ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

III

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Գ

ՀԱՏՈՐ

Ո-Ջ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1977

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Է. Բ. ԱՂԱՅԱՆ, Մ. Մ. ՄԿՐՅԱՆ, ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

Հատորը հրատարակության է պատրաստել Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը

Պատասխանատու խմբագիր՝ պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Ա 70105—31 / 704(04)—77 49—77

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1977

ГР. АЧАРЯН

ЭТИМОЛОГИЧЕСКИЙ КОРЕННОЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Том III

Издательство Ереванского университета

Ереван — 1977

Հ

○ՀՈ. «ահա՛, ահաւասիկ» Ոսկ. յհ. ա. 3. «օ՛ն, դի՛ հ, հա՛յդա» Վրք. հց. «այո՛, հա՛» Երզն. և Թր. քեր. Երզն. մաթ. 123. (այո՛ բառի տեղը բռնած էր արդեն ԺԲ դարում. տե՛ս այս մասին այո՛ բառի տակ)։

=Բնաձայն բառ. համմտ. թրք. ձե he «այո՛», լազ. hó «այո՛», վրաց. ჰო ho «այո՛», ֆրանս. hé!, հայ. դտ. հէ՞ «ի՞նչ, ի՞նչ ասացի՞ր», չաղաթ. ჰაო hau «այո՛» ևն։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Ամեն տեղ էլ կայ հա՛ «այո՛» ձեւով, իսկ Ագլ. հօ՛, Մկ. Ոզմ. Վն. խա «այո՛»։ Անյօդաւոր արտասանութեամբ դարձել է հր՛, հը, խ՛։

Հաբակ տե՛ս Հաւաք։

ՀԱԳԱԳ, ի–ա հլ. «շունչ» Կոչ. 61. Ոսկ. ա. 1. «ձայն արտաբերող շունչը» Նիւս. կազմ. «առողջանութեան տեսակը» Թր. քեր. «շնչափող» Շնորհ. վիպ. որից հագագափողութիւն «արտասանութիւն» Կոչ. 187. հագագափիւռ Կոչ. 187. հագագաճիռատ «բոցաշունչ». Սարկ. տոմար. կիսահագագ ՅՀ. կթ. հագագապահ «շնչերակ» Տիմոթ. կուզ, էջ 324 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 82). հագագայլ «վանկ, արտաբերութիւն» ՅՀ. կթ. շարահագագ Սփր. խշ. 70 (չունի ՆՀՌ). անհագագ Նար. էջ 92. հագագային (նոր բառ)։

=Կրկնուած է պարզական *հագ արմատից, որ առանձին չէ՛ գործածուած։

ՆՀՌ լծ. հաչ, հառաչ, ոգել, գոգ, ոգի, հոգի։ Տէրվ. Նախալ. 105 vak արմատից է դնում սանս. զնգ. vāč, լտ. vocare, vox, յն. εἶπον, ὄψ, պրս. bānk, āvāz, հյ. վանկ, վանգ, գոչել, գոգցես, գոգջիր, «հոս կրնայ բերուիլ նմանապէս հեգել, հագագ=հագ–հագ, եթէ սեմական ծընունդ չեն, տե՛ս արաբ. hajā. վերջապէս ոգել, ոգեղ... եթէ ասոնք ոգի, հոգի բառերուն հետ լծորդութիւն չունին»։ Հիւնք. հանում է հեգ բառից։ Յ. Արշէզ, Բազմ. 1897, 51 լծ. հաչել։ Ն. Ադոնց, Արուեստ Դիոն. քեր. CLII հեկեկեմ բայի հետ՝ կցում է հեգ, հեգճել բառերին ?

ԳԻՒ.—Կայ միայն հագագը կառուիլ Ղրբ. «լեղուն կապուիլ, չկարենալ խօսիլ» դարձուածը։

ՀԱԳԱՄԻԼ «շուայտիլ, ագահաբար կերուխումի յետևից ընկնել» Կոչ. էջ 116. «համակուիլ, մի վատ բանի յետևից ընկնել» Փիլ. լին. 130. որից հագածելի «ախորժելի, հաճոյական» Փիլ. լին. հագածարաճել «իմաստակել կամ շաղփաղփել» Փիլ. լիւս. հագածեալ «ագահ» Իրին. հերձ. 141 (ըստ Վարդանեան ՀՄ. 1910, 303), որին համաձայն է գալիս հագացեալ «ագահացեալ» Բառ. երեմ. էջ 171։

ՆՀՌ Թուի թէ հագածիլ նոյն է դնում զգածիլ բառի հետ. իսկ հագածարաճել հանում է հագածիլ կամ հագճիլ ձևերից։ Հիւնք. հաց բառից։

Հագանիլ տե՛ս Ագանիլ։

ՀԱԳԱՉԵԼ «հաջել (շան)». գիտէ միայն Տիրոյեան, Հանրագր. էջ 471, 477, 235. բառիս աղբիւրը յայտնի չէ։

ՀԱԳԱՅԱՆՔ «տարակուսանք» և **ՀԱԿԱՅԵԼԻ** «սխրալի». ունի միայն Բառ. երեմ. էջ 171 և 172։

ՀԱԳՆԵԼ «կարկատել, կցկցել» Թր. քեր. որից հագներգութիւն «հոմերական բանաստեղծութիւն, քերթուած, պատմութիւն, գրքի դլուխները» Խոր. Նոնն. Թր. և Երզն. քեր. հագներգաբար Փարպ. Խոր. հագներգական Մագ. հագներգող «քերթող, երաժիշտ» Պղատ. օրին.։ Արմատական ձևը առանձին և անկախ գործածուած է միայն մէկ անգամ հագներգութիւն բառի մեկնութեան մէջ. «Եւ ոգեալ է հագներգութիւն ի հագնելոյ կարկատուն

բանս». Թր. և Երզն. քեր. և որովհետև յն. ῥαψῳδία «հագներգութիւն» կազմուած է ῥάπτω «կարել, կարկատել» և ᾠδή «երգ» բառերից, ուստի հետևում է, թէ մեր բառն էլ սորկաբար թարգմանուած է նրանից, որով և հագնել նշանակում է «կարկատել կամ կցկցել»։

Հագներգութիւն (յն. ῥαψῳδία) բառը մեկնելով հները գրում են. «Եւ ոգեալ է հագներգութիւն ի հագնելոյ կարկատուն բանս և կամ ի սարդենի մահակէ պար գալով (սխալ է հրտր. Կոստանեան՝ էջ 33 պարտ գոլով) երգել». Թր. քեր. 4 և Անյ. քեր. 92. Մագ. թղ. 33. (ուրիմն հանում է հագնել «կարկատել, կցկցել» կամ հագնի «ծառի անուն» բառից)։— «Հագներգութիւն ըստ հոռոմին լսի գաւազաներգութիւն. կամ ի հագնելոյ կարկատուն բանս. կամ է հագներգութիւն՝ ելք շնչոյ հագագին, զոր երաժշտականութեամբ նուագեն ի տաղս պարանոցիկ երգոցն. կամ ի հագուցանելոյ ընդ միմեանս և կարկատելով բանս՝ յիրևարս յեռել. կամ հագնին փայտ է անուշահոտ, որպէս սարդենին, որով երգէին». (ըստ այսմ հանում է հագնել «երգեր կցկցել», հագագ «շունչ», հագուցանել «իրար անցկացնել», հագնի «ծառը» բառերից) Երզն. քեր. (Համմտ. Քերդ. քեր. 161, Մագ. քեր. 231)։—«Որ հագն հագն շնչիւ ելանէ ի բերանոյն» Առաք. լծ. սահմ. 523։ — Նորերից՝ Գապատախալեան, Գիրք երաժշտական, Պօլիս 1804, էջ 47՝ «հագն՝ զոտն ասէ և հագներգութիւնն՝ զոտանաւորն կամ զտաղն» (շփոթելով աf բառի հետ)։ ՆՀԲ հագնել միացնում է ագանել բառի՞ն։ Մէնէվիշեան, Արգարու գրոյցը, յն. ἀγνός «սուրբ, մաքուր» բառից։ Ալիշան, ՀԲուս. § 1573 հանում է հագնի ծառի անունից։ Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ 11 հագուցուած բառից է հանում (սակայն հագներգութիւն բառի մէջ և արմատական է, որ չկայ հագուցուած ձևի մէջ. ուստի հագնել «կարկատել» պէտք է բոլորովին նոր բառ համարել, որի հետ կապ չունի հագնիլ «զգենուլ» ժողովրդական ձևը, որ իմաստով էլ տարբեր է)։

*ՀԱԴՆԻ (սեռ. -նւոյ, -նեաց) «մի տեսակ ծառատունկ է. լտ. vitex agnus-castus L» (ըստ Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ 9) Ղևտ. իգ. 40. Յոբ. խ. 17. Խոր. վրդ. Երզն. քեր. (վերջինը դնում է «փայտ անուշահոտ»)։

=Յն. ἄγνος «հագնի» հոմանիշից տառադարձուած։ Այս բառը գտնում ենք Ս. Գրքի վերոյիշեալ կրկին հատուածների մէջ՝ յունարէն բնագրում. սակայն եբրայեցին բոլորովին տարբեր է. առաջինում պակասում է, երկրորդում գրուած է «ուրի»։ Սրանից հետևում է, որ հայը մի՛միայն յունարէնից է յառաջացած։ Հայերէն բառի վրայ աւելացել է և ձայնը, թերևս նրա համար՝ որ մեր նախնիք իրենց օրինակում գտել են ἄγνος։ Ըստ Boisacq յոյն բառի ստուգաբանութիւնը ծանօթ չէ. թերևս փոխառեալ է եբր. *'egen =*'agn ձևից. սակայն հները շփոթելով յն. ἀγνός «սուրբ, մաքուր, անարատ, ողջախոհ» բառի հետ, կարծում էին ծագած սրանից և բոյսը համարում էին սրբութեան և ողջախոհութեան միջոց։ Դրա համար էլ լտ. դարձել է agnus-castus («առաքինի, ողջախոհ»), ինչպէս որ յետոյ էլ agnus կարծուելով լտ. «գառն», կազմուել է գերմ. keusch-lamm (Boisacq 8, Kluge 253):

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը յետոյ Հիւնք. և Արթինեան, Ածաշունչի տունկերը, էջ 10։

ՀԱԴԱՂԱԿ «գինու աման». մէկ անգամ ունի Յուդիթ ժ. 5. այլ ձեռ. հանդաղակ. յոյն օրինակն ունի ἀσκοπυτίνη «կաշեղէն շիշ». ըստ այսմ հայ բառն էլ մեկնում են «կաշիէ տիկ, կամ փայտէ աման գինւոյ, կամ խսիրով պատած մեծ շիշ (ֆրանս. dame-jeanne, ռմկ. տամճանա)», բոլորն էլ ենթադրաբար։

Հիւնք. էջ 334 տճկ. մէրճէրէ, մաթարա բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ. حوقلة ḥauqala «ջրկիրի մեծ շիշ» (Կամուս, թրք. թրգմ. Կ. 180)։

ՀԱՋ, ո հլ. «հազ» ձառընտ. Ասկիփ. Բժշ. որից հազել «հազալ» նւս. պատմ. ա. 8. վրք. հց. Ա. 572 կամ նաև հազալ Վրք. հց. Բ. ՆՆահազ «հին հազ» Մխ. դտ.։

ՆՀԲ յիշում է սանս. fшu: Pictet KZ *5, 347 հսլ.* kašelĭ, *պրս.* kōk, *քրդ.* qokia, *սանս.* kaça «*հազ*»: Lag. Btrg. bktr. Lex. *33 ուզում է կցել գնդ.* hazō *ձևին (նաշտ 19, 80): Տէրվ. նախալ. 70 «հնխ.* kās «*հազալ*», *սանս.* kās, *լիթ.* kosti, *հբգ.* huosto *մեր* հազ, հազել *բառերի հետ դժուար կարող են լծորդութիւն ունենալ»: Նոյն, էջ 109 հարցնում է թէ կարո՞ղ է կապուիլ* sagh «*բռնել, զսպել, զօրել, դէմ դնել*» *արմատին, որից հանում է նաև* հազիւ հազ *ձևը: Հիւնք.* հազար *բառի՞ց:* Meillet MSL *10, 282 ուզում է կապել սանս.* kāsati, *լիթ.* kósėti, *անգսք.* hwósta, hwesan *են համանիշների հետ. հայ բառի մէջ* զ *են-թադրում է հնխ.* g'h, *որի դէմ կար անշուշտ* kh-*ով մի ձև, ինչպէս ցոյց է տալիս հսլ.* kašĭlĭ. *(այս բառի մէջ* š (<հին ch) *չի կարող հնխ.* s-*ով մեկնուիլ).* g'h *գոնում ենք նաև յն.* βήξ, βηχός *ձևերի մէջ, որոնց* g^{w} *նախաձայնը միւսների* k^{w}-*ի դէմ՝ կարօտ է դեռ մեկնութեան: (Վերոյիշեալ ձևերի հետ կարող են յիշուիլ նաև գնչ.* k'asava, hasava «*հազալ*», k'as, has «*հազ*», *բոհեմ.* hašao «*հազալ*», *հինդուստ.* k'ansī «*հազ*»): *Սրմադաշեան, Արմէնիա տեկ. և ռում.* haz «*հաճոյք*» *բառի հետ: Մ. Ս. Դավիթ-Բէկ, Յուշարձան 398 դալլ.* arthai «*հաչել*», *վանդ.* harzal «*հաչել, հազալ*», *հրրբտ.* arthon, Trombetti, L'Unità d'origine, *էջ 90 հնխ.* kwās->*յն.* βηχ-= *gwāgh- և հյ.* հազ=*kwagh-, «*որոնց դէմ ուրոֆիննական լեզուները ներկայացնում են միևնոյն երևոյթը՝ միևնոյն արմատի մէջ»:

ԳԻՒ.—Աղթ. Ախց. Ասլ. Երև. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. հազ, հազալ, *Գոր. Շմ.* հազ, հազիլ, *Ղրբ.* հոգ, հոգիլ, *Տիգ.* հոգ, հոգոլ, *Հճ.* հօգ, հազօլ, *ՀԹ.* հօգ, հոգ, հազօլ, հազոլ, *Սվեդ.* հուզ, հոգզիլ, *Ջղ. Սլմ.* խազ, խազալ, *Մկ. Ոզմ.* խազ, խազոլ, *Վն.* խազ, խոզոլ, *Մրղ.* խազգ, խազգալ, *Ագլ.* խօզ, խզգօլ:—*Նոր բառեր են* հազախաշ, հազմրզալ, հազվռտալ, հազոց, խեղդեալհազ:—*Հմշ. փոխանակուած է* թէօ'f *(որ է* pnf*) բառով, որից էլ* pofալ «*հազալ*»:

ՀԱՋ, *ի հլ. «դժուարութիւն». անկախ գործածութիւն չունի. գտնւում է միայն* հազիւ *գործիականաձև մակբայի մէջ, որից* հազիւ թէ, հազիւ իմն, հազիւ ուրեմն, հազիւ ուրեմ, *և բուն արմատի հետ կրկնութեամբ՝* հազիւ հազ. *բոլորն էլ նշանակում են «դժուարաւ, դժուարութեամբ, դուն ուրեք, քիչ է պատահում որ» ՄԳր. Ոսկ.* հազիւ *բառից են ծագում* հազիւսիսու «*ծանրախօս*» *Կոչ. 210 (չունի ՆՀԲ. դիտէ միայն ԱԲ),* հազուադէպ, հազուագիւտ *են (նոր գրականում):*

ՆՀԲ «որպէս թէ ուժով հզօրի կամ ի ոմկ. ձայնիցս հրզ, խրզ, կիւճ, ազ»: Lag. Btrg. bktr. Lex. 32, 23 *գնդ.* hazaiïha «*բռնութիւն, յափշտակութիւն*»? *Տէրվ. Նախալ. 109 հնխ.* sagh «*բռնել, զսպել, զօրել, դէմ դնել*» *արմատից է դնում սանս.* sah, *գնդ.* haz, *յն.* ἔχω, ἴσχω *և հյ.* հազ, հազիւ: *Հիւնք բրք.* az «*քիչ, սակաւ*» *բառից:* Bugge KZ 32, 12 *յն.* ἄχος «*ցաւ, դժգոհութիւն, վիշտ*» *ձևի հետ՝ իբր բնիկ հայ: Հիւբշ. 174 յիշում է իբր փոխառութիւն գնդ.* hazah- «*բռնութիւն*» *ձևից, իսկ էջ 462 կցում է ըստ* Bugge՝ *յն.* ἄχος *գոթ.* agis «*վախ, երկիւղ, անձկութիւն*», ōg «*վախել*», *հիւլ.* ágor «*երկնչիմ*» *ձևերին, իբր բնիկ հայ. երկուան էլ կասկածով:* Pokorny *1, 40 յիշում է նոյնպէս* Bugge-*ի մեկնութիւնը, բայց գտնում է շատ խնդրական: Պատահական նմանութիւն ունի արաբ.* عزاز ʿazāza «*հազուագիւտ լինել*» *(Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 187):*

**ՀԱՋԱՋ կամ ՀԱՏԱՏ «մի տեսակ բոյս. լտ.* lycium» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1574:* =*Արաբ.* حضض ḥaḍaḍ *կամ* ḥuḍuḍ *(տաճկական արտասանութեամբ՝* hazaz, huzuz) «*նոյն նշ.*» *(տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 418 և* Steinschneider WZKM 12, 11):

Ուղիղ մեկնից ՀԲուս:

**ՀԱՋԱՐ, ի–ա հլ. «1000» ՄԳր. Ոսկ. որից* հազարամեայ, հազարամեան *Եւս. քհր. Եզն.* հազարապատիկ *Օր. ա. 11.* հազարաւոր *ՄԳր. Ոսկ. յհ.* երեքհազարեան *Ոսկ. մ. ա. 21.*

ֆինգիազարեան *Ոսկ. մ. ա. 21.* յոգնաճազար *Կղնկտ.* բազմաճազարք *Գնձ.* վեցճազարեան *Ագաթ.* վեցճազարեակ *Ճառընտ.* հազարամեակ, հազարֆինգիարիւրամեակ, հազարվեցճարիւրամեակ, երկճազարամեակ *(նոր գրականի մէջ)* ևն։

=*Պհլ.* hazār *(պհլ.* hazārak *ձևի հետ համմտ.* վեց-հազարակ *Լծ. կոչ.)*, *պրս.* hazār, *սակ.* zāra, *գնդ.* hazaṅra-, *սանս.* sahásra- «հազար» (Horn § *1093*)։ *Իրանեան բառի ծագումը բացատրում է զանազան ձևերով, որոնց մասին տե՛ս* Pokorny *1, 633 և 2, 488։ Իրանեանից են փոխառեալ նաև քրդ.* hazār, *աֆղան.* zār, *ուտ.* hazar, *կիւր.* azur, aγzur, *լէզգ.* azər, *ռուտ.* hagzür, agzür, *ցախ.* azür, agzür, *ագ.* azur, agzur, *տաբաս.* agzur, *բուդ.* γazar, *ջէկ.* azar, *խինն.* azār, gazir, *արչ.* izardo, *չիլէն.* ezir, ezer, *խիւր.* 'azir, *կայ.* azir, *կուր.* oziy, *վար.* azi, *լակ.* āzarba, āzarva, āzarra, *դիդ.* azal, azargo, *կար.* azareda, *անդ.* ozurugu, *աւ.* azar, 'azarg, *նաև (ըստ* Miklosich-*ի՝ Թուրքերէնի ազդեցութեամբ) հունգ.* äzer, ezer, *խրիմի գոթ.* hazer, *սերբ. խրվաթ.* jẽzero, *սլ.* jęzero «հազար» (Berneker, *էջ 455)*։—*Հիւրշ. 174։*

Ուղիղ մեկնութիւնը գիտէր հներից Մագ. համմտ. «Հազարս ո՛չ է ըստ մեր լեզուիս, այլ զսա ի Պարսից առեալ ընտանեցուցեալ մերոյ լեզուիս». Մագ. Թղ. 95. «Բայց հազարդ ըստ պարսկականին է իմանալ մակբիւ, ոչ գիտել մեզ եթէ ի տեղի հազարի ո՞րպէս մերն Թուէին, տասն հարիւր, որպես Վիրք քսանովն, եթէ այլ ինչ, ո՛չ գիտեմ». Մագ. Թղ. 96։—Նորերից ուղիղ մեկնեց նախ ԳԴ։—ՆՀՌ պրս. և սանս. ձևերը։ Ուղիղ են նաև Peterm. *էջ 22,* Windisch. 21, Böttich. ZDMG 1850, 357 *ևն։*

ԳԻՒ.—Ախց. Գոր. Սրև. խրբ. Կր. Համշ. Ղրբ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. հազար, *Ասլ.* հազար, հոզոր, *Ալշ. Մշ.* հոզար, *Տիգ.* հոզոր, *Սրև.* հզար, հազար, *Սվեդ.* հազզուր, *Հճ.* հազօյ, *Զթ.* հազօյ, հազոր, *Ագլ.* հզզէօր, *Մկ. Ոգմ. Սլմ. Վն.* խոզոր, *Մրղ.* խոզզոր, *Ջղ.* ղզար։ — *Նոր բառեր են՝* հազարանոց, հազարագեղ, հազարաչէնիմ, հազարթերթիկ, հազարփերթիկ, հազարգարուն, հազարաթոռ։

ՀԱՋԱՐ *(ռ հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «մի տեսակ բոյս. տճկ. մառուլ, լտ.* lactuca saligna L.» *(ըստ Տիրացուեան,* Contributo § 577) *Եղն. Անան. գիտ. 21. Մագ. Թղ. 95, 96 (բայց զհազարդ խաւարտ յունարէն ասի մառուլն... իսկ ըստ պարթևին՝* fայիու *[իմա՛ պրս.* kāhū*]). Վրք. հց. Բժշ. Վստկ. 163. որից* վայրի հազար *«եղերդ, լտ.* cichorium intybus L» *(Տիրացուեան, § 568) Բժշ.։*

Հներից Մագ. (անդ) հանում է հազար *Թուականից. «Զհազարդ սակս բազմաթերթութեան և յոգնաբեղուն մանրագոյն մասնկաց, որ ի ներքոյ թերթից տերևոյն ստորակայեալ ընծիւղեալ զոխիցն, որ ի նմա պատշաճեալ հուպ ի միմեանս յարամանեալ»։ Պատկ.* Mamep. 1. 10 *պրս.* hazār *«մի տեսակ վայրի փեղենայ» (չունի ԳԴ)։ Հիմնք. դնում է* հազար *Թուականից, բայց աւելի բանաւոր է համարում հանել* հազ, հազալ *բառից, «քանդի պրս.* fիուf *«հազ և հազար բոյսը»։*

ԳԻՒ.—Խրբ. հազար-մառուլի. *կազմուած է հյ.* հազար *և Թրք. (<յն.)* մառուլ *հոմանիշների բարդութեամբ։ Նոյն ձևով, իբր*

ՓՈԽ.—գործածում են նաև Խարբերդի Թուրքերը։

*ՀԱՋԱՐԱՊԵՏ, ի-ա *հլ. «հազար զինուորի գլուխ. 2. իշխան, նախարար. 3. տնտես, Թագաւորական տան մատակարար, քսակակալ» ՍԳր. Եղիշ. Եփր. Համաբ. և ա. կոր. 58. (ըստ Մանանդեան, Տեղեկ. ինստիտ. 1, 16 հարկային և շինարարական գործերի վերակացուն կամ գլխաւորը). որից* հազարապետութիւն *ՍԳր. Կորիւն։*

=*Պհլ.* *hazārapat, *հպրս.* *hazahrapati, *պրս.* *hazārbad *ձևից (ուղղակի փոխառեալ իրանեանից և ո՛չ Թէ կազմուած հայերէնի մէջ)։ Իրանեան այս բառերը չեն աւանդուած, բայց ենթադրւում են յն.* ἀζαραπατεῖς, ἀζαραβίτης, *ասոր.* ʾhzārpaṭ, *վրաց.* ჰაზარაპეტი հազարապետի *ձևերից։—Հին Պարսից մէջ* հազարապետը *բարձրագոյն տիտղոսներից մէկն էր. այսպէս էին կոչւում*

Բիւրուց Անմահից գնդի 10 հրամանատարները, որոնց իւրաքանչիւրը 1000 դինուոր ունէր։ Սրանք էին նաև արքունիքի հետ եղած յարաբերութեանց հսկիչը, մեծ դահճապետ, հրամանակատար արքայի ևն։ (Հազարապետի տիտղոսի և պաշտօնի նկատմամբ մանրամասն տե՛ս Marquart, Philologus *55, 227—9, հ։ թրգմ. ՀԱ 1898, 316—320)։— Հիւրշ. 174։*

Ուղիղ մեկնեց նախ La Croze, *յետոյ* Lag. Urgesch. *978 ևն։*

***ՀԱԶԱՐԱՒՈՒԽՏ**, ո *հլ. «պարսկական մի տիտղոս, որ մեր մէջ իբրև յատուկ անուն է գործածուած» Բուզ. Փարպ. Արծր.։*

=Պհլ. փոխառութիւն. համմտ. պրս. hazāraft *«պարսկական մի տիտղոս», որից տառադարձուած են յն. ἀζαρέφθης, ասոր. (ըստ* Tabarī) ܐ ;ܙ ;ܗ hazāraft։—*Հիւրշ. 174։*

ՀԱԶԱՐԴԱՐՈՒՆ *«մի տեսակ անուշահոտ ծաղիկ» Սալաձ.։*

=Անշուշտ փոխառեալ է պարսկերենից. համմտ. պրս. هزاردانه hazārdāna *«մի տեսակ խոտ»։*

Բառս ունի նախ ՀԲուս. § 1579, բայց գրում է սխալմամբ հազարդարա։ *Վերի ձևով ուղղից Նորայր, Բանաս. 1901, 117, ինչ որ հաստատում է նաև դաւառական ձևը։ Բայց Նորայր ՀԱ 1924, 552 մոռանալով իր առաջին ուղղումը՝ մեկնում է թրք.* հազարբարա *«անիսոն» և որ նորից է ուղղում ՀԱ 1926, 71։*

Գիմ.—Նր. հազարդարուն *«անուշահոտ բուսիտակ մանր ծաղիկ, որ ցօղունին վրայ փնջաձև կը բացուի. ասոր սերմերը հացի երեսը կը ցանեն եփելու ժամանակ և շատ համեղ է»։ (Վկայութիւնները տե՛ս Նորայր, Բանասէր 1901, 117. նոյն բառը գիտէ նաև ՀԲուս. § 1578, բայց սխալմամբ գրում է* հազարգարուն)։

***ՀԱԶԱՐՃԱՇԱՆ**, *որ և* **ՀԱԶԱՐՔԱՇԱՆ** *կամ* **ՀԱԶԱՐԱՖՇԱՆ** *«մի տեսակ բոյս է» (իբր սունկ կամ լօշտա՞կ) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1580։*

=Պրս. *hazarčašān *անծանօթ ձևից, որ կազմուած է պրս.* هزار hazār *«հազար» և* چشان čašān *«լախտ» բառերից. վերջինը ստում է նաև* فشان fašān, پشان pašān, *որով յառաջացել են վերի բառի երեք տարբեր ձևերը։—Աճ.*

*[***ՀԱԶԵԼՈՒԹԻՒՆ** *«ախորժելի՝ համով լինելը»» Պիտ. մէկ անգամ գործածուած է հետևեալ հատուածում. «Յաւէժ բարօրութեամբ յղփանայի յոգնասիր մրգոցն հազելութեան ճաշակօք»։ Սրա տեղ այլ ձեռ. ունի* համեղութիւն, *ինչպես պէտք է սրբագրել։*

Նշբ ուզում է կցել հաճելի *բառին, իսկ Աբ թւում է թէ արաբ.* ḥass ḥass *«ախորժիլ» (ռմկ.* հազ ընել*) ձևից է հանում։]*

Հազի *տե՛ս Հացի։*

ՀԱԶԻՄԱԹ *«մի տեսակ վհուկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. հարց. 388. «Վհուկն այն է, որ ի վհաց և յանդնդոց մեռեալս կերպարանէն. դևք ի կերպս մարդկան երևին, զոր գեակոչ ասեն և հազիմաթ և նշանագէտ, որ ի դերեզմանս ննջէ և նշանաւոր մարդ կերպարանէ»։*

Քաջունի (հտ. Գ. էջ 133) ունի հազինայ *«վհուկ», որ և կգում է լտ.* hasena *ձևին։ Բայց ո՛չ այս բառի համար որևէ վկայութիւն ունի, ո՛չ յիշում է այլուր իր բառարանում և ոչ էլ գտնում եմ լտ.* hasena *իբր «վհուկ», Quicherat-ի լատին-ֆրանս. բառարանում (Paris 1913). այստեղ կայ միայն* hasena = asena = arena *«աւազ. 2. ամփիթատրոն, մրցարան»։*

Հազիւ *տե՛ս Հազ։*

***ՀԱԶՈՐ** *«սին պտուղը, լտ.* sorbus pictus, *տճկ. իվլէզ, ռմկ. գիվլէզ, Նեմս. օվազ» Բժշ. (ունի միայն ՀԲուս. § 1588 յաւել.). սրա հետ նոյն են* հազորան *կամ* հազուրան *(ի—ա հլ. ըստ Նշբ, թէև առանց վկայութեան) «սին պտուղը» Մեսր. եր. Մամիկ. գրուած է նաև* հաշուրան *ըստ ՋՔ, որից* հազորենի *«աննի, սինի ծառ» Մեսր. եր. Մամիկ.։*

=Ասոր. ܐ ;ܙ ;ܟ xazūrā. *այս բառը առանձին նշանակում է «խնձոր» և փոխառեալ է հայերէնից. բայց զանազան վերադիրներով՝ նշանակում է տարբեր բոյսեր. այսպէս՝* xazūrā armənāya *«ծիրան»,* xazūra dəbärā

«զկեռ» (իմաստի զարգացման համար համմտ. յն. μῆλον «խնձոր» և ἐπι-μηλίς «մի տեսակ զկեռ» Boisacq 266), xazūrā mādəyā «լիմոն, citrus medica», xazūrā parsāyā «դեղձ, amygdalus persica» (Brockelm. Lex. syr. էջ 108—109)։ Ասորերէնում չկայ «սին» նշանակութիւնը, ուստի պէտք է ենթադրել թէ կա՛մ յատուկ էր ասորի մի գաւառականի և կամ պատահաբար չէ աւանդուած ասորական գրականութեան մէջ։—Աճ.

ՆՀԲ լծ. իտալ. azzeruola «ալոճ». Böttich, Arica 43 յն. πασσάρα, βασσάρα «մի տեսակ սունկ»։—Lag. Reliq. gr. 44 ասոր. ʿazrurā «հղևին»։ Պատահական նմանութիւն ունին արաբ. خيزران xayzurān «փշոտ մի թուփ է. ruscus aculatus» կամ «murca (myrta) silvestris» (Կամուս, Բրք. Բրդմ. Ա. 838, Steinschneider WZKM 12, 20), Բրք. هزارن hezaren «հնդիկ հղէգ կամ dauphinelle ծաղիկը»։

ԳԻՒ.—Մշ. հազուրան, Բղ. խազուրան, Մկ. խոզիւրան «մի տեսակ ալոճ»։

*ՀԱՋՐ «հզան վրայ դրուած հարկ». Նորադիւտ բառ, որ գործածուած է Անիի 1301 թուի արձանագրութեան մէջ. «Թողի զկղինն հազրն, զկովին համբրէլէն, զոչխարին աղբլհակն» (տե՛ս Վիմական տարեգր. էջ 151)։

=Արաբ. ḥazīra «փարախ, մակաղատեղ, ցանկապատ»։

Ուղիղ մեկնեց Karst, Դատաստան. հտ. II, էջ 12։

ՀԱՋՐԵԼ «մազերի մէջ ծաղիկ խրել կամ ծաղիկ անց կացնել»? անստոյգ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գործածուած է Նար. տաղ. 465. «Ի ծամին խեղեփին հազրէ զի նոյն սէր»։

Այսպէս է մեկնում Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. հտ. Ա. 150։ Հացունի, Պատմ. տարազի 197 և Նորայր ՀԱ 1924, 70 համարում են նոյն ընդ հազրեվարդ։ Հացունին յիշում է նաև արաբ. խազիրա «կանաչ»։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, էջ 107 արաբ. hāzir «ներկայ, պատրաստ» բառից, իբր «պատրաստել, յարդարել»։

ՀԱՋՐԻ «մի տեսակ անծանօթ ծաղիկ է». ժողովրդական երգից առնելով յիշում է միայն ՀԲուս. § 1584։ Թերևս նոյն ընդ հազրեվարդ։

+ՀԱԼ «հալուիլը» Վրդն. Լ. Ոսկիփ. Նար. խչ. «արծաթի հալուելու չափը» Միխ. առ. 501. «կերակրի մարսում» Վստկ. 120. որից հալ հաճել «հալեցնել» Թլկր. 29. հալել «տաքութեամբ լուծել» ՍԳր. «կերակուրը մարսել» Կիւրղ. ղևտ. Երզն. մտթ. Լմբ. ժղ. «հոգսերով մաշուիլ» Կոչ. «քամուց ցրուիլ՝ անհետանալ (փոշին)» Անան. զղջ. հալոց «մետաղ հալեցնելու քուրայ» ՍԳր. եզն. «առաքոբս» Արծր. հրտր. Պատկ. էջ 22. հալածոյ «ձուլուած» Բ. մնաց. դ. 2. հալաճ «հոգս, մտատանջութիւն» Ոսկ. մ. ա. 22. հալուն Փիլ. հրահալելի Լմբ. Շնորհ. հրահալոց Բննիկ. դիւրահալ Իմ. ժթ. 20. հալևմաշ Մխ. բժշ. դժուարահալ Սոկր. թերահալ Վրդն. երգ. երագահալ Վեցօր. 174. սառնահալ Ագաթ. տեալ «անմարս» Եղիշ. մխանձ. 161. տեալութիւն Պիսիդ. վեցօր. տող 956։

=Բննիկ հայ բառ. մեկնութիւնը տե՛ս հեղուկ ձևի տակ։

ՆՀԲ լծ. Բրք. խալլ (իմա՛ արաբ. ḫall «հալել, զտել, լուծել»)։ Հիւնք. աղ բառից։ Karst, Յուշարձ. 407 սումեր. ša-lal «թոքախտ»։ Միւսները տե՛ս հեղուկ։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Սչ. հալել, Գոր. Երև. Ննխ. հալէլ, Ախց. Ասլ. ՋՓ. Կր. Շմ. Պլ. Ւ. հալիլ, Տփ. հա՛լիլ, հա՛լվիլ, հա՛լշիլ, Հմշ. հալուշ, Տիգ. հոլէլ, Խրբ. Ղրբ. հոլիլ, Ագլ. հա՛յլիլ, Ջղ. Վն. խալել, Մկ. Ոզմ. խալիլ, Սլմ. խոլել, Մրղ. խոլէլ, Հճ. հալլել, Սեբ. հալլէլ, Սվեդ. հոլլիլ։—Նոր բառեր են աճհալել, հալուկ, հալխոնիլ, հալհալ լինել, հալհլիլ, հալհլուկ, հալհլուճ, ձնհալ, հալման, հալմրիլ, հալոց, հալոտել, հալուահալ, հալուհնի, հալ, իւղահալ (>էխալ, ուխալ)։—Նոր ոճեր են հալ աճցնիլ «հալիլ փճանալ», հալ բնկնել «հալելու սկսիլ», հալ գնալ «սիրով խանդաղատիլ», հալի աճել «մանրամասն պատմելով լաւ հասկացնել»։ Այս վերջինը տորպ. Բրք. حالی ایتمك hali etmek «իմացնել, հասկացնել, բացատրել» բառն է, որ Будаговъ 1, 512 գնում է արաբ. حال ḥāl «վի-

ճակ» արմատի տակ։ Ըստ այսմ հայերէնը (գտնւում է միայն երև. Ղրբ.) փոխառեալ է թուրքերէնից. բայց ժողովրդական ստուգաբանութեամբ հալել բայից կարծուելով՝ կապված է նաև հալել, գլխումը հալել, ականջները հալի անել հոմանիշ ձևերը։—Այս արմատին է հայում նաև գւռ. հալիճ (վն. խալիճչ), որ նշանակում է «աղած իւղը հալելու ժամանակ երեսը կազմուած փրփուրը և տակը մնացած դիրտը, որ շատ աղի է լինում». (Ղարաբաղցիք այս դիրտը դէն են գցում, Սեբաստացիք բաղարջի մէջ են խառնում, Արաբկիրցիք հացի վրայ քսելով ուտում են). այլուր կոչւում է բալիճչ. Բլ. Լ., չանչ Լ., աղիչ Ախց. Սեբ., կառուչ Կիւր.։ Մեր բառին շատ մօտիկ է հնչում արաբ. حليجة ḥalīja «մէջը արմաւ թրջած կաթ՝ ուտելու համար. 2. խնոցու մէջ հարուած թանի երեսի իւղը. 3. իւղի տիկի քամուածքը. 4. հինայի հոյզը. 5. վրան կաթ լցուած կարագ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 385)։ Այս բառը ծագում է արաբ. حلج ḥalj արմատից, որ նշանակում է «բամբակը մաքրել ևն». ուստի բնիկ արաբերէն է. հետևաբար կա՛մ մեր բառի նմանութիւնը պատահական է և կամ հայերէնը փոխառեալ է արաբերէնից և յետոյ մօտեցրած հալ-ել արմատին։

ՓՈԽ.—Կայ քրդ. حليان heliyan «հալիլ», حلاندين helandin «հալեցնել», halīnāndin «հալեցնել», heliqin «հալիլ», heliqandin «հալեցնել». սրանք կարող են թէ՛ հյ. հալել և թէ արաբ. حلّ ḥall «հալել, լուծել» բառից փոխառեալ լինել. բայց heliqin և heliqandin ձևերը ցոյց են տալիս թէ՛ որ փոխառութիւնը հայերէնից է, քանի որ կայ հյ. գւռ. f-ով ձևը (ինչ. հալֆ, ձննհալֆ), մինչդեռ արաբը զուրկ է q ձայնից։ (Iusti, Dict. Kurde, էջ 144 յիշում է թէ՛ արաբ. և թէ՛ հյ. ձևերը, Աճառ. MSL 16, 357 քրդ. ḫäline «հալել» դնում է հայերէնից)։

ՀԱԼԱՑ «վանել, քշել, հեռացնել». արմատ առանձին անդործածական, որից հալածել «վանել, յետևից պնդելով վռնտել, հեռացնել» ՍԳր. Ոսկ. ես. և բ. տիմ. Մծբ. հալածական ՍԳր. Ագաթ. Եւս. քր. Մծբ. Ոսկ. ես. հալածաճ ՍԳր. Ոսկ. բ. տիմ. հալածիչ ՍԳր. հալածումն Մրկ. դ. 17. Գծ. ը. 1. հալածչութիւն Կոչ. հալածութիւն Եփր. համար. այսաւհալած Սարկ. Յս. որդի. դիւահալած Գնձ. Ոսկիփ. անհալածեալ Ոսկ. ա. կոր. իճճահալած Առակ. ա. 11. խարազանահալած Սկևռ. աղ. խաւարահալած Վեցօր. ձիահալած Բուզ. կենդանահալած Գիւտ Թղթ. թիւնահալած ԱԲ. հալածողական (նոր գրականում).—ն ձայնի սղմամբ ձևացած են՝ արտալածել Պիտ. Պղատ. օրին. տարալածել Կիւրղ. Թգ. Տիմոթ. կուզ, էջ 278. հաւալած (հաւահալած) Մանդ.—միջին հայերէնում իմաստի զարգացմամբ ունինք՝ հալծել «չարշարել, չարաչար գործածելով նեղացնել» Սմբ. դատ. 3, հալծանճ «չարշարանք, աշխատանք» Անսիզք 47, «շահած՝ վաստակածը» Սմբ. դատ. 144։

ՆՀԲ ածել բայից՝ համ (>հալ) մասնիկով։ Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 142 զնդ. herez, սանս. sṛj, պրս. histan, hilam «թողնել, արձակել»։ Տէրվ. Նախալ. 107 հնխ. varg «հալածել, վրէժ խնդրել» արմատից է դնում սանս. varj, գոթ. vrikan, որից vraks «հալածիչ», հսլ. vragŭ «թշնամի», նրգ. rache «վրէժ», հյ. հալածել և վրէժ։ Հիւնք. յն. ἐλαύνω, ἤλασα, ἐλάσω «հալածել, վանել»։ Müller, WZKM 10, 276 լտ. pello «զարնել, վանել» բառի հետ ցեղակից է դնում։ Հիւրշ. էջ 462 անընդունելի է գտնում այս մեկնութիւնը, որովհետև հյ. հալածել բառի մէջ -ած մասնիկ չէ։ (Այս լտ. բառի ցեղակից հյ. ձևն է հաղ, հեղ «անգամ», որ տե՛ս վարը)։ Meillet (նամակ առ Boisacq, 1913 ապր. 11 թուականով, տե՛ս Boisacq 744) ցեղակից յն. πάλλω «յուզել, ճօճել, շարժել» բային։ Pedersen, KZ 39, էջ 241 մերժում է կցել լտ. fundo «վանել» բառին իբր ցեղակից և համարում է յառաջացած հյ. հալել բայից, ճիշտ ինչպէս լտ. fundo «հալել» ստացել է յետոյ «վանել» նշանակութիւնը։

ԳԻՒՐ.—ՀՃ. Ս. հալածել, Սեբ. հալաձէլ, ՋԹ. հալաձիլ, Խրբ. ճըլըզիլ, որոնք պահում են բուն իմաստը, իսկ Կր. հալածէլ «բամ-

բասել, չարախօսել, վատաբանել մէկի մասին», Պլ. հալածիլ «կորչիլ, բոլորովին անհետքի դառնալ», որի հոմանիշն է հալածակուիլ Երև. Ղզ.։

Հալաճել *տե՛ս Հոլ(անի)։*

ՀԱԼԱՍ. *անասոյգ և նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վասկ.46. «Եթէ ի սպիտակ գետինն պատառած մքոտ չլինի, նա լաւ է սակաւ մի. բայց թէ լինի, ամենևին պիղծ է. մի՛ անդ հալաս առներ. նոյնպէս և ինչ որ նօսր և աւազոտ գետինն, չէ պարտ տնկել»։ Ըստ հրատարակչի, էջ 250, թուի «տնկել»։*

***ՀԱԼԱՒԻ** *«զգեստ» Մամիկ. էջ 37։ Մաշտ. Ոսկիփ. Վասկ. 23, 85. «սարկաւագի շապիկ» Օրբել. իզ (հրատարկ. էմ. էջ 80). «շորի կըտոր, քուրջ» Լծ. նար. ի. որից հալաւօրճնել Մաշտ. 121—4։*

=Փոխառեալ է կա՛մ հին ասուրականից և կամ ասորի գւռ. մի ձևից, որ աւանդուած չէ. համմտ. ասուր. ḫalâpu, ḫalâbu «ծածկել», որից naḫlaptu, ḫitlupatu «կերպաս, հագուստ, զգեստ»։—Աճ.

ՆշՒ լծ. խիլայ, արաբ. خلع xal'at։

ԳԻՒ.—Գոյութիւն ունի գրեթէ ամեն տեղ հալավ ձևով և «շապիկ կամ հագուստ» նշանակութեամբ. այսպէս՝ Ալշ. Ախց. Երև. Մշ. Շմ. իսկ Սւդ. Սեբ. «հարսի զգեստները», Տփ. «հարսի իբր օժիտ բերած շորեղէնը», Մղ. նաև «դաշտան կամ դաշտանի շոր»։ Նոր բառեր են անհալաւ, հալաւած, հալաւացու։

ՓՈԽ.—Վրաց. ჰალავი հալավի «փեսացուի կողմից նշանածին ուղարկուած նուէր». իմաստի զարգացման համար համմտ. խալաթ «հագուստ, վերնաշապիկ և նուէր»։

ՀԱԼԵԼՃԻՏՈՒԿ *«մի տեսակ անծանօթ բոյս է». Ախտարք. ունի միայն ՀԲուս. § 1588. (տպած է հալեճիտուկ, իսկ էջ 680 վրիպակների մէջ ուղղում է հալելճիտուկ)։*

Հալի *տե՛ս խալի և Հաշտ։*

***ՀԱԼԻԼԱ.** *կամ ՀԱԼԻՃ «մի տեսակ բոյս է. լտ. myrobalanum» Բժշ. ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 840ա և ՀԲուս. § 1590.— Նկարագրութիւնը տե՛ս* Seidel, *Մխ. Հեր. § 103, որ և այս* myrobalanum-*ը համարում է* combretaceae terminalia chebula Retz. *կամ* terminalia citrina Roxb.

=Պրս. هليله halīla, *արաբ.* هليلج halīlaj՝ *նոյն նշ. առաջինը տալիս է հալիլա ձևը, երկրորդը՝ հլելիճ. արաբերէնից է նաև վրաց.* ალოლეჩა ալիլեչա։—*Հիւբշ. 279։*

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. անդ։

Հալիոճ *տե՛ս Հիլիոն։*

ՀԱԼԻՔ *«մի տեսակ անծանօթ բոյս է» Գադիան։ ՆՀՒ մեկնում է «կեռաս, յն. «κεράσιον, լտ. cerasum», աւելացնելով նաև թէ ուրիշները կարդում են և մեկնում «κεράτιον, պտուղ եղջերենւոյ և հյ. հոյն»։ ՀԲուս. § 1592 ըստ Ռոշքեանի դնում է «լտ. ceratia, որ կը կոչուի նաև* halenia *և է խոտ լուծողական», իսկ § 1593 յաւել. «սին պտո՞ւղը»։ Քաջունի Գ. 133 դնում է հալիf «bigarreau, մի տեսակ պինդ կեռաս, լտ. prunus avium», հալիf վայրի «mahaleb», հալիf «խոտ որ մի տերև ունի. արմատն է վարակոտ և մեծ. ի կերակուրս դեղ է փորալուծից. լտ. ceratia»։*

Ունինք նաև արաբ. هالك hālik *«մկնդեղ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 124) և* خالق ḫāliq *«որթատունկ» (անդ. Բ. 888)։*

ՀԱԼՀԱԼԻՄ *«անասոյգ մի բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1594։*

ՀԱԼՀԱՄԻՃ *կամ* **ՀԱԼՀԱԻԻՃ** *«շուշմիր,* cardamomum, *հիլ» Վասկ. 197, 206. ունի միայն ՀԲուս. § 1595։*

=Թուի թէ կազմուած է պրս. هيل hīl *+հաւիճ բառերից. տե՛ս այս բառերը։—Աճ.*

Քաջունի, Գ. 133 դնում է պրս. հայլ, որ է هيل hīl, *հյ. հիլ։*

ՀԱԼՈՒԻ *«կեռասի և վարդի գոյնի մէջտեղ կարմիր գոյն.* incarnat, nacarat». *ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 672 ա և 840 բ, իբր միջին հյ. նոյնը յիշուած գտնում եմ Բորոսեան, Տետրակ համառօտ բառարանի, Նախիջևան 1794, էջ 9. «Ալ բոլնկ գոյնն հալուղի». այս նոյն բառն է, որ գտնում եմ նաև գրուած կամ տպուած հալուղի ձևով՝ Այրիվ. 8ա. «Հանդերձ նասիճ հալուղի և պարեգօտ շուշբարի»։*

ԳԻՒ.—Հալուղի Սւդ. «վարդագոյն, բաց կարմիր», Սեբ. «արեան ճապաղիք» (Հալո-

դին թաթխուած, արնպնակներու մէջ կլոդար)։—Նո՞յն է արդեօք հալադի Երև. «կարմիր կամ սպիտակ գոյնով, երկար հատերով ու հաստ կեղևով մի տեսակ խաղող է, կախանի յատուկ»։

ՀԱԼՈՐԻ *«անծանօթ մի բոյս». մեկնուած է Թրք. եափրուն(?) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1596։*

ՀԱԼՈՒԻ, ի հլ. «անուշահոտ փայտ ունեցող մի ծառ է. լտ. lignum aloës. agallochos» Երդ. դ. 14, 34. ժթ. 39, Շար. և Նար. «խնկային մի խոտ՝ դառն հիւթով» (լտ. aloë) Գաղիան. սրանից է հալուախունկ, որ ունի Խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 44. «Կանաչուտ ծով, յորում գհալուախունկն ասեն»։

=Յն. ἀλοή հոմանիշից, որի հետ նոյն են լտ. aloe, եբր. אהלים ahālīm, אהלות ahālōθ, արաբ. الوة alva, պրս. الو ilva, ասոր. ܐܲܠܘܶܐ alvā, որոնք բոլոր ծագում են հընդկականից. հայերէնը գալիս է յն. ձևից, որի վրայ աւելացել է ն, ինչպէս հեբրաներս բառի վրայ. յոյնից փոխառեալ են նաև լտ. aloe, ռուս. алой (Berneker 28), մրգ. alōē, գերմ. Aloe, անգլ. aloes, վրաց. ალო ալո են։— Հիւբշ. 360։

Նախ ԳԴ դրաւ պրս. իլվա ձևի հետ։ ՆՀԲ դնում է յն. լտ. և եբր. ձևերը։

ՀԱԼՊԻՈ «մի տեսակ խոտաբմատ է. mercurialis», հալպուպ «սպիտակ տուղտ» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1601 և յաւելւ։

=Արաբ. حلبا ḥilbāb «մի տեսակ բոյս, ոճկ. սարը սիւտլիյէն» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 144), حلبوب ḥalbub «mercuriale», حلبيب ḥalbīb «սպիտակ սորնջանի նրման մի բոյս» (Steinschneider WZKM 12, 11)։—Աճ.

ՀԱԼՎԱ կամ ՀԱԼՖԱ «մի տեսակ բոյս է» Վստկ. 33, 129. Ամիրտ. (իբր Թրք. տիւկիւն օթի). ունի միայն ՀԲուս. § 1602, որ համարում է «ranunculus acris կամ arundo epigeios, stipa tenacissima և կամ eragrostis cynosuroides» (տե՛ս և Տիրացուեան, Contributo § 187), որից հալֆայուտ «Հալֆայ խոտով լցուած հող» Վստկ. էջ 33։

=Արաբ. حلفا ḥalfā կամ حلف ḥalaf «սէղերի տեսակից մի խոտ է» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. էջ 743).—Աճ.

ՀԱԽԱՆ *«քրքում, սաֆրան» Բժշ. (յիշուած է իբր քրքումի հայերէն հոմանիշը). ունի միայն ՀԲուս. § 1603։*

ՀԱԿ *«հակառակ» Լծ. սահմ. այս արմատից են հակիլ «ծռիլ, միտիլ» Իմ. Բ. 15, հակերգ «վիճաբանող» Մծբ. հակառակ «դէմ, ընդդէմ, ներհակ» և փոխաբերաբար «սատանայ» ՄԳր. Մծբ. Ոսկ. եզն. հակառակագնաց Վեցօր. հակառակասէր Ագաթ. հակառակել ՄԳր. Ոսկ հակառակորդ ՄԳր. Եփր. Թուց. հակառակութիւն ՄԳր. իճճահակառակ Կլիմաք. խոնարհահակառակ Վեցօր էջ 56. հերհակ Արիստ. ստորոգ. սրտահակիլ Լմբ. աղ. հերհակօրէն Հայել. 303 (նորագիւտ բառ), հակակիլ «հակառակիլ» (չունի ԱԲ) Խորվկ. էջ 158. «Եւ նոքին անուանքն մարդկայինք, որք հետևին մարմնոյն Քրիստոսի, հակակեալք լինին նմա»։ Այստեղ է պատկանում նաև հակ «բեռան կապոց» Մանդ. Ոսկիփ. Վրդն. տոկ. 152, այսպէս կոչուած՝ ակնարկելով ձիու երկու կողմը՝ իրար դէմ դրուած կապոցները։ Մի ուրիշ ընդլայնացմամբ ունինք հակ «պատասխան (հմմտ. Ննխ. դարձ «պատասխան»). 2. դուդորդ» ըստ Բառ. երեմ. էջ 172։ Նոյնից է յառաջանում վերջապէս հակակ «հաւասար, նման», որ մէկ անգամ ունի Մագ. Թղ. 60՝ բացատրութեամբ միասին. «Ո՞ւր Հայկակ, որ ըստ հաւուն իւր հակակ, որ է հարթակ հաւասար». հմմտ. Վստկ. 198՝ Հայնաց ի յանձին մեծութիւնն և զգլուխն ըստ անձինն մեծութեան հակակայ արա՛։—Յետոսկնդարեան հայերէնի մէջ հակ դարձած է շատ գործածական նախամասնիկ՝ համապատասխան յն. ἀντι- ձևին. այսպէս՝ հակադարձ= ἀντίστροφος Արիստ. հակակիր= ἀντιπαθής Սահմ. հակատրամատել= ἀντιδιαίρεσις Անյ. ստոր. հակադրել= ἀντιτίθημι Արիստ. են։—Միջին հյ. ունինք հակառ՝ գործածուած 994 թուի մի արձանագրութեան մէջ (տե՛ս Վիմ. տար. էջ 11)։—Նոր գրականում կազմուած են բազմաթիւ բառեր, որոնցից յի-

շենք՝ հակառակաճանաւ, հակառաջարկ, հակադաշնակցական, հակազդեցութիւն, հակաթոյն, հակաթոռ, հակակարծիք, հակակղերական, հակակրութիւն, հակաճառուած, հակաճէական, հակամանկավարժական, հակամարտութիւն, հակայեղափոխութիւն, հակայեղափոխական, հականձնախել, հականձնախական, հակապետական, հակառողջապահական, հակասահմանադրական, հակասական, հակոտիղ և այլն։

Նշ. հակել՝ *լծ. բրք.* էկմէք, էկիլմէք *«ծռել, ծռիլ»*, հակառակ՝ հակ առ ակ *կամ* հակ առեալ։ Տէրվ. *Նախալ. 109* դնում է *հնխ.* sak *«հետևիլ»* և sag *«հակիլ, յարիլ, յամել»* արմատները. առաջինից հանում է սանս. sač, sasč, յն. ἕπομαι, *լտ.* sequi *«հետևիլ»* և socius *«ընկեր»*, *լիթ.* sékti, *իսկ երկրորդից՝ սանս.* sajj, *երկուսից դնում է հյ.* հակ, հակառակ, հակիլ, զակատիլ, հաճգչիլ, հաճգիստ, հաճգոյց, յանգ, յանկ, յագչել, յանգչել, յանկչել, յանկուցանել։ *Հիմք.* հաճ *բառից։* Bugge KZ 32, 12 *համարում է բնիկ հայ բառ՝ հնխ.* pak- *ձևից. համմտ. հալ.* paky *«նորից, դարձեալ»*, opako, opaky, opače *«յետս կոյս, հակառակ»*, pače *«աւելի»*, սանս. ápāñč, ápāča- *«հակադիր, յետևը գտնուած, արևմտեան»*, ápāka- *«հետուից եկած, մեկուսի»*, զնդ. apąš պրս. hāz *«նորից, յետս, յաճախ»*, բելուճ. pač *«յաճախ»*, *լտ.* opācus *«սառնարում գրանուած (այսինքն արևին հակադիր)»*, հրգ. abah, abuh *«հակադարձ, հակընդդէմ»*, հհիտ. bak *«յետևը, թիկունքը»։ Այս մեկնութիւնը յիշում է Հիւբշ. 462 կասկածով. ընդունում է* Meillet MSL *10, 270. այսպէս նաև* Walde *540 և* Pokorny 1, 50 *հնխ.* apo, po- *«դէն» արմատի տակ. բայց կան դանադան ձայնական անպատեհութիւններ, որոնք անստոյգ են դարձնում այս մեկնութիւնը։*—Scheftelowitz BB *28, 305 և 29, 56* հակիլ=*լտ.* uncus, *յն.* ἀγκών, *իռլ.* ēcath *«կարթ»*, սանս. añčati *և հյ. անկիւն բառերի հետ։* Karst, *Ծուշարձան 400 ասուր.* hāqu *«յարիլ»*, *427 ԲԲր.* ek, eg *«ծռել»*, *իսկ էջ 423* հակառակ *սառնարանում է* հակ+կառ+ակ *և* կառ *ձևի դէմ դնում է ԲԲր.* kar *«դէմ, ընդդէմ»։ Թիրեաքեան, Արիահայ բառ. 212 պհլ.* ag, āk *«թշնամի, հակառակորդ» կասկածելի բառից։*

Գիմ.—*Տփ.* հակ տալ *«հակուիլ՝ ծռիլ» (յատկապէս կշիռքի նժարի համար է ասում), երև. Տփ.* հակ, *ԶՁ.* հօգ, հոգ. *ՀՃ.* հօգ, *Ջղ.* խակ *«բեռան հակ, բարձուած բեռան մէկ կողմը, թայը»*, *Շմ.* հակ, *Ղրբ.* հա՛կեր, *Ագլ.* հօ՛կեր *«պայուսակի մէկ աչքը»*, *Այն. վն.* հակառ *«յամառ՝ հակառակ մարդ»*, *Մկ.* խակառ, *Նր.* հակառ կանգնիլ, *երև.* հակառ ընգնել, *վն.* հակառ իյնալ, *Ալշ. Մշ.* հագառ կէնալ *«հակառակիլ, մէկի հետ բռնուիլ, կռուիլ».*—*Ջղ.* հակառակ *«ընդդէմ»* և խակառակ *«դռան փականք».*—*«հակառակ», բայց աւելի փխբ. «սառնանայ» նշանակութեամբ ունին Ախց. երև. կր. Շմ. Ոզմ. Սլմ.* հակառակ, *Ալս. Մշ. Ննխ. Պլ. Սչ. Տիգ.* հագառագ, *Ասլ.* հագառագ, հագառայ, *ԶՁ.* հագառօգ, հագառոգ, *Տփ.* հակարակ, *ՀՃ.* հագարօգ, *միայն հակառակի պէս դարձուածի մէջ.*—*Ննխ.* հագրոգել *«հակառակիլ».*— *Ղրբ.* նէ՛րհակ, *Ագ.* նէ՛հրակ *«նիհրհակ, հակառակասէր», Ջղ.* նեհրհակել *«հակառակիլ»։*—*Շրջմամբ ունինք* հաճակառութիւն *(Ակն. Պլ. ևն), իբր գրական* հակաճառութիւն *ձևից փոխառեալ։*—*Նոր բառեր են* հակառակու *«ի հնճուկս»*, հակկալ *«մահ կամ բեռը պահելու փայտ»*, հակու հակու առնել, հակուն տալ *«երկու կողմ կաղալ, յերկուս հետս կաղալ»։*

Փոխ.—*Թրք. գր. Եւդ. և կս.* häg *(Ծուշարձան 329 բ),* heγ *(Բիւր. 1898, 713) «հակ, բեռան հակը»։ Ուտ.* հակարակ *«բնաւորութեամբ հակառակ». օր.* hakarak adamar *«հակառակ մարդ»։*

ՀԱԿԱՀԻՒԹԻՒՆ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 160. «Գիտես զվարդն ի պտղոյն և ի հակահուեհնէ ընտրել, և զմանուշակն և զշուշանն ճանաչես և զիւրաքանչիւր ինչ ի ծաղկանցն»։—Բնագրում չկայ այս բառը. Ոսկեբերանի հրատարակիչը ուղում է կար-*

դալ յակաճութեենէ «համառութեամբ, վարժութեամբ» (ակաճ բառից)։

ՀԱԿԱՏԵԼ «խորհիլ, խոկալ, զմտաւ ածել, պարուրել». ունին միայն Բառ. երեմ. էջ 172 և ՀՀԲ. անստոյգ բառ։

[ՀԱԿԱՐԱՇ «ընդդէմ, հակառակ» ՅՀ. կթ. Բրս. թղթ. Տոմար. իսկ Հին բռ. հակառաշ «վեճ ընդդէմ կամ հակառակ»։

=Կարծում եմ որ հարակաշ «ընկեր, զուգակից» բառն է, որ յետոյ կորչելով՝ յետիններին մօտ այսպիսի իմաստներ է ստացել։ Սրա համար վկայութեան եմ առնում Ոսկ. եփես. 774.—«Իսկ հակարաշքն ընդ միմեանս խաղաղութիւն ունիցի՞ն և ոչ երբեք»։ ՆՀԲ չունի այս օրինակը, և անշուշտ հասկացուած է «հակառակ». բայց իրապէս նշանակում է «ընկեր, նմաններ»։ Ոսկերերան չափից տար այսչափ անբնական մի հարցում՝ թէ «հակառակորդները իրար հետ հա՞շտ են»։ Բայց կարելի է հարցնել թէ ընկերները հա՞շտ են. և բերած օրինակներն էլ նրան են հայում. այսպէս՝ աւազակներն իրար հետ, ագահը ագահի հետ, երկու գազան իրար հետ, շնացողները իրար հետ են։—Ա.Ճ.]

ՆՀԲ մեկնում է հակ Խարշ։

ՀԱԿԵՏԱՐ «ստահակ». մէկ անգամ ունի Լծ. նար. իբրև մեկնութիւն ստահակ բառի. «Ստահակն՝ հակետարն է»։

ՀԱԿԻՐՃ «համառօտ, կարճառօտ, ամփոփ» Հռ. Բ. 28, Ես. ժ. 22։

ՆՀԲ «համայն կարճ կամ կրճատ»։ Պատահական նմանութիւն ունի պհլ. hakirč «երբեք, երբ և իցէ»։

ՀԱԿԻՑԿ, ի–ա հլ. Նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 183. «Շրթունք իւր որպէս զվարդ փթթեալ՝ յորժամ ի հակուկացն ի դուրս վազէ». կա՛մ նշանակում է «կոկոն» և կամ պէտք է հասկանալ «ծաղկաման, թաղար» (կարդալով բակո՞յկ)։

Այսպէս ունի Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 231։

ՀԱԿՉՆԵԼ «վիճիլ, վիճաբանիլ». ունին միայն Բառ. երեմ. էջ 172 և ՓԲ. անստոյգ բառ, առանց վկայութեան։

ՀԱԿՐ «ըմբոստ, խօսք չլսող, անհնազանդ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գըտնում եմ գործածուած Մծբ. 371. «Սոքա են խրատատեացք հակերք և քսուք խօսիւք»։ Ասորի բնագիրը (հրտր. Graffin 677) ըստ համեմատութեան Վիեննայի միաբան Պ. Էսապալեանի (անձնական) ունի միայն «Սոքա են, (որ) ատեան զյանդիմանութիւն և զսարսափելիս խօսին»։ ՆՀԲ Մծբնացւոյ չիշեալ հատուածը ունի տարբեր ձևով. «Սոքա են խրատատեացք և տողաբանք, հակերգք և քսուք խօսիւք». չիշում է նաև թէ տպագիրն ունի հակերճ, որից երևում է թէ հակերգ բառը իբր «հակառակ երգող»՝ իր սրբագրութիւնն է. բայց Ոսկեդարեան հայերէնում չըկար հակ մասնիկ և առատաւելն կարելի էր ասել հակառակերգք։ Լատդոյնի պէտք կայ ստուգելու համար։

ՀԱՀԱՆԴ «հանդարտ, խաղաղ». միջին հյ. բառ՝ ըստ Նորայր, Բառ. ֆր. 421 բ. որից հաճրնտութեամբ Մմբ. դտ. 60, հաճնտել «խաղաղել» Մխ. բժշ. 96։ Սովորական է արդի գանազան գաւառականներում, ինչպէս՝ Ալշ. Երև. Նբ. Շիր. Վն. և այլն. բայական ձևով ունինք հահանդիլ, հեհեդիլ, ահեդիլ, հարհանդիլ, հերհատալ «հանդարտիլ»։

+ՀԱՂ «անգամ». առանձին և անկախաբար գործածուած ունին Ոսկ. մեկն. ծն. վրք. հց. Բ. 517, 514. որից միւս հաղ «միւս անգամ» Պիտառ. Աթան. էջ 328. միահաղ «միանգամ» Անյ. արիստ. ընտիր հայերէնով՝ միահաղոյն «միանգամայն, միահամուռ» Ոսկ. յհ. ա. 37. Ագաթ. Բուզ. դ. 8. համահաղոյն Ոսկ. ես. հաղ հան զհաղ «գամ քան զգամ, այս անգամը միւս անգամից աւելի» Բուզ. դ. 20. ե. 1։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pel- «զարնել» արմատից. համմտ. լտ. pello «զարնել, ցնցել, վանել», pulsus «զարկ, ցնցում, հարուածը»։ Յաճախ «անգամ» նշանակող բառերը ծագում են «զարկ» նախանշանակութիւնից. համմտ. լտ. du-plex, ումբր. tu-plak, յն. δι-πλαξ «երկիցս, երկու անգամ», որոնք գալիս են «երկու»+plāg, plāq «զարնել» արմատից (տե՛ս լալ), ֆրանս. coup «հարուածը» և à tout coup «ամէն անգամ», tout d'un

coup «մէկ անգամից», արաբ. ضرب ḍarb «հարուած. 2. բազմապատկութիւն», որից հյ. գւռ. դաբրա «անգամ» (Ննխ. Սչ.), դրբին «անգամին» (Երև.), ռուս. разъ «անգամ», բուն. նշ. «հարուած, զարկ» են։ Հնխ. pel- արմատը տալիս է հյ. ճեղ, որ թէև աւանդուած չէ գրաբարի մէջ, բայց պահուած է բարբառներում. նոյն արմատի աստրին ձայնդարձն է *pl̥-, որ տալիս է հյ. հաղ։ Նոյն հնխ. pel- «զարնել» արմատին է կցւում նաև յն. πάλλω «ցնցել», πάλτο «բաղխուել, ընդհարուել» (Ernout-Meillet 714, Pokorny 2, 57, Walde 571)։

Հիւնք. Հեղինէ յատուկ անունից։ Վերի մեկնութիւնը տուաւ Meillet (անձնական)։

Գիր.—Ան. Մշ. հաղ «անգամ», նաև Ալշ. հաղ.—արմատի ճեղ ձայնդարձն են ներկայացնում Ալշ. Մշ. Սչ. ճեղ, Ակն. Ասլ. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. ճեղ, Տփ. ճիղ, Ախց. յէղ, Տիգ. խիղ. *այս բոլորը ունին ազատ և անկախ գործածութիւն, որ գրաբարի մէջ չկայ. ինչ.* աս ճեղու, աճ ճեղուանը, երկու ճեղ, ճեղ մը, մէկ ճեղ, հաղ մ'էլ «մէկ էլ»։

ՀԱՂ «կից, միասին, յար». արմատ առանձին անդործածական, որից կազմուած են՝ հաղորդ «մասնակից, կցորդ» ՍԳր. Փարպ. «մասնակցութիւն» Դիոն. ածայ. հաղորդակից *Իմ. ժը. 9, Բ. պետ. ա. 4. Ոսկ. յհ. բ. 14, 18.* հաղորդել ՍԳր. հաղորդիլ «մասնակից՝ կցորդ լինել» ՍԳր. «զուգիլ, միանալ, մերձաւորիլ» Սիր. ծն. *Ոսկ. յհ. բ. 16* հաղորդակցութիւն *Նաագր.* դիւահաղորդ *Ոսկ. մ. գ. 11.* կենահաղորդ *ՅՀ. կթ.* զուգահաղորդութիւն *Պղատ. օրին.* զուարճահաղորդ *Սանհն.* մասնաւոր կրօնական նշանակութիւն են ստացած՝ հաղորդութիւն «ճաշակ, սրբութիւն» *Մանդ. խոսր.* հաղորդիլ «հաղորդութիւն առնել, ճաշակուիլ» *Եղիշ. Մանդ.* հաղորդաւուրի *Կանոն. ևն։*

Նշխ հաղորդ *մեկնում է* համ *մասնիկով և կամ այլորդ... և կամ աղակից։ Հիւնք.* աղ *բառից* հաղորդ։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 102 հնխ.* alo- *արմատից է հանում, որ գոնում է նաև լտ.* alter «միւսը» *բառի մէջ։*

Գիր.—Պահուած է միայն կրօնական իմաստով. *ինչպէս՝ Ջղ.* հաղորդ՝ութիւն, *Խրբ.* հաղօրդ՝, *Ախց. Կր. Սչ.* հաղօրթ, *Ննխ.* հաղօրթ, հաղօշթ, *Շմ.* հաղօրտութուն, *Ագլ. Տփ.* հա՛ղուրթ, *Ակն.* հաղվօրթ, *Ռ.* խաղօրթութիւն, *Պլ.* խավօրթ, *Կմ.* խօվէօրթ *ևն. որոնցից էլ* հաղորդել, հաղորդուիլ, անհաղորդ։

Փոխ.—*Ուտ.* հաղօրթ–բաէուն «հաղորդութիւն» (կրօնական բառ)։

ՀԱՂԹ, ի հլ. (գործածուած է անհզաբար) «որոգայթ, թակարդ. 2. թակարդը ձգելու չուան» Առակ. զ. 5, իթ. 5. Ոսկ. մտթ. և հս. 437. Սեբեր. 60. աստում է նաև խաղրի *Ոսկ. ա. տիմ. ը. և մ. բ. 21. Մաշկ. 36ա.* որից էլ խաղրակել «թակարդի մէջ բռնել, վտանգել, նեղել» *Ոսկ. տիմ. էջ 61. Կիւրղ. ի կոյսն. Զքր. կթ. Ճառընտ. (ՀԱ 1909, 216)։ Գառն. 38։*

=*Ասոր. և արամ.* ḥawlā «չուան, լար» *բառից. ըստ այսմ հին ձևն է* խաղր (<*խարթ), *որից յառաջացել է* հաղր *(համմտ.* խաղող>հաղող, խաղ>հաղ): *Հառը բնիկ սեմական է, որի հետ նոյն են արաբ.* حبل ḥabl «չուան. 2. պնդել, կապել», حبالة ḥibāla «թակարդ», *եթովպ.* ሐብል ḥabl «չուան», ḥabel «թակարդի չուան», *եբր.* חבל xebel «չուան, թակարդ», *աստւր.* ḥābilu «բռնող», naḥbalu «թակարդի չուան»։ —*Հիւրշ. 308։*

Նշխ լծ. խիղր: *Հիւնք.* աղր *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Müller WZKM 7, 381։ *Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 760 և 1405) արաբ.* խիլար «ճանկ» *բառին կցելով՝ զուր է կարծում, որ* հաղր *իսկապէս նշանակում է «ճանկ», և պիտակ առմամբ եղել է յետոյ «թակարդ»։*

Գիր.—*Խրբ.* խախր՝ «խեղդ, այն է՝ լարով կամ չուանով պատրաստուած հանգոյց, որի մի ծայրից քաշելով՝ մէջն ընկած կենդանին խեղդում են». նոյն են նաև Ալշ. Արբ. Բլ. Մշ. խար՝ «հեշտ բացուող կապ կամ հանգոյց», որից օձխար Ալշ. Բլ. «աւելի դժուար բացուող հանգոյց»։

ՀԱՂԻԿԱ. «թեփից և կեղևից մաքրուած հնտեղէն». Սիր. երաշտ. 204 (Յամաք է մի-

այն ընտրել զմաքրագոյնն ի հաղիկա կամ ի ծնունդս ցորենոյ։ Ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. ἄλιξ, ἄλικος «ցորենի խաշու», լտ. alica, halica *«մի տեսակ ցորեն, épeautre, speltgraupen. 2. սոյն ցորենով խաշու»։—Հիւբշ. 360։*

ՆՀԲ լծ. արաբ. ḥalīǰ *«վուշ կամ բամբակ մաքրեալ ի սերմանց»։*

***ՀԱՃ,** n հլ. «հաճեալ, հաշտ, բարեհամբոյր» Բ. մակ. բ 23. Ոսկ. ես. Մամբր. «հաճոյական բան, հաճոյք» Ուռհ. «հաճութիւն» կիւրղ. եւ. որից հաճիլ «հաւանիլ, ախորժիլ, սիրել, հաշտուիլ» ՍԳր. հաճել «սիրաը շահիլ» ՍԳր. Կոչ. Եւս. պտմ. Ագաթ. Ոսկ. ես. «մեծահոգութեամբ ներել» Ոսկ. Հռոմ. 86. հաճոյ ՍԳր. Ոսկ. հաճոյք Սղ. ճհ. 4. հաճոյակատար Ագաթ. հաճեցուցիչ Ագաթ. հաճոյութիւն Ոսկ. գաղ. Եփր. զևտ. հաճութիւն ՍԳր. դժուարահաճ Փիլ. բարեհաճոյ Փիլ. տհաճ Ոսկ. ես. տհաճել Ոսկ. հփես. աներհաճ Փարպ. խոր. մարդահաճոյ ՍԳր. Եւս. պտմ. մտահաճոյ Կոչ. հաճակից Իրեն. հերձ. 95, 102. իւիհաճաճ խոր. կամահաճոյ Մաշտ. բազմահաճոյ Ոսկ. սղ. հաճոյախօսութիւն (նոր բառ) ևն։*

=Իրան. hač- *ձևից փոխառեալ. համմտ. դնդ.* hač-, *պհլ.* sačītan, *պրս.* سزیدن sazīdan, *արմատի բուն նշանակութիւնն է «հետևիլ», ինչպես ունին յն.* ἕπομαι, *լտ.* sequor, *հիւլ.* sechim, sechur, *լիթ.* sekù, *սանս.* sáčatē *ցեղակիցները։ Այս նշանակութիւնը հետզհետե զարգանալով՝ դարձել է «յարիլ, յարմարիլ, պատշաճիլ, վայլել, սազիլ», և վերջապէս՝ «դուր գալ, ախորժիլ». այսպէս՝ դնդ.* hačaintē *«պատշաճում են, համաձայն են» (համմտ.* noit daenâ noiṭ urvąnō hačaintē *հատուածի մէջ՝ նասնա խտ. 2). պրս.* sazīdan *«արժանանալ»,* sazā *«արժանի, պատշաճ, վայելուչ», պհլ.* sačītan *«արժանի լինել»,* sačāk *«արժանաւոր», և* paiti-*>*pat- *նախամասնիկով՝* pat-sač, *որից հյ. *պատսաճ>պատշաճ «յարմար, վայելուչ». յն.* ἕπω *«հետևիլ», բայց նաև «պատշաճիլ, յարմարիլ, համաձայն լինել»։ Հայերէնի մէջ էլ կայ «համաձայն, հաւան» իմաստը. համմտ. Հաճք և հաւանք և միաբանք. Մամբր. Հաճել և հաւանեցուցանել զմարդիկ. Եւս. պտմ. բ. 10։ Այս «պատշաճիլ» իմաստից ածանցւում է «ախորժիլ, դուր գալ», որ թէև չէ՛ աւանդուած իրանեան գրականութեան մէջ, բայց կարող էր գոյութիւն ունեցած լինել և կամ յառաջացած է հայերէնում. համմտ. գերմ.* behagen *«յարմարիլ, պատշաճիլ, ախորժիլ, հաճիլ»։*

ՆՀԲ լծ. Բրք. հազ (իմա՛ արաբ. حظّ ḥazz *«ախորժիլ»)։ Բագրատունի, Քերակ. զարգաց. էջ 651 լծ. հյ. հաշտ։ Հիմնք. հաշել բայից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *10, 80 և* JAs. *13 (1909), 314։ Մատ. Լազ. քերակ. էջ 230 լազ. խաձի «լաւ, հաճելի» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի վրաց. սաաջո «խնդիրք»։*

***ՀԱՃ** «մի տեսակ փուշ, Բրք. ղարա հաճատաղ, պրս. խարտարու» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1606։*

=Արաբ. حاج ḥāj, *որ կամուս, Բրք. Բրգմ. Ա. 387 մեկնում է «ուղտափուշ», իսկ* Steinschneider WZKM *12, 1* «Scheha romanum, species cuscutae (absinthum)»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ՀԱՃԱՂ *«լուացած, մաքուր մետաքս». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վրդ. առ. 249 (այլ ձ. հաջալի, կայ նաև հաշախ Վրդ. առ. I. էջ 230)։—Համմտ. նաև հաջաղ։*

Մատ. Վրդ. առ. I, էջ 44 արաբ. خزّ xazz, *պրս.* کز gaz *«մետաքս» + պրս.* آل āl *«կարմիր» բառերից։ Նոյն,* Тексты и Раз. по Кавк. фил. *հտ. 1, էջ 115 (Ленингр. 1925) ասոր.* ܩܙ qaz, *վրաց.* ღაჟ ղ՛աճ *են բառերի հետ։*

ՀԱՃԱՐ, n հլ. *«մի տեսակ հացարոյս է». ՍԳր.*

=Թերևս կովկասեան լեզուներից փոխառեալ բառ. համմտ. լազ. ճուարի, վրաց. ჭვავი ճվավի *«հաճար», վրաց. ղզվարի, մինգ. ղչուչ «վարսակ», ափխազ. աճա, աճարած «ցորենեղէն», արազ.* haẑrrü, *շապս.* haǰirri *«ա-*

լիւր», վար. աճի, կուր. աճէ, կայ. աճի «ցորեննեղէն»։—Աճ.

Lag. Urgesch. 486 աշարայ բառի հետ čar արմատից։

ԳԻՒ.—Գոր. Ղրբ. հա՛ճար, Ծրև. ա՛ճար, Ալշ. աճառ «հաճար». Տփ. ա՛ճար «հատիկ». որից նաև Ղրբ. հաճարիճ ածել «շատախօսել, շաղփաղփել». Համմտ. Ծրև. ձաւար աճել «դատարկաբանել»։

ՓՈԽ.—Վրաց. აჭარა աճառա «ձաւար»։

ՀԱՃԱՐ. առանձին չէ գործածուած. բայց սրանից ունինք հաճարի «անտառային մի մեծ ծառ, hêtre» Մխ. առկ. Խոր. աշխ. հաճարուկ «մի տեսակ ծառ» Ագաթ. հաճարածառ «հաճարի» Խոր. աշխ. 611. առանց ն նախաձայնի՝ աճարի «եղևնափայտի կամ մայր փայտի մի տեսակ» Պղատ. օրին. 118 (տպ. հաճարի, բստ ՆՀՓ աճարի)։

ԳԻՒ.—Շշ. ա՛ճար «անտառային ուտելի մի պտուղ է», Լ. Ղզ. Ղբ. աճարի, աճարի, Ղրբ. Լ. հաճարկի, Համշ. աժրի «անտառային մի մեծ ծառ. fagus silvaticus, ռուս. букъ». վերջին ձևը բացատրելի է իբր հաճարի>աճարի>աճրի>աժրի։

ՀԱՃԼԻՔ «հարս ու փեսի նստած գահաւորակը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրւում եմ գործածուած Տաթև. ամ. 202. «Յորժամ արտաքս ելանեն յհկեղեցւոյն հարսն լինի ի ձախ կողմն փեսային, և յորժամ նըստին ի բարձր տեղւոջն՝ զոր կոչեն թախտ կամ հաճլէք, փոխէ և յաջ կողմն նստուցանէ զհարսն»։

Հաճկիրակ տե՛ս Կակժիրակ։

ՀԱՄ, ո հլ. «համ, ճաշակ. 2. ախորժելի համ, անուշութիւն, քաղցրութիւն. 3. ախորժելիութիւն (որևէ առարկայի, զբաղմունքի, խօսքի, գրքի են)» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 2, 8. «չափաւորութիւն, բարեկարգութիւն, կարգ-կանոն» Ոսկ. մ. ա. 21. եփես. 815, տիտ. եբր. որից ունինք՝ համեղ Պիտ. անհամ վհցօր. Եզն. Ոսկ. համեղանամ Նար. անհամիլ «համը կորցնել» ՍԳր. Ոսկ. անհամոհոսել վրք. հց. համահամ «անուշահամ բան» Մանդ. ՅՃխ. էջ 69, 108, 131. համտեսել «համը նայիլ» Վստկ. հաղցրանամ Ագաթ. բարեհամ Խոր. սրբահամ Ագաթ. բազմահամ վրք. հց. գիհեհամ Զքր. կթ. երկհամ Նիւս. երգ. Ծրգն. մաթ. 417. դառնահամ Շնորհ. դժուարահամութիւն վրք. հց. եղեռնահամ Ճառընտ. ժանգահամ Նչ. եզեկ. ժանտահամ Երեմ. իդ. 2. լեղահամ Կոչ. Մծբ. խանձրահամ Վստկ. ծծմբահամ Մխ. երեմ. կրահամ Մխ. երեմ. ևն։ Արմատի «չափաւորութիւն» նշանակութիւնից են ածանցւում համոյ «կանոնաւոր, չափաւոր բան» Ոսկ. եբր. համեստ «պարկեշտ, չափաւոր, հեզ, հանդարտաբարոյ» Փիլ. Պիտ. Խոր. (կազմուած է -եստ մասնիկով, ինչպէս ունինք զգաստ. նոյնը գաւառականներում -աւոր մասնիկով տալիս է համաւոր «հեզ, խոնարհ, խելօք» Ախք. Պլ. վն. Ատ. Տփ). համեստաբարոյ Մաշտ. 705. համեստափայլ, անհամեստութիւն, անհամեստաբար (նոր բառեր). իմաստի զարգացման համար համմտ. լտ. sapere «համ ունենալ. 2. ըմբռնել, հասկանալ, գիտենալ»։

ԴԴ պրս. فام fām «երանգ, որակութիւն, համ» բառից։ ՆՀՓ համ «չափաւորութիւն» ձևի դէմ դնում է «որպէս ոմկ. կեամ, կէմ, լկամ, սանձ», իսկ ՋՓ մինչև անգամ իբրև առանձին բառ նշանակում է «համ, կեամ, լկամ, սանձ»։ Ջուբինով համ «ճաշակ» բառի հետ համեմատում է վրաց. գեմո, գեմովնեբա «ճաշակ, համ», գեմեբա «ճաշակել, ճաշակելիք, ճաշակելաց զգայարան», որի դէմ Brosset, JAs. 1834, 369—405 դրած է պրս. kām «կամք, քիմք»։ Canini, Et. étym. 31 համ տես համեմ։ Հինք. համ, համեղ, համեմ հանում է յն. ἄμωμον բառից։ Lidén, Arm. stud. 67 իբր բնիկ հայ կցում է լտ. sapere «ճաշակել», sapor «համ», մրգ. ent-seben «համտեսել», հրգ. saf «հիւթ» բառերի հետ. հայը դնում է sap-mo նախաձևից, որ կազմուած է հնխ. sap- արմատից. mo մասնիկով։ (Այս մեկնութիւնը ընդունում են Walde 676 և Pokorny 2, 45. բայց հնխ. sap-mo պիտի տար հյ. *հօմ): Charpentier IF 25, 250 բուն նշանակութիւնը դնելով «հիւթ»՝ հանում է հնխ. pō «խըմել» արմատից, -mo մասնիկով։

*ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. համ. Ասլ. հըմ, Տգ. հում, Ջթ. հօմ, հում, Հճ. Հմշ. Սվեդ. հօմ, Մկ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. խամ, Ագլ. հում: Նոր բառեր են համարար, համատար, համել, համկից, համտես, համով, երկուհամի, համուխլ:

ՓՈԽ.—Վրաց. ამო ամո «հաճելի», ნაამე սիամե, ნაამოვნე սիամովնե, ნაამოვნება սիամովնեբա «հաճոյք, քաղցրութիւն, շընորհք», უამო ուամո, უამი ուամի «անդուրեկան», ნაამო սաամո «սիրուն, հաճելի, գեղեցիկ», ნაამოდ սաամոդ «ախորժելի կերպով», ნაამური սաամուրի «ախորժելի», ამოდ ամոդ «հաճոյ, մեղմով, կամաց», լազ. amót amót «կամաց կամաց». վերջինները փոխաբերական համ «չափաւորութիւն» բառից են ածանցուած:

ՀԱՄ, ի–ա հլ. (գործածուած է միայն անեզաբար) «արական կամ իգական անդամ» Փիլ. այլաբ. էջ 108 (իբր յն. ἔτρον), Տիմոթ. կուզ, էջ 292, Եղիշ. խաչել. էջ 230, 34. կթ. 331 (սեռ. համոյն). Անյ. հց. իմ.:

ՆՀԲ համարում է համ «ճաշակ, ախորժանք» բառի մէկ նոր առումը՝ իբր ընդունարան զգալի հեշտութեան և ախորժանաց, որից հանում է նաև հյ. ամոլ «անծնունդ» և թրք. (իմա՛ արաբ.) hāmila «յղի»: Նոյն կարծիքն ունի նաև Lidén, Arm. Stud. 67, որ այս փոխաբերութիւնը մինչև նախալեզուն հասցնելով՝ համմ բառի հետ է համեմատում սանս. sápa «առնի անդամ, կանացի ամօթոյք», լտ. sōpiō «առնի», prosapia «սերունդ, ծնունդ» և բոլորը միասին կցում է համ «ճաշակ»=լտ. sapere «ճաշակել, համն առնել» են արմատին: (Յիշում է Walde 618 կասկածով): Charpentier IF 25, 250 լտ. pēnis, յն. πέος ձևերի հետ: Պատահական նմանութիւն ունին արաբ. هن han «կանացի անդամ» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 720), նոյնպէս և թրք. آم am «կանացի անդամ», որին ցեղակից է դնում Թիրեաքեան, Բազմ. 1913, 341:

*ՀԱՄ–. շատ գործածական նախամասնիկ. ունի հետևեալ նշանակութիւնները.

1. «նման, նոյն, միևնոյն», որից համաբնեայ «նոյն կամ նման բնութեամբ» Ծն. համագործ «գործակից, միասին գործող» Ագաթ. համազգի «նոյն ցեղից» Ծն. չհամազգի Ծն. համազուն «նոյն ազգից» Ոսկ. մ. բ. 34. համազօր Ագաթ. համալեզու Եւս. քր. համախոհ Ոսկ. փիլիպ. համախօս Եւս. քր. համակամ Ագաթ. Սեբեր. համակարիճ Ա. պետ. գ. 8. համակերպ Ոսկ. ես. համահաւանդեր Բուզ. համամայր Ծն. խգ. 29 Եւս. քր. համամիտ Ա. պետ. գ. 8. համանման Ոսկ. յհ. ա. 9. համանշան Կոչ. համանուն Եւս. քր. համաշունչ Փիլիպ. բ. 2, 20 համավկայ Եւս. քր. համատիճ Եւս. քր. համարուեստ Գծ. իր. 3.—զարմանալի ձևով է՝ միաեամ Ոսկ. յհ. ա. 2.—շատ աւելի յաճախադէպ գործածութիւն ունի յեռոսկեդարեան գրականութեան մէջ, ուր շատ բառեր ուղղակի թարգմանուած են յունարէնից. օր. համապարիսպ=յն. ὁμότοιχος, համապատիւ=յն. ὁμότιμος և այլն: Քիչ անդամ գործածւում է առանց յօդակապի. այսպէս՝ համբուն Կիւրղ. գնձ. համհօրեաց Ղևտ. ժը. 11. համմօրեայ Մխ. դտ. համնշան Կոչ:—Նոր գրականում այս մասնիկով կազմուած բառերը խիստ շատ են. ինչ. համագիտացի, համազգեստ, համագործակցութիւն, համակարծիք, համակերպուիլ, համակերպութիւն, համակիր, համակրական, համակրելի, համակրութիւն, համապատասխան, համապատասխանել, համապատասխանութիւն, համաքաղաքացի, համերկրացի և այլն:

2. «Համայն, ամէն կողմ, բոլորը, ամբողջ». որից համագունդ «ամբողջ գունդով» Ագաթ. վեցօր. Ծն. համակերտ «ամբողջ արարածները» Ծն. համակորոյս Ոսկ. մ. ա. 20. համահաղոյն «բոլորը մէկ անգամից» Ոսկ. ես. համաշխարհ Բ. մակ. գ. 18. Կորիւն. համաշխարհագործ Ագաթ. համաշխարհական Ագաթ. Սեբեր. Ոսկ. ես. Կորիւն. համաջինջ Եւս. քր. համաջունջ Ոսկ. մ. ա. 7. համատարած Եւս. քր. Ոսկ. յհ. ա. 20. համօրէն ՍԳր. Եղիշ. աւելի սովորական է յետնաբար. ինչ. համեռամ, համասփիւռ, հա-

մարարիչ, համաշարք, համակործան, համագումար, համահաւաք *ևն. նոր գրականում՝* համաշխարհային, համերգ, համալսարանական, համալսարանաւարտ, համազարկ, համահայաստանեան, համառուսական *և այլն։*

3. «Ամբողջովին, բոլորովին, շատ, յոյժ» (աստիճական կազմելու համար). որից՝ համալսել *«մօտից և լաւ լսել» Շնորհ. բարձր.* համաշար *«շատ չար» Լմբ. սղ.* համապայծառ *«բոլորովին՝ համակ պայծառ» Ագաթ. Ոսկ. փիլիպ.* համամաբեռնի *«ամենամաքուր» Շնորհ. տաղ.* համառձակ *«աներկիւղ, ազատ» ՍԳր. Ոսկ. ես. և մաթ. Եւս. քր.* համառձակել *ՍԳր. Եւս. պտմ։*

4. Գործածւում է նաև իբրև թարմատար. օր. համբառնալ *ՍԳր.* համբառնումն *Սղ. ճխ. 2.* համբերել *ՍԳր. Ոսկ. Եփր. ծն.* համբերութիւն *ՍԳր.։*

Նոյն համ- *մասնիկի միւս ձևերն են՝*

Բ. Ամ-, *որ կրճատուած է* համ- *ձևից և ունի միևնոյն նշանակութիւնները. ինչ.* ամբառնալ *ՍԳր.* ամբառնումն *Խոր.* ամոխախ *կամ* ամողխախ *«աննդակից» Ասկ. մ. ա. 16, գաղ. և եբր.* ամփոփ *Մծբ. Եզն. Եփր. ծն. Կոչ. Ոսկ. փիլ. տիմ. (պարզ արմատն է* *փոփ, *որից և* սփոփել)։

Գ. Հան-, *որից կազմուած են՝* հանդէպ *Սգր. Եւս. քր. Եզն. Եփր. Նչ.* հանդիպիլ *ՍԳր. Ոսկ.* հանդիպութիւն *Վեցօր.* հանգէտ *«նման, նոյն» Փիլ. Պորփ. (որից* հանգիտապատիւ *Բ. պետ. ա. 1, Ոսկ. ես. մ. ա. 15, յհ. բ. 17, գաղ. Սեբեր.* հանգիտակ *Խոր.),* հանուր *(-նրոյ, -նուրբ, -նուրք, -նուրց) «բոլոր, ամէն տեղ» Սահմ. Խոր.* հանրական *ՅՀ. իմ.* ընդհանուր *Եզն.։*

Դ. Ան-, *որ նախորդի կրճատ ձևն է և որից ունինք* անդորր *(տե՛ս այս բառը)։*

Ե. Հոմ- *«նոյն, նման, ամբողջ». գործածւում է միայն յատուկ հոգևոր մատենագրութեան մէջ. ինչ.* հոմիշխան *Խոր.* հոմերամ *Պիտ.* հոմազգի *Նչ. Եզեկ.* հոմածին *Նար.* հոմանուն *Խոր. ՅՀ. կք.* հոմասեռ *Նար. Սահմ.* հոմատոհմ *Կղկնտ.* հոմատեսակ *ՅՀ. իմ.* հոմացեղ *Պիտ.* հոմահայր *Պզատ. Նաև* հոմիլ *«խմբուիլ, միանալ» Սանահն.* զանհոմիլ *«միաւորիլ, պատշաճիլ» Հին բռ.* զանհոմութիւն *Հին բռ.* միահոմիլ *«յարակցել, հաւաքել» Ագաթ. (?) Քեր. քերթ. Յիշ. ոսկ.* պարահոմիլ *Քեր. քերթ. ևն։ (Տե՛ս և* համահոմ՝ հով *բառի տակ)։*

=Իրանեանից փոխառեալ բառ է. համմտ. գնդ. hama-, hāma- *«նոյն, նման, ամբողջ»,* hâm, haṃ, haṇ *«միասին, միատեղ», հպրս.* hama-, *պհլ. պազ.* ham, *պրս.* ham-, *քրդ.* hem-, hew-, *օսս.* äm-, än-, *բելուճ.* ham-, haw- *ևն (Horn § 1102). օրինակ՝ 1. հպրս.* hamapitar- *«համահայր»,* hamātar- *«համամայր», պազ.* hambun *«համաբուն»,* hamzōr *«համազօր»* hamtuxma *«համաառհմ», պհլ.* hamkāmakīh *«համակամութիւն», պրս.* hamšahrī *«համաշխարհիկ». սրանց մէջ մասնիկն ունի «նոյն, նման» նշանակութիւնը.—2. գնդ.* haṃbar-, haṃbāray- *«հետը միասին կրել, բերել»,* haṃpatana- *«միասին խմբուիլ՝ հաւաքուիլը»,* hanǰamana- *«համախմբութիւն»,* handarəza- *«սրբցակ», պազ.* hanǰaman=*պրս.* anǰuman *«ժողով», պհլ.* hampursakīh *«խօսակցութիւն». սրանց մէջ մասնիկն ունի «միասին» նշանակութիւնը.— 3. գնդ.* hamōxšaθra- *«միահեծան տէրը, ամենիշխան»,* hamaēnijan- *«համանուաճ, ամէնքին նուաճող», պազ.* hamdānešnī *«կատարեալ և ընդհանուր գիտութիւն», պրս.* hamadān *«ամենագէտ» ևն. սրանց մէջ մասնիկը ունի «ամբողջ, ընդհանուր» նշանակութիւնը։ — Այս իրանեան բառերը ծագում են հնխ.* sem- *«մէկ, միակ» արմատից, որի ձայնդարձներն են* som, sōm, sṃ, sṃm, sm. *այս բառերը նշանակում էին նաև «միասին». համմտ. արդի հյ. մէկ՝ կրկին նշանակութեամբ. ինչպէս՝ երկուսը մէկ են «երկուսն էլ նոյն են», երկուսը մէկ «երկուսն էլ միասին»։ Ցեղակից լեզուների մէջ նոյն արմատներից ունինք՝ սանս.* samá- *«նոյն»,* samám *«միասին»,* simá- *«իւրաքանչիւր», յն.* ἁμά *«միասին, իսկոյն»,* ὁμαλός *«հարթ, հաւասար, նման, համաձայն»,* ἀμᾶσθαι *«հաւաքել»,* ὁμός *«նման, հասարակաց»,* ὁμοῦ *«միասին, մէկտեղ»,* ἁμῆ *«որևէ ձևով»,* ἀμόθεν *«որևէ տեղից»,* ὁμο- *«համա-» (մասնիկ), լտ.* similis

«նման», simul «իսկոյն», simplex «պարզ», sem-per «միշտ, շարունակ», գոթ. sama «նոյն», sums «մի, մի ոմն», sama-kuns «համացեղ», samaþ «միասին», հբգ. samo «նոյն», zisamene=գերմ. zusammen «միասին», հսլ. samŭ «նոյն ինքն», sa-sědŭ «հարևան (միասին նստող)», հպրուս. sen «միասին», լիթ. sán-, są-, լեթթ. suo- (իբր մասնիկ), հիռլ. som «նոյն», samail «նմանութիւն» ևն ևն (Boisacq *231, 702*, Walde *712*, Trautmann *249* և մանաւանդ Pokorny *2, 488—492*)։ Հայերէնը փոխառեալ է իրանեանից՝ մասնաւորապէս արմատի ա (փխ. հնխ. e) ձայնի և ընդհանրապէս ձևական նմանութեան պատճառաւ. այսպէս՝ հյ. համ-<իրան. ham-, համա-<hama-, հան-<han-, ան-<an-, ամ-<am-, հմմտ. նաև համայն, համակ, համագունակ, համակդեն, հանդէս ևն (տե՛ս այս բառերը առանձին)։ Յետոսկզբեան շրջանին՝ յունաբան հեղինակների ձեռքով՝ յունարէն ὁμο- մասնիկի վրայից ձևուած է հյ. նոմ-։—Հիւբշ. *174—7*։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ կցելով պրս. հէմ ձևին։ ՆՀԲ լծ. բրք. պրս. հէմ, յն. αμα, ομου, յորմէ լտ. սի՛մուլ ևն։ Peterm. 26, 184, 256 պրս. ham, սանս. sam, լտ. cum, con: — Windisch. *22* սանս. sam, sama: Böttich. ZDMG *1850, 357*, Arica *80, 331*, Justi, Zen dsp. *320*, Lag. Urgesch. *85* սանս. sam, գնդ. ham: Մորթման ZDMG *26, 591* պրս. hama և բևեռ. umu-, որ գտնում է umuvadiniçi «համագունդ» բառի մէջ։ Տէրվ. տե՛ս համակ։ Brugmann II² *2, 798* ամ-բառնամ, համ-բերեմ բառերի մէջ ամ-, համ- նախամասնիկը բաժանելով վերիններից, կցում է իբր բնիկ հայ՝ հնխ. an, anō>գնդ. ana, յն. ἄνα ևն ձևին։ (Նոյնը տե՛ս Pokorny *1, 58*)։

ԳԻՒ.—Անկախ գոյութիւն չունի, բայց պահուած է մի քանի ածանցների սկիզբը. այսպէս՝ համբերել (Սչ. համբ'երել, Ջղ. համբ'երել, խամբ'երել, Ալշ. համբ'էրել, Սեբ. համբ'էրել, Խրբ. համբ'էրիլ, Երև. Նախ. Պլ. Ռ. համփէրել, Ասլ. հըմփէրել, Տիգ. հոմփէրել, Ադլ. Շմ. համփէրիլ, Ախց. համփիրել, Տփ. համփի՛րիլ, Նախ. (գիւղերը) համփրէլ, Ղրբ. համփէ՛րիլ, Դոր. համփո՛րէլ), համառձակ (Պլ. Սչ. համարցագ, Տփ. համարցակ), համբարձում (տօնը կամ յատուկ անուն)։

Համագունակ տե՛ս Հանգոյն։

ՀԱՄԱԴԱՄ, ի–ա հլ. «քաղցրահամ, համեղ, անուշ» Պիտ. փիլ. Միսայէլ խչ. Վահր. յար. «համեղ ըմպելիք և կերակուր» Ոսկ. մաթ. Գ. *69*, վեցօր. *24* (տպ. համ ազդումն), վրք. հց. լմբ. Գր. հր. «հեշտութիւն, փափկութիւն» Եւագր։ Այս նոյն բառից է կազմուած և այլաձևուած համադաւդնակ «խորտկաց համեղութիւն» Բառ. երեմ. *172*։

ՆՀԲ «իբր կրկնութիւն ձայնիս համ, որպէս և եբր. טעם tā'am է համ կամ ճաշակ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. *213* պրս. ham-dam «զուգայարմար»։

ՀԱՄԱԴԵՍ «ոսոխ, հակառակորդ» Մագ. գամագտ. գրուած է նաև համդեռ, համբդեռ. նորագիւտ բառ, որ այսպէս է մեկնում Մէնէվիշ. ՀԱ 1911, *389—390*։ Երևի նոյն բառն է, որ Բառ. երեմ. էջ *173* անիմաստ կերպով իրար յետևից գրում է. «Համ. դէտ կամ գէտ» և «Համ. գեռ կամ տէգ»։

Համալուն տե՛ս Համալօն։

ՀԱՄԱԿ «գորշախայտ գոյնով» Մն. լ. *32, 35*. Կիւրղ. ծն. (ՋՔ մեկնում է «միագոյն»)։

ՆՀԲ եբր. הום xūm «սև» բառի հետ։

*ՀԱՄԱԿ «բոլոր, բոլորովին, ամբողջ, ամբողջովին» ՍԳր. Եւս. քր. «միշտ, ամէն ժամանակ, յարաժամ» Ոսկ. մաթ. և եբր. Փարպ. որից համակել «ամբողջովին՝ բոլորովին պատել» Ոսկ. ես. համակիլ «բոլորովին պատիլ, թաթախուիլ, մալակոնիլ» Ոսկ. Փարպ. համակակոյր «բոլորովին կոյր», համակակոր «բոլորովին գլխակոր». երկուսն էլ միայն ԱԲ։

=Պհլ. hamāk «ամբողջ, ամբողջապէս, բոլոր», մանիք. պհլ. המאג hamāg (Salemann, Manichäische Stud. ЗАН *8, 84*), բելուճ. hamak, hamuk, hama «բոլոր, իւրաքանչիւր», պազ. hamā, պրս. همه hama «բոլոր, ամէնքը», همگی hamagī «բովանդակ» (Horn § *1103*). աւելի ընդարձակ տե՛ս Համ.։—Հիւբշ. *177*։

ՆՀԲ «համայն համօրէն»։ Ուղիղ մեկնեց նախ Spiegel, Huzw. Gram. *164, 190*։ Նոյնը Müller SWAW *38, 572* ևն, Justi, Zendspr. *320*։ Տէրվ. Նախալ. *122* հնխ. sama «նոյն, բոլոր» ձևի տակ է դնում սանս. sama, գնդ. hama, յն. ὁμός, հսլ. samŭ, գոթ. sama, հայ. համա-. Նաև համակ, պրս. hama, համայն, պրս. hamīn: Հիւնք. պրս. հէմէկի։

***ՀԱՄԱԿԴԵՆ** (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «զրադաշտական աստուածաբան, այսինքն կրօնի ամբողջ վարդապետութիւնը լաւ ուսած» Եղիշ. ը. էջ *112, 123*. Արծր. «հաւատակից, կրօնակից» Եղիշ.։

=Պհլ. *hamākdēn «համակ դինը՝ ամբողջ կրօնը դիտցող» բառից, որ աւանդուած չէ իրանեան գրականութեան մէջ. բայց կայ պհլ. hamāk dēn, մանիք. պհլ. hāmāg dīn (Salemann, Manichäische Stud. ЗАН *8, 81*) «ամբողջ կրօնական վարդապետութիւնը, համակ դինը»։—Հիւբշ. *177*։

Թովմա Արծրունի (հրատր. Պատկ. էջ *28*) մեկնում է «Անուանէին զինքեանս համակդենս, այսինքն ամենագէտ ի հաւատ կրակի»։ Հին բռ. մեկնում է «ամենահաւատ կամ բոլորից ուսուցիչ»։ ՆՀԲ Արծրունու բացատրութիւնից հանելով մեկնում է պրս. hamadān «ամենագէտ»։ Lag. Symmicta *48, 28* պրս. hamadīn։ Վերի մեկնութիւնը տուաւ Հիւբշ. Pers. Stud. էջ *244*։

Համահարզ տե՛ս Համհարզ։

***ՀԱՄԱՀԻՄ** «մի տեսակ բոյս է. ամիրիշխան, ընտանի ռեհան» Բժշ. ունի միայն Հայբուս. § *1611*։

=Արաբ. حماحم ḥamāḥim حماحيم ḥamāḥīm, որ և حمحيم ḥamḥīm (Steinschneider WZKM *12, 12*), حمام ḥamām (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. *436*) նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § *83*։

***ՀԱՄԱՄԱ** կամ **ՀԱՄԱՄԻ** «աղաւնաբոտ, աղաւնիճ, լտ. verbena» Բժշ. վատկ. *100*. ունի միայն ՀԲուս. § *1612*. ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Seidel, հրատր. Մխիթ. Հեր. § *325*։

=Արաբ. حمامة hamāma «աղաւնիճ», որ ծագում է նոյն բառի «աղաւնի» նշանակութիւնից. իմաստի զարգացման համար հմմտ. Բրք. كوكرچين اوتى gügerčin otə=յն. περιστερεών և հյ. աղաւնիճ կամ աղաւնաբոտ։ Արաբերէնից են փոխառեալ նաև ասոր. ܚܡܡܐ xamamā, յն. ἄμωμον, լտ. amomum։—Հիւբշ. *269*։

Ուղիղ մեկնեց նախ Lag. Ցն. Ագաթ. էջ *154*։ Որից յետոյ է ՀԲուս. § *50*։

***ՀԱՄԱՅՆ**, ի հլ. «ամբողջ, բովանդակ, բոլոր, ամէնքը» Պիտ. «բոլորովին» Նար. «համանգամայն, ամբողջովին, միանգամայն» Խոր. Պիտ. Սահմ. «ի վերայ այսր ամենայնի, բայց դեռ» Եղն. Փարպ. փիլ. որից համայնաջինջ Պիտ. Նար. համայնապատում Նար. համայնազնեան Տաղ. համայնացում (նոր բառ)։

=Իրան. hama- «ամբողջ»>հյ. համ- բառից, -այն մասնիկով. հմմտ. մի-այն. աւելի ընդարձակ տե՛ս Համ։—Հիւբշ. *176*։

ԳԴ պրս. hama ձևից է հանում ամենայն և համայն։ ՆՀԲ «ամենայն համօրէն»։ Մորթման ZDMG *26, 545* սրա հետ նոյն է դնում ամենայն, ամէն, լտ. omnis, պրս. hama, բևեռ. kamna, kamnae, kammanada։ Տէրվ. Նախալ. *122* պրս. hamīn. տե՛ս և համակ։ Հիւնք. նոյն ընդ ամէն, ամեն-։ Մառ. Грам. др. арм. *156* պրս. hama։ Հիւբշ. *176* համ- մասնիկի տակ յիշում է՝ առանց -այն վերջաւորութիւնը բացատրելու։ Թիրեաքեան, Կարնամակ, էջ *15* ծան. պհլ. hamōin «համայն, ամբողջ» բառից, որ գործածուած է Կարնամակ, է. 6 asparān-i-hamōin «ասպաւորք համայն». (բայց պհլ. hamōin պիտի տար հյ. *համոյն)։

***ՀԱՄԱՇԱՀԻՒ** «նոյն քաղաքից, համաքաղաքացի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Այրիվ. *18* ա «Առ Գրիգոր ընկեր իւր համաշահրի»։

=Պրս. hamšahrī նոյն նշ. կազմուած է

ham «նոյն» մասնիկով šahr «քաղաք» բառից։—Աճ.

ՀԱՄԱՇԵԱԿ «համազգի, միազգի». ունի միայն Բառ. երեմ. էջ 173։

=Թուի թէ շ և զ տառերի վրիպակով՝ յառաջացած է համազեակ ձևից։—Աճ.

ՀԱՄԱՒՈՏ, ի հլ. «հակիրճ, կարճ, ամփոփ» ՍԳր. Նաւ. քր. «խիստ, վճռական, կտրուկ» Եղիշ. 36խ. Նար. «համառօտութիւն, բովանդակութիւն, ամփոփում» Բ. մակ. բ. 29. «վճիռ» Եղիշ. Ճառընտ. «համառօտելով, կարճ կերպով» Բ. մակ. ժ. 10, Եզն. Ագաթ. Նաւ. քր. որից համառօտել Ս. Գր. Նաւ. քր. համառօտիւք Նաւ. քր. համառօտախնդիր Սերեր. համառօտաղեղ «զօրաւոր կտրուկ դեղ առող (բժիշկ)» Տաղ. համառօտագրութիւն, համառօտախօս, համառօտախօսութիւն (նոր բառեր) ևն։

=Բառիս հետ անձուկ կապ ունի կարճառօտ հոմանիշը. երկուսի համեմատութիւնը ցոյց է տալիս՝ որ արմատն է առօտ կամ (նթէ ա յօդակապ է) ռօտ. առաջինի մէջ աւելացել է իրանական համ մասնիկը, երկրորդի մէջ բարդուած է կարճ բառի հետ. բայց ո՛չ հայերէնի մէջ և ո՛չ էլ իրանեան գրականութեան մէջ այլուր կարելի է գտնել ու մեկնել այս անծանօթ արմատը։

ՆՀՐ «իբր ի կարճոյ համօրէն առեալ կամ առյօդեալ»։ էմին, Քերակ. -օտ համարում է մասնիկ։ Patrubány SA 1, 194 պրս. هم ham «նոյն»+rōt «հոսող» ձևերից փոխառեալ։ Խիրեաքեան, Արիահայ բռ. 215 պրս. همراڤت hamrāfta «լաւ հասկանալ կամ հասկացնել»։

***ՀԱՄԱՍՊՐԱՄ** «անուշաբոյր, անուշահոտ, հոտաւէտ (ծաղիկների համար ասուած)» Ագաթ. Զքր. կթ. Վրդն. անթ. «մի տեսակ անուշահոտ և դեղեցիկ ծաղիկ է. lychnis orientalis» Մխ. առ. Մխ. հեր. գրուած է նաև համսպրամ, համասփրամ, համասպրան և հայաձև կերպարանքի տակ մասած՝ համասփիւռ։

=Պհլ. *hamspram ձևից, որ թէև աւանդուած չէ իրանական գրականութեան մէջ, սակայն կայ արմատը՝ պհլ. spram կամ sparam, պազ. sparham, պրս. isparam, siparam, isparγam «ոեհան ծաղիկը». սոգդ. °sparγum «ծաղիկ»։ Սրանցից բարդուած ձևեր են հյ. շաճասպրամ, պհլ. nānukspram, պրս. mūrdisparam, mūrdisfaram են ծաղկի անուններըւ –Սպրամ բուն իրանական բառ է և նշանակում է «ծաղիկ». համմտ. սոգդ. *sparγmak «ծաղիկ», գնդ. sparəγa «ծիլ, ընձիւղ» (սլաքի), frasparəγa «ծիլ, ոստ» (ծառի)։ Պատկանում է հնխ. sphereg-, sperg- արմատին, որի ժառանգներից յիշատակելի են սանս. sphûrjati «յանկարծ դուրս գալ», sphûrja «մի տեսակ բոյս», յն. ἀσπάραγος «նորարոդբոջ ծիլ, ծնեբեկ», լիթ. spùrgas «բոյսի աչքերը», հոլլ. sporkel «փետրուար ամիսը», անգլ. spring «գարուն» (իբր ակնուռները բացուելու ժամանակ), անգսք. spraek, spranka «ծիլ» են (տե՛ս Walde 728, Pokorny 2, 673)։—Հիւրշ. էջ 177։

ՆՀՐ մեկնում է հյ. համասփիւռ կամ յն. ὁσφραντός «հոտաւէտ»։

***ՀԱՄԱՎԱՐ** «միակերպ, հաւասար խառնած». մէկ անգամ ունի Կոկնտ. (հրտր. էմինի, էջ 158, Շահն. Ա. 322). «Լինդ դեղնագոյն փետուրս փոքր ինչ կանաչութիւն համավար խառնեալ արտաքս ճողճէր»։

=Պհլ. هموار hamvār, պրս. هموار hamvār «հաւասար, միակերպ, հարթ»։—Աճ.

ԱՐ դնում է «մէկտեղ դրած, մէկտեղ խառնած»։ Վերի մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 20։

ԳԻՒՐ.—Ըստ Ս. Վ. Տէր-Մանուէլեան, Բառափնջիկ, էջ 22 գործածական է նոյն ձևով և նշանակութեամբ Երասխահովտի բարբառում։

Համատակ տե՛ս Տակ։

***ՀԱՄԱՐ**, ո հլ. և երբեմն ու հլ. «թիւ, դուման, հաշիւ, հաշուելը, քննութիւն, հարցուփորձ, բանի տեղ դնելը, համեմատութիւն, ենթադրում» ՍԳր. Ագաթ. Կոչ. Սերեր. Նաւ. քր. և պտմ. Ոսկ. որից համարիլ «հաշուել, թուել, սեպել» ՍԳր. Սերեր. Ոսկ. ես. Կոչ. (աշխարհաբարում դարձել է համարել). համարադրութիւն Ոսկ. ես. համարողութիւն Վեցօր. անհամար ՍԳր. Ագաթ. դիւրահամար Ոսկ. ես. կապճահամար Արծր. յոգնահամար

Կղկնա. Բենիկ. **երդահամար** *Ջենոբ.* **բազմահամար** *Բենիկ. Ան։*—**Համար** *բառի գաւառական և նոր գրական «վասն, պատճառաւ» նշանակութեան հնագոյն գործածութիւնն ունին Խոր. Բ. 7, 87, 90 (ի համար քեռ իւրոյ), Վրք. հց. Վրդն. սղ. Մխ. դտ. էջ 244՝ ի համար ձևով. (Պահի ի համար մեծի փեսայի. Մխ. դտ.)։ Համարիլ բայի երկրորդական «վարկանել, սեպել» նշանակութեան համար հմմտ.* **բիւ, բուիլ** *և աշխ.* **ա՛յնպէս հաշուել.** *երկու նշանակութիւնները իրարից տարբերելու համար արևմտեան գրականը գործածում է* **համարել** *«սեպել» և* **համրել** *«հաշուել». հմմտ. արաբ.* حَسَبَ hasaba *«հաշուել, համրել»,* حَسِبَ hasiba *«համարել, սեպել»։*—**Նոր բառեր են համարակալ, համարակալութիւն, համարիչ, համրիչ, մարդահամար, համարում, համարմունք:**

=*Պհլ.* *hamār *ձևից. հմմտ. պրս.* همار hamār *«հաշիւ, թիւ, չափ». առում է նաև* āmār, āmāra, āvār, āvāra, amār, amāra, hamāra, *որից* نهمار nahmār *«անհամար, անթիւ». սրանք ենթադրում են հպրս.* *hamāra<*իրան.* hamhmāra *ձևերը. բուն արմատն է հնխ.* smer- *«մտածել, յիշել, հոգալ», որ գտնում ենք սանս.* smárati *«յիշել, մտածել», յն.* μέρμηρα *«հոգս, մտատանջութիւն, մտմտուք»,* μερμηρίζω *«անհանգիստ լինել, նեղուիլ. 2. խոկալ, մտածել», լտ.* memoria *«յիշատակ, յիշողութիւն», անգսք.* gemimor *«յիշել»,* māmrian *«մի բանի վրայ մտմտալ», հոլլ.* mijmeren *«խորունկ մտածել», գոթ.* maúrnan, *հբգ.* mornen *«հոգ անել, հոգսերով նեղուիլ» են ձևերի մէջ։ Իրանեանում նոյն արմատը տալիս է* šmar, hmar, mar *ինչ. գնդ.* maraiti, šmāraiti *«մտածել»,* mimara- *«յիշել», պհլ.* šumār, ōsmartan, *պրս.* šumār, *քրդ.* žimārtin *«հաշուել»* (Walde 475, Pokorny 2, 689, Horn § 791):—*Հիւբշ. 178։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ՝ կցելով պրս. **ամար** *բառին։* Gosche 28 *սանս.* samarana, *հպրս.* hamarana, *փռիւգ.* αρμαν *«կռիւ, պատերազմ»։* Müller SWAW 42, 256 *պհլ.* hamār, *սանս.* smṛ, *գնդ.* hmere: Justi, Zendsp. *էջ 228 գնդ.* mar *արմատի տակ։* Karolides, Γλ. συγκρ. *138 մերժում է կցել կապադովկ.* ἀμάρτα *«ուրուական» բառին։ Հինք. պրս.* **ամար, հէմար, շիմար:** Patruhány *ՀԱ 1908, 342 հնխ.* o *«վրայ»+հնխ.* smer *«յիշել»։*

Գիմ.—1. **Համար** *«դաս» իմաստով ունին Ասլ. Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* **համար, Զթ.** **համօր, համոր, Հճ. համօյ, Ննխ. համբար.—2.** **Համար** *«վասն» իմաստով ունին Ալշ. Ախց. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* **համար,** *Ասլ.* **հմար,** *Տիգ.* **հɯմɯր,** *Հմշ* **հօմար, հումար,** *Զթ.* **համօյ, համոր,** *Սվեդ.* **հɯմուր,** *Տփ.* **համա, ամա,** *Մկ. Ոզմ. Վն.* **խամար,** *Զղ. Սլմ.* **խմար,** *Մրղ.* **խամա, խմա,** *Գոր. Ղրբ.* **մհար,** *Հճ.* **համօ,** *Հւր.* **մար:—3.** **Համար** *«թիւ, համրանք» իմաստով ունին Շմ.* **համբարհ,** *Պլ.* **համրանհ,** *Տփ.* **համբարհ, համբրանհ,** *Վն. Սլմ.* **խամբրանհ',** *Զղ.* **խամբարհ.—4.** **Համարել** *«հաշուել» բայաձևն ունին Կր. Պլ. Ռ. Սեբ.* **համրէլ,** *Հճ.* **համրել,** *Ասլ.* **համրէ՛լ,** *Ննխ.* **համրէլ** *(հինը՝* **համբրէլ),** *Զթ. Խրբ.* **համրիլ,** *Սեբ.* **համրէլ,** *Ախց.* **համռէլ** *(ռ-ով. այսպէս նաև* **համռիչ),** *Սրև.* **համբա՛րէլ,** *Ալշ. Մշ. Սչ.* **համբրել,** *Շմ. Տփ.* **համբրիլ,** *Տիգ.* **հɯմբրիլ,** *Ղրբ.* **համբա՛րէլ,** *Ագլ.* **համբա՛րիլ,** *Գոր.* **համբɯ՛րէլ,** *Հմշ.* **հօմբրուշ,** *Զղ.* **խմբարել,** *Սլմ. Վն.* **խամբրել,** *Մրղ.* **խամբրէլ,** *Մկ. Ոզմ.* **խամբրիլ.—5.** *Առանձին ձև ունի Սչ.* **համարել** *«սեպել», տարբերելու համար* **համբրել** *«հաշուել» ձևից.—Նոյնպիսի տարբերացումներ նկատելի են նաև վերը՝* **համար** *«վասն» և* **համար** *«դաս» ձևերի մէջ.—կրճատմամբ յառաջացած ձևեր են Հւր.* **չումա՞ր,** *Շմ.* **չմա՞ր** *«ինչո՞ւ համար»։—Նոր բառեր են* **անհամրանհ, համար-հաւար** *«չատ, անթիւ», համրովի, համրուկ:*

Փռհ.—Վրաց. **ამარი ամարի** *«քանակութիւն»,* **უამარო ուամարի** *«անթիւ».— Սղերդի արաբախօս քրիստոնեաներն ունին* xamar *«համար, դաս» (Բիւր. 1899, 116).— Պատահական նմանութիւն ունի չէչէն.* ʻamar *«ուսանիլ», որի արմատն է* ʻām։

ՀԱՄԱՐ *«ժառանգութիւն կամ հայրենի».*

ունի միայն Բառ. երեմ. էջ 173. երևի պէտք է հասկանալ «հայրենի ժառանգութիւն» և որևէ փոխաբերութեամբ կապել նախորդի հետ։

***ՀԱՄԱՐԱԿԱՐ** *(սեռ. ի) «հաշուակալ, հաշուապահ» Ա. մն. իէ. 1. Ագաթ. Սեբ. (Վասպուրականի հարկահաւաքի համար ասուած). — սխալ գրչութիւն է համակար Կնձ. 1865, էջ 24, Սիմ. ապար. 87—89։*

*=Պհլ. *hamārkār «հաշուակալ» ձևից. կազմուած է պհլ. *hamār «համար, հաշիւ» և kār «-արար» ձևերից. (վերջինից են նաև հյ. օգտակար, վնասակար, գենակար). պհլ. բառը չէ՛ աւանդուած, բայց նրա գոյութիւնը հաստատում է հայերէնի հետ նաև միշնայերէն* אמרכל amarkal։—*Հիւբշ. 178։*

ԳԴ համեմատեց պրս. ամարէկիյր բառի հետ, որի նշանակութիւնը և առաջին մասը նոյն են մերի հետ, բայց երկրորդ մասը (կիյր «բռնել») գործ չունի մեր կար-ի հետ։ Աւելի վատ է ՆՀԲ, որ դնում է պրս. շիմարկիր։ Առաջին անգամ M. A. Levy (Geigers zweit. Zeitsch. 5, 215) *հայ բառը կցեց միշն. ձևին։ Պատկ.* Матер. II 22 *պհլ.* ha mār *ձևից։*

Համարդիլ *տե՛ս Հարամդիլ։*

ՀԱՄԲ, *ի հլ. «խումբ»? անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Նար. առաղ. 476. «Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր. վայր համբից բիւրից՝ օր սահմանեալ գետ»։ Այսպէս է մեկնում ՆՀԲ՝ իբր սխալ գրչութի՞ւն թէ իբր ձայնդարձ։*

ՀԱՄԲ *«տիկ». ունի միայն Բառ. երեմ. 173։ Տե՛ս և համբակ։*

ՀԱՄԲԱԿ, *ի–ա հլ. «երախայ, նորածին մանուկ. 2. տղայ, մանուկ. 3. զաւակ, որդի. 4. աշակերտ» Պիտ. Պղատ. օրին Նոնն. («որդի» Մագ. մեծ են. էջ 14), Տիմոթ. կուզ, էջ 173, 175, 181, 291, 292. «դուստր, աղջիկ» Տիմոթ. կուզ, էջ 196. արդի գրականում գործածւում է միայն «թերուս» նշանակութեամբ։ Այս արմատից ունինք համբակաբար Փիլ. համբակագոյն Պղատ. օրին. համբակական Կղկնտ. համբականալ Պղատ. օրին. համբակատի Շնորհ. վիպ. համբակեալ Տօնակ. համբակօրէն Մագ. գրուած է նաև ամբակ Նար. երգ. բոլորն էլ յետին։*

ՆՀԲ լծ. յն. πάϊς, παῖς «տղայ», հյ. մանուկ, մանչ, պրս. پسر hampā *«ընթացակից, արբանեակ»։ Հիւնք. պրս. հէմբա «ընթացակից, օգնական, հետեւող», յն. ὄμφαξ, սեռ. ὄμφακος «տրհաս, խակ»։* Bugge KZ 32, 13 *մեկնում է իբր ամ-բակ, կազմուած ան բացասականով՝ բակ=bhā «խօսիլ» արմատից. համմտ. բան, բայ. ըստ այսմ համբակ նշանակում է բուն «դեռ անխօս մանուկ»։ Հին բռ. գտնում ենք համբ «տիք», որ կարծես կապ ունի այս բառի հետ, բայց անստոյգ է, որովհետև նոյն բառը Բռ. երեմ. 173 մեկնում է «տիկ»։*

ՓՈԽ.—Արդեօք հայերէնի՞ց է փոխառեալ արաբ. حبنق hubnaq, حبنوق habnūq, حبنيك habnīk, حبانق hubānaq *«նորահաս երիտասարդ ծառայ»,* حبنّق hubannaq, خنبق xanbaq, حبنّك habannak *«անխելք, տխմար մարդ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 898, Դ. 67 և 121)։*

Համբառնալ *տե՛ս Համ և Բառնալ։*

Համբար *տե՛ս Ամբար։*

ՀԱՄԲԱՐ *«ջայլամ». ունի միայն Բառ. երեմ. էջ 174։*

Համբար *տե՛ս Համբարապետ։*

***ՀԱՄԲԱՐԱԿ** *«շտեմարան» Օր. լգ. 28. Եփր. ծն. 128. Մծբ. 229. «մատակարար, կերակրիչ» Մծբ. էջ 229, 369 (տե՛ս Վարդանեան ՀԱ. 1913, 301—2). որ և* ամբարակ *«շտեմարան» Կանոն. էջ 51։*

=Պհլ. anbārak, *որ գտնում ենք պհլ.* anbārakpāt *«համբարակապետ» բարդի մէջ. ընդարձակ տե՛ս* **Ամբար**։—*Աճ.*

***ՀԱՄԲԱՐԱԿԱՊԵՏ** *«պետական համբարանոցի պետը» Բուզ. Նղիշ. ը. էջ 111. որ և* ամբարակապետ *Նղիշ. Փարպ.։*

=Պհլ. anbārakpat *«համբարակապետ», որ կազմուած է* anbār-ak *«համբար»+*pat *«պետ» բառերից. աւելի ընդարձակ տե՛ս* **Ամբար**։—*Աճ.*

Պազիլ, Աւետաբեր 1914, էջ 235 ամբարակապետ *համարում է «բանտապետ», իբր պրս.* anbār šāhi *«պալատում բանտ»։*

*ՀԱՄԲԱՐԱՊԱՆ *«համբարուած իրերի կամ շտեմարանի պահապան» Ադաթ.

=*Պհլ.* anbār+pān *«համբարի պահապան»։—Աճ.*

*ՀԱՄԲԱՐԱՊԵՏ, *որ և* համբար *«բժշկական մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1614։*

=*Պրս.* anbārbad *«մարեմխոտ կամ խընկողկուզուկ» (ըստ Ամիրտովլաթի) կամ «սակամունի,* scammonée*» (ըստ Բժշկարաններուն)։*

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ. 1925, էջ 301։

*ՀԱՄԲԱՐԻՒ, ի–ա *Հլ. կամ* ՀԱՄԲԱՐԻ *(-ւոյ, ւեաց) «պարիկ, յուշկապարիկ, իրական և կամ երևակայական ճիւաղ» ՍԳր. Սգն. Եղիշ. Հրց. էջ 52։*

=*Պհլ.* *hambaru *ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց կայ պրս.* hambaruna *«տան ոգի, դև»։*

Նշ՛ր պրս. parī *«պարիկ» բառի հետ։ Պալասանեան, Պատմ. գրակ. 137 «համբարների կամ շտեմարանների պահապան աստուած»։ Հիւնք. պրս. ֆիւպարի «կարապ»։ Մէնէվիշեան, Արդի լեզուագիտ. էջ 61 հունգ.* hämä *«մթին»+պարիկ բառերից, իբր թէ համբարու «սև պարիկ»։* Stackelberg, Древн. Восг. *1901, թրգմ. Բազմ. 1902, էջ 121 կցում է պրս.* hambaruna *ձևին, որ չունի ԳԴ։ Սագրզեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձան 402 սումեր.* amar-baruu *«մատաղ եղնիկ»։ Ուղուրիկեան (տե՛ս Գաբ. բռ. էջ 771 և 1405) ֆրանս.* vampir *բառի հետ։* Meillet, Rev. ét. arm. I, *10 իրան.* *ham-paru- *ձևից, որի հետ նոյն է* parikā>պարիկ։ *Պատահական նմանութիւն ունի արաբ.* هنبر hanbar *«բորենի և նման վայրի գազան» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 155)։*

Համբարտակ *տե՛ս* Ամբարտակ։

ՀԱՄԲԱՒ, ո, ու, ի–ա *Հլ. «հռչակ, տարածուած անուն, լուր» ՍԳր. Եւս. քր. Ասկ. մ. ա. 11. Եզն. որից* համբաւել *«կոչել, հռչակել, յայտարարել, անուն կամ լուր հանել» Մտթ. ժ. 31. Եզն.* համբաւաւոր *Եփր. երր.* համբաւակոծ առնել *Կոչ.* համբաւահան *Բուզ.* համբաւատենչ *Փարպ. Խոր.* չարահամբաւ *Պիտ. Բրս. մրկ.* բազմահամբաւ *Սիսիան.* բարեհամբաւ *Բ. մակ. ժդ. 37. մակբայական գործածութեամբ՝* համբաւու *«ի լրոյ» Կղնկտ. հրտր. էմ. էջ 40։*

Նշ՛ր արմատը դնում է բա, բայ, բան, բաւ. *վրաց.* համբա՛վի։ Windisch. *22 սանս.* sambhāva, *որ սակայն* Böhtlingk, Sansc. Wört. *հտ. 7, էջ 756* (հաստ) *մեկնում է «*stand, *դիրք, կացութիւն»։—*Lag. Urgesch. 131 bhā *արմատից։ Տէրվ. Նախալ. 95* bha, bhan *«հնչել, ասել» արմատից։ Հիւնք. յն. φήμη, դոր. φάμα «համբաւ»։* Bugge KZ 32, 13 *իբր* *sṃ-bhā-mā *նախաձևից. Համմտ. լտ.* fama, *յն. φήμη «համբաւ». բոլորն էլ* bhā *«խօսիլ» արմատից։* Karst, *Յուշարձան 406 սումեր.* pam, pav, pam-pam *«յայտարարել»։*

ԳԻՒ.—Երև. համբ՛ավ *«հռչակ»։*

ՓՈԽ.—Վրաց. ჰამბავი համբավի *«լուր, աղաղակ, աղմուկ, դիրք, պատմութիւն, ճառ, արձակ գրուածք»,* ამბავი ամբավի *«լուր» (Մաս ժամսա շինա եամա Իոդին որխբա մար սամբավռոբա մբավարսա, ամբավի Իեսոսի—Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուր Յիսուսի. Մտթ. ժդ. 1. Դա գեսմոդեն բռնոլանի, դա ամբավնի բըռնոլաբանի — Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. Մտթ. իդ. 6).* უამბო ուամբո *«առանց տեղեկութեան».* უამბოდ ուամբոդ *«առանց լուր ունենալու». Թուշ.* ამბუო ամբուի *«պատմութիւն, խօսակցութիւն» (Համմտ. զոյց «լուր, խօսք» և դուռ. զրից աճել «խօսակցիլ»),* ‘Լազէ ամբուի *«Ս. Աւետարան», լազ.* ambai, ambayi *«լուր, տեղեկութիւն»,* uča ambayi *«սև լուր, դոյժ», ինգիլ.* համփավ *«լուր» (*Шанидзе ЗВО *22, 357)։*

Համբերել *տե՛ս* Համ և Բերել։

Windisch. 22 յն. συμφέρω «հաւաքել, տանիլ»։ Spiegel, Huzw. Gram. 189 պհլ. anbār, պրս. anbār, զնդ. ham bərə։

*ԳԻՒ.—Տե՛ս վերը՝ համ մասնիկի տակ. և աւելացրո՛ւ Մրղ. համփըէրել, խամփըէրել։

ՀԱՄԲՈՅՐ, ի հլ. (յետնաբար նաև ո հլ.) «պաչելը, պաչ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 10. «սեր, միութիւն, յարում, ընտանութիւն (անասունի)» Վեցօր. եզն. Ոսկ. մաթ. տիմ. Փիլիպ. «ընտել, ընտանի, հեզ, հաշտ» ՅՀ. կթ. Նար. «երկու երկար վանկերից բաղկացած բառ» Թր. և երզն. քեր. որից համբուրել ՍԳր. համբուրեցուցանել «ընտանեցնել, կրթել (անասունը)» եզն. համբուրական Պիտ. աճհամբոյր «անընտել» Ոսկ. բարեհամբոյր ՅՀ. կթ. ուղղահամբոյր Նար. առաք. դառնահամբոյր ՅՀ. կթ. ժամահամբոյր «վաղանցուկ» Հին բռ. համբուրելի (նոր բառ). դժուարահամբոյր Մխ. առակ. (կայ նաև Ղրբ. դժուարահամբոյր «դժուարանցանելի», որի հակառակն է հեշտահամբոյր «դիւրին անց կենալու (ճանապարհ)»։

Հններից Լմբ. մատ. 498 առուգաբանում է համ «մի, ամբողջ» և բիւր բառերից. «Հաղորդին Քրիստոսի և միմեանց համբուրիւն, քանզի և նոյն ինքն առուգաբանութիւն անուանս զառաքեալսդ խորհրդոյս մեզ յայտնէ. համբիւր. համն՝ մի առուղի, այսինքն թէ բազումքն այսպէս հաղորդեալ, իրերաց միանան»։ Ա. ւետիքեան, Քերակ. 1815, 313 համ բոյր «մէկ բուրում, մէկ շունչ ունենալը»։ Նշբ դնում է բոյր բառի՞ց և վրաց. ամպօ՛րի. Lag. Urgesch. 432 budh արմատից։ Müller SWAW 84 (1877), 217 բոյր արմատից։ Էմին, Династ. Спис. 1884 (արտ. Изслѣд. и Стат. էջ 186) կազմուած -ոյր մասնիկով։ Աղայեան, Աղբիւր 1887 յաւել. էջ 68 բոյր բառից, որովհետև հին ժամանակ համբուրելու ժամանակ «իրարից հոտ էին քաշում»։ Նագարէթեան, Պատկեր 1893, 235 արմատը համ, ամ, համր՝ միութեան և հաւաքման նշան։ Հինք. բոյր բառից, որովհետև «համբուրիլդ հոտոտել իսկ է»։—Müller WZKM 7 (1893), 145 ինչպէս պրս. بوسیدن būsidan «համբուրել» հանում է بوی būy «բոյր» բառից, նոյնպէս և հյ. համբուրել՝ բոյր բառից։ Հիւրշ. 176 դնում է զնդ. *ham baoδa «համաբոյր»? ձևից, որ սակայն ո՛չ աւանդուած է և ո՛չ էլ այլուստ կարելի է ապացուցել։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 108 և 218 պրս. ham-bōy «իրար հոտոտել»։

ԳԻՒ.—Գործածւում է միայն կրօնական իմաստով, այն է՝ «մասունք, խաչ, աւետարան և կամ կրօնաւորի աջ համբուրել».—Տփ. համբուրիլ, Ալշ. Մշ. համբ'ուրել, Սեբ. համբ'ուրէլ, Ախց. Երև. Կր. Պլ. Ւ. համփուրէլ, Շմ. համփուրիլ, Տիգ. համփուրէլ, Ննխ. համփրէլ, Ջղ. խամբ'ուրել, Սլմ. խամբիւրել, Մկ. խամբիւրիլ, Մրղ. համփրուէլ, խամփրուէլ, Ագլ. հրմփէ՛րիլ ևն։ Առանձի բրքախօս հայոց մէջ՝ համփրէլ էրմէ։

ՓՈԽ.—Վրաց. ამბორი ամբորի «համբոյր», ამბორება ամբորեբա «համբուրել». Բոմելլա մե ամբոռս-ուղ'ո, իգի առս, շեիպղ'արք իգի «Ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք». Մաթ. իզ. 48։—Լ'ստ Մառ. Грам. др. арм. 41 և ЗВО 17, 303 տառադարձուած է նաև ჰამბორი համբորի, ჰამბოვრი համբովրի, որի հետ Կ'арая, Объ. отнош. абхазск. яз. էջ 20 միացնում է նաև չերքէզ. boyor, boyo «համբոյր»։

*ՀԱՄԲՈՒՆ «նոյն բնութիւնից» Կիւրղ. գնձ. «բնաւ, ամենևին» Վրք. հց. ա. 432։

=Պազ. hambun «միևնոյն ծագումն ունեցող, նոյնարմատ» բառից պատրաստի փոխառութիւն. հայերէնը կարող էր նաև մեր մէջ կազմուած լինել՝ համ և բուն բառերի բարդութեամբ. բայց փոխառութեան կողմն է յօդակապի բացակայութիւնը։ Մեր «բնա՛ւ, երբեք» նշանակութեան զարգացման համար համմտ. հյ. բուն և բնա՛ւ, արաբ. asl «բուն» և ásla «բնա՛ւ, երբեք»։—Աճ.

*ՀԱՄԳՈՒՆԱԿ տե՛ս Հանգոյն։

ՀԱՄԵՂԻՆ «նուշի կաթ». ունի միայն Բռ. երեմ. յաւել. 569։

ՀԱՄԵՄ, ի-ա, ո հլ. «կծու համ ունեցող

այլևայլ բուսական նիւթեր, մասնաւորապէս սամիթ և լտ. amomum *կոչուած բոյսը» Գաղիան. Բժշ. «կերակուրի հանդերձանք» Փիլ. «համադամ, ընտիր կերակուրներ» Մանդ. Երզն. ժ. Խոր. «վարպետ խոհարար» Յճխ. որից* համեմել *«որևէ համեմով ուտելիքը համեղացնել» ՍԳր.* համեմունք *Ոսկ. մ. գ. 17.* համեմական *«քաղցրալուր, անուշ (լեզու)» Վրդն. պտմ.* համեմիչ *Մանդ.* հացհամեմ *«արջնդեղ,* anethum *կամ հու պան,* trigonella foenum-graecum L» *(տե՛ս Տիրացուեան,* Contributo § *228) Վստկ. Բժշ. յետնաբար գրուած է նաև* համիմ *Գաղիան.* համհամ *Բժշ. (շփոթելով համամայ բառի հետ)։*

ՆՀԲ իրարից տարբերելով երկու նշանակութիւնները՝ «համադամ» իմաստով դնում է համ *բառից, իսկ երկրորդ «համեմեղէն» իմաստով կցում է յն.* ἄμωμον *լտ.* amomum *բառերի հետ։ Հիւնք. Հյ.* համ *և յն.* ἄμωμον: Canini, Et. étym. *31* համ *և* համեմ *= սանս.* hima *«փոքր կարդամոմ» և յն.* ἄμωμον: *(Վերջին յն. բառը* Boisacq 59 *կցում է երբ. *ḫamōm ենթադրեալ ձևին, որ հանում է սեմական* ḫmm *(արաբ.* حمّ hamm*) «տաքանալ» արմատից, իբր «տաքացուցիչ դեղօրայք»։ Այս դէպքում Հյ. բառը իր նախաձայնով աւելի համապատասխան պիտի լինէր սեմական ձևին)։ Հիւրշ. (առ.* Jensen, Hitt. u. Arm. *97) դնում է Հյ.* համ *բառից՝ -եմ մասնիկով. Հմմտ.* խոնեմ, վաղեմի: *(Բայց այս երկուսն էլ ածական են, մինչդեռ* համեմ *գոյական է)։*

ԳԻՒ.—Ալշ. համեմ, *Ախց. Երև. Կր.* համէմ *«գինձ», Ղրդ.* հա՛մէմ *«շաքար», Ծփ.* համիմ, *Սվեդ.* հըմիմ *«պղպեղ» (բայց յատկապէս «կարմիր պղպեղ»), Հմշ.* հօմիմ. *Սլմ. Վն.* խամեմ, *Մկ. Ոզմ.* խամիմ.*—այս բառից է Մշ.* առվահամեմ *«մի տեսակ հոտաւէտ բոյս, որ ապրի մէջ են դնում»։*

ՀԱՄԵՄԱՏ, ի *Հլ. «համաձայն, յարմար, զուգապատշաճ, նման» Յուդիթ. ժա. 19. Յոր. խբ. 15. որից* համեմատել *Ա. կոր. բ. 13. իմ. է. 29.* համեմատութիւն *իմ. է. 8. ժդ. 5. Նար. քր.* անհամեմատ *Ագաթ.* անհամեմատական *Ոսկ. ես. ևն։*

ՆՀԲ «որպէս թէ համայն ի մի ածեալ, եկեալ կամ բաղդատեալ»։ Հիւնք. պրս. hamāmad *«համընթաց, ընթացակից»։* Meillet MSL *8, 154* համ *մասնիկով *մատ բառից. այս վերջինը իբր բնիկ հայ կցելով լտ.* modus *«չափ» բառին, որով համեմատ թարգմանւում է բուն «համաչափ»։ Հիւրշ. 463 յիշում է այս մեկնութիւնը (աւելացնելով լտ. բառի վրայ նաև յն.* μέδιμνος *«գրիւ», գոթ.* mitan *«չափել»,* mitaθs *«չափ»), բայց ամբողջը համարում է անստոյգ, որովհետև արմատը ընդունելով *մատ, բառը պիտի ունենար *համամատ կամ համմատ ձևը։ Փիրնաքեան, Արիահայ բռ. 219* համ+*պհլ.* mat *«միտք»։*

Համեստ *տե՛ս Համ։*

Ղափանցեան 3BO *23, 360 զնդ.* hamōistri *«գետին զարկող»։* Meillet, Rev. ét. arm. *1, 34 հնխ.* med *արմատից. հմմտ. լտ.* modestus *հոմանիշը։—Փիրնաքեան, Արիահայ բռ. 220 պհլ.* hamēstāgan *«քաւարան գնացող հոգիները»։*

ՀԱՄԵՏ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «գրաստի թամբ, կորդին» Ղեւռ. ժե. 9. որից* համետել *«գրաստի վրայ համետ դնել» Մն. իր. 3. Դատ. ժԲ. 10. նոր բառեր են* համետատուր, համետագործ:

Հիւնք. պրս. āmādan *«պատրաստել» բայից։ Սրմագաշեան. Արմէնիա ռում.* ham, *յգ.* hamuri *«ձի համետելու ամբողջ սարքը»։*

***ՀԱՄԷՈՒՍ** *«ննի բոյսի սերմը» Հին բռ. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 569 և ՀԲուս. § 2206։*

***ՀԱՄԻՄԱՂ** *«հակառակ, դատաստանով պահանջող, դատախազ», որի համառակն է* անհամիմատ *«անվիճելի, անհակառակելի». երկուսն էլ նորագիւտ բառեր, որ գործածում է Օրբել. հետևեալ տեղերում. «Մի՛ ոք իշխեսցէ այլ կալ սմա հակառակ կամ համիմաղ. էջ 240.—Պայքարել և համիմաղ կալ*

մի՛ իշխեսցեն. էջ 160.—Յիմ հօրէն և յեղբարց յիս հրիտակ հասեալ և իմ հայրենի ժառանգութիւն էր անհամիմաղ տեղի (տեղ՝ որի վրայ վէճ չկայ). էջ 158.—Ստու անհաշիւ անհամիմաղ, առանց զոք զրկելոյ. էջ 237.—Հրամայեցին ունել զիաչն անդային և անհամիմաղ. էջ 261։

=Պհլ. hamēmāl «դատախազ, թշնամի». այսպէս էին կոչւում այն էակները՝ որոնք վնասուած էին hamēmalān մեղքերով։ (Զրադաշտական կրօնը գիտէր զանազանել երկու տեսակ մեղք. առաջին՝ այն մեղքերը՝ որոնք մեղաւորի հոգուն էին միայն վնասում և կոչւում էին rubanik. երկրորդ՝ այն մեղքերը՝ որոնք վնասում էին բարի մարդոց և բարի անասուններին. այս կարգի մեղքերը կոչւում էին hamēmalān. իսկ սրանցից վնասեալները կոչւում էին hamēmal, այսինքն «դատախազ»)։—Պհլ. hamēmal ձևը տալիս է ուղղակի հյ. համիմաղ։

Անցողակի յիշում է Այտնեան, Քնն. քերակ. էջ 143։ Ընդարձակ և ուղիղ մեկնութիւնն ունի անծանօթ մի բանասէր՝ Բազմ. 1895, էջ 7, ծանօթ. 4։

*ՀԱՄԻՇԱԲԱՀԱՐ «ազոխ վայրի կամ գառնադմակիկ» Բժշ. (գրուած է համիշայ բահար). ունի միայն ՀԲուս. § 3348։

=Պրս. hamīša-bahār «անթառամ ծաղիկ». բուն թարգմանութիւնն է «մշտագարուն»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

*ՀԱՄԼԱՅ «յարձակում». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Շնորհ. առ. «Զնա զշահէն հանց սուր երթայ, համլայ կապէ, դատարկ դառնայ» (ագռաւ)։

=Արաբ. ḥamla «յարձակում»։—Աճ.

*ՀԱՄԿՆԱ կամ աւելի լաւ՝ բակլաթլ-համկնա «փրփրեմ, անմեռուկ» Գաղիան։

=Արաբ. baqlat-ul-hamqā «փրփրեմ, դանդուռ, սէմիզ օթը»։

Գաղիանոս յիշեալ արաբ. բառը սրխալմամբ գրում է և մեկնում «բակշաթլ-համկնա. փալփալնահին. որ է խոճկորակ», ուր շ տառասխալը յառաջացած է լ տառաձևի նմանութիւնից. իսկ համկնա յառաջացած է արաբ. hamqā բառի մէջ մի կէտ աւելի դնելով (իբր *hamqnā)։—Ոչքեան այս բակլաթ բառը կցելով լտ. baccalia «մի տեսակ դափնի» բառին, կարծել է որ համկնայ էլ նշանակում է «դափնուոյ տեսակ, որ զշատ կոկոնս ունի»։ Սրանից առնելով ՀԲուս. § 1619 «համկնա? դափնի կամ դափնոյ հատերն»։ Այս բոլորը ուղղում և սրբագրում է Նորայր ՀԱ. 1921, էջ 336, Գաղիանոսի փալփալնահին ձևն էլ հասկանալով պրս. փարփահան «փրփրեմ»։

*ՀԱՄՀԱՐՁ կամ ՀԱՄԱՀԱՐՁ, ի-ա հլ. (ազն բառի հետ շփոթուելով՝ սեռ. գրուած է -հարզանց, փխ. -զաց) «նիզակակից, թիկնապահ, օգնական» Եղիշ. դ. էջ 74, զ. էջ 90, Սեբ. Պտմ. աղէքս. Ասող. գրուած է համհարց Արծր. Հրտր. Պատկ. էջ 94։

=Պհլ. hamharz «թիկնապահ» (կազմուած ham «նոյն»+harz անծանօթ բառից). գործածուած է Draxt-i Asūrīk § 36 և այլուր. հմմտ. Pusarān u bratarān, vaspuhrakān u hamharzān «որդիք և եղբարք, ազնուականք և թիկնապահք». Stackelberg WZKM 17 (1903), 48։—Հիւբշ. 177։

ԳԴ պրս. hĕvarz «խորհրդակից» ձևից։ ՆՀԲ «թերևս իբր համահարազատ կամ պրս. hĕvĕrz «համապատիւ և երկրակից» (իմա՛ ham-arz «համարժէք» կամ ham-marz «գաւառակից»)։ Ներոպա 1852, 123 պրս. hamrāz «խորհրդակից»։ Էմին, Ист. Асохика 1864, էջ 83 պրս. ham «համ»+arz «երկիր», իբր «հայրենակից»։ Տէրվ. Մասիս 1882, օգոստ " 18 harz «մտերիմ, ընկեր, ազգական», որ կազմուած է har մասնիկով՝ զա, զան «ծնիլ» բայից և գտնում է նաև ապա-harz-ան բառի մէջ։ Հիւնք. ապահարզան բառից։ Հիւբշ. 177 գուշակեց իրաւնաւն ծագումը։ Նորայր, Կոր. վրդ. էջ 57 պրս. hĕvarz «խորհրդակից»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ վերի ձևով Stackelberg (անդ)։ Ադոնց, Арм. Юстин. 382 պրս. arzān=արժանիք

բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 214 պրս. همورز hamvarz *«աննդակից» (պիտի տար հյ.* համավարժ)։

***ՀԱՄՇԻՐԱԿ** «աննդակից, կաթնկից, միասին մեծացած ընկեր» Յայսմ. Հին բռ. Լծ. պրպմ. 774. Անկ. գիրք առաք. 450։

=Պհլ. *hamšīrak *բառից, որ թէև աւանդուած չէ, բայց հաստատւում է պրս.* همشیره hamšīra *ձևով. այս բառը բուն նշանակում է «կաթնկից»* (ham *«նոյն» և* شیر šīr *«կաթ» բառից), *բայց այժմ գործածւում է «քոյր» նշանակութեամբ, ինչպէս որ* همشیر hamšīr *գործածւում է իբրև «եղբայր»։— Հիւբշ. 176։*

Հներից ուղիղ մեկնութեան երևի ծանօթ էր Անկ. գիրք առաք. էջ 450, որ գրում է. «վասն զի համշիրակ էր Քրիստոսի, այս է՝ միամօր կաթամբ սնեալ Յիսուս և Յակոբ, ի մի տան, միոյ տարւոյ տղայք էին»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ ԳԴ, նոյնը յետոյ ՆՀԲ և Lag. Arm. Stud. *§ 1225։*

ՀԱՄՈՂ *«համոզուած, հլու» ԱԲ. որից* **համոզել** *«միջնորդելով և խրատելով հաշտեցնել, խաղաղել» Բ. Թագ. ժդ. 6. Ոսկ. ա. կոր. և փիլիմ.* **համոզիչ** *Նար. կուս. Ոսկ. յաւետ.* **համոզակեր** *«խրատատու, համոզող» Ոսկ. մ. ա. 15, յհ. ա. 3. Խոր. Փիլ. չարահամոզ Բռ. ստեփ. լհհ.* **համոզում, համոզմունք, տարհամոզել** *(Նոր բառեր). գրուած կայ նաև* **հոմոզել** *ԱԲ։*

ՆշԲ **ամոխել, համոխել** *ձևերից։ Տէրվիշ.* Altarm. 59 *պրս.* آموختن āmūxtan *«ուսուցանել»,* آموزکار āmūzkār *«ուսուցիչ»,* āmūrzkār *«քաւիչ» բառերից։ Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. էջ 195 պրս.* آموزیدن āmūzīdan *«ուսուցանել»,* āmūzkār *«հրահանգիչ»։ Նոյնը նաև ունի Հիւնք.։ Սակայն հայ բառը չի կարող սրանց հետ կապուիլ, որովհետև նախ նշանակութիւնն է տարբեր (պրս. «սովորեցնել», իսկ հյ. «հաշտեցնել, խաղաղել») և երկրորդ՝ որ յիշեալ պրս. ձևերի հին վիճակն է պհլ.* āmōxtan. āmōčam, āmōčišn, āmōčīnītan, *որոնք պիտի տային հյ. *ամուճել։—Մառ, տե՛ս Հաւատ։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. համօզել, *Ախց. Երև. Պլ. Ռ. Կր. Սեբ.* համօզել, *Խրբ.* համօզիլ, *Տիգ.* համօզել, *Ոզմ.* համուզիլ, *«քաղցր խօսքերով աշխատիլ սիրտը առնել»։*

ՀԱՄՈՒՒ *կամ* **ՀԱՄՈՒՌՆ** *«խումբ, բազմութիւն» Բր. Նչ. և Երզն. քեր. Տիմոթ. կուզ, էջ 127, 145. որից* **միահամուռ** *«միախումբ, ամբողջը միասին» ՍԳր. Եւս. քր. Բուզ.* **համոի** *«միանգամայն, մի անգամից» ԱԲ։*

ՆշԲ «լծ. Բրք. **ճիւմճիւռ** *«բազմութիւն», իսկ հյ. որպէս թէ* **համ** *ի մի ուր, կամ խառն համայն ի մի վայր»։*

***ՀԱՄՈՒԱՀ** *«ուղեկից». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. փետ. 24. «Եւ ի ճանապարհին հանդիպեալ աբեղայիցն, երթայր* **համրոահ** *գհետ նոցա»։*

=Պրս. همراه hamrāh *«ուղեկից», որ կազմուած է* ham *«համ-, նոյն» և* rāh *«ճանապարհ, ռահ» բառերից։—Աճ.*

***ՀԱՄՍԱՅԵԱԿ** *«համագգի». ունի միայն Բառ. երեմ. էջ 174, որից առնում է և ՓԲ։ (Առանց վկայութեան)։*

=Պհլ. *hamsāyak *բառից, որ է պրս.* همسایه hamsāya *«դրացի». կազմուած* ham *«նոյն» և* sāya *«ստուեր, շուաք» բառերից։—Աճ.*

Համտակք *տե՛ս Տակ։*

ՀԱՄՏԻԿ *«համապատիւ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. յհ. (տե՛ս Ոսկ. պօղ. բ. էջ 603—4). «Ո՞ր աղօթք պիտոյացան նմա անդր. ո՞չ համտիկ հաւատարութիւն էր. Զայս և առ բարեկամս ասէ և առ համտիկս պատուակիցս»։ Սրանց հետ համմտ. միւս թարգմանութեան մէջ համապատասխան հատուածները, որոնցով և ճշտւում է նշանակութիւնը. «Ո՞ր աղօթից կարօտացաւ. ո՞չ ապաքէն բազում համապատիւ միակամութիւն էր անդ. Առ սիրելիսն ասի և հանգիստապատիւսն»։*

ՀԱՄՐ, ր *հյ. (-մեր, -մերց) «լեզու չունեցող, մունջ, լալ» ՍԳր. որից* **համրանալ** *ՍԳր.*

Վեցօր. համրիլ «լեզուն բռնուիլ» Իմ. ծբ. 24. Մծբ. համրուիլն կիւրղ. եղ. համրացուցանել Նար. իգն.։

ՆՀԲ լծ. յամր (յամրալեզու)։ Հինք. Հերմէս յատուկ անունից է հանում։ Bugge KZ 32, 13 և A. Torp դնում են *ambrū<anbru «անբարբառ» նախաձևից, որ կազմուած է an բացասականով՝ brū «խօսիլ» արմատից. համմտ. գնդ. fra-mru «խօսող»։ Patrubány SA 2, 13 արաբ. եբր. ḥamr «էշ» բառից։

ՀԱ.Յ. ծաղրական բացագանչութիւն, որ գործածական չէ. բայց ունինք կրկնութեամբ հայ հուշ առնել «ծաղրել, այպանել, նուհա՛պռաւ» Ոսկ. մ. բ. 10։

=Բնաձայն բառ է. համմտ. յայ յու և հայհոյել։

ՆՀԲ համարում է բնաձայն բառ։ Ներգնեան, Արևելք 1884 հոկտ՛՛ 17 առնս. աճուադի։ Տէրվ. Նախալ. 19 հայ հուշ համարում է կրկնուած բացագանչութիւն։ Հինք. էջ 157 պրս. հայաճուշ, հայ իւ հուշ «անորոշ ձայներ»։

ՀԱ.Յ, ի հլ. «ապականութիւն, աղբ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Աբեան. տպ. 1899, էջ 199. «Արեգակնս այս օրերեակ և ի մարմինս մեռելոցն լինելով, և ի վերայ հայիցն և ժախտոտութեանցն փայլելով, ո՛չ վնասի և ո՛չ պղծի». (համմտ. իմաստի ճշտման համար՝ նոյն հատուածի մի ուրիշ համապատասխան ձևը՝ Անկ. գիրք հին կտ. վիենա. 1896, էջ 149.—Արեգակն ոչ ապականի հայելովն յաղբ և ի տիղմ)։

ՀԱ.Յ «հսկայ». ունի միայն Բառ. երեմ. էջ 175 յգ. հայք «հսկայք» ձևով։

ՀԱ.Յ «նայիլ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝ հայիլ «նայել, դիտել, փնտր. մի բանի սպասել» ՍԳր. հայելի ՍԳր. Եփր. եղ. հայեկ «նաւի դիտարան» լծ. նար. հայեակ «դէտ, տեսուչ» (նորագիւտ բառ) Տաթև. ձմ. լզ. (երեք անգամ գործածուած). հայարան «աչք» Մագ. թղ. 136. հայեացք Դիոն. եկեղ. Նար. երգ. հայեցած Փարպ. հայեցիկ Գ. թագ. գ. 4. հայեցուած Եղեկ. իգ. 16. Ոսկ. յհ. հայեցուցանել Առակ. իա. 1. Վեցօր. երկնահայեաց Վեցօր. խաղցրահայեաց Առակ. ժբ. 13. Վեցօր. համարձակահայեաց եղ. իգ. 8. յառաջահայեաց կոչ. 208. իմաստահայեաց Փարպ. լաւահայեաց Փարպ. ծովահայեաց Խոր. ընդվայրահայեաց Եփր. խոստ. դժնահայեաց Խոր. հայեցակէտ (նոր բառ) ևն։—Այս արմատից նիմանիկով կազմուած է նայիլ, որի վրայ տե՛ս առանձին։— Այս համանիշ բառերի նշանակութեան տարբերութիւնն է ըստ Տաթև. հարց. 407՝ հայիլ «ցածրից վերև նայիլ», նայիլ «վերևից ներքև նայիլ», տեսանել «հաւասար դիրքով նայել»։

ՆՀԲ արմատը համարում է ակն, աչք, այց: Lag. Urgesch. 53 յն. συν-ι-έναι «ուշադիր լինել»։ Müller, Kuhns u. Schleich. Btrg. 3, 90 արմատը դնում է paç։ Հինք. արաբ. خيال xayāl «հրեւակայութիւն»։ Thomaschek SWAW 4, 45 (թրգմ. ՀԱ. 1894, 18) դնում է pā արմատից, որին ճիշտ համաձայն է դալիս ալբան. pa, անց. pane, pámune: Scheftelowitz BB 29, 33 pāi «պահել» արմատից, ինչպէս են դնդ. pāyu, պրս. pāyīdan «սպասել», յն. ποιμήν «հովիւ» են։—Հայելի բառի հետ պատահական նմանութիւն միայն ունի դնչ. yali «հայելի, ապակի», որ ծագում է յն. ὕαλος, ὑάλιον, նյն. ὑάλιν, γυαλί «ապակի» բառից։ Մառ. Яз. и Лит. 1, 238 բասկ. aycin «առաջը» բառի հետ։

ԳԻՒՒ.—Խրբ. հաիլ, Ք. հայնալ, Հճ. հէյյել, Զթ. հէյիլ, Տիգ. հիյյոլ «նայիլ», իսկ Սվեդ. հիյյիլ «սպասել».—աւելի հետաքրքրական ձևեր են Շտ. խել, Մկ. բխիլ. (առում է օր. Մկ. կրխը «տեսնում է», արխը «պիտի տեսնէ», բխը՛ «տե՛ս», որոնց հետ նոյն է վն. խեճի՛ «տեսնենք, նայինք» (իբր *հայեճի)։—Նոյն արմատից են հայոց Ակն. «բախտ նայող, բախտագուշակ, տճկ. baqēǰə, ռմկ. պախըճի), հայվածք Խրբ. «նայուածք». —Հայելի բառը պահուած է Ասլ. Մշ. Ննխ. Ալշ. Երև. Ախց. Պրտ. Ռ. Սչ. հայլի, Մրղ. Սեբ. Սլմ. հոյլի, Հճ. Շմ. հէյլի, Խրբ. հոլլի, Աժտ. հալի, Զթ. հիլլէ, Գոր. Ղրբ. Տիգ. հիլի,

Տփ. հալիլա, *Սվեդ.* հիլիլա, *Ագլ.* ըլլէ՛րի, *Ոզմ.* խէյլէ՛, *Ջղ.* խալլի, *Վն.* խայլիկ ձևերով։

ՓՈԽ.—Հայերէն գւռ. հայլի ձևից փոխառութիւն եմ դրած լազ. yali «հայելի, դիտակ» բառը (*Արրտ. 1911, 418*). բայց սխալ է. լազ. yali ձևն էլ փոխառեալ է յունարէնից, ճիշտ ինչպէս գնչ. yali։—Պատահական նմանութիւն ունի կար. haydu «նայիլ»։—Հյ. գւռ. հայլիկ ձևից է փոխառեալ անշուշտ քրդ. լիլըf *համանիշը. Հմմտ. Ա. կոր. ժգ. 12.* mմ ոգա ժը լիլըքէ տըպինըն (տեսանեմք իբրև ընդ հայելի)։

*ՀԱՅԴՈՒԿ «յեղափոխական անկանոն զինուոր». Նորամուտ բառ, որ գործածական է միայն արդի գրականում։

=*Բուլգար.* hajdúk *(որ և* hajdút*) բառից. սրա հետ նոյն են լեհ.* hajduk, *չեխ.* hajduk, hejduk, *ուկր.* hajdúk, *ռուս.* гайдýкъ, *սլ.* hajdûk, *սերբ.* hàjdūk, *գերմ.* Heiduck, *ֆրբանս.* heiduque, *անգլ.* heyduc *ևն. բոլորի մայրն է հունգ.* hajdú, *յգ.* hajdúk, *որ նշանակում է «վարձու թնդանագէն հետևակ զինուոր՝ թուրքական սահմանի պահպանութեան համար». սրանից յետոյ ստացաւ Արևմուտքում «ծառայ, սպասաւոր» իմաստը, իսկ մերձաւոր Արևելքում «աւազակ» իմաստը (այսպէս բուլգ. սերբ. սլ. որոնցից նաև ռճկ.* حيدود haydud *«աւազակ»), ըստ որում նոյն զինուորները յաճախ կատարում էին աւազակային արարքներ* (Berneker *375*)։ *Հայդուկները լինելով քաջ և յաղթանդամ մարդիկ, տաճկերէնում բառը ստացաւ յետոյ «վիթխարի, յաղթանդամ մարդ» նշանակութիւնը, ինչպէս է նաև ռմկ.* հայտուտ։— *Ա.Ճ.*

ՀԱՅԹ. արմատ առանձին անգործածական, որից կրկնութեամբ հայթհայթել *կամ սրղմամբ՝* հայթայթել *«մի ստոր հնարել, յարմարեցնել, կցկցել, նիւթել» Ոսկ. բ. տիմ. 254. Փիլ. Պիտ.* հայթայթանի *կամ* հայթհայթանի *«հնարք, ջանք, ստոր պատճառներ, պատրուակ» Կիւրղ. ծն. Թգ. Եզն. Ոսկ. յհ. բ. 22 և գաղ. Փարպ.* հայթայթամտել *Կիւրղ. ծն.* հայթայթումն *Նար. կան նաև* հաթայթանի, հեթեթանի, խայթայթել *գրչութիւնները.*—հեթեթանի *ձևից ևթադրուած բառեր են* հեթեթ *«յարմար» ՀՀԲ կամ «համ» Բռ. երեմ. 179,* անհեթեթ *«անյարմար» ՀՀԲ (առանձին տե՛ս* անհեթեթ *կամ* անհեդեդ *«այլանդակ, անճոռնի»).—պարզական ձևով են՝* հայթել *«յօդել, իրար կցել» ՀՀԲ, «կցորդել» Բառ. երեմ. էջ 175.—Սիմ. ապար. 90 ունի* հեթեթ *«հսկա՞յ». Ջայրն հեթեթ և խեցէմորթ! զնորն Աբիլլոս և զՀոոդացին։—Նոր գրականի մէջ* հայթայթել *նշանակում է «մատակարարել», որից* հայթայթիչ *«մատակարար,* fournisseur»։

ՆՀԲ իբր հիւթիւթել, սեթևեթել։ *Հիմնք.* անհեթեթ *բառից։*

ՀԱՅԿ «փոքր». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 175, որի հետ հմմտ. նաև հայ «հսկայ» Բառ. երեմ. էջ 175 (յգ. հայf *«հսկայք» ձևով)։— Անշուշտ մեր ազգի և մեր նախահոր անունն է. բայց թէ ո՞րտեղից է առնում այս իմաստները՝ յայտնի չէ։

○*ՀԱՅՀՈՅ. արմատ առանձին անգործածական, որից* հայհոյել *«վատ խօսք ասել, յիշոց տալ, անարգել, չարախօսել, վատահամբաւել» ՍԳր.* հայհոյանի *Բ. մակ. ը. 4.* հայհոյական *Պրպմ. Արծր. Մագ.* հայհոյիչ *ՍԳր. Ոսկ. յհ.* հայհոյութիւն *ՍԳր.* անհայհոյաբար *Կիւրղ. գնձ.* անհայհոյ *(չունի ՆՀԲ) Իրեն. հերձ. 111. Մոկր. 451.* հայհոյախօս *(նոր բառ)։*

=*Բնաձայն բառ, որ կրկնուած է հայ պարզականից. Հմմտ.* հայ հուշ, յայ յու. *նոյնպիսի բնաձայններ են նաև պրս.* هیاهوی hayāhōy, های و هوی hāy ū hōy *«ժխոր, գոռգոռոց, աղմուկ», արևել. Քրք.* های هوی hayhuy *«վիճաբանութիւն, կագ, կռիւ», որոնք բոլորովին անկախ են հայերէնից։*

ՆՀԲ «ի ձայնէս հա՛յ հո՛ւյ, յայ յո՛ւ, *պրս.* հույահույ, հայահայ, *իբր զավդա «կագ»։* Spiegel, Hüzw. Gram. *189 պրս.* hāy hōy*։ Մերժում է* Lag. Arm. Stud. *§ 1229։ Տէրվ. Մասիս 1882, յուն. 7 յծ.* հայ հուշ *և յայ յու։ Նոյն, Նախալ. 19 յն.* αἰαί*, հյ.* յայ յու, հայ հուշ, *պրս.* hāy hōy *բառերի հետ համարում է բնաձայն։ Նազրճեան, Արևելք 1884*

հոկտ. 17 առնս. հվա, հու *արմատից։ Հինք. պրս.* հայահույ, հայիհիյ։ *Հիւրշ. 178 դնում է պրս.* hāy ū hōi *ձևից փոխառութիւն, բայց նշանակութեան տարբերութեան պատճառով կասկածում է։ Աճառ. ՀԱ. 1899, 206 կրկնուած հայ արմատից։*

Գիհ.—երև. հայհօյել, *Ղզ.* հօվհօվել «հայհոյել», *Առն. (թրքախօս հայոց բարբառով)* հայհօյանիլ, *Սեբ. (թրք. հոմանիշի հետ կըրկնութեամբ)* ֆիւֆիւր-հայօյանիլ։

ՀԱՅՄՇՈՒՇ. *անծանօթ մի բոյս է. Բժշ. ունին միայն Քաջունի Գ. 135 և ՀԲուս. § 1621։*

ՀԱՅՍ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն ներգ. ի հայսի և բց. ի հայսէ)* «ջրով շաղուած և դեռ չմօրուած ալիւր» *Ասկ. ա. կոր.* որից նոր գրականում թելաձայս «վերմիշէլ, շհմրիչէ, vermicelle».

Canini, Et. étym. *238* հաց *բառի հետ միասին՝ կցում է բառկ.* ḫaz «սնուցանել» *ձևին։ Հինք.* հասակ *բառից է համում։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* حيس ḥays «մէջը մի բան լցնելով խառնել. 2. մի տեսակ կերակուր է. պատրաստում են արմաւի կուտը հանելով և կարագով ու չորթանով հարելով. 3. չուան ոլորել» *(Կամուս, թրք. Բրգմ. Բ. էջ 230)։*

Գիհ.—*Սվհդ.* հաս, *Ախց.* Ա̈թ. հոս *(սեռ. Ձթ.* հէսի), *Հմշ.* հէս. *սրանք նշանակում են «խմոր, հայս». իսկ Ղրբ. Շմ.* հոս «իւղով, շաքարով և ալիւրով պատրաստուած զանգուած, որ դնում են գաթայի մէջ»։ *Նոր բառեր են՝* հայսալի, հայսգդալ, հայսդիր *(Հմշ.* հէսդ'իր) «մեծ տաշտ», և *Սեբ.* հասըլել «խմորը լաւ շաղաղել, շաղուել»։ *Ախթ. ունինք նաև* հայս ջուր «մէջը խմոր շաղուելու տաք ջուր», հայս ջրաման «կաւէ աման՝ որ բոնիրը կախելով՝ միջին հայսջուրն են տաքացնում»։

Փհե.—Գաւառական հայսդիր *ձևից է փոխառնել քրդ.* hastir «տաշտ» *(Ճուռտ, Քրդերը Տաճկաց-Հայաստանում, Ա. 102)։*

ՀԱՅՎԱՂ «մի տեսակ բոյս. լտ. consolida, լաւ ևս symphytum» *Ռոշք. ունի միայն ՀԲուս. § 1623։—Նոյն բառը Քաջունի Գ. 136 գրում է* հայվաղ՝ *(վերջաձայնը ղ)* «consoude», *բայց Ա, էջ 542* consoude=*լտ.* symphytum, consolida *ձևի դէմ դնում է Հայ.* խարխոտ, շամղիտա՞կ, *բայց չունի* հայվազ։

ՀԱՅՐ *(հոլովւում է* հօր, հարբ, հարէ, հարց *կամ* հարանց) «հայր» *ՍԳր. փոխաբերաբար նշանակում է նաև «ցեղի կամ ազգի նախահայր, վերակացու, տնօրէն» ՍԿր. Ագաթ. «աբբայ, վարդապետ» ՅՀ. իմ. երև. ածանցման մէջ մտնում է հետևեալ ձևերով.—***հայր,** որից* հայրաբար *Ագաթ.* հայրաբարոյ *Խուզ. Կորիւն.* հայրաբուն *Ագաթ.* հայրանարգու *Ոսկ. մ. ա. 3.* հայրապետ *ՍԳր.* հայրենի *ՍԳր. Ագաթ. Եզն. Եւս. քր.* հայրենիք *Ագաթ. Ոսկ. (այս բառի «հայր» նշանակութեան վրայ տե՛ս Նորայր, Կոր. վրդ. էջ 137).* հայրենասուր *Ա. պետ. ա. 18.* հայրիկ *Տոբ. ժա. 13. Եւագր.* աճհայր *Եբր. է. 5.* կնքահայր *Եփր. խոստ.* միահայր *Եւս. քր.* ֆաջահայր *Բ. մակ. բ. 22.* զուգահայր *Խոր.* նախահայր *Փիլ. Պիտ.* թագատրահայր *Յայսմ.* խոստովանահայր *Գր. հր.* հայրենակից, հայրենակցուհի, հայրենակցական *(նոր բառեր) ևն։—***Հօր** *(սեռականի ձևը), որից* հօրաբարոյ *Ագաթ.* հօրամոյն *Բ. մակ. ժ. 10. Ագաթ.* հօրաոյր *Ղևտ. ժը. 12. ի. 19. Եւս. քր.* հօրեղբայր *ՍԳր.* հօրու «խորթ հայր» *Մխ. գտ.* հօրորդի «ազնուական», հօրորդութիւն «ազնուականութիւն» *Ձքր. ծործ. (տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. էջ 119 և Յուշարձան, էջ 169),* համհօհրայ *Ղևտ. ժը. 11 ևն։—***Հարանց** *(յոգնակի սեռականի ձևը), որից կազմուած է* հարանցամոյն «հօրնմանակ» *Կորիւն (տպ.* հարուստ ամացն! *էջ 12, որ ըստ Գ. Տ. Մկրտչեանի, Գորիա և Շմոն, էջ 19 պէտք է ուղղել* հարանցամոյն, *ինչպէս ունի էջմիածնի Ա. 611 ձեռագիրը)։—***Յօր-**, *որից* յօրայ «խորթ հայր» *Սերեր. Փիլ. Խոր. (այս բառի վրայ տե՛ս առանձին)։*

=*Բնիկ հայ բառ, որ յառաջանում է հնխ.* pətḗr *ձևից (սեռ.* հօր<հաւր<*հնխ.* pətrós). *ցեղակիցներից համմտ. սանս.* पितर् pitar-, *գնչ.* pita, *քուչ.* pātr, *գնդ.* 𐨨𐨪𐨟𐨁 pita *(տր.* piθrē, fəðrōi), *հպրս.* 𐎠𐎼𐎹 pitā *(սեռ.* piθra), *պհլ.* pit, pitar

(գաղափարագրով գրուած է پدر pit *և* پدر ج pitar *(ըստ* Nyberg, Hilfsbuch des Pehlevi *1, 21), պրս.* پدر pidar, padar, پیر piyar, *սակ.* pyari (MSL *18, 101 և 121), օսս.* fidá, fjd, *բելուճ.* p'iθ, *աֆղան.* plār, *քրդ.* piėr, *զազա* pī (Horn § *286), յն.* πατήρ *(սեռ.* πατρός), *լատ.* pater, *իտալ.* padre, *սպան.* padre, *ֆրանս.* père, *գոթ.* fadar, *հբգ.* fater, *գերմ.* Vater, *անգսք.* foeder, *հհիւս.* faðer, *հոլլ.* vader, vaar, *անգլ.* father (Kluge *505), հիւդ.* athir, *բոլորն էլ «հայր»։ Բալթիկ-սլաւական խմբի մէջ այս բառը ջընջուած է՝ փոխանակուելով հնխ.* atta *ձևով, որ յատուկ էր մանկական լեզուին. համմտ. սանս.* attā *«մայր, մեծ քոյր», յն.* ἄττα *«հայրիկ», լտ.* atta *«հայր, հայրիկ», գոթ.* atta *«հայր», հբգ.* atto, *հհիւս.* atte *«հայրիկ», ալբան.* at *«հայր», հսլ.* otĭcĭ, *ռուս.* отецъ *«հայր» ևն։ (Իբր բնաձայն նման բառեր գտնուում են նաև ոչ-հնդեւրոպական լեզուների մէջ. ինչ. հունգ.* atya, *ֆրք.* ata, *բասկ.* aita *«հայր»)։ Առաջ կարծում էին լեզուաբաններըբ թէ հնխ.* pətér *կամ* patēr *յառաջացած է* pā *«պահել, պահպանել» արմատից, բայց այժմ այս կարծիքը ճիշտ չի համարւում, և ենթադրում են թէ հնխ.* pətér *յառաջացել է մանկական* pa, papa *«հայրիկ» բնաձայնից* (Walde *565,* Pokorny *1, 44 և 2, 4,* Boisacq *75,* Ernout-Meillet *704—5)։— Հիւրշ. էջ 463։*

Klaproth, Asia polygl. *106 իսկ.* ater *և էրզ.* aδer *համանիշներին է կցում։ ՆՀՔ հանում է այր բառից։ Ուղիղ մեկնութիւնն ունին նախ* Peterm. *26, 33, 153,* Windisch. *22, 25 և յետոյ* Gosche *14,* Böttich. Horae aram. *36, 67 են են։* Thomaschek SWAW *4, 66 (Թրգմ. ՀՍ 1894, 18) կցում է Թրակ.* pair *ձևին։ Հիւնք. ուղղականը այր բառից է հանում, իսկ սեռականը պրս.* խor *«արեգակ» բառից։* Patrubány SA *1, 3 կըցում է հունգ.* férj *«փեսայ» բառի հետ։* Jensen IF Anz. *14, 50 համապատասխան հաթ. բառի մէջ գտնում է* -t- *ձայնը։ Յակոբեան, Բանաս. 1900, 37 հայրապետ բառը դնում է պրս.* hirbed *«իշխան» = զնդ.* atrapaiti *ձևից։*

ԳԻՒ.—Ագլ. հայր, Ախց. Ակն. Ասլ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. հար, Ղրբ. հmր, հէր, Ալշ. Գոր. Երև. Համշ. Մշ. Շմ. Տփ. հէր, Մկ. Մրզ. Ջղ. Սլմ. վն. խէր, Ոզմ. խեր.—ջընջուած է Խրբ. Սվեդ. Տիգ.՝ փոխանակուելով պապ կամ տատ բառով.—2. Կր. հօրէխբ'ար, Համշ. հօրբ'էր, Ագլ. հէ'րբmր, Գոր. Ղրբ. ղօ'րփէր, Ալշ. Բլ. հօխպէր, Սլմ. խօրախպէր, Ջղ. խօրօխպէր, Սչ. հօբ'ար.—(օտար փոխառութեամբ՝ Տիգ. 'ամմօ, Պլ. ամուջա).—3. Ալշ. Ախց. Սեբ. Սչ. հօրfուր, Խրբ. հօրfօր, Ասլ. հէօրfիւր, Մկ. Ոզմ. խօրf'ուր, Սլմ. խուրf'իւր, Ջղ. խարաfուր, Երև. հօ'fիր, Ղրդ. հա'fուր, Ղրբ. հա'fու։—Նոր բառեր են հայրաւոր, հայրամեռ, հայրապապ, հայրաստատ, հայրացու, հայրեմանակ, հայրէցորդի «բնաւ ամենևին», հարաւիլ, հարաւնց գնալ.—Էնկիւրիի Թրքախօս հայերն ունին խօստանաւէայր «խոստովանահայր»։

+ՀՍ.33 *«խնդիրք, աղաչանք. 2. հարցուփորձ, քննութիւն». (այս երկու նշանակութեանց կապակցութեան համար համմտ.* խբնդրել *«աղաչել և փնտռել», յուզել «փնտռել» և ուզել «ուզենալ, խնդրել»). որից* բեղ հայց անկանել *«փնտռել, հարցուփորձ անել» Վեցօր. էջ 11.* հայց և խնդիր լինել *«փնտռել» Վեցօր. 173.* հայցել *«խնդրել, աղաչել, աղերսել» ՍԳր. «փնտռել» Ոսկ. յհ. ա. 14.* հայցուածք *Ա. յհ. ե. 15. Դատ. ը. 24.* հայցական *(հոլովը) Երզն. քեր.* բարեհայց *ճառընտ. մշաւհայց Խոր. Հռիփ.* արդարահայց *Ասող.։*

=Բնիկ հայ բառ. նոյն է այց արմատի հետ. երկուսն էլ նշանակում էին նախապես «քննութիւն, հարցափորձ, աղաչանք» (տե՛ս այց բառի տակ). բայց յետոյ նշանակութեանց զարդացմամբ և տարբերացմամբ դարձաւ այցել «այցելել, տեսութեան երթալ», հայցել «աղաչել»։

Աւետիքեան, Քերակ. 1915, 311 ն յաւելուածով այց բառից։ ՆՀՔ յծ. այց։ Lag. Urgesch. *336 սանս.* sam-yāč: Müller SWAW *42, 257 նոյն է դնում* հարցանել *բայի հետ, իբրև լտ.* precor,

զնդ. peres, պրս. pursīdan ևն։ Նոյնը նաև Justi, Zendsp. 186 բ։ Տէրվ. Altarm. 48 և Նախալ. 67՝ մերժելով այս մեկնութիւնները, դնում է ն յաւելուածով ծագած այց բառից և կցում է գերմ. heischen, հբգ. eiscōn ևն ցեղակիցներին։ Meillet MSZ 7, 162 համեմատում է հյ. այց և սանս. ičháti։ Հիւնք. այց բառից։ Հիւրշ. Armen. Gram. 418 մերժում է միացնել այց բառին և նրա ցեղակիցներին։ Գազանճեան, Արև. մամ. 1902, 76 այց բառից ն մասնիկով։ Pedersen KZ 39, 438 (որից նաև Brugmann, Grundr.² II² էջ 839) հնխ. pi>ն մասնիկով՝ այց բառից։ Մ. Ս. Դաւիթեէկ. Յուշարձ. 398 իսլ. aithesc «պատասխան», հրրբտ. arecer, areesc «փափագ», հբգ. eiscōn, հսլ. iska։

+ՀԱՆ «մեծ մայր» Ոսկ. բ. տիմ. էջ 172. Փիլ. որից ի մասնիկով՝ հանի (սեռ. հանւոյ) «մեծ մայր» Բ. տիմ. ա. 5 (ի հանւոյ կամ ի հանոյ ձևով.—նթէ վերջինն է ուղիղ, պատկանում է հան ձևին). Կանոն. Խոր. Նար. հանիկ «մեծ մայրիկ, մամիկ» Սիր. ապշխ. Վրդն. պտմ. էջ 123, Յայտմ. յունվ. 8, 29 (երեք անգամ)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. an- ձևից, որ նշանակում է «հօր կամ մօր մայր, մամ, տատ». ցեղակիցներից ունինք լտ. anus «պառաւ կին», յն. ἀνύς «մօրը կամ հօրը մայրը», հբգ. ana «մեծ մայր», ano «մեծ հայր» (իբր արական և իգական), մբգ. ane, գերմ. Ahn, Ahne, հպրուս. ane «մամ, մեծ մայր», լիթ. anýta «կնասուր, տալ», աֆղան. anā «մեծ մայր», կամխ. hannut «տատ, մեծ մայր» (Walde 49, Trautmann 9, Kluge 8, Pokorny 1, 55, Ernout-Meillet 55)։ Համարւում է հնխ. ժամանակի մանկական լեզուի բնաձայն բառ։ Հայերէնի մէջ ն յաւելուած է, ինչպէս նաև հաւ «մեծ հայր»=լտ. avus բառի մէջ։—Հիւրշ. 463։

ՆՀԲ լծ. Բրք. ana «մայր»։ Lag. Urgesch. 124 աֆղան. niyā, զնդ. nyāke «մեծ մայր»։ Justi, Zendspr. 319 բ զնդ. hanā «պառաւ կին» բառի տակ է դնում հյ. ին և հանի։ Նոյնը տե՛ս նաև Müller SWAW 66, 272։ Տէրվիշ. Նախալ. 110. սանս. sana, լատ. senex, յն. ἕνη, գոթ. sin-ista «հնագոյն», sin-teino «միշտ» բառերի հետ՝ դնում է հյ. ին, հանի, հանապազ, բոլորն էլ հանելով հնխ. sana «հին» արմատից։ Հիւնք. Բրք. անա, նիանէ, անանէ «մայր»։—Müller WZKM 10, 276 ուզում է փոխառութիւն համարել իրանեանից։ (Իրանեան այս բառն է զնդ. hanā- «պառաւ կին», որ ձևով իրօք շատ յարմար է հայերէնին, մանաւանդ նախաձայն հ-ի պատճառաւ։ Բայց հայ բառը չի կարող սրանից փոխառեալ լինել, նախ՝ նշանակութեան տարբերութեան պատճառով, երկրորդ՝ նրա համար, որ իրանեան բառը շատ հազուագիւտ մի ձև է և պակասում է պարսկականում)։ Հիւրշ. 463 վերի ձևով մեկնելով հանդերձ՝ կասկածով յիշում է նաև հին բառը, իբր թէ սրա՛ն ցեղակից լինէր։ Մատ. ИАН 1913, էջ 178 ափխազ. á-an, չերքէզ. ադիգէ hane «մայր» բառերի հետ։ Schmidt KZ 47, 189 համարում է հնխ. seno- «հին» բառի ձայնդարձը (իբր *sn̥), հնխ. an- ձևի դէմ դնելով հյ. աներ։ Այս մեկնութիւնը ընդունում է Pokorny 1, 56։

Գիմ.—Զղ. խանիկ «մեծ մայր»։

Փոխ.—Վրաց. ბაბი հանի «նախնիք, предки». այս բառը ցոյց է տալիս, որ հնագոյն հայերէնում կար նաև հանի «տատ» բառի արականը, ինչպէս է և գերմանականում։ Միևնոյն ժամանակ՝ վրացերէն բառի գոյութիւնը ապացոյց է՝ որ հյ. հանի փոխառեալ չէ՛ իրանեանից։

ՀԱՆ (մասնիկ) տե՛ս համ-։

ՀԱՆ. արմատ առանձին անգործածական, որից են հանել «հանել, յափշտակել, բաժին հանել», փխբ. նաև «թարգմանել, տարածել, հռչակել» ևն։ ՍԳր. Ագաթ. Ոսկ. Կիւրղ. Թգ. Եզն. Եւս. քր. Կոչ. հանուլ Ծոր. ժ. 11. հանանիլ «խլուիլ» Նիւս. կազմ. Փիլ. հանեալ «արձակուած կին» ՍԳր. հանելի «լծակ» Նոր. գիւտ բ. մնաց. դ. 16. հանածոյ «մեհատազ, հրահալելիք» Ոսկիփ. հանելուկ Բրս. մրկ. խաչահանու Ագաթ. կայծակնահանու ՅՀ. իմ.

պալ. նորահանուկ «նորելուկ» (չունի ԱԲ) Առաք. պտմ. 207. սրտահանութիւն «սիրտը ցաւացնելն ու գրգռելը» Ոսկ. ես. պարզ արմատը երևան են հանում՝ կնահաճ «կնաթոզ» Ոսկ. մ. ա. 17. պատկերահան Ճառընտ. հանիմ (անեզական. սեռ. -աց) «մեռած հանելու տեղ» Ոսկիփ. արիւնահան Բուզ. մսահան ՍԳր. երգահան Նար. քր. գողահան Մանդ. գերեհան Շար. դիահանիմ Ոսկ. տիտ. երազահան ՍԳր. երկաթահանիմ Խոր. աշխ. ծխահանիմ Սիր. ժդ. 24. գինեհան Շիր. համբաւահան Բուզ. սերմանահան «սերմնացան» Մտթ. ժդ. 3. ևն։ Կրճատմամբ ձևացել է ծխան (փխ. ծխահան) «ծխնելոյզ» Երզ վիպաս. (առ. Մագ.)։—Նոր բառեր են հանիմաբանութիւն, հանիմահան, հանիմագործ, հանիմածուխ, խցահան, ջրհան, ֆարահանիմ, օդահան, աղահանիմ ևն։

Brosset, JAs. 1834, 369—405 մեր հանիմ բառի հետ է համեմատում պրս. kān, վրաց. ֆանի հոմանիշները, որոնք ո՛չ մի յարաբերութիւն չունին, որովհետև հայերէնի մէջ ֆ արմատական չէ։ Peterm. 26, 30 սանս. hṛ: Մորթմանն ZDMG 26, 570 բևեռ. siu-khani «պատերազմ», ուր khani=հյ. հան. համմտ. գերմ. Feld-zug։ Justi, Zendsp. 90 գնդ. xa «աղբիւր» բառի տակ է դնում հյ. kankh (=հանիմ)։ Նոյն, Kurd. Gram. 204 քրդ. ēnim «առնեմ» բայի հետ։ Նաղրճեան, Արևելք 1884 նոյ. 16 սանս. han։ Bugge IF 1, 458 ի յաւելուածով՝ նախաւոր *anō ձևից, իբր յն. ἀνά սնս. ániti «շնչել», գոթ. uz-ana «արտաշընչել» են։ Հիւնք. յն. ἀνίημι «հանել ի վեր կամ արտաքս», ἀνωθέω «ի վեր մղել, բարձրացուցանել»։ Meillet, De ind. men, էջ 26 և MSZ 16, 245 սանս. sanōti «շահիլ, ձեռք բերել, օգտուիլ, ստանալ», յն. ἄνομαι, ἀνύω «կատարել, լրանցել, ի գլուխ հանել» բառերին իբրև ցեղակից։ Նոյնը յիշում է Հիւրշ. IF Anz. 10, 48: Brugmann, Grdr.² II³, էջ 130 հնխ. sen արմատի sn̥- ձայնդարձից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. خَنَّ xann «մաս մաս հանել» (Կամուս, Թրգմ. Գ. էջ 624)։

Գիւտ.—Ալշ. Հճ. Մշ. Սչ. հանել, Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. հանել, Ագլ. Զթ. Խրբ. Շմ. Տփ. հանիլ, Ասլ. հանէ՝լ, Տիգ. հոնել, Սվեդ. հոնիլ, Ակն. հէնել, Համշ. հօնուշ, Զղ. Սլմ. Վն. խանել, Մրղ. խանել, Մկ. Ոզմ. խանիլ։—Նոր բառեր են՝ հանիմ «պարար», հանիչիմ, հանոտել, հանվտիլ, հանուրիլ։

Փոխ.—Տե՛ս ֆաղ (ֆաղ-հանիմ) բառի տակ։—Հայերէնից փոխառութիւն եմ կարծում նաև կապադովկ. յն. τραχάγκι, τροχάγκι, որ Karolides, Γλ. συγκρ. 217 բացատրում է հետևեալ ձևով. «ἑλκυστήρ, ἐργαλεῖον σιδηροῦν, ἔχον αἰχμὴν ἀγκιστρώδη δι' ἧς ἑλκύουσι τὸν ἐν καμίνῳ ἀναλελυμένον καὶ κεκαθαρμένον σίδηρον. աքցան, այն է ծայրը կեռ երկաթեայ գործիք, որով բովի մէջ հալած ու մաքրուած երկաթն են հանում»։ Karolides կցում է այս բառը լտ. trahere և գոթ. treihan ձևերին. բայց թուում է թէ բառի վերջին մասը հյ. -հանիմ ձևն է. առաջին մասը անծանօթ. ամբողջը փոխառեալ է հյ. գւռ. մի ձևից։

*ՀԱՆԱՊ «մեծ և լայն գաւաթ» Վստկ. 43 (կիսակուժ մի լնուս կամ հանապ մի), էջ 116 (ապիկի հանապ), Լծ. փիլ. Լծ. բրս. գ. ունի միայն ԱԲ։

=Ֆրանս. hanap բառն է, որ նշանակում է «մի տեսակ բաժակ՝ ոտքով և կափարիչով». այս ձևի բաժակը գործածական էր ամբողջ միջին դարում և աւելի ուշ. Ֆրանսիայում մինչև ԺՉ դարը, Գերմանիայում մինչև ԺՀ դարը։ Բառիս բուն աղբիւրը գերմանական է. համմտ. հրգ. hanap, hnapf, մբգ. napf, գերմ. Napf, հսաքս. hnaep, հոլլ. nap, նոյն նշ։ Գերմանականից անցաւ լատին և ռոման ընտանիքին, ուր ունինք ստ. լտ. hanappus, anappus, nappa, իտալ. nappo և հֆրանս. hanap։ Դժուար է կարծել թէ նոյնից յառաջացած լինին նաև հսլ. konobŭ, konobĭ, ռուս. коноб'ъ, коношь «լացքի տաշտ, պաուկ, փայտեայ կուժ» (Kluge 345, Boisacq 534, Berneker 558)։

Ուղիղ մեկնեց Հացունի, Ճաշեր և խնճոյք, էջ 30։

ԳԻՒ.—Հճ. հանօբ «*թաս*»։

ՀԱՆԱՊԱՉ «*միշտ, շարունակ*» *ՍԳր. Եզն. որից* հանապազարուղխ *Ագաթ.* հանապազախօս. *Ագաթ.* հանապազասուտ *Տիտ. ա. 2. Ոսկ. տիտ.* հանապազորդ *ՍԳր. Եւս. պտմ.* հանապազորդել «*յաճախել*» *ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. յհ. բ. 17. Ագաթ.* հանապազօր *ՍԳր.* հանապազօրեայ *Բ. մն. լա. 2. Ոսկ. յհ. ա. 5.* զօրհանապազ *ՍԳր.*։

=*Իրանեան փոխառութիւն է, ինչպէս ցոյց է տալիս բառիս արտաքին երևոյթը. առաջին մասը՝* հանա- *նոյն է սանս.* sánā, sanāt, sanā-tána «*միշտ*» *ձևերի հետ, որոնք տալիս են իրան.* *hana-. *բայց անյայտ է* -պազ։

ՆՀԲ լծ. հյ. համայաւէժ, *յն.* σύμπας «*ամբողջովին*», *պրս.* هربار har-bār «*ամէն անգամ*»։ Windisch. *22* հանակցում է *սանս.* sanā-tana *ձևին*։ Müller BVS 5, 139, WZKM 5, 355 *պրս.* هنوز hanōz «*տակաւին*»=*հպրս.* *hanā apa-ča «*շարունակ*»։ Justi, Dict. Kurde, *էջ 457 քրդ.* heiž, heiža, heižam «*նորից*», *զազա.* hén'ī «*տակաւին*», *պրս.* hanōz։ *Տէրվ. Մասիս 1881 մայ. 12 սանս.* sana «*միշտ*», *գոթ.* sinteinō *ևն, իսկ Նախալ. 110 կցում է* ինձ, հանի *բառերին (տե՛ս* հանի)։—*Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. էջ 195 պրս.* همیاز hamabāz «*ամէն անգամ*»։ *Հիւնք. պրս.* էնպազ, հէմպազ «*ընկեր, սեղանակից*»։ *Հիւբշ.* Arm. Stud. *էջ 37 և* Arm. Gram. *463 իրրև բնիկ հայ՝ բառի առաջին մասը կցում է սանս.* sánā, sanát, sanā-tána «*միշտ*», *լտ.* sem-per «*միշտ, շարունակ*», *գոթ.* sin-teins «*հանապազորդ*», sin-teinō «*միշտ, շարունակ*» *բառերին. (վերջին երեք ձևերը կապ չունին սանսկրիտի հետ. տե՛ս* Walde *698—9). բայց* -պազ *չմեկնուած մնալու պատճառով՝ անապահով է համարում Մէնէվիշեան ՀԱ 1897, 248 մերժելով Հիւբշմանի մեկնութիւնը, գնում է պրս.* hambāz «*ամէն անգամ*». (*իմա՛ պրս.* hama bāz «*ամէն անգամ*». *սակայն այս ձևը չի կարող յարմարիլ, որովհետև* bāz<*պհլ.* apāǰ)։ Patrubány SA *2, 34* համ-+*պրս.* bāz «*նորից*»։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 137* հան+ապա+զ *մասերից բարդուած։* Walde *698 և* Pokorny *2, 494 կրկնում են Հիւբշմանի մեկնութիւնը, բայց առանց կասկածականի և ամբողջը կցելով հնխ.* seno-><*հյ.* հին *բառին*։

ՀԱՆԱՐ «*հին կամ կազմել*». *այսպէս ունի Բառ. երեմ. էջ 175*։

ՀԱՆԳ «*դադար*». *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* հանգչիլ *(կտր.* հանգեայ, *հրմ.* հանգի՛ր. չ *յօդակապ է) «հանգստանալ» ՍԳր. «վերջանալ, դադարիլ» Եւս. քր. «մեռնիլ» ՍԳր. Կորիւն.* հանգնուլ *վրք. հց.* հանգուցանել *ՍԳր. Ոսկ. Ագաթ.* հանգուցեալ *իմ. դ. 10. («փլած, փուլ եկած» իմաստով գործածուած է եկեղեցու համար Մխ. այրիվ. էջ 72).* հանգիստ «*դադար. 2. բնակութեան տեղ. 3. մահ. 4. գերեզման. 5. գործի կամ երգի վերջաւորութիւն. 6. իղձերի լրացումը*» *ՍԳր. Մծբ. Կորիւն. Վեցօր. Եւս. պտմ.* հանգստարար *Եւս. պտմ.* հանգստագոյն *Եւագր.* հանգստանոց *Ագաթ.* մահահանգիստ *Ագաթ.* հոգեհանգիստ *Մաշտ.* ձմեռնահանգիստ *Կաղկանտ.* ճաւահանգիստ *ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. ա. 1, 16.* անհանգիստ *ՍԳր.* հանգստարար *և սրա իբր իգականը՝* հանգստարարիթայ *(կազմուած ասոր.* ܐܝܬܐ -ita *իգականակերտ մասնիկով) Եւս. պտմ. բ. 17 (տե՛ս Վարդանեան* WZKM *27 (1913), 126—7 և ՀԱ 1913, 133),* հանգրստանալ, հանգստութիւն *(նոր բառեր)*։

ՆՀԲ լծ. անկանիլ, ընկողմանիլ *և յանգիլ։ Տէրվ. Մասիս 1882 յունիս 7 լծ.* յանգ-չիլ, *իսկ Նախալ. 109 տե՛ս* հակ։ *Հիւնք.* յանգիլ *բայից։* Pedersen, *Նպաստ 37 լտ.* quiescō «*հանգստանալ*»?—*Ագաթանգեղոսի* հանգեստապատական *բառի վրայ ընդարձակ տե՛ս Բազմ. 1897, 271. Նոր տպ. էջ 10 չունի այս բառը, որովհետև չկայ և ո՛չ մի ձեռագրում։ Այս մասին տես նաև Հ. Վարդանեան, Բառաք. դիտող. հտ. Գ, էջ 80*։

ԳԻՒ.—Բառիս պարզական հանգ *արմատը թէև չունի գրաբարը, բայց պահում են Ասպ. Ալշ. Երև.* հանիմ, *Մշ.* հանգ՝, *Մկ.* խանգ՝,

վն. խանճ¹ *«շունչ, հանգստութիւն»* նշանակութեամբ. *(նոյնը գիտեն նաև Իլ. Գնձ. Խն.). Համմտ. հետևեալ դարձուածները.* հանգ առնել *«շունչ առնել, հանգչիլ, հանգստանալ»,* հանգը կտրիլ *«շունչը կտրիլ, շնչասպառ լինել»,* հանգ հաշել *«շունչ քաշել»,* հանգ մը *«մի րոպէ, մի շունչ քաշելու չափ ժամանակ».— 2. Երև. Մշ. Տփ.* հանգիստ, *Սչ.* հանգիսդ՝, *Սեբ.* հանգ՝իսդ, *Կր. Ննխ.* հանճիստ, *Տիգ.* հոնճիսդ, *Սվեդ.* հանգէստ, *Ջղ. Սլմ.* խանգիստ, *վն.* խանգ՝իստ.— *3. Երև.* հանգշիլ *«ճրագը ևն անցնիլ, մարիլ», Սչ.* հանգ՝շել, *Ախց.* հանգշիլ, *Սեբ.* հանգչ՝իլ, *Պլ.* հանճշիլ, *Ակն.* հօճշիլ, ֆօճշիլ, ֆօ՛շիլ, *Ասլ.* հէօ*ջիլ, *Ջղ.* խանչկել *«մարիլ»։ Նոր ձևեր ևն* հանգիլ *Ակն. Մկ. «հանգստանալ», վն. «մեռնիլ», Երև. Ղրբ. վն. Տփ. «կրակը կամ ճրագը մարիլ» (Սլմ.* խոյնել), հանգցնել *(Ջղ.* խանչկացնել) *«մարել»,* հանգած *Տփ. «նիհար»,* հանգակտուր *«շնչասպառ»,* հանգավանճ *«աւերակ վանք»,* հանգոիլ *Մշ. «շունչը կտրիլ»։*

*ՀԱՆԴԱՄԱՆՔ, ի–ա *հլ. (գործածւում է անեզաբար) «մի բանի պարագաները, որ պիտութիւնը. 2. կերպ, եղանակ, ձև. 3. ձև, օրինակ, մօդէլ. 4. պատճառ, ապացոյց. 5. տեղեկութիւն» ՍԳր. Կիւրղ. ծն. Կոչ. Ոսկ. յհ. բ. 15 և գազ. եզն. Կորիւն. Եւս. քր.* հանգամանօրէն *«մանրամասնութեամբ» (նոր բառ)։*

=*Պհլ. պազ.* hangām *«ժամանակ, միջոց, տարուայ եղանակները», պրս.* هنگام hangām *«ժամանակ», հպրս.* *hangāma *«ժամանակ»* (Horn § *1109)։ Սրանց հետ համմտ. նաև* անգամ: *Յատկապէս «որպիտութիւն ևն» նշանակութիւնները աւանդուած չենք գտնում իրանականում, բայց յայտնի է, որ ժամանակ նշանակող բառերը ցոյց են տալիս նաև որպիտութիւն. համմտ. հյ.* իբր *և* երբ, իբրև *«երբոր» և «ինչպէս», եղանակ «տարուայ ժամանակները» և «կերպ, ձև, որպիտութիւն»։*

ՆՀԲ ի համ *և* գալ *կամ* համանգամայնի: *Պատկ.* Изслъд. *էջ 11 գնդ.* hanjamana, *պրս.* anjuman, *սանս.* saṇgamana *«ժողով»։ Հիւնք. պրս.* hangām *«ժամանակ» բառից։*

ՀԱՆԴԱՄՈՒՄՆ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Ոսկ. Հռովմ. 252. «Ահեցո՛ զճշմարիտ փառացն զհանդամումնն. լցի՛ր հոգևրական իմաստութեամբն»։ Ըստ հրատարակչին՝ յոյնն ունի «զսէր կամ զտենչումն». Թերևս կարդալ* զցանկացումնն. *ըստ այսմ էլ ԱԲ դնում է «սէր, փափագ»։*

ՀԱՆԴԱՆԱԿ, ի–ա *հլ. (կայ նաև գրծ.* հանգանակիւ *Փիլ. լին.) «ընկերովի հաւաքուած գումար՝ որևէ բանի վրայ ծախսելու համար, յատկապէս խնջոյքի կամ ուրախութեան. 2. ամէն մէկին ընկած բաժինը.* écot. *3. խմբով կոչունք.* pique-nique» *Ես. խգ. 6, Սիր. ժր. 33. Կանոն, էջ 62. Ոսկ. յհ. ա. 2. Կոչ. «Հաւաքում, գումար» Կրպտ. ոտ. «Հաւատքի դաշինքը» Պարզ. որից* հանգանակել *«ընկերանալ, միանալ, հաւաքել, ժողովել» ՍԳր. Շիր. «համեմատել» Մագ.* հանգանակութիւն *Պիտ.* հանգանակապետ *Բրս. արբից.* հանգանակաւոր *Գէ. ես.* հանգանակող *«շռայլ, գեղխ» Մխ. դտ. 198, 385 (բառիս այս իմաստի համար համմտ. իմ Հայ նոր բառեր հին մատ. 63). այս իմաստի հնագոյն գործածութիւնը ունինք Ոսկեդարից. «Որդիս մեր այս խեռ է և անզդամ, և ոչ լսէ ձայնի մերում, հանդանակող է և արբշիռ» Ր. Օր. ԻԱ. 20։ Գրուած է նաև* հանկանակ *ևն։*

ՆՀԲ «ի համ գալ *կամ* համահանակ»։ *Հիւնք. պրս.* հէնկեամէ, էնկեամէ, էնճիւմէն *«ժողով»։—Բառական յարմար է պրս.* هنکامه hangāma *(=պհլ.* hangamak*) «ժողով», բայց մ ձայնը դժուարութիւն է հանում։*

Փոխ.—Վրաց. ანკანაკობა անկանակոբա *«խնջոյք, հարբեցողութիւն» և* ლანკანაკება լանկանակեբա *«հեշտասիրութիւն. 2. հարբեցողների հետ գեղխութեամբ պարապիլ (վերջինը կապելով անշուշտ վրաց.* ლანკანი *լանկանի «մեծ ափսէ» բառի հետ՝ ժողովրդական ստուգաբանութեամբ)։*

ՀԱՆԴԷՏ, ի *հլ. (ՆՀԲ դնում է նաև ի–ա հլ., բայց առանց վկայութեան) «նման, հաւասար, նոյնաձի» Փիլ. լին. Պորփ. ՅՀ. իմ. ևկեղ. որից* հանգիտապատիւ *«համապատիւ» Բ. պետ. ա. 1. Ոսկ. ես. մ. ա. 15, յհ. բ. 17, գազ. Սերբեր.* հանգիտակ *հոր.* հանգիտաբէր

Փիլ. երկնահանգէտ *Գր. տղ.* աենահանգէտ «*անհաւասար*» *Փիլ.* գուգահանգէտ *ԱԲ. ձայնական օրէնքներին հակառակ են՝* հանգէտրնբաց *Առ. որս.* հանգէտամանակ *Վրդն. ծն.* հանգէտահասակ (*բայց նաև* հանգետահասակ) *Փիլ.*։

ՆՀԲ «գրի և հանկէտ, *իբր* համակէտ. *լծ. պրս.* նիշնէնտ, *որ է նոյնչափ, նոյնպէս»։* Windisch. 22 հան *մասնիկով։* Lag. Urgesch. 403 *սանս.* samvid. Müller WZKM 10, 355 *իբր* համ-ա--գէտ=*յն.* ὁμοειδής, *կազմուած* համ *մասնիկով և* *գէտ=*յն.* εἶδος «*երևոյթ, կերպարանք*» *բառով։ Հիւբշ. 176 մեկնում է* համ *մասնիկով կէտ բառից, իսկ 512 մերժում է* Müller-*ի մեկնութիւնը, որովհետև* *գիտ<vid «*տեսնել*» արմատ չկայ հայերէնի մէջ։*

**ՀԱՆԳԱՅՆ «նման, պէս» ՍԳր. Նաս. քր. «նմանապէս» Կորիւն. «իբր, մօտաւորապէս» Նաս. քր. որից* հանգուճակից *Սեբեր.* հանգուճաւոր *Ոսկ. մ. բ. 18.* հանգուճապատիւ *Գնձ. երկնահանգոյն Շար. Նար. խչ.* հանգուճական *Երզն. ոտ. երկն.—բառիս հետ նոյն են՝* հանգուճակ «*նման*» *Սեբեր. (որից* հանգուճակացեալ *Անան. ևկեղ.* հանգուճակեալ *Շնորհ. ոտ. ևն), համգուճակ «նոյնպիսի, նման». դիտէ միայն ԱԲ.* համագուճակ «*համանման*» *Շիր.*։

=*Պհլ.* 𐭧𐭲𐭲𐭪𐭭 hamgōn = *պրս.* همگون hamgōn = *գնդ.* hamagaona *և պհլ* 𐭧𐭲𐭲𐭪𐭭𐭪𐭣 hamgōnak = *մանիք. պհլ.* האמגונג hamgonag (Salemann, Manichäische Stud. ЗАН *8, էջ 82)* = *պազ.* hamgūna = *պրս.* همگونه hamgōna «*նման, նոյնատեսակ, նոյնպիսի*» *ձևերից փոխառութիւն. առաջինը տալիս է* հանգոյն, *երկրորդը՝* հանգուճակ։ *Բոլորն էլ կազմուած են իրան.* ham- «*նոյն*» *և* gōn «*ձև, կերպ, եղանակ*» *բառերից։ Կարելի չէ ընդունել՝ որ* հանգոյն, հանգուճակ *բարդուած լինին հենց հայերէնի մէջ, որովհետև գոյն «կերպ» ձևով բան չունինք մեր լեզուում։—Հիւբշ. 176։*

ՆՀԲ «որպէս թէ համգոյն, *նոյնգունակ, միօրինակ»։ Պատկ.* Mamep. I, *10 պհլ.* hamgūnak: *Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. 196 պրս.* hamgōn: *Հիւնք. պրս.* հէմկիւն, հէնկիւն: Brugmann, Grdr.² I 356 *խօսում է մ ձայնը ն-ի վերածելու մասին. իբր* համգոյն>հանգոյն:

**ՀԱՆԳԱՄ, ի *հլ. «կապ, կնճիռ» Ոսկ. մ. գ. 3. Վեցօր. «կնճռոտ, դժուարակնճիռ» Նար. երգ. Վրդն. ծն. «ճամբորդի՝ ձին փոխելու տեղը, հանապարհի կայարան» Պտմ. աղէքս. Խոր. բ. 43. «երաժշտական մի խազ է» Ոսկիփ. որից* ոսկեհանգոյց *Կաղնկտ.* հանգուցեալ «*վրան հանգոյց շինած*» *Վրդն. պտմ. տպ. Վենետ. էջ 141։*

ՆՀԲ հա՛մ ագոյց: *Տէրվ. Նախալ. 109 տե՛ս* հակ: *Հիւնք. նոյն է դնում* հանգչիլ, հանգիստ *բառերի հետ։* Bugge ZAPh *165 *համգոյց<հնխ.* sam-wi-:

ԳԻՒ.—Զթ. հոնգիւց, *Սվեդ.* հանգայց, *Համշ.* հօնգուց, *Սլմ.* խոնգ'էօց, *Մշ.* հանգուրց, հանգուրծ, *Ալշ.* հանգուռց, *Ագմ.* խանգ'ուրց, *Մկ. Վն.* խանգ'ուց, *Ակն.* հանգօռսդ, *Ախց. Կր.* հանկուստ, *Սեբ.* հանգուշդ, *Խրբ.* հանգօշդ. *բայական ձևով* հանգուցել *Զթ.*, հանգուրցել *Խրբ.*, հանգուստել *Ախց. Համշ. Շիր.*, հանգուռստել *Ակն.*, հանգուշտել *Խրբ. «հանգոյց կապել»։*

**ՀԱՆԳԻՒՇՆ «պարկեշտ, զգոյշ, ամփոփ, կոկիկ» Ոսկ. ա. տիմ. 68 (յն. «զգուշութեամբ»). Փիլ. այլաբ. Վանակ. յոբ. գրուած է նաև* յանկուշն:

ՆՀԲ «իբր ունօղ զհանգոյցս կամ որպէս համ *գոյշ, համազգոյշ»։*

**ՀԱՆԳՐԻՃ «սոթթիլը, ամփոփիլը». ունի միայն ԱԲ. գտնում եմ գործածուած Վրդ. աննց. 21. «Առ հանգրէնս հարսին զարդու». որից* հանգրիճել *(գրուած նաև* հանկրիճել, յանգրիճել) «*հագուստը՝ թևերը վեր սոթթիլ, ամփոփել*» *Փիլ. և. Պտմ. աղէքս. Մխ. երեմ. «ցանել» Վրդ. առ. 68 (Հանգրիճէր մոխիր ի վերայ գլխոյն. այլ ձ ցանէր). հանգրիճեցուցանել Փիլ. այլաբ.* հանգրիճաձև *Փիլ. տեսակ.—Հնագոյն վկայութեամբ ունինք* անգրիճել, անկրիճել *Եփր. Թգ. 432. յետին ռամիկ ձև է գրիճել՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. Հա. Որ*

կամի վազել և երկայն է հանդերձն, ոչ կարէ. պարտ է կտրել կամ ի վերայն կարճել գրիճել. և թէ մերկանայ, թեպէտ ամօթ է, բայց աղէկ վազէ։ (Այս վերջին ձևը պետք չէ կարծել արմատ, այլ կազմուած է աև ձայնախմբի կրճատմամբ՝ կոկորդականից առաջ. ինչպէս ունինք անկողին>կողին՛, ընկոյզ >կուզ, ընկեր>գեր ևն)։

*=Պհլ. *ham-grēč ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց հաստատւում է սակ. (արևել. իրան.)* haṃggalj-, haṃgrīs-, haṃgrīt-, *այն է *ham-garǰaya-, աւելի ճիշտ *ham-k/gar č/ǰ ձևերով, որոնց նշանակութիւնն է «ժողովել, հաւաքել»։ Այս բոլորից՝ հայերէնի համաձայն՝ ընտրելի է *hamgarč-, որ կազմուած է* ham- *մասնիկով՝* garǰ- *«հաւաքել» արմատից. համմտ. լտ.* grex, gregis *«հօտ, երամակ», միռլ.* graig *«ձիերի երամակ», կիմր.* gre *նոյն նշ., յն. ἀγείρω «հաւաքել», ἀγορά «բազմութիւն, շուկայ», γέργερα (հեսիք.) «շատ» ևն* (P. Tedesco BSZ հտ. 25, № 76, էջ 62)։—*Աճ.*

ՀԱՆԴՐՈՒԱՆ, ի–ա *հլ. «հանդստարան, իջեւան. 2. ոչխարների և տաւարի մակաղատեղ» ՍԳր. «նաւահանգիստ» Փիլ. իմաստն. «նահատակի գերեզման, վկայարան» Ոսկ. մ. բ. 12։*

ՀՀԲ հանգչելոյ վան։ Հ. Ղ. Ինճիճեան, Եղանակ Բիւզ. 1820, էջ 211 հան և գրուան բառերից, իբր թէ հանգրուանը լինէր մի շտեմարան, որտեղից գիւղացիք հանում էին «գրուանաւ զցորեանն ի ժամանակս վաճառման»։ ՆՀԲ հանգրուտարան բառի հետ։ Պատկ. Mamep. II. *1 պրս.* angarva *«փարախ» (իմա՛* انگرو angarva *կամ* انگژو angažva *«փարախ խաշանց, այսինքն ոչխարաց և այծուց») բառի հետ։ Մէնէվիշեան ՀԱ 1897 նոյ. (կողի վրայ) –ուան համարում է նոյն ընդ վանք։*

***ՀԱՆԴԱԼ** *«ձմերուկ վայրի կամ* coloquintha, *դմմենի» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1626։*

=Արաբ. حنظل ḥanẓal *«վայրի ձմերուկ» (Կամուս, Բրք. Բրգմ. Ժ. 187 և* Steinschneider WZKM 12, 13), *մի կէտ ջնջուելով՝ նոյն բառը դառնում է* حنطل ḥanṭal։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ՀԱՆԴԱԿ *«օտար տէրութեան դեսպան». դտնում եմ նախ Բառգիրք երեմ. յաւել Դէորգ Դպրէ, էջ 551, որից առնում է և ՓԲ։*

=Անստոյգ բառ, որ թերևս ձևացած է սուր–հանդակ բառից՝ սխալմամբ։—Աճ.

***ՀԱՆԴԱՂԱՒԻՂ** *«վայրի առուոյտ, լտ.* lotus *կամ ըստ ոմանց* globularia arabica» *(Տիրացուեան,* Contributo *§ 246 և § 475) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1627։*

=Արաբ. حندقوق ḥandaquq *«վայրի առուոյտ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 890 և* Steinschneider WZKM 12, 13). *Նոյնը նաև ասոր* ܚܕܟܘܩܐ handəquqā «melilotus»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ՀԱՆԴԱՃ. *մի տեսակ անծանօթ բոյս է. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1628։*

=Թուի նոյն հանդալ բառը՝ լ և շ տառերի շփոթմամբ յառաջացած։ Հանդաշի համար ասւում է թէ «եթէ ոք առնէ հանդաշին տակն և ծխէ, սողունքն որ զանոր հոտն առնուն՝ փախչին»։ Նոյնպէս հանդալի համար էլ ասւում է թէ «զլուն և ոջիլն սպանանէ» (ՀԲուս. § 1789)։—Աճ.

***ՀԱՆԴԱՐՏ** *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «հանդիստ, խաղաղ, լռիկ» ՍԳր. Ոսկ. մ. բ. 9. «հանդարտութեամբ, խաղաղ կերպով» Սիր. իս. 23. Ոսկ. գաղ. որից հանդարտ լինել «համբերել» Յոբ. լգ. 5. Ոսկ. մ. ա. 2. հանդարտել «խաղաղիլ» ՍԳր. «համբերել, ժուժել, տոկալ» ՍԳր. Մծբ. Ոսկ. մտթ. Ա. 383, յհ. 85. Ագաթ. Սէրեր. 217 (համմտ. ՀԱ 1914, 326). հանդարտագոյն Ոսկ. կող. յհ. և բ. կոր. հանդարտանալ Եզեկ. լը. 11. Դատ. ժբ. 27. հանդարտասիրտ Առակ. ժզ. 19. հանդարտիկ Ոսկ. ես. Վեցօր. հանդարտութիւն ՍԳր. Ոսկ. անհանդարտ Ճառընտ. հանդարտարար (նոր բառ) ևն։*

*=Պհլ. *handart ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց համմտ. հպրս. *handrta-=սանս.* samdhṛta-, *որ* dhar- *«դարիլ, դադարիլ, հանդչիլ» բայի անցեալ դերբայն է՝* sam= han *նախամասնիկով։ Նոյն բայի բնիկ հայ ձևն է դարիլ, կրկնութեամբ դադարիլ։ Հանդարտ բառի մէջ* han- *մասնիկը, մանաւանդ*

անցեալ դերբայի -ta *վերջաւորութիւնը ցոյց են տալիս՝ որ* հանդարտ *փոխառութիւն է։*

Նշ՛ Համայն դարեալ դադարեալ։ Böttich. Arica 11, Lag. Urgesch. 207 *սանս.* samdhṛta: Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 141 *հպրս.* *hamdarəta, *պրս.* jam budan *«հանգչիլ»։ Հիւբշ.* Arm. Stud. *էջ* 37 *և* Arm. Gram. 177, 463 հանդարտ *ընդունում է փոխառութիւն, բայց տատամսում է, որովհետև չի մտածել հյ. դարիլ բառը՝ իբր բնիկ՝ բաժանել նախորդից։ Հիւնք.* անդորր *բառից։*

ԳԻՒ.—Ջղ. հանդ'արտ, անդ'արտ, *կր.* հանտարտ, *Երև. Տփ.* հանդարդ *(Տփ. նշանակում է նաև «գաղջ»), Սչ.* հանդ'արդ, *Ննխ. Պլ. Սեբ.* հանթարդ, *Ագլ.* հմ'նդոոտ, *Տիգ.* հմնթոոտդ, *Ոզմ.* հանդ'ոոտց։— *Տարօրինակ է Մշ.* ֆանդրնդել *«հանդարտիլ», որի համապատասխանը՝ Ալշ.* ֆանդրդել *«գետնի տակ անցնիլ, կորչիլ» ցոյց է տալիս, որ բառը ծագում է* անդունդ *(>Ալշ.* ֆանդուդ*) ձևից և յետոյ Մշոյ բարբառում փոխել է իր նշանակութիւնը։*

ՀԱՆԴԵՐՁ, ի *հլ. (երբեմն նաև* ո *հլ. այսպէս Ղևտ. ժա. 32՝* ի հանդերձոյ, *Ագաթ. էջ 571՝* հանդերձով, *Բուզ. ե. 6, զ. 4 (երիցս)՝* հանդերձոյ, *ըստ քննութեան նորայրի, կորիւն վրդ. էջ 262) «զգեստ, հագուստ. 2. ծածկոց. 3. շոր, լաթ, քուրջ. 4. պատրաստութիւն, սպաս, զարդ. 5. միասին, մէկտեղ» ՍԳր. (երկու իմաստը միատեղ՝ Ողբարբք իւրեանց հանդերձ ի հանդերձ բհհեզեղէն. Նորագիւտ բ. մն. ե. 12), որից* հանդերձել *«պատրաստել, կազմել, յարդարել» ՍԳր. Նւս. պտմ.* հանդերձել *«ապագայ, գալիք, ապառնի» ՍԳր. Եղն. «պատրաստել, զարդարուն, պերճ» ՍԳր.* հանդերձիկ *Ագաթ. Ոսկ. երր. ա. տիմ. փիլ. կող.* հանդերձան *«պատրաստութիւն» ՍԳր. Կոչ. 171.* հանդերձատուրութիւն *Գ. թագ. թ. 22.* ոսկեհանդերձ *Բ. մակ. ժե. 15.* համահանդերձ *Բուզ. մաշկահանդերձ Բուզ. մեկնահանդերձ Կոչ. 258.* խորգահանդերձ *Բուզ.* կանանցահանդերձ *Բուզ.* խաշորահանդերձ *Մաշտ.* զուգահանդերձել *Ոսկ. յաղտմ.* հանդերձակալ, հանդերձապահ, հանդերձատուն, հանդերձավաճառ *(նոր բառեր) են։*

=*Մեկնութիւնը տե՛ս* Դերձակ *բառի տակ։ Աւետիքեան, Քերակ. 106* համ *«կից»* +դարձ *կամ* դիրս, *իբր «համանգամայն»։ Նշ՛* համ դարձ *կամ* համայն *տարազ։* Böttich. Arica 11 dhar *արմատից աճած է դնում։* Lag. Urgesch. 641 dṛh *արմատից՝ իբր զնդ.* handərəza- *«տրցակ, կապոց»։* Spiegel, Huzw. Gram. 190, 191 *զնդ.* handərəza-: Müller SWAW 42, 254 *սանս.* dṛh, *զնդ.* dərəz *արմատից։* Justi, Zendsp. *318 ա զնդ.* handarəzan *ձևի տակ է դնում։* Bugge IF 1, 449 *հայ.* ձոռձ *դնելով հրնագոյն* *դարձ *ձևից, այս վերջինը համարում է* հան-դերձ *բառի հետ նոյն, որով երկուսն էլ ընդունում է բնիկ հայ և ո՛չ թէ փոխառեալ։ Այս խնդրի վրայ աւելի երկար, յատկապէս* Lidén-*ի կարծիքը՝ տե՛ս* Դերձակ *բառի տակ։ Հիւնք.* համ *մասնիկով պրս.* ախրզ *արմատից։*

ԳԻՒ.—Ալշ. հանդ'երձ', *Սեբ.* հանդ'էրց, *Երև. Ոզմ. Սլմ.* հանթերց, *բոլորն էլ «կրօնաւորի զգեստ» իմաստով, հետևաբար գրականից փոխառեալ. այսպէս նաև Ախց.* հանդ'էրձ'անէ *«քահանայի զգեստաւորութիւն»։*

Հանդերձապետ *տե՛ս* Անդերձապետ։

Հանդէպ *տե՛ս* Դէպ։

ԳԻՒ.—Ջղ. հանդ'իպել, *Ախց.* հանդ'ըպիլ, *կր.* հանտրպիլ, *Երև.* հանդիրել, *Ասլ. Խրբ. Պլ. Սեբ.* հանդրբիլ, *Տփ.* հանդիրիլ, *Սչ.* հանդրբել, *Ալշ. Մշ.* հանդ'րբել, *Ննխ.* հանդրբէլ, *Զթ.* հանդրբը'լ, *Ռ.* հանթրբրիլ, *Տիգ.* հմնթիրբիլ։—*(Տփ. նշանակում է նաև «մեծարել, խնջոյք տալ, ուտելու մի բան հրամցնել». իսկ Սվ. «Թոնրին կողած հացը յանկարծ պոկուելով կրակն ընկնել»).—Նոր ձևեր են* հանդէպ, հանդպուռ, հանդիպուռս, հանդիպս՝ *որոնք նշանակում են «դէմերից յառաջացած մի հիւանդութիւն»։*

*ՀԱՆԴԷՍ, ի *հլ. «հրատարակային քննութիւն, առեան, դատ, ապացոյց, տեսարան, հրապարակ, մրցարան, մրցանք, քաջագործութիւն, զօրահամար» ՍԳր. Եղն. Նւս. պտմ. Ոսկ. «տօնախմբութիւն» Շար. Նար. Մագ.*

«պատմական ճառ, աւենաբանութիւն» Խոր. Յհ. կթ. Արծր. որից հանդիսանալ *Ոսկ. փիլիպ., յգ.* հանդիսանի *Մագ. մեծ հն. էջ 28.* հանդիսական *Բ. մակ. դ. 19.* հանդիսատես *Ոսկ. բ. տիմ. և մտթ. ա.* հանդիսատուր *Ոսկ. յհ. բ. 21.* մեծահանդէս *Տագ. Գնձ.* անհանդէս *«չփորձուած, անպիտան» Փիլ.* բազմահանդէս *Յճխ. Յհ. կթ.* երկնահանդէս *Շար.* կանխահանդէս *Նար. խչ.* հանդիսաւորութիւն, արուեստահանդէս, ցուցահանդէս, պարահանդէս, զօրահանդէս, ցայգահանդէս *(նոր բառեր) ևն։*

=*Պհլ.* *handēs *ձևից, որ աւանդուած չէ, ինչպէս նաև նրա համապատասխան գնդ.* *handaesa-, *բայց սրանց գոյութիւնն ապացոյց են սանս.* saṁdēça *«պատուէր, յանձնարարութիւն» և գնդ.* handaesayañuha *«ուսուցանել, սովորեցնել»։ Իրանեան արմատն է* dis *«ցոյց տալ, սովորեցնել»=հիւս. պհլ.* dysyd *«ցոյց է տալիս» (տե՛ս* Meillet MSL *17, 243), որի վրայ աւելացել է* han- *նախամասնիկը։—Հիւբշ. 179։*

ՆՀԲ իբր համայն տես, տեսիլ կամ հանումն ի տես, լծ. և յն. ἔνδειξις Windisch. *22 հան մասնիկով կազմուած։* Lag. Urgesch. 526 *սանս.* saṁdēça. Müller, Kuhns und schleich. Btrg. 5, 383 diç *արմատից. համմ. ծէս: Տէրվ. Մասիս 1881 մայ. 8 դէտ բառի հետ՝ արմատը դի, դիս=յն.* θέσμιε θεοπίζω, *Հիւբշ.* Arm. Stud. 37 *աւելի տրամադիր է բնիկ հայ ընդունելու։ Հիւնք. յն.* ἔνθεσις, ἔνδειξις *«ցոյց»։* Müller WZKM 8, 187 *գնդ.* handaēsa=*սանս.* saṁdēça-:

Գիւմ.—Սեբ. հանդ'էս *ևն, փոխառեալ գրականից։*

[ՀԱՆԴԻ «անձխոտ, թրք. չաիրէոէ, լտ. fumaria» *Կամրկպ. ունի միայն ՀԲուս. § 1629. նոյն է* հանդէ *«շահիճէրէ» Գազիան. (ըստ Բռ. երեմ. յաւել. 575)։—Նորայր ՀԱ. 1922, 394 Գազիանոսի յիշեալ տեղը կարդում է իբր «հինդի չաիրէոէ. անձխոտ», որով հինդի «անձխոտ» անգոյ բառը ջնջուելով, կդառնայ «հնդիկ, հնդկական, պրս.* hindī։*]*

Հանդիճել *տե՛ս Անդաճել։*

ՀԱՆԴԻՊԱՆԱԼ *«բարեխօսել». ունի միայն Բառ. երեմ. էջ 176։*

ՀԱՆԴԻՋԵԼ *«համեմատել». ունի միայն Բառ. երեմ. էջ 176։*

ՀԱՆԴԻՑԻ *«համբերող, դիմացող» Բռ. լեհ. որից* հանդուրժել *«համբերել, տոկալ» Յուդ. 9. Գծ. իէ. 15. Ոսկ. փիլիպ.* հանդուրժական *Վրդն. ծն.* անհանդուրժական *Սեբեր. Ոսկ. ես.* հանդուրժելի *(արդի գրականում),* անհանդուրժելի *Վրք. հց. Յհ. կթ. Խոսր. դժուարահանդուրժելի Ոսկիփ. նախաձայնի կամ շփողականի անկումով՝ ունինք* անդուրժել *Ջէնոբ. էջ 29,* անհանդոյժ *(գրուած նաև* անհանգոյժ*) Փիլ. սամփ.* չանդուրժել *Ջէնոբ։*

ՆՀԲ համ ժուժել կամ անդորր ժուժալ։ Ծաղրեհան, Արեւելք 1884 Հոկ. 17 հան *մասնիկով դուրժ<դուժ=սանս. դուշ «հանդարտիլ, խաղաղիլ» բառից։ Տէրվ. Նախալ. 87 հնխ.* dargh *կամ* dhargh *«պնդել, բռնել, տոկալ» արմատից դնում է սանս.* darh, *յն.* δράσσω== =θράχέω, *գնդ.* draž. *հսլ.* drūžati, *գոթ.* dragan *«տանիլ, կրել» և հայ.* հան--դուրժ-ել, *և դարձեալ՝* դերձակ, *պրս.* darzī, դերձան, *պրս.* darzan։ *Հիւնք. անդորր բառից։ Հիւբշ. 177* հան- *մասնիկով։*

ՀԱՆԴՐԱՏԱՆ *«սուր լսողութիւն ունեցող մի անասուն (կամ թռչո՞ւն)». նորագիւտ բառ, որ մէկ անգամ դտնում եմ գործածուած Կղնկտ. հրտր. Շահն. Ա. էջ 111. «Սրատեսիլ ես քան զարծուի և երագալուր քան զմի ի հանդրատանաց» (դրում է Գիւտ կաթուղիկոսը Աղուանից Վաչէ թագաւորին)=հրտր. էմինի, էջ 19* ի հանդարտանաց, *իսկ ըստ ՆՀԲ (տե՛ս արագալուր բառի տակ)* ի հանդարտ անասնոց։ *— Այս ընթերցուածները ստուգելու համար դիմեցի էջմիածնի ձեռագրատան մատենադարանապետ՝ իմ բարեկամ Սննեքերիմ Տէր-Յակոբեանին, որ քննելով Կաղանկատվացու բոլոր ձեռագրերը, հաղորդեց ինձ հետեւեալը.— Կաղանկատվացու ձեռագրերը այժմ թուով 8 հատ են, որոնք բառիս ընթերցուածի համաձայն բաժանւում են 3 խմբի։—Ա խումբը կազմում են № 3043* ի հանդրատանաց *և № 1087* ի

հանդրատանց, *այս երկուսն էլ արտագրուած Թաւրիզում, 1839 թուին, պարոն Պոռէի օրինակից, «բազդատութեամբ ըստ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյ Էջմիածնի».— Բ խումբը կազմում են № 1531, էջ 240* Ba *(գրուած ՉԼՀ=1289 թուին) [որից արտագրուած են № 2646, էջ 21*a *(ՌՄԺ=1761 թուին) և № 2866 (1829 թ. ձեռամբ Յովհ. նպս. Շահխաթունեանի)] և Լազարեան ճեմարանի № 47 (ձեռամբ Մ. Էմինի, 1849 թ.). այս բոլորը ունին* ի հանդարտանաց.—Գ *խումբը կազմում են №2561, էջ 19*a *(գրուած ՌճԺԴ=1664 թ.) և №1725, էջ 22*a *(անթուական, ժէ դարից). սրանք էլ ունին* ի հանդարտ աճասոց. *այսպէս նաև № 2866 լուսանցքում: Երեք ընթերցուածներից վերջինը յայտնի կերպով յարմարանք է. բայց նա ցոյց է տալիս միևնոյն ժամանակ, որ յարմարանք է նաև* ի հանդարտանաց. *ուղղագոյնն է* ի հանդրատանց, *որ գրիչները չհասկանալով վերածել են ծանօթ մի ձևի* (հանդարտաճ, հանդարտ աճասուճ):

Բարգէն Ա. կաթուղիկոս Կիլիկիոյ (նամակ 1935 փետր. 11) մեկնում է «հաւանաբար էշ երկայնականջ»: Չեմ կարծում, որ ստոյգ լինի այս մեկնութիւնը, որովհետև անվայել էր Կիւրտ կաթուղիկոսի համար վաչէ սուրբ թագաւորին «էշ» անուանել:

*ՀԱՆԹԻԹ *մի տեսակ անծանօթ բոյս. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1630:*

=*Արաբ.* حنتيت ḥantit, *որ ունի* Steinschneider WZKM 12, 13, *բայց համարում է սխալ գրչութիւն՝ փոխանակ* حلبيب ḥalbīb *բուսանունի.—Ա՛ճ.*

Պատահական նմանութիւն ունի արաբ. حطمة ḥamaṭīṭ *«մի տեսակ խոտ» (Կամուս, Բրք. Բրգմ. Ի. էջ 464), որ կարելի է սխալմամբ կարդալ նաև* ḥamṭīṭ.

Հանի *տե՛ս Հան:*

*ՀԱՆՃԱՐ, ո *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «խելք, միտք, հնարք. ճարտարութիւն, իմաստութիւն» ՍԳր. որից հանճարագիտութիւն Ագաթ. հանճարեղ ՍԳր. հանճարել «հնարել ճարտարութեամբ» Բրս. ծն. լմբ. անհանճար Ոսկ. անհանճարական Ոսկ. ես. անհանճարութիւն Ոսկ. մտթ. բազմահանճար ՅՀ. կթ. երկնահանճար Նար. կուս. լիահանճար ՅՀ. կթ. կորովահանճար Անան. եկեղ. տղայահանճար Բուզ. գերահանճար Մաշտ. շատահանճար խոր. հոգեհանճար Նար.:*

=*Պհլ.* *hančār *ձևից, որ թէև ատենդուած չէ, բայց համմտ. պրս.* هنجار hanǰār *«ճանապարհ. 2. կերպ, եղանակ». այս նշանակութիւնից է բխում* ناهنجار nā-hanǰār *կամ 3.* بی هنجار bī-hanǰār *«անկարգ, անկանոն» (իբր անհանճար): Հյ. և պրս. բառերի նշանակութեան տարբերութեան համար համմտ. պրս.* راه rāh *«ճանապարհ», որ սակայն նշանակում է նաև «կարգ, կանոն, միտք, խօսք, բանականութիւն, մարդու ներքինը». հայ գտ. ճամբայ «ճանապարհ. 2. հնարք, ելք, հնարագիտութիւն», ճամբայ մը գտնել «մի հնարք մտածել»: Պրս. ձևը կապւում է ըստ Նէօլդէքէի տանս.* saṁčāra- *«պրոտոյտ, ճանապարհ» բառին, որ կազմուած է* saṁ- *մասնիկով՝* čār- *արմատից* (Horn, *էջ 247):*

Հներից Լմբ. առակ. ա. 7 և ը. 14 մեկնում է «Հանճար... ստուգաբանի անճար, այսինքն թէ՝ ոչ առանց խափանածոյ իրիք կատարի: Եւ հանճար ասի, զի զկատարումն առ յապայ ունի»... էջ 135—6 «Հանճար որպէս բազում անգամ! յեղյեղեցաք, ստուգաբանի անճարիցն ճար»: Տաթև. ձմ. լ. «Հանճարն ստուգաբանի անճար. այսինքն անճար է և անխափան որ պիտի լինի կատարումն»: Նոյնը նաև Տաթև. Հարց. 270: Իսկ Առաք. լծ. սահմ. 484 «Հանճար զճար»: ՀՀԲ «Հանէ ճար» (այսպէս նաև Թովուզեան, Արծիւ վասպ. էջ 44): ԳԴ միայն անհանճար ձևին է կցում պրս. նահէնճար: ՆՀԲ հա՛նճար կամ համ ճար: Lag. Urgesch. 477 čar *արմատից: Նոյն,* Arm. Stud. § 1243 *կասկածում է գնդ.* hamčar *և պրս.* hanǰār *ձևերի վրայ: Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. 196 պրս.* hanǰār: *Հիւնք. պրս.* هنكار hangār *«սաստկութիւն, սրութիւն»: Հիւբշ. 173*

պրս. բառի նշանակութեան տարբերութեան պատճառաւ չէ ընդունած։

ԳԻՒ.—Նախ. Պլ. ճնջարէլ, Բբ. ճնջարգէլ «մի բան հնարել, սարքել, մոկոնել»։

+ՀԱՆՈՒՐ «բոլոր, ամէն» Սահմ. Խոր. սրա սեռ.-տր. հոլովաձևն է հանուրց. ածանցման մէջ մտնում է առաջին ձևով. ինչ. հանրական 34. իմ. եկեղ. Անյ. պորփ. հանրապէս Սկևռ. լմբ. հանրակայք Նար. տաղ. նոր գրականի մէջ՝ հանրակառք, հանրակին, հանրամատչելի, հանրագիտակ, հանրագիտական, հանրահաշիւ, հանրահաշուական, հանրազօրք, հնարահուն, հանրապետութիւն, հանրապետական, հանրակացարան, հանրածանօթ են։ Ոսկեդարեան գործածութեամբ ունինք ընդհանուր (գրուած նաև ընթանուր, ընթհանուր) «ամէն տեղ» (և ո՛չ թէ ամէն ոք) Եղն.։

=Կազմուած է հան- (=համ-) մասնիկով՝ ուր «տեղ» բառից, որ բնիկ հայ է։

ՆՀԲ որպէս թէ համ ուր, համուռ, համօրէն ուրիք, ամենայն ուրիք գտեալն։ Հիւնք. անուր բառից։ Մէնէվիշեան ՀԱ. 1897, 248ա համ-ուր: Pedersen, Հայ. դր. լեզ. 62 անուր բառից, որի համար համմտ. բոլոր (կրկին իմաստներով)։

ՀԱՆՑՆԵԼ «առաջնորդել, վարել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դիւան ժ. էջ 71՝ Յիշատ. ժէ դարից. «իսկ ի ՋՂէ=1548 թուին, Ալխասն երեկ հանցեալ զխոնդքարն Սուլէյման տարաւ ի Քաւրէզ ի վերայ եղբօր իւրոյ և աւերեաց զՔաւրէզ»։

ՀԱՇ «մաշած, նիհար, տկար» Շնորհ. այբ. որից հաշիլ «մաշիլ, ծերանալ», հաշել «մաշեցնել, ծերացնել». ՍԳր. Ոսկ. ա. 8, բ. 33. Փարպ. հաշաճ «նիհարութիւն, տկարութիւն» Թէոդ. մյրգ. «հիւանդութիւն» Կնիք հաւ. 286. հաշումն Առակ. գ. 15, Եզեկ. իա. 10. գրուած է նաև խաշել-Ոսկ. պետր. և յհղ. Մանդ. խաշումն Մծբ. հարշել Վրք. հց. Ոսկ. ճառք 355, 361, 456. փոխաբերական իմաստով է հաշիլ արևու «արևի մայր մտնելը» Անկ. գիրք հին կտկ. Ա. էջ 164, 166. (այս իմաստով սրխալմամբ գրուած է հաշտել Վրք. հց. բ. 381, որ պէտք է սրբագրել համաձայն նախորդի՝ հաշիլ, ըստ Նորայր, Հայկ. բառաք. էջ 87).

ՆՀԲ լծ. Բրք. աշընմագ «մաշիլ»։—Մորթման ZDWG 26, 571 բևեռ. khasivami «վախենալ» և գնչ. khasovava «երդնուլ» բառերի հետ։ Lidén, Յուշարձան 387 հնխ. *ḳ̑ṷo- արմատից. համմտ. սանս. náçyati «անհետանալ, կորչիլ», nāçáyati «անհետացնել, փճացնել, կործանել», զնդ. nasyeiti «կործանիլ», nasu- «դիակ», յն. νέκυς, νεκρός «դիակ», լտ. neco «սպանել» և յատկապէս հիւլ. éc, մկիմր. angheu, կորն. ancow «մահ». հայերէնի մէջ ն յաւելուած է. հնխ. *ṇḳ̑ṷ- տուած է նախ անշ-, ուր ն կորչելով՝ դարձել է աշ->հաշ-։ Karst, Յուշարձան 420 թթր. as, az, aš «պակասացնել», օսմ. ašənmaq «մաշիլ», նաև aš, eš, kaš «քորել» և aš, as «ուտել»։

*ՀԱՇԱ «խոտ է սպիտակ, ուտել շինեն» Վստկ. 190, 194, 195. Կամրկպ. ունի միայն ՀԲուս. § 1631։—Սխալ է Քաջունի Գ. 133 և Բ. 601 հալի «serpolet», որ կցում է լտ. halus բառին։

=Արաբ. حشا ḥašā «մի տեսակ բոյս է, որից մեղուն մեղր է շինում. Բրք. kekik կոչուած բոյսն է, այն է վայրի ծովթրին» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 324), «զամբուռ, լտ. thymus, այն է ձիածովթրին» (ՀԲուս. § 694), «Բրք. տուկմալիճա սուփուրկա, կոճակաւոր սուկ» (Ամիրտ.)։ Steinschneider-ի հատաքածոյի մէջ գտնում ենք حشه ḥašā, حاشا ḥāšā և حشى ḥāšī ձևերով և «thyme» նշանակութեամբ։

Արաբերէն լինելը յայտնում է պարզապէս Վստկ. 190, 194. «խոտ մի կայ, զոր արապերէն հաշա ասեն, որ մեղուն զինքն խիստ սիրէ և երբ զինքն ուտէ, շատ մեղր շինէ և պարս աղէկ տայ. Առ զխոտն որ կոչի արապերէն հաշա և փռեա (փեթակի մէջ)։

*ՀԱՇԻՇ ըստ Բժշ. մեկնւում է «հայերէն անուն դանապի, այսինքն կանեփատիճ». ունի միայն ՀԲուս. § 1632։

=Արաբ. حشيش ḥašīš «մմրեցուցիչ մի բոյս է» (տեսակները տե՛ս Stein-

schneider-ի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 10—11):

*ՀԱՇԻ (ո հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «հաշիւ, համար» ՍԳր. Ոսկ. յհ. Կոչ. «կոիւ, վէճ» Վկ. գողթ. 52, 79. որից հաշուել «համարել, հաշիւ անել» Ղևտ. իէ. 23, Ոսկ. ես. և մ. բ. 18. «համարել, կարծել» Ոսկ. մ. ա. 7, 25. Բ. տիմ. Եւս. քր. հաշուրնկեր Լմբ. մատ. 321. հաշուակից Մաղաք. աբ. անհաշիւ Պատմ. աղէքս. հեշտահաշիւ Գէ. ես. նոր բառեր են՝ հաշուապահ, հաշուապահական, հաշուապահութիւն, հաշուակալ, հաշուայարդար, հաշուայարդարութիւն, հաշուեցուցակ, հաշուեմոյմար, հաշուեսեար, հաշուեգիր, հաշուեկշիռ, հաշուագէտ, հաշուեցոյց, հաշուեփայտ, հանրահաշիւ, գրահաշիւ, օրհաշիւ են։

=Ասոր. ܚܫܒ xəšīw «կարծուած, համարուած, հաշուած», ܚܫܒ xəšaw «համարեց, համրեց», xaššew «կարծեց, ենթադրեց»։—Այս արմատը բնիկ սեմական է. համմտ. եբր. חשב xāšab, արամ. xšāb, արաբ. حساب ḥisāb, եթովպ. ሐሰበ ḥasaba, բոլորն էլ «հաշուել. 2. համարել, վարկանել» նշանակութեամբ։ Սեմականից փոխառեալ է շատ հին ժամանակ եգիպտ. ḥsb «հաշուել»։—Հիւրշ. 308։

ՆՀԲ լծ. Բրք. հիսապ: Riggs, Քերակ. 1856, էջ 60 եբր. xašav։ Հինք. վաշխ բառից կամ արաբ. հէսապ:

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Ալշ. Երև. Կր. Ջղ. Սլմ. հաշիվ, Մրղ. Տիգ. հոշիվ, Ոզմ. հաշէ՛վ։

ՀԱՇՄ, ի հլ. «խեղ, կոտրած անդամով, պակասաւոր» Բ. Թագ. դ. 4, թ. 3. Ոսկ. մ. գ. 16. որից հաշմիլ Սիր. լ. 14. հաշմութիւն Եւագր. Կիւրղ. եւ հաշմոտ Կիւրղ. եւ հաշմանդամ Սարգ. ոգեհաշմ ՅՀ. իմ. պաւլ. գրուած է նաև խաշմ. խաշմանդամ, խաշմութիւն Եւագր. 152, որոնց հետ համմտ. տակը վրաց. ձևերը։

ՆՀԲ հաշիլ «մաշիլ» բայից։ Մատ ИАН 1919, 404 վրաց. խաշմ «մաշրիա» և եշմակ «սատանայ» բառերին է կցում։ Պատահական նմանութիւն ունին արաբ. هشم hašm «կոտրել, ջարդել, մանրել», استهشام inhišām «նիհարիլ. գործելու անընդունակ դառնալ» (Կամուս, Բրք. Թրգմ. Գ. 572)։

ՓՈԽ.—Վրաց. ხაშეი խաշմի «վատառողջ կլիմայ», ხაშმიანი խաշմիանի «վատառողջ», სნეხაშმე սիխաշմե «արատ, թերութիւն, պակասութիւն»։

*ՀԱՇՏ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «խաղաղասէր. հեզ, բարեսիրտ, ներող» Բ. մակ. ը. 29, ժ. 26, Ոսկ. երր. ժդ. և յհ. ա. 7. որից հաշտել «հաշտեցնել» ՍԳր. Ոսկ. երր. լա. հաշտիլ, հաշտեցուցանել ՍԳր. հաշտեցուցիչ Ագաթ. հաշտութիւն ՍԳր. Եզն. հաշտարան Փիլ. եկ. հաշտարար ՅՀ. իմ. ՅՃխ. արագահաշտ Յայսմ. դիւրահաշտ Պղատ. օրին. ընկերհաշտիք Ոսկ. փիլիպ. (իսկ հաշտիլ արևու տես հաշ):

=Պհլ. *āšt «հաշտ, խաղաղ» բառից, որ թէկ չէ աւանդուած, բայց ունինք զնդ. āxšti-. պհլ. āštīh, պրս. آشتی āštī, բոլորն էլ «հաշտութիւն, խաղաղութիւն» նշանակութեամբ. սրանց հետ նոյն են նաև քրդ. aš kirin «բարկացած մէկին խաղաղել, բարկութիւնը իջեցնել», aš e «խաղաղած է», ne aš e «խաղաղած չէ»։ Հայերէնի մէջ ե յաւելուած է։—Հիւրշ. 179, 513։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, ՆՀԲ դնում է հաշտ՝ լծ. պրս. աստուտ, իսկ հաշտութիւն՝ պրս. աշդի, էշդի: Lag. symmicta 104, 18 զնդ. āxšti-: Müller WZKM 8, 282 պրս. āštī։ Սագրեան ՀԱ. 1909, 336 և Karst, Յուշարձան 407 սումեր. šuu, kuš «մայր մտնել արևու» ձևերի հետ դնում են հյ. խշտի, հաշտել արևու (որ սակայն սխալ գրչութիւն է)։

ԳԻՒ.—Առանձին ունինք Ալշ. Մշ. հաշտ (յատկապէս հաշտ ու բարիշ դարձուածի մէջ, ուր բարիշ=Բրք. barəš-maq կրկնութիւնն է հյ. հոմանիշի). բայական ձևով Կր. Տփ. հաշտվիլ, Երև. հաշտվէլ, Մշ. հաշդըվել, Սեբ. հաշդիլ, Ղրբ. հոշտրվիլ, Սվեդ. հիշտրվիլ, Ջղ. խաշտել, խաշտվել, Սլմ. խոշտրվել:

*ՀԱՑՏԱԴՐԱՄ «ութը դրամանոց (կոհար)». Խոր. աշխ. 614. ուրիշ վկայութիւն չկայ։

=Պրս. هشت hašt «ութը» և درم diram «դրամ» բառերից։—Հիւբշ. 264։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ Աւդերեան, Բյտր. չփ. և կշռ. էջ 119 և ՆՀԲ։

○ՀԱՋԵԼ «հառաչել, ախ քաշել» Ողբ. ա. 4. Ոսկ. մ. բ. 16 և ա. տիմ. ը. որից հաչիւն Ոսկիփ. հաչումն Նար. Վրդն. սղ։

=Բնաձայն բառ. կազմուած է հ ձայնից. հմմտ. ձևի համար՝ շաչել, բաչել, թաչել, իսկ արմատի համար՝ ճնշել, հռչակ, հոնչիւն, հառաչել, հոնդիւն։—Ա՛ճ.

ՆՀԲ լծ. հագագ, ոգի, ոգել: Հիւնք. հաշչալ բայից։ Յ. Արշէգ. Բազմ. 1897, 51 լծ. հագագ: Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 203 բ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 99 բաշ արմատից։

ՀԱՊ. աճապարանք կամ արագութիւն ցոյց տուող ձայն կամ բառ, որից կազմուած են՝ հա՛պա «օ՛ն, աղէ՛, դի՛հ, ա՛րդ, շո՛ւտ» ՍԳր. Ծղիշ. (որ և աճա՛պա Ծղիշ. այլ ձեռ. հապա). հապճեպ «ստիպողական, շփոթ, շուտով, շտապով» ՅՀ. կթ. (Բուզ. էջ 140 տպուած է ճեպճեպ). հապճեպ տալ «փութացնել, շտապեցնել» ՅՀ. կթ հապճեպել Խոր. Ա. 32. հապճեպիւ կամ հապճեպով «շտապով» ՅՀ. կթ. հապստէպ Վեցօր. դ. 67 (չունի ՆՀԲ). հապշտապ (գրուած նաև ապշտապ). ՋԲ. նոր գրականի մէջ հապօ՛ն (իբրև հապա +օ՛ն)։

ՆՀԲ որպէս պրս. ապա, էպա: Տէրվ. Նախալ. 118 Թիրևս հնխ. apa ձևի հետ, այն է սանս. զնդ. apa, լտ. ab, â, գոթ. af և հյ. ապա։ Հիւնք. ապա բառից։ Թիրեաքեան, Բազմ. 1913. 341 Թրք. هپ hep «բոլոր» բառի հետ. իսկ Արիահայ բռ. 226 պհլ. auštap ձևից է դնում հյ. հապշտապ։

ԳԻՒ.—Տփ. արա «դի՛հ, օ՛ն»։

ՓՈԽ.—Վրաց. ამა ապա, ამა არა «օ՛ն»։—Տ. Վ. Պալեան (Բիւր. 1898, 712) մեր հապճեպ բառից է դնում Թրք. գռ. կես. apəčap ձևը, որ միայն անէծքների մէջ է գործածւում. այսպէս՝ apəčapa gelesin «հապճեպի՛ գաս» (ըստ իս շատ կասկածելի)։

— ՀԱՊ «այնուհետև, յետոյ» Ոսկ. բ. կոր իդ. նաև. քր. հապա «յետոյ, անմիջապէս յետոյ» Ա. մակ. բ. 17, 41. ժզ. 6։

=Նոյն է ապա բառի հետ, որ տե՛ս։

Նոյն է դնում ապա բառի հետ ՆՀԲ կասկածով։ Տէրվ. և Հիւնք. նախորդի և սրա միջև զանազանութիւն չեն դրած։ Bugge KZ 32, 62 նոյն ընդ ապա<հնխ. ápo, ճիշտ ինչպէս որ հուպ<հնխ. úpo։

ԳԻՒ.—Մկ. Ոգմ. ապա, կր. հրպը, Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տփ. հաբա. ՋԲ. հաբը, Հճ. Տիգ. հmբm, Մշ. հրբա, Ալշ. հրբm, Սհբ. ֆրբա, Համշ. աբա, Ասլ. ըրը, որոնք նշանակում են «ի հարկէ, անշուշտ, այո՛ այդպէս, այո՛. 2. ապա, այլ»։

*ՀԱՊԱԼԱՍ «մրտենու պտուղը» Վստկ. էջ 105, 120. որից հապալասեճի, հապալասի Վստկ. 157, հապալսի Վստկ. 36 «մրտենի, vaccinium myrtillus L» (Տիրացուեան, Contributo § 339)։

=Արաբ. حبّ الآس habb-al-as «հատ կամ պտուղ մուրտի». կազմուած է حبّ habb «ունդ» և آس ās «մրտենի» բառերից (տե՛ս Steinschneider-ի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 2)։

Ըստ ՆՀԲ հապալասն է «ազդ մանրը ձիթապտղոյ». ըստ Բախտամեանի «մոշ». ըստ ՀԲուս. § 1633 «մրտենի». ըստ Նորայր, Բառ. ֆրանս. «canneberge, airelle, ռուս. клюква»? Ուղիղ նշանակութիւնն է «մրտենի», ինչպէս ցոյց են տալիս 1. արաբերէն ձևը, 2. Սվեդիոյ դաւառականը, 3. Վաստակաց գրոց վերկայութիւնը։ Վերջինս (էջ 157) գլխի վերնագիր դնելով «Վասն հապալասեաց», ամբողջ այդ գլխի մէջ խօսում է միայն մրտենու մասին։ «Ձիթապտուղ» իմաստը յառաջացել է սխալմամբ նրանից, որ Վստկ. 180 խօսելով ձիթապտղի տեսակների վրայ, ըստ մեծութեան բաժանում է երեք կարգի.—մանր (հապալասի չափ), միջակ (կասլայի չափ) և խոշոր. «Եւ պտուղքն ազգի ազգի են. մէկ՝ հապալսէ պտուղ և ինքնդ մանր լինի և վասն այնր իւրն հապալ ասեն.

և մէկայլն՝ կասլապտուղ ասեն և այն՝ կասլայի պտղոյն է նման և յայն ձևն է. և մէկայլն երկայն պտուղն է և ինքն է քան զամէնն լաւ և գէր»։—Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ, որ կրկնում է Seidel, *հրտր. Մխ. հեր. § 434։*

ԳԻՒ.—Սվեդ. ճրմբոլուս *«մրտենու պտուղը»։*

ՀԱՊԱԼԱՆՁ. *մի տեսակ անծանօթ գործիք է. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 8. «Հապաղանցն որ կասէին, ի յուր ծառն կախեցին, մուրն ու քացախն ու սխտորն պարկովն գլուխն ագուցին»։—Լուսաւորչի չարչարանքներից մէկն է. հմմտ. Ագաթ. § 106 և 107. բայց Տաղարանը ճիշտ հետևած չլինելով Ագաթանգեղոսին, յայտնի չէ թէ ի՛նչ է հապաղանցը. թուի «հիւսանց մամուլ»։*

ՀԱՊԱԼՓԱԿ *կամ* **ՀԱՊԱԼԱԿ** *«մի տեսակ բոյս. խնկատերև,* thymus acinos *կամ* ocymum pilosum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1634։*

*ՀԱՊԸԼԻՍԻՐ
*ՀԱՊԸԼԻՄԻԹ
*ՀԱՊԸԼՄԼՈՒՔ
*ՀԱՊԸԼՆԻԼ կամ ՀԱՊՆԻԼ
*ՀԱՊԸԼՊԱՆ

} *բժշկական այլ*

և այլ բոյսեր են. Բժշ. ունի միայն ՀԲուս. §§ 1635—1639։

=Բոլորն էլ փոխառնալ են արաբերէնից. այսպէս՝ حبّ الغار ḥabb-ul-ɣār, حبّ الملوك ḥabb-ul-muluk, حبّ لنيل ḥabb-ul-nīl, حبّ البان ḥabb-ul-bān *(տե՛ս* Steinschneider*-ի հաւաքածոյի մէջ՝* WZKM *12, 2—4 և 320)։ Այս բոլորի մէջ* ḥabb *նշանակում է «հունդ»,* ul *յօդ կամ սեռականի մասնիկ է։—Աճ.*

Հապնիլ բոյսի վրայ ընդարձակ խօսում է Seidel, *Մխ. հեր. § 387։*

ՀԱՊԻՆ *«տանձ». գիտէ միայն Բառ. երեմ. յաւել. էջ 569։*

Արաբ. حبّين ḥabīn *նշանակում է «գափնեվարդ,* oléandre, *Բրբ. գիկում» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 613)։*

ՀԱՊՃԵՊ. *տե՛ս* հապ *բառի տակ։* Nyberg, Hilfsbuch 2, 42 *մեկնում է իրան.* "api-čapi-. *տե՛ս* նեպ, նապուկ։

ՀԱՋԱՂ *«երեսի ծածկոյթ, լաչակ» Վրդն. երգ հմմտ. նաև* հաճաղ. *բառիս համար մի երրորդ վկայութիւն գտնում եմ Այրիվ. 8 ա, որ տե՛ս գառնաշ բառի տակ (Յաւելուածում)։*

Հացունի, Պատմ. տարազի, էջ 219 համարում է աղաւաղեալ՝ լաչակ բառից։

ՀԱՋԱՄ *«վարսավիրայ, սափրիչ» Ոսկիփ.* =*Արար.* حجّام ḥajjām *«սափրիչ»։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

○**ՀԱՋԵԼ** *«շան հաչելը» Յուդփ. ժա. 17. Ես. ժգ. 10. (սխալ գրուած է* հաշել *և այս ձևը այժմ տարածուում է). որից* հաջեցուցանել *Ջքր. կթ.* հաջումն *Պատ. աղէքս. Պզատ. օրին.* հաջողական *Պիտատ. Երկնաճաշ ԱՔ.* ընդերկնաճաշ *Անյ. հց. իմ.* իրաւաճաշ *Վստկ.* վայրաճաշ *Վստկ. (չունի ՆՀԲ).* յղորդաճաշ *«ոչ-վայրահաչ (շուն)» Վստկ. 221 (ԱՔ ունի* ղորդաճաճ *«քծնող (շուն)», որ անշուշտ նոյն բառի աղաւաղեալ գրչութիւնն է)։*

=Բնաձայն բառ. կազմուած է հ ձայնից. համեմատե՛լ ինչ որ ասուած է հաշել *բառի տակ։ Բնաձայնների մէջ շ և ջ ձայների փոխանակութեան համար հմմտ.* բշել *և* բջել, խնշել *և* խնջել, խնջխնջել, խոխոջել, կրկջաձայն, խխնշել *և* խխնջել, շշնշել *և* շշնջել, մռմնջել։—*Աճ.*

Հիւնք. հոչակ բառից։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 203 բ։ Գազանճեան, Տարեց. Պապիկեան 1905, 126 և Արև. մամ. 1907, 934—5 լծ. Բրբ. հավլամաճ *«հաչել»։ Մ. Ս. Դաւիթ-բէկ, Յուշարձան 398 գալլ.* arthal, *գան.* harzal, *հրրբտ.* arthon*։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 99 բաշ արմատից։*

ԳԻՒ.—Հւր. հաջէլ, *Սչ.* հաջ'ել, *Ագլ.* հա՛ջիլ, *Խրբ.* հաջ'իլ, *Ախց. Երև. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* հաչէլ, *Ասլ.* հաչէ՛լ, *Շմ.* հաչիլ, *Հմշ.* հաչուշ, *Ղրբ.* հա՛չիլ, *Տփ.* հա՛չիլ, հա՛չալ, *Տիգ.* հոչոլ, *Հճ.* հէչէլ, *Ջթ.* հէչիլ, *Ալշ. Մշ.* հաճալ, *Սվեդ.* հիչչիլ, *Սլմ.* խոչել, *Մրզ.* խոչէլ, *Վն.* խաճել, *Մկ.* խաճիլ, *Ոգմ.* խաճալ։—

նոր բառեր են հաջան, հաջոց, հաջվոտել, հաջմջել, մարդահաջ, շնահաջ, գայլահաջ, գազանահաջ, թոչնահաջ:

ՀԱՌ «կաւ». ունի միայն Բառ. երեմ. 177։

○ՀԱՌԱՁ «ախուվախ» Ճառընտ. Բենիկ. նար. որից հառաչել «ախ քաշել» Ոզբ. ա. 21 (մ. հայ. հառչել Թլկր. 54). հառաչումն Մանդ. հառաչական Մաշկ. հառաչանք Մանդ. իգն. միահառաչ Ոսկ. ա. տիմ. բազմահառաչ ՅՀ. կթ. Սարգ. դառնահառաչ Ուռհ. լալահառաչ Սիսիան։

=Բնաձայն բառ. կազմուած է ճ պարզ ձայնից՝ ո սաստկականով և չ ածանցիչով. հմմտ. բառաչել, թառաչել, կառաչել, շառաչել, որոնք սաստկականներն են բաչել, թաչել, շաչել հոմանիշներին։—Աճ.

ՆՀԲ արմատը հաչ, նոյն և հեծ, հեծութիւն: Justi, Dict. Kurde, էջ 442 և Kurd. Gram. 63, 219 քրդ. herzink «խոր հառաչանք» և hertīnim «հառաչեմ» կցում է մեր բառին։ Հիւնք. հազալ բայից։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 204 ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 99 բաչ արմատից։

ԳԻՒ.—Մշ. Սչ. հառչել, Ննխ. Սեբ. հառչէլ, ՋԹ. խրր. հառչիլ, ՀՃ. հարշել. Տիգ. հառչալ. (վերջինս նշանակում է «կռուի մէջ բղաւել, գոռալ, պոռպռալ»)։

*ՀԱՌՆԷՋ «կահ, կազմած, կարասիք» Անսիզք, էջ 19 (չունի ԱԲ)։

=Հֆրանս. harnois, harnais «սպառազէն, կազմած (մանաւանդ ձիու, զէնքի, որսի)»։—Հիւբշ. 391։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Անսիզքի հրատարակիչը, էջ 19։

ՀԱՌՈՏ «համարձակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 177։

+ՀԱՍ, ի հլ. «ժամանում, հասնիլը» Դիոն. ածայ. ՅՀ. կթ. «հասունութիւն, կատարեալ աճում» Մխ. դտ. Մարիին. «տուրք, հարկ, բաժին» ՍԳր. (ըստ Մանանդեան, Տիղեկ. ինստիտ. 1, 31 «ուղղակի հարկ, գլխահարկ և հողային եկամտային հարկ». իսկ ըստ Աւդալբէգեան, անդ 48—58 ընդհանրապէս «հարկ» և ո՛չ բնաւ «հողահարկ»)։ — Շատ գործածական և զանազան նշանակութիւններով զարգացած արմատ է, որից կազմուած են՝ հասանել «հասնիլ, ժամանել. 2. փափագածը գտնել. 3. յարմար՝ պատշաճ գալ, վիճակիլ, բախտին այնպէս պատահիլ. 4. հասկանալ, իմանալ, վերահասու լինել. 5. հասունանալ, կատարեալ աճիլ» ՍԳր. Նւս. քր. Նզն. Եփր. և. հասևառիկ «օլիմպիական խաղերի մէջ պանկրատիոն մրցանակը» Նւս. քր. Սարկ. քհ. (տպ. Սոփերք Գ. 70), հասևխած «անյագաբար ուտելը» Վրք. Հց. հասակ «տարիք, տիք, մարմնի երկարութիւնը» (հմմտ. աշխ. հասած տղայ) ՍԳր. Նւս. պտմ. և քր. Ոսկ. երր. Վեցօր. «ժամանակ» Ագաթ. հասակագեղ Վեցօր. հասակակից ՍԳր. հասակաչափ Բ. մակ. և. 24. Ագաթ. բարեհասակ Բուզ. անհասակ «անչափահաս» Սմբ. դատ. էջ 131. հասուն Ա. մն. իգ. 9, Նզն. Ոսկ. մ. ա. 9. հասունաւս Նւագր. հասու ՍԳր. Կոչ. հասոյք Մխ. դտ. բշուառահասոյց Պիտ. կանխահաս Երեմ. իգ. 2. երագահաս Բ. պետ. բ. 2. Փարպ. անհաս ՍԳր. Վեցօր. Ագաթ. տհաս Յոբ. իգ. 6. Ոսկ. յհ. բ. 19 (ասուած է մարդու համար). ձեռնհաս ՍԳր. Նզն. վերահասու խոր. հասանողութիւն «մտքի ըմբռնում» Նւագր. դիւրահասոյց Ագաթ. կարճահաս «խելքը կարճ» Ագաթ. վաղահասիկ Մծբ. վաղահասուկ Նս. իր. 4. Ովս. Բ. 11. Եփր. ծն. էջ 29. հասառու, հասունութիւն, հասութաբեր (նոր բառեր), հասկանալ «հասու լինել, իմանալ, ըմբռնել» Շնորհ. Լմբ. Ոսկիփ. անհասկացող (նոր բառ) և այլն։

=Բնիկ հայ բառ. յառաջանում է հնխ. ǫk′-ձևից, որ աստրին ձայնդարձն է հնխ. enek′-, nek′-, enk′- «հասնիլ», նաև «կրել, տանիլ» արմատի. ցեղակիցներից հմմտ. սանս. aç. açnōti, náçati, nákšati «հասնիլ, ձեռնհաս լինել, գտնել, ժամանիլ, փափագածին հասնիլ», aça- «մաս, բաժին», naça- «փափագին հասնելը», զնդ. ašnaoiti, nasaiti «հասնում է, գտնում է», aṣa- «բաժին», յն. ἐν-εγκ-εῖν «կրել», πορ-ήνεκές «մինչև ոտքերը հասնող» (իբրև ոտն հաս), ὄγκος «բեռ», գոթ. ga-nah «կրաւէ», ga-nōhs «բաւական», հբգ. ga-nah «կրաւէ», ge-nuog «բաւական», հ. սաքս. gi-nōg, հոլլ. ge-noeg, անգսք. ge-nóh.

նրգ. genug, անգլ. enough «բաւական» (Kluge 175), լտ. nanciscor, հլտ. nancio «գտնել, փափագին հասնիլ», հիռլ. do-icim «գալ», con-icim «կարենալ», air-icim «գրտնել», լիթ. nèšti «կրել, տանել», naštà «բեռ», nèščià «յղի», լեթթ. nest «կրել, տանել», nasta «բեռ», հսլ. nesti, ռուս. нести «կրել, տանիլ» են (Walde 506, Boisacq 251, Pokorny 1, 128, Ernout-Meillet 620, Trautmann 198); *Հայերէնի մէջ հնխ.* g̑k'- *ձևը դարձել է նախ* *անս-, *որից ռնգականի անկումով (հմմտ.* ամիս, միս *և ուս) կամ ռնգականը արմատից դուրս փոխադրելով և նախաձայն ն-ի յաւելումով՝ յառաջացել է* հաս:—*Հիւբշ. 464։*

ՆՀԲ հասակ=*վրաց.* հասակի: Böthtich. Arica 33 *և* Lag. Urgesch. 340—341 հասանել, հասու, հասակ *դնում է* sač *արմատից, որից նաև* seculum: Müller SWAW 42, 256 հասակ *համարում է եսկայ բառի արմատը։ Տէրվ. Նախալ. 59* ասեղ, յեսան *բառերի հետ հնխ.* ak *արմատից, որից նաև յն.* ἴχω, ἱκνέομαι *«գալ, հասնիլ»,* ἀχόνη *«յեսան»,* լտ. acus *«ասեղ»։ Նոյն, էջ 75 սրանց է կցում նաև* հասկանալ, հասկ, *որին լծորդ է դնում գոթ.* ahs *«հասկ» և հլտ.* agna *«հասկ»? Բոլորի մէջ էլ ս յառաջացած է* sk-*ից։ Մառ* ЗВО *5, 320 պհլ.* rasīdan *համանիշի հետ։ Ուղիղ մեկնեց նախ* Bugge KZ 32, 14, *նոյնը նաև* Müller WZKM 10, 276: *Հիւնք.* հաշիւ *բառից։ Մառ.* ИАН *1918, 347 ս մասնիկով* հա *արմատից, որ է սվան.* lihe *«հասնել»։*

ԳԻՒՒ.—ՀՃ. Սչ. հասնել, *Ալշ. Ախց. Ասլ. Խրբ. Կր. Մշ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ.* հասնիլ, *Երև. Նախ.* հասնէլ, *ՋԹ.* հասնըլ, *Սվեդ.* հոսնիլ, *Գոր.* հսնէլ, *Ղրբ.* նի՛ հսնէլ (նի *մասնիկով), Ագլ.* հըսսա՛նիլ, *Ջղ.* խասանել, խասնել, *Սլմ. Վն.* խասնել, *Մրզ.* խասնէլ, *Մկ. Ոզմ.* խասնիլ. *այս բոլորը ունին սովորական և ընդհանուր «հասնիլ» նշանակութիւնը. իսկ Սչ.* հասընալ *«հասունանալ», Համշ.* հասնուշ *«պտուղի հասնել» (իսկ մարդու են սովորական իմաստով՝ ժմնուշ).—2. Շմ. Տփ.* հասկանալ, *Գոր. Ղրբ.* հսկա՛նալ, *Ախց. Կր. Մշ.* հասկընալ, *Նխ.* հասկընալ, հասընալ, *Ասլ. Պլ. Ռ. Սեբ.* հասգընալ, *Հճ.* հասկոնալ, *Ագլ.* հսկա՛նիլ, *Սչ.* հասգ'ընալ, *Տիգ.* հոսկնալ, *ՋԹ.* հասգունալ, հասգունոլ, *Ջղ.* խասկանալ, *Մկ.* խոսկոնալ, *Մրզ. Սլմ. Վն.* խասկնալ, *Ոզմ.* խոսկանալ. *(Ղրբ. նշանակում է նաև «լսել». ինչ. Դրա անունը շատ ենք հասկացել, բայց իրան չենք տեսել. իմաստի զարգացման համար հմմտ.* իմանալ *«հասկանալ. 2. Պլ. լսել»։—Նոր բառեր են* հասուն, անհասուն, ծիրանհասուն, հասուիրանիլ, հաս *«ամուսնութիւնը թոյլատրելի», չհաս «ամուսնութիւնն անթոյլատրելի»։*

ՓՈԽ.—Վրաց. Ձահաչօ հասակի, ահաչօ ասակի *«տարիք, հասակ, բարձրութիւն, մեծութիւն, չափահասութիւն» (հմմտ. Մաթ. գ. 27. Դա շեուձլոս շեձինեբադ հասակսա ԹրւասսաՁղ'ԹթաՆրթ. յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի).* Ձահաչոցահօ հասակովանի, ահաչոցահօ ասակովանի *«հասակաւոր, տարիքոտ, գեղահասակ»,* Ձոահաչշ ահասակի *«հասակակից»,* ՊՁահաչո ուհասակո, Պահաչո ուասակո *«փոքր, անչափահաս»։*

ՀԱՍ *«տիւ», ունի միայն Բառ. երեմ. 177. —Թերևս պէտք է կարդալ «տիք», որով և միացնել* հասակ *բառին։*

ՀԱՍԱՋԱՐԴ *«պահանորդ». ունի միայն Բառ. երեմ. էջ 177։*

ՀԱՍԱԿ «մի տեսակ փուշ է. Թրք. տէմուր փիրէնի» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1640։*

=*Արաբ.* حسك ḥasak *նոյն նշ. (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 81, որ նոյնպէս մեկնում է Թրք.* տէմուր փիրէնի):

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ՀԱՍԱՊԱԿ, ի–ա *հլ. (մէկ անգամ ունինք* հասարակուց *Ա. մկ. ժ. 30, բայց այլ ձձ.* հասարակաց) *«կէս (օրուայ, ճանապարհի համար ասուած). 2. ընդհանուր, միաբան, հասարակաց. 3. հաւասար. 4. իրար հետ համաձայն» ՍԳր. Ոսկ. Եւս. քր. «սովորական, պարզ» Նար. որից* հասարակել *«կէսին հասցնել» Սղ. ծդ. 24. Ագաթ. «հաւասար բաժանել, մասնակից անել» Բուզ. Սեբեր. «լրանալ, բովանդակուիլ» Վրք Հց.* հասարակաց

ՍԳր. Ոսկ. յհ. և ես. հասարակիկ «հաւասար» Մանդ. սիր. 12. հասարակորդ Մաթ. ի. 12. հասարակախառն Ոսկ. մ. ա. 4. Սեբեր. հասարական «կէսը» ՍԳր. Եզն. «դիշերահաւասար» Շիր. Սարկ. տոմ. հասարակակշիռ Վեցօր. հասարակ or կամ orհասարակ «կէսօր» Գ. թագ. ժը. 26 (տե՛ս Այտնեան, Քնն. քերակ. էջ 65). հասարակապետութիւն, հասարակապետական (Նոր բառեր) ևն։

ՆՀՔ համասարաս կամ հաւասարակ։

Հիմնք. հաւասարակ։ Այսպէս է մեկնում նաև Pedersen, Հայ. դր. լեզ. 147։

ԳԻՒ.—Պահուած է մի քանի տեղ գանազան իմաստներով. այսպէս՝ Կր. Ախց. Տփ. հասարակ «պարզ», Ասլ. Պլ. հասարագ «արտաքնոց» (իբր վայր հասարակաց), Երև. հասարակ «վատ տնասակի», Ննխ. հասարագ (գիւղերում՝ հաւասար բառի հետ խաչաձևմամբ՝ հավսարագ) «հասարակութիւն, համայնք, ժողովուրդ»։—Հին orհասարակ ձևից են յառաջացած Ռ. օրարսագ, Պլ. օհարսագ, Սեբ. հօրայսագ, Ասլ. էօրարսագ, Ուդ. օրասսագ, Ակն. օսրաֆ, Ատ. օվարսագ, Ննխ. հօրսագ, հօրսունկու, հօրցագ, որոնք բոլոր նշանակում են «կէս օր, ցերեկ». իսկ Շմ. հէօրծիւգ «առաւօտը կանուխ». (իբր օր-ծագ «օրը ծագելու ժամանակը», ինչպէս սուտպարանեց Ալ. Աբէլեան, Թատերագիր Շամախեցի)։

ՓՈԽ.—Վերջիններին է պատկանում բոշայ. ororսակ «ցերեկ, կէսօր» (Finck, Die spr. d. arm. Zigeuner ЗАН 1907, 118)։

ՀԱՍԱՖ «կորեկի նման մի բոյս». Ասար. ունի միայն ՀԲուս. § 1642։

Կայ արաբ. حسف ḥasf «մի տեսակ փուշ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 740)։

ՀԱՍԵՒՀԱԿԱՅ «պատասխանի». ունի միայն Բառ. հրեմ. էջ 177. հմմտ. եակ «պատասխան»։

ՀԱՍԻՄՈՆԱ «հազի դէմ գործածուած անծանօթ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3350։

Հասիր տե՛ս Խսիր։

ՀԱՍԿ, ի հլ. (ՆՀՔ նաև ի–ա հլ. բայց առանց վկայութեան) «հասած ցորենի ցօղունի գլուխը» ՍԳր. որից հասկաթուռ Ագաթ. հասկահաւաքել Ոսկ. ա. Թես. հասկամաղ Մխք. է. 1. Ես. ժէ. 5. հաջահասկ Փիլ. Հասկահասուն Պիտ. ևն։

ՆՀՔ հասուն բառից. յիշում է նաև պրս. սուխ «հասկ»։ Տէրվ. տե՛ս հաս բառի տակ։ Հիմնք. հաս, հսկայ և կամ արաբ. ḥaṣil «յառաջ գալ» բառերից։ Müller WZKM 5, 268 սիր. ,ܚܣܝ xōšak = պրս. خوشه xōša «հասկ» բառի հետ կասկածով։ Patrubány ՀԱ 1908, 246 հասանիլ բայից։ Karst, Յուշարձան 404 սումեր. eššu, issu «հասկ»։ Պատահական նմանութիւն ունին արաբ. حسك ḥasak «տաւարի կեր ուտելը», حسيكة ḥasīka «տաւարին իբրև կեր տալու գարի», احساك iḥsāk կամ احشاك iḥšāk «տաւարին կեր տալ», حشك ḥašk «տաւարի գարի ուտելը» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 81), նորվեգ. áksa «հասկ» (վերջինիս նմանութեան վրայ հրաւիրելով Meillet-ի ուշադրութիւնը, մերժեց որևէ կապ հայերէնի հետ. նամակ 1927 թ. ապրիլի 21)։

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Վրբ. Մշ. Շմ. հասկ, Մկ. Ոզմ. Վն. խաշկ, Մրզ. Սլմ. խոշկ՝, Սվեդ. հուսկ.—Նոր բառեր են հասկակալել, հասկել (Վն. խաշկել), հասկահաւեղ։

ՓՈԽ.—Մաո. ЗВО 17, 293 հլ. *հասկաւել ձևից է դնում վրաց. ձնკავლი ոսկավիլի, որի նշանակութիւնը անյայտ է և որ ինքը մեկնում է «հասկերից շինուած ուլ»։

Հասկանալ տե՛ս Հաս։

ՀԱՍՈՒՄ «սպիտակ վրացի կոճ» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 1644։

*ՀԱՍՊՈՒ «հարսանիք, քութէշ», rougeole, տճկ. զգամուկ կամ գուրթէշէն» Ասար. (նոյնը աւում է հյ. սև վարդ կամ պարզապէս վարդ, ինչպէս ունի Մխ. հեր. 70)։

=Արաբ. حصبة ḥaṣba նոյն նշ. (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 109, Будагов 1, 517)։

ՀԲուս. § 1645 Ասարի մէջ գտնելով բառս մեկնուած «սև վարդ», ծաղիկն է

կարծում։ Վերի ձևով ուղղեց ու մեկնեց Նորայր ՀԱ. 1921, 337։

+ՀԱՍՏ, ի հլ. «ամուր, հաստատուն, ուժով» Սղ. ժը. 35. Գ. մակ. գ. 16. Սերբ. Ոսկ. եփես. էջ 932. Եփր. աւետ. «հաստատութիւն, ամրութիւն» Ոսկ. ա. թես. թ. և մ. բ. 25. Սերբեր. «թանձր, հաստ» Յայսմ. որից հաստանալ «ուռճանալ, մեծանալ» Ոսկ. մ. գ. 33. հաստել «պնդացնել, ամրացնել, հաստատել, ստեղծել» Բ. մկ. ը. 27. Ագաթ. Եփր. ծն. հաստիչ «ստեղծող» ՍԳր. Ագաթ. հաստոց «անջրպետ» Նչ. նղկ. հաստումն Սիր. լա. 19. Եզն. հաստուն Սերբեր. Եփր. աւետ. 265. հաստուած Ագաթ. հաստաբեստ (տե՛ս բեստ) Բուզ. Վեցօր. 166. հաստակաշի Վեցօր. հաստակապ Վեցօր. հաստահարուստ Վեցօր. հաստահեղոյս Ագաթ. հաստահիմն Ա. պետ. ե. 10. Կորիւն. հաստամագիլ Վեցօր. հաստամեստ Բուզ. հաստանդամ Վեցօր. հաստապինդ Գ. մակ. գ. 9. հաստարմատ Սղ. խէ. 2. հաստոյժ Ոսկ. մ. բ. 24. հաստաբուն, հաստագլուխ, հաստամարմին, հաստավիզ, հաստափոր *(նոր բառեր)*, ոճով ասում է հաստի հարկանել «հաստատ կանգնել». Ջուտրն հաստի հարին, գետղի կալան և առաքինացան յամենայն տեղիս. Եփր. վկ. արև. 37. այստեղ են պատկանում նաև հաստոյր «սաստիկ, ուժգին» Ոսկ. մ. բ. 26 *(ուրիշ վկայութիւն չկայ)* և թերևս հաստեցանել «մանկիկը ծծից կտրել» *(Ներսէսովիչ, Բառ. լա.-հյ.* ablacto)։ *Տե՛ս նաև* հաստատ։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* pasto- «հաստատուն, ամուր, հաստ» *ձևից, որի ժառանգները գտնւում են միայն գերմանականում. այսպէս՝ հրգ.* festi, *մբգ.* veste, *նրգ.* fest, *հսաքս.* fast, *անգսք.* foest, *հիսլ.* fastr, *անգլ.* fast, *որոնք ենթադրում են գոթ.* *fastu «ամուր, հաստատուն»։ Թերևս այստեղ է պատկանում նաև սանս. pastyá- «տուն և բակ, բնակարան» *(իբրև «հաստատուն բնակութիւն»)* (Walde 275, Kluge 138, Pokorny 2, 7)։—*Հիւբշ. 464։*

ՆՀՒ արմատն է աստ, ասպի, ասպին, խիստ, նիստ, ըստ։ Böttich. Arica 82, 384 *օսս.* bäsdyin, baŝgyin, *յն.* βαθύς, *սանս.* baddha, *գնդ.* basta։ *Նոյնը նաև* Wurzelforsch. 17: Müller SWAW 48, 428 *համառօտուած* հաստատ *բառից։ Հիւբշ.* Arm. Stud. *էջ 38 տուաւ վերի մեկնութիւնը։ Տէրվ. Նախալ. 112* հաստ *և* հաստատ *դնում է* sta «կենալ» *արմատից. համմտ. սանս.* sthā, *գնդ.* stä, *յն.* ἵστημι, *լտ.* sto, *հսլ.* stati, *հրգ.* stam *են։ Թիրեաքեան. Պատկ. աշխ. զբրակ. 196 պրս.* هستن hastan «ստեղծել» *բայից։ Հիւնք.* հաստել *դնում է յն.* ἵστημι, στήσω, ἔστησα, *պրս.* ἧէպէմ *և* եզտան «հաստուած» *բառերից, իսկ* հաստել *ձևից էլ հանում է* հաստ *և* հաստատ։ *Սանտալճեան,* L'idiome 10 *խալդ.* situni, *յն.* ἵστημι *և հյ.* ստեղծել *բառերի հետ։*—Kluge 138 *հայերէնի նախաձևը դնելով հնխ.* *pazdu, *ենթադրում է, որ կազմուած է* pa- *մասնիկով* zdu=sed «նստել» *արմատից։* Petersson KZ 47, 288 հաստ *բառին կցելով նաև հյ.* հոծ *և սանս.* pibdamānas, *նախաձևը դնում է* podsto: — *Այս երկու կարծիքն էլ մերժում է* Pokorny 2, 7:

Գիւր.—*Ալշ. Ախց. Դոր. Սրև. Կր. Ղրբ. Մշ. Ննխ. Շմ. Տփ.* հաստ, *Մշ.* հասդ՝, *Խրբ. Հմշ. Սեբ. Տիգ.* հասդ, *Պլ. Ռ.* հասդ, հա՛սդը, *Մկ. Մրզ. Ոզմ. Զգ. Սլմ. Վն. Խաստ, Ագլ.* հօստ *(բայց* հստա՛նիլ «հաստանալ»*), Զթ.* հօսդ, հոսդ, *Հճ.* հօսդ, *Սվեդ.* հուստ.—*Ասլ. չգիտէ այս բառը և նրա փոխարէն գործածում է* հասդադ, հասդա՛ «հաստ». *միայն կայ* հասդրնալ «հաստատնալ» *բայը։*—*Նոր բառեր են* հաստագեռան, հաստագլուխ, հաստաթիկունիմ, հաստակոլոլ, հաստակող, հաստաշրլիիմ, հաստավիզ, հաստափոր, հաստերեսանի, հաստատուն, հաստլիկ, հաստակեկ, հաստուրուդ, հաստհաստանալ։

+ՀԱՍՏԱՏ *(ի հլ. ըստ ՆՀՒ, բայց առանց վկայութեան)* «ամուր, պինդ» Կանոն. Նար. խչ. «աստղդ, վաւերական, իրական» Գազ. գ. 23. Մծբ. Եփր. Թգ. որից հաստատել «ամրացնել, պնդացնել. 2. շինել, կանգնեցնել. 3. ստեղծել, հաստել. 4. վաւերական ցոյց տալ» ՍԳր. Կոչ. Վեցօր. հաստատանալ Ագաթ. հաստատիչ Սղ. ժէ. 2. հաստատուն

ՄԳր. Սեբեր. Ոսկ. հաստատաբան *վեցօր.* հաստատագոյն *Բ. պետ. ա. 19. Ոսկ. յհ. բ. 12, 31.* անհաստատ *Ագաթ. Փարպ.* հաստատակամ, հաստատամիտ, հաստատակամութիւն *(նոր բառեր) ևն։*

=*Բնիկ հայ բառ. կազմուած է* հաստ *բառից՝* -ատ *մասնիկով։*

ՆՀԲ հաստ *բառից։* Müller SWAW *38, 573, 583 և 48, 428 համարում է ներկայ դերբ.* sthā, στα *«կանգնիլ» արմատից։ Տէրվ. Նախալ. 112 և Հիւնք. կը-ցում են* հաստ *բառին։ Հիւբշ. ՔՀ՛* Arm. Stud. *և ՔՀ* Arm. Gram. *դնում է* հաստ *բառը, բայց սրա հետ չի յիշում* հաստատ: Pedersen, *Հայ. դր. լեզ. էջ 220* հաստ *բառից՝* -ատ *մասնիկով, որի հետ համմտ.* հաւ–ատ:

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Կր. Մշ. Տփ. հաստատ, *Ալշ. Զթ. Ննխ. Շմ.* հաստադ, *Սչ.* հաստ'ադ, *Առն. Խրբ. Պլ. Ռ.* հաստադ, *Ասլ.* հաստադ, հաստա*, *ՋՓ.* հաստօղ, հաստոդ, *Տիգ.* հոստոդ, *Մկ. Ոզմ. խաստատ. բոլորն էլ նշանակում են «հաստատ, ամրաշէն, վաւերական». իսկ Ասլ. տե՛ս* հաստ *բառի տակ։*

ՓՈՒ.—Ըստ Bugge IF *5, 168—80 (Թրգմ. ՀԱ 1895, 229) հայերէնից է փոխառեալ գոթ.* astaþ *«հաստատութիւն, ճշմարտութիւն, բանուգութիւն» (համմտ. Ղուկ. ա. 4.* vaurdē astaþ *զբանից ճշմարտութիւն). գոթ. բառի մէջ հայերէնի ե նախաձայնը ջնջուած է և վերջաւորութիւնը գոթական aþ ձևին է վերածուած։*

ՀԱՍՏԱՏ «աշտենաւոր, նիզակաւոր զինուոր». իբր միջին հյ. բառ ունի Նորայր, Բռ. Ֆրանս. 632 բ։

=*Ֆրանս.* hastat, *որ է լտ.* hastatus *նոյն նշ. (կազմուած է լտ.* hasta *«նիզակ» բառից)։—Աճ.*

ՀԱՍՏԵՍՅ «խմորհղէն». մէկ անգամ գործածուած է Երեմ. խդ. 19. «Արարաք նմա հաստեայս և կարկանդակս»։

ՀՀԲ «յն. հաστայս *» բառից։ ՆՀԲ նոյն ընդ* հայս, *որ և յն.* σταῖς, σταίς, σταιτός *«ալիւրով ու ջրով շաղուած խմոր»։ Պատահական նմանութիւն ունի չէրքէզ.* pastə *«կորեկի հաց». բայց թերևս պատահական չեն յն.* ἀκτή *«ցորեն»* (Boisacq 39) *և կամ յն.* πάστη *(որից լտ.* pasta>*ֆր.* pâte) *«ալիւրի խմոր»* (Wald. 559), *որոնց ծագումը ստոյգ չէ բացատրուած։*

Հաստիլ *տե՛ս Աստիլ։*

ՀԱՍՏՈՒ *«կարճավճիռ». այսպէս ունի Բառ. երևմ. էջ 177։*

ՀԱՎԱՐԻ *«լուացած ցորենի ալիւր՝ բարակ մաղած և եփած» Ամիրտ. ունի միայն ՀՌուս. § 1646 և 151։*

=*Արաբ.* حوارى ḥavārī *«շարմաղ ալիւրով հաց»* (Steinschneider WZKM *12, 14) կամ* حوّارى ḥuvvārī *«խիստ սպիտակ և ընտիր ալիւր» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 831)։—Աճ.*

ՀԱՎԱՐԻՈՆ *«12 նիւթից բաղկացած մի տեսակ սպեղանի է» Ասար.։*

=*Արաբ.* حوارىّ ḥavāri, *յգ.* حوارِيّون ḥavāriyyūn *(համմտ. Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 831) «աշակերտ Քրիստոսի, առաքեալ». յիշեալ սպեղանին 12 նիւթից բաղկացած լինելով՝ նմանութեամբ ստացել է այս անունը, որից և Բրբ. հավարիյուն մէրհէմի. այսպէս են նաև իտալ.* apostolicone *«նոյն սպեղանին» (բուն նշ. «առաքելական») և հյ. առաքեալ (հավարիօն առաքեալն է. Ասար.)։*

Բառս գտաւ նախ Ալիշան. ՀՌուս. § 151, որ ուղիղ մեկնեց Նորայր, ՀԱ 1921, 104։

ՀԱՎԻՐ *«սպիտակ կազամախի,* populus alba» *Ամիրտ. ունի միայն ՀՌուս. § 1647։*

=*Արաբ.* حور ḥavar «populus *կամ* platanus alba» (Steinschneider WZKM 12, 14) *կամ «Բրբ. էհերիպա աղաւնր» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 831)։—Աճ.*

ՀԱՏ, ո *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «կտրիչը, հատուած, կտոր» Երեմ. խզ. 20. Եզիշ. հոգ. «մէկ հատիկ սերմ, ունդ, մանաւանդ ցորենի կամ ուրիշ հացաբոյսի» ՄԳր. Եւագր. «վերջ, ծայր» Օրբել. ողբ. է. որից* հատանել *«կտրել, կրճատել, վերջացնել, պակասեցնել, ճեղքել, որոշել, սահմանել, մեռաց հանել կամ հանք փորել, լոյս ցոլանալ, դրամ կըտ-*

րել ևն» ՍԳր. Մծբ Ոսկ. Եւս. պտմ. Սեբեր. Եզն. հատուցանել «վճարել, վրէժը լուծել ևն» ՍԳր. Ոսկ հատուցումն ՍԳր. Ագաթ. վարձահատոյց Կորիւն. ստեահատոյց Ոսկ. հս. հատեալ «մալեալ» Ղևտ. իր. 24. հատած Եւս. պտմ. հատուած Ագաթ. Եւս. քր. հատու «սուր, սաստիկ» ՍԳր. Ոսկ. հատակոտոր Ոսկ. Սիր. մն. հատահատ «հատիկներով հմայող» Ոսկ. բ. տիմ. ը. և տիտ. հատավաճառ «լումայափոխ» ՍԳր. հատիկ «սերմ» Լմբ. սղ. «խաշած ցորենով պատրաստուած մի ուտելիք» Մմբ. դատ. 60. հատիճ «կուտ» Անյ. ստորոգ. (>Ջղ. խատիճ «կուտ ձմերուկի» ևն). հատոր Մաղաք. բ. 15. հատկիլ (գրուած նաև յատկիլ) «հեկեկալ» ՅՀ. կք. 309, Լաստ. ժգ. հատուկտոր, հատուածական, հատուածակոդմ, հատորաւոր (նոր բառեր) ևն։—Շատ անգամ պատահում է բարդութիանց վերջը. ինչ. աճհատ Եզն. բանահատ Սիր. պհ. Մանդ. վիմահատ Սեբեր. նորահատ Պզատ. տիմ. երկաբահատ Ոսկ. մ. բ. 18. դահեկանահատ Մխ. դտ. դեղահատ Կանոն. գանձահատ Ոսկ. յհ. թ. 12. Բուզ. գերեզմանահատ Ոսկ. յհ. բ. 39. գարեհատ Շիր. գինեհատ Սիր. պհ. Մանդ. բաբահատ Սիր. դտ. կապարահատ Բուզ. նոյնից՝ և ձայնի կրճատմամբ և այս պատճառով էլ յոդակապի տեղիք չմնալով՝ ձևացել է -ատ (մասնիկը). հմմտ. ձեռնատ Կանոն. ակնատ «աչքը վնասուած» Ոսկ. հոռվմ. 295. ականատ Վրք. հց. ականջատ Ղևտ. իա. 18, իբ. 23. հերատ Բժշ. միջատ Վեցօր. փայտատ ՍԳր. կտաւատ Մխ. առակ. կառափնատ Բ. մակ. դ. 42. գունատ Ոսկ. երր. բացատ ՍԳր Բուզ. խրամատ Բ. թագ. ե. 20. Սիր. դտ. և սրանցից՝ հերատուկ Ոսկ. մ. բ. 23. խրամատել ՍԳր. Ագաթ. ծայրատել Մամիկ. ՅՀ. կք. գլխատել Մոթ. ժգ. 10. Ղկ. թ. 9. Եւս. քր. ապատել Փիլ. նխ. խարատել «քարը տաշել, կոփել» Տիմոթ. կուզ, էջ 44, 45, 46, 47. տարատել «բաժանել» Տիմոթ. կուզ 261 ևն։—Ջանազան նախդիրներով կազմուած ձևեր են՝ ՋԱՏ «առանձին, զատուած, մեկուսի, հեռու» (իբր զ-հատ) Եզն. Սեբեր. Սիր. բ. կոր. որից իզատ «հեռու» Վրք. հց. ա. 22 (ժե օթեվանօք ի զատ էաք). զատանել, զատել «բաժանել, անջրպետել» ՍԳր. Եզն. Կոչ. վատուցանել ՍԳր. Եզն. զաշիլ Խոր. Ողիշ. զատագոյն «հեռագոյն» Փարպ. զատական Սեբեր. ոսկզատոյց Սիր. պհ. 169.— ԸՆԴՀԱՏ «տարբեր» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. հս. Բուզ. որից բնդհատուրիւն Փիլ. բնդհատումն Փիլ. բնդհատել (նոր բառ), անբնդհատ Փիլ. Պիտ. ևն.—ՆՀԱՏ (կազմուած և նախդիրով) «պակաս, թերի» Տիմոթ. կուզ, էջ 106, 160, 297, 179. որից աննհատաբար «աննուազաբար» Տիմոթ. կուզ, էջ 69։—Արմատի երկրորդ ձևն է յատ, որից յատանել, յատաց, յատուկ ևն, որի վրայ տե՛ս վարը առանձին։

ՆՀԲ հատ բառի հետ համեմատում է այլազգ. ſէք, ſէս (իմա՛ արաբ. qaṭ՛ և թրք. kes «կտրել»), իսկ հատուցումն ձևի հետ լծ. է դնում թրք. ևէտիյէ «նուէր»։ Böttich. Arica 41 և Wurzelforsch. 46 sad արմատից. հմմտ. սանս. sasya: Lag. Urgesch. 408 լտ. caedo, cado «կտրել, ջարդել»։ Müller BVS 5, 138 սանս. çātayāmi և օսս. sattyn. իսկ SWAW 84 (1877), էջ 228 օսս. fadun «ճեղքել»։ Տէրվ. Մասիս 1882 յունիս 7 լծ. յատանել: Հիւբշ. Arm. Stud. 38 օսս. faθun? Մառ. ЗВО 5, 320 զնդ. dāta- «ատամ» բառի հետ։ Հինք. հատ բառից։ Հիւբշ. Arm. Gram. 464 աւելի մանրամասնելով խնդիրը՝ համեմատում է օսս. fadun (fādun) «ճեղքել» և բելուճ. patay «կտրել, ծայրատել, կրճատել» բառերի հետ. բայց այս համեմատութիւնը անապահով է գտնում, որովհետև յիշեալ բառերը ծագում են հնխ. pat- արմատից, մինչդեռ հայերէնը ենթադրել է տալիս հնխ. pad- արմատը. սակայն հնխ. pat- և pad- կարող էին իրար փոխանակել։ Սրմագաշեան, Արմէնիա սում. hat «այգիները բաժանող ճանապարհները»։ Jensen, Hitt. u. Arm. 4, 63, 78, 130 և ՀԱ 1904, 184 հաթ. ht, xt, hat, hato հոմանիշների հետ։ Meillet, Բանաս. 1900, 104 յն. σκεδάννυμι, χεδάννυμι «ցրուել, խորտակել» բառերի հետ՝ հնխ. kd- արմատից։ Karst, Յուշարձան 421, 428 թթր. at, ay «բա-

ժանել», ույգ. atin *«ուրիշ, տարբեր»,* atirmak *«բաժանել, ջոկել», չաղաթ. օսմ.* ayirmaq *«բաժանել», Թիրեաքեան, Ա-բրահայ բռ. 233 զնդ.* hāiti, *պհլ.* hā *«գլուխ, բաժանմունք, հատուած» բա-ռից է գնում հատանել բայը, իսկ հատ, հատիկ = պհլ.* hadīh, *արաբ.* احد ahad *«մէկ»։ Պատահական նմանութիւն ունին արաբ.* هتو hatv *«ոտքով կոխելով կոտրել» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 954),* ᵛهث haθ *«իսկոյն կտրել» (անդ՝ Ա. 67),* حذّ ḥaδδ *«ամբողջապէս կտրել» (Ա. 724)։ Աճառ. Նորք 1925, № 5, էջ 393 յիշում է կամիս.* ḥatt *հոմանիշը։ Մար-գարեան, ժամանակ 1927 օգ. 3* **ատել** *բայի հետ։*

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Կր. Շմ. Տփ. **հատ**, *Ալշ. Խրբ. Համշ. Մշ. Նախ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* **հադ**, *Ասլ.* **հադ**, **հա***, *Տիգ.* **հոդ**, *Մկ. Մրզ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Խատ, Զթ.* **հօդ**, **հոդ**, *Հճ.* **հօդ**, *Սվեդ.* **հուդ**։—*2. Տփ.* **հա՛տնիլ**, *Մշ. Սչ.* **հադնել**, *Խրբ. Պլ. Սեբ.* **հադնիլ**, *Ասլ.* **հա*նիլ**, *Սլմ. Վն.* **խատնել**, *Մկ. Ոզմ.* **խատնիլ**, *Ակն.* **հանիլ**, *Մրզ.* **խանիլ**. *այս բայերը նշանա-կում են «սպառիլ», միայն Մկ. Մրզ. Վն. և Ոզմ. «սատկիլ». որով հատ արմատի նշա-նակութեանց շարքը լինում է «կտրել, վեր-ջանալ, սպառիլ, մեռնիլ, դրամը տալ». ի-մաստի զարգացման համար համմ. վճարել՝ որ նոյնպէս ունի վերջին չորս նշանակու-թիւնները.—«սպառել» նշանակութեան հին գործածութիւնն ունի Վրք. հց. ա. 644* (**հա-տանիցես** *«հատցնես, սպառես, վերջաց-նես»*)։—*Նոր բառեր են* **անհատնելի**, **անհատ-նում**, **սիրտհատնում**, **հարահատ**, **հատխաշ**, **հատբուտ**, **հատեղէն**, **հատկսկիծ**, **հատմազ-տաճի**, **հատոտ**, **հատուկ**, **հատոհին**, **հատէ-հատ**։—*Կրճատ ձևով է Ննխ. մէ՛համ «մէկ»* (<մէկ հատ մը), *ուր հատ բառից միայն ձայնաւորն է մնում անաղարտ։*

ՓՈԽ.—Թրք. գւռ. կես. Եւդ. և Տ. حديك hedig *(պէտք էր դրել աւելի հիշտ* هديك *ձևով) «խաշած ցորեն, հատիկ». օր.* hedig yeyiyorum *«հատիկ եմ ուտում» (Ինւր. 1898, 713 և 1899, 798, Յուշարձան 329 բ)։—Տե՛ս և ցախ բառի տակ* (**ցախատ**)։

ՀԱՏԱԿԱՆ *«հանապազ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 177. ուրիշ տեղից յայտնի չէ բառս։*

***ՀԱՏԱՂ կամ ՀԱՏԱՂԱՅ** *«վայրի պատին-ջան, լտ.* solanum cordatum*» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1648։*

=Արաբ. حدق ḥadaq *«պատինջան» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 880)։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 2520։

***ՀԱՏԱՏ** *«երկաթագործ». նորագիւտ բառ, որ երեք անգամ ունի գործածուած Ուռհ. էջ 213—4. «Գային երկու հատատք յերկրպա-գութիւն Վասակայ... Ժողով արարեալ զա-մենայն ազգն Հոռոմոց զնենգաւորսն և զհա-տատսն. կոտորեաց զամենայն հատատսն առհասարակ»։*

=Արաբ. حدّاد haddād *«երկաթա-գործ»։—Ա.Ճ.*

Սոյն մեկնութիւնս հրատարակուած է նախ իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 193։

+ՀԱՐ *«զարնել, խփել». ճոխ զարգացում կրած մի արմատ է, որից ածանցուած են՝* **հարկանել** *բայի մի քանի ժամանակները. ինչ. կտր.* **հարի**, *ապ.* **հարից**, *հրմ.* **հա՛ր** *են. ՍԳր.* **հարուլ** *«զարնել» Մխ. դտ. Վրք. հց. «նետ արձակել՝ զարնել» Բանք. իմ. 30. «լուացման ժամանակ ձեռքով տրորել» Տա-թև. ամ. 293. «ատամը հարուիլ, ակռան առ-նել» Մխ. առակ. «Թմբուկ են զարնել» Վի-պաս. (Մեք փող հարուաք և թմբկի հարկա-նէաք).* **հարուիլ** *«վնասուիլ» Ոսկ. պօղ. Ա. 36.* **հարուած** *ՍԳր.* **հարիչ** *«թևլաւոր նետգ-րանները զարնելու գործիք, մզրաբ» Պղատ. օրին. 233.* **հարևանցի** *Լմբ. Նար.* **հարևանցիկ** *Ա. կոր. ժզ. 7. Ոսկ. յհ. բ. 4.* **հարուկ** *«հրա-ժըշտական մի խաղ է» Ոսկիփ. որ և* **հար-հար** *Ոսկիփ.* **ճնարահար** *Ոսկ. ես. Նտ. քր.* **ճնարահարու** *ՅՀ. իմ.* **հարստահարել** *ՍԳր.* **որդնահար** *Նար.* **խորշակահար** *ՍԳր. Ագաթ.* **ճերկահար** *«հերկող» Ոսկ. ես. 318.* **կոփա-հարել** *Ա. կոր. դ. 11.* **ակնհար** *Ոսկ. կող. ը. առ* **ակնհարէ** *Բղթ. բարուք. (ՀԱ 1911, 746).* **խոցահարել** *Ոսկ. յհ. բ. 8.* **փայտահար** *ՍԳր.* **կաղնահար** *Փիլ. լին.* **կայծակնահարեալ** *ՅՀ.*

կթ. դիւաճար ՍԳր. գինեճարիլ Եւս. ծգ. 12. գանճաճար Ոսկ. ես. եղջերուաճար Նոնն. երդմնաճար Պղատ. օրին. երաշտաճար Թէոփ. խ. մկ. երկնաճար «շանթահար» Կոչ. ընդդիմաճարիլ Ոսկ. յհ. ա. 34. ընդվայրաճար Ոսկ. եփես. ընդճար «մօտիկ» Եղիշ. մատն. 241 (չունի ՆՀԲ). իննիարուածեայ Եփր. կլ. զրկաճարաճիմ Պիտ. ճարճրել «իրար բաղխել (նաւերը)» Շապհ. 23. ճարճարել «տրորել (մարմինը)» Ոսկ. ճառք. 39 (ըստ մէկ ձեռ.). ամօթաճար, ճարճանցիօրէն, ընդճարուիլ (նոր բառեր) ևն։ Տե՛ս նաև ճարուստ: Այս արմատից աճած ձևերն են՝ ՀԱՐԿ, որից՝ բայական ձևով ճարկանել «զարնել, ծեծել». փխբ. և նորանոր առումներով «2. նուագել, նուագարան զարնել. 3. զարնել, վիրաւորել, խոցել, խայթել. 4. խիղճը խայթել. 5. փայտ կոտրել, փայտ ջարդել. 6. մարդ կամ անասուն զարնել սպաննել, կոտորել. 7. հարուածել, տանջել, պատժել. 8. վրան ցից են զարնել, տնկել, գետինը ցցել. 9. մէկին խրփել, բաղխել, դպչիլ. 10. համեմատել, բաղդատել. 11. դրոշմել, արձանագրել. 12. ծառաը՝ քաղցը են կոտրել, մեղմել, իջեցնել. 13. ճանապարհը կտրել անցնիլ. 14. գետին խփել. 15. ողրալ, արտասուել. 16. ծառայել, սպասաւորութիւն անել. 17. ոտքով խփել կամ ծափ տալ. 18. կրակ վառել են ևն» ՍԳր. Ոսկ. Եւս. պտմ. և քր. «19. մարմինը փտիլ» Վրք. հց. ա. 9 (Զմարմինն գմռեցին, զի մի՛ հարցի ի տօթոյ). Եղիշ. է. (Հարան տրորեցան գոգք նորա)։ Այս զանազան առումների համեմատ են՝ ճարկ «տուրք, տուգանք» ՍԳր. Եւս. պտմ. (համմտ. ճարկս ճարկանել «հարկ տալ» Ա եզր. բ. 19). «ծառայութիւն, գործ» ՍԳր. Եզն. Ոսկ. «պէտք, կարօտութիւն, ցաւ, վիշտ» ՍԳր. Նիւս. Եւս. պտմ. «ստիպմունք, բռնութիւն» ՍԳր. «մեծարանք, հանդէս» Ոսկիփ. Անկ. գիրք նոր կտ. 190. ճերկ ճարկանել «հերկել» Ոսկ. ես. 318 (որից և ճերկաճար Ոսկ. ես. 318), ճարկել «ստիպել, բռնադատել, թախանձել» Ոսկ. յհ. «հարկատու դարձնել, ծառայեցնել, աշխատեցնել» ՍԳր. «կոչունքով պատուել» Վրք. ոսկ. ճարկիճ «պատիւ, պատկառանք» (չունի ԱՒ) Տաթև. ամ. 273, 317. ճարկևոր «պատուելի, ակնածելի» Լաստ. բ. Ճառընտ. (որի հետ համմտ. մեծաճարկի Լաստ. ժհ), ճարկաւոր «պէտքի, ստիպողական» Նիւս. Նար. Սարգ. «ծառայ» Երր. ա. 14. Եզն. Ոսկ. ես. ճարկաւորիլ «պէտք դալ» Ճշ. 43, 583. ճարկադիր Առակ. զ. 7. ճարկաճան ՍԳր. Ոսկ. ճարկաճար «ծառայ» Յոր. բ. 9. ճարկանելի «զարնող, խփող» Ողբ. գ. 30. Քուց. լե. 24. ճարկատու ՍԳր. անճարկապարտ (նորագիւտ բառ) Տիմոթ. կուզ 289 և կնիք հաւ. 175. մարդաճարկ Գ. թագ. ե. 13. ընդճարկանել ՍԳր. գրաւաճարկ Ագաթ. Մանդ. գլխաճարկ Միխ. ասոր. ապաճարկ Ա. մակ. ժա. 28, ժ. 34. ապիճարկել Արծր. բազմաճարկի ՅՀ. կթ. ճարկադրական, ճարկադրիլ, ճարկաճաւաք, ճարկաճաւաքութիւն (նոր բառեր) ևն։—Զարկ «հրակի են հարուած, բաղխում» Լաստ. Մխ. Բժշ. կազմուած է զ նախդիրով՝ նախորդ ճարկ արմատաձևից. որից զարկանել «զարնել, խփել» ՅՀ. ժբ. 6. Բուզ. 196 և Սուտ-Սեբ. 8, Եփր. համաբ. Խոր. (միջին հյ. զարկնել Անկ. գիրք առաք. 209), զարկուցանել Մրկ. ա. 26. Ոսկ. ես. Սեբեր. զարկուած Նար. զարկերակ, ճամազարկ (նոր բառեր) ևն։

=Բնիկ հայ բառ, որ պատկանում է հնխ. per- «զարնել, խփել» արմատին. սրա ձայնդարձներն են *por-, pr̥-, աճականներն են հնխ. perg-, porg-, prg-, spher-, spherg-. Հայերէն ճար ծագում է *pr̥- ձևից, իսկ ճարկ <*prg- ձևից։ Յեղակիցներից յիշելու արժանի են՝ լիթ. periù, periaũ, peřti «թափիչով զարնել, ծեծել, լողացնել», pirtis «բաղանիք», լեթթ. per'u, pē'rt «ճիպոտներով ծեծել», pirts «բաղանիք», հսլ. pera, pĭrati «ծեծել, լուանալ», սերբ. pērēm, prāti «լուանալ», սլով. prati «ծեծել, դանահարել, լուանալ», na-prati «դանակոծել», ռուս. peru, pratĭ «լուանալ» (կրկին նշանակութեանց համար համմտ. հյ. տոփել «ծեծել, թակել. 2. լուանալ, լուացք անել», ըստ որում հին ժամանակ լուացք էին անում թափիչով շորերը ծեծելով), հռուս. Perunŭ «Որոտման աստուածը», լհհ. piorun «որոտում», ուկր. pérun «փայլակ», հռուս. pĭrtĭ «բաղանիք». համմտ. նաև հսլ. pirya̧se «ձգտել, լարել», sa̧-pĭrya, sŭporŭ «կռիւ», չեխ. př-íti «կրո-

ուիլ», ալբան. pr-es «կացնահարել, կացինով ջարդել, կտրել».—աճած *pṛ-t- ձևից են՝ սանս. pṛt-, pṛtanā «կռիւ», զնդ. pərət-, pəšanā- «կռիւ», paiti-pərənē «կռուիլ».—աճած *porg- ձևից են՝ հիոլ. orgaim «զարնել, սպանել, վնասել», orgun «սպանութիւն», գալլ. orgę «սպանել», հիոլ Fiǫrgyn և լիթ. Perkúnas «Որոտման աստուածը», լեթթ. pērkuns և հպրուս. percunis «որոտում», որոնց համապատասխան են սնս. Parjánya- և հռուս. Perunŭ հոմանիշները (զուրկ է վերջինս աճականից).—վերջապէս հնխ. spher-, spherg- ձևերից են գալիս սանս. sphuráti «ոտնահարել, ոտներով կոխոտել», յն. σπαίρω «թռվռալ, թարթափել», լատ. sperno «վտարել, արհամարհել», հբգ. spurnan «ոտքերով զարնել», sporo (=ռուս. шпора, шпоры) «ոտքի խթան, մահմուզ», հհիւս. spark «աքացի», sparka «հարուածել», յն. σφῦρα «մուրճ», որոնց դէմ ունինք առանց նախաձայն s-ի՝ հսլ. peraǫ, pĭruti «կոխել», ռուս. pratĭ, peretĭ «ճրնշել, ճմլել», na-porŭ «հարուած» են են (Boisacq 278, 889, Trautmann 215, Walde 576, 632, Ernout-Meillet 923, Pokorny 2, 42 և 43):

Նշի տարբեր արմատներ է համարում՝ 1. **հարկ** *«տուրք» (յծ. բրբ. խարաճ, հարէճ, վրաց. խարկի). 2.* **հարկ** *«ծառայութիւն» (յծ. երկ, արգասիք, յն. ἔργον). 3.* **հարկ** *«վիշտ, ցաւ, պէտք» (յծ. երկն, յն. խրիա, բրբ. կէրէֆ, հաճէք, բիբիյաճ, իգրիզա). 4.* **հարկանել** *«զարնել» (արմատն ո՛չ է* **հարկ**, *այլ* **հար** *և վէր և ուռն, ուստի ասի և* **հարել, հարուլ**, *յծ. բրբ.* **ուրմագ, վուրմագ, հարմագ**, *լտ.* verbero, ferio). *իսկ* **զարկ** *զնում է* **արկ** *կամ* **հարկ** *արմատից։* Peterm. *էջ 26* **հարկանել**=*սանս.* han: Müller SWAW 43, 10 *զնդ.* حرکه harakē, حرچاپت harəčaẏaṭ *«նետել, զցել» և արաբ.* ضرب ḍaraba *«զարկաւ»։* Justi, Zendsp. *323 ա զնդ.* hareč *«նետել» են։* Lag. Urgesch. *273* **հարուլ, հարկանել, հարել** *զնում է* par *արմատից։ Մորթման* ZDMG *26, 518* **հարկ** *բառի հետ համեմատում է բևեռ.* burgamani *«փրկել, հարկ, հարցնել»։* Canini, Et. étym. *171* **հարկանել**=**հ**+**արկանել**, *իսկ* **արկանել**=*սանս.* rc, ark *«հրգել»,* arka *«երգ»։ Օազրճեան, Արևելք 1884 նոյ" 16 սանս.* hr, har *Տէրվ. Նախալ. 46, 110 հնխ.* sar, sark *արմատներից է զնում զնդ.* hareč, *գոթ.* slahan, *հյ.* **հարկանել** և **զարկանել**. *Թևրևս նաև* **արկանել**. *իսկ* **հարկ** *«գործ, ծառայութիւն» զնում է հնխ.* vərg *«ազդել, գործել» արմատից, իբր զնդ.* varəz, *պրս.* varzīdan, *յն.* ἔργον, ῥέζειν, *գոթ.* vaurkjan, *հյ.* **վարժ, գործ** *(էջ 107)։* Bugge, Etr. u. Arm. *101 հռուսկ.* harc *«զա՛րկ»։ Հիւնք.* **առև** *կամ* **հարիւր** *բառից է զնում* **հարուած, հարցանել-ուց հարկանել** *և սրանից էլ* **զարկանել, առևանգել-ուց հարևանցի, հերկից հարկել** *և* **հարկ** *«ծառայութիւն», իսկ* **հարկ** *«տուրք» հանում է բրբ. արար.* **հար, հարաճ** *ձևից։* Müller WZKM *8, 282 (ՀԱ. 1894, 294)* **հարկ** *«տուրք» դրնում է արաբ.* خراج xarāj *ձևի հետ՝ իբր ասորական փոխառութիւն։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ համառօտիւ* Bugge, Etrusk. u. Arm. *էջ 101, որ պատկանելով միայն* **հար** *արմատին, չընդունեց Հիւրշ. 464։ Սակայն աւելի հանդամանօրէն վերի ձևով բացատրեցին* Bugge KZ 32, 36, Meillet Esquisse 100 *և* BSL *№ 79, էջ 5 և մանաւանդ* Lidén, Arm. Stud. *էջ 85—88։—Պատահական նմանութիւն ունին արաբ.* هرو harv *«գաւազանով զարնել» (Կամուս, բրբ. բրգմ. Գ. 956) և կրրկրգ.* هارومق harumaq *«զարնել»* (Будаговъ, *Բ. էջ 310)։*

Գիմ.—**Հարել** *բայը ունին Ախց. Երև. Սեր. Պլ. Ղրբ.* **հարէլ**, *Տփ.* **հարիլ**, *Համշ.* **հարուշ են՝** *զանազան իմաստներով. ինչպէս Տփ. «սաստիկ ծեծել», Ախց. Արբ. Երև. Ագ. Ղրբ. Սեր. Տփ. «խնոցի զարնել՝ կարագ հանելու համար», Ագ. Ջն. Պլ. «ջրի մէջ տրորելով հա-*

լեցնել», Ղրբ. «մարմինը քսուելով վրան կեղ բանալ», Շլ. Ջղ. «խոթել, խրել», Վրբ. «խոտը հնձելով թողնել՝ որ չորանայ», Համշ. Ղրբ. «եղջիւրով զարնել», Ղրբ. «որևէ փոշիով շրփելով մաքրել», Ախց. Տփ. «մարմինը շփել, մարձել, մասսաժ անել»։ Նոր ձևեր են՝ հար «խնոցի հարիչը, հարբուխ, համաճարակ», հարահարուիլ, հարելի, հարհարել, հարոտել, խոտահարf (գիտէ արդէն Բառ. երեմ. էջ 206), հարու (մհյ. հարուն «եղջերցկիը» Անսիզք 77, 79), հարուիլ, հարոց (ՀՔ. հոյիւց, հոտիւց) «խնոցի»։—Գաւառականներում հար արմատը կայ նաև «փորը լուծել» իմաստով (համմտ. փորը վար զարնել «լուծել»). սրանից են հարինի, փորհարինի, փորհարուիլ. այս նշանակութեամբ շատ նման է արաբ. هرّ harr «փորը սաստիկ լուծել» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 151), որ սակայն պատահական նմանութիւն ունի։

*ՀԱՐԱՉԱՏ, ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «մէկ հօր զաւակ, եղբայր կամ քոյր» ՍԳր. Կոչ. «ծնող, մտերիմ, ազգակից, սիրելի» Ոսկ. յհ. բ. 36. Խոր. «անխարդախ, ստոյգ, բուն» Նխ. իմ. Անյ. պորփ. (գրուած է նաև հայրազատ Կիւրղ. ղկ. կարծելով սխալմամբ թէ հայր բառից է ածանցուած). որից հարազատութիւն Ա. մակ. ժ. 10. Ոսկ. յհ. բ. 27, 31, 35. հարազատիլ Սփր. եբր. անհարազատ Խոր. հարազատագոյն Խոր. ՅՀ. իմ. հոգեհարազատ (նոր բառ)։

=ՊՀլ. *haδazāt ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց նոյնն է հաստատում գնդ. haδōzāta «հարազատ, համարիւն». ինչ. brāθrē haδōzātai «եղբարց հարազատաց»։ Իրանեան բառը կազմուած է haδa «միասին» և zāta «ծնեալ» բառերից և նշանակում է բուն «համածնունդ, ծննդակից, զուգածընունդ»։—Հիւբշ. 180։

Հներից Օրբ. հկճռ. և. (էջ 66) թուի հանել արիւն բառից. համմտ. «Մանուկն յարենէ ծնողացն ընծայեալ, արեամբ նոցին կերակրի և վասն այս կոչի հարազատ»։ Հ. Գ. Աւետիքեան, Բացատր. շար. 375 «իբրև թէ ի հօրէն կամ հօրն ազատ»։ ՆՀԲ «ի միոյ ազատ հօրէ կամ ի նոյն հօրէ զատուցեալ կամ համենեա, յարենեա, իբր ոմկ. զաքր՝ եղտար մէկ», կամ պայազատ, լծ. լտ. heres, heredis «ժառանգ» կամ coherens «ընդակից, համահարզ»։ Lag. Urgesch. 435 իբր «հօրից ծնուած», -զատ դնելով սանս. jāta, պրս. zāda: Lag. Ges. Abhd. 299 բուն հայ ձևն է համարում համահայր։ Պատկ. Изслед. 11 պրս. farzand «զաւակ» բառից, որ մերժում է Lag. Arm. Stud. § 1253։ Տէրվ. Մասիս 1882 օգոստ. 18 և Նախալ. 94 պրս. ֆէրզէնտ, զնդ. ֆրազաինտի, իբր *հրազատ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Müller WZKM 5, 269, որ կրկնում է Մառ ЗВО 5, 318։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրրակ. 196 հայր+պրս. zade «ծնեալ»։ Աղբալեան ՀԱ. 1927, 406—10 հայր +պրս. zade կամ հյ. զատ(ուած)։

ԳԻՒՐ.—Սրև. Մշ. հարազատ, Նխ. Մեք. հարազադ։

*ՀԱՐԱԿԱՇ, ի–ա հլ. «այգու կամ վարուցանքի ընկեր, կիսարար» Մխ. դտ. 432 (Յաղագս դատաստանաց այգեգործաց ընկերաւոր մասնաւորաց հարակշաց և վարձկանաց). «բաժնեկից, ընկեր» Օրբել. Հրտր. էմ. էջ 192 =Շահն. Ա. 336 (Մեծամեծ նղովիւք փակէ վասն ջրոյն, զի մի՛ ոք իշխեսցէ կտրել զնա և կամ հարակաշ գոլ և բաժինս առնուլ)։—Տե՛ս նաև հակառաշ։

=ՊՀլ. *haδakaš ձևից, որի առաջին մասն է = զնդ. haδa- «միասին» (տե՛ս հարազատ և հարևան բառերը), երկրորդը = զնդ. karša «ակօս», karšā «ցել», karš «ակօսներ քաշել», a-karšta «անվար, անհերկ, կորդ. 2. առանց ցանելու բուսած, ինքնաբոյս», սանս. karšḳṇšáti «ակօսներ քաշել, հերկել», պՀլ. kiš «ակօս», kištan «հերկել», պրս. کاشتن kāštan (ներկ. کارم kāram) «սերմանել, սերմ ցանել», աֆղան. karal, բելուճ. kišag «ցանել» (Bartholomae, Altir. Wört. 457 և Horn § 836)։ Ըստ այմ հարակաշ =պՀլ. haδakaš նշանակում է բուն «միասին ցանող»։

Բառ. երեմ. էջ 178 մեկնում է «լուծ եղն անվարացն» ՆՀԲ չունի բառս։ Առաջին անգամ Շահնազարեան, Օրբել. Ա.

336 մեկնում է «ի միասին, ընկերութեամբ», ԱՒ «ընկեր, գործակից»։ Մխ. դտ. մէկ ձեռագրի լուսանցքում մեկնուած է «կիսավաստակ», այն է «կիսպար»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Մարքվարթ (անձնական)։ Ջուր է ճղնում Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 44 դարձնել բառս հակառաջ։ Պհլ. *haδakaš և գւռ. երեք ձևերը ապարդիւն են դարձնում բոլոր ջանքերը։

ԳԻՒ.—երև. հարա՛կաշ, Ղրբ. հրա՛կաշ, Սլմ. խարակաշ «կիսովի ընկեր, կիսպար, բաժնեկից», որից հարակաշովի (Ղրբ. հրրկըշվէ՛) «ընկերովի, ընկերաբար»։

*ՀԱՐԱՃ. անծանօթ մի բոյս, որի ալիւրը իբր դեղ է գործածւում. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1649։

=Արաբ. حراج ḥaraj «արմատ» բառը պէտք է լինի (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 383)։—Ա՛Ճ.

ՀԲուս. հասկանում է հաճար։

*ՀԱՐԱՄԻ «աւազակ». շատ անգամ ունին յետին հեղինակներ. ինչպէս՝ Վրդն. պտմ. էջ 161 (Անկաւ գրքոյս ի ձեռս հարամեաց). Ուռհ. էջ 348 (Այր արիւնահեղ, լիրբ և չար հարամի). Տաթև. ձմ. խդ. (Հարամին զճանապարհորդն և զվաճառականն թալանել). Տաթև. ձմ. ճժզ. (Զգողս և զհարամիս)։ Նոյն բառը Սմբ. դատ. 44 գրում է հարամիկ ձևով։

=Արաբ. حرامی harāmī «աւազակ»։

Էմին, Ист. Вардана, էջ 188 դնում է արաբ. ḥarām «պիղծ»։ Ուղիղ մեկնեց Ալիշան, Հրտր. Վրդ. պտմ. անդ, ծանօթ.։

ՀԱՐԱՄՂԻԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Վրդն. պտմ. Վենետ. էջ 110. «Դիպեցաւ կոմս մի փռանգ ազգաւ ի խռանն Հարամղիլ և զայրանալ, և վասն այնր դանիլ (ձեռ ուտել)». այստեղ ձեռագրական տարբերութիւն չկայ, իսկ հրտր. էմ. էջ 146 բառս համարդիլ ձևն ունի։ ՆՀԲ գրում է համարդիլ «նեղիլ», ԱՒ թէ՛ համարդիլ «նեղիլ, դժուարիլ» և թէ հարամդիլ «հրուիլ, զարնուիլ» (վերջինը անշուշտ ենթադրելով թէ բառս կազմուած է հարկանել և մղել արմատներից). մին կամ միւսը սխալ է.—Նորայր, Բռ. ֆրանս. 168ա համարում է «մղիլ, վարիլ»։

ՀԱՐԱՐԻ. նորագիւտ բառ. մէկ անգամ գրտնում եմ գործածուած Սոկր. 663. «Եւ միաբան ընտրութեամբ ամենայն ժառանգաւորքն գրով զնա նզովեցին. քանզի այսպէս քրիստոնէք կոչել սովորեցաք զընդդէմ հայհոյչին հարարին».—յոյն բնագիրն ունի κοινῇ μέντοι ψήφῳ πάντες οἱ κληρικοὶ αὐτὸν ἀνεθεμάτισαν. οὕτω γὰρ οἱ Χριστιανοὶ καλεῖν εἰώθαμεν τὴν κατὰ τοῦ βλασφήμου ψῆφον։ Ենդրական բառի համապատասխանն է ψῆφος (հյց. ψῆφον) «քուէարկութիւն, քար գցել, vote»։ (Նոյն այս բառը գործածուած է նաև մի քիչ վերև՝ ψήφῳ ձևով, որ թարգմանիչը դրել է գրով։ Յն. ψῆφος բառի բուն իմաստն է «քարի կտոր, խիճ, կապիճ» և որովհետև հին յունաց մէջ քուէարկութիւնը կատարւում էր քարի կտորներով, ուստի և բառը ստացել է նաև այս նշանակութիւնը։ Թարգմանիչը երևի աւելի գրաւոր քուէարկութեան վարժուած լինելով՝ առաջին դէպքում դրել է «գրով», իսկ երկրորդին՝ պարզապէս հարարի, որ պէտք է հասկանանք «քուէարկութիւն»)։

ՀԱՐԱՒ, ո հլ. «հարաւային կողմը. 2. հարաւային քամի» ՍԳր. որից հարաւային ՍԳր. հարաւակողմն ՍԳր. հարաւաճողմ Ագաթ. հարաւական Երզն. երկրն. հարաւակոյս Ճառընտ. հարաւացոյց «մահմետականների գործածած կողմնացոյցը՝ աղօթքի ժամանակ» (չունի ԱՒ) Առաք. պտմ. 458. Նոր գրականի մէջ յօրինուած բառեր են արեւելահարաւ, արեւմտահարաւ, հարաւ-արեւելք, հարաւ-արեւմուտք, հարաւ-արեւելեան, հարաւ-արեւմտեան, հարաւաճայեաց են։

ՆՀԲ արեւակողմն կամ հողմն հարեալ և այրեալ յարեւէ։ Lag. Urgesch. 296 հլ. poludine «կէս օր». համմտ. լտ. meridies։—Նոյն Beitr. baktr. Lex. 7, 37 զնդ. arempiθwā, rapiθwa «հարաւ»։ Müller, SWAW 41, 12 արամ. ערב ʿarab «Արաբ» ազգի անունից։ Patrubány SA 1, 216 ն նախդիրով աւև բառից։ Նոյն, ՀԱ 1908, 214 հնխ. pro «առ» նախդիրով bhu- «լինել» արմատից։

ԳԻՒ.— Տե՛ս հա՛ւաւ, Ախց. Երև. կր. Մշ.

Ջղ. Սեբ. հարաֆ, *Սլմ.* հոռոֆ.—*իսկ Խրբ.* հիսիսէն հարաֆէն *դարձուածի մէջ, որ նշանակում է «դէսից դէնից, կցկտուր»։*—Հարաֆ գրուած գտնում եմ արդէն 1788 թուին Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկպետ. էջ 72։

Փոխ.—*Վրաց.* ახავი արավի, *որ ըստ Ջուբինովի նշանակում է «հիւսիս-արևելեան քամի», բայց ըստ Մառ,* Груз. поэма Витязь въ барс. шкуръ, *էջ 444 «հարաւային». որից և* Խարի արավի *«քամի հարաւային»։*

ՀԱՐԱՒԻՒՆՔ *«ցանք, վարուցան. սերմ, արտ» Ամովս. Բ. 13. Ոսկ. մ. ա. 11 և մ. բ. 22. բոլորի մէջ էլ հյգ.* հարաւուիս *ձևով։*

ՆՀԲ լծ. հյ. արօր, արտորայք, *յն.* ἄροτρα։ *Հիմնք.* հարաւ *բառից՝ «ըստ նըմանաձայնութեան յունին. զի յն.* νότος, *յորմէ և տճկ.* լոտոս, *նշ. «հարաւ» և* λωτός *«հարաւունք»։* Bugge KZ *32, 14 հնխ.* aramon- *ձևից. արմատն է* ar- *«հերկել», որից նաև* արօր, *գւռ.* հարօր *նոյն հ յաւելուածով, ինչպէս և* հարաւունք. *այսպէսով բառը նոյնանում է լտ.* aramentum *հոմանիշի հետ։* Scheftelowitz BB 29, 58 *լտ.* arvum, arvae, *կորն.* erv, ereu *«ագարակ», որ պատկանում է նոյն* ar- *արմատին։ Այս երկու մեկնութիւնները յիշում են* Walde *64 և* Pokorny *1, 78, աւելացնելով նաև առաջինի վերաբերմամբ* Meillet-*ի կասկածը, որ յայտնել է նամակով։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 346 պրս.* وَرز varz *«գործ» բառից։*

ԳԻՒ.—Մշ. հարվօնք *«դարնան և աշնան եղանակին՝ անձրևներից կակղած հող, որ կարելի է արօրով վարել». Նոյն է* հարմունք *Մշկ. Ք։*

***ՀԱՐԲ**, *որ և* հոբր, հարֆ, հորփ *«կոտեմ բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1650։*

=*Արաբ.* حرف hurf *«կոտեմ» (տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 739 և* Steinschneider WZKM *12, 9). սխալ ձայնանիշով կարելի է կարդալ նաև* harf։

Ուղիղ մեկնեց Ալիշան, անդ. Տե՛ս և Նորայր ՀԱ 1923, 57։

ՀԱՐԲՈՒԽ *կամ* **ԽԱՐԲՈՒԽ** *(ի-ա հլ. ըստ ՆՀԲ) «նէվազիլ, դումով, սալում, զուքամ» Մխ. ապար. (երկու ձևերից հնագոյնն է* հարբուխ, *ուր նախաձայն ի՝ վերջաձայնի ազդեցութեամբ դարձել է խ. տե՛ս* Խրախ *բառի տակ). արդի գրականի մէջ ընդունուած է* հարբուխ. *բայց ոմանք սխալ սոուգաբանութեամբ գրում են* հարբուղխ. *հմմտ. գւռ.* հարիւճ, հարով-հազ *«հարբուխ»։*

ՀՀԲ յար բղխող: Այսպէս մտածելով է որ ԳԴ, էջ 74 բ գրում է բառս յարբուղխ:

ԳԻՒ.—Տիգ. հոռփուխ, *Ագլ. Գոր. Երև. Հմշ. Սլմ. Տփ.* Խարփուխ, *Ղրբ.* Խա՛րփուխ, Խրրփո՛խ, Խրբրփո՛խ, *Մղր.* Խարփուղ:

Փոխ.—Վրաց. ხარბუხა Խարբուխա *«ուժեղ հազ»։*

Հարգեղաղելեալ *«գեղեցկացուցանել». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 178. պէտք է ուղղել* հարգեղաղէշեալ:

ՀԱՐԳՈՒՆԱՆԱԼ *«բնակիլ». ունի միայն Հին բռ. նոյն են* հարգոնանալ *«բնակիլ»,* հարգուճող *«հաստատուիչ» Բառ. երեմ. էջ 178,* յարգունել *«հաստատուել» անդ, էջ 222։*

***ՀԱՐԵԻԱՆ** *«դրացի». Նորագիւտ բառ, որ գործածուած է 1341 թուի մի յիշատակարանում, գրուած Ազախ քաղաքի մէջ (որ է այժմ Ազով), մի երևանցու ձեռքով (Ձեռ. Երևանի Պետական Թանգարանի, № 811, էջ 268, ըստ Հ. Ակինեանի (անձնական)։*

=*Պհլ.* *had-=*զնդ.* haδa- *«միասին»+հյ.* վան *«բնակարան» բառերից, որով ամբողջի նշանակութիւնն է լինում «բնակակից»։ Առաջին բառը գտնում ենք նաև հյ.* հարագատ *և հարակաշ բառերի մէջ, որոնք պատրաստի փոխառութիւններ են իրանեանից։ Այսպէս պէտք է լինի նաև* հարևան *(և-ի համար հմմտ.* օրևան, իջևան), *որովհետև* հար- *ձևը առանձին գոյութիւն չունի հայերէնում։ Սրանից հետևում է, որ իրանեան է նաև* վան, *ինչպէս ցոյց է տալիս նախաձայն վ։—Ա.Ճ.*

Մ. Աբեղեան (անձնական) համարում է կազմուած յար+վան *բառերից, ճիշտ ինչպէս յն.* πάροικος *«հարևան» կազմուած է* παρά *«յար, կողքին»+* οἶκος *«տուն, բնակարան» բառերից. նախա-*

ձայն յ դարձել է գաւառականների մէջ ճ, ինչպէս յիսուն>հիսուն։

Գիմ.—Երև. Տփ. հարէվան, Ղրբ. հրէ՛վան են. այս բառը գտնում է միայն «արևելեան» բարբառներում և չկայ բնաւ «արևմտեան» բարբառների մէջ, ուր գտնում ենք միայն դրացի բնիկ հայ ձևը։ Սրանից երևում է, որ Արևելեան Հայաստանը աւելի էր ազդուած իրանեաններից, քան Արևմտեան Հայաստանը։ (Այս բառի հետ կապ չունի բնաւ հարևանցի «վերիվերոյ» բառը, որ կազմուած է հար «խփի՛ր+և(շաղկապ)+ա՛նց«անցի՛ր»+ի (մասնիկ)։

Հարէժ տե՛ս Խերևէշ։

ՀԱՐԹ, ի հլ. «տափակ, ողորկ, դուրան, գետնի հաւասար, ուղիղ կերպով» ՍԿր. Ոսկ. ես. և մ. բ. 11. որից հարթել «դուրել, ողորկել, գետնին հաւասարել» Ես. խե. 2. Դատ. ե. 22. Ագաթ. Ոսկ. ա. կոր. «յապաւել, ծայրից կտրել (թև, մազ, միրուս)» Արծր. Ոսկիփ. Յայսմ. անհարթ եղն. հարթութիւն Բար. է. 7. անհարթութիւն Ոսկ. մ. ա. 15. Եփես. բ. տիմ. հարթայատակ Բ. մակ. թ. 14. ժդ. 33. հարթաղակ Պիտ. կամ հարթատակ Շիր. 38. հարթիկ պահել «լաւ պահել (պասը)» Մանդ. էջ 208=Մանդ. սիր. 13. միահարթ Վեցօր. դաշտահարթ Ճառընտ. Երկնահարթ Ա՛ր. սարահարթ Փարպ. հարթավայր, հարթահանդակ, հարթակար, հարթաշաւիղութիւն (նոր բառեր) են։ Արմատը գրուած է նաև խարթ Կնիք հաւ. էջ 77։—Նոր իմաստ է ստացել Նեմես. 66. «Բնաւորեցան հարթն ի միջէ ի միջնորդութենէ շարակայիլ. այսինքն ի համեմատութենէ. իսկ հասատատունքն՝ յերկուց միջնորդութեանց»։

Նշի՛ թուի արդ (յարդարուն) բառին կցել։ Windisch. 12, 22 սնս. pṛthu: Lag. Urgesch. 299, Müller SWAW 38, 579, 583, Justi, Zendsp. 191 բ. են սանս. pṛthu, գնգ. pərəθu, յն. πλατύς «լայն»։ Thomaschek, Deutsche Litteraturzeit. 1883, սեպտ. 8, էջ 1254 մեր բառի հետ է համեմատում վրաց. ფարթո «լայն, ընդարձակ», մինգ. ֆարթօ, լազ. partho, ինդիլ. fart'oys «ընդարձակ», որոնք պատահական է համարում Հիւբշ. 397։ Այս բառերը, որ սանս. pṛthu են ձևերի հետ նշանակութեամբ և հնչմամբ նոյն լինելով՝ հնդևրոպական պէտք է լինեն, կարող են իրանականից և կամ մի ուրիշ հնդևրոպական լեզուից փոխառեալ լինել։ Հիւնք. արդ բառից, Karst, Յուշարձան 421 լտ. porio, գերմ. Furt, յն. πέρας «ծայր», թաթար. yor, yur, yür «քայլել, երթալ» բառերի հետ Մատ ИАН 1926, 107, նոյն ընդ արդ-ար։ Petersson, Ar. u. Arm. Stud. 102 հբգ. furben «մաքրել», մբգ. vürbe «մաքրում», յն. πρέπω «երևիլ», հյ. երևիլ, հիւլ. richt «ձև, կերպարանք», կիմր. rhith «երևոյթ» բառերի հետ հնխ. prep-արմատից. հյ. հարթ<հնխ. pṛp-to-։

Գիմ.—Այս արմատից են հարթարար Ղրգ. «խարտուղ. 2. բողկի քերիչ», հարթել Արբ. «ծառի ճիւղերը յօտել», Կր. «բուրդը խուզել», հարթուած Ղրբ. «շփացած, լիրբ»։

+ՀԱՐԹ. արմատ առանձին անգործածական, որից հարթնուլ «վախենալով վեր ցատկել, վախենալ, խրտնիլ, փախչիլ» Սերբ. 60, Ագաթ. հարթչիլ «վախենալ, խրտնիլ» (որից անհարթչելի ճշ.), հարթուցանել «վախացնել, փախցնել» Ագաթ. Ոսկ. մ. գ. 28 (գրուած նաև խարթուցանել Ոսկ. Ճառք 566). Հմմտ. նաև արթչիլ անստոյգ բառը, որ թերևս սրա հետ նոյն է։

=Բնիկ հայ բառ. ծագում է հնխ. pṛth ձևից. սրա հետ հմմտ. հսլ. prędati «ցատկել, դողալ», vŭsprętati «կանգնիլ», ռուս. прянуть «ցատկել». Հայերէնի th և սլաւականի d ձայները կարող են բացատրուիլ կա՛մ հնդևրոպականի մէջ th և dh ձայների ծանօթ փոխանակութեամբ և կամ հնթադրելով առանձին աճականներ. վերջին երևոյթը հաստատւում է թերևս մբգ. sprınze, յն. σπέρ-χ-ω «շտապել, արագօրէն նետուիլ», հբգ. spri-n-g-an «ցատկել» (Kluge 464). լիթ. sprústi «ցատկել» են ձևերի համեմատութեամբ (հնխ. sprgh-): Boisacq 895 յն. σπέρχω կցում է սանս. sprhayati «հետաքրքրուն լինել, նախանձիլ», գնգ. ā-sparəz- «ջանասէր լինել» բառերին,—Pokorny 2, 675 սրանց հետ նաև գերմ. springen «ցատկել».

երկուան էլ արմատը դնում են հնխ. ṣper-g'h- *«շտապել, ցատկել», իբր աճած «արտորալ» արմատից. չեն յիշում յն. և սլաւ. ձևերը:* Pokorny 2, 676 *սլաւական ձևերը դնում է հնխ.* (s)pered- *արմատից, որ նույն* sper- *պարզականի աճականն է:*

ՆՀԲ լծ. սարտնուլ, շրտնուլ, խրտնուլ *և* զարթնուլ: Peterm. *259 լծ.* խրտնուլ, շրտնուլ: Lag. Beitr. baktr. Lex. 57 *գնդ.* parəθ *«կոուիլ, փախչիլ», որի հետ* Lag. Urgesch. 846 *կցում է* Πάρθοι *«Պարթևք» (իբր «փախստականք»): Հինք. նոյն ընդ* խրտնուլ: *Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSZ 11, 399: Karst, *Յուշարձան 418 ք՛ր.* art, *ույղուր. չաղաթայ. ալթայ.* art, *օսմ.* ard *«կոնակ, եռևը, յետս»:* Petersson, Studien zu Fortunatovs Regel, *էջ 68 և* KZ 47, 273 *կցում է սանս.* kaṛth- *«առնի», pṛthuka- «հորթ», լտ.* pertica *«թառ, վարոց», հսլ.* prątŭ *«ճիպոտ» և հյ.* որթ *«հորթ» բառերի հետ. հնխ. արմատը դնելով* pṛth-: *Մերժում է* Pokorny 2, 49:

ՀԱՐԹՆԼ *«խածնել, կծել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մծբ. 324. «Հարթեն խածանեն առամամբք իւրեանց»: Ասորի բնագիրը (հրտր.* Graffin, *էջ 579) *ըստ համեմատութեան վիեննայի միաբան Պ. Էսպոլիանի (անձնական) ունի միայն «խածանեն առամամբք իւրեանց». այսպէս է նաև Մխ. Գ. 5. «Որ խածանեն առամամբք իւրեանց»:*

ՀԱՐԹՆԼ. *անյայտ իմաստով բառ, որ Բռ. երեմ. էջ 247 գնում է իբր բացատրութիւն շողոյել բառի, որ նոյնպէս անծանօթ է:*

ՀԱՐԻՐԱՅ *«ալիւրով պատրաստուած մի տեսակ խիւս» Մխ. բժշ. 26, 30, 50 ևն:*

= Արաբ. حَرِيرَة ḥarīra *«ալիւրով և կաթով կամ ճարպով եփուած խիւս» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 817):*

Ուղիղ մեկնեց Seidel, *Բրգմ. Մխ. Հեր. § 89:*

ՀԱՐԻՒՐ, ո *հլ. (գրուած նաև* հարևր՝ *որ հնագոյն ձևն է) «100» ՍԳր. միջին հյ.* հարոյր *Անսիզք 93. որից* հարիւրաւոր *ՍԳր. նաև.* հարիւրապետ *ՍԳր.* հարիւրամեայ *կոչ.* հարիւրամեան *ՍԳր.* հարիւրերորդ *Բ. մակ. ա. 10.* հարիւրորդ *ՍԳր. Ոսկ. մ. գ. 3. բարդութեանց վերջում՝* երեքհարիւր, չորեքհարիւր *են. բայց նաև* երիւր *կամ* արիւր *ձևով. այսպէս՝* երկերիւր *«200» ՍԳր.* երեքարիւր *«300» Բ. թագ. իդ. 18. նաև. քր.* երերիւր *«300» Ա՛Բ. (ըստ այսմ էլ ՀՀԲ և ՆՀԲ յիշում են անկախ* երիւր *ձևը).* հարիւրամեակ, երկհարիւրամեակ *(նոր բառեր) են:*

Peterm. *158 գնում է* եր *արմատից. սրա յոգնակին է* երեր *«մէկեր, բազումք», որ դարձել է յետոյ* հարիւր. *այս* եր *ձևից է նաև* երր=երեք: Bopp, Abhnd. d. Ak. d. Wiss. zu Berlin 1846, 297 *համարում է *հատ-իւր ձևից, ուր -իւր մասնիկ է, իսկ* հատ=*սանս.* çata, *պրս.* sad *«հարիւր» են:* Justi, Zendsp. *312ա գնդ.* haurva, *սանս.* sarva *«բոլոր» բառերի հետ:* Müller, Benfeys Or. u. Occ. II *(1864), էջ 585 մերժելով* Bopp-*ի մեկնութիւնը՝ գնում է *para-ivare ձևից, որի մէջ* para *«մէկ», իսկ* ivare *գտնում է* baevare *«բիւր» բառի մէջ:* Ascoli BVS 5, 212 *իրանեան* pai-var *ձևից. համմտ. սանս.* parvan, parus, *իբր «խումբ, լիութիւն»:* Müller SWAW *66, 272 ուզում է կցել յն.* πολύς *«շատ» են ձևերին:* Böttich. Rudimenta *41, 113 Թալմուդի յիշած պրս.* הִיוֹר ḥivr *«հարիւր» ձևը համարում է* הִרוֹר ḥrvr = հարևր: Müller SWAW 84 (1877), 225 *paruvat *«բազմաթիւ» ձևով է մեկնում: Տէրվ. Երկրագունտ Ա. 49=Հանդ. էջ 179 համարում է ծագումն անծանօթ, բայց հաւանական է կարծում* *paru *«բազում» արմատից դնել: Մառ* ЗВО *5, 316 գնդ.* sata *բառի հետ: Հինք.* հարաւ *բառից:* Patrubány SA 1, 196 *յն.* πολύς, *սանս.* purú *«շատ» բառերի հետ, իբր հնխ.* polevros *ձևից:* Meillet MSZ *11, 384 կասկածով համեմատում է վրաց.* asi, *մինդր.* oši, *սվան.* ašir *«հարիւր» բառերի հետ:* Pedersen, *Հայ. դր. լեզ. 59—61 ենթադրում է որ չափ ցոյց տուող մի դոյական էր, որ*

վերածուել է թուականի, ինչպէս են դան. snes «քսան» և ol «ութսուն» *թուականները, որոնք նախապէս նշանակում էին «ճիւղ, ցուպ». ըստ այսմ հյ.* հարիւր *բառի համար համմտ. յն.* πέρας «վերջ», *սանս.* párvan «եղէգի և այլ տունկերի վարակ, յօդ», párvata «լեռ» *(Յիշում է* Pokorny *2, 32 և անհաւանական է գտնում);* Patrubány *ՀԱ 1908, 153 հնխ.* sero «հոսիլ» *արմատից, իբրև «առատ»; Մառ* ИАН *1911, 145 սվան.* ašir «հարիւր» *բառի հետ, ուր* š *համարում է դարձած r;* Tuttle REA *1927, էջ 324 չուվաշ.* pr «մէկ» +jyz «հարիւր» *ձևի հետ է համեմատում (նոյն է թրք.)* bir yüz «մի հարիւր»:

ԳԻՒ.—Ասլ. հարիւր, *Գոր. Վրբ.* հm՛րիւր, *Ախց. Ակն. Երև. Կր. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ.* հարուր, *Ննխ.* հարուր *(բայց արագ հաշուելու ժամանակ՝* հարու, հար*), Երև.* հարուր, հարիր, *Հմշ.* հարուր, հաուր *(երկրորդ ձևը տալիս է Մառ.* Матер. по Хемшин. наречию*) Շմ.* հաուուր, *Խրբ.* հարիր, *Ալշ. Մշ. Տիգ.* հmրիր, *Մժ.* հmրիւր, հmրիւ, *Վն. Մկ.* խարիր, *Մրղ.* խmրիր, *Ոզմ.* խարէր, *Սվեդ.* հmրէր, *Ագլ.* հէօ՛րիւր, *Զղ.* խէրուր, *Սլմ.* խmյիր, *Զթ.* հէյիյ, հէրիր, *Հճ.* հէյիյ, հէյի:

**ՀԱՐԻՖ «ընկեր, բարեկամ» Կոստ. երզն. 159, 176. «կոչնատէր» Սասն. էջ 26 (Անդ ուր կոչնատէր և հարիֆ է Հայլն համայնից և մատռուակ՝ Որդին միածին);*

=Արաբ. حريف ḥarīf *«ընկեր», որից նաև վրաց.* ახოფი არიფի *«ընկեր»:*

Ուղիղ մեկնեց Պոտուրեան, Կոստ. երզն. էջ 50:

*+*ՀԱՐԿ *տես* հար *արմատի տակ, որից աճած է կ ածականով:*

Ադոնց. Арм. въ эп. Юст. *էջ 483 հարկ «տուրք» կգում է պրս.* xarāj, *վրաց.* խարկի *և հյ.* հերկել *բառերի հետ: Միւսները տե՛ս* հար:

ԳԻՒ.—Այս արմատից ունինք՝ 1. Երև. հարկ *«տուրք», էնկիւրիի Բրքաթաս Հայոց բարբառով* harg *«կնունքի առիթ կիներու հրաւէր» (Բիւր. 1898, 865, ուր Ս. Մխիթարեան սխալմամբ միացնում է յարգ բառին).—2. Երև. Մշ. Ննխ.* հարգիճ, *Պլ.* հարգիճ *կամ կրկնութեամբ՝* հարգ-հարգիճ, *Ասլ.* հարգիճ, հարգի*, *Սեբ.* հmրգիճ, *բոլորն էլ «խնջոյք» նշանակութեամբ —3. Զղ.* հարգաւոր, *Ախց.* հարկաւօր, *Ննխ.* հարգաւօր, *Տփ.* հարկա՛ւուր, *Մրղ.* հարկաւրի՛ր, *Շմ.* հարգօօր, *որոնք նշանակում են «պիտանի».—Սչ.* հարգէվօր *«յարգելի՝ ակնածելի մարդ».—Ալշ. Մշ.* հարգաւոր, *Պլ. Ռ.* հարգաւօր *«արտաքնոց», Սեբ.* հարգաւօր *«մարդու կղկղանք»:—Ձարկ արմատին են պատկանում* զարկել, զարկուկ, զարկման, զարկումն, զարկուիլ, զարկիչ, զարնել, զարնուիլ, *և r-ի անկմամբ՝* զանել, զանուկ:

ՓՈԽ.—Վրաց. ხარკი խարկի *«տուրք»,* ხარკვა խարկվա, ხარკობა խարկոբա *«հարկել, ստիպել, աճապարել»,* მოხარკე մոխարկե *«հարկատու»,* მეხარკე սեխարկե *«հարկահաւաք». Մոձդուարման թիւնէման արա մոգունցեսա խարկի? Վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն. Մաթ. ժէ. 23. Մեփենի հունդ՛անիսաանի վիեթգան միիղերեն խարկսա անու զունէրսա? Թագաւորք ազգաց յումմէ՞ առնուն գհարկս կամ գհասն. Մաթ. ժէ. 24. Ջեր արսա միցեմա խարկիսա կեհարիսա, անու արա? Պա՞րտ է հարկս տալ կայսեր, թէ ոչ. Մաթ. իբ. 17. Միչունենք դրանիկանի իգի խարկիսա. Յուցէք ինձ դդահեկան հարկին. Մաթ. իբ. 19:*

ՀԱՐԿԻ *(գործածուած միայն անեզաբար՝* հարկիճ, *սեռ. –կեաց) «վարող եզների մի լուծ» Յոր. ա. 14. Վեցօր. 129. Շիր. «եզան լուծ» Ոսկ. ա. տիմ. ժդ. «ակօս» Մծբ.:*

ՆՀԲ և Հիւնք. հերկ *բառից են հանում:*

ՀԱՐԿԱՃԱՃԱՒԻՎ *«արիւն ունելով». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 178:*

ՀԱՐԿԱՒՈՏԻ. *անծանօթ բառ. մեկնուած է «շիրամշուշ»? Հին բռ. ունի միայն ՀԲուս. § 1652. պէտք է հասկանալ «շիրամշուշ, բաղեղ»:*

ՀԱՐՃ, ի *հլ. (յաճախարար կայ նաև* ո *հլ.) «երկրորդական կին» ՍԳր. որից* հարճորդի *Ոսկ. երր. Ցուս. քր. Մծբ.* հարճորդեգիր *Փարպ.* հարճութիւն *Խոր.:*

ՆՀԲ վրաց. խարճա՝ *Տէրվ. Լիզու 156* նոյն ընդ հարսն, համ-հարզ և ապահարզան. *ծագում են զա, զան «ծնանիլ» արմատից. հարճ փոխառեալ է պահլաւերէնից, իսկ հարսն բնիկ է՝ նոյն, Նախալ. 94* կցում է հարսն *բառին՝ Հինք. արաբ.* ǰāriya *«աղախին» ձևից (որ և նշանակում է «հարճ»)՝* Ewald ZDMG *13, 344* կցում է յն. πάλλαξ παλλακίς] *հոմանիշին, որից և եբրայեցերէն* מִלֶגֶשׁ pīlageš *«հարճ»,* Walde *553* յն. πάλλαξ և լտ. paelex *ձևերի հետ միասին փոխառեալ է դնում եբր.* pillegeš-*ից՝*

ՓՈԽ.—վրաց. ხარჯა խարճա, ხარჯი խարճի *«հարճ». Համմտ. նաև լագ.* xarkiš bere *«հարճորդի» (Մառ, Լագ. քերակ. էջ 229)՝*

**ՀԱՐՄԱԼ «ապանդ բոյսը, փիգնայ» Ամիրտ. ունին միայն Բռ. երիմ. յաւել. 569 և ՀԲուս. § 2815՝*

=Արաբ. حرمل ḥarmal *նոյն նշ. (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 176)՝*

Ուղիղ մեկնից նախ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 631ա՝

ՀԱՐՈՒԱՆՑ *«ահեկան ամսի հին անունը» Տոմար.՝*

Ըստ Ալիշան, Հին հաւ. 141 հարել *բայից. Համմտ.* խոտ հարել՝

+**ՀԱՐՈՒԻՍՏ**, ի–ա *հլ. «զօրեղ, ուժով, գէր. 2. աւագ, իշխանաւոր, ազնուական» ՍԳր. Ոսկ. եզն. Սեբեր. Նար. քր. «երկար, երկաբատև» Գ. մակ. բ. 15. Կիւրղ. Թգ. «շատ, առատ, բազմաթիւ» Պրպմ. ՅՀ. կթ. Լաստ. Արծր. «մեծատուն, հարուստ, ընչեղ». այս նշանակութիւնը՝ որ արդի գրականի միակ ընդունածն է, յառաջացած է առաջիններից՝ փոխաբերաբար. իշխաններր նաև ընչեղ էին. Ոսկեդարեան գրականութեան մէջ գործածուած է քիչ անգամ. այսպէս՝ Բուզ. Գ. 4, Եփր. մատ. Բ. 20. Ոսկ. սղ. և ապաշխ. 539. Ոսկ. Ես. 430 (Մեծատունն ըստ Հարստութեանն իմն գնայ). իմաստի նոյնպիսի զարգացում են ցոյց տալիս նաև լտ.* opes *«ուժ, իշխանութիւն, պետութիւն, զօրութիւն և հարստութիւն, ինչք», գերմ.* Reich *«թագաւորութիւն. 2. հարուստ», ֆրանս.* riche *«հարուստ», նախապէս «թագաւորական, իշխանական», արաբ.* ملك mulk *և* دولت dovlat *«իշխանութիւն. 2. հարստութիւն». Համմտ. նաև յն.* ἰσχυρός *«ուժեղ, զօրեղ, բուռն»,* ἰσχυρῶς *«շատ, յոյժ»՝* Հարուստ *«հետևակ» նշանակութեամբ ունի Կալիսթ. էջ 109 (այս մասին տես Տաշեան, Ուսումն. Մատյն-Կալիսթ. 192 և Մանանդեան, Խորհնացու առեղծվածը, էջ 106)՝ Այս արմատից են յառաջացած* հարուստ *մի «բաւական հեռու» Բ. մակ. ժ. 27. Ագաթ.* հարստահարել *Ա. մն. ժզ. 21, Բ. մն. իա. 17.* հարստել *«գետին զարնել, հողի մէջ գամել» Ոսկ. մ. ա. 9, ա. տիմ. և ես. «հիմնել, հաստատել» Տիմոթ. կուզ, էջ 241, 266.* հարստանալ *նս. քր. («ընչեղ դառնալ» իմաստով մէկ անգամ ունի Բուզ.),* հարստաբուն *նս. քր.* հարբուտագոյն *վեցօր. նզն.* հարստութիւն *ՍԳր.* հարստահար *Բուզ.* հարստի *կամ* խարստի *«հաստատմարմին, վիթխարի» Փիլ. ժ. բան. էջ 279 և խոր. բ. 37.* հաստահարուստ *Նզնկ. լգ. 4. Մծբ. Վեցօր. 194.* հոգեհարուստ *Ճառընտ.* բազմահարուստ *ՅՀ. կթ.* հարստատուր *«առաստաձեռն» (նորագիւտ բառ) Ագաթ. 180.* մեծահարուստ *(նոր բառ) ևն՝*

=Ծագում է հար *բնիկ հայ արմատից, որի առաջին և հիմնական նշանակութիւնն է «զարնել, խփել». կազմուած է* -ստ *մասնիկով՝* հարու *բնից (բայը* հարուլ*), ինչպէս ունինք զգաստ՝ զգալ բայի զգա- բնից՝ Նախնական իմաստը պահում է* հարստել *«գետին զարնել, հողի մէջ գամել»՝*

ՆՀԲ հարուլ *«զարնել» բայից՝* Müller SWAW 66, 272 *զանազան նշանակութիւններով համեմատում է հյ.* հարիւր, *գոթ.* fairra *«հեռու»,* fairnitha *«հնագոյն», սանս.* purāṇa, *յն.* πάλαι *«հնուց» բառերի հետ՝ Հինք. յն.* ἀρίστεὺς *«գերազանց, առաւելեալ, աւագ»՝* Patrubány SA 1, 196 *հնխ.* polu-*«շատ»+*sed *«նստիլ», իսկ ՀԱ 1908, 153 հնխ.* sero *«հոսիլ» արմատից՝* -ուստ *մասնիկով՝* Nyberg, Hilfsb. 2. 21 *պհլ.* arust *«լաւ աճած (ծառ)» բառի հետ*

կասկածով. բառը մեկնում է իբր *hu-rusta *«լաւ աճած»։*

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մշ. Ջղ. Սլմ. Տփ. հարուստ, *Սչ.* հարուստ՝, *Խրբ. Սեբ.* հարուսդ, *Տիգ.* հmրուսդ, *Մրղ.* հառուստ, հառուս, *Ասլ.* հարիւսդ, հարիւս*, *Սվեդ.* հmրէօստ: *Բոլորն էլ անշուշտ գրականից փոխառեալ։*

ՀԱՐԱԻՐ. *մի տեսակ անծանօթ բոյս է. բացատրուած է «աւարճ» բառով, որ նոյնպէս անծանօթ է. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1654։*

ՀԱՐԱՆ *«հոանկիւնի տերևով և հունդով մի բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3349։*

+ՀԱՐԱՆ, ն հյ. *(-սին, -սունք, -սանց) «հարս» ՍԳր. «առասպելական մի ոգի, յաւերժահարս» Նոնն. Նիւս. բն. ածանցման մէջ մտնում է երկու ձևով. 1.* հարսն-, *որից* հարսնութիւն *Իմ. ք. 2. Ոսկ. յհ. ք. 14. Ագաթ.* հարսնանալ *Խոր.* հարսնացուցանել *Խոր. Հռիփս.* հարսնեղբայր *Ոսկ. Եփես.* յաւերժահարսն *Սահմ. ԱՆ. 2.* հարսան-, *որից* հարսանիք *ՍԳր. Ոսկ. կող. Կոչ.* հարսանեական *Նխ. ա. մակ.* հարսանեկան *ՅճխԽոր* բառեր են հարսանիք *(հիւանդութիւնը),* հարսնուկ «anemone armena Boiss. *ծաղիկը» (Տիրաց.* Contributo *§ 177)։*

=Բնիկ հայ բառ, հնխ. prk'- *արմատից, որի վրայ մանրամասն տե՛ս* հարց։—*Հիւբշ. էջ 464։*

Schröder, Thesaur. *46 արաբ.* عروس 'arus *համանիշից փոխառեալ է դնում։ ՆՀԲ արաբ. պրս.* արուս, արուսէ *«հարս»։* Peterm. *22 արաբ.* carūs: Müller SWAW *42, 256 տուաւ առաջին անգամ ուղիղ մեկնութիւնը՝ համեմատելով զնդ.* pərəs, *սանս.* praćch, *լատ.* procus *բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 94 հնխ.* prask, praç *«հարցնել» արմատից, որից նաև սանս.* prač, *լտ.* procus, *հյ.* հարց *են։ Նոյն, Հնդու 156 համարում է հարճ փոխառեալ բառի բնիկ հայ ձևը, նոյն բնդ համ-հարզ, ապա-հարզան, ազնիւ են, իբր զա, զան «ծնիլ» արմատից։ Հիւնք. յն.* ἄρχ *«գառն» բառից։ Մառ,* Крит. и мелкія ст. *1903, էջ 27 համարում է սեմական և կցում հբր.* אֵרֶשׁ ērēs *«կին ուզել», արաբ.* عروس 'arus *«հարս» և վրաց.* ქორწილი tnrծ-իլի *«հարսանիք» բառերին։—Հյ.* հարսնուկ *բառի հետ պատահական նմանութիւն ունի արաբ.* هرنصانة harnişāna *«ծառի որդ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 409)։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ակն. Ասլ. Երև. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. հարս, *Տիգ.* հmրս, *Ոզմ. Ջղ. Սլմ. Վն.* խարս, *Մրղ.* խարս, խառս, *Մկ.* խառս, *Ագլ.* հօռս, հօռսնը, *Հմշ.* հայս, *ՋԹ.* հօյս, հորս, *ՀՃ.* հօյս, *Սվեդ.* հուրս, *Ղրբ.* հա՛րքնը, հա՛րճ՛նը, *Կոչ.* հm՛սի.—*2. Երև.* հարսանիք, հրսա՛նիք, *Շմ.* հարսանիք[1], *Ալշ. Ախց. Կր. Մշ. Պլ. Ռ. Սչ.* հարսնիք, *Ննխ. Տփ.* հարսնիք, հասնիք, *Ասլ.* հարսնիք, հարսնի*, *Խրբ.* հարսնիք[1], *Տիգ.* հmրսնիք, *Խր.* հարսիճ, *Սվեդ.* հարսնամ, *Հմշ.* հայսնիք, *ՋԹ.* հայսնըք, հարսնըք, *Հւր.* հրսանը՝ք, *Ղրբ.* հրսա՛նէք[1], հրսա՛նէ՛նք[1], *Ագլ.* հռսա՛նիք[1], *Գոր.* հրսա՛նիք, *ՀՃ. Ջղ (դիւզերը) և Սեբ.* հաշնիք, *Ջղ.* խարսանիք, *Վն.* խարսնիս, *Ոզմ.* խարսնէ՛ս, *Մկ.* խառսնիս, *Մրղ. Սլմ.* խառնիս:—*Նոր բառեր են* հարսանուց, հարսանեախաղ, հարսանեհաց, հարսանեատէր, հարսանեատուն, հարսանեաւոր, հարսնիւր, հարսնիրատէր, հարսնալօշ, հարսնահայր, հարսնատ, հարսնացու, հարսնցու, հարսնեմոյր, հարսնկուլ, հարսրնտես *են։ — Առանայի Բրքախօս հայերն ունին* հարսանէք *«հարսանիքի», հալխուզ «հարսնուկ», Ջօք-Մարզուանի Բրքախօս հայերն էլ (ըստ տեղեկութեան Յակոբ Ոսկեբչունու)* hasnug *«հղբօր կինը»։*

ՓՈԽ.—Քրդ. خارس xars *կամ* خارز xarz *«հայ հարս»* (Justi. Dict. Kurde, *էջ 148)։*

+ՀԱՐՑ, ի հյ. *«հարցում, փորձ, քննութիւն» Ագաթ. Սեբեր. որից* հարցանել *ՍԳր.* հարցափորձ *ՍԳր. Եւս. պտմ.* հարցուփորձ *Յոր. լա. 14.* հարցփորձ *Կորիւն.* հարցաքննել *Ոսկ. յհ. ք. 11.* հարցումն *ՍԳր. Փարպ.* հարցաւոր *Ոսկ. յհ. ք. 14.* գիտահարց *Մծբ.* հարցախնդիր, հարցաճննիչ *(նոր բառեր).*

արմատը նշանակում է նաև «համայել, կախարդութիւն անել, գուշակել», որից հարցուկ *«կախարդ» ՍԳր. Կոչ.* հարցկութիւն *Ոսկ. ես.* հատահարց *«սերմերով համայող» Ոսկ. բ. տիմ. ը. և տիտ.* հաւահարց *«թռչուններով գուշակութիւն անող» Օր. ժը. 10. բ. մն. լգ. 6.* գետնահարց *Ոսկ. ես. մեռելահարցութիւն Կոչ. (իմաստի զարգացման համար հմմտ. վրաց.* მკითხავი *մկիթխավի «հարցուկ, վհուկ», թուշ.* კითხობ *կիթխոր «դիւթութիւն». երկուսն էլ* კითხ *կիթխ «հարցնել» արմատից)։*

=Բնիկ հայ բառ, որ ճոխ ձևերով պահուած է նաև բազմաթիւ ցեղակից լեզուների մէջ։ Հնխ. արմատն էր prek'- *«հարցնել, խնդրել», որի ձայնդարձներն էին* prok'-, prk'-, *աճական ձևը* *prk'-sk'-։ Այս չորս ձևերից (ինչպէս նաև ամբողջական* perek'- *ձևից) յառաջացած են՝ սանս.* praçnà- *«հարցում, ծանօթութիւն, հակառակութիւն»,* pr̥čháti *«հարցանէ»,* pr̥čchā- *«հարցում, խընդիր», հինդուստ.* پوچھنا puchna, *պալի* pucchi, *գնչ.* pučava, pačava *«հարցնել», քուչ.* am-blāk-ante *«առանց հարցնելու», զնդ.* pərəsaiti *«հարցանէ»,* frašna *«հարցում», հպրս.* aparsam *«հարցրի», պհլ.* pursītan *«հարցնել»,* pursišn *«հարցում, փուրսիշ», պրս.* پرسیدن pursīdan *«հարցնել», քրդ.* pərsin, *աֆղան.* puxtedal, *օսս.* farsun, färsin, *բևլուճ.* p'ursʻaγ (Horn § 299), *յն.* θεο-πρόπος *(հնխ.* prok'os*) «մարգարէ» (այն է «աստուածահարց». հմմտ. հյ.* հարցուկ *ևն). լտ.* precor, proco, posco (<*porc- sco) *«ուզել, աղաչել, խնդրել, պահանջել»,* prex *«աղաչանք», գոթ.* fraihnan *«հարցնել», հրգ.* frāga *«հարց»,* fergon *«խնդրել»,* forsca *«հարց, խնդիր»,* forscōn *«հարցնել», մրգ.* vrâgen, *հոլլ.* vragen, *գերմ.* fragen *«հարցնել»,* forschen *«հարցափորձել», հիսլ.* fregna *«հարցնել», անգսք.* frignan *«հարցնել»* (Kluge 152), *հիռլ.* imm-chom-arc *«փոխադարձ հարցում, բարև»,* imm-chom-airc *«հարցնէ», միռլ.* arco *«աղաչում եմ», հկիմբր.* archaf *«հարցնել», հսլ.* prositi *«աղաչել», ռուս.* прошу, просить *«խնդրել»,* спросить *«հարցնել», լիթ.* prašýti, *լեթթ.* prasu, prasît *«աղաչել, խնդրել, պահանջել» ևն։ Հնխ.* prek'- *արմատը՝ պարզ «խնդրել, հարցնել» նշանակութիւնից դուրս, մասնաւորապէս նշանակում էր նաև «ամուսնութեան խնդրել, աղջիկ փնտռել». (հմմտ. հնխ.* wedh- *«առաջնորդել, տանիլ», բայց մասնաւորապէս «տունը կին տանիլ»). և ահա այս նշանակութիւնից են ծագում լտ.* procus *«աղջիկ հարցնող, աղջիկ փնտռող, հարս ուզող», լիթ.* peršù, pìršti *«հետը ամուսնանալու համար աղջիկ փնտռել»,* piršlỹs *«խնդրակ, ամուսնութեան միջնորդ»* (Walde 604, Boisacq 339, Trautmann 216, Ernout—Meillet 758, Pokorny 2, 44)*։ Հայերէնի մէջ առաջին նշանակութեամբ ունինք* հարց, *որ ծագում է հնխ.* prk'-sk'- *աճած ձևից՝ արմատական* k'-*ի անկումով, ճիշտ ինչպէս ունինք լտ.* posco<*porc-sco։ Երկրորդ նշանակութեամբ ունինք* հարսն, *որ ծագում է հնխ.* prk'- *արմատական ձևից՝ հյ. ն մասնիկով։— Հիւբշ. 464։*

ՆՀԲ *լծ.* այց, հայց, *թրք.* arg, arag-ыr: *Ուղիղ համեմատից նախ* Peterm. 24, 26, *յետոյ* Windisch. 22, 46, Gosche 29, Böttich. ZDMG 1850, 357 *եև Մորթմանն* ZDMG 26. 518 *սրանց հետ նաև բևեռ.* burgamani *«փրկել, հարկ, հարցնել»։ Հիւնք.* հարկանել *բայից։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Սչ. հարցրնել, *Ախց. Երև. կր. Ննխ. Ռ. Սեբ.* հարցրնէլ, *Ասլ.* հարցրնէ՛լ, *Խրբ. Սվեդ. Տփ.* հարցրնիլ, *Հմշ.* հարցրնուշ, *Շմ.* հարցունիլ, *Պլ.* հարցունէլ, *Տիգ.* հարցրնել, *ՋԹ.* հայցրնիլ, հարցրնիլ, *ՀՃ.* հայցր՛նել, *Ագլ.* հրցա՛նիլ, *Գոր. Ղրբ.* հրցնէլ, *Ջղ.* խարցրնել, *Ոզմ.* խարցրնիլ, *Մկ.* խոցնիլ, *Սլմ. Վն.* խաղցուցել։—*Նոր բառեր են* հարցվնախլ, հարցվնմտել, հարցմնեռել, հարցուրարով, հարցումս, հարցուս։— *Առանձին ուշադրութեան արժանի է Տփ.* հարցնօղ *«դրբաց» (հմմտ. հյ.* հարցուկ *և վրաց.* მკითხავი*)։*

ՓՈԽ.—Patrubány *ՀԱ 1906, 72 հայերէ-*

նից է դնում հունգ. harc «կռիւ», որ անշուշտ բնաւ գործ չունի մեզ հետ։

ՀԱՐՔԱՑԿՈՏ «փոփոխամիտ, անհաստատ». իբր անստոյգ բառ ունի միայն ՓԲ. արմատը պիտի լինէր հարք. ինչպէս ունինք բարկացկոտ<բարկ արմատից։

ՀԱՐՕՐԱՆԱԼ «թռչունների թռչիլը խմբով» Ագաթ. (երամացնալք հարօրանան). սրա յետին ձևն է արօրանալ նար. երգ. էջ 293 (Որպէս հաւք ի ժամ գարնայնոյն արօրանան և տարածանին ընդ երկիր)։

ՀՀԲ, ՋԲ և ԱԲ հանում են արօր բառից, իբր «թռչունների հերկուած տեղերը թափառիլը» նշանակութեամբ։ ՆՀԲ արօրանալ և հարօրանալ ձևերը փոխառ. փոխ իրար ուղարկելով՝ սխալմամբ մոռացել է տալ բառիս բացատրութիւնը։

ՀԱՐՖԱՅ «սպիտակ տուղտ» Ասար. ունի միայն ՀԲուս. § 1658։

ՀԱՅ, ի հլ. «հայց» ՍԳր. «կերակուր, ճաշ, ընթրիք, կոչունք, սեղան» ՍԳր. Ոսկ. ևփես. «ցորեն» Գիրք թղ. 236. Վստկ. 30. Կղնկտ. (Հրտ. էմ. էջ 66, Շահն. Ա. 185). որից հացալից Երեմ. խդ. 17. Դկ. ժե. 17. հացակից Սիր. թ. 22. հացամոլ «հացառատ» Ոսկ. ես. 230. հացարար Երեմ. է. 20. հացարարոց Ա. մն. ժզ. 3. հացարարութիւն Ոսկ. մ. ը. 27. հացաւէտ Ես. լզ. 17. հացերէց Դատ. ժզ. 20. հացեփեաց Ա. թագ. ը. 13. հացկատակ Ոսկ. մ. ա. 4, ը. 23. մեծահաց Բ. մակ. ը. 28. գարեհաց Վրք. հց. հացամեծար «զղջի ասպրնջական, զղջպարտակ» Մխ. գտ. 334. հացուտ «հացաշատ» Աբր. կրետ. էջ 101 են։ Նոր բառեր են հացաբոյս, հացահատիկ, հացագին, հացադուլ են։

Հներից Տաթև. ամ. իգ. «Հայն հայցումն թարգմանի, որ է հայց»։ Սրանից առնելով Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 311 հայց բառից, «որովհետև բնութիւնը հաց է ուզում» (իբր պահանջ)։ Klaproth, As. polygl. էջ 99 և 134 Կովկասեան ակուշա լեզուով kaz և կուբիչի լեզուով kaz ձևերի հետ։ ՆՀԲ լծ. հյ. հայս և արաբ. xubz «հաց»։ Pott EF 1, 233 և սրան հետևելով Windisch. 22, Gosche 29, Böttich. Arica 33, Lag. Urgesch. 334, Müller SWAW 38, 581 և 41, 148—165, Justi Zendsp. 182, Հիւբշ. KZ 23, 29 են կցում են փռիւգ. βέκος «հաց» հոմանիշին, այս էլ դնելով pač «եփել» արմատից. հմմտ. սանս. և զնդ. pač, պրս. puxtan, օսս. p'ičin, յն. πέσσω «եփել» են։—Fick BVS 7, 383 փռիւգ. βέκος ձևը կասկածով դնում է bhaj արմատից։ Canini, Et. étym. էջ 238 հաց և հայս=բասկ. ḥaz «անուշանել» բառի հետ։ Fortunatov BB 7 (1883), 88, որից և Bugge, Btrg. 17 և KZ 32, 41 հաց միացնում են սանս. sasyá- «ցանք, հացահատիկ», զնդ. hahya- «արմտիք», paitiš-hahya «հնձոց տօն» բառերի հետ։ Հիւբշ. 465 սխալ է գրտնում այս համեմատութիւնը, որովհետև հյ. ց չէ՛ <հնխ. sy։ Հիմնք. հայս բառից։ Erckert, Die spr. d. Kauk. stammes, էջ 48 խեւր. gatc «հաց»։ Patrubány SA 1, 188 հնխ. pok²som «եփած» ձևից. հմմտ. լտ. coquo, coxi, սանս. pákṣat։ Նոյն, KZ 37 (1904), 428 և IF 13, 163 հնխ. pā-sk-om նախաձևից, իբր լտ. pasco «արածել, անուշանել», panis «հաց»։ Pedersen, Նպաստ 23 ըն դունում է այս մեկնութիւնը, բայց Հայ. դր. լեզ. 156 մերժելով՝ կցում է յն. πατέομαι «ուտել», գոթ. fodjan «սնանիլ», հ. սկանդ. fóstr «սնունդ, կրթութիւն» են բառերին, բոլորի արմատը դրնելով հնխ. pa «ուտել, սնանիլ», աճականը pat: (—Նոյնը կրկնում են Walde 558 և Boisacq 751)։ Սանուալճեան, Բազմ. 1904, 498 ուրարտ. աձիս: Scheftelowitz BB 28, 287 սանս. aça, զնդ. as, պրս. āš «կերակուր»։ Charpentier, IF 25, 242 սանս. paktí, յն. πέψις լտ. coctio «եփել, եփուած բան» բառերին ցեղակից՝ դնելով kt=հյ. ց։ (Pokorny 1, 112 չի ընդունում Scheftelowitz-ի մեկնութիւնը, իսկ 2, 17 և 72 աւելի լաւ է գտնում Charpentier-ի մեկնութիւնը, քան լտ. pāsco են)։ Karst, Յուշարձ. 421 ՔՔր. as, aš, az «ուտել,

լափիլ», ուդուր. aš «կերակուր», կոյր. կարագաս. aš «ցորեն, ցանք, հաց»։— Մառ, О полож. абхаз. էջ 42 իմիր. ბოზო խոզո, ափխազ. axvaža «հաց»։ Кипшидзе, Грам. мингр. яз. Сп. 1914, էջ 401 ճաց=մինգ. խեցի «հիւրասիրութիւն»։ Պատահական նմանութիւն ունի ափխազ. ača «հաց», չէրքէզ. pastə «կորեկի հաց», ինչպէս նաև յն. ψωμί «հաց», որից փոխառեալ է տճկ. somin, somun «գրտակ հաց» (նախաձայնի անկման համար համմտ. ψαμάτια>տճկ. Samatia «Սամաթիա», Պօլսի հայաբնակ նշանաւոր թաղը)։ Meillet, Dict. étym. It. 694 կրկնում է Patrubány-ի մեկնութիւնը և դնում է հաց<pāski-, pəski-, որին մերձաւոր է գտնում լտ. pānis «հաց»<*pasnis համմտ. նաև pasco «անուցանել, արածել»։ Պատահական նմանութիւն ունի կամիս. azzik «ուտելիք»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ակն. Գոր. Երև. Խրբ. Կր. Համշ. Մշ. Ննխ. Ղրբ. Շմ. Պլ. Ւ. Սեբ. Սչ. Տփ. հաց, Ասլ. հաց, հաս, Տիգ. հոց (սեռ. հոցցի), Ագլ. Հճ. հօց, Զթ. հօց, հոց, Անտ. հուէօց, Այն. հաս (Բիւր. 1900, 682), Սվեդ. հուց, Մկ. Մրղ. Ոզմ. Զղ. Սլմ. Վն. խաց.— հետաքրքրական ձևեր են Զղ. ախանց «անհաց, առանց հացի», Զղ. մնկ. ծածիկ «հացիկ»։—Նոր բառեր են հացաբեր, հացակեր, հացաճաշ, հացաճոռ, հացաման, հացանուշ, հացաշէն, հացապուր, հացատուն, հացաւորել, հացափոխ, հացափոր, հացբուխ, հացլաթ, հացահաճ (մի քիչ հնից ունինք՝ հացահաճ Զքր. սարկ. Բ. 65, որից Վն. խասխան, Շմ. ծահան, Ղրբ. ծհան), հացուրացց, հացուտ «կուշտ», հացպան, հացվալոյ, հացփնջիկ, հացփոր, անհացուտելի, անաղուհաց, բաւահացիկ, բբահաց, տաճդեղահաց են։ Աստանայի Երքաթսօս հայերը պահած են մէղա հացցիկ գարձուածը (ասում են՝ երբ հացը գետին ընկնի), ախաս «աղուհացք, մեծ պահք» (Բիւր. 1900, էջ 454)։

Հացակել տե՛ս հացակել։

+ՀԱՀԻ (-ցւոյ, -ցեաց) «վայրի անպտուղ մի ծառ է. ֆրանս. érable կամ frêne (Նոր տայր ՀԱ 1926, 68), տճկ. տիշպուտաճ» Խոր. գ. 18. 34. կթ. որից հացուտ «հացի ծառեր շատ եղած (տեղ)» Բուզ. գ. 14։ (Սխալմամբ գրուած հազի Գաղիան. որ ՀԲուս. § 3346 կարծում է «մի տեսակ բիծախ», բայց Նոր տայր ՀԱ 1923, 54 հաստատում է ուրիշ ձեռագիրներով՝ որ պետք է կարդալ հացի)։

=Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ. ask'hio- հոմանիշ ձևից. սրա հետ համմտ. հբգ. ase, մբգ. asch, հոլլ. esch, գերմ. Esche, անգսք. aesk, անգլ. ash, հիսլ. askr (բոլորն էլ «հացի» նշանակութեամբ). այս բոլորը տալիս են հնխ. osk- ձևը, որ աճական ձև է. պարզագոյնն է հնխ. ōsi-, որի մի ուրիշ աճականն է osen-. սրանցից յառաջացած են լիթ. ú'sis, լեթթ. ūsis, հպրուս. woasis (<*ōsi), ալբան. ah (<*aska) «փիճի», հսլ. yasenĭ, ռուս. ясень, լհհ. jasień', բուլգ. ուս. ósen «հացի», լտ. ornus (<*osinos) «վայրի լեռնային հացի», յն. (ἀχερ)-ωΐς (<*ωσις) «բարտի», ὀξύη «փիճի», հիսլ. huinnius, կիմր. onnen (<*osn-) «հացի» (տե՛ս Pokorny 1, 185, Boisacq 107, 90, 706, Walde 547, Berneker 31, Ernout-Meillet 680, Trautmann 203, Kluge 124)։— Հիւրշ. 465։

ՆՀԲ լծ. օձի (որովհետև նոյն ծառը կոչւում է նաև օձատանջ)։ Lag. Arm. Stud. էջ 188 լտ. fraxinus «հացի»? Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Bugge KZ 32, 14, նոյնը յետոյ Müller WZKM 8, 282։

ԳԻՒ.—Ագլ. Կր. հացի, Ալշ. Մշ. հացի, հացվէնի, Ակն. Երև. հացէնի, Ղրդ. հա'ցէ, Հճ. հացոճի, Սվեդ. հոցցինա, Զղ. Վն. խացի, Սլմ. խացի, խացիկ', Մկ. խացը', Ոզմ. խացրծա'ն։

+ՀԱՒ, ու Հլ. (ըստ ՆՀԲ յետնաբար հոլովուած է նաև -ոյ, -աց, -է) «թռչուն» ՍԳր. Եւս. քր. Փարպ. «հաւ, մարի» Մտթ. իգ. 37. Ղկ. ժդ. 34. «աքլոր» Գ. մակ. գ. 12. Մտթ. իզ. 34, 74, 75. Ներկայ բարբառների մէջ և դրականում նշանակում է միայն «ընտանի հաւ, մարի». նշանակութեան զարգացման համար համմտ. յն. ὄρνις «թռչուն. 2. հաւ. 3. աքլոր», որ հիմայ յատկացուած է միայն

ընտանի հաւին։ Սրանից են հաւաղէտ *Ղևտ. ԺԲ. 26, Ոսկ. ես.* հաւադիտութիւն *Սիր. լա. 5.* հաւալուսն *ՍԳր. վհցօր. 172—3.* հաւախօս *Մրկ. ժգ. 35.* հաւակեր *ՍԳր.* հաւահարց *Օր. ժբ. 10. բ. մն. լգ. 6.* հաւահմայ *Երեմ. իէ. 9. Կոչ. Ոսկ. տիտ.* հաւահար լինել «*թռչունի գիշատուիլը մի ուրիշ թռչունից*» (*նորագիւտ բառ*) *Ոսկ. տտր. տող 13.* հաւաօրհնէք (*նորագիւտ բառ*) «*եկեղեցուն ընծայաբերուած թռչունները օրհնելու կարգը*» *Մ. Մաշտ. 89բ.* հաւապատիր «*մի տեսակ բոյս*» *ՍԳր.* հաւարս *ՍԳր.* հաւփալ «*մի տեսակ աղաւնի*» (*գրուած նաև* հաւրալ, հովփալ, հորալ *են*) *Ոսկ. եզեկ. Փիլ. Սահմ. Առաք. լծ. սահմ. 469* (*այս վերջինը ցոյց է տալիս թէ ի՛նչ տարբերութիւն ունի աղաւնուց*). տարմաւաւ *վհցօր. 174.* քաջահաւ *Ղևտ. ժա. 17. Դտ. ժգ. 16.* երաշտահաւ *Վանակ. հց.* արտաւազդահաւ «*կապրատ*» *Փիլ. լին. բ. 117* (*հմմտ. յն.* κόκκυξ *հոմանիշը, որ նաև յատուկ անուն է. տե՛ս Նորայր, Բառ. ֆրանս. էջ 657 ա և ՀԱ 1920, 281*). ժրահաւ *Նպիփ. բարոյ.* կիսահաւ *Եպիփ. բարոյ. Խոր. աշխ.* հաւապան (*չունի ԱՔ*) *Ջքր. սարկ. Ա. 42.* հաւրափեալ «*գիշերուայ ժամի հօքը*» (*ըստ արևելեան ժամացոյցի. այսինքն՝ երբ հաւը արդէն խօսած է. ըստ Ս. Վ. Նազարէթեան, Պատկեր 1893, էջ 160*). հաւամրգի «*մի տեսակ բոյս. ebenus laguroides Boiss.*» (*ըստ Տիրացուեան, Contributo § 254*) *կամ* «*erica arborea L*» (*ըստ նոյնի, անդ, § 341*). եգիպտահաւ, հաւաբուծութիւն, հաւկթաձև *են* (*նոր բառեր*)։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* aṷei- «*թռչուն*» *բառից. ցեղակիցներն են լտ.* avis «*թռչուն*», avicula «*թռչնիկ*», *սանս.* vi-, vé-, vayas- «*թռչուն*», *զնդ.* vīš, vay- «*թռչուն*», *թերևս նաև յն.* οἰωνός (<*ϝῐϝωνός ?) «*գիշատիչ թռչուն*», αἰετός (<*ἀϝῐ-ετός), *իռլ.* ai, aoi «*կարապ*», *կիմր.* hwyad (<*aṷietos?) «*բադ*» *են* (Walde 74, Boisacq 694, Pokorny 1, 21 *և* 2, 75, Ernout-Meillet 87):— *Հիւբշ. 465։*

Klaproth, Asia pol. *էջ 101 գերմ.* hahn «*աքլոր*» *բառի հետ։ Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ա բնաձայնից։ ՆՀԲ և* Peterm. 26 *լտ.* avis: Lag. Urgesch. 122 pā *արմատից, իբր հմլ.* pieti, piewati «*երգել*», pictlŭ «*աքլոր*»։ Lag. Btrg. baktr. Lex. 65 *լտ.* pavus «*սիրամարգ*» *բառին ցեղակից։ Հիւբշ.* Arm. Stud. *էջ 38 ընդունում է համեմատել լտ.* pavus, pavo *ձևերի հետ, միայն ա՛յն պայմանով, որ սրանք նախնաբար ընդհանրապէս «թռչուն» նշանակութիւնն ունեցած լինին։ Տէրվ. Նախալ. 108 վերիններիս հետ դնում է հնխ.* vi, avi «*թռչուն*» *բառից։ Հիւնք.* հաւ=*լտ.* avis, *իսկ* հաւալուսն=*արաբ.* հավսալէ «*աստամոքս, խածի*»։ Meillet MSL 7, 162 *և* 8, 154 *վերի ձևով՝ լտ.* avis: Bugge KZ 32, 14 *լտ.* pavus, pavo *նոյնացնելով յն.* ταώς *հոմանիշի հետ, իբր փոխառեալ բառ մերժում է միացնել* հաւ *բառի հետ և ընդունում է վերի մեկնութիւնը։ Այսպէս նաև* Müller WZKM 8, 282: Petersson KZ 47, 249—50 *հնխ.* pōu, pou, pau «*փոքր. 2. ձագուկ*» *արմատից. հմմտ. յն.* πῶλος, «*ձագ, քուռակ*», *սանս.* potas «*ձագ*», *յն.* παῖς *լտ.* puer «*տղայ*», *լիթ.* putýtis «*թռչունի ձագ*», *լեթթ.* putns «*թռչուն*», *հսլ.* pŭta, pŭtica «*թռչուն*»։ *Այս մեկնութիւնը յիշում է նախորդի հետ (հնխ.* aṷei-) Pokorny 2, 75:

ԳԻՒ.—Սչ. հաւ, *Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Հմշ. Ղրբ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տփ.* հաւ. *Տիգ.* հով, *Ագլ. Հճ.* հօվ, *Ջթ.* հօվ, հով, *Սվեդ.* հուվ, *Մկ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Խավ. բոլորն էլ «ընտանի հաւը, poule». իսկ Տփ.* հաւ, *Ալշ. Մշ.* հաֆ, *Ոզմ.* խավ[1], *Վն.* խավֆ[1] «*թռչուն*» (*ընդհանրապէս*)։ *Նոր բառեր են* հաւաբոյն, հաւագող, հաւբան, հաւախոր, հաւալոլոկ, հաւածոր, հաւականչ, հաւառած, հաւերես, հաւթռուճ, հաւխօսող, հաւկոյր, հաւնինջ, հաւձագ, հաւֆուճ, հաւֆաշ, հաւօրէնք։

ՓՈԽ.—Քրդ. خوپال xūpāl «*աղաւնի*» (<*հաւփալ ձևից*). Justi, Dict. Kurde, *էջ 162։*

+ՀԱՒ, ու, ո *հլ. «պապ, հօրը հայրը» Ել. ժ. 6, Ոսկ. մ. ա. 1, գ. 5, Եւս. քր. որից* հա-

ասկիզբն *կամ սկզբնաւիւ Փիլ. լին. Սարկ. հանդ. նախաւիւ Վրդն. պտմ. Ճառընտ.*։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* aṷo- *ձևից. ցեղակիցներն են լտ.* avus *«մեծ հայր, պապ, նախնիք»,* avia, avia *«մեծ մայր, նան, տատիկ», գոթ.* awō *«մեծ մայր», հհիւս.* afi *«պապ»,* āi *«պապի պապ», հիսլ.* aue, haue. *միսլ.* óa, ua *«թոռ», կապադովկ.* avuka *«մեծ հայր», լտ.* avunculus, *լիթ.* avýnas, *հպրուս.* awis, *հսլ.* uyĭ *«մօրեղբայր». վերջին նշանակութեամբ են նաև անգսք.* ēam, *հանգլ.* eme, *հֆրիզ.* ēm, *հբգ.* ōheim, *մբգ.* oeheim, *գերմ.* Oheim, Ohm, *հոլլ.* oom, *որոնց նախնականն է ընդհ. գերմ.* *awo-haimaz *«նա՝ որ պապի տանն է բնակում». սրանից հետևում է որ հնխ.* aṷo- *բուն նշանակում էր «մօր կողմից պապ», կամիս.* huhhaš *«մեծ հայր»։* (Walde 78, Pokorny 1, 20, Ernout-Meillet 92, Kluge 355):— *Հիւբշ. 465։*

ՆՀԲ և Peterm. *26, 33 լտ.* avus: Lag. Urgesch. 122 *և* Btrg. baktr. Lex. 65 *յն.* πάππος *«պապ» բառի հետ։ Հիւբշ.* Arm. Stud. *էջ 38 կա՛մ յն.* πάππος, *լտ.* papa, *պրս.* bāb (<pāp) *և կամ լտ.* avus *են։ Տէրվ. Նախալ. 108,* Bugge KZ 32, 14, Meillet MSL 7, 162, Müller WZKM 8, 282 *մերժում են յն.* πάππος *ձևը և ընդունում են վերի մեկնութիւնը։ Այսպէս և* Brugm. Grd.² I 304: Karst, *Յուշարձան 402 սումեր.* aba *«հայր, պապ, ծեր»։*

ՓՈԽ.—կապադովկ. ἀβοῦκα *«պապ» փոխառեալ է հյ. հաւուկ փաղաքշական ձևից (տե՛ս* Bugge KZ 32, 10)։

+ՀԱՒ, ի–ա *հլ. «ծայր, սկիզբ, սկզբնաւորութիւն» հոր. Պիտ. որից հաւաճալ «սկզբնաւորիլ, սկսիլ» Բր. քեր. Սահն. 15. հաւիլ «սկսիլ» Շիր. 72. Պիտ. հաւումն «սկիզբ» Պիտ. հաւակ «սկիզբ, սկզբնապատճառ, առաջնորդ, հեղինակ» Պիտ. Տիմոթ. կուզ, էջ 144, 267. կնիք հաւ. 343. դառնահաւ «սկզբից դառն» Յիշատ. դեռահաւակ «նոր բսկրսած» Ֆր. իմ. առ. չարահաւ Սիր. համաբ. 252. չարահաւիլ (նորագիւտ բառ. չունին ՆՀԲ և ԱԲ) «վատ վարուիլ մէկի հետ». Ժող. է. 23 (Չի բաղում անգամ չարահաւեացի ընդ քեզ և ի նուագս բազումս չարչարեացէ զսիրտ քո. յն.* ὅτι πλειστάκις πονηρεύσεταί σε...), նախահաւել *Ֆր. իմ. նախահաւակ Պիտ. հաւել «առաջին երկու վանկերը երկար և վերջինը սուղ նուաւանկ բառ» Մագ.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* pau- *«ծայր» ձևից. համմտ. յն.* παύω *«դադարեցնել»,* παύομαι *«դադրիլ, հրաժարուիլ», առտ.* paŭlz *«դադար, հանգիստ, վերջ»,* παυσωλή *«հանգիստ», լտ.* pausa *«դադար, վերջ»,* pausare *«դադար առնել, կանգնիլ», որոնք համարւում էին յունարէնից փոխառեալ. այժմ* Meillet, Dict. étym. Lt 708—9 *բնիկ է գտնում,* Boisacq *յոյն բառի ծագումը անհայտ է թողնում։ «Ծայր» գաղափարը կարելի է առնել թէ՛ «սկիզբ» և թէ «վերջ» իմաստով. այսպէս՝ ծայր տալ «սկսիլ», ծայրը գալ «վերջացնել». ծայրէ ի ծայր, ֆրանս.* d'un bout à l'autre, *թրք.* uǰdan uǰa *«սկզբից մինչև վերջը»։ Հայերէնի մէջ նոյն արմատը առնուած է «սկիզբ» իմաստով, յունարէնի մէջ «վերջ» իմաստով։—Ա.Ճ.*

ՆՀԲ նոյն է դնում հաւ «պապ» բառի հետ, իսկ հաւակ՝ լծ. աւագ, *յն.* αὐθεντής, *լտ.* auctor: Gosche 46 *սանս.* su, sū, *գնդ.* havaṇīh, hāvanī *«նախապատրաստութիւն»։ Հիւնք. հաւ «պապ» բառից։ Ղափանցեան* ЗВО *23, 351 գնդ.* hav *«ծնիլ» բայից։*

*ՀԱՒԱԺԻՊԱԿ *«շէկխարի,* anchusa, *արնգոյր տուղ բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1668, որ և հաւաճիպա § 2782։*

=*Պրս.* هاوجوه havaǰuva, hävāǰuvä *նոյն նշ. կազմուած է* ǰuva *«անդիկ» բառով, որ է ժիպակ։*

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ. 1925, էջ 302։

Հաւալաճի *տե՛ս Հաւելէն։*

ՀԱՒԱԼՈՑ. *անսովոյ բառ. մէկ անգամ ունի Եղիշ. գ. էջ 57. «Յամրածածուկ հաւալոցէն ճնպով դեսպանս արձակէր առ գունդն Պարսից»։ Թուի թէ նշանակում է «պահուելու տեղ, թաքստոց»։*

=*Անշուշտ կազմուած է* -ոց *մասնիկով*

հաւալ արմատից, որ այլուստ անծանօթ է։

ՆՀԲ «որպէս թէ հաւու ալուցէ կամ վանդակ, տեղի թաքստի. տե՛ս և աւլոց, իբր տեղի փախստի»։ ԱԲ մեկնում է «հաւնոց. 2. պահուրտելու տեղ»։ Պատահական նմանութիւն ունի պրս. حوالهگاه havālagāh «թաքստոց», որովհետև կազմուած է արաբ. havāla բառից։

Հաւաճ տե՛ս Ամբարհաւաճ։

ՀԱՒԱՃ «քաջագործութիւն, յաղթութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Սեբ. էջ 41. «Քանզի տեսանելով զհաւաչս նորա չարաչարս, զարհուրեալ խոտորեցան սիրտք իւրեանց ի նմանէ»։ (Խօսքը Մուշեղ Մամիկոնեանի մասին է, որ զսպեց Վահրամ պարսկի ապստամբութիւնը և մեծամեծ քաջագործութիւններ արեց։ Պարսիկները նախանձեցան նրա վրայ և ամբաստանեցին թագաւորի առաջ)։

Գտաւ ու մեկնեց Աճառ. Արրտ. 1911, էջ 230։

*ՀԱՒԱՃ «օդ, եղանակ, օդի փոփոխութիւն»», Վստկ. Ուստնին զգործն և զբնութիւն գետնին և զհաւաչն ժամանակացն և զեղանակ տարւոյն (էջ 2). Պարտ է զգաւառն և զհաւաչն տեղեաց իմանալ (էջ 86). Հոտն և փոթոթութիւնն զհաւաչն առնու (էջ 157). Յայսպիսի հաւաչս խռովի (ձիթենին) (էջ 177). Բաց զպատուհանքն և զդուռն որ հաւաչն մտանէ ի ներքս (էջ 194)։

=Արաբ. هواء hava «օդ, եղանակ»։

ՀԱՒԱՆ (յետնաբար ի հլ.) «համոզում, հաւատք» Ոսկ. Սերբեր. «միաբան, կամակից, հաւանող» եզն. Ոսկ. յհ. ա. 42. որից հաւանիլ ՍԳր. Ոսկ. մ. ա. 23. հաւանեցուցանել ՍԳր. Ոսկ. մ. ա. 9. յհ. բ. 24 կամ հաւանել Ոսկ. ես. և երր. հաւանագոյն եզն. Ոսկ. մ. բ. 11. հաւանբնկերք Ոսկ. երր. 502. Վեցօր. 158. հաւանութիւն Գ. մակ. է. 2. եզն. անհաւան ՍԳր. Սերբեր. դիւրահաւան 3հ. գ. 19 Ոսկ. մ. ա. 4 և բ. կոր. դժուարահաւան Ոսկ. մ. բ. 11. յհ. ա. 25. միահաւան Բ. մկ. ժա. 8. Բուզ. զուգահաւան Նար. յիշ. իմիաբանհաւան (նոր բառ)։

ՆՀԲ «արմատն է այո՛, հա, թրք. էվվէթ «այո՛», լծ. ընդ. հաւատ, դաւան ևն»։ Տէրվ. Նախալ. 65 հնխ. av «յագիլ, հաճիլ, հաւանիլ» արմատից է դնում սանս. av, յն. ἄω «կշտանալ» և հյ. յագել, յագեցնել, հաւանիլ, հաւատ, հաւատարիմ։— Meillet MSL 8, 165 հաւան և հաւատ դնում է հաւ «թռչուն» բառից, ինչպէս և յն. οἰωνός «թռչուն» բառից. հաւ բառի այս առումը Meillet հնդեվրոպական է համարում՝ կապելով հաւահմայութեան արուեստին։ Հիւբշ. 465 կեղծ է համարում այս մեկնութիւնը, որովհետև յն. οἰωνός < *οἰϝοϝωνός = լտ. ōmen (տե՛ս Solmsen, Studien zur lat. Lautgeschichte 93, Walde 539)։ Հինք. յաւանական բառից է հանում հաւանական և սրանից էլ հաւան։ Pedersen, Նպաստ 8 նոյն է դնում հաւատ բառի հետ։ Karst, Յուշարձան 421 հաւ–ան, հաւ–ատ և հաւ–աստի դնում է հաւ ընդհանուր արմատից, որ կցում է այո՛ և այս էլ թրք. evvet «այո՛» բառին։ Մատ տե՛ս հաւատ։

ԳԻՒ.—Շմ. հավանիլ, Սրև. հավանէլ, Ալշ. Մշ. Սչ. հավնել, Նխճ. հավնէլ, Ախց. Ասլ. Խրբ. Կր. Պլ. Ռ. Սեբ. Տփ. հավնիլ, Ղթ. հավնըլ, Հմշ. հավնուշ, Ագլ. հվա՛նիլ «հաւանիլ», հո՛վան «հաւան», Սվեդ. Տիգ. հովնիլ, Հճ. հնվնել, Ալշ. Գոր. Ղրբ. հավան կէնալ, Սլմ. Վն. խավնել, Մկ. Ոզմ. խավնիլ, Մրզ. խավնէլ, Զթ. խօվանել.—այս բոլորը նշանակում են «գնդեցիկ՝ վայելուչ գտնել, դուրը գալ». արևմտահան գրականը զանազանելով երկու ձևերը՝ գործածում է հաւանիլ «համաձայնիլ» և հաւնիլ «դուրը գալ»։

*ՀԱՒԱՆ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «սանդ» Վրք. հց. ա. 432, Ոսկիփ. (ըստ ՆՀԲ Հին բռ. գրում է հայանակ, իբր թէ հաւանակ)։

=Պհլ. hāvan, զնդ. هاوانه hāvana, պրս. هاون hāvan կամ هوان havān, որից փոխառութեամբ արաբ. هاون hā-

vun, *թրք.* havan. *բոլորն էլ «սանդ» նշանակութեամբ* (Horn § 1089):—*Հիւրշ. 180։*

Ուղիղ մեկնեց նախ Justi, Zendsp. 324 *ա։* Lag. Arm. Stud. § 1270 *իբր զրադաշտական պաշտամունքի առարկայ՝ Հայաստան մտած է համարում։*

ԳԻՒ.—Նոր փոխառութեամբ մտած է թուրքերէնից. ինչ. Պլ. հավան, *Երև.* հավանգ *են։*

ՀԱՒԱՆԱՊԵՏ *«ճարտարապետ». ունի միայն Բառ. երեմ. էջ 179։*

ՀԱՒԱՆԻ *«անասունների արուն». մէկ անգամ ունի Ոսկ. հերովդ. 617. «Ո՛ր մատակ առիւծ զիւր հաւանին ի սպանումն մատնէ» (յն.* ἄρρην *«արու»)։*

=*Ըստ որում կայ Ոսկ. եբր.* հաւաներնկեր *«զուգակից, ամոլակից» բառը, որ ծագում է հաւան արմատից, ուստի թերևս այս բառն էլ բուն նշանակում է «ընկեր» և ծագում է նոյն արմատից։—Ա.Ճ.*

ՀԱՒԱՈՒԻ *«գէտաւ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 179. այս բառով պէտք է անշուշտ հասկանալ գետաւո, որ Երև. և Ջղ. նշանակում է «մայր գետ, որից առուն է բաժանւում»։*

*ՀԱՒԱՍԱՐ *(յետնաբա՞ր ի, ի–ա հլ.) «հաւասար, նման, ընկեր, մէկ ձև ունեցող, ընդհանուր, հասարակաց» ՍԳր. Մծբ. Ոսկ. յհ. բ. 37. որից* հաւասարել *ՍԳր. Ագաթ.* հաւասարորդ *Նար. պատմ.* հաւասարութիւն *ՍԳր. Նար. պատմ. Կոչ.* հաւասարագոյն *Ագաթ.* հաւասարակշիռ *Վեցօր.* համահաւասար *Վրք. Հց.* զուգահաւասար *ՅՀ. իմ. երև.* երկնահաւասար *Յայսմ.* հանդիսահաւասար *Անան. եկեղ. ի-ի կրճատումով՝* մակաւասար *Փիլ. Շիր.* չաւասարիլ *Վրք. Հց. բ. 13.—միջին Հյ.* հաւասարակաց *Կոստ. երզն. 78. նոր բառեր են* հաւասարակշռութիւն, անհաւասարակշռութիւն *են։*

=*Պհլ.* hāvsār *(կամ* hāvasār*) բառից, որ ձիշտ հայերէնի պէս ունի կրկնակ «հաւասար» և «նման» նշանակութիւնները։ Ճիշտ հայերէնի պէս պահլաւերէն էլ աւում է* hāvsār nē 'ast *«չիք հաւասար» (նմանը չկայ)։ Պհլ. բառը հին գրականութեան մէջ աւանդուած չէր. պատկանում է հիւս. պհլ. բարբառին և երևան եկաւ մանիքէական գրուածների մէջ՝* הַאוֹסָאר hāvsār *ձևով (տե՛ս* Salemann, Manichäische Stud. ЗАН *հտ. 8 (1908), էջ 81)։ Կազմուած է *hāvat- «նոյն» (համմտ. զնդ.* havaṯ-masō *«նոյն մեծութեամբ») և* sāra *«գլուխ» բառերից. համմտ. պրս.* همسر hamsar *«համապատիւ, հասակակից»՝ կազմուած* ham *«նոյն» և* sar *«գլուխ» բառերից։*

ՆՀԲ իբր համ հասարակ, համասարաս, լծ. և արաբ. հաշիր, *թրք. էջ «նմանն» և յն.* ἴσος, *Հիւնք. պրս.* hamsar *«համապատիւ, հասակակից»։ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet WSL 14, 479 *և* 17, 247: *Պհլ. բառին է կցում նաև Մառ (տե՛ս* ЗАН *8, 81)։ Քիրեաքեան, Արիահայ բռ. 236 պրս.* افشار afsār *«ընկեր, զուղ»։*

ԳԻՒ.—Երև. Շմ. Տփ. հավասար, *Ննխ.* հավասար, հավսար, *Ագլ.* հվա՛սար, *Տիգ.* հոմվոսոր, *ՋՓ.* հավասօյ, հավասոր, *Խրբ. Պլ. Սեբ.* հաֆսար, *Ալշ. Ախց. Կր.* հաֆսար, *Սլմ.* խավասար, *Մկ.* խոմվսար, *Ջղ.* խօվասար, *Ոզմ.* խովսար, *Ակն. Ալշ. Մշ.* հափսար: *Բայական ձևով Տփ.* հավսրվիլ, *Ագլ.* հվրսա՛րիլ, *Խրբ. Պլ.* հաֆսրիլ: *Նշանակում են «հարթ, տափակ, միապաղաղ» և «հարթուիլ, տափականալ, հաւասարուիլ, միապաղաղ ձև ստանալ»։*

ՓՈՒԽ.— Թրք. գւս. Նոգ. حاوسار havsar *«հաւասար» (Յուշարձան 329), Ակն.* havsar *«մէկ մեծութեամբ և իրար նման» (օր. պղտուղները և կամ որևէ երկու ապրանք իրար հաւասար չեն. մէկը խոշոր է, մէկը փոքր է). Կես.* havsar eylemek *«միախառնել, միացնել». օր.* bir buγdaydan, bir čavdardan qat da havsar eyle *«մէկ ցորենից, մէկ էլ հաճարից խառնիր և հաւասարի՛ր, միացրո՛ւ» (տե՛ս Բիւր. 1898, 713)։*

ՀԱՒԱՍՈՏ, ի *հլ. «սառոյգ, ճշմարիտ, վաւերական» Դիոն. եկեղ. սրանից են* հաւաստի *«իրօք, ճշմարիտ» խոր. Պորփ.* հաւաստիք *«հաստատութեան ապացոյց» Ոսկ.* հաւաստեաւ *Օր. ժգ. 14. Նար. քր. Եզն. Ոսկ. մ. ա. 1.* հաւաստապէս *Փարպ.* անհաւաստի *խոր.* հաւաստութիւն *ՍահՄ. Անյ. պորփ.* հաւաստիացում *(նոր բառ) են։*

նշՒ «ի ձայնիցս ասսի, հաստատ, յստակ և հա, այո՛, հաւանելի, հաւատալի *ևն»։ Տէրվ. տես* հաւան *բառի տակ։ Հիւնք. զանդկական Աւետա գրքի անունից։ Նոյնը նաև Ալիշան, Հին հաւատք, էջ 327։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 100 պհլ. բնագրի (ժա. 16)* havišt *բառը մեկնում է «հաւատարիմ» և նոյնացնում է մեր ձևի հետ։* Karst, *Ցուշարձ. 421 տե՛ս* հաւան։ *Մաս տե՛ս* հաւատ։

ՀԱՒԱՍՏԻ *«գօտու ծոպերը կամ ուրիշ մասերը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 68.— «Ձծոպս գօտւոյն մերթ բանայցէ և մերթ ծածկիցէ, մերթ ի կուրծսն ածիցէ և մերթ զգաւակսն ածիցէ և այսր անդր շոշոկիցէ, բայխփիկ նախորատամբն խաղայցէ, զի զհաւաստիս գօտւոյն կարիցէ բազմաց ցուցանել»։*

ՀԱՒԱՍՏ, ո հլ. *(գործածւում է մանաւանդ անեզաբար) «հաւատք, կրօնք, հաւատարմութիւն, վստահութիւն, ստուգութիւն» ՍԳր. «ապացոյց, փաստ, հաւաստիք» Փիլ. «դաշինք» Նա. քր. որից* հաւատալ *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 15, 16. մ. ա. 10. Նա. պտմ.* հաւատացուցանել *Բ. մակ. դ. 34. Ոսկ. հս. Սիր. ծն.* հաւատացեալ *ՍԳր.* հաւատոյ *«հաւատալու արժանի» Կոչ.* հաւատաւոր *Սղիշ. Կանոն.* հաւատուիլ *Իգն. առ. Թղ. 113 (ոսկեգարեան!)* հաւատարիմ *(մասնիկի համար համմտ. մտերիմ, ոխերիմ) ՍԳր. Ոսկ.* հաւատարմութիւն *ՍԳր. Ագաթ. Նա. քր.* առհաւատչեայ *ՍԳր. Ոսկ. Սերիր. Սիր. ծն. Ագաթ.* անհաւատ *ՍԳր. Նղն.* անհաւատոյ *«անհաւատալի» Կոչ. 289.* թերահաւատ *ՍԳր. Կոչ.* երկմարտահաւատ *Կորիւն.* միահաւատ *Ագաթ.* նորահաւատ *Ոսկ. ա. տիմ. Ագաթ. Նաւագր.* ուղղահաւատ *Բուզ.* չհաւատալի *Վեցօր. Բուզ.* դեռահաւատ *Խոր.* դիւրահաւատ *Իրս. Հց.* ապահաւատ *Նար.* կիսահաւատ *Ոսկ. յհ.* հաւատարմատար, հաւատահաննութիւն, հաւատահրննական, հաւատուրաց *(նոր բառեր) ևն։ Նախաձայնի անկումով ունինք* աւատ, *որից մակբայաբար* յաւատ *«հաւատարմութեամբ». Ոչ առնէին համար արանց՝ յորոց ձեռս տային զարծաթն՝ տալ գործաւորաց գործոյն, զի յաւատ (կամ ի յաւատ, յն.* ἐν πίστει) *գործէին (Դ. Թագ. ժբ. 15, իբ. 7). Նաև* աւատալ *Մագ. Վրք. Հց. ա. 522, Լմբ. մատ. 301 (միջին հյ.* աւտալ, ավտալ *Անսիզք 25, 63).* աւատացուցանել *Ճառընտ. չաւատալ Ոսկ. մ. ա. 4. չաւատալի Նա. քր.։ Իսկ* աւատ «fief» *բառը, որից* աւատատու, աւատապետ, աւատական իշխանութիւն «féodalité» *ևն յարմարեցրած է նոր գրականում, կարծելով թէ այս եւրոպական բառը ծագում է լտ.* fides *«հաւատք» բառից։*

Հներից Վանակ. հաւատ. = Տաթև. Հարց. 769 հետևեալ մեկնութիւններն է յարմարացնում. «Հաւատն լոյս. հաւն սկիզբն և աւն՝ զօրութիւն գործոյ. զհոյն զիր ի բաց աւ, աւատ ասի. ամենայն ի դէպ բանի ասեն՝ թէ աւօտ կայ. և առաւօտ ասեն զսկիզբն աւուրն, որպէս աւօտ արեդական գալոյ»։ ՆՀԲ լծ. հյ. հաւանութիւն, դաւանումն հաւատատ, *համ՛, այո՛ յաւէտ, իրք.* էվվէք, *երբ.* եմուտ *«խոստովանութիւն, ցուցա», լտ.* fides, *իտալ.* fede։ *Մորթման* ZDMG 26, 543 *բևեռ.* havadubi: *Տէրվ. տե՛ս* հաւան։ *Հիւնք. Աւետարան բառից։ Ալիշան, Հին հաւատք, էջ 7, 9 լտ.* fides, *իտալ.* fede, *ֆրանս.* foi *կամ* հաւ *«սկիզբ» և կամ* հաւանութիւն: Meillet *տե՛ս* հաւան: Patrubány SA 1, 210 *զնդ.* hu *«լաւ»+*ā*+պրս.* vāt *«բան, խօսք», իբր յն.* εὐαγγέλιον *«Աւետարան», իսկ ՀԱ 1908, 187 սանս.* sabhā *«ազգ», գոթ.* sibja, *հբգ.* sippe*+տալ՝ այն է «իր անձը ազգին նուիրել»։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 100* հաւատ *բառից։* Karst, *Ցուշարձան 421 տե՛ս* հաւան։—*Մաս,* ИАН *1916, 237* հաւատ, հաւան, հաւատի, համոզել *և ամուր դնում է յարեթական* sam *արմատից, որից և վրաց. մծամս «հաւատամ»։*—Առհաւատչեայ *բառը* Lag. Armen. Stud. § 2411 *համարում է ձեռացած ժողովրդական ստուգաբանութեամբ երբ.* עֵרבֹן ʿērābōn *«գրաւական» բառից։*

ԳԻՒ.—*Ախց. Երև. Կր.* հավատալ, *Նախ. Ջղ. Սեբ. Մշ.* հավադալ, *Շմ.* հավատիլ, *Գոր. Ղրբ.* հվատալ, վհատալ, *Ագլ.* հվա՛տիլ, *Մրզ. Սլմ. Վն. Տփ.* ավատալ, *Ախց.* հավտալ, *Ասլ. Պլ.* հավդալ, *Սեբ.* հավդրնալ, *Համշ.* հավդրնուլ, *Մկ.* խոմվոտալ, *Կր. Ոզմ. Տփ.* ավտալ, *Խրբ. Պլ. Ռ.* ավդալ, *Ալշ. Մշ. Ռ.* ավդրնալ, *Սվեդ.* տվդիլ, *Տիգ.* տվդրնուլ, *Հճ.* ավդօլ, *Զթ.* ավդօլ, ավդոլ.—*սրանք անշուշտ բնիկ ժողովրդական ձևեր են.—սակայն գրականից են փոխառեալ Ագլ. Տփ.* հավատ, *Ակն. Պլ.* հավաթգ, *Մշ.* հավադգ՝, *Խրբ.* հավադգ, *Ռ.* հավաթf, *Տիգ.* հովմրf, *Ասլ.* հավա՛գ, հավա՛, *Զթ.* հավօրf, հավորf, *Մրզ. Ոզմ. Սլմ. Վն.* խավատ.—*Նոր բառեր են* հաւատեհաճ, հաւատեհաճել *«համոզելով իր ուզածը անել տալ».—Բլ.* աճավօտ *«անհաւատ» (հաղորդեց Ս. Մովսիսյան, նամակ 1933)։*

ՓՈԽ.—Patrubány SA 1, 222 *հայերէնից փոխառեալ է դնում հունգ.* hit *«հաւատք» և այս փոխառութիւնից եզրակացնում է որ Հունգարացոց նախկին հայրենիքում մազդեզական կրօնը տարածողները հայերն էին։*

ՀԱՒԱՔ *«ժողովուած» Վրդ. պատմ. այս արմատից են* հաւաքել *«ժողովել» ՄԽր.* հաւաքումն *Ոսկ. յհ. ա. 38.* հաւաքարար *Թէոփ. ծն.* հաւաքական *Անյ. վերլծ.* հաւաքարարութիւն *Անյ. վերլ.* հաւաքիչ *Մագ.* զանազանհաւաք *Թէոդ. կուս.* բազմահաւաք *Պիտ.* դրժուարահաւաք *Խոր.* զուգահաւաքել *Ճառընտ.* ծաղկահաւաք *Խոսրովիկ.* համահաւաք *Վրդն. սղ. ծն.* զօրահաւաք, հաւաքածու, հաւաքատեղի, հաւաքոյք *(նոր բառեր) են։ Առանց* հ *նախաձայնի ունինք* աւաքել *«հաւաքել, ժողովել» Եզեկ. իթ. 5. Գ. մակ. գ. 4. Բրս. ողորմ.։ Այս բառը ունի նաև «բժշկել» նշանակութիւնը. այսպէս՝* աւաքել ի բորոտութենէ *կամ* զբորոտութիւն *«բորոտութիւնը բժշկել» Դ. Թագ. ե. 3, 6, 7, 11.* աւաքեցուցանել *«բժշկել» (անդ). պարզապէս* աւաքէր *«բժշկում էր» Սասն. էջ 36։ Այս նշանակութեան զարգացման համար համմտ. յն.* σῳάγω *«հաւաքել» և* ἀπο-σῳάγω *«բժշկել». նաև հայ.* ախտահաղ *«ախտաբոյժ» Սասն. 65 (տպ.* աղտահաղ. *համմտ. Ղարադր բառի տակ ասուածները)։*

Տէրվ. Altarm. 9, 10 *դնում է ի յաւելուած, աւա մասնիկ, արմատը* f, *որի հետ միացնում է սանս.* či, *պրս.* čîdan *«հաւաքել, ժողովել», իսլ.* cyrucmu, oyru umamu *«մաքրել». ըստ այսմ* ի–աւաքել=*սանս.* ava-či *«հաւաքել, հաւնել»։ Հիւնք. յն.* εὐαγέω *«սրբել, մաքրել» ձևից հանում է* աւաքել *և սրանից էլ* հաւաքել։ *Կուրտիկեան, Արևելք թ. 4185 պրս. խաւ «քաղել»։ Յակոբեան, Նաղիկ 1899, նոյ. 4 արաբ.* հավգ *«ժողով, ժողովել» բառից։ Վափանցեան* ЗВО *23, 360* համ+*զնդ.* vyāxa, *«հաւաքումն»։* Nyberg 2 96 *միացնում է պհլ.* hamōk *«հաւասար, ամբողջ, ամբողջական, կատարեալ» բառի հետ, որ դնում է իրան.* *hama-vaka- *ձևից, ընդունելով* *vaka- *իբր «ծայր, վերջ, բարձրագոյն կէտը»։ Այս անծանօթ* *vaka- *բառը ուզում է գտնել նաև հյ.* վախճան<*vax-čar(a)na-, վակահակ, վակաս<*vak-āsa *«մինչև վերը հասնող».* վակժոյժ<*vak-užaužah- *«ծայրը ուժով բռնած» և զնդ.* vaγδana *«գլուխ» բառերի մէջ։* Meillet BSL *հտ. 32, № 97, էջ 84 սխալ է գտնում այս մեկնութիւնը, որովհետև մեկնելով* *ha-ma-vaka- *ձևից, չի բացատրւում ո՛չ* -mă- *վանկի կորուստը և ոչ* f-*ի ծագումը։*

ԳԻՒ.—*Երև.* հավաֆիլ, *Շմ. Տփ.* հավաֆիլ, *Գոր. Ղրբ.* հվա՛ֆէլ, *Ագլ.* հվո՛ֆիլ, *Մշ.* հովրկել, *Ռ.* հաֆէլ, *Ախց. Կր.* հաֆիլ, *Զթ.* հաֆգ՝իլ, *Հճ.* հէվֆել.—*Ախց. Կր. են ստացել են «տեղաւորուիլ, պարունակուիլ, պարփակուիլ» նշանակութիւնը։—Նոր բառեր են* հաւաֆոտել, հաւֆոտուկ, հաւաֆս, հաւաֆ–տեղակ *անել։*

*ՀԱՒԱՔ, ՀԱԲԱԿ, ՀԱՊԱԽ *«մի տեսակ ռեհան.* acimum basilicum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1572 և § 1674։*

=*Արաբ.* حبق ḥabaq, *որ և պրս.* حوك havak՝ *նոյն նշ. (տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Բ. էջ 880 և* Steinschneider WZKM 12, 4): *Պրս. ձևից ծագում է* հաւակ. *միւս երկու ձևերից առաջինը արաբերէնի հին, երկրորդը նոր փոխադարձութիւնն է։*

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Հայկ. բառաք. 97. նոյնը յետոյ ՀԲուս. անդ։

ՀԱԻԵԼԷՆ *կամ* **ՀԱԻԱԼԱՆԻ** *«մեծ թուր» Թղթ. դաշ. (տպ. Շահն. էջ 17 սուսերօք հաւհալենօք). ուրիշ ձևերով ունինք՝ հաւհալի, հաւհալուն, հաւահալնի, հաւալուն. Համմտ. Եւ անդ կախեալ կայ յօդն հաւհալի թուրն Տըրդատայ, զոր խաչ ձևացոյց սուրբն Գրիգոր (Յկ. կր. 13). Անդ կայ հաւհալունի թուրն Տրդատայ (Վրդն. աշխ. 518)։ Ջէնն հաւահալնի (Դրնդ. 512)։*

Սրուանձտեանց, Համով հոտով, էջ 75 տալիս է հետևեալ ժողովրդական ստուգաբանութիւնը. «Հալունի՝ կը նշանակէ հաւու ուղնի. իբր թէ երկաթը կը մանրեն կորեկի պէս, կուտան հաւերուն, կ'ուտեն, և անոնց ծերտերը ժողվելով կրակով կերեն, ելած երկաթը կը լինի զուտ չալիկ (պողպատ) և զարմանալի սուր ու կտրուն»։

ԳԻՒ.—Մշ. հավլունի բուր, *Սրև.* հալվունի բուր *(գործածական են հէքեաթներում)։*

***ՀԱԻՓԱՊՐԱՄ** *(գրուած նաև* հաւգադրամ*) «հօթը դրամնոց (գոհար)» Խոր. աշխ. 614. գիտէ միայն ՀՀԲ։*

=Պրս. هفت haft *«հօթը» և* درم diram *«դրամ» բառերից։—Հիւբշ. 264։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ. նոյնը նաև Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 119։

***ՀԱԻԻՃ** «անուշահոտ համեմ», որից յգ. հաւիճանի Վստկ. 127, 131. գրծ. հաւիճնով Մխ. բժշ. 25։*

=Արաբ. حوايج havāiǰ *«այն բոլոր բաներն են, որ կերակուր եփելու համար մսի հետ են դրւում. ինչպէս՝ աղ, պղպեղ, սիսեռ ևն» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 780 և Գ. 361)։ —Աճ.*

Վաստակոց գրքի հրատարակիչը համարում է արաբ. բայց չի դնում մայր ձևը։ Seidel *Մխ. հեր. § 88 կարծում է թէ ակնարկուած բառն է արաբ.* حاج haiǰ *«գրգռիչ»?*

ԳԻՒ.—Խրբ. հավէջ *«դեռ յարդը չհանուած ոսպ, սիսեռ ևն», 2. Խրբ. «խաղողի տերև» (ըստ Ծաղիկ 1903, թ. 21, 22). 3. ՀՃ,* հավէջ *կամ* հավօջ *(նոյնը նաև ՋԹ. Մրշ.* հավէ՞ջ *ձևով) «պղպեղ, մանաւանդ կարմիր պղպեղ, որ փշրում են, աղի հետ խառնում և հացի մէջ դնելով ուտում պահոց օրերը». որից* հավէջուր *ՋԹ. «տեղական մի կերակուր, որ պատրաստում են կարմիր տաքդեղով, աղով, ջրով, սոխով ու սխտորով»։*

ՓՈԽ.—Ուտ. hävеč *«գինձ, համեմ բոյսը»։*

ՀԱԻՓԱԼ *(գրուած նաև* հաւբալ, հօբալ, հօփալ, հովփալ, հոբալ*) «վայրի աղաւնի» Վեցօր. էջ 89. Ոսկ. եզեկ. Եպիփ. յար. Փիլ. լիւս. Սահմ. Գաղիան. Վրդն. ծն.։*

=Անշուշտ ծագում է հաւ *«թռչուն»+*փալ *բառերից. վերջինը անծանօթ։ (Տե՛ս և* հաւ*)։*

Նշ Ր փալ *համարում է «նոյն ընդ լտ.* palumba *«վայրի աղաւնի»։ Պատահական նմանութիւն ունին յն.* πέλεια *«վայրի աղաւնի», լիթ. paîpala. լիթ. pûtpela, հպրուս.* penpalo, *ռուս.* перепелъ, *չեխ.* přepel, *լեհ.* przepiora *են «լոր, լորամարգի»* (Trautmann 204)։

ՀԱԻՔ *«թշնամանք». ունի միայն Բառ. երեմ. էջ 179։*

ՀԱՓԱՓԵԼ *«առևանգել, յափշտակել» (մանաւանդ աղջիկ կամ կին) Նւս. քր. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Կրկնուած է հափ *պարզ արմատից, որ առանձին չէ գործածուած։*

Նշ Ր ափ *բառից կրկնուած։ Տէրվ. Նախալ. 32, 61 հնխ.* ap *հոմանիշ արմատից դնում է սանս.* āp, *զնդ.* āf *«հասնիլ, յափշտակել», հյ.* ափ, հափափել, յափշտակել։ *Հիւնք. ըստ Նշ Ր։ Գազանճեան, Արև. մամ. 1902 ի+*ափ, *որից նաև* յափշտակել։*—Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 341 Աւրպակ. Թրք.* اپارمق apar-maq *«առնել»։*

ՀԱՔՈՅԶԻ *«որդի». ունի միայն Բառ. երեմ. էջ 179. որի դէմ անդ՝ էջ 175 գտնում ենք* հայֆօղ *«որդի»։*

***ՀԱՔՐ** «արհամարհուած, անարգ». գործածական է յետին դարերի ռամիկ լեզուում. ինչպէս՝ Մէջ անգիտաց հաքր եմ ընկել. Կոստ. երզն. էջ 138. Որ չլինիս հաքր աստեղ. նիս. անդ, էջ 159. որից ունինք* հաքրել *«նախատել» Սմբ. դատ. 95։*

=Արաբ. حقير ḥaqīr «արհամարհեալ, անարգ, նուաստ», حقارت ḥaqārat «արհամարհանք, անարգանք»։

Ուղիղ մեկնից Պատուրեան հրատ. Կոստ. երդն. էջ 50։

ՀԴՆԻ (գրուած նաև Հըդնի, Հնդնի, Հնդի) «սապատող, կուզ» Պիտ. 529 (Հըդնի էր թիկամբք)։—Տե՛ս և ճնդրի։

ՆՀԲ լծ. արաբ. հէնդէպ, հինդպ։ Եաղըճեան, Արևելք 1884 նոյ. 16 սանս. hindira «այրական»։

Հդուդ տե՛ս Հոտոտ։

*ՀԵԳ, ի հլ. (յետնարար նաև ո հլ.) «վանկ, գրի հնչիւնը» Ոսկ. ես. Երզն. և Նչ. քեր. որից են հեգել «վանկ կապել» Մամբր. Մանդ. երեքհեգեան «եռավանկ» Երզն. քեր. միահեգութիւն Մագ. քեր. կիսահեգ Նչ. քեր. հեգաւոր (նոր բառ).—յետնարար գրուած ունինք հեգ Անկ. դիրք նոր կտ. էջ 182—184։

=Ասոր. ܗܓܐ həγā «կարդալ», ն. ասոր. häget'ä «հեգել», արաբ. هجاء haǰa «վանկ, հեգել», որից փոխառեալ է քրդ. هژە hiǰe «վանկ». տե՛ս նաև հեգենայ։—Հիւրշ. 309։

ՆՀԲ լծ. հյ. ոգել, ոգի, հագագ, վանկ, յն. իխի՛, ի՛խօս, մանաւանդ արաբ. և պրս. հէնէ, սիւգիւն։ Տէրվիշ. տե՛ս հագագ բառի տակ։ Վերի ձևով մեկնից Հիւրշ. ZDMG 36 (1882), էջ 132։ Հիւնք. արաբ. հէնէ։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. հէգ՛ել, Ակն. հէնէմ, հէնէրբաև, Պլ. հէնէվէրէն «հեգարան» (գրականից փոխառեալ)։

*ՀԵԳԵՄՈՆ (սեռ. -ի), որ և հոգեմոռ, հեգեմոնիդէս «առաջնորդ, կուսակալ, դատաւոր». վերջինը ունի Բ. մակ. ժգ. 24՝ իբր յատուկ անուն. միւսները՝ Սիր. գծ. (առէպ), Ճառընտ. Յայտմ. դեկ. 13. առանձին տե՛ս նաև եգումենոս։

=Յն. ἡγεμών, ἡγεμονίδης «առաջնորդ, կուսակալ, կառավարիչ» (ἡγέομαι «առաջնորդել» բայից). կրկին ձևերից առաջինը տուել է հեգեմոն, երկրորդը (որ գործածուած Գիշտ Բ. մակ. ժգ. 24) տառադարձուած է հեգեմոնիդէս. իսկ հոգեմոն Յուի շփոթ գրչութիւն՝ հոգի բառից։ Յունարէնից փոխառեալ են նաև ասոր. ܗܓܡܘܢܐ hegəmona կամ ܗܝܓܡܘܢܐ higəmōna, մանիք. պհլ. הגמון higmōn (տե՛ս Salemann, Manichäische Stud. ЗАН 8, 83) և ն. յն. ἡγούμενος «աբբայ, վանաց առաջնորդ», ἡγουμένη «աբբայուհի» ձևից՝ հսլ. igumenŭ, ռուս. игуменъ, ուկր. ihúmen են (Berneker 422)։

Ուղիղ մեկնիցին ՀՀԲ և ՆՀԲ։—Վարդանեան ՀԱ 1922, 407 դնում է ասորերէնի միջոցով։

*ՀԵԳԵՆԱՅ, ի հլ. «գիր, այբուբեն» Կիւրղ. ծն. (Ջուն և զով երրայեցի հեգենայն ոչ ընտրէ ի միմեանց.—ակնարկում է երբ. ו տառը, որ կարդացւում է թէ՛ u և թէ o). «հեգ, վանկ» Երզն. քեր. Փարպ. Մանդ. Խոր.։

=Ասոր. ܗܓܝܢܐ heγyānā «կարդալ, հնգել, ընթերցում, արտասանութիւն» բառից։ Ասորի բառը գարձել է նախ *հեգիանայ, որից *հեգեանայ և սրանից էլ հեգենայ։ Արմատը բնիկ սեմական է. համմտ. երբ. הגה h g h «բզզալ, մրմնջել, մռմռալ, առիւծի մռնչելը, մտածել, ճառել, խօսիլ», הגה hege «որոտ, հեծեծանք», ասոր. ܗܓܐ həγā «կարդալ», արաբ. هجاء haǰā «վանկ, հեգել». տե՛ս նաև հյ. հեգ ձևի տակ։—Հիւրշ. 309։

ՆՀԲ հեգ բառից։ Հիւնք. արաբ. հէնէ։

ՀԵԳԻՒՃՈՍ «անանուխ, նանէ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 569։

Հեգն տե՛ս Հենդն։

ՀԵՂ, ո հլ. «քաղցր և մեղմ բնութեամբ, խոնարհ» ՍԳր. որից հեզացուցանել Ոսկ. յհ. ա. 29. հեզութիւն ՍԳր. Ոսկ. մ. բ. 4. Եւս. պատմ. հեզիկ Փիլ. Խոր. ՅՀ. կթ. հեզասահ Պիտ. Կաղանկտ. հեզարար Եղիշ. Խոր. հեզօրէն Գնձ. Խաղցրահեզ Եպիփ. ծն. հեզահագ, հեզաշունչ (նոր բառեր)։ Սխալմամբ գրուած է հեց Խոր. Ա. 11. որ լաւագոյն ձեռագիրների մէջ հեզ ձևն ունի։

ՆՀԲ լծ. արաբ. խէզէ, խազը, խազու, յոգն. խուզու (իմա՛ արաբ. خذ xaḍa. xaði «հնազանդիլ» կամուս, Բրք.

Թրգմ. Ա. 17)։ Հիւնք. յն. ἡσυχος «հանդարտ» *բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 129* եզ «մէկ» *բառի հետ՝ իբր «պարզ», հնխ.* sem- «մէկ» *ձևից, որ աճել է* -g'ho- *մասնիկով։ Յիշում է կասկածով* Pokorny 2, 489:

ԳԻՒ.—Երև. հզուրիւն, *որ պահուած է այս առածի մէջ. «Աղվէսը մարաքումը ձագ ա հանել, մեր թագու հզուրիւնից ա» (Պոշեան, Յեցեր, էջ 155)։*

ՀԵՋՆԱԿԱՆ «ընդ աղտեղի ինչ զրոյց հեշտանալ». *ունի միայն Բառ. երեմ. էջ 179։*

***ՀԵՒԱՆԻՍ, ի–ա** *հլ. «այլազգ, օտարազգի» (այս անունը տալիս էին երբայեցիք ոչ-հրէաներին. վերջերս հայերն էլ ոչ-քրիստոնեաներին, յատկապէս կռապաշտներին) ՍԳր. որից* հեթանոսութիւն *ՍԳր. Եզն.* հեթանոսացուցանել *Եփր. թգ.* հեթանոսաբար *Գաղ. բ. 4. Եւս. պտմ. Ագաթ.* հեթանոսական *Գ. յհ. 7. Ագաթ.* հեթանոսակիր *Ագաթ.* հեթանոսօրէն *Ոսկ. մ. ա. 8.* հեթանոսերէն *Եփր. գաղ. ևն։*

=Ասոր. ܗܶܬܢܳܐ htnos (hetnos *կամ* hetanos?) *քիչ գործածական ձևից, որի մայրն է յն.* ἔθνος «ժողովուրդ, ցեղ», *յգ.* ἀ ἔθνη «հեթանոսք», ἐθνικός «հեթանոս, հեթանոսական»։ *Հայ ձևը դրւում է ասորերէնից՝ նախաձայն* h-ի *պատճառաւ, որ պակասում է յունարէնում. ասորին դրել է այդ յատկութիւնը՝ գրաւորապէս ճշտիւ արտայայտելու համար յն.* ἐ *նախաձայնը։ Յոյնից տառադարձուած է նաև լտ.* ethnicus «հեթանոս, հեթանոսական». *իսկ գոթ.* haiðno *ձևի համար տե՛ս տակը Փոխ։—(Հիւբշ. 360)։*

Առաջին անգամ Schröder, Thesaur. *47 դրաւ յն.* ἐθνικὸς *ձևից։ ՀՀԲ նոյնպէս յունարէնից։ ՆՀԲ բառ. յն.* է՛θνος, ἐθνικό՛ς, *լծ. հյ.* ազն: Lag. Arm. Stud. § 1272 *ասորի ձևից է դնում։ Հիւբշ. 360 առանց առարկութեան՝ դնում է յունարէնից։ Ասորի ձևի կողմն է վերջին անգամ Մառ* ЗВО *13, 120։*

ԳԻՒ.—Այն. հէթան *(Բիւր. 1900, 682), Մղ.* հէտանոս:

Փոխ.—Bugge և Torp (IF 5, 168—80, *թրգմ. ՀԱ. 1895, 260—1) մեր բառից փոխառեալ են համարում գոթ.* haiðno (*haiðans) «հեթանոս», *որից էլ յառաջ են եկել գերմ.* heidan, heiden, heithin, heidin, heidane, *հսաքս.* hēthin, *հֆրիզ.* hēthin, hēthen, *հանգլ.* hāeðen, *հնորմ.* heiðinn, *հնորվ.* heiðingi, *հշվէդ.* heðninge «հեթանոսական»։ *Նոյնը յիշատակում է նաև* Zeller, Stand und Aufgaben der Sprachwiss. *էջ 301։ Մերժում է* Pokorny 1, 329 *և դնում է այս ձևերը հնխ.* kaito- = *գերմ.* heide «անտառ, անմշակ դաշտ» *ձևից։ Նոյնը նաև* Kluge 209:

Հեթեթանք *տե՛ս Հայթայթել։*

ՀԵԼԻՔՈՎՏԱ *կամ* **ՀԵԼԻՔՈՎՐԱԿ** «հացհատիճ, *լտ.* foenum graecum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1681։*

ՀԲուս. § 1666 համարում է արաբ. حلبة ḥulba *հոմանիշից (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 113). բայց ի՞նչ են հայերէն ձևի վերջաւորութիւնները։*

ՀՆՄ «հառաչանք, ախ քաշելը» *Կնձ. Գէ. ես. ճառընտ. = Վրք. և վկ. ա. 444. որից* հնծել *ՍԳր. Ոսկ. ես. և եբր.* հնծեայ «հնծում է» *(բայը *հնծեալ «հառաչել». յօրդութեան համար հմմտ. ատեալ, կեալ) Ոսկ. եբր. լա.* հնծութիւն *ՍԳր. աշխարաճնծ Ագաթ. Կորիւն. տիեզերաճնծ Կղնկտ. բազմաճնծ Խոսք.— կ սաստկականով՝* հնծկալ *Մագ. թղ. 143.— կրկնութեամբ (բայց կրկնութեան ժամանակ ն-ի կորուստով)* հնծնծ, *որից* հնծնծել *ՍԳր. Մանդ.* հնծնծալ *Վրք. հց.* հնծնծելի *Եղեկ. ե. 15.* հնծնծութիւն *ՍԳր. Ոսկ. ես.* հնծնծումն *Եղիշ.* հնծնծատեսակ *Նիւս. բն. Նոր գրականի մէջ ունինք* հնծկլտալ «հեկեկալ», *որ ՀՀԲ և ՆՀԲ իբր գաւ. բառ մեկնում են «գկռտալ». այս իմաստով գտնում եմ գործածուած Թլկր. 41. «Ընդ ճամբու լանքն քալէ, գէշ հնծկլտայ և ծոկտէ» (հարբածի համար է ասում)։*

Հիւնք. հնծանել *բայից։*

ԳԻՒ.—Շտ. խիծալ «հիւանդի հառաչելը», *Ախց.* հէծկլտալ, *Ննխ.* հէնգըլդալ, *Սչ.* հէնգրդալ, *Ասլ. Սեբ.* հէզգըլդալ *Ջթ.* հէնգօլդօլ, հէնգօլդալ: *(Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 394 նոյնպէս դնում է* հնծկլտալ «հեկեկալ, հնծնծալ» *երև. Շիր.)։—Հնծոց Մկ. «հառաչ»։*

+ՀԵՍ *«գրաստի կամ կառքի վրայ նստելը»*. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* հեծանել *«հեծնել» ՍԳր. Ոսկ. ես.* հեծնուլ *Բրս. մրկ.* հեծանելիք *Ոսկ. մ. բ. 26. Եփր. ի. ծն.* հեծեալ *«ձիաւոր» ՍԳր.* հեծելազօր *ՍԳր. Եւս. քր.* հեծելութիւն *Ամբ. գ. 8.* հեծուցանել *ՍԳր. Փարպ.* հեծուկ *«նըստոյ տեղի, գաւակ» Ուռհ. Մարթին. նոր գրականի մէջ* հեծանիւ *կամ* հեծելանիւ, հեծանուրդ:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sed- *«նստիլ» արմատից, որի վրայ ընդարձակ տե՛ս եիստ բառի տակ. այստեղ յիշենք իմաստի նման զարգացման իբր օրինակ՝ սանս.* sādin *«հեծեալ, ձիաւոր», ռուս.* всадникъ *նոյն նշ. հսլ.* sedlo, *ռուս.* сѣдло, *հրգ.* satal, *գերմ.* sattel *(որից փոխառութեամբ ֆիննա.* satula), *անգսք.* sadol, *ստ. լատ.* sella *«թամբ»* (Kluge 408).—տ>ծ *ձայների փոխանակութեան համար համմտ.* արտ—արծ, պղտար—պիղծ, պարծ—հպարտ *ևն:*

Bugge KZ 32, 47 *և* IF 1, 450 *մերժելով ասս.* xīzir, *պրս.* xēzad *«ելնել» ձևերը, ըստ* A. Torp *դնում է* *հետ նախաձևից, իբր հնխ.* sed- *«նստիլ»: Նոյնը ընդունում են* Scheftelowitz BB 29, 30, Pedersen KZ 38, 206 *և* Pokorny 2, 483: *Հիմնք. հազար բառից:* Patrubány SA 1, 168 *գոթ.* sigis, *գերմ.* sieg *«յաղթանակ», զնդ.* hazah, *սանս.* sáhas *«ուժ», յն.* ἔχω *«կրել, ունել»: Մատ* ИАН 1913, 329 *և* Сред. передвиж. 29 *վրաց.* ղ'եղնայ *«հեծնել»:*

ԳԻՒ.—Ախց. կր. հէձնիլ, *Ալշ. Մշ. Սչ.* հէձնել, *Ննխ.* հէձնէլ, հէզնէլ, *Տիգ.* հէձնալ, *Զթ.* հէձնօլ, հէձնուլ, *Հճ.* հիձնել, հիզնել. հիզնօլ, *Սվեդ.* հիձնիլ, *Ռ. Սեբ.* հէզնէլ, *Ասլ. Խրբ.* հէզնալ, *Հմշ.* հէզնուշ, *Ոզմ.* խեձնիլ, *Մկ.* խէձնիլ, *Սլմ. Վն.* խէզնել, *Մրղ.* խէզնէլ.—*այն բայաձևերը՝ ուր ծ ընկնելով և ձայնի մօտ՝ դարձել է զ, խոնարհման ժամանակ ձայնաւորի մօտ պատահելիս՝ վերստանում են նոյն ծ ձայնը. այսպէս կտ.* հեծա *ևն:— Նոր բառեր են* հեծել *Վն. «հէն, ասպատակ», Սչ. «զօրք, զօրագունդ»,* հեծելուր, *Հնդ. Սչ. «զինուր» (օր. աւում է* ոսfով հեծելուր *«հետոտն զինուր, հետևակ».* ձիաւոր հեծելուր *«ձիաւոր զինուր»).* հեծկան *Սրմ. «գրաստ»,* հեծուկ *Խլ. «հեծեալ»,* հեծոց *Վն. «ձիւնի վրայ կոխոտելուց յետոյ՝ խոտ թափելով կազմուած մասուր՝ ոչխարների համար»:*

ՀԵՍԱՆ, ի–ա *հլ. «ծառի բուն» Ֆ. թագ. գ. 5. «առաստաղի գերան» Գ. թագ. գ. 16. «բիր, ծեծելու փայտ» Նար. «խաչի գաւազանը» Նար. ժ. էջ 22. «մի տեսակ օդերևոյթ. գերանաձև լոյս» Բրս. ծն. որից* հեծանաձեւ *«գերան կտրելու սղոց» Մծբ. 83.* հեծանաձգուիւն *«առաստաղի գերանների շարքը» Ժղ. Ժ. 18.* հեծանացու *«գերան շինելու յարմար փայտ»՝ Նորագիւտ բ. մնաց. լդ. 11.* միահեծան *«իշխանական մէկ գաւազանի տակ» Ագաթ. Կոչ. Եւս. քր. որ և* մեծահեծան *Կոչ. 124:*

ՆՀԲ «պրս. և թրք. հիյզան, հիյզէն, հէզարէն, հասսա, ասաս, *հյ. լծ.* ծեծ, հեծանել, յեցուկ, նեցուկ»: Lag. Arm. Stud. § *1273 ըստ ՆՀԲ պրս.* հիյզան: *Նոյնը նաև Հիւնք: Հիւրշ. 465 յիշում է պրս. ձևը, բայց ձայնապէս անկարելի է գտնում միացնել հայերէնի հետ: Մէնէվիշեան ՀԱ. 1897, 248 բ հայերէնը պարսկականից փոխառեալ է դնում:— Յիշեալ իրանեան բառը հետևեալ ձևերն ունի. պրս.* هیزم hēzum, hīzem, *պհլ.* ēsm, hēzam, ēzam, *պազ.* hezam, *քրդ.* ezink, hezéñg, *զազ.* eizə́mi, *մինջ.* ēzma, *զնդ.* aesma- *=սանս.* idhmā- *«վառելափայտ»* (Horn § 1117, Bartholomae 27): *Եթէ հայ ձևը փոխառեալ լինէր իրանեանից, պհլ.* ēsm *ձևի դէմ պիտի ունենայինք հյ. *եսմ, կամ պհլ.* hēzam, ēzam *ձևերի դէմ հյ. *հիզամ, *իզամ ևն. իսկ եթէ հայերէնը ցեղակից միայն լինէր, պիտի ունենայինք *այդ- կամ *հայդ- ձևով մի բառ, որովհետև յիշեալ բոլորի արմատն է հնխ.* aidh- *«վառել»* (Pokorny 1, 4—5, Boisacq 23):

ԳԻՒ.—Արբ. Սեբ. հէձան, *Հճ.* հիձօն, *Սվեդ.* հիձնուն *«հաստ գերան»:*

ՓՈՒ.—Քրք. գւռ. Աստ. Կս. Ուդ. Տ. hezen, hezän *«հաստ գերան» (Բիւր. 1898, էջ 713,—*

1899, էջ 314 և 798, Յուշարձ. 329)։ Չեն կարող սրանք լինել ուղղակի պարսկերէնից, ձևի և նշանակութեան տարբերութեան պատճառաւ։ Նոյն գաւառների հայերը ունենալով սոյն հազուագիւտ բառը իրենց բարբառներում, թրք. ձևի փոխառութիւնը զարմանալի չէ, այլ և բնական է, ըստ որում պատկանում է շինարարական արուեստին։

ՀԵՓԱՆԻՑ, ի–ա հլ. *«ատամնաւոր թիակաձև գործիք, որով կալում ցորենն են հոսում» Մատթ. գ. 12. Ղկ. գ. 17. Վեցօր. բ. էջ 27. Ոսկ. յհ. ա. 45. «յարդգող, Սիր կաթին» (տե՛ս Ալիշան, Հին հաւ. էջ 117)։*

ՆՀԲ «որպէս թէ հոսաւոց». յիշում է նաև պրս. հիզէ, հիճ: Հիւնք. պրս. هیز hēza *«հեծանոց» (որ և* هید hēd, هیدا hēda. *մեկնութիւնը չունի* Horn)։

Հեծեծել *տե՛ս Հեծ։*

ՀԵԿԵԿԱԼ *«լացի ժամանակ ձայնը կտրուիլը» Վրք. հց. որ և* **ճեկեկել** *Վրք. հց. սրանցից* **ճեկեկաճ** *Վրք. հց. ուրիշ վկայութիւն չկայ. այս բառերը նշանակում են նաև «բարձր ձայնով ծաղրել, հեգնել»։*

*=կրկնուած է *ճեկ պարզ արմատից, որ առանձին չի գործածուած։*

ԴԴ կցեց պրս. **hukhuk** *հոմանիշին։ Հիւրշ.* ZDMG 35 (1881), *էջ 661 փոխառեալ պրս.* هکهک hukak *«հառաչանք» բառից։ Նագրճեան, Արևելք 1884 նոյ" 16 առնս.* hikk *ձևից։ Հիւնք. պրս.* **ճիւկիւկէք** *«կասկամ» բառից։ Հիւրշ. 180 պատահական է համարում պրս.* hukak, hikak, hukča, hukka, hikka, hukhuk *հոմանիշ բնաձայնները, որոնց վրայ աւելացնում եմ եբր.* הגיג hāgīg *«հառաչանք»։*

ԳԻՒ.—Ախց. Երև. կր. ճէկէկալ, Ասլ. Մշ. ճէգէգալ.—նոր բառեր են ճեկոտալ երբ. «հեկեկալ»», ճեկեկոց Մշ. Շլ.—սրանցից առաջինը, որ –ոտ– առստկական մասնիկն է ստացել, ցոյց է տալիս ճեկ– պարզ արմատը։

*+ՀԵՂ. արմատ՝ որ առանձին գործածական է միայն իբր ճեղում բայի հրամայականն ու կոր. եզ. գ դէմքը. սրանից են ճեղուլ «թափել, լցնել, նմանութեամբ՝ վրան թափուիլ, խոնուիլ, լցուիլ» ՍԳր. Ոսկ. ճեղանիլ Մ.կն. ղևտ. ճեղուած խոր. ճեղուկ Ոսկիփ. Դիոն. Թղթ. ճեղումն ՍԳր. Եղիշ. խոր. մշտաճեղ Մանդ. բազմաճեղ Ագաթ. արիւնաճեղ ՍԳր. դիւրաճեղ Նիւս. բն. զուգաճեղումն Սոկր. խաղաղաճեղ Դիոն. ածայ. գերաճեղեալ Դիոն. ածայ. ճեղուկաչափ (նոր բառ)։ Այս արմատի ստացած զանազան ձևերն են.—ՀՆՂԵՂ (իբր *ճեղճեղ, կրկնուած առաջին ձևից), ի–ա հլ. (յետնաբար նաև ո հլ.) «ուղխ, ջուրի յորդ հոսանք՝ ՍԳր. Նւս. քր. Եփր. եկ. որից* **ճեղեղել** *Իմ. ժ. 4. Եփր. ծն. և եփես. 149. ջրճեղեղ ՍԳր.* **ճեղեղամած** *Ագաթ.* **ճեղեղասաստ** *Ագաթ.* **ճեղեղատ** *ՍԳր.* **ճեղեղատել** *Դան. ժա. 10. 22. Ագաթ. Մծբ. ջրճեղեղակուլ կամ ջրճեղեղակուռ Ոսկ. հս. յորդաճեղեղ Բուզ.* **ճեղեղաջուր** *(չունի ԱԲ) Թղ. Պրոկղ. ՀԱ 1921, 21.* **ճեղեղաճման** *(նոր բառ)—ՉՆՂ. կազմուած զ սաստկականով՝ առաջին ձևից. որից* **զեղուլ, զեղանիլ** *«թափուելու չափ լցուիլ» ՍԳր. Եփր. ծն.* **զեղումն** *Գ. Թագ. դ. 29. Մանդ.* **զեղուցանել** *Սիր. ժր. 9. Պիտ. փիլ.* **զեղուն** *«լիուլի» Ղկ. զ. 38.* **բազմազեղ** *ՅՀ. կթ.* **բազմազեղուն** *Նար. յանկարծազեղ Կաղանկտ.—ՈՂ. առաջին ձևի միջին աստիճանի ձայնդարձն է. առանձին անգործածական. բայց սրանից է կազմուած՝* ՈՂՈՂ *(որ նախորդի կրկնական ձևն է) «հեղեղ» Ագաթ. որից* **ողողել** *«հեղեղել, յորդել» ՍԳր. Ագաթ. «ցօղուել, ջրով թեթեւակի լուալ, rincer» Ղևտ. զ. 28, Ոսկ. մ. բ. 26.* **ողողաճել** *ՍԳր. Նւս. քր.* **ողողիչ** *Ագաթ. ջրողող Նար.* **ողողեալ** *«պոռնիկ, լրբացած» Ոսկ. եփես. 833.* **ողողոքիմ** *«ուղխ, հեղեղ» Ոսկ. ա. տիմ. 111.—ՀԱՒ, որից* **ճալել** *«հալեցնել». առաջին ձևի ստորին աստիճանի ձայնդարձն է (տե՛ս առանձին)։*

=Բնիկ հայ բառ. ծագում է հնխ. pel- արմատից, որի ձայնդարձներն են pol-, pl-. *սրանք տալիս են հայերէնի մէջ* pel->**ճեղ**, pol->**ողղ**, pl̥->**ճալ**. *(համմտ.* **ճեմ***՝,* **ոտ***՝,* **դեղ**, **դալար**, **գելուլ**, **գալարել**): *Ցեղակիցներից նոյն արմատը պահած են լիթ.* pilù, pìlti *«թափել, լցնել»,* piltuwas *«ջրի դոյլ», լեթթ.* pilu, pilêt *«կաթկթիլ, ծորիլ, շատ բարակ*

վազել», pile, pilens *«կաթիլ»*, pali, pal'i *«գետի զեղում»*, *ռուս.* водо-поль, поло-водье *«գետի յորդում»*, по́лая *«ձգերքներից դուրս յորդած ջուր»* (Boisacq 794 և 1121, Trautmann 218, Pokorny 2, 55, 63 և 94): *Ենթադրում է թէ հնխ.* pel- *արմատն է դարձեալ, որ իմաստի զարգացմամբ դարձել է հնխ.* pelē-, plē>*հյ.* լճուլ, լի և *հնխ.* pleu-, plu->*հյ.* լուալ *(միևս ցեղակից ձևերը տե՛ս* լի *ու* լուանալ *բառերի տակ)։ Ապացոյցներից մէկն էլ հյ.* զեղուլ *բառն է, որ* հեղուլ *արմատից ծագելով հանդերձ՝ ունի «առատ լինել» գաղափարը (համմտ. յատկապէս* զեղուն *«լիուլի»)։*

Նշ. յն. χέω, χύω *«թափել»*, *հյ.* զեղուլ, իւղ, հալել, ձուլել: Böttich. Wurzelforsch. 12 *զնդ.* pərə *«լի»*, Spiegel, Huzw. Gram. 188 *զնդ.* herez, *պրս.* hištan, *ներկ.* hilam *«թողնել, արձակել»*, Justi, Zendsp. 187 *զնդ.* paršuya *«ծորուն, կաթկթող»*, *322 ա զնդ.* harəz *«արձակել»*, *պրս.* hištan, *սանս.* sarǰ *են*, Müller, Kuhns u Schl. Btrg. 5, 138 sal *արմատից։ Մորթման* ZDMG 30, 434 զեղուլ=*բևհո.* zildi: *Տէրվ. Մասիս 1882 յունիս 7 յ.* յեղուլ: *Նոյն, Նախալ. 92 հնխ.* par, pra *«թափել, լցնել» արմատից է դնում սանս.* par, prā, *յն.* πίμπλημι, *լտ.* pleo, *հյ.* հեղուլ, զեղուլ, հեղեղ, լճուլ, լի *են։* Meillet MSL 8, 154 ողողել *կցում է* հեղուլ *բառին, իսկ էջ 163* հեղուլ *և* զեղուլ *կապում է սանս.* sar *«հոսիլ» արմատին։* Bugge KZ 32, 15 հեղուլ *դնելով հնխ.* pel- *արմատից, կցում է լիթ.* pilù, pìlti *ձևերին, որ ուղիղ է. բայց տալիս է նաև յն.* πίμπλημι *են։ Հինք.* իւղ *բառից։* Meillet, De ind. rad. men, *էջ 36 լիթ. բառի հետ է համեմատում հյ.* հալել, *իսկ* Esquisse 83 հեղուլ= pilù *ձևի վրայ աւելացնում է նաև լտ.* pluit *«անձրևում է»։ Հիւրշ. 466 ընդունում է միայն* հեղուլ=pilù? IF Anz. 10, 48 *յիշում է նաև* հալել, *բայց միւսները չի յիշում։* Scheftelowitz BB 29, 33 *յն.* πέλανος *«թանձր հեղուկ»*, πηλός *«ցեխ, դիրտ»*, *լտ.* palus *«ճահիճ» են ձևերի հետ։ Սարգսեան ՀԱ. 1909, 334* հեղուլ *և* ողող *կցում է հյ.* ուխտ, ալիք, բղխել, *սումեր.* ik *«գետ, ակն»*, uğ *«թուք»*, ak *«ճահիճ»*, *թրք.* ügi *«լուր»*, öl, ül *«ծով»*, ak-mak *«հոսիլ» են բառերի հետ։ Բառիս վրայ առանձին յօդուած ունի* Meillet MSL 19, 178—80, *ուր հաստատում է վերի մեկնութիւնը, բայց արդէն չի յիշում* հալել:

Հեղ *«անդամ»*, *տե՛ս* Հաղ։

Հեղաճարութիւն *տե՛ս* Հեր։

+**Հեղգ**, ի-ա *հլ. «ծոյլ, անհոգ, ծանրաշարժ, դանդաղ» Ոսկ. յհ. Փիլ. Խոր. որից* հեղգալ *«ծուլանալ» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 7, 17.* հեղգացուցանել *Ոսկ. յհ. բ. 5.* հեղգութիւն *Երեմ. խր. 10. Ոսկ. յհ. ա. 44.* հեղգասիրտ *Ղկ. իդ. 25.* հեղգաճիճ *Սերեր.* հեղգական *Ոսկ. հս.* հեղգագնաց *Վեցօր. 184.* հեղգագոյն *Ոսկ. մ. ա. 25 են։*

=*Բնիկ հայ բառ, հնխ.* selk- *«քաշել» ձևից? այս արմատից են յն.* ἕλκω *«քաշել, իրեն ձգել»*, ὁλκή *«քաշողութիւն, ձգում, կրշիռ»*, ὁλκός *«ձգում, սանձ, սողուն, ակօս»*, *լտ.* sulcus *«ակօս»*, *անգսք.* sulh *«սրօր, ակօս»*, *ալբան.* hel'k', hek' *«քաշել, խլել»։ Հնխ. «քաշել» իմաստից ձևացել է «դանդաղիլ, ծուլանալ» նշանակութիւնը. համմտ. յն.* ἕλκω *«ժամանակ անցկացնել, ձգձգել, կեանքը մի կերպ քաշ տալ, պատճառաբանութիւններ մէջ բերել՝ գործը յետաձգելու համար»*, ὁλκά *«սլքտալով, դանդաղօրէն երթալով»*, *որոնք այս արմատին են պատկանում։ Նշանակութեան նոյնպիսի զարգացում են ցոյց տալիս նաև հյ.* քաշ գալ, *լատ.* ducere tempus, *գերմ.* schleppen, *ֆրանս.* se traîner *են* (Boisacq 244, 697, Walde 754, Pokorny 2, 507, Ernout-Meillet 958):

Նշ. յն. եղկ *և* մեղկ: Müller WZKM 10, 276 *լտ.* piger *«ծոյլ, դանդաղ, կամաց» բառի հետ է միացնում՝ իբր բնիկ հայ։ Հիւրշ. 465 ձայնապէս շատ անապահով է դնում այս մեկնութիւնը։ Հինք. մախաղ-ի՞ց* թէ եղկ-*ից (անորոշ է)։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ* Meillet *(անձնական), որից անկախաբար* Lidén, Arm. Stud. *էջ 47։ Թիրեաքեան,*

Բազմ. 1913, 340 տճկ. ələq «դաղջ» և *հյ.* եղկ, մեղկ *բառերի հետ։*

Հեղեղ *տե՛ս Հեղ։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. եէղեղ, *Երև. Կր.* եէղէղ, *Ոզմ.* խեղեղ, *Սլմ.* խէղեղ, *Մկ.* խէղէղ, *Վն.* խղեղ։

ՀԵՂԻՄԱՑԻ «ննջգաւոր». *ունի միայն Բառ. երեմ. էջ 180։*

ՀԵՂԻՆԱԿ, ի–ա. *հլ.* «առաջնորդ, գլխաւոր, վարիչ» *Փիլ. Պիտ. Սարկ.* «հիմնադիր» *Շար.* «պետ, իշխան» *Կղնկտ. (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. էջ 20). որից* հեղինեական «առաջնորդական» *Գնձ.* հեղինեաւորեալ «կանխասահմանեալ, կանխաւ որոշուած» *ԱԲ. բառս գրուած է նաև* հեղաճակ, հեղիւճակ, հիւղաճակ, հիւղեճակ, հիւղական *(վերջինը պէտք է համարել զուտ ձեռագրական սխալ)։ Բառիս նոր նշանակութիւնն է «երկասիրող», որից ձևացել են* հեղինակել, հեղինակութիւն, հեղինակաւոր, հեղինակաւորութիւն։

Հինք. հելլէն *բառից է դնում։* Karst, *Յուշարձան 423 այթայ.* il, el, al «առաջ», *թրք.* ilk «առաջին», ileri «յառաջ»։

ՀԵՂԻՔ «բերք, բոյս». *դիտէ միայն ԱԲ. անատոյգ բառ։—Գւռ. կայ* հեղի՝ *որ տես* եղի։

—**ՀԵՂՁ** «խեղդուիլը» *Տօնակ? այս արմատից են* հեղձաճիլ, հեղձնուլ, հեղձիլ, հեղձուլ *Ղկ. ր. 33. Մրկ. ե. 13. Եւս. պատմ.* հեղձաճել *Վրք. Հց.* հեղձուցաճել *ՄԳր. Եփր. ծն. Եկն. Ոսկ. Ես.* հեղձուցեալ *ԳԾ. ժե. 29. իս. 25.* հեղձամահ *Խոր. Զքր. կթ.* հեղձուցիկ *Կոչ. 65. Եփր. ծն. էջ 49.* հեղձուցիչ *Ագաթ.* հեղձաճախանձ *Մծբ.* հեղձամղձուկ *Ագաթ. Վեցօր. 198.* ջրահեղձոյց *Ագաթ.* շնչահեղձոյց *ՅՀ իմ.* ծովահեղձ *Նխ. եղ.* գետահեղձիկ *Լմբ. ժբ. Մարգ. էջ 49 (ովս. ժա. 5).* ընկերահեղձոյց *Մծբ.* մօրահեղձ *Մամիկ.* սերմահեղձութիւն *Շնորհ.* շնչեղձուցիկ *Եղիշ. առաք. 346 (չունի ՆՀԲ)։*

=*Նոյն է* խեղդ *արմատի հետ։*

ՆՀԲ լծ. եղծանել, հեղեղել։ Dulaurier JAs. 1870, 158 հեղձամղձուկ *բառի մէջ* ամ *համարում է մասնիկ։* Bugge IF 1, 449—50 *ուղիղ մեկնեց՝ կցելով* խեղդ *բառին. բայց սխալ է՝ երբ երկուսը միացնում է սանս.* çṛtáti «կապել» *բառի հետ։ Հինք.* հեղեղ *բառից։ Մատ.* ИАН *1914, 358 վրաց.* ղոշոբա, ղշոբա «խեղդել»։

ՀԵՂՈՅՍ, ի *հլ. (նաև կայ գրծ. -oi Մեկն. ղկ.)* «գամ, բևեռ» *Ճառընտ. Վրք. և վկ. ա. էջ 690. Զքր. կթ. Շար. Նար. իզ, էջ 70. (գրուած է* հեղիւս *Ագաթ. էջ 312). որից* հեղուսել «գամել» *Նանայ. 27 Պիտատ. Ճառընտ. «յօդել, միացնել» Խոր. Լմբ. մատ. էջ 87.* հեղուսումն *Սկեւռ. ազ.* հաստահեղոյս *Ագաթ.։*

ՆՀԲ լծ. յն. ἧλος, *լտ.* clavus «գամ, մեխ»։ *Հինք. յունարէն ձևից։*

Հեղք *տե՛ս Հիւղ։*

ՀԵՃՈՒԿ «թշնամական, հեգնական և այլ սիրտ ցաւացնելու գործ». *գործածուած է միայն* հեճուկս առնել «թշնամութիւն անել» *ոճի մէջ՝ Բուզ. գ. 10, ե. 31։ Նոր գրականի մէջ ունինք ի* հեճուկս «ինադու, թշնամութեամբ՝ աւելի գրգռելու համար»։

ՀՀԲ հիճել «վիճել» *բայից է հանում. ՆՀԲ* «որպէս պրս. հէճա»։ *Պատկ. Հրտր. Բուզ. էջ 194 պրս.* هجيدن hačīdan «ոչխար են մորթել»։ *Հինք.* հաճիլ *բայից։*

ՀԵՄ *կամ* **ՀԷՄ** «այժմ, արդ, հիմայ» *Ուռպ. ողբ. ե. (տպագրի մէջ* հիմ *ձևով է). Մաղաք. առ. 29 (տպ. Պատկ.* հիմայլ, *տպ. Եմ. 42* հէմ այլ). *Գր. տղ. հէմ.* հիմայ *Ադամ. 180.* հայմալ «հիմի էլ, հիմայ ալ» *Արձ. 1288 թ. (Վիմ. տար. էջ 130)։*

Յ. Գ. Մ., Պատմ. գրակ. էջ 16 ճապոն. իմա *ձևի հետ։*

ԳԻՒ.—Հեմ, հիմ *արմատի վրայ նախապէս աւելանալով* ակ, իկ *նուազական մասնիկը՝ ձևացել են՝* հիմակ, հիմիկ, *որից Պլ.* հիմագ, *Ակն.* հմագ, *Երև.* հիմիկ, *Շմ.* հիմիգ՝.—*այնուհետև կ ընկնելով՝ Արբ. Պլ.* հիմա, *Ակն.* հմա, *Ախց. Համշ. Տփ.* հիմի *(բայց տես. Տփ.* հիմիկվա), *Երև.* հմի, *Հճ.* հումմո, *Սվեդ.* համո.—*երկրորդ և երրորդ անգամ աւելանալով նուազականը՝ Ակն. Զրս.* հիմայէգ, *Բզ.* հիմայէգս. *Ակն.* հմայէգս, *շրթնականի ձևացումով՝ Սչ.* հիմբի, *Հնդ.* հիմբիգ, *Ակն.* հմայէգուգս, *տճկ. նուազականով՝ Պլ.* հիմաշուգ,

կրճատմամբ՝ Որմ. մկը, Բլ. Նբ. Մկ. Սլմ. Վն. Մրզ. մկա, Մշ. մգա, եմգա, Ալշ. մգա, եամգա, շրջմամբ՝ Ղրբ. մէկ, Ցղ. մէկ՝. Նուազականների յաւելումը և կ-ի կրճատումը ճիշտ այն ձևով է, ինչպէս այս>աս, ասիկ, ասիկակ, ասիկա, իսիկ, իսի:

***ՀԵՄԻՆ** *«պայուսակ, դրամի քսակ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Շնորհ. առ. «Լեռնցի խիստ շինական, Մեղր շինէ մեղուի նման. Ի ունի հազար սև հնձիան, Ու ներս չկայ մէկիկ դեկան». (եղջիւրի ծառն. հանելուկ)։*

=Պրս. همیان hamyān *«քսակ, պայուսակ, կաշեայ պարկ»* (նոր հնչումով hemyān). *որից փոխառեալ են նաև ասոր. Թալմ.* המין hemyān, *Յովսեպոսի մօտ (Գ. 7, 2)* ἐμιᾶν, *արաբ.* همیان himyān *«խոնջան, գօտի, պարկ»* (Կամուս, Թրք. Բրգմ. Գ. 719)։ *Պրս. բառը բուն նշանակում էր «գօտի» և կապւում է զնդ. yāh- «գօտի. 2. գօտի կապել» արմատին՝ ham- մասնիկով, իբր *ham-yāh-. Հմմտ. նոյն արմատից, այլ մասնիկով՝ զնդ. aiwyāoŋhaŋa- «գօտի»* (Lagarde, Ges. Abhd. 39, Horn § 1105). *—Ա՛Ճ.*

ՀԵՆԱԿ *«հետք»? Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. Հրտր. էմ. էջ 327. «Եղև շփոթումն Ջատկաց... վասն որոյ մոլորեալ ի ճշմարտութենէն՝ կորուսին կուրապէս զհենակս շաւղացն և ոչնչացին զօր Ողոգոմենին Յարութեան և արարին Ջատիկ»։—Հենակ շաւղաց «ճամբի հետք»։*

ՀԵՆԿՆ *կամ* **ՀԵՆԴ** *(ներգ. ի հենգնի, ի հենգնոջ) «ծաղր. 2. հեճուկ, հակառակութիւն» Սեբեր. Ոսկ. մ. ա. 19, բ. 4, 9, ա. Թես. որից* հենգնել *«ծաղրել» Ոսկ. ես. յհ. ա. 30, բ. 2.* հենգնումն *Լմբ. սղ.* հենգնիչ *Մագ.* հենգնական, *Գէ. ես.* հենգնաւոր *Նար. 256. սրանց դէմ միջին ռնգականի անկումով ունինք* հեգնել *Սիր. է. 12. Եփր. և Կիւրղ. ծն. Ոսկ. յհ. ա. 32.* հեգնութիւն *Խոսք.* հեգնական *Արծր. Թր. քեր. սրանք ընդունուած են նոր գրականի մէջ, ուր ունինք նաև* հեգնաբար, հեգնանք, հեգնօրէն *(նոր բառեր)։— ՀՀԲ ունի նաև* հէնք *ձևը։*

ՆՀԲ «ուսոտի ոմկ. հէնէկ, հաճագ, պրս. հէնա, հինա, արաբ. հիւնա, հինաֆ, լծ. և հէնկեամէ, աճէնկ»։ Հինք հագներգութիւն բառից։ Կայ արաբ. هجو haǰv, لجا haǰā *«մէկին ոտանաւորով այպանել» Կամուս, Թրք. Բրգմ. Գ. 954, որ համարւում է ածանցուած արաբ.* لجا haǰā *արմատից>հյ.* հեգ, հեգել։

Գիմ.—Այստե՞ղ է արդեօք պատկանում հեգնել *Ակն. «խնդիր հանել»։*

***ՀԵՆՆՆՏԻԿՈՆ** *«միաբանական թուղթ, ձեռնարկ միաբանութեան». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Օրբել. Հրտր. էմ. էջ 336. «Եւ զոր խնդրեմքս հեննհտիկոն թղթովք ձեռնագրեալ, առնել ձեռնարկ հաստատուն և անխախտ կտակ միաբանութեամբ սուրբ և երջանիկ եպիսկոպոսացդ և յուղարկել առ մեզ»։*

=Յն. ἑνωτικόν *«միարար, միացնող» բառից. այսպէս էր կոչւում Զենոն Իսաւրացի կայսեր 482 թուի հրովարտակը, որով ուզում էր քաղկեդոնականներին և ոչ-քաղկեդոնականներին հաշտեցնել իրար հետ։ Ուրեմն* հեննհտիկոն թուղթ *նշանակում է «միաբանական թուղթ» կամ «ձեռնարկ միաբանութեան», ճիշտ այն, ինչ որ դնում է Օրբելեան իր պատմութեան մէջ, էջ 337—339 և որի նմանը խնդրում էր կաթուղիկոսից, Յոյն բառը ծագում է* ἑνόω *«միացնել» բայից, որի արմատն է* ἑν- *«մի, մէկ»* (Sophocles 476):

Ուղիղ մեկնից Շահնազարեան, Հրտր. Օրբել. բ. 360։

Հեռուլ *տե՛ս Հէն-ք։*

***ՀԵՇՄԱԿ** *«դև, սատանայ». առանձին գործածուած չէ. կայ միայն* հեշմակապաշտ *«դիւապաշտ, սատանայապաշտ» (իմա «կռապաշտ») բարդի մէջ, որ մէկ անգամ գործածել է Եղն. էջ 230. «Յամենայն դարս աստուածապաշտք գտանէին, որք յանդիմանէին զհեշմակապաշտսն» (Թէ՛ ձեռագրում և Թէ տպագիրների մէջ* հեշմակապաշտ *ձևով է. պէտք է ուղղել* հեշմակապաշտ*):*

*=Հիւս. պհլ. *hešmak «դև, սատանայ» բառից, որ աւանդուած չէ. սակայն հմմտ. զնդ.* aēšma *«ցասում, բարկութիւն, կատա-*

ղութիւն (յատկապէս հարբեցութեան ժամանակ). 2. բարկութեան գնը» (սրանից են կազմուած *գնդ.* aēšmodrūta *«գնից յառաջացած»*, aēšmōvarəδa *«դիւարծարծ, դիւագրգիռ»*, aēšmōkaršta *«դիւաոխիթ»*). *պհլ.* hišm (Nyberg, Hilfsbuch des Pehlevi I. 33), xišm, *պրս.* خشم xišm *«ցասում, բարկութիւն»* (Horn § 490, Bartholomae 35). *վերջիններիս* x *ձայնը ներկայացնում է հիւս. պհլ.* *hešmak *բառի նախաձայնը—իրանեան բառերի արմատն է գնդ.* aeš *«աճապարել, շտապել, փութով գործել», որ պատկանում է հնխ.* eis *«արագ շարժիլ, վարել, առաջ քշել» արմատին, որի միւս ժառանգներն են սանս.* éšati *«գրգռել», լտ.* ira (*eisā) *«բարկութիւն», յն.* οἶμα *«խոյանք, ուժգին յարձակում»* (<*οἴσμα), *հհիւս.* eisa *«ուժգին կերպով յառաջ մխիլ», լիթ.* aistra *«կիրք» են* (Pokorny 1, 106, Walde 392, Boisacq 690. 693):—*Իրանեանից փոխառեալ են նաև վրաց.* ეშმაკი եշմակի *(<պհլ.* *hešmak), ეშმა եշմա (<*պհլ.* hešma) *«սատանայ, չար ոգի» (երկուսն էլ ն նախաձայնի կորուստով, որ սովորական է վրացերէնում).* ეშმაკი კაცი եշմակի կացի *«չար՝ նենգաւոր՝ խորամանկ մարդ»,* ეშმაკური եշմակիուրի, ეშმაკური եշմակուրի *«սատանայական»,* უშმაგო ուշմագո *«որ խելք չէ»,* ნაეშმაკო սաեշմակո, ეშმაკეული եշմակեուլի *«սատանայական»,* ნაეშმაკე սիեշմակե, ეშმაკობა եշմակորա *«խորամանկութիւն, սատանութիւն». (հինչ. Մաշին Ինսո աղմոիդ՞ուանա ուդարնող սուլիսագան գամոդդադ եշմակիսագան. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի Հոգւոյն՝ փորձել ի սատանայէ. Մտթ. դ. 1.—Դա սախելիթա շննիթա եշմակնի գանվասխենիթ. Եւ յանուն քո գևս հանաք. Մտթ. է. 22.—Մաշին ծաղրիդ՞ուանա իդի եշմակման ման ծմիդասա քալաքսա. Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ. Մտթ. դ. 5.—Շենմթիսվենես մաս որնի եշմակեուրնի. Պատահեցին նմա դիւահարք երկու. Մտթ. ը. 28.—Մթավրիթա եշմակիթաթա գանասխամս եշմակիթա. Իշխանաւն դիւաց հանէ դա գևս. Մտթ. թ. 34). Թուշ.* ეშმა եշմա *«սատանայ»,* ეშმაკობ եշմակոր *«սատանութիւն»,* ეშმოლ եշմոլ *«խաբեբայութիւն»:*

ՆՀԲ «ճեշմակապատ. *ի բառիցս էմա՛կի, որ է բան վրաց. գև, սատանայ. և բպատէք, որ է արաբ. պատիւ. և կամ գրելի ճեշմակապաշտ: Հինք. (առնելով ՆՀԲ-ից) վրաց. հէշմա՛կի «սատանայ»։ Փորթուքալ փաշա, Եղիշէ 124 գնդ.* աէշմա, *պրս.* խիշմ:

ՀեՇՏ, ի, ի–ա *հլ. «ախորժելի, հաճոյական» Ոսկ. մ. բ. 15, յհ. բ. 14, 16. Եղիշ. Մանդ. «հաճոյք» Ոսկ. մ. ա. 6. որից* ճեշտ ցանկութիւն *«վաւաշոտութիւն» Փիլ. Պիտ.* ճեշտ պաշտօն *«կամաւոր ծառայութիւն» Ագաթ. (Նոր տպ. էջ 25).* ճեշտանալ *Ոսկ. բ. տիմ.* ճեշտացուցանել *Սիր. խ. 21.* ճեշտութիւն *Առակ. ժէ. 1. Ոսկ. յհ. ա. 38, 39.* ճեշտի *Պիտ.* ճեշտեաւ *Ոսկ. յհ. բ. 16.* ճեշտաւ *Պիտ.* ճեշտագոյն *Կորիւն.* ճեշտական *Ոսկ. մ. ա. 13, 16. ես. կոդ. Ագաթ. Կորիւն.* ճեշտային *Ոսկ. եբր.* ճեշտապաշտօնեայ *«հաւատարիմ կարծուած ծառայ» Ես. քր. ա. 347.* ճեշտարենալ *Ագաթ. Կորիւն.* ճեշտին *Ոսկ. յհ. բ. 39.* բոլորաճեշտ *Պիտ.* ամենաճեշտ *Ագաթ.* դիւրաճեշտի *Պիտ. Նոր գրականում* ճեշտամոլ, ճեշտաց, *գաւառականներում և արևելեան գրականում* ճեշտ *«դիւրին», որից* ճեշտութիւն *«դիւրութիւն»,* ճեշտաեռ *«սամավար»,* ճեշտադարան «commode», *այս վերջին առումը դտնում ենք նաև հների մէջ. ինչ. Լմբ. մատ. 228 «զդդակդ ի գլխոյդ հեշտ է առնուլ... բանն է հեշտ ...զայդ հաւատ սահմանեաց մեզ հեշտ և զայս օրէնս հեշտս». բարդութեանց մէջ էլ ունինք՝* ճեշտագեղծ *Տօնակ.* ճեշտալոյծ *Թէոփ. խ. մկ.* ճեշտածին *Նար.* ճեշտանալ *«դիւրանալ» Մանդ. են՝*

ՆՀԲ լծ. հյ. հաճ, հաշտ, *բրբ.* հազ, հազիմ, խօշ, իսթէտիյի: *Հինք. խիստ բառից։*

ԳԻՒ.—Դոր. երև. Շմ. ճէշտ, *Ագլ. Ղրբ. Տփ.* ճիշտ, *Սվեդ.* հիշտ, *Ջղ.* խեշտ *«դիւրին, դիւրաւ»։ Նոր բառեր են* ճեշտախուժ, ճեշտաճամբոյր, ճեշտակիր, ճեշտացնել, ճեշտրան

կամ հեշրան (*Մկ.* խոշտրան, *Վն.* խէշտրան, խէշրան<հեշտարան) «անդորր, հանդիստ, հանգարտ. 2. տափարակ, հարթ».—իմաստի զարգացման այս բոլոր աստիճանների համար համմտ. դիւր գալ «հաճելի՝ ախորժելի լինել», դիւրին «հեշտ», դուրան «տափարակ»։

ՀԵՇՏՊԱՇՏԱԿ «կամաւոր ծառայ». նորադիւտ բառ, որ ածանցեալ հեշտպաշտակութիւն «կամաւոր ծառայութիւն» ձևով մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. Հրտր. էմ. էջ 25. «Եւ գնացեալ (Բարիկ Սիւնի) յաշխարհէն Հոռոմոց առ արքայն Պարսից, հասանէ ի դուռն արքունի, և առ ումեմն ի զօրականաց արքային զեռեղեալ հեշտպաշտակութեամբ և բազում արուեստիւնս պէսպէս յոյմպիադոն Պարսից ցուցեալ»։ Հրտր. Շահն. Ա. 77 ունի իբր առանձին բառեր հեշտ պաշտակութեամբ, բայց լաւագոյնն է միացեալ ձևը։ Պաշտակ բառը գտնում հնք գործածուած կաղանկ. Հրտր. էմ. էջ 46 «ծառայ, սպասաւոր» նշանակութեամբ. իսկ հեշտ բառի հետ միասին՝ ունինք հեշտ պաշտօն «կամաւոր ծառայութիւն». Գնաց առ Տրդատիոս՝ բատ հեշտ պաշտամանն. Ագաթ.—Մխ. Գօշի Դատաստանագրքում գտնում հնք բայձև՝ Որ ոք գնա հեշտ պաշտէ ... որ գնա հեշտ ոք կալցի (Հրտր. Բաստ. էջ 212)։ Ագաթանգեղոսի հեշտ պաշտօն բառի հոմանիշն է ուրիմն—հեշտպաշտակութիւն։

*ՀԵՋՈՒԻՒ (տարբեր տառադարձութիւններով՝ հեջուպ, հէջուր, հեճուպ), ի–ա *հլ.* «Թագաւորի սենեկապանը, արարողապետ» Վրդն. պտմ. էջ 108. Պտմ. վր. էջ 88. Ուռհ. էջ 186. Օրբել. Հրտր. էմ. էջ 258 (տես. հէջպաց). ուրիշ ձևերով ունինք՝ հճեպ, հճէպ Շապհ. 53, 78. հեճպ Ուռհ. էջ 186։

=Արաբ. حاجب ḥājib նոյն նշանակ.—Հիւրշ. 269։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը յետոյ Հիւրշ. ZDMG 35 (1881), էջ 661։

+ՀԵՒ, ի, ո *հլ.* «հակառակութիւն, ոխ, կռիւ» ՍԳր. Եփր. Թուց, էջ 259 (գրծ. հեոիւ). «խեռ, կռուարար» Ոսկ. փիլիպ. Եփր. պհ. և տիտ. որից հեռալ Ոսկ. մ. ա. 15. Տիմոթ. կուզ, էջ 325. հեռութիւն Փիլ. Ղևոնդ. լծ. կոչ. հեռասէր Ոսկ. ես. էջ 152 (չունի ՆՀԲ). դժուարահեռ Պզատ. օրին. զժոխահեռ Պիտ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ers- արմատից. մեկնութիւնը տես եռ (եռալ) արմատի տակ, որից կազմուած է և աստղականով։

ՆՀԲ «լծ. յն. ἔρις.ի մեզ է արմատ բառիս գրգիռ. ուստի ռմկ. խոխո և եռոս»։ Peterm. 69 յն. ἔρις «կռիւ»։ Böttich. Arica 52 և Lag. Urgesch. 276 par արմատից։ Հիւնք. յն. ἔρις։ Ալիշան, Հին հաւ. 317—8 յն. ἔρις դիցուհին։ Հիւրշ. 466 տատանւում է յն. ἔρις (սեռ. ἔριδος) կամ սանս. pṛt և կամ հալ. sŭ-porŭ, ռուս. споръ «կռիւ» ձևերի միջև և չի կարողանում այս երեք մեկնութիւններից մին կամ միւսը ընդունել։ Վերի ձևով մեկնեց Lidén, Armen. Stud. № 59: Scheftelowitz BB 29, 52 ընդունում է յն. ἔρις ևն։ (Boisacq 280 մերժում է այս վերջինը և ընդունում Lidén-ի մեկնութիւնը. նոյնը ընդունում են նաև Walde 258, Pokorny 1, 151 մերժելով սանս. pṛt ձևի համեմատութիւնը (Walde 611 և 615): Թիրեաքեան, Արիահայ բռ. 238 գնդ. hareta «թշնամի» բառից։

+ՀԵՒԻ «տեղով կամ ժամանակով հեռու» ՍԳր. եւս. քր. «անմասն, օտար» ՍԳր. եւս. պտմ. Եղիշ. կազմուած է ի մասնիկով՝ հեռպարզ արմատից, որից են նաև հեռոյ Ոսկ. փիլիմ. հեռուստ, ՍԳր. հեռաբնակ Ագաթ. հեռագոյն ՍԳր. հեռանալ ՍԳր. հեռաստան ՍԳր. հեռաստանեայք Վեցօր. Եփր. երր. հեռարձակ Սիր. իդ. 44. հեռացուցանել ՍԳր. հեռաւոր ՍԳր. խրատահեռացոյց Մծբ. իսկ հեռի ձևից՝ հեռևոր «հեռաւոր» Եփր. երր.։ Նոր բառեր են հեռագիր, հեռագրել, հեռագրիչ, հեռագրատուն, հեռագրաթել, հեռագրակայան, հեռագրական, հեռաձայն, հեռախօս, հեռախօսական, հեռախօսագիր, հեռադիտակ, հեռատես, հեռատեսութիւն, աներեռատեսութիւն, հեռաճկար, զուգաճեռ (հեռ արմատով), զուգաճեռական, զուգաճեռագիծ են։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* per- *արմատից, սրա մերձաւոր ցեղակիցներն են՝ սանս.* pára- «*հետու, ի բացեայ, յայնկոյս, վաղագոյն, յառաջ ժամանակաւ*», parás «*հետու, հետացեալ*», զնդ. paro, յն. πέρᾱ «*հետի՝ ըստ տեղւոյ, ժամանակի և չափու*», πέρᾱν «*յայնկոյս*», περαῖος «*յայնկոյս գտնուած*», գոթ. fairra «*հետու*», հհիւս. fiarr, անգսք. feor, հբգ. fërro, գերմ. fern «*հետու*», Ferne «*հեռաւորութիւն*», հիւլ. ire «*յետին*», անգլ. far «*հետու*», լտ. peregre «*ի տար աշխարհ, օտար երկրում*», լտ. porro—յն. πόρρω «*առաջ, հետու, ուշ*» են։ *Հնխ. արմատը չափազանց աճած է և տուած նորանոր ածանցներ (այստեղ է պատկանում մինչև անգամ գերմ.* Frau «*կին*»!), *որոնց վրայ երկարօրէն տե՛ս* Pokorny 2, 29—40:—*Հիւբշ. 466։*

Windisch. 22 *յն.* πέλας «*մօտ, քովը, կողքին*»։ Böttich. ZDMG 1850, 357, Arica 81, 363, Lag. Urgesch. 295 *տալիս է նախ ուղիղ մեկնութիւնը՝ համեմատելով սանս.* pára, *գոթ.* fairra *են ձևերի հետ։ Նոյնը* Justi, Zendsp. 185 *զնդ.* para *ձևի տակ։ Վերի ձևով են մեկնում նաև Հիւբշ.* KZ 23, 34. *Տէրվիշ. Մասիս 1881 մայիս 11 և Նախալ. 92։* Deecke BB 14 (1889), *էջ 210 լիւկ.* hrzze *բառի հետ։ Հինք. յն.* χεῖρ «*ձևոք*» *բառից։* Karst, *Յուշարձան 414 մոնգոլ.* xola, *կալմուկ.* xoloi, *թունգուզ.* goro, *ճապոն.* hiroi «*հեռի*», *421 չաղաթ.* irak «*հեռու*»։

Գիմ.—Շմ. հէռի, *Ագլ.* հո՛ռի, *Ջղ.* խեռի, *Խրբ.* հոռի, հոռուն, *Ղրբ.* հէ՛ռէ, *Մժ.* յէռէ, *Ախց. Գոր. Երև. Կր. Հմշ. Ննխ. Պլ. Սչ.* հէռու, *Տիգ.* հէռու, խօռու, *Հճ.* հէրու, *Սվկգ.* հիռռօ, *Ալշ. Մշ.* հէռուն, *Ասլ.* հոռիւն (*բցռ.* հէռըվոն), *Տփ.* հի՛րու, *Սեբ.* հոռու, *Ակն.* հէռվօնց «*հեռուից*», *Զթ.* խօռու, *Ւր.* հէռունց (*կազմուած է* -ունկ *մասնիկով, ինչ.* լեցունկ, խորունկ).—*ոճերի մէջ* հէռի *ձևով. ինչ.* Ասված հէռի աճէ *Ննխ. Պլ.*—*Նոր բառեր են* հեռուկ, հեռուկեկ, հեռուանց։

ՀԵՍԿ, ո *հլ.* «*առագաստի կապ կամ չուան*» *վրք. Հց. բ. 353—4 (յղ.* հեսկի, հեսկեան). «*խսիր կամ նման նիւթ՝ ոտքին փաթաթելու համար*» *Բուզ. 274. որից* հեսկի «*ոտքի զանգապան, սռնապան*» *Առաք. պտմ. 133։*

Նշ հիւսել *բայից։ Տէրվ. տե՛ս* հիւսել։ Scheftelowitz BB 28, 282 հիւսել *բայի հետ։ Նոյնն են կրկնում* Boisacq 778 *և Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 79։*

Գիմ.—Ղրբ. հէ՛սկի «*սռնապան*».—*այստեղ կապ ունի՞ արդեօք* հեսկել *նփ.* «*թխմել, ճխտել*»։

ՀԵՍՄԱԻԿ, *որ և* յեսմուկ, յեսմիկ «*աստրեակ կամ ճարճիր բոյսը*» *Ասար. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1683 և 2155։*

ՀԵՍՍԱՅՔ «*գործնականք, իմաստունք*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 180։*

ՀԵՍՍ (*ի հլ. ըստ Նշ. բայց կայ միայն առ* հեսսի *ձևը*) «*խնո, անհնազանդ, խօսք չլսող, զմռսող*» *Ոսկ. եփես. որից* հեսսել «*անսաստել, անհնազանդ գտնուիլ*» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 16. ես. Կիւրղ. ծն.* հեսսանալ *Ճառընտ.* հեսսանք *Սփր. բ. կոր. 107. Եւս. պտմ. 329.* հեսսութիւն *Օր. լա. 27. Փիլիպ. ա. 17. Եզն. Մծբ.* հեսսումն *Լծ. ածաբ.*—*գրուած է* եսսել *Անան. ժմնկ. 57։*

Նշ լծ. խիսս, վէս, վեսս, օցսել, *Թրք.* ասր, խասխս։ *Տէրվ. Նախալ. 121 հյ.* յես, հուսկ, *սանս.* paçča, *լիթ.* paskui, *լտ.* post *բառերի հետ կասկածով։ Հինք.* վսսաճ *բառից։* Scheftelowitz BB 29, 32 *հնխ.* ped-to, *ինչ. հլ.* padą «*ընկնել*» *և* napast «*ձախորդութիւն*»։

+ՀԵՏ, ո *հլ. բուն նախնական նշանակութիւնն է «ոտք». այսպէս՝ Գ. Թագ. ժը. 21. «Մինչև ցե՞րբ կաղայք յերկուս հետս» (երկու ոտքով, երկու ոտքից). այս նշանակութիւնը յետոյ տեղի տալով ամէ՛ բառի առաջ՝ չնչուեցաւ. բայց մնացին նրանից ածանցուած նշանակութիւնները. այսպէս «2. ոտքը կոխած տեղի նշանը, հետք. 3. փխբ. ճանապարհ, օրինակ, նմանութիւն» ՍԳր. Կորիւն. Եւս. պտմ. Կիւրղ. Թգ. Սփր. յես. «4. յետևից» Բ. մակ. դ. 21. Ճառընտ. «5. միասին, միատեղ, հետը» Եզիշ. Ոսկ. սղ. զանազան նախդիրներով՝ զետ «յետևից» ՍԳր. Ոսկ. Եւս. քր. «միասին, միատեղ» Ոսկ. յհ.*

ա. 37. Խոր. «յետոյ, ետքը, վերջը» Մտթ. ը. 10. Փարպ. ի ետ «միասին, հետը» Ոսկ. եբր. իը. ի ետոց «յետևից» ՍԳր. ետ ընդ ետ, ետզետէ, վաղվաղակի ետ կամ զետ ՍԳր. ևն. ստացած է նաև ժամանակի գաղափարը, ինչպէս ցոյց են տալիս ետ «անգամ» (հմմտ. առաջին ետ Շապհ. էջ 61), նոյնեետայն «նոյն ժամին, իսկոյն» ՍԳր. ետ ընդ ետ Բ. մակ. դ. 10. Նւս. պտմ. յորմէետէ ՍԳր. միաեետ, միաեետի, ընդ միաեետ Ոսկ. յհ. ա. 21, 24։ Այս զանազան առումներով են կազմուած ետազօտել ՍԳր. Սերեր. ետակոչոյս Վեցօր. ետամուտ ՍԳր. Նւս. պտմ. ետամտիկ «փախչող թշնամու յետևից հետապնդելու և բռնելու համար ուղարկուած զինուր» Անան. գիտ. 22. ետաբրբիր ՍԳր. ետեղիլ Փիլ. որովետև ՍԳր. ետեակ ՍԳր. ետի «ոտքով» Կ. մակ. գ. 1. ետիոտ(ս) ՍԳր. Նւս. քր. Ոսկ. մ. բ. 4. զուգաեետ Ոսկ. յհ. ա. 21. զրաեետ Կող. բ. 18. մաերաեետել Նւս. քր. ոտնաեետ Վրք. Հց. կամ ոտնետ Մխ. աննց. 38. զաոիեետ «հարթ, տափարակ» Համամ. յովէդ. ետեերբու «հետևող» Իրեն. հերձ. 51 (ՀՍ. 1910, 303). ետաուածի (չունի ԱԲ) «լրտեսելու համար գաղտուկ յետեից երթալով» Անկ. գիրք առաք. 51 (Հետաքրքրական տեսանել թէ յո՞ երթայցեն.—եթէ պէտք չէ կարդալ ետաուած ի տեսանել...)։ Նոր բառեր են ետախուզութիւն, ետաբրբրական, ետաբրբրամոլ, ետևողական, ետևողականութիւն, աննետաբրբիր, աննետևաեի, աննետևողական են։— Այս արմատի տարբեր ձևերն են՝ ՍՏՆ, և հլ. (-տին, -տամբ, ոտք, ոտից) «ոտք». փխբ. նաև «լեռան ստորոտը, մարդ են» ՍԳր. Ոսկ. Բուզ. Եփր. ծն. աճանգման մէջ մտնում է ոտ, ոտն, ոտան ձևերով. այսպէս՝ ետիոտ Ոսկ. մ. գ. 13. ետիոտս Դատ. դ. 15, 17. Բ. թագ. ժէ. 17. Նւս. քր. աետոմ «ոտքը դրած կողմը, սնարի հակառակը» ՅՀ. ի. 12. լեռնոտեայ Խոր. ‖լեռնոտն Յուդիթ. գ. 9. է. 9. աետոտնեայ «պատուանդան» Նորագիւտ Ա մնաց. իը. 2, Բ. մնաց. թ. 18. ետարընդոտնել Երեմ. ժ. 18. աետոտնաձայն Ոսկ. ես. ոտնակապ Մրկ. ե. 4. ոտնակապել Եփր. ա. կոր. յոտնկելեաց «ոտքի վրայ կանգնած ուղիղ» Ա. թագ. իը. 20. Ոսկ. եփես. 927. ոտնատ Եփր. վկ. արև. 32. ոտնետ Նւագր. ոտնատել Եզն. Ոսկ. ոտնատեղի Յես. դ. 3. խոչընդոտն Կոչ. խոչոտն Բուզ. ձիոտն Նւս. քր. արագոտն Առակ. իդ. 34. Վեցօր. եղնոտն Եփր. ել. ‖ոտաեատոր Սղ. կե. 6. բազմոտաեի Ղևտ. ժա. 42. չորոտաեի ՍԳր. երկոտաեի Պորփ. երեքոտաեի Մխ. Երեմ. եոոտաեի Պղատ. օրին. Նոնն. ևն.—ՅԵՏ «ետ, ետև» Ոսկ. մ. բ. 27. «զկնի, յետոյ, վերջը» ՍԳր. Նւս. քր. և պտմ. (այս իմաստով գրուած է ետ՝ Կրկնագիր Ագաթ. 63 բ. տե՛ս ՀՍ. 1913, 14). որից յետս ՍԳր. Ոսկ. Եզն. յետս ընդդէմ ՇՆ. բ. 23. Ոսկ. մ. ա. 2. Եփր. Հռ. և ա. կոր. (իբր ած. Եղիշ. Ննջ. 357 յետսընդդէմ). յետսագոյն Բուզ. յետսամիտ Գ. մակ. գ. 15. անյետսադարձ Իրեն. հերձ. էջ 52 (տե՛ս ՀՍ. 1910, 284 ա), յետուստ «յետևը, կռնակը, յետևից, յետոյ, վերջը» ՍԳր. Բուզ. յետոյ ՍԳր. Եզն. յետին ՍԳր. Եզն. յետնել ՍԳր. յետնախաղաց Վեցօր. յետինք «երեկոյ» Վրդ. առ. 141. յետնամայր «խորթ մայր» (նորադիւտ բառ) Փոնց. 16, 18, 23 ևն. Նոր բառեր են յետադէմ, յետադիմական, յետադիմութիւն, յետամասնիկ, յետնադարեան, յետնուղեղ ևն։ —ՆՏ, որից կազմուած են՝ ետ ընդ ետ «իսկոյն, հետ ընդ հետ, նոյն հետայն» Եզն. ետ զետ «հետզհետէ» Նիւս. կազմ. որ և յետզյետէ Նախ. ա. եզր.։ Այս բոլորի համար ձայնական փոփոխութեանց կողմից հմմտ. ետղեղ, ոդողել, ետնգ, յիսուն. իսկ նշանակութեանց զարգացման կողմից հմմտ. կինէ, զկնի, կռուկն, ընդ կռուկն, բնկրկիլ, պրս. pāy «ոտք», dar-pay «զհետ, զկնի», pay-dar-pay «զկնի միմեանց, հետզհետէ, իրար ետևից», ֆրանս. pas «քայլ» և revenir sur ses pas «նահանջել, յետ գալ» են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pedo- ձևից, որի ժառանգորդներն են. սանս. pād- կամ pad- (ուղ. pāt, սեռ. padás) «ոտք», pada- «քայլ, հետք, կեցած տեղը, ոտք», pádyā «քայլի», padēna «յոտս», pattí- «հետևակազնաց», padāti-, padika- «հետի, հետևակ», թոխար. pe և քուչ. pai «ոտք», զնդ. paδ- (հրկական ᵛ ᵖᵃᵈ pāδa) «ոտք», pāδəm «հետք», հպրս. ni-padiy «յոտնկայս», patipadam

«իր տեղը», պրս. پای pāy «ոտք», پی pai «ոտքի հետք», pāča «տոտիկ», paig «հետևակ, պատգամատար, սուրհանդակ», օսս. fäd «հետք», պհլ. pāī «ոտք», բելուճ. pad «ոտքի հետք», padā «յետևից, յետոյ, վերջը», յն. πούς (սեռ. ποδός) «ոտք», πεζός «յոտս, հետի, հետևակ», πεζῇ «ոտքով, ցամաքով», լեսպ. բէովտ. πεδὰ «հետևից, զկնի, հետը, միասին», դոր. πέζα «ոտք, ոտքի կոճ», լտ. pēs (սեռ. pedis) «ոտք», peda «մարդու ոտքի հետք», pedi-sequus «ծառայ», pedes «հետևակ», pedester «հետի», acu-pedius «թևթևուտն, սրընթաց», լիթ. pėdà «ոտնաչափ, ոտքի հետք», լիթթ. pėz, «յետոյ, յետևը», pêda «հետք», peds «քայլ», հսլ. pěšĭ, չեխ. pěchý, ռուս. пѣшій «հետևակ», գոթ. fōtus, հրդ. fuoz, անգսք. fót, գերմ. fuss, անգլ. foot «ոտք», հիսլ. fet «քայլ», fótr «ոտք», feta «քայլել» են (Walde 578, 569, 543, Boisacq 754, 265, 808, Ernout-Meillet 725, Trautmann 209, Pokorny 2, 23—25): *Այս բոլորը երևան են հանում հնխ.* ped- *և* pod- *արմատները, որոնցից առաջինը տալիս է հյ.* **հետ, յետ, ետ.** *երկրորդը՝* **ոտ-ն:**—*Հիւբշ. 466, 482։*

ՆՀՔ **հետ՝** *լծ. Թրք.* իզ «հետք», *հայ.* **ոտ, ետ, յետ,** *ուստի զհետ, հետևել են.* **հետևակ՝** *լծ. Թրք.* եաէմ. *իսկ* **ճանապարհ** *բառի տակ դնում է յն.* ὁδός *լծ. հյ.* **հետ** *և* **ոտ:** *Ուղիղ մեկնությունը տուաւ նախ* Windisch. 22, 39: Böttich. Arica 42 *յն.* ὁδός *և* ἕζεσθαι *ձիուերի հետ* sad *արմատից։* Lag. Urgesch. 395 pad *արմատից։ Ուղիղ են մեկնում նաև* Müller SWAW 41, 8, Justi, Zendsp. 189, *Հիւբշ.* KZ 23, 34. *Տէրվ. Մասիս 1881 սեպ. 15 և Նախալ. 92։—Բաղրճեան, Արևելք 1884 նոյ. 16 սանս.* hi, hita «հրթալ»։ *Հիւնք.* **այտ** *բառից։ Պատահական նմանութիւն ունին ճապոն.* 了 ato «հետք, յետևը», *ավար.* ẖet'e *և խոտանագ.* heteh «ոտք» *նաև զազա* حت ẖet «քովը, մօտը, առ, մերձ», *որ* Justi, Dict. Kurde *էջ 140 արաբ.* حتّى ẖatta «մինչև» *բառին է ուզում կցել։*—**Ոտ** *և յետ տե՛ս առանձին։*

ԳԻՒՐ.—«Հետք» *իմաստը պահում են Սվեդ.* **հիտ,** *Հմշ.* **հիդ.**—«միասին, միատեղ» *իմաստով են՝ Ախց. Երև.* **հէտ,** *Ալշ.* **հեդ,** *Մշ.* **հեդ, հրտ,** *Խրբ. Հճ. Ննխ. Պլ. Սեբ. Սչ.* **հէդ,** *Ասլ.* **հէ՛դ, հե՛*,** *Ագլ.* **հիտ,** *Հմշ. Սվեդ.* **հիդ,** *Տփ.* **հիդ, իդ, վն. խետ,** *Ջղ. Սլմ.* **խէտ,** *Ոզմ.* **խէ՛տ,** *Մկ.* **խիտ.** *սկիզբը աւելացնելով ևի մասնիկը՝ Գոր. Ղրբ.* **ևրհէտ** *(հմմտ.* **ևիմնել, ևիեսնել** *են). դիմորոշ յօդերով միացած՝ Շմ.* **հէտնաս, հէտնատ, հէտնան** «հետս, հետդ, հետը». *վերջաձայնը կորցնելով՝ Մկ.* **խտ,** *Ոզմ.* **խա.** *ինչպէս՝ Մկ.* **խտծի** «ինձ հետ», **խտ՛ի** «քեզ հետ», *Ոզմ.* **խաձէ՛** «ինձ հետ», **խաի** «քեզ հետ»։ *Ուրիշ նշանակութիւններ են ներկայացնում Ղրբ.* «մինչև», *Ախց. Երև. կր.* «թէ՛ ... թէ՛», *Տփ.* «իսկոյն, նոյնհետայն» *և շատ տեղ էլ* **հետ** «անդամ»։—*Նոր ձևեր են՝ բնտե՛հետ Ղրբ.* «այնուհետև», **հետքհետին** *Շլ. կամ* **հետհետուն** *վն.* «իսկոյն», **հետին** *Խթ.* «հետիոտն», **հետնուհետը** *Տփ.* «հետզհետէ», **հետի** *Ղրբ. Շմ.* «համար, վասն», **հետակոռուստ, հետակտուր, հետխազ, հետվրայ,** *որոնց պէտք է աւելացնել* **հետուրար** *Խոջ.* «հետ իրար, իրար հետ, միասին» *(նոյնը զանազան ձևերով՝* **հիտուրար** *Հմշ.* **հէյրանց** *Ք.,* **հետիրաց** *Ջրս.,* **հետուրանց** *Մշկ.,* **հիտուրաց** *Բլ. Մշ. Շտ. վն. Տիգ.,* **հիրաց** *Ակն,* **հուրաց** *Մկ. վն.,* **հուրանց** *Շտ.,* **հետրացուկ** *Ակն,* **հիդրաց** *Ալշ. ևն. և վերջապէս Ջղ.* **խտուր** *(<***հետ իւր***), որ գործածական է սովորական* «հետ» *նշանակութեամբ և կցուելով ամէն դէմքի հետ։*

ՀԵՏԻՐ «ի բացեայ, հետուստ. *ունի միայն Բառ. երեմ. էջ 180։*

ՀԵՐ *(հզ.* **ո** *հլ., յգ.* **ի—ա** *հլ.)* «գլխի մազ» *ՍԳր. Եփր. աւետ. որից* **հերատ** *Ոսկ. ես.* **հերարձակ** *Գ. մակ. դ. 6. Ոսկ. մ. ա. տիմ. ես. 292.* **հերատեալ** *Բննիկ.* **հերատուկ** «անպատկառ՝ լիրբ կին կամ աղջիկ» *Ոսկ. մ. բ. 23.* **հերագործ** *Նիւս. կազմ.* **հերատ** «ճաղատ» *Բժշ.* **հերատուսեալ** *Շնորհ. վիպ.* **հերաքարշ** *Եղիշ. գալ. 355 (չունի* ՆՀՐ*).* **դալարահեր** *Մծբ.* **գանգրահեր** *Վեցօր. 119. Սեբեր.* **դեղ-**

ձանձաճեր *Սասն. էջ 19.* **երկայնաճեր** *Ուռհ.* **ձաղկաճեր** *Սեբեր.* **բազմաճեր** *Ոսկիփ.* **ճերակալ** *(նոր բառ)* **ևն**։ *Այստեղ է պատկանում նաև* **ճերաճարութիւն** *«գլխի մազերին խիճելով եղած մի տեսակ կախարդութիւն» Մանդ. (ձեռագիրն ունի* **ճեղաճարութիւն**, *որ ԱԲ մեկնում է «թերևս հեղուկները զարնելով կախարդութիւն ընելը». ըստ իս պէտք է սրբագրել* **ճերաճարութիւն**, *քանի որ հեղինակը արդէն քիչ յետոյ բացատրում է «ի հեր գըլխոյ» ասելով, տե՛ս Ածառ. Արրտ. 1911, 671)*։

Klaproth, As. polygl. 101 *գերմ.* haar *բառի հետ*։ *ՆՀԲ եբր.* **սէար** *(իմա՛* שְׂעָר sē'ār) *և գերմ.* haar *«մազ»*։ *վերջինիս հետ նաև էմին,* Ист. Вардана, *էջ 66 և Մորթման* ZDMG 30, 418: Müller, Armen. VI *լտ.* pilus. Canini, Et. étym. 153 *լիթ.* eris *«բուրդ» և յն.* ἔριον *«ասր»*։ *Հիւնք.* **ճեր**=*յն.* εἶρος, ἔριον *«ասր»,* **ճերատուկ**=*յն.* ἱερόδουλος *«պաշտօնեայ մեհենի»*։ Scheftelowitz BB 29, 33 *սանս.* parśa *«փունջ, սրբացակ» բառի հետ*։ Petersson. Ar. u. Arm. Stud. 99 *լիթ.* purė *«ցցունք» և ռուս.* топырить, топорщить *«մազերը փշաքաղուիլ» բառերի հետ՝ հնխ.* per- *արմատից*։ *Պատահական նմանութիւն ունին գերմ.* Haar, *հիսլ.* hār, *անգլ.* hair, *հոլլ.* haar, *հրդ.* hâr, *անգսք.* hāēr *հոմանիշները, որոնք գրւում են հնխ.* qesā *ձևից* (Walde 135 *և* Kluge, *էջ* 194)։

***ՀԵՐԵՍԻՈՎՏ** *կամ* **ՀԵՐԵՍԻՈՍ** *«հերետիկոս, աղանդաւոր» գործածւած է միայն յոգնակի ձևով. այսպէս՝* **ճերեսիովմ**, **ճերեսիոմ**, **ճերեսիովտայք**, **ճերեսիոտայք** *(սեռ.—տաց, տից, տայց) Կոչ. 48, 99, 137, 267. Եա. պտմ. 529, 534—5. Եւագր. Ոսկ. յհ. ա. 10. յետնաբար եզակի ձևով և իբր ած. ունի Ուխտ. Բ. 113 (Հերեսիովտ լեզու նորա)*։ *Այս բառից են* **ճերեսիոտութիւն** *Եւագր.* **ճերեսութիւն** *Եւագր. Կոչ. 99.* **ճերեսուրիւն**, **ճերիսուրիւն** *Կոչ. 311*։

=Յն. αἱρεσιώτης, *յգ.* αἱρεσῖῶται *«հերետիկոս». կազմուած է* αἵρεσις *բառից, որ նշանակում է «առնելը, գրաւում. 2. ընտրութիւն. 3. նախընտրութիւն. 4. մասնաւոր ուսումնասիրութիւն. 5. գրական, բժշկական, փիլիսոփայական դպրոց, և վերջապես 6. առանձին կրօնական հերձուած». բուն արմատը* αἱρέω *«բռնել, գրաւել, ընտրել ևն»*։ *Յունարէնից փոխառեալ են նաև լտ.* haeresis, *ասոր.* heresiōtā *«հերձուածող, աղանդաւոր» ևն*։—*Հիւրշ. 361*։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ՀԵՐԵՍԻԿԱՈՍ**, *ի–ա հլ. «հերձուածող» Կոչ. Մանդ. Սրգ. յհ. բ. որից* **ճերեսիկոսութիւն** *Բուզ.* **ճերեսիկոսապետ** *Մ. Մաշտ. 169 բ. յետին ձևով գրուած է նաև* **եռեսիկոս** *Նանայ 5, Ասող. Գ. իա*։

=Յն. αἱρετικός *«հերձուածող, հերձուածողական». ծագումը նոյն է, ինչ որ* **ճերեսիովտ** *(տե՛ս այս բառը). յունարէնից փոխառութիւն են նոյնպէս լտ.* haereticus, *ասոր.* heretīqā, *արաբ.* أَرَاتِقَة arātiqa *հոմանիշները*։—*Հիւրշ. 361*։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։—*Իսկ* Riggs, *Քերակ. 1856, էջ 61 դնում է յն.* ἔθνος *ձևից!*

Փոխ.—Հայերէնի վրայից տառադարձութիւն է Ս. Գրքի քրդերէն թարգմանութեան մէջ ճէրիտիկոս *Տիտ. Գ. 10. ժր Հէրիտիկոս մոռուվէ «յառնէ հերձուածողէ»*։

***ՀԵՐԻՍԱՅ** *«կորկոտով ու մսով պատրաստուած մի տեսակ կերակուր» Բանք աղ. 189. էֆիմ. 170. գտած եմ նաև 1563 թուի մի գրութեան մէջ, հրտր. ՀԱ 1922, 162 (բայց այս էջը սխալ եմ նշանակել)*։

=Արաբ. և պրս. هريسة harīsa *«մի տեսակ կերակուր, որ շինւում է մսով, ցորենով և իւղով» (տե՛ս Իբն Բաւուտա, հրտր.* Paris, *1853, հտ. Բ. էջ 89, Կամուս, Թրք. Թրգմ. Բ. էջ 306, որ ունի նաև արաբ.* هريس harīs *ձևը). բառը բնիկ սեմական է և գրւում է նաև ուրիշ սեմական լեզուների մէջ. համմտ. եբր.* עֲרִיסָה 'arīsā, *թալմ.* עַרְסָן 'arsān, *ասոր.* ܐܪܣܐ arsā (?) *«կճեպը հանած գարի»*։ *(Պէտք է դիտենալ,*

որ լաւագոյն հերիսան պատրաստւում է մի տեսակ ընտիր, սպիտակ և թեթև գարուց, ինչպէս յայտնեց խոհարարապետ Յակոբ Պարսամեան, Պրուսացի. համմտ. պրս. keškek *«հերիսայ»՝ պհլ.* *kask *«գարի» բառից)։ Արաբ. կամ պրս. ձևից փոխառեալ են նաև քրդ.* heris, helise, härisä, *վրաց.* ահռեա արիսա, ჰარեა ხარիսა *«հերիսայ»։—Հիւբշ. 516։*

Բառիս վրայ առաջին անգամ խօսել է Lagarde, Nachrichten *թերթի մէջ, 1889, մայիս 29, հյ. թրգմ. ՀԱ. 1889, էջ 158, որ համարում է թէ այս բառը Աստրհատանցոց ձեռքով Մարաստան գերի տարուած հրէաների միջոցով մրուած է հայերէնի մէջ։*

*ԳԻՒ.—*Գոնւում է շատ բարբառների մէջ **հէրիսա** *կամ* **հարիսա** *ձևով (այսպէս են՝ Ախց. Ախք. Երև. Աստ. Բլ. ՀԹ. Կ. Հնգ. Նբ. Ննխ. Մկ. Սլմ. Վն. Տփ). ունինք նաև* **հերսէ** *Էնկ.,* **հրիսա** *Ագ.։— Ժողովրդական ստուգաբանութիւն է* **հարէ՛ սա**։

+**ՀԵՐԻՒՆ**, ն *հլ. (հնապէս հոլովւում էր* **հերեան, հերեամբ,** *յետնաբար ի–ա, ո հլ. ինչպէս՝* **հերիւնաւ, հերիւնով** *են. ռամկական հնչումով գրուած է՝* **հերոյն, հերուն, հերին**) *«ծակելու գործիք, մախաթ, բիզ» Օր. ժե. 17. Ել. իա. 6. Նխ. օր. Վրք. Հց. Յայտմ. արդի գրականի մէջ նշանակում է «կօշկակարի բիզ»։*

=*Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ.* per- *«ծակել» արմատից՝ -իւն մասնիկով. ցեղակիցներից համմտ. յատկապէս յն.* πείρω *«ծակել»,* περόνη *«ծակելու գործիք, ճարմանդ, գնդասեղ և նմաններ», նյն.* περόν *«պատառաքաղ» (որից փոխառեալ են Ախց. Կր. Երզ. Ջն. Էվ.* բերոն *և Սվ.* բիլոն *«պատառաքաղ», Եւդ.* բերոն *«գդալ», լազ.* peroni *և գնչ.* berúli *«պատառաքաղ»),* περονάω *«ծակել», հսլ.* na-perją, na-periti *«ծակել», ալբան.* š-boroj *«ծակել, խթել»,* š-puaj *«պատը ծակել, քանդել»։ Նոյն արմատի «մխիւ կողմը անցնիլ, թափանցել, երթալ, ճամբորդել, նաւել են» նշանակութիւնների և սրանցից բխած բառերի վրայ տե՛ս* Boisacq 757, Pokorny 2, 39:—*Հիւբշ. 467։*

Ուղիղ մեկնեց նախ Böttich.: Arica 52, Wurzelforsch. 12, *յետոյ* Lag. Urgesch. 276, Bugge, Beitr. 10:—*Հիւնք. յն.* ὀρύγιον *«գործիք ծակելոյ»։*

ԳԻՒ.—Ակն. Սեբ. **հէրուն**, *Կր.* **հերօն**, *Ալշ. Բլ. Մշ.* **հէրոն**, *Խրբ.* **հէրին**, *Ռ.* **էրօն**, *ՋԹ.* **հիյին, հիրին**, *Հճ.* **հիյին**, *Մկ.* **խէրուն**, *Վն.* **խիրուն**, *Ոզմ.* **խէ՛րօն**, *Սվեդ.* **հիրէն**, *Երև.* **հէլուն**. *վերջինս նշանակում է «ժանեակ գործելու ճաղ»։*

ՀԵՐԻՔ *«բաւական, գոհացուցիչ քանակութեամբ. 2. կարող, ձեռնհաս» Ա. մակ. ժդ 3. Պիտ. Խոսր. 246. Վրդն. սղ. որից* **հերքանալ** *«բաւականանալ» ՅՀ. կԹ. 452։*

ՆՀԲ յն. **արքի՛, ա՛րքէդէ** *«հերիք է»։* Petermann, Monatsbericht der Berl. Akad. *1866, էջ 733* **հերիֆ**<*թրք.* gerek *«պէտք է»։ Հիւնք. յն.* ἀρκέω, ἄρκιος, ἀρκετός *«հերիք»։*

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Կր. Համշ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ. **հէրիք, ՋԹ. հէյիք, հէրիք,** *Ագլ. Խրբ. Ղրբ.* **հէրիֆ**[1], *Սվեդ.* **հիրոմ**, *Յղ.* **հրէֆ**[1], *Ագլ.* **հրոմ**[1], *Զղ.* **խէրիֆ**, *Մրղ. Սլմ. Վն.* **խէրիֆ**[1], *Ոզմ.* **խէրէ՛ֆ**[1], *Ալշ. Մշ.* **հէրֆ** *(վերջինը միայն է էական բայի հետ՝* **հէրֆ է**)։ *Ախց. Ախք. գործածւում է նաև «միթէ՞, ի՞նչ ես ասում» նշանակութեամբ՝ իբրև բացականչութիւն։*

ՀԵՐՈՒՈՒԹԻՒՆ *«անուրջք, անրջական տեսիլ». գիտէ միայն ՓԲ.* անատոյգ *բառ։*

ՀԵՐԿ *(սեռ. -ի) «հողը վարելու գործողութիւնը. 2. վարած հող, անդ, արտ» Երեմ. դ. 3. Ա. Թագ. իբ. 6. որից* **հերկ հարկանել** *«վարել, հերկել» Ոսկ. Ես. մ. բ. 24. յհ. ա. 1. Կիւրղ. Եփ.* **հերկաւար** *«վարող» Մանդ. էջ 169.* **հերկարար** *«վարող» Ոսկ. Ես. 318.* **հերկել** *Ես. իբ. 24. Խե. 9. Երեմ. դ. 3.* **հերկումն** *Եղիշ. Հրչ.* **հերկագործել** *Նար. առաք.* անհերկ *(նոր բառ) են։*

=*Թերևս բնիկ հայ բառ. համմտ. լտ.* porca *«երկու ակօսի միջև բարձրացած հողը, արտի ջրի կորի»,* porculetum *«ակօս», հբգ.* furuh, *անգսք.* furh, *գերմ.* Furche, *հոլլ.* voor, *անգլ.* furrow *«ակօս», հիսլ.* for *«ական, ջրանցք», հրրտ.* rec *«հերկել», կիմր.* rhych, *հիռլ.* etrech *«ակօս»* (Walde 600,

Kluge 160, Pokorny 2, 47): *Այս բառերը ծագում են հնխ.* perk- *արմատից, որ սակայն չէր կարող տալ հյ.* **հերկ**. *ուստի վերջինիս համար հնթադրում է հնխ.* perg- *ձևը. (հնխ.* perk- *պիտի տար հյ.* ***հերգ**)։ *Միևնոյն ժամանակ կայ հնխ.* perk'- *արմատը, որ նշանակում է «պատռել, ճղել, ճանկռել, փորփրել» (համմտ. սանս.* párçāna- *«ճեղք, փոս», լիթ.* praparszas *«փոս» են.* Walde 600, Pokorny 2, 46): *Արդ՝ ոմանք այս երկու խմբի բառերը միացնում են, ընդհ. արմատը դնելով հնխ.* perk'. *այս պարագային հայերէնը դուրս է մնում, որովհետև հնխ.* perk'- *տալիս է հյ.* ***հերս**-. *ուրիշներ հենց հայերէնը հիմք բռնելով՝ մերժում են միացնել երկուսը, որով մնում է հյ.* **հերկ** *<հնխ.* perg-*<*perk:—*Հիւբշ. 467։*

Նշխ *յծ.* **երկ, երկիր, ագարակ, հերձ**: Windisch. 30 **երկիր** *բառի հետ։* Lag. Urgesch. 899 *տատանւում է անգսք.* fyrhjan *«վարել, հերկել», հյ.* **հերձնուլ**, *յն.* ἔλκειν, *լտ.* sulcare, *ինչպէս և լիթ.* wilkti, *լտ.* ulcus *«վէրք» ձևերի միջև։* A. Kuhn ZVS 2, 135 *լտ.* sulcus, *անգսք.* sulh, *յն.* ὀλκός *«քաշել, ակօս», Հիւբշ.* Arm. Stud. *էջ 39 տուաւ վերի մեկնութիւնը։ Տէրվիշ. Նախալ. 107 հնխ.* vark *«պատռել, քաշել, հերկել» արմատից է դնում զնդ.* vrač, *յն.* ἕλκω, αὖλαξ *«ակօս»,* ἕλκος *«վէրք», լտ.* ulcus, *լիթ.* vilkti, *սանս.* vrka *«արօր» և հյ.* **հերկ**? *Հիւնք.* **երկ** *բառից։ Այսպէս նաև Գազանճեան, Արևել. մամ. 1902, 76։ Սրմագաշեան, Արմէնիա ռում.* herghelie *և թրք.* hergele *«ձիերի երամակ» բառերի հետ։* Meillet, Dial. ind.-uer. 129 *հայ. կ-ի պատճառով չի ընդունում վերի մեկնութիւնը և ուզում է միացնել հարկանել բայի հետ։ Տատ* ИАН *1911, էջ 144 լազ.* oxašku *«հերկել» բայի հետ (արմատը* xašk*):—* Thomaschek, Deut. Litterat. *1883, էջ 1254 ուզում է տեսնել Պրոպոնտիսի* Περκώτη *տեղանուան մէջ։*

Գիմ.—Ախց. Տրև. Կր. **հէրկ. հէրկէլ**, *Ալշ. Մշ.* **հերգ, հէրգել**, *Նխճ. Ռ. Սեբ.* **հէրգէլ**, *Ասլ.* **հէրգէ՛լ**, *Խրբ.* **հէրգիլ**, *Սվեդ.* **հիրգիլ**, *Զթ.* **հիյգիլ, հիրգիլ**, *Ոզմ.* **խէ՛րկիլ**, *Մկ.* **խիրկիլ**։ —*Գրական լեզուի մէջ* **հերկել** *և վարել հոմանիշ են, բայց գտ.* **վարել** *նշանակում է «հողը վարել՝ անմիջապէս յետոյ ցանելու համար», իսկ* **հերկել** *նշանակում է «վարել՝ 1—2 տարի յետոյ ցանելու համար» (Ազգ. հանդ. Գ. 372)։ Այս պատճառով էլ* **վարել** *Ղրբ. նշանակում է պարզապէս «ցանել»։— Նոր բառ է* **հերկոտ** *«հերկամեայ հերկած արտ», որ կազմուած է* **հերկ** *+*ոտ *բառերից, ինչպէս ցոյց է տալիս հոմանիշ* **հերկայաղի** *ձևը, որ կազմուած է նոյնպէս* **հերկ** *+ թրք.* ayaγ *«ոտք» բառերից։*

Փոխ.—Վրաց. **ერჭოვნი** **երճովանի** *«արօր»,* **ერჭოვნა** **երճովնա** *«հերկել»,* **მეერჭუნე** **մեերճունե** *«հերկող, երկրագործ, մշակող»,* **შემოერჭუნა** **շեմոերճունա, მოერჭუნა** **մոերճունա** *«մշակել, հերկել»։* (—Lafon BSL *29, № 88, էջ 147 վրացի բառը ցեղակից է դնում անդի* eli-du *«հերկել»* (-du *աներևոյթի մասնիկն է) բառին, հիմնուելով մի ձայնական օրէնքի վրայ (վրաց.* ჟ *Ի Վ = անդի* t, *որ սակայն վերջնական չէ)։—Թրք. գտ. Ե.դ. Էնկ. Կր. Կս. Սեբ. Տ. (ինչպէս նաև Էնկ. և Կս. Թրքախօս յունաց մէջ)* herg *«հերկ»,* herg etmek *«հերկել». օր.* tarlayə herg etdim *«արտը հերկեցի» (համմտ. էնկիւրիի Թրքախօս հայոց մէջ՝* **հէրկ էթմէք** *«հերկել»)։*

ՀԵՐՀԵՐ *«բուրդ գզելու երկաթեայ սանտր», որից* **հերհերել** *«երկաթէ սանտրով սանտրել». երկուսն էլ միջին հյ. բառեր (Նորայր, Բառ. ֆր. էջ 200)։*

ՀԵՐՁ (ի *հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ճեղքուած» Վեցօր. «ճեղք, ծերպ» Ոսկ. Ճառք 901, Լմբ. իմ. որից* **հերձ ի հերձ** *«պատառ պատառ» Ուտհ. 317.* **հերձնուլ** *«պատռիլ, ճաքիլ» Գծ. ա. 18.* **հերձիլ, հերձանիլ, հերձուլ** *«պատռել, ճեղքել» ՍԳր. «անդամահատել» Ոսկ. բ. կոր. յհ. բ. 11. Եւս. քր. «երկպառակիլ» Ոսկ. յհ. բ. 12.* **հերձատել** *Կիւրղ. ղևտ.* **հերձոտել** *Վրք. Հց.* **հերձուցանել** *խոր. Հռիփ.* **հերձումն** *կոչ.* **հերձուած** *ՍԳր. Եւս. պտմ.* **հերձուածող** *Տիտ. գ.*

10. Ոսկ. եզն. **հերձուրիւն** *«հերձուած» Կնիք հաւ, էջ 191.* **հերձապետ** *«հերձուածողների գլուխը» Զքր. եպս. 282.* **հեծանահեր** *Մծբ.* **հերձաթև** *Վեցօր. 162 կամ* **թևահեր** *Պիտ.* **թաթահեր** *ՍԳր.* **կեղակահեր** *ՍԳր. Կիւրղ. ղևտ.* **գաւազանահեր** *Ճառընտ.* **գեռահեր** *Նար.* **ծայրահեր** *Աբ. խչ.* **ծովահեր** *Ագաթ.* **բազմահեր** *Փիլ. բագն.* **հերձատամ, հերձաւոտ** *(նոր բառեր) են։ Այստեղ են պատկանում նաև* **հերձակ** *«նետ, փքին» Կիւրղ. Թգ. (Թարգմանաբար յն. σχίζα «ճեղքուած փայտ. 2. նետ» բառից. հմմտ. σχίζω «ճեղքել») և* **հերձի** *«մի տեսակ ծառ.* pistacia lentiscus L» *Դան. ժգ. 54. Ոսկ. պօղ. Բ. էջ 653 (Թրգմ. յն. σχῖνος հոմանիշից)։*

Դան. ժգ. 54 յիշուած **հերձի** *և* **սղոցի** *բառերի իմաստը չիմանալով՝ Վրդն. դան. ա. էջ 245 այլ բնդ այլոյ մեկնում է. «ասեն՝ հերձաւոր և բոլոր և սղոցաձև տերև և երկայն են ի ծառս. և այլք թէ՝ հերձեալ էին պատուաստ դնել ազնիւս. և թէ՝ զգօս ծառոյ ծայրս սղոցով կրտրեալ էին»։—ՆՀԲ* **հերձ** *լծ. Թրք.* **երբ–մագ** *«պատռել», եարմագ «ճեղքել». իսկ* **խրամատել** *բառի տակ երր.* **ֆարած** *(իմա՛* פרס feres *«ճեղքել, պատռել»)։* Lag. Urgesch. 899 *հլ.* **հերկ** *բառի հետ։* Bugge IF 1, 450 *հնագոյն* ***խերձ**<***խերդ** *ձևից՝ իբր = լիթ.* skérdžiu *«ճեղքուիլ, բացուիլ են», սանս.* scrintu՝ *նոյն նշ.։ Հիւնք. արար.* **ֆէրճ, ֆէրզ** *«պատառուած»։* Patrubány SA 1, 196 *յն.* πείρω *«ծակել»,* πορθμός **«ճեղուց»** *բառերի հետ։ Անդրիկեան, Բազմ. 1905, 512 լծ.* **հերճել**: Petersson, Ar. u. Arm. Stud. 131 *հլ.* prati *«հերձել», ռուս.* пороть *«հերձել, քանդել, պատռել» բայերի հետ՝ հնխ.* per-g'h- *ձևից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 86 շեղտ բառից։—Հերձի ծառի մասին խօսած և ուղիղ մեկնութիւնը տուած են ՆՀԲ, Բանաս. 1902, 379 և Արքինեան, Ածաշնչի տունկերը, էջ 12։*

ԳԻՒ.—Սեբ. **հէրցիլ** *«բարկութիւնից հաքիլ», Երև.* **հէրսած** *«հակառակ, քարս»,* *ինչպէս՝* **հէրսած մարդ է** *«քարս բնութիւն ունի»։*

ՀԵՐԶԻՔ *«յաւելեալ շարախօսութիւն, զրպարտութեան մէջ վերագիրք». Նորագիւտ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 233. «Բամբասօղն վեց կերպիւ շարախօսութիւն առնէ. նախ՝ որ ղընկերին ծածկեալ մեղան յայտնէ. երկրորդ՝ զշարն որ յայլոց լսէ՝ առաւելութեամբ ասէ. երրորդ՝ զի հերձիք ասէ ի վերայ. չորրորդ՝ զծածուկ բարին ուրանայ. հինգերորդ՝ որ զյայտնի բարին պակասեցուցանէ. վեցերորդ՝ զրարին ի չար փոխէ»։*

ՀԵՐՄԵՒԱՄԱՏ. *անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 205. «Այլ բնականքս այս թեպէտև յօդոյ սիմեռիկոնն անուանեալ, սակայն մտաց և մակացութեան ընդունակ. վասն որոյ երկիր զսա կոչել աստուած ոչ պատկառի, հերմեռամած, թեպէտև աշխարհ, բայց ի բազմաց աստուածս» (այլ ձ. հեր մեռամեծ)։—Հատուածի մթութիւնը չի թողնում պարզել բառի իմաստը։*

Արդեօք **Հերմէս** *Աստուծոյ անունից կազմուած մի բարդութի՞ւն է։ (Տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Բ. 193)։*

***ՀԵՐՄԻՍ** *«Փայլածու մոլորակը» Գծ. ժգ. 11. Փիլ. ժ. բան. Արիստ. աշխ. գրուած է նաև* **Երմէս** *Պզատ. տիմ. 102. սրա սեռականն է* **Երմու**, *որ երկու անգամ գործածել է Շիր. 69, 72, իբրև* **Փայլածու** *բառի հոմանիշը. «Տուն Փայլածուի (Երմու»)։*

=Յն. Ἑρμῆς *«Փայլածու»։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Հերշատանք *տե՛ս* **խերշատանք**։

***ՀԵՐՈՍ** *«դիւցազն». նոր գրական փոխառութիւն է. չկայ հին հայերէնում. սրանից են* **հերոսութիւն, հերոսական, հերոսուհի, հերոսամարտ, հերոսաբար**:

=Յն. ἥρως *հոմանիշ ձևից, որից փոխառեալ են նաև ֆրանս.* héros, *գերմ.* Heros, *ռուս.* герой *են* (Boisacq, 329):

+ՀԵՐՈՒ *«անցած տարի» Սեբեր. Ոսկ. գծ. վրք. հց. որից ի* **հերուն հետէ** *Բ. Կոր. ը. 10. Բ. 2. Եփր. բ. կոր. 102, 104.* **հերուին** *կամ* **հերվին** *ամ «երկու տարի առաջ» Խամախ.։*

=*Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ.* peruti- *ձևից. հմմտ. սանս.* पर्वत् parut, *յն.* πέρυσι, *դոր.* πέρυτι, *մբգ.* vërt, *հիռլ.* on hurid, *միռլ.* inn uraid. *հիսլ.* fiǫrð, *պրս.* پار pār, *քրդ.* par, pēr, *աֆղան.* parōs-, *վախի* pard, *օսս.* farä, faron, *բելուճ.* pārī. *լիթ.* pérnai, *լեթթ.* pērns, *գոթ.* faiƕnin jēra, *հբգ.* firni, *անգսք.* fyrn. *բոլորն էլ նշանակում են «հերու», իսկ ալբան.* parviét «*հերուին*». *այսպէս նաև աւստ.* περυσινός։ *Այս բոլորը ենթադրել են տալիս հնխ.* per-ut, per-uti, per-en *համանիշ ձևերը, որոնք կազմուած են հնխ.* per (>*սանս.* párah «*հերու*», *յն.* πέραν) + *հնխ.* wet *և կամ* en «*տարի*» *բառերից. առաջինի համար հմմտ. յն.* ἔτος, *ալբան.* vjet «*տարի*» *են, իսկ երկրորդի համար՝ հմմտ. հոմեր. յն.* ἔνις «*միամեայ երինջ*», δί-ενος «*երկամեայ*», ἑπτάενον «*եօթնամեայ*», τετρα-ένης «*քառամեայ*», *կրետ.* μαλχενὶς «*կոյս*» (Walde 575, Boisacq 774, Trautmann 215, Pokorny 1, 251, BSL № *79, էջ 15 և № 87, էջ 229*)։—*Հիւբշ. 467։*

Ուղիղ մեկնից նախ Windisch. 22, *յետոյ* Böttich. ZDMG 1850, 357, Arica 80, 333, Lag. Urgesch. 291, Müller SWAW 38, 583 *են։ Հիւբշ.* հեռի *բառից։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Համշ. Խրբ. Ղրբ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ. հէրու *(սեռ.* հէրվաց, *Գոր. Ղրբ.* հռնի, հրոնէ), *Ակն. Ասլ.* հերիւ, *Սչ.* հէրուս, *Ագլ.* հո՛րվի, *Սվեդ.* հիրօ, *Հճ.* հիյու, հիյյու, *Զթ.* հիյու, հիրու, *Հւր.* հէրուհի, *Մկ. Վն.* խէրու, *Սլմ.* խէրիւ, *Զղ.* խերվու, *Ոզմ.* խէրօւ, *Մրղ.* խէօրիւ։—*Նոր բառեր են* հերգնամ *(Սլմ.* խէ՛րգնամ, *Վն.* խէրգնում, *Ոզմ.* խրգնամ) «*հերուին*», հերուանձագ, հերնուանց, հերուանիկ, հերնիկ, հեռ *(Վն.* խեռ) «*երկամեայ արու կամ էգ հորթ*»։

ՀԵՐՔ «*վանել, վռնտել, յաղթահարել, դուրս անել*». *արմատ առանձին անգործածական, որից* հերհել «*վանել, վռնտել*» *Խոր. Պիտ. Ոսկ. Հռ.* «*զօրել, դէմ կենալ, տոկալ*» *Փիլ. Սկևռ. լմբ.* հերհիչ *Յճխ. Արծր.* հերհութիւն *Պիտ.* հերհումն *Սրգ.* դիւրահերհելի *նար.—նոր գրականում նշանակում է «մէկի ասածը մերժել, սխալ լինելը ցոյց տալ»։*

ՆՀԲ լծ. երր. հիրխիգ, *հյ.* հեռի, հերիւ, *յն.* արէ՛օ։ Lag. Btrg. baktr. Lex. *56, 39 զնդ.* paraxv «*կռիւ մղել*»։ *Տէրվ. Նախալ. 110* sark «*զարնել, նետել*» *արմատից է դնում զնդ.* hareć, *գոթ.* slahan, *հյ.* հարկ-անել, զարկ-անել, արկանել *և* հերհել։ *Հիւնք.* յարգել *բայից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 85* հերհել *բայից աննմանաձայնութեամբ։ Անդրիկեան, Բազմ. 1905, 512 լծ.* հերձուլ։

ՀԵՑ *(սեռ. -ի) «անուի շրջանակը» Պիսիդ. տող 98. Շիր. Սիւն. քեր. 209=Երզն. քեր. որ և խեց Եզն.։*

ՆՀԲ լծ. հյ. յեց, *Բրբ.* գըլ *և* եիւզ *(իմա՛* qəč «*կոռ*», yüz «*հրես*»)։—Scheftelowitz BB 28, 294 *գոթ.* faskja «*կապ*»։

ԳԻՒ.—Մշ. հեծ, *Բլ.* հեց «*անուի մարմինը կազմող երեք տախտակներից առաջինն ու վերջինը*» *(Ազդ. Հանդ. ե. 56, նկար III), Սլմ.* խեց «*անիւի փայտէ շրջանակը, որի վրայ ամրացած են շառաւիղները*»։

ՀԵՑԻԿ «*հեղիկ*». *այսպէս ունի Բառ. երեմ. էջ 181. ինչ լինելը յայտնի չէ։*

+ՀԵՒ «*հեալը*», *որից* հև *ի* հև «*հեալով*» *(գաւառականներում և արևմտեան գրականում),* հեվ «*հեալը*» *Մխ. Բժշ. 142,* հեալ «*յղանածութիւնից են հատկապէս շնչել*» *միջին հյ. բառ (ԱԲ, Նորայր, Բառ. ֆր. 545 բ),* հեռած *(ձևռ.* հէվռած) «*շնչասպառ հեալով*» *Վրդն. առ. 321 (տե՛ս և տակը գուռ.)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* peu- «*փչել*» *արմատից, որ անշուշտ բնաձայն պէտք է համարել։ Այս արմատը երևում է նաև* pou, pū, pu, phu, bu, bhu *ձևերով. իբրև օրինակ յիշենք ժառանգներից՝ լիթ.* pucziù, pūsti «*փչել*», pūkszcziù, pūkszti «*հեալ*», *լեթթ.* pútu, púst «*փչել, շնչել*», *ռուս.* пыхать «*հեալ*», *լեհ.* puchnąć «*ուժեղ շնչել*», *հիսլ.* fjūk «*ձիւնի բուք*», *մբգ.* pfūchen «*հեալ*» *են են։ (Տե՛ս նաև* փուֆ *և* փուշ, փչել, *ինչպէս նաև* ճոպի)։ *Ժառանգներից շատերի մէջ հնխ.* pu- *և* phu- *խառնուած են իրար, իսկ հայերէնը ճշտիւ զանազանում է հնխ.* pu, peu

>ճևալ և phu->փուֆ, փչել (Pokorny 2, 79):

Վերի մեկնութիւնը տուաւ Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 274—5, որ և ընդունում է* Pokorny *(անդ)։*

Գիմ.—Ալշ. Ախց. Ասլ. Երև. Խրբ. Կր. Մշ. Ռ. Պլ. Սեբ. Սչ. Տփ. Ննխ. ճէվալ, *Տիգ.* ճէվոլ, *Ոզմ.* խէվալ, *Զթ.* ճիվօլ.—*գոյականն է՝ Սչ.* ճեֆ, *Պլ. Սեբ.* ճէֆ, *Ակն.* ճէֆգ.—*նոր բառեր են՝* ճևճևալ, ճևուֆ, ճևոց, ճևոիկ, ճևոոցֆ, ճևֆոտիլ, ճևոիլ, ճևոալ, ճևոաճաճած, ճևօճ, ճևֆոտալ, ճևֆոած, ճևֆոմաճ:

Հեիճն *«անուի հեցը կամ արտաքին շըրջանակը կազմող վից կտորներից իւրաքանչիւրը.* jante» *Սիւն. քեր. 208, Երզն. քեր. Աշխ. Առ. կամեն.։*

Նշ՛ր մեկնում է «բառ անյայտ. թերևս որպէս առամունք միջինք». Աբ՛ հանելով ճևալ *բառից «միջին ակռաներ՝ որ հևալու առեն կը բացուին»։ Նշանակութիւնը վերի ձևով ճշտեց Նորայր, Բառ. ֆր. 709 ա, ուր և տե՛ս բառիս վկայութիւնները։*

Հեիճլ *«դանդաղիլ, յապաղիլ, յերկուանալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 181։*

*ՀեփՏԱՍԱԴՐՈՆ *«Մեծ Արջի համաստեղութիւնը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. ա. 682. «Հիւսիսային աստեղքն, որ յոմանց արքտորոս կոչին, իսկ յոմանց հեփտասագրոն»։*

=Յն. ἑπτάστερος, -ον *«եօթնաստղեան» բառն է, որ ձեռագիրների մէջ սխալ գրչութեամբ այս ձևն է ստացել՝ փոխանակ *ՀեփտաստեռոնՀ:—Աճ.

*ՀՉՍՐ, ի–ա *հլ. «շատ զօրաւոր, հուժկու, ուժով» ՍԳր. որից* հզօրանալ *ՍԳր.* հզորացուցանել *Եփր. Թգ.* հզօրիչ *ՍԳր.* հզօրեղ *Բ. մաթ. գ. 26.* հզօրագոյն *ՍԳր.* հզօրապէս *Եղիշ. Խոր.* անհզօր *«տկար» Առակ. ղ. 26։*

=Կազմուած է զօր *բառից ի– մասնիկով, որ գտնում ենք նաև հլու, հմուտ բառերի մէջ։ Այս մասնիկը կարող է բնիկ հայ լինել, բայց կարող է նաև իրանեանից փոխառեալ լինել. (բաւական ճոխ գործածութիւն ունի իրանեան լեզուների մէջ)։ Վերջին պարագային՝ յարմարագոյն է ենթագրել, որ բառը ամբողջապէս փոխառեալ լինի պհլ.* *huzōr=զնդ.* *huzāvar *հոմանիշից։ Բայց նոյն իսկ եթէ հայակերտ կառուցուածք էլ լինի, իրանեան ազդեցութիւնը անհերքելի է (տե՛ս* Meillet MSL 21, 187):—*Հիւբշ. 180։*

Peterm. 26 *պրս.* خزر xzr *ձևի հետ, որի ինչ բառ լինելը յայտնի չէ։* Windisch. 22 *սանս.* sa, sam, sama *«հետ, ընդ»+*զօր: Lag. Btrg. baktr. Lex. 37 *զնդ.* huzāvarə, *նաև իրանեանից փոխառեալ արաբ.* hizabr *«առիւծ»։* ZDMG 1868, 330 *համեմատում է պհլ.* هزوارش huzwāreš *բառի հետ և փորձում է մեր բառի միջոցով սրա բնթերցումը ճշտել։ Պատկ. Խոր. աշխ. 1877, 71 զնդ.* huzāvarə: *Տէրվ. Նախալ. 73 և Հիւնք.* զօր *բառից՝ ի մասնիկով։*

ՓՈԽ.—Կայ արաբ. حزّاور ḥazavvar *«հրզօր, ուժեղ մարդ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 818), որ եթէ իրանեանից չէ, կարող է հայերէնից միայն փոխառեալ լինել։*

Հէգ *(սեռ. ի, յետնաբար ո հլ.) «թշուառ, խեղճ, ողորմելի» Ոսկ. Ես. և փիլիպ. յհ. ա. 42. Սեբեր. որից* հիգութիւն *Ոսկ. մ. բ. 15.* հիգացեալ *Փարպ. Պիտ.* հիգամորթ *Մագ.* հիգագոյն *Պիտ.* հիգական *«թշուառական» (նորագիւտ բառ) Յիշատ. 1409, 1413 թթ. (տե՛ս Արրտ. 1913, էջ 751, 753)։ Արմատը գրրւում է նաև* հէֆ, հեֆ *ձևերով և վերի բոլոր ածանցները կան նաև* հիֆ– *ձևով։ Ուղղագոյնն է անշուշտ* հէգ:

Նշ՛ր հեծ *արմատից իբր «հեծեծելի»։ Տէրվ.* Altarm. 7 փէֆ, փիճ, փեճատ *ձևերի հետ՝ կցում է սանս.* phēna *«փրփուր», հսլ.* пѣна *«փրփուր», յն.* σπῖλος *«աղտ, կեղտ»,* πίνος *«կեղտ» ձևերին։ —Յազրճեան, Արևելք, 1884 նոյ՛ 16 սանս.* hikk *արմատից։ Հիւնք. արաբ.* haqīr *«խեղճ»։ Հ. Յ. Աւգեր. Բազմ. 1912, 294 եգիպտ.* hyksos *«Հիւքսոս» ազգանունի հետ, որ համարում է նախապէս «իշխան»։* Petersson, Ar. u. Armen. Stud. 95 *լիթ.* paĩkas *«վատ, ապուշ»,* piktas *«չար».* pỹkti *«բարկանալ», հիռլ.* óech *«թշնամի», գոթ.* faih

«խաբէութիւն» բառերի հետ՝ հնխ. peik- «խաբել, խաբուիլ» արմատից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 89 հեզ բառից։ Պատահական նմանութիւն ունին լատ. sēgnis «դանդաղ, ծոյլ, հեղգ», յն. ἴσχα «կամաց, դանդաղ» ևն, որոնց նախաձևն է հնխ. sēk′ կամ sēq- (Boisacq 317):

*Հէճ «մահմետականների ուխտադնացութիւնը՝ իրենց սուրբ քաղաքները». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Մխ. անեց. էջ 36, իբրև յատուկ անուն. «Երթեալ ի Հէճն և ի Մաքայ, մատուցանեն նուէրս դիւաց». Համմ. նաև հանի «ուխտաւոր» Նոր վկ. էջ 143 (ԺՒ դարից)։

=Արաբ. حَجّ ḥajj «ուխտագնացութիւն», حاجى ḥājī «ուխտաւոր»։

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ, ծան.։

*Հէն, ի հլ. «աւազակ, հրոսակ, թշնամի բանակ, յարձակող՝ արշաւող գունդ» ՍԳր. Եղն. Ոսկ. եփես. «ասպատակութիւն, յարձակում» Արծր. Խոր. Ղևոնդ. «աղաղակ, գոռում գոչում» Ոսկ. մ. ը. 17. որից հիներ «աւազակութիւն անել, թալանել» Եղիշ. լրբր. 264. հիներաբար Եղիշ. հինախաղաց ճառընտ. հինական Գէ. հս. հիմնահաւալած կաղանկտ. հինահար Տօնակ. վրդն. ծն. ծովահէն (նոր բառ), հինաւանդ «աւերիչ» Ոսկ. հս. 97, հինաւանդութիւն «թալան» Ոսկ. հս. 81 (այս երկուսը կարդալ հինավանդ, հինավանդութիւն՝ հին+վանդել բառերից). կայ նաև հենախաղաց Պիտ.։

=Պհլ. hēn «բանակ, թշնամի բանակ. 2. դև, սատանայ», արևել. իրան. hīnī (MSL 18, 90), հպրս. hainā- և գնդ. haenā- «թըշնամի բանակ», սանս. sēnā «բանակ» (Horn էջ 281)։—Հիւբշ. 180։

Ուղիղ մեկնեց նախ Եւրոպա 1849, 200՝ համեմատելով հպրս. hiθa, հէնա ձևի հետ։ Böttich. Arica 76, 248 և Lag. Urgesch. 992 սանս. sāinya։ Ուղիղ են նաև Spiegel, Litter. 376, Müller. SWAW 38, 594, Lag. Btrg. baktr. Lex. 31. Justi, Zendsp. 312 են։ Հիւնք. հանել բայից։ Մառ. ИАН 1913, 329 և ЗВО 1925, 677 վրաց. ցխենի «ձի» (վերլուծելով իբր ց-խենի), յն. Ἐνίοχοι ձևերի հետ. իսկ Сред. передвиж. 20 լտ. hinnus «ջորի», յն. ἴννος «ջորի», ὄνος «էշ» և ἵππος «ձի» բառերի հետ։

+Հէն «հիւսել, հիւսուածք». սրա հէնք ձևր գործածական է արդի գաւառականներում. այս արմատից են բխում հիներ «հիւսել» Ոսկիփ. հինուշ Ոսկ. ղկ. հինուած «հիւսք, հիւսուածք» ԱՔ. աւելի հին ձևեր են հեենուլ Թղ. պրոկղեայ ՀԱ 1921, 18, եփր. ծն. Ոսկ. յհ. բ. 39 (որի ռամկականը համարւում է հեենել Լմբ. սղ.) և հաենուլ Յոբ. ժ. 11, Կոչ. 156, 224. ըստ այսմ արմատը ներկայանում է հայերէնի մէջ հէն, հեն, հաե ձևերով։

=Բնիկ հայ բառ. ցեղակիցներից համմտ. լիթ. pinù, pìnti «հիւսել», pántis «տաւարի ոտքը կապելու չուան», լեթթ. pinu, pît «հիւսել», հպրուս. panto «տրցակ», հսլ. pęti (pĭnǫ) «լարել», pąto «կապոց», չհխ. pnu, pnouti «լարել», ռուս. за-понъ «գոգնոց», հիսլ. spinna, գոթ. spinnan «մանել, հիւսել», հբգ. և անգսք. spannan «լարել», գերմ. spannen, spinnen, անգլ. spin «հիւսել, մանել», յն. πάτος «Հերայի հագուստը», թերևս և յն. πένομαι «տաժանագին աշխատիլ, աղքատ ապրիլ, պատրաստել» (անցնելով «*ձգտել, իր ուժերը լարել» նախանշանակութիւնից)։— Այս բոլորը տալիս են հնխ. pen-, spen- «մանել» արմատները, որոնք պիտի տային հայերէնում *հին-, հինուլ>*հնուլ, ըստ Meillet, Esquisse 32 ու-ի պատճառով դարձած յետոյ հեենուլ, որից էլ հէն-f.—արմատի ստորին pn̥- ձայնդարձն էլ տալիս է հաե- (Boisacq 752, 767, 781, Walde 572, Trautmann 219, Pokorny 2, 660):—Հիւբշ. 466։

Տէրվ. Նախալ. 104 հեենուլ, հիւսել, հեսկ, հիւսկէն ձևերը դնում է հնխ. vi, vā արմատից, իբր սանս. vā, հսլ. viti, լտ. viere են։ Հիւնք. արաբ. ṭann «գիտութիւն» բառից։ Ուղիղ մեկնեց նախ Müller, Armen. VI, էջ 4։ Հիւբշ. 466 առարկում է թէ հնխ. pen- պիտի տար հյ. *հենուլ, իսկ էջ 520 խնդիր է հանում թէ հնխ. -en- ամէն անգամ հայերէնի մէջ դառնո՞ւմ է -հե-. եթէ այո, ուրեմն

ճեճուլ<*ճեաճուլ կամ *ճեսճուլ, ինչպէս զգեճուլ:—Karst, *Յուշարձան 401, 404* սումեր gin «հիւսել»:

ԳԻՒ.—*Ալշ. Հճ. Մշ.* հինել, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Ռ. Սեբ. Տիգ.* հինէլ, *Ասլ.* հինէ՝լ, *ՋՓ.* հինիլ, *Սվեդ.* հինիլ, *Համշ.* հինուշ, *Խրբ.* հէնիլ, *Ջղ. Սլմ. Վն.* խինել, *Մրղ.* խինէլ, *Մկ.* խինիլ. *Նոր ձևեր են՝* հէնիմ, հինած, հինուածք, հինուրել:

Հի. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* հիանալ «սքանչանալ, վախեցած և զարմացած մնալ, երկիւղահառն զմայլիլ» *ՍԳր. Մանդ.* հիանալի «սքանչելի» *Ոսկ. յհ. բ. 20.* հիացումն *Երզ. ղ. 3, 9.* հիացուիւն *Սերեր.* հիացուցանել *Խոր. Իգն.* հիաւուրաշ *ճառընտ.* հիւսզարհուր *Գնձ.* բազմահիացիկ *ճառընտ.* գեղեցկահիացք *Ուռհ.* կանխահիաց *Նար. 162.* հիապատում, հիասացուիւն *Սիւն. քեր. 206.* հիացք, հիասմանչ, հիասքափուիլ, հիասքափուիւն *(նոր բառեր) են:*

Նշ՝ Ի լծ. լտ. hio, hians «բերանը բաց մնալ» և *հյ.* աեի, վեի, իե, եիմ: *Հիւնք. պրս.* հույ: *Մառ,* Яз. и Лит. I, *էջ 238* հայել *արմատից, որ տե՛ս:*

ԳԻՒ.—*Ննխ. Տփ.* հիացք «հիանալի»:

+Հի «ի՛նչ, ի՛նչ բան». *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* հի՛բար, հի՛զան, հի՛կէն, հի՛պէս «ի՛նչպէս, գիա՛րդ, ո՛րպէս» *Պորփ. Նիւս. կազմ. Արիստ. ստորոգ. այս ձևերը ոսկեդարեան մատենագրութեան մէջ գոյութիւն չունին, բայց կայ* հի՞մ «ինչո՞ւ» *Թուոց ժա. 11, Սիր. լԲ. 21, նգն. որ նոյն հի արմատի տրական հոլովն է:*

=*Մեկնութիւնք տե՛ս ի:*

ՆշՒ արմատն է ի՛նչ, գի՞նչ, ո՞ր իրչ: *Հիւնք.* հիբար *դնում է յն.* ὅπερ, *իսկ* հիբար-*ից էլ շինուած* հիզան, հիկէն, հիպէս: *Ուղիղ մեկնեց* Meillet MSL 7, 162 *և* 10, 282, *վերջին անգամ* ZAPh 1, 148:

ԳԻՒ.—*Երև.* խի՞, *Ղրբ.* խէ՞, *Դվ.* հէ՞ր «ինչու»:

ՀԻԱԻՍ «մի տեսակ բոյս է, որ շան կծածին իբր դեղ է գործածւում» *Բժշ. անյայտ բառ. ունի միայն Հռուս. § 1686:*

ՀԻԴԻԳԷՍ «երկիւղ». *ունի միայն Բառ. հբեմ. էջ 181:*

*ՀԻԴԻԱ, *որ և* հիւդրա, հիւդրաս, հիդրայ, հիդրիայ, հիարիա «ջրային օձ կամ բազմագլխի առասպելական վիշապ» *Եւս. քր. Ոսկ. մտթ. ղ (տես.* հիդրի), *Նոննն. 56, Կանոն, էջ 84, 162:*

=*Յն.* ὕδρα, *որից և լտ.* hydra *նոյն նշ.· Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ:*

ՀԻԼ կամ ՀԷԼ «փոքր կակուղէ, լտ. cardamomum minus, *ֆրանս.* petit cardamome» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1685:*

=*Պրս.* هيل hīl *կամ* hil «մի տեսակ համեմ է, հիլ»:

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ. 1924, էջ 551:

*ՀԻԼԱ. «ննջգուիւն» *Ուռհ. 239 (Եւ այլ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին զչարութիւն, զհիլա և զամենայն ճանապարհս չարեաց սիրէին): Նոյն բառն է և* հիլայ (հիլայի) «ամբաստանութիւն» *Անսիզք 31, 33, Սմբ. դատ. 42. որից* հիլայել «ամբաստանել» *Անսիզք 31, 33,* հիլայած «ամբաստաննալ» *Անսիզք 29 (բոլորն էլ նորագիւտ բառեր, որ չունի ԱԲ):*

=*Արաբ.* حيلة ḥīla *(աղաւ.* hille) «ննջգութիւն, խարդախութիւն»:—*Աճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. 194:

*ՀԻԼԻՈՆ, *որ և* հիլիօն, հալիոն «ծնեբեկ, asparagus» *Բժշ. Վստկ. 38, 43, 105, 170 ունի միայն ՀԲուս. § 1591 և § 1687, որից* հիլիոնուտ «ծնեբեկ շատ եղած տեղ» *Վստկ. 39 (նորագիւտ բառ):*

=*Արաբ.* هليون haliūn «ծնեբեկ» *(տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 719):*

Վաստակոց գրոց հրատարակիչը համարում է պրս., բայց առանց բառը յիշելու Ուղիղ մեկնեց Աճառ. (անտիպ), որից անկախաբար Նորայր ՀԱ. 1925, 301:

Հիլոս *տե՛ս Հիւղոս:*

ՀԻՂԱԳ «հուն, չում» *Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 1688:*

Հիմ *տե՛ս Հի:*

ՆՀԲ «ի ձայնէս իմն, ի՞նչ, ի՞մ իմիք»: Մ. Ս. Դաւիթ-Բէգ, Յուշարձան 398 գւո. իմալ *ձևի հետ՝ գալլ.* hafal, *իռլ.* amal, *հբրհտ.* amal, *հիռլ.* samail, *գոթ.* sama, *հսլ.* samŭ, *սանս.* samás, *լտ.* similis *ևն։*

Հիմ *«հիմայ» տե՛ս* Հեմ։

ՀԻՃԱԿ *«կռիւ, վէճ», որից հիներ «կռուիլ, վիճիլ». գիտէ միայն ՀՀԲ. անստոյգ բառ. նոյն են նաև Բառ. երեմ. էջ 182 հիներ «խռովել կամ վիճել», հի ծ եալ «խռովեալ» (առաջիններդ ճ ձայնով, վերջինը՝ ծ)։*

Կարելի՞ է արդեօք սրանց հետ միացնել՝

ՀԻՃԿԱԼ *«սպառնալ»? անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Քերդ. քեր. 177. «Սպառնական, որ սաստէ միւսումն. տիր, տի, զի տիրդ հիճկալ կոչի»։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ, էջ 110)։*

Համմտ. նախորդը։ Կապ ունի՞ն արդեօք հետևեալ բառի հետ։

ՀԻՄԷՆ, ի–ա հ. կամ ՀԻՄԵՆԻ (սեռ. –ենոյ, դրծ. –ենաւ) «հեղուկների մի չափ է. դրաման». ուղղական ձևով չեն գործածուած. ունինք միայն եզ. դրծ. հիմենեաւ (այլ ձ. հիմեենաւ) Ել. լ. 24 և սեռ. հիմենի Ղևտ. իգ. 13 (իբր ձեռագրական տարբերակ)։ Ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. ἡμίνα «մի տեսակ հեղուկաչափ», որից փոխառեալ է նաև լտ. hemina՝ *նոյն նշ. յոյն բառը ծագում է ἡμι- «կէս» բառից և նշանակում է բուն «կէս (չափ)»* (Boisacq 324—5). *այս բառը սակայն Ս. Գրքի յունարէն թարգմանութեան մէջ բնաւ չէ գործածուած* (Sophocles 565 *չէ իսկ յիշած բառս), թէև կայ ասորի թարգմանութեան մէջ՝ Թուց ժե. 7՝* ܗܝܡܝܢܐ hemīna *ձևով (տե՛ս* Brockelmann *84 ա), որ փոխառեալ է յունարէնից։ Այնտեղ, ուր հյ. թարգմանութիւնը ունի հիմէն, յոյն օրինակը դնում է* εἴν, εἶν, ἴν, *որ փոխառեալ է եբր.* הין hīn *ձևից և այս էլ եգիպտ.* hȝn(w) *բառից, որ նշանակում է «պտուկ. 2. չափ»* (Gesenius *1921, էջ 180)։ Ըստ* Sophocles *598 յն.* ἴν, *որ տանում է երկու աստիկեան χόες, գործածուած է Ս. Գրքում՝ հետևեալ տեղերը. Ել. իթ 40 (երկիցս), Լ. 24, Ղևտ. իգ. 13, Թիւք ժե. 4 և Եզեկ. դ. 11, որոնց մէջ հյ. թարգմանուած է միշտ դռրակ, բացի վերոյիշեալ տեղերից. յն. տարբերակներում էլ չկայ ἡμίνα ձևը։*

ՀՀԲ համարում է լտ. և յն. հէմիճայ։ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. 419 յն. ἴν, *ՆՀԲ եբր.* hīn, *յորմէ յն.* ին։ *Հիւնք. յն.* χήμιν *«մի տեսակ հեղուկաչափ»։*

ՀԻՄՆ, ն *հ. (-ման, -մունք, -մանց) «հիմ, հիմք» ՄԳր. Ագաթ. Մծբ. Ոսկ. մ. բ. 18. որից հիմնաճալ Վիպաս. երգ. Ագաթ. Կիւրղ. ծն. հիմնացուցանել Փարպ. կամ հիմնեցուցանել Պիտ. հիմնել Խոր. հիմնափոր Մծբ. հիմնարկութիւն Ագաթ. հիմնադրել Յհ. կթ. հիմնայատակ Զենոբ. հաստահիմն Ա. պետ. ե. 10. Կորիւն. անհիմն Ոսկ. յհ. ա. 1. խորահիմն Անան. նկնդ. շարժահիմն Ագաթ. ինհնահիմն Շնորհ. նկնդ.—նոր բառեր են՝ հիմնական, հիմնարկու, հիմնովին, հիմնատրապէս, հիմնադրամ ևն։*

ՆՀԲ իմն կամ վէմ բառից Bopp, *Համմտ. քերակ. 1, 363 (Ֆրանս. Թրգմ. 1, 397) սանս.* sīman *«սահման», որ ծագում է* si *«կապել» արմատից* -man *մասնիկով։ Նոյնը յիշում է* Müller SWAW 44, 561: *Բագրատունի, Քերակ. զարգաց. էջ 74 հի «իր, առարկայ» բառից՝ –մն մասնիկով. բուս այսմ բառս ճշտիւ նոյն է դալիս իմն ձևի հետ.* Justi, Zendspr. 324 *զնդ.* hi, *սանս.* si *«կապել» արմատից։ Հիւնք. հիմէն «հարսանեաց դիք» ձևից։ Ր. Խալաթեանց ՀՄ 1902, 398 ասուր.* temenu *հոմանիշից։* Meillet, Esguisse 3 *խօսելով այն հանգամանքի վրայ, որ հիման սեռականի մէջ ի պահուած է, սրա պատճառը համարում է ն բաղաձայնի տկարութիւնը. բայց* JAs. 1904, 499 *մերժելով այս կարծիքը, գտնում է որ առհասարակ ի, ու ձայնաւորները յաջորդ նգ խմբի մօտ՝ մնում են. սրանից հետևում է՝ որ հիմն բառի նախաձևը պիտի լինի *հիմնմն<*հինգմն։* Pedersen, *նը-*

պատ 19 ին մասնիկով մնալ բառից. իսկ Հայ. դր. լեզ. էջ 140 հենում բայի հետ, ինչպէս հսլ. osnova «հիմ» ծագում է snuti «առէջները պրկել» բայից։ Patrubány ՀԱ 1908, 212 հնխ. se- «արկանել, սերմանել» արմատից, ինչ. լտ. semen «սերմն»։

ԳԻՒ.—Ալշ. Երև. ՋԹ. Մշ. Սեբ. Տիգ. հիմ, Ագլ. Ախց. Կր. ՀՃ. Տփ. հիմ, Սվեդ. հէմ, Սլմ. Մկ. Վն. խիմ (սեռ. Մկ. Վն. խման), Ոզմ. խէ՝մ, Ջղ. խեմ. — Ատանայի Թրքախօս Հայերն ունին հիմ ձևը.—Խրբ. կայ հիմնահատագ բլիս անէծքը։

ՓՈԽ.—Քրդ. خێم xim «հիմ, քարակոյտ» (Justi, Dict. Kurde էջ 168), Ս. Գրքի քրդերէն թարգմանութեան մէջ՝ հիմ. ինչ. Հիմէ ուի լը սէր գէվըր տանի (Եդ հիմն ի վերայ վիմի). Զըմա քո հիմէ ուի լը սէր գէվըր գավի պու (Զի հաստատեալ էր հիմնն ի վերայ վիմի). Ղուկ. գ. 48. Լը սէր արտէ պէ հիմ մալ չէ տքm (Շինիցէ տուն ի վերայ հողոյ առանց հիման). Ղուկ. գ. 49.—Թրք. գւռ. Եւդ. Տ. Ատն. ինչպէս նաև Երևանի՝ خێم him «հիմ», اوڭ حیمی evin himi «տան հիմը» (այսպէս նաև Ատանայի Թրքախօս յոյների մօտ. Բիւր. 1899, էջ 798 և Յուշարձան 329).— ն. ասոր. xim «հիմ» (տե՛ս Калашевъ, Айсорско-русск. слов. էջ 389)։

+ՀԻՆ, ո հլ. «հին, մաշած, հնացած, վաղեմի, հին ժամանակի» ՍԳր. Եւս. քր. Եզն. որից ի ճնումն Ոսկ. յհ. ա. 41. ՅՀ. իմ. ի ճնմէ Ածաբ. Երզն. քեր. հնանալ ՍԳր. Եզն. հնացուցանել ՍԳր. հնական Ագաթ. հնութիւն ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ. հնամի Ագաթ. հնոտի Վրք. հց. հնագոյն Նոնն. հնախօս Խոր. ևն. նոր բառեր են՝ հնակարկատ, հնավաճառ, հնադարան, հնադարեան, հնահաւատ, հնահաւատք, հնագլուխ, հնաբանութիւն, հնաձէր, հնաւանդ, հիներկաբանութիւն, հնածն, հնաւուրց, հնածէս ևն։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. seno- ձևից. ցեղակիցներն են՝ սանս. सन sána- «հին», sanaká «հնաւուրց, վաղեմի», զնդ. hanē «հին, ծեր», hana «ծեր կին», պհլ. hān, յն. ἔνος «հին», ἔνη «նոր լուսնի նախորդ օրը, որ է հին ամսի վերջին օրը», լտ. sen-ex, հյց. senem «ծեր», senior «երիցագոյն», senatus «ծերակոյտ», գոթ. sin-eigs «երէց», sinista «երիցագոյն», լիթ. sẽnas «հին», seniaĩ «ի հնուց, վաղուց», լեթթ. sens «ծեր», sen «վաղուց», հիոլ. sen, sinin, կիմր. կորն. hen, բրբտ. hen «հին, ծեր» (Walde 698, Boisacq 257, Ernout-Meillet 882, Trautmann 256, Pokorny 2, 494): Հայերէնի մէջ նախաձայն s ընկնելով՝ հնխ. seno- տուել է նախ *ին, բայց պարթևական շրջանին ապդուելով իրանեան ձևերից՝ խաշաձևման օրէնքով ստացել է նրանցից՝ նախաձայն հ (ըստ Meillet MSL 21, 187). Համմտ. հում։— Հիւբշ. 467։

Windisch. 22 san արմատից, նաև լտ. senex: Ուղիղ են մեկնում Böttich. Arica 17 (այստեղ յիշուած է նաև բարեկ. σενάγην, σεμνήν ըստ Հեսիւքոսի). Lag. Urgesch. 445, Müller SWAW 38, էջ 583, Justi, Zendsp. 319 բ, Հիւբշ. KZ 23, 15, Տէրվ. Նախալ. 110 են։ Նագրճեան, Արեւելք 1884 նոյ" 16 սանս. hā, hīna: Müller WZKM 10, 276 հանի բառի հետ իրանեանից փոխառեալ է համարում, նախաձայն հ-ի պատճառով։ Մերժում է Հիւբշ. 467, որովհետև փոխառութեան պարագային պիտի ուննայինք *հան ձևը։ Հիւնք. յն. οἶνος «գինի» բառից։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ասլ. Երև. ՋԹ. Խրբ. ՀՃ. Համշ. Կր. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ւ. Սեբ. Սչ. Տիգ. Տփ. հին, Սվեդ. հէն, Ագլ. հայն, Մկ. Մրզ. Ջղ. Սլմ. Վն. խին, Ոզմ. խէ՝ն.—Նոր բառեր են հինծխնաք, հինօրէնք, հինկին, հնամաշ, հինուր, հինումին, հինուստական, հինուց, հնօք, շորահին։

*ՀԻՆԱՅ, ի հլ. «մի տեսակ բոյս և նրա ներկը. լտ. ligustrum nigrum՝ ըստ հին բուսաբանների, իսկ այժմ՝ lawsonia inermis L» Բժշ. Նմանութեամբ «արմատների մազմզուքին կպած կարմիր հողը» Վստկ. 129, 139, 153, 178։

=Արաբ. حنّاء hinnā «հինայ». այս բառը անցել է նաև շատ ուրիշ լեզուների (al

յօդով կամ առանց յօդի). ինչ. գերմ. Henna-Kraut, սպան. alcanna, alheña, alfena, իտալ. alchenna, ֆրանս. hennè, բուլգ. kŭna, ռուս. хна (Berneker 530), արևել. թրք. خِينَا xina, տճկ. qəna, քրդ. hene, xene ևն, բոլորն էլ նոյն նշանակութեամբ։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Նոր փոխառութեամբ սովորաբար **հինա**, *որից կազմուած են* **հինադրէք, հինադրօճ, հինամօճ, հինայտուփ, հինայուան, հինայուել, հինաւիան, հինաւուն**։

+**ՀԻՆԴ**, ի *հլ. (յետնաբար կայ նաև յգ. գրծ.* **հնգօք**) «*հինգ*» *ՍԳր. Ես. քր. ածանցման մէջ մտնում է* **հինգ-, հնգա-** *և* **հնգե-** *ձևերով. օրինակ՝* **հնգետասան** *ՍԳր.* **հնգամարտիկ** *Ոսկ. մ. բ. 8.* **հնգեկան** *Ագաթ.* **հրեշտակին Գ. թագ. զ. 32.** *Ոսկ. ա. կոր.* **հնգիցս** *ՍԳր. Ես. քր.* **հինգամեայ** *Եզն. Ես. քր.* **հինգամեան** *Ղևա. իէ. 5, 6.* **հինգաշարժ** *Ոսկ. ա. կոր.* **հինգերորդ** *ՍԳր.* **հինգկնել** *Ագաթ.* **հինգյարկանի** *(նոր բառ) են։ Միևնոյն բառը թէ՛ սղուած ձևով և թէ առանց սղման գործածւում է միևնոյն ձևագրում. օր. Կրկնագիր Ագաթ. էջ 72 ա, 78 ա ունինք* **հինգետասան**, *իսկ 68 բ՝* **հնգետասան**. Meillet JAs. 1904, 497 *ցոյց է տալիս, որ սրանց մէջ հնագոյնն է առանց սղման ձևը, որովհետև հյ. ի, ու ձայնները նգ խմբի մօտ չէին սրդւում։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* penkʷe *ձևից. ցեղակիցներից համմտ. սանս.* páñca, *գնդ.* panča, *պհլ.* panč, *պրս.* پنج panǰ, *քրդ.* panǰ, penj, *աֆղան.* pinja, *օսս.* fonj, fonǰ, *թոխար.* pañā, *քուչ.* piś, *յն.* πέντε, *ևոլ.* πέμπε, *պամփիլ.* πέδε, *լատ.* quinque, *իտալ.* cinque, *ֆրանս.* cinq, *սպան.* cinco, *ռում.* cinci, *գոթ.* fimf, *հբգ.* finf, fimf, *գերմ.* fünf, *հհիւս.* fimm, fim, *անգսք.* fīf, *անգլ.* five, *հոլլ.* vijf (Kluge 159), *լիթ.* penki, *լեթթ.* pieci, *հսլ.* pętĭ, *ռուս.* пять, *հիռլ.* cóic, *կիմր.* pimp, *կորն.* pymp, *բրբտ.* pemp, *ալբան.* pesɛ, *բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Բայց բառիս բուն նշանակութիւնն էր «մի ձևոքի հինգ մատերը» և ըստ այսմ կապւում է հիռլ.* cōicer «*հինգ թիւ*», *գոթ.* figgrs, *հիսլ.* fingr, *անգսք.* finger, *հբգ. հաաքս.* fingal, *գերմ.* Finger «*մատ*» *բառերի հետ* (Boisacq 767—8, Walde 635, Ernout-Meillet 804, Trautmann 213, Horn § 328, Pokorny 2, 25): *Հայերէնի մէջ հնգետասան բառի ե ձայնը ներկայացնում է ճշտիւ հնխ.* penkʷe *ձևի վերջաձայնը, իսկ* **հինգեր-որդ**՝ *գերմ.* Finger *են ձևերի վերջավանկը* (Meillet MSL 9, 157 *և մանաւանդ* BSL № 86, *էջ 36*)։—*Հիւրշ. 467։*

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, As. pol. *1823, էջ 107. յետոյ* Brosset JAs. *1834, 383 են, ՆՀԲ (որ սակայն աւելացնում է նաև երր.* խամշ, *արաբ.* խամսէ), Peterm. 37, 153, Windisch. 22, 31, Böttich. ZDMG 1850, 357, Müller 35, 198, *Տէրվ. Նախալ. 94, 132, Լեհդու 175, Երկրագունտ Ա. 46, Մասիս 1882 յունիս են։*—**Հինգ, հնգետասան** *են ձևերի քննութեան նուիրուած մի բնդարձակ յօդուած ունի* Meillet MSL 9, 157—9: Karst, *Յուշարձ. 401, 405 սումեր.* kinge «*ձեռք*»։

ԳԻՒ.—Ալլ. Ակն. Երև. Զթ. Հճ. Համշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. Տփ. **հինգ**, *Ախց. կր.* **հինկ**, *Շմ.* **հինգ**[1], *Խրբ.* **հինճ**[1] *(բայց բց.* **հինգէն** *են), Ասլ.* **հինգ, հինճ, հիյ, հի*** *(օր.* **հի*շա*** *դի «հինգշաբթի») Զգ. խինգ, Մկ. Մրդ. Սլմ. վն. խինգ*[1]*, Ոզմ. խէ՛նգ*[1]*, Սվեդ. հէնգ, Դոր. հէ՛նգը, Ղրբ. հէնգ*[1]*, Անտ. հէնճ*[1]*, Ագլ. հանգ*[1]*։ Նոր բառեր են՝* **հինգանոց, հինգաչք, հինգտրաֆանի, հինգեղրայր, հինգում**։

Հինդք *տե՛ս Հնդիպէ։*

Հինել *տե՛ս Հէնել։*

+**ՀԻՆԻՆԱԼ** «*հևալ*». *Փիլ. իմաստ. 80. Նիւս. կազմ. գրուած նաև* **հինանալ** *ԱԲ. որից* **հինինում** *Նիւս. կազմ. Փիլ. յովն. 603։*

=*Բնիկ հայ բառ, որի հնխ. ձևը որոշուած չէ դեռ. գրւում է* pneu- *կամ* pn- *սկզբնաւորութեամբ ուրիշ ձևեր, որոնց նշանակութիւնն է «շնչել, հևալ». համմտ. յն.* πνέω, πνείω, πνεῦσαι, «*փչել, շնչել, հևալ*», πνεῦμα «*շունչ, քամի*», πνοή, πνοά «*շունչ, թեթև ձայն, արտաշնչութիւն*», *հբգ.* fnehan, *մբգ.* phnehan «*շնչել, ուժգին փչել*», *հիսլ.* hnȳsa «*հևալ*», *անգսք.* fnēosan «*փռշտալ*», *մբգ.* phnūsen «*հևալ, փռնգտալ*», *գտ. նորվ.* fny

sa *«քմծիծաղ տալ» են։ Այս բոլորը համաբուելով բնաձայն՝ ենթարկուել են կամայական ձայնափոխութեանց. այսպէս նաև Հայերէնը, որի աւելի հաւատարիմ պատկերը տե՛ս տակը գւո.* (Boisacq 798, Pokorny 2, 85):—*Աճ.*

Բառ. երեմ. էջ 182 սխալմամբ գրում է հիհիհել «շտապել կամ ոքառել», որին հետևելով ՀՀԲ՝ «խուճապել, շտապել, փութալ». իսկ ՓԲ առանց մտադրութեան՝ առանձին բառ կարծելով՝ երկուսն էլ ջոկ ջոկ նշանակում է.—Տէրվ. Նախալ. 61 հնխ. an *«շնչել, փչել» արմատից. Համմտ. սանս.* an, *գոթ.* anan: *Հիւնք.* հնոց *բառից՝ Փառնակ, Անահիտ 1903, 130 գոթ.* fōn *«կրակ» բառի հետ։*

ԳԻՒ.—*Խրբ.* հնհնալ *«հևկևկալ», Եւդ. Պլ. Մն.* հնհնալ *«մորմոքիլ, սիրտը ցաւիլ, հոգս անել», որից նաև* հնհնուր *(Պլ.* հունհունուր, *Ննխ.* հունհունուգ, հումհումուգ. *կայ նաև Առն. Խրբ.) «մտատանջութիւն, մորմոք, վախ, սրտի ցաւ». արմատական ձևով ունինք* հնիկ հնիկ ըլլալ *«հեծեծել, հևալ»։*

Հինչ *տե՛ս Հունչ։*

***ՀԻՊԱՏԻԿԵԱՆ** «մի տեսակ հալուէ» (նորագիւտ բառ). մէկ անգամ ունի Պատմ. ալեքս. էջ 185։*

=Յն. ἡπατικός *«լերդական», որից ֆրանս.* hépatique *«լերդական. 2. մի տեսակ հալուէ» (այս երկրորդ իմաստը յունարէնի համար չեն նշանակում ո՛չ* Bailly 905‴ *և ոչ* Sophocles 566″).

Գտաւ ու մեկնեց Նորայր, Բառ. ֆրանս. 637 բ։

Հիպոն *տե՛ս Ոպոն։*

***ՀԻՊՈԿՐԻՄՆԻՍԿՈՍ** «բժշկական գրուածքների մէջ ընդունուած մի նշան, որ Ս. Գրքի յոյն թարգմանութեան մէջ էլ գործածում էին իբրև պայմանական նշան՝ ընդգծելու համար այն բառերը, որոնք տարբերւում էին բնագրից». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Անան. ժմնկ. 47. «Բան որ կըրկին էր յօրինակին և ութանասունքն ինդին, զայն Ովրիգենէս աստեղ նշանակեաց... իսկ ուր զանազանեցին զրանն՝ դիմնիսկոս և հիպողիմնիսկոս ևդին. մին աստիկեցի նշան է, և միւսն բժշկաց»։ Նոյն բառը Վրդն. սղ. յոչ. գրում է հիպիլիսկոս. «Եւ հիպիլիսկոսն նշան ի վերայ զանազանութեան բանի՝ զոր այլևայլ ազգ թարգմանեցին»։*

=Յն. ὑπολημνίσκος *«ննջամաշտալէն». կազմուած է* ὑπο- *«տակը» և* λημνίσκος *«երիզ, ժապաւէն» բառերից։ Այս բառը չկայ ո՛չ* Bailly-*ի մօտ և ոչ* Sophocles-*ի մօտ, բայց թէ՛ ստուգաբանութեան և թէ հայերէն տառադարձութեան միջոցով կարելի է դիւրաւ վերականգնել։ Նոյն յոյն բառից ունինք ասորի տառադարձութեամբ նաև* hupulīmnīs-qūs։—*Աճ.*

Գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. էջ 125։

ՀԻՒ *«շրջան, պատյտ». անկախ գործածական չէ. այլ միայն ոճով. այսպէս՝* հիւ գալ *«պատիլ, դառնալ, շուռ գալ» Փիլ. Խոսր. 204. Նիւս. կազմ.* հիւ շրջանակել *«պատատցնել» Լմբ. սղ. որից ունինք* առագաւհիւ *«շրջանակի վրայ շուռով դարձող» ԱԲ.* հուիկ գալ *«դառնալ» Փիլ. լիւս. 135 (տպ.* հոիկղ). հոիգայօղ *«դարձող, պատուող (երկինք)» Մագ. թղ. 20 (նոր տպ.* հոիգօղ), հիուալ *«դառնալ», հիուական «դարձող» (այս երկու ձևերը գիտէ միայն ՀՀԲ)։*

ՆՀԲ լծ. յն. γῦρος, *լտ.* gyrus, *իտալ.* giro, *բրք.* հրուռ, *ֆրո,* ֆորլտագ. *իսկ* հոիգայօղ *մեկնում է «շրջագայօղ, իբր հոիկ կամ հիւ նյօղ և կամ որպէս յն. բ՛ղγεα։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 86 շուռ բառից։*

ՀԻՐ. *անստոյգ նշանակութեամբ բառ. գործածուած է երեք անգամ հետևեալ ձևով. Զգեցեալ հիրս և կարմիրս. Եզեկ. իգ. 6 (յոյնը երկու բառի տեղ միայն* ὑακίνθινα *«յակինթագոյն»). Հիր և կարմիր և կապուտակ և երփն երփն նարօտուց. Եզեկ. իէ. 24 (յն. այս բոլորի դէմ միայն* ὑάκινθον *«յակինթ». բայց այլ ձև. աւելացնում են* καὶ πορφύραν *«և պորփիւր»). Ագուցի զքեզ հիր և կարմիր. Եփր. աւետ. 305 (առնուած է Եզեկ. ժզ. 10 համարից, որ մեր թարգմանութեան մէջ այսպէս է. Ագուցի քեզ զերկ-*

նագոյնն. =յն. ὑάκινθον «յակինթ»)։— Որովհետև գործածուած է կարմիր և կապոյտ բառերի հետ, ուստի և գոյնի անուն է, և յատկապէս կարմրից ու կապոյտից տարբեր մի գոյն։ Եւ որովհետև յունարէնում համապատասխան ձևն է միշտ «յակինթագոյն», որ և վերջին օրինակում թարգմանուած է նաև երկնագոյն, ուստի պէտք է ընդունել, թէ հիր նշանակում է «յակինթագոյն, որ է երկնագոյն կապուտակ»։ Հնագոյն հայերէնում զանազանում էին ուրեմն կապոյտի երկու որոշ տեսակները, այն է՝ կապոյտ «синій, лѣзакій цвѣтъ», հիր «голубой, երկնագոյն»։

Նշեցին մեկնում է բառս «պարգև կամ գոյն կարմիր». Ստեփ. լեհ. իբրև արմատ հիրիկ բառի՝ մեկնում է «ծաղիկ նման մանուշակի և զգեստ նոյնպիսի գունով»։ Սրանց համեմատ ՆՀԲ «հանդերձ ծիրանի կամ պարգև յազնիւ և ի գունազարդ զգեստուց», ՋԲ «հանդերձ ի գոյն յակինթի կամ մանուշակագոյն», ԱԲ «խիլայ, պարգև, ծիրանեգոյն լաթ», Քաջունի viola tricolor L ծաղիկը (տե՛ս Տիրացուեան, Contributo § 143)։—

ՀՀԲ նոյն ընդ հիրիկ։ ՆՀԲ որպէս ծիր կամ ձիր... Բո՛ղ զի յն. εἴρος է ասր և εἴρω «մանել»։—Lag. Arm. Stud. § 1291 կցում է հիրիկ բառին, որ տե՛ս Müller WZKM 8, 282 փոխառեալ յն. ἶρις բառից։ Canini, Et. étym. 124 հիր դնելով «pourpre, ծիրանեգոյն» կըցում է սանս. hari «կանաչ, դեղին» բառին։

Փոխ.—Անդի xiri «կարմիր»։

ՀԻՐԻԿ. մէկ անգամ գործածուած է Նլ. լ. 24. «Հիրիկ հինդ հարիւր սիկղ». յն. համապատասխան բառն է ἶρις, որ նշանակում է «մի տեսակ անուշահոտ ծաղիկ՝ շուշանազդիներից». այսպէ՛ս են ընդունած շատերը, ինչպէս նաև Գր. Աղթամարցին (Հրատր. Կոստ. էջ 76)։ (Համմ. վերջին անգամ Տիրացուեան, Contributo § 58 և 60)։ Ոմանք, ըստ որում եբրայական բնագրի մէջ բառիս դէմ գրուած է קדה qīddā «դարիճննիկ, կասիա, laurus cassia L», կարծում են թէ հայերէն բառն էլ պէտք է այս նշանակութեամբ առնել։ Գործածուած է նաև խունկի մի տեսակը նշանակելու համար. այսպէս եմ գտնում ճառընտ. «կէսք արկանէին խունկս հիրիկս և կէսքն խունկս ապուրանս». (նոյնը վրք. և վկ. ա. 527 խունկս խիրիկս)։—Բառգիրք հրեմ. յաւել. 569 մեկնում է «խիժ, հիւթ կպչուն որ կաթէ ի ծառոյ». այսպէս նաև Տաթև. Հարց. 349՝ Հիրիկ «խէժ է ծառոց»։—Ստ. Ռոշքեան էլ գիտէ հիրիկ անունով մի թուփ՝ աշնան ծաղկող և սիրելի մեղուներին, իբր լտ. laica (?)։—ՀՀԲ և ԱԲ մեկնում են նաև «ծիրանի գօտի, ծիածան». բայց այս իմաստը հայերէնում բնաւ չէ գործածուած և յայտնապէս յարմարեցրած է ՀՀԲ-ի կողմից, համաձայն յն. ἶρις-ի, որի առաջին նշանակութիւնն է «ծիածան»։ Նոր գրականում հիրիկ գործածւում է «աչքի ծիածան» նշանակութեամբ, իբր յն. ἶρις և ֆրանս. iris, որոնք ունին նաև այս նշանակութիւնը։ Հիրիկ բառի բուն և սոյգ նշանակութիւնն է ուրեմն «անուշահոտ և գունագեղ մի ծաղիկ» և կապ ունի թերևս նախորդ հիր «յակինթագոյն» բառի հետ։

ՀՀԲ և ՆՀԲ յն. ἶρις ձևից փոխառեալ են համարում։ Lag. Arm. Stud. § 1291 հանում է հիր բառից և միանգելով հյ. խիր «մեխակ», պրս. خیر xīr և յն. ἶρις ծաղկանուններին հետ, ենթադրում է, որ նոյն բոյսը Չինաստանից է ծագել և անուան հետ միասին դէպի Արևմուտք է տարածուել. սրան ապացոյց է համարում պրս. xīr-i xatāyī «Չինական խիր. սև մեխակ» յորջորջումը։ Հիւբշ. 351 և 516 բաժանելով յունարէնից՝ կըցում է կասկածով խիր<պրս. xīr բառին։ Հիւնք. պրս. հիւրում (իմա՛ هروك hurūk, որ սակայն բնաւ չի յարմարում, որովհետև, նախ նշանակում է «ծոր. barbaris» և երկրորդ՝ ձևով պիտի տար հյ. *հրուկ կամ *հրոյկ) և խիրու «ծաղիկ ինչ կարմիր»։

Փոխ.—Բառիս նշանակութիւնը ճշտելու համար շատ կարևոր է քրդ. Տէրսիմի բարբառով հիրիկ, որ դնում է Հայաստան, 1917,

№ 90 և մեկնում է հյ. «հիրիկ» (երկուան էլ տպ. հերիկ), առանց ասելու թէ այս բառով ի՛նչ է հասկանում. բայց մանիշակի կողքին յիշուելուց պէտք է ենթադրել թէ ծաղկի անուն է։

ՀԻՐԻԿ «յաղթեալ». ունի միայն Բառ. հրեմ. էջ 182։

ՀԻՒԱՆԴ, ի–ա հլ. (գրուած հիւանդեաց Անկ. գիրք հին կտ. 359, 360—1) «հիւանդ» ՍԳր. որից հիւանդանալ ՍԳր. Ուս. պտմ. հիւանդացուցանել Յոբ. իգ. 16. Ուս. պտմ. հիւանդանոց Սեբեր. հիւանդագին Բ. տիմ. դ. 20. հիւանդոտ Մագ. ա. 8. Եփր. բ. կոր. և երր. հիւանդութիւն ՍԳր. հիւանդագոյն Կոչ. Ոսկ. յհ. ա. 15. հիւանդամիտ Երր. գ. 12, Ոսկ. յհ. բ. 28. Մծբ. հիւանդատես Ոսկ. մ. գ. 4. հիւանդանի «հիւանդներ» Մագ. մեծ են. էջ 36. նոր բառեր են հիւանդապահ, հիւանդապահութիւն, հիւանդապահուհի են։ Նախաձևն է *հէւանդ։

ՆՀԲ արմատը վանդ, պրս. վէնտ «աշխատութիւն, տարժանումն» (յիշում է վանդեմ բառի տակ)։ Հիւնք. յն. ἀσαντή «ցամաքեցուցիչ» բառից։ Bugge KZ 32, 15 և IF 1, 453 համեմատելով յն. πῆμα «տառապանք, դժբախտութիւն» և սանս. pāpmán «դժբախտութիւն, վնաս, մեղք» բառերի հետ, դնում է հնխ. pēmantó- ձևից. հոմերական ἀπήμαντος «ողջ առողջ» ձևին ճիշտ համաձայն է գալիս հյ. աննիւանդ։ Այս մեկնութիւնը ընդունում է Brugmann, Grdr². 1, 403 և 510, և նախաձևը դնում է *pēvn̥to-: Հիւբշ. IF Anz. 10, 48 յիշում է այս և նկատում է, որ *pēvn̥t- պիտի տար *հուանդ, ուստի աւելի լաւ է դնել *peivn̥t-? Bugge-ի մեկնութիւնը յիշում են նաև Boisacq 780 և Pokorny 2, 8, վերջինը դնելով հնխ. pē- «ցաւիլ, վնասել» արմատի տակ։ Մառ (տե՛ս Salemann, Manichäische Stud. 3AH 8, 92) պհլ. 𐫀𐫁𐫔 «հիւանդ»=մանիք. պհլ. פיבדג xīndg բառի հետ, որ թերևս պէտք է ուղղել היובדך xīvandak։ Ըստ Մարքվարթ (անձնական) այս պհլ. բառը պէտք է կարդալ xīvand, xīvandak «հիւանդ», xīvandakih «հիւանդութիւն», որից փոխառեալ է հայը։ Պատահական նմանութիւն ունին վրաց. ավադ, ավաթ, ավադա «վատ, տգեղ, հիւանդ», ավադոբա, ավադտե՛ոփոբա «հիւանդութիւն», ինգ. ավադ «հիւանդ», ավադո՛աֆայ «հիւանդութիւն», աւար. untun, unt'un, unt'la, untaran «հիւանդ» և լակ. hintu «հիւանդ»։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Երև. Խրբ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. հիվանդ, Ախց. Կր. հիվանտ, Տիգ. հիվոնթ, Ակն. Հճ. Համշ. հիվօնդ, Զթ. հիվօնդ, հիվոնդ, Սվեդ. հիվունդ, Ղրբ. հէ՛վէնդ, Ասլ. հվանդ, հվա՞, Մկ. Վն. խիվանդ, Սլմ. խիվանդ, խվանդ, Ոզմ. խէ՛վանդ. ածանցների մէջ ձայնաւորի. անկումով ունինք՝ Սչ. հիվընդրդ «հիւանդոտ», Ննխ. հիվընդնալ, հիվրնենալ, Պլ. հիվրնդնալ, հրվրդնալ (կտր. հրվրձձա), Սեբ. հրվրնդնալ,, Տփ. հիվրնդանալ. Ագլ. հիվրնդո՛նիլ, Ասլ. հրվը՞նալ, Վն. խիվրնդնալ (կտր. խիվրնձո), Զթ. հօվօնդնօլ, հօվօնդնոլ (բայց հը՛վը՛նդութը՛ն), Համշ. հիվրնենուշ։ Նոր բառեր են հիւանդատեղ, հիւանդադարձ, հիւանդատէր, հիւանդիկ, հիւանդկախ, հիւանդկալ, հիւանդուկ, հիւանդոտես են.—Երև. մնկ. հիանդ։

ՀԻՒԹ, ո հլ. (յետնաբար ի հլ.) «նիւթ, տարր, հոյզ (մանաւանդ խոնաւութեամբ), ծուխ, խոհութիւն» ՍԳր. Եզն. Ագաթ. Կորիւն. որից ունինք հիւթարեր Եզն. հիւթեղ Ոսկ. մ. ա. 5. հիւթանիւթ Կոչ. 50. Կիւրղ. ծն. անհիւթանիւթ Թղ. պրոկղեայ ՀԱ 1921, 18, հիւթել «կազմել, գործել» Ճառընտ. Ծղիշ. անհիւթ Ագաթ. նմանահիւթ Նար. խչ. պատշաճահիւթ ԱԲ. պղնձահիւթ Կիւրղ. խչ. հիւթալի (նոր բառ)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. sip-to ձևից, որ ծագում է to- մասնիկով՝ seip- (աստրին ձայնդարձը sip-) «կաթկթիլ, ծորիլ, մէջի հեղուկը դուրս թորիլ. հեղուլ, քամել, մղել» արմատից։ Նշանակութեան զարգացման համար համմտ. յն. χέω «հեղուլ, թափել» արմատից χῦλος, χυμός «հիւթ, հոյզ»։ Ծեղակիցներից յիշենք յն. τρύγ-οιπος «գինի

պարզելու քամիչ»՝ կազմուած τρύξ «նոր գինի» + οιπο- (*soipo-) «քամել» արմատից, սերբ. sípiti «անձրևը բարակ մաղել», անգսք. sife, հբգ. sib, գերմ. Sieb, հոլլ. zeef «մաղ», անգսք. sípian «կաթիլ կաթիլ թափուիլ, ամանի մրզելը», siftan, գերմ. sichten «մաղել», մսգ. sêver «հոյզ, լրձունք», հֆրիզ. sēver, sāver, հբգ. seivar, մբգ. seifer նոյն նշ., մբգ. seifel «թուք», մսգ. sīpen, հոլլ. zijpelen, մբգ. sifen, շվէդ. sipa, դան. sibe «կաթկթիլ, ծորիլ, դանդաղ հոսիլ» (Pokorny 2, 467, Boisacq 987): —Աճ.

Brosset JAs. 1834, 369 ևն վրաց. ნիվթի (որ սակայն մեր նիւթ բառն է)։ ԳԴ պրս. هفت hift «այն իր՝ որ դոլով խոնաւ և թաց, փոքր մի սկսեալ է չորանալ». (անստոյգ բառ է. Horn § 1099 գտնում ենք պրս. هفت huft «ումպ», որ կցում է հբգ. sūtan, գերմ. saufen «խմել» բառերին)։ ՆՀԲ վրաց. ծուէ՛թի և յն. βάθος «խորութիւն»։ Տէրվ. Նախալ. 110 հնխ. su «քամել, ծնանել» արմատից. համմտ. սանս. su և սրանից էլ sūnu «ծնունդ, որդի», savi «հիւթ» ևն, հյ. նիւթ, ֆամել, ֆամի: Այս *su- արմատից են սանս. sutá, զնդ. hutī «քամուածք», իոլ. suth «կաթ», որոնց յարաբերութիւնը հայերէնի հետ մերժում է Meillet (անձնական)։ Հիւնք. յն. ὕδωρ «ջուր, քրտինք, ցող, հիւթ»։ Pedersen, Հայ. դր. լեզ. 162=KZ 39, 437 հբգ. fūht, գերմ. feucht «խոնաւ», յն. ὑγρός լտ. ūdus «խոնաւ» բառերի հետ (Յիշում է Pokorny 2, 5, բայց չի ընդունում)։ Մերժում է Patrubány, Monde or. 2 (1907/8), էջ 224 և կցում է սանս. sūpas «ապուր», հբգ. sūf «ապուր», հսլ. sūsati «ծծել» բառերին. արմատը *séu «խոնաւ»։ Մառ. Яфет. сбор. 1, 61 յն. χυλός «հիւթ»։

ԳԻՒՐ.—Աղշ. Մշ. հուր. ասում են օրինակ՝ «Ցորենը, խաղողը փուճ է, հիւր չկայ մէջը. Ցորենը հասեր է, հիւր ընկեր մէջ»։

Հիւթ, ո հլ. «թաւուտ, խարձ, եղեգնուտ». նորագիւտ բառ, որ չորս անգամ գտնում եմ գործածուած Անկ. գիրք հին կտ. Գնասցուք ի գիշերիս և դարանակալ լիցուք ի ճանապարհին և թագիցուք ի հիւթս եղեգանն... եւ թագեան ի մէջ հիւթոց եղեգանն (էջ 192, տող 3, 14). Երթայք դուք ի հիւթոց եղեգանդ (էջ 196). Եւ նոքա էին ի պուրակս հիւթոց եղեգանն (էջ 197).—Տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատեն. էջ 231։

ՀԻԹԱԻԿ. մի տեսակ անծանօթ բոյս է, որ մեկնուած է «ղեքս» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 1695։

Հիւլէ տե՛ս Հիւղ։

ՀԻՄ «ծիւրիլ, հալիլ, մաշիլ, ծնգիլ, նուաղիլ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են հիւծանիլ Եզն. հիւծիլ, Լմբ. սղ. հիւծեալ Ոսկ. յհ. բ. 6. Սարգ. հիւծումն Փիլ. Խոր. Նար. հիւծական Յս. որդի. ծարաւահիւծ Ջքր. կթ. ծարաւահիւծեալ Ագ. խչ. Նոր բառեր են հիւծախտ, հիւծախտաւոր, հիւծախտաբոյժ:

ՆՀԲ լծ. թրք. üzülmek: Lidén IF 44, 191 դոթ. siuks, գերմ. sīech «հիւծեալ, հիւանդ» են ձևերին է կցում։

+**ՀԻՄ** (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «պարտիզպանի խրճիթ, խուղ» Սղ. հր. 2. Երեմ. իզ. 18. Վրդն. սղ. գրուած է նաև հիմ Կոչ. 351, հուղ, հեղ. բայց յատկապէս նկատելի է հեղէ (որ և հիմէ) Լմբ. սղ. իբրև եզակի գործածուած. Հիմք մրգապահացն պարիսպ է և ամրութիւն. Լմբ. սղ. հր. համմտ. Իբրև զհիմս մրգապահաց. Երեմ. իզ. 18։ Նոր գրականում ընդունուած է միայն հիւղ, որից հիւղակ «փոքր խրճիթ»։

=Իբր բնիկ հայ՝ կցում է խուղ բառի հետ (տե՛ս այս բառը)։

ԳԴ պրս. کخ kux կամ کوخ kūx «կնիւն. 2. կնիւններով հիւսած խրճիթ»։ Նոյնը նաև Հիւնք.։

ԳԻՒՐ.—ՁՔ. հուղ «հողաշէն խրճիթ»։

ՓՈԽ.—Քրդ. هۆلک holik «հիւղակ, խրճիթ» (որից էլ փոխառեալ է Մշ. հօլըկ). նոյնպէս և քրդ. և թուրքման خوی huγ «ճիլերով շինուած վրան կամ եղեգով ու խոռիւներով տնակ» (յիշում է բառս Կամուս, թրք. Բրգմ. Ա. 29, 557, Բ. 373 և Գ. 447)։—

Պատահական նմանութիւն ունին տաբ. ճոպ «գիւղ», թրք. գուռ. կես. hüyük, üyük *«հիւղակ» (Բիւր. 1898, 713)։*

**ՀԻՒՂ, ի հլ.? «նիւթ, տարր, նախանիւթ» եղն. Ոսկ. ա. տիմ. էջ 96. Վեցօր. էջ 25, 26, 28. աստւմ է նաև հիւղէ (սեռ. -ի, եայ) Վեցօր. էջ 25, 26, 28, 47. եղն. Փիլ. Ագաթ. հիղեայ Վեցօր. էջ 4. հիւղայ Վեցօր. 25. հիւլէ. Նխ. ծն. վերջին ձևը ընդունուած է արդի գրականում, «atome» նշանակութեամբ, որից հիւլէական, հիւլէականութիւն։*

=Յն. ὕλη «նիւթ», որից փոխառեալ են նաև լտ. hyle *«նիւթ», արաբ.* هيولى hiūlā *«հիւլէ»։ Յոյն բառի առաջին նշանակութիւնն է «փայտ, վառելափայտ, շինութեան փայտ», և փոխաբերաբար «նիւթ»։ (Այլ է յն. ὕλη «ցեխ»)։—Հիւրշ. 361։*

Իբրև օտար բառ յիշում է արդէն եղն. էջ 9. «Զոր հիւղն կոչեն, որ թարգմանի նիւթ», էջ 21 «Որում հիւղն անուն էր, որ է նիւթ», էջ 22 «Նիւթ ինչ, զոր հիւղն անուանեն». մինչև անգամ յունարէնի վրայ բառախաղ էլ է անում էջ 110. «Քանզի նիւթոյ անուն ի նոցա լեզու ի մրուր մերձ է». (Համմտ. յն. ὕλη *«նիւթ» և* ἰλύς *«մրուր»)։ Ուղիղ մեկնեցին նորերից* Schröder, Thesaur. 16, 47, *ՀՀԲ, ՆՀԲ են։*

**ՀԻՒՂԷ (սեռ. -ի) «արեգակ» Ածաբ. խչ. որից հիւղական «տաք» ՅՀ. կթ. (Այլք յամառնային հիւղական յորդարորր ջերմութենէն տաղորեալ կիզեալ)։*

=Յն. ἥλιος «արեգակ» բառից կազմուած՝ սխալ տառադարձութեամբ։—Հիւրշ. 361։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

**ՀԻՒՂՈՍ (սեռ. -ի) «կոկորդիլոսին թշնամի մի փոքր անասուն է» Վրդն. ծն. Պիսիդ. վեցօր. տող 977. գրուած է նաև հիլոս Յայսմ. մրտ. 21։*

=Յն. ὗλλος «նոյն նշ. ichneumon. *կատուի մեծութեամբ մի անասուն է, որ կոկորդիլոսին վնասելու պատճառաւ պաշտւում էր հին Եգիպտացիներից» (Պիսիդ. վեցօր. տող 965, 976)։—Հիւրշ. 361։*

ՆՀԲ ծանօթ չլինելով յն. ὗλλος բառին, փոխառեալ է դնում յն. εἴλως «ստրուկ, հիլոդ» բառից, մեկնելով այս «մասնաւոր ծառայ, արբանեակ», ՆՀԲ-ի այս բացատրութիւնը սխալ հասկանալով ՓՔ՝ հյ. հիւղոս բառին տալիս է նաև «ծառայ, պաշտօնեայ» նշանակութիւնը։

**ՀԻՊԱՏԻ «հիւպատոսութիւն, հիւպատոսական իշխանութիւն», որ և հիպատի Ոսկ. պօղ. ա. 501. Եւթաղ. յուջ. պօղ. էջ 1110. Շիր. քրոն. (ունի հիւպատիի, հիպատիի, հիպատ ձևով), ներգոյականն է ի հիւպատուջն «հիւպատոսութեան ժամանակ» Պիոն. 393, որ և ի հիպատուջն, ի հիպատուջն Սոկր. Ճառընտ.։*

=Յն. ὑπατεία «հիւպատոսութիւն», որի վրայ տե՛ս յաջորդը։—Հիւրշ. 361։

**ՀԻՊԱՏՈՍ, ի հլ. «փոխարքայ. կուսակալ» Ա. մկ. ժե. 16. Միսայէլ խչ. գրուած է նաև հիպատոս Անյ. պորփ. Սարգ. հիւպատ Եւս. քր. Արծր. հիպատ Եւս. քր. ա. 9, Ոսկ. երր. 500. գործածուած է հիպատ «երկիր, գաւառ» նշանակութեամբ Սասն. էջ 39, 66. սրանցից են հիւպատեան «հիւպատոսներ» Խոր. բ. 47. հիւպատիկի Մխ. դտ. էջ 860. հիւպատոսական Սոկր. հիւպատոսութիւն Խոր. հիւպատութիւն Արծր. հիւպատաւորութիւն «հիւպատոսական աստիճան» Ասող. էջ 144 (չունի ՆՀԲ). գրուած նաև իպատոս Արծ. ԺԱ. դարու (Վիմ. տար. էջ 27). արդի գրականում ընդունուած է միայն հիւպատոս ձևը, «consul» նշանակութեամբ, որից էլ հիւպատոսարան, փոխ-հիւպատոս։ Առանձին տես աՌքիհիւպատոս, հիւպատի և հիւպատիկոս։*

=Յն. ὕπατος «հռովմէական հիւպատոս», ὑπατεία «հիւպատոսութիւն», ὑπατικός «հիւպատոսական». որից փոխառեալ է նաև վրաց. ობატოსი իպատոսի, ვიცეობატოსი վիպատոսի «հիւպատոս». բուն նշանակութիւնն է «վերին, վերադոյն». Համմտ. ὑπέρ *«վեր, վերին»* (Boisacq *1002)։—Հիւրշ. 361։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

**ՀԻՊԱՏԻԿՈՍ «հիւպատոս» Սոկր. 96 (սեռ. հիպատիկոսի). գրուած եպատիկոս Սոկր. 588։*

=Յն. ὑπατικός «հիւպատոսական, հիւպատոսական անձնաւորութիւն»։

Ուղիղ մեկնեց Մ. Տէր-Մովսէսեան, հրտր. Սոկրատի, էջ 588։

*ՀԻՊԱՐՔՈՍ (գրծ. իւ, աւ), գրուած նաև հիպարխոս, հեպարխոս «գլխաւոր իշխան, կուսակալ» Եւս. պտմ. 87, 711. Ճառընտ. Պտմ. մծբ. 40, 42, 51, 53, 54. որից հիպարխոսութիւն Ճառընտ. Պտմ. մծբ. 38. հեպարխոսութիւն Եւս. պտմ. 672։

=Յն. ὕπαρχος «տեղակալ, կառավարիչ». կազմուած է ὑπό «տակը, ենթ-» և ἄρχω «կառավարել» բառերից։—Ա՛.

Նշ՛ր և Ջ՛ր շփոթում են եպարխոս բառի հետ։ Հիւբշ. մոռացել է նշանակել։

*ՀԻՊԵՐԻՏՍ (գրուած նաև հիպերէտ, հեպերէտ, հապերէտ) «փոքրաւոր, կրօնաւորի ծառայ, սպասաւոր, պաշտօնեայ» Խոր. գ. 14. Նանայ.։

=Յն. ὑπηρέτης «ծառայ, սպասաւոր, որ և է պաշտօնեայի առորադրեալ օգնական». բուն և նախնական նշանակութիւնն է «նաւի փոքրաւոր» և ըստ այսմ ծագում է ὑπό «տակը» և ἐρέσσω «թիավարել» բառերից. յետոյ առացել է ընդհանուր իմաստ։—Հիւբշ. 361։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ և Նշ՛ր։

ՀԻՒ, ի հլ. (յետնաբար նաև հիւսոյ) «գրլխի մազի հիւսուածք, հիւսկէն զարդ» ՍԳր. Եփր. ծն. Խոր. որից հիւսել Ոսկ. հս. և յհ. ա. 40. Մծբ. հիւսուլ Յուդթ. ժ. 3. Եզեկ. իդ. 17. հիւսեալ Ել. լթ. 19. հիւսաճիլ Թէոդ. մայր. հիւսածոյ Ոսկ. ա. տիմ. ը. հիւսակ Ոսկ. մ. ը. 24. հիւսեակ «մազի հիւսք» Անկ. գիրք հին կտկ. Ա. էջ 166. հիւսկէն Ել. իր. և լթ. Կիւրղ. թգ. հիւսումն Խոր. հիւսուածոյ Նխ. Ել. բազմահիւս Պրպմ. բանահիւս Նար. ծաղկահիւս Թէոփ. խ. մկ. զուգահիւսեալ Մաթս. եկեղ. եղեմահիւս Թէոփ. խ. մկ. եռահիւս Եզիշ. դտ. Ենն։—Հիւս ձևի տեղ ունինք հեւս Եփր. ա. տիմ. 239. բայը աւանդուած է նաև հեսուլ Վրք. հց. բ. 478. հուսկուլ, հեսել, հուսել, հուսուլ, հիսուլ (Պիտիդ. վեցօր. տող 187), յուսանել Եփր. դտ. 343, յօսել Վրք. հց. բ. 464, յօսուլ, յօսնուլ, յուսել Վրք. հց. բ. 98, ՀԱ 1912, 549 ձևերով։

Brosset JAs. 1834, 369 ևն վրաց. խուվա ձևի հետ։ Նշ՛ր լծ. հիւսէյին իշլէմէք! Մորթման ZDMG 31, 432 և 573 մեր բառին է կցում հյ. հիւսն, գերմ. Haus «տուն», բևեռ. huçi «տուն», huçini «հիւսն, հիւսել»։ Justi, Zendsp. 190 ա զնդ. pis «զարդարել», սանս. piç, pinçáti, պրս. abīstan, փռիւգ. πεσσινοῦς։ Տէրվ. Նախալ. 105 հիւսել, հիւսկէն, հեսկ դնում է հնխ. viç=visk արմատից, որի պարզական vi ձևից գալիս են սանս. vā, հսլ. viti, լտ. vĭere, հյ. հեհնուլ ևն։ Müller WZKM 8, 282 pis արմատի (pis «գրել», piš «զարդարել») *pipis կրկնականից։ Հիւնք. հիւս «ձեան հիւս» բառից։ Scheftelowitz BB 28, 282 սանս. pāça «լուան, կապանք» և գերմ. fangen «բռնել» բառերի հետ հնխ. pek′ արմատից (նոյնը նաև Boisacq 778): Pedersen, Հայ. դր. լեզ. 147 յն. ὑφαίνω «հիւսել» բառին ցեղակից։

*ԴԻՒ.—Ասլ. հիւսէ՛լ, Մշ. հուսել, Ախց. Կր. Պլ. Ռ. Սեբ. հուսէլ, Տփ. հո՛ւսիլ, Հմշ. հուսուշ, Հճ. հիսսել, Սվեդ. հիսսիլ, Ջթ. Խրբ. հիսիլ, Երև. ուսէլ, Ալշ. Մշ. հուսկել, Սլմ. ուսկել, Դվ. ուսկէլ, Տիգ. ուսո՛էլ, Ննխ. ֆսէլ. իսկ Ղրբ. լիսիլ «շեպը կամ աւելուկը մազի նման հիւսել», որից էլ գյ. լ՛ուս «շեպի հիւսք, հիւսուած շեպ կամ աւելուկ»։ Նոր բառեր են հիւստակ, հիւստակել։—Վերջին լիսել ձևը երևի յառաջացած է հյ. հիւսել և մի կորած *լեսել հոմանիշ ձևերի խաչաձևումից. հմմտ. յն. πλέκω «հիւսել», πλόκος «մազի հիւսք», սանս. praçna- «հիւսած բան, կողով», լտ. plicō «ծալել», հսլ. pleta, plesti «հիւսել» և t աճականով՝ լտ. plecto, հրգ. flehtan, հհիւս. flétta «հիւսել» (Boisacq 793, Walde 591), որոնց արմատն է հնխ. plek′- որ և պիտի տար հյ. *լեսել։

ՀԻՒ, ո հլ. «լեռներից ցած գլորուող ձիւնագէզ» Խոր. գրուած է նաև հոսի Շնորհ. վիպ. Տաթև. ամ. 285. հոս Շնորհ. վիպ. հոսին Առաք. պտմ. 200. ուսի, ուսին Յիշատ. 1445 թ. (Դիւան ժ, էջ 6)։

Նշ՛ր հիւսել և հոսել ձևերից և կամ հիւսիս բառից։ Հիւնք. հիւսիս բառից։

Պատահական նմանութիւն ունի չին. hsûe[3] «ձիւն»։

ԳԻՒ.—Խաչ. հուսի, *Բլ. Մշ.* հուսին, *Վն.* ուսի, *Ոզմ.* օւսէ[1], *Մկ.* ուսը՛։

ՀԻՒՍԻՒ, ո *հլ. (գրծ. -ի Սղ. հէ. 26) կամ* հիւսիսի, -ւոյ *(գրուած նաև* հիւսիւս, հիւսիւսի, հիսիս, հիսիսի, հուսս*)* «*հիւսիսային կողմը*» *ՍԳր. Եզն. «հիւսիսային քամի» Ծրգ. գ. 16. Երեմ. իե. Նար. որից* հիւսիսական *Ագաթ.* հիւսիսակողմ *Եզեկ. խը. 10.* հիւսիսային *Երեմ.. խզ. 24. Ես. խա. 25. Ճովել. բ. 20.* հիւսիսանալ «*ցրտիլ*» *Վանակ. յոբ.* հիւսիսաբնակ *Ճառընտ.* դեհիւսիսական «*հակարջային*» *Արիստ. աշխ. Նոր բառեր են՝* հիւսիսափայլ, հիւսիս-արևելք, հիւսիս-արևելեան, հիւսիս-արևմուտք, հիւսիս-արևմտեան *են։*

Հիւնք. յն. ὑσις «*անձրևելն, անձրեւանք*», ὗσαω *(ապառնի),* ὗω *(ներկ.)* «*անձրևել*», ὁ ὑητς «*Անձրևի Աիք (մակդիր Դիայ)*»։ Meillet JAs. 1904, 500 *սեռ.* հիւսիսոյ *ձևի մէջ ի ձայնը չպղտելուց ուզում է հետևցնել որ բառիս նախաձևն էր* հիւսիւս?

ԳԻՒ.—Ախց. Կր. հիւսիս, *Սլմ.* հիւսիս, *Սեբ.* հիւսիւս, *Մշ.* հուսուս, *Երև. Տփ.* հուսիս, *Խրբ.* հիսիս. *վերջինը պահուած է միայն* հիսիսէն-հարաֆէն «*ասկէ անկէ, կիսատ պրատատ*» *դարձուածի մէջ։*

ՀԻՒՍՆ, ն *հլ. (-սան, -սունք, -սանց) «փայտի վրայ աշխատող գործաւոր, հիւս, խառատ, դուրգեար» ՍԳր. Վեցօր. 197. որից* հիւսնել «*փայտով բան շինել*» *Կոչ. Ոսկ. Երր.* հիւսնութիւն *Եղ. լա. 5. Եզն.* հիւսնանձն *Ճառընտ.* հիւսնական *Ոսկ. Ես.* հիւսնոց *Բրս. մրկ. գրուած է նաև* հիւսն *Խոր. Ա. 32։*

=Թուի թէ նոյն է հիւսել *արմատի հետ. նշանակութեան զարգացման համար հմմտ. լտ.* texo «*հիւսել. 2. հիւսնել*», *յն.* τέκτων «*հիւսն*»։ *Ուրիշ նման օրինակների վրայ տե՛ս* Walde, *էջ 778։*

Հներից Առաք. լծ. սահմ. էջ 566—7 հանում է հիւսել, հասուցանել, հոսել, սնուցանել *բառերից։ ՆՀԲ, Տէրվիշ. Նախալ. 105 և Հիւնք.* հիւսել *բայից են դնում։ Մորթման փորձ.* apisadipum *ձևի հետ, բայց տե՛ս և* հիւսել։ Müller, Benfeys Orient u. Occ, 2, 576 *սանս.* siv, sūtra: Patrubány SA 1, 193 *հնխ.* pevk'os *ձևից. հմմտ. լտ.* pavio «*կռել, զարնել*»։ *Նոյն ՀՄ 1908, 314* հիւսել *բայից։*

ԳԻՒ.—Սլմ. Վն. խուս *(սեռ. Վն.* խասան*), Ոզմ.* խօւս։—*Գւռ.* խուս *ձևը վկայուած է 1591 թուից, Դիւան ժ. էջ 33։*

ՀԻՒՐ, ո *հլ. (յետնաբար նաև սեռ.* ի *կամ* ու *հլ. էլ. արխաս. 144) «ասպնջական, դրրսից եկած իջևանած կամ հրաւիրուած» ՍԳր. գրուած է նաև* հեւր, *որ հնագոյն ձևն է. որից* հիւրացեալ *Սիր. իթ. 34.* հիւրամեծար *Կորիւն. Վեցօր.* հիւրասէր *ՍԳր.* հիւրասիրութիւն *Հռ. ժբ. 13. Առակ. ի. 16.* հիւրընկալ *Պղատ. օրին.* հիւրանոց *Մխսր. եր. 34. կթ. Նոր բառեր են* հիւրասենեակ, հիւրասրահ, անհիւրընկալ *են։*

ՆՀԲ թուի հանել հեռի *կամ* հրաւէր *բառից, որովհետև մեկնում է «հեռաւոր ոք հրաւիրեալ»։ Հիւնք.* հեռի *բառից։ Հալաճեան, Արևելք 1893 նոյ" 10 ն մասնիկով իւր բառից։* Ч'арая, Объ отношн. абхазск. яз. *էջ 39 վրաց.* ստումարի, *մինգր.* սումարի *և ափխազ.* asas *հոմանիշների հետ։*

ԳԻՒ.—Երև. Տփ. հուր, *Վն.* խուր *(սեռ.* խրու*), Բլ.* հարսնխուր, *Սլմ.* խարսիխուր *(վերջին երկուսը միայն այս բարդութեան մէջ)։*

***ՀԻՒՓՕՍՏԱԶԻՉ** *կամ* **ԻՓՕՍՏԱԶԻՉ**, ի–ա *հլ. «անհատ, գոյութիւն». դիտէ միայն ՀՀԲ. մէկ անգամ ունի Տաթև. Հարց. 571* իփոստազիս *ձևով, առնելով Դամասկացուց։ Ճահախ գործածուած է Գիրք առաք. այսպէս* հիփոստազիզ՝ *էջ 78 (3 անգամ) և 106,* հիփոստազիս՝ *էջ 79,* իփոստազիզ՝ *էջ 26, 123 (16 անգամ).—իսկ էջ 81 ա մեկնում է «ըստ դանագան անձանց և իփոստազիզաց (որ Թարգմանի ի ներքոյ եդեալ)»։*

=Յն. ὑπόστασις *(լտ.* substantia*) «գոյութիւն, գոյացութիւն, իսկութիւն» (իբրև փիլիսոփայական բառ)։*

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

*ՀԼՓԻՏ, որ և ՀԼՓԻՍ, ԽԼՓԻՓ «մի տեսակ խէժ, քաղբան, չարհոտ, անգուժատ, լտ. galbanum» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1698։

=Արաբ. حلتيت haltīt կամ هلّيت hallīt «քաղբան խէժը» (տե՛ս Կամուս. Թրք. Թրգմ. Ա. էջ 299)։—Ա՛Ճ.

+ՀԼՈՒ տե՛ս Լսել։

=Բնիկ հայ բառ. կազմուած է ն մասնիկով լու արմատից. նախաձևն էր *հուլու։ —Հիւրշ. 180։

ՆՀԲ «ի լու, լուր», լծ. և արաբ. հալիմ «հնգ», հիւլլամ «գառն»։ Lag. Btrg. baktr. Lex. 33 գնդ. hu «լաւ»+հայ. լու, լուայ։ Հիւրշ. KZ 23, 403 իբրև համազօր գնդ. hu+sravah ձևի։ Տէրվ. Նախալ. 73 վերի ձևով։

ՀՄՄԼ «փսփսալով բան հարցնել» Մրկ. ա. 27 (յն. συζητέω, որ նշանակում է «վիճիլ»). որից հնծաձիկ «փսփսոց, շշնչիւն» Արշ. հնծիւն (նոր բառ)։

Հիւնք. հնծեծել բայից։

*ՀՄԱՅ, ի հլ. (անհզաբար գործածուած) «կախարդութիւն, կախարդական գուշակութիւն» ՍԳր. Եզն. Բուզ. «յուսութք, պահպանակք» Նխ. եզեկ. Նար. «կախարդ» Կանոն. էջ 176. որից հմայել «կախարդել, դիւթել» ՍԳր. Կոչ. հմայական Կանոն. հմայահաւատ նութիւն Մագ. հմայեակ «պահպանակ, կախարդական թղթեր, յուսութք» Կանոն. Նար. էջ 260. «հմուտ, ճարտար, փորձառու» Մարթին. հմայութիւն Կանոն Նչ. եզեկ. դիւահմայութիւն Պիտն. 387. լեռդահմայ Եզեկ. իա. 21. կիսահմայ Զաք. գ. 8. գաւազանահմայութիւն Լմբ. ովս. հաւահմայ Երեմ. իէ. 9. Կոչ. Ոսկ. տիտ.— սրանցից տարբեր և զուտ քրիստոնէական գրուածքների համար գործածուած են՝ հմայութիւն «հանգանակ հաւատոյ» (ըստ Ե. եպս. Դուրեանի) Տիմոթ. կուզ, էջ 152, 162, 163, 168, 184, 252, 253, հմայանալ կամ հմայիլ «տեսիլքով յայտնուիլ» Տիմոթ. կուզ, էջ 229, 279, 297, հմայումն «նիկիական հանգանակը» Տիմ. կուզ, էջ 93 (սրանց վրայ տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 83)։

=Պհլ. humāy- ձևից. համմտ. գնդ. humaya-, humāya- «օրհնեալ, օրհնութեամբ լի» ըստ Bartholomae (միւսները մեկնում են՝ «լաւ գիտութիւն. 2. լաւ գիտութեան տէր, առողջ, ծառայութեան պատրաստ, անձնուէր» Justi, «առողջ, առողջարար» Geldner, «հնազանդ» Darmesteter), humāyōtara «օրհնեալ, բարեբաստիկ» Bartholomae (այլք՝ «բուժիչ յատկութիւններով օժտուած»), սանս. su-māya- «հրաշալի զօրութիւն, հնարագիտութիւն, խորամանկութիւն, խարեբայութիւն, աճպարարութիւն», պրս. همايون humāyūn «բախտաւոր, երջանիկ», همای humāy «փիւնիկ, բախտի թռչուն», բոլորի արմատն է māyā «օրհնութիւն, երջանկութիւն», որի վրայ աւելացել է hu- «լաւ»։

ՆՀԲ լծ. իմայ՛, իմացի՛, հմտութիւն։ Lag. Urgesch. 138 mā արմատից, իսկ Btrg. baktr. Lex. 33 գնդ. humāya ձևից։ Müller WZKM 10, 277 դնում է վերի ձևերից փոխառեալ և իբրև հայերէնին աւելի մօտիկ յիշում է պրս. humāi թռչունը «որ ոսկորներով է սրնանում և բարի բախտի նշան է»։ Ալիշան, Հին հաւ. 363 հյ. հմուտ, գնդ. հոմա և պրս. Հոմ «մարգարէի մը անունը»։ Հիւրշ. 180 յիշում է վերի բառերը, բայց մերժում է նշանակութեանց տարբերութեան պատճառով։ Stackelberg WZKM 17 (1903), 57 վերի ձևով՝ հայերէնը կապելով պրս. humāy թռչունի միջոցով, որ ծառայում էր նաև իբրև բախտագուշակ։ Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 85 սխալմամբ բառիս առաջին նշանակութիւնը դնում է «գրուածք, գրել», որ չկայ իրանեանում։

ՀՄՈՆԵԼ «ջրով հարել, ջրի մէջ տրորել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պտմ. 463. Կարիճ կամ օձ խայթէ, (զմրուխտն) վարդեջրով հմոնեն, ի վերայ քսեն, ողջանայ։

—ՀՄՈՒՏ, ի հլ. «գիտուն, ներհուն, լաւ իմացող» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 39. որից հրմտանալ Խոր. Պիտ. հմտաբէն Պիտ. հմտագոյն Ոսկ. յհ. բ. 12. հմտութիւն Ոսկ. հյ. ա. 33, 41. բազմահմուտ Իմաստ. ը. 8. Սիր.

իա. 25. սուրգաճմուռ *Փարպ.* թերաճմուռ *Ոսկիփ.* աճճմուռ *Ոսկ. յհ. ա. 3.* չատաճմուրիւն *Սիր. իե. 8 ևն:*

=*Կազմուած է ճ մասնիկով՝ մուռ արմատից, որ տե՛ս:—Հիւբշ. 180:*

Նշիւ «իրր ճմայռուռ կամ իմասռ և մուռ»: Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG 36 (1882), *էջ 120 և* Pers. Stud. *էջ 215: Հիմնք. միտ բառից:*

ՀՄՔՏԱԼ *«արհամարհել, ծաղրել» նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Զքր. սարկ. Ա. էջ 9. «Եւ նա հմքտալով հեգնէր՝ ասելով. Նա զոր ինչ և ետես յինէն և ևկեր, զիա՞րդ համարձակի գալ ի վերայ իմ»: (Ամատ. «յոխորտալ»):*

ՀՆԱՁԱՆԴ, *ի հլ. «խօսք լսող, հլու, հրապատակ, ընկճուած, նուաճուած» ՍԳր. Սեբեր. որից* ճնազանդել *ՍԳր. եզն.* ճնազանդեցուցանել *ՍԳր.* ճնազանդութիւն *ՍԳր. Եւս. քր.* ճնազանդեցուցիչ *Սփր. ա. կոր.* աճճնազանդ *ՍԳր. Ագաթ.* աճճնազանդիլ *Յես. ե. 6. Ոսկ. ես.* դիւրաճնազանդ *Վրք. Հց.:*

Lag. Btrg. baktr. Lex. 33 *գնդ.* hu *«բարի, լաւ» և պրս.* nāz *արմատի անցնալ դերբայից: (Այս մեկնութիւնը սխալ է, որովհետև ըստ* Horn, Grdr. *էջ 228 պրս.* nāz *ծագում է պհլ.* nāčuk *ձևից: Սակայն տե՛ս նաև* նազ *բառ տակ): Տէրվ. Նախալ. 73, 125 ճ զօրացուցիչ մասնիկով *նազ «կապել» բայից. (Հմմտ. սանս.* nah, *լտ.* necto< nehto, *հյ.* նիգ*).—աճդ համարում է* -ant *«-իչ, -ող» դերբայակերտը: Հիմնք. աճսամ բայից: Ագոնց,* Арм. Юстин. 377 ծիճ, jan, zan *արմատից, իբր գնդ.* zantu-:

ԳԻՒ.—Ագլ. Երև. Կր. Շմ. Ջղ. Տփ. ճնազանդ, *Ալշ. Մշ. Սչ.* ճնազանդ՝, *Ախց. Ննխ. Սեբ.* ճնազանք, *Տիգ.* ճնոզոնք, *Ջթ.* ճնազօնդ՝, ճնազոնդ՝, *Սվեդ.* ճնազօնդ՝, *Սլմ.* խնազանդ, *Մկ.* խնազոնդ, *Վն.* խնոզոնդ. *Առանձին Թրքահօս հայերն էլ են պահած* ճնազանդ *ձևը: Բոլորն էլ գրականից փոխառեալ:*

***ՀՆԱՐ**, *ի հլ. «ճար, միջոց, վարպետ ելք, կարելիութիւն, մի խելք բանացնելը» ՍԳր. եզն. Մծբ. Կոչ. «մեքոդ» Սահմ. Անց. պորփ. որից են* ճնար է, ճնար չէ *«կարելի է, կարելի չէ» Սգր. Ոսկ. ա. Թես. ը. Կոչ.* ճնարել *կամ* ճնարիլ *ՍԳր. եզն. Կոչ.* ճնարակ *Ոսկ. ա. տիմ.* ճնարաւոր *ՍԳր. Կոչ. Ոսկ.* ճնարողութիւն *Եզն.* ճնարին *Կոչ.* ճնարագէտ *Ոսկ. ես. Վեցօր.* ճնարագիտութիւն *ՍԳր. եզն* ճնարագիտ *Սեբեր. եզն.* ճնարակիրտ *Եւագր.* ճնարացոյց *Սեբեր.* աճճնար *ՍԳր. Ագաթ.* աճճնարին *ՍԳր. Կոչ. Ագաթ.* բազմաճնար *Եսթ. ժգ. 13. Փարպ.* դիւրաճնար *Փարպ.* բարեճնար *Ոսկ. յհ. ա. 42, ևն: Հին հայերէնում շատ անգամ բառս անհզական էր, այս պատճառով նոր գրականում (յատկապէս արևմտեան) աւտում է* ճնարք:

=*Պհլ. պազ.* hunar *«գիտութիւն» բառից փոխառեալ. Համմտ. գնդ.* hunara- *«ճարտարամտութիւն, անձնական արժանաւորութիւն, իմաստութիւն, հնարիմացութիւն»,* haδa-hunara *«հնարիմաց, ճարտար», պրս.* hunar *«ճարտարութիւն, հնարագիտութիւն, խելք, միտք, հանճար»,* hunarvar *«հանճարեղ, հնարագէտ». պարսկերէնից փոխառութեամբ՝ բելուճ.* hunar, *աֆղան.* hunr, *քրդ.* huner, *Քրք.* hüner, *վրաց.* ხნარი ունարի, *բոլորն էլ «մտքի կամ ձեռքի ճարտարութիւն, հնարիմացութիւն»* (Horn § 1108): *Իրանեան ձևերի հետ համեմատւում են սանս.* sūnara- *(նոր հնդ.* sundara-*) «ուրախ-գուարթ, վեհանձն, գրաւիչ, գեղեցիկ». բոլորի ծագումը դրւում է սանս. գնդ.* nar- *«տղամարդ, այր» բառից,* hu- *«լաւ» մասնիկով. իբր Ք է «տղամարդութիւն» նախնական նշանակութիւնից երանգաւորուած. Համմտ. հիոլ.* sō-nirt *և կիմր.* hy-nerth *«քաջ, կորիճ, ուժեղ»* (Pokorny 2, 332):—*Հիւբշ. 181:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ: Նշիւ «լծ. պրս. hiwēr, *բայց արմատն է ի հայ.* հուն, *այսինքն անցք, որպէս* հուանարար»: Müller, Kuhns u. Schleich. Btrg. 3, 84, SWAW 38, 583 *և* 39, 396 *պրս.* hunar, *գնդ.* hunara, *սանս.* sūnara-: *Հիմնք. մերժելով պրս.* hiwēr, *հանում է հյ.* հուն *բառից: Դ. Սարգսեան, Բիւր. 1898, 483 առ «ճամբայ»*

բառից, որ իբր թէ գտնւում է պատառականներում։ Դ. Խաչկոնց, անդ, ծանօթ. 1 այս ար-*ը դնում է պրս.* rāh «ճամբայ» *բառից։*

ԳԻՒ.—Ախց. երև. կր. Շմ. Սչ. հնար, *Սլմ.* հնար, *Ալշ. Գոր. Ղրբ. Մշ. Ննխ.* հնարհ, *Սվեդ.* հնուրհ, *Մկ.* խնարհ[1]. *ուրիշ տեղ գործածական են նոր փոխառութեամբ* հուներ, հիւնէր *ձևերը. կայ նաև իմաստի տարբերացմամբ՝* հնար «ճար, միջոց», հուներ «հմտութիւն, վարպետութիւն»։ *Բայական ձևով են՝ Ննխ. Սեբ.* հնարէլ, *Շմ.* հնարիլ, *Տիգ.* հնարիլ *և իմաստի փոփոխութեամբ՝ Սչ.* հնարել «միջնորդել», *ինչպէս և* հնար «միջնորդութիւն»։ *Հետաքրքրական ձևեր են Տփ.* անհնարանելի «անհնարելի, անհնարին» *և* հնարաւորուիլ *Ախց.* «յարմարուիլ, իրար հետ եօլայ դնալ» (*Ամատ. էջ 398*), *որի հետ նոյն է* հնաւորուիլ *Վն.* «մէկի հետ վարուիլն իմանալ, ամէնքին հաճելի լինելու բնաւորութիւնն ունենալ» *և անցողականով՝* հնաւորցընել *Մշկ.* «գոհացնել, գոհ կացուցանել»։

ՀՆԱՐԱՆԵԼ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Ոսկ. պօղ. Ա. 364. Ապա գո՞յ ինչ ևս դժնդակ քան զսատանայ քարոզութիւնն խափանումն և բարւոք վաստակոցն հնարանել առնել պատիժս (յն. տարբեր ձևերով)։*

Հնդակ *տե՛ս Հնդկոկ։*

ՀՆԴԻԿԱՒՆ (գրուած նաև հընդիկոն) «լեղակի բոյսը, լեղակենի» Գաղիան. *Բժշ. (տես ՆՀԲ* լեղակ *բառի տակ)։*

=*Յն.* ἰνδικόν «լեղակ», *որից փոխառնալ են նաև լտ.* indicum, *ֆրանս.* indigo «լեղակ». *բուն նշանակում է «հնդկական» և ըստ այմ էլ ձևափոխուած է հայերէն բառը։—Աճ.*

ՀՆԴԻՊԻՒ կամ ՀՆԴԻՒՊԱ «եղերդ բոյսը, եղրդուկ, chicorée» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1704. սրա հետ նոյն է* հինդիւ «եղերդ, chicorée», *որ գիտէ միայն Քաջունի, Ա. 458 և Գ. 142, աղբիւրը անյայտ։*

=*Արաբ.* هندبا hindiba «եղերդ» (*Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 288*), *որից փոխառնալ է նաև Թրք.* hindiba. *Նոյն բառը գտնում ենք նաև պհլ.* 𐭧𐭭𐭣𐭥𐭱𐭠 hindubā, *յն.* ἔντυβον, ἴντυβος, ἴντυβον, ἐντύβιον, *լտ.* intybus, intubus, intiba, *ֆրանս.* endive *ձևերով, որ է գիտական անունով* cichorium endivia L. *բոլորի սկիզբը եգիպտական է համարւում։ —Հիւբշ. 279։*

ՀՆԻԿԱԿ (գրուած նաև հնկոկ) «անծանօթ և անստոյգ մի բոյս» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1705. սրա հետ նոյն է նաև* հնդակ «մի տեսակ բոյս, որի սերմը զօրացնող է բնութեան» *Բժշ. (ՀԲուս. § 1701)։*

=*Արաբ.* هندقوق hindqūq «աուտյտ, trifolium» (Steinschneider WZKM 12, 13): *—Աճ.*

ԳԻՒ.—Մկ. հրնդրկօկ «կորնգանի և աուտյտի մի տեսակը»։

ՀՆԴՐԻ «կեղծ, թիւր, սուտ» *Պիտ. 518. Հնդրի խրախուսանօք։*

ՆՀԲ և ՋԲ նոյն են դնում հղնի *բառի հետ, որ տե՛ս։*

ՀՆԿԵՑԻԿ «հինգ դահեկանանոց դրամ», *անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Օրբել.* «Ետու միոյ միոյ քահանայի 50 դրամ ի տարւոջն, որ լինի հնկեցիկս»։ *Ուրուհետև ըստ Թ. Աւգալբէգեանի (Տեղեկ. ինստիտ. 1927, № 2, էջ 50) Օրբելեանի 1 դահեկանը արժէ 10 դրամ, ուստի և 50 դրամը=*հրնկեցիկ? *արժէ «հինգ դահեկան»։ Խանգարում է միայն ս վերջաձայնը։*

ՆՀԲ համարում է «հնգից տասն, տուրք ողորմութեան», ԱԲ «ողորմութիւն կամ ժամուց մը»։

ՀՆՁԱՆ, ի–ա *հլ.* «խաղող ճմլելու աւազան» *ՍԳր. Եփր. յես. որից* հնձանաքար *Ես. կգ. 1. Երեմ. խր. 33.* հնձանայարկ *Ագաթ.* հնձանաշէն *Բէդդ. կուս.* հնձանակ *Վստկ. գրուած է նաև* հնձան։

ՆՀԲ հունձ բառից է հանում. բայց «ճմլելու» և «հնձելու» գաղափարները իՙնչպէս կարող են կապուել իրար հետ. գուցէ հնձան *նախապէս ուրիշ նշանակութիւն ունէր։*

ԳԻՒ.—Երև. Բլ. Մշ. հնձան, *ՋԲ.* օնձօն, օնձոն, *Ագլ.* բնձուն «խաղողի հնձան», *իսկ Խրբ.* հնձան, բնձան *նշանակում է «պարտէզների մէջ շինուած հիւղակ կամ խրճիթ».*

այսպէս նաև Ակն. և Տիգ.։—Նոր բառ է հրնձանապատ Սրև. «հին հնձանի աւերակ»։

ՓՈԽ.—Թրք. գուռ. Թորթումի հնսան «հրնձան» (Շիրակ 1905, 425)։

+ՀՆՈՑ, ի–ա հլ. «փուռ, մեծ վառարան, թոնիր, քուրայ» ՍԳր. որից հնոցանալ, լաստ. հնոցացուցանել Անյ. բարձր. հնոցաձև Կլիմաք. Ղևոնդ. հնոցարան Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 164. հնոցապան (նոր բառ)։—Այս բառը գործածուած է նաև Թուղց իհ. 8=Կոչ. 206, հետևեալ ձևով. «Ու եմուտ զհետ առնն իսրայելացւոյ ի հնոցն, և խոցեաց զերկուսին՝ զայրն իսրայելացի և զկինն ընդ արգանդ իւր»։ Բնագրի մէջ համապատասխան բառն է երր. קֻבָּה qubba, որ բացատրում են ոմանք «կամարակապ», ուրիշներ «տան ներքին սենեակ, կանանոց», իսկ նոր երրայեցերէնում «lupanar. բոզանոց» (Gesenius 1921, էջ 697)։ Այս զանազան բացատրութիւնները տալիս են նաև հյ. հնոց բառին և յատկապէս վերջին նշանակութիւնը, որովհետև յն. թարգմանութեան մէջ համապատասխան բառն է κάμινος, որ թէև հին յունարէնում նշանակում է «հնոց» (այսպէ՛ս միայն ունի Bailly էջ 1015), բայց միջին յունարէնում «բոզանոց» (այսպէ՛ս միայն ունի Sophocles 625 ա, վկայութեան կոչելով Թիւք իհ. 8)։ Յոյն բառի նշանակութեան ձևափոխութիւնը այնպէս է, ինչպէս պատահաբար լտ. fornax «հնոց» և fornix «բոզանոց»։ Բայց հայ թարգմանիչները անշուշտ բնաւ չգիտէին թէ յն. κάμινος բառը այստեղ «բոզանոց» նշանակութիւնն ունի և ըստ սովորականին թարգմանել են «հնոց»։ Ըստ այսմ հնոց բառին «բոզանոց» կամ մի ուրիշ նշանակութիւն ևս ենթադրել բոլորովին անտեղի է։

=Բնիկ հայ բառ. արմատն է *հուն «կրակ», որ առանձին գործածուած չէ, ծագում է հնխ. pūn- կամ pōn- ձևից. համմտ. գոթ. fōn, սեռ. funins, հիսլ. funi, հպրուս. panno «կրակ» և հնդևրոպականներից փոխառեալ ֆիննն. panu «կրակ»։—Հնխ. pūn- ձևացած է ժառանգ լեզուների մէջ pūro- ձևից՝ r/n փոխանակութեամբ. աւելի ընդարձակ տե՛ս հուր (Boisacq 745, 828, Pokorny 2, 14, Trautmann 206):—Հիւբշ. 469։

ՆՀԲ հանում է հրնոց ձևից։ Տէրվիշ. Նախալ. 93 հուր, հոգի, փուֆ, հոտ, փչել ևն ձևերի հետ դնում է հնխ. pu արմատի տակ։ Հիւնք. յն. οἴνων «մառան գինւոյ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւբշ. ZDMG 35 (1881), էջ 176—7= Armeniaca 1, 9: Գ. Փառնակ, Անահիտ 1903, 130 արմատը դնում է հիւ, որից նաև հիւ–հիւ–ալ: Karst, Ծուշարձան 401, 405 սումեր. guni «փուռ»։

ՀՆՉԵԼ տե՛ս Հունչ։

ՀՆՋԱՅԹ. անստոյգ բառ, որ գտնւում է ճնջայթութիւն ձևի մէջ. մէկ անգամ ունի Մագ. Թղ. էջ 11. «Պարսեաց զհսկայն դէպ ուղղակի ի ճակատն ճահեցուցեալ հնջայթութիւնս պարսին որոտիւնս թնդեալ յերկիր զարկուցեալ»։ Այլ ձ. ունի ջայթութիւն, որով յայտնի չէ թէ ո՛րն է ուղիղ. իմաստը ճնշել կամ հայթել բառերի հետ պէտք է կապուի (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 193—4)։

+ՀՈԳ, ո հլ. «ցաւ, մտածութիւն, տրտմութիւն, վիշտ. 2. խնամք, փոյթ, հոգատարութիւն» ՍԳր. Կորիւն. որից հոգալ ՍԳր. Մանդ. հոգած Առակ. ժէ. 20. ժդ. 30. հոգածել Ոսկ. յհ. ա. 45. հոգածու Բուզ. հոգող Փարպ. հոգաբարձ Եւս. պտմ. Սմբր. կոր. հին. ծն. հոգաբարձու Կորիւն. հոգաբարձութիւն Վեցօր. Եւս. պտմ. Ոսկ. փիլիմ. անհոգ ՍԳր. Ոսկ. անհոգութիւն ՍԳր. Եզն. բազմահոգ. Իմ. Բ. 15. բազմահոգակ Գր. տղ. թերահոգ Սարկ. քհ. իւրահոգ Վրք. հց. վաղահոգակ ՅՀ. կթ. հոգցի «դիտմամբ, խնամով» Վստկ. 37. հոգատար (նոր բառ)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. poṷo- ձևից. ցեղակիցները տես հև<հնխ. peu- «փչել» արմատի տակ, որ ներկայացնում է նոյն բարձր աստիճանի ձայնդարձը։ Նախնական իմաստը եղել է «ա՛խ քաշել», որից էլ «ցաւ, վիշտ, տրտմութիւն» և յետոյ «ուրիշի համար ցաւիլ, խնամք, հոգատարութիւն»։ Այսպէս է նաև ուրիշ լեզուների մէջ. ինչ. գերմ. Sorge «նեղութիւն, հոգս, վիշտ. 2. փոյթ, խնամք»=անգլ. sorrow «վիշտ, կսկիծ,

տրամութիւն», *ռուս.* забота *«հոգացողութիւն»*, заботить *«հոգս պատճառել, նեղութիւն տալ»*։ Հև և հոգ, *ինչպէս նաև* հոգի *բառերի ձայնական յարաբերութիւնը ճիշտ ա՛յնպէս է, ինչպէս* արև և արեգ, կով և կոգի։—*Աճ.*

ՆՀԲ լծ. Բրք. հաճէք *«պէտք»*։—*Հիւնք. խոկ բառից։ Քիւփէլեան, Բազմ. 1910, 153* ոգ>ոյժ *արմատից։* Karst, *Յուշարձան 428, 430 ՖՓր. ույղուր. ալթայ.* qiyin, *չագաթ.* qaygu, *չուվաշ.* koyik *«հոգ, ջանք»։*

Գիհ.—Ալշ. Մշ. հոf, *Խրբ. Կր. Պլ. Ր.* հօf, *Երև. Շմ. Տփ.* հօfu, *Տիգ.* հuf, *Ասլ.* հէօf, հէօ*, *ԶՓ. Սվեդ.* հիuf, *Ակն.* ֆօf, *Սեբ.* ֆէf. *—բայական ձևով՝ Սչ.* հոգ՛ալ, *Ախց. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ր. Սեբ. Տիգ.* հօfալ, *ԶՓ.* հիգ՛օլ, հիգ՛ոլ, *Սլմ.* խօfալ, *Մկ.* խոկ՛ոլ, *Ոզմ.* խուկ՛ալ. *(սակայն իմաստի տարբերացմամբ Ախց. Սչ. «տունը՝ սննդակը մաքրել, խնամ տանիլ», Ննխ. «ցաւիլ, վրան ափսոսալ, մի բանի վրայ մտածել». գրական լեզուի մէջ էլ ընդունուած է* հոգալ *«հոգս տանել, խնամել, հոգատարութիւն անել»* և հոգ ընել, հոգս անել *«ցաւիլ, մտատանջուիլ»)։ Նշանակութեան արժանի են Ննխ.* անհօf, անֆօf *«անհոգ» (թէև* հոգ *բառը առանձին գոյութիւն չունի) և էնկիւրիի Բրքախօս հայոց բարբառով* հօfսուզ *«անհոգ» (կազմուած Բրք.* səz *բացասական մասնիկով)։*

Հոգեմոն *տե՛ս Հեգեմոն։*

+ՀՈԳԻ *(-ւոյ, ւոց կամ -հաց) «հոգի, փիսք. նաև անձ, մարդ, շունչ, սատանայ, սիրտ, կեանք, կենդանութիւն» ՍԳր. Եզն. Ոսկ. Կոչ. Եփր. Բգ. ածանցման մէջ մտնում է շեշտի տակ* հոգի, *շեշտից առաջ* հոգեձևով. *ինչ.* հոգեխառն *Ագաթ.* հոգեկրօն *Ագաթ. Կորիւն.* հոգեմարտ *Սերբր.* հոգեներ *ՍԳր.* հոգեոռազգաց *Բուզ.* հոգեոռագոյն *Եւագր.* հոգեոռեցուցանել *«սրբագործել» (նորագիւտ բառ) Մ. Մաշտ. 157 բ.* հեզաճոգի *Երզն. լս.* դառնաճոգի *Եփր. Բգ.* երկայնաճոգի *Եւագր.* կարճաճոգի *Ոսկիփ. ևն։ Յետին շրջանից ունինք նաև* հոգ- *(ձայնաւորի մօտ սղուած),* հոգի- *կամ* հոգիա- *(շեշտից առաջ). ինչ.* հոգեոռանդն *Խոր. վրդ.* հոգերգող *Պրպմ.* հոգիբեկալ, *Խոսր.* հոգիուեակ *Բենիկ.* հոգիախաղաց *ՅՀ. կթ.* հոգիաեալ *Սոկր. գործիականով բարդուած են՝* հոգուվեռաց *ԱԲ.* հոգուվացուցանել *«կենդանութիւն տալ» Կրնիք Հաւ. 16. սխալ գրչութիւն է* հոգէ- *ձևը. ինչ.* հոգէգէղ *Կանոն.* հոգէբարբառ *Ճառընտ, որոնք պէտք է ուղղել* հոգե-։ *Նոր բառեր են՝* հոգեբաժին, հոգեբան, հոգեբանական, հոգեբանութիւն, հոգեզմայլ, հոգեճաոոր, հոգեճարազատ, հոգեցուից, հոգեոռակաութիւն, հոգեփոխութիւն *են։ Արմատի երկրորդ ձևն է* ՈԳԻ՝ *գործածուած նոյն նշանակութիւններով. ՍԳր. Կոչ. Եզն. Սեբեր. Բուզ. Ագաթ. Եւս. պտմ. որից* ոգեխառնիլ *Ա. եղր. դ. 21.* ոգեկիր *Կոչ. 12.* ոգեկոռոյս *Կոչ.* ոգեշունչ *Եփր. ծն.* ոգեպահ *Եփր. պհ. և Բգ.* ոգեսպառ *Ագաթ.* ոգեոռութիւն *Եւագր.* ոգիակողմն *Եւագր.* կաթոգի, կաթոգին *Երզ. ե. 8. Բ. Բագ. ժե. 30. Բուզ. Ոսկ. Եբր. և մ. ա. 9, 12.* կաթոգնիլ *Մծբ. Եփր. մն.* կարճոգի *Եփր. ա. Թես. 183.* յոգւոցճաութիւն *Խոր.* ցոփոգի *Մանդ.* երկաոոգի *Խոր. ևն։ Նոր բառեր են* ոգելից, ոգեոռել, ոգեոռիչ, ոգեոռութիւն։ *Արդի գրականը զանազանութիւն դնելով երկու ձևերի միջև, գործածում է* հոգի «âme, seele» *նշանակութեամբ, իսկ* ոգի «հոգեկան զօրութիւն, ուժ, եռանդ. 2. ըմբռնական որևէ նիւթ, իսկութիւն (ինչ. գինւոյ ոգի)»։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* poĝio- *ձևից, որ ծագում է* peu- *«փչել, շնչել» արմատից. ցեղակիցները տե՛ս* ևն և հոգ *ձևերի տակ։ Հոգի նշանակում է բուն «փչիւն, շունչ»։ Նախնական մարդու համար «հոգի, համի, շունչ, օդ, փչիւն» միևնոյն գաղափարներն էին. հմմտ. Ծն. բ. 7. «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի և եղև մարդն յոգի կենդանի»։ Աւելի մանրամասն է Եզն. 90. «Ոգւոյ և հողմոյ անուն երրայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է. նա թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ՝ նոյնպէս գտանի. յորժամ տագնապեալ ոք յումեքէ իցե՝ ասէ. չեմ ոգի կլանել, չեմ ոգի առնուլ, և այնու զօդոյս՝ զոր միշտ ծծեմք՝ յայտ առնէ». էջ 92 «Գիտեմք եթէ այսն հողմ է և հողմն՝ ոգի, ըստ*

յառաջագոյնն ասացելոյ. քանզի յորմամ մեք ասեմք՝ թէ սիմ շնչէ, ստորնեայք ասեն այս շնչէ... ոգեղէնք, որ է հողմեղէնք»։ Ըստ այսմ ունինք զանազան լեզուների մէջ՝ համապատասխան բառեր «հոգի, շունչ, քամի» իմաստներով. ինչ. լտ. animus *«ոգի, հոգի»,* anima *«քամի, շունչ», հիսլ.* andi, ǫnd *«հոգի», յն.* ἄνεμος *«քամի», գոթ.* us-anan *«հևալ», սանս.* ániti *«շնչել»,* ánila *«քամի»,* ātmán- *«հոգի», անգսք.* oéðm, *հբգ.* ātum, *նրգ.* Atem *«շունչ», յն.* πνεῦμα *«փչիւն, շունչ, հոգի», ևն.* ψυχή *«հոգի», որ* Benveniste BSL 33, № 99, *էջ 165 հանում է* bhes- *«փչել» արմատից ևն։*

ՆՀԲ **ոգի** *գնում է «արմատ բառիցս* **հոգի, շոգի, հագագ, ոգել, հոգալ,** *լծ.* **ոյժ»**: Peterm. 62 **շոգի** *բառից։* Lag. Urgesch. 985 *կելտ.* pura *ձևի հետ։ Տէրվ.* Altarm. 6, *Նախալ. 46, 93 և Մասիս 1882 մայ" 24 գնում է* pu, spu *արմատից, որից նաև* **սփոփել, փոփոգել** *ևն.* **հոգի** *ներկայացնում է* **փոփոգել** *բառի պարզականը՝ իբր* **փոգի,** *որից* **հոգի, ոգի**: *Մառ.* ЗВО *5, 317 գնգ.* aïihu: *Հիւնք.* **հոգ** *բառից։* Meillet MSL 9, 152 *գնում է հնխ.* owyo- *ձևից. համմ. յն.* αὔρᾱ *«հոդմ»,* οὖρος *«յաջողակ քամի»,* ἄελλα *«փոթորիկ»։* Patrubány SA 1, 197 *գերմ.* spuk *«ոգի, ուրուական, հոգեգիշ»։ Գևանջեանան* ZAPh 1, 49 **ոգել** *բառի հետ՝ հհիւս.* ljukr *«փոթորիկ», գերմ.* fauchen *«շնչիլ»։* Scheftelowitz BB 29, 44 *սանս.* sava *«դրդռում» բառի հետ։ Քիւրէղեան, Բազմ. 1910, 153* **ոգ>ոյժ** *արմատից։* Karst, *Յուշարձան 416 մոնգոլ.* agur *«օդ, շունչ», բուրեատ.* ukel, *ճապոն.* iki *«շունչ», 428 և 430 ՖՖր.* qaq, qoq *«փըչել, շնչել»։ Վերի մեկնութիւնը տուաւ* Petersson KZ 47, *էջ 273—275, որ ընդունում է նաև* Pokorny, 2, 79։ *Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 84 ըստ* Peterm. *հանում է շոգի բառից։*

ԳԻՒ.—Ջղ. **հոգ'ի, վոգ'ի** (âme), **խոգ'ի** *(անձ),* **խոկէց խաճել** *«յոգւոց հանել», խագ'իվոր «ոմն». Խրբ. Սչ.* **հօգ'ի,** *Մշ.* **հօկի,** *Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ակն. Համշ. Նախ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տփ.* **հօֆի,** *Ագլ.* **հօ'ֆի** *«հոգի, ոգի», հէ'գ'ի «անձ» (առաջինը փոխառեալ գրականից, երկրորդը՝ բնիկ բարբառային), Տիգ.* **հօֆֆի,** *Ղրբ.* **հիւ'ֆի, հէօ'ֆի,** *Ասլ.* **հէօֆի,** *Հճ.* **հիգ'գ'ի,** *Զթ.* **հիգ'գ'է,** *Սվեդ.* **հիգ'ֆա,** *Վն.* **խոկ'ի,** *սեռ.* **խուկ'ու,** *Սլմ.* **խօֆի,** *Մրղ.* **խօֆը'**, **խօֆու** *(սեռ.* **խօֆույու**), *Մկ.* **խոկ'է'**, *Ոզմ.* **խուկէ'**: *Նոր բառեր են* **անհոգի, հոգադեղ, հոգաչափ, հոգեդատ, հոգեդարձ, հոգեդուռ, հոգեզաւակ, հոգէորդի** *(սրբանց համար հնից համմ.* **հոգւոյ որդի** *վրք. հց. բ. 142),* **հոգեբաս, հոգեկատար, հոգեհամ, հոգեհայր, հոգեհանիկ, հոգեճաց, հոգեհաւատի, հոգեհոգի, հոգեպահ, հոգեպահուստ, հոգեվարահ, հոգետուն, հոգեորցնել, հոգեփրկահ, հոգեֆակում, հոգէատ, հոգուդեղ, չարահոգի, սևահոգի** *ևն։ Էնկիւրիի Թըրքախօս հայերն ունին* hokovart *«անհանդիստ». օր.* bugeje hokovart oldum *«այս գիշեր անհանդիստ եղայ» (Բիւր. 1898, 865)։*

ՓՈԽ.—Ուտ. **հօֆապարցու** *«հոգաբարձու»,* **հօֆօց** *«մեռելի վրայ հոգոց ասելը»,* **հօֆօց փէսաէսուն** *«հոգոց ասել տալ», վրաց.* ოჴუცი ofուցի *«մեռելի վրայ հոգոց» (ունի Գրիշաշվիլի, Զվելի քալաքիս բոհևմա, էջ 246. Հաղորդից Գ. Աստուր)։ Հայերէնի՞ց է փոխառեալ գնչ.* ogi *(եւրոպական գնչ.) «սիրտ, հոգի, քաջութիւն»,* ongi *«սիրտ, հոգում, կամք»,* gi *(Ասիական գնչ.) «կեանք, հոգի, միտք»,* ogi dava *«հոգին տալ, հոգին աւանդել, մեռնիլ»։ Պատկ.* Цыганы, *էջ 47 յիշում է բառիս զանազան ձևերը, ինչ.* ogi, odi, odhi, vodi, godi, goti, dzi, ži, gi *ևն, «հոգի» իմաստով։ Այս բառերը զանազան ձևով են մեկնուած. այսպէս՝ մի կողմից* Pott, II. *էջ 216 գնում է սանս.* jiva, *հինգուստ.* جی ji *«կեանք, հոգի» բառից. նոյնպէս և* Ascoli, *էջ 18—19.* Paspati, *էջ 394 ցոյց է տալիս որ սանս.* jiva *ձևի հետ պէտք է կապել գնչ.* jibe *«կեանք». իսկ գնչ.* ogi *բառը սրա հետ կապ չունենալով՝ կցւում է* an'ga *«անձն» բառի հետ. բայց սրան էլ ուելի մօտիկ է գտնում գնչ.* ongi *«սիրտ, կամք, հակում»։ Սրանց հակառակ միւս կող-*

մից Müller SWAW 66, 278 ընդունում է թէ գնչ. vod'i յառաջանում է հյ. ոգի բառից։ Մի ընդարձակ քննութիւն Mordtmann-ի և Pott-ի կողմից՝ տե՛ս ZDMG 1870, 681—703, ուր գնչ. ogi փոխառեալ է դրւում հյ. հոգի բառից։ — Պատահական նմանութիւն ունին ֆիննն. henki, էստ. hiiŋg, լապ. hoeg և ճապոն. 木 ki «հոգի, ոգի», անդի xek'a, hek'a, կար. xek'oa «մարդ, անձ»։—Տե՛ս նաև վար բառի տակ։

+ՀՈԼ «մերկ, բաց». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են հոլանի «կիսամերկ, մերկ, բաց, անծածկոյթ» Ա. կոր. ժա. 13. Դան. ժգ. 32. հոլանեալ Գ. մակ. դ. 6. հոլանիլ Բ. թագ. գ. 20, 22. «գլուխը բանալ ի յարգանս» Սասն. 52. հոլոնիլ Շնորհ. հոլոնեալ «բաց, կիսամերկ», փխբ. «անպատկառ, յանդգնած» Ոսկ. մ. բ. 23. Կոդ. ժբ. և փիլիպ. էջ 406. Արծր. Մեսր. եր հոլաթևել «թևերը բանալ՝ տարածել» ՍԿԿ. կթ. արմատ. Տագ. հոլաթևեան «թևերը բացած» Շար. հոլեցուցանել Պիոն. 386. հոլանեցուցանել Պիտ. և հոլանել «մերկացնել» Լմբ. տաղ ի ս. Գէորգ (որ ՆՀՔ սխալմամբ «թաւալեցնել, գլորել» է հասկանում). հալանել (ուղղելի հոլանել) «մեկնել, բացատրել, յայտնել» Գիրք թղ. էջ 22 (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 248—9). հոլաբան «ըմբշամարտողների կրկէսը» Կղնկտ. (տե՛ս իմ Հյ. նոր բառեր Ա. էջ 21). թերևս նաև հոլամուկ «ջղջիկ» Վեցօր. 163 (նթ պէտք չէ կարդալ խոլամուկ. հմմտ. խոլումուկն «ջղջիկ»)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pol- արմատից. ցեղակիցներն են ռուս. полый «բաց, ազատ, չծածկուած, դատարկ», լտ. palam «բաց, ակնյայտնի, հրապարակաւ», հսլ. polye, սերբ. pȅlje, լեհ. pole, ռուս. поле «բաց դաշտ, բացավայր», շվեդ. fala «ծառազուրկ բացատեղ», ալբան. ſpal, perpal «բացայայտ», կամիս. palhiš «լայն» (Ernout-Meillet 688).— նոյն արմատի -no- մասնիկով աճած ձևն են ներկայացնում՝ հսլ. *pol-no-, որից սերբ. plȍny «հարթ, տափակ, անբեր, վայրի դաշտ», plȍn՝ «հարթավայր», լեհ. płonny «անպտղաբեր», ուկր. polonýna «բարձրավանդակ», չեխ. planý «անբեր, վայրի», pláň «հարթավայր», սլով. plân, plána «ծառազուրկ», plánja «բաց դաշտ», սերբ. planína «լեռնանտառ», հսլ. planina «լեռ»։ Դարձեալ նոյն արմատի -to- մասնիկով աճած ձևն են ներկայացնում՝ հբգ. fëld, հիսլ. fold, անգսք. folde, գերմ. Feld, անգլ. field «դաշտավայր» ևն։ Պարզ արմատը հնխ. pel-, pol- «բանալ, տարածել, պարզել, փռել» տալիս է հյ. հոլ և հող, աճած հնխ. plāt- տալիս է հյ. լայն (-no- մասնիկով). աւելի ընդարձակ տե՛ս Pokorny 2, 61 և 99, Trautmann 204, Walde 554։

Հիւնք. հովանի բառից։ Ուղիղ մեկնեց Meillet MSL 8, 154: Karst, Ծուշարձան 421 ՔՔր. yal (yar, ar) «մերկ, դատարկ», ույգուր. yalanḳ, չաղաթ. yalang, օսման. palən «մերկ, միայն»։

Հոլ «խումբ» տե՛ս Հոյլ։

ՀՈԼՈՍԵԼ «ոռոգանել». ունի միայն Բառ. երեմ. էջ 184. նոյնը հոռոսել կամ հոլոսել «ոռոգանել» ՓԲ։

+ՀՈԼՈՎ, ի հլ. «թաւալում, իր վրայ պըտրտուելը, գլորում, շրջան» Դիոն. ածայ. Մագ. Նար. «գոյականների քերականական փոփոխութիւնները» Բր. և Նրգն. քեր. որից հոլով գալ «գլորիլ» Նղիշ. դտ. 181. հոլովիլ «գլորուելով երթալ (անիւ, սայլ, քար)» Ամովս. բ. 13. Դատ. է. 13 իմ. ժէ. 18. հոլովել «դարձնել, փոփոխել» Նար. «հեգել» Փարպ. Խոր. հոլովեցուցանել Ամովս. բ. 13. Ոսկ. յհ. ա. 4. հոլովումն Խոր. Պիտ. Փարպ. կիսահոլով Փիլ. լին. երկրահոլով Ճառընտ. եռահոլով Քեր. քերթ. բազմահոլով Թէոդ. ի կոյսն. Նար. անհոլով Պիտ. վերջահոլով, հոլովակերտ (նոր բառեր) ևն։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. qu̯ol- «շարժիլ, դառնալ, պտուտ գալ» արմատից. ցեղակիցներն են յն. πέλομαι «շարժիլ», ἔπλετο «դարձաւ», περιπλόμενος «դարձած», πάλιν «դարձեալ, յետս», πόλος «առանցք, լիսեռն», κύκλος «շրջան, անիւ», πολέω «շարժիլ», πωλέομαι «յաճախել», τελέθω «եմ, լինել», սանս. čarati «շարժիլ», čakrá- «անիւ», զնդ. čaraiti «դառնալ», čaxra «ճա-

խարակ», հսլ. kolo, *չեխ.* kolo, *ռուս.* koleso *«անիւ», հպրուս.* kelan, *հիսլ.* hvel, hjol, *անգսք.* hwēol, hwēl *«անիւ», անգլ.* wheel *«անիւ, դարձնել», լիթթ.* du-celes *«երկ-անիւ կառք», փռիւգ.* κίκλην *«Մայլ կամ Մեծ Արջ համաստեղութիւնը» են։ Այս բոլորը ծագում են հնխ.* g^{u}el-, g^{u}ol-, g^{u}l̥- *արմատից* (Pokorny 1, *էջ 514—6,* Trautmann 125, Boisacq 531, 533 *և* 743, Walde 178, Berneker 549)։ *Հայերէնը ծագում է* g^{u}ol>**հոլ** *ձայնդարձից (-ով մասնիկով), իսկ* g^{u}el- *ձևը ներկայացնում են* **յեղ, եղ,** *որոնց վրայ տե՛ս առանձին։ Պարզ արմատը պահում են գաւառականները։*

ՆՀԲ «ոլորմամբ պտրումն, լծ. լատ. volvo»։ *Տէրվ. Մասիս 1881, մայ. 5 և Նախալ. 106 յն.* εἰλύω, *լտ.* volvo, *գոթ.* valvjan *բառերի հետ՝ հնխ.* varu, varv *«թաւալիլ» արմատից. Համմ. նաև* **գիլ, գլորել, գալարել, ոլորել, բոլորել** (**բ** *նախդիրով*)։ Meillet MSL 10, 282 *յն.* κυλίω, κυλίνδω *«գլորել» բառերի հետ։ Յիշում է Հիւրշ.* IF Anz. 10, 48: *Հիւնք.* **հիվէ** *բառից։ Յ. Արշէզ, Բազմ. 1897, 52 իրար է կցում* **ոլ–որ, բոլ–որ, հոլ–ով** *և կոր։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Pedersen, *Հյ. դր. լեզ. 86 համեմատելով հսլ.* kolo *«անիւ», լտ.* colus *«իլիկ»։ Այս մեկնութիւնը մերժելով՝* Lidén, Armen. Stud. *էջ 131 կցում է հյ.* **իլ** *և* **ողն** *բառերին։*

ԳԻՒ.—Այս արմատից են **հոլ** *Ալշ. Երև. Մշ. «շռնչան կամ գնդախաղ»,* **հոլոլ** *Ղրբ. «անիւ», Երև. մնկ. «սայլ», Գնձ. «թելի կոճ. 2. գլանաձև բարձ»,* **հոլոլ տալ** *Ղրբ. «գլորել»,* **հոլոլայ** *Տփ. մնկ. «սայլ, գլորուիլ»,* **հոլոլվիլ** *Ղրբ. «գլորուիլ երթալ»,* **հոլնդել** *Ալշ. Մշ. «հրել, դէն գցել»,* **հոլովել** *(գրականից փոխառեալ) Ծծկ. Ջն. Սեբ. «կամացուկ դողանալ»,* **հոլվել** *Բո. «դարձնել (աչքը, գլուխը)»։ Այս բոլորը պատկանում են* **հոլ** *արմատին. առաջիններր ներկայացնում են* **հոլ** *պարզ կամ* **հոլ–հոլ** *կրկնական ձևը. միայն վերջի երկուսը* **հոլով** *ձևից են։*

ՀՈՍ (ի *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «*ճիտ, կուռ, լիուլի, ոչ-անօսր*» *Ագաթ. Վեցօր. գ. էջ 60. Փիլ. Խոր. որից* **հոնծիլ** «*պնդանալ, խտանալ, թանձրանալ*» *Վեցօր. 61. Ոսկ. Եփես. 733. Փարպ. Խոր.* **հոնծել** «*կտաւը գործելու ժամանակ գործիքով թելերը ամրացնել*» *Ոսկ. Եփես. 806 (չունի ՆՀԲ).* **հոնծագոյն** *Պիտ. Փիլ. Պղատ.* **հոնծատեսակ** *Պիտատ.* **հոնծուիւն** *Պղատ. Փիլ.* **հոնծարար** *Վանակ. յոր. բազմահոն Պատմ. ազէքս. յոգնահոն Օրբել.* **հոնծեալ** «*թանձր*» *(ինչ. հոնծեալ բերան «թանձրալեզու») ՅՀ. կթ. Լմբ. ազ.* **հոնծիչ** «*կտաւի թելերը ամրացնելու գործիք*» *Ոսկ. Եփես. 806. գրուած ունինք նաև* **հոյծ** *Մագ. Ճառընտ.* **հոյծեալ** *Մագ.* **անհոյծ** *կամ* **անհոն** «*կոշտ, կոպիտ, հասարակ*» *Մագ. թղ. 237. Երզն. քեր.* **խոն** *Արծր.* **թանձրախոն** *(իմա՛* **թանձրահոն**) *ՇԲ։*

Բագրատունի, Քերակ. զարգաց. էջ 651 լծ. **հասա**ս։ *Հիւնք.* **հոսիլ** *բայից։ Հիւրշ. 468 համեմատում է սանս.* paj-ra- «*թանձր, կարծր, պերճ, շքեղ, ուժեղ, փայլուն*», *յն.* πῆγός «*ամուր, հաստատուն*», πήγνυμι «*ամրացնել*», *լտ.* pango «*ամրացնել*» *ձևերի հետ, որոնք ծագում են հնխ.* pag', pak' *արմատից. բայց այս համեմատութիւնը անապահով է գտնում։* Walde 552 *հյ.* **հոն** *կցում է այս արմատի* e/o *ձայնդարձին, որից հանում է նաև հիսլ.* oc, *կիմր.* wng, wnge «*մօտ, քովը*», *հիսլ.* tinōlaim «*ժողովել, հաւաքել*»։ Karst, *Յուշարձան 425 ԹՐ.* kat, kyt, kot «*թանձր*», *իսկ 426 ԹՐ.* sok «*նեղ, թանձր*»։ Petersson KZ 47, 287 *սանս.* pi-bda-ná «*ամուր, հաստատուն*» *բառի հետ, արմատը դնելով* ped, pod, *որից կրկնութեամբ սանս.* pibda-, *իսկ* -so- *մասնիկով հյ.* **հոն**. *սրա հետ նոյն են նաև հյ.* **հասա**ս = *գերմ.* fest *ևն։ Մերժում է* Pokorny *2, 8 և 22։*

***ՀՈՒՏԵՄԲԵՐ** (*սեռ.* -ի) «*մարտից հաշուած ութերորդ ամիսը*» (*ըստ լատինական տումարի*) *Եւս. քր. Երզն. մաթ. գրուած է նաև* **ոկտոբր**, *սեռ.* **ոկտորի** *Սոկր. 196,* **ոկտոմբր** *Սոկր. 639,* **ոկտոմբրի** *Սոկր. 310, 670. Նոր բառեր են* **հոկտեմբերեան, հոկտեմբերիկ**։

=Յն. ὀκτώβριος, *որ փոխառեալ է լտ.* october *հոմանիշից. բուն նշանակում է «ութերորդ ամիս» և կազմուած է լտ.* octo *«ութը» բառից. տարածուած է բոլոր եւրոպական և այլ լեզուների մէջ. ինչ. գերմ.* Oktober, *ֆրանս.* octobre, *իտալ.* ottobre, *ռուս.* октябрь *են. Հայ բառը այսպէ՛ս է ձևափոխուած, ազդեցութեամբ սեպտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր բառերի. Համմ. վրաց.* ოქტომბერი *ոկտոմբերի՝ որ նոյն ամսանունների ազդեցութեամբ առացել է աւելորդ մ ձայնը։—Հիւբշ. 367։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Գրականից փոխառութեամբ կայ նաև գաւառականներում. ինչ. Նախ. հօգդեմփէր, *Պլ.* հօֆդէմփէր, *Ղրբ.* հօկտէմբէր *են։*

+ՀՈՂ, n *հլ. «հող, գետին», լայնարար նաև «գերեզման, կալուած, արտ» ՍԳր. Բուզ. Եզն. որից* հողարեր *Ագաթ.* հողարլուր *Ես. ին. 2,* հողագործ *ՍԳր.* հողաբաւալ *Ագաթ.* հողաթափ *ՍԳր.* հողախառն *Բ. մկ. դ. 41.* հողածին *Իմ. է. 1. Երեմ. խթ. 33.* հողակալ *Կոչ.* հողամաղ *«թուչունը» ՍԳր. «փոշու շամանդաղ» Եզն.* հողեղէն *ՍԳր. Եզն.* բանձրաճող *Պիտ. փիլ. Շիր.* անօսրաճող *Նոնն. 15.* բերքաճող *Փիլ. այլաբ. են։ Նոր բառեր են* հողատէր, հողատիրութիւն, հողատիրական, հողազուրկ, սակաւաճող, կաւաճող, սևաճող, աւազաճող, հողաբաժանութիւն *են։*

=*Ինիկ հայ բառ՝ հնխ.* pol- *ձևից. սրա մերձաւոր ցեղակիցն է հսլ.* polje *«դաշտ, արտ». բուն նշանակում է «բացավայր» և նոյն է հյ.* ճոլ. *«բաց, մերկ» բառի հետ. աւելի ընդարձակ տե՛ս անդ։*

Schröder, Thesaur. 45 *երբ.* חול xōl *«աւազ» բառից է դնում հյ.* խօլ, *որով անշուշտ ուզում է հասկանալ* հող: *(Այս բառի հետ Մաո.* Осн. Таблицы, *էջ 5 միացնում է ասոր.* ܚܠܐ xālā *«աւազ», մանդ.* הילליא hīllīa *«փոշի» և վրաց.* sila *«աւազ», որոնց արմատը դնում է սեմ.* ḳll<hll=*յաբեթ.* sll. *բայց հյ.* հող *բառը չէ յիշում)։* Klaproth, As. polygl. *100 պրս.* xak *«Հող» բառի հետ։ Նշէ լծ. յն. հիւլէ և* χόος, χῶμα *«հող», սանս.* kṣ, *արաբ. (իմա՛ պրս.)* xāk *«հող»։* Peterm. 26, 38 *լտ.* solum: Böttich. Arica 79, 312 *սանս.* pula, *ռուս.* полѣ, *գերմ.* Feld: Lag. Urgesch. 801 *հսլ.* pole, *անգսք.* folde, fild: *Տէրվ. Մասիս 1881 մայ՞ 5 լտ.* pulvis *«փոշի» և սանս.* puriśa: Karolides, Γλ. συγκρ. *102 կպդվկ.* χαΐζι *«դաշտ», յն.* χαμαί, χαμελός, *լտ.* humus:—Meillet MSL 8, 154 *համեմատում է հսլ.* polye *և ռուս.* полъ *«տափակամած, յատակ» բառերի հետ։* Thomaschek, Die alten Thrak. II, 18 *լիթ.* pilis *«բերդ»,* piltas *«լցնել», յն.* πόλις *«քաղաք», թրակ.* πόλτυν *«փայտեայ տուն» բառերի հետ։ Հիւնք.* հիւղէ *բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 61 չի ընդունում հսլ.* polje *և ռուս.* поле, *ինչպէս նաև լտ.* pulvis *և ամէնից աւելի յարմար է գտնում լտ.* solum *«յատակ, հիմք, երկիր, ոտքի տակը»։ (Սրա հետ միացնում են հիսլ.* fol, *գոթ.* sulja, *հդգ.* sola, *անգսք.* solu *«ոտքի տակը». Համմ. նաև ֆրանս.* sol, *իտալ.* suolo, *սպան.* suelo *«հող, գետին». նախաձևն է հնխ.* sụol-, sul- *բան* Walde 723, *որոնք սակայն չեն կարող տալ հյ.* հող *ձևը)։* Karst, *Յուշարձան 423 ՔՔր.* höl *«հող»։ Մաո.* ИАН *1917, 330 ավար.* xur *«դաշտ»։*

ԳԻՒ.—Ալշ. կր. Մշ. հող, *Երև. Խրբ. Շմ.* հօղ, *Սչ.* հօղ, *ֆրղ. Ագլ. Տփ.* հուղ, *Աալ.* հէօ՛ղ, *Զթ.* հիւղ, *կր. Հճ.* ֆող, *Ախց. Երև. Ննխ.* ֆօղ, *Ակն.* ֆէօղ, ֆէղ, *Սեբ.* ֆէղ, *Գոր.* վէղ, *Ղրբ.* վըէղ, *Զղ. Սլմ. Վն.* խող *(սեռ. Վն.* խուղու), *Պլ. Ռ.* խօղ, *Մկ. Ոզմ. Տիգ. Տփ.* խուղ, *Մրզ.* խուէղ, *Սվեդ.* խիւղ, *Համշ.* խէօղ: *Նոր բառեր են* աճիող, հողաբաճ, հողագուղձ, հողածածկ, հողաճամ, հողաճանել, հողաճարկ, հողաճուռ, հողափարտակ, հողդար, հողդրամ, հողել, հողլաթ, հողկալ, հողշոր, հողկիկ, հողմաղ, հողշաղ, հողգլուխ, հողռա, հողռափել, հողոց, հողսարիկ, հողսրիկ, հողվար, հողվարճ, հողվդի *(Հճ.* հօղվէդի*)*,

հողաապաև, հողմ *(որ և միջ. հյ. հողմ «գերեզման» Սմբ. պատմ. 130)*։

Փոխ.—Թրք. գաւռ. Զիլէի հողլաք (Յուշարձան էջ 327). մեր բառից (իբր հին փոխառութիւն) կարող է լինել նաև քրդ. խոլ «հող, երկիր, գետին»։

ՀՈՂԵԼ *«հոծել». ունի միայն Բառ. երեմ. էջ 184 («պնդանալ, խտանալ, թանձրանալ» իմաստո՞վ)։*

ՀՈՂԵՒԱԼ *«ընկճեցեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 184։*

ՀՈՂՀՈՂՈՒՄՆ. *անյայտ իմաստով նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք Թղ. էջ 115. «Ո՛վ հովիւք, որ կորուսէք և ցրեցէք զոչխարս արօտի իմոյ, արդ ահաւասիկ ես վրէժ առից ի ձէնջ, զի լցան աւուրք ձեր ի հողհողումն»։ Ակնարկում է Երեմ. իգ. 1—4 հատուածը. թուի թէ նշանակում է «ցրումն»։*

Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 243 ուղղում է խողխողումն։

+ՀՈՂՄ, ո հլ. *(յետնաբար կայ նաև հողմրն, յգ. հողմուխ)* «քամի» ՍԳր. Վեցօր. «աշխարհի կողմերը» ՍԳր. «դալուկ հիւանդութիւնը, դեղնցաւ» Ոսկ. յհ. ա. 21 *(այսպէս ըստ համեմատութեան յն. բնագրի, ապա թէ ոչ գաւառականներում համի նշանակում է «շարժական յօդացաւ»)։ Որից* հողմայոյգ Վեցօր. հողմաշարժ Յոր. ժգ. 25. հողմաշունչ Ագաթ. հողմավար Յոր. ժգ. 25. ծէ. 1. հողմեղէն Եզն. հողմակոծ Ագաթ. Սերբեր. հողմակոծութիւն Եւագր. խաւարահողմ Նար. հարաւահողմ Ագաթ. մոլորահողմ Ագաթ. հողմընդդէմ «քամուն հակառակ» Եւագր. 93 *(երկիցս. բայց տպուած* հողմ ընդդէմ.— *Հողմընդդէմ խորհրդոց հողմընդդէմ հողմակոծեալ).* հողմաղաց, հողմարգել *(նոր բառեր)։*

=Բնիկ հայ բառ, հնխ. onəmo- *ձևից, որ նշանակում է «շունչ, փչիւն, քամի». բուն արմատն է հնխ.* enə-, onə-, nə- «շնչել, փչել», որ an- ձևով երևում է զանազան լեզուների մէջ. յիշենք այստեղ կարևորներից յն. ἄνεμος «շունչ, քամի», ἀνήνεμος, νήνεμος «առանց քամու, հանդարտ օդ», լտ. anima «օդի հոսանք, քամի, շունչ, հոգի», սանս. anila- «քամի շունչ», հիռլ. animm, նիռլ. anam «հոգի», կորն. eneff, բրբտ. anaoun «հոգի» են *(միւսները տե՛ս* Pokorny I, 56—57): *Հայերէնի մէջ հնխ.* onəmo- *ձևից միջին ə ընկել է ըստ օրինի,* -nm- *տարանմանութեամբ վերածուել է* -ղմ- *(համմտ. նման>ըլման-իլ) և միավանդ* *ողմ *ձևի վրայ աւելացել է ն յաւելուածը, ինչպէս յաճախ։ Մեկնութիւնը տե՛ս* Ernout-Meillet 51. *նոյն արմատից է նաև հյ.* աճն, *որ տե՛ս առանձին։*

Տէրվ. Նախալ. 128 վերջաձայն մ մասնիկ է համարում (համմտ. տիղմ, սեղմ, ջերմ, որմ): *Պատկ.* Арм. геогр 45, Матеріалы I. 3, *որից յետոյ* Müller SWAW 136 (1897), *էջ 29=*Armen. VI, *էջ 4, № 32 յն.* ὀρμή «յարձակում» և սանս. sárma- «հոսանք» բառերի հետ։ *Հինք.* հող *բառից։* Bügge IF 1, 442 -մ *կամ* -մն *համարելով մասնիկ, արմատը դնում է* հող.=*սնս.* anilá- «քամի»։ *(Այս մեկնութիւնը մերժում են* Walde 44, Boisacq 61 *և* Pokorny 1, 57' *ըստ* Lidén, Arm. St. 38 *և* Petersson KZ 47, 246): Patrubány, Monde or. 2 *(1907/8), էջ 222 հնխ.* avē «փչել» *արմատից. համմտ. յն.* αὐλός, αὐλέω, *նոյնը ՀԱ 1908, 187 յն.* αὖρα, ἄημι «շընչել» *բառերի հետ, իբրև* *հաւլմ<*հնխ. *au-l-mos: Karst, Յուշարձան 425, 426 թաթար.* sol, sal «քամի, զովութիւն» *բառի հետ։ Թիրեաքեան, Աբրահայ բռ. 50 նոյն ընդ* հով, զով, ծով: Petersson KZ 47, 246 *յն.* πόλεμος «կռիւ» *են բառերի հետ, իբրև «ուժգին շարժում»։ Մերժում է* Pokorny 2, 53. *մերժում եմ նաև ես, որովհետև յն.* πόλεμος *ձևի համապատասխանն է հյ.* աղմուկ *(տե՛ս այս բառը)։ Մառ,* ИАН *1917, էջ 330 ավար.* հուրի «հողմ» *բառի հետ։ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet BSL *№ 79, էջ 11։*

ՀՈՄ-. նախամասնիկ. տե՛ս համ-:

Schröder, Thesaur. 47 *յն.* ὁμοῦ *ձևից փոխառեալ։ Նշբ որպէս յն.* ὁ΄μου, ὁ΄μու:

ՀՈՄԱՆԻ (–ուոյ, –ենաց) *«սեղեխ, այր՝ որ տուփեալ է առ կին օտար»* ՍԳր. եփր. յես. 304. *«համախոհ, գործակից ի չարիս»* Նպիտ. ծն. Նար. էջ 222. Արծր. որից բոզաճոմանի Ոսկ. մ. բ. 12. բազմաճոմանի Ճառընտ. (գրուած նաև բազմաճոմեան Ոսկ. եփես. 833). Նոր գրականում կազմուած է իգական ճոմանուճի:

Հիւբշ. KZ 23, 19 համարում է հակառակը բշնամի բառի. իբրև թէ բշնամի կազմուած է դժ– մասնիկով, իսկ ճոմանի՝ ճոմ– մասնիկով:— Հիւնք. իմն անորոշից: Karst, Յուշարձան 408 սումներ. umuna *«հաւաքոյթ»* բառից:

ՀՈՄՆԻ *«մի տեսակ բոյս, որ դեղ է փորլուծութեան»* Բժշ. ունին միայն ՀԲուս. § 1714 և Քաջունի, Գ. 144:

ՀԲուս. անդ՝ նոյն է կարծում Հյ. ճուն, ճոնի բառի հետ. մինչդեռ Բժշկարանի բացատրութիւնից (—Հա՛ն իր տակովն, արբէ և կորատէ զբազուկն...) յայտնի է թէ տակ ունեցող խոտհղէն է և ո՛չ թէ ծառ:

ՀՈՅ *«երկիւղ, սարսափ»*. մէկ անգամ գործածուած է Ա. մկ. գ. 25 աի հոմանիշին կից. *«Սկսաւ ահն և հոյն երթալ առաջի Յուդայ և եղբարցն»*: Սրանից են կազմուած ճոյականալ *«զարմանակերտ, հրաշակերտ»* ՍԿր Ագաթ. Ծւս. քր. և պտմ. (գրուած խոյականալ Արծր.), ճոյականալեալ Պիտ. ճոյանուն Պիտ.: Կայ նաև ճոյկապ *անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Սեկունդ.* (Das Leben und die Sentenzen des Phil. Secundus, Wien 1895, *էջ 39 և Մատեն. մանր ուսումն. Տաշեանի, Ա. հտ. էջ 240*). *«Ջի՞նչ է մշակ... ծառոց տնգիչ, աղքատութեան հոյկապ, բժիշկ հողմոց». այս կտորը չունի յոյն բնագիրը. Տաշեան, անդ՝ էջ 55* թարգմանում է բառս «Einer, welcher der Armuth enthoben ist, *յորմէ բարձեալ է աղքատութիւն իւր»*, ՆՀԲ *«պատիչ և դարմանիչ»*:—Հոյականալ բառի մէջ իմաստի զարգացման համար համմտ. աի և աճապին *«սարսափելի. 2. մեծ, խոշոր, վիթխարի»*:

ՆՀԲ ճոյ, ճոյն *(և յօդր արմատական կարծելով) «թերևս որպէս ախոյենի կամ խոյի»*. իսկ ճոյականալ *«ի բառէս խոյ, խոյակ կամ հոյ կամ հոյն»*: Հիւնք. ճոյ՝ պրս. ճույ, իսկ ճոյականալ՝ խոյական բառից: Պատահական պէտք է համարել պրս. هوی hōy, hūy *«վախ, երկիւղ» (բնաձայն բառ կամ միջարկութիւն)*:

ՀՈՃ *«ցից կամ ցեց»*. այսպէս ունի Բառ. երեմ. էջ 184. երկու իմաստներից մին անշուշտ սխալ է:

ՀՈՅԶ, ո հլ. *«ծառից վազած հիւթ, խէժ»* Վեցօր. 101, 186. ունինք նաև ճոյծ Բառ. երեմ. էջ 185 և ճոյժ ՀՀԲ սխալագիր գրչութիւնները. նոր գրականում նշանակում է առհասարակ *«քամուած հիւթ»*, որից ճուզաբաղանք:

Brosset JAs. 1834, 369—405 *իբրև լծորդ է դնում* ճոյզ, խէժ, խոյզ: ՆՀԲ լծ. թրք. öz *«հիւթ»* և göz yaśə *«արցունք»*: Հիւնք. տճկ. öz *«հիւթ»*: Karst, Յուշարձան 408 սումներ. uzu *«մխ, ճարպ»*, 421 թրք. yaš, is, iz *«թաց»*, yüz-mek *«լողալ»*, Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 թրք. öz:

ՀՈՅԼ, ի հլ. (ՆՀԲ դնում է նաև ո հլ. թէև առանց վկայութեան) *«խումբ (կենդանիների, մեղուների, զօրքի, մարդոց, վկայութեանց)»* Պզատ. օրին. Պիտ. Գևոնդ. ՅՀ. կթ. որից ճոյլ ի ճոյլ *«գունդագունդ»* Նար. տաղ. միաճոյլ Վեցօր. 71, 174. բազմաճոյլ Վեցօր. 189. Պիտ. ՅՀ. իմ. նկ. Մանդ. երկնաճոյլ Անան. նկեղ. Մաշտ. մարդաճոյլ Նար. յոգնաճոյլ Անան. նկեղ. գրուած է նաև ճոլ Նանայ. որից ճոլեալ *«հաւաքուած, խմբուած»* ՍԿԿ. կթ. արմատ. ճոլոնեալ *«միասին հաւաքուած»* Շար. լէ. Անկ. գիրք առաք. 336:

ՆՀԲ նոյն ընդ բոյլ, լծ. և բոլոր, յն. ὅλος, ὄχλος, թրք. ուլու, Ffիլլիւ, ճալգ, ճալխ, գօլ: Böttich. Arica 79, 312 սանս. bhūri: Justi, Dict. Kurde 371 քրդ. guluk *«պար մեղուաց»*: Fick I⁴ 82 յն. πόλις, լիթ. pilis=լեթթ. pils *«ամրոց» են բառերի հետ յիշում է նաև լիթ.* pilti *«թափել» և հյ. ճոլել «դիզել»* (Նոյնը կրկնում են Endzelin, Latviešu valodas, իդ-լա, Riga և Pokorny 2, 51, որոնց դէմ է խօսում և մերժում Meillet BSL № 87, *էջ 229*): Հիւնք. յոյլ

բառից։ Scheftelowitz BB 29, 33 հյ. լի, յն. πολύς, գնդ. pouru- «լի», հբգ. fole «ժողովուրդ» են բառերի հետ՝ հնխ. pelē- «լնուլ» արմատից։ Այս մեկնութիւնը յիշում են Walde 592 և Pokorny 2, 63, կասկածում է Meillet (անձնական)։ Pedersen, Հայ. դր. լեզ. 86 թերևս նոյն ընդ հոլով։ Karst, Յուշարձան 421 թրք. küllü «ամբողջ» (որ դժբախտաբար արաբերէն է)։ Petersson KZ 47, 276 լեթթ. pûlis, pûle «դէզ, հօտ», ռուս. pulja, ուկր. pul'a «գընդակ» բառերի հետ։

ՓՈԽ.—Ըստ Մառ. Тексты и разск. IV յաւել. հայերէն հոյլ բառից է փոխառնել վրաց. ხვალი խվալի «հաւաքոյթ, բազմութիւն»?

ՀՈՅՆ, ի հլ. (գրուած նաև հոն, հուն) «զոդալ, չում, տճկ. գրզըլճըք, լտ. cornus» Ագաթ. որ և հիւն Մագ. թղ. 138. ծառը կոչւում է հուսի, հոնի, հնի (ըստ ՀԲուս § 1715), իսկ ՓԲ դնում է հոնենի։

Պատահական նմանութիւն ունի մանջուր. حصن una «մի տեսակ կարմիր ու քաղցր պտուղներով թուփ է՝ բարբարիսի նման»։

ԳԻՒ.—Ղզ. Տփ. հուն, Գոր. Ղրբ. հիւն, Հճ. հին, Երև. ֆօն, որից Ղրբ. հի՛ւնի, Հճ. հնրնի, Երև. ֆօ՛նի «հունի ծառը». Նոր բառեր են հուհոտ, հուհաբրու, հոնեսպաս։

ՀՈՆԵԼ «հոսել». ունի միայն Բառ. երեմ. էջ 185։

ՀՈՆՈՎՐԵԼ «ինչքը բռնագրաւել կամ արգելքի տակ դնել. séquestrer». նորագիւտ բառ, որ ունի Սմբ. դատ. 33. «Զէդ մարդասպան ձգեն զինք և դատեն ու հաւնաւրեն (=հօնօվրեն) ու դնեն յեկեղեցւոյն կարիքն». նոյնը նաև հաւնովրել՝ անդ, էջ 38, 64. որից հոնովրումն Սմբ. դատ. 150։

ՀՈՇ. արմատ առանձին անգործածական. որից հոշական «կոշական» Սիւն. քեր. 207. Բր. քեր. 17, 62. Քերդ. քեր. 172, 176. Մագ. քեր. 247. «բացագանչական» Անյ. պերիարմ. հոշել «կոչել» Բառ. երեմ. էջ 185, որից նաև ՓԲ։

ՆՀԲ յուշ առնել ձևից է հանում։

*ՀՈՇԻԲՈՒՆԱԿ «մի տեսակ խնկեղէն» Խոր. աշխ. 616. ունի միայն ԱԲ. ըստ Տիգրանեան, Բառ. բժշ. բոյսերի 12 «grana paradisi»։

=Փոխառեալ է իրանեանից. վերջի մասը ներկայացնում է պհլ. bōyak, պրս. بویا bōya «բուրող» բառը. անծանօթ է հոշի. համմտ. գազերբուակ, հրբուակ, գոյիբուակ, նայիբուակ, բոլորն էլ նոյն կազմութեամբ։— Հիւբշ. 123։

Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 81 դնում է պրս. xōšbō կամ xōšbōyak «քաղցրաբոյր» ձևից։

*ՀՈՒԻ «հայկական տոմարի երկրորդ ամիսը» Ագաթ. Եփր. դատ. էջ 225. Համաբ. էջ 19. Արծր.։

=Փոխառեալ է կովկասեաններից. համմտ. վրաց. ოქტო ոքի, ჭერო հերի, մինգր. žiri, žuri, ինգ. or, oor, սվան. ori, heri, yervi, լազ. žur, žur, jur. բոլորն էլ նշանակում են «երկու», հոոի ամսանունը առնուած է իբր «երկրորդ ամիս», ինչպէս սաեմի՝ երրորդ ամիս, կովկասեան «երեք» բառից։

Հներից Վանակ. տարեմ. և Տաթև. Հարց. 200 առուգաբանում են հոռել «թաղել» բայից. «Հոռի, զի հորեն երկրագործք և մշակք, զցորեան և զգինի ի շտեմարանս ժողովելով»։ Նոյնպէս է նաև Տաթև. ձմ. ա, որ մի քիչ յետոյ էլ ասում է. «Հոռի զխորհրդակցութիւն ասէ, յորժամ առաքեաց զհուրն ի ջուրն և նկարեաց զամենայն»։ Երզն. տօնապ. (տե՛ս Ալիշան, Հին հաւ. էջ 140) ասում է թէ այս ամիսը նախապէս կոչւում էր մատռան և Խոռէն անունով մէկի պատճառով կոչուեցաւ Հոռի։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ Brosset, JAs. 1832, 528:—Պատկ. О названіяхъ древнихъ арм. мѣсяцевъ 1871, էջ 38 կցում է գնդ. xšaθra vairyn «մետաղների պահապան ոգին», պրս. شهریور šahrēvar «է անուն հրեշտակի միոջ, որ է վրակացու հանքաց և հրոյ. 2. է անուն չորրորդի աւուր իւրաքանչիւր արեգակնային ամսոյ», աղուան. oreli «10-րդ ամիսը»։ Վրացականի հետ են կապում

նաև Բազմ. 1845, 82, Հ. Ե. Տայեցի՝ Բազմ. 1897, 337, Բասմաջեան՝ անդ, էջ 339, Աճառ. անդ՝ էջ 394, Հիւնք. էջ 313։—Ալիշան, Հին հաւ. 139 կգում է խոռ (Հայկի որդին), եգիպ. Հոր. Orus, յն. լտ. Հորա «դիցուհի գեղեցկութեան», գւռ. խոռոտիկ և պրս. խոր «արև», իսկ էջ 338 պրս. խուրտատ ամսանունը։ Յակոբեան, Բանաս. 1900, 37 քաղդ. airu, եբր. iyyar, արաբ. ասոր. ayyār «երկրորդ լուսնային ամիսը», պրս. xōr «արև» ևն։ Պատահական նմանութիւն ունի չին. örh[4] «երկու»։

Հոռոսել տե՛ս Հոլոսել։

ՀՈՍ, ի հլ. «հոսում, վազելը» Պիսիդ. Մագ. որից հոսել «հեղուլ, վազցնել, թափել. 2. ցորենը երնեկով յարդից ջոկել. 3. վերևից ցած դցել, դահավիժել» ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 6. հոսիչ «երնող, ցնդող, ցրտղ» Իմ. ժա. 19. «երնելու գործիք, հեծանոց» Ամովս. թ. 9, Ոսկ. մ. բ. 7. հոսանք ՍԳր. Եփր. ծն. Ագաթ. հոսհոսիլ «առատութեամբ՝ ճոխապէս վազել» Ոսկ. յհ. ա. 3. կալաւոս «ցորեն երնող» Յայսմ. (ՀԱ 1911, 96), յորդաւոս Կոչ. յորդաւոսան Եւագր. մեծաւոսան Եփր. յես. բազմաւոս Պիտ. կարկաջաւոս Ոսկ. լս. առատաւոս Սկևռ. երկնաւոս Արծր. երազաւոս Արծր. դառնաւոսան Անան. եկեղ. դարաւոս Ոսկ. (քանիցս). դիւրաւոս Եփր. յովս. 100. Պղատ. տիմ. գետաւոս Բննիկ. բիւրաւոս Ոսկ. լս. եօթնաւոսան Ոսկիփ. ծովաւոս Անան. եկեղ. հողմաւոս Նար. ջրոս Շիր. կամ ջրոհոս Դամասկ. ևն։

Klaproth, Asia pol. 100 արտբ. سيل seil, պրս. sil «հեղեղ»։ Տէրվ. Նախալ. 110 հոսել և հոռսակ դնում է հնխ. srus արմատից. հմմտ. սանս. սրու, յն. ῥέω ῥεῦμα «հոսանք, գետ» ևն։ Հիւնք. հիւսել բայից։ Patrubány ՀԱ 1908, 213 հնխ. ponts- ձևից, որ տես հուն։

Գիմ.—Տփ. հուսիլ «հոսիլ», հուսան «հոսանք», Խրբ. հօսիլ «երնել» (նոյն բառն ունին նաև Բլ. Բն. Պրտ.), Երև. ֆօսան «բուք», որից հոսանակապ «բքարգել»։ Հետաքրքրական է մանաւանդ հոսելի Ախք. Արբ. Կր. «հեծանոց, եղան», որ ունի խոջ. հուսէլի, Սվեդ. հիսսիլա, Բլ. հօոսէլի, Մշ. հօրսըլի, Ղզ. հուրսըլի, Երև. ֆօրսըլի ձևերը, որոնք ցոյց են տալիս հոռս- արմատը. սրանից ր-ի անկումով յառաջացել է հոս-իլ։

Փոխ.—Թրք. գւռ. Թորթումի hösenk «հոսանք, ջրվէժ», յատկապէս նշանակում է «Թորթումի լճին մէջ թափուղ մեծ ջրվէժը» (Բիւր. 1898, էջ 627)։

ՀՈՍԻ «գազ, մի տեսակ լուսնային շատ փշոտ բոյս» Հին բռ. Դան. ասորի մեկն. սաղմ. ձգ. որից հոսի կռէժ «գազի խէժ» Բժշ. հոսնի «ակքան, գազ փուշը» Վանակ. ունի միայն ՀԲուս. § 1728—9 և յաւել.։ Այս երեքի համեմատութիւնից երևում է, որ արմատն է հոս, տես. հոսի (որից հոսի կռէժ), իսկ միւս հոսի և հոսնի ձևերի մէջ՝ -ի և -նի՝ ծառ ցոյց տուղ մասնիկներն են։ Այս արմատական հոս ձևն է ահա, որ գտնում ենք գործածուած Բառ. երեմ. էջ 9, ակռան բառի բացատրութեան մէջ. այսպէս՝ «Ակքան. գազտ կամ հոս, ժժնիկ կամ փուշ»։

Կայ հնխ. peuk'- «խայթել» արմատը, որից կազմուած են յն. ἐχεπευκής «դառն», ἐμ-πευκής «դառնաւուն», ինչպէս նաև յն. πεύκη, լիթ. puszis, պրուս. peuse, հբգ. fiohta, fiuhta, մբգ. viehte, գերմ. Fichte «եղևին», իբրև «սաղնաւոր ծառ» (Kluge 140, Walde 622, Boisacq 301)։ Հյ. հոս «գազ» և հնխ. peuk'- ձևով և իմաստով յարմար են իրար, միայն անհամապատասխան են eu և հյ. ո։

Գիմ.—Գնձ. նբ. հօսի, Ագլ. հուս, բոլորն էլ նշանակում են գազ փուշը, որ իբրև կրպչան է գործածւում և որի ուրիշ տեսակներն են մկնաւոս, տափաւոսի։

Հոսնի տե՛ս Սին։

+**ՀՈՎ**, ո հլ. (կայ նաև յգ. տես. հովուց) «պաղուկ, ցուրտ, զով» Եփր. դտ. Եզն. Ոսկ. մ. բ. 20. «հովութիւն, հովանի, շուաք, սաուեր» Փարպ. Ճառընտ. Գնձ. «քամուց ձևացած ծալքեր շորի վրայ» Մագ. Քղ. 224. «քամի, հողմ» Բլկր. 43. որից հովանալ վեցօր. հովանի «սաուեր, շուաք» ՍԳր. Ոսկ. ես. հովանանալ Ագաթ. հովանաւոր ՍԳր. Մծբ. հովանոց «հովանաւոր ծածկոյթ կամ

զարդ» ՍԳր. Բուզ. «հովոց, հովանալու տեղ» Երեմ. իբ. 24. «սիրտ հանգստացնող սփոփիչ խօսք» Ոսկ. եփես. 896. **հովանոցակ** *Ոսկ. մ. գ. 16.* **հովասուն** *Եւս. քր.* **հովաճար** *Վրդն. երգ.* **Ꮀաջաճով** *Ոսկ. յհ. ա. 30.* **հովել** *«հովահրել» Վրք. հց. բ. 377.* **հովեկ, հովաճար, հովանոցաձև** *(նոր բառեր) են։ Այս արմատից է կազմուած զ մասնիկով՝ զով (<զհով) Դամասկ. Նար. որից էլ* **զովանալ** *Մն. ժր. 4. Դատ. ժե. 19. Փարպ.* **զովացուցիչ** *Եզն.* **զովացուցանել** *ՍԳր.* **զովացութիւն** *Ոսկ. ես.* **զովամարմին** *«մարմինը սառն» Եփր. մն. 478.* **զովաշունչ** *(նոր բառ) են։—Սրանից տարբեր է* **համաճով** *«նոյն տեղը, մէկտեղ առաջնորդուած» ԱՔ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գր. սրկ. լս. (տպ. Սոփերք, Դ. 149). «Մի՛ լիցի քակել որոշել ի համահով ժողովոցն մինչև ցմահ». պէտք է ուղղել* **համաճով** *«համաժողով», կազմուած* **հոմ, հոմիլ** *«հաւաքուիլ» բայից։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pou- «փչել, փչիւն» արմատից, որի վրայ տե՛ս **հև, հոգ** *և* **հոգի**: *Նախնական «փչիւն» գաղափարից «ցուրտ, հով» գաղափարին անցնելու օրինակ են՝ զնդ. ao-ta-, սանս. ūdhar, ōman-, լիթ. aũksts, իռլ. uar են, որոնք բոլոր նշանակում են «ցուրտ կամ ցրտութիւն», բայց ծագում են հնխ. aṷē- «փչել» արմատից* (Pokorny 1, 222): *Կարելի է սակայն ընդունիլ, թէ* **հով** *հին հայերէնի մէջ էլ ունէր «քամի» իմաստը, որ պահում են մինչև այժմ զանազան գաւառականներ։—Ա՛ճ.*

ՆՀԲ լծ. ոմկ. **հով, հողմն,** *թրք.* **հաւա.** *իսկ* **զով** *բառի տակ՝ թրք.* **սօվում** *«ցուրտ»։* Peterm 62 *և* Windisch. 21 **զով** *բառի մէջ զ համարում են լծորդ ճ-ի (և ո՛չ մասնիկ)։* Böttich. ZDMG 1850, 355 *և* Arica 81, 360, *որից նաև* Müller SWAW 38, 580 *և* Justi, Zendspr. 244 **զով** *«թարմ» բառի հետ կցում են սանս.* yuvana-, *զնդ.* yavan, *պրս.* Javān *«երիտասարդ»։* Lag. Urgesch. 117—119 *բոլորն էլ* pā *արմատից. անդ՝ 118* **հովանի** *բառի մէջ* **-անի** *վերջաւորութեան հետ համեմատում է յն. -ηνόν*: Meillet MSL 9, 53 *զնդ.* aotō, *իլթ.* vêsûs *«հով» և աւելի յետոյ* BSL *հտ. 24, 167 լեթթ.* aũsît *«հովացնել»,* aũksts *«հով». (այս բոլորը պատկանում են հնխ.* ṷēaṷē- *«փչել» արմատին* (Pokorny 1, 220—222), *որ չի կարող տալ հյ.* **հով**. *տե՛ս և օդ)։ Հիւնք.* **հով**=*յն.* ἰωή *«հոդմ»,* **զով**<*ծով-ից,* **հովանի**<*յովանակ-ից կամ արաբ.* **հէվալէ**: *Աւետիսեան ՀԱ 1907, 281* **հոգի** *բառի հետ։* Patrubány *ՀԱ 1908, 215* **հովանի** *կցում է լտ.* op-ācus՝ *նախապէս «հովանաւոր» բառին։* Karst, *Յուշարձան 425 թթր.* sol, sal *«քամի», 426 թթր.* sov, sog *«հով, ցուրտ, սառն»։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ակն. Երև. Խրբ. Մշ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ. **հօվ**, *Սչ.* **հօվ, հօւ**, *Ագլ.* **հուվ**, *Ջթ.* **հէօվ**, *Ասլ.* **հէօ՝վ**, *Հճ.* **հէվ**, *Դրբ.* **հավ**, *Մկ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Խօվ. (սրանցից Ակն. Խրբ. Պլ. Ասլ. Սեբ. Ռ. Տիգ. նշանակում են «քամի», միւսները «հով, շուաք»)։ Այստեղ է պատկանում նաև Ննխ.* **հօվ** *«տգեղ» (հմմտ. Պլ. պաղ «ցուրտ. 2. տգեղ»)։ Նոր բառեր են* **հովաւիրել** */Ասլ.* **հօվարւի՛է՝լ**, *Պլ.* **հօվաւիրէլ**, *Վն.* **խօվխրել**, *Մրղ.* **խօվխռէլ**. *Հին վկայութիւնը Վրք. հց. բ. 378* **հով հարէր**. *աւելի ուշ՝* **իսղհրել** *Մխ. բժշ. էջ 147, որ պէտք է ուղղել* **խովհրել, հովհրրել**). **հոված, հովայ, հովան, հովցուք, հովարուիլ, հովաց, հովգոլ, հովել, հովբռուկ, հովբփիլ, հովիչ, հով-ծով** *«յօդացաւ»,* **հովոտ, հովոտիլ, հովոտուկ, հովուտ, հովրել, հովտուն, հովփչի**: *Գւռ. «զով» և «քամի» նշանակութեանց համար հմմտ. մոնգոլ.* satkin *«քամի»>Ննխ. գւռ.* **սալխրն** *«զով»։*

ՓՈԽ.—Թրք. գւռ. Կր. hov *«քամի» (Բիւր. 1898, 627).—Աւտանայի Թրքախօս հայերը, ինչպէս նաև յոյներն ու թուրքերը ունին* **հօվ վէրմէք** *«մէկին զրգռելու համար գովաբանել».*—Patrubány SA 1, 222 *հայերէնից փոխառեալ է կարծում հունգ.* hüv-ös *«հով, զով»։ Վրաց.* **ᲐᲪᲪᲝᲕᲐᲜᲝ** *ամփովանի «դիակառք», որ հյ. ամպհովանի բառն է (Հաղորդեց Գ. Ասատուր)։*

ՀՈՎԻՏ, *ի–ա հլ. «ձոր» ՍԳր. «ցածր բլրակ, մի քիչ խոր՝ զարուվար տեղ» ԱՔ. «խոռոչ» Պղատ. տիմ. որից* **հովտանալ** *նիւս.*

երգ. հովտագոյն *Փիլ.* հովտաձև *Խոր. Արծր.* հովտային *Ասող.* հովտուքիւն *Փիլ. լին.* հովտաբար *Նիւս. կազմ.* բոլորահովիտ *Թէոդ. կոյսն.* ջերմահովիտ *ՅՀ. կթ. գրուած է* ովիտ *Խոր. Ա. 16. Արծր. Հրատր. Պատկ. 112. երկու ձևով էլ մտնում է բազմաթիւ տեղական յատուկ անունների մէջ. ինչ.* Խալսահովիտ, Կոգովիտ, Աղիովիտ, Արճիշակովիտ *են։*

Նշ Ը ծ. Թրք. ովա *«դաշտ». բայց Թրքում է հանել* հով, հովուել *բառերից։ Մորթման* ZDMG *31, էջ 415, 611 բևեռ.* uevit, vedia:—Pedersen, *Հայ. դր. լեզ. 219* -իտ *մասնիկով* հով *«գով» բառից. հմմտ.* օժ-իտ: Karst, *Յուշարձան 421, 428 ԹԹր. սամ.* ova *«դաշտ», 430 ԹԹր.* kab, kob, kov, kev *«ուռիլ, կոլոր, դատարկ» արմատներից։* Petersson IF 43 (1925), 72 հով *բառից՝ ինչպէս* Pedersen:

+ՀՈՎԻԻ, ի-ա *հլ. «ոչխար արածացնող» ՍԳր. Ոսկ. Բ. տիմ. փոխաբերաբար «առաջնորդ, վարիչ, եպիսկոպոս, կրօնաւոր» Նւս. պատմ. որից* հովուել *ՍԳր.* հովուական *Ա. Թագ. ժէ. 40.* հովուապետ *Ա. պետ. ե. 4.* հովուութիւն *Ջաք. ժա. 15. Նւս. քր. Նփր. աւետ.* հովուակից *Խոր. Ղևոնդ.* հովուաբիր *«մատիտեղ բոյսը» Բժշ.* հովուեբզութիւն, հովուեբզական, հովուեբզական *(նոր բառեր) են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ovi-pā *«խաշնապահ, հովիւ» ձևից. սա մի հին բարդութիւն է, որի մասերն են՝ հնխ.* oui̯- *«ոչխար»+*pā *«արածել, արածացնել». առաջինի ժառանգներն են սանս.* avi, *յն.* οἶς, *լտ.* ovis, *ումբր.* oui, uvef, *հիռլ.* ōi, *լիթ.* ovìs, *լեթթ.* avs, *հսլ.* ovĭca, *ռուս.* овца, *հիսլ.* ēr, *անգսք.* ēowu, ēowe, *հսաքս.* ewi, *հրգ.* ouwi, ou. *բոլորն էլ «ոչխար»* (Pokorny 1, 167, Walde 550, Boisacq 692, Trautmann 20). *երկրորդից ունինք՝ լտ.* pāsco, *հսլ.* pasą, pàsti *«արածել», յն.* πῶϋ *«հօտ» են* (Pokorny 2, *էջ 72—73)։ երկու արմատները առանձին պահուած չեն հայերէնի մէջ։ Հնխ.* owi- *նշանակում էր «ոչխար», առանց սեռի խտրութեան. այս վիճակը պահում են դեռ սանս. յն. և լտ. լեզուները. գերմանականում և կելտականում վերածուել է իգականի, լիթուաներէնը նոյնպէս պահեց իգականի համար, արականի համար յատկացնելով* ā vinas *«խոյ». իսկ սլաւականը մասնիկների տարբերութեամբ զանազանեց* ovъ-nъ *«խոյ» և* ovь-ca *«մաքի» (տե՛ս* Ernout-Meillet 684):

Windisch. 22 *լտ.* pasco, pavi *«հովուել» ձևի հետ։* Lag. Urgesch. 111 pā *արմատից։ Տէրվ. Նախալ. 91* հօտ, պահել, *լտ.* pasco, *յն.* πάομαι *«ստանալ, ունել».* πῶϋ *«հօտ», ποιμήν «հովիւ» են ձևերի հետ հնխ.* pa *արմատից։ Նոյնպէս է նաև* Müller, WZKM 6, 266: *Աւելի յետոյ* Müller WZKM 8, 282 *և* Bugge KZ 32, 16 *առաջարկեցին վերի մեկնութիւնը, ճիշտ այնպէս՝ ինչպէս ունինք յն.* οἰοπόλος, *սանս.* avipālá- *«ոչխարի հովիւ»,* gōpá-, gōpāl'a- *«նախրորդ»։ Այս մեկնութիւնը ոմանք ընդունում, ոմանք էլ մերժում են։ Մերժում է Հիւբշ. 468, պատճառ բռնելով այն՝ որ ո՛չ հնխ.* oui̯ *և ո՛չ* pā- *արմատից ո՛չ մի հետք մնացած չէ հայերէնում։ Այս առարկութիւնը ուժ չունի, որովհետև շատ լեզուներում պատահում են երբեմն արմատներ, որոնք այլուր կորած և միայն մի որևէ բարդութեան կամ ածանցման մէջ պահուած են լինում. յիշենք հայերէնից* *ւուն *«կրակ» (պահուած* ինոց *բառի մէջ),* *տի *«կապ» (պահուած* սամեոտի, կալոտի *բառերի մէջ),* *տի *«մեծ» (պահուած* տիկին, տէր, տիեզերք *բառերի մէջ),* անդ *«շեմք» (պահուած* դրանդ *բառի մէջ) են։*—Bartholomae SA 1, 239 *և* Wochenschr. f. kl. Phil. 1898, *էջ 1054 ընդունում է հակառակ Հիւբշմանի։* Pedersen, *Նպաստ 8 դնելով* -ի *մասնիկով՝* հով *«շուաք» (իբր պաշտպան, ապաստարան) բառից, հետևցնում է առանց որևէ պատճառաբանութեան՝ թէ «*ovi-pā *ձևին մասին ամէն խնդիր կը վերնայ»։* Meillet, Dial. ind.-eur. 73 *և* MSL 18, 264 *դեղեցիկ է գտնում* Müller-*ի մեկնութիւնը, բայց* w>վ *ձայնափոխութիւնը դեռ ապացուցուած չի հա-*

մարում։ Հիւնք. «հովիւին հանած ճո՛, ճի՛ւ ձայներէն»։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Համշ. Մշ. ճովիվ, *Սվեդ.* ճուվէվ, *Մկ. Վն.* խովիվ, *Ոզմ.* խովէվ. *Զրս.* ճովիգ. *Նոր բառեր են* ճովուարած *Խրբ. «հովիւ»,* ճովիխաբան *«մի տեսակ թռչուն» Մշ.։*

+ՀՈՏ, ո *հլ. «հոտ» ՍԳր. լայնաբար կամ փոխաբերաբար «դոյզն նշմարանք, հետք» (այսպէս՝ պատերազմի, ջրի հոտ ևն) ՍԳր. Կոչ. Եփր. ծն. որից* ճոտիլ *«նեխիլ և նեխումից գարշ հոտ արձակել» ՅՀ. ժա. 39. Ոսկ. մ. բ. 9 և յհ. ա. 24.* ճոտարան *«բուրաստան» Խոր.* ճոտեղ *Վրդն. դան.* ճոտևան *Երզն. ոտ.* աճուշաճոտ *Ագաթ. Եզն.* չարաճոտ *Ոսկ. ա. տիմ. բ. ժաճոտաճոտ Եզն. Ոսկ. յհ. բ. 27. ժաճաճոտ Նիւս. բն.* խաճձրաճոտ *Ագաթ.* զազրաճոտութիւն *Խսիւք.* դիւաճոտ *Անան. եկեղ.* դառճաճոտ *Խոր.* գիշաճոտ *Մամիկ.* շարաւաճոտ *Կորիւն. Ագաթ. Մծբ.* գարշաճոտ *Բրս. մրկ.* գեհենաճոտ *Վրդն. պտմ.* ճոտաութիւն *(նոր բառ) են։ Արմատի կրկնուած ձևն են ներկայացնում* ճոտոտիլ *ՍԳր. Ագաթ.* ճոտոտել *Օր. դ. 25. Տոբ. զ. 19.* ճոտոտալ *Մխ. երեմ. Վրդն. ծն.* ճոտոտելիք *Ա. կոր. ժբ. 17. Ագաթ.* բազմաճոտոտ *Վրդն. սղ.* յարաճոտոտ *Վրդն. երգ։—Հոտ և բոյր բառերի իմաստի զանազանութեան վրայ տե՛ս Փէշիկեան, Բազմ. 1925, էջ 139—140։ Գրաբարի մէջ* բուրել *յատուկ է թէ՛ լաւ և թէ վատ հոտի համար, մինչդեռ աշխարհաբարում միայն լաւ հոտի համար է. իսկ* ճոտիլ *թէ՛ գրաբարում և թէ ժողովրդական զանազան բարբառներում յատուկ է միայն վատ հոտի, Պօլսի բարբառում թէ՛ լաւ և թէ վատ հոտի. օր.* Գէշ կճոտի. Վարդը աճուշ կճոտի։

=Բնիկ հայ բառ, հնխ. od- *«բուրել, հոտ արձակել» արմատից. Համմտ. յն.* ὀδμή *(attic.* ὀσμή*),* ὀδωδή *«հոտ, բոյր, անուշահոտութիւն»,* ὄζω (< * ὄδjω) *«բուրել»,* εὐ-ώδης *«անուշահոտ»,* δυσώδης *«ժանտահոտ»,* ὀσ-φραίνω *«հոտոտել», լտ.* oleo *«հոտիլ»,* odor *«հոտ, բոյր» (իտալ.* odore, *ֆրանս.* odeur, *սպան.* olor *«հոտ»), ալբան.* ameze (*odmā+ze) *«հոտ, դառն համ», լիթ.* ûdžiu, ûsti *«հոտոտել», լեթթ.* uôdu *«բուրել», լիթ.* ûdimas *«հոտ»* (Boisacq 684, Trautm. 202, Walde 537, Berneker 24, Ernout-Meillet 665, Pokorny 1, 174)։—*Հիւբշ. 468։*

ՆՀԲ լծ. լտ. o'uon, *յն.* οσμή', osmi, *թրք.* qoqu, qoxu։ Peterm. 21, 26, 38 *լտ.* odor: Windisch. 22 *լտ.* putidus, foeteo: *Պատկ.* Изслъд. *էջ 11 զնդ.* baoδa, *պրս.* bōy, *լատ.* putor *«նեխիլ»։ Հիւբշ.* Arm. St. *էջ 39 վերի մեկնութիւնը կասկածելի է դառնում, նախաձայն* ճ-ի *պատճառաւ և սպասում է* "ոտ *ձևը։ Տէրվ. Նախալ. 93* ճոգի, ճուր, փտիլ, փչել *ևն, լտ.* putere *«փտիլ, հոտիլ», յն.* πύω *«հոտիլ» և այլ բազմաթիւ ձևերի հետ դնում է հնխ.* pu *«փչել, հոտիլ, փտիլ» արմատից։* Meillet MSL 7, 162 *լտ.* odor: *Մառ.* ЗВО *5, 316 զնդ.* bud *>հյ. բոյր բառերի հետ։* Kaist, *Յուշարձան 427 ույղուր.* it, yit, *ալթայ.* yit *«հոտ» (արևել. թրք.* ايد id *«հոտ, բոյր»,* ايدلامق idlamaq *«հոտոտել»)։ Մառ.* ИАН *1917, 323 բոյր բառից։ Պատահական նմանութիւն ունին ուտ.* ad *«բոյր, բուրում, հոտ»,* adba *«հոտառէտ»,* adesun *«նեխիլ, հոտիլ»։*

ԳԻՒ.—Շմ. ճօտ, *Ալշ. Մշ.* ճոդ, *Խրբ. Պլ. Ր. Սչ.* ճօդ, *Ագլ. Տփ.* ճուտ, *Տիգ.* ճուդ, *Ասլ.* ճէծդ, ճէծ*, *Զթ.* ճիւդ, *Սվեդ.* ճիւդ, *Ղրբ.* վրէտ, *Գոր.* վէտ, *Կր.* ֆոտ, *Ախց. Երև* ֆօտ, *Հճ.* ֆօդ, *Ննխ.* ֆօդ, *Ակն.* ֆէօդ, ֆէդ, *Սեբ.* ֆէդ, *Զղ. Սլմ. Վն.* խոտ, *Մկ. Ոզմ.* խուտ, *Մրզ.* խուխտ։—*Այս բոլորը նշանակում են թէ՛ լաւ և թէ վատ հոտ։ իսկ Համշ. զանազանելով երկուսը՛ գործածում է* ճէօդ *«վատ հոտ» և* ճօմ *(իմա՛* ճամ*) «բոյր, լաւ հոտ» իմաստով։—Բայական ձևերից հետաքրքիր են Մշ. Պլ.* ճօդիլ, *Հճ.* ճիդել, *Զթ.* ճիդիլ, *Ագլ.* ճա՛տիլ *«հոտիլ, նեխիլ»։—Հոտոտել ձևի համար ունինք Տփ.* ճօտօտիլ, *Ասլ. Խրբ. Պլ. Ր.* ճօդվըդալ, *Զթ.* ճօդվօդօլ, ճօդվօդդալ, *Հճ.* ճէդվըդօլ, *Սվեդ.* ճիդվըդիլ, *Սչ.* ճօդ՛ֆըդալ, *Պլ.* ճօդմըդալ, *Համշ.* ճօդմըդուշ, *Մշ.* ճօճտճտալ, *Տիգ.* ճօճբբբտալ, *Մն.* ճճբճբալ, *Ակն.* ճօդվըրալ, ֆօդվըրալ, *Սեբ.* ճօդմըրալ, *Վրբ.* վըրվբալ, *Վն.* խօտօտալ, *Սլմ.* խոտխտալ, *Ոզմ.* խուտտալ, *Մրզ.* խուխտուխտալ, խուխտխուխ-

տալ, *Սվեդ.* հիդդիլ *«գէշ հոտիլ»*։ Rivola *ունի խօնքրնալ ձևը։ Նոր բառեր են* հոտաւոր, հոտիկ, հոտ-ծոտ, հոտով, հոտոտ, հոտուկ, հոտուկ-աւել *«օշինդր»*, հոտուտ.—*գլուխ.* հոտվըրալ *ձևին համապատասխան գտնում ենք մհյ.* հոտվրալ *(Նորայր, Բառ. ֆր.* sentir)։

ՀՈՏԻՆԱԿ. *անստոյգ նորագիւտ բառ, անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գըտնում եմ գործածուած Յովսիմ. 24. «Եւ յորժամ նայեցայ, ահա շունք երկզլխեանք և հոտինակք վարէին զշունքն և փախստական առնէին»։*

**ՀՈՏՈՏ «մի տեսակ դեղ աչքացաւի համար» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1736. որ և հդուղ Մխ. բժշ. 67. կայ յատկապէս սրա մի առանձին տեսակը՝ որ կոչւում է* հոտոտմաֆի, յօզազմաֆի *Ասար., ՀԲուս. § 1737։*

=Արաբ. حضض huḍaḍ, *յատկապէս վերջին տեսակը կոչւում է արաբ.* حضض مكى huḍaḍ-i-Makkī։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Seidel § 182, *որ և* հոտոտ *դնում է «lycium indicum». մանրամասն պատրաստութիւնը և տեսակները տե՛ս անդ։ Ուղիղ է նաև Նորայր ՀԱ. 1924, 75։ Սխալ է մեկնում ՀԲուս. § 1736՝ իբրև արաբ.* ուտուտ *«յաւմիկ»։*

ՀՈՐ. ո *հլ. «ջրհոր, գուբ, խոր փոս» ՍԳր. որից* ջրհոր *ՍԳր.* ձիւնահոր *«մէջը ձիւն պահելու հոր» Արծր. էջ 291.* հորել *«ցորենը մի խոր տեղ թաղել ամբարել» Վանակ. տարեմ. Տաթև. ձմ. ա.* հորոն *«ցորենի հոր» Վստկ. էջ 30, 31։*

Klaproth, As. polygl. 91 *արաբ. և պրս.* hûr: *ՆՀԲ յիշում է երբ.* պօր *«հոր»։ Նորայր, Բառ. ֆր. (*silo *բառի տակ) արաբ.* հիւրի *«շտեմարան ցորենոյ»։ Հիւնք.* խոր *բառից։* Tomaschek, Die alten Thrak. II. 19—20 *թրակ.* σιρός *«գետնափոր տուն»,* σῖρο *«հոր»։ Սարգսեան, Բիւր. 1898, 484 արմատը դնում է* որ *«խորութիւն», որից* որոգայթ, խոր, ձոր, ծորձոր: *Բ. Խալաթեանց ՀԱ. 1902, 399 ասուր.* ḫurru, *եբր.* חֹר xŏr, *որոնք տալիս են հյ.* խոռ *(տե՛ս այս բառը)։* Jensen *ՀԱ. 1904, 276 փոխառեալ է դնում ասուր.* bûru, pūru *բառից, որից նաև եբր.* bōr *«հոր»։ (Մատ. Основ. Таблици, էջ 4 եբր.* בֹּאר bōr, בּוֹר bûr, *ասոր.* بَارَا bārā *«հոր» բառերի արմատը դնում է սեմ.* bʾr (bwr), *որի յաբեթական համապատասխանն է* ṗʾr (>ṗẋr), *սրանից վրաց.* ფრე փրե *«հոր», փղ'ռա «փորել». չէ յիշում հյ.* հոր *բառը)։ Անդրիկեան, Բազմ. 1905, 512* փորել *բայից։ Պատահական նմանութիւն ունի ճապոն.* ホル horu *«փորել»։*

Գիմ.—Ալշ. Մշ. հոր, *Շմ. Պլ. Ռ.* հօր, *Ասլ.* հէօր, *Ագլ. Տիգ. Տփ.* հուր, *Սվեդ.* հիւր, *Զթ.* հիւյ, հիւր, *Գոր.* վէր, *Ղրբ.* վըէր, *Կր.* ֆոր, *Ախց. Սրև.* ֆօր, *Սեբ.* ֆէր *(նշանակում է միայն «ջուլհակի հոր», իսկ բուն ջրհորը կոչւում է* ղօղա*). Հճ.* ֆոյ, *Զղ. Սլմ. Վն.* խոր *(«ցորենի հոր» իմաստով* խոր *յիշուած է 1800 թուից՝ Դիւան, հտ. ժ. էջ 128), Մկ. Ոզմ.* խուր, *Մրզ.* խուր.—*Ննխ. չգիտէ* հոր *բառը, բայց ունի* ջրհօր, ջուրհօր, ջրֆօր *«ջրհոր». (քաղաքում գործածւում է* խույի <*թրք.* قویو quyu).—*Նոր բառեր են՝* հորագործ, հորած, հորհոտ, հորաճամ, հորանոց, հորապարան, հորաջուր, հորեզեր, հորնտուն, հորուկ:

Փոխ?—Կիւր. fur *«հոր»,* hür, ör *«լիճ», ագ.* ör, ür, yör *«լիճ», ուտ.* k'ūr *«հոր», վրաց.* ოხა ora, ორე ore *«քարէ տաշտ, որի մէջ անասունները ջուր են խմում, գուռ»։ Տե՛ս նաև* ջրհոր *(ջուր բառի տակ)։*

ՀՈՐ, ի *հլ. «մէկի աղջկայ ամուսինը, փեսայ» Փիլ. ժա. էջ 187. «Հորք փոխանակ որդւոց են աներոցն և փոխանակ հարց հորիցն աներքն». (լուսանցքի վրայ մեկնուած է «փեսայ»). այս երկուսից դուրս ուրիշ վկայութիւն չկայ։*

ՆՀԲ հիւր *բառից կամ* հօր *սեռականի՞ց։ Նման է հնչում յն.* πότις *«փեսայ», բայց կապ չունի, որովհետև ցեղակիցները (համմտ. յն.* πότνια *«տիրուհի», լիթ.* pàts *«փեսայ», սանս.* pātnī *«տիրուհի», գոթ.* brūðfaðs *«նշանածը») ցոյց են տալիս, որ հնխ. արմատն է* pot-:

ՀՈՐԴ *«կոխուած, շիտակ (ճամբայ)» Ոսկ. գծ. 10 (չունի ՆՀԲ). որից* ճորդել *«ճամբան բանալ, մաքրել, պատրաստել» ՍԿր. Ոսկ. մ. ա. 15 և ևս. Եփր. եկ. (գրուած նաև* խորդել *Պիտառ).* ճորդիլ *«երթալ, տարածուիլ» ԱԲ.* ճորդան տալ *«ճամբայ հանել, յառաջ վարել, քշել (զօրքը, ոչխարները են)» Սղ. հէ. 52. ՅՀ. կՓ.* ռաճաճորդ *«ճանապարհորդ» Շնորհ. տաղ.* ներճորդիլ *«յառաջ խաղալ, յառաջանալ» ՅՀ. իմ. ատ.։*

ՆՀԲ ճարթել, յարդարել, յորդել, *ոմկ.* ղորդել, խորդել, *Բրք.* օրտու եիւրիւքմէչ *«բանակը յառաջ վարել»* ձևերի հետ։ *Հիւնք. յն.* ὀρθόω *«ուղղել, առաջնորդել, հովուել»։* Scheftelowitz BB 29, 21 *սանս.* par *«յայնկոյս վարել», յն.* πορος *«անցք», անգսք.* faran *«անցնիլ, երթալ» են բառերի հետ. հայերէնը իբր անց. դերբայ հնխ.* pṛto- *ձևից։ Այս մեկնութիւնը ընդունում են* Walde 602, Boisacq 758 *և* Pokorny 2, 39: Karst, *Յուշարձան 421 լտ.* porro, *գերմ.* Furt, *յն.* περαίνω *«կատարել, վերջացնել, անցնիլ», ՓՓր.* yor, yur, yür *«քայլել»։*

Գիմ.—Ալշ. ճօռտել, *Բլ.* ճօրտել, *Մշ.* ճօրբել, *Սլմ.* խորբել, *Հմշ. Տր.* ճօրբէլ, *Վն.* խորտել, *Մկ.* խուրտիլ, *Ոգմ.* խուռտիլ *«տունը աւլել, մաքրել, սրբել», Հճ.* ճիյբել *«ձիւնը տանիքից թափել» (ըստ Թէրզեան, Ամէն. տարեց. 1924, էջ 197), որից Կր.* ճօրթուճ *«յարդարանք, մաքրել ու սրբելը», Սեբ.* ճօրդ'էլ *«ծառը յօտել» (այսպէս նաև Ւմ. երևի յօտել բառի հետ խաչաձևմամբ)։ Ուրիշ է* ջորդել, խորդել *«շինել, յարդարել, յօրինել», որ ծագում է* ղորդ<ուղղորդ *բառից։*

Հորթ *տե՛ս Որթ։*

**ՀՈՐԻՁՈՆ «տեսութեան սահմանագիծը». ունի միայն ՓԲ. նոր գրական բառ, որից նաև* ճորիզոնական։

=*Ֆրանս.* horizon *հոմանիշից. սրա հետ նոյն են իտալ.* orizzonte, *գերմ.* Horizont, *անգլ.* horizon, *լտ.* horizon *են. ոլորն էլ ծագում են յն.* ὁρίζων *հոմանիշից, որ ներկ. դերբայն է* ὁρίζω *«սահմանորոշել» բայի. այս էլ ծագում է* ὅρος *«սահման» բառից։*

Ուղիղ մեկնեց Հիւնք. էջ 139։

ՀՈՐԿ *«արջնդեղ, սոնիճ.* nigella arvensis». *գիտէ միայն Կոյլաւ, Բառ. գերմ. էջ 46 ա. աղբիւրը անյայտ է։*

ՀՈՐՁ, ի *հլ. «յուզում, կիրք, եռանդ»? մէկ անգամ ունի Լաստ. ժա. (Վենետ. 1844, էջ 51). «Ողորմագին ձայնիւք և անհատ աղաղակաւ՝ (մանկունք) զգառանց բերէին զնմանութիւն, որ դեռադեռ ի մարցն բաժանեալ՝ ի հորձից եւ ելեալս առնէին վասն անժոյժ գոլոյ բնութեանն»։*

ՆՀԲ հյ. յորձանք *կամ արաբ.* xərs *«բարկութիւն» բառից։*

**ՀՈՐՄԱՅ «մարգարիտների շարք, մանեակ» Պատմ. աղէքս. էջ 150. ուրիշ վկայութիւն չը կայ։ (Զարմանալի է որ Ներսէսովիչ, Բռ. լտ. հյ. 316 բ. այս բառը հոմանիշ է գնում «լտ.* maledictum, *նզով, անէծ» բառին)։*

=*Յն.* ὅρμος, ὁρμαθὸς *«պատակ, մանեակ». յառաջանում է* εἴρω *«կապել, կցել» բայից* (Boisacq 229):—*Հիւբշ. 361։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

**ՀՈՒ «շարաւալից արիւն». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գանում եմ գործածուած Մխ. բժշ. էջ 63. «Ապա թէ իւր էութիւնն աւիրի, նա հերձէ զերակսն և ի յանդամ մին վաթի, հու և շարաւ ընծայի իւրմէն»։*

=*Պրս.* هو hū *«թարախ» բառից. հմմտ.* این جراحت را هو برده است یعنی آب در اندرونش اوفتاد in jarāhat-rā hū burda ast, ya'nī āb dar andarūnaš uftād *«այս վէրքը հու է կապել, այսինքն մէջը ջուր է հաւաքուել»* (Vullers). *բառս կարդացւում է նաև* hav, *որ սխալ է, ինչպէս ցոյց են տալիս նախ հայերէնը, և երկրորդ՝ քրդ.* هو heu *«փտախտ, gangrène»։—Ա՛ճ.*

Müller, Armen. VI, *էջ 4 իբր բնիկ հայ՝ դնում է հնխ.* pū *«հոտիլ, փտիլ» արմատից. հմմտ. սանս.* pūy, pūye *«հոտիլ, նեխիլ, փտիլ»,* pūya *«հու, շարաւ, թարախ»,* pūti *«թարախ»,* pūta *«հոտած», զնդ.* pū *«հոտիլ, նեխիլ, փտիլ». պուիտի «նեխում, փտում», յն.* πύον, πῦον *«թարախ»,* πυόω *«թարախո-*

տիլ», πύθω «փտեցնել», πύθομαι «փտիլ», լտ. pūs *«թարախ», pulēo «հոտիլ, թարախոտիլ», գոթ.* fuls, *գերմ.* faulen *«նեխել», լիթ.* pūvù *«փտիլ», pú-lei «հու, թարախ» ևն։ Այս մեկնութիւնը ընդունում է Հիւբշ. 468։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է Բազմ. 1897, 169 և 1898, 371։ Հիւբշման (անձնական), յետոյ նաև* IF Anz. 10, 45 *ընդունեց, ըստ որում հայ բառը շատ յետին գործածութիւն միայն ունի։ Հիւբշմանի առաջին կարծիքը կրկնում են* Walde 626, Boisacq 828 *և* Pokorny 2, 82, *անտեղեակ մնալով վերջին կարծիքին։*

ՀՈՒ *«հրոս». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 185. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

Հուժկու *տե՛ս Ոյժ։*

ՀՈՒԼԱՔ** *(որ և* **հուլապ) «մի տեսակ բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1744։*

=Արաբ. حلب ḥulb *«մի տեսակ բոյս» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 114)։—Աճ.*

***ՀՈՒԼՊԱՅ** *«մի տեսակ բոյս, հացհամեմի ունդ, Թրք.* böy toxumə, *պրս.* šandalīla, *լտ.* foenum graecum» *Մխ. բժշ. 75 (մեկնում է «որ է հացհամեմի ունդ»), Բժշ. (մեկնում են Թրք.* պօյ*). ունի միայն ՀԲուս. § 1745։*

=Արաբ. حلبة ḥulba' *նոյն նշ. տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 113 (մեկնում է Թրք.* böy *հոմանիշով). ԳԴ ունի* hulba *կամ* hulya *«բոյս ինչ բազմաճիւղ և սպիտակածաղիկ. Թրք.* պօյ բուխումի*». Նոյնը պրս. կոչում է* šamlīd, šanbalīla, *որ և Հաստատում է Ջուբինով[2] էջ 1256, 1393 վրաց.* **Შამბალიო** *շամբալիա= ულბო ոպրս (փոխառեալ արաբերէնից «*foenum graecum*»)։—Աճ.*

Ուղիղ մեկնից նախ Աճառ. (անտիպ). Նոյնը յետոյ անկախաբար Seidel § 214, *որտեղ տե՛ս նաև բոյսի մանրամասն նկարագրութիւնը։*

ՀՈՒՀԱՅ *«երաժշտական մի խազ է». ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ԱԲ. ըստ* Schröder *նշանակում է «*tremulatio *դողդողում» (տե՛ս* Peterm. ZDMG 1851, 365—72)։

ՀՈՒՂԿԱՀԱՐ, *ի–ա հլ. «աւազակ» Պիտ. որից* **հուղկահարու** *Պիտ.՝* **հուղկահարութիւն** *Պիտ.։*

*=Երևի թէ բարդուած է *հուղիկ կամ *հուղուկ անծանօթ բառից+***հար** *(հարկանել). հմմտ. պրս.* رهزن rāhzan *«աւազակ», որ է բուն «ճանապարհ զարնող»։*

ՆշԲ մեկնում է «հարող ուղեկի կամ ուղեկանի»։ Նազրճեան, Արեւելք 1884 նոյ՛ 16 սանս. hr, har *արմատից։*

***ՀՈՒՃԱՔ** *«խորշ». նորագիւտ բառ՝ որ ունի Արձ. 1274 թ. (Վիմ. տար. էջ 117). Ի խանապարին ներքի դեհն երկու հուճրաւ։*

=Արաբ. حجرة ḥujra *«պատի խորշ, պատրհան. 2. խուց»։—Աճ.*

+ՀՈՒՄ *(ո հլ. ըստ ՆշԲ, բայց առանց վկայութեան) «չափած, անեփ. 2. նմանութեամբ՝ տմարդի, անգութ» Ել. ժբ. 9. Ա. եզր. ա. 12. Ոսկ. յհ. բ. 8, 31, 33. որից* **հմութիւն** *Ոսկ. յհ. բ. 4. 14, 36.* **հմակեր** *խոսր. պարգ. Նչ. եզեկ.* **հմակերութիւն** *Պրպմ. Մեկն. զեւտ.* **հմագոյն** *Փիլ. տես.* **հմանալ** *Ոսկ. յհ. բ. 14։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ōmo- ձևից. հմմտ. սանս. आम ā́má-, *յն.* ὠμός, *հիոլ.* om, *կիմր.* of *«հում».—Իրանեան ընտանիքում ունինք աֆղան.* ōm, um, *կամ* h, ă *նախաձայնի յաւելումով՝ բելուճ.* hāmag, *օսս.* xóm, *պրս.* خام xām, *քրդ.* xāv *«խակ»* (Horn § 463)։— *Նոյն արմատին են պատկանում նաև լտ.* amārus *«դառն», հոլլ.* amper *«կծու, դառն, խակ», հիսլ.* apr *«կծու», հին շվ.* amper *«թթու, կծու, դառն», սանս.* amlá-, ambla- *«թթու», հբգ.* ampfaro, *անգսք.* ompre, *գերմ.* Ampfer *«թրթնջուկ», ալբան.* ambël'ë, embl'ë *«քաղցր», ɛmbl'ɛ «լեղին»* (Walde 31, Boisacq 1082, Kluge 16, Berneker 426, Pokorny 1, 179)։ *Հայերէնի մէջ* **հ** *յաւելուած է, ինչ* **հաւ**։—*Հիւբշ. 468։*

Ուղիղ մեկնից նախ ՆշԲ՝ համեմատելով յն. ὀμό*ս ձևի հետ։* Böttich. Arica 83, 392 *պրս.* xām *«խակ»։* Lag. Arm. Stud. § 1312. *ինչպէս նաև Հիւբշ.* Arm. Stud. 39 *կասկածելի են դանում համեմատել վերի ձևերի հետ՝ և նախաձայնի պատճառաւ։ Այս նախաձայնը* Meillet MSL 21, 187 *համարում է պարթեւական*

շրջանին աւելացած՝ իրանեաններէ ազդեցութեամբ. նախնականն էր հյ. *ում: Tomaschek, Deut. Litteraturzeit. 1883, էջ 1254 իբր կովկասեան փոխառութիւն՝ վրաց. ումի ձեւի հետ:

ԳԻՒՂ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. ՀՔ. Խրբ. Կր. Հճ. Համշ. Ղրբ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ւր. Սեբ. Սչ. Տիգ. Տփ. հում, Սվեդ. հօմ, Ասլ. հիւմ, Ագլ. Մկ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. խում, Ոզմ. խօմ: Նոր բառեր են հումաճում, հումաճուտ, հումլում, հումի, հումովի:—Ախք. և Կր. հում նշանակում է նաև «հում կաթի թթուած սերը»:

ՓՈՒՂ.—Վրաց. უმი ումի, ჰუმი հումի «հում»:

*ՀՈՒՄԱՅՔ (կամ նաև հումայտ) «թրթենջուկ» Ամիրտ. ունի միայն ՀԲուս:

=Արաբ. حميض humaiḍ (Բրք. արտասանութեամբ humaiz) նոյն նշ. (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 419):—Աճ.

ՀԲուս. դնում է արաբ. حمّاض hummāḍ հոմանիշից, որ ձևով չարմար չէ:

*ՀՈՒՄԵԼ, որ և հմել, հմոլ, խմել, խմէլ «գայլուկ խոտը, լտ. humulus lupulus, ֆր. houblon». ունին միայն ՀԲուս. § 1746, Քաջունի Ա. 1015 և Գ. 142, առանց յիշելու դործածութեան տեղերը:

=Նոր փոխառութիւն լատիներէնից և կամ սլաւական լեզուներից. հմմտ. լտ. humulus, ռուս. хмель, хмѣль, բուլգ. hmel, սերբ. hmẽlj, չեխ. chmel, լհհ. chmiel, շվեդ. humle, հանգլ. hymele, դան. humle, նյն. χουμέλη, բոլորն էլ «գայլուկ»: Այս մագլցող բոյսը՝ որ շատ կարևոր է բժշկութեան և մանաւանդ գարեջրագործութեան մէջ (տե՛ս Анненковъ-ի բուսաբանական բառարանը, էջ 170), ըստ նորագոյն քննութեանց՝ ֆիննական և թաթարական ծագում ունի. հմմտ. թթր. kumolok, kulmak, xomlak, չուվաշ. xumla, վօգուլ. qumlɨx, մորդվին. komljà, հունգ. komló, էստ. humaled, ֆիննի. humala. այս ժողովուրդներից բոյսը իր անուան հետ անցել է դէպի արևմուտք, տուել է նախ հհիւս. humli, հոլ. chmelь, մլտ. humulus, որոնցից էլ յառաջացել են միւսները (Berneker 411):

ՀԲուս. § 417 համարում է մաքուր հայերէն, իսկ § 1746 յիշում է արաբ. համոլ «urticularia inflexa»: Քաջունի Ա. 1015 տե՛ս հրմել:

+ՀՈՒՆ «գետի մէջ ծանծաղ տեղ՝ որից կարող է մարդ անցնել, ելք, հնարք, ճամբայ» ՕՆ. լբ. 22. Յես. բ. 7, Մծբ. Եւագր. «անցք, բացուածք, բաց մնացած տեղ» Բուզ. գ. 1. (ՆՀԲ սխալմամբ գրում է հուն մի «մի քիչ, խուն մի»). «ծանծաղ, երեսկունկ, սակաւաջուր» Արծր. որից ի հուն ելանել «գլուխ ելնել, յաջողիլ» Ոսկիփ. հուեաւոր «սահմանաւոր» Ոսկիփ. աճհուն «անվերջ, անանցանելի, ընդարձակ» (գետ) Եփր. ծն., (հեղեղ) Ամովս. և. 24, (ծով) Եւս. քր., (բազմութիւն) Ագաթ. հունել «անցանել» Բռ. երեմ. էջ 185. ըստհուն «հմուտ» Երզն. քեր. ներհուն «հմուտ» Շնորհ. վիպ. Կրպտ. ոտ.:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pont- ձևից. ցեղակիցներն են սանս. pánthās (սեռ. pathás) «ճամբայ», գնդ. pantă, panta (սեռ. paθō» «ճամբայ», հպրս. paθim (հյց.) «ճամբայ», (պհլ. ʾyl pand և պրս. پند pand ստացել են «խրատ» իմաստը. Horn § 330). օսս. fändag, fändäg «ճամբայ, փողոց», յն. πόντος «ծով», πάτος «շաւիղ», լտ. pons «կամուրջ, ճահիճի մէջ բացուած կածան» (որից ֆրանս. pont, իտալ. ponte «կամուրջ»), հսլ. pątĭ և հպրուս. pintis «ճամբայ», սերբ. pût, ռուս. путь «ճամբայ». բոլորի արմատն է հնխ. pent- «գալ, երթալ», ինչպէս ցոյց են տալիս հբգ. fendo «հետիոտն», funden «շտապել» ևն. այս pent- արմատի ձայնդարձն էր pont-, որ գտնում ենք յատկապէս յն. և լտ. ձևերում. հայերէնի մէջ վերջաձայն t-ի անկումով և ընդհանի մօտ o ըստ օրինի ու վերածուելով՝ յառաջացած է կանոնաւորապէս հուն ձևը: նշանակութեանց զարգացման համար հմմտ. գնդ. pərətu- «կամուրջ» և pəšu- «հուն», յն. πόρος «հուն, ճամբայ, շաւիղ» են հնխ. per- «անցնիլ» արմատից (Walde 598, Boisacq 803, Ernout-Meillet 751, Trautmann 205, Pokorny 2, 26):—Հիւբշ. 468:

Brosset, JAs. 1834, 369—405 *վրաց.* փոնի *ձևի հետ։ Հիմնք.* հուն *և* անհուն *դնում է* ունիմ *բայից. անհուն համարում է ունայն բառի երկրորդ ձևը։ Ուղիղ մեկնեց* Meillet MSL 7, 161, Tomaschek, Deut. Littrtrz. 1883, *էջ 1254 վրաց.* փոնի *(իբրև կովկասեան բառ)։* Karst, *Յուշարձան 401, 404 սումեր.* gina *«փոքր, քիչ» (իբր* հուն մի, խուն*),* *426 թրք.* soñ *«վերջ» (իբր* ի հուն ելանել*)։*

ԳԻՒ.—Անկախ գործածութիւն ունի միայն Բլ. Մշ. հուն. *բայց կան նաև հետևեալ ձևերը. Ակն. Եւդ. Մշ. Ջն.* հուն ելնել. *Եւդ.* հունաւուրիլ, *Սեբ.* հնավօրիլ *«մէկի հետ մաքառելով գլուխ ելնել, յաղթել», (տե՛ս նաև* ընհար *բառի տակ).—*հունաւուրուիլ *Վն. «բնակութիւն հաստատել»,* անհունուն *Խրբ. «անհուն» (ծով), Ագ. Բլ. «անսահման» (Աստուած).—Կայ նաև* ուն–բուն *Վն.,* ունհուրուհ *Երև. Ղզ.,* հուհ ու բուհ *Տփ. «մի գործի բոլոր մանրամասները, մէկի ամբողջ գերդաստանը և ծագումը», որ կարծեմ* հուն *և* բուն *բառերի կրկնութեամբ է ձևացած։*

ՓՈՒ.—Վրաց. ფონი *փոնի, մինգր.* ფონი *փոնի,* ფონი *ֆոնի, սվան.* fon, lafan, *աբխազ.* afan *«գետի հունը», վրաց.* უფონო ուփոնո *«հուն չունեցող (գետ)». այս բառերը կարող են ներկայացնել հայերէնի հնագոյն ձևը (տե՛ս Ջուր.[2] 1312). իսկ ըստ Հիւրշ. 397 պատահական նմանութիւն ունին։*

Հունագհունար *տե՛ս* Դհունագհունար։

Հունդ *տե՛ս* Ունդ։

ՀՈՒՆԴԻՐ *«ընդ կորուստ», հունկել «անկորուստ». երկուսն էլ ունի Բռ. երեմ. էջ 185. ուղիղ ձևը և նշանակութիւնը յայտնի չէ։*

ՀՈՒՆՁ, ո *հ. (սովորաբար անեզական) «քաղելու արմտիք, արմտիք քաղելը», յայնարար «ամառ, իբր հունձքի ժամանակ» ՍԳր. որից* հնձել *«արմտիքը մանգաղով կամ գերանդիով կտրել՝ քաղել», յայնարար «ջարդել, կտրտել» ՍԳր.* արտահունձ *Մանդ.* հրնձումն *ՅՀ. կթ.* բազմահունձ *Կոչ. 386. գրուած ունինք նաև* հնձեալ *Եփր. Համաբ. 81,* արտունձ *Վրք. և վկ. բ. 440. միջ. հյ.* բնձել *Մմբ. դատ. 26։*

Müller WZKM 5, 269 *սանս.* puṅga *«դէզ, շեղջ» բառին է կցում։ Հիմնք. յանձն առնել ձևից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* ḫunūṭ *«ժամանակ հնձոց» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 464)։*

ԳԻՒ.—Գոր. Երև. Տփ. հունձ, *Մշ.* հունձ՛ք, *Ախց.* հունց, *Կր.* հունցք, *Ղրբ.* հօնձ, հէօնձ, *Շմ.* հրնձ, *Մկ. Մրղ. Սլմ.* ունձ, *Ոզմ.* օնձ—*բայական ձևով՝ Սլղ. Մշ.* հնձել, *Սեբ.* հնձ՛էլ, *Սվեդ.* հնձ՛իլ, *Տիգ.* հրնցէլ, *Ննխ.* բնձէլ, *Ոզմ.* բնձիլ, *Մրղ.* ունձէլ։ *Նոր բառեր են* հունձ *և* փունջ, հնձակապ, հնձավարձ, հնձատեղ, հնձոտել, հնձաւոր.—*Հնից կայ* խաւունձ *«խոտհունձ» Դիւան ժ, էջ 11 (ժե դար)։*

ՕՀՈՒՆՁ, ի *հ. «ձայն» Ագաթ. Խոր. Հռիփ. (երկու տեղն էլ գործածուած է յղ. գրծ.* հնչիւմ *ձևով. ուստի ՆՀԲ դնում է ուղ.* հինչ *կամ* հունչ. *բայց ընտրելի է միայն վերջինը, որովհետև ունինք Սեբեր. էջ 165* բազմահունչ*). որից* հնչել *«ձայն՝ արձագանգ տալ, դղրդել են» ՍԳր. «քամու փչելը» Շար. Նար.* հնչական *Ոսկ. Սեբեր.* հնչեցուցանել *Դ. Բագ. է. 6. Կորիւն. Ոսկ. յհ. բ. 5.* հնչիւն *ՍԳր. Ոսկ.* հնչումն *Ոսկ. յհ. ա. 44.* հոգեհնչող *Անան. եկեղ.* բազմահնչումն *Ճառընտ. դիւահնչելի Լմբ. սղ.* զուգահնչիւն *Փիլ. տես. խոռխռահնչական Նար.* հողմահնչել *Նար. տաղ. Նոր բառեր են* հնչիւնաբանութիւն, հնչիւնաբանական *են։*

=Բնաձայն բառ. կազմուած է հ *ձայնից. արմատի համար հմմտ.* հաչել, հոչակ, հորհնչիւն, հառաչել, հոնդիւն. *իսկ ձևի համար հմմտ.* շնչել, բնչել, գնչել, կնչել, պնչել, փնչել, մնչել, խնչել, *բոլորն էլ աճած* ն, չ *մասնիկներով։—Աճ.*

ՆՀԲ լծ. կանչել, խանչել, գանգել, վանգել, գոչել: *Տէրվ. Նախալ. 115 կազմուած է չ ածանցաւոր. արմատը դրնում է* հուն, *իբր սանս.* svan- *«ազմրկել», լտ.* sonare *«հնչել».* sonus *«հնչիւն, ձայն», անգսք.* swin *«երգ, նուագ»։ Հիմնք.* բնչել *բայից։* Meillet MSL 10, 278 *անկախաբար կրկնում է*

Տէրվիշեանի մեկնութիւնը, աւելացնելով նաև սանս. çvasiti «փչել, շնչել». Համարում է որ հունչ ենթարկուած է շունչ բառի ազդեցութեան։ (Ծիշեալ ձևերի արմատն է հնխ. sṷon-): Հիւբշ. IF Anz. 10, 48 յիշում է Meillet-ի մեկնութիւնը։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ Աճառ. ՀԱ 1899, 203 բ։ Pedersen, Հայ. դր. լեզ. 102 ունչ, շնչել բառերի հետ։ Karst, Յուշարձան 427 ՊՊր. tin, tinč «շունչ»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 85 շունչ բառից։

ՀՈՒՉ «ախուր»? Նորագիւտ անյայտ բառ, որ մէկ անգամ գործածում է Կոստ. երզն. 131. «Ոչ մնայ այն որ է ինք անձամբ վայելուչ, ոչ այն որ է տրտում կամ սրտովքն հուչ»։

+ՀՈՒՄ, ո հլ. (յետնաբար ի հլ.) «մօտ, մերձ, քովը» ՍԳր. Ոսկ. մ. ա. 2, 9. Եփր. ել. «մօտաւորապէս, կլոր հաշուով» Կոչ. 351 (յառաջ հուպ ի հազար ամ). «մօտաւոր, քովիկը, մերձաւորը» Սահմ Անյ. պորփ. Նիւս. բն. որից ի հպոյ Ոսկ. մ. ա. 10, 15. ընդ հուպ «անմիջապէս, իսկոյն» կամ հուպ ընդ հուպ «իսկոյն» ՍԳր. (յետնաբար կայ նաև հուպ ընդ հուպ, հուպ առ հուպ «մօտ մօտի, կողք կողքի» ՅՀ. կՔ. Արծր. Կիւրղ. գնձ. տե՛ս և յաջորդը). հպիլ «մօտենալ, կպիլ, դպչիլ» ՍԳր. Կիւրղ. ծն. հպագոյն Դիոն. երկն. թղթ. Անան. հկեղ. հպարար Կիւրղ. գնձ. հպաւոր Ոսկ. յհ. մկ. հպելիք Կիւրղ. գնձ. դիւրահուպ Փիլ. այլար. Սարգ. ա. յհ. ա. էջ 490. երկրահուպ «հողին մօտեցած» ԱԲ. վաղահուպ Լաստ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. sub- ձևից. սրա ամենամօտիկ ժառանգներն են լտ. sub «տակը, ըստ, մօտիկ, մերձ, առաջի, տակից, դէպի, վրայ», subeo «հուպ լինել, մօտենալ» umbր. sub- «տակը»։ Այս sub- ձևը կազմուած է հնխ. upo նախդիրից, որի վրայ աւելացել է eks- նախամասնիկը, կրճատուելով նրանից ek- մասը. իսկ upo նախդրի տեղ դրուած է իր ձայնդարձը ub-, որի համար համմտ. յն. ἀπό. լտ. ab։ Ընդհանրապես կարծում էր, թէ այս ամբողջ ձևափոխութիւնը կատարուած է լատինականում. բայց հայերէնի համեմատութիւնը ցոյց է տալիս՝ որ նոյն իսկ նախալեզուեան շրջանից է։ Միւս լեզուները ունին միայն հնխ. upo ձևի ժառանգները. ինչ. յն. ὑπό «տակը», ὕπερ «վրայ», սանս. զնդ. հպրս. upa «առ, կողքին, դէպ, մերձ», գոթ. uf «տակը. վրան», հրգ. oba, ubar, uf, ūf, հիսլ. upp, անգսք. up, upp, հիսլ. fo, կիմբր. quo-, գալլ. vo- «տակը» ևն. նաև լտ. super «վրայ», umbր. super «վրայ» (Walde 748. Boisacq 1005, Pokorny 1, 192):

ՆՀԲ լծ. յն. ὑπο «ի ներքոյ, առընթեր»։ Եւրոպա 1849, էջ 200 հպրս. upa: Վերի ձևով մեկնենց նախ Տէրվ. Նախալ. 119, որից անկախաբար Bugge KZ 32, 61 և Meillet MSL 8, 292, 10, 270:—Հիւնք. ափ բառից։ Nyberg, Hilfsbuch 2, 13 իրան. *upa- ձևից փոխառեալ է համարում. համմտ. սանս. upāka «մօտիկ, կից», պհլ. apāk «միասին»։

+ՀՈՒՄ «սեղմում, սեղմել» իմաստով. դտնում է գաւառականներում. այսպէս հուպ առալ Երև. Լ. Ղզ. Ղրբ. Շմ. Տփ. (=խուպ առալ Ջղ.) «սեղմել», հուպ գալ Երև. «սեղմուիլ», որից իմաստի զարգացմամբ՝ հուպ Ղրբ. «փակ, գոց», հուպ ունել Ղրբ. հուպ առնել Շլ. «փակել, գոցել», հուպ գալ Ղրբ. «գոցուիլ, փակուիլ», հպնափայտ Ղրբ. «գորգի ոստայնի գերաններըը սեղմող փայտը»։ Այս բառից ազդուելով է անշուշտ, որ այժմ Կովկասում ոմանք ընդ հուպ «իսկոյն, շուտով» բառը գործածում են «պինդ կպած, քիպ»! նշանակութեամբ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ub- «սեղմել, ճընշել» արմատից, որի միակ ժառանգներն են սանս. ubjáti, զնդ. ubjyāite «ցած սեղմել», հպրս.-լիթ. ūbyti «շտապեցնել, արտորցընել». հնխ. արմատի գոյութիւնը ժառանգների պակասութեան պատճառով կասկածական է՝ ըստ Pokorny 1, 193. հայերէնը դալիս է այժմ հաստատելու։—Աճ.

ՀՈՒՌՆ «քղանցք». դիտէ միայն ԱԲ. արդեօք առանձին գործածուա՞ծ է. ես չեմ հանդիպած հայ գրականութեան մէջ. սրանից ունինք ոսկեհուռն կամ ոսկեհուռ «ոսկեթե՞լ, ոսկեհի՞ւս» ՍԳր. Եփր. Թգ. Նորհ. Փարպ. ոս-

կեհուռազարդ *Մծբ.* ոսկեհուռնակապ *ԱԲ.* մարգարտաճուռն *Վրք. Հց.*։

ՆՀԲ ոսկեհուռն *մեկնում է «ոսկեխուռն, ոսկեկուռ»*։

ՀՈՒՍԱՄ *«մի տեսակ հաւ». ունի միայն ԱԲ. անստոյգ բառ. արդեօք սխալմամբ շփոթուած է յաջորդի հետ*։

*ՀՈՒՍԱՄ *«մի տեսակ անուշահոտ բոյս. ամկ.* լավանտա. *լտ.* lavanda spica *Բժշ. ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 736 ր և ՀԲուս. § 1747 և յաւել.*։

=*Արաբ.* حسامā ḫusā՝ *նոյն նշ. սրա գրական ձևն է* خزامى xuzāma *(Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 441), որից փոխառեալ է Հյ. խազամ «մխակ» Բժշ. (տե՛ս ՀԲուս. § 3326)*։—*Ա՛ճ.*

ՀԲուս. § 1747 դնում է xuzāma *ձևից*։

ՀՈՒՍԿ *«յետին, վերջին, ամէնից յետոյ». գործածւում է մանաւանդ հուսկ յետին, հուսկ յետոյ, հուսկ վերջին դարձուածների մէջ՝ Ծն. լգ. 2. Ա. կոր. ժե. 8. Ես քր. աւելի անկախ ձևով կայ հուսկ կրտսերն Ես. քր. հուսկ յեզր մագաղաթին Փարպ. առհասարակ գործածւում է անհոլով. միայն Մագ. Թղ. ունի ի հլ. (ի հուսկիցս կարծեաց)*։

ՆՀԲ լծ. յն. ἔσχατος *«յետին» և Թրք.* uzaq *«հեռի»։ Տէրվ. Նախալ. 121 հնխ.* paska *«յետին» ձևից. համմտ. սանս.* paçča, *լիթ.* paskui, *որոնց պարզագոյն ձևն է լտ.* post: Müller WZKM 5, 269 *սնս.* paščāt, *գնդ.* paskāt *«յետևը, յետոյ»։* Meillet MSL 8, 296 *դրնում է* *putsko- *ձևից. համմտ. յն.* πύματος *«վերջին», πυγή «յետոյք», սանս.* púčča- *«պոչ»,* putâu *«նստոյ տեղի» ևն։ Հիւրշ.* IF Anz. 10, 48 *յիշում է* Müller-*ի մեկնութիւնը։ Բայց թէ՛ այս և թէ յաջորդը անստոյգ են, որովհետև յիշատակուած ձևերի համապատասխանութիւնը հնից անստոյգ է. տե՛ս* Boisacq 826—7 *և* Pokorny 1, 48: *Հիւնք. իսկ բառից։* Karst, *Յուշարձան 421 Թրք.* uzaq *«հեռու»*։

+ՀՈՒՐ, ո *հլ. (գրծ. նաև հուրբ). «կրակ» ՍԳր. Ագաթ. Ես. պատմ. Ոսկ. Եփես. «կրակէ, հրեղէն» Ոսկ. յհ. ա. 11. «բրգաձև (իբրև երկրաչափական մարմին)» Փիլ. էջ 223 (Հուր և փուղձ և ութանիստն. քանզի է՛ որ հրոյ ձև է և է՛ որ օդոյ և է՛ որ ջրոյ.— կազմուած է թարգմանաբար յն.* πυρομίς *«բուրգ» բառից, իբր թէ* πῦρ *«կրակ» բառից լինէր)։ Այս արմատից են ծագում բազմաթիւ բառեր, որոնցից յիշենք մի քանի ընտիրները. ինչ. հուացեալ Ժող. Ժբ. 11. հրագոյն Ագաթ. հրալից Յոբ. խա. 20. հրայրեաց ՍԳր. Ես. քր. հրայրք Ոսկ. Եփես. հրձիգ ՍԳր. հրատ «խարոյկ» Երեմ. է. 18. Կոչ. 268. Ես. պատմ. «Արէս մոլորակը» Շիր. Արիստ. աշխ. հրկէզ ՍԳր. հրդեհ Ել. իբ. 26. Ոսկ. Ես. Եփես. և դաղ. աճուռ Ես. Ժզ. 12 ևն։ Յետին բանաստեղծների մօտ գտնում ենք* րազարդ, րակերպեալ, րակերտ, րապէս՝ *որոնք յառաջացած են հրազարդ, հրակերպեալ, հրակերտ, հրապէս ձևերից, ե-ի ջընջմամբ, ր նախաձայնով բառեր ունենալու դիտումով։ Նոր բառեր են* հրաճօք, հրաբխային, հրդեհաշէջ, հրշէջ, հրարծարծ, հրացաճառ, հրացաճաձիգ, հրացաճաձգութիւն, հրթիռ, հրաթի, հրաճրել *ևն*։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* puro- *ձևից. ցեղակիցներն են յն.* πῦρ *(սեռ.* πυρός*),* umbr. pir, *գերմ.* Feuer, *հրգ.* fuir, fiur, *հոլլ.* vuur, *անգսք.* fȳr, *անգլ.* fire, *հիսլ.* fūrr, fȳre, *իսլ.* ūr, *թոխար.* por, *քուչ.* puwar, *կամիս.* pāḫḫur, *բոլորն էլ «կրակ» նշանակութեամբ, իսկ չեխ.* pýř *«տաք մոխիր», գաւ. ռուս.* pýrej *«օջախի խորքը»։ Այս բառը հնդևրոպական նախալեզուում* n/r *փոխանակութեամբ մի ձև էր, որով նոյն բառը ունինք նաև* *հուն *«կրակ» ձևով, որից* հնոց *(տե՛ս* BSL *հտ. 29, № 87, էջ 61)։ Նախապէս կարծում էին թէ բառիս բուն արմատն է* pu- *«մաքրել», որով հնխ.* puro *ձևին կցում էին նաև լտ.* purus *«մաքուր». այժմ այս կարծիքը մի կողմ է դրուած* (Walde 626, Boisacq 828, Kluge 139, Trautmann 232, Pokorny 2, 14)։—*Հիւրշ. 469։*

Acoluthus, Obadias armenus, Lipsiae 1680, *էջ 43 երր.* אור or *«լոյս» բառից։* Klaproth, Asia polygl. 1823, *էջ 100 լտ.* urere, *աֆղան.* wur, or,

քրդ. úr։ ԳԴ պրս. ևուր «արեգակ» բառի հետ։ Ուղիղ մեկնեց նախ Brosset. JAs. 1834, 383 ևն բացատրելով յն. πῦρ ձևով։ Ինճիճեան, Հնախ. Գ. 165 եբր. אור ūr «կրակ»։ ՆՀԲ լծ. քաղդ. ևուր, պրս. ևար, յն. πῦρ, լտ. ure «այրել»։ Peterm. 26, 30, 39 յն. πῦρ, եբր. ūr «լոյս» և հյ. or: Diefenbach, Berl. Jahrb. 1843, 447 պրս. hūr, յն πῦρ, հին հիւս. hyrr, գոթ. haúri «կրակ»։ Ուղիղ մեկնեցին Windisch. 22, Böttich. Arica 39, Lag. Urg. 190, Müller SWAW 38, 583 ևն։ Տէրոյենց, Երեւակ 1858, էջ 179 լծ. or և եբր. or «լոյս», nir «կրակ»։ Մորթման ZDMG 26, 518 յն. և գերմ. ձևերի հետ նաև բևեռ. khuru. իսկ ZDMG 31, 417 բևեռ. Artuhaïçav=հյ. վարազ, ևուր: Տէրվ. Նախալ. 93 վերի ձևերի հետ հնխ. pu «փչել» արմատից։ Հիւնք. պրս. ևուր, խուր «արեգակ», արաբ. حَرّ ḥarr «ջերմ», իսկ հրատ=պրս. արատ «25ր օր արեգակնային ամսոյ»։ Ի. Խալաթեանց ՀԱ 1902, 309 ասոր. ܢܘܗܪܐ nūhrā «լոյս» բառից փոխառեալ։ Պատահական նմանութիւն ունին չին. 火 huo³ «հուր, կրակ», հհիւս. hyrr «կրակ», գոթ. haúri «ածուխ»։

ԳԻՒՂ.—Անկախ գոյութիւն ունի միայն երկրորդական նշանակութեամբ. ինչ. Տփ. ևուր և Պլ. ևուրմ «վէրքի կակիծը՝ այրուցքը», Սեբ. ևուր (միայն անէծքների մէջ գործածուած), Առն. ևուր ու կէյծաճ «հուր ու կայծակ, երկնային պատուհաս», Ակն. Երև. Եւդ. Ղզ. ևուրմ «կրակի ցոլքը», Ղզ. ևուրմ տալ «ձեռքի մէջ փչելով տաքացնել», Խրբ. Ննխ. ևուր գնաց, մուրը մնաց (առած) «նախկին փառքը կորաւ, խեղճացաւ», Ախց. ևուրուբ'օց «վառվռուն (տղայ)»։ Ածանցներից ունինք Ոզմ. խրախանգ' «հրահան», Պլ. ևրաճրէլ «արծարծել, բորբոքել», Ղրդ. ևուրճաճ «արեգակ», Երև. Ղրբ. ևուրճրատել, ևուրճրատին տալ «փայլատակել», Խբ. ևէրուղան «ահագին», Վն. խուրճիկ, խուրճիխրեղէն=Բլ. ևուրճիկ, ևուրճ ի հրեղէն «շատ գեղեցիկ, իբր թէ հրեղէն էակ»։

ՀՈՒՐԱՍՏԱՑ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Եղիշ. խաչիկ. 288. «Եւ ցուրտ ոչ դուզնաքեայ, այլ պարզ հուրաստաց, նմանեալ է անպատմաբեր ձմերայնոյ»։ ՆՀԲ և ԱԲ հասկանում են «ցուրտ, պաղ», մեկնելով «անստաց հրոյ»։

*ՀՈՒՐԻ «հրկնային երևակայական սևաչեայ գեղուհի» (մահմետականների հաւատալիքներում). գործածական է միայն արդի գրականում։

=Արաբ. حور ḥūr «սևաչեայ գեղուհի». սրանից են փոխառեալ սպան. hurí, պրս. hūrī. վերջին ձևից յետ դառնալով արաբ. حوريّة hūriyya, քրդ. huri, թրք. hürü, hüri և հյ. ևուրի:—Աճ.

ՀՈՒՐՊ կամ ՀՈՒՐՓ «սպիտակ մանանեխի հունդ» Բժշ. կամ բացատրուած անյայտ «տալյաթ» բառով՝ Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1748. հմմտ. ևարբ:

*ՀՊԱՏԱԿ, ի–ա հլ. «իշխանութեան հնթակայ, մեծաւորի տակ գտնուող, հնազանդ» ՍԳր. Ոսկ. բ. տիմ. և փիլիմ. որից ևպատակել Ոսկ. մ. ա. 15. ևպատակութիւն Ա. կոր. է. 35. Եզն. ևպատականալ Ոսկ. յհ. բ. 30. Նոր բառեր են՝ օտարաևպատակ, տանկաևպատակ, ռուսաևպատակ, պարսկաևպատակ, ևպատակասէր են։

=Պհլ. *hupātak ձևից, որ նշանակում է բուն «լաւ պաշտպանեալ» (hu «լաւ»+pā «պահել, պաշտպանել» բառերից), իբր զնդ. hupāta նոյն նշ.։ Այս բառը գործածւում էր որոշելու համար այն վիճակը, որ կար իշխանի և ռամիկի միջև, առաջինը իբրև պաշտպանող, երկրորդը իբրև պաշտպանեալ։ Համմտ. բառիս պարզ pātak ձևը՝ Դինկարդի այս ներբողի մէջ, որ ձօնուած է Արամազդին. Xutai la bandik, abu la farzand, rato la ratvad, patoxšāhī la ahūāstak, pānak la pātak «Տէր և ո՛չ ծառայ, հայր և ո՛չ որդի, տէր և ո՛չ տիրեալ, բդեշխ և ո՛չ հպատակ, պաշտպան և ո՛չ պաշտպանեալ»։

ՆՀԲ «ի ևուպ և տակ, յատակ կամ որ-

պէս յն. ὑποτακτικός «ստորադասական»։ Lag. Beitr. bktr. Lex. 34 զնդ. hupāta «լաւ պահպանեալ»։ Մորթման ZDMG 26, 605 բևեռ. abidadubi: Տէրվ. Նախալ. 119 նուպ արմատից։ Հիւնք. նիւպատոս կամ յն. ὑποταγή «հպատակութիւն» բառից։ Müller WZKM 6, 266 յն. ὑπότακτος կամ ὑποταγή։ Հիւբշ. 180 կասկածում է Lagarde-ի մեկնութեան վրայ, որովհետև պհլ. ձևին անծանօթ էր։ Թիրեաքեան, Արիա. հայ բռ. 245 գտնելով պհլ. բառը, հաստատւում է վերի մեկնութիւնը։

—ՀՊԱՐՏ, ի հլ. «ամբարտաւան, գոռոզ» ՍԳր. որից հպարտանալ ՍԳր. Ոսկ. յհ. ա. 9, 40. հպարտացուցանել ՍԳր. Կոչ. հպարտութիւն ՍԳր. Ոսկ. մ. ա. 15. հպարտագոյնս Բ. մակ. ժբ. 14. հպարտիլ Մծբ. հպարտական Ոսկ. յհ. ա. 30 ևն։

=Կազմուած է ն աստկական մասնիկով. ինչպէս են՝ ճգոր, հսկայ, հմուտ, խրախ. պարզական արմատն է *պարտ «սէգ», որ առանձին գործածուած չէ, այլ վերջաձայնի փոփոխութեամբ՝ պարծ (պարծիլ, պարծանք). համմտ. խեղդ-ճեղձ, խայտ-խայծ, գինդ-գինճ ևն։

Հներից Մոթ. եագր. 137 մեկնում է «հուպ և արդ կորնչի»։ Հ. Կ. Աւետիքեան, Մեկն. պօղ. Ա. 659 նուպ+արտաս բառերից։— ՆՀԲ լծ. հյ. պարծօղ, յն. ἐρέ՛ρβω, իրէ՛ղդաղօս «ամբարձեալ և վերագոյն». ուստի լտ. superbus «հպարտ» և յն. ὕπαρσις «հպարտութիւն»։ Lag. Urgesch. 271 ամբարտակ բառի հետ՝ իբրև սանս. pṛta-, զնդ. pərəta՝ աւելացրած sam- նախամասնիկը։ Նոյն, Arm. Stud. § 1315 և Տէրվ. Նախալ 73 ն համարում են զօրացուցիչ մասնիկը։ Նոյնպէս նաև Հիւբշ. 180, որ –պարտ ձևը ուղում է կցել ամ-բարտաւան բառին։ Հիւնք. բարձր բառից՝ ն մասնիկով։ Թիրեաքեան, Կարնամակ ծանօթ. 35 համեմատէ բարդ, բերդ, ամբարտաւան ձևերի հետ։

Գիւր.—Ախց. Կր. հպարտ, Որև. հպատտ, Ալշ. Խրբ. Մշ. Ռ. հրարդ, Ասլ. հրարդ, հրար*, Տիգ. հրտրդ, Սչ. հաբարդ (բայը՝ հաբարդնալ), Ննխ. հաբարթ, հմբարդ (բայը՝ հաբբրճալ), Ագլ. հպատտ (բայը՝ հրպրոտա՛նիլ), Համշ. հբայդ, Ցղ. հմբարտ, Տփ. հրմպարտ, Շմ. հրմբարդ, Սվեդ. հաբուրդ, Զթ. հիբօյդ, հիբորդ կամ հուբօյդ, հուբորդ, Մրզ. Ոզմ. Զղ. Սլմ. վն. խպատտ, Մկ. խոպարտ. —Առանայի Թրքախօս հայերն էլ ունին հրպարտ բառը։

Հպտիլ տե՛ս Հտպիտ։

*ՀՈՒԱՄՕԹ «մետաքսեղէն, sericus». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ. հյ. 491 բ։

=Եբր. רָאמוֹת rāmōth բառն է, որի իմաստը անստոյգ է. սովորաբար մեկնւում է «բուստ, մարջան». հայ Թարգմանութեան մէջ (Եզեկ. իէ. 16) սխալմամբ քաղաքի անուն կարծուելով՝ պահուած է Հռամովթ, ինչպէս և յոյնն է Ῥαμώθ։—Աճ.

ՀՈՒԱՍԱՓ «մի տեսակ քամի». ունի միայն ԱԹ. մէկ անգամ գործածուած է մի անյայտ գրուածքի մէջ՝ ըստ Հին հաւատք, էջ 64. «Շտեմարան իմն է ի ջուրս, յորմէ օդք ելանեն ի դուրս, հոսասփին, քառասփին, սարսասփին, մազատն կամ նազատն. ելք սոցա ի ծովէ են և գնացք սոցա յերկինս»։—Ըստ Հ. Ակինեանի (անձնական) սոյն գրուածքն է Զենոն իմաստ. յաւելուած. ուր ունինք սակայն Ֆարասփն (և ո՛չ Ֆառասփն.—նազատն, չկայ մազատն)։

*ՀՈՒՏՈՐ, ի–ա հլ. «ճարտասան, ճարտարախօս» Նար. քր. Փարպ. Խոր. որից հռետորաբան Կորիւն. հռետորութիւն Նար. պատմ. հռետորական Փարպ. գրուած է նաև ռետոր Ժմ. յն. հետոր Պզատ. սոկր. 37, 38. յետին ձև է հռետուրիլ «ճարտասան դառնալ» Հին քեր. համմտ. նաև հոխտորայ։

=Յն. ῥήτωρ «ճարտասան» բառից, որ գալիս է ῥη- «խօսիլ» արմատից. սրանից փոխառեալ են նաև լտ. անգլ. rhetor, ֆրանս. rhéteur, ասոր. ܪܝܛܘܪܐ rnītōrā հոմանիշներըւ—Հիւբշ. 362։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ. վերջինը միացնում է նաև լտ. orator։

*ՀՈՒՏՈՐԱՅ «ճարտասան» Եփր. հռ. 54 (սեռ. հրետորեից), Պատմ. աղէքս. 76—83 (գրուած յգ. հռետորայք). որից հոխտորա-

յութիւն «ճարտասանութիւն» Նւս. պտմ. էջ 606 կամ հռետորայութիւն Նւս. պտմ. 598։

=Ասոր. ܪܝܛܘܪܐ rhītōra «ճարտասան» բառից, որի վրայ տե՛ս նախորդը. ըստ այսմ հռիտորայ սխալ գրչութիւն չէ, փոխանակ հռետոր, այլ ասորի ձևի հարազատ տառադարձութիւնը։—Ա՛ճ.

ՕՀՈՆՁԵԼ «սպասուած ժամանակ խոխրոալ, կոկորդից անորոշ հնչիւններ դուրս բերել». այս բայական ձևով գործածուած չէ և կայ միայն ճոնշիւն Ղեղշ. դտ. 186։

=Բնաձայն բառ, որ կազմուած է ճ պարզ ձայնից՝ ո ստատկականով և ն, չ ածանցիչներով. արմատի համար հմմտ. ճնշել, ճաչել, ճառաչել ևն. իսկ ձևի համար հմմտ. կանչել, փոնչել, ճոնչել, դոնչել, մոնչել, զոնչել, շոնչան, սոնչան։—Ա՛ճ.

ՆՀԲ նոյն ընդ խոնչիւն։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, էջ 204 աւ։

*ՀՈՈԳ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ոռճիկ, թոշակ» Սեբ. 89, 138, Անան. գիտ. 21. ՅՀ. կթ. 357. Ասող. 124. Լաստ. ժր. (տպ. 1844, էջ 80), Ղևոնդ ժ. էջ 33, ժհ. էջ 99. Օրբել. Հրտր. Էմ. էջ 322. գրուած նաև հոոգ Տաթև ձմ. կգ. խոռոկ Գիրք թղ. 518. Արծր. Հրտր. Պատկ. էջ 90. յետնադարեան հայերէնի մէջ աւելի սովորական և ժողովրդին աւելի հասկանալի բառ էր՝ քան թոշակ. այնպէս որ Մխ. Գօշի Դատաստանագրքում, Հրտր. Բաստ. էջ 82, թոշակ բառի դէմ, իբրև բացատրութիւն, լուսանցքի վրայ գրուած է հոոգ։ Որից հոոգակեր Վրդն. դան. ե. էջ 256, հոոգել Ուռհ. էջ 21, հոոգվոր «ոռճիկով աշխատող անձ» Սմբ. դատ. էջ 28, 192։

=Բիւզ. յն. ὀψα «ժողովրդին բաշխուած դրամ», որ փոխառեալ է լտ. eroqatio ձևից (Sophocles 971). սա էլ ծագում է ergo «ծախսել, դրամ բաժանել՝ յատկապէս ժողովրդական ծախսերի համար» բայից. յոյն բառը նշանակում է նաև «զինուորներին տրուած թոշակ, տարեթոշակ» (Կոստ. պերի. de admin. imp. էջ 185, 187). յունարէնից է փոխառեալ նաև վրաց. ოფი ոռի, ოლაი ոռդաի «ոռճիկ. 2. պարգև»։—Հիւրշ. 362։

ՆՀԲ նոյն համարելով ոռեիկ բառի հետ՝ դնում է իբր պրս. ռուզի, ըզզ ևն։ Պատկ. Изслѣд. էջ 18 նոյն ընդ ոռճիկ։ Հիւնք. պրս. ռուզ, ռուզի, ռուճի։ Ուղիղ մեկնից նախ Brockelmann, Նւս. փոխ. բառից, էջ 91։

*ՀՈՈԴՈՄ «վարդ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 569, որ և ոռոան 571։

=Յն. ῥόδον «վարդ»։—Ա՛ճ.

ՕՀՈՁԱԿ, ի–ա հլ. «ուրախութեան ձայն՝ աղաղակ» Ա. մն. ժհ. 28. «անուն, համբաւ» ՍԴր. որից հոչակ հաւրկանել «անուն հանել» Մրկ. ա. 45, Բ. կոր. բ. 14. հոչակել Ագաթ. Փարպ. հոչակեցուցանել Ոսկ. բ. տիմ. հրոչակական Ագաթ. հոչակաւոր Ագաթ. բարեհոչակութիւն Ոսկ. յհ. բ. 37. բազմահոչակ Նոնն. գերահոչակ Կաղանկտ. Ճառընտ. շարահոչակ Կիւրղ. գնձ. տխրահոչակ (նոր բառ)։

=Բնաձայն բառ. ծագում է ճ ձայնից՝ ո զօրացուցիչ մասնիկով, չ ածանցականով և –ակ մասնիկով. ձևի համար հմմտ. խոչակ բառը, ինչպէս նաև կոչել, հոչել, շոիչ, շոիճ, սոիչ, խոչափոդ, խոչոտիլ. իսկ արմատի համար հմմտ. ճնշել, հոնշել բառերի տակ յիշուած ձևերը։—Ա՛ճ.

Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 85 պրս. فرّ farr «արժանաւորութիւն, պատիւ, յարգանք»։ Հիւնք. հառաչել բայից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 204 բ։

ՀՈՔ «գնացք». այսպէս առանց ձայնաւորի բառս ունի միայն Բառ. երեմ. էջ 186։

Հսկայ տե՛ս Սկայ։

Հսկել տե՛ս Սկել։

ՀՏՊԻՏ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «միմոս, խեղկատակ» Ոսկ. մ. ա. 7. Եզն. «խնդէշ, մեղկ» Ոսկ. ես. որից հոպպռանճ «պչրանք, պճնանք. 2. կզկզանք, կեղծիք, միմոսութիւն» Մագ. Սարգ. հոպպռեալ «կեղծուած, ծածկուած» Մագ. գամագտ. (ՀԱ 1911, 379). գրուած է նաև խրտպրտալ Ոսկ. ա. տիմ. խոպպռանճ Ոսկ. ա. տիմ. ը. ժդ. որից պ-ի անկումով ձևացած են՝ հպտիլ «պաճուճուիլ, զարդարուիլ, միմոսութիւններ անել» Ոսկ. փիլիպ. եփես. տիմ. հպտանճ «պաճուճանք, միմոսութիւն» Ոսկ.

մաթ. և փիլիպ. երր. 554. գրուած է նաև շպտիլ Փիլ. տես. էջ 19 (որից յառաջացել է Թերևս Բո. երեմ. էջ 248 այլափոխեալ շպտ «լկտի» բառը). կասկածելի է հպիտ «ծաղրածու, մխմոս» Փ։

Այս բառն է որ Բո. երեմ. վրիպակով գրում է. Հապտել «պատճառել կամ խաբել» էջ 177,—Հպդել «մերձիլ, պատրաստել, պատճառել, այլայլել» էջ 186, փոխանակ հատպել։—ՆՀԲ արմատը ենթադրում է հպիտ, լծ. ժպտիլ, ծպտիլ, Թրք. (իմա՛ արաբ.) tabdīl «փոխուիլ»։ Հիւնք. ժպտիլ բայից։ Արդեօք կրկնա-ւո՞ր է։

ՀՐԱԺ. արմատ առանձին անգործածական, որից կազմուած են հրաժարել «Թողնել հեռանալ, յետ քաշուիլ, չուզել» ՍԳր. «մեռնիլ, վախճանիլ» Եղիշ. Պիտ. հրաժարեցուցանել Եղն. հրաժարումն Ագաթ. հրաժարեցութիւն Եփր. եւ. հրաժեշտ «մեկնելու հրամանն» Ագաթ. «բացատրութիւն» Ոսկ. բ. կոր. իե. «աղաւաւթիւն» Յճխ. «յետ կեանալը» Նխ. իմ. և ես. «մահ, յուղարկաւորութիւն» Կանոն. Խսիւք. անհրաժեշտ «անխուսափելի, ստիպողական, շատ պէտքի» Իմ. ժզ. 4, 16. սխալ բարդութեամբ կան երկաժեշտ «աշխատութենէ քաշուիլ, ձանձրութիւն» ԱՒ և երկրաժեշտ «հրաժեշտ՝ ձանձրութիւն յերկրէ» ԱՒ. —վերջին ձևը ունի Սեկունդ. էջ 34՝ երկրաժեշտ գործոյ, որ Տաշեան, էջ 48 մեկնում է «Anspornung zur Thätigkeit գրգիռ գործունէութեան». յունարէնը չունի այս բառը. —նոր բառեր են անհրաժեշտաբար, անհրաժեշտարէն, անհրաժեշտութիւն են։

ՆՀԲ «հեռի ի յօժարելոյ»։ Lag. Beitr. baktr. Lex. 30—31 ենթադրում է զնդ. *fraǰar և *fraǰaristi ձևերից։ Պատկ. О назв. древн. арм. мѣсяцевъ, էջ 37 զնդ. *fraǰar։ Տէրվ. Altarm. 57 սանս. sarǰ, srǰ, զնդ. harez «արձակել» են ձևերի հետ։ Müller WZKM 6 (1892), 266 հպրս. *fražad, զնդ. jad, պրս. جستن justan «որոնել»։ Հիւնք. պրս. farāšā «խորշումն, բաժանումն յիրերաց»։ Հիւբշ. 181 հրաժարել և հրաժեշտ բառերի -ար- և -եշտ մասերի կապը գտնելով իրանեանի մէջ (հմմտ. պրս. kāram «ցանեմ» և kišt «ցանք», guδaram «անցնիլ» և guδašta «անցեալ», dāram «ունիմ» և dāšta «ունեցած». հմմտ. նաև պարարտ բառի տակ), ենթադրում է որ այս բառերը իրանեան են. մայր ձևերն են՝ հրաժարեմ<զնդ. *fraǰarāmi կամ *fraǰārayemi, պհլ. *fražārem, հրաժեշտ<պհլ. *fražišt կամ *fražašt:

ՀՐԱԼ «յուսահատիլ, յոյսը կտրել». մէկ անգամ ունի Փիլ. ժ. բան. 221. «Զոգոց աչսս, չորս հրացին ոմանք ի բարի և ի լաւ յուսոյ, կարծեցեալ ահա կուրանալ, բանամ». յն. համապատասխան բառն է ἀπόγνωσις «յուսահատութիւն»։

ՆՀԲ համարում է «բառ անյայտ, որպէս վիրալ կամ խրամատել՝ նմանութեամբ, զնի որպէս անյոյս առնել կամ հեռացուցանել ի տեսութենէ յուսոյ»։ ՋՔ «հեռացուցանել, մերժել?»—ԱՔ «հեռացնել»։

ՀՐԱԿ. մի տեսակ անծանօթ ծաղիկ. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1751։

*ՀՐԱՀԱՆԳ, ի-ա հլ. (յետնաբար նաև ի հլ. սովորաբար անեղական) «ուսում, կրթութիւն, ուսման մէջ վարժութիւն, մարզանք, մրցում» Նար. քր. Բուզ. Եղն. Ոսկ. մաթ. և ա. կոր. «կարգ, կանոն, չափաւորութիւն, կարդաւորութիւն» Պզատ. տիմ. ՅՀ. կթ. «կարդաւորեալ, կանոնաւոր» Պիտ. վրք. հց. որից հրահանգել Պիտ. ՅՀ. կթ. հրահանգող Պզատ. օրին. անհրահանգ Ոսկ. ա. կոր. են։

=Պհլ. frahāng (գրուած նաև frahang) «վարժութիւն, կրթութիւն, գիտութիւն» ձևից. հմմտ. նաև պհլ. frahangistān «մարզարան, հրահանգք կոուանոցաց», պրս. farhang «գիտութիւն, համեստութիւն, հանճար, հասկացողութիւն, շուք և պատիւ, բառարան», farhangī «ուսուցիչ, ուսումն և կրթութիւն», farhanǰ «գիտութիւն, ուսում», farhanǰidan, farhīxtan, farhaxt-

tan «կրթել, հրահանգել, դաստիարակել»։ Բոլորի արմատն է hang հմմտ. պրս. هنگ hang կամ آهنگ āhang «հասկացողութիւն», هنگ و خرد hang u xirad «կրթութիւն», զնդ. haxta «կրթուած, վարժ», anahaxta «անվարժ, դեռակիրթ» (Horn § 58, Bartholomae, էջ 121 և 1745)։— Հիւբշ. 182։

Ուղիղ մեկնեց նախ Lag. Urgesch. 376, իբր. սանս. prasaṅga, պրս. farhang։ Նոյնը նաև Müller SWAW 39, 396, Պատկ. Изслъд. էջ 11, Տէրվ. Նախալ. 94 ևն։

*ՀՐԱՄԱՅԵԼ «հրաման անել» ՍԳր. որից հրամայական կոչ. Ոսկ. յհ. բ. 4. հրամայողական Գր. տղ. հրամայողաբար (նոր բառ). բայը յետնաբար գրուած է նաև հրամել (իբր գւռ. ձև) Ծփր. համաբ. 24, 57, միջ. հյ. համել Անսիզք 11, Սմբ. դատ. 17։

=Պհլ. framāy- ձևից. հմմտ. պհլ. framāyēm «հրամայեմ», framūtan (նոր պհլ. farmūtan) «հրամայել», framāyišn «հրամայումը», սոգդ. firāmāy «հրամայել», պրս. farmāyam «հրամայեմ», فرمودن farmūdan «հրամայել», فرمایش farmāyiš «հրամայումն», քրդ. fermun «հրամայել», fermu «հրամայեալ». հմմտ. նաև յաջորդը։ Բոլորի արմատն է հպրս. mā, աճած fra- նախամասնիկով (տե՛ս Hohn § 821)։—Հիւբշ. 182։

Նշխ լծ. պրս. ֆէրմուտէն, յն.χρηματίζω «զբաղուիլ գործով, մանաւանդ դրամական գործով»։ Gosche 61 սանս. pramā: Lag. Urgesch. 137 mā արմատի տակ։ Müller SWAW 38, 583, 585 պրս. farmāyam: Justi, Zendsp. 230 բ զնդ. mā արմատի տակ՝ վերի ձևով։

ԳԻՒՒ.—Ջղ. հրամայել, Ախց. Սրև. հրամայել, Ագլ. հրամա՛յիլ, Շմ. հրամմայիլ, Տփ. հրամաիլ, հրամիլ, համէցէք, Ալշ. Մշ. հրամել, Ախց. Ակն. Կր. Պլ. Ւմ. Սեբ. հրամմել, Տիգ. հրոմմել, Հճ. հյամել.—յատկապես գործածւում է ո՛չ թէ բուն «հրամայել» նշանակութեամբ, այլ իբր քաղաքավարական ձև՝ զանազան իմաստներով. այսպէս «նե՛րս եկէք, վե՛ր ելէք, նստեցէ՛ք, առէ՛ք, կերէ՛ք, ասացէ՛ք» ևն. այսպէս ունինք՝ Պլ. հրամմէցէք, հրամմէ, Ննխ. հրամէցէք, համէցէք, Սրև. համէցէք, Մշ. հրամէցէք, ramէցէք, Ղրբ. համ՛ցէք՝, Մկ. Վն. խրամէ. —կայ ծաղրական՝ Պլ. հրամմէր էս «այո՛». —աւելի սովորական է հարցական ձևով՝ Ախց. Ակն. Առն. Սրև. Շմ. Պլ. համմէ՞, Սվեդ. հրմմէ՞, Մրղ. (շփոթելով ամէ՞ն բառի հետ) ամմրէն «հէ՞, ի՞նչ ասացիր»։ Հնագոյն գործածութեան օրինակն ունին Անկ. գիրք նոր կտ. 85 (Բարի եկիր, այր ծեր և պատուական, հրամայեա՛ և նիստ) և Վրք. հց. ա. 200 (Հրամայեա՛ ի սեղանս, զի ճաշակեմք)։ Սրանից են հրամցնել «հրաւիրել», հրամեցէք «հրաւէր», հրամեցէքատր «հրաւիրեալ»։ Այսպիսի քաղաքավարական գործածութիւն ունին նաև պրս. farmūdan «հրամայել» (որ իբրև օժանդակ է գործածւում իշխանաւորների հետ խօսելու ժամանակ), թրք. buyurmaq «հրամայել, հրամմել» (օր. buyur? «համմէ՞»), վրաց. ბრძანება prdzanebа «հրամայել» և მი-ბრძანება mi-prdzanebа «հրթալ»։

*ՀՐԱՄԱՆ, ի–ա հլ. «հրաման, պատուէր» ՍԳր. (միջ. հյ. համան Անսիզք 13, 19). որից հրամանի «ճակատագիր» Սղն. Ոսկ. մ. ա. 6, բ. 1. հրամանատու Սղն. Ագաթ. հրամանատու Ոսկ. մ. բ. 1. հրամանաբեկ լինել «չարաչար օրհասով մեռնիլ» Կոչ. էջ 109. հրամանաբեր Ագաթ. Կորիւն. բարեհրաման Նար. իւրհանհրաման Ագաթ. նախահրաման Նար. տասնհրամանեան Կոչ. ոսնհրաման Ագաթ.։

=Պհլ. framān «հրաման» բառից, որի հետ նոյն են հպրս. framānā, պրս. فرمان farmān հոմանիշները. վերջինս փոխառութեամբ տարածուած է շատ հեռու. ինչ. թալմ. הרמן h r m n, քրդ. ferman, firman, թրք. ferman, լեհ. ռում. ferman, հունգ. fermány, ֆրանս. սպան. firman «սուլթանական հրամանագիր, հրովարտակ»։

Բառիս ծագման մասին տե՛ս հրամայել:— *Հիւբշ. 182։*

Ուղիղ մեկնեց նախ St. Martin, Mémoires II 1819, *էջ 314, իբրև պրս.* farmān: *Նոյնը նաև ԳԴ։ ՆՀԲ լծ. պրս.* ֆէրման, *յն.* χρῆμα *«իր, գործիք, ինչք»։* Peterm. 26 *պրս.* farmān, Windisch. 22 *սանս.* pramāṇa: Gosche 61 *սնս. և պրս. ձևերը։ Եւրոպա 1849, 200 հպրս.* framāna-։ *Մորիման* ZDMG 26, 522 *բևեռ.* armani, *պրս.* farmān: *Հալաճեան, Արևելք 1893 նոյ" 10 հուր+ման գալ:*

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. կր. Վրբ. Մշ. Ննխ. Զղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. հրաման, *Ասլ.* հրամա, *Ալշ. Տփ.* հրամանիմ, *Գոր. Շմ.* հրամման, *Տիգ.* հրոմմոն, *Զթ.* հրյամմօն, հրամմոն.— *այս բոլորը նշանակում են «հրաման».— քաղաքավարական ձևեր են Ախց. Ակն. Երև. Ննխ. Պլ. Զղ. Ռ. Սեբ. Տփ.* հրամանիդ, *Պլ.* հրամանիմիք, *Առն.* հրամանիմ, *Սչ.* ձ'հրմանիմ *(<*ձեր հրամանիմ *ձևից կրճատուած) «Դու, Դուք» իմաստով.—Վն.* խրամանիմ *ի, Մկ.* խրամանի՛ *ը «այո՛, հրամմեր ես»։*

**ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ի–ա Հլ. «իշխանաւոր. հազարապետ, կուսակալ» ՍԳր. Ոսկ. մ. բ. 7 և ես.—որից* հրամանատարութիւն *Բուզ. հնագոյն ձևն է* հրամատար *ՍԳր. Բուզ. Եղիշ. որ ժողովրդական սատուգաբանութեամբ տեղի է տուած նորակերտ* հրամանատար *(իբր հրաման տանող) ձևին. վերջինը արդի գրականի միակ ընդունած ձևն է և նշանակում է «զօրաբանակի գլխաւորը»։*

=*Պհլ.* framātār *«հրամանատար» բառից. սրա հետ նոյն են պրս.* framaδār, *հպրս.* framātar- (*Հյց.* framātāram) *«հրամայող, իշխանաւոր». սրանք ուղղակի տալիս են Հյ.* հրամատար: *Բուն ծագումը տես* հրամայել *և* հրաման *բառերի տակ։—Հիւբշ. 182։*

ՆՀԲ հրաման տանել *ձևից։ Ուղիղ մեկնեց Պատկ.* Матер. II. 16:

Հրամանի *տե՛ս* խարամանի։

ՀՐԱՄԻՆ *«յետինք, երեկոյեան մօտ ժամանակը» Տիմոթ. կուզ, էջ 320 (սեռ.* հրամինի *ձևով. տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 85). սրա հետ նոյն է* հրամենիմ *«երեկոյեան նախաճաշիկ, նախընթրիք» Մխ. առակ. ճհր. Վրդն. առկ. 54։*

ԳԻՒ.—Ալշ. Ագ. Բլ. Մշ. հրամա, *որ և Ալշ. Մշ.* հրամգ'ա *«արևը մայր մտնելուց 3 ժամ առաջ տեղի ունեցած նախընթրիքը», Խն. «ճաշ, կէսօրուայ կերակուր», Նր.* հրամգահի *«կէսօրից յետոյ եղած ժամանակը,* nachmittag», *Մկ.* խրամէնց *«նախընթրիք». նոյն ձևից են նաև* հրամնիլ (Rivola) *«նախընթրել»,* հրամենիմ *Գնձ. «մի քառորդ օրավար, մի ճաշավարի կէսը» (Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 53, 243)։*

**ՀՐԱՆՈՒՆԿ «մի տեսակ գեղեցիկ ծաղիկ է. տճկ.* տիւյիւն չիչէյի. *ֆրանս.* renoncule». *ունին միայն ՓԲ, Նորայր Բռ. ֆրանս. 1067" և ՀԲուս. § 1753, իբր նոր գրական բառ։*

=*Լտ.* ranunculus *հոմանիշից յարմարեցրած գրագէտների ձեռքով։*

Այսպէս մեկնեց ՀԲուս. անդ։ Նորայր, Բանաս. 1901, 124 մերժում է, որովհետև կայ հրանուկ Բզ. «ցինկ ծաղիկը»։ Ըստ իս այս երկուսը կապ չունին իրար հետ։

**ՀՐԱՇ, ի Հլ. (գործածուած սովորաբար անեզական) «սքանչելիք, դերբնական գործ» Անյ. բարձր. Պրպմ. Նար. «հրէշային, այլանդակ գործ» Խոսր. Վրք. Հց. որից* հրաշադէտ *Զաք. գ. 8.* հրաշագան *Ոսկ. ես.* հրաշակերտ *Յոբ. դ. 12. ե. 9. լդ. 24. Սես. քր. արմատական ձևը Ոսկեդարում չէ գործածուած (այս իմաստով աւում է նշան, արուեստ, սմանչելիք, զօրութիւն). ունինք սակայն մի քանի ածանցներ. ընդհակառակը շատ սովորական է յետիններից մօտ, ուր ունինք նաև բազմաթիւ ածանցներ. ինչ.* հրաշանկար *ՅՀ. կթ.* հրաշափառ *Արիստ. աշխ. Կիւրղ. գնձ.* հրաշանալ *Խոսր.* գեղեցկահրաշ *Պիտ.* գեղահրաշ *Մագ. Ճառընտ. (կասկածելի է Ագաթ.),* եռահրաշ *Սիսիան.* երկնահրաշ *Անան. եկեղ.։*

=*Ասոր.* ܚܪܫ xarše *«մոգական արուեստ, մոգութիւն. 2. հմայք,* incantamenta», ܚܪܫ xarāšā *«մոգ»,* ܚܪܫܘܬܐ xārāšūtā *«մոգական արուեստ»* (Brock. Lex. syr. 125). *ասոր. x> Հյ. ի ձայնափոխութեան համար հմմտ.* հանուր, հաշիւ,

հաղբ, Շուփհաղիջոյ: «Հրաշք».—զնդ. fraša բառը մեկնուելով «յառաջ, նոր» (Հիւբշ. 183) կամ «յարմար, առակ» (Bartholomae, Altir. Wört 1006), դուրս էր արուած համեմատութիւնից։ Այժմ Benveniste BSL հտ. 30, № 89, էջ 64 նորից է դնում զնդ. fraša, պհլ. fraš- «սքանչելի» (սրանից պհլ. frašemurγ «սիրամարգ»՝ իբր հաւ հրաշալի), որ համատատում է նորագիւտ պարսկական բևեռագիր արձանագրութեանց frašta «պերճ, սքանչելի, արտասովոր» բառով, որից փոխառեալ է նաև ելամական թարգմանութեան pirraša «սքանչելի, արտասովոր» բառը։ Եթէ ստուգուի այս բոլորը, այն ժամանակ պէտք է վերականգնել հյ. հրաշ բառի հին ստուգաբանութիւնը՝ իբր փոխառեալ իրան. fraša-ձևից և ջնջել իմ տուած ստուգաբանութիւնը՝ իբր <ասոր. xarše «հմայք», որ արդէն բացարձակապէս չի ծածկում հայ ձևը։—Աճ.

Lag. Btrg. bktr. Lex. 27 կցում է զնդ. fraša- «հրաշալի» բառին։ (Այս բառի իմաստն է սակայն «յառաջ», որից զնդ. frašōkərəiti «նորոգութիւն, յարութիւն մեռելոց» (պհլ. fraškart, փարսի frašegart, համմտ. հյ. հրաշակերտ), զնդ. frašōcarətar «նորոգիչ մարդկութեան» (համմտ. հյ. հրաշաճարտար) են. այսպէսով հայերէնը և զենդերէնը նշանակութեան տարբերութեան պատճառով անջատուում են իրարից)։ Justi, Zendsp. 202 յիշում է միայն հրաշակերտ ձևը=frašōkərəiti։ Հիւբշ. ZDMG 35 (1881), 173 և Arm. Gram. 183 մերժում է բոլորն էլ։ Müller WZKM 10, էջ 277 ենթադրում է, որ հայերը նախ զնդ. frašōkərəiti>հրաշակերտ բառը փոխ առին, որ մօտաւոր նշանակութիւն ունի, և յետոյ նրա վրայից ձևակերպեցին «հրաշք» նոր նշանակութիւնը։ Հիւնք. հրեշտակ բառից։ Պատահական նմանութիւն ունի սոգդ. fraxšn «նշան» (BSL 3, 104), որ պիտի տար հյ. *հրաշխ:

Գիւռ.—Ագլ. Ախց. Կր. Ռ. Սչ. հրաշք, Տիգ. հրոշք, Ալշ. Երև. Մշ. Շմ. Ոզմ. Զղ. Տփ. հրաշկ, Խրբ. Պլ. Սեբ. հրաշգ, Ասլ. հրաշգ, հրաշ*, Ննխ. հրաշք, հրաշկ, Սլմ. Մրղ. Մկ. խրաշկ, Սվեդ. հրուշք, Հճ. հոյօշք: Առաջին թրքախօս հայերն ունին հրաշք «հրաշք», հրաշալի կիւն «տօնական օր, ինչ. Զատիկ, Մնունդ» (թրք. gün «օր»). Ննխ. հրաշք «զարմանալի, տարօրինակ» (այսպէս նաև Սլմ.), հրաշալի «սոսկալի, զարհուրելի», որի հին վկայութիւնը գտնում ենք Կալենթ. 175. Հրաշալի ցաւով զգիշերն ամենայն անցուցանէր ցաւագին հեծեծանօք։

ՀՐԱՊԱՐ «կաշիէ չուան, փոկ». մէկ անգամ ունի Ագաթ. § 109. «Եւս բարկացեալ թագաւորն եւս պնդել զոտս նորա ի հրապարս տակաց և կախել զնա գլխիվայր»։—Տպագիրն ունի ի հրապոյրս, մինչդեռ բազմաթիւ ձեռագիրներ, ինչպէս նաև կրկնագիրը (էջ 42 բ, Յուշարձան 108—9 բ), դնում են ի հրապարս: Նոյնը գիտէ նաև Ուխտ. Ա. 89 ի հրապոյրս տակաց, և Նորայր, Կոր. վրդ. 202 նոյն է համարում նաև Բուզ. Դ. 55 «Հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեքենայից»։

Նշբ դնում է հրապար, լծ. պարկ և թրք. խրպա «կաշիէ ջրաման»։ Ջբ կասկածով և Աբ ստոյգ կերպով դնում են հրապոյր ձևը (չունին հրապար): Վերի մեկնութիւնը տալիս է Աճառ. ՀԱ 1913, 18, պաշտպանելով հրապար ձևը և մերժելով հրապոյրը. այսպիսի սովորական իմաստով և հանրածանօթ մի բառի վրայ անկարելի էր սխալուել (այսինքն հրապոյրը չէր կարելի հրապար դարձնել), բայց հրապար՝ իբրև շատ հազուագիւտ մի ձև՝ կարելի էր դիւրութեամբ շփոթել հրապոյրի հետ։ Թերևս լինի իրանեան փոխառութիւն fra- մասնիկով. արմատը պար?

*ՀՐԱՊԱՐԱԿ, ի-ա հլ. «ընդարձակ տեղ քաղաքում, արձակավայր. 2. առեան, արքունի առեան. 3. աւագանիի ժողով. 4. բազմութիւն, ժողովուրդ» ՍԳր. Մծբ. Ոսկ. փխլիպ. Ագաթ. որից հրապարակաւ «ամէնքի առաջ» ՍԳր. հրապարակագոյժ Ոսկ. մ. բ. 10. հրապարակախօս Առակ. լ. 31. Ագաթ. Ոսկ. հրապարականէծ Առակ. ժա. 26. հրապարակատես Ոսկ. նս. հրապարակախօսու-

թիւն *նւս. քր.* հրապարակախօսական, հրապարակային *(նոր բառեր)* ևն։

=*Հիւս. պհլ.* *frapāδak *ենթադրեալ ձևից, որ կազմուած է* fra- *մասնիկով. երկրորդ մասի համար հմմտ. պհլ.* pāyak «աստիճան, ճանապարհ» <*զնդ.* *pāδaka- *(որ է* pāδa- «ոտք» *արմատից)*։

Lag. Urgesch. 182 *զնդ.* frapere *ձևի հետ։ Հիմնք. պրս.* فروارا farvāra «ամառանոց, վերնատուն» *բառից։ (Այս բառի մեկնութիւնը որոշ չէ.* Horn, *էջ 183 դնում է պհլ.* fravār, *զնդ.* *fravārana- *և կամ համարում է պրս.* barvār *հոմանիշի արաբացեալ ձևը։ Սրանցից ո՛չ մէկը չի կարող տալ հյ.* հրապարակ)։ Հալաճեան, Արևելք *1893 նոյ" 10* հուր+պար *ձևերից։ Վերի ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL 11, 398 և 17, 247։

Փոխ.—Վրաց. ფრაკჭარაკი ուրակպարակի «հրապարակ», ფრაკჭარაკად ուրակպարակաղ «հրապարակաւ. *բառիս նախաձայնի վրայ՝ իբրև իրանեան f-ի ներկայացուցիչը խօսում է* Meillet MSL 11, 398. fra- *դարձել է նախ* -ւիր-, *որի ւ ձայնը եղել է վրաց. ու. այսպէսով վրացին ներկայացնում է հայերէնի հնագոյն ձևը (անձնական)։ Վրաց.* ლაპარაკი լապարակի «խօսակցութիւն, խօսք»՝ *իբր «հրապարակում», կամ հրապարակը ըմբռնելով իբր «խօսելավայր» (հաղորդեց Աբուլաձէ՝ Թիֆլիսից)։*

ՀՐԱՊՈՅՐ «սիրտը քաշել չար բանի համար, վատ խրատ, փորձութիւն» *ՍԳր. Ագաթ. որից* հրապուրել «թելադրել, դէպի չարը քաշել» *ՍԳր. Կոչ. Եղն. Ագաթ.* հրապուրեցուցանել *Ոսկ. մ. բ. 10.* հրապուրիչ *Կոչ.* հրապուրանք *Ա. մակ. ա. 12.* անհրապոյր *Ագաթ. ևն։*

Նշբ հրաւէ՞ր *բառից։ Ըստ* Lag. Urgesch. 285 *յիշեցնում է լ.* propellere «վարել, յառաջ վարել»։ *Հիմնք.* վրէպ *բառից։*

***ՀՐԱՍԱՆ** *տե՛ս Փարսախ։*

Հրատ *տե՛ս Հուր։*

ՀՐԱՏԱՐԱԿ *(սեռ. -ի)* «մունետիկ, հրապարակող» *Յս. որդի. որից* հրատարակ առնել «լուրը տարածել, ամէնքին քարոզել» *Շնորհ. ոտ. բարձր* հրատարակաւոր *Կղնկտ.* հրատարակել *Պիտ. Անյ. բարձր.* հրատարակիչ *Լմբ.* հրատարակումն *Լմբ.* հրատարակօրէն *Անան. եկեղ.* հրատարակութիւն, հրատարակչական *(նոր բառեր)* ևն։

=*Պհլ.* *fratarah *ձևն է ենթադրում, որ կազմուած պիտի լինի* fra- *մասնիկով՝* tar «այն կողմ անցնիլ» *արմատից. հմմտ.* վտառել, վտարակ, *որոնք ծագում են նոյն արմատից՝* vi- *մասնիկով։—Աճ.*

Նշբ ի հետաւորս տարածել *կամ* հրապարակել։ Lag. Urgesch. 265 *լիթ.* tarti «քարոզել» *բայի հետ։*

***ՀՐԱՒԻՐ** (ի–ա *հլ. ըստ Նշբ, բայց առանց վկայութեան*) «կոչ, կոչումն, կոչունք» *Նխ. եզ. Սարկ. Նար. (Ոսկեդարից չէ աւանդուած. հմմտ. ՀԱ 1914, 329. բայց կայ Ոսկ. ես 351 «Ոչ երկիւղ գհհննին, ոչ հրոյն սպառնալիք, ոչ տանջանացն հրաւէրք», ուր իմաստը մի քիչ տարբեր է. միջ. հյ.* հաւէր *Անսիղք 9). որից* հրաւիրել *ՍԳր. Եփր. համաբ.* հրաւիրատու *Շար.* անհրաւէր *Ոսկ. պօղ. Ա. էջ 233, 243. Եփր. Գ. 254.* փեսահրաւէր *Զգօն 373.* հրաւիրումն *ՅՀ. կթ. Խոսր.* երկնահրաւէր *Գնձ.* կենսահրաւէր *Տօնակ.* կոչնահրաւէր *Գնձ.* համահրաւէր *Պետր. սիւն.* հրաւիրապուղթ, հրաւիրատոմս *(նոր բառեր) ևն։ Նոր մասնիկներով աճած ձևեր են՝* հրաւիրակ *Երեմ. լա. 6. Վեցօր. 177. Փարպ.* հրաւիրան *Հո. ը. 28. Կոչ.։*

=*Պհլ.* *fravēδ>հրաւէր, *fravēδak>հրաւիրակ, *fravēδan>հրաւիրան *ենթադրեալ ձևերից. հմմտ. սոդդ.* prw'yδ=frawēδ- «խուզարկել», farwēδ «խուզարկել, հրաւիրել, rechercher, inviter» *(ըստ* Gauthiot, Gram. sogd. *էջ 98), զնդ.* fravaed- «նկատել», fravaēδəmna- «նկատելի». *բոլորի արմատն է զնդ.* vaēd-, vaēδayeiti «գիտենալ, գիտցնել», *որի վրայ աւելացել է* fra- *նախամասնիկը։ Նոյն արմատից ուրիշ մասնիկներով ունինք՝ զնդ.* uz-vaēδayeiti «գիտցընել, ծանուցանել», ni-vaēδayemi «ծանուցանեմ», paiti-vaēδayemi «ծանուցանեմ», *որոնք տալիս են հյ.* նուիրակ, պատուիրակ,

պատուիրան *բառերը։ Ըստ այսմ* հրաւիրել *նշանակում է ո՛չ թէ «կանչել», այլ «կոչունքի մասին յայտարարել, ծանուցանել», ճիշտ ինչպէս նուիրակ՝ որ նշանակում է «հրաւիրակ», բուն նշանակում է «ծանուցանող, յայտարարող»։ Սրանցից տարբեր են զնդ.* vaēd- *«գտնել» և նրանից ածանցուած ձևերը։—Հիւբշ. 183։*

ՆՀԲ լծ. հիւրաւոր, Windisch. 43 *սանս.* pravṛ: Lag. Urgesch. 233 *սանս.* pravṛ *և զնդ.* fravere *«պահպանել, հաւատալ, ճանաչել»։* Müller SWAW 42, 256 *և* Justi, Zendsp. 268 *վերջին զնդ. ձևից։*—Lag. Arm. Stud. § 1335 *յարմարագոյն է համարում զնդ.* fravaēra *ձևը։ Ուղիղ մեկնութիւնը տուել է նախ Մառ.* ЗВО *5, 320, որ համեմատում է զնդ.* fra-vid- *«գիտցնել»։ Նրանից յետոյ* Müller WZKM 7, 371 *զնդ.* fra-waēδa: *Ալիշան, Հին հաւ. 346 իրան. ֆէրուիէր կոչուած ոգիների հետ։ Հիւնք. հրապոյր բառից։ Թիրեաքեան, Կարնամակ էջ 134 պրս.* فروهر farūhar (?), *որ Սիւանդի բարբառում «հրեշտակ» նշանակութիւնն ունի։ Հիւբշ. 183 դնում է ըստ ձևի զնդ.* fravaēδa-, *առանց անդրադառնալու հետազօտութեան։*

ԳԻՒ.—Ալշ. Երև. հրավէրէ, *Երև.* հրավիրել, *Թուի գրական փոխառութիւն։*

**ՀՐԻՒԻԱԿ «մի տեսակ խնկեղէն» Խոր. աշխ. 615 (այլ ձ.* ախիրիբոյնկ*). ունի միայն ԱԲ։*

=Իրանեան փոխառութիւն է. վերջի մասը ներկայացնում է պհլ. bōyāk, *պրս.* bōyā *«հոտաւէտ, բուրող». բայց անծանօթ է մնում* հր-. *Համմ.* գոյիբուակ, գազերբուակ, հոշիբուակ *ևն։ Թերևս նոյն է սրա հետ պրս.* خیربویا xīrbūyā, *որ տե՛ս խէրպուէ բառի տակ։—Հիւբշ. 123։*

Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 81 մեկնում է իբր. արաբ. خیربوا xīrbavā *«հիլ, cardamomum minus»։ Նոյնը նաև Նորայր ՀԱ 1924, էջ 551։*

Հրդեհ տե՛ս Դեհ։

**ՀՐԵԱՅ, ի հլ. «հերայեցի» ՍԳր. որից* հրէաբար *Գաղ. բ. 14. Նա. պտմ.* հրէական *Տիտ. ա. 14. Նա. քր. Ոսկ. յհ. ա. 30.* հրէականմն *Ագաթ.* հրէանալ *Ոսկ. գաղ. Կիւրղ. երր.* հրէապէս *Նա. պտմ.* հրէարէն *ՍԳր. Ոսկ. ես. գաղ. և բ. կոր.* հրէութիւն *ՍԳր. Ոսկ. ես. Հրէաստան ՍԳր. ևն։*

=Ասոր. ܝܗܘܕܝܐ īhūδāyā *կամ* yūδāyā, *երր. յգ.* yəhūδīm, *արամ.* yəhūδāyē, *արաբ.* يهود yahūd, *պրս.* جهود ǰahud, juhud, *յն.* Ἰουδαῖος *«հրեայ»։ Հյ. բառը յառաջանում է *հուրեայ ձևից, ուր* -եայ *հայերէն վերջաւորութիւն է (համմ.* հրիստոն-եայ, պաշտօն-եայ, Հրաչ-եայ, *Թաղդեայ, Թադէայ ևն)։—Հիւբշ. 309։*

Ուղիղ մեկնից նախ Müller WZKM 6, 266—7:

ՓՈԽ.—վրաց. ურია uria, ჰურია huria *«հրեայ»,* ჰურიასტანი Հուրիաստանի *«Հրէաստան», օսս.* wirag, *Թուշ.* uriw *«հրեայ»։*

ՀՐԵԱՇԻՐ *«մի տեսակ ազնիւ քար կամ այլ նիւթ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 43. «Լինի անդ (Հնդկաստան) հրեաշիր և դահանակ և անագ ազնիւ»։ Նոյն տեղը Խոր. մատ. հրտր. 1865, էջ 615 խառն և տարբեր է. բայց կայ հրեշերէ՝ գազանների շարքում։*

ՀՐԵԼ *«մղել, քշել». ունին միայն Բառ. երեմ. էջ 187, որից նաև ՓԲ և ԱԲ. հնից չունինք վկայութիւն. բայց կայ միջ. հյ. ըստ Նորայր, Բառ. ֆր. 975 ա։*

Հիւնք. Խրել բայից։

ԳԻՒ.—Կր. Պլ. Ռ. հրէլ, *Ասլ.* հրէ՛լ, *Զթ.* հը՛յիլ, հը՛րիլ *ևն։*

**ՀՐԵՇՏԱԿ, ի-ա հլ. «սուրհանդակ, թղթատար, պատգամաւոր. 2. առաքեալ, մարգարէ, նախակարապետ. 3. կանխայայտ նշան. 4. երկնային հրեշտակ» ՍԳր. Ոսկ. ես. «ոգի, բարի դև» Պղատ. օրին. գրուած է նաև* հրըշտակ *վեցօր. էջ 33, 94, 199 (երեք անգամ), հրիշտակ Ծիր. ա. կոր. 59, 61. գաղ. 131. որից հրեշտակութիւն «պատգամաւորութիւն» ՍԳր. հրեշտակօրէն Կոչ.* հրեշտակապետ *Յուդ. 9. ա. Թես. դ. 15. (որ և գրուած հրեշ-*

տապետ *Անկ. գիրք առաք. 310)*, հրեշտակագնաց *նս. քր.* զուգահրեշտակ *Նիւս. երգ. և կազմ.* համահրեշտակ *ճառընտ. ևն։*

=*Պհլ.* *frēštak *բառից, որ թէև չէ աւանդուած, բայց հմմտ. մանիք. պհլ.* פרישתג frīštag *«մարգարէ, հրեշտակ»* (Salemann, Manichäische Stud. ЗАН 8, 119), *պրս.* فریشته firēšta, *նորը՝* فرشته firišta *«հրեշտակ», հպրս.* *fraišta- *և դնդ.* fraēšta- *«պատգամաւոր». բուն նշանակութիւնն է «ուղարկուած, առաքեալ» և ծագում է* fra- *մասնիկով՝* aēš- *«շտապել, շարժումի մէջ դնել, ուղարկել (գործք, բանակ ևն)» բայից (անց. դերբ.* išta-*). ձևի համար հմմտ. հպրս.* frāišayam *«ուղարկեմ», սանս.* prēšayati *«ուղարկել»* (Bartholomae 975, Horn § 819[bis]), *իսկ իմաստի զարգացման համար հմմտ. արաբ.* ملاك malāk *«հրեշտակ. 2. դեսպան», բուն «ուղարկուած» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 72 և 110), ինչպէս նաև չինէն.* elçа *«մարգարէ», որ Թրք.* ایلچی elči *«դեսպան» բառն է։ Պրս. բառից փոխառեալ են նաև բելուճ.* p'irištay, *ուտ.* faršta *(Մ. Լ. Բարխուդարեանց, Աղուանից երկիր, էջ 93), քրդ.* firište։ *Հայերէնի մէջ հրեշտակ համապատասխանում է իրան.* fireśta *(>*ֆիրեշտակ) *ձևին.—պհլ.* *frēštak *տալիս է* *հրէշտակ>հրիշտակ, իսկ նորագոյն* firišta(k) *ձևը տալիս է* *ֆիրիշտակ >հրշտակ. երկուսն էլ գործածական միայն գաւառականների մէջ—Հիւրշ. 184։*

Schröder, Thesaur. 44 *հանում է հուր բառից՝ մեկնելով* «ignis flamminus», *ըստ ակնարկութեան Սղ. ճդ. 4. «Ո՞ արար զհրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ»։ Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս.* ֆէրիշթէ *բառի հետ. նոյնը նաև ՆՀՒ,* Peterm. 22, 26 *պրս.* firištāda *«ուղարկուած» ձևի հետ։ Ուղիղ են մեկնում* Böttich. Horae aram. 31, Arica 76, 253, Lag. Urgesch. 152, Spiegel, Huzw. Gram. 190. Müller SWAW 38, 572 *ևն։ Գ. Կ., Արշալ. արրտ. 1843, № 130 մեկնում է հուր+շատ կամ շուտ +ակ։ Տէրվ. Մասիս 1882 դեկտ. 15—16 և Լեզու, էջ 152—5 նախաձևը դնում է պրայստակ, ուր պրա- նախդիր է, իս, իշ (անց. ընդ.) և ակ մասնիկ։ Պարոնեան, Բանաս. 1900, 172 զնդ.* սրաօշա *և պրս. ֆէրիշթէ ձևերի հետ։ Ալիշան, Հին հաւ. 202 հրաշտ բառից և կամ հուր +եշտ (ինչ. զաւ-եշտ)։*

Գիհ.—Ջղ. հրեշտակ, *Ագլ. Ախց. Երև.* հրէշտակ, *Սչ.* հրէշդագ, *Տիգ.* հրէշդոգ, *Տփ.* հրիշտակ, *Ալշ.* հրիշտագ, *Մշ.* հրիշտակ, հիրիշտակ, հրշտագ, *Ակն. Պլ. Ւռ. Սեբ.* հրիշդագ, *Համշ.* հրիշդագ, հոբշդագ, *Վրբ.* հրի՛շտակ, հրի՛շտրակ, *Ննխ.* հրիշտագ, հրբշտագ, *Զթ.* հիյիշդօգ, հիրիշդոգ, *Հճ.* հույէշտօգ, *Սվեդ.* հրէշդիւգ, *Կր.* հրբշտակ, *Խրբ.* հրշդագ, *Ասլ.* հրշդագ, հրշդայ, *Նդ.* հրբշտէկ *(Գաբրիկեան, Ամէն. տարեց. 1922, 325), Գոր. Շմ.* հրբշտրակ, *Շմ.* հարաշտարակ, *Ոզմ. Վն.* խրբէշտակ, *Մկ. Վն.* խրիշտակ, *Սլմ.* խրբշտակ, *Մրղ.* խոբշտակ։ *Նոր բառեր են* հրեշտակակոխ, հրեշտակամորթ, հրեշտակամակարդ։

ՀՐԻՇ, ի *հլ. (առանց սղման հոլովուած է* հրէշից) *«յուցանք, այլանդակ՝ խառնակ կենդանի» Խոր. բ. 81 և աշխ. 616 գրուած* հրաշ *Կալիսթ. 170. որից* հրեշեր *«հնդկական մի գազան» Խոր. աշխ. 615. Նոր գրականում՝* հրէշային, հրէշաւոր, հրէշութիւն։

Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 80 տարբեր արմատից է դնում հրեշեր, *իբր արաբ.* حريش ḥariš *կամ* harīš *«մէկ եղջիւրով խառնագազան, մի տեսակ օձ, ռնգեղջիւր»։ Հիւնք. հրեշտակ բառից, կապ ունի՞ արդեօք վրաց. ჩაშო* რაշի *«առաստպելական ձի», որի հետ նոյն է Ախց.* հրաշ, *պահուած միայն Հրաշիհ պէս եկաւ դարձուածում։ Ծնտգլեան, Կոչնակ 1931, № 40 զնդ.* fravaši *«ամէն մէկի պահապան ոգին»։*

Փոխ.—Պէտէլեան, Արեւելք 1888 նոյ" 8—9 սրանից է դնում Աստանայի Թրքախօս Հայոց, Տաճկաց և Յունաց մէջ գործածուած հրէիկ *«հսկայ մարդ» (իբր* հրէշիկ*), որ շատ կասկածելի է։*

*ՀՐԻՑԱՆ *«կորեկ» Խոր. աշխ. Հրտր. Սուբ-*

բեանի, էջ 45. «Լինի ի նմա հրիզոն, որ է կորեակ»։ Ունի միայն ՀԲուս. § 1754։

=Յն. ὄρυζον «բրինձ» բառն է, որ գրտնւում է Պտղոմէոսի աշխարհագրութեան համապատասխան տեղում (տես և Ուրիզ)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ, որ և հատատում է Նորայր ՀԱ. 1924, 546։

ՀՐԻՉՈՒՄՆ *«նենգութիւն». ունի միայն Բառ. երեմ, էջ 187. սրանից է կազմուած հրզիմաց, որ վատ ածականների մի շարքի մէջ գործածում է Մանդ. սիր. 23։*

ՀՐԻՏԱԿ *(ի-ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կտակով ժառանգութիւն թողնուած ինչք» Մխ. դտ. Կանոն. էջ 125. Օրբել. հրտր. էմ. էջ 151. որից* հրիտակատար *(իմա՛* հրիտակակատար*) Մխ. դտ.։*

ՆՀԲ յիշում է յն. χρῆματα «ինչք», պրս. خريدە xirīda *«գնած բանը», լտ.* hereditas *«ժառանգութիւն»։*

ՀՐՁԱՄԵԼ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Լծ. կոչ. «Հրձածեալ և ցրուեալ զճակատ բանսարկուին»։ Թուի թէ նշանակում է «պատռել» և այն ժամանակ պատկանում է* հերձ *արմատին։*

ՀՐՃԻԻ, ի *հլ. «ուրախութիւն, ցնծութիւն» Տաղ. (գրծ.* հրճուիւ *ձևով). որից* հրճուիլ *Պիտ. խոսր.* հրճուումն *Շիր. Մագ.* հրճուանք *Յճխ.* հրճուելի *Նիւս. երգ.* հրճուալից *Պիտ. ևն։ (ՆՀԲ գնում է նաև* հրճ- *ձևով մի արմատ, որ հանում է* հրճուիւ *գործիականից, ինչ որ սխալ է)։*

Ծագրճեան, Արևելք 1884 նոյ" 16 սանս. hrš։ *Հինք. զուարճանալ բայից։* Meillet *(անձնական) կարծում է որ կապ ունի պհլ.* frīčašnīh *«մխծացում» բառի հետ։ Մաս,* Тексты XII, Вступит. и закл. стр. Шоты, *էջ IX վրց.* մորճմա *«ուրախութիւն», մորճմուլի «ուրախ» բառերի հետ. արմատն է* ռճմ։

ՀՐՃՐՃՈՒԿ *«կռճիկ, աճառ,* cartilago, *ռուս.* хрящъ». *ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Լծ. նար. կզ. «Օճառք. լծ. հրճիրճուկ. այն որ պատեալ է զխոչափողն և որպէս նովաւ յարմարի բան և ձայն».—ՆՀԲ իբր գւռ. բառ դնում է* հրճիրճուկ։

=Նման են հնչում պրս. کرجن kurǰan, *վրաց.* ღრაჯა ղրաճա *և Երև. բրք. գւռ.* xərtxərt *հոմանիշները, որոնք բոլոր թւում են բնաձայն։—Ա.Ճ.*

Գ.ԻՒ.—Գործածւում է զանազան ձևերով. 1. ղրճղրճաւ *Ղրբ.,* ղղրճաւ *Երև.,* ղրճղրճ *Սվ.,* ղղճաւ *Ագլ. Գոր. Ղրբ.—2.* ղոճիկ *Իգդ. —3.* խոճիկ *Կ.,* խրճուկ *Կ.,* խոճակ *Մշ.,* խոճճիկ *Խրբ.,* խոճչուկ *Բլ.—4.* կուճիկ *ՋԹ. Երև. Կր. Պլ. Վն.,* կրճիկ *Ալշ. Բլ. Մշ.,* կրճուկ *Խր. Ննխ. Սչ.,* fոչիկ *ԷՆկ.* կոկճիկ *Ոզմ. —5* ղոթիկ *Տիգ.,* կոկոթիկ *Վն.,* խոխոթիկ *Խ.։*

***ՀՐՃԱԿ**, *որ և* հարշակ, արշուկ. *մի տեսակ անծանօթ բոյս. Թուի «ծուաղ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1156։ Ըստ իս՝*

=արաբ. حرشق haršaq *կամ* hiršaq *«վայրի կանգառ»* (Steinschneider WZKM *12, 9).—Ա.Ճ.*

ՀՐՃՏԵԼ *«վախենալ» Հին բռ. Բառ. երեմ. էջ 188. մէկ անգամ գտնում եմ գործածուած Նոր վկ. էջ 512 (ԺԷ դարից). «Եւ ի հորն իջուցեալ՝ հողափակին զնա և քամննցուցեալ հրըշտէին զնա»։ Տեղից երևում է՝ որ նշանակութիւնն է «սարսափեցնել, վախեցնել», որով չեզոքն է* հրշալ *«վախենալ, սարսափիլ»։*

ՀՐՈՊԱԳԻՆ. *անծանօթ և անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սիւնեցու Ադամգրքում, էջ 308.—«Պէսպէս պարգևքն աստուածային բաշխեալ բնութեանց գոյեղինին, իր զանազան յոյժ հրոպագին՝ տպաւորեալք ի միասին»։—Ըստ իս պէտք է ուղղել* հրաշագին *(տ. իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 151)։*

ՀՐՈՍ, ի *հլ. «ասպատակող զօրք» Բուզ. Եղիշ. գ. էջ 48. «աղջիկ փախցնելու ժամանակ առևանգողին օգնական կտրիճը» Կանոն. էջ 66. Մխ. դատ. էջ 199. որից* հրոսակ *Խոր. ՅՀ. կթ. Մագ.* հրոսաճուէր, *ՅՀ. կթ.* հրոսող *ՅՀ. կթ.* հրոսումն *ՅՀ. կթ.* հրոսակախումբ *(նոր բառ).* հրոսաճալ *«մէկ կողմ դիմել» Վստկ. 172.—գրուած է նաև* խրոսակ *Արծր.* հրաճոսակ *Մագ. Օրբել. Սիմ. ապար. 70. իսկ* հոսակ *Խոր. Ա. 11 պէտք է համարել սխալ գրչութիւն։ Նոյն բառն է* հրաճոսակ *«դեսպան կամ նամակ» Բառ. երեմ. էջ*

187. *համմտ.* հրոս *բառի երկրորդ նշանակութիւնը։*

Հներից Մագ. անշուշտ ստուգաբանում էր «հրոյ նման հոսող» և այս պատճառով հնարել է հրահոսակ *ձևը։ Այսպէս է նաև ՀՀԲ։—ՆՀԲ լծ.* խրախոյս *և թրք.* yürüyüš *«քայլուածք»։ Տէրվ. Նախալ. 110 և Լեզու 1887, 150* հոսել *բայից։ Հիւնք. յն.* ῥώομαι *(ներկ.) և* ῥῶσομαι *(ապ.) «արշաւել, սուրալ, դիմել», պրս.* rẖs, rẖsaa *«հասնիլ»։—Հրոս բառի երկրորդ նշանակութիւնը ՆՀԲ և ՋԲ հասկանում են «գործակից տուփողին», ԱԲ ուղղակի դնում է «կաւատ», որ սխալ է. (ՆՀԲ այս իմաստով համեմատում է յն.* ἔρως *«սէր» բառի հետ).* հրոս *նշանակում է «առևանգողի օգնական կարիճը», որ կուող է և ո՛չ կաւատ. ուստի և* հրոս, հրոսակ *բառի մի նոր առումն է միայն (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 64)։—Պատահական նմանութիւն ունին անգլսաքս.* hros *«նժոյգ», անգլ.* horse *«ձի», գերմ.* Ross։

***ՀՐՈՎԱՐՏԱԿ**, ի–ա *հլ. «արքունի հրամանագիր» ՍԳր. Կոչ. Մծբ. որից* հրովարտակաւոր *Արծր. Նար. Մծբ.։*

=*Պհլ.* 𐭥𐭫𐭲𐭠𐭪 fravartak *«նամակ, գրութիւն, հրովարտակ» բառից, որից փոխառուած է նաև արամ.* פרורתקין farvrtaqīn *«հրովարտակք». համմտ. նաև մանդ. պհլ.* 𐭯𐭫𐭥𐭫𐭣𐭲 f r v r d g *«գրել»* (Salemann, Manich. Stud. ЗАН 8, 117), *սոգդ.* farwārt *«գլան, գրքի հատոր, գիրք»։ Բառիսպրս. ձևը պիտի լինէր* *fravartaka-, *որ կազմուած է* fra- *մասնիկով՝* vart *«ոլորել, գաւառել» արմատից։—Հիւբշ. 184։*

Նբ լծ. արար. հուրուֆ, էհրուֆ, րուֆէդ, վէրէֆէ *և հյ.* գրով արտախս *առաքեալական հրատարակեալ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ.* ZDMG 46, 326, *ապա. ՀԱ 1892 354։ Հալաճեան, Արևելք 1893 նոյ. 10* հուր+արտախս *բառերի։ Ֆնտգլեան, Կոչնակ 1931. 40 յիշեցնում է մարական* Fraoertes *անունը։*

ՓՈԽ.—Մեզնից է փոխառեալ վրաց. ჩოართაკი რთართაკի *«հրովարտակ». այսպէս համարելու պատճառներն են՝ նախաձայն* f-*ի կորուստը վրացերէնի մէջ, որ միայն հայերէն* հ-*ի միջոցով կարող է լինել, և երկրորդ՝ պհլ.* av *խմբի դէմ վրաց.* ո, *որ նոյնպէս հյ. –ով խմբից է յառաջացած. ուղղակի պահլաւերէնից փոխ առնուելիս պիտի ձևանար վրաց.* *ფრავართაკი։ *Հայերէնից փոխառեալ լինելու աւելի զօրաւոր ապացոյց է տալիս վրաց.* ჭროართდაგი հրոարդագի *գրչութիւնը, որ տալիս է Մառ,* Иппол. 68։

ՀՐՈՎԵԼ *«պարծիլ, մեծաբանել». ունի միայն ՓԲ. անստոյգ բառ։*

***ՀՐՈՏԻՑ** *«հայկական տարւայ վերջին ամիսը, որ ըստ անշարժ տոմարի սկսւում է յուլիսի 7-ից» Փարպ. Եղիշ. Ասող. գրուած է նաև* հրոտից. *երկուսն էլ յոգն. սեռական ձևով են և ծագում են նախաւոր ուղ.* *հրոտ *կամ* *հրոտ *ձևից, որ չէ գործածուած։*

=*Իրանեան փոխառութիւն է. համմտ. պհլ.* fravartīkan *«Աւելեաց», պազ.* fravardyān *«Աւելեաց» (բայց այժմ փարսիների մօտ նշանակում է «իրենց տարւայ վերջին 10 օրերը, սրա մէջ հաշուելով նաև մեռելոց յիշատակին նուիրուած* mukhtād-*ի տօնի օրը և իրենց ֆրավաշիին»), պրս.* farvardagān, farvardiyān *«Աւելեացի հինգ օրերը՝ որ Պարսիկները տօնում են ի յիշատակ մեռելոց». աստւում է նաև* fōrdagān, fōrdayān, pōrdgān, pōrdyān *(ըստ* Vullers), fordigān, fōrdiyān, pōrdigān, pōrdiyān (Lagarde, Gesam. Abhd. 161), farvadīn, farvardīn *«է անուն առաջնոյ ամսոյ արեգակնային ամի, որ և ըստ հռոմայեցոց ասի մարտ. 2. է անուն իննևտասաներորդի աւուր իւրաքանչիւր ամսոյ արեգակնային ամի. և է կանոն Պարսից, զի մինչ անուն աւուրն գայցէ համեմատ անուան ամսոյն, զօրն գայն օրհնեալ և շնորհաւոր համարեալ առնեն տօն ցնծութեան»,* farvardiyān, farvardigān *«5 աւուրք աւելեաց» (ԴԴ), Խուարէզմի բարբառով* روچنا rōčinā (<*hrōtinā<fravartinām) *«տարւայ առաջին ամիսը» (Marquart, Յուշարձան, էջ 295—6)։ Իրանեան*

բառից օտար տառադարձութեամբ ունինք արաբ. فروردجان farvardijān (Ալբիրունի) կամ կրճատ ձևով فردجان fardajān «Աւելեաց» (ԳԴ), յն. Φουρδίγαν (Մենանդր), ասոր. Frōrdīyān (առ Hoffmann)։ Հյ. հրուտ <հրուրտ<իրան. *frōrt<fravart- ձևից. ըստ այսմ յգ. սեռ. հրոտից համապատասխանում է հպրս. *fravartīnām=գնդ. fravašinąm «մարտ-ապրիլ» ձևերին։—Հիւբշ. 184—185։

Հներից Վանակ. տարեմտ. և Տաթև. հարց. 201 ստուգաբանում են «հրոտիցն ըստ դրութեանն է, զի հուր է ոտիցն, որ այրէ ի ներքուստ ի վեր ջերմութիւն արեգականն»։ Իսկ Տաթև. ձմ. ա. մեկնելով այս բառը՝ գրում է. «Հրոտից՝ զխորհրդակցութիւն և զկատարումն ժամանակացն ասէ. մանաւանդ զգալուստ հոգւոյն և զերկրորդն ահագին փառօք ըստ Դանիէլի»։ (Բայց չի հասկացւում թէ ո՛ր բառից է ուզում հանել)։—Brosset JAs. 1832, 530 և Dulaurier, Chron. arm. էջ 12 դնում են հուր բառից։ Ուղիղ մեկնեց նախ Lag. Gesam. Abhd. էջ 163՝ համեմատելով պրս. fordigān. յն. Φουρδιγαν, բայց և եբր. פּוּרִים Փուրիմ (տօնը)։ Ուղիղ են նաև Պատկան. О назван. древн. арм. мѣсяцевъ, էջ 37 և Տէրվ. Նախալ. 94։ Ալիշան, Հին հաւ. 142 պրս. փրաւորտ, յն. Հերոյիդ, հնդ. Բուտրա, գերմ. Hrodr, ֆրանս. Ruth դիցանունների հետ։ Հիւնք. պրս. արուտ «անուն 25ոդ աւուր արեգակնային ամսոյ Պարսից»։

ՀՐՈՒԱՆԴԱՆ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ծովեզերեայ բարձր տեղեր, սարաւանդ» Պիտ. «երեսաց պատըշգամբ» Ջքր. սարկ. Ա. 15, Բ. 106, Գ. 34։

ՆՀԲ հրաձև գահաւանդ։ Պասմաճեան, Արեւելք 1890 յունիս 1 կցում է veranda բառին, որ ունի հնդկական ծագում։ Հիւնք. պրս. farvān «վերնատուն»+հյ. անդ (պրս. բառի ծագումը տե՛ս Հրապարակ բառի տակ)։ Պատահական նըմանութիւն ունին յն. πρών, πρῳών «լեռ, հրուանդան», սանս. pravaṇá- «անդունդ»։

*ՀՐՈՒՇԱԿ «ալիւրով և շաքարով (կամ թէ ոսպով և կամ մեղրով) և իւղով պատրաստըւած ուտելիք. տճկ. հալվա». ունին միայն ՀՀԲ և ՋԲ. հնից աւանդուած չէ և կայ միայն նոր գաւառականներում։ Բառիս վկայութիւնը գտնում եմ այժմ Նաղաշ Յովնաթանի տաղերում, հրտր. Զօպանեան, Փարիզ 1910, էջ 92. «Զինէք թազայ գառն ու շիշակ եփէք եղաձու և հարուշակ»։ (Հրատարակիչը սխալմամբ ուզում է ուղղել հարիսայ)։

=Պհլ. *𐭮𐭥𐭱𐭠𐭪 frōšak հոմանիշից, որ թէև չէ աւանդուած, բայց ունինք պհլ. 𐭠𐭮𐭥𐭱𐭠𐭪 afrōšak «հալվա» (WZKM 18, 281), որի հետ համմտ. պրս. فروشه farūša, افروشه afrūša, آفروشه āfrūša «ալիւրով, կարագով և մեղրով պատրաստուած մի տեսակ քաղցրեղէն. հալվա». որից փոխ առնուած է նաև քրդ. hewružk «ճմուռ, կարագով տաք հաց» (ըստ Justi, Dict. Kurde, էջ 447)։—Հիւբշ. 185։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. ֆիւրիշէ «հրուշակ» ձևի հետ։ Հիւբշ. ZDMG 35 (1881), էջ 661 պրս. farūša: Հիւնք. պրս. فروشك farūšak «ձաւար»։ Stackelberg WZKM 18 (1904), 281 պհլ. afrōšak «հալվա» բառից։

ԳԻՒ.—Ջղ. խուրշակ, խուրուշակ, Ագլ. հրէ՛շոկ, Պռ. հիւրիշէկ. այլուր գոյութիւն չունի այս բառը. բայց ձևից երևում է, որ շատ հին է և փոխառութիւնը տեղի է ունեցած պահլաւական շրջանին։

ՀՕՊՕՏ. անծանօթ մի բոյս. Բժշ. ունի միայն ՀՌուս. § 1758. թերևս նոյն ընդ հոտոտ։

+ՀՕՏ, ի հլ. «ոչխարի, նաև ուրիշ չորքոտանիների, փխբ. մարդոց խումբ» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 17. որից հօտապետութիւն Բուզ. հօտարած «հովիւ» Փարպ. հօտերեց «հովիւ» Վկ. արև. էջ 90. Փիլ. հօտաժողով Մծբ. հօտարան «փարախ» Երզն. քեր. և այլն։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pā- արմատից. ցեղակիցներն են՝ յն. πῶυ «հօտ». ποιμήν «հովիւ», սանս. pāyú- «հովուեալ». լիթ. pẽmů «հովիւ», պրս. ադ pāda «հօտ». այս բոլորի արմատն է pā-, որի վրայ տե՛ս հո-

րան: *Հայերէնի մէջ արմատը աճած է* d *ա-ճականով, ինչպէս ցոյց է տալիս նաև պրս.* pāda *ձևը. (հմմտ. նաև լտ.* pecu- *և աճած* pecu-dis *«արջառ»)։*

ՆՀԲ լծ. հովիւ, հովիտ, արօտ. *իսկ օղիֆ բառի տակ՝ լծ. յն.* ἀμνός *«գառնուկ»։* Lag. Urgesch. III pā *արմատից։ Այսպէս նաև Տէրվ. Նախալ. 91։* Müller WZKM 6, 266 *ցեղակից է դրնում յն.* ποιμήν, *լտ.* pastor, *լիթ.* pēmū *ձևերին։ Մերժում է Հիւբշ. 468 այս մեկնութիւնը, որովհետև* տ *մնում է առանց բացատրութեան։ Վերի ձևով բացատրեց* Meillet MSL 12, 430: *Հիմնք. յօդ բառից։*

ԳԻՒՒ.—Այս բառը գաւառականներում գործածական չէ. բայց սրանից ունինք Ախց. Երև. Լ. Ղրբ. հօտաղ, *Ալշ. Մշ.* հօղաղ, *Վն.* խօտաղ *«հովիւ. 2. գութանի կամ արօրի առաջին լուծը քշող մշակը». որից* հօտաղ-*fար Բբ. «մի մեծ քար, որ հօտաղ չեղած ժամանակ, գութանի առաջին լուծի վրայ են դնում»։*

ՓՈՒՒ.—Վրաց. գուռ. ოდაღი *օտաղի «արօրի առաջից գնացող և եզները քաշող մշակը»,—Քրք. գուռ. Կր.* hodax *«հօտաղ» (Բիւր. 1898, էջ 627), Եւդ.* حوداخ hodax *«հովիւ» (Յուշարձան 329), Բբ.* hodöγk^{y}ar *«հօտաղքար».—արդիօք նաև ուտ.* օտաղ *«արօ՞ր»։*

Հօտ *«յատոց» տե՛ս յատ-անել։*

ՀՕՏԻՍՈՑ *կամ* **ՀՈՏԻՍՈՑ** *«մի տեսակ բոյս. լտ.* prasium *կամ* marrubium» *Բժշ.—Տիրատեան,* Contributo § 416 *դնում է* lycopus europaeus L, *իսկ* § 449 marrubium heterodon Boiss. et Bal.—*գրուած է նաև* հատիսաւ.—*ՆՀԲ, ՋԲ և ԱԲ գրում են* հօտիսոն, *որ սխալ է ըստ Նորայր, Բառ. Ֆրանս.* (marrube *բառի տակ). Հիւս. § 1739 յիշում է նաև* հոտոսան, հոտսան *ձևերը. իսկ Արթինեան, Ամէն տարեց. 1921, 183 մի Բժշկարանում իրար հոմանիշ դրուած գտնելով «փրեմի տակ, վարսամն, հօտոտայ, սուսամբար, նամամ», համարում է «սուսամբար,* tanacetum balsamita L»:

ՀՕՐԱՆ *«մի տեսակ բոյս. լտ.* staphysaria» *Բժշ. ունի միայն Հիւս. § 1759։*

+**ՀՕՐԱՆ** *(ի-ա Հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «այծի, ուլի կամ նաև ոչխարի հօտ, երամակ» Երգ. դ. 1. Փիլ. քհ. 194. Պիտ. Նար. 114. Մխ. առակ. «փարախ» Փիլ. Օրբել. Հրատր. էմ. էջ 175. գրուած է նաև* հորան *Մագ. թղ. 121։—Այս բառից է ըստ ՆՀԲ* հօրան լինել *«ուրախանալ, խայտալ, այծի պէս ցատկոտել» Ոսկ. երր. իգ. 526, որ Վարդանեան ՀԱ 1914, 327 սրբագրում է* յորան *և կցում* յորանալ *«յղփանալ, լիանալ» բային։*

=Բնիկ հայ բառ. կազմուած է -ան *հատաքական մասնիկով՝* *հատր>*հօր *արմատականից, որ առանձին չէ գործածուած։ Այս* *հատր *ձևը դալիս է հնխ.* *pā-tro-*ից, որ կազմուած է հնխ.* pā- *«պահել, արածացնել» արմատից,* -tro- *մասնիկով. (մասնիկի համար հմմտ.* արօր<*aratro-, աղօրի<*alatro-*). Pā- արմատը գործածական է յատկապէս հօտի և հովիւի համար. հմմտ. սանս.* pāti *«պահել, պահպանել»,* paçu-pa *«նախրապան»,* avi-pālá *«ոչխարի հովիւ»,* gō-pāla *«կովարած»,* լտ. pāicō, pāvī *«կովերն արածացնել»։ Նոյն արմատի աւելի հետաւոր ժառանգներն են յն.* πῶυ, պրս. pāda *«հօտ», ինչպէս նաև հյ.* հօտ՝ *որ աճած է* d*-ով* (Walde 564, Boisacq 409, Ernout-Meillet 702, Pokorny 1, 347 *և* 2, 72):

Հիմնք. յն. χοῖρος *«պարոսների են խումբ» բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 30 լտ.* caper *«այծ», հհիւս.* hafr *«քոշ», իռլ.* caera *«ոչխար» բառերի հետ. Հայերէնի մէջ* -ան *ընդունում է մասնիկ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. 26: *Թիրեաքեան, Արիահայ բռ. 254 զնդ.* ūra *«հօտ» բառից։ Վերի մեկնութեան պատճառով պատահական պէտք է համարել արաբ.* هور haur *«ոչխարի կամ այծի հօտ» (Կամուս, Քրք. Քրգմ. Բ. 155)։*

***ՀՕՐՈՒՏ** *(գրուած է նաև* հօրօտ, հօրուտ, հարուտ, խօրօտ*) «մի տեսակ գեղեցիկ և անուշահոտ ծաղիկ է». յիշուած է սովորաբար* մօրուտ *ծաղկի հետ. այսպէս՝ «Հօրուտն և մօրուտն և մանուշակն». Ագաթ. «Հօրուտն և մօրուտն և ասպուզանն». Մխ. առակ. այս-*

պէս նաև Գաղիան. Բժշ. Սալաձ.։—ՆՀԲ և ՋԲ համարում են «թուիֆիա չիչէյի, giacinto tuberoso կամ giacinto indiano», Շէհրիմանեան «hyacinthus orientalis», Տիրացուեան, Contributo § 359 primula auriculata Lam. ըստ Գաղիան. «եղնբորոս» (տե՛ս ՀԲուս. § 1761).—Նորայր, Բանաս. 1901, 119 ցոյց է տալիս որ hormn և mormn միասին մէկ բառ են կազմում և միևնոյն ծաղիկն են նշանակում։

=Իրաննան դիցաբանութիւնից հայոց փոխանցուած բառեր են. հնագոյն ձևերն են զնդ. haurvatāṭ (որի կրճատ ձևն է haurvaṭ) և amərətāṭ. առաջինը՝ որ բուն նշանակում է «լիութիւն, առատութիւն» (արմատն է զնդ. haurva, սանս. sarva, լտ. salvus, յն. ὅλος =հյ. ողջ), ջրի պահապան իգական մի ոգի է, ընկճում է քաղցը, տալիս է մարդոց բարեկեցութիւն։ Երկրորդը՝ որ բուն նշանակում է «անմահութիւն», բոյսերի պահապան իգական մի ոգի է. ընկճում է ծարաւը, մարդկանց երկար կեանք է պարգևում։ Զնդ. ձևերը պհլ. xōrdat amardat ձևերից անցնելով՝ դարձան պրս. خرداد xurdād «անուն հրեշտակի միոջ, որ վերակացու է հոսական ջուրց և ծառոց. 2. մայիս ամիսը», և مرداد murdād «յուլիս ամիսը»։ Պարսիկներից անցնելով Արաբներին, սրանք ստացան هاروت Hārūt և ماروت Mārūt ձևերը. այս անուններով նշանակւում են Ղուրանում (Բ. 96) այն երկու հրեշտակները, որոնք կախարդութեամբ էին պարապում և Աստուած վռնտեց նրանց արքայութիւնից և Բաբելոնում մի ջրհորի մէջ գլխիվայր կախեց։ (Ուսուցանէր մարդկան սատանայ զմոգութիւն և զգիտութիւն հրեշտակաց երկուց՝ Հարուտի և Մարուտի, որք դատապարտեցան բնակել ի Բաբելոն)։ Սրանց վրայ պատմուած միւս առասպելները տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 327։ Հայոց մէջ պատմուած առասպելը յայտնի չէ. բայց անշուշտ մեր մէջ էլ հօրոտը ջրի ոգին էր և մօրոտը բոյսերի ոգին, որոնք յետոյ ծաղկի անուն դարձան։

Այս երկու առասպելական էակների վրայ առանձին մենագրութիւն ունի Darmesteter, Paris 1875: Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Կ. Կոստանեանց, Հայոց հեթ. կրօնը, Վաղարշապատ 1879, էջ 33։ Նոյնը յետոյ Stackelberg WZKM 12, 244: Տե՛ս նաև Աբեղեան, Arm. Volksglaube, էջ 57, 62, Նորայր, Բանաս. 1901, 119։ Վերջինը, ինչպէս նաև Pedersen Հայ. դր. լեզ. 219 դնում են հայր և մայր բառերից։

ԳԻՒՐ.—Մշ. հօրդ-մօրդ, խօրդ-մօրդ, Ալշ. խօրդ-մօրդ (ծաղկի անուն է). իսկ Սլմ. խօրմ-մօրմ գործածւում է իբր ած. ինչ. խօրմ-մօրմ աղջիկ է. խօրմ-մօրմ մեծաձա՞ս.—այս ձևափոխութիւնը տեղի ունեցած է անշուշտ խորոտ «գեղեցիկ» բառի հետ շփոթուելով։

ՓՈԽ.—Քրդ. خورد مورد xorud-morud «մի տեսակ ծաղիկ է»։

2

ԶԱՓԹՏել *«ծերութիւնից դողդոջել, վատ դիր գրել» Սարգ. յիշատ. նոր գրականում* **ձաբռտուտ** *«վատ գրուածք, ցնդաբանութիւն»։*

=Անշուշտ կազմուած է **-ռտ-** *սաստկացուցիչ մասնիկով. ինչպէս* **վազվռտել, խօսվրռտուտ, ճաթռտիլ** *ևն. ուստի պարզ արմատն է* ***ձաբել**, ***ձաբ**:

ՆշՒ «թերևս ի **ձայնիցս** *ափ, ծափ, որպէս խարխափել»։*

+**ԶԱՓ**, ու *հլ. «հաւի, թռչունի կամ չորքոտանու ձագ» ՍԳր. «ճնճղուկ» Յոր. խ. 24, Ղկ. ժբ. 6, 7 (յետնաբար կայ* **ձագուիճ** *կլիմաք.). միջին հյ.* **ձագ** *նշանակում է «թռչուն», ինչպէս ունին Քուշ. 43, Մխ. աս. 29—31. այս արմատից ունինք* **ձագս հանել** *«թուխս նստիլ» ՍԳր.* **ձագախառն** *Ես. կ. 8.* **ձագասնոյց** *Պիտ.* **ձագասնիլ** *Փիլ.* **ձագարան** *Եպիփ. բարոյ.* **ձագացեալ** *Ոսկ. ես. նմանութեամբ փոքր բանների համար ասուած. ինչ.* **ձագ մատն** *«ճկոյթ» Ոսկիփ. (գրուած* **ձագ մատն** *Տաթև. ամ. 475).* **կարասձագ** *«փոքր կարաս» Վստկ. 114.* **հաւձագ** *Մխ. բժշ. (Քաջունի Գ. էջ 147 ունի* **ձագուռ** *«վռհակ»)։ Սրանից են նաև մի քանի բոյսերի անուններ. ինչ.* **ձագախոտ** *կամ* **ձագխոտ** *(գրուած նաև* **ծագախոտ***)* «erysimum graecum Boiss. et Heldr.» *(ըստ Տիրացուեան,* Contributo § 149), **ձագի դեղ** *«լտ.* melissa», **ձագի լեզու** *«լտ.* lingua avis» *(տե՛ս ՀԲուս. § 1762—4)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'hāg²h- *«ձագ. յատկապէս թռչունի ձագ» ձևից, որի միւս ժառանգներն են սոգդ.* zāk *«տղայ, սերունդ», պրս.* *zāk *(որ աւանդուած չէ, բայց նրանից են արաբ.* زاق zāq *«ձագ», ասոր.* ܙܓܐ zagā *«հաւի ձագ», վրաց.* ზაქი *զաֆի «ձագ, յատկապէս գոմէշի ձագ» ըստ Ջուբինով² 515), ալբան.* zok, zogu, zogne *«թռչունի ձագ»* (Pokorny 1, 531):

ՆշՒ «իբր **ծագ** *կամ* **ձուակ, ձուիկ** *կամ ձայնող* **ճա՛կ, ճի՛կ»**: Lag. Gesam. Abhd. 41 *համեմատեց վերի պրս. և ասոր. ձևերի հետ։ Տէրվ.* Altarm. 54 *և Նախալ. 100 զնդ.* yavān, *պրս.* jivān, *լտ.* juvenis *են ձևերի հետ։ Հիւնք.* **ծագ** *բառից։ Հիւբշ.* Arm. Gram. 185 *դնում է իրանեանից փոխառութիւն։* Pedersen KZ 36, 338 *իբր բնիկ հայ միացնում է ալբան.* zog *«թռչուն» բառին, առարկելով թէ իրանեան փոխառութիւն լինելու դէպքում* **ձ**-*ի տեղ սպասելի էր* **զ** *կամ* **ժ**։ G. Meyer, Alb. Stud. III 18 *և* Wiedemann BB 27 (1902), 203 *ալբան.* zok, zogne *«թռչունի ձագ»։ Մառ.* ИАН *1913 422 ասոր.* zaqā *և պրս.* zāg *ձևի հետ միասին յարեթեական արմատից. համմտ. մինգր.* **ufnuu**, *սվան.* **ագյաի** *«որդի»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 191 պհլ.* zāk *«ծնեալ» և հյ.* **ծագ** *«ծայր» բառերի հետ։* Sigurd Agrell, Zwei Beiträge zur slav. Lautgeschichte, *էջ 28 լիթ.* žagata *և լեթթ.* fchagata *«կաչաղակ» բառերի հետ, որ ընդունելով* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 100, աւելացնում է նաև լեթթ.* schadsināt *«շաղակրատել», schagstēt «հեծկլտալ», լիթ.* žagsėti *«հեծկլտալ»,* žvageti *«ճռնչել, աղմկել», օսս.* zäγun *«ասել. խօսել» ձևերը. բոլորը միասին դնելով հնխ.* g'hagh- *բնաձայն արմատից։ Մառ,* Яф. сбор. 1, 63 *ալբան.* zog

«վառեակ»։ Պատահական նմանութիւն ունի պրս. چاغ zāγ «ագռաւ»։

ԳԻՒ.—Ալշ. խրբ. կր. Մշ. Ննխ. Սեբ. Սչ. ձ'ագ', Ախց. Երև. Ջղ. ձ'աf, Տփ. ձաf, Ասլ. ձ'աf, ձ'ա*, Ոզմ. ձ'mf', Պլ. Ւ. ցաf, Ղրբ. Մկ. Վն. ծmf', Սլմ. ծmկ', Տիգ. ցmf, Շճ. ձ'օգ', Զթ. ծօգ', ձ'ոգ', Սվեդ. ձ'իւգ'.—*բարբառներում հարստացած է նորանոր նշանակութիւններով. այսպէս են «գոմէշի նորածին ձագ. 2. վառեակ. 3. ճնճղուկ. 4. թռչուն. 5. անութի տակ դրուած կարկատան. 6. փէշով վերարկու. 7. պարեգօտի քղանցքի օժանդակ մասը. 8. թռչնաձև մի ոգի»։* Նոր բառեր են ձագուկ (Ակն. ձ'աfուգ), ձագամայր, ձագատուն, ձագեար, ձագխեղդ, ձագնօց, ձագլէք, ձագկորի, ձագտապակ, ձագսիւն, ձագռոխլ, ձագփաթաթ։

ՓՈԽ.—*Հայերէնից փոխառեալ ձև է քրդ.* تساق tsak «*գոմէշի ձագ*», *որ ունի* Justi, Dict. Kurde, *էջ 100. (բայց ի՛նչպէս պէտք է կարդալ* ts *խումբը)։ Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայից է գնում ալբան.* zok, zogou «*թռչունի ձագ, թռչուն*», *որ ի գուր է։— Հայ գւռ. ձագ «հագուստի վրայ այս կամ այն մասը» բառից փոխառեալ է ըստ իս նաև կապադովկ.* záka, *որ* Karolides, Γλ. συγκρ. 82 *մեկնում է «ὁ κόλπος τοῦ ἐνδύματος» (հագուստի ծալք) և ասիլի մանրամասն էջ 162 «ὁ κόλπος ὁ σχηματι-ζόμενος εἰς τὰ Ἀσιατικὰ ἐνδύματα ἄνωθεν τῆς ζώνης περὶ τὸ στῆθος» (ասիական հագուստի վրայ, գօտուց վերև. կրծքի շուրջը շինուած ծալք)։ — Այս բառը* Karolides *հյ. ծոց և յն. σάκος «խորդ, բաղիքի պէս կոշտ կտորեղէն» բառերին է կըցում, մասամբ առաջնորդուելով նրանից, որ յն. κόλπος նշանակում է «ծոց» և «հագուստի ծալք»։*

ՁԱԳԱՐ (ի–ա *հլ. ըստ* ՆՀԲ, *բայց առանց վկայութեան*) «*ձագար, խունի*» *Ագաթ. Ճառընտ. որից* ձագարաձև *(նոր բառ).—*ՀԲ *ունի նաև* ձագառ *ձևը, որ յաճախ ասիլի գործածական է Արևմտահայ գրականութեան մէջ։*

ՆՀԲ *լծ.* ծակ *և* ձագու *բերան։ Դ. Սարգսեան, Բիւր. 1898, 483 արմատը գնում է* ար «*ճամբայ*», *որից նաև* արահետ, հետք, արատ *են։ Պատահական և միայն մօտաւոր նմանութիւն ունի վրաց.* ბაგრი «*ձագար*»։

ԳԻՒ.—*Ախց. Կր. Մշ.* ձ'ագ'առ, *Հճ.* ձ'ագ'գ'ուր, *Սվեդ.* ձ'ոգ'գ'ուր, զաfար, *Խրբ. Սեբ.* զաfար, *Տիգ.* զաfառ. *իսկ Տփ.* ձաբրի *փոխառեալ է վրացերէնից։*

ՁԱԳԻ «*չափի*». *այսպէս ունի Բառ. երեմ. էջ 188. ի՛նչ լինելը յայտնի չէ։ Տե՛ս և* ձակել։

ՁԱԽ, ու, ո *հլ. (բց. ի ձախմէ) «ձախ» ՍԳր. Ագաթ. Մծբ. որից* ձախակուղմն *ՍԳր.* ձախլել «*խօսքի միտքը ծուռ հասկանալ*» *Սարգ. հանգ. (լ-ի համար հմմտ. աշխ.* ձախլիկ «*ձախով գործող*»). ձախաճալ «*վատանալ, գործը վատ գնալ*» *Վրդն. աւետ.* ձախող *Եւս. պտմ. Եփր. Թգ.* ձախողաճ *Եփր. ծն.* ձախողիլ *Բուզ. Ոսկ. ես.* ձախողութիւն, ձախուղ *(նոր բառեր),* ձախուղութիւն *Արիստ. առաք. վերջիններըբխում են այն ընդհանուր նախապաշարմունքից, որով ձախը համարւում է անյաջողութեան, իսկ աջը յաջողութեան նշան. հմմտ.* յաջող, յաջողիլ, յաջողակ, *գւռ.* գործը աջ երթալ «*յաջողիլ*», գործը ձախ երթալ «*չյաջողիլ, անյաջողութեան մատնուիլ*»։

=*Մեկնութիւնը անծանօթ է։ Հնդևրոպական լեզուների մէջ «ձախ» բառը ենթարկուած էր* tabou-*ի և այս պատճառով է որ այս գաղափարի համար չկայ նրանց մէջ մի և ընդհանուր ձև։ Գլխաւորապէս երեք անջատ խմբակներ կան. 1. սանս.* savyá-, *զնդ.* haoya-, *հսլ.* šuyĭ.— *2. հսլ.* lĕvŭ, *յն.* λαιός, *լտ.* laevos.—*3. յն.* σκαιός, *լտ.* scaevos *և լիթ.* kairẽ? *սրանցից ջոկ կան նաև մասնաւոր ձևեր և գարձուածներ, որոնք ցոյց են տալիս թէ ինչպէս ամէն մի լեզու աշխատել է ուղղակի չարտասանել այս բառը և կողմնակի միջոցներով անուանել. ինչ. յն.* εὐώνυμος, ἀριστερός, *զնդ.* vairyāstara- *են. այսպիսի կղզիացեալ մի ձև է նաև հյ.* ձախ *(տե՛ս* Meillet, Interdictions de vocabulaire, *էջ 18)։*

Klaproth, As. polygl. *էջ 103 պրս.* چپ čap *հոմանիշի հետ* Brosset

JAs. 1834, 369 *են և Ջուբինով համեմատում են վրաց.* մարցխենա «ձախ» *բառի հետ։ (Համմտ. վրաց.* մարջվենի «աջ», *ուր նիչ մար- մասնիկ է, արմատը կլինի* -ցխ(ենա) «ձախ», *որից և* մարցխի «կորուստ, վնաս, անյաջողություն», *ինչպէս հյ.* ձախորդութիւն *կամ* ձախողութիւն՝ ձախ *բառից)։ Հիւնք, Թրք.* սաղ «աջ» *բառի հետ։* Karst, *Յուշարձան 415 մոնգոլ.* dogo-lon, *բուրեաթ.* dogo-l, doku-l, *թունգուզ.* dokolok, *մանջու.* doxolon «կաղ» *բառերի հետ?—Մառ* ИАН *1913, 425 վրաց. մար-ցխենա են ձևերի հետ՝ իբր յարեթական, որի մասին խօսում է նաև Ղափանցեան, Հարեթ. լեզվ. էջ 22.* Petersson LUÄ 1916 *էջ 8—9 (չեմ տեսած) հնխ.* g'hwel- «ծռիլ, շեղիլ» *արմատի տակ. համմտ. ռուս.* zýga «անհանդարտ մարդ», *լեհ.* zy-z *լիթ.* žvatras «շիլ նայելը» *են (տե՛ս* Pokorny 1, 644):

Գիւռ.—Տփ. ձախ, *Ալշ. Ախց. Երև. Մշ. Ջղ. Սեբ.* ձ'ախ, *Ոզմ.* ձ'ոխ, *Մկ. Սլմ. Վն.* ծոխ, *Գոր.* ծո՛խի, *Ղրբ.* ծէ՛խէ, *Ագլ.* ձէօճ.—*Նոր բառեր են* ձախուիլ, ձախիլ, ձախլիկ, ձախլրկանի, ձախախնձոր, ձախակի, ձախուծուռ։

ՁԱԿԵԼ «լափել». *գիտէ միայն ՓՒ յաւել. անստոյգ բառ.—կարծեմ թէ նոյն է վերի* ձագի «չափիլ» *ձևի հետ։*

ՁԱՁԵԼ «հաւաքել, ժողովել, դիզել» *Թր. քեր. Հին բռ. Սասն. էջ 55. որից* ձաձել «բոլորովին լի, հոծ, թխկած» *Մագ.* բագձաձել «բովանդակել, ամփոփել, պարագրել» *ՃՀ. կաթ. Նիւս. կազմ.* բագձաձումն *Սկևռ. լմբ.* բագձաձական *Պորփ. Երզն. քեր.* բագձած *Հին բռ. գրուած է նաև* ձաճձել, ձայճձել, *որից* ձաճձեալ «ժողովեալ» *Մագ. գամագռ. (ՀԱ 1911, 719)։—Բառ. նրեմ. էջ 188* ձաձել *մեկնում է «իմանալ, առնիլ, ճպկիլ»։*

ՆՀԲ բաք *բառից։*

+ՁԱՂ (ու *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «ծաղր կամ ծաղրելի» *Ոսկ. ես. 74, 181 և երր. Եփր. թգ. 369. Մծբ. 340—341. որից* ձաղել «ծաղրել, հեգնել, խաղք ընել» *ՍԳր. Ոսկ. մթ. և երր. Եւս քր. Սեբեր. «յաղթել, նուաճել» Եւս. քր. բ. 276, 268.* ձաղաճ *«ծաղր» Երեմ. ժա. 18. Ոսկ. մ. ա. 18, բ. կոր.* ձաղակոծ *Ոսկ. մ. գ. 5.* ձաղածաճակ *(նաև գրուած* ծաղածաճակ) *Ագաթ.* ձաղադէմ *Փարպ.* ձաղիչ *Մծբ.* ձաղութիւն *կամ* ձաղումն *Ոսկ. Եւս. քր.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* g'hl- *ձևից, որ ստորին ձայնդարձն է* g'hel- *արմատի. համմտ. յն.* χλεύη «ծաղր, կատականք», χλευάζω «ծաղրել, կատակել», *հիսլ.* glaumr «խինդ, աղմկալի ուրախութիւն», *հհիւս.* glý «խինդ», gleyma «ուրախ լինել», *անգսք.* glēam «կատակ, խաղ», glēo, glīewes «խինդ, աղմկալի ուրախութիւն», *լիթ.* glaudas «զուարճութեամբ ժամանակ անցկացնել», glaudi «փայփայանք», gláudoti «կատակել», *հսլ.* glumiti «կատակել», glumĭci «խեղկատակ», *ռուս.* глумъ «խաղ, կատակ» *են. բոլորի պարզ արմատն է* g'hel-, *աճած ձևը՝* g'hleu- (Boisacq 1062, Berneker 308, Trautmann 91, Pokorny 1, 660).—*Հիւբշ.* IF Anz. 10, 48?

ՆՀԲ ծաղր *և* խաղ *բառերի հետ?* Windisch. 13, 18 *նոյն ընդ* ծաղ=*յն.* γέλως։ Müller, Kuhn's u. Schleich. Btrg. 3, 253 ծաղ *բառի հետ։ Հիւնք.* ծաղր *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL 10, 280:

+ՁԱՂԿ, ի–ա *հլ. (յետնաբար* ի, ո *հլ.) «գաւազան» Եւս. պատմ. «ճիւղ» Մխ. անեց. էջ 35 (յդ. սեռ.* ձաղկից). «ծեծ, գանակոծութիւն» *Եղիշ. առաք. 349. Ճառընտ. «ուղիղ կանգնած, ցցուած, տնկուած» Տաղ. Նիւս. կազմ. Բժշ. Վստկ. 198, 214. որից* ձաղկել «ծեծել» *Բ կոր. ժա. 25.* ձաղկիլ *Եւս. պատմ. էջ 75.* ձաղկաճեր *Սեբեր.* = ձաղկամազ *Պզատ. յեսթ. 11.* ձաղկաճ *Ոսկ. Բ. կոր. (գրուած է* ձաղաճ) *ՃՀ. կթ.* ձաղկումն *Երզն. լս. (Ներբ. յորդ. 41).* բարձրաձաղկ *Սարգ. յուդ. Բ. էջ 649. Ոսկ. ճառք, էջ 538։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* g'halg- *ձևից. սրբրանից են նաև լիթ.* žalgà «ձող», *լեթթ.* žalga «բարակ ու երկար ձող», *գոթ.* galga «ցից, խաչ», *հիսլ.* galgi «կախաղան», gelgia «ձող, ճիւղ», *անգսք.* gealga, *հրդ.* galgo «կախաղան, խաչ, հորից ջուր քաշելու ա-

նիւ», գերմ. Galgen, հոլլ. galg, անգլ. gallows «կախաղան» ևն. գերմանական ձևերը գալիս են հնխ. g'halgh- ձևից. բայց թէ՛ g'halg- և թէ՛ g'halgh- թերևս աճած են հնխ. g'hel- արմատից, որի վրայ տե՛ս ձող (Pokorny 1, 540, Trautmann 364, Kluge 162): —Հիւբշ. 469:

ՆՀԲ ձողիկ կամ ծղիկ բառից. լծ. ցախ: Հիւնք. ծաղիկ բառից: Ուղիղ մեկնեց նախ Bugge, Btrg. 18, որ և պատահական է համարում վախի šolkh, մոնգոլ. salagha, թրք. salghyn ձևերը: Նոյնը կրկնում է Müller WZKM 5, 68 և SWAW 136 (1897), էջ 21: Մառ ИАН 1913, 424 հյ. ցախ և սվան. ցխեկ «անտառ» են բառերի հետ:

ԳԻՒ.—Շատ տեղ պահուած է ձաղկել «բարակ փայտով բուրդը ծեծել՝ թաւացնելու համար». այսպէս են՝ Ախց. կր. ձ'աղկել, Ալշ. Մշ. ձ'աղգել, Սեբ. ձ'աղգել, Խրբ. ձ'աղգիլ, Սվեդ. ձ'ողգիլ. կայ նաև ձաղաել Ալբս. Նոր բառեր են ձաղկիչ, բուրդձաղկիչ, ձաղափիչ:

ՁԱՄԱԳՈՒՐ «անօթի, շատ քաղցած». ունին միայն ՀՀԲ և Բառ. երեմ. էջ 188. սրանցից առել է ՓԲ և գրում է ցամաքուր:

ՓԲ մեկնում է «ցամաքեալ ի կերակրոյ»:

ՁԱՄԱՓ «քսու, թրք. ղամազ». ունի միայն Բառ. երեմ. էջ 188:

ՁԱՄՁԱՄ կամ ՁԱՆՁԱՄ «տգեղ, գարշ, զազիր». Հին բռ. (տես ՆՀԲ ձանձել). անբառոյգ բառ:

ՁԱՅՆ, ի հլ. «որևիցէ ձայն, հնչիւն» ՍԳր. Եփր. ծն. «երգի կամ շարականի եղանակ» ՍԳր. «բառ» Սահմ. «խօսք, լեզու» Ոսկ. յհ. բ. 39. որից ձայնել Բ. Թագ. ի. 5, 43. Եփր. Թգ. ձայնակից Գ. մակ. դ. 6. ձայնակցաբար Ոսկ. երբ. Սեբեր. ձայնաւոր Իմ. ժբ. 10. Առակ. բ. 1. Եւս. պտմ. ձայնաւոր Բ. մակ. դ. 14. Ոսկ. երբ. Եւս. քր. ձայնարկու ՍԳր. Ոսկ. յհ. բ. 12 և փիլիպ. բարձրաձայն Ագաթ. Յուդթ. ժգ. 17. մեծաձայն ՍԳր. բազմաձայն Ագաթ. ձայնալուր Մ. Մաշտ. 274 բ. նամարձակաձայն Ոսկ. մ. բ. 18. խառնաձայն Ա. կոր. ժգ. 8. ևն: Նոր բառեր են՝ ձայնագիր, ձայնագրութիւն, ձայնագիտութիւն, ձայնաբանութիւն, ձայնախօսութիւն, ձայնալար, ձայնաչափ, ձայնամփոփ, ձայնագրագէտ, բաղաձայնայանգ, բաղաձայնաւոր, ձայնաւորայանգ, ձայնեղ, բառաձայն, ձայնախումբ ևն:

ՆՀԲ լծ. լտ. sonus: Peterm. 23, 33 սանս. gāi: Justi, Zendsp. 103 սանս. և զնդ. gā «երգել» բայի հետ: Տէրվ. Նախալ. 81 հնխ. ghu «գոչել, կոչել» արմատի տակ գնում է ի մէջ այլոց նաև ձայն (<*ձուան)=սանս. hvāna, հսլ. zvonŭ: Նոյնպէս է նաև Müller, Armen. VI (1890): Bugge BB 18 (1892), էջ 172 ալբան. zạni և հսլ. zwonŭ «ձայն»: Meillet MSL 9, 54 սանս. hvā- «գոչել» արմատի հետ: Հիւբշ. Arm. Gram. 469 աւելացնում է սրանց վրայ նաև սանս. hū «գոչել», háva- «գոչումն», hávana- «կոչելն», զնդ. zbā, zū «գոչել», zavana- «գոչիւն», բայց այս բոլորը անյարմար է գտնում՝ հայերէնի այ ձայնի պատճառով: Հիւնք. լտ. sonus: Pedersen KZ 36, 338=Նպաստ, էջ 7 կցելով դարձեալ հսլ. zvonŭ, ալբան. zε «ձայն» բառերին, հայերէնի մէջ v կորած է գտնում: Նոյնպէս են նաև Wiedemann BB 27 (1902), 203, Lidén, Յուշարձան 384: Scheftelowitz BB 29, 44 հիւլ. gin «բերան» և հիսլ. gin «երախ» բառերի հետ: Մառ ИАН 1917, 328 վրաց. ձախիլի «կանչ»: Pokorny 1, 642 հսլ. zvonŭ, ալբան. zē, zạ են հոմանիշների հետ դրած է հնխ. g'hụen- «հնչել» արմատի տակ:

ԳԻՒ.—Ագլ. ձայն, Ննխ. Պլ. ձաե, Ակն. Հճ. Սեբ. Սչ. Սվեդ. ձ'աե (բայց Ակն. ձ'ԼՆԷլ), Բ ցաե, Ասլ. ձա, Խրբ. ձ'ոե, Տփ. ձէն, Հմշ. ձէն, Ալշ. Ախց. երև. կր. Մշ. Ջղ. ձ'էն, Տիգ. ցէն, Ջթ. ձէն, ձ'ոե, Ոզմ. ձ'են, Շմ. ծոն, Գոր. Ղրբ. Մկ. Մրզ. Սլմ. վն. ձէն:—Նոր բառեր են ձայնաւոր «տիրացու» (էնկիւրիի Թրքախօս հայերն ունին saynavor «ձայնաւոր (պատարագ)» Բիւր. 1898, 865), ձայնախիփի, ձայնխեղդ, ձայնկոխ, ձայնկտուր, ձայնհաս, ձայնողչէք, ձայնոտել, ձայնուիլ, ձայնս «ողբ», ձայնտուք «հրաւէր», ձայնաւոր,

ձայնիել «կանչել». կրկնական են ձայն-ձուն, ձայն-ձուկ, ձայն-ձոր, ձայնձնել, ձայնձնուիլ, ձայնձայնոց:

ՓՈԽ.—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է համարում ալբան. ze, zan «ձայն», որ բնիկ բառ է ըստ այլ դիտուններին:

ՁԱՆՁ. *արմատ առանձին անգործածական, ձևով և նշանակութեամբ էլ անստոյգ. գրտնըւում է միայն* fարաձանձ *(գրուած է նաև* fարձանձն, fարաձանձր, fարցանձ, fարաձունձ*) բառի մէջ, որ է «ուրց, խոռն, վայրի ծորիրին, որ աճում է քարերի մէջ», Բժշ. Ամիրտ. ըստ ՀԲուս. § 3179, Նորայր ՀԱ 1923, 344 և Բառ. երեմ. էջ 144, 330: Համմտ. նաև ձօնձ:*

ՀԲուս. անդ համարում է «միթէ քարաքո՞ս մի. ձանձախարիք բառին մասամբ զուգուած»: Ըստ իս աւելի յարմար է կցել ձանձ «ցորենի կճեպ ու յարդ», գւռ. ձանձ (Խրբ.) «ցորենի ցօղուն», ձանձ (Ռշտ. Մկ.) «կանեփի ցօղուն» բառին:

ՓՈԽ.—Վրաց. ჯარაժენძა fարաձենձա *կամ* ყარაძენძა ղ'արաձենձա *«մի տեսակ բոյս.* чернобыльникъ, шалфей, земляной ладанъ» *(Ջուբինով[2] 1327 և 1373. վերջին ձևի նշանակութիւնը անյայտ է. անշուշտ պէտք է միացնել առաջինի հետ):*

ՁԱՆՁԱԽԱՐԻՔ. բառս գործածուած է մէկ անգամ Ես. ա. 18. «Եթէ իցեն մեղք ձեր իբրև զձանձախարիքի, իբրև զձիւն սպիտակ արարից. և եթէ իցեն իբրև զորդան կարմիր, իբրև զասր սուրբ արարից». երկրորդ անգամ էլ ունի Մծբ. էջ 77. «Արիւն կարմրացաւ ի նոսա իբրև զձանձախարիքի»: Առաջին վկայութիւնը Եփր. ղևտ. 222 գրուած է հետևեալ ձևով. «Թէ եղիցին մեղքն ձեր իբրև որդան կարմիր և եթէ եղիցին իբրև զձանձրախարիքի, իբրև զձիւն սպիտակ արարից» (այստեղ գրուած է ձանձրախարիք, որ յիշում է նաև ԱԲ):—Առաջին վկայութեան ակնարկութեամբ են հետևեալ հատուածները. «Եթէ իցեն մեղքն իբրև զձանձախարիքի անլուանալի սեւութեամբ՝ իբրև զձիւն սպիտակասցին. և եթէ իցեն արեամբ չափ որպէս զներկած որդան ի գոյն կարմրութեան աննկանելի՝ իբրև զասր սրբեսցին». Նար. խր. 491.—Գործք քո իցեն յառաջագոյն իբրև զձանձախարիքի, սրբեսցիս իբրև զասր սուրբ. Կոչ. 327.—Թէ իցեն մեղք մեր գարշելի իբրև զձանձախարիքի սևացեալ և իբրև զյորդան կարմիր արեամբ մածեալ, իբրև զձիւն և զասր սպիտակ առնիցէ. Տաթև. ձմ. կր:—Ս. Գրքի եբրայական բնագրի մէջ բառիս դէմ գտնում ենք שני *šānī, որ մեկնւում է «որդնաբեր կաղնու* (quercus coccifera) *տերևների վրայից հաւաքուած որդան կարմիր ներկը* (coccus ilicis) *և նրանով ներկուած կտոր». յոյն թարգմանութեան մէջ գրուած է* φοινίκεος *«շառագոյն կարմիր», իսկ արաբն ունի «մուր կամ թանձրածուխ, ոմկ. իս, խաւրում»: Մեր հին մեկնիչները զանազան տեսակ են հասկացած այս բառը և զանազան իմաստներով գործածած.— այսպէս՝ Մագիստրոս հասկանում է «մուխ սև գոյն». Համմտ. Պղատ. տիմ. 143 «Կարմիրն ընդ սեւի և ընդ սպիտակի խառնեալ՝ (լինի) ծիրանի. և ձանձախարիքի՝ ընդ սոքօք խառնելով մանաւանդ բորբոքմամբ՝ շարախառնի սեաւ». յոյնն ունի «ἐρυθρὸν δέ δὸ μέλανι λευκῷ τε κραθὲν ἀλουργὸν ὄρφνινον δὲ, ὅταντούτοις μεμιγμένοις καυθεῖσί τε μᾶλλονσυγκραθῇ μέλαν»* (Platonis opera, Paris 1883, *հտ. II, էջ 231, տող 40), ուր ձանձախարիք բառի համապատասխանն է* ὄρφνινος *«մուխ գոյն» (մանաւանդ սևի, կարմրի և սպիտակի խառնուրդով՝ ըստ* Bailly, *էջ 1408 ա);—Ուրիշ հեղինակներից ունինք «շառագոյն կարմիր» Ածաբ. յայտն., «արմատի գոյն» Վանակ. յոր., «այծի մաղ» Անան. յովն. (իմա՛ Անան. թրգ. էջ 9), «ծուխ մածեալ յառաստաղս» Դէ. ես. Լծ. կոչ. Տօնակ.—իսկ Հին բռ. գրում է ձանձախ «սակաւակարմիր», ձանձախարիք «վատ կարմիր, կարմրագոյն». արդի գրականում ընդունուած է «մուր, ծխի սևութիւնը, տեղ. խաւրում»: Երկրորդ վկայութեան մէջ (Մծբ.) ասորի բնագիրն ունի՝*

=ասոր. ܙܰܟܘܪܝܬܳܐ zəxōrīθā «coccum, որդան կարմիր», որից փոխառեալ է՝ թարգ-

մանուքեան ժամանակ՝ հայ տառադարձութեամբ։ Ասորի բառի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Ս. Գրքի մէջ էլ բառս հին ասորական թարգմանութիւնից է մնացած և նշանակում է «որդան կարմրի ներկը կամ գոյնը»։ Ասորի բառը ըստ Jensen՝ *առնուած է բարել.* in zaxuritu *«կարմիր գինի» ձևից։ Հայերէնի մէջ ասոր.* zəxōrīθā *ձևի դէմ սպասւում էր *ձախարիթ. անասոյգ է մնում ձան- մասը։—Հիւբշ.* IF 19, 478:

ՆՀԲ եբր. սանի կամ շանի «կրկին ներկեալ, կրկնաթաթախ» և քաղդ. ասոր. ձախօրիթ, ծանարիթա «ներկ կարմիր» բառերից բարդուած։ Հիմնք. պրս. գիթար «մրուր ձիթոյ» և հյ. խանձ բառերից, որով ձանձախարիթ նշանակում է բուն «այրեցած մրուր ձիթոյ»։ Վերի ձևով մեկնից Հիւբշ. IF 19, 477—8, *Թրգմ. ՀԱ 1907, 251։*

ՁԱՆՁԻՒ *«ձանձրալի, տաղտկալի. 2. ձանձրոյթ, տաղտուկ» Սիր. իմ. 16. Ասկ. եբր.— որից* ձանձրանալ *ՍԳր. ձանձրացուցանել ՍԳր. Ագաթ. Փարպ. ձանձրալի Եղիշ. ձանձրանալի Ասկ. յհ. ա. 10. ձանձրագոյն Ասկ. մ. բ. 10. ձանձրոյթ Ասկ. յհ. ա. 3, 11, 26. ձանձրացկոտ Նեղոս. անձանձիր Մծբ. անձանձրոյթ Փարպ. ձանձրամիտ Ագաթ. 232. ձանձրախորհուրդ Ագաթ. 312. համաձանձիր (?) Մծբ. 385 (ասորին ունի «հետազօտիչ», ըստ Տաշեան, Ուս. դաս. հայ. 652)։*

ՆՀԲ մեկնում է «ծանրանալ իմն և բանձրանալ ոգւոց»։ Հիմնք. անձրև բառից։ Մառ ЗВО *5, 312 ծանր բառից է հանում՝ ձ յաւելուածով՝ ն և ր ձայնների միջև. նոյնպէս* Грам. др. арм. *էջ 32 հին ձևը դնում է *ձանիր, ձ յաւելուածով։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* زان zān *«ձանձրոյթ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. էջ 645)։*

Գիմ.—Ալշ. Մշ. ձ'անձրանալ։

+**ՁԱՈ** *«ծուռ, ագեղ, կոշտ» Ճառընտ. «անշնորհք» Անան. մեկն. քեր. 153, Նչ. քեր. որից* ձառաղէմ *«խոժոռ, անշնորհք դէմքով» Թր. Նչ. և Երզն. քեր. Առաք. պտմ. 163. (Քաջունի Գ. 147 ունի և ձառմուկն «մի տեսակ մուկ», տճկ. fէor սըչան, որ է «կոյր մուկ»)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'hṛs- արմատից. համմտ. սանս. harṡatē, hṛšyati *«պրկուիլ, մաղերը ցցուիլ, փշաքաղուիլ», զնդ.* zaršayamna- *«փետուրները տնկուած», zarštva- «քար», χέρσος, χέρρος «չոր, կարծր, պինդ, ցամաքային, սահրջ», χερσοῦν «անմշակ՝ կորդ դարձնել», χήρ «ոզնի», լտ.* horreo *«փշաքաղուիլ», hirsutus «փշաքաղեալ, կոպիտ, բիրտ, մազմզուտ», hirtus «կոշտ, անհարթ», ēr «ոզնի», հիւլ.* garb, *կիմր.* garw *«կոպիտ, կոշտ, բիրտ», բրբտ.* garu *«կարծր, անգութ» ևն* (Boisacq 1056, Walde 257. Pokorny 1, 610):—*Ա.ճ.*

Scheftelowitz BB 28, 298 *սանս.* hira *«երակ», զնդ.* zara *«կապ», հբգ.* garn *«թել» բառերի հետ, որ կրկնում է* Boisacq 1066, *միացնելով յն. χορδή «աղիք», ալբան.* zorε *«աղիք, փորոտիք» ևն բառերի հետ։* Petersson, Arische u. Arm. Stud. 72 *մերժելով այս՝ դնում է հնխ. g'hu̯r-so- ձևից. համմտ. սանս.* hvárās- *«կորացում»,* hvárā *«օձ», լիթ.* žvilti *«ճօճուիլ» ևն բառերի հետ։ Երկուսն էլ՝ հյ. ձառ հասկանում են «ոլորուն, գալարուն», ինչ որ ճիշտ չէ։*

ՁԱՒԴԱԼ *«ծեծել, յանդիմանել, սաստել». անասոյգ բառ, որ ունի Ասկ. պօղ. ա. 176, 742 իրարից տարբեր ձևերով. «Եւ թէ յաշխարհաւանդ կապելանոցան և ի կրպակս անխտիր մտանիցին, չձառգեմմ՝ չածեմք ի խրատս. Զարարս ծախեն և զինչս վատնեն, ձառագղեն (կամ ձեռագղեն), ձեռակոծ առնեն, թշնամանեն, զերեսս կոշկոճեն»։ (Տարբեր գրչութեան վրայ ազդած է ձեռակոծ բառը. այնպէս որ մի* var. *ունի ձառագղեն ձառակոծ առնեն, միւս.* var. ձեռագղեն ձեռակոծ առնեն):

ԱՔ մեկնելով «ձեռքով քաշել, արգիլել», մտածում է հանել ձեռ բառից։

ՁԱՐ *«խոյ, նոխազ». գիտէ միայն Քաջունի, Գ. 147. աղբիւրը անյայտ է։*

ՁԱՐ, ի *հլ. «մազ, մազեղէն» Մագ. Վստկ. 93. «ձարմաղ» Տաթև. մմ. 348 (ձարով մաղիմք զալիս). որից* ձարաձև *«մազակերպ»*

Մագ. թղ. 137. ձարի *«մազոտ, թաւ» Կոչ. 327.* ձարմաղ *«ձիու մազով շինուած բարակ մաղ» Ա.Բ.* ձարխոտ *«մի տեսակ բոյս,* capillus Veneris L, *հերք Աստղկան կամ* adiantum» *Բժշ. (այսպէս* Seidel 162, *իսկ ըստ Տիրացուեան,* Contributo § 517 erigeron acre L), դիւաձար *կամ* գետնի ձար *«ձարխոտ» Բժշ. (ըստ Տիրացուեան, անդ. § 8* asplenium trichomanes L):

ՆՀԲ նոյն ընդ հյ. հեր, *արաբ.* شَعْر ša'ar, *լտ.* crines: *Տէրվ. Նախալ. 56 յն.* χέρσος *«թանձր, կարծր», լտ.* hirsutus *«փշոտ, խոտուտհեր, ձաղկահեր» ձևերի հետ՝ հնխ.* ghars *արմատի պարզական* ghar *ձևից: (Այս արմատը ըստ իս տալիս է* ձառ, *որի մասին տե՛ս վերը):* Karolides, Γλ. συγκρ. 90 *կապադովկ.* čares *«բուրդ», յն.* κείρω *«խուզել», լտ.* caro *«բուրդ զգել», սանս.* çar *«ծեծել» բառերի հետ:* Patrubány SA *1, 17 և 2, 13 հունգ.* ször *«մազ», չեխեմ.* šar *«ձիու մազ», վօգուլ.* śar, sāyr *«մազ»:* Petersson KZ 47, 258 *և* Ar. u. Arm. Stud. 16, 26 *կրկնում է անկախաբար Տէրվիշեանի մեկնութիւնը, որ յիշում է նաև* Pokorny 1, 610: *Պատահական նմանութիւն ունին դնչ.* jar *«մազ, սանս», բոհեմ.* cir *«մազ»,* cirbari *«մօրուք», ասոր.* ܨܥܪܐ sa'rā *«մազ»:*

Գիւր.—Անկախ ձևով ունինք Տփ. ձար *«ձիու մազ», խրբ.* ձ'ար *(պահուած միայն Պապուդ ձարը հայհոյանքի մէջ), Ալշ. Երև.* ձ'ար *«ձիու մազ՝ մաղ շինելու համար», Երև.* ձ'ար *«խաղողի խիղը» (Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 410), Հմշ.* ձ'ար *«կաթի քամիչ», Խոյ* ծmr *«թռչուն բռնելու ցանց» (նոյն է* ձար *«թակարդ» բառը Արճէշում՝ ըստ Ամատ. Հայոց բառ ու բան 410).—նոյնից կազմուած են* ձար-ձար *Երև. «ցանցառ մազերով», ձարձրիլ Մկ. Մշ. Պլ. Վն. որ և* ձարձռուիլ *Վն.* ձաւձռուիլ *Վն. «շորը հնանալով մազերը թել թել դուրս գալ». բայց յատկապէս* ձարմաղ *«մազէ շինուած մաղ» (Ախց.* ձ'արմաղ, *Մշ.* ձ'արէմաղ, *Սեբ.* ձ'էրէմաղ, *Մկ.* ծmրmմաղ, *Սվեդ.* ցիւրմիւղ, *Ոզմ.* ձ'mրմաղ), *որից* ձարմաղել *«ձարմաղով մաղել»:*

Փոխ.—Լազ. ծարի *«ձիու պոչի մազ. 2. բաշով շինուած ցանց». վրաց.* ցარი *զարի,* ძარი ձարի *«բազէ որսալու ցանց»,* ვაჭარი գաճարի *«թռչուն բռնելու ցանց»:—*

ՁԱՐՐ *«մեծ մեծ, խոշոր». միջին հյ. բառ (որից 12 վկայութիւն է յիշատակում Յովնաննեան, Հետազօտ. նախն. ռմկ. Բ. էջ 446). Ջամէնդ աղա՛ ձարր. Ջինք ձարր աղա, մանարր մի՛ աղալ:—Նշանակում է նաև «կոշտ, անհարթ» (ճիշտ ինչպէս* խոշոր *ունի նաև այս երկրորդ իմաստը). այս իմաստով մէկ անգամ գտնում՝ եմ գործածուած Նչխ. մատ. 71 (ԺԴ դարից մի յիշատակարանում). Գլուխըն մեծ և հեր գլխոյն ուղղորդ և ձարր և աչն նեղ և ճակատն լայն և քիթն տափակ: (Այլ է* ձաղկ *«ցցուած, տնկուած մազեր»):*

ՁԱՐՁԱՏ *«թել թել բաժանուած. զղզուած» Վստկ. 125. որից* ձարձատ ածել *Մխ. բժշ. 52.* ձարձատել *«թել թել զգել, բզքտել» Վստկ. 86:*

=Բուի նոյն ընդ ձռնել, *որ տե՛ս:*

ՁԱԻԱՐ (ի–ա *հյ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «խաշած ու խոշոր աղացած ցորեն, հաճար կամ գարի» Վստկ. 207, 210. որից* գարեձաւար *Վստկ. 203, 213:*

Böttich. ZDMG 1850, 357 *և* Arica 79, 310 *սանս. զնդ.* yava, *պրս.* jav *«գարի», յն.* ζειά *«ցորեն», լիթ.* jawai *«ցորեն»:* Müller SWAW 38, 579 *սանս.* yava *և պրս.* jav: Pictet 1, 276 ցորեան *բառի հետ:* Justi, Zeridsp. 244. *զնդ.* yava *«գարի» բառի տակ: Այսպէս ունին նաև Տէրվ.* Altarm. 54. *Նախալ. 100,* Bopp *Համմ. քեր. 2, էջ 276:*

Գիւր.—Տփ. ձավար, *Ալշ. Երև. Մշ.* ձ'ավար, *Ոզմ.* ձ'mվար, *Մկ.* ծmվար, *Սրզ. Սլմ. Վն.* ծmվmր, *Սեբ.* զավառ. *(առաջիններդ նշանակում են «ձաւար», վերջինը «կովերին կեր տալու համար աղացած գարի»): Սրանից են* ձաւար ածել *«շատախօսել, դատարկաբանել»,* ձաւար հաւաքել *«բամբասել»,* ձաւար ձաւար դուրս տալ *«ցնդաբանել»,* ձաւրել *«ցնորիլ»,* ձաւրտել *«մեծ մեծ խօսիլ»:*

ՓՈԽ.—Քրդ. sawar «gruau, blé perlé» (Justi), zavar «seigle blanc» (Socin), savár «seigle, froment cuit» (Garzoni), sāvar «froment pilé, cuit et séché» (S. A. Rhea): *(Հայերէնի հետ նմանութիւնը նշանակում է նախ* Lag. Arm. Stud. § 1344, *յետոյ* Justi, Dict. Kurde 233, Kurd. Gram. 72):—*Թրք. գաւ. Կես. Տ. և Ուշ.* زاوار zavar *«ձաւար» (Բիւր. 1898, 712 և 1899, 798, Յուշարձան 329)։*

ԶԳՈՆ *«ցամաքեցում, չորացում,* siccatio». *ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լա.-Հյ. էջ 494 աւ։*

Զգել, Զգտել *տե՛ս Զիգ։*

ԶԳԵՒՏ *«կերածը վեր գալը, զգայումն, ործալ» Մխ. Բժշ. 25, որից* ձգտալ *«զգայոդիլ» Մարբիին. Մին. Համդ. 55. գրուած նաև* ձկտել *ՓԲ, զկտալ ՀՀԲ.—միջ. Հյ. ձևն է* ծոկտել *հմմտ. Բլկր. 41 Հնծկլտայ և ծոկտէ։ Կայ նաև* կծոտալ *ձևը՝ Աբան. 425 (այսպէս մի ձեռագիր՝ փոխանակ* ոռծկտալ*)։ Տե՛ս և զկրկտանիմ։*

ԳԻՒ.—Սվեդ. ձ՛գ՛ռդ՛իլ, *Հճ.* ձ՛ըգ՛գ՛ըռդօլ, *Ախց.* ձ՛կոբալ, *Կր.* ծկոտալ, *ՋԲ.* ծօգ՛օռդօլ, ձ՛օգ՛օռդոլ, *Ալշ.* զգոտալ, *Գոր. Երև. Ղրբ. Ջղ. Սլմ.* զկոտալ, *Տփ.* զկրտալ, *Մկ. Մրզ. Վն.* սկրոտալ։

ԶԵՂԻՒՆ, ն *հլ. (-ուան, -ուամբ, -ուանց) «առիք, առաստաղ» ՍԳր. Եզն. Կոչ. 23. Ոսկ. մաթ. և յհ. Եւս. քր. «բերանի քիմքը» Դամասկ. (դործածութեան կողմից հետաքրքրական է երգն. մաթ. 496 Ընդ ձեղուամբ գերանաց ձերոց բնակել)։ Որից* ձեղուանալ *«կամարաձև դառնալ» Փիլ. յովն.* ձեղուանաճանիմ *«տանիքի վրայ լուսամուտ, պատուհան» Հին բռ.* ճաստաձեղուն *Անան. նկեղ.* երաձեղուն *Անան. նկեղ.* իմիճաձեղուն *Անան. նկեղ.* բարձրաձեղուն *Լաստ.* եռաձեղուն *Ոսկ. գծ. 356.* երեքձեղուանեայ, չորեքձեղուանեայ *Ոսկ. մ. բ. 23.* երկնաձեղուն *Անան. նկեղ.* սրահաձեղուն *Վրք. և վկ. ա. 51.* կարծրաձեղուն *Նար. խչ.* միջնաձեղուն *ԱԲ. կայ և գրծ.* ձեղմամբ *Սանահն. որ ՆՀԲ համարում է* ձեղումն *«ամրութիւն յարկաց ի ձեռն ձեղուան» բառից, բայց պարզապէս* ձեղուն *բառի գործիականն է։—Սեբեր. էջ 133 գրտնում ենք* ձողուիմ *«առաստաղ, կտուր», որ ՆՀԲ համարում է* ձող *բառի յոգնակին, սակայն նոյն* ձեղուն *բառն է, ինչպէս գտնում ենք Վկ. գէ. 40 (բնագրում* ձեղուիս, *այլ ձեռ.* ձողուիս*) և որ հաստատում է գաւառական* ձողուիմ։

ՆՀԲ «լծ. յն. στέγη, յորմէ Հայ. ստիկոն, դստիկոն*»։ Հիմնք. նոյնպէս յունարէնից։* Petersson, Ar. u. Arm. Stud. 57 *սանս.* hármya- *«տուն, բնակարան», յն. χλαῖνα «վերարկու», թրակ. ζαλμός «մորթ, կաշի» բառերի հետ հնխ.* g'hel- *«ծածկել» արմատից։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* ձելի *«գերան»։*

ԳԻՒ.—Ակն. ձ՛օղուիմ, *Տր.* ցխիմ։

ՓՈԽ.—Մինդր. ցխվիճի, խվխեճի *«ձեղուն», որի հետ առանձնապես նման է Տր.* ցխիմ։

+**ԶԵՒՆ** *(հզ. հոլովւում է ն հլ.* ձեռին, ի ձեռանէ, ձեռամբ, *յգ.* ձեռ, ձեռս, ի–ս *հլ.* ձեռաց, ձեռօ*ք. բացառաբար ունինք* ձեռամբ *Դատ. է. 20.* ձեռովք *Բ. մնաց. ղ. 4) «ձեռք». փխբ. առացած է նաև «միջոց, օգնութիւն, պաշտպանութիւն, իշխանութիւն ևն» նշանակութիւնները. ՍԳր. Կոչ. Ագաթ. Եփր. և. ծն. Ոսկ. սրանից ձեռացած բազմաթիւ ոճերը տե՛ս ՆՀԲ։ Ածանցման մէջ մտնում է ուիր ձևով. 1.* **Ձեռն.** *օր.* ձեռնատու *ՍԳր.* ձեռնհաս *ՍԳր. Եզն.* չձեռնհաս *Ագաթ.* ձեռնարկել *ՍԳր.* ձեռնձգութիւն *Ոսկ. ես.* սակաւաձեռն *Ա. մակ. գ. 17.* դատարկաձեռն *Ել. իգ. 15. Ոսկ. մ. բ. 10.* երկայնաձեռն *Եւս. քր.—2.* **Ձեռնա-.** *օր.* ձեռնասուն, *Ագաթ.* ձեռնաղութիւն *ՍԳր. Եւս. պտմ.* ձեռնամուխ *ՍԳր. Եւս. պտմ. —3.* **Ձեռա-.** *օր.* ձեռագէտ *Գծ. ժթ. 25. Սիրեր. Ոսկ. Եփր. երր.* ձեռագիր *Կող. բ. 14. Բուզ. Սերեր.* ձեռագործ *ՍԳր.* ձեռակապ *ՍԳր. Սերեր. Եւս. պտմ.—4.* **Ձեռ-.** *օր.* բնձեռել *Փարպ. Փիլ. Յճխ.* անձեռոց *ՅՀ. կթ. որ և* անձեռայք *Վրք. Հց. ա. 670.* բնձեռայք *Փիլ. խոսր.* միաձեռանի *Մաթ. ժր. 8.* հարիւրաձեռանի *Նոնն.—5.* **Ձերբ-.** *օր.* ձերբակալ *ՍԳր. Ագաթ.* ձերբակալել *Եփր. բ. տիմ.* ձերբացի *Կիւրղ. և.* ձերբազատ *Մխ. դտ.* ձերբազատիլ *Մխ. դտ.— 6—8։ Սակաւագիւտ*

ձևեր են ձեռամբացի *Վրք. Հց.* ձեռացկոծ *ԱԲ.* ձեռբակալ *ՅՀ. կաթ. Ճառընտ.* ձեռբացի *ԱԲ։ Սրանցից առանձնապէս կարևոր է* ձեր, *որ եղ. գրծ. հոլով է և երևան է հանում նախաւոր* ՁԵՐ *«ձեռք» ուղղականը։ Ծեռին ռամիկ ձև է* ձեռոց *«ձեռքի գործիք, միջնորդ», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. կե. «Հրամայէ ըզտուեալն հաց յԱստուծոյ հասարակ ուտել, զի ոչ ասէ զհաց իմ, այլ թէ մեր. վասն զի մեծատունք ձեռոց են Աստուծոյ, որք պարտին զինչս իւրեանց բազմաց բաշխել և աղքատաց»։ Նոր բառեր են* ձեռնափայտ, ձեռնադաշնակ, ձեռնաճմայ, ձեռնաճմայութիւն, ձեռնաղաց, ձեռնառումբ, անձեռնմխելի, ձեռագրական, ձեռագրատուն, ձեռնոց, ձերբակալութիւն *են։*

=*Ինիկ հայ բառ. ցեղակիցներն են յն.* χεἰρ *«ձեռք», յգ. տր.* χερσί, *դոր. արկ. կիպր.* χήρ, *ևոլ. հյց. յգ.* χέρρας *«ղձեռքս», χέρ-νιφ «ձեռք լուալու ջուր», εὐχερής «դիւրին ձեռնարկելի գործ», ալբան.* dorɛ *«ձեռք»* (Pedersen KZ 36, 341), *լտ.* hīr *«ձեռքի ափ», օսկ.* heriiad *«բռնել», սանս.* hárati *«առնել, բռնել»,* haraṇa *«բազուկ», թոխար.* tsar, *քուչ.* šar *«ձեռք»,* šarne *«միջոցաւ» (ճիշտ ինչպէս հյ.* ձեռամբ. *այսպէս նաևասոր.* بيد bəyad *«ձեռամբ, միջոցով», որ գալիս է* ايد īdā *«ձեռք» բառից)։ Այս բոլորը տալիս են հնխ.* g'her- *և* g'hers- *ձևերը, որոնց նախնական նշանակութիւնն է «բռնել»։ Առաջինից ծագում է հյ.* *ձեր-, *որ յետոյ կորչելով՝ պահուել է միայն* ձեռ- *գործիականի մէջ, իսկ երկրորդից գալիս է հյ.* ձեռ-, *որից և մասնիկով՝* ձեռն *և* f *յոգնակերտով* ձեռք (Pokorny 1, 603, Walde 174, Ernout-Meillet 433, Boisacq 1054)։—*Հիւբշ. 470։*

Ուղիղ մեկնից նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 120, որ համեմատում է յն. χεἰρ *ձևի հետ։ Նոյնը յետոյ* Klaproth, As. polygl. *էջ 101.* Brosset JAs. *1834, 383 են յն.* χεἰρ, *վրաց. խելի, թրք.* el *«ձեռք»։ ՆշՔ և* Peterm. 23 *յն.* χεἰρ, *սանս.* kara-; Windisch. 13, 39 *և Հիւբշ.* KZ *23, 25 յն. ձևը։* Böttich. ZDMG 1850, 357, Arica 71, 163 *և* Lag. Urgesch 250 hr̥, har *արմատից, սանս.* hasta, harana, *յն.* χεἰρ; Müller SWAW 38, 578 *գնդ.* zasta, *սանս.* hasta· *նոյն,* Kuhns u. Schleich. Btrg. 3, 253 *ածանցուած* zasta *«ձեռք» բառից, ինչպէս* ձմեռն<zima-*ից։ Տէրվ. Նախալ. 81 ուղիղ է մեկնում։ Հիւնք* ձմեռն *բառից։* Bugge, Lyk. Stud. 1. 32 *և* 2, 86 *նոյն է դնում լիկ.* terñ *«բանակ»։* Jensen *ՀԱ 1904, 183 հաթ.* t'r=dyer· *Բ. վ. Գէորգեան, Խորհնացին Խորենացիով, Վղրշպտ. 1899, 60* ձեռէ *(յգ. հյց.* ձեռէս*) մեկնում է* ռէս *«գիւղապետ»! բառով (արաբ.* رأس ras *«գլուխ» բառից է)։ Թիւնաքեան, Արիահայ բռ. 257* ձերբազատ *մեկնում է իբր պրս.* سرو آزاد sarv-āzād *«ազատ աճող նոճի»։*

Դիմ.—Ալշ. Ոզմ. Ջղ. ձ'եռ, *Մշ.* ձ'եռ, *Տրև.* ձ'էռ, *Ննխ.* ձէռ, *Ախց. Ակն. Կր. Սչ.* ձ'էռ, *Ագլ.* ձէրֆ, ձէֆ, *Տփ.* ձէրը, ձէրնիրը, *Սլմ.* ձեռ, *Վն.* ձեռ, ձեռ[1], *Մկ.* ձէռ, *Մրզ.* ձէռ, ձէր, *Հմշ. Դոր. Ղրբ.* ձէռ, *Տիգ.* ցէռ, *Խրբ.* ձ'ռռ, *Զթ.* ծռռ, ձ'ռռ, *Ասլ.* ցռռ, *Պլ.* ձառ, *յգ.* ձառվնէր *(կնդծ գրական ձևով* ցառ*), Սեբ.* ձ'ռռ, *Սվեդ.* ձ'ռռ *(յգ.* ձ'իռվա*), Ռ.* ցառ, *Հճ.* ձ'ար, *Հւր. Մժ.* ձէֆ, *Շմ.* ցէֆ։ *Նոր բառերից՝ որ շատ բազմաթիւ են, յիշենք* ձեռաց, ձեռամաց, ձեռբռնուկ, ձեռնաբաց, ձեռնդրէֆ, ձեռնցփաղ, ձեռնմաշ, ձեռցաբար, ձեռմակուլայ, ձեռմպագ, անձեռնմժամտալ, *որոնցով երևում է թէ ի՛նչ ու ինչ ձևերով մտնում է բառս ածանցման մէջ։*

Փոխ.—Հյ. *ձեռնուկ *ձևից փոխառեալ եմ կարծում արաբ.* زرنوك zarnūk *«առձեռն փոքր աղօրիքի կոթ. շուռտուիկ՝ որով աղօրիքն են պտտացնում» (Թրք.* el, *Ֆրանս.* manivelle, *որոնք բուն նշանակում են «ձեռք») (Կամուսի Թրք. Թրգմ. Գ. 91). արաբերէն բառը՝ որ քառատառ է, բուն արաբական արմատով չի մեկնուում։—* Marquardt, Die Entstehung, *էջ 5 Հայերէնից հին փոխառութիւն է համարում թոխար.* tsar *«ձեռք» և*

սրա վրայ հիմնուելով ենթադրում է թէ թուխարները Եւրոպա եղած ժամանակ՝ Հայոց կողքին էին բնակւում։

+ՁԵՏ, n հլ. «բրդոտ պոչ (ինչպէս՝ շան, աղուէսի, առիւծի)» Առակ. իգ. 17, Դտ. ժե. 4. Նա. քր. «առնի անդամ» Սմբ. դատ. 121—2. որից fառաձետ «մի տեսակ գեռուն» Մագ. թղ. 214. գրուած նաև ցետ Եղիշ. դտ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'hédʰs- ձևից. համմտ. գնդ. zaδah- «յետոյք, սրբան», սանս. had, hadati «բնական կարիքը հոգալ», յն. χόδαvος «յետոյք, նստոյ տեղի», χέζω «բնական պէտքը հոգալ» (ածանցման մէջ —κεχοδα), ալբան. δjes «աղբել», քրդ. زوتك zutik «սրբան» (Pokorny 1, 571. Boisacq 1052):—Հիւբշ. 470։

ՆՀԲ իբր ցյետ, յետոյ, լծ. լտ. և իտալ. cauda «պոչ»։ Ուղիղ մեկնեց նախ Müller, Kuhns u. Schleichers Btrg. 5, 142: Նոյնը նաև Հիւբշ. KZ 25, 392, Justi, Dict. Kurde 225, Müller WZKM 10, 177: Հիւնք. ցրտել բայից։ Karst, Յուշարձան 429 ույղուր. qat, եաքութ. չաղաթ. kät, köt, küt, օսմ. göt «յետոյք»։

+ՁԵՒ, n հլ. (յետնաբար նաև սեռ. -ի) «ձև, կերպ» ՍԳր. «կերպարանք, կեղծիք» Գէ. ես. «զգեստ, համազգեստ» Ոսկ. յհ. բ. 38. որից զայս ձև, զնոյն ձև «այսպէս, նոյնպէս» Նա. քր. ձևել Նլ. իր. 32. Ագաթ. ձևանալ Եղիշ. ձևացուցանել Ոսկ. յհ. բ. 28. Փարպ. ձևողանալ Նաագր. 53. ձևիչ Վրք. հց. տձև Բրս. հց. Լմբ. պտրգ. տձևութիւն Նխ. զևտ. աճձև Դիոն. Մաքս. Պրպմ. կամաւոձև Եփր. Թգ. Մծբ. Ոսկ. յհ. ա. 1. կամարաձև Ա. եղր. դ. 34. ծաղկաձև Ագաթ. գրաձև Ոսկ. ես. դաշտաձև Եփր. յես. բոլորաձև Ոսկ. ես. վհցօր. լեռնաձև Եզն. Ագաթ. ևն։ Նոր բառեր են ձևաբանութիւն, շարժուձև, ձևագիտութիւն, խխնջաձև, ձուաձև, եաւկրաձև, շրջանակաձև, ձևափոխել, ձևափոխութիւն, ձևիմ, տառաձև, ձևապաշտ ևն։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'heu- «թափել, հոսել, հեղուլ, ձուլել» արմատից. համմտ. յն. χέω «թափել, հեղուլ», χύσις «թափում, հալում», χυδήν «առատօրէն թափուած, անկարգ», χυδαῖος «առատ թափուած, հասարակ, գռեհիկ», χυτός «թափած, հալած», χυλός «հիւթ, հոյզ, համ», χύαvος, χῶvος «հալոց, կաղապար՝ հալեցրած մետաղին ձև տալու համար», χώvη «հալոց, ձագար», χεῦμα «թափուած բան (նաև մետաղի ձուլման համար)», χύτρα «հողէ աման», χυτρεύς «բրուտ», լտ. fūtis «ջրամանի կտուցը», fū-tilis «հեշտ պարպելու, որ միջին չի պահում, անպէտք», d-ով աճած՝ fundo, fūdi «ձուլել, հեղուլ, թափել», գոթ. giutan, հբգ. giozan, գերմ. giessen «ձուլել», հշվէդ. giuta «կաղապար», հհիւս. giota «նետել», ալբան. düẽ, diẽ «մեղրամոմ», փռիւգ. ζευμάν «ակունք, աղբիւր» են (Pokorny 1, 563, Boisacq 1057, Walde 325, Kluge 181, Ernout-Meillet 384). աւելի ընդարձակ տե՛ս Զօն բառի տակ (համմտ. նաև ձոյլ):—Հիւբշ. 469?

Հիւնք. վեց բառից՝ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet MSL 9, 54, Patrubány SA 1, 193 հնխ. g'hevos- ձևից՝ Մառ ИАН 1918, 345 հյ. դէպ, դէմ և վրաց. ծիփե «հասուն» բառերի հետ։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. ձ'եվ, Պլ. ձեվ, Ախց. Խրբ. Կր. Սեբ. ձ'էվ, Վն. ծեվ, Մրդ. Շմ. Սլմ. ծէվ, Սչ. ցեվ, Ագլ. Հւր. Տփ. ձիվ, Համշ. Ղրբ. ծիվ, Տիգ. ցիվ, Զթ. ծիվ, ձ'իվ.—բայական ձևով Ջղ. ձ'եվել, Պլ. ձէվէլ, Երև. ձ'էվէլ, Տփ. ձէ'վիլ, Ոզմ. ձ'էվիլ, Սլմ. ծէվել, Շմ. ծէվիլ, Համշ. ծէվուշ, Սչ. ցէվել, Ագլ. ձու'վիլ, Ղվնգ. ձ'իվիլ, Ղրբ. ծի'վիլ, բոլորն էլ հագուստի համար գործածուած։ Նոր բառեր են ձևմ (Ննխ. ձէվմ, Սվեդ. ձ'իֆմ), ձևս, ձևօնմ, ձևոց, ձևատել, ձևոտել, ձևձևել, ձևկար, կարուձև։

+ՁԻՓ, n հլ. «ձիթաքուղ, ձիթապտուղի իւղ» ՍԳր. «կնճիթի, կտաւատի և ուրիշ բոյսերի իւղ» Շնորհ. Ոսկիփ. «մեռոն» ՅՀ. իմ. Մեկն. ղկ. «ձիթապտուղ» ՍԳր., որից ձիթենի ՍԳր. Եզն. ձիթաստան Կոչ. Ագաթ. ձիթաստանեայ Կորիւն. ձիթապտուղ Ոսկ. հփես. ձիթագործութիւն Փիլ. ձիթել Ոսկիփ. մոլաձիթենի Փիլ. նշաձէր Մխ. Բժշ. ձիթուն «ձի-

թապտուղ, զեյթուն» ԷՖիմ. *64*, կպրաձեր Գնձ. *(եթէ պէտք չէ ուղղել* կպրաձիւր*)*:

=*Սեմական բառ, որ ընդհանուր տարածուած է Արևելքում. այսպէս՝ ասոր.* ܙܝܬܐ zaitā *(բացարձակ ձևը* zēṯ*), եբր.* זַיִת zayiṯ, *արամ.* zait, *արաբ.* زيت zait, *եթովպ.* ዘይት zayt, *խպտ.* ϣoιτ, *հեգիպտ.* ṣd? *սրանցից են փոխառեալ քրդ.* zeit, zeitun, *թրք.* zeytin, zetin *«ձիթապտուղ», վրաց.* ზეთი ზეթի *«իւղ»,* ზეთიანი ზეթიანի *«իւղային»,* ზეთიხ ხე ზეթիս ხե *«ձիթենի», թուշ.* ზეთ ზեթ *«ձէթ», ուտ.* zeyt, zit, *ափխազ.* azet, *մինգր.* xet'i, *սվան.* zet'y, *չէրքէզ.* zeyitin *«ձիթապտուղ», գնչ.* zeiti *«ձէթ» ևն։ Կարծւում է, որ սեմականներն էլ փոխառեալ են հեգիպտ.* ṣd *ձևից։ Ըստ* Hehn, Kulturpflanzen III 8 *ձիթենին Առաջաւոր Ասիոյ հարաւային կողմերին յատուկ մի բոյս է և Ասիոյ խորագոյն մասերի մէջ չի գտնւում. չի գտնւում նաև բուն Հայկական հողի վրայ. բայց ըստ Ստրաբոնի, Խորենացու և Կաղանկայտուացւոյ առատութեամբ աճում է Ուտիաց, Տայոց և Գուգարաց նահանգներում. այսօր էլ յայտնի է Արդուինի ձիթապտուղը. բայց այս նահանգները չեն վերաբերում բուն Հայաստանի. այս պատճառաւ հայերէն բառը փոխառեալ է, հաւանաբար, ասորերէնից։ — Հիւրշ. 309։*

Ամէնից առաջ Schröder, Thesaur. 45 *դրաւ երբայեցերէնից։ ԳԴ արար. զէյթ -ից փոխառեալ։ ՆՀՔ եբր. զայթ և վրաց. զէ՛թի։—*Peterm. 23, 35 *երր. և ասոր. ձևերը։* Lag. Arm. Stud. § 1347 *հյ. ձէթ բառի բոլոր տառերն էլ անհամաձայն դնելով ասորու հետ, կարծում է, որ ընդհակառակը սեմական ձևերն են փոխառեալ հայերէնից. ձիթենու հայրենիքն է Փոքր-Ասիոյ արևելեան կողմը և ձէթ բնիկ հայ է. ծագում է* ghi *արմատից, իբր* *ghēti *ձևից. սրանց հետ համեմատել յն.* ἔρυσος *«ծիլ», ἐλαίης «ձիթենի» և χαίτη «մազեր, տերև, բոյս»? Նոյն հեղինակը* Göttingen-*ի* Nachrichten *թերթում, 1889 մայ. 29, թրգմ. ՀԱ 1889, 159 պնդում է, թէ ձէթ բնապէս Փոքր-Ասիոյ մէջ իրանական լեզու խօսող մի ազգի բառն է, որից՝ Կիլիկիոյի և Պաղեստինի վրայով փոխառեալ են միւս ձևերը. մինչև եգիպտ.* ċait. *հյ. ձէթ սկզբնական ձևն է։ Հիւնք. արաբերէնից։*

ԳԻՒ.—Ագլ. Տփ. ձէթ, Ալշ. Ախց. երև. կր. խրբ. Մշ. Ջղ. Սեբ. ձ'էթ, ՋԹ. ձեթ, ձ'էթ, Գոր. Հմշ. Ղրբ. Մկ. Մրղ. Սլմ. Վն. ձէթ (Հմշ. «ձէթական իւղ» իմաստով). Ոզմ. ձ'եթ, Ռ. ցէթ, Սվեդ. ձ'իթ.—նոր բառեր են ձիթաթաթախ, ձիթահաւիթ, ձիթհաւիթ, ձիթղաց, ձիթաճրագ, ձիթամաճ (խրբ. ձ'իթմաճ), ձիթծախ (խրբ. ձ'իձձախ), ձիթօշնակ, կտաւաձէթ, ձիթուկ, ձիթոխլ։

ՓՈԽ.—Ուտ. ձէթ՝ նոյն նշ.։

+**Զի**, ո *հյ. «ձի» ՍԳր. Սեբեր. որից ձիական Եւս. քր. ձիագլուխ Եւս. քր. ձիահալած Բուզ. ձիամարտիկ Սեբեր. ձիակերպ Եւս. քր. ձիանդամ Եզեկ. իգ. 20. ձիաստան «ախոռ» Եփր. ա. Թգ. ձիաստան կամ ձիաստաց «ձիու պիծակ» ՍԳր. Ոսկ. ես. Վեցօր. 175. ձիարկել Ոսկ. մ. ա. 9. ձիարձակ Ագաթ. ձիացուլ Եւս. քր. այրուձի, այրևձի ՍԳր. ձիաև Փարպ. երկձի Ես. իա. 9. Եւս. քր. սպիտակաձի Բ. մկ. ժա. 8. միաձի Եւս. քր. Բուզ. շորձիճ Եւս. քր. մեկձիական Անյ. պերիարմ. վագերաձի Խոր. աշխ. աճձի «առանց ձիու» Միխ. աս. 296. երագաձի Ուռհ. կիսաձի Սահմ. ևն։ Նոր բառեր են ձիարուծութիւն, ձիազոհ, ձիասպատակ, ձիավարժութիւն, ձիատածութիւն ևն։—Համմտ. նաև դպի։*

=*Բնիկ հայ բառ. հնխ.* g'hēyos *ձևից. համմտ. սանս.* हय háya *«նժոյգ», որ ծագում է հնխ.* g'heyos *կամ* g'həyos *ձևից։ Ոմանք սրանց հետ միացնում են նաև սանս.* jihīte *«ոստնուլ, թռչիլ», հսլ.* zayęci *«նապաստակ», լիթ.* žáidžiu *«խաղալ», լտ.* haedus *«ուլ», հբգ.* geiz, *գերմ.* geiss *«այծ» են (հնխ.* g'hiados *«այծ» ձևից), բոլորը իրրև բխած «ցատկել» ընդհանուր գաղափարից* (Walde, *էջ* 359, Pokorny 1, 527, 544, 546)*: —Հիւրշ. 470։*

Աւգերեան, Լիակ. վրք. սրբոց. հտ. Ը. էջ 39 լտ. cavallarius *բառին կցում է հյ. ձիաւոր<ձուար։* Klaproth, Asia

Zol. 104 ձի=լէզգ. ču «ձի»։ Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ձի հանում է ի բնաձայնից՝ ճիշտ մեկնութիւնը տուաւ նախ Windisch. 13. նոյնը նաև Gosche 72, Böttich. ZDMG 1850, 357, Arica 65, Lag. Urgesch. 737, Müller SWAW 38, 578, Տէրվ. Նախալ. 81, Բազրճեան, Մասիս 1885, 863։ Վերջինս կարծում է թէ ձի բառի նախնական հնչումն է դզի. իսկ սրա տեղ թի, դի, դիւ ձեռագրական ձևերը կեղծ են։ Մորթման ZDMG 31, 417 բևեռ. zikuni «ձիական»։ Karolides, Γλ. σύγκρ. 81 սանս. açva, լիթ. aszva, հսաքս. ehu և մանաւանդ կապադովկ. ἔθιο «ձի» բառի հետ։ Հիւնք. ենթաձևել բայից։ Jensen ZA. 1904, 183 հաթ. dēio, dyio։ Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 25, 38, 50 պհլ. սուսիա «ձի» բառից (որ է սակայն սասր. sūsyā «ձի»). իսկ ձիաւոր=اسوبار asūbār կամ سوار suvār «հեծեալ» պրս. ձևից։ Erckert, Die Spr. d. kauk. Stammes, էջ 112 հյ. ձի փոխառեալ է համարում հիւս. կովկասեան լեզուներից։ Ч'арая, Объ этноп. абхазск. яз. (1912), էջ 49 աբխազ. աչը «ձի»։ Մառ, ИАН 1913, 328 և 1917, 329 վրաց. ցխենի, սփխազ. աչը, ավար. չի «ձի», որոնց նախապատմութեան վրայ տե՛ս իր Сред. передвиж. էջ 19։ Նոյն ЗВО (1925), էջ 682 չեչէն. din, ինգուշ. da «ձի»։ Պատահական նմանութիւն ունին կովկասեան մի խումբ նմանաձայն հոմանիշներ. այսպէս՝ ավար. ,ակ. չու, վար. ուչի, ուրչի, կուբ. ուչա, ուչէ, չերքէզ. չը, կայ. իրչի, ուրչի, ակ. խիւր. ուրչի, սր. կար. շասր. šü, šu, šəy, ši, սփխազ. աճ, աչչիւ, սվան. čaž, čaaž (յգ. čaar «ձիեր»), վրաց. լազ. մինգր. ցխենի, ինգիլ. ցխեն։ Pictet բ. տպ. Ա. 427 ձիաւոր = սանս. açvavāra հոմանիշի կրճատ ձևն է, որից էլ փոխառեալ է արաբ. uswar «ձիաւոր»։

ԳԻՒՒ.—Ալշ. Ակն. Ախց. Ասլ. Երև. Կր. Հճ. Մշ. Ջղ. Սեբ. ձ'ի, Ագլ. Տփ. ձի, Ննխ. ձի, յոդով՝ ձիը, ձիյը, Գոր. Համշ. Ղրբ. Մկ. Մրզ. Շմ. Սլմ. Վն. ձի, Ոզմ. ձ'է, Ւռ. Սչ. ցի, Խրբ. ձ'ին (յոդով՝ ձիը, սեռ. ձ'իու, յգ. ձ'իան), Պլ. ձին (սեռ. ձինի, յգ. ձինէր, յոդով՝ ձինը), Ջթ. ծր՝, ձր՝, Սվեդ. ձ'էն, Տիգ. ցիան (գործածւում է իբր եզակի, սեռ. ցըյնի), Մրզ ծայ (ըստ Գաբիկեան, Ամէն. տարեց. 1922, 325)։—Նոր բառեր են ձիաբեռ, ձիագող, ձիաքոկ, ձիակ, ձիակոճկիկ, ձիակոճղեզ, ձիաճոց, ձիատէր, ձիատուր, ձիատրել, ձիատրուիլ։

ՓՈԽ.—Հայերէնից է փոխառեալ քրդ. دیلزی deilezzi (Alemont-ի և Roudbāri-Qazvin-ի մօտ՝ Richvend կոչուած քրդերի լեզուով) «էգ ձի» (ըստ Chodzko), որ կազմուած է քրդ. deil «էգ» և հյ. ձի>zi բառերից (տե՛ս Justi, Dict. Kurde, էջ 199)։

ՁԻԳ «պիրկ» Ոսկ. ես. «ամուր, պինդ» ճառընտ. «երկար» Շիր. Խոր. Արծր. «հիւսուածք, գգեստ» Ոսկ. մ. ք. 27, «արօրի մասերից մէկը, արօրձող» Սերբ. «նետարդ» Պիսիդ. Վեցօր. տող 695. «նետ, սլաք» Ոսկ. պօղ. Ա. 935. որից կազմուած են ձիգ դնել «նետաձիգ լինել» Երեմ. ծ. 14. ի ձիգ արկանել «երկարաձգել» Ոսկ. մ. ք. 27. ձգել «տարածել, քաշել, երկարել, պարզել, նետել են» ՍԳր. Ագաթ. «դէպի մէկ կողմ դիմել, երթալ» (ճիշտ ինչպէս Պլ. երկնցնալ, քաշուիլ. օր. Քիչ մը սա կողմը երկննանք. Քաշուեցան գացին) Եղ. ք. 28. Դատ. ի. 31. Ժող. ա. 5, 6. Եզն. 189. Բուզ. 141 (այս նոր իմաստը երևան հանեց Հ. Գ. Գալեմքեարեան, Մասիս 1900, 403). ձգիչ Վեցօր. ձգարան «լար» Նար. ձգանիճ ՍԳր. Ոսկ. երր. ակօսաձիգ Ագաթ. ֆաչաձիգ Ասող. նետաձիգ ՍԳր. Փարպ. նիձիգ ՍԳր. Նար. քր. բռնաձիգ Փիլ. Պիտ. խոնարհաձիգ Ագաթ. գեղեցկաձիգ Փարպ. գաղտնաձիգ Մանդ. խառնաձիգ Գ. մակ. դ. 7. բացաձիգ Մծբ. Վեցօր. լիաձիգ Սղ. Հէ. Ց. երկայնաձիգ Ոսկ. ես. Վեցօր. Նար. քր. ձեռնձգութիւն Ոսկ. ես. են։ Նոր բառեր են՝ ձգափոկ, ձգակապ, ձգախէժ, առաձիգ, առաձգական, նիաձգարան, ձգողութիւն, ձգողականութիւն։— Նոյն արմատից՝ կրկնութեամբ՝ ձգձգել Երեմ. ժե. 10. Ոսկ. մ. ք. 18. Նար.։—Ածած ու մասնիկով՝ ձգտել

Ոսկ. յհ. ա. 11, 12. բ. 39. Կոչ. ձգտեցուցանել *ՍԳր. Եւս. պտմ. Եփր. ծն. Ագաթ.* ձգտիլ *«երկարիլ, քաշուիլ» ՍԳր. Եւս. պտմ. Եփր. ծն. «յօրանջելով ճապկտիլ» Ոսկ. Եզն. Վեցօր. «փափագիլ, ըղձալ» Բառ. երեմ. էջ 190.* ձգտալ *Ոսկիփ.* ձգտումն *Նաւում. բ. 10.* —ա-ի *ազդեցութեամբ դարձել է նաև* ձկտել *ևն։*

ՆՀԲ լծ. Թրք. չէմ *«քաշիր»,* սրգ *«խիտ, սեղմ»,* սէօմ *«քանդի՛ր»,* ուզագ *«հեռու» ևն։* Lag. Reliqq. gr. 83 *պրս.* zil *«ազեղի լար» և երր.* zīq *«սլաք»։ Տէրվ.* Altarm. 54 *և Նախալ. 100 հնխ.* yu, yug *«յօդել, լծել» արմատից, որից նաև* լուծ, յօդ, ջոկ *ևն. հյ.* ձիգ<*ձիւգ։ Karolides, Γλ. σογχρ. 82 *կապադովկ.* žika *«ննջ, աղեղ», հյ.* չիմ. *յն.* βιός, *սանս.* jya, ǰyaka *զնդ.* zya, *լիթ.* gija: Meillet MSL 9, 54 *գոթ.* gageigan *«շահիլ»,* geigan *«ձևոք ձգել»? Հիւրշ. 469 անապահով է համարում նախ նշանակութեան և երկրորդ՝ ձևի տարբերութեան պատճառով (հայերէնը գալիս է* g'high- *ձևից, իսկ միւսները պատկանում են* ghig'h *արմատին։ Սակայն* Pokorny 1, 550—551 *ունի ճշտիւ* g'heigh-, g'hēgh- *արմատը, որի տակ յիշուած բառերից ոմանք նշանակութեամբ էլ միանում են հայերէնի հետ)։ Հինք. ձուկն բառից։* Osthoff IF Anz. 10, 45 *յն.* κιχάνω *«պատահիլ, հասնիլ»։* Scheftelowitz BB 28, 298 *սանս.* jihma *«թեք, խոտորնակ»։* Karst, *Յուշարձան, էջ 421 Թրք.* čekmek *«քաշել», 429 ԹԹր.* qog, qov *«վանել, քշել»։*

ԳԻՒ.— Արմատական ձևով ունինք Հճ. ձ'իգ', *Ախց. Կր. Ջղ.* ձ'իֆ, *Ննխ. Պլ.* ձիֆ, *Ասլ.* ձ'իֆ, ձ'ի*, *Ագլ.* ձիգ՝ ձիյգ՝, *Գոր. Հմշ.* ձիֆ, *Ղրբ.* ձիֆ՝, *Ռ.* ցիֆ. *Նաև Մշ.* ձ'իկս *«երկարութիւն».—բայական ձևով ունինք «երկարել» նշանակութեամբ՝ Ջղ.* ձ'ֆել, *Երև.* ձ'ֆէլ, *Տփ.* ձֆիլ, *Ակն.* ձ'ըֆգ'էլ, *Շմ.* ձիֆ՝ *տալ. Սվեդ.* ձ'ըգդըցընիլ. *և «բցել, նետել» նշանակութեամբ՝ Ագլ.* ձգիլ, *Մշ.* ձ'գ'ել, էձ'գ'ել, *Սեբ.* ձը'ֆ'էլ, *Ախց.* ցկել, *Սչ.* ցֆել, *Ննխ. Պլ. Ռ.* ցֆէլ, *Ասլ.* ցֆէ՝լ, *Խրբ.* ցֆիլ, *Տիգ.* բցֆէլ, *Զթ.* բ՝ձգ'իլ, բ՝ձ'գ'իլ, *Վն.* իսկել, *Ջղ.* գ'ձ'ել, *Ագլ.* գ'իձի՛լ, *Սլմ.* ֆ'բցել, *Գոր. Ղրբ.* ֆցիլ, *Տփ.* գցիլ, *Յղ.* ֆ'բցիլ, *Մրղ.* ֆիցէլ, *Հւր.* գիգէլ։ *Նոր բառեր են* ձիգիձիգ, ձիգճալ, ձիգուկ, ձիգուպուկ, ձիգցճել, ձգանիլ, ձգատայ, ձգելաճ, ձգիբաց, ձգլիկճալ, ձգմուճ, ձգոց. *ինչպէս նաև* ջրջճբել։ *Կարևոր բառ է* ձիգ *Ռշտ. «առօրի հասատ չուան»։—Միջին բաղաձայնի կրկնութեամբ է Հճ.* ձ'ոգ'գ'ել *«նետել, բցել»։—Կայ և Մշ.* ձ'կտիլ։

ՓՈԽ.—Pedersen, *Հայ. դր. լեզ. 219* ձրգտել *բայի արմատը դնելով* *ձգուտ<*ձիգուտա *«նետ», սրանից փոխառեալ է դնում լտ.* sagitta *«նետ» և Թրք.* sögüt, *հակուդ.* üöt. *չուվաշ.* šüzä *«ուռենի»։ (Շատ լեզուների մէջ «ուռի» բառը ծագում է «նետ» բառից. համմտ. շվէդ.* pil *«նետ, ուռի»)։*

ՁԻՂԿ *«անծանօթ հանքային մի նիւթ» նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խոր. աշխ. Հրտր. Սուքրեանի, էջ 31. «Յորում գտանի սալակ և ձիղկ և նաւթ սև և սպիտակ»։*

+ՁԻՐ, ի *հլ. «պարգև, նուէր, ընծայ» Եզն. Ոսկ. ա. Թես. որից* ձրի *«նուէր, պարգև» Կոչ. «գուր, ընդունայն» ՍԳր. Ոսկ. Եզն.* ձրել *«նուիրել, շնորհել» Սկևռ. աղ. կամ նաև* ձիրել *Խոսր. պտրգ. 67, Գնձ. Անան. Լկեղ. Տիմոթ. կուզ, էջ 139, 209.* ձերել *Եփր. պհ.* ձրիատուր *Ճառընտ.* առատաձիր *ՅՀ. կԹ. Մագ.* ձեռաձիր *ՅՀ. կԹ.* աձիր *(գրուած և* աճիր*) «ապերախտ» Պիոն. (Հրտր.* WZKM *28, էջ 381), Ոսկ. Եփես.* բարեձիր *ՅՀ. կԹ.* լիաձիր *Նար. Մծբ.* լուսաձիր *Յիշատ.* կարճաձիր *Նար. կուս. 412.* կենաձիր *Նար.* կրկնաձիր *Նար.* երկնաձիր *Ճառընտ. Շար.* ճոգիաձիր *Նար.* ճոխաձիր *Ճառընտ.* ձրիավարժ, ձրիակեր *(նոր բառեր) ևն։*

=*Ինիկ հայ բառ՝ հնխ.* g'hēr- *արմատից. սրա հետ համմտ. յն.* χάρις *(սեռ.* χάριτος*) «շնորհք, հաճոյք, ուրախութիւն, բարեհաճութիւն, յարգանք, երախտագիտութիւն, վարձատրութիւն, թոշակ»,* χαίρειν *«շնորհալի», χαίρω «հրճուիլ, ուրախանալ»,* χαριτόω *«երկնաձիր շնորհներով լցնել», լտ.* horior, hor(i)tor *«քաջալերել, ոգևորել», օսկ.* herest *«կամի», սանս.* háryati *«ախորժիլ,*

ցանկալ», գնդ. ﻥﺍﺯ zara *«ձգտում, փափագ, նպատակ», հբգ.* ger *«ցանկացող», գոթ.* gairnjan *«ցանկալ», գերմ.* gern *«հաճոյքով, ախորժանօք» ևն (գերմանականից փոխառնւալ է ֆիննն.* kernas *«հաճոյքով, մեծաւ ուրախութեամբ»* Kluge, *էջ 176)։ Այս բոլորի արմատն է հնխ.* g'her, g'herēi- *«ցանկանալ, կամիլ, ախորժիլ». Հայերէն ձիր ծագում է* g'hēr- *ձևից. բայց ունինք նաև ձերել, որ նթէ ուղիղ գրչութիւն է, ցոյց է տալիս բուն* g'her- *արմատը։ Մեր բառի հետ նշանակութեան կողմից յատկապէս կապւում է յն. χάρις «շնորհք, վարձատրութիւն». իսկ «ձրի» առման համար համմտ. լտ.* grātus *«ախորժելի»,* grātia *«շնորհք»,* grātīs *«ձրի»* (Boisacq 1047, Walde 369, Ernout-Meillet 438—9, Pokorny 1, 601): *—Հիւբշ. 470։*

Brosset JAs. 1834, 369 *են վրաց.* ծիրվա *«պատարագ»,* ցարիելի, ցարիերի *«ձրի»։ (Սրան հետևելով Ջուբինով՝ նոյն վրաց. բառի դէմ դնում է հյ.* ցիրել *(իմա՛* ձիրել*). նոյնպէս նաև* Schiefner, Versuch über die Thusch-Sprache, *իրար է միացնում հյ.* ցիրել, *թուշ.* ծիրո *և վրաց.* ծիրվա *«պատարագ»)։ ՆՀԲ* ձիր *«ի ձեռանէ պարգև, լծ. և յն.* δῶρον, χάρις, *լտ.* gratia», ձրի *«ի սեռականէ բառիս* ձիր*, լծ. և ընդ* գուր, *ամկ.* գուրի, *որպէս և ընդ յն. լտ.* δωρεάν, gratis»:— Lag. Urgesch. 250 har *«առնել, բռնել» արմատից։—Մատ* ЗВО *7, 74 գնդ.* dāta *«տրուած» ձևից, ինչպէս* դիր = dāta: Müller, Armen. VI, *էջ 4, № 35 և* Meillet MSL 9, 54 *դնում են յն.* χάρις *և լտ.* grātia *բառերի հետ՝ իբրև բնիկ հայ։ Այսպէս ունի նաև Հիւբշ. 470։ Բայց նորագոյն գիտուններըլտ.* grātia *են բաժանում են յն.* χάρις *ձևից, որովհետև օսկ.* brateis, *պալ.* bratom *ցոյց են տալիս որ լտ. ձևը պատկանում է հնխ.* gᵘerā *արմատին (տե՛ս* Walde, *էջ 352 և 369)։ Հիմնք. ձեռ բառից։*

***ՁԻՒԹ**, ո *հլ. «ձուլք, կուպր, կպրածիւթ» Նս. լգ. 9. Դան. գ. 46, ժդ. 26. որից* կպրաձիւթ *ել. բ. 3. Սարգ. Գնձ.* ձիւթել *Վստկ. 52. Լծ. սահմ. 265։*

=Արամ. זפתא ziftā, *ասոր.* ﻉﺎﻔﺯ zeftā, *եբր.* זפת zefet, *եթովպ.* ZEFT zĕft, *արաբ. (ինչպէս նաև պրս.)* زفت zift *(նաև* سفت sift *ըստ Կամուս, թրք. Թրգմ. Ա. 307), խպտ.* lam-čapt *(որոնցից նաև թրք. քրդ.* zift*) «ձիւթ»։ Թէ ո՛րն է այս բոլորի նախնական աղբիւրը, յայտնի չէ։ Միայն թէ հայերէնը դնել պէտք է սեմականից, որովհետև պրս. z բառասկզբում չի տալիս հյ. ձ, իսկ ասորական z դառնում է երբեմն ձ, ինչպէս են* ձէք, ձանձախարիք*։—Հիւբշ. 185 և 310։*

Նշ Բ «յայլ լեզուս զիֆր, զիվր, զեֆր*»:* Böttich. Arica 77, 274 *պրս.* zift: Lag. Arm. Stud. § 1351 ձ*-ի պատճառաւ հայը բնիկ է համարում։ Հիմնք.* ձէք *բառից է հանում։* Müller WZKM 8, 283 *բառը միացնելով փիւնիկ.* ζουφριν- σίπος *(գիհի,* juniperus*) բառի հետ՝ բնիկ սեմական է համարում և հայերէնը փոխառեալ է դնում սեմականից։ Հիւբշ. 185* ձիւթ *դնում է պարսկերէնից փոխառեալ, որովհետև պրս. z>հյ. ձ ձայնափոխութիւնը գտնում է նաև ձագ բառի մէջ։ Բայց այժմ ընդունելով որ ձագ բնիկ հայ է, պրս. z>ձ ձայնափոխութեան համար օրինակ չի մնում հայերէնում, մինչ ասորերէնի համար կայ։*

ԳԻՒՐ.—Ասլ. ձ՛իւր, ձ՛իւ*, Ոզմ.* ձ՛էօր, *Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. Սեբ.* ձ՛ուր, *Խրբ. Ակն. Հճ.* ձ՛իր, *Ննխ.* ձուր, *Զթ.* ձը՛ր, ձ՛ը՛ր, *Ռ.* ցուր, *Համշ.* ծուր*. վերջինս նշանակում է «եղևնի ձիւթը կամ խէժը», միւսները «ծամոն, մազտաք». այսպէս նաև Սվեդ.* ձ՛այր*. —իսկ Պլ.* ձուր՝ *գործածական է միայն ձուրեու պէս «խիստ սպիտակ և մաքուր» դարձուածի մէջ.—Սլմ.* ձէօր*-ծամոն «ձանձրալի մարդ՝ որ ուրիշի օձիքից կպած մնում է»։ Նոր բառեր են* ձիւրեճի, ձիւրաճալ, ձիւրոտ, ձրիկ *«կպչուն»։*

+**ՁԻՒՆ**, ն *հլ. (ձեան, ձեամբ, ի ձեանէ) «ձիւն» Սգր. վհցօր. որից* ձիւնաճալ *Սղ. կէ. 15.* ձիւնաջուր *Մծբ.* ձիւնաբեր *«ձիւնելը, ա-*

ռատ ձիւն, բուք» ՍԳր. *«փորձանք, վիշտ»* Ոսկ. *մ. ա. 15, բ. 8 (համմտ. գւռ. Գլխուն ձիւն բերել. Աս ի՞նչ ձիւն եկաւ գլխուս).* ձիւնաթաղ *Ագաթ.* ձիւնախաղաղ *Ագաթ.* ձիւնասոյզ *Ագաթ.* ձիւնախառն *Կաղանկատ.* ցօղաձիւն *Համամ. առակ.* ձիւնձիւնիկ *«մի տեսակ թռչուն» Տաղ. (Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 417).* ձիւնածաղիկ *Մխ. առ. Բժշ. (Տիրացուեան,* Contributo § 52 *համարում է* scilla bifolia L, § 491 viburnum lantana L, § 518 bellis perennis L).—*Նոր բառեր են* ձիւնել, ձիւնասպիտակ, ձիւնագունդ, ձիւնագնդակ, ձիւնաճաւատ, ձիւնահալմ *են:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* g'hiyōm *նախաձևից. ընդարձակ մեկնութիւնը տե՛ս* ձմեռն *բառի տակ:—Հիւբշ. 470:*

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Klaproth, Asia pol. *էջ 104՝ համեմատելով յն.* χιών *ձևի հետ: Նոյնը յետոյ* Brosset JAs. 1834, 383 *են: ՆՀԲ դնում է ռուս.* снѣгъ, *գերմ.* Schnee, *յն.* χιών: *Հնդեւրոպական զանազան լեզուների հետ ուղիղ համեմատութիւններ ունին* Peterm. 23, Windisch. 13, Böttich. ZDMG 1850, 357 *են: Մորթման* ZDMG *26, 512 թերևս բևեռ.* zinuardi: *Հիւնք. սիւն բառի՞ց, թէ յն.* χιών; Karst, *Ցուշարձան 429 ԹՒՐ.* qiv *«ձիւն»:*

ԳԻՒՒ.—Ագղ. ձիւն, *Ասլ.* ձ'իւն, *Գոր. Ղրբ. Մրղ. Մկ. Շմ. Սլմ. Վն.* ձիւն, *Ննխ. Պլ. Տփ.* ձուն *(Ննխ. պահուած է միայն մի քանի դարձուածներում, իսկ սովորաբար ջնջուած է՝ տեղի տալով բուի բառին, որ առաջել է «ձիւն» նշանակութիւնը), Ալշ. Ախց. Ակն. Կր. Մշ. Զթ. Սեբ.* ձ'ուն, *Երև.* ձ'ուն, ձ'իւն, *Համշ.* ձուն, *Ռ. Տիգ.* ցուն, *Ոգմ.* ձ'էօն, *Խրբ. Հճ.* ձ'իւն, *Բ.* ձ'օն, *Զթ.* ձը'ն, ձ'ը'ն, *Սվեդ.* ձ'այն: *Նոր բառեր են* ձիւնագնդի, ձիւնաբաթախ, ձիւնակոլոլ, ձիւնափարատուկ, ձիւնհալմ, ձնջրիկ, ձնուռ, ձնվառեկ, ձնակ, ձնակլոճդրակ, ձնաշաւատ, ձնաւուռ, ձնհոր:

Ձլել *«հողը ակօսել». մէկ անգամ միայն ունի Ոսկ. ա. տիմ. ժդ, էջ 122, որի դէմ երկրորդ ձեռագիրն ունի* ցելուլ: *Ըստ այսմ շատ անստոյգ բառ է:*

ՆՀԲ *իբր* ցելուլ, *լծ. լտ.* sulco *«հերկել»:* Böttich. Arica 83, 396, Lag. Urgesch. 494 *սանս.* hal *«վարել»,* halá- *«արօր»:* Հիւբշ. Arm. Stud. *էջ 13 խընդրական է գտնում այս մեկնութիւնը, իսկ* Arm. Gram. 471՝ *անստոյգ է համարում:* Walde 328, *ինչպէս նաև* Boisacq 932 *և* Pokorny 1, 629 *իրար են միացնում լտ.* furca *«երկճիւղ կեռ, խելակ», լիթ.* žirklės *«մկրատ», լեթթ.* zirklas *«մեծ մկրատ», գոթ.* gilda *«մանգաղ», սանս.* halá- *«արօր» և հյ.* ձել, *իբրև հնխ.* g'hel- *«կտրել» արմատից?*

Ձեռն *«մի տեսակ բոյս. լտ.* juniperus, *գիհի»? Ռոշք. որից առնելով ունին միայն Հրուս. § 1783 և Քաջունի Գ. 169:*

Ձղմել *«դիտել, նկատել, պշուցեալ հայել». ունի միայն ՀՀԲ. նոյնը գիտէ Բառ. երեմ. 190 «դիտել կամ դիտել» իմաստով, որոնցից մին կամ միւսը սխալ է:*

+Ձմեռն *(յգ.* ձմեռուճ, *սեռ.* ձմեռայնոյ, *գրծ.* ձմեռայնով, *ներգ.* ձմեռայնի. *յետին են սեռ.* ձմեռան, *յգ. սեռ.* ձմեռանց) *«ձմեռ» ՍԳր. «բուք, փոթորիկ, ալեկոծութիւն» Ոսկ. մ. ա. 24. Սփր. բ. տիմ. ածանցման մէջ մտնում է* ձմեռն *և* ձմեր- *ձևով. ինչ.* ձմեռնաասուն *Ագաթ.* ձմեռական *նւս. քր.* ձմերային *Սեբեր.* ձմեռնաձիներ *«ձմեռը քուն մրսած» (արջ) Վրդ. առ. 15.* ձմեռանոց *Ագաթ.* ձմեռատուն *Երեմ. լզ. 22.* ձմերել *Ա. կոր ժզ. 6. Գծ. իե. 12. նւս. քր.* ձմերոց *Ագաթ. Եզն.* կարաձմեռն *Վեցօր. 186, Կոչ. 309. Ոսկ. մ. ա. 12. սխալ գրչութիւններ են* ձմեռային, ձմեռանոց, ձմերնական, ձմերնային *և նման ձևերը: (Արդի լեզուում առաջին երկուսը սովորական դարձան): Առանձին տե՛ս* ձմեռուկ:

=*Բնիկ հայ բառ. ցեղակիցներն են՝ սանս.* हेमन् hēman *«ի ձմեռան, ձմերայնի»,* हैमन्त hēmantá- *«ձմեռ»,* हिम himá- *«ցուրտ. 2. ձմեռ. 3. ձիւն», հինդուստ.* هيوانت hewant *«ձմեռ», զնդ.* hiv *«ձիւն»,* vent, vend *«ձմեռ», գնդ.* zyā *(հյգ.* 𐬰𐬌𐬎 zyąm, *սեռ.* 𐬰𐬌𐬨𐬀 zimō) *«ձմեռ»,* 𐬰𐬌𐬨 zima- *«սառնամանիք, ձմեռ»,* 𐬰𐬌𐬎𐬎𐬀 zayana- *«ձմեռ», պհլ.*

خم xam «ձմեռ», زمستان zamistān «ձմեռ», պրս. زم zam «ցուրտ», زمستان zamistān «ձմեռ», օսս. zumâg, zimâg «ձմեռ», աֆղան. žimai, zamistān, քրդ. zamistān, zəwistān «ձմեռ», հաթ. gi-im-ma -an-za «ձմեռ» (Sommer, Hethitisches, էջ 18), յուն. χιών «ձիւն», χειμών «ձմեռ, սառնամանիք, անձրեւ, բուք, փոթորիկ», χεῖμα «ցուրտ, սառնամանիք», χειμερία «ձմերանի», χειμερίζω «ձմեռել», χίμαρος «միամեայ ուլ», լտ. hiems «փոթորիկ, անձրեւ, ձիւն», hibernus «ձմեռնային», bīmus, trīmus (bi-, tri-himos) «2—3 ամեայ». հսլ. zima, ռուս. зима, լիթ. žiemà. լեթթ. zëma, հպրուս. semo, հիտ. gam, հկիմր. gaem, նկիմր. gauaf, ալբան. dimɛn, dimɛr «ձրմեռ», հհիւս. gymbr «միամեայ գառն» են։ Այս բոլորի պարզ արմատը դրւում է հնխ. g'hei-, g'hi- «ձմեռ, սառնամանիք». emմասնիկով հնխ. g'heiem, որ մի քանի լեզուների մէջ աճած է r/n մասնիկով. այսպէս՝ սանս. hēmanta-, յն. χειμερίζω, լտ. hībernus, ալբան. dimɛn են (Walde 90, 365, Horn § 666, Boisacq 1053, 1061. Pokorny 1, 547, Trautmann 367, Ernout-Meillet 431, տե՛ս նաև Meillet BSL № 8, 125—126): Հայերէնը նոյն արմատից կազմել է ձիւն և ձմեռն բառերը. առաջինը համապատասխանում է ճիշտ. յն. χιών ձևին և երկուսը միասին դալիս են հնխ. g'hiyōm նախաձևից (վերջավանկի ու ձայնը ի-ից յետոյ մնում է, իսկ բառավերջի m դառնում է ն՝ նման յունարենի). երկրորդը՝ ձմեռն<*ձիմ-եռ-ն հայերէնի մէջ աճել է ն մասնիկով՝ նախաւոր *ձմեր պարզականից (պահուած է ածանցներում. r դարձել է ռ՝ յաջորդ ե-ի պատճառաւ), որ համապատասխանում է յն. χειμερινός բառին և նրա նման կազմուած է r/n մասնիկով։—Հիւրշ. 470։

Հներից վանակ. վրդ. մեկնում է «Ձմեռն՝ որ ձիւնամեռ լինին» (Ալիշան, Հին հաւ. 136)։ Այսպէս նաև Տաթև. ձմ. ա. «ի ձմեռն ամենայն ինչ մեռանի, զի այն թարգմանի անուն իւր. այսինքն ձիւնամեռ. զի ի. ձիւնոյն ամենայն ինչ մեռանի, բոյսք չորանան և ծառք մերկանան. և ջուրք սառուցեալ պաղին և երկիրս դադարի ի ծննդոց»։ Նոյնը դարձեալ Տաթև. Հարց. 197։ Ուղիղ մեկնեց նախ Brosset JAs. 1834. 383 ևն՝ համեմատելով սանս. լտ. յն. և պրս. ձևերի հետ, որոնց կցում է նաև վրաց. զամթարի։ Ինճիճեան, Հնախ. Գ. 25 հինը ձմառն՝ իբր ամառն բառից։ Նշ. յիշում է սանս. և ռուս. ձևերը։ Ուղիղ է մեկնում Diefenbach, Berl. Jahrb. 1843, էջ 445։ Գ. կ., Արշալ. արտ. 1843, № 130 մեկնում է ձիւներն։ Windisch. 13 ձիւն բառի ածանցն է համարում։ Bopp, Abhd. d. Ak. d. Wiss. z. Berlin, 1846, էջ 324 hima «ձիւն» + rtu «եղանակ» >ռն ձևերից, իբր սանս. himartu>ձրմեռն. Համմտ. նաև իռլ. geimhrith, geimhreadh, geimhre: Մանաթ ձևերի հետ ուղիղ համեմատում են Gosche 42, Böttich. ZDMG 1850, 357, Arica 79, 308, Տէրվ. Altarm. 102, Նախալ. 81 են։ Lag. Urgesch. 875 ամառն և ձմեռն կազմուած է դնում ռն մասնիկով, որ դանում է նաև լատինում։ Pictet 1, 90 պրս. zij «ձիւն»։ Հիւնք. յն. լտ. ձևերը և պրս. զէմհէրիր, սէրմա։ Հալաճեան, Արեւելք թ. 1893 նոյ" 10 մեռաւել բայից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 259 պրս. زمحریر zamharir «կարի ցուրտ» բառից։ Պատահական են ափխազ. ածրեռա, ա՞ձրյն «ձմեռ»։

Գիմ.—Ագլ. Գոր. ձմէ՛ռեր, Շմ. ծմէ՛ռեր, Ղրբ. ծմրէ՛ռեր, Ալշ. Մշ. Ջղ. ձ՛մեռ, Սլմ. վն. ծմեռ, Զթ. ծր՛մեռ, ձ՛ր՛մեռ, Ոզմ. ձ՛րմմեռ, Ննխ. Պլ. ձմէռ, Ասլ. ձ՛մէ՛ռ, Ախց. Ակն. Երև. Կր. ձ՛մէռ, Հմշ. Մկ. ծմէռ, Մրզ. ծրմրէռ, Ռ. Սչ. Տիգ. ցմէռ, Խրբ. Սեբ. ձ՛մռո, Հճ. ձ՛մէր, Սվեդ. ձ՛միռ, Տփ. ձմէր։ Նոր բառեր են ձրմեռամուտ, ձմեռնութիւն, ձմռալոջ, ձմռնախաղող, ձմռնատանձ, ձմռնենի, ձմռնաճաճ, ձրմրռնակ, ձմռնուկ, ձմռուկ (վերջիններիս հետ իմաստի զարգացման համար համմտ. յն. χίμετλον «engelure» Boisacq 1061):

Ձմերուկ «յայտնի պտուղը» Մխ. առկ. Ոսկիփ. են։

=*Կազմուած է ձմեռն բառից, որին ապացոյց է վրաց.* ზამთრო սազամբրո «ձմեռուկ», *որ ծագում է* ზამთრო սազամբրո «ձմեռնային», ზამთარი զամբարի «ձմեռ» *բառերից։ Թէ ինչո՞ւ է այսպէս կոչուած այս պտուղը՝ յայտնի չէ. բայց երևի թէ իր առատ զովացուցիչ ջրի պատճառով է. մինչև այսօր էլ գիւղացիք ծարաւ ժամանակ արտից մի ձմերուկ են քաղում և նրանով իրենց ծարաւն անց կացնում. Համմտ. Թրք.* قارپوز qarpuz «ձմերուկ», *որ Պօլսում ժողովրդական ստուգաբանութեամբ մեկնում են իբր Թրք.* qar «ձիւն» + buz «սառոյց» *բառերից։—Աճ.*

Հիւնք. էջ 252 դնում է ձմեռն բառից, իսկ էջ 332 բաժանելով սրանից՝ համարում է արաբ. ثمر samar, ثمرة samara *(բուն հնչումը* θamar, θamara) *«պտուղ» բառից։*

ԳԻՒ.—Ջղ. ձմեռուկ, *Տփ.* ձմէռուկ, *Երև.* ձ'մէռուկ, *Նախ.* ձմէռուգ, *Խրբ. Մշ.* ձ'մէռուգ, *Գոր.* ձմէ՛ռուկ, *Ղրբ.* ձմբէ՛ռուկ, *Ագմ.* ձ'մեռօկ, *Սլմ.* ձմէրիւկ՝, *Ասլ.* ձ'մէրիւգ, ձ'մէրիւյ, *Վն.* ձմրիւկ, *Սվեդ.* ձ'ըմիւրիւգ, *Հճ.* ձ'ումյուգ, *Ագլ.* ձմրո՛րիւկ։

Ձնգիլ *տե՛ս* Ծնգիլ։

Ձնգրիթ *տե՛ս* ձնձիթ։

Ձնձի *տե՛ս* Ձունձ։

Ձնձիթ *«ձնգրիթ». այսպէս է մեկնում Բառ. հրեմ. էջ 190. երկուսն էլ անծանօթ բառեր են։*

Ձոխիլ *«շեղիլ, խոտորիլ, ծռիլ», մէկ անգամ ունի Ոսկ. երր. «Միտք որ ի բազում փորձութեանց պաշարեալ էին և ի հաւատոյ ևս ձոխէին»։ Բառ. հրեմ. էջ 190 ունի* ձոխել *«թիւրել», իսկ էջ 188* ձախել *«ծռել» (անշուշտ ձախ բառից)։ Վարդանեան ՀԱ 1913, 226 ուղղում է* ձախողէին։ *Թուի թէ նոյն է և* ձուլիլ *Ոսկ. պօղ. ա. 534. «Որպէս և զսոցա վերին երևոյս տեսանես, նոյնպէս և նոցա ոգիքն ձուլին»։ Երկու ձևերը շփոթուած են *ձուղիլ կամ լաւ ևս *ձողիլ դրչութիւնից։*

Նշ՛Ր իբր շեղիլ, խոտորիլ ի ձախակողմն կամ ժողխիլ, գեղխիլ։

Ձոձիր *տե՛ս* Ձոնիր։

+**ՁՈՂ**, ո *հլ. «երկար փայտ. 2. ծառի երկար ճիւղ, բուն» ՍԳր. Սեբեր. «Ձողի պէս ուղղորդ, շիփ-շիտակ» Ոսկ. փիլիպ. որից* ձողիf *«ձողերով հիւսուած ծածկոց» Ոսկ. մ. գ. 16.* ձողամբարձ *Ես. ե. 2=*ձողաբարձ *Եփր. աւետ. 288. Սարգ. յկ. դ. էջ 51.* ձողակերտ *Խոսր.* ձողանձ *Մագ. և Երզն. քեր.* ձողաչափել *Գնձ. ևն։ Նոյն արմատից է նաև* ձողձողեալ՝ *որի իմաստը ստոյգ չէ. «Քաժաւարոտն ձողձողեալ այլախառն մազովն». Բառ. հրեմ. էջ 326։ —Ձող բառը նշանակում էր նաև «կաշուց կտրուած երկար շերտեր, գոլ». այս իմաստը անյայտ է հին հայերէնում. բայց սրանից ունինք* ձողանձ *և* ձողանձութիւն *«կաշուց գոլեր կտրելը», որոնց համար գտնում եմ հետևեալ վկայութիւնները. Սուտեր յաղագս խահարարաց կամ փայտահատաց կամ ի մորթս ձողանձևութեան յօգտակարութիւն պատշաճեալ է ի կենցաղումս. Մագ. թղ. 181. Որպէս ի ձողանձս մորթեգործք որք արտաքոյ և ներքոյ զմորթսն կազմեն. Մագ. և Երզն. քեր.—տես և տակը գու։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'hol- ձևից. Համմտ. լիթ. žúolis *«փայտի կտոր, ծառի բուն» և թևրևս սանս.* hala *«արօր»։*

Նշ՛Ր լծ. ծիղ, ծղօտ, ցօղուն, ձաղկ *և* ճիւղ։ *Հիւնք.* ցօղուն *բառից։ Վերի մեկնութիւնը տուին* Scheftelowitz IF 33, 141 *և* Petersson LUA 1916, 75, Heteroklisie 155 *(ըստ* Pokorny. 1, 629 *և 540, հնխ.* g'hel *«կտրել»? արմատի տակ)։*

ԳԻՒ.—Մշ. ձ'ող *«ձող», Հճ.* ձ'ող *«գերան», Ակն. Կր.* ձ'օղ, *Երև.* ձ'օղի, *Սեբ.* ձ'էօղ, *Ճգլ.* ձուղ, *Ջթ.* ծիւղ, ձ'իւղ, *Ոզմ.* ձ'իւուղ (üü) *«ձող», Սվեդ.* ձ'իւղ *«արօրի ձող»։ Նոր բառեր են* ձողան, ձողի *(Համմտ. մհյ. գրծ.* ձողտվ *Մաթ. պտմ. 134 և 135),* ձողտար, ձողթաշ։— *Գաւառականներում՝ պահուած է նաև* ձող *«կաշիի գոլ» (այսպէս ունին Ախց. Ախք. Գնձ. Ղրբ.), որից նաև Ախց.* ձ'օղ *«կոնակ, մէջք»։*

ՓՈԽ.—Թրք. գու. S. soγ *«ձող, սիւն» (Բիւր. 1899, 799), քրդ.* zoela *«փայտի ձող» (ըստ Ղափանցեան* ЗВО *23, 355), Թրք. գու.*

Սլմ. zülä, *Երև.* zola «*ձող, փայտի ձող*»։— Զող *բառի վերջին իմաստից են փոխառեալ (այն ժամանակ՝ երբ դեռ հյ.* ղ=լ *էր) քրդ. և թրք.* zol «*կաշիի զոլ. 2. կերպասի վրայ երկար երկար գծեր*», *ն. ասոր.* zülä «*կերպասի վրայ զոլեր*», *վրաց.* ზოლი զոլի «*հիւսուածեղէնի վրայ զոլեր*», ზოლიანი զոլիանի «*զոլաւոր, զոլեր ունեցող*», ზოლებიანი զոլեբիանի, ზოლ-ზოლი զոլ-զոլի «*զոլաւոր*» *(իմաստի զարգացման համար հմմտ. թրք.* čubuq>*ռմկ.* չուպուխ «*ճրպոտ, ձող. 2. կերպասի վրայ զոլեր*»), *որոնցից յետ առնելով՝ հյ. գւռ.* զոլ «*կաշու զոլ. 2. կերպասի վրայ զոլեր*»։—*Հայերէնից է վերջապէս լազ.* zevle «*լուծի փայտը կապելու կաշի*», *որի համար հմմտ. հյ. գւռ.* զոլ *(Վն.)* «*կաշիէ չուան սայլի լուծը միացնելու համար*»։ *Ուտ.* zol «*կաշիի զոլ, շերտ*», zolama «*երկար ձող. 2. հրացան*»։

+ԶՈՅԼ, ո, ի *հլ. (գրուած է նաև* ձոյլ՝ *ՀԱ 1913, 13,* ձիւլ) «*թափած, ձուլած, միապաղաղ, ամուր, պինդ*» *ՍԳր. Սղիշ.* «*ձուլուած բան*» *ՍԳր. Ոսկ. ես.* «*ժողովրդի միահամուռ խումբ, մասսա*» *Բուզ. էջ 72. որից* ձուլել *(գրուած նաև* ձուղել *Եփր. յհ. մկ. 139,* ձիւղել, ձօղել *Ոսկ. ճառք 482)* «*թափել ձուլել*» *ՍԳր.* «*պնդացնել, զօդել, ամրացնել*» *խոր. ՅՀ. կթ.* ձուլիչ *Դատ. ժէ. 4.* ձուլած *Ի. մնաց. գ. 3.* ձուլածոյ *կամ* ձուղածու *ՍԳր Կորիւն. Եփր. գ. կոր. 120.* ոսկեձոյլ *Լմբ.* բոլորաձոյլ *Պտմ. աղէքս.* պղնձաձոյլ *Ագաթ.* միաձոյլ *Յհս. գ. 16.* դիւաձոյլ *Ճառընտ.* ձեռնաձուլել *Նար. խշ. ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* g'heu-lo- *ձևից, որ յառաջանում է* g'heu- «*թափել, հեղուլ, ձուլել*» *արմատից՝* -lo- *մասնիկով. աւելի բնդարձակ տե՛ս* Զև *բառի տակ։*

Հիմնք. ծոյլ բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ Meillet MSL 9, 54, *որ յիշում է Հիւրշ. 469 անցողակի և կասկածով. ընդունում են* Patrubány SA 1, 193, Petersson, Ar. u. Arm. Stud. 107 *և* Pokorny 1, 563:

Գիւր.—Մշ. ծուլ *(աւում է միայն արծաթի և արիւնի համար)։*

ԶՈՆԻՐ «*տգեղագոյն հասակ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 190. սրա հետ նոյն է* ձոնիր «*տգեղ հասակ ունեցող*», *որ գիտէ միայն ՓԲ. մին կամ միւսը սխալ։*

ԶՈՐ, ո *հլ.* «*ցած հովիտ, ծործոր, լեռների սաորոտում հեղեղատի անցք*» *ՍԳր. որից* ձորակ *Ա. մակ. ժ. 82. Ագաթ.* ձորալիր *Ես. լ. 28.* ձորաձև *խոր.* ձորագաւառ *Սղիշ.* ձորամուտ *Զենոբ. խորաձոր Ես. ծէ. 5, Ոսկ. ես. մ. և. ա. Բեռ.* եօթնաձոր *Ես. ժբ. 15.* լեռնաձոր *Ջքր. կթ.* խարաձոր *Յկ. կարն. 14, 48։*

Նշ՛ր ծործոր *բառի՞ց։* Pictet 1, 134 *սանս.* darā, darī, *պրս.* دَرَ dara «*ձոր*»։ Müller, Armen. VI, *էջ 4,* SWAW *հմ. 122 և* WZKM *5, 269 զնդ.* zrayah- «*լիճ*», *սանս.* jraya «*մարգ*» *բառերի հետ. աւելի լաւ է պահուած ծործոր ձևի մէջ։ Մառ* ЗВО *5. 320 ցեղակից պրս.* dašt, *պհլ.* dašta «*դաշտ*» *բառերին, որոնցից փոխ է առնուած հյ.* դաշտ. *Հիմնք. նոր բառից։ Ղ. Սարգսեան, Բիւր. 1898, 484 արմատը* nr «*խորութիւն*», *որից նաև* որոգայթ, ծործոր, խոր, ճոր։ Patrubány SA 1, 193 *յն.* χωρα «*պարապ դեռին*» *բառի հետ՝ հնխ.* g'horos *ձևից։ Նոյն ՀԱ 1910, 118 հնխ.* g'hei «*դատարկ լինել*» *արմատից։ Մառ,* О полож. абхаз. 38 ջուր, ծործոր, *վրաց.* ծղալի *բառերի հետ. իսկ* ЗВО *1925, 683 սվան.* čala «*գետ, ձոր*» *բառի հետ։* Petersson, Ar. u. Arm. Stud. 106 *հնխ.* g'heu- «*հեղուլ. թափել*» *արմատից, որից են հյ.* ձև, ձոյլ։ *Նոյնը կրկնում է կասկածով* Pokorny 1, 563:

Գիւր.—Ալշ. Մշ. Զթ. ձ'որ, *Ախց. Երև. Խրբ. կր.* ձ'օր, *Վն. ծմր, Տփ.* ձուր, *Ագլ.* ձիւր, *Ոզմ.* ձ'իւռ (jhüür), *Սեբ.* ձ'էօր, *Ասլ.* ձ'էօ'ր, *Մրղ.* ձուի'ր, *Գոր. Ղրբ. Շմ.* ձէօր, *Սլմ.* ձուէր, *Զթ.* ձիւյ, ձ'իւր, *Մկ.* ձիւր, *Հմշ.* ձիւր, ձ'էօր։

ԶՈՐՁ, ո *հլ.* «*զգեստ*» *ՍԳր. որից* ձորձապատեալ *Ագաթ.* ձորձիկ *Ոսկ. յհ. բ. 1.* ձորձիլ «*զգեստի նիւթ դառնալ*» *Ես. ծթ. 6= Ոսկ. ես. 444.* ձորձոյկ *կամ* ձորձմոյկ *Եփր. թգ. 376 (ըստ Հացունի, Պատմ. տարազի, էջ 7 «շորը և կոշիկը միասին»),* ձորձաճերձ

Տօնակ. կարմրաձորձ *Նար. տաղ.* կնատաձորձ *Ոսկ. մ. գ. 16.* հրաձորձ *Տաղ.* միաձորձ *Ոսկ. մ. գ. 37։*

Bugge IF 1, 449 *գնում է նախաւոր* *դորձ *ձևից և սրանով կապում հան-դերձ բառի դերձ արմատի հետ, որ իրանական փոխառութիւն չի համարում։— Հիւնք. գործել բայից։* Petersson, Ar. u. Arm. Stud. 132 *հնխ.* g'horg'h *ձևից. համմտ. լիթ.* žirklės *«մկրատ», լիթթ.* firkles *«մեծ մկրատ», յն.* χάραξ *«ցից»,* χαράσσω *«սրել, ճեղքել, հերձել»։*

ՁՈՐՏԱԼ *«սիրտը տրոփել, դողալ,* затрепетать» *Բանք աղ. 181։—Համմտ.* ձպրտալ?

ՁՈՒ, ո *հլ. «հաւկիթ» ՍԳր. Վեցօր. Մծբ. Փարպ. (Մծբ. ունի յգ. գրծ. -oւ). որից* ձուի *«ամորձիք» Վրդն. առակ. 40.* ձուանկ *«ամորձիքը ընկած, փոշտանկ» Վրդ. առնակ. 53.* ձուարդ *կիւրղ. զետ. նոր գրականում՝* ձուածիր, ձուաձև, ձուածիւն, ձուարան *են։*

Այս գաղափարն արտայայտելու համար՝ դրեթէ բոլոր հնդևրոպական լեզուներում գտնում ենք մի և ընդհանուր ձև. համմտ. լատ. ōvum, *յն.* ὠιον, ᾠον ᾠβεα, *հսլ.* aje, ajĭce. *ռուս.* яйцó, *սերբ. լհհ.* jaje, *չեխ.* vejce, *հիսլ.* egg, *հրգ.* ei. *անգսք.* āeg, *պրս.* xāya, *քրդ.* xēk, *զազա* xāk, *օսս.* aik' *«ձու, հաւկիթ»* (Pokorny 1, 22, Berneker 26 Trautmann 202, Boisacq 1082, Walde 550): *Այս բոլորի նախաձևը գրում է հնխ.* *ōu̯om, *որ գերմանական ճիւղում դարձել է* *ōyom, *իրանեանում* *āya- *են։* Böttich. Arica 54 *և յետոյ* Müller SWAW 66, 273 *սրանց են կցում նաև հյ.* ձու։ *Հիւրշ.* Arm. Stud. *էջ 46 և* Arm. Gram. 471 *չի ընդունում, որովհետև հայերէնի մէջ նախաձայն ձ մնում է առանց բացառութեան։* Bugge KZ 32, 16 *ենթադրում է՝ որ* ձու *նախապէս* *ձուու *ձևն ունէր. այս բառը բարդուած է* *ձու *«ձուկ»+**ու *«ձու» բառերից. այսպէսով* ձու *նշանակում է բուն «ձկան հաւկիթ» (համմտ. գւռ.* հաւկիթ, *որ բուն նշանակում է «հաւի ձու» և յետոյ վերաձուած է ընդհանուրի) և արմատը լինում է* *ու<*հնխ.* ōvom *կամ* ōivom: *Հիւրշ. այս մեկնութիւնն էլ չի ընդունում։ Հիւնք. էջ 5 ցոլ բառից, էջ 277 ցաւ բառից։* Patrubány SA 1, 211 *հնխ.* g'hu *«ձուլել» արմատից, իսկ ՀԱ 1906, 23 ձև բառի այլակերպութիւնն է համարում։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 116 նորից է կցում հնխ.* ōio *ձևին, ենթադրելով որ* ōio *համանմանութեամբ դարձել է* i̯ōi̯o, *որից էլ* ձու։ *Հայերէնի հետ կապ ունի՞ արդեօք վրաց.* ძუ ձու *«անասունների էգը». օր.* ձու ձաղլի *«էգ շուն»։*

Գիհ.—Տփ. ձու, *երև. Ջղ.* ձ'ու, *Ոզմ.* ձ'օւ *կամ նաև խաւիծօ (<հաւի ձու), Ագլ.* ձիւ *և* ձիւվ, *Մկ. Մրղ. Շմ. Սլմ. Վն.* ձիւ, *Գոր. Ղրբ.* ձիու, *իսկ Ալշ. Ասլ. Մշ. Պլ. Սչ. են առհասարակ գործածում են հաւկիթ բառը.* ձու *ձևը պահուած է ձուածեղ բառի մէջ, որի զանազան ձևերն են՝ մհյ.* ձուազեղ *(ըստ Նորայր, Բառ. Ֆրանս.* omelette), *Մշ.* ձ'վածեղ, *Պլ.* ձվածէղ, *Ասլ.* ձվածէ՛ղ, *Նխճ.* ձվածյէղ, *երև. Սեբ.* ձ'վածէղ, *Ախց.* ձ'վածէղ, *Մրղ.* ձիվածէղ, *Սչ.* ցեվածեղ, *Տփ.* ձվածիղ, *Հճ.* ձ'վազեղ, *Սլմ. Վն.* ծվազեղ: *Նոր բառեր են* ձուան, ձուապան, ձուատեղ, ձուաճուտ, ձուախեղդ, ձուի, ձուիկ, ձուուտ, ձվջուր, ձուիկնալ, ձուերես, ձուացախ, ձուազող, ձուախաչուռ։—*Հն. տաքրքրական է Ջղ.* ծապատակ՝ *որ շրջուած է* *ձուտապակ *ձևից։*

Ձուլիլ *տե՛ս Ձոխիլ։*

+**ՁՈՒԿՆ**, ն *հլ. (ձկան, ձկամբ, ձկունք, ձկանց) «ձուկ» ՍԳր. «ձուկ կենդանակերպը» Շիր. որից* ձկնորս *ՍԳր.* ձկնորսութիւն *Ադամթ.* ձկնաքաղ *Վեցօր. 175* ձկնաճան *Ոսկ. մ. գ. 17.* ձկնոց *«տան մէջ ձուկ պահելու աւազան» Ոսկ. ա. տիմ. 155.* աղոցաձուկն *Խոր. Հոիփ. Մխ. առակ.* ձկնատեաճ *կամ* ձկնատեսանճ *Բուզ.* ձկնաւար *Ոսկ. յհ. ա. 1.* ձկնիկ *Վեցօր.* ձկնամբ *«թաթառ» (Նորագիւտ բառ. գործածուած է միջնադարեան գրուածքներում՝ ըստ Ալիշան, Հին հաւ. էջ 65),* կարթաձուկն *Շիր.* վիշապաձուկն *Կղնկտ.* աղձուկն *«տառեխ» Նոր. վկ. էջ 43 (Նորագիւտ բառ). Նոր գրականում՝* բրաձուկ, վահանաձուկ, արծաթաձուկ, օձաձուկ, ձկընկիր, ձկնարանութիւն *են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ. g'hu- ձևից, որի վրայ աւելացել է -կն մասնիկը. հմմտ.* մուկն, արմուկն: *Ցեղակիցներից կան միայն յն.* ἰχθύς, *լիթ.* žuvis, *լեթթ.* zuvs, zuve, *հպրուս.* suckis *(եզ. հյց.)*, suckans *(յգ. հյց.) հոմանիշները, որոնց նախաձևը դրուում է* g'hyu- *(ըստ* Johansson*) կամ* g'hzu- *(ըստ* Bartholomae*): Միւս լեզուները ներկայացնում են տարբեր խմբակցութիւններ. ինչ. լտ.* piscis, *հիւլ.* iasc, *գոթ.* fisks, *արիական* matsya-, *հսլ.* ryba, *որոնք ըստ* Meillet BSL 22, 48 *թուի թէ փոխառնւալ են զանազան ոչ-հնդևրոպական լեզուներից* (Trautmann 373, Boisacq, *էջ 387)*:—*Հիւրշ. 471*:

Klaproth, Asia pol. *էջ 100, 134 լեզգ. ավար.* čua, *ննիսէյ* tyg, tig, *լիվ.* zuwe: *ՆՀԲ «որպէս թէ* ձուկ, *լի ձուօք»*: Peterm. 23 *երր.* דָּג dāg «ձուկ» *բառի հետ: Ուզիղ մեկնից նախ* Böttich. Arica 54՝ *համեմատելով լիթ. žėvi հետ. նոյնը կրկնում են կամ ընդարձակում* Müller SWAW 48, 430, Fick KZ 22, 384: *Մորթման* ZDMG 31, 417 *բևեռ.* zikuni?—*Հիւնք. յն.* κύκνος «կարապ» *բառից:* Karst, *Յուշարձան 415 ճապոն.* sakana, *մոնգոլ.* dzigasun, *կալմուկ.* dzagasun «ձուկ»: *Մատ.* ИАН *1917, 329 ավար.* ču'a «ձուկ» *բառի հետ, իսկ 1926, 391 ջուր բառից է հանում. նոյնը տե՛ս և* Сред. передвиж. 41:

ԳԻՒ.—Ջղ. ձ'ուկն, *Ագլ.* ձուկնը, *Աժտ.* ձուկնը, *Ղրբ.* ձուկնը, ծիւկնը, *Շմ.* ծիւգ'նը, *Ախց. Կր.* ձ'ուկ, *Տփ.* ձուգը, *Ննխ. Պլ.* ձուգ, *Ալշ. Ակն. Երև. Երբ. Հճ. Մշ. Սեբ.* ձ'ուգ, *Գոր.* ծիւկնը, *Համշ.* ծուգ, *Հւր.* ձիւգ, *Մկ. Վն.* ծիւկ, *Մրզ.* ծիւկ', *Սլմ.* ծիւկ', ծիւմ, *Ռ. Տիգ.* ցուգ, *Սչ.* ցուգը, *Ասլ.* ձ'իւգ, ձ'իւյ, *Սվեդ.* ձ'էօգ, *Ոգմ.* ձ'էօւկ (jhöuk), *ՋԲ.* ծօգ, ձ'ոգ: *Նոր բառեր են* ձկնակ, ձկնաձուռ, ձկնաման, ձկնամէջք, ձկնամիս *(այս բառը պիտէ արդէն Բառ. երեմ. էջ 216)*, ձկնապան, ձրկրնխուռ, ձկնձու, ձկնուռ, ձկնկուլի «մի տեսակ ջրային թռչուն» *(իսկ Շլ.* ձկլկուլի «շերեփուկ *գորտի»*. (Pokorny 1, 664, Ernout-Meillet 735): *Այս բառի հետ պատահական նմանութիւն միայն ունի արաբ.* سقنقور saqanqūr, *որի վրայ տե՛ս* սնգուր):

ՁՈՒՂԲ «ձկնկիթ, խավիար». *գործածութեան տեղը անյայտ է. չկայ նաև արդի գաւառականների մէջ. 1788-ին գիտէր Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկպետ. էջ 64, 213, գրուած՝ «ծուղպ (цуги) կամ խաւիար икра», որից՝ էջ 213 «ծուղպնաւոր կամ խաւիարաւոր»:*

Տաշեան ՀԱ. 1925, 73 հանում է ձու բառից:

ՁՈՒՆԻ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Ոսկ. ես. 352. Ի՛ւ իւիք ձաղ ինչ կամ ձունիս արարի զձեզ:*

ՆՀԲ համարում է նոյն ընդ ձօնի: Թոռնեան, Հաւրնտ. Ա. 325 թևևս «ծաղր, խաղք ընել»:

ՁՈՒՆՁ (ո հլ. *ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «քուրջ, պատռած հնացած շոր» Վրք. Հց. բ. 340 (երկու անգամ գործածուած). նոյն է նաև* ցնցոտի *(-տւոյ, -տեաց) Ոսկ. յհ. բ. 14 և մտթ. բ. 25.* ցնցոտաւոր *Մանդ. էջ 105 (գրուած է* ցնոտաւոր, *այլ օր* ցնուտ *և* ցոտուտ), ցնցուտ *ճառընտ.* ցնցոտել «անարգել» *Մագ.* ցնցոտիկ *Վրք. Հց.* ցնցոտումն *ճառընտ. բոլոր վերջիններք հնթագրում են* ցունց *արմատը. առաջինին են վերաբերում նաև խոռնուն «տեռատեսների կապած շորը, ապարահի քուրջ» Վրք. Հց. բ. 135.* ձնձի «մազէ զգեստ» *ՀՀԲ, «փիլոն կամ վիոռն» Հին բռ.=Բառ. երեմ. էջ 190, «ջնջոց ալերան» Քաջունի Գ. 150 (գրուած* ձնձի *ձևով)*:

=*Նոյն է վրաց.* ძონძი ձոնձի «հին զգեստ, քուրջ», *որից* მეძონძე մեձոնձե «հնոտավաճառ». *բայց յայտնի չէ թէ ո՛րը որից է փոխառնւալ:*—*Աճ.*

Հիւնք. ցնցել *բառին է կապում* ցընցոտի, *որ ընդունում է նաև Տէրվ. Մասիս 1881 մայիս 6: Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 97* ձորձ. *բառից:*

ԳԻՒ.—լ. ձունձ «կապերտ» (*Ագղ. Հանդ. բ. 207*). *Հմմտ. նաև Ագլ.* ձնձնատեղ «ժալքատեղ, անկողինները դարսելու դարան». *իմաստի զարգացման համար հմմտ. Բրք.* pa-ḷas=*ոմկ. փալաս «կարպետ. 2. ցնցոտի»:*

Այստեղ է պատկանում նաև ձուննուլայ *(իմա՛* ձ'ուննուլայ*) Խոջ. «կեղտոտ. փնթի» (իբր ցնցոտաւոր)։*

ԶՈՒՆԶՈՒՆԱԿ *«մի տեսակ թռչուն». գիտէ միայն Քաջունի, Գ. 150. գործածութեան տեղը անյայտ։*

ԶՊՏԻԼ *«ձգնալ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 191։*

ԶՊՐՏԱԼ *«յօրանջելու և ձգձգուելու ժամանակ ոսկորների ձայներ հանելը» Ասկիփ.։*

ԶՐԶԵԼ *«կորզել, շորթել, կեղեքել, զզել» Պիտ. Փիլ. տես. էջ 21. որից* ցրցուն *«պատառաստուն» Վրք. հց.* ցրցտել *«բզկտել, պատառոտել» Ոսկ. մ. ք. 15. Մագ. ժե.* ձրձիտ *«գիշատիչ, պատառող, յափշտակող» Եղիշ. դտ. էջ 188, 189. Վրդն. ծն. պարզ արմատը պէտք է լինի* ձիրձ *կամ* ձուրձ *և* ցիրց *կամ* ցուրց.—*ա զօրացուցիչ մասնիկ է։ Տե՛ս նաև* ձարձատ։

=Նոյն են վրաց. ცრცვა ցրցվա *կամ* ძრცვა ձրցվա *«կողոպտել, մերկանալ յընչից»,* აძარცვა ադարցվա *«կաշին քերել»,* აცრცნა ացրցնա *«փորփորել»,* მოცრცნავა մոցրցնավա *«քերել»,* მოძრცვა մոձրցվա *«քերթել, քերել, կորզել»,* ცარცვა ցարցվա *«կողոպտել, շորերը պլոկել». բայց յայտնի չէ երկուսից ո՛րն է փոխառեալ։—Աճ.*

Հինք. հանում է ձորձ բառից։ Աճառ. ՀԱ 1899, 235 սխալմամբ ցրցտել *դնում է կրկնուած հյ. ցտել բայից։* Petersson, Ar. u. Arm. Stud. 85, 132 *հյ.* ձորձ *բառի հետ հնխ.* g'horg'h- *արմատից. համմտ. լիթ.* žirklės *«մկրատ», լեթթ.* firkles *«մեծ մկրատ», յն.* χαράσσω *«սրել, կտրել»,* χάραξ *«ցից»։*

+**ԶՕՆ** *«պարգև, ընծայ, նուէր» (մանաւանդ աստուածներին ձօնուած նուէր), հին հայերէնում չէ աւանդուած, բայց կայ նոր գրականում՝ «գրական ընծայաբերութիւն,* dédicace» *նշանակութեամբ. որից* ձօնել *«նուիրել, ընծայաբերել մեհեաններին կամ Աստուծոյ» Ագաթ. (գրուած նաև* ձունել *Մագ.* ձոնել*). ձօնի «աստուածներին արուած նուէր» Օր. ժղ. 22. իգ. 17. Նա. քր. ձօնիչ «գրուած» Խոսր. Սկևռ. Նչ. եղեկ. ձօնարան «ընծայարան» Նար. ձօնումն Պղատ. օրին. դիւաձօն Նար. յովէդ. տարբեր իմաստ ունի ձօն Մխ. բժշ. 37. Ապա թէ չորանայ ծառն, չիկայ հնար որ ձօնիւ դարձեալ, իւր բնութիւնն դառնայ (իմա՛ «դարմանելով, խնամելով, աշխատանքով». իսկ* Seidel *Մխ. բժ. § 114 ըստ* Karst *մեկնում է «ինքնին, ինքնաբերաբար»)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'hu- *արմատից. համմտ. սանս.* हु hu, हूयति hūyáti, जुहोति juhṓti *«կրակի մէջ հեղուով զոհաբերութիւն անել»,* होत्र hṓtra- *«զոհ»,* हविस् havís- *«զոհաբերութիւն աստուածներին»,* हव háva, हवन hávana- *«զոհ»,* हुत hutá- *«զոհուած»,* होतृ hṓtar- *«զոհաբերող, քուրմ», զնդ.* zaoθra- *«զոհ, օրհնեալ ջուր» (որից փոխ.՝ հյ. զոհ),* zaotar- *«քահանայ, քուրմ», յն.* χοή *«հոսուն ջուր. 2. ըմպելեաց ձօն՝ ի պատիւ աստուածներին կամ մեռեալների հոգուն (ձօնելի գինին կամ մի ուրիշ հեղուկ թափում էին ողջակէզից առաջ և կամ կաթիլ կաթիլ ծորում մեռելի գերեզմանի վրա»,* χύτρα *«օրհնեալ ջուր»,* χυλός, χυμός *«հոյզ, հիւթ, համ» ևն։ Այս բոլորի նախնական արմատն է հնխ.* g'heu- *«հեղուլ, թափել»,* χέω *«ձուլել», որից յառաջացել է հյ.* ձև *(սրա հետ ուղղակի կցուող բառերը տե՛ս ձև բառի տակ)։ Այնուհետև նոյն արմատը ստացաւ «աստուածներին ըմպելիք ձօնել» իմաստը և ապա ընդհանրանալով՝ «զոհել»։ Հայերէնի մէջ նոյն գաղափարը պահուած է «աստուածներին ընծայաբերել» իմաստով, որ յետոյ նաև անցաւ Քրիստոնեաների Աստուծուն, իսկ այժմ էլ գործածւում է հասարակ մահկանացուների համար։ Հնխ.* g'heu-*>հյ.* ձև *արմատի ստորին ձայնդարձն է հնխ.* g'hu-*, որ գտնում ենք շատ լեզուներում։ Սրանից յառաջացել է հյ. *ձու, որի վրայ աւելանալով* -աւն *մասնիկը (համմտ.* պաշտել, պաշտ-օն*)՝ դարձել է *ձուաւն և ու ձայնի անկումով՝* ձաւն*>*ձօն (Pokorny 1, 563, Walde 325, Boisacq 1057)։

Brosset JAs. 1834, 369 *են վրաց.* ցեմա: *ՆՀԲ թրք.* صونمق սօնմագ, սունմագ *«մատուցանել, ընծայել»*, *իսկ պատրուճակ բառի տակ լծ. եբր.* ծօն: Müller SWAW 66, 274 *մտածեց առաջին անգամ ուղիղ մեկնութիւնը՝ համեմատելով զնդ.* zavana *և սանս.* havana *ձևերի հետ: Նոյնը աւելի զարգացրին Հիւբշ.* KZ 23, 24 *և* Lag. Arm. Stud. § 1360:—*Տէրվ. Մասիս 1881 մայիս 11 հյ. արմատը դնում է* *ծու. *հմմտ. նաև* ըն-ծայ: *Հիւբշ.* Arm. Gram. 469 *վերի մեկնութիւնը անապահով է գտնում՝ նշանակութեան տարբերութեան* (!) *և աւ երկբարբառի պատճառաւ (Վերի բացատրութեամբ այս պատճառները վերացում են): Հինք. ընծայ բառից:* Osthoff BB 24 (1899), 182 *հնխ.* zau *«դոշել» արմատից, իբր սանս.* havati *«կանչել», զնդ.* zavaiti *«նզովել», հսլ.* zovą, *լիթ.* žaweti *«կախարդել» և հյ.* նզովել. *իմաստի զարգացման համար հմմտ. լտ.* dicare *և* dedicare: *(Այս մեկնութիւնը կրկնում է* Pokorny 1, 222 *և* 529, *առանց հաւանութեան): Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 341 մերժելով ուղիղ մեկնութիւնը՝ կցում է թրք.* ṣun *«ընծայ» բառին: Մաս* ЗВО *22, 61 և* ИАН *1918, 342 համարում է յաբեթական արմատ և կցում է վրաց.* ձղուն, *մինգր.* ջղոնա, *լազ.* օնջղոնու *«շնորհել, բաշխել» բառերի հետ: (Աւելացնել նաև վրաց.* ძღვნა ձղվնա *«տալ, ձօնել»,* მი-ძღვნა մի-ձղվնա *«տանիլ, մատուցանել, ուղարկել», որոնք բոլոր պատահական նմանութիւն միայն ունին):*

Փոխ.—Lag. Arm. Stud. § 1360 *հայերէնից փոխառեալ է համարում եբր.* זנה zōnā *«բոզութիւն անել, յատկապէս ծիսական բոզութիւն անել, աստուածներին ծառայել կամ երկրպագութիւն մատուցանել»: Բառիս սեմական միւս ցեղակիցներն են արամ.* זנה zōnā, *ասոր.* ܙܢܝ zanix, *արաբ.* زنى zana, zāniyaṭ, *եթովպ.* ዘመወ zamav *(տե՛ս* Gesenius, Hebr. u. Aram. Handwörterb. *1921, էջ 201):*

ԶՕՆԶ, ի *հլ. անստոյգ բառ, որ առանձին չէ գործածուած և կայ միայն վիմանձնական «քարաժայռ» Դամասկ. առ լհհ. և վիմանձնական «ժայռուտ, ժայռային» Պիտ. առ լհհ. բառերի մէջ: Հմմտ. նաև* ձոնձ:

ՆՀԲ կարծում է որ նոյն է ձունձ *«կըտոր, ցնցոտի, քուրջ» բառի հետ և կամ թէ պէտք է ուղղել* վիմանձաւ, *որով չնչում է ձօնձ՝ իբրև բառ:*

Ղ

Ղաբանոս, ի–ա *հլ. «իմաստուն, իմաստասէր». ունին միայն ՀՀՒ և Բառ. երեմ. 191. ՀՀՒ համարում է «բառ այլազգական»։*

Ղաբողոճ *տե՛ս Աղաբողոն։*

***Ղազաւ** *«կռիւ, պատերազմ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. յունվ. 23 (էջ 440). Վրէժխնդիր հղեալ խոսրով արեանն Մօրկայ և երթեալ ի Կեսարիա... և ղազա գործեալ՝ կոտորեաց անդ զհազարս հազարաց ի քրիստոնէիցն։*

=Արաբ. غزا *γazā «պատերազմ յանուն իսլամական կրօնի»։—Աճ.*

Ղազմուխ *«նուրբ միղն ի ներքոյ կիզևոյ մայրի». ունի միայն Քաջունի Գ. 150։*

Ղազուկ *«մակալիզու, luette» Դպղիան. նորագիւտ բառ, որ յիշում է Նորայր ՀԱ 1921, 234։*

***Ղաթմար** *«մի տեսակ ծաղիկ» Սալաձ.*

=Թրք. قطمر qatmer *(ոմկ. խաթմէր) «ծալ ի ծալ, բազմաթերթ», որից* qatmer čičeyi *«մի տեսակ բազմաթերթ ծաղիկ է»։ —Աճ.*

Ղաթրան *տե՛ս Կտրան։*

Ղաթք *տե՛ս Ղատափ։*

***Ղալամ** *«գրիչ, եղեգնեայ գրիչ» Գնձ. Կոստ. երզն. 131, որ և խալամ Օրբ. հկճռ. Գ. էջ 32։*

=Արաբ. قلم qalam *«գրիչ», որից նաև Թրք.* qalem, *ոմկ. խալէմ, ղալամ (տե՛ս և կաղամար)։*

Ղալատ *տե՛ս Խալատ։*

Ղալէ *«մի տեսակ հին նաւ». մէկ անգամ ունի Սմբ. պտմ. 129. «Գաղտ ի գիշերի մըտան ի ղալէքն կիպրոսայ տիրոջն, որ և եկեալ էին իւր հրամանօք յօգն քաղաքին և նաւով փախան»։ Տե՛ս Խալէ, ուր և բառիս մեկնութիւնը։*

Շահնազարեան, հրտր. Սմբ. պտմ. էջ 155 մեկնում է ղալէֆ *(իմա՛ «բերդեր») կամ* գալեր *(իմա՛* galère*) «թեթեւընթաց նաւ»։*

***Ղալիաձ** *«մի տեսակ ուտելիք» Մխ. բժշ.*

=Արաբ. قلية qalia *«սկաւառակում իր շոգիով եփուած միս կամ ուրիշ կերակուր»։ Բառիս հետ նոյն են նաև քրդ. ղալի «խարկած միս», ղալանդրն «խարկել»։*

Ուղիղ մեկնեց Seidel, *հրտր. Մխ. հեր. § 95։*

ԳԻՒ.—Բլ. խայլա (Հաղորդեց Ս. Մովսիսեան, նամակ 1933 մարտ)։

***Ղալիոն** *«մի տեսակ բոյս, որ կոչւում է կտրածի խոտ. լտ.* galium» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1798։*

=Արաբ. غاليون *γāliyūn. նոյն է նաև լտ.* galium. *երկուսն էլ ծագում են յն. γάλιον (որ է ֆրանս.* gaillet jaune*) բառից (Շեյնիշնայդէր* WZKM 12, 223)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

Ղալի կամ **Ղալղի** *«կալի կոչուած ծովեզերեայ աղային բոյսը» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 967 (խալի բառի տակ)։*

Ղալպաս *«օշնանի նման մի խոտ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3356, իբր օտար բառ։*

Ղախեղեալ *«ղօղեալ կամ ղաճեալ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 191, որ մի քիչ յետոյ էլ ղաճել մեկնում է «ղօղել»։*

Ղակատել *«սպանել, սատակել». ունին միայն Բառ. երեմ. էջ 191 և ՓԲ։*

Ղակիշ *տե՛ս Լակիշ։*

Ղակեոյան *«վաճառանոց». ունի միայն Բառ. երեմ. էջ 191։*

Ղակոյն «օդի կամ քամու մի տեսակ» Եպիփ. կիպր. (վկայութիւնը տե՛ս մաղնական):

Ղահվէ տե՛ս Խահուէ:

Ղաղ տե՛ս Կալ:

Ղաղատրել «ղօղանջել». ունի միայն ՓԲ:

Ղաճել «ղօղել». ունի միայն Բառ. երեմ. էջ 191 (տես և ղախեղեալ). նոյնը գիտէ նաև ՓԲ, որ մեկնում է «ծածկել, պահել»:

Ղամաղան «թնօպի ծառը՝ որի վրայ աճում է աղարիկոն սունկը, լտ. agaricus» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1800:

*Ղամար «լուսին». իբր պրս. բառ. յիշում է միայն Շիր. (Երզն. երկն. է. ունի ղամէր ձևով). ազատ գործածութեամբ ունի Կոստ. երզն. 180 (Շամս ու ղամար, Իմ թաճս դուն):

=Արաբ. قمر qamar «լուսին»:—Հիւբշ. էջ 265:

ՀՀԲ իբր պրս.: ՆՀԲ լծ. ընդ կամար, ոմկ. Իմմէր: Ուղիղ մեկնեց Հիւբշ. ZDMG 35 (1881), 661:

Ղամբար տե՛ս Համբար:

Ղամիկ «եղն». ունի միայն Բառ. երեմ. էջ 192: Սրանից պէտք է դնել ղամիկեալ կամ ղամեկեալ «եզի կամ ցուլի պէս եղջերցելով, ընդվզելով», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 237 (տե՛ս իմ յօդուածը՝ ՀԱ. 1923, 252):

*Ղամղայեան «պճնել, զարդարել». մէկ անգամ ունի Բուզ. գ. 14. «Ագանէր (հանդերձս) ղամղայեալս և ժապաւինեալս»:

=Իրանեան փոխառութիւն է. պհլ. ձևը անյայտ. բայց կայ պրս. لام lām «զարդ, զարդարանք». որից հյ. *ղամ «զարդ», կրկնուած ձևով *ղամղայել «զարդարել»:—Աճ.

ՆՀԲ լծ. թերևս ընդ ոմկ. Իմխա (=պրս. kimxa «մետաքսեայ կտորեղէն»): Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ MSL 15, էջ 242:

*Ղամպիլ «մի տեսակ բոյս. լտ. mallotus philippensis կամ alkekengi?» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1801:

=Արաբ. قنبيل qanbīl, որի նկարագրութիւնը տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 332:

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 143:

Ղամրաս «լոտիկարել». ունի միայն Բուռ. երեմ. էջ 192. ի՛նչ լինելը յայտնի չէ:

Ղաղաղ «բարեվայելուչ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 192:

Ղաճաճանիոն «մի տեսակ բոյս է, որ աճում է Երևանում!» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1802:

Ըստ Բժշ. «Հելլենացւոց բառով է»:

*Ղաճունիմ «բարձունենիկ ծաղիկը. լտ. abrotanum» Ամիրտ. գիտէ միայն ՀԲուս. § 1803:

=Արաբ. قيصوم qaysūm նոյն նշ. տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 541:

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 321:

*Ղան «իշխան, մանաւանդ թաթարների թագաւորը կամ իշխանը» Կոստ. երզն. 131. աւելի նոր հնչումով՝ խան Կոստ. երզն. 174.—յդ. սեռ. ղան ո ռաց Սամ. աննց. շար. 159. որից ղանուդի Մխ. այրիվ. 83. ղանութիւն Մխ. այրիվ. 83:

=Թրք. qan, ույղուր. قان qan, պրս. خان xān «իշխան»:

Ղանաբաց. անատոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր 74. «Շատ դրեր ես սիրու գնդան, դուդ ու դրունքդ է ղանարաց»: Նշանակում է «սպանդանոց», ինչպէս ունինք Ախալցխայի գաւառականում:

=Անշուշտ Թրք. qan «արիւն» բառից. բայց qanara «սպանդանոց» ձևով մի բառ չունին ո՛չ Արիկեան, Տաճկ. բռ. և ո՛չ էլ Будаговъ, Срав. слов.—Աճ.

*Ղանդիանոն. գրուած նաև աղանդաւոյն, աղադաւոյն Գաղիան. և դ տառը գ-ի հետ շփոթելով՝ դանգաւուն կամ աղանգաւոյն «լատան» Խոր. աշխ. 603:

=Յն. λάδανον ձևից փոխառեալ. աւելի ընդարձակ մեկնութիւնը տե՛ս Լատան:

Այսպէս նախ ՀՀԲ կասկածով, նոյնը յետոյ ՆՀԲ և մանաւանդ Նորայր, Հայկ. բառաք. էջ 10 և ՀԲուս. § 3357:

Ղանթար տե՛ս Խանթար:

*Ղաննին, ի–ա հլ. «մի տեսակ արևելեան նուագարան՝ բազմաթիւ թելերով. տճկ. Ղանուն» Թղթ. դաշ. վրք. հց. ա. 151.—Ճայս

բառը ՆՀԲ և սրան հետևելով Ա.Բ մեկնում են «երգեհոն», անշուշտ ձայնական նմանութիւնից հետևցնելով. սակայն սխալ է, որովհետև Թղ. դաշ. գրում է «երգեհոնօք և դանոնօք յորդաձայնիւք», որով հասկացւում է, որ երկուսը տարբեր նուագարաններ են)։

=Արաբ. قانون qānūn՝ *նոյն նշ. որից նաև թրք.* qanun, qanon. *արաբ բառն էլ փոխառեալ է յն.* κανών *ձևից, որ նշանակում է բուն «եղէգի ցօղուն», բայց նաև «նուագարանի բանալի, մի տեսակ միալար նուագարան»։—Հիւբշ. 516։*

ՆՀԲ յն. ὄργανον, *պրս.* էրղանուն, էրղուն, *թրք.* գանուն *(ուղիղ է միայն վերջինը)։ Ուղիղ մեկնից նաև* Brockelm. *Ուս. փոխ. բառից։*

ՂԱՆՃ. *արմատ առանձին անգործածական. գտնւում է միայն* խառնաղաճն *կամ* խառնաղաճ, ի հլ. *«խառն և խուռն ամբոխ» ՍԳր. «հասարակ, ամէնական» Ոսկ. հմ. Կորիւն. Վեցօր. 80, 86 բառի մէջ. նոյնը աւում է նաև* խառնիճաղաճն *կամ* խառնիճաղաճ *ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 17.* խառնաճաղաճն *Վեցօր. 139.* խուռնճաղաճ *Յայտմ.—վերջիններս տարակոյս են հանում բառի ձևի մասին՝ թէ արմատը ղա՞ճն է, թէ ճաղաճն: Սրա համար հետաքրքրական է* խառնիճ *«ամբոխ մարդկանց» նորագիւտ բառը, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. այրիվ. էջ 41. «Իսկ խնամքն Աստուծոյ ի բազում խառնիճս գոյացոյց զհսկայն յաղթանդամք և ուժեղք»։ Դրնդ. աէպ գրում է* խառնախաղիճն, խառնախաղիճ *(ինչպէս՝ էջ 98, 100, 547 ևն), և մէկ անգամ էլ ունի* խառնիճ՝ *էջ 365. Խառնիճքն ստիպով բերեալ են։ Աւելի լաւ է արմատը դնել ղաճն, ըստ որում ղ նախաձայնով բառ չունինք հայերէնի մէջ (նկատողութիւն Ղափանցեանի)։*

ՆՀԲ առանց բուն արմատը մեկնելու՝ խառնիճ *համարում է «մարախ»։ Հիւնք. արմատը նոյն է դնում ղօղանջ ձևի հետ։*

***ՂԱՇԱՅ** *«սասրի քահանայ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 28. «Եւ սասրի ղաշայ մի նեստորական գայ մտանէ ի տուն իշխանի միոջ»։*

=Ասոր. qaša *«երէց, քահանայ», որ և* qašīšā *«քահանայ». սրանից է թրք.* kešiš *«քահանայ». ծագում է* qaš *«ծերանալ» արմատից և բուն նշանակում է «ծեր, երէց»։ —Ա.Ճ.*

Ղապալ *տե՛ս* Կապալ։

ՂԱՏԱՓԻՍ *«ճարտարապետ». ունի միայն Բառ. երեմ. էջ 192։*

ՂԱՏԱՅ *«վերակացութիւն». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 192։*

***ՂԱՏԱՓ** *«մի տեսակ բոյս. լտ.* atriplex». *այս ձևով գործածուած չէ և սրա տեղ կան միայն զանազան սխալ ձևեր. ինչ.* ղաբֆ, ղատֆ *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1796։*

=Արաբ. قطف qataf *նոյն նշ. (տե՛ս Կամուս, թրք. Թրգմ. Բ. էջ 827 և* Steinschneider WZKM 12, 324). *սխալ ձայնանիշներով այս բառը կարելի է կարդալ նաև* qatf *(որ է* ղատֆ*), իսկ վերջին տառի վրայ մի կէտ աւելի դնելով՝* qatq (>ղաբֆ)։—Ա.Ճ.

Կայ նաև արաբ. غضف ɣaḍaf *«մի տեսակ հնդկական ծառ է» (անդ, էջ 820)։*

***ՂԱՏԻ** *«դատաւոր մահմետականաց». գործածական է յետին գրականութեան մէջ. ինչ. Բազում դէղէպուլք ևս և զղատին Տրփղեաց և զղատին Անուոյ և զղատին Դունայ և զանուանի շեհին Սուրմարուոյ, ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն՝ Անուոյ (Օրբել. էջ 260). —Նոյնը* խատի *ձևով՝ Ուռհ. տպ. էջմ. էջ 408. նոյնը* ղադի *ձևով՝ Նոր վկ. էջ 137—9 (ԺԴ դարից) ևն։*

=Արաբ. قاضی qāḍī *«Շէրիի մահմետական օրինաց դատաւոր»։*

***ՂԱԴԻՖԱ.** *«Թաւշածաղիկ» Սալաձ.։*

=Թրք. قادیفه qadife *«Թաւիշ», որից և* qadife čičegi *«Թաւշածաղիկ»։*

Ուղիղ մեկնեց Նորայր, Բանաս. 1901, 125։

***ՂԱՐ** *«դափնի» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1805. գրուած է նաև կար «դափնիի պտուղ» Բժշ. (ՀԲուս. § 1323) և սխալ գրչութեամբ շար (ՀԲուս. § 2286)։*

=Արաբ. غار ɣār *«դափնի» (Կամուսի Թրք. Թրգմ. Բ. 60,* Steinschneider WZKM *12, էջ 223)։*

Ամիրտ. դնում է արդէն իբրև արաբ. բառ, որից և ՀԲուս։ Կատ և շար ձևերը սրբագրից և մեկնից Նորայր ՀԱ 1923, 161։

***ՂԱՐԱՆՖԻԼ** «շահոքրամ» (մի տեսակ անուշահոտ ծաղիկ) Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 1807։*

=Թրք. قرنفيل կամ قارنفيل qaranfil, qarenfil «շահոքրամ»։

Ուղիղ մեկնից ՀԲուս։

***ՂԱՐԱՉԱԼՈՒ** «մի տեսակ բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1808։*

=Թրք. قرچالی qara čalə «դժնիկ»։

Ուղիղ մեկնից ՀԲուս։

***ՂԱՐԱՍԻ** «վայրի սալոր» Կմրկպ. ունի միայն ՀԲուս. § 1809։*

=Արաբ. قراصيا կամ قراصيه qarāsiya «կեռաս» (տե՛ս Steinschneider WZKM 12, էջ 320)։—Աճ.

***ՂԱՐԱՏ** կամ **ՂԱՐԱՂ** «ուլկումիլ ծառի պտուղը. mimosa nilotica» (որից պատրաստում են* **ակակիա** *=արաբ. aqāqia կոչուած խէժը) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1810։*

=Արաբ. قرظ qaraz նոյն նշ. սրա բացատրութիւնը տես Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 535։ Բառիս սեռականն է **դարատիեն**, *որ նախ սխալմամբ տարբեր բոյս է կարծում ՀԲուս. § 1811 և յետոյ յաւելուածի մէջ ուղղում է։—Աճ.*

ՂԱՐԻ. *անծանօթ մի ծառ. լտ. cyna? ըստ Ռոշք. ունին միայն ՀԲուս. § 1812 և Քաջունի, Գ. 150. վերջինս մեկնում է «ծառ, որոյ տերևք նման արմաւենւոյ, յորոց արաբացիք առնեն իւրեանց զգեստս. լտ. cyna» (որ է «cotonnier, բամբակենի» ըստ Quicherat)։*

ՀԲուս. կարծում է որ նոյն լինի վերի **ղար** *«դափնի» բառի հետ։*

***ՂԱՐԻԿՈՆ** (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «սունկ» (ընդհանուր անուն) Մխ. հեր. Մխ. դտ. էջ 326 (որ Բաստամեան համարում է «աբեթ»), «փայտի վրայ բուսնող մի տեսակ սունկ» Կամրկպ. «մի տեսակ սունկ, որ թրք. կոչւում է* **ղարաղան կէօպէյի»** *Ամիրտ. գրուած է նաև* **խարիկոն** *Բժշ. ագարիկոն Գաբ. բառ։*

=Արաբ. և պրս. فاريقون yārīqūn կամ اغاريقون aγārīqūn (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 34), որ փոխառեալ է յն. ἀγαρικόν ձևից. սրանից են նաև լտ. agaricum, անգլ. agarick, ֆրանս. agaric, վրաց. ღარიღონა **ղարիղոնա** *«մի տեսակ սունկ»։—Հիւրշ. էջ 279։*

ՆՀԲ և ՀԲուս. § 1813 դնում են յն. ձևից։

ՂԱՐԽՈՒՐ. *նորագիւտ անասոյդ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 46. «Ասեն (թաթարքն). Ղարխուռ սուտ խօսեցայք, վասն այնորիկ ոչ ազատեմք զձեզ. և զերկոքեանն սպանին»։*

Անշուշտ թաթարերէն է. Будаговъ-ի մօտ (Բ. էջ 10) միակ յարմար ձևն է չաղաթ. qarγu, մոնգոլ. xarāxu «անէծք, նզովք, անիծնալ»։ Թէ այս բառն է, պէտք է կարդալ «Ղարխու, սուտ խօսեցայք» ևն։

Ղարուրայ *«մէղ» Մխ. Բժշ. պլ. լդ.—նոյն է կարուրայ<արաբ. قارورا qarūrā «միզամանի» բառի հետ. ըստ Seidel § 292 արար բառն էլ յետնաբար նշանակում է «մէղ»։*

***ՂԱՐՓՈՒԶ** «ձմերուկ» Մխ. հեր. էջ 50. ունի միայն ՀԲուս. § 1814։*

=Թրք. قارپوز qarpuz, ռմկ. խարփուզ, որից նաև ռուս. арбузъ «ձմերուկ». բոլորի մայրն է պրս. خربز xarbuz «ձմերուկ. 2. սեխ»։

Ուղիղ մեկնից ՀԲուս։

Ղաւատ *տե՛ս Կաւատ։*

***ՂԱԻԼ** «պայման, ուխտ» Ադամ. 21, 255։*

=Արաբ. قول qavl «խօսք, խոստում, պայման»։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեան. Բ. 152։

ՂԱԻԼԵԽ *«ղղարշ» Դրնդ. 102. Շնորհեաց ծածկոց և ղաւլեխ Աստուածաշնչիս։*

Այսպէս է մեկնում Նշանեան, հրատ. Դրնդ. էջ 625։

***ՂԱՓԱԹՈՆ** «աւելուկ». ունի միայն ՋՔ. վկայութիւնը անյայտ է։*

=Յն. λάπαθον «թրթնջուկ», որից նաև թրք. labada: لبادا

ՋԲ դնում է յունարէնից։

*ՂԱՓԵՔ «մի տեսակ բոյս. երեսնակ, յն. εὐπατόριον լտ. eupatorium purpureum» Մխ. հեր. որ և ղաֆէք կմրկպ. ունի միայն Հայրուսակ § 1815, ղափդ Մխ. հեր. 85, 127, 131. սխալ գրուած զափդ՝ անդ, էջ 84։

=Արաբ. غافث γāfaṯ նոյն նշ. (տե՛ս Steinschneider WZKM 12, 223):—Աճ.

ՀԲուս. § 3315 սխալմամբ զափդ համարելով տարբեր բոյս, դնում է արաբ. զապտ, որ ըստ Ամիրտ. նշանակում է «մի տեսակ սալորանման պտուղ. ֆրանս. perdrigon?»—Նորայր ՀԱ 1922, 391 ցոյց է տալիս, որ զափդ պէտք է ուղղել ղափդ: Ուղիղ մեկնից Աճառ. (անտիպ), նոյնը անկախաբար Seidel, հրտր. Մխ. հեր. § 241։

ՂԱՓՏԱՑ «արբանեակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 192։

Ղաբայ տե՛ս Լայքա։

ՂԱՔՆԱՐ «իշխանական մի աստիճան է». մէկ անգամ ունի Կղնկտ. «Յիւտի գաւառի ի Գիսն՝ Վարազպերոժի տունն, որ ղաճնար ունէր պատիւ». (հրտր. էմ. էջ 170, Շահնազ. Ա. էջ 339)։

Գտաւ ու մեկնից Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 23։

ՂԱՖԱՌԱՇ. անստյոգ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 221. «Զգազան և զուժով ազգ շունն և զբարոյն և զյղորդահաջն ընտրեա՛, որ չը լինի թափխալիլ և ոտնաշարժ և ղաֆառաշ (միւս. ձձ. շաֆառաշ) քան զնժոյհի»։

Ալիշան, անդ. մեկնում է պրս. شکرف «կզակ, բերան» բառից։

*ՂԱՖԻԼ «անդէտ, անտեղեակ, անհոգ» Կոստ. երզն. 148 (Է՞ր ղաֆիլ կաս յաշխարհիս և անհոգ ի ժուռ գաս կամկար), «չըգիտեցած ու չսպասուած ժամանակը, յանկարծ» Կոստ. երզն. 148 (Մահն... ղաֆիլ հանց հասանէ)։ Գործածական է նաև արդի ռամկականում՝ խաֆիլ ձևով։

=Արաբ. غافل γāfil «անդէտ, անզգոյշ», غفلة γaflatan «յանկարծակի»։

Ղեբերոս տե՛ս Եղեբորոս։

ՂԵԴՈՆԵԼ «պճնել». գիտէ միայն ՓԲ յաւել. անստոյգ բառ։

*ՂԵԿ, ի–ա հլ. «նաւի ղեկ կամ թի» Եզեկ. իէ. 6. Վեցօր. էջ 27, 175. Փիլ. Կլիմ. որ և գրուած է ղեակ Ճառընտ. յղեակ Վրք. ոսկ. որից են ղեկավար «նաւի ղեկը բռնող՝ վարողը» Ոսկ. յհ. բ. 40. ղեկավարել ՅՀ. կթ. Պրպմ. ղեկավարութիւն Մագ. ղեկել Կրպտ. ոտ. ղեկաթափ «ղեկը ընկած՝ կորած» Մաշտ. ղեկաւոր «ղեկ բռնող» Մագ. թղ. 66 (հրկուան էլ նորագիւտ բառ)։

=Ասոր. ܠܝܩܐ lēqā «նաւի ղեկ» Եզեկ. իէ. 6, որի դէմ մեր թարգմանութիւնն էլ ունի ղեկ:—Հիւրշ. 310։

ՆՀԲ և Հիւնք. ուղղեակ ձևից։

Ղեկաւ տե՛ս Լակաւ։

ՂԵԿՍ «ցաւս». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 192։

Ղեկտորոն տե՛ս Ելեկտրիոն։

ՂԵՂ «հարաւ, հակառակեցաւ, դառնացաւ». ունի միայն Բառ. երեմ. էջ 192։

ՂԵՂԱՆ «դուր կամ հանգիստ». ունի միայն Բառ. երեմ. էջ 192։

ՂԵՂԻ «կարի քաղցր». ունի միայն Բռ. երեմ. էջ 192, իբրև տարբեր բառ՝ ղեղի «լեղի» ձևից, որ մի տող վերևն է յիշում։

ՂԵՂԻ «անդրի, ղեկ, ուղղիչ, թև». ունի միայն Բառ. երեմ. էջ 192. վերջին երեք իմաստները ցոյց են տալիս ՀեղՀ ձևը, բայց առաջինը անյայտ է։

ՂԵՄԻՆ «մարք». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 192. ի՛նչ լինելը յայտնի չէ։

*ՂԵՆՋԱԿ, ի–ա հլ. (գրուած է նաև ղենջեակ, ղանջեակ, ղենճակ) «գոգնոց, անձեռոց, սրբիչ» ՅՀ. ժգ. 4, 5. Փիլ. Նանայ. 302. Կիւրղ. ղկ. Վրք. հց. ա. 232, 711.— անշուշտ սրա հետ գործ չունի ղենջակի տակ «բժշկական անծանօթ մի բոյս» Բժշ. (ունի միայն ՀԲուս. § 3358), որ հաւանաբար պէտք է հասկանալ աղջկուտակ (տես եղիճ) կամ երնջակի տակ՝ ըստ Նորայր ՀԱ 1922, 389։

=Յն. λέντιον «ղենջակ» բառն է, որ նոյնպէս գործածուած է Յհ. ժդ. 5, 6՝ Հայերէնի համապատասխան հատուածներում։ Յոյն բառը փոխառեալ է լտ. linteum «վուշէ կտոր, կտաւ» բառից, որ ծագում է linum «վուշ» բառից։ Հայերէնը շատ հին փոխառութիւն է, որին ապացոյց են ջ ձայնը յն. τ ձայնի դէմ (փխ. տ) և -ակ մասնիկը։ Այս պատճառով կարելի է կարծել՝ որ հայ ձևը ուղղակի հռոմէացիներից փոխառեալ լինի։ Յոյներից են փոխառեալ հսլ. lentijĭ, lenùdija, ռուս. лента, գռ. ленда, линда, ուկր. ŀenta, բուլգ. լեհ. lenta «ժապաւէն», սլաւականից էլ ֆիննի. lentta և լիթվ. lente «ժապաւէն» (Berneker 701)։ Համմտ. նաև **ղենափ**։

Նշր լծ. յն. և լտ. ձևերը։ Տէրվ. Altarm. 84 որջ և լանջ բառերի հետ՝ կրցում է գոթ. ligan, գերմ. legen «դնել, պառկեցնել», լիթ. ligà «օրօրոց», հսլ. люгю «պառկիլ» են ձևերին։ Հիւնք լտ. ձևից։ Meillet MSL 18, 350 վերի ձևով։ Սրապեան ՀԱ 1914, 232 մերժելով լատիներէնը՝ դնում է պրս. لچك lačak «լաջակ» բառից, որ սակայն երբեք չի կարող ղենջակ ձևը տալ։ (Նոյն տեղում յիշում է նաև, որ Այտնեան համեմատել է հնդ. لنگوٹہ lengüte «դէրվիշների մէջքին փաթաթած ղենջակը» բառի հետ)։ Թիրեաքեան, Արիահայ. բռ. էջ 260 պրս. لنگاك lungag «ղենջակ» բառից։

*ՂԵՆՏԻ «ղենջակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Տիմոթ. կուզ, էջ 227։ Նոյնը գիտէ նաև Բառ. երեմ. 192 **ղենափ** ձևով։

=Յն. λέντιον հոմանիշի ուղիղ տառադարձութիւնն է՝ յունաբան թարգմանչի ձեռքով կատարուած, փխ. ղենջակ ձևի։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմ. կուզի մեջ, էջ 42։

ՂԵՊԻՇԱՅԻ «լայն երես». ունի միայն Բռ. երեմ. էջ 192։

*ՂԵՊՏՈՆ «երկու դարեհատ, մէկ դանկ կամ ասարիոն» Շիր. էջ 27 (յիշում է իբր յն. բառ)։

=Յն. λεπτόν «մի փոքր դրամ էր»։—Հիւբշ. էջ 362։

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Հրտ. Շիր. էջ 27. յետոյ Brockelmann, Ուս. փոխ. բառից, էջ 113։

Ղերատ տե՛ս Կերատ։

Ղերձ տե՛ս Ուղերձ։

ՂՆԻԱՓԱՆ «շաղկապումն, ընկերակցութիւն իր». ունի միայն Բառ. Երեմ. էջ 193։ Թէ լնիաբան վիշապն է, որտեղի՞ց է այս նշանակութիւնը։

*ՂՆԻՏԻԿՈՆ «Ղևտական գիրքը» Կոչ. 70. Սարգ. բ. պետր. յոչ. էջ 398. (Մովսէսի հընգամատեանի երրորդ գիրքն է)։

=Յն. λευϊτικός, -κόν նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՂՆՔՍ. մի տեսակ անծանօթ բոյս է. Գաղիան. ունի միայն Այիշան, Հայրուսակ § 1817։

ՂԻԲԱՆՈՍ «սաստակումն». ունի միայն Բռ. երեմ. էջ 193։

*ՂԻԲԵՂՂՈՆ «ձեռնարկ հաւատոյ». նորագիւտ բառ, որ երեք անգամ գտնում եմ գործածուած այլայլուած ձևերով. այսպէս՝ ղըբեղղոն Տիմոթ. կուզ, էջ 146, ղիբեղղաեն (սեռ.) անդ, էջ 146, ղիբաղոն Պետր. սիմ. եպս. էջ 40 (տպ. Վղրշպտ. 1902)։ Նոյնը գիտէ Բառ. երեմ. էջ 192 **ղեւրեղոն** «խոստովանութիւն հաւատոյ»։

=Յն. λιβέλλον հայցականից փոխառեալ. այս էլ ծագում է լտ. libellus «գրքոյկ. 2. գրուածք, գրութիւն. 3. տոմսակ, յայտարարութիւն» ձևից. արմատը liber «գրուածք, գիրք»։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 86։

Ղիդրիկ տե՛ս Լկտի։

ՂԻԴՐԻՍՕՂ «համարօղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 193։

Ղիլայ տե՛ս Խլայ։

*ՂԻՄՆԻՍԿՈՍ «պայմանական նշան, որով Ս. Գրքի յոյն թարգմանութեան մէջ բնագրից տարբերող բառերն էին նշանակում». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Անան. ժմնկ. 47. Բան որ կրկին էր յօրինակին և եւթանասունքն թողին, զայն Ովրիգենէս աստեղ

նշանակեաց... իսկ ուր զանազանեցին զբանն՝ դիմնիսկոս և հիպոդիմնիսկոս եդին. մին ատտիկեցի նշան է և միւսն բժշկաց։— Նոյնը գրուած է լիմինիսկոս՝ Վրդն. սղ. յոջ. (Իսկ լիմինիսկոսն է ի վերայ երկուց սուտագաց նշան)։ Այս ձևով է յիշում նաև Բառ. երեմ. էջ 133 և մեկնում է «այն է որ ի լուսանցն դրոշմեն գրոցն»։

=Յն. λημνίσκος «երիզ, ժապաւէն, Թրուչուն բռնելու ցանց, վէրք պատելու խծուծ ևն», որ և լտ. lemniscus «պսակի կամ թագի ժապաւէնները ևն»։ Բիւզանդական շրջանին յոյն բառը նշանակում էր նաև գրչագրական ÷ նշանը և այս իմաստով գրւում էր նաև λιμνίσκος (Sophocles 713′), որից էլ հայերէն ձևը։—Աճ.

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Ա-ճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 125։

Ղիպ տե՛ս Ղպնիլ։

***Ղէֆ** «պատեան, ծածկոց» Վստկ. 135. «Եւ Թէ ոք պրոտով քթոցի նման ղէֆ շինէ նուան»։

=Արաբ. غلاف ġəlāf «պատեան, ծածկոյթ», որ դարձել է Թրք. قلیف qəlәf «վերմակի կամ բարձի երես»>ռմկ. խըլըֆ։—Համմտ. նաև հյ. կեղև և կլեպ։—Աճ.

Վաստակոց գրոց հրատարակիչը՝ էջ 252 համարում է արաբ. բայց չի յիշում արաբ բառը։

ՂՂԸՄՊՕՂ «ճակնդեղ» Բժշ. (իբր ռմկ. բառ). ունի միայն ՀԲուս. § 1819։

ԳԻՒՒ.—Վն. կլմպոզ, Երև. կլմբօզ «ճակընդեղ».—այս օ, կ, ղ ձայնների զուգորդութիւնը ցոյց է տալիս, որ բառը Թրքական ծագում ունի։

***ՂԼԿՆԴԻՒՄ** «հնդիկ Թութիա, որ է sulfate de cuivre, couperose, vitriole, ծաղիկ պղնձոյս ժանգառ», ունի միայն ՀԲուս. § 1820, անծանօթ մի գրողից առնելով։

=Յն. χάλκανθον բառն է, որ բուն նշանակում է «պղնձի ծաղիկ» (<յն. χαλκός «պղինձ»+ἄνθος «ծաղիկ») և նոյն ժանգառն է. տառադարձուած է նաև Ղաղկանբոյ, կալղջնատար, զալղաղինդաս Գաղիան. կալկատար «երկաթի կարմիր թթուածնատ, այրած արջասպ» Բժշ. (բստ Նորայր, Բառ. ֆր. 257 ա)։ Այս տառադարձութիւնները յառաջացած են արաբերէնի միջնորդութեամբ, ուր ունինք քիմիագէտների լեզուով colcothar, որից էլ հֆրանս. colcotar։

ՀԲուս. սխալմամբ մետաղը համարում է բոյս (որովհետև բուքիա նշանակում է Թէ՛ բոյս և Թէ մետաղ)։ Վերի ձևով ուղղեց ու մեկնեց Նորայր ՀԱ 1921, էջ 337։

***ՂԼՄՈՆԱՅ** (յատկապէս ասւում է ղլմոնայ կաւ) «մի տեսակ կաւ՝ որ իբր դեղ էր գործածւում» Մխ. բժշ. 72։

=Յն. χιμωλία γῆ, լտ. terra chemoliae, որ հասել է մեզ արաբ. قیمولیا qīmuliyā տառադարձութեան վրայից աղաւաղուելով։

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. բժշ. § 204։

ՂՂՈՒԻՒ «լուսա, չէքլէմպիճ» (որ է բուհինչ, celtis australis պտուղը. նկարագրութիւնը տե՛ս բոհինչ). ունի միայն Գ.Բ. սրա հետ նոյն է անշուշտ Քաջունի Գ. 151 ղըզվիրի «Թուփ նման վայրի տանձիացց»։

***ՂՃԻ** «վայրի մանանեխ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3359.—Բառս յիշում է Ամիրտ. հետևեալ ձևով. «լապսան (=յն. λαψάνη լտ. lapsana, ֆր. lampsane, հայ խոբու?). ոմանք այս խոտիս Թուրքերէն ղեի կասեն և ինքն վայրի խարտալն է» (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 731 ա)։

=Արևել. Թրք. قچا qəčə, որ Будаговъ 2. 40 մեկնում է «девясилъ, оменъ трава. 2. листъ»։—Աճ.

***ՂՄՈՒՂ** «ձիու կաթ կամ ձիու կաթով պատրաստուած մի տեսակ Թաթարական ոգելից ըմպելիք» Կիր. պտմ. էջ 148. գրուած է նաև խըմրզ՝ էջ 138, խըմզ, գումիզ ՆՀԲ։

=Արևել. Թրք. قمیز qimiz, չաղաթ. قیمیز qimiz, հաքուդ. kəməs, մոնղոլ. kumiz, որոնցից փոխառեալ են նաև ռուս. кумысъ, հռուս. кумузъ, комузъ, кумызъ, ուկր. komýz, լհհ. kumys, kumis հլհհ. komiz, հերոպական լեզուներով kumis՝ նոյն նշ. (Berneker 644). Թաթարական բառը յի-

շատակուած է ԺԴ դարում՝ արաբ աշխարհագիր Իբն-ի-Բատուտայի մօտ (հտ. II, էջ 365) قمز qimizz ձևով։

ՆՀԲ «բառ թաթարի»։

ՂՈՐԱՆՈՍ «շինուածք». ունի միայն Բուն. երեմ. էջ 193։

ՂՈՐՐՕ «կնդրուկ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 569։

ՂՈՒՈՐՈՍ «ոլոռն». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 569։

ՂՈՄՈՍ «եղուկ կամ եղկելի». ունի միայն Բառ. երեմ. էջ 193։ Նոյնը գիտէ ՓՐ ղումոս ձևով՝ «եղկելի, ողորմելի, թշուառ»։

ՂՈՅԻՈՆ «մի տեսակ թռչուն՝ որ լինում է Հնդկաստանում» Ճառընտ.=Վրք. ւ վկ ա. 543 (այլ ձ. ղուոյ)։

=Անշուշտ օտար բառ է, թերևս և խաթթարուած, որ թարգմանութեան ժամանակ բնագրից տառադարձուած է. բայց բնագիրը չգտնուելով՝ դժուար է ստուգել։

ՂՈՎԱՆ «առ ինքն խոտորեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 193։

ՂՈՐԿԱՅ, որից ղորկայութիւն. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Մագ. թղ. էջ 218. «Բայց զհայցեալդ առ ի մէնջ զոսկեկոկոնդ եթովպացի յաղագս ղորկայութեան զգեղեցիկս շնորհեցաք. և եղիցի քեզ ի մաքրութիւն և յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ» (այլ ձ. ղորակութեան, ղորկութեան. ստոյգ ձևը յայտնի չէ. տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 194)։

*ՂՈՐՏՈՍ «թափառական մուրացիկ». մէկ անգամ ունի Ոսկ. պօղ. Ա. 813. «Չտեսանի՞ցե՞ս զմուրոդան, զոր բազումք ղորտոսս կոչեն, զիարդ յածեալ ծփեալ շրջին, մանաւանդ որ խաբեբայքն իցեն»։

=Յն. փոխառութիւն է, ինչպէս երևում է Ոսկեբերանի ասութեան ձևից. բնագիրը սրա դէմ ունի ῥώταγας, որ մեկնում են «փողոցներում ներկայացումներ տուող թափառաշրջիկ կամ սրնգածու». սրա աղաւաղեալ տառադարձութիւնն է մեր բառը։—Աճ.

Վարդանեան ՀԱ 1921, 415 առաջին անգամ երևան հանելով այս բառը, գտնում է որ կապ չունի յն. ձևի հետ և ուզում է կարդալ լորտ «ծոյլ»։

ՂՈՒՉԱՊ «մի տեսակ բոյս է. գետնադափնի». տե՛ս ՀԲուս. § 1824։

*ՂՈՒԼԱՅ «գմբեթ» Արձան. 1286 թ. (տե՛ս Վիմ. տար. 129) և 1326 թ. (անդ՝ 163)։

=Արաբ. قلّة qulla «աշտարակ» բառն է, որ թուրքերէնի մէջ էլ դարձած է قوله qule>ռմկ. խուլէ։—Աճ.

*ՂՈՒԼՂԱՍ «մի տեսակ բոյս. arum colocasia» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1825 յաւել.։

=Արաբ. قلقاس qulqās նոյն նշ. (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 278 և Steinschneider WZKM 12, 324). սրանից է փոխառեալ նաև լտ. ուսումնական բառը։—Աճ.

*ՂՈՒԼՊ «մի տեսակ բոյս. քարասերմնիկ, կաքաւակրկուտ, մարգարտախոտ. լտ. lithospermum officinale L» (Տիրացուեան, Contributo § 377) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1826։

=Արաբ. قلب qulb նոյն նշ. (տե՛ս Steinschneider WZKM 12, 324):

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

*ՂՈՒԿՆ. անյայտ բառ. մէկ անգամ գրտնում եմ գործածուած Սաան. 62. «Ղուտ (որ է «խնկենի») խնկաւոտ, ղուկն պատուական»։ Ըստ իս է՝

=պրս. لك luk նշանաւոր ներկանիւթը, որ հայերէնի մէջ փոխառեալ է աւելի սովորական լուք, լայքա ձևերով. մանրամասն տե՛ս այս բառերը։—Աճ.

ՂՈՒԿՈՒԱՆ «սպիտակ խունկ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 569։

ՂՈՒՂԱԿԻԼ «հրապուրուիլ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Եփրեմի վկ. արևել. էջ 192. «Ոչ միաբանեսցուք, ո՛չ ղուղակիմք և զկամս քո և զթագաւորին քո ո՛չ առնեմք... Պաւղէ ղուղակեցաւ ի մեծութիւն»։

Նորագիւտ բառս երևան հանեց նախ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 8, մեկնելով «համոզուիլ, ցանկանալ»։ Վարդանեան ՀԱ 1922, 289 ըստ ասորի բնագրի՝ մեկնում է լաւ ևս «հրապուրել, ողոքել, հրապուրուիլ»։ Այլ է՝

Ղուղակիլ «պահուիլ» տես Ղօղիլ։

Ղուղան տե՛ս Լողւ։

ՂՈՒՂԱՆԱԿ *«պաղարեր». ունի միայն Բառ. երեմ. էջ 193։*

ՂՈՒՄ *«մսրացորեան, եգիպտացորեն. կուկուրուզ, լազուտ, խամբար». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 151։*

***ՂՈՒՄԱՅ** «հերկրորդական կամ ապօրինի կին». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ճկ. «Եկին այլազգիքն առ ղումայն Սամփսոնի՝ Դալիլա, զի խարէր զՍամփսոն և մատնէր նոցա» (հմմտ. Դատ. ժզ. 4—31)։*

=Թիր. لمة quma, *որ և* غومغ yuma. *այսպէս են կոչում միմեանց՝ մէկի առած մի քանի կանայքը. որ և տճկ.* قومة quma *«ներ»։ (Սրա հետ կապ չունին ռուս.* кума, *հունգ.* koma, *լիթ.* kūmas, *լեթթ.* kûms, kûma *«կնքամայր» ձևերը, որոնք՝ ըստ* Berneker 662 *ծագում են լտ.* compater *«կնքահայր» բառից)։—Աճ.*

Գիր.—Խրբ. խումա *«ապօրինի երկրորդական կին, որ բուն կնոջ կենդանութեան ժամանակ պահում են», Ակն՝* խումա *«այս անունը տալիս է մէկի երկրորդ կինը իր ամուսնու առաջին կնոջը». Բլ.* խամա *«այսպէս է կոչւում աղջիկը՝ ամուսնանալու ժամանակ» (Ազգ. հանդ. ե. 134)։—Նոյն բառից են ծագում նաև* խումաճիկ *Խր. Ննխ.,* խամաճիկ *Մշ.,* խամաճուկ *Տիգ. «տիկնիկ, կուկլա» (Թրք.* جك -jik *փաղաքշական-նուազական մասնիկով)։*

ՂՈՒՄՂՈՒՄԱՅ *«մետաղեայ անօթ օղւոյ». ունի միայն Քաջունի Գ. 151։*

Ղումոս *տե՛ս Ղամոս։*

Ղուպայ *տե՛ս Կուպայ։*

***ՂՈՒՐՈՒԹԱՅ** «խորհուրդ, ատեան, ժողով» Մաղաք. ար. էջ 10. որ և* **խուռուբայ, խոռուբայ** *Մաղաք. ար. էջ 9, 29, 37։—*

=Թիր. قوريلتاى quriltay *«հանդիսաւոր ժողով. ատեան». այս բառն է որ նորերս Ա-ղըրբայջանցիները վերականգնանացրին* qurultay *ձևով։*

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ՝ 64։

Ղուրան *տե՛ս Կուրան։*

***ՂՈՒՏ** «խնկի ծառ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասնեցի, էջ 62։*

=Եբր. לט lut «ladanum»:—Աճ.

ՂՊԵԼ *«մի տեսակ թռչուն». ունի միայն Քաջունի, Գ. 151։*

ՂՊՆԻԼ *«բարկանալ, զայրանալ, դժկամակիլ» Ոսկիփ. Մարթին. Առակք ողոմպ. ժզ. որ և* խպնիլ *Վրդ. առ. 109, 110 (այլ ձեռ.* բարկացաւ*). անշուշտ ունի նաև «ամաչել» նշանակութիւնը (ինչպէս ցոյց է տալիս արդի գուռ.* խպնիլ *«ամաչել»), որից* **ղպնահար** *«ամօթահար» (նորագիւտ բառ) Կոստ. երզն. 135 (Ես ղպնահար եմ և ամօթով)։ Արմատն է դիպ «ամօթ, պատկառանք» Կոստ. երզն. 178 (Շատ դիպն ու նամուս առնուս). հմմտ. նոր բարբառներում* խիպ *«ամօթի զգացում», որ և* խիփ *Քուչ. 64 (Ինձ խիփ ու ղուսայ կուգայ՝ քո ծոցուդ այլ մարդ տիրանայ)։*

Նշ. լծ. ռմկ. խպնիլ *«ամչնալ» և Թրք.* **ղրվանմագ** *«գոռոզանալ»։ Ա-ր նոյն է դնում* խուպանիլ *ձևի հետ, որ միայն «խոպանանալ» է նշանակում և այստեղ գործ չունի։* Karst *(տե՛ս* Seidel, *Մխ. հեր. § 109) դնում է արաբ.* غيب yayb *«կասկած, տարակոյս» բառից, որ իմաստով չէ յարմար։*

***ՂՐԱՄ** «դիծ, գիր». ունին միայն Բառ. երեմ. էջ 193, ՀՀՔ և ՋՔ։*

=Յն. γράμμα *«գիր»։*

ՀՀՔ և ՋՔ համարում են յն.։

***ՂՐՖԱ** (սխալմամբ գրուած նաև* **ղրբայ, խրբա**) *«անմիտուկ, փրփրիմ, դանդուռ» Բժշ. (իբր արաբ. անուն բոյսիս). ունի միայն ՀԲուս. § 1818։*

=Արաբ. خرفى xarfa *նոյն նշ. այս բառն է՝ որ այժմ Պարսկաստանում գործածական է* xəlfa *ձևով։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ՂՓԱՅ *«հաւ թխամայր». ունի միայն Քաջունի, Գ. 151։*

Ղփչուր *տե՛ս Խափչուր։*

ՂՕՂ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի ճառընտ. «Թիւնօք գազան իբրև զղօղ շանց»։*

Նշ. մեկնում է «ղօղանջիւն, հաջումն շանց կամ գրելի շող, որպէս ռմկ. ղողիլ, այսինքն լորձունք խածանօղ շանն»։

ՂՕՂԱՒ «merle, *սարեակ թռչունը». ունի*

միայն Քաջունի, Գ. 151 (բայց չէ յիշում հտ. Բ, էջ 72)։

ՂՕՂԱԿԱՏԵԼ *«հայհոյել կամ ցնդաբանել». մէկ անգամ ունի ՅՀ. իմաստ. էջ 55. «Եւ զայդ այդպէս ղօղակատելովդ՝ Արիոսի նղեալ գտանիս չարապաշտութեանն զուգաձայն»։ Ուրիշ տեղ չէ գործածուած։ Բառ. երեմ. էջ 193 դիտէ* ղօղակատել *«շատախօսիլ, սասանել, լեզուարդիլ», որի հետ նոյն են* ղօղեկարել *«շատ խօսիլ»,* ղուղի *«վայրապար շատ խօսիլ» և էջ 191՝* ղակարտել *«ղօղանջել»։*

Նշ՛ր չունի։ ՋՐ մեկնում է «ղօղանջել, բարբանջել կամ ընդ քօղով բանս կարկատել», ԱՐ «հայհոյել»։

ՂՕՂԱՆՋ, ի *հլ. «լացի ձայն» Լաստ. որից* ղօղանջել *«ձայն հանել (մարդու), հնչել (ծնծղայի), հաջել (շան), հայհոյել, տրտընջալ» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 2. Ճառընտ.* ղօղանջանք *Շնորհ. այբ.* ղօղանջեցուցանել *Արշ.* ղօղանջիւն *Գէ. ես.* ղօղանջումն *«ցնդաբանութիւն» Ոսկ. յհ. հ. 14 ևն (Վրդ. առ. 182 դրուած խօղանջմունք). նոր գրական լեզուի մէջ նշանակում է միայն «զանգակի ձայն»։*

Հիմնք. խանչել բայից։

ՂՕՂԱՐԿԵԱԼ *«հանդերձեալ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 194։*

ՂՕՂԻԼ *«ծածկուիլ, պահվտիլ, մոռացուած մնալ» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 3. որից* ղօղել *«պահել, ծածկել» Սղն. Սակր. կանոն.* ղօղեալ *Ագաթ. (կրկնագրում՝ էջ 63 ա* ղաւղեալ*).* ղօղեցուցանել *Յոբ. իդ. 4. Սղն.* ղօղակ *«ծածկուղ, պահվտող» Փիլ. որ և* ղուղակ *Սղիշ. միանձ. էջ 159 (Նշ՛ր իբր բայ դնում է* ղուղակել*).* ղօղկիլ *«պահվտիլ» Խոր.* ղօղուն *Ոսկ. աւ. բշ. մացառաղօղ Փարպ.* ղուղակել *Ճառընտ.* ղուղիլ *«ծածկուիլ» Ոսկ. մ. բ. 28. Պիտ.* ղուղեալ *«ծածկուած, պահվտած» Վեցօր. գ. էջ 45. Տաղ.* ղօղակատօղ *«փակօղ» Բառ. երեմ. էջ 194.—*ղօղ *և* ղուղ *գրչութեանց համար համմտ.* լղղալ։

Նշ՛ր յիշում է գողել, գաղել, ֆօղել *ձևերը։ Հիմնք. հանում է լղղալ բառից։* Bugge IF 1. 442 *համեմատում է յն.* λάθρα *«ծածկաբար. գաղտ, գողունի» բառի հետ և երկուսը միասին հանում է հնխ. *lṇthrē- կամ *lṇdhrē- ձևից։*

ՂՕՂՈՒԹԻԻՆ *(արմատը* ղօղ*). անստոյգ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գործածել է Շիր. «Պղտորումն, մթութիւն, ցրտութիւն, պնտութիւն, ղօղութիւնք, պակասութիւնք պտղոց»։*

Նշ՛ր մեկնում է «թաքնութիւն, դադարումն և կամ ողողութիւն, ուղխ»։

Ճ

ՃԱԴԱՐ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ բայց առանց վկայութեան*) «*նապաստակի նման մի կենդանի է. սուորիկ*» *ՍԳր. սխալմամբ համարուած է «բորենի» Գաղիան կամ նաև ըստ ոմանց «շնագայլ, տճկ. չաքալ»։*

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ա բնաձայնից է հանում։ ՆՀԲ ծակարար բառից։

ԳԻՒ.—Երև. ճափար։

ՃԱԴՈՄ *կամ* **ՃԱԴԱՄ** «*մի տեսակ խիժաբեր մակաբոյս, որ զանազան ծառերի և յատկապէս կաղնու վրայ է աճում. պատկանում է* loranthacéeների *ընտանիքին. ֆրանս.* gui, *լտ.* viscum *(Տիրացուեան,* Contributo § 88), *գերմ.* Mistel, *արաբ.* dibq, *անգլ.* mistletoe *(Ծակորեան, Արևելք 1890, մայ. 2), ռուս.* армяшка! дублика, омела *են (*Анненковъ, *էջ 382″)» Վստկ. 66 (Զատիկն զոր ի կաղնոյն ճագմընէն շինեաս). Ամիրտ. ունին միայն Նորայր, Բառ. ֆր. և ՀԱ 1925, 303, և ՀԲուս. § 1833։*

ԳԻՒ.—Պահուած ունինք միայն ճագում *Համշ.։*

ՃԱԼԱՄ «*փենունայ,* anémone *(ծաղիկը)». ունի միայն Քաջունի, Գ. 151։*

***ՃԱԼՂԱՒԶԱՅ**, *որ և* ճաղլուզա, ճալղուզար «*սոնոպրի, պիստակի ծառ*» *Կամրկ. կամ նաև* ջալղուպա, ջաղլուզա «convolvulus jalappa?» *երկուսն էլ դիտէ միայն ՀԲուս. § 1836 և § 2622։*

=Արաբ. جلغوزة jalγūza, *որ ծագում է պրս.* گل كوز gul-i kūza *ձևից. վերջինը ԳԴ (էջ 235=328=327) մեկնում է «ծաղիկ ինչ սպիտակ և անուշահոտ, և է նման վարդի, որ ամիսս երիս կամ չորս շարունակաբար փթթի». բուն նշանակում է «կուժի վարդ»։—Աճ.*

ՃԱԽԱՆՈՑ, ի–ա *հլ. «ձիու ոտնակապ» Պիտ. ուրիշ վկայութիւն չկայ։*

Արմատը պիտի լինի ճախ *անծանօթ բառը, որի հետ թերևս հմմտ.* ճակ «*էգ ձի*»։

***ՃԱԽԱՐԱԿ**, ի–ա *հլ. «անիւ կամ անուաւոր գործիք (հիւանի, ոստայնանկի, ատաղձագործի, քանդակագործի են)» Վեցօր. որից* ճախարակել «*ճախարակով հարթել, կանոնաւորել*» *Ոսկ. ևս. Փիլ.* ճախարակագործ *Վեցօր. էջ 181.* ճախարականձև *Ագաթ.* ճախարակեայ *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 2. են։—Միջին հլ. ձևեր են՝* ջարճակ *(Նորայր, Բառ. ֆր. 1102 ա),* ջաճրայ *Առաք. լծ. սահմ. 567, 618։*

*=ՊՀլ. *čarxak ձևից, որի վրայ ընդարձակ տե՛ս* ճախր։—*Հիւրշ. 186։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. ճէխրէ, չարխ *և* չարխէ *ձևերի հետ։ ՆՀԲ արմատը* ճախր, *լծ. թրք.* չարխ: Müller SWAW 42, 255 *պրս.* čarxa, *սանս.* čakra, *յն.* κύκλος, *լտ.* circo-: Justi, Zendsp. 107 *զնդ.* čaxra *ձևի տակ։ Տէրվ.* Altarm. 28 *զնդ.* skarəna- «*կոլոր*» *ձևի հետ։*

ԳԻՒ.—Երև. ճախարակ, *Ղզմ.* ճախրակ, *Ջղ.* ճախրակ, ճարխակ, *Ալշ. Մշ. Սեբ.* ճախրագ, *Մրղ. Սլմ.* ճոռխոկ՝, *Ախց.* ջ՛ախարակ, *Գոր. Ղրբ.* չխա՛րակ, *Մկ. Վն.* չախրակ, *Տիգ.* ջոխրոգ, *Ագլ.* ճճա՛րակ, *ՋԲ.* ջխռոմ *(բայց և ջ՛օճյը), Էնկ.* ջըխրըմ *(նախաձայնի պատճառու կարող է լինել բուն հայ և ո՛չ Թրք. տե՛ս Բիւր. 1898, էջ 865)։ Նոր բառեր են* ճախրակմանիկ *կամ* ճախրակմանող «*լծէ-լծէ թռչունը*». *միւս ձևերը տե՛ս* ճախր *բառի տակ։*

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ է թւում իմերխեվի լեզուով ճախարակի *«ճախարակ» (տե՛ս Մառ, Тексты VII, էջ 71)։ Թրք.* چاخرق čaxrəq *«մի տեսակ թռչուն», որ* Будаговъ, Срав. слов. *1, 454 բ մեկնում է «драхва (=արօ՞ս)»։ Հյ. գւռ.* ճախարակ *(մանիկ) բառն էլ։*

ՃԱԽ *«ճահիճ, ջրոտ՝ թաց տեղ», որից* ճախիճ, ճախիճ, ճախճախուտ. *տե՛ս* ճահիճ։

Klaproth, As. polygl. *էջ 105 պրս.* čaxyn *«կեղտոտ» բառի հետ, որ չունի ԳԴ։*

ՃԱԽՃԽԼ *«խոնարհիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 194։*

ՃԱԽՈՅՃ *կամ* **ՃԱԽՈՅՐՃ**. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Եղիշ. գտ. էջ 196. «ի ճախոյճս մականի Յակոբ հօտս բազում ստացաւ». (ակնարկում է Ծն. լ. 37—43)։ ՆՀԲ մեկնում է «կա՛մ է դնելն ի ճահիճս, յաւուրս ջրոց և կամ կեղևելն ճախարակա՛ն»։*

***ՃԱԽՐ** *«իր վրայ դառնալը, շրջան, դարձ, պտոյտ» Գնձ. որից ունինք* ճախր առնուլ *«դառնալ, ժուռ գալ» Պոմ. աղէքս. Խոր. ՅՀ. կք.* ճախրել *«դառնալ, ժուռ գալ» (Քրոյնի, Ձիու) ՍԳր. Կոչ. Եղիշ.* ճախրումն *Փարպ.* ճախրանք *Նար.* ճախրանոս *Շիր.* ճախրական *Երզն. ոտ. երկն. ևն։*

=*ՊՀլ.* *čarx *(գործածուած է միայն* čark *ձևով) բառից շրջմամբ. սրա հետ համմտ. սանս.* चक्र čahra- *«անիւ, շրջանակ, ձիթահանք, թռչունի ճախր, պտոյտ», զնդ.* 𐬨𐬀𐬭𐬯𐬭𐬀 čaxra- *«անիւ», պրս.* چرخ čarx *«շրջանակաձև շարժում, աղօրիքի ճախարակ, սայլի անիւ, հորի ճախարակ, անուռաձև յեսանաքար, մանելու ճախարակ, կարժառ, որևիցէ դարձող բան, երկինք, ժամանակ ևն», բելուճ.* čark *«անիւ, մեքենայ, երկանաքար», աֆղան.* čarx *«անիւ, շրջանակ, պտոյտ», օսս.* çalx *«անիւ, լուսնի շրջանակը»* (Horn § 437)։ *Այս արմատին է պատկանում նաև հյ.* ճախարակ, *որ փոխառեալ է պհլ.* *čarxak *«ճախարակ» հոմանիշից. համմտ. պրս.* چرخ čarxa *«ճախարակ, ջրհորի ճախարակ, զործի ինչ նետ ձգելոյ, փոքորիկ, մրրիկ»։ Իրանեան բառը ծագում է հնխ.* quel- *«դառնալ, պտտուիլ» արմատից, որ տալիս է հյ.* յեղ- *և* հոլով *(մանրամասն տե՛ս այս բառերը), այնպէս որ* հոլով *և* ճախարակ *միևնոյն բառերն են, առաջինը բնիկ, երկրորդը իրանեան փոխառութիւն (տե՛ս* Pokorny 1, 515, Berneker 549, Boisacq 531)։—*Նոյն իրանական բառը փոխառեալ է նաև ուրիշ շատ լեզուների մէջ. այսպէս՝ վրաց.* ჯახრაკი ճախարակի *«պտուտակ»,* ჩარხი չարխի *«մեքենայ», աֆղան.* čarxa *«մանելու ճախարակ», քրդ.* čarx *«շրջան, անիւ, ջաղացք», թրք.* چهra čahra *«մանելու ճախարակ», արևել. թրք.* چرخ čarx *կամ* چخ čax *«ջուրի կամ մանելու ճախարակ»* چیغریق čiγarik *«բամբակը կուտերից մաքրելու երկանիւ մեքենայ»,* چیقیر čəqər *կամ* چیقریق čəqrəq *«կարժառ, ջրի ճախարակ». չաղաթ.* چارق čark *«ճախարակ» (սխալ է* Vambery, Etym. Wörterb. *էջ 122, որ թրք.* čəqrəq *«ճախարակ» բառը հանում է թրք.* čaγər *«ղռռալ, կանչել» արմատից)։ Թուրքերէնի միջոցով փոխառեալ են՝ սերբ.* čekrkli *«ճախարակ»,* čigra *«շռնչան», լեհ.* cyga, *հունգ.* csiga, *ռում.* čikričnĭŭ, čarklĭŭ *«անուաւոր», բուլգար.* čjark, *նյն.* τζιγκρίκι—*Հիւբշ. 186։*

ՆՀԲ ճախարակ *բառի հետ լծ. է դնում թրք.* չարխ։ Lag. Baktr. Lex. 21 *պրս.* čarx, *զնդ.* čaxra: Müller SWAW 42, 255 ճախրանք *դնում է* ճախարակ *բառից,* Justi, Zendsp. 107 *զնդ.* čaxra *բառի տակ, Տէրվ.* Altarm. 28 *զնդ.* skarəna *«կոլոր»։ Ա. Գ. Բիւր. 1900, 519 հյ. գւռ.* ճախրիկ *ձևից է դնում թրք.* čəqrəq. *փոխառեալ լինելու նշան է համարում ծայրի* -əq։

ԳԻՒ.—Բզ. ջախր, *խրբ.* ջ'այր, ջ'այէր, *Ակն* ջ'այհ, ջար, *ՋԹ.* ջ'օիրը, ջ'օիյը, *ՀՃ.* ջ'օյհ, ջ'օհ, *Սվեդ.* ջ'ուր *նշանակում են «ճախարակ» և հետևաբար հյ.* ճախր *«պտոյտ» ձևի շարունակութիւնը չեն, այլ ներկայացնում են անկախ* *ճախր *կամ* *ճաճր *«ճախարակ» բառը։*

ՃԱԿ *«էգ» և մասնաւորապէս «էգ ձի». այսպէս՝* ճակ *«էգ ձի» Մագ. քեր. 241 և Երզն.*

քեր. «Զիոյ իգականքն, մատեան, գամբիկ, ճայիկ, զոր ճակ անուանեն... մատակ, ճակ, յովտակ»։ Ընդհանուր «էգ» նշանակութիւնն են ցոյց տալիս ճակաճան «իգամոլ, բղջախոհ» Եփր. Թգ. 400. Պիտ. փիլ. 34. կք. ճակաճանութիւն Փիլ. Պիտ. Պտմ. սահ. 33։

=Նոյն են վրաց. ჭაკი, ճակի, սվան. ճագ «էգ ձի», կամ նաև ածականաբար վրաց. և մինգ. ჭაკი ცხენი ճակի ցխենի, ինգ. ճակ-ցխեն «էգ ձի». գործածութիւնն կրկին ձևերը նոյն են հայերէնի հետ. բայց աւելի լաւ է վրաց. მოჭაკე մոճակե «հեշտասէր, իգամոլ» (Զուբ.[2] 884), որ մեր ճակաճան բառի համապատասխանն է։ Բայց այս նմանութիւնները այնպէս են, որ թոյլ չեն տալիս ենթադրել մի կամ միւս կողմից փոխառութիւն, այլ երրորդ մի ընդհանուր աղբիւր, որ թերևս խալդերէնն է։—Ա.Ճ.

ՆՀԲ նոյն է համարում ճայիկ բառի հետ։ Տաղրճեան, Մասիս 1885, 865 առնելով Մագ. «եզն, խոյ, ճակ» վկայութիւնը, գրում է. «Ինչպէս եզն կովու արուն է, և խոյ ոչխարի արուն, այսպէս և ճակ այծի արուն է։ Մեր լեզուի բառերով չէինք կրնար դնել, թէ ճակը արու այծ կը նշանակէ, զի նախնիք այդ բառին յիշատակութիւնը միայն ըրած են առանց աւելի բացատրութիւն տալու։ Դիտեմք այժմ, որ ճակը (արու այծը) = է հնդկաց ջակա բառին, որ կը նշանակէ՝ արու այծ, նոխազ»։ Ւսատ Տաղրճեանի՝ տարբեր են ճակ «էգ ձի» և ճակ «արու այծ»։ Հիմնք. ճակ=Թրք. շաֆ կամ շաֆֆա «մատակ ձի»։

ՃԱԿ «խոնաւութիւն, թացութիւն». արմատ առանձին անգործածական. գտնում է մարգճակ «թաց՝ ջրոտ՝ ճախճախուտ մարգ» բառի մէջ, որ ունին Յայսմ. Ճառընտ. (որ և մարգճախիճ Ջենոր. Յայսմ. փետ. 17)։

ՆՀԲ լծ. ընդ ճաճիճ և ճախճախուտ, Թրք. ջըղ (ՆՀԲ նոյն արմատից է դնում նաև ճակաճան)։ Ճառ. ՀԱ 1909, 159 խ և կ ձայների լծորդութեան օրէնքով՝ նոյն է դնում ճախ արմատի հետ, որ գտնում ենք ճախիճ, ճախճախուտ են ձևերի մէջ։

ՃԱԿ «կտոր, փերթ, շառաշիղ». առանձին չէ գործածուած. գտնում է միայն աղուճակ (ի–ա հլ.) «աղի մեծ կտոր» բառի մէջ՝ Ոսկ. ես. անստոյգ բառ է. որովհետև աղուճակ կարելի է բաժանել նաև աղ+ուճակ։

Երեմեան, Բազմ. 1898, 524 հանում է ճակ «թաց, խոնաւ» բառից։ Պատմահական նմանութիւն ունի պրս. لوچك alūčak «է սա խեցեմորթ ինչ ծովային նման սատէֆի, զոր գրոհք Տէրվիշաց առնեն քէշկիուլ»։

*ՃԱԿԱՏ, ու հլ. (ըստ ՆՀԲ նաև ի–ա հլ. բայց առանց վկայութեան) «ճակատ (մարդու կամ անասունի)» ՍԳր. ճակատը համարելով յառաջամասը՝ փոխ. «շենքի՝ դրան ճակատը, յառաջամասը, գրքի առաջին երեսը» Նար. քր. «բանակի յառաջամասը, ուր զօրքերը դէմ դէմի կանգնում են. բանակ, պատերազմ» ՍԳր. Նար. քր. որից ճակատ առ ճակատ «դէմ առ դէմ» Ա. Թագ. ժէ. 21. Նար. քր. ճակատիլ «կռուի շարուիլ» ՍԳր. ճակատել «կռուի շարել» Ոսկ. մ. բ. 21. ճակատեցուցանել Բ. Թագ. ժ. 9, ա. մակ. գ. 33. ճակատագիր Եզն. ճակատամարտ ՍԳր. Ոսկ. ես. ճակատամուղ Բուզ. ճակատայարդար Սերեր. Ոսկ. մ. ա. 8. ճակատատեղ Վեցօր. ճակատատեղի Եփր. Թգ. լայնաճակատ Աղթարթ. կռուաճակատ Պտմ. աղէքս. (չունի ՆՀԲ). նոր բառեր են՝ ճակատագրական, ճակատագրաբար, ճակատաճոց, ճակատոսկր են։ Այստեղ է պատկանում նաև ճակատիլ «մի բան ձեռքից փախչելով ուժգնապէս զարնուիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. բ. 445. «Եւ ի տանջելն զինուորացն զարդարն, զմիմեանց կառափունս հարկանէին և ճակատեալ մի ի գաւազանացն՝ հնձաս յերեսս Թագաւորին և ի բաց խլեաց զբիբ ականն նորա»։

=Պհլ. čakāt ձևից, որ գործածուած է «գագաթ» իմաստով. համմտ. նաև պրս. چكاد čakād «հասարակօրէն գագաթն. և ևս գլուխ՝ որ ի գագաթանէ մինչև ի ճակատն մազտեալ իցէ. իսկ յատկապէս գլուխ լերին կամ գագաթն լերին». բուն նշանակութիւնը պահում է սոգդ. čakāt «ճակատ», որ ան-

շուշտ կար նաև հիւս. պհլ. բարբառում։— Հիւբշ. 186։

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, As. polygl. էջ 105, որ կգտնէ պրս. čakād բառին։ ՆՀՌ լծ. գագաթն, պրս. čakād, արաբ. ǰabhat «ճակատ»։ Böttich. Arica 69 պրս. բառի հետ նաև լիթ. kakta, լտ. cacu(d)men, սանս. kākud «գագաթ»։ Հիւնք. պրս. ձևր։ Karst, Յուշարձան 408 սումեր. zag «ճակատ, դրլուխ, կերպարանք»։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. ճակատ, Ալշ. Մշ. ճագաղ, Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Սեբ. Սչ. ջագաղ, Ասլ. ջագաղ, ջագա՞, Տիգ. ջագադ, Ռ. շրջմամբ՝ ջաղագ, Հճ. ջագօղ, ՋՓ. ջագօղ, ջագոդ, Սվեդ. ջագուդ. (սեռ. Ղրբ. ճկատի, Պլ. Խրբ. ջագդի, Ռ. ջաղգի, Վն. ճայտի, Ասլ. ջայդի, Ակն. ջայդիւ)։ Նոր բառեր են ճակատախօս, ճակատապինդ, ճակատմէջ, ճակտուռիլ, ճակտիկ, ճակատկապի։

ՃԱԿԱՏ «աշնցան հաճար». ունի միայն Քաջունի Գ. 151։

ՃԱԿԳԱՐԱՆ «մի տեսակ երաժշտական խաղալիք, ճոռան կամ բոժոժ» (յիշուած է կոճի հետ) Պատմ. աղէքս. 54 (այլ ձ. ճագարան). ուրիշ վկայութիւն չկայ. յունարէն համապատասխան բառն է բնագրի մէջ՝ κρόταλον «բոժոժ»։ Կնչառնցին սխալմամբ մեկնում է «ճակղարանս՝ որ է լից ոսկրեայ» (ճան, վէպ) ըստ Հացունի, Դաստ. էջ 279։

Հացունի, Դաստ. 287 պրս. čāk «հընչիւն, բախիւն», որով դնում է «բախական խաղալիկ մը». ուղիղ ձևը համարում է ճագարան։

ՃԱԿՄԱԿԵԱՆ «խաղուտիկ, խայտաճամուկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Սրճ. խորհ. էջ 385. «Յակոբ նախապետն խայտանկար գաւազանաւն և ճակմակեան գառամբն նշանակեաց զպատկեր զանազանութեան որդւոց իւրոց»։ Անստոյգ է բառս, որովհետև կարելի է նաև կարդալ ճարմակեան, ճարտուկեան, որոնք միևնոյն նշանակութիւնն ունին։

ՃԱԿՆ «ճակնդեղ, փանճար, տակ, beta rapa» Բժշ. (ՀԲուս. § 1838). որից ճակնդեղ «փանճար, լտ. beta rapa» Սս. ծա. 20=Ոսկ. ես. 384. Եփր. վկ. արև. 42. «բազուկ, լտ. beta» Բժշ. Վստկ. 167 (դեղ «խոտ» բառով բարդուած, ինչպէս խաշնդեղ, կապնդեղ). գրուած ճակաճդեղ Եփր. վկ. արև. (Սոփերք Ի. 92). ճակնդեղուկ «վայրի ճակնդեղ. beta sylvestris» Վստկ. 218 (ՀԲուս. § 1840), ճակրներոյս և ճակնխոտ (զանազան բոյսեր), երկուսն էլ գտն. բառ (ՀԲուս. § 1839 և 1841)։

ՆՀՌ վրաց. ճակուճտելի։ Lag. Urgesch. 835 պրս. čaγandar։ Հիւբշ. 186 ենթադրում է պհլ. *čakundar ձևր, որից փոխառեալ է դնում հայր. հայերէնում պահլաւ բառը տուել է նախ *ճակնդար. սրա վերջին մասը ժողովրդական ստուգաբանութեամբ դարձել է դեղ (հյ. դեղ «բոյս» բառի հետ փոխանակուելով) և այսպէս ճակնդեղ ձևը գոյանալուց յետոյ, յետին ժամանակներում ենթադրուած է սուտ ճակն ձևը և սրանից կազմուած են նոր բարդութիւններ։ Հիւնք. վրաց. և պրս. ձևերի հետ։

ՓՈԽ.—Ուղղակի հայերէնից է փոխառեալ վրաց. ჭაკუნტელა ճակուճտելա «ճակընդեղ», որ պահում է հայերէնի ր-ա բունը և միջին ձայնաւորը. այսպէսով երևան է հանում հնագոյն հյ. *ճակուճդեղա ձևր։ Մեղանից է ծագում նոյնպէս քրդ. čārkind.le چارکندلە «սառնպղին, գազար» (Justi, Dict. Kurde 124 և Kurd. Gram. 91)։ Վերջապէս այս երկուսի համեմատութիւնը, մեր բառի հին գործածութիւնը, միանգամայն և ճակն արմատի առանձին գոյութիւնը և սրանով ճակնդեղ բառի բացատրութիւնը՝ իրաւունք են տալիս մեզ ընդունելու թէ հայերէնից են փոխառեալ նոյնպէս պրս. čugundar «բազուկ» (Polak, Persien 1, 122), čuqundur «սառնպղին, գազար» (Rosen, Neupers. Sprachführer 36), čukundur «գազար» (ԳԴ), čuγundur և կրճատ čundur «գազար» (ԳԴ և Justi՝ անդ). սրանցից էլ աֆղան. čuqundur «ճակնդեղ», թրք. čüküdür «ճակնդեղ», քրդ. čunār, čavandár «գազար» (վերջին երկուսը չունի Justi)։ Պհլ. ձևը գոյութիւն չունի և Հիւբշմանի ենթադրու-

թիւնները քաշքշուկ են։ Յիշենք նաև, որ հյ. բազուկ *բառն էլ փոխառեալ է մեր շրջակայ լեզուների մէջ։ Վերջապէս յիշելու է լիւդացոց* ζαχυθίδαι *բառը, որ մեկնւում է «դրդում կամ շողգամ» և որ այնպէս շատ նման է հայերէնի հետ. բայց այս մասին որևէ վճիռ տալ չենք կարող, որովհետև լիւդացոց լեզուի խնդիրը դեռ վճռուած չէ։*

ՃԱԿՈՒՐ *«մի տեսակ բազէ. sacre». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 1109 բ (իբր նորակերտ բառ), որից էլ Քաջունի, Գ. էջ 151։ Չգիտեմ ինչպէս է կազմուած։*

ՃԱՂ *«պատշաճ, յարմար» Փիլ. լին. «վայելչութիւն, կարգաւորութիւն, կարգ ու սարք» Նար. Մագ. լմբ. սղ. որից ի ճաճ «շատ յարմար, պատշաճաւոր» Խոր. Պիտ. 36. կք. ի ճաճ է «յարմար է, պատշաճ է» Ոսկ. յհ. ա. 21, 38.* ճաճել *«յարմարեցնել, պատշաճեցնել, յօրինել» Ոսկ. եփես. 871, 932 և մ. ա. 7. Եւս. քր. ա. էջ 162. Կիւրղ. թգ.* ճաճեցուցանել *Անյ. բարձր.* ճաճաւոր *Պղատ. Նոնն.* աճճաճ *Եզն. Սիրեր.* աճճաճս *Ոսկ. մ. բ. 23.* նոճիաճաճ *Նար. խշ. արմատը գրուած է նաև ճախ Արծր. ա. 24։ Արմատիս մէկ նոր առումն եմ կարծում «վարժ», որից կազմուած են ճաճող «վարժող, նուաճող կամ համբերող» Բառ. երեմ. էջ 194,* ճաճանոց *«վարժանոց, արուեստանոց» Հին բռ. և Բառ. երեմ. էջ 194։*

ՆՀԲ լծ. թրք. ճայիզ *և հյ. կաճ։ Հիւնք. արաբ.* ճայիզ *և պրս.* ճա, ճայ *«տեղի». (վերջինն է պրս.* جا jā, جای jāj *«տեղ», որից փոխառեալ են քրդ.* jî, *աֆղան.* jāē, *բելուճ.* jā, jāgā *«տեղ», ըստ* Horn, Grdr. *էջ 94 ծագում է* yā- *«երթալ» արմատից, ինչպէս հոմանիշ* gāh *«տեղ» գալիս է* gā *«երթալ» արմատից)։*

ՃԱՃԵԼ *«թռչել». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 194։*

ՃԱՃԻՃ *«ջրջրոտ՝ ցեխոտ տեղ» Ես. խա. 18. Սղ. ճզ. 35. Եփր. աւետ. 302. Հների մէջ անեղական է, բայց արդի գրականում եզակի ձևով է. որից* ճաճոտ, ճաճայիճ, *երկուսն էլ նոր բառ։ Հների մէջ գրւում է նաև նախիճ «ճահիճ, տղմուտ տեղ» Կէ. եսւ— Սրանից տարբեր է* նախճախուտ *«ճահճոտ» Ագաթ. (կրկնագրում՝ էջ 65ա* նաղճախուտ*), Երզն. մտթ. Կղնկտ. Կանոն, որ կրկնուած է պարզական նախ արմատից։ Նոյն նախ ձևը գտնում ենք նաև նախիճ Վրդ. առակ. 156 (չունին ՆՀԲ և ԱԲ) բառի մէջ, որից կազմուած է* մարգանախիճ *Պտմ. աղէքս. 125 (ըստ Համառօտ ձեռագիրների) կամ իբրև յտ. անուն՝* Ակնեւոց Մարգանախիճ *Դրնդ. էջ 79.* մարգճախիճ *«ճահճոտ՝ թաց մարգ» Ջենոբ. իբրև վերջինիս կրկնակն է* մարգճակ *ճառընտ. Ջենոբ. էջ 31 և Յայսմ. նախիճ ձևը ունի Յովսիմ. 23. «Գտանես դաշտ մի ճախին և տղմուտ», որի դէմ էջ 24* var- նախճախիճ։ *Վերջապէս արմատի պարզ ձևն ունի Բառ. երեմ. էջ 194* նախ *«մարգ»։ Այս բոլորի համեմատութիւնից երևում է՝ որ* ճաճիճ *բառի մէջ* -իճ *մասնիկ է, արմատն է* ճաճ, *որի հետ նոյն են* նախ, ճակ։

ՆՀԲ նախճախուտ՝ *արմատն է* ճակ։ *Հիւնք. պրս.* čāh *«ջրհոր» և* sāy *«գետ, ջուր» բառերից։ Յայտնի չէ թէ ի՛նչ կապ ունին վրաց.* ճոճի *«ճահիճ»,* ճաճորա, ճաորի *«ճախճախուտ տեղ»,* ճաորիանի *«ճահճային»։ Բայց հյ.* նախ *արմատի հետ նոյն են անշուշտ մինգ.* նխոճխո *«ճահիճ», լազ.* čodčxori *«ճահիճ»* (Erckert, Die Spr. d. Kauk. Stammes 347)։ *Պատահական նմանութիւն ունին չաղաթ.* چالچیق čal'ik *«ճահիճ»,* چالچا čalča *«ճահիճ», եակուտ.* čalbax *«տիղմ, ճախին» անն։*

ԳԻՒ.—խրբ. ջախիճ *«մարգ, մարգագետին». շրջմ՝մր Մկ. Շտ. Վն.* խաճիճ *«մարգագետին» (բայց թերևս քրդ. կամ քրդերէնին անցնելուց յետոյ՝ հայերէնի մէջ եւս առնուած). Քրդ* ճախի *կամ* ճախիճ *(ճիշտ ձևը ստուգելի) Արևելք 1898, դեկտ. 9.—նոյն են նաև* եխաճ *Բբ. «թաց, թրջած, խխում եղած»,* եխեխաճ *Պլ. «շարունակ տեղացող թեթև անձրևից յառաջացած ջրալի ցեխ». Նւգ. «ճախճախուտ»,* եխաճ-եխեխաճ *ՇՀ. Պլ. «թաց, ցեխոտ, անձրևային եղանակ»,— իսկ* ճոճ *Բբ. «ճահիճ» փոխառեալ է վրաց.* ჭოჭი ճոճի *հոմանիշից։*

ՃԱՃԻԼ *«ստահակիլ»? մէկ անգամ ունի*

Մագ. թղ. 237. «Մանչուկ մանչոն ճահճեալ, ղամեկեալ, ըմբահակեալ»։

ՆՀԲ համարում է «մանկութեամբ արբեալ, ստահակեալ», որով և մեկնում է «որպէս ճաճիճ եղեալ, կամ որպէս թրք. (իմա՛ արաբ.) jāhil «տգէտ»։—ԱԲ դրնում է «ջրոտ»։ Տե՛ս և Աճառ. ՀԱ 1923, 252։

ՃԱՀՈՒԿ *«խումբ, ջոկ» Ասկ. Հռովմ. 134 (Քրիստոսի հօտը), 329 (ոչխարների), 407 (սեռ. ճահկիս), 422 (աղուէսների խումբ). «բանակատեղի՞» Սիմ. ապար. 88 (Եւ սրիկայքն վեցնքին չուեալ ի ճահուկ բանակին)։*

ՆՀԲ նոյն ընդ ջոկ։

**ՃԱՂ «երկաթէ միլ կամ ասեղ՝ գուլպայ գործելու և այլ նման բաների համար. 2. երկաթէ կամ փայտէ ձողերով վանդակապատ». ունի միայն ՀՀԲ, իբր գաւառական բառ. վրկայութիւն ունինք ԺԵ դարից՝ Բլկր. էջ 49. «Ես իմ սրտիս դանակ ածեմ, զայքս ճաղի տամ հանելու». աւելի ուշ է ճաղեր «վանդակապատ» Արձ. 1732 թ. (Վիմ. տար. 209)։ Սակայն անշուշտ շատ աւելի հին է, ինչպէս ցոյց է տալիս ղ ձայնը՝ փխ. լ։*

=Վրաց. ჭალი ճալի «ցից, սայլի կողքի ճաղերը», ჭალებიანი ճալեբիանի «ճաղերաւոր սայլ՝ ածուխ տանելու համար», ուտ. ճալ «ցանկապատ, շրջափակ, վանդակապատ», ճալփեսուն «ցանկապատ քաշել»։ Հայերէնը փոխառեալ դնելու պատճառն այն է, որ վրացի ձևն է ჩჭალი ռճալի, ჭრჭალი ճռճալի, իսկ ჭალი ճալի սրանց կրճատն է։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Ալշ. Ախց Մշ. Տփ. ճաղ, Սեբ. ջաղ, գործածական է նաև Ակն. Այն. Արբ. Բլ. Երև. Խրբ. Կր. Համշ. Ղրբ. Ղրդ. Մն. Վն. Տր. ևն. նոր բառեր են ճաղել Մշ. «երկաթէ կամ փայտէ ձողերով ցանկապատ քաշել», ճաղիկ Ակն. «ճաղերով ցանկապատ», ճաղմայր Ակն «տանիքի եզերքի ճաղերը պահող գօտին», ճաղուկ Ակն «գուլպայի շիշ. 2. ոտքի ջիղերը», ճաղտել Բլ. Խն. «խոցտել, ասոտիկ ցաւիլ» (իբր ասեղով ծակոտել)։

ՓՈԽ.—Թրք. գաւ. Կր. ǰay «վանդակապատ» (Բիւր. 1898, 627), Խրբ. ǰay «սանդուխի վանդակապատ», Ակն ǰay «տանիքի շուրջը շինուած վանդակաձև ձողերը», քրդ. جاغ ǰay «վանդակապատ», چاغ čay «շէնքի շուրջը քաշուած փայտեայ վանդակապատ», čay-i-odeī «boisage d'une chambre» (Justi, Dict. Kurde 113, 124), ǰay «իբր սուին գործածելու շիշ՝ շամփուր» (Շտուտ, Քրդերը Տաճկաց-Հայաստ. Ա. 153), ուտ. ճաղ «սայլի ճաղեր. 2. գուլպայ գործելու ասեղ»։

**ՃԱՂԱՊ «անտառ կամ մացառուտ». մէկ անգամ գործածուած է Սիւն. քեր. 210=երզն. քեր. հոմանիշների մի շարքի մէջ. «Դրախտ, անտառ, մորի, ճաղագ, արտ, մարգ»։—Բառ. երեմ. էջ 195 մեկնում է «անտառ կամ մարգ», ՆՀԲ և ՋԲ «անտառ կամ մացառ ճիւղովք լի», ԱԲ «անտառ»։ Գրուած է նաև ճագաղ, ճեղագ՝ ըստ Բառ. երեմ. էջ 194, 197. սրանցից առաջինը Բառ. երեմ. մեկնում է «եղէգուտ կամ ճաղագ», որով բոլորովին նոյնանում է ՓԲ-ի տուած ձևը՝ ճարգաղ «եղէգնուտ, շամբ»։*

=Վրաց. ჭალაკი ճալակի «գետափնեայ մացառուտք. 2. կղզի», ჭალა ճալա «գետափնեայ մացառուտք. 2. եզիպտացորենի յարդ», ჭალატყე ճալատղ'ե «պուրակ, փոքր անտառ», թուշ. ჭალა ճալա «անտառ», ուտ. ճոլոգ՝ «անտառ», լազ. čala «խոտի համբարանոց», dčale «մարգ, մարգագետին»։—Ա՛ճ.

Պատահական նմանութիւն ունի արաբ. جلاخ ǰulāx «ձորը լցնող հեղեղաջուր», جلواخ ǰilvāx «ջրով լցուած ձոր» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 539)։ Կովկասեան ձևերի հետ նո՞յն են արդեօք քրդ. ճալ «ձոր», ճալակ «փոս», որից փոխառեալ է ճալաւ Ալշ. Բլ. «ջուր հաւաքուած լայն տեղ, ուր գոմէշներն են լուանում, մարդիկ լողանում են»։

ԳԻՒ.—Ղզ. ճալա «գետի եզերքին գրտնուած հարթ տեղ» (նոր փոխառութիւն վրացերէնից)։

Ճաղանկոտ *տե՛ս Ճաւշանիոտ։*

ՃԱՂԱՏ *(ի–ա Հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց*

վկայութեան) «հերաթափ, կունդ» Յայսմ. Վրդ. առակ. 53. որից ճաղատութիւն Մխ. ապար.։

=Թուի թէ կազմուած է -ատ (<ճատ) մասնիկով *ճաղ «մազ» բառից, որի հետ հմմտ. հիւսիսային կովկասեան լեզուներից՝ լակ. դճարա, կիւր. ռուտ. խին. դճար, ցախ. դճեր, կազիկում. չարա, ագ. տաբ. ճար, արչ. ճարի, բուդ. ջաար, ջէկ. ճաար, որոնք բոլոր նշանակում են «գլխի մազ»։—Աճ.

ՆՀԲ «որ և ճեղ, լծ. կեղ. թրք. fɛl, լտ. calvus»: Bottich. ZDMG 1850, 357 ճեղ բառի հետ առնս. khalati: Պատահական նմանութիւն ունի արաբ. خلج jalhat «ճաղատութիւն» (արմատը jlh. տե՛ս Կամուս, թրք. թրգմ. Գ. 729)։

ՃՈՂՃ. անծանօթ արմատ. գտնւում է միայն ճաղճամաճ անստոյգ բառի մէջ, որ մէկ անգամ գործածուած է հետևեալ ձևով. «Ջի՞նչ է ծերութիւն. դիւրագիտ չար, կենդանի ճաղճամահ, սպասիկ մահու». Պետառ. =Սեկունդ. (տե՛ս Տաշեան Das Leben u. d. Sentenzen des Phil. Secundus, էջ 36 և Մատեն. մանր ուսումն. էջ 240)։ Յունարէնը վերի կենդանի ճաղճամաճ ձևի դէմ ունի ζῶν θάνατος, որ ոչինչ չի պարզում։ ՆՀԲ մեկնում է «կիսամահ կամ ցանկացօղ մահու», ԱԲ «մեռնելը մօտ, ջախջախած», Տաշեան, անդ՝ էջ 205 «կիսամահ»։

ճաղպատիլ տե՛ս Ճապատիլ։

ճաղփումն տե՛ս Ճողփ։

ՃԱՃԱՆՁ (յեռնաբար ի հլ. բստ ՆՀԲ նաև ի–ա հլ. բայց առանց վկայութեան) «ճառագայթ» Ամովս. և. 20. Իմ. բ. 25. որից ճաճանչազարդ Վեցօր. ճաճանչագեղ Մծր. ճաճանչաւոր Կոչ. լուսաճաճանչ Կորիւն. Մծբ. Կոչ. 414. Փարպ. աճճաճանչ Իմ. ժէ. 3. ոսկեճաճանչ Յոր. լե. 22. Նազր. ծովաճաճանչ Եփր. խչ. 69. բոցաճաճանչ Բ. մակ. դ. 22. Մծր. գուարթաճաճանչ Կոչ. հրաշաճաճանչ Ճառընտ. ճաճանչել Բրս. ծն. ճաճանչափայլ (նոր բառ) ևն։

ՆՀԲ ծածանումն կամ ճօճանք լուսոյ։ Տէրվ. Նախալ. 77 արմատը դնում է ճան, որից կրկնութեամբ և չ յօդով՝ ճաճանչ. իբր հնխ. *ga. gan «ճաճանչել» արմատից. հմմտ. յն. γανέω «շողալ»։ Հիւնք. ճաճաչել բայից։ Վափանցեան, Տեղեկ. ինստ. Բ. 85 ճառագայթ բառի ճառ>ճանչ արմատից։

ՃԱՃԱՆՁԱՒՈՒԽՏ, որ և ճաճանչաճաւուխտ, ճաճաճաւուխտ «գոյնզգոյն՝ խառուտիկ՝ փայլ ի փայլ բանուած կտոր կամ շոր». գործածուած է միայն հետևեալ երկու տեղերը. «Հանդերձ քո բեհեզ և զառնաւուխտ և ճաճանչաւուխտ (կամ ճաճանչաճաւուխտ) եզեկ. ժզ. 13 (նոյնը այլ թրգմ. Օսիր. աւետ. 306. Եւ զզարդս քո սնդուս զառնաւուխտ և ճաճանչաւուխտ. ՍԳրքի յոյն թարգմանութիւնն ունի τὰ περιβόλαιά σου βύσσινα καὶ τρίχαπτα καὶ ποικίλα, որ համապատասխան բառը՝ ποικίλα, նշ. «խայտաբղէտ, գանազան գոյներով»).—«Կոյս մի որ ունէր արկանելիս ճաճանչաւուխտ» (այլ ձ. արկանելի ճաճաւուխս). Անկ. դիրք հին կտակ. Ա. էջ 143։

=Բառիս վերջի մասը -ուխտ «հիւսեալ» փոխառեալ է իրան. *vafta<*ufta «հիւսեալ» բառից (տե՛ս զառնաւուխտ). իսկ առաջին մասը անծանօթ է՝ ինչպէս ձևով, նոյնպէս և ծագումով. ուղիղ ձևն է թերևս ճաճանչաւուխտ, որ յետոյ շփոթուելով ճաճանչ բառի հետ, դարձել է ճաճանչաւուխտ։ Հաւանական է որ ամբողջը իրանեան փոխառութիւն է։—Աճ.

ՆՀԲ «որպէս թէ ճաճանչիւք վխտալով»։

ՃԱՄԱՐ «մուշաբախ կամ քնար». ունի միայն Բառ. երեմ. էջ 195. առաջինը անյայտ է. բայց թուի «քնար զարնելու գործիքը»։

ՃԱՄԱՐՏԱՆ «ճոխաբան, մեծախօս, ուռուցիկ ոճով խօսող». գործածական է միայն արդի գրական լեզուում. հնից ունինք ճամարտակել «ճոխաբանել» Եզն. ՅՀ. կթ.։

ՆՀԲ «գումարտակ բանից կազմել... սիգաքայլ ճեմիլ»։ Հիւնք. յն. σαμάρδακος «շարլատան»։

*ՃԱՄԲԱՐ «մանեակ». մէկ անգամ ունի Սեբ. գլ. ժը, էջ 65. «Զարդարէ ի չքնաղս, ի գտակ և ի պատմուճանս բեհեզեայս յոսկւոյ օծեալ, մեծացուցանէ ահագին պատուօք ի ճամբար ականակապ և ի գումարտակ»։ (Հացունի, Պատմ. տարազի 109 դնում է

վարսակալ», որ ուղիղ է ըստ ծագման)։ Նոյն բառն է անշուշտ, որ Ձքր. սարկ. Բ. 68 հին ձեռագրերից հանելով գործածում է. «Ի գիշերի գաղտ եղեալ փախեաւ հեծեալ ի ջորի և ճամբար իւր եղեալ յաւանդ»։

=ՊՀլ. čambar «գլխի կապ» ձևից. (յիշուած է կանացի վզկապի և գինդերի հետ). հմմտ. նաև պրս. چنبر čanbar «շրջանակ, վզկապ, գլխակապ, ճակատակապ» (Zenker). «փայտեղէն կամ երկաթեայ շրջանակ, որ շրջապատեալ զտակաոս՝ պարապնդէ զնոսա. նաև այլ զինչ և իցէ իր շրջանակեալ» (ԳԴ). աֆղան. čambar «շրջանակ, գունտ»։ Իրանեանից են փոխառեալ նաև ասոր. ṣambarā «կիսալուսնաձև զարդ», թրք. čember «շրջանակ», քրդ. čenber «շրջանակ»։—Հիւբշ. 186։

Բառս չգիտեն ՆՀԲ, ՋԲ և ԱԲ։ Գտաւ ու մեկնեց նախ Սւրոպա, 1852, էջ 123։ Սրանից է նաև Պատկ. Սեբ. 1879, 199 և Матер. II. 2:

ՃԱՄԲԱՐ *(գրուած նաև ճաճբար, ջամբար. ի-ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «բանակ, բանակատեղի» ՍԳր. Բուզ. Ոսկ. հփհս. 930. Սեբ. Խոր. որից* **ճամբարապատ** *«բանակով պատած» ԱԲ։*

=ՊՀլ. čambar «շրջանակ» ձևից (տե՛ս նախորդ ճամբար բառի տակ), որ ունեցած պիտի լինի նաև «բանակ» նշանակութիւնը. առհասարակ «խումբ» նշանակող բառերը կապ ունին «բոլորակ» գաղափարի հետ. հմմտ. գունդ, պար, տճկ. pop են. ներկայ դէպքում հմմտ. յատկապէս՝ **գումարտակ** *«բանակ. 2. մանեակ»։—Հիւբշ. էջ 186։*

Ուղիղ մեկնեց նախ Սւրոպա, 1852, 123 «գուցէ հայոց բանակն ալ բոլորակաձև դրութիւն» պատճառաւ։ Lag. Arm. Stud. § 1368 *պրս. čanbar «շրջանակ» բառից։ Հիւնք. շամփուր-ից։*

ՃԱՄԲԱՐԱԿ *«ճոպան կամ երկաթեայ փոկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 195. կենդանի է արդի գաւառականներում (ինչպէս երև. Մշ. Վն. Լ. Ղրբ. ևն) «գութանի շղթայ կամ հաստ փոկէ կապ» իմաստով։*

*=ՊՀլ. *čambarak ձևից, որի աւելի նոր *čambara ձևն է մատնանշում վրաց.* **ჯამბარა** *ջամբարա «ремни у сохи արօրի փոկը» (Ջուբ.[2] 1765). ուտ.* **չոմբոռո** *«լծի փոկը»։—Աճ.*

ՃԱՄԲՈՒԿ *«մազէ պարկ, մախաղ». ունին միայն ՀՀԲ և ՋԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. փետր. 24. «Ու առեալ եդին ի մազեայ մախաղն իւրեանց... և առեալ յինքն զճամբուկ նոցա»։ Նոր գրականի մէջ սկսաւ գործածուիլ «ճամբորդական պայուսակ» նշանակութեամբ։*

ԳԻՒ.—Մշ. **ճամբուկ** *«ճամբի պաշար կամ նրա ծրարը», որ և* **ճամբայ** (Rivola) *«ճամբորդական կամ հովուի պարկ»։ Նո՛յն է արդեօք նաև Լ.* **ճամբուկ անել** *«քղանցքը բոի մէջ հաւաքելով վեր բարձրացնել» (Ազգ. հանդ. ժա. 40 և Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 423—4)։*

ՃԱՄՈՒԿ, ի-ա *հլ. «զգեստի վրայ գեղեցիկ բանուածք, պատի վրայ նկարուած զարդեր» Նփր. օրին. էջ 271. Ոսկ. մ. բ. 24. Փիլիպ. ժ. որից* **ճամկաւոր** *Ես. գ. 23. Ոսկ. հփհս. 814 և երբ.* **ճամկաւորել** *Վրդն. երգ.* **ոսկեճամուկ** *Ես. գ. 23. ՅԿ. կթ. բազմաճամուկ Ոսկ. փիլիպ. խայտաճամուկ (արդի գրականի մէջ) «գոյնզգոյն զարդերով, խառուտիկ»։*

ՆՀԲ պրս. jāma *«զգեստ»,* jāmagi *«կերպաս», թրք.* janfes *«սնդուս»։* Bugge, Btrg. 17 *իրանեան նիդգահ բարբառով* čāmāh *«զարդ» ձևի հետ (կարեւոր է աուգել)։ Թիրեաքեան, Կարնամակ էջ 21 և ՀՄ 1914, 56 պՀլ.* čāmak, *պրս.* jāma *«զգեստ» բառերի հետ։*

ՃԱՅ, ի *հլ. «ուրուր» Օր. ժդ. 15. «մի տեսակ ագռաւ» Վեցօր. 163. Եզն. «մի տեսակ արագիլ» Վեցօր. 167. Վրդն. ծն. «մի տեսակ ծովային թռչուն. տճկ. մարթի» ՆՀԲ (արդի արեւմտեան գրականում գործածւում է միայն այս վերջին նշանակութեամբ). որից* **ճայեակ** *կամ* **ճայեկ** *«մի տեսակ ագռաւ» Մխ. առակ. Մխ. աս. Վրդն. առակ. 35։*

=Նման են հնչում տարբեր լեզուների մէջ զանազան հոմանիշ բառեր. ինչ. աւրպտ. թրք. چای čay *«коршунъ, ѓинъ»* (Будаговъ 1, 466), *վրաց.* **ჯარი** *ջարի,* **ჯარო** **ճարո** *«сухолаплъ, рыболовъ, чайка» (Ջուբ.*

բինով[2] 1703), ռուս. чайка, ուկր. čajka, չեխ. čejka, լհհ. czajka ևն, որոնց յարաբերութիւնը անյայտ է։—Աճ.

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ա բնաձայնից։ ՆՀԲ ճա՛, ճա՛կ ձայններից. լծ. լտ. gavia: Bugge, Btrg. 16 հսլ. čajka, բոհեմ. čejka, սերբ. čavka, čava, լիթ. kówas, յուն. χαῦαξ թռչնանունների հետ է միացնում։ Berneker 134 վերի սլաւական բառերը բնաձայն է համարում։

ԳԻՒՌ.—խրբ. ջայէ[1] «մի տեսակ թռչնորս թռչուն է». վերի արմատից է նաև ճաճռաւ ՋԲ. «մի տեսակ թռչուն» (իբր ճայ-ագռաւ). նո՞յն է նաև. Մշ. ճարեգ «թռչուն սարեակի ցեղից»։

ՃԱՅԹ. արմատ՝ հների մօտ առանձին անգործածական. յետնաբար կայ «ճայթիւն» նշանակութեամբ՝ Անկ. գիրք առաք. 256. որից ճայթել (գրուած նաև ճեթել Արծր. Հրտր. Պտկ. էջ 87) «խորտակիլ, ճաքիլ, շաչել» Ամոս. գ. 5, Ոսկ. ես. «կայթել, խաղալ, ցնծալ» Պիտ. ճայթեցուցանել Խոր. բ. 89. ճայրիւն Վեցօր. ճայրիք Ոսկ. մ. ա. 6. Հռոմ. էջ 210, 324. տիտ. էջ 297 (հինգ անգամ). աճճայր Դիոն. ածայ. բարկաճայր Նար. յովէդ.— ո աստուկականով ունինք ճայրոել Վանակ. յոբ. ճայրոումն Փիլ. իմաստ. 43։

ՆՀԲ լծ. թրք. čatlamaq «ճաքիլ». նոյնը նաև Հիւնք. Դադանճեան Արև. մամ. 1907, 934—5 և Թիրեաքեան, Բազմ. 1913, 341։ Մառ, О полож. абхаз. 29 վրաց. ճեխա «որոտալ ևն»։

ԳԻՒՌ.—Մշ. ջոթել, Ննխ. ջոթէլ, Ակն, Ասլ. Պլ. Ռ. Սեբ. ջաթիլ, խրբ. ջոթիլ, ՋԲ. ջէթիլ, Հճ. ջէդ'դ'ել, Սվեդ. ջիթիլ, Մշ. ճոալ. աստուկական մասնիկով՝ ջաթռդիլ, ջաթաւ-ջաթաւ-ևն։ Նոր ձևեր են՝ ճաթաւ-պատաւ, ճաթեցնել, ճաթիկ-ճաթիկ, ճաթոտուկ, ճաթոտուք, ճաթոցք, ճաթարիլ։

ՃԱՅԻԿ «մատակ ձի». մէկ անգամ ունի Մագ. քեր. 241. «Զիոյ իգականքն. մատեան, զամբիկ, ճայիկ, զոր ճակ անուանեն»։

ՆՀԲ նոյն է դնում ճակ բառի հետ։ Բագրեհան, Մասիս 1885, 863 առնս. ճայա «ձի» բառի իգական ճայի ձևից։ Bugge. Btrg. 16 հպրուս. kaywe, լեթթ. kehwe «մատակ ձի» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։

ՃԱՅԻՆ «սև ճոռոմութեամբ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 195. ի՛նչ լինելը յայտնի չէ։

*ՃԱՅՂ «տիղմ կամ տղմոտ լիճ» Անյ. հց. իմ. ուրիշ օրինակ չկայ։

=Փոխառեալ է կովկասեաններից. հմմտ. ուտ. ճայլ «ցեխ, տիղմ», լազ. ճալիմի «ցեխ, կաւ»։—Աճ.

ՃԱՅՐ «աչքի բիժ, մթարք». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են ճայրոտ «բլշակնեալ, աչքերը հիւանդ» (գրուած ճեռոտ) Ոսկ. յհ. բ. յիշատ. ճայրոտեալ «բլշակնած, աչքերը փչացած» Փիլ. տես. 8, Գիրք թղ. 393. ճայրոտութիւն Փիլ. լիւս. 141. ճայրոտել Առ որս. Սանահն. Սկևռ. ես. ճայրոտեցուցանել Առ. որս.։

ՃԱՆ. արմատ առանձին անգործածական և անյայտ նշանակութեամբ. գտնւում է միայն հետևեալ բառերի մէջ. դաւանան «դաւող, նենգող» ՍԳր. խրախճանք «խնջոյք» ՍԳր. ճակաճան «իգամոլ, իգասէր» Եփր. Թագ. տիրաճան «իր տիրոջ սիրո՞ղ» Թր. Նչ. և Երզն. քեր. գինեճան «գինեմոլ» Տիմոթ. կուզ, էջ 19. ճոխաճանութիւն «հպարտութիւն, պարծենկոտութիւն» Ոսկ. ես. 17. երախճան «սանձ» Նիւս. երգ. սրանցից էլ՝ դաւաճանել Ել. գ. 22. խրախճանակից Բ. պետ. բ. 13. գինեճանութիւն 3Ե. իմ. առ. ևն։

Թր. Նչ. և Երզն. քեր. համարում են ճանաչել բայի արմատը. այսպէս է մեկնում նաև ՆՀԲ։ Սխալ է, որովհետև այս պարագային պիտի լինէր -ճանաչ կամ -ծան։ Վերի ածանցներից մի քանիսի մէջ -ճան նշանակում է «սիրող, ցանկացող, մոլի». այսպէս են ճակաճան, գինեճան, տիրաճան. թերևս նաև ճոխաճան, դաւաճան. այս պարագային կարելի էր թերևս համեմատել հպրս. čanah ձևի հետ. (հմմտ. Aspa-čanah «Զիասէր»). բայց ի՛նչպէս մեկնենք խրախճան և երախճան բառերը։ Մառ, ИАН 1911, 441 և Ղափանցեան, Տե-

*ղեկ. ինստ. 2, 80 (խրախ)*ճան կգում են հյ. ոտն, վրաց. ծանա «կոչունք, ոտն» և մինգր. ճան «հրաւիրել» բառերի հետ։

ՃԱՆ *«վէդ». ունի միայն ԱԲ. դիտէ արդէն Բառ. երեմ. էջ 300։—Հացունի, Դաստիարակութ. էջ 277 ասում է թէ միջին հայերէն բառ է։ Փոխ. ուտ. «ճանովէդ»։*

ՃԱՆ *«ուսոյց մասն ի մարմինս կենդանեաց, որպէս ուղտոյ». ունի միայն Քաջունի, Հա. Գ. էջ 151։*

ՃԱՆ *«երթալ». գտնում ենք միայն ցանկճանօղ «մշտագնացօղ» բարդի մէջ, որ ունի Բառ. երեմ. էջ 317։*

ՃԱՆԱՉԻ *«գրատոհմ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 195. ինչ լինելը յայտնի չէ։*

ՃԱՆԱԿ *(ներգ. ի ճանակի) «մատանու կապիճը, այն է քարը ազուցուած տեղը»։ Մաշտ. ջահկ. ուրիշ վկայութիւն չկայ։*

***ՃԱՆԱԿ** *«անտուղ, կղմուխ բոյսը.* helenium*». յիշում է միայն ՀԲուս. § 1844, առանց վկայութեան։*

=Արաբ. جانه janāh *«կղմուխ,* helenium*» (տե՛ս* Steinschneider*-ի հատաքածոյի մէջ՝* WZKM *12, 329)։—Աճ.*

+ՃԱՆԱՉԵԼ *«ծանօթ լինել» ՍԿր. Ոսկ. մ. բ. 4, 25. Նւս. քր. «հռչակաւոր կամ նշանաւոր լինել» Նւս. պտմ. 43, 92. Նւս. քր. 104. արմատն է ճանաչ, որից նաև ճանաչական Ոսկ. յհ. բ. 13. ճանաչելի Վեցօր. ճանաչիլ Ագաթ. ճանաչողութիւն Փարպ. անճանաչական Ագաթ. անճանաչող Փարպ. նոր գրականի մէջ* **բոախտաճանաչ**, **գրաճանաչ**, **պարտաճանաչ** *են։ Արմատական ճանաչ ձևն ունի Ուխտ. բ. 92 «ծանօթ, յայտնի» իմաստով։*

=Բնիկ հայ ծան արմատից կազմուած՝ շ ածանցականով, որի ազդեցութեամբ յետոյ ծ ձայնը դարձել է ճ։ Ընդարձակ մեկնութիւնը տե՛ս ծան արմատի տակ։—

Ուղիղ մեկնութիւնը ծ>ճ ձանձրախոհութեամբ տուել է նախ Meillet MSL *8, 296, աւելի յետոյ էլ Մալխասեան, Գրաբարի հոլովումը և խոնարհումը, Թիֆլիս 1910, էջ 63։ Միւսները տե՛ս ծան։ Սխալւում է Հիւրշ. 456, որ կարծում է թէ ճանաչ և ծան տարբեր արմատների են պատկանում։* Patrubány *ՀԱ 1908, 152 նոյնպէս տարբերելով ծան արմատից՝ կգում է յն.* δέαται *«երևի» բառին։*

ԳԻՒ.—Ջղ. ճանաճնչել, *Երև.* նաճաճչել, *Տփ.* ճանա՛նչիլ, նա՛նչնալ, *Ագլ. Շմ.* նճանչիլ, *Գոր. Ղրբ.* նճո՛նչիլ, *Ախց. Կր.* նաճչել, *Ալշ. Մշ. Ոզմ. Վն.* նաճչրնալ, *Բլ.* նաճճնալ, *Տիգ.* ջոնչրնալ, *Մկ.* նոնչնալ, *Ննխ.* ջանչնալ, ջաշնալ, *Սչ.* ջանչ'նալ, *Խրբ.* ջանչնալ, ջաչնալ, *Մրզ. Սլմ.* նաշնալ, *Պլ. Ռ. Սեբ.* ջաչնալ *(կտր. Պլ.* ջանձնա*)*, *Զթ.* չէնչնօլ, չէնչնոլ, *Հմշ.* ջօնչուշ, *Ակն* ջօշնալ, *Ասլ.* գէօշնա։ *(Սվեդ. գործածում է այս իմաստով գ'իդոնիլ, որ է գիտենալ)։ Նոր բառեր են ճանաչ (Տփ. ճանանչ. իսկ Մրզ. զանազանում է ճանանչ՝ թուրքի հետ և ծանօթ՝ հայի հետ. այս խորութիւնը կայ նաև տեղական թուրքերէնում). ճանչուռ (Սչ.* ջանչ'ֆօռ*), ճանաչութիւն, ճանչ բերել, ճանչցուիլ, ճանչվոիլ, ճանչուորիլ, ճանչուորութիւն։*

ՓՈԽ.—Բոշայ. ջանել, զանել *«գիտենալ, իմանալ», Եւդոկիոյ բոշայ.* gə janem *«ճանաչում եմ» փոխառութիւն չեն, այլ ցեղակից հնդևրոպական ձևեր։ Այսպէս պիտի հասկանալ նաև ալբան.* dzan *«ուսնիմ, գիտեմ», որ Գ. Փառնակ՝ Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է դնում։*

***ՃԱՆԱՊԱՐՀ,** *ի–ա Հլ. «ճամբայ». փխբ. «եղանակ, կերպ, միջոց են» ՍԿր. Եփր. Եւ. (գրած է ճանապարեհ Փիլ. այլաբ. 115, միջին Հյ. ճանապահ Անսիզք 25). որից* **զճանապարհայն** *ՍԿր.* **ճանապարհորդ** *Մն. լե. 25.* **Առակ զ. 11.** **ճանապարհորդել** *Իմ. ժդ. 1. Ղկ. ժ. 33.* **ճանապարհագնաց** *Մծբ.* **ճանապարհակից** *Ոսկ. մ. գ. 16. Ագաթ.* **ճանապարհացոյց** *Կոչ.* **անճանապարհ** *«դժուարագնաց, դժուար» Եղիշ. Փիլ. (գործածւում է իբր ածական՝* **ճանապարհ** *և տեղի բառերի հետ. հմմտ. պրս.* bērāh *նոյն նշ. ինչ.* ha ma suy-i ān rāh-i bērāh šudand, *ամենքին գնացին ի ճանապարհն այն անճանապարհ. Շահն. Ջոհր. 457).* **դիւրաճանապարհ** *Եփր. փիս. 402.* **երկնաճանապարհորդ** *Փարպ.* **զուգաճանապարհութիւն** *Ճառընտ.*

կանխաճաճապարճուրդեալ *«կանխաճառեալ» (յն. πάνυ) Աբ. ը. շուրջճաճապարճ Ածար. Առ. որս. նոր լեզուի ձևերից են՝* ճամբուրդ, ճամբուրդութիւն, ճամբուրդական *են։*

*=Իրան. *čarana-parθ ձևից արագաբանութեամբ (իբր *ճարաճապարճ). կազմուած է* čarana- *«երթալ» (=զնդ.* kar, čara, čaraya *«շարժուիլ, երթալ»* Bartholomae, Altir. Wört *էջ 449)+*parθ *«անցք» (=զնդ.* pərətu *«անցք», քրդ.* purd, *պհլ.* puhl, *պրս.* پل pūl *«կամուրջ») բառերից։*

Ուղիղ մեկնեց Nyberg, Hilfsb. 2, 187: Schröder, Thesaur. 46 *արաբ.* جنبة janba *ձևից փոխառեալ։ ՆՀԲ պրս.* ճէյբուր, *արաբ.* զէնպուր: Lag. Gesam. Abhd. 32 *պրս.* čanbar *«շրջանակ»։ Հիւնք. պրս.* چيپر čaypar *«լայն ճանապարհ, պողոտայ» (սրա մեկնութիւնը չունի* Horn*)։ Դ. Սարգսեան, Բիւր. 1898, 484 օտար է համարում։ Ս. Վ. Պարոնեան, Բանաս. 1900, 172 զնդ.* ճիճէվար *«կամուրջ հանդերձեալ կենաց», պրս.* ճէյփուր: Patrubány *ՀԱ 1908, 153 պրս.* jān *«հոգի»+զնդ.* pāθra *«պահել, պաշտպանութիւն», իբր թէ «մարդկանցից պահուած տեղ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 261 պհլ.* činvar *(որ կարդում է* čanavar*), պրս.* جينور jīnavar *«հանդերձեալ կենաց մազէ կամուրջը»։*

Գիւմ.—Երև. Տփ. ճաճա՛պար, *Վրբ.* ճճա՛պար, ճճա՛պա, *Ագլ.* ճճա՛փար, ճճա՛պա, ճճա՛փա, *Գոր.* ճճճա՛պա, *Ոզմ.* ճոճրոխ, *Մրղ. Սլմ.* ճամբախ, *Մկ.* ճամբոխ, *Վն.* ճոմբոխ *(սեռ.* ճամխի*), Բլ.* ճանգա, *Ալշ.* ճամպա, *Մշ. Սեբ.* ճամբ՛ա, *Ախց. Երև. Կր. Ջղ. Տփ.* ճամփա, *Ակն. Ռ.* ջանփա, *Խրբ.* ջամբ՛ա, *Ասլ. Ննխ. Պլ. Սչ.* ջամփա, *Տիգ.* ջոմփո, *Հմշ.* ջոմփա, *Զթ.* ջամփօճ, ջամփոճ, *Հճ.* ջամփօ, *Սվեդ.* ջամբ՛օգ, ջամբ՛ուգ: *Նոր բառեր են* ճամբարաժան, ճամբակոռոյս, ճամբակտրէք, ճամբաճան, ճամբամիջի, ճամբել, ճամբուկ, ճամբելուկ, ճամբկոտոր: — ճաճապարճուրդ *դարձել է* ճամբուրդ:

*ՃԱՆԹԱԿ *«մի տեսակ խնկաբեր բոյս է. յն.* ἀσπάλαθος, *որ է* genista acanthoclada L». *մէկ անգամ գործածուած է Սիր. իդ. 20. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Պհլ. čambak *բառից, որի հետ նոյն է պազենդ.* čamba. *Ծագում են սանս.* čampaka- चम्पक «michelia champaka L» *(կծու հոտով՝ դեղին ծաղիկներով մի ծառ է.* Böhtlingk 2, 950) *բառից, որից նաև մալայ.* čampāka, *ֆրանս.* champac, sampac. *բոյսը բառի հետ բնիկ հնդկական է և մշակւում է Արևելեան Հնդկաստանի պարտէզներում՝ իր կծու և հոտաւէտ ծաղիկների համար։ Հնդկաստանից անցել է բառը մալայերէնի և ամբողջ Հնդկական Արշիպելագոսում տարածուել է։—Հիւրշ. էջ 187։*

Lag. Arm. Stud. § 1371 *դրաւ սանս. ձևի հետ, որին կցում է նաև պրս.* zanba *և արաբ.* zanbaq *«սպիտակ յասմիկ»։ Հիւրշ. չի ընդունում վերջիններս և հայը դնում է պահլաւից։*

*ՃԱՆԴԱՆ *«մի տեսակ հոտաւէտ փայտ է խոր. աշխ. նոյն են նաև* ճանդալ, չանդան *Բժշ. վերջիններս յիշում է միայն ՀԲուս. § 1846. բոյսի գիտական անունն է* sandalum, sandalinum lignum»:

=Պրս. چندان čandān *կամ* چندن čandan. *որ և* چندل čandal, *նոյն նշ. փոխառեալ է սանս.* चन्दन čandana *հոմանիշից, որ պատկանում է* čand- *«պսպղալ, փայլիլ» արմատին (տե՛ս հյ.* խանդ): *Սրանցից են նաև արաբ.* صندل ṣandal, *ասոր.* ܨܕܠ ṣandal, *լտ.* sandalum, santalum, *յն.* σάνταλον (Boisacq 405), *գերմ.* Sandel, *ֆրանս.* sandal, santal *են։—Հիւրշ. 187։*

ՆՀԲ պրս. զիճնտէն, զէճտէն: *Վերի ձևով մեկնեց* Böttich. ZDMG 1850, 357 *և* Lag. Arm. Stud. § 1372:

*ՃԱՆԴԱՐ *«սօսի». մէկ անգամ գործածուած է Կիր. տպ. Վեննա. էջ 124. «ծառ սօսի, զոր ճանդար կոչէին (Գանձակի պարսիկները). նոյնը* ճանդարի *ձևով ունի Մեկն. ծն. (Նղիշէի?)՝ ըստ ՀԲուս. § 1848,* ճանդարի *Ջքր. սարկ. Ա. 42 (ի ծառն ճանտա-*

րի՝ որ է չինարի), Բ. 84 (յայն կողմն ճանաարի ծառոյն)։

=Պրս. բառ է, ըստ վկայութեան Կիրակոսի. նոյնը վրաց. ჭანდარი ճանդարի «սօսի, չինար» (Ջուբ.[2] 1702), «բարտի» (Анненковъ էջ 267 բ), ափխազ. աճանդար։

Ըստ ՀԲուս. «սօսի ծառն է պրս. լեզուաւ»։ Պրս. է համարում նաև Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 79։

ԳԻՒ.—Տփ. ճանդարի «բարտի», Մշ. ճանդար «գերան».—ճանդարի իբրև «սօսի» յիշուում է նաև Հովիւ 1906, 430։

ՃԱՆԴԻ «մի տեսակ բոյս». մէկ անգամ յիշուում է Մխ. առակ. խէ՝ իբր արջի սիրական մի ուտելիք. «Ո՞ խորու և ճանդի, ո՞րքան բարի եք որովայնի» (ասում է արջը)։

ՆՀԲ կցում է ճանդան փայտի հետ, բայց կասկածում է որ լինի «ազգ սընգուրի, որպէս յն. σάνδυξ լտ. sandyx»։ ՀԲուս. § 1849 կցում է գւռ. ճանդուկ «վայրի ստեպղին» և նրան էլ նոյն նշանակութիւնն է տալիս։ (Ազգ. Հանդ. է. 300 ունի ճանդուկ լ. «bromus secalinus բոյսը»)։

*ՃԱՆՆ կամ ՃԱՆԳ, ի-ա հլ. «կեռ, սուր և ժանեւոր գործի, կամ նաև թռչունի և գազանի մագիլ, ճիրան» Յայսմ. Խոր. աշխ Վանակ. հց. Լաստ. որից ճանկխոտ «գետնի փիճի բոյսը» Բժշ. ճանկճանկոտ «շատ ճանկերով» Վանակ. հց.։

=Պրս. چنگ čang «թռչունի մագիլ, մարդու ճանկ, կեռ, կորացեալ, թեքեալ» որից փոխառեալ են նաև արևել. Թրք. چانقا čanqa «ճանկ, մագիլ», چانگاك čangak «մխս կախելու կեռ», քրդ. čeng, čang «ձեռք, բազուկ», զնչ. čanka «կեռ գաւազան», վրաց. ჭანგი ճանգի «գազանի կամ թռչունի թաթը, մագիլ», գաշանգեբա «խորել, միջից մի մասը դուրանալ. ճանկել» լազ. ճանգի «մագիլ թռչնոյ», ուտ. ճոնգ[1] «ճանկ, մագիլ»։—Հիւբշ. 187։

Ուղիղ մեկնեց նախ ԳԻ։ նոյնը և ՆՀԲ, Böttich. Arica 85, 410 ևն։ Պատահական նմանութիւն ունին չին. 爪 čang[3] «ափ, բուռ», 抓 čiang՛ «նիզակ» (առաջինը կարդա՛ ճանգ, երկրորդը չիանգ)։

ԳԻՒ.—Ախց. Կր. ճանկ (յգ. ճանկվրնէր), Ալշ. Գոր. Երև. Մշ. Զղ. Սլմ. ճանգ, Տփ. ճանգ կամ չանգ, Մկ. Վն. ճանգ[1], Ոզմ. ճանկ[1], Ղրբ. ճոնգ[1], Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. ջանգ, Ասլ. ջանգ, ջայ, Հճ. Համշ. ջօնգ, Զթ. ջօնգ, ջոնգ.—կայ նաև ճանգոալ Շմ. «ծաղրել»։ Նոր բառեր են ճանկել, ճանկիկ, ճանկուտել, ճանկռել, ճանկռտել (Սչ. ջանճռթել), ճանկճանկել, ճանկռռտել, ճանկռթռռել, ճանկառտ, ճանկռթան, ճանկռտուտ.—Կովկասի մէջ այս ձևերը արտասանւում են չ ձայնով՝ նոր պարսկերէնի ազդեցութեամբ. ինչ. Շմ. չանգռիլ «ճանկռռել» ևն։—Սչ. ունի միայն ջանճրռթել բայը։

ՓՈԽ.—Ատանայի Թրքախօս հայերը, Թուրքերն ու յոյները ունին jeng «ճանկ, ձեռք» ձևը, որ, ինչպէս նախաձայնը ցոյց է տալիս, հայերէնից է փոխառեալ։

ՃԱՆԿՈՒԻ, որ և ճանճալ, ջոնջոլ «դամասկեան սալոր, մի տեսակ խոշոր սալոր» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1854—5։

ԳԻՒ.—Ախց. Ախք. ճանջուլ։

ՓՈԽ.—Թրք. գւռ. Թորթումի janjol, janjur (Շիրակ 1905, էջ 425)։

*ՃԱՆՃ կամ ՃԱՆՋ, ի հլ. (յետնաբար նաև ո հլ.) «ճանճ» Ժղ. ժ. 1. Նղն. Վեցօր. 121. որից շաճաճանճ ՍԳր. ճանճիկ Դ. Թագ. ա. 2, 16. ճանճաճաճած կանոն. ճանճեան Վրք. Հց. ճանճիռն, ճանջիռն կամ ճանճիւռն «ճանճեր» Ես. է. 18=Ոսկ. Ես. 91. Եփր. ծն. էջ 6. Գր. տղ. Գէ. Ես. ճանճոց «փեթակ» Հայել. 165 (նորագիւտ բառ), ճանճաճերմակ «սև ու ճերմակ, պիսակաւոր» Մագ. Թղ. 87. ճանճկէն Բուզ. Գ. 20. Գնձ. (վերջինն երկուսի հետ համմտ. գերմ. Fliegenschimmel, ֆրանս. moucheté, պրս. asp-i-magasī, որոնք նշանակում են «ճանճկէն» և նոյնպէս կազմուած են «ճանճ» բառից)։ Նոր բառեր են ճանճվան, ճանճաճաւ, ճանճասպան ևն։

=Փոխառեալ է կովկասեաններից. համմտ. մինգր. ճանջի, ճանդի, լազ. ჯაჯი ջաջի կամ მჯაჯი մջաջի, მჭაჯი մճաջի, տաբ. ճամճու. բոլորն էլ «ճանճ» նշանակութեամբ։

Բառս կայ նաև վրաց. წერი *ծերի ձևով, ուր* r *համապատասխանում է նախորդների* ջ, նջ *ձայներին. հմմտ. վրաց.* ცვარი *=մինգր.* ცუნჯი *ցունջի «ցօղ», վրաց.* ძირი *ձիրի=մինգր.* ჯინჯი *ջինջի «արմատ», վրաց.* ქმარი *=լազ.* ჭომოჯი *ճոմոջի, մինգր.* ჭომონჯი *ճոմոնջի «ամուսին» ևն։ Կովկասեան ձևերի այս բազմազանութիւնը և ընդհանուր տարածումը չի թոյլ տալիս ընդունիլ թէ կովկասեաններն են փոխառեալ հայերէնից։*

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 և բնաձայնից։ Տէրվ. Նախալ. 77 ճաճանչ *բառի հետ՝ ճան արմատից, իբր հնխ.* gan *«ճաճանչել», յն.* γανέω *«շողալ»։ Հիւնք.* չանչ *բառից, իսկ* ճաճնկէն *=պրս.* ճէշիշ *«գո՞րշ»։ Ուղիղ մեկնեց* M. Riabinin *ի* MSL 10, 21: Patrubány SA 1, 106 *թերևս սանս.* čanč *«ցատկել, ոստնուլ»,* čančarin *«մեղու»,* čančala *«հրերուն, շարժուն»։ Նոյն ՀԱ 1907, 16 հնխ.* deyā- *«թռչիլ» արմատից կրկնուած, իբր* *dyāndyos. *իսկ կովկասեանները փոխառեալ հայերէնից՝* SA 2, 32: *Մաս* ЗВО 19, 072 *կովկասեան ձևերի հետ։*

ԳԻՒ.—Ախց. Կր. ճաճճ, *Ալշ. Գոր. Երև. Մկ. Մշ. Շմ. Ոզմ. Ջղ. Վն. Տփ.* ճաճջ, *Հւր. Ղրբ.* ճոճջ, *Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Սվեդ.* ջաճջ, *Հճ. Ջթ. Տիգ.* ջոճջ, *Ասլ.* ջուջ, ջաժ. *Ագլ.* ճուճջ, *Ակն. Համշ.* ջօճջ։ *Նոր բառեր են* ճաճճակեր, ճաճճաճոց, ճաճճապահ, ճաճճաստէր, ճաճճաֆշի, ճաճճաֆթոց, ճաճճաֆար, ճաճճոտ, ճաճճոտիլ, մեղրաճաճճ։

ՓՈԽ.—Վրաց. ჭანჭიკი *ճաճճիկի «առանցքի սեպը»։*

ՃԱՃԱԻԻՒՆ *«կեռ, ճանկ, ակիշ». մէկ անգամ ունի Եփր. քրզ.։*

*ՆՀՔ «*ճաճկեր *կամ* ճաճկ կեռ, *որպես ոմկ.* կանկիո, կանկեռ»։

ճԱՃ, ո *հլ. «կէսօրուայ կերակուր, խրնջոյք, սեղան տալը» ՍԳր. Ոսկ. մ. գ. 16. որից* ճաշոյ ժամ *«կէսօր» Դան. ժգ. 13. Հռութ. բ. 14.* ճաշագործ *Ոսկ. մ. գ. 17.* ճաշաժամ *Բ. Թագ. իդ. 15.* ճաշակից *Ոսկ. յհ. բ. 13.* ճաշել *ՍԳր. Փարպ.* ճաշարան *Պատմ. աղէքս։ Նոր բառեր են* ճաշկերոյթ, ճաշասեղան, ճաշասրահ, ճաշացուցակ, ճաշադուլ, ճաշարանապետ *ևն։*

*=Պհլ. *čāš ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց հմմտ. պհլ.* čāšt *«առաւօտեան նախաճաշ», պրս.* چاشت čāšt *«ճաշու ժամ, ճաշ, ճաշկերոյթ»,* čāšta, čāštī *«ճաշ, ճաշկերոյթ»,* čāš-dān *«հացի սնտուկ»,* čāšt-gāh *«ճաշաժամ»,* چاش čāš *«ճաշ, ճաշու ժամ». սրանց հետ նոյն են սոգդ.* 'pč'š- *«ընթրիք անել», աֆղան.* cašal *«ճաշել», քրդ.* čāšin *«հացի սեղան»,* češin *«խնջոյք, ընթրիք»* (Horn § 433). *պարսկերէնից է փոխառեալ նաև արևել. թրք.* چاشکا čaš-gā *«արևածագի ու կէսօրուայ մէջտեղը, երբ ոմանք ճաշ են անում»։ Հմմտ. նաև յաջորդը։—Հիւբշ. 187։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. չաշթէ, չաշ *ձևերի հետ։ ՆՀԲ պրս.* չաշթէ, չաշթի: Peterm. 22 *սանս.* čaš, *26* ճաշել՝ *սանս.* čaš, *պրս.* čašīdan: Böttich. ZDMG 1850, 357 *սանս.* jakš *«ուտել»։* Lag. Urgesch. 552 *սրա հետ նաև պրս.* jašīdan: Müller SWAW *հետ նաև պրս.* jašīdan: Justi, Zendsp. *109 զնդ. սանս.* čaš *են ձևի տակ։* Lag. Arm. Stud. § 1375—1379 ճաշ *=պրս.* čāš, čašt, ճաշակեր *=պրս.* čāšgar:—*Հիւնք. պրս.* jašn *«խրախճանութեան և հիւրամեծարութեան»։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Մկ. Մշ. Մրղ. Ոզմ. Սլմ. Վն. Տփ. ճաշ, *Ղրբ. Շմ.* ճոշ, *Սեբ.* ջաշ, *Խրբ.* ջոշ, *Ագլ.* ճօշ. *սրանցից մի քանիսը նշանակում են «ապուր, փիլաւ կամ մի ուրիշ տեսակ կերակուր, խաւիծ, հերիսայ». այսպիսի գործածութիւն ունին Ալշ. Ղրբ. Շմ. Մշ. Լ. Վն. Սւդ. Սեբ. Սլմ. Խն։—Իբր կրօնական բառ՝ ամէն տեղ կայ* ճաշու *«կէսօրուայ ժամերգութիւն»։ Նոր բառեր են* ճաշաժամ, ճաշաման, ճաշաֆամի, ճաշկիթ, ճաշթող, ճաշոց, ճաշֆ, ճաշֆուն: *Ղրբ. կայ նաև չէշտաֆուն՝ որ ուղղակի պրս.* čašt *«ճաշու ժամ» բառից է կազմուած։*

ճԱՃԱԿ, ի–ա *հլ. (յետնաբար նաև* ո *հլ.) «համտես, համի փորձ, համ, յայնաբար՝ որևիցէ փորձ, օրինակ» ՍԳր. Կոչ. Մծբ.*

«կում, մէկ անգամ ըմպելը» Պարգ. 380, 565, 572, 711 (Ու զբաժակն ըմպէ երիս ճաշակս. Առնու ի բաժակէ արեանն ճաշակ մի. Առնու և ի բաժակէն ճաշակ մի. Տացէ նմա և ի բաժակէն ճաշակ մի). «գաւաթ, բաժակ, հեղանիւթերի մի չափ» ՍԳր. «կոնքաձև կամ բաժակաձև բազմակալ ճրագի» Ջաք. Բ. 14, որից ճաշակել *ՍԳր. Մծբ. Ոսկ. յհ. բ. 17.* ճաշակակից *Սիրաք թ. 22.* ճաշակելի *Ոսկ. տիտ.* ճաշակելիւ *երեմ. դ. 19. Ածբ. և. 14.* աճճաշակ *Ագաթ.* դառնաճաշակ *Շար.* գեղեցկաճաշակ *Տօնակ.* նորաճաշակ *իմ. ժղ. 2.* դժուարաճաշակ *Ճառընտ.* դիւրաճուշակ *Մխ. առակ.* եզճաճաշակ *Նոնն.* կենաճաշակ *Պիտ.* ճոգեճաշակ *Նար. առաք.* հրաճաշակ *Նար. Շար.* ճաշակատր *(նոր բառ) ևն։*

=*Պհլ.* *čāšak *ձևից, որ ունէր նոյն կըրկին նշանակութիւնները. Համմտ. պրս.* چاشنی čāšnī *«ճաշակ, համտես, փորձ, օրինակ»,* čāšna kardan *«համը նայիլ, ճաշակել»,* čašīdan *«ճաշակել»,* čašgar *կամ* čāšnīger *«համտեսող»։ Իրանեանից փոխառեալ են նաև սանս.* चषक čāšaka- *«ըմպանակ, բաժակ, մի տեսակ խմիչք», վրաց.* ჭაშნაკი ճաշնիկի *«ըմպելիքի փորձ՝ մի քիչ խմելով. համտես»,* მეჭაშნაკე մեճաշնիկե *«մատրոուակ»,* ჭაშნაკება ճաշնիկեբա *«դիւր դալ», քրդ.* češnī *«օրինակ, նմոյշ», Բրք.* češni *«համ, համտես»,* češniǰi *«համտեսող», հալ.* čaša, *չեխ.* číše, číše, *ռուս.* чаша, чашка. *ուկր.* čáša, *սերբ.* čāša, *բուլգար.* čáša, *լհհ.* czasza, *որից էլ հպրուս.* kiosi *«գաւաթ»* (Berneker 137): *Արմատի համար համմտ. սանս.* čāš *«ուտել, խմել» և նաշ բառի տակ յիշուած ձևերը։—Հիւբշ. 187։*

Նշբ «ճաշիկ իմն», յծ. ռուս. чаша *«բաժակ»։* Böttich. Arica 84, 404 *սանս.* jakš *«ուտել»։* Müller SWAW 38, 579 *պրս.* čašīdan։ Pictet II 277 *սանս.* čāšaka *են ձևերի հետ։ Հիւբշ.* KZ 23, 29 *պրս.* čašīdan: Lag. Arm. Stud. § 1376 *պրս.* *čāša *կամ* čašā *ձևից։ Հիւնք.* ճաշակ *«բաժակ»=պրս.* ǰašada *«չափ ինչ իւղոյ»,* ճաշակ *«համ»=պրս.* čāšnī, čaš։

*Գիհ.—*ճաշակ *«հաղորդութիւն» նշանակութեամբ ունին Ախց. Երև. Շմ.* ճաշակ, *Ալշ. Մշ.* ճաշագ, *Առն. Ննխ. Պլ.* ջաշագ, *Խրբ.* ջոշոգ, *Ասլ.* ջաշագ, ջաշայ, *Ներ.* ջաշշագ, *բայական ձևով՝ Ջղ.* ճաշակվել, *Տփ* ճաշակվիլ, *Ղրբ.* նշա՛կվէլ, *Սլմ.* ճաշայվել *«հաղորդուիլ» ևն։—Տփ.* ճաշնիկ *«համ, ճաշակ» փոխառեալ է վրաց.* ჭაშნაკი ճաշնիկի *բառից, որ ծագում է պհլ.* *čāšnīk *=պրս.* چاشنی čāšnī *«ճաշակ, համ» բառից։*

Փոխ.—Վրաց. ჭაშაკი ճաշակի *«գաւաթ, թաս» գործածուած է երեմ. ծբ. 19, որի դէմ հայ թարգմանութիւնն էլ դնում է* ճաշակ *ձևը. վրացի բառը կարող է լինել անկախ փոխառութիւն իրանեանից և կամ թարգմանութեան ժամանակ հայերէնից առառնուած։*

ՃԱՇԱՏ *«անկեղծ». անստոյգ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Հայել. 296—7. «Զոր ինչ այժմ առնեմ կամ առ յապայ արարից, ամենայն ինչ ճաշատ սիրոյ յառաջ գայ. Ապա յետոյ ի սիրոյն ճաշատ ապաշխարութեամբ դարձցի առ տէր Աստուած»։*

ՃԱՇԿԻ *կամ* ՃԱՇԳԻՆ *«մի տեսակ հոտաւէտ ծաղիկ» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 1856. նոյն է* ճաշխինք *Համանիշը (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 426)։*

*ՃԱՇԿԻՐ *«պալատական այն պաշտօնեան, որ արքունիքի ճաշեղէնների վրայ էր հսկում». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Մխ. Համդ. 15. «Վաղարշակ եղ դինակիր, ճաշկիր, դիննպան... սառնապանս, դռնապանս և այլ սոյնպիսիս»։*

=*Պրս.* چشکر čašgar *կամ* چاشنیگیر čāšnīgīr *նոյն նշ։—Աճ.*

Սոյն մեկնութիւնը հրատարակուած է նախ իմ Հայ. նոր բառեր հին մատեան. Ա. էջ 138։

ՃԱՊԱՂ, *ի հլ. «ծաւալուած, տարածուած, փռուած» Շիր. Վրդն. ծն. որից* ճապաղել *«սփռել, ծաւալել» Խոր. Ոսկ. կուս. «պարապիլ, զբաղուիլ» Խոր. Երզն. մտթ.* ճաղապիլ *«ցրուիլ» (նիւթապէս) Երզն. լս. Մխս. եր. (մտքով) Երզն. մտթ. Վրդն. ծն. (յետնաբար*

ճապղել «սփռել» Սմբ. պտմ. 73). ճապաղումն Լմբ. իմ. Մաթս. ճապաղիճ արեան «արիւնհեղութիւն, կոտորած» (գրուած նաև ճաղպախիճ, ճաղպախի, ճաղճախիճ) Ագաթ. Ոսկ. մ. բ. 8. Զենոբ. 34. կթ. աւտում է նաև ճապաղ արեան Ոսկիփ. Ասող. գիսաճապաղ «հերարձակ» Երզն. քեր. ճապաղական «ցըրուած (զօրք)» Սեբ. 108. աճճապաղ Դիոն. Բղթ. կայ նաև ճապաղ(ա)ջուր տեղական յատուկ անունը։ ճաղճախիճ ձևից է կազմուած նոճիաճաղճախ «նոճիաշատ (անտառ)» Նար. խշ. 394։ Արդի գրականում ճապաղ նշանակում է «տարտամ, անորոշ, ցրուած (ոճ)»։

ՆՀԲ «լծ. և նոյն ընդ ծաւալ»։ Հիւնք. ծաւալել բայից։ Պատահական նմանութիւն ունի պրս. چپل čapal «շուայտ, ապականեալ», բայց նաև «ճահճային տեղ» (Կամուս, Բրք. Բրգ. Ա. 326)։

ԳԻՒ.—Ջղ. ճապաղել «իրար խառնուիլ», Երև. ճափա՛ղել «գետին փռուիլ», Մկ. ճապողիլ «ցեխի մէջ թաթախուիլ», Վն. ճապղել «բանաքը տարածուիլ», Ալշ. Մշ. ճաբղել «փռուիլ, տարածուիլ», Խոջ. ջաբաղ «ողորկ, հարթ», ջաբղել «հարթել, յղկել, ողորկել», Զթ. ջաբղիլ «աչքերը լայն լայն բանալ», Պլ. ջաղուր, Ակն. ջ'ախուր «յոդնած, ոսկորները ջարդուած, թուլացած», Ղրբ. ճապա՛ղել «սիրտը թուլանալ, ուշքը գնալ, նուաղիլ, թառամիլ», Սեբ. ջաբղիլ «թուլանալ, բաժանուիլ» ևն։— Իսկ Սեբ. ջոտքել «առանց բաւարարելու ճամբայ դնել» ծագում է արաբ. جواب javab>ռմկ. ջուղար «պատասխան» բառից. համմ. Դվ. պատասխանել «ճամբայ դնել, դուրս անել»։

ՃԱՊԱՂ «ճամբայ, ճանապարհ». նորագիւտ բառ, որ գործածուած է միայն հետևեալ տեղերը. «Եւ թեպէտ զհաց յոռի և չարահաւ կերիցէ մարդ... ընդ նոյն ճապաղ երթայ ի մարդ անդր և տայ զոյժ զօրութեան». Մծբ. (Հռոմ 1756, էջ 322. բնագիրն ունի «ընդ նոյն ճանապարհ» և կոկորդի անցքի համար է ասում). «Ճանապարհ իմն և ճապաղ եղև անկարգութեան». Ոսկ. եփես. էջ 733. «Դարձան ջուրքն... ընդ ճանապարհ (և) ճապաղ գնացից իւրեանց». Եփր. յես. էջ 307։

Գտաւ ու մեկնեց Հ. Ա. Վարդանեան ՀԱ. 1911, 176 և Բառաքնն. դիտ. Բ. էջ 6, որ և համարում է փոխառեալ ասոր. ܫܘܝܠܐ šəwīlā հոմանիշից, որ սակայն հայ. շաւիղ բառն է։

ՃԱՊԱՏԻԼ «օձի դալարուիլ, մէկին կամ մի բանի փաթաթուիլը» Բուզ. 160.—Նո՞յն է նաև ճաղպատիլ «թեքուիլ, ճարպիկութեամբ ծռուի՞լ» Եփր. թգ. էջ 378։ Ունինք նաև ճապատող Շիր. որի իմաստը պարզ չէ. «Ծուլ հպեալ Պերասևնի անջրպետ միջակետի, արդակ միջոյ ճապատողի»։

ՆՀԲ ճաղպատիլ հանում է ճիւղ կամ ջիղ բառից. ճապատիլ նոյն դնելով ճաղպատիլ ձևի հետ՝ մեկնում է «շաղապատիլ, եռալ զեռալ, գալարիլ, երկայնիլ և կարճիլ սողնոց և զեռնոց ծեքծեքմամբ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 262 պրս. چپیدن čapēdan «ձախից աջ շարժուիլ»։

ԳԻՒ.—Տփ. ճիպտվիլ «երակի երկարիլ ձգուիլը»։

*ՃԱՊՈՒԿ «ճեպով, շուտ, արագ». մէկ անգամ գործածուած է Սղիշ. գ. էջ 57. «Ընդ ճապուկ՝ անդր անցանէ ի վերայ գնդին Պարսից»։ Նոյնը պիտի լինի նաև Նար. տաղ. էջ 473՝ «Այն ճորտն ճոխ էր և ճապուկ» (իմա՛ «շոյտ, աշխոյժ»)։ Նոր գրականում կայ ճապուկ «դիւրաթեք, ճկուն», որի հնագոյն գործածութիւնն էլ գտնում եմ Յայսմ. օգոստ. 7. «Եւ ի ճօճել ճապուկ նիզակացն»։ Այս նշանակութիւնը իբր միջին օղակ՝ վերինի հետ է միացնում նաև ճապուկ «ծռմռկոտ, գալարուղ, մանիճ մանիճ եկող» Նար. կթ. էջ 117 (որդերի համար է ասուած. և այսպէ՛ս է մեկնում Լծ. Նար.), որից ճապկիլ «ծռուիլ, թեքուիլ» Անան. գիտ. 5 (լուսնի մահիկի համար ասուած), «յօրանջելով երկննալ, ձրգուիլ» Ա՛Բ. սաստկականը ճապկիլ «սաէպ յօրանջելով ձգձգուիլ» Վստկ. 212. Ախտարք (բուն նշ. «ծռմռուիլ»), որ և ռմկ. ճպլկտիլ Վրդն. առակ. 78 (Ասի ի բան առակաւոր, Թէ խեցգետինն ի հետ օձին ճպլկտեցաւ Նայ կտրեցաւ. այլ ձ. ձգտեցաւ):—Բառ. երեմ.

էջ 196 ունի ճապուկ և մեկնում է «նազլու կամ մանիչ ճախարակեայ» (անշուշտ մանիքը մանիչ կարդալով)։

=Պհլ. ʾčāpūk ձևից, որից պրս. چاپك čāpuk «արագ, շուտ, փոյթ, թեթևոտն»։ Պարսկերէնից փոխառնալ են նաև Թրք. čabuk (գաւ. čapuk, čapək, ոմկ. չապուխ) «արագ, շուտ», چويك čevik «ժիր, շոյտ, աշխոյժ», քրդ. čäpek «թեթևաշարժ, դիւրաթեք, ճկուն», վրաց. չաուքի «ժիր, արագ», ჭაბუკი ճաբուկի «երիտասարդ» (բառիս իմաստը որոշ չէ. հասկանում են նաև «loyal serviteur, héros exercé dans les combats». տե՛ս M. Riabinin MSL 10, 18)։ Պհլ. բառը աւանդուած է čāpūk ձևով և «կենսունակ, աշխոյժ, ժիր» նշանակութեամբ։ Ենթադրում է իրան. *čāpu-ka-՝ կազմուած -ka- մասնիկով՝ *čapu- արմատից, որից հյ. ճեպ և ճապճեպ (տե՛ս Nyberg, Hilfsb. 1, 60 և 2, 42)։—Հիւբշ. 188։

Նշբ հանում է ճապատիլ բայից. լծ. հյ. ճապաղ, ճեպ, վրաց. ճապուկի, որպէս և Թրք. չէվիկ «աշխոյժ» և չաբուգ «շուտ»։ Աբ ջնջել է ճապուկ «շուտ» բառը և դիտէ միայն ճապուկ «ծոմակող»։ Müller SWAW 42 (1863), 254 և Հիւբշ. KZ 23, 29 պրս. čābuk ձևից։

Գիր.—Ունինք միայն ճապկոտալ Տփ., ճապկոտալ Ննխ., ճապկտիլ Ախց., ճապկոտուիլ Տփ., ճապտկուիլ Զթ. «յօրանջելով ձրգձրգուիլ». Նոյնը Համշ. ճապղտիլ (Ազգ. հնդ. Զ. 148)։

ՃԱՊՈՒՒ «մագիլ, ճիրան» Բո. ստ. լՀ. որից ճապռատ «մագիլներով, ճիրանաւոր» վրդն. ծն. Յայտմ. մրտ. 22։

Հինք. արաբ. ճկպիյէ «մեծ առիւծ» բառից։ Պատահական է պրս. چپور čipūr «սլաք գեղարդեան»։ Աւելի նման են հսլ. čĭparí, չեխ. čpar, սերբ. črparogĭ «ճանկ, մագիլ», չեխ. čpýrati, čepýrati, čeperati «ճանկռտել, ճանկռել», որոնց ծագումը անյայտ է՝ ըստ Berneker էջ 169։ Պատահական նմանութիւն ունին ասուր. ṣupru, ṣuppâru, եբր. עפרן ṣipporen, ասոր. teprā, արաբ. ظفر zufur, եթովպ. ṣĕfĕr «եղունգ, մագիլ, ճանկ» (Gesenius[17], 693)։

Գիր.—Այս արմատից են ճապռել կամ ճեպռել Ղզ. Ղրբ. «ճանկել, ճանկռտել», ճպռել Երև. «պոկել, փրցնել, ճանկելով քաղել», Դվ. «ծաղկի թերթերը պոկռտել», ճապռել Ալշ. Բլ. Ղզ. «պոկել, փրցնել, փետել», ճպռռտել Շմ. Ղրբ. «ճանկռտել», ճեպռել «թեպրել» Բառ. երեմ. էջ 118 և վերջապէս ճպլել Ղրբ. «պլոկելով հանել, սկըրդել»։ Այս բայի հին գործածութիւնը ունի Եփր. մտ. Դ. էջ 174 (մի ձեռ. միայն) ճոպռել ձեռվ (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 273)։

ՃԱՊՈՒՒ «վայրի չաման» Վստկ. 79. Բժշ. Գաղիան։

Նման են հնչում հսլ. čǫbrŭ, հ. ռուս. чубръ, ռուս. щебрецъ, սերբ. čubar, չեխ. čubr, čibr, լհհ. czą̈ber, ուկր. ščabrýk, čebréć «ծոթրին», որոնք համարւում են փոխառեալ յն. գաւ. *θούμβρος ձևից. բայց č ձայնը դժուարութիւն է ներկայացնում (Berneker 160)։

ՃԱՒ, ի հլ. «խօսք, ատենաբանութիւն, երկար գրուածք, նկարագրութիւն» ՍԳր. Եզն. կոչ. 82. Ոսկ. մ. ա. 3. որից ճառել ՍԳր. Եւս. քր. ճառատել Կոչ. 275. ճառագրել Եղիշ. աճճառ ՍԳր. Վեցօր. Եւագր. աճճառութիւն Ագաթ. աճճառական Ագաթ. ճակաճառել Անյ. պերիարմ. կանխաճառեալ Աբ. դրժուարաճառ Սկևռ. Լմբ. ընդվայրաճառ Նար. Մծբ. ճառախօս, ճառախօսութիւն, բաժակաճառ, աւարտաճառ (նոր բառեր) ևն։

Justi, Dict. Kurde, էջ 226 քրդ. zahr «խօսք» բառի դէմ դնում է հյ. ճառ. բայց երևում է թէ նոյն քրդ. բառը ո՛չ թէ «խօսք», այլ «ի կողմանէ» նշանակութիւնն ունի։ Canini, Et. étym. 195 սանս. kâra «օրհներգ» բառի հետ։ Հինք. ճամարտակ բառից։ Աճառ. ՀԱ 1899, 204 բ բառ և տառ բառերի հետ համարում է բնաձայն։ Patrubány ՀԱ 1907, էջ 305 աճել բայից։ Մառ ИАН

1912, 597 վրաց. մճեվրի «պերճախօս», ճորի «բամբասանք, շատախօսութիւն» բառերի հետ։

ԳԻՒ.—Երև. Մշ. Շմ. Ջղ. ճառ, *Ասլ. Ննխ. Պլ. Սեբ.* ջառ «բանախօսութիւն» անշուշտ գրականից են փոխառեալ. այսպէս է նաև ճակաճառութիւն՝ *որ արտասանւում է* հաջագառութիւն *(Առն. Ակն. Պլ.).* Հարազատ է միայն *Խն.* ճէօոf «զրոյց, սուտ պատմութիւն, հէքեաթ»։

ՓՈԽ.—Ուտ. čar «ճառախօսութիւն»։ Ունինք արևել. *Թրք.* جار jār «յայտարարութիւն, վաճառատան մէջ ծախու ապրանքը բարձրաձայն յայտարարել», جارچی jarči «փողոցի շրջուն վաճառական, որ ապրանքը բարձրաձայն յայտարարելով վաճառում է». *չաղաթայ.* چار čar «ճիչ, բացագանչութիւն», جارانگ jarang «արձագանգ», چارلاماق čarlamaq «կոչել, հրաւիրել», جارلماق jarəlmaq «հրատարակել, հրապարակել», جر կամ جار jar «աղմուկ, ձայն, կոչ, յայտարարութիւն, պատգամաւոր», *քումուք.* čarlamak «թրոչունի ճռուողել», *Թրք.* جار jar «կոչումն, յայտարարութիւն», جارجار jarjar «շատախօս», նաև սրանցից փոխառեալ *պրս.* جار jār «պատգամ, լուր», جارجی jārjī «համբաւաբեր, պատգամաբեր, մունետիկ», *ն. ասոր.* jar «յայտարարութիւն»։ Բայց այս բառերը հայերէնի՞ց են փոխառեալ, թէ պատահական նմանութիւն միայն ունին։ Ըստ Будаговъ *2, 323* սրանց բոլորի մայր ձևն է *մոնղոլ.* dzar, *որով այդ բոլորի նմանութիւնը պատահական է դառնում.—Յայտնապէս Կիլիկեան բարբառից է փոխառեալ Թրք. գուռ. S.* jor «խօսք բնել» *(Բիւր. 1899, 798)*։

ՃԱՒԱԴԱՅԻ, ի *հլ.* «ճաճանչ, լոյսի շող» *ՍԳր.* որից ճառագայթանալ *Կոչ.* ճառագայթանիգ *Ագաթ.* ճառագայթարձակ *Ագաթ.* ճառագայթաւոր *Բուզր.* բազմաճառագայթ *Խոր. վրդվ.* երեքճառագայթեան *Կիւրղ. աղ. խչ.* եօթնճառագայթեան *Անյ. բարձր. ևն*։

=*Արմատն է* ճառագ, *որ թէև գրաբարի մէջ աւանդուած չէ, բայց գոնէում է բազմաթիւ գաւառականներում. այսպէս՝* ճառաֆել *Ակն. Ասլ. Երև. Լ. Մն. Ջն. Պլ.,* ճրաֆել *Արտ.,* ճռա՛ֆել *Ղրբ.,* ճռէ՛ֆել *Ղզ. «լուսապայծառ փայլիլ»,* ճառ-ճառաֆ *Ննխ.*=լուս-ճառաֆ *Ննխ. Պլ. «շատ լուսաւոր» (որ Ննխ. գիւղերում դարձել է* լուս-ժառանգ)։

ՆՀԲ «որպէս թէ ճրագացայք. *կրակացայտ կամ շառագոյն ծագեալ»։ Հիմնք. ճրագ բառից։* Patrubány *ՀԱ. 1907, 305* աճել *բայից, իսկ* գայթ՝ գամ *բայի գոյականն է (անդ, էջ 306)*։

ԳԻՒ.—Խրբ. ջառագ՛աթ։

**ՃԱՒԱՅ կամ ՃԱՐԱՅ «կարաս, հեղուկների մի տեսակ աման» Վստկ. 37, 50, 102։*

=*Արաբ.* جرة jara «սափոր», որ և جرّة jarra. *արաբացեալ է պրս.* گرة gara *հոմանիշից։ Արաբերէնից են փոխառեալ նաև քրդ.* jer «սափոր», *ֆրանս.* jarre, *իտալ.* giarra «հողէ սափոր»։ Ցայտնի չէ թէ արաբերէնի՞ց են նաև *մոնղոլ.* čara, cara «մետաղեայ կոնք՝ ոտքերով և առանց կափարիչի», *ալթայ. կազան. արևել. Թրք.* čara «մեծ հողէ աման», որոնցից փոխառեալ են *ռուս.* rapa, *ուկր.* čarka, *լհհ.* czara «բաժակ, գաւաթ» (Berneker 136)։—*Աճ.*

ՆՀԲ իտալ. ձևի հետ։ Աճառ. MSL 16, 358 *քրդ. բառի հետ։*

ԳԻՒ.—Կս. ջարա «սափոր», *ԶՔ.* ջաոо, ջառո «տակառ», *ՀՃ.* ջարо «օղիի կարաս», *Մկ.* ջէռա «մեծ կուժ», *Ալշ. Սրև. Մշ. Սլմ.* ջռա «սափոր», *Վն.* «երկարավիզ մի աման», *Խ.* «բղուղ»։

ՓՈԽ.—Վրաց. ჩარა ჭარა «գաւաթ» փոխառեալ է *Թուրքականից. իսկ* ჭარიკი ճարիկի «կէս կուժ» *հյ.* *ճարիկ *նուագականի միջոցով պիտի լինի։*

*ՃԱՏԷ, *որ և* ճօտէ, ճօտայ, ճօտ, ճուտ «խնկածաղիկ. polium montanum» *Վստկ. 206, 208. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1860 և § 1919։*

=*Արաբ.* جعدة ja'da *նոյն նշ. (տե՛ս* Steinschneider WZKM 11, 327)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ՃԱՏԿԵԼ «հնարել». *ունի միայն Բառ. եբեմ. էջ 196. կասկածելի բառ, որովհետև*

կարելի է կարդալ նաև (միասին ա-ով) ճար'կել=ճարակել, *որ նոյնպէս նշանակում է «հնարել»։*

ՃՈՏՎՈՐ «լուանի թուփ բոյսը, լտ. zedoar, curcuma zedoaria, aconitum napellus» *Ամիրա. ունի միայն ՀԲուս. § 1861։*

=*Արաբ.* جدوار jadvār «lilipendola *բոյսը» (տե՛ս* Steinschneider WZKM 11, *էջ* 326):

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ՃՈՏՊԱԿ «սատրանջ, շախմատ խաղը» Գր. տղ. եէմ. որ և ճարտարակ *Ոսկիփ. (տե՛ս ՆՀԲ ճարտ բառի տակ յիշուած վկայութիւնն մէջ), ճատրկուց Վրդն. պոմ. էջ 95։*

=*Պհլ.* čatrang *հոմանիշից (կամ թերևս սրա երկրորդական* *čatrak *ձևից. համմտ. վրացին). սրանից են նաև պրս.* šatrang *կամ* satrang, *արաբ.* šaṭranj *կամ* siṭranj, *թրք.* satranj, santranj, zatranj, *քրդ.* setrenj, satrənj, *վրաց.* ჭადრაკი ճադրակի, ჭანდრაკი ճանդրակի, *յն.* ζάντρικιον. *բոլորի մայրն է սանս.* čaturāṅga *(կազմուած* čatur «չորս» *և* aṅga «մաս, անդամ» *բառերից. բուն նշ. «քառանդամ. չորեքմասնեայ»), որ նիւթի հետ Հնդկաստանից տարածուել է զանազան երկիրներ։ Արաբ ձևից ուշ ժամանակի փոխառութիւն է սատրիճջ, սատրիճ, որ տե՛ս առանձին։ Այս խաղի հնարումը Ֆիրդուսին տալիս է Հնդիկներին։ Հնդկաց թագաւորը մեռնելով՝ երկու որդիների (Գաւ և Թալհենդ) միջև գահակալական կռիւ սկսուեց. կրտսերը՝ Թալհենդ մեռաւ պատերազմի մէջ. մայրը անիծեց Գաւին, իբրև եղբայրասպանի։ Գաւը հաւատքից Հնդկաց իմաստուններին, որոնք հնարեցին ճատրակը, իբրև պատկեր պատերազմի և ցոյց տուին մօրը՝ թէ որդին չմեռաւ եղբօր ձեռքով, այլ ամէն կողմից պաշարուած՝ յոգնութիւնից ու ծարաւից (Շահնամէ, հտ. Զ. էջ 353—6, փոքրագիր հրատ.* Mohl, *Նոշիրվանի ժամանակ)։—Հիւբշ. 188։*

Նախ ԳԴ համեմատեց պրս. չէդրէնկ *ձևի հետ։ ՆՀԲ էլ յիշում է ոմկ. սաթրանջ, սէթրէնճ։*

ՃՈՐ «հնար, միջոց, դարմանո» Ուս. պոմ. էջ 159. Խոր. Յհ. կթ. 427. որից ճարխմագութիւն «հնարք իմանալը» *Կիւրղ. կոյս.* անճար (ի հլ.) *Ոսկ. յհ. բ. 23. Փիլ.* անճարանալ *Ոսկ. յհ. բ. 6.* անճարացեալ *Լաստ.* անճարաւոր *Մաշկ.* անճարութիւն *Նար.* անճարիլ *Լաստ.։*

=*Պհլ.* ꭩꭱꭻ čār «միջոց, հնար» *բառից. համմտ. սանս.* चार čāra- «վարմունք, կերպ, եղանակ», *զնդ.* 𐬌𐬀𐬭𐬀 čārā «միջոց, ճար», *պրս.* چار čār «հնար, ճար, միջոց», ناچار nāčār «անկարելի, անդարմանելի, անօգնական, թշուառ», *աֆղան.* čār «դէղ, միջոց, հնար»։ *Այս ձևերը ծագում են հնխ.* q^{u}er- «անել, գործել» *արմատից, որի ժառանգներն են նաև սանս.* karóti, kṛṇóti, *զնդ.* kərənaoiti «անել, գործել», *լիթ.* kuriù «շինել, կառուցանել», *կիմր.* peri «անել», *հյ.* կերտ *են* (Pokorny 1, 517, Berneker 137, Trautm. 127)։ *Համմտ. նաև յաջորդը։—Հիւբշ. էջ 188։*

Յաջորդի հետ արմատակից լինելով՝ յաճախ շփոթուած է նրա հետ. բայց պէտք է զանազանել ճար<*պհլ.* čār *և* ճարակ<*պհլ.* čārak։ *Այսպէս ԳԴ* ճար =*պրս.* չարէ։ *ՆՀԲ* ճար=*պրս.* ջարէ, ջար իւ ջէտէր, անճար=նաջար։ Böttich. Arica 84, 405 ճար=*սանս.* čaraṇa *կամ* čaritra: Lag. Urgesch. 478 čar *արմատից։* Müller SWAW 38, 579 *պրս.* čāra, *պհլ.* čārak: Canini, Et. étym. 142 *սանս.* gara «թոյն»։ *Հիւնք. էջ 41 պրս.* չարէ: Patrubány *ՀԱ. 1907, 305* աճել *բայից։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Դրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ոզմ. Զղ. Սլմ. Վն. Տփ. ճար, *Ասլ. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* ջար, *Տիգ.* ջոր, *Ագլ.* ճոր, *Հճ.* ջօյ. *նշանակում են «ճար, հնար, միջոց և դէղ». գաւառականները գիտեն նաև* ճար *«ոյժ, կարողութիւն» —որից կազմուած են* ճարել *«հայթայթել, մատակարարել» (ըստ Արդ. «ծնիլ»),* անճար, անճարու, անճարիկ, ճարակատար, ճարահաս, ճարտարիլ, ճարակտրի, ճարի *«ճարպիկ, որ անճարակ չէ»,* ճարիկ, ճար-ճարակ, ճարուակ, ճարճրկել։—*Առանձի թրքախօս*

հայերն էլ ունին jar. *օր.* ճարըմա ճար եթիշ-տի *«օգնութիան հասաւ ինձ»։*

*ՃԱՐԱԿ, ի–ա *հլ. «հնար, ճար, դարման. դեղ» Նար. Արծր. Վրդն. ծն. Վրք. հց. որից* ճարակել *«դարմանել» Նար. հա.* անճարակ *«անդարմանելի, անհնարին» Նար. «տկար, անկեալ» Բենիկ. «հարկաւ, անշուշտ, ստիպողաբար» Մխ. Բժշ. 135.* անճարակութիւն *Վրք. հց.* անճարակիլ *Մխ. Բժշ.* յանճարկի կալ *Գր. տղ. ամ.։*

=*պհլ.* ǰʾrʾk čārak *«միջոց, հնար» բառից, համմտ. պրս.* چارہ čāra *«միջոց, հնար, դեղ, դարմանն», որից փոխառեալ են նաև քրդ.* čare, *թրք.* čare, *արևել. թրք.* چارا čara, *ինչպէս նաև թուրքերէնի միջոցով՝ բուլգ.* čare, *սերբ.* čara, čare, *նյն.* τσιαρές *են. համմտ. նաև արմատակից* ճար *բառը և նրա տակ յիշուած ձևերը։—Հիւբշ. 188։*

Առհասարակ շփոթուած է յաջորդի հետ՝ հայերէնի մէջ ձևի նոյնութիան և պարսկերէնի մէջ ձևի նմանութիան պատճառով։ Առաջին անգամ Հիւբշ. տարբերից երկուսը՝ դնելով ճարակ *«հնար»<պհլ.* čārak *և* ճարակ *«խոտ»<պհլ.* čarak։

ԳԻՒ.—Գործածւում է նախորդի հետ կրկնական կազմելով՝ ճար-ճարակ *(Պլ. Ռ. Սեբ. են). բայց սրանից ունինք նաև* անճարակ, անճրկիլ, անճրկած, անճրկոտիլ։

*ՃԱՐԱԿ, ո, ի–ա *հլ. «անասունների ուտելու խոտը» ՍԳր. Մծբ. նմանութիամբ «կրակի, վէրքի, մեղքի տարածուելու նիւթ» Բ. տիմ. բ. 17. Նւս. պտմ. ը. 17. որից* ճարակել *«արածիլ, խոտ ուտել» ՍԳր. Եփր. աւետ. «տարածուելով ծաւալիլ» (կրակի, հիւանդութիան են համար խօսելով) ՍԳր. Ոսկ. գղ.* ճարակակից *Պղատ. օրին.* ճարակաջատ *Ոսկ. հս.* ճարակաւոր *Ոսկ. եփես. և մ. գ. 6.* ճարակումն *ՅՀ. կթ.* համաճարակ *Նար. խոտաճարակ Բ. մակ. ժ. 6. Ագաթ. Հուզ.* հրաճարակ *Թէոդ. մայրագ.* մկնաճարակ *Մագ. տե՛ս և* ասպաճարակական։

=*պհլ.* ǰʾrʾk čarak *«արօտ, ճարակ» բառից. սրա հետ նոյն են պրս.* چرا čarā *«արօտ, ճարակ»,* čarāgāh *«արօտատեղի»,* čarāgar *կամ* čaranda *«արօտական անասուն»,* čarāvar *«ճարակաւոր, արօտական»,* čarānīdan *«արածել, ճարակիլ», բելուճ.* čaray *«արածել, ճարակիլ, ման ածել», աֆղան.* car *«ուտելու համար անասունին տրուած խոտ»,* carēdal *«արածել», հինդուստ.* چھار ǰəhar *«մացառ»,* čaru *«խար, խոտ», գնչ.* čar *«խոտ»,* čarava *«ուտել, կշտանալ»,* čarava *«խոտ»,* čaravava *«արածել»,* čariovava *«խոտով սնանիլ, ճարակիլ», քրդ.* čerândin *«տանիլ արածացնել»,* čarewan *«արօտ»,* čere *«ճարակ, խոտ, արօտ» են։—Հիւբշ. 188։*

ՆՀԲ պրս. ջէրա, ջէրամ *են։* Böttich. ZDMG 1850, 357 *սանս.* car, čaru· Lag. Urgesch. 479 *«ձևով պրս.* čāra. *որ սակայն նշանակութիամբ չի համաձայնում»։* Spiegel, Huzw. Gram. 188 čar *արմատից, պրս.* čarāīdan *և* čaman: Müller SWAW 38, 579. *պրս.* čarīdan, *զնդ.* yavočarāni: Justi, Zendsp. 109 *զնդ.* čar *արմատի տակ։* Lag. Arm. Stud. § 1382 *պրս.* čarā· *Հիւնք. պրս.* չէրաղ, չէրա *են։* Patrubány *ՀՄ. 1907, 305* աճիլ *բայի հետ։*

*ՃԱՐԱԿ *«երկիր, նահանգ». ի–ա հլ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խոր. աշխ. 590. «Ձայրեալ գոտեաւն անցին ի հարաւոյ կոյս և զազգսն զայն ճշգրտեցին և զսահմանս ճարակաց նոցա չափեալ». (Պատկ.* Арм. геогр. *էջ 12 ռուս. թարգմանում է* пространства ихъ пределовъ). *կայ նաև նոյնի բայական ձևը՝* ճարակել *«բնակիլ». Եւ ճարակեն զենտոս Լիբիա ազգք վեշտասան. Խոր. աշխ. 598 (Պատկ. էջ 25 թարգմանում է* живутъ)։

=*Նոյն* ճարակել *«արածիլ» բայից է. իմաստի զարգացման համար տե՛ս կեր «գաւառ»։—Աճ.*

ՃԱՐԱՍԻՈՆ. *մի տեսակ անաստղ խոտ է. Վստկ. 207. ունի միայն ՀԲուս. § 1862։*

ՀԲուս համարում է յն.։

ՃԱՐԱՏԵԱԼ *«ճամբար բակեալ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 196. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

Ճարգաղ *տե՛ս* Ճաղագ։

ՃԱՐՃԱՏԵԼ *«ճաքճքիլ, ճայթել, շառաչել»*

Մամիկ. Մագ. Յայսմ. որից ճարճատիւն *Պտմ. աղէքս. Նղիշ.* ճարճատումն *Յայսմ. Մաշտ. ջահկ.* ստուերաճարճատ *Պիտառ.* ճարճատուն *(նոր բառ)*։

ՆՀԲ լծ. յն. χροτέω, լտ. crepito, իբր ճայթճայթել։ *Այտնեան, Քնն. քեր. էջ 280 իբր* ճարճայթել. *իսկ էջ 309 իբր կրկնական։ Տէրվ. տե՛ս* ծաղր *բառի տակ։* Bugge, Beitr. *16 յն.* χρέχω *«աղմուկ հանել» ձևի հետ՝ իբր բնիկ հայ։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 թրք.* čatərdamaq *«ճարճատել» (արմատը* čat -ər)։

ՃԱՐՃԻՐ, *որ և* ճարճրուկ, ճրճրուկ *«վայրի նռան ծաղիկ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1865։*

ՃԱՐՃԻՐ «սասրեակ բոյսը. լտ. eruca sativa L» *(որ բստ* Анненковъ, *էջ 136=է ռուս.* горчица дикая *վայրի մանանեխ) Ամիրտ. յիշում է միայն ՀԲուս. § 1865։— Նո՞յն է արդեօք* ճարտարուկ *«մի տեսակ կոտո՞մ. լտ.* petrocallis» *Գաղիան. գրուած նաև* ճարտրուկ։ *Տե՛ս տակը գտն.։*

=*Արաբ.* جرجر jirǰir *կամ* جرجير jirǰir *«սասրեակ, ջրկոտեմ» (տե՛ս Կամուս, թրք. Բրգմ. Ա. 47 և 795,* Steinschneider WZKM 11, 327), *որ* Будаговъ, Срав. слов. *1, էջ 434 համարում է «վայրի մանանեխ»։*

Ուղիղ մեկնից ՀԲուս։

ԳԻՒ.—Ունինք նման հնչումով զանազան բուսանուններ. այսպէս՝ Մշ. ճարջրուկ, *Բլ.* ճարճուկ *«եղերդ,* cichorium intybus *թրք. բօբքա սալաթա» (Ազգ. Հանդ. Ե. 21), Երև. Շիր.* ճարճարտուկ, ճառճառտուկ, *Վն.* ճարճրտուկ, ճարճտուկ *(«եղերդ» բստ Հովիւ 1909, էջ 96), Լ.* ճրճատուկ *(Ազգ. Հանդ. Ա. 137), Սլմ.* ճարճատուկ *(Աթայեան, Սալմաստ, էջ 19), Ղրբ.* ճոճոկ «stellaria media, *ռուս.* мокрица *(բստ Ազգ. Հանդ. Բ. 18* eruca sativa)։

ՓՈՒԽ.—Թրք. գտն. Թորթումի ճրճուիկ։

ՃԱՐՄԱՆԴ *(գրուած նաև* ճարամանդ*) «կարմաձև օղակ» ՍԳր. նոր գրականում նշանակում է «կեռմայր, օղակկոճակ, չէնկէլկոճակ»։*

Հինք. պրս. karmand *«ուժեղ, տոկուն»։*

ՃԱՐՊ, ո հլ. (յետնաբար նաև սեռ. -ի) «ճրագու, պարարտութիւն, մսի եղ» ՍԳր. «ձէթ, ձիթախուղ» Զքր. կթ. Նար. «գէր, պարարտ» Փիլ. լին. ա. 60. Իրեն. ցոյցք, էջ 67 (Հա 1911, 178).— որից ճարպովին *ՍԳր.* ճարպապարարտ *Մծբ.* ճարպատր *Կրդն. երգ. և ծն.* ճարպատրական *Նար.* ճարպութիւն *Մեսր. եր.* ճարպոտ, ճարպալի *(նոր բառեր)։*

=*Պհլ.* čarp *«պարարտ, իղոտ, կակուղ, փափուկ» բառից. սրա հետ նոյն են պրս.* چرب čarb *«պարարտ, իղալի»,* čarbī *«ճարպատր»,* čarbiš *կամ* čarviš *«մորթի տակի մսի գնդակները»,* ǰarb *«ճարպ, իղալի ուտելիք», բլուճ.* čarp *«պարարտ»,* čarpī *«գիրուց, պարարտութիւն», պազենդ.* čarw *«կակուղ, ողորկ, փափուկ», աֆղան.* cōrb, *օսս.* čarv *«կարագ» (*Horn *§ 436). պարսկերէնից է փոխառեալ նաև թրք.* červiš *կամ* čevriš *«ճարպ»։—Հիւբշ. 188։*

Klaproth, As. polygl. 1823. *էջ 100 պրս.* čarb *և սանս.* šarpi։ *ՆՀԲ «պրս. չէրպ՝ ամենայն գէր և իղատու ուտելի»։* Böttich. ZDMG 1850, 357 *սանս.* galbh? *գալլ.* Galba *կայսեր անուն։ Նոյն.* Arica 81, 364 *պրս.* čarb, čarp, *օսս.* zarw: Lag. Urgesch. 964 *սանս.* galbh *և պրս.* čarb: *Ուղիղ են* Müller SWAW 42, 254 *և* WZKM 9, 291, *Հիւբշ.* KZ 23, 29 *և ն։*

ՃԱՐՊԻԿ «ճարտար, աշխոյժ, գործունեայ». որից ճարպիկութիւն. *երկուսն էլ յատուկ են միայն արդի գրականին։ Բայց կայ խոր. Բ. 85 «Կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէս՝* ճարպ *դիպեցուցանէ յուս ձախակողմանն». ուր ՆՀԲ* ճարպ *մեկնում է «ճարպկօրէն», եթէ չէ ուղղելի* եաճ, *ինչպէս ունի մի ուրիշ ձեռագիր։*

=*Պհլ. *čarpīk ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց համմտ. պրս.* čarb-dast *«աջողակաձեռն և արագաշարժ»,* čarb-bālā *«ուղղաբերձ և կշռակի հասակ»,* čarbīdan *«յաղթող լինել»,* čarb-zabān *«ճարտարալեզուն», որ և* ǰarb *«յաջողակ, ճարտար»,* ǰarbī *«յաջողակութիւն, քաջութիւն»,* ǰarb-dast *«յաջողա-*

ձեռն», jarb-zabān «ճարտասան» ևն։ Թերևս իրանեաններից անցած լինի թաթարական լեզուներին. հմմտ. քումուք. čeberlik «արուեստ», Նախ. հայոց բարբառով՝ չէրէր «ձեռարուեստի մէջ ճարտար»։

Այտնեան, Քնն. քեր. էջ 71 արմատը դնում է ճարպ՝ իբր պրս. չարպ–տասք: Հիւբշ. 188 դնում է նախորդ ճարպ բառի տակ։

ՃԱՐՏԱՂԱԿԱՆ *«հաստատական». ունի միայն Բառ. երեմ. էջ 196։*

Ճարտասան *տե՛ս Ճարտար։*

***ՃԱՐՏԱՎԱՐ** «թանաքով գիծ քաշելու համար մի գործիք. ֆրանս. tire-ligne» ՀՀԲ, «քանոն» ՋԲ. (իսկ Rivola, Բառ. հայոց², էջ 241 գրում է ճարտըվար «քանոն»)։*

=Արաբ. جدول jadval «քանոն, տախտակ, աղիւսակ՝ >ռմկ. jedver «քանոն» բառից նոր յարմարած։—Ա.Ճ.

ՀՀԲ ստուգաբանում է ճարտար–ավար:

ՃԱՐՏԱՐ, ի–ա *հլ. «վարպետ, արուեստագէտ. 2. քերթող, իմաստասէր. 3. լաւ, հմտօրէն» ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ. Ոսկ. Ես. որից* **ճարտարաբան** *ՍԳր. Եւս. քր. Կոչ.* **ճարտարասան** *Ոսկ. մտթ. Փիլ. (որից համառօտուած է* **ճարտասան** *Փիլ. Պիտ. Խոր. հմմտ. Նորայր, Հայկ. բառաք. էջ 64, Վարդանեան ՀԱ 1911, 690 և Բառաք. դիտ. Բ. 65),* **ճարտարագոյն** *Ոսկ. մ. գ. 4.* **ճարտարագործ** *Բուզ.* **ճարտարադէտ** *Մծբ.* **ճարտարախօս** *Գծ. իդ. 1. Սեբեր. Կորիւն. Եւս. քր. Ոսկ. երր.* **ճարտարակ** *կամ* **ճարտարիկ** *Ոսկ. փիլ. 430.* **ճարտարել** *ՍԳր. Ոսկ. Սեբեր.* **ճարտարանի** *Եւս. քր.* **ճարտարապետ** *ՍԳր. Ոսկ. Կոչ. Եւս. քր.* **հրաշաճարտար** *Օրբել. ևն։ Կան և մի քանի տարօրինակ ձևեր՝ Բառ. երեմ. էջ 196—7, որոնք բոլոր այս արմատին են հայում. ինչ.* **ճարտակ** *«ճարտասան»,* **ճարտակապէս** *«յայտնապէս»,* **ճարտարամակ** *«ճարտար կամ յոխորտաբան»,* **ճարտանակ** *«արուեստս արկիլ կամ իմաստասէր»։ Նոր բառեր են* **ճարտարամիտ**, **ճարտարարուեստ**, **ճարտարագիտութիւն**, **ճարտարագործութիւն** *են։*

ՆՀԲ «իբր ճարտարող կամ կերտարար», լծ. լտ. certe «ստոյգ»։ Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 139 *տանս.* čatura-ra: Lag. Beitr. bktr. Lex. 27 *զնդ.* čarətar *«գործող, կերտող» (բայց այս բառը նշանակում է «քայլող, յառաջացող». կայ նաև* čarana *«ձեռագործ, գործ» ըստ* Justi, Zendsp. *109 ա. բայց նշանակութիւնը սխալ է. զնդ.* čār *արմատը նշանակում է «երթալ. 2. արածելու երթալ»)։ Հիւբշ. 189 մերժում է համեմատել* čarətar *ձևի հետ։* Müller WZKM 8 (1894), 362 *կցում է զնդ.* čarətutārō *բառին, որ գտնում է պհլ. բառարանում և մեկնուած է* kartārtum *«գործունէութիւն»։* Bartholomae, Altir. Wörterb. 582 *մերժում է* Müller*-ի այս համեմատութիւնը, ըստ որում զնդ. յիշեալ բառը նշանակում է «մէկ ասպարէզ քայլող անցնող». իսկ ինքը հյ. ճարտար փոխառեալ է դնում իրան. *čartara-*ձևից, որի հետ կցում է տանս.* čatura- *«արագ, ճարպիկ, ճարտար»։ Հիւնք. ճարտ=պրս.* kardan *«գործել», ճարտար=պրս.* kārdār *«գործող»։ Թիրեաքեան, Արիահայ բառ. 263 պրս.* čāra-dār چاره‌دار *«ճարտար»։*

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Սլմ. **ճարտար**, *Ալշ. Մշ.* **ճարդար**, *Ագլ.* **ճա՛ռտար**, *Խրբ. ջարդար: Նոր բառեր են* **ճարտարել** *Տիգ.. «ձևոքիցը բան գալ, շինել»,* **ճարտարուր** *Պլ. «ճարպիկ, աշխոյժ»,* **ճարտրուրիլ** *Պլ. «արտորալ, փութալ, փութկոտ լինել»։*

ՓՈԽ.—Վրաց. **ჭარტარი** **ճարտարի** *«ճարտար». սրա ձևափոխութիւնն է* **ჭვარტალი** **ճվարտալի** *կամ* **ჭარტალი** **ճարտալի** *«շատախօս, չարախօս», բայց յատկապէս* **ენა-ჭვარტალი** **ենա–ճվարտալի**՝ *նոյն նշ.— Այս բառից է յետ փոխառեալ Տփ.* **ճարտալ** *«ճարտարախօս, ճարպիկ»։*

Ճարտարուկ *տե՛ս Ճարճիր։*

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ *«լուսիւին». անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. սեղբ. 794. «Յայնժամ աղաչեաց զթագաւորն Սեղբեստրոս առ ի*

հրամայել նմա բազմութեան լռել. և լեալ ճարտարտումն, ելեալ ի տեղի մի բարձր Սեղբեստրոս, պայծառ ձայնիւ աղաղակէր, ասելով»։

*ՃԱՐՏՈՒԿ «բծաւոր սպիտակ գոյնով, որ է ճանճկէն» Բուզ. գ. 20 (երկիցս) և Գնձ. ուրիշ վկայութիւն չկայ։

=Պհլ. *čartuk հոմանիշից, որի հետ հմմտ. պրս. چرڈ čarda կամ چرٹ čarta «սևի զարնող գոյն, կարմրաւուն ձի» (Vullers), «գոյն, երանգ, բայց մանաւանդ այն երանգ, որ ասի թրք. եաղրզ, այսինքն սեաւ գոյն՝ որ ի շառն (վարդագոյն) հարկանէ» (ԳԴ), چرد carad (կարդա՛ card) «կարմիրի զարնող գոյն, մութ շագանակագոյն» (Vullers), «է այն կարմիր երանգն, որ յատուկ է ձիոյ և ջորւոյ» (ԿԻ), čard «թուխ» (ԳԴ), چرڈ jarda (կարդա՛ čarda) «դեղնակարմիր գոյնով ձի» (Vullers). «է երիվարն այն որոյ հայրն իցէ արէգի և մայրն է յայլմէ ազգէ» (ԳԴ)։—Հիւբշ. 189։

Նախ Պատկ. Матер. I. 11 և յետոյ Հիւնք. պրս. čard, čarda:

ԳԻՒ.—Հիւբշ. 189 և Տաշեան, Ուսումն դաս. հայ. 616 սրանից են դնում ըստ Ա. Խաչատրեանի ճարտուխար «մի տեսակ կարծրը քար՝ սպիտակ գոյնով ու կարմիր և կապոյտ երանգներով, որ կամնի տակ են գտնում, էրկանաքար են շինում ևն»։ Կենդանի է այս բառը Մշ. ճարդուխար, Բլ. երդուխար ձևով, որի հետ նոյն է ճարտի խար Տաղ. «ճարտի քար չեմ, երկաթ՝ որ դիմանամ հա» (Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 27)։—(Նոյնը Գրոց բրոց, էջ 151 գրուած է ջարդուխար, որով ուզում է հանել ջարդել բառից. սակայն Բլ. և Մշ. ունին նախաձայն ճ, որով այս ենթադրութիւնը վերանում է)։

ՃԱԻԱԿ «տղայ, պատկ», որից ճաւակեր «աղջիկ, դուստր». առաջինը իբր չեզոք և երկրորդը իբր իգական բառի օրինակ յիշում են Մագ. քեր. 242 և Երզն. քեր. ուրիշ վկայութիւն չկայ։

ՃԱԻԱՂ. նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 1173 թուի մի արձանագրութեան մէջ՝ Վիմ. տար. էջ 32. «Շինեցաք սմա ժամատունս ամարանս և ձմերանս և ի կեանս մեր պաշտեցաք ի սմա ղեկաւորս ճավաղս հաց»։ Թերևս նշանակում է «պանդուխտ» կամ «աղքատ»։

*ՃԱԻԱՐՍ «մի տեսակ խաղողի». մէկ անգամ ունի Վստկ. 47. «Ազգ մի սպիտակ խաղող կայ, որում Հոռոմն ստինաս ասէ. և այլ կայ որում փուրփուզնա ասեն. և այլ՝ որում ճաւարս ասեն»։ (Յոյն բնագիրն ունի χλωρός «կանաչորակ» ըստ Վաստակոց գրոց հրատարակչի ծանօթութեան)։—Նոյն բառը ունին ԱԲ և ՀԲուս. § 1903 ճուարս ձևով և «տեսակ մը խաղող» նշանակութեամբ, առանց այլ բացատրութեան։

=Յն. բնագրի χλωρός ձևի պրսր. տառադարձութիւնից՝ սխալ ընթերցանութեամբ յառաջացած. այսպէս սկզբնագրում خلورس xlōros, յետոյ դարձած جاورس jāvars։ Այսպիսի սխալ ընթերցուածի ենթարկուած է նաև փուրփուզնայ, որի վրայ տե՛ս առանձին։—Ա՛ճ.

*ՃԱԻՇԱՆԻՒՈՒ «երեսը պաշտպանող զրահ». նորագիւտ բառ, որ սխալ գրչութեամբ մէկ անգամ գտնում եմ գործածուած Քուչ. 64. «Զար փուշն է ի քեզ պատած, որ չկայ ճարակ մտնելու. Զար փուշ պատողին ճրկրուն՝ ես հագնիմ ճաղան կոու, գամ մտնում ու վարդ քաղեմ»։

=Պրս. جوشن رو jaušan-i-ru հոմանիշից, որ կազմուած է جوشن jaušan «զրահ» և رو ru «երես» բառերից. աւելի ընդարձակ տես ճօշան։—Ա՛ճ.

Հրատարակուած է նախ «Ձեռագրական սրբագրութիւններ Հայ մատենադիրների մէջ» աշխատութեանս մէջ, 1926, էջ 72—73։

ՃԳՈՏԵԱԼ «նմանեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 197։

ՃԳՈՒՆ «մեծ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 197։

ՃԵՂ «ճաղատ, մազերը թափած» Վեհ. ժգ. 41, որից ճեղութիւն Վեհ. ժգ. 42, 43. ուրիշ վկայութիւն չկայ։

ՆՀԲ լծ. հյ. կեղ, թրք. Ւել, Ւաչալ, լտ. calvus:

ճեղ, ճեղել տե՛ս ճիւղ։

ՃԵՂԱՆԱԿ *կամ* **ՃԵՂԵՆԱԿ** *«դլխու կամ ղգեստի թիլաւոր զարդ» Ես. գ. 21. Պատմ. աղեքս. 99. Կղնկտ. հրատ. էմ. էջ 158։*

ՀՀԲ **ճեղ ճեղ** *կախեալ ևն։ ՆՀԲ ճիւղ կամ թրք. չելենկ բառից։ (Այս բառի հետ նոյն են նաև քրդ.* چلک čeleng, *բուլգ.* čelenki, *չեխ.* chochole, *յն.* τζιλίγγι. *բոլորն էլ ծագում են արևել. թրք.* چلنك čeleng *ձևից, որ է «ի նշան քաջութեան գդակին անց կացրած փետուր թռչունի, ցցունք», ըստ այսմ նմանութիւնը պատահական է։ Պատահական են նաև վրաց. ճողոճակի «ճախարակ», պրս.* čelān *«երկաթեայ գործիք, ծղխնի են»։*

—**ՃԵՂՔ** *«ծերպ, պատառուածք, նեղ բացուածք» Բառ. երեմ. էջ 197. արմատ՝ որ հների մօտ չէ գործածուած և կայ միայն արդի գաւառականներում, որից* **ճեղթել** *կամ* **ճեղթուլ** *«հերձել, պատռել, երկուսի բաժանել» Դատ. ժդ. 6. Դ. թագ. գ. 60. Գրծ. իգ. 10. Ոսկ. բ. Թես. մ. բ. 22.* **աճճեղթ** *Ճառընտ.* **աճճեղթիլի** *Ոսկ. ղկ.* **երկճեղթիլ** *Վրդն. ծն.։*

=Մեկնութիւնը տե՛ս **ճիւղ**։—*Աճ.*

ՆՀԲ լծ. **կեղեթել**, **ջաղխել**, *թրք.* **ճարգ** *կամ* **ճրգ**։ Justi, Dict. Kurde, *էջ 117 քրդ.* جلگه jelge *«ճեղք, ծերպ»։ Հիւնք. ցեղ բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. էջ 142 դնում է հնխ.* sqel- *«ճեղքել» արմատից. համմտ. հսլ.* skelĭka, *լտ.* siliqua *«կեղև, պատեան»,* silex *«կայծքար», յն.* σχάλλω *«փորել» են։ (Ձիշտ են* Walde 117, Boisacq 1048, Pokorny 2, 591)։ *Մատ* ИАН *1919, 411 վրաց.* **ჭეჭა ნეწა** *«ճեղք», արաբ.* طرق trq *«հարուածել» են։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 191 պրս.* چاک čāk *«պատառուածք» բառից։*

ԳԻՒ.—Սլմ. **ճեխ**[1], *Ալշ. Մշ. Ջղ.* **ճեխակ**, *Ախց. Կր.* **ճէխ**, *Մկ.* **ճէխ**[1], *Ագլ. Գոր. Ղրբ.* **ճէխակ**, *Ջթ. Հճ.* **ջեխ**, *Ռ.* **ջէխ**, *Խրբ.* **ջէխգ**՝, *Պլ. Սեբ.* **ջէխգ**, *Տփ.* **ճիխակ**, *Տիգ.* **ջիխ**, *Ննխ.* **ջրխ**, *Ասլ.* **ջրխգ**, **ջրխ***, *Երև. Մրղ.* **ճղակ**, *Համշ.* **ջրխգուն**։— *Բայական ձևով են՝ Ոզմ.* **ճեխիլ**, *Երև.* **ճէխկէլ**, *Սչ.* **ջխէլ**, *Սվեդ.* **ջրխրիլ**, *Պլ. Սեբ.* **ջխգէլ**, *Ասլ.* **ջխգէ՛լ**։—*Նոր բառեր են* **ճեղոուիլ**, **ճեղոուածք**, **ճեղոովի**, **ճեղոոտել**, **ճեղոուկ**, **ճեղոոտել**, **ճեղոոտկել**, **աճճեղոել**։— *Սրանցից բոլորովին տարբեր է* **ճաք** *արմատը, որից* **ճաքիլ** *(Ագլ. Երբ. Տփ. Գոր. Ղրբ. են). փոխառեալ է պրս.* چاک čāk *«պատառուածք» կամ արևել. թրք.* چاقماق čaq-maq *«ճեղքուիլ» ձևից. սրանից նաև վրաց.* **ჭეჭა ნეწა** *«ճաք, ճեղքուածք»,* **მიჭეჭა მინეწა** *«ճաքիլ»,* **ჭაჭაწი ճաճանի** *«ճաք, ճեղքուածք»։*

ՃԵՃԵԿԵԱԼ *«ճղճիմ, խեղճ, վտիտ, լղըրճուկ». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Մագ. թղ. 218. (Վտիտ ձկունք) ճխմեալք և ճեճեկեալք ճիօրէն ճողորտեաց. (Հրատ. Կոստանեան տպուած է* **ճեկճեկեալ**)։

Պատահական նմանութիւն ունի լազ. čičku *«նուրբ, փափուկ»։*

***ՃԵՄ**, *ի–ա Հլ. «պատյար, քայլուածք» Վեցօր. որից* **ճեմ առնուլ** *«սիգալով մաս գալ» Գ. մակ. ե. 12. Ոսկ. ա. տիմ.* **ճեմիլ** *ՍԳր. Կոչ. Ոսկ. ես.* **ճեմելի** *Յոբ. խա. 24. Ոսկ. բ. կոր. ա. տիմ. Ես. Կոչ.* **ճեմեցուցանել** *Իմ. դ. 2.* **ճեմութիւն** *Նար.* **ճեմարան** *«ճեմելիք, զբօսարան» Նար. Շար. ՍԿմ. «ճեմական փիլիսոփայական վարժարան, ուսումնարան» Փիլ. Պորփ. Մագ. «մզկիթ» (անշուշտ արար.* جامع jāmi‘ *հոմանիշ բառի նմանաձայնութիւնից յառաջացած) Ուռհ. 329, 335, 351. «պատյար, ճեմք» Արծր.* **ճեմարանական**, **ճեմարանաւարտ** *(նոր բառեր).—ճեմ գրտնում է նաև բազմաթիւ յիշատակարանի բարդութիւնների ծայրը՝ բաւական անյարմար ձևով. ինչ.* **առեգակնաճեմ**, **լուսաճեմ**, **երկնաճեմ**, **իմաստնաճեմ**, **կաճառաճեմ**, **մարդիճաճեմ**, **գեղաճեմել** *են։*

=Պհլ. անծանօթ մի ձևից, որի գոյութեան ապացոյց են պրս. چم čām *«ճեմք, նազելով քայլուածք»,* čāmīdan *«նազելով փերևևտել»,* čamānī *«նազելով՝ փերևևտելով երթալը». հայերէն ե–ի դէմ պրս. a անստոյգ է. պատճառը պէտք է փնտռել պահլաւերէնի մէջ։—Հիւրշ. 189։*

ՆՀԲ լծ. թրք. adəm *«քայլ». իսկ բարդութիւնների ծայրը գտնուածները մեկնում է հյ.* **ճամուկ**, *պրս.* **ճամէ**, **ճամ** *«դգեստ»,*

հյ. աճեցուն, արաբ. 'azim «մեծ», տճկ. azγən «կատաղի» և հյ. գումար=արաբ. jam' «գումար» բառերով (տե՛ս ճեմ և լուսաճեմ): Lag. Urgesch. 471 պրս. AW 42, 254 և 44, 238 պրս. čāmidan և jamīdan (իմա čamīdan): Müller SW. čaman «արօտ»։ Պատկ. Матер. I. 11 պրս. čam. Justi, Kurd. Gram. (1880), էջ 233 քրդ. čemīēm «խոնարհիլ», պրս. čamidan, անգաք. hvom «անկիւն»։ Հինք. պրս. չէմիյատէն: Patrubány ՀՄ 1908, 152 յն. δίεμαι «փախչիլ»։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 398 գալլ. caman «ճամբայ», ն. արմ. kamm, kammed «հետք, քայլ», հրբրտ. cemmein «քայլ, հետք», հիւլ. cēimm «ճեմ. քայլ, հետք»։ Karst. Յուշարձ. 408 սումեր. tum «երթալ, քայլել»։

ճեմ տե՛ս կեմ։

Lag. Urgesch. 471 սանս. yam «սանձ», որ մերժում է ինքը՝ Arm. Stud. § 1389: Pedersen տե՛ս ճմլել բառի տակ։ Karst, Յուշարձ. 423 թրք. gäm, gem, güväm, gäym «ձիու սանձ»։

ՃԵՄԱԲԱՐ «բարակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 197։

***ՃԵՄԻԱՑ** «մզկիթ». մէկ անգամ ունի Վրդ. պտմ. տպ. էմ. 154 (իսկ տպ. Վենետ. էջ 117 ճէմիայ). «Անկաւ հուր յերկնից ի ճեմիայն Ամթայ, որ է մնիրայն հաւաքման մալիմանաց»։

=Արաբ. جامع jāmi' «մզկիթ», որի բուն ստուգաբանական իմաստն է «հաւաքող» (իգականը جامعة jāmi'a). սրա համար է Վարդանի «մնիրայն հաւաքման մալիմանաց» բացատրութիւնը։—Ա՛ճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատենագր. Ա. էջ 111։

***ՃԵՄԻՇ** «արտաքնոց». մէկ անգամ ունի Բուզ. ե. 35. սրա հետ հոմանիշ է շաշմակ «արտաքնոց», որ առանձին գործածուած չէ և կայ միայն շաշմակել «կործանել զտեղին և կարգել ի լուալիս, ճեմիշ կացուցանել». մէկ անգամ ունի Կիւրղ. դտ. «Իսկ Յերոբոաղ յետ շաշմակելոյ զԲահաղ և ունելոյ զդատաւորութիւն՝ յաղթեաց Մադիամու» (ակնարկում է Դ. թագ. ժ. 27)։

=Պհլ. անյայտ մի ձևից, որի հետ հմմտ. պրս. چشم čašma և շրջեալ چمش čamša, որ բուն նշանակում է «աղբիւր» և երևի փխբ. նշանակում է նաև «արտաքնոց». այսպէս է քրդ. چمش češma «արտաքնոց» (Justi, Dict. Kurde, էջ 129), ինչպէս նաև Մշոյ հայ. և թուրք. գաւառականով՝ շաշմա «արտաքնոց»։ Իմաստի զարգացման համար հմմտ. հյ. լուալիք «աւազան, բաղանիք, ջերմուկ. 2. աղբանոց, կոյանոց». (Քակեցին զտունն Բահաղու և կարգեցին զնա ի լուալիս. Դ. թագ. ժ. 27), պրս. ābdast «լուացումն ձեռաց» և ābdastxāna «ճեմիշ», ասոր. ܒܝܬ ܐܕܡܝܐ baitā dmaya «արտաքնոց» (բուն նշ. «տուն ջրոյ» ZDMG 40, 439)։— Հայ. շաշմակ համապատասխանում է պրս. čašma ձևին և փոխառեալ է պհլ. čašmak «աղբիւր» բառից. իսկ ճեմիշ մօտենում է շրջեալ čamša ձևին և անշուշտ ծագում է պհլ. գաւառական մի ձևից։

ՆշՌ թէ՛ ճեմիշ և թէ՛ շաշմակել դնում է պրս. չէմշէ, թրք. չէշմէ «աղբիւր. 2. արտաքնոց»։ Հիւբշ. 189 չի ընդունում վերի մեկնութիւնը, որովհետև «արտաքնոց» նշանակութիւնը չի գտնում Vullers-ի մօտ։ Նորայր, Կոր. վրդ. 446 պրս. چامیز čāmēz «մէզ» բառից հանելով՝ սխալ է գտնում ճեմիշ «արտաքնոց» նշանակութիւնը և դնում է ճեմիշ «մէզ»։

ՃԵՆՃ «պարարտութեան գոլորշին, եփած մսի հոտ և կեղտ» Ոսկիփ. այս արմատից են ճեններ «խորոված մսի հոտ, զոհի գոլորշիք» Բ. մակ. է. 5. Ոսկ. ա. կոր. ճեննեռել ՍԳր. ճեննեռոտիլ Ոսկ. եփես. ճեննեռալիր Սահմ. ճառընտ. ճեննեռալից Տօնակ. ճեննեռական Փիլ. ճեննեռաճոտ Վանակ. յոբ. դիւաճեններ ճառընտ. Նար.։

Հինք. ճանճ բառից։

ԳԻՒ.—Ախց. կր. ճէնճ, Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. ճենջ, Երև. ճէնջ, Խրբ. Պլ. Ռ. Սեբ. ջէնջ, Մրղ. Ոզմ. ճինջ (Ոզմ. նշ. «ճարպ»), Նոխ. Տիգ. ջինջ (Տիգ. նշ. «արգանակ, մսի ջուր»)։

—ՃԵՆԵԼԵՐ *բառի հետ է կապում Ջղ.* ճնջեո *«մսի պարարտութիւն»։—Նոր բառեր են* ԵԵՆ-ՃԱԾ, ԵԵՆԵԼ, ԵԵՆԵՈՒ *(Ջթ. չէօնչիւդ)*, ԵԵՆ-ՈՒՏԻԼ, ԵԵՆԵԵՄՈՒՄ, ԵԵՆԵԵՈՒՈՒԱՑՆԵԼ *«խարկել»*, ԵԵՆԵՈՒՏԱԼ *«խարկուելով ճենճի հոտ տալ»*, ԵԵՆԵՈՒՏԱՒ *«կիզիչ տաք»*, որոնք և ԵԵՆՈՒՏԱԼ, ԵԵՆՈՒՍՏԱԼ, ԵԵՆՈՒՃԱՒՈՒՏ, ԵԵՆՈՒԱՑ-ՆԵԼ, ճնջոթաւ։

ՓՈԽ.—Վրաց. ჭინჭო ԵԵՆԵԻ, ჭინჭო ԵԵՆ-ՃՈ *«տապակած մսի հիւթ»։*

ՃԵՆՃԵՐԱՒ *կամ* ՃԵՆՃԵՐԵԼ *«բզզալ, տրզզալ (մեղուի, ճանճի)» Մագ.։*

*ՃԵՊ, ո, ի–ա, ի *հլ. «աճապարանք, շտապումն» ՍԳր. Վեցօր. Ոսկ. ես. և մ. բ. 5, 18. որից* ԵԵՊ ի ԵԵՊոյ *Սիր. թգ. 428, 430, 455. Մծբ.* ԵԵՊ զԵԵՊի *Արծր.* ԵԵՊս ԿԱՑՈՒՑԱՆԵԼ *«շտապեցնել» Կոչ.* ԵԵՊԵԼ *ՍԳր. Մծբ. Եւս. պտմ.* ԵԵՊԵԼ ԿԱՐԿՈՒՄ *«առաւօրէն կարկուտ թափել» Սիր. յոր. (ՀԱ 1912, 670)*, ԵԵՊԵՑՈՒՑԱՆԵԼ *Ոսկ. յհ. բ. 26.* ԵԵՊԸՆԹԱՑ *Երզն. մաթ.* ԵԵՊՈՒՄՆ *Ոսկ. յհ. բ. 39. Վրք. հց.* ՃԱՊԵԵՊ *ՅՀ. կթ.* ՃԱՊԵԵՊԵԼ *Խոր.* ԱՐԱԳԱ-ԵԵՊ *Ոսկ. գծ. 239։—*ՃԵՊԵԼ *և փութալ բառերի երանգը որոշելով՝ Սարգ. բ. պետ. բ. 420 գրում է. «ՃԵՊԵԼՆ քան զփութալն առաւելագոյն է. վասն զի փոյթն է արտաքոյ պղերգութեան՝ յօժարութեամբ սրտի զիրս ինչ կատարել. իսկ ՃԵՊԵԼՆ է ամենայն ինչ պնդութեամբ զհետ ընթանալ և հասանել իրացն»։*

*=ԸՆԹԱԴՐՈՒՄ է իրան. *čapi- ձևը (ինչ. pati-> պետ), որ արմատն է* ճապուկ<պհլ. čāpūk<*իրան. čāpu-ka- *բառիւ Այսպես մեկնեց* Nyberg, Hilfsb. 2. 42:

ՆՀԲ *լծ.* ստէպ, շտապ, խուճապ, *թրք.* չափըգ *«շուտ»*։ Peterm. 246 *լծ.* շտապ։ *Հիմնք. պրս.* čapuk *«շուտ», ՔՔր.* čap -maq *«արշաւել»*։ Müller WZKM 8 (1894), *էջ* 275 *սանս.* čāpa, cāpala, *յն.* καμπύλος *«կոր» բառերի հետ։ Փորթուգալ փաշա, եղիշէ 301* ճապուկ= *պրս.* čāpūk *«արագ» բառի արմատն է։* Karst, *Յուշարձան 407 սումեր.* šib *«աճապարանք, վազք»,* tab *«շտապել, արագ», 423 չաղաթ.* čapuk, *օսմ.* čabuk *«շուտ»,* čap *«վազք», չաղաթ.* čevik. cever *«ճարպիկ, աշխոյժ»։*

ՓՈԽ.—Տե՛ս ճապ *արմատի տակ։*

ՃԵՏ (ի *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ցեղ, սերունդ» Բուզ. դ. 14, 18. Խոր. Մագ. որից* միաճետի *«մէկ բուն ունեցող ծառ» Վեցօր. 96. Ոսկ. Եփես. 878.* աճետ *«անզաւակ» Սիր. թգ. 449. Մծբ. 292.* աճետութիւն *Սիր. եւ. էջ 175 և թգ. էջ 358.* աճետել *«ցեղը չնչել» Սիր. մեկն. սամ. (ձեռ. Վիեննայի, թ. 229, տե՛ս ՀԱ 1912, 550), որ և* աճիւտել *Բուզ. դ. 19։*

ՆՀԲ *ռմկ.* ճէտտ, զաթ, զատ *(իմա՛ արաբ.* جدّ jadd *«ցեղ, նախնիք»,* ذات ðāt *«անձ», պրս.* زاد zād *«ծընունդ»), սանս.* ǰāti: Justi, Zendsp. *127 ա զնդ.* ząθa *«ծնունդ», պրս.* zād: *Պատկ.* Изслѣд. *էջ 18 զնդ.* zāta, *պրս.* zād, *սանս.* ǰāta: *Էմին, Հայ. հին. կրօն, Բրգմ. Յոյս, 1875, 362 «սասանեան դրամոց* ճէթրէ *«ցեղ» բառն է»։ Տէրվ.* Altarm. 60 ծնունդ *ձևի հետ՝ լտ.* gens, gentis, *սանս.* ǰāti, *գոթ.* knōdi *ևն։ Նոյն, Նախալ. 77, 126 հնխ.* ganti *նախաձևից. հինը համարում է* ճէտ *(<*ճայտ), *համմտ.* աճիւտել *(ի-ով)։ Հիւնք. էջ 97 արաբ.* ճէտտ: Pictet *բ. տպ. Ա. 100, Գ. 5 սանս.* ǰāta, *զնդ.* zā-ta, *յն.* θέτος *ևն բառերի հետ։*

ԳԻՒ.—Սլմ. ճէտ *«փոքրիկ», Վն.* ճետ *«վառհակ», Խն. «փոքրիկ աքլոր», Մկ.* ճիտ *«հաւի ճուտ» (առանց սեռի որոշման), Ալշ. Բլ. Խլ. Հզ. Մշ.* ճեղ *«աքլոր», որից* ճետնոց, ճետխօ-սոց, ճիտու արիւն *«շատ կարմիր», ճալօզ «փոքրիկ աքլոր, աքլորաճուտ»։ Հին վկայութեամբ ունինք* ճետաճոց *«աքլորների հաւանոց» Վրդ. առ. էջ 122։—Համմտ. նաև* ճուտ *«ձագ, վառհակ», որ նոյն բառի ձայնդարձն է. տե՛ս գւտ. բռ.։—Մառ, Վրդ. առ. 1. էջ 203* ճետ *«աքլոր» կգում է ճուտ բառին, բայց նաև ծիտ! որ այստեղ գործ չունի։—*

ՃԵՐԵՏ *«անծանօթ մի բոյս է» Դաղիան. ունի միայն Հրուս. § 1869։*

Հրուս. համարում է սասր. ճերուտ *«աղատդրախտ»։*

*ՃԵՐՄԱԿ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «սպիտակ» (*գործածուած միմիայն ձիու համար*) *Բուզ. Սեբ. Մեսր. Եր. Նար. խչ.* որից ճերմակածի «սպիտակ ձի հեծնող» *Բուզ.* ճանճաճերմակ «սպիտակաւոր սպիտակ գոյնով, ճանճկէն» *Մագ. արևմտեան գրականում՝ գաւառականների համաձայն՝ գործածւում է ընդհանրացած «սպիտակ» նշանակութեամբ. իսկ* սպիտակ *բառը անսովոր է. ճիշտ սրա հակառակը, արևելեան հայերէնում գործածւում է* սպիտակ *և անսովոր է* ճերմակ:—*Գրուած է* ճարմակ *Անկ. գիրք հին կտ. 379, 381—2։*

=*Պհլ.* *čermak *ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց համմտ. պրս.* چرمه čarma «ճերմակ ձի, շագանակագոյն կարմիր ձի» (Vullers), «*հասարակօրէն ձի, իսկ յատկաբար այն ձին, որ կոչի թրք.* գուլա ար *(իմա՝ «աշխէտ, կարմրագոյն ձի») և ուրիք գրի նշանակել գորշ ձի» (ԳԴ). գրուած է նաև* جرمه jarma «գորշ ձի». *քրդ.* čerme «սպիտակ, ճերմակ» (ZDMG 38, 61)։ *Իրանականից փոխառեալ են նաև վրաց.* ჯარმაკი ճարմակի *կամ* ჯარმაგი ճարմագի «*ձևերի հետ խառն ճերմակ մազեր*», ჯარმაღი ճարմաղի «*ալևոր քաջ ծերունի*», ჯარმაკი ცხენი ճարմակի ցխենի «*ճերմակ ձի*», ჯარმაგოსანი ճարմագոսանի «*ալեհեր*». *(սրանք չեն կարող հայերէնից լինել՝ առաջին վանկի ա-ի պատճառաւ)։—Հիւբշ. 189։*

Klaproth, As. polygl. 106 *վօգուլ.* sarni, *սամոյէդ* syr *ձևերի հետ։ ՆՀԲ պրս.* չէրմէ: *Հիմք. «ձի» նշանակութեամբ=պրս.* ճէրմէ, *իսկ «սպիտակ» նշանակութեամբ՝ նոյն ընդ գերմակ:*

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. ճէրմակ, *Մշ.* ճէրմագ, *Ակն. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ւր. Սեբ. Սչ.* ջէրմագ, *Ասլ.* ջէրմագ, ջէրմայ, *ԶՓ.* ջիյմօգ, ջիրմոգ, *Զղ.* ճարմակ: *Նոր բառեր են* ճերմակերես, ճերմակլաք, ճերմակկապ, ճերմակկնկ, ճերմակորակ, ճերմկոսիկ, ճերմքուկ, ճերմլուկ, ճերմկնալ, ճերմկոսիլ, ճերմրկուց, ճերմկուցմ, ճերմակջուր. *սաստկականն է* ճեփ-ճերմակ *Արբ. Պլ.*, ճիփ-ճերմակ *Ննխ.* ճերճերմակ *Ախք.։*

ՃԵՒԱԿՏՈՒՏ «*մի տեսակ քամի*». *ունի միայն ԱԲ. մէկ անգամ գործածուած է Եսիփ. կիպր. վկայութիւնը տես* մաղնեակ *բառի տակ։*

Ճեւեղիկ *տե՛ս* Ճիւաղ։

ՃԵՒՈՏ «*օտոտ*». *այսպէս ունի Յատ. երեմ. էջ 197. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ՃԵՒՐ «*ախտոտ*». *ունի միայն Յատ. երեմ. էջ 197, որ կարելի է հասկանալ «ախտաւոր», բայց նաև «աղտոտ» (այժմ էլ Կովկասում* աղտոտ *բառը հնչւում է* ախտոտ):—*Թերևս կապ ունենայ* ճայր, ճայրոտ, ճերոտ *ձևերի հետ։*

*ՃՂԱՀ «*եղնգնաքար*». գիտէ միայն Պատկ.* Драг. камни, *էջ 36 (հանելով յետնադարեան գրուածքներից)։*

=*Արաբ.* جزع ǰiz' «*մի տեսակ թանկագին քար՝ սև ու սպիտակ գոյներով. աչքի ուլունք. սրա մի տեսակն է եղնգնաքարը*» (*ըստ բացատրութեան Կամուսի. Թրք. Թրգմ. Բ. 557*)։

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

ՃՃՈՈՑ «*ձայն փայտի կամ այլոց իրիք*». *ունի միայն ՀՀԲ։*

=*Ինաձայն բառ. պարզ արմատը* ճբ. *հմմտ. գւռ.* ճբճբալ, ճբճբցնել, ճբոտալ։ —*Աճ։*

ՃԺՏՆԼ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Վրդ. առ. 318. «Առիւծն խնդրէր, թէ բերէք զձագ ձեր. զի ոք որ ոչ ճժտեսցէ, զայն ինձ հարսն արասցեմ»։*

*Մառ, Վրդ. առ. I, էջ 441 թարգմանում է «*окажется безобразной, *անճոռնի դուրս կգայ, տգեղ կլինի» և հանում է պրս.* زشت zišt «*տգեղ*» *բառից։*

ՃԻ, ո *հլ. «ժժմականների շողիք, չորանոք» Մագ. Թղ. 202. որից* ճիօրէն «*լղրճուկ, շողիքի պէս*» *Մագ. Թղ. 218. երկուսն էլ անստոյգ բառեր են։ Տե՛ս նաև* ճեի:

ՆՀԲ կգում է ճակ բառին։

ՃԻԳՆ, ն *հլ.* (ճգան, ճգունք, ճգանց) «*ննջուքիւն, վշտակրութիւն, ջանք*» *ՍԳր. Ոսկ. ես. և տիտ. Եփր. կողոս. որից* ճիգն ի ճիգ «*խիտ առ խիտ*» *Ոսկ. մ. դ. 16.* ճգնել *ԳԺ. ժա. 27.* ճգնիլ *ՍԳր. Եւս. պտմ.* ճգնական

Սփր. Թգ. ճգճակից *Բուզ.* ճգնումն *Կոչ.* ճրգնութիւն *ՍԳր. Եզն. Եւս. պտմ.* ճգնաւոր *Ոսկ. յհ. բ. 35 ևն։*

ՆՀԲ լծ. հյ. ձիգ *և Թրք.* səqɔ *«սեղմ»,* səqəntə *«նեղութիւն»,* ček-mek *«քաշիլ»,* jeng *«պատերազմ» (տե՛ս* ճրգնութիւն *բառի տակ)։ Մորթմանն* ZDMG *24, 80 ևն Թրք.* səqəntə, ZDMG 31, 417 *բևեռ.* zikuni։ *Հիւնք.* տճիլ *բայից։ Քիւփէլեան, Բազմ. 1910, 153* ոգ>ոյժ *արմատից։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* ჯოგო ճիգո *«նեցուկ, յենարան»։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. ճրկճել, *Ազմ.* ճրկճիլ, *Ախց. Կր.* ճրճիլ, *Մրդ.* ճրճէլ, ճրյճճել, *Սչ.* ջրգ'ճել, *Խրբ.* ջրգ'ճիլ, *Ջթ.* ջր'գ'ճիլ, *Ննխ. Պլ. Սհբ.* ջրճճել, *Շմ. Տփ.* ճրճվիլ, *Ղրբ.* ճրճ'ճվէլ, *Ռ.* ջրճիլ, *Սլմ.* ճրյճճել, *Ասլ.* ջր*ճիլ.—ճգնաւոր *բառի ձևերն են՝ Մշ.* ճրկճաւոր, *Մկ.* ճրճաւոր, *Ջղ.* ճրճաւոր, *Երև. Կր.* ճրճաւօր, *Սչ.* ջգ'ճաւօր, *Համշ. Ննխ. Պլ. Ռ.* ջրճաւօր, *Ագլ. Տփ.* ճրճա'վուր, *Ղրբ.* ճիճ'ճա'վրէր, *Ջթ.* ջիգ'ճովիւր, *Սհբ.* ջրճաւվէր, *Վն.* ճրյճճաւոր, *Սլմ.* ճրյճճովոր, *Մրդ.* ճրճաւվր*իր, ճրյճճաւվր*իր, *Ասլ.* ջր*ճաւվէ՝օր, *Շմ.* ճրճօօր։—*Ատն. ունի* ջրճաւօր *«ճգնաւոր», ջրճնել էթմէք «ճգնել»։—Նոր բառեր են* ճգնոց *«ճգնարան», ճգնիկ* (Rivola) *«ճգնաւոր փոքր և խոնարհ», ճգմաճուկ «անխօս մանուկ» (?), ճգտալ Նոր. «չափազանց նեղը մնալ», ճգտել Մշ. «ճիգ ու ջանք գործ դնել»։*

ՓՈԽ.—Ուս. ճիճաւօր *«ճգնաւոր»։*

ՃԻԳՆ *«սկիզբն». ունի միայն Բառ. երեմ. էջ 197։*

ՃԻՂ *«մանուկ, զաւակ». երկու անգամ յիշում է Բառ. երեմ. էջ 197 և 198։ Արդի բարբառներում ծանօթ է ճիժ ձևով։*

**ՃԻԿ «ջրոտ տեղեր բանող կնիկն, սէգ, բարակ եղէգ, պրտուս» (ըստ Տիրացուեան,* Contributo § 44 juneus glaucus Ehrh.). *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած լծ. նար. «կնիկն՝ ճղեմն է, որ ի հեղեղատս բուսանի, մանրուբոլոր ճիլն». (տե՛ս ՆՀԲ ճղեմ բառի տակ)։*

=վրաց. ჯოლო ճիլի *համանիշից փոխառեալ։ Հայը փոխառեալ դնելու պատճառն այն է, որ շատ յաճախաբար գործածուած ռամիկ բառ է. մինչդեռ վրացին շատ հին է և գործածուած է նաև Ս. Գրքի թարգմանութեան մէջ. այսպէս՝ Ել. բ. 3. Ես. ժԹ. 6 ևն. միևնոյն ժամանակ վրաց. ձևը գտնւում է կովկասեան ընտանիքի մէջ՝ զանազան կերպարանքի տակ. ինչ. վրաց.* ჯოლო ճիլո *«պրտուղի կանաչ կեղև»,* ჯალა ճալա *«մացառ, եղիպտացորենի կեղև», ինգիլ.* ჯალაჲ ճալայ *«եղէգ, պրտուս», Թուշ.* ჯალ ճալ *«եղէգ, յարդ, սէզ»։—Ա՛ճ.*

ԳԻՒ.—Ալշ. Երև. Մկ. Մշ. Շլ. Սլմ. ճիլ *«կրնիւն», Ջղ.* ճիլ *«հաղագակի երիսը պատող խսիրը». որից* ճկուտ *Շլ. «ճիլ շատ եղած ճախճախուտ տեղ».—ըստ Բլ. որոշւում է* գլոր ճիլ «scirpus lacustris» *և* տափակ ճիլ «juncus effusus» *(Ազգ. հանդ. Ե. էջ 21—22)։*

ՓՈԽ.—Թրք. جيل jil, *քրդ.* jil *«սէգ, ճիլ» փոխառեալ են հայերէնից (որևէ արևմտեան բարբառից, ինչպէս ցոյց է տալիս նախաձայնը). այսպէս նաև արաբ.* جل jil *(նաև* jal, jul, *որ հնչման անվստահութեան նշան է) «արտը հնձելուց յետոյ մնացած ցօղունները» (Կամուս, Թրք. Թրգմ. Կ. էջ 165)։*

○ ՃԻԿ *«ճիչ, փոքրիկ և աննշան ձայն». որից* ճիկ հանել *«մի փոքրիկ ճիչ արձակել» Ես. ժ. 14. Ոսկ. Ես. 161. Ոսկ. մ. գ. էջ 52 և ա. տիմ. էջ 149 ևն։*

=Բնաձայն բառ է. համմտ. ճիչ։

ՆՀԲ և Հիւնք. հանում են ճիչ *բառից։ Պատահական նմանութիւն ունի արևել. Թրք.* جيغ jiγ *«ճիկ, ճիչ»։*

ԳԻՒ.—Պահուած է միայն ճիկ, ճիկ աճել, ճիկ-բօ, ճիկու վիկ, ճիկ-վիկ *մանկական խաղերի անուան մէջ։*

ճիկո *տե՛ս* ճկուռ։

ՃԻԿՄ *«դեռաբուսիկ, մատղաշ» (մանկական հասակի համար ասուած) Ոսկ. Եփես. էջ 904. որից կրկնութեամբ՝* եղճիմ *«փոքրոդի, կծծի, ժլատ» Ոսկ. մտթ. բ. էջ 706, 708, 709 (=յն.* (σ)μικρολόγος *«փոքրոդի, չնչին բաների ուշադրութիւն դարձնող. 2. կծծի, ժլատ»), եղճմագոյն «ագահագոյն» Ա՛Բ. երդ-*

երմիլ «ժլատութիւն անել» Ոսկ. կող. 1, էջ 529 և մ. բ. էջ 447 (յն. μικρολογέω. Ձեռագիրն ունի բաղաձայնների խճողմամբ՝ երղմերմճիցիճ. ՆՀԲ դնում է եղեմճիլ, եղմճմճիլ, իսկ հրատարակիչը իրաւամբ ուղղում է եղեմիցիճ). «ծերութիւնից թառամել, կնճռիլ, քաշուիլ» Պիտ. «ճղճել» Մագ. գամագտ. (գրուած եմղճել. տե՛ս Նորայր, Բանաս. 1900, 135). այստեղ է պատկանում նաև եղեսպիրտ «փոքրոգի, սիրտը ճղճիմ» Սիրաք. ժդ. 3 (յն. μικρόψυχος. վերիններիս համեմատ ուղղելի եղմասպիրտ կամ աւելի լաւ՝ եղեմասպիրտ)։

ՆՀԲ «ճիղմ, որպէս զճիղ իմն, յորմէ և եղճիմ»: Վերի բառերի նշանակութեանց ստուգութեան և ձևի սրբագրութեան համար տե՛ս Հ. Ա. Վարդանեան ՀԱ 1911, 692։ Կայ և քրդ. երմ «կակուղ», որ յայտնի չէ թէ ի՛նչպէս պէտք է կապել մեր բառի հետ։

ԳԻՒՒ.—Պահուած է միայն Ղրբ եղմա՛ղէ՛ճ՝ (<ճիղմ+աղիճ) «նրբաղիք, բարակ աղիքները» բառի մէջ։—Նո՞յն է արդեօք Իվ. եմլի, Խթ. եմլիկ, Դվ. եմրլիկ «փոքրիկ, մատղաշ»։

ՃԻՃՆ «միշտ, ստէպ» Վստկ. էջ 1 (Իւր տէրն ստէպ (այլ ձ. ճիճն) հայի ի յինքն և կառկուռ երթայ տեսանէ և պէտ առնէ). Սմբ. դտ. 101 (Եւ զայս ճիճն կարդալ պարտ է (այլ ձ. ի ժիր). Անսիզք 35 (ճիճն հանդիպած)։

○ՃԻՃՈՒՈՒՆՔ «ծիծառների ճվճվալը». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Հռովմ. 341. «Ջճիճռունան ծիծառանցն լուիցեմք»։

=Բնաձայն բառ. համմտ. ճիկ. ճիչ, ճռուոդ, ճճուել են։—Աճ.

ՃԻՄ տե՛ս ԿԻՄ։

*ՃԻՄ «հողի գուղձ», ունի միայն Բառ. ևբրեմ. էջ 198, որ մեկնում է «կունձ» (գւտ. գունճղ). կենդանի է արդի բարբառների մէջ՝ զանազան ձևերով. այսպէս՝ ճիմ Երև., ճումճ Գնձ. Ղրբ., ճումբ Գնձ. Լ. Ղզ. Շլ. նաև ուտ. ճում «գուղձ»։

=Ջաղաթ. ᵭᵢᵯ čim «գուղձ, дёрнъ» (տե՛ս Будаговъ 1, 487)։—Աճ.

ՃԻՇԴ, ի հլ. «ուղիղ չափով, ո՛չ աւելի ո՛չ պակաս» Բուզ. ե. 7. «ճշտութիւն» Բրս. ճգն. որից ճշդիւ (կամ նաև ճշդով) «ճիշտ ու ճիշտ, ուղիղ» Դ. թագ. իգ. 35. Եզն. (սխալ գրուած ձևով՝ ճշդիւք). Ծա. քր. Կոչ. «խնայելով, կծծիութեամբ» Նար. ճշդել «ճշտել, ճշմարտել» Բ. մակ. բ. 29. «ժլատութեամբ վարուիլ» Բ. կոր. թ. 6. Առակ. ժա. 26. Մանդ. ճշդութիւն «ուղիղ չափը» Ֆաս. ե. 15. Կոչ. «ագահութիւն, ժլատութիւն» Սիր. ժա. 18. ճշդապահաճք Ոսկ. գծ. ճշդավաճառ Ծագբր. ևն։ Գրուած է ճշդութեամբ Տիմոթ. կուզ, էջ 201. արևմտեան գրականում ընդունուած է ճիշդ, ճշդել, իսկ արևելեան գրականում՝ ճիշտ, ճշտել ևն, ուր տ աւելի համապատասխան է նախորդ շ-ին (համմտ. միշտ, վիշտ, կեշտ, տաշտ, դաշտ, վաշտ ևն)։ Նոր բառեր են ճշդապահութիւն, աճճշդապահ ևն։

Տէրվ. Altarm. 9 և Նախալ. 71 հնխ. ki, kin «քննել» արմատից է դնում սանս. և զնդ. či, հյ. *ֆին, ֆննել. զբաղել, լտ. quae-s-o, quae-r-o «խնդրել», որ «նոյն ki արմատէն է s սահմանատառով աճած, որուն յծորդ կ՚երևան ճիշ-ղ և թերևս ճշ-մարիտ»։ Հիւնք. լտ. justus «արդար, ճիշտ»։ Խրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. էջ 200 պրս. جست just «քննութիւն»։ Մաղկաքաղ ՀԱ 1897, 318 պրս. چست čust «արագ, աշխոյժ»։ Մառ. ЗВО 11, 300 եբր. קשט qušt, ասոր. ܩܫܛܐ quštā «ճշմարտութիւն» բառերի հետ, թերևս փոխառեալ ասորականից։ Յ. Գ. Մ. Պատմ. գրակ. 16 ճապոն. ճիշ։

○ՃԻՉ, ի, ո (յետնաբար նաև ի-ա հլ.) «կանչ, բարձր ձայն, մանաւանդ ողբի և լացի» ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. բ. 17. Ծագբր. որից ճչել ՍԳր. ճչիւն, ճչումն Եղիշ. Մանդ. ՅՀ. կթ. բարձրաճիչ Շիր. Եղիշ. Գ. էջ 44. առանց սղման՝ ճիչել Խոր. պատ. Հռիփ. Բրս. մրկ. ճիշտել (<*ճիչտել) «մկան կամ հաւի կանչել» Վստկ. 13. ճիչկան «բօթաբեր, գուժկան» Ուռհ. 99, 256, 348. ճիչկանի «գոռում գոչում» ԱԲ. որ և ճուչ «գոչիւն» ՅՀ. կթ. 193 (Մաշտոց կաթուղիկոսի թղթում), 270. ճիճն Վրդ. առ. 20, 194, ճինչ Վրդ. առ. 194։

=*Բնաձայն բառ՝ կազմուած և ձայնից՝ չ ածանցականով. արմատի համար հմմտ.* ճիկ, ճճուել, ճճճուել, ճչել, ճռուել, ճռնչել *ևն. իսկ ձևի համար հմմտ.* շշալ, շշել, րշել, րշալ, րջել:—*Աճ.*

Տե՛ս իմ յօդուածը՝ ՀԱ 1899, 203բ։

ԳԻՒ.—Երև. Սլմ. վն. ճչալ, *Կզ.* ճչօց, *Ալշ. Մշ.* ճճալ, *Ակն.* ջըշշել, *Հճ.* ջոշօլ, *Խրբ.* ջրճշիլ. *Նոյն են նաև* ճինչ *Ննխ.*, ճինչել, ճնչել *Արբ. Եւդ. Հճ.* ճճնչել *ՋԲ. և սաստկականը՝* ճչվռտել, ճինչվռտել, ճնչվռտել *Արբ.* «*կանչվըռտել*»։

ճԻՊՈՏ «*բարակ դալար գաւազան*». *իբր մհյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆրանս. 650′* (houssine). *գտնում եմ գործածուած ջիպոտ ձևով՝ Վրդն. առ. 158. շատ աւելի յետին է Ջքր. սարկ. Ա. 53 (ճիպոտաւ մի էզարկ վարդապետին)։ Գործածական է արդի բարբառներում* ճիպոտ, ճպոտ, ճպատ *ձևերով. այսպէս՝ Ագլ. Երև. Լ. Կզ. Ղրբ. Մրղ. Նբ. Շլ. Շմ. Վն. Տփ. Ք. որոնց ներկայացրած զանազան առումների վրայ տե՛ս Գւռ. բառ.։*

=*Նոյն է խպտ.* šbot, *հպիպտ.* šbd «*գաւազան, ձեռնափայտ*» *բառի հետ։—Անհնարին չէ՛ որ հայերը բառեր փոխ առած լինին խպտերէնից (Կիլիկեան թագաւորութեան շրջանին). բայց ներկայ դէպքում տարօրինակ է այն, որ բառը այժմ գոյութիւն ունի աւելի արևելեան բարբառներում և գրեթէ չկայ արևմտեան բարբառներում։ Միւս կողմից թէև արաբ. š համապատասխանում է մեր ճ ձայնին (հմմտ.* ճատրակ=*արաբ.* šaṭranǰ), *բայց միայն այն դէպքում, երբ փոխառեալ է արաբերէնը, ուր չկայ č ձայնը։ Կարևոր է յիշել նաև այն, որ այժմ էլ* ճիպոտ *բառը գործածական է Սղերդի արաբախօս քրիստոնէից մէջ* šabot *ձևով (Բիւր. 1899, 116), որ համարւում է հայերէնից փոխառութիւն։ Խպտ.* šbot «*գաւազան*» *բառի համազօրները գտնում եմ այժմ սեմական լեզուների մէջ. հմմտ. ասուր.* šibtu «*գաւազան*», šabbitu «*գայլիսոն*», *երբ.* šēbeṭ, *ասոր.* šabṭā «*գաւազան*», *որոնք հանւում են ասուր.* šabaṭu, *եթովպ.* zabaṭā, *ասոր.* šabeṭ «*զարնել*» *արմատից* (Gesenius[17] 801):—*Աճ.*

*ճԻՊՒ, ի–ա *հլ.*.«*աչքի կեղտ, բիժ*» *Մանդ. գործածուած է միայն գրծ.* ճպոճ *ձևով, ուստի ուղղականի ձևը անյայտ է. յետնաբար ունինք* ճպուռ *Մխ. բժշ. 39. ՆՀԲ գնում է ուղ.* ճիպո. *այսպէս նաև ՋԲ. իսկ ԱԲ ունի թէ՛* ճիպո *և թէ* ճպուռ. *որովհետև գաւառականներում երկու ձևերն էլ կան. նոր բառեր են* ճպռտ «*բժռտ, ճայրռտ*», ճպռտիլ «*աչքերը ճայրռտիլ*»։

=*Փոխառեալ է հարաւային կովկասեան լեզուներից. հմմտ. վրաց.* წიჩლი «*աչքի թարախ*», წიჩლიანი «*աչքերը թարախոտ*», გაწიჩლიანება «*աչքերը թարախոտիլ*»։ *Ընդհանուր իմաստը պահում է Հմշ. հայերէն բարբառը, ուր ունինք* ծպուռ «*ոչխարի աղբ*», *որից* ծպռել «*ոչխարի աղբելը*»։—*Աճ.*

ԳԻՒ.—Ախց. Կր. ճիպո, *Երև. Ջղ.* ճպուռ, *Շմ.* ճուպուռ, *Ագլ.* ճո՛ւպրո, *Ղրբ.* ճէպո, ճրպօո, *ՋԲ.* ջճրոը, *Մն.* ջրոր, *Սվեդ.* ջարբ, *Ննխ.* ջուբռ, *Մշկ.* ջուռբ, *Հճ.* ջճրբ, *Ատն.* ջուբուռ, *Մկ.* ճպէռմ[1], *Վն.* ճպէռռմ *(սեռ.* ճպռմ'ի), *Համշ.* ջիմբոր, *Ալշ. Մշ.* ճրոիգ, *Ոզմ.* ճպռեխ, *Մշ.* ճմռիգ.—ճպռտ *ձևի դէմ ունինք Սլմ.* ճպռուռ, *Պլ.* ջրոօդ, *Տփ.* ճպռուռ, *Ատն.* ջրբօդ, *Ռ.* ջրոօդիլ, *Սեբ.* ջրոբօդիլ, *այս բոլորը աչքի համար.—Խրբ.* ջռբօդ՝ *աչքի. նաև ձեռքի համար, իսկ Ալշ. Մշ.* ժպռռտ *ստացել է ընդհանրապէս «կեղտոտ» իմաստը.—Պլ. Խրբ. Ռ. չունին արմատական ձևը* (ճիպո *կամ* ճպուռ), *այլ միայն ածանցը.—Նոր բառեր են* ճպռիկ «*մի տեսակ աչքացաւ*», ճպռած, ճպռակալել, ճպռկռտ:

ճԻՒ, ի–ա *և* ո *հլ.* «*խաղողի սակաւահատ փոքրիկ ողկոյզ*» *ՍԳր.* «*ձիթենու վրայ մնացած տկար պտուղներ*» *Նփր. օրին. էջ 277 (բցո. ի ճռոյ). (այս վերջին նշանակութիւնը չունի ՆՀԲ). որից* ճռախիտ *Ոսկ. մ. գ. 25.* ճռաճաղ *ՍԳր.* ճռաճաղութիւն *Դատ. ը. 2.* ճռաճաղել *Մծբ.* մշտնջենաճիւռ *Ճառընտ. գրուած է նաև* ճիւռ, ճեռ *Հ. Կիլիկ.* ճուռ *Վստկ. 41. Պտմ. լմբ. 236. Սմբ. դատ. 223ա.—Նուազականն է բառիս՝* ճռիկ «*փոքր ճիռ*» *Էֆիմ. 289 (մէկ ողկոյզ կամ ճռիկ որ կտրած չի լինի յիւր որթէն)։*

Հիմնք. պրս. (իմա՛ արաբ.) جرّ ǰurr'a «*մնացորդ դինւոյ ի բաժակի*»։

*ԳԻՒ.—Սրանից է ճեռուռ խրբ. «ճոպաքաղ անող». հմմտ. նաև ճիռն Ղրբ. «ապոխ, չհասած խաղող», ճուռ ՆՀՒ «ճիռ, փոքրիկ ողկոյզ», ճռտիկ Ակն. «ճիռ. փոքր ողկոյզ»։—

*ՃԻՏ «վիզ, պարանոց» Վստկ. 198. Վրդն. առ. էջ 253։

=Արաբ. جيد jīd «վիզ, պարանոց, և յատկապէս՝ մանեակ կախելու մասը» (տե՛ս Կամուսի Թուրքերէն Թարգմանութիւնը՝ Ա. 593)։

Ուղիղ մեկնեց նախ Հիւնք։—Pedersen, Հայ. դր. լեզ. 142 հիւլ. sciath, կիմր. ysgwydd «ուս» բառերի հետ՝ իբր բնիկ հայ, հնխ. sqido- ձևից։ Ջի ընդունում Pokorny 2, 544:

ԳԻՒ.—Ախց. երև. կր. Ղրբ. Մկ. Տփ. ճիտ, Համշ. Պլ. Ռ. Սեբ. ջիդ, Ասլ. ջիդ, ջի. ոճերով՝ ճիտ աճել երև. Ղրբ. Տփ. «վիզն ընկնել, գրկախառնուիլ», ճիտը կապել Տփ. «բռնի ընդունել տալ» ևն։ Նոր բառեր են՝ ճիտապոկ «վիզը փրցուած», ճիտմ «կօշկի վիզը», ճրտաճար, ճռաճոց, ճռճաւոր:

*ՓՈԽ.—Ուտ. ճիտ «վիզ»։

ՃԻՏԱԿ «մի տեսակ մարգարտեայ զարդիղէն». մէկ անգամ ունի Փարպ. ծ։

=Հնագոյն *ճէտակ ձևից, որ ենթադրում է պհլ. *čētak, որից և փոխառնել պիտի լինի։—Ա՛ճ.

ՆՀՒ մեկնում է ճիտ-տակ՝ իբր «վզի տակ» (շատ անյարմար, որովհետև ճիտ շատ յետին փոխառութիւն է, և երկրորդ՝ ճիտ բառից պիտի ունենայինք *ճռատակ և կամ *ճռտակ): Հացունի, Պատմ. տարազի 140 պրս. ճիտ «գեղեցիկ վիզ» բառից։

ՃԻՐԱՆ, ի-ա հլ. (բայց յգ. և հլ. -ճուճմ, -ճռճց, -ճռմբմ) «մագիլ, գազանի կամ գիշակեր թռչունի ճանկ» Եփր. վկ. արև. Վեցօր. 161. Կիւրղ. ղկ. որից ճիրանաւոր Վրդն. ծն։

=Հնագոյն *ճէրան ձևից ծագած

Հիւնք. պրս. šīrāna «առիւծային» բառից։

ՃԻՐԳՆ «վտանգ». ունի միայն Բառ. երեմ. էջ 198։

ՃԻՒ «ոտք, թաթ կենդանեաց, սմբակ». ունին միայն ՋՒ և ԱՒ. առանձին գործածուած չէ. (յոգնակի ձևով կայ միայն մհյ. ճվերն Վստկ. 222.) որից երկաճիւ «կճղակաբաշխ», մենաճիւ «միակճղակ» Իրեն. հերձ. 169 (տե՛ս Վարդանեան ՀԱ. 1910, 301)։

Böttich. ZDMG 1850, 357 սանս. čhyu «չուել, երթալ», որ մերժում է Lag. Arm. Stud. § 1393, որովհետև իրանեանում նոյն բառն ունի նախաձայն š. պրս. šudan «երթալ, չուել»։ Patrubány ՀԱ. 1908, 152 յն. διέρχαι «փախչիլ», διερός «փախչող, արագընթաց» բառերին ցեղակից է դնում։—Թաթարական լեզուախմբում կայ جيو ձևը, որ գտնում եմ Böhtling-ի հաքուտերէն բառարանում (Über die sprache der Jakuten, Ս. Պ. 1851)՝ satə «յոտընկայս, հետևակ» բառի դէմ համեմատութեան բերուած. جيو ձևը պէտք է կարդալ երևի jeyve. բայց մեր բառը սրա հետ չի կարող կապ ունենալ, որովհետև յիշուած է Ջ դարից (տե՛ս Ակինեան ՀԱ. 1910, էջ 205 ա), ուստի և նրմանութիւնը պատահական է։ Այսպէս է նաև չին. 腳 կամ 跤 čiao³ «ոտք»։

ԳԻՒ.—Ալշ. երև. կր. Մկ. Մշ. Ջղ. ճիվ, Ննխ. Պլ. Ռ. Տիգ. ջիվ, Հզ. շիվ, զանազան առումներով. այն է «1. մարդու կամ անասունի ոտք. 2. հաւի թև կամ ոտք. 3. մարդու թև», իսկ Սեբ. ջիվ «ցայլք»։—Նոր բառեր են ճուռճան աճել երև. Շլ. «յօշոտել», ճվտել «հաւի ոտքերից քաշելով պատռել, փետրատել, փրցնել», որի սաստկականն է ճվատել. գրուած է ճվռդել ձևով՝ ԺՋ դարու վկայաբանական մի տաղի մէջ. «Ճրվըրդից զօղն անկրճէն, արիւնն ի վրայ յատին գընաց». Նոր վկ. էջ 380։

ՃԻՒ «ընկոյզի կճեպ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Լծ. Նար. իր. «Որպէս փուչ ընկուզն, որ ճուով և կեճեպով արտաքոյ զարդարեալ երևի և մէջն սին է»։ Գրծ. ճուով ձևից կարելի է ենթադրել ուղ. ճիւ կամ ճու. մին կամ միւսը սխալ։

○ՃԻՒ «ճիշ, ճիկ». հնից աւանդուած չէ,

բայց իբր բնաձայն բառ գործածւում է նոր բարբառներում. որից նուալ «ճչալ, կանչել» *Զքր. սարկ. Ա. 56, 119. «նոքա թափեցան ի վերայ ճուալով և ճչալով. ճչալով, ճղճղալով և ճվալով». կրկնութեամբ՝* ճվճվալ *Զքր. սարկ. Բ. 82։*

=Բնաձայն բառ է, որ գտնւում է նաև ուրիշ լեզուների մէջ. հմմտ. ն. ասոր. çivvāçiv *«ճվճվոց»։—Աճ.*

ՃԻԻԱՂ, ի–ա *հլ. «հրէշ, առասպելական գազան» Երեմ. ծ. 39. Ոսկ. յհ. ա. 1. Նաագր. որից* ճիւաղաբարոյ *Ագաթ. Կորիւն.* ճիւաղութիւն *Ագաթ. Կորիւն.* ճիւաղական *Զքր. կթ.* ճիւաղացեալ *Ճշ. աստւմ է նաև* նուաղն, ն *հլ. (-ղան, -ղանց) Մագ. որից* նուաղաբարոյ *ՅՀ. կթ.* նուաղական *Մաշտ. մէկ անգամ էլ կայ* նևեղիկ *Միս. խչ. (Բազմ. 1911, էջ 260 բ)։—Նշանակութեան տարօրինակ զարգացմամբ կայ* ճիւաղեալ *«հնացած, փլփրլած» Արծր. էջ 276։—Վերջին* նևեղիկ *բառը Տիրոյեան, Հանրագր. էջ 499 և 208 դիտէ իբրև «թիթեռնիկ»։ (Այս նշանակութեան համար հմմտ.* խիպիլիկ *բառի ծագումը)։*

ՆՀԲ նուալ *բայից։ Հիւնք. Թրք.* ճիվէլէկ *«աշխոյժ տղայ. 2. ուղտի ձագ»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 Թրք.* ճիվէլէկ *«խպլիկ» (?)։*

ՓՈԽ.—Արաբ. جعفليق Ja'falīq *կամ* جفلق Jaflaq *կամ* جنفليق janfaliq *«խոշոր մարմնով կին». սրա համար կասուս, Թրք. Թրգմ. Բ. 878—879 ասում է թէ օտար փոխառութիւն է. բայց ասում է որ յայտնի չէ փոխառու լեզուն։*

ՃԻԻ, ո *հլ. «ծառի ոստ. փխբ. ուրիշ բաների ճիւղաւորուած մասը, մատ են» Անյ. հց. իմ. Մագ. Նար. որից* երկայնաճիւղ *Սրգ. յկ.* բազմաճիւղ *Սրգ. ա. յհ. Խոր. աշխ. երկճիւղ Յես. ը. 9. Նոր բառեր են՝* ճիւղակար, ճիւղաւորել, ճիւղաւորութիւն *են. ռամիկ ձևն է* նուղ *Ոսկիփ. Նար. առաք. 433։ Այս արմատի հետ նոյն են՝* ճՈՂ *(գրծ.* ճեղր!*) Մաշտ. ջահկ. Զքր. ծործ. ժմ. յն. որից* ճեղեալ *«ճիւղ ճիւղ բաժանուած» Հին քեր.* ճեղան *«ճիւղեր» Վկ. գէ. 42.* ճեղել *«ճեղքել» Բառ. երեմ. էջ 197.* հազարաճեղ *Ճառընտ.* երկճեղ *Սանահն. Կամրջ.* եռաճեղ *Ոսկիփ. (հմմտ. Ղրբ.* ճեղ *«պատառուածք», որ տարբեր է ճէ՛ղնը «ճիւղ» բառից)։—*ՃՈՂ, ո, ի *հլ. «ոստ» Եպիփ. ծն. Մարթին. Վրք. ոսկ. Շնորհ. Եդես. որից* ճղել *«մասերի բաժանել» Օրբել. Հրատ. էմ. էջ 58.* ճղճղկէն *«բազմաճիւղ» Խոր. աշխ. 594. Երկճղի Պղատ. տիմ. Եղիշ. յես. 175. Յայսմ. Ոսկիփ. Խոր. աշխ.* ճիղատոր *«ճիւղ ճիւղ» ԱԲ։—*ՃՈՂ, ՃՃՂՔ *և* ՃՈՂՔ, *որոնք տե՛ս առանձին։—Այս վեց ձևերը պատկանում են միևնոյն արմատին. հիմնական դաղափարն է «պատռելով իրարից բաժանել». վեց ձևերից չորսը իրար հետ ձայնդարձ են. (հմմտ.* լիւղ, լոդ, լեղ*). իսկ վերջին երկուսը կազմուած են -ք ածանցականով՝* ճեղ, ճող *պարզական արմատներից։ —Արդեօք կապ ունի՞* ծիլ–ծիղ–ծիւղ *արմատի հետ։*

ՆՀԲ յծ. ծիղ, ծեղ, շիղ, ըճնիւղ*։ Հիւնք. էջ 23* շիւղ *բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 96 իբր բնիկ հայ կգում է յն.* βέλος, βελόνη *«սլաք», լիթ.* gelūnis *«խայթոց» բառերին։ Յիշում է* Walde 805. *չի ընդունում* Meillet MSL 13, 244՝ *իմաստի տարբերութեան պատճառով։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 264 պրս.* چوغ čuγ *կամ* چيغ čīγ *«բարակ ճիւղերով հիւսուած վարագոյր», որ ըստ Բուրհանի թուրքերէն է (պիտի տար հայ.* նուգ*)։ Պատահական նմանութիւն ունի Կազանի ԹԹր.* چوق čoq *«թուփ»* (Будаговъ 1, 495)։ Klaproth, Asia polygl 107 *գերմ.* zweig, *լիթ.* cuka, *պրս.* šāx *հոմանիշների հետ։*

ԳԻՒՒ.—Ալշ. Մշ. նուղ, *Ախց.* եէղ *«ճղուած մի կտոր՝ փայտի են», Ագլ. Ղրբ.* ճէ՛ղնը, *Ակն. Խրբ. Պլ.* ջէղ, *Ննխ.* ջուղ, ջուխ՛, ջրղ, *Ասլ.* ջէ՛ղ, ջէօ՛ղ, *Գոր. Ղրբ.* ճօ՛ղնը, *Շմ.* ճրղնը, *Ոզմ.* նող, *Մկ. Սլմ. Վն.* ճօղ, *Ռ.* ջուղ, *Երև. Ջղ. Տփ.* նուխկ, *Տիգ.* ջիղ, *Հճ.* ջեղ, *Սվեդ.* ջէօղ, *Համշ.* ջուխ, *իսկ Սեբ. կրկնութեամբ՝* ձառ–ջէղ *«մացառ, խոիւ»։—Նոր բառեր են* նղակոտոր, նղատ *«ճեղքուածք»,* նրղատիլ *«մորթը ճաքճքիլ»,* նղատկել, նղատել *«ճիւղերով շինուած աուել»,* նղել *«պատռել, ճեղքել»,* նղիկ նղիկ, նղլակ, նղլկել, նղճղել, նղճղատել, նղճղուիլ, նղճղոտել, նղճանի,

ճղճակոտոր, ճղճճակոտոր, ճղճաճան, ճղովի, ճղոտել, ճղուակ, ճղրտել, ճրղտել, ճղրտոտել, ճղճղուիլ, ճղճղճոտուիլ, ճղճղճոտիլ, ճղօճ ճղօճ անել, ճղճցու, ճղճճաշատ: *Այս ձևերից մի մասը պատկանում է ուղղակի* ճիւղ *«ոստ» ձևին* (ճիւղ, ճիւղն, ճիւղ), *մընացեալը գալիս է պարզական* ճեղ, ճեղել *արմատից։*

ՓՈԽ.—Քրդ. կայ ճէօլ *«հօտ». ինչ. Յովհ. ժ. 16. Ու տէ պրպըն հէք ճէօլ ու հէք շրվան (եւ հղիցին մի հօտ և մի հովիւ)։ Այս բառը հյ. գւռ.* ճիւղ *բառն է, որ Ալշ. Բլ. Մշ. վն. նշանակում է «հօտ»։ Թէ այս* ճիւղը *վերի բառն է, հմմտ.* ճիւղ հանել, *Բլ. «գառները և ոչխարները զատ զատ խմբերի բաժանելով՝ այլ ևս արօտավայրից գիւղ չբերել. այլ դաշտի մէջ յարմար տեղեր պահել և այնտեղ կթել»։ Այս ոճը իրօք ցոյց է տալիս որ* ճիւղ *«հօտ» բուն նշանակում է «բաժանմունք» և հետևաբար քրդ. ձևը փոխառեալ է հայերէնից։ Փոխառութիւնը կատարուած է բաւական հին ժամանակ, երբ հայերէն ղ հնչում էր դեռ լ։—Ունինք նաև վրաց. (Կուրիացոց բարբառով)* ჯავლი ճավլի *«ճիւղ». Հայերէնի՞ց է։—Դարձեալ կայ արաբ.* جول ǰul *«ձիու, ուղտի, այծի, ոչխարի հօտ կամ մի խումբ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 169—170), որ կարող է քրդերէնի նման փոխառեալ լինել հայերէնից։*

*ՃԻՓՍ *«գաճ, բուռ» Վստկ. 108, 127 (Ճիփս և սիսեռն լեսած. Մուստաո ընդ ճիփս եռացուցած)։*

=*Արաբ.* جبس ǰibs *«գաճի քար», որ փոխառեալ է յն.* γύψος *հոմանիշից, որից նաև ֆր.* gypse *են։—Աճ,*

*ՃԼԵԼ *«չափազանց նիհարութիւն». Նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած յետին գրականութեան մէջ. Որկրամոլութիւնն... զմարդ ի ճլէլս ձգէ և վատառողջ պահէ. Տաթև. ամ. 264. Պակասութիւն կենդանեաց, ճլելք, չորեքօրեայ տենդի են. Էֆիմ. 291։ Գործածական է արդի գաւառականներում, ինչպէս՝* ճլերք *Երև. «նիհար, թոքախտ»,* ճլերք ընկնել *Երև. Տփ. կամ* ճլելք կտրիլ *Ղզ. «չափազանց նիհարիլ, թոքախտ ստանալ», ճլերը տալ Ղրբ. «հոգին հանել, սաստիկ վնասել»։*

=*Վրաց.* ჭლეჭი ճլեճի. ჭლერჭი ճլերքի *«թոքախտ», որի արմատն են ներկայացնում վրաց.* მჭლე մճլե *«նիհար»,* მჭლეობა մճլեոբա *«նիհարիլ»։—Աճ.*

ՃԽԱԼ *տե՛ս Ճոխ(ալ)։խ*

ՃԽԱՆ *«ճախճախուտներում բուսնող մի տեսակ բոյս. լտ.* ulva» *Ռոշք. ունի միայն ՀԲուս. § 1879 և Քաջ. Գ. 153։*

ՃԽԵԼ *«ոստուցանել». ունի միայն Բառ. երեմ. 198 կոր.* ճխեաց *«ոստոյց» ձևով։*

ՃԽՄԵԼ *«տրորել, ճնշել, ճզմել» Վստկ. 68. 184, որից* ճխմիլ *«ճզմուիլ, տրորուիլ» Վստկ. 54, 148, 168. անց. դերբ.* ճխմեալ *«ճխլուած, տրորուած» Մագ. թղ. 218։*

ՃՄՈՏԵԱԼ *«ճռացեալ» (իմա՛ ճիռ դարձած, չորացած, կոպած). ունի միանյ Բառ. երեմ. 198։*

*ՃԿՈՅԹ, ի–ա *հլ. «մատներից ամենափոքրը» Ոսկ. փիլիպ. 368 (գրծ.* ճկուբաւ*). Ճառընտ. Աբան. հց. էջ 428 (սեռ.* ճկուբաճ*, որ ենթադրում է ուղ.* ճկոյքն *ձևը), որից* ճկոյքամայր *«մատնեհամատ» Մաշտ. էջ 119. հնագոյն և ընտիր ձևն է* ծկոյք, ո *հլ. Ծ. թագ. ժբ. 10=Նորագիւտ բ. մնաց. ժ. 10 (Նոր թրգմ. փոքր մատն). Սփր. համաբ. 235 (սխալագիր սեռ.* ծկոյքոյ*). կայ նաև* ծկիկ *մատն Առաք. պտմ. 384։*

=*Փոխառեալ է հարաւային Կովկասեան լեզուներից. հմմտ. լազ.* ծո՛լու ի՛բի *«ճրկոյթ». (բուն նշանակում է «փոքր մատ». կազմուած է* ծուլու *«փոքրիկ» և* ի՛բի *«մատ» բառերից. ծո՛լու լազերէնի մէջ սովորական ձև է. ինչ.* ծո՛լու բո՛զօ *«փոքրիկ աղջիկ»,* ծո՛լու դա *«փոքր քոյր».* ի՛բի *կայ նաև ուրիշ Կովկասեան լեզուներում. ինչ. վրաց.* თითი բի՛բի *«մատ»)։ Հյ.* ծկոյք *անցած է նախաւոր *ծուլկոյք>*ծլկոյք ձևերից, որոնց յիշատակը պահում են դեռ Ազա Շմ. և Ագլ. իրենց լ ձայնով։—Մեր* ծկոյք *և* ճկոյք *ձևերի մէջ ծ և ճ ձայների փոխանակութիւնը մեկնւում է Կովկասեան լեզուների ձայնաբանական օրէնքներով, ըստ որում ծ, ձ, ց և ճ, ջ, չ կանոնաւորապէս փոխանակում են իրար վրացի և լազ լեզուների մէջ։*

Առանձնապէս նշանակելի են Ագլ. ծլայգ՝ բիւր<*ծլիկ բոյր *(իմա՛* ծլիկ մատ) *և Շմ.* ծկլա մատ, *որոնց մէջ Կովկասեան ծո՛ւլու ի՛բի ձևից առաջին բառը միայն փոխառեալ է (*ծլիկ, ծկլա *ձևով), իսկ երկրորդը թարգմանուած է Հյ. հոմանիշ բառով։—Աճ.*

Հիմնք. գաճաճ *բառից։ Վերի մեկնութիւնս տե՛ս Բանաս. 1906, էջ 106։ Պատահական պէտք է համարել իրանեան բարբառներից հազգ.* cəlyagī *«ճկոյթ», սար.* dzül, dzülikīk, *ոշ.* dzəl, dzlikīk, zələtīk *«փոքրիկ, չնչին»* (JAs. 1916, 261) *ձևերի նմանութիւնը։*

ԳԻՒ.—Ախց. Երև. կր. Մկ. ճկուբ, *Ալշ. Մշ.* ճգուբ *(սեռ.* ճգուի*),* *Սչ.* ջգուբ, *Ոզմ.* ճկուբ, *Վն.* ճկոբ, ճկոբիկ, *Սեբ.* ջգուդ, *Սվեդ.* ջրգըդ, *ՋԹ.* ջիգիբմօդ, ջիշիբմոդ, *Տփ.* ճկիբկ, *Սլմ.* ճկոտ, ճիկոտ, *Տիգ.* չրբիգ *(<*ճկբիկ*),* *Ակն.* ջբիգ, ջբճիւգ, *Խրբ.* ջբճիգ, չբիգ, *Կոր.* կձ՛յ–ներ, *Ղրբ.* ծկէ՛ւճգ՛ներ, ծկէ՛ւներ, կձէ՛ղներ, *Ջղ.* ծկիկ *(որ և գիւղերում* ճֆկիբ*),* *Ագլ.* ծլայգ՝ բիւր, *Շմ.* ծկլա մատ, *Մրղ.* ճըլտիկ՝ *(սրա համեմատ նաև* ճլտիկ *Ազա). ունինք նաև* ճկոտիկ *Ք., ծծիճ Գնձ., ծծիկն Ղրբ. ձևերը, իսկ Ներսէսովիչ, Բառ. լտ.-Հյ. 152 բ դնում է* ճկոյթ *կամ* կճոյթ*։ Միւսներն ունին «պըզտիկ մատ, փոքր մատ»։*

ՓՈԽ.—Ն. ասոր. čilt'ik' *«ճկոյթ» (*Калашевъ, Айсорско-русс. слов.*) յառաջացած է նոր գաւառական մի ձևից. Համմտ.* ճլտիկ *Ազա և Մրղ.։*

ՃԿՈՒՒ *«կացին, տապար», գործածուած է միայն խոտորնակ հոլովներով. այսպէս՝ գրբ.* ճկոով *կամ* ճկոովն *Ուռհ. էջ 33, 62. Սմբ. պտմ. տպ. Շահն. էջ 39 (տպ.* ճկովճ*),* *սե՛ռ.* ճկոուն *Ուռհ. էջ 33. ուղղականն* ճկուռ *ձևը ցոյց են տալիս գաւառականները։*

ՆՀԲ և ԱԲ չունենալով գուռ. ձևերը՝ ուղղականը ենթադրել են *ճիկո, որ ՆՀԲ մեկնում է «սակր կամ ագդ ինչ սուսերի», իսկ ԱԲ «սուր ծայրով նիզակ»։ ԳԲ կցում է հնդ. ջագռամ բառին։*

ԳԻՒ.—ՋԹ. ջօգուռ, *սեռ.* ջր՛գոր՛ *«կացին, փայտ կոտրելու տապար» (նոյն բառը ունի նաև Մրշ.), Սվեդ.* ջիգօռ*։*

ՃՂԱԻՆԴԻՏԻ. *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սրբել. էջ 260. «Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր՝ հրամայէր քննել զբուպայն և զմարծուան, զիւան դպէլն և զմեմնաշաղելն, զմեծ ճղաւնդիտէլն՝ որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծիրամծղօրն Վարձէոյ և զծիրամծղօրն Պղնձահանիցն և զմեծ մամթավարն գարշատուցն»։*

=Վրաց. ჭყონდიდელი ճղ՛ոն դիդելի *«ճըղոնդիդեցի» բառն է։* Ճղոնդիդի*, որ և Մարտվիլի, վանք է Եզերքում կամ Սամեդրելոյում։ Այսպէս էր կոչւում այս վանքի արքեպիսկոպոսը, որ միաժամանակ վրաց արքունիքի աւագ դիւանադպիրը և նախարարապետն էր։ Նոյն բառը յիշատակւում է* ճղուճտելի *ձևով՝ Հաղարծնի 1184 թ. մի արձանագրութեան մէջ (Հրտր. Ջալալեան, Ա 135 = Բարխուդարեան, Արցախ 36՞ = Վիմ. տար. 31)։*

Ուղիղ մեկնեց Լ. Մելիքսեթ-Բէկ (Նամակ 1933 թ. մայիս 12)։ Աւելին տես իր յօդուածը Христ. Вост. III. 197—8*։ Աճ. Արմ. Դ. կարծում է, թէ պէտք է կարդալ* ճղաւն դիտէլն*, ուր* ճղաւն *յատուկ անուն է, իսկ դիտել հաւանաբար վրացական պաշտօնի անուն. Համմտ.* ილია ჭყონია Իլիա Ճղոնիա*, լեզուաբան, որի աշխատութիւնն է* სტუვის-კონა Սիտղվիս-կոնա *(բառացուցակ) տպ.* СПб *1910։—Աճ.*

○**ՃՂԵԼ** *«ձագի պէս ձայներ հանել». մէկ անգամ ունի Ոսկ. ես. «Ճճուիցեն և ճղիցեն. Թէոդիտոն թարգմանէ զկանխագէտսն ձագացեալս»։ Ըստ ՆՀԲ թերևս ուղղելի ճչել. բայց յիտնաբար կայ* ճղալ *«բղաւել, պոռալ» և կրկնութեամբ էլ՝* ճղճղալ*. Ջքր. սարկ. Բ. 82, 119. Հանին զնոսա արտաքս՝ ճվճվալով, ճղճղալով, ճղալով, ոռնալով, հայհոյելով.—Ճչալով, ճղճղալով և ճվալով։*

=Բնաձայն բառ է։—Աճ.

ՃՂԵՄ *«կնիւն, սէգ, պրտու» Լծ. նար. (ՀԲուս. § 1883 համարում է լտ.* calamus odorans *կամ* acorus calamus*. Քաջունի, Գ. էջ 153* carex, laîche*). Համմտ.* կղեմ*. իբր դեղ գործածական է սրա ջուրը, որ կոչւում է* ճղեման ջուր*, սխալ գրչութեամբ* ջրման ջուր

ՀԲուս. § 2655, ներեման ջուր ՀԲուս. § 1886 (տե՛ս Նորայր, ՀԱ 1923, էջ 64)։

ՆՀԲ «ճիղ, ճիւղ իմն»։

Ճղճասիրտ տե՛ս Ճիղմ։

—ՃՂՃԻՄ տե՛ս Ճիղմ։

ՆՀԲ «ի ճիղմ «մատաղ, փոքր» կամ սեղմ»։ Հիւնք. խղճել բայից։ Աճառ. ՀԱ 1899, 235 բ իբր կրկնական ճիղմ բառից։

ՃՂՃԻՄ «ճահիճ, ելտիւր, կանգնած ցեխոտ ջուր». երկու անգամ ունի Բուն. երեմ. էջ 194 և 198։ Մէկ անգամ գտնում եմ գործածուած ջղջ, ջղջին, ճղճին ձևերով՝ նպիտ. բառոյ. (ըստ ՆՀԲ՝ բնագիրն ունի «Որոնէ ջղջ ինչ տեղի». այլ ձ. «տեղի ինչ տիղմն»). ԱՔ դրում է «Թևրևս ջիղջ կամ ջուղջ». Մատի հրատ.՝ ջղջին տեղի (այլ ձ. ցխոտ) Բար. 156։

ՆՀԲ (ջղջ ձևի տակ) լծ. Բրբ. շղղ «ձևան հիւս»։ Մատ, Физіологъ 1904, էջ XXI կցում է վրաց. ჭიჭყნა ճիճղ'նա և ჭენჭყო ճճճղ'ո բառերին. (առաջինը ըստ Ջուբինով[2] 1711 նշ. «ճմլել տրորել», ըստ Մատ նշ. «марѣть. աղտեղել, ապականել», ուստի նման չէ նշանակութեան կողմից. երկրորդը՝ նշ. «ճահիճ», բայց նման չէ ձևի կողմից)։

ԳԻՒ.—Ղրբ. ճի՛ռճէմնը, որ և Վպ. ճռճիմ «քաց՝ ճահճոտ տեղ», որից էլ ճռճմկուտ Ղզ. «ճախճախուտք»։ (Իմ գտն. բառարանում, էջ 945 մայր ձևը ենթադրել եմ *ջռճեմ, հանելով ջուր բառից)։

ՃՂՈՒՂ «անիւ, ճախարակ» Սիւն. քեր. 209 և Երզն. քեր. (իբրև հոմանիշ է յիշուած անիւ բառի)։

ՆՀԲ «որոյ ճիւղն են ուղղաձիգ ընդ ամենայն կողմն»։

ԳԻՒ.—Ճղուղ «անիւի ճառագայթներ» ձևը յիշում է Խալաթեան, Տրագ. ազգ. էջ 16 (համմտ. Նորայր, Բառ. ֆր. rai)։

ՃՂՏԻՒ «ճապաղիւ». ունի միայն Բառ. երեմ. էջ 198։

Ճղփիւն տե՛ս Ճողփ։

ՃՂՕԿ «ճպուռ». ունի միայն Ածունի, Գ. 153։

ձՃի (ճճուոյ, ճճոյ, ճճեաց, ճճեօ) «միջատ, որդ, բղոճ, պլոճ» ՍԳր. Եզն. որից ճճեկեր Յես. թ. 5, 12. չարաճճի Տիտ. ա. 12, Ոսկ. մ. գ. 3. Եզն. չարաճճիկ Յկ. կր. 52. բազմաճճի Եղիշ. ճճեսպան (նոր բառ). աստում է նաև ճճու ՀՀԲ, ճիճի Մանդ. էջ 127, Խոր. աշխ. Զքր. կթ. Բժշ. Վստկ. 34, 119 (Բառ. երեմ. էջ 198 ունի ճիճ և ճիճու ձևերով). որից ճիճեկեր կամ ճիճեճար Վստկ.։ Այստեղ է պատկանում թերևս նաև ճի անստոյգ բառը, որ ՆՀԲ և ՋԲ մեկնում են «ժժմակների լորձունք, շողիք», բայց տրուած օրինակները ցոյց են տալիս «ժժմակ կամ ճճի»։ Միջնադարեան բժշկական լեզուով ճճի նշանակում էր «մի տեսակ դեղահատ, մի քիչ երկար ձևով և ո՛չ գնդաձև». համմտ. Մխ. բժշ. 146. (Զանազան դեղեր) շաղէ՛ տաք ջրով և արա՛ ճճվնի մթխալ մթխալ. առնելոյն չափն ճճու մի, տաք ջրով։—Կայ նաև ճիճու լինել «ճխլուիլ» Վրդն. առկ. 25. բայց յայտնի չէ թէ կապ ունի՞ սրա հետ։

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 և բնաձայնից է դնում։ Peterm. 26 աֆղան. چونچی čunčī «որդ, միջատ»։ Հիւնք. պրս. čuča «վառեակ» ձևից։ Patrubany SA 1, 312 հունգ. zsizsik «որդ» բառի հետ։ Սագրզեան ՀԱ 1909, 336 և Karst, Յուշարձան 409 սումեր. ẓiẓi «որդ» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի չին. 虫子 虫蚩 čí-ču[1] «սարդ»։

ԳԻՒ.—Ախց. Երև. կր. Տփ. ճիճու, Մշ. ճրջու, Ալշ. ճիջու, Ասլ. Եւդ. ՋԲ. ՀՃ. Խրբ. Սեբ. ջիջի, Շմ. ճիւճի, Համշ. ջիջու, Նախ. ջուջու. այս բոլորը նշանակում են «ճճի» (ընդհանրապէս), իսկ Սվեդ. ջիջա ունի միայն «շերամ» նշանակութիւնը։ Նոր բառեր են ճճկոյր «հաւկոյր, կարճատես», ճճուտա «որդնոտ», ճճուտաիլ «որդնոտիլ»։

ՓՈհ?.—Վրաց. ჭია ճիա, ჭუა ճուա «ճճի, որդ», որից ჭია-ჭუა ճիա-ճուա «որդեր», ჭიანი ճիանի «ճճուոտ», ჭიაფანდურა ճիափանդուրա «աղրի բղէզ» (տես բղեհոն), —լազ. či «ճճի, որդ», բոհեմ. jua «ճճի». սրանց հետ աւելի համապատասխան է ճի ձևը։

Ճճիման տե՛ս Ճղճմն։

○ **ՃՃՈՒԵԼ** *«ճնճղուկի ճռուողել» Լմբ. առակ. «կախարդի՝ թռչունի նման ձայներ հանելը» Ոսկ. ես. 106. Գէ. ես. որից* ճռուող *«ճռվոտացող (թռչուն)» Կոչ. 153 (նորագիւտ բառ),* ճռուողութիւն *Արշ.* ճռուողական *«ճնճղուկի ձայնի նման (լեզու)» Մխ. այրիվ. էջ 44։*

=Բնաձայն բառ՝ կազմուած և ձայնից՝ կրկնութեամբ և ու մասնիկով. հմմտ. ճրճռուել, ճռուողել, ճչել *եև։—Աճ.*

Տե՛ս իմ յօդուածը՝ ՀԱ. 1899. 204 բ։

ՃՄԼԵԼ *«ճզմել, սեղմել, ճնշել» ՍԳր. Եփր. Թգ. որից* ճմլեցուցանել *Գծ. իս. 13. Ոսկ. յհ. բ. 33. Մանդ.* ճմլական *Յայսմ.* ճմլաճ *ԱԲ.* սրտաճմլեալ *Լմբ. պարգ.* սրտաճմլիկ *նար. տաղ։*

Հիւնք. լմել *բայից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 97* ճեմ, *ճիմ բառի հետ՝ յն.* ὄγγεμος *«կապ»,* γέντο *«առ»,* հսլ. žęti *«ճմլել»,* հիսլ. gemel *«շղթայ» ձևերին է կցում՝ իբրև բնիկ հայ։ (Յիշում են* Walde 336 *և* Pokorny 1, 573՝ *հնխ.* gem- *արմատի տակ)։* Karst *Յուշարձան 427 ՔՔր.* yum, žum, yom, čum *«քամել», չաղաթ. օսմ.* yum-maq *«ճմռել»։*

ԳԻՒ.—Մկ. ճմլիլ, *Սչ.* ջմլել, *Տիգ.* ջմլէլ, *Մշ.* ճլմիլ. *ուրիշ է հոմանիշ* ճմռել, *որ տարածուած է բազմաթիւ գաւառականներում, ինչ. Կր. Մրզ.* ճմռել, *Ոզմ.* ճմռիլ, *Պլ.* ջրմռել, *Ռ.* ջրմրռել, *Ակն. Սիս.* ջրռմլել, *Ասլ.* ջռմլ՚ել, *Տփ.* ճմբրիլ, *Սլմ.* մճռել *են, որի աստակականն է* ճմռթել։

ՃՄՂՃԼ *տե՛ս* ՃԻՂՄ։

ՃՄՆԴԻԻԿ. *անծանօթ մի բոյս է. Գաղիան. որ և* ճիմիճդուկ *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1888, որ և համարում է «տերեփուկ,* centaurea»։

***ՃՄՐԻ** *«գձուձ» Վրդ. առ. 246. ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան. գրուած է* ջմրի, ջրմի *Վրդ. առ. 257։*

=Թրք. جمری jimri *«ժլատ. 2. գռեհիկ»։—Աճ.*

***ՃՆԴԻԱՆ** *«մի տեսակ բոյս.* gentiana» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1890։*

=Արաբ. جنطيان janṭian *հոմանիշից (տե՛ս* Steinschneider WZKM 11, 329)։ *—Աճ.*

ՃՆԴԻԱՑ *տե՛ս* ԿՃՆԴԻԱՑ։

ՀԲուս. լատինի՞ց։

ՃՆԴԻԿ *«գուտ սև». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 199. «Պղատոն իմաստունն զպօզն (ձին) գովեաց, և ի հետ՝ զճընդիկ սևն և ապա չքումայինն»։*

ԳԻՒ.—Մշ. Նբ. ճնդրեկ *«գուտ սև»։*

***ՃՆԴՊԱՏԱՍՔ** *«կղբու ձու» Վստկ. 215. Միեամ՝ իւրեանց գայս երկու ազգ խոտս. ճնդպատասք և... (մնացածը թերի է. արդէն առաջինն էլ խոտ չէ)։*

=Պրս. جند بيد ستر jundbīdastar *«ամորձիք շնջուոյ»։*

Ուղիղ մեկնեց Ալիշան՝ Վստկ. էջ 215 ծան.։

ՃՆԻ. *անծանօթ բժշկական մի բոյս. մէկ անգամ գործածել է Վստկ. յիէ. ունի միայն ՀԲուս. § 3360։*

***ՃՆԻԺ** *«երինջ». միջին հյ. բառ։ վկայութիւնը յայտնի չէ։*

=Ֆրանս. genisse *«երինջ»։*

Ուղիղ մեկնեց Այտնեան, Քննակ. քեր. էջ 155։

ՃՆԻԺ *«պալատ, ապարանք». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վրդ. առ. 205։*

○ **ՃՆՃՂՈՒԿ, ի–ա** *հլ. (նաև* –կաճ, –կանճ*) «ծիտ թռչունը» ՍԳր. Եփր. աւետ. որից* ճնճղկա *լեզու «մի տեսակ բոյս» Բժշ. երևելի Յայսմ.։*

=Բնաձայն բառ. կազմուած է –ուկ *մասնիկով* ճնճուղ *ձևից, որ պահուած է գաւառականում. իսկ* ճնճուղ *յառաջացած է* *ճուղ *պարզ արմատից՝ կրկնութեամբ, իբր* *ճուճուղ, *ուր և ձայնը արդիւնք է տարաձայնութեան. հմմտ. դռնդող։—Աճ.*

Հներից Լմբ. առակ. և սղ. աստւգաբանում է իբր բնաձայն. «ճնճղուկն աստւգաբանի ի ձայնէն. արդ որպէս նորա ճճուիլն. ճնճղուկն միշտ ի ճռուողել կայ, յորմէ և զանունն առացաւ»։ Ինա ձայն է համարում նաև Տաթև. հարց. 220։ Schröder, Thesaur. 44 *վերջի վանկը համարում է ուկ մասնիկը։ ԴԴ պրս.* چغك čuγuk *«ճնճղուկ»։ Ինճիճեան,*

Հնախ. Գ. 21 և բնաձայնից՝ ՆՀԲ **երեն-ուել, ճեճուօղ, ճեուող, եիկ հաճող** *ձևերից՝* Böttich. Arica 67, 102 *պրս.* kunǰušk *«ճնճղուկ»՝* La Croze *(տո* Lag Urgesch. 766) *պրս.* gunǰišk՝ *Մսևր մագ. խմբագիր չափածոյ 181* **եր՛ն եր՛ղ յուկն**: Justi, Dict. Kurde, *էջ 225 քրդ.* zangluk, *ռուս.* щеглёнокъ, *վրաց.* **սոնղուլի** *թռչնանունների հետ՝ Հիւնք.* **ճաճե** *բառից՝* Patrubány SA 1, 106 **ճաճե** *բառի հետ՝ սանս.* čanč *«ոստնուլ, ցատկտել» արմատից, որից նաև սանս.* čančarīṭi *«մեղու»՝ Մէնէվիշեան, ՀԱ 1898, 90 մերժելով այս՝ կցում է պրս.* چغول čuful *և* چغچه čatna (??) *ձևերի հետ՝* Bittner WZKM 15, 410 *պրս.* کنجشک kunǰušk? *Բադրուպանեան ՀԱ 1907, 16 մերժում է իր առաջին մեկնութիւնը և դնում է հնխ.* deyā *«թռչիլ» արմատից կրկնութեամբ՝ իբր* *dyōndyōlukos՝ *Տե՛ս* ИАН *1915, 835, 840,* О полож. абхаз. *29 և ՀԱ 1921, 227 համարում է յարևթական. հմմտ. վրաց.* **մճրինավի** *«սոխակ» և* **եիճեռակա** «roitelet, *տրոքիլոս»՝—Պատահական նմանութիւն ունին վրաց.* **ճվիճտա, ճվիճտակա, ճվիճճա** «fauvette de haie, *չիկահաւ», կար.* **տոնճվարա**, *դիդ.* **ճեճույրո**, *սվան.* **կվիճճա** *«արտոյտ», սվան.* **կվիճճ**, *մինգ.* **կվիճչա** *«ճնճղուկ», սվան.* **խիճճ**, **ուճճ**, *լազ.* **չինչխինա** *«մի տեսակ մեծ թռչուն», կվինչի «թռչուն», թուշ.* **եիվճ** «serin», *արևել. թրք.* čimčiq *կամ* čumčuq *«ծիծառ»,* čunčuq *«ծիծեռնակ», čimčik «ճնճղուկ», հակուտ.* čačax *«թռչնիկ», քրդ.* čuk, čevik *«ճնճղուկ», čuček «թռչնիկ», čučik* «passereau, *ճնճղուկ», čučalok «վառեակ», վրաց.* **չանչխուլի** «куканъ *(թռչուն)» են, որոնց մի մասը նոյնպէս բնաձայն է՝*

Գիմ.—Արմատական **ճեճուղ** *ձևն են ներկայացնում՝ Ալշ. Մշ. Սլմ.* **ճեջուղ**, *Ագլ. Զղ.* **երեջուխ**, *Դվ.* **ճուճեուղ**, *Մրզ.* **ճուճջուղ**, *Մալ.* **չինչիւղ**, *Պրտ.* **չուճչիւղ**, *Ակն.* **չինչօղ, չինչօղ.—ուկ** *մասնիկով աճած են՝ Ախց. Կր.* **երեներ-ղ**, *Մկ. Վն.* **ճեչղուկ** *(տես.* **ճեչրղկան**), *Համշ. Տիգ.* **չրճչղուգ**, *խրբ. Սեբ.* **չճչրղուգ**, *Ոզմ.* **երեչղօկ**, *Սվեդ.* **չրճչրղուգ, չրճչրղօգ**, *Զթ.* **չէճչղօգ, չէճչղոգ.—***(սրանցից Ասլ. Մրզ. Դվ. նշանակում են ընդհանրապէս «թռչուն»).—առանձին ձև ունին Սչ.* **չուճչուլուխ** *և Խոչ.* **չրճչղուգ** *(z- ձայնով!)՝ Նոր բառեր են* **ճեճղակ, ճեճղիկ, ճեճղկաբլիթ, ճեճղաճաց, ճեճղկապաչար, ճեճղկեռէն, ճեճղչուան, երեճուղտուիկ** *են՝*

Փոխ.—Kraelitz *ՀԱ 1921, 83 հայերէնից փոխառեալ է դնում թրք.* جنجه ǰənǰərγa *«ճնճղուկ», որ արդէն 1073 թուի մի բառարանում յիշուած է՝ Ըստ իս ո՛չ վստահելի՝ նմանութիւնը նրանից է միայն, որ երկուսն էլ բնաձայն են՝*

○**ճնճՈՒԻԵԼ** *«ճռուողել». որից* **ճեճուղ** *«ճռուողող» Միս. խչ. (Հրտր. Բազմ. 1911, 264 բ). ուրիշ վկայութիւն չկայ՝*

=Բնաձայն բառ. նոյն է **ճեուել** *ձևի հետ, որից աճած է ընդհանով միայն՝—Ա.ճ.*

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 204 բ՝

ճՆՇԵԼ *«ճղմել, ճմլել, սեղմել, նեղը գցել» ՍԳր. Կոչ. որից* **ճեչեցուցանել**, *Նփր. վաշխ. Փիլ. լիւս.* **ճեչուրիւն** *Նփր. ես. 82.* **ճեչումն** *Ած. որս. Նչ. եզեկ. Երզն. ոտ. երկն. գրուած է նաև ճշնել Արծր. Յայտմ. ապր. 22, նոյ. 8, փետր. 27. Տաթև. ձմ. հր. Վրք. սեղր. արմատական ձևր գործածում է Զքր. սարկ. Բ. 128. «Մնաց ի վերայ նորա բազում ևս և խնդրէին ճնշիւ» (իբր թէ գործիական հոլով)՝*

ՆՀԲ լծ. **սաճնել, ցեղել**՝ *Հիւնք.* **չրեչել** *բայից՝*

Գիմ.—խրբ. **չճչիլ** *«գոռալ, բղաւել» գործ չունի այստեղ և կապւում է* **ճչել-ճնչել** *(եիչ) արմատին՝*

ճՆՁԱՆ *«արգանդի մասերից մէկն է». մէկ անգամ գործածուած է յգ. ուղ.* **ճնչանուճ** *ձևով՝ Զքր. կթ. «ի ծնանելն մկանունքն և ճնչանունքն տագնապին»՝*

ճՇԳՐԻՏ, *ի Հլ. «ուղիղ, ճիշտ, շիտակ, հաւատի» նս. քր. Սեբեր. Ոսկ. յհ. ա. 45. որից են՝* **ճշգրտիւ** *Եղիշ. նս. Նխ. աւետ. ճշգրտել Թուղց իգ. 10, Ոսկ. մ. ա. 5, 7.* **ճշգրտեցուցանել** *Իմ. ժգ. 14.* **ճշգրտագործ**

Ագաթ. նշգրտահան *Պիտ.* նշգրտագեղ *«ճիշտ նման և գեղեցիկ նկարուած» (Նորագիւտ բառ) Մ. Մաշտ. 278 բ.—ունինք նաև գրուած* նճգրտապէս *Տիմոթ. կուզ, էջ 153։ Կայ և* նշգիր *կասկածելի ձևը, որ ունի Բառ. երեմ. էջ 198։*

Բագրատունի, Քեր. զարգ. 1496 –իտ *համարում է մասնիկ։ Հինք. բարդուած լտ.* jus *«իրաւունք» և յն.* κριτὴς *«դատաւոր» բառերից։ Մառ.* ЗВО *11, 300* նեշեկ<*պրս.* چشمک čašmak *«աչք» +զնդ.* dīta *«տեսանելի» բառերից բարդուած։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 157, 219* նիշտ + գիր *բառերից։*

ճշդարենի *տե՛ս* նշդարենի։

ՃՇՄԱՐԻՏ, ի, ի–ա *հլ. «իրաւ, ճիշտ, բաւտյգ, աննենգ» ՍԳր. Եզն. Կոչ. Կիւրղ. Թղ. որից* նշմարտել *ՍԳր. Եւս. քր. նշմարտիւ ՍԳր.* նիշմարտագոյն *ՍԳր. Ագաթ. Կոչ. Ոսկ. բ. կոր.* նշմարտակորոյս *Վեցօր.* նշմարտապատում *Կորիւն. Ագաթ.* նշմարտասոյզ *Սփր. Թղ.* նշմարտանման, աննշմարտանման *(Նոր բառեր) ևն։*

ՆՀԲ վրաց. նէշմարիտի. *արմատը համարում է* նիշդ։ *Տէրվ. Նախալ. տե՛ս* նիշդ *բառի տակ։ Հինք. լտ.* j(us) *«իրաւունք» և պրս.* šumārdan *«համարել» բառերից կազմուած։ Մառ* ЗВО *5 (1891), 318 և 11 (1899), 298—300 փոխառութիւն է համարում զնդ.* čašma *+*dīta- *«ականատես, աչքով տեսնուած» ձևից. համմ. պհլ.* 𐭧𐭱𐭲𐭣𐭲 čašmdīt *«հրեշտէք»։ (Այսպէս նաև* M. Riabinin MSL 10, 18): Müller WZKM 6 (1892), 267 *մերժում է այս մեկնութիւնը, որովհետև այս պհլ. ձևը պիտի տար հյ.* *նաշմարիտ. *միւս կողմից կայ հյ.* նշգրիտ։ *Հակառակ է նաև Հիւրշ. 513 և* IF Anz. 8, 48՝ *սպասելով սոյն պհլ. ձևի դէմ հյ.* *նաշմադիտ. *բուռ իրեն հյ.* նշմարիտ *կարող է դալ միայն պհլ.* čišmaδīt *ձևից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 157, 219 հյ.* նիշտ+մար *«չափ» բառերից է դնում։*

ԳԻՒ.—Սլմ. Տփ. նշմարիտ, *Ալշ. Երև. Մշ. Ջղ.* նշմարիդ, *Ակն. Խրբ.* ջիշմարիդ, *Աել. Ջղմ.* նշմարիդ, ջշմարի*, *Պլ. Տիգ.* ջշմարիդ *(Պլ. միայն «ճշմարիտ Աստուած» երդման մէջ)։*

ՓՈԽ.—Վրաց. ჭეშმარიტი եեչմարիտի *«ճշմարիտ, իրաւացի»,* ჭეშმარიტად եեչմարիտադ *«իրաւունէ»,* ჭეშმარიტობა եեչմարիտոբա *կամ* ჭეშმარიტება եեչմարիտեբա *«ճշմարտութիւն»,* საჭეშმარიტო սաեեչմարիտի, საჭეშმო սաեեչմո *«ճիշտ, ճշմարիտ, վաւերական», Թուշ.* ჭეშმარიტ եեչմարիտ *«ճշմարիտ»։ Վրաց. վերջին ձևը ենթադրել է տալիս հյ.* *նիշմ, *որ իրօք էլ գտնւում է Ախց.* նշմի *«ճշմարիտ, իրաւ» ձևի մէջ (ստուգելի!)*

*ՃՈՒՔ *«կատր կամ ծայր» Բրս. մրկ. 443 (նշանախից մի, որ ճոթ մի գրի). մասնաւորապէս «ղդեստի ծայրը, եզերքը». մէկ անգամ գտնում եմ գործածուած Պարգ. 483. «ի ծունր իջեալ, ձիգ ունելով ձախ ձեռամբ զճոթ նախիրտին». սովորական է արդի բարբառներում «ծայր» նշանակութեամբ. գործածուած է նաև «գեղուհու աչքի ծայրով նայուածքը» նշանակութեամբ. համմ. Քուչ. 54՝ Կաթաւ մի հազար փետրով էր նռնել՝ աչվին ճոթերով։ Այս արմատից կրկնութեամբ՝* ճոթճոթ *«եզերքը եզերքին, ծայր ծայրի» Տաթև. ամ. ճծթ. (Այլ և կաղմեն փայտեայ անօթ իբրև զկարաս, ճոթճոթ յիրեար ձգած և փայտեայ պնջանով պրնդած)։*

=Թթր. چت jit, چتّ *կամ* چيت čit *«ծայր, եզերք, սահման. 2. կտորիզէն, չիթ, միտկալ» (*Будаговъ 1, 503). *որից փոխառեալ են նաև ուս.* čot *«եզերք, ջուրք»,* ʒotluγ *«ծայր, վերջ», վրաց.* ჭოტი եոթի, ოთმუთი եոթմուրի *«շորիզէն, չիթ» (Մառ. Крит. и мелкія ст. 1903, էջ 67)։—Ա՛ճ.*

Իմ Գւռ. բառարանում, էջ 728 ճոր *դրել եմ արևել. Թրք.* چوت čot *բառից, որի նշանակութիւնն է սակայն «a small adze—փոքր բրիչ»! (սխալմունքը յառաջացել է անգլ.* adz *«ուրագ, բրիչ» բառը շփոթելով* edge *«եզերք, ծայր» բառի հետ)։ Նոյն տեղը յիշւում է նաև լազ.* čod *«վերջացնել, սպառել, պար-*

պել, հետևիլ», որ շատ հաւանական է կապ չունի յիշեալ ԲԲր. բառի հետ։

ԳԻՒ.—Շատ տեղ կայ ճոր (ջօր) *և* ճոնդ *ձևերով. տե՛ս Գւռ. բառ.։*

ՃՈՒ *(յետնաբար ի, ի-ա, ո հլ.) «հարուստ, փարթամ, պերճ, փառաւոր, իշխանաւոր» ՍԳր. Մծբ. Ոսկ. մ. ա. 10. Սուտ-Սեբ. էջ 3, Բուզ. էջ 207.—որից* ճոխութիւն *Ես. իբ. 21. Եփր. ծն. Ոսկ. ես. և մթթ. Սեբեր.* ճոխանալ *«հարստահարել, բռնանալ, պանծալ. նազիլ» Բուզ. ժզ. 3, Սեբեր. Ոսկ. մ. ա. 17. «վայելել, փարթամանալ, զարդարուիլ» Ոսկ. յհ. բ. 10.* ճոխաբան *Ա. տիմ. բ. 12.* ճոխագոյն *Բ. մակ. ժգ. 24. Ոսկ. ա. կոր. բ. կոր.* ճոխաճաճութիւն *Ոսկ. ես. 17.* ձմեռնաճոխ *Թէոփ. խ. մկ.* շքեղաճոխ *Անան. հկեղ.* պըտղաճոխ *Թէոփ. խ. մկ.* ճոխախօս *«ճարտարախօս, հռետոր» Ուխտ. բ. 91.* ճոխափառ *Հայել. 130 (վերջին երկուսը նորագիւտ բառ). նաև* ճոխալ *«ցնծալ, բերկրիլ» Տաշ. որից յառաջացել է գւռ.* ճխալ *Երև. Պլ. Տփ. համմտ. Ադամ. էջ 9. «Դրախտին ուրախանէր, յետ և յառաջ հայեալ ճոխէր». ուր 5 ձեռ. ունին* ճխէր, *ինչպէս գիտէ նաև Բառ. երեմ. էջ 198՝ ճխալ «հրճուիլ»։*

ՆՀԲ լծ. Բրբ. ջօխ, ջօգ *«բազում» և* գօճա, խօճա *«մեծ, վարժապետ, հարուստ»։ Մորթման* ZDMG 24, 80 *են Բրբ.* čoq *«շատ»։ Տէրվ. Մասիս 1881 մայիս 24՝ պատասխանելով ումն Պարոյրի հարցումին, յայտնում է թէ Բրբ.* čoq *պատահական նմանութիւն ունի մեր բառի հետ։* Patrubány SA 1, 310 *փոխառեալ է Բրբ.* čok *«շատ» բառից, իսկ նոյն ՀԱ 1907, 305 աճիլ բառին արմատակից է և Բրբ.* čok *փոխառեալ է Հայերէնից։* Karst, *Յուշարձան 421 Բրբ.* čok։

ԳԻՒ.—Վն. ճօխլօխալ *«դեղեցիկ ու ճարտար լեզուով խօսիլ», որից և* ճոխլոխան *«ճարտարախօս»։*

**ՃՈԿԱՆ «կեռ գլխով եպիսկոպոսական գաւազան» Մամբ. պատմ. 133. Մաշտ. ջահկ. «գաւազան, մական, լախտ» Ոսկիփ. որից* ճոկանո՞տն *«համաստեղութեան անուն» ԱԲ (ըստ Ալիշան, Հին հաւ. 129 նաև կռճանոտն, կոճնատոն. ըստ այսմ ուղիղ ձևը անյայտ)։*

=Պրս. چوگان čōgān, čavgān *«է փայտ ինչ կեռածայր, որով յատպարիզի գնտակ խաղան կարի ձիավարժք և զինաշարժք. դարձեալ զինչ և իցէ ցուպ կեռածայր, յորոց է և այն որով հարկանեն զքմբուկ»։ Իրանեան հնագոյն ձևն է պհլ.* čōpgān, *որից չի կարող գալ հյ.* ճոկան։ *Մեր բառի մայրն է պրս.* čōgān *(կամ մանաւանդ *čōkān?) ձևը։ Իրանեանից փոխառեալ են նաև ասոր .* ʾātšōlgān, *արաբ.* ṣauljān *(Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 417),* joklān, جوكان jaukān, *քրդ.* چوگان čugān *«գնդամուղի գաւազան», ռուման.* čojan *«գաւազան», նյն.* τζυκάνιον *«մականախաղ», վրաց.* ჩოგანი *չոգանի* «отбойникъ» (Horn § 449):

*Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բառ. ֆրանս. (*mail *բառի տակ), որ կգում է պրս.* չէվկեան *բառին։—Սրմաձգեան, Արմէն. սում.* ciocan *«մուրճ» բառի հետ (այս բառի ընկերները տե՛ս* Berneker 135, *որ հանում է ԲԲր.* čak-mak *«զարնել» բայից)։ Մառ,* Тексты XII, *էջ 40 վրաց. ճակունի ձևի հետ, որ չունի Ջուբինով[2] 1701։*

ԳԻՒ.—Երև. ճոկան, *Ալշ. Մշ.* ճօգան *(ունին նաև Բլ. Բբ. Ասպ. Խրբ.). «հովուի կեռ գաւազան. 2. փայտէ գաւազան, որով ջիրիդ խաղալու ժամանակ ձիաւորը գնտակն է վերցնում»։—*Rivola, *Բառ. հայ.[2] էջ 195* ճոկան *ձևի հետ գնում է նաև* կոճան *«հովուի գաւազան» (համմտ. վերը ճոկանոտն կամ կոճանոտն):—*Այս արմատից է* ճոկնիլ *Բլ. «կատուի գերանը ծանրութիւնից մէջտեղից ծռուիլ, փոր տալ»։*

ՃՈԿՈՂԷՆ *«որոճացող անասունների կրճղակը». ունին միայն Բառ. երեմ. էջ 199 և ՓԲ։*

*—***ՃՈՂԵԼ** *«մազերը փետել» Ոսկ. յհ. բ. 16. Վրք. Հց. ա. 622. Սահմ. Կեչառ. 194. Միխ. աս. 167. Վրդ. պատմ. էջ 122, 133. Անկ. դիրք հին կտ. 166 (գրուած* ճոխել *Վրդ. առ. 68). «կթել, ժողովել» Վրք. Հց. որից* ճողիլ

«մազերը թափիլ» Կղնկա. Հրտր. էմինի, էջ 250։

=Տագումը տե՛ս ճիւղ։

ՆՀԲ ճիւղ բառից։

ԳԻՒՐ.—Պահուած է այլևայլ նշանակութիւններով. այսպէս՝ ճողել Վն. «մազերը ճիւղ ճիւղ բաժանել. 2. բուրդ գզել. 3. որոշել», Սչ. «մի բանի երկու ծայրից քաշել, որպէսզի երկարի», Ալշ. Բլ. Մշ. «աղեթափիլ», ճող Ակն. «ձգտուն, երկարող, առաձիգ», ճողիլ Ակն. Եւդ. Սեբ. «առաձգաբար երկարիլ, տարածուիլ, բացուիլ, լայնանալ», Ակն. Կր. Պլ. Սեբ. «սաւակիլ», Եւդ. Սեբ. «նազիլ, սիգանքներ անել, կոտրատուիլ», ճողալ, ճողճողիլ «յօրանջելով ձգձգուիլ»։

ՃՈՂՃԵԼ *«ցոլանալ, փայլիլ». մէկ անգամ ունի Կղնկա. «Ընդ դեղնագոյն փետուրսն փոքր ինչ կանաչութիւն համամաւր խառնեալ արտաքս ճողճեր». (Հրտր. Շահն. Ա. էջ 322, էմին՝ էջ 158. վերջինս ունի ճոճէր. ԱԲ դնում է ճողճալ)։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 23)։*

*ՃՈՂՈՊՈՒԻՐՏ *«ընկոյզ». ունի միայն Բառ. երեմ. էջ 199, որ և բառաշարքից դուրս՝ էջ 112* ընկոյզ *բառի բացատրութեան մէջ դնում է* ճողպուր։ *Կենդանի է այսօր էլ Ինձ. Ղզ. Ղրբ.* ճղո՛պուր, ճղո՛ւպուր *ձևով. որից նոր բառեր են՝* ճղոպուրթափի *«ընկոյզ թափ տալու ձող»,* ճղոպրամէջ *«ընկոյզի միջուկ»,* ճղոպրի, ճղոպրենի *«ընկոյզի ծառ»,* ճղոպրուտ *«ընկուզենիների անտառ»։*

=Հին կովկասեան բառ է անշուշտ, որի հետ հմմտ. վրաց. ჭუბური ճուրուրի, ჭაბლი ծարլի, *լազ.* ճուրուլի, ճուրուրի, ճուրրի, ճուրրի *«շագանակ»։—Ա՛ճ.*

ՃՈՂՈՊՐԻԼ *«փախչելով հաղիւ ազատիլ» Բ. մակ. ժբ. 35. Կոչ. 277. 86. կբ. հոր. որից* ճողոպրել *«փրցնել, կորչել, խլել, պոկել» Սեբր. պհ. 174. Փիլ. Ճառընտ. Սագ.* ճողոպրիչ *ժղ. Հոմիկլ. Պղատ. տիմ.* ճողոպրումն *Պիտ. Մագ.* աճճողոպրելի *Իգնատ. ղկ. 424։*

ՆՀԲ ճողելով ապրել։ *Տէրվ.* Altarm. 105 ճողոպուտ *բառի հետ կցում է հնխ.* grabh *«գրաւել, բռնել, ունել» արմատին։*

ՃՈՂՈՒՐՏԻ *«ճճի, շողոտ կենդանի». երկու անգամ ունի Մագ. թղ. էջ 202 և 218. «Բացանցուիթինք ճիոց և ճողորտեացն արտասորեալ.—Ճեճեկեալ ճիօրէն ճողորտեաց»։*

*ՆՀԲ «*ճողեալ *մասունք անպիտանք կամ շողոտ կենդանիք». (բայց զուր է «բզքտած, ճղրտկած, շողիքի պէս բաներ» նշանակութիւնը, որ դնում է ՆՀԲ. բացանցութիւն *«արտաքորութիւն» բառը ցոյց է տալիս, որ ճճիների կամ շողոտ սողունների մասին է խօսքը»։* Мат, Яфет. Сбор. 1, 9 *վրաց.* ბაყლი, *լազ.* ջողորի *«շուն» բառերի հետ։*

○ՃՈՂՓ. *արմատ առանձին անգործածական, որից յառաջանում են* ճողփիւն *«ծնծղի ձայն» Արծր.* ճողփումն *«ալիքների կամ ջրի պատռտուածքի ձայն» Փիլ. յովն. Վրդն. ծն. աստ.* է նաև ճղփումն *Փիլ. լիւս. 160. (իբրև «գռան ճռնչիւն» գործածում է Ջքր. սարկ. Ա. 59),* ճղփիւն *Պատմ. աղէքս. 126. Միխ. աս. էջ 288.* ճաղփումն *ԱԲ.* ճղփուն *Յայսմ. ապր. 23։*

=Բնաձայն բառ է. հմմտ. տակի գաւառական ձևերը, ինչպէս նաև վրաց. ჭუჭა-ბულაობა ճղ'ումպուլաորա *«ջրի ճողփիւն»։ —Ա՛ճ.*

ՆՀԲ նոյն է դնում ռմկ. ելօփ, ելօմփ։

ԳԻՒՐ.—Նոյն են Վն. ելօփ *«լողալու ժամանակ ձեռքը ջրին խփելուց յառաջացած ձայնը», Պլ.* ջլօմփ *«ջրի մէջ մի բան ընկնելուց յառաջացած ձայնը», Վն.* ելմփ *«վայր ընկնելու ձայն»,* ելփալ *«մի բան պատին խփելու ձայն», Մշ.* ելպալ *«ջրի մէջ մի բան ընկնելու ձայնը»։*

*—*ՃՈՂՔԵԼ *«քաշքշելով բզկտել, փետել» Եղիշ. ը. էջ 125. որից* ճողքումն *Բրս. արբեց. գրուած նաև* ճոխքումն։

=Մեկնութիւնը տես ճիւղ։—Ա՛ճ.

ՆՀԲ լծ. ճեղքել։

ՃՈՅՓՆ *«հաճար» Բժշ. ունին միայն Նոթայր, Բառ. ֆր. 1130 ա և ՀԲուս. § 3362. անստոյգ բառ. հմմտ. յաջորդը։*

ՃՈՆ *«հաճար» Բժշ. կարելի է կարծել նաև «որոմ, այծակն կամ մի տեսակ ցորեն» Ամիրտ. տե՛ս ՀԲուս. § 1902. առաջին նշանակութիւնը հաստատում է՝*

*ԳԻՒՐ.—*ճոն *Երզ. Կս. «հաճար»։*

*ՃՈՆ. *մատենագիր Բարսեղին տրուած մականունն է. Մխ. այրիվ. էջ 63, որ Բառ. երևմ. էջ 199 մեկնում է «մուշտակակար». այսպէս նաև ՆՀԲ «խազախորդ, մորթ, գոյն», ՋԲ «մորթեգործ, մուշտակարար», Նորայր՝ Բառ. ֆր. 1193 բ, իբր մհյ. բառ «կաշեգործ», որից ճոնըճեար «Բարսեղ Ճոնի ձեռքով ընտրուած (շարական)» Մխ. այրիվ. էջ 63։

=Վրաց. ჭონი ճոնի «գդակ կարող». հմմտ. տակը գւռ.—Աճ.

ՆՀԲ գնում է նաև կոն կամ կօն ձևով և համեմատում է թրք. كون gön «կաշի» բառի հետ. սակայն կոն չէ՛ աւանդուած այսպիսի իմաստով. տրուած օրինակում կոն նշանակում է «սրբի յունական պատկեր, իկոն»։ Ցայտնի չէ նաև թէ ի՛նչ յարաբերութիւն ունի թրք. gön վերի ձևերի հետ. հմմտ. դարձեալ բոշայ. ճամ «ոչխարի մորթ, կաշի»։— Բոնդրակեցի, Աւետարիր 1903, էջ 459 այս ճոնը կցում է նախորդ ճոն «հաճար» բառին, ասելով թէ գաւառներում մինչև այժմ էլ գործածական է ճոն «հաճար. փխբ. սևադէմ կամ թխադէմ նիհար մարդ»։

ԳԻՒՒ.—Լ. Տփ. ճօճ «մորթէ գդակ կարող արհեստաւոր, մուշտակագործ», որից Տփ. ճօճխանա «կաշեգործարան»։ (Իսկ Այն. կոն «կաշի» նոր փոխառութիւն է թուրքերէնից)։

ՃՈՊԱՆ, ի–ա Հլ. «չուան» Բուզ. գ. 14. Զինոբ. էջ 46 (գրուած ճօպան), Ասող. 188, Ոսկիփ. որից ճոպանաձիգ Թղթ. դաշ. Վրդն. պատմ. Մխ. այրիվ. էջ 61. ճոպանաւոր Զինոբ. էջ 46. ճոպանխաղաց (չունի ԱԲ) Ցայսմ. նոյ. 29, Տաղ. (Հրտ. Զօպանեան, Հայ էջեր, էջ 8)։

ՆՀԲ նոյն ընդ չուան։ Տէրվ. Altarm. 38 fուղ, կուղ, զուսպ, կոպճեալ ձևերի հետ հնխ. gu արմատից, նոյն ընդ սանս. guph, անգսք. cyspan «կապել», հսլ. kosp «կապ» ևն։ Հիւնք. չուան բառից։ Սագրզեան ՀԱ 1909, 335 հյ. չուան և սումեր. guana «նաւի չուան»։

ԳԻՒՒ.—Երև. Հլ. Վն. ճօպան, Ալշ. Մշ. ճօբան «հաստ չուան», Խոյ. ջօբան «չուան» (Շիր. և Սլմ. «ցորենի խուրձերը սայլի վրայ կապելու չուան», Լ. Շլ. «հաստ կաշեայ փոկ», Սլմ. «պարսատիկ, պարսէտ»). որից ճոպանել «անասունների ոտքին չուան կապել, որպէսզի արածելիս հեռու չերթան», ճոպան ոլորել Ախց. «մի տեղ երկար նստիլ կամ մնալ»։ Զևով հետաքրքրական է Ղրբ. ճա՛պան «մազէ գործած հաստ չուան», որի հետ հմմտ.՝

ՓՈԽ.—Վրաց. ჭაპანი ճապանի «բեռ կապելու յատուկ փոկէ չուան», քրդ. چپان čopān «չուան» (Justi, Dict. Kurde 127 և Kurd. Gram. 57 սխալ է համեմատում բառը՝ հյ. չուան ձևի հետ), ն. ասոր. čop'an «կաշէ հաստ պարան»։

ՃՈՊՃՈՊԻԼ «ճղմուիլ, ճխլուիլ» Մագ. թղ. էջ 132. ուրիշ օրինակ չկայ։

=Կրկնուած է անշուշտ ճոպ պարզական արմատից։

ՆՀԲ «իբր կոճոպիլ»։

ՃՈՒՈՄ «ճոխ, պերճ, սեթևեթիալ, ուռուցիկ» Ոսկ. Բ. կոր. որից ճոռոմանալ «ճոխանալ, պանծալ» Ոսկ. յհ. բ. 39. ճոռոմաբան ճառընտ. ճոռոմաբանել Կանոն. Տիմոթ. կուզ, էջ 202. Մագ. ճոռոմաբանութիւն 3հ. իմ. պալ.։

Հիւնք. ճառել բայից։ Մառ. Вступительнія и закл. строфы... Шоты, XXXIV կոռովի բառի հետ՝ կցում է վրաց. ყრმაწვიღი ղ'ռմածվիլի «պատանի» բառին, որի սեմական ցեղակիցներն են հբր. עלם 'elem և արաբ. غلام ɣulām «պատանի, տղայ». յաբեթական արմատը kram։

ՃՈՐՆԴՈՒՆ «ղջիւր». ունի միայն Բառ. երևմ. էջ 199 (գրուած է ճորընդուն).

*ՃՈՐՈՎ «զօռով, բռնի». յետին շրջանի բառ. ինչպէս՝ Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր 19, Քուչ. 68 (Պապիկ մը ճորով առնում ևն), Վրդն. առ. 181 (ճորով ազատեցաւ)։— Կենդանի է արդի գաւառականների մէջ (Ակն. Բլ. Խլ. Կր. Հնգ. Մշ. Ննխ. Շտ. Վն.) «դժուարաւ կամ բռնի» նշանակութեամբ, որից ճորովել (կամ ջորովել) «զօռ անել, բռնադատել» (Rivola, Dict. arm.-It. Paris 1633,

և ներսէսովիչ, Բռ. լտ.-հյ.), ԼՀ. ճորովցնել «ստիպել, բռնադատել»։

=Արաբ. جور javr «հարստահարութիւն, բռնադատութիւն». ձևի համար համմտ. արաբ. ذوق zavq «ուրախութիւն, քէֆ» >հյ. գւռ. Տփ. զող։—Ա՛ճ.

Մասեաց Աղաւնի, 1861, 178 արաբ. جبر jabran (արմատը jabr) «բռնի՛ ձևից։ Վերի մեկնութիւնս տե՛ս իմ Գւռ. բառ. 731 ա։

ՃՈՐՈՏԵԼ «կոտորել կամ ջարդել և կամ ի բազում հատուածս անջատել». ունին միայն Բառ. երեմ. էջ 199 և ՀՀԲ. առաջինը գիտէ նաև ճայրատել «ծայրակատուր առնել» (էջ 195), որ կթէ ծայրատել բառի սխալ գրչութիւնը չէ, այտեղ է պատկանում։

ՃՈՐՏ «սպասաւոր, փոքրաւոր, ծառայ» Ուռհ. 274. Նար. տղ. 473. Մխ. դտ. «ձիապան, սէյս» Շնորհ. առակ. 57. «վաստակ» Սմբ. դտ. 104. Արձ. 1033 Բուխց (Վիմ. տարեգ. էջ 17). արդի գրականում նշանակում է «իշխանին կամ հողատիրոջ հպատակ հարկատու». որից **ճորտութիւն, ճորտատէր, ճորտատիրական** (նոր բառեր) ևն։

Մառ. ЗВО *1924, 188* կապում է ռուս. чертъ «սատանայ» բառի հետ։ Կայ թթր. جوری jori «գերուհի» (Будаговъ *1, 444*), բայց մեր բառին համապատասխան չէ։

ԳԻՒՒ.—Ախց. ճorտ (գործածական է միայն «ճորտի պէս դատեցնել» դարձուածի մէջ). *Երև.* ճoտ, *Ջղ.* ճոոր «տան մէջ փոքր ծառայ», *Սլմ.* ճոոտ, *Տփ.* ճուրտ, *Ագլ.* ճուոտ. իսկ *Կր.* ճorտ «աղնուական» (օր. ճորտի տղա՞յ ես, ի՞նչ ես).—*Բլ. Վ.* կայ միայն **ճորտ ու պորտ**=*Տիգ.* բուրդ ու ջուրդ, որ նշանակում է «ազգն ու տակը, ամբողջ գերդաստանը»։

***ՃՈՒԱՐԻՇ** «զանազան դեղերով բաղադրութիւն» *Մխ. բժշ. 85, 133*։

=Արաբ. جوارش javāriš՝ նոյն նշ. որ արաբացնալ է պրս. گوارش guvāriš «մի տեսակ մարսողական մաջուն» բառից. այս էլ ծագում է պրս. گواریدن guvāridan «մարսել» բայից և նշանակում է բուն «մարսումն»։—Ա՛ճ.

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ). որից յետոյ անկախաբար Seidel, *Մխ. բժշ. § 254, §§ 364—5*։

Ճուարս տե՛ս Ճաւարս։

***ՃՈՒԼԱՊ** «ըմպելի ինչ բժշկական մեղմացուցիչ» *Մխ. բժշ. 148* ևն. իբր մհյ. բառ ունի Նորայր, *Բառ. ֆր. էջ 721 ա*։

=Արաբ. جلّاب jullāb «օշարակ ինչ յայտնի՝ եռացեալ շաքարաւ». ծագում է պրս. گلاب gulāb «վարդաջուր» բառից. արաբներէնից են փոխառեալ նաև վրաց. **ჯუ-ლაბი** ջուլաբի «լուծողական», ֆրանս. julep «մի տեսակ դեղաջուր»։

Նորայր, անդ. դնում է պրս. gulāb բառից։ *Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Seidel, *Մխ. բժշ. § 35*։

***ՃՈՒԼԻՆԱՐ** «նռան ծաղիկ. ֆր. balauste». ունի միայն *ՀԲուս. § 1904.* գրուած նաև **ջալիրան, ջուլիրան** *Բժշ.* որ է **ջօլիճար**։

=Արաբ. جل‌نار jul-i-nār կամ جلنار julnār, որ արաբացնալ է պրս. گلنار gulnār համանիշից (պրս. گل gul «վարդ, ծաղիկ» և نار nār «նուռ» բառերից)։

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆր. 123 բ և ՀԱ. 1923, 169։ Աւելի յետոյ անկախաբար Seidel, *Մխ. հեր. § 432*։

***ՃՈՒԼՊԱՆ կամ ՃՈՒԼՊԱՆՏ** «մի տեսակ մազ» *Ամիրտ. Վստկ. 21, 96 (ըստ Տիրացուեան,* Contributo § 264 lathyrus aphaca L, *որ և կոչւում է հյ.* խորու, մաճղանճակ, Ռեկան, Ռսամճ, ոսպնավիգ). *ունի միայն ՀԲուս. § 1906.* որից **ճուլպանիկ** «մի տեսակ քուշնայ» *Կամրկպ.*։

=Պրս. և արաբ. جلبان julbān նոյն նշանակութեամբ։

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ԳԻՒՒ.—Խրբ. ջուլբանդ, *ՋԹ.* ջուլբօնդ «ոլոռն»։

ՃՈՒԿ «թեքում, ծռուիլը». պահուած է արմատ ձևի տակ՝ գաւառականներում. ինչ. վիզը ճուկ. որից ճկիլ «ծռիլ» մհյ. բառ (Նորայր, *Բառ. ֆր. 591 ա*), **ճուկումուկ** «ոլո-

բապտոյտ, zigzag» (անդ, էջ 1292 ա). գաւառականներում՝ **ճկուիլ, ճկուն, ճկոիլ, ճկոճկո, ճկռացնել, ճկոկիլ** *ևն։*

***ՃՈՒՀԻ**, *որ և ճոճի, ջուճի. նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած վրդն. առ. էջ 26—27 և մեկնում եմ «խեղկատակ, ծաղրածու», իբր՝*

=պրս. جحی juhī, *«է անուն առն միոջ, որ էր առակախօս և ծաղրածու, որպէս և յաշխարհին Հոռոմոց կոչեցեալն Նասրէտտինն խօճա, որոյ պատմութեամբքն լցեալ է աշխարհ»։—Աճ.*

ՃՈՒՃ *«առնանդամ». ունի միայն ԱՐ. իբր մկ. բառ գիտէ Նորայր, Բառ. ֆր. 1268 բ։*

Պատահական նմանութիւն ունին վրաց. **ჩუჩა** *չուչա «առնանդամի մաշկը, prépuce» և կապիկումուկ չեչ՝ «առնանդամ»։*

ԳԻՒՒ.—Մկ. **ճուճ**, *Ալշ. Մշ.* **ճուջ**, *ՀՃ. Պլ. Ւո. ջուջ, Սեբ. ջուջ, Տփ.* **ճուճու**, *Ախց.* **ճուճուլ**, *Շմ.* **ճիւճիւլ**, *Ղրբ.* **ճի՛ւճիւլ, ճի՛ւճօղ**. *ընդհանրապես գործածական է միայն երախայի համար. բայց Մկ. Պլ. ընդհանուր է (նաև մեծերի համար է գործածւում)։ Որից* **ճուճլաք** *«խանձարուրի այն մասը՝ որով մանկիկի առականքն են փաթաթում»։ Համմտ. նաև ուտ.* **ճօճօլ**, *«մանկան առնի»։*

ճուճաղ *տե՛ս Դժոխ։*

ՃՈՒՃԱՆ *«կճղակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 199։*

***ՃՈՒՄՃՈՒՄ** *«մի տեսակ բոյս է» Ամիրտ. ունի միայն ՀՒռա. § 1909։*

=Արաբ. جمجم jumjum՝ *նոյն նշ. (բայց այսպիսի բառ չեմ գտնում ո՛չ Կամուսում և ո՛չ էլ* Steinschneider-*ի մօտ)։*

Այսպես մեկնեց ՀՒռա։

***ՃՈՒՆԴԻԿ** *«գինուոր». առանձին չէ գործածուած. բայց սրանից ունինք* **ճունդկութիւն** *«գինուորութիւն» Միխ. առ. 457. «Եկին ի Միջագետս և երթեալք ի Թկրիթ՝ մտին ի ճունդկութիւն բերդին»։*

=Արաբ. جندی jundī *«գինուոր, զօրք, հնծելազօրք». փոխառեալ է պրս.* غند yund *բառից, որից նաև հյ. գունդ։ (Տե՛ս այս բառը)։—Աճ.*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Աճառ. Հյ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 182։

ՃՈՒՇ *«ճագոմ, gui». ունի միայն ՀՒռա. § 1910, որ և ԳՐ համարում է «սպիտակ ճագոմ»։ (Տե՛ս* **ճուռպ** *Գւռ. բառ.)։*

ՃՈՒՇ *«թարախոտ». առանց վկայութեան գտնում ենք միայն Բառ. երեմ. յաւել. Գէորգ Դպրէ, էջ 553։*

ճուղութիւն *տե՛ս Ճռուղ։*

ճուչ, *տե՛ս Ճիչ։*

***ՃՈՒՐԱԿ** *կամ* **ՃՈՒՐԱԿ** *«արու բազէ» Մագ. քեր. 228 և 240. «Բազէի արական՝ ճուռակ»։*

*=Պհլ. *čurrak ձևից. այս ձևը աւանդուած չէ, բայց ունինք պրս.* چرّ čurra *«փոքր բազէ և որձ բազէ» (ԳԴ). սրա հետ համմտ. նաև պրս.* جرّبز jurra-bāz *կամ* jura-bāz *«արու բազէ», իրանեանից են փոխառեալ նաև աֆղան.* jurrą, jurrąbāz *«մի տեսակ բազէ», քրդ.* jurre *«բազէ», արաբ.* زرّق zurraq *«սպիտակ բազէ», յն.* τζουράκιον *(վերջինիս հետ համմտ. Մագ. քեր. 228 Սակս ոչ ունելոյ ճէ նոցա (Ճունաց), յորջորջեն զճուռակն ճուռակ)։—Հիւբշ. 190։*

Նախ նշՒ (գաւազ բառի տակ) մեկնում է պրս. ճիւռէլազ. *իսկ բուն ճուռակ բառի տակ դնում է լծ. յն.* ιέρακας։ Lag. Arm. Stud. § 1396 *կասկածում է պրս.* jurra *և արաբ.* zurraq *ձևերի վրայ, բայց ընդունում է յն.* τζουράκιον։ *Հիւբշ. յիշում է այս վերջիններիս և երզընկացու ճուռակ գրչութիւնը կարդում է *ջուռակ։ Երկուսն էլ ծանօթ չեն պրս.* čurra *ձևին, որով միայն կանոնաւորապէս մեկնւում է հայերէնը։*

ՃՈՒՌՆԿ *«ախտ կամ կեղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 199։*

ՃՈՒՌՆ *«ծունկերից մինչև զիստան եղած մասը» Տաթև. Հարց. 243 (չունի ԱՐ). որ և* **ճուռ** *«ոտք» Մխ. բժշ. 33, էֆիմ. էջ 27։ Բառս յիշում է նաև Բռ. երեմ. էջ 335 ոյոխ բառի բացատրութեան մէջ՝ այսպէս. ոլոխ (իմա ոյոխ) «ճուռ»։ Կենդանի է արդի գաւառականներում* **ճուռ, ջուռ, ճօռ** *ձևերով և զանազան նշանակութիւններով (յգ.* **ճոռներ, ճրուվրներ**). *տե՛ս և Գւռ. բառ.։*

—ՃՈՒՏ *«հաւի ձագ, վառեակ» Էփիմ. 156. գտնւում է գաւառականներում զանազան ձեւերով. այսպէս՝ Երև. Տփ. ճուտ, Ալշ. Մշ. ճուդ, Ղրբ. ճօտ, Ջղ. ճուճ, Ագլ. ճուճ, ճուչ ևն։ Սրա կրճատ ձևն է ճո՜ւ ճո՜ւ կամ ջո՜ւ ջո՜ւ, բացագանչութիւն, որով հաւեղէններն են կանչում։ Այս կարդի բացագանչութիւնները առ հասարակ անասունների անունից համառօտուած ձևեր են. ինչպէս՝ Խուչի, Խուչի, Խուռռո՜վ, փիսի փիսի, փիշօ փիշօ, ռուս.* цыпъ! цыпъ! *«ճո՜ւ, ճո՜ւ» (համառօտուած* цыпленокъ *«ճուտ, վառեակ» բառից) ևն։— Գաւառականներում ճուտ նշանակում է ո՛չ միայն հաւի ձագը, այլ և օձի, խոշի և այլ անասունների. («հաւի ճուտը» յառաջացել է մասնաւորացմամբ). այս պատճառաւ այս բառը՝*

=ձայնդարձն է ճետ «սերունդ» բառի, որ գաւառականներում ունի նաև «վառեակ» նշանակութիւնը (տե՛ս ճետ)։—Աճ.

Պատահական նմանութիւն ունի լազ. ճուտա, ճիտա, ծուտա «փոքրիկ», ինչ. ճուտա կոշի «գառճաճ» (իմա՛ «փոքր մարդ»), ճիտա դալի «առուակ»։

ՃՊԿԻԼ. *անասոյգ բառ, որ մէկ անգամ յիշում է Բառ. երեմ. էջ 188՝ ձաձել բառի բացատրութեան մէջ. այսպէս՝ Ձաձել «իմանալ, կամ առնիլ կամ ճպկիլ»։*

Ճպոտ *տե՛ս Ճիպոտ։*

ՃՊՈՒՌՆ, ն *հլ.* (-ռան, -ռանց) *«ճպուռ, ծղրիտ» Վեցօր. 174 (Ձեռ. ճեպիռնի, լուս. ճպուռն), 183. Փիլ. տես. գրուած է նաև* ճիպուռն *Եղիշ. ը. էջ 157.* ճպիռն, ճպուռ, ճիպիռն։

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 և բնաձայնից։ Հիւնք. ճապուռ «մագիլ» բառից։ Պատահական նմանութիւն ունի հբր צִפּוֹר ṣippōr *«հաւ»։*

ՃՈՒ-Ա-ԴԱՒԱՆ *«ծուռ կամ մոլար հաւատքի հետևող». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք Թղ. էջ 491. «Ձայս վնց եպիսկոպոսքս փախուցիք և սպանիք, ճուդաւանք, մոլար և խոտոր, սուտփառ, գայլախումբ...»։*

=Թերևս պէտք է ուղղել ծուդաւան. բայց հմմտ. նաև Ղրբ. ջրռ, որ «անհաւատաւոր» իմաստով կգւում է զանազան բառերի. ինչ. ջրռ մելիք «սուտ մելիք», ջրռ կաթուղիկոս «չկաթուղիկոս»։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Բ. 250, ուր ջրռ վրիպակով տպուել է չև։

ՃՒԱՆԱԼ, *անսոյգ բառ. մէկ անգամ ունի Սօթնագր. «Նախ սևովն և ապա կարմիր երևի. և ի չորրորդ բոլորին ճռացեալ կապուտակաձև երևի»։*

Նշի մեկնում է «գուցե իբր ճիռ կամ կեռ կամ ծիր լինել»։ Ջի չունի։ Աի դրնում է «ծլիլ»։

○ՃՌՂԵԼ *«թռչունի պէս ձայներ հանել (կախարդի)» Ոսկ. ես. 106. «Քանզի սովորութիւն է դիւաց՝ ճռղել, չհաւու ձայնս արձակել, զոր ճօթանասունքն ընդվայրաճօսութիւն կոչեցին». ուրիշ վկայութիւն չկայ, բայց նոյն հեղինակը մի քանի տող վերև ունի. «Զգէտան, ասէ, որ ճրճուիցեն և երղիցեն... Թէոդիտոսն ասէ. Զկանխագէտան ձագացեալս, այսինքն ձագուց նմանեալս»։ Այս վերջին ձևը (երղիցեն) կարելի է ուղղել թերևս նշիցեն, բայց կարելի է նաև կարդալ ճողիցեն կամ պահել նղիցեն (տե՛ս վերը ճղել)։*

=Բնաձայն բառ. արմատը ճ ձայնն է. համեմատել ճռուել, ճռուողել։—Աճ.

○ՃՌՃՌԻԼ *«ճռռուղել, ճիվ ճիվ ձայներ հանել». սրանից է ճռճռուղ «ճիվ ճիվ ձայներ հանող» Աի։*

=Բնաձայն բառ է. հմմտ. ճճուել, ճռռուղել։—Աճ.

○ՃՌՆՉԵԼ *«դռան կամ կօշիկի ճռռալու ձայն» Սիսիան. Նեղոս 655. «սայլի ձայն» Տաթև. ձմ. ճծթ. արմատը՝ ճռինչ՝ գործածական է միայն նոր գրականում, բայց յիշում է նաև Բռ. երեմ. էջ 199 «գոչիւն» իմաստով։*

=Բնաձայն բառ է, կազմուած ճ ձայնից՝ ռ սաստկականով և ն, չ յօդերով. ձևի համար հմմտ. կռնչել, փռնչել, դռնչել, մռնչել, զռնչել, խռնչել ևն, իսկ արմատի համար հմմտ. ճռչել, ճճուել, ճռռուղել ևն։—Աճ.

Հիւնք. ճչել բայից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ. 1899, 204 ա։

ԳԻՒ.—Ղրբ. Ջղ. ճռնչալ «դռան ճռռալը,

հիւանդի հեծելը, ծաոի շարժուելուց ճռռալը ևն», ՀՃ. ջուրմնշօլ «դռան ճռռալը, մանկան ճչալը»։

○**ՃՌՈՒԻԵԼ** *«ճռճռալ». ունի ՆՀԲ, բայց առանց վկայութիեան. որից ճռուտկան «ճրուտղական, թռչունների ձայնին յատմար» Լաստ. գլուխ ԺԲ։*

=Բնաձայն բառ է. կազմուած է ճ ձայնից՝ ռ սաստկականով և ու մասնիկով։—Աճ.

Մառ. О полож. абхаз. *էջ 29 վրաց.*

ՁՁհոճՁՁ *մեղինավի «սոխակ» և հյ. ճճղուկ բառերի հետ միացնելով՝ արմատը դնում է ճուռ։*

○**ՃՌՈՒՈՂ** *«թռչունի ծլվլոց». արմատ առանձին անգործածական, կայ միայն նոր գրականում. սրանից են ճռուտղել «թռչունի ծլվլալ» Մարաթ. «ճիւաղների կամ փողի ձայն» Մագ. ճռուտղեցուցանել Լմբ. սղ. գրուած է նաև այլ զանազան ձևերով. ինչ. ճռուղել, ճռուտլել, ճռուտղել, ճռռղել Ագաթ. Կոչ. թերևս նոյնից սխալ դրչութեամբ՝ ճռուղութիւն ԱԲ։*

=Բնաձայն բառ. կազմուած է ճ ձայնից՝ ռ սաստկականով և ու, ող մասնիկներով. Համմտ. ճռուել, ճճուել։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 204 բ։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 բրք. ճիվ ճիվ։

ԳԻՒ.—ճուվղալ Երև. «թռչունի ճլվլալ», ճղվողել Ղրբ. «հաւի հանած ձայնը», ճղվղալ Ղրբ. «ուրախութեան ձայներ հանել» ևն։

○**ՃՌՉԵԼ** *«դռան ձայն հանելը» վրք. հց. (այլ ձեռ. ճոնչել). որից ճոչող «ճռվռացող (թռչուն)» Կոչ. 153 (նորագիւտ բառ)։*

=Բնաձայն բառ. կազմուած է ճ ձայնից, ռ սաստկականով և չ ածանցականով. ձևի համար Համմտ. կոչել, ճոչակ, խոչակ, շոիչ, սոիչ. արմատի համար Համմտ. ճոնչել։—Աճ.

Այս մեկնութիւնս տես ՀԱ 1899, էջ 204 ա։

Ճոպճդիկ *տե՛ս Ճրամպիտ։*

○**ՃՌՌԱԼ** *«ճռճռալ». մէկ անգամ ունի Մոլութ. 154ա. «ճռռան տրտընջմամբ որպէս զանիւս սայլի»։*

=Բնաձայն բառ՝ ճռ արմատից, որից նաև ճռչել, ճռվռել, ճռռուղ, ճռռել, ճռնչել։—Աճ.

○**ՃՌՎՌԵԼ** *«թռչունի ճռռուղել կամ նման ձայներ». ունի միայն ԱԲ։*

=Բնաձայն բառ. կազմուած է ճ ձայնից՝ ռ սաստկականով և կրկնութեամբ։—Աճ.

ԳԻՒ.—ճուվռալ Ակն. «ճռռուղել», Վն. «պոռչտալ, նոր կօշիկի ձայն ևն», ճուվռան Մշ. «ճռռուղալիս», ճուվռուն Վն. «ճռճռացող (կօշիկ)»։

**ՃՐԱԳ, ի-ա հլ. (յգ. ճրագ՛ կամ ճրագունք) «ճրագ, ջահ, լոյս, մոմ» ՍԿր. Կիւրղ. Բագ. որից ճրագ գիշերոյ «ամենաթանկագին ակունքը» (որի առասպելական ծագումը տե՛ս) Տաթև. ամ. 162. ճրագաբերան ՍԳր. ճրագարան ՍԳր. ճրագալոյց Արշ. Կամբջ. Գնձ. ճրագու «ճարպ» Եզն. Վստկ. Կանոն. 27, 37 (վերջինը՝ ճրագոյն), Ածկփ. ճրագակալ Վրք. հց. եօթնաճրագ Գնձ. եօթնճրագեան Սերբր. ևն։*

*=Պհլ. *čirāg համանիշից, որ աւանդուած չէ. համմտ. պրս. چراغ čirāγ «պատրոյգի ծայրի բոցը, լոյս, ճրագ, լամբ», սոգդ. čirâγ «ճրագ». սրանից են փոխառեալ նաև բելուճ. čirāg «ճրագ», օսս. çi æγ «լոյս», քրդ. čira, čirai «ջահ, լապտեր», ասոր. ܫܪܓܐ šərāgā, արաբ. سراج sirāj «ճրագ», արևել. թրք. چراغ čiraγ «ճրագ», ավար. նիւրախ «մոմ» և թերևս նաև թրք. چرا čəra «մարխ»։—Հիւբշ. 190։*

Schröder, Thesaur. 46 *դնում է փոխառեալ արաբ. sirāj ձևից։ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 314 անվճռական կերպով ուզում է փոխառեալ դնել ուղիղ բառից։ Ուղիղ է մեկնում նախ ԴԴ՝ համեմատելով պրս. ձևի հետ։* Peterm. 25, 26, 34 *արաբ.* sirāj: Böttich. Rudimenta 55, 243 *և* Arica 75, 238 *պրս.* čirāγ, *ասոր.* šərāg, *օսս.* tyūrāγ, čirāγ: *Սրանց են հետևում նաև միւսները։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. ճրագ՛, Ախց. Երև. Գոր. Կր. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. ճրաւ՛, Համշ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. ջրաւ (Պլ. գործածական է միայն ասացուածների մէջ, ինչ. Սիրտիս ճրագը մարեցաւ). Մկ. Ոզմ. Վն. ճրաւ՛, Ղրբ.

ճրէ՛բաւ[1], *Ակն. խրբ.* ջիրաւ, *Ասլ.* ջիրաւ, ջի-րա*, *Սվեդ.* ջրիւգ՛, *Ագլ.* ճրօյգ՛. *նոր փոխառութեամբ Նախ.* շիրախ *և խաչաձևամբ՝ Սչ.* ջիրախ: *Նոր բառեր են՝* աճերագ, ճրագաճցում, ճրագաւոր, ճրագդիր, ճրագթաթ, ճրագլոյս, ճրագկալի, ճրագկպոց, ճրագպահի, ճրագվառ, ճրագվառոց, ճրագվառուճ, ճրագտալ *«փայլփլիլ»*, ճրագուել, ճրագուակալել *«դիրանալ» են:*

Փոխ.—Վերջաձայն f*-ի պատճառով հայերէնից են փոխառնալ վրաց.* ჭრაჭი ճրաճի, *թուշ.* ჭრაჭ ճրաճ *«ճրագ, լամբ» (բայց պարսկերէնից են վրաց.* ჩირაღი չիրաղի, ჩირახი չիրախի *«ճրագ»).—Կարաբուլակի բարբառով կայ* ճերակուի *«պարարտութիւն, ճարպ» մեր* ճրագու *ձևից:*

ՃՐԱՄՊԻՏ *«վզնոց». մէկ անգամ ունի Վրդ. առակ. 134 (մի ձեռ). ուրիշ տեղ գործածուած չէ: Նոյն է սակայն* ճոպճղիկ *«մի տեսակ գլխազարդ, պսակակալ կամ պսակ յոսկւոյ». ունի միայն Բառ. երեմ. էջ 273:*

*ԳԻՒ.—*ճլպինդ *Երև.,* ջրպինդի *Տփ. «մի մատ լայնութեամբ և մի թիզ երկարութեամբ թաւշեայ կամ դիպակէ կտոր, որի վրայ կարուած են կանանց ճակատանոցի ոսկիները»:*

ՃՐՈՐ *«աղիք, փորոտիք» կամ աւելի լաւ՝ «խախացոց ստամոքսի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պտմ. 465, որ խօսելով մի տեսակ դեղթափի մասին, ասում է թէ ստացւում է Շիրազի մօտ Շապանքար լեռան վրայ գտնուող մի տեսակ եղջիւրաւոր անասունից. «Այն որ ունի զփանդահրն ի փորն... ի մէջ երուվին կու լինի ու կակուղ է»: Իմաստը որոշելու համար հմմտ. ԳԴ, էջ 212բ «կեավզեհրէ (gāvzahra). խարազայ. է քար ինչ որ գոյանայ ի լեղւոջ կամ ի խախացոցի հնդկային եղին. որ և յելանելն՝ է կակուղ և թոյլ որպէս զդեղնուց. զոր կալեալ ի բերանի առ վայր մի՝ կարծրանայ. ունի զգոյն և զգօրութիւն դեղթափի. բայց չէ այնչափ ազդու որպէս զդեղթափի»: «Խախացոց» նշանակութիւնը հանում եմ այս վկայութեան համեմատութեամբ, իսկ «աղիք, փորոտիք» նշանակութիւնը բառի յոգնակի գործածութիւնից (երուր-վի, ինչ. աչվի, ձեռվի, ոտվի են):*

ճՓՆի *«երիցուկ ծաղիկը, փափաստիա, լտ.* chamaemelium decipiens Boiss. *ռամաշկա» (ըստ ՆՀԲ, Քաջունի և Տիրացուեան,* Contributo § 543), *«գափնելարդ,* oléandre» *(ըստ ՀԲուս. § 1915) Գաղիան. Վստկ. 78, 81, 191. Բժշ. գրուած է նաև* ճֆճի, ջիֆճի, *որոնց մէջ* ֆ *ձայնը օտար ծագում է ենթադրում:*

ԳԻՒ.—Ըստ Տիրացուեան § 341 ունինք ծիփիճ, ծիֆիճ *Տր. (նաև* ծեփիկ *ըստ ՀԲուս.)* «rhododendron flavum Don.», *որ ըստ Յակոբեան, Արեւելք 1890 ապր. 27 է «լեռնավարդ,* azalia, *Ամէրիգա Հանրմէլի»:*

ՃՕՐ *«մի տեսակ քա՞ր». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկիփ. «Սեղան նոր ի պատուական քարէ սեաւ ճոր»:*

ՆՀԲ դնում է «բառ անյայտ», ԱԲ «քարի տեսակ մը»:

*ճՕՉՊԻ *«հնդկընկոյզի փոքր տեսակը.* myristica officinalis» *Վստկ. 122. որ և* ճավզպէ *Վստկ. 117,* ճավզպուէ *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1916:*

=Արաբ. جوزبو javz-i-bava *«հնդկընկոյզ» (տե՛ս* Steinschneider WZKM 11, 329), *որ և* جوزبوّى javz-i-bavvă *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 168):*

Ուղիղ մեկնից նախ Վաստակոց Գրոց հրատարակիչը՝ էջ 252 և յետոյ ՀԲուս:

ճՕճ *«երկու կողմ շարժուիլ՝ երերալը». արմատական ձևը ցոյց են տալիս ճօճ «շարժում, շարժուն» Արծր. Օրբել. «կախօրրան» Զքր. սարկ. Ա. 55. որից* ճօճիլ *«երերալ, քամուց տատանիլ, նիզակների շարժուելը» Վեցօր. Մծր. Ողիշ.* ճօճել *(գրուած նաև* ճոճել*) Բ. մակ. ժա. 8. Սփր. Թգ.* ճօճեցուցանել *Նիւս.* ճօճաճ *Գնձ. Բլկր. 53.* ճօճեմական *Սիոն. 198.* ճօճաճակ *«ճոռան, կարկաչայ, շռնչանի նման մի խաղալիք» Յհ. իմ. առ. Կանոն, էջ 146. (Նոր գրականի մէջ «pendule»).* ճօճկտալ *Քուչ. 53.* նիզակաճօճ *Գր. տդ.* յօճաճօճ *Սիսիան.* յառաճօճ *Ագաթ. միջին Հայ.* ճօշ տալ *«երերալ» (իմա* ճօճ տալ*) Բլկր. 25.—Նոր բառեր են* ճօճում, ճօճաճակաւոր, ճօճաթոռ *են:*

Տէրվ. Altarm. 53 *սրա հետ է համեմատում սանս.* pra-yuj *«նետել, արձակել»,* pra-yuk-ta *«յուղեալ, ճօճեալ,*

տատանեալ»։—Հիւնք. ճեմել *բայից։ Մաո,* Вступительныя и закл. строфы... Шоты, *էջ 19 կցում է վրաց.* ჯოჯობინი ճոճմանի *«փառք, փայլիլ, պլպլալ, վառանիլ, տատանիլ» բառին։*

Գիմ.—Ախց. ճօճալ, *Ալշ. Բլ. Մշ.* ճօջալ, *Սեբ.* ջօջալ, *Ղրբ.* ճօճ տալ *«ճօճել, շարժիլ». —արմատական ձևը պահում է Երև. Տփ.* ճօճ, *Ախց. Երև.* ճօճ՛, *Ջղ.* ճօճկ, *Ննխ.* ջօշ՛, *Ղրբ.* ճօժկ, *Վն.* ճօճիկ *«մանուկը քնեցնելու կախօրրան»,—նոյն արմատից ունինք նաև* ճօճ *Ախց. «մի տեսակ պար»,* ճօճանակ *Ագլ. Երև. Ղրբ. (վերջինս* ճնա՛ճակ, ճչա՛ճակ *ձևով) «ճոռան» (ճիշտ նոյն է ՅՀ. իմ. առ.* ճօճանակ *կոչուած գործիքի հետ, որ Մաղկազարդին ճոճուածնում էն),* ճօճկերել *Վն. «մանկան կախօրրանի չուաններըը»,* ճօճկատալ *Մշ. «նազելով քայլել»,* ճօճկատաճ *Մշ. «նազելով քայլող»։*

Փոխ.—Վրաց. ჯოჯო ճօճի, ჯოჯინი ճոճիճի *«գլորուող սիրտ, մանկական օրօրոց»,* ჯოჯონაჯი ճոճոճաճի *«ճախարակ,* poulie», *ն. ասոր.* joǰänä *«շարժուղ, խախուտ» (*Калашевъ, Айсорско-русск. слов.—Сборн. матер. Кавк. *հա. 20, էջ 285)։*

ճՕճ *«սիրուն, գեղեցիկ», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. այրիվ. էջ 39. «Սեթայ որդիքն գունագեղք և կարճամէջք և կուռվիգք էին. իսկ Կայենին մեռելերեսք, բայց ճաւճք»։ Այս կտորը անշուշտ ակնարկութիւն է Ծն. զ. 2 հատուածի. «Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերս մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին»։ Հակասական բայց շաղկապը՝ որ դրուած է մեռելերես և ճօճ բառերի միջև, ցոյց է տալիս՝ որ վերջինը լաւ մտքով պէտք է առնել։*

ճՕՇ *«բամբասանք» Կեղծ-Շապհ. էջ 59. Քուչ. 110. որից* ճօշալ *«չարախօսել, թշնամանել, բամբասել» Կոստ. Երզն. 135 (Ես զպնահար եմ և ամօթով, վասն անդիտաց զմեզ ճօշալով). յգ. տեղ. ձև է ճօշնաց, որ Սմբ. դատ. էջ 37 մէկ ձեռ. ունի միւսների նախատանաց բառի տեղ։ Կենդանի է արդի գաւառականների մէջ. այսպէս՝* ճօշ *«բամբասանք, վէճ, կռիւ» (Ղազախ, Մուշ, Տփղիս),* ճօշանճ *«բամբասանք» (Մշ.),* ճօշել, ճօշալ *«բամբասել, վատաբանել» (Մկ. Մշ. Սեբ. Շշ. Վն. Տփ)։—Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 59, Նորայր, Բառ. ֆր. 6։*

***ճՕՇ,** ի *հլ. (գրուած նաև* ճաւշ, ջաւշ) *«կուրծքի զրահ, լանջապանակ» Շնորհ. հ-դես. էջ 27. այս բառի հետ նոյն է՝*

***ճՕՇԱՆ** (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան գրուած նաև* ճաւշան, ճուշան, ջօշան, *և զաւղան՝ որ գրչագրի սխալ է և պէտք է ուղղել* ջաւշան)՝ *նոյն նշ. Գր. եր. Մարթին. Լմբ. առ լև. տպ. 1865, էջ 239. Բլկր. 54. տե՛ս նաև* ճաւշանիոու։

=Պրս. և արաբ. جوشن jauš *«զրահի օղակ»,* جوشن jaušan *«զրահ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 609), ըստ* Lag. *նաև* چوشن čaušan, čōšan. *որից փոխառեալ նաև վրաց.* ჯავშანი ջավշանի *«զրահ»։—Հիւրշ. 279։*

ՆՀԲ պրս. եվշէն, ճիւշիւղ, *յոգ.* ճիւվէշ, եվաշիճ, *որ է սիրտ և լանջք։ Ուղիղ է* Lag. Arm. Stud. § 1398: Müller WZKM 8, 188 *պրս. բառը կցում է զնդ.* yaō xšana *«պատրաստութիւն, զրահաւորութիւն» ձևին։*

***ճՕՇԻՐ** *(գրուած է նաև* ճաւշիր, ջոշիր, կօշիր. *սխալմամբ* ճուաշիր *Վստկ. 208,* ջուանշիր, ջոխիր) «pastinaca opopanax *կոչուած ծառ և նրա խեժը։ Գազիան, Բժշ.։*

=Արաբ. جاوشير jāvšīr *նոյն նշ. (տե՛ս* Steinschneider-*ի հատաքածոյի մէջ, ի* WZKM 11, 326). *բառս արաբացեալ է պրս.* گاوشير gāvšīr *հոմանիշից, որ ծագում է պրս.* گاو gāv *«կով» և* شير šīr *«կաթ» բառերից և բուն նշանակում է «կովի կաթ». այսպէս է կոչուած սոյն խէժը՝ իր կաթնանման սպիտակութեան համար։*

Բառս գտաւ ու մեկնեց նախ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 875 բ, որից յետոյ ՀԲուս. § 1918։

ճօտ *տե՛ս ճատէ։*

Մ

ՄԱԱՏՐԻՎԹ *«խոտորումն», ունի միայն Բառ. նրեմ. էջ 200։*

***ՄԱԳԱՂԱԹ** (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «կաշուց պատրաստուած թուղթ. 2. լայնաբար՝ գիրք» Ես. լդ. 4. Լաբուբ. 23. Եղիշ. Վրք. Հց. գրուած է նաև մագաղատ Փարպ. որից* **մագաղաթեայ** *Ես. ժը. 2. Եփր. բ. տիմ. Յայտ. գ. 14. Վրք. Հց.։*

=Ասոր. ܡܓܠܬܐ magalləθā *«գալարնալ մատեան, volumen» ձևից. բառս բնիկ սեմական է և ծագում է* גלל gll *«գլորել, գալարել» արմատից. հմմտ. եբր.* מְגִלָּה məγillā, מְגִלַּת məγillāt *«գալարնալ մատեան», արամ.* מגלתא məgilləθā, *որից արաբ.* مجلّة maǰalla *«ճոխ կազմ ունեցող գիրք, մահմեդականների քաղաքային օրինագիրքը» և սրանից էլ օսմ.* mejelle *«Տաճկական օրինագիրքը»։—Հիւբշ. 310։*

Նախ ՆՀԲ «լծ. եբր. մէկիլլա, որպէս և թրք. kāγəd *«թուղթ»։ Այվազովսքի, Յաղագս հնչման 15 եբր. մակէլլօբ։* Lag. Arm. Stud. § 1399 *եբր. և ասոր. ձևերից։ Հիւնք. եբր. մէկիլլօբ։ Մառ,* О полож. абхаз. *էջ 6 պրս.* kāγad, *վրաց. ֆաղալդի «թուղթ»։*

ԳԻՒՐ.—Մշ. մագ'աղատ, Տփ. մաֆաղաթ ԵՒն. Ղրբ. կայ իրրև իգական յատուկ անուն՝ **Մաֆաղաթ**։

ՓՈԽ.—Վրաց. **ձագալթօծօ** *մագալիթի «օրինակ, բնագիր»։—Անցել է Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ՝ «գիրք» նշանակութեամբ. Քիէպան ժի, պախուսուս մագաղաթան (գիրքն, մանաւանդ գմատեանն). Բ. տիմ. Դ. 13։*

ՄԱԳԱՐԻԿԱՆ *կամ* **ՄԱԳԻՐԻԿԱՆ** *«անուն խոտոյ և փշոյ. լա.* xanthium, lappe» Գաղիան։

կայ պրս. ماذریون māδarıγūn *ծաղիկ իմն դեղին, որոյ մէջն է սեաւ» բայց չի ծածկում վերի ձևը։*

ԳԻՒՐ.—ՀԲուս. § 1920 առանց յիշելու հին ձևը՝ դնում է Սեբ. **մագարիկոն** *«սոխագին, բրինջուկ». ըստ իս շատ կասկածելի։—*

ՄԱԳԵՏԻՆ *«մոլեգին». ունի միայն Բռ. եբրմ, էջ 200։*

ՄԱԳԻԼ, ի-ա *հլ. (գրուած նաև* **մաքիլ**, **մակիլ**, **մագալ**) *«թուղունի կամ գազանի ճանկ» Դան. է. 19. Իմ. ե. 11. Նւս. քր. Ոսկ. մ. ա. 4. Կոչ. Վեցօր. 162, 169, 192. որից* **մագլաւոր** *Տօնակ. Վրդն. ծն. լիամագիլ Եզեկ. ժէ. 3.* **կոռամագիլ** *Նիւս. բն.* **բազմամագիլ** *Եզեկ. ժէ. 17.* **ճասամագիլ** *Վեցօր. 161.* **եր-կայնամագիլ** *ԱԲ.* **մագլել** *(գրուած նաև* **մաքլել**) *Ոսկ. փիլիպ. (տե՛ս ՀԱ 1913, 490), Եփր. զոջ. Վրք. Հց.* **մագլցել** *«ճանկռտել, եղունգներով պատառոտել կամ ճանկռելով մի տեղից վեր բարձրանալ» Եփր. ապաշխ. 194. Ճառընտ. որ և* **մագլցտել** *Ոսկ. յհ. բ. 16։*

=Թուխ թէ փոխառեալ է Կովկասեան լեզուներից. հմմտ. վրաց. **ցծցօლօ** **մախվիլի** *«սրածայր, սուր», ուտ.* **մուխ** *«եղունգ, մատիկ, ճիրան», ավար.* maxl *«եղունգ, մատիկ»,* ma'<*max, յդ.* ma'al *«եղունգ»։*

Klaproth, Asia pol. *էջ 103 ավար.* matt: *ՆՀԲ «արմատն երևի մատն և ֆիլ»։ Հիւբշ.* KZ *23, 35 և 36 սանս.* nakha, *պրս.* nāxun, *օսս.* nüx *ձևերի հետ՝ եւրոպական* nagha, naghla *«եղունգ» նախաձևից։* Lag. Arm. Stud. § 1400 *մերժում է սրանք և համարում*

է բառը սեմական։ Տէրվ. Altarm. էջ 74 կցում է մաֆառիլ բայինն, որի վրայ տե՛ս տակը։ Հիւբշ. Arm. Stud. § 182 անհաւանական է գտնում ˚naghla «եղունգ» բառախմբի համեմատութիւնը, որովհետև հյ. մ չի կարող գալ n-ից։ Tomaschek, Deutsche Lit. Zeit. 1883, էջ 1254 և յետոյ Bugge, Btrg. 35, KZ 32, 85 տուին վերի մեկնութիւնը։ Հիւբշ. Arm. Gram. 471 մերժելով հնխ. naghla են, ուղարկում է Bugge-ի մեկնութեան, առանց այս մասին կարծիք յայտնելու։ Meillet, Rev. crit. Բրգմ. Բագմ. 1898, 120 մերժում է ծնօք են համեմատութիւնը։ Jensen WZKM 10, 11, Hitt. u. Arm. 63, 79 և ՀՄ 1904, 184 և 274 հաթ. mag, magh ձևի հետ, որով հայը համարում է բնիկ՝ կազմուած մագ արմատից՝ -իլ մասնիկով (իբր սանս. nakha են), իսկ վրաց. մախվիլի փոխառեալ է հայերէնից։ Հիւնք. կացի՞ն բառից։ Մի առանձին քննութիւն ունի Bugge, ZAPh 1, 164, ուր բառը համեմատում է դարձեալ սանս. nakha, յն. ὄνυξ են խմբի հետ՝ նոր լուսաբանութեամբ։ Հնխ. արմատը դնում է ˚mōkh-, հյց. ˚moghṃ, սրակ. ˚omghéi վերջինը դարձաւ ˚onghéi՝ gh-ի մօտ m փոխուելով n-ի և յետոյ՝ սրա աղդեցութեամբ՝ ամբողջ հոլովումը փոխուեցաւ՝ ˚nōkh-, ˚noghṃ են, որից յառաջացան սանս. nakha-. լիթ. nãgas, հոլ. noga, յն. ὄνυξ են։ Բնիկ անփոփոխ ձևը ցոյց են տալիս յն. ἀμύσσω «քերել»<ἀμυχγω և հյ. մագիլ (-իլ նուազական մասնիկով)։—(Այս մեկնութիւնը անընդունելի է, նախ՝ որովհետև յիշեալ ձևերի համապատասխանն է հյ. եղունգ (տե՛ս այս բառը) և երկրորդ՝ որովհետև յն. ἀμύσσω կապւում է լտ. mucro «մատղիլի են սուր ծայր» բառի հետ (տե՛ս Walde 497) և հետևաբար կապ չունի այստեղ։ Այսպէսով հնխ. ˚mōkh- ձևի ենթադրութիւնը յօդս կցնդի)։—Bugge-ի համեմատութիւնը մերժում են Walde 851 և Pokorny 1, 181: Pedersen, Հայ. դր. լեզ. 98 հայ բառը դնում է -իլ նուազական մասնիկով։

ՄԱԳԻԼՈՆ «տաւիղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 200։

***ՄԱԳԻՍՏՐՈՍ**, ի–ա հլ. «յունական իշխանական մի տիտղոս» Շնորհ. վիպ. Լմբ. մատ. 535. Վրք. հց. որ և մաֆիստրոս Ծայսմ. մագիստրիանոս կամ մագեստրիանոս Բուզ. 103. մագիստրիոն ԱՔ. մագիստրիոնս ՋՔ. մագիստրեան «իշխաններ» Ճառընտ. միջնադարեան յոյն արտասանութեամբ՝ մաժիստրոս Ասող. 182. մաժիստռոս Ասող. 279, 260, 261. Լաստ. նոր յունարէնի հնչումով էլ՝ մայիստռ Շնորհ. պատճ. միաբ. (տե՛ս Շնորհ. ընդ. տպ. եմ. էջ 144, 146, 155), մայստռ Վրք. շնորհ. 76. մայէստր Սկևռ. պատ. 13. սրանցից մագիստրութիւն Եւս. պատմ. ը. 11, էջ 642. մագիստրոսութիւն Ճառընտ. մաժիստռոսութիւն Ասող. էջ 278. Լաստ.։

=Յն. μάγιστρος, μαγιστριανός «կայսերական տան դլխաւորը», μαγιστρότης «մագիստրոսի պաշտօնը». յունարէնն էլ փոխառնել է լտ. magister «նախագահ, դլխաւոր, վարպետ» բառից, որ կազմուած է magnus «մեծ» բառից՝ կրկնակ բաղդատական մասնիկներով։ Նոյն լատին բառը ռոմանական լեզուների մէջ դարձել է՝ իտալ. maestro, հֆրանս. maistre, ֆրանս. maître, որոնցից էլ յետին մայստռ են ձևերը։—Հիւբշ. էջ 362։

ՀՀԲ դնում է լատիներէնից։ Ինճիճեան, Հնախ. Բ. 229 և ՆՀԲ «լտ. magister, յորմէ յն.»։

***ՄԱԳՆԵՍՏԻՍ** «քաշողական ուժ ունեցող մի քար» Նար. էջ 111. գրուած մանգնեստիս Անան. եկեղ. որ և մագնիտ Նիւս. բն. Յայսմ. մանգնիտ. Տաթև. ձմ. կ. մագնիդէմ Բռ. երեմ. էջ 200. ուշ ժամանակ՝ մղնադիս (Պատկ. Драг. камн. էջ 46), մղլադուզ էֆիմ. 247 (տե՛ս ժառատ). ժողովրդական աստւաբանութեամբ դարձած մկնատիզ Մխ. բժշ. 120.—արդի գրականում ընդունուած է միայն մագնիս, որից մագնիսական, մագնիսացում, մագնիսացնել, մագնիսականութիւն։

=Յն. μάγνης, μαγνῆτις «մագնիս քարը», որ ծագում է Μαγνησία (այժմ Մանիսա) քաղաքի անունից, իբրև գիտական բառ՝ տարածուած է բազմաթիւ լեզուների մէջ. օր. լտ. magnes, գերմ. Magnetstein, արաբ. مقناطيس miqnāṭīs, թրք. moqladəz (=ռմկ. մրխլատրզ)՝ նոյն նշ.— Հայերէնի յետին ձևերը յառաջացած են վերջի երկուսից։—Հիւբշ. 362։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

ՄԱԳՈՅՆ «թև» Հին բռ.=Բառ. երեմ. էջ 200. Մագ. գամագա.։

Նորագիւտ բառս ունի միայն Մէնէվիշեան, Գամագա. 33։

ՄԱԳՈՆ, ևս ՄԵՋՄԵՂ «յանդ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 200 (բ տպ. մեղմեղանդ). երևի ուզում է ասել թէ մագոն և մեղմեղ նշանակում են «անդ». և այս բառով պէտք է հասկանալ ո՛չ թէ «անդ, այնտեղ», այլ «անդ, հանդ, արտ», ինչպէս ցոյց է տալիս նախդիրը։

ՄԱՋ, ո, ի հլ. «գլխի կամ մարմնի մազ» ՍԳր. Ոսկ. եփես. սրանից մազագործ Բուզոյ լա. 20. մազապուր «մազից ագաւած» ՍԳր. Եւս. քր. մազեղէն ՍԳր. Եփր. ա. մն. մազեղ Կոչ. մազկոինչ «վերջին թելը հասած, հոգեվարք» Ոսկ. մ. բ. 1. մազմզուկ «թելատու արմատներ» Վստկ. անմազմզուկ Վստկ. սպիտակամազ Ոսկ. հս. բաւամազ Դամասկ. դեղձանամազ Ոսկիփ. ձաղկամազ Պղատ. հիթ. մազնատեսակ «մաղանման», որ մէկ անգամ ունի Գիրք. առաք. 190 ա. «ի ձեռն մազնատեսակ ջլացն որք են արմատացեալք ի գլուխն»։ ենթադրում է մազն ձևը, բայց անշուշտ ազդուած է մզնատեսակ բառից (տե՛ս միզն)։ Մազոտ, մազմզոտ, մազխիլ (նոր բառեր) են։

Klaproth, Asia polygl. էջ 101 պրս. موی muy, լեթթ. և լիվ. matti «մազ»։ ՆՀԲ «որպէս թէ մած ի մորթն»։ Lag. Arm. Stud. § 1401 սեմական է կարծում։ Հիւնք. համարում է շրջուած ծամ բառից։ Հիւբշ. 310 դնում է ասորական փոխառութեանց շարքը և համեմատում ասոր. ܡܙܐ mezzē «բարակ մազեր» և պհլ. مزیا mazia (?) «մազ» բառերի հետ։ Patrubány IF 14, 56 յն. μόσχος «մոզի» բառին ցեղակից՝ իբր «ճիւղ, ոստ»։ Այս մեկնութիւնը յիշում և մերժում են Boisacq 646 և Pokorny 2, 301: Բայց Scheftelowitz KZ 54 (1927), էջ 232 նորից է դնում յն. μόσχος «ընձիւղ», լտ. merges «խուրձ», mergae «եղան»։—Բառիս նման են հընչում չեչէն. mâž, կուբ. կայ. ակ. խիւր. muçur, վար. muçuy, արչ. boçor, ավ. meyež, migež, miš «մօրուս», դիդ. mešloga, անդ. mikašu, bikašu, ինգ. megaš, սամոյէդ. munoç, mutida, monuça, mudut, mulsen են, խալխա maç, կարաբուլակ maj «մօրուս», որոնց արմատը Klaproth, Kaukas. Spr. էջ 15 դնում է ma, me, mi, mu. բոլորն էլ պատահական են։ Այսպէս է նաև չին. 毛 mao «մազ» հոմանիշը։

ԴԻՒ.—Ալշ. Ախց. Ասլ. Դոր. Երև. Խրբ. Կր. Համշ. Մկ. Մշ. Մրզ. Նախ. Շմ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. Տփ. մազ, Ղրբ. մազ, մոզ, Ջթ. մօզ, մոզ, Ագլ. Հճ. մօզ, Սվեդ. մուզ։ Նոր բառեր են՝ մազակալել, մազաճաճ, մազաշարժ, մազաչափ, մազերաւոր, մազերկայն, մազթափ, մազլաք, մազխոտ, մազկապ, մազկաւոտ, մազկեր, մազկուլ, մազկլիլ, մազման, մազպլոց կամ մազմլոց, մազուր, մազփոխել, մազքաշ։

ՓՈԽ.—Վրաց. მაზმანი մազմանի «չուան շինող», թրք. գւռ. կս. Եւդ. Ասն. (ինչպէս և Աստանայի Թրքախօս Յունաց բարբառով) مازمال mazman «մազման, այծի մազ մանող և այծի մազից պարկ են գործող արհեստաւոր» (Բիւր. 1898, 713, Յուշարձան 330)։—Հյ. մազկապ ձևից է փոխառեալ թրք. نزکب nezgeb «մազի կապ, ծամկալ» (Կամուս, թրք. Թրզմ. Գ. 325 և Բ. 658)։

ՄԱՋ «նոտան ծաղիկ, ճուլինար» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1921։

ՄԱՋ «ձեռ, խարազան, գաւազան». մէկ անգամ ունի Փիլ. լիւս. «Հեղգ ձի մի... պատճառէր կաղալ. մինչև բուժողացն մազովքն դարձեալ՝ քան զդանդաղանս ի վեր հղև»։

ՆՀԲ «որպէս յն. μάστιξ «խարազան»։

*ՄԱՋԱՏ «խաղալիք». յետին հայկրէնի յատուկ բառ, որ գոնում եմ մէկ անգամ գործածուած Կոստ. Երզն. 159. «Զհամբերելն ի հետ պահէ զերդ հրեղէն թուր մի փոյատ, որ չլինիս հաքր ատենիս, որ չարնէ զօրն զքեզ մազատ»։

=Պրս. مزاد mazād «խաղ ինչ»։—Ա՛ճ. Պօտուրեան, հրտր. Կոստ. Երզն. էջ 52 մեկնում է արաբ. «նախանձ», որ անյարմար է իմաստով։

*ՄԱՋԱՏ «աճուրդ» Անսիզք 79. գործածական է նաև արդի ռամկականում։

=Արաբ. مزاد mazād «աճուրդ», որ յառաջանում է زيادة ziyāda «աւելի, աւելացում» բառից։—Ա՛ճ.

*ՄԱՋԱՐՈՎՔ. մէկ անգամ գործածուած է Յոր. լր. 32 հատուածում. «Բանայցե՞ս զմազարովքն ի ժամանակի իւրում».—Ոսկիփ. մեկնում է «մթատեսակ աստեղն, զոր մազարովք կոչէ».—Շիր. գրում է նազարովք կամ նազարօք և համարում է «աստղ»։—Իբրև աստղի անուն ունի նաև Վրք. և վկ. ա. 682. «Բայց այլ աստեղք... որպէս արուսեակն և մազարովքն և ալաւունքն և Հայկն»։—Հմմտ. նաև Սարգ. յուդ. Ի. էջ 650. «Իսկ մազարովքն ամենևին ո՛չ տեսանի. երբեմն որ գիշերավարն է՝ առաւօտուն աստղ լինի. և այլ փոխանակ նորա՝ գիշերավար. և այսպէս իբրև ի շփոթման են գնացք նոցա և միշտ մոլորական շրջին, ուստի և զանունն ընկալան»։

=Սբր. מזרות mazzārōθ բառն է, որ նոյն է מזלות mazzālōθ ձևի հետ և նշանակում է «համաստեղութիւն, կենդանակերպ, մեծ արջ, բոյլք, լուսարեր կամ ուրիշ մի աստղ» բուն զանազան մեկնիչների. փոխառեալ է բաբել. mazzaltu բառից։ Մեր ձևը յառաջանում է երր. բառի յունարէն μαζουρωθ տառադարձութիւնից (Sophocles 727ա), որի դէմ անշուշտ կար նաև *μαζιρώθ ընթերցուածը, ուր α փխ. ου համապատասխան է թէ՛ հայուն և թէ երբայականին։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՄԱՋԴ «պինդ, խիտ, ամուր». նշանակուած է Անյ. հց. իմ. մի ձեռագրի լուսանցքում՝ իբրև բացատրութիւն համանիշ սուր բառի. նոյն է նաև մազդ «հաստ» Քուչ. 47 (Հա՛յ իմ մազդ ուռի մորճիկ, չորանա՞ս թէ զիս մոռանաս). որից մազդութիւն «թանձրութիւն» Շիր. մասուրիւն, մասաւնութիւն «հաստատութիւն, ամրութիւն» Մծբ. ունինք նաև մասուրիւն «համբերատարութիւն», որ չորս անգամ իրար հետևից գործածում է Տաթև. հարց. էջ 584՝ հետևեալ ձևով. «Հիզութիւնն նոյն է ընդ մասուրիւնն. զի ասեն թէ մասուրիւն է որ ոչ զգայ զդառնութիւն ինչ սգոյ. և մասուրիւնն նոյն է ընդ համբերութեանն. զի համբերութիւնն է տևումն մարմնաւոր նեղութեանց, իսկ մասուրիւնն տևումն նախատանաց» (իբր «դիմացկանութիւն»)։

=Արևել. իրան. mästa «մեծ» (MSL 20, 10), որ զնդ. masita-, masit- «ընդարձակ, տարածուն, մեծ» բառն է։ Այս բառը ևթէ ձևով ու իմաստով շատ յարմար չէ վերի մազդ բառին, ընդհակառակը շատ համապատասխան է զուտ մասա ձևին, որ տե՛ս տակը։—Ա՛ճ.

ՆՀԲ մազդութիւն մեկնում է «որպէս թէ մածութիւն, մատղումն կամ մասուրիւն, այսինքն հաստութիւն»։ Lag. Ges. Abhd. էջ 31 զնդ. masita «մեծ, աճած»։ Karst, Յուշարձան 406 սումեր. meš, miš «բազմութիւն»։

ԳԻՒՐ.—Խրբ. ՀՃ. Մլթ. Սվ. կայ մասա «մեծ, հաստ», որից մասա ասեղ «մեծ կամ հաստ ասեղ»։ ԳՔ դիտէ նաև մասուռ «երկաթէ մեծ մուրճ, կռան», որ այլուստ ինձ ծանօթ չէ։

*ՄԱՋԴԵՁՆ, ե հլ. (-զան, -զուեմ, -զանց) «զրադաշտական» Բուզ. Խոր. որից դեն մազդեզանց (կամ նաև օրէնք, աղանդ մազդեզանց) «զրադաշտական կրօնը» Ագիշ. Բուզ. Խոր. մազդեզական «զրադաշտական կրօնին վերաբերեալ» Արծր.։

=Պհլ. (արձանագրութեանց մէջ) mazdēsn կամ mazdayasn «մազդեզն», պհլ. dēn-i-māzdēsnān (կամ

māzdayasnān) *«գէն մազդեզանց կամ մազդեզական»*, պազ. dīn-i veh-i mazdayasnān *«բարի դենն մազդեզանց»*. յն. տառադարձութեամբ՝ Μασδασνου (սեռ. հոլով), փարսի mazdayasn. հնագոյն ձևն է զնդ. mazdayasna- *«մազդեզն, զրադաշտական»*, māzdayasnī- *«մազդեզական»*, daēna māzdayasniš *«դենն մազդեզական»*. բուն նշանակութիւնն է *«Մազդային (Արամազդին) պաշտող»*։— *Հիւբշ. 190։*

ՀՀՔ մեկնում է «Արամազդայ ազն»։ ՆՀՔ սրա հետ «որպէս և մէզիտ՝ բառ պրս. է կիրթ յաղանդն, որպէս ծծնալ զամենայն ուսումն դնին. իսկ մազդէեսնան է որմզդապաշտ»։ Justi, Zendsp. *223 բ զնդ.* mazdayasna- *ձևի տակ։*

ՄԱԶԴԵԿԱՆ *«ամսուայ վեցերորդ օրը». ունի միայն Քաջունի Բ. էջ 101 և Դ. 154, որից առնում է նաև ԳԲ. վկայութիւնը անյայտ է։*

ՄԱԶՈՐՏՆ *«մարմնի յօշոտուած կտորներ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած ԺԴ դարի մի արձանագրութեան մէջ, հրատ. Ալիշան, Շիրակ, էջ 34. «Գտի ի խորագոյն հորի քարաթաղ արարած. ի մազորտնո արենաթաթախ մարմնոյն ոչ կարէի ծանել զնա»։ Սուգելի!*

***ՄԱԶՏՈՔԻ** *(գրուած նաև մազտաք, մազթաքէ, մազտաքի, մազդիքի, մաստաքէ, մազդիկ) «ծամոն, ձուի, կիւ» խոր. աշխ. 600. Մխ. դտ. 326. Վստկ. 89, 127, Միխ. ասոր. 80. Անկ. զիրք առաք. 55 (վերջինս մազդիկ ձևով). «հնդկի ծառ՝ որից ծամոնն է հոսում» Վստկ. էջ 143. (ընդարձակ տե՛ս* Seidel *Մխ. բժշ. § 237)։*

=Յն. μαστίχη «ծամոն» բառից փոխառնալ. այս էլ գալիս է յն. μαστάζω «ծամիլ», μάσταξ «բերան» (ծամող) ձևերից, որոնք ծագում են հնխ. menth- *«ծամիլ» արմատից (տե՛ս* Boisacq 613)։ *Յոյն բառը տարածուած է շատ ուրիշ լեզուների մէջ, ինչ. լտ.* mastiche, *գերմ.* Mastix, *ֆրանս.* mastic, *արաբ.* مصطكى maṣṭakī, *քրդ.* mstékki՝ *նոյն նշ։ —Հիւբշ. 362։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

ԳԻՒ.—Ննխ. մազդաքի, Ջղ. մազդաք, Տփ. մաստակ, Մշ. մազդակի, Ախց. Կր. Հճ. Տիգ. մոզդոմի, Սեբ. մոզդոմ, Խրբ. մոզդէքի, Զթ. մէզդէքի։

***ՄԱԶՐԱՅ** *«արտօրայք, շրջակայ մշակելի հողեր». յետին ժամանակի բառ. համմտ. Այգին իւր մազրովն. Արձ. 1243 թ. (Վիմ. տար. 85).—Զգեղն Մեծոփ իւր մզրայիւքն. Արձ. 1291 թ. (Վիմ. տար. 133)։*

=Արաբ. مزرعة mazra'a *«արտ, հանդ», որ ծագում է* زرع zr' *«ցանիլ» արմատից։ —Աճ.*

ՄԱՔ *«հրամայական կամ պատշաճ». ունի միայն Բառ. երեմ. էջ 200։*

***ՄԱՔԵՄԱՏԻԿՈՍ** *«ուսումնական, ուսող» նաև. քր. բ. արդի գրականում սովորական են մաթեմատիկա «ուսողութիւն, չափագիտական գիտութիւնները», մաթեմատիկոս «ուսողագէտ, չափագէտ», մաթեմատիկական «ուսողական» են։*

=Յն. μαθηματικός «ուսումնասէր. 2. ուսողական, չափագիտական. 3. չափագէտ». գալիս է μάθος, μάθημα «ուսում, գիտութիւն» բառից. տարածուած է բազմաթիւ լեզուների մէջ. ինչ. լտ. mathematicus, *ֆրանս.* mathématique *են. ռուս. (չունենալով θ=th= =p ձայնը)* математика, *որից էլ Կովկասում յաճախ գրւում է մատեմատիկա։*

Ուղիղ մեկնեց ՆՀՔ։

ՄԱՔԻԼ *«մանր ոջիլ՝ մեծ քան զանիծ» Լծ. նար. (մէկ անգամ՝ իբրև բացատրութիւն բծիծ բառի)։*

Bugge, Btrg. 17, KZ 32, 78 *փոխառնալ է դնում թուշ.* maç *«ոջիլ» բառից. հայերէնի մէջ -իլ նուազական մասնիկ է. համմտ.* ոջ-իլ, կար-իլ, տես-իլ։ Patrubány *ՀԱ 1908, 277 -իլ նուազականով՝ լտ.* mando *«ծամիլ» բառի հետ։*

ԳԻՒ.—Բզ. Մկ. Վն. մաբիլ, Ալշ. Մշ. մաթիլ «մանր ոջիլ»։

ՄԱՔՈՒՋ *«կիսամայրենի մի պտուղ է. տճկ. հոճա եմիշի, լտ. arbutus», որից մաքզի «նոյնի ծառը» Վստկ. 155. ունին միայն ՓԲ և ՀԲուս. § 1930՝ մաթուզի, մաթուզենի ձևերով, որոնք չկան բնագրում։*

Դիմ.—Զբ. մաթուզ, *Սվեդ.* մթլօս, *իսկ ծառը կոչւում է Զբ.* մաթզի, *Սվեդ.* մթսինա:

ՄԱԹՐԻ *«ինչպէս». ունի միայն Բառ. երեմ. էջ 200:*

ՄԱԾԱՒՈՒ *«սպասաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 200, «խոհարար» նորայր, Բռ. Ֆրանս. 333 ա. որից* մաժառուստուն *«ծառաների սենեակը». մէկ անգամ գտնում եմ գործածուած Սմբ. պտմ. էջ 88. «Եղև զարմանալի նշան ի բերդն սորա Վահկայն. ցոլաց կայծակն ի մաժառուստանն. եղարկ զարծաթի սինին և տարաւ ի տան մէկ այլ կողմն». (միևնոյն դէպքը պատմում է Վահր. ոտ. 194, բայց սրա դէմ որևէ բառ չունի. նոյնպէս Սամ. անեց. 121 «Կայր առաջի իւր արծաթի սկուտեղ մի և այն յանկարծակի թռեաւ և գնաց յանկիւնս տանն»):*

Մոսկուայի հրատարակութեան մէջ, էջ 74՝ գրուած է գլխատառով՝ իբրև յատուկ անուն (Մաճարիստա՞ն): Շահնազարեան, անդ, ծան. 38 համարում է անճոռնի տառադարձութիւն լտ. մայեոր դոմ (=ֆրանս. majordome *«իշխանի ծառաների գլխաւորը, ծառայապետ») բառից:*

Մաժիստոս *տե՛ս Մագիստրոս:*

***ՄԱԼ** *«ևզ, տաւար». մէկ անգամ ունի Մագ. քեր. 239=Երզն. քեր. Հոմանիշների մի շարքի մէջ, հետևեալ ձևով. «Առն, խոյ, գոնչակ, վիդոն, դուար, մալ. այսոքիկ արականք ի վերայ հօտից ասացեալք են նշանակութեամբք և այլք այսպիսիք»: Երկրորդ նշանակութիւնն է «հարստութիւն, ինչք», ինչպէս ունի յետնաբար Կոստ. երզն. 142 (Թէ ես գանձուց տէր և մալի): (Տե՛ս և յաջորդը):*

=Արար. مال *māl «ապրանք, ինչք, հարըստութիւն» բառն է, որ յետոյ առել է «ևզ, տաւար» իմաստը, ինչպէս որ կայ մինչև այսօր զանազան հայ գաւառականներում, բայց նաև թաթարական լեզուների մէջ. ինչպէս՝ չաղաթայ.* مال mal *«անային անասուններ», մինչև իսկ* aq mal *«ձի»,* qara mal *«ուղտ, կով, ոչխար» են (*Будаговъ, II. *էջ 199): Իմաստի զարդացման համար համմտ. Ղրբ.* ապրանճ *«ինչք. 2. արջառ», յն.* κτῆνος *«ինչք, հօտ, արջառ, ևզ, ոչխար», լտ.* mōbilis *«շարժական իրեր, կարասիք, ապրանք»>ֆրանս.* meuble *«կարասիք» և ռոման. գւռ.* muvel *«արջառ»* (MSL 21, 180): *Չինաստանի սահմաններում ապրող կիրգիզների մէջ կայ* ولکی ölgöy *բառը, որ նշանակում է չինական* yamba *կոչուած արծաթ դրամը և սակայն բուն իմաստն է* elli qoyun *«50 ոչխար»* Будаговъ 2, 393):—*Ա.Ճ.*

Նշբ մալել բայից հանելով մեկնում է «ոչխար արու մալեալ, թաղամաւոր... որպէս և յն. μῆλον «ոչխար»: Scheftelowitz BB 29, 46 *հհիւս.* smale *«ոչխար», գոթ.* smals *«փոքր», յն.* μῆλα *«ոչխար», հիւլ.* mīl *«անասուն» բառերի հետ՝ իբր բնիկ հայ: Նոյնը կրկնում են* Walde 458 *և* Pokorny 2, 296 *հնխ.* mēlo- *ձևի տակ: Դուար բառի յարաբերութեամբ և արաբերէնի համեմատութեամբ վերի ձևով մեկնում է Ա.Ճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 110:*

Գիմ.—Ախց. Կր. մալ «տաւար» ևն:

***ՄԱԼ** *«մի տեսակ հարկ կամ տուրք». գործածական է յետնադարեան հայերէնում. ինչ. Սմբ. պտմ. 40 (Եւ յղէ առ Դաւիթ բանս ամբարտաւանս և ասէ. Տո՛ւր ինձ մալ տասն տարւոյ և զորդիսն քո գրէ ծառայ ինձ). Մագաք. ար. 8 (Խոստացաւ տալ հարկս, այսինքըն մալ և թաղար). նաև էջ 10, 16 ևն. Օրբել. էջ 360 (Եւ արդ՝ մի՛ ոք իշխեսցէ իշխանութիւն վարել ի վերայ այս շինոյս և կամ հարկ կամ դիւան կամ մալ կամ այլ ինչ դնել ի վերայ). նոյն բառն է նաև Կիրակոս Գանձակեցի (տպ. վենետ. էջ 218). «Այլ և միւս ընդ այլ բազումս նոր եղաւ (հարկ) յԱրղունէն՝ մալի և խափչուրի»:*

=Թիր. mal *«արջառի վրայ դրուած հարկըն էր. իւրաքանչիւր 20 ընտանի անասունից մէկը և 80 ստակ էլ դրամ էին առնում» (տե՛ս Գ. Ալիշանեան, Արրտ. 1912, էջ 1121): Մագում է արար.* مال *māl բառից. որ նշանակում է՝ «ստացուածք, ինչք. 2. ապրանք, վաճառք. 3. հասոյթ, եկամուտ. 4. դրամ. 5. տաւար»: Նոյն թիր. բառից փոխառեալ է նաև վրաց.* მალი *«փողով տուրք»:*

որից **ցցաձեղ** մեմալե «հարկահաւաք» (տե՛ս և նախորդը)։

Ուղիղ մեկնեց Պատկ. հրտր. Մաղաք. աբ. էջ 63։

+**ՄԱԼ** «մանրել, փշրել». արմատ առանձին անգործածական, որից մալել «մանրել, մաշել, ջարդել» Դան. Բ. 40 (հմմտ. ՀԱ 1914, 330). «կենդանին կոտել» ՍԳր. «մանրել, ուտելիքը ատամներով ծամել, աղալ» կնիք հատ. էջ 270, Զքր. կթ. Նիւս. երգ. Տօնակ. մալեալ «կոտած, ներքինացեալ» ՍԳր. աեմալ Փիլ. սամփս. աեմալելի Երզն. մաթ. 462. արմատը ներկայանում է նաև հետևեալ ձևերով. **ՄՈՒԼ–**, առանձին անգործածական. որից կազմուած են մլաղաց «ջաղացպան» Եփր. թգ. 368. Լմբ. ժբ. մարգ. էջ 212=գաբ. ժա. 7 (*մուլ «ջաղացք» բառից). կրկնութեամբ՝ մամուլ (տե՛ս առանձին) և մլմլել «շփել, քերել, այլայլել պէսպէս շարժմամբ» (օր. քուն լինի դիւրաւ, մլմլէ զերեսս և ձգտէ զձեռս. Նեղոս 655). մլուկ «փայտոջիլ» (տե՛ս առանձին).—**ՄՆԳ**, առանձին անգործածական. որից կազմուած են կ և մ ածանցիչներով՝ մեղ-կ և մեղ-մ (այս բառերի վրայ տե՛ս առանձին) և կրկնութեամբ էլ՝ մղ- «ցեց» (գործածական է Ագուլիսի բարբառում) և «մեղմ, հանդարտ» (գործածական է Ղարաբաղի բարբառում). իմաստի զարգացման համար հմմտ. առաջինի հետ մղմող (տե՛ս տակը) և երկրորդի համար՝ մալել «կակղել». (Մալեալ կակղէ զջերմութիւն հրոյ օդոյն հաւանութեամբ, Եղիշ.)—**ՄՈՂ**, որից կրկնութեամբ՝ մղմող «ցեց» (գործածական է միայն Ղզ. և Ղրբ. նշանակութեան զարգացման համար հմմտ. մի քիչ ցած).—**ՄՈՒԿ**, գոնւում է միայն գաւառականում. այսպէս՝ Մշկ. մուղ «ցորեն աղալը».—և վերջապէս **ՄԱՏԱՂ, ՄԱՏՂԱՇ**, որոնց վրայ տե՛ս առանձին։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mel- «փշրել, մանրել, ջարդել, աղալ» արմատից, որի համապատասխաններն են հայերէնի մէջ, մեղ< *mel, մող<*mol-, մուլ<*mōl, մալ<*mḷ-. ցեղակից լեզուներից գանագան ձայնդարձներով ունինք՝ սանս. mar- «մանրել, փշրել», mūrṇā- «աղացեալ», թոխար. melyem «ոտնակոխ անել», կամիս. mallanzi «աղում են», յն. μύλλω «ջարդել, փշրել, աղալ», μύλη «երկանդ», μύλος «երկանաքար», μυλωθρός «ջաղացպան», լտ. molo «աղալ», mola «երկանաքար», molīna «ջաղացք», գոթ. malan «աղալ», malma «աւազ», հբգ. malan «աղալ», muljan «փշրել», melm «փոշի», mēlo «ալիւր», մբգ. malmen «փշրել», նբգ. mahlen «աղալ», zer-malmen «փշրել», հիսլ. mala «աղալ», mjǫl «ալիւր», mǫlva «ջարդել», հիոլ. melim «աղալ», կիմբր. malu «աղալ», blawt «ալիւր», բրբտ. malaff «աղալ», հսլ. melją, mlěti «աղալ», ռուս. молоть, լիթ. malú, málti «աղալ», míltai «ալիւր», լեթթ. milti «ալիւր», հ. պրուս. meltan «ալիւր», ալբ. miel «ալիւր» ևն, «ցեց» նշանակութեամբ ունինք հսլ. molь, ռուս. моль, լհհ. mol, սերբ. môlj, գոթ. malō, հբգ. milwa, նբգ. Milbe, հիսլ. mǫlr, որոնք համապատասխանում են մեր գւռ. մղ–մող և մղ–մեղ ձևերին, որոնց հետ նոյն է նաև մլուկն։ (Այս բոլորը բմբռնուած են իբրև «փշրող, փոշիացնող»)։ Հնխ. արմատից d, dh, t և այլ աճականներով աճած ձևերի վրայ տե՛ս մեղկ բառի տակ։ Հմմտ. նաև աղալ բառի տակ տրուած բացատրութիւնները (Walde 492, Boisacq 649, 43, 1025, Kluge 315, Ernout-Meillet 595, Trautmann 167, 168, Pokorny 2, 285—6):—Հիւբշ. 471 և IF Anz. 10, 46:

ՆՀԲ լծ. ճալել, պրս. mālīdan «շփել»։ Հիւբշ. KZ 23, 35 մեռանիլ ձևի հետ mar արմատից։ Տէրվ. Մասիս 1881 մայիս 5 և Նախալ. էջ 99 մաղ, մաղել, մամուլ ձևերի հետ mar «մաշել» արմատից, իբր պրս. mālīdan, յն. μύλλω, լտ. molo, լիթ. malti, գոթ. malan: Canini, Et. étym, 58 գոթ. malvjan, իսլ. melim: Հիւբշ. Adm. Stud. էջ 41 ունի ուղիղ մեկնութիւնը։ Հիւնք. յն. μαλάσσω «կակղել, տկարացնել»։ Autran, Sumér. et indoeur. էջ 84 հնխ. mel- = սումեր. ma «աղալ»։

ՓՈԽ.—Հայերէնի՞ց է արդեօք փոխառեալ արաբ. معل ma'l «մարդ կամ անասուն

կատել, ներքինացնել» (Կամուս, Թրք. Թրգմ. Դ. 350). *բայց հմմտ. եբր.* טול mvl «թլփատել»։

***ՄԱԼԱՋ** «անշափահաս մարդ, որի միրուքը դեռ եկած չէ». նորագիւտ բառ, որ երեք անգամ գտնում եմ գործածուած Մխ. դտ. 329 (ըստ երկու ձեռագրի). «Եթէ կոուին արք երկու և մինն մալազ լինի և մինն կատարեալ, և ձգէ մալազն և փախէ զմօրուք կատարելոյն, դատաստան լիցի՝ որ կարեն զըմալազին մազն երկու տարպայ»* (տե՛ս իմ Հայ. Նոր բառեր հին մատ. Ա. 65)։

=*Արաբ.* ملس malas *հոմանիշ ձևից, որ թէև ճիշտ այս ձևով չկայ Կամուսի մէջ (Թրք. Թրգմ. Բ. 294), բայց նոյնից են* املاس imlās «ոչխարի բուրդը թափիլ», ملاسه malāsa «հարթ ու ողորկ դառնալ», املس amlas «հարթ, ողորկ». *վերջինս գործածուած է Ս. Գրքի արաբերէն թարգմանութեան մէջ՝ «անմազ» նշանակութեամբ. այսպէս՝ Ծն. իր. 11 ունինք՝* ʻIsū axī عيسو أَخِي رَجُلُ أَشْعَرُ وَ أَنَا رَجُلُ أَمْلَسُ rajulun aš'aru va ana rajulun amlasu *(եղբայր իմ Եսաւ՝ այր թաւ է և ես լերկ). նշանակութեան զարգացման կողմից ճիշտ նոյն է հյ.* լերկ «ողորկ և անմազ» (տե՛ս այս բառը)։—Աճ.

Սոյն մեկնութիւնս հրատարակուած է նախ իմ Հայ. Նոր բառեր հին մատ. Բ. 290։

***ՄԱԼԱԹՐԱՅ** «ռէզէնէ, հոտոմ սամիթ» Գաղիան. (ըստ Բառ. երեմ. յաւել. 575), որ և* **մարաթրոն** *(ըստ ՀԲուս. § 2693)։*

=*Ծն.* μάραθρον, μάραθον, μάραθος, *որից և լտ.* marathrum՝ *նոյն նշ.։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ (բայց սխալմամբ գրում է յն. μάραδον)։

ՄԱԼԱԽ «հիլ, կակուլայ, cardamomum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1931։*

[**ՄԱԼԱԽՈՒ** «եղիճ, urtica». *ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 592 բ։*

=*Պէտք է կարդալ* մոլախոտ։/

ՄԱԼԻԽ, ո *հլ. (յետնաբար յգ. գրծ.* մալխof) «հաստ չուան» *Մտթ. ժթ. 24. Մրկ. ժ. 25. Ղկ. ժը. 25. Պտմ. աղէքս. Յայտմ. վրիպակով գրուած է մամուլ ճաւրնտ. (Մինչև ի կտրել զմամուլս առագաստին)։*

=*Ասուր.* maxullānu «հաստ չուան», որի արմատական ձևն է xullānu «չուան» (Muss-Arnolt. Ass. engl. Handwb. *էջ 522ա և 315ա). Հայերէնի մէջ* x—l *շրջուելով դարձել են* լ—խ. *իսկ վերջաձայն* -nu-ի *անկումը նոյն է ինչ որ* gišrinnu>կշիռ։—Աճ.

*ՆՀԲ, ՋԲ և ԱԲ բառս դնում են նաև մալխ ձևով. սակայն սա ենթադրուած է մալխոյ սեռականից և գոյութիւն չունի. ուղղականն է միայն մալուխ, ինչպէս ունին Երզն. մտթ. Յայտմ։—ՆՀԲ և սրան հետևելով ԱԲ մալուխ բառը հասկանում են նաև «ուղտ» իմաստով։ Այսպէս նաև հներից ոմանք, ինչ. Բրս. մրկ. 83, 84. Դիւրին է մալխոյ, այսինքն ուղտու. ...Տէրն ասաց թէ մալխոն (!), որ է ուղտ. Դրնդ. 458։ Բայց այս բանը թիւրիմացութեան արդիւնք է։ Արդարև Մտթ. ժթ. 24, Մրկ. ժ. 25, Ղուկ. ժը. 25 «Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան» հատուածում մալուխ բառի դէմ յոյն բնագիրն ունի κάμηλος, որ նշանակում է «ուղտ», ինչպէս գտնում ենք Աւետարանի բոլոր նոր թարգմանութեանց մէջ։ Ուղտը ասեղի ծակից անց կացնելու համեմատութիւնը անշուշտ արևելեան ընթացիկ մի պատկեր էր, որ գտնում ենք նաև Ղուրանի մէջ (է. 38)։ Յիսուսի օրինակով Մուհամմէդ էլ ասում է. «Ամբարիշտն՝ որ հպարտութեամբն իւրով համարեսցի սուտ զվարդապետութիւն մեր, գոյէ զդրունս երկնից փակեալս։ Մոցէ նա անդր՝ յորժամ ուղտ մի անցանիցէ ընդ ծակ ասղան միոյ»։ Բայց մեր հայրերը նոյն յն. բառի տեղ գտնելով κάμιλος «չուան» կամ իրենք այսպէս կարդալով՝ թարգմանել են մալուխ «չուան»։ Ըստ Boisacq (էջ 403, ծան.) յունաց մէջ էլ ձգտում եղած է Աւետարանի κάμηλος «ուղտ» բառը կարդալու κάμιλος «չուան», իբրև տեղին աւելի յարմար։—Սխալւում են ՆՀԲ և միւսները կարծելով որ հյ. մալուխ նշանակում է «ուղտ», թէև սրանով մեր

*թարգմանութիւնը ուղիղ է գուրս բերւում։ Թէ մեր հայրերը յիշնալ չոյն բառը «չուան» են հասկացել՝ ապացուցում է նրանով, որ նախ՝ Ջալուխ բառը այլուր միշտ «չուան» նշանակութիւնն ունի. այսպէս՝ Ջնաւկնեաբն մալխօք իբր ի կղզւոջ կապեալ հանգուցանէին. Պտմ. աղէքս.—Կտրել զմալուխս առագաստին. Յայսմ.— մինչև ի կտրել զմալուխս (գրուած զմամուլս) առագաստին. Ճառընտ.։ Երկրորդ՝ հայ մեկնիչները գիտեն որ այս հատուածում «ուղտ»-ի մասին ակնարկութիւն կայ, բայց այդ վերագրում են ուրիշ լեզուների. այսպէս Մեկն. ղկ.—«Յոյնն ուղտ ասէ մալխոյն, որ նշանակէ զթիւրս և զկորուսեալս վատթար գործովք»։ Երզն. մտթ. 412.— «Ջուղտն մալուխ կոչէ արաբացին և այլք զնաւատոռն (տպ. նաւատորմիլ) նաւու ասեն մալուխ»։ Այս վկայութիւնները ցոյց են տալիս՝ որ հյ. մալուխ «ուղտ» ձևով բառ գոյութիւն չունի։— ՆշՔ ստուգաբանելով բառս գրում է՝ «փոխադրութեամբ առուից լինի խամուլ, խամլ, այն է յայլ լեզուս յն. κάμηλος լտ. camelus, երբ. gamal, արաբ. Jamal»: Lag. Btrg. baktr. Lex. 46 զնդ. manōθri «գլուխ»։ Հիւնք. Բրք. մալախ «դոմէշի ձագ»։

ԴԻՒ.—երև. մալուխ, Ալշ. Մշ. մալոխ «փայտի կեռ կտոր՝ որ լուծի փոկին են անցկացնում, որպէսզի կապը չբացուի». Խոջ. մալօխ «փայտէ սեպ, որ գործածում են զանազան նպատակներով, ինչպէս չուանի կապը ամրացնելու, տրեխը ծակելու, էշ մխտելու ևն». վերջին առումից է մալխել «էշը խթանով խթել»։ (Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. 1788, էջ 107 ունի արդէն «սեպ կամ մալոխ, клинъ»)։

ՓՈԽ.—Բրք. գւս. Բորբոսմի malux «պարան, չուան» (Շիրակ 1905, 425).—այս իմաստը՝ որ բառիս հին նշանակութիւնն է, հայոց մէջ պահուած չեմ գտել։

*ՄԱԼՈՒՄ «մահմեդական կրօնի կարդացուր, ուսուցիչ, իմամ» Մխ. առակ. սխալմամբ գրուած է մամուլ Շնորհ. եդես.։ =Արաբ. معلّم mu'allim «ուսուցիչ, վարժապետ»։—Աճ.

ՆՀՔ մեկնում է իբր արաբ. իմամ, իւլամէ, որոնք ձևով համաձայն չեն մերին։

ՄԱԽ «նախանձ». արմատ առանձին անգործածական. որից մախալ «նախանձիլ, չարակնիլ» Բրս. վաշխ. և մախ. Խոսր. իգն. որ և մախել Մագ. գամագտ. (ՀԱ 1911, 559). մախաճ «նախանձ» Առ. որս. Լմբ. մախող Լմբ. մախողական Երզն. մտթ. մախամարդակ Գր. տղ. էջ 18. մախայոյզ Կաղանկ. այս բառերից ո՛չ մէկը չէ գործածուած Ոսկեդարեան գրականութեան մէջ։

ՆՀՔ լծ. ռմկ. ոխալ և մխալ։—Հիւնք. յն. μεγαίρω «նախանձիլ»։ Ուրիշ է պրս. مخيلن maxidan «շարժիլ, խըլըրտիլ»։

ՄԱԽԱՋ (սեռ. -ի) «անառակ, լիրբ, սրիկայ» Փիլ. լին. 324. որից մախազութիւն «ցոփութիւն, անառակութիւն» Փիլ. լին. 318։

ՆՀՔ «որպէս թէ մարմնախազ, յն. μάχλος, μαχλάς «անամօթ»։

*ՄԱԽԱԹ «մեծ ասեղ, հերիւն, խթան» Վրք. հց. ա. 568. Մարթին. Ոսկիփ. որից մախթել «մախաթով կամ նշտարակով մարմինը ծակծկել, շառաել» Վստկ. 209 (գրուած մաղտել)։

=Ասոր. ܡܚܛܦܬܐ məxaṭṭāṯā «ասեղ», mexaṭ saqqā «մախաթ, քրձեղէն կարելու հատու ասեղ», արաբ. ماخات māxāt «հերիւն, ողորկիչ գործիք». ծագում է ասոր. ܚܛ xaṭ «ծակել, փորել» արմատից (Brockelm. 109ա)։—Հիւրշ. 310։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lag. Arm. Stud. § 1405:

ԴԻՒ.—Ախց. Գոր. երև. Կր. Հմշ. Ղրբ. Մկ. Ոզմ. Ննխ. Շմ. Սեբ. Վն. Տփ. մախաթ, Խրբ. մախադ՝, Մրզ. մախաթ, մխաթ, Ալշ. Մշ. մախատ, Ասլ. մախաթ, մախա՛, Տիգ. մխախթ, Հճ. մախօթ, Զթ. մախօթ, մախոթ, Զղ Սլմ. մխաթ, Ագլ. մխօթ, Սվեդ. մոխուր: Նոր բառեր են մախթիկ, մախթասեղ, մախթել «խոշոր խոշոր կարել», մախաթապետ ծծկ. «աւազակապետ»։—Բոլորովին այլ է Ռ. մա-

խաք «սրբան», որ փոխառեալ է թրք. ṭaqat maqat «հրաստանք» բառից. իսկ սա էլ ծագում է արաբ. مقعد maq'ad «նստոյ տեղի, հրաստանք, սրբան» բառից (արմատը قعود gu'ūd «նստել»).— պատահական նմանութիւն ունի եգիպտ. m-ḫt «յետոյ, յետևը»:— Հմմտ. նաև մխտել (տե՛ս վերը՝ կուտ բառի տակ)։

ՓՈԽ.—Վրաց. მახათი մախաթի, չեչեն. maxa, թուշ. max «ասեղ», ուտ. մախաթ՝ նոյն նշ.։

ՄԱԽԱՂ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «տոպրակ, պարկ, քուրձ» ՍԳր. «քրձեղէն շոր» Բրս. գորդ. «զամբիւղ, կողով» Վրք. հց. «գինու կամ ջրի կաշեայ աման» Վրք. հց. գրուած է նաև մաղախ, մաղխաղ։

ՆՀԲ յիշում է վրաց. մխէվալի։— *Հիւնք. արաբ.* մախալի «պարկ կերակրոյ դրաստու» (?)։ *Պատահական նմանութիւն ունին արաբ.* قلع qal', قلعة qal'a, قلّاع qallā' «հովուի մախաղ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 654—5), ասոր. ܡܠܟܬܐ malxātā «մախաղ», յն. μολγός «կաշիէ պարկ», հբգ. malaha, մրգ. malhe «կաշէ գրպան», հհիւս. malr «քսակ» (Boisacq 643): *Պատահական նմանութիւն ունի դարձեալ հնխ.* maq- «կաշիէ պարկ», որից ծագում են լիթ. mākas, լեթթ. maks «քսակ, պարկ, գրպան» ևն, որ տե՛ս Pokorny 2, 225:

ՓՈԽ.—Վրաց. მახალი մախալի, მახალაკი մախալակի «մախաղ, ձիաւորի երկաչեայ պայուսակ, տճկ. hեյալէ». (վերջինը հնթադրում է հյ. նուազական *մախաղակ ձևը)։— Ջուբինով[2] 662 ունի նաև վրաց.* მალაკი մալակի «խոշոր փոքր տոպրակ», որ համարում է հայերէնից փոխառեալ. բայց դա կարող է միայն ա՛յն ժամանակ ճիշտ լինել, եթէ մալակի կրճատուած լինի մախալակի ձևից։

ՄԱԽԱԼԻԵԼ «սպանել, խոցել», մէկ անգամ ունի Լծ. նար. «Փննհէս՝ որ զԱմբրի և զքասբի աշտէին մախաուհաց»։

ՆՀԲ յն. μάχαιρα «դանակ, մեծ դաշոյն»։ *Կայ նաև բոշայ.* մարկարել «սպանել, վնասել, ոչնչացնել»։ *Երկուսն էլ անյարմար են ձևի տարբերութեան պատճառով (յն. χ տալիս է f և ո՛չ թէ խ).*

ՄԱԽԻՉ «տգեղ» Փիլ. լին. 308, 323. Անյ. ստոր. Մագ. որից մախիզեալ Մագ. առաջին բառի «տգեղ» նշանակութիւնը պարզ երևում է հետևեալ օրինակից. «եթէ մախիզ, ոչ ևս գեղեցիկ» Անյ. ստոր.—*Հին Բռ. դնում է* մախիզ, մախիզեալ «անտեղեակ, անյայտ, աներևակ», *Բառ. երեմ. էջ 202* մաճիզ «տգեղ», *բայց և* մախաղ *(էջ 201)* «անյայտ, զաշաւակ, զաղիր, սով»։ *ՆՀԲ մեկնում է* «զզուելի, գարշ, աղտեղի, զազիր, անարդ». *այսպէս և ՋԲ. բայց ՋԲ (ինչպէս նաև ԱԲ) աւելացնում են* ամախիզ «յօժարութեամբ», որ սխալ ընթերցման արդիւնք է։ *Նորայր, Բանաս. 1900, 138* մախիզ և մախազ *իրար է միանցում և սխալ գոնելով* մախազ «անառակ» նշանակութիւնը, երկուսն էլ մեկնում է «տգեղ». *բայց միևնոյն ժամանակ* մախիզ, մախիզեալ *հասկանում է* «անյայտական, աներևակ»։ *Մէնէվիշեան, Մագ. դամագ. էջ 26, 98, 129 դնում է* մախիզ «անյայտ», մախիզեալ «անտեղեակ», որից նաև *Աճառ. ՀԱ 1923, 253*։

Մախր *տե՛ս Մարխ*։

ՄԱՆ «վահանակ, uncinus, կեռ», ունի միայն Ներսէսովիչ, *Բառ. լատին-հյ. էջ 585*։

+**ՄԱՆ** «կպած, կից, իրար միացրած» Ել իր. 25. Ոսկ. ևփես. 821. «խիտ, հոծ, թանձր» վեցօր. 60, 172. որից մածաճիլ կամ մածճուլ «կպիլ, կպչիլ, փակչիլ, թանձրանալ, կաթը մակարդուիլ» ՍԳր. Ոսկ. Թես. եփր. բ. մնաց. «յարիլ, միանալ (այրը կնոջ հետ)» Երզն. մտթ. էջ 399. մածչիլ Պիսիդ. վեցօր. 1651. մածաճել Նար. մածուցանել «կպցնել, միացնել, մակարդել (կաթ, պանիր ևն)» ՍԳր. զմածիլ «սաստիկ կպչիլ» ԱԲ. մածումն Նիւս. բն. մածան «կպչուն» Տօնակ. մածուած Պիտ. տախտակամած ՍԳր. թանձրամած Ոսկ. ես. և ա. Թես. բ. խաւարամած Ագաթ. ջրամած Ագաթ. ճեղեղամած Ագաթ. դանդաղամած Բ. մկ. ա. 20. մառախլամած

Մծբ. ստուերամած *Ագաթ.* գետնամածնալ *Շար.* ծխամած *Ճառընտ.* կրամած *Ճառընտ.* խեամած *Նշ. եզեկ.* հրամած *Բենիկ.* ձեռնամած *Պարգ.* մածուն *Ոսկիփ. Մագ. և Երզն. քեր. (վերջինիս համար հմմտ. Մածուցեր գիս իբրև զպանիր. Յոբ. ժ. 10. Մածաւ որպէս կաթն սիրտ նոցա. Սղմ. ճԺը. 70. պրս.* māsīdan *«մակարդել»* և māst *«մածուն», թրք.* yoγurmaq *«շաղախել, շաղուել»* և yoγurt *«մածուն», ֆրանս.* cailler *«մակարդել, թանձրացնել»* և lait caillé *«մածուն»), մածուցիկ (նոր բառ) ևն։*

=Բենիկ հայ բառ՝ հնխ. mag´- *«շաղախել, մածուցիկ խմոր շինել» արմատից. ցեղակիցներն են՝ հսլ.* mažǫ, mazati *«օծել, քսել»,* mazĭ *«օծանելիք, սպեղանի», ռուս.* мажу, мазать *«օծել, քսել»,* мазь *«սպեղանի», նաև հսլ. և ռուս.* масло *«կարագ, իւղ», յն.* μαγίς *«շաղախուած խմոր, հաց»,* μαγεύω *«հացթուխ»,* μάγειρος *«խոհարար» (բուն նշանակում էր «հաց շաղուող»),* μάγμα *«չոր սպեղանի»,* μάκτρά *«խմորի տաշտ» (>հյ. մակաւայ), հիռլ.* maistre *«խնոցի», բրետ.* meza *«շաղուել», միռլ.* maistir *«խնոցի հարել», կիմր.* maedd *«կռուիլ, իրար խառնուիլ», հսաքս.* makōn *«շինել, կառուցանել» (հմմտ. հյ. տախտակամած), անգսք.* macian, *հդգ.* mahhōn, *գերմ.* machen, *անգլ.* make *«անել, շինել», գերմանականից փոխառութեամբ՝ ֆրանս.* maçon *«որմնադիր» (նախապէս նշանակում էր «տան համար կաւ ու ցեխ շաղուող»)։ Նոյն արմատի *māq- և *menq- ձևերից են գալիս սանս.* máčatē *«փշրել», յն.* μάσσω *«շաղուել», μαχαρια «ջրով և ալիւրով շինուած մի տեսակ կերակուր, խիւս», լտ.* mācero *«շաղուել, տրորելով՝ ճմռելով կակղացնել»,* māceria *«պատ, ցանկապատ», լիթ.* mākt *«ճնշել, նեղել», լիթ.* minkyti *«շաղուել»,* minksztas *«կակուղ», հսլ.* męknąti *«կակղիլ»,* mękŭkŭ *«կակուղ»,* mąka *«ալիւր. 2. չարչարանք». բուլգ.* mačkam *«շաղուել», չնխ.* mačkati *«ճմռել», գերմ.* mengen *«իրար խառնել» են* (Boisacq 597, Trautmann 173, Pokorny 2, 226—7, Walde 451, Ernout-Meillet 546)։ *Հնխ. արմատի բուն նշանակութիւնը լաւագոյն ձևով պահած է հայերէնը, որի ցոյց տուած զանազան առումները գեղեցիկ կերպով միացնում են միւս լեզուների երևան հանած նորանոր նշանակութիւնները։*

Հներից Մագ. քեր. 228=Երզն. քեր. ճիշտ են ստուգաբանած մածուն բառը. «Մածուն՝ քանզի մածեալ է, սոյնպէս և անուանի»։—Müller SWAW 42, 254 *սանս.* maǰǰ *արմատի հետ։ Պատկ.* Изслед. *15 նոյն ընդ մատզիլ և պրս.* māst *«մածուն»։* Lag. Arm. Stud. § 1406 *յն.* πῆγμα *«մակարդ» և հյ. մակմասնիկը։* Canini, Et. étym. *էջ 157 մածնուլ=պրս.* makhīdan *«կցել, միանալ»։ Հիւբշ.* Arm. Stud. *էջ 41 և* Arm. Gram. 471 *պատահական է համարում սանս.* mástu- *«թթու սեր», պրս.* māst *«մածուն»,* māsīdan *«մակարդել», հյ. մազտիլ են։* Horn § 959 *ասում է թէ հյ. մածուն, մածանիմ, ինչպէս և բելուճ.* maδay *«մակրդել», որ Հիւբշ.* ZDMG 44, 561 *համեմատում է պրս.* māst *«մածուն»,* māsīdan *«մակարդիլ», սանս.* mástu- *«թթու սեր» բառերին, ձայնապէս չեն համապատասխանում։ Ուղիղ մեկնութիւնը առաջին անգամ արտայեց* Lidén BB 21 (1896), 99, *որ մածանել և մածուն միացնում է հդգ.* mahhōn, *հանգլ.* macian *ձևերին. այս բառերը պատկանում են հնխ.* mag´- *արմատին։ Հսլ.* mažǫ, mazati *ձևերին միացրից յատկապէս* Meillet MSL 10 (1898), 279: *Հինք. մակարդ բառից։* Scheftelowitz BB 29 (1905), 30 *բելուճ.* maday *«մածուն», մրգ.* matte, matz, *ֆրանս.* maton *«լոռ», լտ.* madeo, *յն.* μαδάω *«թրջուիլ, խոնաւանալ» բառերի հետ։* Charpentier KZ 46, 38 *ասում է թէ մածուն=պրս.* māst *են իսմբը, որ Հիւբշ. 472 մերժում է, պէտք է ընդունիլ։ Առանձին յօդուած ունի բառիս վրայ* Meillet MSL 19, 122—3, *ուր հաստատում է նորից վերի մեկնութիւնը, հնխ.* mag´- *արմատից։ Այնուամենայնիւ* Pokorny 2, 226—7 *մերժելով թէ՝* Meillet-*ի այս մեկնութիւնը և*

թէ՛ Charpentier-*ի մեկնութիւնը (= հնխ.* mozgho- *«ուղեղ» ձևի տակ* Pokorny 2, 309), *ընդունում է էջ 231 հնխ.* mad- *«թաց» արմատի տակ՝* Scheftelowitz-*ի մեկնութիւնը։ — Պատահական նմանութիւն ունին ասոր.* ܡܣܬܐ masθā *«մակարդ», պրս.* ماست māst, *քրդ.* māst, māzd, *գնչ.* mast *«մածուն», պրս.* māstū, māstūna *«չորթան», իսլ.* misa *«թան», նորվ.* mysse *«շիճուկ», շվեդ.* mysa *«շիճուկ»,* messe *«թան»,* myssje *«թանը քամելուց առաջ շինուած թարմ պանիր» (տե՛ս* A. Sjögren, Osset. Stud. *էջ 601, յիշուած մեր բառերի հետ), արաբ.* مضة maḍa *«թթուած կաթ» (Կամուս, Քրք. Քրդմ. Բ. 447)։ Պատահական պիտի լինին նաև ասոր.* ܡܙܘܢܐ māzonā, *արամ. և երր.* מזון māzōn *«կերակուր, ուտելիք, սնունդ», որոնք սեմական լեզուների մէջ ստոյգ մեկնութիւն չունին (տե՛ս* Gesenius, 1910, *էջ 406 բ) և ի հարկին կարող են հայերէնից փոխառեալ լինել։ Իմաստի զարգացման համար հմմտ. Քրք.* qatəq *«հացի հետ ուտելու որևէ բան», արևել. Քրք.* qatəγ *«մածուն»։*

ԳԻՒ.—Բայական ձևով ունինք միայն Մշ. մածնիլ.—*այլուր դրեթէ ամէն տեղ պահուած է* մածուն *բառը. այսպէս՝ Ախց. Դոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Սլմ. Վն. Տփ.* մածուն, *Ալշ. Զթ. Խրբ. Հճ. Համշ. Մշ. Ննխ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* մաձուն, *Ասլ.* մաձիւն, *Ոգմ.* մածօն, *Սվեդ.* մձձօն։ *(Պլ. այս բառը ջնջուած է՝ փոխանակուելով Քրք.* boγurt *բառով. պահուած է «մածուն ծախեմ» մանկական խաղի անուան մէջ, բայց այստեղ էլ արտասանւում է* մաջուն, *անծանօթ դարձած* մածունը *փոխանակելով Քրք.* majun *սովորական բառով)։ Նոր բառեր են* մածնաբերդուն, մածնալաւաշ, մածնաշոռ, մածնաշոռ, մածնակարագ, մածնահամ, մածնասեր, մածնապուր, մածնախսուկ, մածնեսպաս, մածնահաւ, մածնապաղ, մանենատուն *են։*

*ՓՈԽ.—*Մածուն *բառի կազմութիւնը հայկական լինելով՝ մեզանից են փոխառեալ վրաց.* მაწონი մածոնի *«մածուն», Քրք.* mazun *(հմմտ. Թուրքն փոխան մածնի՝* մազուն *ասէ. Ոսկիփ.), յն.* μαζοῦν *(Չի ոչ էր սովորութիւն յունաց իւղ գործել և կիթ և ուսեալ ի մէնջ զմածուն և նովին անուամբ կոչեն զնա, ոչ գիտելով զառուգաբանութիւն, եթէ մածուն՝ քանզի մածեալ է, սոյնպէս և անուանի. Մագ. քեր. 228 = Երզն. քեր.)։ (—Այլ է թերևս մինդր.* მარწყინი մարծվենի *«մածուն». տե՛ս* Caucasica 4, 13)։— *Յիշուած ազգերի մէջ կարող է ո՛չ միայն հայ բառը, այլ և նրա հետ նիւթը կամ մածուն պատրաստելու եղանակը Հայաստանից մըտած լինել, ինչպէս որ այդ բանը տեղի է ունեցել վերջին ժամանակներս ուրիշ տեղեր.—Ռուսները Կովկասում վրացիների միջոցով ծանօթանալով մածունին՝ նրանցից առել են* мацони *բառը (Մուրճ 1903, 173), որ հայկական փոխառութիւն է. Նոր-Նախիջևանում ուղղակի հայերից փոխ են առել* мацунъ *«մածուն»։ Բոլորովին վերջերս Կասպրացի մի հայ բժիշկ (Դր. Տատրեան) մածունը փոխադրելով Ամերիկայի Միացեալ Նահանգները՝ պատճառ եղաւ անգլ.* mazoon *«մածուն» և* mazol *«իւղով խառնուած մածուն» (Բուլակազմ մարդոց տրուելիք սրնունդ) բառերի փոխառութեան (տե՛ս իմ յօդուածը Բիւր. 1898, 386)։*

ՄԱԿ *«վրայ, վրան» Արիստ. և Անյ. ստոր. Դիոն. ածայ. Մագ. նշանակում է նաև «կըրկին, երկու» Հին բռ. (Մակ. ի միոնն մէկ այլ յաւելուլ). գրուած է* մագ. (մագ թիւ *«կրկնակ թիւ, երկու թիւ» Մագ. գամագտ. տե՛ս Մէնէվիշ. Գամագտ. 34)։ Յետոսկեդարեան յունաբան հեղինակների մօտ դարձել է շատ սովորական նախամասնիկ, իբր համապատասխան յն.* ἐπι- *«վրայ» մասնիկին. հմմտ.* մակագրութիւն = ἐπιγραφή, մակալեզու = ἐπιγλωττός, մակալինիլ = ἐπιγίνομαι, մակակոչել = ἐπικαλέω, մակացութիւն = ἐπιστήμη, մակբայ = ἐπίρρημα, մակեառդ = ἐπίτριτος *են։ Այստեղ է պատկանելու նաև* մակաս *«յայտնի», որից* մա-կառուրիւն *«բացայայտութիւն» Մագ. գամագտ. (ըստ Նորայր, Բանասէր, 1900, էջ 135)։ Նոր բառեր են* մակերես, մակերևութային, մակբայակերտ *են։*

=Կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է թում. համմա. թուշ. maK «վրայ, ի վերայ», որով կազմւում են զանազան ածանցներ։

Lag. Arm. Stud. § 1406 ուզում է միացնել նախորդ մած «կպչիլ ևն» արմատին։ Bugge KZ 32, 85 տուել է վերի մեկնութիւնը։ Patrubány SA 1, 17 հունգ. maga-s «բարձր» բառի հետ։ Karst, Յուշարձան 406 սումեր. mag՝ «գերագոյն», mug՝ «վրայ», 421 թիր. maq «բարձր», ուլգուր. maq-ut-mak «բարձրացնել»։

*ՄԱԿԱՂ «ոչխարների փարախ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են մակաղիլ «ոչխարների հանգչիլ՝ պառկիլը» ՍԳր. Ոսկ. մ. ա. 13, 15, Կոչ. 3. Եփր. ծն. էջ 30. մակաղել ՅՀ. իմ. մակաղեցուցանել Ճշ. մակաղատեղ «ոչխարների պառկելու տեղը» ՍԳր. այս վերջին բառի մէկ վրիպակն եմ կարծում Բռ. երեմ. էջ 202 մակեղտ «խաշնանիստ»։

=Ասոր. մի ձևից, որ աւանդուած չէ. կայ սակայն եբր. מכלה կամ מבלא mīkəlā «ցանկով պատած տեղ ոչխարների համար, փարախ». բառը բնիկ սեմական է և հանւում է եբր. כלא klā, ասոր. ܟܠܐ klā, արաբ. كلا kala, եթովպ. ከለአ kăla, ասուր. kalū «պահել, յետ պահել, բռնել, արգիլել» արմատից (տե՛ս Gesenius 1921, էջ 421. 345)։ Սեմականից փոխառեալ են նաև յն. μάκελα, μάκελες «ցանկով պատած տեղ», μάκελλον «մսավաճառանոց» (որից հյ. մակեղոն), լտ. macellum «նպարեղէնի շուկայ» (Boisacq, էջ 602)։—Ա.Ճ.

ՆՀՒ «գուցէ որպէս մակ աղի, այսինքն ի ձայն աղի հաւաքումն հօտից»։ Հիւնք. կաղամախ բառից է հանում։

ԳԻՒ.—Ղրբ. մակալ, Խն. Վն. մաղալ, Մկ. մողոլ «անասունների մակաղիլը, հանգիստ, դադար», Սվեդ. մոնգրոնիւց «ոչխարների մակաղատեղի», Ղրբ. մա՛կալ տալ, Վն. մաղալ տալ, Մշ. մաղալել, Ալշ. Մշ. մղլել «տաւարի մակաղելը», Ղրբ. մկա՛ղել «գառան նման ապշած զարմացած նայիլ», Ալշ. մաղա՛լ մաղա՛լ «բացագանչութիւն՝ որով անասուններին մակաղելու են կանչում»։

ՓՈԽ.—Ուտ. mägʸal «մակաղատեղի» (տե՛ս Մ. վ. Բարխուդարեան, Աղուանից երկիր և դրացիք, էջ 95, Թիֆլիս 1893), քրդ. مغل meyel «անասունի դադար՝ հանգիստ առած տեղը, մակաղատեղի» (Justi, Dict. Kurde, էջ 402 և JAs. VI, 19, 527)։

ՄԱԿԱՂՈՎԻ «մական, գաւազան, ճոկան». ունի միայն Բառ. երեմ. էջ 201. իսկ Յաւել. Գէորգ դպրի, էջ 553 գրուած է մակազովի։

ՄԱԿԱՆ, ի–ա հլ. «գաւազան, ցուպ» Նիւս. կազմ. Փիլ. սամփս. Եղիշ. դտ. որից մականել «ծեծել» Բէոդ. մայրագ. մականաբար «փայտանման» Փիլ. իմաստ. մականական Խոր. մականակիր Մամիկ. մականախաղ «ջիրիդ» (նոր բառ). արդի գրականում մական նշանակում է «թագաւորական գաւազան, գայիսոն»։

Մառ, Яфет. сбор. 1, 55 չէրքէզ. փխա, հյ. փայտ, բասկ. makilatu «ծեծել» բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունի ասոր. ܡܩܠܐ maq'ālā «գաւազան»։

Մական տե՛ս Մակ։

ՄԱԿԱՐԴ, ի հլ. «խախաց. մածունի մէջ բան» Բուզ. 14 (փխր. մեղքի համար ասուած է). վրդն. սղ. Խոսրովիկ. Գնձ. որից մակարդանալ «խմորիլ» Բժշ. մակարդել, մակարդիլ Սահմ. Խոսր. Նար. Երզն. մտթ. 403. մակարդէտ «խմորի՝ մէրանի ման» Բժշ. մեղսամակարդ Պիտ.։

Karolides, Γλ. συγκρ. 188 կցում է յն. μάσσειν «շաղախել», μαχαρία «ալիւրով և արգանակով շինուած ուտելիք», լտ. macero «ճմռել, շաղախել». Հայերէնը դնում է կապադովկ. μαχάρτι հոմանիշից փոխառեալ։ Հիւնք. մկրտել բայից։ Scheftelowitz BB 29, 59 -արդ մասնիկով կազմուած է դնում։

ԳԻՒ.—Ախց. Կր. մակարթ, Խրբ. Մշ. մագարդ՝, Ակն. Սեբ. մագարթ, Ասլ. մագարթ, մագար*, Ննխ. մագարթ, մագաշք, Տիգ. մագոռթ, Սվեդ. մագուրդ՝, Ջթ. մագոյթ, մագոռթ, Հճ. մագոյք, Ռ. մագըրթլ.—նոր բառեր են մակարդուիլ, մակարդոց։

ՓՈԽ.—Լազ. მაკათი մակաթի, მარკათი

մարկաթի «մածունի մակարդ» (Մաո, Грам. чан. էջ 165), կապադովկ. μαχάρτι «մակարդ», μαχαρτωμένογᾶ «մածուն» (Karolides, Γλ. συγκρ. էջ 91 և 188)։

Մակարդակ տե՛ս Արդ։

ՆՀԲ ուղիղ է մեկնում։ Հիւնք. մակարդ բառից է հանում։

ԳԻՒ.—Գրականից է փոխառեալ Ասլ. խելբիդ մագարթագը «խելապատա՞կդ» ծաղրական բացատրութիւնը։—Բայց ինչպէ՞ս պէտք է կապել մակարդուն եւդ. «հարթ, յղկուն» բառը։

***ՄԱԿԱՐԻ** «երանելի» վրք. հց. ա. 485 (չունի ՆՀԲ). որ և մակար «երանելի» Բո. երեմ. էջ 201։

=Յն. μακάριος, μακάρια «երանելի, երջանիկ»։

Վրք. հց. ա. 485 և ԱԲ գնում են յն.։

***ՄԱԿԴԱՂԻՈՍ** «մի տեսակ յունական կերակուր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պղատ. օրին. 14. «Զի մակդաղիայ՝ որ է կերակուր ինչ ճարպոյ, իւրաքանչիւր ոք բերէր»։

=Յն. μαγδαλιά որ ըստ Bailly նշ. «խրմորի զանգուած» և վկայուած է Գաղիանոս բժշկից (131—203 յ. Ք.). Պղատոնի այս հատուածը՝ որ յունարէնի մէջ կորած է, բայց պահուած հայերէն թարգմանութեան մէջ (համմտ. Platonis opera, Paris 1883, հտ. Բ. էջ 269), տալիս է մեզ վեց դար առելի հին վկայութիւն յունարէն բառի համար և մի քիչ տարբեր նշանակութեամբ։—Աճ.

***ՄԱԿԵՂՈՆ** «մսավաճառանոց». մէկ անգամ ունի եղն. իբր օտար բառ. կայ և սխալ գրութեամբ սեռ. մարկեղոսի Սոկր. 110։

=Յն. μάκελλον «մսավաճառանոց» բառից, որի ծագումը տե՛ս մակաղ բառի տակ։—Հիւբշ. 363։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՄԱԿՆԱԿ «խեցեղէն ըմպանակ կամ խոր». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 202։ Այս բառը մէկ անգամ գտնում եմ գործածուած Սրճ. չրչր. էջ 185. «Պատառեսայ դինուորն զկողն (Յիսուսի), ուստի արիւն և ջուր կայլակեաց. եթէ աչ թագաւորին զնդէղէնն ի վտակ արեան իւր կողին և կենդանի անուամբն կնքեաց զնա մակնտակ ի ժառանգաւոր ի դրախտին»։ Վերի մեկնութիւնը՝ որ տալիս է Բառ. երեմ., բնաւ յարմար չէ տեղին։ Ըստ իս վերոյիշեալ տողը աղճատ գրչութիւն է, որ պէտք է կարդալ «կնքեաց զնամակն կտակ ի ժառանգաւորութիւն դրախտին»։ Քրիստոս խաչի վրայ եղէգը՝ իբր գրիչ, իր կողի արիւնի՝ իբր թանաքի մէջ թաթախելով, կնքել է թուղթը և տուել իբր կտակ իր խաչակից աւազակին, որպէս զի ժառանգէ դրախտը։ Սխալը յառաջացել է զնա առանձին բառ կարծելով և երկու կ-երից մէկը ջնջելով. իսկ ի ժառանգաւոր ի դրախտին անմիտ ձևը յառաջացել է «ի ժառանգաւորութի՟ն» պատուագրեալ ձևի մէջ պատիւ ընկնելուց։ Թէ վերի սրբագրութիւնը ստոյգ է՝ երևում է Սրճեցու յաջորդ երեսներից, ուր աւազակը արդէն հասած դրախտի դուռը՝ իր ստացած «կտակը» պարզում է և խօսակցում հրեշտակի հետ. «Ի խոստովանելն իմ զխաչեալն Տէր ի վերայ փայտին... և յորժամ գրէր ինձ կտակ ժառանգել զդին (էջ 193). և ահա առեալ կտակ ժառանգելոյ դրդրախտն (էջ 197). Առեալ զկտակ իմ քերովբէն՝ ընթերցաւ (էջ 201)։—Իմ այս մեկնութիւնը կարելի է ստուգել Սրճեցու ասորի բնագրից. Ասսեմ. հտ. Ա. 325, թիւ 164—75, § 6-րդ (տե՛ս Տաշեանի ցուցակը)։—Իսկ թէ որտեղի՞ց հանելով Բառ. երեմ. այս մակնտակ ձևին տալիս է «խեցեղէն ըմպանակ» իմաստը, սրա համար ըստ իս աղբիւր է ծառացած արաբ. مقنده maqnada, որ կամուս, Բրք. Բրդմ. Ա. 800 մեկնում է «սախսի, խեցեղէն աման»։—Աճ.]

ՄԱԿՈՅԿ, ի-ա հլ. «նաւակ, կուր» Գծ. իէ. 16. Փիլ. Խոր. որից մակուկաշու Շիր. քրոն. մակուկել Մագ. Թղ. 145. նաւամակոյկ Փիլ. արդի գրականում մակուկածև, մակուկաւար, շոգեմակոյկ։

=Նոյն է ձևով պրս. کوک makōk «ոստայնանկի կկոց, մաքոք» բառի հետ. համմտ. թակոյկ<պհլ. takōk>պրս. کوک takōk «կկոց» նշանակող բառերը յառաջանում են «նաւակ» նշանակող ձևերից. օրինակ, գերմ. schiff «նաւակ. 2. մաքոք», ռուս. челнокъ «նաւակ. 2. մաքոք», սերբ. čûn «նաւակ» և

čûnak «մաքոք», ֆրանս. navette «մաքոք» <լտ. navis «նաւ» բառից, ևն՝ Լատ այսմ կարելի է ենթադրել, որ պրս. مکو makōk «մաքոք» բառը նոյնպէս ծագում է պհլ. *makōk «նաւակ» բառից, որից և փոխառեալ է հյ. մակոյկ:—Պրս. makōk «ոսոսայնանկի կկոց» ձևից են փոխառեալ նաև թրք. mekik, ն. ասոր. mäk'ük', վրաց. მაჭო մաճո, հյ. գաւ. մաճոճ, մճոճ, մճուճ, որոնք բոլոր նշանակում են «ոսոսայնանկի կկոց». այսպէս նաև արաբ. مكّوك makkūk «ըմպանակ (ըստ Будаговъ 2, 250 կկոցի ձևով ըմպանակ). 2. մի տեսակ չափ է», ասոր. ܡܟܘܟܐ makūqā «ըմպանակ. 2. մի տեսակ չափ»:—Հիւրշ. 191:

ՀՀԲ մակ «վրայ» բառից:—ՆՀԲ մագուգ (իմա՛ պրս. makōk) կամ մոյկ բառից: Lag. Arm. Stud. § 1407 կրճում է պրս. makōk, արաբ. makūk և ասոր. makūqā բառերին: Պատահական նմանութիւն ունի ասոր. ܡܟܘܬܐ mākūtā «նաւ»: Համմ. նաև Pedersen KZ 39, 378 և Berneker 167: Պատահական նմանութիւն ունի ասուր. makurru «նաւ, նաւակ» Muss-Arnolt. Ass. Handwb. 540:

ՄԱԿՈՆ կամ **ՄԱԿՈՆԱՏ** «ձախորդ, ձախող, փուճ» Հին բռ. նոյնը գտնում ենք Բառ. երեմ. զանազան ձևերով. ինչ. էջ 188 մակօն «ձախող», էջ 202 մակողատ «ձախօղ կամ փղուն«, էջ 212 միզօղ «ձախօղ»:

ՄԱԿՈՒ և **ՄԱԿ** «կուսան». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 202. բայց տե՛ս մաղկու:

ՄԱԿՈՒԱԾ «պատուիրան». ունի միայն Բառ. երեմ. էջ 202:

ՄԱԿՈՒԻՐԱՆ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Յհ. կթ. 314. ԵԹԷ պաշտօն մակուրան կուրանին Մահմետի հաւանեալ դարձցին:

Թևրևս կուրան բառի մ յաւելուածով աճած ձևն է, որ շատ սովորական է արաբերէնի մէջ և կոչւում է maṣdar-i mīmī (միմ սաուով անեղեալ). օր. sa'ādat կամ mas'adat «երջանկութիւն». (Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեան. Ա. էջ 118):

***ՄԱԿՏՐԱՅ** «տաշտ թրելոյ զալիւր, գհայց. ñuche». իբր նոր բառ ունի Նորայր, Բառ. ֆրանս. 650 բ և 934 բ. նոյնը կրկնում է Քաջունի, Գ. 156:

=Յն. μάκτρα «հաց թխելու տաշտ», որի ծագումը տե՛ս մած արմատի տակ (Boisacq 597, 603, 613):—Աճ.

ՄԱՀ, ու հլ. (կամ նաև -ուան, -ուամբ, -ուիվ, -ուանց) «մահ, մեռնիլը», լայնաբար՝ «կոտորած, ջարդ, ժանտախտ, ժանտամահ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. Բուզ. Կիւրղ. Թգ. որից մահաբեր ՍԳր. Կոչ. մահածին Ագաթ. մահակից Ոսկ. Եփր. մահահանգիստ Ագաթ. մահաչունչ Վեցօր. մահապարտ ՍԳր. Ագաթ. մահարձան ՍԳր. մահկանացու ՍԳր. Ոսկ. Նս. Եզն. Եւս. Քր. դառնամահ Եփր. խոստ. ժանտամահ Սերբր. անմահ Ագաթ. կիսամահ ՍԳր. խայտառակամահ Ագաթ. կոտամահ Ագաթ. բռնամահիկ Ճառընտ. խաչնամահ Մանդ. խեղդամահ Խոր. Պիտ. մահակապ «մահը կապած» Մ. Մաշտ. 1714, էջ 441. մահալից «մահով լցուած, թշուառ, մահկանացու» Բանք իմ. 35 (երկուսն էլ նորագիւտ բառ). վաղամահուկ Փիլ. մահոյ «մահկանացու» Եղիշ. առաք. 349 (չունի ՆՀԲ), ևն: Բառիս հնագոյն ձևն է մարհ, որ մի քանի անգամ գործածուած է Եփր. Վենետիկ 1832, հտ. Գ. էջ 12, 20, 21, 62, 147, 257 (տե՛ս ՀԱ 1912, 177. չունի ՆՀԲ): Հետաքրքրական ձև է մահիճաբողրոջ նար. տաղ.: Նոր բառեր են մահազդ, մահացութիւն, մահերգակ ևն:

=Պատկանում է հնխ. mer- «մեռնիլ» արմատին, որի ժառանգներն են նաև մեռանիլ և մարդ (ցեղակիցները տե՛ս այս բառերի տակ): Սակայն շատ պարզ չէ թէ հյ. մահ բնի՞կ է, թէ իրանեան փոխառութիւն: Իր ամենից մերձաւոր ձևերն են սանս. mṛtyú-, զնդ. mərəθyu- «մահ», հպրս. uvā-mršiyu «ինքնասպան», օսս. mälät' «մահ», գոթ. maúrþr, գերմ. Mord «մահ»: ԵԹԷ սրանց նախաձևը դնենք հնխ. mṛtu-, mṛtyu-, կրճատուած հյ. մարդ և ո՛չ մարհ: Սրա ի ձայնը բացատրելու համար կարելի էր ենթադրել իրան. *maθra- ձևը (համմ. պահ<պարհ<

զնդ. pāθra-), բայց մի այսպիսի ձև չկայ իրանականում։— —Հիւբշ. 472։

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 312 մի աճ, այսինքն մի ահռելի բան։ Windisch. 22 զնդ. mahrka և հյ. մեռանիլ ձևերի հետ՝ ի եկամուտ ձայնով։ Gosche 23 մարհ կամ մառհ ձևից, իբր զնդ. mahrka, արմատը mərə, սանս. mṛ։ Müller SWAW 38, 583 զնդ. mahrka «մահ» բառի հետ. ի համարում է n ձայնի շնչի մնացորդը։ Justi. Zendsp. 230 զնդ. mahrka, պհլ. պրս. աֆղան. marg ևն։ Lag. Ges. Abhd. 297 զնդ. *marəθra ձևից։ Մորթման ZDMG 26, 604 բևեռ. makhubi «մահ»։ Տէրվ. Altarm. 40 և Նախալ. 98 նոյն ընդ մեռ–ա–նիլ, իբր *մառ>մարհ>մահ. իսկ էջ 101 մահկանացու բառի մահկա– մասը համեմատում է պրս. mark, murg «մահ», զնդ. mahrka «մահ» և marənč «սպանել» ձևերի վերջամասերի հետ։ Կոստանեան, Հայ. հնթ. կր. էջ 8 զնդ. marənč «սպանել» բառի հետ։ Canini, Et. étym. 91 յն. μάχομαι «կռուիլ»։ Հիւնք. յն. μάχερα «սուր, դանակ» բառից։ Գարագաշեան (անձնական) մեռանիլ բայի հետ ճիշտ ա՛յն ձայնական առընչութիւնն ունի, ինչ որ ջեռանիլ և ջահ։ Հիւբշ. 472 վերի բառերի հետ դնում է իբրև բնիկ հայ։ Meillet ZAPh 1, 145—6 ի ձայնը բացատրուած չդնելով՝ կասկածում է որ իրանեան փոխառութիւն լինի։ Փոխառութիւն է համարում նաև Scheftelowitz BB 29, 25: Էսգէթ. Արրտ. 1915, 499 արաբ. موت mavt «մահ» բառից։

Գիւռ.—Ալշ. Ախց. Ատն. Երև. Հմշ. Կր. Նախ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. մաճ (Պլ. սեռ. մաճման՝ պահուած է միայն մաճման դռդերո՛ւ գաս ևն դարձուածների մէջ. իսկ Ռ. նշանակում է «ժանտախտ»). Տիգ. մոճ, Մշ. մա, Ակն. մայճ, սեռ. մայճման, Խրբ. մայ, Մկ. Ոգմ. Զղ. Սլմ. Վն. մախ, Ագլ. Հճ. մօճ. —նոր բառեր են՝ մաճաֆռանիճ, մաճենիճ, մաճուէր, մաճուռն, մաճմաճական Նախ. «մահու (դող)», մաճմեռուկ։

ՄԱՀԱՆԿ, ի–ա հլ. «բիր, ծեծի գաւազան» Վկ. արև. էջ 219, Ոսկ. Ճառք, էջ 395. Վրք. հց. ա. 160. Վրդն. առակ. 112. Երզն. քեր. գրուած է մհանկ Զքր. սարկ. Բ. էջ 2։

Գիւռ.—Ղրբ. մհանկ, որից մահանկռուի տալ «հաստ բիրով կռուիլ»։

ՄԱՀԱՆԿ «վարձք, վարձատրութիւն կամ վաստակ». առանձին գործածուած չէ. պահուած է միայն սեռամահանկ «անվարձ մնացած» բարդի մէջ՝ Ոսկ. ես. Ճառընտ. որ և սեռամահիկ Ա.Բ։

=Թերևս պհլ. *māhak «ամսական թոշակ, ամսավարձ» ձևից. հմմտ. պրս. ماهیانه māhiāna, ماهانه māhīna, ماهگانه māhgāna «ամսավարձ, ամսական ռոճիկ», բոլորն էլ կազմուած պրս. ماه māh=պհլ. 𐭬𐭧𐭲 māh «ամիս» բառից, ինչպէս և մահիկ։ –իկ և –ակ վերջաւորութեանց համար հմմտ. պրս. روزی rūzī «ապրուստ, բաժին»<պհլ. *rōčīk և պրսկ. روز rūza «ռոճիկ, թոշակ, օրավարձ»<պհլ. *rōčak։—Աճ.

ՆՀԲ հանում է մաճր բառից։

*ՄԱՀԱՆԿ «փորձաքար». ունի միայն ՀՀԲ՝ առանց վկայութեան. յետին ռամկական մատենագրութեան մէջ գտնում ենք գործածուած մահաճ, մահագ ձևով. ինչ. Կոստ. երզն. 96, 155. Զի ես պղինձ օծած ոսկով, դո՞ւ ընդէր մօտ ի մահաքն յայտնի լինիս պարզ երեսով... զայն որ ընտրած էր մահագով. Որ մահաքովն զալպ լինի։

=Արար. محكّ mahakk «փորձաքար, parre de touche». որից Թրք. محنك meheng՝ նոյն նշանակութեամբ։

Ուղիղ մեկնեց Պոտուրեան, հրտր. Կոստ. երզն. էջ 52։

ՄԱՀԱՆ «անպակաս». ունի միայն Բառ. երեմ. էջ 202։

*ՄԱՀԻԱՆԱԿ կամ ՄԱՀԱՊԱՆԱԿ «մի տեսակ ընդեղէն. յս. catapodium?» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1938.—Տիրացուեան, Contrib. § 264 գնում է իբր lathyrus aphaca L. որ է հյ. «խորու, նուպպան, Ռեկան, Բրսամն»։

=Պրս. ماهودانه māhudāna կամ ماهوبـ ماهوبدانه māhubdāna «ունդ ինչ յոյժ լուծողական և սպանող. արաբ. habb-us-salātīn»։

Ուղիղ է մեկնում ՀԲուս. անդ. բայց պրս. բառը կարծում է արաբերէն։

ՄԱՀԵԿ «մի տեսակ բոյս. գեղձի. լտ. taxus, ֆրանս. if?» Հին բռ. ունի միայն ՀԲուս. § 1939։

***ՄԱՀԻԿ, ի–ա** հլ. «նորածին լուսին, լուսնի եղջիւրը» Փիլ. սամփս. Գէ. հս. «այս ձևով մի տեսակ զարդ» Ես. գ. 19. Գէ. հս. Արծր. որից **մահիկեղջիւր** Վեցօր. 115, 131. Շիր. էջ 51, 53. **մահկաբար** Նիւս. երգ. **մահկածև** (նոր բառ)։

=Պհլ. *māhīk «լուսնակ, մահիկ» բառից փոխառեալ. պհլ. բառը կազմուած է ماه māh «լուսին» բառից՝ -īk նուազական մասնիկով. համմտ. պրս. ماه māh «լուսին», որից նուազական ماهچه māhča «մահիկ. է լուսնաձև իմն տափարակ՝ զոր յարծաթոյ և ի պղնձոյ արարեալ դնեն ի գլուխս դրօշակաց, մէնաբէից և զմբէթեայ շինուածոց» (ԳԴ)։ Վերջինից է փոխառեալ Վն. **մահչա** «կանացի ճակատազարդ», որ և համապատասխանում է հների **մահիկ** «մի տեսակ զարդ» իմաստին։ Պհլ. բառը աւանդուած է գաղափարագիր ʒʷʏ birīq ձևով, որ պէտք է կարդալ māhīk, ինչպէս որ յոգնակին էլ գրուած է ճշտիւ māhīkān «ամիսներ» (Nyberg, Hilfsb. 1, 34, 52 և 2, 143)։ Աւելի բնադարձակ տե՛ս ամիս բառի տակ։—Հիւրշ. 191։

ՆՀԲ պրս. **մահչէ** կամ **մէհչէ**։ Böttich. ZDMG 1850, 380, Arica 77, 286, Lag. Urgesch. 800 և Gesam. Abhd. 40 սանս. māsa, գնդ. mâ; mâñha, պրս. māh, օսս. may:—Müller SWAW 38, 583 սանս. māsa: Հիւրշ. KZ 23, 9 համարում է -իկ նուազական մասնիկ։ Կ. Վ. Շահնազարեան, Երկրագ. 1864, թ. 5, էջ 7 գնդ. մաօ։ Տէրվ. Altarm. 96 իբր նախաւոր մի ածական՝ սանս. māsika ևն։

ՄԱՀԻՃ, ի–ա հլ. (գործածուած է անեզաբար) «անկողին, անկողնակալ» ՍԳր. Սեբեր. Եզն. «դազաղ» Յայսմ. որից **մահճակալ** Կոչ. 382. **մահճական** ԱԲ. **մահիճաձև** Վանակ. յոբ. **մահճակ** «անկողին» Ագաթ. եփես. 816 (ձ. **մարճակ**), Պատմ. աղէքս. (տպ. **մարկճակ**, որ պէտք է ուղղել **մահճակ**՝ ըստ 3 ձեռագրի և համաձայն լտ. lectulum ձևի)։

Հներից Վրդ. սղ. խ. 4. «Անկողին... ի մահ իջումն է... մահիճք վասն այնր ասի»։ Ինճիճեան, Եղանակ բիւզանդեան 1819, 148 **մահ**+նիճ բառերից։ ՆՀԲ «որպէս թէ մահու անկողին»։ Հիմնք. արաբ. hājim «վիրաբոյժ, երակահատ» բառից։

***ՄԱՀԱԼԱՊ,** որից **մահլպի** «շշի ծառը. լտ. cerasus mahaleb» Վանակ. ունի միայն ՀԲուս. § 1940 և § 2343։

=Արաբ. محلب maḥlab, maḥalab, որից նաև լտ. գիտական բառը։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 2343։

ՄԱՀԿԱՄ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Պիտառ. «Եւ տարերցն և մահկածին և ողկաւին» անհասկանալի հատուածի մէջ (հրատարակուած Բազմ. 1893, 573)։ ՆՀԲ մեկնում է «բառ անստոյգ՝ իմաստակօրէն յօդեալ. թերևս իբր նշանակ մահկի կամ նոր լուսնի». ՋԲ և ԱԲ չունին։

ՄԱՀԿԱՆԱՅ «մի տեսակ տուրք». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած անթուական մի արձանագրութեան մէջ, Վիմ. տար. 226, հյց. զմանիկաձէն ձևով։

***ՄԱՀՄԻՉ** «կօշկի խթան» (Կիլիկեան ասպետների). նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Ալիշան, Սիսական, էջ ?։ Սրանից է կազմուած **մահմիզել** «խթանով զարնել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Այրիվ. 18ա. «Տեսանէր զաստանայ, զի հեծեալ էր յուսն Գրիգորի և մահմիզէր». (Հրատարակիչը դրել է **մահ միզէր**, իբր թէ «մահ էր միզում»)։

=Արաբ. مهماز mihmaz կամ مهماز mihmāz «խթան», որից փոխառեալ է նաև թրք. محموز mahmuz «խթան կօշկի. 2. արլորի բիտ». արմատն է همز hamz «բոթել, հրել, ճնտել» (Կամուս, Բրբ. Բրգմ. հտ. Բ. էջ 210)։—Աճ.

***ՄԱՀՄՈՒՏԱՅ** կամ **ՄԱՀՄՈՒՏԻ** «մի տեսակ բժշկական խոտ է. սակամոնի. լտ. con-

volvulus scammonia» *Բժշ. ունի միայն Հայբուսակ § 1941 (բայց սխալ է գրում մահմուտաև. տե՛ս § 2627 յիշուած վկայութիւնները)։*

=*Պրս.* ماهمودا māhmuda «*սակամոնի*» (*տե՛ս ԳԴ, էջ 291 բ և 464 ա*)։—*Աճ.*

***ՄԱՀՏԵՍԻ** «*Երուսաղէմ ուխտի գնացած*» *Նոր վկ. էջ 519 (1677 Թուից բնագիր). Աբր. կրեա. 6. Նոր լեզուի մէջ ընդունուած ձևն է. կայ և մահդեսի Առաք. պտմ. 297, 322. աւելի հինն է մուղտեսի, մղղբսի, մղտեսի. այսպէս օր. Կամենից-Պոդոլսկիի հկեղեցու արձանագրութեան մէջ (1653 Թուից) գործածուած է մըղտէսի ձևը. Առաք. պտմ. 330՝ մուղդսի, Ջքր. սարկ. Ա. 48՝ մուղտեսի, Բ. 48՝ մղտեսի։*

=*Արաբ.* مقدسى muqdisī «*մահմեսի*». *Ծագում է* قدس Quds «*Երուսաղէմ*» *բառից. արաբերէնից է փոխառեալ նաև քրդ.* mokdasi «*Երուսաղէմ ուխտի գնացած մարդ*» (Justi, Dict. Kurde 403): *Հայերէնի մէջ բառը յեռնաբար կեղծ-գիտական սուտպատճառութեամբ դարձել է մահտեսի, իբր թե «մահը տեսի»։*

Ինճիճեան, Եղանակ բիւզանդեան, 1818, էջ 126—7 եբր. մագոխի «Երուսաղէմ ուխտի գնացած», Ուղիղ մեկնեց նախ Dulaurier, Recherches chron. *1859, էջ 160. նոյնը յետոյ Մսեր մագիստ. Համբագիր չափածոյ (1864), էջ 185 և Պատկ.* Истор. Монгол. 1872, *էջ 27։ Ս. Պաղտասարեան և Մ. Ագամեան վէճ բանալով բառիս ծագման մասին, առաջինը մեկնում է արաբերէնով, երկրորդը՝ մահի տեսի։ Հրատարակում է Տէրվ. որ Մասիս 1884 մարտ 6 տալիս է ուղիղ մեկնութիւնը։ Ուղիղ են նաև* Müller WZKM 10, 182, *ՀԱ 1896, 250 և 1897, 125 ևն։*

ԳԻՒ.—Սեբ. մղղէսի, *Ախց. Տփ.* մղղբսի *(Տփ. միայն «ժամհար» իմաստով), Ալշ. Երև. Մշ.* մուխսի, *Մկ.* մուխսը՛։ *Ուրիշներ ունին հաջի ձևը, որ նոյնպէս փոխառութիւն է արաբերէնից (<* حاجى ḥajī)։

***ՄԱՀՐ** «*օժիտ փեսացուի առ հարսնացուն*» *Ասոր. դատ. 9. Մխ. դտ. էջ 289. Անսիզք 45։*

=*Արաբ.* مهر mahr *համանիշից փոխառեալ. այս բառը բնիկ սեմական է. նոյն են եբր.* מהר mohar, *ասոր.* ܡܗܪ mahrā, *արամ.* מהרא mahrā, *որ և ասուր.* maḫīru «*մահր, մի բանի գինը, արժէքը*» (Delitzsch, Assyr. Handwb. *էջ 404,* Strassmaier, Alphab. Werzeichn. der Assyrischen und Akkadischen Wörter, *էջ 615). այս բոլորը ծագում են սեմական* mhr «*մի կին գնել*» *արմատից։ Արաբերէնից են փոխառեալ նաև սվահիլի լեզուով* mahari «*օժիտ*», *վրաց.* მეჰარი *մեհարի «մահր», ՅԱՀՈ մարի «մահմեդականի պատկ. 2. մահր». Հայ բոշայ. մարաճուր «օժիտ, ընծայ, պարգև»։—Հիւբշ. 270։*

Հներից ուղիղ մեկնութիւնը գիտէին Ասոր. դատ. էջ 9 և Լմբ. օր. 19. «Եթէ ոք առնէ տուայր, որ է մահր ըստ Արաբացւոց, և ըստ Հայոց անձին գին աղջկանն»։ Նոյնպէս և Մխ. դտ. էջ 289 գրում է. «Առ մահմետականսն... կոչի մահր»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, որից յետոյ Lag. Arm. Stud § 1410:

***ՄԱՀՐԱՍԱՅ** «*վարդապետ քրիստոնէից (ըստ մահմեդականաց)*» *Նոր վկ. էջ 113 (ԺԴ դարից). «Ո՛վ մահրասայ, դարձի՛ր ի հաւատս մեր և ա՛ռ զկրօն առաջնորդին մերոյ»։ Գրուած է նաև մարհասիա։*

=*Արաբ.* مرخصه marxasa՝ *նոյն նշ. (տես Նոր վկայք, էջ 788)։—Աճ.*

ՄԱՂ, ո, ու, ի *հլ. (յգ. մաղի կամ մաղիճ) «մաղ, խարբալ» Սիր. իէ. 5, Վրք. հց. «կողով» Պտմ. տիմ. «մեղրահաց» Վեցօր. 165. Եւագր. Ոսկ. եփես. 873. որից մաղել «մաղից անցկացնել» Ես. իթ. 5. Ոսկ. եբր. Սիբիր.* մաղարախուրիւն *Ոսկ. եփես. Մանդ.* մաղարախ *(սխալ գրուած մաղարաւովդ) Հին բռ.* մաղատեսակ «*ծակոտկէն*» *Պղատ. տիմ.* մաղուճ «*մաղի մէջ մնացած խոշրոտուքը*» *Ոսկիփ.* մաճրամաղ *Վեցօր. Ագաթ.* հողամաղ «*հիւղէ, շամանդաղ*» *Եղն. «մի տեսակ քրոչուն է» ՍԳր.* խառնամաղ *Կոչ.* մաղմաղա-

տեսակ «մանրամաղ» Տօնակ. (արմատը մաղմաղ «մանրամաղ» ունի Խրբ.)։ Այստեղ է պատկանում նաև մաղակ «փոքր կողով», որ մէկ անգամ ունի Վրք. Հց. բ. 622. «Կատարեցից զսակաւ արմաւենի տերևս կամ զպակասեալ մաղակիս և ապա յառնեմ»։ (ՆՀԲ մեկնում է «կա՛մ է մաղ փոքրիկ կամ վերծանելի մախաղ». տե՛ս տակը փոխ.)։

Տէրվ. Մասիս 1881 մայիս 5 և Նախալ. 98 կցում է մալել, մղեղ (=իբր մղմեղ), մլաղաց, մամուլ (<*մալմուլ) ձևերին. արմատը իբր մալ, միլ, մուլ. հմմտ. գոթ. malan, յն. μύλλω, լտ. molere, լիթ. malti «աղալ, մանրել» և պրս. mālīdan «ոլորել»։ Նոյնը նաև Müller, Armen. VI: — Bugge, Beitr. 25 յն. ὁμαλιά «ալիւրի աւելցուկը», լտ. simila «շարմաղան ալիւր» բառերի հետ՝ հնխ. simali- ձևից, որ կազմուած է -mal- մասնիկով si- «մաղել» արմատից. հմմտ. լիթ. sijóju «մաղել», հսլ. sito «մաղ»։ Հիւնք. մղեղ բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 268 գնդ. maya «ծակ» բառից։

ԳԻՒՐ.—Ագլ. Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Համշ. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սչ. Սեբ. Սլմ. Վն. Տփ. մաղ, Տիգ. մոդ, Հճ. մօղ, Զթ. մօղ, մոդ (առանձին չի գործածւում, այլ միայն բարդութեանց մէջ), Սվեդ. միւղ։—Նոր բառեր են անմաղել, մաղաճաճ, մաղծակ, մաղմաղ, մաղիկ-մաղիկ, մաղմղել, մաղմղուկ, մաղում, ֆարմաղ, շարմաղ, ձարմաղ, ալրմաղ, փոկեմաղ ևն։

ՓՈԽ.—Վրաց. მალაკი մալակի նիշ նշանակում է «մաղ», այս բառից է և ննթադրում է հյ. մաղակ, որ տե՛ս վերը. իսկ նիշ նշանակում է «խսիրէ փոքր տոպրակ», տե՛ս վերը մախաղ բառի տակ.—քրդ. كرماغ kermaγ «մեծ ծակերով մաղ» (Justi, Dict. Kurde, էջ 330) գալիս է դուռ. ֆարմաղ բառից։

ՄԱՂԱԲԵՐ «տերև». ունի միայն Բառ. երեմ. էջ 202. հմմտ. մուսաբեր։

ՄԱՂԱՂ կամ **ՄԱՐԱԽ** «հրձիգ». ունի միայն Բառ. երեմ. էջ 202 և 206. երկու ձևերից մին կամ միւսը սխալ է։

ՄԱՂԱՂԻԼ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Կալիսթ. 68. «Հերակլէս պատմուճան յԱրկադայ կարելով մաղաղեցաւ ձիոօք Փիլոքտետայ յարեան վիշապին». (ըստ Տաշեան, Ուս. ստոյն Կալիսթ. 200 յն. համապատասխան բառն է καθηλώθη). ՆՀԲ համարում է սխալ գրչութիւն՝ փոխանակ ֆաղաղել «այրել, ապառել»։

***ՄԱՂԱՊ** «մի տեսակ ծաղիկ՝ երջանիկ Արաբիայում» Խոր. աշխ. 612 (ձեռ. տարբ. մաղադ). «Եւղք անոյշք ի նմա և ծաղիկք վեշտասան». յետոյ յիշում է 16 անուն, որոնցից երրորդն է մաղապ. ասելու ձևից երևում է որ կա՛մ ծաղիկ է, կա՛մ անուշահոտութիւն։ (ԱԲ դնում է մաղապ, ՀԲուս. § 1922 մազապ և § 1943 մաղապ, իբր թէ տարբեր բառեր լինէին. Քաջունի, Գ. 154 միայն մազապ)։

=Արաբ. ملاب malāb «մի տեսակ անուշահոտութիւն կամ քրքում» (Կամուս Ա. 262)։

Lag. Ges. Abhd. 64 և Arm. St. § 1411 կցից արաբ. ձևին, սրա հետ միասին յիշելով նաև սանս. tamālapatra, յն. μαλάβαθρον։ Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 57 պրս. malāb, յն. μαλάβαθρον, լտ. malabathrum «հնդկական մի բոյս»։ Հիւբշ. 270 յիշում է արաբ. և յն. ձևերը, համարելով «շատ անապահով»։ Նորայր ՀԱ 1926, 69 նոյն ընդ արաբ. maḫleb։

ՄԱՂԱՍ, ո հլ. (նաև սեռ. -ի, բցա. -է) «ներքին կենդանական մի հիւթ, բալղամ» Ագաթ. եղն. Ոսկ. մ. ա. 20. որից մաղասաձար Պզատ. տիմ. մաղասկաթ «ընկնաւոր, լուսնոտ» Ասող. Վրդն. ծն. մաղասայոյզ Բժշ. մաղասախտ «մաղասը բուժող մի բոյս» Բժշ. մաղասային (նոր բառ)։

ՆՀԲ լծ. Քրք. մալէզ «խմոր, խիւս»։ Justi, Dict. Kurde, էջ 405 մեր բառի հետ է կցում քրդ. ملاز melaze «գլխի հարբուխ», որ անշուշտ արաբ. nazla ձևից է փոխառեալ և գործ չունի

մաղասի հետ։ Հինք. Խաղցու բառից։ Թիրեաքեան, ՀԱ 1912, 288 նոյն ընդ մաղձ։

ԳԻՒ.—Կայ անյայտ գաւառականով մաղաս «ծննդաբերութեան ժամանակ կանացի անդամից վազած հեղուկը». նաև մաղասկաթ Ակն. Բիւթ. «արտում, տխուր, վշտահար», մաղասկոտ (Rivola) «ջերմոտ, դողդոջուր»։

ՄԱՂԱՐԻԿՈՆ «հեղուկների յատուկ մի տեսակ աման», նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածել է Վասակ. էջ 121, 126՝ շատ սխալ ընթերցուածներով. այսպէս՝ «Ա՛ռ առուշ գինի 70 մասն (մեղր են)..., յիրար խառնեա և ած մաներ աղի կոճեր և սակաւ մի սառէճ հինտի ած յամէն ման սակաւ մի և ձիւթեա զբերանն. Որ ամէնն ջուր կտրի և ապա ի նոր ձիւթած մաղ առ, ի կոճեր լից և զբերանն ձիւթեա աղէկ և կալ»։ Նոյն բառի աւելի լաւ ընթերցուածն ունի Շիր. լաղարիկոն «լիտր» (Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. էջ 88)։

=Անշուշտ նոյն է ասոր. ܡܠܡܒܪܟܘܢ mlmbrkon «մի տեսակ ման» (ձայնանիշները ծանօթ չեն) Brockelm. 188, որ և նոյնպէս սխալ գրչութեամբ աւանդուած մի բառ է։ Հաւանաբար թէ՛ հայը և թէ ասորին յունարէնից են փոխառեալ, ինչպէս ցոյց է տալիս -իկոն վերջաւորութիւնը։—Աճ.

Վաստակոց դրոց բառացանկում բառս դարձել է կոճ, կոճեր։ Վերի ձևով սըրբագրից Նորայր, Հայկ. բառաք. էջ 99, որ և հաստատում եմ Շիրակացու վկայութեամբ։

ՄԱՂԶՄԱՅ, ի հլ. «սկաւառակ. ափսէ, մանաւորապէս տաճարի կամ եկեղեցու սեղանի ափսէն» նորագիւտ Ա. մնաց. իր. 17. Եւագր. 337. Ճառընտ. Մաշտ. գրուած է նաև մաղազմայ Ճառընտ. Սոկր. 615. Ոսկիփ. մաղազմի Սիրաք. լդ. 17. մաղազման փ. Սոկր. 615. մաղզման (բց. ի մաղզմանէն) Յայսմ. ապր. 19, Աբեան. էջ 493. մղզմայ Պատրգ. 481. նաև մողոզմայ «գինու գաւաթ» Կղնկա. Հրտր. էմ. էջ 59 (իսկ Հրտր. Շահն. էջ 174 մաղզմայս, մողմողայս)։ Արդի եկեղեցական լեզուով մաղզման «այն տափակ արծաթեայ փոքր ափսէն է, որ սկիհի բերանն է դրւում իբր կափարիչ»։

Հինք. բարդուած յն. μάγις «պնակ նուիրական ալեր Դելփեայ» և μάγμα «հայս» բառերից։ Հիւբշ. Arm. Gram. 196 կասկածով համարում է պարսկերէնից փոխառեալ. համմ. պրս. mul «գինի»։ Յ. վ. Յակոբեան, Բիւզանդիոն թ. 743 արաբ. ասէմ, ասմէք «հացի պատառ», ասամաթ «փշրանք, աշտուճ», մասէմէ «հացի փշրանաց ման»։ Ըստ իս ասորական փոխառութիւն պէտք է լինի, ինչ որ lzm արմատից, ինչպէս ցոյց են տալիս բառի ընդհանուր ձևը և -այ վերջաւորութիւնը։ Սակայն Brockelmann-ի ասորերէն բառարանում յարմար մի ձև չգտայ. միակ բառը, որ քիչ թէ շատ յարմարւում է. ܡܫܝܫܐ maišā «արոյրէ մեծ ափսէ» ձևն է, որ սակայն լիովին չի ծածկում մեր ձևը։

+ՄԱՂՔ, ի հլ. «աղօթք, մաղթանք» Պզատ. օրին. Շնորհ. որից մաղթել «աղօթել, պաղատիլ, բարեխօսել» Իմ. ժգ. 18. Խոր. Պզատ. տիմ. և օրին. մաղթանք Խոր. մաղթութիւն Պզատ. տիմ. և օրին. մաղթակից Դիոն. եկեղ. մաղթական Մագ. Նոր գրականում մաղթել նշանակում է «մէկին մի լաւ բան ցանկանալ», որից բարեմաղթել, բարեմաղթութիւն։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mḷth- արմատից. սրա համապատասխան բրթուն *mḷdh- ձևից են ծագում լիթ. maldýti «շարունակ աղաչել, թախանձել». maldà «աղօթք, աղաչանք», ռուս. МОЛЮ, МОЛИТЬ «աղօթել». հսլ. molje, moliti, չհ. modla «աղօթք», modliť «աղօթել», չխս. modla «կուռք, տաճար» (ընդհանուր սլաւական ձևը *modliti, որ և շրջուած է *molditi ձևից), համիս. maldiyat «աղօթքներ արտասանից», maldi «(ցած ձայնով) արտասանում է», maltaš «աղօթից», malduwar «մի տեսակ աղօթք», malteššar «օրհնութիւն», արմատը mald «աստուածներին խօսք ուղղել, աղօթել»։ Այս համեմատութիւնները տալիս է Benveniste BSL 33, № 99, էջ 133—5, որ նրանց է կցում նաև գերմ. խմբից հսաքս. meldōn,

անգսք. meldian, հբգ. meldōn, գերմ. melden «յայտարարել, զեկուցել, յիշատակել» ևն (Kluge 327), որոնք բխում են հնխ. meltā ձևից. ընդհանուր արմատն է հնխ. meld- (melth-) «աստուածներին աղօթել», որ անկախ ձև է և կապ չունի հնխ. mḷdu-, mḷdwi- «մեղկ» բառի հետ, ինչպէս ընդունուած էր նախապէս: — Այս բոլորը ծագում են հնխ. պարզական *mel արմատից, որի նշանակութիւնն էր «մանրել, աղալ, փոշիացնել» և բարոյական առումով «մեղմ, կակուղ են». սրանից զանազան աճականներով կազմում են մի խումբ հիմնարդական արմատներ, որոնք տե՛ս Pokorny 2, 284—90: Հայերէնի մէջ նոյն արմատից ունինք մալել, մամուլ, մեղկ, մեղմ են, որոնք տե՛ս վերը մալել բառի տակ: Հյ. մաղր նոյն արմատի th-ով աճած ձևն է (Trautm. 177, Pokorny 2, 289):—Հիւբշ. 472?

ՆՀԲ ռուս. մօլիթվա: Համգամանօրէն ուղիղ մեկնից նախ Bugge, Btrg. էջ 15 և վերի ձևով Meillet MSL 10, 277: Հիմնք. աղօթ բառից: Գազանճեան, Արև. մամ. 1902, 77 մ+աղօթել: Տիրատզեան, Կոչնակ 1931, №40 զնդ. manthra «աղօթք» բառի հետ:

ԳԻՒՐ.—Մշ. մախտել, մախտաւէ:—Այստեղ պէտք չէ դնել Արբ. մախտուն «ազգական ու բարեկամ կանանց՝ մեռելի տունը հրթալով լալ ու գովքեր արտասանելը» (հակառակ իմ Գաւառական բառարանի, էջ 746 բ), այլ իբր մաճառուն, ինչպէս ունի Ակն. նոյն նշ.:

*ՄԱՂԹ «խայծղանի հետ ունեցող մի խէժ է» Բժշ. և Հին բռ.:

=Յն. μάλθη, μάλθη «մոմով և ձիւթով պատրաստուած խայծղան» բառից, որից են նաև լտ. maltha, ֆրանս. malthe «մաղթ, խայծղանի հետով մի խէժ»: Յոյն բառը *μάλθος «կակուղ» ածականի իգական ձևից է յառաջացած՝ բստ Boisacq 605:

Բառս գտաւ ու բացատրեց Նորայր, Հայկ. բառաք. էջ 25. տուգարանեց Բառ. ֆրանս. էջ 775 բ: Scheftelowitz BB 29, 29 իբր բնիկ հայ! կցում է հբգ. malz «հալուղ, կակուղ», հհիւս. maltr «փտած», յն. μέλδω «կակղիլ, հալիլ». սանս. mṛdu «փափուկ» բառերին:

ԳԻՒՐ.—Համշ. մախթ «մարխի ծառի խէժը». (յունիս ամսում մարխի ծառը կացինով վիրաւորում են և հոսած խէժը հաւաքում):

ՄԱՂԻՆԱՒԹ «բաժինք». ունի միայն Բռ. երեմ. էջ 203:

*ՄԱՂԱՂ «պատյտ, շրջան, դարձ». մէկ անգամ գործածուած է Յայսմ. մարտ 13. «Երեք երկինք հաւատարեալ ի շուրջ գան և պատեն զաշխարհաւս՝ ի վեր և ի վայր մաղլաղ (տպ. մաղալաղ) առեալ և իւրեանց շրջագայութեամբն զերկիրս ի կայի պահեն»:

=Արաբ. معلق mu'allaq «կախեալ, առկախ», որ նշանակում է նաև «գլխիվայր շրջուիլ, գլուխկոնծի տալ» և այս իմաստով Պարսկաստանում դարձել է maylaγ. այս ձեւից է նաև հայերէնը: Նոյնից է դարձեալ վրաց. მალაყი մալաղ'ի «գլուխկոնծի», ուտ. մաղանելաղ «գլուխկոնծի»:—Ա՛ճ.

ՆՀԲ հանում է մաղ բառից:

ԳԻՒՐ.—Riggs, A vocabulary ofwords used in modern armenian, but not found in the ancient armenian lexicons. Smyrna 1847, էջ 93 իբր ամկ. բառ ունի մուղալլէիը կենալ «to hang in suspense, to be in danger of falling, կախուած մնալ, ընկնելու վտանգի մէջ լինել»:

*ՄԱՂԱՆԱՋ կամ ՄԱԼԱՆԱՋ «բագաւորի պահապանների գլխաւորը» ԱՐ. որից մաղխազութիւն «հայ նախարարական Մաղխազունեաց տան պաշտօնը» Ագաթ.:

=Ասուր. malxazu «իշխան», որ սակայն չգիտէ. Muss.-Arnolt Ass. Handwb.

Այսպէս է մեկնում Ադոնց, Арм. Юстин. 400, բայց սխալ է կցել արաբ. malik «իշխան»: Պատահական նմանութիւն ունի սասր. māxozā «urbs munita, ամրացրած քաղաք»: Կարադաշեան, Քնն. պատմ. Ա. 148 արաբ. مَلِك malīk «բագաւոր» բառից: Պատահական նմանութիւն ունի ասուր. maxāzu «քաղաք» (Muss-Arnolt, Ass. Handwb. 521):

ՄԱՂԿԱՏ «խայթ, ցաւ, կսկիծ». արմատ առանձին անգործածական. կայ միայն դա-

առականներում. որից մաղկատել *«կճել, խայթել» Սիր. իս. 2. Եղիշ. խաչել. էջ 281, «վէրքը կսկծալ» Բրս. մրկ. 59.* մաղկատիլ *«խայթուիլ» Եղիշ. խաչել. էջ 279, 281—3, «լալուց մորմոքիլ» Սիմ. ապար. 46 Յայտմ. Առաք. պտմ. 264.* մաղկատող *Եղիշ. խաչիլ. 283. Նանայ 61 (երկու անգամ՝ օձին իբր ածական), 62.* մաղկատութիւն *Անան. եկեղ.* մաղկատիչ *Եղիշ. խաչել. 281, 282.* մաղկատեցուցանել *Ջքր. կթ. գրուած նաև* մաղկտալ *«մորմոքիլ» Լմբ. իմաստ. (բառիս «շլմի՞լ թէ զայրանա՞լ» առումի վրայ տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 49)։*

ՆՀԲ մաղ *կամ* մխել *ձևերից։* Scheftelowitz BB 29, 13 *լա.* muleto *«դատապարտել», յն.* βλάπτω *«վնասել», գնդ.* mərənčaiti *«չնչացնել», սանս.* marćayati *«վիրաւորել, վնասել» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Միւժում են* Walde 499, Boisacq 121, Pokorny 2, 298:

ԳԻՒ.—Ակն. Մշ. մաղգադ, *Ղզ.* մխկիտ *«սրտի մորմոք, կսկիծ», որից Ախց.* մղկտալ, *Ալշ. Մշ. Ննխ.* մրղգրդալ, *Երև. Ղրբ. Ջղ. Սլմ.* մրխկտալ, *Տփ.* մխկտալ, *Շմ.* մխկտիլ *«մորմոքիլ». իսկ Ակն.* մաղգդիլ *«ձեռքը՝ ոտքը ցրտից կսկծալ», Սեբ.* մխկտալ *«քթի տակից մռլտալ, փնթփնթալ» (այս բառի՞ց է).—նոր բառեր են* մաղմղկտալ, մղկտաձար, մղկտալի, մղկտան, մղկտացնել, մղկտոց:

ՄԱՂԿՈՒ *«սան». ունի միայն Բառ. երեմ. էջ 203. բայց Հմմտ. նաև* մակու:

ՄԱՂԶ, ո, ի *Հլ. «լեղուց վազած հիւթը», փխբ. սրա արդիւնքը համարուած «բարկութիւն, տրտմութիւն, դառնութիւն» Յոբ. ժզ. 14. Գծ. ը. 23. Ագաթ. եզն. որից* մաղձադեղ *եզն.* մաղձայոյզ *Սիր. լդ. 23, Ոսկ. մ. ա. 18.* սևամաղձ *Ոսկ. յհ. ա. 21.* մաղձախառն *Արծր.* մաղձութիւն *Բրս. Հայեաց. դառնամաղձայ Նիւս. բն. խստամաղձոտ ԱԲ. բազմամաղձ Նիւս. կազմ. նոր բառեր են՝* մաղձոտ, մելամաղձութիւն, մելամաղձոտ, մելամաղձիկ *են։*

Windisch. 18 *գերմ.* Milz *«փայծաղ» բառին է կցում։ Հիւնք. Թաղցու բառից է հանում։* Patrubány *ՀԱ 1906, 343 և 1908, 246 հնխ.* mēl- *«աղտեղել» արմատից. Հմմտ. յն.* μέλας *«սև» և սանս.* malinā *«կեղտոտ»,* malas *«պղծութիւն» են։ (Մաղձը միւս հնդևրոպական լեզուների մէջ գոյնի համեմատ կոչւում է «դեղին», բայց ո՛չ «սև». տե՛ս* Walde, *էջ 279)։ Թիրեաքեան, ՀԱ 1912, 288 նոյն ընդ* մաղաս: Petersson LUA 1916, 83 *(բաս* Pokorny 2, 300) *հնխ.* melg'h- *«ուռչիլ» արմատից. Հմմտ. լիթ.* mìlžinas, *լեթթ.* milʃens *«հսկայ», են։*

ԳԻՒ.—Ագղ. Հւր. մաղձ, *Մշ.* մախձ', *Գոր. Ղրբ.* մախձ, *Ախց. Երև. Կր. Մկ. Շմ. Ջղ. Տփ.* մախց, *Ոզմ. Վն.* մախս, *Սլմ.* մոզգ. *իսկ Պլ. պահուած է միայն* խախցը-մախցը կրկնականի մէջ *(Նշ. «քաղցրով ու թթուով խառն մի տեսակ անախորժ համ»)։ Նոր բառեր են* մաղձոտ *«կեղտոտ՝ իւղոտ բուրդ»,* մաղձիլ *(Տիգ.* մոխցիլ*) «ստամոքսը քացախիլ, թթուիլ»։*

ՄԱՂՃԱՄ *«ճակատց, առանկիւնաճակատ, անգլ.* pediment, *թրք.* սաչաք». *ունի միայն Փափազեան, Անգլ. բառ. Պօլիս 1910։*

***ՄԱՂՃՈՒՆ** *«դեղօրայքով պատրաստուած բժշկական խիւս» Նոր վկ. էջ 260 (ԺԸ դար). գրուած կայ նաև մայջուն Կոստ. երզն. 138, մաճուն Վստկ. 169, Տաթև. ձմ. ճժդ։*

=Արաբ. معجون ma'jūn *նոյն նշ. ծագում է* عجن 'aǰn *«իրար հետ շաղախել» արմատից։—Աճ.*

Ուղիղ մեկնեց Աճառ. Նոր. վկ. էջ 788։

Մաղմաղատեսակ *տե՛ս Մաղ։*

ՄԱՂՄԱՋ. *անստոյգ բառ. գործածել է միայն Պիտառ. «Եւ են թանձր եթերքն հարիւր, որ է երեքհարիւր մաղմաջք. և մաղմաջ օդն ունի զթանձրութիւն ծովու»,—ՆՀԲ մեկնում է «բառ անյայտ՝ որպէս նշանակ աշխճանաց վերին օդոց կամ եթերաց». իսկ ԱԲ երկուսը իրարից զանազանելով՝ «1. աստիճան, կարգ, յարկ. 2. թանձր»։*

ՄԱՂՆԵՒԱԿ *«օդի տեսակ». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած «Վասն Ամանաց լուսաւորաց Եղիոսի և Եպիփ. կիպր.» հրատր. Բազմ. 1893, 574. «Իսկ աստեղացդ ամանք՝ օդք են և ի նոսա ծածկին և ի նոցանէ վարին. և այս են օդք առ*

*լուսաւորացն. յամսոս, մաղնեակ, փաար, ճնակաուտ, ղակոյն. այս են օդքն որ յարակայք անուանին»։

*ՄԱՃ, ո հլ. (նաև ի հլ. դրծ. մաճիւ Եփր. դտ. էջ 329, 330. յետնաբար կայ ի-ա հլ.) «արօրի կոթը», լայնաբար «արօր, խոփ» Սիր. լը. 26. Դատ. գ. 31. Ղկ. Բ. 62. Լաբուբ. 42. Սեբեր. որից մաճակալ Ես. կա. 5=Ոսկ. ես. 455. Սիր. լը. 26. Մծբ. 197. մաճակալութիւն Պիտառ. Լմբ. մատ. էջ 43.—այստե՞ղ է պատկանում նաև մաճիօր «վարուց» Բառ. երեմ. էջ 203։

=ՊՀլ. *māč ձևից, որի նախդիրով աճած *āmāč ձևն է ներկայացնում պրս. آماج āmāj «մաճ». սրա հետ է կցւում փարսի mātk «մաճ», որ սակայն ըստ Horn § 45 ձայնապէս անհամաձայն է վերիններին հետ։ Իրաններից է փոխառեալ նաև արևել. Բրբ. կամ չաղաթ. آماج āmāč «արօր»։—Հիւբշ. 191։

Նախ Lag. Arm. Stud. § 1413 համեմատում է պրս. āmāj բառի հետ, որ ըստ հայերէնի ուղղում է *amāč: Հիւբշ. Arm. Stud. էջ 41 կասկածի մէջ է և հյ. բառը բնիկ է համարում։ Հիւնք. պրս. ամաճ:

ԳԻՒ.—Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Սլմ. մաճ, Խրբ. Սվիդ. մաջ, Մշ. մաջ, մանճ, Ալշ. Մկ. Ոզմ. Վն. մանջ.—նոր բառեր են մաճակոթ, մաճրուռ, մաճկալ, մաճեղբայր, մաճկալեղբայր, մաճամայր:

ՓՈԽ.—Վրաց. მაჭი մաճի «արօրի մաճ», որ և მანჭი մանճի (օլօա ჭყონია, სიტყვაკონა, СП. 1910, էջ 31), მემაჭე մեմաճե «մաճկալ».— այստե՞ղ է պատկանում արդեօք նաև վրաց. მაჭაკალი մաճակալի կամ მაჭანკალი մաճանկալի «խնամախօսութեան միջնորդ». (ուրիշ է սակայն լազ. maxačkali «երկրագործ», որ ծագում է լազ. xačk «փորել, տափնել» արմատից և կապ չունի հյ. մաճկալ բառի հետ).— Բրբ. դւռ. Եւդ. և Բորբումի՝ ماج māj «մաճ» (Յուշարձան, էջ 330 բ, Շիրակ 1905, 425).— քրդ. մաճ «մաճ» (տե՛ս Վտակ 1908, № 141)։—Մատ. ЗВО 22, 42 հայերէնից է կցում սվան. դվաճ «մաճ», որ սակայն ձայնապէս շատ անհամաձայն է։

ՄԱՃԱՌ «աղածին կամ ամուր կամ մոխ». ունի միայն Բառ. երեմ. էջ 203. (վերջին երկու բառերը տե՛ս աղմուր և մոռէ). նշանակում է «աղաջուրով համեմանք»։ Նոյն է՝

ԳԻՒ.—Վն. մաճառ «աղած և արևի մէջ չորացրած ձուկ» (տճկ. çiroz)։

ՄԱՃԱՒԱԿ (կամ մաճռակ?) «նոր և թարմ պանիր». մէկ անգամ ունի Ա. Թագ. ժէ. 18։

ՆՀԲ թուի հանել մածեալ բառից։ Հիւնք. մածուցանել բայից։ Patrubány SA 1, 223 հանում է Մաճառ ազգի անունից, իբրև «հունգարական պանիր»։ Պատահական նմանութիւն ունին ուտ. մուճաճաղ՝ «կաթ» և արաբ. مضر ma-ǧar «կաթը թթուելով մածնանալ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 110). առաջինը առուգաբանւում է մուճա «անուշ, քաղցր» և ճաղ՝ «թան» բառերից և բուն նշանակում է «քաղցր թան»։

ՄԱՃԱՍ «թևի մեծ երակը, բազկերակ, զարկերակ». այս իմաստով գտնում եմ հետևեալ վկայութեանց մէջ. «Աղօթքն նման է մաճասին՝ որ է ի բազուկն. որչափ մաճասն կուտայ՝ նշան է թէ կենդանի է մարդն... և թէ դադարի, նշան է թէ մեռեալ է հոգին, ճանաչի թէ կենդանի է մարդն, յորժամ մաճասն հարկանէ». Տաթև. ձմ. հթ և ճծբ. գրուած է մէճաս Տաթև. հարց. 244.—նշանակում է նաև «բազուկ, դաստակ», ինչպէս ցոյց են տալիս հետևեալ վկայութիւնները. «երակ մաճասային» Մխ. բժշ. էջ 1. «մաճասին երակն» Մխ. բժշ. էջ 9, 10 եև. գրուած է նաև միճաս Մխ. բժշ. էջ 32։

=Թւում է թէ արաբական փոխառութիւն է, ինչպէս ցոյց են տալիս ա, է, ի ձայնաւորների փոխանակութիւնը և ճ, ջ ձայնաշրջութիւնը (տե՛ս տակը)։ Նոյն աղբիւրից են նաև վրաց. მაჯა մաջա «բազկերակ, դաստակ», მაჯიბ ძარღვი մաջիս ձարղվի «շնչերակ», მაჯიბ ცემა մաջիս ցեմա «արեան զարկը երակների մէջ», թուշ. მაჯ մաջ «բազկերակ» և թերևս նաև ն. ասոր. mača «մկանունք»։—Ա՛ճ.

Բառս չգիտէ ՆՀԲ։ Ունին միայն ՀՀԲ, ՋԲ (իբր նոր բառ) և ԱԲ, միայն առաջին նշանակութեամբ և առանց վկայութեան։ Ջուբինով[2] 687 վրացին դնում է հայից։

ԳԻՒ.—Տրև. մաջա «վերնադաստակ, carpus, *ռուս.* запястіе». *իսկ Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկպ. 1788, էջ 208* մաջայ «բազկերակ»։

ՄԱՃԱՌ «քաղցու, խակակութ գինի, շիրա». *ունի միայն Բառ. երեմ. էջ 203.—մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 267. «խաղող էր և եղև քաղցու և մաճար և գինի և քացախ»։ (Այս օրինակից երևում է, որ քաղցուն բոլորովին նոր քամուածն է, իսկ մաճարը՝ մի քիչ թթուածը)։*

ԳԻՒ.—Երև. Ղզ. Տփ. մաճար՝ *նոյն նշ.—նոյն բառն է նաև* մաճառ *Բս. Շիր. «ճակընդեղի թթու, հասուրիկ»։*

ՓՈԽ.—Վրաց. მაჭარი մաճարի «քաղցու, շիրա»։

ՄԱՃԿԱՑՈՒՑԱՆԵԼ, *անստոյգ բառ. մէկ անգամ գործածում է Բուզ. Դ. 5. «Թո՛ղ թէ գինիս կամ ղգինի ճաշակել, որ զնախճամէջ պարն յուղացուցեալ մաճկացուցանէ»։ ՆՀԲ մեկնում է «կա՛մ է մածուցանել, մակարդել, թանձրացուցանել, և կամ մաշկացուցանել», ՋԲ «թանձրացուցանել», ԱԲ «մակարդել, թանձրացնել»։*

ՄԱՃՈՒՃԻԿ «մատնեմատ». *ասում է յատկապէս* մանուկիկ մատ. *ունի միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 65 ա* (annulaire), *իբր մհյ. բառ. նոյնը կրկնում են Քաջունի, Դ. 156 և ԳԲ։*

***ՄԱՄ** «մեծ մայր, հանի» Մխ. դտ. որից* նախամամ «մեծ մամ» Կանոն. մամխոպոպ «մի տեսակ ծաղիկ» Սալաձ. երկմամ «պապի պապի կամ մամի մամի մայրը, quadrisaïeule» *մհյ. բառ (Նորայր, Բառ. ֆր.)։*

=Յն. μάμμα, μάμμη «մեծ մայր, մամ» *բառից (նախապէս նշանակում էր «մայր», յետնարար դարձաւ «մեծ մայր»). սրա հետ համմտ. լատ.* mamma, *իռլ.* mam. *կիմր.* mam, *լիթ.* māma, momà, *ռուս.* мама, *լեհ.* mama, *ալբան.* mamɛ, mɛmɛ, *ռում.* mamă, *ֆրանս.* maman «մայրիկ», *հրդ.* muoma, *գերմ.* Muhme «մօրաքոյր», *պրս.* مام mām «մայր», māmā «մայրիկ, տիկին», māmak «մայրիկ», māmī «տանտիկին», *քրդ.* mimek «մօրաքոյր» *են։ Այս բոլորը փաղաքշական ձևեր են, կազմուած «մայր» բառից, որոնց միավանկներն էլ կան, ինչ. սանս.* mā, *յն.* μᾶ, μᾶτα: *Գտնւում են մինչև անգամ ոչհնդևրոպական լեզուներում, ինչ. վեպս. սիրյ.* mam «մայրիկ», *արև. թրք. կամ չաղաթ.* māmā «մեծ մայր» *և մինչև իսկ չին.* 媽媽 mä-má «մայրիկ»։ *Հայերէնի մէջ էլ* մամ *կարող էր լինել մայր բառից կազմուած փաղաքշական մի ձև. բայց «մայր» բառի փաղաքշականը զուգընթաց է ընթանում հայր բառի փաղաքշականի հետ. և որովհետև հայր բառից չի կարող հայերէնի մէջ պապ ձևն յառաջանալ և պապ փոխառեալ է, ուստի նոյնպէս պէտք է դնել նաև* մամ *բառը։ (Այսպէս է նաև գերմ.* papa, *որ չի կարող յառաջանալ* vater «հայր» *բառից, ուստի և փոխառութիւն պէտք է լինի. և իրօք որ փոխառեալ է ֆրանսերէնից, 18րդ դարում, ըստ* Kluge 360): *Մամ չի կարող փոխառեալ լինել պարսկերէնից, որովհետև նշանակութեամբ համապատասխան չէ. յունարէնը յարմարում է թէ՛ ձևով և թէ նշանակութեամբ. հմմտ.* ապոմամ *և* ապոպապ (Walde 458, Trautmann 168, Boisacq 606, Pokorny 2, 221):

Lag. Arm. Stud. § 1414 *պրս.* mām *ձևի հետ։ Հիւնք. պրս.* mām-*ից։ Հիւբշ.* Arm. Gram. 191 *դնում է պարսկերէնից, իսկ էջ 341 և 513 ասում է թէ կարող է գալ յունարէնից։* Karst, *Յուշարձ. 402 սումեր.* am, ama «մայր»։

ԳԻՒ.—Ախց. Աղլ. Կր. Մշ. Պլ. Սեբ. Սչ. մամ, *Խրբ.* մամա, *Հմշ.* մօմ, *Ոզմ.* մամէկ, *Մրզ.* մամը՛, մամը՝կ՝, *բոլորն էլ նշանակում են «մեծ մայր». իսկ Ալշ.* մամ, *Տիգ.* մոմ «մայր», *Սվեդ.* մում «կնքահօր կինը»։ *Նոր ձևեր են* մամի *Ննխ. «պառաւ կին» (Պլ.* մամի «մանկաբարձուհի» *փոխառեալ է յունարէնից), մա՛մա Վն. «մա՛յրիկ», Այն. «մեծ մայր», Արբ. «մանկաբարձուհի», մամիկ Պլ. Սլմ. Վն. «մեծ մայր», մա՛մօ Բիւթ. Մշ. «մայրիկ», մամուկծիկ Պլ. «կծկտած», մա-

մուկ Ննխ. Պլ., մամիւգ Ասլ. «սարդ» (իմաստի զարգացման համար հմմտ. քրդ. pirik «մայր, մամ. 2. սարդ», վրաց. დედა-ზარდელი դեդա-զարդելի «մայրիկ-սարդ», հիւս. օստյակ. nimsar-imi «սարդ», բուն «ոստայնի մայրիկ»)։

ՄԱՄԱՑ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «նոր մարսուած և կաթնանալման մի խիւս դարձած կերակուրը ստամոքսի մէջ. ֆր. chyle» Ոսկիփ.։

Պատահական նմանութիւն ունի ուտ. մոմոծ «շողիք, խլինք», մոմոծեն բեսուն «խնջել»։

***ՄԱՄԲԱՐ** «մզկիթի բեմը՝ աստեանը կամ խորանը» Գր. տղ. եմ. Վրդն. պտմ. էջ 96։

=Արաբ. منبر minbar, որից նաև թրք. քրդ. minber, mimber «մզկիթի բեմը, որտեղից քարոզիչն է խօսում»։—Հիւբշ. 270։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ՄԱՄԲԱՎԱՐ** «վրացական մի պաշտօնեայի անուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Օրբել. 260. «Զծիրավ ծղօրն Պղնձահանիցն և զմեծ մամբավարն Գարշտէուցն»։

=Վրաց. მამაթ-მთავარი մամաթ-մթավարի «պատրիարք, հայրապետ, պետ հոգևորականաց» (Ջուբինով[2] 663)։—Աճ.

Շահնազարեան, հրտր. Օրբել. Բ. 303 դնում է վրաց. **մամբավար** «ոստիկան»։

***ՄԱՄԻԹԱ**, որ և մամիսա, մամիտայ, մամշա «մի տեսակ բոյս է. լտ. chelidonium glaucum» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1949։

=Արաբ. ماميثا māmītā կամ ماميثا māmīθā (ըստ զանազան արտասանութեանց՝ կարդացւում է մամիթա կամ մամիսա)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.

ՄԱՄԻՐ կամ **ՄԱՔԻՐ** «հաւ». ունի միայն Բառ. երեմ. էջ 203 և 207. երկու ձեռիից մին սխալ է.

Ըստ Հ. Պ. Տէր-Պօղոսեան ՀԱ 1922, էջ 554 նշանակութիւնը պէտք է ուղղել հաւր=հօր։

***ՄԱՄԻՐԱ** կամ **ՄԱՄԻՐԱՆ** «փոքր ծիծեռնախոտ, chelidonium» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1950։

=Արաբ. պրս. مامیران māmīrān «ծիծեռնախոտ»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 1300։

ՄԱՄՁԻՐ «խանգարեալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մանդ. սիր. 6, իբր օտար բառ. «Իր ոչ սիրեսցէ զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ մարանաթայ... այսինքն Տէր եկն և նորա ոչ հաւատացին, որք կոչին յամենեցունց **մամձիր**, այսինքն խանգարեալք. զի ոչ օրինօքն վարեցան և ոչ հաւատոց հնազանդեցան»։ Նոյն բառը գիտէ նաև Բառ. երեմ. 202, 204 **մաձիր, մանձիր** «խանգարեալ»։

***ՄԱՄՈՆԱՅ** (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «ինչք, մթերեալ հարստութիւն» Մտթ. գ. 24, Ղկ. ժզ. 9, 11, 13. Սփր. բ. կոր. 94. Ոսկ. մ. էջ 106. Փիլիպ. 414. Կոչ. 30. «սատանայ» Երզն. մտթ. 151. գրուած **մամովնայ** Սփր. ասաց. նիկ. (հրտր. Յուշարձան, էջ 207). նոր գրականում գործածւում է «դրամ» իմաստով. սրանից մամոնապաշտ «փողի գերի» Սպիփ. ծն.։

=Յն. μαμωνᾶ, μαμμωνᾶ կամ ասոր. ܡܡܘܢܐ māmōnā հոմանիշ ձևից տառադարձուած՝ Աւետարանի թարգմանութեան ժամանակ։ Նոյն միջոցով տարածուած է շատ լեզուների մէջ, ինչ. լտ. mammona, գոթ. mammôna, ռուս. мамона, գերմ. Mammon ևն։ Բառիս ծագումը սեմական է։

Հներից Մեկն. ղկ. «Մամոնայ՝ ընչիցն մեծութիւնն ասի ըստ հեբրայական բառին»։ Գիրք. առաք. 351 բ. մեկնում է «Մամոնայի, որ թարգմանի ասորերէն փարթամութիւն»։ Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

+**ՄԱՄՈՒԻԼ** (ո հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ճնշելու՝ ճզմելու գործիք՝ մեքենայ» Ագաթ. Շիր. Ճառընտ. որից **մամուլ գրոց** «գրքի բուն նիւթը՝ նպատակը» Նազար. հմմտ. նաև «ի մամուլս գիտութեան և աշխատութեան» Տաթև. ամ. 114։

=Բնիկ հայ բառ. կրկնուած է մուլ ձայնդարձից, որի վրայ մանրամասն տես **մալ**։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Տէրվ. Մասիս 1881 մայիս 5 և Նախալ. 98 (տե՛ս մաղ բառի տակ)։— Նոյնը նաև

Meillet MSL 10, 280, *որ Հիւբշ.* IF Anz. 10, 46 *մերժում է՝ նշանակութեանց տարբերութեան պատճառով։ Հիմնք. էջ 37 ամուլ բառից, իսկ էջ 50 ևմլել բայից։*

Մամուլ *«չուան» տե՛ս Մալուխ։*

Մամուլ *«իմամ» տե՛ս Մալում։*

ՄԱՄՈՒԻ, «cholera, *ցնդխտումն». այսպէս ունի Ներսէսովիչ, Բառ. լա.-հյ. 74 բ։*

ՄԱՄՈՒԽ *(ըստ ՋՔ ո հլ. իսկ ՆՀԲ չունի բառս) «վայրի սալոր» ԱԲ. որից* մամխի (-խուց, -խեաց) *«վայրի սալորենի» Բուզ. էջ 118 (ըստ ՀԲուս. § 1951* prunus salvaticus)։

ԳԻՒ.—Երև. մամուխ *«մի տեսակ թթու, անպէտք պտուղ է», Արբ.* մամուխ *«թրք. ճաճ էրիյի կոչուած սալորը», Ղզ. Պրտ.* մամուխ *«վայրի սալոր», Ակն.* մամօխ, *Ասլ.* մամէօ՛խ, *Սվեդ.* մոմէօխ *«վայրի սալոր», Մշ.* մամոխ *«խակ» (օր. Կեռասը մամոխ է). Ատ.* մամուգ-սալօր (<մամուկ-սալոր, *իմա՛* մամուխ-սալոր) *«դամոն», որից Ղբ.* մամբխկի *«մի տեսակ ծառ, մամխի»։—Մամուխ «սալոր» բառից որոշ պատկերաւորութեամբ յառաջացած է Ննխ.* մամուխ *«բունոց», որի համար հմմտ. Ղրբ. ծիրան և թրք. շէֆթալի «դեղձ» պտղանունները, որոնք փոխաբերաբար ստացել են նաև «բունոց» նշանակութիւնը։*

ՄԱՄՈՒՒՐ (ո հլ. *ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «լօտաբոյս, ջրի գորտնեբուրդ» Վկայօր. էջ 142. Նիւս. բն. Վրք. հց. գրուած է նաև* մամուր: *Որից* մամոախնդիր *Փարպ.* մամոարմատ *Նար. 138.* մամոապատ *(նոր բառ)։*

Bugge KZ 32, 17 *հլ.* müchü, *հրգ.* mos, *հհիւս.* mosi, *լտ.* moscus *են հոմանիշների հետ՝ իբր բնիկ հայ, *մուսր ձևից կրկնութեամբ։ Նոյնը կրկնում է* Pedersen KZ 39. 416 *և այլ ձևի տակ ուզում է հաստատել* Petersson LUÅ 1916, 42 *(ըստ* Pokorny 2, 251): Bugge-*ի մեկնութիւնը յիշում են կասկածով* Walde 504, Boisacq 648 *և* Pokorny՝ *անդ։ Պատահական նմանութիւն ունի հիւս. թրք.* mamur *«մի տեսակ բոյս», որից ըստ* Miklosich *փոխառեալ է ռուս.* мамура *«մի տեսակ մորենի,* rubus arcticus»։

ԳԻՒ.—Ղրբ. մա՛մուռը, *Ալշ. Երև. Մկ. Մշ. Շմ. Ջղ. Վն.* մամուռ, *Ոզմ.* մամօռ, *իսկ Սլմ.* կոռտան-մայիմուռ *(հմմտ.* գորտնբուրդ *Բլ.,* գորտնփրփուր *Մշ.,* գորտնխալի *Ախց. Կր. հոմանիշները, որոնցից հետևում է որ վերի բառն էլ պէտք է հասկանալ՝* գորտան մամուռ *կամ* գորտան մախմուր *(«Թաւիշ»)։—Նոր բառեր են* մամուռնակալել, մամռակալել, մամռուռ։—*Բոլորովին ուրիշ է Արբ.* մամուռ *«մորենի, վայրի թութ», որ ծագում է հիւս. թրք.* mamur *բառից. տե՛ս վերը։*

ՓՈԽ.—Ռուս. мамур՝ *նոյն նշ.։*

ՄԱՄՈՒՒՒՐ *«անխախտ կամ ջամախ կամ ղօղ կամ խոտ բարակ, որ ի ջուրն գոյանայ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 203. բացի առաջինից՝ մնացեալ բոլորը նշանակում են «մամուռ». ուստի անխախտ բառն էլ կա՛մ նշանակում է «մամուռ» և կամ կայ մի տարբեր* մամուռ *բառ, որ նշանակում է «անխախտ»։—Վերջինիս համար հմմտ. թերևս արաբ.* مَعْمُور ma'mūr *«հոյակապ, շէն, բարգաւաճ, մշակեալ»։*

ՄԱՄՐԻՉ *«բաղեղ». ունին միայն ՀՀԲ, ՋՔ (իբր նոր բառ) և ՀԲուս. § 1959, առանց վրկայութեան. վերջինս մեկնում է «*hedera arborea», *որով և Քաջունի, Գ. 156 ֆրանս.* «lierre, *բաղեղ»։*

Նկատելի է որ մամուռ *դրում է նաև* մամուր *և ըստ ՆՀԲ-ի նշանակում է նաև «բաղեղ»։*

***ՄԱՄՓԱԻԻՂ** *«իշխան, գաւառապետ». մէկ անգամ ունի Ասող. 257. «Թիկունս օգնականի զՎիրս արարեալ՝ ի նոցին կրկնամեռ լուանալ ջուր, և զորդին իւր՝* մամփուղ *Տաշրաց կացուցանէր ի Հիւնէ վանս» (այլ ձև.* մամփալ, մամփայլ)։

=Վրաց. მამფალი მამփալի *«թագաւոր. 2. հայրապետ, պատրիարք» (Ջուբինով[2] 665)։*

Brosset, Hist. de la Géorgie, *էջ 148 (ըստ Մալխասեան, Հրտր. Ասող. էջ 389) վրաց.* მამფე *«արքայ» բառի նուազականն է համարում։ Ուղիղ մեկնից Մառ* Тексты VII, *էջ* LXVIII, *որ*

և սոյն վրացի բառը ստուգաբանում է «հայր-տէր»։

***ՄԱՅԱ** «թթխմոր» Վստկ. 31. «Վասն հաց եփելոյ՝ զմայան, գինւոյ մրուրովն բռնէ»։*

=Պրս. مایه māya «թթխմոր»։

ՄԱՅԵԱԿ, ի-ա *հլ. «շտեմարան, մի բանի շատ գտնուած տեղը». անստոյգ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Նար. խչ. 380. «Անդէն ի նմին ազգային և բնաբնակ լեռնայոլով և կարծրախարիսխ գաւառին Մոկաց մայեկաց մըրզաց»։—Իբր տեղական յատուկ անուն գրտնում եմ գործածուած մի Աւետարանի յիշատակարանում՝ 1605 թ. «ի յերկիրն Մայեկայ ի գեօղն որ կոչի Սեպ.» (Հրատր. ՀՍ. 1920, էջ 24)։ Նկատելի է որ նախորդ օրինակում բառը յօգնակի է և յատուկ անուն համարուելու յարմարութիւն չունի։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 150, Բ. 288)։*

⊙ՄԱՅԵԼ *«ոչխարի ձայն հանելը», որից և մայիւն. ունին միայն ՋՔ և ՓՔ. հնից չէ աւանդուած. գործածական է միայն նոր գրականում։*

=Բնաձայն բառ է և բուն այսմ պատահական նմանութիւն ունի սանս. māyú- «մայիւն», mɛmāyat «մայել» բառերի հետ։—Ա.Ճ. Justi Dict. Kurde, էջ 386 քրդ. mārin «մայիլ» ձևի հետ։ Տէրվ. Նախալ. 46, 97 հնխ. ma արմատից. հմմտ. սանս. mā «մայիլ», makaka «մայող», յն. μηκάομαι «մայել» ևն։ Scheftelowitz BB 29, 46 սանս. mimāti «մայիլ», յն. μιμέῖσθαι։

ԳԻՒ.—Ախց. մոյել, Կր. մայէլ, Վն. պայել «ոչխարի մայել».—իսկ Կր. մոյել, ՋՔ. մայօլ, մայոլ «կաւտուի մլաւել»։ Նոր բառեր են Ակն. մէյան «շատ մլաւող կատու», Շմ. մոյվօց=մայոց Շլ. «մայիւն», մայուլել Վն. «կատուի մլաւել»։

Մայեստր *տե՛ս Մագիստրոս։*

ՄԱՅՁԵԼ *«տեսնել, համոտեսելով այնպէս իմանալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վստկ. էջ 122. «Որ մայզես որ քաղցրութիւնն բաւական է, և լից յապիկած ամանն»։*

ԳԻՒ.—Մայզել Ակն. «նշմարել», մէզել Արճ. Խլ. Մշ. Վն. «խորունկ խորունկ մտածել», Հզ. «դիտել, նայիլ»։

ՄԱՅԹ *«փողոցի երկու կողմը՝ անցուդարձի համար շինուած նեղ սալայատակ». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. trottoir, իբրև նորակերտ բառ։*

***ՄԱՅԻՍ** «Հռովմէական տոմարի հինգերորդ ամիսը» Յայսմ. Տոմար.։*

=Յն. μάϊος ձևից, որ՝ ծագում է լատ. maius հոմանիշից. այս բառը նախապէս էր Maius աստուծոյ անունը, որ Walde 455 կցում է maior «մեծագոյն» բառին, իբր «աճում յառաջ բերող աստուած»։ Փոխառութեամբ տարածուած է բազմաթիւ լեզուների մէջ, ինչ. ֆրանս. mai, իտալ. maggio, գերմ. Mai, հբգ. meio, ռուս. май, թրք. مايس mayıs ևն։—Հիւբշ. 367։

ՋՔ դրաւ լատինից։ Ընդարձակ տե՛ս Բազմ. 1897, էջ 138—141։

ԳԻՒ.—Ամէն տեղ կայ մայիս ձևով. Ղրբ. մա՛հիս.—Նոյն է և Շիր. մայիս «ոչխարի փորհարինք, որ մայիս ամսուայ թարմ խոտը ուտելուց է յառաջանում»։

Մայիստո *տե՛ս Մագիստրոս։*

ՄԱՅԼԵԼԻՔ *«ի սկզբանէ». ունի միայն Բառ. երեմ. էջ 215։*

***ՄԱՅՄ** «հգիպտացորեն, լաղուր, խամբար». ունի միայն ՀՌուս. § 1961, որ և յայտնում է թէ առաջին անգամ Յովհ. Անկիւրացի, մօտ 1640-ին, յարմարեցրել է այս բառը՝*

=լտ. maïs հոմանիշից։—Եգիպտացորենը ամերիկեան բոյս է, որ առաջին անգամ Կոլոմբոսը փոխադրել է Եւրոպա՝ նիւթի հետ բերելով նաև անունը (Հաիտի կղզում, որ Կոլոմբոսը գտաւ 1492 թ. դեկտ. 6-ին, բոյսը կոչում է mahis)։ Այնուհետև այս բառը տարածուեց Եւրոպայի զանազան լեզուներում, ինչպէս՝ սպան. maiz, անգլ. maize, ֆրանս. maïs, իտալ. maiz, գերմ. նախապէս երկվանկ mahis (այսպէս արդէն 1557 թ.) և յետոյ Mais (այսպէս արդէն 1624 թ. տե՛ս Kluge 316 ա). մինչև անգամ ունինք չին. 玉子 mai⁴-tsə «հգիպտացորեն»!

ՄԱՅՄՐԱՅ *«գաւաթ» Լծ. փիլ. (Պատժանակն մեծ մայթրայ է ...զոր տօսդաքան ա-*

սեն). ունին միայն ԱԲ և Հացունի, Ճաղեր 76, 104։—Նոյն բառը Նորայր, Բառ. ֆրանս. 180 ա, 760 ա համարում է «ծառի վրայ ուռ կամ այտոյց, broussin» (իբր մհյ. բառ), որ կրկնում են Քաջունի, Ա. 1176, Գ. 156 և Գաբ. բառ.։

ՄԱՅՊԵՏ. պարսկական անծանօթ մի պաշտօնեայ, որ ունին Փարպ. 262, 291, 307. Եղիշ. 139։

Պատկ. Mamep. II. 23 դնում է պրս. مي may «գինի»+պետ բառերից, իբրև «տաճարապետ արքունի»։ Հիւբշ. Arm. Gram. 69 կարդում է մարդպետ կամ մարզպետ: կարելի չէ հասկանալ «մոգպետ», որովհետև մայպետի կողքին նաև մոգպետն է յիշուած վերի վկայութեանց մէջ։

ՄԱՅՈՒ (սեռ. ի) «երակ». մէկ անգամ գործածում է Եզն. «ի բարիոք երակէն նորա բարւոք որդին եղև և ի չար մայռէն նորա չարն»։

ՆՀԲ մեկնում է «երակ», որ ուղիղ է անշուշտ. ՋԲ «սերմն կենդանեաց կամ արգանդ», ԱԲ «երակ կամ ծննդական անդամք».—իսկ Հիւնք. ուղղում է ի չար մրոյն:

*ՄԱՅՍ «լատինի, celtis australis (որ և բոխիշ)» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1962։

=Արաբ. ميس mīs կամ mays «լոտոս» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 296 կարդում է mays և մեկնում է յն. λωτός, որ ի մէջ այլոց նշանակում է նաև «celtis australis L.» բայց Թրք. դնում է يبان يبرى yaban biberi «վայրի պղպեղի ծառ» և ո՛չ թէ četlenbič կամ čeklembij, ինչպէս կոչում է լատինին)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 892։

Մայատո տե՛ս Մագիստրոս։

*ՄԱՅՏԱՆ «Հրապարակ» Վրք. Հց. ա. 351, Ուռհ. 32, Ոսկ. գծ. 325. գրուած է նաև մէյդան Օրբել. Հրար. էմ. էջ 248, մոյտան Կոստ. երզն. 175. նոյնը ունի Շապհ. 40, 45 մոյտաան, մէտան ձևերով։

=Արաբ. ميدان maydān «հրապարակ», որից փոխառեալ են նաև սպան. almidana, ֆրանս. maïadan։—Հիւբշ. 270։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը յետոյ Հիւբշ. ZDMG 35 (1881), 661:

+ՄԱՅՐ (մor, մարբ, մարf, մարց, մարբf) «մայր, մայրիկ» ՍԳր. Եզն. Ոսկ. ևն. որից մայրաբար Եփր. ծն. մայրակեր Ոսկ. մ. գ. 3. մայրակնութիւն «իր մօր հետ ամուսնանալը» Ոսկ. տիտ. 328 (չունի ՆՀԲ), մայրաքաղաք ՍԳր. մօրաքոյր Ղևտ. ժը. 13. մօրեղբայր (հնից չէ աւանդուած), մօրեղբօրորդի Պղատ. օրին. մօրու «խորթ մայր» Ոսկ. պօղ. Ա. 328. Սերբեր. 42 (նաև գրուած մուրու). Եւս. քր. Բ. էջ 116 (ձ. ի մօրէն). աստուածամայր Շար. Սկևռ. Գնձ. անմայր Ես. ծդ. 1. երր. է. 3. կոչ. գորովամայր Մաշկ. եղերամայր Ոսկ. երր. և Փիլիպ. մանկամայր Ագաթ. մատաղամայր Գ. մկ. ա. 11. ոսկեմայր Ագաթ. կնքամայր Մխ. ապար. կոչամայր Վրդն. ծն. կուսամայր Պիտառ. համամայր Մն. խգ. 29. Եւս. քր. միամօր ՍԳր. (յգ. սեռ. միամօրուց Տոբ. ը. 19), համմօրեայ Մխ. դտ. ևն։

=Բնիկ հայ բառ, որ գալիս է հնխ. mātér ձևից. համմտ. սանս. मातृ mātar, զնդ. 𐬨𐬀𐬙𐬌 mātar, հպրս. 𐎠𐎼𐎰 𐎠𐎼𐎰 mātā, պհլ. māt, mātar, պրս. مادر mādar, արևել. իրան. meri (տե՛ս MSL 18, 101), աֆղան. mor, թոխար. mācar, յն. μήτηρ, դոր. μάτηρ լատ. māter (իտալ. սպան. madre, ֆրանս. mére), հրգ. muoter, գերմ. Mutter, հոլլ. moeder, հսլ. mati, ռուս. мать, լիթ. mótyna, լիթթ. māte, հպրուս. mūti, mothe, հիռլ. máthir, հիսլ. mōðer, անգսք. mōdor, անգլ. mother ևն, բոլորն էլ «մայր» նշանակութեամբ. իմաստի փոփոխութիւն են կրած լիթ. motė, móte «կին», ալբան. motre «քոյր» (նախապէս «երէց քոյր», որ մօր պաշտօնն էր կատարում իրանից փոքր հարազատների համար). համմտ. նաև յն. μητρυιά և հպրուս. pomatre «մօրու» (Walde 469, Boisacq 635, Ernout-Meillet 565, Trautmann 171, Pokorny 2, 229): Հայ. սեռ. մօր<մաւր<հնխ. mātrós ձևից, իսկ մօրու <մաւրու<հնխ. mātruyā- ձևից։ — Հիւբշ. 472։

Klaproth, Asia pol. 103 ֆրանս. mè-

re *են ձևերի հետ։ ԳԴ պրս.* mādar, mā-δar, mād, māmā, mām, mār, mārū *հոմանիշների հետ։ ՆՀԲ «որպէս թէ ունօղ զմի այր կամ միացեալ ընդ այր». լծ. և պրս. սանս. յն. լտ. ձևերը։ Ուղիղ են մեկնում* Peterm. 20, 21, 33, Windisch. 22, 31, Böttich. Horae 36, Bopp *Համմտ. քերակ. 2, 37. են։* Bugge, Lyk. Stud. 1, 86 *լիւկ.* madrane «մայրական»։ *Ալիշան, Հին հաւ. 318 Կելտերի մայր կոչած իգական ոգիների հետ։ Հիւնք. հայր բառի՞ց։* Jensen, Hitt. u. Arm. 95 *կցում է հաթ.* mtr, mtar *ձևերին։*

ԳԻՒ.—Ագլ. մայր, *Ախց. Ակն. Ասլ. Կր. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* մար, *Խրբ.* մոր, *ՋԹ.* մոյ, մոր, *Երև. Համշ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ.* մէր, *Գոր.* մըէր, *Ոզմ.* մեր, *ՀՁ.* մայ.—մօրու *ձևը պահում են Շտ.* մուրու մէր *(Ագգ. հանդէս իե. 115)՝ իբր ածական և Բլ. Մշ.* խորթումուրու *(<*խորթ ու մօրու*) կրկնականում.—*մայր *բառը բոլորովին ջընջուած է Տիգ. և փոխանակուած* մում *բառով, ինչպէս որ հայր փոխանակուած է* բոր *(<*պապ*) բառով։—Նոր բառեր են* մայրաեոր, մայրամաեիկ, մայրամեռ, մայրամուտ, մայրաեիճ, մայրապետ, մայրատատ, մայրացու, մայրնմանակ, մայրտեսիկ, մայրճ, մօրեեական, մօրուր, մօրացու, մօրացեղ, մօրուց *են։—Այստեղ են պատկանում նաև* կոճակամէր *«կոճակի լամբակ»,* մէրան *«մածնի կամ պանրի մակարդ»,* մէրել *«մակարդել» (Համմտ. վրաց.* მაწვნის დედა *մածվնիս-դեդա «մածնի մերան», բուն «մածնի մայրիկ») են. այս բառերի վրայ տես Գւռ. բու։—Բրքահօս Հայոց մէջ դանում ենք Ատն. մէրկիմօրէ «աղքատ», սանամէր «սանամայր», էնկ. իճ՛ամար «կնքամայր» (Բիւր. 1898, 789)։*

ՓՈՒԽ.—Ուտ. tatmer *«տատմէր, մանկաբարձուհի», վրաց.* ტატბერი *տատրեր «տատմէր»* (იოსებ ჭყონია, სიტყვის-კონა СП. *1910, էջ 50), քրդ.* مرابط marabet *«կրօնատրուհի»<գւռ. մարապետ ձևից. (այս վերջինը* Justi, Dict. Kurde 392 *զուր է աշխատում հանել արաբ.* مرابط murabit *«ափրիկեան դարվիշ» բառից)։*

+ՄԱՅՐ, ի *հլ. «անտառային մի բարձր ծառ է. ըստ ՆՀԲ եղևին, նոճի, թեղօշ, ըստ Արթինեան, Ածաշունչի տունկերը 144* pinus cedrus, *չամ» ՍԳր. որից մայրի «անտառ» ՍԳր. վեցօր. եղիշ. (իմաստի զարգացման համար Համմտ. թրք. և քրդ.* meše *«կաղնի. 2. անտառ»), բաւամայրի «անտառահեծ» (նորագիւտ բառ) 3կ. կարն. 14. մայրակերտ Երեմ. իթ. 15. մայրակոփ, մայրակոփեայ նորագիւտ Ա. մնաց. ժէ. 1, 7. մայրաբուսակ Ասող. գ. 44. մայրագերան Ասող. գ. 11. մայրայարկ Եփր. մն. մայրաւոր «անտառ» եղիշ. գ. էջ 92. մայրևոր «անտառ Մհար. եր. «փայտահար» Եւս. քր. երկրմայր «մի տեսակ բոյս» Բժշ. մայրեպան «անտառապահ» (նորագիւտ բառ) Վրդն. սղ. ճգ. էջ 342 (Ծառք անտառի, զի ոչ մայրեպան ոք և ոչ մարդ խնամէ և տնկէ). մայրևորութիւն «փայտահարութիւն» Ոսկ. մ. ք. 27. մայրփայտեայ Ագաթ. փայտամայր «մայրի փայտ» նորագիւտ Ա. մնաց. իբ. 4. թանձրամայրի Կոչ. 219։—Սրա հետ նոյն է նաև մայրի «որջ, գազանների բոյոց» (անտառը համարելով իբրև գազանների բնակավայր) Ամովս. գ. 4, Նաւ. բ. 11, 12. Երգ. դ. 8. Փիլ. նխ. բ. գրուած է նաև մորի Երեմ. իե. 38, դ. 7, Սղ. թ. 30, ճգ. 22, Եզն. 3Հ. կթ. կամ մորենի Վստկ.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* māter- *ձևից, որից են նաև լտ.* māteria *«շինութեան համար փայտ, շինուածանիւթ, նիւթ», ռուս.* матерóй *«հաստատուն, ուժեղ, ամուր», գալլ.* mataris, materis, *սերբ.* mātor *«հին, հնացած, դահ (անասուն)»։ Կարելի է կարծել, որ վերոյիշեալ հնխ.* māter- *բառը նոյն լինի նախորդ* mātér- *«մայրիկ» բառի հետ, «մայրը» ըմբռնելով իբրև «շինութեան էլ մայրը», ապա թէ ո՛չ հնխ. երկրորդ ձևը անկախ բառ է և նշանակում է «մի տեսակ մեծ ծառ»։* Ernout-Meillet 565—6 *լտ.* materia *դնում է լտ.* mater *«մայրիկ» բառի հետ նոյն և չի յիշում ոչ հայերէնը և ոչ էլ ուրիշ որևէ ձև։*

Brosset, JAs., 1834, 377 մայր, *որից*

մորի հանում է այր «քարայր» բառից՝ մ մասնիկով։ ՆՀԲ «որպէս մայր ծառոց»։ Pictet 1, 235 սանս. mēruka «ոտին», կիմր. mérgw «գիհի», հալ. smrĕča «եղևին». բոհեմ. smrk «շոճի» ձևերի հետ։ Müller SWAW 1890, 4= Armen. VI, *թ. 37 կցում է առաջին անգամ լտ.* materia *բառին*։ Bugge KZ 32, 17 *մերժում է այս և հաստատում նախորդ մեկնութիւնը, հայերէնի նախաձևը դնելով* *smṛkí-s: *Նոյնը ընդունում է* Brugmann, Grd. *բ տպ. 1, 741, իսկ Հիւրշ.* IF Anz. 10, 48 *կրկնում է կասկածով։—Հիւնք. և ՀԲուս. § 1963 ըստ ՆՀԲ։*—Lidén IF 18, 493 *առաջարկում է բոլորովին նոր մեկնութիւն. ըստ իրեն՝ հայերէնը բնիկ է՝ հնխ.* məi̯trā- *ձևից. սրա բուն արմատն է հնխ.* mei̯- «ցից, ցիցերով ցանկապատ քաշել», *որից և սրա* -tā *մասնիկով աճած ձևից են գալիս՝ սանս.* mayûkka «ցից», sumēka «ամուր հաստատուած», mēthí-, mēdhí- «ցից», mit- «սիւն», *լտ.* mēta «կոթող», *հհիւս.* meiðr «ծառ, ծառի բուն, ցից, ձող», *իոլ.* methos «սահմանանիշ», *լիթ.* mẽtas «ցից», *լիթթ.* mẽts «ցից, ձող», mẽt, maidīt «չորս կողմը ճաղեր քաշել», maide «ճաղ, ձող»։ *Նոյն արմատի* -tra *մասնիկով աճած ձևերն են հյ. մայր<*məi̯tra- *և լիթթ.* mī-tra, mi-tra «տօսախ» (*թէ* -tra *մասնիկը գործածական էր ծառեր նշանակելու համար՝ հմմտ. հհիւս.* iǫlstr- «ուռենի», *հրգ.* offoltra, mazzaltra *և յն.* κλήθρα «ծառի անուն»)։ Lewy KZ 40, 562 *վերսաին է յիշում* Müller-*ի մեկնութիւնը (=լտ.* māteria*) և աւելացնում է սլաւական բառերը։* Lidén-*ի մեկնութիւնը մերժում են* Walde 469 *և* Pokorny 2, 240, *ընդունում են* Müller-*ի մեկնութիւնը՝* Trautmann 171, Walde 469 *և* Pokorny 2, 230:—*Սագրեան ՀԱ 1909, 335 սումեր.* mar «բնակութիւն» *բառի հետ։* Karst, *Յուշարձան 406 սումեր.* mar «բնակարան», *415 ճապոն.* morin, *թրք.* orman «անտառ», *թունգուզ.* mō «ծառ»։ *Միւսները տե՛ս մորի ձևի տակ։*

Գիւր.—Ալշ. երև. կր. Տփ. մէրի, *Խոջ.* մարի, *Մկ.* մէրը՛, *Սչ.* մօրի «անտառ», որից մերախնձոր «անտառային խնձոր», մերխաղող «վայրի խաղող»։

ՄԱՅՐ «մթութիւն, խաւար». *անկախօրէն գործածուած չէ, բայց պահուած է մի քանի դարձուածների մէջ. ինչ.* ի մայրն դառնալ, ի մայր մտանել «արևի մայր մտնելը» *Յայսմ. Եղիշ.* խաչել. ի մայր դարձուցանել «ճրագը հանգցնել» *Ոսկ. մ. գ. 16.* մայր արևու «արևմուտք» *Լաստ.* որից արևմայր *կամ* արևմարք «վերջալոյս» *Վստկ. 45, 116.* մարիլ «աստղը մայր մտնել» *Վստկ. 45.* անմար *(նորագիւտ բառ) «անշէջ» Ադամ. 300. գաւառականներում ունինք բայական ձևով՝* մարել «հանգցնել», մարիլ «հանգիլ (լոյսի, կրակի)», կրկնութեամբ՝ մարմրիլ «աւկայծելով՝ կամաց կամաց շիջանիլ» են։ *Համմտ. նաև* մառ։—*Ըստ իս այստեղ է պատկանում նաև* մայրամած *Օրբել. 370. «Վասն որոյ մայրամած դիմօք մաղթեմ ղդասս սրբազանիցդ, զի յիշման զմեզ արասջիք արժանի»։ ՆՀԲ մեկնում է բառս «մածեալ ի մայր հասարակաց՝ ի հող, դեռնամածեալ», որից էլ ԱԲ «հողի կպած». պէտք է հասկանալ «խաւարամած, մթամած»։*

=*Անշուշտ առանձին արմատ է՝ որ տարբեր է վերի* մայր «մայրիկ» *բառից. սրան ապացոյց պէտք է համարել* մառ *ձևի գոյութիւնը (հմմտ. նշոյլ և նշող)։ Աւելի յետոյ բառերի նմանութիւնից ազդուելով՝ կապուեց* մայր «մայրիկ» *բառին և ստեղծուեց ժողովրդական հաւատալիքը. Արեգակը գնում էր իր մօր մօտ հանգստանալու, ինչպէս որ ծագելու համար էլ ասում էին «Արևը մօր ծոցից ելաւ»։ Նոյնպիսի փոխաբերական դարձուածներ կան նաև Սլաւական ժողովուրդների մէջ (հմմտ. Աբեղեան,* Arm. Volksglaube, *էջ 42—43)։*

Մայր «մայրիկ» *բառից են մեկնում ՆՀԲ և ԱԲ։ Տէրվ. տե՛ս* մառ։ *Սագրեան ՀԱ 1909, էջ 335 և* Karst, *Յուշարձան, էջ 406, 410 սումեր.* martu «արևմուտք»։ *Մատիկեան ՀԱ 1920, 262*

չընդունելով ՆՀԲ-ի մեկնութիւնը, մայր համարում է անկախ արմատ, «մթութիւն» իմաստով։

ԳԻՒ.—Սեբ. մարը մրդնել, *Ախց. Կր.* մարը մանիլ, *Ննխ. Պլ. Ռ.* մարը (մանել, մրտնալ), *Սլմ.* մար մնել, *Ղրբ.* մար մրնել, *Շմ.* մոր մանիլ, *ՋԹ.* մոյը մօդնուլ, *Ջղ.* մէր մտնել, *Երև.* մէր մանել, *Տփ.* մէր մտնիլ, *Սվեդ.* միրիլ «արևը մայր մտնել».—*բայական ձևով՝ Մշ.* մարել «նուաղիլ, ուշքից գընալ» (*իսկ ճրագի համար ասում են* անցընել), *Սլմ.* մարել, *Ախց. Մշ. Պլ. Սեբ.* մարիլ (*յիշում է արդէն Բառ. երեմ. էջ 246*), *Խրբ.* մորիլ, *Համշ.* մէրիլ «շիջանիլ, հանգիլ» *են։ Կրկնական են Ղզ.* մէրեամէր «արևը մայր մտնելու կէտի վրայ», մարմրիլ, մարմրկիլ, մարեմրիլ, մարմշտիլ *են։*

+ՄԱՅՐԱՆ (*սխալ դրչութեամբ նաև* մացրան, մայրաս) «պատուաստելու տեղը, ծառի ծունկը» *Վստկ. 35, 38, 43, 51, 60։*

=*Հյ.* մայր *բառից՝ իբրև պատրուսի մայրը. համմտ. գւռ.* մէրան «մակարդ» (*տե՛ս վերը* մայր)։

ՆՀԲ վերի ձևով։

Մայրի «անտառ, որջ» *տե՛ս* մայր։

ՄԱՆ «պտոյտ, շրջան, ոլորք, գալար» *Վրդն. ծն.* «կոր, ծռմռուած» *Վեցօր. 195* (*լուսանցքի վրայ նշանակուած*). *որից* ման առնուլ «ոլորիլ» *Վրդն. ծն. Տաթև. ամ. 31* (*Օձն հինդ ման առնու ի գնալն*). մանել «թել ոլորել, հիւսել, մանել» *ՍԳր. Վեցօր. Սերեր.* «բեղերը ոլորել» *Ոսկ. պօղ. ա. 330.* մանիլ «ոլոր ոլոր երթալ» *Լծ. Նար.* «մազերի գանգուրները կախուիլ» *Անան. պատճառ յաղագս զեռսրով նզովելոյն, Հրատ. Արրտ. 1897, էջ 276* (*Մօրուացն զհերան ապա թողուլ, երկայնիլ և մանիլ ցարունան*). մանելիք «իլ, աղեկատ» *Յայտմ.* մանոց «իլ» *Փիլ. Կանոն.* մանուած «ոլորք, գալար, հիւսք» *Խոր. Վրք. հց.* «մանած բան» *Պղատ. օրին.* «խօսքի կնճիռ» *Պիտ.* մանուածապատ *Վեցօր.* մանուածոյ *ՍԳր. ոսկեման Ա. տիմ. բ. 9. Հռոմ. 416.* չուանամման *Ոսկ. մ. ա. 20.* բազմամման *Առ որս. փիլ.* բարակաման *Վեցօր. 121.* դժուարմանուած *Լմբ. ժող.* խառամանել *Վրդն. սղ.* կաւամանութիւն *Լմբ. առակ.* մազմանոց *Երզն. մտթ.* շարամանել *Նիւս. Պիտ.* մանիճ «գալարք օձի» *Մհ. բառ։*

Canini, Et. étym. 159 *սանս.* man'-d'ala «շրջանակ» *բառի հետ։ Տէրվ. Նախալ. 98* մանեակ *բառի հետ միասին՝ դնում է հնխ.* man *արմատից, որից նաև յն.* μανιάκης, *լտ.* monile, *հսլ.* monisto: *Հիւնք. պրս.* մանիյտէն, մանիսթէն «նմանիլ», *լտ.* manus «ձեռք», manifactus «ձեռագործ»։

ԳԻՒ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. Սլմ. Սչ. Վն. մանել, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* մանել, *Ասլ.* մանէ՝լ, *Ագլ. ՋԹ. Խրբ. Մկ. Շմ. Ոզմ. Տփ.* մանիլ, *Սվեդ. Տիգ.* մոնիլ, *Համշ.* մօնուշ, *բոլորն էլ «թել մանել»։ Պարզ արմատը ցոյց են տալիս Ննխ. Տփ. Երև.* ման գալ, *Ջղ.* ման գ'ոլ, *Ղրբ.* ման կ'ոլ, *Ասլ.* ման գ'ալ, *Համշ.* մօն էգուշ, *Ագլ.* մուն գիլ «ման գալ, շրջիլ, պտտիլ, որոնել»։ «Ման գալ» և «մանել» գաղափարների նոյնութեան համար *համմտ. Քուշ. էջ 54.* «Այս ծովական գիշերս ի բուն՝ ես երկու շրջան մանեցի», *համմտ. նաև ասոր.* ܡܨܠ fəšel *արմատը, որ նշանակում է թէ՛ «պտտիլ, անցուդարձ անել» և թէ՛ «հիւսել, մանել»։— Նոր բառեր են* մանիչ, մանի՛, մանեուկ, մանողակ, մաննփոխ, մանուման անել, մանուփոխ, մանած, մանամանատեղ «գրօսավայր», մանացնել «պտտցնել», մաննկատալ *են։ Հետաքրքրական է* մանդարձնել *խոջ.* «միւս երեսը դարձնել», *որ կազմուած է շրջփոթելու համար* դարձնել «պտտացնել» *և* «միւս երեսը շուռ տալ» *գաղափարները։*

ՓՈԽ.—Վրաց. მაზმანი *մազմանի և թրք. գւռ. Ատն. և Կս.* mazman «մազման, չուան շինող» (*տե՛ս* մազ *բառի տակ*). *պրսական թրք. կայ* كرمان kirman «իլ, բոք», *որ փոխառնալ է գւռ.* ֆարման «իլ» (*Ակն. ՋԹ. Ան. Մշ. Տր.*) *բառից. Հաճինի թուրքերը ունին* kermen *ձևով, մինչ հայերը՝ հայմօն (այսպէս նաև ՋԹ.)—կապադովկ.* χαρμάνα «իլ» *որից* χαρμανίζω «պատուիլ», χαρμανίτομαι «թափառիլ», χορμάντα «շրջանակ» (Karolides, Γλ. συγχρ. 55 և 169)։ *Համմտ. նաև* մատման «իլ»։—*Վերջապէս հայերէնից է բոշայ.* մանխիկարել «մանել», *որի մէջ* -խիկար- *յա-*

ւելուածի համար հմմտ. նետխիկարել «նետել» (Finck, Die Spr. d. Arm. Zigeuner, ЗАН *1907, էջ 57*)։

ՄԱՆ «մորթի վրայ բծեր, ցան». մհյ. բառ (տե՛ս նորայր, Բառ. ֆր. 740 բ lentille բառի տակ). հմմտ. «Քալաֆն մանն է» Բժշ. (=couperose, Բազմ. *1917, 102*, որ է արաբ. كلف kalaf)։

Դիմ.—Կենդանի է գաւառականներում, զանազան նշանակութիւններով. ինչ. «երեսի ցան, հում կաթի երեսի սերը, պատուղների մաշկը պատող փոշին, ատամների վրայի սպիտակ կեղտը ևն», որոնք տե՛ս Գաւառական բառարանը։

***ՄԱՆ** «մանանայ» Ել. ժզ. *31*. «Անուանեցին որդիքն Իսրայելի զանուն նորա ման». ուրիշ վկայութիւն չկայ։

=Եբր. מָן mān «մանանայ» բառի յն. μάν տառադարձութիւնից փոխանցուած է մեզ՝ Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ։ Աւելի ընդարձակ տե՛ս մանանայ։—Հիւբշ. *310*։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ և ՆՀԲ։

***ՄԱՆ** «մի տեսակ քաշ, որ ըստ Շիր.=*44* ունկի» Գ. թագ. ժ. *17* (երեք մանք ոսկւոյ ի մի զէն). ուրիշ վկայութիւն չկայ։

=Պհլ. *man ձևից, որ աւանդուած չէ. այժմ կայ պրս. ժողովրդական լեզուի մէջ mān «լիտր», որ սխալմամբ համարում և դրում են արաբ. مَنّ mann։ Աւելի ընդարձակ տե՛ս մնաս։—Ա.Ճ.

Նախ ՀՀԲ, յետոյ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 124 և վերջին անգամ ՆՀԲ կցում են բառը յն. ասոր. եբր. և արաբ. ձևերին, որոնցից ո՛չ մէկը համապատասխան չէր մեր բառին։

Դիմ.—Նոր փոխառութեամբ՝ Մրզ. ման «մի լիտր», Շմ. ման «կէս փութ, *20* ֆունտ», Սլմ. ման «հեղուկաչափ, որ առնում է մօտ երկու շիշ»։

ՄԱՆԱԿ «մատուռակ» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § *1964*։

ՄԱՆԱՅԱՅ «թոշակ». ունի միայն Բռ. եբեմ, էջ *204*։

***ՄԱՆԱՆԱՅ**, ի հլ. «ծառերի տերևների վրայ հաւաքուած բուսական քաղցրահամ մի նիւթ, գազպէն, Ս. Կարապետի հալվա» ՍԳր. եփր. ա. կոր. *68*. Շար. Վրդն. ծն. նմանութեամբ «սրբերի մարմնից կաթած աւիշկը» Մարթին։

=Ասոր. ܡܢܐ mannā հոմանիշից, որ է եբր. מָן mān «մանանայ». ըստ Ել. ժզ *13—31* կազմուած է եբր. מָן הוּא mān hū—«զի՞նչ է այս» ձևից. «Եւ եղև ընդ առաւօտն՝ ընդ արկանել ցօղոյն շուրջ զբանակաւն, և ահա ի վերայ երեսաց անապատին մանր իբրև զդինձ, սպիտակ իբրև զեղեամն ի վերայ երկրին. Իբրև տեսին զայն որդիքն Իսրայելի, ասեն ընկեր ցընկեր. Զի՞նչ է այս. քանզի ո՛չ գիտէին զի՛նչ իցէ... և անուանեցին որդիքն Իսրայելի զանուն նորա ման. և նա էր իբրև զսերմն գնձոյ սպիտակ, և համ նորա իբրև զխորիսխ մեղու»։ Ս. Գրքի թարգմանութեամբ մտած է բազմաթիւ լեզուների մէջ, ինչ. յն. μάννα, լտ. manna, արաբ. مَنّ mann ևն։ Հիւբշ. կարծում է, որ բառը ասորերէնից սխալ տառադարձութեամբ անցած է մեզ։ Դիտելի է սակայն, թէ մանանան Հայաստանի մէջ էլ է գտնւում, և յատկապէս Տարօնի կողմերը, ուր դեռ մինչև այսօր պահում է այս անունը։ Արդեօք պէտք է ընդունել թէ բոլոր այս գաւառական ձևերը Ս. Գրքի թարգմանութիւնից, այսինքն գրական ճամբո՞վ են յառաջացել, թէ ընդհակառակը մանանայ ուղղակի ժողովրդական փոխառութիւն է՝ հարաւային Հայաստանի ասորիների բարբառից և այստեղից էլ անցել է Ս. Գրքի թարգմանութեան։—Հիւբշ. *310*։

ՀՀԲ դնում է եբրայեցերէնից։ ՆՀԲ «եբր. ման, մանա, ըստ այլոց նաև մաննա... վրաց. մանանա ևն»։ Հիւնք. եբր. ման բառից դնելով՝ կարծում է որ -անայ յաւելուած է և գրում է «այս յաւելուածի պատճառն յայտնի չէ»։

Դիմ.—Ալշ. երև. կր. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Ռ. Տփ. մանանա, Մկ. մոնոնա, Ղրբ. մնա՛նա, Ախց. շփոթուելով յաջորդ բառի հետ՝ դարձել է մանանէդ. այսպէս նաև Սլմ. մանանեխ (ըստ Ա. Աբայեան, Սալմաստ, էջ *162*)։ Սրբանից կազմուած ձևեր են՝ բեռանը մանանայ չդնել երև. Ղրբ. «ոչինչ չուտել», մանանայ

աճել Դգ. «մի քիչ բան ուտել», անմանանայ Դրբ. «անսուաղ, քաղցած»։—Այս բառից կազմուած իգական յատուկ անուն է Մանան։—Ըստ Ոզմ. մանանա «մի տեսակ բոյս է»։

Փոխ.—Վրաց. მანანა մանանա «մանանայ» հայերէնից է, միջին ա-ի պատճառով։

ՄԱՆԱՆԻԽ, ո հ. «մի տեսակ կծու համեմ, թրք. խարտալ, լտ. sinapis arvensis L (ըստ Տիրացուեան, Contributo § 154)» ՍԳր. Ոսկ. մ. բ. 22, երր. իա. յետնաբար դարձել է մանանեխ Յայսմ. Յս. որդի. Ասկիփ. Գաղիան։—

Lag. Arm. Stud. § 1418 դնում է պրս. ʾānxuāh «արջնդկղ, սև սոնիճ, հացհամեմ», որ մերժում է Հիւբշ. 191՝ նշանակութեանց տարբերութեան պատճառաւ։ Հիմնք. մանանայ բառից։

Գիմ.—Մկ. Սեբ. մանանէխ (որից ոճով ասում են՝ «Մէկի սրտին մանանեխ ցանել»—վիշտը աւելի ծանրացնել), Սվեդ. մոնիխ,—ըստ Հիւս. § 1966 կայ նաև գւռ. մաննեխ ձևը (տեղը չի յայտնած).—տե՛ս և մանանայ բառի տակ։

ՄԱՆԱՍՐՈՒԱՆՔ «կայանք, օթեվանք». անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Անկ. գիրք հին կտ. էջ 302. «Այսպիսի պահապանք կան շուրջ զաթոռոյ աստուածութեանն. կայանք են, մանասրուանք են, խոռոչք են, հրեղէնք են, կամարազգեստք են, լապտերք են»։ Տեղից յայտնի է որ յոգնակի է և կայանի բառին էլ մերձաւոր է (տե՛ս իմ Նոր բառեր հին մատ. Բ. 232)։

ՄԱՆԱՒԱՆԴ «աւելի, յատկապէս, տճկ. ի՛լէ, ի՛լէ քի» ՍԳր. Եզն. Կիւրղ. ծն. (գործածւում է շատ անգամ մանաւանդ զի, մանաւանդ թէ). որից նա՛մանաւանդ Ոսկ. յհ. ա. 3։

ՆՀԲ «ἔν. μᾶλλον, μάλιστα, μενοῦνγε, լտ. magis, imo, որպէս և ante, իտալ. avanti, է յառաջ... և գահաւանդ, դառաւանդ, սարաւանդ, բարձրաւանդակ, իբր՝ և անդր, կամ յառաջ մատուցեալ ինչ»։ Հիմնք. օն անդր ձևից։

ՄԱՆԳԱԽՈՏ. մի տեսակ անծանօթ բոյս է. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1967։

***ՄԱՆԳԱՂ** (գրուած նաև մանկաղ), ի-ա հ. (յետնաբար նաև ո հ.) «ցորենք կամ խոտ քաղելու գործիք» ՍԳր. Սեբեր. որից մանգաղակ «յօտաց» Կոչ. 116. մանգաղանձն Գիւտ. Թղթ. մանգաղամատն «մատը մանգաղաձև» Տեսիլ դան. էջ 133։

=Ասոր. ܡܓܠܐ maggəlā (հնագոյն ձևը *mangəlā), ն. ասոր. mägylä ձևից. սրա հետ համմտ. եբր. מַגָּל maggāl, արամ. maggəlā, որից փոխառեալ են արաբ. منجل minjal, փարսի mangāl, բոլորն էլ «մանգաղ» նշանակութեամբ։—Հիւբշ. 311։

Նախ Schröder, Thesaur. էջ 45 երր. ձևից փոխառեալ։ ՆՀԲ լծ. է դնում երր. մակէլ, մէկէլլա, վրաց. მანგალი, բայց հայերէնը հանում է ման գալ ձևից։ Lag. Reliqq. gr. 83 և Arm. Stud. § 1419 ասոր. և արաբ. ձևերի հետ։ Տէրվ. Altarm. 74 քաղդ. maggāl ձևից։ Պատկ. Матер. I, էջ 17 պրս.-ից։

Գիմ.—Ալշ. Ասլ. Երև. Խրբ. Մշ. Զղ. Տփ. մանգաղ, Սեբ. մանգ՚աղ, Ախց. Կր. մանկաղ, Մկ. մանգ՚ուղ, մանգէղ, Մրղ. Ոզմ. Վն. մոնգ՚ուղ, Աշտ. Սչ. մանգէղ (տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան 458), Մժ. մոնգէղ, Սլմ. մոնգ՚եղ, Հմշ. մօնգաղ, Զթ. մանգօղ, մանգուղ, Հճ. մանգ՚օղ, Սվեդ. մոնգիւղ։ Նոր բառեր են մանգաղաբեռան, մանգաղարև, մանգաղաւոր, մանգաղամաղ։—Բոլորովին ուրիշ բառ է մանգղոն «մանգաղ» (Իլ. Բր. Մշ. Սլմ. Կր.), որ փոխառեալ է ասոր. ܡܓܙܢܐ magzōna ձևից։

Փոխ.—Վրաց. მანგალი մանգալի, ნამგალი նամգալի, լազ. mangali, ինգ. namgal, namγul, մինգ. magana, ուտ. Թուշ. mangal, կիւր. mangal, makkal, ափխազ. amagana, ագ. maqqal, չէչէն. māngal, բոլորն էլ «մանգաղ» նշանակութեամբ, ուտ. mangal «երկարակոթ ցաքան՝ փշաքիթեր կտրատելու համար»։

***ՄԱՆԳԱՆԱՅ** (սեռ. -ի) «պատերազմական մեքենայ» Գր. տղ. եէմ.—

=Մեկնութիւնը տե՛ս Մանգղիոն։

ՄԱՆԳԱՒ (սեռ. մանգաւոն) «մի տեսակ

խմորիղէն» Նորագիւտ Ա. Մնաց. ժզ. 3 և իդ. 29 (այլ ձ. մանգաո)։

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Ա-ճառ. Հայ. նոր բառեր Մնաց. գրոց մէջ, էջ 22։ Նոյնը նաև Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 458։

***ՄԱՆԴԱԻՈՆ** *կամ* **ՄԱՆԴԱԼՈՆ**, *ի Տլ. «պատերազմական գործիք, բարան կամ նմաններ» ՍԳր. Սեբ. 145։ Տե՛ս և մանգաննայ։*

=Փոխառեալ բառեր են. հմմտ. յն. μάγγανον, μαγγανικόν «պատերազմական մի մեքենայ, որով քար են նետում». սրանից են լտ. manganum «մեքենայ», ասոր. ܡܢܓܢܘܢ *manganūn,* ܡܢܓܢܝܩܐ *manganīqā «մեքենայ», արաբ.* منجنيق *manǰanīq կամ* منجليق *manǰaliq «պատերազմական մեքենայ»,* منجون *manǰanūn «մեքենայ», թրք.* mengene *(գւս. mangana) «մամուլ, ճնշիչ մեքենայ»։ Հայերէն մանգաննայ, որ ճշդիւ նման է վերջին թրք. ձևին, անշուշտ փոխառեալ է արամերէնի միջոցով, ինչպէս ցոյց է տալիս -այ վերջաւորութիւնը, իսկ մանգղիոն ո՛չ մէկին չի համապատասխանում ճշտութեամբ։*

ՆՀԲ «նոյն է ընդ մեներեայ, մերեայ, յն. միխանի, լտ. մաքինա, պրս. մէնճէնիյ»։ Հիւբշ. 363 գնում է յունարէնից։ Meillet Rev. ét. arm. I. էջ 11 արամերէնի միջոցով անցած է գոնում։

ՄԱՆԳԻՅՆ *«ոսոխ». ունի միայն Բռ. երեմ. էջ 204։*

ՄԱՆԴԱԼ *«մի տեսակ տունկ» Մագ. թղ. 220 (չունի ՆՀԲ), «ծխանելիք մ'է և մարտղութեան դեղոց հետ խառնուի» Բժշ. (ՀԲուս. § 1968), «հալուէ» Ամիրտ. Մագ.։*

Մանդակ *տե՛ս Մարդակ։*

***ՄԱՆԴԻԱ** *«զգեստք և քղանցք հանդերձից» Կիւրղ. Թգ. յիշում է իբրև օտար բառ։*

=Յն. μανδύας, μανδύη *«վերարկու»։— Հիւբշ. 363։*

ՆՀԲ գրում է «բառ յն. ըստ պարսից»։

***ՄԱՆԴԻԼ** *«կնդուղ, վարշամակ, գլխի թաշկինակ». ունի միայն ԱԲ. գոնում եմ գործածուած հետևեալ տեղերը. Լուաց և պատեաց մանդիլով. Վրդն աշխ. 531.—Իսկ սուրբ կոյսն... եկն և զմանդիլն իւր առեալ ի գլխոյ իւրմէ, արկ զանդամօքն Յիսուսի. Յայտմ. մրտ. 22.—Հայք դաստառուկ ասեն, յոյնք մանտիլ. Յայտմ. օգ. 16։*

=Յն. μαντῆλα, μαντήλιον, μαντίλιον *«թաշկինակ»* (Sophocles 732″), *որ փոխառեալ է լտ.* mantile, mantele *«անձեռոցիկ» բառից. սա էլ ծագում է* manus *«ձեռք» բառից* (Walde 462). *լատիներէնից են փոխառեալ նաև իտալ.* mantile *«սփռոց», սպան.* mantilla, *ֆրանս.* mantille *«գլխի թաշկինակ», իսկ յունարէնի միջոցով՝ թրք.* منديل mendil, *ռմկ. մանտիլ «թաշկինակ»։ —Աճ.*

ԱԲ գնում է լատինից։

***ՄԱՆԴԻԿ** *«քուրձ, մախաղ, բայց յատկապէս երկաշեայ պայուսակ, որ ուսին են առնում». Նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Վրդն. առակ. 27 (այլ ձ. մատնիկ), Վրդ. բար. 100. Բառ. երեմ. էջ 308. —բառիս իմաստը շատ լաւ ցոյց է տալիս Վրդ. առ. 152. «Մարդն ի վերայ աշխարհիս ունի մի մանդիկ ի յուսն երկու ակնէն» (իմա՛ «երկաշքանի»).—քանիցս գործածում է Դրնդ. էջ 454—5 մանդ, մանդի, մանդիկ ձևով, որ և մեկնում է թրք. նակիպա (իմա՛ գւս. թրք. hăbigä, գրակ. heybe «երկաշեայ պայուսակ»). սրա հետ նոյն է մանտի «նոյն նշ.» Բռ. երեմ. յաւել. Գէորգ դպրէ. էջ 553։*

=Վրաց. მანდიკი մանդիկի «խուրջին» (Զուբին.², էջ 667)։—Աճ.

***ՄԱՆԴՐԱ** *«փարախ» Վստկ. 215։*

=Յն. μάνδρα «փարախ», որից նաև թրք. mandra *«գոմ, փարախ»։*

Ալիշան, Վստկ. 253 գնում է յն.։

***ՄԱՆԵԱԿ** *(ի–ա Հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «վզի զարդ՝ ոսկի օղ կամ շղթայ» ՍԳր. որից մանեկածն Պիտ. Վրդ. երգ. մանեկածևութիւն Առ. որս. մանեկաւոր Մծբ. Վրք. Հց. օղամանեակ ՍԳր. բառամանեակ ՍԳր.— բառս նշանակում է նաև «նաւահանգիստ», ինչպէս ցոյց է տալիս Վրդն. երգ. էջ 90. «Զնաւահանգիստս ի ծովեզերացս սովոր են մանեակ կոչել, որ արդ մինա ասեն». Թերևս բոլորակ ձևի նմանութեամբ այսպէս կոչուած լինի։*

=Յն. μανιάκης «ոսկիայ վզնոց» բառից. գանւում է Ս. Գրքի նոյն այն հատուածների մէջ, ուր և հյ. մանեակ. նուազականն է μανιάκιον. բնիկ յոյն բառ է և կապւում է հիւլ. muince «վզի շղթայ», լտ. monile «վզնոց» են բառերին (Boisacq 608)։— Հիւբշ. 363։

ՆՀԲ «յն. ևս մանիագիս, մանիաքս և վրաց. մանիակի. ի հյ. և ի յն. ստուդարանի ման հկեալ, ոլորեալ»։ Böttich. Horae aram. 30 երր. hamnīk և սանս. *sumāṇika: Gosche 25 հյ. մանել արմատից և կամ սանս. mān «պատուել», māna «պատիւ». հայերէն ձևին է կցում նաև փռիւգ. μάνικα «պերճ և սքանչելի իրք» (ըստ Պլուտարքոսի)։ Justi, Zendsp. 233 զնդ. minu «քարեղէն, գոհարեղէն կամ վզնոց» բառի տակ դնում է սանս. maṇi, պրս. mangoš, փռիւգ. μάνικα և հյ. մանեակ։ Pictet 2, 307 սանս. māṇava են։ Lag. Btrg. baktr. Lex. 47 մանել բայի հետ։ Տէրվ. Altarm. 71 և Նախալ. 98 տե՛ս մանել։ Հիւնք. յն. μανιάκης։

ՓՈԽ.—վրաց. მანიაკი մանիակի «մանեակ» (Դան. ե. 7՝ ճիշտ հայերէն բառի դէմ), մինգր. maniki «օղ, boucle»։

ՄԱՆԵԻՈՐ, ի–ա հլ. «կապ, երիզապինդ» կնիք հաւ. էջ 275, իրեն. հերձ. 181. նիւս. կազմ. (վերջինիս մէջ այլ ձ. մանևար)։

***ՄԱՆԷՍ** «մեռելների ասուածացեալ հոգին». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Մոլութ. 451բ. «Զհոգիս քաջ արանց՝ յորժամ որոշէին ի մարմնոց, ի բարձրագոյն աստիճանս քան զորպիսութիւն աստեաց վերափոխել կարծէին և զայնս կոչէին երկաս և մանէս, որոց և մասուցանէին իսկ զաստուածային պաշտօն»։

=Լտ. manes «մեռեալի հոգին, դի, դժոխք են» (Ֆրանս. mânes), որից diis manibus «հոգւոցն ասստուածացելոց»։—Ա՛ճ.

ՄԱՆԹԱՆԱՅ «թանձրութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 204։

ՄԱՆԻ «խօսող». ունի միայն Բառ. երեմ. էջ 204։

***ՄԱՆԻ** «ամսի 16րդ օրը». ունի միայն Քաջունի. Բ. 101, Գ. 157։

=Մանի լեռան անունից, ինչպէս որ կայ Աւագած «ամսի 20րդ օրը», Կորգոր «ամսի 21րդ օրը», Վարագ «ամսի 29րդ օրը» են, բոլորն էլ լեռների անուններ։

Ուղիղ մեկնեց Քաջունի, անդ։

ՄԱՆԻ «կաղնիի նման մի ծառ է». ունի միայն ՀԲուս. § 1971 «Յաղագս ծառոց վերնագրով համառօտ գրուածքէ» առնելով. տե՛ս նաև Նորայր ՀԱ. 1923, 156՝ իբր Բրք. սարիւն աղաճը։ Սրանից է մանիֆեղ «մի տեսակ բոյս. լտ. corylus» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1972 (ըստ Տիրացուեան, Contributo § 76 «արքայակաղնի, corylus avellana»)։

ԳԻՒ.—Համշ. Տր. մօնի «թեղի կամ կաղնի»։

***ՄԱՆԻՄ** «տաքուիթիից յառաջացած զառանցանք, սև մաղձ (ըստ հին բժշկութեան)» Մագ. թղ. 135. որից մանիական «զառանցական, սևամաղձային» Մագ. թղ. 6.—երկուսն էլ նորագիւտ բառ։

=Յն. μανία «զառանցանք, խելթութիւն, սև մաղձ» բառից։—Ա՛ճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 194։

***ՄԱՆԻՊՈՒԼ** «պատարագիչ քահանայի բազպանը». գործածում է միայն լատինականից թարգմանուած Պարգ. 456՝ սեռ. մանիպլիի ձևով (նորագիւտ բառ)։

=Լտ. manipulus, որ յետադարեան լատիներէնում ունէր այս նշանակութիւնը։—Ա՛ճ.

Մանիշակ տե՛ս Մանուշակ։

***ՄԱՆՄԱԿ** «ամբուկ, բադմջան», իբր «հռոմարէն» բառ յիշում է Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1973։

=Նյն. μελιτζάνα, որ է իտալ. melenzana, լտ. melongena «բադմջան, բադինջան»։—Ա՛ճ.

***ՄԱՆՆ**, ի–ա հլ. (գրւում է նաև մանգ) «նենգութիւն, խորամանկութիւն» Վեցօր. 144. «խորամանկ» Հին բռ. որից մանկաւոր Եւագր. 304. մանկաւորել «մեքենայել, խարդախել, նենգել» Եւագր. Տիմոթ. կուզ, էջ 158. մանկաւորապէս «խարեբայութեամբ»

Տիմոթ. կուզ, էջ 185. ամմանկ *«անխարդախ, անկեղծ» Ոսկ. մ. ա. 25.* խորամանկ *ՍԳր.* խորամանկել *ՍԳր.* չարամանկ *Բրս. մախ.։*

=*Պհլ.* *mang *ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց համմտ. պրս.* منه mang *«նենգութիւն, խաբեբայութիւն», օսս.* manie, mäng *«խաբեբայութիւն»,* mäng-äwdisänt'ä *«սուտ վկայութիւն»։ Այս բառերը կապւում են յն.* μαγγανεύω *«խարդախութիւն բանեցնել», լտ.* mango *«խարդախ, խանութպան», իռլ.* meng *«խաբէութիւն» և հպրուս.* manga *«բոզ» բառերի հետ և բոլորը միասին ծագում են հնխ.* mang- *արմատից* (Boisacq 596, Pokorny 2, 233 և Walde 461):—*Հիւբշ. 191, 513։*

Brosset JAs. 1834, 377 *տակի վրացերէն բառերի հետ։* ՆՀԲ ման գալ *կամ* մանուկ *ձևից։ Տէրվ.* Altarm. 79 *համարում է բնիկ հայ և համեմատում է պրս.* mang, *գոթ.* magan *«կարենալ», հսլ.* mogiu, možeši *«զօրել, իշխել» ձևերի հետ՝ բոլորն էլ իբրև ցեղակից յն.* μηχανή, μαγγανεία *«մեքենայութիւն» բառերին։—Պատկ.* Matep. I. 11 *պրս.* mang. Canini, Et. étym. 159 մանել *բայից։ Հիւնք. յն.* μάγγανον *«նենգութիւն, խարդախութիւն»։*

ՓՈՒԽ.—Վրաց. მანკო մանկի, მანკიერება մանկիւերեբա *«արատ, պակասութիւն, մեղք».* უმანკო ումանկո *«անմեղ»,* უმანკოება ումանկոեբա *«անմեղութիւն»,* მანკიერი მանկիւերի *«վնասակար, կատաղի, մոլի»,* მანკიერება մանկիւերեբա *«կատաղութիւն». այս բառերը հայերէնից փոխառեալ են դնում* Brosset *(տե՛ս վերը) և Ջուբինով² էջ 667։*

ՄԱՆԿԻ *«տի կամ խաղաղութիւն». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 204 (եթէ չկայ վրիպակ)։*

***ՄԱՆԿԻՊԷՍ** *«Հռոմի հանրակացարաններ վերակացուները». նորագիւտ բառ, որ իբրև օտար փոխառութիւն գործածում է Ոսկր. 446. «էին ի սկզբանէ ի մեծն Հռոմ տունք յոյժ մեծք, յորս որ բազմութեանն հաց բաշխիւր լինէր. և կարգեալքն յայսոսիկ մանկիպէս Հռովմայեցւոցն լեզուովն կոչին»։*

=*Յն.* բնագրի μάγκιπες *ձևից տառադարձուած, որ* μάγκιψ *«հացավաճառ» բառի յոգնակին է. փոխառեալ է լատ.* manceps *«կապալառու ևն» բառից* (Sophocles 726):

Ուղիղ մեկնեց Մ. Վ. Տէր-Մովսէսեան, Հրտր. Ոսկր. էջ 446։

***ՄԱՆԿԼԱԻ** *«լախտ կամ բիր» Մխ. գտ. «Որ զկարգաւ իւրով յաւուր մարտին զանց առնէ, մանկլաւով ծեծեն»։*

=*Յն.* μαγκλάβιον *«յանցաւորներին ծեծելու կաշեփոկ» բառից, որ ծագում է լտ.* manualis clava *«ձեռքի գաւազան կամ մահակ» ձևից* (Sophocles 726):—*Հիւբշ. 363։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ, *հտ. Բ. էջ 1057″։*

***ՄԱՆԿԼԱԻԻԿ** *«սննեկապան արքայի, արքունի սպասաւոր» Վրդն. պտմ. տպ. Վենետ. էջ 77 (իբր օտար բառ գրում է և մեկնում «Մանկլաւիկքն, որք են սննեկապանք արքայի և մօտակայք»). աւելի ուղիղ ձևն է մանգլաւիտ Նար. խչ. 380 (գրուած է սեռ. մանգլաւտի ձևով, որից* ՆՀԲ *հետևցնում է ուղ. մանգլաւտ, որ սխալ է)։*

=*Յն.* μαγκλαβίτης *«կաշեփոկով զինեալ մարդ (կայսեր իբր պահապան)» բառից, որ ծագում է* μαγκλάβιον *բառից. սրա վրայ տես մանկլաւ։—Հիւբշ. 363։*

ՆՀԲ *հտ. Բ. էջ 205 գ «որպէս մանուկ լափիկ», բայց էջ 1057 բ տալիս է ուղիղ մեկնութիւնը։ Նոյնը Պատկ.* Матеріалы I, 3: *Ուղուրիկեան (տես ԳԲ, էջ 893 և 1405) լտ.* manus *«ձեռք» +* clava *«մահակ» (իբր ձեռքը մի լախտ կրող արքունի սննեկապան)։*

Մանձիր *տե՛ս Մամձիր։*

ՄԱՆՋՐԻԼ *«այրիլ, մրկիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Մագ. թղ. 237. համմտ. գւռ. մնձրիլ «այրիլ, խանձիլ, մրկիլ». բառ այսմ սրա հետ կապ չունի նախորդ մանձիր «խանգարեալ» բառը, որի վերայ տե՛ս նաև Աճառ. ՀԱ. 1923, 253։*

ՄԱՆՂԱԱՅ. *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. էջ 345. «Սա (Ղազան ղան) յոյժ ատեցող էր քրիստոնէից և թշնամի եկեղեցեաց, որ ասպատակ ածեալ՝ գայր իբր զմրրիկ փոթորկեալ նախամարտիկ լինել, զոր մանղլայ կոչէին»։*

=Անշուշտ թաթարական բառ է և կա՛մ յատուկ անուն է և կամ մի տիտղոս։—Աճ.

ՄԱՆՃԱԿ «շահոթրամ, մխրակ» Ամիրա. (Ասէ Պատէհին թէ պրս. մանճակ կասեն). ունի միայն ՀԲուս. § 1974։

=Անշուշտ պրս. բառ է, ինչպէս վկայում է հեղինակը, բայց պրս. բառարանի մէջ չեմ գտած։

***ՄԱՆՆԱՅ** (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «նուէր, ընծայ, անարիւն պատարագ» ՍԳր.

=Եբր. מִנְחָה minxā հոմանիշից, որ Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ յն. μάννα (որ և μαναά Sophocles 731 ա) տառադարձութեան վրայից անցած է հայերէնի։ Նոյն է նաև լտ. manna։—Հիւբշ. 311։

ՀՀԲ քաղդ.-ից։ ՆՀԲ վերի ձևով, բայց նաև լծ. լտ. munus «նուէր»։

ՓՈԽ.—Վրաց. მანანაჲ մանանայ «ղոհ, մատաղ» Երեմ. դ. 5 տառադարձուած է հայերէնից, ինչպէս ցոյց է տալիս վերջաձայն ա=յ, որ չի գտնւում յունարէնում։—

***ՄԱՆՇՈՒՐ** «հրովարտակ». հօմն անգամ ունի Օրբել. Գնացեալ առ աթաբէկին Ելտկուզ, ցուցանէ զնամակ սուլտանացն և ի նմանէ ևս առնոյր մանշուր հաստատուն գրոյ... հաստատուն և անսուտ մանշուրաւ (էջ 257). Տուղրայիւ գրոյ և փարմանաւ և մանշուրաւ, զոր մեք սիգէլլ կոչեմք (էջ 251). Առնու ի նմանէ ֆարման և մանշուր (էջ 255). Տայ զՀրասեկայ բերդ մանշուր գրով... անսուտ սիգելաւ և անանցական մանշուրաւ (էջ 256). Տուղրայիւ գրոյ և մանշուրաւ (էջ 287)։—Գրուած է նաև մամշուր. Ցուցանէ զմամշուրն աթաբէկ Ելտկուզին (Օրբել. էջ 262, ուր տպ. Շահնազ. նոյնպէս ունի մանշուր)։ Վերջին ձևով է նաև Սիմ. ապար. 115, 120 (մանշուր)։

=Արաբ. منشور manšur «հրովարտակ», որ ծագում է نشر našr «հրատարակել» արմատից։—Հիւբշ. 270։

Ուղիղ մեկնեց նախ S. Martin, Mém. sur l'Arm. Paris 1819, II, էջ 253, յետոյ Պատկ. Матер. II. 1։

+**ՄԱՆՈՒԿ**, ն հլ. (-նկան, -կունք, -կանց) «հրեշտակ. 2. պատանի, սպասաւոր. զինուոր. 3. փոքր, մանկահասակ» ՍԳր. Եւս. պտմ. «անասունի ձագ» Պզատ. սոկր. որից մանկիկ Տոբ. ժ. 7. Բուզ. Ադաթ. մանկուկ Ոսկ. հբր. էջ 544. մանկտի ՍԳր. Եւս. քր. մանկտեակ Ածր. թգ. 449. Մծբ. մանկանալ Ագաթ. Ոսկ. մանկամարդ ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ. Փարպ. մանկամայր Ագաթ. մանկաբարձ Բլ. ա. 19—21. մանկակալ Ես. խթ. 23. մանկաբարոյ Բուզ. մանկակոտոր Ոսկ. մ. ա. 9. մանկապէս «հրեշտակի պէս» (նորագիւտ բառ) Ածր. մատ. Դ. 98. մանկակորուստ «ձագերը կորցրած» Քուչ. 62 (չունի ԱԲ). լաւամանկութիւն Փիլ. քհ. բարեմանկութիւն Փիլ. նխ. գեղեցկամանուկ Վրդն. Բուզ. ևն։ Նոր բառեր են մանկաբարձուհի, մանկաբարձութիւն, մանկապարտէզ, մանկապարտիզպանուհի, մանկավարժական, մանկատուծութիւն ևն։

=Բնիկ հայ բառ, հնխ. mənu- «փոքր, մանր» բառից՝ -ուկ մասնիկով կազմուած։ Աւելի ընդարձակ տես մանր։—Հիւբշ. 472։

Հներից Սարգ. ա. յհ. և. էջ 541 բառիս նշանակութիւնները հետևեալ ձևով է որոշում. «Մանկունք ասելն բազմադիմի անուն է. վասն զի մանուկ ասի տղայն որ միրձ է յանբանութիւն սակս անկատար հասակին. մանուկ ասի և անմիտն... մանուկ ասի և միամիտն և անմեղն, որ ամենայն բանի հաւատայ և յամենայն տեսակս առաքինութեան փոփոխի»։—Դարձեալ հներից խոսրով Ան. ձևացի մեկնում էր բառս՝ իբրև թէ մզկերը «մանին ցսրունսն» (տ. Արրտ. 1897, 276)։ ՆՀԲ մանր բառի՞ց Peterm. 30, 34 և 39 սանս. manu «մարդ»։ Diefenbach, Berl. Jahrb. 1843, 446 իբրև գերմ. Männchen «մարդուկ»։ Windisch. 23 և Lag. Urgesch. 438 լտ. minor: Müller SWAW 42, 258 լտ. minor, գոթ. minniza, սանս. manāk։ Նոյն, 66, էջ 274 մանուկ, մանկան կազմուած է համարում mana ձևից՝ երեք մասնիկներով. այսպէս՝ *mana-ava-ka-nan> *manavakana>մանկան։ Տէրվ. Նախալ. էջ 29 ման-ր, սեռ. մանու բառի հետ ma արմատից, իբր յն. μενόω, լտ. mi-

nuo *«մանրել, նուագելցնել» են։ Թօփուզեան, Արծ. վասպ. էջ 43 «ման գայ, մանիլ, ոլորիլ, մոլեգնիլ, անմանն»։ Հիմնք. մանկ բառից։ Գաբրիէլեան ՀԱ 1912, 32 իբր «նոր ման եկող»։ Ս. Վ. Նազարեթ, Կոչնակ 1921, էջ 1166 Աճառեան անուան վերջավանկի հետ։*

ԳԻՒ.—երև. մանուկ, Ալշ. Մշ. Սեբ. մանուգ, Շմ. կրկնութեամբ միայն մանուկ-ա-ռախա «փոքր երախաներ», խրբ. Պլ. մանգուիճ «մանկական անմեղութեամբ, անմեղունակ» (օր. Ի՜նչ մանկունք տղայ է). նոյնը նաև էնկիւրիի Բրբախօս հայոց մէջ. ինչ. մանկուիճ կիպի չօճուճ «անմեղ մանուկ» (Բիւր. 1898, 865)։ Նոր բառեր են մանկուր, մանկուց։ Հետաքրքրական է Զղ. մանդավաճ «երէցփոխ, եկեղեցական հոգաբարձու», որ ծագում է մանկտաւագ «պաշտօնէից գլխաւորը» բառից։

**ՄԱՆՈՒՇԱԿ, ի–ա հլ. «մանուշակ ծաղիկը. լտ. viola» Ագաթ. Խոր. Փիլ. կամ նաև մանիշակ Լմբ. մատ. 471, Մխ. առակ. մանեմշակ Բժշ. սրանցից մանիշակագոյն Մաշտ. ջահկ. մանուշակաբեր Նար. տաղ.։*

*=Պհլ. ՙʾnwšʾk vanavšak «մանուշակ» բառից, որ դարձած է պրս. بنفشه banafša, մազանդ. venewše, քրդ. benefša, benewš, փոխառութեամբ նաև ասոր. ܡܢܝܫܟܐ mənīškā, արաբ. بنفسج banafšaj, بنفسجون manafšaǰ, بنفسج banafsaj. Թրք. menefše կամ menekše և վերջինի միջոցով էլ բուլգար. menekše, նյն. μενεξές, բոլորն էլ «մանուշակ»։ Հյ. մանիշակ ծագում է ասորի ձևից, իսկ մանուշակ<*մանաւշակ պահլաւ ձևից. համմ. unuabr<ասոր. safserā։—Հիւրշ. էջ 191, 311։*

ՀՀԲ անուշակ բառից է դնում։ ԳԴ պրս. պէնէֆշ։ ՆՀԲ լծ. Թրք. պրս. արաբ. ձևերը։ Վերի ձևով մեկնից նախ Böttich. Rudim. 35, Arica 73, 193, Lag. Urg. 830—1, Ges. Abhd. 22 են։

ԳԻՒ.—Ախց. Կր. Ղրմ. Վն. Տփ. մանուշակ, Մկ. մոնուշակ, Խրբ. Մշ. մանուշագ, Սչ. մանուշիգ (այս վերջինը միայն իբր յատուկ անուն), Զթ. մանուշօգ, մանուշոգ, Սվեդ. մոնիշիւգ ծագում են մանուշակ ձևից. իսկ Երև. մանիշակ, Ալշ. Մշ. մանիշագ, Շմ. մոնիշոգ[1], Գոր. մնի՛շակ, Ղրբ. մնէ՛շակ, Ագլ. մնէ՛շոկ ծագում են մանիշակ ձևից։—Նոր բառեր են մանուշակաձոտ, մանուշեկ Մշկ. «մանիշակագոյն»։

ՓՈԽ.—Քրդ. (Տէրսիմի բարբառ) մանիշակ «մանուշակ» (Հայաստան 1917, թ. 90), ուտ. mämüšak «մանուշակ», որի մէջ երկրորդ ռնգականը վերածուել է առաջինին։

+ՄԱՆՂ «արու տղայ». մհյ. բառ՝ ըստ Նորայր, Բառ. Ֆրանս. 586 բ. գործածական է նոր լեզուում և գաւառականներում. հնից աւանդուած կայ մանչուկ, մանչոն «մանկիկ» ձևերով Մագ. թղ. 237, որոնց իմաստի և գործածութեան համար տես Աճառ. ՀԱ 1923, 254։

*=Բնիկ հայ բառ՝ հնխ. mas- «տղայ» արմատից, որի ժառանգն է նաև լտ. նուազական mas-culus «արու»։ Ուրիշ լեզուի մէջ չի գտնւում բառս։ Հայերէնի մէջ mas- պիտի տար մա, բայց արմատը չ աճականով աճելով գարձել է *մաչ, որից էլ ռնգականի յաւելմամբ՝ մանչ.— յետին շրջանի հայերէնի մէջ ռնգականից յետոյ յաճախ է լինում այսպիսի յաւելում՝ մանաւանդ չ ձայնից առաջ. ինչ. կանանչ, ճանճանչ, ամանչել, զոհանչ, կարմունջ, մանճ, կամանց, մեծ, մեծ, լինգ՝ փոխանակ կանաչ, ճանաչ, ամաչել, զոհանչ (նախ շրջուած զոհանչ), կամուրջ, մանճ, կամաց, մեծ, մեծ, նիգ։—Աճ.*

ՆՀԲ մանուկ բառի՞ց։ Պալասանեան, Ընդհ. տեսութիւն արևելեան նոր գրական լեզուի, էջ 13 մանուկ բառի հետ՝ կցում է սանս. mānuša, գոթ. man, manisks, գերմ. mann, mensch բառերին։

ԳԻՒ.—Ախց. Կր. Նախ. Պլ. Ռ. Սեբ. մանչ «արու տղայ», Սչ. մանչ «ծառայ, սպասաւոր», Ասլ. մանչ, մչղ «մանչ», Ակն. Հմշ. մօնչ «մանչ»։ Նոր բառեր են մանչբերուկ, մանչխաբուկ, մանչմանալ, մանչիկ։

ՓՈԽ.—Պատահակա՞ն պէտք է համարել անդ. մոչի, Կար. միչի, մոչի «մանչ»։

ՄԱՆՏԱՏՈՒՐ «թղթաբեր, սուրհանդակ». մէկ մէկ անգամ ունին Լաստ. ժղ. տպ. Վենետ. 1844, էջ 70, Մխ. դատ. Մամբ. դատ. էջ 87։

=*Յն.* μανδάτωρ «messenger, *պատգամաբեր*» (Sophocles 731) *ձևից, որ տառադարձուած է լտ.* mandator «*յանձնարարող*» *բառից՝ նոյնից է նաև վրաց.* მანდატური *մանդատուրի «ոստիկան»,* მანდატურთუხუცესი *մանդատուրթ-ուխուցեսի «ոստիկանապետ արքայական» (Ջուբինով², էջ 666—667)։*

Ուղիղ մեկնեց Karst, *Դաստան. II 77։*

Մանտար *տե՛ս Մանր։*

+**ՄԱՆՐ** (-նու, -նուի, -նուց) «*մանր, փոքրիկ, պստիկ*» *ՍԳր. Եւս. քր. Ոսկ. Եփր. ա. կոր. որից* մանրել *ՍԳր.* մանրուած *Ամովս. թ. 9.* մանրիկ *ՍԳր. Ագաթ. Կոչ.* մանրամանր *Եփր. ա. կոր.* մանրապատում *Ագաթ.* մանրատուն *Եզնիկ. ժէ. 5.* մանրախիճ *Յոբ. ը. 17. Կոչ.* մանրախոտ *Ագաթ.* մանրակծծի *Ոսկ. բ. տիմ.* մանրամաղ *Վեցօր. Ագաթ.* մանրավաճառ *Ջքր. սարկ. Ա. 20 (չունի ԱԲ) ևն։ Գրուած է նաև գւռ. ձևերով՝* մանար, մանառուի *Կիր. պատմ.* մանդրուն *Կոստ. երզն. 110. սխալ գրչութեամբ* մանատար *Սուտ-Շապհ. էջ 3։ Նոր բառեր են* մանրանկար, մանրանկարիչ, մանրանկարչական, մանրանկարչութիւն, մանրամասնութիւն, մանրամասնօրէն, մանրատառ, մանրէ, մանրազնին, մանրադէտ, մանրադիտական, մանրավէպ, մանրաճեի *ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mənu- *արմատից, որի պարզականն է* men- «*փոքր, փոքրանալ*». *ցեղակիցներն են սանս.* मनाक् manāk «*սակաւ, մի քիչ, մի քիչ ժամանակ, միայն*», *քուչ.* meñki «*նուագագոյն*», *յն.* μάνυ «*մանր*», μανός «*ցանցառ, անգայտ, թոյլ*», *լիթ.* meñkas «*սակաւիկ, չնչին*». *հիւլ.* menb «*փոքր*», *նիւլ.* meanbh «*սակաւիկ*» *կամիս.* man-in-k «*փոքր լինել*», *հսլ.* мьnjьjь «*նուագագոյն*», *գոթ.* mins «*նուազ*», minniza «*փոքրագոյն*», *լտ.* minus «*նուազ*», minister «*ծառայ*» (*որ յիտոյ եղաւ «միջնորդ, նախարար», իբր թագաւորի ծառան*). *տե՛ս* Ernout-Meillet 586.—*յն.* μάνυ *ձևը ըստ Հեսիքիոսի՝ Աթամանացոց բառ է, որի մասին խօսում է Մարքվարթ* REA 8 (1928), *էջ* 211: Walde 487, Boisacq 608, Pokorny 2, 266): *Հյ.* մանր *կազմուած է այս արմատից r մասնիկով, ինչպէս որ նուազական մասնիկով էլ կազմուած է* մանուկ։—*Հիւբշ. 472։*

Նշ. լծ. լտ. minor, minus, minutus: Windisch. 23 մանուկ *բառի հետ՝ համեմատում է լտ.* minor «*փոքրագոյն*» *ձևի հետ։* Lag. Urgesch. 438, Müller SWAW 42, 258 *և* 66, 274 *նոյնպէս* մանուկ *բառի հետ, սանս.* manāk *ևն։* Justi, Dict. Kurde, *էջ 406 հյ.* մանուկ *և քրդ.* mendār «*տղայ*»։ Canini, Et. étym. 59. *հյ.* մանրել=*իսլ.* min «*աւիւր*»։ *Տէրվիշ. Նախալ. 29 հնխ.* ma *արմատից է դնում յն.* μινύω, *լտ.* minuo «*մանրել, նուազեցնել*», *գոթ.* mins «*նուազ*», *սանս.* mīnu *և հյ.* մանուկ: Müller, Armen. VI *լտ.* minor, *գոթ.* mins *ձևերի հետ։* Bugge KZ 32, 18 *սրանց հետ նաև յն.* μάνυς «*փոքր*», *օսկ.* menvum: Meillet MSL 8, 164 *յն.* μινύθω, *գոթ.* minnists, *լտ.* minuō *ձևերի հետ՝ հնխ.* minu- *արմատից, բայց յիտոյ մերժելով այս, տալիս է վերի մեկնութիւնը (անձնական), որ ընդունում է նաև Հիւբշման։ Հիւնք.* ման «*մանանայ*» *բառից։ Սրմագաշեան, Արմէնիա ռում.* mârunt, mânunt *հոմանիշների հետ։*

Գիր.—*Պլ.* մաւնըր, մաըր, մաւնդրը, մանդրը, *Ալշ. Ագլ. Երև. Մկ. Մշ. Շմ. Ջղ. Տփ.* մանդր, *Ննխ.* մանդռ, *Ախց.* մանառ, *Մշ.* մա՛նդրը, *Տիգ.* մոնդր, *Ջթ.* մո՛նդրը, մո՛նդրը, *Սվեդ.* մունդր, *Ր. Սեբ.* մանյը, *Խրբ.* մայր, *Պրտ.* մա՛յրը, *Ասլ.* մէօ՛րյը, *Ակն.* մօյրը, մօյը, մօյ:—*Նոյն բառից է Հւր.* մաուվել «*կոտրիլ*»։—*Նոր բառեր են* մանրում, մանրուիմ, մանրուցք, մանառուիս, մանառուել, մանառառել, մանառուիկ, մանառուիլ, մանրածուկ, մանրակար, մանրացան, մանրգիր, մանրհատ, մանրկեկ, մանրման, մանրուկ, մանրուքի:

Փոխ.—*Քրդ.* مندار mendār «*տղայ*» *և* mendāriké «*տղայ*» *գալիս են մեր գւռ.* մանար, մանարիկ *ձևերից (տե՛ս* Justi, Dict Kurde, *էջ 406)։*

***ՄԱՆՐԱԴԻՐ**, ի-ա *հլ.* «*մի տեսակ թրմ-*

բեցուցիչ բոյս. լտ. atropa mandragora» ՆՆ. լ. 14—16, երդ. է. 13, Ագաթ. Վեցօր. 88, 89. եղն.—այս բառը կծ. նար. կէ. մեկնում է. «Ամենայն պտղի մանրագոր ասեն, որ զծաղիկն ի ծայրն ունին, որպէս մասուրն և սինձն. եւ դարձեալ՝ ազգ մի խնձոր կայ վաղահաս, մանրագոր ասի, կարմիր է և անուշահոտ». (վերջինը ՆՀԲ համարում է «ափիոն, խաշխաշ»). իբր Մոկաց նահանգի պըտուղ է յիշում Խոր. աշխ. 608։

=Յն. μανδραγόρας «մանրագոր», որից փոխառեալ են նաև ասոր. ܡܢܕܪܓܘܪܐ mandragorōn, լտ. mandragoras, իտալ. mandragola ևն։ Հայերէնի մէջ յն. ծ>հյ. ն՝ ճիշտ ինչպէս սանտր>գւռ. սանր։ —Հիւբշ. 363։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Նոյնը նաև Peterm. 57: Բառիս մասին համմ. նաև Lag. Ges. Abhd. 67: Յոյն բառի ծագումը անծանօթ է՝ ըստ Boisacq 607:

ՄԱՆՐԱԳՈՐՈՆ «մաճառակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 204։

ՄԱՆՕՇ «թաղթ. լտ. cyclamen» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1980։

***ՄԱՆՕՇԱՅ** «շահպանակ» Ամիրտ. կամ «մրտին տակն» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1981։ Ամիրտովլաթի շահպանակը լինելով «շան մանուշակ, viola canina L» (Տիրացուեան, Contributo § 142) կոչուած բոյսը, մանուշայ ձևն էլ պէտք է մեկնել՝

=Թրք. menefše<պրս. benefše «մանուշակ». սրանց վրայ աւելի ընդարձակ տե՛ս մանուշակ։—Աճ.

***ՄԱՇ** «մի տեսակ ընդեղէն, մանր ոլոռ» Մխ. առակ. (լտ. phaseolus mungo ըստ ՀԲուս. § 1982, pisum sativum L կամ pisum e latius M. B ըստ Տիրացուեան, Contributo § 267—8. տե՛ս և Seidel, Մխ. հեր. § 51)։

=Պրս. ماش māš հոմանիշից. համմ. սանս. माष māša- «լորի», քրդ. māš «ոսպ, բակլայ»։ Իրանեանից են փոխառեալ նաև վրաց. ձաშა մաշա «ոսպի նման սիսեռ», արաբ. ماش māš «մի տեսակ հնդկական ընդեղէն՝ նման սիսեռի, phaseolus max L» (տե՛ս Իրն-ի Բառուտա հտ. Գ. էջ 131), ն. ասոր. maši «լորի», արևել. թրք. māš «մաշ» (ըստ R. B. Shaw) կամ չաղաթ. māš «մի տեսակ կորկոտ» (ըստ Vambery), ֆրանս. mâche «աղցան անելու խոտ է, valerianella locusta» (ըստ M. Devic, Dict. étym. des mots fr. d'origine orientale, Paris 1876):—Հիւբշ. 198։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, նոյնը նաև ՆՀԲ։

ԳԻՒ.—երև. Ղրբ. Ջղ. մաշ «մաշ», Մրղ. Սլմ. մաշ և Ագլ. մօշ «լորի». Շմ. բարդութեամբ՝ մաշ-լօբյա։

+**ՄԱՇ** «մաշած, հնացած» Մծբ. եփր. աւետ. 267. որից մաշ «նուագումն լուսնի» Անան. գիտ. 5, մաշել «մաշեցնել, վատնել, փճացնել, հիւծիլ, հնանալ» ՍԳր. Ոսկ. Կոչ. մաշական Ագաթ. մաշուածոյ Ագաթ. մաշումն Առակ. գ. 15. Ագաթ. մաշուիւն եփր. աւետ. 272. հալամաշ Մխ. բժշ. հոգեմաշ Ոսկ. սղ. արագամաշ Նիւս. կազմ. դիւրամաշ Ոսկ. սղ. Երզն. մտթ. մաշուկ «հագուստի մաշած մասը» Վրդն. սղ. ճա. էջ 334. սխալ գրչութիւն է մաշկ «մաշած» Ոսկ. ա. տիմ. իսկ Վրք. հց. ձ. գտնում ենք գրուած մարշել փխ. մաշել։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mṛs- ձևից, որ հնխ. mers ձևի ստորին ձայնդարձն է. համմ. սանս. mašam, mašim kar- «փշրել, փոշիացնել», maši-, maši- «փոշի», հբգ. morsari «սանդ», մբգ. zer-mürsen, մգերմ. zermorschen, շվէյց. morsen, mürsen, հոլլ. ver-morzelen, morzelen «ջարդել, մանրել, տրորել, փշրել», գերմ. mursch, murs, morsch «փխրուն, դիւրաբեկ, փտած» (Pokorny 2, 279): Այս բոլորը ծագում են հնխ. պարզական mer- արմատի -s-ով աճած ձևից։ Հայերէնի մէջ mṛs պիտի տար մարշկամ մաո, ինչպէս հնխ. tṛs- տալիս է հյ. թառ-ամ և թառշ-ամ (տե՛ս այս բառերը)։ Առաջինից ունինք մաշել (հնագոյն չևը մարշել, որ աւանդում է Վրք. հց.), իսկ երկրորդից գւռ. մաո «փայտի բարակ փշուր՝ որ մարդու միսն է խրւում»։ Այս վերջինը ունի նաև մեռ ձևը (Ակն), որ հնխ. mers- ձևի ներկայացուցիչն է։—Աճ.

ՆՀԲ լծ. հյ. հաշել, թրք. աշըրմագ,

աշքնտրմագ, լտ. macero «կակղել»։ Lag. Urgesch. 558 սանս. makš և լտ. mactare «զոհաբերել, մահացնել, ոչընչացնել»։ Վերջինիս հետ Lag. Gesam. Abhd. 282. Canini, Et. étymol. 165 սանս. mas «ծերանալ»։ Հիւնք. յն. μασάομαι «ուտել, կլանել, սպառել, ծախել»։ Անդրիկեան, Բազմ. 1905, 512 լծ. մարսել։ Karst, Յուշարձան 420 ՖՐ. as, az, aš «պակասեցնել», օսմ. ašənmaq «մաշիլ»։ Petersson, Ar. u. Arm. Stud. 91 հնխ. mak-՛ «ճեղքել, խթել» արմատից, որից և հյ. մասն, սանս. maçáka- «մոծակ». իսկ հյ. մաշկ «մաշած» յառաջանում է նոյն արմատից -կ աճականով։ Պատահական նմանութիւն ունին արաբ. ماش māš «անձրևը հողերը սրբելով քշել տանիլ», مشّ maśś «ջրի մէջ հալեցնել» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 350, 351)։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Զղ. Սլմ. Վն. մաշել, Ննխ. Պլ. Մրղ. Սեբ. մաշէլ, Ասլ. Ախց. Խրբ. Կր. Մկ. Շմ. Ոզմ. Ռ. մաշիլ, Ագլ. Տփ. մա՛շիլ, Երև. մաշվել, Տիգ. մոշիլ, Հմշ. մաշուշ, Հճ. մէշել, ԶՖ. մէշիլ, Սվեդ. միշիլ։ Նոր բառեր ևն մաշուկ, մաշուցք, մաշուք, մաշուևք, սիրտմաշուկ, բերմաշ։

ՓՈԽ.—Թրք. գւռ. Կր. termaš «թերմաշ» (Բիւր. 1898, 627), քրդ. تیرماش tiremaš «անտէր մնացած», tiremaš bəmini «թերմաշ մնա՛ս» (անէծք) (Justi, Dict. Kurde 111). ծագում են գւռ. բերմաշ բառից։ (Justi ուղիղ ճանաչե՛լ է քրդ. բառի վերջին մասը, բայց սխալւում է, երբ առաջին մասը համարում է քրդ. tire «ցեղ» բառից)։

*ՄԱՇԱՐ «սղոցի բերանը կամ ատամները» Մագ. ուրիշ վկայութիւն չկայ։

=Ասոր. ܡܨܥܪܐ masārā «սղոց» բառի գւռ. մի այնպիսի ձևից, որի ներկայացուցիչն է ն. ասոր. məššar «սղոց»։ Բառը բնիկ սեմական է. ցեղակիցներից համմտ. երբ. מִשּׂוֹר massōr, նեբր. מַסָּר massār, արամ. מַסְרָא massārā, եթովպ. ምሳርት mōsart, խպտ. bašur «սղոց», արաբ. مِشَار mišār կամ مِنْشَار manšār «յատուց, կրտրելու գործիք, Թրք. պըչխը»։ Այս բառերի արմատն է եբր. נָשַׂר nsr, նեբր. נסר nsr, արամ. נסר nsr, ասոր. ܢܨܰܪ nəsar «սղոցել», արաբ. نشر našr «սղոցել», اشر ašr «ատամները սուր լինել» (համմտ. تاشير taašīr «ատամները սրել», مۏشّر mūaššar «սուր, հատու»), ասուր. 𒈬𒋛𒊑𒀸 ma-šṭa-ru «կտրել, կտրատել» (Brockelm. 208, Համուսի Թրք. Թրգմ. Ա. 749, Gesenius 17, 465, Delitzsch, Assyr. Handwörterb. 432, Strassmaier, Alphabet. Verz. d. assyr. u. akkad. Wörter 648): Սեմականից են փոխառեալ նաև քրդ. məšar կամ mešar «սղոց» (Justi, Kurd. Gram. 60, 95, Beidar, Gram. Kurde 72), կիւրին. mišér «սղոց» (յիշում է Justi, անդ), Թրք. مرشر mušer «չիղակի սղոց» (Կարապետեան, Օսմ. բռ. 872)։—Ա՛ճ.

ՆՀԲ մաշել բայից է հանում։

ԳԻՒ.—Գոր. Ղրբ. Շմ. մաշառ «սղոց», որից մաշառել «սղոցել». իսկ Սլմ. մուշար. Մրղ. մուշառ փոխառեալ են տեղական Թրք. mušar ձևից։ (Ըստ Ամատ. 460 ունին նաև Գնձ. Վն. Ալքս.)։

ՓՈԽ.—Ուտ. մաշար «սղոց»։

*ՄԱՇԱՐԱՅ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «պարտէզի ածու» Վստկ. 143, 146, 152։

=Արաբ. مشارة mašāra «ածու» (Համուսի Թրք. Թրգմ. Բ. 109). բառս բնիկ սեմական է. ցեղակիցներից համմտ. արամ. מִשְׂרָא mēšərā «ածու». ասուր. 𒈬𒋛𒊑𒀀 mu-sa-ru-u կամ mu-ša-ru-u (musarū, mušarū) «պարտէզ, արտ», սումեր. musar «պարտէզ, արտ» (Autran, Sumérien et indo-eur. էջ 157, Delitzsch, Ass. Hndw. 421, Strassmaier, Alphab. Werz. 679):—Հիւրշ. 270։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, համեմատելով պրս. (իմա՛ արաբ.) մէշարէ, Թրք. մաշալա հոմանիշների հետ։ Նոյնը Հիւրշ. ZDMG 35 (1881), 661։

ԳԻՒ.—Մաշարա «ածու» Այն. Մշկ. Ք. իսկ Մկ. մշարա «դդումի, վարունգի կամ ձմերուկի ածու»։

*ՄԱՇԱՐԱՅ (սեռ. -ի) «բարակացաւ, թոքախտ» Փիլ. նխ. Բ. 66 (յն. νόσος φθινώδης), Մխ. բժշ. 72 (յն. ἐρυσίπελας). որից մաշարայական Խոր. Գ. 44, Երզն. մաթ. 156 կամ մաշարական Փիլ. նխ. բ. 68։

=Ասոր. ܡܫܪܐ māšrā «մի տեսակ մորթային հիւանդութիւն, կարմիր քամի, érésipèle», որից նաև պրս. ماشرا māšrā «ուռուցք, այտուց»։—Հիւբշ. 311։

ՀՀԲ և ՆՀԲ դնում են մաշել բայից։ ՆՀԲ յիշում է նաև յն. μαρασμός, իտալ. marcia, լատ. macies, macoz «հիւծութիւն»։—Պատկ. Матер. I. 11 պրս. ձևի հետ՝ իբր ասորականից։

*ՄԱՇԻՔ «հին կօշիկ» Դրնդ. 497 (երկու անգամ). այս նշանակութիւնը սխալ է և ենթադրուած է մաշել բայի պատահական նրմանութիւնից. բառիս ճիշտ ձևն է մաշիկ, որ նշանակում է «կրունկով կօշիկ» և նուազականն է մաշ բառի. այս վերջինը երևում է մաշակար (որ և մաշկակար) «կօշկակար» բառից՝ Հայնկ. 243։

=Վրաց. ᲛᲐᲨᲘᲐ մաշիա «կրունկով կօշիկ», որից ᲛᲔᲛᲐᲨᲘᲔ մեմաշիե «կօշկակար. 2. կօշկապահ». (Ջուբինով[2] 682 այս բառը դնում է փոխառեալ արաբերէնից, որ և անշուշտ մեր էլ աղբիւրը պիտի լինէր. բայց կամուսի մէջ չեմ դտնում նման մի բառ)։—Ա.Ճ.

ԳԻՒՐ.—Մաշիկ ձևն ունին Ախք. Գնձ. Երև. Լ. Ղզ. Սր. Ջղ. Շիր. որից մաշկակար, մաշակար, մաշեկար Երև. «կօշկակար», մաշկշոր Խոյ. «ոտքի չափով կտրուած կաշի՝ որ կօշիկի մէջ են դնում, խոնաւութիւնից պաշտպանուելու նպատակով»։

ՄԱՇԽ «սխտորի նման մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1983, որի վրայ տե՛ս նաև Նորայր ՀԱ. 1923, 157։—Քաջունի, Գ. 158 մեկնում է «բոյս որ ի ջրային տեղիս լինի»։

*ՄԱՇԿ, ի հլ. «մորթ, կաշի» ՍԳր. «գղաթ, մուշտակ» Մագ. որից մաշկեղէն ՍԳր. վէնցօր. մաշկեակ ՍԳր. մաշկաճանդերձ Բուզ. լեշկամաշկ Երր. ժա. 37. Եփր. Երր. 227. Բուզ. զ. 15. մաշկագործ ճառընտ. մաշկամիրգ «շագանակ» (վրայի կաշենման կճեպի պատճառով այսպէս կոչուած) Խոր. աշխ. 608 (տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. 122)։

=Ասոր. ܡܫܟܐ meškā «մորթ» բառից, որ բնիկ սեմական է. համմտ. ցեղակից լեզուներից՝ արամ. מִשְׁכָּא maškā, արաբ. مسك mask. ակկատ. ասուր. 𒈨𒆪𒆪 mašku կամ 𒈨𒆪𒅆𒀀𒀀 ma-ša-ak «մարդու կամ անասունի կաշի», եգիպտ. msk «կաշի, մորթի»։ Այս բոլորը հանում են սեմ. mšk «քաշել» արմատից (գաղափարագրով SU «կաշին հանել, քերթել»). համմտ. երբ. מָשַׁךְ mšk «դուրս քաշել», արաբ. مسك mask «բռնել», եթովպ. ማሰከ masak «աղեղը լարել» (Gesenius[17], էջ 468, Delitzsch, Assyr. Hndwrt. 431, Strassmaier, Alphabet. Verz. d. assyr. u. akk. Wörter 647)։ Սեմականից են փոխառեալ նաև յն. μέσκος «կաշի, մորթ» (Հեսիւք.) (տե՛ս Boisacq 88), պրս. مشك mašk «տիկ», հպրս. maška «տիկ», պհլ. mašk, քրդ. mešk «տիկ» և սրանց միջոցով՝ չաղաթ. mešk, mešik «ջրի տիկ»։—Հիւբշ. 311։

ՆՀԲ արաբ. (իմա՝ պրս.) մէշ. բայց երևի մեր բառը ուղում է հանել մաշեալ կամ լեաշկ ձևից։—Lag. Urgesch. 558 և Ges. Abhd. 282 մաշել բայից. իսկ ասոր. mašk դնում է հայերէնից փոխառեալ։ Müller SWAW 41, 12 արամ. mašk, maškā ձևից։ Մորթման ZDMG 24, 80 են թրք. mešin «կաշի» բառի հետ։ Հինք. կաշի-ից։ Jensen փոխառութիւնը համարում է հաթեան շրջանից։

ԳԻՒՐ.—Ախց. մաշկ «մորթ», Ալշ. մաշկ «փոքր անասունի կաշի», Մկ. մաշկ «հաւի մորթը», Ննխ. մաշկ «մսի միջից դուրս հկած անուտելի թաղանթներ», Ոզմ. մաշկ «լորու կճեպ»։ Այս բառից են նաև մաշկ Երբ. կամ մաշկածու Ղրբ. «հաւի կիսատ վիժած ձուն», մաշկել Գնձ. Երև. Ղզ. Ղրբ. Ղրդ. Շմ. «կաշին քերթել», մաշկահան Ղրբ. «կաշին քերթուած», մաշկիկ Մշ. «հաւի ոտքի կաշուց պատրաստուած դեղդիր, (ծարիրի ման)»,

մաշմիրգ *խոջ. Համշ. «շագանակ»*, մաշմրգի *Համշ. «շագանակենի»*։

ՓՈԽ.—*Հայերէնից են փոխառեալ գնչ.* maski *«կաշի, մաշկ»*, *վրաց.* მაშკი մաշկի *«երկար զգեստի քղանցք, կաշեայ ծածկոց, վրանի ծածկոց» (վերջինիս համար հմմտ. նաև հյ.* մաշկն*)*, *որովհետև այս լեզուները սեմականների հետ հաղորդակցութիւն չունեին և իրանեանների մէջ չկայ «կաշի, մորթ, մուշտակ» նշանակութիւնը։ Հայերէնից է նոյնպէս կապադովկ. փάσκι, որ* Karolides, Γλ. συγκρ. *էջ 191 այսպէ՛ս է մեկնում.* «ἡ λεπτὴ μεμβράνα, ἡ καλύπτουσα τὰ μυώδη μέρη τοῦ κρέατος τοῦ ἀπεσφαγμένου ζώου. εἶτα δὲ τὸ ἄπαχον κρέας, καὶ ὁ ἀδύνατος, λιποσαρκὴς ἄνθρωπος *(նուրբ թաղանթ, որ պատում է մորթուած կենդանու մսի մկանուտ մասերը. որից էլ նիհար միս, և տկար վտիտ մարդ)*։ —*Վերջապէս մեզնից են նաև վրաց.* მაჩკათელა մաչկաթելա *(Ջուբինով[2] 673) և ուտ.* maškatikal, mäškätil *«ջղջիկ». սրանց մայրը հյ.* մաշկաթև *բառն է, որ կազմուած է* մաշկ *և* թև *բառերից։ Այս բառը նշանակում է նախ «մաշկեայ թև ունեցող» և գործածւում է իբր ածական ջղջիկի. հմմտ.— Ձկէան հերձաթեւս անուանեցին, այսինքն զարծուիս և զկէան մաշկաթեւս, այսինքն զջղջիկանս դիշերոյ. (Ջղջիկան) թուչի թաղանթագեղ մաշկաթև թեւօք։ Վեցօր. 162 և 173։ Սակայն նոյն ածականը հետզհետէ գոյականի վերածուելով՝ վերջապէս նշանակել է «ջղջիկ». հմմտ.* մաշկաթև *կամ* մաշկթև, *եարասա (իմա՛ թրք.* yerasa *«ջղջիկ»). Բժշ.* մաշկաթևիկ *«ջղջիկ» Առաք. լծ. սահմ. էջ 540։*

ՄԱՇԿԱՊԱՐՃԷՆ, *ի–ա հլ. «Պարսից թագաւորական վրանը». ա՛յսպէս պիտի լինէր ուղիղ ձևը, բայց զանազան սխալ գրչութիւններով դարձած է՝* մաշկապատնէն, մաշկապատենան, մաշկապերճէն, մաշկապերճան, մաշկաւարգան, մաշկապաճեն, մաշապերճան *Բուզ. էջ 55, 193, Սեբ. Հրտր. Պատկ. էջ 27, 42.—որից իբր սեռ.* մաշկապերճին *Սիմ. ապար. էջ 81։*

=*Պհլ.* משכאפרזין *բառից, որ պէտք է կարդալ* maškāparzēn *կամ լաւ ևս* maškāparčēn *«Պարսից արքայական կանանոցի վրանը»* (Horn, Grdr. § 284):—*Հիւբշ. 192։*

Նշ Բ չկարենալով ստուգել բառի նշանակութիւնը, գրում է. «Ի պրս. մէշկ, որպէս մաշկ, կամ սերտիւ ուսեալ, և ավարշէ, ավէրջէ, համար, ռմկ. հիսաւգ և տէֆտէր. կա՛մ է աւագանի մաշկեազգեաց և կամ համարակիր, համարակալ և դիւան»։ Աբ հասկանում է «մաշկով պատած վրաններ, վրաններու բազմութիւն»։ Պատկ. հրատ. Սեբ. (1879), էջ 198 «վրան թուի լինել արքայի յարմարեալ վասն կանանոցի, թերևս ի բառից مشكو *«կանանոց» և* بارگاه bārgāh *կամ* بارگ bārgah *«վրան արքունի»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւբշ.* ZDMG *46, 328, Թրգմ. ՀԱ 1892, 355, որ կրկնում է* Müller WZKM 8, 366: *Հ. Վարդանեան ՀԱ 1911, 175 սրխալմամբ արմատը համարում է* մաշկն, *որ յետոյ ՀԱ 1913, էջ 134 նրանից բոլորովին բաժանում է։*

ՄԱՇԿՆ, ն *հլ. (սեռ.* մաշկին*) «վրան», նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած է Նորագիւտ Ա. մնաց. թ. 19 (ուր միւս թարգմանութիւնը ունի* խորան*)*:

=*Ասոր.* ܡܫܟܢ maškan *«վրան, խորան» բառից, որ բնիկ սեմական է. ցեղակիցներից հմմտ. ասուր.* maškanu *«բնակարան», եբր.* מִשְׁכָּן miškān *«բնակարան, խորան վկայութեան», արաբ.* مسكن maskan *«տեղ, բնակարան»։ Այս բոլորը ծագում է սեմական* škn *արմատից, որից են ասոր.* ܫܟ škn, *եբր.* שכן škn, *փիւնիկ.* škn, *արամ.* škn *«բնակիլ», արաբ.* سكن skn *«հանգչիլ, բնակիլ», ասուր.* šakânu *«դնել, գետնել, բնակեցնել»* (Gesenius[17], *էջ 827,* Delitzsch, Assyr. Hndw. 657, 660, Strassmaier, Alphab. Verz. *էջ 650)։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց նախ Աճառ. Հայ. նոր բառեր մնաց. գրոց մէջ, էջ 23, որ սակայն համարում է մաշկ բառի նոր առումը։ Վարդանեան ՀԱ 1911, 175 համարում է մաշկապար-

ճէն *բառի «զատակաց մէկ անդամը», իսկ ՀԱ. 1913, 134 մերժելով այս՝ տալիս է ուղիղ մեկնութիւնը։*

ՄԱՇՄՆ կամ ՄԱԶՄՆ? *որից* մաշմնխոտ *կամ* մազմնխոտ *«մի տեսակ բոյս. թուխ փեգենայ,* ruta graveolens» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1985 (տե՛ս և §§ 1326 և 1928)։*

ՄԱՇՏԻԼ *«մազերը թափիլ, ճաղատ դառնալ» Ղևտ. ժգ. 40, 41. որից* մաշտել *«խլել, քայքայել, թափել» Ա.Բ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Ճառք 857. «Ջտանց նոցա քակումն զքարինս և զփայտս մաշտելոյ»։*

Նշ.Բ «լծ. յն. μαδίζω «մազերը թափիլ», բստ հյ. որպէս թէ մազատիլ... *լերկանալ իբրև* զմաշ *կամ* զմաշկ»։

ՄԱՈՐՊԱՅ *«անապականութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 205։*

Մաջուն *տե՛ս Մաղճուն։*

ՄԱՌ *«ժողովումն», որից* մաճառաէր *«ժողովասէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 204 և 205. երկու ձևերից մին վրիպակ է։*

ՄԱՌ *«խոշ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 205. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

+ՄԱՌ *«գինու կամ քացախի փառը». ունի միայն Վստկ. 108։ Գաւառականների մէջ գտնում ենք մար ձևով, այսպէս՝ Ալն. Ջն. Պլ. Մն. Ննխ. Ղրբ. և Խրբ. (վերջինը* մար *և* բայր<պայր? *ձևերով)։*

=Հյ. մայր «մայրիկ» բառն է, որ ստացել է այս նշանակութիւնը, ճիշտ ինչպէս որ անգլ. mother, *գերմ.* mutter, essigmutter, *ֆրանս.* mère de vinaigre, *հոլլ.* azijnmoer *(բոլորն էլ «մայր» նշանակութեամբ) դարձել են «քացախի մայր»* (Kluge 341)։—*Աճ.*

Նշ.Բ միացնում է մառն *բառի հետ։*

ՄԱՌԱՆ *«գամ, մեխ, բևեռ». ունի միայն Բառ. երեմ. էջ 284՝* սեմ *(իմա՛* սեպ*) բառի բացատրութեան մէջ։*

—ՄԱՌԱԽՈՒՂ, ո *հլ. (յետնաբար նախ ի, ի–ա հլ.) «մէգ, մշուշ, բալ» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 4, որ և* մառախուղ *(սխալմամբ գրուած է նաև* մարախուղ*). որից* մառախլապատ *Ագաթ.* մառախլիլ *Մծբ.* մառախլամած *Մծբ.* մառախլածն *Արծր.* մառախլամուտ *Թէոդ. խշ.* մառախղին *Պիտառ.* մառախղուտ *Խոր*

բոլորն էլ կան գրուած թէ՛ լ-ով և թէ՛ ղ-ով։

=Բարդուած է մառ «մշուշ, մէգ» (տե՛ս մառն*) և խուղ կամ* խուլ *բառերից, վերջինը անյայտ է, որովհետև ուրիշ տեղ չէ՛ գործածուած։*

Նշ.Բ մառ+խուղ *կամ* խուլ *կամ* ճոյլ։ *Ջուբինով (ա տպ.) վրաց.* მარაგა მარაგა *«ճերմակ ամպ» բառը համեմատում է հյ.* մառախ! *ձևի հետ, որով թևրևս ուզում է հասկանալ* մառախուղ։ *Ջուբինովի բ տպագրութեան մէջ (էջ 668) իբր հայերէնից փոխառեալ բառ գրուած է վրաց.* მარაგი მარაგի *«բարակ ամպով պատած երկինք»։ Հիւնք. յն.* μελαγχολία *«մելամաղձութիւն» բառից։ Քիւփէլեան, Բազմ. 1910, 153* մառ *մասը համարում է մեռանել, մարհ արմատից։ Պատահական նմանութիւն ունին սերբ.* mrâk, *լհհ.* mrok, *ռուս.* мóрокъ *«մթութիւն, թանձր մշուշ, մութ ամպ» ևն։*

ԳԻՒ.—Պահուած է միայն Մկ. մրժ–մառամուխ *կրկնականի մէջ, որ նշանակում է «մառախուղ» և ուր* –խուղ *դարձել է ժողովրդական ստուգաբանութեամբ՝* մուխ *(իբր թէ* մուխ *«ծուխ»)։*

ՓՈԽ.—Գ. Փառնակ (Անահիտ 1906, 233) հայերէնից փոխառեալ է դնում ալբան. myergoulë *«մառախուղ», որ անշուշտ պատահական նմանութիւն ունի։—*օլօռ ֆյօճօռ, ճօփյցօճ—*յոճռ Իլիա Ճղ՛ոնիա, Սիտղ՛վիս կոնա* СП. *1910, էջ 31 հայերէնի հետ է համեմատում վրաց.* მარახული მარახულის *«աշնան դեղին գոյն» (չունի Ջուբինով² 669).— այս բառը պէտք է դնել հայերէնից փոխառեալ, բստ որում հայերէն բառը ունի հայկական կազմութիւն (ա յօդակապով բարդուած* մառ *և *խուլ բառերից)։*

ՄԱՌԱՆ, ի–ա *հլ. «շտեմարան (գինու, կեռակրեղէնի, մթերքի ևն)» Բուզ. Ոսկ. ա. տիմ. Եւս. պտմ. Մծբ. որից* մառանապան *կամ* մառնպան *Լմբ.* մառանապետ *Հայել. էջ 309 (նորագիւտ բառ). գրուած է նաև* մարան, մարանապան *Ագաթ. էջ 146, 152։*

*=Թուի թէ ծագում է *մարան ձևից (ինչպէս ունին մի քանի բարբառներ) և այն ժա-*

մանակ փոխառեալ է ասոր. ܡܕܢܐ madā-nā>maδānā «horreum, cellaria, *շտեմարան, մառան, ցորենի ամբար*» *բառից* (Brockelm. Lex. syr. 180):—*Աճ.*

Brosset JAs. 1834, 377 *վրաց.* **մառանի**: *ՆՀՌ թուում է հանել* **մառ** «*մութ*» *բառից (մեկնում է «ներքին և մթին սենեակ»).* — *Մառ* ЗВО 5, 319 *դնելով* ***մաճառան**՝ *մեկնում է* **մաճ**=*պրս.* may «*գինի*» + **-ռան** = *պրս.* dān *տեղ ցոյց տուող մասնիկ. Հիմնք. շտեմարան բառից.* Karst, *Յուշարձան 406 սումեր.* mar «*բնակութիւն*»:

Գիւղ.—*Ալշ. Երև. Կր. Մշ. Մկ. Ոզմ. Վն.* **մառան**, *Ագլ. Ջղ. Տփ.* **մառան**, *Հմշ.* **մառօն**:

Փոխ.—*Վրաց.* **მარანი** «*գինու մառան*», *որից* **მემარნე** **მեմარնե** «*մառանապետ, գինու մառան ունեցող*», **სამარანო** **սամառանո** «*շտեմարան*»,—*ուտ.* maran «*գինու մառան*», *քրդ.* مارانmaran «*ուտելիքէնի պահարան*» (Justi. Dict. Kurde, *էջ 386*):

***ՄԱՌԵԽ** *կամ* **ՄԱՐԵԽ** «*Հրատ մոլորակը*» *Շիր. Երզն. հրկն. է (իբր պրս. բառ յիշուած)*:

=*Արաբ.* مرّيخ mirrīx «*Հրատ մոլորակը*»,—*Հիւրշ. 265*:

ՀՀՌ պրս. **ՆՀՌ** *արաբ.* **մէրրիխ**, *լտ.* mars: Lag. Arm. Stud. § 1449 *վերի ձևով*:

ՄԱՌԼԱՅ? *որից կազմուած է մաղայտակ «անծանօթ մի բոյս». Բժշ. ունի միայն ՀՌուս. § 1986*:

ՀՌուս. յաւել. կարծում է որ **մառուլ** *բառից է*:

ՄԱՌՆ, ն *հլ. (գրծ.* **մառամբ**) «*մշուշ, մէգ, մառախուղ*» *Հին բռ. և Ռռ. ստեփ. լեհ. որից* **ի մառն մտանել** *կամ* **ի մառն դառնալ** «*արևը մայր մտնել*» *Եփր. եր. էջ 153, ղևտ. և համաբ. 181.* **մառնամուտ** «*մութ*» *Նար. ղղ. էջ 261, Գիրք թղ. 38. գտնւում է* **մառ** *ձևով նաև* **մառախուղ** «*մէգ, մշուշ*» *բարդի մէջ*:

=*Նոյն է* **մայր** «*մթութիւն*» *բառի հետ. հմմտ.* **նշոյլ** *և* **նշող**:

ՆՀՌ «արմատ բառիցս **մոայլ, մառախուղ**... *և* **մայր**»: *Տէրվ. Նախալ. 99 հնխ.* mar «*մարիլ, սևանալ*» *արմատից է դրնում սանս.* **մալ-ինա** «*մութ*», *յն.* **μέλας** «*սև*» *և հյ.* **մառն, մայր, մուր, մրրիկ, մրուր, մոայլ**, *գուցէ թէ նաև* **աղջամուղջ** *և արդի լեզուաւ* **մարիլ** (= **մայրիլ**)»: Petersson LUÄ 1916, 40 (*տե՛ս* Pokorny 2, 280 *հնխ.* mer, mor «*մութ գոյն. կեղտի արատ» արմատի տակ*) *յն.* **μόρνον** «*կեղտոտ դեղին գոյն*», **μορτός** «*սև*», *լիթ.* **mùrszinu** «*կեղտոտել*», *յն.* **μεμορυχμένος** «*ծխից սևացած*», *ռուս.* **марушка** «*արատ, բիծ*» *և հյ.* **մոայլ** (<***մուռայլ**) *բառերի հետ*:

Գիւղ.—*Թուի թէ սրանից է կազմուած Ղրբ.* **մռա՛մօշ**<**մառամոշ** «*մի տեսակ մոշ, որի վրայ մշուշի բարակ մի խաւ է պատած*», *ինչպէս նաև Մշկ.* **մառի** «*լրթագոյն, մուգ մանիշակագոյն*»:

***ՄԱՌՈՒԻԼ** «*հազար բոյսը*». *իբր յն. բաւ յիշում է Մագ. ձգ.* «*Հազարդ խաւարտ՝ յուներէն ասի* **մառուլ**, *որ նշանակէ, եթէ ի մարմին յուլիս պարտ է ճաշակել և այլ ոչ բնաւ*»: *Յետին նորմուծութիւն է Եզնիկի ա. տպագրութեան մէջ (Զմիւռնիա)* «*Եւ զհազար, որ է մառուլ, եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք...*»:

=*Յն.* **μαρούλιον**, *նլն.* **μαρούλι** «*հազար բոյսը*, lactuca saligna, *պրս.* **խեաճու**» *բառից. Ըստ* Bailly, Dict. gr.-fr. 1910, *էջ* 1227‴ *թերևս* **ἀμαρούλιον** *ձևից, որ դալիս է լտ.* amarus «*դառն*» *բառից. Ըստ այսմ Մագիստրոսի բացատրութիւնը՝ որ ենթադրում է թէ բառը ծագած է* **μάϊος** «*մայիս*» *և* **ἰούλιος** «*յուլիս*» *ամսանուններից, ժողովրդական կամ քմածին ստուգաբանութեան արդիւնք է. Նոր յունարէնից է փոխառեալ թրք.* مارول marul «*հազար*», *որից էլ Պլ. Սեբ.* **մառուլ**:—*Աճ.*

ՄԱՌՕՆԵԱԼ «*ի բաց թողեալ*». *ունի միայն ՀՀՌ. նոյնը Բառ. երեմ. էջ 205 մեկնում է «լքեալ կամ խափանեալ»*:

ՄԱՍԱՐԱՅ «*ձիթապտուղ ծեծելու գործիք. ձիթզաց*» *Վստկ. 183. (Ձիթին մասարայն և զջաղացանին և զամանսն). որից* **մասարաճար** «*ձիթզացի քար*» *Վստկ. 184*:

ՆՀՌ դնում է **մասար** *արմատից, իբր* **մաշար** *բառի՞ց. և ըստ այսմ գրում է*

մասարայ fար՝ *փոխանակ* մասարաfար: *Ըստ Ալիշան, հրտր. Վսակ. 253 արաբ. բառ է:*

ՄԱՍԻՐ *«բերկրութիւն և ուրախութիւն սըրտի, հրճուանք». ունի միայն ՓԲ. որից է* մասրել *«խնդամտել» Բառ. երեմ. էջ 205 և ՓԲ:*

Պատահական պէտք է համարել արաբ. مسرّة masārr *«ուրախութիւնք», որ յոգնակին է* مسرّت masarrat *բառի:*

***ՄԱՍԽԱՐԱՅ** *«ծաղրաշարժ» Շնորհ. առակ. 74, Տաթև. ձմ. ճծէ:*

=Արաբ. مسخرة masxara *«ծաղրածու»:*

ՄԱՍԿՈՒՎԹ *«խոտորմունք». ունի միայն Բառ. երեմ. էջ 205:*

Մասմարովթ *տե՛ս* Ամասարակովթ:

Առաջին ձևի հետ նոյն են նաև վրաց. მაზმარობი մազմարոբի *«լոգանքի աւազան» և* მოზმარობი միզմարոբի *«սրուակ»:*

ՄԱՍՆ, ն *հլ.* (-սին, -սամբ, -սունք, -սանց) *«բաժին, կտոր, մաս» ՍԳր. «աշխարհի բաժանմունք, երկրամաս» Փիլ. Խոր. աշխ. «սրբի նշխարք» Նար. խչ. «վայրկեան» ԱԲ. այս նշանակութեան համար վկայութիւն ունինք Վանակ. տարեմ. «Զի տայ կամ կրէ գիշերն յօրէն զժամն և զմասունքն» (տե՛ս ՆՀԲ տրէ բառի տակ): Բառիս այս նշանակութիւնը անվաւեր պիտի համարէինք, եթէ չիներ վրաց.* მახი *մասի «15 վայրկեանի ժամանակամիջոց»:—ՓՈԽ. ուտ.* մաս *«ճաշակ, հաղորդ» (եկեղեցական բառ), որից մասամբ «կոդմանէ, ըստ» Փարպ. Խոր. ի մասնէ «մի քիչ» Ոսկ. Հռ. Առ. որս.* մասնաւոր *Սերեր.* մասնմուտ *եղն. անմասն Իմ. բ. 9.* բազմամասն *Սերեր.* մասնիկ *Նիւս. բն.* մասնաւորել *Նար.* հողամասն *Եփր. պհ.* կիսամասնեայ *Ոսկ. յհ. ա. 30.* եօթնամասնեայ *ՅՀ. իմ. առ.* բարեմասնութիւն *Սղիշ. Պիտ.* մանրամասն *Շիր.* մասնատուփ *«Հաղորդութեան տուփ» (արդի գործածութեամբ), «մեռոնի ման» Մ. Մաշտ. էջ 174 բ.* մասնակի, մանրամասնել, մանրամասնութիւն *(նոր բառեր) են:*

ՆՀԲ «որպէս թէ մի այս կամ ի միասին» Justi, Zendsp. 229 *կասկածով զնդ.* masan *«մեծութիւն» բառի տակ:*

Տէրվ. Altarm. 97 *և Նախալ. 98 հնխ.* ma, man *«չափել, ձևել, համեմատել» արմատի տակ, ուր դնում է նաև* ամիս, նման, սանս. *զնդ.* mā *«չափել», յն.* μέτρον *«չափ» են:* Müller WZKM 8, 362 *պհլ.* 𐭬𐭮𐭯 *բառից, որ է սանս.* mātrā, *յն.* μέτρον: *Հիւնք. վասն բառից:* Patrubány *ՀԱ 1908, 274 յն.* μακρός *«երկար» և զնդ.* mas- *«մեծ» բառերի հետ է կցում:* Karst, *Յուշարձան, էջ 406 սումեր.* mač *«կէս, կտրել, չափանել» բառի հետ:* Scheftelowitz BB 28, 282 *իբր բնիկ հայ կցում է հբգ.* smāhi *«փոքրիկ» բառի հետ:* Petersson, Ar. u. Arm. Stud. 97 *հնխ.* mak´- *«ճեղքել, խթել» արմատից, որից նաև սանս.* maçāka *«մոծակ» և հյ.* մաշ–ել:

ԳԻՒ.— Ագլ. Ախց. Երև. Կր. Համշ. մաս *«բաժին, մաս», Ակն. պահուած է* մաս ու մեռ *«մաս և բաժին, մասնակցութիւն» ձևի մէջ, իսկ Տփ.* մաս մաս անիլ *«կտրատել» ձևի մէջ:—Վն.* մասն, *Ասլ. Խրբ. Մկ. Ոզմ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ.* մաս, *Տիգ.* մոս, *Զթ.* մօս, մոս, *Սվեդ.* մուս *«եկեղեցու մէջ բաժանուած օրհնեալ հացը», Ալշ. Մշ. Զղ. Ննխ. Սլմ.* մաս *և Դրբ.* մասնը *«ճաշակ, Հաղորդութիւն»: Գրեթէ ամէն տեղ պահուած է* մասունք *«սրբի նշխարք» բառը: — Ատանայի Բրքախօս հայերը գիտեն* մաս *«բաժին. 2. եկեղեցու օրհնեալ հացը»,* մասունք *«սրբի նշխարք»,* մասնագիչ *«մասնակից»: — Մրղ. հետաքրքրական է* կալամած *«կալամաս»:*

ՓՈԽ.—Վրաց. მახი *մասի «15 վայրկեանի ժամանակամիջոց». այս իմաստի համար հմմտ. վերը* մասն *«վայրկեան» ԱԲ (վկայութիւնը անյայտ):—Տե՛ս նաև կալ բառի տակ:*

***ՄԱՍՈՒՆ** *«խթան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդ. առ. 90. Հա՛ր զնա մասունովդ (այլ ձ. խթանաւդ). Մառ էջ 554 թարգմանում է «стрекаломъ խթանով». նոյն բառը մի այլ խմբագրութիւն, էջ 115, ունի երկու անգամ:*

=Ասոր. ܡܣܐܣܐ masāsā «aculeus, *խթան»* (Brockelm. Lex. syr. 190 *ա*), *քաղդ.* מַסָּאסָא masāsā, *արաբ.* مساس misās *կամ* منساس minsās *«խթան»:*

Ուղիղ մեկնից Մաո, Վրդ. առ. I. էջ 554։

Գիմ.—Նոյն բառն է մասսա *Բբ. Բիբ.,* մասուսա *Ջն. Ջրս. Սեբ.,* մասոս *Ք.,* մեսսէ *Խրբ.,* մասսաս *Հճ. «երկար ձող՝ ծայրին սուր խթանով. սրանով երկրագործները քշում են գոմէշներն ու եղները՝ վարուցանի ժամանակ»։*

ՄԱՍՈՒՐ *«շնվարդ, վայրի վարդի պտուղը, լտ.* cynorrhodon, *կամ* rosa canina L *(ըստ Տիրացուեան,* Contributo § 214*)» Ագ. նար. կէ. որից* մասրի *կամ* մասրենի *«վայրի վարդենի» Բժշ. Կոստ. երզն. 113. Ամիրտ. ունի միայն ՀՀՔ և ՀԲուս. § 1987։*

Գիմ.—Ալշ. Ախց. Ակն. Բն. երև. Զթ. Մկ. Մշ. Ննխ. Վն. Տփ. մասուր, *Սլմ.* մասուր, մանսուր, *Խրբ.* մասուլ, մասուրա, *Ախց.* մասուրա, *Ոզմ.* մասօր, *Հճ.* մանսույ, *Ղրդ.* մա՛սուր, *Ղրբ.* մհա՛սուր, *Սեբ.* մասբուր, *Զմշ.* մարսիգ։

Փոխ.—Ինձ թւում է թէ մի կապ կայ քրդ. masur *«ուռկըք», Թրք.* مایاسیل mayasəl *«սրբանից արիւնաթորութիւն» (Հաճինի Թրք.* mayasər*) և Հյ.* մասուր *բառերի միջև։ Իմաստի զարգացման համար համմտ. Հյ.* բուր *«պտուղը» և* բուրթ *«արիւնաթորութիւն»։ Ժողովրդական բժշկութեան մէջ մասուրը գործածւում է իբր դեղ արիւնաթորութեան. շատ տեղ էլ մասուրի համար կարծիք կայ թէ շատ ուտելով սրբանի քոր է յառաջ բերում. համմտ. նաև ֆրանս.* gratte-cul *«մասուր», որ ստուգաբանօրէն նշանակում է «յետոյք քորող»։ — Թրք. բառի աղբիւրն է արաբ.* بواسير bavāsīr *«թուիք, արիւնաթորութիւն», որ դարձել է նախ ՊՊր.* بابصر babasir (Будаговъ I, 272), *վերջաձայնի փոփոխութեամբ ՊՊր. և Աստպտ. Թրք.* بابصل babasil, *որ յետոյ Հյ.* մասուր *բառի ազդեցութեամբ դարձել է* mayasər *կամ* maynsəl: *Պէտք է նկատի ունենալ որ ժողովուրդը երբեմն կեղծ ստուգաբանութեամբ մի բանի անունից դեղ է հնարում. օր. լտ.* astrutium *«օճառախոտ»ը փոշտալու դէմ դեղ դարձաւ. Իտալացիք սամիթի խաշուն աչքի հիւանդութեանց իբր դեղ են գործածում. ստուգաբանելով* finocchio *«սամիթ» բառը* fino occhio *«վասն աչաց»* (Ernout-Meillet 77—8)։

***ՄԱՍՈՒՐԱՅ** *«մագոգի մէջի եղեգնիկը» Վստկ. 206 (իբր դեղդիր գործածուած)։*

=Թրք. ماصورا masura *նոյն նշ.—Աճ.*

ՄԱՍՍ *«բողբոջիալ և մաքրիալ գարի՝ գարեջուր պատրաստելու համար». ունին միայն Նորայր, Բառ. ֆր. և Կոյլաւ, Բառ. գերմ.* (Malz)*, իբր նոր բառ։*

=Կազմութիւնը և ծագումը ինձ անյայտ է։

Մաստ *տե՛ս Մազդ։*

***ՄԱՍՏՈՒ** *կամ* **ՄԱՅՍՏՈՒ** *«խորհրդական» Շնորհ. թղթ.։*

=Հֆրանս. maistre *(ֆրանս.* maître*) «տէր, վարպետ» բառից փոխառեալ. սրա վրայ ընդարձակ տե՛ս* **մագիստրոս** *բառի տակ։—Աճ.*

Նշ Ր դնում է իբր յն. μάϊστωρ *«խորհրդական», բայց ձևը համապատասխան չէ։*

Մասրել *տե՛ս Մասիր։*

ՄԱՍՓԱՐ *«մի տեսակ բոյս,* bacile, fenouil marin, *որ է շումբայ, ծովային սամիթ». գիտէ միայն Քաջունի, Գ. 159, բայց չէ յիշում Ա. 217 և 847 վերի ֆրանսերէն հոմանիշների տակ։*

***ՄԱՎԶԱՃ** *կամ* **ՄԱՎԻԶԱՃ** *«աղուիճակ, լտ.* staphysaria *կոչուած բոյսը» Բժշ. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1989։*

=Արաբ. միւֆէզէճ կամ մէյֆիզաճ՝ նոյն նշանակութեամբ։

Այսպէս է մեկնում ՀԲուս. § 65։ Թերևս նոյն է պրս. مویز mavīza *(որի արաբացեալ ձևը պիտի լինէր* mavīzaj*) «ունդ ինչ սևորակ. ռմկ. մէվզէֆ»։*

***ՄԱՎԻՃ** *«ալեծածան երփն երփն զարդեր» Ղեղ. դաշ. որից* մարգարտամավիճ *ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ղեղ. դաշ. էջ 17։*

=Արաբ. موج mavǰ *«ալիք, կոհակ»։*

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

+ՄԱՏ *«մօտ կամ առաջ երթալ՝ տանիլ». արմատ առանձին անգործածական, որից զանազան բայակերտ մասնիկներով ձևացած են՝* մատիլ *«մօտենալ» Մծբ.* մատնուլ *«մօտենալ» Բ. մակ. ժա. 8.* մատչիլ *«մօտ եր-*

թալ, մօտենալ» ՍԳր. Ագաթ. Կիւրղ. Թգ. և ծն. մատուցանել ՍԳր. Ագաթ. Եզն. Սեբեր. *սրանցից են* մատուցական Ագաթ. մատուցիչ Եփր. եվ. գևտ. բղթամատոյց Աբր. մամիկ. և ճառընտ. իճճամատոյց Նիւս. բն. դժուարամատոյց Բ. մակ. ժբ. 21. Ոսկ. մ. բ. 12. դժուարամատչելի Արծր. յառաջամատոյց Կոչ. Ոսկ. յհ. ա. 30. սրբամատոյց Ագաթ. զոհամատոյց Կաղանկտ. նպաստամատոյց Կորիւն. նաւամատոյց, խնդրամատոյց *(նոր բառեր) են։ Թերևս նաև* մատ *«հրազափորձութի՞ւն» Եւագր. իա.։ Տե՛ս նաև* մատաւարկայ։—*Արմատի երկրորդ ձևն է* ՄԱԻՏ =ՄՕՏ, *որի հետ ճիշտ այն ձայնական յարաբերութիւնն ունի, ինչ որ* աւածել և աւօտ, յատանել և յօտ։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mād- *«հանդիպիլ, պատահիլ, մօտը գնալ» արմատից, որ և ունէր* mōd-, məd- *ձևերը. ժառանգներից ունինք հսլ.* mōt *«հանդիպում, հաւաքոյթ, հասարակական ժողով», անգսք.* ge-mōt, *հին սաքս.* mōt, *մրգ.* muoz *«նոյն նշ.», հիսլ.* mota, *գոթ.* gamōtjan, *անգսք.* mētan, *անգլ.* meet *«հանդիպիլ, պատահիլ»,* meeting *«պատահում, հանդիպում, տեսակցութիւն, հաւաքում, ժողով»,* moot *«վիճաբանիլ, հակաճառել» են* (Pokorny 2, 304)։

Նշբ բոլորը հանում է մատն *կամ* մօտ *ձևից, իսկ* մատ *թերևս որպէս լտ.* mador *«խոնաւութիւն, գիշութիւն, թացութիւն»։* Windisch. 23 մատուցանել *ձևը՝* մատնել, մուծանել, մուտ *բառերի հետ՝ ազգակից է դնում լտ.* medius *ձևին։ Մորթման* ZDMG 31, 437 մատուցանել=*բևտ.* madutini: *խորհնացու մար ամատ ձևը ուզելով մեկնել հայերէնով (որովհետև մար հայերէն է),* Vetter *ենթադրում է որ խորհնացու ժամանակ գոյութիւն ունէր ամատ «եկաւ» բառը (հմմտ.* Ամատունիք՝ *ըստ խորհնացւոյ «եկք»). և այս բառը մեկնում է* ամ=*սանս.* am *«հոթալ» արմատից՝ աս կտր. եզ. գ. դէմքի վերջաւորութեամբ։ Այս կարծիքը քննելով Հ. Ն. Ա. ենթադրում է որ* ամատ *կազմուած է* ա *կատարեալի յաւելուածով (հմմտ. ե-*ճատ) մատ *ձևից, որ* *մատանեմ *բայի կտր. եզ. գ. դէմքն է. նոյն արմատից կազմուած են ուրիշ յօդերով* մատնում, մատչիմ *են. (երկուսն էլ տե՛ս ՀԱ 1894, 199)։ Հիւնք. մօտ բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուին* Pedersen, *Հայ. դր. լեզ. 124 և* Scheftelowitz BB 29, 28, *համեմատելով ի մէջ այլոց գոթ.* gamōtjan *«հանդիպիլ» բառի հետ։ (Այս բառը* Bugge *և* Meillet *կցել են հյ. մուտ արմատի հետ, բայց այժմ* Meillet BSL *հտ. 26, № 79, էջ 4 չունի այս կարծիքը)։*

ՄԱՏԱԿ *«ջրի աւազան կամ առուց». նոր գրաբար բառ, որ երեք անգամ գտնում եմ գործածուած Օրբել. Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ ո՛չ նորեցեաց... ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կտրել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի ջուր տալ՝ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ (էջ 186). Մարդ և անասուն ջուր ըմպեն ի մատակէդ (էջ 187). Մեծամեծ նզովիւք փակէ վասն ջրոյն, զի մի՛ ոք իշխեսցէ կտրել զնա և կամ հարակաշ գոլ և բաժինս առնուլ, բայց միայն թէ ըմպեն ի մատակէն մարդ և անասուն (էջ 192)։—Մղր.* մատակ *«առուց»։*

Այտնեան, Քննակ. քեր. էջ 143, որ առաջին անգամ նկատել է այս բառը, համարում է արաբ. մէքճա *«ջուր հանելու տեղ»։*

***ՄԱՏԱԿ,** ի–ա *հլ. «անասուններուի էգը» ՍԳր. որից* մատակախազ *Երեմ. ե. 8. Եփր. պհ. Մանդ.* մատակախազութիւն *Փիլ. լին.* մատակպան *«ձիերի վերակացու» Պտմ. աղէքս. 16։*

=*Պհլ.* 𐭬𐭲𐭪𐭪 mātak *«մատակ» Բառ. հց. հմմտ. պրս.* ماده māda *«մատակ, էգ (անասունների)», քրդ.* māde *«էգ, մատակ», հնդուս.* mādag, māδaγ *«մատակ»։ Իրանեան* māda gāv *«կով» բառից է փոխառեալ գնչ.* mangav, manga *«կով»։—Պհլ. ձևը կազմուած է* -ak *մասնիկով՝* māt *«մայր, մայրիկ» բառից, որ հյ. մայր ձևն է. հմմտ. պրս.* مادیان mādiyān *«էգ ձի» (հյ. դւռ. մադեան), նոյն արմատից* (Horn § 956)։—*Հիւրշ. էջ 192։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։ Նոյնը նաև ՆՀՔ, Lag. Urgesch. 140, Spiegel, Huzw. Gram. 164, Müller SWAW 38, 572 *և ն։* Patrubány SA 2, 237 *և ՀԱ 1908, 314* **մատաղ** *բառի հետ՝ լտ.* mamma, *յն.* μαζός *«ծիծ», μαδάω «հալիլ» ևն։*

ԳԻՒ.—Ախց. երև. Մրղ. Կր. Ոզմ. վն. **մատակ**, *Խրբ. Մշ.* **մաղագ**, *Ալշ. մղագ, նշանակում են «էգ գոմէշ». Սլմ.* **մատակ**, *Սչ.* **մաղագ** *«էգ ձի». և միայն Սվեդ. մղիւգ՝ ամէն անասունի էգը։*

ՓՈԽ.—Թրք. գւռ. Կր. և Ււդ. مدك medek, mädäk *«մատակ (գոմէշ)» (Բիւր. 1898, 627, Յուշարձան 330). Համմտ. նաև էնկիւրիի Բրքախօս հայոց բարբառով՝* medek *«խրոխտ կին» (Բիւր. 1898, 865)։*

[ՄԱՏԱԿ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած է Ուխտ. Ա. էջ 30, հետևեալ ձևով. «(Շամիրամ) տուն արքունի շինէ հրաշազան իմն շինուածօք և զմատակ ամբարտակ ի գետոյն հանեալ».—Համապատասխան տեղը Խոր. Ա. ժզ. ունի. «Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալս, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ, որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի». սրա մէջ* **մատակ** *անստոյգ բառին համապատասխան մի ձև չեմ գտնում (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 130)։— Ըստ իս Ուխտանէս (կամ թերևս որևէ արտագրող)* **ամբարտակ** *ասելով հասկացել է «առու», ուստի մինչդեռ Խորենացին գրում է «զամբարտակ գետոյն շինել», Ուխտանէս դարձնում է «ամբարտակ ի գետոյն հանեալ» և որպէս զի թիւրիմացութիւն չլինի, ամբարտակի կողքին էլ աւելացնում է իբր բացատրութիւն «մատակ», որ ինչպէս տեսանք Օրբելեանի մօտ նշանակում է «ջրի աւազան կամ գուռ» և կամ պարզապէս «առու», ինչպէս ունին այժմ էլ Մեղրեցիք։ Տարակոյս չկայ որ Ուխտանէս ակնարկում է Շամիրամի նշանաւոր առուն, որ մինչև այժմ էլ կայ։—Ա՛Ճ.]*

ՄԱՏԱԿԱՐԱՐ, *ի–ա հլ. «վերակացու և պաշտօնեայ կերակրոց, խոհարարապետ», փխբ. «տնտես, հազարապետ տան կամ ուրիշ պաշտօնեայ» ՍԳր. Եւս. պտմ. որից* **մատակարարել** *ՍԳր. Ոսկ. մ. գ. 24.* **մատակարարութիւն** *Կոչ.* **մատակարարումն** *Փարպ.* **մատակարարաբար** *Փիլ. ևն։*

*=Թուի թէ բարդուած է *մատակ անծանօթ բառից + հյ.* **արար** *«անող»։—Ա՛Ճ.*

ՆՀՔ (տե՛ս **մշակել** *բառի տակ) «մշակարար կամ արբանեկող և մատուցանող, մատուցակող»։*

ՓՈԽ.—Վրաց. **მატაკარაბი** **մատակարաւնի** *«սեղանը պատրաստող կամ կարգադրող»։*

ՄԱՏԱԿԵԼԻ, *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Պտմ. աղէքս. 22. «Մատակելի աղաչանաց ձև տեառն նմա մատուցանէր»։*

+ՄԱՏԱՂ, *ո հլ. «մատղաշ, փափուկ, դեռատի, մանկահասակ» ՍԳր. Եւս. քր. Եփր. համաբ. «երախայ, մանկիկ» Եւագր. «մատաղ հորթ զննլի, զոհ, ագապ» Շնորհ. Մաշտ. ջահկ. որից* **մատաղածին** *Գ. մակ. և. 28. Ոսկ. երր.* **մատաղական** *Ոսկ. ես.* **մատաղամայր** *Գ. մակ. ա. 11.* **մատաղատունկ** *ՍԳր. Եւս. քր. Ոսկ. ա. տիմ.* **մատաղել** *«փափկացնել» Եփր. ել. էջ 150.* **մատաղօրեայ** *Եզն. Ոսկ. մաթ. և Փիլիպ.* **մատաղաճաս**, **մատաղատի** *(նոր բառեր)։ Այստեղ է պատկանում նաև* **մատղաշ** *(կազմուած -աշ մասնիկով. համմտ.* թթուաշ, աղուաշ*), որ թէև չէ աւանդուած հնից, բայց կայ յետին շրջանից (ինչ. Վստկ. 9, 36, որից* **մատղաշուց** *Վստկ. 147) և շատ գործածական է նոր գրականում և բարբառներում։*

=Բնիկ հայ բառ, բուն արմատն է հնխ. mel- *«փշրել, մանրել, ջարդել, աղալ», որի ժառանգները և հայերէն համապատասխանները տե՛ս մալ արմատի տակ։ Հնխ.* mel- *աճել է* d, dh, t *և այլ աճականներով, որոնց վրայ տե՛ս* **մեղկ**։ *Աճած *mld- ձևից գալիս է հյ. *մաղտ, որից շրջմամբ* **մատղ–աշ**, *իսկ *mlad- ձևից՝ *մաղատ, շրջմամբ* **մատաղ**։ *Սրանց ամէնից մերձաւոր ցեղակիցներն են՝ հսլ.* mladŭ *«նուրբ, մատղաշ», ռուս.* млад-шій *«կրտսերագոյն, մատաղագոյն»,* молодой *«երիտասարդ, մատղաշ», հպրուս.* maldenikis *և հսլ.* mladěnĭci *«տղայ» (վերջին իմաստով է* **մատաղ** *Եւագր.)։*

Հներից Վրդն. ծն. և Տաթև. հրց. 657 առուգաբանում են մատո՛ աղ (մատաղ «զոհ» իմաստի համար)։ ՆՀԲ լծ. տղայ։ Peterm. *էջ 260 մատակ բառից։* Müller, Armen. VI *մեկնում է վերի ձևով։ Հինք. մեսաղ բառից։* Patruhany SA 1, 221 *հունգ.* madár *«թռչուն» բառի հետ, իսկ* SA 2, 237 *տե՛ս մատակ։* Scheftelowitz BB 29, 28 *լտ.* madeo *«թաց լինել», յն.* μαδάω *«հոսիլ», որ կրկնում են* Boisacq, *էջ 598,* Walde 453 *և* Pokorny 2, 231: *Վերի ձևով է մեկնում նաև Աճառ. ՀԱ 1908, 123՝ անկախ* Müller*-ից։ Պատահական նմանութիւն ունի արար.* مَلٌ mald *«մատաղ, մատղաշ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա 694)։*

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Դոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. մատաղ, *Ալշ. Ասլ. Խրբ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* մադաղ, *Տիգ.* մդդող, *ՋՓ.* մադօղ, մադոդ, *Հճ.* մադօղ, *Համշ.* մդաղ, *բոլորն էլ «զոհ» նշանակութեամբ. իսկ Կր. Ղրբ. Տփ.* մատղաշ, *Ննխ.* մադղաշ, մադղաջ, *Համշ.* մադղաշ, *Տիգ.* մդդղոշ, *Պլ. Ռ.* մաթխաշ, *Ասլ.* մա*ղաշ *«մատղաշ, փափուկ», Սչ.* մադղաշ *«կաթնկեր մանուկ».— կրկնութեամբ միջաձայնի՝ ունինք Մրղ.* մատատաղ *«զոհ», իսկ Ղրբ.* մա՛տատաղ՝ *միայն իբր բացագանչութիւն, «սիրելի՛ս» իմաստով. («զոհ» իմաստով մրնում է* մատաղ*)։—Տաճկախօս Հայոց մէջ ունինք Ատն.* մադաղ *և Այն.* ադաղ *«զոհ»։— Նոր բառեր են* մատաղամիս, մատաղանայ, մատաղաջուր, մատաղատու, մատաղատուն, մատաղացու, մատաղրաժին, մատաղհերք, մատղել *«մատաղ անել»։*

ՄԱՏԱՐ *«նշան». ունի միայն Բառ. երեմ. էջ 205՝ յղ. անորոշ հյց.* մատարս *«նշանս» ձևով։*

[ՄԱՏԱՐԱԿԱՅ *«ճշգրտեաց». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 205։—Սրա հետ նոյն է մատարկայ Թրակ. քեր. 33, որ մակբայների տեսակների մասին խօսելով գրում է. «Մատարկայ(իւ) կամ ճշգրտութեանն, որպէս, զիպէս, որպիսի, զիարդ, ըստ որոյ, որգոն»։ Այս բոլորը նմանութիւն կամ օրինակ ցոյց տուող մակբայներ են և հետևաբար* մատարկայ *բառի նշանակութիւնն էլ պետք է դնել «նմանողական, համեմատական»։ Յոյն բնագրի մէջ սրա դէմ գրուած է τὰ δὲ παραβολῆς ἢ ὁμοιώσεως.* **մատարկայ** *ուրեմն յն.* παραβολή *«համեմատութիւն, նմանութիւն, առակ» բառի ստրկական թարգմանութիւնն է (*παρά *«առ, մօտը, մատչիլ» և* βάλλω *«արկանել» բառերից կազմուած). Համմտ.* առարկայ*։—Համամ. քեր. 276 սխալ կարդալով* մատարկայ *բառը, գրում է. «Իսկ որ ասէ թէ* մատարկացն *կամ ճշգրտութեանցն, մատարկացն հարցական լսի, իսկ ճշգրտութեանցն, որ դեռ ստուգագոյնս հարցմամբ ոք կամի ուսանել և ասէ. ո՞րպէս, զի՞պէս...»։ Մի ուրիշ սխալով Բառ. երեմ. էջ 205 կարդացել է բառը* մատարակաց *և հետևցնելով կամ շաղկապից («*մատարկայիւ *կամ ճշգրտութեանն»), որ երկու համարժէք բառեր իրար է կապում,* մատարակաց*-ին տուել է «ճշգրտեաց» նշանակութիւնը (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 111։)—Ա.Ճ.*

***ՄԱՏԵԱՆ** *«մատակ ձի, զամբիկ». մէկ անգամ յիշուած է հոմանիշների մի շարքում՝ Մագ. և Երզն. քեր. «Ձիոյն իգականքն՝ մատեան, զամբիկ, ճայիկ»։*

=Պհլ. matyān *(նախնաբար* *mātikān*) ձևից. սրա հետ նոյն են պրս.* مادیان mādiyān, *բլուճ.* mādyān, *քրդ.* mahin, mehin, main, *զիզի.* māhin *և պարսկերէնից նոր փոխառութեամբ՝ ուտ.* մադիան, *բոլորն էլ «էգ ձի, զամբիկ» նշանակութեամբ. բուն ծագումը տե՛ս* մատակ*։ Հիւրշ. 192։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Ղրբ. և այլուր մադեան *«էգ ձի» նոր փոխառութիւն է արևել. Թուրքերէնի միջոցով։*

ՄԱՏԵԱՆ *«Պարսից անմահների գունդը» Եղիշ. զ. էջ 90, 91. որից* մատենիկ գունդ *Բուզ.—Ըստ Բրս. մրկ. էջ 378՝ «էր ի պարսկաց տունն գունդ մի՝ անուանեալ* գունդի *և նմայրեան, այսինքն գունդ անմահական և ոչ ոք ունէր իշխանութիւն տանջել զնոսա, երբ մեղանչէին». (անշուշտ ուզում է ստուգաբանել պրս.* gund-i nā-mīr-ān *գունդն ոչ-մեռանել+յոգնակիի նշան)։*

=*Իրանեան փոխառութիւն է, բայց մայր ձևը աւանդուած չէ։—Հիւբշ. 192։*

*Փորթուգալ փաշա, Եղիշէ 360 հանում է մատեան «գիրք» բառից, իբր թէ «յատուկ մատենի մէջ յանուանէ արձանագրուած»։ Տաշեան, Ուսումն դաս. հայ. էջ 523 և 723 Մարաց ազգի անունից է դնում, իբր զօրք Մարաց. (այս պարագային սակայն բառը պիտի լինէր *մարեան)։*

***ՄԱՏԵԱՆ**, ի *հլ. (կայ նաև -եանց) «մագաղաթ կամ թուղթ, գիրք, դրուածք, արձանագրութիւն, գրքի գլուխ» ՍԳր. (—Վիրք բառից տարբերութեան համար հմմտ. Բ. տիմ. դ. 13 Յորժամ գայցես, բերջիր և զգիրսն, մանաւանդ զմատեանսն. յն. մագաղաթ). որից մատեան կամ մատենից դարան «գրադարան» Բ. մակ. բ. 13. Նւս. քր. ի մատենի եւարկանել կամ տալ «գրել» Նւս. քր. մատենագէտ. Եզեկ. իէ. 9. մատենագիր Նւս. քր. Փարպ. Կոչ. մատենայած Ագաթ. մատենապատում Կորիւն. մատենադարան Նւս. քր. նոգեմատեան Ագաթ. կրճատ ձևով ունինք մատնարկ «գրքերի դարան, մատենայարկ» (իբր ֆրանս. étagère, որից ռուս. этажерка) Արձ. 1201 և 1214 ԹԹ. (Վիմ. տար. էջ 45 և 56)։ Նոր բառեր են մատենադարանապետ, մատենագիտութիւն, մատենացանկ, մատենագրական, մատենախօսական, մատենախօսութիւն են։*

=*Պհլ.* mātīkān *«գիրք, մատեան» բառի աւելի նոր* mātyān *ձևից. յայտնի է պհլ.* Mātīkān i hazār Dātistān *«Մատեան հազար Դատաստանաց» գիրքը. բառիս ձևափոխութիւնը ճիշտ այնպէս է, ինչպէս հպհլ. *mātīkān>նպհլ. mātyān>հյ. մատեան «էգ ձի».*

Brosset JAs. 1834, 377 *դնում է ատեան բառից՝ մ մասնիկով. համեմատում է վրաց. մատիանէ։—Հիւնք. ատեան բառից։* Patrubány SA 1, 210 *մատն բառից։—Փորթուգալ փաշա, Եղիշէ 360 պհլ. մատիկան, պազենդ. մատեանէ «գիրք, վէպ, պատմութիւն» բառից, որ իմ էլ կարծիքս է եղած անկախաբար և վերի պատճառաբանութեամբ։*

Փոխ.—Վրաց. მატიანე *մատիանե «գլան, սրբերի պատմութիւն, վարքագրութիւն, տարեգիրք, ժամանակագրութիւն»,* ქართლის მატიანე *Քարթլիս մատիանե «Վրաց ժամանակագրութիւն»,* მემატიანე *մեմատիանե «ժամանակագիր»։*

ՄԱՏՂԻԼ *«մածիլ, փակչիլ, կպչիլ, կպիլ» Բ. թագ. իգ. 10. Պատմ. վր. Մխ. առակ. Տօնակ. որից մատզողական Վրդն. երգ.։*

*Նշխ և Պատկ. նոյն են համարում մածիլ հոմանիշի հետ (տզ=ծ)։ Հիւբշ. 472 արմատը դնելով *մատիզ կամ *մատուզ՝ բաժանում է մած ձևից։*

***ՄԱՏԻՏ** *«կապարեայ գրիչ». նոր գրականին յատուկ բառ է, թէև ՋՔ նշանակում է գւռ. մատիտն!*

=*Իտալ.* matita *«կապարեայ գրիչ. մատիտ» հոմանիշից փոխառեալ է վերջին ժամանակներս։—Աճ.*

Հիւնք. արաբ. مداد midād *«մելան, թանաք» բառից։—*Bittner WZKM 14, 162 *պրս.* مداد midād *«մատիտ»։*

ՄԱՏԻՏԵՂ *«մի տեսակ բոյս» Կաղիան. Բժշ. (ըստ Տիրացուեան,* Contribato § 89 polygonum Bistorta L. *որ ըստ* Анненковъ-*ի Բուսաբանական բառարանի, էջ 264 Կովկասում հայերն ու Թուրքերը (Բորչալու) անուանում են* ագիր)։

Հմմտ. եարսնմատ և մատուտակ բուսանուններըր։

Փոխ.—Վրաց. მატიტელა *մատիտելա բոյսը, որ Ջուբինով[2] 678 մեկնում է ռուս.* спорымъ, воробьины язычки, кровавникъ, кровавикъ, кровянка (Анненковъ *այս վերջիններըր համարում է էջ 264* Polygonum Bistorta L, *իսկ էջ 277* ptarmica vulgaris DC)։

ՄԱՏԻՏՈՒՄՆ. *անասոյզ բառ, որ երեք անգամ գործածում է Մագ. թղ. 203 և 223. «Յոսկւոյ... և յամենայն ականց հանդերձ մատիտմամբ և դրակոնաւոր... յոսկւոյ բնդելուզեալ մատիտմամբ և ի կարծրակոփ վիմացն մանրագոյն զնոսա տարակայցեալս առ միմեանս. Որպէս դրակոնտիկոն շարամանարար մակ ոսկւոյ մածեալ մա-*

տիտամբն»։ ՆՀԲ այս բառը մեկնում է «ընդելուզումն, յեռումն», իսկ ՋԲ «կարմրաքար, hématite»։

+ՄԱՏՆ, ն *հլ. (-տին, -տամբ, -տունք, -տանց) «ձեռքի կամ ոտքի մատ» ՍԳր. փխբ. «սանդուխի աստիճան, երաժշտական եղանակ, մի մատնաչափ» ՍԳր. Ոսկ. «խաղողի որթի ճիւղերը» Վստկ. Անկ. դիրք հին կտ. 316. ածանցման մէջ մտնում է հետևեալ 4 ձևերով.—ՄԱՏՆ. ինչ. մատնաձոյն Կորիւն. մատնացոյց Եփր. ծն. կամ մատնցոյց Գ. մակ. գ. 22. Յոր. լդ. 26. Եփր. եկ. մատնահատ Կաղնկտ. մատնէք «սիւնի վրայի մատ մատ ակօսները» Գ. թագ. է. 15. մատնաշուրթն Բժշ. մատնոց Յայսմ. երկմատնի, երեքմատնի ԱԹ. ենգմատնեան Այն. վերկ. սանդղամատն «սանդուխի ոտքը» Վրդն. աւետ. Մագ. և Երզն. քեր. վարդամատն Նոնն. Յայսմ. շալակամատն «պայուսակի մէկ աչքը» Կիւրղ. թգ. մատնանիշ, մատնանշել, մատնեմատ (նոր բառեր).—ՄԱՏԱՆ–, ինչ. մատանել «կնքել» Սարգ. Վրդ. պտմ. մատանի ՍԳր. մատանահար «մատանիով կնիք» Երզն. խրատ.—ՄԱՏԻՆ–, ինչ. մատինայօրին «Աստուծոյ մատով յօրինուած» Տաղ.—ՄԱՏ–, ինչ. մատնրամատն «յորդորական կամ հրամայական (մակբայ)» Երզն. և նչ. քեր. երկմատնեի Եղիշ. հրեց. հատնամատ «նուռնուֆար» Գաղիան.—Նոյն արմատից են ձևացած նաև մատն «մատնութիւն» Ոսկ. ես. 84, մատն առնել «այպանել, նշաւակել» Սիր. իթ. 35 (Հմմտ. գւռ. մատի վրայ առնել), մատն գործել «սպանութեան միջամուխ լինել» Նանայ. մատն լինել «մատնել, ուրիշի ձեռքը յանձնել» ՍԳր. Ոսկ. մ. ա. և բ. մատն և տուր լինել «մատնել» Ոսկ. մ. բ. 6. ի մատաճակ կամ ի մատենակ արկանել «բռնել, մատնել, ձեռքը դնել» Սեբեր. 66. Ոսկ. մ. գ. էջ 125. մատնել ՍԳր. մատնիչ ՍԳր. մատնութիւն Իմ. ժէ. 11, 14. մատնատու «մատնիչ» Գ. մակ. գ. 16. անձնամատն Ա. թագ. ի. 30. սիրամատնիչ Բուզ. աշխարհամատն Երզն. լուս.։*

*=Բնիկ հայ բառ՝ հնխ. māt- արմատից. այս ձևը երևան են հանում միջ. բրբտ. meut, ն. բրբտ. meud, հկիմբ. maut, նկիմբ. bawd «բութ մատ», որոնք ծագում են կելտական *māto- նախաձևից։ (Թերևս այստեղ պատկանի նաև հիռլ. mér «մատ», որի ձայնական դիրքը կարելի չէ հաշտեցնել միւսների հետ)։ Հայերէնի մէջ māt- ձևի դէմ սպասելի էր *մաթ–ն, բայց թ դարձել է տ, յաջորդ ընգականի ազդեցութեան տակ. ճիշտ ինչպէս որ ունինք ակն՝ փոխանակ *աթն, ուր կ դրուած է փոխանակ f ձայնի՝ յաջորդ որնգականի պատճառով։*

Հներից Համամ. քեր. 266 արմատը դնում է մատ նախդիր (?)։ ՆՀԲ մատնել դնում է մատն բառից, իսկ այս էլ մատչիլ, մօտ ձևերից։ Windisch. 23 մատնել, մատուցանել, մուծանել և մուտ *հանում է մէջ բառից։* Karolides, Γλ. συγκρ. 118 *իռլ.* mát «ձեռք», *լտ.* manus «ձեռք» և կապադովկ. μάτλι «հօթը» *բառերի հետ։ Հիւնք. բոլորն էլ տալ, տամ բայից։ Ուղիղ են մեկնել նախ* V. Henry (Lexique étymologique breton, *էջ 200)* և Rozwadowski (Questiones gramm. a. etym. *2րդ շարք, 14)։ Վերի ձևով* Meillet MSL 11, 395, *որ կրկնում է* Pokorny 22, 221 *և* 238: Jensen *ՀԱ 1904, 184 հաթ.* mat: Patrubány SA 1, 192 *անգսք.* mund, *հբգ.* munt «ձեռք» *բառերին զեղակից։ Նոյն ՀԱ 1908, 214 հնխ.* mad- «ծամել» *արմատից. հմմտ. լտ.* mando, *յն.* μασάομαι «ծամել». (կերակուրը մատով բերանը դնելով էին ծամում)։ *Մառ,* О полож. абхаз. *էջ 31 ափխազ.* amaça. *վրաց.* t'it'i «մատ» *բառերի հետ, դնելով* մա- *մասնիկ, արմատը* տ։

ԳԻՒՌ.—Ախց. Երև. Կր. Մկ. Մրղ.Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. մատ, Ալշ. Խրբ. Հմշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. մադ, Ասլ. մադ, մա, Սվեդ. մուդ, Զթ. մօդ, մոդ, Հճ. մօդ, Գոր. Ղրբ. մա՛նը, Ագլ. կորցրած է այս բառը և նրա փոխարէն գործածում է բիւք, որ նշանակում է բուն «բթամատ»։ = Մատանի բառի դէմ ունինք Ջղ. մատանի, Շմ. մատանի[1], Ագլ. Գոր. մատա՛նի, Ախց. Կր. մատանի, Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տիգ. մադնի, Զթ. մադնը՛, Սվեդ. մուդնա, Ղրբ. մատա՛նա, մու-*

տա՛ճա, *Կր. Տփ.* մատնիֆ, *Ալշ. Մշ.* մադնիֆ, *Ոզմ. Վն.* մատնիկ, *Ասլ.* մա՛նի, *Ակն. Խրբ. Հճ.* մանի, *Մրղ. Սլմ.* մանիկ՝։—Նոր բառեր են մատնիկպաճոց, մատնորել, մատնախաղ, մատել «*կողիկի ոսկորները մատ մատ անջատել*», մատխոզել, մատիկ, մատղոզ, մատման, մատնագոլ, մատնաթուր, մատնաշունչ, մատնաթուշ, մատնահաշիւ, մատնահաւարել, մատնել «*մատով դիպչիլ, մատը մէջը թաթախելով լիզել*», մատնեսունկ, մատնոցուկ, մատուկ, մատցի են։ Ունինք նաև *Առն.* մանի «*մատանի*», մանեօս «*մատնոց*», մատիկլէմէք «*մատի ծայրով ուտել*», մատնիչ «*մատնիչ*» և վերջապէս առանձին մի դարձուած՝ մատրմ-մուտում տէյէնիմ, փարմաղը՛մ տէ «*մատս-մուտս ասելու փոխարէն* փարմաղս *(Բրք. մատ)* ասա՛» *(փխբ. պարզ խօսի՛ր, խօսքը մի՛ ծամծըմիր)*։

ՄԱՏՆ «*բլուր*» *Վստկ.* Նորագիւտ բառ, որի համար գտնում եմ հետևեալ վկայութիւնները. Պարտ է որ շրջեն զկարմիր գետինն... և զչորն որ ցամաք լինի ի հիւթոյ և բլրնով լինի և մատներով ի ձմեռան աւուրքն. էջ 17.—Բարձրագոյն կողերն և մատներն և տափերն՝ ևս առաւել լաւ են, զի օդն անդ լաւ բանի. էջ 177.—Պէտք չէ շփոթել յաջորդ մատներ բառի հետ, որ եղակի ուղղական է և իբր ածական է գործածւում։ Արմատիս հնագոյն գործածութիւնը ցոյց է տալիս մատոյց «*զառիվերը*», որ մէկ անգամ գործածուած է *Յես. ժհ. 7.* «*Իջանեն ի Գաղգաղ, որ է հանդէպ մատուցին (երբ. զառիվերին) Ողոմիմայ*»։

*Վաստակոց գրոց հրատարակիչը, էջ 17 և 253 երկուսի մէջ տարբերութիւն չտեսնելով՝ մեկնում է «մատներովն ցուցանէ զգետին՝ յորում իցեն հողակոյտք ցցուելք իբրև զմատունս»։—*Մատոյց ձևի գործածութիւնը ցոյց է տալիս, որ պատահական նմանութիւն ունին արաբ. متن matn «*բարձրաւանդակ*» *(Կամուս, Բրք. Թրգմ. Գ. 705)*, *ասոր.* ܡܛܘܢܐ maθā «*հող, երկիր*»։

Գիմ.—*Լ.* մատ, *Զթ.* մօդ «*բլուր*», *Զրս.* մադ «*լեռան կող, լանջ*». *հնչ. Լեռան մատն ի վեր*։

ՄԱՏՆԵՐ «*սակաւահող, նօսր հողով (գետին)*» *Վստկ. 43, 53*։

*Նշ*Բ մեկնում է «*մատնաչափ ևեթ թանձր կամ մատն մատն հերձուտեալ*» և ըստ այսմ հանում է մատն բառից։

*ՄԱՏՈՒՈՒՆ, ն հլ. (-տրան, -տուն՛, -տանց) «*վկայարան, մարտիրոսի վրայ շինուած փոքրիկ տաճար*» *Բուզ. Ագաթ. Կիւրղ. Թղ կոչ. «Համայն մարտիրոսաց տօնի օրը» Կանոն. էջ 258.*—որից մատրանոց *Ճառընտ.* աշխարհամատուռն *Տօնակ. Տօնաց. Շար.* գրուած է նաև մարտուռն *Սոկր. 346*, մատուռն *Սոկր. 320—1 (քանիցս)*։

=*Յն.* μαρτύριον «*վկայարան*» բառից, որ ծագում է μάρτυρος «*վկայ, նահատակ*» բառից. սրանից է փոխառեալ նաև լատ. martyrium «*վկայարան*»։ Յոյն բառը դարձել է նախ մարտուռն, որից յետոյ ր ընկնելով՝ մատուռն։—*Հիւրշ. 363*։

*Ուղիղ մեկնից նախ Նշ*Բ։ *Հիւնք. յն.* μάνδρα «*փարախ*» *բառից*։

Գիմ.—*Երև. Սլմ.* մատուռ, *Տփ.* մատուր, *Ալշ. Զթ. Մշ. Ննխ. Սեբ.* մադուռ, *Սվեդ.* մդէօռ, *Ղզ.* մանդուռ.—*Երև. և Տփ.* նշանակում է «*գերեզմանի մահարձան*»։

Փոխ.—*Վրաց.* მატური մատուրի «*գերեզմանատան մէջ մի ընտանիքի մեռելներին յատկացուած հողամասը. բաղ*»։ Վրացի բառը թէև նշանակութեան կողմից փոփոխութիւն է կրած *(միջինը ներկայացնում է Երև. Տփ. «մահարձան»)*, բայց անշուշտ մեզանից է փոխառեալ՝ ձևի պատճառաւ. յունարէնից փոխառեալ լինելու պարագային սպասելի էր *մարտուլի ձևը։

ՄԱՏՈՒՏԱԿ «*մի տեսակ բոյս. լտ.* glycyrrhiza, *ֆրանս.* réglisse» *(Տիրացուեան. Contributo § 269, Քաջունի, Գ. 159) (նոյնը նաև* մատիտակ, մատուտիկ, *Քաջունի դիտել դարձեալ* մատնէտակ) *Բժշ.*։

Lag. Arm. Stud. § 1438 *պրս.* مهك mahk *և քրդ.* mekuk *համանիշների հետ։ Հիւրշ. 192 մեկնում է թէ՛ պրս.* mahk *և թէ պրս.* bīx mekkeh *և* motki *համանիշները։*—Canini, Et. étym. 166 *կցում*

է սանս. madhu «քաղցր» բառին (Այս մեկնութիւնը բաւական հրապուրիչ է, որովհետև մատուտակը շատ լեզուների մէջ բացատրւում է «քաղցր» բառով. ինչ. յն. γλυκύ-ρριζα «քաղցր արմատ», գերմ. süssholz «քաղցր փայտ», ֆրանս. réglisse՝ յառաջացած յն. γλυκύρριζα «քաղցր արմատ» բառից, ռուս. сладкій корень «քաղցր արմատ», Թրք. Ատրպ. širin biyan «քաղցր մատուտակ», կալմուք. šiker boya «շաքար մատուտակ» ևն. (տե՛ս Анненковъ-ի Բուսաբանական բառարանը, էջ 159 բ). ըստ այսմ էլ հյ. մատու–տակ «քաղցր արմատ»։ Բայց այս *մատու «քաղցր» բառը ո՛չ իրրև բնիկ հայերէն է յարմարւում և ո՛չ իրրև իրանական փոխառութիւն. առաջին դէպքում հնխ. méd·hu- ձևի դէմ (տե՛ս մեղր բառի տակ) պիտի ունենայինք հյ. *մեղու, որից էլ *մեղուտակ, իսկ երկրորդ դէպքում իրան. maδu ձևի դէմ պիտի ունենայինք հյ. *մար, որից էլ *մարուտակ)։—ՀԲուս. § 1997 դնում է մատն>մատ բառից, արմատի մատնաձև լինելու պատճառաւ, ինչպէս ունինք լտ. digitalis և հյ. գւռ. մատնոցուկ՝ «մատ» բառից. և ինչպէս իրօք էլ գտնում ենք Քաջունու մօտ մատնէտակ՝ փոխանակ մատուտակ. տե՛ս նաև տակը փոխառ. *մատնիկ։

ԴԻՒ.—Մշ. մադուտագ, Ալշ. Բ. մադուդագ, կր. վն. մատուտիկ (այս վերջինը ըստ Ամատ. Հայ. բառ ու բան, էջ 466)։

ՓՈԽ.—Թրք. գւռ. mednig «մատուտակ».—այս բառը դիտէ միայն ՀԲուս. § 1997.—կազմուած է հյ. գւռ. *մատնիկ ձևից՝ տաճկերէնի ներդաշնակութեան օրէնքով։—Կապ ունի՞ն արդեօք նաև վրաց. მატოტი մատոտի, მატუტი մատուտի, მათოთი մաթոթի «ռուս. болиголовъ, омегъ (բոյսը)» Ջուբին.² էջ 679, որ Анненковъ 421 բ շատ զանազան ձևերով է բացատրում և յայտնի չէ թէ վրացին սրանցից որի՞ն է համապատասխանում։

Մատչիլ տե՛ս Մատ։

***ՄԱՏՊԱԻԽ** «բժշկական մի բոյս խաշելով ստացուած ջուրը. décoction» Մխ. բժշ. 32 ևն. գործածուած է նաև մատպուխ ձևով՝ Մխ. բժշ. 51։

=Արաբ. مطبوخ maṭbūx «եփուած», որ طبخ ṭabx «եփել» բայի անցեալ դերբայն է։

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆր. էջ 352 ա։

ՄԱՏՈՒԶ «խուզմուղ», այսպէս ունի Բռ. երեմ. էջ 205. Թերևս պէտք է կարդալ խազմուզ. բայց հմմտ. նաև մուտղիչ։—

ՄԱՏՈՒՈՒԱԿ, ի–ա հլ. «գինի մատուցանող, արբուցիչ, տակառապետ» ՍԳր. Ագաթ. Փարպ. որից մատռուակել «գինի մատուցանել կամ ծառայութիւն անել» Ագաթ. Ոսկ. յհ. ա. 21. մատռուակութիւն Ագաթ. մատռուակոց «գինու մառա՞ն» (Նորագիւտ բառ) Անկ. գիրք առաք. 376։

ՆՀԲ «մատուցօղ ըմպելեաց, իբր առուաց»։ Տէրվ. Նախալ. էջ 172 հնխ. madhu (իմա՛ médhu) «մեղր, մեղրաջուր» բառից, իբր մատու–ռա–կ։ (Իմաստի կողմից շատ յարմար է այս բացատրութիւնը, որովհետև հնխ. médhu «մեղրաջուր»-ը գինի կամ արբուցիչ ընպելիք էր. հմմտ. սանս. mādhura «ոգելից ըմպելիք», madya «գինի», madra «ուրախութիւն», յն. μεθύω «հարբիլ», μέθυσις «հարբեցութիւն», μεθύσκω «հարբեցնել», զնդ. maδa- «ոգելից ըմպելիք», պհլ. և պրս. mai «գինի»։ Բայց ինչպէ՞ս պէտք է բացատրել ձևը, եթէ բառը լինէր բնիկ հայ. պիտի ունենայինք *մեղ–, իսկ եթէ իրանականից լինէր փոխառեալ (ինչպէս ցոյց են տալիս ա ձայնաւորը և –ակ վերջավորութիւնը), պիտի ունենայինք հյ. մար–՝ իրան. maδa- ձևի դէմ։—Աւելի փորձիչ է հնխ. mad- «խոնաւանալ, թաց լինել, թրջուիլ» արմատը, որից ունինք լտ. mattus «հարբած», սնս. mádati «հարբիլ» ևն (Boisacq էջ 598, Pokorny 2, 230), բայց բառիս –ռուակ վերջաւորութեան պատճառաւ անյարմար)։ — Յակոբեան, Բիւզանդիոն № 743 երր. միզրաf «ման, տաշտ, գաւաթ», արար.

ڕ ṣirā «բաժանել, մատակարարել»։

ՓՈԽ.—Վրաց. **მატრაკვეცა** *մատրակվեցա «առնտուի կամ աղախնի օգնական աղջիկ»։*

ՄԱՏՏԱՅ *«սակաւ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 206։*

ՄԱՏՐԱՆ *«հին հայոց երկրորդ ամիսը, Հոռի» բստ Երզն. տօնապ. (տե՛ս Ալիշան, Հին հաւ. 140). այսպէս էր իբր կոչւում հնապէս Հոռի ամիսը և յետոյ Խոռէն անունով մէկից փոխուելով՝ եղաւ Հոռի. սրանից է կազմուած իբր թէ աշխարհամատեան (տօնը), որ Հոռի ամսուայ սկիզբն էր գալիս։*

Մատք *տե՛ս Մատ։*

ՄԱՐ. *մի տեսակ անծանօթ բոյսի անուն է. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1998։*

***ՄԱՐ,** *ու հլ. «ցամաքիղէնի կամ հեղանիւթերի չափ է» ՍԳր. Շիր. Վրք. Հց. (ըստ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 127 այլևայլ մեծութիւն ունի. կայ 50 քսեստ, 150 քսեստ, ինչպէս և 6 քսեստ առնող մար. պոնտական մարը ըստ Եպիփանի՝ 20 քսեստ էր առնում. իսկ ըստ Վրք. Հց. փոքր մի չափ է, քանի որ առում է «ի ժամ ճաշոյն կերիցես մի հաց և լիտր մի միս և մար մի գինի արբ»։)*

*=Իրան. *mār ձևից, որ աւանդում են յոյն հեղինակները μάρις ձևով. սրանից է նաև պոնտ. μάρης «մար»։ Իրանեան բառը կարող է լինել պհլ. *mār, որ գալիս է հնագոյն *māhr ձևից և այս է <Հպրս. *māθra, իբր սանս.* मात्रा *mātrā- «չափ»։—Հիւբշ. 192։*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, անդ, որ երկարօրէն խօսում է բառիս վրայ և կցում յն. և պոնտ. ձևերին։ Նշ֊ի պոնտ. μάρις և երր. mor «չափ»։ Lag. Gesam. Abhd. 197 *նոյնպէս պրս. և պոնտ. ձևերի հետ։ Տէրվ.* Altarm. 75 *և Նախալ. 98 սանս.* mātrā, *յն.* μέτρον, *հսլ.* мѣра «չափ» *և պոնտ.* μάρης։ — *Հինք. մառան բառից։ Պատահական նմանութիւն ունի պրս.* مر mar «յիսուն»։

ՓՈԽ.—Վրաց. **მარი** *«15 ֆնտանոց», կապադովկ.* μάριον «փոքր սափոր» (Karolides, Γλ. σογκρ. 91). *մատած է նաև Աւետարանի քրդ. թարգմանութեան մէջ՝ Յովհ. Բ. 6. Հէր եէքէ ուան տրաօ եա սըսէ մար դշդտը սmնտ (տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս)։*

***ՄԱՐ** *«տէր, ո՛վ տէր» ճառընտ. (ինչ. Մա՛ր Սարգիս. նոյն է նաև խորհնացու Մարաբաս, այն է Մար Աբաս «տէր Աբաս»)։*

=Ասոր. արամ. ܡܪܐ *mārā «տէր» բառից, որի իգականն է* ܡܪܬܐ *mārtā «տիրուհի», գոյականը* ܡܪܘܬܐ *mārutā «տիրութիւն» (Brockelm. Lex. syr. 193ա). սրանցից են յառաջանում* **Մարթա** *և* **Մարութայ** *յատուկ անունները։*

Ուղիղ մեկնեց Նշ֊ի։

ՄԱՐԱԳ *«յարդանոց» Յայտմ. նոյ. 19, դեկ. 12, մրտ. 2. Մին. համդ. 85. Արձ. 1215 թուից (Վիմ. տար. 59)։*

Հինք. մարգ բառից։ Kraelitz-Greifenhorst *ՀԱ. 1911, 259 փոխառեալ թրք.* märäk, merek *բառից, իսկ այս էլ հյ.* **մթերք** *բառից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* مرقة marāqa *«ուղտին տալու համար փրցուած մի քիչ խոտ» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 54)։*

ԳԻՒՐ.—Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Համշ. Սեբ. Սլմ. Տփ. **մարաք**, *Ասլ.* **մարաք**, **մարա***, *Մկ. Ոզմ.* **մարաք**[1], *Ղրբ.* **մա՛rmք**[1], *Ալշ.* **Մշ. մարագ՛**. *որից* **մարագատեղ**։ (—**Մարագ** *բառն ունին նաև Ալքս. Ակն. Արբ. Բլ. Բղ. Գնձ. Երզ. Խ. Խն. Կյ. Հղր. Ղզ. Շտ. Վն. Տիգ. Տր. Ք.)։*

ՓՈԽ.—Քրդ. marak, merek *«յարդ կամ խոտ պահելու տեղ»* (Justi, Dict. Kurde *էջ 395*), *Կիւրին.* mark'w (Schiefner, *էջ 232 բ*). *Թրք. գաւ. Կր.* merek *(Բիւր. 1898, 627), Նոգ.* مرك mārāk *«յարդանոց» (Յուշարձան, էջ 330 ա), Իմերխեվի լեզուով* meregi *«մարագ» (Մաո, Тексты VII, էջ 82) և մինգր.* **Ցարձա մարակա** *«այծի փարախ» (վերջինը դնում է* Кипшидзе, Грам. мингр. яз. СП. *1914, էջ 276)։—Թուրքերէն բառի հայերէնից՝ փոխառեալ լինելուն ապացոյց է այն, որ գործածական է միայն Փոքր-Ասիոյ բարբառներում և չկայ ո՛չ Օսմանեան գրական լեզուի մէջ (չի յիշում Արիկեան, Ընդարձակ բառարան տաճկ.-հայ. Պոլիս 1892,*

էջ 542 բ) և ո՛չ էլ որևիցէ արևելեան թուրք կամ թաթար բարբառում (չի յիշում Будаговъ, Сравнительный словарь турецко-татарск. наръчій, էջ 224, 414)։

*ՄԱՐԱԽ, ո հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «մորեխ» ՍԳր. Վեցօր. 174. ոամկական ձևով գրուած է մոռեխ Լաստ. Վրդ. պոմ. մոռեխա Կիր. պոմ. էջ 241. ուրիշ է գւռ. մարախ կամ մարուխ «մատուտակ», որ տե՛ս առանձին. ուստի ոմանք շփոթելով նախորդի հետ՝ կարծում են թէ Յովհաննէս Մկրտչի կերած մարախը ո՛չ թէ «մորեխ» էր, այլ «մատուտակ».—«ոմանք ի Մշեցւոց կամ ի Տարօնացւոց համարին՝ թէ կերակուր սրբոյ Մկրտչին յանապատի էր մատուտակ» (ՆՀՒ)։

=Հիւս. պհլ. *maδax «մորեխ» բառից։ Պարսկականում «մորեխ» բառը երեք ձև ունի. 1) հիւսիսային պարսկերէն *maδax, որի հետ նոյն են զնդ. 𐬨𐬀𐬎𐬀𐬵 maδaxa, բեբելուճ. maδax. maδaγ, օսս. mät'ix. 2) հարաւ-արևմտ. maig<*maδaka, maδika, կազմուած -ka մասնիկով, մինչդեռ առաջինը ունի -xa մասնիկը (MSL 17, 245), որից պրս. meig=պհլ. maig (Horn § 1010). 3) կենտրոնական malax<*maδakha, որից պազենդ. malax (գրուած malak), պրս. ملخ malax, որ և ملاخ malāx, աֆղան. mlax, քրդ. malδ, վախի milax. այս ձևը փոխառեալ է սոգդիականից, որովհետև այս լեզուի մէջ է որ δ դառնում է l (Gauthiot, Gram. sogd. էջ II)։—Հիւբշ. 192։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. մէլէխ ձևի հետ։— Böttich. Arica 67, 92 և Lag. Ges. Abhd. 72 պրս. malax։—Lag. Urgesch. 787 պրս. malax, իբրև սանս. mar, լտ. molere արմատից։ Müller SWAW 38. 582 պրս. marax, որ գոյութիւն չունի։ Նոյն, SWAW 40, 9 սրա հետ նաև աֆղան. malax։ Հիւբշ. ZDMG 36 (1882), էջ 133 maδaxa։ Եազըճեան, Մասիս 1884, 202 տալիս է բառիս մեկնութիւնը, ինչպէս և ենթադրում է մի նոր մարախ «բազէ» բառ. ահա իր խօսքերը. «Ոսկեփորիկ մը նէեսայի վրայ խօսելով կ'ըսէ թէ Ակիւղա զնէեսա բառը, զոր դիտեմք թէ «ջայլամն» կը նշանակէ, թարգմանած է «մարախ»։ Ջունիմ ես հոս դիտողութիւն քննելու թէ Ակիւղասայ օրինակագրին մէջ ի՛նչ ձայնով գրուած է այս. եթէ մարախ ձայնն ունի, կ'երևի թէ պէտք չէ զայն շփոթել սովորական մարախի հետ, որ «մորեխ կամ չէփիրկէ» կը նշանակէ, զի կրնայ այն յառաջ եկած ըլլալ սանս. մարաճա բառէն՝ որ «բազէ» կը նշանակէ։ Ըսել թէ «Ակիւղաս զնէեսա մարախ թարգմանեց» կը նշանակէ Ակիւղաս զնէեսայն բազէ հասկացաւ ու թարգմանեց։ Մարաճա առուգաբանօրէն «սպանիչ, կորուսիչ» նշանակելովը, կըրնայ յարմարիլ թէ՛ բազէի բնութեան և թէ սպականիչ մարախ միջատին»։ Մարախ բառի նշանակութեան վրայ ուրիշներ էլ են կասկած յայտնած, յատկապէս տարօրինակ գտնելով որ Յովհ. Մկրտիչը մարախ միջատը կերած լինի. այս մասին տե՛ս Աւգերեան, Լիակ. վրք. սրբոց Ա. 33։ Բ. Էքսէրճեան էլ ունի մի առանձին տեսրակ «Մարա՞խ թէ մարուխ» վերնագրով (Պօլիս 1887), ուր ցոյց տալով թէ Յովհ. Մկրտչի կերածը մարուխ էր, ասում է թէ Աւետարանի մարախ բառը նշանակում է նաև «մատուտակ»։ Սրան է պատասխանում Տէրվ. Լեզու, 1887, էջ 62 և ցոյց է տալիս որ Աւետարանի մարախ բառը միայն «մորեխ» կարող է նշանակել, քանի որ գրուած է յոյն բնագրի ἀκρίς բառի դէմ, որ միայն «մորեխ» նշանակութիւնն ունի։ Նման մի թիւրիմացութիւն տեղի է ունեցած հին սլաւերէնում, ուր Մաթ. գ. 4 յառաջացել է հսլ. brědŭ «մորեխ» անգոյ բառը, փոխանակ abrědĭ «կանաչեղէն» (տե՛ս Berneker 84)։ Պատահական նմանութիւն ունի յն. βροῦχος «անթև մորեխ» (Boisacq 135).

ԳԻՒՒ.—Աալ. մարախ, Ախց. Գոր. Երև. Ղրբ. Շմ. Տփ. մօրէխ, Ագլ. մա՛րաճ, Ղզմ. Ջղ. Սլմ. մուրեխ, Երև. Մկ. մուրէխ, Զթ մը՛յրխ, մը՛րէխ, Սվեդ. միրիխ.—Նոր բառեր են մորեխակոռ, մորեխատեղ։

ՄԱՐԱԽ *«զմուռ». ունի միայն Բառ. երեմ. էջ 206։*

Մարախ *«մատուռակ» տե՛ս Մարուխ։*

ՄԱՐԱԿ *«գտնալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 206։*

***ՄԱՐԱՆ** *«անծանօթ մի ծառ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2000։*

=*Արաբ.* مرّان murrān *(կարելի է նաև կարդալ* marrān, marān*) «մի տեսակ ծառ է, որ տճկ. կոչւում է վայրի հունի կամ լուծի ծառ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 707—708)։—Ա.Ճ.*

***ՄԱՐԱՆԱՓԱՅ.** *նզովքի մի բանաձև, որ մէկ անգամ գործածուած է Ա. կոր. ժգ. 22. «Եթէ ոք ոչ սիրէ զտէր Յիսուս, եղիցի նզովեալ. մարանաթայ». յոյնն ունի* εἴ τις οὐ φιλεῖ τὸν Κύριον Ἰησοῦν Χριστὸν, ἤτω ανάθεμα, μαρὰν ἀθά:

=*Արամ.* ܡܪܢ ܐܬܐ mār-an aṯā *«Տէր մեր գայ» դարձուածքից, որ Ս. Գրքի Թարգմանութեան ժամանակ՝ յն. μαρὰν ἀθά ձևի վրայից տառադարձուել է հայերէն (Sophocles 733)։—Հիւբշ. 325։*

Հներից ուղիղ են մեկնում Մեկն. ա. կոր., Մանդ. սիր. 6 (մարան «տէր», աթայ «եկն», այսինքն Տէր եկն), Երզն. մաթ. 518 (Մարանաթայ, այսինքն Տէր գալոց է, զգոյշ կացէք)։ Նորերից նախ ՀՀԲ, Աւետիքեան՝ Մեկն. Թղթ. Պօղոսի Ա. 1070 և ՆՀԲ։

ՄԱՐԱՆՃՈՒ *«ծնեբեկ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2001։*

=*Անշուշտ պրս. բառ է. համմտ. պրս.* مارچوبه mārčōba *և* مارگیا mārgiyā *«ծնեբեկ» հոմանիշները, որոնք բուն նշանակում են «օձափայտ, օձախոտ». ըստ այսմ մարաճնու ձևն էլ կարող է լինել պրս.* *مارانجوی mārānǰūy *«օձերի փնտուածը» ձևից. կայ նաև ժողովրդական պրս.* mālāčuālā *«ծնեբեկ», որ* mārčōba *բառի աղաւաղեալն է՝ գործածական Ատրպատականում։—Ա.Ճ.*

***ՄԱՐԱՋԱԽՏ** *«իշխան զօրավար» Լմբ. առ Լև. տպ. Վենետ. 1865, էջ 240. Պտմ. կիլ. 210. Անսիզք 3. գրուած* մարաչախ *Սմբ. պտմ. 112. գործածական դարձաւ նոր գրականում՝ իբր ֆրանս.* maréchal:

=*Հֆրանս.* *mareschalt *բառից փոխառեալ է Ռուբինեանց ժամանակ. այս բառը իր հերթին փոխառել է հգերմ.* marahscale *«ձիապան» բառից, որ կազմուած է հրգ.* marah *«ձի» (համմտ. իռլ.* marc, *կիմր.* march, *անգսք.* mearh, *նրգ.* Mähre, *հիսլ.* marr *«ձի») և հրգ.* scalc (>*նրգ.* schalk) *«ծառայ» բառերից. գերմանականից են փոխառնուած նաև հիտալ.* marescaldo, *հֆրանս.* mareschalc, *իտալ.* maresciallo, *ֆրանս.* maréchal, *որից յետ դառնալով՝ գերմ.* Marschall (Pokorny 2, 235, Kluge 320)*: Նախկին հասարակ ձիապանի նշանակութիւնը հետզհետէ բարձրանալով՝ դարձել է «զօրավար». այսպէս ֆրանս.* maréchal de France *՝ զօրավարներից բարձր մի աստիճան է, որ 1870 թուին վերացուեց, բայց 1916 թ. նորից վերահաստատուեց։—Հիւբշ. 390։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը յետոյ Peterm. ZDMG 15 (1861), *էջ 403։*

***ՄԱՐԱՐ** *«մի տեսակ բոյս է.* centaurea calcitropa*» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2002։*

=*Արաբ.* مرار murār *(կարելի է սխալ ձայնանիշով կարդալ* marār*), Սգիպտոսի արաբ. բարբառով* مریر marīr *կամ* murīr? *նոյն նշ. (ընդարձակ բացատրութիւնը տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 107)։—*

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ՄԱՐԱՐՊԱՅ *«սպանութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 206։*

***ՄԱՐԳ** *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «խոտաւէտ տեղ» Ա. մակ. Բ. 42, Վեցօր. Ոսկ. մ. ա. 2. որից* մարգագետին *ՍԳր. մարգնախիև Ջենոբ. Յայտմ. փետ. 17. մարգնակ Յայտմ. (Նոր վկ. էջ 20), Ճառընտ. Պտմ. ամաս. 60. ջրամարգ Ոսկ. ես.* մարգաւէտ, մարգագոյն *ԱԲ։*

=*Պհլ.* *marg *«մարգագետին» բառից փոխառեալ. համմտ. զնդ.* 𐬨𐬀𐬭𐬎𐬀 marəγā *«մարգագետին», պրս.* مرغ marγ *«տեսակ ինչ դալարուոյ, զոր ուտեն անասունք կարի ախորժանօք. 2. մարգագետին վայր՝ ուր առատութեամբ բուսեալ է խոտն. 3. տեղի խոտաւէտ և դալարազուարճ»,* مرغزار

maryzār «մարգաստան» Շահն. Ա. 435, 34. քրդ. mirk, merk, merya, méreg «մարգագետին»։ Իրանեանից փոխառեալ են նաև ասոր. ܡܪܓܐ margā «մարգագետին», արաբ. مرغ maryy «մարգագետին», تمرّغ tamarruy «մարդի մէջ արածիլ», նաև مرج marj «մարգ», ցախ. marž «մարգագետին»։ —Հիւրշ. 193։

Նշ՚ի պրս. և արաբ. մէրճ: Neumann ZKM 1, 242 գերմ. Mark, պրս. marz «գաւառ» ձևերի հետ։ Նոյնը նաև Gosche 6: Müller SWAW 41, 13 յիշելով արաբ. և արամ. ձևերը, սեմականից փոխառեալ է համարում։ Justi, Dict. Kurde, էջ 395 պրս. քրդ. արաբ. ձևերի հետ։ Հինք. պրս. մէրդ: Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան, էջ 398 գալլ. bro, հբրբտ. brool «երկիր, գեաին», գոթ. marka «սահման», հիւլ. mrug, լտ. margo «եզերք» բառերի հետ։

ԳԻՒ.—երև. մարգ «պարտէզի մէջ ածու», որից մարգամիջի «մի տեսակ խնձոր»։

ՓՈՒՆ.—Վրաց. მარგი մարգի «ածու»։

*ՄԱՐԳ «թռչուն». բառ առանձին անգործածական. գտնւում է լոռամարգ կամ լոռամարգի «լոր թռչունը» (ՍԳր. Փիլ.) բարդի մէջ համմտ. նաև սիրամարգ։

=Պհլ. *marg «թռչուն» բառից փոխառեալ. համմտ. զնդ. mərəγa-, պհլ. murγ, murv, սանս. मृग mṛgá-, պրս. مرغ murγ, բելուճ. murg «թռչուն, հաւ». մեր ա ձայնաւորին համապատասխան են գալիս աֆղան. maryа, օսս. marγ, մազանդ. marγ «թռչուն» հոմանիշները (Horn § 975): Իրանեանից փոխառեալ է կարծւում նաև յն. μελεαγρίς անունով թռչունը (լտ. numida meleagris, ֆր. pintade), որ Յունաց մէջ ժողովրդական սոուգաբանութեամբ ստացել է այս ձևը (Boicasq 623):—Ա՚ճ.

Մաո ИАН 1918, էջ 2086 վրաց. მარ-ხილ մարխիլ «լոր» բառի հետ։

*ՄԱՐԳԱՐ «իւրաքանչիւր ամսուայ չորրորդ օրը». ունի միայն Քաջունի, Կ. 180 և Բ. 101։

=Մարգար յատուկ անունից է, որ կրճատուած է մարգարէ բառից. համմտ. նոյն տեղը հրաման «երկրորդ օրը ամսոյ», արամ «երրորդ օր ամսոյ» ևն։—Ա՚ճ.

*ՄԱՐԳԱՐԷ, ի հլ. «ապագան գուշակող իմաստուն» ՍԳր. որից մարգարէանալ «գուշակել» ՍԳր. մարգարէանոց «մարգարէի գերեզմանի վրայ շինուած մատուռ» Բուզ. մարգարէագէտ Ագաթ. Կորիւն. մարգարէական Ագաթ. մարգարէակիր Կոչ. 412 մարգարէանարգու Եւս. պտմ. էջ 377 (նորագիւտ բառ. տպուած է մարգարէս անօգուտ. այսպէս պէտք է սրբագրել ըստ Վարդանեան, ՀԱ 1913, 559), նախամարգարէ Պիտ. Խոր.։

=Պհլ. գւռ. *mārgar- ձևից. այս բառը թէև աւանդուած չէ գրականութեան մէջ, բայց նոյնն են հաստատում սրանից ածանցուած նորագիւտ սոգդ. mārkrāy, mārkarāk «կախարդ» (Gauthiot, Gram. sogd. էջ 77), mārkrāyt «գուշակք, վհուկք» (եզակին պիտի լինի *mārkarē), որոնք գործածուած են Մանիքէական գրուածքների մէջ (Meillet BSL 1965): Բառիս հնագոյն ձևն է զնդ. *maθra-kara-, որ կազմուած է զնդ. 𐬨𐬀𐬎𐬭𐬀 maθra- «բառ. Ս. Գրքի խօսքերը» և 𐬐𐬀𐬭𐬀 kara- «գործող, կերտող» բառերից. համմտ. նոյն բառից ածանցուած ուրիշ ձևեր. ինչ. զնդ. 𐬨𐬀𐬎𐬭𐬀𐬯 maθran- «կանխատես. կանխագուշակ, մարգարէ» (Գաթաների մէջ գործածուած է միայն Զրադաշտի համար), 𐬨𐬀𐬎𐬭𐬋-𐬯𐬀𐬭𐬋𐬰𐬀 maθrō-pərəsa- «Աւետաբերգիչ», maθrə-baēšaza- 𐬨𐬀𐬎𐬭𐬋-𐬝𐬀𐬋𐬱𐬀𐬵𐬀 կամ («սուրբ» ածականով) 𐬨𐬀𐬎𐬭𐬋-𐬯𐬀𐬙𐬀𐬑𐬀𐬵𐬀 maθrəm-spəntəm-baēšaza- «բանիւ սրբով բժշկող». համմտ. նաև սանս. मन्त्र mántra- «ծիսական կամ մոգական բանաձև», որից मन्त्रयति mantrayati «ծիսական կամ մոգական բանաձևեր արտասանել», मन्त्रकार mantrakāra «երգահան, երգասաց», मन्त्रवादिन् mantravādin «կախարդ, մոգ, որ զանազան մոգական բանաձևերով հիւանդների վրայ աղօթում ու բժշկում է»։ Ըստ այսմ մեր մարգարէն էլ, որ զրադաշտական կրօնից փոխառեալ բառ է, նշանակում էր նախապէս այն արևելեան

կարդացողները, որոնք Ս. Գրքերից զանազան աղօթքներ կարդալով հիւանդների վրայ, բժշկում էին նրանց, և կամ այդ գրուածքներից գուշակութիւններ էին հանում։ Քրիստոնէութեան հաստատութեամբ բառը նոր գաղափարների դրոշմն ստացաւ և նոր իմաստով սրբագործուեցաւ. այնպէս՝ ինչպէս պատարագ բառը հասարակ և աշխարհիկ «նուէր» նշանակութիւնից՝ անցաւ քրիստոնէական քաւութեան պատարագի իմաստին։ Արիական բառերին ցեղակից են յն. μάντις «մարգարէ», μαντεία «մարգարէութիւն, պատգամ», μαντσύνη «մարգարէական գիտութիւն», որոնք բոլորը միասին ծագում են հնխ. men- «մտածել» արմատից (Boisacq 609)։

ՆՀԲ հանում է մոգ բառից։ Lag. Reliqq. gr. 83 *երր.* נגד ngʿ *«հոսիլ, հեղուլ» արմատի հետ, որ մերժում է* Lag. Arm. Stud. § 1443։—Karolides, Γλ. συγκρ. 91, 190 *մեր բառին է կցում կապադովկ. յն.* καρκάλτζα *«առասպելական հսկայ»։ Հիւնք. և Ալիշան, Հին հաւ. 392 լատ.* Mercurius *«Հերմէս» բառից։* Patrubány SA 1, 217 *սանս.* mārg *«կանխատեսիլ»+հյ.* ար *(իմաստ)+է յունական վերջաւորութիւնը։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 225 մոգ բառից՝ նշմարիտ բառի նմանողութեամբ։ Մաս* ИАН *1909, 1057 մարգարէ հմմտում է նախատուր «աստղարաշխ, աստեղագէտ». արմատը դնում է հյ. *մարգ «աստղ», որի աւելի պարզ արմատն է յարեթեական մրգ «փայլ». ցեղակիցներն են արաբ.* barq *«փայլիլ», վրաց.* բրկիալի *«փայլուն», լազ. մուրուցխի, մուրուճցխի «աստղ», մինգր. մուրիցխի «աստղ» և հյ.* պերճ, պայծառ։ *(Հայերէնից է փոխառեալ վրաց.* მემარგე *մեմարգե «վհուկ, կախարդ, աստղագէտ», որ կազմուած է պաշտօն ցոյց տուող մե- մասնիկով. որով արմատը կլինի մարգ <հյ. *մարգ «աստղ»)։ Այս մեկնութիւնը մերժելով՝ վերի ուղիղ մեկնութիւնը տուաւ առաջին անգամ* Salemann ИАН *1913, էջ 1129—1130, որ դրաւ սոգդ. ձևից փոխառեալ։ Պհլ. ձևի միջնորդութեամբ բացատրեցին* Meillet BSL 19, 65 և Gauthiot MSL 19, 127։ *Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 95 դեռ կրկնում է *մարգ «աստղ» բառից, մ- և -արէ մասնիկներով։*

Գիւմ.—Ջղ. Սչ. մարգ՛արէ, *Ախց. Երև. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տփ.* մարմարէ, *Ալշ. Մշ.* մարգ՛արա, *Սվեդ.* մրգ՛ուրա, *Մկ.* մուրկ՛ուրմ, *Մրղ. Շմ.* մարմարա, *Սլմ.* մուրմ՛ուրմ, *Ջթ.* մայգ՛այէ, մարգ՛արէ։

ՄԱՐԳԱՐԻՏ, ո հլ. *(կայ նաև ի-ա հլ.) «մարգարիտ» ՍԳր. Փարպ. որից* մարգարտեայ *Ոսկ. երր.* մարգարտազարդ *Բուզ.* մարգարտատող *ՅՀ. կթ.* մարգարտահուռն *Վրք. Հց.* ոսկեմարգարտեայ *Կաղանկտ.* մարգարտանման *(նոր բառ). ամենահին վկայութիւնը տալիս է Խոր. վիպասանական մի երկտողի մէջ.*

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն։
(Խոր. Բ. ծ.)։

=լա. margarita *բառից, որ փոխառեալ է ինքն էլ յն.* μαργαρίτης *հոմանիշից. (աստւում է նաև* μάργαρον, μαργαρίς, μάργαρος*). սրանց հետ նոյն են պրս.* مروارید marvārīd, murvārīd, *ասոր.* מרגניתא margānīθā, *գոթ.* marikreitus *ևն. բոլորի սկիզբը համարւում է սանս.* मञ्जर manjara *«ծաղիկների փունջ, ծաղկի կոկոն, մարգարիտ»* (Boisacq 610)։ *Հայերէն բառը առհասարակ դնում են յունարէնից. բայց որովհետև նա աւանդուած է այնքան հին ժամանակից, երբ դեռ յունարէն փոխառութիւններ չէին կարող լինել հայերէնում, ուստի աւելի յարմար եմ կարծում դնել Հռոմէական փոխառութիւն, քանի որ լա.* margarita, margaritum *ձևերը դեռ Կիկերոնի և Տակիտոսի ժամանակից գործածական են։—Աճ.*

Klaproth, Asia polyg. 103 *յն.* μαργαρίτης։ *Այսպէս նաև ՆՀԲ և վերջին անգամ Հիւբշ. 363։*

Գիհ.—Ազ. մարգ՝արիդ, *Ջղ.* մարգ՝արիբ, *Երև. Շմ.* մարմարիդ, *Ալշ. Մշ. Սեբ.* մարգ՝-րիդ, *Ախց. Կր. Մրդ. Սլմ.* մարմրիտ. *Տփ.* մարմրիտ *(2 վանկով, առանց միջաձայն ը-ի), Ակն. Խրբ. Պլ. Ռ. Ննխ.* մարմրիդ, *Ասլ.* մարմրիդ, մարմրի*, *Վն.* մարկ՝րիտ, *Մկ.* մոռկ՝րիտ, *Ագլ.* մըրգ՝միրիթ, *Տիգ.* մոռմրիդ, *Ողմ.* մարկ՝րէտ, *Հճ.* Մայգ՝այիդ *(այս վերջինը միայն իբր յատուկ անուն գործածուած)։*

Քոհ.—Justi, Dict. Kurde, *էջ 404 (տե՛ս և իր* Kurd. Gram. 95) *հայերէնից է դնում քրդ.* مگریت magrit *«մարգարիտ», որ անշուշտ ծագած է գւս.* մարգրիտ *ձևից՝ r-ի անկումով։ Բնիկ քրդ. ձևերն են* mirari, mrári. mervar: *Հայերէնից են թևրևս նաև վրաց.* მარგარიტი մարգարիտի, მარგალიტი մարգալիտի, *թուշ.* მარგალტ մարգալիտ, *ավար.* margal, *բոլորն էլ նոյն նշանակութեամբ։*

**ՄԱՐԳԱՅ «հայկական տումարի 11ու ամիսը. անշարժ տումարով համապատասխանում է յունիս 7—յուլիս 6» Եփր. դևտ. 224, դտ. 335, Կանոն առաք. 291, Յայտմ. Տոմար. վանակ. տարբ. բուն սհռականի ձևով է, որ յետոյ նաև իբր ուղ. էլ սկսեց գործածուիլ։*

=Հպրս. *margazana- *ամսանունից, որ գործածուած է Բիսիթունի արձանագրութեանց Շօշական թարգմանութեան մէջ (Գ. 87). նշանակում է «թոչունների թուխսի ժամանակը» (ըստ* Oppert, ZDMG 52 (1898), *էջ 266,* Justi, Die altpersische Monate ZDMG 51 (1897), *էջ 234)։—Հիւրշ. 506։*

Հներից վանակ. տարեմ. և Տաթև. հարց. 201 ստուգաբանում են մարգ *բառից. «Մարգացն, որ է ժամանակ ածելոյ զմարգս որ ի դաշտս և ի հովիտս իցեն, յայգեստանս և ի բուրաստանս»։ Տաթև. ձմ. ա. մեկնում է «Մարգաց՝ մարդ ծնեալ և Աստուած բովանդակեալ և զմեզ դալարացուցեալ և ծաղկեալ և սրբեալ, արար վայելօղս մարմնոյ և արեան իւրոյ»։* Brosset, JAs 1832. 530 մարգ *բառից, իսկ էջ 532 ասում է թէ թարգմանուած է վրաց դուբայի «վրացական տումարի 11ու ամիսը» բառից, որ ծագում է* թիբա *«խոտ» բառից։ Ըստ Վանականի՝* մարգ *բառից են հանում* ՆՀԲ, ՋԲ, Dulaurier, Chron. arm. 11, *Բազմ. 1897, 334, 339, 391։ Մորթմանն մօտենում է առաջին անգամ ուղիղ մեկնութեան, համեմատելով Շօշական արձանագրութեան* markazanas *ձևի հետ։ Պատկ.* О назван. древ. арм. мѣсяцевъ *41 մերժում է Մորթմանի մեկնութիւնը և դնում է* մարգ *բառից։* Marquart, Philologus 55, 235 *ձևաւորելով Մորթմանի մեկնութիւնը և ենթադրելով որ շօշական ձևը ծագած պիտի լինի հպրս. ձևից, հասնում է ուղիղ մեկնութեան։* Karolides, Γλ. σγχρ. 91, 190 *մեր բառի հետ է ուզում համեմատել կապադովկ. μαρκάλτζα «առաւտեղական հրէշ»։ Յակոբեան, Բանաս. 1900, 42 երբ.* մարխէշվան *«յունիս» ամսանունից։*

**ՄԱՐԳԻՉ «իշխանական մի աստիճան է» Սմբ. դտ. 15, Վահր. 193, Մին. Համդ. 37, Պատմ. սուբ. 214, որ և* մարքէզ *Հեթ. ժմնկ. էջ 79.—Նոր գրականում ունինք այս բառից* մարգիզուհի, մարգիզուրիւն *(արևմ. բարբառ)։*

=Հֆրանս. marchis *բառից, որ իշխանական մի աստիճան է՝ դուքսի և կոմսի մէջտեղ. ծագում է դերմ.* Marka, *ֆրանս.* marche *բառից, որով նշանակւում էին «կայսրութեան սահմանակից զինուորական գաւառները»։ Նոյն են ֆրանս.* marquis, *իտալ.* marchese. *յն.* μαρκήσιος։—Հիւրշ. 390։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

**ՄԱՐԳԻՄՈՒՇ «մկնդեղ». բառս ունի միայն ՀԲուս. § 2008 իբր անասոյգ ձև, առնելով Ասարից և մեկնելով «մկան ծիրտ» (§ 2008) կամ «վայրի նռան ծաղիկ» (§ 2189)։ Ըստ իս պէտք է հասկանալ «մկրնդեղ», իբր՝*

=պրս. مرگموش marg-i-mūš *«մըրկընդեղ», որ բուն նշանակում է «մահ մրկան» և կազմուած է պրս.* marg *«մահ» և* mūš *«մուկ» բառերից։—Ա.Ճ.*

+ՄԱՐԴ, ո հլ. *«մարդ էակը» ՍԳր. Ոսկ. Եւս. պտմ. որից բազմաթիւ ածանցներ,*

որոնց հնագոյններից յիշենք մի քանիսը. մարդախաձն *Եզեկ. ժթ. 3, 6. Բուզ.* մարդաքափ *Եփր. Թգ.* մարդակեր *Կոչ.* մարդաշատ *Ոսկ. ա. տիմ.* մարդակերպ *Ագաթ. Կոչ. Բուզ.* մարդատեաց *Վեցօր.* աշխարհամարդ *Եփր. ա. կոր. 60.* մարդամուխ *Ոսկ. Փիլիպ. 424 (չունի ՆՀԲ).* տմարդի *Ոսկ. յհ. բ. 31.* մարդիկ *(իբր յոգնակի) ՍԳր. Ոսկ.*, որից էլ բարեմարդիկ *(հմմտ. գւռ.* լաւամարդի) *Գաղ. գ. 12. Ոսկ. մտթ.* մարդկախառն *Եւագր.* մարդկակերպարար *Եզն.* մարդկութիւն *ՍԳր. Սեբեր.* չմարդկապէս *Ագաթ.*—*յետին են* կրնամարդի *«թոյլ ու մեղկ մարդ» (կազմութեամբ ճիշտ այնպէս է, ինչպէս պրս.* زن‌مرد zan-mard, *որից փոխառնել է արաբ.* زمّرد zamarrad *«կնամարդի», ըստ Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 615) Խոր. Փիլ.* կիսամարդի *Վրդն. ծն.* մարդագայլ *Մխ. առ. Յիշատ. Ժէ դարից (Դիւան ժ. 62),* մախամարդակ *Գր. տղ. Ղեղ.* անմարդի *«վայրենի» Սոկր. 280 (տպ.* յարանցան մարդիւ, *ուղղել* յարանց անմարդիւ՝ *բուս յն.* ἀνδρῶν ἀπάνθρωποι)—*նոր բառեր են՝* մարդավայել, մարդաբանութիւն, մարդաբանական, մարդակազմական, մարդակազմութիւն, մարդանմար *են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mṛtó- *ձևից, որ յառաջանում է հնխ.* mer- *«մեռնիլ» արմատի ստորին* mr- *ձայնդարձից՝* -tó- *մասնիկով. պարզ արմատի ժառանգները տե՛ս մեռանիլ արմատի տակ, իսկ հնխ.* mṛtó-, mórto- *և սրանց մերձաւոր ձևերի ժառանգներն են՝ սանս.* मृत márta- *«մահկանացու, մարդ»,* मर्त्य mártya- *«մահկանացու, մարդ»,* मृत mṛtá- *«մեռեալ»,* मृति mṛti- *«մահ», զանդ.* 𐬨𐬀𐬭𐬎𐬀𐬙 mərəta- *«մեռեալ»,* 𐬨𐬀𐬭𐬎𐬀 marəta *«մահկանացու, մարդ»,* 𐬨𐬀𐬱𐬌𐬎 mašya- *«մարդ», հպրս.* martiya- *«մարդ», պհլ.* 𐭬𐭫𐭮 mart *«մարդ», սոգդ.* mart, *պրս.* مرد mard *«մարդ»,* مرد murd *«մեռեալ», յն.* μορτός *(Հեսիւք.),* βροτός *«մահկանացու, մարդ», լատ.* mors, mortis *«մահ»,* mortuus *«մեռեալ», լիթ.* mirtis *«մահ»* (Walde 495, Boisacq 134. Pokorny 2, 276): *Ըստ այսմ* մարդ *նշանակում է բուն «մահկանացու». Հնդեւրոպացիները մարդ էակը անուանում էին երկու ձևով.* մարդ *(մահկանացու)՝ իբր անմահների հակառակը, և երկրածին (հնխ.* g'hmon-. *հմմտ. լտ.* homo *«մարդ» և* humus *«հող»), իբրև երկնայինների հակառակը։ Հայերէնի մէջ երկրորդը ջնջուած է, բայց առաջինը կայ և բնիկ է, որովհետև իրաննականից փոխառեալ լինելու դէպքում՝ պհլ.* 𐭬𐭫𐭮 mart *ձևի դէմ պիտի ունեննայինք հյ.* *մարտ։—*Հիւբշ. 472։*

Հներից Ն. Շնորհալի (Թուղթ ընդհանրական, տպ. Երուսաղէմ 1871, էջ 287, Վաղարշապատ 1865, էջ 398) մեկնում է «մարդն անուն, որ է մարթուն, այսինքն իմաստուն»։—Ցայտնի է նաև հներիս մարդ *և շրջմամբ՝* դրամ բառախաղը· *«Դրամն օրինակ բնութեանս մեր. զի մարդ տառիւքն է անդրադարձութեամբ։ Անդրադարձելով մարդ՝ դրամ վերընդարձակի վերծանութեամբ». Մխ. գտ. Կամրջ. «Մարդն դրամ և դրամն մարդ». Տօնակ։ — Նորերից առաջին անգամ* Klaproth, Asia polygl. 103 *համեմատից պրս.* mard. *ղնդ.* mereti, *սիրյ. պերմ. վոտյ.* mort, murt, *քրդ.* mer, *բենգալ.* mûrd, *սանս.* murti *«անձ» բառերի հետ։ ԳԴ պրս.* mard *ձևի հետ։ ՆՀԲ յիշում է պրս.* mard, mardum, *սանս.* martya, *լտ.* maritus *«ամուսին»։ Ծանօթ ձևերի հետ են համեմատում* Peterm. 30, Windisch. 11, 23, Böttich. ZDMG 1850, 359, Müller SWAW 38, 577, *Եւրոպա 1849, 200,* Bopp. Gram. comp. 1, 400 *են։* Lag. Urgesch. 21։ *Հյ.* մարդիկ *ձևը համեմատում է պրս.* mardak *«մարդուկ» բառի հետ։ Իբրև բնիկ հայ են մեկնում Հիւբշ.* Arm. Stud. *էջ 41,* Meillet MSL 9, 151:

Գիւր.—Մղր. մարդ, *Ալշ. Մշ. Սչ.* մարդ՛, *Ագլ.* մօդ, *Ախց. Ակն. Գոր. Երև. Խրբ. Կր. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Պլ. Ռ. Սեբ. Զղ. Վն. Տփ.* մարբ, *Ասլ.* մարբ, մար*, *Ղրբ.* մարբ, մոբբ, *Ննխ.* մարբ, մաշբ, *Տիգ.* մոբբ, *Սլմ.* մառբ, *Սվեդ.* մուրբ, *Հճ.* մօյդ՛, *Զթ.* մօյդ՛, մոդ՛,

Համշ. մաշա:—*Նոր բառեր են* անմարդ, մարդագլուխ, մարդաթող, մարդաշող, մարդախաբ, մարդախօս, մարդակորոյս, մարդահաճ, մարդահաշիւ, մարդահաչ, մարդահոտ, մարդամեռ, մարդամէջ, մարդամօտիկ, մարդանիւ, մարդաշարք, մարդաչնման, մարդատեղ, մարդնակ, մարդուկ *են:*

Փոխ.—Սրմագաշեան, Արմէնիա՝ ռումանահայ մարդապօյ *«մի մարդու հասակի մեծութեամբ» (հյ.* մարդ + *թրք.* boy *«հասակ» բառերից կազմուած) ձևից փոխառեալ է դրնում ռում. գւռ.* martapoĭ *(կարդա՛* մարցապօի*). այսպէս են կոչում այն պատանիները, որոնք ծերերի առաջ իրենք իրենց իբր մեծ բան են ուզում ցոյց տալ, բայց իրապէս ոչինչ են:*

ՄԱՐԴԱԿ, ի–ա *հլ. «գերան, հեծան» Փիլ. լին. 274 և լիւս. 133. Վարք և վկ. Ա. էջ 48. Ճառընտ. Տաղ. նոյնը սխալ գրուած* մանդակ, *որ գտնում եմ Նորագիւտ երգ երգոցի մէջ՝ Բ. 16 (Հրատ. ՀԱ 1924, էջ 304). «Գերանք տանց մերոց մայրք, դարաւանդք մեր նոճք». այստեղ* դարաւանդ *բառի տեղ՝ որ նշանակում է «առաստաղի գերաններ», մի ձեռ. ունի* մանդակ*:*

ՆՀԲ և Հիւնք. Թրք. մէրթէ *բառի հետ, որ տե՛ս տակը.—Կայ Ֆիննի.* malta *«տանիքը պահող գերանը», որ համարւում է հնդևրոպականներից փոխառեալ բառ՝ ըստ* Les langues du monde, *էջ 177. Յայտնի չէ ինձ սոյն հնդևրոպական ձևը, որի հետ թերևս կապ ունենայ հայերէնը:*

Գիւտ.—Ալշ. Մշ. մարդ'ագ, *Մկ.* մարտոկ, *Վն.* մրտոկ, *Ախց. Կր.* մրբոկ, *Սեբ.* մրբոմ, *Սվեդ.* մարդ'օգ, մարդ'ուգ, *Զթ.* մայդ'օգ, մարդ'օգ, *Հճ.* մայդ'օգ:—*Կենդանի է նաև Ակն. Բլ. Խն. Կյ. Սս. Համշ. Տիգ.—ձևերից ոմանք թուրքերէնից յետ փոխառութեամբ:*

Փոխ.—Օսմ. مرتك mertek *«քառանկիւն գերան», թրք. գւռ. Կս. Տ.* mertek *«գերան» (Բիւր. 1898, 713 և 1899, 799), Եւդ.* märtäg *«գերան» (Յուշարձան 330), քրդ.* مردیاه merdiiah *«գերան»* (Justi. Dict. Kurde 394), *լազ.* mert'ek'i *կամ* mertak (Erckert, Die Spr. d. Kauk. Stamm. *էջ 87),* mertek *«տանիք, երդիկ»* (Rosen, Über d. Spr. d. Lazen):

***ՄԱՐԴԱՍԱՆԿ** *(գրուած նաև* մարտասանկ, մուրտասանգ, միւրտեսէն, միւրէսէնկ, fարմարցանկ, fարմրցանակ*) «մի տեսակ հանք կամ ներկ՝ որ իբր դեղ է գործածւում. յն.* λιθάργυρος, *ֆրանս.* litharge, *արծաթաքար» Վստկ. էջ 210, 224, Գաղիան.:*

=Պրս. مردا سنگ murdāsang *հոմանիշից փոխառեալ. սրանից են նաև թրք.* mürdeseng, *արաբ.* مردا سنج murdāsanj, mardāsanj, murtuk, *քրդ.* merdasenj, *նոյն նշանակութեամբ: Հյ.* fարմարցանկ *կազմուած է* fար *(իբր թրգմ. պրս.* sang *«քար» բառի) և* -մարցանկ<*մարտասանկ <մարտասանկ *ձևերից (համմտ.* արցունք< արտասուք*):—Հիւբշ. 270:*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ. նոյնը նաև Böttich. Horae Aram. 38, 83, Rudimenta 47, 156 *և Հիւբշման* ZDMG 35 (1881), 661:

Գիւտ.—Մշ. մուրդասան *«հող՝ որով ամանները են չնարակում»:*

***ՄԱՐԴԱՐԻՇԱՐ** *«մի տեսակ խունկ» Խոր. աշխ. 615. ունի միայն ԱԲ:*

=Պրս. مرقشیشا marqašīšā *բառից, որ և ասւում է* marqašītā. *սրանց հետ նոյն են ասոր.* ܡܪܩܫܝܬܐ marqašīta, *լտ.* marcasita, *գերմ.* Markasit *են. բոլորն էլ նշանակում են «*pyrite *կոչուած քիմիական մարմինը, որ է երկաթի երկծմբուկ»: Մեր բառը սխալ գրչութիւն է, որ պէտք է ուղղել* մարգաշիշայ:—*Հիւբշ. 193.*

Ուղիղ մեկնից նախ Պատկան. Խոր. աշխ. 1877, էջ 82 և Mamep. I, 11:

***ՄԱՐԴՊԵՏ** *«ներքինապետ Հայոց արքունեաց» Բուզ. Դ. 55. որից* մարդպետական, մարդպետութիւն *Բուզ. Դ. 18, Դ. 4:*

=Կազմուած է մարդ+պետ *բառերից. այս* մարդ *բառով պէտք է հասկանալ իրանական մի առանձին ցեղ, որ Պարսկաստանից Հայաստան անցնելով, պարապում էր աւազակութեամբ: Մարդերը յիշուած են Քանանփոնի ժամանակից, ասելի յետոյ Տիգրանի ժամանակ՝ իբրև առանձին կուռ ցեղ: Ցոյն և*

լատին պատմագիրները (Ստրաբոն, Պլուտարքոս, Քսենոփոն, Տակիտոս) կոչում են սրանց Մάρδοι, Ἄμαρδοι, Mardi. *Հայոց մէջ սրանց բնակած գաւառը կոչուեց* **Մարդաստան**, *ժողովուրդը* **Մարդացի՛**, *իսկ իրենց գլխաւորը (որ է Մարդոց ցեղապետը) անցնելով պալատական ներքինապետութեան պաշտօնին, մարդպետ բառն էլ դարձաւ համանիշ «ներքինապետ» բառին։*

Այս մեկնութիւնը տուաւ Ադոնց, Арм. Юстин. 417։

Մարեխ *տե՛ս Մառեխ։*

***ՄԱՐԵՐԻ** *«հայկական տումարի 10ոդ ամիսը, որ ըստ անշարժ տումարի համապատասխանում է մայիս 2—յունիս 5» լաբուր. 45, եւս. քր. Յայսմ. Ճառընտ.։ Բուն սեռականի ձեւ է և գործածւում է նաև իբրև ուղղական։*

=*Պհլ.* *maδyārya, *որի հին ձեւն է զնդ.* maiδyārya *«տարւայ 5-րդ եղանակի աստուածութեան անունը. 2. այդ եղանակի վերջում հնգօրեայ տօն»։ Հին դրադաշտական տարին ունէր 6 եղանակ, որոնց իւրաքանչիւրը վերջանում էր գիւղական մի տօնով. ինչ. գարնան տօն, ամառուայ կէսի տօն, հունձքի տօն են։ Մարերին ունէր 80 օր և ձմեռնային արևադարձի տօնն էր. վերջին 80ոդ օրը ընկնում էր 10ոդ ամսի 20ոդ օրը. և ամառնային արևադարձի տօնի (20 յունիս) 185-րդ օրն էր։ Այժմ յուլիսի սկիզբն է ընկնում։ Ծագում է արագաբանութեամբ* *madyai-yārya *ձևից և բուն նշանակում է «տարւայ մէջտեղը»* Bartholomae, Altir. Wört. 1117):

Ուղիղ մեկնեց Մարքվարթ, Untersuch. z. Gesch. von Eran, II. *էջ 205։ Հներից Վանակ. տարեմ. (և Տաթև. հարց. 201) հանում է մայր, մայրի բառերից. «Մարերի, յորժամ թաւանան մայրիք տերեւօք և ոստօք, և յինին որպէս մայր թռչնոց և գազանաց»։ Տաթև. ձմ. ա. մեկնում է «Մարերի՝ զմարմնանալն ի կուսէն ասէ, մերովին բնութեամբ և կերպիւ»։* Brosset, JAs. *1882, 530 կցում է վրաց.* **Յարելո մարելի**, *աղուան.* orili, *որ ստուգաբանում է «աճող ջերմութիւն». «Եթէ, ասում է, այս մեկնութիւնը ուղիղ է, հայը սկզբնականն է»։ Նշ. «ամիս մարեաց կամ թխելոյ հաւուց»։ Պատկ.* О назв. древн. арм. мѣсяц. *էջ 40 վրաց.* **Յահօալո մարիալի** *«8ոդ ամիսը», աղուան.* mare *«6-րդ ամիսը»։ Ալիշան, Հին հաւ. էջ 142* **մրրիկ** *բառի՞ց։ Խաչկոնց, Բիւր 1898, թ. 4 աստր.* **առաւիզման, մարէզվան**: *Յակոբեան, Բանաս. թ. 1900, էջ 42 պրս.* murdād *«յունիս»=զնդ.* amərətāt։

Փոխ.—Հայերէնի՞ց է փոխառեալ վրաց. **Յահօալո մարիալի** *ամսանունը (Մատ* ЗВО *13, 63)։*

***ՄԱՐՁ**, ի *հլ. «երկրամաս, գաւառ» Ագաթ. Եղիշ. գ. էջ 47, 64. Ղևոնդ ը, էջ 23. ՅՀ. կբ. գրուած է նաև* **մարձ** *Արծր. Հրատր. Պատկ. էջ 263. առանձին տես* **մարզպան** *և* **մարզպետ**:

=*Պհլ.* marz *«ծայրագաւառ»* (Bartholomae, Altir. Wört. 1153) *ձևից. համմտ. զնդ.* marəza- *նոյն նշ., պրս.* marz *«գետին, երկիր, սահման»* (*կայ նաև* marj, Horn § 974): *Իրանեանից են փոխառեալ նաև ասոր.* marzā, *վրաց.* **Յազրա** *մազրա «գաւառ»։ Իրանեան բառի հնխ. ցեղակիցներն են լտ.* margo *«եզերք», գոթ.* marka *«սահման», հբգ.* marca, marcha *«սահման, շրջան», անգսք.* mearc *«սահման, գաւառ», հիսլ.* mǫrk *«անտառ» (բայց* Dan-mǫrk *«Դանիացոց երկիրը, Դանիա, Տանիմարքա»), հիսլ.* mruig, bruig, *կիմր. կորն. բրբտ.* bro *«գաւառ», գալլ.* brogae *«ագարակ», հշվէդ.* brink *«եզերք, երկիր», գերմ.* Mark *«սահման, երկիր, գաւառ»։ Գերմանականից են փոխառեալ հֆրանս.* marche *«սահման», իտալ.* marca, *ֆրանս.* marche *«կայսրութեան սահմանի վրայ գտնուած զինուորական գաւառները», որից յետ փոխ առնուած անգլ.* march (Kluge 319)։ *Այս բոլորի նախաձևն է հնխ.* merg¹- (Boisacq 52, Walde 465, Pokorny 2, 283), *որ բնիկ հայ լինելու պարագային պիտի տար *մերձ ձևը։—Հիւբշ. 193։*

Նախ ԳԴ համեմատեց պրս. մէրզ բառի հետ։ ՆՀԲ պրս. մէրե, մէրզ, մերզիպիւմ, լծ. յն. μέρος, μερίς «մաս»։ Neumann ZKM 1, 442 *պրս.* marz: Windisch. 23 *պրս.* marz, *սանս.* maryā: Gosche 58, Böttich. ZDMG 1850, 358 *վերջինիս պէս*։ Müller SWAW 38, 580 *նաև լտ.* margo: *Տէրվ.* Altarm. 59 *փոխառեալ պարսկերէնից։ Բայց նաև հմմտ. լատ.* margo, *գոթ.* marka:

ԳԻՒ.—Ազա մարզ, *Շմ. Սլմ.* մարզ *«երկու արտեր կամ հողեր բաժանող թումբը՝ սահմանը»։*

**ՄԱՐՁ «կռուի կամ զինուորական վարժութիւն». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* մարզել *«վարժել, կռուի կրթել, վարժեցնել» Փիլ. Ղևոնդ.* մարզումն *Պիտ.* մարզիչ *Բ. մակ. դ. 14.* մարզողական *Սկևռ. լմբ.* մարզիկ *«զինուոր» Եղիշ. էջ 11 (որ և* մարձիկ*),* մարզիկ գունդ *Ա. մակ. ժա. 38 (չունի ՆՀԲ).* մարզանք *Ոսկ. զկ.* մարզարան *«մրցարան, կռուելու կամ զինուորական վարժութեան տեղ» Պիտ. Կաղանկտ.* մանկամարզ *Ոսկ. մրկր. Բրս. պհ. Պիտտո.* նորամարզ *Կրպտ. ոտ.* մարմնամարզ *(նոր բառ)։*

=Իրան. marz *ձևից, որ աւանդուած է «սրբել, մաքրել, օծել» նշանակութեամբ. Հայերէնի մէջ այս նշանակութիւնը պահած է* մարձել*, որ* մարզել *բառի կրկնակն է. (մանրամասն տե՛ս այս բառի տակ)։ Բայց իրաննեանում այս արմատը պիտի ունենար նաև «մարդել, կռուի պատրաստել» նշանակութիւնը (ըմբիշների օրինակից առնելով որոնք նախ իրենց մարմինը իւղով օծելով՝ կռուի էին պատրաստում). հմմտ. յն.* ἀλείφω *«իւղով օծել, կռուի պատրաստել, քաջալերել, զրդռել, կռուի և ընդհանրապէս որևէ բանի պատրաստութիւն տեսնել», թարգմանութեանց մէջ երբեմն* մարզել *դրւում է յն. «օծել» բառի դէմ (տե՛ս ՆՀԲ) և գրութեամբ էլ տեղ տեղ շփոթւում է* մարձել *բառի հետ. այսպէս* մարզիկ՝ *Եղիշ. էջ 11 գրուած* մարձիկ*,* մարզիչ *Բ. մակ. դ. 14՝ գրուած նաև* մարձիչ*։ Յատկապէս «օծել, շրփել» նշանակութեամբ ունի Պիտ. էջ 507 «Զիթոյն բնութիւն օծեալ մարզէ զըմբիշսն». (Նորայր, Հայկ. բառաք. էջ 61)։*

Նախ ՆՀԲ մարզել *կգեց* մարձել *«օծել, շփել» բառին՝ յունարէնի օրինակով։ Հիւնք.* մերկանալ *բայից։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. Ա. 208 պրս.* վէրզիտէն *«վարժել» ձևից։ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet *(անձնական)։*

Մարզաւ *տե՛ս Մարզպան։*

**ՄԱՐՁԱՆԿՈՇ (որ և* մարզանկոշ*,* մարզանկուշ*,* մարզգոշ*,* մարզաճճոշ*,* մարճանկոշ*,* մազազոշ*,* մարզիգոշ*,* մարգգուշ*,* մարտակուշ*,* մարտաղուշ*,* մարզաճոն*) «մի տեսակ խոտ է, մկնականջ, լտ.* majorana*» Գաղիան. Բժշ. խոր. աշխ. 612* (Seidel *Մխ. հեր. § 52)։*

=Պրս. مرزنگوش marzangōš *«ռեհան ինչ կանաչագոյն և յոյժ անուշահոտ, որոյ տերևքն նման են ականջացն մկան.* origanum majorana L., majoran*». կազմուած է պրս.* مرزن marzan *«մուկ» և* گوش gōš *«ականջ» բառերից և ըստ այսմ հայերէն բարդմանաբար շինուած է նաև մկնականջ։ Պարսկերէնից են նոյնպէս արաբ.* مرزنجوش marzanjūš *(Կամուս, Բրք. Բրդմ. Բ. 351), քրդ.* bezeranguš*, Բրք.* merjangül*, որ ժողովրդական ստուգաբանութեամբ ձևացած է* merjan *«մարջան, բուսա» և* gül *«վարդ» բառերից։ Այս բոյսը այժմ Պարսկաստանում (Ատրպատական)* märzä *կոչուած կանաչին է կարծեմ։—Հիւբշ. 193։*

Ուղիղ մեկնեց նախ Lag. Ges. Abhd. 64. *Նոյնը նաև Պատկան. Խոր. աշխ. 1887, էջ 57։ Ա. Ուղուրլեկեան, ծանօթ չլինելով այս մեկնութեանց և գիտենալով միայն Բրք.* merjangül *ձևը, Հյ.* մարզանգոշ *ուղղում է *մարզանգոյ։ Հ. Բուս. § 116 տալիս է բառիս բազմաթիւ գրչութիւնները և ուղիղ է մեկնում։*

ՄԱՐՁՈՆ *«աստղի անուն» Շիր. էջ 73.—ունի միայն ԱԲ։*

**ՄԱՐՁՊԱՆ, ի–ա Հլ. «կուսակալ» Փարպ. Եղիշ. Խոր. ՅՀ. կթ. որից* մարզպանութիւն *եւս. քր. Փարպ. Եղիշ .աւանդուած է նաև* մարզուան *Վրդն. պտմ.* մարզաւան *Ուռպ.*

մարծպան *Արձ. ՆՂՔ=1050 թուից (Կոստանեան, Վիմական տարեգիր, էջ 23)*, մարծուան *Օրբել. 260 (Հրամայէր քննել գԲուպայն և զմարծուան, զիւան գպէլն)* ձևերով (Կղնկտ. հրտր. էմ. էջ 39 ունի մարսպան, որի դէմ Շանհազ. դնում է մարզպան), բայց ըստ Մելիքսեթբէկ (նամակ 1933 մայիս 12) յատուկ անուն է և ոչ թէ «մարզպան»։

=Պհլ. 𐭬𐭫𐭦𐭩𐭥𐭠𐭭 marzəpān հոմանիշից, որ կազմուած է 𐭬𐭫𐭦 marz «մարզ, գաւառ» բառից՝ -pān մասնիկով (տե՛ս մարզ բառի տակ). Համմ. պրս. مرزبان marzbān «սահմանակալ, կուսակալ», որի مرزوان marzwān ձևին համապատասխան են գալիս Հյ. նորագոյն մարզաւան, մարզուան ձևերը։ Իրանեանից են փոխառեալ նաև ասոր. ܡܪܙܒܢܐ marzbānā, արաբ. مرزبان marzubān *(Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 142)*, վրաց. მაზრაბანი մազրապանի, მარზაპანი մարզապանի, յն. μαρζαπάνος լտ. marzapanus։—*Հիւբշ. 193։*

Աւգերեան, Լիակ. վրք. սրբոց ը. 39 յն. մարզաբանաս, *որ դնում է պարսկերէնից։ Ուղիղ մեկնեց նախ ԿԴ, յետոյ* Neumann ZKM 1, 442, Böttich. Horae Aram. 38, 82 *ևն։*

*ՄԱՐԶՊԱՆ *«հեղուկների կամ ընդեղէնի մի չափ է, ըստ ՀՀՌ վից քոռ պարունակութեամբ» Վստկ. 19, 107, Վրդ. առակ. 92. որ և մարզման Սիմ. ապար. 118, մարծպան Անսիզք 79. մարազպան Վրդ. առ. 92. մազմէն Վրդ. առ. 93, մազման Վրդ. առ. 93, մարզան Վրդ. առ. 94. Բառ. երեմ. էջ 156 (յիշուած կապին և սօմար բառերի հետ), Առաք. յծ. սահմ. 152—153. մարզ ՆՀՌ (առանց վկայութեան)։*

=Անշուշտ պհլ. *marzpān ձևով մի հոմանիշից, որից փոխառեալ է նոյնպէս ասոր. ܡܪܙܒܢܐ marzbānā «մոթ, modius (չափ)» Brockelm. Lex. syr. *194a, «գրիւ, Scheffel»* ZDMG 40, 445: *Արդէն* Brockelm. *ասորի բառը դրած է իբրև նախորդի երկրորդ նշանակութիւնը։—Աճ.*

ՆՀՌ «գուցէ որպէս ամկ. մորչափայ, մոշրոպա» (իմա՛ արաբ. mišraba «ըմպանակ»)։ Մառ, Վրդ. առ. I. էջ 28 նախ միացնում է մաղզմայ բառի հետ և յետոյ ասորի բառին է կցում։

*ՄԱՐԶՊԵՏ *«կողմնակալ, արքունի գործակալ» Եղիշ.* որից մարզպետական գունդ *Ուռհ.։*

=Պհլ. 𐭬𐭫𐭦𐭯𐭠𐭮 *marzpat հոմանիշ ձևից, որ կազմուած է 𐭬𐭫𐭦 marz «մարզ, գաւառ» և 𐭯𐭠𐭮 pat «պետ» բառերից. նոյնից փոխառեալ է նաև վրաց. მაზრაპეტი մազրապետի «զօրավար, փոխարքայ, նահանգապետ, շրջանի կառավարիչ» (Ջուբին.², էջ 660)։—Աճ.*

ՄԱՐԶՈՆ. *անծանօթ մի բոյս է. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2017. նոյնը գիտէ Քաջունի, Գ. 160* մարզոն *ձևով և մեկնում է «բանջար տաք»։*

=*Թուի թէ մարզանգոշ բառի բազմաթիւ ձևերից մէկն է. տե՛ս վերը. Համմ. յատկապէս* մարզանոն *և նպրս.* märzä:—*Աճ.*

ՄԱՐԹ *«հնարաւոր, կարելի» ՍԳր. (միշտ մա՛րթ է ձևով). որից* մարթել *«կարենալ մի բան յարմարեցնել» Կորիւն. Ագաթ. Բուզ. «կարենալ, ձեռնհաս լինել» ՍԳր. Կոչ. Սեբեր. Ոսկ. Եղն. Բուզ. Եւս. քր.* մարթանալ *«կարենալ» Կոչ.* մարթական *«հանճարաւոր» Նիւս. կազմ. Տօնակ.* մարթաւ *«վարպետութիւն, հնարագիտութիւն» Բ. մակ. ժդ. 29. Մծբ.* անմարթ *«անկարելի» Գծ. ժ. 28.* չըմարթուն *«անփորձ, անճարակ» Սաթ. ժդ. 4. Մծբ. Սերեր.* մարթուչ *Ոսկ. ա. տիմ. էջ 119. Փիլ. նխ. 21, 53։*

Հիւնք. նշմարիտ բառից։ Oštir *ՀԱ 1912, 357 յն.* μάρπτω *«բռնել» բառի հետ՝ հնխ.* mərgu̯tō- *ձևից. նշանակութեան տարբերութեան համար համմ. լտ.* potior *«գրաւել»,* possum *«կարող եմ»։* Lidén IF 44, 191 *գոթ.* magan *«կարենալ», յն.* μηχανά *«հնարք են» բառերի հետ. հայերէնը իբր հնխ.* maghtro- *ձևից։ Պատահական նմանութիւն ունին վրաց.* მართება მարթեբա *«պարտիլ, պէտք լինել, սոիպուիլ, պարտք կամ պարտականութիւն ունենալ»,* მართებული մարթեբուլի *«պատշաճ, կրթնալ, քաղաքավար»,* მართვა մարթվա *«ճշտել, սրբագրել, կառավա-*

րել, յարդարել», Ցահա մարք «ճիշտ, ճշմարիտ», որոնք իմաստով համապատասխան չեն մեր բառին։

Գիւր.—Բառս մարդ'իլ «կարենալ» ձևով պահած են Բ. Խրբ. Ջրս.։

+ՄԱՐԻ (-ուոյ, -ութաց) *«թռչունների էգը, հաւ» Առակ. լ. 31. Մծբ. 229. Կոչ. «էգ մեղու» Վստկ. 193. գրուած է նաև մայրի «էգ տատրակ» Ջքր. կթ.։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. m°rī- «մանկամարդ կին, աղջիկ» ձևից. ցեղակիցներն են՝ սանս. मर्य márya- «երիտասարդ մարդ, սիրական, յովատակ», मर्यक maryaka- «մարդուկ», յն. μεῖραξ «աղջիկ, յետնաբար նաև՝ տղայ», μειράκιον «տղայ, մանչ», կրետ. Βριτό-μαρτις «Արտեմիս աստուածուհին», լտ. marītus «ամուսնացեալ մարդ, կին առած» (յետնաբար նաև marīta «ամուսնացեալ կին, մարդու գնացած, արամբի»), լիթ. marti «հարս, նորահարս», mergà «աղջիկ», լեթթ. marscha «հղբօրդ կինը», հպրուս. martin «հարս», mergo, mergu «աղջիկ, աղախին», գոթ. (Խրիմի) marzus «հարսանիք», կիմր. merch «դուստր», morwyn «աղջիկ», mor-forwyn «ծովային յուշկապարիկ», կորն. moroin «աղջիկ, կոյս», myrgh «աղջիկ, կին», բրբտ. merc'h «դուստր», հիռլ. muir-moru «ծովային յուշկապարիկ»։ Բոլորի նախաձևն է հնխ. mério-, լատինը՝ հնխ. m°rī- ձևից, որից և հայը, իսկ դերմանական և բալթեան ճիւղի մէջ g, t ածականով (Pokorny 2, 281, Walde 465, Boisacq 621, Trautmann 170): Meillet, Dict. étym. It 562 *չի ընդունում լտ.* maritus *«ամուսնացեալ մարդ» բառին տրուած այս ստուգաբանութիւնը, որովհետև* *marī «կին» բառի գոյութիւնը այլուստ չի հաստատուում։*

Klaproth, Asia polygl. 102 *պրս.* mury, *բենգալ.* murgi։ *ՆՀՒ յիշում է պրս. մաֆի, մաֆիյան «էգ»։* Ascoli KZ 17, 137 *զնդ.* marəγa *«թռչուն» ձևից։* Justi, Zendsp. *էջ 234 զնդ.* mərəγa *«թռչուն» ձևի տակ,* Dict. Kurde 394 *քրդ.* mirišk, mirîžk *«հաւ» բառի հետ. նոյնը* Kurd. Gram. *էջ 26։* Canini, Et. étym. 143 *լտ.* maris *(արու)։*—Bugge, Beitr. 32, KZ 32, 2 *ընդունում է* Justi-*ի համեմատութիւնը, ի վերջաւորութիւնը համարում է իգականի մասնիկ, բառը հանում է հնխ.* margia *ձևից. համմտ. սանս.* mṛgī- *«հղնիկ»։ Հիւնք. մայր բառից։ Մառ,* Грам. др.-арм. 42 *նոյնպէս հանում է մայր ձևից, ինչպէս արի գալիս է այր ձևից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Patrubány *ՀԱ 1906, էջ 344։*

Գիւր.—Գոր. Ղրբ. **մա'րի** *«էգ (թռչուն)»։*

***ՄԱՐԻԱՃ** *«ամուսնութիւն» Անսիզք, էջ 45. Յառաջ զմարիաճնին դրեմք և զխնամութիւնսն։*

=Ֆրանս. mariage *«ամուսնութիւն»։—Աճ.*

***ՄԱՐԻ** *(կամ նաև* **մախր**) *«հղևիններուն ցեղից՝ ձիւթի նման առատ խէժ ունեցող մի ծառ է. լտ.* pinus picea» *Վստկ. 41, 132. «իւղային դիւրավառ փայտ» Յայտմ. առաջին նշանակութեամբ յատկապէս ասում է* **մարխի** *Վստկ.։*

=Պրս. مرخ marx *«տեսակ ինչ փայտի, զորոյ երկու մասունսն ևթէ յիրեարս շփիցեն, հուր ելանէ», որից էլ արաբ.* مرخ marx *«մի տեսակ ծառ, որ հրահանի պէս զարնուելով վառւում է. լտ.* leptandenia pyrotechnia *(Կամուս, Թրք. Թրգմ. Ա. էջ 559). նոյն է անշուշտ քրդ.* merx *«պիհի» (նշանակութիւնը սխալ դրուած)։*

Ուղիղ մեկնեցին ՆՀՒ, Հիւնք և ՀՒտս. § 2021։

Գիւր.—Ալշ. Ախց. Ասլ. Կր. Տփ. (ըստ Ամատ. Հայ. բառ ու բան, էջ 469 նաև Շիր լ. Ղզ.) **մարխ**, *Հմշ.* **մախրը**, *Սեբ.* **մառխ**, *Հճ.* **մօխրը**, *Զթ.* **մօ'խոր, մոխոր**, *Սվեդ.* **միւխըր**.—*Ղրդ. կայ* **մա'խ** *ծառը, որ է* **մարխի**։

Մարծուան *տե՛ս Մարզպան։*

***ՄԱՐԿ** *«արծաթեայ միջնադարեան դրամ է» Անսիզք 29, 59։*

=Ֆրանս. marc, *որ փոխառնալ է գերմ.* mark *(մրգ.* marc, marke) *հոմանիշից. ծագում է հաւանաբար* marke *«նշան» բառից* (Kluge 319):

***ՄԱՐԿԵԼ**, *ի–ա հլ. «բրիչ, փայտատաշ» Ոսկ. ա. տիմ. էջ 114 (Ջողիւք և երկայնակոթ ինչ*

մարկեղօք մաքրել. ՀԱ. 1897, 246 բ և 1912, 636), Վրք. հց. բ. 477։

=Յն. μαχέλη, μάχελλα «բրիչ, փայտատ» բառից, որի ծագումը մութ է (Boisacq, *էջ 602)։—Հիւբշ. 364։*

Ուղիղ մեկնիչ ՆՀԲ։

ԳԻՒ.—Ակն. **մարգղել** *«մանր մանր փորել՝ բանջարեղէնի սերմը սերմանելու և հողի տակ անց կացնելու համար. սերմը հողով ծածկել»։*

ՓՈԽ.—Վրաց. **մარგლა մարգլա, მარგლვა մարգվա** *«քաղհանել»,* **მარგვილი մարգվիլի** *«քաղհանող (անձ)»,* **მარგლი մարգլի** *«քաղհանիչ (գործիք)»,* **ნამარგლი նամարգլի** *«քաղհան արած, քաղհանած»։*

[ՄԱՐԿԱԿԱՆ. սխալագիր բառ. մէկ անգամ ունի Պտմ. աղէքս. էջ 6. «Ստեղծանէ էդ մարմին մոմեայ... արարեալ մարկեակս մոմեայ և լուցեալ ճրագ»։ ՆՀԲ մեկնում է «կա՛մ է կճատ, մոմպատ կամ մոմ ի ձև մարեաց», ԱԲ «մոմէ շինած արձան» (դնելով նաև **մարգեակ** *ձևով)։ Ըստ ուղիղ նկատողութեան Տաշեանի, Ուսումն. ատոյն Կալիսթ. էջ 216 պէտք է կարդալ* **մանեակ** *«անկողին», ինչպէս գրում են 3 ձեռ. և ինչպէս ունի լատինը* (lectulum)։ *Այս նոյն բառը ունինք նաև Ոսկ. եփես. 816՝* **մարեակ** *ձևով. «Գահոյս արծաթապատս մի՛ առնիցես, այլ այնպիսի մարեակս» (այլ ձեռ.* **մանիկս**), *որ դարձնալ պէտք է ուղղել* **մանեակ** *«անկողին»։]*

ՄԱՐԶԱԿ *«մի տեսակ անծանօթ բոյս, որ իբր մաղասի դեղ է առաջարկւում» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2022. նոյնը Քաջունի, Գ. 160, որից և Տիրոյեան, Հանրագրութ. էջ 509 մեկնում են «մանանեխ»։*

***ՄԱՐԶԵԼ** *«շփել, օծել, մարմինը իւղով տրորել» Ոսկ. Բ. տիմ. 249, տիտ. 330, Մխ. բժշ. Կանոն. նոյնը նաև Բուզ. Ջ. 8, տպուած մնրձեալ, որ այսպէս է ուղղում Նորայր, Հայկ. բառաք. էջ 60. այս բառից են* **մարձիկ** *«մարզիչ» Ոսկ. փիլ. 483.* **մարձիկք** *«ըմբշամարտութեան ասպարէզ» Ոսկ. փիլ. 482։*

=Իրան. marz *հոմանիշից. հմմտ. զնդ.* marəz, marzīdan *«զուգաւորիլ»,* marzišn *«զուգաւորութիւն, մերձաւորութիւն» (իմաստի զարգացման համար հմմտ. յն. χρίω «շփել, օծել», χροΐζω «մերձաւորիլ», հյ. գւռ. շփել «շփել. 2. մերձաւորիլ»), պրս.* muštan *«շփել, տրորել»,* mālīdan *«շփել, յղկել»,* marz *«զուգաւորութիւն»,* mālišgar *«բաղնեպան», բելուճ.* mušag *«շփել, քերել, իւղով օծել, աղալ», աֆղան.* muẋal, *քրդ.* mālin, mištin, *օսս.* märzin *«աւլել, մաքրել», սանս.* mṛjátr, mārjati *«մաքրել, սրբել, հարթել, յղկել»* (Horn *§ 962 և 983)։ Սրանց արմատն է հնխ.* merg´- *«տիրևները են քերել, հանել, սրբել, մաքրել». հմմտ. յն. ἀμέργω «քաղել, հաւաքել», ὀμόργνυμι «սրբել, սրբելով մաքրել», լտ.* merges *«խուրձ»* (Pokorny 2, 283, Walde 479, Boisacq 52)։ *Հայերէնը փոխառեալ է իրանեանից, որովհետև բնիկ լինելու պարագային պիտի ունենայինք *մերձ, *մորձ կամ *մարձ։ Բացի* **մարձել** *ձևից, իրան.* marz *տալիս է նաև հյ.* **մարզել**, *որի վրայ տե՛ս* **մարզ**։

Տէրվ. Altarm. 59 *տալիս է առաջին անգամ ուղիղ մեկնութիւնը, համեմատելով զնդ.* marəz *և սանս.* marj *«օծել, քսել» ձևերի հետ. բայց սրանց հետ նաև հյ.* **մերձենալ** *և զնդ.* marəγ *«վազվզել»։—Հիւբշ.* Arm. Gram. 193 *ձևից միայն դատելով՝ իրանեան փոխառութիւն է համարում* **մարձիկ**. *վերի մեկնութեան ծանօթ չէ։ Ուղիղ մեկնութիւնը ընդունում է նաև* Meillet *(անձնական)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 348 պրս.* varz *«գործ» բառից։*

ԳԻՒ.—Այս բառի հետ նոյն են **մորձել** *(ըստ ՆՀԲ) կամ Շլ.* **մէրսէլ**, *Տփ.* **մէրսիլ** *«շփել, քսել, տրորել», Ննխ.* **մօսրէլ**, **մօրսէլ** *«մաժել, շփել, տրորել», Բբ.* **մօրսէլ** *«ալիւրը ջրով տրորել, շաղուել, հարել», Ջղ.* **մէրժել, մէժժել** *«շփել, տրորել», որից յետոյ r-ի անկումով՝* **մաժել** *նրև. Մշ. Շմ. Սլմ. Վն. ԵՒն։ Տարօրինակ է այս բոլորի մէջ ե, ո ձայնաւորը, որ չկայ իրանեանում. իսկ ժ հնթադրում է իրանեան երկրորդական *marž ձևը։*

Մարճակ *տե՛ս Մարկճակ։*

ՄԱՐՄ *«սև արմատ, կախեթու արմատ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2023. (անշուշտ* թրապոզան խուրմասի *կամ* բստան խուրմա *կոչուածն է)։*

ՀԲուս. ուղում է սրբագրել մորմն։

ՄԱՐԳԻՍ *«մի տեսակ սողուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Տաղ. 2. № 612 (էջմիածնի), էջ 15 ա. «Այլ թէ օձասանդր կամ մարդիս կամ սոցին նման [կենդանիք], որ արիւնք են, անկանին ի կերակուր, անվնաս է կերակուրն և ամանն»։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Ամատ. Հայ. բառ ու բան, 469։

***ՄԱՐՄԱԽԻՐ**, *որ և* մարմաճան, մարմաճուլ, մարմաճուզ, մարմայոյզ, մարմարոյզ *«մի տեսակ բոյս, լտ.* marum, *ֆրանս.* herbe aux chats» *Բժշ. ունին միայն ՀԲուս. § 2024 և Քաջունի, Գ. 160։*

=Արաբ. مرماخوز marmāxūz, مرماحوز marmāḥūz, مرماحول marmāḥūl *նոյն նշ. (ըստ Պէյթարի)։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ՄԱՐՄԱՆԴ *«բարեխառն տեղեր» Ոսկ. ես. 165, Մծբ. 239. իբր ածական ունի Սգն.* մարմանդ տեղիս *«բարեխառն տեղեր»։*

ՆՀԲ մեղմ անդ։ *Հիւնք.* ճարմանդ *բառից։ Ղափանցեան* ЗВО *23, 357 կրկնուած մանդ արմատից, որ է սանս.* manda *«կամաց, թոյլ»։*

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Երև. Մկ. Մշ. Ոզմ. Վն. մարմանդ, *Կր. Ախց.* մարմանտ՝ *նշանակում են «հանդարտ» և գործածւում են իբրև ած. ջրի, կրակի, գետի, քամու համար։ Նոր բառեր են՝* մարմանդիլ, մարմանդացնել *«մեղմանալ, մեղմացնել»։*

Մարմանջ *տե՛ս Մնջան։*

***ՄԱՐՄԱՇ** *«բարակ կտաւ, շղարշ, տճկ. թիւլպէնտ». իբր ռմկ. բառ ունի Նորայր, Բառ. ֆրանս.* mousseline, *որ կրկնում է Քաջունի, Հտ. Գ. էջ 160։*

=Վրաց. მარმაშ՝ *նոյն նշ. Ջուբին.[2] 673 ռուս.* кисея.—*Ա՛ճ.*

ՄԱՐՄԱՋ *«հոգ, մարմնի հոտը, քոր գալը». հների մէջ առանձին գործածուած չէ, բայց նոր գրականում սովորական դարձաւ «ներքին զգիտո» նշանակութեամբ. օր.* գրելու մարմաջ։ *Բառ. երեմ. էջ 207 մեկնում է մարմաջ «հեշտ կամ դիւր»։ Այս արմատից են* մարմաջել *կամ* մարմանջել *«հոգ ունենալ, կճիլ, խայթիլ, կսկծացնել» Բ. տիմ. գ. 3 = Եփր. բ. տիմ. 236, Սերեր. 109.* մարմաջեցուցանել *կամ* մարմանջեցուցանել *Ոսկ. յհ. ա. 28, բ. 3.* մարմաջողական *Նար. 177.* մարմաջումն, մարմանջումն, մարմանջիւն, մարմաջիւն *«հոգ» Պիտ. Խոսր.։*

Նոյն ընդ մորմոքիլ։ Bugge KZ 32, 18 մրջիւն *բառից, ինչպէս են յն.* μορμηκίζειν, *լտ.* formicare, *նորվ.* maura *հոմանիշները։ Հիմնք. մրջիւն բառից։ Կրկնուած է թերևս մարջ արմատից։ Տե՛ս* մարմար։

ԳԻՒ.—Խրբ. մարմնջալ, *Ւդ.* մարմնջել, *Երև. Տփ.* մրմնջալ *«կսկծալ ցաւից, ցրտից»։*

ՄԱՐՄԱՆ *«մրջմնոց հիւանդութիւնը, մի տեսակ վէրք». առանձին չէ գործածուած, որից* մարմառում *«մրջմնոց հիւանդութիւնն ունեցող» Ղևտ. իբ. 22. Եփր. վկ. արևել. էջ 25.* մարմառումն *«կճիռը, մարմնի վրայ հոգ» Ոսկ. ճառք, էջ 123։*

=Կրկնուած է պարզական *մառ *արմատից։*

ՆՀԲ նոյն է դնում յն. μύρμηξ, *պրս.* mūr, mūrča *«մրջիւն անասունը» ձևերի հետ։ Հիմնք. մարմաջ բառից։* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 8 արմատը դնում է հնխ.* mer- *«տրորել, շփել», որից յն.* μαραίνω *«սպառել»,* μάρναμαι *«մարտնչիլ», նորվ.* merja *«ջարդել», հբգ.* marawi *«փափուկ, փխրուն», իսլ.* mor *«փոշի», կրկնութեամբ՝ հսլ.* iz-mrŭmĭrati *«կրծել», սլով.* mramor *«ոսկորի փտութիւն» և հյ. մարման և կրճատ կրկնութեամբ՝* մարմաջել, մարմանջել։

***ՄԱՐՄԱՐ** *«մի տեսակ ընտիր և փայլուն քար. կուճ». ոսկեդարեան ձև էր, բայց պատահաբար չէ՛ աւանդուած. կայ միայն յետնաբար Տաթև. ամ. 163 և արդի գրականի մէջ. որից* մարմարակուռ *Ոսկ. մ. բ. 25.* մարմարապատ *Ոսկ. Փիլիպ.* մարմարեայ *Երգ. ե. 15. Ոսկ. ա. տիմ.* մարմարեղէն *Վրք.*

հց. մարմարաձև *(սխալմամբ գրուած մարմաձև)* «մարմարիոնի պէս ողորկ» Ոսկ. կող. ժբ. մարմարաշէն Սամ. կիր. Մագ. Մին. Համդ. 102. յետիններէն մօտ դարձած է մարմարիոն «կուճ» Խոր. աշխ. «մարմարեայ» Ասող. Ճառընտ. մարմարիովն Անկ. գիրք առաք. 368. որից մարմարիոնեայ Յայսմ.։

=Յն. μάρμαρον կամ μάρμαρος «մարմարիոն» բառից, որ բուն նշանակում է «փայլուն». Հմմտ. μαρμαίρω «փայլիլ», μάρμαρος «փայլուն, ցոլուն»։ *(Բառս նախապէս սրանց հետ կապ չունէր և պատկանում էր հնխ.* mera «կոտրել, ջարդել» արմատին։ *Բայց յետոյ ժողովրդական ստուգաբանութեամբ ա՛յսպէս կարծուեցաւ և «մարմարիոն» նշանակութիւնն ստացաւ)* (Boisacq էջ 611)։ Սրանից են փոխառեալ նաև լտ. marmor, ֆրանս. marbre, իտալ. marmo, գերմ. marmor, անգլ. marble, հոլ. mramorŭ, լիթ. marmoras, հունգ. márvány, վրաց. მარმარილო մարմարիլո, թուշ. მარმაღლო մարմաղլո, պրս. և արար. مرمر marmar, թրք. mermer են հոմանիշները։ Ցն μάρμαρος կամ μάραρον է հյ. մարմար. բայց պէտք է կարծել թէ կար նաև բիւզ. *μαρμάριον ձևը, որից փոխառեալ է հյ. մարմարիոն։—Հիւբշ. էջ 364։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԳԻՒՒ.—Մկ. Տփ. մարմար, Ջղ. մարմարէ, Խար, Կր. մոռմոր, Ալշ. Մշ. մառմառ, Ախց. Գոր. Ղրբ. Մրղ. Սլմ. Սեբ. մռամռո, Սվեդ. մարմուռ, Ննխ. Պլ. մէռմէռ *(Թուրքերէնից նոր փոխառութեամբ, ինչպէս և վերիններից շատերը)*, Վն. կայ նաև մոռմոռիկ «լաւ տեսակի մարմարիոն»։

ՄԱՐՄԱՒ «անծանօթ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2025. պէտք չէ կարծել թէ բառս արմաւ ձևի սխալ գրչութիւնն է. որովհետև նոյն Բժշկարանը պատուիրում է մարմառը եփել արմաւի հետ։

ՄԱՐՄՆԻ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Արիստ. աշխ. «Երկք մասունքն ի մարմնին (կամ ի մարմննին) ի նա լինին հայեցեալ, քան երից ամանակաց բաժանեալ»։ ՆՀԲ մեկնում է «մանելիք, գործի մանելոյ, աղեկաւ», իսկ ԱԲ ջնջած է։ Արդիօք ստուգուած է որ սխալ ընթերցուա՞ծ է։ Քաջունի, Գ. 160 դեռ շարունակում է գրել «quenouille, իլ»։*

+ՄԱՐՄԻՆ, ո *հլ. «միս, փխբ. մարդ, նիւթ, իր» ՍԳր. որից ունինք բազմաթիւ ածանցներ. յիշենք նրանցից մի քանի հնագոյնները.*—մարմնագեղ *Ոսկ. ես.* մարմնածին *Ագաթ.* մարմնակից *Եփես. գ. 6. Ագաթ.* մարմնաճար *Բուզ.* մարմնապատ *Եզն. Վեցօր. Ոսկ. մ. բ. 19.* մարմնապէս *Սերեր. Եւս. պտմ. Եփր. ծն. Ագաթ. բառավերջում՝* բանձրամարմին *Եզն.* զովամարմին *Եփր. մնաց.* շոռեմարմին *Եւս. քր.* քաջամարմին *Ոսկ. յհ. ա. 3. յետիններից յիշենք* մարմնապահեստ *Պարզ. 261,* մարմնացի «մարմնով» *Լծ. պրպմ. 742 (երկուսն էլ նորագիւտ բառ),* գեղեցկամարմին *Փիլ.* երկմարմին *Փիլ.* թուլամարմին *Կանոն* լերկամարմին *Նար.* խոտամարմին *Ոսկիփ.* բազմամարմին *Նիւս. կազմ.* մարմնամարզ, մարմնամարզութիւն, մարմնամարզական *(նոր բառեր) են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mṛmeno- *ձևից? Հմմտ. սանս.* मर्मन् marman- «անդամ, անդամների յօդաւորութիւնը, ամբողջ գործարանները, մարմնի բաց մասերը՝ որոնք աւելի են ենթակայ վիրաւորուելու, մարդուս տկար մասերը՝ որ պէտք է ծածկել». բացի հայերէնից ու հնդկերէնից ուրիշ լեզուի մէջ չկայ այս բառը։* Pokorny, 2, 290 *սրանց հետ է միացնում մի կողմից լիթ.* melmũ «ողնաշար», լեթթ. melmeni «ողնաշարի ծայրի մասը» և միւս կողմից յն. μέλος «անդամ, յօդ», կիմր. cym-mal «յօդաւորութիւն», կորն. mal, յգ. mel-l-ow, բրբտ. mell «յօդերը, ողնաշար» (Boisacq 625 *առաջին շարքը բաժանում է երկրորդից)։ Բայց նթէ միացնենք լիթ. և լեթթ. ձևերը, հայերէնի* r *ձայնը (փխ.* ղ) *անչարմար դուրս կգայ. ուստի կասկած է ծագում որ իրանեան փոխառութիւն լինի. բայց իրանականում էլ նման ձև չկայ։—Հիւբշ. 473։*

Windisch. *23 սանս.* marma: Böttich. ZDMG 1850, 358, 164 *սանս.* marman. *նոյնը նաև* Arica 68, 116, Müller SWAW 38, 592 *և* 44, 567 *են։* Lag. Arm. Stud. § 1458 *սանս.* marman *բա-*

ոի հետ ցեղակից միայն է համարում և ոչ նոյն, որոհետև սանս. -man *մասնիկը տալիս է հյ.* -մն: Bopp, *Համմտ. քերակ. Ա. 400* mar «մեռնիլ» *արմատից. ինչպէս* մարդ *և սանս.* mūrti «մարմին». *Հայերէնի* -մին *մասնիկը նոյն ի դնում նգնդ.* -mana, -mna, *յն.* -μένο *լտ.* -mno *մասնիկների հետ: Տէրվ. Մասիս 1881 մայիս 12 նոյնպէս* mar *արմատից՝ իբր «մահկանացու»: Հիւնք. յն.* μέριμνα «հոգ» *բառից:* Müller, SWAW *136 (1897), 27 յն.* μηρός «սրունքի մսոտ մասը» *բառի հետ:*

ԳԻՒ.—Ախց. Երև. Խրբ. Կր. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տփ. մարմին, *Տիգ.* մոմին, *Ոզմ.* մարմ՚ին, *ՋԹ.* մայմինք, մարմինք, *Սվեդ.* մոմէնք:—*Նոր նշանակութիւն են ստացել Կր.* մարմին «կանացի ամօթոյք», *Նր.* մարմին «էգ անասունների ծննդական գործարանը»:—*Նոր ձևեր են* մարմինք դառնալ, *Շշ.* «շատ ծիծ ուտելուց ուռիլ, կարմրիլ», մարմնիլ *Մշ.* «ապրիլ», մարմնատակ «մանրագոր»:

ՄԱՐՄԻՒՐԻՆ «մոլորութիւն» *Բառ. երեմ. էջ 207, ՀՀԲ և ՋԲ. արմատն է անշուշտ* մար «մոլոր, մոլեգին, անմիտ» *ՀՀԲ, որից նաև* մարամիտ «անմիտ» *Բառ. երեմ. էջ 206, ՀՀԲ,* մարդամարոտն *ՀՀԲ.* մարդատողական «մոլորական» *Բառ. երեմ. էջ 206. նո՞ յն է արդեօք սրա հետ Երև.* մար-մար «զարմացած, ապշած». մար-մար նայիլ *(Տարագ, 1900, էջ 275):*

ՄԱՐՈՒԽ «մատուտակ բոյսը» *Մխ. բժշ. էջ 119. գրուած նաև* մարախ *Եպիփ. ծն. էֆիմ. էջ 286.* մարոխ *Տիրացուեան,* Contributo § 269 *(լտ.* glycyrrhiza glabra L. var. glandulifera). *իսկ Միխ. աս. 508 համարում է մատուտակ բառի աշխարհաբար ձևը. «Եգիպտ նա տուն լցնալ մատուտակով՝ զոր կոչեն ըստ աշխարհաց* մարուխս»:—*Տե՛ս* մարախ *բառը:*

ԳԻՒ.—Ոզմ. մարօխ. Rivola *դնում է* մարախ *և մեկնում է* «siliqua duleis. carrula nuncupata»:

ՄԱՐՈՒՑ «մի տեսակ խոտ է. *լտ.* ocimum basilicum *կամ* mentha pulegium»? *Աղթամ. (Վստկ. 168 յիշում է անանունի հետ մարուճ ձևով, որի արաբերէնն էլ դնում է պատրուճ. տե՛ս այս բառը). ՀԲուս. § 2029 յիշում է* մարուճ *ձևով:*

**ՄԱՐՍԵԼ «կերածը հալեցնել ստամոքսում» Անկ. դիրք հին կտ. 202. Յայտմ. օգ. 24. կրաւ.* մարսիլ *Տաթև. ձմ. ճիգ. որից* մարսական *Վստկ. 160.* անմարսական *Մխ. ապար. նոր բառեր են* մարսողութիւն, մարսողական, անմարս, դիւրամարս, դժուարամարս *են:*

=*Ասոր.* ܡܪܨ məras «ճմլել, ճզմել *(Ցղնկ. իգ. 3 ատինքների համար ասուած),* ջարդել, կակղացնել» (Brockelm. Lex. sur. *194 բ):—Աճ.*

Աճառ. Բազմ. 1897, 398 համեմատելով զնդ. ahmaršta «չջարդուած, չփշրուած, չմանրուած» *բառի հետ, սրա արմատը դնում է *hmares «մանրել, ջարդել, փշրել», որի հետ կապում է նաև հյ.* մարսել, *իբր բնիկ հայ: Այս բառը մէկ անգամ միայն գործածուած է վէնդիդադում, Գլ. ժե. 3—4.* Bartholomae, Altiran. Wört. 297 *նախաձևը դնում է *smršta-, արմատի վերջաձայնը š, ž և կապել է ուզում լիթ.* smalks, *լիթ.* smulkùs «բարակ, նուրբ» *բառերին, որով հայերէնի կապը բոլորովին ջրնջւում է:*

ԳԻՒ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. Սլմ. մարսել, *Երև. Ղրբ. Կր. Մրղ. Պլ. Ռ. Սեբ.* մարսել, *Մկ. Շմ. Տփ.* մարսիլ, *Ննխ.* մարսէլ, մասրէլ, *Տիգ.* մոսիլ, *ՋԹ.* մոսիլ, մարսիլ, *Ախց.* մէրսէլ. *կայ նաև Առտնայի Բրքաիսս Հայոց մէջ* մարսել *ձևով:*

**ՄԱՐՎ «ալևորուկ բոյսը, ֆր.* marum, germandrée maritime, herbe aux chats» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2030:*

=*Պրս.* مرو marv «խոտ *ինչ անուշահոտ» (ԳԴ):*

ՀԲուս. անդ յիշում է մարս *ձևով և կցում է արաբ.* مرس mars «զմռսաբեր մի բոյս» *բառին (ըստ Պէյթարի): Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1923, 60 և 156:*

+ՄԱՐՏ, ի հլ. «կռիվ, պատերազմ» ՍԳր. Ագաթ. որից մարտնչիլ «կռուիլ, պատերազմիլ» ՍԳր. Եւս. քր. մարտուցանել Ոսկ. յհ. բ. 30. մարտիկ «զինուր, կռուող» ՍԳր. Սեբեր. «մրցարան, ասպարէզ» Ոսկ. Եփես. մարտկոց ՍԳր. մարտածնոյց Մծբ. մարտունայց Եզն. մարտամբոխ Ագաթ. մարտայարդար Ոսկ. մ. ա. 13. մարտակից Յհս. ա. 14. մարտացու «սուր, զէնք» Պիտ. Ծր. քեր. 19 էլ. արիստ. 51, 55 (իբր յն. μάχαιρα, որ գալիս է μάχη «մարտ» բառից), հոգեմարտ Սեբեր. կռիւամարտիկ Եւս. քր. կառամարտիկ Ոսկ. փիլիպ. ճակատամարտ ՍԳր. Ոսկ. հս. գօտեմարտիլ Ոսկ. յհ. ա. 31. բռնամարտիկ Ոսկ. հս. Եւս. քր. գազանամարտ Ա. կոր. ժհ. 32. Ոսկ. եբր. բմբշամարտ Ագաթ. Եւս. քր. Ոսկ. մաթ. եբր. և ա. տիմ. նոր բառեր են՝ մարտակոչ, մարտանաւ, մարտաճրաւէր են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mṛd- ձևից, որ կազմուած է հնխ. merā- արմատից՝ d ածականով։ Բէ՛ պարզ և Բէ ածած ձևերի համար հմմտ. սանս. mṛṇāti «ջարդել, արօրել», mardati «ջարդել, փշրել», mṛdha «մարտ», զնչ. marima «պատերազմ», mardo «յաղթուած», mardan «կռիւ», mardak «կռուարար», զնդ. marəd- «ոչնչացնել», յն. μαραίνω «սպառել, ոչնչացնել», μάρναμαι «կռուիլ, մրցիլ, պատերազմիլ», μαρασμός «սպառում, լքում», լտ. Mars, -tis «Արէս, պատերազմի աստուածը», հիսլ. merja, marða «հարուածել» են (Walde 467, 495, Pokorny 2, 276—8, Boisacq 611)։ Արմատին մերձաւոր ձև ունի հնխ. mel- «փշրել, ջարդել» (տե՛ս մալ արմատի տակ), որի հետ շփոթուած է յատկապէս սանսկրիտի մէջ։

Նշբ սանս. mṛdha, հյ. մրցումն, մարզումն, լտ. Mars, -tis «Արէս» բառերի հետ։ Peterm. 21, 34 սանս. mṛdha, mṛdh, 30 պրս. āward «կռիւ»։ Böttich. ZDMG 1850, 358, 165 սանս. mṛa'ha, յն. μάρναθαι: Lag. Urgesch 220 mar արմատի տակ՝ իբր *marti: Müller SWAW 42, 250 և 331 զնդ. marəδa: Lag. Arm. Stud. § 1459 յն. μάρ-ναθαι բառի μαρ- արմատի հետ՝ ո յատ-

լուածով։ Նոյնը նաև Հիւբշ. Arm. Stud. 42։ Տէրվ. Նախալ. 98 հնխ. mar արմատի տակ է դնում սանս. mar, յն. μάρναθαι, թերևս լտ. malus «չար» և հյ. մեղ, մարտ: Karolides, Γλ. συγκρ. 92 սանս. mar, maraka «սպաննող», լտ. Mars, կապադովկ. μαρκαόνα «կռուիլ»։ Bugge KZ 32, 70 հայերէնի t ձայնը մեկնելու համար յիշում է իռլ. martad «մահացու»։ Հիւնք. լտ. Martis սեռականից։ Հիւբշ. Arm. Gram. 473 անապահով է համարում համեմատել յն. μάρ-να-μαι ձևի հետ՝ ա-ի բացակայութեան պատճառաւ։ Müller WZKM 11, 205 յն. μάρναμαι? կամ հպրս. *marda «կռիւ», որ ծածկուած է գոնում պհլ. պազ. hamēmal «թշնամի» բառի մէջ (իբրև *ham-marda): Վերի ձևով մեկնում է նախ Scheftelowitz BB 29, 28 և աւելի լաւ՝ Walde 467: Պատահական նմանութիւն ունի սասր. مرد mrad «ապստամբիլ»։ Nyberg, Hilfsb. 2, 21 իրան. *hamarti- «կռիւ» բառից» նախավանկի անկումով. արմատն է ar, որից ունինք հպրս. ham-ara «հակառակորդ, ոսոխ», ham-arana «կռիւ, պատերազմ», պհլ. artīk «կռիւ, պատերազմ»։

*ՄԱՐՏ «հռովմէական երրորդ ամիսը՝ յունվարից սկսած» Յայտ. Տօմար. (ՆՀԲ և ԱԲ չեն յիշում)։

=Յն. μάρτιος «Մարտ» հոմանիշից, որ ծագում է լտ. martius բառից. բուն աստում էր Martius mensis «մարտ ամիս», որ է «Մարսի՝ Արէսի ամիսը»՝ Mars պատերազմի աստուծոյ անունից (տե՛ս մարտ «կռիւ» բառի տակ). փոխառութեամբ տարածուել է բազմաթիւ լեզուների մէջ. ինչ. ֆրանս. mars, իտալ. marzo, թրք. مارت mart են. —Հիւբշ. 367։

Հներից Տաթև. հարց. 201 հռովմայեցի մի իմաստասէրի անունից, ՀՀԲ մարտ «կռիւ» բառից, ուղիղ մեկնեց ՆՀԲ (տե՛ս մարտ «կռիւ» բառի տակ)։ Համանուններին վրայ ընդարձակ խօսում է Բագմ. 1897, էջ 138—141։

*ԳԻՒ.—Ախց. մարտ, Նախ. Պլ. մարդ, Ղրբ. Շմ. մտրդ, Սեբ. մադդ ևն։

ՄԱՐՏԱՆ «իցէ՛ թէ, երանի՛ թէ». մէկ անգամ ունի Թր. քեր. 32 հոմանիշների մի շարքի մէջ. «Ըղձիցն նշանականք են. իբրու թէ, իցի՛ւ, օշ, գուցէ, մարտանն»։

*Համամ. քեր. 272 (ըստ ՆՀԲ Երզն. և Նչ. քեր.) կարդալով բառս մարտն, ըստ այսմ առուգաբանում է մարտ «կռիւ» բառով։ ՆՀԲ յիշում է պրս. մարտէն «գայ ուրախալի, ահա գայցէ, իցէ՞ թէ գայցէ» ձևը, որ չգիտէ ԴԻ։

***ՄԱՐՏԻՐՈՂՈԳ** «վկայաբանութիւն, նահատակի պատմութիւն» Օրբել. հրտր. էմ. էջ 193. սխալ դրչութեամբ են մարտիրոդոմ Վկ. շուլ. 55. մարտիրոդօմ, մարտիրոդէմ, մարտիրոդմ Մագաք. արեղ. 13. Յիշատ.։

=Յն. μαρτυρολόγιον «վկայաբանութիւն» բառից, որ կազմուած է μάρτυρος «վկայ» +λόγος «խօսք» բառերից. նոյնից են նաև լտ. martyrologium, ֆրանս. martyrologe «վկայաբանութիւն» ևն։—Հիւբշ. 364։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ՄԱՐՏԻՐՈՍ** կամ **ՄԱՐՏԻՐԻՈՍ**, ի–ա հլ. «նահատակ» Ագաթ. որից մարտիրոսութիւն Կոչ. Ոսկ. ա. Թես. Փարպ. մարտիրոսական Կոչ. Փարպ. մարտիրոսանալ Եւս. քր. մարտիրոսարան «վկայարան» Կորիւն. նախամարտիրոս Գր. սք.։

=Յն. μάρτυς, սեռ. μάρτυρος, «մարտիրոս, նահատակ», հոմեր. և նյն. μάρτυρος «նահատակ». բուն նշանակութիւնն է «վկայ». հմմտ. μαρτυρέω «վկայել, մարտիրոսանալ». փոխառութեամբ տարածուած է ուրիշ քրիստոնեայ ազգերի մէջ, ինչ. լտ. martyr, ֆրանս. martyr, գերմ. Mârtyrer:—Հիւբշ. 364։

Հներից Երզն. լտ. մեկնում է մարտ բառով. «Մարտիրոս, զի մարտեաւ ընդ երևելի և աներևոյթ թշնամւոյն. վկայ՝ զի վկայեաց բազում չարչարանօք»։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

ԳԻՒ.—Մշ. մարդիրօսել «նահատակել»։

***ՄԱՐՔԱԲ** «գրասա, էշ». մէկ անգամ իբր օտար բառ յիշում է Մագ. քեր. 229. «Իսկ մեր ի Պարսից բազում ինչ ընտանեբար ուսեալ զգեստս, որպէս դուռա և ռիդէ, մարքաբ, աւազան՝ որ է ջրոյ անօթ...»։ Ուրիշ տեղ չէ գործածուած։

=Արաբ. مركب markab «հեծանելիք, գրասա, էշ», որ ծագում է rkb «հեծնել» արմատից. գործածական է այժմ էլ թուրքերէնում վերջին իմաստով. նոյնից է դարձեալ վրաց. მარქაფა **մարքափա** «պահեստի ձի»։

Մագիստրոս սխալմամբ պարսկերէնից է կարծում։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Ն. Ադոնց, Աբուսահ Փիռն. քեր. էջ 229 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 112)։

ՄԱՅԱՌ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «անտառանման ծառոտ՝ թփուտ տեղ» Կոչ. Խոր. «ծառի արմատ» Երզն. մտթ. 487. «փխբ. աչքի խիտ արտևանունք, թարթիչներ» Մծբ. Եփր. Թգ. «անտառի պէս խիտ» Ա.Բ. որից մացառաղօղ Փարպ. մացառանձև Ոսկ. կողոս. մացառախիտ Յհ. կթ. մացառուտ Պիտ. ևն։—Իմաստի ճշտման համար հմմտ. Մտթ. եւագր. 56 «Թէ զմի ճիւղն հատանես՝ ո՛չ չորանայ ծառն, մինչև յարմատոյ խլեսցես զամենայն մացառսն»։

ՆՀԲ մեկնում է «միացեալ կամ մած ծառք»։

ԳԻՒ.—Կր. Մկ. մացառ «մացառ», ՆՀԲ ունի ոմկ. մոցառ «բազմութիւն շառաւիղաց առ արմին ծառոց», Երև. մօցէռ «արմատի կողքերից ծլած ճիւղ», Համշ. մացառ և Զթ. միցեռ «տախտակի բարակ փուշ՝ որ մարդու միսն է խրում», Կ. Սարաֆեան, Բանալի դիտութեան, 1788, էջ 85 դնում է մոցառ «кустъ, բուսի».—իսկ Ջղ. մացակ «ծառի կամ բոյսի արմատ»։

ՓՈԽ.—Թրք. գւռ. Համշ. մացառլանմամբ «փայտը կամ տախտակը փշփշոտիլ, ճղճղուիլ». ինչ. օտուն մացառլանմըշ։

ՄԱՔԱԼԻՆԵ տե՛ս Տեյիզ։

ՄԱՔԱԼՈՒԿ «մի տեսակ թռչուն, ֆրանս. martinet, որ է մի տեսակ երկայնաթև ծիծառ». մէկ անգամ ունի Վեցօր. 161. «Որպէս ծիծառանց և այլոց թռչնոց, որ անուանեալ կոչին մաքալուկք, որք յօդոց ժամանրամաղ

իրա ինչ թոուցնալ բերեն զդարմանս իւրեանց պիտոյիցն»։

Տէրվ. Altarm. 74 **մագիլ** *կամ* **մանգաղ** *բառից։ Իրօք որ բառս գործածուած է բնագրի* δρεπανίς *ձևի դէմ, որ ծագում է* δρέπανον *«մանգաղ» բառից. ըստ այսմ արդեօք հայ բառն էլ պէտք է հասկանալ* **մանգաղո՞ւկ**։

***ՄԱՔԱՌ** *(սեռ.* -ի*)* *«կռիւ, վէճ, պայքար» Պզատ. տիմ. 168. որից* **մաքառիլ** *«կռուիլ» Ա. մակ. ժա. 46. Կոչ. Եւս. պտմ.* **մաքառումն** *Եւս. պտմ. 36. կք.* **մաքառող** *Մծբ.* **մաքառեցուցանել** *Պզատ. տիմ.։*

=Ասուր. maxaru *«դէմ կանգնիլ, հակառակիլ, մրցիլ, թշնամու դէմ դուրս գալ»,* māxiru *«մրցակից, ոսոխ, հակառակորդ», որոնց արմատն է* maxru *«ճակատ, առջեր, յառաջամաս»,* maxrū *«առաջին, սկիզբ, ըսկիզբը լինել»* (Muss-Arnolt. Ass. Handwb. 525, 529, 530, 531)։—*Աճ.*

Նշբ յծ. յն. μαχή «մարտ, կռիւ»։ Տէրվ. Altarm. 74 *յն. μάχ-εσθαι «կռուիլ», μάχαιρα «դանակ» կամ սանս.* marj *«քերել, քերթել»։* Karolides, Γλ. σσγκρ. 92 *վերջինիս աւելացնում է նաև կապադովկ. μαρκαόνω «կռուիլ»։ Հիւնք. յն. μάχομαι։ Բ. Խալաթեանց ՀՄ 1902, 398 ասուր.* maḫāru *«դէմ, ընդ առաջ»։—Ցոյն բառի ծագումը անստոյգ է. տրուած զանազան մեկնութիւնները տե՛ս* Boisacq 616։

Գիմ.—Սեբ. **մաքառիլ** *«իրար հետ կռուիլ»։*

Փոխ.—Կապադովկ. μαρκαόνω «կռուիլ» թուում է փոխառեալ հյ. գւռ. կրճատ **"մաքռիլ** *ձևից՝ շրջմամբ։*

+**ՄԱՔԻ** *(-ւոյ, -ւեաց) «էգ ոչխար» ՍԳր. Եզն. վկեցօր. 190։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mak- *բնաձայն արմատից. համմտ. սանս.* मक makaka *«մայող»,* मकमकायते makamakāyatē *«կոկռալ (գորտի)»,* मक méka- *«ուլիկ», յն. μηκάς «մայող (այծ, մաքի)», μηκάομαι (հոմեր. μεμηκώς, μεμαυῖα, μακών) «մայել», լտ.* miccio *«մկկալ», դերմ.* meckern, *մրգ.* mĕchzen, *«մկկալ»,* mēcke *«ուլ», սերբ. չեխ.* mekati, *ուկր.* mékaty, *սլով.* meketati *«մայել», լիթ.* mekénti *«մայել, կակազել»* (Pokorny 2, 256, Boisacq 631, Walde 483, Trautmann 177, Kluge 325)։

Նշբ յիշում է արաբ. **մաշիաճ** *և թրք.* qoyun *«ոչխար»։* Diefenbach, Berl. Jahrb. 1843, 449 *ուղիղ մեկնեց առաջին անգամ՝ համեմատելով յն. μηκάς «այծ» բառի հետ։* Gosche 24 *համարում է բնաձայն և կցում փռիւգ. μᾶ, աֆղ.* mikh, *պրս.* mīš, *քրդ.* mišin, *սանս.* mēša *հոմանիշների հետ։* Justi, Zendsp. 221 *զնդ.* maēša, *սանս.* meśá, *պրս.* mēš *են։ Տէրվ.* Altarmen. *34 և Նախալ. 46, 97 հնխ.* ma *«մայել» արմատից է դնում հյ.* **մայել**, **մաֆի**, *սանս.* mā *«մայել»,* makaka *«մայող», յն. μηκάομαι «մայել»։* Meillet, *Բանաս. 1900, 110 ունի* Diefenbach-*ի ուղիղ մեկնութիւնը։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 272 պրս.* mākiyān *(իմա՛* ماکی mākī *«հաւ»)։*

Գիմ.—Ալշ. Երև. Զթ. Կր. Մկ. Մշ. **մաֆի**, *Սլմ. Վն.* **մաֆ'ի**, *Տիգ.* **մոֆի**, *Մրղ.* **մաֆը՛**, *Ոզմ.* **մաֆ'է**, *Սվեդ.* **մագ'ա** *սովորաբար նշանակում են «էգ ոչխար», իսկ Զթ. Մկ. Սվեդ. Տիգ. ստացել են ընդհանրապէս «ոչխար» նշանակութիւնը։*

ՄԱՔԻՍ *«զարդարեալ». ունի միայն Բռ. երեմ. էջ 207։*

***ՄԱՔՄԱՆ** *«սաւան, պաստառ, դաստառակ». մէկ անգամ գործածուած է Դ. Թագ. ը. 15. «Առ մաքման և հեթաց ի ջուր և արկ զերեսօք իւրովք և մեռաւ»։*

=Եբր. מִכְבֵּר makbēr, *որ գործածուած է Ս. Գրքի նոյն տեղում. բառիս իմաստը անստոյգ է, սովորաբար հասկացւում է «անկողնի ծածկոց, վերմակ», յունարէն թարգմանութեան մէջ բառը տառադարձուած է յն. μαχβάρ ձևով (այլ ձեռ. ναβρα). պետք է ենթադրել անշուշտ որ մեր թարգմանիչները ունեցել են յն. *μαχμαν ընթերցուածը, որից և տառադարձել հայերէնը։

Հին բռ. մեկնում է «անկողին կամ պաստառակ կամ դաստառակ բարակ»։

ՀՀԲ գրում է նաև մաք կամ մագ: Ուղիղ մեկնեց առաջին անգամ ՆՀԲ։

ՓՈԽ.—Վրաց. ᲛᲐᲭᲛᲐᲜᲘ մախմանի կամ ᲜᲐᲭᲛᲐᲜᲘ նախմանի, *գործածուած է Ս. Գրքի նոյն տեղում և անշուշտ պէտք է առնել նոյն իմաստով. Ջուբինով մեկնում է «кружево, жанчак»։*

ՄԱՔՈՒՐ, ի *հլ. (յետնաբար ի–ա, ո հլ.) «նաքուր, թամուզ» ՍԳր. «սուրբն կամ նուիրականն Փայլածու» Պզատ. տիմ. որից* մաքրել *ՍԳր. մաքուրիւն Երեմ. դ. 11. մաքրապէս Սեբեր. մաքրափայլ Եփր. ծն. կիսամաքուր Շնորհ. մտթ. գերամաքուր Անան. եկեղ. ճառընտ. դժուարամաքուր Փիլ. նխ. կայծակնամաքուր Եփր. խոստ. հրամաքուր Անան. եկեղ. ճառընտ. նամամաքրենի Շնորհ. տաղ. անմաքուր Բ. մնաց. իգ. 19. Ոսկ. յհ. ա. 27. մաքրիճաճեմ Նար. տաղ. մաքրիչ «ածելի» Վրդն. առ. 240. մաքրելի Պրպմ. 259 բ (չունի ՆՀԲ), ևն։*

Windisch. 9 *յն. μάχαρ «հրանիկի, հրջանիկ»։* Lag. Anmerkungen VIII *ասոր.* ܡܟܘܪ maxwar, məxawwar *Գծ. իգ. 3 (Բրգմ. κεκονιαμένε, բռնալ)։ Նոյն,* Arm. St. § 1461 *մերժում է այս մեկնութիւնը։ Տէրվ.* Altarm. 58 *ամոթել են ձևերի հետ սանս.* marǰ *«քերել, ջնջել, մաքրել» են։ Հիւնք. մոխիր բառից։—Շատ մօտիկ են հնչում, բայց երևի պատահական են ասոր.* ܡܙܪܩ məraq *«մաքրել, յղկել»,* ܡܪܝܩܐ marīqā *«մաքուր»,* ܡܕܝܩܘܬܐ mədāqūṯā *«մաքրութիւն. 2. յղկում». այս արմատը բնիկ սեմական է և գտնւում է նաև ուրիշ սեմական լեզուներում. ինչ. արամ.* מרק mrq, *հբր.* מרוק mārūq *«յղկուած, մաքուր»,* מרוקים mərūqīm *«թագուհու արդուզարդն ու պատրաստութիւնը»,* תמרוק tamrūq *«շփում, օծում, մաքրում», ասուր.* marāku *«տրորել, սղկել»։*

ԳԻՒՒ.—*Երև. ՋԲ. կր. Տփ.* մաքուր, *Ասլ.* մաքիւր, *Մշ.* մակուր.—*Թրքախօս հայոց մէջ՝ Առն.* մաքուր։

**ՄԱՔՍ (ի *հլ. բստ ՆՀԲ. կայ միայն սեռ. մաքսի Ա. մակ. ժ. 33) «վաճառքի կամ ապրանքի վրայ տուրք» ՍԳր. որից* մաքսաւոր *ՍԳր. մաքսապետ Ղկ. ԺԹ. 9. Ոսկ. մ. ա. 1. Սեբեր. մաքսել Եղիշ. յես. 172. Նար. առաք. 436. Իգնատ. ղկ. 365. մաքսաւորուն Սկևռ. ի լմբ. ձեռամաքս (չունի ԱԲ) Ջքր. սարկ. Բ. 135. Նոր բառեր են մաքսանենգ, մաքսախոյս, մաքսայինն, մաքսապաշտպան և այլն։*

=*Ասոր.* ܡܰܟܣܳܐ maxsā *«մաքս» բառից. այս բառը բնիկ սեմական է. համմ. ցեղակիցներից ասուր.* mi-ik-si *կամ* miksu *«մաքս»,* makisu *կամ* ma-ak-ka-su, makkasu *«մաքսաւոր»* (Delitzsch, Assyr. Hndwrt. 407, Strassmaier, Alph. Werz. *էջ 619, 620, 657*). *հբր.* מכס mekhes, *արաբ.* مكس maks, *արամ.* מכסא miksā *«մաքս». փոխառութեամբ նաև պրս.* مكاس mukas, مكيس mukīs *«մաքս»։ Հիմնական նշանակութիւնը պահում է դեռ արաբ.* مكس maks *«մէկի ծախած ապրանքը պակաս գնով առնել, պակասեցնել, հարստահարել», (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 294)։—Հիւբշ. 311։*

Ուղիղ մեկնից նախ Schröder, Thesaur, 46: *ԳԴ պրս.* mukās, mukīs: Riggs, *Քերակ. 1850, էջ 60 հբր.* mekes *ձևից։* Müller. SWAW 41 (1863) 12 և 42, 329 *դնում է սեմականից փոխառեալ։ Տէրվ.* Altarm. 69 *սեմականների հետ նաև ֆինն.* maks *«տուրք»։ Ըստ* Jensen *փոխառութիւնը հաթեան շրջանից է։*

ՄԿԼԻԼ *«մաքառիլ». մէկ անգամ գործածուած է Ոսկ. ես. 160. «Ոչ ոգորիցի և ոչ ջանայցէ և ոչ մղիցի»։*

ՆՀԲ *մագիլ բառից, իբր* մագլցիլ։

+ՄԿԼԻԼ *«նեխիլ, բորբոսիլ». որից* մրգլաճուռ *«մգլածի հոտ ունեցող» Վստկ. 100. կամ* մգռաճուռ *«նոյն նշ.» Առաք. պտմ. 99, 352։*

Lag. Arm. Stud. § 1463 *համեմատում է ասոր.* ܡܓܘܠ məgūl, ܡܘܓܠܐ muγlā *«թարախ, վէրքի ջուրը, ձիթապտղի կորիզների հիւթը», արաբ.* مجل

majl «ուռեցքի կամ վէրքի մէջ հաւաքուած ջուր, հուն»։ Հիւրշ. 311 չի ընդունում այս համեմատութիւնը՝ նշանակութեանց տարբերութեան պատճառաւ։

ԴԻՒ.—Սչ. մգ՝լել, Խրբ. մգ՝լիլ, Ջթ. մը՝գ՝լիլ, Հճ. մոգ՝լել, Ալշ. մկլել, Ախց. Ակն. Կր. Պլ. Ռ. Սեբ. մ՝լիլ, Երև. Ննխ. մ՝լել, Համշ. մ՝լուշ, Ասլ. մը՝լիլ, իսկ Ղրբ. մկլա՝վրէա (<մգլաճուա) «խանձի հուռ»։—Սրանցից տարբեր են Նբ. Շլ. Վն. մգլիլ, Մկ. մբկ՝լիլ, Ալշ. մկլտել, Մշ. մգ՝լօդել, մկլօդել, Նբ. մգլտիլ, Ոզմ. մբ՝լլիլ, Երև. մ՝լել «երկինքը ամպոտիլ»։—Ըստ այսմ մգլիլ բառը ունի հինք տարբեր նշանակութիւն. «1. բորբոսիլ. 2. խանձիլ. 3. ամպոտիլ»։ Տարակոյս չկայ՝ որ վերջինը պատկանում է մեզ արմատին (տե՛ս այս բառը). բայց կարծում եմ որ նոյն են նաև առաջին երկուսը, իբրև ընդհանուր «սևանալ» իմաստով։—Ա.Ճ.

*ՄԴՐԻՇԱՅ «երգ, կցուրդ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Գորիա և Շմոն, տպ. Վղրշպտ. էջ 90. «Եւ ասէին ի վերայ նոցա սաղմոս և մդրիշայս (տպուած է մդրիլայս՝ բստ ձեռագրին) և փառաւոր առնէին և օրհնէին զտէր Աստուած մեր»։

=Ասոր. ܡܕܪܫܐ madrāšā «երգ, կրցուրդ». բառս սխալ ձայնանիշով կարդացուած է մդրիշայ, որ ձեռագրում չետոյ սրխալ դրչութեամբ դարձել է մդրիլայ։ Արմատն է drš. Համմտ. արաբ. درس darasa «ուսանիլ», dars «դաս», եբր. miḏrāš «մեկնութիւն, մեկնաբանութիւն»։

Նորագիւտ բառս առաջին անգամ երևան հանեց Միսբան, Գորիա և Շմոն, էջ 32, համարելով ասորերէն։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Մառ ՀԱ 1898, 270″ և չետոյ ասորագէտ Gussen ՀԱ 1913, 135։

ՄԵԳԱՂԷ (սեռ. -ղու) «մեծ» Ագաթ. Զեն. «Ղևոնդիոս արքեպիսկոպոս մետրապոլիտ՝ մեգաղէ կեսարու. Հայրապետիդ Ղևոնդի՝ մեգաղու կեսարու». ուրիշ օրինակ չկայ։

=Յն. ὁ μεγάλη «մեծ, մեծն»։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՄԵԳԱՐԵԱԼ. նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 208. «Ի նոյն միակ պարառեալ և չհօթնիցն երկրորդացն դասուէ շաղկապեալ և չիրն սիրեցեալ միակ մեգարեալ և անդուստ չերկեակն երրորդին թաւացեալն և չօդն չանգեալն»։—Խօսում է թուերի անիմանալի մի չարաբերութեան վրայ, որով բառի իմաստը շատ մութ է մնում։ Կայ չն. μέγαρον «սրահ, ժողովարան, տաճարի մէջ պատգամախօսի տեղը», որից կարող էր Մագիստրոս մի բայ չօրինել։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 195)։

*ՄԵԹԵԼ «ցնդաբանել, չիմար չիմար խօսիլ». մէկ անգամ ունի Ոսկ. մ. բ. 16, էջ 604. «Անսային իսկ ոչ, և այլ ընդ այլոց մեթելոց էին»։

=Յն. μυθέω, μυθέομαι «պատմել, խօսիլ, խորհրդածել», բայց մանաւանդ μυθεύω «առասպելաբանել»՝ μῦθος «զրոյց, առասպել» բառից։ Ըստ այսմ մեր բառը ուղղելի է *միթել կամ միթել։

ՆՀԲ համարում է դրչագրական սխալ և սրբագրում է մեկնել։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւնք. էջ 323։ Վարդանեան ՀԱ 1921, 501 ձեռագիրներում գրանելով միայն մեկնելոց ձևը, ի սպառ ջնջում է բառս, համարելով այն ՆՀԲ-ի «ինքնակերտութիւններէն»։

*ՄԵԹՈՏ «կերպ, եղանակ, միջոց». գործածական է արդի գրականում (արևել. մերող). հները չունին, թէև ՓԲ նշանակում է մեթոտոս ձևը։

=Յն. μέθοδος «խուզարկութիւն, քննութիւն, գիտական խնդրի կանոնաւոր ուսումնասիրութիւնը». ծագում է μετά «ընդ» և ὁδός «ճամբայ» բառերից. փոխառութեամբ անցած է բազմաթիւ լեզուների՝ իբրև գիտական բառ. ինչ. լտ. methodos, methodus, ֆրանս. méthode ևն։—Ա.Ճ.

*ՄԵԼԱՄԱՂ «սևամաղձ», որից մելամաղձիկ, մելամաղձոտ, մելամաղձութիւն, մելամաղձոտութիւն. հների մէջ չէ՛ գործածուած. կայ միայն նոր գրականում, իբր «տրտում, տխուր ևն»։

=Յն. μελαγχολία «սև մաղձ» բառից կիսովին թարգմանուած. (μέλαν «սև» պահուած է, իսկ χόλος· «մաղձ» թարգմանուած

է)։ Նոյն բառն է՝ որ թրք. եղել է malixulia, որից էլ հյ. մախուլիայ. Համմտ. «Յաւ ինչ անկի ի նա, զոր մախուլիայ կոչեն կամ սավտայի՝ այլազգիքն». Մոթ. և ապր. 80։— Հին բժշկութեան կարծիքով մաղձը սևանալուց յառաջանում էր ընդհանուր տխրութիւն։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ. նոյնը նաև Müller SWAW 41, 10:

***Մելան**, ի–ա հլ. (գրուած նաև մեղան) «թանաք» Ոսկ. մոթ. էջ 1. Վրք. հց. Անյ. բարձր. որից մելանաւ «թանաքամանը» ԱԲ. մելանագիծ «թանաքով գրուած» ՀԲ. մելանաձուկ «մի տեսակ ձուկ, իբր տճկ. միւրէքքէպ պալըղը» (նոր գրականի մէջ)։

=Յն. μέλαν «թանաք» բառից. բուն նշանակում է «սև» և մասնաւոր առումով «սև թանաք», թէև այժմ ամէն գոյնի թանաք էլ կոչւում է մելան. Համմտ. ռուս. чернила, գոթ. swartizl, լտ. atramentum, որոնք նշանակում են «թանաք», բայց ծագում են «սև» բառից։ Ըստ այսմ հայերէն էլ թարգմանաբար կազմուած է սևակ, սևադեղ «թանաք»։ Յունարէնից փոխառեալ են նաև վրաց. მელანი մելանի, թուշ. მელა մելա և մինչև անգամ սանս. मसी melā «թանաք» (Böhtlingk, Sans. Wört. V. էջ 907)։ —Հիւբշ. 364։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԳԻՒ.—Արևելեան գրականում գործածական չէ բառս, այլ կայ միայն արևմտեան գրականում. ճիշտ ինչպէս կաղամար գործածական է միայն արևմտեան գրականում, իսկ արևելեանի մէջ թանաֆաման։—Գրականից փոխառութեամբ անցած է նաև բարբառներին. ինչ. Ալշ. Համշ. Սեբ. մէլան, Պլ. Ո. մէլամ են։—Տփ. ևս ունի մէլան՝ փոխառութեամբ վրացերէնից։

***Մելաւի** «ոչխար», իբր օտար բառ յիշում է Նոնն. 38, որից և մելաճարակ «հովիւ». «Քանզի մելաւ զոչխարէ ասացեալ Հոմերոս. աստուած և մելաճարակք են հովիւք»։ (ՆՀԲ գրում է միլոն, միլաճարակ, այլ ձ. միլօն, միլիոն)։ Համմտ. նաև մելովաէ, միլոբուս։

=Յն. μῆλον «ոչխար» բառից. իսկ մելաճարակ կազմուած է թարգմանաբար μηλοβοτήρ. «խաշնարած» բառից։—Հիւբշ. 365։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Մելիովտայ տե՛ս Միղիղովտայ։

***Մելիք** «իշխան» Ուռհ. 403. յգ. մելիքնի Սամ. անեց. շար. 143. սեռ. մելիքաց Լմբ. օր. 5. որից մելիքութիւն Ուռհ. 406։

=Արաբ. ملك malīk, թուրքական արտասանութեամբ՝ melik «տէր, իշխան», որ գալիս է mlk «տիրել, իշխել» ընդհանուր սեմական արմատից։

ԳԻՒ.—Տես. Ղրբ. մէլիք։

Մելիմաստենաց «անառակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի կանոն. էջ 183. «Կընքահայրն (լիցի) ո՛չ կին, ո՛չ այլազգի, ո՛չ յիշոցնաւոտ, ո՛չ մելոմազնաց, այլ լաւ քրիստոնեայ և գիտուն»։ Նոյնպէս է նաև Շողակաթ, էջ 38, 43, ուր հրատարակիչը (Գարեգին վրդ.) նկատում է թէ Երզնկացին իր խմբագրութեան մէջ բառս թարգմանած է «շնացող»։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 165)։ Արմատն է "մելոմ–, որ բարդուած է գնաց բառով։

***Մելովտէ** «ոչխարի մորթ». մէկ անգամ ունի Նոնն. 38, իբր օտար բառ. ամբողջ վրկայութիւնը տե՛ս միլոբուս։ ՆՀԲ գրում է միլովաէ։

=Յն. μηλωτή «ոչխարի մորթ». արմատը տե՛ս մելաւ։—Հիւբշ. 365։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***Մեխակ** «ձաղախոտ, խարանֆիլ» Բժշ. (ըստ ՀԲուս. § 2033 լտ. caryophyllus):

=Պրս. میخک mexak «մեխակ». բուն իմաստն է «փոքր գամ» և գալիս է میخ mēx «գամ, բևեռ, մեխ» բառից. այսպէս է ստուգաբանւում մեխակը նաև ուրիշ լեզուներում. Համմտ. գերմ. Nägelein, ֆրանս. clou de girofle, ռուս. гвоздика «մեխակ» (< гвоздикъ «գամ» բառից)։ Պարսիկ բառը փոխառութեամբ տարածուած է նաև ուրիշ շատ կովկասեան լեզուներում. ինչ. վրաց. մինգ. խին. բուդ. mixaki, ուտ. mixak, ջէք. mixagi, թուշ. mixak, ավար. mexak, բոլորն էլ նոյն նշ։—Հիւբշ. 270։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. նոյնը նաև Lag. Arm. Stud. § 1465 են։

ԳԻՒ.—Ջղ. մեխակ, Ագլ. մէ՛խակ, Երև.

Տփ. միխակ, *Շմ. Ալմ.* մխոմ[1], *Ղրբ.* մուխոգ[1], *Մրղ.* միխոյ:

+Մեծ, ի–ա *հլ. (յետնաբար կայ նաև ի, ու հլ.) «մեծ», լայնաբար նաև «շատ, զօրեղ, իշխանաւոր, հարուստ» Սգր. Եփր. Թգ. Եւս. պատմ. Ոսկ. մ. բ. 2. այս արմատից կազմուած են բազմաթիւ և բազմազան բառեր, որոնց հնագոյններից յիշենք մի քանիսը. ինչ.* մեծանալ *Սգր.* մեծամեծ *Սգր. Ոսկ. Եւս. քր. Եզն. Ագաթ. Սերեր.* մեծատուն *«հարուստ» (որ մեծ տուն ունի) Սգր. Սերեր.* մեծարել *Սգր.* մեծարանք *Սգր. Կոչ. Սերեր. Եւագր.* մեծարոյ *Սգր. Սերեր. Ոսկ. Եզն.* մեծամեծար *Օր. լգ. 26 (սրանք կազմուած են –ար մասնիկով).* մեծաբարբառ *«բարձրաձայն» Կոչ. Ոսկ.* մեծաբեռն *«ծանրաբեռն» Ագաթ. Վեցօր.* մեծագին *«թանկագին» Սերեր.* մեծագոր *«հզօր» Սգր. Եզն. Ագաթ. Եւս. քր.* մեծախումբ *«բազմախումբ» Բուզ.* մեծահանգոյց *«արագ գնացքով. օրական մի քանի իշեան կտրելով» Եփր. մատ. Ա. էջ 401 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 274) են. այս բոլորի մէջ երևում են բառիս զանազան առումները: Բարդութեանց ծայրը ունինք* հիւրամեծար *Կորիւն. Վեցօր.* ձիւնամեծ *Շիր.* գառամեծար *ՅՀ. կթ.* մեծամեծար *Օր. լգ. 26. Ոսկ. Ես. 284.* գերամեծար *Ճառընտ.* նոամեծ *Մագ. Գնձ.* ծառայամեծար *Արշ.* կանխամեծար *Նար.* նախամեծար *Իմ. է. 8. Ոսկ. ա. 22, գ. 3 են: Նոր բառեր են* մեծագումար, մեծաղիր, մեծաղդուդ, մեծահասակ, մեծահարուստ, մեծախօսութիւն, մեծամասնութիւն, մեծամասնական, մեծատան, մեծարելի, մեծարժէք, մեծահանակ, մեծապետական *են:*

=*Ինիկ հայ բառ՝ որ գալիս է հնխ.* még'a- *կամ* még'a- *ձևից. ցեղակիցներն են՝ սանս.* महान् mahān, महत् mahānt- *(բարդութեանց մէջ* मह maha-), माहि máhi *«մեծ»,* máha-, majmán- *«մեծութիւն», քուչ.* makī- *«շատ», զնդ.* maz-, mari, maza-, mazant- *«մեծ»,* mazō *«մեծութիւն», պհլ.* mas, *պրս.* mih, *պազենդ.* meh, *քրդ.* mezin *«մեծ»* (Horn § 999), *յն.* μέγας, μέγα, μεγάλη *«մեծ»* μείζων, μέζων, μέγιστος *«մեծագոյն», կամիս.* mekki *«շատ»,* *ալբան.* maθ *«մեծ»,* maδi *«մեծն»,* maδóń *«փառաբանել». լտ.* magnus *«մեծ»,* maius *«մեծագոյն» (որից և* Deus Maius *«Մեծագոյն Տէր, Արամազդ», յետոյ դարձած* մայիս ամիսը), *գոթ.* mikils, *հբգ.* michil. mihhil, *անգսք.* micel, *հսաքս.* mikil, *իսլ.* mikill, *դան.* magle *«մեծ», հիսլ.* mjak *«շատ, յոյժ», անգլ.* much *«շատ», միսլ.* mass *«փարթամ մարմնով, գեղեցիկ»,* maige, maighne *«մեծ»,* māl, mael *«մեծ, ազնուական, իշխան, թագաւոր», կիմր. կորն.* mehin *«գէր» են: Հետաքրքրական է յատկապես յն.* μεγαίρω *«նախանձիլ (մէկին մեծ կամ գեղեցիկ համարելով)»=հյ.* մեծարել (Pokorny 2, 257, Boisacq 616—7, Ernout-Meillet 551, Walde 454):—*Հիւրշ. 473:*

Klaproth, Asia pol. 101 *յն.* μέγα *զնդ.* mese, *պհլ.* masa *ձևերի հետ:* Brosset, JAs. 1834, 369 *ուղիղ համեմատութեան հետ դնում է նաև վրաց.* մաղալի: *Նշիր հայերէնից է դնում «յն.* մէ՛գաս, մի՛գօն, *լտ.* մա՛կնուս, մայո՛ռ, *սանս.* մահաթ»: *Ուղիղ են* Peterm. 23, Windisch. 13, Gosche 25 *(որ սրանց հետ միացնում է նաև փռիւգ.* Μαζεύς *«Դիոս», պրս.* Μαζάκης, Μαζαῖος, *մար.* Μαζάρης, *կապադովկ.* Μάζακα, *վոսփորական* Μαζαία *յատուկ անունները) են: Մորթման* ZDMG 26, 516 *բևեռ.* maçiniani, 540 maçini *«մեծ»,* Jensen ZDMG 48, 456, Hitt. u. Arm. 97, 130. 179 *հաթ.* mzis, mzia, msi, ms *«մեծ»: Պատահական նմանութիւն ունի չէրքէզ.* mazi *«ծեր», սվան.* meji, meči *«ծեր, պառաւ»:*

Գիւտ.—երև. Շմ. մէծ, *Գոր.* մէծծ, *Ալշ. Հճ. Մշ. Սչ.* մեծ, *Ակն. Ննխ.* մէձ, *Ղրբ.* մըէ՛ծծ, մը՛ծ, *Ագլ.* միծ, *Հմշ.* միձ, *Ախց. Կր.* մէնծ, *Լ. Ջղ.* մենձ, վենձ, *Խրբ. Խր. Պլ. Ռ. Սեբ.* մէնձ *(բայց* մէզնալ *«մեծանալ»), Ջթ. Սվեդ. Տիգ. Տփ.* միենձ *(բայց Տփ.* միծավուր *«մեծաւոր, իշխան»,* միենձա միենձա *«մեծ մեծ», մէձրիլ «մեծարել, հիւրասիրել» և Տիգ.* մէնձնալ *«մեծանալ»), Ասլ.* մրենձ, մրզ: *Բրբախօս*

հայերից Առն. մէնն «մեծ»։—Նոր բառեր են մեծակեր, մեծաճաճ, մեծաճարկ, մեծաձուկ, մեծայ *կամ* մեծար *«մեծ մայր»*, մեծարհ, մեծարհաճաչ, մեծաւոր, մեծաւուն, մեծխոսիկ, մեծկակ, մեծղի, մեծմեծաճան, մեծմեծաւուն, մեծուր, մեծուճամ, մեծուց, մեծտու *«մամ» են։*

ՓՈՒ.—Margoliuth, *Բրզմ. Բիւր. 1900, էջ 334 հյ.* մեծադուռն *բառից է դնում եբր.* מסרון misdrōn *Դատ. Գ. 23 անբստոյգ բառը, որ ըստ* Gesenius, *Բառ եբր. 1921, էջ 439՛՛ Թևրևս նշանակում է «սիւնազարդ գաւիթ, գալլերիա»։*

ՄԿԱՆԱԻՈՐ, *անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մաղաք. աբ. 33. «Յամէն շէն դեղէ մեկանաւոր հանէին և ի փոքրէն մէկ, ի մեծէն երկու կամ երեք. և անուանեաց գնոսա իամս (ՔՔր. «սուրհանդակ») և առաքէր գնոսա ամէն աւեր տեղիսն առնել շինութիւն»։*

Մեկին, Մեկնիլ *տե՛ս Մի։*

Canini *տե՛ս մուղ, մղել բառի տակ։*

ԴԻՒ.—*Ակն.* մէյնել *«տարածել», խրբ.* մէյնիլ *«փռել», Ջղ.* մենկ *«շիտակ, ուղիղ» (օրին.* մե՛կն ճատիր*). Երև.* մէկնել *«երկարել (ոտքերը են)»։*

***Մեկոն** «խաշխաշ բոյսը, լտ.* papaver *(Տիրացուեան,* Contributo § 172*)» Նիւս. կազմ. հնագոյն ձևն է* մեկոնիովն *Վեցօր. 89. որ և* մեկոնիոն *Վեցօր. 88. Վրդն. ծն. Յայտմ.։*

=Յն. μήκων *«խաշխաշ»,* μηκώνιον *«աւիշոն, խաշխաշի հիւթը» բառերից։ Սրանց ծագումը անյայտ է. Թևրևս միջերկրեան բառ լինի, որովհետև բոյսը միջերկրական ծագումից է* (Boisacq 632)*: Յունարէնից են փոխառեալ նաև հրգ.* māgo, *մրգ.* māge, mān, māhen, *գերմ.* mohn, *հսլ.* makŭ, *լհգ.* mak, *ռուս.* макъ, *լեռթ.* magone, *հպրուս.* moke *հոմանիշները* (Kluge 334)*:*

Ուղիղ մեկնեցին ՀՀՒ և ՆՀԻ։

ԴԻՒ.—ՆՀԻ և ՋԻ դնում են ոմկ. մաՀ, մագ, մեգ հոմանիշ ձևերը. սրանք անշուշտ ԼհՀահայոց մէջ գործածական ձևերն են և փոխառեալ լհգ. mak *բառից. այսպէս նաև Կովկասում տեղ տեղ գործածական* մակ *ձևը որ փոխառեալ է ռուս.* макъ *բառից։*

Մեկուսի *տե՛ս Մի։*

***Մեհեան,** ի, ի-ա հլ. «կռատուն, կուռքի տաճար», լայնաբար «բագին, զոհարան» ՍԳր. որից* մեհենագիրք *Եւս. քր.* մեհենազարդ *Գծ. ժԹ. 35.* մեհենական *Եւս. քր.* մեհենակապուտ *Գծ. ժԹ. 37.* մեհենաշէն *Ագաթ.* մեհենապետ *Պիտն. 379, 388.* մեհենասէր, *Բուզ.* մեհենատեղի *Բուզ. յոգնակի ձևով կայ* մեհենանի *Մագ. մեծ են. էջ 66. սեռ.* մեհենաց *Խոսր. 94։*

=Հիւս. պհլ. *meh *բառից փոխառնալ, որ է Միհր աստուած (հյ. -եան մասնիկով). Համմ. պրս.* در مهر dar-i-Mihr *«Միհրի դուռը կամ մեհեան, տաճար (փարսիների)». Ենթադրում է իրան.* *māiθryāna *նախաձևը. որի ձայնական փոփոխութիւնը ճիշտ այնպէս է, ինչպէս մեհենական բառի մէջ։*

ՆշՒ լծ. Թրք. մեհեան, մէսճեան *(իմա՛ արաբ.* makān, maskan *«տեղի, բնակարան»). Միհր բառից են հանում էմին,* Ист. Вардана 85, *Հայ. հնթ. կրօնը (Բրզմ. Յոյս 1875, 414), Սէր 1862, թ. 24, էջ 183,* Lag. Gesam. Abhd. 9 *և* Beitr. baktr. Lex. 49, *և Թիրեաքեան, Կարնամ. էջ 44։—Կ. Վ. Ս., Արարտ. 1879, էջ 224 պրս. (իմա՛ արաբ.)* makān *«տեղ»։ Հիւնք. պրս. մէյ «գինի» բառից։ Ալիշան, Հին Հաւ. 103 և 429 լծ. է դնում* մաճիկ *և մեհենական բառերի հետ։ Հիւրշ.* Arm. Gram. *էջ 194 անապահով է համարում դնել Միհր բառից։ Ուղիղ մեկնեց վերի ձևով* Meillet MSL 17, 246, JAs. 1907, *էջ 158 և* RBA 1, 234*:*

Մեհեծ *«բանայ». ունի միայն Բառ. երեմ. էջ 208։*

***Մեհեկան** «հայկական տոմարի եօթնեւրորդ ամիսը, որ անշարժ տոմարով համապատասխանում է փետրուար ամսուան» Կորիւն. Խոր. Կաղանկտ. (երեքն էլ սեռ. մեհենկանի ձևով. ուղղականը չէ գործածուած). ունինք նաև* մեհենկի *(ուղ. *մեհենակ) ՅՀ. կթ.* մահենկի *(ուղ. *մահենակ) վանակ. տաբեմ.։*

=Հպհլ. *mihrakān *համանիշից փոխառնալ. սրա հետ համմտ. Հպրս.* Miθrākāna *(այսպէս պէտք է ուղղել Ստրաբոնի* τὸ

Μιθραϊνοις) *«Միհրի տօնը», պհլ.* mihragān *(գրուած է* mitrugān), *պրս.* مهرگان mihrgān *(կամ արաբացեալ* مهرجان mihrijān) *«պարսից հօթներորդ ամիսը, սեպտեմբեր, աշնանամուտ կամ աշուն, սեպտեմբեր 16-ին կատարուած մեծ տօն ի պատիւ Միհր աստուծոյ»։ Այս բոլորը ծագում է պհլ.* Mihr *(գրուած է* 𐭬𐭩𐭮𐭫 Mitru), *պրս.* مهر mihr *բառից, որ Միհր աստուծոյ անունն է և նշանակում է նաև «պարսկական հօթներորդ ամիսը», որ նուիրուած էր Միհրին. հմմտ. պրս.* ماه مهر mihrimāh, mihrmāh *«սեպտեմբեր ամիսը»։— Զայնական փոփոխութեանց համար հմմտ.* **մեհեան** (**Միհր** *բառից*) *և* **աւեկան**<*պհլ.* *āθrakān, *āhrakān։—*Իրանականից է փոխառնալ նոյնպէս վրաց.* **მოძრაკნი მიჰრაკნის** *ամաանունը (Մատ, Физіологъ* 1904, *էջ* XXXVII)։—*Հիւբշ. 194։*

Հներից Վանակ. տարեմ. և Տաթև. հարց. 201 աստղաբանում են. «Մահեկի, զի տունկք և բոյսք որպէս զմեռնալ լինին եղեմնապատ և ձիւնաթաղ. մահ եկի, այսինքն ածի»։ Տաթև. ձմ. ա. մեկնում է «Մեհեկի՝ զմոլորութիւն հրէիցն ասէ, զի հրէայքն մոլորութեամբ կուրացան»։ **Միհր** *բառից է դնում* Böttich. ZDMG 1850, 365:—Lag. Ges. Abhd. 9 *և* Beitr. baktr. lex. 48 *իբր պրս.* mihrigān։ — *Կոստանեան, Հայ. հեթ. կրօնը, Վղրշապ. 1879, էջ 27 դնում է* **միհրական**, *Միհր աստուծոյ անունից, «որի ընդարձակ ժողովրդականութիւնը երևում է և այն տօնից, որ կատարւում է փետրվ. 13-ին (Մեհեկան ամիս) Տէրընտազ անունով»։ Ալիշան, Հին հաւ. էջ 103 պրս.* māh *«լուսին» բառի հետ. իսկ էջ 141 նաև* **Մահևան, Մեհենդակ** *յատուկ անունները, Խաչկոնց, Բիւր. 1898, թ. 4 կցում է հեթ.* ma *«լուսին աստուածուհի»։* Benveniste REA IX ! (1929), *էջ 10 աւելի լաւ ճշտելով բառիս ձևը՝ դնում է* **մեհեն**(*կան*)<*իրան.* māiθrya-:

Մեհեննջանք *«զարդարանք». ունի միայն Բառ. երեմ. էջ 208. մէկ անգամ գործածում է Մագ. գամագտ. ժե. «Զի մի՛ մախիզ մնասցէ մխերևալ մեհենջանք՝ ձանձեալ աստուստ յՌեսաոփանէ»։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց (ըստ Հին բառ.) Մէնէվիշեան ՀԱ 1911, 719, միանգամայն մատնանիշ անելով մեհենանդ և ապարանջանք բառերը։

***Մեհենանդ** *«կանացի մի զարդ է. մանեակ կամ ապարանջան» ՍԳր. Եփր. նին. էջ 121.—ըստ Հին բռ. «լանջագեղ կամար կամ անթանոց». ճշդագոյն նշանակութիւնն է ըստ Հացունի, Պատմ. տարազի, էջ 124 «տեսակ մը գոհարազարդ ապարանջան՝ որ թևին կը կապէին»։*

=Իրանեան փոխառութիւն է, ինչպէս ցոյց է տալիս բառի վերջին մասը՝ որ պրս. بند band *«կապ» բառն է. հմմտ.* **դանդաճաւանդ, բանուանդ**։—*Հիւբշ. 194։*

Ալիշան, Հին հաւ. 103 դնում է մանիկ բառից, իբր «լուսնաձև»։ Յակոբեան, Բանաս. 1900, էջ 40 պրս. **միհրպէնա**, *որ սակայն չգիտէ Կ՚Ի (նթէ չէ պրս.* مهربانی mihribānī *«տեսակ ինչ միտաբանայ կերպասու և հանդերձի», որ բնաւ յարմար չէ մեր բառին)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 273 կազմում է պրս.* ماه بند māh-band *«լուսնի մահիկի ձևով զարդ»։ Կարելի էր դնել նաև պրս.* مهربند muhra-band *«ուլունք-կապ», որի առաջին մասը՝ պրս.* مهره muhra *«ուլունք ապակեղէն» յիշում է նաև Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 114 և նրանից փոխառնալ է համարում արաբ.* مهره muhra *«ուլունք»։*

ՓՈԽ.—Վրաց. **მელავანდი მելավանդի, მელევანდი մելևանդի** *«թևի ապարանջան», որ գործածուած է Թուղց լա. 50, ճիշտ այնտեղ, ուր հայերէնն էլ ունի մեհենանդ բառը։*

***Մենհրապ** *«մզկիթի աւագ սեղանը» Նոր վկ. էջ 109 (ԺԹ դարից). գրուած և* **մահրապ**։ *(Սպանին շուն մի և զշան գլուխն տարեալ հղին ի մհրապն և զշունն կախեցին ի դուռն մզկթին)։*

=Արաբ. محراب mihrāb *նոյն նշ.—Սրա*

հետ կապ չունի Մեհրաբ յատուկ անունը, որ Կովկասում յաճախ պատահում է Սեհրաբեան ազգանուան մէջ և է պրս. مهراب Mihrāb «է անուն քաջի միոջ ի Թուրանականաց անտի»։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս նոր վկ. էջ 789։

*ՄԵՀՐԻԿ «մրուանտակ, կատուախոտ, asarum» Բժշ. յիշում է իբր պրս. բառ. որից առնում է Հիւս. § 2036՝ իբրև անստոյգ բառ։

=Պրս. مهرگیاه mihrgiyāh կամ mihrgiyā բառի կրճատ ձևն է. այս բառը յիշում է Ամիրտ. իբր պրս. հոմանիշ ասարոնի (տե՛ս Հիւս. § 2139). բուն նշանակում է «խոտ սիրոյ». (և ասի թէ ի խոտոյ ասի եթէ ոք դոյզն ինչ ծրարեալ առ իւր ունիցի, որ ոք զնա տեսանէ՝ ի հարկէ սիրելութիւն առնէ ընդ նմա. տճկ. մուհապպէթ օթի. ԳԴ)։

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), որից յետոյ անկախաբար Նորայր, ՀԱ 1925, 304։

ՄԵՂ. տե՛ս Թալաս կամ Թալասմեղ բառի տակ։

ՆՀԲ կգում է հյ. մալեալ, մայող, Բրբ. մէլէյէն «մայող» և յն. μῆλον «ոչխար» բառերին. վերջինը յարմար է, եթէ ստուգուի որ հյ. մեղ իրօք առանձին գոյութիւն ունի։ Այսպէս նաև կաբարդին. mel «ոչխար»։

+ՄԵՂ, ի–ա հյ. (սովորաբար անեզական է, բայց կայ նաև եզ. ուղ. հյց. մեղ ձևը) «մեղք, յանցանք, վնաս» ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. Սերեր. Եփր. Բ. կոր. որից մեղանշել ՍԳր. մեղանալ «մեղք գործել» Ծուղթ. յա. 16. մեղանիմ Ոսկ. մ. ա. 14. մեղաւոր ՍԳր. մեղանչական ՍԳր. Եղն. Կոչ. Վեցօր. Ագաթ. մեղադիր ՍԳր. Կոչ. Կիւրղ. ծն. մեղապարտ Ոսկ. ա. կոր. Եփր. Թգ. անմեղ ՍԳր. չմեղ ԳՆԱ. չիմեղ Ոսկ. մ. բ. 2. մեղուցանել ՍԳր. բազմամեղ Ոսկ. ես. և մ. ա. 9. յեռնամեղ Եղն. սակաւամեղ Ոսկ. ա. կոր. երկրամեղ Նար. առաք. մեծամեղ Ոսկ. ես. և մ. ա. 18 հոլովուած ձևով՝ մեղացածին Ագաթ. մեղացային Ղևտ. զ. 25. մեղսաբեր Ագաթ. մեղսաթաթաւ Ագաթ. մեղսասէր Փիլ. Նար.—միջ. հյ. մեղկան «յանցաւոր» (չունի ԱԲ) Անսիզք 35. Սմբ. դատ. 42, 103.—նոր բառեր են մեղսակից, մեղայական, անմեղունակ են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mel- «սխալիլ, խաբել» արմատից. ցեղակից ձևերն են լիթ. mēlas «սուտախօսութիւն», milyti «թերանալ», լեթթ. ma'ldīt «սխալիլ», mu'ldēt «թափառիլ», me'lst «խառնաշփոթ կերպով խօսիլ». յն. μέλεος «զուր, անօգուտ, խեղճուկ, թշուառ», ἀμβλακίσκω «սխալիլ, մոլորուիլ» (?), βλάσφημος (-φήμη «խօսք») «անարգիլ» (արմատը βλασ<μλασ<*mļs, որ է melos), իռլ. mell «մեղք, յանցանք, սխալ», mellaim «խաբել», գնդ. mairya- «խաբէական, սրիկայական», և թերևս նաև լտ. malum «ցաւ, տառապանք, պատիժ, վնաս, սխալ, յանցանք, ոճիր», malus «գէշ, չար» (Pokorny 2, 291, Boisacq 122, 623, Ernout-Meillet 553, Walde 457):—Հիւբշ. 473։

Հներից Լմբ. անատ. 133 ստուգաբանում է մեղկ բառից, այսինքն հոգին թուլացնող. «Մեղքն ստուգաբանի մեղկութիւն և հոսումն մտաց՝ ի խոտորնակ հեշտութիւնն, զայս ասէ՝ զիմ ի հեշտութիւնն մեղկկեն, և մոլորելն, յերկինսդ բարձրացուցի»։ Նոյնը Տաթև. սղ. ճե.։ Նորերից նախ ՆՀԲ լծ. լտ. malum «չար»։ Windisch. 17 լտ. malus «չար»։ Böttich. ZDMG 1850, 358, Arica 80, 335, Lag. Urgesch. 218 և Müller SWAW 38, 588 և 591 սանս. mala «աղտ, կեղտ» բառի հետ։ Հիւբշ. ZDMG 36 (1882), 116—7 և Arm. Stud. § 192 յն. ἁμαρτία, ἁμαρτάνω «սխալ, սխալիլ»։ Տէրվիշ. Նախալ. 98 հնխ. mar արմատից է դնում սանս. mar, յն. μάρνασθαι «մարտնչիլ», թերևս լտ. malus «չար» և հյ. մեղք, մարտ, մեղանչել, մարտնչիլ։ Մառ ՅԲՕ 5, 319 գնդ. peša «պարտք» բառի հետ, որից նաև պարտք։ Ուղիղ մեկնեց Bugge KZ 32, 18, որին համաձայն է Meillet, MSL 8, 279, որ համեմատում է լտ. malus և լիթ. milyti: Հիմնք. զեմեղել բայից է հանում։ Müller SWAW 136 (1897), 26

կրկնում է դեռ սանս. mala «*կեղտ, մեղք*», *որին հետևում է* Trautmann, *էջ 178*; Prellwitz 18 (*ըստ* Boisacq 51) *յն.* ἀμβλακίσκω «*սխալիլ*», *որի այստեղ պատկանելը կասկածելի է*։

Գիր.—Ալշ. Հճ. Մշ. Սչ. մեխ, *Ոզմ. վն.* մեխ[1], *Ախց. Ջթ. Խրբ. Կր. Համշ. Ննխ. Ռ.* մէխ, *Ջղ. Սլմ.* մեխկ, *Ագլ. Գոր. Ղրբ. Շմ.* մէխկ, *Ակն. Պլ. Սեբ.* մէխգ, *Երև.* մեխկ, *Տփ.* միղ, միխկ, *Ասլ.* մէ՝խգ, մէ՝խ*, *Սվեդ. Տիգ.* միխ, *Մրզ.* մրէխկ[1]։ *Բրքախօս հայոց մէջ կայ Աստ.* մաղդրել «*մեղադրել*», մէղավօր «*մեղաւոր*», մէղա հացցի՛կ (*ասում են, երբ հացը պատահմամբ գետին ընկնի*), *էնկ.* մէղօք «*չհաս*» (*Բիւր. 1898, 865*)։—*Նոր բառեր են* մեղաւորնալ, մեղդրուիլ, մեղ՛ուցիչ գալ, մեղօք, մեղ՛նալ, մեղագիր։

Փոխ.—Ուտ. meγaesun «*մեղայ գալ*»։

ՄԵՂԱՅ «*աստուած*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 208*։

***ՄԵՂԱՆՊՈՂԱԿԱՆ** «*մի տեսակ տենդ կամ ջերմ*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Մագ. թղ. էջ 6. «Մթերեալ յինքեան զհամաքամուածս և զտողս և զափոդիտականս և զատիրրագուտականն և զմանիական մեղանպոդականաւն կիզեալս»*։

=Յն. Μελάμπους, Μελάμποδος *անունից. սա հնութեան հռչակաւոր մի բժիշկ էր. սրան է նուիրուած* Μελαμπόδεια *Հեսիոդոսի մի բանաստեղծութիւնը.* Μελαμποδίδαι *կոչում են իր ժառանգորդները.* μελαμπόδιον *անունն է կրում սև եղերբորսը, որ իբր թէ առաջին անգամ Մելամպոս բժիշկն է գործածել բժշկութեան մէջ։ Եվ զարմանալի չէ, եթէ տենդի մի տեսակն էլ այս հռչակաւոր բժշկի անունով կոչուած լինի. թէև այդ բառը չունի ո՛չ* Bailly *և ոչ* Sophocles (*տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 195*)։—*Աճ.*

ՄԵՂԱՐԴ «*լուսին*». *գիտէ միայն Բառ. երեմ. էջ 208*։

ՄԵՂԴԷՏ «*բանտ*». *գիտէ միայն Բառ. երեմ. էջ 208, որի հետ նոյն իմ կարծում Մագ. թղ. 237* մեղդէտ (*այլ ձ.* մեզդէտ) «*բանտարկեալ*» (*Աճառ. ՀԱ. 1923, 254*)։

***ՄԵՂԵԴԻ** (-դւոյ, -դեաց) «*մի տեսակ եղեգնական քաղցրաձայն երգ*» *Ինձ. Տաղ. երգ. ժմ. 912, 916*։

=Յն. μελῳδία «*երգ, մեղեդի*» *բառից, որ ծագած է* μέλος «*երգ*» (*ծագումը տես* Boisacq 625) *և* ᾄδω «*երգել*» *բառերից։ Փոխառութեամբ անցած է նաև ուրիշ լեզուների. ինչ. գերմ.* Melodie, *ֆրանս.* mélodie, *իտալ.* melodia *և այլն*։—*Հիւբշ. 364*։

Ուղիղ մեկնեց նախ Ն.Հ.

ՄԵՂԵԼ «*վարել*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 208, որ մի քիչ յետոյ էլ մեկնում է «միղել (կարդա՛ մզել) կամ քամել»*։—*Համմտ. նաև* մղել, *որ է «վարել»*։

ՄԵՂԵՆ (*սեռ.* -ի, *գրծ.* -ով) «*փայտատի կամ կացինի կոթ*» *Որ. ժմ. 5. Նխ. ժղ. Եփր. թգ. 410. «լախտ» Սմբ. պատմ. (ըստ Հացունի, Պատմ. տարազի 275)*։

Ն.Հ. մխիլ *բայից*։ *Հիւնք.* մաղմաղ *բառից*։ Petersson, Ar. u. Arm. Stud. 102 -ենխ *դնում է մասնիկ (առանց որևէ պատճառաբանութեան), ինչ.* կեռենխ *և գռոլխ բառերի մէջ*։

ՄԵՂԵՂՈՒԿ. *անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Եւագր. «Աւ խորհուրդն, որ վասն այսպէս կիրակրոց մեղեղուկս առնն»*։ *Ն.Հ մեկնում է «ողոքել կամ մեղադրել». Ջ.Ք չունի. Ա.Բ «մեղադրել կամ մե՞ղք վա՞խ ըսել»*։

ՄԵՂԵՍԻԿ *կամ* **ՄԵԼԵՍԻԿ** «*մի տեսակ պատուական քար. սուտակ, ամեթիստ*» *Եզնկ. իբ. 13. ուրիշ վկայութիւն չկայ*։

Հիւնք. յն. μελιτίτης λίθος, *որ է «տպազիոն»*։

***ՄԵՂԻԱՐԻՍ** «*ծանրութեան չափ է, որ է* 1/4 *ունկիա*». *մէկ անգամ ունի Շիր. էջ 28, իբր հռովմայեցի բառ*։

=Յն. μιλιαρήσιον, *որ առնուած է լտ.* milliarensis, milliarius «*հազարանոց*» *բառից*։—*Հիւբշ. 364*։

Յիշում է և մեկնում նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 129, յետոյ Պատկ. Շիր. էջ 28։

***ՄԵՂԻԼՈՎՏՈՍ** «*մի տեսակ բոյս. մեղրածուծ, կորնգան, լտ.* melilotus officinalis Lam. var. armena Boiss.» (*Տիրացուեան,* Contributo § 235) *Փիլ. լիւս. էջ 132. որ և*

մեղիղոտոն, մեղիղովտոս, մելիովտա Գաղիան.։

=Յն. μελίλωτον, μελίλωτος «կորնգան» (կազմուած է μέλι «մեղր» + λωτός «լոտոս ծաղիկը» բառերից և բուն նշանակում է «մեղրալոտոս»). սրանից են փոխառնալ նաև լտ. melilotus, ֆրանս. mélilot:—Հիւբշ. 518։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ (մեղրածուծ բառի տակ)։

ՄԵՂՄ. անստոյգ բառ. ՀՀԲ և ՋԲ մեկնում են «ձանձախարիճ, մուր». ՆՀԲ չունի. իսկ ԱԲ մեկնում է «անառակ». որից յոլովամեղծ «մրոտ» Նար.խր, էջ 121 (տպ. յոլովամեղձ. այսպէս նաև տպ. Պոլիս 1850, էջ 137. իսկ Աւետիքեան, Մեկն. Նար. Վենետ. 1859, էջ 241 ունի յոլովամեղծ)։

Scheftelowitz BB 29, 16 հհիւս. myrkr «մուր», հսաքս. mirki «խաւար» բառերի հետ՝ հնխ. merkg^{w}e ձևից։ Մերժում է Charpentier BB 1905, 166 և միացնում է գալլ. marga «կրախառն կաւային հող, արտի աղբ» և թերևս յն. ἀμόργη «ձիթապտուղի չէչ» բառերին։ Petersson, Ar. u. Arm. Stud. 135 հնխ. smel- «խարկել, աւրել» արմատից. համմտ. հոլլ. smeulen «անբոց այրիլ», անգլ. smoulder, մ. անգլ. smolder «ծուխը», լիթ. smilkýti «ծխալ», ռուս. смáлить «բոցավառիլ», լեհ. smalic «սև ծուխ արձակելով վառիլ, մրով սևացնել» են։ Pokorny, 2, 275 հակառակելով Scheftelowitz-ի համեմատութեան, գտնում է որ հյ. մեղձ իր ղ-ով պատկանում է հնխ. mel- «սև» արմատին, ինչպէս է նաև մուղջ. (համմտ. սանս. malinā-, յն. μέλας, լիթ. melns են, որոնք նշանակում են «սև»)։

+ՄԵՂԿ, ի հլ. «կակուղ, փափուկ, մեղմ. 2. կնատ, թոյլ, թուլամորթ» Սեբեր. Եզն. (Նիւթական իմաստի համար համմտ. Տիկ ջրով թրջեալ մեղկի. Վրդն. սղ. էջ 405). որից մեղկագոյն Ոսկ. մ. ա. 12, մեղկանալ Երեմ. դ. 31, Փարպ. մեղկացուցանել Ոսկ. հս. Եփր. Թգ. մեղկել Ոսկ. հս. մեղկութիւն Եզն. մեղկիչ Ոսկ. մ. ա. 10. մեղկախառնուդ Ոսկ. հս.։ Սաստկականն է զմեղկիլ կամ սմեղկիլ Վրդն. դան.։ Նշանակութեան փոփոխութեամբ ունինք մեղկիլ «ցաւ քաշել. ցաւ կրել», մեղկութիւն «ցաւ» Տիմոթ. կուզ, էջ 24, 29, 79, 275, 286, իբր հետևողութիւն յունարէնի (տե՛ս Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 87)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mel- արմատից, որից աճել է կ աճականով. բուն արմատի ժառանգները տե՛ս մալ «մանրել, փշրել» ձևի տակ. աճականի համար համմտ. յն. μαλακός «կակուղ, փափուկ, քաղցր, անոյժ»։ Նոյն արմատից d, dh, t և այլ աճականներով ունինք յն. μέλδω «մեղմել, հալել», μαλθακός «կակուղ, փափուկ, քնքոյշ, թոյլ, մեղկ», հիւլ. meldach «կակուղ, փափկիկ», անգսք. milde, հբգ. milti, հհիւս. mildr, գերմ. mild «քաղցրիկ, հեզ, փափուկ», գոթ. mildiϑa «քաղցրութիւն», լտ. mollis (<*moldvis) «կակուղ, թոյլ», հպրուս. maldūniu «հրիտասարդութիւն», maldenikis «երիտասարդ», հսլ. mladŭ «մատղաշ, փափկիկ», լեհ. młody, ռուս. молодой «մատղաշ, երիտասարդ», млодшій «կրտսերագոյն», սանս. mṛdú- «կակուղ, փափկիկ, քաղցր, տկար», mradīyaṁs, mrad-iṣṭha «կակուղ» և հյ. մեղմ, մատաղ, մատղաշ (Pokorny 2, 288, Boisacq 49, 603—5, Trautmann 167, Ernout-Meillet 594, որ հյ. մեղկ դնում է հնխ. meldwi ձևից, Walde 491)։—Հիւբշ. 473։

ՆՀԲ լծ. յն. μαλακός, լտ. mollis։—Նոյնը նաև Windisch. 17. Lag. Urgesch. 219 լտ. marcidus «թառամած, թոյլ, տկար» բառի հետ հնխ. mar արմատից։ Lag. Arm. Stud. § 1475 յն. μάλκη «ցրտից քամիլ»։ Հիւբշ. Arm. Stud. § 193 յն. μαλακός և լտ. mollis? Տէրվ. Նախալ. 52 համեմատում է յն. և գոթ. ձևերը և հյ. մեղ-կ ու մեղ-մ բառերից հետևցնում է հնխ. mar պարզական արմատը։ Նոյն, էջ 99 mark արմատի տակ շարում է հյ. մոմոմիլ, մեղկաճալ, սանս. marč, յն. μαλκίω, լտ. marcere և murcus «մեղկ»։ Meillet, Rev. crit. Թրգմ. Բազմ. 1898, 120 և MSL 11, 394 և Esquisse 28 հայերէն բառի կ ձայնը դնում է dw-ից, որով լատինի

նման հյ. մեղկ<*meldwi *(համմտ. եր-կու)*։ Գազանճեան, Արև. մամուլ *1902, 77* մ *մասնիկով* եղկ *բառից*։ Scheftelowitz BB 29, 23 և 46 *սանս.* marāla *«փափուկ»*, ko-mala *«խիստ փափուկ»*, *լատ.* maltas, *լիթ.* malonus *«շնորհալի» են*։ Թիրեաքեան, Բազմ. *1913, 340 թրք.* ələq *«գաղջ» և հյ.* եղկ, ճեղգ *բառերի հետ*։

+Մեղմ, ո *հլ. «հեզիկ, հանդարտ, կակուղ, համացուկ»* Գ. *թագ. ժթ. 12, Ոսկ. մ. ը. 5.—որից* մեղմով *«համացուկ, մեղմութեամբ»* ՍԳր. *եզն. Ոսկ. Ագաթ.* մեղմաւ *իմն Ոսկ. ես. 367.* մեղմանալ ՍԳր. մեղմական *Ոսկ. մ. ա. 1, գ. 13.* մեղմագոյն *Ոսկ.* մեղմագնաց *Սեբեր.* մեղմածամ *Վեցօր. 192 (տպ.* մեղմաժամ*)*, մեղմախառն, *Վեցօր. նոր բառեր են* մեղմել, մեղմարար, մեղմաշունչ, մեղմամայլ *են*։

=*Բնիկ հայ բառ, որ կազմուած է հնխ.* mel- *արմատից՝ մ աճականով. ընդարձակ տես* մալել, մատաղ, մեղկ։

Նշ՛ թ. թրք. միլայիմ, միլայիմ, *յն. լատ.* մալագո՛ս, մո՛լլիս, *որ են* մեղմ *և* մեղկ»։ Windisch. 17 *յն.* μαλακός, *լատ.* mollis։ *Տէրվ. Նախալ. 52* մեղկ *բառի հետ. հնխ.* mar *արմատից*։ Գազանճեան, *Արև. մամ. 1902, 77* մ *մասնիկով* յեղմ *բառից*։ Scheftelowitz *տե՛ս* մեղկ։ *Իրր* մ *աճականով* mel- *արմատից յիշում են* Walde 492, Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 134*։ Ջունի Հիւրշման։

Գիմ.—Պարզ ձևի տակ ունինք միայն Ալշ. մեղմ, *Մկ.* մէղմ.—*ածանցմամբ ունինք* մեղմուկ (Rivola) *«համացուկ կամ գաղտուկ գործող (մարդ)»*, մեղմեւէց տալ *Ղրբ.*= մեղմեռուց տալ *Գնձ. «մեղմիկ այրուիլ»*։

Մեղմեխ *(գրուած նաև* մեղմեղ, մեխմեխ*)* *«նենգաւոր, կեղծաւոր, շողոքորթ»* Առակ. *ժբ. 26, Գծ. ը. 22, Ոսկ. որից* մեղմեխաճ *«կեղծաւորութիւն, շողոքորթութիւն» եզն. Ոսկ. մ. ա. 13, բ. 2, 5. «կուտրատուիլը, նազկրատիլը, պչրանք (աչքերով, ձայնով, շարժումներով)» Ոսկ. երր. ա. տիմ. մ. բ. 12.* մեղմեխել *եզն.* մեղմեխութիւն *Ոսկ. գազ. մ. ա. 7, 13.* մեղմեղիլ *«մարդահաճոյ խօսքեր անել, կեղծաւորիլ» Ոսկ. եփես. էջ 836*։

Նշ՛ մեղմ բառից։ Bugge KZ 32, 18 *կրկնուած* մեղ *«մեղք» բառից, ուստի և հնագոյն ձևը դնում է* մեղմեղ։ *Հիւնք. 144* մելան *բառից, իսկ 225* մեղմ *բառից*։

Մեղմեղ *տես* Մագոն։ *(Տպուած է այնպէս, որ կարելի է կարդալ թէ՛* մեղմեղ *և թէ* մեզմեղ*)*։

Մեղմերդ *«կաղնիշանի տակ». որից* իգամեղմերդ *«անծանօթ մի բոյս» Բժշ. ունի միայն Հիւս. §§ 851 և 2037. բայց վրիպակով երկուսն էլ գրում է մի անգամ* մեղմերդ *և մի անգամ* մեղերդ*, որով բուն ձևը յայտնի չէ, բայց Նորայր Հա. 1924, 549 ուղիղ է միայն վերի ձևը*։

+Մեղոի *տե՛ս Մեղր*։

=*Կազմուած է* մեղ(ր) *արմատից՝ -ու- մասնիկով. համմտ.* եղջերու։

Նշ՛ լծ. յն. մέ՛λιττα։ Windisch. 17 *լատ.* mel, *յն.* μέλι, *սանս.* madhu *են*։ *Հիւնք.* մեղր-*ից*։

Գիմ.—Ալշ. Ախց. Ակն. Զթ. Խրբ. Կր. Համշ. Ննխ. Ռ. Սեբ. մէղու, *Հճ.* մղու, *Ասլ.* մէղիւ, *Սչ. Տիգ.* մէղուն *(սեռ.* մէղունի*)*, *Մշ.* մէղոն, *Սվեդ.* միղօ, *Մրղ. (նուազական մասնիկով)* մէղուկ, մօղիկ՝, *իսկ Սլմ.* մեղր *բառի հետ կցելով՝* մեղրուկ։ *Միւսները բացատրում են ուրիշ բառերով. ինչ. Երև. Լ. Ղրբ. Տփ.* մեղրաճաննճ, *Ոզմ.* մեղրի տղէզ։ *Նոր բառեր են* մեղուախտ, մեղուակեր, մեղուածագ, մեղուագազ, մեղուատուն, մեղուց։—*Մեղուի անուան* tabou-*ի մասին ընդարձակ մի յօդուած ունի* Gauthiot MSL 16, 264—279։

Մեղուիճ. *անասոյգ բառ, որ գտնում եմ Տաթև. Հարց. երկու անգամ գործածուած. «ի մեռեալ կենդանւոյ է մեղուն, որպէս ասեն ի մեղուշ արջառաց» (էջ 356)։—Հներն էլ ունէին այսպիսի կարծիք. օր.* Elien, Nat. anim. I. 28 *ասում է թէ պիծակները դիակներից են ծնւում. համմտ. նաև Փիլ. Բազն. 202՝ Մեղուն ոչ մաքուր կենդանի է, ի նախութենէ և յապականութենէ մեռելոց, որպէս բանք են, յարջառոց ծնեալ, որպէս և ձիաստացք ի ձիական մարմնոց.— Պիտ.*

Վնասակար զեռուն ըստ իմաստասիրացն բանի ի նեխեալ մարմնոց սոցա ասեն ծնանել, յարանուն ինքեան ձիաստաց կոչեցեալ։

+ **Մեղր** (-ղու) *յետնաբար* r *հլ.* (-ղեր, -ղերք) *կամ* ի-ա *հլ.* (-ղուի, -ղուաւ) *«մեղր» ՍԳր. ածանցման մէջ մտնում է երկու ձևով.* 1. **Մեղր** *ինչ.* **մեղրախորիսխ** *Սիրեր.* **մեղրեալ** *Ղեւտ. բ. 11.* **մեղրուկ** *«մի տեսակ ծաղիկ» Ագաթ.* **մեղրօղի** *Կանոն.* **մեղրաճաման** *Փարպ.* 2. **Մեղ—.** *ինչ* **մեղու** *«մեղրաճանճ» ՍԳր.* **մեղուաբոյն** *Սիրեր.* **մեղուակն** *Խոր.* **մեղուանոց** *Ա. Թագ. ժդ. 26. Եզն.* **մեղուագործութիւն** *Փիլ.* **իշամեղու** *Փիլ.* **մեղոյշ** *«մեղուանոյշ» Ագաթանգ.* **մեղուշակն** *«մեղոյշ աչքերով» Ամատ. Հայոց բառ ու բան 472 (իբր անատոյգ բառ) են. նոր բառեր են* **մեղուաբուծութիւն, մեղրալուսին, մեղրածորան, մեղրահաց, մեղրամիս, մեղրամոմ, մեղրաճման, մեղուաջան են։**

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mel- *ձևից. ցեղակիցներն են՝ յն.* μέλι *(սեռ.* μέλιτος*) «մեղր»,* μέλισσα *«մեղու»,* βλίττω *«փեթակից մեղր հանել», լտ.* mel *(սեռ.* mellis*) «մեղր»,* mellītus *«մեղրով քաղցրացրած», ֆրանս.* miel, *իտալ.* miele, mele, *սպան.* miel, *ռում.* miere, *գոթ.* miliþ. *հիսլ.* mil *«մեղր»,* milis *«քաղցր», անգսք.* mil-deaw *«նեկտար»,* milisc *«մեղրանոյշ, մեղրահամ», կիմր. կորն. բրբտ.* mel *«մեղր», ալբան.* mjal' *«մեղր»,* mjal'tse *«մեղու»* (Boisacq 624, Walde 473, Pokorny 2, 296)։ *«Մեղր» նշանակող բառը հնդեվրոպական նախալեզուում երկու տարբեր անուն ունէր.* *mel- *և* *médhu-. *առաջինը պահում են արևմտեան լեզուները, որոնց հետ է նաև հյ.* **մեղ-ր**, *իսկ երկրորդը պահում են արևելեան լեզուները (որոնց հետ է նաև սլաւականը). բայց այս երկրորդը գտնում ենք նաև արևմտեան լեզուների մէջ՝ «մեղրաջուր ըմպելիքը, մեղրաջրով պատրաստուած ոգելից ըմպելիք» նշանակութեամբ. Համմ. սանս.* मधु madhu *«մեղր. 2. մեղրաջուր. 3. քաղցր»,* գնդ. 𐌼𐌰𐌳𐌿 maðu, *պհլ.* may, *պրս.* می may *«դինի», բուլ.* miţa *«մեղր»,* հալ. medŭ, *չեխ.* med, *լհհ.* miód, *ռուս.* медъ *«մեղր»,* медвѣдь *«արջ» (բուն նշ. «մեղրակեր»),* հպրուս. meddo, *լիթ.* medùs, *լեթթ.* medus *«մեղր», անգսք.* meodo, *անգլ.* mead, *հբգ.* mëto, mitu, *գերմ.* Meth, *հիսլ.* miǫðr, *հիսլ.* mid, *կիմր.* medd, *բրբտ.* mez *«մեղրաչուր», յն.* μέθυ *«արբեցուցիչ ըմպելիք, դինի, գարեջուր»,* μεθύω *«հարբիլ»,* μεθύσκω *«հարբեցնել»* (Boisacq 619, Trautmann 173—4, Horn § 1003, Kluge 329, Pokorny 2, 261)։ *Հայ.* **մեղր** *բառի բունը՝* **-ու** *(համմ. սեռ.* **մեղու***), որ ուրիշ լեզուի մէջ համապատասխան չունի, ձևացած է ըստ* Meillet MSL 11, 401 *հնխ.* medhu>*հյ.* ***մեղու** *բառի աղճատութեամբ։—***Մեղր** *բառը գտնում է նաև ուրբո-ֆիննական լեզուների մէջ. ինչ. ֆիննի.* mesi *(արմ.* mete-*), մորդվ.* med, *չերեմ.* my, *սիրյ.* ma, *օսթյ.* mag, *վօգուլ.* mȧu, *հունգ.* mēz, *որոնք նշանակում են «մեղր». սրանց վրայ հիմնուած այն տեսութիւնը թէ նախապէս Հնդեվրոպացիք և Ուգրօ-ֆիննները դրացի էին, տե՛ս* Hirt, Indogerm. I. *էջ 188. իսկ ուրիշներ կարծում են թէ կայ աւելի հին ցեղակցական կապ երկուսի միջև (տե՛ս* Szinnyei Finnisch-Ugrische Sprachwiss. *էջ 20)։—***Մեղուն** *էլ երկու անուն ունէր հնդեվրոպական նախալեզուում. բուն անունն էր* *bhei-, *որ զանազան մասնիկներով պահած են հանգլ.* béo, *հբգ.* bini, *գերմ.* biene, *անգլ.* bee, *հշվէդ.* bê, *հոլլ.* bij, *լիթ.* bitis, *լեթթ.* bite, *հպրուս.* bitte, *իռլ.* bech, *հալ.* bĭčela. *ռուս.* пчела́, *ուկր.* пчола́, bdžołá, *սերբ.* čẹ̑bẹ̑la, żbela, včela, čẹ̑la, *չեխ.* včela, *լհհ.* pszczoła, *պոլաբ.* cüöla, céla *«մեղու»* (Walde 322, *որ այստեղ է դնում լտ.* fucus *«պիծակ» բառը,* Berneker 116, Kluge 54, Ernout-Meillet 571, Pokorny 2, 184)։ *Վայրենիների մի նախապաշարման համեմատ՝ մեղր հաւաքուած եղանակին արդիլուած է յիշել այս միջատի անունը. ուստի հնարուել է «մեղրաճանճ» բառը, որի համեմատ ունինք հյ.* **մեղու**, *յն.* μέλισσα, *ալբան.* mial'tse *«մեղու»։—Հիւրշ. 473։*

Նշբ լծ. յն. μέλι, *լտ.* mĕl, *ռուս.* медъ, *սանս.* मधु madhu, *գոթ.* miliþ *կամ* milip, *պրս.* می may *«դինի», պրս.* mai *«մեղր»։—Peterm. 29 լտ.* mel, *սանս.* madhu, *յն.* μέθυ։ *Սրա նման են նաև* Windisch. Böttich. Lág. Müller *են։*

Գիր.—Ալղ. Հճ. Մշ. Ոզմ. Ջղ. Վն. մեղր, *Սլմ.* մեղր, մեղ, *Սչ.* մե՛ղրը, *Ջթ.* մե՛ղը, մե՛ղյը, մե՛ղրը, *Ագլ. Երև. Մկ.* մէղր, *Գոր. Շմ.* մէ՛ղրը, *Ղրբ.* մրէ՛ղրր, *Ախց. Խրբ. Կր.* մէղ, *Հմշ.* մէ՛ղրը, *Ասլ.* մէ՛ղը, *Մրղ.* մրէղ, *Սվեդ. Տիգ. Տփ.* միղր, *Ակն. Ննխ. Պրտ. Ռ. Սեբ.* մէղ:—*Նոր բառեր են՝* մեղրախոտ, մեղրաբերան, մեղրաթաթախ, մեղրախնձոր, մեղրածծուկ, մեղրածոր, մեղրակեղի, մեղրահաց, մեղրահաճճ, մեղրամած, մեղրամանիկ, մեղրամտիկ, մեղրահոցիկ, մեղրահոյշ, մեղրատէր, մեղրատանձ, մեղրափուշ, մեղրեհի, մեղրիկ, մեղրուկ, մեղրոտել:

Փոխ.—Թրք. գուռ. Ակն. mirγig armudə *«մեղրիկ տանձ» (հյ. մեղրիկ ձևից).*—Karolides, Γλ. συγκρ. 195 *հայ.* մեղր *բառին է կցում կապադովկ.* μιραπόλι *«մի տեսակ սև մեղրամոմ, որ թևլին քսելով՝ հարթում ու ողորկում են». այս բառը Փոքր-Ասիոյ յունաց մէջ գործածական է նաև* μιραπόλ, barapùli, *իսկ Թրքաց և Թրքախօս յունաց մէջ* πιρεπόλ *ձևով: Ըստ այսմ հնագոյն ձևն է* mirapol, *որ գալիս է հյ.* մեղրամոմ *ձևից՝ միջին* m *դարձած տարանմանութեամբ* p, *իսկ վերջին* m>l:

Մեղրապ «salep, *խոլորձ բոյսի արմատից միջին* m *դարձած տարանմանութեամբ* p, *553, Գ. 162:*

***Մեղրապոպ**, ի *հլ. «շամամ» Բուսց ժա. 5. Մծբ. 240 (դրծ.* մեղրապոպիւն). *Պատմ. աղէքս. էջ 154. Սփր. երաշտ. 205. այժմ գործածւում է «ձմերուկ» նշանակութեամբ, ինչպէս ունի Ջղր. սարկ. Ա. 59. նաև Ոսկ. ի հարս. էջ 681. այսպէս է հասկանում նաև Բառ. երեմ. էջ 208, որ գրում է* մեղրապոպոպ:

=Յն. μηλοπέπων *«շամամ,* cucumis citrullus L*» բառի վրայից կազմուած. յոյնից է նաև լտ.* melopepo. *յոյն բառը բարդուած է* μῆλον *«խնձոր» և* πέπων *«մի տեսակ սեխ» բառերից, իբր բուն «խնձորասեխ»: Հայերէնի մէջ բառի առաջին մասը կարծուելով յն.* μέλι *ձևից, թարգմանուած է* մեղր, *իսկ երկրորդ մասը տառադարձուած է: Ըստ այսմ հայ բառը պէտք է կարդալ* մեղրապեպ, *ճիշտ ինչպէս որ Ս. Գրքի վրացերէն թարգմանութեան մէջ էլ նոյն տեղը (Բուսց ժա. 5) գրտնում ենք տառադարձուած* მელაბაებო *մելապեպո,* მელაბაებო *մելապեպո,* მელაბაებონი *մելապեպոնի «սեխ» ձևով: Յոյն բառից են նաև ռում.* pepene, *բուլգար.* нипонъ *«սեխ»:*

ՆՀԲ «որպէս նոյն ընդ յն. ձայնիս միլօքէ՛բօն»: Նոյնը նաև ՀԲուս. § 2047 և յատկապէս Հիւնք. էջ 331:—Հիւբշ. 373 յիշում է պոպ ձևի տակ և առաջին մասը ընդունում է մեղր, *սակայն վերջին մասը՝ պոպ=յն.* πέπων *անապահով է համարում, որովհետև ուրիշ տեղ չի պատահում:*

Մեմբան *«մատեան». ունի միայն Բառ. երեմ. էջ 102՝ յգ. հյց.* զմեմբանս *«զմատեանս» ձևով:*

***Մեմոն** *«կապիկ» Շնորհ. առ. 74. գործածական է նաև արդի ռամկերէնում:*

=Պրս. և Թրք. میمون meymūn *«կապիկ»:*

***Մենթան**, ի–ա *հլ. «զգեստ, հանդերձ». մէկ անգամ ունի Ոսկ. ա. տիմ. ը. «Անդ հանդերձք պաճուճեալք և ժամանակ մեննթանաց» (մի ձեռ.* մեմենքաանց). *յն. «Բազմագին հանդերձից կայ ժամանակ»: (Փր աւելացնում է նաև «ըստ ոմանց նազումն, սիգացումն ագանելով զհանդերձս»):*

=Պհլ. 𐭬𐭭𐭲𐭠𐭭 **nēmtan** *ձևից շրջմամբ, որ է պրս.* نیمتن nēmtan *կամ* نیمتنه nēmtana *«տեսակ ինչ կարճ հանդերձի, յորոյ վերայ յաճախ անցուցանեն զմուշտակ». կազմուած է պհլ.* 𐭭𐭩𐭬 nēm *=պրս.* نیم nēm *«կէս»+պհլ.* 𐭬𐭭 tan *=պրս.* تن tan *«մարմին» բառերից, իբր թէ մարմնի կէսը ծածկող հագուստ: Նոյն պրս. բառը արդի արտասանութեամբ* nīmtan *ձևն ստանալուց յետոյ՝ նմանապէս շրջուելով՝ դարձած է Թրք.* منتان mintan *«երկար զգեստ»>ռմկ. միներ, միներոն:—Աճ.*

ՆՀԲ «բառ ռմկ. միներ, լծ. յն. ἱμάτιον *«զգեստ»:*

Մենիաս *տե՛ս Ամիաս:*

***Մենիդիոն** *«մի տեսակ ձուկ» Վեսպ. 152. Վրդն. ծն. (սխալմամբ գրուած է* մենդոս*):*

=Յն. μαινίς *բառի սեռ.* μαινίδος *ձևից:*

ից, որ և յաւող «մի տեսակ ծովային փոքր ձուկ է. mendole»։—*Հիւբշ. 364։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

Մեռ. *անյայտ բառ. «Տեսանելով առ սոքօք մի մեռ ներգոլով». Պզատ. տիմ. 162.— իմաստը պէտք է ստուգել յոյն բնագրի միջոցով։*

+**Մեռի.** *արմատ առանձին անգործածական. որից կազմուած են մեռանիլ ՍԳր. Ոսկ. մեռեալ ՍԳր. մեռուցանել ՍԳր. մեռելագոյն Ոսկ. մ. ա. 6. մեռելաճառցութիւն Կոչ. մեռելոտի ՍԳր. մեռելութիւն. Հռ. դ. 19. Սեբեր. Ագաթ. մեռոտ Ագաթ. անմեռ Ագաթ. անմեռուկ «փրփրեմ, դանդռեւ» Բժշ. Վստկ. 75. գեռամեռ Ոսկ. երր. իգ. իննեամեռ Վնցօր. 192. կրկնամեռ Յուդ. 12. հանապազամեռիկ Ասող. վաղամեռիկ Իմ. ժգ. 15. մարմնամեռութիւն Անյ. հց. իմ. կիսամեռութիւն Մաշկ. Նար. սուտամեռուկ Վանակ. հց. են։*

=Բնիկ հայ բառ. գալիս է հնխ. mer- *արմատից, որի միւս ժառանգներն են՝ սանս.* मृयते mriyátē, मरते maratē *«մեռնիլ»,* मर mara *«մահ»,* मृत mṛtá- *«մեռեալ», գնդ.* 𐬨𐬀𐬭 mar (mirya, miryeite) *«մեռնիլ»,* 𐬨𐬭𐬉𐬌𐬀 mərəta- *«մեռեալ». հպրս.* 𐎶𐎼𐎡𐎹𐎢𐎠 amariyatā, *պհլ.* 𐫢𐫥𐫫𐫬 murtan, mīrēt, *պրս.* مردن murdan, میرد mīrad *«մեռնիլ», քրդ.* merin, *աֆղան.* mṛal, *օսս.* mälin, marun, márin, *բելուճ.* mirag (Horn § 973), *գնչ.* meráva, *հինդուստ.* मरना murna, *բոշայ. մուլել, լտ.* morior *«մեռնիլ»,* mors *«մահ», ֆրանս.* mourir, ***ռում. muri,*** *իտալ.* morire, *հրգ.* mord, *անգսք. հհիւս.* morð, *գերմ. Mord «սպանութիւն», հսլ.* mrěti *«մեռնիլ»,* morŭ *«ժամանամահ», ռուս.* мереть *«մեռնիլ», լիթ.* miřti *«մեռնիլ»,* mirtis *«մահ»,* māras *«ժամանամահ», լիթթ.* mėris *«ժամանամահ», հիռլ.* marb, *կիմր.* marw *«մեռեալ» են։ Այստեղ են պատկանում նաև մարդ և մահ, և այս բառերի տակ յիշուած ցեղակից ձևերը* (Pokorny 2, 276, Boisacq 134, Trautmann 186—7, Walde 495)։ *Յունարէնում ջնջուած է բառս՝ փոխանակուելով ուրիշ քաղաքավարական բառերով ինչպէս հայերէնի մէջ վախճանիլ, հանգուցեալ, երթեցեալ են. բայց յունարէնի մէջ էլ իր հին գոյութեան ապացոյց է* ἔμορτον *(Հեսիք.) «մեռաւ»* (Ernout-Meillet 600)։ — *Հիւբշ. 473։*

Klaproth, Asia polygl. 105 *լատ.* mors *«մահ»։ Ուղիղ համեմատութիւններ ունին ՆՀԲ, յետոյ* Peterm. 30, 35, Windisch. 222, Böttich., Lag. Müller *են։*

ԴԻՒ.—Հւր. մէռանէլ, *Ջղ. Սլմ. Վն.* մեռնել, *Ոզմ.* մեռնիլ, *Ալշ. Մշ. Սչ.* մէռնել, *Ախց. Ակն. Կր. Մկ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* մէռնիլ, *Երև.* մէռնէլ, *Համշ.* մէռնուշ, *Տփ.* մէ՛րնիլ, *Հճ.* մէրնել, *Զթ.* մէռնը՝լ, *Գոր. Ղրբ.* մրէ՛ռնէլ, *Ասլ.* մէ՝ռնիլ, *Սվեդ.* միռնիլ, *Մրզ.* մրէռնել, մրէյնել *(իսկ* մէռռուց *«մեռելոց»). Ագլ.* մո՛ռնիլ։—*Թրքախօս Հայոց մէջ կայ էրմառուկ Առն., որ ըստ Պէտէլեան, Արեւելք 1888 նոյ" 8—9 հյ.* անմեռուկ *բառն է։— Նոր բառեր են* մեռելագունել, մեռելաբաղ, մեռելաճաց, մեռելաճոռ, մեռելաչուր, մեռելատէր, մեռելատուն, մեռելաւոր, մեռելաֆուն, մեռելբաղոց, մեռելկոխ, մեռելժամ, մեռելնոց, մեռելոզի, մեռելոց, մեռելֆաշոց, մեռուկ։

Մեռինուձ *«ընձախոտ, ակոնիտոն բոյսը,* pardalianehes, aconitum». *Հնագոյն յիշատակութիւնը ունի Վարդան Յունանեան, Ձեռաբծութիւն 1671 թ., էջ 323, յետոյ Բառ. երիմ. յաւել. 569, ինչպէս և ՀՀԲ և ՋԲ. միւս բառարանները չունին։*

Մեռոն *տե՛ս Միւռոն։*

***Մեսեդի** (գրուած նաև միսիդի) «կցուրդ հրեկոյեան սաղմոսերգութեան» ՅՀ. իմ. աւտ. և եկեղ. ժմ. 650, 733. Տօնացոյց. Նիս. Թուղ. իհ. Լմբ. մատ. էջ 85։*

=Յն. *μεσῳδία *ձևից. համմտ. յն.* μεσῳδός *«հրկու հրկար տների միջև երգուած միջանկեալ կարճ տուն»* (Sophocles 747 *բ). կազմուած է* μέσος *«միջին»+* ᾠδή *«երգ» բառերից. հյ. մեսեդի յարաբերում է* *μεσῳδία *ձևին այնպէս, ինչպէս մեղեդի =*μελῳδία *ձևին։ —Հիւբշ. 364։*

Հներից արդէն ՅՀ. իմ. եկեղ. էջ 105 մատնանիշ է անում յունարէն ծագումը. «երգ նոր երգն՝ միսիդի անուանելով,

որ ըստ յունարէն բարբառովն թարգմանի, այսինքն է օրհնութիւնս երգել»։ ՀԱԲ ևս յունարէնից։ ՆՀԲ «կայ յն. բառ μεσίτης «միջնորդ», որ ի հին Վարս Հարանց գրի մեսիս, մէսոն, ուր և կրկնի հայկականն միջնորդ»։ Հիւնք. յն. μεσφδικός «միջնորդական»։ Brockelmann, *Ուս. փոխ. բառից, էջ 103 վերի ձևով։ Հիւբշ. 364 հանում է *μεσώδιον ձևից։*

***ՄԵՍԻԱ.** *կամ* **ՄԵՍԻԱՅ** *«Օծեալն, Քրիստոս» Շար. որից մեսիաս Նար. տղ.։*

=Յն. Μεσσίας *ձևից տառադարձուած. այս էլ փոխառեալ է եբր.* מָשִׁיחַ māšîxa *«օծեալ» բառից. արմատն է եբր.* mšx *«ձեռքով քսել, օծել, զօծել»* (*ասուր.* mašâ'u, *արամ.* משח mšx). *յունարէնի միջոցով անցել է բոլոր քրիստոնեայ ազգերի լեզուին. ունինք նաև արաբ.* مسيح masīḥ *«Մեսիա», որից էլ* مسيحى masīḥī *«քրիստոնեայ»։— Հիւբշ. 364։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՄԵՍԻԼ *«ներս սպրդիլ». մէկ անգամ ունի Ոսկ. եփես. ժէ. «Եւ ո՞ւր իցէ՝ զի չիցէ ախտն այն. արդ և չեկեղեցիս իսկ եմուտ և ի դիրս ևս մեսեցաւ». (յոյն օրինակն ունի* ἔπτομαι *«կպիլ, կցիլ, դիպչիլ»)։*

ՆՀԲ մեկնում է «յարիլ, շփիլ, միջամուխ լինել, հասանիլ, դպչիլ, պլըշտիկիլ», ԱԲ «դպչիլ, շփուիլ, պլշտկիլ». Թոռնեան, Հատընտ. Ա. 232 «դպչիլ, կպչիլ, յարիլ». այս բառն է որ Բռ. եբրեմ. էջ 209 գրում և մեկնում է մեսեցաւ «սովորեցաւ կամ մերձեցաւ»։— Հիւնք. հանում է յն. μέσος, μέσις «մէջ, մէջտեղ» բառից։

ՄԵՍԻԼ *«բորբոսիլ, որդնոտիլ». ունին միայն ՀԱԲ և ՋԲ, վերջինը իբր նոր բառ. նոյն է նաև Բառ. եբրեմ. էջ 209 մեսեալ «բորոտեալ»։*

Արդեօք մեցամէս բառի՞ց է ենթադրուած։

ՄԵՍԽՈՒԻՐ *«ոստայնանկութիւն, ջուլհակագործութիւն». մէկ անգամ ունի Մագ. քեր. 228=Երզն. քեր. «Զգործ մատին ոստայնանկութեան, զոր այժմ առ մերս գործի, և մեսխուր (այլ ձ. մեսխուրան) անուանեմք զնա ըստ վրաց, իսկ նոքա* մեխիկա *(այլ ձ. մեսիկա)»։*

Վկայութիւնից երևում է որ բառը վրացերէն է. բայց Զուբինովի մէջ չեմ գտնում նման մի ձև։ Ն. Ադոնց, Արուեստ Դիոն. քեր. էջ 228 համարում է Մոսքիացոց ազգի անունից, իբր վրաց. մեսխուրի, յն. μεσχιχή։

ՄԵՍՄԵԼԻՈՆ *«սինձ». ունի միայն Բառ. եբրեմ. յաւել. 569։*

=Թերևս յն. μέσπιλον «զկեռ» բառից. համմտ. յաջորդը՝ մեսմեղոն «խնձոր»։— Աճ.

***ՄԵՍՄԵՂՈՆ** *«խնձոր». ունի միայն Բառ. եբրեմ. յաւել. 569։*

=Անշուշտ յն. μῆλον «խնձոր» բառից է. բայց անյայտ է մես- մասը։ Համմտ. նաև նախորդը։— Աճ.

ՄԵՍՈՒԹԻՒՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկիփ. «Մեսութիւն առանց կրթութեան, դիտութիւն և առանց բայի»։ (Արմատը մես)։ ՆՀԲ համարում է «որպէս միջամուխ լինել, ձեռներիցութիւն», կապելով մեսիլ բային. բայց գործածութիւնը ցոյց է տալիս՝ որ բառը պէտք է նշանակէ «դիտութիւն, ուսում»։*

ՄԵՍՈՒՐ *«մետաղեայ մի ջրաման է՝ թասի նման և բաժակից մեծ». նորագիւտ բառ, որ երկու անգամ ունի գործածած Անան. գիրէջ 24. «Ապաղարէ մի էր իմ, խանգարեցի և այլ սպաս արարի. զերրորդ մասն մեսուր մի արարի և զչորրորդ մասն այլ մեսուր արարի և զհինգերորդ մասն երկու բաժակս արարի»։*

ՄԵՍՍ *«պինդ, ամուր, հաստատուն», արմատ առանձին անգործածական, որից մեսսիլ «պինդ հաստատուիլ, ամրանալ» Փիլ. լիւս. 137. («Էին պատրաստեալք յառաջագոյն մեսսեալ մահիճք երկաթիք յառաջահոգութեամբ, զի մի՛ անհնարին ծանրութեամբ փղացն բեկցի». Լծ. փիլ. մեկնում է «կազմեալ»). հաստատեսս Բուզ.—Նոյն բառն է Բառ. եբրեմ. էջ 209 մեսսրեալ «սերտ»։*

Karst, *Յուշարձան 406 մազդ բառի հետ սումեր.* meš, miš *«բազմութիւն»։*

ՄԵՍՏԻՈ *«խառնածին». ունի միայն Բառ. եբրեմ. յաւել. Գէորգ դպրի, էջ 554։*

ՄԵՍՐԻՆ *«մուրտ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 569։*

ՄԵՏ *«շատ». ունի միայն Բառ. երեմ. 209։*

***ՄԵՏԱՂ**, ի–ա հլ. «հանք, հրահալելիք» Մարթին. (ունի նաև մէդալ ձևով). որից մետաղ (անեզական) «հանք» Ոսկ. փիլիպ. էջ 430, որից էլ «հանքերի մէջ աքսոր, տաբագրութիւն, թիւապարտութիւն» Ոսկ. մտթ. Բ. էջ 634, Ա. էջ 376. խոր. «օթևան, իջևան» Աբր. կրետ. 30, 34, 50, 86 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. էջ 130). նոր գրականի մէջ ունինք մետաղակերպ, մետաղանման, մետաղաբանական, մետաղագործութիւն, մետաղագործական, մետաղագործարան ևն։*

=Յն. μέταλλον «հանք, մետաղ և ջուր հանելու համար բացուած փոս, այդտեղից հանուած մետաղը» բառից։ Այս բառը հները հանում էին μεταλλάω «որոնել, խուզարկել» բայից, իսկ այս էլ μετὰ «ընդ» և ἄλλα «ուրիշ» բառերից։ Նորագոյն մեկնութեամբ դրւում է μεταλλᾶν «պրպտել, որոնել» բայից, որի բուն ծագումը անյայտ է (Boisacq 630): Փոխառութեամբ անցած է շատ լեզուների, ինչ. լտ. metallum «մետաղ, հանք», ֆրանս. métal, անգլ. metal, գերմ. Metall ևն. ոճով ասւում է լտ. damnare in metallum կամ condamnare ad metalla «աքսորել, հանքային աշխատութեանց դատապարտել»։—Հիւբշ. 365։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ՄԵՏԱՂ *«անձրև». ունի միայն Բառ. երեմ. էջ 209։*

Մետասան *տե՛ս Մի։*

***ՄԵՏԱՔՍ**, ի. հլ. (յետնաբար ի–ա, ո հլ.) «մետաքս, ապրշում (թելը և նրանով շինուած կտոր)» Վեցօր. 177. Ոսկ. ա. տիմ. Ագաթ. որից մետաքսեայ Ոսկ. մ. բ. 24. մետաքսառէշ Ագաթ. մետաքսագործ խոր. Մագ. մետաքսաճիւս Նար. խչ. բազմամետաքս խոր. նոր բառեր են մետաքսավաճառ, մետաքսանման, մետաքսեղէն ևն։*

*=Յն. μέταξα հոմանիշից, հմմտ. նաև ասոր. ܡܛܰܐܟܣܐ mitaksā, արաբ. مدقس midqas (Կամուս, թրք. թրգմ. Բ. 292), دمقص dimqaṣ (անդ, էջ 378), دمقس diqmas (էջ 239), دمقس dimaqs կամ dimqas (էջ 241) (շրջուած *midaqs -ից), լազ. մետաքի, մետաքէ, մեքտասի, ռում. mătasă. վերջին երկուսը ծագում են յունարէնից, բայց յայտնի չէ յոյնի և ասորու ծագումը, որովհետև անծանօթ է մետաքսի էլ բուն հայրենիքը։ Մատենագրութեան մէջ յոյն բառը ծանօթ է Դ դարից, իսկ ասորի և արաբ բառերը՝ Զ դարից.—Հիւբշ. 394։*

ՀՀԲ և ՆՀԲ համարում են յունարէն։ Neumann ZKM 1837, 389 չի համարձակում որոշել թէ հայե՞րն են յոյներից առել այս բառը, թէ յոյները հայերից. միայն նկատում է որ յոյնը բնիկ չէ։ Böttich. Horae aram. 24 երբ. רמשק dəmešeq «Դամասկեան մետաքսեայ կտոր»։ Նոյնը, Rudim. 45, 153 յիշում է արաբ. دمقص d m q ṣ և دمسق d m s q, որ հանում է պրս. dimsa «սպիտակ ապրշում» բառից։ Ewald, Göttˈing. Gelehrt. Anz. 1862, 372 արաբերէն دمقس d m q s և ասոր. d m š q։ Müller SWAW 41, 12 համարում է ասորերէնից փոխառեալ և կցում է ասոր. mitaksā և յն. μέταξα բառերին։ Lag. Reliqq. gr. յոչ. 37, ինչպէս և Hitzig ZDMG 8, 213 ջանում են յունարէնը հանել սեմական עכם ʻks «ապարանջաններով զարդարուիլ» արմատից։ Brockelm. ZDMG 47, 1—42 յունարէնից փոխառեալ համարելու հակառակ է, որովհետև յոյն բառը շատ քիչ է գործածուած, իսկ հայը բառական յաճախադէպ։ Հիւբշ. Arm. Gram. 394 դնում է փոխառեալ, բայց յայտնի չէ ո՛ր լեզուից։ Müller SWAW 136 (1897), էջ 26 և Մէնէվիշեան ՀԱ 1897, 246 բ համարում են յունարէն փոխառութիւն։

ՄԵՏԵԱԻՆԱՍ. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. էջ 110, իբր «վատ, ապականեալ բարքով».—«Բիսոս ոմն անուն և Առիվարդան զեղխեալ մետեաւնաս բարուք՝ խորհեցան սպանանել զԴարեհ»։ Այլ ձև. մետաւնայս, մէտաւնայս, մեսօնայս. մէկն էլ բարգմանում է «չարք և անամօտուած բարուք»։ Ան-*

շուշտ չն. մի բառի խաթարեալ ձևն է, բայց բնագիրը այստեղ թերի լինելով՝ դժուար է ստուգել։

***ՄԵՏԷՈՐԱՅ** «օդերևոյթ». ունի միայն ՓԲ. որից մետէորաբանութիւն, մետէորաբան, մետէորաբանական, բոլորն էլ գործածական միայն նոր գրականում։*

=Իտալ. meteora բառից, որ փոխառեալ է չն. μετέωρον «վերին բարձրագոյն (յատկապէս օդի խաւերի համար ասուած)» բառից. ծագում է μετὰ «ընդ»+ἀείρω «բարձրացնել» բառերից։—Ա՛ճ.

ՄԵՏԻՒՊՓԵԱՆ *(որ և մետուղբեան, մէտուլփեան) «հրաշափառ, գերագոյն, երկնային». մէկ անգամ ունի ճառընտ. (Հին բռ. մեկնում է «հրաշք, լիալոյս, համակ լոյս, կամ բազմաժողով», իսկ Բառ. երեմ. էջ 209 գրում է մետուղփեան «հրաշք, հրաշալից, լուսալցեղց», և էջ 207 մետուվփեան, մետուվփեան «համակ լոյս և կամ բազմաժողով»)։ Սրանից է երևում մետաղփոն. «Ջերկնային մարմնոցն մետաղփոն բացատրելով» Ստեփ. սիւն. (Բորոս աղբար Ա. 192)։—Համմտ. ուղիղ։*

ՆշՔ չն. μετά «ընդ» և ὁλοφυής «միակտուր» բառերից։

ՄԵՏԻԻՐ *«ընդմտանել կամ բազմել». ունի միայն Բառ. երեմ. էջ 209։*

***ՄԵՏՐԱՊՈԼԻՍ** «մայրաքաղաք, գլխաւոր քաղաք». ունի միայն ՀՀԲ. մէկ անգամ գրտնում եմ գործածուած Պտմ. ամաս. 57. «Բայց և զԱմասիա կալեալ ի նախագահութեան Եղեսպոնտոսի մետրապոլիս արարեալ»։ Աւելի հին ձևն է մետրոպոլիս, որ մէկ անգամ ունի Վրք. և վկ. բ. 394. «Արար զԳորտինա մետրոպոլիս, որ Թարգմանի մայրաքաղաք»։*

=Յն. μητρόπολις «մայրաքաղաք». կազմուած է μήτηρ «մայր» և πόλις «քաղաք» բառերից։ (Հայերէն լաւագոյն է մետրոպոլիս)։

Ուղիղ մեկնից ՀՀԲ։

***ՄԵՏՐԱՊՈԼԻՏ**, ի–ա հլ. (գրուած է նաև մետրապօղիտ, մետրոպօլիտ, յգ. մետրապօլիտ, մետրապօլտուն) «մայրաքաղաքի արքեպիսկոպոս» Ագաթ. ՅՀ. կթ. Մխ. գտ. որից մետրապօլտուրիւն Օրբել. (սխալ գրուած մետրապետուրիւն Ուխտ. բ. 126). մետրապօլտարան ԱԲ.—Սմբ. դատ. 83 մի ձեռագիր քանիցս ունի նետրապօլիտ։*

=Յն. μητροπολίτης «համանիշից, որ բուն նշանակում է «մայրաքաղաքացի» (տե՛ս նախորդը). սրանից են նաև լտ. metropolita, գերման. Metropolit, ռուս. митрополитъ են. ըստ այսմ հայերէնի ուղղագոյն ձևն է մետրոպողիտ (կամ մետրոպոլիտ)։—Հիւբշ. 365։

Ուղիղ մեկնութեան ծանօթ է հներից Լմբ. մատ. 83. «Երիր գաս աստիճանի եկեղեցւոյ մետրապօլիտք, որ Թարգմանին մայրաքաղաքացիք»։ Նորերից ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՄԵՐԱՂ *«մետաղէ կամ փղոսկրէ կլորակ նշանակ. jeton». ունի Նորայր, Բռ. ֆր. 712 բ՝ իբր նորաստեղծ բառ. չգիտեմ ի՛նչ է ծագումը։*

ՄԵՐԹ *«երբեմն» Երր. ժ. 33. Եզն. Եփր. Թգ. Ոսկ. Ես. և մտթ.։*

Աւետիքեան, Քերակ. էջ 117 և ՆՀԲ հանում են մի երթ ձևից։ Հինք. մարթ բառից։

ՄԵՐԺ. *արմատ առանձին անգործածական. որից մերժել «վանել, վռնտել, հերքել, չընդունիլ» ՍԳր. մերժեցուցանել Եւագր. մերժիլ ՍԳր. Եղիշ. մերժումն Ողր. բ. 14. Հռ. ժա. 15. յանդիմանամերժ Մծբ. ճիւրամերժ Վրդն. ծն. Մխ. առակ. ատրամերժել Շար. Նար. իրաւամերժ Նար. բացամերժել Եղիշ. Զքր. կթ. մերժողական (նոր բառ) են։*

ՆշՔ «մեր չէ՛ ասել»։—Justi, Zendsp. 228 զնդ. marəz «սրբիլ, քսուելով անցնիլ», սանս. marj, պհլ. āmurjītan, պրս. āmurzīdan «քսուել»։ Տէրվ. Altarm. 59 լիթ. milž-ti «շփիլ, կթիլ», յն. ἀ-μοργ-ός, հսլով. млъзю, мльсти: — Հինք. մերձ բառից։ Scheftelowitz BB 28, 310 սանս. mṛgayate «որսալ», զնդ. mərəγenti «թափառիլ»։ Patrubány SA 2, 34 համեմատելով հյ. մոռանալ, սնս. mṛš, լիթ. mirszti «մոռանալ» բառերի հետ՝ համարում է իրանեանից փոխառեալ։

ԳԻՒ.—երև. մերժէլ.—նոր բառ է Տատ. մերժուկ «խոտելի, արհամարհելի»։

*+**ՄԵՐԿ**, ո հլ. (յետնաբար ի–ա հլ.) «բան*

չհագած, մերկ. 2. պարզ, յայտնի, ակներև. 3. լոկ, միայն» ՍԳր. Ոսկ. ես. Սերեր. որից մերկանալ ՍԳր. Կոչ. Եզն. Ագաթ. մերկել ՍԳր. Եփր. Թգ. մերկաբար Եւս. պատմ. մերկանդամ ՍԳր. Ոսկ. Եփր. դտ. և Թգ. Եւս. քր. Վեցօր. մերկամարտ Եւագր. մերկաոիտ Բուզ. մերկապարանոց Երր. դ. 13. Ոսկ. երր. սուսերամերկ ՍԳր. դժուարամերկ Մխ. առակ. մերկառակ (նորագիւտ բառ) «մերկ և խայտառակ» Վկ. արև. 35։

=Բնիկ հայ բառ. պատկանում է հնխ. nogᵘ- արմատին, որ լեզուից լեզու տարբեր կերպարանքներ առանալով, գրեթէ անճանաչելի է դարձած։ Իր անխառն ձևի տակ երևում է հոլ. nagû, ռուս. нагій, սերբ. nâg, լհհ. nagi, լիթ. nügas, լեթթ. nuôgs «մերկ», հհիւս. nakkua «մերկացնել» բառերի մէջ։ Դերբայական -to մասնիկով ձևեր ունին՝ հբգ. nackut, nahhut, գերմ. nackt, հոլլ. naakt, անգսք. nacod, անգլ. naked, հհիւս. nǫkkuеðr, գոթ. naqaðs, բոլորը նախագերմանական *nogotó- ձևից. այսպէս նաև հիւլ. nocht, կիմր. nocth են՝ *nogᵘ-to- ձևից։ Նոյն -to դերբայական մասնիկի տեղ -na- մասնիկն են ներկայացնում՝ հհիւս. nakinn, հֆրիզ. naken, սանս. nagná-, գնդ. maγna- «մերկ»։ Մի ուրիշ մասնիկ ունի լտ. nūdus «մերկ» (իբր *nogᵘedhos), կամիս. nekumanza «մերկ» (տե՛ս Ernout-Meillet 651 nudus բառի տակ)։ Վերջապէս անճանաչելի կերպարանքի է հասած յն. γυμνός, որի դէմ Հէսիքիոս տալիս է λυμνός ձևը։ Դժուար բացատրելի է գնդ. maγna-՝ իր նախաձայն m-ի պատճառաւ, որից անկարելի է բաժանել միւս իրանեան ձևերը, ինչպէս՝ սոգդ. βaγnāk, օսս. bägnäg, աֆղան. layaṛ, պհլ. brahnak, մանիք. brahnag, պրս. برهنه brahna «մերկ» (Pokorny 2, 339, Boisacq 158, Trautmann 208, Walde 528, Kluge 344, ինչպէս և M. Grammont IF 25, 371—374)։ Իրանեան ձևերը միջոց են տալիս բացատրելու նաև հայերէնը, որի մ և ր ձայնները գտնւում են իրանեանների մէջ։ Ըստ այսմ հայերէնի նախաձևն է հնխ. (ը ձայնդարձով) negᵘ-ro->megᵘ-ro->մերկ, կազմուած -ro- մասնիկով։

նշԲ լծ. լերկ։ Ltg. Arm. Stud. § 1482 սանս. marǰ, գնդ. marəz «սրբել» ձևերի հետ։ Տէրվ. Altarm. 58 և Նախալ. 99 հնխ. marg «քերել, քաղել» արմատից. հմմտ. սանս. marǰ, յն. ἀ-μέργω «քաղել», ἀ-μέλγω «կթել», լտ. mulgere, գերմ. melken «կթել»։ Karolides, Γλ. συγκρ. 91, 190 հյ. մերկամարդ ձևի հետ է ուղում համեմատել կպղվկ. μαρκάλτζα «առաւսպելական հրէշ»։ Հիւնք. մկրտել բայից է հանում։ Patrubány SA 1, 194 լիթ. mirgeti «փայլփլել»։ Նոյն, ՀԱ 1906, 344 յն. μαρμαίρω «փայլիլ», հիւլ. émer «անփայլ»։ Գաղանճեան, Արև. մամ. 1902, 77 մ մասնիկով լերկ բառից։ Scheftelowitz ZDMG 59, 700 կցում է գնդ. maγna- ձևին, բաժանելով սանս. nagná- են ձևերից։ Նոյնը կրկնում է Petersson, Ar. u. Arm. Stud. 87, նախաձևը դնելով *megᵘ-ro-։ Վերի ձևով մեկնեց Meillet MSL 22 (1922), 227։ Ըստ այսմ պատահական նմանութիւն ունի արաբ. مرق marq «աղաղաձ կաշու մազերը փետել» (Կամուս, Թրք. Թրամ. Գ. 53)։

ԳԻՒ.—Ախց. կր. մէրկ, Մշ. մերգ, Երև. Ննխ. մէրգ, Մկ. Ոզմ. միրկ, Հճ. մեյգ, Սվեդ. միրգ, միրգէգ, Զթ. միյգիգ (<մերկիկ). միւսները ունին «մօրէ մերկ» բացատրութեան մէջ. ինչ. Վն. մօրէ մերկ, Ննխ. Սեբ. մօրէ մէրգ, Խրբ. մօրէ մէրգիգ, Ասլ. մէօրէ մէրգիգ, մէօրէ մէրգի*, Առն. մէրգ ի մօրէ. (առաջիններդ նշանակում են «բոլորովին մերկ», վերջինը «աղքատ»)։ Նոր բառ է մերկածածուկ անել «թևեր կերպով ծածկել»։

+ՄԵՐՁ «մօտ, մօտիկ» ՍԳր. Եւս. պատմ. որից մերձ ընդ մերձ Հռ. ժզ. 20. Փարպ. մերձենալ ՍԳր. մերձիլ ՍԳր. մերձաւոր ՍԳր. մերձակայ Ոսկ. յհ. բ. 35. Եղիշ. դիւրամերձ Սարգ. ա. յհ. երկրամերձ Խոսր. ձեռնամերձ Վրք. Հց. ոճամերձ Ոսկ. յհ. բ. 20. մերձաճիշ, մերձակայք, մերձակէաց (նոր բառեր), մերձակից «յարակից, կցորդ» (նորագիւտ բառ) լծ. պրպմ. են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. meg'hri ձևից. (դարձել է նախ *մեձրի, յետոյ *մերձի, որի

ի վերջածայնը պահում է դեռ մերձենալ <*մերձիանալ). Համմտ. յն. μέχρι «մինչև, ց»։ Երկուսի պարզական արմատն է հնխ. me-, որ տե՛ս Pokorny 2, 236, Boisacq 631: Müller, Kuhns u. Schl. Btrg. 3, 253 սանս. mṛj ձևի հետ։ Lag. Arm. Stud. § 1483 մեր բառի նախաձևը դնում է *margha: Տէրվիշ. Altarm. 59 մարձել բառի հետ սանս. marj, զնդ. marəγ են։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Meillet MSL 7, 165. նոյնը նաև Bugge KZ 32, 19, Pedersen KZ 39. 352, Petersson, Ar. u. Arm. Stud. 131։ Անապահով է համարում Հիւբշ. Arm. Gram. էջ 473՝ նշանակութեանց տարբերութեան պատճառաւ։ Այս կասկածը աւելորդ են դրտնում Boisacq և Pokorny՝ անդ։ Հիմնք. ձեռն բառից։

ՄԵՐՈՒՅԱՆ կամ **ՄԵՐՈՒՇԱՆ** «մի տեսակ ծաղիկ» Երզն. քեր. ուրիշ վկայութիւն չունինք. երկու ձևերից մին կամ միւսը սխալ դրչութիւն. Ադոնցի հրատարակութեան մէջ, Համամ. քեր. էջ 258 կայ միայն մերուշան ձևը։

ՄԵՑ կամ **ՄԷՑ** «փառութիւն. ցեց. ապականութիւն» Ես. ժդ. 11. Ոսկ. ես. 371. Կոչ. 399. Փիլ. նխ. բ. 114. (Բառ. երեմ. էջ 210 դնում է «հուր կամ կայծակն»). որից մեցոտիլ «ցեցոտիլ, փտիլ, ապականիլ» Ագաթ. ցեցամէց Երզն. մաթ. 157 և կրկնութեամբ մեցամէց «ցեցակեր, որդնակեր» Ոսկ. մ. բ. 22 և Եփես. բ. կամ մեցամէս «նոյն նշ.» Ես. ծ. 9։—Կարելի էր կարծել թէ ցեց բառի կրկնութիւնն է. բայց առանձին բառ լինելու նշան է Ոսկ. ես. 371՝ Սիմաքոս մեց ասէ. Թէոդիտոն՝ ցեց։

Հներից Գէ. ես. մեցամէս մեկնում է մէց «գիջութիւն» բառից՝ -ամէս յօդով կազմուած։ (Մէցն գիջութեան անուն է... իսկ ամէսն թուի թէ իբրև յօդ իմն բան պատշաճի անուանցդ, որպէս յիմովսանն և յիւրեանցայոցն)։ ՆՀՔ յիշում է յն. μύξα, լտ. mucus «խլինք, շողիք»։ Canini, Et. étym. 165 իտալ. mezzo «լխկած»։ Հիմնք. մեծ բառից։ Հացունի, Պատմ. տարազի 12 մեցամես դնում է մեց+մեսել բայից։ ‖Pictet բ. տպ. Ա. 520 (գրուած met) կցում է սանս. matka «մլուկ», պրս. mitah «որդ» են բառերի հետ։

Գիւռ.—Մշ. մեց, ցեցումեց՝ «ցեց» իմաստով. իսկ Ախց. մէց «բրդի մէջ գտնուած կեղտեր և ոչխարի մորթի թեփեր, որ հեճինելով հանում են դուրս». որից և մեցոտ։

ՄԵՑՈՒԿ «խանձեալ հաց». դիտէ միայն Քաջունի, Գ. 164։

ՄԵՒՏՐԱՅ «փոյթ». ունի միայն Բառ. երեմ. էջ 210, որ էջ 212 նոյնը գրում է միեռայ ձևով։

+**ՄԵՔ** «մեծ» (սեռ. մեր, ո հլ. տր. մեզ, հյց. զմեզ, բց. ի մէնջ, գրծ. մեօք), բոլորն էլ հին և ընտիր. ածանցման մէջ մտնում է մեր ձևով. ինչ. մեռազգեայ Ես. քր. մերազնեայ Խոր. մեռախոն Երզն. քեր. մեռովի Վրք. հց. են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mes ձևից։ Ցոգնակի ա դէմքի դերանուան համար հնխ. երկու ձև ունէր. wes և mes. առաջինից են ծագում սանս. vay-ám, զնդ. vaem, գոթ. weis, հբգ. wir, իսկ երկրորդից՝ հյ. մեք, լիթ. և լեթթ. mẽs, հպրուս. mes, հսլ. my (նմանողութեամբ vy «դուք» բառի), յն. լեսբ. ἄμ-μες, դոր. ᾱμτς (որոնցից հետևում է յն. *ἀσμες)։ —Հիւբշ. 474։

Klaproth, Asia polygl. 106 հսլ. my, սիրյ. և վոտյ. mi, պերմ. mjas ձևերի հետ։ Windisch. 33 մեօք կցում է սանս. asmābhis ձևին։ Bopp, Gram. comp. 2, 276 asma ձևի smá մասն է, իբր պրս. mā։ Հնդեւրոպական զանազան ձևերի հետ են համեմատում Böttich. Müller են։ Հիւբշ. Arm. Stud. 42 չի պատկանում յն. ἡμεῖς = ἄμμες, սանս. a-sma-<*m-sm?) ձևերին, այլ սանս. զնդ. ma-, յն. μέ, լտ. me են։ Տէրվ. Նախալ. էջ 121 հնխ. ma ձևի տակ, իբր յն. μέ, ἐμε, լտ. me են։ Meillet MSL 8, 161 հյ. մեք, լիթ. mẽs, պրակր. mō դնում է հնխ. mes ձևից (աւելի ընդարձակ տե՛ս MSL 23, 141 շար.)։—Հիմնք. իբրև միւմ (մի «մէկ» բառի յոգնակին)։ Bugge, Lyk. Stud. 2. 105 և 106 մեք,

մեր=լիկ. mire «սեպհական, բնիկ» և mą «մեր», որոնցից առաջինը մերժում է ինքը անդ, 2, 113; Մառ, Яз. и Лит. I. 245 վրաց. ᲛᲔ մե «ինձ», չուվաշ. ebĕ «ես», ebĭr «մենք»; Autran, Sumér. et ind. էջ 107 սումեր.—meš «մենք» ձևի հետ՝ պատահական է հունգ. mink «մենք», ինչպէս և հունգ. tik' «դուք», որ Karst, Gesch. d. Arm. Phil. էջ 11 ցեղակցական է համարում՝

ԳԻՒ.—Հմշ. Շմ. մէք, Մղր. մէք[1], Ագլ. միք[1], Ալշ. Հճ. Մշ. Նբ. Ջղ. մեճ, Սլմ. Վն. մեճ[1], Ակն. Ասլ. Ախց. Երև. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. մէճ, Զթ. Մրշ. Սչ. Սվեդ. Տիգ. Տփ. միճ, Մրզ. Անտ. Մկ. միճ[1], Մշ. մրճ, Ղրբ. մուճ:

ՓՈՒ.—Բոշայ. մէր «մեր», մերավոնց «մեր» (տե՛ս Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 63 և Finck, Die spr. d. Arm. Zigeuner, ЗАН 1907, 117):

*ՄԵՔԵՆԱՅ, ի հլ. (սովորաբար յոգնակի գործածուած) «գործիք, կազմած, մանաւանդ պատերազմական գործիք» ՍԳր. «խորամանկութիւն, նենգութիւն» Ոսկ. մ. բ. 16. Ագաթ. գրուած է նաև մեճեճնայ, մեճեճանայ Սոկր. 446, 502, մճնայ Ուռհ. էջ 355. արդի գրական ընդունած ձևն է միայն մեճեճնայ: Այս բառից են մեճեճնայել «խորամանկութեամբ հնարել, նենգել» ՍԳր. Բուզ. (որ և մեճեճնել կնիք հաւ. 315), մեճեճնայագործ իմ. ժե. 4. մեճեճնայանալ Եւագր. Եփր. աղ. մեճեճնաւոր Սեբեր. 193. Եփր. կիես. 151. Իգնատ. թղ. 68. մեճեճնայաւորութիւն Ոսկ. մ. բ. 24 կամ մեճեճնաւորութիւն «հնարք, վարպետութիւն» Ոսկ. մ. բ. 12. Բուզ. բազմամեճեճնայ Լմբ. մատ. 97. անմեճեճեճնայ Ոսկ. յհ. ա. 45; Նոր գրականում մեճեճնաբար, մեճեճնագէտ, մեճեճնագիտութիւն, մեճեճնագործ, մեճեճնականութիւն ևն՝

= Յն. μηχανή «ամէն տեսակի վարպետ հնարք, միջոց, հնարագիտութիւն, ճարտարութիւն, մեքենայ, նենգութիւն», բայական ձևով՝ μηχανάω «արուեստով հնարել, շինել, խորամանկութեամբ գործել», արմատական ձևը μήχος «միջոց, հնարք, ճար», որ կապւում է գոթ. magan, հհիւս. mega, հբգ, magan «կարենալ» ևն բառերի հետ. արմատը հնխ. māgh, məgh- (Boisacq 636), որից նաև հսլ. moga, mošti, ռուս. могу, անգլ. may, գերմ. mögen (Kluge 334): Յոյն բառը փոխառութեամբ տարածուել է բազմաթիվ լեզուների մէջ, ինչ. լտ. machina (յառաջացած դոր. μαχάνα ձևից. Համմ. Meillet. Esq. lat. էջ 89), որից իտալ. macchina, ֆրանս. machine, գերմ. Maschine (1695 թուից, ֆրանսերէնի միջոցով, ըստ Kluge 321), ռուս. машина, ասոր. ܡܟܝܢܐ mēxanē (յունարէնից, Brockelm. lex. syr. 185), թրք. ماكينا makina ևն; Թէև -այ վերջաւորող բառերը սովորաբար փոխառեալ են ասորերէնից, սակայն այս բառը նրանց կարգից չէ, որովհետև վերջաւորութիւնը չի յարմարում աս. ē-ին. մեճեճնայ փոխառեալ է ուղղակի յն. բառի յոգնակի μηχαναί ձևից; —Հիւրշ. էջ 365;

Ուղիղ մեկնեցին ՆՀԲ, Windisch. 8:—Տէրվ. Altarm. 78 կցելով հյ. մանգ, խորա-մանկ, պրս. mang, գոթ. magan, հսլ. могю, можеши, мошти «կարենալ» ևն ձևերի հետ, շատ ապահով չի գտնում որ մեճեճնայ յունարէնից լինի փոխառեալ; Հիւնք. մանգղիոն բառից; Հիւրշ. Ուս. փոխ. բառից 34 շեշտում է որ ասորերէնից փոխառեալ չէ, իսկ Müller WZKM 8, 285. Թրգմ. ՀՍ. 1894, 295 ասորի է համարում՝

ԴԻՒ.—Նոր փոխառութիւններ են Պլ. Սեբ. մաճինա, Մշ. մակինա, Երև. Ղրբ. մաշին (ռուսերէնից) ևն՝

ՓՈՒ.—Հայերէնից է փոխառեալ (ըստ Մառ, Иппол. 65) վրաց. ᲛᲐᲜᲭᲐᲜᲐ մանճանա «մեքենայ, խարդախութիւն», որից և ᲛᲐᲜᲭᲐᲜᲝᲡᲝ մանճանիքի «խորամանկ»՝

*ՄԵՔԵՆԱՒՔ (սեռ. -այ, յգ. -աց, -ից) «խարիսխ, մոյթ, պատուանդան, նկուղ» Գ. թգ. է. 27—43, Դ. թագ. ժգ. 17, իե. 16, Բ. մնաց. գ. 14, երեմ. իէ. 19. Նորագիւտ բ. մնաց. դ. 14. որից Մխ. դտ. մեճեճնովք՝ էջ 238 և մեճեճնովքեայ՝ էջ 239 (երկիցս).—Բռ. երեմ. էջ 210 վերի իմաստներից դուրս դնում է նաև «խորու տեղ կամ կարաս» նշանակութիւնները՝

=*եբր.* מכנות məkōnōθ *«տեղ, խարիսխ, պատուանդան» բառից, որ յոգնակի ձևն է* מכנה məkōnā *բառի (արմատը* כון kvn *«հաստատուիլ»=արաբ.* كان kān *«լինել»). գործածուած է բնագրի նոյն համարներում և անցած է մեզ յոյն թարգմանութեան* μεχωνώθ (Sophocles 756) *տառադարձութեան վրայից. հայերէնը ենթադրում է յն.* *μεχενώθ *տարբերակը։*

Ուղիղ մեկնեցին ՀՀՔ և ՆՀԲ։

ՄԵՔՈՐԱՅ. *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. էջ 117. «Ածէր ի հնագանդութիւն սուրբ եկեղեցւոյն և ծառայեցուցանէր վանիցն, զոր և արձանն եցոյց, եթէ արար հարկաւոր մեքորայ, այսինքն եկեղեցւոյս»։ Հնդինակի իսկ մեկնութեամբ ուրեմն մեքորայ նշանակում է «եկեղեցւոյս» և հետևաբար ուղղականն է մեքոր կամ մեքորա «եկեղեցի»։ Օրբելեանի յիշած արձանագրութեան երկու բեկորները գտաւ Սեդրակ Բարխուդարեանը՝ Թանահատի վանքում, որոնց վրայ կարդացւում է «Հայր Մխիթար ...չեալ էր հարկաւոր մեքորա»։*

Բառիս -այ վերջաւորութիւնը յիշեցնում է ասորիէնը. բայց Brockelmann-*ի ասորի բառարանում չեմ գտած նման մի ձև։ Պատահական նմանութիւն ունի երբ.* מכורה məkurā *«ակունք, աղբիւր, ծագում»։ Տրուած իմաստը հաստատում է Սեդրակ Բարխուդարեան՝ յաջողապէս համեմատելով ուտ.* mäk'ür *«վանք» բառի հետ։ Ուտի բառի ծագումը անյայտ լինելով՝ չի հերքւում առայժմ ասորական աղբիւրը։ Կարող էր ասորի բառը փոխառեալ լինել թէ՛ հայերէնի և թէ ուտիերէնի մէջ։*

***ՄՂԿԻԹ**, ի–ա հլ. «մահմեդականների աղօթատեղին» Լաստ. ժէ. տպ. 1844, էջ 76. Բրս. մրկ. 142. որ և* մզգիթ, *մանաւանդ մսխիթ Շնորհ. եղես. Ուռհ. Ճառընտ. Ներս. մոկ. նոր գրականում ընդունուած ձևն է* մզկիթ։

=*Պրս.* مزگت mazgit, *որ ծագած է արաբ.* مسجد masjid *հոմանիշից, իսկ այս էլ գալիս է* سجد sjd *«երկրպագել» արմատից, որի տեղական անունն է և նշանակում է բուն «երկրպագութեան տեղ»։ Արաբերէնից են փոխառեալ նաև արամ.* מסגד masgid, *մանդայ.* מאזגרא mazgidā, *հբրք.* mezkit, *քրդ.* mizgeft, musgefta, mesgaut, *սպան.* mezquita, *ֆրանս.* mosquee, *իտալ.* moschea, *գերմ.* Moschee. *անգլ.* mosque, *ռուս.* мечеть, *վրաց.* მოზგითი *միզգիթի*, მოსგითი *միսգիթի են։—Հիւբշ. 271։*

Նախ ՆՀԲ և յետոյ Peterm. 18 *դրին արաբերէնից։*

Գիւռ.—Մկ. Սեբ. մզգիթ, *Ոզմ.* մզկեթ։

ՄՂՈՒԻԿ կամ **ՄՂՐՈՒԿ** *«մի տեսակ ծաղիկ». իբր անստոյգ բառ ունի ՀՔ. իսկ ԱԲ դնում է միայն* մզուկ *և ուղարկելով* **մեղուկ** *բառին, կարծել է տալիս թէ սրա սխալ գրչութիւնն էւ—Հ Ռուս. չունի։*

+**ՄԷԳ**, ի–ա *հլ. (գրծ. նաև* –ով*) «մշուշ, մառախուղ» ՍԳր. որից միգախառն Ել. ժթ. 16. Ագաթ. միգապատել Մանդ. Եփր. Խոստ. միգապատ ՅՀ. կթ. Շնորհ. Նար. շոգիամէգ Նար. խչ. և այլն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* meigh- *«մշուշ, անձրև» ձևից. հմմտ. սանս.* मेघ mēghá- *«ամպ»,* मिह mih *«մէգ, շոգի», զնդ.* maeγa, *պհլ.* mēγ, *պրս.* میغ mēγ, *մինջ.* mēγ *«ամպ», օսս.* mēγā, mīγ *«ամպ, մշուշ», յն.* ὀμίχλη *«մշուշ», ալբան.* mjégułe, *հսլ.* mĭgla, *լհհ.* mgła, *չեխ.* mha, *ռուս.* мгла, *լիթ.* miglà, *լեթթ.* migla *«մշուշ. մէգ», ռուս.* мжить, *չեխ.* mží, *լհհ.* mžy, *լեթթ.* migluõ, *հոլլ. գռ.* miggelen *«անձրևը բարակ շաղել»* (Pokorny 2, 247, Boisacq 701, Trautmann 184, Walde 486, Horn § 1009)։ *Ըստ ձևի հայերէնը կարող էր փոխառեալ լինել իրանեանից, ինչպէս ունինք պրս.* تیغ tēγ>*հյ.* տէգ, *մանաւանդ որ եւրոպականները ներկայացնում են* l-*ով աճած մի ձև. բայց բառիս իմաստը (հյ. «մշուշ», իրան. «ամպ») ցոյց է տալիս, որ հայերէնը բնիկ է. աճած* -l- *ձևը գտնում ենք դաւառականների մէջ. հմմտ. մգլիլ բառի տակ։—Հիւբշ. 474։*

Klaproth, Asia pol. 103 *պրս.* mig: Brosset JAs. 1834, 377 *(նոյնը նաև Զուբինով, Բառ. վրաց-ֆրանս.) վրաց.*

ՄԷՁ մեխի *«կայծակ» բառի հետ.— Հնդևրոպական զանազան ձևերի հետ համեմատեցին ՆՀԲ,* Böttich. ZDMG 1850, 358, Lag., Müller, Justi, Bopp Gram. comp. 1, 394 *ևն. Հիւբշ.* Arm. Stud. § 197 *արդէն կողմնակից է բնիկ հայ համարելու, նոյնը* Arm. Gram. 474:

+**ՄԷՋ** *«շեղ, ջրվաթ» Դ. Թագ. ժը. 27. Ես. լզ. 12. որից* միզել *ՍԳր.* միզուկ *«առնի» Բժշ. Ոսկիփ.* միզարձակ *Մագ.* միզագրաւ *Սակր.* մէզմուղ *«միզեցնող խոտ» Բժշ.* գժուարամէզ *ԱԲ.* միզաւան *Ոսկ. կողոս. Ա. հտ. էջ 603 (տե՛ս և* աւան), միզանցք, միզանցքային, միզափամփուշտ *(նոր բառեր) ևն. գըրուած է* միզ *Յայսմ.:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* meig'h- *արմատից, որի միւս ժառանգներն են՝ սանս.* 𑀫𑁂𑀖 meha- *«մէզ»,* 𑀫𑁂𑀖𑀢𑀺 mēhati *«միզում է», զնդ.* 𐬨𐬀𐬎𐬌𐬰 maēza- *«մէզ» (որ և* maesman), 𐬨𐬀𐬎𐬌𐬰𐬀𐬌𐬑 maēzaiti *«միզում է», պրս.* میختن mēxtan *(նոր.* میزم mēzem) *«միզել», պհլ.* mēzītan *«միզել», քրդ.* mīztin, mistin *«միզել»,* mīz *«մէզ», աֆղան.* mīṭal, *օսս.* mēzun, mīzin, *բելուճ.* mīžaγ, mēzaγ *«միզել», Թոխար.* miço *«մէզ», յն.* ὀμιχέω *«միզել»,* ὄμιχλα *«մէզ», լտ.* mingo, mējo, *լիթ.* mẽžù, mīszti, *լեթթ.* mīzt, *սերբ.* mižam, *հիսլ.* mīga, *անգսք.* mígan *«միզել»,* migoð *«մէզ», գոթ.* maihstus, *հրգ.* mist *«աղբ, կուտ» ևն* (Pokorny 2, 245, Boisacq 700, Trautmann 185. Walde 486, Ernout-Meillet 584—5, Horn § 1006): *Հայերէնը հաւասարապէս կարող է գալ թէ՛ հնդևրոպականից և թէ փոխառեալ լինիլ իրանեանից, որի հետ տառացի համաձայն է:—Հիւբշ. 474:*

Նախ Windisch. 21 *համեմատեց սնս.* mih, *լտ.* mingo *ձևերի հետ: Նման համեմատութիւններ ունին* Böttich. ZDMG 1850, 358, Lag., Müller *ևն:* Canini, Et. ētym. 55 *պրս.* maz: *Հիմնք. գումէզ բառից:* Tomaschek, Die alten Thrak. II. 27 *Թրակ.* μόζουλα *«ծորբրին» բառի հետ: Պատահական նմանութիւն ունի արաբ.* مذع maδ' *(օսմ. արտասանութեամբ* mez) *«միզել» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 671):*

ԳԻՒ.—Կայ միայն նբ. միզուկ *«գոմէշի, ոչխարի, եզան կամ ձիու արական անդամ»:*

**ՄԷԼ «յոյս». Նորագիւտ բառ, որ 20 անգամ գործածուում է Ադամ. էջ 243, 244, 247, 248, 249, 254—6, 260, 262—3, 269, 272:*

=*Արաբ.* أمل amal *(նոր հնչմամբ* emel) *«յոյս»:—Աճ.*

Հ. Մ. Պատուրեան, Հրատ. Ադամ. էջ 243 բառս մեկնում է «պատճառ, առիթ»: Վերի ձևով մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 153, ըստ որում ունինք՝

ԳԻՒ.—Ղրբ. մէ՛լավ կաց *«յուսով կա՛ց, յոյս ունեցիր, յուսա՛»:*

ՄԷԿ *տե՛ս Մի:*

**ՄԷՀՐՇՈՒԱՆ «հերրայական ութերորդ ամիսը». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Լմբ. ժբ. մրգ. էջ 175 (զաք. ա. 1). «Յամսեանն ութերորդի, որ է մէհրշուան»:*

=*Պրս.* مهر mihr *«սեպտեմբեր, գարնանամուտից յետոյ 7ոդ ամիսը» + արաբ.* شعبان ša'bān *«7ոդ լուսնային ամիսը». որ է ասուր.* siwānu=*հբր.* סִיוָן sivān *«հրեայական երրորդ ամիսը»:—Աճ.*

**ՄԷՆ տե՛ս Մնաս:*

+**ՄԷՆ** *տե՛ս Մի:*

ՆՀԲ լծ. յն. μόνος *«միակ»: Հիմնք. պրս.* man *«ես» բառից. միւսները տե՛ս Մի:*

ՄԷՇ *«մի տեսակ բոյս. լտ.* thymus serpyllum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2057:*

ՄԷՇԻԱ *կամ* **ՄԻՋԱՅԻԱՅ** *«մի տեսակ գոհար» Խոր. աշխ. 614. բառարանները չեն նըշանակած:*

**ՄԷՇԻՄ «չնչին, գձուձ, խեղճուկ». Նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած է յետին մատենագրութեան մէջ. «Ճնճուխտարն էր մօրուօք և ունէր մէշում ձի. և Սղուրն էր տղայ և ձին աղէկ... Սղուրն իջեալ ի տաճիկ ձիոյն ետ ի ճնճուխտարն և ինքն նստաւ ի վատ ձին». Մաղաք. ար. 38. «Մէշում քթեք կարեմ խիստ գէշ». Վրդ.*

պատ. տպ. Վեներ. էջ 158 (որի դէմ հրատ. էմ. էջ 208 ունի մէջում)։

=Թթր. مشوم կամ میشوم mešum «թշուառ, ողորմելի»։

Վարդանի հրատարակիչը (Ալիշան, անդ) մէջում իբրեւ մեկնում է «քրիստեայ գիտական գծուծ»։ Dulaurier JAs. 1860, 303—4 կարդում է մէլում և իբր մոնգոլերէն բառ՝ մեկնում է «քահանայ»։ Էմին, Ист. Вардана, էջ 186 մերժելով այս՝ հասկանում է «մի՞թէ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Պատկ. հրատ. Մաղաք. աբ. էջ 64։

+ՄԷՋ, ո հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «մէջտեղը» ՍԳր. «մարդու մէջք» ՍԳր. Ոսկ. եփես. «մէջը, կէսը» ՍԳր. Ագաթ. «արգանդ» Ոսկ. հս. էջ 365 (եզակի գործածութեամբ). որից ընդ մէջ, ի մէջ, ի միջի, ի միջոյ ՍԳր. Ոսկ. Կիւրղ. եւլ. Եզն. միջամուխ Ոսկ. Վեցօր. Կորիւն. Սեբեր. միջամուտ Բ. մակ. ա. 15. միջապատ «գոգնոց» Ոսկ. հս. միջավայր Վեցօր. միջատ Վեցօր. միջին ՍԳր. միջնաձիւ Կոչ. միջնաշխարհ Բուզ. միջնորդ ՍԳր. միջոց ՍԳր. Եւս. պատ. միջօրեայ ՍԳր. Եւագր. ընդ–միջել ՍԳր. Եզն. Եւս. պատ. ընդմիջաւուիղ Ես. ծր. 12. միջնաբերդ Բուզ. բերդամէջ Ագաթ. բանակամէջ Բուզ. աշամէջ Պիտ. լեռնամէջ Խոր. արծր. խորամիջոց Վեցօր. բիկնամէջ Սղ. կէ. 14. երկնամիջակ Ջքր. կթ. Միջագետ ՍԳր. և սրա հակառակը՝ գետամէջ Եփր. երր. (ՀԱ 1912, 554, ինչպէս կայ բերդամէջ, աշխարհամէջ, փողոցամէջ, ֆաղաքամէջ): Առանց ձայնաւորի փոփոխութեան ունինք՝ մէջօրեայ ՍԳր. Մծբ. Կոչ. մէջբերկրեայ Խոր. մէջափայտ Տօնակ. մէջգետին Ագաթ. Բուզ. ե. 24. Ոսկ. կող. 619. Մանդ. իզ. 191 (նորագիւտ բառ, որի վրայ տե՛ս Նորայր, Կոր. վրդ. 245), մէջբաղաք «Հրապարակ» Բ. մակ. ժ. 2 (Վարդանեան, Բառաք. դիտ. Բ. 72)։ Նոր բառեր են միջազգային, ազգամիջեան, միջամասնիկ, միջամասնկաւոր, միջամտել, միջամտութիւն, միջանկեալ, միջանցք, միջարկութիւն, միջկուսակցական, միջնադարեան, միջնարար, միջնորդաբար, միջնորդել, անմիջական, անմիջապէս, ընդմիջում են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. médyos ձևից. միւս ժառանգներն են սանս. mádhya-, mádhyam, դնչ. majaš, զնդ. maiδya-, maiδyana-, պրս. պհլ. miyān, քրդ. maiyān, զազա myāni, աֆղան. manj, miyanǰ, բելուճ. niyām, օսս. mēdäg, mīdäg, յն. μέσσος, μέσος, τὸ μέσον, լտ. medius, medium, գոթ. midjis, հրգ. mitti, գերմ. Mitte, հհիւս. miðr, անգսք. midd, անգլ. mid-, հսլ. meždа, meždu, հռուս. межи, ռուս. между, գւռ. ռուս. межу, գալլ. medio-, կիմր. mewn, հիւլ. medón են, որոնք բոլոր նշանակում են «մէջ, միջև, մէջտեղը» (Pokorny 2, 261, Walde 472, Boisacq 629, Trautmann 173, Ernout-Meillet 570, Horn § 1004, Kluge 333)։—Հիւբշ. 474։

Klaproth. Asia pol. 103 գերմ. mitte են բառերի հետ ուղիղ համեմատեց։ ՆՀԲ լծ. հյ. մէտ, յն. ωὲσος լտ. medium են։ Peterm. 22, 35 աֆղան. miyanǰ, սանս. madhya: Windisch. 10, 23, 39 սանս. madhya, պրակր. majja, լտ. medius: Սրանց համեմատ են նաև Böttich., Müller, Justi, Bopp են։ Karolides, Γλ. συγκρ. 93 միջուկ կցում է յն. μικρός «փոքրիկ», կապադովկ. μίτζικο «փոքրիկ» և լտ. mica «փշրանք» բառերին։ Սրմագաշեան, Արմէնիա միջոց բառը համեմատում է ռում. mĭloc հոմանիշի հետ։ Karst, Յուշարձան 406 սումեր. maš «կէս, կտրել, բաժանել»։

ԴԻՒ.—Խրբ. Մշ. մէջ՝, Ալշ. Ախց. Ակն. Դար. Երև. Զթ. Կր. Հճ. Համշ. Մկ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. Տփ. մէչ, Ասլ. մէչ, մէջ, Ոզմ. մեչ, Սվեդ. միչ, Հւր. մէօջ, Ղրբ. մաչ, Ագլ. մաջ, մանջ.—2. Ախց. Զթ. Կր. Հճ. Ննխ. Վն. Տիգ. մէչ (սեռ. Տիգ. միչոց, Վն. մէճոց, Զթ. մօչօց, մօչոց), Ջղ. մէչկ, Տփ. մէչկ, մէճկ, Սչ. մէչգ՝, Ոզմ. մեչ, Մշ. մէճկ, Սվեդ. միչ՝, Ռ. մէչ, Խրբ. Պլ. Սեբ. մէչգ, Ասլ. մէչգ, մէչ*, Դար. Երև. Շմ. մէչկ, Մրղ. Սլմ. մէչկ՝, Ագլ. Ղրբ. մաչկ, Համշ. մէչ (եզակի ձևով. ինչ. մէչս ցաւի կու «մէջքս ցաւում է»).—3. Ագլ. մ՛աժնակ «միջնակ», ինչպէս և Ղրբ. մա՛ժոլ «մէջի կողմը», մինչդեռ մա՛շկիւս «մէջ կոյս, մէջը»։—Թրքախօս հայոց մէջ ունինք Առն.

մուջջուգ *«հացի միջուկ»։— Նոր բառեր են* մէջալի, մէջալուծ, մէջակալել, մէջաւոր, մէջկապ, մէջբացաւ, մէջբաւել, միջաբեր, միջամատիկ, մատնամիջի, միջան, միջանոց, միջացու, միջեան, միջնակ, միջնաւո, միջնաբար, միջնոց, միջտանիճ, միջխալեղ, շէնամէջ, գիւղամէջ, մարդամէջ, տնամէջ, մշնդուռ, միջուկ *են, են։*

ՓՈԽ.—Վրաց. მიჯნა *միջնա «սահման»,* მემიჯნავე *մեմիջնավե «սահմանակից, հարևան».—բոշայ.* մանջը *«մէջը»,* մանջուել *«ապրիլ»,* մանջուած *«յղի».—Թրք. գւո. կր.* Kar-meč *«Քարմէջ» (յատուկ անուն է. «Նիխախէն 5 վայրկեան հեռու ապառաժի մը մէջ գտնուած խոռոչն, որ ժամանակաւ բաւական երկայն ճամբայ մըն է եղեր, բայց եաքէն գոցուեր է քարերուն իյնալովը». Բիւր. 1898, 627)։ — Կովկասեան լեզուներից ունինք խունս. և ջար.* māčo, *անցուգ.* maç *«մէջք», որոնք պատահական կարող են լինել։*

ՄԷՍ *«սովոր կամ մերձաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 210։*

ՄԷՏ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «կշիռքի միջին կէտը» (ըստ ՆՀԲ) կամ «հաւասար նժարների վրայ աւելացուած դոյգն ինչ ծանրութիւնը» (ըստ ՋԲ) ՍԳր. Մծբ. 294. Ոսկ. եփես. 695. «կշռի նժար կամ թաթ» Վանակ. յոր. «հակած, յօժար» Ոսկ. Սերբ. «հարիւր լիտր» Բառ. երեմ. էջ 210.—«փոշու մի հատիկ, որ ամենափոքր կշիռն է» Վրք. և վկ. Բ. 150 (Իբրև մէտ մի փոշւոյ համարեալ է). այսպէս է հասկանում նաև Զքր. սարկ. Ա. 67 (Կշռեցին և կշիռն նորա որպէս և ասաց Շահղուլի Բէկն, մէտ մի ո՛չ աւելի և ոչ պակաս)։ Այս արմատից ունինք մէտ ի մէտ «ճօճելով» Ագաթ. կամ մէտ առ մէտ Քեր. քերթ. միտել «հակել, մէկ կողմ ծռել» ՍԳր. Ոսկ. Բուզ. Եզն. «կցել, միացնել» Հին բռ. Մագ. գամագտ. (ՀԱ 1911, 366), «խօսքը յատկապէս մէկին ուղղել» Ոսկ. մ. գ. 112 (Առ Պետրոս զրանն միտէ), «հաւանութեան գալ, խոնարհիլ» Մագ. թղ. 237 (Աճառ. ՀԱ 1923, 254). որ և գրուած է մեաել Ոսկ. մ. բ. էջ 706. միտագոյն Ոսկ. մ. ա. 15, բ. 12. միտութիւն Ոսկ. մ. բ. 27. դիւրամէտ Սերբեր. ճակամէտ Փիլ. 34. կթ. զուգամէտ ԱՔ. միտումնաւոր (նոր բառ). նոյն են նաև մետ «մէջտեղը» Պետ? մետական «հասարակ բայ» (ըստ. յն. «միջակ») Հին քեր.։*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 130 պրս. մէեէք, մէեք*(?)*: Brosset JAs. 1834, 377 *(որից և Ջուբինով) վրաց.* մետեբա *«չխնայել, աճիլ, աւելանալ»,* մետի *«աւելի, աւելորդ»։ ՆՀԲ լծ. հյ.* մէջ: Lag. Urgesch. 136 mā *արմատից։ Պատկ. Շիր. 28 յն.* μέτρον *«չափ» բառի հետ։* Müller, Armen VI *գնդ.* mit *«կրցել, մերձենալ» կամ սանս.* mitra *«բարեկամ»։ Հինք. միտ բառից։*—Kluge MSL 16, 335 *վրաց. մեաի «աւելորդ, յաւելուած, ուժեղ»։*

ԴԻՒ.—Ունինք մէտ *Զն. «հակեալ դիրքով, ծուռ, շեղ», շփոթելով նետ բառի հետ՝ ձևացել է Զթ. նիդ «կշռի սլաքը».—Նո՞ր է արդեօք նաև Առն. (Հայոց, Յունաց և Թրքաց մէջ գործածական) միտ «ցատկելու և նման խաղի ժամանակ որոշուած մի կէտ, ուր կոխում են և ցատկում», որից էլ* մէտմէտ խաղալ *Սվ.։*

ՄԷՐԻԷՄ *տե՛ս Մլհամ։*

ՄԸՆՈՒ *«կօշիկ». նորագիւտ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Դիւան ժ. էջ 128, Պատմ. ԺԲ դարից. «Դեղին սոչ ու մըխս հայու հասաղ արին»։*

Մթար *տե՛ս Մութ։*

ՄԹԵԼ. *անսովոյ բառ, որ մէկ անգամ ունի Զգօն 242. «Նկն մատեաւ և մթնաց զմեղըրն յինքն». (ասորին ունի* ܢܣܒ nəsab «collegit, accepit, sumpsit»). *Վարդանեան ՀԱ 1921, 502 սրբագրում է* կթեաց *կամ* մթերեաց: *Առաջինն աւելի հաւանական է։*

ՄԹԵՐ, ի *հլ. «դիզուած բան, համբարանոց» ՍԳր. Եփր. բ. կոր. 103. Ոսկ. մ. ա. 5. —որից* մթեր առ մթեր *«կոյտ կոյտ» Վեցօր. 165.* մթերել *Ա. մակ. ղ. 53. Սպ. թ. 25. Ագաթ. Եփր. թագ.* մթերածոյ *Մծբ.* մթերանոց *խոր.* մթերումն *Պետ. բազմամթեր Վեցօր. Եղիշ. բ. էջ 36, առաք. 346.* ռազմամթերք *(նոր բառ)։*

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 311 մի թեր, *իբր «մէկդի դրած, մի կողմ*

դրած, պահած բան»։ ՆՀԲ հանում է մութ բառից, իբր «մթին սենեակ, համբարանոց»։

ՓՈԽ.—Kraelitz-Greifenhorst *հայերէնից փոխառեալ է դնում Ատրպատ. թրք.* مرك merek *«շտեմարան ցորենոյ. վաճառատուն», որից յետ է առնուած հյ.* մառագ *(ՀԱ 1911, 259)։—Անհիշտ է. որովհետև մթերի բառը հայ գաւառականների մէջ գործածական ձև չէ. թրք.* merek *փոխառեալ է հյ.* մառագ *բառից։*

***ՄԹԽԱԼ** *(գրուած նաև* մտղալ, մթղալ, մըտղալ*) «փոքր մի կշիռ է, մէկ և կէս դրամ» վրք. հց. Պտմ. աղէքս. 167. Շիր. Բժշ. Վստկ. 145, Տաթև. ձմ. ճլթ.—նոր ձև է մրսխալ Կալիսթ. 167 (ըստ մի ձեռ.)։ Այս բառն էլ չի գտնւում Աղեքսանդրի վարուց նախակնչառուական օրինակում. ահա հատուածը՝ ըստ հաղորդագրութեան Հ. Ն. Ակինեանի (Նամակ 1935 մայ. 12). Եւ իմ ոչ հաւատացեալ թէ իցեն սեղանք կռածոյք, կամ եղև ինձ զոհս մատուցանել Հերակղեայ։ Եւ հրամայեցի ծակել զմի յարձանաց անտի. և էր համակ ոսկի. և ապա լնուլ հրամայեցի զծակն. և տարաւ լտիրս ՌՇ։ Եւ անտուստ դնացեալ մեր ընդ անապատս և ընդ ահուտ վայրս (ձեռ. Վիեննայի, № 947, էջ 106բ)։ Սրա դէմ տպագիրը (էջ 167) ունի. Եւ ոչ հաւատացեալ թէ իցեն սեղմք կռածոյք, կամ եղեւ ինձ համակ ոսկի. կամ եղեւ ինձ դարձեալ լնուլ զծակն, և գտաւ ծակուածն պի տարաւ ոսկիս հազար և հինգ հարիւր մտղալ, որ է դրամ մի։ Եւ աստուստ դարձեալ ընդ անապատն և ընդ վախուտ վայրս։*

=Արաբ. مثقال miθqāl *նոյն նշ. որից էլ թրք.* məsqal, *ամկ. մսխալ. ծագում է արաբ.* ثقل θql *«ծանրութիւն» արմատից։ —— Հիւբշ. 271։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ, նոյնը յետոյ Հիւբշ. ZDMG 35 (1881), *662։*

ՄԺԵԽ, ի–ա *հլ. «մոծակ» Սղ. ճղ. 31. Ոսկ. յհ. բ. 30. Վեցօր. 183, որ և* մժիխ (ի–ա *հլ.) Ոսկ. ա. տիմ. ժէ, (ո հլ.) Նղն. Վեցօր. 121, 136. Նխ. իմ. 8հ. իմ. պաւլ.* մժիղ, ո *հլ. Վեցօր. 183, 195.* մժիկ *Սեբեր. Սոկր. 357. մժղուկ Մտթ. իգ. 24. Վեցօր. 183. Ճառընտ. Վրք. հց. եփր. ծն. էջ 6. յոգնակին՝* մժղուճ *Վրդն. սղ. սրանցից դուրս ՆՀԲ տալիս է նաև* մժեղ, մժեղն, մժղիկ *ձևերը՝ առանց վկայութեան՝ Բառ. երեմ. էջ 211 ունի* մժղեխկ. *կայ նաև* մեջեխ, մճչեխ *Վստկ. 79,* մճեղեխ *Ոսկիփ. (ՆՀԲ Բ. 1057)=Անկ. դիրք նոր կտ. 169,* մճեղուկ *Բար. 167։*

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 հանում է ժ բնաձայնից։ Peterm. 22, 29 *լտ.* musca, *սանս.* makšikā, *որ է «ճանճ»։* Lag. Urgesch. 783 *–եխ համարելով մասնիկ՝ մժ կցում է սանս.* makšikā, *պրս.* maqas, *լտ.* musca, *յն.* μυῖα *«ճանճ» բառերին։* Müller SWAW 38, 592 *և* 595 *սանս.* makšikā: Pott. Kurdische Stud. ZKM 4, 36 *աֆղան.* mičan *«ճանճ», քրդ.* meš, *պրս.* magas, magaz, *բուխար.* mekes, *սանս.* makšika, *լտ.* musca *ևն։ Նոյնը* Justi, Zendsp. *222 դնդ.* maxši *ձևի տակ։* Lag. Arm. St. § 1498 *–եխ մասնիկով* մժ<maǰ *արմատից, որի հետ դնդ.* maxši *այնպէս է համեմատում, ինչպէս* baxš—baǰ. *Նոյն՝ կասկածով յիշում է նաև պրս.* miżmiż *«ծհատուկի ճանճ»։ Հիւնք. պրս.* մէխիյզ *«խայթոցատուր»։* Bugge KZ 32, 86 *մոծակ բառի հետ կովկասեան ծագումից է դնում. համմտ. կիւրին* mizmiz *և չէչէն.* mozu *«ճանճ». (այս ձևերը ըստ իս յարմարում են հյ. դւռ.* մոզ *«ճանճ» բառին)։* Scheftelowitz BB 29, 67 *դնում է փոխառեալ պարսկերէնից. համմտ. բելուճ.* makiš, *դնդ.* maxši, *պհլ.* maxš *«ճանճ»։ Մատ* ИАН *1918, էջ 2076 վրաց. բուզի «ճանճ» բառին ցեղակից։* Petersson IF 43 (1925), 72 *մժ/եխ ազդուած է հյ. գոռ/եխ ձևից. մժիխ գումարն է* մժիկ+մժեխ. *համմտ. լիթ.* mig´eles *«մուն»։ Պատահական նմանութիւն ունին լիթ.* mašalaĩ, *լեթթ.* masala *«փոքր ճանճ» (*Trautmann, *էջ 170)։*

ԳԻՒՐ.—Ջղ. մժեխ, *Ակն.* մժէխ, *Ալշ. Մշ. Ջղ.* մժեղ, *Ախց. երև. կր. Համշ. Շմ. Սեբ.* մժէղ, *Ասլ.* մժէ՛ղ, *Տփ.* մժիղ, *Խրբ.* մռժէխ,

Ռ. մրժէղ, Հմշ. մչէղ, Ղրբ. մնչէղ, Զթ. մրչղեխ, Մկ. Վն. մժիկ, Սլմ. մժիկ՝, Մրղ. միժիկ՝, Մշ. Տիգ. մժիգ. սրանցից Ախց. Կր. մըժէղ նշ. «մոռն, փոքրիկ ճանճ», որից և Ախց. մաճր-մժէղ «մանր-մունր», Շմ. և Ղրբ. մըժէղ և մնչէղ գործածւում են միայն իբրև կրկնական՝ ճանճ բառի հետ, Տիգ. մժիգ նշ. «մրչիւն», մինչդեռ Մրղ. Սլմ. «ճանճ» և Դվ. Վն. «մոծակ»: Բրքախօս հայոց մէջ ունինք Առն. մուչուխ «մժեղ», Սեբ. մժեղ «մրչիւն»: Նոր բառ է մարդամժեխ:

+**Մի՛** «մի՛, ո՛չ, չ, չինի թէ». (սովորաբար գործածւում է հրամայականի հետ և կազմում է արգելական. գործածւում է նաև ուրիշ եղանակների հետ. ինչ. Յոբ. իա. 2 ևն). ոճով աւում է մի՛գուցէ, մի՛ արդեօք, մի՛ երբեմ, մի՛ եղիցի, խաւ և մի՛ լիցի ևն:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. me ձևից. համմտ. սանս. मा mā, գնդ. 𐨨𐨪 mā, հպրս. mā. պազ. պրս. 𐭬 mā, քրդ. me, աֆղան. օսս. ma-, գնչ. ma, բոշայ. մա՛, յն. μή «մի», իսկ Թոխար. mā «չ (իբր ընդհանուր բացասական մասնիկ)», ալբան. mos (Pokorny 2, 236, Bolsacq 631 Horn § 998: — Հիւբշ. 474: Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. ma ձևի հետ: ՆՀՔ սանս. mā, յն. μή և արաբ. մա «ոչ»: Պատկ. Изслвд. 6 սանս. mā, պրս. ma ևն: Տէրվ. Altarm. 31, Նախալ. 121, Lag. Arm. Stud. § 1499 ևն վերիններիս հետ: Մորթմանն ZDMG 26, 549 բևեռ. ma: Ծնէն ՀԱ 1904, 271 հաթ. mia: Karst, Յուշարձան 421 Բրբ. բացասական -me մասնիկի հետ: Պատահական նմանութիւն ունի չին.  mei² «ոչ, չէ»:

ԳԻՒ.—Ասլ. խրբ. Գոր. Համշ. Մրղ. Զղ. Սեբ. Սչ. Տիգ. մի՛, Զթ. Մշ. Ռ. Հճ. Սլմ. Վն. մի՛, մ՛, Ննխ. մի՛, մը՛, Պլ. մի՛, մը՛, մ՛, Ախց. Երև. Կր. Շմ. Տփ. մի՛, մի՛ֆ (երկրորդը յոգնակիում), Ալշ. Մկ. Ոզմ. Սչ. մը՛, Ղրբ. մըէ՛ր (յգ. մրէ՛ֆ), Յղ. մո՛, Ագլ. Մղր. մո՛ն.— Բրքախօս հայոց մէջ կայ Առն. մըխըսի՛ր «մի՛ խօսիր, լռի՛ր»:

+**Մի**, ո հլ. (նաև միոջ, միում, ի միոջէ) «մի, մէկ». գործածւում է իբր թուական, իբր անորոշ յօդ կամ անորոշ ածական. այլ և այլ ձևերով աւում է՝ մի մի, մի առ մի, առ մի, ընդ մի, մի ըստ միոջէ, մի ոմն, մի ոմ, մի ինչ, ինչ մի ևն. ՍԳր. Ոսկ. Եփր. Եւս. քր. ևն ածանցման մէջ ներկայանում է հետևեալ ձևերով. **Մի**, որից միաբան ՍԳր. Եւս. քր. միագոյն Կոչ. Բուզ. Ագաթ. միագործ Վեցօր. միագունդ ՍԳր. Վեցօր. Եփր. Թգ. միազօր Եւագր. միամիտ Մտթ. ժ. 16. Եւս. քր. և պտմ. Եփր. Թգ. միաճաղոյն Ագաթ. Բուզ. Ոսկ. յհ. ա. 37. միականի ՍԳր. Բուզ. միալարի (նորագիւտ բառ) Լծ. պրպմ. 748. միակին «մինակ» (-կին մասնիկով) Ոսկ. Հերոդ. միական Եւագր. Նանայ. միանալ «միանալ» Ա. եզր. դ. 21. Խոր. «սրտումը տպաւորուիլ» Փարպ. 20, 181, Թղթ. 200, Պտրգ. 230. միացուցանել «միացնել» Պարպմ. ՅՃխ. «սրտումը տպաւորել» Փարպ. 35 (այս նորագիւտ նշանակութիւնները դնում է Գաթըրճեան, Պտրգ. 230). ի միասին ՍԳր. Եզն. միաւոր ՍԳր. Ագաթ. Կոչ. Եւագր. միաճգամ, միաճգամայն ՍԳր. Ոսկ. Եւս. քր. աճմի Բուզ. Մծբ. էջ 335 (համմտ. ՀԱ 1911, 748). Նոր բառեր են միակին, միաճաւոր, միաճանուճի, միասպատ, միացում, միդասեան ևն.— **Մե-**, որ գտնւում է բարդութեանց սկիզբը, երբ երկրորդ եզրը բաղաձայնով է սկսում, և յառաջացած է հին միա- ձևից. (մի բառի ի ձայնաւորը միանալով ա յօդակապի հետ՝ տալիս է ըստ օրինի ե. համմտ. *այգիակուբ>այգեկուբ, *գարիաճաց>գարեճաց). այսպէս են՝ մեծասան ՍԳր. մեկուսի ՍԳր. Ագաթ. Եզն. Եւս. քր. Ոսկ. Սերեր. մեկողմանի Կոչ. մեկին «մէկ, միակ» Կոչ. «պարզ, յայտնի» Եւս. պտմ. Սերեր. Վեցօր. «լոկ, միայն, ևթէ» Ոսկ. Եւս. պտմ. (կազմուած է -կին մասնիկով, ինչ. կր-կին, երեք-կին, չորե֊-կին. սխալ գրչութեամբ կամ ձևով՝ մէկին, մեկն «պարզ» Լմբ. Ներբ. Համբ. 1865, էջ 269), որից էլ մեկնել «բաժանել, ջոկել, զատել» ՍԳր. «պարզաբանել, բացատրել, պարզել» ՍԳր. «պարզել, տարածել, սփռել» Բրս. մրկ. Վստկ. առմեկնել «բաժանել» Կոչ. 366. մեկնեցուցանել Ծն. լ. 36. մեկնոց «վերարկու» Եզեկ. ե. 3. Հռութ. գ. 15. Եփր. Թգ. 374. Բուզ. մեկնակ Վեցօր.

Կոչ. Եւս. պտմ. «վերարկու» (նորագիւտ բառ) Լմբ. մատ. էջ 84, մեկնակազէն *ՍԳր.* անմեկն *ԱԲ.* մեկնակէտ *(նոր բառ) ևն. այս ձևերը իրապէս արժեն *միատատան, *միակուսի ևն. ինչպէս որ ունինք էլ միակուսեցուցանել Մծբ.* միակողմանի *Մաթ. ժե. 30, 31.* միակին *Ոսկ. Հերոդ.*—ՄՈՒ *(սեռ.* մոյր, *տր.* մում*) «մէկ». յունաբան դպրոցի հնարած ձևն է՝ իբրև իգական, մինչդեռ մի չեզոք է, և եզ՝ արական. Համմ. Եփես. գ. 5. «եզ Տէր, մու հաւատ, մի մկրտութիւն» ըստ Թարգմանութեան Տիմոթ. կուզի, էջ 213, 256 (յն.* εἷς κύριος, μία πίστις, ἓν βάπτισμα.*)* —ՄԻԱԿ, ի–ա *հլ. «մէկ» Փիլ. Խոր. կազմուած է մի բառից՝* -ակ *մասնիկով. որից* միակօրէն *Փիլ. իմաստ. և սղմամբ* մէկ, *որի հնագոյն վկայութիւններն ունին Պղատ. օրին. գ. Մխ. դտ. Տօնակ. Հիմայ տարածուած է գրեթէ բոլոր գաւառականներում*— ՄԻԱՅՆ, ո *հլ. «մինակ, առանձին, լոկ» ՍԳր. Ոսկ. Եւս. քր. որից* միայնաձալ *ՍԳր.* միայնուկ *Մծբ. Եփր. Թգ.* միայնեակ *Փիլ.* միայնակ *Խոր.* միայնաւորական *Ագաթ.* միայնաստան *Ագաթ.* միայնանոց *«մենաստան» Փիլ.* միայնագործ *Կորիւն.* միայնակեաց *Կոչ. Եւագր. Ագաթ. կազմուած է* -այն *մասնիկով. ինչ.* գիշերայն, զեռնապարեայն, ամենայն, միանգամայն *ևն.*— ՄԵՆ-. *դործածւում է ածանցների սկիզբը. ինչ.* մենամարտ *Եւս. քր.* մենաւոր *Կոչ.* մենաստան *Ագաթ.* մենակեաց *Բուզ. Վեցօր.* մենանալ *Ողբ. ա. 1. Ա. տիմ. ե. 5.* մենանոց *Եղիշ.* մենութիւն *Ոսկ. ա տիմ. Ագաթ.* մենաշնորհ, մենավաճառ, մենավաճառութիւն *(նոր բառեր). առանձին դործածուած պարագային դառնում է* մէն *Սիր. ը. 19, Կոչ. 191, Ագաթ.* մէն մի *ՍԳր. Ագաթ. Բուզ. որին հետևելով և սխալ գրչութեամբ՝ նախորդներն էլ գրում են նաև* մէնամարտ, մէնաւոր *են, որոնք չեն ընդունուած մեր գրական ուղղագրութեան մէջ,* մենկամ մէն *գալիս է միայն ձևից՝ եա դառնալով ե կամ է (միայն>*մեյն>մեն, մէն). ուստի վերի ձևերը իսկապէս արժեն* միայնամարտ, միայնաւոր, միայնակեաց *են, ինչպէս որ իրօք էլ գործածուած են մատենագրութեան մէջ.* մեն- *ձայնափոխութիւնը տեղի էր ունեցած Ոսկեդարից էլ առաջ, այնպէս որ ե դարուն գործածւում էր իբրև գաւառական ձև.*—ՄԻՆ *«մէկ» Լմբ. Նար. Առ որս. ծագում է մի բառից՝ և յօդի կցմամբ. ունինք նաև* միներ *Ագաթ. Եւթաղ. 116. Ոսկիփ. Մաշտ.* միներիւ *Սեբեր. 196. Վրք. Հց. որոնք կարող են թէ՛ մէն ձևից ածանցեալ լինել և թէ մին բառից ձևացած՝ առանց սղման.*—ՄԻՄԵԱՆՔ. *դործածական է միայն հոլովեալ ձևով. սեռ. տր.* միմեանց *«իրարի», հյց.* զմիմեանս *«իրար», բցռ. ի միմեանց, դրծ.* միմեամբք *(հին և ընտիր). ածանցների մէջ ունինք* զմիմեանսզրկութիւն. *Բուզ.* միմեանցասէր *Ոսկ. յհ. ա. 9.* ընդմիմեանսաւարութիւն *Փիլ. եր. ի* միմեանսայար *Փիլ. քհ. ևն. կազմուած է մի բառի կրկնութեամբ, ճիշտ այնպէս, ինչպէս ունինք գւռ.* մէկզմէկ, մէկմէկու, մէկզմէկու, մէկմէկէ, մեկզմէկե, *թրք.* biribirimiz *«մենք իրար մենք զմիմեանս» ևն. հին լեզուի մէջ էլ ունինք Եզեկ. լգ. 30. Եւ ասեն մի ցմի (փոխանակ ասելու* ցմիմեանս).—ՄԻՈՒ, ո *հլ. (հնագոյն գրչութեամբ մեւս) «մէկէկ» ՍԳր. Եւս. քր. Ագաթ. որից* միւս ևս *Եփր.* միւսանգամ *ՍԳր. կազմուած է մի+ևս բառերից՝ ճիշտ այնպէս, ինչպէս աշխ.* մէկ–ալ, մէկ–ել *«միւս» (որ և համմտ. թրք.* obir *«միւս», բուն* ó-bir *«ա՛յն մէկ»)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* smio- *ձևից։— Սրա պարզական արմատն է հնխ.* sem-, *որ նշանակում էր «մի» և «ամբողջ, մի ամբողջութիւն» (ամբողջը իբրև մի միութիւն ըմբռնելով)։ Զանազան ձայնդարձներով* sem- *առանում էր* som-, sm-, sm̥-, som-, smm- *ձևերը, որոնցից յառաջացած են յն. ար.* εἷς *(դորդ.* ἓνς, *դոր.* ἧς < ἑμ-ς*), իգ.* μία, *չեզ.* ἓν *«մի, մէկ»,* ὁμός *«նման»,* ἅμα *«միասին»,* ἀ-παξ *«մէկ անգամ»,* ἀ-πλόος *«պարզ»,* ἑ-κατόν *«մի հարիւր»,* սանս. sama *«նոյն, միևնոյն»,* ça-cvant *«իրաքանչիւր»,* sahá *«միասին»,* satra *«միասին»,* sa-kŕt *«միանգամ»,* sa-hasram *«մի հազար», զնդ.* hāma *«նոյն»,* haδa *«միշտ, միասին»,* haθrā *«միասին»,* ba-kərət *«միանգամ»,* hazaŋra- *«մի հազար», քուչ.* ṣeme *«մէկ», լտ.* similis *«նման»,* semel *«մի անգամ»,* sim-plex

«պարզ», sin-guli «ամէն մի», sem-per «շարունակ», mille (*smī g´zhlī) «մի հազար» գոթ. sama «նոյն», sums «մէկը», simlē «էր երբեմն, մի ժամանակ», հսլ. samŭ «նոյն», są-sědŭ «հարևան, միասին նստող», հիռլ. samail «նմանութիւն», som «ինքը» են (տե՛ս Walde 697, Boisacq 231 և մանաւանդ Pokorny 2, 488—492 *դրուած բառերի երկար ցանկը*)։ *Այս բոլորի մէջ միայն յունարէնն ու հայերէնն են, որ պահել են այս ձևը իբրև թուական անուն, ար.* sem-s, *իգ.* smia, *լիզ.* sem *ձևով (համմտ. նաև քուշ.* ṣeme «մի, մէկ»). *իսկ միւս հնդեւրոպական լեզուները, իտալականից մինչև սլաւոնականը՝ այս թուականի տեղ գործածում են* oino- «միայն, առանձին» *բառը. լտ.* unus, *իռլ.* oen, *գոթ.* ains, *հպրուս.* ains, *հսլ.* inŭ (Meillet, Esq. lat. 45)։ *Հայերէնի մէջ մի ձևը կա՛մ իբրև հնխ.* smia *նախապէս իգական էր և յետոյ անցաւ նաև արական ու չեզոք սեռերին էլ, և կամ կազմուած է* -io- *մասնիկով՝* sem- *արմատից, իբր* smio-։—*Հիւբշ. 474։*

Հներից Մագ. թղ. 95 միակ համաբում է յունարէնից փոխառնալ. «Միակդ յոյն բարբառով նշանակէ առաջին և փոխանակ մեր միակին ասէին առաջին». (այսինքն թէ բուն հայ ձևն է առաջին)։—*Ցն. յւա բառի հետ են համեմատում* Peterm. 151, Windisch. 29, Capelletti, Armen. *Բրգմ. Արշ. արրտ. 1842, 108։*—Müller SWAW 35, 191—199 *անտեղի է դնում որ մեր բառը ներկայացնէ յունարէնի իգականը. ուստի մ դնելով յառաջացած* v-*ից, մի* <vi<iv *կցում է զնդ.* acva, *օսս.* iv «մէկ» *բառին։* Böttich. Wurzelforsch. 25 և Lag. Urgesch. 438 մէն և մեն= յն. μόνος։ Müller SWAW 42, 258 և 66, 274 մէն *դնում է* maina *ձևից, այսինքն կազմուած մի բառից՝* -aēna *մասնիկով։ Այս ենթադրութիւնը մերժում է* Lag. Arm. Stud. § 1492: Bopp, Gram. comp. 2, 212 մէկ և մին *կապում է սանս.* manāk «քիչ» *մակբայի հետ, որի մօտ թևերս կար նաև* manāka *ածականը. բունը մէկա՝ միջին վանկը գոյել է, իսկ միևո՝ վերջին վանկը. միևո-ից յառաջացաւ միո և յետոյ մի. ամէնից աւելի կարաւորածն է մու, որ* manāka *բառի առաջին վանկը միայն պահել է՝ ձայնաւորն էլ շրջելով* ու. *Թուում է թէ յն. μία ազգական է հայերէնի։—Ցն. μία ձևով են մեկնում նաև Հիւբշ.* Arm. Stud. 43, *Տէրվ. երկրագունա Ա 17, Լեզու 166 և Նախալ. 131 են։* Canini, Et. étym. 241 *մի կցում է ամերիկեան այմարա լեզուով* maia *բառի հետ։* Bugge, Etr. u. Arm. *էջ 23 և 123 միակ=հոր.* max *հոմանիշի հետ. (այսպէս էր արել նաև* R. Ellis, The Asiatic affin. of the old Ital. 51): *Ննաէն դնում է հաթ.* mi(á) «մի, միայն» *ձևից։* Deecke BB 14 (1889), *էջ 210 հյ. մու=լիւկ.* mo-: Patrubány SA 1, 193 *հնխ.* mevk´os *ձևից. համմտ. լտ.* mu-to: Bugge, Lyk. Stud. 1, 51 *լիւկ.* mupῆmẽ «պարզ» *բառի մէջ և 2, 47* miyedi *բառի մէջ գտնում է լիւկ.* mi=«մի», *որ ինքը մերժում է 2, 110, համարելով լիւկ.* mi «վերաբերեալ»։ Pedersen, *Ցուց. դեր. 37 միաս-ին բառի մէջ գրտնում է մի բառի յգ. հյց. ձևը՝ -ին մասնիկով։* Patrubány IF 14, 58 մին «մէկ» *ո՛չ թէ մի բառից է, այլ մնամ բայից։ Հայտնի, Պատմ. տարազին 142 մեկնոց մեկնում է «մեկնելու, անից դուրս գալու ժամանակ հագած զգեստ»։*

ԳԻՒ.—Մի ձևը պահում են *Երև. մի և Ակն. մի (յետադաս, իբրև անորոշ յօդ).*—*այս մի ձևից են սղուած ՋԹ. Խրբ. ՀՃ. Համշ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. մը, որոնք իբրև անորոշ յօդ են գործածւում և ձայնաւորի մօտ դառնում են մ՛.*—*Նոյնը Ախց. Կր. -ըմ. 2. Միև ձևին են կապւում Ղրբ. Շմ. Ջղ. միև, Գոր. մրև, Պլ. մրև, Ագլ. մույն? 3. Միակ>մէկ ձևն են ներկայացնում Ոզմ. մեկ, Ախց. Կր. Մկ. Վն. մէկ, Ալշ. Ակն. Երև. ՋԹ. Համշ. Մշ. Ննխ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. մէգ, Մրզ. Սլմ. մէկ[1], Ասլ. մէգ, մէյ, Պլ. մէգ, մէյ մը, Ակտ. մեհ, Խրբ. մէհ[1], Սվեդ. միգ, միյ մը, Ախց. Մրզ. Սլմ. Տփ. մէ (կրկնութեամբ Տփ. մէմէկ, ինչպէս և Պլ. մէյմէգ). երկու ձևերի գումարն է Ախց.*

մէմ<մէկ մը<միակ մի: *4.* Մէն ձևից է *Աչ.* մէնը *«միայնակ»: 5.* Միայնակ *բառի հետ նոյն են Սլմ. Տփ.* մէնակ, *Ննխ.* մէյնագ *(դիւղերը նաև* փէյնագ, փայնագ), *Ղրբ.* մի՛նակ, *Ալշ. Ակն. Մշ. Պլ. Սեբ.* մինագ, *Ասլ.* մինագ, մինայ, *Մկ. Ոզմ.* մնակ, *Ջղ.* մինէկ, *Ագլ.* մո՛նոկ, *Շմ.* մոնոգ՛, *Ագլ.* մէնո՛ոկ. *նոր* -ուկ *մասնիկի յաւելումով Մշ.* մինգուգ=*Պլ.* մինագուգ. *6.* Մեկն ձևն *ունի Ջղ.* մեկն *«շիտակ». ինչ.* Գ՚իրբ մեկն բռնել:—*Կրճատ ու մաշուած ձևեր են ներկայացնում* մէսի *Տփ. (մէկտեղ),* մէփշու, մէշու, մէշոլ *Նբ. (մէկ փշուր),* մէտօմր *Ննխ. (մէկ կտոր մը),* մէհամ *Ննխ. (մէկ հատ մը),* միկա *Ղրբ. (մի կաթ),* մուխրէկ *Ղրբ. (մի խրեկ, մի քիչ.— արդեօք մու «մի» ձևի ներկայացուցի՞չն է):*—*Նոր բառեր են* մէկալ *(հնագոյն վկայութիւնն ունի Սոկր. 26* մեկայլ *ձեւվ),* մենակակեր, մէկանոց, մէկանց, մէկդի, մէկէն, մէկէն ի մէկ, մէկուսար, մէկսալ, մէկտեղ, մեսակ, մեսակել, միմարանի, միաժամ, միաշէն, միանամ, միանել, միանուսար, միանամէջ *են ևն:—Տաճկախօս հայոց մէջ՝ Ատն.* մէգնութիւն *«մենկնութիւն, բացատրութիւն»:*

Փոխ.—Բառս մը, մ՚ *ձևով ճոխ գործածութիւն ունի հայ բոշայերէնի թուականների կազմութեան մէջ. այսպէս՝* ար մը *«հինգ» (բուն նշանակում է «ձեռք մը»),* ար-մ՚ուակ *«վեց» (5+1),* ար-մ՚ու-լուի *«եօթը» (5+2).* ար-մ՚ու-լուի-ակ *«ութը» (5+2+1),* ար-մր-աֆ-մր-լասը *«վաթսուն» (5+1×10),* լա-սէն-աֆ-մր-նաբ *«ինը» (10—1),* լաս-մր-աֆ-մր *«11» (10+1) են. (տե՛ս իմ յօդուածս Արարատ 1899, 241 և* Finck, Die Spr. d. Arm. Zigeuner, ЗАН *1907, էջ 117 են):*

ՄԻԱՁԱՆԷՔ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Բուզ. Զ. 10. «Ձանձն իւր կրթեալ յագահութեան, որում ծարաւեալ պատքեալ փափագէր, սակայն միեանեաւ՝ այն էին նորա»: Այսպէս Պատկ. և Վենետ. 1889. իսկ Պատկանեանի ձեռագիրը, ՆՀԲ, ՋԲ և ԱԲ ունին միաեանէք: ՆՀԲ մեկնում է «Որպէս թէ միակ հանակ, այսինքն խաղ, կատակ, միմոսութիւն կամ կեղծաւորութիւն՝ առ ի հանել և քաղել ինչ մի յայլոց. լծ. Բրբ.* միտա-ճանէ» *(իմա՛ արաբ.* مداهنة mudāhana *«շողոքորթութիւն»): Այսպէս նաև ՋԲ և ԱԲ, երկուսն էլ ընտրած են միաեանէք ընթերցուածը: Բառը անշուշտ յոգնակի է. ինչպէս ցոյց է տալիս էին յոգնակի բայը. հզակին պիտի լինի միաեանէ կամ միեանէս: Ի՞նչպէս պէտք է կէտադրել նախադասութիւնը: Վենետկի և Պատկանեանի հրատարակութիւնները վերինին պէս են. մինչդեռ ՆՀԲ «...փափագէր: Սակայն միահանէք այն էին նորա, ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր...»: Երևի նախկին ձևն է ուղիղ, որովհետև երկրորդ պարագային սպասելի էր «զի ի չորք...»: Առաջին ձևով կէտադրելով նախադասութիւնը, անյարմար է գալիս «կատակ» նշանակութիւնը և աւելի յարմար է գալիս «փորձանք, վտանգ, փորձութիւն»: Բուզանդ ուզում է ասել թէ «Ցուվհաննը ազատութեան ծարաւի էր. սակայն այդ ազատութիւնը իր գլխին փորձանք էր բերում» (ինչպէս այդեպանի դէպքում. համմտ. Բուզ. Զ. 9):*

ՆՀԲ-ի մեկնութիւնը իբր եանաթ բառից, չի կարող ուղիղ լինել, որովհետև բառի եզ. ուղ. ձևն է միաեանէ, երկրորդ՝ որ եանաթ յետին փոխառութիւն է. համմտ. քրդ. henek *«շատախօսութիւն, անպէտ խօսքեր»,* bi-henek *«առանց կատակի, լուրջ»,* hanak *«կատակաբանութիւն»,* hanak kirin *«կատակել»,* hanakči *«միմոս, կատակարան»: Վերի ձևով մեկնեց Աճառ. Արարատ 1910, 270:*

+ՄԻԱՅՆ. *կազմուած է մի բառից, այն մասնիկով. տե՛ս* մի:

ՆՀԲ «մի այն ևեթ»: Հիւնք. չն. μεῖον *«նուազագոյն»:*

Միասին *տե՛ս մի և սին, սուն, սնանիլ:*

ՄԻԲԱԻՆԱԿ *«հզօր». ունի միայն Բառ. ԵՒրեմ. էջ 212:*

***ՄԻԳԱԼԻՍ** *«մի տեսակ բունաւոր կենդանի». ունին միայն ՀՀԲ և ՓԲ, առանց վկայութեան: Վկայութիւնն ունի Մոլութ. 171 ա. «Նմանին կենդանւոյն որ կոչի միգալիս, որ հանդարտութեամբ գտանէ զմարդ և ապա հեղու ի նա զթոյնս մահաբերս»:*

=Յն. μυγαλέη, μυγαλέης «դաշտային մի փոքր անասուն է. musaraigne, լտ. mus araneus»։—Աճ.

ՄԻԳԱՐԻՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ գործածում է Մագ. թղ. 58. (Ո՛չ թէ օտարից, այլ արևնակցից) մեղկեալ եմք միգարնով, և թողացուցեալ (ՆՀԲ թուլացեալ) գործարանս բանի և գրոյ և մտածութեան։— ՆՀԲ մեկնում է «միգանալ, մէգ առնել անձին», ԱԲ «ինքզինքը մթագնել». երկու մեկնութիւններն էլ անյարմար են։*

ՄԻԳԵՂԵԱԼ *«զարդարեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 212։*

ՄԻԳՆ *(ըստ ՆՀԲ հոլովւում է մգին, մգնի, մգնիւ, մգնեաց, բայց չունի վկայութիւն. ըստ Ակինեանի՝ սեռ. մգան ձևով է Զենոն իմաստ. «Իսկ բժշկութիւն է ըստ մգան և ըստ ուղղոյ». մգնեաց ձևն ունի Մոլութ. էջ 49 բ. «ի մէջ երկուց մգնեաց, որք պատեն զուղեղն, է կարմիր իմն ջուր»), «պարուտակ, բարակ մաշկ (ուղեղի, քարաճիկի, ձուի ևն)» Նիւս. կազմ. ծրղն. երկն. գ. Վստկ. 220. Տիմոթ կուզ, էջ 324. որից մգանիւ «նորածնի շապիկ, փաթ, տղընկերք» Ոսկ. մ. ա. 4, բ. 24. մգնանն Մագ. թղ. 224. ԵՒս. որս. մգնատեսակ Նեմես. էջ 110. Մագ. մգնարճեսա Նար. 262. գաւառական ձև է մզղին (յիշում է միայն ՀՀԲ), որից ձևացած են մզղնանն կամ մղգնանն, մզղնատեսակ Տաթև. հարց. 181, 239, Տաթև. ամ. կ. ճլդ. Յայտմ. մրտ. 18, Սարգ. յկ. գ. էջ 52։*

ՆՀԲ լծ. յն. μήνιγξ, լտ. meninx «մզղն»։

ԳԻՒ.—ՆՀԲ իբր գւռ. յիշում է մզղին, որ գիտէ նաև ՋԲ։

+ՄԻԹԼ *«արդիօք» ՍԳր. «թևրևս, գուցէ, կարելի է որ» Վրք. Հց. Զքր. կԲ. Գնձ. Օրբել. աււում է նաև մի՞ եթէ, կամ պարզապէս մի՞ «մի՞թէ» Փիլ. Մագ. խսիւք. (Համաձայն յունարէնի). ըստ Միսքճեանի՝ Խսիք. յոր. գործածուած է 61 անգամ մի՛ եթէ (տե՛ս իր սեփական տպագիր օրինակի մէջ կատարուած վիճակագրութիւնը, որ հիմայ գտնւում է Երևանի Հանրային գրադարանը)։*

=կազմուած է մի՛ արգելականից և թէ շաղկապից, իբր «չլինի թէ». համմտ. յն. μή, μήτι, τήτις, μήτινος, μήποτε հոմանիշները, որոնք նոյնպէս կազմուած են μή արգելականից՝ զանազան միջակ անուններով։ Նոյն կազմութիւնն ունի նաև պհլ. al-hat «մի՛թէ» (ըստ Թիրեաքեան, Կարնամակ, ծանօթ. 51)։—Աճ.

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ՝, որ կցում է նաև յն. մի՛դի։ Հիւնք. հանում է յն. μήτι բառից։ Գազանճեան, Տարեցոյց Պապիկ. 1905, էջ 128 միացնում է թրք. մի՞ հարցական մասնիկի հետ։

ԳԻՒ.—երև. Տփ. միթամ, Լ. Ղզ. մթամ «իբր թէ» կապ չունին սրա հետ և փոխառեալ են վրաց. მითამ միթամ հոմանիշից։

***ՄԻԹԻԻՏՈՍ** *«միհրդատեան անդեղայ կամ դեղթափ. mithridate». մհյ. բառ. ունի նոր այր, Բառ. ֆրանս. 816ա. մէկ անգամ գրտնում եմ գործածուած Մխ. բժշ. 124՝ յիշուած Թևրիակի հետ։*

=Յն. ἀντίδοτος Μιθριδάτειος բառն է, որ և լտ. Metsrouditous. արաբ. مثروذيطس mθrūδīts. սրանով հները հասկանում էին մի տեսակ զօրեղ դեղթափ, որի գիւտը վերագրում էին Պոնտացոց Միհրդատ Ջ (20—63) թագաւորին։

Ուղիղ մեկնեց Seidel, Հրտր. Մխ. հեր. § 339 և 340։

***ՄԻՒՐ** *«լատին ոճով եպիսկոպոսական կամ քահանայական թագ» Օրբել. Հրտր. էմ. էջ 314, Մաշտ. ջահկ. Թղթ. դաշ. 27. Տաթև ամ. էջ 442. գրուած է նաև միդր Մամբ. դատ. 68. ուղիղ տառադարձութեամբ է միտր «պրսակ, խոյր» Ոսկ. ես. 458. «Իբրև փեսայի եղ ինձ միտր ... միտրն պսակ ինչ բոլորեալ նարօտ ականակուռ, զոր դնեն ի գլուխ փեսայք ի հարսանիս»։*

=Յն. μίτρα «արևելեան խոյր, փաթթոց, չալմա». բուն նշանակում է «գօտի, կապ». սովորաբար կցում են μίτος «թել», μιτάω «ոստայնի թելերը լարել» բառերին. բայց չէ ստոյգ. և հաւանաբար Փոքր-Ասիականից փոխառութիւն է (Boisacq 641)։ Սրանից են փոխառեալ նաև լտ. mitra, ֆրանս. mitre «եպիսկոպոսական թագ»։—

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

Միժել «լռել». ունի միայն Բառ. երեմ. էջ 212։

***Միլ** «երկանաքար, meule». դիտէ միայն Նորայր, Բառ. ֆր. 808 ա. աղբիւրը չի յիշած, բայց գնում է իբրև հին բառ։ Կայ յիշուած 1036 թուի և 1215 թուի մի մի արձանագրութեան մէջ (տե՛ս Վիմ. տարեգ. էջ 19 և 59), սակայն նշանակութիւնը պարզ չէ։—Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 408 բ ունի նոյն արմատից մլաւոր «միլ կամ իլ ունեցող (ջրաղաց)»՝ հանելով Ջամբռից 189—190. երևի այս վերջինը միլ «ճաղ» բառն է. այս դէպքում տարբեր է *միլ կամ *մուլ, որից մլաղաց (տե՛ս մալ)։ Մատ. մեկնում է «փողրակ, ազուցայ» (Անիի արձանագրութեան մէջ) կցելով վրաց. მილი միլի հոմանիշին։ Մաքրիանց, Kъ интерпрет. դնում է իբր թալդ. pilé որ ուրիշներ սխալ են մեկնում «յիշատակարան»։

=Յն. μύλος «երկանաքար, ջաղացքի քար»։—Աճ.

Միլ, միլոն տե՛ս Մղոն։

***ՄԻԼԱՐԻՏ** «ոչխար ճարակելու արօտ». այսպէ՛ս է ՆՀԲ-ի ընթերցուածը՝ քաղուած Նոննոսից. բայց տպագիրը (էջ 38) ունի «Եւ թողացոյց զվայրս իւր, զի լինիցին մելաբաւտ. և մելաբաւտ է վայրն, ուր արձակեալ լինին ոչխարք ի ճարակս. քանզի մելաւ զոչխարէ ասացեալ Հոմերոս. աստուստ և մելաճարակք են հովիւք և մելովտէ՝ մորթ ոչխարի»։

=Յն. μηλόβοτος «ոչխարներից ճարակեալ» բառն է, որ յետոյ թարգմանարար դարձել է միլորուտ (բուտ «ճարակ, ուտելիք» բառից)։—Հիւբշ. 365։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Միլոն տե՛ս Մելաւ։

Միլովտէ տե՛ս Մելովտէ։

Միխճի «այգու մէջ անկելու մի տեսակ անվնաս ծառ» Վստկ. այս բառը չունի ԱԲ. իսկ ՀԲուս. գրում է միճխի, մճխի «որդան փայտ, brésil», առանց յիշելու Վստկ.։

Միմ «ցեխ, հոտած տիղմ» Փիլ. լիւս. 133. Նիւս. կազմ. Անյ. հց. իմ. որից մծեալ «կեղտոտ, մուխ» ԱԲ. մձուիւն «մխուիւն. թխուիւն» Գիւտ. թղթ. սաստկական զ նախադիրով՝ զմծեալ «ապականեալ» Նորագիւտ բ. մնաց. իէ. 2. Ոսկ. եփես. 909 (Հին բռ. և Բառ. երեմ. էջ 102 սխալ են մեկնում «տրտմեալ». տե՛ս իմ Նոր բառեր Մնաց. գրոց մէջ, էջ 14)։

Scheftelowitz BB 28, 300 *հայ.* **մէզ** *բառը դնելով իրանական փոխառութիւն, բնիկ է համարում մձուիւն. իսկ* BB 29, 30 *կցում է անգսք.* smitta «կեղտ, արատ», հրգ. smiz «բիծ, արատ» *են բառերին. և դարձեալ* BB 29, 46 *սանս.* mih «մէգ», meha «մէզ», *զնդ.* miz, *լիթ.* mižu, *լտ.* mingere, *գոթ.* maihstus, *գերմ.* mist *ձևերին։* Pokorny 2, 685 *այս երեքից ընդունելով երկրորդը, միմ դնում է հնխ.* smeid- «քսել, կեղտոտել» *արմատի տակ։ Պատահական նմանութիւն պէտք է ունենայ վրաց.* მიწი միծի «հող, աճիւն, արտ, նկարի մէջ սուներ», მიწური միծուրի «գետնատուն, խրճիթ», შემიწება շեմիծերա «յանձին դառնալ», სამიწო սամիծո «հողային»։

***ՄԻՄ** «հոպիտ, ծաղրածու, միմոս». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Ոսկ. մտթ. Ա. էջ 107. «Խուժդուժքն մինչև տեսեալ էր զնա, այնչափ ճանապարհս հատին վասն նորա, դու և ո՛չ յետ տեսանելոյ նախանձաւոր լինիցիս նոցա, այլ թողեալ զնա յետ տեսանելոյն՝ ընթանաս զի զմիմսն տեսանիցես». (յն. τρέχεις ἑνα τὸν μίμον ἴδῃς). —Հին բռ. ունի միմf «կատակք»։

=Յն. μῖμος Հոմանիշից, որի վրայ տես՛ի ընդարձակ տե՛ս միմոս։

Ոսկերերանի յիշեալ հատուածի մէջ զմիմսն *բառի տեղ ձեռագիրն ունենալով «զմիւսն հոպիտս» ընթերցուածը, ՆՀԲ (հոպիտ բառի տակ) տարակուսում է թէ զմիւսն պէտք է ուղղել զմիմոսն։ Նորայր, Հայկ. բառաք. էջ 41 համաձայն Հին բռ. կարդում է զմիմսն։ Վերջին անգամ Հ. Ա. Վարդանեան ՀԱ 1913, 345 յունարէն բնագրի համեմատ կարդում է զմիմսն, իսկ հոպիտս բառը համարում է յետին լուսանցագրութիւն՝ իբր բացատրութիւն միմ բառի։*

+**ՄԻՄԵԱՆՔ** տե՛ս Մի։

Ուղիղ մեկնեցին ՆՀԲ, Windisch. *էջ 38։*

ԳԻՒ.—Ագլ. մումՙնիւ «միմհանց»։

***ՄԻՄՈՍ** (ի–ա *հլ. բառ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «*ծաղրածու, կատակող*» *Վրք. հց. բ. 373. սրա հետ նոյն են նաև* **միմ** *Ոսկ. մաթ. Ա. 107 (տե՛ս վերը) և* **մոմոս**, ի–ա *հլ.* «*խեղկատակ*» *Ոսկ. մ. բ. 23, յհ. բ. 36. Կանոնք սահ. 75. (ուր և գրուած* **մոմող**). *արդի գրականի ընդունած ձևն է* **միմոս**, *որից և* **միմոսութիւն**, **միմոսական**։

=*Յն.* μῖμος «*ծաղրածու, խեղկատակ*». *ծագում է* μιμέομαι «*նմանեցնել, մէկի ձայնը կամ ձևերը կեղծել*» *բայից. սրանից են փոխառեալ նաև վրաց.* **მიმოხი միմոսի**, **მიმოხი միմմոսի** «*աճպարար, ձևոնածու*», *լտ.* mimus, *ֆրանս.* mime *և հյ.* **միմ** «*միմոս*»։ *Ուրիշ է յն.* μῶμος «*ծաղր, ծաղրական քննադատութիւն*», Μῶμος «*Ծաղրի՝ Հեգնութեան աստուածը*». *դալիս է* μωμέω, μωμάομαι «*ծաղրել, հեգնել*» *բայից. սրանից են փոխառեալ հրէարէն* מומום momos, *գերմ.* Momus *(և հայ.* **մոմոս**) «*խեղկատակ, ծաղրական անձնաւորութիւն՝ յետին յունական կատակախաղերի մէջ*»։—*Հիւբշ. 365։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

***ՄԻՆԱՅ** «*նաւահանգիստ*». *Նորագիւտ բառ, որ հինգ անգամ գտնում եմ գործածուած հետևեալ տեղերում. Այլ մեք թևօք լցեալ զկուր բանիս և թռուցեալ ի վերայ ծովացեալ պատմութեանց յոգունց և հասեալք ի միևնոյս հանգստեան մերումս կենցաղավարութեան. Միխ. աս. 532.—Թիւր հողմով ոչ հասանի նաև ի միևնոյն... յորժամ ի միևնոյն հասանին և նստեալ ի նաւէն յօտար աշխարհ... յորժամ ի միևնոյն մահու հասանի՝ մեծ վնաս կայ. Տաթև. ձմ. հև.—Զնաւահանգիստս ի ծովեզերացս սովոր են մանիակ կոչել, որ արդ միևնոյն ասեն. Վրդն. երգ. էջ 90. սրանից է կազմուած* **–պան** *մասնիկով՝* **միևնապան** «*նաւահանգստի պետը*». *այսպէս էր կոչւում Այասի ոստիկանապետը (տես* Brosset, JAs. 1861. XVIII. *էջ 327)։*

=*Արաբ.* مينا mīnā, مينة mīna, ميني mīnă «*նաւահանգիստ*» *բառից (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 712). այս բառը համարւում է փոխառեալ ասոր.* ܡܝܢܐ ləmīnā *հոմանիշից, որ իր հերթին փոխառեալ է յն.* λιμήν *ձևից, որից է նաև Բրք.* ليمان liman=*ռմկ.* **իլիման** «*նաւահանգիստ*»։

Ուղիղ մեկնեց Brosset, *անդ։*

ՄԻՆԻՐԱՅ. *անյայտ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սամ. անեց. շար. 167. «Եմուտ մսրցին ի Կիլիկիէ... և զԱյաս ի սպաս ջնջեցին և զմինիւրան և զբերդն քակեցին»։ Անշուշտ չէ մնիրայ «մզկիթի աշտարակ», որ մսրցիք չպիտի աւերէին. ուստի պէտք է կա՛մ մի նոր բառ լինի և կամ աւելի հաւանաբար պէտք է կարդալ միևնայ «Այասի նաւահանգիստը» (տե՛ս նախորդը)։*

+**ՄԻՆՉ** «*մինչև, ց*» *Ա. մակ. դ. 15, «երբ, որ ժամանակ որ» ՍԳր. Ոսկ. Եղիշ. «այնպէս որ, այնչափ որ» ՍԳր. Կոչ. որից* **մինչ զի**, **մինչ այս մինչ այն** *ՍԳր. Ագաթ.* **մինչդեռ** «*երբ դեռ*», **մինչև** «*ինչուան, ց*», «*այնքան որ*», **մինչչև** «*դեռ չ*», *բոլորն էլ Ոսկիդարեան. նոր գրականի մէջ* **մինչև** *իսկ,* **մինչև անգամ**։ *Բառիս ամենահին վկայութիւնն ունի Խոր. Բ. կա «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար» վիպասանական հատուածը։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* smē *(կամ* sme) *ձևից, որ աճած է* **–նչ** *ձայնով (հմմտ.* **ի–նչ**, *որ կազմուած է* **ի** *արմատից, նոյն* **–նչ** *մասնիկով)։ Այս* sme *կամ* smē *ձևը ներկայացնում են սանս.* sma, smā՝ *սաստկական մասնիկ, յն. յոն. աւտս.* μα *հաստատական մասնիկ, թես.* μά «*բայց*», n *ձայնով աճած՝ հոմեր.* μέν, *յոն. աւտս.* μήν, *լեսբ. դոր.* μᾶν, *հոմեր.* μᾶν «*իրօք, սակայն*», *որից էլ* **–τοι** *մասնիկի յաւելումով՝* μέντοι «*սակայն*» (Boisacq 596, 627)։—*Աճ.*

Աւետիքեան, Քերակ. էջ 106 մեկնում է մի ինչ։ ՆՀԲ «որպէս թէ ցմի ինչ»։ Բագրատունի, Քերակ. զարգաց. էջ 119 մի ինչ։ Տէրվ. Altarm. 3 *և Նախալ. 119 վերջաձայնը նոյն է գնում ոչ, ինչ, գինչ բառերի չ-ի հետ, իբր լտ.* que *են։* Patrubány SA 1, 218 *մի ինչ։*

ԳԻՒ.—Երև. Կր. Սեբ. **մինչեվ**, *Ագլ.* **մինչեվ**, **մինչի՛**, **մինչիեա՛**, **մինչեա՛**, *Ննխ.* **մինչեվ**,

մինչի, մինչօր, *Եւդ.* մինչի, *Խր.* մինչվանի, *Ղզ. Տփ.* մինչկի, *Ակն. Արբ. Պլ.* մինչուգ, *Ակն.* միժվի, մժվի (<մինչուի<մինչև ի).— *արդեօք մ-ի անկումով սրանցի՞ց են յառաջացած, թէ անկախաբար ինչ բառից են ձևացած Հճ.* ինչի, *Արբ. Խր. Ննխ. Պլ.* ինչվան, *Ռ.* իչվան, իչվան, *Սչ.* ինչֆանի, *Ռ.* ինչվանէ, *Արբ. Տր.* ինչաէ, *Ննխ.* ինչվագ՚ի, ինչագ՚ի, *Արբ.* ինչօ՛ր, *Արբ. Կիւր. Կյ. Պլ.* ինչուէ, *Սլմ.* իւնչիւկ՚, *Կս.* ինչուց, *Բզ.* ինչուր, *Տփ.* ինչրի, ինչրու, *Շիր.* ինչարի, *Տփ.* ինչկել, ինչկլի, *Աստ. Դվ.* ինչէրի.—ի *դառնալով ը՝ Սրև.* ընչանէ, *Ասլ.* ընչէօ՛ր, *Երև.* ընչում, *Ջղ.* ընչուր.—*նոյնը վերածուած ու՝ Մրզ.* ունչույ, ունչուն.—ն *յաւելուածով՝ Մշ.* ինչի, *Ակն.* ինինչիգ, ինընչուգ, ինժվի, ինժվի, *Համշ.* ինչագ, *Շմ.* ինիւնչիւրիւ.—*նախավանկի անկումով՝ Գնձ.* չվա, *Շշ.* չվանց, *Վն.* չում, *Ղզ.* չվէլ, *Ալշ.* չանէի.—*սրանցից դուրս ունինք նաև* չուր *ձևը՝ Ալշ. Ասպ. Խլ. Մկ. Մրշ. Ոզմ. Ջղ. Սր. Վն. որի դանազան ձևափոխութիւններն ու աճած ձևերն են՝ Մշ.* չուրի, *Ալշ.* չոր, չորի, *Հւր.* չիր, *Զթ.* չիւյ, չիւր, *Ջղ.* չուրիկ, չուրիկ օր, չուկօր, չկօր, *Ղրր.* չուրու, չրա՛ներ, չէօ՛րանը: *Վերջինը* (չուր) *կարելի է մեկնել կրճատուած* մինչև որ, ինչ որ, չոր *ձևից, բայց համմտ.* ցուր *Մխ. բժշ. էջ 51, 52, 104 և 120. Արկ ջուր ի վերայ մի լիտր և հինէ ցուր ջուրն հատնի և կաթն մնայ. Ցուր չես տեսել զեփելոյ նշանն. Եփէ ցուր մնայ երկու լիտր են. այս ձևը ենթադրել է տալիս, որ բառը կազմուած է ց՚ուր «մինչև ուր, մինչև որ»?*

ՄԻՆՁԵԼ *կամ* **ՄՆՁԵԼ** *«ցանկալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 212 և 214:*

***ՄԻՇՏ** *«ամէն անգամ, շարունակ» ՍԳր. որից* մշտարուղխ *Եզն. Ագաթ.* մշտագնաց *Վեցօր.* մշտակաթ *Եփր. կողոս. Ասկ. տիտ.* մշտակատար *Բուզ.* մշտակենագործակ *(նորագիւտ բառ) Արիստիդ. 20.* -նչեան *մասնիկով (համմտ.* առնչեան*)՝* մշտնչեան *Գ. մակ. գ. 17.* մշտնչենական *Ագաթ. Ասկ. ես.* մշտնչենակաց *Վեցօր.* մշտնչենանալ *Եփր. կողոս. 165. Եւս. պատմ.* մշտնչենաւոր *Ագաթ. Եզն. Եւս. պատմ.* առանց սղման, *յետնաբար՝* միշտհերգելի *Փիլ.* միշտամեղ *Պիտառ. Նոր բառեր են՝* մշտադալար, մշտարծարծ, մշտաձիծաղ *են:*

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. զնդ. mušti *«շարունակ, մշտապէս». ուրիշ իրանական լեզուի մէջ աւանդուած չէ:*

Klaproth, As. polygl. 102 *գերմ.* meist *«մեծ մասը» ձևի հետ:* Peterm. *249 մի շատ ձևից:* Justi, Dict. Kurde *էջ 399 քրդ.* mišt *«առատ», պրս.* mašt *«ամբոխ, բազմութիւն»: Հինք. 226 պրս.* hamīša *«միշտ», լաւ ևս թրք.* šimdi *«այժմ»: Հիւբշ. 194 անապահով է գրտնում համեմատել զնդ.* mišti *բառի հետ, որովհետև ըստ* Geldner *բառս նշանակում է «մէգ, ցօղ», ըստ* Justi *«հեղումն», ըստ* Bartholomae, Altir. Wört. 1187 *«խառնիխուռն, միասին» (հանելով* myas *«խառնել» արմատից, որ է նաև=լտ.* miscere, *գերմ.* mischen, *ռուս.* мѣшать *«խառնել». նոյնը տե՛ս* Trautmann, *էջ 175): Բայց ըստ աւանդութեան նշանակում է «միշտ», ինչպէս ունի Զենդ-Աւեստայի պհլ. թարգմանութիւնը, որ և ընդունում են* Darmesteter, Etud. iran. 2, 303, Zend-Avesta 2, 394, Meillet MSL 17, 247:

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Կր. Ջղ. Տփ. միշտ, *Տիգ.* միշդ. *յատկապէս Ախց. Կր. կրկնութեամբ* միշտ և հանապազ:

+**ՄԻՍ**, ո *հլ. (յետնաբար ի-ա հլ.) «միս» ՍԳր. որից* միս ածել *«զիրանալ» Կիւրղ. ղևտ.* մսակերութիւն *Եւագր. Եզն.* մսաեան *ՕԳր.* մսահատ *Եզն.* մսան *(յգ.* մսանուկ, -նանց*) ՍԳր. (սխալ գրուած* մրցանուկ *Ոսկիփ.),* մսոլ *«մարմնապաշտ» (նորագիւտ բառ) Կանոն. 42.* մսապատ *Ոսկ. մ. բ. 15.* մսեղի *ՍԳր. Եզն. Եփր. եւ.* մսավաճառանոց *Եզն.* կակղամիս *Եւս. պատմ.* իշամիս *Եփր. վկ. արև.* մատաղամիս *Տօնակ.* խառնամիս. *Տօնակ.* թանձրամիս *Վրք. ոսկ.* մսադուլ *(նոր բառ) են:*

=Բնիկ հայ բառ հնխ. mēmso- *(որ և* mēs*) ձևից. սրա ժառանգներն են սանս.* mā́sa-, māṣ, *հինդուստ.* mans, *գնչ.* mas, másі, maš, *քուչ.* misa, *գոթ.* mimz, *հսլ.* męso, *լեհ.* mięso, *ռուս.* мясо, *հպրուս.* mensā, *լիթթ.*

miesa, *լիթ.* misà, *ալբան.* miš, *բոլորն էլ նոյն նշանակութեամբ. հիւլ.* mīr «*մսի կտոր, խայծ*»: *Նոյն արմատին են պատկանում նաև յն.* μηρός «*ոլոք*», μῆνιγξ «*պարուրտակ*», *լտ.* membrum «*անդամ*», *հսլ.* męzdra «*մաշկ, վէրքի փառ*» (Pokorny 2, 262, Trautmann 179, Walde 474, Boisacq 634):—*Հիւբշ. 474:*

Նախ Schröder, Thes. 58 *ռուս.* мясо *բառի հետ, որ դնում է հայերէնից փոխառեալ:* Klaproth, Asia pol. 100 *հսլ.* mjaso, *զնդ.* miesd, *սանս.* amisza, Mémoires 1, 426 *սանս.* amišam: Rask, Nonnulla (1832), *էջ 25=ռուս.* мāso: *ՆՀԲ սանս.* ա՛միշա, *ռուս.* мѣа՛цо: Peterm. 22, 30, 37 *սանս.* māṃsa: Windisch. 23 *աղճատուած սանս.* māṃsa *կամ* āmiša *ձևից. հմմտ. գոթ.* mimz: Lag. Urgesch. 721 *սանս.* māṃsa: Riggs, *Քերակ. 1856, էջ 61 անգլ.* meat: Müller SWAW 38, 592 *սանս.* māṃsa: Justi, Zendsp. 236 *զնդ.* myazda *ձևի տակ՝ պհլ.* mīyak, myazd, *պրս.* mīzd *ձևերի հետ: Սրանց համեմատ են նաև Պատկ. Տէրվ. ևն: Հիւնք. յն.* μῦς «*մուկ, մկան, դնդեր*» *բառից: Սանտալճեան,* L'idiome 14 *բևեռ.* miesi: Karst, *Յուշարձան 408 սումեր.* uzu «*միս*»: Klaproth, Asia polygl 141 *ալաւ.* mäso, *զնչ.* maš, *սամոյէդ.* amša «*միս*» *բառերի հետ:*

ԳԻՒՐ.—Ալշ. Ախց. Ասլ. Երև. Խրբ. Կր. Հճ. Համշ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. Տփ. միս, *Ոզմ.* մէ՛ս, *Ցղ.* մէյս, *Գոր. Ղրբ.* մըէ՛ս, *Սվեդ.* մէս, *Ագլ.* մայս, *ՋՓ.* մը՛ս: *Նոր բառեր են միսբերան. միսմորթէ, մսաբակի, մսալի, մսակալել, մսաճալ, մսաճախիլ, մսաճուռ, մսաճաշ, մսամոլ, մսացու, մսեճի, մսլախ, մսմսատել ևն:*

ՓՈԽ.—Գ. Փառնակ (Անահիտ 1906, 233) մեզանից փոխառեալ է դնում ալբան. miš «*միս*», *որ ընդհանուր հնդեւրոպական աղբիւրից է:*

ՄԻՍԱԼ «*լատիններէն և ունիթոռներէն պատարագամատոյցը*» *Պտրգ. 479, 496 (նոր բագիւտ բառ):*

=*Սո. լատ.* missale, *որից ֆրանս.* missel «*պատարագամատոյց*». *արմատը լտ.* missa «*պատարագ*»:—*Ա.Ճ.*

***ՄԻՍԹԱՍՂ,** *որ և* միսբաճաղ, միսբաղ. *մէկ անգամ գործածուած է Դ. Բաղ. ժ. 22.* «*Ասէ Յէու ցմիսթասաղսն. Հանէ՛ք զպատմուճանդ ամենայն ծառայից Բահաղու*»:

=*Եբր.* מלתחה meltāḥā *ձևից, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը և նշանակում է «բազատրական հանդերձատուն, vestiaire» (փոխառեալ է ասուր.* maštaku<*maltaktu *«սեղնակ» բառից՝ ըստ* Gesenius[17] 431): *Այս բառը անցել է մեզ յն. տառադարձութեան վրայից, որ թէև ընդհանրապէս μεσθάλ ձևն ունի, բայց կայ նաև* μισθάλ *ընթերցուածը (տե՛ս* Tischendorf-*ի 1869 Յուն հրատարակութիւնը, էջ 470): Երկուսն էլ սակայն սխալ են և հաւանաբար հարազատ օրինակում գրուած էր* μελθάα (Sophocles 745): *Հայերէնի մէջ կատարուել է երկրորդ սխալը. յոյն օրինակի* τῷ ἐπὶ τοῦ οἴκου μεσθάαλ *հատուածի դէմ, որ պէտք էր թարգմանել «առէ ցնա՝ որ էր ի վերայ տանն հանդերձատանի (կամ միսբաղ)», հմմտ. անգլ.* and he said unto him that was over the vestry, *թարգմանուել է պարզապէս «առէ ցմիսթասաղսն» (այն էլ յոգնակի). որով սեղնակը դարձել է անձ, այսինքն հանդերձատունը՝ հանդերձապետ:*

ՆՀԲ «բառ. եբր. միջքալ, *որ է վերակացու կոչնոց», ՋՓ «հանդերձապետ»:* Macler *ՀՄ 1927, 614 վերի յոյն ձևի հետ, որ եբրայականի տառադարձութիւնն է:*

***ՄԻՍՏԵՒԻՈՆ,** *որ և* միստեռիոն, միստեռիոն, միստոռն, մեստրիոն, միստերիոն «*խորհուրդ, խորհրդաւորութիւն*» *Նոնն. էջ 5, 11, 51:*

=*Յն.* μυστήριον «*գաղտնիք, խորհուրդ*». *ծագում է μύω «փակուիլ, գոցուիլ» բայից. սրանից են փոխառեալ նաև լտ.* mysterium, *ֆրանս.* mystère *ևն* (Boisacq 614):—*Հիւբշ. 365:*

Ուղիղ մեհնից ՆՀԲ:

ՄԻՍՖԱՔ «*գատաստան*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 213:*

+ՄԻՏ, ի-ա *հլ. (շատ անգամ անեզաբար՝ միտք, մտաց) «խելք, բանականութիւն, ուշադրութիւն, իմաստ ևն» ՍԳր. Ոսկ. Սեբեր. Կիւրղ. ծն. եւ. որից բազմաթիւ ոճեր ու դարձուածներ. ինչ.* միտ դնել, ի մտի դնել, ի միտ առնուլ, ի միտս գալ, զմտաւ ածել, ընդ միտ մտանել *ևն. մտած է շատ բազմաթիւ ածանցների մէջ, որոնցից յիշենք մի քանի հնագոյնները. այսպէս՝ մտաբերել ՍԳր. Եւս. քր. Եզն. Եւագր. Սփր. Թղ.* մտացի *Ոսկ. Ես. և մաթ.* մտադիւր *ՍԳր. Ոսկ. Եւս. քր.* մտախաբ *Բուզ.* մտաւոր *ՍԳր. Եզն.* մըտացածին *Բ. պետ. Բ. 3.* մտացծնոյց *Նխ. յուդ.=Եւագր.* անմիտ *ՍԳր.* ընդմտատար *Առակ. ժդ. 10.* երկմտիլ *ՍԳր. Եզն.* սրբամտիլ *Ագաթ.* ծածկամիտ *Սփր. դտ.* բարեմիտ *Ոսկ. բ. կոր.* գազանամիտ *Ագաթ.* դրժամիտ *Մծբ.* կարճամիտ *ՍԳր. Ոսկ.* թերամիտ *Ոսկ. Ես.* խղճամիտ *Սիր. է. 9.* միամիտ *Սփր. Թղ. Եւս. պտմ.* սրտմտիլ *ՍԳր. ևն ևն: Նոր բառեր են՝* մտագրաւ, մտածելակերպ, մտածողութիւն, մտայինն, մտածմունք, մըտայնութիւն, մտապատկեր, մտավախ, մտավախութիւն, մտացիր, մտորում *են:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mēd- *արմատից. համմտ. յն.* μῆδος, *յգ.* μήδεα *«հոգ, խնամք, մտածմունք, մտադրութիւն»,* μήδομαι *«խոկալ, մտածել, ենթադրել»,* μήστωρ *«խոհեմ»,* μέδομαι *«խորհրդածել, մի բանի մասին մտածել, հոգ տանիլ, զբաղուիլ, մաղթել», լտ.* meditāri, meditor *«մտածել, խոկալ, ուսումնասիրել»,* meditātio *«խոկմունք, մտածմունք»,* moderare *«չափաւորել»,* modestus *«համեստ»,* modus *«չափ, քանակ, կերպ, եղանակ», գոթ.* mitan *«չափել»,* mitōn *«դատել»,* us-mēt *«վարմունք», հբգ.* mezzōn *«չափել, մտածել»,* māza *«չափաւորութիւն», մբգ.* māz *«չափ, եղանակ», գերմ.* messen *«չափել»,* Mass *«չափ», անգսք.* metan, *հոլլ.* meten *«չափել», հհիւս.* mât *«դնահատութիւն»,* moetr *«նկատելի, արժէքաւոր», իռլ.* midiur, ro mīdar *«մտածել, կարծել»,* mod *«կշիռ», կիմր.* meddwl *«հոգի, միտք» ևն: Այս բառերի մի մասը պատկանում է* med- *արմատին, միւսները՝ երկար* mēd- *կամ միջին* mod- *ձևին: Հայերէնը պատկանում է միայն* mēd- *ձևը: Արմատի իմաստն է «չափել, կշռել և այստեղից էլ՝ դատել, խորհրդածել»: Ունեցել է նաև. «բժշկել» իմաստը, ընդունելով բժիշկը իբրև իմաստուն, որից էլ ծագում են զնդ.* vī-mad- *«բժիշկ», լտ.* medeor *«բժշկել»,* medicus *«բժիշկ», յն.* Μῆδος, Μῆδη *«բժշկութեան աստուածը» ևն* (Pokorny 2, 259, Boisacq 619, Walde 471, Ernout-Meillet 568, Kluge 329):—*Հիւբշ. էջ 474:*

ՆՀԲ լծ. հյ. մէտ, մուտ, *լտ.* mens, *իտալ.* mente, *սանս.* mati, manas;—Windisch. 23 *կամ սանս.* manas, *լտ.* mentis *և կամ յն.* μῆδος, μήδομαι, μήτις *բառերի հետ:* Gosche 26 *սանս.* mid, mith, mēdh, mēth, *զնդ.* miθ, *նոյնպէս և փռիւգ.* Midas, Mida, *իգ.* Midia *յատուկ անուններից:* Böttich. ZDMG 1850, 358 *զնդ.* mati *կամ սանս.* miti, *զնդ.* miti *«չափ» և կամ սանս.* mith: Lag. Urgesch. 438 *զնդ.* maiti, *լտ.* mens, *ինչպէս և զնդ.* upamaiti=*պրս.* ummēd *«յոյս» ձևերի հետ՝* man *արմատից:* Müller SWAW 42, 250 *զնդ.* maiti, *սանս.* mati:—Justi, Zendsp. 219 *զնդ.* maiti *ձևի տակ:* Lag. Beitr. baktr. Lex. 45 *զնդ.* maiti *են: Հիւբշ.* KZ 23, 34 *եւրոպական* menti- *արմատից: Նոյն.* Arm. Stud. § 203 *միտժելով սանս.* mati *«միտք», զնդ.* maiti, *լտ.* mens (men-ti-s), *գոթ.* ga-munds, *լիթ.* at-minti-ę, *հսլ.* pa-mętĭ *ձևերը, որոնց նախաձևը* *mn-ti-s *համապատասխան չէ հյ. միտ բառին, տալիս է վերի մեկնութիւնը:* Canini, Et. étym. 39 միտ=*յն.* μῆδος: *Տէրվ. Նախալ. 98 հնխ.* ma, man *արմատի տակ՝ հնդ. զնդ. հպրս.* man, *յն.* μάντις, μέμονα, *լտ.* memini, mens, *գոթ.* ga-mun-an, *գերմ.* meinen *և հյ.* իմանալ, իմացայ, իմաստ *ձևերի հետ: Հիւնք. յն.* μῆτις, μῆτις, *զնդ.* մատ, *սանս.* մաթիս, *լտ.* meditatio:

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. միտկ, *Երև.* միտ, միտկ, *Տփ.* միտ, միթկ, *Ախց. Խրբ. Կր. Համշ. Մկ. Նխճ. Ռ. Սեբ. Տիգ.* միթք, *Սլմ.* միթք', *Վն.* միթկ, *Մրզ.* միթկ', *Պլ.* միթգ *(բայց* միթս

է, միքն է), *Սչ.* միդգ՝, *Ակն.* միրգ, միւգ, *Ասլ.* մի*գ, մի*, *Ոզմ.* մէ՛տկ, *Սվեդ.* մէդ, *Գոր. Ղրբ.* մրէտկ, մրէննը, *Հւր. Շմ.* մրդկ, *Ջթ.* մը՛դ, *Յղ.* մէյա, *Ագլ.* մայա, մայամ: *Նոր բառեր են՝* անմտածել, մտաճան, մտամոլոր, մտաջոկիլ, մտացիկ, մտացմ, մտափոխ, մտիկ անել, մտմտալ, մտմտուք, մտորել, մտքել, մտքամոլոր, մտքարարի *են: Թրքախօս հայոց մէջ ունինք էնկ.* xəžmədank *«խղճմտանք» (Բիւր. 1898, 789), Առն.* xəγǰmədank *«խնդճ», Ղզլ.* mədig qoymaq *«մտիկ ընել»,* muzmunq *«մտածմունք»:*

ՓՈխ.—Վրաց. მეამატი *մեամիտի «միամիտ»,* მეამატობა *մեամիտոբա «միամտութիւն». այս բառերը չունի Ջուբինովի բառարանը, բայց գործածական են Վրաց նոր գրականութեան մէջ. ինչ. օր. Վ. Կոտետիշվիլի, Պատմ. վրաց ԺԹ դարու գրականութեան, էջ 189: (Այս տեղեկութիւնը հաղորդեց Գ. Ասատուր, Վրաց լեզուի և գրականութեան պատմութեան դասախօս՝ Երևանի համալսարանում):*

Միտր *տե՛ս Միթր:*

***ՄԻՐԱԲԱՂԱՆՈՍ** *«մի տեսակ հնդկական բոյս և նրա պտուղը, բան» Կալիսթ. էջ 145, 148. ունին միայն ՋՔ և ՓՔ:*

=Յն. μυροβάλανος *նոյն նշ. որից փոխառեալ են նաև լտ.* myrobalanus, *ֆրանս.* myrobalan *են. յոյն բառը կազմուած է* μύρον *«բուրմունք» և* βάλανος *«կաղին» բառերից և նշանակում է բուն «բուրող կամ անուշահոտ կաղին»:—Հիւբշ. 365:*

ՋՔ և ՓՔ նշանակում են միայն թէ յունարէն է: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Տաշեան, Ուսումն. ստոյն Կալիսթ. էջ 207:

ՄԻՐԳ, ո *հլ. (յետնաբար նաև ի, ի–ա հլ.) «պտուղ» Երեմ. խ. 12, 20. խը. 32. Կոչ. որից* մրգապահ *«պարտէզի պահապան» ՍԳր.* մրգարեր *ՍԳր. Ագաթ.* մրգիկ *Ոսկ. մ. ղ. 16.* մրգաւէտ *Ագաթ.* մրգաբոյծ *Եղիշ. չրչր. 277. Վրդն. սղ.* ճաւամրգի *Մխ. առակ. Գաղիան.* մաշկամիրգ *նոր. աշխ. նոր բառեր են* մրգավաճառ, մրգավաճառանոց, մրգասատակ, մրգասիսեռ *«բոլոր սիսեռ, լար. լաբու, լէպլէպի» (որ և ոմանք գրում են— մրկասիսեռ. առաջինը իբր* միրգ–սիսեռ, *երկրորդը իբր* մրկած սիսեռ):

Տէրվ. Altarm. 58 *կգում է հյ.* ամոթել, մաֆուր, *սանս.* marǰ *«քերթել, փրցնել, մաքրել», յն.* ἀμέλγω, *լտ.* mulgeo, *գերմ.* melke *«կթել»,* Milch *«կաթ» են բառերի հետ:*

ԳԻՒ.—Երև. Հմշ. Տփ. միրճ, *որից* մրգեղէն, մրգաջուր *(>Ջթ.* մարճաջ՛ուր*).—Հմշ.* մաշմուրճ *«շագանակ» ներկայացնում է հների մաշկամիրգ բառը.—ըստ ՀԲուս. § 3276 խոջ. կայ ամրկենի թուփը՝ որից ցախաւել են շինում և այս է հների ճաւամրգի բառը՝ ըստ Նորայր ՀԱ. 1921, 615:*

ՄԻՐՂ *«մի տեսակ ըմպելիք, կորեկօղի, պօղա». ունի միայն ԳԲ, իբր արաբ. փոխառեալ բառ, որ սակայն չգտայ Կամուսի մէջ:*

ՄԻՑԻԼ *«առնել,* usurpo*». այսպէս ունի Ներսէսովիչ, Բառ. լտ.–հյ. էջ 592 բ. թերևս «վաշխ առնել»?*

Միւռիկիճա *տե՛ս Միւրիկէ:*

***ՄԻՒՒԻՆԷՍ** *«մի տեսակ ձուկ» Ղևոնդ, էջ 93. որ և* մուռուենէս, մեռինէս *Վեցօր. 141, 151:*

=Յն. μύραινα, μύρινος, *որից փոխառեալ են նաև լտ.* muraena, myrinus, *ֆրանս.* murène, *նոյն նշ. այս ձկան արուն կոչում է յն.* μῦρος *որից լտ.* myrus.—*Հիւբշ. 518:*

Ուղիղ մեկնից ՆՀԲ:

***ՄԻՒՌՈՆ,** *որ և* միռոն, մեռոն, ի, ի–ա *հլ. «օծման սուրբ իւղ» ՅՀ. իմ. Դիոն. «որ և իսկ անուշահոտ իւղ» Վրք. հց. որից* մեռոնակիր *Լաստ.* միռոնել *կամ* մեռոնել *Բրս. մրկ. Լմբ. մատ. էջ 26.* միռոնատուփ *Մաշտ. 65. արդի գրականի ընդունած ձևն է* միռոն:

=Յն. μύρον *բառից, որ նշանակում է «հնդուկ անուշահոտութիւն, հոտաւէտ իւղ», յետնաբար «իւղ օծութեան, միւռոն». ծագում է ո՛չ թէ* μύρα *«ծորիլ, կաթիլ կաթիլ հոսիլ» բայից, այլ հնխ.* smer *«քսել, օծել» արմատից, որի ժառանգներն են նաև յն.* σμυρίζω, μυρίζω *«անուշահոտ իւղեր քսուիլ», գոթ.* smairþr, *անգսք.* smeoru, *հհիւս.* smiǫr, *հրգ.* smëro, *հոլլ.* smeer, *անգլ.* smear, *լիթ.* smarsas *«ճարպ», հհիւս.* smyria, *հրգ.* smir-

wen, գերմ. schmieren «քսել, զօծել, ապականել» են (Boisacq 652, 886, Kluge 429, Pokorny 2, 690): Նոր կտակարանում յն. բառը թարգմանուած է միշտ իղ և հյ. միւռոն ձևը ուշ է երևում: Ցոյնից են փոխառեալ նաև ասոր. mīrun, վրաց. მირონი, ռուս. мvро, քրդ. mirún հոմանիշները:— Հիւրշ. 364:

Հներից Նար. ղգ. էջ 261—2 տալիս է այլ ընդ այլոյ մեկնութիւններ. «Միռոնս այս օրհնաբանեալ... բուռ քերթութեանն բառի որ ըստ խորութեանն Հոմերոնի, թարգմանեալ իմանի «ինձ մայր»... Իսկ մանաւանդ՝ որ և այս միւռոն՝ ըստ այլում բառի ցուցանի, այսինքն է «մբթին», որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ կամ անտեսական... Մեռայ՝ որ է «դառնութիւն» ... որ և միւռոն սուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ «մեռելութեան ազգականութիւն»: (Սրանց մեկնութեան փորձերը տե՛ս Աւետիքեան, Մեկն. Նար. Վենետիկ 1859, էջ 531):— Սարգիս Շնորհալի, Մեկն. Քղթոյն Յակոբայ, Գլ. ժա (էջ 166) մեկնում է մեռանել արմատով. «Զոր միւռոնն սուրբ անուանեմք, այսինքն մեռուցիչ բոլոր ախտից. որով և մարդիկ մեռեալք ի մեզաց՝ ի մեծ պատիւն ի վեր ելանեն և որդիք Աստուծոյ անուանին»: — Ուղիղ մեկնեցին նորերից նախ ՀՀՒ և ՆՀԲ:— ՀԲուս. § 2065 միւռոնածաւո բառի տակ յիշելով Դիոսկորիտէսի աւանդածը՝ թէ հայերը myuron են կոչում Հռովմայեցոց majorana կոչած բոյսը, ենթադրում է որ «ի Հայոց բառէն առած ըլլան արևմըտեայք majorana անունը»:

ԳԻՒ.—Զղ. մեռոն, Ալշ. Մշ. մէռոն, Ախց. Գոր. Երև. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սչ. մէռօն, ՋՓ. մէռօն, մէռոն, Սեբ. մէռէօն, Ոզմ. մեռուն, Համշ. Շմ. Տիգ. մէռուն, Հճ. մէռոն, Ղրբ. մըէ՛ռուն, Մրզ. մրէռուն, Խրբ. մռօն, Տփ. մի՛ռօն, Սվեդ. միռոօն, Մկ. մռուն, Ասլ. մէռան, մէռա, Ագլ. մո՛ռիւն, Սլմ. մեռոն! Նոր բառեր են մեռոնաղբիւր, մեռոնուիլ, մեռոնաջուր: Առանձնապէս հետաքրքրական մի ձև է Զղ. ռոմռոն, ռոմբռոն «չարաճճի, ստահակ», որ ծագում է ռո մեռոն>ռոմռոն ձևից, ակնարկութեամբ «քո մեռոն երեսից գնացեր ա» են ասացուածների:— Թրքախօս հայոց մէջ ունինք էնկ. մէռօնսուզ «անմեռոն, մահմեղական» (տճկ. səz, suz բացասական մասնիկով) Բիւր. 1898, 865:

+ՄԻԻՍ. իբր մի ևս. տե՛ս մի «մէկ» բառի տակ:

Ուղիղ մեկնեց ՆՀԲ. նոյնը նաև Peterm. 77: Karolides տե՛ս Ամն բառի տակ:

*ՄԻԻՍԻՒՆ «մանրախիճ քարերով զարդարանք, մոզայիկա» Ոսկ. յհ. բ. 36. «Ոսկիղէն միւսիոնս ժողովելով արկանէ շուրջ զորմովքըն» (էջ 884):

=Յն. μουσῖον, μουσεῖον, μουσαῖον «մոզայիկ, լտ. musivum» (Sophocles, էջ 770բ):— Ա.Ճ.

ՆՀԲ լտ. musivum բառից. անծանօթ է յոյն ձևին, որ իրօք էլ չկայ հին յունարէնում: Հայերէն ձևը թերևս ուղղելի է *մուսիոն:

*ՄԻԻՐԻԿ (կամ միրիկ) «մոշի թուփը» Վեցօր. 104, որ և միւռիկինա Վրք. հց. Բ. 401, մուրիկ, մրկենի ՀԲուս. § 2131:

=Յն. μυρίκη «tamaris բոյսը կամ որևէ վայրի թուփ», որից μυρικίνεα, μυρίκινη «մացառային կամ tamaris բոյսից»:—

Ուղիղ մեկնեց ՆՀԲ:

ՄԻՕՊԵԱՅ «ամենայն». ունի միայն Բն. երեմ. էջ 213. անշուշտ վրիպակ:

+ՄԼԱՂԱՅ «ջաղացպան» Եփր. թգ. 368. Լմբ. ժբ. մարգ. էջ 212 (=զաք. ժա. 7):

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mel-, mōl- «աղալ» արմատից. աւելի մանրամասն տե՛ս մալ. Համմտ. յն. μάλευρον «ալիւր», որ հին ἄλευρον=ալեւր բառն է, ա՛յսպէս ձևափոխուած μύλλω «աղալ» բայի ազդեցութեամբ (Boisacq 604). Համմտ. նոյնպէս լտ. molinum «ջաղացք» (>իտալ. mulino, ֆրանս. moulin): Լատինները ջաղացքը (այսինքն ջրով դարձող տեսակը) արևելքից ստացան, բայց այդ նոր առարկան անուանեցին իրենց հին արմատով, որից էլ ջաղացպանը կոչուեց նոր անունով՝ molinārius>ֆրանս. meunier (Meillet, Esq. lat. 277): Նկատելի է նոյն-

պէս, որ թէև հնխ. mel- «ջարդել. մանրել» արմատը ընդհանուր է բոլոր լեզուներին, բայց յատկապէս «աղալ» իմաստով գործածական է իտալ. կելտ. գերմ. և բալթիկ-սլաւ. խմբի մէջ, որի դէմ հայն ու յոյնը հանում են աղալ=ἀλέω արմատը (տե՛ս Meillet, Esq. lat. 43):—Աճ.

ՆՀԲ և ՋԲ յն. μῦλος, μύλον «աղօրիք» բառից։ Հիւբշ. չէ յիշատակած այս բառը։

Մլար տե՛ս Մռայլ։

⊙**ՄԼԱՒ** «կատուի նուալու ձայները». արմատ առանձին անգործածական, որից մլաւել «կատուի նուալ», մլաւիւն, մլաւոց «կատուի նուոց». հների մօտ դոյութիւն չունի, բայց սովորական է նոր գրականում։

=Բնաձայն բառ. այսպէս են նաև միւս լեզուների հոմանիշ ձևերը. ինչպէս Թրք. miau, քրդ. meu, meužin, պրս. mav, ֆրանս. miauler, յն. μιάζω, ռուս. мяукать, արաբ. مَوَا mavā ևն։—Աճ.

Գիր.—Երև. մլավէլ, Գոր. Ղրբ. մլա՛վբէլ, Համշ. մլավուշ, Տփ. կլավիլ, Խրբ. մռվույիլ, Պլ. միյավ, Ասլ. միալ, Ախց. Կր. մոյէլ, ՋԹ. մայօլ, մայոլ են (վերջիններս պատկանում են մայել ձևին, որ տե՛ս)։ Բառիս սաստկականն է ռ-ի յաւելումով՝ Պլ. մռլավ, Երև. մռլավէլ։

*ՄԼՀԱՄ «սպեղանի» Վստկ. 201. Վրդն. ստկ. 32. Տաթև. ձմ. կթ. Մաթ. ևագր. 171. որ և մերեամ Վստկ. 223 (գրուած մէրեէմ)։

=Արար. պրս. مرهم marham, նաև malham, mal'am, malyam, Թրք. mehlem, քրդ. malham «սպեղանի». այս բոլորը գալիս են յն. μάλαγμα «սպեղանի» բառից, որ ծագում է μαλάσσω «կակղել» բայից, իսկ այս էլ պատկանում է հնխ. mel- արմատին, որ տե՛ս վերը մալ- (Boisacq 604):—Հիւբշ. 271։

Ուղիղ մեկնից նախ Böttich. Arica 75, 236։

*ՄԼՀԵՏ «ուրացեալ, մահմետական կրօնը ընդունած և քրիստոնեայ դարձած» Նոր վկ. էջ 58 (ԺԲ դար)։

=Արար. ملحد mulhid նոյն նշ.—Աճ.

Տե՛ս Նոր վկայք, էջ 789։

*ՄԼՂՈՒՆ «անիծեալ, նզովեալ» Նոր վկ. էջ 167 (ԺԴ դար). գրուած մելղուն՝ անդ, էջ 302 (ԺԵ դար)։

=Արար. ملعون mal'ūn «նզովեալ». այս օրինակը կարևոր է արաբ. ع>հյ. ղ տառադարձութեան համար։—Աճ.

Տե՛ս Նոր վկայք, էջ 789։

+**ՄԼՄԼԵԼ** տե՛ս Մալ։

ՆՀԲ մալելով մալել։

Մլմլոտ տե՛ս Մուլ։

ՄԼՆԱԿ «փորձաքար, pierre de touche». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. 167. աղբիւրը անծանօթ է։

+**ՄԼՈՒԿ** «փայտոջիլ, թախթաբիթի». հնից չէ աւանդուած. գործածւում է գաւառականներում և արդի գրականում (1788-ին գիտէ արդէն Կ. Սարաֆեան, Բանալի գիտութեան, էջ 83)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mol- արմատից, որ տալիս է հյ. *մուլ, և -ուկ մասնիկով՝ մլուկ. միւս ժառանգները տես մալ։

Pictet 1, 419 սանս. malūka «մի տեսակ որդ» բառի հետ։ Հիմնք. հանում է մուկն բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. § 58, որ ընդունում է նաև Meillet REA 4, 5։

Գիր.—Մէրտ. մլուգ «ոջլի անիծ».—Նոյն արմատից -իկ, -ակ մասնիկներով են կազմուած՝ Երև. մլակ «մանր մոծակ», Տփ. մլակ «մանր մոծակ», Ղրբ. մլաճ «փայտոջիլ», Վն. մլիկ «փայտոջիլ», Նախ. մլագ «մոծակ», Մկ. մլիկ, Մշ. մլիգ։

ՄԽԱՐԵԼ «յորդորել». ունի միայն Բառ. հրեմ. էջ 213, որից առնում է և ՓԲ։

+**ՄԽԻԹԱՐ** «սփոփանք, մխիթարանք» Ոսկ. յհ. ա. 9. «մխիթարող» Իմ. ը. 9. Ես. խ. 11. Ոսկ. ես. 326. «մխիթարական» Բ. մկ. ը. 21. որից մխիթար տալ կամ մխիթար մատուցանել Ոսկ. մխիթարել ՍԳր. Եղիշ. մխիթարական Ագաթ. մխիթարակից Հռ. ա. 12. անմխիթար Փարպ. Եղիշ. ևն։

=Հյ. մի՛ խիթար «մի՛ վախեներ, հոգ մի՛ անիլ» ձևից ածանցուած, ինչպէս որ ևա՛ջ լեր ձևից ածանցուած է ևաջալեր, ևաջալերել։ Հայերէնի հետ ճիշտ միևնոյն կազմութիւնն ունի վրաց. ნუგეში նուգեշի «մխիթարու-

թիւն», որ կազմուած է ՆՅ ԳՅՇօճօճ նու գեշի-նիս «մի՛ վախենար» արդելականից։ Հայերէնի նման վրացերէն էլ աւում է ՑՅՅՃ ցեմա «տալ» բայով՝ ՆՅԳՅՇօճօճ ՑՅՅՃ նուգեշինիս ցեմա «մխիթար տալ»։

Հինք. արաբ. մուխբիր «յուշարար, յիշեցուցիչ» բառից։ Patrubány *ՀԱ 1903, 380 սանս.* múkha *«բերան» ձևից, իբր անց. դերբ. մուխիթա «ասացեալ»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 108 մխել բայից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Մառ* ЗВО *17, 30—31, հայ թրգմ. ՀԱ 1907, 17։ Մխիր, Բազմ. 1907, 29 մաղթել բառի հետ։* Tezo *Բազմ. 1907, 53—56 յիշում է Մառի մեկնութիւնը կասկածով, բայց անորոշ է իր միտքը։*

ԳԻՒ.—Ջղ. *Մշ.* մխիբարել, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* մխիբարել, *Ասլ.* մխիբարէ՛լ, *Խրբ.* մխիբարիլ, *Ագլ.* մխիբո՛րիլ, մխբո՛րիլ, *Շմ.* մխբարիլ, *Սլմ.* մըխբրբարել, *ՋՓ.* մխիբայիլ, մխիբարիլ, *Ալշ. Մշ.* մխիտարել, մխիտրել, *Տփ.* խի՛յար, խիբա՛րիլ։

—Մխիրճ *«սուզումն, ջրի տակ երթալը». առանձին գանւում է* մխիրճ ճարկանել *«սուզիլ, խորն ընկղմիլ» ոճի մէջ՝ Ոսկ. խչ. 763. սրանից են* մխրճել *«ընկղմել, նաւը ծովի տակ տանիլ» Ոսկ. երր. 34 (տպ. Վիէննա 1855, էջ 3),* մխրճիլ *Ոսկ. մ. բ. 15, 25, Պատմ. աղէքս.* մխրճաել *Կնիք հաւ. 44.* մխրճուկ *ԱՐ. կամ ը-ի փոխարէն լ՝ ձայնով* մխլճիլ *ճառընտ.* մխլուճ *«ջրասոյզ լուղորդ, տալղըճ» Շնորհ. առակ. 86.— գրուած է* մխրմճիլ *Ոսկ. արբեց. էջ 128.* մռախղնիլ *Անան. գիտ. 8 (այս վերջինը Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 495 մեկնում է «թերևս թուլնոց ջրի վրայ թևը քսելով անցնիլը»)։ Սրանից ծագած* մխլճիլ *ձևը ունի Քուղ. 305. «Մխլճեալ ընկղուզի ի ներ ձեան». և տառասխալով՝ էջ 109* մխլձիլ. *«Մխլձեալ գահավիճուցուք»։*

=Մկրտել *բայի մի ուրիշ ձևն է. իմաստի նոյնութեան համար համմ. Շիր. Հրտր. Պատկ. էջ 43 «Պահելով զաստուածային հաւատս՝ մկրտեցան ի խորս գիտութեանն»։ Ուրիշ լեզուների մէջ ևս «խորասուզել, ընկղմել» դառնում է յետոյ «մկրտել». օր. ասոր.* ṣmad *«մխրճիլ, լուացուիլ, մկրտուիլ» գոթ.* daupjan *«մխրճել. 2. մկրտել», որից և գերմ.* taufen *«մկրտել»։*

ՆՀԲ մխիրճ *հանում է* մխիլ *բայից, իսկ* մխլուճ *մեկնում է «ի լին մխեալ»։ Տէրվ.* Altarm. 30 *և Նախալ. 70, 99 կցում է* մկրտել *բառին և երկուսը միասին դնում է* մուխ *արմատից։ Հինք. լտ.* mergo, immergo *«ընկղմիլ, լուանալ»։*

ԳԻՒ.—*Կայ* մխլեկիլ *Մշկ. «կծկուիլ, քաշուիլ»,* մխլեկուիլ *Եւդ. «շան կամ կատուի կորտուելով պառկիլ»։*

Մխկել *«լխկեցնել, հոտեցնել». ունին միայն ՀՀԲ, ՋՔ և ԱՔ. նոյն է գւռ.* մխկիլ *(Երև. Ղրբ. Վն.) «բորբոսնելով դառն համ ստանալ», որից* մխկաճամ, մխկուկ։

*[*ՄԽՄԽԱՆՔ. *անասոյզ բառ. մէկ անգամ գործածել է Ոսկ. յհ. ա. 1. «(Պիւթագորաս) հրամայէ աշակերտացն՝ լռութիւն համերց, որպէս և նոքա հրամային լռեալ նստել. և ոչ իրրև քարինս առ քարինս անշունչս անմռունչս առ մխմխանս նստել»։ Այսպէս է Պօլսի տպագիրը՝ էջ 20, որ և ՆՀԲ մեկնում է «մխելով մխելն կամ մխիլն. խիտ առ խիտ հոծութիւն, միաւորութիւն». բայց միևնոյն ժամանակ աւելացնում է թէ ձեռագիրը առ միմեանս ընթերցուածն ունի. սրանից կարող ենք հետևցնել թէ* մխմխանս *տպագրական սխալ է, ինչպէս է նաև* համերց *(տպ.* նամերձ*)։]*

Մխոհիլ *«ընկոյզ». ունի միայն Բառ. երևմ. յաւել. 569։*

ՄՄԱԿԵԼ *«աստել». ունի միայն Բառ. երևմ. էջ 213։*

Մծիր *տե՛ս Մոծիր։*

ՄՄՂՆՆԱՅ, ի հլ. «մի տեսակ քրիստոնէական աղանդ», փոխ. «պիղծ, զազիր, զզուելի» Եզն. Կանոն. էջ 58, 73. ՅՀ. իմ. առ. Իգնատ. ղկ. 275, որ և մծղնի *(յգ. -իք, -եաց) Հին բռ. որից* մծղնէացի *Ոսկիփ. մըծղնէութիւն «խառնակութիւն, պղծութիւն, պիղծ մերձաւորութիւն» Կանոն. էջ 80. մըծղնագործութիւն Կիր.։*

=Ասոր. ܡܨܠܝܢܐ məṣalləyāne *«Մեսաղեան կամ* Euchitae *(աղօթական) կոչուած աղանդաւորները, Մծղնեայք աղանդա-*

տրք՝ որ ծաղկեցան Դ դարի վերջում Միջագետքում». ասորի բառը ծագում է ṣəlā «թեքուիլ, խոնարհիլ», ܨܠܘܬܐ ṣəlūtā «աղօթք» արմատից (Brockelm. Lex. syr. 303)։—*Հիւբշ. 311։*

ՆՀՔ «ի միծ, մծեղ, իբր փիծ, ռմկ. փիս, լծ. յն. μίξις, լա. mixti» «խառնակութիւն»։

Մծրիլ *«այրիլ, խանձիլ» տե՛ս Մոծիր։*

ՆՀՔ չկարողանալով որոշել բառիս իմաստը, գրում է. «Մծրի. բառ անստոյգ. կա՛մ է բայ, իբր ռմկ. մեռի, մճիր լինի, և կամ անուն՝ իբր մծիր, մծրի, ռմկ. մճիր, եթէ չիցէ որպէս Մեծրայիմեան ցորեն, մսրացորեան, մրսրր պուղտայի»։ Աւ բոլորովին ջնջել է բառս։

[ՄՄՐԿԱՆԵԼ. մի անգամ ունի Ոսկ. փիլիպ. դ. Մի՛ զտիգս մծրկանել, մի՛ զայտս ցտել։— կարդա՛ մեռկանալ, ինչպէս ունի յոյն բնագիրը։ ՆՀՔ դրել է իբրև առանձին բառ, մինչդեռ հասարակ գրչագրական սխալ է, որ ինքն էլ ուղած է տիգմ բառի տակ։]

+ՄԿԱՆ, *ի–ա հլ. «մէջք, կռնակ» ՄԳր. սրա յոգնակին է մկանիմ կամ մկանունիմ (սեռ. –նաց, –նանց) «թիկունք, կռնակ» Վեցօր. Ոսկ. մ. գ. 11. Եզն. «ծովի կամ ջրի երեսը» Նա. ժբ. 2. Ագաթ. Ոսկ. մաթ. Վեցօր. Նոր գրականում նշանակում է «նեարդ, դնդեր, muscle»։*

=Մկնութիւնը տես մուկն։

ՆՀՔ մուկն բառից։ Klaproth, Asia pol. 106 *մկանունիմ (ծովու) = վալերէն goaneg։ ՆՀՔ պրս. միյան «մէջք»։ Հիւնք.=ՀՀՔ։*

ՄԿԹԱԼ *«ծաղրել, ասածի վրայ ծիծաղել» Բուզ. 114.—Հին բռ. ունի մփթալ կամ մփթել «չարսրտել կամ հեգնել կամ քրթմնջել», Բառ. երեմ. էջ 334 Ւրթմնջիւն «մկթալ»։*

ՆՀՔ լծ. յն. μυκτηρίζω «ծաղրել»։

ՄԿՈՒՆԴ, *ի–ա հլ. «մեծ գեղարդ, տէգ, տէգի կոթ» Ոսկ. ևս. Գիւտ աս. Վչ. Պատմ. աս լեհ. (ըստ Հին բռ. «ասպար»), որից մկնդաւոր «մկունդով զինուած» Ա. մկ. Բ. 4. Ագաթ. (սխալմամբ գրուած մեսկանդաւոր Մագ. Թղ. 34). մկնդաճար Խոր. մկնդազգեստ «տիգաւոր» ԱԲ. մկնդակ Կղնկտ. Հրտր. էմ. էջ 17. Հիւնք. մկան բառից։* Tomaschek, Die alten Thraker II, 25—26 *յն. μύκρων, լա. mucro ևն՝ muk «խթել» արմատից։ Նորայր, Կոր. վրդ. 311 յիշում է պրս. մկեկն «մի տեսակ փոքր վահան»։*

ԳԻՒ.—Սրանից է մկնդասեղ Ննխ. «կեռ ծայրով հաստ ասեղ՝ քուրձ կարելու համար»։

Մկպոռիոն *տե՛ս Սկեպտոռն։*

***ՄԿՍԱՐ** *«վրան միս ծեծելու տախտակ, տճկ. խըյմա թախթասի» Ոսկիփ. = Վրդ. աո 245 (ունի չորս անգամ). ուրիշ վկայութիւն չկայ.—«Մկսար, զոր ոմանք սատուրի կոճ ասեն» (այլ ձ. մսկար կամ մմսար)։*

=Արաբ. مكسر maksir *«բան կոտրատելու տեղ».* ism-i makān *(տեղական անուն) է* كسر ksr *«կոտրել» արմատից (տե՛ս Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 97). բստ այսմ ընտրելի է մմսար ընթերցուածը։ (Բայց* ism-i makān-*ը կարող էր լինել նաև* maksar *ձևով, որից աւելի հեշտութեամբ կարելի էր ստանալ մմսար ձևը)։ Աւելի լաւ է դնել արաբ.* مكسار miksār, *իբր* ism-i-ālat *նոյն արմատից, ինչպէս* مقراض miqrāḍ *>*մկրատ՝ qrḍ *արմատից, կամ* مغلاق miɣlāq *>*մղլակ *«փականգակ»՝* ɣlq *արմատից. բայց չունի Կամուս, անդ։—Աճ.*

ՆՀՔ «բառ ռմկ. որպէս մկճաձև կոճ արմատոց»։ Այտնեան, Քննակ. քեր. էջ 155 արաբ. մէճսար։ Մառ, անդ, ռուս. Բրգմ. 1, 219 հասկանում է «կացնի կոթ», երկուսն էլ սխալ են։ Գ. Տ. Մրկըրեանց, Հայկականք 1899, էջ 66 մեկնում է «միս ծեծելու տախտակ», որովհետև մինչև այսօր էլ Ախալցխայի գաւառականով սաթուրի կոճ նշանակում է «միս ծեծելու տախտակ»։

***ՄԿՐԱՏ,** *ի–ա հլ. «կտրոց» Յայսմ. փետր. 29. Գնձ. Վստկ. 81. որից մկրատել «մկրատով կտրատել» (նոր գրականում), մկրատ «խաղողի որթի ծիլ» Վստկ. 53։*

=Արաբ. مقراض miqrāḍ *«մկրատ», որ գալիս է* قرض qrḍ *«կտրել» արմատից.* mi-f'āl *ձևով գործիքական անուն է և նշանակում է բուն «կտրելու գործիք, կտրոց» (տե՛ս Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 442, որ և էջ 392*

ունի مقراض miqrāṣ *ձևը)։ Նոյնից են փոխառեալ նաև վրաց.* მაკრატელი *մակրատելի,* ბուշ. მაკარტა *մակարտա, մինգր.* მარგატელი *մարգատելի* (Кипшидзе, Грам. минг. 1914, *էջ 304*) *«մկրատ»։—Հիւբշ. 271։*

Ուղիղ մեկնից նախ Schröder, Thesaur. 46։ *Նոյնը նաև* ՆՀԲ, Petermann 25, Lag. Arm. Stud. § 1507, *Հիւնք. են։* Patrubány *ՀԱ 1908, էջ 186 յն.* μικρο *«փոքր»* + ճաա *«կտրել»։*

ԳԻՒ.—*Ղրբ. Մկ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ.* մկրաա, *Մրղ.* մրկըրաա, *Ախց. Կր.* մգրաա, *Սլղ. Երև. Մշ. Սչ.* մգրադ, *Տիգ.* մգրոդ, *Խրբ.* մգրադ, մրգադ, *Ագլ.* մկրօա, *Ննխ.* մուգրադ, *Սվեդ.* մգրուդ, *Բբ.* մոգադ, *ՋԲ.* մօգյօդ, մօգրոդ, *ՀՀ.* մոյգօդ, մոռգօդ, *Ասլ.* միրյադ, միրյա*, *Սեբ.* մնյադ։ *Նոր բառեր են* մկրատել *(Ակն.* մրյդել*),* մկրատուիլ *«մազերը խուզել»* (>*Սչ.* մրգրըդվել*),* մկրատայ (>*Մէրտ* մողադա*) «խնչափառ» (իր մկրատանման ճանկերի համար այսպէս կոչուած)։*

ՄԿՐՏԵԼ *(արդի լեզուով, ինչպէս և հնում հնչւում էր* մրկըրտել*. բայց գրուած կայ և* մկրըտել*) «ջրով լուանալ» (յատկապէս կրօնական նշանակութեամբ, բայց կայ նաև սովորական նշանակութեամբ, ինչպէս Ղուկ. ժա. 38՝ ճաշից առաջ ձեռքերը լուալու համար ասուած. Նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ) ՍԳր. որից* մկրտիչ *ՍԳր.* մկրտութիւն *ՍԳր. Կոչ.* մկրտատուն *Կանոնք սահ. 81. ՅՀ. իմ. առ.* մկրտարան *ՅՀ. իմ. առ.* մկրտչական *(Նոր բառ)։—Բառիս հնագոյն իմաստն էր «խորասուզել». տե՛ս* մխրճել։

ՆՀԲ լծ. մխրճել, մաֆրոտել։ *Տէրվ.* Altarm. 30 *և Նախալ. 70, 99 հյ.* մխրճել *բառի հետ՝* մուխ*,* մխել *արմատից։ Հիւնք.* մակարդել *բայից։ Մառ,* ЗВО *16. 152, հյ. Թրգմ. Մկրտ. Հայոց, Վղրշպտ. 1911, էջ 89 սեմ.* כרת krt *«կտրել, թլփատել» արմատից, որին հակառակ տե՛ս Աճառ. ՀԱ 1914, 565։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 227 արմատը համարում է* մկ*, որ կայում է հյս.* mokrŭ *«խոնաւ»,* moknati *«թրջել»,* močiti *«թրջել» բառերին։* Patrubány *ՀԱ 1908, 153* մխել + կտրել *բայերից կրճատ բարդութեամբ։*

Պատահական նմանութիւն ունի լտ. mergo *«մխրճել»։*

ԳԻՒ.—*Ախց. Կր.* մկրտել*, Ոզմ. Տփ.* մկըրտիլ*, Մրղ.* մրկըրդել*, Սլղ. Մշ. Ջղ.* մրգըրդել*. Գոր. Երև. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* մրգրդել*, Ասլ.* մրգրդէ՝լ*, Շմ. Սվեդ.* մրգրդիլ*, Հմշ.* մրգրդուշ*, Սլմ.* մկոտել*, Ագլ. Մկ.* մկոտիլ*, ՋԲ.* մ՝ըգ՝ըդիլ*,* մր՝գր՝ըդիլ*, անշուշտ բոլորն էլ փոխառեալ գրականից. բայց կայ Աշտ.* առնի մէջ մկրտվել *«արեան մէջ մխրճուիլ՝ լողալ» (Լալայեան, Մարգարիտներ Ա. էջ 101, 107)։*

ՄԿՐՕՆ *«է գործի ինչ երկաթեայ իբրև մկրատ, որով կալեալ դարբինք զերկաթի թիթեղն՝ հարկանեն ուռամբ զնոյն և հատանեն զթիթեղն». ունի միայն ՓԲ.—արդեօք* մկրատ *բառից յարմարեցրած նոր ձև՞ է։*

***ՄՀՐՈՒԿ** *«այրած, աղանձած» (դեղերի համար՝ իբրև բժշկական բառ, լտ.* usta*) Վստկ. 211 (Աղ մհրուկ արորեա անապակ դինեաւ և ընդ քիթն խմցո՛)։*

=Արաբ. محروق maḥrūq *«այրուած», որ գալիս է* حرق ḥrq *«այրել» արմատից։—Աճ.*

ԳԴ (տե՛ս Վստկ. 239) դնում է արաբ. միւճրագ *հոմանիշը, որ ձևով անյարմար է։*

Մձութիւն *տե՛ս Միծ։*

***ՄՂԱՎԱՇԵՔ**, ի *հլ. «կենդանակերպ, զոդիակոս». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Լարուբ. 33. «Յաստեղագիտութենէ և ի մղավաշէից՝ յորս յուսացեալ են յիմարեալքն»։*

=Ասոր. ܡܠܒܫܐ malvāšē *հոմանիշից է փոխառեալ* (Brockelmann, Lex. syr. 326 *բ*)*. ասորին էլ նոյն է ասուր.* mulmaš *բառի հետ։—Հիւբշ. 312։*

Ուղիղ մեկնից նախ Լաբուբնեայ գրոց հրատարակիչը, անդ, էջ 33 ծան.։ Halévy BSL 11, 9 *համեմատում է ասորի բառը ասուր.* masmasē *«մոլորակ» բառի հետ։ Տե՛ս նաև* WZKM 4, 191—2։

+ՄՂԵՂ *«բարակ փոշի, մոխիր, մազուք» Ես. ԽԴ. 24. որից* մղեղել *«փոշի դարձնել» ՅՀ. իմ. Նիւս. կազմ. «մի քաղաք կործանել» Յիշատ. 1401 Բ. (Դիւան ժ. էջ 16).* մղեղակ *Պիտ. իբրև ռմկ. գրուած է* մռեղ *Վրք. Հց. ա.*

607. Վստկ. 29, 149, 160 (Լծ. նար. իզ. նշանակում է «հատիկը պատող բարակ մաշկը». Մղնաձև մռեղն է՝ որ պատեալ է զհատն)։ —Վերջինիս մէջ ռ—ղ տարանմանութեան համար հմմտ. բաղեղն–բառեղ ձևը։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mōl- արմատից, որի ժառանգները ընդարձակ տես մալ «մանրել, փշրել». այստեղ յիշատակելի են յատկապէս գոթ. malma «աւազ», հբգ. melm, gi-mulli, molta «փոշի», մբգ. malmen «փշրել»։ Հայերէնի մէջ հնխ. mōl- տուել է *մուլ, որից կրճատ կրկնութեամբ *մուղեղ> մղեղ։ Ամբողջական կրկնութեամբ է մղմեղ «յարդի մանր փշուր» (տե՛ս տակը գտ.), որով բառը բոլորովին նոյնացել է մղմեղ, մղմոդ «ցեց» բառի հետ, որ դարձեալ նոյն արմատին է պատկանում։—Ա֊ճ.

ՆՀԲ և ԱԲ ցուի թէ կցում են մաղել արմատին։ Տէրվ. Մասիս 1881 մայ. 5 և Նախալ. 98 մեկնում է *մղմեղ, իբր մաղել, մալել արմատից։ Müller, Armen. VI մաղել ձևի տակ։ Հիւնք. ճողամաղ բառից։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. մղեղ, մռեղ, Մկ. մռէղ, Խրբ. մրէղ, Հճ. մաղոդ, Ջղ. մղմեղ (Բազմ. 1923, 299), Երև. մղմէղ, բոլորն էլ նշանակում են «յարդի մանր փշուր կամ մանրուքն». որից են մրեղել Խրբ. «ոչնչացնել. քանդել», մրեղիլ Ջթ. «կորչիլ, անհետ լինել. ոչնչանալ»։

*ՄՂՂԱԿ «դուռը փակելու ծառայող երկաթի կամ փայտի կտոր». մհյ. բառ, որ յիշում է Նորայր, Բառ. ֆր. 187 ա (cadole բառի տակ), որից և ԳԲ։

=Արաբ. مغلاق miγlāq «դուռը փակելու գործիք, կողպէք, նիգ, փակաղակ են» (Կամուս, Թրք. Բրդմ. Գ. 37)։—Ա֊ճ.

ՄՂԿԵԱԼ. մէկ անգամ գործածել է Ածար. մկրտ. «Մշակեն զշնորհն և առաւել ևս ի լուսիւնս մղկեան». սխալ գրչութիւն բան ՆՀԲ և պէտք է ուղղել յղկեան, այն է յղկեն, իբր յն. ἀποξέω «քերիչով հարթել»։

ՄՂԿԵՂ «մի տեսակ ծաղիկ, խալի». ունի միայն ԱԲ. չգիտէ ՀԲուս։

ՄՂՁՈՒԿ «շունչը կտրուիլ՝ խեղդուիլը» Բռ. ստեփ. լեհ. «խեղդող» Ադամ. 312. հների մօտ առանձին չէ գործածուած, բայց սրանից են հեղձամղձուկ Ագաթ. Վեցօր. մղձկել «խեղդել, խիստ նեղել» Ոսկ. մ. ա. 15. մղձկիլ «խեղդուիլ» Ոսկ. մ. ա. 8, բ. 10. Բուզ. մղձկուտ Վրդն. ծն. Պատմ. վրաց. էջ 80. Մխ. այրիվ. էջ 43 (տպ. մղծկուտ). կայ և մղրնձկրտալ Բանք աղ. 183, 192.—«սև» նշանակութեամբ է գործածուած Կղնկտ. Հրտր. Էմինի, էջ 17. «Ջմղձկութիւն ծխոյն ի սպիտակութիւն շուշանի շրջեցեր»։ Բուն արմատն է մուղձ, ինչպէս ցոյց է տալիս հեղձամուղձ Կիր. էջ 176 (չունի ԱԲ) և այս արմատից են կազմուած մղձաւանջ «cauchemar» և մղձաժէտ «մղձաւանջ ունեցող» նորակերտ բառերը։

ՆՀԲ «հեղձնուլ... փղձկիլ մաղձիւ»։ Հիւնք. փղձկիլ բայից։ Գազանճեան. Արև. մամ. 1902, 77 մ մասնիկով հեղձ արմատից։ Scheftelowitz BB 29 (1905), 17 մղձաւանջ և մղձաժէտ բառերը սխալմամբ կարդալով մղջ–, դնում է (աղջա)մուղջ բառի հետ։ Մառ, ИАН 1914. 359 Գազանճեանի նման՝ հեղձ արմատից մ մասնիկով. որ և համարում է կովկասեան մ նախամասնիկը։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 125 դնում է հեղձ բառից կրկնուած *հեղձ–ա–մ–ուղձ, հ–ի չնչումով *հեղձամուղձ, որից էլ ենթադրուած անկախ արմատ մուղձ, մղձուկ։

ՄՂՂԱԿ «նետի նպատակ, նշան առնելու տեղ» Ղևոնդ, խ. էջ 162։

ՆՀԲ «որպէս արաբ. մրպլաղ»։

*ՄՂՈՆ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «երկայնութեան չափ, որ սովորաբար հազար քայլ էր» Մաթ. ի. 41. Խոր. աշխ. Վրք. Հց. աւտում է նաև միլոն Վրք. Հց. ա. 589, բ. 360. միլ Յայսմ. Վրք. Հց. ա. 577, Միխ. ասոր. 81, 209. մողոն Սարկ. աղ. 131. որից մղոնաչափ (նոր բառ)։

=Յն. μίλιον «մղոն», որ ծագում է լատ. mille «հազար» բառից. յունարէնից են փոխառեալ նաև Թրք. պրս. արաբ. ميل mīl «մղոն», որից է հյ. միլ ձևը։ Բուն ազբիւրն է լտ. mille passuum «հազար քայլ», որից՝ չնչուելով յետոյ «քայլ» բառը, մնաց միայն

mille, *որից և փոխառնալ են ֆր.* mille, *հբգ.* mîla, mîlla, *գերմ.* Meile, *հոլլ.* mijl, *անգլ.* mile, *իտալ.* miglia, *բոլորն էլ «մղոն» նշանակութեամբ։—Հիւբշ. 365։*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցտր չփ. և կշռ. էջ 131. նոյնը նաև ՆՀԲ են։

ՄՂՐՈՒԻՆ *«կողով, կթոց» նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Վստկ. 84 և 133. Կթեա՛ (պատուղն)... և արկ ի մղրուն (այլ ձ. մղրուղն, մղրդուն. մի քիչ ցածրն էլ ասում է կթոց). Վարոցօք շինած մղրուն այգւոյ։*

***ՄՃՆԵՀ** *«պատերազմական մեքենայ» Յայսմ.*

=Արաբ. منجنيق manǰanīq *հոմանիշից աղաւաղուած։*

Այսպէս մեկնեց ՆՀԲ։

Մճրոտել *տե՛ս Մուրճ։*

ՄՄԿԻԼ *«շաղաշարիլ, խառնակիլ ընդ այլս» Բուզ. 159 (Դարձեալ ինքն իգանայր այլոց և այսպէս մմկեալ թաւալեալ էր), Կոչ. 306 (Ամենայն ազգք ազգք մեղաց հեղան տարածեցան յերկրի. արիւնք ի վերայ արիանց մըմկեալ խառնակեցան յաշխարհի). գրուած է նաև տմկիլ. մին կամ միւսը սխալ է. սխալը յառաջանում է երկաթագիր Մ և Տ գրերի նմանութիւնից։ Սակայն կայ նաև շմկիլ «խառնակուիլ» ձևը, որ գտնում եմ գործածուած Խոր. բնութ. 258. Չպատուականն ոչ զանգիտես քան նոցա շմկեալ և խառնափնդորեալ վարկանի յանձն առնուլ։*

Կոշումն ընծայութեան գրքի հրատարակիչը (էջ 335) յիշեալ վկայութիւնը միայն ի նկատի ունենալով՝ մեկնում է «հեղեալ, հոսեալ»։

ՄՄՆԵԼ *«մոմի պէս կակղացնել». ունի միայն Բառ. երեմ. 214, որից և ՓԲ. վերջինս գրում է մըմնել։*

+ՄՆԱԼ *«մնալ, եա կենալ, դադարիլ, սպասել, պահուիլ, տպրիլ» ՍԳր. Եփր. եկ. և օրին. Ոսկ. մ. բ. 7. բուն արմատն է մնա, որ գործածական է իբր հրամայական. ածանցման մէջ մտնում է մնա, մնայ կամ մնաց ձևով. այսպէս՝ մնաց «մնալը» Ոսկ. փիլիպ. ժ. մնացուած ՍԳր. մնացական Ոսկ. ա. տիմ. ժե. մնացորդ ՍԳր. չմնալի «անցաւոր» Ոսկ. փիլիպ. ժ. յարամնայ կամ յարամնաց Դիոն. Նիւս. բն. ենթամնայ Երզն. քեր. մնայուն, մնացեալ (նոր գրականում)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. men- *արմատից, որ դարձած է նախ *միենալ, յետոյ մնալ։ Ցեղակիցներից ունինք սանս.* man *«յամենալ, հանգիստ սպասել», հպրս.* 𐎶𐎢𐎽 a-mān-aya *«սպասում էր», զնդ.* upa-mąn-ayən *«մնասցեն», պրս.* ماندن māndan *(ներկ.* mānam*) «մընալ, աւելանալ», պհլ.* mānistan, *պազ.* mān-θan. *քրդ.* māin, *բելուճ.* mānay *«յոգնիլ», յն.* μένω *«մնալ, կանգնիլ, տևել, սպասել», կրկնութեամբ* μί-μνω *«մնալ», միջին ձայնդարձով՝* μονή *«մնալը, դադար, յապաղում», μόνιμος «մնայուն», լտ.* maneo *«մնալ», հիռլ.* ainmne, *կիմր.* amynedd *«համբերութիւն»։ Հնխ.* men- *«մնալ, սպասել» համաձայնում է մի նոր աստամ հնխ.* men *«մտածել» բայի, իբրև «կանգնած մտածել»* (Pokorny 2, 267, Boisacq 627, Walde 460, Ernout-Meillet 556, Horn § 966)։—*Հիւբշ. 475։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. մաներն բայի հետ։ Սրանից յետոյ ՆՀԲ, Peterm. 30, Windisch. 23 *են։* Müller SWAW 38, 595 *մեր բառը դնում է *մանալ նախաձևից։* Justi, Zendsp. 225 *զնդ.* man *«մտածել, մնալ» ձևի տակ։ Սանտալճեան ՀԱ 1913, 400 բևեռ.* manudi *«մնացեալ»։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ակն. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Նխճ. Շմ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սլմ. Սկբ. Սչ. Վն. Տփ. մնալ, Տիգ. մնալ, Ագլ. մնօլ, Հմշ. մնուշ, Սվեդ. մնիլ, Հճ. մոնօլ, Զթ. մօնօլ, մօնոլ.—Բնորոշ է՝ Դվ. Թևհ. մննաց «մնաց» ձևը (կրկին ն-ով), որի հնագոյն հաստատութիւնն ունի Կոստ. Երզն. 131 (Դավրէժ գրուած ձեռագրում՝ մննացել). դիտելու արժանի ձևեր են նաև Ալշ. Մշ. կար. մացի, Հրմ. մանցի՛։

***ՄՆԱՍ,** *ի, ու հլ. «մի տեսակ կշիռ և դրամ» ՍԳր. Պղատ. օրին. Շիր. 28. գրուած նաև մնի, Փիլ. եկ. 524, մէն Վստկ. 14։*

=Յն. μνᾶ, μνᾶς հոմանիշից, որ իբր կշիռ արժէր 100 դրախմի = կէս կիլօգրամ, իսկ իբր դրամ 60 արծաթ մնասը արժէր մէկ

տաղանդ, ոսկին վեց անգամ աւելի։ Յոյն բառը ծագած է եբր. מנה mānē *բառից, այս էլ փոխառնալ է բաբել.* manū *ձևից, որից են նաև եգիպտ.* manō, *հարամ.* manah, *արաբ.* منا manā, من mann, *ասոր.* ܡܢܝ maniā, *ինչպէս նաև սանս.* manā *«կշիռ ոսկւոյ»։ Բուն արմատն է սնմ.* manā *«հաշուել, թուել»։ Յոյնից են փոխառեալ նաև վրաց.* მნა **մնա, მნახო** *մնասի, լատ.* mina, *ֆրանս.* mine, *գերմ.* Mine *են* (Gesenius[17] 436, Boisacq 641). *տե՛ս նաև* **ման**, *որ պահլաւականից է. իսկ մէնի՝ յետին արաբական փոխառութիւն։—Հիւբշ. 365։*

Հներից Շիր. 28 ասում է թէ «ըստ եբրայեցւոց մնասն արծաթի խարգմանի»։ Ուղիղ մեկնից նախ Ասղերեան, Բցտր. չափ. և կշռ. էջ 132, յետոյ ՆՀԲ։

ՄՆԴԱՎԱՐ *«զօրավարական մի աստիճան Պարսից մէջ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բուզ. տպ. Վենետ. 62, Պատկ. 53. «Յաղագս մնդավարին Պարսից Անդիկանայ», որ զլուխների ցանկի մէջ և յետոյ դառնում է «Յաղագս զօրավարին Պարսից Անդիկանայ. եւ Անդիկան զօրագլուխ նոցա» (էջ 124)։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Աճառ. Բանաս. 1904, 97։ Վարդանեան ՀԱ 1921, 504 կարդում է **մկնդավար** *«առաջնորդ մկնդաւոր զօրաց»։*

ՄՆԵՒ *«մի տեսակ ընդհդէն է». մէկ անգամ ունի Մխ. առակ. լթ. (յիշուած է հաճարի հետ)։*

***ՄՆԹԻՆ** «դիշահոտ». գործածուած է միայն վարդի մի տեսակը որոշելու համար.* **վարդին մնթինն** *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2084։*

=Արաբ. منتن mintin *«հոտած, ժանտահոտ» (Կամուս, Բրք. Բրգմ. Կ. 712)։*

Այսպէս է մեկնում ՀԲուս. անդ, բայց աւելի լաւ՝ Նորայր ՀԱ 1921, 616 և 1926, 69։

***ՄՆԹՈՒԻՐ** «շահոքրամ» Վստկ. Ամիրտ. սխալ գրուած* **մնփուր** *Վստկ. էջ 142. ըստ Տիրացուեան,* Contributo § 153 «hesperis campicarpa Boiss.»

=Պրս. منتور mantūr, *որ է արաբ.* منثور manθūr *«մանուշակ կամ շահոքրամ»։*

Ուղիղ մեկնեց նախ Նորայր. Հայկ. բառաք. էջ 100 և Բառ. ֆր. 721 ա (julienne *բառի տակ), որից յետոյ ՀԲուս. § 2085։*

***ՄՆԻՆԱՅ** (սեռ. -ի) «մի տեսակ փոքրիկ միջատ է՝ մլակի կամ մնիկի պէս» Շնորհ. եզես. էջ 68, որ և* **միճինայ** *Կիր. 241.—սբխալմամբ 1757 թուի մի Յիշատ. (Դիւան ժ. էջ 196) համարում է թռչուն և գրում է մինոս. «Փոքրիկ թռչունն այն, որ կոչի մնինոս, և ըստ այլազգեաց բարբառոյն ղրմբլ... ծածկեաց զամենայն արտօրայսն, որ ի միում հասկի գրեթէ ճ և բճ գտանիւր և ծծեցին զամենայն հիւթ հատիցն». (սրանից իմացւում է որ թռչուն չէ, այլ թռչող միջատ, քանի որ մի հասկի վրայ 200 են հաւաքուած. ծանօթութեան մէջ գրուած է լատ.* calandra):

=Ասոր. ܡܢܝܢܐ manīnā «curculis, calandre, charançon, *ցորենի ուտիճ»* (Brockelm. Lex. syr. 189), mənīnā «cynips, musca» *(անդ, էջ 513)։—Ա.Ճ.*

Գիւր.—Ջմշ. **միճինա** *«մի տեսակ միջատ է, որ ցորենը հեղի ժամանակ ծծում չորացընում է»։*

***ՄՆԻՐԱՅ**, ի հլ. «մզկիթի աշտարակ» Յայսմ. մրտ. 11. Շնորհ. առ. որ և* **մնիրայ** *Վրդ. պատմ. էջ 117, 127,* **միճարա** *Կիր. էջ 202,* **մճերայ** *Միխ. առ. 448, Ալաթ. յիշ. 13. —յգ.* **միճարանի** *«բուրգեր, աշտարակներ» Սամ. անեց. շար. 171.—ունի միայն ԱԲ։*

=Արաբ. منارة mināra *«մզկիթի աշտարակ». գալիս է* نور nūr *«լոյս» բառից՝ իբր «ջահեր վառելու տեղ»։*

ՄՆՇԵԼ *«ճմռել, թրել, շաղուել, տրորել» Վստկ. (յաճախ). էջ 19, 23, 81, 135 ևն։*

***ՄՆՈՒՐ** «լատին քարոզչական մի կարգ» (Նորագիւտ բառ)։*

=Լտ. minores *«կրտսեր քարոզիչներ»։*

Ուղիղ մեկնեց Ալիշան, Սիսական, էջ 382։

ՄՃՂԵԼ *տե՛ս* **Մունչ**։

***ՄՆՋԱՆ** «բուսա» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2087. կայ նաև* **մարմանջ** *ձևով՝ Բառ. հբրմ. էջ 207։*

=Պրս. Բրք. مرجان marǰan, merǰan *«բուսա»։*

Այսպէս մեկնեց ՀԲուս։

ՄՆՋԵԽ *տե՛ս Մժեխ։*

ՄՆՋՆՂ *«մի տեսակ ծառ» Վստկ. 36, «կնձնի, թեղի,* orme?*» ըստ Նորայր, Բառ. ֆրանս. «լտ.* acer*, ֆրանս.* érable*» ըստ ՀԲուս. § 2088. առաջին պարագային նոյն է* **մնջեխ** *«մոծակ» բառի հետ, որովհետև նոյն ծառը կոչւում է նաև* **մոծակի ծառ**։

***ՄՇԱԿ**, ի–ա *հլ. «հողագործ, երկրագործ, այգու աշխատաւոր» ՍԳր. որից* **մշակել** *«հողը վարել, հերկել» Ոսկ. յհ. բ. 32. Փիլ. «մատակարարել, տնտեսել» Ագաթ. ՅՀխ. «ծառայել, աշխատիլ» Մաշկ. Վրք. Հց.* **մշակութիւն** *ՍԳր. Փիլ. Պիտ. մշակական Փիլ. Պիտ. անմշակելի Ճառընտ. անմշակ, մշակոյթ, մշակութային (նոր բառեր) ևն։*

=Կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. հմմտ. վրաց. **მუშა** *մուշա,* **მუშაკი** *մուշակի «գործաւոր»,* **მუშაობა** *մուշաորա,* **მუშაკობა** *մուշակորա «աշխատանք»,* **ნამუშავო** *սամուշավո «աշխատանք»,* **მემუშავე** *մեմուշավե «բռնակիր»,* **მემუშავება** *մեմուշավերա «մի բան մշակել,* воздѣлывать, обработывать*»,* **ნამუშაკარი** *նամուշակարի,* **ნამუშაკევი** *նամուշակեվի «աշխատութիւն, հերկ»,* **მუშობა** *մուշորա «աւերկութիւն, դերութիւն», թուշ.* **მუშა** *մուշա «գործաւոր»,* **მუშობ** *մուշոր «գործ, աշխատութիւն», լազ.* muša *«բռնակիր», ինգ.* mušaabay*, մինգ.* vimušuat, mušeoba*, սվան.* limšav, limšae *«աշխատիլ, աշխատանք», կաց. ինգ.* muša *«աշխատասէր», չէրքէզ.* mišak *«երկրագործ, մշակող»,* miši *«ցանք, վարուցանք»; ինչպէս տեսնում ենք, բառը կայ թէ՛ հիւսիսային և թէ հարաւային Կովկասեան լեզուներում։ Հայերէնը կարող է մեկնուիլ* **-ակ** *մասնիկով, սակայն մշ– արմատը մեր մէջ գոյութիւն չունի, որ գոնէում է մուշ, միշ, մշ ձևերով Կովկասեան զանազան լեզուների մէջ և այն էլ աւելի ընդհանուր «աշխատանք, գործ» իմաստով, մինչդեռ հայերէնի մէջ «երկրագործ» նոյն գաղափարի մի մասնաւոր առումն է միայն։ Այս բոլորը ցոյց է տալիս՝ որ բառը Կովկասեաններից է անցած հայերէնի և ո՛չ թէ հակառակը։ Իմաստի զարգացման համար հմմտ. հյ.* **գործ** *և* **գործել** *գերկիր «մշակել (հողը)», պրս.* رنجبر ranǰ-bar *«նեղութիւն կրող»>թրք.* renǰber*, ռմկ.* ռաշբար *«մշակ, հողագործ»։—Աճ.*

Brosset JAs. 1834, 377 *վրաց.* **მუშაკი** *մուշակի «նշՀԲ պրս.* **միւշագ** *և թրք.* **ուշագ** *«ծառայ»։* Lag. Urgesch. 886 *ռուս.* **мужикъ** *«գիւղացի» բառի հետ (որ սակայն* **мужъ** *«այր մարդ» ձևից է)։* Justi, Dict. Kurde 399 *պրս. թուշ. և քրդ. ձևերի հետ, որ տես տակը փոխ.։ Գարագաշեան, Քնն. պատմ. Ա. 68* **Մուշ** *քաղաքի անունից, որովհետև այդտե՛ղ էր տարածուած գլխաւորապէս երկրագործութիւնը։—Հիւնք. արաբ.* mašaqq *«տառապանք, աշխատութիւն» և պրս.* mušāq *«պաշտօնեայ»։ Ադոնց, Арм. Юстин. 436* Мошхои *(Մոսոխ) ազգանունից։ Պատահական նմանութիւն ունի սերբ.* mijẽšati *«հողը երկրորդ անգամ վարել», որ *meišįō «խառնել» բայի մի նոր առումն է միայն (Trautmann, էջ 175)։*

ԳԻՒ.—Կր. Մկ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. **մշակ***, Ակն. Երև. Խրբ. Մշ. Պլ. Ւր. Սեբ.* **մշագ***, Տիգ.* **մշշոգ***, Ջթ.* **մուշօգ***, մուշոգ, Հճ.* **մշօզ***, Սվեդ.* **մշշիւգ** *(«ծառայ, գործաւոր, բռնակիր» նշանակութիւնն ունին բոլորն էլ)։ Նոր բառեր են* **մշկիկ**, **մշակավարժ**։

ԳԻՒ.—Պրս. مشاق mušāq *«սպասաւոր, ծառայ» կամ նախաձայնի փոփոխութեամբ էլ* وشاق višāq *«մատաղօրեայ սպասաւոր» (երկուսի մէջ էլ վերջաձայն* q *մասնանիշ է անում օտար ծագումը), քրդ.* مشاق mišāq *«տան ծառայ, մշակ, ախոռապան»։*

ՓՈԽ.—Ըստ Գ. Ասատուր (անձնական) հայերէնն նոր գրական լեզուից է փոխառեալ վրաց. **მუშაკი** *մուշակի «մտքի մշակ», որ ունի Գրիշաշվիլի, Զվելի քալաքիս բոհեմա. էջ 75։*

ՄՇԱՄ *«բո՞ւյս է» Բժշ.—ըստ ՀԲուս. § 2090 «թերևս բլլայ մաշմն»։*

ՄՇՈՒՇ. *անստոյգ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գր. Աղթամարցու մի տաղի մէջ՝ Նոր վկ. էջ 353. «Անդ է նահատակեալ առա-*

քեալն Թումայ՝ հարեալ ի մըշդհՀէ»։ Արդեօք ղՀնքի անո՞ւն է։

ՄՇել, *«մանրել, փշրել» Մխ. բժշ. 50.— նոյն է գւռ. մշրել։*

Seidel, *Մխ. բժշ. § 156 ուղղում է* մաշել *կամ* մաղել։

ՄՇեել, *«աղած՝ փոշի դարձրած դեղերը որևէ ձէթով հարել տրորել՝ միախառն խմոր կազմելու համար» Մխ. բժշ. 149. (նորագիւտ բառ)։*

Seidel, *Մխ. բժշ. § 427 ուղղում է* մաշել։

***ՄՇՂԼԻԿ**, *«զրաղիլ, հնոր պարապիլ». Նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վասիկ. 27. Երբ այս բոյս չկՀնայ՝ որ զետինն մշղրլի ի դարմանել գնա։*

=Արաբ. مشغول maš̌ġūl *«զբաղուած»։ —Աճ.*

***ՄՇՄԻՇ** *կամ* **ՄԻՇՄԻՇ** *«ծիրան» Գառն. ունի միայն ՀԲուս. § 2093. նոյն է մըշմըշ «ծիրան» Դրնդ. 497. որից մշմշի «ծիրանի ծառ» Վարդան Այգեկցի (տե՛ս Վրդն. առ. I, էջ 318)։*

=Արաբ. مشمش mišmiš *«ծիրան»։— Հիւրշ. 279։*

ԳԻՒ.—Գործածական է այժմ էլ Ասլ. Զրս. վն. (տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 485)։

ՄՇՆԻ, *«աչքը տնկած նայիլ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կարապետ վարդապետի մի տաղի մէջ (ԺԴ դար). «Պատուիրեմ քեզ ի յայս մարգել և զՀայելուչն ոճն ուսանել. մի՛ զեղջապէս հայեացս առնել, մի՛ յարաժամ իրս ինչ մշնել, այլ ի կողմանց զգաստ նկատել» (Նոր ժող. Դ. էջ 51)։—Համմ. պշնուլ։*

ՄՇՈՒՇ *«մառախուղ, մէգ, բալ». յիշում են Բառ. երեմ. էջ 214 և Նորայր, Բառ. ֆրանս. 1247 բ (իբր մհյ. բառ). յետնաբար ունի Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 75. հնից աւանդուած չէ. գործածական է այժմ բարբառներում. անցած է նաև գրական լեզուին, ուր և ունինք՝ նորակերտ բառեր՝ մշուշային, մշուշապատ։*

Schröder, Thesaur. 45 *երր.* mšṡ מְשֵׁשׁ *«մութի մէջ խարխափել». Համմ. եբ. ժ. 21* וַיְמַשֵּׁשׁ חֹשֶׁךְ və -yāmēš ḥ̱ōšek *=խաւար շօշափելի (եւ հղիցի խաւար ի վերայ երկրիդ եգիպտացւոց, խաւար շօշափելի)։—Այս համեմատութիւնը անճիշտ է, քան որում բառիս իմաստն է «շօշափել» և նոյն է ասոր.* ܡܫ maš, *արաբ.* مسّ mass *«շօշափել» բառերի հետ։ Աւելի հեռաքրքրական է ն. ասոր.* miš, miiš *«մըշուշ», ասուր.* mušu *«գիշեր»,* mušiš *«գիշերանց»,* mūšītu *«գիշեր», որի հետ նոյն է թւում արաբ.* مساء masā *«իրեկոյ»։*

ԳԻՒ.—Սեբ. մշուշ. նաև Երև. տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 485.

***ՄՇՏԻԿ**, *ի–ա հլ. «փնջիկ կամ կապոց, որով որևէ հեղուկ էին սրսկում» (սովորաբար զոպայից կամ ծոթրինից շինուած, արդի յոյն եկեղեցիներում ևհՀանից) ՄԳր. Կոչ. 29. Բրս. մրկ. «սպունդ» Պզատ. տիմ. 145 (համմ. Զբջիշքն ի ներքոյ ունելով (թոքն) ծախտեալ իբրև զմշտիկ.=յն. σήραγγας ἐντὸς ἔχουσαν οἷον σπόγγου κατατε τρημένας. Plat. opera. Paris 1883, էջ 233, հա. II. տող 18, որից երևում է որ պէտք է կարդալ* ծակոտեալ, *փխ.* ծախտեալ*).—Տիրացուեան,* Contributo § 442 *մշտիկ գնում է իբրև բոյս՝ զոպայ,* hyssopus angustifolius M. B, *որ սխալ է, քանի որ հին մատենագրութեան մէջ յաճախ աւում է մշտիկ զոպայի։*

=Պհլ. *mušṭīk *համանիշ ձևից. սրա հետ հմմտ. պհլ.* ܡܘܫܬ must *կամ* mušt *«ափ, բուռ»,* mustīh *«բռունցք», պրս.* مشت mušt *«ափ, բռունցք»,* مشتی mušti *«մի բուռ», բելուճ.* mušt *«ափ», գնդ.* mušti- *«ափ, բուռ»,* mušṭimasah- *«մի բռունցքի մեծութեամբ», սանս.* muṣṭi- *«ափ, ճանկ, բուռ»,* muṣṭika- *«մի բուռ»։ Իմաստի զարգացման համար հմմտ. լտ.* manipulus *«մի բուռ. 2. տրցակ», պրս.* دست dast *«ձեռք» և պրս.* dasta *=պհլ.* dastak *«տրցակ»։—Հիւրշ. 195։*

ՆՀԲ յծ. իտալ. mazzo *«կապոց»։ Ուղիղ մեկնից նախ* Lag. Urgesch. 690. *նոյնը նաև Հիւնք. 197։*

***ՄՈԳ**, ու, ի–ա *հլ. «զրադաշտական դինի կրօնաւոր, կախարդ, աստղագէտ» ՍԳր. Եզն. Եղիշ. Խոր. «զրադաշտական կրօնին հետևող» Եղիշ. ը, էջ 153, 154. որից յգ.* **մոգեան** *Փարպ.* **մոգել** *«կախարդութիւն անել» Գծ. ը. 9. Ոսկ. երր.* **մոգութիւն** *Գծ. ը. 11. Փարպ. Եղիշ.* **մոգակրօնիկ** *Ոսկ. մ. ա. 6 և տիտ.* **մոգպետ** *«մոգերի գլխաւորը» Եղիշ. Փարպ. «զրադաշտական մի կեշտ» Եղիշ. ը, էջ 112. չարամոգական Պիտ. սրանց նորագոյն ձևերից են* **մովպետան մովպետ** *Եղիշ. գ. էջ 47, ը. էջ 124, 141.* **մուբիտան մուբիտ** *Կաղանկտ. Բ. ա.* **մովան ևանդերձապետ** *Եղիշ. ը, էջ 124, 128.* **մովան անդերձապետ** *Փարպ.* **մոգաց անդերձապետ** *Բուզ.։*

=*Պհլ.* **moγ** *բառից փոխառեալ (գրուած է* magu, *արտասանւում էր* **may** *կամ* **moγ**), *որ է հպրս.* magu- *«կախարդ, մոգ», զնդ.* moγu-, *պրս.* مغ **muγ** *կամ* **mōγ** *«մոգ, կախարդ». իրանականից են փոխառեալ նաև յն.* μάγος *«մոգ, զրադաշտական կրօնաւոր, կախարդ»* (Boisacq 597), *նյն.* μάγισσα, *երր.* מג **māg** *«մոգ» (Երեմ. լթ. 3), արաբ.* مجوس **maǰūs**, *լտ.* magus, *ֆրանս.* mage, *իտալ.* mago, *գերմ.* Magier *են։—***Մոգպետ** *գալիս է պհլ.* **moγpet** *(գրուած* magupat*) ձևից, որ է հպրս. **magupati- *«մոգերի գլխաւորը». այս բառը Սասանեանների ժամանակ դարձաւ* **movpet** *կամ* maupet, *որից* **movpetān** movpet *կամ* maupetān maupet *«մոգպետաց մոգպետ», պրս.* **mōbedān mōbed** *և հյ.* **մովպետան մովպետ**: *Այս իրանական ձևերից են փոխառեալ նաև ասոր.* ܡܘܒܕܐ **mōpetā** *(Դ դար), յն.* Μαυϊπτᾶς, Μαυϊπτουθά *(ուղղել* Μαυπιτᾶς, Μαυπιτουθᾶ*), ասոր.* **mōwedān mōweδ**, *արաբ.* موبذان **mūbadān mūbaδ** *(Կամուս, Բրք. Բրդմ. Ա. էջ 740)։—Հիւբշ. 195։*

Ուղիղ համեմատութիւններ ունին S. Martin, Mémoires 2, 469, *ԳԴ, ՆՀԲ։—* Böttich. Arica 22, 58 *հպրս.* magu, *սանս.* mah, maghavan *«մեծ», լտ.* magister *ձևերի հետ։* Pictet ZVS 5, 41 *յն.* μάγγανον, *պրս.* **mājīdan** (=**māgīdan**): Justi, Zendsp. 235 *զնդ.* **mōγu** *ձևի տակ՝ ի մէջ այլոց երր.* mag *և չին.* mu-hu *ձևերի հետ։* Autran. Sumér. et indeur. *էջ 49 ըստ* Delitzsch-*ի սումեր.* mag՝ *որ է «գերագոյն քահանայ»։*

ՓՈԽ.—Վրաց. **მოგუ მოგი, მოგე, მოგვი** *«մոգ, աստեղագէտ, կախարդ»,* **მოგობა მոգոբա, მოგეობა მոգեուրա** *«մոգութիւն» բառերը Մառ,* Грам. др.-арм. 47 *դնում է հայերէնից, Աւետարանի թարգմանութեան ժամանակ՝ տառադարձութեամբ անցած վրացերէնի և ուղում է ապացուցանել թէ հայ ձևը կարդացւում էր* **մոգը**:

***ՄՈԴ** *կամ* **ՄՈԹ**, ո *հլ. «մի տեսակ չափ՝ երեք գրիւ կամ չորս արդու պարունակութեամբ» Շիր. 31. Սամ. անեց. 82, 111. Կիր. էջ 34, Վստկ. 26, 31. Ուռհ. գրուած* **մունք** *Վրդ. առակ. էջ 27։*

=*Յն.* μόδιος *«մօտ 25 լիտր պարունակութեամբ մի չափ է», որ փոխառեալ է լտ.* modius *«գրիւ, արդու» բառից։ (Այս լտ. բառը* Marcel Devic, Dict. étym. *գնում է սեմականից. համմտ. երր.* מד **mād-** *«չափ»,* מדה **middāh** *«հարկ, տուրք», արաբ.* المدّ **al-mudd**, *որից պորտ.* almude, *սպան.* almud, *ֆրանս.* almude, almoude *«հեղուկաչափ», իսկ* Walde, Lat. etym. Wört. 489 *իբր բնիկ բառ՝ հանում է հնխ. *med «չափիլ» արմատից)։ Ցոյնից են փոխառեալ նաև վրաց.* **მოდა მოդა, მოდი მոդի** *«ընդհղէնի չափ», ուտ.* **մոդի** *«լայնաբերան պուտուկ».—Հիւբշ. 366։*

Ուղիղ մեկնից նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. 135. նոյնը նաև ՆՀԲ, Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 իբր. **մուր**:

ԳԻՒՐ.—Ղրբ. **մօր** *«մեծ ու խոր փայտեայ պնակ» (որի հետ համմտ. ն. ասոր.* moθa *«սկաւառակ»)։*

ՄՈՂ *«մեծ, շատ, զօրեղ, առաւելեալ». այսպիսի մի արմատ ցոյց են տալիս* **մոգանալ** *«մեծանալ, սաստկանալ, շատանալ» Ոսկ. մ. ա. 6, եւս. պտմ. գ. 40 (ձեռ.* **մոգացեալ** *կամ* **մոռացեալ**), **մոգացուցանել** *«գրգռել, քաջութեան յորդորել,՝ զօրացնել» Ոսկ. Եփես. 917. բոլորն էլ անստոյգ բառեր են, որովհետև ԱՔ ունի նաև մոլանալ «մե-*

ծանալ, զօրանալ (չար բանի)» ձևը՝ մոլի արմատից։

ՆՀՔ յն. μεῖζον «առաւելեալ», ἀκμάζω «առաւելուլ»; Karst, *Յուշարձան 406 սումեր.* meš, miš «բազմութիւն»։

+ **ՄՈՂԻ** «հորթ» *Երզն. քեր. ուրիշ վկայութիւն չկայ։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mazg'ho- *ձևից, որի երկրորդ ժառանգն է յն.* μόσχος «անասունի ձագ, երինջ կամ հորթ, հորթուկ», նրա ազականը μοσχίον. *հնխ.* zg'h *տալիս է հյ.* ձ, *բայց երկու ձայնաւորի միջև դառնում է* զ։—*Յն.* μόσχος *նշանակում է նաև «բոյսի ընձիւղ, ծիլ. 2. երախայ (տղայ կամ աղջիկ)». ոմանք ընդունում են որ հնխ. և յն. բառի նախնական իմաստը այս է, որից էլ փոխաբերաբար բխում է երրորդ իմաստը՝ «երինջ, հորթ» (այսպէս* Boisacq 646). *ուրիշներ էլ իրարից բաժանում են հնխ.* mozgho- «ծիլ, ընձիւղ» (*որից դնում են նաև լիթ.* mãzgas, *լեթթ.* maxgs «ընձիւղ, ծիլ») *և հնխ.* mozg'ho- «հորթ, երինջ» (*այսպէս* Pokorny 2, 308—309):—*Հիւրշ. 475?*

ՆՀՔ դրաւ նախ յն. ձևի հետ ուղիղ մեկնեց Հիւրշ. Arm. Stud. § 205, *յետոյ* Bartholomae, Stud. 2, 40, Bugge KZ 32, 11, Meillet MSL 10, 282:—Scheftelowitz BB 28, 300 *և* 29, 56 *կըցում է ալբան.* mezi «արու քուռակ», mezε «էգ քուռակ», mezore «երինջ, հորթ», *մակեդ.* mandzu «քուռակ», *ռում.* manz «հորթ», *իտալ.* manzo «եզ» *են բառերի հետ. իսկ* KZ 54 (1927), 226 *և* 232 *սանս.* mahiṣás «ցուլ» *բառի հետ<հնխ.* mog'hisos: *Վերջինիս դէմ են* Boisacq *և* Pokorny՝ *անդ։*

ԳԻՒ.—Երև. Համշ. Տփ. մօզի, *Ղրբ.* մո՛զի, մէօ՛զի, *Ախց. Կր.* մօզիկ, *Ալշ. Մշ.* մօզիգ, *Սվեդ.* միզզա: *(Ղզ.* մոզի *է կոչւում «ձիու և էշի երկու տարեկան արու քուռակը» Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 486. Ղրբ. «զոմէշի ձագը», Սվեդ. «արու հորթը» են)։ Նոր բառեր են* մոզամայր, մոզաւած, մոզի-մզուր։

ՓՈԽ.—Կապադովկ. մօշէա «երինջ» (Karolides, Γλ. σγχρ. 93, 196, Bugge KZ 32, 11), *քրդ.* موزیك muzik «հորթ. 2. կնոջ առաջին *ամուսնուց ունեցած որդին» (այս նշանակութիւնն ունի նաև մոզիկ Բլ.), մոզի «զուարակ» Մաթ. իր. 4. վրաց.* მოზვერი *մոզվերի, գւռ.* mozvi, mezve, mezvi «հորթ», *լազ.* muzari «էգ հորթ» *(Աճառ. Արարատ. 1911, 417), ուտ.* mozi, *թրք. գւռ. Կր.* mozig «մոզիկ» *(Բիւր. 1898, 627).—անշուշտ պատահական է դիպ.* meši «հորթ». *բայց յայտնի չէ թէ պատահակա՞ն է նաև արևել. թրք.* موزای muzay «հորթ», *որի դէմ ունինք օսմ.* بوزاغو buzaγu «հորթ» *(սրանից է Նախ.* բուզօվլ «հորթ»), buzaγəlamaq «հորթ ծնիլ»։

ՄՈԹԻՆ «մզկիթի աշտարակից հաւատացեալներին աղօթքի կանչող մոլլան. միւէզզինն». *ունի միայն ԳԲ։*

Մոթխոթել *տե՛ս Խոթ։*

+ **ՄՈԼ** «ծառերի բնի մօտ բուսած երկրորդական ճիւղ» Գաղիան. *բայց ըստ Նորայր. Բանաս. 1901, էջ 121 Գաղիանոսի մոլը պէտք է կարդալ մոզ «մորենի», որ տե՛ս մոշ։ Հայ բառի տակ. ըստ այսմ մոլ բառի (այս նշանակութեամբ) վկայութիւններից ջնջւում է Գաղիան. և մնում է միայն Սահեփ. լհհ.։ Աւելի հնից չէ աւանդուած, բայց պահուած է գաւառականների մէջ՝ զանազան նշանակութիւններով։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mol- «ծլիլ, ընձիւղիլ» *արմատից. համմտ. յն.* μολεύω, μολούω μωλύω *(Հեսիւք.)* «ծառի մոլիքը կտրել և ուրիշ տեղ տնկել», βλαστέω, βλαστάνω, βλαστεῖν «ծլիլ, աճիլ», βλαστός βλάστη «ծիլ, բողբոջ», βλώσκω *(աօր.* ἔμολον, *ապ.* μολοῦμαι, *անորոշ՝* μολεῖν) «երթալ, գալ», αὐτόμολος «ինքնակ, կամաւորապէս կամ ինքնագլուխ եկող» են. *այս բոլորի նախնականն է* *melō «դուրս գալ, յառաջ գալ, փխբ. բոյսերի աճիլ, ծլիլ», որի սաորին ձայնդարձի* *ml- *ձևից յառաջացել է յն.* βλ- (Boisacq 121, 124, 643, Walde 301): Pokorny 2, 294 *հնխ. արմատը դնում է* melā* «դուրս գալ, երևալ», *որից հանում է՝ բացի յն. ձևերից, նաև սլաւական ընտանիքից՝ սերբ.* izmolīm «դուրս երևցնել», *սլովէն.* molíti «մեկնել, երկարել» են։ *Սակայն «բոյսի աճիլ» իմաստով կայ միմիայն յունարէնը, որ ենթադրում է* *μόλος «ծիլ, ընձիւղ»։—Ա՛ճ.

Աճառ. MSL 15, 244 *կցում է սանս.* mula- *«արմատ» բառին, որի հետ* Boisacq 654 *և* Pokorny 2, 303 *միացնում են յն.* μῶλυ *«մոդական բոյս, գեղնածաղիկ սխտոր», նախաձևը դնելով* mōul-: *Այս ձևի դէմ սպասելի էր հյ.* *մոյլ, *ուսոի լաւագոյն եմ համարում վերի մեկնութիւնը, որ թէ՛ ձևով և թէ նշանակութեամբ աւելի համապատասխան է։*

ԳԻՒ.—**Մոլ.** *Բ. Ջմշ. Ջրս. «ծառի բարակ ճիւղ, ճպոտ», Ակն, Բնկ. Ննխ. Ջղ. «ծառի արմատի կողքերից դուրս եկած երկրորդական ճիւղեր», Տր. «ծառերի մատղաշ ճիւղեր և տերևներ՝ որ իբրև կեր տալիս են հորթիկներին», Բիւթ. «թթենու տերև՝ որ կտրատելով տալիս են շերամին», «յարդախառն շաղախ», մող Տր. «թեղի, կաթնատերևի, մանի և ուրիշ ծառերի տերևներ, որ անասուններին իբր կեր են տալիս», մողկ Խոջ. (ձևի և կազմութեան համար հմմտ. բողկ, արմատը բող) «ժահի նման մի բոյս». սրանցից են մոլել Վն. «յարդախառն շաղախով ծեփել», Հմշ. «փուշերն ու թուփերը կտրատել», մոլուտ Ղզ. մոլնկուտ Շլ. «մացառուտ»։*

ՓՈՒ.—*Վրաց.* მოლო **մոլի** *«դալար խոտ, մի տեսակ խոտ, պատրինջ կամ թուրինջ խոտ»։*

+**ՄՈԼ** *«մի բանի սաստիկ կապուկով խեղթենալ, ցնորիլ, կատաղիլ». արմատ առանձին անգործածական, որից* **մոլիլ** *«խեղթենալ» ՍԳր. մոլուցք Ոսկ. Ես. գիենմոլ ՍԳր Ոսկ. մ. բ. 23. մոլել «խեղթեցնել» Վրք. Հց. մոլութիւն ՍԳր. մոլաթզենի «վայրի թզենի» ՍԳր. Վեցօր. մոլախիճ* «conium maculatum L» *(Տիրացուեան,* Contributo § 287) *Նիւս. կազմ. Մխոր. երէց. մոլաբոյս Ագաթ. դիւացամոլ Ագաթ. § 246 (հին տպ. դիւամոլ), դիւցամոլ Կաղանկտ. իգամոլիլ Փիլ. կնամոլ Խոր. մանկամոլ Նոնն. Ճառընտ. մարմնամոլութիւն ՅԺ. իմ. առ. կռամոլ ՅԺ. կթ. շրջմոլիկ Լմբ. պարզ. ոչխարամոլ Ոսկ. յհ. ա. 43. առաւութեան գաղափարով՝ ճացամոլ «հացառատ» Ոսկ. Ես. էջ 230. մոլեռանդ, մոլեռանդութիւն, ծխամոլ, սրճամոլ են (նոր բառեր).*—*Նոյն արմատից* **-ի** *մասնիկով (հմմտ. բար-ի)* **ՄՈԼԻ** *«խեղթ, խեղթի պէս կապուած, բուռն» Դ. Յագ. Բ. 11, Ոսկ. մ. դ. 34, յհ. ք. 22, Բ. տիմ. որից* **մոլեգին** *ՍԳր. Եփր. ծն. մոլեբար Եփր. օրին. էջ 280. մոլեկան ՍԳր. Վեցօր. Ես. քր. մոլեխիճ Խոր. ՅԺ. կթ. խեղդամոլի Ես. քր. բառիս համար Հ. Ս. Գարամանլեան ՀԱ 1931, 646 գտնում է մի նոր առում. այսպէս՝ մոլի «մի տեսակ կախարդ» Եզն. էջ 100—101, մոլիլ «հարցուկի դուշակութիւններ անելը» Կծ. ժգ. 16. այս նշանակութիւնը անշուշտ կապուած է կախարդի կատաղիլ փրփրելու հետ։— -ար մասնիկով (հմմտ. մեծարել, մթար)* **ՄՈԼԱՐ** *«խաբող» Բ. կոր. գ. 8. Կոչ. «ցնորեալ, խաբուած» Ճառընտ. Եղիշ. Յղմ. «սխալ, մոլորական» Առակ. ժ. 17. որից* **աստեղմոլարք** *«մոլորակներ» Յուդ. 13.* **մոլարանուն** *Ա. տիմ. գ. 20.* **մոլարումն** *Փիլ. խաւարամոլար Եփր. ապաշխ. 186.* **մտամոլար** *Փիլ.*—**-որ** *մասնիկով՝* **ՄՈԼՈՐ** *(հմմտ. գլոր. ճատոր, բեկոր) «մոլորած, թիւրած» Ոսկ. լս. Վրդն. ծն. և հլ. որից* **մոլորիլ** *ՍԳր. մոլորեցուցանել ՍԳր. մոլորութիւն ՍԳր. Ոսկ. մտթ. մոլորակ Փիլ. մոլորական Ովս. թ. 17. Կոչ. Ագաթ. Նաագր. Ես. քր. Վեցօր. մոլորաւոդմ Ագաթ. դիւամոլոր ՅԺ. կթ. Կաղանկտ. եօթնամոլորակ Փիլ. մտամոլոր Մարաթ. են։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mol- *արմատից. հմմտ. յատկապէս՝ ալբան.* mal *«կիրք, մոլութիւն, սաստիկ ցանկութիւն», հոլլ.* mal *«յիմար, անմիտ, կատաղի», սանս.* मल malva *«անխելք, անմիտ», անգսք.* malsc *«հպարտ», գոթ.* (untila)malsks *«անմիտ, անխորհուրդ» (դրուած է յն.* προπετής *բառի դէմ, որ է ճիշտ «մոլեալ և զակատեալ») են (վերջին երկուսը* -sko- *մասնիկով ածած)։ Այս բոլորը հանւում են հնխ.* mel-: mol- *արմատից* (Pokorny 2, 290, Walde 296):— *Տե՛ս և տակը՝ առուգաբանութեանց պատմութեան մէջ։*

Pictet KZ 5, 335 *իռլ.* maille, *սանս.* mlāi *են ձևերի հետ։ Առաջին անգամ* Diefenbach, Wört. yot. spr. 2, 27 *համեմատից գոթ.* -malsks *բառի հետ։ Թոփուզեան, Արծ. վասպ. էջ 42* «մոլոր, *արմատ* ոլոր, *որ և* գլոր, խոլոր, բոլոր»: Meillet MSL 8, 279 *մեղմ բառի հետ*

միասին դնելով մոլոր՝ *համեմատում է լտ.* malus, *լիթ.* milyti *ձևերի հետ։ Հիմնք.* մոլի=յն. μολύνω *«կեղտոտել, ապականել», լտ.* mollire *«կակղացնել ևն»,* մոլար<ոլոռն *բառից, իսկ* մոլոր<բոլոր *բառից։* Tomaschek, Die alten Thraker 2, 27 *յն.* μωλύω *«թուլանալ», թևաէ.* βλάξ, βλακός *«թոյլ մեղկ», թրակ.* μῶλη *«վայրի փեղենայ բոյսը»։* Patrubány SA 1, 194 *լտ.* moles, molīri, *լիթթ.* maĩitis *«սաստիկ ջանալ»,* mu'ldinát *«հանգիստ չտալ»։* Diefenbach-ի *վրայ հիմնուելով* Finck ZAPh 1, 170 *տուաւ վերի մեկնութիւնը, բայց դնելով նաև այնպիսի բառեր, որոնք նոյն արմատին չեն պատկանում։*—Pokorny 2, 284—294 *ճանաչում է եօթը տարբեր հնխ. արմատ* mel- *ձևով, որոնցից յիշենք* 1. mel- *«ջարդել, մանրել» (տե՛ս հյ.* մալ), 2. mel- *«խարել» (>հյ.* մեղ), 3. mel- *«դանդաղել», 4.* mel- *«ուժեղ, մեծ». վերի բառերը դրւում են առաջին* mel- *արմատի տակ, ուր են նաև «խենթ» իմաստով ուրիշ ուրիշ բառեր. ինչ. յն.* βλάξ, βλακός *«թոյլ, մեղկ, կակուղ, խենթուկ»,* լիթթ. mulk'is *«յիմար, ապուշ» ևն. բայց այս «խենթ»երը իրաւամբ պատկանում են այստեղ, որովհետև բխում են «թուլութեան, տկարութեան» գաղափարից, մինչդեռ մեր* մոլին *և նրա յարակից օտար ձևերը ընդհակառակը «կատաղութեան» գաղափարից են բխում։ Շատ կարելի է հյ.* մոլ- *արմատը իր զանազան առումներով գումարումը լինի մի քանի տարբեր հնխ. արմատների, ինչ.* մոլորիլ *«սխալիլ»<հնխ.* mel- *«խարել» արմատից,* հացամոլ *«հացառատ»<հնխ.* mel- *«ուժեղ, մեծ» արմատից են։*

Դիմ.—Արմատական ձևը պահում են Պլ. մօլօր էրթալ *և Ռ.* մօլօր էրալ *«կերածը կատիկին թոնել, շնչափողի մէջ մտնել». բայական ձևով են՝ Սչ.* մօլօրել, *Երև. Նախ.* մօլորվել, *Հմշ.* մօլօրվուշ, *Մշ.* մօլբրել, *Ախց. Ակն. Ասլ. Խրբ. Կր. Ոզմ. Պլ. Ւեր.* մօլբրիլ, *Տփ.* մօլբրվիլ, *Ալշ.* մօլրել, *Դրբ.* մլօ՛րվել, *Շմ.* մլօրվիլ, *Վն.* մէօլրել, *Սլմ.* մէօլէօրվել, *Զթ.* մը՛լը՛յիլ, մը՛լը՛րիլ, *Մկ.* միւլիւրիլ, *Զղ.* մուլորել, մալորել, *Ագլ.* մլլո՛րիլ. *այս բոլորը նշանակում են «մոլորիլ». իսկ Տիգ.* մօլրիլ *«նուաղիլ, ուշաթափուիլ», Սվեդ.* մլլարիլ, մըլըրիլ *«աչքերը շաղուիլ» (հատանաբար վերջինս ներկայացնում է* մոլոր *և* մլար *(<մոայլ,* մլար*) արմատների խառնուրդը)։ Նոր բառեր են* մոլորուկ, մոլոր-շոլոր, մսամոլ, մսամոլիկ, խնդամոլիկ, ծծմոլ, մտամոլիկ, մտամոլոր, մոլոֆոր. *(վերջինը ա՛յնքան է ձևափոխուել, որ հասել է մինչև* մօրֆուր! *ձևին. հնագոյն և ուղիղ ձևը (իբր* մոլի ֆոր*) ներկայացնում է Առաք. լծ. սհմ. էջ 178 «Մոլեալն ի մոլոքորէն ոչ յադի քերելովն». որ և* մոլաֆոր *Բժշ. «Մոլաքոր որ է տապատորն» (հրտր. Բազմ. 1917, 102)։*

Փոխ.—Patrubány SA 1, 224 *հայերէնից է դնում հունգ.* bolond *«յիմար» բառը (իբր հյ.* մոլի+*պրս.* andak *«լեալ»), որ անշուշտ բնաւ կապ չունի այստեղ։*

*ՄՈԼՈՇ (ի *հլ. բառ նշբ., բայց առանց վրկայութեան*) *«բաղրջուկ, աղջկատակ, բրք. էպէմ կիւմէճի, լտ.* malva silvestris L» *(Տիրացուեան,* Contributo § 330, *ուր տալիս է նաև* մոլոֆ *ձևը) Վրք. հց. բ. 263 (սեռ.* մոլոշի*). գրուած նաև* մօլօշ, մօլօշիա, մոլոխ, մոլոխիա *Բժշ.* մօլօխ *Մխ. հեր. 95։*

=*Յն.* μολόχη, μαλάχη *հոմանիշից. հայերէնի մէջ բառավերջի շ և խ ձայնները ներկայացնում են յն. χ-ի յետին հնչումները. համմտ.* շլոռոս<χλωρός, խաւոտաֆիլակ<χαρταφύλαξ. *հին հնչման տատանութիւնն են ներկայացնում վրաց.* მალოჟი მალոֆի, მალუჟი მալուխի *և լազ.* molok'i *«մոլոշ»։ Յոյն բառի ծագման մասին կան զանազան կարծիքներ (տե՛ս* Boisacq 604), *բայց հատանաբար հին միջերկրեան փոխառութիւն է, որի հետ նոյն է գալիս եբր.* מַלּוּחָה malluḥa *«աղիմայ բոյսը,* atriplex halimus L»։ Boisacq *անդ տալիս է բառիս համար նաև յն.* μάλβαξ, μάλβακον *ձևերը, որոնք շատ կասկածելի է համարում։ Հյ.* բաղրակ=*վրաց.* ბალბა balba *«մոլոշ» հոմանիշները ջնջում են այս կասկածները և թերևս մի ընդհանուր հին աղբիւր ենթադրում։—Հիւբշ. 366։*

ՆՀԲ լծ. յն. մօլօ՛խի, մալա՛խի, *լտ.* մա՛լուա, *պրս.* միւլէէ: *Հիւբշ.* ZDMG 36 (1882), 127 *և Հիւնք. յն. μολόχη-ից։*

ԳԻՒ.—Ննխ. մօլօշ *«բաղրջուկ». իսկ Ջն. «կաղնիների վրայ՝ գկեռի նման կոլոր և թեթև մի պտուղ»։*

Մոլոր *տե՛ս Մոլ։*

ՄՈԽԻՐ, ո *հլ. «այրուած բանի փոշին» ՍԳր. որից* մոխրել *«մոխիր դարձնել» Ամովս. բ. 1. Ոսկ. ա. Թես.* մոխրակոյտ *Ղևտ. ա. 16, դ. 12.* մոխրանոց *Փարպ.* մոխրապաշտութիւն *Ագաթ.* մոխրատարած *Ոսկ. մ. դ. 14.* մոխրացան *Ոսկ. մ. բ. 5. Վեցօր.* մոխրոց *«աղբանոց» Նէեմ. գ. 13, 14.* կրակամոխիր *Ճառընտ.* մոխրամած *(նոր բառ) ևն։*

Lag. Urgesch. 806 մուխ *բառից։ Հիւնք. յն.* κοπρίον. *լտ.* maculo *«աղտեղել»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 հյ.* մոծիր *և թրք.* məǰər *բառերի հետ։ Մառ,* О полож. абхаз. 34 *վրաց.* xviri *«փոշի», սփխազ.* àxua *«մոխիր» բառերի հետ. արմատը* խիր, մո *մասնիկով։*

ԳԻՒ.—Ջղ. վն. մոխիր, *Ախց. Երև. Խրբ. կր. Համշ. Պլ. Ռ. Սեբ. Տփ.* մօխիր, *Գոր.* մո՛խէր, *Ակն. Եւդ.* մախիր, *Ագլ.* մա՛խիր, մա՛ճիր, *Մկ.* մուխիր, *Ոզմ.* մուխ՛ր, *Սլմ.* մուխիր, *Ասլ.* մէօխիր *(բայց* մօրխէօ՛ց *«մոխիր թափելու տեղ»), Ղրբ.* մօ՛խուր, *Շմ.* մուխուր, *Ջթ.* մախը՛յ, մախը՛ր, *Սվեդ.* մոխխ՛ր։—*Նոր բառեր են* մոխիրխաշ, մոխիրկոխ, մոխրագոդ, մոխրաբաթախ, մոխրաբաղ, մոխրածուծ, մոխրակալ, մոխրակոլոլ, մոխրաճաճ, մոխրաճաւրել, մոխրաճող, մոխրատ, մոխրատաճնի, մոխրիկ, մոխրել *«մոխիրով շփել» (>Ակն.* մառխլ), մոխրուիլ, մոխրօձ։—*Ջղ. փոխանակ* մոխիր *ձևի՝ աւելի գործածական է* կտրմոխիր։

ՄՈԽՈՍԻ *«մոխիր կամ շօշափումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 214։*

***ՄՈՄԱԿ** *«մժեղ, մժղուկ» Վրդն. սղ. ճիգ. էջ 496 (ձեռ. ի* տոծկէ, *տպ. ի* տոծէ, *ուղղելի ի* մոծկէ՝ *քան Նորայր, Հայկ. բառաք. 19) Ջքր. սարկ. Բ. 2. (գրուած նաև* մուծակ*). որից* մոծակի ծառ *«թեղի,* orme*» Ասար. Ամիրտ. (ըստ Ջղ.* մոծակի ծառ *է կոչւում մի տեսակ անպտուղ ծառ, միջակ բարձրութեամբ, տերևները նման թթենու տերևներին. հմմտ. պրս.* پشه‌دار paššadār *«է ծառ իմն, որ ունի զգոզակ, ի մէջ որոյ գոյանան մոծակք»* (paššа *«մոծակ» բառից)։*

=Կովկասեաններից փոխառեալ բառ. հմմտ. ուտ. մոծակ, *ավար.* măčak‘, *կիւր.* miçeg, *բուդ.* mičax, *խին.* miǰak‘, *ակ. լակ. ջի.* mičak‘, *ինգ.* mučak‘, *նաև չաղաթ.* موچاك mučak (Будаговъ 2, 261), *բոլորն էլ «մոծակ» նշանակութեամբ։—Աճ.*

ՀՀԲ հանում է մոյծ արմատից, իբրև «մուծակ, մուծանող, խայթող»։ Karolides, Γλ. σγχρ. 93 *կապադովկ.* μοῦτα *«սարդ» բառի հետ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Արարատ 1910, 270։ Ղափանեան,* ЗВО *23, 356 քրդ.* moz *«պիծակ»։*

ԳԻՒ.—Ջղ. մոծակ, *Երև. կր. Շմ. Տփ.* մօծակ, *Ղրբ.* մըխ՛ծակ, *Ագլ.* մա՛ծակ։

ՄՈՄԻՐ *«մոխիր, ածուխի փշրուք, մճիր». Վրք. Հց. Բ. 464. Մարթին. աւում է նաև* մոճիր, մճիր, մծիր. *որից* մծրել *«խանձել, այրել, մոխիր դարձնել» (նորագիւտ բառ) Սիմ. ապար. 77, 100 (Ջաուիծադէմ անպարտելին... կամէր մծրել հուր Սասանին. Մըծրեալ այրեաց բոլորովին). Օրբել. 330 (Զգիղեցիկ սաղարթ լուսալիր ոստոց հաւատոյ... բոցաթոյն արկածիւ այրեալ մծրէ և ապականէ), մծրիլ «հացահատիկը ուշ հնձուելով՝ այրիլ հողանալ» Վստկ. էջ 29 (Թէ գարին հասեալ իցէ, յառաջ զայն հնձեա՛, զի թէ յամէ, մծրի)։*

ՆՀԲ մոխի՛ր *բառից։ Հիւնք.* մոխիր *և* մաճուր *բառերի հետ։ Թիրեաքեան. Բազմ. 1913, 341 հյ.* մոխիր *և թրք.* məǰər *բառերի հետ։*

ԳԻՒ.—Ախց. Կր. մօծիր, *Համշ.* մօճիր *«կրակը պատող մոխիրը», Ալշ. Եւդ. Մշ. Մշկ.* մօճիլ *«փոքրիկ կայծ» (Մշ. նաև* մօճեղ*), Ջղ.* մոճիլ, *Ոզմ.* մուճէ՛լ *«կայծ», Պլ. Սեբ.* մըջիր, *Ռ.* մըջըր, *Ասլ.* մճիլ *«ածուխի փշրանք», Բերքախօս հայերից՝ Ատն.* մգել *«սպառած՝ քիչ մնացած կրակ».—*մծրիլ *ձևի դէմ ունինք* մծրուիլ *Երև.,* մճռիլ *վն.,* մճռոել *Սլմ.,* մճռուր *Մրղ. Վն. «այրուած բանի ածխացած*

*մնացորդը».—Նոր բառ է մոճրակալել Ղզ. «կրակը մոխրով ծածկուիլ»։

Փոխ.—Թրք. موجور mujur *«հրահալելեաց կղկղանք,* scorie», *որ ըստ Կարապետեան, Թամ. բռ. 870 բացի «հրահալելեայ կղկղանք» նշանակութիւնից, ունի նաև «ածուխի մանրուք» նշանակութիւնը, որով բոլորովին նոյնանում է հայերէնի հետ և սրանով փոխառութիւնը հաստատում։*

ՄՈՂ *«ծուռ, ծուռ ու մուռ». գիտէ միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Վեցօր, Բ. 195. «Զիա՞րդ կորացեալ և կըրկնեալ կազմի (կարիճն) հարկանել ըստ օրինակի մող և կոր (լս. ման և կոր) կերպարանաց փղի»։*

Կապ ունի՞ արդեօք աղամող բառի հետ։

***ՄՈՂԼԷՂ** *«քարաթոթոշ, կովադիաց, քէրբէնքէլէ» Ղևտ. ժա. 30. ասւում է նաև մողիկ Եղիշ.* մողոզ *Պատմ. աղէքս. 154.* մայաղէզ *Գաղիան. կամ նաև* մուղէզ, մողէս, մուղէս. մուղիզ *են. վերջաձայնի տարբերութիւնը այնպէս է, ինչպէս* fարաէզ—fարաէս. *նոր գրականի ընդունած ձևն է միայն* մողէս։

=Պհլ. անծանօթ մի ձևից, որի ներկայացուցիչն է պրս. مالوس mālūs *կամ* mālōs *«կանաչ մողէս» (ԳԴ, էջ 290 տ). բառիս բուն հայերէնն է* կովադիաց։

Klaproth, Asia pol. 100 *համեմատաբար առաջին անգամ սոյն պրս. ձևի հետ։ Տէրվ.* Altarm. 90 *բարդուած է համարում* մող=գնդ. mairya *«մահացուցիչ, վնասակար», պրս.* mār *«օձ»+իժ բառերից։* Bugge KZ 32, 86 *համեմատում է ուտ.* milγonǰ, *թուշ.* melqu, *չեչէն.* melq̇u *բառերի հետ։ Նոյն* IF 1, 442 *մերժում է կապել նրդերմ.* molch, *մրգ.* mol, molle, *հբգ.* mol *«սալամանդր, սև մողէս» ձևերի հետ և իբր բնիկ հայ՝ բարդուած է համարում* մող և իժ *բառերից.* մող<*mandr- *գտնում է սանս.* maṇḍūka- *«դորտ» բառի մէջ։ Սրա դէմ են դուրս գալիս* Bartholomae IF 3, 173, Wackernagel *և մանաւանդ* Lidén, Stud. zur altind. u. vgl. spr. *էջ 85—87, որ հյ.* մողէս *դնում է հնխ.* mel„ mol- *«կեղտոտել» արմատից, կցելով սանս.* mala *«կեղտ», յն.* μολύνω *«ապականել», հբգ.* mol, molm, molt, *նրգ.* Molch *«մողէս» ձևերին։ (Չի ընդունում* Pokorny 2, 286)։ *Հիւնք.* մժեխ *բառից։ Գարագաշեան, Արևելք, 1895 յունիս 27 յն.* մալախաօս, *լս.* mollis *բառից, որ է կակուղ, իբր կակղամորթ։ Մառ, Վրդ. առ. I. էջ 409 արաբ.* مجوس maǰūs *«քամիլէոն»։* Patrubány *ՀԱ. 1908, 152 յն.* βλώσκω, ἔμολον, μολοῦμαι *«երթալ, դալ» բայի հետ՝ հնխ.* melo *«դուրս դալ» արմատից (տե՛ս վերը* մող)։ *Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, էջ 111* -էզ *կենդանի նշանակող մասնիկով, ինչ.* խլէզ, տղէզ *են։—Վերի մեկնութիւնը առաջարկել եմ* Meillet-*ին, բայց նա չէ՛ վճռական՝ պրս. l ձայնի անորոշութեան պատճառով (անձնական)։*

Գիր.—կր. մօղէզ, *Սեբ.* մօղէս, *Մկ. վն.* մօղօզիկ, *Ալշ. Մշ.* մօղօզիգ *(Մշ. նաև* մօղօզիգ), *Մրղ. Սլմ.* մօղօզիկ', *Խրբ. Տիգ.* մըզլէգ, *Մշկ. Ք.* մզըլդրէզ, *Ննխ.* մոխլէզ, *Ասլ. Սր.* մողոզրիկ *(ըստ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 111 ծան.). անշուշտ նոյն բառն է նաև մողորիկ Տր. «մի տեսակ կարճ և անթոյն օձ»։ — Բառիս ձևափոխութեան վրայ անշուշտ ազդել է խլէզ հոմանիշը և փոխադարձաբար։*

Փոխ.—Ըստ Ղափանցեան (անդ) գուռ. մողոզրիկ *ձևից է փոխառեալ տեղական քրդ.* makizark *«մողէս»։ Այլուր մողէսը կոչւում է քրդ.* makamä'r *(տե՛ս իմ* Recueil de mots Kurdes, *էջ 12), որ կազմուած է ըստ իս քրդ.* mä'r *(=պրս.* mār*) «օձ» բառից. Հաճինի բարբառով էլ մողէսը (մեծ տեսակը) կոչւում է «Օձին թոյն ուտող»։ Ուտ.* մօղօճ *«մողէզ»։*

***ՄՈՄ,** *ո հլ. «մեղրամոմ» ՍԿր. Վեցօր. էջ 166. որից* մոմակերտ *Վեցօր. 165.* մոմեղէն *Բուզ. ականամոմ Եղն.* մոմատեսակ *Պղատ. տիմ. և օրին.* մոմազօծ *Մաշտ. ջահ.* մոմնել *«մոմով պատել?» Կոչ. 115 (Չմորթն հանեալ մոմնեալ իբրև զպարկ. յն. չունի* մոմնեալ*). մոմակալ Յայտմ. Մաշտ.* մոմածն *Նիւս. կազմ.* մոմլաթ *Առաք. պատմ. 138.* մոմիղինաւոր *«ձևոքը մոմ բռնած տիրացու*

կամ դպիր» (նորագիւտ բառ) Լմբ. մատ. 201. Նոր բառեր են մեղրամոմ, կնճամոմ, մոմավաճառ, մոմլուցկի, մոմշոր (արդէն յիշուած է Թորոսեան, Տեառ. հմն. բառ. էջ 53), մոմապատ, մոմագործութիւն են։

=*ՊՀլ.* *mōm *բառից. հմմտ. պրս.* موم mūm *«մոմ», հինդուստ.* mōm, *գնչ.* mom, *որոնցից են փոխառեալ նաև արաբ. քրդ.* mūm, *թրք.* mūm, mom *«մոմ, մեղրամոմ, կերոն»։—Հիւբշ. 196։*

Նախ Schröder, Thesaur. 46 *արաբ.* mūm *բառից։ ԳԴ պրս.* mūm: *ՆՀԲ թրք.* մում: Böttich. Arica 78, 293, Lag. Urgesch. 957, Müller SWAW 38, 590, *Հիւբշ.* KZ 23, 403 *պրս.* nōm։

ԳԻՒ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. Վն. մոմ, Ախց. Խրբ. Կր. Ննխ, Պլ. Ռ. Սչ. մօմ, Ագլ. Ակն. Գոր. Երև. Համշ. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Տիգ. Տփ. մում, Սեբ. մէօմ, Սլմ. մուէմ, Զթ. միմ, միում, Սվեդ. միմ, Ասլ. մըմ, Նոր բառեր են մոմել, մոմիլ, մոմթափ, մոմիկ, մոմշոր, մոմպատ, մոմփայտ։

ՄՈՄԱԱՓԻ *«ժառանգ». ունի միայն Բո. Երեմ. էջ 214։*

ՄՈՄՈՇ *«գետնաքարշ, դանդաղ» Հին բռ. Բառ. Երեմ. էջ 214. որից անմոմոշական «անդանդաղ, համարձակ» Մագ. գամագտ. (Մէնէվիշ. Գամագտ. էջ 32)։*

ՄՈՄՈՂ *«նոճի, կաղնի և նման վայրի ծառերի պտուղը, chaton», որ և մամոյ Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2105 և § 1953։*

***ՄՈՄՈՍ** *տե՛ս Միմոս։*

+**ՄՈՅՓ**, ի *հլ. «նեցուկ, յենարան, մի բան հաստատ պահելու համար ւ ակը դրուած ցից» ՍԳր. Վեցօր. 167, 194. Նախ. ւլօղ. Ոսկ. ես. 264. Մագ. թղ. 31. Վանակ. յոր. Գէ. ես.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* meuthi- *ձևից. սրա հետ հմմտ. սանս.* मथि methi *«մոյթ, ցից», mitá «հաստատեալ», minóti «տնկել, ցցել, հաստատել, հիմնել», mit- «տնկած ցից», mayūkha- «ցից», լիթ.* miẽtas *«ցանկապատի ցից», լեթթ.* miets *«նոյն նշ.», maide «ձող», mienu, miet «հողի մէջ ցից խրել», միսլ.* methos *«սահմանանիշ», լտ.* meta *«սահման, ծայր, վերջ», moenia «շրջապարիսպ», munio «պարսպել, պատ քաշել», murus «պատ», հհիւս.* meiðr *«ծառ, գերան, ձող»* (Walde 481, 490, Trautmann 165)։ *Բոլորի էլ պարզական արմատն է հնխ.* mei *«ցից տնկել, ցցով ամրացնել», որ սոսնալով* u *աճականը՝ դարձել է* meyu- *(հմմտ. սանս.* mayūkha) *կամ* meu-, *որի վրայ էլ աւելանալով* th *աճականը՝ առացուել է* meu-thi-*>մոյթ* (Meillet BZL 26, 125, Pokorny 2, 240):

ՆՀԲ յիշում է արաբ. ʻamūd *«հաստատութիւն»,* matīn *«հաստատուն», պրս.* umūd, umīd *«յոյս»։ Տէրվ. Նախալ. 99 սանս.* mū, *յն. μόω բառերի հետ հնխ.* mu *«փակել, պնդել» արմատից և կամ հյ. մուծանել, մտանել, մղել, լտ.* movere *են ձևերի հետ՝ հնխ.* mu *«մղել» արմատից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Scheftelowitz BB 29 (1905) 24 *և* 27, KZ 54 (1927), 252, *որ ընդունում է նաև* Meillet *(նամակ 1 ապր. 1927)։*

—**ՄՈՅՄ.** *արմատ՝ որ առանձին գործածւում է իբրև կտ. եզ. գ. կամ հրամ. մուծանել բայի. որից ունինք մուծանել «մտցնել» ՍԳր. Եզն. Ոսկ. Եւս. պտմ. մուծումն Աբ. մուծիչ «մտցնող» Լմբ. պարգ. մուծիկ «արարողապետ, թագաւորի մօտ առաջնորդողը» Ա.Բ. առարամոյծ Մագ. եկամոյծ «նորամուտ» Եփր. յովս. 102 (չունի ՆՀԲ). նոր ձև է մուծել։*

=*Նոյն է մուտ արմատի հետ. երկուսի ձայնական առնչութեան համար հմմտ.* բոյծ *և* բուտ։

ՆՀԲ համարում է այլափոխուած մրտուցանել բայից։ Windisch. 23 մատնել, մատուցանել, մուտ *բառերի հետ՝ լտ.* medius *«միջին» ձևին ազգակից։ Տէրվ. Նախալ. 46 հնխ.* mu *արմատից այլևայլ աճականներով կազմուած է դրնում մուտ, մուխ, մուժ, մուղ, մոց։—Հիւնք.=ՆՀԲ։* Bugge KZ 32, 77 մատուցանել *բառից, ուր ց ձայնը նախորդ տ-ի ազդեցութեամբ զրկուած է իր շընչից։* Meillet BSL № 79, *էջ 4 մուտ կցելով յն. μόω ձևին և հանելով հնխ.* mud^{e}/$_{o}$ *բայից, անցողականը մուծա-*

նեմ՝ *հանում է հնխ.* $m^e/_o$ u-$g^e/_o$ *ձևից։ Տե՛ս նաև մատչիլ և մուտ։*

***ՄՈՅԿ** (ի–ա *հլ. բառ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) *«ոտնաման, հողաթափ, կօշիկ» Բուզ. 209, Փարպ. Վրք. Հց. որից* միամոյկ *Փրպ. արմատը գրուած է նաև* մոյգ, մոգ.— *նոր գրականում (արևմտեան բարբառ) ընդունուած էր միայն* մոյկ *ձևը և նշանակում էր «մինչև ծունկը հասնող կօշիկ, ճիզմէ»։—Իսկ* ձորձմոյկ *տե՛ս* ձորձ։

=*Պհլ. պազ.* mok *«կօշիկ» բառից, որից փոխառեալ են նաև արաբ.* موق mūq, *ասոր.* ܡܘܩܐ mūqā, *թալմ.* מוק mūq, *վրաց.* მოგი მოგვი *«կօշիկ», յն.* βαυκίς *«մի տեսակ կանացի կօշիկ»* (Boisacq 117 *այս բառի ծագումը անյայտ է համարում)։— Հիւբշ. 196։*

ՆՀԲ պրս. մուզէ *և հյ.* մուճակ *բառերի հետ. իսկ* սանդալ *բառի տակ՝ լծ.* մակոյկ *և* մագուգ։ Lag. Btrg. baktr. Lex. 49 *թալմ. արաբ. ասոր. և յն. ձևերի հետ դնում է* muč *արմատից։ Հիւբշ.* KZ 23, 29 *պհլ.* mok *և աֆղան.* mocarah *«կօշիկ»։ Հիւնք. մակոյկ բառից։*

+**ՄՈՅՆ** *«վայելչութիւն, բարեձևութիւն» Ոսկ. երր. իր. 558. Պիտ. որից* ամոյն *«անբարեվայելուչ, տխեղծ» Ոսկ. երր. իր. 558.* ամուճութիւն *«անբարեվայելչութիւն» Պիտ.* բարեմոյն *«կայտառ, բարեվայելուչ, ուրախ» Առակ. ժէ. 22. չարամոյն «թշուառ, տառապեալ» Եփր. Թգ. էջ 378.* մուճաւոր *«մարմնի լաւ գոյն և գեղեցկութիւն ունեցող» Ոսկ. կոր. էջ 530.* ճօրամոյն *Ա. մակ. ա. 6. Բ. մակ. Ժ. 10 (գրուած յն.* εὐπάτωρ *«բարեհայր» բառի դէմ). Ագաթ.* ճարաճցամոյն *Կորիւն. (տպ.* ճարուսո ամացն, *որ բառ Գ. Տ-Մկրտչեան, Գորիա և Շմոն, էջ 19, ուղղելի է* ճարաճցամոյն, *ինչպէս ունի էջմիածնի Կհ. 611 ձեռագիրը). երկուսն էլ բուն թարգմանւում են «հօրը վայել, հօրն արժանի, հօրնմանակ» և ո՛չ «բարեհայր կամ քաջահայր»։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mou-no- *ձևից, որ կազմուած է* mou- *արմատից՝* -no- *մասնիկով. արմատը գտնում ենք մի՛միայն գերմանական ընտանիքի մէջ. համմտ. մհիւս. գերմ.* mōi(e), *մհոլլ.* mooy, *հոլլ.* mooi, *ֆրիզ.* mōi, *բոլորն էլ «գեղեցիկ, սիրուն», ֆրիզ.* sik mōien *«եղանակը գեղեցկանալ, օդը բացուիլ», որից փոխառեալ շվեդ.* mojna *«քամին նստիլ»։ Ընդհանուր գերմանական նախաձևն է* *mauja-։

Բառ. երեմ. էջ 215 մոյն *հասկանում է «փափուկ, բողբոջ, զուարթ»։* Canini, Et. étym. 46 մոյն *կցում է սանս.* man´i *«գոյն» բառին, իսկ էջ 226 հյ.* այլամոյն *ձևից փոխառեալ է դնում արաբ.* qalamūn, *յն.* χαμαιλέων *«քամելէոն» բառը։ Հիւնք.* ճօրամոյն *մեկնում է իբր յն.* μητρό-μοιον *«հանգոյն մօրն»։* Մոյն *բառի առթիւ տե՛ս Մրմրեան, Բիւզ. թ. 922, ուր առաջարկում է* բնամոյն «original» *բառը և որ քննում է Խաչկոնց, Սաղիկ, թ. 1899 հոկտ" 28։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 122 լծ. զնդ.* vohu manō *«բարի ոգին»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 290 կցում է* նման-ման *արմատին։ Վերի մեկնութիւնը տուաւ* Petersson, Ar. u. Arm. Stud. 113։

ՄՈՅՆ *«խեղդել». արմատ առանձին անգործածական. գտնում է միայն ծովամոյն առնել «ծովի մէջ խեղդել» Վրդ. պատմ. Խոսր. և գետամոյն «գետի մէջ խեղդուած» Նչ. եզեկ. Ոսկ. գծ. բառերի մէջ։*

ՆՀԲ, Բագրատունի, Տարերք (1856), էջ 65 և Հիւնք. ամալ, ամացեալ *բառից, որով արմատը լինում է ո՛չ թէ* մոյն, *այլ ամ. այսպէս՝* գետ–ամ–ոյն, ծով–ամ–ոյն *(երկուսն էլ* –ոյն *մասնիկով)։* Meillet MSL 12, 430 *իբր բնիկ հայ կցում է հսլ.* myti *«լուալ», լիթ.* maut *«սուզիլ, լողալ», լիթ.* máudyti *«լոգանալ», հպրուս.* aumūsnan *«լուացումն», սանս.* mūtram *«մէզ», յն.* μύδος *«խոնաւութիւն» բառերին։ Այս մեկնութիւնը ընդունում են* Walde 500 *և* Pokorny 2, 249։

ՄՈՅՆ *«մեկնել, մեկնութիւն». անստոյգ բառ, որ երևան է գալիս միայն* եռազմոյն *«երազներ մեկնող Տիւր դիք» բառի մէջ։*

Էմին, Հայ հեթ. կրօնը, Յոյս 1875, 292 և Ист. Асохика 269 մոյն *դնելով «բնածին հանդամանք», եռազմոյն մեկնում է «երազ մեկնելու բնածին յատ-*

կութիւն ունեցող»։ Հիմնք. կազմուած է դնում յն. μηνύω «յայտնել, ցուցանել, մեկնել», μήνυμα «ծանօթութիւն, գեկուցումն» ձևով։ Տաշեան, Ագաթ. էջ 64 մոյն համարելով «բարի», երազմոյն հասկանում է «բարի երազոց մեկնիչ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 290 իբր պրս. երազ+نمون numūn «երազի իմաստը ցոյց տուող»։

ՄՈՅՍ *«մօրուս», ունի միայն Բառ. երեմ. էջ 215։*

***ՄՈՅՐ,** ո հլ. «մուրացկանութիւն, մուրացկանին տրուած ողորմութիւնը» Սիր. խ. 32. Բուզ. Ոսկ. երր. 469. Փիլիպ. 358. Մծբ. որից ջրմոյր Մծբ. մուրանալ ՍԳր. Եղիշ. մուրալ Յայսմ. Անկ. գիրք նոր կտ. 118. մուրացիկ ՍԳր. մուրիկ Ոսկ. յհ. բ. 12, 14 մուրացկան Ոսկ. յհ. բ. 12. մուրակ Վեցօր. 123. Շիր. մուրական Ոսկ. երր. մուրացածոյ Սիրեր. մուրող ՍԳր. Ոսկ. մ. բ. 10. Վեցօր. (ՀՀԲ ունի նաև մօրիկ (իմա՛ մուրիկ) «աղքատ, թշուառ, ողորմելի»)։*

*=Պհլ. *mōδ ձևից, որ պահում է միայն նորագիտ սոդդ. mwδ=mōδ «աղքատի տրուած ողորմութիւն». ձևի համար հմմտ. βōδ >բոյր, rōδ>արոյր։*

Müller WZKM 5 (1891), 65 *պրս.* موی mūya *«ողջ ու կոծ»,* موئیدن mūīdan *«լալ, ողբալ» բառերի նախաձև հպրս. *mauda ձևից, որոնց վրայ ուշադրութիւն է դարձնում* WZKM 8, 182 *նաև յն.* μῶθος *«խօսք, առակ, վէպ ևն»։ Չի՛ ընդունում Հիւրշ.* Pers. Stud. *էջ 99։ Հիմնք. յն.* μοῖρα, μορία, μόρος, μορίων *«մասն, բաժին», μοιράω «բաժին առնել» և μείρομαι «զրկիլ, չքաւորիլ», տճկ. միրաս «ժառանգութիւն» բառերի հետ։* Patrubány *ՀՄ 1908, էջ 344* meu *«երթալ» արմատից. հմմտ. լտ.* moveo *«շարժիլ», լիթ.* máuju *«թափառիլ», յն.* ἀμεῦσαι *«գերազանցել» ևն։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Gauthiot MSL 19, 128:

ԳԻՒ.—Ննխ. մուր «մուրալու աստիճանից» հասած աղքատ», Շլ. մուր անել «մուրալ». Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Ննխ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. մուրալ, Տիգ. մուրտլ, Ասլ. միւրալ, Զթ. մույօլ, մույոլ, Հճ. մույօլ, Սվեդ. միրիլ.—Հմմտ. նաև Ասլ. միւրասգլ, Մկ. մօրօցիկ «մուրացկան, մուրացիկ»։

***ՄՈՆԱՊ** «տաղանդ, քանքար» Շիր. էջ 29. «մնաս» Շիր. 33.—ՆՀԲ և ԱԲ դնում են նաև «միութիւն», բայց այս իմաստով գործածուած չէ հայերէնում։*

=Յն. μονάς (սեռ. μονάδος) «միութիւն». նաև «չափ երկարութեան, մատնաչափ»։— Հիւրշ. 366։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 136, յետոյ ՆՀԲ։

ՄՈՆԱՅ *«մէգ». ունի միայն Բառ. երեմ. էջ 215։*

***ՄՈՆԱՔՈՍ** «մենակեաց, ճգնաւոր» Մխ. դտ. էջ 270. ունի միայն ՀՀԲ, որ տալիս է նաև մոնաքոզ գրչութիւնր. Բառ. երեմ. էջ 215 ունի մոնոքոզ, էջ 209 մենաքազն։*

=Յն. μοναχός «մենաւոր, ճգնաւոր, սրեղայ». գալիս է μόνος «մինակ» բառից։

Ուղիղ մեկնեց Բառտամեան, անդ։

***ՄՈՆՈԶՈՆ,** ի–ա հլ. «միայնակեաց, սրեղայ» Անան. ժմնկ. 77. Մխ. դտ. էջ 269. Կանոն. էջ 116. Վրդն. պտմ. Ղևոնդ, լդ, էջ 141—142, լե. էջ 152. որից մոնոզոնակ «սրեղուկ» Շնորհ. առակ. մոնոզոնական Կանոն. մոնոզոնութիւն Մխ. դտ. հայկական կերպարանք առացած՝ մոնազն (իբր Թէ ազն բառից կազմուած) Գիրք Թղ. 42. Սրբ. որից մոնազնութիւն Կանոն.։—Գրուած է մոլոզոն Սմբ. դտ. 89։*

=Յն. μονάζων «սրեղայ», որից նաև վրաց. მონაზონი մոնազոնի՝ նոյն նշ։—Հիւրշ. էջ 366։

ՀՀԲ համարում է արդէն բառ յն.։ ԳԴ պրս. միլուզէն, իբր բառ յն.։ Brosset JAs. 1834, 377 *վրաց. մոնազոնի։ ՆՀԲ յն-ից։*

ՄՈՇԱՅ *«մի տեսակ թուփ,* tamarix, brya», *որից մոշավայրի Երեմ. ժէ. 6, 31. Վրդն. ծն. (գրուած մոշ վայրի Գիրք Թղ. 468), մոշի Գաղիան, Բժշ. մոշենի Պտմ. վր. էջ 48, 55, մոշ «պատուղը» Վստկ. 72, 79։*

Պատահական նմանութիւն ունի բրբ. meše, miše *«կաղնի», որի հետ նոյն է*

երևում ալթայ թրք. موش möš «*մայրի, եղևնի*» (Будаговъ 2, *էջ 263*)։

Գիր.—Մշ. մօշի «*թուխ՝ որից ցախաւել են շինում*», *խրբ.* մօշի «*մի տեսակ ծառ է*», *Ագլ. Ղրբ.* մո՛շի «*մորենու թուփը*». *արմատն է մոշ Ագլ. Ղրբ. Ղրդ. Ղբ. Շմ.* «*մորենու պըտուղը*», *որից նոր բառեր են՝* մոշուտ, մոշաճոտ, մոշամաղի, մոշաթսի, մառամոշ և *թևրևս* մոշաճաւ: *Նշանակութիւնն արժանի է ննխ.* մուշայ (*վերջաձայն* y-ով) «*մի տեսակ խոտ՝ որ անասունները արածում են*». *բայց այս բառը թաթարական փոխառութիւն պէտք է լինի և կապ չունի մեր մոշայի հետ՝ որ թուփ է (տե՛ս և իմ Քննութ. Նոր-Նախիջևանի բարբառի § 49)։*

ՄՈՇԻ «*ի սկզբանէ*». *ունի միայն Բառ. հրեմ. էջ 215։*

ՄՈՇՈՐԵԼ. *անյայտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Բառ. հրեմ. էջ 196* նաւակել *բառի բացատրութիւնն մէջ. այսպէս՝* նաւակել «*հնարել կամ մոշորել կամ արածել*». *բստ այսմ բառիս իմաստը անորոշ է և հաւանաբար կա՛մ առաջինին է հոմանիշ և կամ երրորդին. կարող է նաև լինել վրիպակ՝ փոխանակ* մոլորել:

+**ՄՈՒԱՆԱԼ** «*մտքիցը դուրս գալ*» *ՍԳր. Ոսկ. երր. որից* մոռացուցանել *Ին. խա. 51. Ագաթ. Ոսկ. մ. ա. 17.* մոռացօն՛ *Ղևտ. ե. 3. բ. պետ. ա. 9. Ոսկ. ես. Ագաթ. Բուզ.* մոռաց *Եփր. մաքր. 220.* մոռացկոտ *Փարպ. Եղիշ. Հյր. մեր 206. Երզն. մաթ. 484.* մոռացութիւն *Յհ. ա. 25. Եւագր.* մոռացումն *ՍԳր.* չմոռացական *Բուզ.* անմոռաց *Մծբ. Փարպ. Եղիշ.* չարամոռաց *Եւագր.* միրամոռաց «*իր միրոջ մոռացող ապերախտ*» (*նորագիւտ բառ*) *Մխ. աննց. 32.* երախտամոռաց *Մաշկ. իգն.* դիւրամոռաց *Արծր.* անմոռանալի *Պիտ.* անմոռուկ «myosotis *ծաղիկը*» (*նոր գրականում կազմուած՝* անմեռուկ *բառի կաղապարով և իբր թրգմ.* ne m'oubliez pas, *գերմ.* Vergissmeinnicht, *իտալ.* non-ti-scordar-di-me *հոմանիշներից*)։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mors- *արմատից. համմտ. սանս.* mṛš, mṛšyatē, *կոր.* mamárša, mamṛše «*մոռանալ, անյիշաչար լինել, համբերութեամբ տանիլ*», *քուչ.* marsoymä «*մոռանալ*», *լիթ.* miršzti, miršztu «*մոռանալ*» (Pokorny 2, 279, Trautmann 187, Boisacq 50):—*Հիւբշ. 475։*

Նշխ «որպէս թէ մեռանիլ իրաց ի յուշն. լտ. memor «*յիշող*» և immemor «*մոռացող*»։ Böttich. Arica 86, 413 *սանս.* smṛ և *զնդ.* mərə «*յիշել*»։ *Տէրվ. Մասիս 1881 մայիս 12 «թերևս ազգակից մեռանիլ բառին»։ Եպրեհան, Արեւելք 1884 հոկ" 17 սանս.* smr «*յիշել*» *բառի հականիշն է համարում։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ Տէրվ. Նախալ. 58, 99. անկախաբար նաև* Bugge, Btrg. 23 և IF 1, 446: *Մառ* ЗВО *5, 320 պհլ.* muštan, *զնդ.* marəz. *պրս.* āmurzīdan «*քաւել*»։ *Հիւնք. մեռանիլ բայից։*

Գիր.—Զղ. մոռանալ, *վն.* մոռնալ, *Ալշ. Ակն. Ախց. Կր. Ննխ. Պլ. Մշ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* մօռնալ, *Համշ.* մօռնուշ, *Տփ.* մօռանալ, *Երև. Կր.* մօռանալ, *Շմ.* մռանալ, *Ագլ.* մոռ՛նիլ, *Ասլ. Մկ.* մէօռնալ, *Ոզմ.* մուռնալ, *խրբ.* մառնալ, *Զթ.* մառնօլ, մառնոլ, *Սվդ.* մառնիլ, *Հճ.* մօրնօլ, մօյնօլ: *Նոր բառեր են* մոռացկոտ, մոռցուկ, մոռցուկոտ, մոռուցք:

ՄՈՍ «*շօշափումն*». *ունի միայն Բառ. հրեմ. էջ 215, Տե՛ս և* նամեսի:

Արգիօք արամ. מש moś=*արաբ.* مسّ mass «*շօշափել*» *բա՞ռն է* (Gesenius 409, 474):

ՄՈՎԱՐԻ «*մարախ*». *ունի միայն Բառ. հրեմ. էջ 215։*

ՄՈՎԴԱՏ «*միայն*». *ունի միայն Բառ. հրեմ. էջ 215։*

ՄՈՎԿ «*մի տեսակ լայն վարտիք*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. Ա. 463 (անեզաբար, ինչպէս է և վարդիք). «Զքղամիթ և զկամար և զմովկս»։ Թէև կարելի էր այս բառը սխալ գրչութիւն համարել, փոխանակ մոյկ «կօշիկ», բայց որովհետև յոյն բնագրում գրուած* ἀναξυρίς «*լայն վարտիք*», *ուստի պէտք է համարել առանձին բառ (Հացունի, Պատմ. տարազի, էջ 118)։*

**ՄՈՎՊԵՏ *տես Մոգ։*

ՄՈՎՐԻ *«դառնութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 215։*

+**ՄՈՐ** *«մոշ, մորենու պտուղը» Կիւրղ. թգ. որից* մորենի *«նոյնի թուփը, լտ.* rubus nemorosus Haynè» *(ըստ Տիրացուեան,* Contributo § 216) *ՍԳր. Վեցօր. էջ 111 որ և մորի Առաք. պտուղների նմանութիւնից շփոթելով՝* մորմ *«ելակ» Կամրկպ. «շնախաղող» Բժշ. «մոր, մոշ» Բժշ. որից և բոյսը կոչուած է* մորմենի։ *(Ըստ Տիրացուեան,* Contributo § 387 *մորմ սև է «solanum nigrum L», որ է շանախաղող)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* moro- *ձևից, որի բուն նշանակութիւնն էր «մորենի». այնուհետև ետրուպայում ստացաւ «թուփ, թփենի» նշանակութիւնը։ Ժառանգներն են բացի հայերէնից՝ յն. μόρον կամ μῶρον «թուփ», μορέα «թփենի», միւլ.* merenn, *կիմր.* meirwydden «թուփ», *լտ.* morum «մոր, մոշ», morus «մորենի»։ *Աւելի ուշ յն. μόρον «թուփ» ձևից փոխառութեամբ լտ.* morum *ևս դարձաւ «թուփ», որից փոխառութեամբ յառաջացան հբգ.* mōr-, mūr-, mūl-beri, *մբգ.* mūl-boum, mūl-ber, *գերմ.* Maul-beere, *հոլլ.* moer-bezie, *անգսք.* mórberie *կամ* múrberie, *անգլ.* mulberry, *լիթ.* môras, *լեհ.* morwa *«թուփ»* (Pokorny 2, 306, Boisacq 645, Walde 495, Kluge 323): Ernout-Meillet 601 *յոյն և լատին ձևերը միջերկրեան փոխառութիւն է համարում (չի յիշում հայերէնը և կելտականը)։*

ՆՀԲ լծ. յն. μορέα, լտ. morus: *Նոյնը նաև* Lag. Arm. Stud. § 1520 *և Հիւնք.։* Canini, Et. étym. 182 *մուր «սև» բառից։ Հիւրշ. 394 յունարէնի հետ միասին գնում է ծագումն անծանօթ փոխառութեանց շարքը։* Hehn, Kulturpflanzen[6], *էջ 373—378 յոյն բառը համարում է մարապոնտական փոխառութիւն, միւսներն էլ յունարէնի միջոցով փոխառեալ։* Bugge, Lyk. Stud. 1, 13 *ուզում է տեսնել Լիւդիոյ* Μορμονδα *քաղաքի անուան մէջ։* Pokorny *գնում է վերի ձևով բնիկ հայ, բուն որում հյ. և յն. ձևերը չէին կարող իրարից փոխառնալ լինել՝ նշանակութեանց տարբերութեան պատճառով։ Պատահական նմանութիւն ունի լազ.* murγi *«թուփ»։*

ԳԻՒ.—Հմշ. մօրա *«մորենի», Ջեբ.* մույ, մուր *«մոր», մը՝յմինէ, մ՝ըմինէ «մորենի», Մկ.* մուրունիկ *«մոր պտուղը», Պլ.* մօրմէնի *«մոր պտուղը! և բոյսը», Տիգ.* մօռմէնի, *Սվեդ.* մըրմինա *«մորենի», Ասլ.* մըրմ, մըմբ *«մոր», մըրմի փիւշ «մորենի», Գնձ. Ղզ. Շշ.* մօռ *«մոր», Գոր. Երև.* մօ՛րի, *Ղրբ.* մօ՛րէ *«ելակ», Ատ.* մօմլիգ *«մորենի պտուղը և բոյսը»,—նոյն են նաև* մոր Ղբ. *«արքայամոր»,* մորեմուկ *Ջն. «շնախաղող», Մշ. «մորենի»,* մորենուկ *Ալշ. Մշ. «մորենի»,* մորմորիկ *Բն. Մէրտ. «մոր»,* մորմիկ *Ակն. «արքայամոր»։*

ՓՈԽ.—Պօլսի հայ բարբառից է փոխառնւալ Թրք. mormeni *«մոր» (օր. «bahǰelerde mormeni, Sen urum, ben ermeni—Պարտէզներում մորենի, Դու յոյն ես, ես հայազգի» ժողովրդական երգը)։—*Patrubány SA 1, 222 *Հյ.* մորենի *ձևից փոխառնալ է դնում Հունգ.* Murány *տեղական յատուկ անունը!*

ՄՈՐ *«մի տեսակ թունաւոր միջատ է. լտ.* tarantula» *Ամիրտ. որից* մորաճար *«նոյն միջատից խայթուած» Վստկ. 165. սրա հետ նոյն են* մուր *«մի տեսակ վնասակար միջատ» (տե՛ս Ալիշան, Հին հաւ. 155՝ առանց վկայութեան). մորմ Վրդ. առ. 332։*

Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 108 հնխ. mər, merə *«մեռնիլ» արմատից, ինչ. պրս.* mār *«օձ»։*

ԳԻՒ.—Ջղ. մորմ, *Երև.* մօրմ։

ՓՈԽ.—Հայերէնից է փոխառնւալ բստ Գ. Ասատուր (անձնական) վրաց. მორიელი *մորիելի «կարիճ»։*

ՄՈՐ *«մի տեսակ բնտիր զգեստ», անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի կղնկտ. Հրտր. էմ. էջ 138. Ետուն նմա ևս զանգապանս մարգարտով և գոմարտակ նոյնգունակ շուրջ զպարանոցսն. ապուցին նմա արջնաթոյր մորս չորիւք. զրօշակօք (Հրտր. Շահն. գրում է* ստորս)։ *Թերևս ուղղելի է* սամոյր. *տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. էջ 24. սակայն կայ նաև մօռ, որ տես ֆօռտ բառի տակ։*

Մորեխ *տե՛ս Մարախ։*

***ՄՈՐԷ**, ի հլ. «ձկան ընդերքով և աղաջրով պատրաստուած մի տեսակ համեմանք՝ որ հների մօտ յարգի էր. լտ. garum». իւղ, ձու, ձուկն, պանիր, կոպի, կաղտի, բածին, շճուկ, կաթն, խիր և ձկանմորէ. Մանդ. էջ 210= Դիրք թղ. 239=Մանդ. սիր. էջ 13. Մեղու և մորէիւ թացեալ՝ ի պիծակաց և ի մեղուաց գօշեալ լինէր ի միջօրէին (յն. γάβος, լտ. garum). Գր. Նազիանզ. Նշանակում է նաև «մի տեսակ ջրալի նիւթ՝ որ պատրաստում էին գարու ալիւրով, աղով, ջրով, սև գնդիկով, ռազանայով և մեղրով. գործածւում էր հին բժշկութեան մէջ իբր մարսողական» Բժշ. Մխ. հեր. 89. Վստկ. ճՀը. 115. այս վերջին իմաստով գրուած նաև մուռի Ամիրա. 203 (մեկնում է իբր պրս. ābgāma, որ այս նշանակութիւնն ունի իրօք) կամ նաև մոռի Բառ. երեմ. 203, 215.—տե՛ս դարձեալ մոռ Կիւրղ. աղէք. (Դ. թագ. ժդ. 9), որի ընթերցուածն անորոշ է։

=Յն. ἁλμυρίς, որ է լտ. muria, որից ֆրանս. saumure, սեպ. սալամուրա «աղաջրով համեմանք ձկան» կամ նաև առանձին պատրաստուած համեմանք՝ որ ընդարձակ տե՛ս Seidel, Հրատր. Մխ. հեր. § 259, որ և արաբ. مُرِّى murri։ Յետին մուռի ձևը անշուշտ արաբերէնից է. բայց ի՛նչպէս պիտի բացատրել յն. ἁλμυρίς և մոռ ձևերի յարաբերութիւնը։

ՆՀԲ նոյն է համարում միւռիճէս ձրկան հետ, բայց ձկաւմոռ ասելուց յայտնի է որ բառը ձուկ չի՛ նշանակում։ Քաջունի, Բ. 73 դնում է իբր «merluche» ձուկը, որ նոյնպէս սխալ է։ ՀԲուս. § 2115 հետևելով Հին բժշկարանների աւանդածին, համարում է բոյս։ Ուղիղ է հասկանում նախ Գաբ. բառ.։ Վերի ձևով բացատրեց ու մեկնեց նախ Seidel, Մխ. հեր. § 259, որից յետոյ նորայր ՀՍ. 1921, 337—339 և 1926, էջ 70։

***ՄՈՐԻԱՍ** «թութ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 570։

=Յն. μορέα «թթենի» և μόρον «թութ»։— Աճ.

ՄՈՐԹ, ո հլ. «մարմնի վրայի կաշին» ՍԳր. եզն. որից մորթել «մորթը քերթել հանել» Ղևտ. ղ. 1. Միք. բ. 8. գ. 8. Ագաթ. եզն. «խողխողել, սպանել» Ես. կզ. 3. մորթազերծ եզն. մորթաղ կանոն. մորթիկ Վրք. Հրց մորթազործ Շիր. քր. մորթի Փիլ. լիւս. Յայտմ. փետր. 16. Գնձ. թաննրամորթ Նիւս. բն. թեփամորթ Վեցօր. 138. թուլամորթ Ես. քր. լերկամորթ Վեցօր. 138. խեցեմորթ Վեցօր. Փիլ. Նիւս. բն. ճիճամորթ Մագ. զրահամորթ ԱԲ. թխամորթ Ախտարք. Սմբ. պատ. տպ. 1856, էջ 82. նոր բառեր են սևամորթ, դեղնամորթ, կարմրամորթ, սպիտակամորթ են։

ՆՀԲ սանս. մո՛ւրթի «մարմին»։— Հիւնք. յն. δέρμα հոմանիշից է հանում։ Müller SWAW 136 (1897), 25, WZKM 9, 290 սանս. mlāta «աղաղած, աղաղելով կակղացրած» բառի հետ՝ իբր բնիկ հայ։ Նոյնը Scheftelowitz BB 29, 23, որ և աւելացնում է զնգ. mrāta «աղաղած (մորթ)»։ Patrubány ՀԱ 1908, 246 մեռանիլ բայից «նորա համար, որ մորթն վիրաւորուած ըլլալով, մարդը կը մեռնի»։ Նոյնպէս է Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 109, որ դնում է հնխ. merə «մեռանիլ» արմատից։— Պատահական պէտք է համարել ասոր. ܡܪܛܐ merṭa «փետուր, այծի մազից շինուած հագուստ»։ ܡܪܛܐ mərāṭa «այծի մազ», ܡܘܪܛܐ mūrāṭā «expansio crinis, մազերը տարածելը», ܡܪܛܘܢܐ merṭonā «փետուր փոքրիկ», որոնց բոլորի արմատն է ասոր. ܡܪܛ mərāṭ «պոկել, փրցնել, արմատից խլել» (համմտ. հյ. բուրդ և բրդել, կաուրֆ և կարել) Brock. Lex. syr. 194։

ԴԻՒ.—Սլմ. մորթ, Մշ. մորթ, մորտ, Սեբ. մօրթ, մօրթի, Ախց. Երև. Կր. Տփ. մօրթի, Ղրբ. մօ՛րթ, Մկ. Ոզմ. մուրթ, Ասլ. մէօ՛րթ, մէօ՛ր*, Զթ. միյրի, միրթի, Ագլ. մա՛ոթի.— բայական ձևով ունինք՝ Ջղ. Սչ. մօրթել, Ախց. Կր. Պլ. Ռ. Սեբ. Ղրբ. մօրթէլ, Ննխ. մօրթէլ, մօշթէլ, Շմ. Տփ. մօրթիլ, Տիգ. մօնթէլ, Ալշ. Մշ. մօտեւ, Ոզմ. մուրթիլ, Ասլ. մէօրթէ՛լ, Մրղ. մրթրէլ, Ագլ. մա՛ոթիլ, Հճ. միյրել, որոնք բոլոր նշանակում են «խողխողել, փողոտել». իսկ Համշ. մօշտուշ «կա-

շին քերթել, կաշին հանել»։ Նոր բառեր են **անկամորթ, մորթահան, մորթոտել, մորթուչիղ**։ *Հետաքրքրական է* **մորթ** *Դրբ. Նախ. «անասունների զենումը»։*

Փոխ.—Գնչ. morti *«կաշի, մորթ»*, mortiákoro *«կաշեվաճառ, կաշեգործ» (փոխառությունը նշանակում է նախ* Pott, Zigeuner 2, 453, *յետոյ* Müller SWAW 66, 278, Lag. Arm. Stud. § 1521, Paspati, Les Tchinguianch)։

ՄՈՐԹԱՂ *«սանդ, հաւան». իբր միջին հյ. անստոյգ բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 830* (mortier *բառի տակ)։*

=Թերևս լտ. mortarium *«սանդ, հավան»։ —Աճ.*

Մորի *տե՛ս Մայր (ծառը)։*

ՆՀՔ **մայրի** *բառից կամ* **մայր, մօր** *սեռականից։* Canini, Etud. étym. 145 *լտ.* murus: *Հինք.* **մօր** *սեռականից։* Patrubány SA 1, 192 *լտ.* mora *«մրնալն», հիոլ.* maraim *«մնամ» բառերի հետ՝ իբրև բնիկ հայ։ Սագրզեան ՀԱ 1909, 335 սումեր.* mar *«բնակություն»։*

***ՄՈՐԿԵՂ** *«սունկն ինչ ուտելի՝ ծակոտկէն իբրև զպունգ կամ իբրև զխորիսխ մեղու». ունի Նորայր, Բառ. ֆր.* morillè- *իբրև նորակերտ բառ։—Յայտնի չէ ի՛նչպես է կազմուած։*

=լտ. morchella, *որ Մէնէվիշեան, Բուսաբ. 276—7 կոչում է* **մորխ** *և ունի երկու դլխաւոր տեսակ.* morchella esculenta **ուտելի մորխ** *և* morchella conica **սրածայր մորխ**։

Ուղիղ մեկնեց Մալխասեան (Հազորդեց 1932 ապրիլ 4-ին)։

ՄՈՐՃ *կամ* **ՄՈՐՂ**, ո *հլ. «դալար գաւազան, ոստ, ճիւղ» Դամասկ. Վասկ. 142. Կոստ. երզն. 169. (որ և* **մորջ** *Վրդ. առ. 100). «ծառի արմատի կողքից դուրս եկած նոր ծիլ կամ ճիւղ» Սմբ. դատ. 99. «դալար, նոր, կանաչ, թարմ» Առաք.։ Գրուած է «մուրճ դալար»՝ Մոլութ. 211բ. «Յորժամ գաւազանն է մուրճ, դիւրաւ կրկնի յիւրաքանչիւր կողմն. իսկ յորժամ լինի բիրտ, փութով խորտակի, քան ուղղի».—որից* **մորճիկ** *«ոստիկ, ճիւղիկ» Քուչ. 47, 55.* **մորչել** *«ծլիլ կանաչիլ» Վասկ. 129 (երկուսն էլ նորագիւտ բառ)։*

Մառ, Վրդ. առ. I. էջ 20 համարում է վրացերէնից փոխառեալ. իսկ վրացին յաբեթական vrṭ *արմատից. հմմտ. եբր.* יָרַק yrq *«կանաչ, կանաչութիւն»։* Petersson KZ 47, 280 *լտ.* marceo *«թառամիլ, թուլանալ», լիթ.* miřkti *«թըրջուիլ», կիմր.* braen *«փխրուն, փտած» բառերի հետ հնխ.* merāq- *արմատից։* Pokorny 2, 278 *ընդունում է այս մեկնութիւնը և չիշում է* **մորճ** *բառը՝ հնխ.* mer- *«ջարդել» արմատի տակ։*

*ԳԻՒ.—***Մորճ** *խրբ. «մացառ»,* **մորճիկ** *խրբ. «մացառ, նոր բուսած ծառ», Ակն. «զաւակ».* **մանուկ-մորճուկ** *Սեբ. «նորահաս՝ մատաղատի հրիտասարդ».—Կայ նաև Տփ.* **նօ՛րչի** *«դալար, մատղաշ» (օր. Նորչի արիվըդ պիտի փչանայ էլի. Պէպօ 1876, էջ 43), բայց փոխառեալ է վրացերէնից, Սվեդ. մէրչ «ծառի ծիլ. 2. յատկապէս բևեկնի ծիլը», որից մրչիլ «ծլիլ»։*

Փոխ.—Վրաց. **ցორჩი მორჩი, ნორჩი ნორჩი** *«ճիւղ, ընձիւղ, ծիլ»,* **ნამორჩი ნამორჩი** *«մատղաշ ճիւղերի մնացորդ» (նմանութիւնը նշանակած է նախ* Brosset JAs. 1834, *էջ 369, յետոյ ՆՀՔ)։*

Մորմ *տե՛ս Մոր։*

ՄՈՐՄՈՔ *«կոկիծ, ցաւ, հոգ». արմատ՝ որ առանձին գործածական է միայն նոր դրականում. որից* **մորմոքիլ** *Առակ. իթ. 21. Անգ. ր. 15. Ջաք. թ. 5. Գծ. ե. 38.* **մորմոքել** *Մարթ.* **մորմոքիցուցանել** *Պրոկղ. ոսկ.* **մորմոքող** *Նար.* **մորմոքանք** *Յայտ.* **մորմոքումն** *Շնորհ.* **սրտամորմոք, մորմոքիչ** *(նոր բառեր),* **մորմոքալից** *Մ. մաշտ. 339ա (նորագիւտ բառ)։*

ՆՀՔ լծ. **բորբոքել, մարմաջել**։—*Տէրվ.* Altarm. 32 *և Նախալ. 99 սանս.* marj *«վիրաւորել, սպառնալ», յն.* μαλϑάω *«թմրիլ», լտ.* marcere *«թառամիլ, թուլանալ, թմրիլ»,* murcus *«մեղկ» բառերի հետ՝ հնխ.* mark *արմատից։ Հինք.* **մարմառոտ** *բառից։ Ղափանցեան* ՅՒՕ *23, 357 համարելով կրկնուած* **մոմ** *արմատից՝ դնում է =պրս.* موژ mūž, o موژ

mūža «ցաւ, վիշտ»։ Petersson KZ 47, էջ 291 -nf մասնիկով կրճատ կրկնական մոռմ ձևից, որ է հնխ. mor-mor-o, պարզ արմատը mor-. Համմտ. յն. μέριμνα «հոգս», գոթ. maúrnan, հիսլ. morna, անգսք. murnan, հբգ. mornēn «հոգալ», լատ. memoro «յիշել», զնդ. mimara-, սնս. smarati «յիշել»։ Pokorny 2, 689 ընդունում և յիշում է հնխ. smer- «յիշել, հոգս անել, հոգս քաշել» արմատի տակ։

Գիր.—Կր. մօրմօթալ, Տիգ. մօրմօթիլ, Սլմ. մօրմբթալ, Սեբ. Տփ. մօրմբթիլ, Շմ. մրմօթիլ, Մրղ. մօռմթալ, Ախց. մօրմօնթալ, Մկ. մուրմուֆ՝ալ, որոնք նշանակում են «կսկծալ». իսկ Ողմ. մրմֆ՝ալ «լալ, լալ ուզել, լալու պատրաստուիլ»։

*ՄՈՐՈՍ, ի–ա հլ. «յիմար, անմիտ, խելթ» ՍԳր. Սեբեր. 139. Կոչ. 247, 328. Ասկ. ես. և մթթ. (Ի ծնէ իսկ մորոսքն փոքրագլուխ ծնանիցին. Ասկ. ես. 425). «յիմարական» Ասկ. եփես. դ. որից մորոսիլ Թղ. պրոկղ. ՀԱ 1921, 18. մորոսանալ Ասկ. փիլիպ. երր. և ես. մորոսուրիւն Սիր. ե. 33. Սեբեր. 143. Վեցօր. գ. էջ 45. Կոչ. 100. Լաբուբ. 26. Ասկ. փիլիպ. Եզն. մորոսական Ասկ. եփես. մորոսագոյն Եւագր. 243. մորոսաբանուրիւն Ասկ. կող. ժբ. մորոսախօսուրիւն Ասկ. եփես. Մանդ. էջ 102. շատ յետնաբար՝ մորոսել «ծաղրել, հեգնել» (իբրև թէ խելթի տեղ դնելով) Աբր. կրետ. 104։

=Յն. μωρός «անմիտ, բթամիտ, տխմար, յիմար» բառից, որից փոխառեալ է նաև լտ. mōrus «խելթ». յոյն բառը կցւում է սանս. mūrá- «բթամիտ» բառին և երկուսը միասին հանւում են հնխ. mō(u)r- «ապուշանալ» արմատից (Boisacq 655, Pokorny 2, 303): —Հիւրշ. 366։

Հներից Երզն. մթթ. 114 գրում է թէ «Մորոսն բառ է դաւառի՝ հասարակաբար ասացեալ Բշնամանօք առ բնաւնիս»։ Ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. 47, յետոյ ՆՀԲ։ Սրմագաշեան, Արմէնիա սրա հետ է համեմատում ռում. moros «տխուր, բարկացկոտ»։

ՄՈՐՏ «ամանների բերանը պինդ փակելու յատուկ ծեփ. ֆր. lut». միջին հյ. բառ. ունի Նորայր, Բառ. ֆր. 762 բ։

=Ֆրանս. mortier «շաղախ» բա՞ռն է, որ է լտ. mortarium «շաղախ»։—Աճ.

ՄՈՑԵԼ «վանել, հեռացնել, մի սովորութիւն վերջացնել» Ասկ. մ. ա. 17 (կաթից կտրելու համար է ասուած). սրանից է երեւում անմոց «անհակառակ», որ գիտեն միայն Բո. երեմ. էջ 22։

Տէրվ. Նախալ. 46 հնխ. muk արմատի mu պարզականից, որից այլևայլ ածականներով ձևացած են նաև մուխ, մուծ, մուռ, մուղ, մոց<մուց։

ՄՈ տե՛ս Մի։

*ՄՈՒ «սամիթի նման մի խոտ. լտ. meum» Բժշ. ունին ՀՀԲ, ՋԲ, ԱԲ և ՀԲուս. § 2119. չգիտէ ՆՀԲ։

=Արաբ. مو mū (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 933), որ և յն. μῆον. լտ. ֆրանս. meum։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ՄՈՒԱՐ «ժողով». ունի միայն Բառ. երեմ. էջ 216։

ՄՈՒՊՈՒԱՆ «եպիսկոպոս». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Դրնղ. 241, իբր օտար բա՞ռ. «Առէք զայդ մուդռանդ, որ է եպիսկոպոսդ և ելէք արտաքս»։

*ՄՈՒՋ «բթուի և քաղցրի միջին համն ունեցող, մարխօշ». Պատեհ է տալ մուզ նոան ջուր. Մխ. հեր. էջ 7, Բժշ. ևն։

=Արաբ. مز muz՝ նոյն նշ. որ յառաջացել է յն. μέσον «միջին» բառից։

Նորագիւտ բառս երևան հանեց և ուղիղ մեկնեց Seidel, Մխ. հեր. § 33։

Գիր.—Ակն. մուզ «բթու՝ տխիպ և լեղի համ»։

ՄՈՒՋ «քամուք, քամուած մզուած հիւթ». արմատ առանձին անգործածական (ՆՀԲ-ի մէջ բերած օրինակները այս բառի մասին՝ պատկանում են նախորդ մուզ «մարխօշ» բառին). սրանից են մզել «քամել» ՍԳր. Ագաթ. Եփր. դտ. 336. Եղիշ. մզիլ Եփր. համար. 18. մզումն Շնորհ. Բղթ. համմտ. նաև խազմուզ (ո հլ.) Կոչ. Ասկ. գծ.։

ՆՀԲ լծ. հյ. ճոյզ, Բրք. öz, լտ. mustum, պրս. mustār: Müller SWAW 42, 253 պրս. mazīdan «ճաշակել, ծծել»։

Տէրվ. Altarm. 59 *լիթ.* milž-ti, *հսլ.* млъзю, млъсти, *յն.* ἀμέλγειν, *գերմ.* melken *են։* Bugge KZ 32, 19 *յն.* μοζάω «*ծծել, ճմել, ճմլել*», *որ* Fick BB 1, 63 *դնում է* *μυδjάω *ձևից. Թերևս յն.* μοζάω *լինի* <*μυσδάω, *ցեղակից* μαζός, *դոր.* μασδός *բառերին։ Գազանճեան, Արև. մամ. 1902, 77 մ մասնիկով* նոյզ *բառից։* Karst, *Յուշարձան 421 թրք.* yoz *(իմա՛* öz), yaš, is, əz «*խոնաւ, թաց*», yüz-mek «*լողալ*»։ Patrubány IF 14, 56 *սանս.* mudgaras «*մուրճ*», *հսլ.* můžditi «*թուլացնել*», *ռուս.* možžiti «*ճնդքել*» *են։* Scheftelowitz KZ 54 (1927), 240 *հսլ.* muža «*ճահիճ*», *ռուս.* mozglavyj «*խոնաւ*», *հբգ.* murga «*գետ*», *սլ.* mužęti «*կաթկթիլ*», *ռուս.* umuzitĭsja «*կեղտոտուիլ*» *ձևերի հետ։ Թերևս պատահական նմանութիւն ունի ասուր.* «*մզել, քամել (գինի են)*». (Muss-Arnolt, Ass. Handwb 517 *ա*)։

ԳԻՒ.—երև. մզել, *խրբ.* մզիլ, *Գոր. Ղրբ.* մի՛զիլ, մրզիլ, *Շմ.* մրզիլ «*քամել*». *որից* մրզուիլ, մզուիլ, մրզոտիլ «*կովի ծիծը մզելով՝ բոլորովին չորացնել*»։

ՄՈՒՋԱՅ *կամ* **ՄՈՒՍԱՅ** «*գեղարուեստից դիցուհի*». *գործածական է միայն նոր գրականում, առաջինը արևելահայոց մէջ, երկրորդը արևմտահայոց մէջ։*

= *Յն.* μοῦσα՝ *նոյն նշ. որ փոխառութեամբ անցած է բոլոր եւրոպական լեզուներին. ինչ. լտ.* musa, *ֆրանս.* muse, *ռուս.* муза *են. սրանցից են յառաջացած* musée «*թանգարան*», musique «*երաժշտութիւն*», *իրք.* musika *են։ Ցոյն բառի նախաձևը դնում են* *μονθ-ja *և կապում* μανθάνω «*ուսանիլ, ուսումնասիրել*» *բային* (Boisacq 647)։

ՄՈՒԹ, ո, ի *հլ. կամ* **ՄՈՒԹՆ**, ն *հլ.* (մթան, ի մթան) «*մուր, խաւար*» *Եւս. պտմ. Կոչ.* «*մթութիւն*» *ՍԳր. Եղն. Ոսկ. Սերեր. որից* մթագին *Կիւրղ. ծն.* մթագոյն *Եփր. ծն. Ոսկ. մտթ.* մթագած *Ոսկ. մ. գ. 4.* մթանալ *Գ. թագ. ժը. 45. Եղն.* մթապատ *Վեցօր.* մթացուցանել *Ամովս. է. 8. Սիր. իե. 24. Եւս. պտմ. Եղն. Կիւրղ. ծն. և թգ.* մթին *ՍԳր. Սերբեր. Բուզ.* մթնանալ *Եւագր. Ոսկ. յհ. ա. 42. խոռամթին Մագ.* խաւարամուր *Թէոդ. խչ.* մթնաւոր *Շիր. -ար մասնիկով՝* մթար «*սևացած, մուր գոյնով*» *Սերեր. 116 «աչքի ճիպո» Եղն. էջ 6.* մթարուրիւն «*մթութիւն, խաւար*» *Պիտ. «լուսնի վրայ սև նիշ, բալ» Վեցօր. 115. «իմաստի մթութիւն» Կիւրղ. ծն.* մթարագոյն «*մթագոյն*» *Ոսկ. պօղ. Ա. 782. սխալ գրչութեամբ էլ* մթեր *Աբան. 1899, էջ 240 (երկիցս). Ճառընտ. ՅճԽ. Մանդ. (Բաբգէն վրդ. ՀԱ 1907, 312 ընդհակառակը* մթար *ուղղում է* մթեր, *իբր «աղտ մթերեալ», որ շատ սխալ է և միայն «ճիպո» իմաստը ի նկատի առած է։ Վարդանեան ՀԱ 1928, 533—5 նոյն* մթարը *(Եղն.) ուղղում է* մոայլրը, *ինչպէս ունի Ձմիւռնիոյ տպագիրը)։ Նոր բառեր են* մթնշաղ, մթնոլորտ, մթնոլորտային *են։*

ԳԴ պրս. մաղ, մէղ, միյղ *(որ սակայն համապատասխանում է* մէգ *բառին)։* Klaproth, Asia pol. 100 *անգլ.* muddy «*ցեխոտ*», Mémoires I, 432 *սանս.* tama, *հսլ.* temno, *լտ.* tenebrae «*խաւար*», *սանս.* mudira «*ամպ*»։ *ՆՀՒ* (մթարուրիւն *բառի տակ) պրս.* tārī «*խաւար*»։ Justi, Zendsp. 234 *զնդ.* mūθra «*անմաքրութիւն*», *սանս.* mūtra «*մէգ*»։ *Կոստանեանց, Հայ հնթ. կր. սանս.* mu «*յաղթել, կապել*» *արմատի* muta «*յաղթեալ, շղթայեալ*» *դերբայից։* Canini, Et. étym. 10 *սանս.* tāma, *իսլ.* dimmr «*մուր*»։ *Տէրվ. Նախալ. 83 սանս.* tam «*թմրիլ*», tamra «*մուր*», *զնդ.* temanh «*մուր*», *պրս.* تم tum «*մուր, մթարք*», *լիթ.* tamsà «*մուր*» *են ձևերի հետ՝ իբր շրջեալ* *tum *ձևից։ Հիւնք. հանում է մուտ «արևմուտք» բառից։* Bugge KZ 32, 20 *կցում է հիւս.* mothar «*մուր*» *բառին։ Նոյնը կրկնում են* Strachan BB 20 (1894), 22 *և* Scheftelowitz BB 29 (1905), 23: *Քիւրէղեան, Բազմ. 1910, 153 արաբ.* موت mavt «*մահ*» *բառի հետ։* Karst, *Յուշարձան 406 սումեր.* mud «*մթնել*», mut «*մուր*», mi «*շուաք*»։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 275 մուղա հոմանիշից։ Պատահական նմանութիւն ունի ասոր.* ܡܘܬܐ ūmōṭā «*մուր*»։

Pokorny 2, 250 *ընդունելով* Bugge-*ի մեկնութիւնը, մուր դնում է հնխ.* meu- *«խոնաւ, կեղտոտ» արմատի աճած* meut- *ձևից. մերժում է յն.* μύελον *«փակուխլ»,* μυστήριον *«գաղտնիք», լտ.* mutus *«համր» բառերի համեմատութիւնը։*

ԳԻՒ.—Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Հճ. Համշ. Մրզ. Մկ. Ննխ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. մուր, *Տփ.* մուր, մուրը, *Ոզմ.* մօր, *Ասլ.* միւր, միւ*, *Ալշ. Մշ.* մուռ, *Սվեդ.* մէօր, *Զթ.* մուռ, *Շմ.* մր՛բը, *Ագլ.* մօր. *այս բոլորը ծագում են մուր բառից. իսկ Գոր. Ղրբ* մրէն, *Ագլ.* մրայն՝ *ծագում են մրիւն բառից և նշանակում են թէ՛ «մուր» և թէ՛ «մրիւն» (գոյական և ածական).—Ագլ.* մրան *«երեկոյ»։ Նոր բառեր են* մրնագիշեր, մրնադէմ, մրնաժեռ, մրնախաղ, մրնակալել, մրնակեր, մրնակոխ, մրնաուռն, մրնդալ, մուրկեկ, մրնշող, մրնել, մրնթաթախ, մրնռուն *են։*

+ՄՈՒԼ. *արմատ առանձին անդործածական (գտնւում է նոր գաւառականների մէջ). որից* մլմլոտ *«պլպլացող, առկայծնալ». մէկ անգամ ունի Շիր. 74. «Երեկ տեսանիցես զնոսա (զաստեղս) պայծառս և այլանմանս և մլմլոտս»։—Արմատը առանձին գտնում եմ մէկ անգամ գործածուած Մագ. Թղ. 87. «Արտաշէսն պարեկ բաղձայր մլոյ մրրկեալ ծրխոյ շամանդաղեալ մակաւասար շինից և քաղաքաց. Ո՞ տայր ինձ, ասէր, զծուխ ծխանի և զառաւօտն Նաւասարդի». ուր* մուլ *(ո հլ.) նշանակում է «ծուխ, ծուխի բարձրանալը» (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մտ. Բ. 196)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. smōl- *«այրիլ կամաց կամաց, ծխալ» արմատից. սրա ժառանգորդներն են ֆլամ.* smoel *«տաքից հեղձամահ անել», մանգլ.* smolder *«ծուխ». անգլ.* smolder, smoulder *«ծխալով վառիլ». —արմատի հիմնական ձևն է* smel-, *որ ցոյց են տալիս՝ հոլլ.* smeulen *«առանց ծուխի կամաց կամաց այրիլ», հիւս. գերմ.* smelen, smölen *«կամաց կամաց ու ծխալով այրիլ». մանգլ.* smel, smul, *անգլ.* smell *«հոտ, հոտ արձակել» (նշանակութեան զարգացման համար համմտ. գերմ.* rauchen *«ծխել» և* Geruch *«հոտ»), սորբ.* smalii, smalis´ *«բոցի վրայ խարկել, սևացնել», ուկր.* pry-smalyty *«այրել, բոցավառել», ռուս.* смáлить *«բոցավառիլ».—նոյն արմատից* k *աճականով՝ լիթ.* smilkti, smilkstù *«իրանից թեթև մի շոգի կամ ծուխ արձակել»,* smilkýti *«ծխել, բուրել»,* smelkiù, smẽlkti *«խեղդել, հեղձամահ առնել».—արմատի վերջաձայնը* r-*ի վերածելով էլ՝ անգսք.* smorian *«խեղդել», մհգերմ.* smoren *«խորովել, խեղդել», գերմ.* schmoren *«մի փակ ամանի մէջ կամաց կամաց խորովել», հոլլ.* smoren *«խարկել, խորովել, ծխալ», անգսք.* smorðer *«ծուխ, շոգի» են* (Pokorny 2, 691, Kluge 431)։ *Հայերէնի մէջ «հոտ» իմաստի համար տես տակը գտ.—Աճ.*

Karst, *Յուշարձան 406 տումեր.* mul *«փայլիլ»։*

ԳԻՒ.—Երև. Ղզ. մուլ, *Ղրբ.* մօլ *«ծուխ». որից* մուլ աՌել *լ. «քիչ կրակով վառիլ», Ղրբ. «ծխալ, ծուխ արձակել. 2. բարակ փքալ» (նոյն է վերի «հոտ» իմաստի հետ),* մլալ *Երև. Ղզ. «ծխալ»,* ծխամուլ *Երև. «ծուխ»,* մլիկ մլիկ *Պլ. «կամաց կամաց (այրիլ)»,* մըլլալ *Ղրբ. «ծուխը հանդարտ բարձրանալ».* մլրկտալ *Պլ. «կամաց կամաց խանձիլ այրիլ»,* մլմլալ *Մն. «առկայծիլ, պլպլալ», Ղրբ. «ծուխը հանդարտիկ բարձրանալ»,* մլուլ *Սնք «ծուխի քուլայ»,* մլուլ *կամ* մլուռ *Ակն. «սարդի ոստայն. 2. ձանձախարիւթ, ծխի կապած մուրը» (իմաստի զարգացման համար համմտ. ունջ «ձանձախարիւթ, մուր. 2. սարդի ոստայն»)։*

**ՄՈՒԼՈՒԽ «թաախոտ, ծովու ժանկ, լտ.* atriplex foetida» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2122։*

=Արաբ. ملوخ malūx։

Այսպէս մեկնեց ՀԲուս. § 823։

**ՄՈՒԼՔ «հարստութիւն, իշխանութիւն, սեփականութիւն» Տաթև. ձմ. խղ. —յգ.* մլՐեր *Յայսմ. մրտ. 11. որից* մլՐել *«տիրել» Սմբ. պտմ. 119 (էաւ զՄելտինք... և մինչ Եփրատ կտրէ, զամէնն մլրեց). Սամ. անեց. չար. 173 (Մլրեաց բազում տեղիս).* մլՐատէր *Անկ. գիրք առաք. 451. Յայսմ. Հոկտ. 23։*

=Արաբ. ملك mulk *«հարստութիւն, իշխանութիւն»։*

+ՄՈՒԽ, ո *հլ. «ծուխ» Փիլ. լին. 53. Սեբ. 109. Միխ. առ. 239. Ուռհ. որից մխախառն Եւս. պատմ. 36. կթ. Ուխտ. Ա. 88.* թանձրամուխ *Անան. հկեղ.* մխոեցուցանել *«մուխ տալ» Վստկ. 192. շատ գործածական է արդի լեզուի մէջ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. smuqh- *«ծխել, ծուխ» արմատից. ցեղակիցներից համմտ. յն.* σμύχω *«քիչ և անբոց կրակով եփել կամ այրել, սպառել», հիւլ.* múch *«ծուխ», կիմր.* mwg *«ծուխ», կորն.* mok *«ծուխ», բրետ.* moug, mog *«կրակ»,* moged *«ծուխ», անգլսք.* smooian, sméocan *«ծխել»,* smoca *«ծուխ»,* smiec *«ծուխ, շոգի», անգլ.* smoke *«ծուխ, ծխել, մխալ», մրգ.* smouch *«ծուխ, շոգի», հհոլլ.* smuucken *«ծխել», գերմ.* schmauch *«թանձր ծուխ»,* schmauchen *«ծխել», հոլլ.* smoken *«ծխել»,* smook *«ծուխ». մ.հիւս. գերմ.* smōken *«ծխել, ծխով խեղդել, հեղձամահ անել», լիթ.* smáugiu, smáugti *«խեղդել» և թերևս ռուս.* смуглый *«թուխ, սևորակ»=ուկր.* smuhłyj *(իբր «ծխագոյն»)։ Սրանց մէջ արմատը երևում է* smeuqh-, smeug-, smeugh- *ձևերով. յատկապէս համմտ. յն.* σμύχω *ձևի կտր.* ἐσμύγην. *որ ցոյց է տալիս* γ—g *ձայնը* (Pokorny 2, 688, Boisacq 886, Kluge 429). *տե՛ս նաև* մուրկ։

ՀՀԲ մխիլ *բայից, որովհետև մուխը «մխի յաշս»։ ՆՀԲ նոյն ընդ ծուխ։ Ուղիղ մեկնութիւնը մոռացել է նախ* Lag. Urgesch. 805, *որ բառը համեմատում է անգսք.* smyc *և անգլ.* smoke *«ծխել» ձևերի հետ. սակայն ինքը* Arm. Stud. § 1524 *մերժում է։ Վերի ձևով մեկնեցին* Bugge., Btrg. 18, KZ 32, 20 *և յետոյ* Meillet MSL 8, 294: *Հիւբշ. 475 յիշում է այս մեկնութիւնը, բայց անապահով է համարում։ Հիմնք. մէգ բառից·* Patrubány SA 1, 214 *անհս.* mukha *«բերան» կամ* muk *«թողնել, արձակել» ձևերի հետ է միացնում։* Karst, *Յուշարձան 424 թաթար.* bug, buh, mug *«ծուխ, շոգի» բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունին թուշ.* moxk *«փոշի», արևել. թրք.* مو ی mūy *«շոգի, արտաշնչութիւն», որ է թրք.* بوغو buγu *«շոգի»,*

գիր.—Ալշ. Ախց. երև. Զթ. խրբ. կր. Հճ. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Զղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. Տփ. մուխ, *Ոզմ.* մուխ, *Ասլ.* միխ, *Սվհդ.* մէօխ, *Բ.* մխէլ, *«կոխել, խոթել»։ Նոր բառեր են* աճմուխ, մխալ, մխածքոլ, մխակոլոլ, մխաճ, մխաշապիկ, մբխմխալ, մխմխոտիլ, մխնոց, մխոտ, մխոտել, մխոտիլ, մխրիլ, մխրկտալ, մխրտալ, մխրցնել, մուխխաշ *են։*

ՓՈՒՆ.—Վրաց. მხოე მխիե *«գորշ, մոխրագոյն», լազ.* mǧ (mǧums, mǧup's) *«առանց բոցի այրիլ»,' ուտ.* muǧ' *«ձանձախարիթ»,* muǧ'enbesun *«մխալ»,* muǧ'enbak'i *«ծխահամ»։*

+ՄՈՒԽ *«մի բանի մէջ խրել, խոթելը». այս արմատից են ծագում՝* մուխ *«երկաթը ջրելու համար տաք տաք ջրի մէջ մխելը և այս գործողութեամբ յատաջացած կարծրութիւնը» Սիր. լդ. 31. Յայտմ. Վանակ. «մխելով կարծրացած» Գէ. ևս .«կարծրացնող» նար. «մխելու աստիճանի չափ տաքացած, հրաշէկ, կարմիր աստիճանի տաքացած» Ածիս. գ. 16. Եւագր. Ոսկ. յհ. ա. 31.* մխել *(դրուած մղխել կնիք հաւ. 44) «խոթել, ձեռք երկարել, բռնել» ՍԳր. Ագաթ. Եւս. քր. Եղն. «երկաթը կարծրացնել» Սղ. ՃԺթ. 4.* մխած *«ջրած (երկաթ)» Քեր. քերթ.* մխոց *Բ. մակ. ա. 21.* մխուն *Լմբ. սղ.* ձեռնամուխ *ՍԳր. Ոսկ. Եւս. պատմ. և քր. դաշտամուխ Ա. մակ. ժգ. 5. ծովամուխ Փիլ.* միջամուխ *Ոսկ. Ագաթ. Վեցօր. Կորիւն. Սեբեր.* թևամուխ *Կորիւն. Ագաթ.* գործամխիլ *Փարպ.* նոգնմուխ *Ագաթ.* խառնամխի *Ագաթ. § 39 (հին տպ.* խառնամրոխ*), Ղևոնդ, ժբ. էջ 41.* ջրմխիլ *Ոսկ. մ. ա. 7. Թես. գ. 443։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. meuq-, meuqh- *կամ* smeuq-, smeuqh- *արմատի* muqh- *(կամ* smuqh-*) ձևից, որի նախնական իմաստն է «լպրծուն, սահուն, յետոյ՝ սահիլ, սողոսկիլ, ներս մտնել»։ Ցեղակիցներից յիշատակենք յն.* μύχος *«մի տեղի ներքնագոյն մասը, խորքը»,* μύχατος, μυχοίτατος *«ներքնագոյն», հիւլ.* smjúqa *«սողալ, մի նեղ տեղից ներս սողոսկիլ», անգսք.* smúqan *«կամաց կամաց ներս թափանցել», մրգ.* smiegen, *գերմ.* schmiegen *«ծռիլ, թեքիլ», հալ*

smykati sę, smučati «սողալ, սողոսկիլ», լիթ. smùkti «վերևից ներքև սահիլ», լեթթ. mūku, mukt «ճահճի մէջ խրուիլ» ևն ևն (Pokorny 2, 254, Walde 254, Boisacq 653—4, Kluge 430)։ Զևով և նշանակութեամբ հայերէնի ամենամօտիկն է լիթուերէնը։

ԳԴ պրս. mēx «գամ, ցից» բառից՝ ՆՀԲ մխել դնում է մղել բայից? իսկ մխոց՝ լծ. յն. μυχός (տե՛ս ներքուստիւն բառի տակ) կամ μοχλός «պարզունակ» (տե՛ս այս բառը)։ Տէրվ. Altarm. 30 և Նախալ. 99 սանս. majj<*masj և լտ. mergere ձևերի հետ՝ հնխ. masg «մխիլ, մխրճիլ» արմատից։ Վերի մեկնութիւնը տուաւ Bugge KZ 32, 20, որ Հիւբշ. 475 բոլորովին անապահով է համարում։ (Նոր քննիչները ընդունում են)։ Հիմնք. մխրճել, մկրտել են ձևերից։ Meillet BSL № 79, էջ 4 յն. μυχός բառի հետ՝ կազմուած խ ածականով, ինչպէս մուտ, մուծանեմ յն. μύω, μυέω բառի հետ՝ ուրիշ ածականներով։

ԳՒՒ.—Մշ. մուխ «երկաթը մխելը», Մկ. մխել «երկաթը մխել», Սեբ. մխել «մի փոքր ժամ մեծ ժամանի մէջ մխելով պարունակած հեղուկից մի մաս վերցնել», Ղլ. մխել «սիրտը ցաւացնել, խօսքով վիրաւորել», Սվ. մխվոխ «մարմնի մէջ ասեղի խայթոցներ զգալ», Հնդ. մխել «զարնել»։

ՓՈՒՒ.—Վրաց. მოწუხვა մոմուխվա «колоть, ծակոտել» (Զուբինով[2] 819). արմատական ձևը՝ որ պիտի լինէր—մուխ—չգիտէ Զուբինով։

ՄՈՒԽԱԼԱՍԱ կամ ՄՈՒԿԱԼԱՍԱ «մի տեսակ բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2123։

=Անշուշտ արաբերէն է, բայց բուն ձևը յայտնի չէ։

*ՄՈՒԽԱՏՐԱՅ «փորձանքաւոր, վտանգալից» Վրդն. սղ. ճի. էջ 425. Սմբ. դատ. 9. գրուած մուխադրայ՝ Կոստանդին Ա կաթուղիկոսի կոնդակի մէջ (Կիր. տպ. Վենետ. էջ 167)։

=Արաբ. مخاطرة muxāṭara «վտանգ, փորձանք»։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։ Նոյնը Seidel, Մխ. հեր. § 169։

*ՄՈՒԽԹԱՍԻՊ «շուկայում առևտրի կարգապահութեան հսկող ոստիկան» Սմբ. դատ. 162 ևն (Կիլիկեան շրջանի բառ). աւելի հին է մուրսիբ «հարկահաւաք» Արձ. ԺԱ դարու (տե՛ս Վիմ. տար. էջ 27)։

=Արաբ. محتسب muḥtasib բառն է, որ առաջին իմաստով տարածուած էր Արևելքի մէջ, այնքան որ Կիպրոսում անգամ ունինք romanացած mathessep ձևով։ Ծագում է արաբ. حسب ḥsb «հաշուել» արմատից։

Ուղիղ մեկնեց Karst, Դատաստն. II. 233։

Մուծանել տե՛ս Մոյծ։

ՄՈՒԿԱԲԵՒՆ «աւելորդ տեղը, իբր աւելորդ ծանրութիւն, աւելորդաբար» ԱԲ (չունի ՆՀԲ). երկու անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 533 և 567. «Այլ զդես մուկաբեռն մուծանես. Ընդէ՞ր մուկաբեռն ի մէջ մուծանիցէք ղհրեշտակս»։

ԱԲ ուզում է կարդալ մակաբեռն. բայց ի զուր. որովհետև Ոսկեդարում մակ- նախամասնիկ չկար դեռ։

*ՄՈՒԿԼ կամ ՄՈՒԿԼԻ «քարախունկ կամ մի տեսակ խէժ. լտ. bdellium, որի ծառն էլ կոչւում է balsamodendron mukul կամ heudelotia» Ամիրտ. Պէյթ. (ունի միայն ՀԲուս. § 2124). գրուած մուխլ Մխ. բժշ. 145։

=Արաբ. مقل muql՝ նոյն նշ. այս բառի բացատրութիւնը, որ բոլորովին նոյն է Հայրուսակի բացատրութեան հետ, տե՛ս Կամուս. Բրբ. Բրգմ. Գ. 351։—Աճ.

+ՄՈՒԿՆ, ն հլ. (մկան, մկանի, մկանց) «մուկ կենդանին» ՍԳր. որից մկնաձիս Ղևտ. ժա. 30. մկնորսակ ՅՀ. իմ. մկնաճարակ Մագ. մկնանկ Մաշտ. Կանոն. մկնասոխ Վստկ. մկնականջ Գաղիան. Բժշ. մկնակեր Լծ. նար. խոլոմուկն Վանակ. Հց. նոլամուկ Վեցօր. մկնօրհնէք (չունի ԱԲ) «մուկ օրհնելու ասորական սովորութիւնը» Տարօն. Բ. § 20, 21. մկնշիտ «մի տեսակ թռչուն» (նոր բացթիւ բառ) Տաղ. (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան 483)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mūs ձևից -կն մասնիկով (հմմտ. ձուկն). ժառանգորդ լեզուներն ունին՝ սանս. mûṣ mūš, mūša-, mūšaka-, mûšika-, հինդուստ. mūsa, գնչ. mušk, musso, mušo, mussos, mišjakos, mu-

šákos, պրս. موش mūš, բելուճ. mūšk, աֆղան. mažak իգ. maža օսս. miste, mjst'. քրդ. mišk, məšik, յն. μῦς, լտ. mūs, հրգ. և քրդ. mūs, գերմ. Maus, անգսք. mús, անգլ. mouse, հոլլ. muis, հիսլ. mús, հսլ. myšĭ, լհհ. myszka, ռուս. мышь, ալբան. mī, բոլորն էլ «մուկ» նշանակութեամբ (Pokorny 2, 312, Walde 503, Boisacq 652, Trautmann 191, Kluge 324, Ernout-Meillet 618, Horn § 995)։ *Բառս պակասում է միայն բալթեան և կելտական լեզուներում, որոնց մէջ* tabou-*ով փոխանակուած է «սև, մոխրագոյն» նշանակող բառով. այսպէս՝ լիթ. pelẽ, լեթթ. pele, հին պրուս. *peles, իռլ. luch, գալլ. llyg, կորն. logoden, բրբտ. lôgôden (տե՛ս* Meillet, Interdictions de vocabul. *էջ 14)։ —Հիւբշ. 475։*

Klaproth. Asia pol. 103 *սամոյէդ* migade: *ԳԴ պրս. մուշ։—ՆՀՔ «որպէս թէ միուկ կամ մսուկ», լծ. յն. լտ. պրս. ռուս. ձևերը։ Ուղիղ են համեմատում նաև* Windisch, 23, Böttich. Arica 66, 82, Lag. Urgesch. 753, Müller SWAW 38, 572 *եև։* Meillet MSL 7, 58 *Հայերէնի նախաձևը դնում է* *մուսկ։ Մառ* Яз. и Лит. I. 234 *յն.* μῦς, *լտ.* mus *եև ձևերի հետ նաև վրաց.* ցօრცხა վիրցխա, *արաբ.* 'akber *եև։*

ԳԻՒ.—Ջղ. մուկն, Աժտ. Շմ. մուկը, Տփ. մուկ, մուկը, Ախց. Ներև. Կր. Մկ. Մրզ. Սլմ. Վն. մուկ, Ալշ. Ակն. Ջթ. Խրբ. Համշ. Հճ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. մուգ (Ակն. յգ. մըյնէր), Գոր. Ղրբ. մօկնը, Ագլ. մօկնը, մօ՛կուն, Շմ. մուկուն, Ոզմ. մօւկ, Սվեդ. մէօզ, Ասլ. միւզ, միւյ։ Նոր բառեր են մկածեռն, մկնալոն, մկնաճաստ, մկնաճուտ, մկնամիջի, մկնաչէմ, մկնատամ, մկնաւո, մկնաօճ, մկնոռ, մկնոռ, մկնոռացնել, մկնկեռիմ, մկնոց, մըկրնփուշ, մկոջ.—Ասլ. մգնդ՛է՛ղ «մկնդեղ»։

+**ՄՈՒԿՆ**, ն *հլ. (յգ. մկուեմ, մկանց) «դընդեր, նեարդ» Վրդն. ծն. Պիտառ. Անյ. պորփ. Նիւս. կազմ. և բն. որի հետ նոյն է նաև մըկան, մկանուեմ «կոնակ, մէջք, թիկունք», որ տե՛ս առանձին։*

=*Բնիկ հայ բառ, որ նոյն է նախորդ* մուկն *(կենդանին) ձևի հետ. նշանակութեան այս զարգացումը յառաջացած է ո՛չ թէ հայերէնի մէջ անկախաբար, այլ յատուկ էր հնդևրոպական նախալեզուին, որից ժառանգաբար անցել է նաև նոր լեզուներին. Համմտ. յն.* μῦς, *լտ.* musculus, *ռուս.* мышца «մկան, դընդեր», *հրգ. մբգ.* mūs «դնդեր՝ յատկապէս վերնաբազկի», *գերմ.* Maus «ոտքի և ձեռքի մկաններ», *հսլ.* myšica «թև, բազուկ», *լհհ.* myszka, *ռուս.* мышка «մկան, անթաատակ», *հոլլ.* muis, *անգսք.* mús «մկան»։ *Նոյն զարգացումը ցոյց են տալիս նաև հպրուս.* peles «մկանունք» *(Համմտ. լեթթ.* pele «մուկ») *և ո՛չ-հնդևրոպական լեզուներ, ինչ. արաբ.* فَارَة fāra «մուկ. 2. նեարդ», *ամհար.* ayyiṭ «մուկ. 2. բազկի մկանունք, biceps» (BSL 18, 139), *արաբ.* يربوع yarbū' «խլուրդ, դաշտամուկ. 2. թիկունքի մսերը» *(Կամուս, Բրք. Քրգմ. Բ. 580)։ Հնդևրոպական ձևերի համեմատութիւնը տե՛ս* Pokorny 2, 313, Trautmann 191, Boisacq 652, Kluge 324, Walde 503։—*Հիւբշ. 475։*

ՄՈՒԿՈՒԼԱՅ «ակն սրտագոյն սիրելի պարսկաց. telicardius». *գիտէ միայն Քաջունի, հտ. Բ. 710 և իբրև վկայութիւն է տալիս «Պարգևէ նմա զասացեալն մուկուլայ ակն» Եզնիկ! (ո՞ր Եզնիկը)։*

ՄՈՒՂ «քշել, վարել, առաջ տանիլ, հրելը». *այս արմատից են մղել «քշել, վարել, հրել» Բուզ լե. 20, 22. Սերեր. Ոսկ. Եբր. և մ. դ. 16. «պատերազմ վարել» ՍԳր. «անվարժ կենդանին կրթել, գործի քշել» Մեհն. ծն. մղիլ «նեռուիլ» Կիր. 135 (մղիլ ի վախից «գահավիժուիլ»), մղօն «մղումն», որից մղօն տալ «հրել» Ջենոբ 47. մուղ «գործի մէջ մրատած, վարժ (անասուն)» Ոսկ. ես. ընդդիմամղել ԱԲ. եակատամուղ Բուզ. մէզմուղ Բժշ. ջրմուղ ՍԳր. (շատ անմիտ սխալ է ջրմուղի՝ որ սկսել է գործածուել այժմ Երևանում, իբր թէ ուղի «ճանապարհ» բառից լինէր կազմուած), տրմուղ «անվարժ՝ չլծուած (անասուն)» Երեմ. լա. 18. Ոսկ. մ. ա. 6 և Եբր. լա. Եւս. պտմ. Սեբեր. (կազմուած տր<տուր բացասական մասնիկով), որ և աեմուղ Ոսկ. մտթ. և յհ. հակառակն է եաջամուղ «վարժ (ձի)» Աթան. էջ 607. Հայկական կրկնութեամբ՝ տրմուղ կրմուղ Կոչ.։*

Նշբ մղել «մխելով վարել ի բաց կամ ի մի կողմն», մուղ՝ լծ. լտ. mulus *«ջորի»*։ Lag. Urgesch. 218 *լտ.* molere *«աղալ»*։ *Տէրվ. տե՛ս մոյծ*։ Canini, Et. étym. *էջ 157 մղել՝ կազմուած մեկնել բառի հակադրութեամբ և հյ. մածնուլ=պրս.* makhīdan *«կցել, միանալ» բառից*։ Bugge, Etr. u. Arm. 71 *ընդունում է երկու տարբեր բառ. մղել «վարել» և մղել «կակղացնել, վարժեցնել», մուղ «վարժ». առաջինի հետ է կցում հտր.* mulu *«նուէր», լտ.* moveo *«շարժել», լիթ.* máuju *և սանս.* mīv *«վարել». իսկ երկրորդի հետ յն.* ἀμαλός *«կակուղ, թոյլ»։ Հիւնք. մխել բայից։ Պատահական նմանութիւն ունի յն.* μῶλος *«դժուար աշխատանք, ջանք, կռիւ»* (Boisacq 654)։

*ԳԻՒՐ.—Այս բառը շրջմամբ ունինք Պրտ. ղմէլ ձեւով։ Նոյն արմատից են մղան, մղանել, մղան մղան անել, մղանածակ։ Նոյն արմատի *մուլ ձևն է ներկայացնում մլել «հրել, մղել, վանել, վարել» Բլ. Խլ. Մկ. Մշ. Նբ. Սլմ. Վն. որի սաստկականներն են՝ զանազան մասնիկներով՝ մլշկել Մրղ. Սլմ. Վն., մլշտել Ագ., մլուիլ Դվ., մլակվել Բլ. «բազմութեան մէջ սողոսկելով մտնել»։*

*ՄՈՒՂ, ի–ա *Հլ. «մատակ էշ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Նորագիւտ Ա. մնաց. ժբ. 40. «Եւ կրէին իշովք, ուղտովք և ջորւովք և մղաւք ցկերակուրս»։*

=*Ասոր.* ܡܘܠܐ mūlā *«էգ էշ, asina». բստ* Brockelmann, Lex. syr. *էջ 181 գործածուած է Ծն. խե. 23, Գ. Թագ. Ա. 33։—Ա.Ճ.*

Այս բառը երևան հանեց նախ Ա.Ճառ. Հայ. նոր բառեր մնաց. գրոց մէջ, էջ 24։ Մեր հատուածի դէմ Եբրայականն ու Յօթանասնից թարգմանութիւնն ունին «Եւ բերէին նոցա ուղտս և իշովք և ջորւովք և եզամբք». որից թւում է թէ մուղ պիտի նշանակէր «եզ». բայց նա աւելի լաւ եմ համարած առնել «գրաստ կամ ձի» նշանակութեամբ։ Որովհետև հատուածում ջորին արդէն յիշուած է, ուստի կարծել եմ որ մուղ չի կարող լինել «ջորի»։ Բայց Գ. Տ. Մկրտչեանը (անձնական) դիտել տուեց, որ պէտք է զանազանել երկու տեսակ ջորի. մին՝ արու էշի և էգ ձիու խառնուրդից յառաջացածը և երկրորդը՝ արու ձիու և էգ էշի խառնուրդից յառաջացածը. հայերէնում կարող էին սրանք զանազանուած լինել՝ առաջինը ջոր և երկրորդը մուղ բառով, թէև այսպիսի նուրբ զանազանութիւն ուրիշ լեզուի մէջ գոյութիւն չունի։ Այսպէսով մուղ դառնում էր «ջորի» և կապւում յայտնապէս լտ. mula *հոմանիշի հետ։ Պարսկաստան եղած ժամանակս ստուգեցի սակայն, որ ջորին միայն էգ ձիուց է ծնւում և էգ էշից ջորի չի յառաջանում։ Նոյնը ցոյց է տալիս նաև Առաք. լծ. տահմ. 276. «Կիսէշն ջորին է և նա յիշոյ լինի և ոչ ձիոյ. այսինքն զի հարկ է որ էշն ի ձին վազէ և ի կով. և ոչ ձին յէշն վազէ կամ ի կով. և թէ ձին վազէ՝ ոչ ինչ ծնանի, այլ յիշոյ լինի»։ Այսպէսով Տէր-Մկրտչեանի ենթադրութիւնը չստուգուեցաւ։ Սակայն ստոյգ չէ նաև իմ տուած «գրաստ, ձի» նշանակութիւնը և բառը պէտք է հասկանալ «էգ էշ», ինչպէս ցոյց է տալիս ասորին։ Եւ շատ հաւանական է՝ որ հայ թարգմանութեան իբր բնագիր ծառայող օրինակումն էլ նոյն ասորի բառն էր գործածուած։ Կարելի չէ հյ. մուղ կցել լտ.* mūlus *«ջորի» բառին իբրև հնդեւրոպական ցեղակից, որովհետև հնխ. ձևն է* mug'h-, *որի վրայ աւելանալով* -so, -slo, -sko *մասնիկները, ստացուել են վեներ.* musso *«էշ», յն. փոկ.* μυχλός *«ցիռ», ալբ.* mušk *«ջորի», լտ.* mūlus *«ջորի», նուազականը* muscellus, muscella *և լատինականից էլ ֆրանս.* mule, mulet, *գերմ.* Maul-esel *և* Maul-tier *«ջորի», մրդ.* mûl, *հրդ.* mûl, *հոլլ.* muil, *անգսք.* múl, *հիսլ.* múl, *անգլ.* mule, *ռուս.* мулъ *«ջորի» են* (Pokorny 2, 311, Boisacq 653, Walde 501, Kluge 323)։ *Հայերէնի մէջ բառը բնիկ լինելու դէպքում պիտի ունենայինք *մուծ կամ* *մուղն։

ՄՈՒՂԱՍ *«վայրի նռան տակ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2125։*

Սրա հետ կապ ունի՞ Ղրբ. **մո՛լուս** *նոնը «մի տեսակ ընտիր թթուաշ նուռ»։*

ՄՈՒՂԱՔ *«թունաւոր մի նիւթ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2126։*

ՄՈՒՂՏ *«մշուշ, խաւար». արմատ առանձին անգործածական. սրանից են* մղտանալ *«մթնել, մշուշ պատել» Գիւտ. (Կաղնկտ. հրտր. էմ. էջ 19). Լմբ.* մղտափարաւ *Նար. 267.* մղտագոյն վանակ. *Ճառընտ.* մղտագունութիւն *Խոսր. 205.* մղտանձն *Անյ. բարձր.* մղտատեսակ *(չունի ԱԲ) Սասն. 33. Տաթև. ձմ. խր.* մղտութիւն *Շիր. 45. Պիտ. առ. ԼԿ.* աղտամուղտ *«մութ, մթին» Ոսկ. գծ. սխալ ձև է* մղուտ *«միգապատ, մթին» Պտմ. առ. ԼԿ. (ուղղելի* մղտուտ*)։*

ԳԴ պրս. մաղ, մէղ, միյղ *ձևից (որ է հյ.* մէգ*)։ ՆՀԲ լծ. հյ.* աղտ, մղեղուտ, *թրք.* bulut *«ամպ»։* Scheftelowitz BB 29, 17 *յն.* μόρφνος *«մթագոյն», գոթ.* maurgins *«առաւօտ, վաղը» բառերի հետ հնխ.* mörghyo- *ձևից է դնում* մուղջ*։ Նմանապես Փառնակ, Անահիտ. 1906, 233* մուղջ *ձևից է դնում ալբան.* mourk *«մութ, սև» (իբր փոխառեալ)։* Pokorny 2, 274 *և 275 մերժելով* Scheftelowitz*-ի մեկնութիւնը դ-ի անհամաձայնութեան պատճառաւ,* մուղջ *դնում է հնխ.* mel- *«սև» արմատից։ Սրանք ընդունում են առանձին արմատ* մուղջ՝ *որ գտնում ենք միայն* աղջամուղջ *բառի մէջ, որ* աղջ *բառի կրկնականն է մ յաւելուածով (այսպէս է ընդունում նաև* Meillet MSL 18, 253)*։ Պատահական նմանութիւն ունի բատ այսմ լազ.* lumǰ *«գիշերանալ», որից* dogilumǰu *«գիշեր եղաւ»։*

***ՄՈՒՂՐԻ** *«սուսր, կարմիր ներկող մի տեսակ հող է. ֆր.* rubrique, terre de Sinope» *Գաղիան. (գրուած* մաղաէ, մուղաէ*), որ և* մուղրայ *Ամիրտ.։*

=Արաբ. مغرة mayra *«սուսր» (Կամուս, թրք. Բրգմ. Բ. 112)։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Նորայր ՀԱ 1921, 341 և 1926, 70։

***ՄՈՒՂՐԻ** *«մահմեդական կրօնաւոր» Յայսմ. փետր. 15, մրտ. 11. (տե՛ս Նոր վկ. էջ 116, 225—7, 446), Վրդն. պտմ. 140. Ջքր. սրկ. Բ. 31, որ և* մուկրի *Վրդն. պտմ. 127. սրա յգ. սեռ. ձևն է* մուղրեենոյ *Նոր վկ. էջ 67։*

=Արաբ. مقرئ muqrī *«կրօնաւոր, Ղուրան կարդացող»* (قرئ qarī *«կարդալ» արմատից), որից նաև վրաց.* მუყრი *մուղ'րի «միւէզզին, աղօթակոչ»։*

Ուղիղ մեկնեց էմին, Ист. Вардана, *էջ 161։ Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Ա. 112 սխալմամբ դնում է արաբ.* مُقِرّ muqirr *«խոստովանող?»։*

***ՄՈՒՃԱԿ** (ի—ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կօշիկ, կանացի կօշիկ» Երզն. քեր. Տաթև. Հարց. 388. Վրք. Հց. ա. 698. ուրիշ վկայութիւն չկայ. արդի գրականում (արևմտեան բաբբառ) նշանակում է «տափակ, առանց կրունկի, յետևը բաց, կարճ երեսով ոտնաման, փապուճ», որից* **մուճակակար, մուճակագործ** *են։*

=Պհլ. mōčak *հոմանիշից. սրա հետ նոյն են բելուճ.* mōžay, mōzag *«մուճակ, կօշիկ, երկար կօշիկ, տափատ», աֆղան.* mōza *«գուլպայ, սոնապան, մոյկ», պազ.* mōža *«կօշիկ, գուլպայ», պրս.* موزه mōza *«կրկնակօշիկ, փապուճ»։ Բոլորի արմատն է* muč*, որ տես պատմուճան բառի տակ* (Horn § 994)*։ Իսկ կովկասեան լեզուներից կայ. մաշիկ, կար. դիդ. մաշի, չեչէն. ինգուշ. մաշէ «կօշիկ» բառերը կա՛մ իրանեան փոխառութիւն են և կամ պատահական նմանութիւն ունին։ — —Հիւբշ. 196։*

Նախ ԳԴ պրս. մուզէ *ձևի հետ։ ՆՀԲ պրս.* մուզէ*, իբր մոյկ բառից։ Պրս. ձևին են կցում նաև* Müller SWAW 42, 255, Lag. Btrg. bktr. Lex. 49, *Հիւբշ.* KZ *23, 29 են։*

ԳԻՒ.—Խրբ. մուջգիգ *«մուճակիկ»։*

ՓՈԽ.—Հայերէնից ենթադրուած յն. μοῦζάκιον *«մուճակ» բառի մասին տե՛ս* լմուշկ*։*

***ՄՈՒՃՈՒՐ** *«ծառայ». հնից չէ աւանդուած և կայ միայն դաւառականներում. բայց սրանից է* մուճուրութիւն *«ծառայութիւն» Կանոն. 185 (նորագիւտ բառ)։*

=Արաբ. مأجور majūr *«վարձեալ,*

վարձքով բռնուած». դժուարութիւն է հանում ճ̌j=ճ *տառադարձութիւնը։ Նոյն բառն ունի և վրաց.* მუჯირი *«հացի շտեմարանների վերակացու» ձևով, որ սակայն արաբ.* ǰč=χǰ *տառադարձութիւնը ճիշտ է պահում։ —Աճ.*

Վերի մեկնութիւնս տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 165։

ԳԻՒ.—Արմատը մուճուռ *պահում են Ջղ. «ծառայ», Երև. Ղզ. «տնտես, մատակարար, հարսանիքի ժամանակ ծառայող մատանապետը», որից* մուճուռապետ, մուճուռատուն։

ՄՈՒՄԻԱՅ *կամ* ՄՈՄԻԱՅ *«եգիպտական զմռսեալ դի». ունին միայն ՀՀՔ և ՋՔ. գործածական է նոր գրականում։*

=Արաբ. مومیا mumiā, *որից նաև ֆրանս.* momie *են։*

+ՄՈՒՆ, ո *հլ. (յետնաբար նաև սեռ. -ի) «մանր մժեխ, մարմնի հոտ, քոս» ՍԿր. Եզն. Նղիշ. գտ. 196. Նար. 176. որից* մնակ *«մանր մժղուկ» ՀՀՔ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. musno- *ձևից, սրա հետ համմտ. յն.* μυῖα, *լտ.* musca *(>ֆրանս.* mouche, *իտալ.* mosca, *սպան.* mosca), *լիթ.* musẽ, *լեթթ.* mùsa, mūscha, *հին պրուս.* muso, *հսլ.* mucha, *ռուս. և ուկր.* муха, *բուլգ.* múcha, *չեխ.* moucha, *սերբ.* müha *«ճանճ», ռուս. գռ.* мшица, мошка *«ճանճիկ, մուն», լեհ.* mszyca *«ծառի ոջիլ», հսլ.* mūšica *«մոծակ», հիսլ.* mȳ, *անգսք.* mycg, *հսաքս.* muggia, *անգլ.* midge, *հրգ.* mucca *«ճանճիկ», գերմ.* Mücke, *հոլլ.* mug, *շվեդ.* mygg. mugga, *շվեդ. գռ.* mausa, *ալբան.* mīzε *«մոծակ» (-zε նուազական մասնիկով)։ Այս բոլորի արմատը դրւում է հնխ.* mu-, mus- *բնաձայնը. հայերէնը աճած է* -no- *մասնիկով, և* Ernout-Meillet 618 *հայերէնի նախաձևը դնում է* muno- *կամ* musno (Pokorny 2, 311, Walde 503, Trautmann 191, Boisacq 649, Kluge 338)։—*Հիւբշ. 476։*

ՆՀՔ վրաց. მუმლი։ *Տէրվ.* Altarm. 33 *լեթթ.* maunu, máut, *հրգ.* māwan, *լտ.* mūtire *ձևերի հետ՝ հնխ.* mu *«մրմնջել» արմատից։ Նոյն, Նախալ. 46, 97 աւելացնում է նաև յն.* μυῖα *«ճանճ»։ Այսպէսով ուղիղ մեկնութիւնը սկսում է Տէրվիշեանից։* Müller WZKM 1892, *հտ. 6, էջ 267 չեխ.* muňka *«մի տեսակ ոջիլ», որ մուճ ձևի նուազականն է համարում։ Վերի մեկնութիւնը տուաւ* Bugge KZ 32, 20: *Հիւնք.* ման *«մանանայ» բառից։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* მუმლი მუმլի *«ճանճիկ, լուս» Սղ. ճդ. 31։*

ԳԻՒ.—Երև. մուճ *«մանր ոջիլ», Կոր. Ղրբ.* մուճ *«մանր ոջիլ. 2. սերմից նոր դուրս եկած որդ շերամի», ՋՔ.* մը՝ճ *«ոջիլի ձագ», Մկ. Տփ.* մուճ *«մի տեսակ մանր ճանճ», Ալշ.* մուճ *«մանր միջատ», Ջղ.* մնո՛ճ *«մանր ոջիլ»։ Նոր բառեր են* մուճիկ *«ձիու ճանճ», մճիկ Ախց. Կր. Պլ. «մանր անիծ, նոր ճաթած ոջիլ», մճիճ «մի տեսակ բաղմոտանի ոջիլ», մճաճուն Ղրբ. «շերամի առաջին քունը», մճեղ Պլ. «մանր ոջիլ»։*

ՓՈԽ.—Վրաց. მუნი *«քար, բորոտութիւն, քոս»,* მუნიანი *«բորոտ, հոռ ունեցող»։*

***ՄՈՒՆԵՏԻԿ** *«մի բան բարձրաձայն յայտարարող, ջառչի» Միխ. աս. էջ 261. Յկ. կր. 58, Փոնց. 7. Ջքր. սարկ. Ա. 41, Բ. 5 (գրուած* մունէտիկ *Տաթև. ձմ. հա.* մոնէտիկ *Ջքր. սարկ. Ա. 23). ունի միայն ՀՀՔ. գործածական է արևմտահան գրականում. սրանից է* մունետկել *«աճուրդի դնել, յայտարարել» Անսիզք 75, 79. Սմբ. դատ. 20.—արմատական* մունէտ *ձևով ունի շատ անգամ Դրնդ. 112, 275, 326 են։*

=Արաբ. منادی munādī *նոյն նշ. որ ծագում է* ندا nidā *«կանչել, բացագանչել» արմատից։—Աճ.*

***ՄՈՒՆԻ** *«իգական անդամ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. էջ 85. «Մեր բանս վասն հաւատոյ է և ոչ վասն գործոց քննութեան. զուք Հայքդ ունիք զանբնական պղծութիւնս ընդ արուս և ընդ անասունս և այլս յոլովս. բարձէք զուք զայն ի Հայոց, և ես բառնամ զայդ ի Հոռոմոց. զբոզանոցն և զմունին քաղկեդոնի ժողովն չէ կարգեալ, զոր յիշէքդ այժմ»։*

=Նոր յն. μουνί *«իգական անդամ»։—Աճ*

⊙ՄՈՒՆՉ *«խօսք» Մագ. գամագտ. 4. սրանից մնչել «բերի տակից ձայն հանել, մեղ-*

միկ մոմոալ» ՍԳր. Վեցօր. 198. Փարպ. մրնջիւն *Եղիշ. Նիւս. կազմ.։*

=Բնաձայն բառ. կազմուած է մ պարզ ձայնից՝ նշ ածանցիչով. արմատի համար հմմտ. մոմոալ, մոմունջ, մռնչել, *իսկ ձևի համար հմմտ.* ճնշել, շնշել, բնշել, գնշել, կնշել, պնշել, փնշել, խնշել: *Տե՛ս նաև* մունջ: *—Աճ.*

ՆՀԲ ունչ *բառից է հանում։ Տէրվիշ.* Altarm. 33 *և Նախալ. 46, 97 սանս.* muj «բռռալ», *լտ.* mugire «բառաչել», *յն. μυκάομαι «մայել» են բառերին ցեղակից է դնում։ Հիւնք. յն.* μύω, μώσω «փակել ղրևրան, լսել», μυκάομαι «մռնչել, հեծել»։ *Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ. 1899, 203 բ։*

ՄՈՒՆՋ «խեղճ, յիմար, անմիտ, ցնորած». *որից* մունչել, մունչաճալ «յիմարանալ». *բոլորն էլ գիտէ միայն ՀՀԲ. Բառ. երեմ. էջ 216 ունի միայն* մունչել «յիմարիլ»։

[**ՄՈՒՋ** «պինչ, քթածակի կողքերը». *ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 39. «Իսկ մնչացե՞ր ինչ ակնուութիւն իցէ. յորժամ պարզ և հասարակ իցեն, եթէ որ գհոտն երազ առնուցուն»։ — Պէտք է ուղղել* ընչացե, *որ* ունչ *բառի սեռականն է։]*

+**ՄՈՒՆՋ** «համր, լուռ, անխօս» *Մծբ. որից* մնջիկ *Եղիշ.* մնջուկ *Իրեն. ցոյցք 12.* մնջնակ «մնջներէն» *Շնորհ. առ. 74.* մնջկատուակ «pantomime» *(նոր բառ). արդի գրականի մէջ շատ սովորական է* լռիկ մնջիկ *ձևը։ Որովհետև ոճով աւելում է միայնիկ* մնջիկ *Եղիշ. կամ միայն* մնջուկ *(Իրեն.), ուստի սրանից հետևցնելով սխալմամբ Բառ. երեմ. էջ 214 մեկնում է* մնջուկ «միայնուկ»։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mundyo- *ձևից. սրա հետ հմմտ. յն.* μύνδος, μυνδός, μύδος, μύτης, μυττός, μύτις, μυκός, μυκαρός «համր», *լտ.* mūtus, *սանս.* mūka- «համր». *սրանց բոլորի պարզ արմատն է *mu- «մրթմրթալ, փընթփընթալ», որից մի կողմից յառաջանում են վերի բառերը «համր» նշանակութեամբ (ընդունելով համրը իբրև անորոշ կերպով փրնթփնթացող) և միւս կողմից յն.* μύ, μῦ «ցաւի բացագանչութիւն, փնչոց», μῦθος «բառ, խօսք», μυκάομαι «մռնչել», μύζω «փակ բերանով փսփսալ», *լտ.* mu «ցաւի բացագանչութիւն», mugio «մռնչել», *սանս.* mūñjati «հնչել», *հբգ.* mutilōn «մոմոալ», *մբգ.* mugen, *լեթթ.* maut, *ռուս.* мычать «բառաչել» *են են* (Walde 498, 506, Boisacq 651, 647, Pokorny 2, 309—310, Ernout-Meillet 618)։

ՆՀԲ արմատը դնում է ունչ, *որից և* մնչել: *Տէրվ. Նախալ. 46, 97 և* Altarm. 33 *յն.* μύκη «մռնչիւն», *լտ.* mugire «մռնչել», *հյ.* մնչել, մոմնջել *են ձևերի հետ՝ հնխ.* muk *արմատից։* Bugge KZ 32, 21 *մեկնում է վերի ձևով, որ Հիւբշ. էջ 476 անապահով է համարում։— Հիւնք.* մնջել *բայից։* Patrubány, *Բանաս. 1901, 30 յն.* μύω «բերանը կամ աչքը փակել» *բառի հետ։* Karst, *Յուշարձան 415 մոնղոլ.* moxo, *բուրեաթ.* moko, *թունգուզ.* moko, *մանչու.* mokto, moyo *և 421 նաքուէթ.* muñur «բութ»։ *Պատահական նմանութիւն ունի չէչէն.* mättiz «համր»։

Դիմ.—Երև. Զթ. Հճ. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սլմ. Վն. Սեբ. Տփ. մունջ, *Ախց. Կր.* մունն, *Ասլ.* միւնչ, միւնշ: *Նոր բառեր են՝* մնջուիլ *(Ոզմ.* մրնջրվիլ), մնջալ, մնջաճալ, մնջալելուիա, մնջիկ, մնջեւէն, մունջխեղդ:

Փոխ.—Վրաց. მუნჯი მունջի «համր»։

***ՄՈՒՆՖԱԽԻՃ** «սպիտակ խաղողի եփած ու բանձրացրած գինի կամ քաղցու» *Վստկ. 90, 102, 104, 105, 106։*

=Արաբ. مَيْفُخْتَج mayfuxtaj *նոյն նշ. որ ծագում է պրս.* مَيْ پُخْتَه may puxta «գինի եփելալ, եփած գինի» *ձևից։*

Ուղիղ մեկնեց Վաստակոց գրոց հրատարակիչը՝ էջ 254։

ՄՈՒՇԱԲԱԽ. *անյայտ բառ, որ մէկ անգամ Բառ. երեմ. էջ 195 գործածում է անծանօթ* ճամար *բառը բացատրելու համար.* ճամար «մուշաբախ կամ քնար»։

Թախ ձևից և ճնար բառի յարադրութիւնից թերևս կարելի լինի կարծել «քնար զարնելու գործիքը, մզրաբ». բայց հմմտ. նաև մուշապահ:

ՄՈՒՇԱՆԱՅ «մոմշոր, մոմլաթ». *նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 164.*

«Հունան ի մէջն դիր և յիրեար բեր և մուշախայով փաթաթեա» (այլ ձև. մուշամպա, յոյն բնագիրը «պապիրոսով»)։

Թերևս սխալ գրչութիւն՝ փոխանակ լինելու մուշամպա, մուշամբա<արար. مشمّ mušamma՝, ինչպէս ունին արդէն ձեռագիրներից ոմանք։

*ՄՈՒՇԱՊԱՔ «բարակ ճիւղերից հիւսուած՝ մեծ ծակերով խուփ, որով կարասի բերանն են ծածկում» Վստկ. 95, 190. «Զկարասին բերանն եղեգամբք կամ բարակ վարոցօք մուշապաք արա ծածկեա, որ ծուխն ի միջոցացն ելանէ.—Զպատն և զամէնն զերդ մուշապաք ծակոի առնել, որ ընդ ծակոին մըտանեն և ելանեն (մեղուքն)»։

=Արաբ. مشبّك mušabbak «ցանցկէն հիւսուած» բառից, որ անցեալ դերբայի մի ձև է شبك šabk «ցանցաձև հիւսել» բայից (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 96). Համմ. արաբ. شبك šabaka «վանդակ, հիւսկէն, ցանց», որից փոխառեալ է հյ. գւս. շրակ «լուսամուտ, պատուհան» (ըստ Rivola):—Աճ.

Ալիշան, Վստկ. 254 ուղիղ է մեկնում բառս «ուռկանաձև հիւսուած», բայց ծագումը չի նշանակում։

*ՄՈՒՇԹԱՐԻ «լուսնթագ» Շիր. Տոմար. որ և մուշտարի Կոստ. երզն. 180։

=Արաբ. مشترى mušṭarī «լուսնթագ»։—Հիւբշ. 265։

ՀՀԲ և ՆՀԲ դնում են իբրև «բառ պրս.»։

ՄՈՒՇԻԿ «սիրտը կոտրիլ, ընկճուիլ?» նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Մագ. թղ. էջ 55. «Այլն արարեալ, յայրս և ի փապարս արտալածեալ դիաշու, խրուացեալն այն հեծօք և մուշեալն սրտիւք, մաշկեղինաւ պատածածկեալ մարմնով»։ Մի ձեռ. ունի մաշեալ. բայց հրատարակիչը դնում է մուշեալ, որ շատ կասկածելի է (Աճառ. Հյ. նոր բառեր հին մտ. Բ. էջ 197)։ Մէնէվիշեան, Գամագտ. էջ 32 մուշեալ սրտիւ հասկանում է «հանդարտասիրտ, հեզաբարոյ» և կասկածում է թէ անմոռշական «անդանդաղ» և գւս. մշիկ մշիկ բառերի հետ կապ ունենայ։

*ՄՈՒՇԿ, ո հլ. «անուշահոտ կենդանական մի նիւթ. 2. հնդկական մկնանման մի անասուն՝ որից մուշկն է պատրաստւում. 3. որևիցէ անուշահոտ նիւթ» Խոր. աշխ. Պատմ. վր. Բրս. մրկ. 385. Գնձ. որից մշկաճաւ Վստկ. մշկապուրտ Խոր. պատմ. հափտս. մուշկեղէ Խոր. աշխ. 615 մշկալից ԱԲ. հրամուշկ Խոր. աշխ. էջ 614. արդի գրականում՝ մշկաճոտ, մշկաբոյր, մշկընկոյզ։

=Պհլ. mušk, որ և mešk «մուշկ», պրս. مشك mušk, mišk. բուն նշանակում է «մկնիկ» և ծագում է mūš «մուկ» բառից, իրանեան բառը փոխառութեամբ անցած է նաև ուրիշ շատ լեզուների. այսպէս՝ արաբ. misk, քրդ. misk, məšk, թրք. misk, յն. μόσχος, լտ. muscus, moschus, գերմ. Moschus, անգլ. musk, ֆրանս. musc, սպան. almisque, պորտ. almiscar, իտալ. musco, muschio, վրաց. მუშკი մուշկի ևն։—Հիւբշ. 196։

Ուղիղ մեկնեց նախ ԿԴ. նոյնը նաև ՆՀԲ, Windisch. 23 (կցում է լտ. moschus բառին), Böttich. Rudim. 45, 151 ևն։

ԳԻՒՌ.—Կր. Տփ. մուշկ, Պլ. միսկ, միսգ ևն, նոր փոխառութեամբ.—Զթ. մուշկ «Պէրիա լեռան վրայ աճող մի տեսակ մշկահոտ բոյս է»։

*ՄՈՒՇՏ «բազուկ». ունի միայն Բառ. ևրեմ. էջ 216։

=Պրս. պհլ. քրդ. mušt «բռունցք», որից թրք. mušta «բռունցք»։—Աճ.

ՄՈՒՇՏ. անստոյգ բառ, որ նախդիրների ցանկի մէջ յիշում են Բր. քեր. 30 և Համամ. քեր. 267. «Մուշտ. մուշտակեալ ասի մուշտ կամ հաւել ի հոյլս կամաւ ի ջոկս աւանաց (ըստ ՆՀԲ անասնոց)»։

ՆՀԲ համարում է «որպէս ամկ. մուշտա զարնել, մշտել». սա նախորդ բառն է, բայց տեղին անյարմար է դալիս։

*ՄՈՒՇՏԱԿ, ի–ա հլ. «անասունների վրայի բրդոտ մորթը» Շնորհ. առակ. Նոր վկ. էջ 528 (ի մուշտակաց). «այսպիսի մորթով պատրաստուած ձմեռային վերարկու» Հայել. 159. Զքր. սարկ. Ա. 16. վերջին իմաստով գործածական է նոր գրականում, ուր ունինք

նաև մուշտակավաճառ, մուշտակագործ, մուշտակատուր.— *Բառ. երեմ. էջ 199 ունի* մշտակակար *(իմա՛* մուշտակակար*)*:

=*Պհլ.* *muštak *հոմանիշից, որ թէև աւանդուած չէ, բայց հայերէնի հետ նոյնի գոյութիւնն է հաստատում պրս.* مشته mušta. *այս բառը չգիտեն ո՛չ Բուրհան և ոչ Գ-Դ. բայց ունի Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 924 և նրանից արաբացեալ է համարում* مستوقه mustuqa *կամ* mustaqa *«կողքերը երկար մի տեսակ մուշտակ»*:—*Աճ.*

Թէ՛ ձևով և թէ նշանակութեամբ անյարմար է պրս. میشتی mīštī *«տեսակ իմն մետաքսեղէն հանդերձի, որ յոյժ լաւ ոստայնանկեալ է»*:

Գիւռ.—*Նախ.* մուշտագ:

***ՄՈՒՉԱԼԿԱՅ** *«յանձնառութեան գիր, պայմանագիր». Նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. հր. «Զնոօքս գիր տամ, այսինքն մուչալկայ, զի մի՛ մեղայց»: Նոյն բառն է՝ որ երեք անգամ գործածում է Դրնդ. «Որ յառաջմէ մուչալկայ էին դրեր, զոր շարտ (<արաբ.* شرط šarṭ *«պայման») ասեն» (էջ 256).—«Ուխտաւն հազար կարմիր դահեկան մուչալկայ տայցեն. Եդին հարկն մուչալկային ի վերայ գլխոց» (էջ 12—13)*:

=*Թրք. և մոնղոլ.* موچلکا müčelgʸa *«գիր յանձնառութեան», որից* موچلکاچی müčelgʸači *«նօտար»*.—Будаговъ 1, 261 *ասում է թէ յայտնի չէ բառս ի՛նչ լեզուից է թէ՛ մոնղոլերէն և թէ թրք. է համարւում*:—*Աճ.*

Նշանեան, Դրնդ. էջ 627 հասկանում է բառս «տուրքի տեսակ», որ ըստ այս բացատրութեան ուղիղ չէ:

Մուռ *տե՛ս Զմուռս*:

+ՄՈՒՌ *«լուռ ու մունջ լսող». արմատ առանձին անգործածական, որ երևան է գալիս նախ լուռմուռ բարդի մէջ՝ Ասկ. ճառ. ապաշխ. էջ 47.—Նոյն արմատից բայական ձևով ունինք մռել «լսել, անսալ, հնազանդ գտնուիլ». գործածւում է յետին հայերէն լեզուի մէջ. ինչ. Վրդ. առ. 206. Մաղաք. ար. 50. Կոստ. երզն. 149. կենդանի է նաև արդի բարբառներում. Համմ. մռել Ակն. Ասլ. Երև. Կյ. Կս. Պլ. Սվ. «խօսքը լսել, հնազանդ գտնուիլ, հլու լինել», մռուկ Բբ. «հնազանդ, հլու», խօսմռուկ Ասլ. Բբ. Պլ. «հլու, հնազանդ, ուրիշի խօսքը լսող», նաև մուճջ բառի հետ կրկնութեամբ մուճջ ու մռուճջ Տիր. «լռիկ մնջիկ»: Տարօրինակ գործածութեամբ Անսիզք 15 չմռել նշանակում է «դատական պատասխանատուութիւնից ազատ մնալ,* rester à couvert*». Որ 17 աւուրն ընդ ներքսէ գայ, նա չմռէ*:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mu- *արմատից՝ -ռ ածականով, ինչպէս են և լուռ, բառ. արմատիս վրայ տե՛ս մուճջ բառի տակ*:

Հիւնք. լուռմուռ բարդի երկրորդ մասը կցում է մռմռալ բայինն: Վերի մեկնութիւնը տուաւ Petersson, Ar. u. Arm. Stud. 109, *միայն թէ վերջածայն -ռ դնում է լուռ բառի նմանութեամբ յաւաջացած*:—*Տե՛ս և* մուռ:

Մուռ *«շաղախ» տե՛ս Մօր*:

Մուռուճէա *տե՛ս Միւռինէա*:

ՄՈՒՐՏ *«աղմուկ, շփոթ, խռովութիւն, խառնակութիւն» Լաստ. որից* մռտել *«ապըստամբիլ» Գէ. ես. Սմբ. պտմ. էջ 56, 94. Հեթ. ժմնկ. էջ 81. Սմբ. դատ. 3, 35.* մռտութիւն *Միխ. ասոր. (տե՛ս նաև* մռտիկոն*)*:

ՆշՀբ սրանից է դնում գտ. շմռել «չանսալ». իսկ մռտութիւն մեկնում է «մռուտըն կամ մռուղն գոլ»: Հիւնք. հանում է մռել բայից, իսկ այս էլ Ւrբմ՚ել բայից:

Գիւռ.—*Կայ մռաել Ջն. «դրդել, դրդռել. խօսք խառնել,* provoquer*»*:

ՄՈՒՍԱԲԵՐ *«մորենի». ունի միայն Բառ. երեմ. էջ 216. Համմ.* մաղաբեր:

ՄՈՒՍԱՅԻՊ *«մի տեսակ հա՞րկ». գործածուած է Անիի անթուական մի արձանագրութեան մէջ՝ Վիմ. տար. 221*:

ՄՈՒՍԻ *«արջասպ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 570*:

ՄՈՒՍԻՐ *կամ* **ՄՈՒՍՈՒՐ** *«սուրհանդակ, որ մարդկանց դատարան կամ ատեան է հրաւիրում» Դրնդ. 153*:

***ՄՈՒՍՏԱՌ** *«խազմուզ, քաղցու, դեռ չխմորուած գինի» Վստկ. 86, 91, 93. Սմբ. դատ. 61*:

=*Պրս.* مستار mustār «*քաղցու. 2. թթու գինի*», որ և *արաբ.* مصطار muṣṭār «*թթու գինի. 2. ըստ այլոց՝ քաղցր գինի*» (*Կամուս. Թրք. Թրգմ. Բ. 110*)։

Նշ՛Բ լտ. mustum «*նոր գինի*»։ *Ուղիղ մեկնեց Ալիշան, Վստկ. 254։*

ՄՈՒՏ, ի *հլ.* (*յետնաբար նաև* ո *հլ.*) «*ներս մտնելը. 2. մտնելու տեղը, դուռ, շեմք. 3 եկամուտ, հասոյթ* (*ըստ Մանանդեան, Տեղեկ. ինստ. 1, 25 քաղաքներում տրուած մի տեսակ հարկ էր*). *4. արևի մայր մտնելը, Արևմուտք*» *ՍԳր. կոչ. Ոսկ. եզն. որից մուտանել Եփր. ա. տիմ. ելևմուտ ՍԳր. մտանել ՍԳր. եզն. Սերեր. մտել 36ին. Նար. էջ 182. Լաստ. մտուցանել Խոր. Վրք. Հց.* (*մեկ. մըցնել*). *ընդմտանել Իմ. է. 24. Եփես. բ. 2. Սեբեր. գարնանամուտ Երզն. երկն. աւելմուտ ՍԳր. Ագաթ. աւելմտեալ Յես. ժա. 16. ճմուտ ՍԳր. խելամուտ ՍԳր. Ագաթ. եզն. միջամուտ Բ. մակ. ա. 15. ճետամուտ ՍԳր. Եւս. պտմ. գոմամուտ Վեցօր. դարաճամուտ ՍԳր. ընդմուտ «հեղ» Ոսկ. պօղ. ա. 314. եկամուտ ՍԳր. Մծբ. Եւս. քր. ծակամուտ Երեմ. խթ. 16. կանխամուտ Ոսկ. մ. բ. 26. միջամուտ Բ. մկ. ա. 15. Մծբ. նորամուտ Գ. մկ. ա. 11. Ոսկ. մ. բ. 26. եկամտային* (*նոր բառ*)։ *տե՛ս նաև մոյծ։*

Windisch. 23 մատնել, մատուցանել, մուծանել *ձևերի հետ՝ թերևս լտ.* mĕdius «*միջին*»։ Böttich. ZDMG 1850, 358, 173, Arica 69, 136 մուտ՛ «*բերան*» *նշանակութեամբ կցում է սանս.* mantra *և զնդ.* manθra *բառերին։ Նոյն,* Arica 84, 407 *պրս.* ā-madan «*դալ*» *ձևի հետ։* Müller SWAW 42, 250 *զնդ.* maēθana «*բնակութիւն*», *հսլ.* mjesto «*քաղաք*»։ Justi, Zendsp. 221 *զնդ.* maōθana: *Նոյն,* Dict. Kurde 408 *քրդ.* modin «*ծխամորճի ծայրը*», *յն.* μύτη «*քիթ, դունչ*», *գերմ.* Mund «*բերան*»։ *Տէրվ. Նախալ. 46* մուխ, մուծ, մուղ *են ձևերի հետ՝ դնում է հնխ.* mu «*մղել*» *արմատից, բոլորն էլ աճած զանազան աճականներով։* Bugge, Etr. u. Arm. 48 *հայ.* mutana «*դամբան*» *բառի հետ. Հայերէնը կցում է զոթ.* gamōtjan «*մօտեցնել*» *ձևին, որ ընդունում է նաև* Meillet MSL 10, 278: *Հիւնք. մուծանել բայից։* Scheftelowitz BB 29, 28 *տե՛ս* մատ–չիլ: Meillet BSL *26, № 79, էջ 4 յն.* μύω, μυέω «*փակուիլ, սկսիլ*» *բայերի հետ՝ դնելով հնխ.* mu- *արմատից* -d- *աճականով։* Pokorny 2, 304 *յիշում և ձեւտրում է* Bugge-*ի և* Meillet-*ի մեկնութիւնը* (=*զոթ.* gamōtjan), *որ սակայն այլ ևս չի ընդունում* Meillet (*տես* մատ)։

Գիր.—Ջղ. վն. մտնել, *երև.* մտնէլ, *Ոզմ.* մտրնիլ, *Ախց. Կր. Մկ. Շմ. Տփ.* մտնիլ, *Ագլ. Մժ.* մտիլ, *Ալշ. Մշ.* մդնել, *Ննխ. Ռ. Սեբ.* մդնէլ, *Պլ.* մդնալ, *Տիգ.* մդնալ, *Սչ.* մդնուլ, *Համշ.* մդնուշ, *Ասլ.* մը*նալ, *ՋԹ.* մօդնուլ, մօդնոլ, *ՀՃ.* մոդնել, *Ակն.* մբնէլ, *Գոր. Ղրբ.* մրննլ, նի՛ մննլ (*այսինքն «ներս մտնել»*), *Մրղ.* մբննէլ, *Սվեդ.* մննիլ, *Խրբ.* մննալ, *Սլմ.* մննել. *ոճով՝ Հւր.* մուն տալ «*մտնել*». *Նոր ձև է մտան աւել վն. «շատ յաճախ մտնել ու ելնել»։*

Փոխ.—Քրդ. kernamut «*գարնանամուտ*» (*տե՛ս* գարուն *բառի տակ*)։

*ՄՈՒՏԱՆՋԱՆԱՅ «*Հիւանդի տալու մի տեսակ փափուկ կերակուր*» *Մխ. Բժշ. 130, որ և մութանջանէ՝ էջ 131 (յիշուած գառան և ուլի մսի հետ)։*

=*Արաբ.* مطنجنة muṭanjana *կամ* مطجّنة muṭajjana «*մսի վրայ դրած բանջարեղէնով կերակուր, սովուա*». *արմատն է* طجن ṭajn «*տապակել*», *անցնալ դերբայը* مطجّن muṭajjan «*տապակած*» (*Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 662*)։

Ուղիղ մեկնեց Seidel, *Մխ. Հեր. § 363։*

ՄՈՒՏՂԻՉ «*խաղիչ կամ ապականիչ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 216. տե՛ս և* մատուիչ։

+**ՄՈՒՐ**, ո *հլ.* «*ձանձախառիթ, թանձրացած ծուխ, ծխի մրուրը*» *Ագաթ. Բրս. մրկ. Նոնն. «թանաք, միլան (իբր սևադեղ)» Բ. կոր. գ. 3. Եփր. բ. կոր. 91. «սև, մուխ, թըշուառ» Լմբ. մատ. 397 (ի սեաւ և ի մուր կեանքս պանդխտիմք). որից մրել «մուրով սևացնել» Երեմ. խր. 31. Ոսկ. մ. բ. 5. Եւս. պտմ. Կորիւն. մրոտել Նղիշ. մրանալ «սևա-*

նալ, ծխոտիլ, կեղտոտիլ» Արշ. մրագիր «թանաքով գրուած» Ոսկ. ևս. մրագարդ Ա. գաթ. մրաղիր 3Հ. կթ. մրաքաքախ Նոնն. մրակերպ Ոսկ. յհ. ա. 17. մրայօն «սևայօն» 3Հ. կթ. մրոտ, մրազարկ (նոր բառեր)։—Եթէ Ոսկ. պօղ. ա. 585 «Ընդ այս տանիս ընդ այս նիշ ինչ մրի է մուտ» հատուածի մէջ մրի այս բառն է, ուրեմն կայ նաև սեռ. -ի։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. mūtro- ձևից, որ նշանակում է «կեղտ, աղտ» և որի հետ յատկապէս միանում են սանս. mûtra «մէզ». զնդ. mūθra- «կեղտ, կեղտոտութիւն»։ Առաջանում են հնխ. meu- արմատից, որի նախնական նշանակութիւնն է «խոնաւ, թաց, անմաքուր հեղուկ», որից էլ «կեղտոտել ևն»։ Սրանից են յառաջանում զանազան աճականներով՝ յն. μύδος «փտութիւն, բորբոս», μυδαλέος «խոնաւ», μιαρός «անմաքուր, արգելք», լիթ. mudẽt «բորբոսնիլ», smaulis «կեղտոտուած», հիւլ. mosach, կիմր. mws, բրբտ. mous «կեղտոտ»; մբգ. smuz, նրգ. schmutz «կեղտ», Moder «ցեխ, դիրտ», հոլլ. modde «թանձր ցեխ», մ. իռլ. mūn «մէզ», mūr «ցեխ», անգլ. mud «ցեխ, կեղտ», smut «սև, սևացնել, կեղտոտել, ածխացած ցորեն (carie, charbon, nielle)», smutch «սեւացնել, ապականել», smutty «սև, ծխի մէջ սևացրած», լհ. mul, ուկր. mul «ցեխ», տիղմ», ռուս. գռ. мулъ «պղտոր ջուր», мулить «ջուրը պղտորել» ևն ևն (Pokorny 2, 249—252, Walde 500, Boisacq 637, Trautmann 172)։ Հայերէնի հետ ձևով նոյն է արիականը (tr դառնալով ur, mūtro- տալիս է *մուր, որից մուր. հմմտ. արաւր, հաւր). իսկ նշանակութեան կողմից բոլորովին նոյնանում է անգլիականը, ուր ունինք «սև, մուր (smut), կեղտոտ, ածխացած ցորեն (=Ղրբ. mor), ածխի փոշի» (=Պլ. ծծկ. մուր «ածուխ»)։—Աճ.

ՆՀԲ լծ. մառն, որպէս և յն. μαῦρος, իտալ. moro «թուխ, մաւրիտանացի». Windisch. 23 յն. μαῦρος «սև» (նոյնը նաև Canini, Et. étym. 182)։ Տէրվ. Նախալ. 99 սանս. malina «մութ», յն. μέλας «սև», հյ. մառն, մայր, մուր, մրրիկ, մայլ ձևերի հետ՝ հնխ. *mar «մաղրիլ, սևանալ» արմատից։ Հիւնք. մուրկ բառից։ Աճառ. SA 1, էջ 302—3 կցում է սանս. mūtra-, զնդ. mūθra- բառերին, իբրև իրանեան փոխառութիւն։ (Սակայն այս պարագային պիտի ունենայինք հյ. *մուրճ, *մուճր և այն՝ «կեղտ» նշանակութեամբ։ Նշանակութեան տարբերութիւնը և ւ ձայնը ցոյց են տալիս՝ որ բառը բնիկ է և պէտք է մեկնել վերի ձևով)։ Scheftelowitz BB 29, 46 ռուս. smuryj «գորշ», չեխ. smouřiti «մթագնիլ», լհ. chmura «ամպ» բառերի հետ։ Դաւիթ Բէգ, Յուշարձան 398 յն. μέλας «սև», գալլ. braith, brith, հիւլ. mrecht «կեղտոտուած, պիսակաւոր»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Արրտ. 1910, 270։ Պատահական նմանութիւն ունին պրս. مور mūr «երկաթի ժանգ», موری mūrī «ծրխնելոյզ», արաբ. مور mūr «օդի մէջ պտտող փոշի կամ հող» (Կամուս, Բրք. Բրդմ. Բ. 113)։

Գ.Ի.Ր.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Հճ. Համշ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Վն. Տիգ. Տփ. մուր, Ղրբ. մուր, մօր, Գոր. մօր, Ոզմ. մօւր, Ջթ. մույ, մուր, Սվեդ. մէօր, Ասլ. միւր։ Նոր բառեր են մուրարև, մուրջուր, մուրպահ, մրալ, մրակոյլ, մրաման, մրաճի, մրամոտ, մրկաթ, մրոտ, մրոտել։

ՓՈՒխ.—Վրաց. მურტი մուրի «ծխնելոյզի մուր, ձանձախառիթ»։

Մուր տե՛ս Մար։

***ՄՈՒՐԻԿ** «մոշի, tamarix». Նորագիւտ բառ, որ յիշում է Ալիշան, Վասակ. 254։

=Յն. μυρίκη «մոշի»։

Ուղիղ մեկնեց Ալիշան, անդ։

+**ՄՈՒՐԿ**, ի–ա հլ. «ցորենի հատիկ, աղանձ» Ղևտ. բ. 14, 16, իգ. 14. Մեկն. ղևտ. Փիլ. Մխ. երեմ. արդի գրականի և դաւառականների մէջ այս արմատից ունինք մրկել, մրկիլ, մրկած «խանձել, խանձիլ, խանձած»։ Համշ. մուրկ «լազուտի փուշ հատկ»։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. smug-ro- ձևից, որ կազմուած է smug- «քիչ կրակով այրել, ծխել» արմատից՝ -ro- մասնիկով. այս արմատի մի այլ ձայնդարձն է smuqh-, որից

ունինք հյ. մուխ *(տե՛ս այս բառը)։ Հայերէնի մէջ* smugro- *շրջմամբ տուել է բառ օրինի* smurgo-> **մուրկ**։

Հինք. հանում է մկրտել բայից։ Վերի մեկնութիւնը տուաւ Petersson KZ 47, 267, *որ դնում է նաև* Pokorny 2, 688։ *Պատահական նմանութիւն ունին լիթ.* mirgėti, *լեթթ.* mirgt «*կայծկլտալ*», *հհիւս.* myrkr, *անգսք.* mierce, *հսաքս.* mirki «*խաւար, մութ*», *հհիւս.* miǫrkue, myrkue «*մթութիւն*» (Boisacq 646, 1094, Trautmann 190)։

***ՄՈՒՐՀԱԿ,** ի–ա *հլ.* «*պարտքի կամ դատի համար ստորագրուած կամ կնքուած թուղթ*» *ՍԳր. Նա. քր. Սերեր. որից* **մուրհակագիր** *ԳՆձ.* **պարտամուրհակ** *(արդի գրականում)։*

=*Պհլ.* *muhrak *ձևից. հմմտ. պհլ.* muhr, *պրս.* مهر muhr, *սանս.* मुद्रा mudrâ-, मुद्रिका mudrikā- «*կնիք*»։ (Weber SBAW *1887 սանս.* mudrâ- *համարում է հպրս.* mudrāya- 𐎶𐎢𐎽𐎡𐎹 «*եգիպտոս, եգիպտացի, եգիպտական*» *բառից փոխառեալ. իսկ* Zimmern *սումեր.* mu+sar «*անունը գրել*», *ասուր.* 𒈬𒊭𒋗𒄿 mu-sar *կամ* 𒈬𒊭𒅔𒌅𒌅 mu-sa-ru-u «*արձանագրութիւն*» *ձևից* (Delitzsch, Assyrisches Handwörterbuch 421, Strassmaier, Alphabetisches Verzeich. 679. Autran, Sumér. et ind. *էջ 157)։ Իրանեանից փոխառեալ են նաև քաղդ. և թալմ.* מוהרק mūhraq, *արար.* محرق muhraq «*կնիք*», محرّق muharraq «*գիր գրելու յատուկ թերթ*» (*Կամուս, Թրք. Թրգմ. 9. 68*), *քրդ.* mor, möhr, *օսս.* miχur, *Թրք.* möhr, möhür «*կնիք*», *որից ռմկ.* **մօհրել** «*կնքել*» (Horn § 1001)։ —*Հիւբշ. 197։*

*Նշ*Ր **մուր** *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուին* Böttich. Rudim. 36, 61, ZDMG 1850, 358, 174, Lag. Urgesch. 1119, Müller SWAW 38, 583։

ՄՈՒՐՃ, ո *հլ. (յետնաբար* ի–ա *հլ.) «մուրճ, չաքուճ» ՍԳր. Խոր. որից* **մրճաւոր** *Եփր. վկ. արև. 66. Ջենոբ 46. գրուած է* **մուրջ** *Սոկր. 267։*

Հինք. **մուրկ** *բառից։* Patrubány *ՀԱ 1906, 347 ասում է թէ կապ չունի լտ.* marcus «*կռան*», martulus «*մուրճ*», *հսլ.* mlatŭ, *ռուս.* молотъ «*մուրճ*» *բառերի հետ, այլ իբր բնիկ հայ կապւում է սանս.* mṛ-náti «*մանրել*», mūrṇas «*մանրած, փշրած*», *յն.* μαρύνω «*ջրընջել*», *հիսլ.* merja, marða «*ծեծել, մանրել*», *հբգ.* morsāri «*սանդ*» *են բառերին։*

ԳԻՒ։—Մշ. **մուրջ**։

+**ՄՈՒՐՃ** «*մուր*». *արմատ առանձին անգործածական, որից ծագում են* **մրճանալ** «*սևանալ*» *Գր. սրկ. լս. (տպ. Սուիերք Գ. 136),* **մրճոտ** *(կամ* **մրճնոտ**) «*մրոտ, սևացած*» *Ոսկ. մ. բ. 5.* **մրճոտել** «*սևացնել, մրոտել, ապականել*» *Սարգ. յիշ.* **մրճոտիլ** «*մրոտիլ, կեղտոտիլ*» *Եզիշ. գ. էջ 42. Նար. էջ 49, 182. շրջմամբ* **մճրոտել** *Ոսկիփ. (ՓՒ արմատը դնում է* **մրճիճ**, *որից* **մրճնոտ**)։

=*Անշուշտ աճած է* **մուր** *բառից. արմատը թէև գրինք* ***մուրճ**, *բայց կարող է լինել նաև* ***միրճ**, ***մրուճ** *և* ***մրիճ**. *ամէնից հաւանականը վերջինն է, իբր* **–իճ** *մասնիկով (հմմտ. ուտիճ, հատիճ են)։*

Մուր *բառից են մեկնում ՆՀՒ, Հինք. և* Pedersen, *Հայ. դր. լեզ. 218։*

ՄՈՒՐՃ «*երակ ձեռաց*». *գիտէ միայն Քաջունի, հմ. Գ. էջ 170։*

***ՄՈՒՐՏ,** ո *հլ.* «*մի տեսակ բոյս և նրա պտուղը. լտ.* myrtus, *տճկ.* **մէրսին աղաճը**» *Նեեմ. ը. 15, Ես. խա. 19, Ող. 13. Վեցօր. 92. որից* **մրտենի** *Գէ. հս. Յայսմ. ԳՆձ. Վստկ. 157.* **մրտի** *Մխ. առակ.* **մուրտաստան** «*մրտենիների պարտէզ*» *Դատ. ա. 35։*

=*Պհլ.* mūrt «*մուրտ*» *ձևից, որի հետ նոյն են պրս.* مورد mūrd, *յն.* μύρτος, *կապադովկ.* μοῦρτο, *լտ.* myrtus, *գերմ.* Myrte, *ռուս.* мирть *են. բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Հայերէնը կարող էր ծագել թէ յունականից և թէ իրանեանից. բայց որովհետև առաջին պարագային ապասելի էր* ***միւրտ** *ձևը, ուստի փոխառութիւնը իրանականից է։—Հիւբշ. 197։*

Նախ ԳԴ պրս. միւրտ, մուրտ։ *ՆՀՒ պրս. և Թրք. ձևերն է դնում։* Lag. Arm.

St. § 1531 *կարող է գալ թէ յոյնից և թէ պարսկից»։ Բոյսի պատմութիւնը տե՛ս* Hehn, Kulturpflanzen⁵ 231—233, 573:

ԳԻՒ.—Նո՞յն է մուրտ ՋԹ. «մաթուղ».— Սվեդ. մրդի՛նա (արաբական ե հնչումով)։

ՄՈՒՐՑ *«կոուփ, բռունցք, բռնամարտութիւն» Պտմ. աո լեհ. Դրնդ. 346. որից* անմուրց *«ըմբշամարտութեան մէջ անվարժ» Իրևն. հերձ. էջ 182 (ՀԱ 1910, 282),* մուրցացի *«բռնցի, կռիվելով զարնելով» Մխ. առնից. 35. Երզն. նչ. և Թր. քեր. ՅՀ. կԹ.* մրցիլ *«կռուիլ, մենամարտիլ» Ա. կոր. թ. 26. Եւս. քր.* մրցութիւն *Եւս. քր. Ոսկ. Եզն.* մրցամարտ *Ոսկ. հիմն. ժդ.* մրցանակ *Ագաթ.* մրցարան *ՅՀ. կԹ.* մերկամրցանակ *Նար.* մրսամրցութիւն *Դիոն. ԹղԹ. յոգնամրցիկ Մագ.* անմրցելի, մրցանակաբաշխութիւն *(նոր բառեր)։*

Brosset JAs. 1834, 369 *և Ջուբինով*[1] *վրաց.* ბრძოლა *բռնոլա «կռիւ, պատերազմ» բառի հետ են դնում, նշԲ «որպէս պրս.* mušt *«բռունցք»։* Peterm. 63 *մարռնչել բայից։* Müller SWAW 42, 255, *որից* Justi, Zendsp. 228 *գնդ.* marənč *«սպանել», պհլ.* marōčinītan: *Հիւբշ.* KZ 23, 29 *աւելացնում է նաև յն.* μάρναται *«կռուիլ» և սանս.* mṛṇāti *«փշրել»։* Lag. Arm. Stud. § 1536 *ինչպես նոյն է բռունցք բառի հետ։ Հիւնք. 295 մարզել բայից։* Bugge, Lyk. Stud. 1, 55 *լիկ.* mrbbẹne?

ՄՈՒՔԵՐԻԿ *«խոհարարի օգնական, որ է մոխիր թափող, ծոնիր մաքրող ու վառող, ջուր բերող են անձր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. մրտ. 10 (էջ 555 ա). «Լումայն գրաստի մի վարձ է և զկտորն (հացի) մուքերիկն (տպ. մուէրիկ, այլ ձ. մուհերիկ) ուտէ»։ Բառիս իմաստը տալիս է՝*

ԳԻՒ.—Երև. մուհուրիկ, մհռուկ՝ նոյն նշ.։— Ըստ այսմ անասոյզ է Քաջունի, Հա. Գ. 170 մուհեռիկ *«իշապան»։*

ՄՌԱՅԼ (ի Հլ. *ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «մութ, նսեմ, խաւարին» Ա. Թագ. իգ. 14, 15, 19. Եւագր. «մթութիւն, խաւար, մշուշ» Ա. Թագ. իգ. 1. Վեցօր. 115. Շիր. 60. Նար. «աչքի բիժ» Եփր. վկ. տես. 42 (թէ նշնիկի մէջ էլ* մթարէ *բառը պէտք է ուղղել* մոայլ՝ *տե՛ս Վարդանեան ՀԱ 1928, էջ 533—535). որից* մոայլեցուցանել *Փարպ.* մոայլութիւն *ԱԲ. նոյն բառի զանազան ձևերն են՝* մառայլ *ԱԲ, շրջմամբ՝* մլար *Ճառընտ. Վստկ. 12. Սարգ. բ. պետր. դ. (էջ 586), Անկ. գիրք առաք. 65. Կոստ. Երզն. 93, 133. Անան. գիտ. 6։*

ՆՀԲ կցում է մառն, մառախուղ *բառերի՞ն։ Տէրվ. Նախալ. 99 հյ.* մառն, մայր, մուր, մրուր, մրրիկ, *յն.* μέλας *«սև», սանս.* malina *«մութ» բառերի հետ՝ հնխ.* mar *«մարիլ, սևանալ» արմատից։ Քիւփէլեան, Բազմ. 1910, 153 աղուած* մառախուղ *բառից։* Petersson LUÅ 1916, 40 *(տե՛ս* Pokorny 2, 280) *դնելով *մուռայլ (-այլ մասնիկով)՝ *մուռ- համարում է հնխ.* mor-so-, *որ է աճած* -so-*ով* mor- *«սև գոյնով, սևացնել» արմատից. համմտ. յն.* μόρνον, μορτός, μόρυχος, μεμορυγμένος, *ռուս.* maráju *են։*

ԳԻՒ.—է. մլար *«աչքի մշուշ», Ակն.* մլար *«մթութիւն, յատկապէս գինի խմելուց աչքը պատած մութը», Համշ.* մռէլ *«ամպ», խոջ.* մոալ *«մառախուղ», Մշ.* մլալ *«մոայլ».—բայական ձևով Սեբ.* մլարիլ *«մթնել», Սվեդ.* մլարիլ *«աչքը շաղուիլ»։—Այստե՞ղ է պատկանում մլկիլ Խրբ. «ամպոտիլ»։*

Մռեալ *տե՛ս Մոմռալ։*

Մռել *տե՛ս Մուռ։*

Մռեղ *տե՛ս Մզեղ։*

ՄՈՂԳԱՅԻԼ *«ագահաբար ուտել, փորը լցնել» Ածաբ. Առ. որս. Ոսկիփ. Համբ. առակ. Ուխտ. Բ. 47. Երզն. մտթ. 128.* մոզգայլութիւն *ԱԲ։*

ՆՀԲ «մոմռալ իբրև զգայլ»։ ԱԲ «տե՛ս և զգայոիլ»։

⊙ՄՌՄՌԱԼ *կամ* **ՄՌՄՌԻԼ** *«գազանի մռնչիլը, կատաղի ձայներ հանել» Ոսկ. յհ. բ. 11. Կանոն. Սամ. եր. Երզն. մտթ. 478. որ և* մրմռել *Ոսկ. հս. Կազանկտ. ՅՀ. կԹ. Արծր. որից* մոմռումն *ՅՀ. կԹ.— սխալ գրչութեամբ* մռեալ *(կարդա՛ մոմռեալ) Ոսկ. տիտ. 296։*

=*Բնաձայն բառ. կազմուած է մ պարզ ձայնից՝ ռ սաստկականով և կրկնութեամբ. հմմտ.* զռալ, զոզռալ, բռբռալ, բռբռալ, խոխռալ, տուռռալ *են։ Նոյնպիսի բնաձայն ձևեր գտնում ենք նաև ուրիշ լեզուներում. հմմտ. յն.* μορμύρω, *լտ.* murmuro, murmur, *գերմ.* murmeln, *հբգ.* murmurōn, *լիթ.* murméntі, *սանս.* murmura *են, որոնք բոլոր պատահական են և գտնւում են նաև ո՛չ-հնդևրոպական լեզուների մէջ. ինչ. վրաց.* მურმური մուրմուրի *«մռմռալ, որոնջիւն», թրք.* mər-la-maq, mərəl-da-maq, *արաբ.* تمرمر ta-marmara *«մրմռրմռալ, յանդիմանել» են։—Աճ.*

ՆՀԲ լտ. և թրք. ձևերի հետ է դնում։ Տէրվ. Altarm. *33 և Նախալ. 46, 97 սանս.* muj, *լտ.* mugire, *յն.* μυκάομαι, *հյ.* մրնչել, մռմնջել։ Bugge KZ 32, 19 *իբր բնիկ հայ ցեղակից է դնում վերի բնաձայնների հետ, որոնք Հիւբշ. 476 իբր բնաձայն՝ պատահական է համարում։ Սրմազաշեան, Արմէնիա ռում.* mormâire *հոմանիշի հետ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 204։* Pokorny, 2, 307, Walde 315, Boisacq 644 *կրկնում են* Bugge-*ի մեկնութիւնը։*

ԳԻՒ.—Առհասարակ պահուած է վերի մոմռալ ձևով. կայ նաև մռալ, մռռալ։

ՄՌՈՒԻՑ *«բեղ, պեխ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. մրտ. 4. «Սուրբ Հայրն Մարկոս էր հասակաւն կարճ և քարձ, անմօրուս, միայն զվերին մոզունքն ունելով (էջ 540 ա)»։ Այս գրչութեամբ գտած եմ նաև ուրիշ մի ձեռագիր Յայսմաւուրքում։ Այս միևնոյն բառն է անշուշտ և մռուղ «բեղ, պեխ», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ջքր. սարկ. Բ. 50. «Եւ հրամայեաց երկուց արանց փետել զմօրուսն և զմռուղսն, զթարթափսն և զունսն»։ Երկրորդ ձևը անշուշտ վրիպակ է, որովհետև գաւառական բարբառով ունինք սրանից կազմուած մոզէմ «խաղողի որթի վրայ բուսած մազաթելերը» (տե՛ս Կ. Մ. Շահնազարեան, Վազի մշակութիւնը, էջ 60)։—Քաջունին ևս ունի հա. Գ. էջ 170 մռուզ «գանգրահեր» և միևնոյն տեղում մռուզ «ազգ ինչ։ վերարկուի»։ Բառիս համար ընտիր վկայութիւն է Սվեդ. մռզօնմ «բեխեր»։—Տե՛ս նաև յաջորդը։*

ՄՌՈՒԻՂ *«ուռած և ցայտուն կզակով» (թաթարներին իբր ածական տրուած). Մաղաք. աբ. 6. «Գլուխն մեծ էր իբրև զդոմիշու, աչքերն նեղ իբրև զձագու, քիթն կարճ իբրև զկատուի, դունչն մռուզ իբրև զշան». ուրիշ վկայութիւն չկայ։ Բայց արդեօք ուղի՞ղ է բառիս գրչութիւնը. ՆՀԲ և ԱԲ դնում են մռուղ, Պատկանեանի հրատարակութեան մէջ մռուզ, Երուսաղէմի տպագրութեան մէջ (էջ 16)՝ մռուճջ. հմմտ. նաև Մշ. մռուզ «քիթը կախած», Բլ. Մշ. մռուզ կախել «քիթը կախել», Դրբ. մռզել «յօնքերը պռասել», մըռշադունչ «տափակ քթով», Խրբ. մռուղ «բարկանալով քիթը կախել, յօնքերը պռասել», Մշ. մռուղած «դառնացած, վշտահար»։ Բառիս համար գտնում եմ այժմ մի երկրորդ վկայութիւն՝ Վրք. ոսկ. 21. «Ափրոդիտէս և Արտեմայ կռնչեան մռուղ շուն». դժբախտաբար այստեղ էլ տպագիրը նօտրդիր լինելով՝ չի իմացւում զ՞ է թե ղ։*

ՀՀԲ գրում է մողուճ «շրթունք»։ ՆՀԲ հանում է մոմռալ բայից։ Տաշեան ՀԱ 1932, 402 համարում է մռութ «դունչ». ընդունելի չէ, որովհետև ապաւում է մի ածական միայն, ինչպէս միւսներն են. բացի սրանից նորագիւտ երկրորդ վկայութիւնը ոչ մի տարակոյս չի թողնում նշանակութեան մասին։

ՄՌՈՒՆՉ *«գազանի ահեղ ձայն» Պտմ. առ լհհ. «շրթունք, մռութ» Բառ. երեմ. էջ 216. որից* մռնչել *ՍԳր. Եփր. նին. Վեցօր. 198, որ և* մռնչալ *Ոսկ. յհ. ա. 45.* մռնչական *Կիւրղ. Թգ.* մռնչիւն *Գ. մակ. դ. 7.* մշտամռունչ *ՅՀ. կթ. Ճառընտ.* մշտնջենամռունչ *Ագաթ. Կորիւն.* անմռունչ *ՍԳր. Ագաթ. Եղն.։*

=*Բնաձայն բառ. կազմուած է մ պարզ ձայնից՝ ռ սաստկականով և ն, չ ածանցիչներով. հմմտ.* կռնչել, փռնչել, ճռնչել, դրնչել, զռնչել, խռնչել, ճռնչիւն, շռնչան, սռնչան։ *Նոյն արմատից ուրիշ ձևով կազմուած բառեր են գւռ.* մոլնգալ *«դոմէշի ձայն» և* մռնգալ *«մռնչել» Բառ. երեմ. էջ 216։—Աճ.*

ՆՀԲ մոմռալ բայից։ Տէրվ. Altarm *101 զնդ.* mru *«խօսիլ» բառի հետ։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ. 1899, 204 ա։*

ՄՌՈՒՏ. *անյայտ իմաստով մի բառ՝ որ իբրև մակդիր արուած է* **Սահակ** *անուն անձին. (Ասող. Գ. բ. Վրդ. պտմ. խդ. Կիր. 45. Գիրք Թղ. ձա)։*

ՆՀԲ նոյն ընդ մռուղ (իբր ձեռ. տարբերութիւն) կամ մոմռացող «քրթմնջող, թիթիզ» և կամ մռտել «ապստամբիլ» բայից։ Ա՛Բ մեկնում է միայն երկրորդ ձևով։ Կայ նաև վրաց. **მრუდი** *մռուդի «ծուռ»։*

ՄՌՏԻԿՈՆ. *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Թղկր. 52. «Լաւագոյն բան մի ասաց մեծն Սողոմոն և նորին բանին վրայ մեծն Սիմէօն. Լաւ է բանջար խաղաղութեամբ քան զմիս մռտիկոն»։ (Բայց պէտք է նկատել, թէ ոտանաւորի այս տունը Թղկուրանցուց չէ և յետոյ է աւելացուած. ոտանաւորի ծայրանունը տալիս է* **Յոհաննես վար.** *իսկ այս վերջին տունը սկսում է և տառով, որ բնաւ չէ յարմար)։ Հատուածը ակնարկում է Առակ. ժե. 17 «Լաւ են կոչունք բանջարեղէնք սիրով և շնորհիւ, քան զուարակ ի մսոյ՝ թշնամութեամբ»։ Սրանից երևում է որ մռտիկոն բառի նշանակութիւնն է «թշնամութիւն». Համմտ. գւռ.* մռտել *Ջն. «դրդել, գրգռել, խօսք խառնել,* provoquer*»։ Բառս գիտեն նաև Հին բառ. մռտիկոն և Բառ. երեմ. 271 մռտինակ ձևով (պիճ բառի բացատրութեան մէջ), իբրև համանիշ վզենակ բառի, որ է «վնասել են»։ Տե՛ս և մռտռտ։*

ՄՍԵԼ *«ջանալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 216։*

ՄՍԵՐԻ *«կանաչացեալ». ունի միայն Բռ. երեմ. էջ 216։*

ՄՍԻԼ *«այրիլ». այս իմաստով մէկ անգամ ունինք Բրս. խ. մկ. «Մսեսցի ոտն, զի հանապազ ընդ հրեշտակս պարեսցէ» (յն. այրեսցի)։ Այս իմաստին համապատասխան են գալիս՝*

ԳԻՒՐ.—Ակն. Արբ. Այն. مسل *մսիլ «կրակից կարմրիլ, խանձուիլ, դեղնիլ»։*

Մսիլ *«պաղիլ» տե՛ս Մրսիլ։*

***ՄՍԼԻՄԱՆԱԿ** *«մահմետական» ՝ Արծր. հրտր. Պատկ. էջ 141, 158, 240. աւելի յետոյ սովորական է դարձած* **մսլման, մբսըլման, մսլիման** *ևն ձևերով։*

=Արաբ. مسلمان muslimān *«մահմետական»։*

Արծրունու հին տպագրութեան մէջ դրուած էր **մոլի մաճուկ, մոլի մաճակ, մոլիմաճակ**: *Վերի ձևով սրբագրեց և ուղիղ մեկնեց Նորայր, Հայկ. բառաք. էջ 5։*

ՄՍԽԵԼ *«ծախսել, վատնել» Վրդն. պտմ. Տաթև. ձմ. ձը. Անսիզք 17, 19. Մին. Համդ. 99. փոնց. 40. Հայել. 71. Ձքր. սարկ. Ա. 35. Օրբ. հկճռ. ժբ. էջ 185. աւում է նաև* **մխսել.** *նոր գրականի մէջ սրանից են ածանցուած* **մսխող, մսխում**:

Հիւնք. **փսխել, մղձկել** *ձևերից։*

ԳԻՒՐ.—Ալշ. Սլմ. **մխսել,** *Երև. Մրղ.* **մխսէլ.** *Ագլ. Մկ.* **մսխիլ,** *Շմ. Տփ.* **մխսիլ,** *Ղրբ.* **մբսխել, մխսել,** *արմատը ունին Երև.* **մրխս,** *Տփ.* **միսխ** *«վատնում, մսխում»։* Rivola *ունի* **մսխաճ** *«ծախս»։*

***ՄՍՄԱՐ** *«գամ, բևեռ, մեխ». հների մօտ առանձին չէ գործածուած, բայց սրանից է մսմարազարկ «բևեռագամ» Վրդն. ծն. աւելի ուշ՝ արմատական ձևով կայ մսմար Աբր. կրետ. 30. «փայտ շարեալ և պնդացուցեալ մսմարաւ»։*

=Արաբ. مسمار mismār *«գամ, բևեռ», որից նաև վրաց.* **მუხმარი** *մուսմարի «գամ»։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԳԻՒՐ.—Խոջ. **մսմար** *«գամ, մեխ», Ղրբ.* **մսմաո** *«մեխ», Մկ.* **մսմար** *«սեպի մէջ խրելու փայտեայ գամ»։*

ՄՍՈՂ *«մողէզ». գործածուած է միայն Բարսղ. Հրտր. Մաո,* Физіологъ, *էջ 50։*

Ըստ Մաո՝ աղաւաղուած է յն. σαύρα *հոմանիշից։*

ՄՍՈՂԻԼ *«բարականալ կամ տափականալ» Նիւս. կաղմ. «Որպէս զչորքոտանիս՝ երկայնագոյն զկերպարանն ունել և յոնգունս կոյս մսողել» (յն.* ἀπολεπτύνω *«նրբանալ»)։*

ՆՀԲ կցում է սղիլ, սղանալ, մսեալ բառերին, կամ թերևս դրելի մոողիլ

մոուղ բառից, որ է «ուռած և ցայտած կզակով»։

ՄՍՈՒՐ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ.) «կենդանիների խոտ ուտելու տեղը. լայնաբար՝ ախոռ, գոմ» ՍԳր. Փիլ. Եփր. Համար. «յարդդող, ծիր կաթին» Պիտառ. «խնդրանի մօտ մի համաստեղութիւն» Անան. գիտ. 7 (չորս անգամ). «բերանի առջևի մասը, շրթունքները, պռունկը» Յայսմ. Ճառընտ. որից մսրաբուտ «ընտանեանալով մսուրից ուտող (փղերի համար ասուած)» Կալենթ. 165 (տպ. մսրամուտ. բառս գիտեն միայն ՋՐ և ԱՔ մսրամուտ ձևով. թերևս ուղղելի մսրաբուտ)։—Տիրոյեան, Հանրագրութ. էջ 203 և 520 ունի մսուրճ և մսուջ «որջ, բայոց» ի. մասսով. աղբիւրը անյայտ։

Հիւնք. մսիլ բայից։ Patrubány ՀՄ 1908, 314 միս+սանս. vār «ջուր»։ Պատահական նմանութիւն ունի արաբ. مذود miδvad «մսուր» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 606)։

ԳԻՒ.—Ալշ. խրբ. Մկ. Մշ. Վն. մսուր, Ախց. երև. Կր. Հմշ. Սեբ. Սլմ. մսուրճ, Ննխ. մուսուրճ (տե՛ս տակը), Ասլ. մսիւրճ, մսիւր*, Ոզմ. մսօւր, Սվեդ. մսաչօր, ՋԹ. մսուչ, մսուսուր։—Նոր բառեր են մսրբումբ, մսրմուտ, մսրմնաչ.— ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 493 մսուրճ անել «դիզել, կուտել»։

ՓՈՒ.—Լազ. օմիսուրա, օմիխսուրա «մրսուր» (յիշում է նախ Adjarian, Etude sur la langue laze, էջ 44, որից առնում է Մառ. Грам. чан. яз. 176 առանց աղբիւրի յիշատակութեան), քրդ. məsrānī «մսուրի կողքի փայտը՝ որից կապում են անասունները» (Justi, Dict. Kurde 398), զուռ. Թրք. կս. musur (որ և Թրքախօս յունաց մօտ. Բիւր. 1898, 713), Կր. müsürlük (Բիւր. 1898, 627), Էնկ. musur (Բիւր. 1898, 788, 865), Ուդ. musurk, musurluk «մսուր» (Յուշարձան 330 բ)։ Թրքական այսպիսի մի ձևից չեա է առնուած Ննխ. մուսուխ՝ որի մէջ ր ձայնը կրճատուած է, փխ. *մուսուրլուխ։ (Այս բառը գործածական է միայն քաղաքում. գիւղերն ունին հյ. մուսուրճ ձևը. տե՛ս իմ Քննութ. Ն. Նախիջեւանի բարբառի, § 261)։

ՄՍՏԻՆ «անյայտ գործիք մը» Աբ. իսկ ըստ Գաբ. բառ. «երկրաչափական գործիք մը»։

=Թուում է արաբ. مسطر misṭar «քանոն» բառի երկակի مسطرين misṭarayn ձևից. Համմտ. նաև ō مسطرة misṭarat «անկիւնաչափ շարժուն քանոն»։—Ա.Ճ.

ՄՏԵՐԻՄ, ի–ա հլ. «հաւատարիմ, մտիկ և ընտանի բարեկամ» Փիլիպ. դ. 3. Խոր. Յճխ. որից մտերմութիւն Բ. կոր. ը. 8. մտերմագոյն Ոսկ. յհ. ա. 23. մտերմական 3հ. կթ. մտերմաբար Պիտ. Մարգ. Գնձ.։

=Կազմուած է –երիմ մասնիկով, ինչպէս հաւատարիմ, ոխերիմ. յօդակապը (և փոխանակ ա) ցոյց է տալիս՝ որ արմատի բունն էր –ի՝ որով արմատը կլինի *մտի–։

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 231 –երիմ մասնիկով միտ բառից, իբր «մէկ միտք կամ սիրտ ունեցող»։ Նշ.Ք հաւատարիմ մտօք։ Lag. Btrg. bktr. Lex. 48 պհլ. mat «Mithra» բառից։ Տէրվ. Նախալ. 99 սանս. mith, mitra «բարեկամ», զնդ. miθra, պրս. mihr ձևերի հետ՝ հնխ. mit «միաւտել՝ մտերիմ լինել» արմատից։ Հիւնք. արմատը համարում է մուտ «մտնել»։ Pedersen, Հայ. դր. լեզ. 225 միտ (=մի՞տ) բառից։ Մարքվարթ REA 8 (1898), 218 միտ բառից –երիմ մասնիկով։

ՄՏՂՆԼ «ուժգին մղել, հրել, մխտել, շարժել» Փիլ. նխ. բ. 55 (այս նշանակութիւնը ճշդում է ըստ յոյն բնագրի. ուստի Լծ. փիլ. զուր է մեկնում «փոշոտիլ»)։

Մտուկ տե՛ս Մտրուկ։

***ՄՏՐԱԿ**, ի–ա հլ. «խարազան» Առակ, իզ. 3. Բուզ. Ագաթ. Եղն. «խթան» Ածաբ. մակաբ. որից մտրակել Խոր. Խոսր. Արշ. մըտրակավար Վրք. ոսկ. գրուած է նաև մտրուակ Խոսր. պտրգ։

=Ասոր. ܡܰܛܪܰܩܳܐ maṭrəqā «խարազան, խթան» (Brockelmann, Lex. syr. 142 ա) բառից, որի հետ նոյն են նաև Թալմ. מטרקא maṭraqā «գաւազան», արաբ. مطرق miṭraq «բուրդ ձաղկելու փայտ, թակ, գաւազան», ܡܛܪܩܐ maṭraqa «գաւազան, մուրճ», مطراق miṭrāq «գաւազան, սուր»։

Արաբերէնից են փոխառեալ վրաց. **Յատհաեօ** *մաթրախի «մարակ», մինգ.* **Յատհաեօ մատրախի, Յահտաեօ մարթախի,** *սվան.* **Յրզաայչ** *մղադ'կ,* **Յձզհայ** *միղրադ' «մարակ»։ Սեմական բառերի արմատն է* ṭrq *«զարնել», որ թէև չգիտէ ասորին* (Brockelmann *դնում է ենթադրելի* ṭrq *արմատի տակ), բայց ունի արաբը, որ է* طرق ṭrq *«զարնել, ծեծել, ձաղկել» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 10)։ —Հիւբշ. 312։*

Brosset JAs. 1834, 377 *վրաց. ձևի հետ։ ՆՀԲ մաուկ կամ մաղել «քշել» բառերից։ Ուղիղ մեկնեց* Müller WZKM 8, 283 *(Թրգմ. ՀԱ 1894, 294)։ Հիմնք. մկրատ բառից։*

ԳԻՒ.—Բլ. մաուակ *«խարազանի կաշեայ մասը՝ որով անասունն են ծեծում» (ամբողջը միասին կոչւում է* խարազան*) Ազգ. հանդ. ե. 56.—երև. Տփ.* մաթրախ՝ *փոխառեալ վրացերէնից։*

ՄՏՐՈՒԿ, ի–ա *հլ. «քուռակ, իշուկ» Մն. լբ. 15. Ոսկ. մ. գ. 13. գրուած* մաուտ *Վրդ. առ. 119. որից* իշամաուկ *Սևբեր. 199։*

Հիմնք. մաուակ *բառից։* Jensen, Hitt. u. Arm. 78, 213 *հաթիան* mtl, mutal, mudal *հոմանիշի հետ։*

ԳԻՒ.—Տփ. մո՛ւաուկ։

ՓՈԽ.—վրաց. **Յუტრუკი** մուաուկի *«իշուկ»։*

ՄՏՐՈՒԿ *«խոզերին սիրելի մի ուտելիք». մէկ անգամ ունի Համամ. առակ. «Որպէս պահիարոնն և մաուկքն և դիքանքն՝ խոզի կերակուր են». (այլուր ՆՀԲ գրում է* մուկ *և տիգաւիճ. տե՛ս պեհիաւոն բառի տակ)։ ՀԲուս. չունի։*

***ՄՏՐՈՒԿ** *«երգիչ, երաժիշտ» Կոստ. երզն. 175, 176։*

=Արար. مطرب muṭrib *«երգիչ, նուագածու»։*

Ուղիղ մեկնեց Նորայր, Կոստ. երզն. էջ 200։

ՄՐԱՓ *«նիրհ, քուն, թեթև քուն». չէ գործածուած հների մէջ, բայց կայ միջին հայերէնում և նոր գաւառականներում, համմտ. Քուչ. 78 (Մրափն դիս է տարել). Առաք. լծ. սահմ. 344. որից* մրափել *«նիրհել» Գնձ.*

մրափիլ *Յիշատ. ԺԷ դարից (Դիւան ժ. էջ 66).* մրափած *«քնած, թմրած» Մաշկ. Գնձ. Ալաթ. յիշ. 23.* մրափող *Առաք. լծ. սահմ. 560։*

Հիմնք. յն. Μορφεύς *«Մորփէոս, քնոյ աստուած» անունից։ (Այս աստուածաբանութիւնը՝ թէև ըստ երևութին շատ յաջող է, բայց իրապէս բոլորովին սխալ է։ Մորփեւս գալիս է* μορφή *բառից, որ նշանակում է «ձև, գեղեցկութիւն», յետոյ «ուրուագիծ, արտաքին երևոյթ» և վերջապէս «տեսիլք, երազ». վերջին իմաստից ծագում է Մորփէոսը, որ ըստ այսմ երազների աստուածն է և «քուն» նշանակութեան հետ գործ չունի)։*

ԳԻՒ.—Խրբ. Պլ. Ռ. Սեբ. մրափ *«թեթև քուն», երև. վն.* մրափ *«խոր քուն», Ասլ.* մրափ, մրա՞, *Մշ.* մրապ, *Ագլ.* մրօփ, *Շմ.* մոափ, մուոափ։ *Որից Պլ.* մրափիլ *«թեթև ննջել» (իսկ երև. վն. «խոր քնել», Ղրբ. Շմ. «կատուի կամ շան քնելը»), Ագլ.* մրա՛փիլ, *Տիգ.* մրբրփիլ, *Խ. Սլմ. վն.* մոփել, *Մրղ.* մրոփրէլ, *Ալշ. Մշ.* մոպել *«անասունների քնելը», Շմ.* մոափիլ *«շան քնելը»,* մրափեցնել, մրափոտել։

ՄՐԳՈՒՉ *(գրուած նաև* մրճուզ*) «անպիտան, նուաստ, ստորին» Փիլ. լիւս. 149. Առակ. Ղեղշ. միանձ. 163. Համամ. առակ. Նչ. Թղթ. Մագ. Թղ. 237։*

ՆՀԲ արաբ. մէրճուզ *«յերկիր հարթատեալ»։ Հիմնք. կրմուղ բառից։*

ՄՐԵԿ *«Թշուառական. միզուկք», այսպէս ունի Բառ. հրիմ. էջ 217. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ՄՐԻՒ *«գայթակղութիւնք». ունի միայն Բառ. հրիմ. էջ 217։*

ⓄՄՐՄՈՒՆՋ, ո *հլ. «մեղմաձայն երգ, ողբ են» Ոսկ. Նա. Բուզ. Եւս. քր. որից* մրմնջել *ՍԳր. Ոսկ. Նա. և մ. ա. գ. Եւագր.։*

=Բնաձայն բառ. կազմուած է մ պարզ ձայնից կրկնութեամբ և ածանցիչներով. համմտ. խրխնջիւն, ղրղնջիւն, շրշնջել, տբրտունջ։—*Աճ.*

ՆՀԲ ունչ կամ մունջ ձևից է հանում։ Տէրվ. Altarm. 33 *և Նախալ. 46, 97 հլ.* մնչել, մրմռել, *սանս.* muj, *լտ.* mugire, *յն.* μυκάομαι *ձևերի հետ։ Հիմնք. ար-*

մասը դնում է յն. μύα, μύσα «փակել զբերան, լռել», μυκάομαι «մռնչել, հեծել»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 204 բ։ Petersson IF 43 (1925). 69 լատ. murmuro, տե՛ս նաև նոյն հեղինակի Ar. u. Arm. Stud. էջ 74 և 76։

Մրմռել տե՛ս Մռմռալ։

***ՄՐՈՒԱՀԱՐ** «հովհար». Նորագիւտ բառ, որ գտնում ենք գործածուած Վրդ. առկ. 285. Բացեալ զբերանն ծծէր զհողմն և յորժամ ոչ յագէր, մրուահարովն հարկանէր զհողմն, զի մոցէ ի բերան իւր. Այր մի ի վերայ աշտարակի մի կանգնեալ և զօդոյ զրազմութիւն կու ծծէր մրվահարով. (այլ ձ. մրուիեր՝ էջ 337)։ Տե՛ս և Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 495։

=Արաբ. مروحة marvaḥa (կամ նաև مروح marvaḥ) «հովհար» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 474), որ գործիքական անուն է ريح rīḥ «քամի» բառից։ Հայերէնի մէջ վերջաձայն r վրիպակ չէ, նախ որովհետև մի քանի անգամ է կրկնուած և երկրորդ, որովհետև նրա պատճառով վարդան անում է բառախաղ.— մրուահարովն հարկանէր։ Այս r աւելացուած է անշուշտ հայերէնի մէջ՝ նմանութեամբ հողմահար, հողմահարիլ (և նման բառերի), որոնք արդէն կային լեզուի մէջ.—Մագ. ունի այս բառերը։—Աճ.

ՄՐՈՒԱՆ «մի տեսակ ծաղիկ է. ֆրանս. asaret, ռմկ. cabaret». Սալաձ. (ՀԲուս. § 2143). որից մրուանատակ «կազմոր բոյսը, ասարոն, լտ. asarum» Բժշ. (ՀԲուս. § 2139)։ —Տիրացուեան, Contributo § 495 մրու, մրուան դնում է ըստ Քաջունու «valeriana alliarifolia Vahl»։

Կայ պրս. مرو marv «խոտ ինչ անուշահոտ»։

ԳԻՒ.—Վն. մրիվանդ «սպիտակ գոյնով մի ծաղիկ է»։

+**ՄՐՈՒՐ**, ո հլ. «դիրտ, տկուք, մի բանի տակին նստած կեղտը, ցեխը» Սղ. հգ. 9. Ես. իե. 6. Եզն. Ագաթ. որից մրրախառն Եզն. Ոսկ. յհ. ա. 21. մրրական Ոսկիփ. Երզն. մրրատեսակ Վրք. հց. Շնորհ. մրրիլ Վեցօր. 59. Շիր. 42 (սխալ տպ. մրրկեալ). մրրութիւն Շիր. մրրուկ Արշ. անմրուր Փիլ. եւ գինեմրուր Վստկ. 218. մրրգոյն «մրուրի գոյն ունեցող» Վստկ. 188.—Մրուր բառը հին լեզուի մէջ նշանակում էր նաև «օդի պղտորութիւն, փոթորիկ» և այս իմաստով մէկ անգամ գործածուած եմ գտնում Եփր. վկ. արևել. (Սոփերք Ի. 91). «Օդք սուգ զգեցեալ բարկութեամբ շնչէին և ի պարզ յստակութենէն յարամուր և ի մրուր և ի մրրիկ դառնային»։

=Բնիկ հայ բառ. կրկնուած է (կրճատ. կրկնութեամբ) մուր արմատից. հմմտ. փաթաթել, պատատել, փոթոթ, ատաղաղ, որոնք կրկնուած են փաթ, պատ, փոթ, ֆաղ արմատներից։

Նշբ մուր բառից, Müller SWAW 42, 257 և Justi, Zendsp. 237 զնդ. mrūra «ամուր, թանձր»։ Տէրվ. Լեզու 45 և Նախալ. էջ 99 կրկնուած մուր բառից, իբրև մուր-մուր>մրուր։ Հիւնք. նոյնպէս մուր բառից։ Դաւիթ-Բէկ. Յուշարձան 398 մուր բառի հետ՝ յն. μέλας «սև», հիւլ. mrecht «կեղտոտ» ևն։ Petersson KZ 47, 280 կցում է մօր «ճահիճ» բառի հետ, որի մեկնութիւնը տե՛ս առանձին։ Pokorny 2, 252 ընդունում է այս մեկնութիւնը և միաժամանակ յիշեցնում է որ չպէտք է դնել *mŏr-u-ro-, իբր յն. μορύσσω «սևացնել, կեղտոտել, ապականել», հնխ. mer- «սևացնել» արմատից։ Ուղիղ մեկնութիւնը տուել են Նշբ և Տէրվ. որ լաւ ուշադրութեան չէի առել։

ԳԻՒ.—Մշ. հրբ. մրուր «դիրտ», Զթ. մօյուլ, մօրուր, Հճ. մոյոյ «մրուր», Տիգ. աղի մրուր «տհալի տակին մնացած մասը»։

***ՄՐՈՒՐ** «մի տեսակ հարկ» Արձ. 1041 թուից (Վիմ. տար. էջ 22)։

=Արաբ. مرور murūr «անցնիլ, անցք» բառից։ Արաբ. աւելում է مرور وعبور murūr ū ʻubūr, երկուսն էլ հոմանիշ, իբր «անցուդարձ», որից ʻubūr արդէն տալիս է հյ. ապուր, ապուռ(իշի) «անցահարկ, passagium»։ Կասկածելի է միայն ծուծ բառի յարադրութիւնը բնագրի մէջ. «Զմրենոյ հարկըն, զծուծ և մրուր, զկապիճքն...»։—Աճ.

+**ՄՐՉԻԻՆ** (-չեան, -եանց) «մրչիւն» Առակ. զ. 6, լ. 25. Եզն. Վեցօր. 127, 136.

յետնաբար **մրջիմն** (-ջման, -ջմուճ, -ջմանց) *նղիշ. խոր. աշխ. վրդն. ծն. Ոսկիփ. որից* **մրջիւնաւուն, մրջմնաւուն** *կամ* **մրջնաւուն** *(արդի գրականի մէջ գործածական է միայն վերջինը)* «leo formicarius» *Յոր. դ. 11. Խոր. աշխ.* **մրջիւնոց** *Վեցօր. 187.* **մրջմնոց** *Փիլ.* **մրջիրոյն** *Բժշ.* **մրջմնակեր** *Վրք. Հց.— Բառ. հրեմ. էջ 217* **մրջմնոց** *մնկնում է «խաղաւարտ բղբշտացեալ» և սրանով հասկացւում է մի տեսակ մաշկային հիւանդութիւն, որ այժմ էլ ծանօթ է գւռ.* **մրջմուկ, մրջնրոյն, մրջիմնոց, մրջիւնոց, մրջիւնոցք** *ձևերով. մորթը թեփոտւում է, միշտ բորբոքւում և սաստիկ քոր գալիս. (ըստ Մ. Աբեղեանի,* Der arm. Volksglaube, *էջ 31 բառս ծագում է* **մրջիւն** *բառից՝ մրջիւնը ըմբռնելով, գրադաշտական հայեացքով, իբր Ահրիմանի ստեղծած չար արարած, որ մարդոց վրայ այս հիւանդութիւնն է բերում. Հմմտ. նաև* **գորտնուկ** *և* **օձիկ** *(Թրք.* yolanjək):

=*Բնիկ հայ բառ, որի ցեղակից ձևերն են յն.* μύρμηξ, μύρμαξ, μύρμας, βύρμαξ βόρμαξ *Փոքր Ասիոյ գւռ. յն.* mermiji (BSI. 20, 58), *լտ.* formīca<*mormīca<*ǫormīca (>*իտալ.* formica, *սպան.* hormiga, *ֆրանս.* fourmi), *հալ.* mravijĭ (<*morvijĭ), *ռուս.* муравей, *սերբ.* mrāv, *սլով.* mrávlia, *լհհ.* mrówka, *հիսլ.* maurr (<*marva-), *նորվ.* maur, *անգսք.* myre, *հոլլ.* miere, *անգլ.* mire, *իռլ.* moirb (<*morvi-), *կիմր.* mor, myr, *գնդ.* maoiri (<*marvī- *կամ* *marg-vī-), *պհլ.* mōr, *պրս.*[1] mōr *(նուազականը* mōrča), *փարսի* morik, *յիդգ.* murgāh, *սոդդ.* mora, 'mwrč (MSL 23, 124), *քրդ.* merū, mūrī, *աֆղան. բելուճ.* mōr, *օսս.* muljug, mäljjg, *սանս.* vamrá-, vamrī- *«մրջիւն» (բայց* valmīka- *«մրջիւնների բոյն»)։ Այս այլևայլ ձևերի նախնականն է* *moru̯o-, *որ բաղաձայնների շրջմամբ և նմանութեամբ տուաւ յետոյ* *u̯ormo-, *mormo-, *mouro-. *գերմանականում նաև* *meuro-. *զանազան ձևեր յառաջացած են մասնիկներով, ինչպէս* -ka *մասնիկով՝ սանս.* valmīka-, *լտ.* formīca, *յն.* ὄρμιξαξ *են.—Հայերէնի արմատն է* *մուրջ, *ուր* -ջ *մասնիկ է, որի վրայ յետոյ էլ աւելացել է* -իւն *մասնիկը* (Pokorny 2. 306, Walde 308, Horn § 993, Trautmann 170, Ernout-Meillet 364, Boisacq 651):— *Հիւրշ. 476։*

Նախ ԳԴ համեմատեց պրս. **մուր, մուրչէ** *ձևերի հետ։ ՆՀԲ սրանց հետ նաև յն.* **մի՛րմիխս, լտ. ֆո՛րմիխա:** *Ուղիղ համեմատութիւններ են անում նաև* Böttich. Arica 67, 88, Lag. Urgesch. 788, Pictet KZ 5, 349. Müller SWAW 41, 160; 42, 258, Justi, Zendsp. *էջ 222, Տէրվ.* Altarm. 24, *Նախալ. 173, Հիւրշ.* Arm. Stud. § 207 *են։* Lag. Arm. Stud. § 1535 *Թևրևս փոխանակ* *մրմջիւն, իրրև նոյն՝մարմաջել բառի հետ։* Bügge KZ 32, 18 *հայերէնի նախաձևը դնում է* **մրմջիմն, մրմջիւն:**

ԳԻՒ.—Կր. **մրջուն**, *Ռ.* **մոջուն**, *Խրբ.* **մըռջում**, *Ննխ.* **մուռջում**, *Հմշ.* **մէյջում**, *Աալ.* **մոռջիմ**, *Սվեդ.* **մոջ՛օմ**, *Հճ.* **մոռջ՛իմ**, *Երև. Տփ.* **մռջիմ**, *Ագլ.* **մոջիմ**, *Մկ.* **մռնիմ**, *Ոզմ.* **մոնիմ**, *Ակն.* **մըռչէօմ**, *Ջղ.* **մոչ՛եմ**, *Ալշ. Մշ. Սլմ. Վն.* **մոնեմ**, *Ղրբ.* **մռչէ՛մնը, վռչէ՛մնը**, *Մրղ.* **մրոնըմ**, *Առն. (Թրքախօս հայոց մէջ)* **մրոջջըմ**, *ՋԹ.* **մօռնօմ, մօռջ՛ում**, *Ախց.* **մոջ՛ըմուկ**, *Լ.* **մօ՛ռմօնջ, մօ՛ռմոնջ**, *Ղզ.* **մօ՛ռմօնջ**, *և նոր կրկնական մի ձևով՝ Շմ.* **մօռմօռինջ:** *Հետաքրքրական է Հնդ.* **մրջ՛ըր՛ուն** *«մրջիւն» (տե՛ս Հայնակ և մաճռնակ այբուբենի թուղթ, Վիեննա 1834, էջ 44. տպուած է* **մրջըրուն.** *որ ա՛յսպէս պէտք է հնչել)։ Նոր բառեր են* **մրջիւնոցք, մրջիւնոտ, մրջմուկ, մրջնրոյն:**

ՄՐՍԻԼ *«գրտից պաղիլ, սառիլ» Ոսկիփ. որ և մսիլ 84. կթ. 309 (տպ. եմ. ունի* **մրսեալ**). *Սարգ. յուդ. բ. էջ 657. ոսկեդարեան շրջանից գտնում եմ մի՛ վկայութիւն Ոսկ. փիլ. 456. «եթէ ցուրտ մսէր զմարմին», ուր մսել ունի «մրսեցնել, պաղեցնել» նշանակութիւնը (չունի ՆՀԲ)։*

Հիւնք. **մրցիլ** *բայից։ Մառ* ИАН *1918, 887 գնդ.* mərəzu *անծանօթ բառի հետ, որ Ֆրէյման թարգմանում է «ցուրտ, սառնամանիք»։* (Bartholomae 1174 *թէ ա՛յս և թէ նրա ածանցները թողնում է առանց բացատրութեան)։ Պատահական նմանութիւն ունին այրան.* marθ *«սառնամանիք ցուրտ», ռուս.* морозъ, *չեխ.* mráz,

սերբ. mräz «սառնամանիք», ռուս. мёрзнуть «սառչիլ» են (Trautmann 187):

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. մրսել, երև. Գոր. Ղրբ. մրսէլ, Շմ. Տփ. մրսիլ, Ագլ. Շղ. մոսիլ, Սվեդ. մսսիլ, Ախց. Ակն. Ասլ. Խրբ. Կիւր. Կր. Մկ. Ոզմ. Պլ. Ռ. Սեբ. մսիլ, Սլմ. Վն. մսել, Մրզ. Ննխ. մսէլ, Հմշ. մսուշ, Հճ. մոսել, ՋԹ. մը՝սալ: — Նոր բառեր են մրսկաճ, մրսկոտ, մսուկ, մսակոտ, մրսուկ, մրսաճիւանդ:

ՄՐՎՈՐ. անձանօթ մի բոյս է (բացատրուած է տլվորուկ բառով) Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2144, որ և կարծում է թէ տճկ. mürver «թանթրաւենի» բոյսն է, որ է ֆր. sureau:

ՄՐՏԻՄՆ «ծովային ձկնակեր մի թռչուն» Գիրք թղ. 486. իսկ յգ. մրտմունք ձևով ունի Երզն. ժ. խորան, 7 բ, 10 բ. սեռ. մրտմանց Երզն. ժ. խորան, 11 (ըստ ԼԿՀ. «bruntus, querquedula»). շփականի անկումով՝ մրտմունք Անան. գիտ. 8 (երկիցս):

Գաբ. բառ. համարում է «մարթի, mouette թռչունը» և համեմատում է արաբ. մէրզամի պաճուճ ձևի հետ:

ԳԻՒ.—Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 495 Օշական և Աշտարակ ունին մրտիմ ձևով. (գլուխը սև, թևերը մոխրագոյն և սպիտակախառն, կտուցը կարճ և տափակ, ոտները կարճ, սև և թաղանթապատ ջրասէր թռչուն):

Մրտխղճիլ տե՛ս Մխիրճ:

+ՄՐՐԻԿ, ի–ա հլ. «ծուխ կամ գոլորշի». այս իմաստով համմտ. Ին. ԺԹ. 28 «և նոքա և ահա ելանէր բոց երկրին իբրև մրրիկ հնոցի»=յն. ὡσεὶ ἀτμὶς καμίνου «իբրև գոլորշի հնոցի». (այլուր ծուխ. համմտ. Ել. ԺԹ. 18. Եւ ելանէր ծուխ նորա իբրև զծուխ հնոցի=յն. ὡσεὶ καπνὸς καμίνου):—Այս իմաստից է յառաջանում «մէգ, մշուշ, ամպ» նշանակութիւնը. համմտ. Սարգ. բ. պետր. դ. էջ 454, որ մեկնելով բ. պետր. բ. 17 «Այսպիսիքն են աղբերք անջրդիք և մէգք վարեալք ի մրրկէ» (իմա՛ փոթորկից քշուած ամպեր, անգլ. clouds that are carried with a tempest, յն. ὑπὸ λαίλαπος ἐλαυνόμεναι) հատուածը, գրում է. «Աղբիր նմանեցուցանէ՝ որ զջուր ունիցի և մրրկի սաստկապէս վարեցելոյ ի հողմոյ՝ որ զցօղ երբեք յերկիր ոչ ցօղէ, այլ զոր օրինակ աղբիւր անջրդի ոչինչ օգտէ ծարաւելոց, և ոչ մրրիկ առանց ցօղոյ՝ ծարաւուտ երկրի»: Սրանց մէջ մրրիկ նշանակում է «ամպ»: — Երրորդ նշանակութիւնն է «փոթորիկ, ալեկոծութիւն» ՍԳր. որից մրրկիլ. ՍԳր. մրրկել Բ. մկ. ժբ. 22. մրրկածին Ագաթ. մրրկածուփ Նար. կուս. մրրկախառն Մծբ. ևն: — Կայ վերջապէս մրրիկ մսոյ «հիւսուղ մսի փրփուրը, քափ» վրք. հց. ա. 701 (նոր բազիւտ բառ): — Մրրիկ բառի առաջին և երրորդ նշանակութիւնները մեկնելով Սարգ. յկ. ժ. էջ 146 ա՝ գրում է. «Մրրիկ ասէ զայն որ յետ պարզոյ և ջերին ժամանակի յանկարծակի երևի ի խաւսութենէ ամպոց և ի սաստկութենէ հողմոց և յամենայն կողմանց մութ և խաւար գործէ արգելեալ զճառագայթս արեգականն... և կամ զարձեալ մրրիկ ասէ զրորբոքումն հնոցին»:

=Ծագում է հյ. մռուր բառից, ինչպէս ցոյց են տալիս վերի «ծուխ» և «ամպ» նշանակութիւնները. համմտ. նաև Սիր. վկ. արև. (Սոփերք Ի. 91) «Օդք սուգ զգեցեալ բարկութեամբ շնչէին և ի պարզ յաստակութենէն յարամուր (Սոփերք աւելացնում է և ի մռուր) և ի մրրիկ դառնային (Սիր. չունի ի մռուր)». —համմտ. նաև Երև. մռռած «փոթորկուած, մրրկուած (ամպեր)». նմանութեամբ՝ «խիստ զայրացած, զազանացած». (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 495):

Klaproth, Asia polygl. էջ 105 ալբան. mura, հսլ. burja «փոթորիկ»: ՆՀԲ «մռուր կամ մուր ցնդեալ յօդս»: Տէրվ. Հնդու 1887, 45 և Նախալ. 99 մռուր բառի նուազականն է: Հինք. մռուր բառից: Ալիշան, Հին Հաւատք 216 հնդ. մառուտ «բարի հողմ»: Սագրգեան ՀԱ 1909, 335 և Karst, Յուշարձան 405 սումեր. imiri «մրրիկ»: Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է դնում ալբան. mourė «հիւսիսի ծով», որ չի կարող կապ ունենալ:

ԳԻՒ.—Մշ. մռրիգ:

ՄՐՓԵՆԻ «ակակիա». ունի միայն Գաբ. բռ.

ՄՑՒԵԼ «անյագաբար ուտել, փորը ճխտել»

Ոսկ. ա. տիմ. ժգ. էջ 126. ուրիշ վկայութիւն չկայ։

ՄՔՈՒՅ *«հողի ճեղք կամ պատռուածք». ունի վստկ. քանիցս (գրուած նաև մգոա). եթէ ի սպիտակ գետինն պատռուած մքուա լինի, նա լաւ է (էջ 46). Տե՛ս զգետինն, որ յամառան չորութիւնէն զառնէ խիստ մգուա (էջ 15). Սպիտակ հողն և ոչ մքուայն... մքուայն ամէնէն վատ է (էջ 159). Բայց ի խորու և ի հատա գետինն՝ որ մքուայ ունենայ, ամէնէն չէ պարտ տնկել ձիթենի (էջ 176)։*

***ՄՕՂ**, *որ և մաւգ, մավզ, մավզայ «բանան բոյսը և պտուղը, լտ.* musa paradisiaca» *(որ Հնդկաստանում կոչւում է ֆիլա) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2145։*

=Պրս. موز mavz, *որից նաև արաբ.* mavz, *թրք.* moz, muz *«բանան»։—Ա՛ճ.*

ՄՕՆԵՒՆ *«մի տեսակ նաւ կամ նաւակ». ունի միայն ԱԲ։*

ՄՕՒ. *անստոյգ նորագիւտ բառ, որի վրայ տե՛ս մոր և ֆոռա։*

ՄՕՒԱՄԲ *«մորենի, լտ.* lycium europaeum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2146։*

+ՄՕՏ *«մօտիկ, մերձ, ոչ հեռու» ՍԳր. Ոսկ. որից ի մօտոյ ՍԳր. Եւս. քր. ի մօտէ նզն. մօտ ընդ մօտ Ոսկ. ա. կոր. մօտիլ ՍԳր. Եւս. պտմ. մօտալուտ Գ. մկ. Ե. 4. Ագաթ. (սխալ գրուած մօտաշուտ). մոտակայ Ոսկ. մ. գ. 12. Եփր. ծն. մօտակաց Ոսկ. Ես. կիրզ. թգ. մօտակուտ Դղ. Ե. 12. մօտաւոր ՍԳր. Եւս. քր. Ոսկ. մտթ. անմօտելի Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 79. մարդամօտ Ագաթ. շարամօտ Արիստ. մօտաւորապէս (նոր բառ)։*

=Բնիկ հայ բառ. նոյն է մատ (մատչիլ, մատուցանել) արմատի հետ, որի հետ ունի ճիշտ այն ձայնական յարաբերութիւնը՝ ինչ որ առածել և առօտ, յատանել և յօտ։

Karolides, Γλ. σσγκρ. 196 *իրար է կըցում հյ.* մօտ, *յն.* μετά *«ընդ» և կապադովկ.* μοτό։ *Հիւնք. մատն բառից։* Karst, *Յուշարձան 400 ասուր.* muttu *«ճակատ»։ Ուղիղ մեկնից* Pedersen KZ 39, 411 *(տե՛ս* Pokorny 2, 304)։

ԳԻՒ.—Ախց. Կր. Մկ. Շմ. Վն. մօտ, *Գոր.* մօ՛տի, *Ղրբ.* մօ՛տրէ, *Ոզմ. Ջղ. Սլմ.* մոտ, *Ալշ. Երև. Խրբ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. Տփ.* մօդ, *Զթ.* մէօդ, *Ասլ.* մէ՛օդ, մէօ՛*, *Սվեդ.* մուդ, *Մրղ.* մրի՛ա։— *-իկ մասնիկի յաւելմամբ են կազմուած՝ Ախց. Կր.* մօտիկ, *Ագլ.* մօ՛տիկ՝, *Շմ.* մօտիգ՝, *Տփ.* մօդիկ, *Հմշ. Ննխ. Պլ. Սչ.* մօդիգ։ *Զանազանութիւն դնելով այս երկու ձևերի մէջ՝ Տփ. են գործածւում է* մօտ *«քովը, կողքին,* auprès de», մօտիկ *«մօտ,* près de, *ո՛չ հեռու»։ Նոր բառեր են* մօտալ *«դիպչիլ»,* մօտամօտ *«շատ մօտ»,* մօտանց, մօտելիկ, մօտգամ, մօտիլ *«ձեռքով դիպչիլ, շօշափել»,* մօտիկանալ, մօտկնալ, մօտիկցընել, մօտնաս։

ՄՕՏԱԿԳԻՆ *«երեակ մոլորակը». անստոյգ բառ. յիշում է Հին հաւ. էջ 109, առանց վրկայութեան։*

> *Վկայութիւնը չունենալու պատճառով դժուար է հաստատօրէն ասել թէ բուն նշանակում է* մօտ *խէֆին «Հայկ համաստեղութեան* (Orion) *մօտ»։ Երեակը իր շրջանը կատարում է 30 տարուայ մէջ և այդ միջոցին անցնում է ամբողջ զոդիակոսով։ Հայկը լինելով զոդիակոսին շատ մօտիկ, երբեմն Երեակն էլ նրա մօտ է գտնւում։ Այս տարի (թ. 1930) Լուսնթագն է՝ որ Հայկի մօտ է գտնւում, իսկ Երեակը գտնւում է արեւմուտքում՝ Աղեղնաւորի մէջ։ Այն ժամանակ, երբ մեր հեղինակը գրել կամ յօրինել է* մօտխէգին *բառը, կարող էր Երեակը գտնուել Հայկի մօտ։ (Վանի բարբառով* խէֆ *կամ* խէֆեր *(յոգնակի ձև) կոչւում է Հայկ համաստեղութիւնը)։ —Ա՛ճ.*

+ՄՕՐ, *ի–ա հլ. (յետնաբար ի հլ.) «ցեխ, տիղմ, ճահիճ» Վեցօր. էջ 58. Փարպ. Ոսկ. յհ. բ. 8, 12 (յետին). «ճախճախուտ» Վրդն. ծն. յետնաբար գրուած է* մուռ *Արծր. Հրտր. Պատկ. էջ 199, ինչպէս նաև* մուռ՝ *որ յիշում են միայն Բառ. երեմ. յաւել. 554 և ՀՀԲ. գործածուած եմ գտնում Յայսմ. մրտ. 9 (էջ 552 ա) Հարեալ էին ի տիղմն գետոյն և խրեալ ի մուռն (այլ ձ. ի մօռն)։ Այս արմատից են՝* մօրանալ *«ճահճանալ» Վեցօր.* մօրատնալ *Սկեր. 158.* մօրական *Եւս. քր. (գրուած* մուրական *Վրք. և վկ. բ. 178).* մօ-

ռասէր *կիր. պտմ.* մօրաքաքախ *Մամիկ.* բազմամօր՝ *ունի միայն ԱԲ (գործածուած եմ գտնում Յայսմ. մրտ. 13 (էջ 561 բ). ի բազմամուտ և ի տղմային տեղիսն ճանապարհաց. նոյն բառն ունի և Մխն. Համդ. 63).* Մեծամօր *(յատուկ անուն գետի) Ագաթ.* մօրաստ «ճահիճ» *Ոսկ. Ճառք 672. Սմբ. պտմ. 49. Սամ. աննց. 105. «տղմուտ, ճահճուտ» Վրք. հց. Ուտհ. գրուած նաև* մուրաստ *Վրք. հց. ա. 649.* մօրաս, մուրօս *ԱԲ.* մօրոս *Ուտհ. 352.* մուրաս *Դրնդ. 479 (այլ է* մուրաս՝ *որ տե՛ս առանձին). կայ և* մուրաստան «ճահի՛ճ» *Բուզ. 124։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mauri- *կամ* məuri- *ձևից. սրա հետ համմտ. յն.* μῦρα, μῦρομαι «հոսել, ողոգել, լալ, ողբալ», *լիթ.* mùrstu. mùrti, muraũ «*խիտում դառնալ, բոլորովին թրջուիլ*», mauraĩ «*ճահճացած ջրերի մէջ աճող մի տեսակ բոյս, մօրաբոյս*», *լեթթ.* maura «*տան շուրջն աճող թաց ու պարարտ խոտ, արօտ*», mauragas, muragas «*ճահճաբոյս*», murĩt «*կեղտոտել, ապականել*», *հսլ.* murava, *ռուս.* мурава́, *սերբ.* mûrava, *լհհ.* murawa «*ծովային կամ ճահճային խոտ, արօտ*», *ռուս.* муръ «*մարգի արօտ*», му́рый «*գորշ*» (*որ է «կեղտոտ գոյնով»*), мура́стый «*գորշախայտ*», *սլով.* murava trava «*տան շուրջը կամ ճանապարհների եզերքն աճող խոտ*» (*նշանակութեան զարգացման համար համմտ. գերմ.* Wiese «*մարգ, արօտ*»=*հհիւս.* veisa «*ճահիճ*», *հոլլ.* ware «*ցեխ, տիղմ*»=*հրգ.* waso «*թաց գետին, արօտ*»>*ֆրանս.* gazon «*արօտ*)» *են։ Այս բառերը ծագում են հնխ.* meu- «*թաց, խոնաւ, անմաքուր ջուր կեղտոտել*» *պարզական արմատից՝ աճած* -ro- *աճականով* (Pokorny 2, 252, Trautmann 172):

Առաջին՝ անգամ Neumann ZKM 1, 242 *համեմատից գերմ.* moor «ճահիճ» *բառի հետ։ Տէրվ. Նախալ. 98 համեմատում է լտ.* mare, *գոթ.* mari-saivs, *պրս.* murd-āb *ձևերի հետ և բոլորը միասին դնում է հնխ.* mar «*մեռնիլ*» *արմատի տակ։— Հիւնք. մայր բառի սեռականից է հանում։ Փիւֆլեան, Բազմ. 1910, 153* մեռանիլ *բայից։* Petersson LUÅ 1916, 17—18 *(տե՛ս* Pokorny 2. 224) *ալբան.* makɛ «*սոսինձ, ձուլի, կանգնած հեղուկների երեսին կապած փառ*», *լտ.* macero «*կակղացնել*», *հսլ.* mokrŭ «*խոնաւ, թաց*», *ռուս.* мочить «*թրջել*» *են բառերի հետ, որ ընդունում է* Pokorny 2, 224՝ *դնելով հնխ.* maq «*թաց, խոնաւ*» *արմատի տակ. հայ ձևը իբրև* *maq-ro-: *Ուղիղ մեկնութիւնը տուաւ վերի ձևով նոյն ինքն* Petersson KZ 47, 281 *(նոյն 1916 թուին), որ ընդունում է դարձեալ* Pokorny 2, 252: *Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2 (1927) 80 կրկնում է* Neumann-*ի մեկնութիւնը, ինչպէս արել էր նաև* Bittner WZKM 15 (1901), 410: *(Ըստ այս մեկնութեան հյ.* մօր<մաւր *ցեղակից է դրւում հետևեալ բառերին.—լտ.* mare, *հիսլ.* marr, *կիմր. կորն. բրբտ.* mor, *հիոլ.* muir «*ծով*», *անգսք.* mere «*ճահիճ, ծով*», mōr «*ճահիճ*», *անգլ.* meer, mere, mire, moor «*տղմուտ, ճահիճ*», *գոթ.* marei «*ծով*», marisaiws «*ծովակ, լիճ*», *հբգ.* mari, meri «*ծով*», muor «*ճահիճ*», *հոլլ.* meer, *գերմ.* Meer «*ծով*», Moor «*ճահիճ, մօր*», *հսլ.* morje, *ռուս.* море, *չեխ.* moře, *սերբ.* möre, *բուլգար.* more «*ծով*», *լիթ.* mãrės «*ծովածոց*», *հպրուս.* mary «*ծովածոց*» *են* (Pokorny 2, 234, Walde 464, Boisacq 49, 1054, Trautmann 169—170, Kluge *էջ 325 և 335*)։ *Այս բոլորի նախաձևը դրւում է հնխ.* mari *կամ* mori «*ծով*»։ *Հայերէնը սրբանց հետ կապելու համար երկու դժուարութիւն կայ. նախ՝ ձևը (*a *ձայնի դէմ աւ). բայց այս դժուարութիւնը կարելի էր հարթել, ենթադրելով՝ որ* a *ձայնաւորը երկբարբառի է վերածուել, այնպէս՝ ինչպէս* մաւ(շիլ) *և* մօս, աւածել *և* աւօս, յաւաանել *և* յօս։ *Երկրորդ դժուարութիւնն այն է, որ* *mari *արմատը յատուկ է միայն արևմտեան հնդեւրոպական բարբառին և գոնւում է միայն իտալական, կելտական, գերմանական և բալթիկ-սլաւական լեզուներում* (Meillet, Esquisse d'une histoire de la lan-

gue latine, Paris 1928, *էջ 42*)։ *Անստոյգ է սանս.* maryādā *«ծովեզերք» բառը, իսկ յունարէնում կայ միայն* Ἀμφί-μαρος *«ծովերի աստուած Պոսիդոնի որդին». առանձին գոյութիւն չունի։ Այս պատճառով անընդունելի է հյ.* մօր=*լտ.* mare, *գերմ.* Moor *կապակցութիւնը, քանի որ կայ վերի յարմարագոյն բացատրութիւնը։*

Գիմ.—Սվեդ. մուրուդ *«ցեխ», ըստ գաւաշցոց՝* մօռ *«ցեխ». Ջթ.* մույօղ, մուրդ *«ցեխ» (համմտ. Կիլիկեցի Սմբատ պատմիչի* մօրաւտ *ձևը), նոր բառ է* մօրջուր *Ջթ. «ճահճաջուր»։*

Փոխ.—Թուշ. Յոցրէլ *մովրել «ճահիճ»։*

+ՄՕՐԻՒ, ի–ա *հլ. (սովորաբար անեզական, յետնաբար կայ նաև եզակի գործածութեամբ) «մօրուս»։ ՍԳր. Բուզ. Եփր. թգ. 404. գրուած է նաև* մուռու, մուռուվ, մուռուվ *(գրծ.* մուռուօվ *Սարգ. բ. պետ. բ. էջ 538,* մուռվօվ *Մխ. այրիվ. էջ 61). օ>ու ձայնափոխութեան համար համմտ.* մօռու *«խորթ մայր»>Բլ.* մուռու, *նոր գրականի մէջ ընդունուած ձևերն են* մօռուվ *(արևմտեան բարբառ),* միռուս, մօռուս *(արևելեան բարբառ)։ Այս բառից են* մօռուաձի *Ուս. քր.* մօռուաձակվ *«կզակ» Պատմ. աղէքս.* մօռուեղ *Մագ.* անմօռուս *Բուզ. Շիր.* երկայնամօռուս *Յայսմ.* գեղեցկամօռու *Պզատ. եւթ.* խառնեչամուռուս *Յայսմ.* պակասամօռու *Յայսմ.* մօռուազալի *«պատանի՝ որի բեխն ու միրուզը նոր են մրած» Նղշ. էջ 9։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* smakru- *ձևից. ցեղակիցներն են սանս.* çmáçru- *(յառաջացած* *smáçru- *ձևից) «մօրուք», լիթ.* smakrà *«ծնօտ»,* smãkras *«միրուս, ծնօտ», լեթթ.* smakrs *«ծնօտ, քիմք», իռլ.* smech *«ծնօտ», ալբան.* mjekrɛ *«ծնօտ, կզակ, միրուս». (այս նշանակութեանց յարակցութեան համար համմտ. յն.* γένειον *«ծնօտ և միրուս», իտալ.* barba *«միրուս», բայց և* Dante, *Քաւար. XXXI 68, 74 «ծնօտ», ռուս.* борода *«կզակ, մօրուս» և զանազանելու համար՝* подбородокъ *«կզակ»)։ Բոլորի պարզական նախաձևն է* smek- (Pokorny 2, 689, Trautmann 270)։ *Հայերէնը կարող է գալ* *smakru- *ձևից՝ նախաձայնի անկումով և* k *վերածուելով ւ-ի (տե՛ս* Pedersen, *Հայ. և դրացի լեզ. 31)։—Հիւբշ. 476։*

Klaproth, Asia polygl. *էջ 99 սլ.* boroda, *լտ.* barba, *գերմ.* Bart *«միրուս» բառերի հետ, իսկ էջ 346 թիբեթ.* mara։— *ՆՀԲ յն.* μεῖραξ *«միրուս» (այնպիսի ձև չգիտեն սակայն ո՛չ* Bailly *և ո՛չ* Sophocles. *կայ միայն* μεῖραξ *«աղջիկ. յետնաբար՝ տղայ»)։* Lag. Arm. Stud. § 1539 *սանս.* çmaçru, *որով և ինքն է առաջին ուղիղ մեկնողը։ Հիւնք.* մուռ, մուռկ *բառերից։ Հացունի, Պատմ. տարազի 327 պրս.* մույ *«մազ»*+ռուվ *«այտ» բառերից*!!

Գիմ.—Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. մօռուվ, *Ալշ. Մշ. Շմ.* մուռուվ, *Ջթ.* մույուվ, մուռուվ, *Հճ.* մույուվ, *Սվեդ.* մուռէօվ, *Ասլ.* մէօռիվ, մէօռիւ*, *Ախց. Սրև. Կր. Համշ. Ջղ. Սչ. Տփ.* միռուվ, *Ննխ.* միռուվ, միւռիւվ, *Յղ.* մէ՛ռուվ, *Ագլ.* մա՛յռուվ, *Ղրբ. Գոր.* մռօվ, *Մրղ.* միւռիւս, *Սլմ.* մռիւս, *Ոզմ.* մօռօւս: *Նոր բառեր են* մօռուվախառն, մօռուվուռ, մօռուօվ:

Փոխ.—Կապադովկ. μαρούκια *«ծնօտ» (տե՛ս* Karolides, Γλωσ. συγκριτ *էջ 92 և 191, որից և* Bugge KZ 32, 11. *նշանակութեանց տարբերութեան համար տե՛ս վերը).—Թրք. գւռ. Ասն. (նաև Թրքախօս հայոց և յոյների մօտ)* մօռուվ:

+ՄՕՐՈՒ *«խորթ մայր»։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* mātruyā- *ձևից. համմտ. յն.* μητρυιά *և հ. պրուս.* pomatre *«մօրու». աւելի յետոյ կարծուած է հայկական ածանց, ինչպէս* յօրայ, *որ յետոյ զարձել է* ճօռու: *Աւելի ընդարձակ տե՛ս* մայր:

Գիմ.—Շտ. մուռու մէր, *Բլ. Մշ.* խորթումուռու, *նաև Մշ.* մուռի *«խորթ»։*

*ՄՕՐՈՒՏ *«մի տեսակ ծաղիկ». մանրամասն տե՛ս* ճօռուտ:

Յ

ՅԱԲԵՆԱՅ *տե՛ս Աբբենա։*

+ՅԱԳ *(յետնաբար ո հլ.) «կշտանալը, լիութիւն» ՍԳր. Ոսկ. Եբր. «կշտացած» Եփր. Բգ. 358. որից* յագիլ *կամ* յագենալ *«կշտանալ» ՍԳր. Եփր. ծն.* յագեցուցանել *ՍԳր. Եզն.* յագչիլ *Սանահն. յհփր.* յագուրդ *ՍԳր.* յագութիւն *Մծբ.* անյագ *ՍԳր. Ոսկ. Վեցօր. 65.* անյագաբար *Եզն.* վաղայագ, վաղայագու *Փիլ.* անյագաւրէն *(նոր բառ) ևն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. sāw- *արմատից. սրա պարզական ձևն էր հնխ.* sā-, sə- *«կըշտացնել», որի ժառանգներն են յն.* ἄω<ἄϝω *«կշտանալ»,* ἄατος *«անկուշտ»,* ἄδην *«յագ, բաւական»,* ἄμεναι *«կշտացնել», ոնգականի ներմուծումով՝ վհդ.* a-sinváḥ, á-sinvan *«անկուշտ», t աճականով՝ լտ.* satis *«բաւական»,* satur *«յագեցած», լիթ.* sotùs, *գոթ.* soþ, saþs *«կուշտ», հբգ.* sat, *գերմ.* satt *«կուշտ», հիւլ.* sāith *«յագուրդ»,* sathech *«կշտացած». նոյնը* u *աճականով դարձել է* *sū, *որի վրայ աւելանալով նոյն* t *աճականը՝ հսլ.* sytŭ, *ռուս.* сытъ, *լհհ.* syty *«յագեցած, կուշտ»* (Pokorny 2, 444, Boisacq 2, 13, Walde 680, Ernout-Meillet 857, Trautmann 250)։ *Հայերէնը յառաջանում է նոյն պարզական* sā- *արմատի աճած* sāu-, sāw- *ձևից* w>g *սովորական ձայնափոխութեամբ և յ նախդրի յաւելումով, որ յետոյ միացել է բառին, այնպէս որ կարելի է եղած ասել* ցյագ։

Lag. Urgesch. 994 *համմ. գնդ.* haghdhaĩihu *«յագուրդ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Տէրվ. Նախալ. 66, որ համեմատում է յն. ἄω և սանս.* av *բառերի հետ։ Հիմնք. հաց բառից։* Bugge KZ 32, 21 *սանս.* av, ávati *«յառաջել, հաճել, յագիլ»։* Karst, *Յուշարձան 427 թրք.* toq, toy *«կուշտ»։ Վերի ձևով մեկնեց* Meillet BSL 22, 20՝ *Տէրվիշեանից անկախաբար։*

ՅԱԴԱՁՈՒՄՆ *«ձայն, գոչիւն» Բէրդ. մայրագ. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Պարզ արմատն է յագ. ա *յօդակապով և շ ածանցով։*

Նշ՝ իբր հագագումն կամ հաչհաչումն։

ՅԱԴՉԻԼ *«զգեստը վրան կպիլ, մարմնին լաւ փակչիլ» Ոսկ. ա. տիմ. ը. ուրիշ վկայութիւն չկայ։*

Նշ՝ իբր յանկչիլ։ *Տէրվ. Նախալ. 109 կգում է հանգչիլ, հանգոյց, յանգչել, յանկչիլ ևն ձևերին, բոլորն էլ դնելով հնխ.* sak *«հետևիլ» արմատից։*

ՅԱԴԴԵԼ *«հրել, մշտել, բոթել» Ոսկ. մ. ա. 17. ուրիշ վկայութիւն չկայ։*

Նշ՝ լծ. եբր. և արաբ. ճատ *«ձեռք», յն.* σὺν-ωθέω *և թրք.* էօթէյէ տիւրմէք *«այն կողմ հրել»։*

***ՅԱՂ** *«զոհ, զոհաբերութիւն», արմատ առանձին անգործածական, որից* յազել *«զոհը կտրատելով աստուածներին նուիրել» Ա. մակ. ա. 50. Եզն. Եփր. Բգ.* յազածոյ *«զոհած» Եղիշ.* յազումն կանոն. անյազ *«չզոհած, չզոհած» Եղիշ. բ. էջ 40, տե՛ս նաև* յաշտ։

=Պհլ. yazēm *«պաշտեմ»,* yazeŝn *«պաշտում»,* yaštan *«պաշտել, նուիրագործել», պազ.* yaštan, *գնդ.* yazaiti *«զոհել, ձօնել»,* yasna- *«զոհ», հպրս.* ā-yadana- *«տաճար»,* yadātaiy *«թո՛ղ զոհաբերէ՛», սանս.* yaj, yájati *«զոհել, ձօնել»,* yajña- *«զոհ» ևն։ Այս բառերը պատկանում են հնխ.* yag՛-

«պաշտել» արմատին, որին պատկանում են նաև յն. ἅγος «պաշտամունք, զոհաբերություն», ἅγιος «սուրբ, նուիրական», ἁγίζω «նուիրագործել, զոհ մատուցանել», ἄζομαι «յարգել», ἁγνός «մաքուր, պարկեշտ», ἁγνίζω «մաքրագործել», παναγής «նուիրական, ամենասուրբ», παναγία «ամենասրբուհի, աստուածածին» (Pokorny 1, 195, Boisacq 7): — Հիւբշ. 197։

ՆՀԲ լծ. թրք. yüzmek «մորթը սկրթելով հանել» կամ yazəq itmek «վնասել իւիք»։ Ուղիղ մեկնեց նախ Windisch. 13, 16, յետոյ Böttich. ZDMG 1850, 358, 175, Arica 88, 448, Lag. Urgesch. 367, Müller SWAW 38, 577, Justi, Zendsp. 242, Տէրվ. Նախալ. 100 են։ Մորթման ZDMG 26, 518 և 31, 419 աւելացնում է նաև բևեռ. is «զոհել»։ Հիմնք. զոհ բառից։

[ՅԱՂԱԿԱՆ «խռովայոյզ, անդորհական». անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Ոսկ. փիլիպ. ժե. «ՅԲԼ կաթ մի քուն հասանէ տեսանել և զայն ցնորական և յազական հրազովք հանդերձ»։ Յունարէնն ունի միայն «երևակայական»։ ՆՀԲ մեկնում է բառս «յածական կամ յուզողական», ՋԲ «անդորհական», իսկ ԱԲ ջնջած է։—Պէտք է ուղղել յուզական. հմմտ. Դ. եզր. ժդ. 14 «Ի բա՛ց ընկեա ի քէն զհոգս և զյուզական միտս»։]

*ՅԱԲ «տարր, նախանիւթ», մէկ անգամ ունի եզն. Դ. 7 (իբր ասորի բառ). «Եւ յասորի լեզու քանզի չմարթի երկին ասել, ասէ. Ի սկզբանէ արար Աստուած զյաթն երկինս և զյաթն երկիր... յաթն ասելով՝ որ է տարր»։

=Ասոր. ܝܵܬ̰ yāθā «գոյութիւն, նիւթ, իսկութիւն. 2. նշան հայցականի բաղադրեալ ձևի»։ Գործածուած է օրինակ՝ եզնիկի ակնարկած ՇՆ. ա. 1 հատուածում. ܒܫܡܝܵ ܘܒܐܪ̈ܥܵ yāθ šəmayā və yāθ ar'ā- «զերկին և զերկիր»։—Հիւբշ. 312.

ՋԲ և ՓԲ մեկնում են «տարր»։ ԱԲ «քերականի յօդ»։ ՆՀԲ չունի այս բառը։ Թոռնեան, Հաւրնտ. 1866, Ա. 57 ասոր. «տարր»։

*ՅԱԼԱԲ «պիտոյք, պարագայք» Անսիզք 47. Զարթ ի յընգօղնէն և բաղնեցն ի յալթէն—«բացի անկողնից և բաղանիսի պիտոյքներից»։

=Արաբ. آلَة ālat «գործիք», որի յոգնակին էլ լինում է آلَات ālāt «գործիքներ»։

Ուղիղ մեկնեց Անսիզքի հրատարակիչը՝ էջ 47։

*ՅԱԼԱՄ «դրօշ» Կոստ. երզն. 131։

=Արաբ. علم ʿalam «դրօշակ»։

Ուղիղ մեկնեց Պատուրեան, հրտր Կոստ. երզն. էջ 54։

ՅԱԽԻՄԱԽՍ «ընդ վայր օգտումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 218։

ՅԱԽՃԱՊԱԿ, ի–ա հլ. «մոզայիկ, մանր քարերով բանուածք» Բրս. ընչեղ. Ածաբ. աղք. Ճառընտ. Պտմ. առ. լեհ. գրուած ախնապակ Շնորհ. տաղ. որից յախնապակեայ Ոսկ. մ. բ. 25. յախնապակապատ Փիլ. տես. յախնապակել Գնձ. Անան. նկեղ. նոր գրականում յախնապակի նշանակում է «porcelaine»։

ՀՀԲ ապակի բառից։ ՆՀԲ խիճ և ապակի բառերից, իսկ յա– դնում է իբր թրք. ayaq և հյ. աւ «ոտք», որ գրանում է նաև յախնքոր, յաղթել և յատակ բառերի մէջ։

Յախորտ տե՛ս Յոխորտ։

ՅԱԽՈՒԻՒՆ «անխորհուրդ, յանդուգն» Սփր. ծն. քս. Լմբ. Սարգ. «անխորհրդաբար, յանդգնութեամբ» Ոսկ. ես. եփես. երբ. և փիլ. Սերբ. որ և յախուր կամ յախուռն Ոսկ. հռ. և բ. տիմ. յաւուր Ոսկ. ա. կոր. Փիլ. Նիւս. ախուռն Ոսկ. փիլիպ. 360. աւուր Կանոն, էջ 257. որոնցից յախուռնախօս «պոռոտախօս» Հին բռ. յաւուռնաբար Արծր. յախռապէս Ոսկ. բ. կոր. յաւուրիւն Պտմ. աղէքս. յաւուրիլ «յանդգնիլ» Մագ. թղ. 237. յաւուրանալ «յանդգնիլ, անկարգանալ» ԱԲ. զրայաւուր Թէօդ. մայրագ.։

ՆՀԲ և ՋԲ առանձին յիշում են նաև աւուր (իբր արմատակա՞ն ձև). բայց հանում են խուռն և աւն բառերից։ Karst, Յուշարձան 416 մոնգոլ. axur, uxur, oxor, բուր. okor, կալմ. axor, oxor «կարճ»։

*ՅԱԽՏԻԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Կանոն. «Որք ի գազանս և յանասունս յան-

դրգնին, նման են այնոցիկ, որ ընդ դևս յախտին»։

ՆՀԲ հասկանում է «յաղթիլ կամ յոխորտիլ», ԱԲ «հիւանդանալ», ՋԲ չունի։ —Թուի թէ պէտք է հասկանալ ախտանալ «յարիլ յիրս ինչ ախտաւոր կրիւք և զգածմամբ, անկղիտանալ»։—Ա՛ճ.

+ՅԱՄ *«պտոյտ». արմատ առանձին անդործածական, որից* յածիլ *«ման գալ, թափառիլ, տատանիլ»* ՍԳր. յածեցուցանել Թուց *լբ. 13.* յածումն ՍԳր. յածաչու *Մագ.* յածեզաձի *«ժովահէնի նաւ»* Պերիարմ. յածուն Պիտ. պարայածիլ Փիլ. *Խոր. ՅՀ. կԲ.* գիշերայածու *Մագ.* դատարկայած *Մագ.* յոգնայածուկ *Մագ.* յածանաւ *(նոր բառ)։*

=Բնիկ հայ բառ, կազմուած յ նախդիրով ած- արմատից. նշանակութեան համար հմմտ. լտ. agmen *«գնացք, շարժում, ընթացք»,* agitatio *«շարժում»,* agilis *«շարժուն»,* ambages *«պտոյտք, դարձուածք» ևն. բոլորն էլ* agō *«ածել» արմատից։*

Ուղիղ են մեկնել ՆՀԲ, Տէրվ. Նախալ. 60 ևն։

ՅԱԿԻՆԹ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն յետնաբար ի հլ.) «ընտիր մի ակունք» Եղ. իր. 20. Յայտ. իա. 20. «յակինթ քարից» Յայտ. Թ. 17. «նունուֆար ծաղիկը» Կոչ. 344. Ոսկ. ա. կոր. որից յակնթակ *Յայտ. Թ. 17.* յակնթակապ *Խոր. բ. 44.* յակնթապաճոյճ *Անկ. գիրք հին կտ. 156.* յակնթեայ *Բղթ. դաշ. յետնաբար գրուած է նաև* յակինթոս *Տօնակ.* ակունդ *Ոսկիփ. Վստկ. 110.* յակունդ *Խոր. աշխ.* յակինդ *Խոր. աշխ. 597.* յակունթ *Պոմ. վր. էջ 87.* աղուր *Գնձ. Վրց. առ. 205.* յաթինկոս! *Նոնն. 59 (անշուշտ վրիպակ՝ փոխանակ* յակինթոս*),* ակինթոս *Գիրք. առաք. էջ 257 բ։*

=Յն. ὑάκινθος *բառից, որ նշանակում է «յակինթ քարը և ծաղիկը», որի հետ նոյն են նաև լտ.* hyacinthus *«ծաղիկը», մբգ.* jachant, *գերմ.* Hyacinth *«քարը և ծաղիկը», ֆրանս.* jacinthe *«ծաղիկը»,* hyacinthe *«ծաղիկը և քարը», լհհ.* jachant, *ուկր. և՛ռուս.* яхонтъ, *սասր.* ʾyāqunda *կամ* yuqanṯā, *պհլ. պրս.* یاکند yākand, *արաբ. պրս. Քրք. և քրդ.* یاقوت yāqūt *«յակինթ քարը», ուղղուր.* ياقوت yaqut, *վրաց.* იაკინთი *իակինթի «ծաղիկը»,* იაგუნდი *իագունդի «քարը» ևն։ Բառի բուն աղբիւրը եգիպական կամ Միջերկրեան է* (Boisacq, *էջ 996,* Meillet Esq. lat. 86), *որից անցել է յունարէնին՝ նախ* Ὑακινθος *ձևով, որ և յետոյ յոնիական մի բարբառում ստացել է* ὑάκινθος *ձևը (փոխառութեան ապացոյց է և –ῶπος վերջավորութիւնը. հմմտ.* Κορῶπος, Լաբիւրինթոս*)։ Յունականից փոխառեալ է լատինը, լատինականից գերմանականը և գերմանականից սլաւականը* (Berneker 443)*։ Միջերկրականից են նաև սեմական ձևերը, որոնցից արաբերէնը տարածիչն է զանազան արևելեան ձևերի։ Հայերէնի մէջ յակինթոս և յակինթ ձևերը յունարնէից են, աղուր արաբերէնից է. միւսները ազդուած են ասորականից։—Հիւրշ. 366։*

Նախ ԳԴ կցնց պրս. ձևերի հետ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ ՆՀԲ։

ՓՈԽ.—Հայերէնի միջոցով են վրացի ձևերը. հայերէնից է տառադարձուած Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ՝ Յայտ. Թ. 17՝ Ոգա յակինթէ ու քիպրիթէ (որպէս յակինթ և ծծումբ)։

ՅԱԿՈՆԵԼՈ *«ամուրս». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 218։*

*ՅԱԿՈՐԻԿ *«կարմիր շնախաղող. լտ.* physalis alkekengi *կամ* halicucabus*» Բժշ.*

=Կազմուած Յակոբ *անունից. հմմտ. ֆր.* jacobée *«ճառագայթաձև ծաղիկներով մի տունկ»։*

ՆՀԲ «որպէս թէ խաղող խաբօղ» (ուրիմն հանում է Յակոբ *անունից, որ նշանակում է «խաբող»)։*

ՅԱԿՐԻ *«փշոտ մի թուփ է» Սարգ. բ. պետր. ա և յուդ. բ (բ տպ. էջ 415, 649). գրուած և* ակրի *ՀԲուս. § 42.—ըստ Ուղուրիկեան, Մասիս 1881 նոյ. 25 «*ilex aquifolium*», ըստ ՀԲուս. § 2151 «*rhamnus catharticus*», ըստ Նորայր ՀՍ. 1921, 614 «մի տեսակ գիհի կամ ցրդի»։*

Ուղուրիկեան (անդ) դնում է փոխառեալ յն. ἄγρια *համանիշից* (Bailly *ունի* ἀγριάς *«վայրի խաղող»)։*

ԳԻՒՒ.— Ըստ ՆՀԲ ոմկ. ակրի։

ՅԱԿՔԱՐԻ *«յօժարիլ» Մագ. գամագտ. ժգ. ունի միայն ՀՀԲ. իսկ ՓԲ գրում է* յակարիլ. *(ձեռ. տարբ.* յաfարել, յաfաfրութիւն, յաfագրութիւն, յաfրութիւն. *տե՛ս ՀԱ. 1911, 558). Բռ. երևմ. ունի* յակfարութիւն *«յօժարութիւն» էջ 218,* յաfարել *«յօժարել» էջ 223,* յաffարութիւն *«ճարտարութիւն» էջ 224։*

***ՅԱՀ** *«Աստուած». մէկ անգամ յիշում է կիւրղ. ծն. իբր բառ եբր.։*

=եբր. יָהּ yāh *«Աստուած» բառից, որ «եհովա» բառի կրճատ ձևն է։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Յաղագս *տե՛ս Ադագ։*

ՅԱՂԵԼ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մխ. ապար. «Կեռոսն յաղեաց զՅունան»։ Տեղից հետևցնելով պէտք էր հասկանալ «կլանել, կուլ տալ», իսկ ՆՀԲ մեկնում է «ուտկանով բռնել»՝ հանելով բրբ.* غَلّ aγ *«ուտկան, ցանց» բառից։*

ՅԱՂԹ *«շատ, առատ, հսկայ տարածութեամբ» Օր. բ. 7. Ամբակ. ի. սղ. Ագաթ. «հսկայ, վսեմ, քաջ, զօրաւոր» Եւս. քր. Ա-գաթ. Բուզ. Մծբ. Ոսկ. ես. «յաղթութիւն» Սկևռ. աղ. «տիրապէս, մի յաւ...» Վանակ. յոբ. որից* յաղթել *«թշնամուն զարնել, ուժը պատել, նուաճել» ՍԳր. եփր. Բգ.* յաղթական *Ա մկ. ժ. 49. Կոչ. Եզն.* յաղթանակ *Պիտ. Նիւս.* յաղթաճասակ *Բուզ. ժգ. 33.* յաղթաճարել *ՍԳր. Եւս. պատմ.* յաղթանդամ *Օր. Բ. 2. Վեցօր. Եւս. քր. որ և* անդամայաղթ *Ոսկ. ես. 345.* յաղթաչուր *Վեցօր. բարեյաղթ Յհ. կթ. մեծայաղթ Ոսկ. ես. Վեցօր.* յաղթկու *Պատմ. աղեքս. 33. փիլ. Նանայ. 383. Նեմես. էջ 91. Խոսր. 170.* յաղթուկ *Ոսկ. յհ. բ. 29.* սաստկայաղթ *եփր. մն.* դիւրայաղթ *Ոսկ. գծ.* դժուարայաղթ *Նոնն.* ասառուածայաղթ *Ագաթ. եւթաղ. 88։*

ՆՀԲ լծ. բրբ. alt *«տակ», լտ.* altus *«բարձր, խոր», պրս.* saxt *«քաջ, մեծ, խիստ». տե՛ս նաև* յախճապակ։ Peterm. *33 լտ.* victoria *համանիշի հետ. դնելով* j=v, դ=c, p=t: Müller SWAW 41, *էջ 8 զնդ.* pərəθ *«փախչիլ»։* Justi, Zendsp. 186 *զնդ.* parəṭ *կամ* parəθ *«կռուիլ, փախչիլ»։ Հիմնք. յաղդաղդ բառից։ Սանտալճեան,* L'idiome 16 *բևեռ.* alšuisi: *Ա. Գ., Բիւր. 1900, 518 մերժում է բրբ.* alt itmek *«յաղթել», որ ծագում է* alt *«տակը» բառից։* Scheftelowitz BB 29, 27 *կցում է յն.* πλατύς *սանս.* pṛthú-, *զնդ.* pərəθu- *«լայն» բառերին։* Meillet, Dial. indo-eur. 81 *յիշում է այս բառերը, որոնք ձևով էլ նըման է գտնում, բայց մերժում է նշանակութեան տարբերութեան պատճառաւ (Պէտք է աւելացնել նաև, որ սրանց համապատասխան հայ ձևն է* լայն): Karst, *Յուշարձան 402 սումեր.* al *«բարձր», 421 թթր.* al, ol, ul, *ուղուր.* alp, alk, *չաղաթ.* alp, ulup *«մեծ, բարձր»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 277 պրս.* اخْتَن axtan *կամ* یاخْتَن yāxtan *համանիշից, որ x ձայնի պատճառաւ չի կարող մեր բառի մայրը լինել։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 89 սեմական* slt *արմատի հետ, որից և* sulṭan *«սուլթան»։*

ԳԻՒՒ.—Ջղ. ǯախթել, *Ադլ.* յա՛խտիլ, *Մշ.* ǯախտել, *ՀԹ.* ճախթիլ, *Մկ.* ճոխթիլ, *Երև.* ճախտէլ, *Սլմ.* ախտել, *Մրզ.* ախտէլ, *Ոզմ. Տփ.* ախտիլ, *Խրբ.* ախդիլ *«յաղթել»,* էխդիլ *«ուժը պատել», Աալ.* ախդէ՛լ, *Ալշ.* ǯէխթել, *Ռ.* էխթէլ, *Շմ.* յէխտիլ, *Ախց. Կր.* էխտէլ, *Հմշ.* էխտուշ, *Ակն. Պլ. Սեբ.* էխդէլ, *Ննխ.* ըխտէլ, *Տր.* ըխտուշ, *Դրբ.* յէ՛խնէլ, *Սչ.* էխդ՛ել։ *Նոյն է նաև Ախց.* յէխդ, *եթէ այս բառը նշանակում է «առատ, վարար» (=յաղթ). Համմտ. Ջրին նախ գալը կտրելու նշան է (Վարդանեանց, ժող. անդիր բնստ. էջ 85)։*

ՅԱՂԿԻԼ *«նեխիլ, հոտիլ, մարմինը փտելով քայքայուիլ» Բուզ. գ. 19. ուրիշ վկայութիւն չկայ։*

ՆՀԲ յիշում է աղ, ճեղճեղկիլ, յեղյեղկիլ։ *Հիմնք. յաղել բայից։*

ՅԱՂՄԱՆՈՒԻՆ *«բազմանուն». ունի միայն Բառ. երևմ. էջ 219։*

ՅԱՃԱԽ, ի–ա *հլ. «շատ, բազմաթիւ» Ոսկ. ա. կոր. «յաճախութիւն, ամէն օր շարունակելը» Բ. մակ. ա. 8, ժ. 3. «առէպ, միշտ, ամէն անգամ» ՍԳր. որից* յաճախել *«շատացնել, աւելացնել» ՍԳր. Եզն. (տարբեր իմաստ ունի եփր. յոբ. ՀԱ. 1912, 670, տող*

197), յաճախութիւն ՍԳր. յաճախաբար Ոսկ. ես. յաճախագոյն Ագաթ. Կորիւն. Եւս. քր. յաճախագունդ Եւս. քր. Ոսկ. ես. յաճախագութ Ոսկ. ես. և մթթ. Սեբեր. յաճախուդ (նոր բառ)։

ՆՀԲ լծ. հյ. ճոխ, աճեցուն, ւրք. čoq «շատ», səq «խիտ»։ Հիւնք. յաշաղել բայից։ Lidén IF 18, 503, Arm. Stud. 76, Pedersen Հայ. դր. լեզ. 62 և Meillet, Altarm. Elementarb. 198 հանում են աճել բայից յ նախդիրով (բայց առանց մեկնութեան է մնում -ախ)։

ՅԱՃԱԿԱՆ «յարիլ ինչ». ունի միայն Բառ. երեմ. էջ 219։

ՅԱՄ «ուշ, կամաց, դանդաղ». արմատ առանձին անգործածական. որից կազմուած են յամով «ուշ» Կլիմաք. Շնորհ. եդես. յամել «ուշանալ, դանդաղիլ» ՍԳր. Ոսկ. Սեբեր. Վեցօր. «երկայնամտիլ, յարատևել, հանապազորդել» Ոսկ. մ. ա. 22, 23 (=մհյ. յեմել «ուշանալ» Անսիզք 15, 23, 25), յամենալ ՍԳր. Եփր. հռ. յամեցուցանել ՍԳր. (=մհյ. յեմեցնել «ուշացնել, յետաձգել» Անսիզք 81, յիմել, յիմեցնել «վճարը ուշացնել» Սմբ. դատ. 150, 151, 154). յամումն Երզն. մթթ. յամուրդ «յետաձգում» Եւս. պտմ. 93. մեծայամ ճառընտ. Այստեղ է պատկանում նաև յամր «ուշ, դանդաղ, կամաց» Բ. պետ. գ. 9 վրք. հց. «երեկոյ (իբրև ուշ ժամանակ)» Տիմոթ. կուզ, էջ 150. որից յամրանալ Փարպ. յամրագնաց Եզն. Վեցօր. անյամր «շուտ» Մագ. յամրաթայլ, յամրընթաց (նոր բառեր) են։ Երկուսի կապը հաստատում է Վրք. հց. բ. 396. երեք օր յամր ինդեալ (յետաձգելով, ուշացնելով) ոչ մկրտէր. ապա ի յասելն թէ ընդէ՞ր յամես...։

ՆՀԲ բոլորի էլ արմատը դնում է ամ։ Lag. Urgesch. 468 հնխ. yam «բռնել. սանձել» արմատից։ Տէրվ. Altarm. 53 և Նախալ. 100 սանս. yam «բռնել, սանձել», զնդ. yat, յն. ζητέω «խնդրել», ζημία «պատիժ» բառերի հետ՝ հնխ. yam, yat, yan «բռնել, ջանալ» արմատից։ Müller, Armen. VI և Bugge KZ 32, 22, IF 1, 449 սանս. yam-։ Müller WZKM 8 (1894), 188 պրս. جمند jamand (? չունի ԳԴ) «ծոյլ»=իրան. *yamant ձևի հետ։ Հիւնք. յամել դնում է ամ բառից, իսկ յամր՝ Հերմէս բառից։ Անդրիկեան, Բազմ. 1903, 368 նոյն ընդ ժամ, որի տակար աստիճանն է. այս առթիւ յիշում է թէ Արդուինի բարբառով ամէն ժ հնչում է յ։ Pedersen Հայ. դր. լեզ. 116 նոյնպէս ամ «տարի» բառից։ Ղափանցեան ՅԲՕ 23, 352 գնդ. yam «բռնել» բառի հետ։ Pokorny 1, 207 հակառակ է այս մեկնութեան, ըստ որում ընդունում է թէ բառիս արմատն է ըստ Pedersen ամ «տարի»։

ԴԻՒ.—Ակն. էմէլ, Սվեդ. իմիլ «ուշանալ»։

ՅԱՄԱՅՐ «երկար, շատ» (միշտ գործածուած է ամ բառի հետ. յամայր ամս «շատ տարիներ») Եւս. լ. 27. Ոսկ. մ. ա. 10. «ուշ, անագան» Արիստ. գրչ. Նար. որից յամերամ =«յամայր ամ» Վանակ. տարեմ. Օրբել. յիշ.։

ՆՀԲ դնում է «իբր յամեալ կամ ի բառէս ամ, ամեր՝ իբր ամք»։

ՅԱՄԱՌ, ի–ա հլ. «կամապաշտ, պնդադրլուխ, ուզածն անել փափագող» Ոսկ. ես. Եւս. պտմ. Ագաթ. Մծբ. որից յամառիլ ՍԳր. Ոսկ. ես. Եփր. երր. յամառոտ Ոսկ. մ. ա. 12. Եփր. հլ. էջ 149, 180. Ղևտ. Վկ. արև. 76. Մծբ. յամառութիւն ՍԳր. Եզն. Ագաթ. ևն։

ՆՀԲ «այն՝ որ յամէ յառս և յառածս իւր, կամ համայն յարեալ, լծ. լտ. temerarius»։ Տէրվ. տես յամ–ել։ Հիւնք. համար բառից։ Ղափանցեան ՅԲՕ 23, 352 յամել բայից։ Պատահական նմանութիւն ունի կիրգիզ. ومرأو omrau «յամառ» (Будаговъ 1, 158)։

ՅԱՄԱՔ «ուղղութիւն». ունի միայն Բռ. երեմ. էջ 219. արդեօք վրիպա՞կ է յամում բառից։

ՅԱՄԲԱՅՐ «յախուռն, անխնայ» Ոսկ. մ. ա. 11. «ի զուր, պարապ տեղը, վայրապար» Ոսկ. մ. ա. 13. որից ընդվայրայամբայր «բոլորովին պարապ տեղը» Ոսկ. ղգր. գ. էջ 555 (Հ. Ա. Վարդանեան, ՀԱ 1911, 176—7 բառս անջատ անջատ կարդում է ընդվայր և յամբայր). գրուած է նաև յամբոյր «վայրապար, յախուռն, ի զուր» Փիլ. նխ. բ. 117. Լծ. փիլ. Սարկ. Հանգ. (Վարդանեան, անդ,

այս բառը համարում է սխալ գրչութիւն) «առանց երկար քննութեան, հապճեպով դատուած» Անան. թրգ. 5։

ՆՀԲ երկուսը տարբեր բառեր համարելով՝ յամբայր *մեկնում է* յամրոկ, յամառ, յամբոյր *ձևերով, իսկ* յամբոյր *մեկնում է «խոտորնակ, թրք.* yampuri *կամ հյ.* անհամբոյր»։

***ՅԱՄԲԱՐ**, որ և* յամպար, ամբար, յանպար, ամպար *«անուշահոտ մի ծաղիկ. լտ.* ambra» *Բրս. մրկ. 385. Բժշ. Պտմ. վր. նոր գրականում սրանից են* յամբարաճոտ, յամբարաբոյր *են։*

=Արաբ. عنبر ‘anbar *«յամբար», որ փոխառութեամբ տարածուած է բազմաթիւ լեզուների մէջ. ինչ. պրս.* anbar, *թրք. քրգ.* amber, *լտ.* ambar, ambra, *սպան.* alambar, *ֆրանս.* ambre, *վրաց.* ამბარი ամբարի, ამბრი ամբրի *են։*

Ուղիղ մեկնեց Պատկ. Драгоц. камни, *էջ 58։*

***ՅԱՄԲԻԿՈՆ**, որ և* ամբիկոն, ամբիկուն, ամպիկուն *«մեծավերջ, մէկ սուղ և մէկ երկար ոտքերից բաղկացած ոտանաւոր» Յայտմ. յունվար 25։*

=Յն. ἴαμβος, ἰαμβικόν, *լտ.* iambicus, *ֆրանս.* iambique. *յոյն բառի համար առաջարկուած են զանազան սուտգարանութիւններ, բայց* Boisacq 363 *մերժելով բոլորը, կարծում է փոխառեալ (թրակո-փռիւգական?)։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ՅԱՄՈՅՐ**, ի–ա հլ. «վայրի այծ, այծեամ» Յոր. լբ. 1. Օր. ժդ. 5. Փիլ. հլ. բ. 101. Խոր. բ. 81. գրուած* յամօրէ *Սիմ. ապար. 30. որից* յամոյրանման *Խոր. աշխ. 615։*

=Ասոր. ܝܰܚܡܘܪܳܐ yaxmūrā, *որի հետ նոյն են եբր.* יַחְמוּר yaxmūr *(երկուսն էլ գործածուած Օր. ժդ. 5, ճիշտ հայերէն բառի դէմ) և արաբ.* يحمور yaḥmūr *«այծքաղնների (antilope) ցեղից կարմրագոյն մի անասուն կամ ցիռ» (կայ նաև արաբ.* يامور yāmūr *«արու եղջերու» կամ «մի տեսակ քարայծ» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 753 և Բ. 158)։ Բառը բնիկ սեմական է և ծագում է* ḥmr *«կարմիր» արմատից* (Gesenius[17] 242, 298)։— *Հիւբշ. 312։*

ՆՀԲ պրս. համուր, եէմուր։ Lag. Ges. Abhd. 52 *վերի ձևով։ Նոյնը նաև Պատկ. Խոր. աշխ. 80։ էմին.* Династ. списокъ 1884 *(արտ.* Изслѣд. и стат. *էջ 186)* –ոյր *մասնիկով կազմուած։*

ՓՈԽ.—Վրաց. იამოარი *իամոաիրի կամ* ნიამორი *նիամորի «վիթ», գործածուած Օր. ժդ. 5 հայ բառի դէմ, որից տառադարձած է, թարգմանութեան ժամանակ։*

ՅԱՄՍՈՍ *«օդի մի տեսակ». մէկ անգամ գործածել է Եպիփ. կիպր. (վկայութիւնը տե՛ս մաղնեակ բառի տակ)։*

*—**ՅԱՄՐ** տես* յամ, *որից ձևացած է* ր *մասնիկով։*

ՅԱՅ, *կրկնութեամբ* յայ յու *(որովհետև կարելի չէ ասել հյ.* յույ*) «հիգնական կամ ծաղրական բացագանչութիւն. աւտում է օր.* յա՛յ կարդալ, յայ յու առնել *«ծաղրել, հիգնել» Ոսկ. մ. բ. 10, 23։*

=Բնաձայն բառ, ճիշտ այնպէս, ինչպէս այժմ Պօլսում ունինք yú ha! *ծաղրական բացագանչութիւնը, որից եւսեբ. ըներ «յանախից ծաղրական բացագանչութիւններ արձակել, ծաղրել»։ Համմտ. նաև* հայհոյել, հայհուչ։

Աստուգաբանութեանց պատմութիւնը տե՛ս հայհոյել։

Յայպանաս *տե՛ս* Յապանաս։

ՅԱՅՏ, ի *հլ. «յայտնի, հրեւացող» Ոսկ. մ. գ. 24. Եփր. Համար. «յայտնապէս, բացորոշ կերպով» Եզն. Ոսկ. մ. ա. 8. Եփր. Թգ. «յայտնի, նշանաւոր» Մծբ. 204. որից* յայտ առնել, ի յայտ գալ, յայտ ածել *«հրեան հանել, գալ» ՍԳր. Ոսկ. ես.* յայտ յանդիման *ՍԳր. Եզն. Ոսկ. մ. ա. 4.* յայտագոյն *Բուզ.* յայտական *եւագր.* յայտապատկեր *Կոչ. 213.* յայտակ *«յայտնի» Տիմոթ. կուզ, էջ 200 (Ա. մեռեցուն յայտակ կացուցից), որից* յայտակարար *«զեկուցագիր» Մխ. գտ. 267.* անյայտ *ՍԳր.* անյայտումն *«անհետացում», որից* անյայտումն աշաց *«կուրութիւն, տեսողութեան կորուստ» Ուխտ. բ. 128.* յայտնի *ՍԳր. Ոսկ. եփր. Ագաթ.* յայտնական *Ագաթ.* յայտնել *ՍԳր.* ճաշայայտ *Արծր. փիլ.* ճրա-

պարակայայտ *Մաշկ. բրս. պհ.* բացայայտել *Ոսկ. գաղ. Ագաթ.* կանխայայտնեալ *Ագաթ.* նախայայտ *Դիոն. երկն. ևն։*

ՆՀԲ «լծ. հյ. այտ՝ *որպէս ի դուրս երևեալ և այտուցեալ, մանաւանդ թրք.* այտրն, այաև, պէյան»։ Müller SWAW *86, 291 զնդ.* haidya *և սանս.* satya, *որոնց հետ* Lag. Beitr. bktr. Lex. 31 *կցում է նաև յն.* ἑτεός «ստոյգ»։ *Հիւբշ.* Arm. Stud. *էջ 13 մերժում է սանս.* satya=*զնդ.* haiθya=*հպրս.* hašiya «ճշմարիտ, ստոյգ»։ *Հիւնք. պրս.* huvaydā «յայտնի»։ Patrubány *ՀԱ 1906, 345* այտ «ուռիլ» *արմատից յ նախդիրով՝ ինչպէս որ ց նախդիրով էլ կայ* ցայտել։ *Թիրեաքեան, Ատրպատ. ծան. 1 պհլ.* paytak, *պրս.* paydā *և* huvaydā «յայտնի»։

Գիւտ.—Սչ. հայդնել, *Ագլ.* հա՛յտնիլ, *Երև. Կր.* հայդնէլ, *Շմ.* հայդնիլ *ևն փոխառեալ են գրականից. ունինք սակայն Ջթ.* այիդ էնել «յայտ առնել» (*տե՛ս Աւետարան ըստ Մարկոսի, Ջէյթունի գաւառականով, Պօլիս 1913, Գ. 12*)։

ՅԱՅՐԱՏ, ի–ա *հլ.* «անառակ, անամօթ, լիրբ, պագշոտ» *Սիր. իթ. 5. Ոսկ. մ. ա. 17. մթ. տիտ. յիտնաբար գրուած է նաև* յարատ, այրատ, արատ. *որից* յայրատիլ *Ոսկ. կող. ժբ և մ. բ. 12 (*այրատիլ *Ոսկ. ա. տիմ. էջ 40).* յայրատութիւն *Մծբ. Ոսկ. մ. ա. 16. բ. տիմ.* յայրատաբաց *Կոչ. 231.* յայրատագոյն *Բ. մկ. ժգ. 30. Ոսկ. մ. ա. 6, 17.* ակնայայրատ *Նար. և այլն։*

Հիւնք. յն. ἐρωτηκά «սիրային» բառից։ Karst, *Յուշարձան 421 մեկնում է իբր* *յայր-նատ, *այր-նատ *և* *այր «ամօթ» արմատը կցում է թրք.* ar «ամօթ» *բառին, որից* ar-səz «անամօթ»։

ՅԱՆԳ. *անառոյգ բառ, որ գտնում եմ հետևեալ հատուածի մէջ. «Զոր օրինակ որ յանգն յաղթիցէ և զապստամբսն կապիցէ». Սեբեր. էջ 40։*

+ՅԱՆԳ «վերջ, ծայր, եզր. 2. յարմար, պատշաճ, վայելուչ». *որից* յանգիլ, յանգուցանել, յանգչիլ *ևն։*

= *կազմուած է յ նախդիրով անկ արմատից. տես* անկ–անել։

ՆՀԲ «ի ձայնէս անկ, անկումն կամ յանկչելն, հանգիստ»։ Հիւնք. անկանիլ *բայից։ Տէրվ. տե՛ս հակ բառի տակ։*

Գիւտ.—Երև. Տփ. անգ «եզերք (կերպասի, կտորի)», *նաև «կերպարանք». օր. Երև. Կաամ՝* անգդ կծովի *(այնպէս կզարնեմ որ ...).—ունինք նաև Խոջ. լէոի հանէ «ամառ ժամանակ լեռներն ու բարձրադիր արօտավայրերը ամառանոց երթալուց յետոյ դիւղ վերադառնալը» (իբր լեռի յանգ—վերջ)։*

ՅԱՆԳԱՀԱՆԱԼ. *անառոյգ բառ, որ մէկ անգամ ունի Պիտ. 553. «Քանզի քաջայայտ ամենեցուն, զի զյառաջագոյն յապահովագրութեամբ յանդահացեալսն յորժամ ընդ իւրով քաղցր ըմբռնմամբն արկցէ, անդրէն քննողս և նախահոգակս դիտելոյ... պատրաստէ»։*

Թուի ուղղելի անհոգացեալ։

Յանգուրճ *տե՛ս Անկարճ։*

ՅԱՆԴԻՄԱՆ «զէմը, դիմացը» ՍԳր. որից յանդիման առնել *կամ* կացուցանել «ներկայացնել» *ՍԳր. «յայտնի դարձնել, փաստել» ՍԳր.* յայտ յանդիման *ՍԳր.* յանդիմանել «դիմացը կանչել, յանցանքները երեսին տալ, կշտամբել» *ՍԳր. Ոսկ.* յանդիմանութիւն *ՍԳր. Կոչ.* յանդիմանակաց *Դ. Բագ. թէ. 8, 19. Երեմ. լե. 19. Եւագր.* յանդիմանատես *Ագաթ.* յանդիմանատուր *Ագաթ. ևն։*

=*Պհլ.* 𐭠𐭭𐭣𐭬𐭬𐭠𐭭 andēmān, *մանիք. պհլ. (տե՛ս* Salemann, Man. Stud. ЗАН 8, *էջ 85)* הנדמן handeman «զէմը, առջևը». *համմ. պհլ.* andēmānkar «ներկայացնող», andēmānīh «առանին ծառայութիւն» (*բուն «մէկի առաջ ներկայանալը»*), *պազ.* andīmāni (=*պահլ.* *andēmānīk) «զէմը, առջևը». պարզ արմատն է պհլ.* 𐭣𐭬 dēm, *մանիք. պհլ.* דים dīm>*հյ.* դէմ։—*Հիւբշ. 141։*

ՆՀԲ հյ. դէմ *բառից։ Տէրվ. Նախալ. 118 սանս.* anti, *յն.* ἀντί, *գոթ.* and *բառերի հետ՝ իբրև յ–անդի–ման։ Հիւնք. և Մառ* ИАН *1918, 344* դէմ *բառից։*

Գիւտ.—Ջղ. ջանդ՛իման «դիմացը»։

ՅԱՆԴՈՒԴՆ (*յգ.* յանդգուճ) «խրոխտ, անվախ, աներկիւղ» *ՍԳր. Ոսկ. յհ. բ. 30. որից*

յանդգնիլ *ՍԳր. Ոսկ.* յանդգնութիւն *ՍԳր.* յանդգնագոյն *Գ. մկ. ա. 9. Բ. կոր. ժա. 23.* յանդգնաբար *Եղիշ.* յանդգնօրէն *(նոր բառ)* ևն։

Հիւնք. անդունդ *բառից՝ իբր «գնամ ընդ անդունդս»։*

Յանդրանալ *տե՛ս Անդ։*

Յանկարծ *տե՛ս Կարծ։*

Յանձանձել *տե՛ս Անձն։*

Յանց, Յանցանք *տե՛ս Անց-անել։*

ՅԱՇ. *առանձին չի գործածւում. սրանից յաշ կենալ «լրտեսել, դիտել՝ տեսնելու համար թէ ո՛վ է» Վրդ. առկ. 140։*

**ՅԱՇՏ, ի հլ. «կուռքերին եղած զոհ» Ագաթ. եզն. Եղիշ. գրուած է նաև յաշդ, աշդ, աշտ. որից յաշտածին եզն. յաշտարար «զոհ մատուցանող» Բառ. երեմ. էջ 220 = աշտարար ԱԲ. անյաշտ «չզոհուած» Եղիշ. նոյնպէս և Աշտիշատ կամ Յաշտիշատ տեղանունը։*

= Պհլ. 𐭩𐭮𐭮𐭬 yašt *«աղօթք, երկրպագութիւն» բառից, որի հետ նոյն են զնդ.* yašta- *«Աստուած պաշտելը, աղօթք», պհլ. պազ.* 𐭩𐭮𐭮𐭠𐭩𐭭 yaštan *«պաշտել զԱստուած, սրբազնագործել», փոխառութեամբ նաև ասոր.* ܝܫܬ yašt *«զրադաշտական աղօթք, պաշտօն». բոլորի արմատն է զնդ.* yaz- *«զոհել, նուիրաբերել», որի անցեալ դերբայի ձևից է* yašt. *տե՛ս և հյ. յազել։—Հիւբշ. էջ 197։*

Ուղիղ մեկնեց նախ S. Martin, Mém. s. l'Arm. 2, 477 *կցկլով զնդ.* yašt *բառին։ ՆՀԲ յծ. պրս. աշտի «հաշտութիւն», եէշրէ «նուէր», լտ.* hostia *«զոհ»,* festum *«տօն»։* E. Boré JAs. 1841, 652 *պրս.* یزد Yazd *«Աստուած»։* Böttich. ZDMG 1850, 358, 175, Arica 89, 448, Lag. Urgesch. 367 *յազել ձևից։* Müller SWAW 38, 580 *են զնդ.* yašta: Justi, Zendsp. 249 *զնդ.* yēšti: *Հիւբշ. KZ 23, 9 փոխառեալ զնդ.* Yēšti-*ից։ Տէրվ. Մասիս 1882, յունիս 7 պհլ.* yašt *«զոհ»։ Նոյն, Նախալ. 100 առնս.* yaj, *զնդ.* yaz, *պրս.* yaštan, *յն.* ἅτομαι, ἅγιος *ձևերի հետ, բայց բնիկ հայ լինելու վրայ կասկածելով։ Հիւնք. հաշտ բառից։*

Յաչաղ *«նախանձ» տե՛ս Աչք։*

ՆՀԲ «աշօք աղելն, աղարտելն, այլայլութիւն»։ Հիւնք. հաջել բայից։

Յապաղել *տե՛ս Ապա։*

ՆՀԲ յծ. հյ. ապա, այլ և *Թրք.* եափեա։ *Հիւնք. յն.* ἀπάγω *«տանիլ»։*

**ՅԱՊԱՆԱՍ «արհամարհանք, թշնամութիւն» (սխալմամբ գրուած նաև* յայպանաս, յապանա). *երեք անգամ գործածում է Մծբ. «Սէր հեռի է յապանաս ասելոյ» (էջ 338). «Յապանաս բարբառով» (էջ 234)։ «Սոքա են... պարտաւորիչք արդարոց և որդիք յապանասի» (էջ 371)։*

= Ասոր. ܚܣܪܢ yapanas *բառից տառադարձուած. գտնւում է Զգօնի բնագրի համապատասխան տեղերում. ասորի բառի նշանակութիւնը շատ տարբ չէ.* Parisot *մեկնում է «արհամարհանք, թշնամութիւն»։*

ՀՀԲ մեկնում է բառս՝ «այպանող, արհամարհոտ, տոպր, դաժան, դժնդակ. 2. այպանք, քամահանք են»։ ՆՀԲ «չար սատանայ կամ Թրք. եապանա «վայրենի»։ ՋԲ, որից նաև ԱԲ, «այպանող, արհամարհոտ, դժնդակ. 2. արհամարհութիւն կամ անէծք»։ Ուղիղ մեկնեց վերի ձևով Վարդանեան ՀԱ. 1913, 135։

ՅԱՊԱԻԻԼ *«կտրել, ծայրից կրճատել, խուզել» ՍԳր. Վեցօր. 97. որից յապաւաճ Պիտ. յապաւիչ Շնորհ. յապաւումն Մաքս. եկեղ. Մաշտ. ջհկ. գրուած է նաև ապաւել Եղիշ. դտ. (որ Բռ. երեմ. էջ 27 մեկնում է «լուանալ»)։*

Հիւնք. ապ բացասականով աւելի բառից։

**ՅԱՊԻՊԱՅ «հողմ ինչ արևմտեան». ունին միայն ՀՀԲ և ՋԲ (իբր նոր բառ)։*

= Յն. ἰάπυξ, ἰάπυγος *«արևմտեան-հիւսիս-արևմտեան քամի». յառաջանում է բառս հարաւային Իտալիոյ Ἰαπυγία գաւառի անունից։—Աճ.*

Յապուրակի *տե՛ս Ապուրակի։*

ՅԱՊՏԻԼ *«ծպտիլ, այլակերպիլ, մտանել յայլ կերպարանս, ձևանալ». ունի միայն ՀՀԲ. անստոյգ բառ։*

ՅԱՊՏԿՈՅ *«անկասկած կամ անգործ». ունի միայն Բառ. երեմ. էջ 220։*

Յաջող *տե՛ս Աջ։*

ԳԻՒ.—Ոգմ. հաջ՛օղիլ, *խրբ.* աջ օղիլ, *Ակն.* աչէօղ, *Մշ.* ֆաճող.— *իսկ Մշ.* աչողել «օգնել» (*անշուշտ* Աստուած յաջողէ՛ *ձևից*)։

—ՅԱՋՈՐԴ «մէկից յետո՛ եկող, ժառանգ» *Եւս. քր. Ոսկ. մ. ա. 4. որից* յաջորդել *Իմ. ժէ. 20. Ագաթ. Կորիւն. Ոսկ. մ. ա. 8. «շարայարել, խօսքը առաջ տանիլ» Նանայ 117.* յաջորդութիւն *Եւս. քր.* նախայաջորդ *Գր. տղ.* նոր բառեր են յաջորդաբար, յաջորդական, յաջորդաբաո են։

=*Կազմուած է յ նախդիրով և* -որդ *մասնիկով (հմմտ.* նախ-որդ) աջ *արմատից, որի վրայ տե՛ս առանձին։*

ՆՀԲ աջակից *կամ* նորա *բառերով է մեկնում։ Տէրվ. Երկրագունտ 1883, 170* յաջ *անդորձածական մի արմատից՝* -որդ *մասնիկով։—Հիւնք.* աջ *բառից։*

ՓՈԽ.—Ուտ. hajort՛ «յաջորդ» (*եկեղեցական բառ*)։

ՅԱՌԴԱԼ «արդիւնի, սանձալ». *անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Ոսկ. բ. տիմ. ա. «Չյաւագեմք, չածեմք ի խրատ զատահակս»։*

ՆՀԲ հանում է գառագեղ *բառի՞ց։ Ա՛Բ չունի. արդեօք լաւագոյն մի ընթերցուա՞ծ է գտել։*

ՅԱՒԵԼ «երկարել, մեկնել (ձեռքը)» *Երգ. ե. 4, «տնկել (աչքը, աչքերը)» Նար. Խոսր. որից* յաւիլ «երկարելով նայիլ, կարկառիլ» *ՍԳր. Տիմոթ. կուզ, էջ 271 (որ և* յառուլ *Սիր. ժդ. 24). «կախուիլ» Տիմոթ. կուզ, էջ 99—100.* յառումն *Նար. Խոսր. պտրգ.։*

ՆՀԲ «ի ձայնէս առ կամ յաբեղ, *լծ. և* յեռուլ *և կարկառել»։—Հիւնք.* յեռուլ *բայից։*

+ՅԱՒՆԵԼ *(կտր.* յաբեայ, *հրմ.* արի՛) «ոտքի հլնել, վեր կենալ, կանգնիլ, քնից վեր կենալ, յարութիւն առնել, կենդանանալ, արշաւել, վրան յարձակիլ» *ՍԳր. որից* յարուցանել *ՍԳր.* յարուցիչ *Ագաթ.* յարութիւն *ՍԳր.* չյարութիւն *Եզն.* վաղայարոյց *ՍԳր.* մեռեալարոյց *Մեծոբ.* գեռայարոյցք *Վանակ. տաբեմտ.* յառաջյարուցումն *Կենս. Դիոն. (ՀԱ 1913, 654),* անյարիր *(սխալ կազմուած) «չյառնելի» Եղիշ. Նար.* դիւրայարոյց *Ոսկ. երր.* կիսայար *Նար.։*

=*Բնիկ հայ բառ, որի բուն արմատն է* ար, *ինչպէս ցոյց է տալիս հրմ.* արի՛. *ծագում է հնխ.* ṛ *արմատից* (Meillet MSL 8, 155), *որ ստորին ձայնդարձն է հնխ.* er, or *արմատի. սրանց հետ համմտ. սանս.* ṛṇóti, *կտր.* úd ārta «յարեաւ», árvā, árvan-, árvant- «քաջընթացիկ», árṇas «հեղեղ», *զնդ.* ərənaoiti «երթալ», aurvō «արագ», *քուչ.* eror, erṣam «յարուցանել», *յն.* ὄρνυμαι «յառնեմ», ὦρτο «յարեաւ», ὄρσο «արի՛, ե՛լ, վե՛ր կաց», ὀρούω «իսկոյն վեր կենալ՝ ոտքի վրայ կանգնիլ, խոյանալ, վրան յարձակիլ», ὄρθρος «արեւածագ», *լտ.* orior «յառնեմ», orīgo «ծագում», *հիսլ.* arna, arnaða «երթալ, վազել», ǫrr «աշխոյժ», *անգսք.* ryne «վազք», earu «արագ, աշխոյժ», *անգլ.* run «վազել», *հրգ.* runs «ջուրի ընթացք, գետ», *հսաքս.* aru «աշխոյժ» են են, որոնց ընդարձակ ցանկը տե՛ս Pokorny 1, էջ 136—142, Boisacq 714, Walde 547, Ernout-Meillet 679, *որ յաբեայ ձևի մէջ ի դնում է=լտ.* oritur են *ձևերի* i-ի *հետ։—Հիւրշ. 477։*

ՆՀԲ «արիաբար ի վեր ելանել»։ Peterm. 33 *և* 227 *սանս.* jāgṛ, *յն.* ἐγείρειν «կանգնեցնել, յարուցանել»։ *Ուղիղ մեկնեց նախ* Müller SWAW 41, 8 *համեմատելով զնդ.* ərə, *յն.* ὄρνυμι *ձևերի հետ։* Justi, Zendsp. 29 *զնդ.* ar «երթալ» *և 102 զնդ.* gar «հսկել» *արմատների տակ։ Հիւրշ.* Arm. Stud. § 209 *ունի ուղիղ մեկնութիւնը։ Տէրվ. Նախալ. 62 վերիններին և* երթալ *բառի հետ՝ հնխ.* ar *արմատի տակ։ Հիւնք. յն.* ὄρνυμι *-ից։* Karst, *Յուշարձան 402 սումեր.* ari «exaltation», 421 *ալթայ.* ör, ür «վեր», *չաղաթ.* ör, ur «բարձր» են։ *Պատահական նմանութիւն ունի Բերբերիատանի՝ Սահարայի սեմադրիների լեզուով* արի՞ «ե՛լ, վե՛ր կաց, ե՛կ, արի՛» *(Բիւր. 1900, էջ 474)։*

ԳԻՒ.—Առանձին բայաձևը չկայ, բայց տեղ տեղ գործածւում են հրմ. արի, արիմ *ձևերը՝ իբր միջարկութիւն, «ե՛կ, եկո՛ւր էկէ՛ք» նշանակութեամբ. այսպէս՝ Սլշ. Ախց. Երև. Կր. Ննխ. Տփ.* արի, *Վն.* արե՛, *Մկ.* արը՛, *Սվեդ.* որէ՛, *Սլմ.* յո՛րի, *Մրզ.* յոր։ *Այս նշանակութիւնը յառաջացած է նրանից,

որ «երթալ-գալու» գաղափարին գուգորդուած է միշտ «ելնել, վեր կենալ» գաղափարը. ինչ. ելաւ եկաւ, ելաւ գնաց, վեր կացաւ գնաց, *նոյն իսկ նախատաբար* մնկուէ՛ չխուէ՛ *(Ախց.) «վեր կաց գնա՛». սրա համեմատ էլ* արի՛ եկ, *որից սղուելով ձևացել է մէյ.* արե՛կ *«է՛կ, եկո՛ւր, արի՛». իսկ նոր գաւառականներում երկրորդ բայը յապաւելով՝ մնացել է միայն* արի՛՝ *նոյն «արեկ» իմաստով (տե՛ս Մաքսուդեան, Արրատ. 1915, 408)։ Գրեթէ նոյն բանն է արաբ.* تعالَ ta'āla, *որ բուն նշանակում էր «բարձրացիր, վե՛ր կաց, է՛լ», բայց յետոյ եղաւ պարզապէս «եկո՛ւր, է՛կ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 881)։ —Այս միջարկութիւնից դուրս ունինք նաև* յարիլ վն. *«յարութիւն առնել»,* Յարութիւն *«Քրիստոսի յարութիւնը, Ջաուիկ», (նաև իբր յատուկ անուն՝* Առութիւն, Առութ, Յարութ, Արթին, Արթօ, Յարօ, Թիւնի, Աթիւն *ձևերով), հարյավ (Քրիստոս յարեաւ) և ծծկ. «գողանալ, գողութիւն անել»։*

ՓՈԽ.—Ուտ. արի *«եկած»։*

**ՅԱՍՄԻԿ «մի տեսակ անուշահոտ ծաղիկ է. լտ.* jasminum fruticans L*» (Տիրացուեան,* Contributo *§ 352), որ է ռուս.* жасминъ, ясминъ *(տե՛ս* Анненковъ, *էջ 180) Ագաթ. որ և* յասմիկ *խոր. աշխ.* յասմի *Բժշ. —այս ծաղիկը պատկանում է* Oleaceae *ընտանիքին. նոյն ընտանիքին է պատկանում նաև* syringa vulgaris L, *որ է «եղրևանի, Թրք.* լէյլաֆ, *Ֆրանս.* lilas, *ռուս.* сирень*» (Տիրացուեան § 349,* Анненковъ 346). *ընտանիքի նոյնութեան պատճառով Պարսկաստանում* yasaman, *որ է «յասմիկ,* жасминъ*» ստացել է նաև «եղրևանի,* lilas, *ռուս.* сирень*» նշանակութիւնը, որից էլ վրաց. իմեր. մինգր.* iasamani *«եղրևանի,* сирень*» (*Անենկովъ 346*), հայոց մօտ էլ բարբառներում* եասաման *«եղրևանի,* сирень*» (օր. Խոյում՝ ըստ Տիրացուեան § 349), որից և Կովկասի գրական հայերէնում սխալ անդրադարձութեամբ* յասմիկ *դարձել է «եղրևանի,* lilas. сирень*»։ (Բոլորովին ուրիշ է յեսմիկ, որ է «ասորեակ,* chamaelina silvestris Wallr*». (Տիրացուեան § 159), տես* Եեսմուկ*)։*

*=ՊՀԼ. *yāsmīk և* yāsmīn *հոմանիշ ձևերից փոխառեալ. (առաջինը աւանդուած չէ, բայց անշուշտ գոյութիւն ունէր, ինչպէս ցոյց է տալիս հայերէնը. համմտ. պրս.* zamī *և* zamīn, anguštarī *և* anguštarīn *կրկնակները)։ Բառիս իրանեան միւս ձևերն են պրս.* یاسمامین yāsamīn, یاسمین yāsmīn, *բելուճ.* yāsmīn, *աֆղան.* yāsmīn, vāsamīn *«յասմիկ»։ Գտնւում է նաև ուրիշ լեզուների մէջ. ինչ. ասոր.* ܝܣܡܝ yasmā, *յն.* ἰάσμη, ἰάσμινον, *լտ.* jasme, jasminum, *իտալ.* gelsemino, *ֆրանս.* jasmin, *ռուս.* ясминъ, жасминъ, *սպան.* jazmin, azemin, *նյն.* γιασεμί, γιασουμί *են (սրանք Թրք.* yasemi *ձևի միջոցով)։—Հիւբշ. 198։*

Ուղիղ մեկնեց նախ Գ. նոյնը նաև ՆՀԲ, Lag. Arm. Stud. *§ 1551 են։*

ԳԻՒՐ.—Մկ. ասմիճ։

ՅԱՍՈՄՆ *«մի տեսակ քամի». մէկ անգամ գործածուած է անծանօթ մի գրուածքի մէջ. «Էնդ մէջ ջուրց և երկնի օդք են և բազում անգամ յօդուտ յաղթերաց և յերակս ջրոց յաճախեն. և են այսոքիկ.* յասոմն, *սուրհապ, անագումն, նեսփա. այսոքիկ են որ շարժմունս առնեն և երկինք հաստատ լինի վասն երկրի». (Հին հաւ. էջ 64). ԱՔ գրում է* յասում *ձևով։*

**ՅԱՍՊԻՍ (ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «մի տեսակ ազնիւ քար» ՍԳր. որ և* յասպի *Յայտ. դ. 3 (սեռ. -ւոյ), Լմբ. յայտ. կէ. «յասպիսից շինուած» Սամն. 67. —Յայտ. դ. 3* յասպւոյ *սեռականի դէմ նկատելու է՝ որ Լմբ. յայտ. ժ. կէ. երեք անգամ գրում է* յասպոյ, *որով ուղղականը լինում է* յասպ. *իսկ Ս. Գրքի վերջին հրատարակութիւնը (Պոլիս 1895) պարզապէս դնում է* յասպսոյ, *որով ջնջւում են թէ՛* յասպի *և թէ* յասպ *ձևերը. բուն ուղղական* յասպի *ձևը ունի Լմբ. յայտ. կէ։*

=Յն. ἴασπις *Հոմանիշից, որից են նաև լտ.* iaspis, *գերմ.* Jaspis, *ռուս.* яшмъ, *Ֆրանս.* jaspe *են. յունարէնն էլ փոխառեալ է փիւնիկերէնից. համմտ. երր.* יָשְׁפֵה yāšəpe *«յասպիս» (*Boisacq 364*). բոլորի սկիզբն է ասուր.* yašupū, ašpū, yašpu (Gesenius[17] 326), *որից էլ պրս.* یشب yašb, *արաբ.* یشم yašm *«յասպիս» են։—Հիւբշ. 366։*

ԳԴ, էջ 49 (yašm բառի տակ) պարսիկ ձևից է հանում։ ՆՀԲ յիշում է յն. լտ. իտալ. և պրս. ձևերը։

—ՅՍՏ «կտրել, մանաւանդ ծառի ճիւղերը կտրել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են յատաձել կամ յատել «ծառերի կամ մանաւանդ որթի աւելորդ ճիւղերը կտրել» ՍԳր. յատումն Շնորհ. առակ. և տաղ. յատոց «այգիները յօտելու կեռ դանակ» Նանայ. 440 (տպ. յատոյց). Սկևռ. լմբ.—Այս արմատի միւս ձևերն են՝ ՅՕՏ «որթի կտրած ճիւղ» Եզեկ. ժե. 4. որից յօտել «որթի աւելորդ ճիւղերը կտրել» Վստկ Վրք. հց. բ. 71. Շնորհ. տաղ. Նար. երգ. յօտումն Շնորհ. տաղ. յօտոց «որթ յօտելու դանակ» Վստկ. յօտաճատել «այգու աւելորդ ճիւղերը կտրատել» Պարականոն շար. էջ 48 (նորագիւտ բառ).— ՀՕՏ «հատեալ ուռ որթոյ» Վստկ. որից ճօտել «յօտել» ճառընտ.։

=Նոյն է ճատ «կտրել» արմատի հետ, որ ունի վերը. ճատ—ճօտ և յատ—յօտ ձևերի ձայնական առնչութեան համար հմմտ. մատչիլ—մօտ, արածել—արօտ:

ՆՀԲ ճատաճել բայի՞ց։ Տէրվ. Մասիս 1881 մայիս 1 լիթ. piauti «կտրել, հընձել», լտ. putare «կտրել» բառերի հետ, ճօտ համարելով անցեալ դերբայի ձև։ Հիւնք. յօղ, զօղ բառերից, Պատահական նմանութիւն միայն ունիասորերէն ʿad «յօտել»։

ԳԻՒ.—Խրբ. յօդիլ, Խոջ. օդել, Ալշ. էդել, Նրև. էտուլ, Վն. էօտել, Ակն. ճօդէլ, Հճ. ճիդել, Սվեդ. ճիդդիլ, Զթ. ճուդիլ և Ռ. ճօրթել. այս բոլորը նշանակում են «ծառի աւելորդ ճիւղերը կտրատել» (վերջինը կազմուած է յօտել, ճորդել և թերևս նաև որթ բառերի խաչաձևմամբ).—Հմմտ. նաև Վն. էօտ «խաղողի որթ», Զթ. ճէօդ «յօտ», Հճ. ճէդոց և Զթ. ճիւդիւց «յօտոց».—Նոր բառեր են որթյօտ «խաղողի կտրած ճիւղեր» (>Խրբ. orթօդ, Տիգ. orթօդ, վorթօդ. այս երկուսը «յօտ, կտրած ճիւղ» իմաստով.— իսկ Մշ. onթօդ «խաղողի ճիւղ՝ որթի վրայ»), որթյօտել «որթը յօտել» (>Խրբ. orթօդիլ), յօտուր «որթ յօտող» (>Նրև. էտվor), էտուլարիկ «յօտոց»։

Փիխ.—Տե՛ս որթ բառի տակ։

+ՅՍՏԱԿ, ի-ա հլ. «տակը, խորքը, գետին, հողի երեսը» ՍԳր. Ոսկ. մ. բ. 12 և եբր. եզն. «հող, երկիր» Սարկ. քհ. (յատակ հայրենեաց «հայրենի երկիր»), Նորագիւտ Ա. մնաց. ժթ. 13. «հայրենիք» Սասն. 55. որից յատակել «քարուքանդ անել» ՍԳր. Եւս. քր. «սալայատակ շինել» Վեցօր. յատակաբուխ Վեցօր. սալայատակ Եղիշ. Շիր. Սարգ. Խաբայատակ Բ. մնաց է. 3. 34. ժթ. 13. անյատակ Նոնն. հիմնայատակ Զենոբ. կճայատակ Նիւս. երգ. դաշտայատակ ճառընտ. բանձրայատակ Ագաթ. վարդայատակ Եսթ. ա. 6. թաւայատակ Նոնն. կարծրայատակ Անան. եկեղ. կարմրայատակ Պիտ. հարթայատակ Բ. մակ. թ. 14, ժդ. 33. գրուած է նաև ատակ Վրք. և վկ. ը. 412, որից հյգ. զատակ Վկ. գէ. 26. Նխդ. հյգ. յատակ:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pedo- «ոտք» բառից. ցեղակից ձևերը տե՛ս ճեմ, որ ունի նաև ոտ ձայնդարձը. այստեղ առնուած է ստորին ձայնդարձը՝ իբր pəd-. նշանակութեան համար հմմտ. նոյն արմատից յն. ծά-πεδον (հնխ. *dm̥-pedo-) «*տան յատակը, յատակ, հող» (Boisacq 166), πέδον «հող, երկիր», սանս. padá- «տեղ», միռլ. inad (*eni- pedo-) «տեղ», յն. πεδίον «դաշտ», ἔμπεδος «հաստատուն (որ հողի վրայ է հիմնուած)», աոտ. ἐμπεδοῦν «հաստատել» (Boisacq 754), πόδωμα «տախտակամած» (Boisacq 808):— Աճ.

ՆՀԲ յա- համարում է =թրք. ayaq «ոտք», հյ. աճ. նոյնը գտնում է նաև յա-խճապակ, յա-խճքոր, յա-ղբել բառերի մէջ. լծ. ամկ. տակ. նոյն է վրաց. իատա՛կի, լծ. և հյ. գետին, յն. ἔδαφος. իսկ յատակել՝ լծ. սատակել: Lag. Urgesch. 313 և Beit. baktr. Lex. 64 պրս. تاک tak «հիմ, խորք»։ Մորթման ZDMG 24, 80 թրք. yataq «անկողին». Müller, Armen. VI սանս. sadas, հպրս. hadiš. զնդ. haδiš, յն. ἕδος «նիստ», ἔδαφος «յատակ» բառերին ցեղակից։ Հիւնք. դնում է թագ բառից տակ, որից ատակ, որից յատակ: Հիւրշ. 110 միտժում է համեմատել պրս. tak բառի հետ, որով-

հետև հայ ձևը յատակ է, և պհլ. *atak ձևը պիտի տար պրս. *dak:—Karst, Յուշարձան 421 նակուտ. ուղղուր. atak, չաղաթ. ayaq «ոտք», թրք. yataq «անկողին»: Մառ ИАН 1917, 322 ավար. ʻodo «վարը» բառի հետ: Աճառ. Նորք 1925, № 5, էջ 393 յիշում է վերապահութեամբ Կամիս dagan հոմանիշը, որի վրայ կարելի է աւելացնել նաև tēkan, takn «գետին»:

ԳԻՒ.—Փոխանակուած է սովորաբար նոյնանիշ և նոյնաձայն տակ բառով, որի վրայ տե՛ս առանձին. յատակ ձևը պահում են Լ. ատակ, Ախց. հատակ «սենեակի կամ տան յատակը», Խրբ. ադագ «յատակ, տակ», Հճ. ադօգ «իւղի տականքը», ինչպէս նաև ատկենել Ջթ. «սուզիլ, ջրի տակ խորասուզուիլ». բարդութեան մէջ՝ Լ. բարեխատակ «աւերուած, քարյատակ»:

ՓՈԽ.—Վրաց. ათაკი իատակի «յատակ, տախտակամած, սալայատակ, շէնքի յատակագիծ», մինգր. ათაკი իատակի «տախտակամած» (այս մասին տե՛ս նաև Brosset, JAs. 1837, 467), ուտ. atak «դժոխք» թուում է փոխառեալ յատակ ձևից:

—ՅԱՏՈՒԿ, ի–ա հլ. «զատուած, բաժանուած» Սփր. բ. կոր: Պիտ. «մասնաւոր, առանձնական, սեփական» Նիւս. Պորփ. Պիտ. «առանձին, միայն, զատ, բացի» Սփր. ծն. Ոսկ. յհ. ա. 29. Խոր. Պիտ. «տարբեր» Ոսկ. գծ. 72 (Ետես զձև նոցա յատուկ յայլոց). որից յատկութիւն, յատկանալ, յատկապէս, յատկեղ են, բոլորն էլ յետին: Նոր գրականում ունինք յատկանիշ, յատկանշական, առանձնայատուկ, իւրայատուկ, յատկացուցիչ, յատկացեալ, առանձնայատկութիւն են:

=Կազմուած է յատ=հատ «կտրել, բաժանել» արմատից՝ -ուկ մասնիկով. նշանակութեան զարգացման համար համմտ. հյ. զատ «որոշ, յատուկ, բաժանուած» (հատ–անել արմատից), լտ. privus, privatus «առանձին, մասնաւոր, սեփական» (privare «զրկել» բայից). միջին օղակը կազմում է յատուկ «տարբեր», որ մի կողմից նշանակում է «բաժանուած, տարբեր» և միւս կողմից «սեփական, իրեն յատուկ»:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:—Տէրվիշ. Նախալ. 122 յա– մասը դնում է իբր սանս. sva, զնդ. hva, յն. οὖ, լտ. sibi, գոթ. sik «ինքն» են. համմտ. զնդ. xvayta «յատուկ», xvaytu «խնամութիւն»: Հիւնք. յատանել բայից: Թիրեաքեան. Արիահայ բռ. 233 հյ. հատիկ, պհլ. hadīh, արաբ. āhad «մէկ» բառերի հետ, իսկ Հայ-երան. ուսումն. էջ 97 պհլ. սեմ. haduh «մէկ, միակ»:

ԳԻՒ.—Նկատելի է խրբ. ադուգէն «յատկապէս, յատուկէն». միւսների մէջ գրական ճանապարհով՝ հատուկ, հադուգ (Ջղ. յատուկ):

*ՅԱՏՊԻ կամ ԱՏՊԻ «մոշայի պտուղ, tamarix» Ամիրտ. Մխ. Հեր. ունի միայն ՀԲուս. § 3370:

=Արաբ. عضبة ʻaḍba նոյն նշ.:

Ուղիղ է մեկնում նախ Ալիշան, ՀԲուս. բայց սխալ է գրում عذبة ʻadba: Վերի ձևով Karst, որ նամակով յայտնել է Seidel-ին (§ 431):

ՅԱՏՍԱՆՑ. բոլորովին անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. էջ 223. «Քանզի և այս ինքեանց սեպհական և հարազատապէս ի Թրակիայ երևեալ գիտ, մանաւանդ ի յատատանցն ներքինեաց մաքրագոյն և վճիտ քմազարդութիւն և բացատանչութիւն պատկանեալ և յարմարեալ ձայնիւ»:—Յայտնի չէ մինչև անգամ բառիս ձևը. յ կրկնուած նախդի՞ր է թէ արմատական. ուղղական հոլովը ինչպէ՞ս պէտք է դնել: (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մտ. Բ. էջ 198):

ՅԱՏՐԱՆԱԼ «երկբայիլ, կասկածիլ». ունի միայն ՓԲ. սրա դերբայն էլ ունի Բառ. երեմ. էջ 221 յատրացեալ «երկուացեալ» ձևով:

+ՅԱՐ «կից, կցուած, կողք կողքի միացած» Եւս. քր. և պատմ. Ոսկ. մ. բ. 11. «իրար նման, յարմարող» Վեցօր. «յարմար, համապատասխան» Ոսկ. յհ. ա. 19. «միշտ, ամէն անգամ» Եղիշ. Պիտ. Խոր. (Նշանակութեան զարգացման համար համմտ. պրս. پیوسته payvasta «յարակցեալ, կապուած, կցուած. 2. միշտ»). այս արմատից են յար

միանգամայն «իսկոյն» Ոսկ. մ. գ. 28. յարել «կցել, իրար միացնել, աւելացնել» ՍԳր. Ագաթ. Եւս. քր. Եփր. ծն. յարեցուցանել Ագաթ. Կորիւն. յարնչիլ «ի դէպ գալ, յարմարիլ» Ոսկ. մ. գ. 16. յարևանալ «հետևիլ, անմիջապէս յետևից գալ» Բր. քեր. Խոսրովիկ. 88, յարևումն, յարևմուխ Խորվիկ. 177, անյարուչ «անմիաբան» Փարպ. միայար Կիր. պոմ. Շիր. ողնայար Ա. Թագ. ի. 5. մշտայար Մագ. շարայարել Ոսկ. եփես.! յետնադարեան բարդութեանց մէջ գարձած է յաճախադէպ մի տարր՝ 1. «միշտ» նշանակութեամբ և 2. իբր համապատասխան նախամասնիկ՝ յն. παρα, παρ- «առ երի, մօտը, քովը» նախդիրի. հմմտ. յարազուարճ «միշտ զուարթ» Խոր. փիլ. յարաշարժ «մշտաշարժ» Եղիշ. յես. Նար. յարագոյ = յն. πάρωϑ, յարադրութիւն = παράθεσις, յարանուն = παρώνυμος ևն. հնագոյն օրինակներն են յարածուխ Ոսկ. ա. կոր. յարակարգել Եւս. քր. յարաճօճ Ագաթ.։

= Բնիկ հայ բառ՝ հնխ. ar- «կցել, միացնել, արուեստով յօրինել» արմատից, որա պարզ, ածած կամ կրկնաւոր ձևերն են ներկայացնում յն. ἀραρίσκω «յարմարել, պատրաստել, կցել, յօրինել», ἄρμενος «յարիակ, կազմեալ», ἁρμός «կցուածք, ճեղք, դամ», ἅρμα «կառք», ἄρθρον «յօդ», ἀρέσκω «գոհացնել, հաճիլ», ἀρτύω, ἀρτύνω «կարգաւորել, պատրաստել, յօրինել, շինել», ἄρτος «յարդարուն», լտ. ars «արուեստ», artus «ամփոփ, սեղմ, նեղ, յօդ», arma «կարասիք. գործիք, զէնք», սանս. arpáyati «ներմուծել», ará- «անուի ճառագայթ», aram «յարմար, բաւական», ṛti- «ձև, եղանակ», զնդ. arəm «յարմար, համապատասխան», ərənāvi «արարաւ», arānte «հաստատուն», aši (<*ṛti) «գործ» ևն ևն (տես Boisacq 73. Walde 61, 63, և մանաւանդ Pokorny 1, 69—76 յիշուած բառերի երկար շարքը)։ Հայերէնում հնխ. ar- գարձած է *ar, որից յ նախդիրով՝ յարել, կրկնութեամբ՝ արարի, ածմամբ՝ արդ (արդար, արդիւն, արդեօք, յարդ, զարդ), և յօդով՝ առնել. այս բառերի վրայ տե՛ս վերը առանձին. տե՛ս և յարմար։

Նշբ լծ. յն. ἐρείδω «յենուլ», լտ. haereo «նստիլ, հաստատուիլ», Թրք. եարան։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Տէրվ. Մասիս 1881 մայիս 11, նախալ. 62 և յետոյ Bugge KZ 32, 21, որ ընդունում են Pedersen, Հայ դր. լեզ. 162 և Meillet, Altarm. Elementarb. 199 աւ.—Մաս ЗВО 5, 318 զնդ. haδa «ընդ» բառի հետ։ Հիմնք. յառիլ բայից։ Scheftelowitz BB 29 (1905), էջ 50 յն. ὄρμος «կապ», εἴρω «կապել, կցել», լտ. sero «միախառնել», սանս. sarat «թել» են ձևերի հետ։ Karst, Յուշարձան 417 ուղիղ մեկնութեան հետ նաև ՔՔր. yar, yer, ar, er «պատրաստել», ույղուր. yarak «պատրաստութիւն», օսմ. yarar «օգտաւէտ», yaratmaq «ստեղծել»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 89 ըստ բառից՝ «սիբիլանտների և սպիրանտների ալտերնացիայով»։

ՅԱՐԱԲԵԹԵՐ «լոյս». ունի միայն Բո. երեմ. էջ 221։

Յարալէզ տե՛ս Առլեզ։

ՅԱՐԱԿ «երկար ժամանակ» (նորագիւտ բառ) Վասակ. 116, 138. Թէ հառայ լինի, որ յարակ (այլ ձ. յեռակ) ի մէջն պտղի ձէթ կեցեալ իցէ. Թէ կամենաս յարակ պահել.— Այս բառից է յարակիլ «հանապազորդիլ, միշտ մէջը մնալ» Եփր. մատ. Գ. 253. «Այլ յիմարութենէ և յանխրատ հակառակութենէ՝ յորում տժէտդ յարակեալ են, հրաժարեա»։

Վերջին յարակիլ բայը ՆՀԲ մեկնում է «թերևս գրելի յարակցիլ, վարակիլ են և կամ իմանալի յարանալ, հանապազորդիլ». Աւ «միշտ շարունակ ընել»։ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 275 գտնում է որ նոյն հատուածը առնուած է բ. Տիմ. բ. 23 համարից. «Այլ ի յիմար և յանխրատ խնդրոց հրաժարեա», ուր յարակիլ բայի համապատասխանը չկայ. բնագրի համեմատութիւնը անհրաժեշտ է։

ՅԱՐԱՀՈՒՆ «խորաքնին» Հին բո. և Մագ. դամագտ. է. «Մատիր դու առ մակագրութիւնս անմոմոշական՝ միտելով մագոյն և

զմակ անկեալ բբօք, առ մարգ, յորում խուզում յարահունս»։

Գտաւ ու մեկնեց Մէնէվիշեան ՀԱ 1911, 369։

Յարամուր *տե՛ս Արամուր։*

ՅԱՐԱՅ *«հարաւ». ունի միայն Բռ. երեմ. 222։*

ՅԱՐԱՆՆԱԼ *«ձանձրանալ». ունի միայն Բռ. երեմ. էջ 222։ (Սրանից տարբեր է յարաճալ «յար գառանիլ, շարունակիլ. 2. կցիլ, միանալ» ՅՀ. իմ. առ. Պետ.—յար բառից)։*

ՅԱՐԱՋԻՆ *«ի զուր, վայրապար». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 222, որից և ՓԲ. անբստոյգ բառ։ Նկատելու արժանի է այն՝ որ Մագ. Թղ. 237 յարազինեալ «զէնք առած, մէկի դէմ զինուած» բառը ըստ այլ ձ. զրուած է յարաչինեալ (տե՛ս Աճառ. ՀԱ. Թ. 1923, էջ 254)։*

*ՅԱՐԱՐ *«գիհի», որ և յառյառ, առառ Ամիրտ. բժշ. (տե՛ս ՀԲուս. § 478, Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ 65)։*

=Արաբ. عرعر ‘ar‘ar «գիհի»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

Յարգ *տե՛ս Արգ։*

Յարգուճդ *տե՛ս Արդ։*

ՅԱՐԴ, ի հլ. *«յարդ, երդ, դարման, սաման» ՍԳր. Կոչ. 116 (սեռ. յարդից)=մհյ. յեռդ Կոստ. երզն. 154. որից յարդիլ «յարդ դառնալ» Փարպ. յարդգող կամ յարդագող Փիլ. Շիր. Ոսկիփ. Պետառ. յարդլի «յարդով լի» Վստկ. 179. յարդատեսակ Սարգ. Նար. յարդալից, յարդախառն, յարդանոց (նոր գրաբարի մէջ)։*

Հիմնք. յն. ἄρτος «հաց» բառից։

ԳԻՒ.—Ասլ. յmrp, յmr, վն. mrp, Մկ. Ոգմ. ճmrp, Ալշ. Մշ. ǯէրդ‘, Սեբ. ǯէրբ, Խրբ. էրդ‘, Ախց. Կր. Ռ. Տիգ. էրբ, Ննխ. էրդ‘, էշտ, Զթ. էյդ‘, իէրդ‘, Հճ. ճէյդ‘, էյդ‘, Սվեդ. իրբ, Պրտ. յէրբ։*

Յարդ, Յարդարել *տե՛ս Արդ։*

Scheftelowitz BB 29, 29 յարդ-ար-ել *=սանս. rādhati, գնդ. rādaiti, պրս. ārāstan «զարդարել», հսլ. rędŭ «կարգ»։*

Յարկ *տե՛ս Արկ։*

ՓՈհ.—Վրաց. ხარგა խարգա «թաղիքից շինուած խրճիթ»։

*ՅԱՐԿ *(գրուած նաև արկ, հյց. զարկ կամ զյարկ) «թաղարդ, որոգայթ». մէկ անգամ գործածում է Նոնն. 22. «ի վերայ ածէ և զարկն, այլ յարկն է ինչ տեսակաւ ուռկաց թանձրալարի, զոր կազմեն յորոգայթ արջոց և եղանց և զօրեղագունից ի սոցունց կենդանեաց». յոյն բնագիրն ունի ἄρκυς δὲ ἔστιν εἶδος δικτύου παχιὰ χοίνου. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. ἄρκυς «թաղարդ, որսի ցանց». ըստ այսմ վերի բառի ուղիղ ձևն է արկ, որ յետոյ յարկ բառի հետ շփոթուելով՝ այս ձևն է ստացած։—Աճ.

Նշիւ յարկ բառից է կարծած և նրա իբր երկրորդ նշանակութիւնն է դրած։ Յոյն բնագրի հետ համեմատութիւնը տուաւ Ակինեան ՀԱ 1904, 171։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Արարատ 1910, 270։

Յարձակիլ *տե՛ս Արձակ։*

+ՅԱՐՄԱՐ *«պատշաճ, վայել, վայելուչ» Փիլ. Իգն. Բրս. մրկ. «յարմարութիւն» Նար. գնձ. «յարմար կերպով» Իգն. Նանայ. որից յարմարիլ Առակ. ը. 9. Եփր. Թղ. Եղիշ. յարմարումն Երզ. է. 1. Ոսկ. յհ. բ. 26. Փարպ. յարմարական Ոսկ. յհ. բ. 25, 26. անյարմար Խոր. ՅՀ. կք. երեմյարմար (նորագիւտ բառ) Կնիք. հաւ. 41. բազմայարմար Փարպ. գեղայարմար Պոմ. աղէքս. Մագ. գեղեցկայարմար Ղևոնդ. Մխոր. եր. դիւրայարմար Պետ. Նիւս. երզ. զուգայարմար Նար. խչ. կարմրայարմար Նար. խչ. հարբայարմար ՅՀ. կք.։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ar- արմատից, կազմուած յ նախդիրով, մ ածականով և -ար մասնիկով. պարզական -ar արմատին ցեղակից ձևերի վրայ տե՛ս ընդարձակ յար. մեր բառին ձևապէս ամենամօտիկ բառերն են յն. ἄρμενος «յարեալ, կազմեալ», ἁρμός «կցուածք, յաւելուած, ճեղք, գամ», ἅρμα «կառք», ἁρμόζω «կցել, յարել», լտ. arma «կարասիք, գործիք, զէնք», որոնք նոյնպէս աճած են -ar արմատից՝ m ածականով։ Ըստ այսմ հյ. յարմար ճիշտ նոյն բառն է, ինչ որ յարդար։

Աւետիքեան, Քերակ. 1815, 211 յար *բառից կրկնուած։ ԳԴ պրս.* nā-ham-vār=ան-յարմար։ *ՆՀԲ* յարմար՝ «*իբր* յարումար *կամ* յարևյար. *ուստի և յն.* ἁρμόνιος, *լտ.* harmoniosus?, անյարմար =*յն.* ἀνάρμοςτος։ *Տէրվիշ. Նախալ. 62* յար *արմատից։ Հիւնք. յն.* ἁρμόζω։ *Վերի ձևով մեկնեց* Bugge KZ 32, 21 *(որ և ընդունում է* Pokorny 1, 72)։ *Աճառ. ՀԱ 1899, 207 ա* յար *բառից մ-ով կրկնական (նոյնը նաև Մաքսուդեան, Շողակաթ 164)։ Գազանճեան, Արև. մամ. 1902, 77* յար+մ *մասնիկ+*յար։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Կր. Մշ. Ջղ. յարմար, *Ագլ. Երև. Պլ.* հարմար՝ *փոխառեալ են գրաբարից։ Սեբ. ժողովրդական սուղաբանութեամբ եղել է* հա՛ր ու մար «*ճիշտ ու ճիշտ յարմար*» (*իբր թէ* հայր ու մայր)։

Յարմնիլ *տե՛ս* Արմն։

Յարնչիլ *տե՛ս* Յարն։

ՅԱՐՏ. *անստոյգ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ երկու անգամ ունի Կոստ. երզն. 131. «Շատոց վերանայ հուրմ ու թուղթ ու զալամ, շատոց խաւիանի յարտ ու տապալ ու յալամ, այնոք որ էին քաջք ու յաղթող ի մարտ, էին աննմանք ի հնծելոց ի յարտս»։*

Հրատարակիչը Պոտուրեան, էջ 54 համարում է բրբ. ard «*յետևը*», *որ ըստ իս անյարմար է տեղին. թերևս աւելի յարմար էր դնել պրս.* ārd «*սպառնալիք և ցասումն*»։

+ՅԱՒ «*վերջ, ծայր*». *առանձին չէ գործածուած. միայն Բառ. երեմ. էջ 223 դնում է յաւ «բաւ». որից ունինք* անյաւ «*անվերջ, անծայր, անբաւ*» *Վեցօր. էջ 17, 24, 67. Ճառընտ. Անան. եկեղ.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* pau- «*ծայր*» *բառից. աւելի ընդարձակ տե՛ս* հաւ «*ծայր, սկիզբ*». յաւ «*վերջ*» *աւելի համապատասխան է յն. բառերին, որ տե՛ս անդ։ Հ—յ ձայնական յարաբերութեան համար հմմտ.* ինգ *և* յիսուն, հայր *և* յօրայ, հետ *և* յետ։—*Աճ.*

ՆՀԲ յաւ *դնում է արմատ՝* անյաւ, բաւ, յաւէտ, յաւիտեան, տեւել, աւարտ, աւելի, յաւելուլ *բառերի. լծ. յն.* αἰ̓, ἐϕ᾽, *լտ.* euum, *արաբ.* abad, ābād «*յաւիտեան*»։ *Տէրվ.* Altarm. 52, *Մասիս 1882 յունիս 7. Նախալ. 100 հյ.* յաւէտ, յաւիտեան *և ուրիշ բազմաթիւ ձևերի հետ՝ դնում է հնխ.* yu, yug «*յօդել, լծել, յաւելուլ*» *արմատից։* Karolides *տե՛ս* աւելի։ *Հիւնք.* հաւ *բառից։*

ՅԱԻԱԿՆ, *առանձին չէ գործածուած. կայ միայն* յաւական գալ «*տևել, բաւել, հասնիլ, մինչև մի տեղ գալ*» *ոճի մէջ, որ սխալագիր* յաւագն գալ *ձևով ունի Մաքս. դիոն. նոյն է նաև* յաւականիլ *Եւս. քր. ա. 108 (սխալ գրուած նաև* ցաւանակիլ *Եւս. քր. էջ 326. ուղղել* յաւականիլ. *հմմտ. Նորայր, Հայկ. բառաքնն. էջ 21)։*

Թերևս նախորդ յաւ *բառից է։*

ՅԱԻԱԿՆ «*յանդուգն, լիրբ*» *Բառ. երեմ. էջ 223. արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* յաւակնիլ «*յանդգնիլ, ժպրհիլ*» *Պիտառ. Արծր. Նար. Նանայ.* յաւակնոտ «*յանդուգն*» *Նար. խրատ. առ. լեհ.* յաւակնազեղց *Թէոդ. մայր.=*յաւակնայեղց *Արծր.* յաւակնութիւն *Մարկ. հնգ. Արծր.։Նար.։*

ՆՀԲ լծ. լտ. audeo «*յանդգնիլ*», ausus «*յանդգնութիւն*»։ *Հիւնք. անհաւան բառից։ Թերևս այս բառն էլ նախորդի հետ գալիս է* յաւ *արմատից. իբր* յաւականիլ «*բաւել, մինչև ծայրը հասնիլ*», յաւակնիլ «*յանդգնիլ, չափը անցնիլ*»։

***ՅԱԻԱՆԱԿ** (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ. կայ միայն սեռ.* –ի) «*ձագ չորքոտանիների, յատկապէս իշու, ձիու, նաև եղնիկի*» *ՍԳր. եզն. Եւթաղ. 161. Կանոն. ասւում է նաև* յովանակ *Կոչ. 209. Եփր. համար. (գրուած* ովանակ՝ *էջ 189), Նար. սրանցից են* յաւանակական *կամ* յովանակական, յովանակեան, յովանական *Եւս. քր.* յովանականիմ, յովանակաչու *Սոնակ.։*

=*Պհլ.* *yavānak *նուազական ձևից. սրա հետ հմմտ. զնդ.* yavan- (*կարդա՛* yuvan-). *պհլ.* yuvān, *պազենդ.* jūvān, *պրս.* جوان ǰuvān, ǰavān, *բելուճ.* ǰūvān, *աֆղան.* ǰavān, *քրդ.* ǰuvān, *բոլորն էլ «մատաղատի, երիտասարդ»* (Horn § 429)։ *Պարսիկ բառից են փոխառեալ բրբ.* ǰivan «*մատաղատի թարմ երիտասարդ*», *սերբ.* džuvan, adžuvan, *ռում.* džuban «*սիրահար*»։—*Իրանեան բա-*

ուրի ցեղակիցներն են լտ. juvenis, *սանս.* yúvan-, yuvā, *լիթ.* jáunas, *լեթթ.* jaũns, *հսլ.* junъ, *հռուս.* юнъ, *ռուս.* юный, *գոթ.* juggs, *հբգ.* jung, *հիսլ.* ungr, *հիռլ.* ōa. ōam, ōc, ōac, *կիմր.* ieuanc, *բրբտ.* iaouank, youanc, *անգսք.* geong, *անգլ.* young, *հոլլ.* jong (Kluge 234), *որոնք բոլոր նշանակում են «երիտասարդ, մատաղատի». բոլորի արմատն է հնխ.* yeu- *«երիտասարդ»* (Pokorny 1, 200), *որ հայերէնի, ինչպէս նաև յունարէնի մէջ պակասում է։—Բառիս բուն իմաստը լինելով «մատղաշ, մատաղատի, փոքր», զանազան լեզուների մէջ յատկացուած է նշանակելու զանազան անասունների փոքրը. ինչ. լտ.* jūnīx *«մատաղատի կով»,* juvencus *«փոքր կով կամ ցուլ», հսլ.* junicĭ *«մատաղ ցուլ»,* junica *«մատաղ կով», ուկր.* juneć *«ցլիկ, փոքր ցուլ», բուլգար.* junica *«երինջ», սերբ.* jùnica *«հորթ», լեհ. գռ.* junosza *«գառնուկ» են* (Berneker 459, Walde 400, Trautmann 106)։ *Նոյնը եղած է և հայերէնի մէջ, ուր այլ ևս ընդհանուր իմաստը կորած է. տես և ուլ բառի տակ, որ նոյնպէս նախնաբար ունէր ընդհանուր «ձագ» նշանակութիւնը։ Իմաստի զարգացումը ճիշտ ա՛յն է, ինչ որ Մոկաց արդի բարբառով ջրվան «քուռակ» (տե՛ս Ազգ. Հանդ. է, էջ 253 ա)։ Այսպէսով մի կողմից «սիրահար»* (*ռում.* džuban) *և միւս կողմից «քուռակ» (Մկ. ջրվան) միևնոյն բաներն են!—Հիւբշ. 198։*

ՆՀԲ «իբր դիւրաճաւան հլու. լծ. յն. o῾ἕου *«էշ», պրս.* ẖիվան *և սանս.* ẖուվանա, *որ և լտ.* juvenis, *իտալ.* giovine, *իսկ լտ.* juvencus, juvenca *«որթ մատաղ»։* Lag. Urgesch. 184 *լտ.* juvenis *և պրս.* jawān: *Տէրվ.* Altarm. 54, *Մասիս 1882 յունիս 7, Նախալ. 101 համեմատելով հնդեւրոպական և ասիական ձևերի հետ՝ ուզում է ընդունիլ իբրև բնիկ, իսկ նոյն, Լեզու 153—5 բնիկ լինելը երկբայական է գտնում։ Մառ.* Яфет. Сбор. 1, 49 *վրաց.* ჴონე ẖონẽ *«ձի», յն.* ὄνος *«էշ» բառերի հետ։*

Գիւտ.—Ախց. Կր. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Տփ. ավանակ, *Ագլ. Վրբ.* ավա՛նակ, բվա՛նակ, *Պլ. Ռ. Սեբ.* ավանագ, *Տիգ.* ովմնոգ, *Ջթ.* ավանօգ, ավանոգ, *Հճ.* ավանօգ, *բոլորն էլ նշանակում են «էշ, մեծ էշ»։ Այսպէսով բառը հասել է ճիշտ հակառակ իմաստին։ Ցոյց տալու համար թէ հին լեզուի մէջ (գոնէ մինչև ԺԹ դար)* յաւանակը *էշի ձագն էր՝ հմմտ. Հեծեալ յէշ և յաւանակի իշոյ. Մտթ. իա. 5.—Գտանիցէք էշ կապեալ և յաւանակ ընդ նմին. Մտթ. իա. 2.—Ջնա էշն պառաւ և զսա յաւանակն տրմուղ. Մանդ. սիր. 7.— էշ մի էառ զաւանակն իւր... և ասէ աւանակն, որ է քուռակն, լալով. Վա՛յ մայր իմ... Վրդ. առ. 118։*

Փոխ.—Թրք. գռ. Ատն. Սւդ. Էնկ. Կս. Տ. (ինչպէս նաև Ատանայի և Էնկիւրիի Թրքախօս յունաց լեզուով) avanag *«անմիտ, տըխմար». օր.* avanag oγlu avanag *«աւանակի որդի աւանակ»,* avanag mə sən, ne sin? *«աւանա՞կ ես, ի՞նչ ես»,* avanag herifin biri *«աւանակ մարդու մէկը» (Արեւելք 1883 նոյ. 8—9, Բիւր. 1898, 712, 789, 1899, 798, Յուշարձան 328 ա)։ Թրք. բառը* آوانق āvanaq *ձևով յիշում է Կարապետեան, Օսմ. բառ. 51 «դիւրախաբ, դիւրահաւատ, աւանակ, տխմար, ապուշ» նշանակութեամբ, որից և* آوانقلق avanaqləq *«դիւրախաբութիւն, դիւրահաւատութիւն, աւանակութիւն, տխմարութիւն»։*

Յաւելուլ *տե՛ս Աւել։*

Յաւերժ *տե՛ս Յաւէժ։*

***ՅԱԻԻԺ**, *ի հլ. «միշտ, ամէն ժամանակ» Եսթ. ժզ. 4. Ոսկ. մ. ա. 1. «մշտնջենաւոր, յաւիտենական, անփոփոխ» Ագաթ. Եզն. որից* յաւեժանալ *Փիլ. Պիտ.* յաւեժութիւն *Փիլ. Նիւս. Երգ. Պիտ.* յաւեժացուցանել *Պիտ.* յաւեժակայ *Պիտ.* յաւեժաբար *Շար. Ան։ Նոյն բառն է ր-ի յաւելուածով՝* յաւերժ *«միշտ, շարունակ» Իգն. Պիտ. Խոր. որից* յաւերժաճառան *կամ* յաւերժական ճառան *Սահմ. Նար. յովէդ.* յաւերժապէս *ՅՀ. իմ. հկ.* յաւերժանալ *Երզն. մտթ.* յաւերժաձիգ *«երկարատև» (նորագիւտ բառ) Պարակ. շար. էջ 18.* յաւերժայիշատակ *(արդի գրականում) են։—Արմատն ու ածանցները իրար վրայ փոխադարձաբար ազդելով՝ գրուած են նաև* յաւեժ, յաւէրժ, յաւէժանալ, յաւէրժանալ *են, որոնք*

համապատասխան չեն հայերէնի ձայնական օրէնքներին։

=*Պհլ.* *yāvēž *ձևից, որի վրայ տե՛ս* յաւէտ։—*Հիւբշ. 198։*

*Նշ*Ի *«նոյն ընդ* յաւէտ»։ Böttich. Arica 83, 389 *պրս.* Jāvīd *«յաւիտեան»։*

ՅԱԻԷՏ *«աւելի, շատ» Պիտ. Ճառընտ. Դիոն. «միշտ, յաւիտեան» ժմ. Խոսր. Նար. որից* յաւէտ զի *«մանաւանդ որ» Կիւրղ. գնձ. և Պարապմ.* յաւետաճալ *«յարատև մնալ» Փիլ. Պիտ.* յաւետազուարճ *Ոսկ. յհ. ա. 23,* յաւետախաղաց *Փիլ. Խոր. Նիւս. կազմ.* եր-կարայաւէտ *Փիլ. բազն.* կամայաւէտ *Անան. եկեղ. գրուած է նաև* աւէտ *ԱԲ, որից* աւետաճեալ *«շատ աճած» Մծբ.* աւետախաղաց *ԱԲ։ Արմատն ու ածանցները իրար վրայ փոխադարձաբար ազդելով՝ յառաջացած են* յաւետ, յաւէտազուարճ *են, որոնք համապատասխան չեն հայերէնի ձայնական և ուղղագրական օրէնքներին։* Յաւէտ *բառից* -եան *մասնիկով կազմուած է* յաւիտեան, ի *հլ. «մշտնջենաւոր» ՍԳր. որից* յաւիտենական *ՍԳր.* յաւիտենադիր *Ագաթ.* նախայաւիտեան *Շար.* յաւիտենապէս, յաւիտենականութիւն *(նոր բառեր) են։*

=*Պհլ.* yāvēt *«յաւիտեան» բառից. սրա հետ համմտ. պհլ.* yāvētān *«յաւիտեան, ընդ միշտ», մանիք. պհլ.* Jāvīdān *(անշուշտ պէտք է կարդալ* Jāvīdān) (Salem. Man. Stud. ЗАН 1908, *էջ 76, 85), պրս.* Jāvēd, Jāvēdān *«յաւիտեան», և զնդ.* yavaēča yavaetātaēča *յաճախ գործածուած բանաձևը, որ նոյն է մեր* յաւիտեանս յաւիտենից *ձևի հետ։ Այս բոլորի պարզական ձևն է* yavae-, *որի մի ուրիշ ածանցն է ներկայացնում պհլ.* *yāvēž, *որից էլ հյ.* յաւէժ. *համմտ. զնդ.* yavaēji- *«յաւիտենակեաց»* (Horn § 414)։— *Այս բառերի ենթադրեալ կապը սանս.* āyu-, āyus- *«կեանք», զնդ.* āyu *«տևողութիւն», յն.* αἰών, *լտ.* aevum, *գոթ.* aiws, *անգսք.* ā, ǣ, ǣw, *հբգ.* ēwa, *ն.բ.գ.* ewig *«յաւիտենական» են բառերի հետ՝ այժմ չի ընդունւում (տե՛ս* Pokorny 1, 6, Bartholomae Altir. Wört. 1264, Boisacq 22)։—*Հիւբշ. 198։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. ճավիյտ, ճավիտան *բառերի հետ։ Նշ*Ի յաւէտ *«աւելի» լծ. արաբ.* է՛վվէլա *«նախ», թրք.* էվէր *«այո՛»,* յաւիտեան՝ *լծ. արաբ.* abad, *յն.* ἀΐων, *լտ.* aevum, aeternum, saeculum, *եբր.* այօլամ, էօլամ, լիյօլամ, *թրք.* էպէտլիճ, տայրմլրգ, տէվրի զէման»։ *Ուրոպտ 1849, 200 հպրս.* եաւատ։ *Ուղիղ են մեկնում նաև* Böttich. Arica 83, 389, Lag. Urgesch. 183, Müller SWAW 41, 8 և 43, 299, Justi, Zendsp. *էջ 244։—Տէրվ.* Altarm. *52 և Նախալ. 100 հնխ.* yu, yug *«յօդել, լծել, յաւելուլ» արմատի տակ է դնում* յաւէտ, յաւէժ, յաւիտեան՝ *ուրիշ բազմաթիվ բառերի հետ։*

ՅԱՓ *«դադարեցնել, վերջացնել, անց կացնել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* յափուցաանել *«անցկացնել, վերջացնել» (մէկի զօրութիւնը) Եփր. ծն. 94, (ծարաւը) Եղիշ. դտ. 190, (հիւանդութիւնը) Ոսկ. հռոմ. էջ 63 (ձևս.* յափրացուցաանել), յափուցիչ *«դադարեցնող» (ցաւերի) Վեցօր. 89 (այլ ձևս.* յափրացուցիչ *այս և նախորդ սրբագրութեանց վրայ տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. 49),* յափշիլ *«խափանիլ, մարիլ, հանգիլ» (ճրագը, լոյսը) Վեցօր. դ. էջ 57 (լս.* խաւիշի)։—*Այս արմատից է շինուած ֆրանս.* réséda *ծաղկի համար նորակերտ* յափուկ *կամ* յափրուկ *բառը (ըստ որում ֆրանս.* réséda *յառաջանում է լտ.* resedare *«հանդարտել, հանգստացնել» բայից) (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 1077 ա)։*

*Նշ*Ի *մեկնում է* հափուցաանել, հափշիլ, *այն է* խափուցաանել։

ՅԱՓՇՏԱԿԵԼ *«ձևոքից խլել, բռնի կորզել շորթել» ՍԳր. Ոսկ. մ. բ. 25. որից ունինք* յափշտակելով *«արագութեամբ, արտորնօք» Ոսկ. ես.* յափշտակիլ *«վերանալ» (մարմ. հոգով) Բ. կոր. ժբ. 2, 4.* յափշտակող *Մն. խթ. 27, Մտթ. ե. 15.* յափշտակութիւն *ՍԳր. «առևանգում» Եւս. քր. են։*

Քերականի հին մեկնիչները ստուգաբանում են «յափ շատ արկանել» (ափր շատ բան ձգել). համմտ. Անանուն մեկն. քեր. էջ 127 ծան. «Յափշտակութիւն է

յափ շատ արկութիւն, որպէս թէ շատին և հոլովին ձևոն արկելով ո՛չ խարխ զանիրաւութիւն»։ ՆՀԲ յափ շուտով կամ շտապաւ ձգել, ռմկ. գափըշմագ, գափմաֆ, լտ. capto: Lag. Arm. Stud. § 1561 *զնդ.* tāč, *պրս.* tāxtan *«վազել» արմատից, իբր* *aipiš-tāka *«ի վերայ վազելն»։ Տէրվ. Նախալ. 32, 61 դնում է* ap *արմատի տակ, իբր սանս.* āp, *զնդ.* āf *«հասնիլ, յափշտակել»։ Թիրեաքեան, Պատկեր աշխ. գր. Ա. 203 պրս.* أبشتن ābištan *«թագուցանել»։ Հիւնք. հյ. ափ և պրս.* šitāγ *«գող, աւազակ» բառերից բարդուած։ Գազանճեան, Արև. մամ. 1902, 76 ափ բառից, որից և հափշտակել։ Գաբրիէլեան, ՀԱ 1910, 365 ֆրանս.* happer, *տճկ.* qap-maq *բառերի նման բնաձայն է համարում։ Թիրեաքեան, Բզմ. 1913, 341 թրք.* qap- maq *«յափըշտակել»։*

ՅԱՓՈՒ *«յուշիկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 223. համմ.* յափուր։

Յափսիթերս *տե՛ս* Ափ։

ՅԱՓՐԱՆԱԼ *«յագեցնալով զղուիլ, ձանձրանալ» Թուղց ժդ. 31. եզեկ. իգ. 17, 28. Փիլ. Մանդ. որից* յափրանիմ *Մանդ.* յափրութիւն *Մանդ.։*

Հիւնք. արբեալ *բառից։*

ՅԱՓՐԻԼ *«զեղխանալ, լրբիլ». ունի միայն ԱԲ՝ իբր անսովոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մանդ. (տպ. 1836, էջ 127. տպ. 1860, էջ 135) «Իբրև զայսահարս յափրին, ծռին, գելոն, աքսոռեն»։*

ՅԱՔԱՆՔԵԼ *«յուսով սպասել». ունի միայն ԱԲ՝ իբր անսովոյգ բառ. մէկ անգամ զըտնում եմ գործածուած Ոսկ. Հռոմ. 256. «Յիւրաքանչիւր ժամանակս նշան խնդրէին Հրեայքն և զկերպարանս յարութեանն, և կարի իմն յայսոսիկ բերանաբացք յաքանչէին» (յն. բերանաբացք էին)։*

***ՅԱՔՈՒՄ** *«երուսաղէմի տաճարի սիւներից մէկի անունն է». Գ. թագ. էջ 21. Օրր. 164. Մխ. աս. տպ. եմ. 68 (օրինակները տե՛ս բոյոս բառի տակ).—Բառ. երեմ. էջ 223* յաքում *մեկնում է «ուղղութիւն կամ պատրաստութիւն»։*

=Եբր. יָכִין yākīn, *որ նոյն սիւնի անունն է. ծագում է* כּוּן kvn *«հիմնել, հաստատել» արմատից* (Gesenius[17], 299, 337). *—յոյն թարգմանութիւնն ունի* Ἰαχούμ *ձևր (այլ ձ.* ιαχουν), *որից էլ տառադարձուած է մեր բառը։—Աճ.*

ՅԱՔՈՒՐ *«յուշ». ունի միայն Բառ. երեմ. էջ 223. համմ.* յափու։

Յեգուց *տե՛ս* Այգ։

ՅԵԳԴԻԼ *«ցիխ կամ ագդօղ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 224։*

***ՅԵԳԵՐ** *կամ* ՅԱԳԵՐ *«պսակ, թագաւորական թագ» Դ. թագ. ժա. 12. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Եբր. נֵזֶר nēzer *«թագ, պսակ» բառն է, որ գործածուած է Ս. Գրքի համապատասխան տեղում. յոյն թարգմանութեան մէջ տառադարձուած է* νεζὲρ, *ձեռ. տարբ.* εζερ, *որ աւելի մօտիկ է հայերէնին. մեր ձևը ենթադրում է* ιεζὲρ *(այսինքն* IEZEP *փոխանակ* HEZEP):

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ, Վերջին անգամ Macler *ՀԱ 1927, 674։*

ՅԵԳՆԷՆ *«յանձնէն». այսպէս ունի Բառ. երեմ.։*

ՅԵԼՄՈՓ *«ջահ». մէկ անգամ գործածում է Բառ. երեմ. էջ 131 լապտեր բառի բացատրութեան մէջ՝ այսպէս. «Լապտեր. ճրագկալ կամ յելմոփ կամ մաշալայ» (թրք. «ջահ»)։*

Յելուզակ *տե՛ս* Ել։

ՅԵՆԿԱՆ *«փրկութիւն կամ փոքրկութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 224։*

+ՅԵՂ *«փոխել, մէկ վիճակից մի ուրիշի դարձնել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* յեղուլ *«փոխել. դարձնել, վերածել» Պիտ. փիլ. Պրսմ. «ուրիշ լեզուի վերածել, թարգմանել» Խոր.* յեղուրիւն *«փոփոխութիւն» Տիմոթ. կուզ. էջ 120.* յեղել *«ծռել, թեքել, շեղուիլ» Եղիշ. Մխ. դտ.* յեղումն *«այլայլութիւն, փոփոխութիւն» Պիտ. Փիլ. Դիոն. «տարւոյ եղանակ» Փիլ.* յեղափոխ *Ագաթ.* յեղափոխել *Ոսկ. յհ. բ. 26.* յեղաշրջել *Կլիմաք. Լմբ.* յեղաշրջութիւն, յեղափոխական *(նոր բառեր),* յեղադարձել *Ոսկ. յհ. բ. 25.* յեղական *«փոփոխական» Յհ. կթ.* յեղակագոյն *«փոխաբերական» Փիլ.* յե-

ղաճակել «փոփոխել» ՅՀ. կթ. յեղաճակ «կերպ, ձև, տարազ. 2. տարւոյ չորս բաժանումները. 3. նուագ. 4. դրքի առանձին բաժինները» Խոր. Փիլ. Եղիշ. յեղաճակաւոր «փոփոխական» Նար. յեղակարծ (գրուած նաև եղակարծ, աղեկարծ, աղէկարծ, յաղակարծ) «յանկարծ, յանկարծակի» (Meillet MSL 18, 254) Ա. մկ. ե. 28. Ագաթ. Բուզ. Եւագայեղ Վեցօր. 132. դիւրայեղ Արիստ. որակ. խելայեղ ՅՀ. իմ. երև. ծայրայեղ ՅՀ. իմ. առ. ժամայեղ Արծր. ճնգայեղեան Դիոն. Բզմ. անյեղլի Փիլ.— կրկնութեամբ ունինք ձևացած յեղյեղուլ «փոփոխել, շրջշրջել» (աչքերը) Եզն. «միևնոյն բանը դարձնել դարձնել նորից ասել» Ոսկ. մաթ. և յհ. յեղյեղել «փոփոխել» Պիտառ. Նիւս. կազմ. «միշտ կրկնել» Ոսկ. մաթ. և յհ. Սերեր. յեղյեղանիլ «փոփոխուիլ» Համամ. առկ. յեղյեղուկ «տարւոյ եղանակները» Փիլ. եկ. յեղյեղուկ «փոփոխական» Գ. մակ. ե. 22. Վեցօր. Ա. դաթ. յեղյեղուկս առկանել «ձայնը բեկբեկել» Նիւս. պատմ. յեղյեղումն «փոփոխութիւն» Նիւս. կազմ. Փիլ. «տարւոյ եղանակ, արևադարձ» Փիլ. Պիտառ. անյեղյեղ Փիլ. ևն։—Յեղ արմատը առնւում է նաև երկրագործական իմաստով և նշանակում է «հողը արօրով դարձնել արևի դէմ, որպէս զի լաւ այրի և զօրանայ». այս ձևը այս իմաստով պահում է հիշատ Մշոյ բարբառը (տե՛ս Ազգ. հանդ. ե. 53). հնից ունինք նոյն իմաստով Վստկ. 35 «Զհներկերն նոյնպէս վաստակել, յեղել և սրբել յամենայն ազգ խոտոց»։—Այստեղ է անշուշտ պատկանում նաև յեղ, որի իմաստը շատ որոշ չէ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. դեկտ. 26 (էջ 357բ). «Ս. Ստեփաննոս... ինքն գնաց յառաջագոյն ի ճանապարհս չարչարանաց արեան, եմուտ ի հուն սպանութեան և էանց ի յեղն սատակութեան ձմերան. երից զճանապարհն մարտիրոսութեան և եմուտ ի գետն ճգանցն վկայութեանն». (Նշանակութեան համար համմտ. վերը յեղումն, յեղաճակ «տարւոյ եղանակները»)։—Նոյն արմատի երկրորդական ձևերն են՝ ՅԱՂ, որից եղանիլ, եղանակ են, ինչպէս նաև եղան (երկրագործական գործիքը), որոնց վրայ տե՛ս առանձին.—ՅԱՂ–, որից յառաջացած են յաղադարձիլ «յեղադարձիլ» Ոսկ. երր. 493 և յաղակարծ «յեղակարծ» ՅՀ. կթ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g^{u}el- «դառնալ, շարժիլ» արմատից, որի ժառանգներից յիշենք՝ յն. πέλω, πέλομαι «շարժիլ, յառաջ գալ, լինել, մի բանի վերածուիլ=դառնալ», πάλιν «յետ, յետոս», πόλος «առանցք, շուռ տուած՝ հերկած հող» (այս իմաստի, ինչպէս և յաջորդ մի քանիսի համար համեմատէ՛ հյ. եղան, եղել), πολεύω «շարժիլ, դառնալ», πολεῖν «հողը շուռ տալ», πωλέομαι, πωλεῖσθαι «յաճախել, շարունակ գնալ գալ», τελέθω «եմ, լինիմ», πολεύω «արօրով հողը շուռ տալ, յեղել!», κύκλος (կրկնական ձևով) «անիւ շրջանակ», լտ. colo «զբաղիլ, հողը մշակել, շինել, խնամել, բնակիլ», colus «իլ», հիսլ. huel «անիւ», անգսք. hwēol «անիւ», անգլ. wheel «դարձնել, թաւալիլ, գլորիլ, անիւ», հսլ. kolo, սերբ. kȍlo, չեխ. kolo, լեհ. ուկր. koło, ռուս. колесó, գւռ. коло, պոլաբ. k'üölü' «անիւ», հպրուս. kelan «անիւ», լեթթ. du-celes «երկ-անիւ սայլ», փռիւգ. κίκλην «սայլ համաստեղութիւնը», սանս. čarati «շարժիլ, դառնալ, ապրիլ, գոնուիլ», čakrá- (կրկնական) «անիւ, շրջանակ», čarāna «արօր», զնդ. čaraiti «դառնալ», čaxra-= պրս. چرخ čarx (կրկնական) «ճախարակ» (որից և հյ. ճախր, ճախարակ) են (Pokorny 1, 514, Trautmann 125, Berneker 549, Boisacq 764, Ernout-Meillet 198—9, Walde 177): Սլաւականից են փոխառեալ ռոմանական բնտանիքի մէջ՝ իտալ. calesso, calesse, սպան. calesa, ֆրանս. calèche «մի տեսակ կառք», որից գերմ. Kalesche և ռոմանականից յետ փոխառեալ ռուս. коляска «մի տեսակ կառք» (Berneker 549, Kluge 237): Այսպէսով եղան, ճախարակ և коляска ձևով ու ծագումով միևնոյն բառերն են դառնում, նոյն q^{u}el- արմատի q^{u}ol- ձայնդարձին են պատկանում հյ. ճոլ, ճոլով, որոնց վրայ տես ճոլով:

ՆՀԲ յեղուլ «ի ձայնէս այլ, այլայլել, լծ. շեղել, ճեղուլ», յեղաճակ «արմատն ո՛չ այնչափ է եղանիլ, որչափ յեղումն, ի ձայնէս այլ, Բրք. եկ, յն. ἄλλος, լտ.

alius», յաղադարձիլ «յեղափոխիլ *կամ* յաղ *դառնալ»։ Տէրվ. Մասիս 1882 յունիս 7 լծ.* հեղուլ։ *Հիւնք. բոլորն էլ Հեղինէ յատուկ անունից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 37 կցում է* եղանիլ *բային. և որովհետև* եղանիլ՝ *ըստ* Meillet MSL 7, 162 *և* 10, 282 *կցում է* πέλομαι *բառին. ուստի ամբողջը պատկանում է հնխ.* q^{u}el- *արմատին (տե՛ս* եղ-*)։*

ՅԵՂԱՆՋԵԼ *«ցնդաբանել, ունայն ամբաստանութիւններ անել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած կնիք հաւ. 295. «Այլ նոքա այնքան յեղանջեն ի գաղտնի՝ ի ծածուկ բերելով յինքեանս զշնթփնթանս»։*

ՅԵՂԿԵԼ *«նկատել, քննել, ձգտիլ, աշքը կարկառել». ունի միայն ՓԲ. նոյն բառը Բո. երեմ. էջ 224 մեկնում է «նախատել, պարզել, սիրել», իսկ մի քիչ ցած գնում է յեղծել «քննել», որ իմաստով նոյն է առաջինի հետ։ Այս բոլորից ո՞րն է ուղիղ։*

ՅԵՂՄ *«մեղմ». մէկ անգամ ունի Վրք. հց. բ. 234. «Եւ ասեմ յեղմ ձայնիւ»։ Պէտք չէ կարծել գրչագրական սխալ, որովհետև ունինք Սչ.* յէղմ *«գաղջ, գոլ»։*

Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 131 հանում է* *ē-tel-mo- *ձևից, ուր* ē *նախամասնիկ է,* tel *=նոյն ընդ* բող, բողոք, *իսկ* մ *=*mo- *մասնիկ է, ինչպէս մեղմ բառի մէջ։*

ՅԵՂՆՋՈՒՄՆ *«ջնջումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 224։*

ՅԵՂՈՒԵԼ *«յոխորտել»։ ունի միայն Բառ. երեմ. էջ 225.— Թուի թէ պէտք է կարդալ* Յեսուել, *ինչպէս բառաշարքն է պահանջում, որ է յատուկ անուն (Ա. մնաց. իե. 14) և նշանակում է «յաղթահարող, տիրող»։*

ՅԵՂՑ *«լի, լեփ-լեցուն» Հին բռ. որից* յեղցեալ *«լցուած» Պիտ. շաղղայեղց Վեցօր. 193.* բազմայեղց *(կամ* բազմայեղծ*) Փիլ. Ճառընտ. Վահր. յար. առիւնայեղցութիւն Պիտ. յոգնայեղց Աբ. դրուատայեղց Կղնկտ. երդրմնայեղց, Փիլ. բշուառայեղց Պիտ. իմաստայեղց Պիտ. ՅՀ. կթ. լուսայեղց Անան. հոկտ. լուսաջահայեղց Թէոդ. կուս. խորհրդայեղց Թէոդ. կուս. խորշակայեղց Պիտ. հանճարայեղց Պիտ. Ոսկ. գծ. Երզն. մաթ. հարբստայեղց Արծր.—ՆՀԲ դնում է նաև* զեղց *ձևը՝ որ նախորդի սաստկականն է, բայց չունի վկայութիւն։*

ՆՀԲ կցում է հեղուլ, զեղուլ *ձևերին։ Նոյնը նաև* Bugge KZ 32, 15 *(տե՛ս* հեղուլ*)։ Այս մեկնութիւնը յիշում, բայց անապահով է համարում Հիւբշ. էջ 466։*

Յեղքել *տե՛ս Յեղկել։*

ՅԵՄՈ. *անստոյգ նշանակութեամբ միջ. հյ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Անսիզք 39. «Եւ ոչ պատեհ է որ վանց այնոր թէ նաքա ի վաղէ կալել լինին զայն սինօդն՝ նա իսկի ի յեմո չընկնի, ուր թուղթ և վկայք կենան»։ Անսիզքի հրատարակիչը կասկածով թարգմանում է* յեմո ընկնել *«ստացուածքից զրկուիլ» (խօսքը կալուածների գրաւման վեճի մասին է)։—Ըստ իս կարող է բառս կապուիլ արաբ.* عمل amr *«գործ» ձևին, որով* յեմո ընկնիլ *«գործի անցնիլ, ազդեցութիւն ունենալ»։—Հակառակորդի այն խօսքը թէ շատոնց ինքը գրաւած է այս հողը՝ պէտք չէ որ նշանակութիւն ունենայ, երբ կան փաստաթղթեր և վկաններ։*

ՅԵՆԻԼ *«խառնուիլ». նորագիւտ անստոյգ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մծբ. 92. «Մի կողմն յերկաթոյ և մի կողմն ի խեցւոյ, ասէ, ո՛չ յինիցին խառնակիցին ընդ միմեանս»։—Կարևոր է համեմատել բրնադիրը. դուցէ թէ խաթարուած գրչութիւն է։ Ասորին (հրտր.* Graffin *էջ 209) ունի արդարև «խառնուիլ» ըստ համեմատութեան վիհննայի միաբան Պ. Էսապալեանի (անձնական)։*

ՅԵՆՈՒԻԼ *(կար. յեցայ) «յենուիլ, կռթնիլ. փխբ. ապաւինիլ» ՍԳր. Մծբ. որից* յեց *«յենուած» Գ. թագ. ժբ. 4. «ապաւինած, ապաստանած» Բուզ. գ. 6. «ամուր, հաստատուն» Կնիք. հաւ. 352. «կիպ» Փիլ. լին.* յեցուցանել *Գ. թագ. ժդ. 28. Ամովս. ե. 19.* յեցուկ *Մագ.* յեցամիտ *«հաստատ մտքով» Մծբ. 337.* ոմայեց *Ա. թագ. ի. 25. նոր բառեր են* յեճառաւ, յեճակէտ, յեցակ, յեճուիլ։ *Նոյն արմատի են մասնիկով աճած ձևն է* նեցուկ, *որի վրայ տե՛ս առանձին։*

ՆՀԲ լծ. թրք. եաե կէլմէք, *տայտամամ:* *Հիւնք.* ճեծաճել *բայից:* Pedersen *Հայ. դր. լեզ. 130 կցում է* ճեճուլ *«հիւսել» բային (տե՛ս այս բառը), որ և կրկնում են* Boisacq 767 *և* Pokorny 2, 660:— Karst, *Յուշարձան 427 ԹԹր.* köl, *ալթայ.* yöle, *ույղուր.* yölek *«յենուլ»:* Meillet, Dict. étym. lt. 716 *հետևելով* Pedersen-*ի՝ կցում է* ճեճուլ *«հիւսել» բային, որ բնաւ կապ չունի:*

+ՅԵՒ *«ընդելուզեալ, կողք կողքի շարուած՝ գամուած» Տօնակ. որից* յեռուլ *(հրմ.* յե՛ռ*) «շարել, կողք կողքի շարել, միացնել, կպցնել» Ս. Գր. Եւագր. Սերբր.* յեռուլ զբաե *«շարադրել» Սերբր. Ոսկ. Թես. Եւս. քր.* յեռել *Նար. խր. 493. Ճառընտ. Լմբ. առկ.* յեռումն *Փիլ. լին. մարգարտայեռ Շնորհ. յիշ.:*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ser-s- *«յեռուլ, իրար կողքի շարել, կապել, կապակցել» արմատից, որ աճած է* -s *ձայնով՝* ser- *պարզականից. Համմտ. սանս.* sarat- *«թել», յն.* εἴρω *«կապել, կցել, միացնել» (պսակ, մանեակ, նաև* εἱρομένη λέξις *=հյ.* յեռուլ զբաե*),* ἐνείρω *«կցել, ներմուծել»,* ἔνερσις *«յեռումն, միացումն»,* ἕρμα *«ականջի գինդ, վզնոց»,* ὅρμος *«մանեակ»,* ὁρμαθός *«շարք, շղթայաշարք», լտ.* sero *«կապել, կցել, շղթայաշար միացնել»,* series *«շարք, շղթայաշար միացում», հիւլ.* sreth *«շարք»,* հհիւս. sфrue *«մարգարտայեռ վզնոց», հլիթ.* sėris *«թել», հբգ.* saro, *անգսք.* searu *«պատրաստութիւն»* (Boisacq 229, Pokorny 2, 499, Ernout-Meillet 890, Walde 703)*: Զևով ու կազմով հյ.* յեռ- *ճիշտ այն է՝ ինչ որ յն.* ἔνερσις, *ուր* ἐν*=հյ.* ներ- *=*եռ-*:—Աճ.*

ՆՀԲ լծ. յարել, յիրել, յերիւրել*:— Հիւնք.* ճեռաճալ *բայից:*

**ՅԵՌԵՏԻԿՈՍ ՍՊԻԼԱՏԷՍ. Նորագիւտ բառ կամ ասացուած, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. հկճռ. դ. էջ 57. «Հրեա՛յ և հերձուածող, ո՛րպէս ըմբռնեցար ի թակարդս բանից իմոց. ո՛րպէս որսացար ի լարս որոգայթի իմոյ. ահա ես ի վերայ քո յեռետիկոս սպիլատէս»:*

=Յն. ἱερατικός *«քահանայական, նուիրապետական»+* σπηλαῖτης *«քարայրաբնակ». յայտնի չէ թէ որանով Օրբելեան ի՛նչ վիճաբանական ասացուած է ակնարկում:—Աճ.*

ՅԵՍԱՆ *(յետնաբար ի, ի-ա հլ.) «սրոց, դանակ սրելու քար» Փիլ. լին. 191. Վրդն. սղ. 412. որից* յեսաճասուր *«յեսանով սրուած» Եզեկ. և. 1.* յեսանել *Նար. (ՀԲ ունի նաև* եսան, եսանել *ձևերը. և իրօք Վրդն. առ. 76 կայ գրուած* եսան *ձևով):*

ԳԴ Համեմատեց պրս. էֆսան. ֆէսան, սան, *ասեանէ ձևերի հետ:* Böttich. ZDMG 1850, 354, Arica 74, 214, Lag. Urgesch. 515—6 *կցում է սանս.* çāṇa *«յեսանաքար», զնդ.* asāna *«քար», պրս.* āsyāna, *յն.* ἀκόνη *«յեսան», լտ.* cos *«յեսան»,* acuere *«սրել», հսլ.* osla *«յեսան» բառերին: (Այս բառերը՝ թէև նշանակութեամբ համապատասխան են հայերէնին, բայց ձայնապէս անյարմար. սրանց արմատն է հնխ.* ak'- *«սուր», որից* k'ōḷ-, k'əḷ-, k'ə- *«սրել»* (Pokorny 1, 454)*, որոնք տալիս են հյ.* *աս, *սու *են, իսկ* յե- *մասը մնում է առանց մեկնութեան): Մորթման* ZDMG 26, 598 *պհլ.* sang *«յեսան», պրս.* sang *«քար». հպրս.* āθaŋgaina *«քարհղէն», բևեռ.* eçinini: *Հիւրշ.* Arm. Stud. § 211, *ինչպէս նաև* Arm. Gr. 477 *մերժում է վերի համեմատութիւնները: Տէրվ. Նախալ. 59 դնում է* ak *արմատի տակ՝ ասեղն են բառերի հետ: Հիւնք. պրս.* ֆէսան, էֆսան: Scheftelowitz BB 28, 286 *հիալ.* egg *«սրել», հբգ.* ecka, *հին անգլ.* ecg, Liden, Arm. Stud, *էջ 56 հնխ.* pek- *արմատից. համմտ. սանս.* pāçī *«քար».* pāça, paçaka *«նարդի քար», յն.* πεσσός, *առտ.* πεττός *«նարդի քար կամ տախտակ»,* πεσσεύω, πεττεύω *«նարդի խաղալ»: (Այս յն. բառերը փոխառեալ են դրւում սեմականից, իբր արամ.* pīsā, pīssā *«քար, տախտակ»,* passīn *«նարդի տախտակ», փիւն.* päs *«հարթ մակերես», իսկ* Lidén *բաժանելով սրանցից, համարում է բնիկ): Karst, Յուշարձան 422 ԹԹր.* aš, eš, qas *«սրել»: Պատահական նմանութիւն ունին արաբ.* سنّ sann *«դանակը քարի վրայ սր-*

րել», որից مسن misan *«յեսան» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 651—2) և ասոր.* ܦܣܝܘܢܐ pāsyōnā *«խարտոց, յեսան», որ պարսկերէնից է փոխառեալ։*

Գիւր.—Ոզմ. ճեսան, *Մկ. Մրղ.* ճէսան, *Ախց. Կր. Սեբ. Սլմ. Վն.* էսան, *Հմշ.* էսօճ, էսճի *Խար, Խրբ.* օսան, *Ալշ. Մշ. Սս.* լէսան։

Փոխ.—Քրդ. هسان hesan *«յեսանաքար», hesan kirin «սրել», husān (ըստ* Rhea*) «յեսան»,* هسون hesun *«սրել»* (Justi, Dict. 443)։

Ցեսմիկ *տե՛ս Հեսմուկ։*

ՅԵՍՏԱՐԱՅ *«ձեռն իմ». ունի միայն Բառ. երեմ. էջ 225։*

+ՅԵՏ *«յետոյ, ետքը» ևն։*

= Բնիկ հայ բառ, որի մեկնութիւնը տե՛ս ճեա։—*Հիւրշ. 466։*

Ուղիղ են մեկնում ՆՀԲ, Müller SWAW 41, 8 *և* 43, 302, Justi, Zendsp. 189, *Տէրվ. Մասիս 1882 յունիս 7, Հիւրշ.* Arm. St. §§ 164, 212։—*Տէրվ. Նախալ. 121 հյ.* ճուսկ, *սանս.* paçča, *լիթ.* paskui *բառերի հետ՝ իբր հնագոյն* *ճեսա ձևից. համմտ. լտ.* post *«յետոյ»,* Karolides, Γλ. σχκρ. 102 *կպղվկ.* χατάρ *«յետին, վերջին»։ Հիւնք.* յեսիճ < *Թրք. (իմա՛ արաբ.)* էտնա *«առորին»,* յետնիլ < ետնա *լեռան անունից, ն.* αΐωα *«սևադոյն, թխատիպ», տճկ.* aydən *«լոյս»* Karst, *Յուշարձան 427 թաթար.* kat, kit, küč։ *Պատահական նմանութիւն ունի չին.* 候 骨 hóu⁴ -t'ou² *«յետևը»։*

Գիւր.—1. Սլմ. Վն. յետ, *Ջղ.* ֊ետա, *Ախց. Կր.* յէտ, *Գոր. Ղրբ. Շմ.* յէտ, յէ՛տը, *երև. Խրբ. Հճ. Նախ. Պլ. Ռ. Սչ. Տիգ.* յէդ, *Սեբ.* ֊էդ, *Ագլ.* յիտ, *Հմշ.* յիդ, *Ոզմ.* ճիտ, *Տփ.* ճիդ, *Զթ.* իդ.—*2. Մշ.* ֊էտեվ, *Ալշ.* ֊էդեվ, *Մրղ* յէտէվ, *Ախց. Կր.* ֊էտէվ, էտէվ, *Սեբ.* ֊էդէվ, *Ասլ.* յէդէվ *(նշանակում է «յետոյ». օր.* յէդեվ էգէօ *«յետոյ արի՛»), Նախ. Պլ. Ռ.* էդէվ, *Ակն.* էդվէն *«յետևից», Հմշ. Տիգ. Տփ.* էդիվ. *Սլմ.* իտեվ, *Հճ.* իդեվ, *Զթ. Սվեդ.* իդիվ, *Մկ.* ճիտիվ.—*3. Մշ.* յէտ, *Ախց. Կր.* յէտը, *Սեբ* ֊էդը, *Ակն.* էրգ, էրգը *«վերջը, յետոյ», Ռ.* յէրը, *Պլ.* յէրգը *«յետոյ», Ագլ.* յիտ.—*4. Տփ.* էդեն, *Ջղ.* ֊ետա։—*Նոր բառեր են* յետևանց, ետեւրես, ետևոռանց, ետևոռիկ, յետոռիկ, յետվրայ, ետեօ, յետի *կամ* ետի *«ուշ» (գիտէ արդէն էֆիմ. 73* յետի ձևով), ետիճեռը *«այնուհետև»,* ետիտես, ետնտռուկ, ետիճենկ, յետաճալ, յետացնել, յետիճ *«իրիկնադէմը» (սրա հետ պատահական նմանութիւն ունի հիւս. օսքյ.* jetən *«երեկոյ»՝* jet *«վերջանալ» արմատից),* յետկենկ, յետճաքեր, յետճակապ, յետճակին, յետճաճաչ, յետճաճձիւղ, յետճափակ, յետնուց, յետոռել, յետոռիկ, յետփախ, յետֆաչ։

ՅԵՏԵԼ *«տրտնջել կամ խնդրել». ունի միայն Բառ. երեմ. էջ 225։*

ՅԵՏԵԼ *«ոռոգել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 393. «Ծառք և տունկք դրախտին պէտս ոչ ունէին ջրոյ յետելոյ, զի գետ ելանէր և ոռոգէր զնա»։*

***ՅԵՏԵՆ** *«ձի եկեալ յետուստ. այսինքն ձի ասպաստանիկ, զոր ի յետուստ տանին ճանապարհորդք ի պէտս իւրեանց և իշխանաւորք առ ի զարդ». գիտէ միայն ՓԲ. գործածուած չէ հին մատենագրութեան մէջ, չրկայ նաև նոր գրականում. ուստի յարմարեցրած է՝*

= Թրք. يدك yedek *հոմանիշից։—Ա.Ճ.*

ՓԲ զուր է աշխատում մեկնել հյ. յետ եկ բառերով։

ՅԵՏԻՔ *«ծործոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 225։*

ՅԵՒԻՆ *«կտակ». ունի միայն Կեղծ-Շապհ. էջ 26. «Եւ հասաւ ախտ հիւանդութեան սրբոյն Սահակայ հայրապետին և առեալ զբռնաց զյետինս իւր այսպէ՛ս»։*

= Թերևս յետկար բառն է, որ ոգէտ զբռչի ձևոքով այսպէս խաթարուած է. բայց և համմտ. Ղևոնդ պատմիչ, որ նոյն տեղը (էջ 29) գրում է. «Գրէ զվերջինս բանից իւրոց»։—Ա.Ճ.

Տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մտ. Բ. էջ 62։

***ՅԵՏԿԱՐ**, ի *հլ. (ըստ ՆՀԲ նաև ի-ա հլ. բայց առանց վկայութեան) «ձեռագիր, մուրհակ, երդման թուղթ, խոստմնագիր» Յհ.*

կաթ. «նամակ» Սեբ. 41. «զեկուցագիր, դատավճիռ» Սեբ. 122։

=*Պհլ.* ayātkār *«գրուածք, գիրք, տետր, տետրակ, յիշագիր, զեկուցագիր»*, *պազ.* ayādagār *«զեկուցագիր»*, *պրս.* یادگار yādgār *«յիշագիր, յիշատակագիր, յիշատակ»*, *որից նաև Թրք.* yadigar *«յիշատակ»։ Իրանեան բառը կազմուած է զնդ.* yāta-, *պհլ.* yāt *կամ* āyāt, *պրս.* یاد yād *«յիշել, յիշողութիւն»* + kār, -կար *«-արար» (ինչ.* վճռակար, օգտակար*) բառերից* (Horn § 1119)։ *Պհլ. ձևի դէմ սպասելի էր հյ.* *այատկար *կամ առնելով աւելի ուշ ժամանակի մի ձև՝* *յատկար, *որ թերևս ժողովրդական սուղաբանութեամբ ազդուելով հյ. յետ բառից՝ դարձել է* յետկար. *Համմ. նաև սխալագիր* զայիտիկար *(Հյց.) գրչութիւնը՝ Օրբ. հկճռ. ժբ. էջ 185. մինչդեռ նոյնի օրինակութիւնը Օրբ. կթ. ունի* յետկար։— *Հիւրշ. 198։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀՔ. նոյնը նաև Lag. Arm. Stud. § 1564։

ՅԵՏՐՈՅ *«բարձրացեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 225։*

Ցերասաւ *տե՛ս Երասան։*

Ցերիւրել, Ցերիւրաւք *տե՛ս Երիւր։*

Ցերկուաւնալ *տե՛ս Երկու։*

ՅԵՐՋ. *անստոյգ նորագիւտ բառ. մէկ անգամ գործածուած է Օրբել. հրտր. Էմինի, էջ 140. «խաղացոյց գերութեամբ և գնաց ի Դուին, և եդ ի նեղ յերջ խաւարչտին բանտի» (Շահն. Ա. 236 և այլ օր. Էմինի՝ յորջի)։— Թէ ուղիղ ձևը յորջի ընթերցուածը չէ, հաւանաբար յերջ գոյական է և նշանակում է «ծակ, նեղ տեղ».—(մութ բանտի նեղ ծակի մէջ բանտարկեց).—բայց կարող է առնուիլ նաև իբր ածական՝ «մութ. խաւար» նշանակութեամբ.— յ կարող է լինել նախդիր կամ արմատական։*

Ցեց *տե՛ս Յենուլ։*

ՅԻՋԴԻԼ կամ ՅԵՋԴԻԼ *«ջրի կամաց կամաց ցամաքիլը հողի երեսից» Փիլ. լին. 150. Լծ. փիլ.։*

ՅԻՂԿ *«յղկուած, ողորկ, հարթ». գործածական է միայն նոր գրականում. որից* յղկել *(գրուած նաև* յեղկել*) «ողորկել, հարթել». Փիլ. Սարգ. Ոսկիփ.։*

Տէրվ. Նախալ. 103 հնխ. rik *«գծել» արմատից է հանում սանս.* rik, likh, *յն.* ἐρείχω *«խորտակել, փշրել» և հյ.* յղկել<*յղիկել։ *Հիւնք.* ողորկ *բառից՝* Karst, *Յուշարձան 422 ԹԹր.* yol, yoŋ, yul *«տաշեղով յղկել»։ Ղափանցեան, Արրտ. 1917, 217 և Տեղեկ. ինստ. 2, 85* շողոքորթ, ողոքել *բառերի հետ կցում է վրաց.* սլեֆա *«հարթել» ձևին և սեմական* xlk *արմատին։ Պատահական նմանութիւն ունին եբր.* חלק ḥlq *«ողորկել, հարթել»,* חלק ḥālāq *«յիղկ, ողորկ, հարթ, լեռկ»։*

Գիմ.—Ասլ. ճրղգէ՛լ *«յղկել»։*

ՅԻՄԱՐ, ի-ա *հլ. «խինթ, անմիտ» ՍԳր. Ոսկ. ա. 12. եղիշ. որից* յիմարանալ *Ես. ժթ. 11.* յիմարիլ *ՍԳր.* յիմարեցուցանել *ՍԳր.* յիմարութիւն *ՍԳր.* յիմարակորոյս *Ագաթ. ևն. գրուած նաև իմար Վրդն. առ. 73. նոր բառեր են* յիմարանոց, յիմարաբոյժ, յիմարաբուժութիւն։

Lag. Symmicta 7, 27 *պրս. (իմաստաբար.)* xumār *«զարթիսում» ձևի հետ։ Հիւնք. յն.* χειμάρρους *«վտակ, հեղեղատ» բառից։* Patrubány SA 1, 309 *արաբ.* ḫimar *«էշ» բառից փոխառեալ։ (ե դարում արաբերէն փոխառութի՞ւն!)։ Բ. Խալաթեան ՀԱ 1902, 309 ասոր.* xamrā *«դինի» բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 36 պհլ.* a-hamār *«անհամար, անզգոյշ» բառից։*

Գիմ.—Ալղ. ⁻իմար, *Ագլ. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Սլմ. Տփ.* ճիմար, *Տիգ.* ճիմոր, *Ախց.* իմար, *ՋԹ.* իմօյ, իմոր, *Ակն.* ումար։

ՅԻՆՈՒՆՔ *(սեռ. -նաց) «Ջատկից մինչև Հոգեգալուստ եղած յիսուն օրուայ միջոցը» Տօնաց. Տօմար.։*

Հները մեկնում են իննի *բառից. «Յինունքն և կիւրակէքն ունին զօրինակ երկնաւոր փեսային Քրիստոսի Հարսանեաց... յորժամ խառնեալ միանան ազգ արդարոց մարդկան ընդ ինն դասս հրեշտակաց, զոր և անուն իսկ աւուրցդ*

յայտ առնէ՝ յինուիմ վերակոչելով». Շնորհ. ընդհ. տպ. եմ. էջ 64։—«Այլ և բազումք յինունք կոչեն ըստ ինն դասուցն հրաբուն զօրացն». Տօնակ.։—«Այս յիսուն օրս զատիկ է, վասն այն կոչի յինունք, որ է յիսունք և կամ յինունք, այսինքն ընդ ինն դասս հրեշտակաց ուրախացեալ տօնիմք զյարութիւն Քրիստոսի». Տաթև. ձմ. ճխե։—ՆՀԲ մեկնում է իբր յն. ὑμνῳδοὶ «հարսանիք», ὑμνος «երգ հարսանեաց» կամ հյ. ինն բառից։ Քըննասէր, Օրաց. հիւանդ. 1905, էջ 358 յինուիմ բառից է հանում։

ԳԻՒ.—Սեբ. ինուիմ։

*ՅԻՇԱՏԱԿ, ի–ա հլ. «յիշողութիւն, յիշում, յիշելիք» ՍԳր. Ոսկ. մ. ա. 1. որից յիշատակել ՍԳր. յիշատակարան ՍԳր. յիշատակագիր Նիւս. կազմ. անյիշատակ Կոչ. Ագաթ. անյիշատակութիւն ՍԳր. Եւագր. Կոչ. բարեյիշատակ Լմբ. նոր բառեր են յիշատակութիւն, արժանայիշատակ Լծ։

=Պատկանում է յիշել բային. բայց որովհետև կազմութիւնը չի կարող հայերէնով մեկնուիլ, ուստի պէտք է կարծել թէ պհլ. փոխառեալ մի բառ է և յատկապէս ներկայացնում է անցեալ դերբայի -tak ձևը, տե՛ս նաև յիշել։—Աճ.

Աւգերեան, Քերակ. 1815, էջ 237 յիշել բայից –տակ մասնիկով, որի համար ուրիշ օրինակ չունի։ ՆՀԲ յիշել և տակ բառերից, իբր «կարող յիշելոյ»։

ԳԻՒ.—Ջղ. յիշատակ, Ախց. Մրզ. Շմ. Սլմ. հիշատակ, Ագլ. հիշատա՛կ, շո՛տակ, Մկ. հիշոտակ, Երև. Ոզմ. Տփ. իշատակ, Ալշ. Մշ. Սեբ. յիշադագ, Ռ. Սչ. հիշադագ, Ննխ. հիշադագ, շադագ, Խրբ. Պլ. իշադագ, ՀԹ. հիշադօգ, հիշադոգ. բայի «յիշատակ» իմաստից. նշանակում են նաև «ժառանգ, որդի». իսկ Ախց. իշտէֆ «կիրակամուտ»։

ՅԻՇԱԻ «արշաւանք», որից բայական ձևով յիշուել «արշաւել». նորագիւտ բառ, որ ունի Սմբ. դատ. 9, 20, 152, 189. Վասն որ յիր ընկերոջ երկիրն յիշվէ. Յիր ընկերոջ երկիր յիշվէ ու ծեծ այնէ. Եթէ երթայ թագվոր ի յիշաւ ի չարկմու յերկիրն ևն։

=Թուի թէ նոյն է արշաւ բառի հետ. շ-ից առաջ r ձայնի անկման համար հմմտ. far·· շել—fաշել, *պարշտել—պաշտել ևն։—Աճ.

*ՅԻՇԵԼ «միտքը դալ, միտքը պահել» ՍԳր. Ոսկ. երբ. որից յիշեցուցանել ՍԳր. յիշեցուցիչ Ոսկ. մ. բ. 3. Եփր. դևտ. յիշումն Նխ. եզեկ. Նիւս. բն. յիշաչար Վրք. հց. անյիշաչար Գնձ. ժմ. յիշելիք «յիշատակ» Վրք. հց. յիշելութիւն Պզատ. օրին. յիշողութիւն Ոսկ. յհ. ա. 41. Փիլ. յիշոց «հայհոյանք» Մաշկ. Կանոն. Շնորհ. (թէև հնից գործածուած է, բայց վերջին ժամանակի գաւառական բառ է համարում Շնորհ. Ընդհ. տպ. Եմ. էջ 13. «Հայհոյութիւնամբ, որ ըստ գեղջկացն բարբառոյ հիշոցք անուանին և ըստ դրոց սովորութիւնն՝ անէծք և թշնամանք». նոյնը նաև Տաթև. ամ. 81 ա. գրուած յուշունչ Բար. 174). որից յիշոցաւագ, յիշոցասաց (նորադիւտ բառեր, որ տես իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 166)։

=Նոյն է ուշ, յուշ բառի հետ և սրա հետ փոխառեալ է պհլ. գւտ. մի ձևից, որ աւանդուած չէ։ Իրանեաններից մէջ գտնում ենք uši, hōš, hūš ձևերը, որոնք տալիս են հյ. ուշ, բայց կայ նաև քրդ. hiš, որից կարելի է հետևցնել i-ով գաւառական երկրորդական մի ձևի գոյութիւնը։ Նոյնն է հաստատում նաև հյ. յիշատակ, որ անտարակոյս նոյն է յիշել բայի հետ, բայց չի կարող մեկնուիլ հայերէնի բառակազմութեան օրէնքներով, այլ ներկայացնում է պհլ. անցեալ դերբայի ձևը։ Համմտ. դարձեալ գւտ. յիշար «սթափ», որ պրս. hošyār «արթուն» բառի համապատասխանն է և նոյնպէս ունի ի ձայնը. միւս կողմից յիշոց բառը, որ յիշ– արմատից է կազմուած և գաւառականներում տեղ տեղ ունի ուշուց ձևը, որով ցոյց է տալիս յիշ և ուշ արմատների նոյնութիւնը։

ՆՀԲ կցում է յուշ բառին։—Bugge KZ 1, 459 մեկնում է ի նախդիրով՝ ուշ բառից, իբր *յուշել>*յշել>յիշել։ Սրան հակառակ է Հիւբշ. Arm. Gr. 513 և IF Anz. 8, 49, բայց յիշել և յիշատակ բառերի ծագման և կազմութեան մասին որևէ կարծիք չի՛ յայտնում։

Գիւմ.—Ալշ. ⁺իշել, *Մշ.* ⁺իշել, յիշալ, *Սչ.* ճիշել, *Ախց.* ճիշէլ, *երև. Պլ.* իշել, *Ննխ.* իշէլ, ²շէլ, *Զթ. Խրբ. Տփ.* իշիլ, *Ագլ.* ճի՛շիլ, *Ոզմ.* ճիշալ։—Յիշոց *բառը ներկայացնում են Խրբ.* իշօց, *Զթ.* իւշիւցf, *Ասլ.* իշէօսf, *Վն.* իշուց, *Զղ.* ⁺ուշուց, *երև. Գոր. Տփ.* ո՛ւշուց, *Ղրբ. Մրզ. Շմ.* իւշիւց, *Մկ.* ճիշուց, *Ոզմ.* ճէշօց։—*Նոր ձևեր են* յիշ ասել *Վն.* «*յիշել*», յիշնուիլ, յիշելf, յիշէf, յիշուական, յիշարնալ *Բզ.* «*սթափիլ, խելքը գլուխը գալ*», յիշարցնել *Մշ.* «*քնից արթնացնել*» (*Համմ. պրս.* hōšyār «*արթուն*»), ուշունցաբերան, ուշունցատու, ուշունցնատեղ։

Փոխ.—Սղերդի արաբախօս քրիստոնեաներն ունին išek «*յիշէք, պատարագիչ քահանային տրուած դրամը*» (*Բիւր. 1899, 116*)։

ՅԻՍԿԱԻՈՐ «*միայնատուր*». *ունի միայն Բռ. երեմ. էջ 226 (տե՛ս 10 տող ցածրում)։*

+ՅԻՍԱԻՆ, ի *հլ. (յետնաբար կայ նաև* յիսուց, յիսաց) «*յիսուն*» *ՍԳր. Եփր. Թգ. 447 (գրծ.* յսնիւf). *որից* յիսնամեան *ՍԳր. Եփր. ծն.* յիսնապետ *ՍԳր.* յիսներորդ *ՍԳր.* յիսնակ *Նանայ. Տոմար.* յիսնեակ *Փիլ. Կանոն.* յիսնեւրեակ *Փիլ. ՅՀ. իմ. առ.* յիսնաւոր *Երգ. վէ. 5. (տպ. Պոլիս 1895* յսնաւորf. *իմաստը անյայտ է. բնագրում և միւս թարգմանութեանց մէջ ամբողջ այս կտորը չկայ. տե՛ս ՀԱ 1924, 231 և 418. Թերևս ա՛յս է վերի* յիսկաւոր *բառը). Նոր բառեր են* յիսնամեայ, յիսնամեակ.—*գրուած կայ նաև* յսուն *Եփր. Թգ. 447, Եղիշ. և, էջ 84, որից* յսնապետ *Եփր. Թգ. 447 են, որոնց վրայ տե՛ս* Meillet JAs. 1903², 498:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* penk²ek′omt- *ձևից. Համմ. սանս.* pañcāçát-, *զնդ.* pančā-sat-, *պրս.* panjāh, *պհլ.* pančāh, *Թոխար.* pçāka, *յն.* πεντήκοντα, *լտ.* quinquāginta, *հիռլ.* cōica *են հոմանիշները* (Boisacq 768. Walde 635, Pokorny 2, 25): *Ըստ* Meillet *(անդ) հնխ.* penk²ek′omt- *առած է նախ հյ.* *ճինգիսուն *կամ* *յինգիսուն, *որից սղմամբ* *յինգսուն>*յինսուն. *առաջին վանկի ի ձայնաւորը կրճատուած չէ՝ կոկորդական ընդայինի պատճառաւ. Բայց կրճատումը տեղի է ունեցած գուց. յսուն ձևի մէջ, որ գործածուած է մի խումբ հին աւետարաններում։—Հիւբշ. 477։*

Նշ. *ճինգտասուն *ձևից։ Ուղիղ են մեկնում* Peterm. 157, Windisch. 32, Böttich. Arica 62, 15, Müller. SWAW 38, 584, *Տէրվ. Մասիս 1882 յունիս 7. Նախալ. 94, 132 են։ Հիւնք. հիւսիս բառից։*

Գիւմ.—Ալշ. Մշ. ⁺իսուն, *Մկ.* ճիսուն, *Հճ. Սչ. Սլմ. Վն. Տփ.* իսուն, *Ննխ.* ճիսուն, իսուն, սուն, սիւն, *Ագլ. Հմշ. Ռ.* ճիսսուն, *Տիգ.* իսսուն, *Մրզ.* իսսուն, իցցուն, *Ասլ.* իսիւն, *Զթ.* իսսօն, իսսոն, *Սվեդ.* իսսօն, *Ոզմ.* ճէ՛սօն, *Ալշ. Զղ.* ⁺իբսուն, *երև.* իտցուն, *Ախց. Կր.* իցծուն, *Սեբ.* ⁺իձձուն, *Պլ.* իձձուն, *Խրբ.* իձ-ձ՛ուն, *Գոր. Ղրբ. Սլմ.* իցցուն, *Ցղ.* իցուն.—*վերջիններիը ձևացած են* վաթսուն, ութսուն *բառերի ազդեցութեամբ, որոնց մէջ* թս *ձայնախումբը ըստ օրինի վերածուած է* ձձ, ցց *(տե՛ս Աճառ. Բազմ. 1897, 261).—Համշէնի մահմեդական հայոց բարբառով* իսըն «*50*» *(Մառ,* Зап. Коллегіи Восток. I. *էջ 73—80)։*

ՅԻՐԱԼ «*մեղկիլ*» *Բառ. երեմ. էջ 225, կամ «յուլանալ» Փբ։*

ՅԻՐԵԼ «*յետուլ, իրար միացնել*» *Փիլ. լին. 283, 374. Քեր. քերթ. «ձեռքը ներս կոխել» Նիւս. երգ. «աչքը մի տեղ յառել» Նիւս. երգ. Վրդ. երգ. որից* յիրեցուցանել «*ընդարձակել, տարածել*» *Պիտ. — իսկ* յիւրել «*ձրգտել՝ երկարել չուանը*» *Ոսկ. ես. 407 պէտք է ըստ Վարդանեան ՀԱ 1921, 505 կարդալ* յեւրիւրել «*ուղղել, կարգաւորել*» (*կարող է նաև այստեղ պատկանիլ*)։

Նշ. «*իր ընդ իր յարել, յեռուլ, յորմէ ումկ.* յրել, հրել»։

ՅԻՐՆԵԻՆԱՆ «*կապմութիւն?*» *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կնիք հաւ. 55. «Աստուածաղան յիւրնուածով վերանգնցան»,— Թերևս ուղղելի* յօրինուած։

+ՅՂԻ (-ղւոյ, -ղեաց) «*ծոցուր, երկուհոդիս, ոտքը ծանր*» *ՍԳր. որից* յղութիւն *ՍԳր.* յղանալ *ՍԳր. Եփր. ծն. կամ* յղենալ *ՇՆ. իա. 2. Ագաթ. Եւս. պտմ. Ոսկ. ես. Եղն. Եփր. Թգ.* յղեկիր *Պտմ. աղէքս.* յղացութիւն *ՅՀ. իմ. երև. են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* plē- «*լի, լցնել*» *արմատից, որի վրայ ընդարձակ խօսուած է լի արմատի տակ. նշանակութեան զարգացման համար համմտ. ֆրանս.* pleine «*լի. և յղի*»։—

ՆՀԲ լի բառից։ Տէրվ. Մասիս 1881 մայ" 5 և Նախալ. 92, 127 մեկնեց վերի ձևով։ Հիւնք. ճող բառից։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 195 ուղի բառից, որ իբր թէ նախապէս նշանակում էր «փոր, որովայն». համմտ. լտ.* alvus, alveus «*փոր, փոս*»։ (*Այս մեկնութիւնը կրկնում են* Walde 30 *և* Pokorny 1, 25): Karst, *Յուշարձան 427 ԹՔր.* kal, kil, kol «*ուռիլ, դէզ, դիզել*»։ Meillet *(անձնական) վարանում է ընդունիլ վերի մեկնութիւնը՝ ղ ձայնի պատճառով, որ բացատրելու համար ենթադրում է հնխ.* pelən-iyo—. *իսկ այժմ (նամակ 5 հոկտ" 1930) դնում է հնխ.* pōlo- «*ձագ*» *բառից, որից և հյ. ուլ, բացատականը՝ ամուլ<*ան-ուլ «անձագ», որով և յղի՝ բուն «ուլով, ձագով»։*

ԳԻՒՒ.—Գոր. յղի՛, *Ալշ. Ախց. Մշ.* ɉղի, *Ղրբ.* յղէ՛, *Ագլ.* յղա՛, յաղա՛, *ՋԹ.* ճղի, *Սրև. Խրբ. Հմշ. Սեբ. Սլմ. Վն.* ղղի, *Ոզմ.* ղղէ՛, *Սվեդ.* աղղա, *Զղ.* ɉուղի, *Ագլ. նաև* յէ՛ղղա։

ՅՂԿՆՏԻՐ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. եփես. 919. «Դու զիա՞րդ իցէ զի փափկանայցես, յանհոգս գայթիցես, յղկնտեր խաղայցես».— ընդհանուր նշանակութիւնն է «անհոգ զուարճանալ»։*

ՅՂՓԱՆԱԼ *«լիանալ, առատանալ, բոլորովին կշտանալ» ՍԳր. որից* յղփութիւն *«անչափ լիութիւն», Եզեկ. ժզ. 49.* յղփագոյն *Ագաթ.* յղփիլ *Մագ.* յղփացուցանել *Եփր. դտ. 342։*

ՆՀԲ «ի յեղց կամ ուղփ, ուղխ, իւղ, կամ թրք. ölefe «*ոռճիկ*», *պրս.* էլվան խորտէն «*խճողել զորովայն*»։ *Տէրվ. Մասիս 1881 մայ" 5 հնխ.* par «*լցնել*» *արմատի կրկնական *parp- ձևից։ Հիւնք.* յղանալ *բայից։* Karst, *Յուշարձան 427 ԹՔր.* kal, kil, kol «*դիզել, ուռիլ*»։

ՅՂՔԵԼ *«սպանել». ունի միայն Բառ. երեմ. էջ 226։*

ՅՇՏՈՂ *(գրուած* յշտող*). անստոյգ բառ է, որ մէկ անգամ գործածում է Մծբ. 210. «Եթէ գրեալ լինի պարտուկ և յշտօղ, մեկուսեն զնա»։ ՀՀԲ մեկնում է «ժպիրհ, լիրբ», ՆՀԲ «ճշդօղ կամ ժխտօղ», իսկ ՋՒ և ԱՒ երկուսն էլ միասին։*

ՅՈ՞, ՅՈ՞Վ *տե՛ս Ո։*

*ՅՈՐԵԼԵԱՆ, *ի հլ. «հրէական թողութեան տարին, որ յիսուն տարին մի անգամ էր գալիս» Եփր. եւ. Նխ. ղևտ. Շիր. քրոն. Մեկն. ծն. «յիսուն տարուայ մի շրջան» Նար. «յինանց յիսուն օրերը» ՅՀ. իմ. եկեղ. Կանոն. որից* յորելեան փող *«հանդէսի բացումն ազդարարելու փող (ըստ հրէից)» Յես. ղ. 4, 6. որ և պարզապէս* յորելեան *«շեփոր» Յես. ղ. 3. նոր գրականում* յորելեան *նշանակում է «տօնական տարեդարձ». ինչպէս՝* ճարիւրամեայ, ութսունամեայ, *Բաաննինգամեայ, տասնամեայ* յորելեան *և.— բառս գրուած է նաև* յովբելեան, յորեղեան, յորեղ *Անան. ժմնկ. 31։*

=*Յն.* ἰώβηλος, ἰωβηλαῖος *«յորելեան» բառերից կազմուած՝ հյ. -եան մասնիկով։ Յունարէնից են նոյնպէս լտ.* jubilaeus, jubilaeum, *ֆրանս.* jubilé, *գերմ.* Jubeljahr, *իտալ.* giubileo, *ռուս.* юбилей *են։ Բոլորի բուն մայրն է եբր.* יובל yōbēl *«խոյ», որից* קרן היובל qeren hayōbēl *«խոյի եղջիւր» կամ* שופרות יובלים šōpərōth hayōbəlēm *«շեփորք խոյի» (որով յայտարարում էին հանդէսի բացումը),* שנת היובל šənath hayōbēl *«յորելեանական տարի»։ — Հիւբշ. 366։*

Հներից Շիր. քրոն. մեկնում է «յորելն ըստ եբրայեցոց յիսուն ամ է»։ Տօնակ. «Յորելեան կոչէին, որ թարգմանի ազատութիւն»։ ՀՀԲ և ՆՀԲ դնում են եբրայեցերէնից։

*ՅՈՐԵԼԵԱՐ *«այն անձը՝ որի յորելեան հանդէսն է տօնւում. յորելինաւոր». գործածական է միայն արդի գրականի մէջ։*

=*կազմուած է* յորելեան *բառի ձևով՝ ֆրանս.* jubilaire, *գերմ.* Jubilar *«յորելեանական» բառից։*

*ՅՈՔԵԼԻ *«շամփրաձև մի նշան՝ որ գործածուած է Որոգինէսի վկայիչեանում՝ ընթերցուածների տարբերակները նշանակելու համար» Շիր. քրոն. = Անան. ժմնկ. 47. նոյն բառն է յոբէլեան՝ որ Վրդ. սղ. յոչ. մեկնում է «յոբէլեանն է կէս գրոյ առ ի շեղ՝ ունելով ի ներքոյ ստիքս»։

=ՅՆ. ὀβελός «ձեռագիրների մէջ սխալները նշանակող նշան՝ որ ունի ⁱ— կամ ÷ ձևը». բուն նշանակում է «շամփուր». սրանից է նաև լտ. obelus կամ obeliscus հոմանիշը։ —Հիւբշ. 367։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՅՈՔԵԼԻ «շեփոր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ա. մնաց. ժե. 28. «Հանին զտապանակ ուխտին Տեառն հռչակաւ, ձայնիւ յոբելեան և փողով և ծընծաղայիւք»։

=Եբր. יוֹבֵל yōbēl «փող, շեփոր» բառն է, որ գործածուած է Ել. ժԹ. 13 (տե՛ս բառիս վրայ յոբելեան)։ Զարմանալին այն է, որ Ա. մնաց. ժե. 28 թէ՛ եբրայական բնագրում և թէ Եօթանասնից յոյն թարգմանութեան մէջ չէ՛ գործածուած yōbēl բառը, այլ שׁוֹפָר šō·pār=σωφέρ «շեփոր» (Tischendorf 1869 հրատարակութեան մէջ ձեռագրական ընթերցուածներն էլ չունին նման մի բառ)։—Ա.Ճ.

*ՅՈՔԵԼԻԿ «կոթող» Պատմ. աղէքս. էջ 42 (երկու անգամ)։

=ՅՆ. ὀβελίσκος «կոթող» (բուն նշանակում է «փոքր շամփուր»), որից փոխառեալ են նաև լտ. obeliscus, ֆրանս. obélisque, գերմ. Obelisk ևն։— Հիւբշ. 366։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՅՈԳՆ, ն հլ. (յոգուճ, յոգուց. գրուած է նաև յոճն) «շաղ, բաղում» Ոսկ. մ. բ. 10. Պիտ. Խոսր. սրանից ունինք կազմուած բազմաթիւ ածանցներ (ԱԲ ունի 135 հատ), որոնք սովորաբար յետին են. հնագոյններն են՝ յոգնագոյն Եզն. յոգնագնալի Ոսկ. յհ. բ. 27. յոգնաճարակ Ոսկ. յհ. բ. 23. յոգնաշնորհ Ոսկ. եփես.։ Այստեղ է պատկանում նաև յոգնիլ (գրուած նաև յօգնիլ, յաւգնիլ) «խոնջիլ, պարտասիլ» Թուղց իս. 4. Պիտ. Սեբ. 39. Վրք. և վկ. բ. 544. Արծր. Հրտր. Պատկ. էջ 87. «ջանալ, հետամուտ լինել» Տիմոթ. կուզ. էջ 85 («ըրովդէս սպանանել յոգնիւր»). Նշանակութեան զարգացման համար համմտ. յն. ὄχλος «բազմութիւն, ամբոխ, շփոթութիւն, նեղութիւն», ὀχλέω «չարչարել, անհանգստանալ», ὀχλητρός «յոգնեցուցիչ, ձանձրալի»։

ՆՀԲ լծ. ճոխ, յաճախ, աճումն, լտ. auctus, թրք. čoq, yekün: Տէրվ. Altarm. 52, Նախալ. 100 հնխ. yug «յօդել, լծել, յաւելուլ» արմատից։ Հիւնք. յոգն=յն. ὄχλος, յոգնիլ=յն. ὀχλέω: Lidén, Arm. Stud. էջ 76 յ նախդիրով և ո մասնիկով գն<գուն<հնխ. gu̯hen «ուռիլ, ուռճանալ, առատլուլ» արմատից. համմտ. սանս. ghaná- «ամուր, կարծր, գունդ, բոլորովին», պրս. ā-gan-dan «լցնել, խճողել», ā-ganiš «լիուլի», յն. εὐ-θηνία «լիութիւն, ճոխութիւն», լիթ. ganà «բաւական»։ (Այս մեկնութիւնը կրկնում են Boisacq 294, Walde 283, 363, Berneker 1, 327, Pokorny 1, 95): Pedersen. Հայ. դր. լեզ. 62 թուի կցել յաճախ բառին, Սագըզեան ՀԱ 1909, 336 սումեր. ug, uk, uku «մարդ, բազմութիւն»։ Karst, Յուշարձան 405 սումեր. gun «հաւաքում», 408 սումեր. uga, uku, ukkin «ժողովուրդ, բազմութիւն», 421 թրք. čoq «շատ», 422 չաղաթ. yogun «բանակ», ögumak «հաւաքել», ögün «հսկայական»։

ԴԻՒ.—Պլ. Ռ. ճոճնիլ, Ախց. Սեբ. օճնիլ, Ննխ. ճօճնել (գիւղերում՝ օգ՛նել), Ասլ. ճէօ*նիլ, Երև. ճօճնել։

+ՅՈԼՈՎ, ի հլ. «շատերը, բազմաթիւ մարդիկ» ՍԳր. յետնաբար նշանակում է նաև «շատ, բազում» Եղիշ. Խոր. Պիտ. որից յոլովել «շատանալ, շատացնել» ՍԳր. Ոսկ. հս. մ. ա. 21 և փիլիպ. Ագաթ. Եզն. յոլովագոյն Ա. մնաց. իդ. 4. Ոսկ. մ. ա. 15, բ. 9. յոլով անգամ Ոսկ. յհ. ա. 29. յոլովութիւն ՍԳր. լեռնայոլով «լեռնաշատ» Նար. խչ. 380 (տպուած է լեռնաճոլով, որից անցել է նաև բառարաններին մէջ).—գրուած է ոլով Վրդ. առ. էջ 9 և 108։

=Բնիկ հայ բառ՝ որ պատկանում է հնխ. pelē- արմատին. սրա ժառանգները տե՛ս լի բառի տակ. յոլ-ով ձևը ներկայացնում է հնխ.

արմատի pol- ձայնդարձը. մեր բառի հետ համմտ. յատկապէս սանս. purú-, զնդ. pouru- «լի, շատ, առատ», յն. πολύς (<*παλύς) «շատ», հիւլ. il «շատ», lia «աւելի, յոգունք», lour «բաւական», կիմր. llawer «շատ», llwyr «բոլորովին», դոթ. հրգ. filu, նրգ. viel «շատ», լիթ. pilus, հսլ. paru «առատ» ևն։—Հիւբշ. IF Anz. 10, 48?

ՆՀԲ լծ. ճոյլ, ժողով, ճոլով, բոլոր, յն. ὅλος, πολύ, թրք. ulu «մեծ», bol «լայն, առատ»։ Ուղիղ մեկնից նախ Տէրվ. Մասիս 1881 մայիս 5, 1882 յունիս 7, Նախալ. 92, որ անկախաբար կրկնում են Bugge KZ 32, 22, Meillet MSL 8, 280 և ընդունում է կասկածով Հիւբշ. IF Anz. 10, 48։ Իսկ Pedersen, Հայ. դր. լեզ. 62 և Lidén, Arm. Stud. 76 ի նախդիրով ճոլով բառից են դնում։ (Երկու մեկնութիւնները անվճռաբար յիշում են Boisacq 803 և Pokorny 2, 63)։ Մատ տե՛ս ժողով։

ՅՈՃՈՐՏ, ի հլ. «խրոխտ, յանդուգն» Խոսիք. «խրոխտութեամբ» Փարպ. որից յոխորտալ, յոխորտանալ Փիլ. Պիտ. յոխորտօրէն Պիտ. աւելի ընտիր է յախորտ Ոսկ. յհ. բ. 30. Սիրեր. 96. որից յախորտիլ Մանդ. յախորտի կալ «յամառիլ» ՋՔ. առում է նոյնպէս յոխորդութիւն Կնիք Հաւ. էջ 300. ոխորտ, ոդորդ ՅՀ. կթ. ոխորտիլ Ուխտ. բ. 106. յախուրդ Ոսկ. բ. տիմ. յաճուրդ Ածաբ. ժզ. որոնք անշուշտ ազդուած են յախուռն և յաճուռ բառերից. արդի գրականը ընդունել է միայն յոխորտ ձևը։

Հիւնք. խորդալ բայից։

—ՅՈՂԱԼ «ծուլանալ, պարապ նստիլ, այս ու այն տեղ նայիլ» Ոսկ. մ. ա. 17, բ. 3, 24. «դիտել, նկատել, հսկել, սպասել» Պիտ. Փիլ. արմատն է յող-, որից են նաև յողանալ «հրպարտանալ» Սիրեր. ծն. էջ 66. յողացուցանել «անհոգացնել, հպարտացնել» ԱԲ։

=Մեկնութիւնը տե՛ս յոյլ։—Աճ.

ՆՀԲ ողն բառից, իբր «յողն կալ, յողնիլ»։

ՅՈՂՈՂԴ, ի–ա հլ. (գրուած նաև յողդյողդ) «տկար, խախուտ, անհաստատ, ուսման մէջ թոյլ» Բ. պետ. բ. 14, գ. 15. Ոսկ. ա. տիմ. եփր. աղ. որից յողդողդել Նաւ. գ. 10. Սիրեր. բ. կոր. Ոսկ. մ. բ. 9, 11 և հռ. յողդողդեցուցանել Սիրեր. բ. թես. յողդողդուն Վեցօր. 96. անյողդողդ ՅՀ. իմ. ևն։

=Կրկնուած է *յողդ պարզ արմատից, որ առանձին չէ գործածուած։

Այսպէս է դնում նաև Հիւնք. և յողդ համարում է նոյն ընդ խախուտ։

ՅՈՅԳ «վէգ, խաղալու կոճ, ճան». երկու անգամ գործածում է Ոսկ. «Լինդ վնասակար ծառայն կցէր և ի լիցս և ի յոյգս և ի տապեղուլունս դեգերէր» (յն. περιφερόμενος τοῖς περὶ κυβείαν) Ոսկ. պօղ. Ա. էջ 923. «Աճապարեմք թագուցանեմք զխալարիկսն կամ զգունդսն կամ զլիցս կամ զյոյգս» Ոսկ. պօղ. Բ. 539։ Առաջին վկայութեան մէջ կարելի է կասկածիլ, որ յ նախդիր լինի, իբր ի յ'ոյգս, որով արմատը ոյգ, ինչպէս դնում է ԱԲ. բայց երկրորդ վկայութիւնը (զյոյգս) ցոյց է տալիս որ անտեղի է այս կասկածը, որովհետև զ և յ նախդիրները միասին չեն կարող դրուիլ բառի վրայ։ Ըստ այսմ ոյգ ձև դոյութիւն չունի։ Նոյն այս բառն է՝ որ սխալ գրչութեամբ դարձած է ճոգի Եւս. պտմ. 387. «Մարգարէ զարդարի՞, մարգարէ զարդասէր լինի՞, մարգարէ տապալի և ճոգի խաղա՞յ»։

ՆՀԲ և ՋՔ վէգ բառի սխալ գրչութիւնն են համարում Եւս. ճոգի բառը (տե՛ս ոգի բառի տակ), որովհետև ծանօթ չեն Ոսկեբերանի վկայութեանց։ ԱԲ դնում է ոյգ, յոյգ, որոնցից առաջինը սխալ է։ Karolides, Γλ. σσγκρ. 78 յն. κύβος բառից աղաւաղեալ։ Բառիս վրայ խօսում է նաև Վարդանեան ՀԱ 1914, 328, որ անուշադրութեամբ՝ միայն ոյգ ձևն է դնում և ճոգի ընթերցուածին կցելու համար յիշում է գուռ. ճան «վէգ» և թրք. ǰān «հոգի» բառերի նմանութիւնը, ինչ որ զուտ պատահական է։ Հացունի, Դասատ. 288 մեկնում է «քուէ» և ո՛չ «վէգ»։

ԳԻՒՐ.—Յղ. իւ[1] «վէգ», Մշ. ճուգ՝ «խոշոր վէգ՝ որով միւս փոքր վէգերն են խփում խաղի մէջ»։

*ՅՈՅՂ, ի հլ. «որոնում, փնտռտուք, խուզարկութիւն» ՅՀ. կթ. Ասող. Նար. երգ. «ծըփում, տակնուվրայութիւն, խռովութիւն, շը-

փոքուքիւն, աղմուկ» Բ. մկ. ժդ. 15. Ոսկ. մ. բ. 3 և ես. Եզն. Ագաթ. որից յուզել *«փնտռել, տակնուվրայ անել, շփոթել» ՍԳր. Ոսկ. Ագաթ. «խնդրել, ուզել» Մագ. մեծ ևն. էջ 39. «հարցնել» Մագ. մեծ ևն. էջ 55. (այս իմաստների միութեան իբր օրինակ է Պոմ. Ներս. Հյր. 80. Ահա ախոյեանս քո զոր յուզէիր).* յուզումն *նեագր.* յուզակ *Ագաթ. Կոչ.* յուզախնդիր *Ագաթ.* յուզական *Դ. եզր. ժդ. 14. մտայոյզ Դան. բ. 29. նփր. թգ.* պահայոյզ *«գիշերապահ» Ոսկ. մ. բ. 10.* ջրայոյզ *Փարպ.* բֆայոյզ *Վեցօր.* բազմայոյզ *Կանոն.* դարանայոյզ *Դ. թագ. զ. 10.* խոնաւայոյզք *Վեցօր.* խորայոյզ *Ոսկ. յհ. ա. 1.* խռովայոյզ *Մծբ.* հողմայոյզք *Վեցօր.* մաղասայոյզ *Բժշ.* մաղձայոյզ *Սիր. լդ. 23. Ոսկ. մ. ա. 18.* յուզիչ, յուզել, յուզմունք, յուզումնալից, սրտայոյզ *(նոր բառեր) են; յետնաբար գրուած է* ուզել *«պահանջել, կամենալ» Մխ. դտ. Լմբ. պտրգ. Վրդն. դան. Ուտ. էջ 6.* ուզենալ *«կամենալ» Վրք. հց. ա. 640։*

=*Պհլ.* *yōz *ձևից, որ չէ աւանդուած. սրա հետ համմտ. զնդ.* yaozaiti *«շարժիլ, տատանիլ, ծփալ», հպրս.* yaudatiy *«շարժիլ», բելուճ.* ǰuzay *«շարժիլ»,* juzōx *«շարժում», սոգդ.* āyδzot *«յուզէ,* il agite, il trouble», *պրս.* یوزیدن yōzīdan *«որոնել, հետազօտել»,* یوز yōz *«փնտռտուք, յոյզ, որոնում»,* رزمیوز razmyōz *«ռազմայոյզ, ռազմախնդիր»։ Իրանեան բառերը պատկանում են հնխ.* ǰeug'-, ǰeudh- *«յուզել» արմատին, որի ժառանգներն են նաև սանս.* yút, yudh *«կռիւ, պատերազմ, կռուող, մարտիկ»,* yúdhyati *«կռուիլ», յն.* ὑσμίνη *«կռիւ», կիմր. կորն. բրբտ.* iud- *«կռիւ», լտ.* jubeo *«հրամայել» լիթ.* jundù *«շարժիլ, դողալ», գոթ.* jiuka *«կռիւ»,* jiukan *«կռուիլ», մրգ.* jouchen, *(գերմ.* jagen *«վարել, քշել, որսալ»,* Jagd *«որս» բառերի հետ գործ չունին!), հին լիթ.* judra *«պատուող քամի» են. սկզբնական նշանակութիւնն է «շարժել, անհանգիստ շարժումներ անել», որից լայնաբար «կռուիլ» են* (Pokorny 1, 203—4, Boisacq 1007, Walde 396):—*Հիւրշ. 199։*

Ուղիղ մեկնից նախ Lag. Btrg. bktr. Lex. 75—76: *Հիւրշ.* Arm. Stud. § 214 *կցում է վերի ձևերի հետ, բայց համարում է ո՛չ թէ իրանեանից փոխառեալ, այլ բնիկ հայ՝ հնխ.* yug'h *արմատից։ (Նոյնպէս ունի նաև Հիւրշ.* Pers. Stud. *էջ 50)։ Հիւնք.* յեղուզակ *բառից։* Pedersen KZ 40, 210 *յն.* εὔχομαι, *լտ.* voveo *«ուխտել, մաղթել», սանս.* vāghát- *«աղօթաւոր, ուխտաւոր» բառերի հետ՝ իբր բնիկ հայ՝ հնխ.* eu̯eg̑h- *արմատից. (Նոյնը կրկնում են* Boisacq 300, Walde 859, Pokorny 1, 110. *բայց միևնոյն ժամանակ ուղիղ մեկնութիւնն են տալիս* Walde 396, Pokorny 1, *էջ 203—4)։* Karst, *Յուշարձան 430 թթր.* köz, göz *«նայիլ, որոնել», ույղուր.* kösemek *«փափագիլ»։ Պատահական նմանութիւն ունին արևել. Քրք.* اوزلامك özlemek *«ուզել, փափագիլ», օսմ.* اوزلمك üzlemek *«տենչալ, ցանկալ»։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. ǯուզել, *Հճ. Զղ. Սչ. Վն.* ուզել, *Ախց. Գոր. Երև. Կր. Պլ. Ր. Սեբ. Տիգ.* ուզէլ, *ԶԹ. Խրբ. Մկ. Շմ. Սվեդ. Տփ.* ուզիլ, *Հմշ.* ուզուշ, *Ոզմ.* օւզիլ, *Ղրբ.* էօ՛զիլ, օ՛զիլ, *Ննխ.* ուզէնալ, ուզանալ, *Սլմ.* իւզել, *Մրզ.* իւզէլ, *Ագլ.* ի՛զիլ. *այս բոլորը նշանակում են «կամենալ», որ կայ նաև յետնադարեան հայերէնի մէջ. նշանակութեան զարգացման համար համմտ.* խնդրել *«փնտռել. 2. կամենալ, ուզել»,* տղել *«շարժիլ, փնտռել, ուզել», նյն.* ζητῶ *«փնտռել. 2. ուզել. 3. մուրալ»։ Գաւառականների մէջ* ուզել *առացած է նաև ուրիշ նոր նշանակութիւններ. այսպէս՝ Երև. Ղրբ. Պլ. «ամուսնութեան համար մի աղջկայ ձեռքը խնդրել», Ախց. Դվ. Երև. Կիւր. Կր. Մրզ. Մլթ. Շհ. «սիրել»։ Նոր բառեր են* ուզան, ուզանքեւան, ուզուզիկ, ուզող *(Ղրբ. «մուրացիկ». իմաստի համար համմտ. պրս.* خواهنده xāhanda *«ուզող, ցանկացող, կամեցող. 2. մուրացկան», նյն.* ζητῶ *«փընտռել. 2. ուզել. 3. մուրալ»),* ուզեանց, ուզնկայ, ուզնկան, ուզուր։—*Այստեղ է պատկանում նաև* բեկուզ *«թէև», որի համար համմտ.* կուզէ թէ *«թեպէտ» (Ներսէսովիչ, Բառ. լտ. հյ. 304)։*

*ՅՈՅԺ *«սաստիկ, շատ, խիստ», ՍԳր. որից* յոյժ յոյժ *«խիստ շատ» Ծն. է. 19, լ. 43. ա-*

ռաւել ֆան զյոյժ «չափազանց» եղիշ. գտ. և խաչել.։

=Կազմուած է յ նախդիրով ոյժ բառից, որ իրանական փոխառութիւն է. իմաստի զարգացման համար հմմտ. կար «կարողութիւն, ուժ» և կարի «շատ»։——Հիւբշ. 215։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Տէրվիշ. Altarm. 53 յoժar, յոգնիլ, ժուժել և ուրիշ բազմաթիւ բառերի հետ հնխ. yug «կապել» արմատից։ Հիւնք. ոյժ բառից։

ՅՈՅԼ (յետնաբար ի հլ.) «ծոյլ, դանդաղ, ծանրաշարժ» Դատ. գ. 17. Կանոն, էջ 87. Կանոն առաք. 320. Բրս. հց. որից յուլանալ կամ յուղանալ «ծուլանալ, պարապ սարապ այս ու այնտեղ նայելով ման գալ» ՍԳր. «անհոգ՝ անփոյթ գտնուիլ» Նւս. քր. յուլացուցանել «արհամարհոտ դարձնել» Ոսկ. յհ. ա. 2. որ և յուղացուցանել «մեղկացնել, կակղել» Ոսկ. հս. 57. Բուզ. յուլութիւն կամ յուղութիւն «ծոյլ ու պարապ նստիլը» Սիր. իէ. 1. Ոսկ. հս. Եւագր. Նւս. քր. յուղող «մեղկացուցիչ» Նեղոս. յուղալ «ծոյլ ծոյլ ալքատալ» Մանդ. արմատի երկրորդ ձևն է յող-, որից յողալ «ծուլանալ, պարապ նստիլ, այս ու այնտեղ նայիլ» Ոսկ. մ. ա. 17, բ. 3, 24. «դիտել, նկատել, հսկել, սպասել» Պիտ. փիլ. յողանալ «հպարտանալ» Սիր. ծն. էջ 66. յողացուցանել «անհոգացնել, հպարտացնել» ԱԲ. երկու ձևերի ձայնական առնչութեան համար հմմտ. թոյլ և թող, ճշոյլ և ճշող։

ՆՀԲ յիշում է թոյլ, ծոյլ, յոյր, յողճ եկեալ, յօրացեալ ձևերը։ Հիւնք. ծոյլ բառից։ Karst, Յուշարձան 415 մոնգոլ. sula, բուրեատ. sula, hula և թունգուզ. sul «թոյլ, տկար» բառերի հետ։ Petersson, Ar. u. Arm. St. էջ 134 կցում է թոյլ բառի հետ, այնպէս՝ ինչպէս վիզ և թիզ։

ԳԻՒ.—Մկ. ճիլ «յոյլ», Ղրբ. իլո՛նալ, Ղզ. իլա՛նալ «ծուլանալ, ալարիլ»։

ՅՈՅՍ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ.) «յոյս, ակնկալութիւն» ՍԳր. Ոսկ. մ. ա. 4, 8. բ. 6. որից յուսալ ՍԳր. Եփր. ծն. յուսալից Ագաթ. Բուզ. Կորիւն. Եփր. ծն. յուսակորոյս Ագաթ. յուսահատ Ոսկ. մտթ. Ագաթ. անյոյս ՍԳր. Ոսկ. հս. Նւս. քր. մեծայոյս Կոչ. բարեյոյս Իմ. ժբ. 19. դիւրայոյս Կոչ. 42. հարստայոյս Օրբել. ճեղգայուսութիւն Արիստ. առաք. չյուսալի Ոսկ. մ. ա. 9. յուսատու, յուսահատական, յուսախար, յուսախաբութիւն, յուսախաբուիլ (նոր բառեր) են։

Հներից Գիրք առաք. 187 բ. ստուգաբանում է ուս բառով. «Ու յոյսն ստուգաբանի ուս, որ բառնայ զծանրութիւն առաքինութեանն»։ Brosset JAs. 1834, 369 են վրաց. վեսավ, սանս. asaya: Գր պրս. بيوسا bēyūsa «յոյս, ակնկալութիւն» ձևից շինուած է դնում անյոյս։—ՆՀԲ արաբ. էյիսէ, ուստի մէէյուս «անյոյս» (իմա՛ مأيوس mayūs «յուսահատ», որ գալիս է يأس yās «յուսահատութիւն» բառից)։ Ջուբինով՝ վրաց. սասո «յոյս», սասոեբա «յուսալ, վստահիլ, հաւատք»։ Böttich. ZDMG 1850, 358, 176, Arica 80, 338, Lag. Urgesch. 996 սանս. āsā «յոյս»։ Հիւնք. խօսիլ բայից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 191 յ նախդիրով ուս-աճիլ բառից։ Karst, Յուշարձան 422 ԲԲր. iš, ալթայ. izen «յուսալ»։

ԳԻՒ.—Ջղ. ֆույս, Ագլ. երև. Շմ. հույս, Մշ. հուիս, Ալշ. Ախց. Մշ. ֆուս, Կր. ույս, Մկ. հուս, Ոզմ. օւս, Ալմ. թուրքերէն բառի հետ կրկնութեամբ՝ հիւս-ումուդ.—Համշ. յոյս ստացած է «փափագ» նշանակութիւնը.—Նոր բառեր են յուսատեղ Ղզ. Ղրբ. «յոյսի տեղ, ապաւէն», բայական ձևով՝ Ջղ. ֆուսանալ «յուսալ», ֆուսադվել «բարկանալ» (իբր<յուսահատուիլ. իմաստի զարգացման համար հմմտ. ֆր. se désespérer «յուսահատուիլ», բայց Molière, L'Avare, III, տեսիլ 7րդի վերջերը՝ il se désespère «սաստիկ բարկանում, զայրանում է»)։

ՅՈՅՐ, ի հլ. (գրուած նաև յor, յովր) «գէր, հաստ, թանձր, ուռած» Ոսկ. փիլիպ. է. և ա. տիմ. բ. «թաւ բաղաձայն» Քր. քեր.։

ՆՀԲ ուզում է կցել յorանալ և յոյլ բառերին։ Հիւնք. ուռնուլ բայից։ Pedersen, Յուց. դեր. 37 յ նախդիրով իր ձևից, իբր in suo: Scheftelowitz BB 29, 34 սանս. peru «ուռած, գէր», զնդ. paeman «կաթ» բառերի հետ, որոնք Po-

korny 2, 73 *դնում է (յայր բառի հետ միասին) հնխ.* poi-, pi- *«ճարպ, պարարտութիւն, կաթ ևն» արմատի տակ։*

ՅՈՊՆԱԿ, ի–ա *հլ. «սայլակ». մէկ անգամ ունի Ոսկ. մ. ա. 23. «Նաև զփայտ և զքար այնպէս կրեն սայլիւք կամ յոպնակօք» (յն. բնագրում չկայ)։*

ՆՀԲ և ՋՔ հասկանում են իբր «սայլակ կամ յովանակ, իշուկ»։ (Վերջին իմաստը անշուշտ յովանակ բառի պատահական նմանութիւնից հետևցնելով)։ ԱԲ միայն «սայլ, պզտի սայլ» (և այս է ստոյգը, որովհետև բնագրում յոպնակ չգտնուելուց հետևում է որ սայլ և յոպնակ հոմանիշ են)։ Նագրճեան, Մասիս, 1885, 866 կցում է սանս. յուգա «փայտէ ցից» բառին և այսպէսով յոպնակ մեկնում է «այն կարճ ու ամուր փայտերը՝ որովք շինութեան ժամանակ հող, քար, կիր, ջուր և այլ ծանր նիւթեր կը կրեն գործաւորք, նոյնպէս բեռնակրաց երկայն փայտը»։ Հիւնք. Յորնաղ Հռովմէական յատուկ անունից։

⊙ՅՈՊՈՊ, ո *հլ. «բուբուլ կամ խոխոխիկ կոչուած թռչունը (huppe)» Ղևտ. ժա. 19. Օր. ժդ. 17. Ջաք. և. 9. Մխ. առակ. սրա փաղաքշականն է յոպոպիկ Բար. 149. գրուած է նաև ոպոպ Տաթև. ամ. 19. Վրգ. առ. 229. ոպոպիկ Բառ. երեմ. էջ 252։*

=Բնաձայն բառ. կազմուած է թռչունի հանած ձայնի նմանողութեամբ, յոպ վանկից կրկնաբար. այսպէս է նաև ուրիշ լեզուներում. համմտ. յն. ἔποψ, լտ. upupa, *ֆր.* huppe, *իտալ.* upupa, bubbola, *գերմ.* Hupphupp, *լեթթ.* puppukis, *պրս.* pūpū, pūpa, pūbak, *առանց կրկնութեան սորբ.* hupak, *լհհ.* hupek, *նաև ո՛չ հնդևրոպական լեզուների մէջ, ինչ. ավար.* efef, *արևել. թրք.* هوپوپ hupup, اوپوپ upup *«յոպոպ»։*

ՆՀԲ լծ. յն. է՛բօփս, լտ. ո՛ւպուպա, պրս. պուհէ։ Հիւնք. յունարէնից։ Հիւբշ. 367 դնում է յունական փոխառութեանց շարքում, սակայն աւելի կարծում է որ բնաձայն պիտի լինի։ (Pokorny 1, 123 *իբրև բնիկ հայ՝ հնխ.* epop, opop *ձևի տակ)։* Коршъ, *Брдм. Ховйит 1914, 456 ֆիննն.* hyyppä *«յոպոպ» բառի հետ։*

ԳԻՒ.—Տփ. ճօ՛պօպ, *Ղրբ.* ճո՛ւպուպ *«յոպոպ». ոճով ասում է Տփ.* ճօպօպնիրը մօտ գալ *«բարկանալ կամ յիմար յիմար խօսիլ». —միւսները նոր նմանաձայնութեամբ կազմել են պուպու. այսպէս՝ Ալշ. Մշ.* բ՛ուբ՛ու, *Ախց.* բ՛ուբ՛բ՛ու, *Մրզ.* պուպու, պըպը, *Սլբ.* իրիբիգ։

ՓՈԽ.—Վրաց. ოპოპი ոպոպի, ოფოფი ոփոփի *«յոպոպ» Օր. ժդ. 17 (այսինքն հայ բառի համապատասխան տեղը), ինգիլ.* ჰოპოპი հոպոպի *«յոպոպ» (Շանիձէ* ЗВО *22, 357), որոնք անշուշտ պատահական են իբր բնաձայն։*

ՅՈՒԴԱՏԵԼ *«ճոխաբանել». ունին միայն Բառ. երեմ. էջ 226 և ՓԲ։*

ՅՈՒԻ (–ուոյ, –ռեաց) *«վատ, գէշ» ՍԳր. Ոսկ. մտթ. և Բ. տիմ. գ. Սերիր. Սփր. երբ որից յառեցուցանել Ոսկ. մ. բ. 12. յառեգոյն Մծբ. յառեակ Ոսկ. յհ. ա. 11. յոռուբիւն ՍԳր. Սերիր. Ոսկ. մ. ա. 18, երբ. Փիլիպ. եգն. եւս. քր. կիւրղ. ծն. գրուած է նաև ոռի Սփր. համաբ. 51—52 (երիք անգամ). բուն արմատն է *յոռ, որից յառաջացած է ի մասնիկով. համմտ. բարի, աղի, լեղի. այս պարզ *յոռ ձևն են ցոյց տալիս յոռանալ Ես. լգ. 19, Ել. ա. 7. յոռագոյն Սիր. լթ. 40. յոռացուցանել Ծագր. կայ նաև սեռ. յոռից (իբր ուղ. *յոռ ձևից) Պղատ. օր. ը. «Աստուածատեացք իսկ և յոռիցն Թշուառականագոյնք» (յն. «յոռեացն յոռեգոյնք»). մինչդեռ յոռեգոյն են ծագում են յոռի ձևից։*

Klaproth, Asia pol. 104 *և* 200 *հֆր.* ore, *վոթեակ.* urod, *գերմ.* arg *ձևերի հետ։ ՆՀԲ լծ. ոմկ.* խuon, հion, հուո, Fուո, *յն.* խի՛ոն։ *Հիւնք. պրս.* դուրէ *«ազոխ բառից։ Աճառ. ՀԱ 1912, 39 յիշում է կասկածով քուչ.* yolo *«վատ», որի մեկնութիւնը դեռ ստուգուած չէ։*

***ՅՈՎԱՂ** *(սեռ. –ի) «գիշատիչ մի գազան է.* panthère *» Ովս. և. 14, ժդ. 7. Եզն. Պտմ. աղէքս. էջ 150. Կաղնկտ. Ա. 93, վրք. հց գրուած նաև* յաւազ *կամ* ովազ *Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 77. որից* յովազաւիւծ *«ընձ-*

առիւծ» Խոր. աշխ. (Եթէ պէտք չէ կարդալ իբր երկու բառ)։

=*ՊՀլ.* *yavaz ձևից (Gauthiot MSL 20, 1). *սրա հետ համմտ պրս.* یوز yōz «*յովազ. 2. որսորդական հետախոյզ շուն*», کیوزک yōzak «*յովազիկ. 2. որսական շուն*», քրդ. yūz «*որսորդական փոքր շուն*»։ *Սրանից է փոխառեալ նաև ասոր.* ܝܘܙܐ yōzā «*յովազ*»։ *Իրանեան բառը՝ ըստ* Horn. Grdr. *էջ 252 ծագում է* yaoz «*յուզել, փնտռել*» *արմատից, որի վրայ մանրամասն տե՛ս* յոյզ։—*Հիւբշ. 199։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ. նոյնը յետոյ ՆՀԲ, Lag. Urgesch. 739, Müller SWAW 78, 425, *Տէրվ. Մասիս 1882 յունիս 7 (որ մեր բառի հին ձևը համարում է* *յուվազ) *են։ Հիւնք. պրս. ևուվազ (?): Tomaschek, Deutsche Litrtzeit. 1883, էջ 1254 վրաց.* avaza:

ՓՈԽ.—Վրաց. ავაზა *ավազա, որ ծագում է հյ. յաւազ հոմանիշից (Հիւբշ. 199)։*

Յովանակ *տե՛ս Յաւանակ։*

ՅՈՎԱՏԱԿ *(դրուած նաև յովտակ, հովտակ) «արու ձի» Ոսկիփ. Մագ. և Երզն. փիր. Վստկ. 197։*

ՆՀԲ լծ. Թրք. ekṭik *«հետևակ ձի»։ Տէրվ.* Altarm. 61, *ծան. 2 կցում է սանս.* açva *«ձի» բառին (=լտ.* equus, *հյ.* ասպ), *որի մէջ* a *ընկած է և ç դարձած յ. բայց իր այս մեկնութիւնը ինքն իսկ մերժելով՝ կարծում է թէ կապ ունի յովանակ բառի հետ։*

***ՅՈՎՏ** «Եբրայական» (yōt) *դիրը՝ որ այբուբենի ամենափոքրիկ տառն է» Մտթ. ե. 18. «Յովս մի՝ որ նշանախից մի է». սրա ակնարկութեամբ՝ Քննեցէք, ասէ, զգիրս, և յոտ նշան մի՛ անցցէ. Ոսկ. Ճառք 550. Յովս մի զանց առնել ո՛չ է առանց տուժանաց. Ոսկ. յհ. ա. 35. Զի եթէ յովան նշանախից՝ որ է մի ի փոքրկանց տառից և ունի զտեղի մեծամեծաց. Եղիշ. Լրլր. 243.—յայնաբար նշանակում է նաև «կէտ, նշան». Ջտեղի արտահանոց աչացն յովս (յօտ) մի ծրագրեալ, որ ոչ կարէր նշմարել. Կղնկտ. Հրտր. Էմ. էջ 109 (Հրտր. Շահն. բ. էջ 93 այս բառը դնում է հօտ՝ համարելով գր. հօտ «խաղի մէջ շինուած փոսիկ, ուր խաղացողները վէգ, ընկոյզ են են նետում»)։ Բառիս գործածութեան ուրիշ օրինակ չկայ։*

=*ՅՆ.* ἰῶτα, *որ յն. ι գրի անունն է. գործածուած է Ս. Գրքի նոյն համարում. եբրայեցերէնում նոյն գրի անունն է* יוֹד yōd:

Հներից Երզն. մտթ. 108 մեկնում է «Յովս ըստ յունականին է ձայն և առ մեր՝ գիր թարգմանի»։ ՀՀԲ և ՆՀԲ դնում են սեմականից, որ սակայն պիտի տար հյ. յոդ (=եբր. יוֹד yōd, *ասոր.* ܝܘܕ yud):

ՅՈՐԱԼ *«մտածմունքներով չարչարուիլ». մէկ անգամ ունի Ոսկ. մ. բ. 13. «Ջօրհանապազ հոգալ և զդիշերն ամենայն յորալ». ձևով անստոյգ է բառս, որովհետև նոյն տեղում գտնում ենք յիրալ տարբերակն էլ։*

ՆՀԲ լծ. Թրք. yorulmaq *«յոգնիլ»։*

ՅՈՐԴ *«առատ, առատահոս» Ես. ը. 7, Եւս. պատմ. Մծբ. որից* յորդել *«առատօրէն հոսեցնել», յորդիլ «առատ հոսիլ, զեղուլ» ՄԳր. Ագաթ. Մծբ. Եփր. ծն. Եւս. պատմ.* յորդաբուխ *Ոսկ. Բուզ.* յորդագոյն *Ագաթ.* յորդագուր *Մծբ.* յորդալոյս *Վեցօր.* յորդախօս *Նւագր.* յորդուբիւն *ՄԳր. Եզն. Եւս. պատմ.* յորդահոս *Կոչ.* յորդիչ *Եփր. Թգ.* բազմայորդ *Եփր. ծն. 91. մախայորդ Կղնկտ.—նկատելի է յորդեգնաց ձևը՝ Ագաթ.։*

ՆՀԲ ուզում է կցել ուրդ *և յորձանք բառերին։ Հիւնք. Յորդանան գետի անունից։* Scheftelowitz BB 29, 29 *սանս.* ṛdhnoti *և զնդ.* arəd *«աճիլ»։ Գաբրիէլեան ՀԱ 1910, 365 առու, առատ և յն. լտ.* ru, ruo *«հոսիլ» բառերի հետ։* Karst, *Յուշարձան 408 սումեր.* ur *«առատութիւն»։ Պատահական նմանութիւն ունին չինէն.* huord, *օսս.* furd, *ինգուշ.* furt *«ծով»։*

ԳԻՒ.—Մշ. ջօռտ ու ջոռտ:

ՅՈՐԴՈՐ *«յօժար, պատրաստակամ, եռանդուռ» Ագաթ. Ոսկ. մ. ա. 6. Փարպ. որից* յորդորել *«խրախուսել, քաջալերել» Ոսկ. մ. գ. 37. «խրատել» (այն է «յօժարեցնել») ՄԳր.* յորդորակ *«խրատ» Ոսկ. մտթ.* յորդորութիւն *Ոսկ. ես.* յորդորումն *Եփր. ժ. 24. Ոսկ. եբր.* յորդորագոյն *Ոսկ. մ. ա. 25, բ. 13.* բազ-

մայորդոր *ՅՀ. կթ.* իճճայորդոր *Նխ. ա. մնաց. Պիտ.* կամայորդոր *Ճառընտ.* հակառակայորդոր *Մծբ.* մարտիրոսայորդոր *Փարպ.* բֆայորդոր *«բուք գրգռող» ՅՀ. կթ.*—*ըստ իս յորդ բառից ազդուած յետնադարեան սխալ ձևեր են* յորդոր *«յորդ, առատ» Կնձ. Շնորհ. եղես. Մագ. քեր. Ոսկիփ.* յորդորել *«շատանալ, յաճախել, զեղուլ» Ագաթ. Սղիշ.* յորդորութիւն *«գետի յորդառատութիւն» Ոսկ. ես.*:

ՆՀԲ յորդ *բառից. լծ. և կամ հայերէնից փոխառեալ է համարում լա.* hortor *«գրգռել, դրդել, յորդորել»,* hortamen, adhortatio *«գրգռումն, յորդորումն», որոնց նմանութիւնը պատահական է (Ծագումը տե՛ս* ձիր *բառի տակ)*: *Հիւնք. լա.* hortor: Bugge KZ 32, 22 *և յետոյ* Patrubány SA 1, 191 *յն.* ὀρθόνω *«գրգռել, շարժել» բայի հետ: Յիշում է նոյնը Հիւբշ.* IF Anz. 10, 48 *(և յետոյ* Pokorny 1, 137)*:*—Pedersen, *Հայ. դր. լեզ. 226* յորդ *բառից:* Karst, *Յուշարձան 419 ՖՖր.* yürek *«քաջութիւն, սիրտ»,* yürekli *«քաջասիրտ»,* yür *«քայլել, երթալ», 421 Հայ.* ճորդել *և* ճորդան տալ *ձևերի հետ:*

ԳԻՒ.—*Ջղ.* յորդ'որել, *Մշ.* յօրդ'օրել, *Ախց.* յօրդ'օրէլ, *Սրև.* ճորբօրէլ, *Շմ. Տփ.* ճօրբօրիլ, *Ասլ.* ճէօրդ'ըրէ'լ, *Ննխ.* օրբօրէլ, *Ակն.* օրբըրէլ, օրբէօրէլ. *սրանցից մի քանիսը նշանակում է «յորդորել, դրդել, գրգռել», իսկ Մշ. «առատանալ», Ննխ. «աճիլ, մեծանալ» (որից և* օրբօրցնել *«մեծացնել, չափազանցել»). Տփ. «մարդից մի բան հնարել». Համմտ. նաև* յորդորան *Վն. «ալեկոծ, ազմկալից (գետ)», որ* յորդ *և* յորդոր *բառերի խառնուրդն է ներկայացնում, Ախց.* օրբօրէլ:

[ՅՈՐԵՒԻՒԹԻ *«քթոց թի կամ անօթ է գեհկական, ի տկարութենէ բաղկացեալ. որ է եբրայեցերէն. կօֆինուս ասի. իսկ դաղմատերէն կօրբիս». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 228 (ա. տպ. վրիպակով* յարևիթի, *բ. տպ.* յորևիթի):

=*Պէտք է կարդալ* յորթ և իթի *«կողովի և թիի», որ գործածուած է Սղ. ձ. 7. «Ի բաց արարի ի բեռանց զթիկունս նորա, և զձեռս նորա յորթ և ի թի ծառայելոյ». յիշատակուած օտար բառերն էլ պէտք է հասկանալ յն.* κόφινος *=լա.* corbis *«կողով»:]*—*Ա՛ճ.*

—ՅՈՐՔ *«ջրի առատ հոսանք, զեղում». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* յորձախոր *Ագաթ.* յորձաճոս *Ճառընտ.* յորձաճք *«յորդ հոսանք» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 41. «եւ հկող հեղուկի եռումբ» վկ. դէ. 24. (գրուած նաև* որձաճք *Փիլ. տես. էջ 31).* յորձաճաձիգ *Ոսկ. ես.* յորձաճուտ *Գծ. իէ. 17. Ես. քր.* յորձուտ *Վրդն. ծն.* դառնայորձան *ԱԲ.* խորայորձան *Պոմ. աղէքս.* յորձնեռանդն *Լաստ. Սարգ. (գրուած նաև* յորդեռանդ *Ոսկ. ղղ. տե՛ս ՀԱ. 1911, 690)*:

=*Նոյն է* յորդ *բառի հետ, որ սրա համանիշն է. ձայնական առնչութեան համար համմտ.* խեղդ *և* ճեղձ, խաղդ *և* խաղճ:

ՆՀԲ յորդ *բառից: Տէրվ.* Altarm. 56 արձակել *=սանս.* sarj *արմատի հետ:* Bugge IF 1, 451 *առանց ուշադրութեան առնելու յորձ արմատը՝* յորձան *մեկնում է իբր <*յորդսան<*յորդոսան<* յորդաճոսան:

ՅՈՐՋՈՐՋ *«անուն, կոչումն» Շնորհ. տաղ. որից* յորջորջել *«կոչել, անուանել» Ես. քր. Եփր. Թգ.* յորջորջաճք *Սերեր. Ես. քր.* յորջորջումն *Սերեր. Ոսկ. ես.* յորջորջաճօք *«միայն անունով, անուանապէս» Կոչ.*:

=*Կրկնուած է պարզ *յորջ արմատից, որ առանձին չէ գործածուած:*

ՆՀԲ *կրկնուած ոգումն բառից: Հիւնք. պրս.* խուրուս *«աքաղաղ, արլոր» բառից:* Pedersen. *Հայ. դր. լեզ. 46 արմատը* որջ՝ *ուզում է կցել* որդի *բառին:*

ՅՈՐՍԱՅՍ *«մէջքի վրայ պառկած» Ոսկ. մ. գ. 31. Կոչ. 307. Փիլ. Իգն. Վրք. և վկ. Ա. 176. որից ի* յորսայս *Յայտմ.* յորսայս առնել *«մէջքի վրայ պառկեցնել» Վրք. և վկ. Ա. 466.* յորսայսեալ *«ծուլաբար մեջքի վրայ անհոգ պառկած» Առակ. գ. 9. Կանոն.* յորսայսել *«պառկեցնել» Վրք. հց. ա. 3. «գետին խփել» Լաստ. Նար. լզ. էջ 98.* յորսայսութիւն *Նիւս. կազմ. կայ և առանց նախաձայնի՝* որսայս *«պառկած» Վրք. հց. ա. 3,* որսայսեալ *Խոր. Պիսիդ.*:

ՆՀԲ *լծ.* երես, *Թրք.* yüz *«երես»:*

ԳԻՒ.—*Ջղ.* ճօռսա ընգնել, ճօռսանգ տալ

«իշխանաւորի պէս անկարգ կերպով թնքուիլ, պառկիլ, ընկողմանիլ»։

Յու *տե՛ս Յայ։*

***ՅՈՒԼԻՈՍ** «Հռովմէական տոմարի ութներորդ ամիսը» Տոմար. Յայսմ.։*

=Յն. ἰούλιος, ἰούλις Հոմանիշից, որ փոխառեալ է լտ. julius *բառից. այս էլ ծագում է Յուլիոս Կեսարի անունից, որ ծնուել է նոյն ամսի 4-ին. (Յուլիոս=*Jūlius *անունը բուն նշանակում է «Արամազդի,* Jupiter-*ի» և յառաջանում է **Jovilios *ձևից. տե՛ս* Walde 397). *Հմմտ.* **Օգոստոս** *ամսանունը։ Փոխառութեամբ անցած է բազմաթիւ լեզուների, ինչ. ֆրանս.* juillet, *իտալ.* luglio, *գերմ.* Julius, *վրաց.* ԻՒլիսի, *թուշ.* Իվլիս, *ռուս.* ИЮЛЬ *ևն։—Հիւրշ. 367։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։ Ամսանունների ծագման վրայ տե՛ս Բազմ. 1897, 138—141։

ԳԻՒ.—Գրականից են փոխառեալ Ախց. Ղրբ. Ննխ. Շմ. Պլ. հուլիս *ևն.—Ննխ. կայ նաև* ուլիս *ձևը (Պատկ. Երկեր, հտ. Գ. էջ 77)։*

Յուկամ *տե՛ս Ուր։*

ՅՈՒՂԻԴԱՅ *«քար կազմեալ ի մանր մանր խեցեաց քարացելոց» (ֆրանս.* oolithe). *ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 874ա. Նոյնը գիտէ նաև Քաջունի, հտ. Բ. 203. բայց աղբիւրը յայտնի չէ։ Տե՛ս և յաջորդը։*

***ՅՈՒՂԻԴԱՍ** «նշանաւոր մի ձուկ է». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 148. Զկնամորթս... յուղիդաս երկքանքարաւորս և այլ ժանիս ձկանց։*

=Յն. ἰουλίς, ἰουλίδος «կարմիր գոյնով մի տեսակ ծովային ձուկ»։—Աճ.

ՅՈՒՆ. *անստոյգ բառ՝ որ մէկ անգամ գրանում եմ գործածուած Սեբեր. 213. «Թեպէտև ունկն (Մաղքոսի) հատաւ, անդէն եդեալ սքանչելիօքն. սակայն ձեռքն յուն երախտաւորին ո՛չ թափեցաւ»։ Այս վկայութիւնը ունի ՆՀԲ Ճառընտրից միայն և դնում է իբր ուն «զօրութիւն, ոյժ», որ յետին ձև է և չի յարմարւում տեղին։*

***ՅՈՒՆԱՊ** (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «յունապ պտուղը» Վրք. Հց. ա. 183, բ. 422. որից* յունապի *«նոյնի ծառը» Մխ. առակ. Վրք. Հց. Բժշ.—գրուած է նաև* յունենապ.*—ըստ* Seidel, *Մխ. Հեր. § 91* zizypha rubra, *գերմ.* rothe Datteln.

=Արաբ. عنّاب *'unnāb «յունապ», որից փոխառեալ են նաև Բրք.* hünnab, *ՖԻՐ.* իննապ, *վրաց. իմերել.* unabi, *ուտ.* inab *ևն։ —Հիւրշ. էջ 271։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ. յետոյ Հիւրշ. ZDMG 35 (1881), 662:

ԳԻՒ.—Կր. հունապ, *Պլ.* հունենաբ, հիւնենաբ, *Ախց.* ունապ, *Ագլ. Տփ.* ո՛ւնաբ, *Ղրբ.* ունենա՛բ, *Ասլ. Ռ.* հինենաբ, *Շմ.* իննաբ, *Սվեդ.* բնեմբ, *Գոր.* ա՛ննապ. *արաբերէնից նոր փոխառութիւն է Տիգ.* 'ունենաբ, *ինչպէս Պլ.* հիւնենաբ *Թուրքերէնից.—նոր բառ է յունապի Տփ. «յունապի գոյնով, մի տեսակ կարմիր»։*

***ՅՈՒՆԻՍ** «Հռովմէական տոմարի վեցերորդ ամիսը» Տոմար. Յայսմ. գրուած է նաև յունի (յամսեանն յունի) Նխ. Բղբ. պօղ.= Եւթաղ. 101։*

=Յն. ἰούνιος ձևից, որ ծագում է լտ. junius *Հոմանիշից. այս էլ յառաջանում է* Juno *«Յունոն» աստուածուհու անունից, որ Ռոմամազդի քոյրն ու կինն էր* (Walde 398): *Բառը փոխառութեամբ անցել է շատ ուրիշ լեզուների, ինչ. ֆրանս.* juin, *իտալ.* giugno, *գերմ.* Junius, *անգլ.* june, *վրաց.* իվնիսի, *թուշ.* իվնիս, *ռուս* ИЮНЬ *ևն։—Հիւրշ. 367։*

Ամսանունների վրայ երկար տե՛ս Բազմ. 1897, 138—141։

ԳԻՒ.—Գրականից փոխառութեամբ կայ հունիս *ձևը. բայց ունինք նաև Ննխ.* ունիս *(Պատկ. Երկեր, հտ. Գ. էջ 113)։*

***ՅՈՒՆՈՒԱՐ** «Հռովմէական տոմարի առաջին ամիսը». ա՛յս է նոր գրականի ընդունած ձևը. հների մօտ կար նաև* յանուար *Շիր. հրտր. Պատկ. 4, 7.* յունվար, յանվար *Յայսմ. Տոմար.* յունուար *Վրք. իգն. 184 և ամենահինը՝* յունուարիոս *Սեւ. քր. բ. էջ 178։*

=Յն. ἰανουάριος *ձևից, որ փոխառեալ է լտ.* januarius *բառից և այս էլ ծագում է լտ.* Janus *անունից, որ է «արեգական ընթացքի աստուածը»* (Walde 374. *Ճիշտ չէ դնել բարել.* yāna *«ամիս» բառից)։ Փոխա-*

ռութեամբ անցել է բազմաթիւ լեզուների. ինչ. ֆրանս. janvier, *իտալ.* gennario, *գերմ.* Januar, Jänner, *անգլ.* january, *ռուս.* январь *են։—Հիւբշ. 367։*

Հներից Տաթև. ամ. 666 և Հարց. 484 «յունվարն ի հռոմ լեզուէ թարգմանի ծննդեան ամիս». իսկ Տաթև. Հարց. 201 համարում է Յովան անունից, որ է «նախնին Հռովմայեցւոց»։ Նորերից նախ ՆՀԲ տուաւ ուղիղ մեկնութիւնը։—Բազմ. 1897, 79 սկսեց գործածել ըստ լատինականին յանուար, փեբրուար, փխ. յունուար, փետրուար ձևերի, որոնք յայտնի չէ թէ ի՛նչպէս են յառաջացել և այժմ սովորական են դարձել մեր գրական լեզուի մէջ։ Այս մասին թեր ու դէմ կարծիքներ տե՛ս Բազմ. 1897, 138—141։ Նորմուծութիւնը տևեց մի տարի և հետևորդներ չունեցաւ։

ԳԻՒՒ.—*Սեբ.* ֆունվար, *Ախց. Ննխ. Շմ. Պլ.* հունվար, *Ղրբ.* հունուար *են՝ փոխառեալ են գրականից.— ոմանք նմանողութեամբ* փետրուարի *արտասանում են* յուներվար։

Յուշ *տե՛ս Ուշ։*

***ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿ,** ի–ա *հլ. «առաստպելական մի էակ» Ես. ժգ. 22, լդ. 11, 14. Եզն. Ոսկ. ես. Եւս. քր. Ա. 7, 13, 22. Պատ. աղէքս. = Խոր. բ. 60. Վրք. հց. էլ. արիստ. 22. Վահր. երրդ. 165.* յուշկապարիկ *ծովային «Սիրէնա, յն.* Σειρήν» *Նպիտ. բարոյ.— ածականաձև գործածուած գտնում եմ մի անգամ Ոսկ. երր. 34 (տպ. Վիէննա 1855, էջ 14) «անհեդեդ յուշկապարիկ գազանացն» (ծովային հրէշների համար ասուած)։ Ս. Գրքի թարգմանութեան մէջ մեր բառի դէմ գտնում ենք յն.* ὀνοκένταυρος *«իշակենտաւրոս», որի համար էլ Եզնիկ ասում է. «Յուշկապարկաց ասեն բնակել յաւերական, զոր յոյն լեզու իշացուցս ասէ»։ Բառս գրուած է նաև* վշկապարի *կամ* վշկապարիւ *(սեռ. -եաց) «կատաղիք Դժոխոց» Ոսկ. տիտ. 329 (չունի ՆՀԲ. գիտէ միայն ԱԲ)։*

=Իրանական փոխառութիւն է, որ բարդուած է յուշկ *և* պարիկ *բառերից. վերջինը պհլ.* parīk *հոմանիշից է, իսկ առաջինի հետ համմտ. պրս.* vušk *«էշ», որին շատ համապատասխան է գալիս* վշկապարիկ(ի) *ձևը. սրանով* յուշկապարիկ՝ *յունարէնին համաձայն՝ դառնում է «իշապարիկ»։—Հիւբշ. 199։*

ՆՀԲ յունարէնի համեմատ մեկնում է «պարիկ իշուկ», բայց նաև «վիշապակի պարիկ, վիշապ ձուկն»։ Müller SWAW 42, 251, Justi, Zendsp. 180, Lag. Btrg baktr. Lex. 54 պարիկ *բառից։ Պալասաննան, Պատմ. գրակ. 199 իբր* յուշկ+պար+իկ *«ծանր պար եկող»։ Էմին, Հայ. հեթ. կր. (Բրգմ. Յոյս 1875, 357) սխալ է համարում թարգմանել* ὀνοκένταυρος, *ասելով թէ թարգմանիչները ո՛չ իբր կատարեալ հոմանիշ, այլ իբր մերձանիշ բառ են դրած յունարէն ձևի դէմ։* Lag. Arm. St. § 1573 իշուկ *և* պարիկ *բառերից, որ յիշում է Հիւբշման և մերժում։ Տէրվ.* Altarm 96 յուշկա *մեկնում է զնդ.* huška, *Հպրս.* uška, *պրս.* xušk, *սանս.* çuška *«շուր», որով յուշկապարիկը դառնում է «ցամաքային պարիկ»։ Նոյն ձևով մեկնելով Պատկ.* Mamep. I. 11, *սրբագրում է բառը* հուշկապարիկ *ձևով։ Հիւնք. պրս.* ուշկ *«հեկեկանք»+հյ. պարիկ բառերից։ Ալիշան, Հին հաւ. 186 «յուշիկ՝ կամաց պարող ոգի»։ Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 998 և 1406) վիշապ *«օձ»+*պարիկ, *որով հասկացւում է «կատաղիք դժոխոց, որոնք մարդերի տեղ օձեր ունէին»։*

Յուպէտ *տե՛ս Ուր։*

ՅՈՒՐԹԻ *«արգաւանդ, ջրարբի, բերրի» Մն. ժգ. 10. «առատահոս» Նար. 170. լծ. Նար. որից* յուրթանալ *«աճիլ ,ուռճանալ» Շնորհ. վիպ. գրուած է նաև* ուրթանալ *Անան. եկեղ. Փարպ. նոյն է դարձեալ* ուրդ *«լցնալ» Բառ. երեմ. էջ 258։*

ՆՀԲ լծ. յորդ։ *Հիւնք. լտ.* hortus *«պարտէզ» բառից։*

ԳԻՒՒ.—*ՆԲ.* ըորբընալ *«արտը ջրուելով ուռճանալ»։*

ՅՈՒՐՈՒԹ, ի *հլ. «սովորաբար անեզական է.—Մանդ. ունի նաև* ո *հլ.) «կախարդանք, բժժանք» Բուզ. և. 48. Ոսկ. կող. բ. Եզն. ո-րից* յուրթել *«կախարդել, համայել» Ոսկ. կող. բ. և ես. Կոչ. Մանդ.* յուրթիչ *«կախարդ»*

Ոսկ. կող. յուրթուրթիւն Նոնն. յուրթուլումք կամ յուռուրթուլումք Բ. մակ. ժբ. 40. գրուած է նաև ուռուր, ուրբել Մանդ. ջուռուրթոյց, ջուռուրթէք Կանոն. սխալ ձևեր են յուռ Ա.Բ և յուռ Կանոն. (ածանցներից հետադրուած)։

ՆՀԲ լծ. յն. ἱερομαντία «կախարդանք»։ Ալիշան, Հին հաւ. 380 համարելով բուն «ջրահմայութիւն»՝ հանում է յուրթի բառից։ Բ. վ. Գէորգեան, Խորենացին Խորենացիով, Վղրշպ. 1899, էջ 37 դուռուռ «ձկնկիթ» բառից (որ է ըստ Գդ պրս. արաբ. قروت qurūt «չորաթան»)։

ՅՈՒՐՄԱՐԻԼ «ոխակալութեամբ թշնամուն չարիք նիւթել». մէկ անգամ ունի Մանդ. էջ 109. «Նստաւ հանապազ (ոխակալն) և խորհի պատահարս չարեաց, և դիպումն փորձութեանց նախանձորդին ըղձանայ, շրջի մտախորհ յուռմարեալ (այլ ձ. ուռ մառեալ, յարմարեալ) և երկնէ իբրև ծննդական». որից յուռմարութիւն «ոխակալութիւն, քինախընդրութիւն». մէկ անգամ ունի Ոսկ. մեկն. մաթ. ըստ Ճառընտ. «Զնախանձ ի բաց մերժեսցուք, զորմոութիւն և զյուռմարութիւն և զառանց բարբառոյ աղաղակն հատցուք»։ Այս երկու բառերը գոնում ենք նաև գործածուած Վրք. հց. և Ոսկ. եփես., բայց սխալմամբ գրուած յիմարութիւն, յիմարիլ. «Զնախանձ մերժեսցուք, զորմոութիւն և զյիմարութիւն և զառանց բարբառոյ զաղաղակն ի բաց մերժեսցուք». Վրք. հց. բ. էջ 606.—«Ցանկ մտախորհ յիմարեալ սրտառուչ տրտում և տխուր շրջի». Ոսկ. եփես. ժե. էջ 832։

Ըստ ՆՀԲ յուռմարութիւն անստոյգ բառ է, «թերևս որպէս մոմոումն, տրրտունջ»։ Վերի օրինակները մէջ է բերում Նորայր, Հայկ. բառաք. 70, բայց յուռմարիլ և յիմարիլ ձևերի մէջ չի կարողանում ընտրութիւն անել։ Սակայն անտարակոյս պէտք էր ընտրել յուռմարիլ, որովհետև յիմարիլ բառի նման սովորական մի ձև անկարելի էր որ չփոթուէր և ստանար անսովոր յուռմարիլ ձևը, մինչդեռ հակառակը շատ բնական էր տղէտ գրիչների համար։

ԳԻՒՐ.—Իբր գաւառական բառ յիշուած է յուռմառել «թշնամութեամբ պատճառներ գտնել». բայց աղբիւրս չեմ նշանակած (ստուգելի!)։

*ՅՈՒՍ «մի տեսակ ծխանելի փայտ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ճժդ. «Երկրորդ դեղ՝ որ զտկարութիւն և զերկչոտութիւն սրտին տանի, որպէս յուսն որ է ծխանելի փայտն և մրջանն և վարդիջուրն»։

= Պէտք է կարդալ յուտ (փոխանակ յուս. սխալը յառաջացել է u և t տառերի շփոթութիւնից) և սրանով հասկանալ Բրք. od! öd «հալուէ», որ գրուած է նաև հյ. յօտ, ուտ։ Անշուշտ պէտք չէ կապել գւռ. ճուս «գաղ» (տե՛ս ճոսի) բառի հետ, որովհետև գազի փուշը թէև վառելիք է, բայց ո՛չ փայտ է և ո՛չ էլ ծխանելի.— Ա.Ճ.

ՅՈՒՍԻԿ «փրկանք». ունի միայն Բառ. ևրեմ. էջ 229։

ՅՈՒՐԱԼ (կամ յուռալ). անստոյգ բառ. մէկ անգամ ունի Արծր. հրտր. Պատկ. էջ 110. «Ախոյանքն յարձակէին, կապարճակիրք յաղեղանցն յուրայինն»։ ՆՀԲ մեկնում է «սուրալ», որ յարմար չէ տեղին. պէտք էր ասել «արձակէին, նետաձիգ լինէին»։

ՆՀԲ լծ. Բրք. yürümek «քայլել, վրան արշաւել»։ Մառ, Грам. др-арм. 204 նոյն է դնում սուրալ բայի հետ։

ՅՈՒՐԱՆ, ո ին. «ցորենի դէզ». մէկ անգամ ունի Բուզ. 111. «Սպառէր զամենայն յուրանս և զնորամանս և զմառանս գինւոյն». նոյնը ցուռան սխալագիր գրչութեամբ ունի Ծւս. քր. ա. 209. «Պիրամիդն, որ է ցուռան բլրաձև». միևնոյն բառն է դարձեալ յռան (որ է յաւռան=յուռան). Զյօրանս առ Քով աւանաւն կանգնեաց. Ծւս. քր. ա. 205 (Եգիպտոսի բուրգերի համար է ասում). Որպէս եղին յօրանոյ բերանակապ շուրջ եկեալն ի կալն (յն. γέννημα «բերք») Նիւս. կուս.։

Հ. Մ. Աւգերեան, Ծւս. քր. Հրատարակութեան մէջ (ծան. 5) դնում է յն. πυραμίς ձևից, իբր ճուռան։ (πυραμίς ծագած համարելով յն. πῦρ «հուր» բառից, ըստ այսմ և հյ. յուռան<*ճուռան՝ ճուռ բառից)։ Բառարանները համարում են անստոյգ բառ. ՆՀԲ մեկնում է՝ յուռան

«կա՛մ է բրգաձև աման, կարաս, սիւրահի, սիվրի գապ, և կամ է մառան ցորենոյ, շահմարան, ամբար», ցուրաւ կամ յուրան *«պիրամիդ, բուրգն հրաձև կամ տանձաձև, ցորենաձև»*։ ՀԲ յուրաւ *«թևրևս օրան ցորենոյ դիզեալ բրգաձև. ևս՝ բուրգն»*։ ԱԲ յուրաւ *«բուրգ. կոթող. 2. բրգաձև դիզած որայ. 3. բրգաձև աման»*։ ՀԲ և ԱԲ չնչած են սխալագիր ցուրաւ գրչութիւնը, որին համաձայն է նաև Նորայր, *Հայկ. բառաք. էջ 20*։ Նորայր, *Բառ. ֆր. 1009 բ արաբ.* ներէմ *բառի հետ (իմա՛* هرم haram *«բուրգ»)*։ Коршъ, *Брям. Мշակ 1914, թ. 122 հպրս.* *yava-dhāna *«գարու աման»* ձեւից, որ պիտի տար պրս. جودان jaudān: Յօրաւն *բառի հետ կցելով՝ անստոյգ բառի իմաստը վերի ձևով որոշեց Աճառ. Արրատ. 1915 (անտիպ մնացած)*։

Յոփինաճեմ, Յոփինըմբաց *տե՛ս Յոփ։*

ՅՍՏԱԿ (ի–ա *հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) *«մաքուր, զուտ, պարզ, վճիտ»* ՍԳր. *Սեբեր. Վեցօր. Ոսկ. յհ. ա. 20, 24, 34. «Թափանցիկ» Պղատ. տիմ. «որոշ լսուող (ձայն)» Եփր. համաբ. որից* յստակել *Եղն. Ագաթ.* յստակեցուցանել *Եփր. հլ.* յստակութիւն *Իմ. ե. 24. Եղն. Եփր. ծն.* յստակասպաս *Կոչ.* յստակամիտ *Եփր. Թգ. 374 և մնաց.* յստակզրուց *(նորագիտ բառ) «պարզ և մաքուր խօսող» Փոնց. 58.* յստակօրէն *(նոր բառ). գրուած է նաև* յիստակ *Եփր. աւետ. 274. և նախդիրով (հմմտ.* յեներլենեցուկ*) ունինք* ևստակ *«յստակ» Կնիք հաւ. էջ 7*։

ՆՀԲ «որպէս թէ ցտակ *կամ* ցյատակ *զեստեալ պարզեալ», իսկ* յստակութիւն *«թևրևս լծ. և ընդ* ստուգութիւն»։ *Հիւնք.* յն. στακτός *«զտեալ, պարզեալ»*։ Patrubány *ՀԱ 1908, 246,* Monde or. II *(1907/8), էջ 222—3 հսլ.* cistŭ *«մաքուր» և լտ.* caelum *«երկինք» բառերի հետ՝ Թիրեաքեան, Արիահայ բռ. 328* սատակ *«պարզ»=պրս.* sāda *«պարզ» բառն է։ Պատահական նմանութիւն ունին հսլ.* istŭ, *ռուս.* истый, *լեթթ.* īsts *«ստոյգ, ճշմարիտ», որոնք հանւում են* es- *«լինել» արմատից* (Berneker 435. Trautmann 105)։

ԳԻՒ.—Բլ. Ջղ. չիստակ, *Ալշ.* չիստագ, *Ագլ Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Շմ. Վն. Տփ.* իստակ, *Ռ.* ճիսդագ, *Խրբ. Հմշ. Սեբ.* իսդագ, *Ասլ.* իսդագ, իսդա*, *ՋԲ.* իսդօգ, իսդոգ, *Սվեդ.* իւսդիւգ, *Մշ.* լիստագ, *Ոզմ.* ստակ, *բոլորն էլ «յստակ, մաքուր». իսկ Սչ.* իսդագ *«ոչ-կախարդական».—բայական ձևով՝* ստակել *(Սլմ.* ըստրկել, *Ննխ.* ստրգել, *Սչ.* սդ'ըգել, *Ախց. Կր. Մրզ.* իստրկել, *Պլ.* ըսդրգել, *Ակն. Սեբ.* իսդրգել, *Մկ.* ըստրկիլ, *Խրբ.* իսդրգիլ*) «կեղևները հանել» կամ «մաքրել, սրբել»*, իստակնալ *«մաքրուիլ»*, իստակուկ *կամ* ստկուկ *«մաքրուած»*, յստակչրել *«մաքուր ջրի մէջ դնել՝ լուալու համար»*։

+ՅՈԴ, ի *հլ. «մարմնի անդամների կապը»* ՍԳր. *«քերականական յօդ» Ոսկ. յհ. ա. 1. Թր. քեր. որից* յօդել *«կապել, կազմել, յարմարել, պատշաճեցնել» Եփես. բ. 21, դ. 16. Եփր. ծն. Սեբեր. Վեցօր. Եղն. «մի սուտ սարքել» Եփր. Թգ. Ոսկ. ես. Եւս. պտմ.* յօդուած *Վեցօր. Եղն. Եփր. Թգ.* յօդակապ *Եւագր. Վեցօր.* յօդապատ *«մարմնեղէն» Եղն. Մծբ. Ոսկ. յհ. ա. 6. «լաւ կապակցեալ (խօսք, դրուածք)» Եւս. պտմ. Ոսկ. յհ. ա. 11. Վեցօր.* անբաւայօդ *Վեցօր. 67.* բաբեյօդ *Վրք. հց.* գեղեցկայօդուրիւն *Դիոն. ածայ.* կապարայօդ *Արծր.* բազմայօդ *Վեցօր.* սուայօդ *Վեցօր.* յօդացաւ, յօդուածագիր *(նոր բառեր)*։ *Այս արմատից* զ *նախդիրով՝* զօդ, ի *հլ. «ամուր կապ» Կող. գ. 14. Եւս. քր. որից* զօդել *Գ. Բագ. ե. 6. Բ. մակ. բ. 33.* զօդուած *Նար.* զօդած *Կնիք հաւ. էջ 22.* զօդամանեալ *Վանակ. յոր.* ոսկեզօդ *Ոսկիփ.* պայծառազօդ *Պիտ. ևն։ Գրուած է* օդ օդ *(փխ.* յօդ յօդ*) Յայտմ. ապր. 23 (Օդ օդ կարատեցին և սպանին)*։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. au-dh- *ձևից, որ աճած է* au- *կամ* eu- *«հագնիլ, հիւսել, մանել», բայց նաև «կապել» արմատից՝* dh *աճականով։ Յեղակից ձևերը տես* ագանել *և* օբ *բառերի տակ։ Այստեղ առանձնապէս յիշում ենք այն բառերը, որոնք «կապ» իմաստն են ցոյց տալիս. այսպէս՝ լեթթ.* aūkle *«ոտքի կապ»,* auklis *«չուան», լեթթ.* àukla

«կապելու թել», հպրուս. auclo *«ձիու երասանակ, սանձ», լիթ.* aũtas *«ոտքի փաթաթան», լեթթ.* àuts *«կտաւ, կապ»։ Վերջին ձևերը ցոյց են տալիս արդէն «հագնիլ» և «կապիլ» գաղափարների նոյնութիւնը։*

Peterm. 20, 33, 41 *սանս.* yuj *արմատից։* Lag. Arm. Stud. § 1574 *սանս.* abhidhā *«կապել»=զնդ.* aiwidā, *սանս.* abhidhāni *«վզկապ», զնդ.* aiwidāna *«գօտի»։ Տէրվ.* Altarm. 53, 55, *Նախալ. 48, 100, Մասիս 1881 մայ" 1, 1882 յունիս 7* yu, yug *«կապել» արմատից. բուն արմատն է յաւ. հմմտ. լիթ.* jutis, *սանս.* yuti *«յօդ, զօդ»։ Մառ* ЗRO *5, 317 զնդ.* añt *«կապել»? Հիւնք. օդ «կօշիկ» բառից։* Bugge KZ 32, 22 *և* IF 1, 449 *զնդ.* yaoiti-, *սանս.* yūti, *լեթթ.* jūtis *«յօդ, կապ» ձևերի հետ։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 115 յ նախդիրով օդ «կօշիկ» բառից, որի ծագումը տե՛ս առանձին։* Pokorny 1, 16 *և* 109, Trautmann 17 *կրկնում են* Pedersen-*ի մեկնութիւնը, միևնոյն ժամանակ* Pokorny 1, 20! Bugge-*ի մեկնութիւնը։* Scheftelowitz KZ 54 (1927), 232 *սանս.* yauti *«կապել»։ Ուղիղ մեկնութիւնը ունի* Pokorny 1, 109, *որի աղբիւրն է* Pedersen:

Գիւմ.—Երև. զօբ դ'ենել, *Ալշ. Մշ.* զօդ'ել, *Ղրբ.* զօբել *«երկաթէ առարկայի մաշած մասի վրայ նոր երկաթի կտոր կպցնելով նորոգել», Նախ.* զօբել *«մերձաւորիլ»։*

Փոխ.—Փոխառութի՞ւն է թէ պատահական ամար. hod *«յօդ, զօդ,* Gelenk, Wirbel»։

ՅՕԴԱՏԲԵԼ *«ապատել». ունի միայն Բառ. երեմ. էջ 229։*

ՅՕԴԻԲԵԼ *«հրամայել». ունի միայն Բառ. երեմ. էջ 229։*

ՅՕՓ *«մի տեսակ գազան». նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յովսիմ. 24. «Ու տեսանէի վիշապք և պիծակք և յօթք ահագին իբրև զուղտ, և այլ մեծամեծք»։*

ՅՕՃԱՐ *«սրտով պատրաստ, հաճ և հաւանութիւն» Մտթ. իզ. 41. Մրկ. ժդ. 38. Ղուկ. ԺԹ. 8. Յհ. Ա. 12. Ա Կոր. Ը. 12. Կող. Ա. 12. Ա Պետ. Ե. 2. Ա Տիմ. Ա. 12. Եբր. Ժ. 1. Յհ. Ա. 3. Ա Յհ. Գ. 21. Յհ. Ե. 14. Ա Յհ. Ե. 15. Ա Մակ. Զ. 36. Ժ. 27. ԺԱ. 36. ԺԳ. 37. ԺԵ. 21. Բ Մակ. Ա. 4. Գ. 1. Ը. 19. Ժ. 15. ԺԱ. 27. ԺԲ. 3. ԺԴ. 8. Ա Եսդր. Ա. 6. Ը. 28. Ա Մակ. Ա. 57. Ե. 54. Զ. 44. Ը. 22. Ժ. 20. ԺԱ. 23. ԺԳ. 42. ԺԵ

ՆՀԲ լծ. Բրք. öñ *«առաջք»։* Lag. Urgesch. 672 *գնդ.* hāna, *որ չգիտեն ո՛չ* Justi *և ոչ* Bartholomae*։ Հիմնք. յատկնիլ բայից։* Lidén, Arm. Stud. 27 *համեմատում է սանս.* pákṣma *«արտևանունք», գնդ.* pašnəm, *պհլ.* peš, *քրդ.* pač *«կոպ» բառերի հետ, որոնց բուն նշանակութիւնն է «մազ» և կցւում են պրս.* pašm, *յն. πόκος «ասր, գեղմ», հբգ.* fahs *«մազ» և հյ. ասր բառերի հետ. վերի արիական ձևերի նախաձևն է* *pok´s-no-, *որի* *pək´s-nā *ձայնդարձից կարող է գալ հյ. յաւն (նախաձայն* p*-ի անկումով և* k´sn *խումբը վերածուելով ւն)։ (Այս մեկնութիւնը կրկնում են* Walde 568, Boisacq 759, *իսկ* Pokorny 2, 17 *շատ խնդրական է համարում)։* Karst, *Յուշարձան 416 մոնղոլ.* anisxa, *բուրեաթ.* nyitke, *թունգուզ.* enitke *«յօնք, թարթիչ», 422 ԹՔՐ.* öng *«առաջը»։*

ԳԻՒ.—Յղ. յօնք, *Ախց.* օնք, վօնք, *Գոր. կր. Ղրբ. Ննխ. (գիւղերը)* օնք, *Սչ.* օնք, օնքֆի, *Ոզմ.* օնք[1], *Սվեդ.* էօնք.—*Ագլ.* յունք, *Ալշ. Մշ. Ջղ.* ջունք, *Հջղ.* հունք, *Ակն. Երև. Խրբ. Համշ. Մրղ. Ննխ. Շմ. Սեբ. Սլմ. Տիգ. Տփ.* ունք, *(սեռ. Խրբ.* ընքի, *յգ. Ակն.* ըվի, իվի, *Համշ.* ընվի, *Սեբ.* ըվի), *Բլ.* ունկ, ունք, *Մկ.* ունք[1], *Ռ.* ընվի, իվի, *ՋԲ.* ը՝նվը՝ *(յգ.* ը՝նվը՝նա), *Վն.* ունք[1], ընվ[1]վեր *(սեռ.* ընվ[1]վեռաց), *Պլ.* իվի *(յգ.* իվիներ), *Ասլ.* ը*վի. *(Տէրվ.* Altarm. 17 *գտ. ընճուի ձևի համար ասում է թէ՝ եթէ չի վերաբերիլ յօնք բառին, կապականի հյ.* ճի, *սանս.* sku *«ծածկել, փակել» բառերին. բայց սխալ է. ընճուի երկակիի ձևն է, ճիշտ ինչպէս աչուի, ձեռուի, ծնկվրներ ևն)։ Նոր բառեր են* ունքաթացուիլ. ունքախառն, ունքակախ, ունքամէջ, ունքծոռութիւն *են։*

Յօշ *տե՛ս Օշ։*

ՅՕՍՆԵԼ *«պղծել, շնալ, պոռնկիլ» Ոսկ. մաթ. էջ 685 (ըստ գեղեցիկ սրբագրութեան Նորայրի, Հայկ. բառաք. էջ 21), որ և ասւում է յօսել Կանոն. յօսնուլ Փիլ. Եփր. ծն. 130. յօսուլ Հին բռ. ինչպէս նաև յուսուլ, յուսնուլ, յուսկուլ? որից յօսնական «պոռնկական» Նար. կ. էջ 152։*

ՆՀԲ լծ. Բրք. bouma, bounu, ճէվէս, նէֆս *և հյ.* նիւսել*։ Հիմնք. ամուսին բառից։* Müller WZKM 6 (1892), 267 *և* SWAW 136 (1897), *էջ 9 սանս.* yábhati. *հպ.* jebati, *յն.* ἄπτω, οἴπω *«մերձաւորիլ» բառերին զուգակից. հյ. յօսնել ներկայացնում է սանս. ըղձականի ձևը՝* yi-yap-sa-tē *«ցանկանալ մերձաւորիլ»։*

—**ՅՕՍ** *տե՛ս Յաւ-անել։*

***ՅՕՍ**, *որ և ուս «հալուէ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2160, § 2425. տես և յուս։*

=Բրք. ɔ֏ öd *«հալուէ»։*

Ուղիղ մեկնից ՀԲուս.։

+**ՅՕՐԱՅ** *(սեռ. ի) «խորթ հայր, հօրու» Սեբեր. խոր. Փիլ. հին բառ է. ածանցներ չունի և յետնաբար գործածութիւնից դադարելով՝ փոխանակուեց հօրու հոմանիշով՝ որ շինուած է մօրու բառի օրինակով։*

=Ինիկ հայ բառ՝ որի բուն արմատը տե՛ս հայր բառի տակ. կազմութիւնն կողմից համմտ. յն. πατρυός «հօրու», πάτρως «հօրեղբայր», լտ. patruus, *անգսք.* faedera *«հօրեղբայր»,* faðu *«հօրաքոյր», հբգ.* fatureo *«հօրեղբայր», գերմ.* vetter *«հօրեղբօրորդի», գնդ.* tūirya- *(որ է* *ptūirya-), *սանս.* pítṛvya- *«հօրեղբայր»* (Walde 565, Boisacq 751, Pokorny 2, 4)։—*Հիւրշ. 477։*

ՆՀԲ հայր բառից՝ վերի ձևով մեկնից (սկզբնականն ընդունելով յօրայ) Հիւրշ. ZDMG 35 (1881). 656 *և* Arm. Stud. *§ 215։*

Յօրաւ *տե՛ս Յուրան։*

ՅՕՐԱՆԱԼ *«յղփանալ, առլցուիլ» Օրին. լբ. 15. Մծբ. Պիտ. «շատանալ, տարածուիլ» վրք. և վկ. Բ. 1. «պարծենալ, պանծալ, հր. պարտանալ» Ոսկ. մ. ա. 4, բ. 12. Երր. 554. Արծր. Իգն. գրուած է նաև յուրանալ, յովրանալ ԱԲ. որից յօրացում Տօնակ. Վանակ. յոր. (տե՛ս և հօրան բառի տակ)։*

ՀՀԲ յոյր բառից։ ՆՀԲ լծ. յօրան, յոյր, զօրանալ, յոռանալ, յուրբանալ, ուռճանալ*։ Հիմնք. յոյր բառից։*

ԳԻՒ.—Այս արմատից են հոո երև. վն. «ազատ, հանգիստ մեծացած մարդ կամ ա-

նասուն. նաև սաստիկ աճած, փարթամացած բոյս», հոռանալ *Ալշ. Երև. Վն. «մարդոց և անասնոց ազատ, հանգիստ ապրելն ու գործելու անընդունակ դառնալը. նաև բոյսերի սաստիկ աճելը, փարթամանալը, զորանալը, որոնք պարարտութիւնից կամ բնաւ պղտուղ չեն տալիս, կամ տալիս են շատ քիչ»* (*Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 402*)։

ՅՈՐԱՆՋ *«յօրանջելու գործողութիւնը»* *Կրպտ. ոտ. (տե՛ս Նոր ժղ. Գ. էջ 51). որից են* յօրանջել *Եզն. Վեցօր. եփր. պհ. Ոսկ. յհ. բ. 12.* յօրանջիլ *Եփր. Թգ. 454.* յօրանջումն *Նիւս. կազմ. արմատը գտնում ենք նաև գրուած* յոռանչ, յոռոնջ *Վրք. Հց. բ. 510.* յոռաչ, յօռանչ *ձևերով. իսկ բայը՝* յօռանչել, յոռանչել *Ոսկ. եբր. 543,* յոռանջել *Վեցօր. 86,* յոռոնչել *Եփր. խր. 225.* ոռնչել *Նեղոս 655,* ոռնջել, ոռոշտալ, *որոնցից* յոռոնչուն *«յօրանջող, ծոյլ»* *Անյ. Հց. իմ.* յառաչիլ *կամ* յարաչիլ *«ատէպ յօրանջել»* *Մանդ. էջ 191*։

ՆՀԲ յիշում է հառաչել, շնչել, յօրանալ *և յոյր բառերը*։ Patrubány *ՀԱ. 1908, 278 լո.* aveo *«փափագիլ» բայի հետ*։— Karst, *Յուշարձան 422 ՖՖր.* yar, yor, *ույգուր. օսմ.* yar-maq *«ճեղքել»*։ *Պահլաւական նմանութիւն ունի պրս.* فرنج furunj *«շրջանակ բերանոյ»*։

ԳԻՒ.—Ստացած է բազմաթիւ (մօտ 40) ձև, որոնք բոլոր բխում են 1. յօրանջել, *2.* յօրանջկել, *3.* յօրանջտել, *4.* յօրանջոկալ, *5.* յօրանջկոտալ, յօրանջկոտալ, *6.* յօրանջոտոտալ *ձևերից. այսպէս՝ 1. Կր* օրանճել, *Համշ.* օրընջուջ, *Ասլ.* ճէօրանճէ՛լ, *Մկ. Տիգ.* օռօջալ, *Ննխ.* գօրնջալ (կ *յաւելուածով, տես* եռ–ալ).—*2.* օռոնկալ *(բատ ՆՀԲ) և շրջմամբ՝ Հճ.* էյէնգջօլ.—*3. Ննխ.* օրինջդալ, *Ալշ.* օրընջդալ, *Ննխ.* գօրինջդալ, գօրինժդալ, *Տփ.* օռօշտիլ, օռշտալ, *Ագլ.* ըռըշտօլ.—*4. Ասլ. Ռ.* էրէժդգալ, *Մկ. Սլմ. Վն.* օռօշկըտալ, *Երև.* արըշկօտալ, *Ոզմ.* օրըշկըտալ, *Ագլ.* ըռըշկըտօլ.—*5. Մշ. Ննխ.* օրընջզըդալ, *Ալշ. Բլ. Տիգ.* օռօջգդալ, *ՋԲ.* էրէնջգդօլ, գէրէնջգէդօլ, գէլէնջգէդօլ, *Եւդ.* գէրէջգդալ, *Ախց.* կօրընճկտալ, *Բբ.* գօրըջգդալ, *Ակն. Եւդ. Սեբ.* էրըժգրդալ, *Արբ. Պլ.* էրէժգրդալ, *Սվեդ.* ըրըժգրդիլ, *Դվ.* աօշկտալ.—*6. Երև.* արըշօտէլ, *Ջղ.* աորշտոտալ, *Շմ.* հաւրշօտիլ, *Ղրբ.* ըրըշօ՛տալ.—*բացառիկ ձևեր են Խրբ.* հաւրջգրդալ, *Քղի* հաւէջգդալ, *Ղրբ.* պռշօ՛տալ, պռկրշօ՛տալ։

Յօրինել *տե՛ս Օրէն*։

Ն

+Ն *երրորդ դէմքի մերձաւոր առարկան նշանակող ցուցական յօդ, որի հետ նոյն է նա «այն». հոլովւում է* նա, նորա, նմա, ի նմանէ, նովաւ, նոմա, նոցա, նոսա, ի նոցանէ, նոքօք. *գրւում է նաև* նայ, նորայ, նոցայ, նմայ *ևն. իբր կազմիչ տարր մտնում է* աւանիկ, նա աւանիկ, նոյն, այն, ահա աւանիկ, ահաւանիկ, անդ, անդէն, անդր, անդրէն, անտի, անդուստ, անդստին, անդաճօր *ձևերի մէջ։ Յունաբան հեղինակները յարմարեցրել են իգականի համար* նէ, նեռա *են, որոնք երկար ժամանակ խափանուելուց յետոյ, նոր բանաստեղծութիւնն նորից գործածական դարձան։ Անսովոր ձև է* նոջա «նոցա», *որ յաճախ պատահում է Տիմոթէոս կուզի մէջ (տե՛ս յատկապէս էջ 236)։ Երրորդ դէմքի դիմորոշ յօդը դարձել է յետոյ ընդհանրապէս որոշիչ յօդ. օրինակ՝* հացն, այրն, *որից յառաջացել են գաւառականներում և գրականի մէջ* ն և ր *յօդերը. ինչպէս՝* հացը, կառուն։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* no- «այն» *դերանունից. սրա հետ համմտ. սանս.* aná- (*դրծ.* anéna, anáyā) «այս, նա», *զնդ.* ana, *լիթ.* anàs, ans, *լիթթ.* win'sch «այն, նա», *հպրուս.* tāns «նա», tennā «նէ», *հսլ.* onŭ, *ռուս.* онъ «նա, այն», *փռիւգ.* αινι, *գոթ.* jains, *հրգ.* ëner, *գերմ.* jene, jener, *հհիւս.* enn, inn «այն», *յն.* ἔνη «վաղանդ» (*որ է «այն օրը»*), ἐκεῖνος (κε+ἐνος), *դոր,* τῆνος (τε+ἐνος) «նա», *լտ.* enim «քանզի, այն է» *ևն. բազմաթիւ ուրիշ ձևեր տե՛ս* Pokorny 2, 336, Walde 254, Boisacq 234)։—*Հիւբշ. 478։*

Klaproth, Asia pol. 100 *չին.* na, no «սա, այն»։ Windisch. 35 *սանս.* ēnam «այն» *ձևի հետ։* Justi, Zendsp. 8 *զնդ.* aēm, *պրս.* īn, *քրդ.* am, *օսս.* ay։ *Մորթման* ZDMG 26, 490 *և* 31, 413 *բևեռ.* unai։ *Տէրվ.* Altarm. *100 և նախալ. 120 սանս.* ēna «այն», *յն.* νή, ναί, *լտ.* ne, nae, nos *ևն։* Bugge, Etr. u. Arm. 59 *հարուսկ.* ei, ein=այն *և* Lyk. Stud. 1, 68, 69 *լիւկ.* -ñ, *մեսապ.* -no։ *Դերանունների վրայ մանրամասն մի քննութիւն ունի* Meillet MSL 10, 241—71. *Նա բառի վրայ մասնաւորապէս. էջ 136, 244, 261։* Jensen *մեր բառի դէմ դնում է հաթ.* n, in, na, ino? *ձևերը։* Pedersen *իր ընդարձակ ուսումնասիրութեան մէջ՝ Յուց. դեր. էջ 61* այն, *սանս.* anya «ուրիշ», *ալբան.* n'ë «մի» *ձևերի հետ։* Karst, *Յուշարձան 406 սումեր.* na «այն»։

Գիր.—Շմ. Սչ. Տփ. նա «նա, այն անձը, անիկա», *Պլ.* նա «այն» (*գործածական է միայն հին բարբառում. ինչ.* նա մարդը, նա տունը, *իբր ցուցական ածական. բայց իբր ցուցական դերանուն՝ գոյութիւն չունի*). *Ագլ.* նօ «նա», *Զթ.* օնօ՛, օնո՛ «նա», *միւսները գործածում են այն ձևը. ինչ. Ախց. Կր.* ան, անիկ, ինիկ, *Ալշ.* էնի, ինա, *Սվեդ.* ինօ, *Համշէնի մահմեդական հայոց մէջ (Մառ,* Запис. Колл. Вост. I. *էջ 73—80)* ինէր, էնէր «նորա», ինու «նորա» *են (տե՛ս այն)։*

+ՆԱ՛ «մանաւանդ, արդ, արդէն իսկ» *ՍԳր. Կոչ. Ոսկ. որից նաև ՍԳր.* նա՛ ուրեմն «բայց արդ, թուի թէ» *Կոչ. Ոսկ. յհ. բ. 31.* նամանաւանդ *Ոսկ. յհ. ա. 3.* նա զի «մանաւանդ թէ» *Գէ. ես. Նար. ևն։ Այս նոյն բառն է անշուշտ, որ միջին հայերէնում ստացել է «և» շաղկապի պաշտօն. Ղազարկեց ի հետ թէ տո՛ւր զփախստականդ. Նա վախճային որ թաթարն*

ձգուէր յերկիրս, տուին. ևս ոխացաւ սուլտանն և ամէն Տաճկունք (ԺԹ դար)։ Սրանից է յառաջացել թէականի նշանակութիւնը, որ միջին հայերէնում երկրորդական նախադասութեան սկիզբն էր դրւում, իսկ նոր գաւառականների մէջ դարձել է թէականին վերջադաս ևէ, ևը, ևա. ինչ. Թէ անհոգ կենայ տէր ծառոյն, ևա չորանայ ծառն.—Սառին տէրը անհոգ կենայ ևէ՝ (Պլ. ևէ, Ննխ. ևը), ծառը կը չորնայ։ (Տե՛ս Այտնեան, Քնն. քեր. էջ 99)։

=Բնիկ հայ բառ. նախորդի հետ պատկանում է հնխ. no- «այն» դերանուանական արմատին, որ ուրիշ լեզուների մէջ էլ այսպիսի զանազան նշանակութիւններ ստացած է. համմ. լտ. enim «քանզի, որովհետև, այսինքն», ne, nae «արդարև, իրօք», nem-pe «այնու ամենայնիւ, բնականաբար», nam «որովհետև, այսինքն», օսկ. inim «և», umբբր. eine «և», enem «յայնժամ», յն. νή, ναί «հաստատական մասնիկ» (նյն. «այո՛»), սանս. anā «որովհետև, արդարև», nánā «զանազան եղանակով», na «իսկոյն», լիթ. nei «իսկոյն», հսլ. neže, nego «հենց», հրգ. na «բացասական հարցականի մասնիկ» ևն (Pokorny 2, 336, Boisacq 655 ևն)։

Նշէր ևայևա՛ բառից։ Peterm. 251 ևա դերանունից։ Lag. Arm. Stud. § 1579 յն. ναί։ Հինք. պրս. ևա, ևէ, ևի և լտ. no «ոչ»։ Պատահական նմանութիւն ունի լազ. -na «հէէ», որ իբրև մասնիկ կցւում է բայի վերջը. ինչ. minon-na «ուզեմ նէ», gopti-na «երբ ման գամ, պատիմ նէ» (տե՛ս Adjarian, Etude sur la langue laze, էջ 42)։

**ՆԱԲԱՂԵԼ «անարգել». մէկ անգամ իբրև օտար բառ գործածում է Եփր. Թգ. 381՝ Նաբաղ յատուկ անուան մեկնութիւնը տալու առթիւ. «Վասն զի մեկնութիւն Նաբաղու՝ անարգիչ է. Նա և այսօր իսկ ասէ՝ հէէ ևաբաղեմ ևս զքեզ, այսինքն հէէ անարգեմ ևս զքեզ». համմ. Ա. Թագ. իե. 25. «Մի՛ դիցէ տէր իմ զսիրտ իւր ի վերայ առն ժանտի Նաբաղայ. զի ըստ անուան նորա և ինքն է. Նաբաղ անուն նորա և անզգամութիւն ընդ նմա»։*

=Ասոր. ܢܒܠ nabbel «անարգել, նախատել», որ պատկանում է սեմական nbl արմատին. համմ. եբր. נבל nbl «նախատել», nābāl «խենթ», արաբ. تنبال tinbāl «ողորմելի» ևն։—Հիւբշ. 312։

Ուղիղ մեկնեց Նշէր։

ՆԱԴԱՄ *«հաճութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 230։*

***ՆԱԴՐՈՒՆ** *կամ* **ՆԴՐՈՒՆ** *«բորակ, հայբորակ» Վստկ. 21 (գրուած ևատրուն), 31 (գրուած ևադրուն). Բժշ.*

=Արաբ. نطرون naṭrūn, որ կարող է կարդացուիլ նաև niṭrūn «բորակ, հայբորակ». ժողովրդական լեզուի մէջ եղած է لطرون laṭrūn (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. էջ 125). Ծագում է յն. νίτρον համանիշից, որ և աստւում է λίτρον. սրանցից են նաև լտ. nitrum, գերմ. Natron, ֆրանս. nitre, natrum ևն. բոլորի նախնականը համարւում է եգիպտ. ntr, որից ասուր. nitiru, ասոր. netrā, եբր. neter (Boisacq 671, Seidel Մխ. հեր. էջ 168)։—Հիւբշ. IF Anz. 10, 43։

Թուի թէ ուղիղ մեկնեց նախ Նշէր։ Հիւբշ. Arm. Gram. 367 դնում է յունարէնից, իսկ IF Anz. 10, 43 արաբերէնից, ինչպէս երևում է նաև ձևից։

***ՆԱՂ** *«պատիւ, յարգանք, պարծանք, սիգանք». հների մօտ չէ գործածուած. կայ միայն մէյ. համմ. Կոստ. երգն. 132 և նոր լեզուի մէջ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. Սկևռացի, Պտսխ. յղ. համապատուհեան ժբ առաքելոց, Երուս. 1865, էջ 74՝ ևազ «չհամութիւն ցոյց տալը». որից ևազել կամ ևազիլ «պանծալ, սիգալ, պարծիլ, խայտալ» ՍԳր. Ոսկ. փիլիպ. և եբր. ևազաբանել «պարծենալով խօսիլ» Պիտ. Վրգն. ծն. ևազանք «սիգանք, աղջիկների ծեքծեքումը» Ոսկ. փիլիպ. ևազելի Պիտ. խոր. 3Հ. կթ. ևազարարութիւն Փիլ. ժ. բան. էջ 241. ևազագոյն Փիլ. էջ 109. գեղեցկաևազ Պիտ. ևուաշաևազելի Աթ. կոյս. նոր բառեր են ևազելաևեմ, ևազելաշուք, սիգաևազ, ևեզաևազ ևն։*

*=Պհլ. *nāz ձևից, որ աւանդուած չէ. համմ. պրս. ناز nāz «նազանք, սիգանք, չհամութիւն կերպարանեալ, պչրանք», نازیدن*

nāzīdan «նազիլ, սիգալ, պանծալ», نازك nāzuk «նազուկ, նուրբ, բարակ, փափուկ», نازنين nāznīn «նազելի, նուրբ»։ Horn, Grdr. § 1017 սրանց դէմ դնում է պհլ. nāčuk, *որ մեր բառի համապատասխան ձևը չէ։ Պարսկականից են փոխառեալ նաև վրաց.* ნაზი նազի «նուրբ, նազելի», ნაზება նազեբա «նազ անել», աֆղան. nāz «նազանք», nāzuk «նուրբ, փափուկ», nāznīn «նուրբ, սիրուն», բևլուճ. nāzurk «նուրբ», քրդ. nāz «հրապոյր, նազանք», nazik, nazek «նուրբ», արևել. թրք. ناز naz «նազանք», օսմ. ناز naz «նազանք, չհամութիւն կերպարանեալ», آلناز naz-lə «նազելի», نازك nazik «նուրբ, նրբակազմ» և թուրքերէնի միջոցով էլ բուլղար. nazli, սերբ. nazli, լհ. łazy, նյն. νάζια «նազ»։—Հիւբշ. 200։

Ուղիղ մեկնից նախ ԳԴ. նոյնը նաև ՆՀՒ, Հիւբշ. KZ 23, 404 *և այլն։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Համշ. Ննխ. Շմ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Սվեդ. Վն. Տիգ. Տփ. նազ, *Հճ. Ագլ.* նօզ, *Զթ.* նօզ, նոզ։

ՆԱԶԱՏ *(կամ* **ՄԱԶԱՏ**, *որ սխալ է) «մի տեսակ քամի». ունին միայն ԱՒ և Հին Հաւ. էջ 64. վկայութիւնը տես* Հռասափ։

ՆԱԶԱՐ *«լեռնային գազ (փշոտ բոյսը)» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2162։*

Նազարօթ *տե՛ս* Մազարովբ։

***ՆԱԶԱՅ** «հրաբուխ» Բժշ. որ և* նուզլայ *Մխ. հեր. էջ 29, 30։*

=Արաբ. نزلة nazla «հարբուխ». *ծագում է* نزل nzl «իջնել» *արմատից և նշանակում է բուն «իջուածք»։—Հիւբշ. էջ 271։*

ԳԻՒ.—Մշ. նզուլ «հարբուխ»։

***ՆԱԶՈՎԲԻ.** մէկ անգամ գործածում է Ճառընտ.՝ իբր օտար բառ. «նազարէթին մաքուր ասի և նազովբին՝ գաւազանն»։*

=Եբր. נזר nezer «արքայական թագ», *որի վրայ աւելի ընդարձակ տես* յեզեր։

Ուղիղ մեկնից ՆՀՒ։

ՆԱԹՐԻ *«մի տեսակ անծանօթ բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2720 և § 3371։*

ՆԱՃ *«մի տեսակ հիւանդութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 264. «Նմանի հիւանդութեան՝ որ կոչի նաճ, որ թարգմանի ստամոքս շնութեան, որ բնաւ ոչ լիանալ կերակրով»։ (Ոսկեդարեան հայերէնով այս հիւանդութիւնը կոչւում է* սուր, *գիտական բառով՝* boulimie)։

ՆԱՃԻՇՏ, ի–ա *հլ. «աղախին» ՍԳր. եղիշ. որից* նաճշտաբար *Արշ.։*

Հիմք. պրս. nāhīd *«կոյս աղջիկ»։ Աճառ. Բանաս. 1899, 252 համեմատելով* երաժ–իշտ *բառի հետ՝ գտնում է որ* –իշտ *մասնիկ է, որով արմատը լինում է *նաժ կամ մանաւանդ *նագ. կարելի է կարծել որ սա էլ իրան. *nag «ծառայել, աղախնութիւն անել» նշանակութեամբ մի բառից փոխառեալ լինի։*

***ՆԱԼ** «պայտ» Վրդն. պատ. տպ. Վենետ. էջ 119. կիր. 219. Մխ. այրիվ. 77. Սամ. անեց. էջ 79. որից* նալակառուր *«պայտի կռատոր» Մխ. առ. էջ 322։*

=Արաբ. نعل na'l, *թրք.* نال nal *«պայտ»։—Հիւբշ. 271։*

ՆՀՒ «բառ ոմկ»։ Ուղիղ մեկնից նախ Վարդանի հրատարակիչը (Վենետ. 1862, էջ 119, ծան. 1), ուր նաև ասուած է թէ պայտը լուսնաձև լինելու պատճառով մահմետականութեան իբր նշան էր համարւում։ Lag. Arm. Stud. § 1581 *արաբ.* na'l։

***ՆԱԼԱՔ** «անէծք, նզովք» Օրբել. 159, 160, 256. Ադամ. 97. Սիմ. տպար. 119. (չունին բառարանները)։*

=Արաբ. لعنة la'nat *«անէծք» բառի ժողովրդական* na'lat *շրջեալ ձևից, որից են փոխառեալ նաև քրդ.* nalet *«նզովք, անէծք», օսս.* nalat *«անիծեալ», թրք.* nallet *«նզովք. անէծք. 2. նզովեալ, անիծեալ»։—Հիւբշ. 271։*

ԳԻՒ.—Ննխ. նալէք, *Պլ.* նալլէք, *Վն.* նոլոր, *Ղրբ.* նո՛ղլոր *«անէծք, անիծեալ» ևն, բոլորն էլ թուրքերէնից նոր փոխառութեամբ։*

***ՆԱԼԲԱՆԴ** «պայտար» Վրդն. առակ. 57. որ և գրուած* նալպանտ *Տաթև. ամ. հհ. (Դէր ձիոյ բևեռն տայ թաքուն նալպանտն և կազացուցանէ զնա և յետոյ յաժան գնէ). որից* նալպնդոց *«պայտարների շուկայ» Արձ. 1234 թուից (Վիմ. տար. 78)։*

=Պրս. نعلبند na'lband «պայտար», որ կազմուած է արաբ. نعل na'l «պայտ»+պրս. بند band «կապ» բառերից։—Աճ.

ՆԱԽԱՀԱՏՈՒ «կալուածատիրոջ տուրք առ թագաւորն». գիտէ միայն Քաջունի, հա. Գ. 176, որից և ԳԲ։

ՆԱԽ «առաջ, առաջուց. 2. գլխաւոր, հինը, առաջինը» ՍԳր. Նա. քր. որից ածանցուած են բազմաթիւ բառեր (ԱԲ ունի 409 ձև), որոնց մեծագոյն մասը յետին է. ընտիր բառերից յիշենք օր. նախաբարբառ Եզն. նախարոյս Բուզ. նախադուռն Եզնկ. ը. 3. նախադիպիլ Ագաթ. նախաթոռ ՍԳր. Նա. քր. նախաչար Սեբեր. նախավկայ Ագաթ. նախամեծար Ոսկ. նախանկար Ոսկ. ա. տիմ. նախնի ՍԳր. Նա. քր. նախնական Ագաթ. ևն։ Յետին ձևերի մէջ կարևոր են նախան «երախայրիք, նուրար» Կանոն. նախկի Պղատ. օրին. Պրպմ. նախկին Արիստ. ՅՀ. իմ. առ. նախուսա Պղատ. օրին. նախուռ (նոր բառ), նախակ «առաջնակարգ դիրք կամ պաշտօն» Տիմոթ. կուզ, էջ 222, 255. նախնի «իշխան, սատրապ (Կիլիկիոյ Հայոց)» Սմբ. դատ. 104. Նոր դրականում շինուած բառեր են՝ նախաբան, նախագահական, նախագահ, նախագուշակել, նախազգալ, նախազգացում, նախազգուշական, նախազգուշացնել, նախակարապետ, նախանձախնդիր, նախաձեռնարկ, նախաճաշ, նախաճաշել, նախաճաշիկ, նախամասնիկ, նախամտածութիւն, նախամտածուած, նախապաշարել, նախապաշարմունք, նախապատմական, նախասենեակ, նախասիրած, նախասրահ, նախատան, նախահրեշտակական, նախընթրիք, նախընտրական, նախընտրութիւն, նախնաբար, նախնականութիւն, նախորդ, նախորդել, նախօրօք, նախօրեակ են։

=Այս արմատի հետ են համեմատւում պհլ. պազ. 𐫀𐫄𐫉𐫆 naxust, մանիք. պհլ. 𐫀𐫄𐫉𐫆𐫔 naxust (Salemann, Manich. Stud. ЗАН 8, 101) «առաջին», պրս. نخست naxust, nuxust, nuxast «սկիզբն, առաջին», نخستین nuxustīn «առաջին», نخز nuxz կամ نخزی nuxzi «առաջին». կայ նաև մանիք. պհլ. 𐫀𐫄𐫅𐫆𐫔 naxvīn «առաջին»։ Այս բառերի ծագումն ու մեկնութիւնը յայտնի չէ. ուստի որոշ չէ նաև թէ ի՛նչ յարաբերութիւն ունի հայը սրանց հետ։ Յետին հյ. նախուսա, ի նախուսա «առաջուց, առաջվանից» Պղատ. օրին. Մագ. թէև կատարեալ նմանութիւն ունի իրան. naxust հոմանիշի հետ, սակայն այս նմանութիւնը պատահական է, որովհետև նախուսա կազմուած է -ուսա մասնիկով՝ նախ արմատից (համմտ. այլուսա, յերկնուսա են)։ Համմտ. նաև նահապետ, նահատակ, նախաւար բառերը։—Հիւբշ. 200։

ՆՀԲ «յածանցս լինի նահ. արմատն է արի, յարգի, առաջ, առաջին, յորմէ յն. էն առի՛ «ի սկզբան» և է՛նառխոս «նախկին»։ Böttich. Arica 77, 269, Spiegel, Huzw. Gram. 75 և Müller SWAW 38, 582 իրան. naxust ձևի հետ։ Lag. Arm. Stud. § 1585 նախուսա= պրս. naxust։ Հիւնք. պրս. նիխզ, նիխրզ, նիխուսք։ Pedersen, Հայ դր. լեզ. 162 և նախդիրով՝ ախոյեան բառին արմատակից։ Коршъ, Хроник. 1914, 470 չէրքէզ. nax «ամենա-» գերադրական մասնիկի հետ։ Salemann ЗАН 8 (1908), էջ 98 պհլ. 𐫀𐫄𐫅 nvx «սկիզբ» կամ «առաջին» բառի հետ։ Benveniste REA IX 1 (1929), էջ 7 հաստատում է որ կար պհլ. naxv (հիւս. արևմտեան բարբառ)՝ «ծագում, սկիզբ, առաջնութիւն» իմաստով, որ և անցել է հայերէնին։

ՆԱԽԱՀԵԼ «աճել». ունի միայն Յառ. երեմ. էջ 231 (տպուած է նահանել, բայց բառաշարքը ցոյց է տալիս նախահել, ինչպէս ունի և բ. տպ.)—բայց նոյնը՝ էջ 232 դիտէ նաև նահապետել «աճել», որ մեր նահապետ բառից կազմուած մի ածանց է։

ՆԱԽԱՆՁ, ու հլ. «նախանձ, չարանալը» ՍԳր. Ոսկ. մ. բ. 15, գ. 8. Նա. քր. որից նախանձիլ ՍԳր. նախանձաւոր ՍԳր. Նա. քր. Ոսկ. երր. նախանձուկ Բուզ ժա. 29. Կորիւն. Ոսկ. մ. ա. 1. նախանձորդ «նա՝ որ նախանձ է կրում» Ա. կոր. ժդ. 12. «նա՝ որի վրայ նախանձում են, նախանձելի» (նորագիւտ նշանակութեանս վկայութիւնը առ՛ս յումարիլ բառի տակ). նախանձաբեկ ՍԳր.

Ագաթ. Եփր. Թգ. նախանձախնդիր *Գաղ. ա. 24. Ոսկ. մտթ. և ես. Բուզ.* նախանձայոյզ *ՍԳր. Եփր. գտ. Թգ. ծն.* աննախանձ *Ագաթ. Եզն.* հեղձանախանձ *Մծբ.* բարենախանձ *Փարպ.* երկրանախանձ *Ոսկ. ես. և մտթ.* գետնանախանձ *Ոսկ. յհ. ա. 37.* ստորանախանձ *Ոսկ. յհ. ա. 8.* յորդանախանձ *Սիսիան.* դիւրանախանձ *Լմբ.* ինանախանձու *Եփր. աղ. 273.* իճիանանախանձ *Դիոն. ածայ. ևն։* (Նախանձ, մախանճ և շարակնութիւն *համանիշների տարբերութեան մասին տես Տաթև. ամ. 250)։*

Հներից Տաթև. ամ. 247 մեկնում է «նախանձն... զմարմինն մաշէ, հիւծէ և տոչորէ, որպէս իւր անունն թարգմանէ. այսինքն նախ ի յիւր անձն վնասէ և ապա յայլս» (=նախ, անձ, խանձ բառերից)։ Նոյնը՝ նաև էջ 249. «Վասն այն նախանձ ասի, այս է նախ ի յիւր անձն չարանայ, որպէս հրով փայտն այրի և ապա զայլս այրէ կամ ոչ, նոյնպէս ի նախանձէն ինքն այրի և տոչորի»։ ՀՀՌ «նա է խանձ»։ ՆՀԲ «նա խանձէ կամ խանդայ»։ Տէրվ. Altarm. *29 և Նախալ. 117* նա *մասնիկով* խանձիլ, խանդալ *բայից։ (Նոյնը նաև այժմ Ղափանցեան. Տեղեկ. ինստ. 2, 86)։ Հիւնք. պրս.* նախասք *«ծոյլ, թոյլ, մեղկ»։* Bugge IF 1, 450 նախ *և* անձն *բառերից։*

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Երև. Մկ. Մշ. Ջղ. Սլմ. Տփ. նախանձ, *Ախց. Կր.* նախանճ, *Պլ. Սչ.* նախանց, *Տիգ.* նոխոնց, *Վն. (ժողովրդական ստուգաբանութեամբ նեխիլ բային նմանեցնելով)* նեխած. *առհասարակ գործածւում են իբր ած. և նշանակում են «նախանձոտ». միայն Ագլ. «նախանձ». բայական ձևով Սեր.* նախրնցիլ *ևն։*

ՆԱԽԱՏ *«անարգուած» ՍԳր. Եփր. օրին. էջ 285. Ես. պտմ. 618. «անարգանք» Լմբ. Մագ. Օրբել. որից* նախատել *ՍԳր.* նախատանք *Դան. ժա. 18. Ոսկ. բ. կոր.* նախատիճ *ՍԳր.* նախատիչ *Սղ. կբ. 19. Ոսկ. ես.* իճճանանախատ *Նար.* կրկնանախատ *Նար.* հրապարականախատ *Շնորհ. ընդհ.* յայտնանախատ *Ոսկ. մ. գ. 27 և ես.* յայտնանախատ *Կոչ. 326.* յաւէտանախատ *Համամ. առ.։*

ՆՀԲ նախ *և* առել *բառերից և կամ «իբր նախել և հոտեալ առել»։ Տէրվ. Նախալ. 117.* նա *մասնիկով* խանտալ *բայից։ Ղափանցեան, իսնտ. Տեղեկ. 2, 87* նա *մասնիկով* խայթել *բայից։ Պատահական նմանութիւն ունի անշուշտ արաբ.* نَخَسَ naxīṭ *«նախատել, խայտառակել» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 519)։*

ԳԻՒ.—Սլմ. նախատել, *Ախց.* նախատէլ, *Շմ.* նախադիլ.— *իսկ Համշ.* նախադէլ *«սպանել, մեռցնել»։*

*ՆԱԽԱՐԱՐ, ի–ա *հլ. «իշխանական մի աստիճան հին հայոց մէջ, իշխան, աւագանի» ՍԳր. որից* նախարարագունդ *Կորիւն.* նախարարակոյտ *Ագաթ. Բուզ.* նախարարապետ *Ես. քր. ևն։*

=*Իրան.* *nāfaδāra *հոմանիշ ձևից. որ բարդուած է* nāfa *«պորտ, ցեղ» (=պրս.* نَافَ nāfa *«պորտ», գնդ.* nāfah- *«ցեղ»,* nāfya- *«ազգակցութիւն», պհլ.* nāf, nāfah *«պորտ»)* +δāra *բառերից։ Այս ձևը հաստատում է սոգդ.* nāfδār *«ժողովրդի կամ ցեղի պետը». կազմութեան համար հմմտ.* նաճապետ<*nafapati-*։ Իրանեան* *nāfaδāra *տուած է նախ* *նաճարար *(ճիշտ ինչպէս* *nāfapati->նաճապետ*). բայց յետոյ ժողովրդական ստուգաբանութեամբ՝* *նաճարար *կապուելով նախ բառի հետ՝ դարձել է նախարար, իբր արարող կամ կալուածների առաջինը կամ գլխաւորը. ճիշտ ինչպէս* նաճապետ *յետոյ դարձել է նախապետ, թէև այս ձևը աւելի ընդհանրացած չէ. սակայն այնուամենայնիւ տուած է վրաց.* նախպետի։ Benveniste REA IX 1 (1929), *էջ 5—7 ընդունելով որ* *nāfapati *տալիս է* նաճապետ, *տարօրինակ է գտնում որ* *nāfaδāra *տար* նախարար *և ոչ* նաճարար։ *Հաստատում է հիւս. արևմ. պհլ. բարբառում իրան.* naxva-dāra- *(հմմտ.* Nohodares *Ամմիանոս) բառի գոյութիւնը, որ պիտի տար հյ.* նախարար, *ըստ որում հիւս. արևմ. պհլ.* xv *դառնում է հյ. խ. ինչ.* kaxva-rəδa>կախարդ, *pati-saxvan>պատասխան։

ՀՀՌ «նախկին առաջօղ կամ նախապետական առնօղ»։ Ինճիճեան, Հնախօս.

Բ. 77, 83 (որից նաև Հիւնք.) նախ արարեալ, *իբր թրգմ. լտ.* praefectus, praefectura *ձևերի՝ ՆՀԲ նախկին և գլխաւոր արարեալն, այսինքն յիշխանութեան հղեալն՝ էմին,* Истор. Арм.М. Хор. 1858 *(բ տպ. 1893, էջ 298)* նախ+արար *«առաջին գործող»՝* Canini, Et. étym. 1882 *էջ 237* նախ=*Ամերիկայի* Inka-*ները+* -rar=*իսլ.* rogh *«ընտիր»՝ նշանեան, Բիւր. 1900, 172 արաբ.* نخور nixvār *«նշանաւոր», մանաւանդ* نحاریر naḫārīr *«հանճարեղ, հմուտ»՝* Meillet *(տե՛ս Հիւբշ.* Arm. Gram. 514) *կազմուած է համարում հպրս.* *sāraδāra->*պրս.* sālār>*հյ.* սպար *ձևի վրայից, փոխանակելով* sāra—*հյ.* նախ *համազօր բառով՝ նոյն,* MSL 17, 245 *և* 18, 268 *բառի* -rar *մասը մեկնում է իբր իրան.* -dār, *որ գտնում ենք Թուրֆանի մանիքէական բնագիրների* šhrd'r *(=*šahrdār*) «ինքնակալ» ձևի մէջ, և որ համապատասխանում է հարաւային* šahriyār *հոմանիշին՝* Andreas *(տե՛ս Հիւբշ.* Arm. Gram. 514) *հպրս.* *naxaδāra *ձևից, որ վերակազմում է Ամմիանոսի յիշած* Nohodares *յատուկ անունից՝ Հիւբշ. (անդ) առարկում է որ հպրս.* *naxaδāra- *պիտի տար պհլ.* *naxyār=*լտ.* *Nahiares: *Մաս* ЗВО *11 (1899), 171—173 բարդուած նաև «տուն, երկիր»+*rar *«տէր» բառերից. առաջինը գտնում է նաև նահանգ և նահապետ բառերի մէջ և վերջինս կցելով չահապետ ձևին, նաև համարում է գաւառական ձևափոխութիւն չահ<իրան.* šahr *«երկիր, քաղաք» բառին (նոյն է նաև արաբ.* ناحیة nāhiya *«գաւառակ»). երկրորդը (*rar*) կցելով (*nr*)-*bar *բառին՝ երկուսը միասին համարում է զնդ.* ratu, *պհլ.* rad *«տէր, իշխան» բառից (տե՛ս և* nrbar*): Բարգէն վրդ. ՀԱ 1906, 242* նախ+արարէ *«կալուած». համմտ. լտ.* arare: *Նոյնը նաև Բ. Խալաթեան, Լումայ 1907, թ. 1, էջ 80՝ Ադոնց,* Арм. Юстин. 451 *գնում է կրճատուած իրան.* dañhuδar *ձևից, ինչպէս և նահապետ<*dañhupati *ձևից՝* Salemann, ЗАН 8 (1908), *էջ 98 պհլ.* נוכיר nuxvīr *«իշխան» գնում է ըստ* Andreas-*ի* *naxuδār *ձևից և միացնում է* նախարար *բառին՝* Кипшидзе, Грам. минг. *1914, էջ 423 կազմուած իրանեան* sāra-δara *ձևի վրայից՝ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet REA 2, 2: *Պատահական նմանութիւն ունի մանիք. պհլ.* nūxvīr *«իշխան»* (ИАН 1912, 43), *որից փոխառեալ է արաբ.* نخوار nixvār *«մեծ, աւագ մարդ. 2. հպարտ». կայ նաև արաբ.* نخریر naxrīr, *որ մեկնւում է «մեծ գիտուն ծովացեալ գիտութեամբ»՝ Պատահական է դարձեալ ըստ Ց. Զօրեանի (դասախօս մեր համալսարանում) յն.* ναύχραρος *«ցեղի նախագահ», որ ըստ* Boisacq 658 *ծագում է յն.* ναῦς *«նաւ» բառից և նշանակում է բուն «նաւատէր»՝*

ՆԱԽԵՐ *«գաւառ». ունի միայն Բառ. երեմ. էջ 231՝*

ՆԱԽԻՐ *(յետնաբար ի–ա հլ.) «կովերի և եզների խումբ» Նիւս. կազմ. Վրք. հց. ա. 528. անարգաբար մարդոց կամ աստուածների համար գործածուած՝ Եզն. որից* նախրուղ *«կովարած» (չունի ԱԲ) Առաք. պտմ. 129 (կայ նաև նոր գաւառականներում)՝*

ՆՀԲ ռմկ. նախրի, պախրի, վախրը, *երր.* պահար*: Հիւնք.* նախարար *բառից՝ Դիմ.—Ալշ. Երև. Ղրբ. Մկ. Մշ. Վն. Տփ.* նախիր, *Մրղ. Սլմ.* նոխիր, *Ոզմ.* նախէ՛ր, *Ախց. Կր. Շմ. Սվեդ.* նախը՛ր, *Զթ. Խրբ.* նախրո, *Ագլ.* նա՛ճիր*: Նոր բառեր են* նախարապան, նախարարած, նախարարող, նախարագնայ, նախարաճաց, նախարատափ, նախարափայտ, նախրբհաշ՝

Փոխ.—Վրաց. ნახირი նախիրի *«նախիր».* სანახირე սանախիրե *«արօտատեղի, հովուին արուած դրամը»,* მენახირე մենախիրե *«հովիւ»,* მენახირობა մենախիրոբա *«հովուութիւն», ինդ. բուդ. ջէք.* naxir, *խին.* nixer *«նախիր»,* nixervan *«հովիւ, նախրապան», ցախ.* nexir *«նախիր»,* nexirvan *«նախրապան», ռուտ.* nexir *«նախիր»,* nexirči *«նախրորդ», կիւր.* nexir, nexer *«նախիր», քրդ.* ناخر naxər *«նախիր»,* naxər-qavan *«նախրաքող»* (Justi, Dict. Kurde, *էջ 414), Քրք.*

գւռ. Կր. naxər «նախիր» (Բիւր. 1898, 627). Ծւդ. ناخر naxər «նախիր» (Յուշարձան 330բ), արևել. թրք. naxər «նախիր», naxərčï «նախրապան»։

ՆԱԽԻՃ «որովայն, փոր»? առանձին չկայ գործածուած. գտնւում է միայն նախճամէջ պար բարդի մէջ՝ որ մէկ անգամ ունի Բուզ. 86. «Թո՛ղ թէ զմիս կամ զգինի ճաշակել, որ զնախճամէջ պարն յուզացուցեալ մաճկացուցանէ և զճարպն և զերիկամամբքն պատեալ»։

ՆՀՐ նախճամէջ պար մեկնում է «ադիք կամ փորոտիք մեծ, քաղիրթ, փոր կամ մէջ շուրջ զերիկամամբք»։ Մաո. Иппол. 65 կցում է վրաց. ნახჯი նախճի, որի նշանակութիւնը յայտնի չէ. (բառարանները դնում են «ձև, օրինակ, պատկեր», բայց անյարմար է)։ Կայ նաև վրաց. ნახოჯო նախիճո «իւղի մէջ տապակած»։

*ՆԱԽՃԻՐ «մեծ կոտորած (որսի կամ պատերազմի մէջ՝ գազանների, անասունների կամ մարդոց)» Բուզ. Նղիշ. ղ, էջ 92. 3Հ. կթ. Լաստ. որից Նախճրաձոր տեղանունը (Այրարատի մէջ մի գիւղ) 3Հ. կթ.։

=Պհլ. نخچیر naxčīr (տե՛ս Կարնամակ, էջ 6 ծան.), մանիք. պհլ. נחציחר naxčixr (Salemann ЗАН 8, էջ 99), պրս. نخچیر naxčīr կամ نخجیر naxjīr «որս, որսի կենդանի, երէ, այծեամն», نخجیربان naxjīrbān «որսորդ», نخجیر کردن naxjīr kardan «որս անել, որսալ» (համմտ. նախճիր գործել), սոգդ. naxšēr «որս, gibier», քրդ. نچیر ničir, nečīr «որս», ničirvan «որսորդ», մինջ. naxčīr «քարայծ» (MSL 19, 150)։ Իրանեանից են փոխառեալ նաև ասոր. نسحیرا naxšīrā «որսորդութիւն, որս, որսի կենդանի», վրաց. ნახშირი նախշիրի (յիշում է Մաո. ЗВО 18, էջ 170)։—Հիւբշ. 200։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։— ՆՀՐ պրս. նախչիր «որս», նախչ «վնաս, հարուածծ», նօգսան «պակասութիւն», լտ. noxa «վնաս», Lag. Gesam. Abhd. 65, 18 յիշում է պրս. և ասոր. ձևերը։

*ՆԱԽՇԻՒՒՈՒՆ «անբան, անմիտ». մէկ անգամ ունի Կոստ. երգն. 82. «Սուրաթ են բէսիֆաթ և յանդիման նախշիդէուար»։

=Պրս. نقش دیوار naqš-i-devār «պատի վրայ նկարած պատկեր» (որ մարդու դէմք ունի, բայց բանականութիւնից զուրկ է)։—Աճ.

*ՆԱԽՇԻՆԻԳԱՐ «նկարակերտ, զարդարուած» Կոստ. երգն. 131։

=Պրս. نقش نگار naqš-nigār «նախշերով նկարուած»։

Ուղիղ մեկնեց Պոտուրեան, անդ՝ 54։

*ՆԱՇՐԱՅԻ կամ ՆԱՇԱՐԱՅԻ «քրիստոնեայ» Նղիշ. Վենետ. 1859, էջ 21, 123, 140։

=Ասոր. ܢܨܪܝܐ naṣrāyā, մանդ. nāṣorāyā, արաբ. نصرانی naṣrānī, յգ. naṣārā «քրիստոնեայ»։ Հայերէնի մէջ ունինք նաև Նազովրեցի, որ յն. Ναζωραῖος ձևից է կազմուած. երկուսի մէջ էլ -ցի տեղական մասնիկ է։—Հիւբշ. 312։

ՆԱԿՆՐՏ «հովուապետ».ունի միայն Բառ. երեմ. էջ 231։

*ՆԱՀԱՆԳ, ի–ա հլ. «մի երկրի իւրաքանչիւր բաժանմունքը» Գծ. իգ. 34. Նա. քր. որից նոր գրականում նահանգական, նահանգապետ։

=Ասուր. na-an-ga կամ na-gu-u, nagu, nanga, որ է սումեր. գաղափարագրեալ LUL-KIL «երկրամաս, երկրի շրջանակ, երկիր, վայր» (Delitzsch, Assyrisches Hndwört. 447, Strassmaier, Alphabetisch. Verzeich. d. Assyr. u. Akkad. Wörter, էջ 716, 739)։

Lag. Urgesch. 376 հյ. նրահանգ, պրս. āhang բառերի հետ sanj արմատից։ Lag. Arm. Stud. § 1587 մերժելով այս՝ նաև կցում է նախ «առաջին» բառի հետ։ Հիւնք. նհանգ «կոկորդիլոս» բառից։ Մաո ЗВО 11, 171—2 -անգ մասնիկով (համմտ. պահ-անգ) կազմուած նաև «երկիր» բառից, որի վրայ տե՛ս նախարար։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Բ. Խալաթեանց ՀԱ 1902, 398, նոյնը նաև Karst, Յուշարձան 406։ Meillet REA 2, 2 թերևս իրան. nāfa «պորտ, ցեղ, ժողովուրդ» բառից, որի վրայ տե՛ս նահապետ, նախարար։

*ՆԱՀԱՆՋ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «յետ քաշուիլը, ընկրկում» Անյ. բրծր. Շնորհ. բրծր. «366 օր հաշուած տարի» Շիր. Խոսր. Տոմար. որից ներ. ներքին. ներքին. ներքին

Stud. § 1588 *մեկնում է իբր բարդուած* նաճ *«նախ, առաջին» և* տակ *«վազք, արշաւ» բառերից. առաջինը գտնում է նաև* նաճապետ *բառի մէջ (իբր* նախապետ*), իսկ երկրորդը գալիս է պհլ.* tak, *ղնդ.* tač, *պրս.* tāxtan *«վազել, արշաւել» ձևից. Համմ.* ասպատակ: *Նոյնը նաև Հիւբշ.* Arm. Gram. 200: *Հիւնք. պրս.* նուտէ *«քաջազն»: Մառ* ЗВО *11, 172 դնում է իբր շաճատակ բառի գւռ. ձևր (տե՛ս նաև* նախարար*):* Meillet REA *2, 3 թերևս իրան.* *nāfa-taka *ձևից, որ կազմուած պիտի լինի* nāfa *«պորտ, ցեղ, ժողովուրդ» (սրա վրայ տե՛ս* նախարար *և* նաճապետ*) +* taka *կրկնակ մասնիկով, որի մի ուրիշ օրինակն է ներկայացնում սոգդ.* xšaθratāk *«արքայական», կազմուած* xšaθra- *բառից:*

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Շմ. Սլմ. նաճատակ, *Ալշ. Ռ.* նաճադագ, *Տիգ.* նոճոդոգ, *Գոր. Ղրբ.* նճա՛տակ, *Սեբ.* նրճադագ, *ՋՓ.* նաճադօգ, նաճադոգ *«մարտիրոս».— Տփ.* նաճատակ անիլ *«չարչարել», Բլ. Մշ.* նճադգել *«նախատել, յանդիմանել».—Պլ.* էշ նաճադագ *«զուր տեղը չարչարուած», Այս վերջինիս օրինակով կազմուած է էնկ.* էշէ—նաճադագ *հոմանիշը՝ Թրք.* ešek *«էշ» բառով (Բիւր. 1898, էջ 789):*

**ՆԱՂԱՇ *«նկարիչ». Մկրտիչ Նաղաշի մականունն է. որից* նաղաշագործ *«նկարիչ արուեստագէտ» Առաք. լծ. սահմ. 542, որ և* նաղաշքար *(անդ):*

=Արաբ. نقّاش naqqāš *«զարդանկարիչ»:*

**ՆԱՂԱՐԱՅ *«թմբուկ». յետին ռամիկ բառ, որ մէկ անգամ գործածում է Միխ. ասս. 419. «Ջորս ալամ սեաւ և շղթայ մի պարանոցին և գաւազան ոսկի և նաղարայ և փողս»: Նոյնը նաև Առաք. լծ. սահմ. 615:*

=Արաբ. نعرة na'ara *«գոչիւն, աղաղակ». այս բառը Թուրքերէնում դարձել է* nayara, *որ օսմաններէնի մէջ պահում է իր հին իմաստը, բայց արևելեան Թուրքերէնի մէջ (Կովկաս) նշանակում է «թմբուկ»:—Ա՛ճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 184:

**ՆԱՂԻՇՏ *«վայրի նուռ կոչուած խոտը» (Պէյթար մեկնում է «սև պղպեղ». գիտական անունը անծանօթ է). Ամիրտ. ունի միայն Հիւս. § 2166:*

=Արաբ. պրս. ناغشت nāγišt *«սեւ պղպեղ»:*

Ուղիղ մեկնեց Հիւս:

**ՆԱՂՄ *«ական պատերազմի,* mine*», որից* նաղմափոր *«ական փորող». երկուսն էլ մոյ. բառ. ունի Նորայր, Բառ. ֆր. 813 ա:*

=Պրս. نغم naγm *«ական», որից Թրք.* لغم laγəm, *որից էլ նյն.* λαγούμι, *ալբան.* lāgém, *ռում.* lagum, *սերբ.* lägum, *բուլգար.* lagŭm *նոյն նշ. (Berneker 685):*

**ՆԱՂՍ *«առձեռն պատրաստ դրամ». գործածական է միայն յետին դարերի ռամկական լեզուում. ինչ. Անսիզք 19 (Ի՛ր նաղտ և ի՛ր այլ ցեղ կումաշ). Կոստ. երգն. 95 (Երբ դու չունիս քեղիկ բաժին իրք նաղրտով):*

=Արաբ. نقد naqd *«դրամ», որ և գործածական է Կովկասի արդի բարբառներում նաղդ ձևով և «կանխիկ» նշանակութեամբ:*

Ուղիղ մեկնեց Պատուրեան, Հրտ. Կոստ. երգն. 55:

[ՆԱՃԱԿ *«սակր, տապար, կացին». սխալ բառ, որ ունին միայն ՆՀՒ և ՋՒ. ենթադրուած է Ուտհ. իր Հատուածից. «Պողովատ նճկովն հարկանէր զևրկաթի դուռն քաղաքին»: Սա մի սխալ դրչութիւն է, որ պէտք է ուղղել* նկով *(տե՛ս* նկուռ*), ինչպէս ունի Ուտհ. տպ. Վղրշ. 1898, էջ 33: ՆՀՒ և ՋՒ նախատառ աւելորդ* ն*-ից շփոթուելով և արդի գաւառականների նաճախ, նաճագ ձևերի վրայ հիմնուելով՝ հնարում են նաճակ ձևը, որ և մեկնում են իրր պրս.* ناچخ nāčax *«տափասլաք նիզակ և նետ. 2. տեսակ ինչ կացնոյ»,* نجك najak, نچك načak *«տեսակ ինչ կացնոյ», Թրք.* naǰaq *«կացին»: Այսպես նաև* Lag. Arm. Stud. § 1589, *Հիւբշ.* Arm. Gram. 271:—*ԱՒ արդէն ջնջած է այս անգոյ բառը:]*

**ՆԱՃԱՅ *«փսիաթ, խսիր, կապերտ» Վրք. հց. Բ. 479. «Եւ նոցա երկոցունցն մի փսիաթ, որ է նաճայ»:*

=Պրս. نایچه nayča «եղէգնիկ», որ نای nāy կամ نی nay բառի նուազականն է. պէտք է ենթադրել ուրեմն որ եաեայ եղէգի բարակ ճիլերով հիւսուած հասարակ խոխրն է. այս իմաստը չեմ գտնում պարսկերէն բառարանում, բայց անշուշտ գոյութիւն ունէր որևէ բարբառում, որից փոխառնալ է նաև ինգիլ. նեեա, նեենքի «խոխր»:—Աճ.

ՆՀՒ «բառ այլազգ. ելից»: ՋՒ դնում է պրս. (բայց չի ասում ո՛ր բառից)։ Շանիձէ ЗВО 22, 351 հայ բառին է կցում ինգիլ. ձևերը, առանց սրանց յարաբերութիւնը կամ ծագումը որոշելու։

*ՆԱՄ «դէշ, խոնաւ, թաց». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են եամիլ «խոնաւանալ, թրջուիլ» Կնձ. եամէա (կամ եայամէա) «խոնաւուտ, թաց» Պիտ. Նար. տաղ։ Արմատը պահում են նոր գաւառականները, որոնց մէջ ձևացած են նաև մի քանի նոր բառեր. ինչ. եամակուշտ է. «խոնաւութիւնից լաւ յագեցած՝ փափկած (հող)», եամաճեի Շշ. «գէշ տեղեր ապրող որևէ միջատ», եամասունկ Շշ. «խոնաւ տեղեր բնող մի տեսակ սունկ»։

=Պհլ. nam, namb «խոնաւ, խոնաւութիւն», պրս. نم nam «թաց, խոնաւ», نمید namīd (կամ nameđ?) «խոնաւ», քրդ. nem «խոնաւ», պհլ. nambītan «խոնաւացնել, թրջել»։ Իրանեանից է փոխառնալ նաև թրք. nem «խոնաւ», nemnāq (ոմկ. եէմլախ) «խոնաւուտ»։ Իրանեան բառերը կցում են լտ. nimbus «ամպ, տեղատարափ, փոթորիկ», միւղ. nimb «կաթիլ», սանս. ambhas- «ջուր», հյ. ամպ, լտ. imber «անձրև», յն. νέφο «ամպ», հսլ. nebo «երկինք» են բառերին և հանում են հնխ. nembh- արմատից, որի պարզականն է nebh-, embh-, m̥bh- (Pokorny 1, 131): Սրանց վրայ տե՛ս նաև եայ:—Հիւբշ. 201։

ՆՀՒ եամէա «որպէս թէ եամաւէա կամ եայաւէա, լծ. և յն. ναματώδης»։ Lag. Arm. Stud. § 1591 պրս. nam բառից։ Հիւնք. էջ 71 եայամէա<եայ ձևից, իսկ եամէա պրս. եէմիյա, թրք. եէմ, յն. ναματώδης, νάμα։

ԳԻՒ.—Ախց. եամ, Երև. եամ ևն։

*ՆԱՄԱԿ, ի–ա հլ. «նամակ, գրուածք» ՍԳր. Կոչ. Եղիշ. որից եամակագիր Բ. մկ. գ. 11, դ. 1, զ. 10. եամականի Փարպ. եամակակիր Նար. խչ. եամակամատոյց Նար. մծբ. շրջաեամակ Ոսկիփ. եաւատեամակ 3Հ. կթ. 99. Նոր բառեր են եամակադրոշմ, եամակատուն, եամակագրութիւն, եամակաբեր, եամակատուփ ևն։

=Պհլ. نامک nāmak, պրս. نامه nāma, քրդ. name «նամակ, գրութիւն, դիրք». փոխառութեամբ արաբ. namq نمق «գիր գրել» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 61)։—Հիւբշ. 201։

Ուղիղ մեկնից նախ Brosset, JAs. 1834, 383 ևն. նոյնը նաև ՆՀՒ, Spiegel, Huzw. Gram. 187, 190, 191, Müller SWAW 38, 572, Lag. Ges. Abhd. 185:

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Տփ. եամակ, Սլմ. եումուկ՝, Ալշ. ՋՒ. Հմշ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. եամագ, Ասլ. եամագ, եամայ, եամա*. կայ նաև Զանգեզուրի գաւառականով պամակ (Խաթաբալա 1910, էջ 496)։

ՆԱՄԱԿ «տէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 232՝ այս ձևով. «նամակ. բնակ. տէր ասի». որի հետ համմտ. էջ 237՝ «նժռական և բնական տէր ասին»։

*ՆԱՄԱՄ կամ ՆԱՄՄԱՄ «մի տեսակ թիմ, thymus serpyllum L» կամ «սուսամբար, մարսէմանի, tenacetum balsamita L» Մխ. հեր. էջ 10, 83. ունի միայն ՀԲուս. § 2167. նոյնպէս և Seidel, Մխ. հեր. § 53։

=Արաբ. نمّام nammām (մեկնուած է կամուս. թրք. թրգմ. Գ. 570 թրք. մարսէմանի). —Հիւբշ. 279։

Ուղիղ մեկնից նախ ՀԲուս։

ՆԱՄԵԻԱՐ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պզատ. տիմ. էջ 167. «Եւ ամենայնի այսոցիկ նամեբար և իբրու չար ինչ առլինիցի»։ Բնագիրն ունի παντὶ δὲ ταῦτα ἐχθρὰ καὶ ἄκοντι προσγίγνεται, ուր խնդրական բառիս համապատասխանն է ἐχθρὰ «ատելի, անհաճոյ, անդուրեկան» (տե՛ս Platonis opera, Parisiis 1883, հտ. II, էջ 245, տող 28), որ և պէտք է դնել նամեբար բառի դէմ, եթէ խաթարեալ ձև չէ։

ՆԱՄԵԱԿԱՆ. *անյայտ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած է հետեւեալ տեղերը. «Եւ քարոզել ձեզ հաւատամք ոչ միայն նամեսական և մերձակայիցդ, այլ և բացականաց տարակացելոցն, նաև ուր ոչ անուանեցաւ Քրիստոս». Գիրք թղ. էջ 373.— «Զի ի ժամ տապակէզ աւուրցն առնալ գերահրաշ պետականին զաղաւաղարմ տոհմն հանդերձ նամեսական գնդիւն ի հովիտս բարձրաբերձ լերանցն՝ բերկրէր». Կղնկտ. հրտր. էմ. 176, Շահն. Ա. 350։ Ըստ տեղւոյն դատելով առաջին վերկայութեան մէջ նամեսական բառի իմաստն է «մերձաւոր, մօտը գտնուած», իբրև հականիշ բացական բառի և հոմանիշ մերձակայ բառի՝ որ հականիշն է տարակացեալ բառի. և այս իմաստն է ընդգրում Բառ. երեմ. էջ 232 նամեսի «շօշափումն»։ Երկրորդ վկայութեան մէջ այս իմաստը կարող էր յարմարուել (նամեսական գնդիւն «մօտը գտնուած գնդով»), բայց Բառ. երեմ. էջ 232 դրնում է նամեսական «շնորհական», նամերսական «յաւերժական», նամենական «նախարար կամ իշխան», որից չի կարելի բաժանել նումենեան «նախարար» (տե՛ս այս բառը)։ Այս բոլորից կարելի էր հանել նամեսական «նախարարական», որով նամեսական գնդիւն կդառնայ «նախարարական գնդով», որ շատ լաւ յարմարում է տեղին։ Այս անյայտ բառի առաջին նշանակութիւնը հնթադրել էի «մերձաւոր, մօտը գտնուած». այժմ այս նշանակութիւնը հաստատւում է. որովհետև Գիրք թղ. 373 հատուածի դէմ (Ոչ միայն նամեսական և մերձակայիցդ; այլ և բացականաց տարակացելոցն) ունինք մի նոր var. Ո՛չ միայն մօտաւորացդ (տպ. մրտաւորացդ) և մերձաւորաց մօտակայից, այլ և բացականաց և տարակացելոց (տես Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց, Նոր-Ջուղա 1688, էջ 303)։*

Ալիշան, Հայապատում Բ. էջ 237 ա ծանօթ լինելով միայն երկրորդ վկայութեան, բառը կապում է Նեմէական տօնահանդէսին։ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 26, որ ծանօթ է նոյնպէս միայն երկրորդ վկայութեան, կցելով յն. νομεύς «հովիւ», νόμιος «հովուական», νομεύω «արածել» բառերին, հասկանում է նամեսական «հովուական» և բառը ուղղում է նոմևսական։ Նոյն, հտ. Բ, էջ 286 այս մեկնութիւնը սխալ համարելով՝ ըստ Բռ. երեմ. նոմեսական մեկնում է «նախարարական»։

Նամփորտ *տե՛ս* Նափորտտ։

+**ՆԱՅ** *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «թաց, խոնաւ. 2. կակուղ. 3. հեղուկ կոչուած գրերը (ղ, մ, ն, ր). 4. թացութիւն» Թր. Մագ. Երզն. և Նչ. քեր. Պիտ. Ոսկիփ. որից* նայացուցանել *«թրջել, ջրել, ոռոգել (պարտէզ կամ ծառ)» Փիլ. յովն. 610. Պիտ. նայական «թաց, խոնաւ» Ոսկ. եփես. 803 (խոնաւութիւն նայական շոգով). նայամէա Պիտ. ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* snə-t- *ձևից, որ աճած է* t *աճականով՝ հնխ.* snā *«հոսիլ, հեղուկ» պարզական արմատից. սրանց հետ համմտ. սանս.* स्नाति snāti, स्नायति snāyati *«լոգնալ, լուալ, լուացուիլ», գնդ.* snā *«լուալ»,* snāta *«լուացեալ»,* snayeitē *«լոգնալ», յն.* νάω *«լողալ»,* νᾶμα *«հոսուն ջուր, ակունք»,* ναρός *«հոսանուտ»,* Νηιάς *«ջրի յաւերժահարս»,* νότιος *«թաց, խոնաւ»,* νοτία *«խոնաւութիւն, անձրև»,* νοτέρος *«խոնաւ»,* νότος *«հարաւային քամի (որ է «անձրևաբեր, խոնաւուտ»՝ Յունաստանի համար). 2. հարաւ» (որից թրք.* لودوس lodos> *ռմկ.* լոտոս *«հարաւային քամի»), լտ.* no, nare, natāre *«լողալ», ումբր.* snata *«թաց», միւլ.* snāim, *կիմր.* nawf, *բրբտ.* neuff *«լողալ»։ Նոյն արմատի ուրիշ աճումներն են ներկայացնում յն.* νάω, *ևոլ.* ναίω, ναύω *«հոսիլ», վէս «լողալ», վոա «ադբիւր», իռլ.* snuadh *«գետ», գնդ.* snaoδa *«ամպեր», հիսլ.* snȳta, *անգլ.* snot *«խլինք» են։ Կարելի էր այստեղ կցել նաև հյ. նամ «թաց, խոնաւ», բայց որովհետև տառացի նման է իրան.* nam *ձևին, ուստի փոխառեալ է նրանից* (Pokorny 2, 692, Walde 521, Ernout-Meillet 641, Boisacq 659, 673)։

ՆՀԲ համառօտուած է դնում խոնաւ բառից. յիշում է նաև յն. νάμα: Հինք. պրս. nay *«եղէգ» կամ արաբ.* 'ayn *«աչք» բառից: Ուղիղ մեկնեց* Scheftelowitz BB 29 (1905), 24: *Ն. Ադոնց, Արուեստ Դիոն. քեր.* CLVII *պրս.* nam *«թաց» բառից: Թիրեաքեան, Արիահայ բռ. 285 իբր* նայմ (նամ):

ՆԱՅԱՍՏՆ *«տատանումն իմն». ունի միայն Բառ. երևմ. էջ 232. տպուած է նա՛ աստրն. բայց բառաշարքը պահանջում է նայասան:*

ՆԱՅԵՂ *«մարդ». ունի միայն Բռ. երևմ. էջ 232:*

***ՆԱՅԻԲՈՒՆԱԿ** *«մի տեսակ խունկ է» Խոր. աշխ. 615. ունի միայն ԱԲ:*

=կազմուած անծանօթ նայ+բուակ<*պհլ.* bōyak>*պրս.* bōya *«բուրող» բառերից. հմմտ.* հրբուակ, գոյիբուակ *ևն:—Հիւրշ. 123:*

Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 81 պրս. nāy *«եղէգ»?+պհլ.* bōyak *ձևերից: Ըստ այսմ Գաբ. բառ. մեկնում է «տեսակ մը անուշահոտ եղէգ, գասպ-իւզ-զարիրէթ, աղաէզրիյի»:*

—ՆԱՅԻ, *«նայիլ, նկատել, դիտել, ուշ դնել, զգուշանալ» ՍԳր. որից* նայելիք *«տեսողութեան գործարանը, աչք» ՅՃխ.* նայեայ *«տեսարան» Բուզ. 117.* նայեցած *Ոսկ. մ. ա. 17.* նայեցուած *Արծր. Նար. ևն:*

=կազմուած է ևի- մասնիկով նայիլ *բայից. հմմտ.* նեցուկ<յենուլ, նիւթ<նիւթ:

ՆՀԲ սանս. նայանա *«աչք», յն.* νοέω *«նշմարել», իբր* բնևայել, ներևայել: Peterm. 30 *սանս.* nayana: Böttich. ZDMG 1850, 358, 177, Arica 89, 449, Lag. Urgesch. 52 *սանս.* nī, nayana, nētra: Böttich. Wurzelfor. § 31 *սրանց հետ նաև խպտ.* nau *«տեսնել»: Ուղիղ մեկնութիւնն ունին Պատկ.* Изслъд. 14. *Տէրվ. Մասիս 1881 սեպ" 15,* Meillet MSL 11, 396 *ևն: Հինք. նայ «խոնաւ» բառից: Մառ,* Яз. и Лит. I. 247 *չէրքէզ.* na *«աչք», սվան.* näqča *«յօնք»: Պատահական նմանութիւն ունին մանիք. պհլ.* nāy *«նայի՛ր» (ИАН 1907, 543), խպտ.* nau *«նայիլ», մանդէ* ña *«աչք»* (BSL № 89, էջ 15):

ԳԻՒ.—Սչ. նայել, *երև. Ննխ.* նայէլ, *Ագլ. Պլ. Ռ.* նայիլ *(բայց հրմ. Պլ.* նէյէ, նէէ *«նայի՛ր»), Ասլ. Սեբ.* նէյիլ, *Պրտ.* նէյէլ.—*որից* նայող *Պլ. «բախտ դուշակող»,* նայելչէք *Ննխ. «հիւանդապահի վարձք»:*

ՆԱՅՐԱՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ գըտնում եմ Վրդ. առ. 313. «Օր մի ի ձիուն ջիլայուն (սանձ) կապեց և ի նայրանն ինչուր յիրիկունն յառջև ձիուն անօթի վազցուց»:*

ՆԱՅԿԱՄ *«պարտութիւն». ունի միայն Բառ. երևմ. էջ 232:*

***ՆԱՆԱԽԻՒ,** *կամ նաև* նաճխու, նաճախուա, նաճխոյա, նաճախաւա, նաճխաւայ *«հացագեղ, լտ.* ammi» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2168: (Ըստ* Seidel, *Մխ. հեր. § 315 տեսակներն են՝* sison ammi L, sison amomum L, ammi copticum L, ptychotis adjowan D. C., ammi visnaga Lam.=daucus visnaga L, *որ հայոց ճանաչած տեսակն է):*

=Պրս. نانخواه nānxāh, nānxᵘāh *«հացհամեմ, արջնդեղ, սոնիճ» բառից, որ կազմուած է* nān *«հաց»+*xᵘāh *«ուզել» բառից, և բուս այսմ կան հյ.* նաց ուզող *ՀԲուս. § 1660 և արաբ.* طالب الخبز ṭālib-ul-xubz (Seidel *անդ) հոմանիշները: Պարսկերէնից է փոխառեալ նաև յատին յն.* ναναχσυά:

Ուղիղ մեկնեց ՀԲուս.:

ՆԱՆԻՐ, ո, ի–ա *հլ. «ունայն, սին, փուճ, պարապ» Սղ. իե. 24. ճիգ. 4. Ոսկ. ես. «ճի տեսակ վաղանցիկ բոյս, որ առաւօտուն ցանում էին, ճաշին բուսնում էր, կէսօրին պըտուղ տալիս և երեկոյին չորանում» Վրդ. առ. 266. Վրդն. սղ. (ըստ ՀԲուս. § 2169) (բոյսի մասին եղած առակը տե՛ս Բարուխաս, հրտր. Մառ, Վրդ. առ. I. էջ 433). որից* ի նանիր *«ի զուր» ՍԳր.* նանրագիր *Եւս. պտմ.* նանրութիւն *ՍԳր.* նանրանալ *Հռ. ա. 21. Սղ. ե. 10.* նանրական *ՅՀ. կք. ևն:*

ՆՀԲ ունայն իր, *լծ. լտ.* inanis, inanitas, vanus, vanitas, *երր.* ավան, *թրք.* ավարա, *որ և* աւիր, առաւիր, վայրապար: *Հինք. լտ.* inanis *և հյ.* ունայն: Bugge KZ 32, 35 *ունայն-իր:

Գիմ.—Ըստ Հիւս. (անդ) կան նաեիրխոտ, նաերեոց բուսանուններըւ

***ՆԱՇ** (սեռ -ի) «դագաղ» Յայսմ. սեպ. 12. Գնձ. Ոսկիփ. Մաշտ.ւ*

=Արաբ. نعش na'š «դագաղ, դի»ւ— *Հիւբշ. 271ւ*

ՆՀԲ դնում է «բառ այլազգականն», Lag. Arm. Stud. § 1594 *վերի ձևովւ*

***ՆԱՇԻՀ,** ո *հլ. «ընտիր բարակ ալիւր» ՍԳր. աստւմ է նաև նաշեի (սեռ. -հւոյ) ՍԳր. նաշի 3Հ. իմ. հկեղ. էջ 112, սեռ. նաշւոյ Կնիք հաւ. 43, նաշիխ Պիտառ.ւ*

=Ասոր. نعشيثا nəšīfā «նաշիհ, simila» (Brockelm. Lex. syr. 215 a), *որ ծագում է* نعش nəšafyā «մաքրել, զտել» *բայիցւ*

ՆՀԲ արաբ. نشا nišā *և պրս.* nišasta نشاسته «օսլայ, նշայ» Justi, Dict. Kurde, *էջ 420 քրդ.* nišaï «կաթնախառն ալիւր՝ կերակրի մէջ դնելու համար», *պրս.* nišeste «օսլայ»ւ *Հիւնք. արաբ. նիշա, տճկ. նիշասթ: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Մառ,* Кавк. Вѣст. 1902 *ապր. էջ 71ւ*

Գիմ.—Գնձ. պահուած է նաշիվ, նաշիճ, նշիվ ձևով՝ ըստ Մամիկոնեան, Հաղարից մէկը էջ 246 և «գերմակ ալիւր» նշանակութեամբւ Riggs, A vocabulary *էջ 96 տալիս է ժողովրդական նաշիր ձևըւ*

ՆԱՇՏ *«մեծ տերեփուկ,* centaurea serotina Bor.» *(ըստ Տիրացուեան,* Contributo § 559*) Գաղիան. ունին միայն Հիւս. § 2170 և Նորայր, Բառ. ֆր. 214 աւ*

ՆԱՇՔ *«մի տեսակ վայրի խիժոտ ծառ» Հին բռ. ունի միայն Հայբուսակ § 2171ւ*

ՆԱՊԱՍՏԱԿ, ի–ա *հլ. «նապաստակ» ՍԳր. Նւս. քր. Վեցօր. 192. որից* նապաստակի ականջ *«մի տեսակ խոտ. լտ.* auricula leporis *կամ* chantarellus» *Բժշ.* նապաստակակեր *«նապաստակ շատ ուտող». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 122, իբր նախատական վերադիր Վրաց. «Ծու անարի և որովայնամոլ, արբեցող և լապաստակակեր ազգն Վրաց, որ հանապազ ի գիներբուս նստեալ պարծէին»ւ Գրուած է* ալապազտրակ *Վրդ. առ. 195,* լապաստակ *Վրդ. առ. 196ւ*

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ապաստանող: *ՆՀԲ «ճա որ ապաստան լինի ի վէմս»ւ* Lag. Btrg. bktr. Lex. 70, 27 *իրան.* arnab *(իմա՛ արաբ.* ارنب arnab) *«նապաստակ» բառին է կցում։ Տէրվ. Նախալ. էջ 82 վերջին վանկը համարում է պհլ.* tak, *պրս.* tāxtan, *հյ.* ըն–բանալ *«վազել». համմտ. լակոն.* ταχί-νας՝ *Հիւնք.* ապաստան *բառից։* Bugge KZ 32, 62 *մերժում է կցել լտ.* lepus, *ևս.* λέπορις, *ֆրանս.* lapin *են ձներին, որոնք նշանակում են «նապաստակ կամ ճագար»ւ* Patrubány SA 1, 189 *պրս.* nabast *«անկապ, ազատ»+պհլ.* a: *(մասնիկը)։* Oštir, Beitr. alarod. 72 *հլտ.* laurex, lepor *«նապաստակ», հանգլ.* rabbit, *բասկ.* erbir, *յն.* λεβηρίς *«նապաստակի որջ»ւ* Meyer-Lübke, Rom. etym. Wört. 4902 *հիմնվելով* Bugge*-ի յիշատակութեան վրայ՝ կցում է ֆրանս.* lapin, *պորտուգէզ.* laparo, *իրլր.* *lappar, *լտ.* lepus *բառերին՝ կասկածովւ* Josef Brüch KZ 46, 365 *իմանալով՝ որ ըստ* Andreas *հայ. բառի հին ձևը ունի* n *նախաձայնը (իսկ* l *դաւառական և նոր ձև է միայն), մերժում է վերոյիշեալ համեմատութիւնը։*

Գիմ.—Սեբ. նաբասդագ, *Պրտ.* լափուստագ, *Ջթ.* լափուսդօգ, լափուսդոգ, *Սլմ. Վն.* լապըստրակ, *Բլ.* լապըստրագ, *Տփ.* լապուստրակ, *Ոզմ.* լապըզդրակ, *Մշ.* լարըստրագ, *Ալշ.* լարըզդրագ, *Ախց.* լափրստրակ, *Մկ.* լըպըստրակ, լըպըզտրակ, *Սրև.* ալապըստրակ *(Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. 1788, էջ 159 ունի* ալապաստրակ *ձևը), Ագլ.* ըլըպա՛զտրակ, *Գոր. Ղրր.* ըլըրա՛ստրակ, *ՀՋղ.* ալապօստրակ (Riggs, A vocabulary *96 իբր ժողովրդական ձև ունի* նապստակ).— *սրանց ներկայացուցիչն է լապըստկանք «նապաստակներ» կեղծ-Շապհ. 75, ուր անշուշտ յետին ձևափոխութիւն կայւ Այս բոլորի մէջ եղած r ձայնը և ն>լ ձայնափոխութիւնը ցոյց են տալիս, որ բառի հնագոյն ձևն էր *նապարստակ, ուր r շշականից առաջ չնչուեցաւ հայերէնի մէջ, իսկ բարբառներում՝ տեղափոխութեամբ հետանալով շշա-*

կանից՝ անկումից ազատ մնաց. միևնոյն ժամանակ՝ և—ր տարանմանութեամբ դարձաւ լ—ր:

***ՆԱՊԱ** «մի տեսակ բոյս. paliurus spina-cristi Mill» (ըստ Տիրացուեան, Contributo § 298). ասում է նաև նապ, նապղ, նաբկ, նրբգ. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2172.—կայ նաև նրկն «բոհնչ» Բժշ. նոյն բառն է և ներգիւն «լոտաս, lotus corniculatus L» (ըստ Տիրաց. § 246), որ ձևագրերում սրխալմամբ գրուած է ներգիւն, ներգոյն, ներգևն Գազիան. (ՀԲուս. § 2196). առաջին ձևի տարբերակներից է դարձնալ նաբակ:*

=Արաբ. نبق nabq, որի բացատրութիւնը տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 57. փշոտ ճիւղերով մի ծառ է, որ տալիս է Բիւուշ պտուղ. սովորական է Սգիպտոսում. Ղուրան ԼԴ. 15 յիշւում է իբրև անարդ մի պտուղ, իսկ ՄՋ. 27 նրա անփուշ տեսակը արքայութեան ճեմելիքների զարդն է կազմում: Այս ծառն է «lotus cyrenaica, արաբ. majisch, sidra, connar, Բրք. սիտրէ, պրս. kunār, որ է մի տեսակ յունապ» (Խորենացւոյ աշխարհագրութեան լուտասը): Բառիս -իւն, -ոյն վերջաւորութիւնը արաբերէնի անորոշ յօդն է. nabq-un:

Ուղիղ մեկնեց ՀԲուս.: Տարբեր է արաբ. نبخ nabx՝ խոխրի բոյսի արմատը, որ սովի ժամանակ ուտում են (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 561): Ներգիւն ձևի վրայ պատուական մի քննութիւն ունի Նորայր Հ. 1923, էջ 165, ուր և ուղղում է ներգիւն:

ՆԱՋԱՆ. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. էջ 134 մի ոտանաւորի մէջ. «Ներձուն նպաստ նաջան նեռին նարին կիզողական». (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 175):*

ՆԱՒԵԱՆ. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ Թղ. էջ 204. «Որք զկնի նաւեանն լիգոնի («պսակ») ակիւրրափաւեանացն սփողէն». Թուի թէ պսակը շինելու նիւթն է և կարող է կազմուած լինել -եան մասնիկով (տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Բ. էջ 206—8):*

ՆԱՒԵԱՆ. *նորագիւտ անստոյգ բառ, որ գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 117 étalon նշանակութեամբ: Բայց այս բառը հտ. Ա, էջ 801—2 étalon բառի տակ չէ յիշած. և ապրովհետև étalon բառին տալիս է երկու իմաստ (1⁰ տիպար չափուց և կշռոց, 2⁰ յովատակ), ուստի յայտնի չէ թէ ո՛րն է նաւեանը: Վերջին դէպքում կարելի է յիշել պրս. نر nar «արու (մարդ կամ անասուն)», որ եղած է Կովկասում նաւ:*

ՆԱՒԻՆ *«օղակ՝ որի մէջ կոճակն է մտնում, լամբակ, կոճակամայր». գիտէ միայն Քաջունի, Գ. 177, որից առնում են Տիրոյեան, Հանրագրութ. 533 և Գաբ. բառ.:*

***ՆԱՍՊ** «տունկերի կարգ կամ շարք» (նորագիւտ բառ). երկու անգամ գործածած է Վասկ. 179, 181. «նասբն զոր շինես ի պարան՝ պիտի յարևելս. Զակնուռան յամէն տարի պարտ է քարշել և տանել տնկել և շատացուցանել զնասբն»:*

=Արաբ. نصب naṣb «կանգնեցնել, դնել, գետնդել. 2. կարգել. 3. յառել», նաև «ճանապարհների վրայ տնկուած քարեր՝ որ մրցողներն են ցոյց տալիս» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 270):—Ա՛ճ.

***ՆԱՍԻՃ** «հիւսկէն, հիւսուած, գործուած». նորագիւտ բառ, որ երեք անգամ գտնում եմ գործածուած 1261, 1286 և 1326 թուերի արձանագրութեանց մէջ. երկու նափորտ նասիճ և տոլաս վառ. խաչվառ ու նասիճ շուրջառ. խաչվառ և նասիճ շուրջառ. (Վիմ. տար. 103, 129, 163): Բառիս համար մի նոր վկայութիւն եմ գտնում Այրիվ. 8 ա. «Հանդերձ նասիճ հալուղի և պարեգօտ շուշթարի»:*

=Արաբ. نسيج nasīj «գործուած, հիւսուած», որ ծագում է نسج nasj «գործել, հիւսել» արմատից (Կամուս, Բրք. Բրգմ. հտ. Ա. էջ 445):—Ա՛ճ.

***ՆԱՍՈՒՐ** «մարմնի վրայ յառաջացած կոշտ» Բրս. մրկ. 131 (խստացեալ և կարծրացեալ էին ի նոսա չարիքն, որպէս զնասուր ինչ ի վէրս). Վասկ. 169 (Եւ աչացաւի՝ որ յաղբիւրն նասուր լինի, հռոմերէն անոպիա ասեն):*

=Արաբ. ناسور nāsūr «կոշտ»:—Ա՛ճ.

***ՆԱՏԱՐ** «հայհոյանք». նորագիւտ բառ, որ*

*մէկ անգամ դտնում եմ գործածուած յետ-նաբար Յայսմ. յունվ. 9 (էջ 405 բ). «Զարևն ի յերկինս իմայ և լուսոյն նաւտար (այլ ձ. նադար) դուն արա»։

=Արաբ. نظر nazar «նայիլ, դիտել»։— Ա՛ճ.

***ՆԱՏԻԿ կամ ՆԱՏԻՓ** «մի տեսակ փոքրիկ խմորեղէն». Խնդրեաց նատիփս. Վրք. հց. բ. 365 (ըստ ՆՀԲ նատիկս). Գնեա՛ ինձ պղակունտա, այսինքն նատիփ. Վրք. հց. բ. 358. երկուսն էլ ուղղելի նատիկ։

=Յն. ναστός, ναστίσκος «փոքր կարկանդակ». դալիս է ναστός «սեղմուած, թանձր, հաստ», νάσσω «սեղմել» բառից։—Հիւրշ. 367։

*Ուղիղ մեկնից ՆՀԲ։ Պատահական նմանութիւն ունի արաբ. نَدَ nada «կարկանդակ շինել» (Կամուս, Բրք, Թրգմ. Ա. 57)։

Նարաւ տե՛ս Նրան։

Նարգեաւ տե՛ս Նարդոս։

***ՆԱՐԳԷՍ** (կամ նարկէս, նարկիս, նեռգէս, նեռկիս, նարկիզ, նարգիզ, նարգէզ. արևմտահան գրականում այժմ ընդունուած ձևն է նարկիս) «մի տեսակ ծաղիկ. narcissus tazzetta» (ըստ Տիրացուեան, Contributo § 56) Ագաթ. Վրդն. Բժշ.։

=Իրանեան փոխառութիւն. հնագոյն ձևն է պհլ. *narkis, որից յառաջացել են յետոյ պրս. نرگس nargis, քրդ. nargis, nergiz. փոխառութեամբ ասոր. نرقص narqis, արաբ. نرجس narjis, վրաց. ნარგიზი նարգիզի, ԲՐք. nergiz։ Նոյն է նաև յն. νάρκισσος, որից փոխառեալ են լտ. narcissus, ֆրնս. narcisse, գերմ. Narcisse, իտալ. narciso, ռուս. нарциссъ են համանիշները։ (Համաձայն -σσος վերջաւորութեան՝ Boisacq 657 սրանց աղբիւրը միջերկրեան է դնում. հմմտ. κυπάρισσος «կիպարիս»)։ Մեր բառի հնագոյն ձևը անյայտ լինելով՝ կարելի չէ նրա բուն աղբիւրը որոշել. նիթ հնագոյն ձևն է նարկիս, ծագած է պհլ. *narkis-ից. նարգէս կամ նարգիս գալիս են սասանեան nargis ձևից. միւսները ներկայացնում են իրանեան նորագոյն ձևերը. մինչև նարճիս, նոճէս՝ որոնք տառադարձուած են արաբ. narjis ձևից։— Հիւրշ. 201։

Ուղիղ մեկնից նախ ԳԴ. նոյնը նաև ՆՀԲ, Lag. Arm. Stud. § 1596 են։ Նազարէթեան, Պատկեր 1892, էջ 300 իրար է կապում նեռկ=նարկ և նարկիս, անս. նիրա «ջուր» և նար «բոյր»։

ԳԻՒ.—Մշ. Տփ. նարգիզ, Ախց. Գոր. Կր. Ղրբ. Շմ. Սլմ. նուրգիզ, Մկ. Պլ. նէրգիզ, ՋԲ. նէյգ՚իզ, նէրգ՚իզ։

***ՆԱՐԳԻԼԱԿ** «հնդկընկոյզ, coco, cocos nucifera» Բժշ. յիշում են միայն ՋԲ, ՓԲ (իբր զուտ բառ!) և ՀԲուս. § 2178։

=Պհլ. *nārgīlak ննջադրեալ ձևից, որի հետ համմտ. պրս. نارگیل nārgīl. սրանից է տառադարձուած արաբ. نارجيل nārǰīl «հնդկընկոյզ». (արմատները նման ծառ է. մինչև մարդու գլխի մեծութեամբ ընկոյզներ է տալիս. շատ աննդարար ուտելիք է. նրանից են պատրաստում նաև մեղր, իւղ և կաթ. ընդարձակ նկարագրութիւնն ունի Իբն-ի-Բատուտա II. էջ 206—211)։

Ուղիղ մեկնից Նորայր, Բառ. ֆր. 254 ու։

***ՆԱՐԴԷՍ** «մի տեսակ բոխի. ferula» Վեցօր. էջ 101։

=Յն. νάρθηξ նոյն նշ.։

Ուղիղ մեկնից Նորայր ՀԱ. 1924, էջ 71։

***ՆԱՐԴԻՍՏԱՔՈՍ** «սմբուլ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 570։

=Յն. ναρδόστακυς «նարդոսի հասկ կամ ծաղիկ» (կազմուած νάρδος «նարդոս» և στάχυς «հասկ» բառերից)։—Ա՛ճ.

***ՆԱՐԴՈՍ**, ի հլ. «մի տեսակ բոյս և ծաղիկ, որից անուշահոտ և ազնիւ իւղ են պատրաստում. կազմորէն» Երգ. ա. 11, դ. 13, 14. աւում է նաև նարդէս Փիլ. նխ. բ. նարդին Գաղիան. նարդաւ Ագաթ. *նարդեէս (սեռ. նարդենիայ) Տաղ. նարդ Տաղ. սեռ. նարդեան Մրկ. ժդ. 3. ՅՀ. ժբ. 3. որոնցից նարդիւեանոս Տաղ. նարդիւնաբեր Նար. տաղ. (ենթադրում է ուղ. *նարդիւն, որ հանուած է սեռ. նարդեան ձևից, ինչպէս արդիւն, սեռ. արդեան), նարդոսական Անան. ակեղ.—սբխալման արդիւնք է ՀԲուս. § 2177 նարգեան «վայրի մկնսոխ», որ պէտք է ուղղել ըստ Նորայր ՀԱ. 1923, 58 և 157 նարդեան։

=Յն. νάρδος «նարդոս» (ածականը νάρδινος) ձևից, որից փոխառեալ են նաև լտ. nardus, գոթ. nardus, հբգ. narda, գերմ. Narde, անգլ. ֆրանս. nard, իտալ. nardo, վրաց. ნარდი նարդի են։ Նախնական աղբիւրը սանս. *narda ձևն է, որ բուն նշանակում է «եղէգ». սրանից փոխառութեամբ յառաջացել են պրս. نارديـن nārdīn, եբր. נֵרְד nērd, ասուր. lardu (Gesenius[17], 522) և փիւնիկերէնի միջոցով էլ յն. νάρδος Այնուհետև յոյն ձևը յետադառնալով տուած է սանս. नलद nalada «նարդոս» (Boisacq 657, Horn § 1060)։ Ուշ ժամանակի հյ. նարդին ձևը պրս. nārdīn-ից է։—Հիւբշ. 367։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ։—ՆՀԲ դնում է եբր. յն. լտ. իտալ. ձևերը։ Պատկ. Խոր. աշխ. 1877, 57 պրս. nārdān։

ՓՈԽ.—վրաց. ნარდოსნი նարդոսնի «նարդոսի իւղը» հյ. նարդեան սեռականից է. (իւղոյ նարդեան աղնուի միծագնոյ. Մրկ. ժդ. 3. 3Հ. ժբ. 3)։

ՆԱՐԻՆ. նորագիւտ անասոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 134 մի ոտանաւորի մէջ. «Ներձուն նպաստ նաջան նեռին նարին կիզողական»։—Կիզողական ածականը ենթադրել է տալիս որ նարին՝ արաբ. نار nār «կրակ» բառի սեռականն է (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 175, 199. այլ ձ. եակին)։

*ՆԱՐԻՆՋ (ի–ա հլ. բառ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «փորթուխալ» Մխ. առակ. հների մօտ շփոթուած է թուրինջի, լիմոնի և կիտրոնի հետ. տե՛ս ՀԲուս. § 2187. գրուած է նաև նարանճ Բժշ. առաջին ձևից են նոր գրականում՝ նարնջենի, նարնջագոյն, նարընջաստան։

=Յետին պրս. نارنج nārinj ձևից։ Բառս բնիկ հնդկական է. համմտ. սանս. नारङ्ग nāraṅga, որ կրճատուած է नागरङ्ग nāgaraṅga «նարինջ» բառից. կազմուած է ձևապէս नाग nāga «պղինձ» և रङ्ग raṅga «հրանգ, գոյն» բառերից, որով «նարինջ» նշանակում է բուն «պղնձագոյն»։ Ժմ գ. բուն նարինջը Արաբների միջոցով անուան հետ Հնդկաստանից անցաւ Արեմտեան Ասիա և այստեղից էլ տարածուեցաւ Եւրոպա։ Այսպէս յառաջացան իրարից փոխառութեամբ պրս. نارنگ nārang, արաբ. نارنج nāranj (ըստ որում արաբերէնում չկայ g), բելուճ. nērinj, nārunj, քրդ. nārinj, աֆղան. nāranj, վրաց. ნარინჯი նարինջի, լազ. araranži, հինդուստ. naranji, յն. νεράντζιον, ալբան. naranč, հունգ. narancs, սպան. naranja, laranja, իտալ. arancia, ֆրանս. orange, ստ. լատ. narantium են։ Հյ. նարանճ ձևը տարադարձուած է արաբականից։—Հիւբշ. 271։

Ուղիղ մեկնեց նախ ԳԻ։—ՆՀԲ յիշում է պրս. թրք. լտ. են ձևերը։ Peterm. 26 պրս. nāranj: Böttich. ZDMG 1850, 358, 178 սանս. nāraṅgā: Müller SWAW 38, 580 փոխառեալ է համարում։ Տէրվ. Altarm. 23 պրս. ձևի հետ։—Նարինջ բառի ծագման և բոյսի նախնական հայրենիքի վրայ խօսած են Pott և Rödiger ZKM 7, 114, Wilson, Fournier MSL 1, 422, Hehn, Kulturpflanzen[6], 436:

ԳԻՒՂ.—Երև. նարինջ «գոյնը», Գոր. Ղրբ. Մշ. Ջղ. Շմ. նարինջ, Սլմ. նուրինջ, Սվեդ. լառանջ (վերջինիս մէջ ձայնափոխութիւնը ճիշտ այնպէս է, ինչպէս սպան. naranja, laranja)։ Նոր բառեր են նարնջաքոլ «մի տեսակ ծաղիկ», նարնջի Մշ. Վն. «նարնջագոյն», Սվ. «նռնագոյն մի խաղող», Ղրբ. «ներկատու մի փայտ», Երև. «մի տեսակ դեղձ»։ Արդեօք այստե՞ղ է պատկանում նաև Ոզմ. նարէնջ «ներկուած թել»։

*ՆԱՐԿԱ «մի տեսակ թմրեցնող ձուկ, թրմբաձուկ. լտ. torpedo» Փիլ. լիւս. 139. գրուած է նաև նեռկէս (կարդա՛ նարկէս) Վեցօր. 138։

=Յն. νάρκα, νάρκη, νάρκης «թմբրաձուկ». ծագում է ναρκόω «թմրեցնել» բայից։—Հիւբշ 367։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՆԱՐԿԵԼ. անասոյգ բառ. մէկ անգամ ունի Պզատ. տիմ. 144. «Իբրու ճարտարաց նիւթս առաջի մեզ եդաւ՝ զսեռք պատճառացն նարկելով». բնագիրն ունի οἷα τέκτοσιν ἡμῖν ὕλη παράκειται τὰ τῶν αἰτίων γένη διυλισμένα. ուր մեր բառի համապատասխանն է διυλα-

μένος (անց. դերբ) «հիւղէի՝ այն է նիւթի վերածեալ»։ ՆՀԲ մեկնում է «գուցէ նիւթարկել», ՋԲ, ԱԲ չունին։ (Բնագիրը տե՛ս Platonis opera, Paris 1883, հտ. II, էջ 232. տող 15—16)։

*ՆԱՐՃԻՍ կամ ՆՈՃԷՍ «նարկիս ծաղիկը» Բժշ. Վստկ. 142 (գրուած նոճէս). ունի միայն ՀԲուս. § 2188 և § 2230։

=Արաբ. نرجس narǰis «նարկէս» ձեւից. աւելի մանրամասն տես ներգէս բառի տակ։—Աճ.

*ՆԱՐՄ «հանդարտութիւն, մեղմութիւն». այս ձեւը գիտէ միայն ԱԲ. ըստ իս պէտք է ուղղել ներմ «հանդարտ, մեղմ», որից ներմաշարժ «մեղմաշարժ, հանդարտագնաց (գետ)» կազմանկտ. և գտ. ներմանազուն (Գնձ. Ղրբ. Մշ.) «քնքոյշ, նրբին»։

=Պհլ. نرم narm «փափուկ, կակուղ», պրս. نرم narm «կակուղ, մեղմ», քրդ. nerm, գազա nemr, աֆղան. բելուճ. narm «կակուղ», սանս. namrá- «խոնարհ, ակնածալի» (Horn § 1028)։—Աճ.

ՆՀԲ ունենալով միայն ներմաշարժ ձեւը, մեկնում է իբր «բառ անյայտ, թերևս ներմաշարժ կամ նայաշարժ, իբր հոսանուտ կամ տարմաշարժ «բազմայոյզ»։ ԱԲ դնում է ներմ՝ պրս.։ վերի ձեւով մեկնից Աճառ. Արարատ 1910, 269։

*ՆԱՐՄՈՒՇԿ, որ և ներգմուշկ, ներշիշ «մի տեսակ բոյս». Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2189։

=Պրս. نارمشک nārmušk (որ և anārmušk) «է սա դեղ ինչ առ բժիշկս ծանուցեալ և է սերմն ինչ կարմրերանգ և ունի ի միջի իւրում դոյն ինչ կանաչութիւն և դոյ ի սմա զօրութիւն՝ մերձ ի զօրութիւն այնր դեղոյ, որ կոչի սիւնպի՛ւլի հինտի» ԳԴ. (այս բացատրութեան հետ ճիշտ համապատասխան է Ամիրտ.) բառացի նշանակում է «նռան մուշկ»։

Ուղիղ մեկնից ՀԲուս. (բայց սրան իբր հոմանիշ դրած մարգիմուշկ բառը բոլորովին ուրիշ է և նշանակում է «մրկընդեղ»)։

*ՆԱՐՏ «թավլու խաղի տախտակը կամ խաղը» Ոսկիփ. Տաթև. տմ. 232. գրուած ներդ Հայել. 123։

=Պրս. نرد nard՝ նոյն նշ. որից փոխառեալ են նաև արաբ. nard, վրաց. ნარდი ներդի. բուն աղբիւրն է սանս. नर्द nard «խաղի քուէ, զար», որ ծագում է nard «բառաչել, մռնչել, գոչել» բայից (Böhtlingk, Sans. Wört. 4, 63 ա)։ Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 693 ասում է թէ այս խաղը Արտաշիր Բաբականն է հնարել, որ յետոյ աւելի է զարգացրել Բուզուրջմիհր. այս պատճառով էլ կոչւում է նաև نردشیر nardšīr: Այս խաղի հնարումը Ֆիրդուսին վերագրում է Բուզուրջմիհրի, որ Նուշիրվանի իմաստասէրն էր, և անձամբ տարաւ Հնդկաստան (Շահն. հտ. 6. էջ 312՝ Mohl-ի փոքրագիր հրատարակութեան)։—Հիւրշ. էջ 272։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։ Böttich. ZDMG 1850, 179, 359, Arica 76, 246 դնում է սանս. narditā ձեւի դէմ (որ չգիտէ Böhtlingk 4, 63). իսկ Lag. Arm. Stud. § 1598 պրս. nard։

ԳԻՒ.—Թրև. Ղրբ. Տփ. նա՛ռդի, Շմ. նռռդի (նոր փոխառեալ վրացերէնից), ՋԲ. ներդ։ Արևմտեան գրականում ընդունուած է նարտ, որից և նարտախաղ։ — Ղրբ. նարթախթա «նարտի տախտակը»։

*ՆԱՐՏԱՆ. մի տեսակ բոյս, որի ծաղիկը յաճախ յիշում է Բժշ. ըստ ՀԲուս. § 3373։

=Պրս. ناردین nardīn «յակինթ ծաղիկը»։—Աճ.

ՆԱՐՕՏ, ու, ի-ու հլ. «գոյնզգոյն թել կամ հիւսուածք» Դատ. ի. 30. Եզեկ. իէ. 16, 25. Ագաթ. Բուզ. Մանդ. որից նարօտաներկ «նկարկարար, թել ներկող» Սերեր. Վեցօր. 152. նարօտաներկութիւն Կանոն.։

ՆՀԲ յիշում է արաբ. նիյր «գոյնզգոյն նկարել»։ Տէրվ. Նախալ. 102 մեկնում է *ն-արակ-ա, ինչպէս ունինք ն-երկ, երկուան էլ ն մասնիկով հնխ. rag «ներկել» արմատից. համմտ. սանս. raj, rakta «գունաւոր»։ Հիւնք. նօտար բառից։ Թիրեաքեան, Արխահայ բռ. 286 պրս. نارو nārū, որ սակայն թէ՛ ըստ ԳԴ և թէ՛ ըստ Բուրհանի նշանակում է «երգեցիկ

թռչուն. 2. մի տեսակ հիւանդութիւն» և հետևաբար բնաւ կապ չունի մեր բառի հետ։ Պատահական է վրաց. ნავრთի «մի տեսակ ծառ»։

ԳԻՒ.—Ախց. Կր. Մրղ. Շմ. Սլմ. Վն. նաւ-*ron, Երև. Ալշ. Ննխ. Սեբ.* նաւօդ, *ՋՓ.* նաւ-*ոդ, նաւոդ, Ագլ.* նա՛ռուտ, *Մշ.* նաւօդիզ, *որոնք նշանակում են «պատկի ժամանակ հարսի ու փեսի վիզը կապած գոյնզգոյն թելը»։*

+ՆԱԻ, ու, ի–ա *հլ. «մեծ կամ փոքր նաւ, լաստ, կուր, մակոյկ, պատերազմական ցրտկանաւ» ՍԳր. «աւազան, տաշտ (գինու համար)» Կանոն. որից նաւել «նաւով ճամբորդել» ՍԳր. Ագաթ.* նաւոդ *Գ. Թգ. Բ. 27. Եւս. քր.* նաւակ *«փոքր նաւ» Մրկ. գ. 9. «բաժակ» Փիլ.* նաւակիկ *Ոսկ. մ. գ. 4.* նաւագնացք *Վեցօր.* նաւագործ *Կոչ.* նաւակալ *«մի տեսակ ձուկ» Վեցօր.* նաւանանգիստ *ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. ա. 1, 16.* նաւապետ *ՍԳր. Եւս. քր.* նաւաստի *Փիլ. Պիտ.* նաւուղիղ *Առակ. իգ. 34.* ծանրանաւել *Գծ. իէ. 7.* գերանաւել *Անան. եկեղ.* բացանաւել *ճառընտ. նոր դրականի մէջ՝* առագաստանաւ, բեռնանաւ, ականանաւ, նակա–ականանաւ, ցոկանաւ, փոխադրանաւ, ռազմանաւ, շոգենաւ, շոգենաւակ, մարտանաւ, յածանաւ, սուզանաւ, օդանաւորդ, նաւախումբ, նաւամատոյց, նաւային, նաւաշինութիւն, նաւաշինարան, նաւապաշարում, նաւավարձ, նաւարան, նաւարշաւ *են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* nāu- *«նաւ» արմատից. սրա ժառանգներն են՝ սանս.* 𑀦𑀸𑀯 nāu- *«նաւ, մակոյկ», զնդ.* 𐬥𐬀𐬯𐬎 nava- *(որ գոնւում է* navāza- *«նաւաղ, նաւավար» բառի մէջ), հպրս.* nāviyā *«նաւաւորմիղ», պհլ.* nāv *(գոնւում է* nāvīčak *«ջրանցք», նāvtāk «նաւարկելի» բառերի մէջ), պրս.* ناو nāv *«նաւակ, ջրանցք»,* nāvdān *«ջրանցք»,* nāxuda (<*nāvxudā) *«նաւապետ», քրդ.* nav *«նաւակ, մակոյկ, ջրանց, խողովակ», օսս.* nau, navā, *յն.* ναῦς, *յոն.* νηῦς, *դոր.* νᾶς, *լտ.* nāvis *(իտալ.* nave, *սպան.* nave, *ֆրանս.* navire), *հիսլ.* nōr, *հիսլ.* nau, *փոխառութեամբ նաև՝ լատինականից հրդ.* nāwa, *մրդ.* nāwe, *գերմ. գտ.* Naue, *լհհ.* nawa, *խբրվաթ.* nava, *և մինչև անգամ ոչ-հնդևրոպական լեզուների մէջ՝ հունգ.* náva, *թրք.* ناوی navi *«մեծ նաւ» (վերջինը իտալ.* nave *ձևից՝ ըստ* Gustav Meyer, Türkische Studien SWAW 1893, 128). *պարսկերէնից՝ արաբ.* نواخذه navāxiδa *«նաւապետ» (պրս.* ناوخدا navxudā *հոմանիշից փոխառեալ՝ ըստ Կամուս, թրք. Թրգմ. Ա. 739)։ Բալթիկ-սլաւական ճիւղի մէջ հնխ.* nāu- *ձևը կորել է՝ փոխանակուելով մի բառով, որ նշանակում է «ծառի կոճղի մէջ փորած մակոյկ»* (Meillet BSL № *85, էջ* xliij)։ *Հայերէնը բառը ունի այնպիսի մի ձև, որ կարող է թէ՛ բնիկ և թէ իրանական փոխառութիւն համարուիլ, բայց ի նկատի ունենալով բառի հնութիւնը և ճոխ դործածութիւնը՝ պէտք է բնիկ համարել* (Horn § 1024, Boisacq 658, Walde 509, Ernout-Meillet 625, Pokorny 2, 315)։ *—Հիւբշ. 17, 201։*

Schröder, Thesaur. 58 *հայերէնից է դնում յն. և լտ. ձևերը։* Klaproth, Asia pol. 104 *տալիս է ուղիղ մեկնութիւնը։ Գ. պրս.* nāv *բառից։ ՆՀԲ յն. լտ. վրաց. և սանս. ձևերը.* նաւ *«տաշտ» բառի հետ համեմատում է պրս.* նավէ *«կոնք», նավիյտէն «փորել, մէջքն», իսկ* նաւտաշխ *համարում է նայաբաշխ։ Ուղիղ համեմատութիւններ են անում* Peterm. 30, 33, Windisch. 23, 25, *Եւրոպա 1849, 200,* Böttich. ZDMG 1850, 359, 180, Arica 80, 340, Müller SWAW 38, 572, 589, Pictet 2, 180, *Տէրվ. Նախալ. 37, 91 են։ Հիւբշ.* Arm. Stud. § 216 *բնիկ է համարում բառս և փոխառութիւնը կասկածական է գտնում. իսկ* Arm. Gram. *201 դնելով իրանական փոխառութեանց շարքում՝ էջ 17 յայտնում է որ կարող է նաև բնիկ լինել։*

ԳԻՒ.—Ալշ. Մրղ. Ննխ. Ռ. Սչ. Զղ. Տփ. նավ *«նաւ» հնից են.— իսկ նոր գաւառականներում Տփ.* նավ *«ցեխ կրելու տաշտակ», Երև. Կր. Մշ. Շմ. Սլմ.* նավ, *Ագլ. Ղրբ.* նօվ *«ջաղացքի խողովակ» փոխառեալ են պրս.* ناو nāv *«ջաղացքի խողովակ, ջրանցք» բառից, ինչպէս են նաև թրք.* nav, *քրդ.* nāv *հոմանիշները։—Վերջին նշանակութիւնից ձե-*

ւացած նոր բառեր են նաւագլուխ, նաւաճիլ, նաւքաշ:

Փիլ.—Վրաց. ნავი նավի «նաւ» Մաթ. գ. 21. Գծ. ի. 13, որից նանავო սանավո «նաւարկելի», նանავე սանավե «նաւագին», მენავე մենավե «նաւապետ, նաւաստի», ნავტოკი նավտիկի «տկլաստա», მენავტოკე մենավտիկե «տկլաստի տէրը», թուշ. ნავ նավ «նաւ», მენავ մենավ «նաւավար», ուտ. nâv «նաւ, նաւակ»:

*ՆԱԻԱՁ, ի–ա հլ. «նաւավար» Պիտ. Փիլ Յայտ. ժը. 17. (սխալմամբ բառս կարծուելով ազն բառից բարդուած՝ հոլովուած է յգ. ուղ. նաւազուն, սեռ. տր. նաւազանց):

=Պհլ. *nāvāz հոմանիշ ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց նոյնն են հաստատում գնդ. navāza- «նաւավար», սանս. nāvājá- «նաւավար» ձևերը, ածանցուած nāu «նաւ» բառից՝ az-, aj- «վարել, քշել» բայով, որի համապատասխանն է հյ. ածել. համմտ. գաւազան, խաւազան և յն. ναυαγός «նաւավար»:—Հիւբշ. 201:

Առհասարակ համարւում էր նաւ բառից կազմուած՝ հայերէնի մէջ, վերի ձևով մեկնից Հիւբշ. ZDMG 35 (1881), 662 և Arm. Stud. § 216:

ՆԱԻԱՁԵԼ «ծածկել, թագցնել». մէկ անդամ ունի Տիմոթ. կուզ, էջ 164. «Ոչ զօրեալ նաւազել զըստինքեանն կիղծաւորութեամբ»:

=Կազմուած է և «մէջ» նախդիրով՝ աւազ բառից. համմտ. ընդաւազել «հողի՝ աւազի տակ թաղել» Նղիշ. Կղնկտ.:—Ա.Ճ.

Նորագիւտ բառս երևան է հանում Ա.Ճառ. Նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ էջ 91. բայց մեկնութիւնը չունի:

*ՆԱԻԱԿԱՏԻՔ (սեռ. –տեաց) «բացման հանդէս. 2. տարեդարձ» ՄԳր. Եւս. քր. և պտմ. «տօնի նախորդ օրուայ կէս ուտիսը» Տօնակ.:

=Բարդուած է նաւա և կատի–Ք բառերից. առաջինը գնդ. navak, պրս. nav, nō «նոր» բառն է. իսկ երկրորդը՝ որ վն. և ոգմ. առանձին գործածական է, սոյգ մեկնութիւն չունի դեռ. ամբողջը իրանեան փոխառութիւն է, որովհետև կարելի չէր հայերէնի մէջ օտար nava- բառով բարդութիւններ կազմել:

Հները՝ իբրև օտար բա՞ռ՝ թարգմանում են «նորոգութիւն կամ ուրախութիւն». այսպէս՝ «նաւակատիք նորոգութիւն թարգմանի կամ ուրախութիւն. նաւակատիսն նորոգումն թարգմանի. եւ զի նաւակատիս անուանէ, զնորոգութիւն բնութեանս մերոյ յայտնէ». (Տօնակ, բստ Ածաբ. ի նոր կիր. և Շար.)—«նաւակատիսն նորոգումն թարգմանի». (Տաթև. ամ. 477).—«Իսկ նաւակատիս՝ ոչ ուրախութեան կամ նորոգումն թարգմանի». (Տաթև. ձմ. ճղ. և հարց. 509); — «նաւակատիքն նորոգութիւն թարգմանի». (Օրբ. Հակաճռ. է. 96);—Ինճիճեան, նղանակ Բիւզ. 1819, 150 հյ. նաւ (բստ յն. լտ. նաւ «այն մասն եկեղեցւոյ՝ ուր կայ ժողովուրդն») և կատարել բառերից և կամ նախակայաթիռ կամ նախախայրիճ, նախանաւատիկ, նորախայրիճ, նորանաւատիկ: ԳԴ պրս. navgān «նաւակատիք, այսինքն հանդէս ոչնի՝ վասն կատարման շինուածոյ տաճարի են»: Ինճիճեան, Հընախ. Գ. 18 հյ. նոր բառից՝ որ լինում է բարդութեան մէջ նաւ: ՆՀՔ «որպէս նորակերտիճ, նոր կերտել, բստ պրս. nav kardan, navgān, զի և բստ յն. ասի εγκαίνια «նորոգութիւն»: Հ. Ա. Բագրատունի, Զարգաց. քեր. 686 և 691 պրս. nav «նոր» և հյ. կատարել բառերից: Մորթման ZDMG 26, 574 բևեր. nulus: Հիւբշ. ZDMG 35 (1881), էջ 664 առաջին մասը գնում է պրս. nav, իսկ երկրորդ մասը անյայտ: Տէրվիշ. Մասիս 1882 հոկտ. 5 և հեզու 121 նշանակում է բուն «նորոգ կատարումն»: գալիս է նաւա «նոր»+կատ (արմատ կատ–ար–ել բայի. համմտ. մեծ–ար–ել, զարդ–ար–ել) ձևերից: Հիւբշ. Arm. Gram. 202 կազմուած ի մասնիկով պհլ. *navakat-<գնդ. *navakata- ձևից, որ գալիս է nava- «նոր» և գնդ. kata-, պհլ. kat, katak, պրս. kad, kada «տուն» բա-

ուրից։ Հիմնք. սանս. nava, *պրս.* nav *և* κατοικία «բնակութիւն» *բառերից։*

ԳԻՒ.—Ախց. Կր. Ջղ. Տփ. նավակատիկ, *Երև.* նաւակատիկ, նօվակատիկ, *Մրղ.* նավակատիկ[1], *Շմ.* նավակատիգ, *Ջթ.* նավագադիֆ, *Խրբ.* նավագադիֆ[1], *Հճ. Ննխ. Պլ. Ր. Սեբ. Սչ.* նավագադիգ, *Ասլ.* նավագադիֆ, նավագադի*, *Մկ.* նովոկոտիկ, *Տիգ.* նովոգոդիֆ, *Ադլ.* նըվըկա՛տիկ[1], *Գոր.* նըվըկա՛տիկ, *Ղրբ.* նըվըկա՛տրէ՛գ[1], *Սլմ.* նավկատիկ[1], *Ալշ. Մշ.* ավակադիգ, *Վն.* կատիկ, *Ոզմ.* կատէ՛կ.—*իսկ Վանում ունինք և* աւագ-կատիկ «Զատկի նաւակատիքը», *իբր «աւագ կամ մեծ նաւակատիք»։*

**ՆԱԻԱՍԱՐԴ, ի–ա Հլ. «Հայկական տարու առաջին ամիսը՝ որ անշարժ տոմարով տևում է օգոստ. 11—սեպտ. 9» Բուզ. Կորիւն. Եղիշ. «ամանոր, նաւասարդի մէկը=օգոստ" 11 և տարեմուտ հայկական թուականի» Ագաթ. աստում է նաև ուղ.* նաւասարդի *Տոմար. Վանակ. տարեմտ.։*

*=Իրան. **navasārd *հոմանիշից, որ բարդուած է* nava- «նոր» (=զնդ. nava-, *պրս.* نو nav, *աֆղան.* nau, *քրդ.* nu) *և* sārd «տարի» (=զնդ. 𐬵𐬀𐬭𐬎 sarəδa- «տարի», *օսս.* särd «ամառ», *սանս.* शरद् çarad- «աշուն, տարի», *պրս.* سال sāl «տարի», *քրդ.* sār, sāl «տարի») *բառերից։ Նոյն իրանեան բառի շարունակութիւնն են սղդ.* nausarδ «առաջին ամիսը», *խորազմ.* nausarǰē (*տե՛ս* Nöldeke, Pers. Stud. 1, 34), *իսկ նրանից են փոխառեալ ասոր.* ܢܘܣܪܕܝܠ nausardīl «ամանոր. նոր տարի» (Brockelm. Lex. syr. 202) *նեստորեան* nausard-el «հոգեգալստեան ևօթներորդ կիրակին, ամառնամուտ», յունացեալ (և ո՛չ լիւդիական. *Համմ.* G. Meyer IF 1, 326) νέον σάρδιν «նոր տարի», *թալմ.* נוסרדי navsardī (*ըստ* WZKM *8, 366*)։ *Համմ. նաև պրս.* نوسال navsāl «նորատի», *պհլ.* 𐭭𐭥𐭮𐭠𐭫 sālak «ծնր», *հյ. երիտասարդ և աւսարդ բառերը։ (Իրան.* sārd *բառի ծագման մասին տե՛ս* Meillet MSL 23, 146, *վերի ձևերի մասին* Horn § 691): *—Հիւբշ. էջ 202։*

Հներից Վանակ. տարեմտ. մեկնում է. «Նաւասարդ, նոր ասի, այսինքն ըսկիզբն տարւոյ կամ ա՛րդ է ժամանակ նաւելոյ...» և համարում է Հայկի առաջին որդու անունը։ Տաթև. ձմ. ա. մեկնում է «նոր, այսինքն սկիզբն տարւոյ» միանգամայն Հայկի որդիներից մէկը և վերջապէս «նաւասարդի զնաւարկութիւն ասէ, յորժամ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»։ Նոյնպէս Տաթև. Հարց. 200 «Նոր ասի, այսինքն սկիզբն տարւոյ. և դարձեալ՝ այժմ է եղանակ նաւելոյ ի վերայ Ովկիանոս»։ Առեփ. լեհ. համարում է յանուն Նաբոնասարայ տոմարագէտ արքայի Բաբելացւոց։ Ինճիճեան, Հնախ. Գ. 18 նաւասա աւարս, *այսինքն «նաւելը վերջացաւ» (իբր թէ ի յիշատակ ջրհեղեղի. Համմ. Մն. ը. 13. «Յամսեանն առաջնում, որ օր մի էր ամսոյն՝ նուազեաց ջուրն յերեսաց երկրի և եբաց Նոյ զձեղուն տապանին». այդ օրը դարձաւ նոր տարի, որ և մնաց հայոց մէջ՝ մինչև այժմ կենդանի. իրար վրայ ջուր ցանելը և աղաւնի թողնելը Նոյեան յիշատակներ են)։ ՆՀՐ նոր այս արդ կամ արտ. և կամ որպէս պրս.* նէվ էսիր, *այս է «նոր ժամանակ կամ եղանակ»։* Brosset JAs. *1832, էջ 528—9 այս և աղուան.* նավասարդոս *թուին նշանակել «վ։րանորոգում», իբր* nou zardi, *բայց որովհետև հոոի և սահմի վրացերէն են, ուստի այստեղ էլ պէտք է տեսնել վրաց.* երբի *«մէկ» բառը (ուզում է ասել (նաւաս)-*երբի*)։ Ազգասէր 1846, № 53, էջ 1* նաւ հաւս արդ։ Böttich. Rudim. *14 լիւդ.* σάρδις, *սանս.* çarad, *զնդ.* sarəδa, *սիւնկեղ.* σάρος *ձևերի հետ։ Ուղիղ են մեկնում* Böttich. ZDMG 1850, 359, 181, Arica 26, 86, Lag. Urgesch. 1074, Müller SWAW 41, *էջ 154,* Justi. Zendsp. *292, Հիւբշ.* KZ *23, 403, Էմին, Հայ հեթ. կրօնը (Բրգմ. Յոյս 1875, 294), Տէրվ.* Altarm. 46 *են։* Sayce, The cun. inscr. of Van *(1882), էջ 487* –սարդ *համարում է խալդիական* šardis «տարի» *բառից*

փոխառնալ Ոմն, Աւետաբեր 1885, էջ 83 նոր սար «լեռ», որ է դար, իբր նոր դար:

ԳԻՒ.—երև. նավասարք, *Ագլ.* նվա՛սադ, *Ղրբ.* նվա՛սարք «նաւասարդի մէկը, որ մինչև հիմայ ոմանք կ՚ունին. տարւայ մէջ այսօ՛ր մի-այն եփում են հերիսան, ինչպէս որ Պօլսում յունվարի 1-ին եփում են անուշապուրը», *Սլմ.* նավասարք, նավբսարք «նոյեմբերի 13-ը, երբ նախրաթողն է և երբ վարձուած ծառաները արձակւում են», *Հճ.* նավասօյդ՛, նավասօրդ՛:

ՓՈԽ.—Աղուաներէն նաւասարդուլ *(ըստ վանակ. տարեմ. և Տաթև. հարց. 201 բուն նշանակում է «նաւասարդեցի» և Հայկի թոռներից մէկն էլ).—գրուած է* նաւասարդուս *կամ* նաւասարդոս *(ձեռ. Պարիզի Ազգ. մատենաց. № 114,* fol. 43, *ըստ* Dulaurier, Rech. s. la Chron. arm. 1859, *էջ 167); Սալմաստի թուրքերի մէջ էլ գործածական է* նավասարք *ձևով և «նոյ" 13, նախրաթող» նշանակութեամբ:*

ՆԱԻԱՐՏԱԿ *«ծովահէն». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան: Իր աղբիւրն է անշուշտ Վարդան Յունանեան, Ձեռագութիւն 1671, էջ 327, ուր Յունանեանի շինած նորակերտ բառերի մէջ կայ նաև* նաւարտակ՝ *վերի նշանակութեամբ: Ուստի պարզ է որ կազմուած է նաւ բառից, բայց անծանօթ է* -արտակ:—*Բառ. երեմ. էջ 233 դիտէ* նաւարտակ *«որ ծածկել ինչ», որով պէտք է հասկանալ* նաւարտան *«ծածկոց»: Ըստ այսմ գործ չունի նախորդի հետ:*

ՆԱԻԳՈՒՆԱԿ *«տեղեակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 233:*

*ՆԱԻԹ, ի, ո *հլ. «մի տեսակ դիւրավառ ձիւթ, տճկ. նէֆթ եաղը, լտ.* bitumen, pix» *ՍԳր. Եւս. քր. Խոր. աշխ. Կաղանկտ. (արևմտեան գրականում բառս նշանակում է «նաւթային իւղ,* naphte», *իսկ արևելեան գրականի մէջ «քարիւղ,* pétrole»*). գրուած է նաև* նափաթ *Մխ. առ 339 (այլ ձ.* նֆաթ), նֆատ *Վրդ. պտմ. տպ. Վենետ. էջ 132,* նֆատ *Հրաբ. էմինի, էջ 172, նաև Մաղաք. աբ. 40 (սխալ տպուած որպէս փայտ, որի դէմ տպ. Երուսաղէմի, էջ 55* Սապ նֆատ): *Որից* նաւթել *(գրուած* նաֆտել*) «քարիւղով ղօծել» Մին. Համդ. 60, արդի գրականում՝* նաւթային, նաւթարդիւնաբերութիւն, նաւթարդիւնաբերական, նաւթահանք, նաւթահոր, նաւթաբեր, նաւթահող, նաւթաշրջիկ *են:*

=*ՊՀլ.* *naft *ձևից, որի հետ հմմտ. պրս.* نفت naft *«նաւթ, սև նաւթ, քարիւղ». սրանից են փոխառնալ նաև արաբ.* نفط naft̤, *թրք.* neft, *քրդ.* nefte, *ասոր.* ܢܦܬܐ nafta, *յն.* νάφθα, *լտ.* naphtha, *վրաց.* ნავთი նավթի, ნაფთი նափթի, *թուշ.* ნავთ նավթ. *գերմ.* Naphta *են համանիշները* (Horn § 1035)*: Իրանեան բառը կցւում է ընդ.* napta *«թաց, խոնաւ» ձևին և սրա միջոցով հանւում է հնխ.* enebh-, nebh-, embh-, m̥bh- *«խոնաւ, ջուր, շոգի, ամպ» արմատից, որի ածանցները տե՛ս նամ և ամպ բառերի տակ* (Pokorny 1, 131 *և* 2, 693)*:—Հիւրշ. 202:*

Schröder, Thesaur. 46 *դրաւ. արաբ.* naft̤*-ից: ԴԴ պարսկերէնից: ՆՀԲ և* Böttich. Arica 23, 65 *պրս.* naft *են: Հիւնք. յն.* ναῦθη (?) *և տճկ.* նէֆթ:

ԳԻՒ.—Ագլ. Ղրբ. Շմ. նօթ *«նաւթ, քարիւղ» գալիս են հին հյ.* նաւթ *ձևից և ըստ օրինի աւ երկբարբառը վերածել են օ. ըստ այսմ էլ Բառ. երեմ. էջ 241 գրում է* նօթ: *Նոր փոխառութիւն են Երև. Տփ.* նաֆթ, *Ջղ.* նաֆտ, *Ախց. Կր. Սլմ. Տիգ.* նոֆթ, *Պլ.* նէֆթ, *Մրզ.* նոփտ *և վերջապէս Ալշ.* նըֆտ, *Մշ.* նըֆթ. *(վերջին երկուսը նշանակում են «լուցկի»)*:—*Նոր բառեր են* նօթաներագ, նօթոտել, նօթոտուիլ, նօթոտ:

ՆԱԻՐԱ *«սապատուկ, ձիւնածածկի արմատ». դիտէ միայն ԳԲ:*

*ՆԱՓԱԿ *«մշկան պորտ» Խոր. աշխ.:*

=*ՊՀլ.* nāfak *«պորտ» բառից. հմմտ. պրս.* نافه nāfa *«մշկան պորտ», արմատն է ընդ.* نافجه nāfǰō, *պՀլ.* nāfa, *պրս.* نافی nāfī, *որ է «պորտ»: Նոյնից փոխառնալ ունինք նաև արաբ.* نافجة nāfija *«մշկան պորտ» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 446), ասոր.* ܢܝܦܓܐ nīfgah *«մշկան պորտ»: Յետին հայերէնում ունինք ուղղակի պարսկերէնից փոխառեալ* նաֆայ. *ինչ. Նոր վկ. էջ 353 (Գր. Աղթա-*

մարցու տաղի մէջ)՝ Ուր մուշքն է պատուական, երէոյ նաֆայ։—Հիւրշ. 203։

Ուղիղ մեկնեց նախ Հիւրշ. Persische Stud. *էջ 100, 187։*

Նափինգ *տե՛ս Ափինդ։*

***ՆԱՓՈՐՏՆ**, ն *հլ.* (-տան, -տամբ, -տունք) *«վերարկու, փիլոն, շուրջառ» էր ընդ եղբ. էջ 44. Եփր. թգ. 440. Մծբ. Ոսկ. ա. տիմ. 67. որ և* նամփորտն *(Ոսկ. ըստ ՆՀԲ),* նամփորտ *Մաշտ.* նափորտ *Վրք. հց. Փարպ. Խոր. մատ. 147 (զվտաւակն պճղնաւոր ի վերայ այնորիկ, զոր այժմ կոչեմք նափորտ... զպճղնաւոր վտաւակն, այսինքն զնափորտն). որից* նափորտանի *«շուրջառներ» Շնորհ. նդես.* նափորտապատ *Շար.=Պտրգ. 622=ժմ. 906.* նափորտիկ *Մեկն. ղկ. Տօնակ. (սեռ.* նափորտկան *Վրք. հց. բ. 63).* լայնափորտ *(իմա՛* լայնանափորտ*) ԱԲ.* մաշկանափորտ *Բուզ.։*

=Փոխառեալ է յն. մի ձևից, որի ճիշտ համապատասխանը այժմ կորած է։ Բառի սկիզբն է յն. ἀναφορά, որ գալիս է ἀνα-φέρω «վեր հանել, կրել, տանիլ» բայից և նշանակում է «բարձրացում, վերաբերութիւն, զոհ առ Աստուած, Հաղորդութիւն». վերջին իմաստը չի գտնւում հին յունարէնում բնականաբար, բայց ունինք միջին յունարէնում (Sophocles 156), *ուր նախաձայնի կրճատմամբ կայ նաև ναφορά ձևը, որից փոխառեալ են հսլ.* anafora, *բուլգար. գւռ.* navára, *սերբ.* nāpora, nävora (Berneker 28)։ *Նոյնից է դարձեալ ասոր.* ܐܢܐܦܘܪܐ annāfūrā *«նուիրաբերութիւն, պատարագ, պատարագի աղօթք»։ Բայց յոյն բառը ունեցած պէտք է լինի նաև «վերարկու, ծածկոց» իմաստը, ինչպէս ցոյց է տալիս* ἀναφορτίζομαι *«բեռնաւորուիլ, կռնակի կամ ուսերի վրայ առնել»* (Λεγρανδιου Λεξ. νεοελλ. και γαλλ. *էջ 83 բ), և որից յառաջացած է «սկիհի ծածկոց» նշանակութիւնը։ Այս վերջին նշանակութիւնը կայ արդէն հին ասորերէնում և շարունակւում է այսօր էլ Լիբանանի արաբախօս քրիստոնեաների բարբառում, ուր ունինք* nāfûr *«սկիհի ծածկոց քող և մաղզմայ»* (Féghali, Etude sur les emprunts syr. dans les parlers arabes de Liban, MSL 21, 281)։ *Թէ նախապէս «վերարկու» նշանակող մի բառ կարող էր յետոյ դառնալ «մաղզմայ», համմտ. լտ.* palla *«վերարկու», որ եղել է ֆրանս.* pale *«սկիհի մաղզմայ»։ Հայերէնը փոխառեալ է այնպիսի մի գաւառական ձևից, որ զուրկ էր նախաձայն a-ից (ինչպէս բիւզ. ναφορά և Լիբանանի արաբ. գւռ.* nāfûr*) և ունէր դեռ «կրօնաւորի ծածկոց» նշանակութիւնը։ Այդ գաւառականը կարող է լինել յոյն, բայց աւելի հաւանաբար ասորական էր։ — Այս բոլորի հետ նոյն է վրաց.* ნაფერტი ნափերտի, ნაფერტები ნափերտების, *որ Ջուբինով[2] մեկնում է «клобукъ, увясло, діадема, վեղար, ապարօշ, խոյր» և որ չեմ կարող հայերէնից փոխառեալ դնել՝ ե ձայնի և իմաստի զանազանութեան պատճառով։—Աճ.*

ՆշՀԲ « ի դէպ դայ որպէս յծ. զանազան բառից հյ. և յն.»։ Հիւնք. փոռանկնալ *բառից։ Գաթրճեան, Պտրգ. 740 հանում է յն.* ἀναφορεῖον *ձևից։ Հացունի, Պատմ. տարազի 362 յն.* ἀναφορτίζομαι *«բառնալ, յուսս»։ Պատահական նմանութիւն ունին վրաց. և ինգ.* նաբադի, սվան. նաբյադ *«վերարկու»։*

***ՆԱՔԱՐԱԿԻՏ** *(սեռ.* -կտի*) «փոքրիկ մի դրամ» Մաթ. ժ. 26. Մրկ. ժբ. 42. Ոսկ. մ. բ. 9. Եփր. թգ. 362. (իսկ Հին բռ. ունի* աճառակիտ *«չափ գարւոյ միոյ»)։*

=Պհլ. անյայտ մի ձևից, որի հետ նոյն են բուդդայական սոգդ. nakaratākə *(գրուած* n'krt'k*) և քրիստոնէական սոգդ.* nqṭy *«արծաթ» (տե՛ս* Gauthiot, Gram. sogd. *էջ 170 և* Benveniste MSL 23, 128)։ *Հակառակ վերջին բաղաձայնների յետևառաջութեան՝ նմանութիւնը անժխտելի է։ Տարբերութիւնը կարող էր բացատրել կա՛մ պահլաւերէնով և կամ հայերէնի մէջ ժողովրդական սուղաբանութեամբ (համմտ.* ակաճակիտ*)։ Չգիտեմ թէ վերի ձևերի հետ որևէց կապ ունի՞ն արաբ.* نقرة nuqra, *յդ.* نقار nuqār *«հալած ոսկու կամ արծաթի կտոր» (Կամուս, Թրք. Թրդմ. Բ. 131) և* نقد naqd *«դրամ», որից ռմկ.* նաղդ *«կանխիկ»։—Աճ.*

Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. 138 յն. κοδράντης *ձևից, որ լատ.* quadrantis *բառից է փոխառեալ և նշանակում է «մէկ քառորդ աս». գրուած է Մրկ. ժբ. 42՝ մեր նահարակիտ բառի դէմ։*

ՆԱՔԱՐ. *անյայտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 134 մի ոտանաւորի մէջ. Ներուն նամակ նիտան նորին նաքոր անբուժական.— թերևս նշանակում է «վիշտ», ինչպէս ենթադրել է տալիս* անբուժական *վերադիրը (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 175)։*

ՆԱՖ *(կամ նաֆաֆ, ֆաֆ) «մի տեսակ բոյս» Սալաձ. (այսպէս անորոշ դրչութեամբ ունին միայն ՀԲուս. § 2192 և Նորայր. Բանաս. 1901, 91)։*

***ՆԱՖԱՍ** «շունչ», որից նաֆասոտ «շընչարգելութիւն ունեցող». մէկ անգամ գրտնում եմ գործածուած Յայսմ. յունվ. 1. «էր ծերացեալ սուրբն Բարսեղ և էր ցաւագին և նաֆասոտ և լերդացաւ». նոյնը՝ յունվ. 10՝ լերդացաւ էր Ս. Բարսեղ, ծեր և նաֆասոտ։*

=Արաբ. نفس nafas *«շունչ»։*

***ՆԱՖԻՐ** «շնփոր, փող», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Թղկր. 53. «Հարին զփող պատերազմին, զպուկն ու զնաֆիրն, զգաւ հարկան». նոյնը նաև Առաք. լծ. սահմ. 615։*

=Պրս. نفیر nafīr *«տեսակ ինչ սրնգի, զորոյ ի վերին գլուխն լեղուակ եղեալ փըչեն, թրք. ևս նէֆիյր (ԳԴ)։—Աճ.*

ՆԳՈՅՐ *«կոնք, ուր սեղան նստող բազմականները ձեռք էին լուանում» Նիւս. (ըստ Հացունի, ճաշեր 83 համապատասխանում է յոյն բնագրի* πλυνός *«կոնք» բառին)։*

Բառս լծ. Նիւս. մեկնում է «եռոտանի սեղան», որից առնում է նաև ԱԲ։ Հացունի գտնում է՝ որ մեկնիչը սխալուելով յոյն բնագրի մէջ սրան յարակից «եռոտանի» բառից, մեկնել է այսպէս։ Իր կարծիքով նգոյր նոյն է նճոյր «մաղ» բառի հետ, ըստ որում կոնքի մէջ կայ մաղանման ծակոտկէն մի խուփ, որից ցած է վազում ջուրը։

ՆԳՈՏԻԼ *«մզլոտիլ, բորբոսնիլ, փտիլ», ո-րից նգոտեալ «մզլոտած» Բրս. սղ. ուրիշ վկայութիւն չկայ։*

+ՆԵԱՐԴ, *ի հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.).* «nerf» *Ագաթ. Կոչ. 61, 155. Սիր. դտ. 343. գրուած է նաև նիարդ, նէարդ, նարդ. որից* նէարդապատ *Եզնկ. լ. 22.* նեարդատեսակ *Նիւս. բն.* նեռդեայ *Խոր. բ. 85.* նեարդային *(նոր բառ)։ — Այս միևնոյն բառն է նաև* նեռա, *որ պէտք է կցել այստեղ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. snēurt- *ձևից. սրա հետ համմտ. սանս.* snâvan- *«յօդ, ջիղ, լար», զնդ.* snāvarə *«ջիղ», յն.* νευρά, νεῦρον *(<*snēuro-) «նեարդ, չուան, կորով», յոն.* νευρή *«աղեղի լար», լտ.* nervus *«նեարդ», որոնք բխում են հնխ. ածանցական* snēu-*արմատից։ Սրա պարզականն է հնխ.* snē- *«հիւսել, մանել», որից ունինք յն.* νέω, *լտ.* neo *«մանել», հբգ.* nāan, *գերմ.* nähen *«կարել», հիռլ.* snāthe *«թել», հսլ.* nitĭ *«թել, լար», ռուս.* нить, нитка *«թել», ալբան.* nus *«թել», սանս.* snāyu *«կապ», անգսք.* snód *«կապ»։ Այս արմատի մի ուրիշ աճականն է հնխ.* sner-, *որից ունինք հիռլ.* snōre *«չուան», հբգ.* snuor *(սրանից փոխառեալ ֆիննի.* nuora), *հոլլ.* snoer, *գերմ.* Schnur *(որից փոխառեալ ռուս.* шнуръ*) «լար», գոթ.* snōrjō *«հիւսած կողով» ևն։ Տարբեր արմատ է հնխ.* sēi *«կապել», որին պատկանում են հիռլ.* sin, *անգսք.* sinu, *հբգ.* senawa, *մբգ.* sëne, *գերմ.* Sehne, *հոլլ.* zenuw, *անգլ.* sinew *«նեարդ»* (Walde 514, 517, Boisacq 665, 1118, Kluge 436, 448, Pokorny 2, 696, 700)։—*Հիւբշ. 478։*

ՆՀՐ *(նեռդեայ բառի տակ) լծ. յն.* νευρῶδης, νεῦρον, *լտ.* nerveus, nervus։ *Հիւբշ.* KZ *23, էջ 401 և* Arm. Stud. *§ 217 դնում է բինկ հայ՝ համեմատելով սանս. և զնդ. ձևերի հետ։ Նաև օսս.* navr *«երակ» և կասկածով յն.* νεῦρον։ *Հիւնք. հանում է նարդոս բառից։ Պատահական նմանութիւն ունի օսս.* nart *«ճարպ», իսկ վրաց. նեվրի, նեռվի, նեվրով «մկան» նոր փոխառութիւն են։*

Նեխ, ո *հլ. «ժահահոտութիւն, փտութիւն բարախ» Բ. մկ. թ. 9, 10, 12. Կոչ. 81. «փը-*

ած, հոտած» Կանոն. Եղիշ. դա. էջ 188. Վստկ. 104. որից նեխիլ *«հոտիլ, փտիլ» ՍԳր Կոչ. 289.* նեխել *Ագաթ. Եփր. ծն.* նեխասատ. *Սիր. դ. 35.* նեխական *Ագաթ.* նեխութիւն *Յոբ. ը. 16.* նեխավայր *Բրս. ծն.* չարանեխ *Մանդ.* նեխուտ *«նեխեալ» (չունի ՆՀԲ) Եւս. պտմ. 529—30։ Նոր բառեր են* ապանեխել, հականեխել, հականեխական։

Տէրվ. Altarm. 104 *և Նախալ. 90 հնխ.* naç *«վնասուիլ, փճանալ» արմատից. համմտ. սնս. և զնդ.* nas, *լտ.* noxa *«վնաս»,* nocere *«վնասել»,* nex *«մահ»,* necare *«սպանել», յն.* νεκρός *«մեռեալ»,* νέκυς *«դիակ»։ Սրա նման նաև* Canini, Et. étym. 9 *յն.* νέκυς *զնդ.* naçu *«դիակ», լտ.* nex։ *(Ուղիղ չէ այս համեմատութիւնը, որովհետև սրանց արմատն է հնխ.* nek′, *որ պիտի տար հյ. *նես-)։ Հիւնք.* նեղ *բառից։ Մ. Ս. Պատիթ-Բէգ, Յուշարձան 396 ըստ Տէրվիշեանի։*

ԳԻՒ.—Սլմ. վն. նեխել, *Ակն. Զք. Մկ. Մշ. Ռ.* նէխիլ, *Ալշ.* նէխվել *(բնաւորութեան համար են ասում), Երև.* նէխվէլ, *Մրղ.* նէխէլ, *Գոր. Ղրբ.* նէխվրէլ։—*Նոր բառեր են* նեխաւոտիլ, նեխուկ, նեխած *(այս վերջինը տե՛ս նաև* նախանձ)։

ՓՈՒ.—Վրաց. ნეხვი նեխվի *«աղբ»,* ნანეხვი նանեխվի *«աղբով պարարտացրած հող»,* ნანახვე սանախվե *«աղբիւս, աղբանոց»։*

Նեխուր *տե՛ս Լախուր։*

***ՆԵԿԱԹ** *«հովիւ». մէկ անգամ ունի Դ. Թագ. գ. 4. «Մովսա արքայ Մովաբայ էր նեկաթ»։ Այս բառը մեկնելով Կիւրդ. Թգ. գրում է. «Նովկէտն (կամ նովպէտն) հովուապետ է». իսկ Հին բռ. դնում է «նեկաւ՝ հովիւ, նակեղ՝ հովուապետ»։*

=Եբր. נֹקֵד nōqēd *«խաշնադարմանն» բառն է, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը և որի հետ նոյն են ասոր.* ܢܩܕܐ nāqdā, *սասուր.* nāḳidu, *արաբ.* نَقَّاد naqqād *«հովիւ»* (Gesenius[17], 519, Delitzsch, Assyr. Hndwb. 479)։ *Եբրայական բառը տառադարձուած է յն.* νωκήδ, *այլ ձ.* νωκηθ. *Հայերէնը ենթադրել է տալիս *νεκαθ ընթերցուածը։ Կիւրդի նովկէտը ճշտիւ յունականի νωκήδ-ն է (դ դարձած տ)։—Աճ.*

ՆՀԲ միայն «բառ եբր.»։

***ՆԵԿՏԱՐ** *«աստուածըմպելիք». գործածական է նոր գրականում. ունի միայն ՓԲ։*

=Յն. νέκταρ *«աստուածների ըմպելիքը», որից առնուած են նաև ֆրանս.* nectar, *գերմ.* Nektar, *իտալ.* nettare *են. բուն նշանակում է «մահայաղթ» (կազմուած է հնխ.* nek′- *«մահ»+*tar *«յաղթել» ձևերից. ըստ* Boisacq *660)։*

ՆԵՀ *«ծանր». ունի միայն Բառ. երեմ. էջ 233։*

ՆԵՂ *(սեռ. ո կամ ի՝ ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «նեղ, անձուկ» ՍԳր. Եղիշ. «տառապեալ, վշտահար» Նար. «նեղ տեղ, ծերպ» Խոր. «նեղսրտութիւն» Եզն. որից* նեղել *ՍԳր. Եփր. ծն.* նեղուլ *Ասկ. յհ. բ. 5. կամ ոճով ի* նեղ արկանել՝ *հասուցանել՝ մրտանել ՍԳր. Եւս. քր.* նեղիչ *ՍԳր.* նեղագոյն *Ագաթ.* նեղութիւն *ՍԳր. Սեբեր.* նեղածեռպ *Ագաթ.* նեղսրտութիւն *Սղ. ժդ 9.* սրտնեղիլ *Կանոն.* նեղուց *«նեղ» Զենոբ էջ 43, Գէ. ևս. Պիտառ. «ջրի կամ ծովի նեղ անցք» Խոր. փիլ.* նեղանձուկ *«նեղ» (տպ.* նեղանցուկ*) Աբր. կրետ. 74։*

ՆՀԲ նուաղ *բառի՞ց։* A. Fick BB 1, 172 *լիթ.* neriù, nerti *«անցկացնել, ներմուծել», գերմ.* narva *«նեղ», անգլ.* narrow *«նեղ»։* Lag. Arm. Stud. *§ 1604 պրս.* narm *«մեղմ» և աֆղան.* naraey *«նուրբ, նեղ»։ Տէրվ.* Altarm. *67 սանս.* nah *«կապել», զնդ.* naz, *լտ.* necto, nexus, *հյ. նիգ բառերի հետ։ Հիւբշ.* Arm. Stud. *§ 218 հաաքս.* naru, *անգսք.* nearu, *անգլ.* narrow *և աֆղան.* naraey, *որոնք բոլոր համանիշ են մեր բառին։ Հիւնք.* Նեղոս *գետի անունից։ Հիւբշ.* Arm. Gr. *478 կրկնում է իր նախորդ համեմատութիւնները՝ առանց աֆղաններէնի, բայց կասկածականով։ Կասկածելի են այս բառերը նրանով, որ* r *և հյ.* ղ *անհամաձայն են իրար. միւս կողմից չէ ճշտուած նոյն բառերի և հնդեւրոպական այլ ցեղակիցների յարաբերութիւնը, որով և հնդեւրոպական նախամայր ձևը։*

Pokorny 2, 699 *դնում է այդ բառերը (կասկածով նաև հայ ձևը) հնխ.* (s)ner- *«ոլորել» արմատի տակ, ուրիշ մի խումբ բառերի հետ, որոնք՝ նշանակութեան տարբերութեան պատճառաւ՝ բոլորն էլ կասկածելի են։ (Տե՛ս նաև* Boisacq 558 *և* Trautmann 197)։

ԳԻՒ.—Ալշ. երև. Ջթ. Մշ. Ջղ. Սլմ. Սչ. Վն. նեղ, *Ագլ. Ակն. Ախց. Խրբ. Կր. Համշ. Մկ. Մրզ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ.* նէղ, *Ասլ.* նէ՛ղ, *Դոր. Ղրբ.* նըէղ, նըղ, *Սվեդ. Տիգ. Տփ.* նիղ *(բայց Սվեդ.* լ՛իղինիլ *«ձանձրանալ, սիրտը նեղանալ»)։ Նոր բառեր են* նեղանալ *(Պլ. տարբերւում են* նեղանալ *«բարկանալ, սրդողիլ» և* նեղնալ *«նեղ դառնալ»),* նեղաչ՛, նեղասրտուիլ, նեղատեղ, նեղեցուկ *«յոգնած»,* նեղլիկ, նեղկնուկ, նեղկեկ, նեղնեխլ, նեղմնի, նեղմտոքիլ, նեղսրտանի, նեղուածէ՛։ *Կարևոր ձև է* նեղնը *ս. «շտապ, վռազ, ստիպողական», որից* նեղնութիւն *ս. «աճապարանք»։*

ՓՈՒ.—Վրաց. ნელი նելի *«մեղմ, քաղցր, կամաց, խաղաղ, գաղջ, միղմաձայն»,* ნელა նելա, ნელიად նելիադ *«մեղմով, մեղմաձայն»,* ნელა ნელა նելա նելա *«մեղմ»,* ნელება նելեբա *«մեղմել, հանգցնել, կորցնել, մարսել»։*

ՆԵՂԿԱՏՈՒՆ *«տէրունեան». ունի միայն Բառ. հրհմ. էջ 233։*

ՆԵՃԵՄ. *անստոյգ նորագիւտ բառ, որ գրտնում եմ գործածուած միայն Նար. տաղ. 465. «Յունիցն նրբենից ի մի կից կամար, նէճեմ թէ նէճեմ մէջօրէի ժամն»։*

Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 16 դնում է արաբ. naǰm *«աստղ» բառից! Առնուազն պիտի լինէր նաջմ։*

*ՆԵՄԻ *(սեռ.* նեմէի, *ներգ. ի* նեմռջ, *յգ. ի* նեմեայս*) «յունական ազոնական մի խաղ է» Նար. քր. Փիլ. լիտ. 153. որից* նեմէական *Ածաբ. կիպր.։*

= Յն. νέμεα *«նեմէական խաղերը». գալիս է Արգոլիսի* Νεμέα *ձորի անունից, որովհետև այդ խաղերը ներկայացնում էին այդ ձորում։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՆԵՄՈՂ *«հարաւ». գոնւում է միայն* ուսա ի նեմռոզ *կամ* ուսա ի նմռոջ *ձևի մէջ՝ Խոր. աշխ.։*

= Պհլ. 𐭭𐭬𐭥𐭥 nēmrōč, *որից* 𐭪𐭥𐭥𐭥 𐭭𐭬𐭥𐭥 Kust-i-nēmrōč *«կէսօր, հարաւ, հարաւային կողմ», պազ.* nīmrōž, *պրս.* نیمروز nīmrōz, *բելուճ.* nēmroč *«կէսօր», որոնք կազմուած են* nēm *«կէս»+*rōč *«օր» բառերից։— Հիւբշ. 203։*

Ուղիղ մեկնեց նախ. Lag. Gesam. Abhd. 60, 13:

ՆՆԴ, ի–ա *հլ. (յաճախաբար նաև ի, ո հլ.) «դաւ, դաւաճանութիւն, խաբէութիւն» Բ. մկ. ժգ. 21. Մրկ. ժդ. 1. Եւս. քր. «ննդաւոր» Ոսկ. ես. և յհ. բ. 5. որից* ննդել *ՍԳր. Բուզ. Եղն. Ոսկ. մաթ.* ննդագործ *Ոսկ. մ. բ. 1, 8. Եւս. քր.* ննդախոշոշ *Եւագր.* ննդան *Եղ. իբ. 11. Եւս. քր.* ննդաւոր *ՍԳր.* ննդաժէտ *Իգն. (*ննդաժոռ *Դամասկ. վրդ. առ. 5. Մեծոր. Գնձ.* ննդժոռ *Իգնատ. ղկ. 241, 386, Լմբ. ժբ. մրգ. էջ 192 (զաք. գ. 8). Ուռհ. 401),* տիրաննդ *Բուզ. Փարպ.* աննննդ *Փարպ. Եղիշ.* ուխտաննդ *Փարպ.—Նոր բառեր են* դրամաննդ, չարաննդ, դիւաննդ, մահաննդ *են։*

Նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Lag. Urg. 604, Müller SWAW 42, 258 *պրս.* ننگ nang *«նախատինք» բառին են կցում, որ ո՛չ ձևով է համաձայն մեր բառին և ոչ էլ նշանակութեամբ (պհլ.* 𐭭𐭢 nang *«ամօթ, նախատինք»)։ Հիւնք. ՌննգՌ բառից։ Հիւբշ. 203 մերժում է պրս.* nang։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 269* -մանգ (խոռամանգ) *բառից է հանում։*

ԳԻՒ.—Երև. նէնգ *«ոխակալ»։*

ՆԵՊԱԿ, ի–ա *հլ. «մի տեսակ հարկ» Օրբել. Հրտր. էմ. էջ 149 և 159. («Տայ ի ձեռս նորա զԱրծիւ գիւղ և զբերդականերիչ... ազատ յամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց. Առաք զԲեխ իւր սահմանովն և արքունի նեպակովն և տուաք զԱրուքս իւր սահմանովն և արքունի նեպակովն, որ էր երկու տասան դրամ»).—տե՛ս նաև Այտընեան, Քնն. քերակ. 143։—Նեպակ բառը գրեթէ նոյնպիսի իմաստով գործածուած եմ գտնում նաև մէկ անգամ Թովմա Արծրունու պատմութեան մէջ (Հրտր. Պատկ. էջ 27). «Եկեալ երկոցին խնդալից (Որմիղդ)՝ ակն ունէր առնուլ կերակրովն. եդիտ ապա-*

*կանեալ և գիշակեր, զի մողէսք և կովիդայք, քարաթաթօշք և բնդոունք ի վերայ եկեալ կերան զորս նորա (նրա որսացածը)։ Արդ յայսմհետէ ըստ նեպուկի գեաղջն կապճահամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. զի սոքա վնասակարք առ աստուծոյն եղեն»։ — Խնդրական բառի համար Պատկ. գրում է թէ հին օրինակն ունէր նեպակի. Պօլսոյ տիպը՝ էջ 26 ունի նեպուկի. ՆՀԲ-ի օրինակն ևս ունի նեպակի, թէև մի քիչ տարբեր ձևով. «Մողէղք և կովիդեայք և բնդոունք, ըստ նեպակի գեղջն կապճահամար ժժակք» (տե՛ս նեպակ բառի տակ)։ ՆՀԲ այս բառը նոյն է համարում հյ. նեպուկ բառի հետ, որ նշանակում է «բազմոտանի մի ճճի» և Արծրունու հատուածի մէջ բոլորովին անյարմար է։ Նախ պէտք է ընդունել այստեղ նեպակ ձևը, որի ճիշտ նշանակութիւնը իմանալու համար չունենք եղիշէի համապատասխան մի հատուածը, որից ազդուած է Արծրունին. «Օձք և մողէսք, գորտք և մրջմունք, և որ այլ ևս խառնափնդոր բազմաճճիք են՝ մի՛ կացցեն. այլ վաղ թուով համարով ի մէջ բերցին ըստ արքունի չափոյն։ Եւ որ այլ ևս ինչ սպասք իցեն, կամ զոհից կամ սպանդից, ըստ տօնական կարգին՝ կարևոր թուականին և ըստ կապճաթիւ մոխրաչափ կարգին» (Եղիշ. բ)։ Եղիշէի այս հատուածից երևում է, որ վնասակար միջատները ջնջելու համար հին Պարսից կառավարութիւնը ամէն դիւղի վրայ որոշնալ մի չափ էր դրած. գիւղացիք՝ այս թիւը իրենց վրայ բաժանելով՝ ամէն մէկ անձի ընկած բաժինը որոշում էին և ըստ այնմ հաւաքելով միջատները՝ գիւղովին ներկայացնում էին դուռը։ Սա մի կերպով նման է Կովկասի մորեխակռուին, որ հաստատուած է ջնջելու համար մորեխը։ Նեպակը այսպէսով ըստ Արծր. «զրադաշտական օրէնքով ջնջելիք վնասակար միջատների համար կառավարութեան կողմից նշանակուած կապճահամարը կամ չափն է»։

ՆԵՊՈՒԿ «բազմոտանի մի ճճի, գլորուկ Թէսպիհ պէօճէյի, cloporte» Բժշ.։

Պատահական նմանութիւն ունի լտ. nepa, nepas «կարիճ, խեչափառ», որ ափրիկեան ծագում ունի։ Կար. բառ. յն. ἔχῖνος։

*ՆԵՌՆ, ն հլ. (-ին, -ամբ, -իճ) «սուտ Քրիստոս, անտիքրիստոս, գալոց վերջին սուտ Մեսիան» ՍԳր. Ոսկ. բ. թես. Կոչ. 318 եփր. հռ. 34, 35. եւթաղ. 143. Իգնատ. թղ. 100. որից նեռնագործ «չարագործ» (Ալիշան, Հին հաւ. էջ 232)։ Կղնկտ. հրտր. էմինի, էջ 59 ունի «չար ոգի» նշանակութեամբ. «Սկսաւ արտնջել և հայհոյել զնահատակն Քրիստոսի զԳրիգորիս և ասէր. Մեզ Նեռն ընտրեցաւ Գրիգորիսն այն». (Նկատողութիւն Հ. Ն. Ակինեանի՝ ՀԱ 1929, էջ 703—4)։

=Ներոն կայսեր յունաձև Νέρων անունից ձևացած. (Ներոն<լտ. Nero նշանակում է բուն «ուժեղ» և ծագում է հնխ. ner- «այր, մարդ» բառից. հմմտ. սանս. nár-, գնդ. nar, պրս. nar, յն. ἀνήρ ևն. Walde 517)։ Այս կայսեր վերայ արդէն Յայտ. ժգ. 18 մի ակնարկ կար՝ իբր դերաքրիստոսի վրայ. «Ասա է իմաստութիւն. որ ունի միտս՝ համարեսցի զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ և թիւ անուան նորա և այս. վեց հարիւր վաթսուն և վեց»։ Ներոնի անունը տառահաշուով հանում էին 666 և քրիստոնեաներից շատերը ա՛յնպես ընդունեցին նրան՝ իր հանած մեծամեծ հալածանքների պատճառաւ. հմմտ. Ոսկ. բ. թես. «Խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. զՆերոնէ ասէր, որպէս թէ օրինակ էր Նեռինն»։—Հիւբշ. IF 19, 472:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Հիւնք. և վերջին անգամ Հիւբշ. IF 19, 472—5, հյ. թրգմ. ՀԱ 1907, 249—250։ Lag. Urgesch. 67 սնս. nišṭya «մերժում, արհամարհանք»։ Ալիշան, Հին հաւ. 232—3 գերմ. nornes «մարդկանց բախտը գրող վհուկները», Բևեռ. նեռ «դժոխոց չաստուած մը»? Բառիս վրայ շատ ընդարձակ խօսում է Թ. Աւդալբէգեան ՀԱ 1928, 418—428 և 494—503, և մերժելով Ներոնից ծագումը (հայերը Ներոնից դժգոհելու ոչինչ չունէին. ընդհակառակը նա խաղաղութիւն բերաւ հայ երկրին), դնում է Միհր աստծու անունից։

ԳԻՒՐ.—Ջղ. նեռն, Ալշ. նրև. Մշ. Սլմ. նեռ,

Շմ. նէոր, *Ախց. Ատն. Ղրբ. Ննխ.* նէո, *Ղրդ.* լէո!

ՓՈԽ.—*Հայերէն* նեո *ձևից փոխառեալ եմ համարում կապադովկ. յն.* νῆρια, *որ ըստ* Karolides, Γλ. συγκρ. 200 *գործածական է ժողովրդական երգերի մէջ, իբրև «Քարոն կամ Մահ». կանայք հասկանում են իբրև «միւս աշխարհը»:* (Karolides *կցում է սանս.* narakas *«ստորերկրեայ աշխարհ» բառին):*

**ՆԵՍԱՐ, ի–ա հլ. «չար դև, սատանայ» Ա. Թագ. իա. 7. որից առնելով ունին նեսար Առաք. պտմ. 27 նէսար Նար. էջ 244, նիեսեր, նեսեր Կիւրղ. Թգ:*

=Սբր. נְעָצַר ne'ṣār *բառից, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը. այս բառը թէև ընդհանրապէս «ծածկուիլ, բռնուիլ, սեղմուիլ, դադրիլ» իմաստն ունի, բայց վերի հատուածում անստոյգ է (ըստ* Gesenius[17], 612)*: Բողոքականների անգլերէն թարգմանութեան մէջ* (New York, 1894) *դրուած է «detained». Օծթանասնից մէջ թարգմանուած է «συνεχόμενος — նեղեալ» և կողքին էլ մեկնութեան ձևով եբրայեցի բառը դրուած է նոյնութեամբ՝ իբրև փակագծի մէջ: Ձեռագիրների տուած ընթերցուածներն են* νεσσαρ, νεσσαράν, νεεσσαράν, νεσσάρ: *Հայ թարգմանը հետևել է յոյնին և այս բառը ուղղակի տառադարձել:—Հիւրշ.* IF Anz. 10. 42:

Ուղիղ մեկնեցին նախ. ՀՀԲ և ՆՀԲ. բայց վերի ձևով ունի Carrière *(խօսեց Արևելագիտական 11ոդ ժողովին, որից էլ ՀԱ 1897, 316 և Արձագանք 1897, 107): Վերջին անգամ* Macler *ՀԱ 1927, 613:*

ՆԵՍՓԱՅ *«մի տեսակ քամի». ունի միայն ԱԲ. (վկայութիւնը տե՛ս յաւտմն):*

*+*ՆԵՏ, *ի հլ. «աղեղով արձակելու սլաք՝ փքին» ՍԳր. «կայծակ» Պղատ. օրին. Մեկն. ծն. որից* նետալից *Ողբ. գ. 13. Բուզ.* նետաթափ *Կիւրղ. դտ.* նետակալ *ՍԳր.* նետաձիգ *ՍԳր. Եփր. ծն. Բուզ.* նետող *«աղեղնաւոր» Ես. է. 24. Փարպ. (յետին շրջանում գործածական էր «թաթար» իմաստով).* նետաճ՞ր *(սեռ.* նետաճրիճ*) «նետ շինող» Վրդ. Բար. 99. իսկ բայական ձևով՝ յետնաբար միայն* նետել *«նետ արձակել» Սմբ. պտմ. 107, որից լայնաբար «որևէ բան ընկենուլ, արձակել, գցել» Գիրք առաք. (ճիշտ ինչպէս ունինք ՀՀ. ՁԲ.* քարել *«նետել»՝ նախատր «քար նետել» նշանակութիւնից ընդհանրացած). աւելի հին է ծաղկաճետեալ «ծաղիկներ արձակելով» (նոր բա՞ռ) 3Հ. իմ. խոստ. 4 (կարդա՛ ծաղկաւետեալ, ինչպէս է անդ՝ էջ 27):*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. nedo- *«եղէգ» ձևից. ժառանգորդներն են սանս.* nada-, na-ḍa-, *հպրս.* *nada-, *պհլ.* nad, nai, *պրս.* نای nāy, نی nay, *գիլանի* nad. *բոլորն էլ նշանակում են «եղէգ», որ սլաք պատրաստելու նիւթն է, ինչպէս որ պրս. էլ եղած է նաև «սրինգ», որից* سورنای sūrnāy *«զուռնա» (որ կազմուած է* سور sūr *«տօն, խնջոյք» և* نای nāy *«սրինգ» բառերից և նշանակում է «տօնի սրինգ»). բառիս համար առաջարկուած միւս ցեղակից ձևերը անընդունելի են (տե՛ս* Pokorny 2, 329, Walde 508, Horn § 1060, Boisacq 13, 657)*:—Հիւրշ. 478:*

Klaproth, Asia pol. 104 *պրս.* nežeh *«որսի նետ» բառի հետ՝ Ուղիղ մեկնեց* Böttich. Arica 76, 244, Lag. Ges. Abhd. 67 *համեմատելով սանս. պրս. (նաև լիթ.* nendre) *ձևերի հետ: Հիմնք. նիզակ բառից: Պատահական նմանութիւն ունի արաբ.* نَدَا nada *«նետել» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 57):*

ԳԻՒ.—Ագլ. նէտ, *Մշ.* նեդ, *Ասլ.* նէդ, նէ*, *Մկ. Տփ.* նիտ, *ՁԲ.* նիդ.*—Նոր նշանակութիւններ են ստացած՝* նետ *Ձն. «մէկ անգամ հրացան արձակելու չափ (վառօդ)», Վն. «շէնքի գերաններին իբր նեցուկ դրուած փայտը», Ղրբ. «գորգի ոստայնի ամենավերին և ամենանորքւի հաստ գերանները», Վն. «արշին չափը», Սրև. Շիր. «գուշակութիւն անելու մաղ», ՁԲ. «կշռի սլաք» (այս վերջին նշանակութեամբ մէտ բառն է, որ տես առանձին): Նոր բառեր են* նետիչ, նետուիլ, նետուտել, նետուտուիլ, նետոձ*:—Աղեղ բառի հետ բարդուելով կազմուած է* նետաւաղեղ, *որի գաւառական ձևերը տե՛ս* աղեղն *բառի տակ. (դրեթէ անփոփոխ է Կր.* նէտ ու աղէղ*):—Նետել բայաձևն ունին Ախց. Կր.* նէտէլ, *Պլ. Ռ. Սեբ.* նէղէլ, *Ասլ.* նէդէ՛լ, *Խրբ.* նէղիլ,

Համշ. նէդուր, *Սվեդ.* նիդիլ *ևն. Կովկասում առհասարակ փոխանակուած է* ձգել>գցել *բառով։*

Փոխ.—Գնչ. (Հայ բոշա) նեռխիկարել *«նետել». յատկացածի համար համմտ.* մաճել>մաճխիկարել *(տես* Finck. Die spr. d. arm Zig. ЗАН 1907, 57):

+ՆԵՐ, ո *հլ. (կամ նաև սեռ.* ի*) «կնոջ ամուսնու հղբօր կինը, տագերակին, կամ ամուսնու միւս կինը» Եփր. Թգ. 356—7, Փիլ. լին. 437 (այլ ձ.* նեար*), որ և* ներ *(սեռ.* նիրի*) Հոռթ. ա. 15։*

=Բնիկ հայ բառ՝ որ կցւում է հնխ. jénətēr *ձևին. սրա ժառանգներն են սանս.* yâtar-, *յն. համեր.* ἑνάτηρ, *յգ.* ἑνατέρες, *չափի համար գրուածէ* ἑνατέρες, *փոքր ասիական* ἑνατρὶ, *փռիւգ. (հյգ.)* ιανατερά, *լտ.* janitrīces, *հսլ.* jętry, *սերբ.* jêtrva, *հլհհ.* jątry, *ռուս.* ятровъ, *ուկր.* jatrívka, *բուլգար.* etûrva, *լիթ.* jénte, ínte, gentē, žentė *լեթթ.* jentere, ētere, ētala *«հղբօր կին»* (Walde 373, Berneker 456, Trautmann 107, Boisacq 250, Ernout-Meillet 447, Pokorny 1, 207)։ *Այս բոլորից հետևցնում են հնխ.* jénətēr. *Հայերէնը հանւում է* *enéteri- *ձևից, որ տալիս է* *ինե՛յեր>*նե՛յեր>*նեյր>ներ, *որ և հայերէնի հնագոյն ձևն է, յետոյ վերածուած ներ (ր-ի մօտ դնելով սովորական ն ձայնաւորը և ո՛չ է)։*

Նշիւ նուեր *«նուէր, նուանք, հարսեր» ձևից։* Windisch. 23 *ազգակից է դնում հյ.* նու, *սանս.* snušā, *լտ.* nurus *բառերին։ վերի ձևերի հետ կապից առաջին անգամ Տէրվ. Նախալ. 163, յետոյ* Bugge, Btrg. 37 *և* IF 445, 449։ *Տէրվ. դրնում է հնխ.* yantar>*հյ.* *նաատար>*նաատր>նայր>ներ։ Bugge *դնում է* *yineter>*նեաեր>*նեյր>ներ: Հիւբշ.* Arm. Gram. 478 *անապահով է գրտնում այս մեկնութիւնը, որովհետև հայը հասցնում է մինչև* *neteri- *նախաձևը, որ նախաձայնի կողմից համաձայն չի գտնում միւսներին։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 191 հնխ.* *eineter-ից՝ նախաձայնի անկումով։ Հիմնք. նոր բառից։*

Գիւռ.—Ախց. Ակն. խրբ. Կր. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. ներ *(խրբ. սեռ.* նիրոչ*), Ասլ.* նէ՛ր, *Հճ. Զթ.* նեյ *(սեռ.* նիւյիւչ*), Սվեդ.* նիրդրգէն *(որ է* ներ-տիկին*), բայց նաև* նիր: *Նոր բառեր են* ներուկ, ներաճ՛:

**ՆԵՐ, ի հլ. «600 տարւայ մի շրջան» նւս. քր. ա. 11. Արծր. հրտր. Պատկ. էջ 21. Սամ. անեց. 12։*

=Յն. νῆρος *նոյն նշ.* (Sophocles 782)։ *Յոյն բառը ծագում է սումեր.* neru *«600 տարւայ շրջան» բառից, որ Բերևս փոխառեալ է բաբելականից* (Bertin, Lang. of the cuneiform inscr. *էջ 7)։—Հիւբշ. 368։*

ՆՀԲ «բառ քաղդէական»։ Brockelm. *Ուս. փոխ. բառից 112 յն.* νεῖρος։

+ՆԵՐ *«մէջ». արմատ, որ հների մօտ առանձին չէ գործածուած. որից ունինք ի* ներս *«ներսը» ՍԳր. Ոսկ.* ներսուստ, ի ներսուստ *«միջից» ՍԳր. Եւագր. «վարից, ցածրից, տակից» ՍԳր. Եղիշ.* ներսին *«մէջի, միջին» ՍԳր. Նւս. քր. «վարի, ցածի, տակի, ստորին» ՍԳր. Եղիշ.* ներսոյ, ի ներսոյ *«մէջը, տակը, միջից, տակից» ՍԳր. Ոսկ. սրանցից են ծագում* ներսակողմն *Բ. մկ. ժգ. 6.* ներսագոյն *ՍԳր. Ագաթ. Կորիւն. Ոսկ.* ներսնակ *Եղ. իթ. 5.* ներսնատուն *ՍԳր. Նւս. պատմ.* ներսնագունդ *«ստորին գունդ, խումբ երկրաւոր մարդկան» Ագաթ.։ Յետոսկեդարեան շրջանում՝ յունաբան հայերէնի մէջ՝ ներ դարձաւ մի շատ սովորական նախամասնիկ՝ իբր համապատասխան յն.* ἐν- *նախամասնիկին. ինչ.* ներածել=ἐν-άγω, ներկայ=ἐν-εστώς, ներ-գործել ἐν-εργέω, ներ-տրամ-ա-դրեալ=ἐν-διά-θετος ներ-հակ= ἐν-αντίος, ներշնչական =ἔμ-ψυχος *ևն։ (Ոսկեդարեան գրուածքների մէջ էլ տեղ տեղ պատահում են այս կարգի ձևեր, ինչ.* ներգործել *Ագաթ.* ներգործութիւն *Ագաթ.* ներկայ *Ոսկ. երր.* ներհակաւոր *Եւագր. բայց բոլորն էլ յետին յատկացածներ են)։ Յունաբան հայերէնի մէջ* ներ *գործածուած է նաև առանձին, իբր նախադրութիւն. ինչ.* ներ տեղւոջ, ներ ի տան, ներ արեւմտից, ի ներ մարմնոջն *Բր. քեր. Պերիարմ. են։ («Ըստ» նշանակութեամբ գործածութեան համար տե՛ս ՀԱ. 1911, 548)։—Այս բոլորի հետ՝ բառերի կազմութեան և գործածութեան կողմից համմտ.* արտ, արտաքս, արտաքին,

արտաքոյ: *Տե՛ս նաև* ներքին:—*Նոր բառեր են* ներաշխարհ, ներարկել, ներարկում, ներարկութիւն, ներգաղթ, ներդաշնակել, ներխուժել, ներխուժում, ներկայացնել, ներկայացուցիչ, ներկայացուցչական, ներհայեցողութիւն, ներշնչել, ներշնչում, ներշնչութիւն, ներփակ, ներփակեալ, ներփակել, ներքնուղի *ևն:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ner- *ձևից. սրա հետ համմտ. յն.* ἔνερος «*առաջին*», ἔνερτοι «*առաջնեայք*», ἐνέρτερος, νέρτερος «*ամենաառաջի, դժոխային*», νειρός «*վերջինը, յետինը*», νεῖραι «*ամենացածրիններըը*», νέρθεν, ἔνερθεν «*տակից, վարից*», *ումբր.* nertro «*ձախից*», *հհիւս.* norðr «*հիւսիս*», *անգսք.* norþ «*հիւսիս*», norderra «*աւելի հիւսիսային*», *հբգ.* nordrōni «*հիւսիսային*», *անգլ.* north, *գերմ.* nord, *որից և փոխառութեամբ ֆր.* nord «*հիւսիս*», *սանս.* naraka «*առաջներկրյա աշխարհ, դժոխք*»? (Boisacq 252 և 665, Pokorny 1, 126 և 2, 334, Kluge 351). *Այս բառերը մեկնւում են երկու ձևով. կա՛մ կազմուած* ni *նախդիրով (որ վերևից ցած շարժում է ցոյց տալիս)*+ero- *մասնիկով (այսպէս է դնում* Meillet*) և կամ* en «*մէջ*» *նախադրութեամբ*+ero- *մասնիկով (այսպէս է դնում* Pokorny 1, 126*).—սակայն վերջինս դնում է նաև առանձին* ner- *արմատը՝ «տակը» նշանակութեամբ, որին կցում է վերի յն. և հռոմէական ձևերը, հայերէնից էլ միայն* ներքին «*տակի*», *միւսները դնելով* en-ero- *ձևի տակ: Այսպէսով հյ. ձևերը բաժանւում են երկու խմբի՝ տարբեր ծագումով. «մէջ» իմաստով անցնում են* en *արմատին, «տակ» իմաստով* ner *արմատին:*

Նշի՛ր արմատը դնում է ն, իսկ -եր՝ *լծ. հյ. վայր. թրք.* yer «*տեղի*», *որոյ հետք կան և ի բառս* ներել *և* երկինք, երկիր: Böttich. Arica 77, 263 ներոյ=*յն.* νέρθε, ἔνερθε *և սանս.* naraka: Lag. Urgesch. 64 ներ=*սանս.* nis, *որ մերժում է ինքը* Lag. Arm. Stud. § 1610: Müller SWAW 88 (1877), *էջ 14 յն.* νέρ-θε, ἔνεροι *են: Տէրվ.* Altarm. 8 *սանս.* ni, *զնդ.* ni *մասնիկի հետ*+r: *Նոյն, Նախալ. 117 թերևս սանս.* antar, *լտ.* inter «*ի մէջ*»: *Հիմնք.* ներքին, ներոս, ներոյ *հանում է* ներկ *բառից: Վերի մեկնութիւնը* Bötticher-*ից առնելով ձևակերպից* Meillet MSL 10, 275, *որ կասկածով յիշում է Հիւբշ.* IF Anz. 10, 48:—Patrubány SA 1, 194 *լիթ.* nérti «*ներմուծել, անցկացնել*», *գերմ.* narva «*նեղ*» *բառերի հետ: Ներհակ «հակառակ»* Nyberg, Hilfsbuch 2, 196 *հանում է իրան.* *níyarθa -ka *ձևից. համմտ. սանս.* níyartha — «*առաջութիւն, դժբախտութիւն*»: *Շատ զուր, որովհետև ներ-հակ յունաբան դպրոցի հնարած բառերից է: Նոյնը* Hilfsb. 2, 156 ներհուն *հանում է իրան.* níyaθruna- *ձևից (>*níyahrun>*նեարհուն>*ներհուն*). համմտ. սկլ.* nērōk «*գերբնական, մոգական ուժ*»<*níyahrōk<*níyaθrava-ka: *Նախորդի նման սա էլ յունաբան դպրոցի բառ է և կազմուած է ներ մասնիկով:*

ԳԻՒ.—Պարզագոյն ձևն ունին Ջղ. ևե, *Ղրբ.* ևի «*ներս, մէջը*», *Տփ.* ևի «*ներս*» (*օր.* ևի ու դուս «*ներս ու դուրս*»), *Խոջ.* (ի *նախդիրով միասին)* իևի (*ինչ.* տունևե իևի, գեղն իևի).—*2.* Ներհս *ձևը ցոյց են տալիս Տփ.* ևէհսի, ևէհսէմէն «*ներսի, ներսից*», ևէհսիվը «*ներսը, մէջը*», *Երև.* ևէհսէվ, *Ալշ. Մշ. Ջղ. Սչ.* ներս (*ուր* ի *ընկած է*). *Վն.* ներս, ևիրսի, *Երև. Կր. Պլ. Ռ. Սեբ.* ևէրս, *Սլմ.* ևես, *Ախց. Շմ. Ննխ.* ևէս, *Մկ. Տիգ.* ևիրս, *Հճ.* ևեյս, *ՋԹ.* ևիյս, ևիրս, *Համշ. Մրզ.* ևիս, *Ջղ.* ևեսկուս (<ներհս կոյս) *Ագլ.* ևի՛ս-կումուն (*իմա՛* ներհս-կողմն) «*ներսը*»: *Բառիս հին գուռ.* ի ներս «*մէջը*» *ձևը տալիս են Զեյնոբ. Պիտ. Վրդն. պատմ. էջ 158, Լմբ. մատ. 38* (ի ներս, ի ներսս), *Լմբ. ժբ մարգ. էջ 123 (յովն. ա. 13).—3.* Ներհ- *ձևի ուրիշ ժառանգներ են Տփ.* ևէրհի «*վարի*», *Համշ. Տփ.* ևէրհիվը, *Ագլ.* ևէրհին «*ի ներքոյ, տակը*» (*օր. ծառին ներքին նստիլ*), *Երև. Կր. Ռ.* ևէրհէվ «*տակը*», *Շմ.* ևիրհէվ, *Մկ.* ևիրհիվ, *ՋԹ.* ևիյհիվ, ևիրհիվ, *Հճ.* ևիյհէվ, *Մշ.* ևէրկին. (*այս բառի հին ածանցներն են* ներկայացնում ներհևադաս *և* ներհևաճատ *Երզն. քեր.*):— *Զարմանալի ձև է Սվեդ.* ևրգ'ձէ «*ի ներքս*»:—*Նոր բառեր են* ներսանց, ներսկոյս, ներսիդի, ներսնկոց,

ներսնատր, ներսնոց, ներսոտ, ներհևանալ, ներհևնոց, ներհևուտ, ներհնագործ, ներհնախնձոր, ներհնակ, ներհսատուն, ներհսև: *Հետաքրքրական մի ձև է ՋԲ.* նիհսէ *«մառան» (համմտ.* ներհնատուն*)*:

ՆԵՐԱԼ *«յոյսով լցուիլ կամ սպասել». անստոյգ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած վրք. իլար. (Սոփերք ԻԲ. 102). «Եւ քաղաքն ամենայն քաղցր յուսով ներային և աշօք տենչային տեսանել ամենեքեան դէմս Իլարիոնի միայն». Թերևս պէտք է կարդալ «...քաղցր յուսովն եռային...». այսպէսով ևնթադրեալ* ներալ *բառը կը ջնջուի:*

ՆԵՐԱՅԻԿ *«պիտանի բան, խօսքի մեկնութիւն, բացայայտութիւն». մէկ անգամ ունի Մագ. գամագտ. ժա. գրուած է զանազան ձեւերով. այսպէս է դնում Մէնէվիշեան ՀԱ 1911, 547՝ ըստ Բառ. երեմ. էջ 235:*

ՆԵՐԲԱՆ *(անհզաբար գործածուած) «ոտքի տակը» Ագաթ. եփր. օրին. էջ 278. «ոտքերը մէջը պնդելու կոճղ» (տանջանքի գործիք) Ոսկ. գծ. էջ 296.—գրուած է* ներբոն՝ *այս վերջին վկայութեան մէջ, իսկ* ներբան *ձևով ունի Վրդ. առ. 317 (երեք անգամ իրար հաևից):*

ՆԵՐԲՈՂ, ի *հլ. «գովեստ, օրհներգութիւն» Նար. Շար. որ և* ներբողեան *Պիտ. փիլ. որից* ներբողել *Փիլ. Պիտ. Շար. Նար.* ներբողումն *ՅՀ. կթ.* ներբողաբանութիւն *Պիտ. ևն:*

Հներից Պիտ. մեկնում է. «ներբողեան է բան արուեստական հղելոյ բարեաց. և ասացեալ է այսպէս՝ յաղագս հնոցն ի գեղս գովութիւնս առնելոյ. գեղս կոչէին զներբափողոցս»: Այս մեկնութիւնը ակնարկում է յն. ἐγ-κώμιον *«ներբող» բառը, որ կազմուած է* ἐν *«ներս» մասնիկով* κῶμος *«տօն, փողոցներում երգելով հանդէս» բառից. իսկ* κώμη *«գիւղ, արուարձան»: Այս մեկնութեան համաձայն ՆՀԲ հայ բառը դնում է «ներփողական կամ ներբափողեան, ևս և ներբափողոցեան». Անհաւանական չէ դնել* ներ–փողոց, *որովհետև յունարան հայերէնի մէջ ուրիշ անգամներ էլ ենք գտնում հայերէն բերբերուն և թաւ բաղաձայնների փոխանակութեան օրինակներ. ինչպէս՝* բդ>ևեր, բաղ>փաղ, ապադարձ>ապաբարց *ևն:*

ՆԵՐԳԱՆԵԼ *«ծաղկեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 235. կարդա՛ «ձաղկեալ», որով բառը կդառնայ* ներ–գան–եալ՝ գան *«ծեծ» արմատից:*

ՆԵՐԳԱՍԵԱԼ *«գովեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 235:*

+ՆԵՐԳԵԻ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «նուազ, տկար, ճոզած» Հին բռ. «երեք սուղ վանկերից բաղկացած բառ» Թր. քեր. 64. որից* ներգևիլ *«ճոզիլ, մաշիլ, նիհարիլ, չորանալ» Բուզ. Ոսկ. փիլիպ.* ներգևումն *ՅՀ. կթ.* ներգևոտ *Բժշ. գրուած* ներհևեալ *Օրբել. հրտր. էմ. էջ 189:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* snerq- *«քաշուիլ, կոնծիլ» արմատից. համմտ. հբգ.* sner(a)han *«կաշկանդել, կապկպել», մբգ.* snërhen *«կապել, սեղմել, ճնշել, ճզմել», հբգ.* snar(a)ha *«թակարդ», հհիւս.* snara *«ոլորել, գալարել», անգսք.* snearh, sneare *«չուան, լար, թակարդ», յն.* νάρκη *«թմրիլ, կարկամիլ, անդամալուծութիւն»: Նոյն արմատի* snerg- *ձեւից են անգսք.* ge-sneorcan *«խորշոմիլ», հհիւս.* snerkia *«խորշոմեցնել, կնճռել»: Հնխ.* snerq- *և* snerg- *աճած են* sner- *«ոլորել, գալարել» արմատից, իսկ այս էլ* snē- *«մանել, հիւսել» պարզական արմատից, որի վրայ տե՛ս* ներարդ (Walde 515, Boisacq 657, Pokorny 2, 700): *Հայերէն* ներգև *ձևի մէջ և մասնիկ է, ինչպէս* աղրևմ *բառի մէջ:*

ՆՀԲ լծ. արուգ: *Հիւնք.* ներհինի *բառից: Ուղիղ մեկնից* Lidén, Armen. Stud. 65: Karst, *Յուշարձան 478* արուգ *բառից՝ իբրև* ն–երուգ–և, *և այս էլ ույգուր.* yerik, *չաղաթ.* arik, *օսմ.* arəq, *նակուտ.* yari *«հիւանդ, տկար»:*

ՆԵՐԳԵՒՕՂ *«պարգևիչ». ունի միայն Բառ. երեմ. էջ 235:*

ՆԵՐԳԻՒՆ *տե՛ս* Նապխ:

ՆԵՐԳՈՎ *«վերականգնիչ». ունի միայն Բառ. երեմ. էջ 235, որի հետ նոյն է* ներգրով *«վերնակարգիչ» անդ՝ էջ 235 (նախորդից մի քիչ ցած). երկուսից մին վրիպակ:*

ՆԵՐԳՕՂ *«գաւաճանօղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 235:*

ՆԵՐԿ *«քաւել, յանցանքը շնորհել. թոյլ*

տալ» ՄԳր. Կիւրղ. ծն. «տոկալ, հանդուրժել» Ոսկ. յհ. ա. 30, 35, 42. Խոր. ներեամ *«ներեմ» Ոսկ. Հերոդ.* ներելի *Իմ. ղ. 6. ժգ. 8.* ներումն *Նխ. իմ.* ներողութիւն *Խոսր. Նար.* աննեերելի *Նար. Շար.* ներութիւն *(«ներողութիւն, ներումն» իմաստով) Նար. էջ 219, Պզատ. օրին. 321 և յաճախ։*

ՆՀՔ ներ *մասնիկով Թրք.* yer *«տեղ» բառից, իբր «տեղի տալ»։* Lag. Urgesch. 65 *Հալ.* nesti *«կրել»? Հիւնք.* ներ *«տագերակին» բառից։*

ԳԻՒ.—Ղզ. ներել, *Ախց. Երև. Սեբ.* նէրէլ, *Ագլ. Խրբ. Շմ.* նէրիլ։

ՆԵՐԹԱԿՆ *«մեծ մուկ, rat». դիտէ միայն Քաջունի, Բ. 475 և Գ. 179, առանց վկայութեան։*

ՆԵՐԻՔ *«վարք». ունի միայն Բառ. երեմ. էջ 236։*

ՆԵՐԿ, ո *Հլ. «ներկ» Բրս. մրկ. Յայտմ. Գնձ. որից* ներկանել *ՄԳր. Ոսկ. ես. Ծփր. ծն. կամ* ներկել *Սեբեր. Ոսկ. մ. բ. 5. Վեցօր. 152 կամ* ներկուլ *Ոսկ. Հռոմ. 326.* ներկագործ *Արծր.* ներկած *Մանդ. Շար.* ներկածոյ *Խոր.* ներկուած *Ծփր. Թգ. Նղիշ.* ծիրանաներկ *Եւս. պտմ.* աննեերկ *Մանդ.* երանգաներկութիւն *Փիլ. նխ.* երփնաներկ *Մծբ.* իմաներկ *Գէ. ես.* լուսաներկ *Մագ.* ծաղկաներկ *Փիլ.* սեաներկ *Վեցօր.* մեղսաներկ *Վրդն. օրին. և ապ.* ճարօտաներկ *Սեբեր. Վեցօր. 152 են։ Նոր բառեր են* իղաներկ, *ջրաներկ,* ներկարար, ներկանիւթ, ներկապնակ, ներկատուփ *են։*

Canini, Et. étym. 169 *պրս.* nirkh *«շքեղութիւն» բառի հետ։ Տէրվ. Նախալ. 39 և 102 են մասնիկով հնխ.* rak *արմատից. համմտ. սանս.* raj *«ներկել»,* rakta *«գունաւոր, կարմիր», յն.* ῥέζω = ῥεγιω *«ներկել» են։ Նազարէթեան, Պատկեր 1892, էջ 300 իրաւ է կապում* ներկ = ներկ *և* ներկիս, *սանս.* նիրա *«ջուր» և* ներ *«բոյր»։ Հիւնք. երանգ բառից։* Bittner WZKM 14 (1900), 161 *պրս.* rang *«գոյն» բառի հետ։* Patrubány, *Բանաս. 1901, 29 իբր բնիկ հայ՝ սանս.* ran'ga *«գոյն» բառի հետ՝* ni- *նախամասնիկով։*

ԳԻՒ.—Ղզ. ներկ, *Ախց. Շմ.* նէրկ, *Սլմ.* ներկ', *Ալշ. Մշ.* ներգ, *Երև. Սեբ.* նէրգ, *Գոր. Ղրբ.* նըէրկ, ներկ, *Ագլ. Մկ.* նիրկ, *Սվեդ.* նիրգ.—*բայական ձևով՝ Կր. Մրղ.* նէրկէլ, *Տփ.* նէ՛րկիլ, *Խրբ. Տիգ.* նէրգիլ, *Ագլ.* նո՛ր-կիլ, *ՋԹ.* նիյգիլ, նիրգիլ։ *Նոր բառեր են* ներկուկ, ներկուն։

Ներկէս *տե՛ս Նարկաւ։*

Ներճակ *տե՛ս Հակ։*

ԳԻՒ.—Մշ. նէրճագ, *Երև.* նէճրակ բնկնել *«յամառիլ, հակառակ գնալ». միւսները տե՛ս անդ։*

ՆԵՐՁՈՒՆ. *նորագիւտ անաստղ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 134՝ անխմանալի մի ոտանաւորի մէջ. Ներձուն նպաստ նաջան նեռին նարին կիզողական (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 175)։*

ՆԵՐՁԱՆԱԿ *«քերթող կամ տէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 236։*

[ՆԵՐՏ. *այս բառը մէկ անգամ գործածուած է Բուզ. դ. 22 (Եմուտ ի ներքոյ փղին, հարկանէր զներտս փղին և անդէն ընկենոյր զփիղն) և երեք անգամ Մագ. Թղ. բ, է, կբ. (Որք յայգւոյ անպտղացեալք և ի ներտից արտակացեալ.—Զներտս տրամիքս խոկաս կակղացուցանել.—Անփղաբեր և յայլոց յոգնատեսիլ ներտից և արմատոց հերքեալ. էջ 106, 72)։ Առաջին օրինակում ներկայացնում է մարմնի մասերից մէկը, միւսներում «արմատ» նշանակութիւնն ունի, որ կարելի է հասկանալ «բոյսի ջղաթելերը», ինչպէս յն. ἶς «նեարդ, ջիղ. 2. բոյսի ջղաթելերը»։ ՆՀՔ մեկնում է «ներքին և սերտ մասն մարմնոյ և արմատոյ են. որպէս նեարդ, ջիղ, կաշի. կեղև կամ ծուծ, ամրութիւն». իսկ ՋԲ ուղղակի նոյն է դնում նեարդ բառի հետ։ Այս բացատրութիւնը ճիշտ է, որին իբրև ապացոյց կարող ենք յիշել Պզատ. տիմ. 161 և 163 հետևեալ վկայութիւնները. Միսք և ջիլք յարենէ լինին. ջիլն իսկ նեարդիցն... և միսքն մածեալ յարենէն յայնմանէ՝ որ մածի անջատելով ի ներտից. Ոչ ևս դարձեալ ի ներդիցն արիւն և ի ջղացն մեկնելով. տե՛ս և էջ 165՝ վեց անգամ յիշուած. այս բոլորի դէմ բնագրում գրուած է ἶς, ἰνῶν «ջիղ, նեարդ»։]

ՆԵՐՑԻԿ. *անաստղ բառ. երկու անգամ*

գործածում է Քևր. քերթ. «Եւ ևս քան զայս պաճարանս գտցուք՝ զներցիկ բանին առ մարմին միահամեալ խառնմամբ՝ անտրոհելի բաղազանեալ... ծանի՛ր զներցիկ բանին» ՆՀԲ մեկնում է «իբր ներքին իսկութիւն կամ իմաստ կամ հաւաստիք»։—Անշուշտ նոյն է վերի ներացիկ ձևի հետ։

Ներքին տե՛ս Ներ։

+ՆԵՐՔԻՆԻ (–նոյ, –նեաց) «կուսած. 2. կանանոցի կուռա պաշտօնեայ կամ վերակացու» ՍԳր. Բուզ. որից ներքինանալ Կանոն. ներքինացուցանել կամ ներքինեցուցանել «կուսել» Շիր. քրոն. ներքինապետ Դան. ա. 3—18։

=Կազմուած է ի մասնիկով՝ հյ. ներքին բառից, նմանողութեամբ կամ թարգմանաբար իրաննանից. համմտ. սոգդ. 'ntryk (կարդա՛ antarikə) «ներքինի. 2. կուսած», կազմուած իրան. antar>պրս. اندر andar «մէջը» բառից։

ՆՀԲ, Ինճիճեան, Հնախ. Բ., ՆՀԲ ներքին բառից։ Տէրվ. Altarm. 35 ի մասնիկով ներ=սանս. nar, զնդ. nar, պրս. nar «այր մարդ» + քին (իմա՛ կին) բառերից։ Հիւբշ. ZDMG 30, 774—9 ծիծաղելի է գտնում այս մեկնութիւնը. որովհետև այս պարագային պիտի ունենայինք *ներակնի. բառը գալիս է *ներէնի նախաձևից։ Müller SWAW 88 (1877), 14 ներ «մէջ» բառից և ո՛չ թէ սանս. nara «այր»+կին։ Հիւնք. յն. ἀνενεργής «անկարող» բառից։ Ուղիղ մեկնութիւնը վերևի ձևով տուաւ Meillet REA հտ. 2, էջ 5։

ՆԵՐՔՆԱՐ «մի տեսակ բոյս, anthyllis» Գաղիան. առ Ոսշք. ունի միայն ՀԲուս. § 2197. անստոյգ բառ։

Ներքոյ, Ներքս տե՛ս Ներ։

—ՆԵՑՈՒԿ «մոյթ, յինարան» Ել իխ. 38. Դ. թագ. է. 23. Փիլ. ևն. որից ընդդիմանեցուկ Պիսիդ. վրդն. ծն. ներցուկաւոր, աննեցուկ (նոր բառեր). անստոյգ ձև է՝ արմատից կազմուած՝ աննեց «աննեցուկ» երդն. երկն. ոտ. (էջ 26)։

=Կազմուած է նի մասնիկով յեղուլ բայից, իբր *նի–յեց–ուկ։

Ուղիղ են մեկնած ՆՀԲ, Պատկ. Изслѣд. 14, Meillet, Rev. crit. թրգմ. Բազմ. 1898, 120 ևն։

ՆԵՒՍ կամ **ՆԷՆՍ** «լաստ». ունի միայն Բառ. երեմ. էջ 236 և 237. երկու ձևերից մին կամ միւսը սխալ։

***ՆԵՔԱՒՈՎ** «խեղ կամ կաղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 236 և 237 ներքաւով և եէ հայով ձևերով. սրանց աղբիւրն է Եւագր. 238, որ գրում է «տային Փարաւոնի նեքաւովր՝ կաղ Փարաւոնի»։ Նոյն բառը շատ աւելի ուշ գործածում է Զքր. սարկ. Ա. 4՝ «անկարող, անճարակ, տկար» իմաստով. «Եւ նեքաւով Զաքէոսս ի պախարակելոյ ազատ արարէք»։

=Եգիպտացոց Նեքաւով թագաւորի անունն է=հբր. נְכֹה Nəkō, եգիպտ. Nkɜw, Nekôu. ասուր. Nikū, Nikkū, յն. Νεχαώ, որ հին մեկնիչները հաննելով հբր. נְכֵה nēke «հարուածեալ»=ևթով. ՀԱՔՔ nakaya, արաբ. نكى naka, ասոր. ܢܟܐ nəkā, ասուր. nakū «վնասել» արմատից, մեկնել են «կաղ կամ հարուածեալ»։—Աճ.

ՆՂԱՂ «սարում բուսած մոշենիայտ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2198։

***ՆՂԱՐ** «վտիտ, ճղոտած». մէկ անգամ ունի Մանդ. գ. «Մատուցանէք ի սեղան իմ հաց պղծութեան, զխոտանն և զյափշտակեալն և զանօգուտն, այսինքն զնզարն» (այլ օր. զնիճարն). մէկ անգամ էլ Սոկր. 668. «Ոչ տանելով սառնամանեացն, քանզի յոյժ նզարս տկար մարմին ունէր»։ Նոյն բառն ունինք և նիզար ձևով, որ գիտէ Բռ. երեմ. էջ 235՝ ներգև բառի բացատրութեան մէջ (տպ. նիղար, բ տպ. նիզար) և էջ 302՝ վտիտ և նիճար բառերի մօտ։

=Պհլ. nizār, պրս. نزار nizār «նիհար, վտիտ, չորացած». հին հայ ձևն է նզար՝ համաձայն սղման օրէնքի, նոր ձևն է նիզար՝ համաձայն պարակերէնի։—Հիւբշ. 203։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Գիհ.—Ըստ ՆՀԲ ամկ. մզար։

***ՆՂՈՎ**, ի հլ. (մանաւանդ անհգարար գործածուած) «անէծք, բանադրանք» ՍԳր. Եփր. ծն. որից նզովել ՍԳր. նզոված Եփր. յես.

նզովաձ *Փիլ.*—նզովք և անէծք *համանիշների տարբերութեան վրայ տե՛ս Տաթև. հարց. 388։*

=*Պհլ.* *nizav *ձևից, որ աւանդուած չէ. այս ձևը կազմուած է* ni *մասնիկով (վերևից ցած շարժում ցույց տուող)* zu «*գոչել, կոչել, կանչել*» *արմատից. համմտ. զնդ.* zu «*գոչել, աղոթել*», zava «*գոչիւն*», zbā «*գոչել, քարոզել*», nizbayemi «*բղաւել, գոչել*»= *սանս.* hu, hava, hvā, hváyāmi, *պրս.* ōj; zāva «*ողբ, լալիւն*»։ *Ըստ այսմ հյ.* նզով *նշանակում է բուն «վերից ցած՝ մէկի վրայ կանչել»։ Իրանեան բառը պատկանում է հնխ.* g'haṷā-, g'haṷ- «*գոչել*» *արմատին, որի այլ ժառանգորդներն են հսլ.* zovą, zūvati, *բուլգար.* zová, *սերբ.* zòvêm, *հչեխ.* zovu, zvàti, *ռուս.* зову, звать, *սլով.* zòv «*կոչ*», *լիթ.* žavėti «*կախարդել*». *լեթթ.* zavet «*կախարդել*» (*սակայն բուն «անիծել»*), *հիռլ.* gutl «*ձայն*» (Trautmann 367, Pokorny 1, 222, 529 *և* 563)։ *Հայերէնը փոխառեալ է իրանեանից, որովհետև բնիկ լինելու դէպքում պիտի ունենայինք՝ ձաւ կամ *ձնաւ, և կամ եթէ* g'h *համարենք երկու ձայնաւորի միջև,* *նզաւ, բայց ո՛չ նզով, ըստ որում հնխ.* au *տալիս է հյ.* -աւ, *իսկ իրան.* -av>*հյ.* -ով, *համմտ.* խոսրով<*զնդ.* husravah-, դսրով< *զնդ.* *dušsravah-, *պազ.* dusrav։

Müller SWAW 42. 253 *և սրանից էլ* Justi, Zendsp. 127 *զնդ.* zbā, nizbayemi *ձևերի տակ։ Հիւրշ.* KZ *23, 24 յիշում է սանս.* hu, *զնդ.* zu, *հսլ.* zovą «*գոչել*»։ Lag. Arm. Stud. § 1616 *մերժում է այս բոլորը՝ ձևի և նշանակութեան տարբերութեան պատճառով։ Տէրվ. Նախալ. 81 սանս.* hu, *զնդ.* zu, *հսլ.* zvatĭ, *հյ.* գովել, գգուել, զգուել *ձևերի հետ։ Հիւնք.* անզովոզ *բառից։* Osthoff BB 24, 179 *և* Meillet MSL, 11, 395 *ձևակերպում են վերի ձևով։* Meillet *(անձնական) գրում է թէ Հիւրշ.* Arm. Gram. *բառս չյիշելը պատահական մոռացման արդիւնք է։ Ըստ* Osthoff *բառս բնիկ հայ է՝* ո *ձայնի պատճառաւ, բայց ճիշտ այս ո-ի պատճառաւ է, որ բառս փոխառեալ է, ինչպէս ցոյց տուինք վերը։*

Գիւռ.—*Սլմ.* նզովել, *երև.* նզովէլ, *Զթ. Շմ.* նզովիլ, *Մշ.* նզովկ, *Ագլ. Տփ.* նզոֆ, *Ղրբ. մզովա՛ծ (բայը առանձին չի գործածւում)։*

ՆԶՐՈՒՎԱՐԴ *(կամ սխալմամբ* նզրուվասու *գրուած) «ճիճի, դափնեվարդ, լա.* nerium» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2199։*

*ՆԷԵՂԱՍ, ի–ա *հլ. «մի տեսակ անծանօթ թռչուն է». մէկ անգամ ունի Յոբ. լԹ. 13. «Թևք թռուցելոց նէեղասաց». մեկնուած է զանազան ձևերով. այսպէս՝ «Նէեղաս՝ հաւ է ի Միջագետս ասուրց, որոյ թևքն վայելուչ և թռչելն գուարթարար. Ակիղաս բազէ ասէ, և այլք մարախ. այլ նա այլ է և սոքա այլ». Հին բռ.։*

=*Եբր.* נְעֵלָסָה ne'elāsā *բառն է, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը, անստոյգ նշանակութեամբ. ոմանք համարում են «սիրամարգ» (այսպէս Ս. Գրքի անգլ.* New York 1894 *թարգմանութեան մէջ գրուած է* «peacock, *սիրամարգ*»), *այլք «ջայլամն» (այսպէս Պօլիս 1895 Ս. Գրքի գրաբար Հրատարակութեան մէջ, ծան. «Եբր. թևք ջայլամանց ցնծան»)։ Ըստ* Gesenius *17 րդ տպ. էջ 594 բառս ծագում է* עלם 'ls *«վայելել» արմատից և նշանակում է «թըռչունների թևերն ուրախ թափահարելը»։ Բառս յն. տառագարձուած է* νεέλασσα, νεέλασα, *որից էլ հայ ձևը։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։ Վերջին անգամ տե՛ս Macler *ՀԱ 1927, էջ 615։*

ՆԷԵՍԱ. «անծանօթ մի թռչուն է». մէկ անգամ ունի Յոբ. լԹ. 13. «ՕԹէ յղասցի ասիդն և նէեսայն». մեկնուած է զանազան ձևերով. համմտ. «Ակիւղաս տառիղն թարգմանեաց զնէեսայն. Ոսկիփ.—Յղասցի ասիդն և նեսայն. Առանց սերման երկու իրս լինի ի նմանէ. սողուն է նա յերկրին փղշտացւոց սևագոյն կերպիւ. Ասիդն զձուն ընդ բերանն փսխէ. և բուսանի ծառն՝ որ կոչի ասիթ. և անտի կենդանակերպի նէեսայն. և ծառոյն ոսաքն գործին և տերևքն են ոսկեզոյնք և ոսկեթելք». Լծ. կոչ.։ ՆՀԲ կիսատ է բերում Լծ. կոչ. վկայութիւնը. պէտք է շարունակել այսպէս. «...տերևքն են ոսկեզոյնք և ոսկեթելք սրմակերպք, որ ի տունս թագաւորաց հագիւ

գտանին։ Եւ ասիդն որ էարկ զձուն՝ մոռացաւ թէ ուր ցրուեաց. զի ոչ ետ նմա բաժին իմաստութեան։ Ուծացաւ յորդւոց իւրոց իբր թէ ոչ յիւրմէ։ Քանզի զորդիան իւր ինքն ոչ սնուցանէ. այլ զձուսն զոր արկանէ, անտի բուսանի ծառ, որ կոչի ասիդ. և անտի կեն-դանակերպի նէեսայն առանց սերման ա-մուսնութեան» (Լծ. կոչ. էջ 110—111)։

=Սբր. נֵצֶץ noṣā բառն է, որ գործա-ծուած է բնագրի նոյն տեղում և նշանակում է «թռչունի մեծ փետուր» (Gesenius 15րդ տպ. էջ 488 և 17րդ տպ. էջ 494, 517). ըստ այսմ ունինք անգլ. թարգմանութեան մէջ (New York 1894) «or wings and feathers unto the ostrich», Պօլսոյ 1895 թ. հրատա-րակութեան մէջ «սբր. միթէ իցէ՞ն նման թևոց և փետրոց արագլի»։ Յունարէնում ամ-բողջովին ձևափոխուելով դարձել է «ἐάν σκλλάβῃ ἀσίδα καὶ νέσσα (այլ ձ. νεέσσα)», որից և հայերէնը։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։ վերջին անգամ Macler ՀԱ 1927, 615։

Նէշու տե՛ս Նիշուղ։

ՆԺԱԿԱՆ «տէր». տե՛ս նամակ բառի տակ։

ՆԺԱՐ, ի հլ. «կշռի աշք, թաթ» Իմ. ժա. 23. Բրս. Հայեաց. Նար. Մաշկ.։

=Նոյն է վրաց. ნიჟარის «յախճա-պակի, ճենապակի», ნიჟარა «խե-ցեմորթի կեղևը կամ խեցին, մարգարտի պատեանը, սադափ» բառերի հետ։ Նահապե-տական կեանքում նժարը խեցեմորթի մի խեցի կամ մի կեղև էր. հմմտ. յն. πλάστιγξ «ոստրէի կեղև. 2. կշիռքի նժար»։ Ըստ այսմ հայ բառի նախնական նշանակութիւնն է «խեցի»։ Բայց որովհետև այս իմաստը չը-կայ հայերէնում, իսկ վրացերէնի մէջ էլ «նժար» իմաստը գոյութիւն չունի, ուստի երկուսն էլ բխում են մի երրորդ աղբիւրից, որ կարող է լինել կա՛մ խալդերէնը և կամ թերևս (ծ-ի պատճառաւ) կորած իրանեան մի ձև—Աճ.

Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. 139 «Թերևս պրս. նիզար»։ (Այս բառի վրայ տե՛ս նզար)։

***ՆԺՊՆՀ**, ի հլ. «պանդուխտ» ՍԳր. Բուզ. Նա. պտմ. գրուած է նաև նշդեհ Սիր. սբր. 224. Նորագիւտ Ա. մնաց. ժզ. 19. որից նշժ-դեհիլ Ոսկ. ես. նժդեհաճալ Արծր. նժդեհու-կից Բ. կոր. ը. 19։ Հոմանիշն է պանդուխտ. երկուսի տարբերութիւնն այն է, որ նժդեհ շեշտում է օտար երկրի մէջ բնակութիւն, իսկ պանդուխտ օտար տան մէջ բնակութիւն. սրա համար է որ Ծն. իգ. 4 և Ա. պետր. բ. 11 յն. πάροικος καὶ παρεπίδημος թարգմանուած է պանդուխտ և նժդեհ. նոյնն են հա-մատատում նաև պանդխտանոց բառը և նժ-դեհ բառի ծագումը։

=Պհլ. *niždeh «պանդուխտ, տարաշխար-հիկ» բառից, որի հին ձևերը պիտի լինէին հպրս. *niždahyu-, զնդ. niždan'hu-, կազ-մուած niž «արտ-, դուրս» նախդիրով՝ dahyu-, dan'hu-, deh «գաւառ, երկիր, դեհ» բառից։ Այս բառերը աւանդուած չեն իրան-եան գրականութեան մէջ, բայց կան ուրիշ մասնիկներով՝ զնդ. uz-daẖyu- «տարագիր», antarə- daẖyu-, ādaẖyu- «իր երկրում ապ-րող», սոգդ. 'ntyw (=*an. dahyu-) «աք-սորական», իբր հյ. աե-դեհ։ Հյ. նժդեհ իր ե ձայնաւորով մատնանշում է պարթեւական բարբառային մի ձև, որ այլուստ ծանօթ չէ մեզ։—Հիւբշ. 203։

Windisch. 21 դեհ բառից։ Böttich. ZDMG 1850, 359, 183 սանս. nir և dasya բառերից, որոնք վերի ձևերի հա-մապատասխաններն են։ Lag. Urgesch. 598 das արմատի տակ։ Նոյն, Btrg. baktr. Lex. 26, Տէրվ. Մասիս 1882 յու-նիս 24 վերի ձևով։ Հիւնք. պրս. նիսբ «չիք» և դեհ բառերից. յիշում է նաև նաշբա «անօթի, քաղցած»։ Ուղիղ մեկ-նութիւնը վերջին անգամ Meillet REA 2, 233։

Փոխ.—Վրաց. ნაშდევი նիշդեվի «նժդեհ» (տե՛ս Մառ, Հայ-վրաց. յարաբերութ. էջ 41)։

ՆԺՈՅԳ, ի հլ. «ընտիր ձի» Ա. մկ. զ. 35. Ոսկ. Սբր. բ. 471. տիմ. 93 (գրծ. նժուգօֆ), Բուզ. Փարպ. որից նժոյգաձիգ «ձիապան» Արծր. նժուգաւոր Ոսկ. բ. տիմ. 207 (չունի ՆՀԲ). գրուած է նաև նոյժիկ ՀՀԲ, նշոգ ԱԲ, նժոյմ և այս էլ յղնակի կարծուելով՝ շինուած է սեռ. նժոյից ՆՀԲ։

Ինճիճեան, Հնախ. Ա. 197—200 պրս. նէզիճ «cheval de main, *եէտէք» և յոյն ու հռովմայեցի մատենագիրների նիսեաեան կոչած ձիերի տեսակը (նոյնը նաև Նորայր, Կորիւն վրդ. էջ 338. բայց ո՛չ ԳԴ և ո՛չ Կամուս չգիտեն նման մի պրս. բառ)*։ Lag. Urgesch. 355 առոյգ *բառի հետ սանս.* ōjas *«ոյժ» ձևի հետ։ Հիւնք.* ընկոյզ *բառից է հանում։ Արշէզ ՀԱ. 1896, 268 և մասնիկով* զոյգ *բառից։ Մառ,* Яфет. сбор. 1, 49 *ջուրի բառին է կցում՝ իբր* ն–ժուգ։ Nyberg, Hilfsbuch *2, 134 դնում է<իրան.* *nižaugah- *ձևից, իբր «արագ, ուժեղ (ձի)»։*

ՆԺՈՒԱԳ *«հահանդ, մաղմաղ, թոյլ (կըրակ)». իբր մհյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 535 աւ կենդանի է Մոկաց գաւառակաւում՝* նժվաղիլ, մժվաղիլ, մժղաւիլ *«նուաղիլ, աղօտանալ (աստղը, լոյսը)» ձևերով։*

ՆԺՈՒԼԵԼ *«արիւնաքամել, նժժել». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 237, որի հետ նոյն է* նժուրել *«նեղել, տառապեցնել» ՓՒ։*

*ՆԻԱՁ *«նուազ, կարօտ, պակաս» եզն. խոր. գ. 42. լմբ. որից* նիազութիւն *Եւագր. Նխ. գծ.* աննիազ *Բ. մկ. ժդ. 35. Գ. մկ. բ. 5.* աննիազական *Կորիւն. Ագաթ.* նիազեցուցանել *«մարմինը պասով տկարացնել»։*

=*Պհլ.* 𐭭𐭩𐭠𐭦 niyāz *«պէտք, կարիք», պազենդ.* nyāz *«կարօտութիւն, պէտք», nyāzīdan «ցանկալ, տենչալ», պրս.* نیاز niyāz *«կարօտութիւն, պիտոյք, աղերս, աղաչանք»,* نیازیدن niyāzīdan *«կարօտիլ և հայցել ըղպէտս»,* نیازی niyāzī *«նիազ, կարօտեալ»։ Համմտ. նաև (ապ– բացասականով)* ապենիազ։ *Պհլ.* niyāz *«պակասութիւն» բառն էլ* Nyberg, Hilfsbuch *2, 163 դնում է իբր զնդ.* ni-āz *«սեղմել, ճնշել». կազմուած* ni *մասնիկով* āzah- *«նեղութիւն, անձկութիւն» արմատից։—Հիւբշ. 105։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀՈ, Müller SWAW 42, 253, Justi, Zendsp. 15 *(զնդ.* az *ձևի տակ)։ Հիւբշ.* KZ 23, 24 *կցում է սանս.* aṃhas *բառին։ Ալիշան, Հին Հաւ. 345 իրան.* նիազ *«ագահութիւն չար ոգին»։*

ՆԻԱՆԴԱԿ, ի–ա *հլ. «տէգ, նիզակ». ունի միայն ՓԲ. անստոյգ բառ. համմտ. նաև* նիւանդակ։

+**ՆԻԳ, ի–ա** *հլ. «դռան ետևը ձգուած սողնակը. 2. գերանները կամ սիւները իրար կապելու համար խոտորնակի ձգուած գերան կամ ձող» ՍԳր. Եփր. դտ. 343. «մեծ և ծանր բաներ շարժելու լծակ, լոմ» Յայսմ. փետ" 14. Նիւս. կազմ. Երզն. մտթ. «ձողաձև կամ գերանաձև լոյս՝ որ երևում է ամպերում» Արիստ. աշխ. «իբրև բանտ ծառայող քարայրանք. latomia» Փիլ. նխ. բ. 48. «սանդիտոռ, հաւանգդաստա» Նոնն. 31. որից* նգաբեկել *«փայտով կամ երկաթով մխտել, ընցցել, խախտել» Ոսկ. Հերոդ.* նգել *«տեղից խախտել» Նիւս. կազմ. Վրդն. ծն. «ճխտել, թխմել» (օր. բարձը բերանը թխմել) Մամիկ. 45.* նգախարխար *Պատմ. աղէքս. Խոր.* կարծրանիգ *Եղիշ. թղմ. 297.* երկաթանիգ *Ճառընտ. պղնձանիգ Գ. թգ. դ. 13։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* kneig²h- *արմատից (սորին* knig²h- *ձայնդարձից), որի նախնական նշանակութիւնն էր «յենուիլ»* (Meillet, Dict. étym. It *էջ 205), յետոյ դարձաւ նաև «փակել» և «ծռել, թեքել»* (Pokorny 1, 476)*։ Ցեղակիցներից համմտ. լտ.* coniveo, conivo *«փակել, յատկապէս կոպերը՝ աչքերը փակել, թարթել, աչք փակել (չտեսնելու տալ), ներողամիտ լինել, համաձայնուիլ, կուրանալ, բոյսի ծիլերը փակուիլ».* nictare *«աչքերը թարթել» (առաջին նշանակութիւնը եղել է «յենուիլ», ըստ վկայութեան* Festus-*ի),* nitor *(հլտ.* gnitor*) «վրան յենուիլ, ուժով թեքուիլ, ճիգ անել, երկնել (ծննդկանի)»,* nisus, nixus *«ճիգ արած, ջանք գործ դրած, յենուող, յենուած (գաւազանի վրայ, ծառի դէմ եկն), հաստատուն», գոթ.* hneiwon, hnaiw, *հիսլ.* hnīga, hneig, hnē, *անգսք. և հբգ.* hnīgan *«թեքուիլ»։ Հայերէնի մէջ ունինք թէ «յենուիլ» և թէ «փակել» նշանակութիւնը, որովհետև նիգը այն փայտը կամ երկաթէ ձողն է, որ դռան ետին յենելով փակում է դուռը։ Լատիներէնի հետ բոլորովին նոյնանում են հյ. գւռ.* նիգ տալ *«սեղմուիլ (կղկղանքը դուրս տալու համար)» =լտ.* nitor «faire des efforts pour aller à la selle *ճիգ գործ դնել կղկղանքը դուրս տա-*

լու համար» և նիֆ տալ «ճիգ անել ծննդկանի՝ երախան արգանդից դուրս քշելու համար»=լտ. nitor «enfanter, երախայ բերել»։—Աճ.

Տէրվ. Altarm. 67 և Նախալ. 90 սանս. nah «կապել», nahana- «գամ, պահանդ, նիգ», լտ. necto «կապել» բառերի հետ հնխ. nagh «կապել» արմատից։ (Ըստ Walde 512 որանց արմատն է հնխ. neg'h-, որ պիտի տար հյ. *նեձ, նոյն իսկ ննջադրելով հնխ. (երկար ē-ով) nēg'h>*նիձ, բայց ո՛չ նիգ)։ Հիւնք. կնճիռ բայից։ Պատահական նմանութիւն ունին արաբ. عنك 'ank, اعناك i'nāk «դուռը փակել», معنم mi'nak «դռան նիգ կամ փականք» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. էջ 106)։

Գիմ.—Ախց. նիֆ «դուռը փակելու համար յետևից դցուած ձողը», խրբ. նիֆ[1], Ագլ. նագ՝ նոյն նշ։—Հին Ջղ. նիկը «ծանր բաներ շարժելու երկաթ ձող, լինգ» (գրուած է նինգ՝ Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկպետ. 1788, էջ 90, 119), Սիփ. նիգ (ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 248), Երև. Բլ. Շիր. լինգ. (ըստ այսմ վերջինիս ծագման ընթացքն է եղել՝ նիգ— և յաւելուածով՝ նինգ —առաջին անգականի տարանմանութեամբ էլ՝ լինգ, ինչպէս բացատրեց Արշակ Տօնեան. դասախօս մեր համալսարանում)։—Թերևս նոյն է նաև Կր. Ննխ. Պլ. նիֆ «մի տեսակ փորկապութիւն, épreinte», նիֆ տալ Ակն. Կր. Մշ. Շիր. Պլ. «սեղմուիլ (կղկղանքը դուրս տալու կամ ծննդկանի՝ երախան արգանդից դուրս քշելու համար), որից Տփ. լիէցնիլ «փորը քիչ քիչ և ցաւով դուրս գալ»։

Փոխ.—Ռուս. լինգ «լծակ» գւս. լինգ ձևից։

ՆԻԳ «գետնափոր հորերի միջի բունաւոր գազը». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Սմբ. դատ. էջ 3 և 30. «Վասն որ ոք զիր հորն բանայ և մարդ ածէ ի ներք՝ նա նիգն սպաննէ. Ու մարդն ի նզէն խեղդվի»։

Գիմ.—Հոռ և Պարսկահայք ունին նիֆ «ծանր և թանձր օդ՝ որ գոյանում է գետնափոր տների, հորերի մէջ ևն» (Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 503)։

*ՆԻՁԱԿ, ի-ա հլ. «տէգ, գեղարդ. 2. լայնաբար՝ գեղարդի բունը, տէգի կոթ. 3. նիզակաձև խնձորով վահան?» ՍԳր. որից նիզակակից «զինակից, կռուի դաշնակից» ՍԳր. Ագաթ. նիզակաբեկ Եզեկ. լթ. 9. նիզակաբուն Ծիր. թգ. Բուզ. նիզակատէգ Բուզ. ե. 37. Փրպ. (այսպէս ուղղել նաև Մծբ. էջ 359 նիզակատեղ գրչութիւնը՝ ըստ ՀՍ. 1911, 502). նիզակաւոր Նորագիւտ Ա. մնաց. ժբ. 8, 24, 34, Բ. մնաց. ժդ. 8. Բուզ. նիզակընկէց Եւագր. նիզակագերաճղի Նոնն. 56. նիզակակցութիւն (նոր բառ) ևն։

=Պհլ. nēzak, մանիք. պհլ. nīzag (Salemann, Man. Stud. 3AH 8, 100) «աշտեայ» բառից. հմմտ. պազ. nēža «կարճ տէգ, սուին», պրս. نیزه nēza «տէգ, սուին», كيزك nezak «կարճ աշտէ՝ զոր կրեն ի ձեռս», nēza-var «սունաւոր», զնդ. naēza «ծայր, մանաւանդ ասեղի» (Bartholomae, Altir. Wört. 1037): Իրանեանից են փոխառեալ նաև բելուճ. nēza «նիզակ», ասոր. ܢܝܙܟܐ nīzkā «աշտեայ, նիզակ», արաբ. نيزك naizak «կարճ տէգ», արևել. Բրք. نايزا naïza «սուին»։ Պհլ. nezak ձևը Մարքվարթ REA 8 (1928), 213 մեկնում է իբր <*naižak <naδ-čak, որ *naδ>nay «եղէգ» բառի նուազականն է. այսպէսով նիզակ նշանակում է բուն «եղէգնիկ». հմմտ. նետ, որ բուն նշանակում է «եղէգ»։ —Հիւբշ. 204։

Նախ Schröder, Thesaur. 46 դրաւ արաբ. naizak բառից փոխառեալ։ ԳԴ պրս. նիյզէ։—Նոյնը յիշում է նաև ՆՀԲ։ Böttich. Rudim. 47, 159, Arica 74, 216, Müller SWAW 42, 253, Lag. Ges. Abhd. 65, 217, Հիւբշ. KZ 23, 403 պրս. nēza։—Մորթման ZDMG 31, 423 իրանեան ձևերի հետ նաև բևեռ. nizabulu «կոթող», որ համարում է բարդուած նիզակ+յն. ὀβελός «կոթող» բառերից։ Հիւնք. նպրս. նիյզէֆ և հպրս. նիյզաֆ!

Փոխ.—Թրք. գւս. S. müzeg «նիզակ» (տե՛ս Բիւր. 1899, 799), որ շատ կասկածելի է։

Նիզար տե՛ս Նզար։

*ՆԻԼ «լեղակ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2201։

=Պրս. نيل nēl, նոր արտասանութեամբ nīl, nīyl «լեղակ»։ Յագումը տե՛ս լեղակ բառի տակ։—Աճ.

***ՆԻԼՈՒՄ** «մի տեսակ հանքային նիւթ. disthéne, որ է silicate d'alumine, ռուս. кіанитъ». յետին ժամանակի բառ. գիտէ միայն Պատկ. Драгоц. камни, էջ 28։

=Պրս. نيلم nīlum? նոյն նշ. (բառս չը-գիտեն ո՛չ Գ և ոչ Կամուս)։

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

***ՆԻՀ** «սակ, վաճառելի ապրանքների վրայ պետութեան կողմից դրուած գինը» վրդն. խր. Տաթև. ամ. էջ 139 (երկու անգամ). գրուած նաև ՆԻՒՐ Առաք. յծ. սահմ. 506. ՆԵՒ Սմբ. դատ. 163, 164 (այլ ձ. ՆԵՒՐ)։

=Պրս. نرخ nirx՝ նոյն նշ. (Horn § 1027. Будаговъ 2, 282. գործածական է այժմ էլ Պարսկաստանում (Մակու կն) և արտասանւում է nərx ըստ Բագ. Աւդալբէկեան). որից փոխառեալ են նաև վրաց. ნორხი նիխոր կամ ნორი նիրի «makca, սակագին», քրդ. nərx, nəxər «սակագին»։—Աճ.

ՆՀՒ (յաւել.) պրս. ՆԻՒ, ՆԻՒԱՏԷՆ «դնել» բայից։

***ՆԻՀԱՐ** (ի-ա հլ. ըստ ՆՀՒ, բայց առանց վկայութեան) «վտիտ, լղար» Նիւս. բն. Շիր. Յայսմ. Ոսկիփ. որից ՆԻՒԱՐՈՒՄՆ Սոկր. ա. 1. ՆԻՒԱՐԱՆԱԼ, ՆԻՒԱՐՈՒԹԻՒՆ Ագ։

=Պհլ. *nihār կամ *nehār? հմմտ. պրս. نهار nihār (կամ نهار nahār, ناهار nāhār) «պակասումն, նուազումն մարմնոյ, անօթութիւն»։—Հիւբշ. 203։

Գ պրս. ՆԷՒԱՐ, ՆԱՒԱՐ, ՆԻԶԱՐ: Նազըճեան, Արևելք 1884 նոյ" 16 դրաւ առնս. har, ḥr արմատից։ Տէրվ. անդ, դեկտ. 6 պարսկերէնից։ Հիմնք. պրս. նիզար բառից։

Գիւղ.—Կր. Տփ. ՆԻՒԱՐ, Սեբ. ՆԻՒԱՐՆԱԼ։

ՆԻՆՋ «քուն, թեթև քուն» Սղ. Ճլա. 1. Առակ. ղ. 4. որից ՆԵՆՋԵԼ «քնել» ՍԳր. «մտաՆել առ կին» ՍԳր. «գադարիլ, հանդարտիլ» Եփր. օրին. «մեռնիլ, վախճանիլ» ՍԳր. Ոսկ ՆԵՆՋԵԱՄ «քնեմ» Եփր. աւետ. ՆԵՆՋԵՑԱԼ «մեռնել, մեռեալ» ՍԳր. ՆԵՆՋԵՑՈՒՑԱՆԵԼ ՍԳր. Եփր. Թգ. դժուարանինջ Պղատ. օրին. Խաղցրանինջ Արծր. ՆԵՆՋԱՐԱՆ, ՆԵՆՋԱՍԵՆԵԱԿ (նոր բառեր), ԱՆՆԵՆՋԵԼԻ (հրեք և միայար) «չքնող» Ագ։

Պատահական նմանութիւն ունի հինդուստ. nīnd «քուն», որ գալիս է սանս. nidrā «քուն» բառից (արմատը drā՝ ni մասնիկով)։ Klaproth, Asia pol. 348 թիբեթ. niig, 104 բենգալ. niin և սանս. niszdana։ Հիմնք. զննել բառից։ Patrubany SA 1, 210 հնխ. *ni-nidh-jo ձևից. հմմտ. սանս. nidrā «քուն», ni-nidrā-su «քուն, քնկոտ», ni-dha-na «վերջ, մահ»։

ԳԻՒՒ.—Գոր. Ղրբ. ՆԵՆՋ, Երև. Մշ. ՆՈՒՆՋ, բայական ձևով՝ Երև. ՆԵՆՋԵԼ, Գոր. Ղրբ. ՆԵՆՋԻԼ, ՋԲ. Տփ. ՆԵՆՋԻԼ, Դվ. ՆԵՆՋԷԼ, ԼՆՋԷԼ, Խն. Մշ. ՆԵՆՋԱԼ, Շմ. ՄՆՋԻԼ, Սւդ. ԼՆՋԻԼ «քնել, ննջել»։ Նոր բառեր են ՆԱՒՆՈՒՆՋ Խն. Մշ., ՆԵՆՋՈՒԿ Խն. «թեթև քուն», կրկնութեամբ ՓՈՒՆ-ՆՈՒՆՋ Երև. Ղզ., ՓՆԵՆՋԵԼ Բբ.։

***ՆԻՇ** «կէտ, հետք, նշան» Եփր. ծն. Խոր. Յճխ. «նշաւակ» Մագ. գամագտ. (տե՛ս ՀԱ 1911, 665). որից այս ՆԻՇ «այս ինչ, այս ինչ տեսակ» Եղն. 46. ՆՇԵԼ «նշան դնել» Գնձ. ՆՇԱՒՈՐԵԼ Արծր. ՎԱՐԺԱԿԱՆԻՇ Բուզ. դ. 2. ԲՈՑԱՆԻՇ Շար. ԽԱՉԱՆԻՇ Յհ. իմ. հկեղ. Մաշտ. ԿԱՅԾԱՆԻՇ Մագ.։

=Պհլ. *niš բառից, որ թէև աւանդուած չէ իրանեան գրականութեան մէջ, բայց նրա գոյութիւնն են ապացուցանում՝ հայերէնից ջոկ՝ իրանեանից փոխառեալ ասոր. ܢܫܐ nīšā «նշան, դրօշ, նշանակութիւն, պատահումն, նպատակ, օրինակ, նիւթ» և քրդ. نشی niši «նշան, ցուցմունք»։ Սրանց հետ հմմտ. նաև նշան, նշանակ։—Ոմանք ասոր. ܢܫܐ nīšā, ܢܝܫܐ nīšā «նշան» բառը կցելով եբր. אֹת nēs «նշան, իբր նշան տնկուած ձող», արամ. nissā, nesā «նշան, հրաշք» բառերին, համարում են բնիկ սեմական, փոխառեալ ասուր. nīšu «կանգնեցնել, բարձրացնել (ձեռք, աչք՝ յաղթ., յերկինս)» ձևից (տե՛ս Gesenius[17], 507, Delitzsch, Assyr. Hndwb. 485)։ Այս պարագային հայը փոխառեալ կլինի ասորականից։—Հիւբշ. 204, 312։

ՆՀՒ վրաց. ნი՛ში: Windisch. 42 սեմ. nēs ձևից։ Lag. Ges. Abhd. 66 ničyu արմատից, որ անցել է ասորերէնի։ Հիմնք. նշան բառից։

*ՓՈԽ.—Վրաց. ნიში նիշի «նիշ, նշան, հրաշք», ნიშა նիշա «անասունների ճակատին սպիտակ նշան», Թուշ. ლიშა լիշա «նշան»։ (Վրաց. «հրաշք» նշանակութեան համար համեմատել Հյ. նշան «նշան և հրաշք»)։

*ՆԻՇՈՒԿ կամ ՆՇՈՒԿ «ալոճ» Բժշ. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2208, § 3374 և յաւել. § 188. սրան պէտք է կցել նաև նէշու, որ Բժշկարանից առնելով յիշում է ՀԲուս. § 2200՝ իբր անծանօթ մի պտղեղէն։

=Պրս. نیشو nīšū կամ ڈشیز nīšə «տեսակ ինչ շլորոյ»։—Աճ.

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), յետոյ Նորայր ՀԱ. 1923, 498։

ՆԻՍ «օդի շնչելը,, փչիւն, քամի». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մագ. լ. «Ստորիչեալ ընդ լուսանցան մանրամաղ փոշետեսակութիւն վսամական սթափառումն ի նսէ օդոյն զմիմեամբք հոլովեալ». ուր բացառական ի նսէ կարող է ենթադրել ուղ. *նիս կամ *նուս։

Բառիս մասին տե՛ս նսեհ ձևի տակ՝ ՆՀԲ-ի կարծիքը։ Կայ և արաբ. نسع nis‘ «հիւսիսային քամի» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 679)։

*ՆԻՍԱՆ «հերրայական առաջին ամիսը՝ որ սկսում է գարնանային հասարակածից» ՍԳր. Կոչ. 280. Փիլ. եկ. ա. 1. Բրս. մրկ. լծ. պրպմ. 611, որ և նիսեան «մարտ» Մագ. Թղ. 135։

=Եբր. נִיסָן nisān բառի յունարէն νισά (Sophocles 784) տառադարձութեան միջոցով։ Եբրայական բառն էլ փոխառեալ է բաբել. nisannu ամսանունից, որ է ասուր. 𒀭𒋛𒈨𒌍 ni-sa-an-nu, գաղափարագրով գրուած 𒀭 nisannu «նիսան ամիսը»։ Սրանք հաւանաբար կազմուած են nīsu «սկիզբ, սկզբնաւորութիւն» բառից՝ -ān մասնիկով (Delitzsch, Assyr. Hndwb. 470, Strassmaier, Alphab. Werzeich. 765 և 808)։ Սեմականից փոխառեալ է նաև պրս.>օսմ. نیسان nīsān «ապրիլ» ամիսը։

Ուղիղ մեկնութեան ծանօթ էին նաև հները. համմ. Կոչ. 280. «Արեգ ամիս... առ հերրայեցւովքն Նիսան կոչեցեալ էր»։ Նիսեան ձևի մասին տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 199։

ԳԻՒ.—Մկ. նիսան «ապրիլ ամիսը»։

+ՆԻՍՏ, ո հլ. «նստուածք, դիրք, զետեղման ձև» Օր. ժա. 30. Ոսկ. գաղ. Սփր. թգ. «կայան, աթոռանիստ քաղաք» Ագաթ. «ստացուածք, կալուածք» Եզեկ. խհ. 7. իր. 21. որից նստիլ «նստիլ, բազմիլ, հանգչիլ» ՍԳր. Սփր. եկ. յես. «բնական պէտքը հոգալ» Դատ. գ. 24. նստել «կծկել, ամփոփել, փոքրացնել» Սեբեր. նստոյ տեղի «յետոյք» Ագաթ. Եւս. պտմ. երկայնանիստ խոր. թագաւորանիստ Սղիշ. խոր. զօրանիստ Բուզ. լայնանիստ Ագաթ. Վեցօր. գեղեցկանիստ Փարպ. խոր. լռանիստ Մծբ. սուրբանիստ Ագաթ. գաճանստիլ Ճառընտ. մեծանիստ Վեցօր. նաւանստական Փիլ. նստակլոր «սև բզէզ» (նորագիւտ բառ) Նոր վկ. էջ 317.—զ նախադիրով՝ զնստագոյն «աւելի ցած» ՍԳր. զնրստուն «ցած» Սփր. վկ. արև. 38. զնստուցանել Գ. մակ. գ. 13. Ոսկ. Սղն. ևն։ Սխալ ձև է նստիճ «գահաւորակ» Ոսկ. եփես. ի., որ ըստ լաւագոյն օրինակի՝ պէտք է կարդալ նստի «նստում է» (տես Հիւնք. էջ 92 և ՀԱ 1911, 175)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. nizdo- ձևից, որ կազմուած է ni մասնիկով՝ պարզական sed- «նստիլ» արմատի առորին zd- ձայնդարձից։ Պարզ արմատն են ներկայացնում սանս. सद sad, सीदति sīdati «նստիլ», sádaḥ «կայան, տեղ». զնդ. had, հպրս. had «նստիլ», զնդ. և հպրս. hadiš «բնակարան, պալատ», յն. ἕζομαι «նստիլ», ἕδος «նստարան, կայան», լտ. sedeo «նստիլ», sedo «հանգստացնել», հիւլ. saidim, կիմր. seddu, հիսլ. sitja, գոթ. sitan, հբգ. sizzen, գերմ. sitzen, անգլսաք. sittan, անգլ. sit, հոլլ. zitten, լիթ. sėdu, sėdmi «նստիլ, նրստեցնել», հսլ. sěděti, ռուս. сидеть «նստիլ», հպրուս. sīdons «նստած», այսպէս նաև հսլ. saditi «տնկել», ռուս. садъ «պարտէզ», съдло «համեհ, թամբ» են, իսկ ni-ով աճած ձևեր են սանս. निषादति nišīdati «նրստում է», नीड nīḍá- «դադար, կայան, թրուչունի բոյն», զնդ. nišhiδai-

ti *«նստում է»*, *հպրս.* nīy-a-šādayam *«նրա-ստուցանել»*, *պհլ.* 𐭭𐭩𐭱𐭮𐭮𐭬 nišastan, *պրս.* نشستن nišastan *«նստիլ»*, نشینم nišīnam *«նստիմ»*, *սոգդ.* nista *«նստած»*, *լտ.* nīdus, *հբգ.* nest, *անգլ.* nest, *միռլ.* net, *կիմր.* nyth, *կորն.* neid, *լիթ.* lizdas, *լեթթ.* ligzda, *հսլ.* gnězdo, *ռուս.* гнѣздо *«բոյն»* ևն ևն (Walde 518, 695, Horn § 1033, Boisacq 685, 215, 217, Trautmann 200, 259, Bernecker 313, Pokorny 2, 483—486, Ernout-Meillet 878—9)։ *Այս նոյն արմատից են ծագում դարձնալ հյ.* ատեան, հեծանել. *տե՛ս և տեղի*։—*Հիւբշ. 178։*

Ուղիղ մեկնութիւնը մտածել է նախ ԳԴ, որ համեմատում է պրս. նիշէսթէն *ձևի հետ։ ՆՀՔ նիստ՝ արմատը* ստ, *բստ.* եստ, իստ, աստ, ստան *են, ի բազում լեզուս. որպէս և սանս.* նիշդա՛ *«բնակութիւն».*— նստիմ՝ *պրս.* նիշէսթէն... *լտ.* սէտէ՛րէ, *յն.* էստա՛օմէ *և* գա՛թիմէ, գաթի՛զօմէ, *այսինքն ըստ կամ ի տոր զետեղիլ։* Windisch. 42 *սանս.* nišad: Böttich. ZDMG 1850, 359, 188, Arica 89, 450 *սանս.* nišad, *պրս.* nišastan: Lag. Urgesch. 406 *գնդ.* niš-haδ-: Müller SWAW 38, 571, 595 *և* 66, 275 *սանս.* ni-sad *կամ հին իրան.* nišasti *ձևից։* Justi, Zendsp. 318 *գնդ.* had *արմատի տակ՝ ծանօթ ձևերի հետ։ Պատկ. Изсльд. 105 յատկապէս նստիլ=աֆղան.* ناستل nāstil: *Հիւբշ. KZ 23, 13, 16, 33 հնխ.* sad, sed *արմատներից, իսկ* Arm. Stud. § 220 *վերի ձևով։ Տէրվ. Նախալ. 110 ծանօթ ձևերի հետ՝ հնխ.* sad *արմատի տակ։ Հիւնք. 146* նստիլ՝ *համառօտեալ* նրաստաև *բառից կամ պրս.* նիշէսթէն: *Ա., Բազմ. 1901, 335 ո՛չ թէ* ni+sed, *այլ* ni+sta *«ցածը կանգնիլ»։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. նստել, *Սչ.* նսդել, *Գոր. Երև. Ղրբ. Մրզ. Ննխ.* նստէլ, *Ախց. Կր. Ագլ. Մկ. Շմ. Սվեդ. Տփ.* նստիլ, *Ակն. Ասլ. Խրբ. Պլ. Սեբ. Տիգ.* նսդիլ, *Համշ.* նսդուշ, *Ռ.* նսթիլ, *Ջթ.* նը՝սդը՝լ, *Հճ.* նոսդել.— *(Ջթ. նախաձայնը միջին առամնականերին նմանուելով՝ դառնում է նաև* դը՝սդը՝լ*)։ —նոր բառեր են* նստելատեղ, նստելիք, նստկան, նստման, նստուածք, նստուկ, նրստոտել։

ՆԻՏԱԼ *«չարիք մտածել, չարիք նիւթել»* *Առակ. ժզ. 28. Ոսկ. մ. ա. 9։*

ՆՀՔ լծ. յն. νήθω, *հյ.* նետել, նիւթել։ *Հիմնք. հյ.* նիւթել *կամ յն.* νήθω։

ՆԻՏԱԼ *«տկռելուց հետք».* *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ա. տիմ. 114. «Յորժամ կարի զխորտկօքն գայցեմք, իբրև տիկ ուռուցեալ նիտայցէ որովայնն, զգայրիցի թառանչիցեն տագնապիցէ»։ Աբ ունի* նիտալ *«հռալ, վատուիլ», որ ՆՀՔ չդիտէ։*

ՆԻՏԱՆ. *Նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Մագ. թղ. 154 հանելուկային մի ոտանաւորի մէջ. «Ներսն նամակ նիտան նորին նաքոր անբուժական»։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 175)։*

ՆԻՐ *«վայրի անիսո՞ն» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2203։*

ՆԻՐԵԼ. *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եւագր. 12. «Քանզի եկեսցէ (նեռն) յամայութեան՝ կոչեսցի, ասէ, նիրել»։ Ըստ Համեմատութեան Սարգիսեանի (անդ), յոյն բնագիրն ունի* βδέλυγμα *«սարսափ, զզուանք, գարշանք»։*

***ՆԻՐՀ** *«քուն, մրափ» Սիր. լդ. 1. Երեմ իդ. 31. Եփր. ծն. էջ 11. որից* նիրհել *ՍԳր.* նիրհալ *Եփր. թղ. 360.* նիրհեցուցանել *Դատ. ե. 27.* նիրհումն *Յոբ. լգ. 13. Ոսկ. եզեկ. Եփր. աղ.* խաղցրանիրհ *Ոսկ. երր.* գառնանիրհ *Եփր. խոստ. գրուած է* երհացեալ *«քնած» Տիմոթ. կուզ, էջ 113։*

=*Իրան.* *niδrā- *ձևից, որ թէև առանդուած չէ իրանեան գրականութեան մէջ, բայց ենթադրւում է հյ.* նիրհ = *սանս.* निद्रा nidrā- *«քուն», հինդուստ.* nīd, nīnd *«քուն»,* nindāsā *«քնած», գնչ.* nendir, lindr *«քուն» ձևերի միջոցաւ։ Զայնական փոփոխութեան համար հմմտ. հայ. մուրհակ<իրան.* muhr =*սանս.* mudrā-։—*Հիւբշ. 204։*

Müller SWAW 38, 583, 592 *սանս.* nidrā *ձևի հետ։ Նոյնը նաև Տէրվ.* Altarm. 49։ *Հիւբշ.* Arm. Stud. § 221 *կցելով սանս. բառին, կասկածում է հայերէնի բնիկ լինելու մասին, իբրև բնիկ՝*

*ունենալու էր բառս *նիար կամ *նիրա ձևը. հաւանօրէն իրանեան փոխառութիւն է։ Հիմնք. նոր բառից։*

Գիմ.—Խրբ. նիրիլ «թեթև քնել»։

ՆԻՒ *«մի տեսակ լեռնային բանջար, որ աղն են դնում» Ղրիշ. այլակ. 237։*

ՀԲուս. § 2204 համարում է նուիկ բառի արմատը։

ՆԻՒԱՆԴԱԿ *«դէտ կամ պահպանակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 238։ Համմտ. և նիանդակ։*

+ՆԻՒԹ ո, ի–ա *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «տարբ, բաղկացուցիչ մարմին» ՍԳր. Եզն. Ոսկ. մ. դ. 25. «իր, գոյք, ինչք» Փիլ. Վրք. հց. Լմբ. «առիթ, պատճառ, առարկայ» Երզն. մաթ. գրուած նիւթ Վրդ. առ. 123. որից նիւթել «մանել, հիւսել» ՍԳր. «չար կամ բարի մի բան հնարել» ՍԳր. «հայթայթել, պատրաստել, կազմել» Առակ. ժե. 18. Ոսկ. յհ. բ. 15. Եւս. պատմ. նիւթիչ Վեցօր. նիւթուրիւն Կոչ. 151. նոգենիւթ 84. կթ. չարանիւթ Առակ. ժբ. 20. բազմանիւթ Յոբ. ե. 15. լուսանիւթ Նար. խաւարանիւթ Ճառընտ. կարծրանիւթ Անան. եկեղ. նողանիւթեայ Անյ. բարձր. հրանիւթ Կաղկանտ. նիւթանիւթ Կոչ. 50. Կիւրղ. ծն. նիւթապաշտական (նոր բառ).— սխալ գրուած մի ձև է նիւթծուն «թրծեալ (աղիւս)» Եւս. քր. Ա. 68՝ փոխանակ թրծուն (տե՛ս Վարդանեան, ՀԱ. 1922, 652), բայց սա այլուր գոյութիւն ունեցող մի բառ էր (Համմտ. Դաբիկեան ՀԱ. 1923, 378)։*

=Կազմուած է նի մասնիկով նիւթ բառից. Համմտ. հայիլ>նայիլ, յեծուղ>նեցուկ։

Brosset JAs. 1834, 369 *են վրաց.* նիվթի։ *ՆՀՒ վրաց.* նիվթի, *Հայ.* նիւթ, *լծ. յն.* νήθω, νέω, νηέω, *լտ.* neo, necto։ *Հիմնք. յն.* νήθω։ *Վերի ձևով մեկնեց* Meillet MSL 11, 396: Pedersen, *Հայ. դր. լեզ. 162* նիւթ *մեկնում է ըստ* Meillet, *բայց նիւթել բայը սրանից բաժանելով՝ կցում է նիւսել բային։*

Գիմ.—Ջղ. նուբ *«հիւթ» (օր. թէյը նուբ չունի «գոյն չունի»). Մշ.* նուկ, նուռ, *Ալշ.* նուբ *«կերակրի հիւթը, խօսքի միտքը՝ էութիւնը», երև. Տփ.* նուբ *«մի քիչ անունդ» (օր.* նուբ առնել *«մի քիչ բան ուտել, մի քիչ սնունդ առնել»), Սլմ.* նիւթ *«կերակրի համը, հիւթը», Ննխ.* նիֆթ *«գործի էութիւնը»։*

ՓՈհ.—վրաց. ნივთი նիվթի *«բան, նիւթ, իր, տարբ»,* ნივთიერი նիվթիերի *«նիւթական»,* ნანივთო սանիվթո *«նիւթական»,* ნივთება նիվթեբա *«նիւթ»,* შენივთება շենիվթեբա *«կազմել, յօրինել»։*

Նիւսկեղթ *տե՛ս Նուս։*

**ՆԻՓԱՅ կամ ՆԻՎԱՅ «գեաեղրի շուշան» Կմրկպ. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 579 և ՀԲուս. § 2205։*

=Պէտք է կարդալ նիմփայ, իբր յն. νυμφαία *«նունուֆար»։*

Այսպէս է մեկնում ՀԲուս։

+ՆՈՒԹԵԼ տե՛ս Խոթել։

**ՆԿԱՀ «խօսքին հաստատ, խօսքը պահելով». մէկ անգամ ունի Մագ. մեծ են. էջ 52. «Ակահ այսր եղև՝ նկահ չեկաց իւրըն բանին»։*

=Պրս. نگاه nigāh *«հայեացք», բայց նաև «պահպանութիւն». Համմտ.* نگاهبان nigāhbān *«պահապան». ոճով ասում են* نگاه داشتن nigāh dāštan *«պահ ունել, պահել, պահպանել», որից* نگاهداشت nigāhdāšt *«պահպանութիւն, աւանդ»,* نگاهدار nigāhdār *«պահող» են. ըստ այմ հայերէնի մէջ էլ նկահ կալ ոճը նշանակում է «պահել»։—Աճ.*

ՆՀՒ նկահ մեկնում է «անգէտ, տգէտ», իբր պրս. nāgāh, *որ սակայն նշանակում է «յանկարծ»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ. 1914, 565։*

**ՆԿԱՆ, ի–ա հլ? «մի տեսակ հաց» ՍԳր. Սիր. Համաբ. 122. որից նկանակ ՍԳր. Նոնն. նկանակածին Ա.Բ.— սրանից պէտք է դնել նաև նկանախոր նոր բառը՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. (վկայութիւնը տե՛ս կողմն բառի տակ). սրա համապատասխանը դժբախտաբար չունի Կաղանկատուացին, բայց թէ թւում է որ պէտք է հասկանալ «ննջգաւառ, խարդախ», իբր նկանը կամ հացը խորոց, ինչպէս պրս.* nānkōr *(հացին կոյր նայող, ապերախտ, անաղուհաց)։*

*=Պհլ. *nikan ձևից, որ կազմուած է* ni *բայական մասնիկով* kan *«փորել» արմա-*

տից. համմտ. գնդ. nikan *«հողը փորելով մէջը թաղել».* nikañta *«թաղուած, խորուած». ըստ այսմ* նկան<*nikan *նշանակում է «թաղուած» և յատկապէս ցոյց է տալիս «մոխրի տակ թաղելով եփուած հացը»։ Պհլ.* *nikan *բառի այս վերջին նշանակութիւնը աւանդուած չէ գրականութեան մէջ. իրանեան միւս ձևերը, որոնք ձայնապէս փոքր ինչ նըման են (այսպէս՝ պհլ.* nān, *բելուճ.* nayan, *սոգդ.* nγn-, *միջ.* nayn, *պրս.* نان nān, *քրդ.* nan, nānî, non, *զազա* nān, nā, *դուժ.* non*), ծագում են* *nayna- *«հաց» բառից և գործ չունին* *nikan *ձևի հետ. սակայն ունինք խորազմ.* kand *«հաց» (ըստ Ալբիրունի), pknd «հաց» (ըստ Բուրհան-ի-կաթիի), որոնք գալիս են նոյն* kan *արմատի անց. դերբ.* kanta- *«թաղեալ, թաղուած» ձևից և անուղղակի կերպով հաստատում են* *nikan *«հաց» բառի գոյութիւնը։*

ՆՀՔ լծ. երբ. ուկա, օկկա, մաօկ: Pictet 2, 313 *պրս. քրդ. բուխար.* nān *«հաց» բառի հետ։* Müller SWAW 46. 465 *և* 48, 236 *սրանց և բելուճ.* nayan *ձևի հետ, իբր հին հյ.* *նական։ Lag. Gesam. Abhd. 298 khan *արմատի տակ։ Նոյն,* Arm. Stud. § 1626 *յիշում է խորազմ.* pakand *և ենթադրում է որ* նկան *լինի «մոխրի տակ եփուած հաց»։* Justi Dict. Kurde 416 *կցում է նոյն իրանեան ձևերին։ Հիւնք.* ունկն *բառի տես.* ունկան *ձևից։ Հիւբշ.* Arm. Gram. 204 *ընդունում է որ հյ.* նկան<*nikan, *բայց սրա հետ անհամաձայն է գտնում պրս. բելուճ. և միջ. ձևերը։ Վճռական մեկնութիւնը վերի ձևով տուաւ* Gauthiot MSL 19, 129։

ՆԿԱՏ *«նայելը, դիտելը, ուշադրութեան առնելը» Նար. որից* նկատել *«նայիլ, դիտել» ՍԳր. Ոսկ. գղ. Կոչ. Վեցօր.* նկատութիւն *Սերբր.* նկատումն *Կիւրղ. գնձ.* նկատիչ *Նար.* յայտանկատ *Նար. խշ.* նախանկատ *Սկևռ. Նար.* աննկատելի *Բննիկ. Ճառընտ. նոր ձևեր են՝* նկատի առնել, ի նկատի ունենալ, նկատողութիւն, նկատառութիւն, նկատառում *են։*

ԳԴ պրս. nigāh *«նայուածք»։ ՆՀԲ լծ. երբ.* նիյաթ, նիյէթ *«դիտումն», պրս.* nigāh *«նկատ, նայուածք»։ Հիւնք. պրս.* նիկեահիյտէն: *(Այս պրս. ձևը կարող էր միայն տալ հյ.* նկաճ, *ինչպէս որ ունինք. բայց ո՛չ երբեք* նկատ*)*: Patrubány *ՀԱ 1910, 93 և մասնիկով հնխ.* gad *«նայիլ» արմատից. հայերէնից են փոխառեալ ֆինն.* katso *«նայիլ», հունգ.* kacsint *«աչքերն ամփոփել»։*

ՆԿԱՏ *«ձեռքով բռնելու չարմար փայտի մի կտոր է, որի ծայրը սանտրաձև երկաթ թելեր են շարուած. սրանով նշխարքը յետիւ կողմից ծակծկում են, որպէսզի դիւրաւ նիւթ»։ (Բառս ունի միայն Քննասէր, Միսեական բառարան, Օրաց. Հիւանդ. 1906, էջ 170)։*

=Մեկնութիւնը տե՛ս նկատ*։—Աճ.*

**ՆԿԱՐ, ու *հլ. (յետնաբար ի–ա հլ.) «կենդանագիր, պատկեր» Եղեկ. իգ. 14. Եզն. Եփր. համաբ. «երփներանգ՝ նախշուն բանուածք» ՍԳր. որից* նկարել *«գծագրել. 2. կերպարանել, ձև տալ. 3. գրել. 4. օրինակ տալ, ներկայացնել, գաղափարը տալ» ՍԳր. Ոսկ. Եզն. Ես. պտմ. Եփր. ծն.* նկարէն *ՍԳր.* նկարիչ *Դ. Թագ. ժբ. 12. Ոսկ. Բ. տիմ.* նկարագիր *երր. ա. 3. Ագաթ. Ոսկ. Ես. պտմ.* նկարակերպ *ՍԳր. Ոսկ. եփես.* ոսկենկար *Եփր. Թգ.* նախանկար *Ոսկ. ա. տիմ.* նորանկար *Ես. քր.* դեղանկար *Նար. խշ.* երփնանկար *Ճառընտ.* բազմանկար *Շնորհ. եդես.* խայտանկար *Վրդն. սղ.* լուսանկար *Անան. եկեղ.* խաչանկար *Լմբ. պտրգ.* յոգնանկար *Նար.* հրաշանկար *ՅՀ. կթ. Նոր բառեր են* դիմանկար, իւղանկար, գիւղանկար, ոսմանկար, զարդանկար, ծաղկանկար, լուսանկարիչ, լուսանկարչատուն, նկարազարդ, նկարչական, ծովանկարիչ, զարդանկարիչ *են։—Պատկեր և նկար հոմանիշների զանազանութեան համար համմտ. հետևեալ վկայութիւնները. Նկարիչ ոք որ զդեղն ընդ միմեանս խառնիցէ՝ ի տդեղութիւն ածէ զնկար պատկերին. Ոսկ. եփես. 723.—Զրազում պատկերն զոր ազգի ազգի նկարուք քանդակեալ դրօշեալ. Ոսկ. եփես. 781։— Արդի գրականում* նկար *գործածական է արևելեան բարբառում, իսկ* պատկեր՝ *արևմտեան բարբառում։*

=Պհլ. *nikār ձևից. հմմտ. մանիք. պհլ. ניגאר nīgār «նկար» (Salemann ЗАН 8. 99), պրս. نگار nigār «նկար, պատկեր. 2. գեղեցիկ», نگارین nigārēn «նկարչեն», نگاریدن nigārīdan «նկարել», نگاشتن nigāštan (ներկ. نگارم nigāram) «նկարել», քրդ. nikar «նկար, գրութիւն». ծագում են պրս. نگریدن nigarīdan «նայիլ, դիտել», نگران nigarān «հայող, դիտող» բառից (Horn § 1036, § 1038):—Հիւբշ. 204։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ. Windisch. 42 (աւելացնելով նաեւ. kṛ «գործել»), Böttich. ZDMG 1850, 359 եւն։ Bopp, Gram. comp. IV 399 տես. anu-karōmi «նմանեցնել»։

ԳԻՒ.—Երև. նկար, Մշ. նգար.—ասում են մանի նգար՝ շատ գեղեցիկ է (նմանում է նկարի)։

ՓՈՒԽ.—Վրաց. ნაკრძა նիկորա «անասունների ճակտին դնուած սպիտակ նշան»։

ՆԿԻՐ կամ ՆԻՐ «գործ». ունի միայն Բառ. երեմ. էջ 238.—երկուսից մին կամ միւսը վրիպակ։

*ՆԿԻՐԱՑՈՂ «ժխտող, ուրացող, դրժող». ունի միայն ՀՀԲ. աղբիւրը անյայտ է։

=Արաբ. نكر nakār «ուրանալ, անգիտանալ», انكار inkār «ուրանալ», منكر munkir «ուրացող» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 132):—Ա՛Ճ.

ՆԿԼԷ «շպետա». ունի միայն Բառ. երեմ. էջ 238 (իմա «հովիւ»)։

Արդեօք ասոր. ṣ̈ nāqdā<եբր. נֹקֵד noqēd «հովիւ» բառից սխալ ընթերցման արդիւնք է։

ՆԿՈՒՂ «տան տակ դնուած գետնափոր տեղ, մաղազա» Սուիոն. բ. 14. «վաճառանոց, մթերանոց, դանձատուն» Հին բռ. (ՆՀԲ դնում է նաև «կարասանի իջևան» նշանակութիւնը, որի համար սակայն չկայ վկայութիւն)։

ՆՀԲ պրս. նուղուլ (իմա نغول nuγūl «խոր տեղ». ծագումը չէ նշանակած Horn. այս ձևը հայերէնում կարող էր տալ *նգուղ, արդեօք աւելի յարմար պհլ. մի ձև կա՞ր)։ Հիւնք. անկողին բառից։

*ՆԿՈՒՆ «նուաստ, ստորին, ցած, նուաճուած, ընկճուած» ՍԳր. Մծբ. Կոչ. 22. Եփր. հռ. 28. ա. Կոր. 72. որից նկնութիւն Կոչ. 97. նկնատեսակ «փոքր երեցող» Վեցօր. 129 (որ սխալ ձև է ըստ Նորայր, Բառաքնն. և Վարդանեան ՀԱ. 1922, 653. աւելի ճիշտ կլինէր ասել ձևափոխեալ և նորամոյծ). նկնախոճ, նկնահասակ, նկնածն. Պիտ. անկուն (նոր բառ)։

=Պհլ. nikūn «հակառակ, խոտորնակ, գլխիվայր» բառից, որ է պրս. نگون nigūn «ներհակ, խոտորնակ. 2. դարձած, շրջուած, կոր». որից պհլ. nikūnsār, մանիք, պհլ. נגונסאר nigūnsār (ЗАН 8, 94)= պրս. نگونسر nigūnsar կամ سرنگون sarnigūn «գլխիկոր», պհլ. nikūn, Nyberg, Hilfsb. 2, 159 իրանեան բառը մեկնում է ni «դէպի վայր»+kav «կորանալ, ծռիլ». հմմտ. պհլ. fra-kavān «կամար», զնդ. kava «սապատ», frakava «որ առջևից կուզ ունի», apakava «որ ետևից կուզ ունի»։—Հիւբշ. 205։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Müller SWAW 42, 250, Lag. Beitr. bktr. Lex. 11, Հիւբշ. KZ 23, 403:—Meillet MSL 9, 54 նի մասնիկով, ինչպես գ-կնի գ մասնիկով։ Հիւնք. -ուն մասնիկով՝ ընկ-եճուլ բայից։

ԳԻՒ.—Ախք. նկուն։

*ՆԿՏԱ «ձեռքի վրայ կտուած, հաշի անել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. լծ. սահմ. 555 հետևեալ ձևով. «Ջի՞նչ է նկտա դնելն.—Զոր ասղով և հերունով զձևն ծակոտեն և ժիպակ և լեղակ թողուն ի ներս, որ տպտպիկ երևի. այլ և զեղունգն կարմիր և սեաւ ներկեն»։

=Արաբ. نقطة nuqṭa «կէտ» բառն է, իբրև «կիտուած, կէտ կէտ նշան»։ Այս նոյն արաբ. բառից է նաև նկատ «նշխարքի յետևը ծակծկելու՝ ծակ ծակ կէտեր դնելու գործիք», որ կա՛մ արաբ. نقاط nəqāṭ= نقط nuqaṭ «կէտեր» բառն է (որ نقطة nuqṭa «կէտ» բառի յոգնակին է) և կամ արաբ. نقّاط naqqāṭ «կէտադրող, կէտեր դնող» (որ նոյն արմատի mafālaya-i ism-i fā'il-ն է)։—Ա՛Ճ.

ՆԿՏԱԼ կամ **ԿՏԱԼ**. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Փիլ. յովն. 579. «Որպէս նոքա ի կեանս վարուց իւրեանց հիւանդացեալ էին. այսպէս և մարգարէն յԱստուծոյ գիտութիւնէ նկատայր, յանփախչելի Աստուծոյ փախչել կաթծեցեալ»։ Ստորագծեալը կարելի է կարդալ գիտութենէ նկատայր կամ աւելի հաւանաբար՝ գիտութենէն կատայր (այլ ձ. ունի տկայր). Լծ. փիլ. կարդում է կատայր և մեկնում է «ջանայր փախչել». ՀՀԲ կտալ «գլթել, սայթաքիլ, գայթել»։—Աւգերեան, լտ. Թրգմ. մտածում է կցել տբալ կամ նկրտել բառերին.—ՆՀԲ նկտալ կամ կտալ «նուազիլ, յետնիլ».—ԱԲ նկտալ կամ կտալ «ջանալ, եռանդ ըլլալ, կամ թերևս ուղղելի նիտալ»։

***ՆԿՐԻՍ**, ո հլ. «ոտքի ցաւ» Մաղաք. ապեղ. 25 (սխալ տպուած ի ցաւն կրսոյ). Ամբ. պտմ. հրտր. Շահն. 117, որ և նիհրիս Վստկ. 120։

=Արաբ. نقرس niqris «ոտքի կոճերին և մատներուն յօդերին յատուկ ցաւ», نقرس قدم niqris-i-qadam «ոտնացաւութիւն», որից նաև վրաց. ნიკრისი նիկրիսի «ոտքի ցաւ»։ (Ըստ Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 301 արաբ. բառը ձևացած է յն. ποδάγρα n q u r s «ոտքի մատ» բառից)։

ՆՀԲ գրում է «ոմկ. նիգրիս». ԱԲ «տճկ. նիհրիս». Բասմաջեան, Բանաս. 1907, 54 արաբ. նգրիս «կաթուածած»։

ՆԿՐՈՒՍՏ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Յհ. կթ. 395. «Տայցէ նմա այլ ևս ամրոյ նկրուստ քան զնա». (տպագիրների մէջ ունինք ամրոցն կրուստ. ՆՀԲ և ԱԲ յօդը միասին առնելով դնում են նկրուստ). ՆՀԲ մեկնում է «զօրագոյն, լաւագոյն», էմին (հրտր. Յհ. կթ. էջ 171) յատուկ անուն է համարում. իսկ ԱԲ «քիչ մը աւելի վար»։ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 116 –ուստ դնելով տեղական մասնիկ, համարում է ըստ ԱԲ «քիչ մը աւելի վար» կամ «քիչ մը աւելի վեր»։

ՆԿՐՏԻԼ «ամէն կերպով ջանալ, ձգտիլ, ջանք գործ դնել» Ա. կոր. ժա. 17. Փիլիպ. գ. 13. Եփր. ա. կոր. 72. փիլիպ. 161. որ և Լմբ. առակ. որից **ՆԿՐտումն** Լաստ.։

ՆՀԲ ի ներբս իմն կրթիլ։ Պատկ. Изслѣд. 105 աֆղան. نقرډل nγrdal ձևի հետ։ Հիւնք. պրս. նիկէրիյտէն (իմա نكريدن nigarīdan) «հայել, ուշ ունել»։

***ՆՀԱՆԳ**, ի–ա հլ. «ծովային առասպելական վիշապ, գետաձի, կոկորդիլոս» Եւս. քր. ա. 204. Ոսկ. մ. բ. 23. Եզն. որից նհանգանման Աղթամ. (Հրտր. Կոստ. 111՝ սխալ տպուած)։

=Պհլ. *nihang ձևից. հմմտ. պրս. نهنگ nihang «կոկորդիլոս». սրանից է փոխառեալ նաև ասոր. ܢܗܢܓܐ nihangā «կոկորդիլոս»։—Հիւրշ. 205։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Böttich. Rudim. 47 սանս. nihākā «մի տեսակ մողէս» և պրս. nihang։

ՓՈԽ.—Վրաց. ნიანგი նիանգի «կոկորդիլոս, վիշապ»։

Նհանջ տե՛ս Նահանջ։

***ՆՂՄՈՒՆՔ** «իբր ապաստան ծառայելու խոր տեղեր» Յայտմ. փետր. 15=Նոր վկ. 223 (1418 թուից). «ի նղմունս և ի դարանս մըտին և այլ ոչ ելին, այլ անդէն խեղդեալ հեղձամղձուկ եղեն». սրանից են արտագրում նաև Առաք. պտմ. 324. Խլաթ. յիշ. 3։ Նոյնը ունի նաև Նոտարք Հայոց. 200. «Որք ի նղմունս և ի ներքնատունս և ի դարանս մտեալ էին» (տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 503 նղմուն! ձևով)։ Բոլորն էլ յգ. ներգ. ձևով են. իսկ ի՞նչ էր ուղղականը։ Rivola Բառ. Հայոց² ունի նղմն, նաղմ «cuniculus subterraneus գետնափոր խոռոչ, ական», նղմաշէնք «cuniculi structura»։

=Պրս. نغم naγm «ական, գետնափոր անցք կամ ծակ», որից և Թրք. laγəm «ական»։—Աճ.

ՆՀԲ նկուղ բառի սխալ գրչութի՞ւնն է կարծում։

***ՆՄԱՆ** (յետնաբար ի հլ.) «հանգոյն, պես» ՍԳր. որից նման է «յարմար է, կարելի է ասել» Ոսկ. մ. բ. 27. Եփր. ծն. և Թգ. նմանիլ ՍԳր. Ոսկ. Եւս. պտմ. նմանագոյն Սերիր Եւս. քր. Ոսկ. ես. և բ. տիմ. նմանակից Կոչ. Ոսկ. ես. Ագաթ. Բուզ. նմանաձև Ագաթ. նմանութիւն ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ. նմանի

Յոբ. լե. 8. Ոսկ. եփես. Եւս. քր. եմանալիշտ *Իմաստ. ե. 3.* աննման *Իմ. բ. 15. Սերեր. Վեցօր. Ագաթ.* աննմանագոյն *Ոսկ. մ. բ. 22.* հայրանման *Փարպ.* զուգանմանութիւն *Ճառընտ.* ծովանման *Ագաթ.* խոռանանման *Ագաթ.* խաչանման *Ագաթ. Կորիւն.* եմանողակից *Նիթագ. 91.* խեցանման *Վեցօր.* գեղնման *կամ* դեղնման *Նփր. եբր. 218. Ոսկ. կող. Փիլ. (տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. 8)։— Ըստ Ակինեան, ՀԱ. 1907, 149—150 սրանից ծագած եմանեցուցանել բայը ունի նաև «ընտրել» իմաստը. այսպէս հետևեալ օրինակների մէջ. «Խորհուրդ ի մէջ առեալ Պարսիկք թէ զո՞ արժանի թագաւորութեան նըմանեցուցանել կարասցեն (Փարպ. էջ 157՝ հրատ. Տփղիսի). Ապա իբրև ոչ ոք գոյր ի տանէն Գրիգորի այնմ (կաթուղիկոսութեան) արժանի, ապա նմանեցուցին զՇահակ ումն անուն (Բուզ. Գ. ժէ). Նմանեցուցէք տեղիս դիւզնագիւտ որսոց ինչ, որով լոկ զբօսուցուք զնա (Բուզ. Գ. ի)»։ Յետիններից Շիր. ունի «համարել» իմաստով. «(Ի շարժել ամպոց) զլերինս բարձունս ի հեռաստանէ՝ շարժուն նմանեցուցանեմք»։ — Նոր բառեր են* եմանաբուժութիւն, եմանաբուժական, եմանողութիւն, եմանողաբար *են։*

=*Պհլ.* *nimān *ձևից, որ կազմուած է* ni *մասնիկով* mān *արմատից. սրա ուրիշ ածանցումներն են ներկայացնում՝ սանս.* मान māna «պատկեր, երևոյթ, նմանութիւն», upa-māna «նմանութիւն», ni-māna «չափ», *պհլ.* mānāk «նման», *պազ.* mānā «նման», *պրս.* مانستن mānistan «նման լինել», مانا mānā «որպէս թուի, նման է», ماننده mānand «նման». *Համմտ. պրս.* نمودن numūdan «ցոյց տալ, երևիլ», نمونه numūna «օրինակ, նմոյշ», *կազմուած* ni *մասնիկով* mā *արմատից։—Հիւրշ. 205?*

Նշ՞ի եմայն յար: Windisch. 42 *սանս.* mā *արմատի հետ։* Böttich. ZDMG 1850, 359, 186, Arica 84, 405 *սանս.* anumā, *պրս.* nimāndan: Lag. Urgesch. 137 *ենթադրում է պրս.* nimān *ձևից։ Մորթման* ZDMG *26, 601 բևեռ.* namanu։ *Տէրվ.* Altarm. 97, *Նախալ. 97* ma, man «չափել, ձևել, համեմատել» *արմատից՝ և նախդիրով։ Քիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. 204 պրս.* numūdan «ցոյց տալ», numūna «օրինակ»։ *Հիւնք. յն.* ὅμοιος, *պրս.* մանանիտէն (?): Müller WZKM 8 (1894) 273 *պհլ.* manaka *ձևի հետ։* Lagarde-ի *ենթադրութեան վրայ՝ վերի ձևով ձևակերպեց Հիւբշման։*

ԳԻՒ.—1. Երև. Կր. Հւր. Մկ. Ջղ. Սչ. Վն. Տփ. եման, *Ագլ.* եմուն, *Զթ.* եօմօն, եօմոն, *Գոր. Ղրբ. Շմ.* մնան, *Ախց. Խրբ. Մրղ. Ջղ. (գիւղերը), Սլմ.* լման, *Համշ.* լմօն, *Մշ.* եմանագ.—*2. Ջղ. Սչ. Վն.* եմանել, *Ագլ.* եմա՛նիլ, *Խրբ.* լմանիլ, *Մրզ. Ննխ.* լմանէլ, *Ասլ. Պլ. Պրտ. Ռ. Սեբ.* ըլմանիլ, *Ալշ. Տիգ.* ըլմընիլ, *Համշ.* լմօնուշ, *Զթ.* ըյմանիլ, ըոմանիլ.—*3. Ախց. Շմ.* աննման, *Զթ.* աննօմօն, աննօմոն, *Մրզ. Ռ.* անըման, *Խրբ. Պլ.* ալլըման, *Համշ.* օնլըմօն. *առաջիններն նշանակում են «անման, գեղեցիկ», յաճախ հեղնաբար գործածուած, որից և վերջինը նշանակում է «այլանդակ»։—Նոր բառեր են՝* եմանուկ, հայրեմանական, մայրեմանական: — *Հետաքրքրական մի ձև է Վն.* մանիլ, *Մշ.* մոնիլ «նմանիլ», *որ կարող է ներկայացնել բառի պարզական ձևը՝ առանց* ni- *նախդիրի յաւելման, բայց աւելի հաւանաբար յառաջացած է նախաձայնի անկումով։*

Փիս.—Bugge IF 5, 274 *(Քրդմ. ՀԱ. 1895, 261) հյ.* եմանաւղ *բառից փոխառեալ է ըստ նում գոթ.* manaulja «ձևով, կերպարանօք», *որ գործածուած է մէկ անգամ Փիլիպ. բ. 7։*

*ՆՄՈՅՇ *«օրինակ, տեսակ. 2. հետք, երեւոյթ, նշմար. 3. դէմք, երես», աւանդուած չէ հին գրականութիւնից և կայ միայն նոր բարբառներում, ինչպէս Ագլ. Բլ. Մկ. Վն. որոնցից էլ անցել է գրական լեզուին՝ «օրինակ» իմաստով։*

=*Պրս.* نمایش numāyiš «ցոյց, ցոյց տրուած բան, երևոյթ» *բառն է, որից ծագում են նաև քրդ.* nümuš «նմոյշ, օրինակ», *վրաց.* ნიმუში նիմուշի, *թուշ.* ნიმუშ նիմուշ «օրինակ, նմոյշ»։ *Ըստ այսմ յայտնի չէ ինչո՛ւ Քաջունի, հտ. Գ. 180 դնում է* եմրուշ «գաղափար նկարուց» (ր ձայնով)։—*Աճ.*

*ՆՆԻ «հացհամիմ, սոնիճ, լտ. ammi» *Գաղիան. Բժշ. Հին բռ. ունին միայն Հրուս.*

§ 2206 և Նորայր, Բառ. ֆր. 54 բ, ուր տե՛ս նաև զանազան վկայութիւններ բառիս գործածութեան։

=*Պրս.* *nānī *ձևից, որ կազմուած է* نان nān *«հաց» բառից. Համմտ. պրս.* nānx ᵘāh, nānkiš *հոմանիշները և մանաւանդ պրս. գւռ.* նանիոյ, նանիեան *(ըստ Բժշ. տե՛ս ՀԲուս. § 1660) ձևերը, որոնք բոլոր ծագած են նոյն* nān *«հաց» բառից։ Պարսիկ բառի գոյութիւնը հաստատում է նաև նրանից փոխառնալ ասոր.* ܢܝܢܝܐ nīnyā *«հացհամիմ, սոնիճ»* (Brockelm. Lex. syr. *էջ 207)։—Աճ.*

***ՆՇԱՅ** *«մի տեսակ ալիւր, օսլայ, նշաստայ» Վստկ. 205, 208. Մխ. բժշ. 43։*

=*Արաբ.* نشا niša *(Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 939), որից նաև քրդ.* nišaï, nša *«օսլայ»։ Բուն ծագումը տե՛ս նշաստակ։—Աճ.*

ՆՀԲ նաշիճ բառի՞ց։

***ՆՇԱՆ,** ի–ա *հլ. «նշան 2. դրոշմ, զինանշան, յայտանիշ. 3. նետի նպատակ, նշան. 4. դրօշակ. 5. խաչ, խաչանիշ. 6. հրաշք» (Համմտ. ասոր.* ܐܬܘܬܐ āθā *«նշան. 2. հրաշք») ՍԳր. Բուզ. Ագաթ. «7. նշանադրութիւն. 8. կէտ, միջակէտ. 9. կենտրան. 10. նշանագիր, նշանախեց» Սահմ. փիլ. Դիոն. որից նշանել Սղ. գ. 7. Սերեր. Եփր. ծն. նշանագիր Երր. ե. 12. Եփր. Թագ. Եւս. քր. և պտմ. Կորիւն. Ագաթ. Ոսկ. նշանագործ ՍԳր. Սերեր. նշանախեց Մաթ. ե. 8. Ղուկ. ժզ. 17. նշանակերտ Վեցօր. նշանակիր Բուզ. Սերեր. նշանացի Առակ. գ. 13. Ղկ. ա. 22. նշանաւոր ՍԳր. Եւս. քր. Եւագր. նշանացել «աչքով են նշան անել» Բուզ. 225 (Համմտ. աճացել). նշանաւորութիւն «գրուածք» Տիմոթ. կուզ, էջ 259. նշանանի «նշաններ» Մագ. մեծ են. էջ 40. խաչանշան Կորիւն. միանշան Բուզ. նամանշան Կոչ. մատնանշան Կորիւն. կառանշան Ագաթ. բարենշան ՍԳր. Եզն. բոցանշան Ագաթ. ապանշան Ոսկ. պօղ. ա. 7. նշանիս «թագաւորապատակ կոչուած բոյսը» Բժշ. (տե՛ս ՀԲուս. § 2207), անընշանանալ «հետքը կորցնել, անհետ լինել, ծածկուիլ» Մին. Համդ. 99, 103. նոր բառեր են՝ նշանաւոր, նշանագգեստ, նշանախօսութիւն, նշանած են։*

=*Պհլ.* 𐭭𐭩𐭱𐭠𐭭 nišān *«նշան», պրս.* نشان nišān *«նշան, նիշ, դրոշմ, հետք, զինանշան, դրօշակ, նպատակ, անգամ»։ Իրանեաններից են փոխառեալ նաև ասոր.* ܢܝܫܢܐ nīšānā *«նշան», վրաց. ნიშანი նիշանի «նշան, նետի նպատակ», ნიშნება նիշնեբա «աչքով նշան անել, նշանացել. 2. յուզմունք, գուշակել, նկատել», ნიშნვა նիշնվա «նշանակել», քրդ.* nišan *«նշան, յուզմունք, նպատակ, հարսանեկան նշանադրութիւն», մանչուր.* ܢܝܫܢ nišan *«ձիու վրայ դրոշմ, կերպասի վրայ նշան են», Թրք.* نشان nišan *«նշան, հետք, նշանադրութիւն» և սրա միջոցով բուլգար.* nišanja, *սերբ.* nišan, *լեհ.* niszan, *ռում.* nišan, *ռուս.* nyšanŭ, nišanŭ, *յն.* νισάνι *«որակութիւն», ֆրանս.* nichan *«տաճկական պատուանշան». Համմտ. նաև* նիշ, նշանակ։—*Հիւրշ. 205։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Աւգերեան, Բյտր. չափ. և կշռ. 139. նոյնը նաև ԳԴ։—ՆՀԲ վրաց. նի՛շի, *պրս.* նիշան, նիշանէ, *արմատը* նիշ։ Peterm. 22, 34 *պրս.* nišān։ Windisch. 42 *սրա հետ նաև սեմ.* nēs, *որի վրայ տե՛ս* նիշ։ *Ուղիղ են նաև* Müller SWAW 38, 577, Lag. Ges. Abhd. 66, Justi, Dict. Kurde *420 են։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Ջղ. Սլմ. Սչ. Վն. Տփ. նշան, *Տիգ.* նշոն, *Հմշ.* նշօն, *Ագլ.* նշուն, *Ասլ. Պլ. Մրղ. Ռ. Սեբ.* նիշան, *Զթ.* նիշօն, նիշոն, *Սվեդ.* նիշուն *(վերջին երեք շարքը նոր փոխառութեամբ Թուրքերէնից).—բայական ձևով՝ Ագլ.* նշա՛նիլ, *Տփ.* նշնիլ, *Սչ.* շանվել *«նշանուիլ», Ասլ. Պլ.* նիշանել *են.—նշանացի տալ ձևից են կազմուած Շմ. Ջղ.* նշանց տալ, *Ջղ. Տփ.* շանց տալ, *Մրղ.* նիշաս տալ, *Սլմ.* շաշ տալ, *որոնք նշանակում են «ցոյց տալ»։—Նոր բառեր են* նշանախօս, նշանածառես, նշանածացու, նշանդրէք, նշանքախէք, նշանդարձէք, նշանտարէք, նշանտուք, նշանտուէք, նշանօրհնէք, նշանօրհնելչէք *են։*

ՓՈԽ.—Վրաց. ნიშანი նիշանի *«նշան» բառի երկրորդ նշանակութիւնը՝ «հրաշք», փոխառեալ է Հայերէնից.—այս նշանակութիւնը յիշում է Զուբինով[2] 1222, բայց էջ 984 մոռացել է նշանակել։*

***ՆՇԱՆԱԿ**, ի–ա *հլ. «նշան, յայտարարութիւն, խորհրդանշան, հրաշք» ՍԳր. Ոսկ. եփես. «դրօշ» Իսիւք. Մաշտ. ջահկ. «գաւազան» Պղատ. մինովս. որից* նշանակել *ՍԳր. Կոչ.* նշանակիչ *Սերբեր.* նշանակաւոր *Փիլ.* նշանակութիւն *Սահմ.* նշանակալից *(նոր բառ) ևն։*

=Պհլ. nišānak *«նշան, նպատակ ևն», պրս.* نشانه nišāna *«նշան, նետի նպատակ». կազմուած է* nišān *բառից. հայերէնը պատրաստի փոխառութիւն է իրանեանից, և ո՛չ թէ մեր մէջ կազմուած, որովհետև* –ակ *մասնիկը նուազականի նշանակութիւն չունի։ —Հիւբշ. 206։*

Ուղիղ մեկնից նախ Lag. Arm. Stud. *§ 1635։*

ԳԻՒՌ.—Ակն նշանակ *«ծիածան» (ըստ Ծն. թ. 13 «Զաղեղն իմ եդից յամպս, և եղիցի ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկիր»)։ — Այս բառի նորագոյն ձևն է՝*

***ՆՇԱՆԱՅ** *«նշան, ակնարկ» Կոստ. երզն. 152. «Լուր աչօքն նշանայ տան մէկ մէկի»։*

=Պրս. نشانه nišāna՝ *նոյն նշ. ունէի ընդարձակ տե՛ս* նշանակ *և* նշան *բառերը։— Ա.Ճ.*

***ՆՇԱՍՏԱԿ** *«օսլայ», իբրև միջին հյ. բառ ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 54ա* (amidon)։

=Պրս. نشاسته nišāsta *«օսլայ», որ ըստ իս պրս.* nišāstan *«նստեցնել» բայի անցեալ դերբայից է և նշանակում է բուն «նստեցրած». բրինձը կամ ցորենը ջրի մէջ երկար ժամանակ պահում են, օսլան բաժանուելով նստում է տակին. (=զնդ.* nišasta *«նստած», որի դէմ պհլ.* nišastak *«նստած» բառը ունէ՞ր արդեօք նաև վերի նշանակութիւնը)։ Սրանից է համառօտուած արաբ.* نشا nišā, *որից և հյ. նշայ «օսլայ»։—Ա.Ճ.*

ՆՇԱՒԱԿ, ի–ա *հլ. «նետի նպատակ, գաւազան կամ այլ նշան արքունի» Լաստ. Լմբ. Վրք. Հց. «Նախատանքի առարկայ, խայտառակութեան նիւթ» ՍԳր. Եւս. պտմ. «լաւ նշանաձիգ» Խոր. «խայտառակ» Փիլ. որից* նշաւակել *«խայտառակել» Կող. բ. 15. Յուդ. 19. Եւս. քր.* նշաւակաճիճ *Փարպ.* նշաւակութիւն *Ոսկ. մտթ. և մ. գ. 27. Եւս. քր. մարմնանշաւակ Ոսկ. մ. բ. 5։*

ՀՀԲ նշանակ *բառից։ ՆՀԲ* նիշ աւագ։ Lag. Ges. Abhd. 66 *դնում է* ni *մասնիկով սանս.* čyu *«հեռանալ, մեկնիլ» արմատից, որ տալիս է զնդ.* šu, *հպրս.* šiyu *«երթալ, չուել». ըստ այսմ հայերէնը փոխառեալ պիտի լինէր պհլ.* *nišavak<*հպրս.* *nišiyava- = սանս.* *ničyava- ձևից. սակայն այսպիսի մի ձև չգտնուելով իրանեանց մէջ, այս մեկնութիւնը շատ անապահով է համարում Հիւբշ. 206։ Հիւնք. դնում է* նշանակ *բառից։*

ՆՇԴԱՏԵԼ *«գարշիլ, զազրանալ, տրտմիլ? ունի միայն Բառ. երեմ. էջ 239։*

ՆՇԴԱՐԻ. *անստոյգ ծառ. մեկնուած է «նոճի, սօսի, որթի նեցուկ ևն» Փիլ. լիւս. էջ 169. առում է նաև* նշդարենի *Յայսմ. յունիս 13. Նար տաղ. 464. Տաղ. առաջին տառի տարբերութեամբ՝* նշդար *Լծ. փիլ.* նշդարենի *վկ. արև. էջ 235 (ոչ–ոսկեդարեան). Ոսկ. ճառք 879 Յայսմ. Ճառընտ.— երկու ձևերից մին կամ միւսը սխալ։*

***ՆՇԽԱՐ**, ի–ա *հլ.? «հացի, կերակրի ևն մնացորդ կտոր» ՍԳր. Վեցօր. 185. «սրբոց ոսկորների կամ մարմնի մաս» Ագաթ. «եկեղեցու օրհնեալ հաց» Տօնակ. Շնորհ. որից* նշխարել *«հացից կամ կերակրից մնացորդ թողնել» Դ. Քահ. դ. 43. ՅՀ. գ. 12.* նշխարակուժ *Կանոն.* նշխարաւոուն *Յիշատ. գրուած է* նշխարեւ *Անան. ժմնկ. էջ 78։*

=Պհլ. *nišxvar *ձևից. հմմտ. պրս.* نشخوار nišx^{w}ār, نشخور nišxūr, نشخار nišxār, *որ մեկնւում է «որոճումն» (ԳԴ), «ինչ որ ուղտը, եզը, ոչխարը և նմաններ կերած և նորից փորից բերանը բերելով ծամում են և ցած տանում. 2. յարդի և կերի մնացորդ՝ որ մնում է չորքոտանիներից» (Բուրհան). վերջին նշանակութիւնը ճիշտ ու ճիշտ մեր նըշխարն է, որ է «հացի՝ կերակրի են մնացորդ»։ Կամուս, թրք. Բրգմ. Բ. 123 նոյն պրս. բառը մեկնում է «ուտելիքի մնացորդ՝ որ չորքոտանիները մսուրի, տոպրակի, և գոմինը՝ արօտի մէջ թողնում են» և սրանից*

փոխառեալ է համարում արաբ. نشوار niš-vār «չորքոտանիների՝ կերն ուտելուց յետոյ մնացորդ թողնելը» (=գրբ. նշխարել):

ՆՀԲ պրս. նիշխար, նիշխար կամ կազմուած նիշ և խար բառերից (տե՛ս խար բառի տակ), իբր «նիշ կամ մնացորդ ուտելեաց»: Windisch. 42 նշ- համարում է մասնիկ: Թիրիաքեան, Պատկ. աշխ. գր. 204 ուղիղ է մեկնում: Հիւնք. խոշոր բառից: Коршъ, Брэм. Мշակ 1914, 123 հպրս. *niš-xāθā «անուտելի» ձևից. համմտ. սանս. khādá- «ուտելիք»:

ԳԻՒ.—Ախց. խրբ. կր. Համշ. Մշ. Ջղ. Սեր. Սլմ. Սչ. Տփ. նշխարճ, վն. նշխարճ', Գոր. Ղրբ. նշխարճ, նխշարճ, Ալշ. Երև. Շմ. նրխշարճ, Տիգ. նշխոռճ, Ագլ. նշխօրճ, Ննխ. նշխարճ, նիխշարճ, Պլ. Ռ. նիշխարճ, Ասլ. նիշխարճ, նիշխար*, Մրղ. նիշխոռճ', Մկ. նխշարճ', Սվեդ. նիխշուռ, Հճ. նէշխօյ, Զթ. նէշխօյ, նէշխոռ կամ նէշխօյճ, նէշխոռճ. բոլորն էլ «նկեղեցու օրհնեալ հաց» իմաստով: Նոր բառ է նշխարաձիգ «մոլոշ բոյսը. malva»:

ՓՈԽ.—Ուտ. nišqar «նկեղեցու նշխարք»

ՆՇԿԱՀԵԼ «պրհամարհել, անարգել, մերժել, ապստամբիլ» ՍԳր. Բուզ. որից նըշկահեալ «արհամարհուած» Կոչ. 53, «վտարուած, վռնտուած» Կոչ. 109. նշկահումն «ապստամբութիւն» Ուռհ. նշկահելի «արհամարհելի» Նար. դա, էջ 238 (նորագիւտ բառ):

ՆՀԲ շկահել բայից: Windisch. 42 նշ- համարում է մասնիկ: Lag. Beitr. bktr. Lex. 42 nis+kartra: Հիւնք. պրս. նիկիուհիյաէն «արհամարհել»: Meillet REA 2, 234 իրան. niš-kaf- ձևից. համմտ. պրս. kāftan, šikāftan «ճնղքել, պատառել»:

*ՆՇՄԱՐ «նշան, հետք, երևոյթ, տեսիլ» Եփր. համաբ. Նար. Յայտմ. որից նշմարել «նկատել» ՍԳր. նշմարեցուցանել Ագաթ. նշմարաճ Իմ. ի. 11. Եւս. քր. և պտմ. Ոսկ. Ես. Եփր. երր. և. աստեղանշմար Եզն. բարենշմար Նար. դիւրանշմար Փիլ. նիւանշմար Նար. Տաղ. աննշմարելի Ճառընտ.:

=Պհլ. *nišmār<հպրս. *nišmāra- ձևից. որ կազմուած է ni- բայական մասնիկով՝ šmar=smar արմատից. համմտ. պրս. شمار šumār «համար, թիւ, հաշիւ, համարում», šumurdan «հաշուել, թուել, համարել, ենթադրել», āxtaršumār «աստեղանշմար», զնդ. mar (<smar-ից) «նկատել, նշմարել. դիտել», hišmarəntō «նկատողք», սանս. smar «յիշել, մտածել» (Horn § 791). տե՛ս նաև հայ. համար:—Հիւբշ. 206:

ՆՀԲ «նիշ և նշան իմն մնացեալ», իսկ նսեմ բառի տակ՝ արմատը դնում է նսեմ: Windisch. 42 նշ- համարում է մասնիկ: Lag. Urgesch. 247 և Btrg bktr. Lex. 26 պրս. šumār ձևի հետ šmar արմատից: Հիւնք. իբր աճ-նշմարիտ:

ԳԻՒ.—Վն. նշմար տալ «կամքը յայտնել». Ննխ. նշմարճ «ակնարկութիւն, ակնարկ».—Թերևս նոյն բառն է Սս. մշմրել «նայիլ, դիտել» (որտեղ բառ օրինի միջին ա ձայնաւորը ընկած և նախաձայնը ազդուած միջաձայն մ-ից):—Երև. Մշ. նշմարաճճ «երես» (Ամատ.):

—ՆՇՈՂ կամ ՆՇՈՅԼ (գրուած նաև նշոյղ, նշոլ), ի, ի-ա Հլ. «շողք, ցոլք, ճառագայթ, փայլ» ՍԳր. Կոչ. 148. Եզն. Եւս. պտմ. որից նշողել Նար. Երզ. նշուղել Երզն. ոտ. նշուլել Բրս. մրկ. նշողացուցանել Ստեփ. սեան. նշողազարդ Վեցօր. Մծբ. նշուլազարդ Մծբ. նշուլագեղ Նար. լուսանշոյլ Նար. Վրդն. բազմանշոյլ Յճխ. բոցանշոյլ Շար. Նար. ճօրճանշոյլ Նար. առաք. բաւականշոյլ Ճառընտ. ճրագնշոյլ Նար. խշ.:

=Կազմուած է նի- մասնիկով շող արմատից. համմտ. նայիլ>նայիլ, յեղուլ>նեցուկ. ձայնական փոփոխութեանց համար համմտ. բոյլ, բոյղ, բող:

ՆՀԲ շող բառի՞ց: Ուղիղ մեկնից նախ Տէրվ. Նախալ. 39 ծան. (նոյնը ընդունում են այժմ Petersson, Ar. u. Arm. Stud. 94 և Pokorny 1, 368): Հիւնք. նշմարաճ շողոյ:

Նշուղ տե՛ս Նիշուղ:

ՆՇՈՒՇ տե՛ս Նշող:

*ՆՇՏԻՐ, ո Հլ. «վիրաբոյժի դանակ» Եփր. Խրատ. (աւանդում է միայն գրծ. նշտրով

ձևով). որից նշարակ Անյ. պորփ. Վստկ. էջ 209։

=Պհլ. *nīštir ձևից. համմտ. պրս. نشتر naštar կամ نیشتر neštar, աֆղան. naštar, nēštar, քրդ. ništer, nešter, փոխառութեամբ նաև վրաց. ნეხტარი նեստարի, ասոր. ܢܫܬܪ neštarkā, թրք. nešter, բոլորն էլ մեր բառին հոմանիշ։ Արմատն է պրս. نیش neš «խթան, սուր ծայր», աֆղան. nēš «թունաւոր անասունների կիճը», սանս. nikš «ծակել», որից՝ դործիք ցոյց տուող -tra- մասնիկով կազմուած է բառս (Horn § 1067)։— Հիւբշ. 206։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. նոյնը նաև ՆՀԲ, որից յետոյ Lag. Urgesch. 266 և Հիւբշ. KZ 36, 163—4։— Bottich. Arica 75, 218 nas արմատից, իբր պրս. naštar։

ԳԻՒ.—Երև. Տփ. նշտար, Մշ. նշտրագ, Ալշ. նշտրա, Ախց. նɯշտmr.—Նոր բառեր են նշտարել Դրբ. նշտրել Խն. «նշտարով կտրել, արիւն առնել»։

ՆՇՕՇ «կատաղի կոչուած բոյսը. լտ. thelygonum» Գաղիան. Նո՞յն է սրա հետ նշուշ, որ առանձին չէ գործածուած, բայց ունինք նրանից խարնշուշ «քարաննուխ, տճկ. թաշ նանէսի» Բժշ. (այժմ էլ կենդանի ի Հայս) ըստ ՀԲուս. § 3178 և յաւել։

*ՆՈՒՐԵԼ «նուագանել», որից նուրբրիչ «նուագիչ, դայեակ». երկուան էլ գիտէ միայն Rivola, Բառ. Հայոց², 284։ Անշուշտ յետին ժամանակների փոխառութիւն է իբր՝

=Լտ. nutrio «նուագանեմ», nutrix «նուագիչ, դայեակ»։—Աճ.

*ՆՈՒՕՁ, ի–ա Հլ. «արու այծ» ՍԳր. Ագաթ. որից նուխազեան Եփր. մնաց. նուխազադէմ Նոնն. նուխազերգութիւն «ողբերգութիւն» Մագ. և Երզն. քեր. նուխազուան Նոնն. 41. նուխազաւրուն Նոնն. 13։

=Պհլ. գաւառական մի ձևից, որի հետ համմտ. պրս. نهاز nuhāz «արու այծ՝ որ հօտին է առաջնորդում», պհլ. n(u)hāzīk «այծեղջիւր աստեղաստունը»։ Մարքվարթ REA 8 (1928), 222 իրան. բառը մեկնում է իբր պհլ. *naxv-āz, հինը *naxv-āza «առաջից առաջնորդող» (նախ+ազ)։—Հիւբշ. 207։

Klaproth, As. polyg. 107 պրս. nuxsar, nuxsān։ Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։ ՆՀԲ պրս. նիհազ ձևը յիշելով հանդերձ՝ հայ բառը մեկնում է «նախն յայծս»։ Ուղիղ են նաև Spiegel, Huzw. Gram. 187, 190, Müller SWAW 42, 253, Lag. Btrg. bktr. Lex. 47։ Տէրվ. Altarm. 26 հայ բառը դնում է բարդուած ևո<նաւ< նար (պրս. nar) «արու» և խազ<խաղ «այծ» ձևերից. իսկ պրս. nuhāz փոխառեալ է դնում հայերէնից։

ՆՈՄԵԱԼ. անյայտ բառ. մէկ անգամ ունի Մագ. թղ. 237. Որջասոյզ և գրուանող, ծեքեալ, նոճեալ, ապազոնեալ (այլ ձ. հոճեալ). թերևս նշանակում է «ընկճեալ» (Աճառ. ՀՄ. 1923, 255)։

ՆՈՀ «սփռոց». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է ձեռագիր երեքլեզուեան մի բառարանի մէջ, ԺԹ—ԺՒ դարից, ուր պատկանում է Դ. եպս. Յովսէփեանի. «Բսատ. շատրուան. նոհ». առաջինն է արաբ. بساط bisāṭ, երկրորդն է պրս. شادروان šādrevān, որ պէտք չէ առնել «շատրուան, իմաստով, այլ «սփռոց», ինչպէս և արաբ. bisāṭ բառը։

Այս տեղեկութիւնը տուաւ Հ. Ն. Ակինեան (անձնական)։

ՆՈՂԿ «գարշելի, զզուելի, պիղծ» Ոսկ. ես. 14 (գարշելի ա՛յն ինչ կոչի՝ որ կարի աղտեղին իցէ, պիղծ ինչ, նողկ, անսուրբ). որից նողկալ «զզուիլ, գանիլ». Կանոն. Մանդ. նողկրտալ Ոսկ. մ. գ. էջ 108. Աբան. էջ 559. նողկացեալ Եւագր. նողկտացուցանել Առակ. իգ. 8. նողկութիւն Նար. էջ 262. նողկալի, նողկանք (նոր բառեր).—իսկ Բառ. երեմ. էջ 239 ունի նողկտալ «դողդողալ», որ անշուշտ պէտք է կապել Ոսկ. մ. գ. 108 հետևեալ հատուածի հետ, որ սխալ է հասկացել. Եւ արդ մի՛ ոք նողկտալով մերձենայի, մի՛ որ մեղկութեամբ (ի սուրբ խորհուրդն)։

ՆՀԲ լծ. յն. ναυτίαω և լտ. nauseo «սիրտը խառնել» (երկուան էլ ծագում են «նաւ» բառից)։ Հինք. տողուկ բառից։

*ՆՈՁ, ի, ո Հլ. «մշտադալար վայրի մի ծառ է. լտ. cupressus, կիպարիս, տճկ. սէր-

վի, *ամկ.* սէլվի, սէվլի. *2. այս ծառի փայտից» ՄԳր.* նոճեայ *Նար. նոճեայօճառ Նար. խչ. 373.* նոճիաճաի *կամ* նոճիաճաղճաիւ *«նոճաշաատ, շատ նոճիներով»* (եաղճախիճ *կամ* ճապաղիճ *բառով բարդուած է) Նար. խչ. 394.* նոճաստան *(նոր բառ)։*

=*Պհլ.* *nōč *ձևից. Համմ. պրս.* نوج nōj, نوژ nōž, نوز nōz, نازو nāzō, ناجو nājō, نازۇ nāžō, نوژن nōžan *«շոճի, չամ, pinus». սրանցից են փոխառեալ նաև արևել. թրք.* ناجو naju *«շոճի», վրաց.* ნაძვი ნაძვი *«ель, кедръ մայրի, եղևին»,* ნაძვი ნაძვი *«пихта, сосна եղևին», անդ.* nuži, *չեչէն.* naž, *ինգ.* nazi *«կաղնի», թուշ.* նաձ *«եղևին», մինգ.* nuzu *«եղևին, շոճի»։ Երևան եկաւ բառիս հնագոյն իրաննան ձևը, որ է հպրս.* naučaina *«cèdra եղևին» (տե՛ս* Meillet, BSL № 103, *էջ 44)։—Հիւբշ. 207։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։ Որից յետոյ Pictet 1, 236 *պրս. ձևերի հետ նաև օսս.* naezi, naeji, *սանս.* nāga *«լեռ»։* Lag. Btrg. bktr. Lex. 21 *և Հիւնք. պրս. ձևերի հետ։ Մանտալճեան,* L'idiome 13 *բևեռ.* luese: *Նոճի ծառի բացատրութիւնը տե՛ս մանրամասն Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ 111—116։ Մառ,* Яз. и Лит.I. 236 *իրար է կցում հյ.* նուշ, ընկոյզ, *վրաց.* ნაძვი, *մինգր.* ნძბ *«ընկոյզ» և այլն։*

ՆՈՄԻԿՈՍ *«դիւանադպիր, նօտար» Ոսկ. մաթ. դ. (Հրտր. Բազմ. 1913, 16 ա). Երզն. մաթ. 478. Ասոր. դատ. 41. Մխ. դտ. Վրք. Հց. բ. 226. 227. «դատաւոր կամ կուսակալ» (Պիղատոսի համար է ասուած) Մագ. մեծ հն. էջ 53։*

=*Յն.* νομικός *«օրէնագէտ, իրաւաբան», որ ծագում է* νόμος *«օրէնք» բառից. (տե՛ս տակը)։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՆՈՄԻՍՄԱՅ *«դրամ, ստակ, փող» Շիր. էջ 28. ուրիշ վկայութիւն չկայ (տե՛ս և* նումիզմադայ*)։*

=*Յն.* νόμισμα, *որից էլ լտ.* nomisma *«դրամ». ծագում է* νομίζω *«գործածուիլ» բայից և բուն նշ. «գործածական՝ ընթացիկ դրամ». պարզ արմատն է* νέμω *«բաժանել», որից նաև* νόμος *«սովորութիւն, օրէնք»,* νομικός *«օրինական, օրէնագէտ» են։—Հիւբշ. 368։*

Հներից Շիր. մեկնում է «Նոմիսմայ ըստ Հռովմայեցւոցն դահեկան անուանի. վասն զի Նոմիսմայ անուն էր թագաւորի և ըստ իւրում անուան անուանեաց»։ Աւգերեան, Բզտր. չփ. և կշռ. էջ 140 յունարէնից։ ՆՀԲ դնում է յն. և լտ. ձևերը։

ՆՈՄՈՍ, ի, ի–ա *հլ. «օրէնք, կարգ, կանոն» Ասոր. դատ. 12. Սմբ. դատ. 121. Մխ. դտ. Ճառընտ. Յայտմ. դեկ. 12. Մին. Համդ. 65. Հաւաք. 50 (գրուած նաև* նօմօս *Ասոր. դատ. 16), «Հրովարտակ» Յայտմ. յունվ. 18. Սիմ. ապար. 68 (Նոմոս բերեալ ի չարքայէն առ ի գիտել զխնդիրս նորին). Ջքր. սարկ. Ա. 22։*

=*Յն.* νόμος *«սովորութիւն, օրէնք, կանոն». սրանից է փոխառեալ նաև թրք.* نوموس nomos *«կարգ-կանոն, օրէնք, ծէս». բուն ծագումը տե՛ս* Նոմիսմայ*։—Հիւբշ. 368։*

Ուղիղ են մեկնում ՀՀԲ և ՆՀԲ։

ՆՈՅԵՄԲԵՐ *«Հռովմէական տոմարի 11ոդ ամիսը» Յայտմ. Տօնակ. գրուած է* նոյեմբեր՝ *Շողակաթ, էջ 32.* նովեմբեր *էֆիմ. 105. ունին միայն ՀՀԲ և ՋԲ։*

=*Յն.* νοέμβριος *ձևից, որ գալիս է լտ.* november *բառից. նշանակում է «իններորդ ամիս» (մարտից սկսեալ) և ծագում է* novem *«ինը» բառից. փոխառութեամբ անցել է բոլոր եւրոպական լեզուներին. ինչ. ֆրանս.* novembre, *գերմ.* november, *ռուս.* ноябрь *են։ Հիւբշ. 367։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ։ Ամիսների անունների վրայ տե՛ս ընդարձակ Բազմավէպ 1897, էջ 138—141։

Գիւմ.—Ղրբ. նօյէմբէ՛ր, *Ախց.* նօյէմբ'էր, *Շմ.* նօյենբէր. *Պլ.* նույէմփէր, *Ննխ.* նույէմփէր, նուենէմփէր *են։*

Փոխ.—Վրաց. ნოემბერი նոեմբերի *բուժ է հայերէնի միջոցով՝ ձևի պատճառով։*

ՆՈՅԻՆ *«մոնղոլական իշխան, բիւրապետ». իբր օտար բառ յիշում է Վրդն. պտմ. Վենետ. 1862, էջ 144. «Զբերդս ամուրս մե-*

ծամեծ իշխանացն՝ զոր նոյինս կոչէին» (Էմին, Ист. Вардана, էջ 187 գրում է տոյին), միւսները գրում են նուին Մագաք. աբ. 10. 11. Սամ. անեց. շար. 150, 153, 155. յգ. նոյիէն Մխ. այրիվ. 80. նուինայք Մխ. այրիվ. 84։

=*Մոնղոլ.* ᠨᠣᠶᠠᠨ noyan *կամ* نويون nuyun, نويان nuyan *«արքայորդի, թագաժառանգ. 2. բիւրապետ»* (Будаговъ 2, 296), *չաղաթ.* نوين nuvīn *«արքայորդի», որից և պրս.* نويين nūyīn *կամ* نويان nūyān *«արքայորդի. 2. էօզբէգների և Դաղիստանի թագաւոր», վրաց.* ნოიონ ნოინի *«իշխանաց իշխան, բէգլարբէգի»։ Մոնղոլ.* noyan *բառն էլ փոխառեալ է չին.* lao-ye *«տէր, պարոն»> մանչուր.* looye *բառից* (Владимирцов, Срав. грам. монг. *էջ 305*)։

Ուղիղ մեկնեց նախ Վենետկի հրատարակիչը (Վրդ. պտմ. ծան. 1), որ ասում է թէ «նոյին, լաւ ևս նոյան ըստ Մոնղոլաց նշանակէ «բիւրապետ»)։

+ՆՈՅՆ *(հոլովւում է նորին, նմին, նովին կամ նովիմբ, նոյին, նոցին, նոցուն կամ նոցուց, նոյիմբ, նոյումբ կամ նովիմբ. յետնաբար կայ հոլովուած բց. ի նունոյն Ոսկ. յհ. Բ. 27, 30. էջ 799, 822) «նոյնը. միևնոյնը, էլի էն, նորէն ան, ինքը» ՍԳր. Ոսկ. Նւս. քր. Եզն. Բուզ. զանազան դարձուածներով աւում է նոյն ինեն, ի նոյն, միևնոյն, ի միև ի նոյն, ի նմին ժամանակի, նոյն նման, նոյն և մի, նոյն օրին, նոյն օրինակ, նոյն ժամայն, նոյն հետայն. ածանցներից յիշենք մի քանի հնագոյնները, ինչ.* նոյնազգի *Բուզ.* նոյնաձև *Գ. թագ. է. 23.* նոյնաեռուն *Ոսկ. մտթ.* նոյնգունակ *Իմ. է. 3. Եզն. Ոսկ. փիլիպ. Սերբեր.* նոյնպէս *ՍԳր. յետնաբար* նոյնչափ, նոյնպիսի, նոյնման *են։*

=*Բնիկ հայ բառ. կազմուած է* -ին *մասնիկով՝ նա դերանունից, որ այստեղ երևան է գալիս իր նախնական *նո<հնխ.* no- *ձևով. կազմութեան և գործածութեան մասին տե՛ս ինչ որ ասուած է դոյն բառի տակ։ (Յեղակից ձևերի ընդարձակ քննութիւնը տե՛ս* Pokorny 1. 101 *և* 2, 336)։

Բառիս վրայ ընդարձակ մի քննութիւն տե՛ս Meillet MSL *հտ. 10, էջ 241—271, յատկապէս էջ 258. հմմտ. նաև* Pedersen, *Հայ. ցուց. դեր. մենագրութիւնը։*

*ՆՈՅՆԱԴՐԱՄ *«ինը դրամանոց (գոհար)» Խոր. աշխ. 614 (բառարանները չեն յիշում)։*

=*Պրս.* نو nuh *«ինը»+* درم diram *«դրամ» բառերից։—Ա.Ճ.*

*ՆՈՈՄՈՆ *«յուլիս ամիսը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Եւթաղ. 89. «Յառաջ քան զերիս կազանդացն յուլիայ, որ օր վեց է նոոմոն ամսոյ, որ է մարերիք» (այլ ձ. պաՆեմոս)։*

=*Յն. բնագրի νόμων ընթերցուածից, որ սխալ է փոխանակ ὅλων որ նոյնպէս սխալ է փոխանակ λώφ նախնականի (այլ ձ.* πανέμους). *լոոս 6=պանեմոս 5=յունիս 29։*

Ուղիղ մեկնեց Հ. Վարդանեան, Եւթաղ. էջ 29, ծան.։

*ՆՈՊԱՅ *«հիւանդութեան դարձը. տագնապ,* crise» *Մխ. բժշ.։*

=*Արաբ.* نوبة nauba, *նոր արաբ.* nōba, *որից թրք.* növbet, *ռմկ.* նէօպէր, լէօպէր *«հերթ, կարգ. 2. հիւանդութեան տագնապ»։ —Հիւրշ. 272։*

Նշ՛ռմկ. նէօպէր։ Lag. Arm. Stud. § 1644 *արաբ.* nauba։

Դիմ.—Նոր փոխառութիւններ են Պլ. լէօբէր, *Երև. Ղրբ.* նօ՛բար *են։*

Նոպարենի *տե՛ս Սոնոպրի։*

*ՆՈՎԵԼԻՍՍԻՄՈՍ *«իշխանական մի աստիճան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գըտնում եմ գործածուած Տարօն. Բ. § 14, էջ 275. «Վասն զի սեպհական տէրութեամբ ի գահընկալ Նովելիսիմոսէ՝ պատուհաս մեծաւ պատուով ի կայսերացդ Հոռոմոց»։ Նոյն բառն է որ վրիպակով գրուած է* նովերսիմոս, *անդ՝ Ա. § 2. «Բերաւ առ իշխանն Հայոց Սահակ զնովերսիմոսս Զորտուանելս, որ յաթոռն կայ»։*

=*Յն.* νωβιλίσσιμος *բառից, որ աւանդուած է սխալագիր* νοβελίσσιμος *և* νωβελίσσιμος *ձևերով. կայսեր որդուն տրուած տիտղոսն էր և փոխառեալ է լտ.* nobilissimus *«ազնուականագոյն» բառից* (Sophocles 784, 788), *որ գերադրականն է* nobilis *«ազնուական» բառի. բուն իմաստն է «ծանօթ. յայտ-*

նի» և կրճատուած է gnobilis *բառից. ծագում է* nosco *«ճանաչել» բայից (ս.* Walde *522)։—Աճ.*

Նովպետ *տե՛ս* Նկաթ։

+ՆՈՐ, ո *հլ. «նոր» ՍԳր. Եզն. Ոսկ. որից գալիս են բազմաթիւ ածանցներ. յիշենք հնագոյններից՝* նորաբեր *Ագաթ.* նորագին *Ոսկ. ա. տիմ.* նորագիւտ *Ագաթ. Կորիւն.* նորածին *Եւս. պտմ.* նորակերտ *Ոսկ. ես. Եւս. քր.* նորաձև *Սերեր. Ոսկ.* նորաճոր *Բ. մակ. Բ. 6.* նորեկ *Եւագր. Կոչ. 215.* նորի *«հերախայրի պտուղ» Թուց իր. 26. 3հս. ե. 11.* -ոգ *մասնիկով աճած է* նորոգ *ՍԳր. Եզն. Ոսկ. որից* նորոգել *ՍԳր. Ոսկ. Եփր. ծն. և Բգ.* նորոգապէս *Բ. մկ. ժդ. 36. Եփր. եփես. Եւս. պտմ. Կոչ. Ոսկ.* լուսանորոգ *Նար.* կենդանանորոգ *Նար. յիշ.* հոգենորոգ *Նար. խչ.* հրաշանորոգ *Նար. խչ.—նոր բառեր են՝* նորաւանդ, նորածիլ, նորաբանութիւն, նորմուծութիւն, նորավէպ, նորափեսայ, նորալուր *են։ Կարևոր բառ է* նորf *«նորատունկ այգի», որ յետոյ դառել է յատուկ անուն (ընդարձակ տե՛ս Աւդալբէգեան, Տեղեկ. ինստիտ. Բ. էջ 55)։*

=*Բնիկ հայ բառ. հնդևրոպական նախաձևն է* névo-, névyo-, *որոնցից յառաջացած ձևերն են սանս.* नव náva-, नव्य návya-, *հինդուստ.* nuo, *գնչ.* nevó. *գնդ.* nava-, *պհլ.* 𐭭𐭥𐭢 nōk, navak, *պազ.* no, *պրս.* نو nō, nav, *քրդ.* nu, *աֆղան.* nau, nawai, *օսս.* näväg, nvog, *բելուճ.* nōk, *յն.* νέος, *յոն.* νεῖος, *հլտ.* novos, *լտ.* novus (>*ֆրանս.* neuf, neuve, *սպան.* nuevo, *իտալ.* nuovo, *ռում.* nouă), *գոթ.* niujis, *հրգ.* niuwi, *գերմ.* neu, *անգլսք.* níwe, *անգլ.* new, *հոլլ.* nieuw, *հալ.* novŭ, *սերբ.* nȍv, *չեխ.* nový, *ռուս.* новый, *հլիթ.* navas, *լիթ.* naũjas, *հպրուս.* neuwenen, *հիտ.* nūe *հոմանիշները. նոյն նախաձևից* r-*ով աճած ունինք յն.* νεαρός <*հնխ.* nevarós *և հյ.* նոր<*հնխ.* nevros, *նմանապէս ձայնաւորների՝* novros, *հնխ.* -ro *մասնիկով է կազմուած նաև լտ.* noverca *«մօրքոյր». այս մասնիկը ցոյց է տալիս երկու իրերի միջև հակադրութիւն. ուստի հյ.* նոր *նշանակում է բուն «երկուսի մէջ ամենից նորը»* (Ernout-Meillet 649, Boisacq 664, Horn § 1045, Walde 526, Kluge 348, Trautm. 194, Pokorny 2, 324)։ *Նոյն բառի ստորին ձայնդարձն է ներկայացնում հնխ.* nū *«հիմա, այժմ», որի ժառանգները տե՛ս* Pokorny 2, 340։—*Հիւրշ. 479։*

Նախ ԳԴ համեմատեց պրս. նէվ *հոմանիշի հետ։* Rask, Nonnulla (1832), *էջ 25 ֆիննն.* nuor *բառի հետ։ Ինճիճեան, Հնախ. Գ. 18 (1835) պրս. յն. և լտ. ձևերը դնում է հայերէնից։ ՆՀՔ ուղիղ ձևերի հետ դնում է նաև եբր.* նաար, *յն.* χαινός, *թրք.* yeni *«նոր»։ Ծանօթ ձևերի հետ համեմատում են* Windisch. 23, Müller SWAW 38, 589 *և* 41, 12, Justi, Zendsp. 168, *Տէրվ. Նախալ. 91, Երկբագունա 1883, 19 են։ Տէրվ. կարծում է թէ մեր բառի* r *ձայնը գալիս է միւսների* v-*ից և այս ձայնափոխութեան համար համեմատում է* մեղր—մեղու, բարձր—բարձու *ձևերը։ Հիմնք.* նոր<*լտ.* nurus *«հարս», իսկ* նորոգ *բառի* -ոգ *մասնիկը յն.* ἐγχαινίζω *բառի նախամասն* ἐγ-*ից է դնում։* Patrubány *ՀԱ 1908, 188 են-թադրում է երկու հյ. ձև՝* նոր *և *նոգ, որոնց միացմամբ յառաջացել է* նորոգ։

Գիւր.—Ալշ. Մշ. Զղ. Վն. նոր, *Ախց. Երև. Կր. Խրբ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սչ.* նօր, *Ագլ. Մկ. Տիգ. Տփ.* նուր, *Մրղ.* նուՙր, *Ակն. Սեբ. Սլմ. Հմշ.* նէօր, *Ասլ.* նէՙօր, *Սվեդ.* նիւր, *Զթ.* նիյ, նիւր, *Հճ.* նոյ.—*սրանցից Զղ.* նոր *և Մկ.* նուռ *գործածւում են միայն իբր մակբայ և նշանակում են «դեռ հիմայ, դեռ նոր» (այս իմաստի համար հմմտ. վերը հնխ.* nū *«այժմ», որ նոյն բառի ստորին ձայնդարձն է). իսկ «նոր» իմաստի համար գործածւում է պրս.* تازه tāza *«թարմ, նոր» բառը։—Նոր բառեր են* նորափեսայ, նորափոռիկ, նորկեկ, նորելուկ, նորելուղդ, նորէն, նորից, նորմլկէն, նորուկ, նորմնայ, նորուց *են։*

Փոխ.—Patrubány SA 1, 313 *հայերէնից փոխառնել է կարծում ֆիննն.* nuore *«նոր, թարմ, մատաղատի», էսթն.* nōre *«դեռատի, թարմ», լապ.* nuor, nuora *«մատաղաշ». Նոյնը նաև* Pederzen KZ 40, 184։

+ՆՈՒԻ, ո *հլ. (յգ. նաև* նուաճ, նուվաճ,

-անց, յետնաբար գրծ. -ու) «հարսը (փեսի ծնողների և հարազատների համար)» ՄԳր. Եզն. Սեբեր. (յգ. հյց. նուվանս ձևն ունի Ոսկ. ես. էջ 13)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. snuso- ձևից. սրա միւս ժառանգներն են սանս. snuṣā, սոգդ. šunūša, յն. νυός, լտ. nurus, ռում. noră, հբգ. snura, snur, մբգ. snürche, նբգ. schnur, խրիմի գոթ. schnos, անգսք. snoru, հիսլ. snor, հոլլ. snaar, հսլ. snŭcha, սերբ. snàha, ռուս. сноха, լեհ. (փաղաքշական) sneška, բոլորն էլ «նու». իսկ ալբան. nuse «նշանածուհի» (Pokorny 2, 701, Trautmann 273, Walde 538, Boisacq 674, Ernout-Meillet 656, Kluge 436): Meillet MSL 13, 211 մեր բառի համեմատութիւնից հետևեցնում է թէ հնդևրոպական նախալեզուն ճանաչում էր -o- բնով իգականներ, որ այժմ միայն յոյնն ու լատինն են պահում։—Հիւբշ. 479։

Նախ Schröder, Thesaur. 58 մեզանից դրաւ լտ. nurus, ՆՀԲ լծ. յն. և լտ. ձևերը։ Ուղիղ մեկնեցին Peterm. 30, 39, Windisch. 23, Böttich. ZDMG 1850, 359, 187, Arica 65, 49, Lag. Urgesch. 864, Müller SWAW 38, 593, Pictet 2, 372, Տէրվ. Նախալ. 114 ևն։ Հիմնք. պրս. նէվ «նոր» բառից։ Պատահական նմանութիւն ունի չին. 女 nü³ «կինը, ամուսինը, weib»։

ՓՈԽ.—Բուշ. ნუ նու, լազ. nusa, nusava. կարաբդին. nəsə «նու». սրանք ներկայացնում են հնագոյն հայերէնի *նուս ձևը։

*ՆՈՒԱԳ, ի–ա հ. «երգ, երգի եղանակ» ՄԳր. Ոսկ. մ. ա. 19. Սեբեր. որից նուագել «նուագարան ածել կամ բերնով երգել» ՄԳր. նուագածու Դաան. ե. 11. նուագայարդար Նար. քր. նուագարան ՄԳր. Նար. քր. նուագաւոր Փիլ. Պիտ. խաղցրանուագ Վեցօր. Կոչ. սաղմոսանուագ ՄԳր. Ագաթ. նոգենուագ ՅՀ. իմ. Արծր. բազմանուագ ՄՀԿ. արմաւ. գեղեցկանուագ ՅՀ. իմ. աստ. նոր բառեր են նուագահանդէս, նուագախումբ, ցայգանուագ, նուագային, նուագայնութիւն ևն։

=Միջին պհ. nivāg «նուագ, երգ, եղանակ» բառից, որի ներկայացուցիչն է մանիք. պհ. ניואג nvag (Salemann. ZAH 8, 98). հին պհ. ձևն է *nivāk, որից ծագում են պհ. הוניוואכיה hunivākīh «երաժշտութիւն» (բուն «բարեհնուագութիւն»), הוניואכאר hunivākkar «երաժիշտ», պրս. نوا navā «նուագ, եղանակ, երգ», navāsāz «նուագայարդար», نوايدن navāyīdan «նուագել, բարձրաձայն հնչել»։

ԳԴ համեմատեց նախ պրս. նէվա ձևի հետ։ ՆՀԲ նուագ «լծ. հյ. աւաչ, պրս. ավազ, նէվա, նէվայի, նիվա, նավա», նուագել «պրս. նիւվախդէն, նիւվազիյտէն»։ Lag. Urgesch. 421 պրս. nuvāxtan (արմատը nuvāz) «նուագել, փայփայել, գգուել»։ Justi, Dict. Kurde 376 և Kurd. Gr. 38, 75 պրս. nuvāz, քրդ. lavuž, lavəžk, lauk, lauže «երգ»։—Հիմնք. պրս. նէվա։—Հիւբշ. Arm. Gram. 207 մերժում է պրս. navā ձևի համեմատութիւնը, հայերէնի հետ ձայնական անյարմարութեան պատճառաւ։ Stachelberg WZKM 17 (1903), 54—55 համեմատում է պհ. hunivākīh, hunivākkar ձևերի հետ։ Վերջապէս 1908-ին Salemann, Manich. Stud. դնելով մանիք. պհ. ձևը՝ հաստատում է նուագ բառի իրանեան ծագումը։

ՓՈԽ.—Վրաց. ნოვაგი նովագի «նուագ, եղանակ», ნოვაგობა նովագոբա «ուրախութիւն, զուարճութիւն», ნოაგი նոագի «լարաւոր նուագարան»։

ՆՈՒԱԳ (սեռ. -ի) «անգամ, հեղ» ՄԳր. Եփր. դտ. Ագաթ.։

ՆՀԲ լծ. արաբ. vaqt, լտ. vicis, vices, յն. ἅπαξ։ Մորթման ZDMG 26, 489 բևեռ. nuki «սկիզբ»։ Հիմնք. էջ 147 կցում է նախորդի հետ՝ նշանակութեանց զարգացման համար համեմատելով եղանակ բառը, որ նշանակում է թէ՛ «երգի եղանակ» և թէ «տարւայ եղանակ»։

*ՆՈՒԱԳ, ի–ա հ. «գաւաթ, բաժակ, գինու բաժակ» ՄԳր. Ագաթ. Բուզ. ե. 32. Խոր. որից նուագաւորել «մատռուակել» Բէրդ. կուս.—ըստ ՋՔ նուագ նշանակում է նաև «խում, գինի»։

=Պհ. գւռ. մի ձևից, որ աւանդուած չէ. բայց նրա հետ համմտ. պրս. نفاغ nifāγ

կամ nufāγ *«մեծ կթղայ գինւոյ, որով ի վախճան բազմականի խրախճանութիան՝ լի գինի ըմպեն», օսս.* նուագին *«խմել»։*

ՆՀԲ նաւակ *բառից։ Հինք. պրս.* nāva *«աման գոգաւոր ի ձև նաւու»։ Հիւբշ.* Arm. Gram. 207 *սխալմամբ կցել է* նուագել *բային։ Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Կոր. վրդ. էջ 200. Նոյնը յետոյ Աճառ. Արրտ. 1910, 269։* Karst, *Յուշարձան 406 սումեր.* nag, nak *«խմել»։*

ՓՈԽ?—Վրաց. ნოვაგი նուվագի *«պաշարեղէն», ნოაგი* նոագի *«համեղ ուտելիք», ნაճოვაგო* սաճուվագո *«սնունդ, ուտելիք, կերուխում», Მენოვაგე* մենուվագե *«միասին խմող, բաժակի ընկեր»։*

ՆՈՒԱՂ *(յետնաբար ի հլ. ընտիր է յդ.* նուագուճ*) «քիչ, պակաս, սակաւ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 4. «Բարակ, նուրբ» Դիոն. ածայ. որից* նուագիլ *ՍԳր. եղն.* նուագեցուցանել *ՍԳր. Ոսկ. մ. ա. 3.* նուազութիւն *ՍԳր. Սերեր. Եւս. քր.* նուազագոյն *Յոբ. ժզ. 7. Եզն. Եւս. քր. Ոսկ. մթթ. Սերեր.* նուազական *Ոսկ. ես.* նուազուն *Մծբ. ևն։*

ՆՀԲ պրս. niyāz *և հյ.* նիազ *«կարօտ»։* Böttich. Arica 84, 406 vah *արմատից, իբր զնդ.* nivazaiti *«ցած է տանում»։ Հինք. պրս.* նիյազ։ Patrubány SA 2, 34 *ևի մասնիկով վազել բայից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* نفاض nufāḍ *«պարէնը նւագիլ՝ պակասիլ» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 450)։* Nyberg, Hilfsb. 2, 245<*իրան.* *ni-vaza- *այն է* vaz *«տանիլ, քաշել» արմատից, որ ուրիշ հնդևրոպական լեզուների մէջ նաև «կըշռել» նշանակութիւնն ունի. ինչ. հբգ.* wāga, *հիսլ.* vág, *շվէդ.* vāg, *գերմ.* Waage *«կշիռ»։*

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Ղրբ. Մշ. Ջղ. Սլմ. նվազ, *Ագլ.* նվայզ *«նիհար, վտիտ», Շմ. Տփ.* նվազիլ, *Մշ.* նվազել *«նիհարիլ», Մշ.* նվրզրուզ=*Սլշ.* նվրժրուկ *«նիհար, ճղազած» (մարդ, ցորենի հատիկ ևն)։*

ՆՈՒԱԹ *«հնութիւն». ունի միայն Բառ. հրեմ. էջ 240։*

ՈՆՈՒԱԼ *«կատուի մլաւիլ» Յայսմ. «մարդու հառաչելը» Առաք. պտմ. 67. հնչման համաձայն գրուած է նաև* նըւալ։

=Բնաձայն բառ. նման բնաձայն ձևեր են արաբ. نعأ nu'ā *«կատուի մլաւիլ» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 941), լեթթ.* n'auju, n'aut *«մլաւել»* (Pokorny 2, 323)։—*Ա՛.*

Տէրվ. Նախալ. 90 հնխ. nu *«գոչել» արմատից, իբր սանս.* nu, *լիթ.* naut, *հբգ.* niumo *«գովեստ, օրհնութիւն»։*

ԳԻՒ.—Ալշ. Մկ. Մշ. Վն. նվալ *«մլաւել», Երև. Տփ.* նվալ *«մանկիկի լալ, ինծկալ, հառաչել», Տիգ.* նվվալ *«մլաւել», Ջղ.* նվվալ *«հեծել, հառաչել», Կր.* նֆալ *«հիւանդի սրքալ», Մրղ.* մօուալ *(ազդուելով մլաւել բայից) «մլաւել», կրկնութեամբ Ալշ. Մշ. Սլմ.* նվնրվալ *«մլաւել».—Նոր բառեր են* նուոց *Երև. «լացի ձայն», նվուկ Խրբ. «ճիչ, մանկական աղաղակ», նվնվան «բարակ ձայնով լացող», նվնվուն «մլաւոց»։*

ՆՈՒԱՂ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «աղօտ, տկար, մեղմ (ձայն, լոյս ևն)» Շիր. Նանայ. Նար. «պակասաւոր, թերի» Եւս. պտմ. Եփր. ծն. Ոսկ. յհ. ա. 35. բ. տիմ. գ. որից* նուաղիլ *«լոյսը թուլանալ, հանգիլ. 2. թուլկանալ, թառամիլ, ուշագնաց լինել, մարիլ» ՍԳր. Եփր. ծն. Ոսկ. ես. Եւս. քր.* նուաղեցուցանել *Ագաթ. Ոսկ. մթթ. (այս բառերը շատ անդամ շփոթուած են* նուագ *բառի հետ՝ ղ և գ տառերի նմանութեան պատճառով)։*

Հինք. հանում է նուագել *բայից։ Նման ձևեր են ներկայացնում լիթ.* nõvyti *«չարչարել, տրորել, վնասել», չեխ.* unaviti *«յոգնեցնել», ռուս.* уны́ть *«տխրիլ, քաջութիւնը կորցնել, թուլանալ». գոթ.* nauþs *«կարիք», որոնց նախաձևը* Trautmann 201 *դնում է* nūþō *«անցնիլ, դունաթափ չինիլ ևն»։*

ԳԻՒ.—Երև. Մրղ. նվաղել, *Ագլ. Տփ.* նվա՛ղիլ, *Լ. Ղզ. Շշ.* նաղվել *«ուշքը գնալ, մարիլ»։ Նոր բառեր են* նվաղկատ *Վն. «նուաղիլ, սրտը խառնուիլ»;* նվաղկոտ *Ղզ. «ընկնասուր, լուսնոտ»,* նվաղկոց *Վն. «սրտի նուաղում». —ունինք նաև* նվաղել *Ակն. «ափսոսալ, ատելով»։*

ՆՈՒԱՃ *«ընկճել, տիրել, յաղթահարել, հընազանդեցնել». արմատ առանձին անգործածական, որից* նուաճել *ՍԳր. Եւս. քր. Ա-գաթ.* նուաճութիւն *ՍԳր. Ոսկ. եփես.* նուաճումն *Փարպ.* աճնուաճ *ճառընտ.* բազմանուաճ *ճառընտ.* նուաճողական *(նոր բառ)։*

ՆՀԲ նուասա, նուազ *ձևերից։* Windisch. 42 աճել *բային ցեղակից։* Böttich. Arica 84, 405 *պրս.* nuvāxtan, nuwāz *և զնդ.* nivaz *բառերի հետ։* Lag. Urgesch. 424 *պրս.* nuwāstan *«կռուիլ»։* Spiegel, Comm. 2, 511 *պրս.* nawāštan *«աշխատիլ, ջանալ»։—Հիւնք.* նուազ *բառից։* Patrubány SA 2, 35 *և ՀՍ. 1907, 304 փոխառեալ զնդ.* ni+vač *«խօսիլ» ձևից։*

ՆՈՒԱՍՏ *(յետնաբար ի հլ.) «խոնարհ, ցած, ստոր, յետնեալ» Լմբ. պտրդ. Նար. Աբ. գրուած է* նաւաստ *Տիմոթ. կուզ. էջ 330. որից* նուաստական *Եւագր.* նուաստամտել *Ոսկ. անտմ. է.* նուաստանալ *Շար. Փիլ.* խաչանուաստ *Ոսկ. յհ. ա. 30.* նուաստագոյն *Փիլ. Պիտ.* նուաստացում *(նոր բառ) ևն։*

ՆՀԲ «իբր նուազեալ, նուաճեալ կամ նսեմեալ ի վայր, զնսեմեալ»։ Windisch. *42 Թիրևս անս.* anustha *բառին ազգակից։* Böttich. Arica 84, 405 *և* Lag. Urgesch. 419 նուաճել *բայի դերբայն է համարում։ Հիւնք. պրս.* նիւվիխէնտ *«դպիր» բառից։* Patrubány SA 2, 35 ni *բայական մասնիկով անս.* vāstu *«բնակավայր»։*

ՆՈՒԱՐ, *որից* նուարխոտ *կամ* նուարտակ *«մի տեսակ խոտ,* lepidium, *ֆրանս.* passerage, *արաբ.* սարիճ, *պրս.* šaytara *Գաղիան. Բժշ. Ամիրտ.։*

ՆՀԲ Գաղիանոսի մէջ գտնելով սարիճ *=*նուարտակ, *այդ բառով հասկանում է յն.* στρίξ *=լատ.* strix, *որով* նուարտակ *էլ մեկնում է «ազգ ագռաւու, կամ գոգաւոր գիծ կամ խողովակ տեսանց»։ Ուրիշ Բժշկարաններ շփոթում են պրս.* šaytara *«նուարտակ» և* šāhtara *«անձխոտ», որով և գրած են* նուարտակ *=* անձխոտ. *այսպէս նաև Հիւնք. § 2220 և Տիրացուեան,* Contributo § 161 aethionema cristatum DC: *Բառի իմաստը վերի ձևով ճշտեց Նորայր ՀԱ 1922, էջ 393։*

ՆՈՒԱՐՏԱՆ, ի–ա *հլ «ծածկոց» ՍԳր. Ոսկ. երր. իր. 552. բառս մեկնուած է հներից՝ «նուարտան, որ է ծածկոյթ մազեղէն» Նխ. ել. կամ «սեկէ ծածկոց» Մխ. դտ. էջ 245։ Այս բառն է անշուշտ՝ որ Բառ. երեմ. 233 գրում է* նուարտակ *«որ ծածկել ինչ»։*

ՆՀԲ պրս. nuvār *«ծոպք վրանի»,* navard *«շուրջ պատիճ»,* nuvardīdan, navardīdan *«պատել»։* Böttich. Arica 84, 405 *սանս.* nivṛ *«ծածկել, շրջապատել», պրս.* naward *«շրջագնաց»։ Հիւնք. պրս.* nuvār *«չուան, վրանի պարանդակ»։*

ՆՈՒԲՈՍ *«ցեց». ունի միայն Բառ. երեմ. էջ 317, որ գրում է.* Ցեց. նուբոսասի *(բ տպ.* նուբոս ասի*).—բայց թերևս պէտք է կարդալ* Ցեցն ուրոս ասի, *որով վերի բառը կդառնայ* ուրոս*։*

***ՆՈՒԵՆԴ**, ի–ա *հլ. «սուրհանդակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Սոկր. 228. «էբարձ և զհարկս պիտոյից ընդ ձեռացն, զորս խաշանց, ջորոց և իշուց. միայն երաւարացն պիտոյից թուլացոյց բռնադատուրել հարկացն».=յն.* περιεῖλε δὲ καὶ τὸν ὀχμώδιον τῶν χρειῶν δρόμον *(տե՛ս* Socrates' Ecclesiastical history, Oxford, 1893, *էջ 140). յն.* δρόμον *թէև հին լեզուով նշանակում է «վազք, արշաւ, ստադիում», բայց ըստ* Sophocles 356 *Բիւզ. յն.* ὀχμώδιος δρόμος *նշ.* «public conveyance *հանրային փոխադրութիւն»։*

=Պրս. نوند navand *(նոր հնչումով* näväṇd *կամ* nevend*) «արագընթաց. 2. արագավազ ձի. 3. ձի. 4. սուրհանդակ»։—Աճ.*

***ՆՈՒՀ**, ի–ա *հլ. «ընծայ և տաճարին ընծայուած որևէ բան, երախայրիք պտուղ, նուբար, զոհ, ձօն, դինու բաժակ կամ իբրև Աստուծոյ ձօնելու համար կաթեցրած դինի» ՍԳր. Եւս. քր. որից* նուիրել *ՍԳր.* նուիրակ *«բաժակ» Փիլ. ել.* նուիրաբեր *Ել. լզ. 3.* նուիրական *Ցես. գ. 8, 13. Սեբեր. Եւս. քր. Ոսկ.* նուիրամսակ *Փիլ. լին.* նուիրանոց *ՍԳր.* անանուհր *«ամբարիշտ» Հռոմ. ա. 31. Բ. տիմ. գ. 3.* դիւանուհր *Անան. եկեղ. Նար.* բազմա-

նուէր *Կանոն. մշտանուէր Նար. Գր. Հր.* նախանուէր *Նար.* փեսայանուէ՞ր *Ոսկ. ԵՒս.* նուիրապետութիւն *(նոր բառ) ևն։*

=*Պհլ.* nivēδ *բառն է, որ Աւեստայի պհլ. թարգմանութեան մէջ գործածուած է* nivēδenēm *ձևով՝ զնդ.* nīvaēδayemi *«ձօնեմ, սրբագործեմ, նուիրագործեմ (զոհ կամ աղօթք)» բառի դէմ* (Bartholomae, Altir. Wört. 1318)։ *Ծագում է* nī- *մասնիկով* vaēd- *«գիտենալ, ճանաչել» բայից. հմմտ. նաև* նուիրակ։—*Ա՛ճ.*

Brosset JAs. 1834, 383 *պրս.* نویس *որի ինչ լինելը յայտնի չէ։ ՆՀԲ որպէս թէ* նոր իր *կամ* նոր բերք, *յծ. յն.* ἱερός *«սրբազան», պրս.* nōbar *«նորաբեր, հրախայրի պտուղ, նուբար»։* Windisch. 42 *և* Lag. Urgesch. 233 պատուէր, նուէր *ձևերի հետ* var *արմատից։ Հիւնք. պրս.* navard *«նուէր»։ Ալիշան, Հին Հաւ. 450 պրս.* նիւվար *«չւան» և զնդ.* նոնուվէր *«կրակին նուիրուած աղօթք»։* Müller WZKM 8, 98 *պրս.* nuvēd *«աւետիս» և զնդ.* niwaēδayēmi *«ծանուցանեմ» բառերի հետ։ Սրա համեմատ Հիւբշ.* Pers. Stud. 103 *և* Arm. Gram. 207 *կասկածով կապում է* նուէր՝ *պհլ.* ˇnivēδ *ձևի հետ, իբր զնդ.* nivaēδayēmi *«ծանուցանեմ»։ Նկատենք սակայն, որ պհլ.* nivēδ *գործածուած է «վարձ» իմաստով՝ զնդ.* vyam *հոմանիշ ձևի դէմ* (Bartholomae, Altir. Wört. 1476). *բայց ո՛չ պհլ.* nivēδ *«վարձ» և ոչ էլ զնդ.* nivaēδayēmi *«ծանուցանեմ» կարող են տալ հյ.* նուէր *«ձօն»։ Վերջին զնդ. ձևի հյ. համապատասխանն է* նուիրակ։ *Այս պատճառով բոլորովին տեղին է Հիւբշմանի կասկածը, քանի չէր գտնուած իրանեանց մէջ «ձօն» իմաստը, ինչպէս ցոյց տուինք վերը։ — Սանտալճեան,* L'idiome 11 *բևեռ.* nuri: *Թիրեաքեան ՀԱ 1912, 426* նոր-բեր *ձևից, ակնարկելով Նոր Տարւոյ առթիւ կառավարիչների թագաւորին բերած մատուցած տուրքերը։ Ֆինդլեան ՀԱ 1926, 489 պհլ.* nvar *բառից, որ գտնում է* aspānvar *անծանօթ բառի մէջ և որ թարգմանում է «ձիազոհ»։ Սրան հակառակ է Ադոնց ՀԱ 1927, 405։*

ԳԻՒ.—Երև. Մշ. նվէր, *Սլմ.* նվէրի՛.—*նոյն բառն է նաև* նուէրք *Ակն. «չար աչքից, աչքից, հիւանդութիւններից ազատուելու համար նզած բոլոր կախարդական միջոցները. 2. մկրատ՝ որ երախային լոգցնելու ժամանակ ջրի մէջ են գցում կամ տղացկանը իր գօտու մէջ է կրում 40 օր»։*

ՆՈՒԻԿ *կամ* **ՆՈՒԻՃ** *«շաւաշարիւն բոյսը. լտ.* arum dracunculus» *Բժշ. գրուած է նաև* նվիկ։

ՆՀԲ *պրս.* նիվիշք, նէշէ *«գրեալ, նկարչէն»։ ՀԲուս. § 2204 արմատը դնում է* նիւ, *իսկ § 2221 «հարազատ հայ անուն լսուի, թէև չէ հնուի արաբ.* لوف lūf *«նուիճ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 292 պրս.* نویچ navīč *«բազեղ, պատատուկ», որ սակայն իմաստով համապատասխան չէ և երկրորդ չի բացատրում* նուիկ *ձևը։*

ԳԻՒ.—Երև. Մկ. Վն. նվիկ, *Ալշ. Մշ. Սեբ.* նվիգ, *Զթ.* նը՛վը՛գ, *Ակն.* լվիջ, *Ասլ.* լվիջ, լվիժ, *Խրբ.* լվինջ, *Պրտ.* լվիջ։

ՓՈԽ.—Վրաց. ნიუკა ნիուկա *«մի տեսակ բոյս» (ա տպ. մեկնուած է* pied-de-nau, *բ. տպ. էջ 984 ռուս.* «аронава борода, образки. 2. *վայրի գազար»), քրդ.* niwik «poirée, folia betae» (Justi, Dict. Kurde 428), *Քրք. գուռ. Նւդ.* نیویك nivig *(Յուշարձան 330 բ), Ակն.* lviǰ *«նուիկ»։*

***ՆՈՒԻՐԱԿ,** ի–ա *հլ. «պալատական յատուկ պաշտօնեայ՝ որ արքունիք կանչուած անձին առաջնորդում էր թագաւորի առաջ. 2. թագաւորի կամ իշխանի առաջից գնացող պաշտօնատար՝ որ նրա գալուստն է յայտարարում և ճանապարհ բաց անում» Գծ. ժզ. 35, 38. Ոսկ. ԵՒս. 439 (Առաջի իշխանաց յորժամ սպասաւորն երթայցէ, կարապետք և նուիրակք և քարոզք մեծաձայն առաջի կարդայցեն). Վեցօր. 86 (Աստի անտի նուիրակք հպարտացեալք ամբարհաւաճեալք ստիպեն ճնպեն, զխառնադանճ ամբոխն ի բաց պարզեն). Եփր. բ. 284. Լաբուբ. 30. Բուզ. 221. Գիրք Թղ. 90. Փարպ. Եղիշ. բ. էջ 156 (Չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս և ոչ*

կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա). Մամիկ. էջ 25 (Վահան կոչեաց ըզնուիրակն և ասէ. Ե՛րթ կոչեա՛ զայս անուն իշխան). Անկ. գիրք նոր կտ. 58 (նոյնը մի քիչ ցած կոչւում է հրաւիրակ). «նոյն պաշտօնը կատարող եկեղեցական՝ կաթուղիկոսի մօտ» Օրբել. (Կաթողիկոսն Անանիա կոչէր նուիրակօք զՅակոբ և զՍահակ. Յուղարկէ նուիրակ... զՄեհփաննոս վարդապետ... հրաւիրական նամակօք) հրտր. Էմինի, էջ 201 և 321. «պաղի և եկեղեցական տուրքերը հաւաքելու համար կաթուղիկոսի կողմից ուրիշ երկիր կամ քաղաք ուղարկուած կրօնաւոր» (նոր բառ). որից նուիրակապետ Բուզ. 128. Պիոն 389. Յայսմ. Ճառընտ. (սխալ գրչութեամբ նուիրապետ Ուռհ. Ճառընտ. նուիրապետական Դիոն. երկն.)։

=ՊՀլ. *nivēδak ձևից, որ աւանդուած չէ. հմմտ. զնդ. nivaēδayemi «ծանուցանեմ» և պրս. نوید nuvīd «աւետիք, լուր». կազմուած են ni- մասնիկով vid=զնդ. vaēd- «գիտել, ճանաչել, հասկանալ» արմատից.— ըստ այսմ նուիրակ բուն նշանակում է «ծանուցիչ, ազդարարող, յայտարարող», որ և ճշտիւ համապատասխանում է բառի իսկական նշանակութեան։ Նոյն vid—vaēd «գիտել» արմատից paiti->pat- և fra- մասնիկներով կազմուած ձևեր են զնդ. paiti-vaēδayemi «ծանուցանեմ», fravaēδ- «նկատել», որոնց ՊՀլ. ձևից փոխառեալ են հյ. պատուէր, պատուիրել, հրաւէր, հրաւիրակ, հրաւիրել։ Այս բոլորի նախնական և հիմնական գաղափարն է «իմացնել, դիտցնել, ծանուցանել». այսպէս պատուիրել ո՛չ թէ «խրատել» է, այլ աննկիքը նախապէս իմացնել, հրաւէրը ո՛չ թէ «կոչ» է, այլ «հանդէսը ծանուցանել» և հրաւիրակը այն անձն է՝ որ հանդէսի մասին յայտարարում կամ ծանուցում է հրաւիրեալ անձին։ Նոյն իսկ նուիրել (որ այս արմատից է դարձեալ. տե՛ս նուէր), բուն իմաստով «աստուածներին մի բան ձօնել», ո՛չ թէ «պարգեւել» իմաստով է, այլ «քուրմի կողմից ծանուցում տալ ժողովուրդին՝ ընծայ բերուած իրի մասին» և նուիրագործել (կամ սրբագործել)՝ նշանակում է «սրբազնագործեալ անձի կամ իրի մասին» բարձրից ցած (ni-) ժողովրդին յայտարարել կամ ծանուցանել»։ Այնուհետև աստուածներին միայն յատուկ նուէրը, իր սրբազան իմաստը կորցնելով, դարձել է հասարակ ընծայ ամէն մարդու համար, ինչպէս եղել է նաև ձօն բառը։—Ա՛ճ.

ՆՀԲ արաբ. և պրս. նէֆէր, նէֆէրաբ (իմա՛ արաբ. نفر nafar «անձ, անհատ, զինուոր»), իբր «զինուոր սոսկական՝ հրամանակատար ևն»։ Պատկ. Матер. для арм. слов. II 20 ընդունում է արաբ. բառի համեմատութիւնը և հասկանում է «գլխաւոր կոմիսար»։ Ակինեան ՀԱ 1910, 9 տալով բառիս համար բազմաթիւ վկայութիւններ, մեկնում է «արքայի անձնապահ, բարապան»։ Վերի ձևով մեկնեց ու բացատրեց Աճառ. ՀԱ 1910, 119։ Թիրեաքեան, ՀԱ 1912, 426 -ակ մասնիկով նուէր բառից, որ կցում է պրս. nūbār կամ naubar «նախախայրիք» բառին։

ԳԻՈ.—Մշ. նվիրագ «վանքի կողմից պաղի հաւաքող կրօնաւորը»։

ՆՈՒԽ «վարք». ունի միայն Բառ. հրեմ. էջ 240։ Նոյն բառն է Քաջունի, հտ. Գ. էջ 181 նուխ «վարդ»!

*ՆՈՒԿԻ տե՛ս Ունկի, որի աստրական ձևից է փոխառեալ։

*ՆՈՒԿՐԱՅ «աման՝ որի մէջ դեղորայք են եփում» Մխ. բժշ. 148 (երկիցս)։

=Արաբ. نقر nuqra «գետնի վրայ կամ քարերի մէջ ծակ կամ կլորակ փոս՝ ուր ջուր է հաւաքւում. 2. ղլխի հաւի փոսը. 3. աչքի փոսը, ակնակապիճ. 4. սրբան 5. այն փոսիկը՝ որի մէջ թռչունը ձուն է ածում» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 131)։

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. հեր. § 422։

ՆՈՒՄԱՅ «կիտրոն կամ նարինջ». ունի միայն ՀԲուս. § 2224՝ առնելով Բովմա վ. կիլիկեցւց. որից նումայի «լիմոնենի կամ նարընջենի» Վստկ. 42, 143. Աղթամ. հրտր. Կոստ. 63.—Քաջունի, հտ. Գ. 182 համարում է mandarine, իսկ ԳԲ «անուշ լիմոն», որ իրօք լիմոնի և նարինջի մէջտեղն է։

—ՆՈՒՄԵՃԱՆԱԿ «նախագլուխ, նախիշխան, նախարար» Հին բռ.=Բառ. հրեմ. 240։

=Նոյն ընդ ևամեսական, որ տե՛ս վերը։— Աճ.

ՆՀԲ «թիւս յն. ևօմի՛զօն «օրէնսդիր» և ևօմի՛զմէևօս «երևելի ոք»։

*ՆՈՒՄԷՐ «գունդ զօրաց». Նորագիւտ բառ, որ երեք անգամ գործածում է Վարք սեղբ. 714. «Առեալ նումէրս ոչ սակաւս, սպառազինի հակառակ Բիւզանդացւոցն և քախեալ ընդ նոսա, կորոյս նումէրս վեց. և դարձեալ խառնեալ ընդ նոսա, կորոյս նումէրս երիս»։ Համմտ. նաև Ոսկ. գծ. էջ 192 «է գունդս այս զոր այժմիկ նումերովն կոչեն, այսինքն է թիւ զաւուրեանս»։

=Յն. νούμερος, τὸ νούμερον «գունդ զօրաց», որ փոխառեալ է լտ. numerus «թիւ», յգ. numeri «գունդ զօրաց» բառից (Sophocles 786 բ)։

Ուղիղ մեկնեց Մ. Վ. Տէր-Մովսէսեան, Հրատ. Սոկրատի, էջ 714։

*ՆՈՒՄԻՉՄԱՏԱՅ «ընթացիկ դրամ» Մագ. թղ. 202 (ըստ ՆՀԲ և ԱԲ ևումիզմատայ՝ որ յետին տառադարձութեամբ է)։

=Յն. νομίσματα, որ յոգնակի ձևն է νόμισμα «դրամ, ընթացիկ դրամ» բառի. ծագումը տե՛ս ևումիսմայ, ևումոս։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՆՈՒՆՈՒՖԱՐ (որ և ևոևուֆար, ևոևոփար, ևոևոֆար, ևուևաֆար, ևիևոֆար, ևիլուֆար, լիլուֆար, լիլուփար) «ջրային շուշան, լտ. nymphaea» Մխ. բժշ. Վրդն. հրգ. Բժշ. Վատկ. էջ 174. Կոստ. հրզն. 112. Հայերէն հոմանիշն է ևարսևամատն ՀԲուս. § 1655։

=Արաբ. نينوفر nīnūfar, որ և արաբ. պրս. nīlūfar, nīlūbar, līlūpal, līlūfar, līlūpar, nīlūbal, nīlūfal, nūfar ևն. սրանցից են փոխառեալ նաև թրք. لوفر lufar (Կամուս. թրք. թրգմ. Բ. 130), նյն. νενούφαρ, νουφάρα, ասոր. nīrōpal, ռում. nenufer, nufar, nufer, ռուս. nenufarŭ, ֆրանս. սպան. իտալ. nenufar ևն. բոլորի աղբիւրն է հնդ. nīlotpala, որ է սանս. नीलोत्पल nīlotpala «կապոյտ նունուֆար, nymphaea cyanea Roxb.», որ կազմուած է nīla «կապոյտ»+utpala «նունուֆար» բառերից (Böhtlingk I. 899 և IV 295):—Հիւբշ. 279։

ՀՀԲ բառ այլազգական։ ԳԴ պրս. նիյրուֆէր: ՆՀԲ ռմկ. նիլուֆէր, նիյլուպէր, էօլիֆէր: Բոյսի ծագման և բառի մեկնութեան վրայ տե՛ս Teza, Թրգմ. Բազմ. 18. 212։ Վերջին անգամ Seidel, Մխ. հեր. § 48։

ԳԻՒ.—Ախց. Մշ. ևուևուֆար։

ՆՈՒՇ (յետնաբար սեռ. ևշի) «նուշ, բադամ» Ագաթ. Երզն. մտթ. «վայրի կաղին» Գաղիան. որից ևշի ժղ. ժբ. 5. կամ ևշենի Ոսկիփ. ևշուտ Վրդն. ծն. ևշաձէթ Մխ. բժշ. ևշատեռև Ոսկ. մ. բ. 24։

ՆՀԲ լտ. nux «ընկոյզ» և վրաց. ևուշի «տե՛ս ընկոյզ և ևշի բառերի տակ)։ Lag. Arm. Stud. § 1654 եբր. לוז lūz, արամ. lūzā, արաբ. لوز lauz, եթովպ. ՈՀԻ lawz «նուշ, նշենի»։ Canini, Et. étym. 29 և Հիւնք. լտ. nux, nucis «ընկոյզ» բառի հետ։ (Այս մեկնութիւնը սխալ է, որովհետև լտ. nux, ինչպէս նաև գերմ. Nuss, հբգ. hnuz, հիսլ. hnot, անգսք. hnutu, միսլ. cnū, կիմր. cnewon հոմանիշները ծագում են *knu, knud նախաձևից, որ չի կարող տալ հյ. ևուշ. տե՛ս Pokorny 1, 391, Vendryes MSL 21. 41): Մառ, Яз. и Лит. I. 235 վրաց. ևուշի և արաբ. lūz, լտ. nux ևն։

ԳԻՒ.—Ալշ. Խրբ. Հճ. Մկ. Մշ. Ջղ. Վն. Տիգ. Տփ. ևուշ, Մրղ. Սլմ. ևիշ, Սվեդ. ևէօշ «նուշ», իսկ Երև. ևուշ գործածւում է իբր ած. «անուշ, քաղցր» իմաստով՝ միայն կորիզի համար (Ամատունի, Հայոց բառ ու բան. 506)։

ՓՈՒՆ.—Վրաց. ნუში նուշի, Թուշ. მუშ ևուշ, ուտ. nuš «նուշ», որից վրաց. ևուշիս զեթի «նշաձէթ»։

ՆՈՒՌՆ, ևի հլ. (ևռան, ևռուևի, ևռանց, յետնաբար նաև ևոևուևի) «նուռ պտուղ». punica granatum L» ՍԳր. որից ևռևենի «նռան ծառ» ՍԳր. Վեցօր. 92. «նռան ծառի փայտ» Յայտմ. ևոևանձև ՍԳր. Փիլ. քհ.։

Հներից Մագ. թղ. 131 բաժանելով պրս. anār հոմանիշից՝ ստուգաբանում է հյ. կռուն «խիտ» բառով. «Պարսկական է անունն անար, ի հրապաշտութեանն պատուեալ յատրուշանին յորջորջեալ,

յորմէ անարն կոչնցնալ սակս որակութեանն հրակերտ, կարմրահատ և հրահատ։ (Ուրեմն Մագ. պրս. anār «նուռ» բառը համարում է nār «կրակ» բառից, որ սակայն արաբերէն է և նրա հետ գործ չունի)։ Իսկ սաուգաբանեալ նուռնըդ ներմակագրեալն նուռն կուռն, յոգնախումբ և միահամուռն ի միասին բաղկացութեան բազմահատեալ հարբատութեամբ իբրու կուռն փոխադրեալ ընդ ներառասութեան (ուղում է ասել ն տառը ներս է առնուած)։ Զի կուռն իբրու բազում գտեալ այս ի գիր՝ փիւրն ի պէ, և կենն ի գիմ կամ ի քէ, հիւնն ի խէ յոյն ուղղախօսելոյ»։—Նորերից ԳԴ, ՆՀԲ, Lag. Urgesch. 819, Btrg. bktr. Lex. 21 կցում են պրս. نار nār բառին։ (Այս բառը՝ որի հինն է պրս. نار anār, պհլ. anār, և որից փոխառեալ են քրդ. enār, henār, hinar, գազա. hənār, արևել. թրք. نار anar, օսմ. nar, բուլղ. սերբ. nar, գնչ. k'inar հոմանիշները, իսկապէս գործ չունի հայերէնի հետ, որովհետև ձայնական օրէնքները թոյլ չեն տալիս ո՛չ հայերէնը իրանականից փոխառեալ դնելու և ոչ էլ երկուսը միասին ցեղակից համարելու (ըստ Հիւբշ. Arm. Gram. 207)։

ԳԻՒՒ.—Զղ. նուռն, Ագլ. Գոր. Ղրբ. Շմ. նօ՛ռնը, Տփ. նո՛ւրը, Ալշ. Ախց. Որև. ԶԲ. Կր. Խրբ. Մկ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Վն. Տիգ. նուռ, Հճ. նուռ, Սվեդ. նօռ, Ասլ. նիւռի (սեռ. նիւռիի), Ննխ. (Թուրքերէնից նոր փոխառութեամբ) նառ։ Նոր բառեր են նռաճատ, նրոնաճատ, նռնի, նռնիկ։

ՆՈՒՍ (ո հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ուս, կռնակ, մանաւանդ ձիու գաւակ» Ոսկ. մ. ա. 8. Մամբր. բ տպ. 63. ՍԿԿ. կԲ. արմաւ. էջ 186. աւելի սովորական է նիւս Եղիշ. գ. էջ 59. Սեբ. 39. Կաղնկտ. Արծր. էջ 132, որից նիւսկեղր «կողով» ԶԲ, Քաջունի, Հա. Գ. 179 cacolet, ԳԲ «կաշիէ պայուսակ»։

ՆՀԲ նոյն ընդ ուս, լծ. յն. νῶτος, νῶτον։ Հիւբ. էջ 30 նուս համարում է յգ. հյց. և ուղղականը դնելով նու, հանում է նու «հարս» բառից։ (Իսկապէս որ բառս գրեթէ միշտ ի նիւս ձևով գործածուած լինելով, կարող է այսպիսի կասկածի տեղիք տալ։ Սակայն կայ Արծր. «յայս նիշ նիւս կեղթում», որ ցոյց է տալիս թէ բառը յոգնակի չէ և եզ. ուղ. ձևն է նիւս)։ Scheftelowitz BB 29, 46 սանս. snu, sānu «անասունների մէջքը, կռնակը»։

ՆՈՒՍԻԽՈՒՆԱՐՏ «միջօրէական». ունին միայն ԱԲ և Նորայր, Բառ. ֆրանս. 802 բ։

ԱԲ դնում է պրս.։

*ՆՈՒՍԱԿԱՅ «օրինակ. 2. դեղագիր, դեղատոմս» Մխ. բժշ. 144. որից նուսխայիկ «գաղափար, նախագիծ օրինակ, գրուածք» Շնորհ. տղ. յար. նուսխայապէս Շնորհ. չափ. 340. նուսխայօրէն Նար. տաղ. 465։

=Արաբ. نسخة nusxa «օրինակ, ընդօրինակութիւն. 2. համեմատակ, կախարդական պահպանակ», որից փոխառեալ են նոյնպէս արևել. թրք. nusxah «օրինակ, մօդէլ», ռմկ. մուսխա «համեմատակ», քրդ. nusxe «համեմատակ»։—Հիւբշ. 272։

Նախ ՀՀԲ բառ արաբ։ Կ'Ի արաբ. նուսխէ։ ՆՀԲ արաբ. նիւսխէ, նիւսխէր, նէսխ։ Ուղիղ մեկնից նաև Հիւբշ. ZDMG 35 (1881), 662։

*ՆՈՒՐ «լոյս» Նոր վկ. էջ 58 (ԺԲ դարից). (Զի՞նչ է նուրն այն, այսինքն լոյս, որ էջ ի վերայ նորա). Կոստ. երզն. 176 (Քու տեսդ աչերուս իմ նուր)։

=Արաբ. نور nūr «լոյս»։—Աճ.

Տե՛ս Նոր վկայք, էջ 791։

+ՆՈՒՐԲ, ի հլ. (յետնաբար նաև ո հլ.) «բարակ, թեթև, անպայտ» Իմ. է. 12, 23. Եզն. «նեղ (փողոց, ճանապարհ)» Շիր Խոսր. Սարգ. յուդ. «tenuis» (բաղաձայնի տեսակ որ և լեռկ, որ է «պարզ խուլ») Բր. քեր. «խորին՝ դժուարիմաց ոճով» Ոսկ. յհ. ա. 26. որից նրբել Ոսկ. ա. տիմ. նրբափողոց Վեցօր. 135=նրբուղի Վրդ. երգ. Տօնակ. նրբագոյն Եզն. Կորիւն. նրբաճայեաց Եւագր. նրբաւարտ Ոսկ. փիլիպ. նրբաձայն Եղ. դ. 10. ղ. 30, Ոսկ. մ. դ. 3 (ըստ ՀԱ. 1913, 301).—Նոր բառեր են նրբամիտ, նրբանկատ, նրբանկատութիւն, նրբիմաստ, նրբանցք, նրբագեղ ևն։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* snōbhri *ձևից, որ կազմուած է* -ri *մասնիկով՝ պարզական* snēbh *արմատի միջին ձայնդարձից. համմտ. դան.* snoever «նեղ (ճանապարհ, դուռ, զգեստ), նուրբ, բարակ (օրիորդ)», snoever sti «նրբափողոց», հշվէդ. snoevr «նեղ», նշվէդ. snäf «նեղ, սեղմ», նորվեգ. snoevr «նեղ, նրբին, ճկուն, սեղմ, ճղճիմ», հիսլ. snoefr «նեղ (զգեստ)». *այս բոլորը դալիս են հնխ.* snēbhri, snōbhri *ձևերից և կատարելապէս համաձայն են մեր բառի հետ. կան և սրանց առանց* s-*ի ձևերը. ինչ.* հշվէդ. noever, հիսլ. nǭfr, *որոնց հետ միացնում են նաև գերմ.* nuofer, nuober «առույգ, թարմ» (Pokorny 2, 698): *Ձևի համար համմտ. հյ.* **սուրբ**=*սանս.* çubhra-:

Klaproth, As. pol. 100 *սս.* nareg: Lag. Urgesch. 295 *և* Müller SWAW *46, 465 պրս.* narm «մեղմ»: *Այս մեկնութիւնը մերժում է* Lag. Arm. Stud. *§ 1656: Հիմնք. յն.* νεβρός «ձագ, կորիւն»: Patrubány SA *2, 31 և 288 յն.* νέφος «ամպ, մութ», *լտ.* imber «տարափ» *բառերի հետ: Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. 64—65:— Karst, *Յուշարձան 415 մոնղոլ.* narin, *թունգուզ.* narxon, *թրք. օսմ.* narin «նուրբ»: Persson IF *35, 206—208 դրնում է հնխ.* snerp, snerb «քաշուիլ, ամփոփուիլ, կծկուիլ» *արմատից, իբր հրգ.* snerfan, *մբգ.* snerfen, *գերմ.* schnurfen, schnurfeln, *որ և գնդ.* narəp «լուանի պակասիլը». *սրանց պարզականն է հնխ.* sner-, *որից ունինք անգսք.* nearu «նեղ». *շվէդ.* nōr «մանկիկ», *լիթթ.* nārs, nāre «ճարմանդ», *գերմ.* schnurren «սեղմուիլ, կուչ գալ», *այլ աճականով՝ հնխ.* snerk-, snerg-, *որից հգերմ.* snerhan, *յն.* νάρκη, *հյ. ներգնիլ*: Pokorny 2, 698 *ընդունում է ուղիղ մեկնութիւնը, իսկ 2, 701, առանց անդրադառնալու նախորդին, ընդունում է* Persson-*ի այս մեկնութիւնը (միայն սխալմամբ հյ. նուրբ բառի տեղ գրում է* սներբ!): *Այս երկու մեկնութիւններից նախընտրելի էր բնականաբար առաջինը՝ ըստ նշանակութեան, մանաւանդ որ երկրորդից ունինք արդէն ներգնիլ*:


Դիմ.—Սվեդ. նէօրփ «նեղ (ճանապարհ, ժապաւէն ևն)»:

ՆՈՓԻԱՉ «մի չար դև» *Ախտարք. ունի միայն Ալիշան, Հին հաւ. 215:*

Նոքողար *տե՛ս Սքողար:*

***ՆՊԱՍՏ** (*յետնաբար ի հլ.*) «օգնութիւն օժանդակութիւն» *Ես. խոր. 70. Գծ. ժր. 27. Կոչ. Ես. քր. Մծբ. Ոսկ. որից* նպաստամատոյց *Կորիւն. Կոչ.* նպաստութիւն *Կորիւն.* նպաստաւոր *Իմ. ե. 8. Ես.* նպաստաւորութիւն *ՍԳր.* նպաստել *Փարպ.* աննպաստ, բարենպաստ *(նոր բառեր) ևն:*

=*Հպրս.* *ni-upastā «նպաստ» *բառից, որ կազմուած է* ni- *և* upa- *մասնիկներով՝* sta- «կենալ, կալ» *արմատից. իրանական գրականութեան մէջ աւանդուած չէ* *ni-upasta *ձևը, բայց ունինք գնդ.* upastā «օգնութիւն, նպաստ, օգուտ» upastābara «նպաստամատոյց, օգտակար, նպաստաբեր» (Bartholomae, Altir. Wört. *398 կարդում է* upaštābara *և թողնում առանց բացատրութեան. իմաստը անյայտ). Հպրս.* upastā «օգնութիւն, նպաստ». *Հին պարսկական բևեռագրութեանց մէջ յաճախակի գործածուած մի բանաձև է*



Auramazdā- maiy upastām abara «Արամազդ ինձ նպաստ հերիր». *Համմտ. նաև* ապաստան, *որ պատկանում է նոյն արմատին:—Հիւրշ.*

Նշխ յծ. ապաստան *և նուպ ասա. իսկ պրս.* նէվաստէն, նէվաշտէն «ջանալ ճգնիլ»: *Ութոպա 1849, 200 Հպրս.* upastā «նպաստ» *բառի հետ:* Müller SWAW 66, 275 *Հպրս.* upastā, *գնդ.* upasta՝ *առած* ni- *մասնիկով: Lag. Ges. Abhd. 228 յն.* ὑπαστόν «ընկերանալ»: *Նոյն* Arm. Stud. *§* 1657 *չի ընդունում* Müller-*ի մեկնութիւնը՝ առարկելով թէ* ni- *և* upa- *միասին չէին կարող կցուիլ և թէ* niu *չի՛ կարող տալ և: Հիմնք. ապաստան բառից:* Müller-*ից անկախաբար վերի մեկնութիւնը տուաւ Աճառ. Բազմ. 1897,*

170. նոյնը խօսեց նաև Արևելագիտաց ԺԱ. համաժողովին՝ Պարիզ (ՀԱ 1897, 310 և 316), ուր և նախագահ Հիւբշ. տուաւ իր հաւանութիւնը (անձնական)։

ՆՊԱՍՏԿՈՒԹԻՒՆ *«պատրիկութեան աստիճանը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Մագ. Թղ. 23. «Մինչ տակաւին ի տարերս էր անթիպատուութեանն նպաստկութեանն»։ Նոյն անձի մասին խօսելով Մագ. էջ 82 գրում է, «ի խոնարհագոյն աշտիճանէ անթիպատ պատրկութեամբ», որից երևում է որ նպաստկութիւն բառի հոմանիշն է «պատրկութիւն»։*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 199. այսպէս է ընդունում նաև Կոստանեան, հրտ. Մագ. Թղ. էջ 330։

ՆՊԱՏԱԿ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) *«նշան առնելու տեղ, նեռի նշաւակ» Ողբ. գ. 22. Իմ. ե. 12, 22. «մատադրած բանը» Լմբ. Բրս. հց. «նախատիպ, օրինակ» Նար. կուս. Լմբ. յայտ. «յաղթանակ, յաղթութեան մրցանակ» Ագաթ. Մծբ. որից* նպատակեալ *Ջքր. կթ.* նպատակաւոր, աննպատակ, աննպատակայարմար, բարենպաստակ, նպատակայարմար, նպատակակէտ *են։*

Lag. Ges. Abhd. 66 *սանս.* ni-pāta-*։ Այս բառը նշանակում է «ընկնել, առաջն ընկնել, ծնրադրել, վրան վազել, յարձակիլ» են. այս իմաստները համաձայն չեն մեր բառի իմաստին, թէև երկու ձևերը իրար հատպատասխան են ձայնապէս։ Այս պատճառով* Lag. Arm. Stud. § 1659 *և Հիւբշ. 207 մերժում են։ Մեր բառն իրանեան փոխառութեան երևոյթն ունի և ենթադրում է սկզ.* *ni-pātak *ձևը, որ սակայն այլուստ չի ապացուցւում։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 292 գնդ.* nivat *«արձակել, նետ» +պրս.* gāh *«տեղ»։*

ՆՊԱՍՏԵԼ. *անստոյգ բառ. տե՛ս վատկեալ։*

ՆՊԱՐ *«պարէն, ուտելիք» Պիտ. որ և* նպարակ՝ *նոյն նշ. Երեմ. խ. 5. Ես. պտմ. 158. (երկուսն էլ ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան), որից* նպարակաւոր *Ծն. խև. 23.* նպարակել *Փարպ. կր.* նպարակեալ *վկ. արև. էջ 46 («Մերքն համեստութեամբ նպարակեալք». այսպէս ունի նոր տպ. մին, Սոփերք Ի. 98* նպատակեալ, *որ վերի ձևով ուղղել էր Նորայր, Բառաք. էջ 54). նոր բառեր են* նպարեղէն, նպարավաճառ։

ՆՀԲ պարէն նուիրեալ։ Lag. Urgesch. 283 *և* Müller WZKM 10, 277 par *արմատից* ni *մասնիկով, ինչպէս* նամ–բար՝ *նոյն արմատից* sam *մասնիկով։ Հիւնք. և Գազանճեան, Արև. մամուլ 1902, 77* նի– *մասնիկով* պարէն *բառից։ Հիւբշ. 513 յիշում է կասկածով* Müller-ի *մեկնութիւնը։ ԳԲ սկզ.* նիպար (!)։ *Թիրեաքեան ՀԱ 1912, 426 նուէր բառի հետ, իսկ Արիահայ բռ. 102 պրս.* nau *«նոր»+* بار bār *«պտուղ»։*

ՆՊԵՐՏ *«հպարտ, ամբարտաւան». մէկ անգամ ունի կղնկտ. հրտր. էմ. էջ 217. «Անձնահաճ կամօք ըստ նպերտ բարուց Հայաստանեացն». (սրա դէմ հրտր. Շահն. Ա. 410 ունի* բիրտ, *որ նպերտ բառի մեկնութիւնն է). սրանից է առնում նաև Ոսկիփ., որից* նպերտական՝ *նոյն. նշ. Ոսկիփ.։—Երկրորդ անգամ գտնում եմ այս բառը Օրբել. հրտր. էմ. էջ 147. «Ըստ նպերտ բարուց ոմանց, որպէս թէ ճգնազգեաց և անապատասէր գոլով, կուսութիւն աչաց և ականջաց խոկացեալ՝ պատշաճ համարիցան բնակել ի վանս». այստեղ բառս «խոնարհ, պարկեշտ» նշանակութիւնն ունի, —Ո՞րն է ստոյգ։*

3. Արշէզ ՀԱ 1896, 268 հպարտ բառից և մասնիկով։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 292 պրս. نبرد nabard *«արի, խրոխտ, սէգ, կռիւ, պատերազմ»։*

Նռապ *տե՛ս Նռապ։*

Նռճէս *տե՛ս Նարճիս։*

ՆՐՆԷՍ *«խաշխաշ, մեկոն» Մեկն. գր. Նիւս. ունի միայն ՀԲուս. § 2231։*

ՆՐՆԷՃ *կամ* **ՆՐԻՆՃ** *«մի տեսակ ուտելի բանջարեղէն» Բժշ. Կամրկպ. ունի միայն ՀԲուս. § 2234, որ և ածանցեալ ձևով* նորնեխոտ *Կամրկպ. որ ՀԲուս. § 3372 սխալմամբ գրում է* նարինջխոտ *(տե՛ս Նորայր ՀԱ 1923, էջ 157)։*

ԳԻՒ.—Ախք. նռնիճ *«մի տեսակ բանջար,*

որ տհաս ժամանակ ժողովում են և իւղով, կաթով ու շաքարով ուտում»։

ՆԱԱՊ *«կաշի յղկելու գործիք». ունի միայն* Rivola*-յի բառգիրքը, որից առնելով Քաջունի, հտ. Գ. 182 և ԳԲ. (վերջինը գրում է սխալմամբ նռապ)։*

Նաեի *տե՛ս Նահի։*

+ՆԱՆՄ *(յետնաբար ի–ա հլ.) «աղօտ, մթին» վրք. հց. Ոսկիփ. Երզն. մաթ. «մթութիւն, խաւար» Խոր. Շնորհ. յուդ. Սարկ. պատմ. որից* նանմանալ *«մթնել, գիշեր դառնալ» Միք. գ. 6. 3հ. գ. 17.* նանմացուցանել *Ձքր. կթ. Դևոնդ. Շար.* նանմական *3հ. կթ. ևն։—Այս բառի համար ՆՀԲ ո՛չ մի ընտիր վկայութիւն չի տալիս. բայց Միք. գ. 6, 3հ. գ. 17 գործածուած գտնելով՝ բառիս ոսկեդարեան գոյութեան համար կասկած չի մընում։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'ema- *ձևից, որի վրայ աւելացել է* ni- *նախամասնիկը. ժառանգներից համմ. սանս.* ཅཱམ çyāmá- *«սև, մթնագոյն», որ և* ཅཱམཀ çyāmaka- *«նոյն նշ.», լիթ.* šẽmas, šėmas *«գորշ մոխրագոյն կամ գորշ կապտագոյն» (եզան համար ասուած), թևրևս նաև լտ.* cīmex *«մլուկ, փայտոջիլ» (իբր *cīmoqs «*գորշատեսիլ»), յն.* Κίμων *(յատուկ անուն, իբր «Սևակ»)։ Նոյն արմատին է պատկանում նաև սեաւ բառը, որի համազօրները տե՛ս անդ* (Trautmann 306, Boisacq 456, Walde 160)։—*Ա՛ճ.*

ՆՀԲ իբր արմատ նշմարի, նշմարելոյ. նաև պրս. nas, nasar *«հովանի, շուաք»։* Lag. Urgesch. 1018 *սանս.* niç *«գիշեր» բառի հետ։* Müller SWAW 66, 275 *և Տէրվ. Նախալ. 39 ծան. իբր* ni- *մասնիկով *սեմ ձևից, որի հետ համմ. սանս.* çyāma, *զնդ.* syāva, *պրս.* siyāh *«սեաւ, մութ»։ Հիւնք. պրս. նիզէմ, նիզմ, նիժմ (իմա՛* نزم nazam, نژم nažam*) «գիշերային մթութիւն, խաւար»։ Մէնէվիշեան, Արդի լեզուագ. էջ 60 ուգրօ-ֆիննեան.* sam *«սևանալ»,* samia *«պղտոր»,* sumea *«մթին, մութ» բառերի հետ։ Գալանճեան, Արև. մամուլ 1902, 77 նի +սեաւ։* Müller*-ի համեմատութիւնը սանս. բառի հետ՝ ուշադրութեան չէր առնուած մինչև այժմ, քանի չէր հաստատուած կապակցութիւնը սանս. բառի և միւս հնդևրոպական ձևերի միջև. այժմ որ այս կապակցութիւնը հաստատուած է, նոյն հիման վրայ հայերէն բառը դառնում է բնիկ (և ձայնաւորի պատճառաւ) և կապում է միւսների հետ։*

ՆԱԵՐՏ *«թոյլ, կակուղ». ունի միայն ՓԲ. անստոյգ բառ. պէտք չէ՞ արդեօք յասկանալ* ան–սեռտ *«ո՛չ սերտ»։*

ՆԱՒՀ *«բախտ բանալը, հմայութիւն», այս իմաստը յայտնի կերպով երևում է Ոսկ. ա. տիմ. էջ 28 դրուած հոմանիշների շարքից. «Զճակատագիրն՝ զոր ասեն և զխտիրս և զհմայս, զկիւս և զնահս»։ Նոյն բառը* նաեի *ձևով մէկ անգամ էլ ունի Պիտ. «Ահա զմեծագոյն խոհականութեան բերին իմն յինքեանս նահ», սրանից է կազմուած* գեղեցկանահի, *որ նոյնպէս մէկ անգամ գործածում է Պիտ. «Որ այսքանում գեղեցկանահի և վայելուչ կարգի զհակառակն փութացաւ հասուցանել խախտումն»։ Հին բռ. մեկնում է* նահի *«բախտ բարի», Բառ. երեմ. էջ 241* նահի! *«բախտ բարի կամ շնորհ». նոր դրականումն էլ ընդունուած է* նահի *«բախտ», որից* անհահի *«անբախտ»։*

ՆՀԲ՝ որ տեղեակ չէ Ոսկ. ա. տիմ. վկայութեան, իրար հետ միացնելով նահի, նահի *և* նիս՝ *մեկնում է. «Թուի շունչ, շնչիւն, փչումն, ոդի և նմանութեամբ՝ բախտ, բաժին, որպէս նէֆէս, էմմէսի կամ նասիպ» (իմա՛ արաբ.* nafas *«շունչ», թրք.* esme-si *«փչել-ը», արաբ.* nasīb *«բախտ»), իսկ* գեղեցկանահի՝ *մեկնում է «կա՛մ է գեղեցկանազ և կամ գեղեցկակերպ ևն». պրս.* նէսէգ *«կրեակ»,* նասիհ *«կերպաս»,* նասիպ *«բախտ»։* Peterm. 260 նահի *կգում է նահր բառին։*

ՆԱԻՐ. *անստոյգ բառ. մէկ անգամ գործածում է 3հ. իմ. առ. էջ 15. «Յորմէ ոչ փոփոխեսցի նախահարցն հաստատեալ սահմանք. այս ինքն՝ ոչ սէրունականն աւուր զապաշխարութեանն ի վերայ ածել զնսիր, և ոչ նմանօրէն սմա զծոմականսն զատարկա-*

ցուցանել և փափկացուցանել զաւուրս»։— Ըստ Հին բռ. նշանակում է «գործ», որովհետև ունի սրանից ևսիրել «գործել»։ ՆՀԲ մեկնում է «գործ ծանր, աշխատութիւն», ՋԲ «աշխատութիւն, տառապանք, ծանրութիւն կամ սուգ», ԱԲ «ծանր աշխատանք կամ մըթութիւն, տրտմութիւն»։

Ըստ ՆՀԲ «Թուի որպէս պրս. ևէսէր, սայէ «ստուեր, հովանի» կամ հյ. ևժար, որպէս ծանրութիւն»։—Այվազեան, Ուղղագր. էջ 44 լծ. ևսիճ (ինչպէս ունի և Peterm. 260)։

—ՆՍՏԱԿ *«յատակ»։*

=Կազմուած է յատակ բառից՝ ևի- նախդիրով. համմտ. յեևուլ—ևեցուկ. (տե՛ս և յատակ)։—Աճ.

ՆՐԱՆ (ի-ա *հլ?*) *«սուր, թուր» Բուզ. ե. 6, 32, 35. ՅՀ. կԲ. 446 (գրծ. ևրաևաւ), Անյ. պերիսարմ. Թր. քեր. 19. էլ. արիստ. 51, 55. որից ևրաևակոտոր Կղնկտ. Հրտր. էմ. էջ 178, 191. (Հին բռ. գրում է ևրեան «դաշնակ կամ թուր»)։*

Հիմնք. պրս. nārīn *«նուրբ» բառից։*

ՆՐԱՆ *(կամ* ևարաև, ևորաև*) «արաբական մի բոյս և նրա իւղը» Խոր. աշխ. 612. ունին միայն ԱԲ և ՀԲուս. § 3375։*

Նփաստ *տե՛ս* Նաւթ։

ՆՔԹԵԼ *«քաղցից նուաղիլ, անօթութենէն մարիլ» Մտթ. ժե. 32. Մրկ. ը. 3. որից* ևրքթեալ *«սաստիկ անօթի» Ծն. իե. 29, 30. Դատ. ը. 15։*

Տէրվ. Altarm. 12 *ևի մասնիկով* *քթել *բայից, որ կցում է սանս.* čyu *«տկարանալ, դեղևիլ, ընկնել» արմատին։— Հիմնք. պրս.* nāštā *«քաղցած», յն.* νηστεύω *«զրկումն ի պարենից. պահք, նքթեալ»։* Meillet MSL 10, 270 *և* 15, 356 ևիողիլ *բառի հետ՝ թերևս իբր սանս.* niḍā- *«ցածր»=հալ.* nicī։

ՆՔՈՂԱԿ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկ. ղկ. (տպ. Ոսկ. պօղ. Բ. էջ 627). «ե՛լ յինէն, տե՛ր, զի մի՛ արքս հանդերձ նաւաւս ընկղմիացուք. քանզի նոյն ինքն և նքողակս մտանել ի նաւս բռնադատի (ամենայն ձրկամբք)»։ ՆՀԲ մեկնում է «ծովակ, լճակ, ևթէ չկայցէ սխալ գրչի», ԱԲ «ծովակ, լճակ. 2. ձկները»։ Առաջին իմաստը աւելի է յարմար։*

ՆՔՈՂԻԼ *«անօթի մնալուց ցամաքիլ՝ չորանալ» Թուց ժա. 6, Ա. թգ. լ. 13. Եփր. գտ. 338. վրք. հց. որից* ևՔողումն *ՅՀ. կԲ. նոյն պէտք է լինի նաև շՔողիլ (տե՛ս այս բառը)։*

Հիմնք. անկողին բառից։ Meillet *տես* ևՔթել։

+ՆՔՈՅՐ *«մաղ» Վեցօր. ը. 181 (աւանդուած է միայն մէկ անգամ՝ սեռ.* ևՔուրի *ձևով). համմտ. նաև* ևգոյր։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. neik- *«ցորենը տեփրելով մաքրել» արմատից (-ոյր մասնիկով). համմտ. լիթ.* nėkóti, *լեթթ.* nėkāt, *կիմր.* nithio, *բրբտ.* niza, *բոլորն էլ «ցորեն տեփրել», լեթթ.* lėkscha *«տեփրելու թի» (նախաձայնի փոփոխութեամբ). նոյն են դարձեալ յն.* λικμός *«տեփուր»,* λικμάω *«տեփրել»,* λικμητήρ *«տեփրող»,* λῖκνον *«տեփուր, ուռիէ կողով», որոնց բոլորի մէջ նախաձայն λ յառաջացել է տարանմանութեամբ. համմտ.* νεῖκλον, νίκλον, νίκειν, ἰκμᾶν *ևն հոմանիշ ձևերը, որ աւանդում է Հեսիքիոս։ Հայերէնի պարզ արմատն է *ևիՔ-։* (Pokorny 2, 321, Boisacq 581)։—*Աճ.*

Հիմնք. յն. λίκνον *«կողով, մաղ» բառից։ Հ. Գ. Նահապետեան, Բզմ. 1908, 18 ուղում է սրբագրել* խոյր?

ՆՕԹ, ի *հլ. «մի տեսակ ազնիւ կարմիր ևներկ. լտ.* minium, rubrica*» Երեմ. իբ. 14. ուրիշ վկայութիւն չկայ։*

Հիմնք. ևաւթ բառից։

ՆՕԹԻ (-բւոյ, -թեաց) *«անօթի, քաղցած, սոված» ՍԳր. որից* ևօթութիւն *Ծաագր. Նիւս. բն. աւում է նաև* աևօթի *Ոսկ. ա. թես. Բ. վրք. հց. Ճառընտ. որից* աևօթութիւն *Ճառընտ.* աևօթեց, ի յաևօթեց, աևօթուց *«անօթի փորանց, քաղցած փորով» Վստկ. Մխ. Բժշ. բուն արմատն է* ևօթ, *որից -ի մասնիկով՝* ևօթի. *համմտ.* բարի։

ՆշՔ յիշում է պրս. nāštā *«անօթի, քաղցած»։ Հիմնք. ևիւանդ բառից։* Bugge, Btrg. 22 *իբր բնիկ հայ՝ կցելով յն.* νήφω (νάφω) *«ժուժկալել, մանաւանդ ի դինւոյ»,* νῆπτης, νηπτικός *«ժուժկալ»,* νῆψις *«ժուժկալութիւն» բառերին՝ հանում*

է հնխ. naphtio- ձևից։ Հիւբշ. 479 անապահով է համարում այս մեկնութիւնը, որովհետև կարող է լինել՝ որ յն. νήφω կապ ունենայ գերմ. nüchtern «անօթութ» բառի հետ և երկուսը միասին ծագին հնխ. nāg²hō ձևից։ Իրօք էլ Pedersen, Հյ. դր. լեզ. 28 երեք ձևերը իրար է միացնում, որ կրկնում է նաև Boisacq 670։ Բայց Kluge 352 ցոյց է տալիս, որ գերմ. nüchtern<հբգ. nuohturn ծագում է լտ. nocturnus «գիշերային» բառից։ Ըստ այսմ Pokorny 2, 317 պահում է միայն յն. νήφω=հյ. նօթի, որոնք դնում է հնխ. nāg²h- (nābh-?) արմատի տակ։

ԳԻՒՒ.—Ղրբ. նո՛ր, Ախց. Երև. Խրբ. Կր. Շմ. Սեբ. Տփ. աճօթի, Վն. աճօթի, աճուրի, Հճ. Պլ. Ռ. աճուրի, Մրղ. աճօր՛, Գոր. ընօ՛թի, Սվեդ. ոճօթա, Համշ. օճօթի, օճէթի, Մկ. ոճուրը, Ասլ. էճէօթի, Ալշ. Մշ. աճօտի, Զթ. աճըրը՛։ Նոր բառեր են աճօթեճալ, աճօթեցնել, աճօթիմեռ, աճօթիփորաճց, աճօթու, աճօթաճց։

ՆՕԹՃԵԼ «աւետել, ծանուցանել, պատմել» Ոսկ. մ. ա. 19. 34. իմ. եկեղ. Նիւս. երդ. Գնձ. «նիւթել, հայթայթել, հնարել» Ագաթ. Կորիւն. Պիտ. Լմբ. (Հին բռ. որից և ՓԲ, գրում է նաև աւրճել). որից նօթճութիւն «աւետում» (նորագիւտ բառ) Սիր. գծ. 17։

ՆՀԲ լծ. հյ. աւետիչ, նիւթիչ, լտ. noto «ծանուցանել», nuncio «ազդել», annuntio «աւետաբանել»։ Տէրվ. Նախալ. 108 պրս. نوید nuvēd կամ և նախդիրով աւետել բայից։ Հիմնք. պրս. նէվիյտ ձևից։

ՆՕՃՏԱՅ «աղի ինչ որ տայ շատ ջուր ըմպել». գիտէ միայն Քաջունի, Գ. 182։

Նօսր տե՛ս Անօսր։

*ՆՕՏԱՐ կամ ՆՈՏԱՐ, ի–ա հլ. «գրագիր» Մարթին. Տօնաց. Յայտմ. որից նոտարացի Բուզ. էջ 89. նօտարութիւն Կանոն. էջ 177. Կիր. պատմ. նօտարել կամ նօտրել «արագ գրել» Յիշատ. Մխ. բառիս հարազատ ձևն է նոտար, որ յիտոյ սխալ դրչութեամբ դարձաւ նօտար, ինչպէս ընդունուած է այժմ մեր գրականում. և սրանից էլ կրճատմամբ նօտր «մի տեսակ ընթացիկ գիր» Յիշատ. պատմ. Վրդն. նօտրագիր (նոր բառ)։

=Յն. νοτάριος, որ փոխառեալ է լտ. notarius «քարտուղար, նօտար, գրագիր» բառից. սրանից են նաև վրաց. ნოტარი նոտարի, ֆրանս. notaire ևն։ Լատին բառի հին իմաստն է «սղագրող» և ծագում է noto «նշանակել», nota «նշան» բառից, որ կապ չունի լտ. nōsco «ճանաչել» բառի հետ (վերջինս տես ծան, ճան–աչել), այլ ծագում է հնխ. ono- «նշանակել» արմատից (Walde 524)։— Հիւբշ. 368։

ՀՀԲ և ՆՀԲ դնում են լատինից։ (ՆՀԲ նօտր հանում է նօտ կամ նօտար բառից)։ Հիմնք. արաբ. Ուրարիտ «Հերմէս» բառից։

*ՆՕՏՈՍ կամ ՆՈՏՈՍ, ի–ա հլ. (գրուած նաև նաւտաւս, նաւտոս) «հարաւային քամի» Ագաթ. Խոսր. աշխ. 611. Առաք. պատմ. 435. Առաք. կենդ. էջ 70. Տաթև. հարց. էջ 205, 206։

=Յն. νότος «հարաւային քամի», որից փոխառեալ են նաև լտ. notus, Բրբ. لوذوس lodos «հարաւային տաք քամի» (=ասկ. լոտոս)։ Ըստ այսմ մեր բառի ուղիղ տառադարձութիւնն է նոտոս։—Յոյն բառը բուն նշանակում է «խոնաւ». բուն ծագումը տե՛ս նայ «թաց» բառի տակ։—Հիւբշ. 368։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ՆՖԼ, ՆՖԼԱ, ՆՖԼԻ. մի տեսակ բոյս է. ունի միայն ՀԲուս. § 2236. մեկնում է զանազան ձևերով. ըստ ոմանց «մի տեսակ ծառ է», ըստ այլոց «սֆլայ կամ սֆլայ կամ ճըփնի և կամ մի տեսակ խոտի տակ է»։

=Արաբ. نفل nafal «ձիերի համար աւետրժելի, անուշահոտ դեղին ծաղիկներով, իբրև աղցան գործածուղ մի խոտ է» (տե՛ս Կամուս, Բրբ. Բրդմ. Գ. 365). կայ նաև nifla «խոնդատի նման մի բոյս, որի լտ. անունն է celsia parviflora», և որի մի տեսակն էլ արաբ. անունով կոչում է լտ. nefflea (ըստ ՀԲուս. § 2236)։—Ա.Ճ.

Շ

***ՇԱԲԱԹ**, ու *հլ.* «շաբաթուայ հօթներորդ օրը» *ՍԳր.* «մի հօթնեակ» *նս. կգ. 25. որից* շաբաթանալ «հանգչիլ» (*ըստ եբր. ոճի, որի համեմատ է նաև յն.* σαββατίζω) *ՍԳր.* շաբաթացուցանել *Ղևտ. իգ. 32. Ա. եզր. ա. 58.* շաբաթաւոր *Բ. մն. իզ. 12.* շաբաթամուտ *Դ. թագ. ժա. 5, 7, 9.* շաբաթապահ *Բ. մն. իգ. 4. Կոչ. Մծբ.* շաբաթակրօն *Բ. մկ. ժբ. 31. նաև* շաբաթուայ օրերի անունները. *ինչ.* միաշաբաթի, երկուշաբաթի, երեքշաբաթի, չորեքշաբաթի և հինգշաբաթի *կամ նաև* միաշաբաթ, երկուշաբաթ *են։ (Նկատելի է որ օրերի անունները զանազան լեզուների մէջ կազմուած են կա՛մ երկնային մարմինների անունից և կամ թուականներից. առաջինին են պատկանում օրինակ՝ եւրոպական լեզուները. համմտ. գերմ.* Sonntag «կիրակի, արեի օր», Montag «երկուշաբթի, լուսնի օր» *են. երկրորդին են պատկանում միւսները, ինչ. յունարէնը, պարսկերէնը, վրացերէնը, ռուսերէնը և սրանց հետ նաև հայերէնը)։ Նոր բառեր են* շաբաթաբեր, երկշաբաթաբեր, շաբաթօրեակ *են։*

= *Ասոր.* ܫܒܬܐ šabbəθā, *ն. ասոր.* šäp'ṭ'ə «շաբաթ օր. 2. հօթնեակ» *ձևից. այս էլ առնուած է եբր.* שַׁבָּת šabbāθ «շաբաթ» *բառից, որ ծագում է սեմական* šbθ «դադարել, հանգստանալ» *արմատից և բուն նշանակում է «հանգիստ»։ Եբրայական բառը փոխառութեամբ անցած է նաև ուրիշ բազմաթիւ լեզուների. ինչ. պազ.* šanbaδ, *պրս.* šanbaδ, šanba, šanbih, *քրդ.* šembi, šambi, šambah «շաբաթ. 2. հօթնեակ», *իսկ արաբ.* سبت sabt, *յն.* σάββατον, *լտ.* sabbatum, *իտալ.* sabato, *ֆրանս.* samedi, *հրգ.* sambaztac, *գերմ.* samstag *են «շաբաթ օր»։ Յունարէնից տառադարձուած ձև է* սաբբատ, սաբատ (ի–ա *հլ.*), *որից միասաբատ «կիրակի». բոլորն էլ ըստ Տիմոթ. կուզ, էջ 318—322։—Հիւբշ. 312։*

Օրուայ անունների մասին տեղեկութիւն տալիս է մեզ հներից Վրք. սեղբ. 703, որ նրանց անուանակոչութիւնը վերագրում է Հռոմի հայրապետ Սեղբեստրոսին. «Ասեաւսա դէպ եղև աո ի դրպրացն բաց ածել թերևս զշաբաթուն փոխանուանակոչութիւնս զաո ի հեթանոսացն անուանեցելոց աւուրցն. նախ և առաջին զարեգական, զլուսնի, Արէսի, Ափրոդիտի, Կրոնի, [Հերմեայ և Դիոսի]՝ Ս. Սեղբեստրոս փոխանուանակոչեաց զկիրակի, իսկ զԱրէսին երեքշաբաթի, [զՀերմոսին չորեքշաբաթի], զԴիոսին հինգշաբաթի, իսկ զԱփրոդիսին Ուրբաթ, և զԿրոնին աո ի հին կտակարանաց՝ շաբաթ. բայց զԱրեգական՝ որպէս տիրականաւն զարդարեալ յարութեամբ՝ կիրակէ կոչեաց»։ Սրանից է առնում նաև Յայսմ. յնվ. 2. «Եւ եղև յետ վախճանի Մենտիատոսի հայրապետին, ձեռնադրեցաւ Ս. Սեղբեստրոս յաթոռ նորա՝ պապ Հռոմայ. և կարգեաց լինել յեկեղեցիս ինն դաս կարգաւորաց ըստ նմանութեան երկնաւորացն, և եդ անուանս շաբաթուն աւուրց։ Զարեգակ օր կիրակի անուանեաց, որ է տէրունի. և զլուսինն՝ երկուշաբաթ, զԱրէսինն՝ երեքշաբաթ, զՆերմոսին՝ չորեքշաբաթ, զԴիոսին՝ հինգշաբաթ, զԱփրոդիտայն՝ ուրբաթ, և զԿռոնայն՝ շաբաթ»։—Հին և նոր ազգերի տոմարական դրութեան, օրերի և ամիս-

ների անուանակոչութեան վրայ շատ ընդարձակ մի մենագրութիւն ունի Nilsson, Primitive time-reckoning, Paris 1921; —Շաբաթ *բառի մեկնութիւնը տալիս են հներից՝ Երզն. մտթ. էջ 611 «շաբաթն ըստ եբրայեցւոցն հանգիստ թարգմանի».—Գիրք առաք. 680 ը մեկնում է «Շաբաթն թարգմանի հանգիստ և նշանակէ զխաղաղութիւն».—Յայտմ. մարտ 23 «Շաբաթն հանգիստ թարգմանի».—Տաթև. ձմ. ճլդ «շաբաթն հանգիստ լսի յեբրայեցւոցն ի մերս».—այսպէս և Բրս. մրկ. 376, Խոսր. 126։—Նորերից նախ* Schröder, Thesaur. *45 և յետոյ ՀՀԲ, ՆՀԲ,* Müller SWAW 38, 578 *դրին հրբայեցերէնից։*

ԳԻՒ.—Ախց. Խրբ. Ջղ. Սչ. ջաբ'աբ, *Ակն. Երև. Կր. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տփ.* շափաբ *(Պլ. սեռ.* շափաու, շափավաե*), Ասլ.* շափաբ, շափա*, *Ջթ.* ջար'օբ, շար'որ, *Հճ.* շար'բ'օբ, *Ագլ.* շո՛բոր, *Մկ. Սլմ. Վն.* շոպոր, *Ալշ. Մշ.* շապատ, *Տիգ.* շոփոր, *Մրղ.* շոպպոր, *Շմ.* շոպոտ, *Գոր.* շէ՛բէբ, շո՛փոր, *Ղրբ.* շէ՛բէբ, շէ՛բոր, *Սվեդ.* շոբ'ուբ։—*Նոր բառեր են շաբաթական, շաբաթավար, շաբթամիջի: Էնկիւրիի Բրքախօս Հայոց մէջ* eršapdə *«երկուշաբթի»,* šapatsəz *«անշնորհք» (Բիւր. 1898, էջ 789 և 865)։—Գաւառականների մէջ* շաբաթ *(օրը) և* շաբաթ *(հօթնեակը) չշփոթելու համար կատարուած է տարբերացում. այսպէս* շաբաթ *(հօթնեակ) և* շաբաթօր, կիրակմուտ *(շաբաթ օրը), որից և Տիգ.* շփոր *«շաբաթ օրը»։*

ՓՈԽ.—Վրաց. Ցաბათი շաբաթի *կամ* Ցაფათი շափաբի *«շաբաթ օր. 2. հօթնեակը», որից* ორშაბათი որշաբաթի *«երկուշաբթի»,* ოთხშაბათი որքշաբաթի *«չորեքշաբթի» են.—Թուշ.* Ցაბათ շաբաթ, *ավար.* šamat, *ուտ.* šamat *«շաբաթ օրը, հօթնեակ», որից* xibšamat *«երեքշաբթի».—Չեչէն.* šuot' *«շաբաթ օրը». Քրդ. Աւետարանի մէջ գործածուած է* շարաբ. *ինչ. Նա ժի լը ոօյա շաբաթէ. «Մի՛ ի շաբաթու» (Մտթ. իդ. 20).—Պօլսի տաճկաց շուկայական լեզուի մէջ էլ հայոց ձեռքով մըտել է* šapat günü *«շաբաթ օրը».—իսկ լահճ.* šambi *(Ադուանից երկիր և դրաց. 1893, էջ 91) ծագած է պրս.* šambih *ձևից և լազ.* sabatoni*<յունարէն* σάββατον*-ից։*

ՇԱԲԱԼՈՒԹ *«հնդկական նարդոսահոտ մի բոյս. յն.* μαλάβαθρον *» ըստ Գաղիան, որ է* bétel*։*

=Պրս. شنبليد šanbalīd *«ծաղիկ իմն դեղնագոյն, որ ըստ ձևոյն և ըստ հոտոյն նման է ծաղկան թուրնջի. և ևթէ հոտոտիցի, փարատէ զգլխացաւութիւնն». կոչւում է նաև* šanbalīt. *աւելի ընդարձակ տե՛ս շամդիւտակ: —Աճ.*

Բառս ունի միայն ՀԲուս. § 2237, բայց կարծելով թէ սխալւում է Գաղիանոս, միացնում է շանպալուտ «շագանակ» բառի հետ։

Շաբեմիսիորոն *տե՛ս Թեսմոփորոն։*

Շագանակ *տե՛ս Շահդանակ։*

ՇԱԴՈՅՐ *«պայուտակ». Նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Սեբ. Ժղ. էջ 62. «Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն ընդ ուս իւր... առ յինքն զշագոյրն և տեսանէր զի կայր ի նմա տուփ մի»։*

Բառս ԱԲ կասկածով դնում է «մախաղ»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Արրատ. 1911, 230 և մտածում է կցել շարագոյր=ռմկ. շարգոյր *«կանանց գլխի թաշկինակ, գրքի պատեան կամ տուփ» բառին։*

ՇԱԳԻՒ. *անասոյզ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած. վկայութիւնը տե՛ս* **բարուր** *բառի տակ։*

***ՇԱԹՐՈՒՒԹԻՒՆ** *«խարդախութիւն ևն». Նորագիւտ բառ. երկու անգամ գործածում է Վրդն. առ. 125 և 182. (Կերիցին զգանձս այլոց և է որ գողանալով և է որ շաթրութեամբ)։*

=Արաբ. شاطر šāṭir *«յանդուգն, ստահակ, անամօթ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 914)։*

Ուղիղ մեկնեց Մառ, Վրդ. առ. I, էջ 268։

ՇԱԼԱԿ, ի–ա *հլ. «մախաղ, պարկ, տոպրակ» Դ. Բագ. դ. 39. Կիւրղ. Բզ. «պատգարակ» Բ. մկ. Բ. 8. «բեռ» Վստկ. Վրդն. պտմ. էջ 157. «կռնակ, թիկունք» Երզն. մտթ. «տող ընդ մէջ սրբագրութիւն կամ յաւելուած» ԱԲ.*

«պարտականութիւն» Անսիզք 9. որից շալակամատն «բեռան մէկ աչքը» Կիւրղ. Թգ. (ԳԲ դարձրել է շալակամասն). շալակել «մէջքով՝ կռնակով վերցնել» Վրդն. ծն. Վրք. հց. բ. 124. շալական «բեռնատար (ձի կամ ջորի)» Վստկ. 204։

=Բառիս հետ նոյն են արաբ. شلاق šallāq «մուրացկանի տոպրակ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 937) և պրս. شالاق šālāq «փըսիաթ, խսիր» (ԳԴ, էջ 343), բայց այս երկուսն էլ բնիկ չեն. հայերէն բառը շատ հին լինելով՝ չի կարող արաբերէնից փոխառնուած լինել. ուստի պէտք է ենթադրել որ բոլորն էլ սեմական կամ պահլաւական աղբիւրից են։ —Հիւբշ. 272։

ՆՀԲ լծ. ոմկ. շլիֆ, շլնիֆ և արաբ. սէլաֆ, սէլէֆ են։ Lag. Arm. Stud. § 1664 արաբ. šallāq ձևի հետ։ Հիւնք. պրս. շալաֆ «ձորձ, կապերտ, քուրձ» (իսկ շալակ «պատգարակ» հանում է լտ. sella «աթոռ» բառից)։

ԳԻՒ.—Ախց. Կր. Համշ. Մշ. Զղ. Տփ. շալակ, Ալշ. Երև. Խրբ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. շալագ, Ասլ. շալագ, շալայ, Հճ. շալօգ, Զթ. շալօգ, շալոգ, Ագլ. շո՛լոկ, Սլմ. շոլոկ՝, շլոկ՝, Տիգ. շոլոգ, Շմ. շոլոգ՝, Գոր. Ղրբ. շէ՛լոկ, շէ՛լակ, Մկ. Վն. շլոկ, Մրզ. շիլոկ՝, Սվեդ. շոլիւգ, Ատն. շէլէգ, բոլորն էլ «կռնակ կամ շալակարեռ»։ Նոր բառեր են շալակատար, շալակնուաճառ, ոսկեշալակ, խաչաշալակ, շալկոտ, շալկուորիլ, շալկնտել։

ՓՈԽ.—Թրք. գաւ. Կր. Կս. Տ. Եւդ. šeleg «շալակ, շալակարեռ» (Բիւր. 1898, 627, 713; 1899, 799; Յուշարձան 329 բ). նոյնպէս և Ատն. Թրք. և յն. գաւ. šeleg «շալակարեռ» ուտ. šâlak «բեռ, շալակարեռ»։

ՇԱԼԱՄ «մի տեսակ թռչուն». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Տաղ. (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 508). «Շալամ ասեն հաւուկ մի կայր, Որ յղտու կողնոն նմանէր, Ջեղ գկուսօղ («աքլոր») ինք ձայն ածէր, Եւ ծափ զարկնէր, ինքն խաղայր»։

ՇԱԼԹԱ «պատառ վաճառուց». դիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 182։

ՇԱԽՇԱԽ «է տակն վրացի կոճոյ. ellĕbore». ունի միայն Քաջունի, Գ. 182։

ՇԱԽՐԻԽ «կաղնչան» Բժշ. ունի միայն Հիւս. § 2242։

Հիւս. անդ համարում է «ղոյզ կամ ապուաժ շպրամ բառից»։

*ՇԱԿԱԿԻԻԼ, որ և շախաղուլ, շաղաղուլ, աշղաղուլ «մի տեսակ վայրի դաղար, ֆր. tordyle (Քաջունի, Գ. 182), լտ. tordylium officinale L (ըստ Տիրացուհան, Contributo § 290)» Բժշ. Ամիրտ. (Հիւս. § 2243 և § 2784, Նորայր ՀԱ. 1923, 62)։

=Արաբ. شقاقل šaqāqul «tordylium secacul». արաբ. աւում է նաև šašqāqul, ašqāqull (տե՛ս Կամուս, Թրք. Թրգ. Գ. 254)։

Ուղիղ մեկնեց Հիւս։

Ծակաճջել տե՛ս Ականջ։

ՇԱՀ, ի հլ. (ՆՀԲ դնում է նաև ու հլ. բայց առանց վկայութեան) «օգուտ, վաստակ» ՍԳր. Ոսկ. Ածես. գ. «դրամագլխի և կամ փոխ տուած դրամի տոկոսը» Կանոն առաք. 316 (Որ փոխ տայ և առնու վաշխ և տոկոսիս և շահի շահս ազահութեան). որից շահիլ ՍԳր. Եզն. Եփր. ծն. շահաւոր Եզն. Ոսկ. կողոս. շահաբեր Առակ. յա. 14. շահազուրկ Ագաթ. շահավաճառ ՍԳր. շահաւէտ Ոսկ. մ. բ. 3. գ. 11. Սերիր. շահաւետիլ Ագաթ. Կորիւն. անշահ Երեմ. բ. 8. Ոսկ. մ. բ. 3. Ագաթ. բազմաշահ Ոսկ. երր. Եփր. պհ. Վեցօր. ճոգեշահ Ոսկ. յհ. ա. 20. Եփր. պհ. մեծաշահ Վեցօր. բարեշահութիւն Պիտ. դանգաշահութիւն Սարկ. քհ. վաճառաշահ Եզեկ. իէ. 3. Ոսկ. մ. բ. 21. վաճառաշահիկ Պիտ. շահեստ «շահ» Վրք. հց. բ. 537. գրուած է շայել Եփր. ծն. էջ 99. հմմտ. նաև շայեկան։ Նոր բառեր են շահագրգռել, շահադիտութիւն, շահագրգռութիւն, շահադիտական, շահաբաժին, շահասիրական, անշահասէր, անշահախնդրութիւն են։

Lag. Urgesch. 1118, Ges. Abhd. 46, 48, Btrg. bktr. Lex. 54, 67 զնդ. xšaθra «թագաւոր, իշխանութիւն» բառի հետ նոյն, Arm. Stud. § 1665 պրս. šāyistan «արժանանալ», հրմ. šāy, ներկ. šāyad= զնդ. xšayeiti: Հիւնք. վաշխ և հաշիւ բառերից։ Պատահական նմանութիւն ունին չէչէն. sā «շահ, օգուտ» և չաղաթ. شای šay «շահաւէտ գործ». վերջինը ըստ Бу-

даговъ *2, 406 և 1, 663 ՖՐ.* šay «լի, հարուստ» են բառն է։ Հ. Կ. Տ. Սահակեան, *Բազմ. 1907, 321* կցում է պրս. šāh «թագաւոր» բառին, իբր թէ թագաւորի անունով կոչուած լինի նախ դրամը (հմմտ. շահի), որից յետոյ նաև «օգուտ»։ Մերժում է Հիւբշ. անդ՝ ծանօթ.։

ԳԻՒՐ.—Ախց. Երև. Կր. Հմշ. Ննխ. Ռ. Սչ. Տփ. շահ, Ալշ. Մշ. շա(ի), Տիգ. շոհ, Խրբ. շայ, Ագլ. Հճ. շօհ, Զթ. շօհ, շոհ, Մկ. Սլմ. Ջղ. շախ. սովորաբար «տոկոս» իմաստով է. (Մրղ. զանազանում է շահ «օգուտ» և շախ «տոկոս»)։—Նոր բառեր են անշահ «գէշ, վատ», շահիլ «տոկոս», շահել «պահել, խնամել», շահածել, շահածուկ, շահակալել, շահմանիլ, շահուպահ։

ՇԱՀ «խաղ, պար». *մէկ անգամ ունի Մծբ. 241. «խաղացին վերտեցին և շահս արարին առաջի որթագլխոյն»։ Զգօնի վկայութեան մէջ աւորի բնագրում (հրատր.* Graffin, *էջ 741) գտնում ենք ըստ համեմատութեան վիեննայի միաբան Պ. Էսապալեանի (անձնական) «տօն կատարեցին»=շահս արարին։

ՆՀՔ «որպէս Ֆրք. շախ՝ շահ գալգմագ կամ պրս. շախս, որ է շարժիլ» (այսպիսի բառ չունի ԳԴ։

ՇԱՀԱԽՍԻՒԱՊԵՏ «արքունի ախոռների պետը» Նիշ. էջ 186. գրուած է նաև շահխոռապետ, շախուռապետ կամ անջատ գրուած՝ շահ ախոռապետ և այս պատճառով էլ չէ նշանակուած բառարանների մէջ։

=Պհլ. *šāhāxvarpat հոմանիշ ձևից, որ բարդուած է պհլ.* 𐭱𐭧𐭲 šāh «թագաւոր»+ 𐭠𐭧𐭥𐭥𐭥 āxᵛar «ախոռ»+ 𐭯𐭠𐭯 pat «պետ» *բառերից։—Աճ.*

Բառիս վրայ խօսում է Բազմ. 1895, 148, որ իբր աւոյգ ընդունելով տպագրի անջատ Շահ խոռապետ գրչութիւնը, համարում է Շահ յատուկ անուն և խոռապետ «կիւրապաղատ, իշխան յարքունիս», իբր պրս. խօն «պալատ» բառից, և կամ նոյնացնում է Խոսրովի նամակի շահոռապետ (որ է շահրապետ) և Վռամի Գահնամակի չորրորդ բարձ Քաղաքապետն արևուելի ձևերի հետ։

ՇԱՀԱՆՇԱՀ «թագաւորաց թագաւոր, արքայից արքայ» Յհ. կթ. Ասող. (որ և բաժանուած ձևով շահանշահ կոչեցեալ շահ Յհ. կթ.) կամ շահնշահ Օրբել.։

=Պրս. شاهانشاه šāhānšāh «թագաւորաց թագաւոր» բառից, որ ունի նաև šāhanšāh, šāhinšah, šahinšāh, šahinšah են ձևերը. հմմտ. նաև պազ. šāhānšāh. պհլ. šāhānšāh (գրում էին աւորաձև 𐭱𐭠𐭧𐭠𐭲𐭠𐭲 𐭱𐭠𐭧𐭠𐭲𐭠𐭲 malkān malkā, բայց կարդում էին šāhānšāh). *բոլորն էլ գալիս են հպրս.* xšāyaθiyānām xšāyaθiya- *ձևից, որ է հպրս.* 𐎧𐎰𐏁 𐎧𐎰 𐎫𐎠𐎹𐎰𐎼𐎠𐎹𐎢 𐎧𐎰𐏁 xšāyaθiya *«թագաւոր» բառի յգ. սեռականի յարադրութիւնը։ Իրանեան ձևը Մարկոս Ամմիանոս XIX 2, 11* տառադարձում է saansaan, *որ և թարգմանում է «*rex regíbus *թագաւոր թագաւորաց»։ Պարսկերէնից է փոխառեալ նաև թրք.* šehinšah شهنشاه *«կայսր, թագաւոր» (Տաճկաց Սուլթանի տիտղոսն էր)։—Հիւբշ. 207։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՋՔ. Müller SWAW 38, 577, Lag. Arm. St. *§ 1666 են։*

ՇԱՀԱՆԱ *և անցանել. յորդորամտել.—այսպէս ունի Բառ. երեմ. էջ 242. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ՇԱՀԱՊ, ի–ա հլ. «նախարարապետ, իշխան, գաւառապետ, քաղաքապետ» Գ. Թգ. դ. 6. Հռ. ժզ. 23. Ուս. քր. ա. 65, 232. Սիր. բ. կոր. 111. Ագաթ. «որբերի խնամակալ» Փիլ. լիւս. 126։

=Սասանեան պհլ. *šahrap ձևից, որի հինն էր արշակունեաց պհլ. *šatrap. այս բառը գալիս է հպրս. *xšaθrapā «գաւառապետ» բառից, որ կազմուած է հպրս.* xšaθra=զնդ. xšaθra *«թագաւորութիւն, երկիր, գաւառ» և զնդ. հպրս.* pā *«պահել, պահպանել» բառերից. հմմտ. սանս.* kšatrapa- *ձևը։ Հպրս. *xšaθrapā- ձևի մօտ կային նաև* xšaθrapāvā *(որ աւանդուած է բեհիստոնի արձանագրութեանց մէջ) և ենթադրեալ *xšaθrapāna-. առաջինից է տառադարձուած յն.* ἐξατράπης (KZ 33, 215), *երրորդից են եբր.* אחשדרפנים axašdarpənīm *Եզր. բ. 36, Եսթ. դ. 12, բ. 9, թ. 3 և արամ.* אחשדרפנין axašdarpənīn, axašdarpənayyā *Դան. դ. 2,*

3, 27, ղ. 2—8։ ՊՀլ. ձևից է տառադարձուած յն. σατράπης, σατράπαι, որի միջոցով են հյ. սատրապ, լտ. satrapes *և ասոր.* ܣܛܪܦܐ saṭrāpā։—*Հիւբշ. 208, 513։*

Աւետիքեան, Մեկն. բղթ. Պօղոսի 1806, հտ. Ա. էջ 554 համարում է պրս.։ Նշբ արաբ. صاحب ṣāḥib *«տէր» բառի հետ։ Ուղիղ մեկնից նախ* Lag. Urgesch. 1118, Ges. Abhnd. 68: *Նոյն,* Arm. Stud. § *1667 «քաղաքապետ» նշանակութիւնը պրս.* šahr *«քաղաք» բառից կարծելով՝ ենթադրում է թէ նախապէս երկու տարբեր բառեր շահապ ձևի մէջ միացած են։ Այս բանը չի ընդունում Հիւբշ. 208։ Բազմ. 1895, 148 դնում է շահապետ բառից կրճատուած։*

**ՇԱՀԱՊ «անստոյգ մի բոյս է» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2244, ուր և բոյսի նկարագրութիւնը. տե՛ս այս մասին Հ. Պ. Տէր-Պօղոսեան ՀԱ 1929, 545—552, ուր և «շահապետ Աստուծոյ» արձանի դիւտը և նկարագրութիւնը։*

=Արաբ. شاهب šāḥib *կամ* اشحل āšḥab *«մի տեսակ յամբար ծաղիկ». գալիս է* šaḥab *«գորշախայտ»,* šahāb *«հրագոյն, աստղաշէկ» արմատից (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 176)։—Ա.Ճ.*

Վերի մեկնութիւնը տպուած է նախ Արրտ. 1910, 179։

**ՇԱՀԱՊԵՏ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «պետ, իշխան, պահապան». այսպէս ունինք՝ շահապետ արքայի Ոսկ. բ. կոր. Գէ. ես., շահապետ այգեաց (ձիթենեաց և ամենայն ծառոց) Ոսկ. ես. 274, շահապետ գերեզմանաց Ագաթ., շահապետ վայրաց Եզն. (վերջին երկուսը յատկապէս նշանակում են «մի ոգի, պարիկ»). յետնաբար շահապետ Բաղաֆի «քաղաքապետ» Վրդ. առ. 50։*

=ՊՀլ. šahrpat *ձևից. համմ. զնդ.* šōiθrapaiti- *«գաւառապետ»,* šōiθrapānā *(յդ. ուղ.) «դաշտաբնակ, բուն՝ դաշտապահ», սանս.* kšētrapati- *«դաշտապետ, հողապետ»,* kšētrapa- *«դաշտերը պահպանող մի աստուածութիւն»,* kšētrapālā՝ *նոյն նշ.։—Հիւբշ. 208։*

ՆՀԲ իբր նահապետ և նոյն ընդ շահապ: Lag. Urgesch. 1118 զնդ. xšaθrapaiti *և Ges. Abhd. 68 սանս.* kšatrapati *ձևերի հետ. իսկ* Arm. Stud. § *1668 զնդ.* šōiθrapaiti, xšaθrōpaiti։ *Բազմ. 1895, 148 զնդ.* xšaθrapaiti *ձևից, հինը *շահրապետ: Հիւբշ. 208 դժուար կարող է լինել հպրս. *xšaθrapati-, սանս.* kšatrápati,- *որ է «երկրապետ»։ Խրիմեան, Կարնամակ ծան. 10 ՊՀլ.* շատուրիար, *պրս.* šahriyār *բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* شحام šaḥām *«խոխ, բոբոխ, մանուկներին վախեցնելու էակ» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 493)։*

**ՇԱՀԱՍՊՐԱՄ (կամ շահսպրամ) «ռեհան,* basilic» *Բժշ. յետնագոյն ձևեր են շահսաֆրամ, շահասֆարամ, շահսիֆրամ, շահի ֆարում, շահմիսպրամ:*

=ՊՀլ. šāhspram, *որից պրս.* شاهسپرم šāhisparam *(կազմուած է* šāh *«թագաւոր» և* spram *բառերից, որի վրայ տե՛ս հետագայ համասպրամ). աւելի է նաև պրս.* šāhisparγam, šāhisfaram, šāhsarm, šāhsiparham, šāhsiparγam, šāhsiparm, šāhsifarham, šasparm, šāhisparm, šāhisfarm *են, որոնք բոլոր նշանակում են «ռեհան»։ Իրանեանից փոխառութիւն է նաև ասոր.* ܣܗܣܦܪܡ šahaspram (?) «ocimum basilicum»: *Հյ. շահասպրամ բառը թէև շատ յետին, բայց ձևով այնպէ՛ս համապատասխան է ՊՀլ. բառին, որ անշուշտ պէտք է հին համարել. համմ.* համասպրամ *Ագաթ.—Հիւբշ. 209։*

ՆՀԲ յիշում է պրս. ձևերը։ Lag. Ges. Abhd. *83 ՊՀլ.* šāhsprem:

**ՇԱՀԱՍՏԱՆ կամ ՇԱՀՍՏԱՆ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «մեծ կամ թագաւորական քաղաք, նահանգի կամ գաւառի կենտրոնական քաղաքը» Նղիշ. գ. էջ 59, Փարպ. Արծր. Լաստ. Մամիկ.։*

=ՊՀլ. šahrastān *(դրուած է* šatrustan*), պազ.* šahrastān, *պրս.* شهرستان šahristān *կամ* شارستان šāristān *«քաղաք». սրանցից են փոխառեալ նաև ասոր.* šahrestān, *քրդ.* šahrestān, šehrestān *«քաղաք»։—Հիւբշ. 209։*

ՀՀԲ «տեղի կամ բնակարան շահաց»։ ՆՀԲ պրս. շահիսթան։ Այսպէս նաև էմին, Ист. Вардана, էջ 50։ Lag. Arm. Stud. § 1670 և Պատկ. Арм. геогр. 75 միաժամանակ մերժում են դնել պրս. šāhistān և ընդունում են վերի ձևով։ Ուղիղ է նաև Բազմ. 1895, 148։

ՇԱՀԱՏԱԿ «ախոյեան, առաջին յարձակողը, յառաջամարտիկ». առանձին չէ գործածուած. բայց սրանից են շահատակել «համարձակ արշաւել, յարձակիլ» Կ. մակ. գ. 9. խոր. շահատակիւն Նաւում. գ. 2. շահատակարար Թէոդ. կուս. շահատակութիւն խոր. շահատակումն Մագ.։

ՆՀԲ «որպէս նահատակ կամ նախադրաւ արշաւօղ... կամ (արաբ.) šāhid «վկայ, նահատակ»։ Նոյն արաբ. ձևի հետ է դնում Պատկ. Матер. I. 11: Մատ ЗВО 11, 172 կցելով շահապետ բառին՝ արմատը դնում է շահ<իրան. šahr: Աճառ. Արրտ. 1910, 179 իբր պհլ. *šahratak=պրս. šahrtak «քաղաքի վրայ յարձակող», կազմուած šahr «քաղաք» և tak «արշաւել, վրան վազել» բառերից. հմմտ. նահատակ, ասպատակ:

ՇԱՀԱՐ «անտառ», որից շահաւարացի «անտառաբնակ», մէկ անգամ ունի Մարթին. «Կոչեցաւ սիլուանոս, որ է շահարացի, վասն զի ի շահար և ի մայրիս սնաւ»։

ՆՀԲ յիշում է պրս. սայէ, սայվան «հովանի», սայէտար «հովանաւոր», շախ «ոստ, շառաւիղ»։ Նորայր, Բառ. Ֆր. 1186 բ արաբ. ṣaẖra «դաշտ»։

Շահաւար տե՛ս Շաւար։

ՇԱՀԱՒՈՐԱՍՏ «հնդկական մի բերք է» խոր. աշխ. ունի միայն ՀԲուս. § 2246 (որ տպ. Վենետ. 615 ունի շահաւոր մարդարիշար):

*ՇԱՀԴԱՆԱԿ «կանեփհատ». մէկ անգամ ունի խոր. աշխ. 608. «կորեէք ունի. ի պրտղոց շահդանակ». ձեռագրական տարբերութիւններն են շահնդակ, շահտանաւ, շանդանիճ, շատանայ, սատանէն, աշահդանակ, շաղդանակ, շաղգանակ, շագանակ. մէկ ձեռագիր էլ իբր մեկնութիւն աւելացնում է «այսինքն գանգար (իմա՛ կանկար) փշոյ սերմն»։ —ՀՀԲ այս ընթերցուածներից ընտրել է. շագանակ ձևը, որին տուել է «քէստանէ, կաստանայ» նշանակութիւնը (1769 թ.). սրան հետևել են միւսները (այսպէս առաջին անգամ 1788-ին Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. էջ 167 «каштанъ, шагананагъ, шамбалут»), յետոյ ՆՀԲ, ՋԲ և ԱԲ, և այսպէսով արդի գրական լեզուի մէջ մտել է հնապէս անգոյ շագանակ բառը, որից էլ կազմուել են շագանակենի, շագանակագոյն, շագանակավանառ:

=Պհլ. šāhdānak, պրս. دانه شاه šāhdāna «կանեփի սերմ, մազաթի խոշոր հատ ևն». բուն նշանակում է «թագաւորական հատիկ կամ սերմ» և կազմուած է šāh «թագաւոր» և dānak, dāna «հատիկ» բառերից։ Իրանեան նից են փոխառեալ նաև ասոր. ܫܗܕܢܐ šahdanag, արաբ. šāhdānaj, šahdānaj, šāhdānaq «կանեփի սերմ»։—Հիւբշ. 209?

ՆՀԲ դնում է շագանակ, շաղգանակ, շաղդանակ ձևերը և մեկնում է կաստածով «շահպալուտ, կաստանա կամ պրս. շիլիւգէ «ընկոյզ և որ ինչ նման է նմա»։ Սրան է հետևում ՋԲ։ ԱԲ շագանակ «կաստանա կամ անոր նման պտուղ», շանդակ «պտուղ մը»։ Թաղիադեան. Առաջն. մանկ. 139 մեկնում է «կաստանայ» և բուն հայ ձևը համարում է շաղդանակ, որ և առուգաբանում է «կեղևը դանակով շեղուած» (շագանակը խորովելու համար նախապէս կեղևը ճեղքում են)։ Պատկ. խոր. աշխ. 1877, 47 մեկնից վերի ձևով։ Աւելի ընդարձակ և ուղիղ մի քննութիւն ունի Նորայր, Հայկ. բառաքն. 119։ Lag. Götting. Nachr. 1889 մայիս 29, Հյ. Թրգմ. ՀԱ. 1889, 159 պրս. šāhdāna։ Այս բոլորից տեղեկութիւն չունի կարծես ՀԲուս. § 2238 և § 2247։ Pictet, բ. տպ. Ա. 250 կցում է գնդ. hexte<սանս. *sakta «խոզակաղին»? բառի հետ։

*ՇԱՀԻՆ (սեռ. -հենի) «ընտիր և վարժուած բազէ» Մխ. առկ. Երզն. քեր. աւում է նաև շահին.—նոյն է նաև շահեան «ԲՋ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամաւունի, Հայոց բառ ու բան, 509ա)։

=Պրս. شاهين šāhīn «ապիտակ ագնիւ բազէ», որից նաև արաբ. شاهين šāhīn (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 657), քրդ. šahin, šain, šīn, Թրք. šahin qušə, սերբ. šahin «բազէ»։ —Հիւբշ. 210։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը նաև Lag. Ges. Abhd. 10, Btrg. bktr. Lex. 11։

ԳԻՒ.—Սվեդ. Սեբ. շաճէն, Ալշ. շաճէնբազա, Մշ. շաճենբազա.—ոճով աստում է Սեբ. շաճէնի աչ ուճի «խոշոր աչքեր ունի»։

*ՇԱՀԹԱՌԱԿ (որ և շաբաուակ) «մի տեսակ բոյս է. անձխոտ, լտ. fumaria officinalis L կամ Vaillantii Lois» (ըստ Տիրացուեան, Contributo § 167—168) Բժշ. գրուած է նաև շաբաուէճ, շէաուէճ, շէաուաճ, սաբաուիճ ևն. ունի միայն ՀԲուս. § 2239։

=Պրս. شاهتره šāhtara «անձխոտ», որից փոխառեալ է արաբ. شاهترج šāhtaraj «անձխոտ» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 417 և Steinschneider WZKM 12, 201). բուն նշանակութիւնն է «արքայական խոտ»։ Հյ. շաճբաուէճ ևն փոխառեալ են արաբերէնից, իսկ շաճբաուակ ուղիի հին պարսկական ձևն է (իբր պահլ. *šāhtarak), որից փոխառեալ է ասոր. šāhṭarag։

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

*ՇԱՀՄԷԼԻՔ «մի տեսակ խոտ» Կամարկպ. ունի միայն ՀԲուս. § 2250։

=Պրս. šāh+արաբ. ملیك melik «իշխան, թագաւոր» բառերից. բայց այս անունով մի բոյս ծանօթ չէ պարսկերէնում։—Ա.Ճ.

ՇԱՀՄԻԱԼ կամ ՇԱՀՄԻՀԱԼ «մի տեսակ բոյս է» Վստկ. (առաջին ձևը տալիս է ԱԲ). այս բառերը չունի ՀԲուս. և երևի թէ նոյն են յաջորդի հետ։

*ՇԱՀՄԻԱՆԴԱԼ (որ և շաճմիճանաալ) «վայրի ձմերուկ» Վստկ. 81 (ՀԲուս. § 2251)։

=Արաբ. شحمة الحنظل šaḥmat-ul-ḥanzal կամ شحم الحنظل šaḥm-ul-ḥanzal բառի պարսկական شحم حنظل šaḥm-i-ḥanzal (վերջին կէտը ջնջելով شحم حنطل šaḥm-i-ḥantal) ձևից, որ նշանակում է «հանդալ, վայրի ձմերուկ կամ ապուհահլ կոչուած ձմերուկի կորիզներից ջոկ մնացեալ մասը, այսինքն ամբողջ միսը». կազմած է արաբ. šaḥma «միջուկ» և ḥanzall «վայրի ձմերուկ» բառերից (տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 490 և 186)։ Նոյն աղբիւրից է նաև վրաց. შამიანზარი «դառն դդում»։—Ա.Ճ

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ). որից յետոյ Seidel, Մխ. բժշ. § 106։

*ՇԱՀՄԼՀԱՄ «վայրի դդում կամ վայրի ձմերուկ, լտ. colocynthis» Վստկ. 74. ունի միայն ՀԲուս. § 2252։

=Արաբ. šaḥm-ul-ḥanzal բառն է, որ կրճատուելով դարձել է šaḥmlḥan(zal). ընդարձակ տես շաճմիանդալ բառը։—Ա.Ճ.

*ՇԱՀՆԱՅ «Թագաւորի նշանակած վերակացուները քաղաքում» Վրդն. տպ. Վենետ. էջ 95 (որ էմին էջ 128 յատուկ անուն է կարծել). Մաղաք. աբ. 15, 16. այսպէս նաև Տաթև. ձմ. լբ. Ումն իշխան է և շահնայ որ հրամայէ. ևն. ուղի յետնաբար Հաւաք. էջ 48, 50. Առաք. պտմ. 419. գրուած է ջախնայ Վրդն. տակ. 37։

=Պրս. شحنه šahna «ոստիկան՝ որ պահպանէ զգաւառն և զքաղաքն ի չարութենէ և ի վնասուէ». նոյնը նաև արաբ. (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 654)։

Ուղիղ մեկնեց նախ էմին, Ист. Вардана (տպ. 1861), էջ 140. նոյնը յետոյ Ալիշան, հրտր. Վարդանայ, Վենետ. 1862, էջ 95։

ԳԻՒ.—Սեբ. շաճնա, Մկ. շոճնո, շանա «կալ չափող պետական պաշտօնեայ, տասանորդ հաւաքող»։

Շահնդակ տե՛ս Շահդանակ։

Շահնշահ տե՛ս Շահանշահ։

*ՇԱՀՈՒՆԱՐ «խոշոր և ընտիր մարգարիտ» Անան. դիտ. 20, որ և շաւար Կաղանկտ. հրտր. էմ. էջ 83 (Գոհարս ականց պատուականաց և զշաւարն բազմագին.—որ հրտր. Շահն. Ա. 26 սխալմամբ գրուած է աւար), շահաւար Օրբել. 22 (Գոհարս ականց և մարգարտաց, զշահաւարն բազմագին ոսկեթել հանդերձից)։

=Պհլ. šāhvār բառից=պրս. شاهوار šāhvār (որ և šahvār, šāhvā, šāhū) «խոշոր և աննման գոհար». գալիս է šāh «թագաւոր»

բառից և նշանակում է բուն «արքայավայել»։ Հիւբշ. 213։

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Матер. I. 11։ *Աւելի ընդարձակ տե՛ս Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 27։*

***ՇԱՀՈՔՐԱՄ** «մեխակ ծաղիկը, լտ.* dianthus fimbriatus M. B.» *(ըստ Տիրացուեան,* Contributo *§ 130) Բժշ. (ըստ ՆՀԲ գործածուած է Բժշկարանում, իսկ ըստ ՀԲուս. § 2253 «ի գիրս յիշուած չէ»). սովորական բառ է արդի գրական լեզուի մէջ։*

=Բառիս առաջին մասը կարող է լինել պրս. šāh «թագաւոր» *բառը, որով բարդուած են շատ բուսանուններ. ինչ.* շահպալուտ, շահպրակ, շահպանաճ *են. իսկ երկրորդը անյայտ է. ամբողջը պարսկական փոխառութիւն պէտք է լինի, որ իրանեանում կորել է։ Հիւբշ. 272։*

***ՇԱՀՊԱԼՈՒՏ** (գրուած նաև* շահպալուր, շարալուր, շամբլուր, շատալուր, շաւիբլուր, շապալլուտ) «շագանակ, կաստանայ» *Մխ. բժշ. 44. Բժշ. մեկնուած է նաև «նուշ, ընկոյզ»։*

=Պրս. šahbalūṭ, *որ և* šāhballūd, šahbalūt «շագանակ», *բայց գալիս է* šāh «արքայ» *և* balūt «կաղին» *բառերից և աստուգաբանօրէն նշանակում է «արքայական կաղին» (այսպէս է նաև արաբ.* balūṭ-ul-melik *հոմանիշը). սրանից են նաև քրդ.* šabelut *և արևելեան թուրքերէնի միջոցով Ղրբ.* շմբա՛լուր «շագանակ»։— *Հիւբշ. 272։*

ՀՀԲ բառ այլազգական։ Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, նոյնը նաև ՀԲուս. § 2237, վերջին անգամ Seidel, *Մխ. հեր. § 136։*

***ՇԱՀՊԱՆԱԿ**, որ և* շահպանաճ, շապանկ, շահուրակ, շահուրանկ «մի տեսակ բոյս», *որ այլևայլ ձևերով է մեկնուած Բժշկարաններում, բայց հասարակօրէն համարւում է «մանուշակի տակ» կամ ըստ Ամիրտ. «շան մանուշակ» (ըստ Տիրացուեան,* Contributo § 142 viola canina L). *ունի միայն ՀԲուս. § 2254։*

=Արաբ. պրս. šāhbānik *կամ նաև* šāhbāniǰ, šābānik «մի տեսակ ծառ, որ Եգիպտոս շատ է գտնւում և տեղա-

կան արաբերէնով կոչւում է barnūf, *լտ.* conyza odorosa» (Steinschneider WZKM *12, 201). ա՛յսպէս պէտք է հասկանալ նաև մեր բառի նշանակութիւնը. հմմտ. ՀԲուս. անդ։—Աճ.*

ՇԱՀՊՈՒԿ «մանդակ, լտ. polygonum bĭstorta *կամ շահպրակ, լտ.* cheiranthum». *ունի միայն ՀԲուս. § 2256, առանց վկայութեան։*

***ՇԱՀՊՐԱԿ** կամ **ՇԱՀՊՈՒՐԱԿ** «մի տեսակ ծաղիկ, լտ.* cheiranthum, *Բրք.* ղէիպօյ». *ունին միայն ՓԲ և ՀԲուս. § 2257. վերջինս գրում է թէ. «ի գիրս կարծեմ չէ յիշուած». նոր գրականում ընդունուած է շահպրակ ձևով։*

=Պրս. šāhparī, šahbarī, šāhbōy «յամբար ծաղիկը», *որից Բրք.* šehboy>*ռմկ.* շէհպօյ «շահպրակ»։ *Կերևի թէ նոր գրողների ձեռքով է շինուած այս բառերի վրայից՝ հին հայերէն փոխառութեանց ոճով և հայկական համարուած -ակ մասնիկով։—Աճ.*

***ՇԱՀՌԱՀ** «մեծ ճանապարհ». Մեծ շահրուէն Մասթարոյ. Արձ. 1336 թ. (Վիմ. տար. էջ 165)։*

=Պրս. šāhrāh *նոյն նշ. որից և վրաց. Შარა շարա. կազմուած է* šāh «թագաւոր» *և* rāh «ուղի, ճանապարհ» *բառերից։*

Ուղիղ մեկնեց Կոստանեան, Վիմ. տար. էջ XVI։

***ՇԱՀՐԻԿ** «հին պարսկական կրօնը հաւատարմութեամբ պահող մի ցեղ». մէկ անգամ ունի Արծր. Հրտր. Պատկ. էջ 27.—«Զայս ևս ես իսկ տեղեկացեալ գիտացի ի բազմաց յայնցանէ, որ շահրիքն (տպ. կամ ձեռ. շահրիխն, շախրիխն. պետք է ուղղել շահրիկին) կոչին, որոց դէպ եղև ինձ հանդիպիլ ևկելոց ոմանց ի յԱսպաստան աշխարհէ, որք անուանէին զինքեանս համակդենս, այսինքն ամենագէտ ի հաւատ կրակի»։*

=Պհլ. šahrīk, *որ է պրս.* شهری šahrī, *գալիս է* šahr «քաղաք» *բառից և նշանակում է բուն «քաղաքացի». սրանից է փոխառեալ նաև ասոր.* ܫܗܪܝܓ šahrīg «nobilis, qui dihkanis majore dignitate fruebatur»: *Շահրիկները ազնուականներ էին, որոնք լեռների մէջ քաշուած ապրում էին և դեռ անա-*

զարտ պահում էին հին պարսկական կրօնը։ Նրանց վարդապետութեան մասին խօսում է Արծրունին՝ անդ։—Հիւբշ. 210։

Պատկ. Матер. I. *27 համարում է Եակուրիի* šahrrīg *«շրջանի կառավարիչ» և Մասուդիի* šahāriga *«ազնուականք» բառը։*

***ՇԱՀՐՄԱՐ** «քաղաքների և գիւղերի վիճակագրական մատեան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Սեբ. էջ 26. «Տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դունայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի՛ և կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա»։*

=Պհլ. šahr+*hamār *«քաղաք-համար», իբր պրս.* شهر šahr *«քաղաք, աշխարհ, գաւառ»+* هماز hamār *կամ* مار mār *«հաշիւ, համար», որի հնագոյն հայ ձևն է* աշխարհամար։

Ուղիղ են մեկնել Մարկվարտ, Eranschahr *1901, էջ 122, Ադոնց,* Арм. Юстин. *էջ 220—1, Սպենեան, Ուս. դաս. հյ. 716 ծան.։*

ՇԱՂ, ի *հլ. «ցօղ, խոնաւութիւն, շիթ, կաթիլ» Երզ. ե. 2. Յոբ. լը. 28. Վստկ. 215. որից* շաղալից *«ցօղալից» Ա.Բ.* շաղել *«ջրով թրջել, թրմել, շաղախել» Մաշտ. Կիւրիկ. Ջրբ. կթ. (իմաստի զարգացման համար տե՛ս և հմմտ.* թրել*). արմատի երկրորդ ձևն է* *շող, որից* շողիք *«լորձունք, թուք» Վստկ. ընդհանուր իմաստն է «թացութիւն»։ Հմմտ. նաև* ջաղախ։

ԳԴ պրս. žāl, žāla *«ցօղ»։ ՆՀՔ պրս.* ժալ, ժալէ, *որպէս և թրք.* չըղ, չըյ *«ցօղ»։ Տէրվ. Նախալ. 72 հյ.* սառ, ցուրտ, *պրս.* žāla, sard, *զնդ.* sarəda, *լիթ.* szalti *«սառիլ». szalna, szarma «շաղ, եղեամ» ձևերի հետ՝ հնխ.* çar *«սառիլ» արմատից։* Karolides, Γλ. συγκρ. 215 *կպդովկ.* šavi, *սանս.* savam *«ջուր»,* sunomi *«քամել», ումբր.* savitu *«անձրև» ևն։ Հինք. պրս.* žāl: Justi, Dict. Kurde *261 և* Kurd. Gram. *251 հայ.* շաղել *բառի հետ դնում է քրդ.* šelen *«շաղուիլ, հեղուկի մէջ թաթախել ևն», որ բայի անորոշ ձևն է. արմատը* šel։ *Սագըզեան ՀԱ 1909, 334 սումեր.* sêq *«անձրև»,* sūk *«աղբիւր»,* suk *«ճահիճ»,* šağār *«ցեխ», թրք.* yaγmur *«անձրև»,* čaγmur *«ցեխ»,* sel *«հեղեղ»,* saγanaq *«տարափ», հյ.* շաղախ, շողիք *ևն։* Lidén IF 44, 191 շաղել, շողիք *և* շաղախ *իբր բնիկ հայ՝ կցում է հանգլ.* hwelian *«թարախոտիլ» և լիթ.* szvelnus *«կակուղ» բառերի հետ։ Նոյնը* Pokorny 1, 473 *հնխ.* k'ɣel- *արմատի տակ։*

ԳԻՒ.—Ալշ. Ասլ. Գոր. Երև. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Ռ. Սլմ. Վն. Տփ. շաղ, *Ջթ.* շօղ, շող, *Ագլ.* շէն *«ցօղ».—2. Երև. Պլ.* շաղել, *Գոր. Ղրբ. Տփ.* շա՛ղիլ *«անձրևը բարակ ցօղել», Ալշ. Հճ. Ջղ. Մղ.* շաղել, *Ջթ. Խրբ.* շաղիլ, *Տիգ.* շողել *«ալիւր կամ ցեխ շաղախել, շաղուել». որ և Ակն.* շէղիլ։*—այս երկու իմաստները զանազանելու համար կազմուած է յետոյ* շաղվել *«խմորը շաղախել», որից ունինք Ախց. Կր. Ննխ. Պլ. Սեբ.* շաղվել, *Հմշ.* շաղվուշ, *Ռ.* շաղվել, շավղել, *Ակն.* շէղվիլ։ *(հին գործածութիւնը ունի Քուչ. 63).—ցօղի պատկերով է* շաղ տալ *Ախց. Երև. Տփ. «ցանել, ցրուել»։—Նոր բառեր են* շաղիկ, շաղաթախ, շաղակալել, շաղակոլոլ, շաղամէջ, շաղայրեց, շաղատար, շաղափուփ, շաղոտիլ, շաղուիլ։

ՓՈՒ.—Կապադովկ. յն. šayi, šavi *«ցօղ, շաղ»։ (Ջուր է աշխատում* Karolides, Γλ. συγκρ. *62, 98, 215 կցել սանս.* savam *«ջուր» և մինչև անգամ փռիւգ.* Σαβάζιος *«Աստուած» բառին!)։*

ՇԱՂ *«կապ, զօդ, կցում, կապակցութիւն». այս նշանակութեամբ առանձին գործածուած գտնում եմ մէկ անգամ Այրիվ. 8ա. վկայութիւնը տե՛ս տարի (Յաւելուածում), որից կազմուած են* շաղել *«պատատել, փաթաթուել, կապուել» ՍԳր. Սերեր. 209. Արծր. Բրս. Հց. Նիւս. բն.* շաղապատիլ *«պատիլ, փաթաթուիլ, միանալ» Կոչ. Ոսկ. ա. կոր. Լաբուբ. 42. Փիլ. «թակարթի մէջ բռնուիլ» Յոբ. ժբ. 8.* շաղաշարիլ *«կապուիլ, միանալ» Ճառընտ. «խառնակիլ, զուգաւորիլ» Նոնն. Երզն. մթ. 118.* շաղամաճուրիւն *«յարակցութիւն» Փիլ. լին.* շաղկապ *Նար. Նիւս. բն. Արշ. կամ* շաղակապ *Սանահն.* շաղկապական

Ոսկ. յհ. բ. 36. այստեղ է պատկանում նաև շաղիպատուկ *«բաղեղ, պատատուկ» Գաղիան. (ունի միայն ՀԲուս. § 2263)։*

Հիւնք. յն. ցυν- ձևից։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 102 անապահով է գտնում կցել ճաղ «կիր» բառին։* Petersson, Ar. u. Arm. Stud. 28 *սանս.* çulba- *«կապ» և հյ.* շեղ, շղթայ *բառերի հետ հնխ.* k̑ṷl̥- *արմատից։*

—ՇԱՂԱԽ, ո *հլ. «ցեխ, շաղուած հող և կիր» ՍՆ. ժա. 3. «պիղծ, կեղտոտ» Կոչ. 31, 118 (նշանակութեան զարգացման համար համմտ. ռուս.* грязный *«ցեխոտ. 2. կեղտոտ»). որից* շաղախել *«ծեփել, ցեխի մէջ թաթախել, կեղտոտել, պղծել» ՄԳր. Եփր. Թգ. Ոսկ. Եփես.* շաղախանալ *«պղծուիլ. ապականուիլ» Բրս. ծն.* շաղախուտ *«տղմուտ» Վստկ.* կրաշաղախ *Օրբել.* կպրաշաղախ *Ագաթ.* շաղախաբեր *(գրուած* շաղդաղաբեր*) Ուռհ.* խառնաշաղախ *«անկանոն զօրք» Ուռհ. 344 (չունի ԱԲ). ըստ Նորայր, Բառ. ֆր. 762 բ կայ նաև մհյ.* շոխ, շողախ *«ամանների բերանը ցեխելու ծեփ»։*

=Մագում է շաղ «թրջել, թացութիւն» արմատից, որից շաղել *«շաղախել». այս երկուսը երբեմն իրար հետ այնքան են միանում, որ անկարելի է լինում զանազանել համմտ. հներից՝ «Մոխիր հնոցի քացախով շաղախեալ արկին ընդ քիթս նորա» (Ճառընտ.) միջին հյ.* շաղղել *(իմա՛* շաղաղել*) «շաղուել» Վստկ. 157, որ յայտնի չէ թէ* շաղել *բայի՞ց է կազմուած -աղ մասնիկով, թէ* շաղախել *բայից՝ խ>ղ ձայնափոխութեամբ. նոյնը նաև յաջորդ գաւառականներում։*

Նշ՚ր «նոյն ընդ ցեխ, ցիխ, որպէս թէ կաւ շաղեալ», իսկ Թրք. çelɛ̈g *«տիղմ կպչուն» և* sɛlaɯ *«տիղմ կամ կաւ աւազախառն»։ Հիւնք.* շաղիղ *բառից։* Patrubány SA *1, 189 յն.* χηλίς *«արատ, կեղտ», հսլ.* kalŭ *«ցեխ, տիղմ», սանս.* kāla *«սեւ» բառերին ցեղակից։ Նոյն ՀԱ 1908, 213 հնխ.* kéu̯o *«ուռիլ» արմատից։—Սագըզեան ՀԱ 1909, 334 հյ.* շաղ, ուաղախ, շողիւ, *Թրք.* čaγmur *«ցեխ»* saγanak *«տարափ», սումեր.* šaǧar *«ցեխ»,* suk *«ճահիճ» են բառերի հետ* Lidén *և* Pokorny 1, 473 *տե՛ս* շաղել։

Գիւմ.—Գոր. Կր. Ղրբ. Մկ. շաղախ, *Մրզ.* շաղախէլ, *Մկ.* շողոխիլ, *Խրբ.* շխախ *«շաղախ, ծեփ, ցեխ»,* շխիլ *«շաղախել, ծեփել», Երև.* շա՛ղաղ *«ալիւրի, ցեխի շաղախ», Ջղ. Վն.* շաղաղել *«շաղուել», Մլմ.* շաղըղել *«ցեխ կամ խմոր շաղուել», Ագլ.* շղա՛ղիլ *և Տփ.* շաղըղիլ *«խմորը շաղուել» (նաև Տփ.* շաղխիլ *«ցեխը շաղախել»), Շմ.* շղաղիլ *«ապականել, բնական պէտքը հոգալ», Ասն.* շաւախ *«խմորի համար ջրով պանդուած ալիւր», Մշ.* շաղ *«շաղախ»։*

ՇԱՂԱԽ *«փուշ, տատասկ». մէկ անգամ ունի Վրդն. աղ. լգ։*

Նշ՚ր յիշում է արաբ. պրս. šulūhak, šulūhaj *«փշոտ բոյս ինչ»։*

ՇԱՂԱԿՐԱՏ *(յետնաբար կայ սեռ.* ի, ոյ*) «դատարկախօս, շատախօս» Փարպ. Նար. «ծաղրածու» Ոսկ. Եփես. ժէ. որից* շաղակրատել *«պարապ խօսիլ» Ոսկ. ա. տիմ. ժդ.* շաղակրատումն *Ղևոնդ.* շաղակրատութիւն *Ագաթ.։ (Սխալ գրուած* շարակարատ *Եփր. մատ. Դ. 115՝ փոխանակ* շաղակրատ*)։*

Նշ՚ր լծ. հյ. շար *և* ագռաւ, *յն.* κράζων, *լտ.* crocitans, *իբրև կռկռացող։ Տէրվ.* Altarm. 73 շա- *դնում է մասնիկ, արմատը* դակ, *իբր յն.* λάσκω, ἔλακον, λέλακα *«երգել, խօսիլ», լտ.* loquor, locūtus *«խօսիլ», հսլ.* рекю, решти *«ասել, խօսիլ»։ Հիւնք.* Կաղիկրատ *յոյնի անունից է դնում, բայց նաև -կրատ վերջաւորութիւնը կցում է յն.* ἀριστοκρατία, ὀχλοκρατία *են ձևերի վերջամասի հետ։*

+ ՇԱՂԱՂԵԼ *«ծռմռել, այլայլել». մէկ անգամ ունի Եփր. ծն. «Եթէ բոթովախօս ոք զանուն Թագաւորի շաղաղէ, մինչ պակասի՞ անուն Թագաւորին ի նորա շաղփաղփ բանիցն» (այլ օր.* շաղփաղփէ*. տե՛ս Նշ՚ր* շաղփաղփել*)։*

=Կազմուած է շաղ *«ծուռ, սխալ» արմատից, որի վրայ ընդարձակ տես շե՛ղ։—Ա.Ճ.*

Նշ՚ր մեկնում է «շաղկով շաղել»։

ՇԱՂԱՄԱՔ *(բց. -է) «թել, դերձան» ՍՆ. ժդ. 23. Եփր. ծն. էջ 59. Նար. 247.—այսպէս նաև Բռ. առեփ. լհ. իսկ Հին բռ. «գամ»,*

Հիւնք. պրս. շէլմ, շէմէլ «*կօշիկ, տբ-բախ, մուճակ*» *բառից՝* -աք *մասնիկով։*

ՇԱՂԱՄԱՂԵԼ «*դանդաղել*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 242։*

ՇԱՂԱՄԱՇՈՂ «*անմիտ կամ տգէտ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 242։*

ՇԱՂԱՇԻԻՆ «*շմոշ*». *այսպէս ունի Բառ. երեմ. էջ 242. երկուսն էլ անծանօթ բառեր են։*

ՇԱՂԱՇՈՒՏ «*անմիտ, խենթուկ*» *Ոսկ. մ. բ. 12. Բուզ. որից* շաղաշաուրիւն «*անառակութիւն*» *Բուզ. 109 (տպ.* շաղաշաուրիւն, *ըստ ՆՀԲ* շաղաշաուրիւն).—*առաջին վկայութեան մէջ գրուած է* շաղաշոյտ, *որ պէտք է ուղղել* շաղաշուտ, *ինչպէս ունի Բուզ. և ինչպէս երեւում է* շաղաշաուրիւն *ածանցից։ Տե՛ս նաև դիշուտ բառը։—Ըստ իս* -ուտ *մասնիկ է. բառիս արմատն է* *շաղաշ։

Տէրվ. Altarm. *73 արմատը դնում է* շաղ, *որ կցում է սանս.* laś «*ցանկալ, տենչալ*», *գոթ.* lustus, *գերմ.* Lust «*ուրախութիւն, հաճոյք*» *բառերին։*

ՇԱՂԱՐՉԵԼ «*շողոքորթել*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 242. բայց նոյն էջ կայ* շաղաշարել «*շողոքորթել*»։

ՇԱՂԱՒ. *արմատ առանձին անգործածական. սրանից բարդուած ունինք միայն* շաղաւաշուրթ «*խարեբայ, խարէպաճոյ, որ խաբող լեզու ունի*» *Առակ. ժթ. 1. Ոսկ. ա. տիմ. և ղկ. Փարպ։ (Հին բռ. մեկնում է «թեթևամիտ կամ ցոփախօս»)։*

ՆՀԲ «իբր ընդեղել շրթամբք կամ շաղաւ (որպէս ոմկ. շէլլաֆ) ի շուրթն»։ Տէրվիշ. Altarm. *73* շա- *մասնիկ դնելով՝ արմատը համարում է* դաւ, *որ կըցում է սանս.* lap, rap «*շաղփաղփել*», *պրս.* lab. lav «*շրթունք*», lāf «*շաւաղաճոսութիւն*», lābīdan, lāvīdan «*աղաչել, փաղաքշել*» *բառերին։*

ՇԱՂԱՒԱՐ «*եթեր կամ եթերային մասերից մէկը*» *Պիտաո. որից* շաղաւարիլ «*լուանի կամ աստղերի շարժիլը*» *Պիտաո.։*

ՇԱՂԱՓ (*գրուած նաև* շաղապ) «*ծակիչ, գլիր, բան ծակելու գործիք, մաքխար կամ բուղու*» *Յայսմ. վկ. գէ. 30, 34. Տաթև. ամ. 508. Գնձ. փահլ. 65 (վերջինս տարօրինակ գործածութեամբ. հմմտ. Կատեցաւ առ իս շատ մեղք, որպէս անձրև որ գայ տարափ, խոցվեր եմ մահու սրով և եղեր եմ գինչ որ շաղափ). որից* շաղափել *կամ* շաղափեել «*գլիրով ծակել*» *Գնձ։—Այս* շաղափ *բառը գործածուած է նաև Ոսկ. ես. 138 մութ մի հատուածի մէջ՝ անստոյգ իմաստով. «Զի եթէ շաղափքն սաքափաթանաց և թովչութիւնք ինչ ստաբանք՝ յորժամ թովիցին, կարեն անազդական առնել զմարմինս ի թունաց չար դաղանաց են».—ՆՀԲ չի յիշում այս հատուածը շաղափ բառի տակ. Տէրվ.* Altarm. *77* շաղափ *հասկանում է «terebrae, գլիր?»*

ՀՀԲ «որ շաղի յափ»։

ԳԻՒ.—Բլ. երև. Մկ. Նբ. Սլմ. շաղափ, *Մշ.* շաղար՝ *(սեռ.* շախբ՝ի), *Ջղ.* շաղար, *Ալշ.* շղապ.—*որից* շաղփել *Ալշ. Մշ. «ծակել» (օր. Գնգակը շաղփից անցաւ)։*

Փոխ.—Վրաց. შალაფი *շալափի «գլիր», քրդ.* شخاب *šixab «գլիր,* vrille» (Justi, Dict. Kurde 255 *և* Kurd. Gr. 54), *նաև բոշ.* šavap «ahle, pfrieme *հերիւն» (որ* Finck ЗАН *1907, էջ 121 յիշում է՝ առանց համեմատելու հյ. բառի հետ)։*

ՇԱՂԲԱՂՈՒ «*ծաղրածու, միմոս*». *մի անդամ ունի Դամասկ. (խօսելով կապիկների մասին)։*

Նորայր, Բառ. ֆրանս. (babouin *բառի տակ) յիշում է պրս.* سنبالو sanbālū «*մի տեսակ կապիկ*»։

***ՇԱՂԴԱՄ** «*ուտելի կոճղէզաւոր մի բոյս է. շալղամ*» *Մխ. առկ. Գաղիան. բժշ. աւում է նաև* չողգամ *Վստկ. 66. Բժշ.* չախգամ, չողգամբ *ՀԲուս. § 2258. (իսկ Բառ. երեմ. յաւել. 570 գրում է* չակգամ)։

=*Պրս.* شلغم šalγam «*շողգամ*», *որից փոխառեալ են նաև արաբ.* شلجم šaljam *կամ* سلجم saljam, *թրք.* šalγam, *քրդ.* šilim, šelem, šelim, *նյն. σαλγάμι հոմանիշները։—Հիւբշ. 210։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Lag. Arm. Stud. § 1674 *և Հիւնք.։—ՀԲուս. օտար ձևերը հայերէնից է դնում,*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Ջղ. չախկամ, *Մշ.* չախգ՝ամ, *Մկ.* չախկ՝ոմ, *Սլմ.*

վն. շախկ'ում, Ակն. շօխգամ, Խրբ. շօխգ'ամ, Տիգ. շօխfում, Զթ. շուխգ'օմ, շուխգ'ոմ, Սեբ. ժօխբաճմ: Նոր բառեր են շաղգամակեր, շաղգամաճամ, շաղգմուկ:

+ՇԱՂԻԼ «շփոթուիլ, սխալիլ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Լմբ. ժբ. մարգ. էջ 167 (անգ. յոչ.)—Մինչդեռ ածէ բերէ զբանս իւր վասն միւսոյն՝ փոխի յանկարծակի յերկրորդն և անտի յերրորդն և ի չորրորդն. և վասն այսորիկ շաղեալ շփոթի և սահի խնդրոյն և քննօղն»:

=Բնիկ հայ բառ. մեկնութիւնը, ինչպէս նաև դաւառական ձևերը տե՛ս շեղ:—Աճ.

ՇԱՂԻԿ, ո հլ. «հում միս, մարմին, դիակ» Ել. իա. 34. Ոսկ. եփես. Բ. Եզն. Վեցօր. 192. որից շաղղակեր «գիշակեր, մսակեր» Սեբեր. շաղղակերութիւն Ոսկ. ես. շաղղայեղց Վեցօր. 193. շաղղագործութիւն Ածաբ. յայտ. նեխաշաղիղ 36. իմ. պալ. գրուած է նաև շաղաղ Ոսկ. ես. 120, որից շաղաղակերութիւն Ոսկ. ես.—Նոր բառ է շաղղաճալ «շատ լաց լինելուց աչքը փճանալ» Անկ. գիրք հին կտ. 220 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 233): Բառ. երեմ. էջ 241 սխալ գրչութեամբ ունի շալիչ:

Հիւնք. պրս. lāšа «դիակ» բառից (-իղ մասնիկով): Müller WZKM 10, 277 իբր բնիկ հայ՝ կցում է սանս. çárīra- «մարմնի կարծր տարրը, ոսկորները, մարմին» բառին: Հիւրշ. Arm. Gram. 479 սանս. բառը դնելով հնխ. k'alīlo- ձևից, ձայնապէս անհամաձայն է գտնում հայերէնի հետ: Նոյնը աւելի ընդարձակ Boisacq MSL 17, 113 և Dict. étym. 433: Պատահական նմանութիւն ունի վրաց. შალაღი շալալի «թարախ», որ Ղափանցեան. Տեղեկ. ինստիտ. 2, 85 հյ. շարաւ բառից է հանում:

ՇԱՂԻՆՏՐ «անուտելի մի բանջար է» Վրդն. ծն.:

Հբուս. § 2262 կարդալով շաղինգղ՝ նոյն է կարծում իշաշինգղ «իշկոյ վարունգ կամ վայրի վարունգ» բառի հետ:

ՇԱՂՇԱՓԵԼ. անսովոր բառ. մէկ անգամ ունի Ոսկ. երբ. ժգ. 510. «Եւ կնոջ առաջի ոչ վայրապար շաղշափիցես, զի մի՛ զնա թշնամանիցես» (յն. «առնել»).—ՆՀԲ մեկնում է «շաղփաղփել կամ ցոփանալ», ԱԲ «ցոփ՝ լկտի ըլլալ»:

ՇԱՂՈՎ «բուռն». ունի միայն Բռ. երեմ. 242:

ՇԱՂՓ «յիմարի՝ ցնդածի խօսքեր, դատարկաբանութիւն». արմատ առանձին անգործածական, որից կազմուած է շաղփաբանութիւն «ցնդաբանութիւն» Ոսկ. յհ. ա. 23. Շնորհ. Թղթ.: Նոյն արմատի կրկնականն է՝

ՇԱՂՓԱՂՓ (ի հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «յիմար յիմար խօսող» Ոսկ. երբ. իա. «յիմարական, անմիտ» Եփր. աղ. և ծն. Պարապմ. որից շաղփաղփել «ցնդաբանել» Ոսկ. մ. ա. 2. շաղփաղփութիւն Ղկ. իդ. 11. Ոսկ. մտթ. Փարպ. շաղփաղփումն Ոսկ. յհ. ա. 32. շաղփաղփական Ոսկ. ես.:

ՆՀԲ լծ. հյ. ցոփ, զաղփաղփուն, Թրք. շագա շէլլաֆ, նիլվէ, սաֆուր սուֆուր, սալլաճմագ, սէլեէֆֆ ևն: Տէրվ. Altarm. 73 և Նախալ. 101 ը մասնիկով դափ արմատից, որ կցում է սանս. rap, lap, յն. ὀλοφύς, լտ. lamentum, հյ. ողբ ևն բառերի հետ (տե՛ս շաղաւ-ա-շուրթ): Հիւնք. զաղփաղփուն բառից: Պատահական նմանութիւն ունի արաբ. سلفع salfa' «չարաչեզու, կուարար, պոռպռան կին» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 602):

ՇԱՃԵԼ «կեղծել, անգիտանալ, չիմանալ ձևացնել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սոկր. 613. «Իսկ Թագաւորին Պարսից ծանուցեալ զանցսն, շաճէր ոչ գիտել զեղեալսն». (յն. բնագիրն ունի προσποιεῖται բայը προσποιέω «կեղծել». տե՛ս Socr. eccles. hist. էջ 302. հմմտ. նաև փ. Սոկր. սրա համապատասխան հատուածը. Ձայս լուեալ զանցս աղետիցն Թագաւորին Պարսից... անգիտանայր որպէս ոչ գիտելով զեղեալսն):

Նորագիւտ բառս երևան հանեց Մ. Վ. Տէր-Մովսէսեան, Սոկրատի հրատարակութեան մէջ՝ անդ:

*ՇԱՄԱՄ «փոքրիկ և անուշահոտ մի տեսակ սեխ. cucumis dudaim» Մխ. առակ. Թլկր. 34:

=Արաբ. شَمّام šammām կամ شَمّامة šammāma՝ նոյն նշ. որից փոխառեալ են նաև

պրս. šamāma, քրդ. šemamuk, šimamōk, ուտ. ևս շամամ: Արաբ. բառը ծագում է شمّ šamm «հոտոտել, բուրել» արմատից և այսպէս է կոչուած իր անուշ հոտի պատճառով։—Հիւբշ. 272։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը նաև Lag. Arm. Stud. § 1675, ՀԲուս. § 2264։

ԳԻՒ.—երև. Ղրբ. Մկ. Մշ. Վն. Տփ. շամամ, Ալշ. շումամ, Մրղ. Ննխ. Շմ. Սլմ. Տիգ. շամամա, Մշ. շամամուգ, Ագլ. շա՛մում:

ՇԱՄԱՆԴԱՂ (յետնաբար ի–ա հլ. գրծ. շամանդաղաւ Սարգ. բ. պետ. բ. էջ 488 (բ. տպ.) «մէգ, մշուշ» Իմ. դ. 2. Փիլ. Նւագր. 204. Պտմ. աղէքս. 168. «մթին, նեմ» Տօնակ. «հոգ, մտատանջութիւն» Ոսկ. Հռովմ. 80. «աչքին պատած փառ» Յայսմ. մրտ. 21. որից շամանդաղութիւն Թէոդ. խշ. շամանդաղաձև Ծն. բարձր. շամանդաղատեսիլ Անան. եկեղ. շամանդաղիլ Մագ. անշամանդաղ Նար. 6. —նոր գրականում շամանդաղ առացել է «corpuscule, հիւղէ, մասնիկ» գիտական նշանակութիւնը (տե՛ս Քաջունի, Ա. 565)։

Հիւնք. թերևս պրս. سمند samand «մոխիր, մոխրագոյն» բառից՝ -աղ մասնիկով. (այս նշանակութիւնը սխալ է, պրս. samand նշանակում է «ձի, մոխրագոյն ձի»)։

Շամանդրիդ տե՛ս Արքիմանդրիտ։

ՇԱՄԲ (յետնաբար ի հլ.) «եղեգնուտ տեղ» Եւս. քր. Խոր. Նար. Վրք. Հց. Վրդ. առկ. 193. որից շամբակ «փոքրիկ եղէգնուտ» Վրք. Հց. բ. 167. շամբուտ Պիտ. կամ շամբոտ Մարբին. եղեգնաշամբ Շնորհ. վիպ.։

Հիւնք. ամպ բառից։ Patrubány IF 14, 56 սանս. šamya, զնդ. simā, յն. κάμαξ «եղէգ, գաւազան»։ Lidén IF 44, 191 իսլ. hvǫnn «angélique բոյսը», լտ. combretum և լիթ. szveñdrai. Պատահական նմանութիւն ունի ասուր. šamu, šammu «բոյս, խոտ, տունկ» (Muss-Arnolt, Ass. Handwb. 1050):

ԳԻՒ.—Մշ. Զղ. շամբ, Ղրբ. շումբ, Կր. շամփ, Ագլ. շումբ (վերջին երկուսը իրր յատուկ անուն)։

ՓՈՒ.—Վրաց. შამბი շամբի, შამბნარი շամբնարի «շամբ, եղէգնուտ», მოშამბნარე մոշամբնարե «շամբերում բնակող գազան». Բրք. գւռ. Ղրբ. šam «եղէգնուտ». յայտնի առած է «Դօնգուզուն մեյլի շամդա իդի, ի՛թդա վուրդը շամա սալդը—Խոզի միտքն էր դէպի շամբը, Շունն էլ տուեց քշից շամբը» (այսինքն Ուզածը յանակնկալս կատարուեց)։

[ՇԱՄԲԱՐ, մէկ անգամ գործածուած է Ս. Բարսղի հարցմանց մեկնութեանց մէջ՝ ըստ ՀԲուս. § 2267. «Խարն, շամբարն, դամոնն, հլիլայքն ևն»։ ՀԲուս. համարում է առանձին բոյս. ըստ իս նախորդի հետ միասին կարդալով՝ պէտք է հասկանալ խիարշամբար «կասիա», որ տե՛ս առանձին։]

*ՇԱՄԲՈՒՇ «խելագար, խենթ, անմիտ. 2. կատաղի, մոլեգնած. 3. ցանկասէր, վավաշոտ» Փիլ. նխ. 10. Պիտ. Պրպմ. 234. 3Հ. իմ. երև. գրուած նաև շամուշ Ուխտ. բ. 113. որից շամշիլ «խենթենալ, դժուիլ» Ոսկ. մ. դ. 3. կնիք հաւ. էջ 278. «մոլեգնիլ, կատաղիլ» Եւս. քր. ա. 210. «անառակիլ, շաղաշարիլ» Ոսկ. ա. թես. բ. 454. շամբշիլ Սարգ. յկ. զ. յորդ. շամբշագոյն Փիլ. այլաբ. շամբշանիլ Ոսկ. մ. բ. 26. շամշանիլ Ճառընտ. շամբշաբանել Ճառընտ.=շամշաբանել Վրք. և վկ. ա. 367. շամբշաբար Պիտ. շամբշական կամ շամշական Ճառընտ. շամբշութիւն կամ շամշութիւն Փիլ. Խոր. ևն։

=Իրանեան փոխառութիւն է. բարդուած է շամբ+ուշ բառերից. առաջինն է իրան. šam «խելագար» (հմմտ. պրս. شم šam «խելացնոր, յիմարած, խենթ», شمیدن šamīdan «ուշաթափիլ, երկնչիլ», oشمیده šamida «խենթ, մտացնոր, ուշաթափեալ»), երկրորդը ուշ< զնդ. uši, պհլ. hōš «խելք, միտք», որի վրայ տե՛ս առանձին։ Ըստ այսմ մեր բառի բուն ձևն է շամուշ (որից շամշիլ, շամշանիլ ևն) և թարմատար բ-ի յաւելումով՝ շամբուշ:—Հիւբշ. 210։

ՆՀԲ լծ. հյ. ուշ, որպէս շամբ յերերի, և իտալ. scempio, sempio, Բրք. սէրսէմ, սէֆիճ: ՓՒ մեկնում է «որոյ ուշն է միայն դիմել ի շամբուտ վայրս»։ Ուղիղ մեկնեց Lag, Arm. Stud. § 1676։ Հիւնք. շամբ-ից։ Պատահական նմանութիւն ունի քրդ. šambəš «աքացող», որ ծագում է čamūš ձևից։

ՇԱՄԿԱԿԱՆ *«հանապազ». ունի միայն Բառ. երեմ. էջ 243։*

***ՇԱՄՂԻՏԱԿ** «մի տեսակ ծաղիկ» (յիշուած է յաւմիկի, նարկէսի և մանիշակի հետ) Ագաթ.* (symphytum asperrimum Sims. *ըստ Տիրացուեան,* Contributo, § 371):

=Պհլ. փոխառութիւն. հմմտ. պհլ. ծաղ šamblīt *(գործածուած է* Bundeheš-*ում), պրս.* شنبلید šanbalīd *«ծաղիկ իմն դեղնագոյն, որ ըստ ձևոյն և ըստ հոտոյն նման է ծաղկան թուրնջի և հիէ հոտոտիցի, փարատէ զգլխացաւութիւնն» (գործածել է Ֆիրդուսին, և համարւում է «սորնջան,* Herbstzeitlose», *որ է ըստ* Ашенковъ-*ի բուսարանական բառարանի, էջ 104 լտ.* colchicum autumnale L, *ըստ դեղագործների* crocus pratensis, *ֆրանս.* colchique, tue-chien, mort-chien, veilleuse, safran des prés, safran bâtard, *անգլ.* tuberoot, *ռուս.* безвременница *են). աւում է նաև պրս.* شنبلیت šanbalīt, شملید šamlīd. *ունինք նաև* شنبلیدة šanbalīda *«բուրումն ազդի ազդի ծաղկանց»։ Պրս. բառի յետին հյ. ձևն է* շարալուք, *որ տե՛ս առանձին։ Այլ է պրս.* شنبلیل šanbalīl, *որի վրայ տե՛ս* բաղեղն *բառի տակ։—Իրանեան բառի արաբ. տառադարձութիւնն է* ζιμβιλικέ *(ըստ Նորայր ՀԱ. 1924, 71), որ ներկայացնում է պհլ.* *šamlīdag *ձևը։*

ՀԲուս. § 2268 յիշում է շամղիտակ, շամպղիտակ *ձևերով, ըստ Շէհրիմանեանի դնում է «լտ.* symphytum» *և թուում է կցել արաբ.* سمغوطن samγūṭan *հոմանիշին։ Բժշկարանները այս արաբ. բառը կարդացել են* սամղուտան, սամղրատան։ *Տարակոյս չկայ թէ մեր բառի արաբերէնի հետ նմանութիւնը բոլորովին պատահական է և* ղ=γ *ձայների պատճառով մերժելի։ Երևակայական է նոյնպէս* շամղիտակ-*ին տրուած «*symphytum» *նշանակութիւնը, որ հնթադրել է Շահրիմանեան՝ արաբ բառի ձայնական դոյզն նմանութեան պատճառաւ։ Վերի ձևով մեկնեց* Stackelberg WZKM *15 (1901), էջ 382. որից անտեղեակ նոյնը անկախաբար Աճառ. Արրա. 1910, 179։*

ՇԱՄՇՏ-ՈՒԹԻՆ *«չորրորդապետութիւն» Նւս. պտմ. էջ 50, 84, 96. որից հնթադրուած է ըստ Հին բռ. շամշպետ. «չորրորդապետ»։*

ՆՀԲ բրք. սէմք *«կողմ» կամ յն.* ի՛միսիս, *լտ.* սէ՛միս *«կէս, կիսեալ»։ Հիմնք Պարսից.* Šamšīd *թագաւորի անունից։*

***ՇԱՄՍ** «արեգակ» Դամասկ. Կոստ. երզն. էջ 180. գրուած ըլմս երզն. երկն. է։*

=Արաբ. شمس šams *«արեգակ»։— Հիւբշ. 265։*

Ըստ ՀՀԲ և ՋԲ բառ պրս!

ՇԱՄՐԱՇ *«շատ պայծառ գոյնով մի ծաղիկ, որ ծաղիկների անդրանիկն է կոչւում» Տաղ. տե՛ս շումրայ։*

***ՇԱՄՓՈՒՐ** (յետնաբար ո, ի–ա հլ.) «երկաթեայ կամ փայտեայ սուր ձողիկ. խորոված ծի շիշ». Նորագիւտ Ա. մնաց. իր. 17. Բ մնաց. դ. 11. Խոր. Մամիկ. Ճառընտ. Յայտմ. Տաղ. (գրուած է նաև* շափուր). *որից* շամփրել *«շիշը անց կացնել» Խոր. ա. 28. Կաղնկտ. —*շամփուր *նշանակում է նաև «*Orion *կամ Հայկ համաստեղութիւնը». հմմտ. էֆիմ. 109. «Յունիսի 14, երևի Հայկն, որ է Շամփուրն»։*

=Ասոր. ܫܦܘܕܐ šappūdā *«անթրոց, հացագործի երկաթեայ ձողը՝ կրակ խառնելու համար», որի հետ նոյն է արաբ.* سفّود saffūd *«միս խորովելու շամփուր», որից և* تسفید tasfīd *«միսը խորովելու համար շամփուրի վրայ անցունելով շարել» (Կամուս. Բրք. Բրմ. Ա. 624)։—Հիւբշ. 313։*

Lag. Hagiogr. chald. 298 *երբ.* ממפור sampūr? *ձևի հետ, որ Հիւբշ. Սեմակ. փոխ. բառեր (Բրմ. Տաշեան, էջ 35) մերժում է, որովհետև միայն մի անգամ է գործածուած Թարգումի մէջ և դժուարաւ է սեմական. նշանակութիւնն էլ մութ է, բայց յամենայն դէպս «շամփուր» չէ։ Հիմնք. շամբ բառից։*

ԳԻՒ.—Ագլ. Գոր. երև. Ղրբ. Ջղ. Սչ. Տփ. շամփուր, *Խրբ.* շամբ'ուռ, *Շմ.* շանփուր, *ՋԲ.* շամփույ, շամփուր, *Հճ.* շամփույ, *Սվեդ.* շումբ'էօռ.*—Նոր բառեր են* շամփրաճար, շամփուր-կշիռ *«Հայկ աստեղատունը»։—Էնկիւրիի Բրքախօս հայերն էլ ունին* շամփուր *«շիշ» (Բիւր. 1895, 865)։*

ՓՈՒ.—Վրաց. შამფური շամփուրի *կամ*

Յամփուրճամփուրի «շամփուր», լազ. մինգ. šampuri «շամփուր, նիզակ», սվան. šamfvir «շամփուր»։ Erckert, Die spr. d. Kauk. Stam. 77 կովկասեաններից փոխառեալ է դնում նաև ռուս. šompuli «հրացանի մէջ վառօդ և շորի կտորտանք լցնելու ձող». (այս իմաստը գտնում ենք և Ղարաբաղի բարբառում)։—Վիսառն եղբայրները (Բրգմ. Խոր. էջ 72) հյ. շամփուր ձևի հետ նոյն են դնում յն. σαμψύρα «թագաւորական գայիսոն՝ արեգակի պատկերով» (Յովսեպոս 20, 2)։

ՇԱՄՓՐԱԿ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «թագ, պսակ». մէկ անգամ ունի Եւագր. 125. «Ոչ վայելէ անղգամի գիտութիւն և քար անարգոսկի շամփրակի»։ Այս կտորը մեկնելով Լծ. եւագր. գրում է «Թագ է շամփրակն. տգետ քար ի շամփրակն չէ՛ զարդ»։ Այսպէս նաև Վանակ. յուրախ. մեկնելով «Ուրախացիր, պսակ կուսից» շարականը, ասում է. «Պսակդ այլ լեզուաւ շամփրակ ասի և է՛ զի յաղթանակ ի հանդիսի մրցման» (այսինքն թէ շամփրակ նշանակում է «պսակ կամ մրցանակ»).—Սամն. էջ 14 ներգ. հոլով ի շամփրակի՝ լուսանցքում մեկնուած «պսակ».—Բառ. երեմ. էջ 243 և 245 ունի շամփրակ և շափրակ «պսակ կամ զարդ», որից շափրակազգեաց «պսակաւոր» Մագ. դամագտ. (ՀԱ 1911, 721)։

Միթրան (անձնական) մեկնում է «թագի քորոց» (արևելեան տարազով) և ըստ այսմ հանում է շամփուր բառից։ Մէնէվիշեան, ՀԱ 1911, 721 պրս. šāhpar «մեծ փետուր»?

ՇԱՅԵԿԱՆ «օդտակար, պիտանի, լաւ» Երր. գ. 7. Յեփ. Իսիւք. կամ շաւեկան Վեցօր. Սարկ. աղօթ. Շնորհ. որից շայեկաւութիւն Վեցօր. Ճառընտ. Պիտ. Մաշտ. կամ շաւեկաւութիւն Պիտ. Սկևռ. Մաշտ. Երզն. մտթ. շաւեկանագոյն Ոսկ. յհ. բ. 30. շաւեկանացու Մծբ. շայեկանացնել Պիտ.։

=կազմուած է շահ բառից՝ –ական մասնիկով (Համմտ. պատուական)։ Այսպէս բնդունելու առ երևոյթս հակառակ են հետևեալ պարագաները. 1. Հ-ի փոխարէն յ ձայնը՝ որ աւելի սովորական է երևում և յատկապէս գտնւում է բառիս հնագոյն վկայութեան մէջ՝ Երր. գ. 7։—2. Իբր յօդակապ դրուած ե ձայնաւորը՝ փոխանակ ա, ինչպէս ունինք շահական, շահականացու Մծբ.։—3. Բառս ո՛չ այնքան «շահաւէտ» նշանակութիւնն ունի, ինչպէս պէտք էր, որքան բաւական տարբեր իմաստներ. օր. Երր. գ. 7 «Մբնանիցի արդիւնս շայեկանաս» հատուածում դրուած է յն. εὔθετον «յարմար, պատշաճ» բառի դէմ. միւս վկայութեանց մէջ գործածուած է ամպի, անձրևի, պտուղների, բոյսերի համար ևն (տե՛ս ՆՀԲ)։ Այս պատճառներից դրդուած՝ ոմանք բառս համեմատում են պհլ. šāyakān, պրս. شایکان šāyagan, šāygān «յարմար, պատշաճ, բազում, առատ, ընդարձակ (յատկապես գանձի համար ասուած)» ձևերի հետ (Համմտ. տակը) և իրանեանից փոխառութիւն են դնում։ Բայց այս նմանութիւնը պատահական է և հայ բառը կապ չունի իրանեան ձևերի հետ։ Հակառակ պատճառաբանութիւնները կվերանան, երբ նկատենք թէ՝ 1. յ ձայնի փոխանակութիւնը դտնում ենք նաև շայել<շահել ձևի մէջ. 2. և յօդակապը այնու ամենայնիւ իրանական ձևերով էլ չի կարող մեկնուիլ. (ընդհակառակը պէտք է կարծել թէ աւելի բանաւոր է մեկնել շահ բառով, ենթադրելով թէ սրա հնագոյն ձևը եղել է ուղ. *շահի, որից ստացուել է *շահիական>շահեկան, ճիշտ ինչպէս ունինք վաղ (հնագոյնը *վաղի) ձևից՝ վաղեմի (իբր *վաղիամի). 3. նշանակութեան զարգացումը գուտ հայկական է, որ գտնում ենք նաև շահաւոր, շահաւէտ, մանաւանդ անշահ «յոռի, գէշ» բառերի մէջ (Համմտ. գւռ. անշահ տանձ, խնձոր ևն). 4. իրանեան բառերը գալիս են šāh «թագաւոր» բառից, նշանակում են «թագաւորական» և էապէս համաձայն չեն մեր շայեկան բառի նշանակութիւնների հետ։—Հիւրշ. 209։

ՆՀԲ պրս. šāyasta «պիտանի, արժանի» ձևից։ Lag. Arm. Stud. § 1665 պրս. šāyagān, šāygān, šahagān «առատ» են։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. էջ 205 և Հիւնք. հյ. շայեկան թարգմանում են «առատ» և կցում են պրս. šāygān «յոլով, առատ» ձևին։ Մերժում է Հիւրշ. 209։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 295

հիմնւում է յատկապէս Պարսից Բահրամ-Գոռ թագաւորի նշանաւոր ganj-i šāykān *կոչուած առասպելական գանձարանի և պահլաւական գրականութեան մէջ այս անունով յայտնի մատենիկի վրայ։*

ՇԱՆԴԱԿԻԿ *«մեծ տերեփուկ, լտ.* centaurum» *Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 2272։*

[**ՇԱՆԴԱՄ** *«Սիդոնացոց պաշտամունքին արժանացած մի առարկայ». մէկ անգամ ունի Յայսմ. մայ. 2 (էջ 714 բ). «Եւ զոհէին Բահադու պատկերի կնոջ և Աստարտայ գարշելոյն և շանդամիցն, զոր պաշտէին Սիդոնացիքն». հմմտ. այլուր՝ Աստարտայն երկիրպագանէին և Քամովսայ գարշելոյն և Աստղկանն պատկերի. Սարգ. բ. պետ. գ. (բ տպ. էջ 434, ա տպ. 554)։—Պէտք է կարդալ իշանդամ, տես. իշանդամիցն։*]

ՇԱՆԲ, ի հլ. *(գրուած նաև շանդ) «կայծակ» Յոբ. լբ. 35. Եւս. քր. «երկնաւոր կրակ» Նար. յովէդ. «կրակի կայծ և ատրաշէկ երկաթ» Յոբ. խա. 10. Զքր. կթ. «մետաղի ձոյլ և սրանից* $^3/_5$ *քանքարի ծանրութիւն» Եփր. թգ. 425. Սիրաք. խբ. 18. «հրավառ տաք» Վստկ. 186. որից* շանբի *կամ* շանդի *«կայծակ» Շիր. էջ 44, 47, Փիլ. Նիւս. բն.* շանբաեար *Խոր.* շանբրնկէց *Ոսկ. հռ.* շանբեռանդն *Մծբ. էջ 296,* շանբիք *Կոչ. էջ 98 (այս երկուսի մասին տե՛ս ՀԱ. 1913, 345—6).* շանբակեաց *(ուղղելի* շանբրնկէց *կամ* շանբակէզ*) Ոսկ. ա. տիմ. ժե.—Նոր բառեր են* շանբառաք, շանբարգել, շանբաեարել։

Նշբ լծ. լտ. scintilla *«կայծ» (նոյնը նաև* Canini, Et. étym. 222)։ *Տէրվ.* Altarm. *29 և Նախալ. 111 առնս.* čand. čaniççand *«փայլիլ»,* čandana *«լուսին», յն.* κάνδαρος *«ածուխ»,* ξανθός *«շէկ, խարտեաշ», լտ.* in-cendo, candere, candela *են բառերի հետ՝ հնխ.* skad, skand *«վառիլ» արմատից։ Նոյն համեմատութիւնը անկախաբար տալիս է* Bugge KZ 32, 57 *և* IF 1, 441: *Հիւբշ. 479 սրանց հետ յիշում է նաև լտ.* scintilla *«կայծ», բայց բոլորն էլ անապահով է համարում։ Հիւնք. շնթել բայից։* Jensen, Hitt. u. Arm. *118, 153, ՀԱ. 1904, 184 Հաթիան* Sanda *(յն. տառադարձութեամբ* Σανδα*) «Օդի, մանաւանդ կայծակի աստուած»։ (Նոյնը կրկնում է* Roth *ՀԱ. 1927, 744. գրելով* šantaš*)։ Վերջին անգամ* Walde *121 (որից նաև* Boisacq 405, Pokorny 1, 352*) յիշում են* Bugge*-ի մեկնութիւնը և անապահով են գտնում, որովհետև ո՛չ միայն նախաձայնը, այլ և վերջաձայն առանձնականը համապատասխան չեն բառիս հնխ.* sqend- *ձևի հետ։ (Ըստ իս այս արմատի հլ. համապատասխանն է խանդ՝ որ տե՛ս)։* Petersson LUÄ *1915, 3 և 1916, 47 (տե՛ս* Pokorny 1, 368*) հնխ.* k'eu- *«լուսաւորել» արմատից. հմմտ. սանս.* çoṇa- *«կարմիր», գնդ.* sūrəm *«առաւօտը կանուխ» ևն, ինչպէս և հյ. շուք, շող, նշոյլ։ Պատահական նրմանութիւն ունին լիթ.* šuntù, šuta, šùsti, *լեթթ.* sùtu, *հբգ.* siodan, *անգսք.* séoþan, *մբգ.* sôt, *որոնց հիմնական նշանակութիւնն է «եփել, շոգիով խաշել» (բալթեան նախաձևը *šuntō. Trautmann 310)։ Պատահական է նաև չին.* 𠀧 šan³ *«կայծակ, շանթ»։*

Դիմ.—Հճ. շանթել *«դևերի հարուածելը», երև.* շա՛նթէլ, *Ագլ.* շա՛նթիլ *«խայթել, կսկծացնել», Շլ.* շա՛նթէլ *«այրել, խարել»։*

Փոխ.—Վրաց. შანთი შანթի *«ատրաշէկ երկաթ»,* დაშანთვა დաշանթվա *«դրոշմել, դամղա զարնել»։*

***ՇԱՆԿԻԱՐ**, *որ և* շնկիար, շինկխար, շանեար, շինեար *«մի տեսակ բոյս, լտ.* anchusa*» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2277։ =Պրս.* شنكار šangar, *նոր հնչումով* šengʸār, *որից արաբացեալ* سنجار sanjār *«խոտ ինչ՝ որոյ տերևն է սեաւ և արմատն աստուար... որ և ասի* havajuva*»։—Աճ.*

Դիմ.—Զթ. շինգիոր։

Շանկղկիլ *տե՛ս* Շնկղկիլ։

ՇԱՆՑՆԵԼ *«հարստութիւնը մսխել, վատնել». նորագիւտ մհյ. բառ, որ մէկ անգամ գործածում է Անսիգք 45. «Եւ թէ այրիկն (=էրիկը, ամուսինը) շանցնել լինի զպատյգքրն»։*

⊙ՇԱՉԵԼ *«կաւրի, զէնքի, սողունների ձայն», երեմ. խէ. 3. Եւս պտմ. 371. որից*

շաշիւն *ՍԳր.* շաշումն *Փիլ. Բրբ. արբից. արմատական շաշ ձևով՝ Պատմ. ըստ Լեհ.*։

=*Ինաձայն բառ. կազմուած է շ ձայնից շ ածանցիչով. արմատի համար հմմտ.* շառաշել, շշել, շշուկ, *իսկ ձևի համար հմմտ.* բաշել, բաշել, ճաշել։—*Աճ.*

Հիւնք. հանում է շշել բայից՝ վկրի մեկնութիւնս տես ՀԱ 1899, էջ 203 բ։

ՇԱՊԱՀ «մի տեսակ փշոտ բոյս. rhamnus paliurus» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3376։*

=*Արաբ.* شبه šabah, *որ ըստ ասորոց հնչւում է* شباهی šabāhī՝ *նոյն նշ.։*

Այսպէս է մեկնում ՀԲուս.՝ առնելով Պէյթարիից։

ՇԱՊԻԿ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «մսի վրայից հագնելու կտաւեայ բարակ հագուստ» Մոթ. ե. 40. Ղուկ. գ. 29. «դրսից հագնելու վերարկու, պատմուճան» Սփր. ծն. էջ 103. յետնաբար նաև «դպիրների և սարկաւագների բարակ վերարկուն՝ որ արարողութեան ժամանակ են կրում». որից շապկել «պատել, ծածկել, շրջապատել» Մարթին. շապկիկ Քուչ. 55 (չունի ԱԲ). նաև գրուած է շաբիկ, շապիւ Պտրգ. էջ 476, 620։

=*Պհլ.* 𐭮𐭠𐭯𐭩𐭪 šapīk «նուիրական շապիկ գրադաշտականաց», որից šapīkīh «նուիրական շապիկը հագնելու արարողութիւնը». պրս. شبی šabī «դիշերային, դիշերազգեստ», բելուճ. šapīg «դիշերային», սեմնանի ševī «շապիկ». այս բառերը ծագում են զնդ. 𐬵𐬀𐬎𐬀 xšapa=պհլ. 𐭮𐭠𐭯 šap=պրս. شب šab «դիշեր» բառից։ Պարսկականից է փոխառնալ նաև (ըստ Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 410) արաբ. سبیج sabīj կամ دسبیج sabīja «առանց օձիքի արաբական շապիկ, սև աբա կամ սև կապերտ»։ Ըստ այսմ շապիկ բուն նշանակում է «դիշերային (զգեստ)»։—*Հիւբշ. 211։*

ՆՀԲ լծ. լտ. subucula «շապիկ»։ Lag. Btrg. baktr. Lex. 42 *պրս.* šabī։ *Տէրվ. Նախալ. 111 սանս.* kšapa, *զնդ.* xšapa, *պրս.* šab «դիշեր», *յն.* σκέπω և *հյ.* խափ, խափանել, խափնուլ, խուփ *ձևերի հետ հնխ.* skap «ծածկել, փակել» արմատից։ *Հիւնք. և Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրաբակ. 205 պրս.* շէպի։ *Էսգէթ. Արրտ. 1915, 784 պրս.* šabik «դիշերային» *կամ արաբ.* شابك šābik «փաթաթուղ»։

ԳԻՒ.—Սլմ. շապիկ[1], *Շմ.* շոպիգ[1] *(հկեղեցու), Ախց. Կր. Զղ.* շապիֆ, *Մկ. Վն.* շապիֆ[1] *(սեռ.* շապկի*), Ագլ.* շա՛փիկ[1], *Ալշ. Համշ. Մշ. Սչ.* շարիգ, *Տիգ.* շոբիգ, *Սրև. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տփ.* շաբիֆ, *Հճ.* շոբիֆ, *Խրբ.* շաբիֆ[1] *(սեռ.* շաբգի*), Մրզ.* շապըիկ[1], *Զթ.* շաբըֆ, *Ասլ.* շէրիգ, շէրի*, *Սվեդ.* շոբոմֆ *(վերջիններիս մէջ* f *ձայնը յառաջացել է վաւոիֆ բառի նմանութեամբ)։ Նոր բառեր են* շապկընկեր, շապկացու, շապկաւաճառ, շապկաճց, շապկաւիճ, շապկիկ։

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ պէտք է լինի քրդ. šapək «բաճկոն» *(Շուռա, Քրդերը Տաճկաց—Հայաստ. Ա. 129)։*

Շապլեղ *տե՛ս Շիպ։*

ՇԱՊՍՏԱՆ ՏԱԿԱՒԱՊԵՏ. երեք անգամ ունի Բուզ. Դ. խզ. իբր պարսիկ մի զօրավարի տիտղոսը։

=*Պհլ.* *šapastān-takārpat «արքայական ննջասենեակի կամ կանանոցի մատուռակ». բարդուած է պհլ.* šapastān «սենեակ գաղտնի խորհրդակցութեան, գաղտնի խորհրդակցութիւն», *բայց անշուշտ նաև «ննջասենեակ, կանանոց», ինչպէս ունինք պրս.* شبستان šabistān «1. *անկողին. 2. տեղի ուր լինի ընկերակցութիւն ի դիշերի. 3. առանձին տեղի կայից կանանց ի տան կամ առագաստ հարսին. 4. յատուկ տեղի առանձնութեան արքայից. նաև վայրն այն՝ ուր աղօթէ և պաղատի արքայ առ Տէր ի դիշերի» (արմատն է* 𐭮𐭠𐭯 šap=*պրս.* شب šab «*դիշեր*»—stān *մասնիկով) և պհլ.* *takārpat *բառերից. վերջիններս վրայ տե՛ս* տակառապետ։—*Հիւբշ. 211?*

Պատկ. Матер. II *23 շապստան կգայ պրս.* šabistān *բառին։ Հիւբշ. 211 մեկնելով բառս «գաղտնի խորհրդարանի մատակարար», անհաւանական է գրտնում այս գաղափարը։ Վերի ձևով մեկնից բառս* Marquart, *Բրգմ. ՀԱ 1897, 6։* Justi, Iran. Namenbuch *320 բառի երկրորդ մասը ուղղում է* տաճարապետ։

ՇԱՊՐԵԼ «յորդորել». ունի միայն Բառ. երեմ. էջ 243։ Տե՛ս յաջորդը։

ՇԱՊՐՈՒՄՆ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Փիլ. լին. 102. «Մեծն արդարև ջրհեղեղ սա է, և մտաց հոսանաց բացելոց անզգամութեամբք, շապրմամբք, անյագ ցանկութեամբք (ընչից), անիրաւութեամբք ...և մարմնոյն աղբերց բացելոց հեշտ ցանկութեամբք»։

Լծ. փիլ. մեկնում է «շապրմամբք, այսինքն յիմարութեամբք»։ Հին բռ. «պարպատիլ ընդերօք», Բռ. երեմ. էջ 243 «պարպատիլ ընդերօք կամ զարդասիրութիւն»։ ՆՀԲ «շամբշութիւն կամ որպէս ոմկ. շարուր շուրուր ուտելն, խճողելն զորովայն... մարթ է իմանալ և ապռումն, շոպրումն, շորթումն, յափըշտակութիւն», ՋՔ «խճողելն զորովայն», ԱՔ «ուտելով ակռիւը, ցոփանալը, շամբշիլը»։

*ՇԱՒ «ամբոխ, խռովութիւն». մէկ անգամ յիշում է Վրդն. եւ. կաշառ բառի առուգաբանութեան մէջ. «կաշառն... առուգաբանի «կայ շառ», որ է ամբոխ և խռովութիւն»։ Սրանից են նաև շառագլուխ և շառամայր «գլխաւոր խռովարար». (Իբրև մեռաւ Սերվիլոսն այն շառագլուխ, դադարեաց ամենայն խռովութիւնն. Գլխաւորք և շառամայրք մարտին). Մարթին։

=Արաբ. شَرّ šarr «չարութիւն, չարիք, չար», որ նաև «կռիւ, խռովութիւն» իմաստն է առած յատկապէս Արևելքում. այսպէս՝ քրդ. šer, զազա šiér «պատերազմ, կռիւ, սպանութիւն», šer kirin «մարտնչել» (Justi, Dict, Kurde 255), հյ. գւռ. ջան «փորձանք, աղէտ, ամբաստանութիւն, զրպարտութիւն»։ — Գւռ. շառաւ ՆԲ. Սր. «կուարար»։

ՆՀԲ «իբր թրք. qarγaša. Թող զի և արաբ. շէրր կամ շէռ «չար, չարք», շառագլուխ «շառագունեալ գլխով, արիւնռուշտ կամ գլուխ խռովութեան, չարագլուխ», շառամայր «իբր զօրագլուխ, ի sar «գլուխ»։

ՇԱՒ «ոտքի կապ». նորագիւտ բառ, որ հնթադրել է տալիս Վրդն. եւ. կաշառ բառի առուգաբանութեան մէջ. «Կաշառն ո՛չ միայն կոյր առնէ, այլ և զկեանս քաղէ. և առուգաբանի՝ կայ շառ, որ է ամբոխ և խռովութիւն և շարաւանդ ոտից»։ Պէտք է անշուշտ կցել շարաւանդ բառի հետ։

ՆՀԲ համեմատում է ձար բառի հետ։ Վերի ձևով է մեկնում Աճառ. Արրտ. 1910, 179։

ՇԱՒ «մուխ կարմիր, արիւնագոյն շէկ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են շառագոյն Ծն. իե. 25. Փիլ. Ոսկ. զկ. շառագունիլ Եփր. Թգ. 356. Փիլ. Նիւս. բն. շառագունանիլ Պիտ. շառագունացուցանել Նիւս. կազմ. շառագունութիւն ՅՀ. կթ. շառագեղ? Պիտ. շառաւ «Թուխ կարմրագոյն (ձի)», ֆրանս. bai (իբր նոր բառ, Նորայր, Բառ .ֆր. 121 ա)։

ՆՀԲ լծ. ոմկ. շիրա «քաղցու», պրս. surxak «կարմրագոյն», թրք. sarə «գեղին» և լտ. cruor «արիւն»։ Canini, Et. étym. 123 սանս. çara «գեղին», 187 խպտ. shari «կարմիր», հբր. shered «կարմիր մատիտ»։

ՇԱՒԱՅԼ «ճառագայթ, շող, շառափղ լուսոյ». մէկ անգամ ունի Եփր. ծն. էջ 5. «Զի լոյսն շառայլք ինչ էին իբր ի հասատատութենէ ընչէ»։

⊙ՇԱՒԱՆԶ «շառաչ», որից շառաչել՝ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Լմբ. ժբ. մարգ. էջ 107 (յովել. բ. 5). Շաչելով և շառանչելով թևոց և առամանց։

=Բնաձայն բառ. մեկնութիւնը տե՛ս շառաչ։—Աճ.

ՇԱՒԱՇԻԿ «աղի մեծ կտոր», մեկ անգամ ունի Ագաթ. (որից առնում են և ուրիշները. այլ ձեռ. շառաշեղ)։

⊙ՇԱՒԱՂ «կառքի, զէնքի, անձրևի, քարերի են ուժեղ ձայն. գործածական է նոր գրականում. այս արմատից են՝ շառաչել երեմ. խէ. 3. Ոսկ. յհ. ա. 28 և մ. ա. 4. շառաչիւն, շառաչումն ՍԳր. շառաչուկ Սիրեր. 158. Ոսկ մ. ա. 4. շառաչեցուցանել Մեսր. կր.։

=Բնաձայն բառ. կազմուած է շ ձայնից՝ ո զօրացուցիչով և չ ածանցիչով. ձևի համար համմտ. բառաչել, բառաչել, կառաչել, ճառաչել, իսկ արմատի համար համմտ. ըշել, շաշել,

շղուկ ևն։ Նոյն արմատից և յաւելումով ծագում է շառաձել։—Աճ.

ՆՀՒ և Հինք. դնում են շաչել բայից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 204 աւ։

Շառատ տե՛ս Շառ։

ՇԱՌԱԻԻԼ, ի–ա հլ. (որ և շառաւեղ) «ընձիւղ, բողբոջ, ծիլ. 2. զաւակ, սերունդ» ՍԳր. «մարմնի մասեր» Վանակ. յոբ. Նիւս կազմ. «շող, ճառագայթ, կայծ» Եփր. ծն. քս. 26. Նար. Պիտառ. Ոսկ. յհ. ա. 17. որից շառաւիղաւորմառ Կիւրղ. խչ. շառաւիղել Նար. շառաւիղուղէք ճառընտ. բազմաշառաւիղ Վրդն. յանթ. շառաւեղիճաշնորհ Նար. տաղ. այս բոլորի մէջ էլ սղման օրէնքը չէ գործադրուած. Նոյնպէս և հոլովուած ժամանակ, ինչպէս՝ շառաւիղաց, շառաւիղօք Վեցօր. 97 ևն։

ՆՀՒ լծ. լտ. surculus «ընձիւղ» և վրաց. շառավա՛ნդի։ Հինք. շաւիղ բառից։—Վրաց. ունինք შარავანდი շարավանդի, შარავანდედი շարավանդեդի «արքայական պսակ, թագաւորութիւն» Օր. իր, 25, შარავანდედი շարավանդեդի «ճառագայթ», გაშარავანდება գաշարավանդեբա «պայծառ փայլուն լոյս արձակել», որոնք կարող են մեր շառաւիղ «ճառագայթ» բառի հետ համեմատուիլ, եթէ ա՛յս է մեր բառի հիմնական իմաստը և ո՛չ թէ «բողբոջ, ծիլ». այս պարագային հայերէնում կլինի –իղ մասնիկ, ինչպէս և վրացերէնում –անդի. երկուսի էլ արմատն է *շառաւ։

ԳԻՒ.—Ակն. շառվէխ «ընձիւղ», խրբ. շարվէղ, շէուվէղ «արևի լոյսը, ցոլքը, լոյսի անդրադարձումը, օդի շարժումը տաքութիւնից». հմմտ. նաև Պոօշեան, Յեցեր, էջ 154. Բաս էն ի՛նչ ճրագի շառաւիղ աւ։

ՇԱՌԱԻԻՆ, ն հլ. «ուղտ». մէկ անգամ ունի Ոսկ. փիլիպ. էջ 430 յգ. հյց. շառաւունս ձևով, որի դէմ միւս ձեռագիրն ունի շաւառնուս։ (ԱՒ դնում է նաև «նետ» նշանակութեամբ, բայց այս իմաստով տես շաւառն)։

Հինք. յն. σάραπος, σαράπους «տափակ և լայն ոտքեր ունեցող» բառից։

ՇԱՌԱՓ «յորդ անձրև, տեղատարափ». նոր բագիւտ բառ, որ երկու անգամ գտնում ենք գործածուած միջնադարեան հայերէնում. Հանցկուն եմ ի քո սիրուդ՝ զինչ ամպերն կաոնեն շառափ. Քուչ. 58. Կուտեցաւ առ իս շատ մեղք յայն նման որ երբ գայ շառափ. Տաղ. (Հրտ. Զօպանեան, Հայ էջեր, էջ 89)։

ԳԻՒ.—Ակն. շառափ «տեղատարափ անձրեւ»։

ՇԱՌԱՓ «լոյս, ճառագայթ, փայլ», որից շառափնաթափ «լոյս թափող», շառափնայոլով «շատ լուսաւոր», վկայութիւնը գտնում եմ այժմ Յովսիմ. 23 բ. «Ապա պատահի քեզ դաշտ մի սպիտակ իբրև զձիւն, և հոտ անուշ բուրէ ի նմանէ, անջրդի, շառափնայոլով», շառափումն «փայլիլը, ցոլալը». այս բոլորը գիտէ միայն ԱՒ (առանց վկայութեան)։

Նախ Պատկ. Matep. II. 12 և յետոյ անկախաբար Աճառ. SA 1, 303 փոխառութիւն են դնում արաբ. شَرَف šaraf «փառաւորութիւն, պերճութիւն, վեհութիւն, շուք» բառից. վկայութիւնները ձևաբի տակ չունենալով յայտնի չէ թէ իրօք շառափ «լո՞յս» թէ «պերճութիւն» պէտք է հասկանալ։ Բայց նախորդ շառափ «տեղատարափ» բառի դիւտը կասկածելի է դարձնում երկու իմաստներն էլ. թերևս այս բառն էլ պէտք է միացնել նախորդին։

ՇԱՌԱՓՆԱՏ. անատոյգ բառ. մէկ անգամ ունի Եփր. յես. «Յետ նզովածոյ անտի ձախողակի շառափնատ կապարճս դարձուցեալ փախստեայք լինէին յերեսաց բնակչացն Գեհայ.» տպ. Վենետ. հտ. Ա. էջ 312. այսպէս նաև Վիեննայի № 229 ձեռագիրը. այլ ձ. կառափնատ, որից հետևցնելով ՆՀՒ մեկնում է բառս «կառափնատ», իսկ ԱՒ «խաղք ու խաւար եղած, երեսը կախած», ինչ որ աւելի պատշաճ է։ Համապատասխան տեղը Ս. Գրքի մէջ գտնում ենք «Դարձուսցեն զպարանոցս առաջի թշնամեաց իւրեանց՝ զի եղեն ի նզովս» (Յես. է. 12), որ սակայն անծանօթ բառի միտքը չի պարզում։

Վերջին նշանակութիւնից առնելով Աճառ. SA 1, 303 բառս հասկանում է «փառազուրկ» և կցում է շառափ բառին։ Բայց այժմ կասկածելի է այս մեկնութիւնը, որովհետև շառափ «լոյս կամ

փառք» բառի գոյութիւնն էլ է կասկածելի։

ՇԱՒՆԱՋ *«վայրի նռան հունտ». Հին բռ. ունին միայն ԱՔ և ՀԲուս. § 2283։*

ՇԱՒՇԻՒ *«աքիքայ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 244. մին քան զմիւսն անծանօթ։*

***ՇԱՒՏԵԼ** *«ածելիով մարմինը ճեղքռտել՝ արիւն առնելու համար. ռմկ. հաճամաթ ընել» Վստկ. 213. գրուած է շաուտել Մխ. բժշ. 73, 75։*

=Արաբ. ب ش šarṭ նոյն նշ. բնիկ սեմական արմատ է. հմմտ. ասոր. ܫ ܪ ܛ šəraṭ «պատառոտել», ասուր. šaratu, եբր. šrṭ «պատռել, ճեղքել»։—Ա.Ճ.

ՆՀԲ շերտել կամ ջարդել բառից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 85 շերտ բառից։

ԳԻՒ.—Ալշ. շրդել «ածելիով մարմինը երեսանց կտրել» (ա՛յլ է Ալշ. Մշ. շերդել «ձմերուկը ևն շերտ շերտ կտրել»). Շմ. շարքիլ «շաուտել» (արդեօք ջարդել բառի հետ խաչաձևմա՞մբ)։

ՇԱՍԱՐ *«ազդ երկաթային գաւարդի, կարմիր և դիմահար. ֆր. sinople». ունի միայն Քաջունի, հտ. Բ. 612, հտ. Գ. 183։*

ՇԱՏ, ի հլ. *«առատ, բազում» ՍԳր. Ոսկ. բ. տիմ. ա. Փարպ. եղիշ. «ստէպ, յաճախ, շատ, խիտ» ժղ. ե. 11. Ագաթ. Ես. պտմ. Բուզ. ե. 44. որից* բնդ շատ և բնդ սակաւ *կամ* բնդ շատ և բնդ փոխր *«աւելի կամ պակաս, մօտաւորապէս» Ես. պտմ.* շատ է *«բաւական է» ՍԳր.* շատաւ *«գոհանալով, գոհ լինելով» խոսր. պտրգ.* շատ անգամ *Փարպ.* փոխր ի շատէ *ՍԳր. եղիշ.* շատանալ *«բաւականանալ» ՍԳր. «բաւիլ» Վրք. հց. «կարող լինել, ձեռնհաս գտնուիլ» Ոսկ. գծ. «շատանալ, բազմանալ» Յայսմ.* շատիլ *«բաւական համարիլ» Ոսկ. բ. կոր. Կոչ. Ես. գր.* շատախօս *Մտթ. գ. 7.* շատակեաց *Ագաթ.* շատատես *«աչքը լաւ տեսնող» Եփր. համար. 182.* շատխօսել *Ոսկ. մ. ա. 9.* շատխօսութիւն *ՍԳր. Վեցօր. Ոսկ. մ. ա. 19.* ամենաշատ *Ոսկ. ա. թես.* ճարակաշատ *Ոսկ. ես.* արիւնաշատ *Եփր. թգ. 417.* մարդաշատ *Բ. մկ. թ. 14. Ոսկ. ա. տիմ.* երիվարաշատ *Սերբր. 199.* ընչաշատ *Վեցօր. 85.* շատօրաց *«վաղուց, շատոնց» կեղծ-Շապհ. 39 (նորագիւտ բառ. տպ. շատորաց).* սատցուածաշատութիւն *Բուզ.* խորհրդաշատ *Վրդն. դան.* խոռանաշատ *Կիր. պտմ.* հրաշատ *Վրդն. ծն. (շատ բառի հին գործածութեան վրայ տե՛ս Այտնեան, Քննակ. քեր. էջ 64)։*

*=Պհլ. *šāt=պրս. *šād «շատ, առատ» ձևի՞ց. բայց այսպիսի ձև չէ աւանդուած. պրս.* شاد *šād=պհլ.* 𐭱𐭠𐭲 *šāt սովորաբար նշանակում է «ուրախ», որից պրս.* شادی *šādī=պհլ.* 𐭱𐭠𐭲𐭩𐭭 *šātīh «ուրախութիւն» = գնդ.* šāiti- *= հպրս.* šiyāti- (Horn § 767), *պրս.* شاباش *šābāš «ուրա՛խ լեր» (որից ռմկ. շաբաշ «բանիմող»)։ Ենթադրւում է սակայն որ բառս ունեցել է նաև հնագոյն «առատ» նշանակութիւնը, որից կազմուած է պրս.* شادآب *šādāb «յորդաջուր, շատաջուր»։—Հիւբշ. 212։*

Առաջին անգամ ԳԴ համեմատեց պրս. šād *«ջուր յորդ և բազում» ձևի հետ։ ՆՀԲ լծ. լտ.* sat, satis *«բաւական», հյ.* լիք, կաթն, *թրք.* süd *«կաթ», եբր.* շատ, שת *«ստին», որպէս լտ.* uber է *«ստին» և «առատ», շատիլ՝ լծ. լտ.* satior *«յագիլ»։* Müller SWAW *78, 425, 430 և 84 (1877), 229 նոյն է դնում գնդ.* šāiti, *հին պրս.* šiyāti. *վերջինս ըստ* Müller-*ի պէտք չէ թարգմանել «ուրախ», այլ Համաձայն հայերէնի «առատ»։ Վերի ձևով մեկնից* Lag. Arm. Stud. *§ 1681։ Մորթման* ZDMG *26, 541, 578 և 31, 413 բևեռ.* šida, šadai *«բազում, շատ»։ Հիւնք. շատ «բազում»=պրս.* šād *«ուրախ»,* sad *«հարիւր, բազում», յն.* ἑκατόν *«հարիւր, բազում»,* σάττω *«լնուլ, լցուցանել», իսկ* շատ *«բաւական»=լտ.* sat, satis.—Patrubány *ՀՄ 1907, 305 հնխ.* k´uo *«ուռչիլ» արմատից, որի վրայ տես* աճիլ։ *Էտգեթ, Արրտ. 1915, 785*

արաբ. شدّ šadd *«սաստկութիւն»։*

ԳԻՒ.—Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. շատ, *Ալշ. Ակն. Խրբ. Համշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* շաղ, *Ասլ.* շադ, շա*, *Տիգ.* շոդ, *Ագլ.* շօտ, *ԶՔ.* շօդ, շոդ, *Հճ.* շօդ, *Սվեդ.* շիւդ, *Մղ.* շէտ։ *Նոր բառեր*

են շատաղատ, շատագրոյց, շատաճոց, շատախաչ, շատածին, շատարար, շատարարել, շատկեկ, շատուր, շատոնց:

Փոխ.—Ուտ. šadara *«շատարար, մեծ ծակերով մաղ»:*

ՇԱՏ *«ուրախ» Կոստ. երգն. 141. Ջի է խնդման օր և շատի:*

=*Պրս.* شاد šād *«ուրախ» բառից, որի վրայ ընդարձակ տես նախորդը և յաջորդը:*

Ուղիղ մեկնեց Պատուրեան, Կոստ. երգն. 141:

***ՇԱՏ** *«քաղաք», արմատ առանձին անգործածական, որ գտնւում է բազմաթիւ տեղանունների ծայրին. ինչ.* Արտաշատ, Երուանդաշատ, Ջարիշատ, Շամշատ, Վասակաշատ, Վարդանաշատ *են:*

=*Պհլ.* 𐭱𐭫𐭮𐭲 šāt *«ուրախ», որ պրս.* شاد šād *«ուրախ», հպրս.* 𐎧𐎢𐎼𐎰𐎽 šiyāti-=*գնդ.* šāiti- *(<հնխ.* k²yē-ti*) «հանգստութիւն, ուրախութիւն, երջանկութիւն» բառն է: (Սրանց հնդեւրոպական ցեղակիցներն են լտ.* quiēs *«հանգստութիւն»,* tran-quillus *«հանգիստ», ռուս.* по-чить *«հանգչիլ», գերմ.* weilen *«դադար առնել, մնալ մի տեղ», անգլ.* while *«ժամավաճառ լինել, ժամանակ, միջոց, մինչդեռ, երբ» են են. տե՛ս* Berneker 166, Kluge 523, Walde 634 *են): Այս բառը իրանեանների մէջ էլ ծառայում էր տեղանուններ կազմելու. ինչ.* šāδ-šāpur, šāδ-hurmuz *քաղաքները: Նոյն գործածութիւնն ունի նաև հոմանիշ* rām *«ուրախ» բառը. ինչ.* Rām-hormizd, Rām-ardašīr. *Համմտ. նաև գերմ.* Friedrichsruhe, Ludwigslust *են ձևերը, նոյն կազմութեամբ:— Հիւբշ. 211:*

Lag. Gesam. Abhd. 46, 48, Beitr. bktr. Lex. 48, Symmic. 60 *և* Arm. Stud. *§ 280 և § 1680 համեմատում է սանս.* kšatra, *գնդ.* xšaθra, *պրս.* šahr *«քաղաք» բառերի հետ, որին իբր ապացոյց է յիշում Արտաշատի արդի Արտաշար կոչումը: Մորթման* ZDMG *30, 428 Արտաշատի հին կոչումը համարում է բևեռ.* Ardiniasti, *որից հետևցնում է թե շատ «քաղաք» բառի հին ձևն է* asti=*յն.* ἄστυ,

***ՇԱՏՐՈՒԱՆ,** ի–ա *հլ. «վարագոյր, սրսկապան, կապերտ, գորգ» Ոսկ. Հռովմ. 114, 195 (այս վկայութիւնները չունի ՆՀԲ). Խոր. ա. 25. Բրս. արբեց. Լաստ. իա:*

=*Պհլ.* šāturvān *«ննջասեննակ?»,* պրս. شادروان šādurvān *կամ նաև* šādravān, šādirvān, šādurbān, šādrabān, šādvān, šārvān *«մեծ վարագոյր կամ գորգ՝ որ արքայական օթեակի առաջն են քաշում. 2. բարձ»:—Հիւբշ. 212:*

ՆՀԲ «պրս. շատիրվան, շատիւրպան, շատիւրվան, *այսինքն զուարճալի ի գնացս. իսկ Բրք. շատըր է վրան՝ խորան. այլ վրաց.* շատրովանի է *ամղան»:*

Lag. Arm. Stud. *§ 1682 ՆՀԲ-ից առնելով՝ պրս.* šāderawān:

Փոխ.—Վրաց. შატროვანი շատրովանի *«հիւսուածք. 2. ճամկատոր»:*

***ՇԱՏՐՈՒԱՆ** *«ջրացայտ աղբիւր» Ոսկիփ. նաև արդի գրականում:*

=*Պրս.* شادروان šādravān *կամ* šādurvān *են «շատրուան, ջրբուղխ՝ ուստի ջուրն բռնութեամբ ոստուցեալ ի վեր ցայտէ». սրանից են փոխառեալ նաև քրդ.* šadirevan, šazirevan, šadruvan, *վրաց.* შადრევანი շադրեվանի *«ջրի շատրուան», արևել. Բրք.* شودرون šudreven *«ցօղ, նուրբ անձրև», սերբ.* šadrevan, šahdrvan, šedervan, šadrman, *բուլգար.* šedravan, *ռում.* sadervin, sadorvin *«շատրուան»:—Հիւբշ. 212:*

Նախ ԳԴ պրս. շատրիվան: *ՆՀԲ միացրած է նախորդի հետ:* Lag. Arm. Stud. *§ 1682 պրս.* šāderawān:

ԳԻՒ.—Սլմ. Վն. շատրվան, *Երև. Տփ.* շադրվան, *Ննխ.* շաղրովան, *Մկ.* շատրվան, *Համշ.* շաղրվօն, *Հճ.* շադրվօն, *Կր. Ռ. Տիգ.* շաղրվան *(շփոթելով Բրք.* čadər *«վրան» բառի հետ). այս բոլորը նշանակում են «ջրցայտ շատրուան». իսկ Էնկ.* šadərvan *«վարդավառի ուռնը» (նոյն օրը իբրև վրայ ջուր ցանելու սովորութիւնից առնելով. Բիւր. 1898, 865), Մշ.* շադրվան *«բաղնիսի մէջտեղի քարը՝ ուր լողացողները հանգստանում են. ամկ. կէօպէք թաշի» (նոյն տեղում նաև մի շատրուան լինելու պատճառով այս նշանակութիւնն է ստացած):*

ՇԱՐ *(յետնաբար ի, ու հլ.)* «շարուածք, կարգ» *Սիր. ղ. 31. Ոսկ. մ. ա. 5, 15, եբր. թ. «շարակարգութիւն խօսքի» Եւս. քր. Ոսկ. մ. բ. 28. «խումբ, բազմութիւն (շների և էանճերի համար ասուած)» Նար. Սարգ. որից* շարել *Ագաթ.* շարումն *ՍԿԿ. կթ. արմաւ.* շարուրել «իրար վրայ կամ կողք կողքի կարգ կարգ դիզել» *ԱԲ.* մարգարտաշար *Վրք. Հց. Գնձ. Շար.* միաշար *Ոսկ. Ես.* նախաշար *Յայսմ. Գր. սք.* շաղաշարել *ՅՀ. կթ. Նոնն.* զուգաշարել *Երզն. քեր.* զամբարաշար *Խոր. վրդ.* մտաշար *Նար. կուս. յունաբան հեղինակների մօտ դարձել է սովորական նախամասնիկ՝ իբր համապատասխան յն.* συν- *և լտ.* con- *մասնիկներին. օր.* շարագրել = συγγράφω, շարադասել = συντάσσω, շարադրել = συντίθημι, շարունակել = συνέχω, շարաձայն = συμφωνία *են. կասկածելի է* շարայարել = συνάπτω *Ոսկ. ևիևս. նոր բառեր են* շարունակելի, շարաճիւսութիւն *են։*

ՆՀԲ լծ. Թրք. səra, *յն.* σειρά, *լտ.* series. *նաև Թրք.* sürü «ջոկ, խումբ», *Մորթման* ZDMG *31, 434 բևեռ.* siru «շարք», *գերմ.* Schaar «խումբ»։ Lag. Arm. Stud. § *1687 հյ.* շարկայ «բազդրևալ» *բառը համարում է սեմական իբր ասոր.* ܫܪܟ šarkā «λείπεται» *և արաբ.* شركت širkat «ընկերանալ»։ *Հիւբշ.* ZDMG *35 (1881), 177 ցոյց է տալիս որ* շարկայ *ամենևին կապ չունի սեմականի հետ և կազմուած է յն.* συγχείμενος = *լտ.* constans *հոմանիշից թարգմանաբար՝ հյ.* շար *և* կայ *բառերով։ Հիւնք.* շար = *յն.* σειρά *և Թրք.* səra «շարք»։ *Մաո, Иппол. 67 ասոր.* šārā «շղթայ» *բառից փոխառեալ։ Սագրգեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձան 407 սումեր.* sar, šar «գիծ, շարք», *422, 426 շաղաթ.* sirgi, sürgü, *ույգուր.* serge, *օսմ.* səra, *հաքութ.* särga «շարք, կարգ, գիծ»։ *Մարտիրոսեան, ՀԱ 1924, 457 հաթ.* šarnizki «տեղը դնել, լցնել, շարել»։ *Պատահական նմանութիւն ունի արաբ.* شرا širā «փոխել» *(Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 847)։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սչ. Սլմ. Վն. ըարել, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Նախ. Պլ. Ռ. Սեբ.* շարէլ, *Ասլ.* շարէ՝լ, *Մկ. Շմ. Տփ.* շարիլ, *Հմշ.* շարուշ, *Տիգ.* շուրէլ, *Խրբ. Սվեդ.* շուրիլ, *Մրզ.* շառէլ, *Հճ.* շայել, *ՋԹ.* շայիլ, շարիլ.—*Սլմ.* շուրf¹ *(Թէև բայը* շարել*),* *Ագլ.* շor, շorf «շար, շարք»։ *(Ալշ. Մշ.* շարել *նշանակում է նաև «գուլպայ գործել»)։*

*ՇԱՐ «քօղ, շղարշ, տիւլ» *Գնձ. Մաշտ. Տօնակ. Նար. առաք.* որից շարեղէն շապիկ «բարակ տիւլէ շապիկ» *Քուչ. 55 (Լուկ իւր շարեղէն շապիկն ի չորեք դիմաց կու խըզտէր), որ և* շարեշապիկ՝ *նոյն նշ. Պատմ. աղշ. էջ 171 (Յայնժամ աղջիկն հհան զհանդերձան. ընդ նմին և զշարեշապիկն, զոր եդ ի ներքոյ սնարից գլխոյն),* շարշապկանց «շարէ շապիկ հագած» *Քուչ. 61 (տպ.* շարշապկանճ, *որ յարմար չէ յանգին)։*

= *Պրս.* شار šār «նուրբ և գոյնզգոյն տիւլ» (Vullers), «անդուս, զոր կանայք արկանեն գլխովք իւրեանց, յորմէ և բազմիցս հանդերձ կազմեն», *որից պրս.* شارة šāra «պատատ հնդկային, կարմիր կտաւ լապտերի», شاريچه šārīča «ծածկոյթ զոր առնուն ի վերայ»։—*Հիւբշ. 212։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ։ ՆՀԲ սովորական շարf «կարգ» *բառի հետ է դրած։* Lag. Arm. Stud. § *1683 պրս.* šār։— *Հիւնք. պրս.* šāra: *Մաո,* Иппол. 67 *դրնում է ասոր.* ܫܪܝܐ šeryā *կամ* ܫܝܪܝܐ ; šērāyā *ձևից և զարմանում է թէ ինչո՞ւ Հիւբշման պարսկերէնից է դրած։ (Որովհետև բոլորովին նոյն է պարսկերէնի հետ. իսկ ասորերէնից լինելու դէպքում պիտի ունենայինք հյ. *շերեայ. Ըո՛ղ իմաստի տարբերութիւնը)։*

ԳԻՒ.—Ակն. Ատն. Ռ. Սեբ. Ք. շար, *ՋԹ.* շօյ, շոr «շղարշ» *(Ռ. նաև «սառոյցի բարակ խաւ՝ որ ջրի երեսն է պատում»), Չն.* շար «վզի թաշկինակ», *Սվ.* շար «կանանց ծածկած բարակ սաւանը», *որից Ախց. Կր.* շարէ շապիf, *Պլ.* շարէ շաբիf, *Ալշ. Մշ.* շալէ շաբիg։—*Նոր բառեր են* շարմադ, շարեմադ, շարմադուն, շարմադել, շարշապկած։

ՓՈԽ.—Վրաց. შარი շարի «մի տեսակ

կտաւ, холстинка» ըստ Ջուբինով[2] 1394, իսկ ըստ Մառ, Иппол. էջ 67 «մետաքս»։

***ՇԱՐ**, ի հլ. «3600 տարիների մի շրջան» Եւս. քր. ա. 11, որից Խոր. Արծր. Հրատ. Պատկ. էջ 21. Սամ. երէց. Մագ. թղ. 179 ևն։*

=Բաբել.  šar, ասուր.  ša-ar բառն է, հնագէս գրուած է  կամ  ձևով և նշանակում է 3600 թիւը (Delitzsch, Assyrisch. Handwört. էջ 687 և Strassmaier, Alphabetisches Verzeichniss der Assyrischen und Akkadischen Wörter. էջ 996)։ Յայտնի չէ սակայն թէ ինչ ճանապարհով այս բառը հասած է մեզ. որովհետև միւս լեզուները ունին u նախաձայնով. այսպէս՝ ասոր. sar, յն. σάρος, լտ. sarus՝ նոյն նշ.։

ՆՀԲ յն. և լտ. ձևերի հետ։ Lag. Arm. Stud. § 1684 յն. σάρος Հիւրշ. 313 դնում է ասորական փոխառութեանց մէջ և համարում է թէ յունարէնի վրայից հայոց ձեռքով սեմականի ձև է տրուած! Jensen, Hitt. u. Arm. 213 որովհետև կարող չէ գալ ասորուց, ուստի դնում է հաթիրէնի միջնորդութեամբ։ Հիմնք. դար բառից։

Շար *«դափնի» տե՛ս Ղար։*

***ՇԱՐԱՔ** (գրուած նաև շարապ) «խոտերից կամ պտուղներից պատրաստուած ըմպելիք՝ իբր դեղ» Վրդն. երգ. Շնորհ. առակ 54. Բժշ. աւելի յետին ձև է շէրապ Վստկ. 8։*

=Արաբ. شَرَاب šarāb «գինի, ըմպելիք, խմիչք» (ծագում է شَرِبَ šrb «խմել» արմատից). նոյն բառից են փոխառեալ նաև իտալ. sciroppo, sciloppo, ֆրանս. sirop, գերմ. Syrup, լտ. syrupus, ռուս. сиропъ, թրք. šurub ևն։—Հիւրշ. 273։

Բառ. երեմ. էջ 244 մեկնում է «շարապ. ոետին է»։ Նագումը ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը նաև Lag. Arm. Stud. § 1685.

***ՇԱՐԱԳԱՀ** «շտեմարան հորաձև» Բառ. երեմ. 244, «շտեմարան» ՓԲ. միւս բառարանները չունին։*

=Պրս. شِيرَه šīra «քաղցու, նոր գինի, շիրա»+گاه gāh «տեղ» բառերից. բարդութեամբ լինում է گاه شِيرَ šīragāh «քաղցու պահելու տեղ»։—Աճ.

ՇԱՐԱԳՈՅՐ *(որի ոմկ. ձևն է շարգոյր) «գդակի վրայ գցելու կանացի քող» Մաղաք. աբ. 7 (այսպէս ըստ տպ. Եմի. իսկ Պատկ. վարագոյր). «գրքի տուփ, կող կամ պատեան» Մաշտ. Վրք. Հց. բ. 614. «գիրքը մէջը փաթաթելու շոր» Յիշատ.։ Համմտ. նաև շագոյր։*

ՆՀԲ շար, որպէս վարագոյր կամ շարիւ ագուցեալ պատին։

*—**ՇԱՐԱԿԱՆ**, ի–ա հլ. «եկեղեցական երգ. 2. այդպիսի երգերի հաւաքածոյ, երգարան» Մաշտ. Յայտմ. Գր. տղ. Լմբ. Լծ. եւագր. Վրք. Հց. որից շարականի լեզուի «առանց իմաստին ուշ դարձնելու՝ թութակի պէս ասուած խօսքեր» Պտրգ. 578. շարակնոց «շարականների հաւաքածոյ» Շար. շարականագէտ (նոր բառ)։*

=Կազմուած է հյ. շար(f) բառից՝ -ական մասնիկով։ Այս բառով հասկանում էին իւրաքանչիւր տօնի յատկացուած ինը երգերի մի շարք, որոնք մի ամբողջութիւն էին կազմում։—Հնագոյն ժամանակներում ամէն տօնի համար կային զանազան հոգևոր երգեր։ Ը դարում Յունաց մէջ, և նրանց օրինակով նաև Հայոց մէջ սովորութիւն դարձաւ միևնոյն տօնին պատկանող զանազան հոգևոր երգերից ընտրելով կամ, նթէ պակասներ կային, լրացնելով՝ կազմել ինը երգերի մի շարք։ Շարքի այդ մասերն էին՝ 1. Օրհնութիւն, 2. Հարց, 3. Դուրս, 4. Մեծացուսցէ, 5. Ողորմեա, 6. Տէր յերկնից, 7. Մանկունք, 8. Ճաշու, 9. Համբարձի. իսկ բոլորի ամբողջութիւնը կոչւում էր կանոն կամ կարգ, երբեմն նաև սարք. օր. կարգ ծննդեան, կարգ աւագ շաբաթուն, կարգ ապաշխարութեան, իւր սարօքն ևն։ Այս բանը հաստատում է նաև Օրբելեանի հետևեալ վկայութիւնը. «Բաժանեաց և զութ ձայնսն և կարգեաց շարեաց գՅարութեան Օրհնութիւնսն» (հրտր. էմ. էջ 101)։ Նախապէս ասւում էր (իբր ածական) շարական երգ, յետոյ բառը դարձաւ գոյական, ինչպէս ունինք բազմական, գեղական, ուրուական, վանաական, ազգական, իսկ գիրքը կոչուեց շարակնոց։—Շարական բառը կանոն բառից աւելի նոր է, մօտաւորապէս

ԺԲ դարից, բայց կարող է լինել նաև աւելի հին՝ Ժ դարից։ Ըստ Ամատունի (Հայոց բառ ու բան, էջ 511) «Բառս առաջին անգամ յիշում է ԺԱ. դարում ապրող Պօղոս վրդ. Տարօնեցին՝ ասելով. իսկ ի կիւրակէի և ի մարտիրոսաց յիշատակս խնկարկութեամբ և շարականաւ [կատարել]»։ Բառիս կազմութեան համար կարող ենք համեմատել նաև յն. εἰρμός «շարք, բայց նաև բանահիւսութիւն, շարական» (Sophocles 426 բ). Համմտ. վրք. հց. ա. 421 տունս եռմոսից, որ էջ 422 դառնում է տունս շարականաց. համմտ. նաև անդ՝ էջ 535—6 ասուածները։

Schröder, Thesaur. 45 *երբ.* שרק šrq *«սուլել» արմատից։ ՀՀԲ* շարf ականց։ *Հ. Գ. Աւետիքեան, Բցար. շար. էջ Ժ մերժում է այս բացատրութիւնը, որովհետև* ակն *բառը բարդութեանց սկիզբը դառնում է* ական–, *վերջը՝* ակն. *ուստի, պիտի ասուէր* ականաշար *կամ* շարակն. *ինքը հանում է կա՛մ հյ.* շարf *(համմտ.* շարագիր, շարագրած. *նաև Մովս. քերթ. «շարադրութիւն շարամանութեան հոգևոր երգարանիս ըստ երաժշտական չափոց) և կամ երբ.* շիր, շիրաև *«երգ» բառից։ ՆՀԲ լծ. երբ.* շիր, շիրա, *արաբ.* شعر ši'r, *պրս.* surūd, *թրք.* šarqī *«երգ»։ ՓԲ «ուր շարեալ կան ամենայն երգք»։* Peterm. *իր մի ընդարձակ յօդուածում՝* Über die Musik der Armenier, ZDMG *1851, էջ 365—372 մեկնում է «*շարf *մարգարտաց, այսինքն* ականց»։ *Էմին,* Ист. Вардана, *էջ 116,* Переводы *320, 327 սեմ. շէր «երգ» բառից, որ ունի նաև Մամիկ.* շեր *ձևով։ Հիւնք. հյ.* սաբեակ = *պրս.* šārak *«սոխակ» բառից։ Ա. վրդ. Ամատունի (Ուս. շարականաց, Արրտ. 1894, էջ 176—180, 218—222, 250—256) դնում է* շարf *բառից։ Մաս,* Тексты и раз. I (1900), *էջ 22—23 մերժում է դնել արաբ.* شعر ši'r *«երգ» բառից, որովհետև այս բառից նախ չի կարող յառաջանալ* շար– *ձևը, և երկրորդ՝ կրօնական մի բառ չի կարող յառաջանալ արաբերէնից. ուստի դնում է ասոր.* ܫܚܪܐ šahrā *«հսկում, նաև հսկման երգ» բառից (նոյնը տե՛ս Թրգմ. Մշակ 1900, 226)։ — Վերի գեղեցիկ մեկնութիւնը տուաւ Մ. Աբեղեան, Արրտ. 1912, 823—836։*

ԳԻՒ.—*Ախց. երև. կր. Շմ. Զղ. Սլմ. Տփ.* շարական, *Ալշ. Մշ. Պլ. Սեբ.* շարագան, *Ննխ. Ռ.* շարագան, *Ասլ.* շարագ, *Ագլ.* շրա՛կան, *Մկ.* շուրական, *Տիգ.* շուրգուն, *Մրզ.* շառական, *ԶՓ.* շայագօն, շարագոն, *Սվեդ.* շուրգուն. *բոլորն էլ գրականից փոխառեալ։*

*ՇԱՐԱՊԱՅ *«որթապատակը». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 244 (ա տպ. գրուած է «որթայ պատկը»). ակնարկում է այն հորթագլուխ կուռքը, որ պաշտում էին եգիպտացիք և նրանց օրինակով նաև երբայեցիք։*

= *Ասոր.* ܫܪܦܐ šərāpā *«աթար, կռվի թրիք»* (Brockelm. Lex. syr. *390ա*). *Նշանակութիւնը նոյն չէ, բայց նկատի ունենալով քրիստոնեաների վերաբերմունքը դէպի հեթանոսական աստուածները՝ յարմար է։—Աճ։*

ՇԱՐԱՍԽ *«ճճի ապանող մի բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2287։*

ՇԱՐԱՒ, ո *հլ. «թարախ, վէրքի կեղտոտ ջուրը» ՍԳր. Ոսկ. մ. բ. 3. Եղիշ, որից* շարաւ առնուլ *«արիւնը բորբոքիլ» Պզատ. տիմ.* շարաւաճոտ *Կորիւն. Ագաթ. Մծբ. 240 (սոխի համար ասուած).* շարաւաճոտութիւն *Եւագր.* շարաւոտեալ *Եփր. հլ. էջ 176.* բազմաշարաւ *Ոսկիփ. մեծաշարաւ Յիշատ.* շարաւալիր *լծ. պրպմ. 775, դրուած է* շարաֆ *Մոլութ. էջ 8 բ և Գիրք առաք. 397ա. Համմտ.* հարաւ>հարաֆ։

ՆՀԲ արաբ. jarāhat, *լտ.* cruor։ *Հիւնք. արաբ.* šarāb *«գինի» բառից։*

ՓՈԽ.—Վրաց. შარავი *«թարախ»։*

*ՇԱՐԱՒԱՆԴ *«ոտքի կապ, չուան» Վրդն. հլ. որ և* շարաւանդն *(սեռ. –դան) Թէոդ. կուս.։*

= *Նոյն է կամիս.* šarāwanzi *«կապ» բառի հետ. և որովհետև կամիս. z յաճախ յառաջանում է t-ից (համմտ. բցո. -az մասնիկը, որ գալիս է -at ձևից.—եզ. գ. դէմք* epzi *«առնում է», յգ. գ. դէմք* appanzi *«առնում են»,* mallanzi *«աղում են», որոնք գալիս են -ti, -nti ձևերից), ուստի բառիս հին ձևն է *šarāwanti: Երկուսը միասին ենթադրում են*

իրանեան աղբիւր (հմմտ. դանդաճաւանդ, պարաւանդ *են)։—Աճ.*

ՆՀԲ լծ. յն. սիրայ: *Աճառ. Արարատ 1910, 179 պրս.* šār «պատառ. շղարշ» +band «կապ» *բառերից։ Վերի ձևով մեկնեց նոյն, Նորք 1925, № 5, էջ 393։*

ՓՈԽ.—Վրաց. Ցარავანდი շարավանդի «արքայական թագ, պսակ, թագաւորութիւն» *(թագը կամ պսակը ըմբռնելով իբր գլխի կապ)։—Տե՛ս նաև* շաուափղ:

*ՇԱՐԲԱԹ «օշարակ. 2. յատկապէս՝ հիւանդներին իբր դեղ խմացնելու օշարակ» *Օրբել. 322 (Յառաջ քան զպատարագն ըմպէ շարբաթս). Կոստ. երզն. 118, 122. Նոր վկ. էջ 260։*

=Արաբ. شربت šārbat «օշարակ», *որից նաև ֆրանս.* sorbet, *ռմկ.* շլպէք «օշարակ»։

ՇԱՐԴԱԿ *կամ* ՇԱՐԴՈՒԿ «*մի տեսակ բոյս՝ որ իբր ճճեսպան դեղ է գործածւում» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2288։*

ՇԱՐԵԼ «*դողացուցանել կամ խախտել». ունի միայն Բառ. երեմ. էջ 244։*

ՇԱՐԺ *(յետնաբար ի հլ.) «երերալը» Պիսիդ. Վրք. հց. «երկրաշարժ» Մամիկ. Վրք. հց. Նխ. յայտ. որից* շարժել ՍԳր. *եզն. Կիւրղ. ել. (նաև «յորդորել, գրգռել» Մխ. դտ. 323. տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 66).* շարժաճիմն *Ագաթ.* շարժումն ՍԳր. *եզն. Եւս. քր.* շարժուն ՍԳր. *եզն.* շարժիչ *եզն.* անշարժ ՍԳր. *Վեցօր. Բուզ. Ագաթ.* գետնաշարժ *Ամովս. ա. 1. Եղիշ.* դիւրաշարժ *Իմ. է. 22.* թեթևաշարժ *Փարպ.* հողմաշարժ *Յոր. ժգ. 25.* հինգաշարժ *Ոսկ. ա. կոր.* երկրաշարժ *Նոննդ.* զինաշարժ *ՅՀ. կԹ.* արագաշարժ *Պիտ.* դժուարաշարժ *Պիտ. ՅՀ. իմ. ատ.* շարժապատկեր, շարժարիք, շարժուձև *(նոր բառեր) են։ Առանձին տես* շարժմակ *և* շարշել:

ՆՀԲ լծ. Հյ. սասել, *երր.* շարէշ «արմատէն հանել», *թրք.* սասմագ, սալամագ «ցնցել, շարժել», *յն.* σαλεύω «ցնցել»։ *Մորթման* ZDMG *26, 545 բևեռ.* asazi «շարժել»։ *Տէրվ. Նախալ. 64 շ մասնիկով* *ard *արմատից, որ կայում է սանս.* argh, *յն.* ὀρχέω *բառերին, իբր հնխ.* argh «շարժել, յուզել»։ *Հիւնք. ա-բար.* զելզելէ, *յն.* σεισμός «շարժ, ցնցում»։ Nyberg, Hilfsb. *2, 107 իրան.* *uš(h)arz- *ձևից, այն է* us- *մասնիկով՝ դնդ.* harəz «բողնել, արձակել» *արմատից։ Մերժում է* Meillet BSL *հտ. 32, № 97, էջ 84, որովհետև 1) հին* *uš-(h)arz- *ձևը պիտի պահէր իր նախաձայն* u-ն, *2) չպիտի ունենար ժ, 3) նշանակութիւնը տարբեր է։*

ԳԻՒՐ.—Անփոփոխ են պահուած Սչ. շարժել, շարժում «երկրաշարժ».—r *ձայնի անկումով ունինք Մկ.* շաժիլ «շարժիլ», և ժ *ձայնը* f-ի *մօտ խլանալով՝* շաշ «երկրաշարժ, շարժք».— *նաև նախաձայնը վերածուելով վերջաձայնի աստիճանին՝ Ալշ. Մշ.* ժաժել, *Ակն. Ասլ. Կր. Պլ. Ր. Սեբ. Սվեդ. Տփ.* ժաժ, *Ախց.* ժաժ տալ, *Համշ.* ժաժվուշ «շարժուիլ, թօթուել», *Գոր. Ջթ. Ղրբ. Մրղ. Վն.* ժոժ, *Ախց. Երև. Համշ.* ժաշ, *Ջղ.* ժաշկ, *Սլմ.* ժոշ՝ «երկրաշարժ», *Ննխ.* ժաժել «շարժել», *որոնցից ածանցուած ձևեր են՝* ժաժկաև, ժաժկոիլ *(Ննխ.* ժաշքել), ժաժկլոիլ, ժաժմուիմ, ժաժուամած, ժիժացնել, ժժնել, ժժկոտալ, աննեռըժաժտալ *են։ Սրանց հին վկայութիւնն է* ժաժուն «շարժական իրեր» *Սմբ. դատ. 64։*

ՇԱՐԺՄԱԿ «*կախարդական դիր, պահպանակ, համայիլ, նուսխա» Մանդ. էջ 194, որ և գրուած է* ժաժմուկ *Մանդ. էջ 193։*

ՇԱՐԻԱՏ, *ի հլ. «տոկոս, վաշխ» Ղևտ. իե. 37. Օր. իգ. 20.—Նոյն է նաև յետին արձանագրութեանց մէջ գործածուած* շարյատ *կամ* շարիատ «տուրք» *բառը. այսպէս՝ 971 թ. (Վիմ. տար. 8), 1001 թ. (էջ 26). 1008 թ. (էջ 13), 1015 թ. (էջ 14). յետնաբար դարձաւ* շարէտ, *ինչպէս ունի երկու անգամ Արձ. 1285 թ. (Վիմ. տար. էջ 127)։ Նոյն է վերջապէս* շարատ «հողային հա՞րկ», *որ անստոյգ ձևով գործածուած է երկու անգամ Յովհաննավանքի անթուական մի արձանագրութեան մէջ, որ Ջքր. սարկ. Գ. 23 ա՛յսպէս է օրինակում. «Հասարակաց տունս խլած էր, էդոց հողի շարատ էր դրած, մեք էլ հասարակ ի Ս. Կարապետս ապսպարեցաք, վանաց էդոց հողի շարինատ վեր կալաք վասն արեշատութեան պարոնաց մերոց»։ Այս բառի հետ նոյն եմ համարում* Շիր. շառատ «ջաղացքում ա-

ղունաւորի վարձը բնատուրքով» (հաղորդեց Ն. Նիկողոսեան, որ կազմել է Լենինականի գաւառական բառերի հաւաքածուն, անտիպ)։ Ուրիշ ամէն տեղ այս վարձը կոչւում է շահաղ, որի ծագումը բաւ իս հետևեալ ձևով է։ Նախ շառաւ բառը հայերէնից անցել է թուրքերէնի. այստեղ ժողովրդական սուղաբանութեամբ դարձել է šahad, իբր թէ արաբ. šahad «վկայ», որից յետոյ յետ դառնալով անցել է հայերէնի։

ՆՀԲ «Բառ եբր. իբր յաւելուած». (անշուշտ ակնարկում է հբր. שְׁאֵרִית šērīṯ «մնացորդ», որ իմաստով անյարմար է»)։ Հիմնք. արաբ. աշրաղ «տասանորդք»։ Մառ ЗВО 8, 80 շարյաա հանում է արաբ. شَرِيعَة šarī'at «օրէնք» բառից։

ՇԱՐԻԿ *«աստիլ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 245. ի՛նչ լինելը պարզ յայտնի չէ։*

ՇԱՐԽՈՆ *կամ* **ՇԱԽՐՈՒՆ** *«վայրի խաշխաշ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2290։ Նոյնը գիտէ Քաջունի, Հտ. Գ. էջ 184 շարիան և շարխուն ձևերով։*

***ՇԱՐՄԱՇՈՒՐԱՅ** *«շարմաշուր, շարմաշուք». ա՛յսպէս է դնում Բառ. երեմ. յաւել. 570 (բոյսերի ցանկում). պէտք է հասկանալ՝*

=Թրք. صارماشق sarmašaq «բաղեղ», որ Ղարաբաղի հայոց բարբառով այժմ էլ գործածական է շրմրշուղ ձևով։—Աճ.

ՇԱՐՄՈՒՂ *«հաւալուան, onocrotale, pélican». գիտէ միայն Քաջունի, Հտ. Գ. 184 և Հտ. Բ. 203, առանց վկայութեան։*

ՇԱՐՇԱՐՈՒՐԻԿ. *անծանօթ մի ծաղիկ է. Սալամ. ունի միայն ՀԲուս. § 2291։*

⊙ՇԱՐՇԱՓ *«շշնկոց, աղմուկ», որից կազմուած է շարշափիւն Աբան. էջ 579, Վրք. Հց. ա. 53։*

=Բնաձայն բառ. կազմուած է շափ բնաձայնից՝ կրկնութեամբ. համմտ. գարգափ, կարկափ, բարբափ, խարխափ, սարսափ։—Աճ.

ՇԱՐՇԱԼԵԼ *«քաշկռտել, պատառոտել, ցրցրտել» (դևի համար ասուած). երկու անգամ ունի Մրկ. Թ. 19, Ղկ. Թ. 42, յն. σπαράττω, συσπαράσσω «պատառոտել, կտոր կտոր անել, ծուատել» ձևի դէմ։ Յետին ժամանակներում շարշել բառը ջնջուելով՝ դրիչները սկսան սրբագրել շարժել, որով բառը կապուեց շարժ արմատին և այսպէսով ստացաւ «սաստիկ շարժել, ցնցել» նշանակութիւնը։ Այսպէս էջմիածնի հնագոյն Աւետարանը (№ 363) և Մոսկուայի լազարեան ճեմարանի ձեռագիր Աւետարանը ունին շարշել, միւս նորագոյնները դնում են շարժել։ Վերջին ձևն ունին նաև Ոսկ. մ. բ. էջ 627 («ղշարժելալ քաղաքն կանգնեաց», այն է «կործանուած քաղաքը»), Լմբ. մատ. էջ 462, Մաշկ. Շնորհ. ներբ. խչ. տող 415 (չափուած շարժրլէր), Երզն. մաթ. 371 («ի նորանալ կամ ի հնանալ լուանին շարժլէր»—լուանոտի հիւանդութեան համար է ասում), Վրդն. սղ. էջ 389 (Շարժլեցին և այժ հասուցին)։*

*=Յառաջանում է *շարշուլել ձևից. արմատն է *շարշուլ, որ կրկնուած է անծանօթ *շար արմատից, այնպէս՝ ինչպէս խարխուլ< խար արմատից։*

ՆՀԲ և ուրիշներ դնում են շարժլել՝ իբր շարժ արմատից։ Վերի ձևով ուղղեց ու մեկնեց Meillet JAs. 1903 (2), 505։

***ՇԱՐԱՂԱՐ** *(սեռ. -ի) «քաղաքապետ, քաղաքագլուխ. պարսկական պետական մի տիտղոս». նորագիւտ բառ, որ գործածում են Գիրք թղ. էջ 150, 168, 170 և Ուխտ. Բ. 57, 58 (տպ. շաղսաղար), 60, 61, 62, 64, 93, 95, իբր տիտղոս Վրթանէս քերթողի։*

*=Սասանեան պհլ. *šahrsālār ձևից, որ կազմուած է šahr «քաղաք» և sālār «զօրագլուխ, առաջնորդ» բառերից, իբր պրս. *šahrsālār։—Աճ.*

*Նորագիւտ բառս երևան հանեց Ակինեան ՀԱ 1910, 9, որ և մեկնում է շար<, պրս. šar «քաղաք» կամ (արաբ.) šārih «մեկնիչ գրոց»+սաղար։ Վերի ձևով Աճառ. ՀԱ 1910, 119։ Թիրեաքեան ՀԱ 1912, 427 ուղում է բառս սրբագրել *բարսաղար, իբր sālār-i-bār «դռնապան»։ Սրա դէմ Աճառ. ՀԱ 1914, 563։ Ջամինեան, Անահիտ 1931 սեպտ. 124 մեկնում է «երգապետ», իբր շար «երգ»+սաղար բառերից։*

***ՇԱՐՓՈՒՇ** *«ասիական իշխանական խոյր»*

լմբ. առ Լև. տպ. 1865, էջ 239.—գրուած է նաև շարփուր:

=*Պրս.* سرپوش sarpūš «*ծածկոյթ դլխոյ*». *կազմուած է* sar «*գլուխ*» *և* pūš «*ծածկել*» *բառերից. ըստ այսմ նշանակում է նաև «խուփ որ և իցէ իրի, իսկ յատկաբար խուփ սկաւառակի»*:—*Աճ.*

Աբ դնում է իբր պրս.՝ վերի ձևով մեկնեց Աճառ. Արրատ. 1910, 180:

Շաւակի *տե՛ս Արշաւ*:

Նշբ (որին հետևելով նաև ՋԲ) «իբր **աւշաւակի** *և կամ որպէս այլազգ.* **շէհվէք** *կամ* **շէֆգէք իլէ**, *փառօք կամ ցոփութեամբ»*: *Աբ ուղիղ է մեկնում*:

ՇԱԻԱՇԱՐ «*մի տեսակ բոյս.* aucuba, aucube». *ունի միայն Քաջունի, Հտ. Բ. 195, Հտ. Գ. 184, առանց վկայութեան*: *Կասկածելի բառ. հմմտ. յաջորդը*:

***ՇԱԻԱՇԱՐԻԻՆ** (*կամ շաւարշարիւն*) «*նուիկ խոտը և հիւանդութեան մի տեսակ. լտ.* dracunculus, dracontium, serpentaria» *Գաղիան. Մտեփ. լեհ.*:

=*Պրս.* خون سیاوش xūn-i-siyāvaš *բառից կազմուած թարգմանաբար. ասւում է նաև պրս.* xūn-i-siyāvašān, xun-i-siyāvuš *կամ* xūn-i-siyvušān. *նշանակում է «մի տեսակ կարմիր խէժ, որ վազում է արմաւենիների ցեղին պատկանող մի տեսակ եղեգնման ծառից և հին բժշկութեան մէջ օգտակար դեղ էր. լտ.* sanguis draconis, *ֆր.* sang-de-dragon»: *Իր թունդ կարմրութեան պատճառով զանազան լեզուների մէջ այս խէժը նմանեցրել են արիւնի և ըստ այսմ ծագած են լտ. և ֆրանս. անունները («վիշապի արիւն»), ինչպէս և արաբ.* dam-ul-axavaini, *Թրք.* qardaš-qanə *«եղբայրների արիւն» (տե՛ս և հյ.* **աղբրանց արիւն՝ եղբայր** *բառի տակ)*: *Պրս. բառն էլ նշանակում է «Սիաւուշի կամ Շաւարշի արիւն» և այս բացատրութիւնը գոյացած է մի հին աւանդութիւնից, որի համեմատ ասում են թէ նոյն ծառը առաջին անգամ բուսել է այնտեղ, ուր Թուրանի Աֆրասիաբ թագաւորը Իրանի Քէյքաւուս թագաւորի մատաղատի որդի* Siyāvuš-*ին սպանեց տարապարտ տեղը. հմմտ. Շահնամէ. Բ. 664, տող 8, 9*: *Պրս. բառը թարգմանուած է հյ. շաւաշարիւն.—ՀԲուս. § 2293 ունի և շաւաշ բառը՝ «արանց ծաղիկ, թաղթ» նշանակութեամբ. բայց սա ըստ Նորայր ՀԱ 1923, 161 պարզ ձեռագրական սխալ է՝ փխ.* լօշ *և հետևաբար բնաւ կապ չունի վերի բառի հետ*:—*Հիւբշ. 213*:

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. Pers. Stud. *էջ 273*:

ՇԱԻԱՒՌՆ «*ցորենի ծղօտը*». *այս նորագիւտ, բայց նախնական իմաստը գտնում եմ Եղիշ. հրտ. 65 (Ի նոյն հատ որ սերմանի՝ կան զօրութեամբ տակըն և բոյսքն, շաւառն և քիստ և այլն). որից յետոյ՝ «մի տեսակ եղէգ» Գաղիան. (իսկ Մտեփ. լեհ. մեկնում է «խոտ լեռնական, յորմէ իւղ հանի»). փխբ. «երաժըշտական փող» ՀԲուս. § 646 կամ «աղեւոր մի նուագարան» ՀՀԲ (այս է որ Առաք. լծ. սահմ. 615 գրուած է* լաւառն). «ԳՋ *ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան 512). «տաղաւար, եղէգներով շինուած բնակարան» Վանակ. (ըստ ՀԲուս. անդ)*: *Բառս նշանակում էր նաև «սլաք, նետ, ախգ» և այս նշանակութեամբ տարբեր գրչութիւններ են ներկայացնում՝* շուառն *Արծր. բ. 3 (Հրտր. Պատկ. էջ 87) և* շառաւն *«նետ» Սեբ. 38 (ձեռ.* շաւառուս*). որից* շաւառեղէգն *«եղէգնախունկ, խնկեղէգն,* calamus aromaticus» *Գաղիան.*:

Նշբ շուառն *բառի տակ յիշում է պրս.* suvār *«ձիաւոր»*:

ԳԻՒ.—Խրբ. շավառ *«արտի մէջ թափուած ցորենի չոր տերևներ». Մշ. Վն.* շավեռ, *Մկ.* շավառ *«քեամանչա», որ և* շաւեղ *Ասպ.,* շաւերմ *Բլ. իսկ* շաւեռ–մաւեռ *Վն. «նուագարանի թելերի ձայներ»*:

ՓՈԽ.—Վրաց. **Ցავარნი** շավարնի *«անձրևից յետոյ ուռճացած դալարիք»*:

ՇԱԻԱՐՇԱՆ «*փղանման մի մեծ գազան*» *Բար. 170 (նորագիւտ բառ)*: *Բառիս համար մի ուրիշ և աւելի հին վկայութիւն է տալիս Խոր. աշխ. Հրտր. Սուքրեանի, էջ 44. «Լինի անդ գազան շաւարշան, որ լեզուաւն զփեղ սպանանէ և բառնայ ի ճանկն՝ զոր յողինն ունի և գնայ. յորոց զգուշին լսեն ամենայն չորքոտանիք և արիւն մղեն»*:

***ՇԱԻԻՂ**, ի–ա *հլ. «նեղ ճանապարհ» ՍԳր. Ես. պտմ. «ուռքի հետք» Բ. կոր. ժբ. 18. Բուզ. որից շաղակոխել կիւրղ. ի կոյսն. լուսաշաւիղ 3Հ. կթ. Խոսր. շաւիղակից ԱԲ. ընդմիջաշաւիղ Ես. ծբ. 12. խոզաշաւիղ Ստ. ժմ. 486. միջաշաւիղ Դիոն. Թղթ. բազմաշաւիղ 3Հ. իմ. աս. բոցաշաւիղ Նար. տաղ. երկնաշաւիղ Անան. հկեղ. երկշաւիղ Նանայ. 202, 256. կիւրղ. ղկ. կուրաշաւիղ 3Հ. իմ. երև. ևն։ Գրուած է նաև շաւեղ, շաւիւղ և հոլովուած շաւեղի, շաւիղի: Հոմանիշների երանգը ճըշտելու համար հմմտ. Գիրք առաք. 498 բ. «Ուղղութիւնն է առաքինութիւն յոյժ պատուական, զի առ սակաւս գտանի. վասն որոյ շաւիղ կոչի առաւել՝ քան ճանապարհ, որպէս ասի Առակաց դ. 11. «խնդամուտ արարից զքեզ ուղիղ շաւղաց»։*

=Ասոր. ܫܒܝܠܐ šəwīlā «ճանապարհ, հետք», որ բնիկ սեմական բառ է. հմմտ. եբր. שְׁבִיל šəbīl «նեղ ճանապարհ», արամ. שְׁבִילָא šəbīlā, արաբ. سبيل sabīl «ճամբայ»։—Հիւրշ. 313։

Նշ. Ք. արաբ. զէպիլ, լտ. semita: Lag. Ges. Abhd. 66 հայ բառը դնում է հնխ. čyu արմատից և սեմական ձևերը հայից փոխառնալ է համարում։ Նոյն. Arm. Stud. § 1689 հայերէնի մէջ –իղ մասնիկ չգտնելով և սեմական բառերը շատ գործածական լինելով՝ հայերէնը դնում է փոխառնալ ասորուց։ Հիւնք. բաւիղ բառից։

Գիւ.—Մշ. շավի (ըստ Բենսէ, ձեռ. աշխատ.)։

***ՇԱԻՍԱՅ** «մի տեսակ հիւանդութիւն» Մխ. բժշ. 54 (Թոքին խոցնալն հետ բռնամ հիւանդութեան լինի, որ է շաւսայ)։*

=Արաբ. شوصة šauṣa «pleurésie»:

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. հեր. § 167։

***ՇԱԻՔԱՐԱՆ** (որ և շոգրան) «մոլեխինդ, լտ. conium» Գաղիան. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2296 և § 2344։*

=Արաբ. شوكران šavkarān, որ և شيكران šaykarān, šaykurān «մոլեխինդ բոյսը» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 923)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ՇԱՓԱՌՈՒԿ. *անասոյգ բառ. մէկ անգամ ունի Փարպ. ղ. «Լոկ ի բանիցն խօսելոյ ընդ մեզ սիրով Նիխորոյ՝ զձիօք այդպէս ամպ մթագին և շափառուկ անկաւ» (էջ 163)։ ՆՀԲ (որից և ՋԲ) մեկնում են «մթութիւն գիշերոյ հասեալ ի տուընջեան կամ տխրութիւն յուրախութեան»։*

Նշ. Ք. պրս. šab ū rūzī «գիշեր-ցերեկ»։

***ՇԱՓԻՂԱՅ**, որ և շափիւղայ, շափիլայ, յհտնաբար շափիղ (բոլորն էլ ի հլ. կամ անփոփոխ նաև սեռ. շափիղայ) «պատուական մի քար. sapphirus» ՍԳր. Փիլ. այլաբ. Եփր. եկ. էջ 178. որից շափիւղեայ Պտմ. աղէքս. Տաղ. շափիւղաձև Լծ. եւագր։ Հմմտ. նա՛և* **սափիրայ**։

=Ասոր. ܣܦܝܠܐ sapīlā «շափիւղայ». սրա հետ հմմտ. նաև եբր. סַפִּיר sappīr, յն. σάπφειρος, լտ. sapphirus, իտալ. zaffiro, գերմ. Sapphir, ֆրանս. saphir հոմանիշները, որոնց բոլորի սկզբնական աղբիւրն է սանս. चानिप्रिय çani-priya- «շափիւղայ», որ բուն նշանակում է «Saturno amatus, երևակից սիրուած» (çani- «երևակ»+priya- «սիրեցեալ» բառերից բարդուած)։ Անկանոն է բառասկզբի չ ձայնը՝ ասոր. s-ի դէմ։—Հիւրշ. 313։

Նշ. Ք. եբր. սաֆիր բառից։ Böttich. Rudim. 48, 176 ասոր. և եբր. ձևերի հետ նաև սանս. çanipriya, որի նախաձայնով բացատրում է Lag. Armen. Stud. § 1690 հայերէնի չ ձայնը։

ՇԱՓԻՆ. *«շղամէջ». այսպէս ունի Բո. երեմ. էջ 245. երկուսն էլ անծանօթ։*

Շափրակ *տե՛ս Շամփրակ։*

***ՇԱՔ** «պատուհան». ունի միայն Քաջունի, Հա. Գ. էջ 184. աւելի լաւ է ԳԲ շամ «շինուածքի պատերու մէջ բացուածք, ուր պատուհան մը կամ դուռ մը կը զետեղուի»։*

=Արաբ. شقّ šaqq «պատառել, ճեղքել, ճեղք, ճեղքուածք, ճաք, բունոցի կամ երաստանի վերից վար ճեղքը», شقّ šiqq «հատուած, երկու կտրուած բանի մի կէսը» են (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 935)։—Աճ.

***ՇԱՔԱՐ** (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «շաքար» Խոր. աշխ. Ասկիփ. Վրք. Հց. Բժշ. Բրս. մրկ. 278. Գնձ. Շնորհ.*

առակ. որից շաքարաբուղխ *Ոսկ. լս.* շաքարբերան *«քաղցրախօս» Կոստ. երդն. 140. նոր բառեր են* շաքարեղէն, շաքարաջուր, շաքարաման, շաքարաւազ, շաքարային, շաքարախտ, շաքարակալել, շաքարել, շաքարեղէգ, շաքարավաճառ *են։ Գրուած է նաև* շագար։

=*Պրս.* شكر šakar *համանիշից. այս էլ մի հնդկական բառ է. համմ. սանս.* शर्कर çarkarā, *պալի* sakkharā. *Թուում է թէ հնդիկ բառն էլ հնագոյն ժամանակ փոխառեալ է հնդկաչինական լեզուներից (համմ.* J. Przyluski MSL *22, 208. նկատելի է սակայն որ սանս. բառի առաջին հնչական է «խիճ, խոշոր աւազ», երկրորդ՝ «շաքարաւազ»). յետոյ նիւթի հետ միասին բառը բենգալից անցաւ միւս ասիական լեզուներին. ինչ. պրս.* šakar, šakkar, *վրաց.* შაქარი *շաքարի, մինգր.* შანქარი *շանքարի, սվան. Թուշ.* šak'ar, *ափխազ.* aššak'ar, *քրդ.* Şekir, šükir, şeker, *Թրք.* şeker, *արաբ.* سكّر sukkar, *ասոր.* ܫܟܪ šekar. *նոյնը խաչակիրների ժամանակ արաբների միջոցով անցաւ Եւրոպա և ձևացան՝ յն.* σάκχαρ, σάκχαρον, σάχαρον (Boisacq *849), լտ.* saccharum, *իտալ.* zucharum, zucara, *սպան.* azucar, *իտալ.* zucchero, *ֆրանս.* sucre, *գերմ.* Zucker *(իտալերէնից՝* Kluge 547), *անգլ.* sugar *(հնչւում է* šūgr, *ուր š ձայնը նորից վերականգնուած է), ռուս.* сахаръ, *բուլգ.* zahar, *սերբ.* cahara *(*Berneker *131) են։—Հիւրշ. 213։*

ՀՀՌ մեկնեց «սա է քար»։ Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որից յետոյ ՆՀՌ, Pott ZKM 7, 163 *են։ Թաղիադեան, Առաջնորդ մանկանց, էջ 46 հայ բառը առաւելաբանում է* սա քար *և սրանից է հանում հնդ.* սաքքար։

ԳԻՒ.—Սրև. Մշ. Ննխ. Ջղ. Սչ. Տփ. շաքար, *Ալշ.* շակար, *Խրբ. Ղրբ. Սեբ. Տիգ.* շոմոր, *Սլմ. Ախց. Կր. Ագլ. Մկ. Մրղ. Շմ. Վն.* շոմ՚որ, *Ասլ.* շէմէ՚ր, *Հմշ. Պլ.* շէմէր *(սրանք Թուրքերէնից նոր փոխառութեամբ), ՀՃ.* շաֆօյ, *ԶԹ.* շաճօյ, շաճոր, *Սվեդ.* շոմ՚որ։ *Նոր բառեր են* շաքարի, շաքարենի, շաքարկենի, շաքարածաղիկ, շաքարկոտրի *կամ* շաքարկոտրելի։

ՇԱՔԻԼ *«ծառի տերևներ» Վստկ. 132, 133. «Կախեա ի հորն և զբերանն տախտակեա և հողով և շաքլով ծածկեա. Ապա վարոցօք շինած մղրուն այգւոյ շաքիլ դիր և զինքն ի վերայ շաքլին և աղէկ սեղմեա, որ տափականայ սերտ և ի վերայ շաքլով ծածկեա»։ Այս արմատից է* շաքլել *«ընձիւղել, բողբոջել» Վեցօր. 96։*

ՆՀՌ դնում է շաքիլ *«ընձիւղ, ծիլ», բայց այս իմաստը ևթէ յարմար է շաքլել բային, անյարմար է վաստակոց գրոց վկայութեանց, որոնք պահանջում են «տերև» իմաստը, ինչպէս ունի նաև Խրբ.—ըստ ՆՀՌ «Թուի բառ պրս.* šāx *«շառաւիղ»։— Տէրվ.* Altarm. 31 *իբր բնիկ հայ կցում է լիթ.* szakà *«ճիւղ»,* szakė *«արմատ», հսլ.* сукъ, сюкъ *«ընձիւղ», սանս.* çākhā, *պրս.* šāx *«ճիւղ, ոստ» բառերին, -իլ համարելով մասնիկ։ Պատահական պէտք է համարել արաբ.* شكير šakīr *«մեծ ծառերի տակ բուսնող տունկ, արմատնու տակի ծիլը կամ մանր տերևները, շիւ, տաշտաթաղ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 923)։*

ԳԻՒ.—Խրբ. շոմիլ *«աշնան դեղնած տերև, որ անասուններին են տալիս իբր կեր», Ռ.* շաքիլ *«բամբակի կեղևները»։*

**ՇԱՖ «լուծիչ պատրոյգ բժշկական» Մխ. բժշ. 67 են։*

=*Պրս.* شاف šāf *«է այն փիլթայաձև իրն՝ զոր արկանեն ի ներքս ընդ ծակ երաստանին, մածուցանելով զնոյն սպեղանեաւ» (ԳԴ)։— Աճ.*

Շդաո *տե՛ս Շիդար։*

ՇԵԱԽ *«քաջահաւ, ibis Թռչունը». մէկ անգամ ունի Լծ. փիլ. բացատրելու համար Փիլոնի գեծ բառը (տե՛ս Փիլ. Հա. Ի. էջ 117)։*

Շեթ *«խեղճ» տե՛ս Շէթ։*

ՇԵՖ *«Թանկ». արմատ՝ որ առանձին չէ գործածուած. սրանից է կազմուած շեֆութիւն «Թանկութիւն, սով», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. այրիվ. էջ 64. Ուրիշ ամ սով և շեֆութիւն (եղև)։*

ՇԵԼ *«արգել». ունի միայն Բառ. Երեմ. էջ 245։*

***ՇԵԽ** *«իսլամական վանքի մեծաւոր» Օր-*

բել. 260 (Զղատին Տփղեաց և զղատին Անուշ և զղատին Դունայ և զանուանի շեխն Սուրմարուշ). Նոր վկ. էջ 362 (ԺԶ դարից). յգ. շխեր Նոր վկ. էջ 109 (ԺԹ դար). որ և շեխեր, շիխեր, շեհեր. սրա փապաքշական ձևն է շխուկ (նորագիւտ բառ), որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Շնորհ. առ. Շրխուկ մի կայր զեա ըզիըրեր, Ու ինք խաւ ի վեր մուշտակ ունէր. (Հանելուկս նշանակում է «արջ». արջի մոմռալը շեխի կարդալով գնալուն է նմանեցրած)։

=Արաբ. شيخ šēx նոյն նշ. հնագոյն և նախնական իմաստն է «ծեր»։—Աճ.

Ուղիղ մեկնեց Աճառ. Նոր վկ. էջ 791։

*ՇԵՀ (որ և շէհ, շիհ) «օշինդրի նման մի բոյս է. լտ. artemisia absinthium» Բժշ. ունին միայն ՀԲուս. § 2299 և § 642, Նորայր, Բռ. ֆր. 110 ա (amone):

=Արաբ. شيح šīh՝ նոյն նշ. (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 485, Steinschneider WZKM 12, 207). այս բոյսի մի ընտիր տեսակը գալիս է Հայաստանից և ըստ այսմ էլ կոչւում է արաբ. شيح ارمانى šīh-i armānī։—Աճ.

+ՇԵՂ (յետնաբար ո հլ.) «խոտորնակ, թեք, ծուռ» Եւկլիդ. որից առիշեղ Բ. մկ. ժգ. 6. առշեղ Շիր. շեղել «ծռել» Գէ. Ես. շեղիլ «ծռիլ, մոլորիլ» Կիւրղ. գնձ. և ղկ. ՁՀ. կՔ. շեղիշ Ոսկ. գծ. շեղութիւն Դիոն. Կիւրղ. Հանգ. առշեղեալ Զքր. կՔ. անշեղ Խոր. շեղակի, շեղում, շեղատառ, անշեղօրէն (նոր բառեր)։ Արմատի միւս ձևերն են՝ ՇԻԼ «ծուռ» (յատկապէս աչքի համար ասուած), որի վրայ մանրամասն տես առանձին.—ՇԱՂ «ծուռ, սխալ». արմատ, որ իր առանձին գոյութիւնը պահած չէ դրաբարի մէջ, բայց սրանից են շաղիլ «սխալիլ, շփոթուիլ» և կրկնաբար շաղաղել «այլայլել, ծռմռել» (տե՛ս այս բառը)։ Շատ լաւ պահուած է բառս գաւառականների մէջ, ուր ունինք Ագլ. Երև. Ղրբ. Տփ. շա՛ղվէլ, շա՛ղվիլ «աչքը վատ տեսնել, կաթը փճանալ, սխալիլ, շփոթուիլ, շշկլուիլ, լեզուն չդառնալ, վատ արտասանել», շաղուեցնել «շփոթեցնել, սխալեցնել», շաղշղուիլ «շփոթուիլ». (իսկ շեղ>Ախց. Մկ. Պլ. շէղ»)։

=Բնիկ հայ բառ, հնխ. sqel- «կորացնել, ծռել» արմատից. ընդարձակ տե՛ս խեղ. Ձայնական դժուարութեանց լուծման մասին տես Grammont MSL 20, 215—216:

Bugge KZ 32, 57 և IF 1, 447 շեղ բառը կցից յն. σκέλος, σκολιός, լտ. scelus ձևերին, բոլորը միասին հանելով հնխ. skhel- արմատից։ Հիւբշ. 479 ընդունելով որ σκολιός =սանս. skhal և հյ. սխալ ձևերի հետ նոյն է, նախորդ համեմատութիւնը անապահով է գտնում։ (Այժմ սակայն չի ընդունւում σκολιός = սանս. skhal, հյ. սխալ)։ Հիւնք. շիւղ բառից։ Patrubány SA 1, 194 յն. κέλης «վազող» բառից։ Pedersen, Նպաստ 18 ընդունում է ըստ Bugge շեղ= σκολιός և ըստ Հիւբշ. սխալ=skhalati, որով նախաձևերը դնում է շեղ<հնխ. sqhel-, սխալ<հնխ. sqhl̥-։ Աճառ. ՀԱ 1904, 335 վերի ձևով իրար է կցում շեղ, շաղուել (պէտք է աւելացնել նաև շիլ) և սրանց կրկնակ է դնում սխալ։ Meillet BSL 17, 40 սխալ է գտնում շեղ=յն.σκολιός։Karst, Յուշարձան 426 շեղ և շիլ իբր ԲԲր. sol, čol «ձախ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 299 պրս. شيب šīb «զառիվայր» բառից։ Petersson, Ar. u. Arm. Stud. 28 շեղ, շաղել և շղթայ կցում է սանս. çulba «կապ» (հնխ. kʻu̯l̥-bo) ձևին։ Pokorny 2, 598 արդէն դրած է հնխ. sqel- «ծռել» արմատի տակ։ Պատահական նմանութիւն ունի արամ. שְׁלוֹ šālū «անփութութիւն, սխալմունք», որի բուն արմատն է שְׁלָא šlā «հանգիստ»։

*ՇԵՂԲ «դանակի երկաթը». մհյ. բառ, որ ունի միայն նորայր, Բառ. ֆր. էջ 49ա, alumelle բառի տակ։ Կենդանի է արդի գաւառականներում՝ շեղր, շեղրիկ, շղրիկ, շղուփ, շղրլինկ, շղպլիկ, շղրինկ ձևերով։

=Ասոր. ܫܠܦܐ šelpā, šəlāfā «դանակ», ܫܠܦܘܢܐ šelpūnā «փոքր դանակ», եբր. שֹׁלֵחַ šōlēf «դանակ, թուր», šalaf «սուրը պատեանից հանել», Լիբանանի արաբ. գւռ. šalfûne «դանակի փոքր բերան» (MSL 21, 240), արմատը ասոր. ܫܠܦ šəlap «extraxit, evellit, քաշել, հանել, խլել» (Brockelm. Lex. syr. 378)։—Աճ.

ԳԻՒ.—Ալշ. շեխփ «դանակի բերան», *Ե-րև.* շխպիկ, *Սվեդ.* շիխփ, *Սեբ.* շխբիգ, *Ախց.* շխպիկ, *Կր.* շխբ'իկ, *Զթ.* շեղր՝ «անկոթ դանակ կամ կոտրած դանակ», *Հճ.* շրջմամբ՝ խշպիկ *(կարդա՛ խշրիգ)* «դանակի երկաթէ մասը» *(ըստ Թէրզեան, Ամէն. տարեց. 1924, էջ 197)։*

ՓՈԽ.—Քրդ. šəxtik «հին անպէտք դանակ» *փոխառեալ է Հյ. գւռ. մի ձևից. բայց ուղղակի սեմականից է քրդ.* šilw «սրի կամ դանակի բերան» (Justi, Dict. Kurde, *էջ 260)։*

ՇԵՂՋ, ո *Հլ. (գրուած նաև շիղջ)* «կոյտ, դէզ *(յատկապես արմտիքների, ցորենի)»* *ՍԳր. Եփր. Ել. Ագաթ. Բուզ.* որից շեղջել «դիզել, կուտել» *Սերեր. Եւագր.* շեղջաշեղջ *Իմ. ժը. 23.* շեղջակոյտ *Սիր. իա. 9. Եփր. ծն. Եւս. պտմ.* շեղջակուտել *Բ. տիմ. դ. 6. Եւս. քր.* ջրշեղջ կամ ջրշիղջ *Ես. ԺԲ. 5. Եփր. Ել. էջ 158. Վեցօր. ևն։ Յետնաբար գրուած է* շեաղջ *Նոր վկ. էջ 515 (ԺԷ դար),* սեղջ *Զքր. սարկ. Ա. 68։*

Հիւնք. զեղչել *բայից։ Աճառ. Հյ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 94 իբր նորագիւտ բառ է դնում Տիմոթ. կուղ, էջ 222. գործածուած շեղջ բառը՝ «դագաղ» նշանակութեամբ։ Բայց Հ. Պ. Ֆ. (ՀԱ 1910, 30) ցոյց է տալիս, որ այս բանը թարգմանչի մէկ սխալն է, որ յառաջացած է յն.* σορός «դագաղ» *բառը* σωρός «շեղջ» *կարդալով։ Սրանով նորագիւտ* շեղջ «դագաղ» *բառը ջնջւում է։* Petersson, LUÄ *1915, 7; 1916, 40 (ըստ* Pokorny *1, 367) հնխ.* k'eu- «ուռչիլ» *արմատից է հանում. համմտ. հիսլ.* hvāll «կլոր բլուր», *շվեդ. գւռ.* hvälm «խոտի դէզ» *ևն։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. շեխջ', *Մկ.* շէղե, *Վն.* շեղ[1], *Երև.* սեխե «շեղջ, դէզ». *Նոյն բառը Ղզ. «վառարանի մէջ դիզուած կրակ» նշանակութեամբ. որից Ջղ.* շխշել «դիզել, հաւաքել». *Նոր բառեր են* շեղջանակ *Վն. «շեղջի նման դիզուած»,* շեղջակոլոլ *Ղզ. «կրակախառն. կիսավառ»։*

ՇԵՂՏԱՄԵՂՏ «ցոփ, խենէշ» *Իրեն. Հերձ. 136. «Թոյլ, մեղկ» Կանոն. ըստ Հին բռ. նշանակում է «ծոյլ, Թոյլ»։*

=Անշուշտ կրկնուած է անծանօթ շեղտ բառից։—Աճ.

ՆՀԲ «որպէս թէ շերտ շերտ եղեալ մեղկութեամբ»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 207։—Գազանճեան, Արև. մամ. 1902, 77 շեղտ *բառից մ մասնիկով և կրկնութեամբ։*

ՇԵՄ, ՇԵԱՄ *տե՛ս Սեամ։*

ՇԵՄԱԿ, ի–ա *Հլ. անսովոյ բառ, որ մէկ անգամ գործածուում է Ագաթ. § 211. «Ապա յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զօրաց ածել կուտել զպատառականն, խուճապական սփռեալ, երագազ տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթեալ ի դաշտն Փառական Շեմակաց»։—ՆՀԲ կարծում է թէ* շեմակ *սխալ գրչութիւն է՝ փխ.* եմակ «ձոր, հովիտ».—*բայց* եմակ *լինելով հերքական փոխառութիւն՝ հազիւ թէ հին հայկական մի տեղանուան մէջ մտած լինէր. միւս կողմից Ագաթանգեղոսի բոլոր ձեռագիրները ևնթադրել են տալիս* շեմակ *ձևը և ո՛չ մէկը չունի* եմակ։ *Նոյն* շեմակ *ձևն ունէր նաև Ագաթանգեղոսի յոյն թարգմանը՝ որ ստրկօրէն տառադարձելով գրում է* Φαρακάνη Σεμάκων *(տե՛ս Յունարէն Ագաթ. հրատ.* Lag. *էջ 45.—արաբական թարգմանութիւնը՝ էջ 26 չունի այս կտորը)։ Սրանցից հետևում է որ* շեմակ *ձևը ուղիղ է։ Ագաթանգեղոսի նոր տպագրութեան հրատարակիչները յիշում են Սեբ. հրատ. Պտկ. էջ 7 «և Փառականն դաշտ որսոց և արշաւանաց նոցին» հատուածը, որ նոյն է ճշտիւ «ի դաշտն Փառական շեմակաց» ձևի հետ և որից հետևցնում եմ թէ* Փառական՝ *դաշտի յատուկ անունն է, իսկ* շեմակ *նշանակում է «որս»։*

ՇԵՇ *(ի Հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «սուր կերպով, խիստ, ուժգնութեամբ, դէպ ուղիղ» Խոր. ՅՀ. կթ. «սուր ձայն և սրա նշանը» Փիլ. այլաբ. Թր. քեր. որից* շեշտել *«սուր ձևով կտրել» ՅՀ. կթ. «ձայնը սուր հնչել» Քեր.* շեշտակի կաղանկտ. *ՅՀ. կթ.* շեշտումն *Խոր. յանգաշեշտ Երզն. քեր.* յարաշեշտ *Ոսկիփ. ևն։*

ՆՀԲ լծ. սաստ, սաստիկ, խիստ, աշտեայ, *Թրք.* խըշտ, շիշ *և լտ.* seco, sectio «կտրել, կտուրք»։ Petersson IF *43*

(1925), 74 շետ բառից, որ է հնխ. k'ṷedo=հբգ. hwaz «սուր» ևն։ Ղափանցեան, *Տեղեկ. ինստ. 2, 85* շերտ բառից։

*ՇԵՇՓԱՒՌ «լախտ». ունի միայն Բառ. հրեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 555. նոյնը շաշփառ «elava, լախտ» Rivola, կամ շաշփար «լախտ» Տիրոյեան, Հանրագրութ. էջ 543։

=Պրս. شَشپَر šašpar (նոր հնչումով šäšpär) «լախտ վեցշերտեան, որ ի հնումն հռչակեալ էր յաշխարհին Հոռոմոց և ի գործ ածիւր»։—Աճ.

*ՇԵՊ «շեղ, զառիվայր» Վեցօր. 148. «լեռան ափափայ» Գէ. Ես. «մէջքի վրայ պառկած» Վրք. Հց. որից farշեպ «անդունդ, վախք» Արիստ. գրչ. (ՆՀԲ չի յիշում առանձին. բայց տես վախ բառի տակ)։

=Պհլ. *šēp ձևից, որ անկախ չէ աւանդուած. բայց սրանից են պհլ. ni-šēp «վար տակը», ni-šēp-ītan «վայր իջնել, տակն երթալ», պրս. شیب šeb, šīb «զառիվայր, խորտուբորտ գետին», nišēb «զառիվայր». բելուճ. šēp «զառիվայր, ձոր», աֆղան. šēwa «զառիվայր», քրդ. šīw «ձոր», որոնց բոլորի հնագոյնն է զնդ. xšvaepā- «յետևը» (Horn § 799)։—Աճ.

ՆՀԲ լծ. շեղ և սեպ, ասկ. շէվ, շիվ, շիպ, շէվգ, լտ. supinus: Աճառ. Արրատ. *1910, 180* պրս. šēb ձևի հետ։

ԳԻՒՐ.—Ալշ. շեփ «գութանով հողը վարած ժամանակ շուռ տրուած հողը՝ երկար թըմբի ձևով դարսուածծ» (նոյնը և Բլ. Նբ. Վն.)։

ՇԵՒՐ «մէզ», որից շռատ «միզարգելութիւն ունեցող», շռծակ «ծակ միզանոցի անասնոց» Վստկ. *213*։

Սպրդեան ՀԱ 1909, 336 և Karst, Յուշարձան *407* սումեր. sura «միզելով»։

ԳԻՒՐ.—Ալշ. ՋԲ. Մշ. Զթ. Սլմ. շէռ, Մխց. Սրև. Կր. Համշ. Մկ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տիգ. շէռ, Ասլ. շէ՝ռ, Հճ. շէր, Սեբ. շռտ, Սվեդ. շիռ, Տփ. շիր ևն։ Նոր բառեր են շռել (Համշ. շռուշ), շռան, շռաման, շռկապ, շռնող։

ՇԵՐ «ստիւրաքս ծառը և նրա ճիւղը. լտ. styrax» ՇՆ. լ. *37*. Վրդն. ծն. գրուած է նաև շէր (*ՀԲուս. § 2303*), շերբ, շերդ, շերտ (*ըստ ՆՀԲ*). որից շերոց «անտառ շեր ծառոց» Հին քեր.։

ՆՀԲ լծ. յն. στύραξ։ Թազիադեան, Առաջն. մանկանց, էջ *48* հնդ. պրս. շիրա «հոյզ» բառի հետ (նոյն է նաև վրաց. Ծօճա շիրա «ծառի խէժ, ռետին»)։ Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ *39* գրելով շաեր՝ համարում է յն. բառից տառադարձուած։

*ՇԵՐԱՍ (գրուած նաև շէրաս) «մետաքսի որդը, հնդիկ որդ» Վեցօր. *177* (Յայնմ զնոնոյ որ կոչի շէրաս, այսինքն կերպասաբեր). վերջին տառը Ս՝ սխալ կարդացուելով, բառս դարձել է յետոյ շերամ, ինչպէս ընդունուած է արդի գրականում և որից շինուած են շերամատուն, շերամաբոյծ, շերամապահութիւն, շերամաբուծութիւն (*տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. էջ 13*)։

=Փոխառեալ բառ է, բայց յայտնի չէ ո՛ր լեզուից. համմտ. յն. στῆρ, սեռ. στῆρός «շերամ. 2. մետաքսէ թել կամ հիւսուած կտոր», որ գալիս է Στήρ, սեռ. Στῆρός, յգ. οἱ Στῆρες ազգի անունից (Boisacq 861). այս անունով հին յոյները հասկանում էին ծայրագոյն Ասիոյ մի ժողովուրդ, որից սովորել էին մետաքսագործութեան արհեստը։ (Լսա Schrader, Reallex. յոյն բառը ծագում է մանչու sirghé, կորէական sir «մետաքս» բառից, որից ժողովրդական առուգաբանութեամբ ձևացել են մի կողմից στήρ և միւս կողմից οἱ Στῆρες); Յունարէնից է ծագում լտ. seris «շերամ»։ Բայց հայը չի կարող յունարէնից լինել փոխառեալ՝ նախաձայն շ-ի պատճառաւ։ Լսա Lag. նախաձայնին համաձայն են ասոր. ܫܪܝܪ կամ ܫܥܙܪ šerāyā «մետաքսեղէն», ܥܒܕ ܫܥܙܪ 'abd šerāyā «շերամաբոյծ», ܫܪܡܪ śarmar «the silk cotton tree» (Brockelmann, Lex. syr. *362 բ, 390 ա*)։

ՀՀԲ դրաւ յունարէնից։ ՆՀԲ յիշում է յն. և լտ. ձևերը։ Ագգաստր 1846, 143—4 գիշեր+ամպ բառերից։ Müller SWAW *38, էջ 577, 581, 589,* ինչպէս նաև Justi, Zendsp. *84* սանս. kṛmi, զնդ. kərəma, պրս. kirim, քրդ. kerm «որդ» բառի հետ։ Lag. Arm. Stud. § *1692* գնում է ասորերէնից։ Müller SWAW 136

(1897), էջ 34 յն. σήρ։ Մառ, Тексты I (1925), էջ 111 ռուս. шелк «մետաքս» կամ червь «որդ», մինգր. šuala,ršuala «կտաւ», վրաց. qsal «առէջ» բառերի հետ։ (Վրաց. qsal բառի համեմատութիւնը հյ. կտաւ բառի հետ, ինչպէս նշանակած եմ վերը, հմ. Գ. էջ 1457, վերջին երկու տողերը, սխալման արդիւնք է և պէտք է ջնջել)։

ՓՈԽ.—Patrubány SA 1, 224 հյ. շերամ բառից փոխառեալ է դնում հունդ. selyem «մետաքս»։

ՇԵՐԳՈՒՆՕՂ «իմաստուն». դիտէ միայն Բառ. երեմ. էջ 245։

ՇԵՐԵՓ կամ ՇԵՐԵՊ «մեծ գդալ» Ոսկիփ. վստկ. 93. Յայսմ. դեկ. 29 (տպուած է շերեք). որից շերեփակոր «թևաւոր մի միջատ է» Վանակ. հց. շերեփաձև կղնկա.? Նոր բառ է շերեփուկ «դորտի նախաձևը» (գւռ. գորտան գդալ)։

Մառ Тексты I (1925), էջ 91—93 յաբեթական k'lp արմատից. հմմտ. արաբ. مشرب mašraba «ըմպանակ, ջրաման» (ամհ. մօրշուփա. բայց արաբ. šrb «խըմել» արմատից է)։

ԳՒՒ.—Ալշ. Մշ. շէրեփ (սեռ. շէրբ'ի), Ախց. Երև. Խրբ. Կր. Նախ. Ռ. Սեբ. Տփ. շէրէփ, Սլմ. Վն. շիրեփ, Գոր. Ղրբ. Մրզ. Շմ. շիրէփ, Համշ. Տիգ. շէրիփ, Ագլ. Մկ. Սվեդ. շիրիփ, Հճ. շիյյէփ, Զթ. շիյիփ, շիրիփ։

ՓՈԽ.—Լազ. շերեպի «մեծ գդալ»։

ՇԵՐՆԱԳՈՅՆ «երկնագոյն». ունի միայն Բառ. երեմ. էջ 245. արմատը շերն-։

ՇԵՐՏ, ի հլ. «փայտի ջարդած կտոր» Գ. Թագ. ժը. 33—38. «պանրի կտոր» Ոսկիփ. Վրդն. առակ. 29. «որևէ բանի երկար կամ տափակ կանոնաւոր կտրուած կտոր (օր. հացի, սեխի, պանրի ևն)», «խաւ (օր. հողի, կաւիճի, աւազի)» (այս երկուսը միայն արդի գրականում), «ցանկապատի ցից, ցանկ» ԱՐ, «տապար, կացին» (այս իմաստով երևում է միայն ածանցների մէջ)։ Սրանից են շերտել «շերտ շերտ կեղևել, գծել, ջարդել» Շնորհ. Բարձր. «ճեղքել» ՅՀ. կթ. 434. շերտակոտոր առնել (գրուած նաև շերդակոտոր) «տապարով ջարդել, կոտրատել» Պիտ. 408. շերտափակ «ցիցերով փակած՝ գոցած», շերտաւոր փակել «ցիցերով պատնէշ շինել» Ողիշ. ե. էջ 81 (ՆՀԲ չունի), շերտաւոր «տապարաւոր դինուր» Բուզ. Խոր. ՅՀ. կթ. (Հացունի, Պատմ. տարազի 154 հասկանում է «շերտ շերտ զրահներ հագած» և ո՛չ թէ «վերտ կամ կողինաւոր»)։ Նոր բառեր են շերտաւորել, շերտաւորում, շերտաւորութիւն։

Riggs, Քերակ. էջ 61 անգլ. shred «մանրել, կտրտել» բառի հետ։—Տէրվ. Նախալ. 112 հնխ. skard «ճեղքել» արմատից. հմմտ. գոթ. skreitan: Հիւնք. շուրթն բառից։ Bugge KZ 32, 57 համարում է շրջուած *շեռr ձևից և կցում է յն. *σχέδη (որից լատ. scheda), σχεδάριον «գրքոյկ, թերթ, տախտակ», σκεδάννυμι «ցրուել, ցանցնել» բառերին։—Հիւրշ. 480 սխալ է գտնում թէ՛ այս և թէ շերտ ձևին նման ուրիշ մի խումբ բառերի համեմատութիւնը։ Այսպէս՝ 1) յն. σχέδη «տախտակ, թերթ», որ աւանդուած է յատնաբար, փոխառեալ է ընդհակառակը լտ. scheda բառից. այս էլ յառաջանում է յն. σχίδη բառից, որ պատկանում է σχίζω բային (Pokorny 2, 558, Walde 684), որի համապատասխանն է հյ. ցտել։ 2) յն. σκεδάννυμι «ցրուել, σχίδναμαι «ցրուել, տարածել» նշանակութեամբ յարմար չեն շերտ բառին։ 3) Աւելի յարմար են նշանակութեամբ յն. σχίζω «ճեղքել», σχίζα «փայտի կտոր», σχίδαξ «ճեղքուած փայտ», գերմ. Scheit «փայտի մեծ կտոր» են, բայց ձայնապէս անյարմար են (ծագում են հնխ. sk'hid ձևից, որ է հյ. ցտել)։ 4) Եթէ ընդունինք թէ հյ. շ <sk, կարելի է համեմատել լիթ. skėdrà կամ *skidra «տաշեղ», բայց սրանք էլ պիտի տային հյ. շէրտ կամ շիրտ։ 5) Վերջապէս յն. σχάζω «հերձել», գնդ. sčind (իրանեան արմատը skand, sčand, skad), պրս. šikastan «կոտրել» չեն յարմարւում հայերէնին՝ նշանակութեամբ և ձայնապէս։ Հայերէն շերտ պահանջում է հնխ. sked-r- ձևը։ Միջին ճանապարհն է բռնում Pedersen,

Նպաստ 18 և համեմատում է յն. σχίζω «ճեղքել» և σκεδάννυμι «ցրել» բառերի հետ, ենթադրելով թէ հնխ. sqheid- *և* sqhed- *միևնոյն արմատի ձևափոխութիւններն են։* Patrubány SA 1, 195 *լիթ.* kertù *«կտրել», յն.* κρότος *լտ.* curtus *են (որոնք սակայն կցւում են հյ.* Ճերել *արմատին), Թիրեաքեան, Արիահայ բռ. 300 հյ. ըրտնում և սարտնում բայերին է միացնում։* Pokorny 2, 558 *նորից է կրցում սանս.* skhadatē *«ճեղքել», պրս.* škastan *«կոտրել», յն.* σκεδάννυμι *«ցրել», σκίδνημι «ցրուիլ», ալբան.* tšan´, tšaj *«ճեղքել, պատռել, հերկել», անգսք.* scaterian *«ցրուել», անգլ.* shatter *«ջարդել, փշրել», լիթթ.* škedēns *«ջարդած փոքր փայտ», լիթ.* kedėti *«ճաքիլ, ճաքճըքիլ», ռուս.* щедрый *«առատաձեռն» են բառերին և բոլորը միասին հանում է հնխ.* sq(h)ed- *«ճեղքել, ցրուել» արմատից։—Այս բոլոր ձևերից ամենայարմարն է Հիւբշմանի մատնանշած լիթ.* skėdrà *«տաշեղ», որ թէև պիտի տար հյ. *շէրտ, բայց այս էլ համաձայն հայերէնի ներքին ձայնական օրէնքներին՝ իսկոյն պիտի դառնար շերտ։ Անպատեհ է միայն այն հանգամանքը, որ լիթ.* skėdrà *դրւում է հնխ.* sqeid- *արմատի տակ, որ տալիս է հյ.* ցտել։ *Ներկայ ենք թևրևս ձայնաբանական մի առանձին օրէնքի, որի պայմանները անծանօթ են մեզ։—* Petersson, Ar. u. Arm. Stud. 89 *հաաքս.* hwat, *հրգ.* hwaz *«սուր, հասու», հհիւս.* hváta *«ծակել», հիռլ.* cuit *«մաս», կիմր.* peth *«իր, մաս», կորն.* peth, *բրբտ.* pez *«կտոր» բառերի հետ հնխ.* k̑ued- *«ճեղքել» արմատից, որ աճել է* -r- *աճականով։ Մառ, Яфет. сбор. 1, 124 յարեթ.* skor- *«կտրել» արմատից։ — Պատահական նմանութիւն ունին ասոր.* ʿšrt *šərat «պատառոտել» և արաբ.* شرط *šarṭ «մարմինը շառաել»։*

Գիմ.—Մկ. շէրտ, շէրտիլ *«մանր կոտորել», Ալշ. Մշ.* շերդ, շերդել *«շերտ շերտ կտրել», Սեբ.* շէրդել *«պատռել», Խրբ.* շէրդ, *Տիգ.* շիրդ, *Երև.* շէրթ, *Սվեդ.* շիրթ, *որից* շիրթիլ *«կացինով ճղրտել, քարով գլուխը ջարդել»։*

*ՇԵՓՈՐԱՅ *կամ* ՇԻՓՈՐԱՅ, *ի հլ. որ և* շեփոր *կամ* շիփոր *(սեռ. -այ) «նուագափող» Նորագիւտ Ա. մնաց. ժե. 28, Ագաթ. Մծբ. Եփր. համաբ. 79. Վկ. արև. 135. նոր գրականում ընդունուած է միայն* շեփոր, *որից* շեփորուկ *«մի տեսակ ծաղիկ, տճկ.* boru *(«շեփոր»)* čičeyi*».—գրուած է նաև* շիփող! *Գնձ.։*

=Ասոր. ʿšīfōrā *«շեփոր», որ գալիս է հրէարէն* שִׁפּוּרָא šifūra, *եբր.* שׁוֹפָר šōfār *«շեփոր, պատերազմական փող» բառից. սրանից են փոխառեալ նաև պրս.* شپور šapōr *կամ* شیپور šēpōr, *արաբ.* شبّور šabbūr *«շեփոր, փող»։ Բառս բնիկ սեմական է. նախապէս նշանակում էր «եղջիւր, կոտոշ». համմտ. ասուր.* 𒄑𒁍𒊑𒁍 šapparu *«վայրի այծ», արաբ.* سوافر savāfir *«խոյի եղջիւրներ»* (Strassmaier, Alphab. Verzeich. 994, Delitzsch, Assyr. Handwb. 683)։—Հիւբշ. 313։

ՀՀԲ համարում է «բառ եբր.»։ ԳԴ պրս. շէփուր։ *ՆՀԲ եբր. և պրս. ձևերը։* Müller SWAW 38, 577 *եբրայեցերէնից.* Lag. Armen. Stud. § 1693 *ասորերէնից։*

*ՇԵՔ *«քայլ կամ միջոց երկուց ոտից», որից* շեշեմել *«անհարթութեամբ գնալ». երկուսն էլ ունի միայն Բառ. երեմ. էջ 245։ Կենդանի է արդի գաւառականներում՝* շեմ, շենք, շեռ *ձևերով և «մեծ քայլ, ցայլք, ազդրերի միջոցը» նշանակութիւններով. որից կազմուած նոր բառեր են* շեմել, շեմամէջ, շեմատակ, շեմելեմ, շեմոկել, շեմոռուկ։

=Ասոր. ʿsqa *šaqa «fémur, բարձոսկր», ն. ասոր.* šäkä *«սրունք», եբր.* שׁוֹק šōq, *արամ.* שׁק šāq, שׁקא šāqā, *արաբ.* ساق sāq *«սրունք»։—Աճ.*

ՆՀԲ յաւել. հտ. Բ. էջ 1065″ յիշում է արաբ. շէգր *«առականք»։*

*ՇԻԹ *«խնոթ, յիմար». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Վրդն. առ. 343. «Ե՛րթ ի բաց, յիմար և շեթ». նոյնը սրան մօտաւոր իմաստով ունի Սմբ. դատ. 6. «Վասն կնկան որ փնթի ու շէթ լինի»։ (Առա-*

չին վկայութեան մէջ գրուած է շեր ձևով, երկրորդի մէջ՝ շէր)։

=Վրաց. Ցցո շերի «խննթութիւն, հիւանդութիւնից յառաջացած կաւտաղութիւն», Ցցոօճո շերթիանի «կաւտաղած, խննթ», ցաՑցոցծա գաշերթերա «ուշաթափ անել, одурить, привести въ ошаленье»։—Ա՛ճ.

*Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 88 կապում է խենթ բառին, որի նախնականը համարում է *խեր:*

ԳԻՒ.—Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 512 Գնձ. շեր «խենթ»։ Նո՞ւն է արդեօք Ղրբ. շիր «ծաղրելի, տարօրինակ, աւելորդ զարդերով ծանրաբեռնուած»։

Շէկ *(գրուած նաև շեկ. ըստ ՆՀԲ ի–ա հլ. բայց առանց վկայութեան) «դեղնակարմիր» Անյ. հց. իմ. Պտմ. աղէքս. 141. Նիւս. բն. Պղատ. տիմ. 143. որից են շիկնիլ «ամաչելուց կարմրիլ» Բուզ. շիկաթան Մն ին. 30. շիկակարմիր Ալ. իզ. 14. Բուզ. շիկափոկ վիպաս. (առ Խոր. բ. 50). շիկխարի «անգոյր» Մծբ. (տե՛ս խարի). հրաշէկ Յայտ. ա. 15. Նար. հրաշիկացուցանել Լծ. Նար. առաշէկ (կամ առաշեակ) «կրակի պէս կարմիր» Փիլ. այլաբ. (սխալ գրչութեամբ առաշէկ Խոր. դ. 37). առաշիկանալ «կրակի գոյն առնել» ԱԲ կամ առաշիկանալ Փիլ. Զքր. կթ. Տօնակ. առաշիկագոյն Անյ. բրձր. Շնորհ. բրձր. շիկատակ «մի տեսակ բոյս, atropa belladonna L» (Տիրացուեան, Contributo § 391). Նոր բառեր են շիկաներ, շիկամորթ, շիկացնել են։*

Canini, Et. étym. *87, 182 սանս.* çuč *«փայլիլ»,* çuka *«կարմիր» բառերի հետ։* Lidén, *Յուշարձան 386 իբր բնիկ հայ՝ հնխ.* k'u̯oito- *ձևից՝ կ մասնիկով. հմմտ. սանս.* çvit- *«փայլիլ»,* çvētá *«փայլուն, պայծառ, սպիտակ», զնդ.* spaēta- *«սպիտակ»,* spiti- *«պայծառ», հսլ.* světŭ *«լոյս, արշալոյս», լիթ.* szvintù *«լուսանալ»։ (Կրկնում է* Pokorny, 1, 470՝ *հնխ.* k'u̯eit- *«փայլիլ, փայլուն, սպիտակ» արմատի տակ)։ Ղափանցեան* ЗВО *23, 355 քրդ.* šē *«շէկ»։*

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Գոր. Կր. Ջղ. Վն. Տփ. **շէկ**, *Մրղ. Սլմ.* **շէկ**^{1}, *Ալշ. Երև. Հմշ. Մշ. Ննխ. Շմ. Սեբ.* **շէգ**, *Ղրբ.* **շէ**$^{\text{i}}$**գ**$^{\text{i}}$*։ Նոր բառեր են* **շէկիկ**, **շէկուկ**, **շէկլիկ**, **շէկոիլ**, **շէկ-բոց**, **շիկաճող**, **շիկապեխ**, **շկնտեռես** *«ամաչկոտ» (<շիկնոտ-երես):*

***Շէն**, *ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «շինուածք, շինութիւն լինելը» Ոսկ. յհ. ա. 22. Նխ. ա. եզր. «աւան, գիւղ» Բուզ. Եւս. պտմ. «մարդաբնակ, բնակելի, արգաւանդ, ուրախ, զուարճալի» ՍԳր. Ոսկ. Ագաթ. Եփր. Թգ. որից* **շինել** *ՍԳր.* **շինութիւն** *ՍԳր. Եղիշ.* **շինական** *Ագաթ. Ոսկ. մ. գ. 25.* **շինականագոյն** *«կարի վայրենաբար»! Բ. մկ. ժդ. 30.* **շինականաշէն** *Բուզ.* **շինակեաց** *Ագաթ.* **շինամէջ** *Ոսկ. մ. ա. 15. Ագաթ.* **շինարար** *Եփր. ծն. աճշէն ՍԳր. Ոսկ.* **նորաշէն** *Ոսկ. ես. և ա. տիմ. մարդաշէն Բ. մկ. Թ. 17.* **բարեշէն** *Մաղաք. գ. 15. Ոսկ. ես.* **երդաշէն** *Ոսկ. եփես.* **խորանաշէն** *Ագաթ.* **հաստաշինած** *Բուզ.* **մեհենաշէն** *Ագաթ.* **շինասէր** *«շինարար» (չունի ԱԲ) Սմբ. պտմ. 114.* **շինուածանիւթ**, **շինարարական** *(նոր բառեր). Նաև բազմաթիւ տեղանունների ծայրին. ինչ.* **Հայկաշէն**, **Համամաշէն**, **Շակաշէն**, **Վարդաշէն**, **Արտաշէն**, **Վասակաշէն** *են։*

*=Պհլ. *šēn ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց նոյնն է հաստատում նորագիւտ սոգդ.* šēn *«տեղի հանգստեան»* (Gauthiot, Gram. sogd. 96): *Այս բառը ծագում է իրան.* ši *«բնակիլ» արմատից. հմմտ. զնդ.* šiti- *«բնակարան»,* -šayana *«բնակութիւն, բնակարան»,* anašita- *«անբնակ»,* šōiθra- *«բնակավայր». սանս.* kšaya-, kšiti- *«բնակարան», որոնց ցեղակից են յն.* κτίζω *«շինել, հիմնել»,* εὐκτίμενος *«բարեշէն», հոդ.* κτοίνα *«բնակարան, գաւառակ», լտ.* situs *«շինուած, հիմնուած, զետեղուած, դիրք»։ Բոլորի հնխ. արմատը* k'ei- *«բնակիլ, հաստատուն բնակութիւն հիմնել»* (Walde 718, Pokorny 1, 504, Boisacq 526): *Իրանեանից փոխառեալ է նաև սուր.* ܫܝܢܐ šainā *«մշակեալ երկիր, յաջողութիւն, երջանկութիւն, խաղաղութիւն, շէն, բարեբեր»։—Հիւբշ. 213։*

ՆՀԲ մեզանից է դնում յն. σκηνή, *լտ.* scena, *իտալ.* scena: Gosche 13 *սանս.* či *«հաւաքել» բայի հետ։ Եւրոպա 1849, 200 հպրս.* չանա: Lag. Urgesch.

166 սանս. kši, *յն.* κτι- (εὐκτίμενος *ձևի մէջ*)։ Spiegel, Huzw. Gram. 190 *զնդ.* ši «բնակիլ» արմատից։ Pictet 2, 244 *սանս.* kši: Müller SWAW 42, 254 *զնդ.* ši, *յն.* κτίζω: Justi, Zendsp. 95 xši «բնակիլ» արմատի տակ։ Lag. Btrg. bktr. Lex. 63 *զնդ.* šayana, *ինչպէս նաև բարդութեանց վերջում, ինչ.* Հայկաշէն, *ճիշտ զնդ.* Suγδōšayana: *Նոյնը նաև* Müller SWAW 78, 431, Armeniaca IV *425 և Հիւբշ.* KZ *23, 39։—Մորթման* ZDMG *26, 565 բևեռ.* šinidai *կամ* šinidai «շինել տուին»։ *Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 93* շէն «գիւղ»=*զնդ.* šayana, *իսկ* շէն «ուրախ»=*թրք.* šen *պատահական է*։ Justi, Kurd. Gr. 211 *քրդ.* niži-nim «շինեմ»։ *Տէրվ. Նախալ. 127 հնխ.* skaina *ձևից։ Հիւնք. բոլորն էլ* շէն «ուրախ» *բառից։ Հիւբշ.* Arm. Gram. 213 *դրած էր վերի ձևով՝ իբր իրանեան փոխառութիւն. բայց* Strassburger Festschrift, *էջ 70—71 ընդունելով որ ասորի բառը ըստ* Nöldeke *բնիկ սեմական է և պահլաւ բառը գոյութիւն չունի, հրաժարուեց նախորդ մեկնութիւնից և հայերէնը դրաւ բնիկ՝ իբր ցեղակից վերի բառերի հետ, հնխ.* kþoinā- *ձևից. միայն կասկածելի է համարում* kþ->š *ձայնափոխութիւնը, որ այլուր չի պատահում։* —Karst, *Յուշարձան 415 մոնղոլ.* čik, *բուրիաթ.* šike, seke, *կալմուկ.* tsekele, *Թունգուզ.* tseke, seke, *թրք.* čun, čin, *կըրկըզ.* šijn, šen «ուղիղ» *բառերի հետ։ Սանտալճեան, ՀԱ. 1913, 409 խալդ.* ši։ *Վերի մեկնութիւնը հաստատուեց* Salemann ИАН *1913, էջ 1130, հայերէնի հետ դնելով նորագիւտ սոգդ.* šīn *ձևը։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 88 խալդ.* -xinili:

Գիւղ.—1. Շէն «գիւղ» *ունին միայն՝ Գոր. Ղրբ.* շէն, *Շմ.* շիւ *ձևով.—2.* շէն «ուրախ» (*նաև* «հարուստ») *իմաստով ունին՝ Ալշ. Ախց. Ասլ. Գոր. երև. Ջթ. Խրբ. Կր. Ղրբ. Հճ. Հմշ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Պլ. Ջղ. Ռ. Սլմ. Սեբ. Վն. Տփ. Տիգ.* շէն, *Սչ.* շեօն *(միայն «Աստուած շէն պահէ» ասացուածի մէջ).—3.* շինել *բայն ունին՝ Ալշ. Հճ. Մշ. Ջղ. Սլմ. Սչ. Վն.* շինել, *երև. Մրղ. Սեբ. Տիգ.* շինէլ, *Ախց. Կր.* շինել, *Ջթ. Խրբ. Շմ. Սվեդ.* շինիլ, *Ագլ. Գոր. Ղրբ. Մկ. Տփ.* շինիլ, *Հմշ.* շինուշ, *Ակն. Պլ. Ռ.* շնել, *Ասլ.* շնէ՛լ, *Մն.* շուռնել.—*այլ ձև է ստացած Ալշ.* շիկել, *Մշ.* շիգ՛ել *բառերի մէջ (որ է* շեմբել)։—*Նոր բառեր են* շենցնալ «մարդաշատ դառնալ», շենիս «կազմ», շենիշ-շնորհիշ, շենիով, անշենիշ, շենշող, շենութիւն, շենսիրտ, շինամէջ, շինահաւան, շինացի, շինծու, շինովի, շինոտել, շինուկ, շիրել, շիւոուիլ, շիւոուկ։—*Էնկիւրիի Թրքախօս հայոց մէջ* շենիսիզ-շնորհսուզ «անշնորհք» *(Հիւր. 1898, 865)։—Ջղ.* շինուիլ «կնոջ հագուիլ զարդարուիլը» *(որի հին գործածութիւնն ունի Բրս. մրկ. 64. Շինուիլն զօտարսն կարէ խաբել և ոչ զիւրն... տգեղն որչափ շինուի, աւելի երևի տգեղութիւնն)։*—Շենշող *կազմուած է ո՛չ թէ* շող «ցոլք» *բառից, այլ պրս.* شوخ šūx «ուրախ, զուարթ» *ձևից, որ գործածական է նաև Թրքական լեզուների մէջ. ինչ. Կազանի Թթր.* šux Kiši dur «ուրախ մարդ է» (Будагов, *1, 674), օսմ.* شن و شوخ šen u šux «ուրախ զուարթ» *(Կամուս, Թրք. Թրգմ. Ֆ. 258)։*

Փոխ.—*Վրաց.* შენი շենի «շինուած, բնակեալ, գիւղ», შენობა շենոբա «գիւղ, շէնք», ნაშენი նաշենի «շէն, շէնք, շինուածք», აღშენება աղշենեբա, აშენება աշենեբա «շինելի», შენება շենեբա «շինել, կառուցել, հարստացնել», დაშენება դաշենեբա «հաստատել, դաղթեցնել, բնակեցնել» *Սղ. ժդ. 1.* დაშენებული դաշենեբուլի «բնակեալ, շէն». მოშენე մոշենե «բնակիչ», მოშენება մոշենեբա «տակին կամ կողքին տուն շինել, տարածել, բազմապատկել», გარდაშენება գարդաշենեբա «բնակութիւնը փոխել տալ, ջնջել, աւերել», უშენო ուշենի «անմարդաբնակ, անշէն, անապատ», უშენობა ուշենոբա «անշէնութիւն, անբնակութիւն», *Թուշ.* შენობ շենոբ «շէնք, շինութիւն», (Ч'арая, Объ отнош. абхазск. яз. *էջ 38 սրանց է կցում նաև ափխազ.* ṣən «շինել, կառուցել»), *քրդ.* شینی šini «բնակուած տեղ, շէն դիւղեր» (Justi, Dict. Kurde, *էջ 267), շէն «շէն» (օր. Օնա՛ղէդը շէն պի «Օջաղըդ շէն մնա՛» Շուտ, Քրդերը Տաճկաց—Հայաստ. Ա. 89),* անշէնս «տնաշէն» *(Միրա-*

խորհան, Նկարագր. ուղև. Գ. 96), շէն պըն «քաջալերուեցէք» Գծ. իէ. 22, 25, 36. չաղաթ. شين šin *«ուրախ, ոգևորեալ, շէն, մարդաբնակ, մշակուած», šinlik «զուարճութիւն, ուրախութիւն, յաջողութիւն, շէն երկիր», օսմ.* شن šen *«ուրախ, զուարթ, շէն, մարդաբնակ, բազմամարդ»,* شنلك šenlik *«ուրախութիւն, հանդէս, տօն»,* شنلنمك šenlenmek *«զարճանալ, շէննալ, բազմամարդ դառնալ»,* شنلتمك šenletmek *«զուարճացնել, շէնացնել, բազմամարդ դարձնել», գւռ. Բրք. Ակն. šen «ուրախ, շէն» (օր. šen olasən «շէն մընաս»), նաև «շէնք՝ որ պարզ գետնի վրայ չէ շինուած, այլ տակին ուրիշ բնակութիւն կայ», Բրք. գւռ. Տ. šenksiz «անշնորհք» (Բիւր. 1899, 799).—Թուրքերէնի միջոցով բառս անցել է նաև բալկաններր. այսպէս՝ հին սլով. šenĭligŭ, սերբ. šenli, šenlenk, šenlok, šelmuk, šenlučiti, šemno, ռում. šenlîk կամ šinlîk:*

ՇԷՋ *«հանդիլ, մարիլ». արմատ առանձին անգործածական, որից* շիջանիլ *«հանդիլ» ՍԳր. Եղիշ. շիջուցիչ Իմ. ժթ. 19. Սիր. ծն. շիջուցանել ՍԳր. Սեբեր. շիջելափառ Ցոր. լ. 8. շիջանուտ Ագաթ. անշէջ ՍԳր. դիւրաշէջ Ճառընտ. հրշէջ, հրդեհաշէջ (նոր բառեր) ևն։*

ՆՀՐ իջանել կամ զիջանիլ ձևից։ Հիւնք. իջանել բայից։— Karst, Ցուշարձան 426 Բրք. չաղաթ. sōn-mek *«շիջանիլ»։ Մառ ИАН 1913, 181 մինգր. շՒիաատուա «շիջումն», ափխ. ապսը «հոգի, մեռեալ» և հյ. շունչ բառերի հետ։*

ՇԷՐ *«ժողովրդական երգ» Մամիկ. էջ 42. որից շէրասաց «բանաստեղծ, երգիչ» ԱՐ.— կարծեմ նոյն բառն է սխալ գրչութեամբ չեշ «երգ» Բառ. հրեմ. էջ 245։*

=Արաբ. شعر ši'r *կամ* ši'ir *«երգ, բանաստեղծութիւն», որ է երբ.* שיר šīr, שירה šīrā *«երգ»=սումեր. sir «երգել»։ Համեմատութիւնը ճիշտ և փոխառութիւնը ստոյգ կարելի է համարել միայն ա՛յն ժամանակ, երբ ընդունինք թէ Մամիկոնեանի սոյն հատուածը աւելի ուշ ժամանակի գործ է կամ յետոյ աւելացրած։*

ՆՀՐ երբ. šīr «երգ» բառի հետ՝ էմին, Ист. Вардана, էջ 116 նոյնպէս համարում է սեմական։

ԳԻՒ.—Մշ. շէր «ժողովրդական երգ»։

***ՇԷՐԽԻՇՏ**, *որ և շիրխիշտ, շիրախուժ, շիրախուշկ «մանանայ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2304 և 2314։*

=Պրս. شيرخشت šīrxušt *կամ* šīrxišt *«մանանայ» բառից. ըստ* Seidel *§ 255 պրս. բառը իսկապէս խորասանի գաւառական* كشيرو kšīru *«հացիի նման մի ծառ»+* وخشت vxišt *«խէժ» բառերից է. կազմուած և յետոյ ժողովրդական ստուգաբանութեամբ դարձել է պրս.* šīrxušk, *իբր թէ «չոր կաթ» (պրս.* šīr *«կաթ»+*xušk *«չոր» բառերից)։*

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. նոյնը Նորայր ՀԱ. 1923, 498։

***ՇԷՐՄ** *«մեղուներին սիրելի մի խոտ», իբր արաբ. անուն յիշում է Վստկ. 195 (խոտ մի այլ կայ որ ասեն արապերէն շէրմ) յն. κνέωρον բառի դէմ, որ նշանակում է «մի տեսակ դափնի». ունի միայն Ալիշան՝ Վստկ. 255 և ՀԲուս. § 2305։*

=Արաբ. شرم šarm *(նոր հնչումը* šerm*) «մի տեսակ ծառ» (առանց աւելի բացատրութեան՝ Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 491)։—Աճ.*

ՇԻԳՂ *(որ և շինգղ, շինկղ), ղ հլ. (սեռ. շգեղ, դրծ. շգեղր) «մեծ և շքեղ ճարմանդ, իբր արքունական զարդ դրուած օղ՝ կռճակ» Ա. մկ. ժ. 89, ժա. 58. ժդ. 44, Նխ. ա. մկ։— կարծեմ այս բառն է դարձեալ շինճ «խիր կամ թիկնակիք կանաց» Բռ. հրեմ. էջ 246։*

ՆՀՐ լծ. Բրք. čengel *«կեռ, ճանկ», իսկ պսակ բառի տակ էլ դնում է շիւնկեալ ձևը, որի ի՛նչ լինելը յայտնի չէ։— Հիւնք. յն.σύγκλωσις «միաւորութիւն, մանուած, շղթայ ևն»։ Պատահական նմանութիւն ունին արաբ.* شكل šakl *«մարդարտէ կամ արծաթէ դինդ, կախովի օղ»,* شكال šikal *«անասուններին ոտնակապ կամ փորկապ» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 256)։*

***ՇԻՒԱՐ**, *ի–ա հլ. «խենթ, խելագար, դիւահար. 2. դև, մի չար ոգի». գործածուած է հետևեալ տեղերը. «Շուայտական շիդարացն շարս շամանդաղեալ շոհանան ի վերայ մեր»*

(Մագ. թղ. 67). «Որդի մի էր նորա Արտաւազդ անուն, բախած ի մանկութենէ, զոր շիդարն կոչէին» (Վանակ.). Սխալմամբ համարուած է յատուկ անուն. «Թագաւոր մի կար Հայոց՝ Արտաւազդ անուն և ունէր որդի մի խելագար՝ Շիդար անուն» (Ոսկիփ.). «Որպէս զմեր Հայոց Շիդար թագաւորն» (Ւրնդ. էջ 208). գրուած է նաև ջիդար (Տաշեան, Յուց. էջ 181), շիբար էֆիմ. էջ 11։—Մեր բառարանները չունին այս բառը. միայն ՀՀԲ յիշում է շդար «ստահակ, վնասակար, խեռ», որ անշուշտ այս բառն է և որ Խորոսեան, Տետր. համ. բառարանի, էջ 40՝ գրում է շգար։

=Ասոր. ܫܛܪ šəṭar «խեղդուկ՝ ապուշ լինել», ܫܛܘܪܐ šaṭōrā «խեղդուկ, ապուշ» (Brockelm. Lex. syr. 373 բ), որոնց հետ իբրև սեմական ցեղակից են արաբ. شَاطِر šāṭir «ուրախ, համարձակ, յանդուգն, անամօթ, խաբեբայ» (որ և شِطِّير šiṭṭār), شَطَارَت šaṭārat «զուարթութիւն, խեղկատակութիւն», թրք. شطارتلو šetaretlu «զուարթ, զուարճախօս, ծաղրածու»։—Աճ.

Халатянцъ, Арм. эпосъ 1, 318 պրս. šīdā «խեղդ» բառի հետ։ (Բայց պրս. شیدا ձևը կարդացւում է šayda և ո՛չ թէ šīdā)։ Ռոզմէրի, Բիւր. 1899, էջ 70 ա շիբել «խայթիլ» բառից կամ աւելի լաւ պրս. شیدا šaydā «յիմար»։ Մառ, Վրդ. առ. I, էջ 245 ասոր. ܫܕܐ šedā «դև» բառի հետ։ Հ. Ն. Անդրիկեան, Բազմ. 1906, էջ 56—59 մեկնում է իբր արաբ. շաբր «խեղդ» և կամ Աշխադար անունից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 88 թերևս շեբ «խեղդ» բառից՝ -ար մասնիկով (ինչ. կայտառ, պայծառ) և կամ փոխառեալ վրաց. շաբերբա «ապշեցնել» բառից։ Ե. Աւգալբէգեան, ՀԱ 1928, 332—334 ասորաբաբելական Իշտար աստուածուհու անունից և կամ աւելի լաւ՝ Աժդահակ անուան Աշդահար ձևից։

Գիւմ.—Ալշ. Ակն. շիբաւ «խեղդուկ», հմմտ. նաև Բիւր. 1899, 70 ա յիշուած շիդարէ «իմաստութեան հակառակ ոգիներ. մարդ մտային կարողութիւններէ զրկող և յիմարացնող կը ճանչցուին»։

Շիթ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կաթիլ» ՍԳր. Վեցօր. 60. Մծբ. 294. «բոց, կրակի բոց» Վկ. գէ. 39 (Յնդեալ ի նմանէն շիթս ի կանգունս հնգետասանս. այլ ձ. բոց), գրուած է նաև շիտ, որից բայական ձևով շթալ «ցայթիլ» Բռ. երեմ. էջ 245։

ՆՀԲ լծ. թրք. süd «կաթ» (տե՛ս կաթն բառի տակ), յն. σταγών, լտ. stilla, gutta «կաթիլ»։ Peterm. 20, 22 հմմտ. կաթ «կաթիլ»։ Տէրվ. Altarm. 12 լտ. gutta, հբգ. scutjan «թափել, հեղուլ», սանս. çčut «կաթկթիլ»։ Canini, Et. étym. 149 թրք. süd «կաթ»։ Karolides, Γλ. σγχρ. լտ. gutta ևն ձևերի հետ աւելացնում է նաև կպդովկ. šutrao «հոսիլ, ծորիլ», šotri «չրորդան», պրս. šudan «լինել», հյ. շուտ։ Justi, Dict. Kurde, էջ 256 և Kurd. Gram. 91 քրդ. širte «կաթիլ» ձևի հետ։ Հիւնք. 285 հյ. շիթել «խայթիլ» բայից։ Մառ, տե՛ս կաթ բառի տակ։

Գիւմ.—Ղրբ. շիթ «կաթիլ» (օր. Կովի ծրծուումը շիթ շկայ «բոլորովին ցամաքել է»). Մշ. շիտ «կաթիլ», Տփ. շթի տալ «թափիլ» կամ շիթ տալ «հոսիլ» (օր. Բերնի ջուրը շիթ է տալիս). Շմ. շթուա «կաթիլ»։ Ունինք նաև շիթ Շմ. «համ» նշանակութեամբ՝ շիթը դուրս գալ «համը փախչիլ ոճի մէջ, որին համապատասխան է գալիս Յոբ. իզ. 14՝ Զշիթս բանից նորա լուիցուք (յն. «զհիւթս»)։

Շիթել «խայթիլ», որից շիթեալ «խայթուած» Վրք. հց. ա. 3, շիթող «խայթող» Մանդ. էջ 217, Վրք. և վկ. բ. 10. Վրք. հց. շիթոց «մեղուի խայթոց» Լաստ. իա. վերջինիս համար մի նոր վկայութիւն ունի Յովսիմ. 23 բ։ Սրանից պէտք է լինի նաև շիթացաւ «այտուցեալ» Բառ. երեմ. էջ 246։

ՆՀԲ թուում է թէ նոյն է դնում խայթել բառի հետ։

Գիւմ.—Ղրբ. շիթ «վէրքի տաքութիւնը»։

+Շիկ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «աչքը պակասաւոր, ծուռ» Ղեւտ. իա. 20. Վանակ. հց. որից շլագոյն Ղեւտ. ժգ. 4—56. Եւագր. շլամիտ Մծբ. 235. շլութիւն Կոչ. շլանալ «աչքը ծռիլ մինիլ» Յոր. ժէ. 7. Ես. խգ. 18. Ոսկ մ. գ. 26. Եւագր.

«փայլը կորչիլ, խունանալ» Ոզբ. դ. 1. «գունլանալ, բթանալ կամ դանակի բերանը ծռիլ» Նա. պտմ. 635. Լաստ. էջ 48. Ոսկ. լս. (Սոփերք, Դ. 110). շլացուբիւն *ՍԳր.* շլացուցանել *Իմ. դ. 12. Ոսկ. հս. եփես. մտթ. Կոչ. 281.— վրիպակ պէտք է համարել Բառ. հրեմ. էջ 249* շօլիկ «շիլ»։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sqel- «ծռել, կորացնել, շեղել» արմատից, ձայնդարձն է շեղ ձևի. ձայնական յարաբերութեանց համար հմմտ. ջիղ, ջեղ, ջիլ: *Ավելի ընդարձակ տե՛ս* խեղ:—*Աճ.*

Նշխ գերմ. ևս շիլ, *լծ. գուլ (տե՛ս շլանալ բառի տակ)։ Ջուբինով, Բառ. վրաց.*[1] *կցում է վրաց.* շլէ, շլու «խեղթ» *բառի հետ։* Böttich. ZDMG 1850, 359, 189 *սանս.* čilla: *Մորթման* ZDMG *26, 543 բևեռ.* sulustibi «շլացութիւն»։ *Հիւնք.* նշոյլ *բառից։ Մառ,* ЗВО *16, 151 միջոցում է վրաց.* շլու «խեղթ»։ Kaist, *Յուշարձան 426* շեղ *բառի հետ՝ թիր.* sol, čol «ձախ»։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 300 պրս.* ﺷﻞ šahlā «շիլ»։

ԳԻՒ.—Ագլ. Գոր. Երև. Ջթ. Խրբ. Համշ. Հն. Ղրբ. Մկ. Մշ. Մրզ. Շմ. Սեբ. Սչ. Սլմ. Վն. Տիգ. Տփ. շիլ, *Սվեդ.* շէլ «աչքը ծուռ». *Նոյն են նաև Ղրբ.* շիլ «սխալ» (*որից* շիլ ընկնել «սխալիլ»), *Ջղ.* շիլ «խեղթ, դիժ» (*հմմտ. Վն. ծուռ «խեղթ».—Բառ. երեմ. էջ 246 նոյնպէս դնում է* շիլ «խեղթ»)։ *Նոր բառեր են* շիլտի, շիլտիկ, շիլտի-շլոռ «շիլ», շլտիկ «շիլ» (*յիշում է Բառ. երեմ. էջ 249*), շլուխլ «աչքը շիլ դառնալ», շլիլ «դանակը դուլանալ» (*հմմտ. Ջթ.* շիլ՝ *նաև «գուլ, բութ» նշանակութեամբ*), շլթփիլ «աչքերը շիլի նման շարժելով՝ աստղին անդին նայիլ», շլաճալ «աւտամը հարուիլ, ակռան առնել», շլացնել «աչքերը խոլորել», շլել «խէթ նայիլ»։

Փոխ.—Արևել. Թրք. ﺷﻴﻞ šil «շիլ», *որ չի կարող թուրքերէնով մեկնուիլ, (բուն Թրք. բառերն են* ﺷﺎﺷﻲ šaši *և* ﻗﻮﺯﻏﻴﻦ qožγən «շիլ»)։ *Պատահական նմանութիւն ունին արաբ.* ﺷﻬﻞ šahl «շիլ», *քրդ.* šil «անդամալոյծ»։

ՇԻԼԱՄԱՆ «մանր ցորեն» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2307։ Համմտ. գւռ.* շիլ *Ղրդ. «մի տեսակ սև ու վատ ցորեն»,* շիլ *Ղրբ. «եղէգնաբոյսերի թաւուտ»,* շլել *Սլմ. «ցորենի հետ աճող մի բոյս է, որ աւելի բարձր կլինի և դառն համ ունի». սրանից էլ փխբ.* շլել *Վն. «բարձրահասակ»։*

ՇԻԽԻՏՏԻԿ «մի տեսակ սունկ, արաբ. fitr, յն. μύκης *(ըստ Դիոսկորիտեայ)» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2308։*

ՇԻԿԵՐԵԱՅ *կամ* ՇԻԿԵՐԻ «արու վայրի ոչխար» *Մագ. և Երզն. քեր.։*

Նշխ «որպէս թէ շէկ եռէ կամ որպէս արաբ. շէգրէ «կաթնաբեր» *կամ որպէս պրս.* շիճեար «որս, երէ»։ *Սագրզեան, ՀԱ 1909, 336 սումեր.* šigarra «մի տեսակ եղջերու»։

Շիկխարի *տե՛ս* խարի։

ՇԻՀ. *անստոյգ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ երկու անգամ ունի Մաղաք. աբ. 45. «Թէ շիհ ինչ գտանէ մեզ որ դու վասն շիհայ զքո որդիքն կորուսեր»։*

Պատկ. անդ 64 համարում է ﺷﻴﺦ šīx «ծովեզր» *բառը (իբր թէ վէճը ծովեղերքից մի մաս գրաւելու համար լինէր)?*

ՇԻՂ, *որ և* շիւղ, շեղ, ո *հլ. (նշխ դնում է նաև ի հլ. բայց առանց վկայութեան) «ճիւղի կամ ծղօտի բարակ կտոր» ՍԳր. Վեցօր. 101, 169. «մի տեսակ բոյս.* festuca altissima All.» *(Տիրացուեան,* Contributo § 36). *որից* շղարեր *Եղիշ. մկրտ. 208, 3Հ. իմ. եկեղ. Ջքր. կթ.* շղարեռել *Ջքր. կթ. խչ.* շղագոյն *Խոր. պտրգ. կամ* շիղարեր *(իմա՛* շիւղարեր*) Ուռհ.* շիւղադէտ *Ներս. աբ.* շիւղաճան «աչքի շիւղը հանող» *(չունի ԱԲ) Տարօն. էջ 315։*

Նշխ լծ. ծիղ, ծեղ, ճիւղ: *Հիւնք.* շառաւիղ *բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 110 յն.* χιλός «գալար խոտ» *բառին ցեղակից։ (Սրան են կցում ոմանք լտ.* fēnum, *հսլ.* sěno, *լիթ.* szõnas «չոր խոտ». *տե՛ս* Walde 282 *և* Boisacq 1061):

ԳԻՒ.—Մշ. Սեբ. շուղ «բարակ փայտի կտոր, ծառի ճիւղ», *Սվեդ.* շէօղ «աչքի մէջ ընկած շիւղ», *որ և Երև. Մկ. Մշ. Սլմ. Վն.* շուղ «գուլպայ հիւսելու փայտէ կամ երկաթէ ճաղ», *որից* շուղէ մարթ «շատ բարակ՝ վտիտ մարդ»։

*Փոխ.—Նո՞յն է վրաց. შულო շուլո «թելի կաժ»։

ՇԻՂՇԱՅՔ *«այսք». այսպէս ունի Բռ. երեմ. էջ 246, որից պէտք է հետևցնել շիղշայ «սատանայ, այս»։*

Ասոր. կայ ܫܝܠܫܐ šīlāšā, *որ է* «mustela, belette, fouine, *աքիս, կուզ»։*

ՇԻՃ *«անձրևից ապականուած ցորեն» Դրչ. արիստ. և Գէ։ (ԳԲ դնում է «հացի բորբոս», ինչպէս ունի Քաջունի, Գ. 185)։*

Կապ ունի՞ յաջորդ բառի հետ, որին կցում է ՆՀԲ, ինչպէս նաև Դրչ. արիստ. (վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 180 ա)։

ՇԻՃ *«քամուիլ, թորիլ, մզուիլ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են շճել «քամուիլ, վար վազել» Յոբ. իա. 24. շճուկ «մածնաջուր» Մանդ. էջ 210 = Գիրք Թղ. 239, որ և շիճուկ Բժշ. (Քաջունի, Գ. 185 ունի և շիճ ձևը այս իմաստով)։ Նոր գրական լեզուում նաև շիճուկ «արհնաջուր, éerum», որից շիճուկաբուժութիւն։*

Բառ. երեմ. էջ 247՝ Յոբ. իա. 24 շճնացէ ձևը հասկանում է «նեխեսցէ կամ հոտեսցէ»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 թրք. süz-mek «քամել», իսկ Արիս-հայ բռ. 300 պրս. شجك šijuk, որի նշանակութիւնը չի տալիս և որ ո՛չ ԳԴ գիտէ և ոչ էլ Բուրհան.։ Petersson IF 23, 388 (առ Pokorny 1, 469) հնխ. k̑uei- «դիրտ, կեղտ» արմատից՝ իբր անդաք. hwoeg «շիճուկ» ևն։

ԳԻՒ.—Բր. շճուկ (արտասանւում է շջո՞ւգ), Մշ. շիջուգ, շղուգ, Ախց. սիճուկ, Նրև. սուճուկ, Ալշ. շղուգ, Սեբ. սուջուխ «պանրից կամ մածնից քամուած դեղին-կանաչ ջուրը»։

Փոխ.—Պրս. سجك sajuk «մածուն խառնեալ ընդ կաթին» (համեմատութիւնը տուաւ նախ ԳԴ. նոյնը պէտք է հասկանալ նաև Թիրեաքեանի յիշածը). քրդ. šuži «շիճուկ» (Ղափանցեան ՅՒՕ 23, 355)։

ՇԻՃԻՏԱԿԻԼ *«սասպիկ ուտել-խմելուց կարմրերիլ». ունին միայն ԱԲ և Նորայր, Բառ. ֆր. 466 բ՝ իբրև մհյ. բառ։*

ՇԻՄԱՐ *«մի տեսակ բոյս. վայրի սամիթ, ռազիան, ռէզէնէ,* foeniculum». *յիշում է Ալիշան՝ Վստկ. 258 իբրև համանիշ՝ ռազիան բառի. բայց յայտնի չէ աղբիւրը։ Նոյն բոյսը Քաջունի, հտ. Բ. 748 և հտ. Գ. 185 համարում է «torilis», որից և Տիրացուեան,* Contributo § 293 «torilis leptophylla L.»: *Առաջին նշանակութիւնը նոյնացնում է բառս շումրայ ձևի հետ, որ տե՛ս։*

ՇԻՄՇԻՐ *«սուր, թուր» Օրբել. (հրատ. էմինի, էջ 275 ունի շմշիր). ուրիշ վկայութիւն չկայ։*

=Պրս. شمشير šamšer, *նոր արտասանութեամբ* šämšīr, *բայց մանաւանդ* šimšīr *«սուր, թուր»։—Հիւբշ. 273։*

ՆՀԲ բառ պրս.։ Lag. Ges. Abhd. 73 *պրս.* šamšīr *ձևից փոխառեալ։*

ՇԻՆԴՂ *կամ* **ՇԻՆԿՂ** *«վարունգի և դդումի միջև դտնուող մի բոյս է. արաբ.* ḡūḍa. *կոդայ» Բժշ. որից* իշաշինգղ *«իշկոյ վարունգ». ՀԲուս. և Նորայր, Բառ. ֆր. 312* (courge *բառի տակ)։*

ՇԻՆԻԿ *«արմտիքի մի չափ է» Վրդ. առ. էջ 244։*

=Յն. χοῖνιξ *«3 կամ 4 կոտիւղ ցորենի չափ, որ մի լիտրից մի քիչ աւել է անում և մի մարդու օրական պարէնն է կազմում»։ Ըստ* Bailly 2143 բ *ծագում է յն.* χέω *«լցնել, թափել» բայից, բայց ըստ* Boisacq 1065 *ծագումն անծանօթ է։ Յետին շրջանում անշուշտ նախաձայն χ հնչում էր Ֆ, որից էլ յառաջացել է հյ. շինիկ։ Համմտ. նյն.* σοινίκι, σινίκι *նոյն նշ.։ (Ֆրանս. գիտական բառ է* chenice, chenix *«շինիկ»)։—Աճ.*

ԳԻՒ.—Բլ. Մշ. շինիկ կամ շնիկ «ցորենի կամ ուրիշ արմտիքի չափ է, որ տանում է $^1/_4$ քիլէ = 4 կոտ = 48 օխա = $61^1/_2$ կիլօ»։

Փոխ.—Անշուշտ հայերէնից են քրդ. շինիկ Մոթ. ժդ. 33, թրք. شنيك šinik, *որի միջոցով էլ սերբ.* šinik, šenik: (Miklosich և Gustav Meyer, Türkische Studien SWAW 128 (1893) *դնում են ուղղակի յունարէնից)։*

ՇԻՇ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ապակուց շինուած աման» ՍԳր. Նձն. Շիր. յետնաբար կայ նաև շիշայ Կոստ. երզն. 118, 123, 170, շուշ, շուշայ Վստկ. Հայել. 178, 186, 187, Կոստ. երզն.*

101։ Սրանի՞ց է նաև շղուկ «կօշ, սնամէջ դդում՝ որ իբր ջրաման է գործածւում» ԳԲ։

=Պհլ. *šīš «շիշ» ձևից, որի ներկայացուցիչն է պրս. شیش šīš «շիշ»։ Աւելի սովորական է պրս. شیشه šīša «շիշ, սրուակ», որ ենթադրում է պհլ. *šīšak և որից փոխառեալ են վրաց. შუშა շուշա, քրդ. šuša, ավար. šiša, թրք. šiše, սերբ. šiša, šišе «շիշ», ինչպէս նաև յետին հյ. շիշայ, շուշայ ձևերը։ Բառս գոնւում է նաև սեմական լեզուների մէջ, համմտ. ասուր. šaššu, ասոր. ܫܫܐ šīšā, եբր. שֵׁשׁ šeš կամ שַׁיִשׁ šayiš, եգիպտ. šs «սպիտակ մարմարիոն, ալաբաստր»։—Հիւբշ. 214։

Նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 142 և յետոյ ԳԴ դրին պրս. šiša ձևից։ ՆՀԲ այլազգ. շիշէ, շիշէ! Lag. Gesam. Abhd. 83 պրս. šīša: Հիւնք. պրս. շիյշ, թրք. շիշէ։

ԳԻՒ.—Կայ միայն ՋԲ. շիշ. միւսները նոր փոխառութեամբ ունին թրք. šiše և վրաց. šuša ձևերը։

ՇԻՇ *«ծոծրակ, վզի հետևը» Պտմ. աղէք. 17. Փիլ. լին. 106. երկուսն էլ գործածուած անեղաբար. բստ այսմ Հին բռ. մեկնում է* շիշմ *(այլ ձ. շիլմ) «պարանոցք», լծ. փիլ. շիշմ «պարանոցի ջիլքն»։ (Տիրոյեան, Հանրագրութ. 192 ունի և շուշակմ ձևը)։*

ՇԻՇ *կամ* **ՇՇԻ** *«մի տեսակ ծառ է. թեղեւս* cerasus mahaleb*» Վրդն. լս. 55 Իժշ.։*

***ՇԻՇԱԿ** «գառնուկ. փխբ. ծիլ, բնձիւղ, բողբոջ», սեռ. շղկի ձևով ունի Մխ. բժշ. 147 (շղկի միս կամ գառան). գրուած է* շիշակ, *իշամ Վրդն. առ. 116. շիշեկ Էֆիմ. 164.— իբր գաւառական բառ ունին ՀՀԲ, ՆՀԲ, ՋԲ, ՓԲ և ԱԲ. գործածական է Ալշ. Բլ. Երև. Ղրբ. Մշ. ՆԲ. Վն. ևն։*

=Պրս. شیشک šīšak *կամ* شیشاک šīšāk *«միամեայ գառ», որից փոխառեալ են նաև արեւել. թրք.* شیشک šišak *«երկամեայ ոչխար՝ այծ»* (Shaw), شیشیک sišek *կամ* شیشک šīšek *«մեծ ոչխար»* P. de Courteille, Vámbery), *թրք.* شیشک šišek *«միամեայ գառ»* (Будаговъ *1, 667*), *քրդ. šišak, լազ. šīšeγi «երկու տարեկան գառ», վրաց.* შიშაგი *շիշագի «միամեայ գառ՝ լաւ սնուած», սերբ.* šiše *ևն։—Հիւբշ. 273։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Lag Gesam. Abhd. 83:

ԳԻՒ.—Մշ. Տփ. շիշակ, *Ալշ.* շիշագ, *Սեբ.* շիշուգ *ևն։*

***ՇԻՊ** «պաղլեղ». գործածական է նոր գաւառականներում. հներից թէև աւանդուած չէ, բայց սրանից են շպարար «ներկարար» Կիր. տպ. Վեննտ. էջ 210. Պիտառ. շպլեղ կամ շապլեղ «պաղլեղ» Ոսկիփ. Վստկ. 224. շպել «պաղլեղով թրջել» ՓԲ. (գւռ. «տտպել, բերանը փոթոթել»)։*

=Արաբ. شبّ šabb *«պաղլեղ», որից փոխառեալ են նաև թրք. և քրդ. šab, պրս.* شاب šāb *«պաղլեղ»։—Հիւբշ. 273։*

Ալիշան, Հրտր. Կիր. (1865), էջ 210 շպարար մեկնում է թրք. շապ կամ հյ. շպար բառով։ Պատկ. Истор. Монгол. 1874, 79 *շպարար դնում է արաբ. šabb բառից. պէտք չէ, ասում է, հանել շպար բառից։* Justi, Dict. Kurde, *էջ 251 ունի ուղիղ մեկնութիւնը, բայց մեր բառը գրում է շիփ, շապ։ Հիւբշ.* ZDMG 36 (1882), 132 *պրս. šab բառից։*

ԳԻՒ.—Ախց. Կր. շիպ, Երև. Ղրբ. Սլմ. Տփ. շիբ, *Մշ.* շիբ՛, *Ալշ.* շբբ, *Պլ.* շաբ *ևն։—*Շպլեղ ձևն ունին *Մշ.* շբլեղ, *ՋԲ.* շբ՝բլեղ, *Բլ.* շբլեխ *(այս վերջինը նշանակում է «այրած ու ծեծած պաղլեղի և ձուի դեղնուցի խառնուրդ, որ իբր դեղ ալքի են քաշում»)։—Նոր բառեր են* շպամանիկ, շպեռաց, շպջուր։

ՇԻՒ. *արմատ առանձին անգործածական՝ անյայտ իմաստով գտնում է միայն* արշիւ *(հնից չունինք հոլովուած. յետնաբար ի, ի–ա հլ.) «գինեմոլ, շուայտ, հարբեան» բառի մէջ՝ ՍԳր. Եփր. թգ. 356. որից* արշրութիւն *Բուզ. 36խ. Վրք. հց.* արշրական *ԱԲ.* շինծու ձև է արշրութիւն *ԱԲ, իբր թէ արմատը լինէր* արիշ *կամ* արուշ։—Հիւբշ. 423։

Ինճիճեան, Եղանակ Բիւզանդեան, 1820, էջ 211 արբելոյ շռայլ *կամ* շռայլ ի յարբումն։ *ՆՀԲ արբեցող և շռայլ. «գինո է արմատ բառիս շռայլ»։—Հիւնք.* արբ + շիւ, *որ է պրս.* شیره šīra *«քաղցու, գինի»։*

ԳԻՒ.—Սվ. իրշիր *«անառակ, ուրիշների հետամուտ»՝* արբշիռ *ձևի՞ց է։*

ՇԻՏ *«պալար, ուռեցք» Տաթև. հարց. 367, որ և շուտ Վրդն. դևտ. (յգ. շտեր Մխ. բժշ. 66). երկուսը միասին գործածուած եմ գըտնում Լծ. նար. իգ. «Մարմին յորժամ նշան լինի սպոյ շիտ և կամ պալար՝ որ է միատարր լանացեալ սպիտակն կամ պաղպաջ, այս է պսպղուն և կամ շուտ շուտ սպիտակ աստ և անդ»։ Նոյն շիտ ձևը դիտէ նաև Բառ. երեմ. էջ 262 «պալար» իմաստով։*

ՆշՀ որ ունի միայն շուտ ձևը, հանում է շիթ, շիտ «կաթիլ» բառից և լծ. է դրնում յն. στίγμα «կէտ, սպի», σταγών «շիթ կաթիլ»։ Patrubány, *ՀԱ 1907, 305 հնխ.* k'uo, k'euo *«ուռչիլ» արմատից. համմտ. սանս.* švâyati *«ուռչում է»։ Տաղաւարեան, Բժիշկ 1912, 156 հանում է շիթ «կաթիլ» բառից, ինչպէս ունինք միջին հյ. պուտ «բշտիկ, պալար», որ պուտ «կաթիլ» բառն է. ձևի համար համմտ. շիտ «կաթիլ» գրչութիւնը։*

ԳԻՒ.—Ալշ. Երև. Ջղ. շիթ, *Մշ.* շիդ՝ *«պալար», նոյն են նաև* շիտ *ՆԲ. «փոքրիկ պալար», Խն. «լեղուի վրայ դուրս եկած մանր բշտիկ»,* շտիկ *Խն.,* շուտիկ *Ակն. Խրբ. Ջն «մի տեսակ վէրք»,* շղուտ *Վն. «գորտնուկ»։*

ՇԻՏԱԿ *«ուղիղ» Վստկ. 179 (շատ գործածական արդի գաւառականներում). որից են* շիտակեալ *«ուղիղ բարձրացած» Կնձ. ստեղնաշիտակ Նար. տաղ. գեղաշիտակ Մագ. թղ. 41։*

Հիմնք. շոյտ բառից։ Karst, *Յուշարձան 409 սումեր.* zid, zida *«ուղիղ, ճիշտ», 415 մոնգոլ.* čik, *բուրևաթ.* šike, seke, *կիրգիզ.* šiyn *«շիտակ, ուղիղ»։ Պատահական նմանութիւն ունին վրաց. շվետի «ուղիղ», արևել. թրք.* شیدام šīdām *«յիղկ, ողորկ»։*

ԳԻՒ.—Ախց. Կր. շիտակ, *Ալշ. Երև. Համշ. Մշ. Պլ. Սեբ. Սչ.* շիդագ, *Սլմ.* շիտոկ[1], *Տիգ.* շիդոգ, *Ռ.* շիդղագ, շիյղագ, *Հճ.* շիղօգ, *Մկ. Ըշտակ.—Նոյն բառն ունին նաև Ախք. Եւդ. Լհ. Խն. Խրբ. Կս. Հչ. Ննխ. Նփ. Շհ. Վն. Տր.—պակասում է ընդհանրապէս Կովկասի Հայ բարբառներում։—Նոր բառեր են* շիտակախօս, շիտակել, շտկել, շիտկուտել, շտկուռիլ, շիտկուտկել, շտկցնել, շիփշիտակ։

ՇԻՏԻՏԻ *«իգացեալ» Մագ. քեր. 242 և Երզն. քեր.։*

ՆշՀ իբր շուայտուտ։ Ադոնց, Արուեստ Դիոն. քեր. 242 արաբ. شديد šadīd *«սաստիկ»։*

***ՇԻՐ** *«կաթ». ունի միայն Բառ. երեմ. էջ 246։*

=Պրս. شير šīr *«կաթ»։—Աճ.*

Շիրախուժ, Շիրիխիշտ *տե՛ս Շէրխիշտ։*

ՇԻՐԱՄՇՈՒՆ *«մի տեսակ բոյս է». մեկնուած է. «հարկուտիւ» (երկուսն էլ անծանօթ). Դաղիան. ունի միայն ՀԲուս. § 2315։*

***ՇԻՐԻԿ** *«սուսամի իւղ» Մխ. Բժշ. էջ 117. Կամրկ. ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ՀԲուս. § 2316. իսկ Բառ. երեմ. էջ 246 գրում է* շիրակ։ *Առաջին ձևից են ածանցուած շիրկագործ, շիրկավաճառ (ըստ ՀՀԲ)։* Rivola, *Բառ. Հայոց*[2] *դնում է* շիրիկ *«կտաւատի սերմ», իսկ* շիրկի ձէթ *«կտաւատի իւղը»։*

*=Պհլ. *šīrik ձևից, որի հետ համմտ. պրս.* شیرا šīra *«սուսամի իւղ»,* شیروغن šīrūγan *և* شیرپخت šīrpuxt *«սուսամի իւղ» բառերը։ Իրանեանից են փոխառեալ նաև գնչ.* širii *«ձէթ»* (Vaillant, Gram. Bohem. 127), *արաբ.* شیج šīraj *կամ* šīrīǰ *(վերջինը ըստ ԳԴ, էջ 368), թրք.* شیرلغن šərlaγan *(որ ձևափոխութիւնն է պրս.* šīr-ruγan *«շիրիկձէթ» բառի), արևել. թրք.* širbaxt *(որ պրս.* šīrpuxt *ձևից է և այժմ էլ գործածական է Կովկասում)։ Կայ վերջապէս ասոր.* ܫܝܪܓ šīrīg *«սուսամի իւղ»* (Brockelm. Lex. syr. *389 ա), որ թերևս հայերէնից է փոխառեալ։ Թէև հայերէն բառը ուշ է աւանդուած և չէր կարող ենթադրել պհլ. ձևը, բայց նա անշուշտ աւելի հին է և պհլ. ձևի գոյութեան ապացոյց է արաբ.* šīrīǰ։

Ուղիղ համեմատեց նախ Lag. Arm. Stud. *§ 1701։ Հիւրշ. էջ 273 գնում է նոր պարսկերէնից, առանց ուշադրութիւն դարձնելու* -իկ *վերջաւորութեան վրայ։* Seidel, *Մխ. հեր. § 311 գնում է պրս.* šīr *«կաթ» բառից. համարում է ածական (որովհետև աւում է* շիրիկ ձէթ*), իսկ վերջաւորութիւնը* (-իկ) *յառաջացած*

նմանողութեամբ սատայիկ, պալղամիկ *բառերի*։

ԳԻՒ.—Մշ. շարիգ՝-յաղի *(Թրք.* yaγi *«իւղ» ձևով). այսպէս նաև տեղական Թուրքերէնում*։

ՇԻՐԻՄ, ի–ա *հլ. «գերեզման, գերեզմանաքար» ՍԳր. Եւս. պատ. որից* շիրմակից *Պղտատ. օրին.* շիրմատար *Նար. մծբ.*։

Տաթև. Հարց. 678 «շիրիմն սատուգաբանի թէ սատի շարժիմ կամ շինիմ ի յարութեան ասուրն»։ ՆՀԲ արաբ. սիրր, *պրս.* گور gōr, *ռմկ.* կօռ, *լծ.* կոյր *և* խաւար։ Pictet 2, 280 *սանս.* sirā, *սիահփուշ* siri *«պտուկ», ռուս.* sirena *«կաթսայ», յն.* σίρος, σειρός *«փոս, խոռոչ»*։ Pedersen KZ 38, 395 *թերևս գնդ.* šairimya *և սրանով հսլ.* chramŭ *«տուն», սերբ.* chrām, *սանս.* harmyám *«հաստատուն բնակարան կամ շէնք» բառերի հետ*։ Patrubány IF *14, 55 արմատը* շէր *(որից փոխառեալ հունգ.* sír *«գերեզման»). Համմտ. յն.* κεῖμαι *սանս.* šētē *«պառկիլ»։ Մառ,* Отчетъ аніи-скаго музея 1917, *էջ 40 խալդ.* nir-ibi *«շիրիմ», վրաց.* širimi *և հյ.* շիրիմ *դրնում է* *շիր—նիր *«քար» արմատից՝* -ibi=-իմ *յոդնակերտ մասնիկով*։

ՓՈԽ.—Վրաց. Ցირიმი *«միզաքար» (ըստ Մառ,* Иппол. *67 «գերեզմանաքար»),* Ցირიმის ჭუა շիրիմիս ճուա *«չիշաքար», Թուշ.* Ցირიმ շիրիմ *«միզաքար», լազ.* širimi *«ծովի կամ գետի աւազ». այս բոլորը ցոյց են տալիս որ հայերէնի նախնական նշանակութիւնն էր պարզապէս «քար» (տե՛ս Աճառ. Արրատ. 1911, էջ 419)*։

ՇԻՐԽԱՒ *«մի տեսակ բոյս. լտ.* sigillum Salomonis, sigillum Mariae, vigna Mariae, clematis vitalba, clematis cirrosa» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2317։ (Տիրացուեան,* Contributo *§ 175 դնում է* clematis vitalba L. *և իբր հոմանիշ՝ յասմիկ վայրի, պատվարդ, ճոտոտ խիպիլիկ, ճողմավարդ և պատաղիճ վայրի)*։

ՇԻՒ *«խաղողի կուտերն ու կեղևը, ճմռած խաղողի մնացորդը» Վստկ. 68, 127, Բժշ.։ (Ըստ Բառ. երևմ. 246* շիւ *«ճիւղ, ոստ»)*։

Lidén *(առ* Pokorny 1, 469) *հնխ.* k'ṷei- *«աղբ, կեղտ» արմատից. համմտ. լտ.* caenum *են*։

ԳԻՒ.—Զթ. շիվ, *Հճ. Տիգ.* շիֆ, *Խրբ. Ռ.* շիբ *«խաղողի չանչը, այն է կուտերն ու կեղևները», Էնկիւրիի Թրքախօս հայոց լեզուով* շիվ *«խաղողի մնացորդ» (Բիւր. 1898, 865), Ակն. Արբ.* շիվ *«խաղողի կամ Թութի մնացորդ կուտ ու կեղև», Ատն.* շիֆ *«բամբակի խեճեպները», Սեբ.* շիվ *«խաղողի ջուրը», Մրղ.* շիվ *«խաղողի Թևը», Երև. Մկ. Սլմ.* շիվ *«մաղաշ, դալար, նոր դուրս ուռած ճիւղ», Համշ.* շիբ *«դդումի կամ ձմերուկի Թևերը», Ղրբ.* շէվ *«մաղաղատի ծառ կամ Թարմ ոստ», որից Ղրբ.* շէ՛վուտ *«նորատունկ անտառ», Եւդ.* շիվել *«խաղողի ողկոյզի հատերը փետել»*։

ՓՈԽ.—Քրդ. شیو šīv *«խազմուզ»* (Justi, Dict. Kurde, *էջ 267),* šiw «baguette, tuyau de pipe, *գաւազան, ծխամորճ»* (Justi), *գւռ. Թրք. Տ.* šiv *«Թութին բուտերուն աւիլցուքը» (Բիւր. 1899, 799), գւռ. Թրք. և յն. Ատն.* šif *«բամբակի խեճեպ» (Արեւելք 1888, նոյ. 8—9)*։

—**ՇԻՒ** *«ջուլհակի ձեռքի կողքի փայտը» Մխ. առկ. ճկդ. (ունի միայն սեռ. շտյն ձեւով)*։

=*Անշուշտ նոյն է նախորդի հետ. միութեան կապն է գւռ. «ճիւղ, գաւազան» նշանակութիւնը։—Աճ.*

ՆՀԲ «որպէս Թրք. սէօյէ, շէօյէ»։ *Ճիշտ նոյնը* Karst, *Յուշարձ. էջ 426։*

***ՇԻՒԱՆ** *«կոճ, ողբ, լաց» Հին բռ. Օրբել. ողբ. գ։*

=*Պրս.* شیون šīvan *«ողբ, կոծ», որ ենթադրում է գնդ.* *xšaevan- *ձևը։—Հիւբշ. 214։*

ՆՀԲ բառիս նշանակութեան վրայ վրատահ չէ և համեմատում է ռմկ. ճուալ *բայի հետ։ Ուղիղ մեկնեց Պատկ.* Mater. I. 12։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Ղրբ. Մկ. Տփ. շիվան։

Շիւղ *տե՛ս* Շիղ։

***ՇԻՓ** *«տարակուսանք, աւօթ, շփոթութիւն». մէկ անգամ ունի Լաստ. իա. «Իսկ*

արեանաբբու գազանացն պարտաւորեալ ի շիփս հղեալ». ուրիշ վկայութիւն չկայ։

=Պրս. شيب *šīb «ապշեալ կամ զարմացեալ», որից կրկնութեամբ* šīb-tīb *կամ* tīb-ū-šīb *«ապշեալ և տարակուսեալ»։—Ա՛ճ.*

ՆՀԲ շիփ հասկանում է «շփոթութիւն, կռիւ, աղմուկ» և Լաստիվերտցու վկայութեան հետ է կցում Խոր. գ. 67 «հղեալ շփից ամբոխութեանն», ուր շփից պարզ ձեռագրական սխալ է և միւս օրինակներում շփոթից ձևն ունի։ Այս իմաստով ՆՀԲ դնում է «շիփ, արմատ բառիս շփոթ, *լծ. և ծուփ»։*

***ՇԻՔԻԼՈՆ** «նատարան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դրնդ. 407. «Բնաւ չանկողնի ոչ ննջէր, այլ սակաւ մի ոյժ առնելոյ աղագաւ դնէր զգլուխն ի վերայ շիքիլոնին և նստեալ ննջէր մէկ ժամ կամ երկու»։ Նոյնը կայ Շիւրոն ձևով՝ անդ, էջ 209. «Նիրհեցի նստոյ տեղիս ի վերայ շիքրոնին յեցեալով»։*

=Թիւր. բառ է. համմատ. ույղուր. شيكوسون *šikusun (վերջին երկու ձայնաւորները անորոշ են. կարող են լինել* u, o, ü*) «փողոցներում հանգիստ առնելու տեղ* место отдохновенія по улицамъ; *մի տեսակ հիւրանոց* родъ гостинницы» (Будаговъ *1, 681 բ*)։—*Ա՛ճ.*

***ՇԼԱՆ** «մոխիր». մէկ անգամ ունի Ոսկ. սղ. լբ, էջ 673. «Մոխիրն մեծամտեալ, շլանն փքացեալ» (յն. լոկ «մոխիրն փքացեալ»)։*

=Վրաց. შლამი «տիղմ, աւազ և ցեխ», որից შლამიანი շլամիանի *«ցեխոտ. աղմուտ». որ և* ლამი լամի *«սիկ, ջրի տակին նստած տիղմը, խոնաւութիւն, թացութիւն»,* ლამიანი լամիանի *«ալոտ, խոնաւ, թաց»։ Հայ բառի իմաստը թէև դրուած է «մոխիր», բայց միայն մերձաւոր նշանակութիւն է. կարող է նաև առնուիլ իբրև «տիղմ»։—Ա՛ճ.*

ՆՀԲ լծ. թրք. kül *«մոխիր»։—Տաշեան ՀԱ 1925, 503 պրս.* شاولا šaula *«աղբիւս»?*

Շլատ *տե՛ս Ժլատ։*

ՇԼՄՈՐ *կամ* **ՇՄՈՐ** *«խառնակութիւն, շփոթութիւն, կռիւ» Մարթին. Անսիզք, էջ 39. Սմբ. պտմ. 128. դատ. 17, Միխ. առ. 519. որից* շլմորեցուցանել *«շուարեցնել, շփոթել» Կիւրղ. ծն. շմորեցուցանել Պտմ. աղէքս. 101. շլմորիլ «շփոթիլ» Կիւրղ. ծն. շմորիլ «գժտիլ» Ուռհ. 425. Մարթին. «կռուի՛լ» Գիրք թղ. 509. շմորութիւն Վրդ. առ. 183. դրուած է նաև* լշմորեալ *Գիրք թղ. էջ 7։*

ՆՀԲ խմոր բառից։ Տէրվ. Մասիս 1881 մայիս 12 թերևս շմոլորիլ։ Հիւնք. իբր զմոլորիլ։ Ամատունի, Հայոց բառ ու բան 254 լշմորել *մեկնում է «թերևս ճմլել, տրորել» (անդրադարձած չէ* շլմորիլ *ձևին)։*

ԳԻՒ.—Ախց. շէլէմբռիլ *կամ* շէռէմբռիլ *«շշկլուիլ, շփոթուիլ»։—Կայ նաև* շլառրիլ *Մն. «զարմանալ, այլ յայլմէ լինել»։*

ՇԼՆԻ *«վիզ, ճիպ, պարանոց» Յայսմ. Վստկ. 68, 116, 198. Անսիզք 33. որ և* շլինճ *Մաղաք. աբ. 33. Քուչ. 67 (սեռ.* շլնից *Քուչ. 73). շլիճ Տաթև. ձմ. ձբ. (սեռ.* շլեց*) Մխ. բժշ. էջ 44. որից* շլնեատակ *Վստկ. 198.* շլնեատան *Վստկ. 203։*

ՆՀԲ լծ. լտ. collum *«վիզ»։*

ԳԻՒ.—Գրեթէ ամէն տեղ պահուած է շլինճ, շլաինճ, շլաիճ, շլա *կամ* շլնի *ձևով. յիշենք յատկապէս Երև. Տփ.* շլինճ, *Պլ.* շլաինճ, *Ռ.* շիլիճ, շիլիինճ, *Սեբ.* շլաիճ, *Ակն.* շլա, *Հմշ.* շնլիճ *(«դէմք» նշանակութեամբ), Բլ.* շըլըճ *(«ծոծրակի տակը՝ վզի վերևի մասը»),* Rivola շլինս.*—հետաքրքրական է Խրբ. գրծ.* շըլլօճ, *որից* շլլօճ դդում *«հրկարաւիզ դդում՝ գինու համար»։*

Շլոռ, Շլոր *տե՛ս Սալոր։*

***ՇԼՈՒՈՍ** «բաց կանաչ, գալար դեղնորակ գոյնով» Յայտ. գ. 8. «տեսակ մի խաղողոյ, բացադոյն կարմիր թափանցիկ մաշկով» ՀԲուս. § 2319։*

=Յն. χλωρός «դեղնաւուն, կանաչորակ»։—Հիւրշ. 368։

Ուղիղ մեկնից նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ, Müller SWAW 42, 254:

ՇԼՐՏԻԼ. *անասոյգ բառ. մէկ անգամ ունի Գնձ. «Յիսուս ծնանէր, նա՛ դուք խայտայիք, մանկունք. շլրտեալ դնիք՝ ուրախ ցնծութեամբ, մանկունք»։ ՆՀԲ մեկնում է «զննանիլ կամ խղուրտիլ, շարժիլ, խլրտիլ», ԱԲ «շարժիլ, ցատքել»։*

ՇԼՖՕՆ *«պարարտ ձագ հաւու». միջին հյ. բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 593 ա. մէկ անգամ գտնում եմ գործածուած իբրև հիւանդի ապաքինիչ թեթև ուտելիք՝ Տաթև. ձմ. ճիբ. «Որ դարձեալ է ի հիւանդութիւնէ բայց դեռ ևս անզօր է, պիտոյ է նմա թեթև կերակուր, որպէս զարիջուր և շլֆօն. զի ոչ է օգուտ նմա գինի կամ զէր միս»։*

ՇԽՄՈՒՏ *«վազուն, արագահոս (գետ)». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ-հյ. 450 ա. անշուշտ -ուտ մասնիկ է։*

Շխուկ *տե՛ս Շեխ։*

***ՇԽՐԱՅ** *«տանջանքի գործիք՝ երկու փայտից կամ տախտակից բաղկացած, որոնց միջև ճզմում էին քրիստոնեաներին». ունի միայն* Rivola:

=Արաբ. شخر *šaxr «ճղած կոճղ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 911)։—Ա՛ճ.*

ՇԿԱՀ *«նետի սուր ծայրը» Պիտ. առ Լևհ. որից շկահիւն «աղեղների հանած ձայները» Բ. մկ. ե. 3. Եփր. աւետ. 318. շկահական Պիտ. շկահել «նետի ձայն հանելը, նետ նետել, ձեռքով կամ անորոշ ձայնով նշան անել» Նիւս. երգ. Անթիպատր.։*

Թիրեաքեան, Արիահայ բռ. 300 պրս. شکا *šikā, որ սակայն չունին ԳԴ և Բուրհան. (հայ* شکه *šika կամ šikka «գործիք պատերազմի»)։*

***ՇԿԱՊԵԼ** *«վռնտել, դուրս անել, մերժել, վանել». մէկ անգամ ունի Խոր. բ. 7. «Վասն ընդդիմութեան իրիք լինելոյ շկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն, զայլս ի տեղիս նոցա յարուցին» (այլ ձմ. շաղկապեալ, ճշկաճեալ, որոնք սխալ գրչութիւններ են և իմաստին անյարմար)։*

=Ասոր. ܫܥܦ *šəqaf, որ թէև սովորաբար նշանակում է «հարուածել, բաղխել (verberavit, contudit)», բայց նաև «դուրս հանել, դէն գցել, նետել (detraxit, jactus est)» (Brockelmann, Lex. syr. 386 ա)։—Ա՛ճ.*

Նշ՛ր դնում է իբր անստոյգ բառ վերի իմաստը տուաւ Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 106, որ և դնում է պրս. Šikāftan, *պհլ.* škaft *«ճեղքել» բառի հետ։ Այս իմաստը յարմար չէ մեր բառին (թէև հայերէնի մէջ նեղմել նշանակում է նաև «մի խմբակցութիւնից հեռացնել». հմմտ. Գուցէ ճեղքիցէ զնոսա յեղբայրութենէ. Ոսկ. բ. թես.—Մատնիչն որոշեալ ճեղքեցաւ ի նմանէ. Ոսկ. յհ. բ. 26). ուստի աւելի լաւ համարեցի դնել ասորուց՝ որ նոյն է նշանակութեամբ։*

Շկթիլ *տե՛ս Շքթիլ։*

ՇԿԻՐԱՀԵԼ *«բնակել կամ կործանել կամ շիջուցանել». ունի միայն Բառ. երեմ. էջ 246 (տպ. շկիրահեղ)։*

ՇԿԼՈՐ, *որ և* շկլօր, շկլաւր *«կաղնի ծառի պտուղը՝ նման դեռտրի» Բժշ. ունի միայն Հին. §2320։ (Այստեղ յիշւում է նաև կամըրկապցու շախլոր բառը, որի նշանակութիւնը մութ է)։*

Գիմ.—Մկ. շկլօր *«կաղնու պտուղը՝ դրեստորից մեծ», վն.* շկլոր *«մի տեսակ շլոր»։*

ՇԿՆՋԻԹ *«մի տեսակ բոյս կամ բոյսի մի մաս» (արաբ. մեկնուած է բազր լալ) Բժշ. ունի միայն Հին. § 3377։*

Արդեօք պէ՞տք է ուղղել շնկենիթ։

ՇԿՈՒԹ *(գրուած ըշկութ) «վատ կամ առ ընդ այն կամ անասուն». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 112. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ՇԿՏԵԼ *«մորթել». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 246 և ՓՒ. անստոյգ բառ։*

ՇԿՕԹԱԿ *(գրուած նաև ըշկօթակ) «աքսորուած» Հին բռ. կայ միայն շկօթակ առնել «հեռու մի տեղ աքսորել» ոճի մէջ՝ Նիշ. բ էջ 37, ը. էջ 124, 126, 128. Կաղանկտ. (սխալ է «խորասոյզ առնել» Հին բռ.)։*

*=Թուրս պհլ. *šikaftak ձևից. հմմտ. պրս.* شکفتن *šikaftan «քիւր և անհաւասար առնել»։ Ըստ այմ *šikaftak կարող էր նշանակել «խեղանդամ, խեղ» և ակնարկել հին պարսկական մի պատիժ, որով յանցաւորների զանազան անդամները կտրելով՝ մի հեռաւոր տեղ էին վարում. հմմտ. Փարպ. էջ 105 «Պատուհաս կրեսցեն խեղութեամբ և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն». այս ակնարկելով կարծես գրում է նաև Կաղանկտ. հրտր. էմինի, էջ 38. «Զոմանս խեղդելով զոմանս շկօթակս (ս-ով՝ իբր ածական!) առնելով և զոմանս ի սպրկութիւն արկանելով»։ —Ա՛ճ.*

Նշբ յն. ἐξωθέω, ὠθέω, *բրք.* էօթէ էթմէէ, էօթէյէ սիւրմէէ, *լտ.* exoticus «*օտար, տարաշխարհիկ*»։ *Տէրվ.* Altarm. 13 *և Մասիս 1882 յունիս 24 համարում է պահլաւերէնից փոխառեալ բառ, արմատակից հյ.* շռնել, *պրս.* šudan, *զնդ.* šu, *սնս.* čyu «*երթալ, հեռանալ*» *ձևերին։ Հիւնք. յն.* ἐξωθέω «*դուրս վտարել*»։ *Վերի ձևով մեկնեց Աճառ. Արրատ. 1910, 180։ Թիրեաքեան, Հայ-Երան. ուսումն. էջ 68 առանց այս յիշելու՝ դնում է պրս.* šikāft, *որ է* šikāftan «*ճեղքել*»։

ՇՂԱՄԷ. *անյայտ բառ, որ Բռ. երեմ. էջ 245 դնում է իբր մեկնութիւն շափին բառի։ Երկուսն էլ անծանօթ են։*

ՇՂԱՐՇ «*բարակ շոր՝ որ կանայք իրենց վրայ են առնում*» (*կրճատմամբ գրուած է* շղաշ, շարշ) *Վրդն. պատմ. հրատր. Վեներ. էջ 116. Օրբել. որից* շղաշատեռ «*շղարշեայ քող*» *Յուդիթ. ժզ. 10. Ես. գ. 23 (գրուած* շաղաշատեռ *Ոսկ. Ես. 37), «շղարշեայ, բեհեզեայ, բարակ բանուած» Յհ. կթ. արդի գրականում ընդունուած է միայն շղարշ ձևը՝ «տիւլ» նշանակութեամբ։*

Նշբ շար *բառից։ Հիւնք. պրս.* չախշըր «*վարտիք*»։ *Մառ,* Тексты X, *էջ 25* շղա(r)շ = *ասոր.* šilāšā «mustela Scytica, *աքիս, մկնհարսուկ*»։

Գիւտ.—Զբ. Տիգ. շղշ «*քող*», *Մշ.* շաշիկ «*կանանց գլխի կապ*», *Տիգ.* շղա «*կանանց գլխի ծածկոց*»?

*ՇՂԹԱՅ, *ի հլ.* «*զնջիլ, ղինճիլ*» *ՍԳր.* «*փխբ. շարք, շարայարութիւն, կարգ*» *Նփր. Թգ. որից* շղթայագործ *ՍԳր.* շղթայական *Արծր.* շղթայաձև *Յհ. իմ. հկեղ.* շղթայատող *Խոր.* շղթայաշար *(նոր բառ).* շղթայել *Մեկն. ղկ. Վրդն. սղ.* շրթնաշղթայ *Նար. առաք. 429։*

= *Ասոր.* šešaltā «*շղթայ*», *որ գտնւում է նաև միւս սեմական լեզուների մէջ. ինչ. Թալմ.* שושילתא šošiltā, *արամ.* שלשלתא šalšaltā, *ն. ասոր.* šišilt'ə, *արաբ.* سلسلة silsila «*շղթայ, շարք, ազգատոհմ*» *(որից ոսմկ.* սինսիլէ «*գերդաստան*»)։ *Հին ասոր. ձևը պիտի տար հյ.* *շիշաղթայ *կամ* *շիշիղթայ, *ուստի չէ յարմար։ Մեր ձևը ծագում է գուռ. ասոր.* *šišiltā *ձևից, որի ներկայացուցիչն է ն. ասոր.* šišilt'ə, *և որից կանոնաւոր կերպով (անշեշտ* i*-հրի անկումով) յառաջանում է* *շշղթայ > շղթայ։—*Հիւբշ. 314։*

Müller SWAW 66. 278 *դրաւ արամերէն ձևից։* Lag. Arm. Stud. § 1703 *ասոր.* šešaltā *ձևից։ Մորթման* ZDMG *26, 543 Բևեռ.* çiluadi: *Հիւնք. պրս.* չիլէ «*հանգոյց՝ կապ գօտւոյ*»։ Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 28 սանս.* çulba- «*կապ*», *հյ.* շեղ, շաղել *բառերի հետ՝ հնխ.* k'u̯l̥- *արմատից. հյ.* շղթայ *ծագում է* -այ *մասնիկով՝* *շուղթ *արմատից (հնխ.* k'u̯olb-to-)։

ՇՂԻԼ «*բոյսի տարածուիլը գետնի վրայ*» *Վստկ.։*

ՇՂՈՒԱԲԱՐՈՅ «*յիմար, անխելք*». *Համմ. Ագաթ. § 164. «Իսկ երանելիքն իբրև զիտացին զանմիտ և զշղուաբարոյ մարդկանն զյոռութիւն». շփոթմամբ գրուած է զանազան ձեռագրերում՝* շեղաբարոյ, շղուաբարոյ, շնաբարոյ. *այսպէս նաև ուրիշ հեղինակների մօտ. ինչպէս՝* շուարարոյ *Մանդ. էջ 161.* շղուրտաբարոյ *Յհ. կթ.* շուաղաբարոյ *Մանդ. ժէ. բայց ուղիղ է* շղուաբարոյ *Յհ. կթ. 313։*

= *Բարդուած է* շղու «*յիմար*» *և* բարէ, բարոյ *բառերից. առաջինը կորած հայերէն բառ է, որ գտնում ենք նաև վրացերէնում. այսպէս՝* შლუ շլու «*խենթ, յիմար*», შლუობა շլուոբա «*խենթութիւն, յիմարութիւն*». *սակայն ո՛վ ումից է առած։*

Նշբ վերիվերոյ մեկնում է բառը «շողոմարար, քծնող, շնորհող, շլխոփ, ճիլվէճի», իսկ շղուրտաբարոյ *համարում է «վայրենամիտ, վայրագ, լծ. լտ.* silvanus, *ի յն.* ὑλή*'ous»։ Այսպէս են նաև ՋԲ և ԱԲ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Արրատ. 1898, 311 և 1910, 180 (դնելով վրացերէնը հայերէնից փոխառեալ), որից յետոյ Մառ.* ЗВО *16, 150, հյ. Թրգմ. Մկրտ. Հայոց, Վրաց... Վաղշապ. 1911, էջ 88, որ հայերէն բառը փոխառեալ է դնում վրացերէնից, ինչ որ աւելի բանաւոր է թուում։ Պատահակա՞ն նմանութիւն ունի արաբ.* شول šūla «*յիմար կին*» *(Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 261)։*

ՇՂՈՒՆԱԿԱՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ*

ունի Բրս. կան. որից և Վրք. հց. ձ. «Ո՛չ է պարտ զարդարել հանդերձիւք կամ զգեստուք ոտից, որ շղուականք կոչին»։ ՆՀԲ մեկնում է «կօշիկ զարդարուն, մոյկ պաճուճազարդ՝ կանացի», ԱԲ «կանանց հագուիլ սգուելուն՝ ծոմակելուն վերաբերեալ բանները», Բառ. հ. բեմ. 246 (շղոկան ձևով) «փառամոլ կամ աշխարհական», Հացունի, Պատմ. տարազի, էջ 196 կցելով նախորդ շղուաբառոյ բառին՝ կարծում է կանացի բարքերին համեմատական մի կօշիկ։

ՇՄԱՖ «եկեղեցու գմբեթի վրայի պատուհանները». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մարտիրոս Ղրիմեցու մի տաղի մէջ. «Ունիս բոլորակ ձև խորհրդական, կամարին երկնից յարմար և նըման, լուսածագ շմաթք բուն երկոտասան, Ս. Աստուածածին գեղազարդ խորան» (Անկիւրիոյ համանուն վանքի համար է ասում). տե՛ս Կոստանեան, Նոր ժողովածու, Դ. էջ 27։ Այժմ գտնում եմ մի նոր վկայութիւն՝ նոյն Մարտիրոս Ղրիմեցու «յաղագս քաղաքին Ամասիու» տաղի մէջ (հրտր. Նոր ժող. Ա. 40). «Յաջմէ յահեկէ շմաթք, որ հեզիկ հողմն գայր ի նա»։

*ՇՄԱՖ «կրծկալ, գոգնոց». նորագիւտ բառ, որ երիք անգամ գտնում եմ գործածուած Քուչ. 53, 75. «Խնձորն ի ծառին ճղին, ի ճղին ներքև տերևին, Հնցկուն իմ եարին ծծերն ի ծոցին ներքև շմաթին. Քաղեց զիւր հոտում լունին, լուկ ելից ի շար շմաթին, շար շմաթն ալ ի վեր քաշեց...»։ Պէտք է հասկանալ անշուշտ կուրծքի փոքր կրծկալ (նման Ախալցխացի հայ կանանց տարազի), որ վեր բարձրացնելով՝ ստինքները ցոլացնել և լոյս են արձակել՝ ըստ Քուչակի։

=Պրս. شَمَد šämäd «քառակուսի սպիտակ շորի մեծ կտոր, որ իբր սաւան կամ սփռոց են գործածում». այս բառը չունի ԳԴ, բայց կենդանի է Թեհրանի արդի պրս. բարբառում, ինչպէս ստուգել եմ տեղի վրայ։— Ա.Ճ.

Զօպանեան, հրտր. Քուչ. էջ 133 համ. նում է արաբ. շիմաք ձևից։ Հացունի, Պատմ. տարազի 289 մեկնում է «շապիկ» և դնում է արաբ. շէմէճ «հիւսել» արմատից։

ԳԻՒ.—Մշ. շամատա «արծաթէ կրծկալ կանանց». սրա նուազականն է շմադիկ «գոգնոց», որ կենդանի է խութեցոց գաւառականում։ Նոյն բառն է դարձեալ շար ու շամաթ (իբր ածական), որ գտնում եմ ժողովրդական մի երգի մէջ. «Ճէվայիրէ բարձ ունիս, շար ու շամաթ շոր ունիս» (Հնութիւնք Ակնայ, էջ 412. նոյն երգը Արև. մամուլ, 1883, էջ 376 գրուած է շար ու ֆնար)։

ՇՄԱԼ «հևալ, շունչը կտրուիլ» մէկ անգամ ունի Ոսկ. ա. տիմ. 112՝ Անդ խօղ (=խուխ), անդ աւր, անդ շմալ, անդ հեծել, անդ փսխել և զգայել։ Նոյնը նաև Մանդ. էջ 127, որ գինու տուած վնասների մասին խօսելով՝ ասում է թէ «զսիրտն տաղտկացուցանէն և նեղեն նողկալովն և շմալովն և որովայնին փքալովն»։ Շատ աւելի ուշ՝ էֆիմ. 227 ունի «շմայ, հևայ, թոքայ»։—Հին բռ.=Բառ. երեմ. 247 մեկնում է «հևալ», բայց ՆՀԲ (որից նաև ՋԲ և ԱԲ) աւելի յարմար է գտնում «խառնիլ սրտի կամ ործալ, զգայուիլ առ ճմլէլոյ սրտի յառաւելութենէ կերակրոց և ըմպելեաց». գւռ. շմալ «հիւանդ մանուկի քնած միջոցին մշ մշ շունչ քաշելը» (վն.) հաստատում է Հին բռ.-ի մեկնութիւնը։

ՇՄԲՈՈՑ «տոպրակ, պարկ» Ոսկ. մ. բ. 8 (յատկապէս այն տոպրակը, որ ըմբիշները աւազով լցնելով՝ ուժի փորձեր էին անում. ըստ Նորայր, Բառ. ֆրանս. 629 բ haltère)։

Շմկիլ տես Մմկիլ։ Այստեղ մէջ բերուած վկայութիւնը (Խոր. բնութ. 258) գտնում ենք նաև Գիրք թղ. 24՝ հետևեալ ձևով. «Մաղու արժանի են բանքն. զպատուականն, ոչ զանգիտես, ըստ նոցա շմկեալ և խառնափնդռեալ վարկի՝ յանձն առնուլ». (տես իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 251, ուր համեմատութեան է դրւում նաև յաջորդ շմշկել բայը)։

ՇՄՇԿԵԼ «լմշտել, ճմլել, կոխան ոտից առնել». ունի միայն ՓԲ. սրա կրաւորական շմշկուել ձևն ունի Բառ. երեմ. էջ 322՝ հետևեալ ձևով. «Փառաւել՝ շմշկուել կամ շփոթել». ըստ այսմ շմշկուել նշանակում է «շփոթել»? Նորայր, Բառ. ֆր. 1244 բ շմշկել «գոր-

ծել ինչ խառնամառն կամ աղտեղի օրինակաւ, շաղախել, tripoter»։

ՇՄՈՇ. *անյայտ բառ՝ որ ունի Բառ. երեմ. էջ 242 շաղաշիւն բառը բացատրելու համար, որ սակայն նոյնպէս անծանօթ է։*

ՇՄՈՐԻԿ *«հոտիկ, նեխիկ, փտիլ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Բրս. մրկ. 288 և 382. Զչորեքօրեայն՝ զեղեալն ի գերեզմանի, զհոտեալն և զշմորեալն յարոյց. Մեռելոց որք որոշին և շմորեալ ապականին, յորժամ դնին ի տապանին։*

=Նոյն է վրաց. **შმორი** *շմորի «թթուիլ, նեխիլ», որից* **შმორიანი** *շմորիանի «թթուած, նեխած»,* **აშმორება** *աշմորեբա «նեխիլ, փտիլ, մգլիլ»,* **დაშმორება** *դաշմորեբա «հոտիլ (միս ևն)»։ Բայց յայտնի չէ թէ ո՛վ ումից է փոխ առել։—Աճ.*

ՇՄՈՐՏԱԿ *«օճառաախտ, ցամախ, թրք. չօղան, չէօյլէն օթի, լտ.* struthium, *ֆրանս.* saponaire» *Շահրիմ. որից առնելով ունին Նորայր, Բռ. ֆրանս., ՀԱ 1924, 72 և ՀԲուս. § 2325։*

=Անշուշտ կազմուած է տակ *«արմատ, խոտ» բառով, բայց յայտնի չէ թէ ո՛ր ձևի հետ պէտք է կցել շմոր։*

ՇՆԱՊԻ *«կորիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 247։*

ՇՆԹԵԼ *«քծնիլ, շողոքորթել» վրք. հց. անշուշտ պէտք է հասկանալ խօսքերով շողոքորթել և ո՛չ թէ զանազան ձևերով քծնիլ, քաւիլ. համմ. շնթփնթաանք, ինչպէս և՝*

*Գիհ.—***Շնթել** *Թհհ. «յանդիմանել, սաստել, չախել»։*

Նշ՛ր «իբրու շնոտել»։ Հիւնք. հանում է շղնջել բայից։ Petersson LUÅ 1915, 7 *(առ* Pokorny 1, 471) *հնխ.* kuenqu- *«գոդեցիկ, սիրուն, զարդարուն» արմատից. համմ. լիթ.* švánkus *«կոկիկ, նուրբ», յն. κομψός «մաքուր, զարդարուն»։* Pokorny *յիշում է, բայց թէ՛ ձևով և թէ նշանակութեամբ կասկածելի է գտնում։*

ՇՆԹԻՒՆ *«անպիտան ոլոռն». ունի միայն Քաջունի, հտ. Գ. 186. նոյնը ունի ԳԲ, բայց գրում է շնթիւն։*

—ՇՆԹՓՆԹԱՆՔ *«բարբանջանք, ցնդաբանութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կնիք հաւ. 295. Յեղանջեն ի գաղտնի՝ ի ծածուկ բերելով յինքեանս զշնթփնթանս. (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 100)։*

=Կրկնուած է շնթ- արմատից, որ իր պարզ ձևով երևում է շնթել «շողոքորթել» բառի մէջ։—Աճ.

ՇՆԿՂԿԻԿ *«իբար փաթաթուիլ, իրար խառնուիլ (բոյսերի)» Վստկ. 63, 171. (առաջին վկայութեան մէջ մէկ ձեռ. ունի շանկղկիլ, ինչպէս ընդունած է և ՆՀԲ. բայց գաւառական ձևերը ցոյց են տալիս, որ առաջինն է ուղիղ. երկրորդ վկայութիւնը առանց տարբերութեան է)։*

ՆՀԲ հանում է շուն բառից։

Գիհ.—Խրբ. **շընգըխգիլ** *«գրկել, փաթաթուիլ», Սեբ.* **շընգըխգիլ** *«կառչիլ, իւիջմիշ ըլլալ, փուշը շորերին կամ մատին խրուիլ»։*

ՇՆԿՃԵԼ *«ծծոտել կամ ճենճերել կամ երևել». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 247։*

***ՇՆՀԱՐՄԻ,** *որ և* **շէնհարմի** *«դաղձ կամ օշախ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2339։*

=Արաբ. شيح ارمنى *šīharmanī «հայկական եղևնահունդ»։ Հայաստանից դուրս եկած մի տեսակ* santonine», *որ ուրիշ Բժշկարան. հերում գրուած է շէհարմնի, շեհարմնի, որից սխալ գրչութեամբ յառաջացել է շենարմի։*

Այսպէս մեկնեց Նորայր ՀԱ 1923, 501։

ՇՆՈՐԵԱԿ *«մի տեսակ բոյս. լտ.* serapios» *Գաղիան. առ Լեհ. ունի միայն Հայբուսակ. § 2340։*

***ՇՆՈՐՀ,** *ի–ա հլ. (եզակին նաև ի հլ.) «ձրի բաշխուած պարգև. 2. վայելչութիւն, գեղեցկութիւն. 3. հաճութիւն, գոհունակութիւն» ՍԳր. Ոսկ. Եփր. Թգ. և ծն. Կոչ. Ագաթ. որից* շնորհել *ՍԳր. շնորհազարդ Ագաթ. շնորհալից Սեբեր. Ագաթ. շնորհակալ ՍԳր. Սեբեր. շնորհակորոյս Եփր. Թգ. 399. շնորհապատում Կորիւն. շնորհաւոր Սիր. ժր. 17. Ոսկ. եփես. շնորհուկ Եզեկ. ժր. 24. Ոսկ. յհ. ա. 31, 32. ապաշնորհ Ղկ. ղ. 35. Ոսկ. մ. ա. 1, 10. ա. տիմ. հռ. Կոչ. անշնորհ ՍԳր. Ագաթ. Բուզ. յոգնաշնորհ Ոսկ. եփես. հոգեշնորհ Փարպ. մարգարէաշնորհ ՅՀ. իմ. երև. բազմաշնորհ Պիտ. երանաշնորհ Գնձ. հօրնաշնորհ Արշ. նոր բառեր են շնորհագեղ, շնորհակալական,*

շնորհաւորութիւն, շնորհաւորական *են. արմատը գրուած է նաև* շնոհ, *որից* շնոհաւոր= *մհյ.* շնոֆոր *«շնորհալի» Կոստ. երզն. 117, փխբ. «մի տեսակ վատ վէրք». Յայսմ. մայ. 4 (Ունէր ի մարմինն իւր շար վէրս, զոր շնոֆոր ցաւ կոչեն, և ոչ է շնոֆոր, այլ դժոխաւոր). համմտ. Ախց.* բարի բան *«մի տեսակ վատ վէրք». գրուած* շրնուոր՝ *Դիւան ժ. 514 Պատմ. ԺԲ դարից։*

=*Պհլ.* *šnohr *ձևից, որ աւանդուած չէ թէև, բայց կան նրա ածանցները. այսպէս բացատականը՝ պազ.* avēšnohr *«ապաշնորհ, անշնորհք» (Թիրեաքեան, Ատրպատ, էջ 38). պհլ.* hu-šnōhr *«որին հեշտ է գոհացնել»* (Bartholomae 1820), *Թուրֆանի մանիք. պհլ.* עשנוהרג ‘šnwhrg (Salemann 3AH *8 (1908), էջ 108,* MSL *17, 246)=իրր հյ.* շնորհուկ. *համմտ. գնդ.* xšnaoθra *«գոհացում, գոհունակութիւն, ուրախութիւն», արմատը* xšnav- *«գոհանալ, բաւականանալ», որից և պհլ.* šnāyēnītan, *պրս.* خشنود xušnūd *«գոհ, բաւական, հաճ»* =*պհլ.* xušnūt=*գնդ.* *hu-xšnūta- (Bartholomae 557—8, Horn § 509)։—*Հիւբշ. 214։*

Նշբ արմատը շէն, իրր շէն օր, կամ շէն արարօղ, շէն օրհնութիւն, շէնուոր, շինարար, շինօղ գոհասօղս, երր. խչն «շնորհ»։ Ուղիղ մեկնից նախ Müller SWAW *38, ... և 42, 256. նոյնը նաև* Justi, Zendsp. 96 *ա,* Lag. Ges. Abhd. *297։ Ալիշան, Շնորհ. և պրպյ. 4* շէն, շէնի *բառից՝* -որհ=ուրհի *մասնիկով։ Հիւնք. ներել բայից։*

Գիր.—Ալշ. Մշ. Զղ. Սլմ. շնորհ, *Ախց. Գոր. Երև. Երբ. Կր. Համշ. Ղրբ. Մրզ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սչ. Տիգ.* շնօրհ, *Սեբ.* շնէօրհ, *Ագլ.* շնուրհ, *Ասլ.* շնէօ՝րհ, շնէօր*, *Տփ.* շընուրհ, շնուհ, *Ակն.* շինէօրհ, *Սվեդ.* շինիւրհ, *Վն.* շնոխ[1], *Մկ.* շնօխ[1], *Հճ.* շոնոյհ, *ԶՓ.* շէօնիյհ, շէօնիւրհ: *Սրանից* շնորհաւոր, *որի գուռ. ձևերն են՝ Սչ.* շնօրհաւօր, *Սեբ.* շնօրաւէր, *Ախց. Կր. Պլ.* շնահաւօր, *Տփ.* շնահա՛վուր, շնա՛վուր, շինա՛վուր, *Ակն.* շինահաւօր *(բայը* շինայհիւօրէլ), *ԶՓ.* իշնոհովիյ, իշնոհովիւր, *Հճ.* շնօյհաւոյ, *Գոր. Ղրբ.* շնրհա՛վուր, շնուհա՛վուր, շնրհա՛վրէր, *Պլ. Ռ.* շնաւօր, *Ասլ.* շնաավէօ՝ր, *Զղ. Սլմ.* շնախաւոր, շնոխաւոր, *Ալշ. Մշ.* շնավոր, *Մրզ.* շիւնախաւրի՛ր, շիւնոխաւրի՛ր, *Ննխ.* շնավօր, *Ագլ.* շնա՛վուր *(բայը* շրնրվա՛րիլ), *Շմ.* շնօօր, *Բլ.* շնօֆոր, *Համշ. Սչ.* շնաֆօր, *Տիգ.* շնօֆուր:— *Էնկիւրիի Թրքախօս հայոց բարբառով՝* շնօրհ *«շնորհք» (օր.* Ալլահտան շնօրհ իսաէ *«Աստուծոյ շնորհք ուղիր»),* շէնհսիզ-շնօրհսուզ *«ձև, անշնորհք» (Բիւր. 1898, 865), Այն.* շէնիֆօր *«շնորհաւոր» (Բիւր. 1900, 683)։*

Փոխ.—Վրաց. შნო շնո *«գեղեցկութիւն, հաճոյք, շնորհք»,* შნოიანი շնոիանի *«գեղեցիկ, հաճելի, շնորհալի». (Ջուբինով կգտ է նաև* შვება շվեբա *«ուրախութիւն»,* შვენება շվենեբա *«գեղեցկութիւն, զարդարել, գեղեցկացնել, վայլեցնել»,* შვენიერება շվենիերեբա *«սիրունութիւն, վայելչութիւն, գեղեցկութիւն»,* შვენიერი շվենիերի *«գեղեցիկ, սիրուն, հաճելի». բայց սրանք համաձայն չեն մեր բառին). Թրք. գուռ. Կս.* šənork *«շնորհք». օր.* Allah saña šənork versin *«Աստուած քեզ շնորհք տայ» (Բիւր. 1898, 387 և 713)։*

Շշի *տե՛ս* շիշ։

ՕՇՇՈՒԿ *«վտանգի երկիւղալի ձայն» Ա-Թագ. ե. 6, 11. Ոսկ. մ. բ. 11. որից* դառնաշշուկ *ԱԲ. մահաշշուկ ՅՀ. կԲ. անշշուկ Ոսկ. բ. տիմ. չարաշշուկ ՅՀ. կԲ. ճառընտ. նոր գրականի մէջ շշուկ նշանակում է «բարակ ձայն, փսփսոց», Բառ. երեմ. էջ 245 մեկնում է «զօրութիւն»։*

=*Բնաձայն բառ. կազմուած է շ ձայնից կրկնութեամբ և* -ուկ *մասնիկի յաւելումով. համմտ. հյ.* շշուիջ, *վրաց.* შაშა-შუშა շաշաշուշի *«կօշիկի ճռճռոց», ուտ.* շուշուփսուն *«փսփսալ»,* շուշուկալ *«փսփսացող»։—Աճ.*

Սոյն մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, էջ 204 բ։

Գիր.—Սվեդ. շշէօգ, *Հճ.* շոշուգ *«շշուկ, կամաց խոսակցութիւն». համմտ. նաև* շշկոց *Սեբ. «շշուկ, փսփսոց», Ուդ. «սօսափիւն»։— Տարբեր իմաստ ունին Առն.* շշօգ *«սուտիր, շուաք», ինչպէս նաև* շշուկ *Զղ. «ժանտամահ». այս նշանակութեան համար մի քիչ հնից ունինք՝* Շշուկ ցաւօք զքեզ տիրեացեն և գարշ անձամբ քով սաստիկ պատեացեն. *Նոր վկ. էջ 594 (ԺՀ դարից). իսկ ԺԷ դարի*

վերջից բառ. երեմ. էջ 245 դնում է շղուկ մաճու «խոց մահու կամ ուռուց». գրեթէ նոյնպիսի նշանակութիւն ունի նաև շղուկ Ոսկ. ա. տիմ. 114 «Որպիսի՞ ինչ գայր և շղուկ գլերդիւն և գփայծղամբն և կամ զաղբոյն գայրանոցօքն»։

⊙ՇՇՈՒՆՋ «փսլտոց, տկար ձայն» Իմ. ա. 11. որից շղնջել ՍԳր. (գրուած է շըշնջել՝ Կրկնագիր Ագաթ. Յուշարձան, էջ 86 ա), շղնջիւն Իմ. ա. 10. Եղիշ. շղնջումն Մաթս. հ-կեղ. աճշղունջ ՍԳր. Եզն. գաղտնաշշունջ Մծբ։

=Բնաձայն բառ. կազմուած է շ ձայնից՝ կրկնութեամբ և ն, ջ ածանցիչներով. հմմտ. շղուկ և դղնջել, խխնջել կամ խխնջել։—Աճ.

ՆՀԲ «իբր մրմռումն ընդ ունչս շրշ մրշ հնչմամբք, կամ ընդ ունկն այլոց հծծհլով»։—Հիւնք. շունչ բառից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 204 բ. նոյնը յետոյ Lidén, Յուշարձան 385 ծան.։

ՇՈՂ (յետնաբար ո հլ.) «տաքութիւն, տօթ» Լմբ. առակ. և Բեննդ. Վանակ. յոբ. «շոգի, գոլորշի» Պիտառ. «տաք» Էփիմ. 110. որից շոգի «գոլորշի». Եւս. պտմ. Եզն. «շունչ» Եզն. Ագաթ. «լոյսի ճառագայթ» Եփր. համաբ. Երզն. մտթ. «դիտութեան նշոյլ» Եփր. ա. կոր. 75. շոգաճալ «շոգիանալ» Նիւս. բն. շոգալիճ կամ շոգլիճ «գոլորշի» Երզն. մտթ. էջ 570. (որ և շոգլի Երզն. երկն. գ. շոմլ Վրդ. առ. 115. շուխլ «vapor» Cl. Galano, Gr. et log. inst. Romae 1645, էջ 21 ա, շոգոլի «գոլորշի» Վրդն. ծն. Փիլ. լին. 289. «հառաչանք» Նիւս. կազմ.), շոգեալ «տաքացած» Յայսմ. յնվ. 11 (չունի ԱՔ), շոգիամէգ Նար. շոգեակ Վրդն. սղ. շոգէտեսակ Նիւս. բն.—Նոր բառեր են շոգեկառք, շոգենաւ, շոգենաւակ, շոգեշարժ, շոգեմեքենայ, շոգեմակոյկ, շոգեկաբասայ, շոգելից, լիաշոգի։—Շոգ և շոգի բառերի նշանակութեանց զարգացման համար հմմտ. գոլ և գոլորշի։

ՆՀԲ շոգ՝ ոմկ. ձևն շոգի և շող բառերի, իսկ շոգի՝ հանում է ոգի բառից, լծ. սիբ, յն.ψυχή։ Հիւնք. ոգի բառից։ Pedersen, Հայ. գր. լեզ. էջ 102 շնչել և հոգի բառերի հետ։ Lidén, Յուշարձան 385 հոգի բառից դնում է շոգի, ինչպէս հունչ բառից շունչ։ Գաբրիէլեան ՀՈ. 1909, 222 շող բառի հետ։ Karst, Յուշարձան 415 ճապոն. tsuge «ներշնչում», 416 ոգի բառից, 429 թիբր. kuy, kov, kog, guy «այրիլ, վառիլ, ցոլալ», 430 թիբր. qoq «փչել, շնչել»։

ԳԻՒՐ.—Ալշ. Մշ. շոգ՝, Զթ. շոք, Ախց. Երև. Կր. Շմ. շօք, Տփ. շուք, Մկ. շուք՝, Համշ. շէօք, Ալմ. շէօ՝ք՝ «շոգ, տաք».—Սեբ. շօքի, Ալշ. Մշ. շոգ՝իլք «գոլորշի».—Նոր բառեր են շոգեճալ, շոգճալ, շոգիլ, շոգոուկ, շոգաճան լինել։

ՓՈԽ.—Քրդ. شۆق šoq «տաք» (Justi, Dict. Kurde, էջ 264 բառս կցում է արաբ. شَوْق šavq բառին, որ ըստ Կամուս, թրք. թրգմ. Բ. 938 նշանակում է «ցոլք, փայլ» և չունի «տաքութիւն» նշանակութիւնը)։

ՇՈՂՄՈՂ (յետնաբար ի–ա հլ.) «բանսարկու, քսու, բամբասող» Հռ. ա. 30. Յուդ. 12, 16. Բուզ. որից շոգմոգել «շողոքորթել» ՅՀ. կթ. Պիտառ. շոգմոգութիւն ՅՃխ. Բրս. ճգն. Ասող.։

=Կրկնուած է *շոգ պարզական արմատից, որ այլուստ անծանօթ է։—Աճ.

ՆՀԲ «իբր շոգւով բերանոյ իւրոյ մոգիչ լսելեաց կամ ի կրկնութենէ շոգ կամ մոգ բառից»։ Վերի ձևով Աճառ. ՀԱ 1899, 207 ա։ Գազանճեան, Արևել. մամ. 1902, 77 շոգ բառից՝ մ մասնիկով և կրկնութեամբ։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 125 շոգի «գոլորշի» և հոգի բառերից՝ մ յաւելուածով։

ՇՈՀԱՆԱԼ «ճեմել, ման գալ» Մագ. գամագտ. և այլ թղթեր. (Հին բռ.=Ռս. երեմ. 247 մեկնում են շոհել «վնասել», շոհաճալ «ճոխանալ», շոհեցեալ «յաղթեալ». ըստ Ռոշք. շոհաճալ «ճոխանալ». նոյն է նաև շոհել «յաղթել» ՓԲ. բայց այս բոլորը սխալ է և ուղիղ է միայն «ճեմել, պտտիլ» նշանակութիւնը, ըստ Նորայր, Բանաս. 1900, 135). աւելացնենք նաև «վրան դիմել, յարձակիլ», ինչպէս ունի Մագ. թղ. 67. «Շուայտական շիդարացն շարս շամանդաղնալ շոհանան ի վերայ մեր»։

ՇՈՂ (յետնաբար ի, ո հլ.) «արևի ճառագայթ, նշոյլ, ցոլք» Բ. մկ. ա. 22. Ես. լը. 8. Ագաթ. եզն. «լուսաւոր, փայլուն» Ոսկ. երր.

Վեցօր. 115. «տաք» Վստկ. 17. Սմբ. պտմ. 70. Տաթև. Հարց. 211, որից շողալ *«փայլիլ, ցոլալ» Նաւ. գ. 3. Յոր. թ. 23. Ոսկ. ես. Եփր. Թգ. Ագաթ. Սիբեր. «լոյսի մէջ երևիլ» Եզն. Սեբեր. Վեցօր. էջ 161, 179 (ՀԱ. 1913, 135), «երևիլ» Ոսկ. փիլիպ. 412, Եփես. 868.* շողանալ *«սաստիկ տաքանալ» Մանդ. Յայտմ.* շողացուցանել *Ագաթ. Նւս. պտմ. Բուզ. Սեբեր. Ոսկ. ես.* շողաւոր *Կորիւն.* շողայիւն *«տաք» Աբր. կրետ. 66.* շողսիրտ *«տաքարիւն, կրքոտ, զայրացած» (չունի ԱԲ) Ագնսիզք 35.* շողհաց *«մատաղի յատուկ մի տեսակ հաց» Սմբ. դատ. 60.* շողկտացուցանել *«հայհոյին արևի դէմ ցոլացնել» Վստկ. 73.* շողրեցուցանել *«մի քիչ տաքացնել» Վստկ. 215. կրկնութեամբ՝* շողշողիլ *«փայլփլիլ» Նար. խչ.* շողշողեցի *«փայլուն» Նար. տաղ. նոր բառեր են՝* լուսաշող, ամպշող, շողշողուն *են։ Այստեղ են պատկանում նաև* ճշող, ճշոյլ *ձևերը, որոնց վրայ տե՛ս առանձին։*

Այվազովսքի, Յղ. հնչման 16 տճկ. շէօղէ *«շող» (իմա՛ արաբ.* شعله su'la *«բոց, ճշոյլ»)։* Canini, Et. étym. 182 *սանս.* çuč *«փայլիլ»։ Տէրվ. Մասիս. 1881 մայիս 5* ցոլաճալ *բառի հետ յն.* σχέλλω, *լտ.* calere, calor։ *Նոյն, Նախալ. 115 կասկածով սանս.* çur, *զնդ.* xvarəta *«փայլ», գերմ.* Schwuel *«գոլ» ձևերի հետ՝ հնխ.* svar *«վառիլ, այրիլ» արմատից։ Հիւնք. լտ.* sol *«արեգակ» բառից։* Bugge IF 1, 441 *սանս.* sčandra-, *յետնաբար* čandrá *«փայլուն, լուսին» և հյ.* շանթ *ձևերի հետ։* Patrubány IF 14, 55 *հնխ.* kelē *արմատից՝ լտ.* calere, *լիթ.* šilaũ *«տաքանալ», հգերմ.* lāo։ *Գաբրիէլեան, ՀԱ. 1909, 222 նոյն ընդ* շոգ։ Karst, *Յուշարձան 427. օսմ.* yəl-dərəm *«փայլակ»,* yəl-tramaq *«կայծակել», ույղուր.* yola *«ջահ, լոյս», չաղաթ.* žili, čili *«տաք» բառերի հետ։* Petersson LUÄ 1915, 3 *և* 1916, 47, Ar. u. Arm. Stud. 94, *որից և* Pokorny 1, 368 *հնխ.* k'eu- *«փայլիլ, պայծառ» արմատի տակ. Համմտ. հյ.* շուք, շաւիղ, *սանս.* çvaḥ *«վաղը», զնդ.* sūrəm *«առաւօտը կանուխ», սանս.* çoṇa- *«կարմիր» և այլն։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Վն. շող, *Մրղ. Ննխ.* շօղ, *Ախց. Երև. Կր.* շօխ, *Ջղ.* շօխկ, *Ղրբ.* շօխկ, *Ագլ.* շուղ, շուխկ, *Տփ.* շուխկ, *Սլմ.* շէօ՝ղ, *Մկ.* շուղ *«շողք, ցոլք, փայլ».— Հճ.* շող *«տաք», Խրբ.* շօղ *«տաքութիւն»,* շօղալ *«փայլիլ», ՋԹ. Սվեդ.* շիւղ *և Ասլ.* շէօ՝ղ *«տաք». այս իմաստի համար հներից լաւագոյն վկայութիւնն ունի Վկ. արև. էջ 59. Ո՛չ ձմեռն ջնջել շող ամպովք։ Նոր բառեր են՝* շողաթաթախ, շողալոյս, շողաճ, շողերես, շողճար, շողմտիլ, շողճալ, շողշղաճ, շողշողաճար, շողշողաւիլ, շողշողոց, շողուղող, շողուճ, շողռուճ, շողվղտալ, շողվղտաճիլ. *(իսկ Տփ.* շօվղ, *Պլ.* շաֆխ *«ցոլք» գործ չունին այստեղ և փոխառեալ են արաբ.* شوق šavq *«ցոլք» բառից)։*

*—*ՇՈՂ *«խոնաւութիւն, թացութիւն». արմատ առանձին անգործածական, որից կազմուած է* շողիւ *«լորձունք, վազած թուք» Ոսկ. Հոռվմ. 92, 93, 163 (ուղ.* շողիւ, *հյց.* շողիս *ձևերով). պարզ արմատը պահում են Կովկասեան ձևերը և* շոլ *«ցօղ, շաղ» Համշ։*

=Նոյն է շաղ *«ցօղ» արմատի հետ, որի ձայնդարձն է։*

Նհբ լծ. հյ. տողիւ, *յն. լտ. Թրք.* սալի՛վա, սալեա։ *Սագրգեան, ՀԱ. 1909, 334 հյ.* տողիւ, շաղ, շաղախ, *Թրք.* sel *«հեղեղ»,* sayanaq *«տարափ», սումեր.* sêg *«անձրև»,* sük *«աղբիւր»,* suk *«ճահիճ» են։* Karst, *Յուշարձ. 407 սումեր.* šua *«թացութիւն, թուք»։ Պատահական նմանութիւն ունին արևել. Թրք.* شیلکی šilgey *կամ* شولاکای šulagay *«թուք, շողիք»։* Lidén *տես* շաղել։

ԳԻՒ.—Հճ. Պլ. Ռ. Սեբ. շողիւ, *Կր.* շողիւճ, *Ակն.* շողոււ, *ՋԹ.* շուղրւ, *Ննխ.* շողուճ, *Ղրբ.* շա՛ղէնւ՛, *Սվեդ.* շուղէնւ, *Ասն.* շօրիգ *«լորձունք»։ Նոր բառեր են* շողուռ *«լորձունքոտ»,* շողուկ *«լորձունքոտ և առանց պատեանի մի տեսակ խղունջ».—Ղրբ.* շա՛ղէնւ՛ *պատկանում է* շաղ *ձևին։*

ՓՈԽ.—Լազ. šol *«թրջել»,* do-vo-šoli *«թրջեցի»,* vo-šol-aminon *«պիտի թրջեմ»,* šolapa *«թրջելը»,* šoleri *«թաց, խոնաւ» (Աճառ. Արրատ. 1910, 179), Թրք. գուռ. Կր.* šoyort *«շողիք» (Բիւր. 1898, 627)։*

ՇՈՂԱԽ *«մի տեսակ հիւանդութիւն». ունի միայն Քաջունի, հմ. Գ. 186. որից և ԳԲ։— Արդեօք պէտք է հասկանալ շող-ախտ «ջերմ-ախտ»?*

[**ՇՈՂԱԿԵԱԼ** *«հոչակեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 247, որի հետ նոյն է շուշական «հռչակեալ», էջ 248։ Բառիս միայն այս երկու ձևով գործածութիւնը ստիպում է կարծել՝ որ պէտք է միացնել Ոսկեբերանի շշոկել, շշակաճս առնել բառերի հետ, իբր վրիպակ։]*

ՇՈՂԱՆ *«մի տեսակ եղէգ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2346։*

Շողգամ *տե՛ս Շաղգամ։*

Շողիք *տե՛ս Շող։*

ՇՈՂՆԱԳՈՅՆ *կամ* **ՇԱՂՆԱԳՈՅՆ** *«սիրողագոյն». ունի միայն Բառ. երեմ. էջ 243 և 247. երկուսից մէկը վրիպակ է։*

ՇՈՂՈՄ, ի–ա *հլ. «շողոքորթ, քծնող» Պատմ. ըստ ԼԽ. «շողոքորթութիւն» Ոսկ. Հռովմ. 415 (ձ. յիշէղոմս). Վրք. Հց. բ. 292. որից* շողոմել *«շողոքորթել, քծնել» Նոնն. 45. Նեղոս 646.* շողոմաւար *Խոր. ՅՀ. կթ.* շողոմութիւն *ՅՀ. կթ. Ագաթ. 169. սրանք գրւում են նաև* շղոմ–, շղում–, շղողմ– *ձևերով։*

Տէրվ. Altarm. 72 *կցելով* շողոմոր *բառի հետ, արմատը դնում է* ղոմ, ղոմ՝ *ծագած պարզական* ra *արմատից. Համմ. սանս.* ra *«սէր», յն.* ἔραμαι *«սիրեմ»,* ἔρως *«սէր», գնդ.* ram *«հանգչիլ, ուրախանալ», սանս.* rāma *«ուրախութիւն, հաճոյք», լիթ.* rimti *«հանգչիլ»։*

ՇՈՂՈՅԵԼ *«հարժել». ունի միայն Բո. երեմ. էջ 247. երկուսն էլ անծանօթ են իմաստով։*

ՇՈՂՈՔՈՐԹ *«կեղծաւոր, քծնող». մէկ անգամ միայն գործածուած է Ոսկեդարեան գրականութեան մէջ՝* շողոմոր առնել ումեք *ոճով (Ոսկ. սղ. ՀԱ 1917, 27). ուելի յաճախական է յետոյ, ինչ. Պետտա. Նար. Կլիմաք. (գրուած է* շողաւմոր *Սասն. էջ 55). որից* շողոմորթել *Յճխ. Դիոն. ածայ. Երզն. մաթ.* շողոմորթանք *Ճառընտ.* շողոմորթութիւն *Ասող. Գր. հր. արդի գրականում ոմանք գրում են* շողոմորդ, *իբր թէ կազմուած* -որդ *մասնիկով* *շողոմ *արմատից։*

ՆՀԲ շողոմ ողոմիլ։ *Տէրվ.* Altarm. 72 *(տե՛ս նաև* շողոմ*), Նախալ. 63, Երկրագունտ 1883, 170 արմատը* շողոմ*, որ կազմուած է* շ *մասնիկով* ողոմ *բառից։ Հիւնք.* շաղակրատ *բառից։ Մատ տե՛ս* ողոմ *բառի տակ։*

ԳԻՒ.—Ունինք Երև. շօղո՛մfor, *Ղրբ.* շուղո՛մmur (<շողոմmor) *«քաղցր լեզուով իրեն սիրելի ընծայող», որի առաջին մասը թէև թուում է շողոմ բառից, բայց ընդհանուրը շողոմոր ձևից է։*

Շոճ *տե՛ս Սոճի։*

ՇՈՃ *«նուագ կամ նուագարան» Հին բռ. (իբր հոմանիշ է դնում՝ «նուագք, տաղք, գեղապարք, շոճք, նուագարան»)։*

Դիտելի է որ պրս. سرو sarv *նշ. «նոճի» և սրանից* sarv-i sahī, sarvistān, sarv-i sitāh *զանազան երաժշտական եղանակների անուններ են։*

ՇՈՃՄՏՈՒԹԻՒՆ. *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Գր. Մարաղեցի, Ձեռ. էջմ. № 20, էջ 130. «Մեղայ անմիտ շոճմբտութեամբ». թերևս նշանակում է «անմիտ, դատարկ, ունայն մտածմունք»։*

Այսպէս ունի Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 520 բ։

***ՇՈՄԻՆ** *կամ* **ՇՈՒՄԻՆ** *«ծմել, սպանախ» Բժշ. Մխ. բժշ. 147 (տպուած զօմին)։*

=Պրս. شومین šōmīn *«սպանախ»։— Հիւրշ. 273։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ Հիւնք.։

ԳԻՒ.—Ջղ. շօմէն *(նոր փոխառութիւն պարսկերէնից).—Նո՞յն է նաև Ղրբ.* շումի *«մի տեսակ բոյս»։*

ՇՈՅ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «փութկոտ, ճարպիկ, յաջողակ, արագաշարժ» Առակ. իբ. 29. Վեցօր. էջ 85. Ոսկ. կող. «շուտով, շուտ մը» Սիր. ժգ. 11. Վրք. Հց. որից* շուտարան *Կոչ. 421.* շուտագոյն *Կոչ. 215.* շուտախօս *Սիր. դ. 34.* շուտութիւն *Փարպ. Լմն։ Արմատը ոմկ. գրւում է նաև* շուտ, *որ հիմայ ընդունուած է գրական լեզուի մէջ՝ «արագ» նշանակութեամբ. որից* շուտասելուկ *(նոր բառ)։*

ԳԴ պրս. زود zūd *«շուտ, արագ». (Նմանութիւնը պատահական է, որովհետև բառիս սկզբ. ձևը՝* 𐬵𐬎𐬎 zūt՝ *պիտի*

*տար հյ. *գուտ)։* Böttich. ZDMG 1850. 359 *սանս.* jūta *և պրս.* zūd: Lag. Ges. Abhd. 66 *գնդ.* šūta *«եկած, քշուած»։ Տէրվ. Նախալ. 112 կասկածով* չու, չուել *բառի հետ։* Karolides *տես* շիր: *Հիմնք. պրս.* šīd *«արեգակ» բառից։*

ԳԻՒ.—Ախց. Կր. Մկ. Ջղ. շուտ, *Ալշ. Երև. Մշ. Ննխ. Ո.* շուդ, *Մրղ.* շուխտ, շուէտ, *Վն.* շոտ, *Ագլ. Շմ.* շիւտ, *Սլմ.* շուէտ, *Սվեդ.* ուշէդ: *Որովհետև բառս երկու տարբեր նշանակութիւն ունի («կանուխ» և «արագ»), որոնք շատ անգամ իրար հետ շփոթւում են, Ղրբ. զանազանութիւն դնելով գործածում է* շիւտ *«կանուխ» և* շի՛շիւտ *(<*շուտ-շուտ*) «արագ, յանախ»։ Նոր բառեր են* շուտաիաս, շուտիասուկ, շուտկեկ, շուտմաշ, շուտուց *կամ* շուտուից:

Շոնիճ *տե՛ս Սոնիճ։*

Շոշական *տե՛ս Շոշոկել։*

Շոշիլ *տե՛ս Շօշիլ։*

ՇՈՇՈԿԵԼ *«դեղեցիկ երևալու համար ձևեր անել, ալևկիլ, նազկոտիլ» Ոսկ. ա. տիմ. էջ 68. նոյն է նաև* շոշականս առնել *(ձևո.* շոշականս*) համանիշը՝ Փիլ. իմաստ. էջ 81 (յն.* ἐγκαλλωπίζομαι*):*

*=Կրկնուած է *շոկ պարզական արմատից, որ այլուր չէ գործածուած։*

Հ. Ա. Վարդանեան ՀԱ. 1912, 635 մեկնում է վերի ձևով. սրան է միացնում նաև Ակն. շոգշգալ, *որ ըստ իս համաձայն չէ թէ՛ գ ձայնի պատճառաւ և թէ նշանակութեան կողմից («առատօրէն վայելել, հարստութեան մէջ լողալ»)։*

ՇՈՇՈՐԹ *«հիւանդութիւնը անցնելուց յետոյ՝ մարդու վրայ մնացած հետքը», իբր մհյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆրանս. 669 աւ կենդանի է զանազան գաւառականներում, ինչպէս խրբ.* շօշօրդ՝ *(նոյնպէս նաև Արբ. Երև. Ննխ.), Մշ.* շորշորդ՝, *որ և նշանակում է «խեննթուկ, յիմար, փախուկ» (այս իմաստով ունին խրբ. Պլ. Վն.)։*

ՇՈՊ *կամ* ՇՈՐՊ *«բոյսերի արևահարութիւն» Վասկ. 74։*

ԳԻՒ.—Մկ. շօբ *«տիֆ և նման վարակիչ հիւանդութիւն», շփած «արևահար», Ալշ. Մշ.* շօբա «typhus»։

ՇՈՊԵԼ *«յափշտակել, կորզել, խլել» կանոնք սահ. 125. Փիլ. քհ. 191. Պիտ. 36. կթ. 315. գրուած է նաև* շուպել *երգն. մտթ. (այսպէս ըստ ՆՀԲ, բայց տպ.* շոպել՝ *էջ 116 և 448). կրկնութեամբ* շոպշոպել *Կանոն, էջ 50 (այսպէս ըստ ՆՀԲ. իսկ ըստ տպ.* շոպել, *որին տրուած իմաստն էլ անյարմար է թուում տեղին). ո աստկականով* շոպոել *Բռ. երեմ. էջ 247 և ՀՀԲ։*

Տէրվ. Նախալ. 111 յն. σκάπτω, *լտ.* scabere, *լիթ.* scapoti, *գերմ.* schaben *և հյ. շօշափել ձևերի հետ՝ հնխ.* skap *«քերել, փորել» արմատից։* Karst, *Յուշարձան, էջ 407 սումեր.* šub *«առնել», 426 օսմ.* soymaq *«քերթել, պլոկել, կողոպտել»,* soyan *«սոխ», չաղաթ.* soy-gan *«թալան, գողութիւն»։*

ՇՈՐ *(յեռնաբար ի, ո հլ.) «հագուստ» Տաթև. ձմ. ձդ. Յայսմ. յնվ. 2. Առաք. պատմ. 456. Մխ. ապար. Մին. համդ. 56. Սիմ. ապար. 160. որից* կեղտաշոր *«քուրջ, կեղտոտ շոր» (նորագիւտ բառ) Յայսմ. ապր. 16,* շորեթափիլ *«հագուստները վրայից ընկնիլ?» Ոսկիփ. Վրդն. առ. 60.* շորեղէն *Ես. պատմ. 42.* ուսաց շոր *կամ* ռուճաշոր *«կանացի վարտիք» Ջքր. սարկ. Բ. 82, 88։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Վն. շոր, *Ախց. Երև. Կր. Ննխ. Պլ. Ո.* շօր, *Շմ.* շօր, *Խոր. Համշ. Ղրբ. Սեբ.* շէօր, *Ասլ.* շէօ՛ր, *Ագլ. Տփ.* շուր, *Մկ. Տիգ.* շուր, *Սլմ.* շուէր, *Մրղ.* շուխր. *սրբանք նշանակում են «1. լաթ, կտոր. 2. հագուստ, զգեստ. 3. շորի կտոր, քուրջ, հին շոր».—Պլ. միայն «մանկիկի առականքը պատող շորերը»։—Նոր բառեր են* շորաբալուլ, շորակտոր, շորաճան, անշորաճան, շորաճին, շորաճոտ, շորաձևաճոք, շորձևէք, շորացու, շորաւորիկ, շորճաճելուկ, շորերաւօն, շորապան, շորատուն, ռուաշոր, տակաշոր.—շորեղէն *հաւաքական բառ է և նշանակում է «շորերն ընդհանրապէս» (հմմտ.* ֆարեղէն, արծաթեղէն, պղնձեղէն, երկաթեղէն, փայտեղէն*), մինչդեռ* շորեղէն *Մ. Մաշտ. էջ 216 բ նշանակում է «շորից շինուած»։*

ՇՈՐԹ *«գոյն». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* յոգնաշորթ *«բազմագոյն» Վահր. ոտ. յիշ.* դեղնաշորթ *«դեղնագոյն, դեղնորակ» ՀՀԲ.* կարմրաշորթ

«կարմրորակ» ՀՀԲ. էֆիմ. 183. պաղշորթ «դժգոյն» ՆՀԲ (իբր ռմկ.), կապուտաշորթ էֆիմ. 182. նսեմաշորթ էֆիմ. 177. մրնաշորթ էֆիմ. 296։

ՆՀԲ լծ. թրք. շուտուբ «օրէն, օրինակ» (իմա՛ արաբ. شُرُوط šurūṭ «պայմաններ», հզակին ب شَرْط šarṭ «պայման»)։

ՇՈՐԹԵԼ «յափշտակել, խլել, կորզել» Կոչ. էջ 197. վրք. և վկ. Ա. 150 (ոսկեդարեան), Բ. 497. Նխ. ա. և բ. մկ. փխբ. «խելամուտ լինել, մի բանից իմաստ հանել» Մագ. գամատգ. ժա (ըստ Մէնէվիշեան ՀԱ 1911, 546), որից շորթումն «մազերը փետելը» Մագ. թղ. 121. անշորթելի Մագ. թղ. 137. Սարգ. ա. պետ. ա. էջ 237 (բ. տպ. 188), բ. էջ 255 (բ. տպ. 202). դրամաշորթ (նոր բառ)։

Հինք. յորդել բայից։

ԳԻՒ.—Սեբ. շօրթել «խլել, յափշտակել». նոյն իմաստով ունինք նաև շորփել Բլ. Խն. Մշ. Նբ. որ հնչւում է (անշուշտ սաստկութիւն տալու համար) շոռփել (Մշ. շօռպել)։

ՇՈՐԻԿ, մէկ անգամ գործածում է Բուզ. դ. 20. «Այն բանքն յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շոշմոգն սիրանենգն Փիսակայ». բուն նշանակութիւնը անստոյգ է. մօտաւորապէս միայն երևում է որ անարգական ածական է։

ՆՀԲ «պրս. շուրիաէ, շուրիզէ, այսինքն խելաշուրջ և թափառական»։ Աճառ. Արրատ. 1910, 180 համարելով «խառնակիչ, խռովարար կամ խենթ», ուզում է դնել պհլ. *šōrīk ձևից, իբր պրս. شور šōr «շփոթութիւն, խռովութիւն. 2. ձախող», šōrmōr «անարգ, չնչին, նուաստ. 2. կաղ և կոիւ», šōrbaxt «վատաբախտ, դժբախտ», šōrīdan «պղտորել 2. խենթենալ, խելացնոր լինել», šorīda «խելացնոր. 2. խառնակ»։

ՇՈՐՈՄ. անստոյգ բառ, որ առանձին չէ գործածուած. կայ միայն շորոմանձև բարդի մէջ, որ մէկ անգամ գործածում է Կղնկտ. Հրտր. էմ. 126. «Ընդ նմին և զըմպոցս եղջիւրիղէնս և զշորոմանձևս փայտեղէնս մեծամեծս, որով զարգանակն լափէին». (Հրտր. Շահն. Ա. 272 դնում է շերեփանձև, որ գուցէ յարմարեալ սրբագրութիւն է. Ալիշան, Հայապատում, էջ 223 բ մեկնում է «երկայն վըզով աման ջրոյ, որ խոխոջէ կամ կարկաչէ անոր մէջ» (երևի բնաձայն է համարում)։

Մառ, Тексты I (1925), էջ 66—125 շորոմանձև մեկնում է «դդմանձև», իբր հռուս. шелом «սաղաւարտ» և պրս. سورم šūram «մի տեսակ թուրինջ»։

ՇՈՒԱՅՏ «ցոփ, զեղխ, վաւաշոտ» Ժմ. յն. որից շուայտանալ «զեղխութիւն անել» Ոսկ. ա. կոր. և ա. տիմ. Մանդ. շուայտիլ Ոսկ. մ. ա. 4, 10. ա. Թես. Եփր. թգ. շուայտութիւն Ղկ. իա. 34. Սիր. լդ. 3. շուայտասէր Ոսկ. բ. կոր. շուայտաձիկ Մանդ. շուայտաբարոյ Ագաթ. (ուղղել շղուարարոյ). ունինք նաև գրուած շուայթիլ։

ՆՀԲ և Հինք. արար. شهوة šahvat «ցանկութիւն, վաւաշոտութիւն»։

Շուառն տե՛ս Շաւառ։

Շուատ տե՛ս Շոատ։

ՇՈՒԱՐ «տարակոյս, վարանում, ի՛նչ անելիքը չիմանալը. 2. շփոթած, վարանած» Հին բռ. որից շուարիլ Յայսմ. շուարեալ Լծ. Նար. շուարումն Լծ. Նար. շատաշուար (նորագիւտ բառ) Խոսր. 252. գրուած է նաև շուայր, շիւայր, շիւար։

Թիրեաքեան, Արիահայ բռ. 144 քրշուառ բառից է հանում, իսկ էջ 301 պրս. شور šūr «խենթ» բառից (սրա վրայ տե՛ս շորիկ)։ Պատահական են չերքէզ. աշվարա «վախ» և սոգդ. šiβār «ամօթ»։

ԳԻՒ.—Ալշ. Դվ. Երև. Մկ. Մշ. Սլմ. Վն. շիվար.—Ջղ. շվարել, Գոր. Դրբ. Ննխ. շվարէլ, Ախց. Կր. Սեբ. շվարիլ, Շմ. ըվարվիլ, Մրղ. շուարէլ։ Նոր բառեր են շուարայ, շուարուկ։

ՓՈԽ.—Ուտ. šivär «շիւար, մոլոր, մտամոլոր»։

ՇՈՒՀԻՐ. անյայտ նշանակութեամբ առանձին անգործածական արմատ, որից կազմուած են վաղուհէր (գրուած նաև վաղաշուհէր, վաղըշուհէր) Ոսկ. անոմ. դ. Փիլ. Խոր. Պիտ. վաղուհերիլ Կնիք հաւ. էջ 367. շաբաշուհէր Պիտ.։

ՀՀԲ համարում է շուար «ցնորիալ». ՆՀԲ շուառ. Թիրեաքեան, Արիահայ բռ. 344 պրս. شوهر šūhar «ամուսին, փեսայ». Ֆնտղլեան ՀԱ 1926, 488 պհլ.

svar «հոտ» բառից։ Ադոնց, ՀԱ 1927. 404 մերժելով այս՝ պհլ. *vatišvēr ձևից փոխառնել է դնում վաղուէր (իսկ շար–ա–շուէ՞ր)։

ՇՈՒԹԱՓ «արագ, շուտ շարժուող» Փիլ. նխ. բ. 101, որից շուրթափել «շտապել, փութալ, արտորալ» Սիր. ժա. 11. Ոսկ. մ. բ. 7. Վեցօր. 85. Արծր. 211. «ազատել» Արծր. 240. շուրթափութիւն (գրուած նաև շուրթափուրթիւն) Առակ. ժդ. 35. Ոսկ. Հռ. 34. կք.։

ՀՀՒ շուտափոյթ բառից։ ՆՀՒ շուտ բառով, շտապ։ Հիւնք. 16 շտապ բառի հետ նոյն։ Patrubány ՀԱ 1907, 305 կրճատուած շուտաթափել ձևից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 226 պրս. شتاب šitāb> շտապ բառից։

ՇՈՒԻ «սուլիչ». հնից գործածուած չէ. յետնաբար ունինք Առաք. լծ. սահմ. 615. կենդանի է արդի զանազան բարբառներում, ինչ. Ագլ. Երև. Ղրբ. Տփ. Լ. Ղզ. (շվի, շվու, շուու ձևերով.—Երև. շվի, Ալշ. Մշ. շվիգ). մի քիչ հնից ունինք բայական ձևով՝ շուել Բառ. Եւրիմ. էջ 248, շվշվել Ջքր. սարկ. Ա. 74, շրվշուել «սուլել» Ջքր. Բ. 33։

Արդեօք բնաձայն բա՞ռ է. կամ գուցէ շիւ «ծիլ» բառից, ինչպէս գռ. պոկ «ծիլ. 2. սրինգ»։ Պատահական նմանութիւն ունի արաբ. شياع šiyā կամ šayā «կրակը բորբոքելու համար փայտի կտորտանք. 2. հովուի սրինգ. 3. հովուի սրնգի ձայնը» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 614)։

***ՇՈՒԿԱՅ** «փողոց, հրապարակ, վաճառանոց, բազար» Ոսկիփ. Վստկ. 29. Ուռհ. Բրս. մրկ. (արդի գրականում միայն վերջի երկու նշանակութիւններով). որից շուկամէջ «շուկային մէջը» ԱԲ, շուկայիկ, շուկայական (նոր բառեր)։

=Ասոր. ܫܘܩܐ šūqā «շուկայ» ձևից. որ բնիկ սեմական է. հմմտ. արամ. שׁוּקָא šūqā «շուկայ», եբր. שׁוּק šūq «փողոց», արաբ. سوق sūq, աասուր. sūqu «փողոց», և. ասոր. šūikā «շուկայ», եթովպ. ሰንጎ sakʷat են. այս բոլորի աղբիւրը հաւանաբար աասուր. sūqu «փողոց» բառն է, ինչպէս արաբ. زقاق zuqāq (<ռմկ. սօխախ) «փողոց»=աասուր. ša-sūqā=արամ. שְׁקָא šəqāqā ծագում են աասուր. suqāqu ձևից (Gesenius 17, 816): Ասորերէնից է փոխառնել նաև պհլ. šūkā:—Հիւբշ. 314։

ՆՀԲ դնում է «նոյն ընդ ռմկ. սօգագ, զուգագ, սուգ»։ Müller SWAW 66, 278 դրաւ ասորերէնից։ Հիւնք. արաբ. սուգ բառից։

ԳԻՒ.—Մկ. շուկա, Մշ. Սեբ. Սչ. շուգա, ՀՃ. Տիգ. շուգտ։ Նոր բառ է շուկացու։

ՓՈԽ.—Վրաց. შუკა շուկա «փողոց», մինգր. შუკა շուկա «նեղ փողոց, նրբափողոց, հրապարակ» (Кипшидзе, Грам. минг. 1914, էջ 358, ուր չէ՛ տրուած հյ. բագի համեմատութիւնը)։

ՇՈՒԿԱՏ «շաղատանան». մէկ անգամ ունի Եւագր. 94. «Դևն չարութեան ... ընդ երեսս խնդայ... շուկատ է ի ծածուկ թռուցեալ ի վերայ անձանց վաստակասիրաց և զվաստակն զոր գործեն, ի նմին որսայ». Սարգիսեան գրում է շուկատէ (իբր բայ) և «շուկատէ ի ծածուկ թռուցեալ» բառերի դէմ յունարէն բնագրում գտնում է ἐφάλλετ ὀξέως! «ի վերայ յարձակի նրբամտութեամբ». ուստի աւելի յարմար էր դնել շուկատ «նրբամիտ, խորամանկ»։ Հին լծ. մեկնում է «տկար», լս. լծ. «սուր և արագ»։ Ցետնաբար գտնում ենք գործածուած նաև Կոստ. երգն. 158 «Նա չառնու յիանէ խրատս, միտքն է ի դուրս՝ զօրն ի շուկատս»։—Գրուած է շոկատ Սասն. 17 (ձագ մի շոկատ)։

ՆՀԲ շուկայ բառից՝ մեկնելով «գոհհիկ որ թափառեալ շրջի ի շուկայս»։

***ՇՈՒՄՐԱՅ** «վայրի սամիթ, ռազիանէ կամ ռէզէնէ». մէկ անգամ ունի Վեցօր. թ. 186՝ բացատրութեամբ հանդերձ. «Շումրայ, այսինքն է սամիթ վայրենի»։ Լաւագոյն ձեռագիրն ունի շամրայ ընթերցուածը (այլ ձ. ջամրա)՝ ըստ Նորայր ՀԱ 1923, 162։—Մի Աղօթագրքում գրուած է նոյնը շամրաս և համարուած է ծաղիկ. և սրա հետ էլ թերևս նոյն է շամրաշ ծաղիկը՝ ըստ Նորայր (անդ)։—Տե՛ս նաև շիմար։

=Ասոր. ܫܡܪܐ šamārā կամ ܫܘܡܪܐ šūmrā, šumrā, šamrā «foeniculum capillaceum», որ և արաբ. شمرة šumra։ Ըստ

այսմ կարող ենք ընդունել, որ մեր մէջ էլ հնագոյն ձևն է շամրայ, որ յետոյ արաբերէնի ազդեցութեամբ դարձաւ շումրայ: Ասորի բառը ըստ Brockelm. Lex. syr. *նշանակում է նաև «isatis tinctoria», որ տարբեր բոյս է:*

ՆՀԲ-ի գործածած ձեռագրի մէջ գրուած լինելով դումրայ, ՆՀԲ յիշում է այս ձևով և ուղղում է շումրայ, իբր «ոմկ. շիմրէ»: ՋԲ և ԱԲ ունին շումրայ: ՀԲուս. § 2354 շումրայ, իսկ § 2369 շումրայ: Lag. Armen. St. § *1709 ասորերէնից է դնում: Հիւբշ. 273 ծանօթ լինելով բառիս վկայօրէից մէջ գործածութեան, համարում է յետին և դնում է արաբական փոխառութեանց շարքը՝ փխ. ասորերէնի:*

Գիր.—Սվեդ. շումբրա:

+ՇՈՒՆ, ն *հլ. (սեռ.* շան, շանց) *«շուն» ՍԳր. փխբ. «պոռնիկ կին, շնացող մարդ» ՍԳր. (իմաստի զարգացման համար հմմտ. ռուս. և լեհ.* suka *«էգ շուն» և պոլաբ.* seuko *«բոզ»). ածանցման մէջ մտնում է երկու ձևով. 1. շն-. հին.* շնալ *«անխտիր խառնակիլ» ՍԳր. շնաբարոյ Ա. Թագ. իե. 3. Կիւրղ. Թգ.* շնաբերան *Բուզ.* շնագլուխ *Եւս. քր.* շրենկենիք *Ոսկ. մ. ա. 4.* շնութիւն *ՍԳր.* շնջրի *Վկայօր. յետնաբար ոմկ. յգ.* շնուի *«շնիր», որ մտած է նաև Եւս. պտմ. (լաւագոյն ձեռ. ունին* շուն*. տե՛ս ՀԱ 1911, 693).—2.* շան-. *հին.* շանագլուխ *Եփր. Թգ.* շանազգեաց *Ագաթ.* շանաճանճ *ՍԳր.* շանի *«շան կերակուր» Ոսկ. մտթ. Ա. 736 (հմմտ. ՀԱ 1913, 346).* շանախուռ *«պոռնկութեան վարձք» Որ. իգ. 18 ևն: Նոր բառեր են* շնագայլ, շնախտ, շնախտաբոյժ, շնակաճուրիւն, շնատամ *են:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* kʻṷṓn- *ձևից, սեռ.* kʻunós. *որանց ժառանգներն են վեդ.* çúvā, çuvan-, *սանս.* çvā́, çván- *(սեռ.* çúnas), *զնդ.* spā *(սեռ.* sūnō*), Թոխար.* ku, *յն.* κύων *(սեռ.* κυνός*), լտ.* canis *(ֆրանս.* chien, *իտալ.* cane, *ռում.* câne*), հհիւս.* hundr, *գոթ.* hunds, *հբգ.* hunt, *դերմ.* hund, *անգլ.* hound, *հոլլ.* hond, *լիթ.* szū̃ *(կարգա՛ šuō, սեռ.* szuñs*), լեթթ.* suns, *հին պրուս.* sunis, *ռուս. լեհ.* suka *(«էգ շուն». իսկ ռուս.* собака *փոխառեալ է թերևս մարերէնից՝ Սկիւթացոց միջոցով), հիւլ.* cú *(սեռ.* con*), կիմր.* ci, *կորն.* ki, *բոլորն էլ «շուն» նշանակութեամբ* (Walde 122, Trautmann 310, Boisacq 541, Ernout-Meillet 138, Pokorny 1, 465)*: Իրանականում* -ka *մասնիկի յաւելումով ձևացած է՝* spaka, *որից մար.* σπάκα (τὴν κύνα καλέουσι σπάκα Μῆδοι *«զշուն կոչեն Մարք՝ սպակա». Հերոդ. 1, 110) և յգ.* σπάκαδες *Հեսիք., պրս.* سگ sag, *պհլ.* sak, sag, *քրդ.* seh(=se), *յգ.* sān, *աֆղ.* spai (Horn *§ 743)*: *Հայերէնի մէջ շ համապատասխանում է հնխ.* kʻṷ *ձևին. այս մասին եղած ընդարձակ վիճաբանութեանց վրայ տե՛ս* Osthoff-ի *մենագրութիւնը շուն բառի մասին՝* Etym. Parerga *1, 199—278, մանաւանդ էջ 229—240,* Pedersen *Նպաստ, էջ 6 և վերջին անգամ* Lidén, *Յուշարձան 381—8։—Հիւբշ. էջ 480։*

Հներից Տաթև Հարց. էջ 220 «շողոքորթելու» պատճառաւ այսպէս կոչուած, Klaproth Asia pol. 102 *սանս.* šuni, *լեթթ. լիվ.* suns; Mémoires *1, 437 սանս.* chouni *«էգ շուն» ձևի հետ։ Ինճիճեան, Հնախօս. Գ. 21 շնթել բայից։ Ուղիղ են մեկնում ՆՀԲ և* Peterm. 22, 39 *համեմատելով յն. լտ. սանս. ձևերը։* Windisch. 19 *շ յօրդով սանս.* çun=*հյ.* *սուն *ձևից։* Capelletti, Armenia, *Թարգմ. Արշալ. արրտ. 1842, 108 շնթել բայից։* Pott, Kurdische St. ZKM 1842, *17 սանս.* çwan, çuan, *աֆղան.* spey, *քրդ.* sah *են։ Ուղիղ են նաև* Böttich. ZDMG 1850, 359, Arica 66, 66, Lag. Urgesch. 736, Müller SWAW 38, 577, Pictet 1, 377, Justi, Zendsp. 303, *Տէրվ.* Altarm. 20, 63, *Նախալ. 75, Երկրագունտ 1884, 101, Մասիս 1882 յուլ. 24, Լեզու 160, Հիւբշ.* KZ 23, 17, Arm. Stud. 46, Bopp Gram. comp. 1, 397 *են։* Ebel BVS 8, 368 *՞շուան կամ ՞շուան նախաձևից է դնում։* Lag. Arm. Stud. § 1710 *զնդ.* xšapāyaona *«գիշերաշրջիկ» (իբր շան տրուած ածական)։* Bugge, Etr. u. Arm. 31 *հարուստ.* culsʻu *«մահու աստուածուհին» մեկնում է հյ. կուլշուն «կլանող շուն»։ Հիւնք.* շուն *«անասունը» յն. լտ. ձևերից, իսկ* շուն

«պոռնիկ»=արաբ. զինա, *շիյն բառից*։ Jensen *ՀԱ 1904, 182 հաթ.* s´..n *բառից*։ Meillet BSL 19, 55 *համարում է անծանօթ մի լեզուից փոխառեալ*։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Ջթ. Խրբ. Կր. Հճ. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Վն. Տիգ. Տփ. շուն, *Ակն. Ասլ. Մրդ. Սլմ.* շիւն, *Ագլ. Գոր. Ղրբ. Սվեդ.* շօն, *հետաքրքրական է Գուրա-փէլէն (Նիկոմիդիա)* շըվրն *«շուն» (Արևելք 1894 փետր. 10)*։—*Կան բազմաթիւ նոր բառեր՝* շուն–, շն–, շնա–, շան– *ձևով, ինչ.* շունչալակ, շուննոց, շնկեր, շնդող, շնամէջ, շնահոտ, շանդող, շանգոզ *են են*։—*Մանկական լեզուով եղած է* օշո, օշօշ, օշիկ *«շուն», որից էլ՝*

ՓՈԽ.—Թրք. اوش اوش oš-oš *«շուն կանչելու ձայն» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 276) և* اوشت ošt *«շուն վռնտելու ձայն» (Հյ. օ՛շա)*։—*Բայց լագ.* tcuna *«էգ շուն», որ ունի* Erckert, Die spr. d. kauk. Stam. *Բ. 191, երևի թէ սխալ է և նշանակում է միայն «էգ». Համմ. Բ. 346* tcuna-cxeni *«էգ ձի»*։

ՇՈՒՆՉ, ո *Հլ. «շունչ, նաֆաս. 2. շնչառութիւն. 3. հոգի, մարդ, անձ, սիրտ. 4. օդի փչիւն, քամի» ՍԳր. Եփր. ծն. Կոչ. Ագաթ. Եզն. Ոսկ. ես. որից շնչել ՍԳր. Եւս. քր. շընչական Կորիւն. Ագաթ. Ոսկ. ես. և հին.* շնչակեաց *Ագաթ.* շնչակից *Ոսկ. Փիլիպ. ժ.* շնչաճաղ *«կենդանանալ» Կոչ.* շնչաւոր *ՍԳր. Եզն. Վեցօր.* միաշունչ *Ագաթ.* համաշունչ *Փիլիպ. բ. 2, 20.* անշունչ *ՍԳր. Ագաթ. Եզն.* բոցաշունչ *Վեցօր.* բռնաշունչ *Վեցօր.* դառնաշունչ *Ոսկ. մ. բ. 6 և ես. Եփր. Թգ.* խստաշունչ *Վեցօր. Բուզ.* ծխաշունչ *Ոսկ. յհ. ա. 1.* հողմաշունչ *Ագաթ.* հրաշունչ *Իմ. ժա. 19, 9. մկ. ղ. 24.* մահաշունչ *Վեցօր.* յորդաշունչ *Վեցօր. աւելացննենք նաև* շնչապահ *«ձիու քիթն ու բերանը պաշտպանող զրահ» Արծր. 132 (օրինակն ունի* շոնչապահ, *այսպէ՛ս ուղղելի բառ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 207),* շնչառուչ *(նորագիւտ բառ) Վրդն. աննց. 12. «Առ շնչառուչ փողդ ահաւոր՝ բրնաւոր»։ Նոր բառեր են* շնչառութիւն, շընշառաւորութիւն, շնչարգելութիւն, շնչելոյզ, ներշնչում, շնչաւեղձ, շնչիկ, հեզաշունչ, մեղմաշունչ, շնչաւիամար *են*։

=Թուի բնաձայն բառ՝ կազմուած շ պարզ ձայնից՝ և, չ ածանցիչներով. արմատի համար համմտ. շշալ, շշել, շաշել, շռիշ, շռնչան, շառաչել, շռինդ, շշուկ, շրշիւն, շշնչել. *իսկ ձևի համար համմտ.* ճնշել, ընշել, գնշել, կնշել, պնշել, փնշել, մնշել, խնշել։—*Աճ.*

ՆՀՔ (ունչ *բառի տակ) արմատը դնում է* ուչ։ Böttich. Arica *82, 377 սանս.* çvi=*յն.* κυίσκω *«յղանալ», անց. դերբ.* çūna: *Հիմնք. շշել բայից*։ Meillet MSL *10, 278 սանս.* çvasiti *«շնչում է» ձևի հետ, բայց աղղուած հունչ բառից. վերջաձայն չ ներկայացնում է* sky-: *(Այս մեկնութիւնը հենց ինքն է կասկածելի համարում. տե՛ս* Osthoff, Parerga 1. 232): *Նոյն մեկնութիւնը յիշում է պարզապէս Հիւրշ.* IF Anz. 10, 48: *Վերի ձևով մեկնից Աճառ. ՀԱ 1899, 203 բ։ Մառ,* Иппол. *51 վրաց. շումիներ հոմանիշի հետ*։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 102* շոգի, ունչ, հնշել *բառերի հետ*։ Lidén, *Յուշարձան 385 յիշում և մերժում է լիթ.* szvañksz-ti *«շնչել, հևալ»*։ Karst, *Յուշարձան 416* ունչ *բառի հետ՝ մոնղոլ.* unur, *կալմուկ.* unus, *թունգուզ.* unu *«հոտ»*։ *Մառ,* Основ. табл. *էջ 5 և* ЗВО 22, 37 ИАН 1913, 181, Яз. и Лит. I. 266 *եբր.* הבל hebel *«շունչ» հանում է սեմ.* hbl *արմատից, որի յարեթականն է* svl, svn *(համմտ. վրաց.* სული suli *«հոգի, շունչ»,* სუნი suni *«շունչ, հոտ»), նախաձայնի փոփոխութեամբ՝* švl, švr, švn, *որոնցից միևդր.* Ψυχο շուրի *«հոգի», դւտ. միևդր.* շունջո *«հոգի» և հյ.* շունչ։ Pokorny *1, 475 իբր առոյգ ընդունում է* Meillet-*ի և* Lidén-*ի մեկնութիւնները, որոնք իրենք՝ հեղինակները, չեն ընդունում*։

ԳԻՒ.—Ագլ. Մկ. Շմ. Ջղ. Տփ. շունչ, *Ախց. Երև. Խրբ. Կր. Պլ. Ռ.* սունչ, *Ալշ. Մշ.* սունջ՛, *բայը՝ Ռ.* սնշալ. *համմտ. նաև* Աստուածաշունչ *բառը (Ասլ.* ասվածաշիւշ, *Ոզմ.* աստվածասօնչ *են)։ Նոր բառեր են* շնչակատար, շնչաման։

Շուշ, Շուշայ *տե՛ս Շիշ։*

***ՇՈՒՇ** *«ծառի պտուկ». նորագիւտ բառ, որ*

դործածուած եմ գտնում Առաք. լծ. սհմ. հետեւեալ ձեւերով. «Տերևն և ծաղիկն ի շուշէն սկսանի և պտուղն ի ծաղկէն սկսանի (էջ 277). Ի վեր բողբոջեն զշուշն և զտերևն և զայլսն (էջ 387)։ Նոյն բառն եմ կարծում նաև էջ 639՝ «Զշուղն (որ ըստ իս պէտք է կարդալ զշուշն), զճուղքն և զտերևն և զծաղիկն և զպտուղն»։

=Պրս. شَشْ *Šafš «ծառի ճիւղ, ուղէշ. 2. ճպոտ՝ որով լպուտը բամբակն է հաւաքում»։—Աճ.*

ԳԻՒ.—Շշ. ղուշ, Ղրբ. շոշ «գեղեցիկ ծիլ ծառերի, որով պատուաստ են դնում»։

ՇՈՒՇԱԿ *«վիզ, շլինք». գիտէ միայն ԳԲ։*

ՇՈՒՇԱԿԵԱԼ *«շարժեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 248։*

***ՇՈՒՇԱՆ,** *ի–ա հլ. «շուշան ծաղիկը, լտ* lilium candidum L» *ՍԳր «փխբ. բուրվառի վերին խուփը, որ երեք թևերով կապուած է մարմնին» ճառ. ինչ (Հացունի, Պատմ. տաբաղի, էջ 354). որից շուշանագործ Գ. թագ. է. 19, 22. շուշանափայլ Անան. եկեղ. Գնձ. Տաղ. շուշանաբեր Թէոդ. կուս. շուշանազարդ Ոսկ. կտրծ. շուշանաբոյր (նոր բառ) ևն։*

=Ասոր. *šūšan *բառից, որ գտնում ենք ասոր.* ܫܘܫܢܐ šūšanθā, *յգ.* šūšanne, *նոր ասոր.* šūšännā, šošan *«շուշան» ձևերի մէջ։ Բուն և նախնական ծագումը եգիպտական է. համմտ. եգիպտ.* sšn, ššn, *խպտ.* šōšen «lotus *ծաղիկը»* (Brugsch, Hiero glyph. Wörterb. IV 1314/5, Erman ZDMG 46, 117)։ *Եգիպտականից են փոխառեալ սեմական ձևերը. ինչ. ասուր.* šēšanu, *եբր.* שׁוּשׁ šūšan, šōšān, šōšannaθ, *յգ.* šōšannīm, *արամ.* šūšanəθā, *արաբ.* سوسن sausan *կամ* sūsan։ *Սեմականներից էլ բառը տարածուել է ուրիշ լեզուների մէջ, ինչպէս՝ պհլ.* שׁוּשׁ šūšan (ZDMG 31, 585), sūsan, *պրս.* سوسن sūsan, *քրդ.* soşın, šusen, *յն.* σοῦσον (Boisacq, *էջ 888*), *վրաց.* **შროშანი** *շրոշանի, նոխանո սոսանի ևն։—Հիւբշ. 314։*

Նախ ԳԴ կցից պրս. սուսէն բառին՝ ՆՀԲ յիշում է եբր. արաբ. պրս. վրաց. ձևերը։ Այսպէս են նաև Riggs, *Քերակ. (1856), էջ 60,* Böttich, Arica 28, 95, Lag. Urgesch. 824, Ges. Abhd. 227, Müller SWAW 38, 577 *ևն։*

ԳԻՒ.—Կր. Համշ. Մկ. Մշ. Վն. շուշան, Զթ. շուշօն, շուշոն, Սլմ. շիւշան, Ագլ. շիւշոն, որոնք նշանակում են ծաղիկը.—բայց Երև. Նխ. շուշան (նաև Ղզ. Ղրբ.) «մի տեսակ բանջար է»։ Նոր բառեր են շուշանածալ, շուշանափետուր։

ՓՈԽ.—Հայերէնից է փոխառեալ քրդ. շուշան, ինչպէս գտնում եմ Աւետարանի Թարգմանութեան մէջ (Պօլիս 1872). Պը նէորն լը շուշանա տէշդէ (Հայեցարուք ի շուշանն վայրենի). Մտթ. գ. 28. Մէզաքըն լը սէր շուշան (Հայեցարուք ընդ շուշանն). Ղուկ. ժբ. 27։ Նոր վրաց. **შუშანი** *շուշանի «ծաղիկը», որ գործածում է Գրիշաշվիլի, Ջվելի քալաքիս բոհեմա (Հաղորդից Գ. Ասատուր)։*

ՇՈՒՇԵԼ *«ծուլանալ, անհոգ՝ անփոյթ գրանուիլ» Ոսկ. ա. Թես. Թ. էջ 459, եփես. էջ 720. ուրիշ վկայութիւն չկայ։*

Տէրվ. Altarm. 103 *խոկալ, շուշանել ձևերի հետ=սանս.* çank *«հոգսերի մէջ ընկնիլ մտածել»։ Հիւնք. անշուշտ բառից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 հյ. ուշ և թրք. իշէնմէք «տատամսիլ, ծուլանալ»։*

***ՇՈՒՇԹԱՐԻ** *«մի տեսակ կանացի պարեգօտ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրանում եմ գործածուած Այրիվ. 8ա. «Հանդերձ նասիճ հալուղի և պարեգօտ շուշթարի»։*

=Պրս. شُشْتَر šuštar *«խուժաստանում մի քաղաքի անուն է», որի անունով էլ կոչւում է շորը. համմտ. սարասխի, բաղդադի ևն։—Աճ.*

***ՇՈՒՇՄԱՅ** *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կնճիթ, սուսամ և սուսամի ձէթ» Շնորհ. ընդհ. տպ. Եմ. էջ 97. Սանահն վանակ. 172. Բժշ. գրուած է նաև շուշմա, շուշպա, շուշմուշ։ Սրանի՞ց է արդեօք շուշմաուկ «տուղա» ՀԲուս. § 2366։*

=Ասոր. ܫܘܫܡܐ šūšmā *«սուսամ», որի հետ նոյն են ն. ասոր.* ššmā, *արաբ.* سمسم simsim, sumsum, *թրք.* susam *(որից էլ բուլգար. սերբ.* susam, *ալբան.* susam), *յն.* σησάμη (Boisacq 862), *միջ. յն.* σέμσεμ, *լտ.* sesama, sesamum, *գերմ.* sesam, *ֆրանս.* sésame, *ասուր.* šamaššammu *նոյն նշ.*

(Muss-Arnolt, Ass. Handwb, *էջ 1064*) ևն։ *Բոլորի աղբիւրն է եգիպտ.* semsemt=*խալտ.* semsem «*սուսամ*, sesamum indicum L» (Seidel, *Մխ. հեր. § 226*)։—*Հիւբշ. 314*։

Ուղիղ մեկնեց նախ Lag. Armen. Stud. § 1713:

Գիմ.—Ակն. շիւշմա:

***ՇՈՒՇՄԻՐ** *(որ և* ջուշմիո, շուշմիներ) «*կակուլայ*, cardamomum» *Բժշ. ունին միայն ՓԲ և Հիւբշ. § 2367*։

=*Պրս.* شوشمير šūšmīr *կամ* شمشير šumšīr «cardamomum minus»:—*Հիւբշ. յոջ. էջ XXI*։

Այսպէս է մեկնել նախ Müller WZKM *10, 278. բայց այս բառը Գ՚Ր մեկնում է (էջ 372 բ) «փոքր և սակաւ կարաւան»!*

ՇՈՒՇ «*տարակուսած, երկբայող*». *ունի միայն ԱԲ, որից* անշուշտ «*հաւաստի, ստոյգ, անսուտ*» *ՍԳր. Ագաթ.* արևիշուշտ «*ապերախտ*» *Ոսկ. մ. գ. 3*։

ՆՀԲ արևիշուշտ *և* անշուշտ *հանում է* արևխուտ, անսուտ *ձևերից։ Տէրվ.* Altarm. 103 շուշել, շուշտել, անշուշտ, *ինչպէս և խոկալ՝ հանում է սանս.* çank «*հոգալ, կասկածիլ, մտածել*» *բայից։ Հիւնք. պրս.* sust «*տկար*»։

Գիմ.—Պարզ արմատը ցոյց են տալիս Վն. շուշաեմ «*ա՛րդեօք, կկասկածիմ, չլինի թէ*», *Ակն.* շուշտիկ «*ապուշ, տկարամիտ, միշտ շուարած*» *(ՀԱ 1908, 286)*=շուշտակ *Վն.* «*թեթևամիտ*»։

ՇՈՒՇՏ «*յանդուգն, լիրբ, անզգամ*», *որից* շշտուրիւն, շշտաբար. *երեքն էլ գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լա.-հայ. էջ 534—5*։

***ՇՈՒՇՏԱԿ** «*թաշկինակ*» *Ցայսմ. (ԱԲ դրնում է նաև «մագկապ» նշանակութեամբ)*։

=*Պհլ.* *šustak *ձևից. համմտ. պրս.* دستمال *šusta «*անձեռոց*», *որից փոխառեալ է արաբ.* šūštaqa «*շոր*»։—*Հիւբշ. 215*։

ՆՀԲ լծ. լտ. sundarium «*թաշկինակ*»։

Ուղիղ մեկնեց Lag. Arm. Stud. § 1714:

Գիմ.—Մկ. Ջղ. շուշաակ «*կանանց գլխի ծածկոյթ*» *(նոյնը նաև Վն. և Երև. իսկ Կմխ. «լուանի մահիկի նման կանացի գդակ»)*։

Փոխ.—Վրաց. შუშტაკი շուշտակի, *որ յիշում է Ջուբինով*[2] *1531, բայց առանց նշանակութիւնը կարողանալ որոշելու. անշուշտ մեր բառի հետ նոյն պէտք է լինի։*

***ՇՈՒՇՏԱՆԴԱՄ** «*առնապէս անկարող*». *գործածուած է միջին հայերէնում. տե՛ս Նորայր, Բառ ֆր.* froid *և* impuissant *բառերը։*

=*Պրս.* سستاندام sustandām «*անոյժ, տկար. 2. առնապէս անկարող*». *կազմուած է* sust «*տկար, թոյլ*»+andām «*անդամ*» *բառերից։*

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բռ. ֆրանս. 670, որից անկախաբար Աճառ.։

***ՇՈՒՇՓԱՅ** *կամ* **ՇՈՒՇՊԱՅ**, *ի հլ.* «*սկիհը մաքրելու կամ ծածկելու շոր, սրբոց մասունքների պատանք*» *Մաշտ. ջահկ. որից շուշփայական (նորագիւտ բառ) Ստ. ժմ. 637 (Որպէս ի ձեռն զգեստու ի վերայ ուսոցն շուշփայական հանդերձիւքն)։*

=*Ասոր.* ܫܘܫܦܐ šūšeppā «*գլխի ծածկոց. ծածկոյթ, քող*», *որի հետ նոյն է համարւում ասուր. բաբել.* šusuppu, šusubbu (Brockelm. Lex. syr. *371 ա*)։—*Հիւբշ. 314*։

Ուղիղ մեկնեց նախ Lag. Arm. Stud. § 1715:

Գիմ.—Մկ. Վն. շուշփա, *Շիր.* շուշբա «*սաւան կամ նման մի շորեղէն*» *(Արրատ. 1896, 519 ա), Մկ.* շիշպի *(Դ. Սրկ. Յովսէփեան. Փշրանքներ 27) և Ալշ. Մշ. Նբ.* շուշպա «*շոր կամ թաշկինակ, որի մէջ աւետարան կամ մասունք են փաթաթում*»։ *Նոր բառեր են* շուշփացու (Rivola) «*ընտիր կտորեղէն, որից սկիհի համար շուշփայ են պատրաստում*», շուշփայել *Վն.* «*մասունքը, խաչը կամ աւետարանը մեռաքսահիւս ընտիր շորի մէջ փաթաթել*»։

***ՇՈՒՈՏ** «*փետրվար ամիսը*» *Վրդն. պատմ. էջ 19 (Հրատ. էմինի, էջ 29 ունի* շուատ):

=*Պրս.* شبات *կամ* شباط šubāt «*փետրվար ամիսը*». *սա ասոր.* ܫܒܛ šəbāt *բառից է, որ իր կարգին փոխառեալ է ասուր.* 𒋛𒁍𒀀𒋫 ša-ba-tu *բառից, որ է «ասորաբաբելական տոմարի 11-րդ ամիսը»* (Delitzsch, Assyrisches Handwörterbuch 638, Strassmaier, Alphabetisches Verzeich. 943). *բայց նաև համմտ. ասոր.* ܫܘܝܘܬܐ šauyūtā «*դիշերահաւասար*» *(որ փետրվարից անմիջապէս յետոյ է գալիս)։ Ըստ նախա-*

պաշարմանց՝ փետրվարը սատանաների ազատութեան ամիսն է. «Բայց գշուտ ամիսն անհնազանդեալ (դևքն կախարդաց) գործին զկամս իւրեանց՝ տանելով զոմանս ի մարդկանէ» Վրդն. պտմ. էջ 19։ Ըստ այսմ արդի բարբառներում շուտ նշանակում է մի տեսակ դև, որ փետրվարին է գործում։ Պրս. էլ ունինք شفت šifūt «ճիւաղ. է ազգ մի դիւաց, որք լինին յանշէն տեղիս և ի դաշտավայրս. որք մտեալ ի զանազան կերպարանս, և զմարդն ի ճանապարհէ խոտորեցուցեալ՝ սպանանեն» (ԳԴ, էջ 377 բ և 271 ա)։—Աճ.

Այս մեկնութիւնս տես իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 112։

ԳԻՒ.—Ալշ. շվօդ «փետրվար ամիսը և մի տեսակ դև կամ ոգի», Երև. շվօդ, Մշ. շվօդ «նոյն ոգին», Հճ. շվէտ (իմա՛ շվէդ) «տեառնընդառաջ՝ որ փետրվարի 14-ին է գալիս» (Թէրզեան, Ամէնուն տարեց. 1924, 198). նոյն բառն ունին նաև Ակն. Բլ. Խն. Խնս. Խրբ. Նբ. Սեբ. Սվ., ինչպէս և շիֆօթ Սթ., ֆշօդ Կս.։ Սրանից են շուտուանան և շուտամիս «փետրվար ամիսը»։

ՓՈԽ.—Կպդվկ. σιφώτ, σιφώτης. «տան գանազան անկիւններում բնակող մի չար ոգի, որի վրայ եղած նախապաշարմունքները և նրան դուրս վռնտելու համար եղած հրավառութեան սովորութիւնը են ընդարձակ տե՛ս Karolides, Γλ. σύγκρ. էջ 212—213 (ի զուր հեղինակը համեմատում է բառս τζιφούτ «հրեայ, ջիֆուտ» են բառերի հետ)։—Նման մի սովորութիւն կայ նաև Լիբանանում, ուր փետրվար ամսի սկզբում՝ դռան վերևը՝ մոխրով խաչի նշան են քաշում, ապադայ չարիքներից խուսափելու համար. կոչւում է sáubəṯ, որ նոյն šubāt «փետրվար» բառն է (MSL 22, 22)։

*ՇՈՒՊ «ընտիր մի կտո՞ր». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում ենք գործածուած Մաթ. Եսագր. 51. «Դու ազտեղի չուխայ ես զգեցեալ, պարտ է քեզ դի սուֆ հագնիս և շուպ»։

=Պրս. شوب šūb «փաթաթոց գլխոյ. 2. թաշկինակ»։—Աճ.

Պատահական պէտք է լինին թթր. شوبرك šöberek «բամբակեայ գործուածք, չիթ», (Будаговъ 1, 674) և ռուս. шуба «մուշտակ»։

Շուտ «պալար» տե՛ս Շիտ։

Շուտ «արագ» տե՛ս Շոյտ։

ՇՈՒՏ. անյայտ մի բոյս. Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2368։

ՇՈՒՐԹՆ, ն հլ. (շրթան, -թուն, -թանց) «բերնի պռօշները, պռկունք, փխր. բերան, լեզու, խօսողութիւն, եղերք, մի բանի եղրը» ՍԳր. Եփր. ծն. Սեբեր. որից շրթնատ կանոն. վրդն. ծն. շրթնաշղթայ Նար. առաք. էջ 429. միաշուրթն «մէկ լեզու խօսող» Սիր. ժէ. 12. Եւս. քր. խոռաշուրթն Ոսկ. ես. պղծաշուրթն Ես. գ. 5. կռաշուրթն Դիոն. երկն. Սահմ. երկշուրթն Պտմ. աղէքս. զուգաշուրթն Նար. առաք. բիւրաշուրթն Ան որս. մատնաշուրթն Բժշ.։

=Նոյն է շուրջ բառի հետ և երկուսը միասին ծագում են շուտ արմատից. տե՛ս շուրջ։

Տէրվ. Նախալ. 70 նոյն է դնում շուրջ բառի հետ։ Հիւնք. պրս. շէրիյր, թրք. շէրիտ «ժապաւէն, լար»։ Patrubány ՀԱ 1908, 213 հնխ. k'éuo- «ուռիլ» արմատից։ Lidén IF 44, 191 իսլ. hváþr «ծրնօտ, բերան», պրս. sufra «սրբան». suftan «ծակել», ռուս. svepet «փեթակի ծակը»։

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. շուրբ, Ալշ. Մշ. շուրդ՝, Սլմ. Վն. շուրթ, Սեբ. (յգ. ձևով) շրթնէր «եղերք» (յատկապէս թոնրի կլոր եղերքը). Սչ. շրթուն՝ «բերնի շրթունքը», Խոջ. շիբ «թոնրի եղր» (իմա՛ շուրբ>*շույբ>*շիյբ>շիբ)։ Սրանից շրթնուիլ Ննխ. «համբ նայիլ»։

ՓՈԽ.—Թրք. գւտ. Կր. (շրջակայից) šurt «շուրթն» (Բիւր. 1898, 627)։

—ՇՈՒՐՋ «բոլորտիքը, չորս կողմը» ՍԳր. «ամէն կողմից, շուրջանակի» ՍԳր. «շրջան. շրջանակ, դառնալը» Վրդն. պտմ. և ծն. Վանակ. Հց. «շրջան, պտոյտ, մոլորակների դառնալը» Անկ. գիրք Հին կտ. 229, 230. «արտը վարել, հողը շրջելը» Վստկ. 17. «շրջակայ, չորս կողմը գտնուած» Մխ. այրիվ. «դրեթէ, մօտաւորապէս, կլոր հաշուով» (նոր դրականում կազմուած՝ ֆրանս. environ «չորս կողմը. 2. մօտաւորապէս» բառից

բարդմանաբար. բայց հմմտ. նաև հին հայերէնի պարառական հոլովը, որ նշանակում է թէ՛ «շուրջը» և թէ «մօտաւորապէս». ինչպէս՝ զերեռուդ ժամու, զվեց ժամու և զինն ժամու): *Սրանից ունինք բազմաթիւ ոճեր, ինչ.* շուրջ ածել, շուրջ գալ, շուրջ պատել, շուրջ արկանել *են։ Ածանցման մէջ մտնում է երկու ձևով. 1. ՇՐՋ-. ինչ.* շրջել «դարձնել, պտտել *են*» *ՍԳր. եզն. Եւս. քր. Ոսկ. Ես. շրջշրջել Ագաթ. Վեցօր. Ոսկ. փիլիպ. Եփր. ծն. շրջագնաց Ոսկ. ա. տիմ. շրջական Ոսկ. Ես. և բ. տիմ. շրջան ՍԳր. Վեցօր. շրջանակ ՍԳր. շրջանակել եզն. Ոսկ. երր. շրջանկեալ Եւագր. շրջանակի Անկ. դիրք Հին կտ. Ա. էջ 77.* յեղաշրջել *Լմբ. շրջեակ «կաթուղիկէի չորս բոլորի շրջանակը» Օրբել. Հրտր. էմ. էջ 250 (եզև շարժն Կանձակայ... և գմբեթն մեծ եկեղեցւոյն ի Տաթև բոլորապոյր շրջեկաւն թռեաւ և անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն). շաւաշրջիկ Յայսմ. յարաշրջիկ Ճառընտ. ներշրջական «շրջաբերական» Տիմ. կուզ, էջ 264. երկնաշրջան Բենիկ. եօթնշրջագայ Պիսիդ. շրջովի «երկդիմի (խօսք)» մհյ. բառ (տե՛ս Նորայր, Բառ. ֆրանս. էջ 50 բ). շրջագգեստ, շրջանակածև, շրջաեռութիւն, շրջաեւարտ, աճշրջանեայց (նոր բառեր).—2. ՇՈՒՐՋ-. ինչ.* շուրջանակի *ՍԳր.* շուրջանակաւ *ՍԳր.* շուրջառ «փիլոն» *Պարզ. Մաշտ. Տօնապ. «պարոյկ նշանը (՞)» Երզն. քեր. խելաշուրջ Փարպ. գաղտաշուրջ Փարպ. դժուարաշուրջ Պոմ. ագէբս. դիւրաշուրջ Նոնն. բանաշուրջ Ջքր. կթ.* շաւաշուրջ *Մարաթ. Ոսկիփ. Վասակ.* շուրջտեսանելիք «ամփիթատրոն, կրկէս» *Ուխտ. ա. 64.* վայրաշուրջ «պարապ ման եկող, դատարկապորտ» (երկուսն էլ նորագիւտ բառ) *Անկ. գիրք առաք. 198.* շուրջկալ, շուրջպար (նոր բառեր)։ *Ցեմին ոմկ. ձևեր են՝ ի շուռ ածել, ի շուռ գալ Ոսկիփ.* շուռ առեալ *Ուռհ. 121.* շուռ տալ *Յայսմ. ապր. 21.* ժուռ գալ «ման գալ» *Մխ. Բժշ.* ժուռիպատ «աղօրիք, ջաղացք» *մհյ. բառ (ըստ Նորայր, Բառ. ֆր. 833 ա. բայց Կոյլաւ, Բռ. գերմ. 1477 ա դնում է «սահանքաւոր, դռնաւոր (ջաղացք), գերմ.* unterschlächtig»)։ *Սրանք համաձայն են գալիս արդի գաւառականների շուռ>ժուռ ձևին և ցոյց են տալիս թէ բառի պարզ արմատն է *շուռ կամ *շուռ: Սրանից* p *աճականով կազմուած է նախ* շուրթն *(հմմտ.* թեր>թերք*), ուր* p *դառնալով* ջ *ստացուել է* շուրջ, *ինչպէս ունինք* լուրք>լուրջ: *Այս երկու ձևերի փոխանակութեան համար հետաքրքրական է մատնաշուրթն «մատի ծայրին դուրս եկած պալար», որ յետոյ դարձել է մատնշուրջ, իսկ այժմ էլ գաւ.* մատնաշուն՝ *(Ղրբ. մննա՛շօղ, Ագլ. մտնա՛շօղջ, մտնա՛շօրժ, Խրբ. մաղի սուճ՛)*:

Canini, Et. etym. *133 հինդ.* چرخ čarx, *իտալ. գաւ.* sercio «շրջանակ» *բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 70 նոյն է դրնում* շուրթն *ձևի հետ։ Հիւնք.* շուրթն *բառից է հանում։* Patrubány SA *1, 215 լատ.* curro «ընթանալ» *բառի հետ՝ չմատնիկով։ Նոյն ՀՍ. 1907, 304 և 1908, 213 հնխ.* k'euō «ուռչիլ» *արմատից. հմմտ. սանս.* švāyati «ուռչիլ, աճիլ», šavīras «բուռն» *են։* Karst, *Յուշարձան 429 թիր.* kar, kor, gur «շրջապատել»։

ԳԻՒ.—Արմատական ձևը պահում են երև. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. շուռ, *Ագլ. Ղրբ.* ջօռ, *Տփ.* շուր, *Խրբ. Կր. Ննխ. Ռ. Սեբ.* ժուռ, *Ակն.* ժօռ, *որոնք գործածւում են միայն ոճերի մէջ. ինչ.* շուռ գալ «ման գալ, փնտռել, դառնալ, գլորիլ», շուռ ածել «ման ածիլ, դարձնել», շուռ աճցնիլ «տապալիլ», շուռ ունել «վրան առնիլ, հաղնիլ» *(հմմտ.* շուրջառ*) են։—Այստեղ են պատկանում նաև 1)* Շրջել>*Մշ.* ջրջ՛ել, սրճել, *Կր.* շրչել, *Տիգ.* շրչիլ, *Ալշ.* շոճել, *Վն.* շռճել, սռճել, *Մրզ.* շռճէլ, սռճէլ, *Ախց. Խրբ. Ռ.* սրչէլ, *Երև. Սեբ.* սռչէլ, *Պլ.* սրչէլ, զրչէլ, *Ննխ.* զրչէլ, զշջ՛էլ, ժրշջ՛էլ, *որոնք նշանակում են «շուռ տալ կամ տապալել». իսկ Զթ.* շը՛յչիլ, շը՛րչիլ *«փսխել, սիրտը յետ գալ»։ (Պատահական նմանութիւն ունի տուրպ. և Իրբ. և չաղաթ.* سورچمك sürčmek *«սահիլ»)։ 2) Պլ.* ջուրչ *«թաշկինակի կամ գգեստի եզերքի շրջարոլոր բանուածքը», որ յառաջանում է* շուրջ *ձևից։ (Այտնեան, Քնն. քեր. 105 այս ձևը դնում է* ջուր *բառից, իբր թրգմ. տճկ.* սու *«ջուր» բառի, որ իբր թէ ունի նաև այս նշանակութիւնը։ Բառարանները սակայն այսպիսի բան*

չգիտեն։ Թերևս Այտնևան ուզում է ակնարկել ռճկ. sa'at altə sularənda «ժամը վեցի կողմերը, շուրջ ժամը 6-ին» դարձուածքը, որ թէև իսկապէս պրս. سو su «կողմ» բառից է, բայց սխալմամբ թրք. صو su «ջուր» բառից է ենթադրուել. համմտ. հյ. ռամկական ժամը վեցին ջրերը դարձուածքը (տե՛ս Այտնևան, անդ, էջ 329). սակայն այսպիսի մի նշանակութիւն չի կարող բերել նաև հյ. «շրջանակ, եզերքի բանուածք» իմաստը)։—3) Շուրջառ, որ իբր կրօնական բառ, ամէն տեղ պահուած է. համմտ. Պլ. Սեբ. շուրչառ, Ախց. սուրչառ, Ննխ. սուռչար, սուռչալ, Մշ. սուռճալ, Ակն. շրչալ են. վերջիններին համապատասխան է գալիս Առաք. պտմ. 402 շուրջալ։—Նոր բառեր են շուռ վն. «մի տեսակ պար». շուռեշուռ տալ, շուռտի-շուռտի, շուռտի-մուռտի, ժուռեկան, շուռտուպառաև, շուռտուիկ, շուռպաճի, շրջմոլ, շրջմակտել, շրջնկալ, շրջուկ, շրջօճ։—Առանայի թրքախօս հայերն էլ ունին սրշշառ «շուրջառ»։

ՓՈՒ.—Վրաց. შუშპარიշուպարի «մի տեսակ պար, пляска» (<հյ. շուրջպար), შუშპრობა շուշպրոբա «плясать, պարել», սվան. šüšpär «մի տեսակ պար» (այս բառի վրայ տես ցուց), վրաց. դւռ. ხიჩაფეთი սիչափեքի կամ ჩიჩაფეთი չիչափեքի «նոր կարած կօշիկը շուռ տալու փայտ» (Իմէր և Ռաչինի դւռ. բստ Беридзе, ხიტლვის-კონა 1912, էջ 39), որ ենթադրում է հյ. շրջափայտ ձևը։

ՇՈՒՓ. անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Լծ. ի վերլծ. Պորփ. «Հոմանուն՝ բարի. ի շուփ, որ չէ իսկապէս և ի կարևոր՝ որ է աստոյգ բարի»։ ՆՀԲ համարում է «կասկածելի», ԱՒ «կասկած, կասկածելի, խառնակ»։

ՆՀԲ դնում է արար. شُبْهَة šubha «կասկած» բառի հետ. յիշում է նաև շիփ «խռովութիւն»։

ՇՈՒՓ «իրար քսել, տրորելը». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են շփել Ղկ. ղ. 1, Յոբ. լ. 13, Եզն. Վեցօր. էջ 58, 59, Ոսկ. մ. բ. 4, 17, շփշփել Ոսկ. երր. շփիլ «քսուիլ» Նղմշ. հրց. 53 (Գլուխքն յերկինս շփէին). շփումն Մանդ. պարզ արմատը երևան են հանում ամպաշուի Ագաթ. (բայց նոր տպ. § 562՝ ուղղուած ամպաշուխ), ոսնաշուփ «տրորելով» Նղմշ. այլակ. 237 (ՆՀԲ գրում է ոսնափշուր. Նորայր ուղղում է ոսնաշուփ՝ Յուշարձան, էջ 167)։—Արմատիս հետ նոյն է շօշափել, որի վրայ տե՛ս առանձին։

ՆՀԲ ափ բառի՞ց։ Justi, Kurd. Gram. 195 լտ. scabo, քրդ. hešawtin «փշրել, մանրել»։ Տէրվ. Նախալ. 53 և 111 շօշափել բառի հետ՝ հնխ. skap «քերել, փորել» արմատից. համմտ. յն. σκάπτω, լտ. scabere, լիթ. scapoti, գերմ. schaben։ Հիւնք. համաձայնուած շօշափել բայից։—Karst, Յուշարձան 407 սումեր. šub-šub «կպցնել», 426 թթր. seb, suv «հարթել»։ Պատահական նմանութիւն ունին ասոր. ŠƏFĀ «խարտել, մաքրել, հարթել», šappī «հարթել, մաքրել», արամ. שף šaf, šāf «փշրել, մանրել», եբր. שׁוּף šuf «տրորել, մանրել»։

ԳԻՒ.—Մշ. Սչ. շփել, Ախց. Երև. կր. Ռ. Ննխ. Պլ. Սեբ. շփէլ, Ասլ. շփէ՝լ, Խրբ. Տիգ. շփիլ, ԶԹ. շը՝փիլ, ՀՃ. շոփել, Մշ. շպել, Համշ. շփուշ (որ և նշ. «մածուն հարել»)։—Նոր բառեր են շփոց, շփվտիլ, շփշփել, շփտել։—Թրքախօս հայերից՝ Առն. շփէլլէմէք «շփել» (Թրք. -lemek բայակերտ մասնիկով)։

*ՇՈՒՓԱՅ «աչքի դեղ, ծարիր, թութիա» Գիրք առաք. (1339 թ. առած է Յայտ. Գ. 18 մի հին օրինակից, որի մասին տե՛ս Ֆ. Մուրատ, Յայտ. յովհ. տպ. Երուս. էջ ՆԻԴ. արդի օրինակը նոյն տեղում ունի դեղ, որ կննդանի է գաւառականում «աչքի ծարիր» իմաստով). վկայութիւնն է «Քանզի է շուփայ, այսինքն դեղ աչաց. զորմէ ասէ Տեսիլ Գ. 18. Դիր շուփայ յաչս քո, դի տեսցես». Գիրք առաք. 663 բ։

=Ասոր. ŠƏYĀFĀ «աչքի դեղ, ծարիր», որ գործածուած է Յայտ. Գ. 18՝ հայ թարգմանութեան համապատասխան տեղը։ Սրանից են նաև արար. شِيَاف šiyāf, պրս. شَافَة šāfa «աղտոր, ծարիր, թութիա»։ Մեր բառը ձայնապէս անյարմար է ասորի ձևին. ուստի պէտք է կարծել թէ հայ թարգմանը սխալ է կարդացել ասորի բառը (իբր ŠŪFĀ). կամ թէ հայ բառը պէտք է ուղղել *շափայ

*(ինչպէս է պարսկերէնը) և կամ թէ իրօք գոյութիւն ունեցել է ասոր. *šūfā երկրորդական մի ձև։—Հիւբշ. 314։*

ՆՀԲ թրք. (իմա՛ արաբ.) ṣifa «դեղ, դարման, ապաքինութիւն»։ Lag. Arm. Stud. *§ 1717 տալիս է ուղիղ մեկնութիւնը՝ համեմատելով ասոր. և արաբ. բառերի հետ։ Հիւբշ. ուզում է ենթադրել ասոր. *šūfā ձևը, որից դնում է մերը։*

ՇՈՒՔ, ո *հլ. (ներգ. ի շի Բուզ. ն. լէ) «սառուց, հովանի» Վեցօր. Կիւրղ. ծն. «ծածկոց, հովանի» Ա. կոր. ժա. 10. Մաշտ. Նար. «պատիւ, փառք, վեհութիւն» ՍԳր. Ոսկ. Եփր. ա. թես. Սեբեր. Բուզ. որից շ'ալ «պանծալ» Սիր. ժ. 29. շ'եղ ՍԳր. Եփր. զևտ. շ'աղիր Ագաթ. շ'եղազարդ Կոչ. շ'եղաշուք Ագաթ. մեծաշուք բ. մկ. գ. 25. Եփր. թգ. Ոսկ. Եւս. քր. անշուք Ոսկ. Ես. բաեեշուք Ոսկ. ա. կոր. չարաշուք Բ. մկ. 29. Եփր. վկ. արև (ստէպ), սխանչելաշուք Բուզ. գեղաշուք Մագ. գեղեցկաշուք Լաստ. գլխաշուք Նար. բազմաշուք Ճառընտ. նոր բառեր են ազնուաշուք, վեհաշուք, շ'ախտմբ, շ'անշան, շ'ամուտ, շ'եղափայլ, շ'երբ են։—Հայերէնի մէջ իմաստի զարգացման համար հմմտ. անգսք.* scima *«շուք, սառուց. 2. փայլ» են։*

ՆՀԲ յն. σκιά «շուաք» բառի հետ։ Böttich. ZDMG *1850, 359 սանս.* čhāyā *«շուաք»։ Նոյն,* Arica 72, 176 *և* Lag. Urgesch. 392 *սրա հետ նաև աֆղան.* sōray, *պրս.* sāya, *յն. σκιὰ, գոթ.* scadus, *ռուս.* šyenĭ։ *Տէրվ.* Altarm. *6 և Նախալ. 112 սանս.* sku *«ծածկել», յն. σκότος «մորթի», լտ.* scutum *«վահան»,* obscurus *«մութ», անգսք.* scua *«շուաք» և հյ. ի ձևերի հետ՝ հնխ.* sku *«ծածկել, պատել» արմատից։* Canini, Et. étym. *182 սանս.* çuč *«փայլիլ» արմատից։* Bugge KZ *32, 57 հբգ.* scūwo, *անգսք.* scūa *«սառուց» բառերի հետ։ Հիւբշ. 480 սրանց վրայ աւելացնում է նաև հիսլ.* skugge *«սառուց», գոթ.* skuggva *«հայելի», գոթ.* skauns *և գերմ.* schön *«գեղեցիկ»,* schauen *«նայիլ, դիտել», որոնք բոլորն էլ դնելով հնխ.* sku *«նայիլ, տեսնել» արմատից, նոյն մեկնութիւնը անապահով է համարում։ Հիւնք. շուք «սառուց»=յն. σκιά, իսկ շուք «պատիւ»=պրս.* šigūh *«պատիւ»։* Karst, *Յուշարձան 407 սումեր.* suk *«փայլուն»,* šug'us *«փայլատակել, բոց», 426 ՔՔր.* sok, sog, sov *«զով, ցուրտ»։* Petersson LUÅ *1915, 3 և 1916, 47 (ըստ* Pokórny *1, 368) հյ. շող, ճշոյլ, շաւիղ բառերի հետ հնխ.* k'eu- *«լուսաւորել, փայլել, պայծառ» արմատի տակ. հմմտ. անս.* çvaḥ *«վաղը», զնդ.* sūrəm *«վաղն առաւօտ կանուխ», սանս.* çoṇa *«կարմիր» են։* Ч'арая, Объ отнош. абхазск. яз. *էջ 46 ափխազ.* açašə *«մոմ»,* išeyt *«լուսացաւ»,* ašeẑ *«առաւօտ»։ Խրիսաքեան, Արիահայ բռ. 302 զնդ.* sūka *«փայլուն» և պրս.* šigūh *«պատիւ»։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Զթ. Խրբ. Կր. Համշ. Ննխ. Հճ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. շուք, *Մրղ.* շուք[1], *Սվեդ.* շէօք, *Ակն.* շիւք, *Վն.* շիւք[1], *Ասլ.* շիւք, շիւ*, *Ագլ. Գոր. Ղրբ.* շօք, *Երև. Շմ. Ջղ. Տփ.* շվաք։ *Նոր բառեր են* շուքարան, շուքել, շուքաւոր, շքառուն։

ՓՈՒ.—Վրաց. შუქი შուքի *«ճառագայթ, լոյս, գեղեցկութիւն, վայելչութիւն»,* მზის შუქი մզիս շուքի *«արևի շողը»,* შუქიანი შուքիանի *«լուսաւոր, ճառագայթարձակ»,* ნაშუქი նաշուքի, ნაშუქარი նաշուքարի *«լուսափայլ»,* შუგა շուգա *«արևի համար հովանոց»։ (Բայց անշուշտ պատահական նմանութիւն ունի չադաթայ.* شكر šükür *«հովանոց»* Будаговъ *1, 670)։*

***ՇՈՒՔԱՀԻ** *«փշոտ և չերմահալած մի բոյս է. լտ.* spina arabica» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3380։*

=Արաբ. شكاعى šukā'ī՝ *նոյն բոյսը, որի նշանակութեան ճշտման համար տե՛ս* Seidel, *Մխ. հեր. § 243. սրանից է տառադարձուած յն. σουκχαΐ. արաբերէն ձևը գրւում է նաև* شكاعا šukā'ā *և* شكاع šukā'. *այս վերջինը սխալ կէտադրելով (իբր* شكّ šukāγ*) յառաջացել է հյ. շուքաղ Մխ. հեր. էջ 84։*

Ուղիղ մեկնից ՀԲուս. § 3380՝ ըստ Պէյթարի. բայց շուքաղ ձևը ՀԲուս. § 3381 ուղում է ուղղել շուքաղ և կամ

նոյնացնել շուֆաճի ձևի հետ։ Վերջինի կողմն է Seidel։

***ՇՈՒՔՈՒՖԱՅ** «անծանօթ մի բոյս, որ իբրև լուծողական է գործածւում» Բժշ. (ՀԲուս. § 2371), որ և շ'ուֆա Բժշ. (ՀԲուս. § 3382)։ =Պրս. شکوفه šikūfa «ծաղիկ»։—Ա՛ճ.

Ուղիղ մեկնեց Աճառ. (անտիպ), որից յետոյ Նորայր ՀԱ 1923, էջ 498։

ՕՇՂԵԼ «ափսոսալու կամ աւաղելու ձայն» ՍԳր. «դիւահարի ճիչ» Եզն. «օձի՝ վիշապի ֆշֆշալը» Երեմ. իզ. 22. Վեցօր. էջ 151. Պատմ. աղէքս. որից շշումն կամ շշիւն ՍԳր։

=Բնաձայն բառ. կազմուած է պարզ շ ձայնից՝ շ ածանցիչով. ձևի համար հմմտ. բշել, ճշել, իսկ արմատի համար հմմտ. շնշել, շաչել, շառաչել, շռնչան, շռինդ, շշուկ ևն։—Ա՛ճ.

ՆՀԲ «առնալ ի ձայնիցս շշշ, սրս, բշ, վշշ»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 203 բ։—Petersson LUÅ 1915, 6 և 1916, 47 բստ Lidén-ի (առ Pokorny 1, 469) հնխ. k'ŭei- «սուլել» բնաձայն արմատից. հմմտ. հիսլ. hvīa, շվէդ. hwija, հբգ. hwaijōn, մբգ. weihen ևն. հայը k'ŭĭqiō ձևից։

***ՇՊԱՐ**, ի–ա հլ. «անգոյր, երեսի նեղկ» Մամբր. առ. լհհ. որից շպարիլ Եզնկ. իգ. 40. Ոսկ. մ. ա. 16 և ա. տիմ. ը. շպարանկար Պիտ. առ լհհ. շպարաւիճ (սխալմամբ գրուած շապրաւիճ) Իրեն. ցոյցք 14 (ՀԱ 1910, 304). գրուած նաև շպիրիլ, շեպարել (սրանց վրայ տես Նորայր, Կոր. վրգ. 435)։—Նեղկայ գրականում հնչում է բստ արևելեանի բշպար, բստ արևմտեանի շբպար։

=Ասորական փոխառութիւն է. հմմտ. ասոր. ܣܦܦܝܪ šappīr «գեղեցիկ», ܫܦܝܪܐ šāpīrā «գեղեցկութիւն, փառք», ܫܦܪ šəfar «գեղեցկանալ». բայական ձևերից մէկն էլ նշանակում է «զարդարել, գեղեցկացնել». հայերէնին համապատասխան բուն ասորի բառը՝ որ կազմուած էր այս արմատից, կորած է։—Հիւբշ. 314?

Schröder, Thesaur. 46 փոխառեալ վերի ասորի ձևերից։ ՆՀԲ լծ. հյ. ծեփ։ Հիւնք. ասպար բառից։

***ՇՊԵՏ** «հովիւ» եփր. Թգ. 449. Կնձ. (գրած է շբշպետ). իսկ Հին բռ.=Բռ. երեմ. էջ 248 մեկնում է «հացերէց կամ հովուապետ»։

=Պհլ. *šupat<հպրս. *fšupati-, գնդ. *fšupaiti- «հովիւ» բառից, որ կազմուած է հպրս. fšu=գնդ. fšu- «ոչխար» և հպրս. pati=գնդ. paiti- «պետ» բառերից. հմմտ. պրս. شبان šubān, պհլ. šupān, špān, աֆղ. špūn, բելուճ. šipānk, քրդ. šiwan, šewan, զազա šuane «հովիւ», որոնք ենթադրում են հպրս. և գնդ. *fšupānaձևը, կազմուած նոյն fšu- «ոչխար» բառից+pāna- «պահապան» (Horn § 776)։—Պարսկականից է փոխառեալ նաև թրք. چوبان čoban «հովիւ», որի միջոցով էլ ուկր. čoban, čaban, ռուս. գւռ. чабанъ, բուլգ. čoban, սերբ. čòban, լհհ. czaban (Berneker 159) համանիշները։—Հիւբշ. 215։

ՆՀԲ «Թուի բառ երբ. շուփէք, որ է տեսուչ, իշխան, դատաւոր և կամ պրս. շիւպան, թրք. չօպան»։ ՋՔ համարում է պրս.։ Müller SWAW 42, 254 համեմատում է պրս. šubān բառի հետ, որի երկրորդ անդամը փոխանակուած է ուրիշ բառով»։ Justi, Zendsp. 206 fšu «արջառ» ձևի տակ։ Վերի ձևով ունի Հիւբշ. ZDMG 44, 560։

ԳԻՒ.—Վրաց. **ՁՅეტი** շպետի «հովիւ», **ՁՅეტობა** շպետորա «հովուութիւն»։

Շպլեղ տե՛ս Շիպ։

ՇՊՈՆԵԼ «հրել, մշտել, հրմշտել» Անսիզր 31 (քանիցս)։

Շպտիլ տե՛ս Հոպիտ։

***ՇՊՐԱՄ կամ ՇԲՐԱՄ** «կաղնեան բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2298 և § 2370։ (Քաջունի, Գ. 187 «քոխկան»)։

=Արաբ. شبرم šabram, պրս. شپرم šapram «կաղնեան» (տե՛ս Կամուս, թրք. Թրգմ. Բ. 800 և Steinschneider WZKM 12, 202)։—Ա՛ճ.

ՇՒԱՅ (ի հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «զեղխ, ցոփ, մախող» Գր. հր. «շռայլութիւն» Յճխ. որից շռայլիլ «զեղխութիւն անել» Երեմ. բ. 20. Սիր. լէ. 32. Եզն. Սերբեր. շռայլութիւն Ագաթ. շռայլական Պիտ. շռայլամիտ Մծբ. ևն։

ՆՀԲ (արբշիռ բառի տակ) արմատը համարում է շիռ, որից նաև արբշիռ: Հիմնք. կաշառ բառից:

*ՇՈՒԱՏ «պանրի շիճուկ» (նորագիւտ բառ) Վստկ. 110 (Յամէն լիտր ու կիսոյ վերայ թուխթ մի շուտ ած):

=Վրաց. შრატი შრატ «պանրից կամ մածնից վազած ջուրը»: Որովհետև հայ բառը շատ ուշ է աւանդուած, խիստ քիչ է գործածուած և այժմ էլ գոյութիւն ունի միայն խոջ. գաւառականում, մինչդեռ վրացերէնը կենդանի և շատ սովորական ձև է, ուստի պէտք է կարծել թէ հայերէնը փոխառութիւն է վրացականից:—Աճ.

ԳԻՒՒ.—Խոջ. շուաղ «խնոցու թանը քամելուց յետոյ մնացած կամ պանրից քամուած դեղին ջուրը»:

ՇՈՒԱՏ «կարմիր պղինձ» Հին բռ. Գաղիան ունի միայն ԳԲ. սրա հետ նոյն է շուատ «դեղին պղինձ» Ամիրտ. (տե՛ս Ուղուրլիկեան, Ամէն. տարեց. 1908, էջ 36): Այս երկու ձևերից մին կամ միւսը սխալ է՝ ո և ու տառաձևերի նմանութիւնից յառաջացած:

⊙ՇՈՒՆԴ «աղմուկ, ժխոր» Բարուք բ. 29. Բ. մակ. և. 5 (իբրև շունդն իմն յանկարծուստ համբաւի՝ հարկանէր, իբրև թէ Անտիոքոս փոխեալ իցէ յաշխարհէ). Ոսկ. Հռովմ. 234:

=Բնաձայն բառ. կազմուած է շ ձայնից՝ ո զօրացուցիչով և -իւնդ մասնիկով. արմատի համար հմմտ. շշել, շառաչել, շշուկ ևն, իսկ ձևի համար հմմտ. ճռնդիւն, բռնդիւն, դրնդիւն, դրնդել, խռնտալ:—Աճ.

ՆՀԲ շունչ բառի՞ց: Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, էջ 204 բ:

⊙ՇՈՒՆՉ «շշիւն, հնչիւն, ձայն» Նար. խչ. 389 (այլ ձմ. շոիչ, սոիճչ). որից կազմուած են շունչանն (յգ. շունչանուիմ) «ճախարականման մի գործիք՝ ճռ ճռ ձայներ հանելու համար. ճռռան» Դտ. բ. 26. բ. մկ. ժբ. 26. Ոսկ. ա. տիմ. բ. եղն. յետնաբար շունչան Շնորհ. առ. 67. Մագ. թղ. 203. շունչեցուցանել «հնչեցնել (քարերը)» Անան. ժմնկ. 31 (չունի ՆՀԲ):

=Բնաձայն բառ. կազմուած է շ ձայնից՝ ո զօրացուցի-չով և ն, չ ածանցիչներով. արմատի համար հմմտ. շշել, շաշել, շշնշել ևն, իսկ ձևի համար հմմտ. կռնչել, փռնչել, ճռնչել, դռնչել, մռնչել, զռնչել, ճռնչիւն ևն. —Աճ.

ՆՀԲ սրինգ, շշել, ճնշիւն բառերի հե՞տ: Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 204ա:

*ՇՈՒՆԻՏ «մէջը ձևոք լուալու կոնք, լական» Մաշտ. ջահկ. որ և շունիճ «կոնքի մէջ ջուր լցնելու ամանը, նրպրրխ» Մաշտ.—այս իմաստը՝ որ ընդունուած է արդի գրականումն էլ, սխալ է, որովհետև Մաշտ. իրար յետևից դնում է «զշունիտն և զբսեստինն և զդաստառակն», որոնցից վերջինը լինելով «թաշկինակ, սրբիչ, անձեռոց», երկրորդը լինելով «կուժ»!, առաջինն էլ միայն «լական, կոնք» կարող է լինել: Ճիշտ այսպէս է նաև Բուզ. ն. χερνιβεῖον «basin and pitcher, for washing the hands, լական ու կուժ, ոմկ. լէհէն-երպրրխ» (Sophocles 1164 բ):

=Փոխառեալ պիտի դնել յն. χέρνιβον «կոնք, մէջը ձևոք լուալու լական» բառից, հմմտ. յն. χερνιβεῖστα, որ բոլորովին նոյն է Մաշտոցի «զշունիտն և զբսեստինն» ձևի հետ: Միագում է յն. χεὶρ «ձևոք» բառից (Boisacq 1056). Վերջաձայնի տարբերութեան համար պէտք է ենթադրել թերևս յետին յն. ոմկ. մի ձև, որ աւելի մօտիկ էր հայերէնին:

ՆՀԲ յն. χέρνιβον բառից:—Կոյլաւ. Բառ. գերմ. 1341 ա գնում է բառս իբրև «միզաւան, կրիճ, անկողին պառկած հիւանդի միզամանն», որով անշուշտ ուզում է կապել շեռ «մէզ» արմատին: (Բայց այսպիսի նշանակութիւն չէ աւանդուած մեր մէջ. միայն յն. χερνίβιον նուազականն է, որ նշանակում է թէ՛ «փոքր լական» և թէ «կրիճ. միզամանն»):

Շոնչապահ տե՛ս Շունչ:

Շտամբ- տե՛ս Շտապ:

ՇՏԱՄԲԱԿ «ճիւաղ հրկեզուցիչ մանկանց. croque-mitaine». իբր նոր բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 329 բ. յայտնի չէ թէ ի՛նչ աղբիւրից է առնուած:

*ՇՏԱՊ, ի հլ. (յետնաբար ո հլ. ՆՀԲ դնում է նաև ի-ա հլ., բայց առանց վկայութեան) «աճապարանք, վտանգից յառաջացած խուճապ»

ՍԳր. եւս. պատ. եփր. թգ. Ոսկ. յհ. ա. 9, բ. 16. «շտապով, աճապարական» Ոսկ. յհ. ա. 1. «շուտով, փութով» Լաստ. Ուռհ. Վրք. հց. որից շտապել *եփր. թգ. Ոսկ. հս.* շտապիլ *եփր. յես. և թգ.* շտապանալ *Պատ. աղէքս. ևն։ Գրուած է նաև* ըշտապ *(ինչպէս հնչւում է)։ Թերևս և նոյն է սրանց հետ* շտամբ, *որից կազմուած է բստ ՆՀԲ* շտամբաձայնութիւն *«յորդոր երգեցողութիւն» Քերթ. եկեղ.։*

=*Պհլ.* *štāp *ձևից, որ աւանդուած չէ. բայց համմտ. պհլ.* ōštāftan *«շտապել, աճապարել»,* ōštāp=*պրս.* šitāb *կամ* ištāb *«շտապում, աճապարանք»,* šitāftan *կամ* ištāftan *«շտապել, աճապարել», որոնք կազմուած են* tap *«տապ, տաքութիւն» արմատից՝* aiwiš- *մասնիկով, իբր գնդ.* *aiwiš-tap *«տաքանալ, եռանդ ստանալ»* (Horn § 777)։—*Հիւբշ. 215։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ։—ՆՀԲ «լծ. հյ. շութափ, ստէպ, ենպ և շոյտ ափ յափոյ, պրս. շիթապ, շիթա, թրք. չարըգ»։ Ուղիղ են նաև Peterm. 22, Böttich. Arica 77, 273, Müller SWAW 38, 577:—Lag. Beitr. baktr. Lex. 43 *պրս.* šitāb *և գնդ.* xštāv *«քաջ, կտրիճ»։ Մնակեան, Հայրենիք 1893 նոյ" 2 առաջարկում է կարդալ* շրտապ *և ո՛չ թէ* ըշտապ, *որովհետև պրս. շիթապ ձևով է։* Karst, *Յուշարձան 407 սումեր.* šib *«աճապարանք, վազք»,* tab *«արագ, շտապել», 423 օսմ.* čabuk *«արագ»,* čapmaq *«վազել»,* čevik *«աշխոյժ» բառերի հետ։*

ԳԻՒ.— *Տփ.* շտապ, շտա՛պիլ, *Մշ.* ֊իշ֊ *տար։*

ՇՏԵՄԱՐԱՆ, ի֊ա *հլ. «ամբարանոց, մթերանոց» ՍԳր. Ագաթ. Մծբ. որից* շտեմարանային *Մծբ. Ագաթ.* շտեմարանել *Պիտ. Պրզատ. օրին.* շտեմարանապետ *Ճառընտ. Պզատ. օրին. Նիւս.* շտեմարանապան *Իրեն. 70. որ և գրուած է* շտէմարան *Իրեն. 15, 16, 64.* յիշտեմարանն *Ոսկ. երր. 537,* յիշտեմարանս. *եփր. համար. 81, ըշտեմարան (ինչպէս հնչւում է)։*

Brosset JAs. *1834, 377* շտե֊ *մասը կասկածով մեկնում է վրաց.* Ցծა շբա *«մէջ»։ ՆՀԲ* շտե֊=*յն.* στέγος *«տորեն»+մառան?* Lag. Btrg. baktr. Lex. 43 *փորձում է սրանով մեկնել գնդ.* xštąmi *անստոյգ բառը։ Հիւնք.* ստամոխս *բառին է կցում։ Կուրտիկեան, Արեւելք 1899, յուլ. 22 -արան մասնիկով* *շտեմ *բառից, որ է գնդ.* վէշթէմունիթէն *«ուտել, խմել», արմատը* վէշթէմ։ *Սագրգեան ՀԱ. 1909, 336 և* Karst, *Յուշարձան 409 սումեր.* zid *«տորեն» բառից. առաջինը իբր* շտ֊ե֊մառան, *իսկ երկրորդը՝ իբր հյ.* *շիտ֊եամ *«տորեան»+*արան։

ՇՏՈՒԱՆԵԼ *«խառնել, իրար հետ շփոթել» Ոսկ. յհ. ա. 2, 3. Զի՞ խառնակես զանխառնդ, զի՞ շտոգանես զանքակդ, զի՞ ջանաս բաժանել զմիականդ (էջ 33). Արդ մի՛ մեք, մի՛ դուք շտոգանել զարարածս ընդ արարիչն ջանասցուք (էջ 53)։—Բառ. երեմ. էջ 249* շտոգանել *մեկնում է «բաժանել, քակել», որ շատ գեղեցիկ յարմարւում է առաջին վկայութեան, բայց ո՛չ բնաւ երկրորդին։*

*ՇՏՊԱՂԱՆԴ *«ընձուղտ» Խոր. աշխ. հրատ. Սուքրեանի, էջ 43 յիշուած է իբր պրս. բառ «Վինի անդ ընձուղտք. Պարսիկք կոչեն շորրպաշանք». սխալմամբ շ փխ. ղ։*

=*Պհլ. և պրս.* *ušturpalang *համանիշ ձևից, որ կազմուած է* uštur *«ուղտ» և* palang *«ինձ» բառերից. համմտ. յն.* καμηλοπάρδαλις, *հյ.* ընձ֊ուղտ *և պհլ. պրս.* uštur֊gāv-palang *«ընձուղտ»։—Հիւբշ. 215։*

Ուղիղ մեկնից Պատկ. Матер. II. *42։*

ՇՐԻՒԱՐ. *Նորագիւտ անծանօթ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Արձ. 1282 թ. (Վիմ. տար. 123). Յերիցակալերէն երեք հողոյ շրջարբ կողճիքն մինչև վանքն։*

*ՇՐԻՇ *(որ և* շրէշ, շրէժ, շրէզ*) «մի տեսակ լեռնային ուտելի բոյս,* asphodèle» *Բժշ. «սրանից պատրաստուած ալիւրանման մածուցիկ նիւթը» Մաշտ. ջահկ.։*

=*Պրս.* *širēš *ձևից, որի դէմ ունինք պրս.* sirīš, sirīšem *«շրէշ, սոսինձ», ինչպէս նաև պրս.* čareš, *քրդ.* čiriz, čiriš, *աֆղ.* sareš *«սոսինձ». փոխառութեամբ թրք.* čiris, *արաբ.* širās *(Կամուս. թրք. թրգմ. Բ. 250), արեւել. թրք.* širiš, *ուս.* шприц, *ռում.* čiriz,

հունգ. csiriz *«շրէշ»։ Իրանեան ձևերը ծագում են* sriš *արմատից. հմմտ. զնդ.* sraeš- *«կպիլ, փակչիլ», սանս.* çliš, çriš *«կպցնել, միացնել, փակցնել», պրս.* سرشتن sirištan *«զանգել, թրել (խմոր ևն)»,* سرشت sirišt *«խառնուածք կամ բնութիւն»* سریشکر sirīšagar *«հաց շաղուող, խմոր շինող», պհլ.* srištan (Horn § 732, *Հիւբշ.* Persische Stud. 75):

Նախ ԳԴ դրաւ պրս. շէրիյշ *ձևից։ ՆՀՌ նոյն ընդ թրք.* շիրիշ *«շրէշ»,* ſիրիշ *«ապիք»։ Արդեօք կապ ունի՞ այստեղ ասուր.* šuruš, šuršu *«բուսական մի արմատ»* (Delitzsch, Assyr. Handwb. *693)։*

ԳԻՒ.—Ախց. խաջ. կր. Սեբ. Տփ. շրէշ, *ՋՖ.* շը՝յէշ, շը՝րէշ, *Ագլ. Գոր. Ղրբ.* շրիշ, *Շմ.* շիրիշ, *Հճ.* շույէշ, *Բբ.* շէրէշ, շրէշ, *Ալշ. Երև. Մկ. Սլմ. Վն.* շրէշա, *Մրղ.* շիրէշա, *Ջղ.* շրիշա, *Խրբ. Տիգ.* շրէզ, *Մշ.* շրէզ, շրէզդ, *Բլ.* շրէսա. *Պլ. (նոր փոխառութեամբ թուրքերէնից)* շիրիշ։—*Նոր բառեր են* շրեշուկ, շրէշխանչլոզ, շրեշտաչուր, շրէշտուն։

ՓՈԽ.—Վրաց. შრეშე շրեշի *«շրէշ»։*

*ՇՐԻՔ *«վաճառականութեան մէջ ընկեր». ունի միայն Քաջունի, հմ. Գ. էջ 187, որից և* շրմութիւն։

=Արաբ. شریك šarīk *«ընկեր»։*

Ուղիղ մեկնեց Քաջունի, անդ, բայց կարծում է թրք.։

ԳԻՒ.—Այս նոյն բառն եմ կարծում Ալշ. շրիք *«տապերակին», որի փոխաբերական իմաստն է «կռուարար կին»։*

ՇՐՇԱՆԱԿ *«մանր ոսկեզօծ թիթեղ» (ֆր.* oripeau). *գիտեն միայն Նորայր, Բառ. ֆր. 881 բ (իբր նորակերտ բառ) և Կոյլաւ, Բառ. գերմ. 631* (flimmer և flittergold *բառերի տակ)։ Բայց ծագումը յայտնի չէ ինձ։*

⊙ՇՐՇԻԻՆ *«տերևների ձայն» Նեղոս 658. որից* շրշել *«շրջազգեստի ձայնը» (նոր գրականում)։*

=Ինաձայն բառ, կազմուած շ պարզ ձայնից. հմմտ. շրշունջ և խօշիւն։—*Աճ.*

Սոյն մեկնութիւնս տես ՀԱ. 1899, էջ 204 բ։

⊙ՇՐՇՈՒՆՋ *կամ* ՇՐՇՈՒՆՉ *«շշունջ» Աբ. որից* շրշնջել *«շշնջել» Ագաթ. յոչ.։*

=Ինաձայն բառ. կազմուած է շ ձայնից՝ կրկնութեամբ և ր, նչ ածանցիչներով. հմմտ. մրմնջել, խրխնջիւն, դրդնջիւն։—*Աճ.*

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 205 ա (ուր տպագրական վրիպակով չէ՛ յիշուած բառս)։

Շրորիլ *տե՛ս Տրորիլ։*

ՇՐՈՒԱՆ *(կամ* շրվան ծաղիկ*)» մի տեսակ սպիտակ ծաղիկ» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 2376։*

ՇՐՈՒԱՆԴ *«հատերը վրայից թափած խաղողի ողկոյզ, չանչ» Եպիփ. բարոյ.=Բար. 155, 156 (այլ ձձ.* շուանդ, շուանեգ*)։*

ՇՐՈՒՇԱԿ *(որ և* շրոշակ, շրօշակ*) «սանձ, յատկապէս ձիու բերի վրայի կապը» Եփր. ծն. էջ 52. Կնիք հաւ. էջ 300. Վանակ. յոբ. Սարկ. քհ. (Սոփերք, հտ. Գ. էջ 45), Վրդ. լս. 62 (գրծ.* շրուշակաւ*), Վրք. հց. ա. 35. Անան. Թղ. 12. (հրեհմն նաև Դ. Թգ. եթ. 28 լուսանցքի վրայ՝ իբրև բացատրութիւն* կարք *բառի)։ Նո՞յն է արդեօք նաև* շրօշակ, շրուշանակ *«վրի ջղերը կամ յօդերը». (Ոչ պարտնոցին շրօշակը առ պճղանցն խառնուածան մոլորեալք զտեղի խնդրէին. Եպիփ. յար. մեռ. կամ ըստ ճառընտ. Ոսկ. յեզեկ. Ոչ պարանոցին շրուշանակքն)։ Սխալմամբ շփոթուած է շօք բառի հետ. հմմտ. Եհան ընդ ոնդունս նորա զշրօշակս և զկարկանդակս. Վկ. արև. (Սոփերք, Ի. 74), որ էջմիածնի տպագրութեան մէջ (էջ 23) ունի զշաւրս ձևը։*

Պատահական նմանութիւն ունի արաբ. شرس šars *«անասունը սանձով քաշել» (Կամուսի Թրք. Թրգմ. Բ. 250)։*

ԳԻՒ.—Մշ. շրիշակ *«դռան երկու փեղկերը ներսից իրար միացնող փայտէ սեպերը» (Հաղորդեց Բենսէ. Նամակ 1935 ապր. 25)։*

ՇՐՏԵԼ *«թեքել, ծռել». ունի միայն Բռ. հ. գիմ. էջ 249՝ իբր տարբեր բառ յաջորդից։*

ՇՐՏՆՈՒԼ *«խրատել, վախեցնել, շուարել, շշկլուել» Ա. մկ. ի. 34. Յայտմ. նոյ. 10 և փետր. 18. Փիլ. լին. որից* շրտեալ *«շլացած (աչք)» Երզն. մտթ. 311.* շրտուցանել *«աչքը շլացնել» Եւթաղ. 82=Նխ. Թղթ. պօղ. Նար.*

երգ. 318. Մեկն. ղկ. շրռումն Փիլ. Նար. 237. Ոսկիփ.։

ՆՀԲ յիշում է խրտնուլ, սարտնուլ *կամ* սերտեալ մնալ ձևերը։ Peterm. 259 *լծ.* խրտնուլ, հարբնուլ։ Patrubány *ՀԱ 1907, 304 նոյն ընդ շուրջ։ Պատահական նմանութիւն ունին արաբ.* دَرَشٌ šurūd, دِرَاشٌ širād, širād *«անասունների խրրտնելով փախչելը» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. էջ 629), վրաց.* დაშრტიალება *դաշրտիալեբա «բարկութեամբ մէկի վրայ բղաւել»։*

ԳԻՒ.—Վն. շրտել *«աչքը սառած՝ պաղած մնալ», Կր.* fուես շրտալ *«քունս փախաւ» (տե՛ս Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 87)։*

ՇՓԱՆԱԼ *«խրոխտալ, ամբարտաւանութեամբ պարծենալ» Ոսկ. գծ. 52, 311. որից* շփացութիւն *Նխ. ժղ. և Ոսկ. գծ. 11, 17։*

ԳԻՒ.—Հին իմաստին ճշտիւ համաձայն է՝ Ննխ. շփանալ *«հպարտանալ, պարծենկոտութիւն անել». Նոր իմաստ են առացած՝ Ասլ. Պլ. Ռ. Վն.* շփանալ *«երես առնել»։ Նոր բառեր են* շփացած, շփացուկ։—*Թրքախօս Հայոց մէջ՝* շփանել օլմաք *«շփանալ, երես առնել»,* շփասազ *«շփացած» Առն.։*

Շփել *տե՛ս Շուփ։*

ՇՓՈԹ, ի, ո *հլ. «խառնակութիւն, իրարանցում, տակնուվրայութիւն» Խոր. Պիտ. 3Հ. կթ. «խառնակ» Լմբ. իմ. «կռիւ» Վրք. Հց. բ. 108, 371. որից* շփոթել *ՍԳր. Եփր. ծն. շփոթական Սերեր. շփոթանք Եփր. ծն. էջ 26. շփոթումն Խոր. անշփոթ Պիտ. դիւրաշփոթ Թէոփ. խ. մկ. բազմաշփոթ Ճառընտ. հեշտաշփոթ Թէոփ. խ. մկ. (սխալ հնչմամբ գրուած ունինք* անքշփոթ, շփոյթ, բազմաշըփոյթ*). Նոր բառեր են* շփոթութիւն, խառնաշփոթ *են։*

ՆՀԲ լծ. յն. σπουδή, *վրաց.* շփոթի, *որպէս թէ շփումն ընդ միմեանս կամ փոյթ յաղթասիրութեան, շտապ և խուճապ. արմատն է* շիփ։ *Այվազեան, Ուղղագր. էջ 38 արմատը դնում է* շուփ։ *Հիմնք. կա՛մ փոթորիկ բառից և կամ պրս.* աշիփթէն, աշուպ։

ԳԻՒ.—Կր. շփօթիլ, *Երև.* շփօթվել, *Շմ. Տփ.* շփօթվիլ, *Ալմ.* շփոտվել *«շուարիլ, սխալիլ», իսկ Համշ.* շփօթիլ *«բարկանալ, տակն ու վրայ լինել»։ Այստեղ է պատկանում նաև Երև. Ղրբ.* շփօթ *«ալիւրով, ջրով, կաթով, շաքարով ու իւղով պատրաստուած հասարակ խիւս», որ յիշում է արդէն Բառ. երեմ. էջ 249* շփոթ *«փոշեայ կերակուր կամ ջուրխըմոր» ձևով։ Համմտ. աւելի հնից՝ Մխ. ապար. «Յաղաւնոյ և յոչխարի մսոց լեսեալ և շփոթեալ քուֆ(տ)այն ո՛չ է աղաւնի պէսպէս անդամօք կամ ոչխար մի»։*

ՓՈԽ.—Վրաց. შფოთი շփոթի *«խռովութիւն, վէճ, կռիւ»,* შფოთიანი շփոթիանի *«կռուող».* მეშფოთე մեշփոթե *«խռովարար»,* აშფოთება աշփոթեբա, აღშფოთება աղշփոթեբա, გაშფოთება գաշփոթեբա, შფოთება շփոթեբա *«բարկանալ, խռովիլ, յուզուիլ» (Համմտ. Համշ.* շփօթիլ *«բարկանալ, տակնուվրայ լինել»),* აღმაშფოთებელი աղմաշփոթեբելի *«խռովարար»,* უშფოთველი ուշփոթվելի *«անշփոթ»,* უშფოთველობა ուշփոթվելոբա *«անդորրութիւն, խաղաղութիւն»։*

ՇՓՈՅԼՆԻ *«արդիլել, յետ կանգնեցնել, չթողնել որ գնայ». մէկ անգամ ունի Ոսկ. ա. Կոր.։*

ՆՀԲ մեկնում է չհայլեցուցանել։

ՇՓՈՐ *«մի տեսակ շքեղ զարդ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Կոստ. երզն. 131 (Այն որ հագանէր ինք հանդերձ ոսկեկար, շարած յիր վերայ էր մարգարտով շքքար)։*

ՇՓՈՒՆԿ *«մի տեսակ թունաւոր ձուկ. ներկէս». ունին միայն ՀՀԲ և ՋՐ (իբր նոր բառ)։*

ՇՓՐԻԼ *«ձեռքով ջուրը շարժելով՝ դուրս ցայտեցնել» Եզն. 220 (գրուած է* ժՓրել*), «ջուրը բերնով ներս քաշել» Եղիշ. դտ. 180 (գրուած է* շրՓել*). որից* շՓրեցուցանել *Եզն. շՓրոց Սերեր. 158։*

ՆՀԲ լծ. ժայրֆել։ *Տէրվ.* Altarm. *12* շիր և fրրել *բառերի հետ, որոնց վրայ տե՛ս։ Հիւնք. 285* ժայրֆել *բայից։*

ՇՓՐԻԼ *«լկտիլ, անամօթիլ, լրբանալ» Ոսկ. հս. 37 (ղի ամենևին շքրիցին). որից* շՓրեալ *Բարուք ղ. 8, Ագաթ. Ճառընտ. Կր. սարկ. լուս. (տպ. Սոփերք, Դ. 149),* շՓրանք *Ոսկ. հս. էջ 36 (չունի ՆՀԲ) (Պոռնիկ կանանց իմն սեփական նշանակ է, զայս (իմա՛ զաչս)*

յեղյեղուկ, և զշքթանս և զշռայլութիւնս ցուցանել, ճմռել, ճօճել, զհասակօքն նայել). գրուած է նաև շկթիլ Ոսկ. մ. բ. 23։

ՆՀԲ (տես շկթիլ) կցում է նախորդին, լծ. ռմկ. շլխտի։ ԱԲ մեկնում է «երեսին ջուրը վերնալ»։

ՇՔԼԱՐ «ստիւրաքս ծառը, styrax». ունի միայն Քաջունի, Գ. էջ 188 և Բ. էջ 664։ Տե՛ս և շեր։

ՇՔՈՂԻԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Յայսմ. «Գտանէին զնա հովիւք յայրի միոց շքողեալ ճնշեալ ի ճգնողական վարուցն»։ Թերևս ուղղելի է նճողիլ, նճողեալ։

ՆՀԲ մեկնում է «յոյժ նքողիլ, նուաղիլ կամ աքօղիլ, ծածկիլ ընդ ջրով»։ ՋԲ և ԱԲ համարում են «նքողիլ»։

Շքութր տե՛ս Քշութ։

ՇՔՈՒԻՆ «մի տեսակ փշոտ բոյս է agave» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 2379։

*ՇՔՐԻԿ «սուրհանդակ» (նորագիւտ բառ) Յիշատ. ՁՈԳ թ. «Կարգեաց յամենայն տեղիս սուրհանդակս, որ են շ[ք]րիկք» (Շողակաթ, էջ 36). յիշում է նաև Բառ. հրեմ. էջ 277, 289 սուրհանդակ բառի հետ։ Նոյն բառը վրդն. այգեկ. 79 բ գրում է շիֆրիկ։

=Վրաց. Ցօկհօձօ շիկրիկի «սուրհանդակ» և կամ երկուսը միասին մի այլ անծանօթ աղբիւրից։—Աճ.

ՇՕԹ, ի հլ. «հաց աղնիւ, պարզ կամ իւղով զանգուած» Ել. իթ. 2, 29. Ղեւտ. է. 13. Եփր. վկ. արև. 23, Եփր. Թուոց 232, Կանոն.։

Հիւնք. պրս. բուշ «պաշար, թոշակ» բառից։

ԳԻՒ.—Ասն. Ղրր. շօթ «լաւաշի պէս բարակ մի տեսակ հաց». իսկ Տփ. շօ՛թի նոր փոխառութիւն վրացերէնից։

ՓՈԽ.—Վրաց. Ցոցո շոթի «երկար հաց» (այս բառը փոխառեալ է հայերէնից յետին շրջանում, երբ աւ դարձած էր օ. հակառակ պարագային պիտի ունենայինք հյ. շոթ)։

ՇՕՇԱՆՔ «բարբաջանք, շատախօսութիւն, փուճ խօսքեր». մէկ անգամ ունի Ճառընտ. (գրուած շաւշանք, շուշանք)։

—ՇՕՇԱՓ «ձիուդը քսելով զննել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են շօշափել ՍԳր. (գրուած է շաշափել Տիմոթ. կուզ, էջ 93). շօշափելի Ել. ժ. 21, Սբր. ժբ. 18. շօշափական Նիւս. բն. դիւրաշօշափագոյն Փիլ. լին. խաւարաշօշափ Տօնակ. մեղկաշօշափ ՅՀ. կաթ.։

=Կրկնուած է շափ արմատից, իբր *շափշափել>շաւշափել (համմտ. սօսափիւն և թօթափել). ըստ այսմ Տիմոթէոսի շաշափել ձևը (եթէ սովորական վրիպակ չէ) կարող է լինել *շափշափել բառի մէկ կրճատ ձևը։ Պարզական արմատը՝ շափ, նոյն է շուփ արմատի հետ, որից ունինք շփել (տե՛ս առանձին շուփ ձևի տակ)։ Երկու ձևերի բարդութեամբ է կազմուած շափշփել<*շափշուփել։

ՆՀԲ ափ բառից։ Տէրվ. Նախալ. 53, 111 շփել բառի հետ հնխ. skap «քերել, փորել» արմատից. համմտ. յն. σκάπτω, լտ. scabere, լիթ. scapoti, գերմ. schaben: Justi, Dict. Kurde էջ 445 քրդ. hešawtin «ջնջել, աւրել, սրբել», լատ. scabo, գերմ. schaben։ Հիւնք. ափ բառից (ինչպէս ՆՀԲ)։—Bugge KZ 32, 73 դնում է *շօշաղփել ձևից, իբր=յն. ψηλαφάω, լտ. palpo «շօշափել», Karst, Յուշարձան 407 սումեր. šub-šub «խել»։

ՇՕՇԻԼ «լուծուիլ, քայքայուիլ, մեռած մարմնի նեխիլ փտիլը» Վկ. արև. էջ 222 (ոչ ոսկեդարեան) (իսկ ի վերայ սրբոցն խոսէին թարախք մարմնոյն յոյժ, զի շօշնալ սրոբնալ էին յանհնարին տանջանացն). Վարք և վկ. Ա. 35. Նիւս. կազմ. (վերջինիս մէջ բառս գրուած է շոշնալ, շուշնալ ձևերով, որով ՆՀԲ էլ բառս նշանակում է շոշիլ ձևի տակ. բայց այս երկու դրչութիւններն էլ սխալ են, ինչպէս որ Նիւսացուց փոխառեալ նոյն հատուածի մէջ՝ կնիք հաւ. էջ 274 ունի արդէն շաւշնալ)։

ԱԲ Արևելեան վկայից մէջ դնելով շօշնալ ձևը և չանդրադառնալով շոշնալ ձևի վրայ, իբր իրարից տարբեր բառեր դնում է շոշիլ «քայքայիլ», շօշիլ «ննջուիլ, չարչրկիլ»։ Երկուսը պէտք է միացնել վերի ձևով (Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 9)։

Ո

+Ո՞. *Հարցական անորոշ դերանուն՝ անձերի համար գործածուած. Հոլովւում է սեռ.* ոյր, *տր.* ում, *բց.* յումէ, յումմէ, *յգ.* ուղ. ոյք, *սեռ. տր.* ոյց. *(սրանց նախաւոր ձևերն են* *ոյրու, *ումե, *ինչպէս ցոյց են տալիս* ուրումն, ուրուք *սեռականները և* ումեմն, ումեք *տրականները)։* Ո *արմատից են* ո՞ ոք, ո և իցէ, ո և է, ումպէտ *«պարապ տեղը» Ագաթ. կամ* ում և պէտ *Բրս. լմբ.։—Նոյնից* -ք, -մն, -ր *ածանցիչներով են կազմուած* ոք, ոմն, որ, *որոնց վրայ տե՛ս իւրաքանչիւրն առանձին (համմտ.* *ի, *իք, իմն, իր)։ Մատրութեան արժանի է* ոյք *բառի գործածութիւնը՝ իբրև անորոշ ածական. Միթէ բազո՞ւմք ոյք էին, որ դիտակ էին գործոյն. Կոչ. 19։—*Ո *գործածւում է նաև տեղ ցոյց տալու համար. այս իմաստով առանձին չէ գործածուած, բայց նրանից ունինք* յո՞ *«դէպի ո՞ւր» (իբր* ո *արմատի նախդրիւ հայցականը) ՄԳր. Սղն. Բուզ.։* Ո՞վ և ո՞ւր *բառերի վրայ տե՛ս վարը։*

=*Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ.* k^{w}o- *(կամ* q^{w}o-*) հարցական և անորոշ դերանունից՝ նախաձայնի անկումով։ Այս արմատը տալիս է խիստ բազմաթիւ ածանցներ (դերանուններ, միջակ անուններ, մակբայներ), որոնց թուումն ու բացատրութիւնը համեմատական քերականութեան գործն է։ Կարևորագոյններից յիշենք այստեղ՝ սանս.* kaḥ, kā *«ո՞վ», զնդ. հպրս.* ka- *«ո՞վ», պրս.* ki *«ո՞վ»,* kay *«ե՞րբ»,* či *«ի՞նչ»,* čirā *«ինչո՞ւ»,* kuǰā *«ո՞ւր»,* kudām *«ո՞րը», յն.* πο-, *որից* πόθεν *«ո՞րտեղից»,* πόθι, ποῦ *(յոն.* χόθι, χοῦ*) «ո՞ւր, ուր որ է»,* ποῖ *«յո՞»,* πῶς, *յոն.* χῶς *«ինչպէս», լտ.* quis *«ո՞վ, ո՞րը»,* quod *«ի՞նչ»,* quo *«յո՞», օսկ. umbր.* po-, *հիռլ.* co-te, ca-te *«որ է»,* coich *«որոյ»,* nech *«ոչ ոք», կիմր.* pan *«երբ», գոթ.* hvas *«ո՞վ»,* hvan *«ե՞րբ»,* hvad *«յո՞», գերմ.* wer *(հինը* hwēr*) «ո՞վ»,* was *«ի՞նչ»,* wie *«ի՞նչպէս»,* wo *«ո՞ւր, յո՞»,* wann *«ե՞րբ»,* wenn *«եթէ»,* welch *«ո՞րը»,* weder *«ո՛չ», անգլ.* who *«ո՞վ», լիթ.* kàs *«ո՞վ»,* kadà *«ե՞րբ»,* kuĩ *«ո՞ւր, դէպի ո՞ւր», լեթթ.* kas *«ո՞վ, ի՞նչ», հպրուս.* kas, *հսլ.* kŭ-to *«ո՞վ»,* kŭ-do *«ո՞ւր», ռուս.* kmo *(ուկր.* chto*) «ո՞վ»,* каждый *«իւրաքանչիւր» (հսլ.* kъ-žьdo*),* колька, с-колько *«ո՞րքան»,* куда *«յո՞»,* гдѣ *(հսլ.* къде*) «ո՞ւր»,* какъ *«ինչպէ՞ս»,* когда *(=լիթ.* kadà*, հպրուս.* kaden*) «ե՞րբ»,* чей *«որի՞», ալբան.* kę *«եթէ»,* si *«ինչպէ՞ս», ևն ևն։ Նոյն արմատի հնխ.* k^{2}i-, k^{2}u- *ձևերի վրայ՝ տե՛ս* ի, ուր (Pokorny 1, 519—523, Walde 635, Boisacq 799, Berneker 673—5, Trautmann 111)։—*Հիւբշ. 481։*

Նշ n *համարում է* nr-*ից կրճատուած։* Justi, Zendsp. *76* n, ով=*զնդ.* ka, *241* յո՞=*զնդ.* ya *«որ» ձևի տակ։ Տէրվ.* Altarm. *3* n *և* ով *դնում է* nf *բառից ձևացած։* Bopp, *Համմտ. Քերակ. 2, 383* n=*վեդ.* kaya, kayasya*։ Հիւբշ.* Arm. Stud. § *225 կասկածով մեկնում է վերի ձևով։* Bugge, Beitr. *28—29* k^{2}o- *ձևից դարձած* ge-, *որից նախաձայնի անկումով* n*։ Հինք.* nr *բառից։ Դերանունների վրայ ընդարձակ տես* Meillet MSL *10, 241—271,* n *բառի վրայ յատկապէս՝ վերի ձևով մեկնուած՝ էջ 267, 282 (նոյնը նաև* Meillet JAs 1903 (2), *503—4)։ Համմտ. նաև Բանասէր, Բազմ. 1897, 590—2։* Bugge, Lyk. Stud. 2, 49

ո, ով=*լիւկ.* uve: *Պատահական նմանութիւն ունի չին.* 和 ho² «*յո՞*», wohin?» *Գիւր.*—*Ամէն տեղ կորել է՝ տեղի տալով* **ով** *ձևին, պահում է միայն Ղրբ.* **ո՞ւ** «*ով*» (*ճիշտ նոյն է անգլ.* who *հոմանիշի հետ*), *որի նախաձայն ն շունչը հնխ.* k^w-*ի մնացորդն է, ճիշտ ինչպէս գրաբարի մէջ* **ի՞մ** *փխ.* **ի՞մ**:—*Կայ նաև Ննխ. (գիւղերում)* **վո՞** *ձևով, միայն* **վո՞ գինա** «*ո՞վ գիտնայ, ո՞վ դիտէ, չգիտեմ*» *դարձուածի մէջ: Ալշ. Մշ.* **ո՞վ** *ձևն էլ կորցրած՝ ունին միայն Մշ.* **վո՞ր**, *Ալշ.* **ւո՞ր**:—*Սվեդ.* **յէօ՞** «*ո՞ւր*»:

***ՈԲՈՂՈՍ** «*մի տեսակ մանր դրամ, դրաքմայի* 1/6 *մասը, որ արժէ 15 սանտիմ*» *Եփր. ևն. 92. Շիր. 27:*

=*Յն.* ὀβολός *նոյն նշ. որից փոխառեալ են նաև լտ.* obolus, *ֆրանս.* obole *ևն. բառս նոյն է յն.* ὀβελός «*խորովածի շամփուր*» *ձևի հետ. ծագումը տե՛ս* Boisacq 682:—*Հիւբշ. 368:*

Շիրակացին (Հրտր. Պատկ. էջ 27) յիշում է արդէն թէ բառը հնդկականից է: Ուղիղ է մեկնում և ՆՀԲ:

ՈԳԵԼ «*ասել, խօսիլ, երգել, նուագել*» *Պիտ. Պզատ. օրին. և տիմ. Տաղ. որից* **առոգաբանութիւն** «*ընթերցանութեան մէջ լաւ արտաբերութիւն*» *Բր. և Երգն. քեր. Մագ.* **առոգել** «*բարբառել, ասել*» *Ճառընտ.* **առոռոգել** *Պզատ. Դամասկ.* **ներառոռոգեալ** «*ասացեալ, մականուանեալ*» *Մագ. գամագտ. ժն (իսկ* **ոգեղարարբառ** *Վեցօր. էջ 163 պէտք է ուղղել* **ագեղարարբառ**. *տե՛ս ՀԱ. 1911, 303):*

ՆՀԲ **հագագ** *կամ* **ոգի** *բառից:* Gosche 23, Bottich. ZDMG 1850, 359 *սանս.* vač *ձևի հետ:* Lag. Urgesch. 986 *կասկածով* **հոգի** *բառի հետ:* Canini, Et. étym. 70 *սանս.* aikan, *լտ.* nego «*ժխտել, ուրանալ*», *յն.* ἀχέω «*հնչել, աղմկել*»: *Տէրվ. Նախալ. 105 կա՛մ* **ոգի, հոգի** *բառի հետ և կամ հնխ.* vak «*դոչել, խօսիլ*» *արմատից. համմտ. սանս. և զնդ.* voč, *լտ.* vocare, vox, *յն.* εἶπον, *պրս.* āvāz, bānik, *հյ.* **վանկ, հագագ** *են: Հինբ. յն.* αὐχέω «*ասել, խօսիլ, կարծել*»: Bugge, Beitrg. 27 *յն.* βοή «*ձայն, ճիչ*», βοάω «*բղաւել, աղաղակել, դոչել*», *սանս.* jóguve «*բարձր ձայն հանել*» *բառերի հետ, իբր* gowe- *նախաձևից: Ալիշան. Հին հաւ. էջ 318 Կելտաց* **ոկամ, ոգամ, ոկմիա** *ճարտասանութեան աստուծու հետ:* Scheftelowitz BB 29, 14 *լիթ.* sakyti, *հսլ.* soča, *անգսք.* secgan, *անգլ.* say, *գերմ.* sagen «*ասել*» *բառերի հետ: (Կրկնում է* Pokorny 2, 479 *հնխ.* seq^u- «*ասել*» *արմատի տակ):* Karst, *Յուշարձան 401, 405 սումեր.* gu, gugu, gug «*ձայն, ասել, խօսիլ*», *416 մոնղոլ.* üge «*խօսք, բառ*», *թունգուզ.* ige, *418 ույղուր.* ögmek, *չաղաթ.* ögümek, *օսմ.* öymek «*գովել*»: *Պատահական նմանութիւն ունին լտ.* ovo, *յն.* εὐάζω «*ուրախութեան բացագանչութիւններ արձակել*»:

Ոգի *տե՛ս Հոգի:*

Ոգի *տե՛ս Յոյգ:*

ՈԳՈՂՆԱԼ «*վրէժ ունենալ, բախլիլ, նախանձիլ*». *ունի միայն ՀՀԲ. անստոյգ բառ:*

ՈԳՈՇԵԼ «*գոռալ, հող արկանել, հող հանել կամ հովանալ*». *գիտէ միայն Բառ. երեմ. էջ 250. Հաւանաբար նոյն է նախորդի հետ և մին կամ միւսը սխալ:*

ՈԳՈՐԻԼ «*հետը կռուիլ, մարտնչիլ (նղջիւրներով, ձեռքով կամ զէնքով), հակառակիլ, դէմ կենալ*» *ՍԳր. Ոսկ. մտթ. էջ 466, 502, 601. Եւս. քր. Ագաթ. որ և* **ոգորալ** *Մծբ. տպ. Պլ. էջ 60. որից* **ոգորական** *Մագ. գամագտ. (ՀԱ. 1911, 665),* **իմիննոգոր** *Նար.:*

ՆՀԲ «ի բառէս նղջիւր, որ և յայլ լեզուս՝ **էրե, էրաձիու, էրաս, ֆոնու**»: *Քիւփէլեան, Բազմ. 1910, 153* **ոգ>ոյժ** *արմատից:*

+ՈՂՆԻ «*ոգնի անասունը*» *ՍԳր. Վեցօր. 186. Մխ. առակ. Վրդն. լս. գրուած է* **ոզնիկ** *Ոսկ. մ. գ. 6, էջ 24 (որ գտնում ենք նաև գաւառականներում), սրա* **կոզնի** *ձևի հին վկայութիւնն ունի Յովսիմ. (Համառօտ խմբագրութիւն), էջ 29:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* og'hinio->[*]**ոզինի** *ձևից. սրա դէմ քոյր լեզուներն ունին* eg'hi- *արմատաձևը. համմտ. յն.* ἐχῖνος, *հհիւս.* igull, *անգսք.* igil, igl, il, *հբգ.* igil, *գերմ.* Igel, *հոլլ.* egel, *հսլ.* ježĭ, *ուկր.* již, jižák, *պոլար.* jes, *լհհ.* jeż, *հռուս.* ожъ, ожикъ *(նա-*

խաձայն o՝ *մեր բառի պէս), ռուս.* ёжъ, *լիթ.* ežỹs, *լեթթ.* ezis, *փռիւգ.* ἔξις *(իմա՛* ἔζις*)* «ոզնի». (Petersson, Ar. u. Armen. Stud. 63 *որանց հետ է կցում նաև օսս.* uzun, uzĵn «ոզնի»)։ *Նախապէս այս բոլորի արմատը դնում էին հնխ.* eg՛h- «*խայթել*», *բայց այժմ այս կարծիքը չի ընդունւում* (Pokorny 1, 115, Walde 42, Kluge 228, Trautmann 73, Berneker 267, Boisacq 302)։—*Հիւբշ. 481։*

ՆՀԲ յիշում է ռուս. և յն. ձևերը՝ առանց նմանութիւնը նշանակելու։ Böttich. ZDMG 1850, 367 *և* Arica 34, 22 *փռիւգ.* ἐξουανοῦν *(մեկնուած է* ἐχινολώπηξ ոզնաղուէս*) բառի առաջին կէսի և* Ἀτανοί *յատուկ անուան հետ։* Pictet KZ *6, 186 և* Orig. ind. *1, 453, 454 իրար է կցում յն.* ἐχῖνος, *գերմ.* Igel, *սանս.* ahīna «*մեծ օձ*» *և միւս կողմից* ոզնի = *սանս.* ahi «*օձ*»։ *Պատկ.* Изслѣд. *20 յն.* ἐχῖνος, *ձևի հետ։ Հիւբշ.* KZ *23, 25 ունի ուղիղ մեկնութիւնը և հանում է հնխ.* ag՛hanya *ձևից։* Justi, Dict. Kurde *էջ 350 քրդ.* kusi *համանիշին է կցում հյ.* կոզնի *ձևը։ Հիմնք. յունարէնից է հանում։* Karst, *Յուշարձան 404 սումներ.* eššu, issu «*ցորենի հասկ*»։ *Պատահական նմանութիւն ունի չեչէն.* zu «*ոզնի*»։

ԳԻՒ.—Ախց. Կր. Հմշ. օզնի, *Սեբ.* վօզնի, *Ռ.* օզնի, օզնիգ, *Երև.* վօզնի, կուզնի, *Ասլ.* էօզնի, *Տիգ.* օզնիգ, *Խրբ.* օզնէգ, *Վն.* վոզնիկ, *Սլմ.* վօզնիկ՝, *Մրղ.* վրʰզնիկ՝, *Գոր. Ղրբ.* կօ՛զնի, *Ագլ.* կօ՛զնի, կո՛ւզնի, *Ղզ.* կուզ, *Ալշ.* օձնի, *Մշ.* օձնի, *Շտ.* վոնձնի, *Մկ.* տոնձնը՛, *Ջղ.* կոնձնի, *Լ.* կուձնիճա, *Շմ.* կուզնիգ՝.—*սրանցից* կոզնի *ձևի մէջ կ նախաձայնը ծագած է շրչմամբ՝* ոզնիկ *նուազականից, ինչպէս որ* կոզնի *ձևից էլ նոր նուազականով յառաջացել է Շմ.* կուզնիգ՝<կոզնիկ *(նուազականի համար համմտ. վերը սլաւական ձևերը).—Բառ. երեմ. էջ 143 դնում է նաև* խոզնի *ձևը, որ սակայն վրիպակ պէտք չէ կարծել, որովհետև դրուած է խ բառաշարքի մէջ՝ իր պատշաճ տեղը։ Իսկ Կ. Սարաֆեան, Բանալի դիտութ. Սանկպետ. 1788, էջ 69 ունի* կուզնի։—*Նոր բառ է* ոզնեղէն *վն. «ոզնիի մորթից շինուած»։*

ՈՉՆԿԱՆ «*ռաւենտ, գաբծիլի տակը*» *կամրկ. ունի միայն ՀԲուս. § 2384. նոյն է* ոզնկաճ «*ինաշնդեղ (կարդա՝* խաշնդեղ*), ըռէվէնտ*» *Գաղիան. (ըստ Բռ. երեմ. յաւել. 575)։*

ՈՉՈՏՆ. *անստոյգ բառ. գտնւում է* ոզոտաճաճմայ *բարդի մէջ, որ մի տեսակ հմայական ձև է նշանակում և մէկ անգամ գործածուած է Մանդ. էջ 194. «Ի լուսնախտիրս, ի շեղջախտիրս, յոզոտնահմայս, ի գեղահմայս, ի աննիկոնս, յատուիս». (տպուած է* յոզոտճաճմայս, *ՆՀԲ դնում է* յոզոտատճաճմայս)։

ՆՀԲ մեկնում է «ազգ հմայից, թերևս հայելով յոստան քաղաքս»։ ՋԲ և ԱԲ չունին։

+ՈՉՈՐ «*ճիւղ, ճապտ*». *արմատ՝ որ հների մօտ առանձին գործածուած չէ. շատ յետին է Ջքր. Բ. 119 (Բարսղ ոզորով փորր փորր հարկանէր զնոսա). որից կազմուած ունինք* ոզորածեծ առնել *(գրուած նաև* ոզրածեծ *և տգիտութեամբ՝* ոլորածեծ*) «ճպտուով ծեծել, գանահարել» Ագաթ. Յայտմ. (Նոր վկ. էջ 18), Երզն. լս. (Ներր. յորդ. 32, 41), Ճառընտ. Լմբ. մատ. 381.* ոզորած փայտ *«մի կապոց փայտ՝ ոզորով կապուած» Կեչառ. աղէքս.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ozg՛ho «*ճիւղ*» *ձևից, որի միւս ժառանգներն են յն.* ὄσχος *և պհլ.* azg «*ճիւղ*» *(սրանից է փոխառեալ հյ. ազգ). ձայնական յարաբերութիւնը ճիշտ այն է, ինչ յն.* μόχος = *հյ.* մոգի < *հնխ.* mozg՛ho—ոզոր *բառի մէջ* r *մասնիկ է* (Pokorny, 1, *185)։—Աճ.*

ՆՀԲ լծ. ոլոր, ոստ, *յն.* ὄζος «*ոստ*»։ Bugge, IF 1, 445 ոստ *բառից* -որ *մասնիկով։* Scheftelowitz BB 29, 69 *փոխառեալ! հֆրանս.* osier «*ուռի*», *անգլ.* osier *բառից։ (Սխալուած է* ոզոր *հասկանալով* «weide, *ուռի*». *բայց ինչպէ՞ս կարող է* ծ *դարու մի բառ ֆրանսերէնից առնուած լինել)։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. օզոր «*ծառի ճիւղից շինուած կապ՝ խուրձ կապելու համար*». *նշանակում է նաև «ծուռ, գալարուն, ճամբից շեղուած, սխալ». որից* օզրել «*ծռել, ոլորել. ճիւղերը իրար ոլորելով հիւսել, թեքուել, ճա-*

նապարհից շեղուել, միսը կամքիլ (ՀՀԲ և ՋԲ)», ոզիր «կամիք» (ՓԲ), **օզորուկ** *«շիլ աչքերով» (Ազգ. հանդ. ծ. էջ 143),* **օզոր-մոզոր** *«օձապատոյտ»,* **օզրուկ** *«ոլորուած»։*

ՈՋՈՒՄՆ *«թեզան». մէկ անգամ ունի Սիր. ղևտ. էջ 220. «Փոխանակ այնր՝ զի ասէ յաուէջ կամ յոզումն, հեբրայեցին՝ յառէջ կամ ի թեզան»։*

Ոթալ *տե՛ս Օգ։*

ՈՒԻՍ *«սև ու դարշահոտ մի միջատ է» (նորագիւտ բառ). Վստկ. էջ 80. Մատակին (բզէզքն), նոյնպէս և ոլիսքն։*

ԳԻՒ.—Նախ. **օրիս**, *Ախց. Տփ.* **օրիզ**, *Ղզ.* **հօ՛բիս**, *Ղրբ.* **վէ՛բըէս**։

ՈՃԲԻԼ *«զարնել, ջարդել, կոտորել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Իրեն. ցոյցք 22. «Շրջեաց և եյեղ Աստուած զճանապարհն նոցա մոլորիլ զնոսա, ոժբիլով և հարկանելով յանապատին»։*

Գաւառ. ու մեկնից Վարդանեան ՀԱ 1910, 304։

***ՈԼԱԻԿ** *«մոշ, մորենու պտուղը», Կաղիան. սխալ գրուած ոշաիկ, ոշակի, որ յիշում է ՆՀԲ մոլ—իմա մոշ բառի տակ, նոյնը աւելի յեռնաբար* **յոլեխ** *Ամիրտ. ՀԲուս. § 2113)։*

=Արաբ. 'ulaiq «մոշ» (Կամուս, Թրք. Թրգմ. հտ. Գ. էջ 27)։ Նորագիւտ բառս գտաւ և ուղիղ մեկնից Նորայր, Բանաս. 1901, էջ 121։

*+***ՈԼՈԳ** *«երկար գուլպայ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 189։*

=Ըստ իս հյ. **ոլոմ** *«սրունք» բառն է, որ արդէն գրւում է նաև* **ոլոգ**։—*Աճ.*

ՈԼՈՒՆ, *ե հյ. (-ոաև, -րաև, -ոուեմ, -ոանց, -րանց, յեռնաբար նաև* **ոլեռն**, *սեռ.* **ոլոանց**) *«բակլայի կամ մաշի նման մի ընդեղէն.* pisum sativum L. *(Տիրացուեան,* Contributo *§ 267). փխբ. խոշոր կաթիլ (քրտինքի, արցունքի)» ՍԳր. Եւս. քր. վեցօր. 60. «կտրուած կաթի մէջ ձևացած գնտիկները» Սասն. 67. «կարկուտի մէկ հատիկը» Ոսկ. յհ. բ. 1 (յետին). «մի տեսակ որդ փայտի» Գաղիան. որից* **ոլոոնացեալ** *«ոլոոի պէս կլորացած (կաթիլ)» Նիւս. կազմ. Երզն. մոթ.* **ոլոոնաձև** *Շար.։*

ՆՀԲ յն. ὄλυρα *«հաճար» և լտ.* olus, oleris *«բանջար». ի ձայնէս* **ոլոր, բոլոր**, *յն.* ὅλος: Peterm. *30 լտ.* olus: Lag. Gesam. Abhd. *59 կգում է* ὀλύρα *բառին։ Պատկ.* Изслѣд. *էջ 35 լտ.* olus, oleris: *Հիմնք.* **ոլոր** *բառից։*

ԳԻՒ.—Մշ. **օլոո**, *Նախ.* **ուլէո** *(գիւղերը) և շրջմամբ՝* **ուտէլ** *(քաղաքում), Խոջ.* **օոէլ**, *Գոր.* **ևի՛վէօոևր**, *Ղրբ.* **ևի՛վէոևր** *«ոլոոս». որից* **իվլէ՛օոևէ՛գ՝** *«մի տեսակ պալար». բացի առաջինից միւս ձևերը ծագում են* **ոլեոն** *ձևից. որի հին գործածութիւնը ունի Վրք. հց. ա. 582։—(Նո՞ւն է թէ տարբեր բառ է Ջղ. (գիւղերը)* **ճոոալ** *«ոլոոի նման մի բոյս»=պրս.* holar)։

ՈԼՈՐ *«ոլորք, ոլորած բան, պնդութիւն, ամրութիւն» Ոսկ. ա. տիմ. ժե. և հռ. «փակագիծ» Լծ. Նար. որից* **ոլորել** *«գալարել, պրկել, պնդել» Եւագր. Կիւրղ. Թագ.* **ոլորակ** *«պրկումն, ձգտում» Ոսկ. յհ. բ. 37. «առողանութեան մի նշան» Թր. և Երզն. քեր.* **ոլորակել** *«պրկել» Յայտմ.* **ոլորան** *«պրկոց, գելարան, մամուլ» Վանակ. հց. Վրդն. լս. 58.* **ոլորուտ** *Պզատ. տիմ. շեշտոլոր Թր. քեր.* **ոլորուն, ոլորապտոյտ** *(նոր բառեր)։ Նոյն արմատից տ մասնիկով ածած է* **ՈԼՈՐՏ** *«պտոյտ, սաստիկ ոլորք» Իմ. և. 11. «բոլորտիքը, չորս կողմը» Պիտ. Փիլ. որից* **ոլորտանալ** *Պիտ. Փիլ. Անան. եկեղ.* **ֆաջոլորտ** *Մագ. նոր բառ է* **մբնոլորտ**. *մասնիկի համար համմտ.* **բոլոր, բոլորտիք**։

ՆՀԲ լա՞ր բառից։ Տէրվ. Նախալ. 106 **ճոլովել, գիլ, գալարել, բոլորել**, *ինչպէս և յն.* εἰλύω, *լտ.* volvo, *գոթ.* valvjan *ձևերի հետ հնխ.* varu, varv *արմատից։ Հիմնք.* **օղ** *բառից։* Bugge IF 1, 445 **-որ** *մասնիկով կազմուած է դնում։ Յ. Արշէղ, Բազմ. 1897, 52* **ոլ-որ, բոլ-որ, ճոլ-ով**, *կոր կգում է սեմական* gal, gul *«կլոր լինել» արմատին, ինչպէս. նաև յն.* κολίνδω, *լտ.* collis *ևն բառերին։* Scheftelowitz BB *29 (1905), 51* **ոլոոն** *«փայտի որդ» բառի հետ։* Petersson KZ *47 (1916), 261* **-որ** *դնում է մասնիկ, իսկ էջ 284* **աղխ** *բառի հետ միասին կըցում է սանս.* arāla *«կորացած», alaka*

«խոպոպիք», ինչպէս և աղեղն բառերին. բոլորի արմատը հնխ. el-, -ol *«ծռել, կորացնել»։ Աճառ. Նորք 1925, № 5, էջ 393 յիշում է համխ.* ḫūlali *«ոլորել»։* Scheftelowitz KZ *53 (1925), 248* ողն *«կռնակ» բառի հետ՝ սանս.* arāla *«կորացած», սլով.* olito *«աղիք», զնդ.* arəθna *«արշին»։*

ԳԻՒ.—Սչ. ոլորել, *Պլ.* ոլորէլ, ոլբրէլ, *Ալշ. Մշ.* ոլբրել, *Ախց. Կր Ռ.* ոլբրէլ, *Խրբ. Տփ.* ոլբրիլ, *Ասլ.* ոլբրէ՝լ *(բայց* էոլէո՛րf *«ոլորք»), Համշ.* ոլբրուշ, *Սեբ.* ֊ոլբրէլ, *Վն.* էոլէորել, *Մկ.* էոլէորիլ, *Մրզ.* էոլէորէլ, էոլիւրէլ, *Սլմ.* էոլրել, *Երև.* ըլօրէլ, *Տիգ.* օլ՛րիլ, *Ննխ.* ոլդբրէլ, ոլդբոէլ, *Ջղ.* ֊յուլորել, ալորել *(բայց* ուլոր *«ոլոր»), Ագլ.* ըլլո՛րիլ *(բայց* իւ՛լլիւր *«ոլորք»), Շմ.* ֊հիւլէորիլ, *Գոր. Դրբ.* ֊ըլլէո՛րէլ, *Բիւթ.* օլլիլ, *Հճ.* իլլել, *Զթ. Սվեդ.* իլլիլ։ *Նոր բառեր են* ոլոր *«մանուածապատ»,* ոլորով աճցնիլ *«գլորիլ»,* ոլորգերան *«պողոսակ»,* ոլոր-մոլոր, ոլորաձև, ոլորկծիկ, ոլորճուտ, ոլորուիլ, ոլորշան, ոլրծուն, ոլրով, և ա *մասնիկով՝* ոլրտիլ, ոլրտալ *«ման գալ» (Ննխ.* օլդրիլ *«ոլորել»),* ոլրտկել, ոլրտկցնել, ոլրտուն։—*Աստանայի Թրքախօս Հայոց մէջ կայ* կէզէ կէզէ ըլօրfում սէօֆիլտին *«շատ ման գալով ոլորքս քանդուեցաւ (յոգնեցայ)» դարձուածը, ուր* ըլօրf *պարզ է թէ Հյ.* ոլոf *բառն է (ինչպէս կարծում է և Պէտէլեան, Արևելք 1888 նոյ. 8—9), և ոչ թէ* ոլորf. *Համմտ. Երև.* օլօրf *«ոլոքի ոսկորը»։*

+ ՈԼՈՔ, ի–ա՞ *Հլ. (յետնաբար* ո *Հլ. աւելի յետնաբար* և *Հլ. յգ.* ոլոfուն֊f*) «ծունկից մինչև կրունկը եղած մասը» Ագաթ. Պղատ. տիմ. էջ 151. Փիլ. որից* բոկոլոf *«բոկոտն» (գրուած* բոկոլոռ*) Սոկր. 308.* ոլոfոսկր *(նոր բառ). գրուած է նաև* ոլոգ, *նոյնը* օլոխ *«ճուռ» Բառ. երեմ. էջ 335.—Քաջունի, Գ. 189 գիտէ նաև «ծաղկի կոթ» նշանակութեամբ (նոյնպէս է դարձեալ Գաբ. բառ.), իսկ Գ. 189 «երկար դուլպայ» նշանակութեամբ դնում է* ոլոգ *ձևով։*

=Բնիկ հայ բառ՝ որ ծագում է հնխ. oleq-*ձևից (երկրորդ ձայնաւորը առաջինի ազդեցութեամբ դարձել է* ո*). սրա ցեղակիցներն են՝ սանս.* ṛkšala (<*ḷqs-elā) *«ձիու կրունկից մինչև սմբակը եղած մասը», յն.* ἄλαξ *«արմուկ», λάξ «կրունկով», λαχμός «քացի, կիսք», λακτίζω «աքացել, քացի տալ», լտ.* lacertus *«մկանունք, բազուկ», հիսլ.* leggr *«սրունքների բումբը», անգլ.* leg *«սրունք», հիոլ.* less *«երանք», հիսլ.* lāer, *հշվէդ.* lār *«սրունք», հսլ.* lakŭtĭ, *ռուս.* lákotĭ *«արմուկ», լիթ.* elkúnė, *հպրուս.* alkunis *«արմուկ»,* lagno *«վարտիք, ոտաշոր» են։ Հնխ. արմատը* oleq- *(աճած* ole-, elei-, lei- *պարզականից) նշանակում էր բուն «ծռել, ճկել» և յետոյ զանազան լեզուների մէջ յատկացուեցաւ նշանակելու արմուկը կամ սրունքը՝ սրանց կորացած ձևի պատճառաւ. համմտ. յն.* σκολιός *«կեռ» և* σκέλος *«սրունք», հյ.* կարթ *«ձկնորսի կամ ոտքի ճանկ»* (Pokorny 1, 157, Walde 404, Boisacq 555)։ *Նոյն արմատին են պատկանում նաև* ողն *և* ուլն, *որոնք տե՛ս առանձին։* Ernout-Meillet 490 lacertus *բառի համար ո՛չ մի համեմատութիւն աւոյգ չի գտնում։*

Տէրվ. Altarm. *72, 74 լիթ.* linkti *«ծռել, կորանալ»,* lenkti *«ծռել», պրս.* lang *«ամբողջ ոտքը»։ Հիւնք.* ողոf *բառից։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ* Lidén, Arm. Stud. *95 և* KZ *41 (1907), էջ 396։ Չի՛ ընդունում* Meillet MSL *15, 355 նշանակութեանց տարբերութեան պատճառաւ։*

ԳԻՒ.—Մշ. ոլոf, *Ախց. Ննխ. Ջղ.* ոլօf *«ծունկից մինչև կոճը եղած մասը» (բստ Բլ. «ցորենի ցօղուն» Ազգ. Հանդ. ե. 23), Երև.* օլօրf *«ոլոքի ոսկորը, լուլա». այստեղ են պատկանում նաև* ծոկոլոf *Ղզմ. «ոլոքի վրայի կակուղ միսը, բումբ»,* լոլոf *Եւդ. «բարձ ոսկր»։*

ՈՒԽ *(հների մէջ անհզական) «քէն, վրէժխնդրութիւն» ՍԳր. Եփր. աւետ. Փիլ. լին. որից* ոխանալ *Ծն. խթ. 23.* ոխացեալ *Մրկ. ղ. 19.* ոխացուցանել *Բուզ.* ոխակալ *ՍԳր. Ոսկ. ես. Եփր. ծն. Եւագր.* չոխակալ *Ոսկ. մ. ա. 25.* ոխաբափ *Կոչ. 249.* ոխերիմ *կամ* ոխորիմ *«ըմբիշ» Եւս. քր. «անհաշտ թշնամի» Պիտ. 3՛՛. կթ. Խոսր.* ոխութիւն *ՍԳր. Եւագր. Բուզ. Ան։*

Bugge, Beitr. *19 կասկածով իբրև բնիկ հայ ուզում է կցել յն. ὀχθήσας «ցասկոտ, բարկացած», նորվ.* agg *«ոխ, վրէժ», հբգ.* egida, ecken, *լտ.* occa *«փոցխ» բառերի հետ։ Հիւնք. համառօտուած* ոսոխ *բառից։* Karst, *Յուշարձան 422 ՖՖր.* öv, öy *«բարկութիւն»։* Patrubány IF *14, 58 լտ.* secare *«կըտրել», յն.* σχάω *«հերձել»։* Беридзе, ხოტღვაბ-კონა СП. *1912, էջ 33 վրաց. (Իմն և Ռաչինի գտ.)* oxti *«վրէժ» բառի հետ։*

ԳԻՒ.—Ննխ. օխ, *Ախց. Երև. Կր.* վօխ, *Ալշ.* տխ, *Մշ. Վն.* վոխ, *Ասլ. ՋՖ.* էօխ։

ՈՂ *«աճառ, կոճիկ,* cartilago*». դիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 68 ա։*

ՈՂԱՅ *«ձայնք լալեաց, ողբ ու կոծ». ունի միայն Բառ. երեմ. էջ 250։*

+ՈՂԲ, ո *հլ. «լաց ու կոծ» ՍԳր. Ագաթ. որից* ողբալ *ՍԳր. Ոսկ. երր. Կիւրղ. Փգ.* ողբալի *Եղիշ.* ողբումն *ՍԳր.* ողբագին *Եփր. աղ.* ողբակից *Եղիշ. ՅՀ. կՖ.* ողբասաց, ողբերգու *(նոր բառեր) ևն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. olbh- *ձևից. համմտ. լիթ.* ulbüti, ulbauti *«կանչել, երգել», յն.* ὀλοφύρομαι *«ողբալ, հեծել»,* ὀλοφυδνός *«ողբագին»։ Հնխ.* olbh- *արմատը կազմուած է պարզական* ol- *արմատից՝* bh *աճականով. ունի ընդարձակ տե՛ս* Ողող (Boisacq 698, Walde 849, Pokorny, Vergl. Wörterb. d. ind. sp. 1, 194:—*Հիւրշ. 481։*

Müller SWAW *88 (1877), էջ 15* ὀλοφύρομαι, ὀλοφύζω *ձևերի հետ։ Տէրվ.* Altarm. *30—31 և Նախալ. 101 հնխ.* rabh *արմատից՝ նախաձայն ո-ի յաւելումով. համմտ. յն.* ὀλοφύς, *լտ.* lamentum <*lap-mentum, *սանս.* rap, lap, vilap *«տրտնջալ»։ Հիւրշ.* Arm. Stud. *§ 227 յն.* ὀλοφύρομαι *ձևի հետ։ Հիւնք. էջ 272* փող *«շնփոր» բառից։* Meillet MSL *11, 183 յն.* ὀλολύζω ? Scheftelowitz BB *29, 38 լտ.* fleo *«լաց լինել», հսլ.* blějǫ *«մայլել»։ Պատահական նմանութիւն ունին երբ.* אבל abl, *ասոր.* ebl, *արամ.* abl *«սգալ, ողբալ»։*

ԳԻՒ.—երբ. Կր. օխր՛ալ, *Սչ.* վօխր՛ալ, *Հճ.* վոխր՛, *Պլ.* օխրալ *(պահուած է միայն լալօխրալ կրկնաւորի մէջ), Ալշ.* տխպ, *Սլմ.* վոխպալ, *Ալշ. Մշ.* օխպալ, *Երև.* վօխպալ, *Տփ.* վուխպալ, *Ննխ.* օխփալ *(բայց՝* վօխփ*). իսկ* ողբալ *Սվ. «սաստիկ կարօտիլ, փափագիլ»։*

ՈՂԵՂ *«առաւել». ունի միայն Բառ. երեմ. էջ 250։*

***ՈՂԻՄԲԱՍ** *(կարդա՛* ողիմբիաս*) «Ողիմպոս լեռներից փչող արևմտեան քամի» Աբիստ. աշխ. էջ 612. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. ὀλυμπίας, *որից նաև լտ.* olympia *նոյն նշ.—Հիւրշ. 368։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՈՂԻՔ *«շահ կամ մթերք». ունի միայն Բառ. երեմ. էջ 251։*

ՈՂԿԱՏ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Պիտառ. «Ու տարերցն և մահկածին և ողկատին»։ ՆՀԲ յիշում է այս բառը մահկածին բառի տակ և մեկնում է «լրումն լուսնի՞»։*

ՈՂԿՈՂԱՆԻԿ *«դանդաղիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 251։*

ՈՂԿՈՅԶ, ո, ի, ի-ա *հլ. «խաղողի ճութը, կուզ» ՍԳր. Վեցօր. 94. «արմաւենու կամ նոճու ողկոյզ» Երգ. ա. 13, է. 17. «Նորահաս, մատղաշ» Ածազգ. «գունդ մեղուաց» (այս նշանակութիւնը դիտէ միայն Տիրոյեան, Հանրագր. էջ 552). որից* ողկուզաբեր *Թէոդ. կուս. Սկևռ. աղ.* ողկուզաբոյծ *Ոսկ. Հերոդ.* ողկուզալից *Մծբ. Եփր. մն. էջ 467.* ողկուզուկ *«մի տեսակ խոտ» Փիլ. լիւս.* ողկուզօրէն *Պիտ. Նոնն.* գեղեցկողկոյզ *Պրպմ.* խաչողկոյզ *Փիլ. Նխ.* խնկողկուզիկ *Մխ. առակ.* մաճողկուզեան *Նար.։*

Böttich. Arica *74, 198 կցում է պրս.* angūr *«խաղող» և արաբ.* عنقود ʻanqūd *«ողկոյզ» ձևերին։* Lag. Urgesch. *837 և* Arm. Stud. *§ 1728 փոխառեալ է դնում արաբ.* ʻanqūd *ձևից, որ մերժում է Հիւրշ. 273։—Հիւնք.* ընկոյզ *բառից։ Տե՛ս նաև* կոյզ։

ԳԻՒ.—Կր. օղկուզ, *Սվեդ.* ուղգայզ. *միւսները պահում են կա՛մ* կոյզ *ձևը, որ* ողկոյզ *բառի կրճատուածն է, և կամ ցոյց են տալիս նուր բառը։*

ՈՂԿՈՒԹԻՒՆ *«դառնութիւն». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 251։*

+**ՈՂՆ**, ն *հլ.* (ողին, -ղամբ, -ղուխ, -ղանց, *յետնաբար* ողան *էլ. արիստ. 8*) *«կռնակ. 2. ողնաշարը ուղեղով միասին» ՍԳր. Ագաթ. Եղիշ. ը. 137. Փիլ. «ողնաշարի ծուծը» Նիւս. բն. Գէ. հս. «մի բանի վերի կողմը (ինչ. երկնքի, լեռան, նաւի ևն)» Նիւս. կազմ. Փիլ. որից* ողն առնուլ *Ոսկ. հս.* յողն կալ *Գ. մկ. գ. 12.* յողն անկանել *Ոսկ. մ. բ. 4, 14,* յողն երթալ *Վեցօր. 86 («ծուլանալով մէջքի վրայ պառկիլ»),* ողնայար *Ա. Թագ. ի. 5. Սիր. գտ.* ողնափող *Նորագիւտ Բ մնաց. ժբ. 33.* ողնդժնեայ *Ագաթ.* ողնիլ *«դէպի յետ ծռիլ» Մխ. առակ.* ողնբեկիլ *«մէջքը կոտրիլ» Սիր. գծ. էջ 33, Սիր. Թղ. 436 (ՀԱ 1913, 347),* ողնափայտ *Սահմ. փիլ.* ողնուց *«նաւի փորը» Ոսկ. Հռովմ. 392. Սիմես. 871.* ողնաեռ *«կեղ, վէրք» Վստկ.* ողնուլար *Արծր. էջ 196.* միողնի *Ոսկ. խչ. Արծր. էջ 65, 78.* սապատողն *Ղեւտ. իա. 19.* միջնողն *Օր. լբ. 11. Վեցօր. 143.* յողնեալ *«պառկած» Փիլ. «ծռած» Անան. գիտ. 5.* բնդողնիլ *Ոսկ. ա. տիմ. ը.* բնդողնեցուցանել *Ոսկ. եբր.* ռամիկ ձև է ողոշար *«ողնաշար» Մխ. բժշ. 29.* իսկ *Ոսկ. պօղ. ա. 93* բնդողմեալ *«վիզը հպարտօրէն յետև բռնած» պէտք է կարդալ* բնդողնեալ։— *Նոր բառեր են* ողնայարաչին, ողնայարաւոր, ողնուղեղ *ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* olen- *ձևից. սրա հետ համմտ. յն.* ὠλένη, ὠλήν *«արմուկ, վերնաբազուկ, ձեռք»,* ὠλλόν, ὠλέκρανον, ὀλέκρανο *«արմուկի ծայրը», լտ.* ulna (<*հնխ.* olenā) *«արմուկի ոսկորը, ամբողջ թեւը, նախաբազուկ, գրկաչափ», գոթ.* aleina, *հգ.* elina *«արմուկ», գերմ.* Elle, *անգլ.* ell, *հոլլ.* el, *հիսլ.* ǫln, *անգսք.* eln *«գրկաչափ» (գերմանական* alina *ձևից փոխառեալ են ռոմանական ձևերը, ինչպէս իտալ.* auna, *ֆրանս.* aune *«գրկաչափ»), կիմր. կորն.* elin, *հիռլ.* uilen, *պրս.* آرن ārān *«արմուկ», ալբան.* lanɛ, lerɛ *«արմուկից մինչև ձեռքն եղած մասը», սանս.* aratní-, *զնդ.* arəθna- *«արմուկ» են։ Բոլորի պարզ արմատն է* ol, *որ ունէր նաև իր երկար ձևը՝* ōl, *համմտ. յն.* ὠλέκρανον *և* ὀλέκρανον, *սանս.* āṇí-, *բայց և* aratní: *Բոլորի ընդհանուր գաղափարն էր «ծռիլ, կորանալ» և կարող էր գործածուիլ նաև նշանակելու համար մարմնի ուրիշ մասերը. համմտ. սանս.* āṇi (<*ōlni-) *«ծունկի վերի մասը», ārtnī «աղեղի ծայրը»,* alaka *«խոպոպ»,* arāla *«կոր», հսլ.* lanita *«այտ» են (*Pokorny 1, 157, Boisacq 1081, Ernout-Meillet 1078, Trautmann 202, Walde 848)։ *Այստեղ է պատկանում նաև* ուլն *«վիզ», որ գալիս է հնխ.* ōlen- *ձևից (նախաձայն ձայնաւորի երկարութեամբ, ինչպէս տեսանք վերևում)։ Նշանակութեան զարգացման համար համմտ. ցեղակից* ոլոռ *բառի տակ յիշուած ձևերը։ Տե՛ս նաև* ուղուկ։

ՀՀԲ ող *բառից՝* Klaproth, Asia pol. *1823, էջ 104 (կարդալով* ոզն!*)=ռոման.* osso *ձևի հետ՝* Bugge KZ *32, 86 թերևս փոխառեալ ավար.* hod *«կռնակ, մէջք» բառից՝ նոյն,* Album Kern, Leïden *1903, էջ 105 արմատակից յն.* Ὄλυμπος *լեռան անունին, որ Փոքր-Ասիական մի լեզուից է համարում՝* Pedersen, *Հայ. դր. լեզ. 87 յուն.* κωλήν *«կշտամսկր», հսլ.* koléno *«ծունկ» բառերին ցեղակից՝ նախաձայն հնխ. q-ի անկումով. (նոյնը կրկնում է* Berneker, *էջ 546)։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. *127։*

ԳԻՒՒ.—Ալշ. Մշ. ող *(սեռ.* ողան *կամ* ողնի*) «կռնակ. 2. լեռան լանջ», Խոջ.* վող *«լեռան լանջ», Հմշ.* էող *(սեռ.* ողօն*) «երկարաձիսա բլրակ», Տր.* ող *«տան գլուխը, կրատուր»։ Սրանցից կազմուած ձևեր են՝* վրր ողան *Մշ. Սս. «շուռ տուած, կռնակի վրայ պառկեցրած» (օր. Ամանը վրր ողան դարձնել),* ողմիլ, ողմկիլ *(համմտ. Ոսկ. պօղ. ա 93* բնդողմեալ *ձևը) Ագլ. Բլ. Մշ. «բնկողմանիլ, մի տեղ յենուիլ, թեի վրայ յենուելով պառկիլ»,* ողնուիլ *Վն. «մի տեղ կպիլ, մնալ, նրանից դժուար հեռանալ»։ Ունինք նաև Ակն.* ողրշար *«ողնաշար»։*

***ՈՂՈԳՈՄԵԱՆ**, ի *հլ. (գրուած նաև* ողոգոմէն, ողոգոմէ, ողոգոմ, ղոգոմեան*) «Մաղկազարդի ոտներ» Սկր. 46, Էմր. առ. Լև. 237, Կանոն. 38, ժմ. 261, 324, 642, 687. Ճառ-*

ընտ. Արշ. ՍԿԿ. արմաւ. Վրդն. սղ. Օրբել. հրտր. էմինի, էջ 71 ևն։

=3ն. εὐλογημένη «օրհնեալ, բարեբանեալ» բառից, ակնարկութեամբ *Մրկ. ժա. 9 և Ղկ. ԺԹ. 38՝* εὐλογημένος ὁ ἐρχόμενος ἐν ὀνόματι Κυρίου—*Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն. (այսպէս էին փառաբանում Քրիստոսին՝ Երուսաղէմի տաճարը մտած ժամանակ)։ Ըստ այսմ հյ. լատագոյն դրչութիւնն է ողոգոմեն և սեռ. ողոգոմենի ձևի վրայից կազմուած է ողոգոմեան, իբր թէ -եան մասնիկով։ Թարգմանաբար ունինք բարեբանութիւն. համմ. Եփր. արմաւ. 45 «Ի գալուստն Փրկչին յերուսաղէմ և ի սուրբ տօնն բարեբանութեան»։— Հիւրշ. էջ 368։*

Հներից Կանոն. էջ 38՝ տալիս է ուղիղ մեկնութիւնը. «Ողոգոմեանն մեծ, որ թարգմանի բարեբանեալ օր. Ի գալ ողոգոմէին մեծի տօնին, որ է օրհնեալ օր»։ —ՆՀԲ յն. εὐλογημένος *«բարեբանեալ» կամ* ὑλόκομος *«վարսագեղ, անտառազարդ, ծառազարդ», ումկ. ծառզարդար։ Ուղիղ մեկնութիւնն ունի Պատկ. Սեբ. էջ 198։ Հիւնք. յն.* ἐλαιοκομία *«մշակութիւն ձիթենեաց»։*

+ՈՂՈՂ *«թափելը, հեղեղ».*

=Կրկնուած է -ող արմատից. բնիկ հայ բառ. ընդարձակ տե՛ս Հեղ։

Scheftelowitz BB *29, 66 սանս.* saras *«ջուր, ճահիճ»։ Միւսները տե՛ս Հեղ։*

ԳԻՒՐ.—Սլմ. վն. օղօղել, *Մկ.* օղօղիլ, *Տփ.* օղօղիլ, օղըղիլ, *Գոր. Երև. Ղրբ.* ըղօ՛ղել, *Շմ.* ուղօղիլ, *Ագլ.* ըղա՛ղիլ, *Ջղ.* աղողել, *Ալշ. Մշ.* օղղել, *Ախց.* օղվէլ, *Խրբ.* օղվիլ, *որոնք նշանակում են «ամանը կամ բերանը մի քիչ ջրով լուալ». որից* ողողան *«յորդահոս», ողողոցք «ողողած ջուրը»։*

+ՈՂՈՂ *«ողբ, լաց, կոծ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են ողողանալ «լալ, ողբալ, կոծիլ» Ոսկ. փիլիպ. գ. ողողանիլ «նոյն նշ.» Ոսկ. Թես. ողողանք «լաց, կոծ, ողբ, վայնասուն» Եփր. խոստով.։*

*=Բնիկ հայ բառ. կազմուած է կրկնութեամբ պարզական *ող արմատից, որ ծագում է հնխ.* ol- *ձևից. սրա հետ նոյն են նաև գռ.* ուլուլալ *«ողբալ» և աճած ողբ ձևը. համմ. յն.* ὀλολύζω *«ճչալ»,* ὀλολυγή *«ճիչ»,* ὀλολύς *«կնկայ նման ճչացող, կնամարդի. կնատ»,* ὀλολυγαία *«ողբացող (բու)»,* ὀλάω, ὀλακτέω *«հաչել», լատ.* ululo *«ոռնալ»,* ulucus *«բու»,* ululatus *«ճչի սուր ձայն»* ululatio *«ողբ, կոծ»,* ulula *«բու», սանս.* ululí- *«սուր (ճիչ)».* ūlūka *«բու», լիթ.* ulūti *«ոռնալ»,* ulūlóti *«աղաղակել», միռլ.* ulach *«աղմուկ, աղաղակ», նիռլ.* ul-chaochan *«բու» և* -bh- *աճականով՝ յն.* ὀλοφύρομαι *«ողբալ, հեծել»,* ὀλοφυδνός *«ողբագին», լիթ.* ulbūti, ulbauti *«կանչել, երգել»* (Pokorny 1, 194, Boisacq 698, Walde 849)։—*Ա՛ճ.*

ՆՀԲ «լծ. յն. ὀλολύζω, *լտ.* ululo. *տե՛ս և ողողանք և բողոք»։*

ԳԻՒՐ.—Կայ միայն Ախց. ուլուլալ *«կանչով լալ, ողբալ կանչելը», որից* ուլուլիկ աճել *Երզ. «ճչալ, աղաղակել»։—Այստե՞ղ է պատկանում արդեօք նաև* օղիկ օղիկ գալ *«լալ ողբալ» (թէ՞* օղ *արմատից՝ իբր «գալարուիլ, մորմոքիլ»)։*

**ՈՂՈՄՊԻԱԴ (գրուած նաև* ոլոմպիաս, ոլոմպիադ, ոլոմպիաթ, ոլիմպիադ, ոլիմպիաթ, ուլիմպիադ, ուլումպիադ, ուլիմպիաձդ, ողիմպիադ, ոլիմպիադ, ողիմպիաս, ողիմպիադ, ղիմպիադ), ի-ա *հլ. (սխալ սեռ.* ոլոմպիացն *Պատմ. աղեքս. 24) «Ոլիմպիայ դաշտում չորս տարին մի անգամ խաղացուած յունական ըմբշամարտութեան աշխարհահռչակ խաղերը. 2. այդ խաղերի մէջ տարուած յաղթական մրցանակը. 3. նրա վրայ հիմնուած յունական թուականը» Եւս. քր. Ագաթ. Կոչ. 218. որից* ողոմպիական *Եւս. քր. Խոր. հոիփ.* ղոմբիական *ԱԲ։*

=3ն. Ὀλυμπιάς *(սեռ.—*άδος, *հյց.—*άδα*) «ոլիմպիական խաղեր», ὀλυμπιακός, ὀλυμπικός «ոլիմպիական», ὀλύμπιος «ոլիմպիական»։— Հիւրշ. 368։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ՈՂՈՎԹԻ, ՈՐՈՎԱԹԻ *«հեղեղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 251։*

+ՈՂՈՐԿ *(յետնաբար ի հլ.) «հարթ, կոկ, յղկուած» Ա. Թգ. ժէ. 40. Վեցօր. 143. «քաղցրախօս, մեղմ խօսող» Առակ. իզ. 23. որից* ողորկել *«հարթել» Յոբ. ժդ. 19, «մեղմել,*

կակղել, ամոքել» Ոսկ. բ. կոր. Սերբեր. ողորկակեղև *Վեցօր. 97.* ողորկապատեան *Վեցօր. 140.* ողորկաբար *Ասող.* անողորկ *Եւագր. գրուած է նաև* ոտղորկ, ըղորկ, ղորկ *Դամասկ. բժշ. Երզն. քեր.* ղորկել *Սարգ. (առակ.) ս. պետ. ա, էջ 229, բ. պետ. ա, էջ 527.* ղորկոտ *Մագ.* ղորկութիւն *Պղատ. ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* lorg^{w}- *«հարթ, ողորկ» արմատից, որի* lerg^{w} *ձևից էլ գալիս է հյ.* լերկ *«անմազ». ցեղակից լեզուներից ունինք հիռլ.* lerg *«հարթ դաշտավայր»,* leirg *«ճանապարհ», նիռլ.* learg *«դաշտ, փողոց, ափունք»,* leargán *«բլրակող», նոյնպէս հիռլ.* lorg, lorc *«շաւիղ», գաելլ.* lorg *«ճանապարհ, գնացք, հետք», կիմր.* llyr *«պրոտոյտ, ափունք», բրետ.* lerc'h *«հետք»։ Հայերէնի մէջ* լերկ *պահում է մաքուր ձևը, իսկ* ողորկ *կազմուած է ո յաւելուածական ձայնաւորով՝ յաջորդ ղ-ի պատճառաւ, որի բանդն էլ (փոխանակ ա) արմատական ։ ձայնաւորի նմանութեամբ էր։ Իմաստի զարգացման համար համմտ. արաբ.* mls *արմատը, որից ունինք* malāsa *«հարթ ու ողորկ դառնալ»,* amlas *«հարթ, ողորկ», բայց նաև «լերկ, անմազ»,* imlās *«ոչխարի բուրդը թափիլ» (տե՛ս և մալազ),* imlīs *«չոր անապատ դաշտ, տափաստան» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. էջ 294—295)։*

Նշ Բ մեկնում է «ուղիղ և լերկ»։ Հիւնք. օղակ *բառից։* Bugge IF *1, 452 դնում է* *ողիրկ *ձևից, իբր հնխ.* oligrós. *Համմտ. յն.* ὀλιβρός *«հարթ» (որ գալիս է հնխ.* ligrós *ձևից), անգսք.* slipes, *անգլ.* slipper, slippery *«փուփոխական, սահուն, դժուարին»,* slippy *«լպիրծ, հոսուն», որոնք ծագում են հնխ.* slig^{2}ró-s *ձևից։ Հիւրշ.* IF Anz. *10, 48 մերժում է։ Մանուալճեան, Բազմ. 1904, 499 լծ.* ուղուղ։ *Վերի մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. *60—64, որ միացնում է* լերկ *և* ողորկ, *և դնում է հնխ.* lerg-^{u}, lorg^{w}- *արմատից. Հյ.* ողորկ *հնթագրում է թէ կազմուած է* po- *նախդիրով, իբր* po-lorg^{w}-: Meillet, *Յուշարձան 211 մերժում է* Lidén-*ի մեկնութիւնը և համարում է կրկնուած* *որկ *արմատից,* *որորկ, *տարանմանութեամբ՝* ողորկ։ Karst, *Յուշարձան 422 ք՛բր.* yol, yul *«հարթել»։* Pokorny *2, 439 (ինչպէս նաև* Petersson, Ar. u. Arm. St. 87) *ընդունում են* Lidén-*ի մեկնութիւնը, միայն թէ* Pokorny *1, 48, ինչպէս և* Walde *2 համաձայն չեն նախաձայն* n=po- *բացատրութեան, որ և մենք վերևում բացատրեցինք իբր նախայաւելուած։*

+ՈՂՈՐՄ, ո *հլ. «գութ, կարեկցութիւն» Բ. մնաց. ե. 13. Սղ. ճլե. 1—26. Դան. գ. 89, 90. «աղերս, պաղատանք» Երեմ. լէ. 19. «թշուառ, ցաւալի» ՍԳր. Ոսկ. Եփր. թգ. Ա. գաթ. որից* ողորմիլ *ՍԳր. Ոսկ.* ողորմած *ՍԳր.* ողորմածութիւն *ՍԳր. Սերբեր. Ոսկ. մ. բ. 6, 7.* ողորմուկ *Եփր. թգ.* անողորմ *ՍԳր. Ոսկ. ես.* անողորմածութիւն *Բուզ. Ոսկ.* աղիողորմ *Մամբր. ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* orm- *արմատից (կրկնութեամբ* *որորմ, *տարանմանութեամբ՝* ողորմ*). Նոյն արմատի այլ ժառանգորդներն են գոթ.* arms *«թշուառ», հիռլ.* armr, aumr *«դժբախտ, ողորմելի», հբգ.* arm, aram, *հսաքս.* arm, *հոլլ.* arm, *անգսք.* earm *և գերմ.* arm *«խեղճ, աղքատ», գոթ.* arman *«գթալ, խղճալ»,* armahairto *«ողորմած». գերմ.* erbarmen *«գթալ»,* erbarmlich *«ողորմելի» ևն։ Հնխ.* orm- *արմատը այս երկու ընտանիքից դուրս ուրիշ տեղ չէ պահուած։ Գերմանականից է փոխառեալ ֆիննն.* armas *«սիրելի»* (Kluge 23)։

Նշ Բ լծ. իղ *և* աղիք։ *Տէրվ.* Altarm. *73* ողոխել, ղողոմել, ըղողոմորթ *բառերի հետ՝ կցում է զնդ.* ram *«հանգչիլ, ուրախանալ», սանս.* rāma *«ուրախութիւն, հաճոյք», լիթ.* rimti *«հանգչիլ», գոթ.* rimis *«հանգիստ» բառերին.* ողորմ *շրջուած է* *ողոմր *ձևից։* Bugge, Beitr. *38 յն.* ὀδυρμός *«ցաւի աղաղակ»,* ὀδύρομαι *«ողբալ» բառերի հետ՝ իբրև բնիկ հայ։ Հիւնք. յն.* ἐλαιοκομίον *«մշակութիւն ձիթենեաց»։* Müller, Armen. VI, 5, *որից յետոյ* Meillet MSL *10, 280 և Յուշարձան 211 տալիս են վերի մեկնութիւնը։ Նոյնը յիշում են Հիւրշ.* IF Anz. *10, 49 և* Pokorny *1, էջ 184։* Patrubány

ՀԱ 1906, 56 հնխ. or «շարժիլ» *արմատից. համմտ. լտ.* orior, *յն.* ὄρνυμι *և հյ.* յառնել. *համմտ. սիրտը շարժիլ դարձուածը*: Pedersen, *Հայ. դր. լեզ. 132 յն.* ἐλεαίρω «գթալ»:

ԳԻՒ.—*վն.* օղօրմել, *Մշ.* վօղօրմել, *Ննխ.* օղօրմէլ, *Ալշ. Ախց. Ակն. Խրբ. Կր. Մկ. Մշ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ.* օղորմիլ, *Համշ.* օղորմուշ, *Ագլ. Գոր. Երև. Ղրբ.* ղօրմիլ, *Շմ.* ուղօրմիլ, *Ջթ.* ուղույմիլ, ուղուրմիլ, *Ասլ.* էօղէօրմիլ, *Սվեդ.* վուղուրմիլ, *Մրղ.* օղորմած, *Սլմ.* օղորմուրո՞ւէն, *տաճկախօս հայերից՝ էնկ.* օղորմիս «*Աստուած ողորմի՛ տանը*», *օր.* օղորմիս չխարմամ «*ողորմիս տալ*» (*Բիւր. 1898, 866*), *Ասն.* օղորմած, օղորմութիւն (*Արևելք 1888 նոյ. 9*):—*Նոր բառեր են* ողորմաթաս, ողորմածիկ, ողորմածնոգի, ողորմակոր, ողորմաճաշ, ողորմասիրտ, ողորմատեղ, ողորմորակ:

ՈՂՈՑ «*ուռկանի չորս ծայրերը*» (*չունի ՆՀԲ*). *մէկ անգամ գտնում եմ գործածուած Եզիշ. տիբ. էջ 342.* «*Եւ եթէ յիշէք՝ ես յառաջագոյն ասացի, թէ երկնային ուռկանին չորք ողոցք* (*այլ ձ.* ողցք) *են և գլորեսին անկիւնս երկրիս ի ներքս արդելեալ փակէ*». (*իր նախկին ասածն է «Երկու են լարք ուռկանին և չորք ծագ լարացն», անդ՝ էջ 338, որից մի քիչ յառաջ «Ծովն աշխարհս է, ուռկանն քարոզութիւն Տեառն, ծագք ուռկանին չորք աւետարանք*»):

ԳԻՒ.—Rivola, *Բառ. Հայոց 1133, էջ 34 և Նորայր, Ֆրանս. բառ.* chas *բառի տակ ունին գտ.* ողց «*ասեղի ծակը*», *որ թերևս կարելի լինի կցել այս բառին*:

ՈՂՈՑ «*ոմանց*» *Հին բռ.=Բառ. երեմ. էջ 251*:

Բառիս համար գրում է ՆՀԲ. «Թերևս առեալ ի գրոց Եւս. քր. (ա. 358 և բ. 35), ուր գնի ողոց, *իբր յն.* ἀσθις, *այսինքն «դարձեալ». գուցէ ընթերցեալ որպէս յն.* ὄλως, *որ է «բոլորովին, ամբողջ»*:

ՈՂՈՑՆ ՏԱԼ «*տագնապիլ, շտապիլ*» *Հին բռ.=Բառ. երեմ. էջ 251*:

ՈՂՈՒՄԱԲԱՅ «*հիւանդի քթի մէջ կաթեցնելու մի տեսակ դեղ*» *Մխ. բժշ. 68*:

Seidel, *Մխ. հեր. § 188 ուղում է հանել պրս.* خمرة xumra «*փոքր ամանն անուշահոտութիւն պահելու համար. 2. անուշահոտութիւն*» *բառից*:

+ՈՂՈՔ, ո *հլ.* «*աղաչանք, պաղատանք, քաղցր և համոզիչ խօսքեր*» *Առակ. ժբ. 23. Ագաթ. Բուզ.* «*աղաչական, աղերսական*» *Առակ. ժե. 1. Ոսկ. ես. որից* յողոք անկանել *Բ. կոր. ժբ. 19. Եզն. Ոսկ. գաղ.* յողոք ածել «*հաւանեցնել*» *Ոսկ. յհ. բ. 1.* ողոքել *ՍԳր. Ոսկ. Եզն.* ողոքանք *ՍԳր.* ողոքումն *Ժող. ժ. 4.* ողոքիչ *Իմ. ժ. 9. Ոսկ. մ. գ. 38.* անողոք *Պիտ. փիլ. ևն*:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* lok²- «*խօսիլ, մանաւանդ լաւ խօսիլ*», *որի այլ ժառանգներն են՝ լտ.* loquor, loqui «*խօսիլ, արտայայտուիլ*», loquax «*շատախօս*», eloquor «*արուեստով ու ճարտարութեամբ խօսիլ*», eloquentia «*ճարտարախօսութիւն*», *իռլ.* -tluchnor *գտնում ենք* ad-tluch- «*շնորհակալութիւն հայտնել*» *և* to-tluch- «*աղաչել, խնդրել*» *բառերի մէջ* (Ernout-Meillet 532, Pokorny 2, 377, Boisacq 559): *Հայերէնի մէջ* ո *հաւելուած է* ղ-*ի պատճառաւ (համմտ.* լեռկ *և* ողորկ) *և* f *համապատասխանում է ճշտիւ լտ.* q-*ին (համմտ.* լքանել=linquo): *Լտ. և կելտական բառերի համեմատութիւնը ցոյց է տալիս որոշ դժուարութիւններ. հայերէնը ձեւով նոյն է գալիս լատինականի և նշանակութեամբ՝ կելտականի հետ*:

ՆՀԲ «ողորմ աղերս, որպէս ողողանօք (ողիկ ողիկ գալով)»: Տէրվ. Altarm *30* ո *յաւելուածով* ողոսք *արմատից, որի հետ համմտ. հսլ.* ласка «*ողոքանք, շողոմանք*», ласкати «*ողոքել, շողոքորթել*», ласкавьць «*շողոքորթ*»: *Նոյն, էջ 72* ղոք *արմատից, որի հետ յիշում է* շողոմ, շողոքորթ, *զնդ.* ram «*հանգչիլ, ուրախանալ*», *սանս.* rāmaḥ «*հաճոյք, ուրախութիւն*» *ևն: Նոյն, Նախալ. 63 արմատական ձևը* ողոք *(որից* բողոքել *և* շողոքորթ) *ծագում է հնխ.* ark *կամ* rak *արմատից. համմտ. սանս.* arč «*մռնչել, գոչել, երգել*», *յն.* λάσκω, ἔλαχον, λέλακα «*հնչել, երգել, խօսիլ*», *լտ.* loqui «*խօսիլ*», *հսլ.* rekti «*խօսիլ*». *Հիւնք. եղեռն բառից*: Pedersen, *Հայ.*

դր. լեզ. 91 կցում է հյ. աղաչել, *լտ.* loquor? *Մառ,* Основн. Табл. *էջ 6 համեմատում է եբր.* הלק xlq «*հարթել, շողոմել*», *արաբ.* خلق axlaq «*հարթ*», حلق ḥalq «*սափրել*», *որոնց արմատն է սեմ.* xlk. *սրա յաբեթականն է* slq. *հմմտ. վրաց.* սլեֆա «*հարթել, կակղել*», ենա-մոսլեֆիլի «*շողոքորթ*». *իսկ հայկականում՝ արմատը դարձել է* ulk', šlk', *որից* ողոքել *և* շողոքորթ: *Ուղիղ մեկնեց նախ* Pedersen, *Հայ. դր. լեզ. 91, բայց վերիվերոյ և առանց բաւարար բացատրութեան, որով մատնուել էր անուշադրութեան:*

+ՈՂՋ, ո *հլ. «առողջ, կենդանի» ՍԳր. Ոսկ. ես. և եփես. «ամբողջ, անթերի, բոլոր, բովանդակ» ՍԳր. Կիւրղ. ծն. Եզն. Ոսկ. ես. «ողջամիտ, ողջախոհ, մաքուր» Փիլ. Վանակ. յոբ. Լմբ. առակ. որից* ողջամբ «*ողջ և առողջ*» *ՍԳր. Փարպ. «ամբողջ» Ճառընտ. Նար. խչ. Օրբել. հրտր. Էմ. էջ 187 (Վճարեաց զամենայն գինն ողջամբ).* ողջանալ *ՍԳր. Ոսկ. մ. գ. 14.* ողջացուցանել «*լաւացնել, բժշկել*» *Տոբ. ժբ. 3. Ովս. զ. 3. Ոսկ. եփես. «ամբողջացնել, լրացնել» Գ. թագ. ժբ. 30.* ողջոյն «*բոլոր, բովանդակ*» *ՍԳր. Եղիշ. «մէկի որպիսութիւնը հարցնելը, բարևում, բարև» ՍԳր. Ագաթ. Եփր. թգ.* նախողջոյն *Մրկ. ժբ. 38. Ղկ. ժա. 43.* առողջ *Ղևտ. ժգ. 10. Եզն. Ոսկ. ես.* ամբողջ *(տե՛ս առանձին),* ողջախոն *Փարպ. ՅՃխ.* բղջախոն *(տե՛ս այս բառը),* աճառողջ, ողջերք *(նոր բառեր) ևն:*

=*Ինքիկ հայ բառ. կազմուած է ջ մասնիկով (հմմտ.* աճուրջ, սառերջ, գաղջ, շուրջ)՝ *պարզական *ող արմատից, որ *ոյղ ձևի միջնորդութեամբ գալիս է հնխ.* olyo- *ձևից. հմմտ. հիռլ.* uile «*բոլոր, ամբողջ*», *կիմր.* holl «*ամբողջ, բոլորովին*», *կորն.* holl «*ամբողջ*», *գոթ.* alla- (<*alna-), *գերմ.* all, *հբգ.* al, *հհիւս.* allr, *անգսք.* eall, *անգլ.* all, *հոլլ.* al «*բոլոր, ամբողջ, ամէն*». *հմմտ. գոթ.* alamans «*բոլոր մարդիկ*»: *Այս երեք ընտանիքից դուրս նոյն արմատը ուրիշ տեղ դոյութիւն չունի* (Kluge 11): Pokorny 1, 80, *գերմանական բառերը դնում է հնխ.* alo-, alno- «*բոլոր*» *բառից, չի յիշում հայ ձևը «Առողջ» և «ամբողջ» գաղափարների յարակցութեան համար հմմտ. թրք.* sağ «*կենդանի, ողջ. 2. գուռ. ամբողջ, բոլոր*», *սասր.* سلامه xəlīmā «*ողջ. 2. ամբողջ*»:—*Հիւբշ.* IF *19, 476:*

Այվազովսքի, Յղ. հնչման 16 յն. ὅλος *Տէրվ.* Altarm. 84 *սանս.* ūrj «*սնունդ, ուժ առնելը, զօրանալը*», ūrja «*ոյժ, կեանք*»: *Մորթման* ZDMG *26, 516 բևեռ.* ulduitni «*ողջ, ողջոյն*»: *Հինք. ջաղջախել բայից: Ուղիղ մեկնութիւնը տուին* Müller, Armen. VI 5 *և* Meillet MSL 8, 237: *Հիւբշ.* Arm. Gram. 481 *այս մեկնութիւնը յիշելով հանդերձ՝ աւելի լաւ է համարում սանս.* sárva, *զնդ.* haurva, *յն.* ὅλος, οὖλος<*ὀλϝο-ς, *լտ.* salvos, sollus, salus «*ողջոյն*», salve «*ո՛ղջ լիր*» *բառերի համեմատութիւնը: Բայց աւելի յետոյ՝* IF *19, 476, հյ. Բրգմ. ՀԱ 1907, 251 ընդունում է վերի մեկնութիւնը:* Karst, *Յուշարձան 422 կազիկում.* çuldu «*ողջ, ամբողջ*»: *Պատահական նմանութիւն ունին մոնգոլ.* اولجاش oljaš «*մոնղոլական ողջոյն, որ կատարում է մէկ ծունկը գետին և մէկ ձեռքը գլխին դնելով և համբուրելով պատուելիք անձի ծունկը*», *չաղաթ.* اولچاش olčaš «*յարգանք*», olčamaq «*յարգել, մոնղոլական ողջոյնով ողջունել*»:

Դիմ.—Պլ. օխջ, *խրբ. կր.* օխշ, *Ալշ.* ոխշ, *Մշ.* ոխջ', *Ասլ.* էօխշ, էօխջ, *Ջղ. Սլմ. Վն.* վոխշ, *Ախց. Երև. Ննխ. Ռ. Սչ. Տփգ.* վօխշ, *Շմ.* վօխճ, *Տփ.* վուխշ *(վերջինս նշանակում է նաև «ամբողջ»), Սեբ.* վէխշ, *իսկ Մրղ. զանազանութիւն դնելով երկու իմաստների մէջ՝* վուէխճ *«առողջ»,* վըխճ *«բոլոր»:—Կրօնական լեզուից փոխառեալ բառ է Կր.* օխճուն, *խրբ.* օխջ'ուն, *Ալշ. Մշ.* օխջ'ում, *Պլ.* օխջում, *Սլմ.* վոխշում, *Ջղ.* վողջ'ում, *Վն.* օխճում, *Շմ.* վօխճում, *Ննխ.* վօխշում, *Տփ.* վուխշում, *Բրբախոս հայերից՝ էնկ.* օխջօմ *(Բիւր. 1898, 866) ևն:—Նոր բառեր են* ողջմտութիւն, ողջամիտ, ողջախոհ, ողջունել, ողջունաւոր, ողջունեղբայր:

ՓՈԽ.—Նոր կտակարանի քրդ. թարգմանութեան մէջ է մտած ողջակէզ. ինչ. ժը հէմի ողջակէզան ու ժը կըրպանան բէթըր ա (Առաւել է քան զամենայն ողջակէզս և զզոհս). Մարկ. ժբ. 33։ Վրաց. ოხრუმობა «եղբայրանալ, ողջումախպէր դառնալ» (հյ. ողջոյն գւռ. օխչում բառից). ունի Գրիշաշվիլի, Զվելի քալաքիս բոհեմա, էջ 246 (հաղորդեց Գ. Ասատուր)։

ՈՂՋԱԳԻՐ *«յաղթահարեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 251։*

ՈՃ, ո հլ. *«ծղօտ, ցողուն». ՍԳր. «ծղօտներից հիւսուած կողով, կիպոց» Երեմ. ղ. 9. «արտավար, մէկ օրավար» Միխ. ասոր. էջ 81. «կարգաւորեալ դասաւորութիւն, կարգկանոն» Ոսկ. հս. «գրութեան ձև, շարադասութիւն, խօսքի կարգը» Ագաթ. խոր. «կրօնական կարգ, վարդապետութիւն, դաւանութիւն» եւս. քր. Ոսկ. եբր. «ընթացք կենաց, կեանք, վարք» Ոսկ. մ. ա. 15, 16. որից* **ոճով** *«կարգով, շարքով, հերթով» Ոսկ. հս. 51 (Որպէս և հրգնէ զի ոճով ուտիցէ զամենայն).* **աոճ** *«անկապ-անկանոն» խոր. Մագ.* **ոճաբանութիւն, ոճաւոր** *(նոր բառեր)։*

ՆՀԲ **աճել** *բայի՞ց։* Muller, Armen. VI *սանս. գնդ.* vača- *«ոճ բանի»։ Հիւնք. արաբ.* huqqa *«թանաքաման» բառից է հանում։* Patrubány *ՀԱ 1908, 85 հնխ.* *podyo>ոտն *բառից։*

ՈՃԻՐ *«մեծ չարագործութիւն, եղեռն» Ոսկ. բ. տիմ. և մ. բ. 23. Ագաթ. «չար, եղեռնական» վրք. հց. գրուած է նաև* **օճիր, ոճիո, օճիո**: *(Փոխանակ ասելու* **ոճրագործ**՝ *գրուած է* **օճիրագործ** *Մագ. թղ. 178). ներկայ գրականում ընդունուած է միայն* **ոճիր**. *որից* **ոճրագործութիւն** *Անան. եկեղ. Կանոն. Սարգ.* **ոճրապարարտ** *(նոր բառ)։*

ՆՀԲ լծ. արաբ. էօզիւր *«յանցանք»։ Տէրվ.* Altarm. *47 ուղիղը համարում է* **աւճիր**, *իբր սանս.* avačar-ana *«վարմունք, գործածութիւն»։ Մառ* ЗВО *5, 317 գնդ.* aûra *«չար»։ Հիւնք.* **օճառ** *բառից։*

Ոճոռք *տե՛ս Աճառ։*

***ՈՄԲՈԼՈՆ** *«կամարի տակ մութ և փոքր խորան» Լմբ. մատ. 227, 524։*

=Յն. ἔμβολον «ճարտասաններուն բեմ, սիւներուն շարք ևն»։—Հիւբշ. 518?

ՀՀԲ համառօտուած յն. պերիմբոլոն *«շանկապատ» բառից։ ՆՀԲ վերի ձևով։*

+ՈՄՆ *«մէկը, մի մարդ». հոլովւում է* **ուրումն** *կամ* **որումն, ումեմն** *կամ* **ուրեմն, ոմամբ, ոմանի, ոմանց, ոմամբք.** *(կայ նաև եզ. սեռ. ոման Պղատ. տիմ.), որից* **ոմն ոք, մի ոմն, նաև հոլովեալ ձևերով՝ ո՞յք ոմանի, ո՞յց ոմանց** *(իբր յոգնակի ձև* **ո՞ոք** *բառից)։*

=Բնիկ հայ բառ. կազմուած է **-մն** *ածանցիչով ո անորոշ դերանունից. համմտ.* իմն *(որ է ի-մն). աւելի ընդարձակ տե՛ս ո.* Meillet REA 5 (1925), *էջ 2 դնում է հնխ.* som-n *ձևից, որի ժառանգները տե՛ս* մի<sem *բառի տակ։ Ոմն կազմուած է ո-ի բառի օրինակով՝ իբր թե* **-մն** *մասնիկ լինէր, բայց* **ոման-ի, ոման-ց** *մատնում են հին ձևը։ Սրա օրինակով էլ կազմուած են* **երեմն, ուրեմն, իմն**։—*Հիւբշ. 481։*

Windisch. 38 ո *յարաբերականից* **+մն** *=մի, մէկ, մէն թուականից։* Karolides, Γλ. συγκρ. *67 կապադովկ.* ἀΐμισε *«ոմանք», յուն.* ἀμόθεν *«ուստեքէ»,* ἀμῶς *«մի կերպով» և հյ. միա։ Հիւնք. և յօդով մի բառից։* Meillet *ՀԱ 1897, 316 և* MSI. *10, 267* **ոման-ի, ոման-ց** *հոլովաձևերից հետևցնում է թէ բառը կազմուած չէ* **ո+մն**, *այլ արմատն է* **ոման**, *որի հետ համմտ. գոթ.* sums *«ոմն» կամ նաև գոթ.* sama *«ինքն», յն.* ἀμο- *ևն. նշանակութեան կողմից գոթ.* sums *ճիշտ համաձայն է մեր բառին. ինչ.* wasuh ƀan sums siuks Lazarus=*էր ոմն հիւանդ Ղազարոս (ՅՀ. ժա. 1)։ Այս մեկնութիւնը առանց պատճառաբանութեան մերժում է Բազմ. 1897, 591։* Zanolli, *Յուշարձան 276* **-մն** *մասը մեկնում է հնխ.* -mo-+-no- *մասնիկներից. ինչ. յն.* μέν։

ԳԻՒՐ.—Ջղ. մի վոմն։

Ոմոփորոն *տե՛ս Եմիփորոն։*

Ոյգ *տե՛ս Յոյգ։*

***ՈՅԺ**, ո հլ. *(յետնաբար ի հլ.) «զօրութիւն, կարողութիւն, ուժ» ՍԳր. Ագաթ. Եփր. ծն. («Ճշդագոյն մատենագրական ոճոյն մէջ զօ-*

ռութիւն նոյնանշանին հետ համեմատելով՝ հազիւ գուցէ հարիւրին մէկ գործածութիւն ունի, և քիչ տեղ առանց անոր կը բանի՝ կամ թէ նոյնը չկրկնելու կը ծառայէ»։ Այտնեան, Քնն. քեր. էջ 66). ոամկաձև գրուած է ուժ, որ արդի գրականի մէջ նախորդից աւելի գործածական ձև դարձաւ։ Որից յուժոյ «զօրեղ կերպով» Ոսկ. ես. ի յուժ ձգել «նեղը գցել, նեղել» Յիշատ. 1531 թ. (Դիւան ժ, էջ 24), ուժգին ՍԳր. Ես. պտմ. Ոսկ. Փարպ. ուժգնագոյն Ոսկ. յհ. բ. 22. Ես. քր. ուժեղ Փարպ. ուժել «տոկալ, դիմանալ» Եփր. ևն. 92. «զօրել» Պտրգ. 227. Լմբ. ներբ. Հոգեգլ. 298. Տեսիլ դան. 123, 124. Անկ. գիրք Հին կտ. 242—3. վաստուժ Մխ. գտ. Ծայսմ. վաստուժել Կեղծ-Շապհ. 30. ուժնդի «ուժգին» ՅՀ. իմ. միաշ. էջ 101. հաստոյժ Ոսկ. մ. բ. 24. շատոյժ Ոսկիփ. հուժկու (գրուած նաև հաւժկու, հօժկու, հժկուն) «շատ ուժեղ» Կիւրղ. ծն. Սեբեր. Բուզ. (հուժգոյ ձևով՝ Սամ. աննց. 46). (մասնիկի համար հմմտ. յաղթկու Նեմես. բն. էջ 37, 91, 98, 136, Փիլ. 135). ուժանակ «դինամիտ», անուժութիւն, ուժասպառ (նոր բառեր). այստեղ են պատկանում նաև յոյժ և ժոյժ, որոնց վրայ տե՛ս առանձին։

=ՊՀլ. պազ. ꣡ōž, ōǰ «ոյժ, զօրութիւն» բառից, որ է զնդ. aoja-, սանս. ओजस् ōjas- «ոյժ». սրանք ծագում են հնխ. aug-, aug-, ug- արմատից, որի միւս ժառանգներն են յն. αὔξω, լտ. augeo, գոթ. aukan, հբգ. ouhhōn, հհիւս. auka, անգսք. eacian, լիթ. áugu, լեթթ. aûgu, որոնք ընդհանրապէս նշանակում են «աճիլ, բազմանալ»։ Հայերէնը փոխառեալ է իրաննեանից. փոխառեալ երկրորդ ձևն է *ոյգ<զնդ. aoga-, որ գտնում ենք առ-ոյգ բառի մէջ։ Բնիկ հայ ձևն է աճ-իլ (տե՛ս այս երկուսը առանձին.— Pokorny 1, 23, Walde 73, Boisacq 101, Trautmann 17)։—Հիւբշ. 215։

ՆՀՔ «լծ. առոյգ, իշխ-, յն. իսխի՛ս և լտ. վիս, վի՛կօս ևն, թրք. կիւճ, խրզ, նրզ, ներս. օզ ևն». իսկ միազօր բառի տակ լծ. յն. ուսի՛ա։ Առաջին անգամ Windisch. 25 համեմատում է սանս. ձևի հետ, որից յետոյ Böttich. ZDMG 1850, 359, Lag. Urgesch. 355, Müller SWAW 42, 256 և 44, 567, Justi, Zendsp. 10 աւելացնում են միւս իրանեան ձևերը։ Riggs, Քերակ. (1856), էջ 60 ներբ. oz։ Մորթման ZDMG 26, 537 բևեռ. uzuni «ոյժ»։ Հիւբշ. Arm. Stud. § 228 փոխառեալ ընդունելու կասկածում է. սակայն ասում է թէ բնիկ լինելու պարագային սպասելի էր *ոյկ կամ *ոյճ։ Տէրվ. Նախալ. 105 և 204 ծան. հնխ. *vag «աճիլ» արմատի տակ է դնում՝ սանս. vaǰ, ukš, զնդ. vaǰ, vaxš, յն. ὑγιεις «առողջ», αὔξω «աճիլ», լտ. vigere, հյ. օգնել, զօրաւիգն, օճառ ևն ձևերի հետ։ Հինք. յն. ὑσ «ոյժ, կորով»։ Սանտալճեան, L'idiome 10 խալդ. usgini։ Գ. Փաստակ, Անահիտ 1904, 26 հուժկու Բուզ. Գ. ժա. և Դ. ժե. գտնելով «հասուն այր» իմաստով՝ հանում է բարել. us «առնանդամ» բառից։ Patrubány ՀԱ 1908, 152 իբր բնիկ հայ կցում է հյ. ուզել, յն. εὔχομα, ևն բառերին։ Քիւրքէեան, Բզմ. 1910, 153 ոգ արմատից, որից նաև ոգի, հոգ, ոգորել ևն։ Պատահական նմանութիւն ունին սեմական լեզուներից՝ ներբ. עֹז ʿōz «ուժ», ասոր. ʿaz, حز ʿūzā «ոյժ», ինչպէս նաև արաբ. عزّ ʿazz «ուժեղ» ևն։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. Տփ. ուժ, Ասլ. իւժ, Գոր. Ղրբ. օժ, Մրղ. վըժ, Մկ. ոժ, Սլմ. Վն. վոժ (վերջին հրկուսը ևնթադրում են *ոժ ձևը և ո՛չ ուժ<ոյժ, ինչպէս ունին միւսները)։—Կրնակ ժ ունի Ջղ ուժժի «բրտնի»։—Նոր բառեր են ուժել, ուժով, ուժովնալ, ուժաուն, ուժաճառ, ուժառնվար, ուժառ, ուժօք։

+ՈՅՄ «պաղ, ցուրտ, զով, հով» Ոսկ. մ. ա. էջ 12. Ճառընտ. Հին բռ. «զատ, հեռու, մէջերը սառնութիւն մտած» Եփր. ել. էջ 163. որից ուժանալ «սառելով բաժանուիլ մէկից, անսիրելութեամբ իրարից հեռանալ», Յոր. լթ. 16. ուժացուցանել «սիրտը սառցնել» Եղիշ. դ. էջ 72. Ճառընտ. ուժակեր «չոր՝ սառն բաներ ուտող, տաք կերակուր չուտող» Մանդ. էջ 129. ուժութիւն (չունի ՆՀԲ) «սիրտը սառչիլը, չսիրելը» Ոսկ. փիլիպ. 360։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* oug'- *արմատից. սրա հետ համմտ. լիթ.* áusz-tu, áusz-au, áusz-ti *«ցրտիլ, սառչիլ», լեթթ.* auksts *«սառն, հով, ցուրտ»,* aukstums *«ցրտութիւն», հիւլ.* ōcht, ūacht *«ցրտութիւն», միւլ.* ūar, *կիմր.* oer, *կորն.* oir *«ցուրտ, սառն», նիւլ. գաէլ.* fu-achd *«ցրտութիւն», լտ.* autumnus>auctumnus *«աշուն» (այն է «ցուրտ եղանակ»). այս բոլորը երևան են հանում հնխ.* eug'-, oug'-, aug'- *արմատները, որոնց պարզականն է* uē, auē *«փչիլ»* (Walde 867, Pokorny 1, 222)։ *Բառիս մասին* Meillet, Dict. étym. It. *1080 տալիս է ուրիշ մեկնութիւն։ Դարձեալ դրւում է հնխ.* e/oug'- *արմատից, բայց ցեղակից դնելով յն.* ὑγρός *«խոնաւ, թաց»,* ὑγρότης *«խոնաւութիւն, կակղութիւն», լտ.* ūvídus (udus) *«խոնաւ»,* ūvor *«խոնաւութիւն»,* ūvescō *«թևթևակի խոնաւանալ»,* ūvens *«թևթևակի խոնաւացած»,* ūmeo *«խոնաւանալ»,* ūmor *«թացութիւն, հեղուկ», հհիւս.* vǫkr *«խոնաւ»,* vǫkua *«խոնաւութիւն», իռլ.* lūal *(հնխ.* wogw -lo-) *«մէգ», հոլլ.* wak *«խոնաւ, թաց»* (Boisacq 997, Ernout-Meillet 1080, Walde 864, Pokorny 1, 248)։ *Բայց «թաց» նշանակութիւնը բոլորովին նոյն չէ «ցուրտ» դաղափարի հետ. բացի սրանից* Pokorny *արմատը դնում է* weg-², ug²-, *և ոչ թէ* ug'-։

Böttich. Arica 28, 86 *պրս.* yax *«սառոյց», օսս.* ix *«կարկուտ»,* yexan *«մրսիլ», զնդ.* aoxtəm *բառերի հետ։ Հիւնք. 68 բուծանել բայից։* Patrubány *ՀՄ 1906, էջ 344 լտ.* pungere *«խայթել» բառի հետ. համմտ. լիթ.* gélti *«խայթել», որից* gélmenis *«ցուրտ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. 21, *որ ընդունում է նաև* Pedersen, Kelt. Gram. *1, 103։ Թիրևաքեան, Բզմ. 1913, 342 թրք.* uz-aq *«հեռու» բառից։*

Ոյն *տե՛ս Ունիլ։*

ՈՇԱՆԱԼ *«սրանալ». ունի միայն Բռ. երեմ. էջ 252։*

Ոշոգի *տե՛ս Աշոգի։*

+**ՈՉ** *«չէ, չ, մի՛» ՍԳր. Եւս. պատմ. Եւագր. Կոչ. (հոլովուած ձևով կայ՝ գրծ. ոչովն Եփր. տիտ. 262). փոխանակուած է յետոյ չէ բառով (տե՛ս այդ՛ բառի տակ). զանազան գարձուածներով ունինք ո՛չ ապաքէն, ո՛չ եթէ, ո՛չ երբեք, ո՛չ ևս, ո՛չ բնաւ, ո՛չ ոք, ո՛չ ուստեք, ո՛չ ուրեք, ո՛չ ինչ, ինչ ոչ, իբր ոչ եթէ ևն.—այս արմատից են ոչինչ, ՍԳր. Ագաթ. ոչնչութիւն Խոսր. Նար. երգ. ոչնչանալ Արշ. ոչեղութիւն Մագ. ոչէ «անգոյ մի բան» Նար. Դիոն. համառօտուած ձևով չ՝ որ իբր բացասական մասնիկ է գործածւում. ինչ. չախորժական եզն. չազնուութիւն Ոսկ. մ. ա. 21. չաւագին Ոսկ. մ. ա. 20. չանձնաւոր եզն. չանսական Սեբեր. չաստուած ՍԳր. եզն. Սեբեր. չև, չև ևս ՍԳր. Ագաթ. չէ «անգոյ բան» Սեբեր. եզն. Ոսկ. չէական եզն. չժողովուրդ Ա. պետ. բ. 10 չինչ «տկար, ոչինչ» Կոչ. չիմ Ոսկ. Եւս. քր. Եփր. Բ. կոր. Կոչ. ի չմեղս Ոսկ. մ. բ. 2. չոտի եզն. կոչ. Բուզ. չոտիլ Ագաթ. չաւոր Ա. կոր. ժա. 22. Բուզ. Ագաթ. չաւորիլ «պատասխան տալու անկարող լինել» Ոսկ. Լեւնս. 872. չանալ Եփր. թգ. Կոչ. չնաշխարհիկ Ոսկ. չնչիկ եզն. չնչին ՍԳր. Կոչ. եզն. (ամբողջական ձևով՝ ոչնչին Վկ. արև. 170). չնչինագոյն Ոսկ. հբր. ևն.—նոր բառեր են ոչնչական, ոչնչացում, չմեղանիմ, չմեղութիւն ևն։*

=*Բնիկ հայ բառ. կազմուած է ո+չ. վերջինը անորոշի նշանն է, որ դնում ենք նաև ինչ բառի ծայրին. իսկ ո բուն բացասականն է, որ պէտք է կցել հսլ.* otŭ, *սանս.* áti *«հակառակ» բառերին. սրանց իբրև բացասական գործածութեան համար էլ համմտ. սանս.* áti vratám *«ընդդէմ օրինի», հսլ.* ot-rokŭ=*ռուս.* отрокъ *«մանուկ» (իբրև լտ.* in-fans *«անխօս=մանուկ»)։ Ըստ այսմ ոչ նշանակում է բուն «ո՛չ մի», իսկ ոչխալ չ ձևի մէջ մնացել է միայն «մի, մէկ» գաղափարը։*

ՆՀԲ լծ. թրք. yoq, *յն.* οὐκ, οὐχί *«ոչ»։ Յոյն բառի հետ են համեմատում նաև* Windisch. 9, Lag. Urgesch. 197, *Պատկ.* Изслъд. *18 ևն։ Տէրվ.* Altarm. 3 *և Նախալ. 119 կցում է* ka *յարաբերականի հետ. համմտ. սանս. զնդ.* ka, čа, *յն.* πο, τε, *լտ.* qui, que, *գոթ.* hvas, h, *հյ.* ում, ոմն, ոմանք *ևն։ Հիւնք. ոճ բառից։ Յն.* οὐκ *ձևի հետ վերջին անգամ* Bugge KZ 32, 31, *որ մերժում է Հիւրշ. 481 (նրա հետ*

և Boisacq 725), *որովհետև հայը ո՛չ թէ ծագում է *աւչ նախաձևից, այլ ենթադրում է հնխ.* ok²i: Patrubány SA *1, 212* ո *«ով»+հնխ.* k²e: *Նոյն ՀԱ 1907, 90 լս.* ex, *յն.* ἐξ *«-ից» ձևերի հետ:* Pedersen KZ *36 (1900), 341 և 321—22 կցում է յն.* οὐκ *և ալբան.* s, as *«ոչ» բառերին:* Scheftelowitz BB *28 (1904), 306 լս.* secus *«թէ ոչ», յն.* ἧσσων *«նւաստագոյն» բառերի հետ:* Karst, *Յուշարձան 424 ԹՊր.* yok *«չէ»,* žoki *«ստախօս»,* čogul *«սուտ գանգատ»,* čikai *«կարօտ» (=հյ.* չկայ, չիմ): Güntert IF *40, 186 մերժում է* ոչ=*յն.* οὐκ *համեմատութիւնը:* Oštir, Btrg. alarod. *123 և 129 բասկ.* ez *«ոչ», չիչէն.* -ač, *հ. ալբան.* as *«ոչ»:* Pedersen *ՀԱ 1929, 185 վերադառնում է ալբան.* s *«ոչ» համեմատութեան վերի մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *23, 224:*

Գիմ.—Առհասարակ փոխանակուած է չէ ձևով. այսպէս՝ Ագլ. Ալշ. Ախց. Դոր. Երև. Զթ. Խրբ. Կր. Հճ. Համշ. Ղրբ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սլմ. Սչ. Սվեդ. Տիգ. Տփ. չէ. *Նոյնը ձևափոխուած՝ Զղ.* չն, *Ասլ.* չէ՝, *Խրբ.* չո, *Վն.* չի.— *բուն ոչ ձևը պահում են՝ Զթ.* օչ *«ոչ», Տփ.* օչ օվ *«ոչ ոք», վուչ մէ «ո՛չ մի», վուճչիչ, վուճչինչ «ոչինչ», վո՛ւճց մէկը «ո՛չ մէկը», Երև.* վօչ, վօճչ, *Ռ.* վօչ, *Ագլ.* ուչ, ուճչ, *Համշ. Ակն.* ուչ, *Մշ.* վուչ, *Ղրբ. Սեբ.* վէչ, *Սչ.* վօչինչ *(իբր ածական գործածեալ), Զղ.* վոչինչ, մոճչիչ, *Մշ.* մըչ *(պահուած միայն «Բաց ասիմ, մըչ ամաչիմ» առածի մէջ (ըստ Բենսէի), Թրքահօս հայերից՝ էնկ.* օչինչ *«ոչինչ» (օր.* օչինչ օլդու *«ոչինչ եղաւ, փճացաւ». Բիւր. 1898, 866), Ատն.* օչինչ զօրինչ օլմամ *«ոչինչ դառնալ, կորչիլ, փճանալ» (Արևելք 1888 նոյ. 9); նոր բառերից յիշելու արժանի են* ոչուփուճ, չնհաւան *«ոչ մէկ բանի չհաւանող»,* չնչաւատ *«անպիտան, անհաւատ»,* չնչոտ *«ոչինչ, անպիտան»:*

*Փոխ.—*Karolides, Γλ. συγκρ. *88 և 175 հյ.* չէ *բառին է կցում կապադովկ.* čo, ké *«ոչ» (բայց սրանց է միացնում նաև լատ.* que, *սանս.* ča, *յն.* κε *«և» ձևերը, որոնց իմաստը բոլորովին ուրիշ է):*

*ՈՉԽԱՐ, ի–ա *հլ. «ոչխար» ՍԳր. «ԴՉ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 528). որից* ոչխարակ *Ա. Թագ. ժե. 28.* ոչխարավաճառ *Ոսկ. երր.* ոչխարիկ *Ոսկ. մ. բ. 26.* ոչխարութիւն *Զքր. ծորժ.* ոչխարենի *վրք. հց.* ոչխարազեն *«մահմետականների ոչխար զոհելու տօնը, զուրպան պայրամը» Յայսմ. յնվ. 30.* ոչխարաբուծութիւն, ոչխարապահ, ոչխարային *(նոր բառեր) են:*

=Փոխառեալ է հարաւային կովկասեան մի լեզուից. համմտ. լազ. ჩხური *չխուրի,* მჩხური *մչխուրի, մինգ.* შხურიշխուրի, *վրաց.* ცხოვარი *ցխովարի,* ცხუარი *ցխուարի, աշխ. վրաց.* მცხვარი *մցխվարի, ինգիլ.* ցխor *«ոչխար»: կարելի չէ ասել թէ այս ձևերը փոխառեալ են հայերէնից, որովհետև, մինչդեռ* ոչխար *հայերէնում չունի ստուգաբանութիւն, կովկասեան բառը ծագում է* ցխով *«կեալ, ապրիլ» արմատից և բուն նշանակում է «կենդանի, ապրող». համմտ. վրաց.* ცხოველი *ցխովելի «շնչաւոր, անասուն»,* ცხოვრება *ցխովրեբա «կեանք, կենսագրութիւն, պատմութիւն»,* საცხოვარი *սացխովարի,* საცხოვრებელი *սացխովրեբելի «կենսական, ուտելիք, սնունդ, բնակութիւն, բնակարան»,* საცხურე *սացխուրե «ոչխարային, փարախ»,* სამაცხოვარებო *սամացխովարեբո «փրկարար»,* მეცხვარე *մեցխվարե «ոչխարների հովիւ»: Հայերէն բառի չ ձայնին համապատասխան է գալիս լազ. չ, որ վրաց. ց-ի սովորական ձևն է. համմտ. վրաց.* ცა *ցա=լազ. ჩა չա «երկինք», վրաց.* ცხრა *ցխրա=լազ.* ჩხორო *չխո՛րո «ինը», վրաց.* ცრემლი *ցրեմլի=լազ.* ჩერამული *չերամուլե «արցունք»:—Աճ.*

Klaproth, Asia pol. *1823, 104 վոդուլ.* oš, *Բրք.* koč, kočkar *ձևերի հետ: ՆՀՔ «որպէս ոչ խարիսխ մալեալ կամ որոճոզ զխար. վրաց.* ცხოვარი»: *Մորթման* ZDMG *26, 563 բևռ.* huzi *ձևին է կցում հյ.* խոյ, ու–խար, *Բրք.* quzu qoč: *Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 97 կցում է չաղաթ.* qočqar, qočqor *«վայրի խոյ» ձևերին և համարում է ակկադեան փոխառութիւն: Հինք. պրս.* աչ խor *«կերակուր ուտելի»: Վերի մեկնութիւնը*

տուաւ Աճառ. SA 1, 303, որ ընդունում է Meillet BSL հա. 23, էջ 133։ Patrubány SA 1, 310 թրք. չաղաթ. kočkar: Pedersen տե՛ս խոյ բառի տակ։ Մառ, Христ. Вост. 2 (1913), 30 խալդ. suse «ոչխար» և վերի կովկասեան ձևերը։ Պատահական նմանութիւն ունի ասուր. zikaru «ոչխար»։

ԳԻՒ.—Ախց. Բլ. Համշ. Ննխ. Մչ. օշխար, Կր. օշխար, օխշար, Մշ. օշխար, օխշար, օխճար, Բլ. Խրբ. Հւր. Շմ. Տփ. օխշար, Ալշ. օճխար, օխճար, Մժ. օխճար, Պրտ. Ռ. Սեբ. օշխար, Ասլ. Էօշխար, Ագլ. Է՛խշար, Վն. վոշխար, Սլմ. վոխշար, Երև. վօխշար, Մկ. ոխշար, Ջղ. վոխջ՛ար, Մրղ. վուէխշար, Գոր. Ղրբ. վրխճար, վրէ՛խճար: Նոր բառեր են ոչխարախոտ, ոչխարած, ոչխարաճամար, ոչխարաչէ, ոչխարապան, ոչխարատեղ, ոչխարծաղիկ, ոչխարատէր:

ՓՈԽ.—Հայերէնից կրկին յետ է փոխառնւել վրաց. ოხრაზი ոչխարի կամ ოხრაზობა ոչխարոպա «փոքրիկ խնջոյք, որտեղ մի աղքատ մարդ մի ոչխար է մորթում և հարուստներին բաժանելով, փոխարէնն պարգևներ է ստանում, իր վիճակը բարելաւելու համար»։ —Pedersen հայերէնից է համարում չաղաթայ. kočkar, արև. թրք. قوچقار qočqār, որոնց վրայ ընդարձակ տե՛ս խոյ:

Ոպել տե՛ս Սոպել։

***ՈՊՂԻՏ** «զէնքով ըմբշամարտութիւն» Եւս. քր. ա. 291. ուրիշ օրինակ չկայ։

=ՅՆ. ὁπλίτης «սպառազէն. 2. զինեալ ըմբշամարտութիւն»։

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

***ՈՊՂԱՆ** «զէնք». մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. հկճռ. բ. էջ 8. «Սպառազինեալ հոգևոր զինուն՝ յանդուգն յարձակմամբ և յախուռն համարձակութեամբ՝ առնում ոպղոն և դիողոն, և իջանեմ ի Թալպիովթ, մենամարտեալ ընդ առաւերազէն ճակատու հերձուածողացն»։ Ըստ ՆՀԲ «զէնքով ըմբշամարտութիւն», Հին բռ. մեկնում է «ոպղոն, սպանող, կամ ոսոխ լինել զինու մրցութեան», Բառ. երեմ. էջ 78 դիղոն և ապղովն «սպանօղ լինիլ կամ ոսոխ զինու փորձութեամբ»։ Նոյն բառն է նաև ճիպղոն «ըմբշամարտութիւն», Եւս. քր. 292 (ի դիւղոնին և ի հիպղոնի, որ է ոսոխ ելանել զինակրին մրցութեան).—պէտք է ուղղել ճոպղոն:

=ՅՆ. ὅπλον «զէնք, զինուած ըմբշամարտութիւն». սրա հին հնչման տառադարձութիւնն է ճոպղոն, նոր հնչմանը՝ ոպղոն:

Ուղիղ մեկնից ՆՀԲ՝ միացնելով նախորդին։

Ոպճիազ տե՛ս Երենոս։

ՈՊՈՒՄՓԻՏ (այլ ձեւ. բոգումփիտ, բրգումփիր) «մի տեսակ խունկ» Խոր. աշխ. էջ 602։

Պատկ. Խոր. աշխ. 1877, 32 սրբագրում է բառս սպոգումփիտ և մեկնում իբր արաբ. صبر ṣabr «հալուէ»+بنبيذ qunbīṭ «brassica oleracaca» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 508 կարդում է qunnabīṭ և հասկանում «ծաղկակաղամբ»)։

***ՈՊՍԻՏԱՐ** «թագաւորի ձեռքին ջուր լցնող ծառան». գրուած է նաև ոսպիտար, ոսպիկար, տփսիտար. մէկ անգամ ունի Մխ. դտ. հրտր. Բաստամեան, էջ 268։

=Բիւզ. յն. անծանօթ մի ձևից, որ տառադարձուած պիտի լինի լտ. hospitarius «հիւրընկալ» ձևից։

Բաստամեան (անդ) դնում է լտ. obsecundator «պալատական ծառայ» բառից, որ սակայն ձևով յարմար չէ։ Վերի լտ. ձևի հետ ուղիղ համեմատեց Karst, Դասան. II 80, որ անշուշտ պէտք է դնել յունարէնի միջոցով, թէև Sophocles 820 չունի նման մի բառ։

ՈՋԻ, ո, ի–ա հլ. (երկուսն էլ յետնաբար) «մարդու, անասունի կամ բոյսի ոջիլ» Նոնն. Պետտա. Վրք. Հց. բ. 627. Վտկ. որից ոջլակեր Ոսկ. մ. բ. 22. Խոր. աշխ. գրուած է նաև ոռջիլ Փիլ. նխ. բ. 114. Նոնն. 39. Մխ. ապատ. որից ոռջլալից Ոսկ. մ. ա. 14։ Նոր գրականում ընդունուած ձևն է ոջիլ, որից ոջլոտ, ոջլոտիլ, փայտոջիլ. բայց հնագոյն ձևն է ոռջիլ, որից ռ-ի անկումով ձևացել է ոջիլ:

ՆՀԲ «ճճի ոռջացեալ ի մարմնի»։ Bugge, Btrg. 17 և յետոյ Bartholomae, Stud. 2, 24 կցում են սանս. liksā «ոջլի անիծ», պրս. rišk, աֆղան. riča, օսս.

lisk «անիծ», լտ. ricinus «կովի ոջիլ», լիթ. erke «փայտի որդ, ոչխարի ոջիլ», լեթթ. erze «ցեց», ալբան. erg´ís, erzi «անիծ» բառերի հետ, հյ. ո– և –իլ մասնիկ համարելով։ Այս բառերի նախաձևը դրւում է հնխ. erek´-, ereik´-, որ համաձայն չէ մեր բառին. ըստ այսմ Հիւբշ. 482 անստույգ է համարում։ Bugge-ի մեկնութիւնը կրկնում են Walde 652. Pokorny 1, 145 և 2, 344։ Մառ, Яз. и. Лит. I, 272 վրաց. տիլ։

ԳԻՒ.—Սչ. օչ'իլ, Ախց. Ակն. Խրբ. Կր. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Տիգ. Տփ. օշիլ, Ալշ. Մշ. օճիլ, Մկ. ոճիլ, Աալ. էօշիլ, Ջղ. Սլմ. Վն. վոճիլ, Գոր. Երև. վո՛շիլ, Մրզ. վը՛ճիլ, Սեբ. ֆօշիլ, Ագլ. է՛ջիլ, Ղրբ. վի՛շիլ, Շմ. ճէօշիլ, Հճ. իչ'չ'իլ, Սվէդ. իչ'էլ, Զթ. իճէլ, իչ'էլ (սեռ. ուճլա, ուչ'լա). Բրքախօս հայերից՝ Ատն. օշիլ (Արեւելք 1888, նոյ. 9)։ Նոր բառեր են ոջլակալել, ոջլխոց։

Ոջիճ տե՛ս Ջինւ։

+ՈՒ «յետոյք, նստոյ տեղի (մարդու կամ անասունի), տակ, յատակ (իրերի)» Վստկ. էջ 52, Վրք. Հց. (իրեղէնների համար աւելի սովորական է ոռ Վստկ. 134. Վրք. Հց. ա. 619). որից բդռռ «մի տեսակ թռչուն» (իբր յետոյքը բրդոտ. համմտ. նոյնի յն. հոմանիշը՝ πυγάργος, որ բուն նշանակում է «յետոյքը սպիտակ») Վանակ. Հց. ոռճան «սրբանի այտոյց, condylome», գիտէ միայն Քաջունի, Գ. 190։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. orsos ձևից. համմտ. յն. ὄρρος «ողնաշարի ծայրը, անասնոց գաւակ», կամիս. arraš, հրգ. ars, գերմ. arsch, անգսք. ears, անգլ. arse և հոլլ. aars, naars «յետոյք», հիսլ. ars, rass «սրբան», հիսլ. err «պոչ, վերջ, ծայր» (վերջինը հնխ. ersos ձևից.—Boisacq 717, Pokorny 1, 138, Kluge 24).—Հիւբշ. 482։

Նախ նշՒ համեմատից յն. ձևի հետ։ վերի մեկնութիւնը տուաւ Bugge, Btrg. 23 և IF 1, 446։ Jensen ՀԱ 1904, 184 հաթ. r «յետոյք»։ Karst, Յուշարձ. 408 սումեր. ur «յատակ, հիմք, պատ», 416 մոնղոլ. բուրեաթ. aru, aro, թունգուզ. ura, թրք. arqa, ալթայ. ari, ճապոն. ura «յետևը»։ Պատահական նմանութիւն ունին թուշ. 'ur, յգ. 'uriś «յետոյք» (որ ըստ Bugge, Btrg. էջ 23 հայերէնից է փոխառեալ) և ճապոն. 尻 ura «յետեւը, տակը»։

ԳԻՒ.—Խրբ. Համշ. օռ, Մկ. ոռ (Մոկաց Հասկնչաւս գիւղում յէռ՝ որ յիշեցնում է հնխ. ersos ձայնդարձը), Ախց. Կր. օռ, վօռ, Ալշ. Մշ. ֆոռ, Ջղ. Սլմ. Վն. վոռ, Գոր. Երև. Ննխ. Շմ. Պլ. Ռ. վօռ, Զթ. էօռ (սեռ. ուռա), Աալ. վէ՛օռ, Հճ. վոր, Մրզ. վուէռ, Ղրբ. վրէռ, վրռ, Սեբ. վէռ, Սվէդ. վրոռ, Տփ. վուր, Տիգ. վրռ, Ագլ. վառ. հետաքրքրական ձև է Սվ. որդ (կարդա վօրդ?)։ «Ծայր, տակ, վերջ» նշանակութեամբ գործածւում է ոռ, որից Տփ. վուրֆ, Սվէդ. վրրֆ (օր. Անտարի վուրֆումը «անտառի ծայրը»)։ Նոր բառեր են ոռագօտի, ոռազատիկ, ոռակալ, ոռաճնի, ոռաշուռռու, ոռաոռ, ոռասաճղի, ոռասոռ, ոռատռու, ոռաֆեծ, ոռգոգոշ, ոռղիֆ, ոռեֆաշ, ոռիկ, ոռծախ, ոռծեծ, ոռձիգ, ոռովաճալ, ոռուիլ, ոռուրբիշ, ոռուիտիկ, ոռռոզ, աճռոի, աճռոֆ, աճռոագլուխ, կայծռոիկ։

ՈՒԵԿԱՆ «ուրուրի նման գիշատիչ մի թռչուն» Պիռռռ.։

ՈՒՆ «կամարի կամ գմբեթի մէջտեղը հաստատուած քարը՝ որ ամբողջ կամարը իր վրայ է կրում. պորտաքար, բիղիս». նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Պիսիդ. վեցօր. տող 1425, 1431 և 1439։

ՈՒՆ, ն հլ. (յգ. ոռուճ) «գամ, սեպ, մեծ մեխ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Ագաթ. § 115. «Եւ ետ հրաման արկանել կապիճս երկաթիս ի ծունգս նորա և վարել ոռունս սուրս և բառնալ ի կախաղան» (տպ. ուռուճս, այլ ձ. ռռռուճս, կրկնագիրը՝ էջ 45 բ ունի ուղիղ ոռուճս). յոյն թարգմանութիւնը (հրտր. Lag. էջ 28) ունի սոյն հատուածի դէմ καὶ ἐκέλευσεν περικνημῖδας σιδηρᾶς γενέσθαι εἰς τὰ γόνατα αὐτοῦ, καὶ πῆξαι παχεῖς σφῆνας, καὶ ἀνακρεμάσαι αὐτόν, ուր համապատասխան բառն է σφῆνας — «սեպս». այսպէս նաև արաբ. թրգմ. էջ 5 «բևեռս»։

Նախապէս ոռուճս բնիերցուածը միայն ծանօթ լինելով, մեկնւում էր ոռճ

«մուրճ». բայց որովհետև «մուրճ» յարմար չէ տեղին, ՆՀԲ սրբագրում է ...ուռամբ սեպս կամ բևեռս ըստ ուսուս: Ուղիղ մեկնեց Նորայր, Յուշարձան 168 սրբագրելով բառը ոռն «գամ»: Նոյնը կրկնագրի ընթերցուածով հաստատում է Աճառ. ՀԱ 1913, 19:

+ ՈՒՆԱԼ *«անասունների դոչելը» Թղթ. բարուք. Եւագր. 81. Եփր. համաբ. Նիւս. սքանչ. Նոր գրականում գործածւում է միայն շան և գայլի համար:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* rū- *«ոռնալ, դոչել» արմատից, որի բարձր ձայնդարձներն են* reu-, rēu-, *համմտ. սանս.* rāuti, ruváti, ravati *«ոռնալ, մռնչել, աղաղակել», յն.* ὠρύομαι *«ոռնալ, մռնչել, ցաւից կամ ուրախութիւնից աղաղակել», լտ.* rūmor *«համբաւ, հռչակ»,* ravus *«խոպոտ», անգսք.* rȳn, rȳnan (*riunjan) *«մռնչել»,* rēon *«ողբ», մբգ.* rienen *«ողբալ, գանգատիլ», հհիւս.* rymja *«մռնչել»,* rymr *«խոպոտ ձայն», հբգ.* rūnen *և գերմ.* raunen *«փսփսալ», որից անցնելով՝ գոթ.* rūna, *անգսք. հիւլ.* rūn, *կիմր.* rhin *«գաղտնիք» և վերջապէս «ռունական նշանագրերը»* (Pokorny 2, 349—350, Walde 643, Ernout-Meillet 836, Boisacq 1083): *Նոյն արմատի երկրորդ տիպարն է* rē, rei *«դոչել, մռնչել, հաջել», որի ժառանգներից են սանս.* rāyati *«հաջել», լիթ.* rieju, rieti *«վրան կանչել, նախատել», լիթթ.* reju, reju, riet *«հաջել», հսլ.* rarŭ *«հնչիւն», ռուս.* рять *«հնչել», անգսք.* rārian, *հբգ.* rēren *«մռնչել» են* (Pokorny 2, 342): *Հայերէնը պատկանում է առաջին խմբին. աւորին* rū *ձայնդարձը տուել է հյ.* *ռու, n *աճականով* *ռուն *(համմտ. գերմանական բնատնիքի ձևերը), նախայատկուածով* *ոռուն *(համմտ.* rug- >ոռծալ), *ոռուճալ, *որից՝ անշեշտ* ու-*ի անկումով* ոռնալ:

Տէրվ. Նախալ. 102 հնխ. ra *«հաջել» արմատի տակ. համմտ. սանս.* rā, *լտ.* lātrare, *հսլ.* layati, *գոթ.* laian *«հաջել» են*; Bugge, Btrg. 38 *տուաւ ուղիղ մեկնութիւնը, դնելով հնխ.* ru *արմատից և համեմատելով սանս.* ru *«ոռնալ, մռնչել», յն.* ὠρύω *«մռնչել» ձևերի հետ. հայերէնը իբր* *ոռուճալ. *(անստոյգ է գտնում լտ.* garrio *«շատախօսել», լիթ.* gársus *«ձայն», իբր նախաւոր* gorsn- *ձևից)*: Karst, *Յուշարձան 401 սումեր.* gur *«աղմկել», 416 մոնղոլ.* uryal, *բուրեաթ.* uryan, *թունգուզ.* uran *«կանչել, ձայն»*: Petersson KZ *47, 259 առանց խօսելու* Bugge-*ի մեկնութեան մասին, դնում է վերոյիշեալ երկրորդ խմբից: Նոյնը կրկնում է* Pokorny 2, 342:

Գիր.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ. ոռնալ, *Շմ.* ոռնիլ, *Հմշ.* ոռնուշ, *Մկ.* ւոռնալ, *Սլմ. Վն.* վռռնալ, *Ասլ.* էոռնալ, *Ագլ.* ներռնալ: *Նոր բառեր են* ոռնոց, ոռնուն:

Ոռնացուցանել *տե՛ս Ուռ:*

Ոռոգ *տե՛ս Առոգ:*

Ոսիճ *տե՛ս Սին:*

ՈՍԿԻ (-կւոյ, -կւով, -կեաց) *«ոսկի մետաղը. 2. ոսկեղէն, ոսկուց շինուած» ՍԳր. Ագաթ. ածանցման մէջ մտնում է հետևեալ ձևերով. 1.* ոսկե-. *ինչ.* ոսկեղէն *ՍԳր. Եւս. քր.* ոսկենկար *Եփր. թգ.* ոսկեպատեան *Բուզ.* ոսկեզարդել *Եւագր.* ոսկեսէր *Ոսկ. ես.* ոսկերիչ *ՍԳր. Կոչ. Եփր. մն. 477. Ոսկ փիլիպ. (համմտ.* Meillet MSL 17, 262).—*2.* ոսկէ-, *որով կարող են գրուիլ բոլոր նախորդ ձևերը, բայց յատկապէս* ոսկէօղ *խոր.* ոսկէօծ *Յայսմ. —3.* ոսկի- *(առանց յօդակապի). ինչ.* ոսկիվարաւանդ *Բուզ.* ոսկիգիսակ *Եւս. քր.* ոսկիկմբեայ *Բուզ.* բազմոսկի *Վանակ. յոր.* յոգնոսկի *Փիլ. իմաստ.—4. նոյնը յօդակապով. ինչ.* ոսկիազէն *Բ. մկ. ժա. 8.* ոսկիածին *Ագաթ.* ոսկիապատ *Նլ. իղ. 32. լզ. 36. Ես. լ. 22. Թղթ. բարուք. Կոչ. 20. Ագաթ.* ոսկիակուռ *Կոչ. 20:—Նոր բառեր են* ոսկեգեղմն, ոսկեզօծել, ոսկեդրամ, ոսկեդար, ոսկեդարեան, ոսկերչական, ոսկերչապետ *ևն:*

Böttich. Arica *48, 35 կցում է սանս.* piçanga, pišta, peças *ձևերի հետ*; Pictet 1, 157 *սանս.* vastu, *իռլ.* fost, afost. *ֆիննն.* waski *«արույր»*: Lag. Armen. Stud. *§ 1735 հիմնւում է վերջինիս վրայ և ընդունում է որ մետաղների անունները նիւթի հետ միասին թուրանեան*

ժողովուրդներից անցել են Հայաստան, իսկ «անագապղինձը» յետոյ նշանակութեան փոփոխութեամբ դարձել է «ոսկի», ինչպէս որ ըստ J. Grimm *յուն.* σίδηρος *«երկաթ»=գերմ.* silber *«արծաթ»։ Մորթման* ZDMG *31, 412 բևեռ.* usgini *«ոսկեղէն»։ Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 97 աւելի մօտիկ է գտնում ակկադ.* gušqi *«ոսկի»։* Lag. Gött. Nachr. *1882, 164 սումեր.* guški(n): Schrader, Sprachvergleichung und Urgeschichte, Jena 1890 *դնում է ո՛չ-հնդեւրոպական նախահայկական բառ և կցում սումեր.* guškin, gušgin, *վրաց.* okro, oker *«ոսկի» և ուրիշ կովկասեան ձևերի հետ. «ոսկի» և «պղինձ» նշանակութեանց յարաբերութեան համար յիշում է եաքութ.* altun *«պղինձ» և թրք.* altun *«ոսկի». Համմ. նաև* Jensen ZAss. 1, 254—5: Bugge IF *1, 444 այս հիման վրայ ենթադրում է թէ հյ.* ոսկի *ծագած է նախաւոր* *goski *ձևից, g-ի անկումով։ Յ. Արշէգ, Բազմ. 1897, 51 ակկադ.* guski, guskin, *ֆիննո.* waski: Riabinin MSL *10, 19 ֆիննո.* waski, *էսթ.* wask *«պղինձ», հունգ.* vas *«երկաթ»։* Jensen, Hitt. u. Arm. *209 դնում է սումեր.* guškin *ձևից՝ հաթերէնի միջնորդութեամբ։ Հիմնք.* ոսկր *բառից է հանում։* Patrubány SA 2, 12 *հայ բառը նոյնպէս դնում է* ոսկր-*ից. իսկ ՀԱ. 1908, 278 հնխ.* aves *«փայլիլ» արմատից, որով ֆիննո. և հունգ. ձևերը փոխառեալ հայերէնից։* Karst, *Յուշարձան 401, 405 սումեր.* guški *«ոսկի»։ Мат, Яфет. сбор. 1, 128 կապում է Սկիւթացոց անուան հետ. իսկ* О полож. абхаз. *34 և* Абхазский анал. алф. *էջ 47 իրար է կապում հյ.* ոսկի, *ափխ.* axə', *վրաց.* ոქრო, *ռուս.* золото, *գերմ.* gold, *չուվաշ.* ылтăн, *թրք.* altən։—*Պատահական նմանութիւն ունի ճապոն.* 金 kin *«ոսկի»։—Ֆիննական ձևերի համար* A. Ahlquist, Die Kulturwörter der westfinnischen Sprachen. Helsingfors *1875, էջ 63 գրում է. «Մարդիկ նախ պղինձն են գտած և գործածած, որովհետև պղինձը արծաթից և երկաթից նուազ աստիճանի ջերմութեամբ է հալւում և գտնւում է երկրի երեսը։ Հաւանաբար Ուրալում ֆիննները արդէն գիտէին այս մետաղը բանիլ և նրանից զէնքեր ու կարասիք շինել. ֆիննական հնագոյն դարբնութիւնը պղնձով էր. Ռուսները Սիբերիայի, ինչպէս և Ուրալի և Ալթայի մէջ բազմաթիւ պղնձէ գործեր երեան հանեցին... կասկած չկայ բնաւ թէ այս մետաղը շատ կանուխ ծանօթ էր ֆիններին... որին վկայում է նաև իրենց լեզուն. ամէն կողմ, Արեւմուտք, Բալթիկ, Արեւելք, Ուգրեան ֆիննների մէջ տարածուած է մի՛ բառ. այս բառն է* vaski, *որ բալթիկ-ֆիննեան լեզուներում* vask, vasjk, vašk, vahči *և լապպեան լեզուներում էլ* vešk, viǫšk, veikke, vöikke *ձևերն ունի. -ki մասը հաւանաբար ածական է. հին բառն է* vas, *որ աւելի ուշ դարձել է* vaš. *սրանից հետ նոյն է հունգ.* vas, *որ այժմ նշանակում է «երկաթ» և ո՛չ թէ «պղինձ». այս էլ բառերի նշանակութեան մի փոփոխութիւն է, որ ուրիշ լեզուների մէջ էլ կայ. ինչ. գերմ.* eisen, *անգլ.* iron *«երկաթ», գոթ.* ais, *սանս.* ayas, *լտ.* aes *«պղինձ»։ Ուգրեան Օսթյաքների մօտ բառը դարձած է* vox *և նշանակում է «կոպէկ, դրամ» և ընդհանրապէս «մետաղ»։—Ուգրօ-ֆիննական ձևերը դասաւորւում են հետևեալ կերպով. մորդվ.* vis'k'ä, us'k'ä *«երկաթէ թել», վօտյ.* -ves' *(որից* azves' *«արծաթ»,* uzves' *«անագ, կապար»), սիրյ.* -ys', -is' *(որից* ezys', ezis' *«արծաթ»,* ozys' *«անագ, կապար»), ֆիննո.* vaske- *«պղինձ», էսթն.* vas'k *«պղինձ», հունգ.* vaš *«երկաթ», ձ-üšt «արծաթ», վօգուլ.* þös, -íš *(որից* ātþös, atíš *«անագ, կապար»), չերեմիս.* baž *«արոյր», լապպ.* viašk, vieške, veäihki *«պղինձ» (տե՛ս* J. Szinnyei, Finnisch-ugrische Sprachwissenschaft, Leipzig *1910, էջ 41)։*

Գիր.—Ալշ. Աբեղ. Կր. Համշ. Մշ. Ննխ.

Տփ. **օսկի**, *Ջղ. Սլմ. Վն.* **վոսկի**, *Երև. Շմ.* **վօսկի**, *Հճ. Պլ. Սեբ.* **օսգի**, *Ակն.* **օսգի, վօսգի**, **վէօսգի**, *Սչ.* **օսգ'ի, վօսգ'ի**, *Խրբ. Ռ.* **օսֆի**, *Տիգ.* **օսգի, օզգի**, *Մկ.* **տսկը՛**, *Մրղ.* **վը̈սկ'ը՛**, **վբ'ոսկի**, *Գոր.* **վէ՛սկէ**, *Ղրբ.* **վբէ՛սկէ, վը սկէ**, *Ասլ.* **էօսգի**, *Զթ.* **իսգի**, *Ագլ.* **ա՛սկի**, *Սվեդ.* **իսֆա**: *Նոր բառեր են* **ոսկերել** *«ոսկեջրել»*, **ոսկերած** *«ոսկեջրած»*, **ոսկեբեռն, ոսկեծիլ, ոսկեկառուց, ոսկեշալակ, ոսկեպղոճ, ոսկեջուր, ոսկեջրել, ոսկեհոչոր**:

+ **ՈՍԿՐ**, ր *հլ.* (**-կեր, -կերի, -կերաց, -կերոք**) *«ոսկոր» ՍԳր. Ագաթ. Կիւրղ. ղկ. Եղիշ. գտ. որից* **ոսկերոտի** *Ագաթ. կամ* **ոսկրոտի** *Փարպ.* **ոսկրաֆաճց** *Եփր. վկ. արև.* **ճաստոսկր** *Եփր. վկ. արև.* **ոսկրկոյզ** *Ժշ.* **փղոսկր** *Խոր. Նիւս. երգ.* **փղոսկրեայ** *ՍԳր. Նոր գրականում՝* **ծղոսկր, ճակատոսկր, կրծոսկր, զառոսկր** *են*:

=*Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են սանս.* ásthi, *զնդ.* ast, asti- *«ոսկոր»*, asčv- *«արունք, ոլոր»*, *պրս.* ast, ustuxvān, *պհլ.* ast *քրդ.* hesti, hestik, esk, yesk, *օսս.* stag, stäq (Horn *§ 81, 85*), *յն.* ὀστέον *«ոսկոր»*, ὄστρακον *«խեցի»*, ὀσφύς *«գիստ, աղդր»*, *կամիս* haštāi *«ոսկոր. 2. դիմադրութեան ուժ»* (BSL *հտ. 38, № 99, էջ 139*), *լտ.* os, oss, ossis, *հլտ.* ossu, ossua, *ալբան.*ašt, ašte, *կիմր.* ascorn, *բրբտ.* askourn (Pokorny 1, 186, Walde 548, Ernout-Meillet 628, Boisacq 723, Berneker 583): *Ըստ* Meillet MSL *23, 259—260 բառիս նախաձևն է* os, *որ իր չափազանց կարճութեան պատճառաւ ո՛չ մի լեզուի մէջ անվիճար չէ պահուած. նոյն իսկ լատիներէնում բաղաձայնի կրկնութեամբ դարձել է* oss: *Այս բառը, «լեզու» և «փայծաղն» բառերի նման, մէկն է այն ժողովրդական ձևերից, որոնք ենթարկուած են շատ մեծ փոփոխութեանց՝ իւրաքանչիւր լեզուի մէջ: Շատերի մէջ ստացել է* ost- *ձևը, որի վրայ աւելացել են նոր մասնիկներ. այսպէս յն.* ὀσφύς <*ost-bhū, *կիմր.* asgwrn, *կորն.* ascorn<*ost-cornu. *Սլաւականը սկզբին դրել է* k *յաւելուածը, որի ծագումը անյայտ է. այսպէս հսլ.* kostĭ, *ռուս.* кость, *լհհ.* kos'c' *են, ճիշտ ինչպէս «այծ» բառի ծայրին—*koza (Meillet, Rev. des études slaves, *1925, էջ 9*), *որ և գտնում է յունարէնում. ինչ. յն.* κάπρος =*լտ.* aper, *հբգ.* ebur *«վարազ»: Հյ. ոսկր ենթադրում է* *ostw-er *նախաձևը* (Meillet, Esq. 14, 28), *որի մէջ* w *համապատասխանում է լտ.* u-*ին* (ossu, ossua) *և թերևս գտնում է նաև յն.* ὀστέον *բառի մէջ, ուր* ε *և* ο *ձայնների միջև կար* s *կամ* y *կամ* w: *Նախալեզուի* stw *ձայնախումբը տուած պիտի լինի հյ.* սկ, *ինչպէս ցոյց է տալիս նաև իսկ<հնխ.* istwo- *ձևից:—Հիւբշ. 482:*

Klaproth, Asia pol. *էջ 102 լտ.* os, *վալերէն* asgurn *և բրբտ.* askurn *ձևերի հետ: ՆՀՔ յիշում է յն. և լտ. ձևերը: Ուղիղ համեմատութիւններ ունին* Peterm. 25, Böttich. ZDMG 1850, 359, Arica 68, 117, Müller SWAW 38, 576, 593, Justi, Zendsp. 37 *են:* Müller *հյ.* ր *համարում է մասնիկ: Տէրվ. երկրագունտ Ա, էջ 20 ցեղակիցների* t *ձայնը մեր մէջ դարձած է համարում* կ, *իսկ* ր *դնում է* ւ, ու *ձայնից. ինչպէս* մաեր-մաեու: *Հիւբշ. բառիս համար երկու մեկնութիւն է տալիս. նախ՝ իբր* ὀσφύς, asčv... *(չի ընդունում* Meillet MSL 8, 294) *և երկրորդ՝ իբր* ὀστέον, ásthi *են (ըստ* Bugge KZ 32, 30, Bartholomae IF 3, 164, Meillet MSL 8, 296). *(բայց այս երկու խումբերը ըստ նորագոյն քննութեանց իրար հետ նոյն են և կմիկնուին վերոնշանակեալ ձևերով): Հիւնք. յուն.* σκωριά (ῥῶκτ, σκῶρ) *«փրփուր՝ կղկղանք մետաղաց»: Մառ,* Яз. и Лит. I. *272 բասկ.* asur, gesur, *չուվաշ* šəmə, *սվան.* jijv, *վրաց.* ძվალი, *լազ.* xvili, *յն.* ὀστέον, *պրս.* ustuxvān *են հոմանիշների հետ*

Գիւմ.—Երև. կր. Ննխ. Տփ. **օսկօր** *(Տփ. մնկ.* **օ՛կօր**), *Ալշ. Մշ.* **օսկոռ**, *Խրբ. Սչ.* **օսգ'օր**, *Ախց.* **օսկօռ**, *Ակն. Ռ.* **օսգօր**, *Պլ.* **օսգօռ** *(մնկ.* **օգօր**), *Վն.* **ուսկոռ**, *Հմշ.* **օսկէօր**, *Տիգ.* **օսֆուռ**, *Ասլ.* **ըսգէօ՛ր**, *Ղզլ.* **սկօռ**, *Սլմ.* **վըսկոռ**, *Մրղ.* **վըսկօռ, վուսկօռ**, *Մկ.* **ուսկուր**, *Ագլ.* **ո՛ւսկուռ** *(յգ.* **բսկըռա՛տիֆ**[1]), *Ջղ.* **վոսկուռ**, *Շմ.* **վօսկուռ**, *Գոր.* **վօ՛սկէռ**, *Ղրբ.* **վբէ՛սկըէռ, վըսկըռ**, *Սեբ.* **օսգէր**, *Հճ.* **ուսգոյ**, *Զթ.* **իսգիյ, իսգիր**, *Սվեդ.* **իսգիր**: *Նոր բառեր են* **անոսկոր, ոսկորկոտրէֆ, ոսկորոտ,**

ոսկորատաճ, ոսկրագլուխ, ոսկրախաղ, ոսկրաճաճ, ոսկրաճաստ, պետռոսկոր, ոսկրաջուր, ոսկրացաւ, ոսկրփխել:

Փոխ.—*Թրք. գւռ. Կր.* osgor *«ոսկոր» (ըստ Բիւր. 1898, 627)*:—*Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 մեզանից է դնում ալբան.* koske *«ոսկոր», հայերէնի նախաձևը ենթադրելով* *կոսկր:

*ՈՍՄԻԴԱՅ *«մի տեսակ պողիպոդ? Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 202. «Ի թալանտայ (=յն. θάλαττα «ծով») արտակիտեալ ստորիջացն ի խորս և յախտնդեանց ոսմիդայն (այլ ձ. նումիդայն) ընկալեալս, զոր շիթք ամպոց գնա գործեն»: Խօսում է լուղորդների կամ սուզակների վրայ, որոնք ծովի խորերն իջնելով, նրա փորոտիքներից որսում են ոսմիդան, որ ամպերի շիթերից է յառաջանում:*

=Յն. ὀσμύλη, ὀσμύλιον, ὀσμύλος «մի տեսակ ծովային պողիպոդ, որ զօրաւոր հոտ է արձակում»: Ըստ իս հայ բառը պէտք է ուղղել ոսմիդայ:—*Ա.Ճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 199:

ՈՍՄՆԵԼ, *«ասել». ունի միայն ՋԲ՝ իբրև «խորթ բառ»:*

ՈՍՈՒ, ի–ա *հլ. «հակառակորդ, թշնամի» ՍԳր. Ոսկ. ես. «վրէժխնդիր, նախանձայոյզ» Պիտ. «վրէժ, քէն, ոխ» Վրք. Հց. որից* ոսոխիլ *Ոսկ. մ. գ. 11. Սերեր. ես. քր.* ոսոխասէր *խոր.* ոսոխութիւն *Մաշտ.* հակառակոսոխ *Փիլ. ժ. բան.* դառնոսոխ *«չարաչար թշնամի» Երզն. մտթ. 170. գրուած է նաև* աւսոխ, օսոխ *Եփր. Թգ. Մեկն. ծն.:*

Նշ՝ Ր յիշում է յն. ὄσπριον *կամ* ὄσπριον *«հասարակ անուն ընդոց, որպէս ոլոռն»:* Pictet, Origines ind. *1, 291 և* KZ *5, 343 սրա հետ նաև ռուս.* осна *«ծաղկախոտ»:—Հիւնք. = Նշ՝ Պատահական նմանութիւն ունին ասոր.* ʿesbā *«խոտ», արաբ.* visb *«խոտ, բոյս», عشب* ʿušb *«դալար խոտ»:*

Գիւմ.—Մշ. ոսպ, *Ալշ. Մկ.* ւոսպ, *Զղ.* վոսպ, *Կր.* օսպ, *Ախց. Երև. Նախ.* վօսպ, *Խրբ.* օսբ, *Ակն.* օսբ, վէսբ, *Հճ.* վոսբ, *Վն.* վոսփ, *Ռ.* վօսփ, *Շմ.* ճօսպ, *Ագլ.* ուսպ, *Վրբ.* վրէսպ, *Սլմ.* վուէսպ, *Տփ.* վուսպ, *Սեբ.* վէսբ, *Մրզ.* վրխպ, *Սվեդ.* վրսբ՛, *Տիգ.* վրսբ, *Ասլ.* էօ՛սբ, է՛օս*, *ՋՖ.* իւսբ: *Նոր բառեր են* ոսպախաշու, ոսպնապուր, ոսպնակ, ոսպուսոխ:

Փոխ.—Վրաց. ოხპი ոսպի, *Թուշ.* ოხპ ոսպ *«ոսպ»:*

ՈՍՏ, ո *հլ. «բլուր, բլրակ» խոր. (քանիցս). Վրդն. պտմ. էջ 135, Օրբել. հրտր. էմ. էջ 179:*

Եւրոպա, 1849, 200 հպրս. ուստա *«բարձր տեղ»:*

+**ՈՍՏ**, ո *հլ. «ծառի ճիւղ» ՍԳր.* որից ոստախիտ *Սիր. ժղ. 19. Ոսկ. կողոս.* ոստաճանց *ՅՀ. կՓ.* ոստակոստոր *Մխ. առակ.* ներբոստ *Մխ. առակ.* մաճրոստ *Եպիփ. բարոյ.* բազմոստ *Վեցօր. 96. Մծբ.* վեցոստեան *Եփր. գևտ. Սերեր.* դառնոստեան *Նար.* եօթնոստեայ *Եփր. եւ.* խստոստեայ *Վեցօր. 96. Նաև* ոստանալ *«ծառալիլ, ճճիլ» Եփր. բ. թես. 184.—ուղ.* *ոստի ձևն է ենթադրում գրծ. ոստեօք *Վեցօր. 84, բայց հաւանաբար ուղղելու է* ոստիւք *կամ* ոստովք:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ozdos *ձևից, որից ծագում են նաև յն.* ὄζος *«ճիւղ, ոստ, գաւազան», գոթ.* asts, *գերմ.* Ast *և հրգ.* ast *«ճիւղ», քուչ.* atstse *«ճիւղ». երկար ձայնաւոր են ներկայացնում անգսք.* ōst, *մ. հիւս. գերմ.* ōst *«ոստոց», որոնք տալիս են հնխ.* ōzdos *ձևը. համմտ. նաև լեռ.* ὀσδος:—*Հնխ.* ozdos *դրւում է* o *մասնիկով* sed· *«նստիլ» արմատից, իբր «ծառի բնի վրայ նստած»*

(Pokorny 1, 95, 185—6 և 2, 486, Walde 549, Boisacq 686, Kluge 26)։—*Հիւբշ. 482։ Ուղիղ մեկնից նախ* Klaproth, As. pol. *107 համեմատելով դերմ.* Ast *ձևի հետ։ ՆՀԲ «յորմէ* ոստնուլ, ոստիկան, աստիճան, աշտանակ *ևն. լծ. թրք.* üst «*ի վեր, ի վերայ*»։ Pictet 1, 199 *գերմ.* ast: *Պատկ.* JAs. *1870, 186 սանս.* astis: *Ուղիղ են մեկնում նաև Հիւբշ.* Arm. Stud. § 229, Bugge IF 1, 445: *Հիմնք. սահեղն բառից։*

ԳԻՒ.—Մշ. ոստ, *Ալշ.* ուստ, *Կր.* օստ, *Խրբ.* օսդ, *Ախց.* վօստ, *Հճ.* վոսդ, *Զթ.* իւսդ, *Սեբ.* վէսդ, *Երև.* վօստղ, կօստղ, *որոնք նշանակում են «ճիւղը կտրելուց յետոյ ծառի վրայ մնացած մասը, ծառի կամ տախտակի վրայի հանգոյց կամ երակ, այդ հանգոյցը ընկնելուց յետոյ մնացած ծակը», միայն Հճ. «շոճի ծառի մարխուռ ճիւղ»։ Հետաքրքրական է* օստուռտ *Սեբ. «ոստղերով լի (փայտ)»։ —Ղ յաւելուածի մասին տես Դափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 103։*

ՓՈՒԽ.—Վրաց. ტო ստո *կամ* შტო շտո «*ծառի կամ գետի ճիւղ*», შტოებიანი շտոեբիանի «*ճիւղաւոր*», *Թուշ.* ტო ռտո «*ճիւղ*». *սրանք կարող են ծագած լինել Հիւսիսային Հայաստանի գուռ.* *ոշտ *ձևից. Համմ.* անոստ, *որ և* անոշտ «*որ չի ոստնում*»։ (*Վրաց. բառի նրմանութիւնը յիշում է նախ* Brosset JAs, *1834, 369*)։

ՈՍՏ, «*ցատկել, դուրս ցատկել*». *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* ոստնուլ «*ցատկել*» *Իմ. ն. 22. Ոսկ. յհ.* ոստչիլ *Խոր. Վրդն. ծն.* ոստանիլ «*դուրս ցատկել, ձեռքից պրծնել*», *Ոսկ. մ. ա. 22. յհ. ա. 9.* ոստել «*դուրս ցատկեցնել*» *Լմբ. իմ.* ոստուցանել *Խոր. Փիլ.* ոստոստել «*ցատկըռտել*» *Դետ. ժա. 21. Փիլ.* ընդոստ *Ոսկ. մ. ա. 17, բ. 19. Փիլիպ. ժե.* ընդոստչիլ *Ոսկ. դղ. մտթ. բ. 24.* ընդոստուցանել *ՍԳր.* ընդոստնուլ *Մաշկ.* որոտընդոստ *Սիր. աղ. Ագաթ.* դիւրոստոյց, կայծոստ *ԱԲ.* ոստոստիւն *(նոր բառ),* անոստ *Նար. կդ. 164, առաք. 428, որ և գրուած* անոշտ *Կոչ. 45* (անոշտ *և* անվազ)։

ՆՀԲ ոստ «*ճիւղ*» *բառից («որպէս ոստ ի դուրս ցցուիլ»)։—Տէրվ. Լեզու 1887, 150 արմատը* ոս, *նոյն ընդ* վազ-ել։ *Հիմնք.* ոստ «*ճիւղ*» *բառից։* Bugge IF 1, 443 *հնխ.* g²ost- *ձևից, որի հետ համմտ. հհիւս.* kast «*նետուածք*», *նորվ.* kast «*արագ շարժում, խայտալ*», *լտ.* gestire «*կայտռել, խայտալ*», *յուն.* βαστάζω «*բարձրացնել*» *ևն։* Scheftelowitz BB *28, էջ 298* ոստ «*ճիւղ*» *բառի հետ, ինչ. անգլ.* spring «*ցատկել*» *և* «*բուսանիլ*»։ Patrubany *ՀԱ 1908, 342 հնխ.* o «*վրայ*» + sed «*նստիլ*»։

ՈՍՏԱՅՆ, ի *հլ.* «*ջուլհակի բանուածք*» *ՍԳր. Ոսկ. մ. գ. 6.* «*ոստայնանկութեան գործիք կամ գործարան*» *Պրոկղ. ի կոյսն. որից* ոստայն սարդի *կամ* սարդիոստայն *(նոր գրականում կայ նաև* սարդոստայն) *ՍԳր. Վեցօր. 121. Ոսկ. մ. բ. 24.* ոստայնանկ *ՍԳր. Եփր. Թգ. Սիբեր. Վեցօր. Ոսկ. ա. տիմ. բ.* ոստայնանկել *Ոսկ. մ. բ. 24.* ոստայնանկութիւն *Յոբ. լբ. 36. Եղ. լև. 35. լբ. 23. Վեցօր.* միոստայնի *Նար. խշ. ևն։*

=*Կազմուած է* -այն *մասնիկով* ոստ *պարզ արմատից, որ հին մատենագրութեան մէջ չէ աւանդուած. բայց կայ նոր գաւառականներում. Համմ.* ոստ *Ղրբ. Ղզ. Շշ. «իլիկի վրայ փաթաթուելով հաւաքուած դիզուած թելը»։—Ա.Ճ.*

Böttich. Rudim. 39 *ասորերէն* ܐܣܛܘܢܐ *ձևից ուղղագրեալ* ܐܣܛܘܢܐ *«ոստայնանկի գործարան» բառի հետ է համեմատում հյ.* ոստայնարան. *բայց* Lag. Arm. Stud. § 1739 *մերժում է, որովհետև նոյն բառի ուղիղ ձևն է ըստ ձևո.* ܐܣܛܘܢܐ < *յն.* ἱστόπους: — *Հիմնք. յն.* ἱστός «*ոստայն*» *բառից։* Bugge IF *1, էջ 444 ևնթադրում է որ* ոստնուլ *նշանակում է նաև «գցել», և այս նշանակութիւնից է հանում* ոստայն: *(Նոյնպէս է և Գաբրիէլեան ՀԱ 1911, 109)։* Patrubány *ՀԱ 1908, 342 հնխ.* o-sed «*վրան նստիլ*»։

ԳԻՒ.—Գոր. վօ՛ստան, *Ղրբ.* վըէ՛ստան, վը՛ստան «*գորգ գործելու փայտեայ կազմած*». *իսկ* սարդի ոստայն *բառի ձևերի վրայ տե՛ս* սարդ։

***ՈՍՏԱՆ** *«երևելի՝ թագաւորական քաղաք» Փարպ. Խոր. Արծր. «արքունի, թագաւորական» Բուզ. Խոր. որից* ոստանեայ *«թագաւորական, իշխանական» Փարպ.* ոստանիկ *«արքունական ցեղ՝ տուն՝ գունդ» Եղիշ. դ. էջ 71. Փարպ. 3Հ. կթ.* սարոստանիկ *«լեռնաբնակք» Կաղնկտ. (ըստ Հիւբշ.* Altarmen. Ortsnamen, *էջ 460* ոստանը *բուն նշանակում էր այն նահանգն ու քաղաքը, որ գտնւում էր ո՛չ թէ մի նախարարի, այլ ուղղակի Արշակունի թագաւորի կամ մի թագաւորական իշխանի իշխանութեան տակ։ Արշակունի թագաւորութեան ջնջումից յետոյ՝ բառը իր բուն նշանակութիւնը կորցրեց և յատկացուեց առհասարակ ամէն մէկ գաւառի կամ երկրի գլխաւոր քաղաքին. Համմ. Ոստանն Որշտունեաց (Արծր. 128), Ոստանն Վասպուրականի (Արծր. էջ 128), Ոստանն Արծրունեաց (Արծր.), Ոստանն Բագրատունեաց (Ղևոնդ), Ոստանն Վրկանաց (Փարպ.), Ոստան ի մարզպան (Ղևոնդ 132)։*

=Պհլ. *ōstān *«գաւառ» բառից, որ թէև աւանդուած չէ, բայց սրանից ունինք պրս.* ōstāndār *«գաւառապետ» (տե՛ս* Hoffmann, Auszüge aus syrischen Acten persischer Märtyrer, Leipzig *1880, էջ 93)։—Հիւբշ. 215։*

Վիստոնեանք (Բրգմ. Խոր. էջ 93) համարում են բառ, որ նշանակում է պրս. «սեամ, շինք» (այն է ūstān *կամ* āsitān*)։ ՆՀԲ «լծ. հյ.* ոստ *(իբր բարձր տեղի, բլուր) և* ազատ, վեստ, վատաճ, ապաստան, աստիճան *են, Բրք.* üstün, set, *պրս.* իւսթամ, ուսթամ, ասիթան, ասիթանել *«սեամ», յն.* ա՛սղի, *լտ.* ա՛սդու *«մայրաքաղաք», մանաւանդ «Աթէնք»,* Peterm. *տե՛ս Ոստիկան։ Ջուբինով՝ սրան է կցում վրաց.* ոստիճապի, *որ տե՛ս* ոստիկան։ *Պատկ.* Матер. II. 5 *պրս.* ūstām, ūstān, āsitān *«շինք, դուռ, պալատ» բառից։ Տէրվ. Նախալ. 108* ոստան<վաստան, *սանս.* vastu *«կայանք», յն.* ἄστυ *«քաղաք»։ Սահիսանէ, Խոր. ծան. 148 պրս.* ուստիմ *«գաւիթ, արքունի Դուռը»։ Հիւնք. յն.* ἄστυ *«քաղաք», լտ.* ostivum *«դուռ»,* civitas *և ֆրանս.* cité *«քաղաք»։ Քիրեաքեան, Արիահայ բռ. 303 պրս.* اُستان āstān *և* استن astan *«մեծ քաղաք, շքեղ բնակարան» (ԳԴ և Բուրհան գիտեն միայն* استان astān *«քնելու և հանգչելու տեղ»,* آستن āstan *«սեամ, դուռն պալատի»)։ Բառիս վրայ վերջին անգամ խօսում է Մանանդեան, Տեղեկ. համալս. 1, էջ 10։*

ՓՈԽ.—Ասոր. ܐܘܣܛܢ ōstan, *իբրև յատուկ անուն գտնւում է* ܐܘܣܛܢ ܕܐܪܙܘܢ Ostan d'Arzōn *«Ոստանն Աղձնեաց» ձևի մէջ. նոյնպէս արաբ.* Vasṭān *«Ոստան քաղաքը՝ Վանայ ծովի եղերքում»։ Ըստ Պատկ.* Матер. II. 7 *համմ. թերևս նաև օսս.* uazdan *«ազնուական»։*

***ՈՍՏԻԿԱՆ,** *ի–ա հլ. «վերակացու, հրամանատար, իշխան, կուսակալ» ՍԿր. Ոսկ. մ. ա. 17. եւս. քր. «արաբների կողմից դրուած կուսակալ Հայաստանի վրայ» Սեբ. 3Հ. կաթ. (նոր գրականում «կարգապահութեան հսկող հասարակ քաղաքապահ»). որից* կապանք ոստիկանք *«պահապաններով բանտ» Ա. մակ. ժզ. 3 (որ Վարդանեան ՀԱ. 1922, 583 սրբագրում է* պարեկապանս ոստիկանս*). ոստիկանութիւն ՍԿր. եւս. քր.* ոստիկանաբար *ԱԲ. նոր բառեր են* ոստիկանապետ, ոստիկանական, ոստիկանատուն։

=Պհլ. ōstīkān (ōstīgan) = պազ. ōstiyān *բառն է, որ նշանակում է «հաւատարիմ, վստահելի»։ Հին Հայոց մօտ հաւատարիմ էին կոչւում թագաւորին մօտիկ բարձրագոյն պաշտօնեաները. օր. Անան հաւատարիմ արքայի (Լաբուբ. =Խոր. բ. 30). Ես Թէոդոս և Աբոս հաւատարիմք արքայի (Վրք. և վկ. ա. 500). Ասէ դահճապետն ցհաւատարիմ թագաւորին (Վրք. Ն վկ. բ. 113)։ —Աճ.*

ՆՀԲ լծ. Բրք. իւսթ՝ իւսթաէ տուրան, ուսթատ, ուստա։ Peterm. De Ostikanii arabicis, Berolini *1840, հյ. Բրգմ. Երևւակ 1859, էջ 15 մեկնում է հյ.* ոստ *«ճիւղ, բլուր» կամ* ոստան *«մայրաքաղաք» բառերով, բայց առաջինի իմաստը յարմար չէ. երկրորդը պիտի տար* ոստանական, *ուստի դնում է Բրք.* իւստ *«վերին, բարձր» արմատից, որից նաև*

ոստան ևն։ Պատկ. Матер. I, *12* պհլ. hūstīkān «բարի արարչութեան տէրը»։ Müller WZKM *5, 69* դնում է պհլ. 𐭠𐭮𐭲𐭪𐭠𐭭 āstīkār, որ Haug, Pahlavi-Paz. Gloss. *128* մեկնում է «արուեստագէտ՝ ճարտար մարդ»։ Նոյնը WZKM *6 (1892), 304* ուղղում է ōstīkān «վրատահելի անձ, արուեստաւոր ևն»։ Հիմնք. ոստանիկ բառից կամ յն. ἀστυάναξ «քաղաքի մէջ իշխող»։—Հիւբշ. *215* յիշում է պհլ. և պազ. վերի բառերը, բայց նըշանակութեան կողմից անհամաձայն է գտնում։ Մեր տուած բացատրութեամբ այս անհամաձայնութիւնը վերանում է։

ՓՈԽ.—Վրաց. ოხტონაგი ոստինագի (շըրջուած *ոստիգանի ձևից) «ուտելեղէնի վերակացու, տնտես», ხოხტოგანო սանոստիգանո «տնտեսական», ხოხტოგანე սանոստիգանե «մատան» (որ Մատ. Текст. VII, էջ XX համարում է =ոստիկան)։ Նշանակութեան տարբերութիւնը և գ ձայնը աւելի կարծել են տալիս, որ բառը նոր պհլ. ōstigān ձևից լինի։

+ՈՍՏԻՆ «անջրդի, չոր, ցամաք» Վեցօր. էջ *103*. Ոսկ. ես. «ցամաք տեղ» Վեստ. ժա. *29*. «ցամաքային» Վեցօր. *104*. Վրդն. ծն. Յայտ. Նոյնը ոստան ձևով ունի Գիրք մոլութ. *171* ա. «Նմանին ոստան գորտան, որ յերկար պահէ զբարկութիւնն ընդդէմ վնասողի ինքեան», որից ոստեան «ցամաքային» Ոսկիփ. ոստնական «ցամաքում ապրող» (կենդանի) Եւագր. *161*. Սկևռ. աղ. *10*։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ozd- «այրել, չորանալ» արմատից։ Այս արմատի սովորական ձևն է azd-, որ աճած է ăs- «այրել, չորանալ» արմատից և որի ուրիշ աճականներն են azg-, azgy,- azgh- և askh-. որոնցից յառաջացած ձևերն են յն. ἄζω «չորացնել, այրել», լեհ. ozditi չորացնել», հյ. ազազել, աճիւն (միւսները տե՛ս այս բառերի տակ)։ Հնդեւրոպական նախալեզուի մէջ a նախաձայնը քիչ սովորական լինելով, մեր ճիւղում վերածուել է նաև o ձայնդարձի։

ՀՀԲ ոստ (անշուշտ «բլուր») բառից։ Հիմնք. ստին բառից։ Bugge KZ 32, 30 յն. αὐσταλέος, αὐστηρός «արևակէզ, սևացած, չոր» բառերի հետ հնխ. saustino-ձևից։ (Յիշում է կասկածով Pokorny *2, 448* հնխ. saus «չոր, կարծր» արմատի տակ»)։ Scheftelowitz BB *29, 32* յն. ἄζω են ձևերի հետ։ Մերժում է Meillet MSL *15, 357* նախ նշանակութեան տարբերութեան պատճառաւ (հյ. ոստին բնականից է չոր, մինչդեռ ἄζω են յատոյ է չորացրած կամ այրած), երկրորդ՝ որովհետև հյ. ո ձայնի դէմ գտնում ենք հնխ. a։

ԴԻՒ.—Մշ. օսաին, Վն. վոսաին, Երև. վօսաին «անջրդի, առանց ջրուելու՝ միայն անձրևով ոռոգուող (արտ, հող), ցամաքային (օձ)»։

Ոստղ տե՛ս Կոստղ։

Ոստնուկ տե՛ս Ոստ։

ՈՍՏՈՒՅԻ «վարդապետ». ունի միայն Բառ. երեմ. էջ *253*։

***ՈՍՏՐԻՈՍ** (յգ. ոստրիմ, սեռ. ոստրից) «ծովային մի խեցգետնատիպ» Վեցօր. *140. 143—4, 152*, Պղատ. տիմ. *174* (տպ. ոստրից, ՆՀԲ դնում է ոստից!) Գնձ. գրուած՝ ոստրիոս Գիրք թղ. *472*. ոստրէ Եփր. մրգ. *355* (սեռ. ոստրէից). նոր գրականի մէջ ընդունուած է միայն ոստրէ ձևը։

=Յն. ὄστρεον «ոստրէ» (բուն նշանակում է «ոսկրային». տե՛ս Ոսկր բառի տակ). սրանից են փոխառեալ նաև լտ. ostreum, գերմ. Auster, անգլ. oyster, ֆրանս. huître, ռուս. устрица, իրլ. ostoridya ևն՝ նոյն նշ.։—Հիւբշ. *369*։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

+ՈՎ (անհոլով) «ո՞վ, ո՞ր մարդը» ՍԳր. Ոսկ. Բուզ. ևն. ո՞վ ոմ «ո՞ր մէկը» ՍԳր. Ագաթ. յո՞վ «դէպի ո՞ւր» Դատ. ժթ. *17*. Երեմ. խ. *5*. Զքր. Բ. *2. 34*. ժգ. *36*. Սրբ. ժա. *8* (հմմտ. յո՞). ուրիշ ձևերով չի գործածւում։

=Բնիկ հայ բառ. ո՞ բառի կրկնակն է. նախապէս ո՞ գործածւում էր բաղաձայնի մօտ (ինչ. ո՞ կարէ). ձայնաւորի մօտ՝ ներդաշնակութեան համար յառաջացել է վ ձայնը և այսպէսով ձևացել է ով ձևը. (ինչ. ո՞վ իցէ). յետնաբար երկու ձևերը շփոթուելով իրար խառնուեցան, մինչև որ պարզական ո ձևը բոլորովին ջնջուեցաւ՝ տեղի տալով

ով-ին. այսպէս արդի գրականում և բոլոր բարբառներում։ Ղարաբաղի բարբառն է միայն՝ որ գրաբարի ամենահին օրէնքը պահում է դեռ՝ գործածելով ձայնաւորի մօտ ով՞ւ, բաղաձայնի մօտ և անկախ՝ ով՞։ ինչ. ով՞ւ ա, ով՞ւ ասից, ով՞։ էլցայ, ով վէր «ո՛վ որ», ով՞։ «ո՞վ»։—Ո ձևը (բայց ոչ անկախաբար) պահուած է նաև Նախ. գիւղերը՝ վո՞ գինա «ո՞վ գիտնայ, չգիտեմ» դարձուածի մէջ։ Ըստ այսմ ով բառի վ ձայնը իր համազօրը չունի ցեղակից ձևերի մէջ, որոնց վրայ տե՛ս Ո։

Riggs, *Քերակ. 1856, էջ 61* ո՞վ = անգլ. who: *Տէրվ.* Altarm. 3 kva- *ձևից (= լտ.* qua*) նախաձայնի յապաւումով և վ ձայնի յաւելումով։* Bopp, Gram. comp. 2, 384 *դնում է* n = *սանս.* kaya *ևն. վ համարում է ուղղականի նշան, իբր գնդ.* ō, *որ* -a *յանգող բառերի ուղղականի վերջաւորութիւնն է։ Բանասէր. Բազմ. 1897, 591* n *բառից վ մասնիկով։ Հիւբշ. 481* n *բառի հետ։* Bugge, Lyk. stud. 2. 49 *լիւկ.* uve։ *Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ* Meillet JAs. *1903 (2), 503—4։*

Գիւմ.—Երև. Ջղ. Տփ. օվ, *Հւր. Շմ.* ևօվ, *Հճ. Վն.* վով, *Խրբ. Նախ. Պլ. Ռ. Սչ. Տիգ.* վօվ, *Ասլ.* վէօ՝վ, *Ագլ. Սվեդ.* ով, *Ջթ.* իվ, *Մկ.* վէօվ, *Գոր. Ղրբ.* ևով. *Սլմ. Մրղ.* վով, *Ախց. Պրտ.* վօվ, վէվ, *Կր. Սևբ.* վէվ, *Համշ.* վօվ, վէօվ, *Ակն.* էօվ, վէօվ, վօվ, վէվ։

Ովամայ *տե՛ս Ովան։*

***ՈՎԱՆ** (*սեռ.* ովանայ) *«ծովային մի գազան է» Եւս. քր. ա. 14, 20—22, 47 (ունի միայն ԱԲ. իսկ ԳԲ մեկնում է «մէջքէն վար ձկան մորթով մը ծածկուած՝ բարելացւոց էաստուածը»)։ Նոյնը գիտէ Մագ. Թղ. էջ 213 և 215* ովամայ և ովանայ ձևերով, և «*Կարմիր ծովից դուրս եկող մի մեծ ձուկ» իմաստով (տե՛ս Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 200). «Կէտք վեհ գոլով քան զփոգրոս... և քան զդռակոնոռայն և կամ զովամայն, որ ի Կարմիր ծովէ արտաքս ելեալ.—Յիշատակեալ եմք զփոգրոս և զովանայն և զդռակոնոռայն և զկէտն Յովնանու, ընդ նոսին և զլևիաթանայնն»։ Նոյն է վերջապէս Մխ. այրիվ. էջ 43 «Ովան գազանն հրեշտակ էր, որ ուսուցանէր մարդկան զամենայն հնարս կենցաղավարութեան»։*

=Յն. Ὠάννης, Ὠάννου, Ὠάννῃ ձևերից տառադարձուած՝ Եւսեբիոսի Թարգմանութեան ժամանակ։—Աճ.

***ՈՎԱՍԻՍ** «անապատում դալարազարդ տեղ». յատուկ է նոր գրականին. հնից ունինք իբր յտ. անուն գործածուած Սոկր. 662. Արտասահմանեալ յՈասին բնակէր։*

=Յն. ὄασις բառն է, որից փոխառեալ են նաև լտ. oasis, *ֆրանս.* oasis, *ռուս.* оазисъ *ևն. վերջինիս համաձայն հյ. բառն էլ ամանք Կովկասում գրում են* օազիս *կամ* օվագիս։ *Յոյն բառը համարւում է եգիպտական ծագումից. համմտ. խպտ.* ouahsi (Bailly, Dict. gr.[6] 1348)։

***ՈՎԱՐ** «խօսք». իբր յն. բառ գրում է և մեկնում Պղատ. մինովս.։*

=Յն. ὄαρος «ընկերական խօսակցութիւն, ճառ, երգ»։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՈՎԱՐԻՍՏԷՍ** «խօսակից». իբր յն. բառ գրում է և մեկնում Պղատ. մինովս.։*

=Յն. ὀαριστής «ընկեր, ընտանի բարեկամ, մտերիմ»։—Հիւբշ. 369։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՈՎՋԱՐԴ *«թեթև». ունի միայն Բառ. երեմ. էջ 254։*

Ովթելիթ *տե՛ս Ոփելեթին։*

ՈՎԻՐՈՒԹԻՒՆ *«արիութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 254։*

***ՈՎԿԻԱՆՈՍ** «համատարած ծով, բայց յատկապէս Ատլանտեան ովկիանոսը» Արիստ. աշխ. 608—9. որից* ովկիանեան *Պետ. ովկիական Օրբել. նոյնը գրուած է նաև ուկենոս Սոկր. 460 (բնագրում գրուած է* ὠκεανῶ *(էջ 239)։*

=Յն. Ὠκεανός «մեծ ծով, յատկապէս Ատլանտեան ովկիանոսը». Ὠκεανός-ը բուն Ուրանոսի որդին էր, ծովի աստուածը, Հոմիրոսի մէջ նշանակում է երկիրը պատող ջուրը, յետնաբար ստացել է վերի նշանակութիւնը։—Սրանից են փոխառեալ նաև լտ. oceanus, *ֆրանս.* océan, *ռուս.* океанъ *են —Հիւբշ. 369։*

Հներից Յայսմ. մրտ. 19 մեկնում է ով կայ ի նոսա. *«Բայց Արիստոտէլ ովկիանոս զայս ասէ, որ շուրջ զցամաքաւս է. որպէս թէ հիանայ վասն կենդանեացն բազմութեան, որ անդ կան և յօրանան. ասէ թէ զարմանք է. թէ ով կայ ի նոսա, զորս արարիչն միայն գիտէ»։*

ՈՎԿԻՆ *«մարգ». ունի միայն Բառ. երեմ. էջ 254։*

ՈՎՍԱԴ *«բազէ». ունի միայն Բառ. երեմ. էջ 254։*

***ՈՎՍԱՆՆԱՅ**, ի հլ. «օրհնութիւն» ՍԳր Ութր. արմաւ. 45, 48, 50, 57. Յայսմ. Պարգ. 372, 544. ժմ. 581. որից* ովսաննայաբեր *Նար. տաղ. գրուած է* ուսանա *Տիմոթ. կուզ. էջ 299։*

=*Եբր.* הוֹשִׁיעָנָא hōšī'anā *«ազատի՛ր, օգնի՛ր» բառն է, որ երկրորդ դէմքի սաստկական հրամայականն է* יָשַׁע iš' *արմատից։ Հյ. բառը տառադարձուած է յն.* ὡσαννά *ձևից, որի հետ նոյն են նաև լտ. Ֆրանս.* hosanna, *գոթ.* ōsanna, *գերմ.* hosianna, *վրաց.* ოსანნა osanna *են։—Հիւրշ. 369։*

*Հներից Սեբեր. 201 մեկնում է. «Ովսաննա, այս է բան երբայեցւոց բարբառոյն՝ փառաբանութիւն իսկ նշանակեալ և մեծ գովութիւն»։—Բրս. մրկ. 136 «Ովսաննայն երբայեցի բառ է. սակայն այլևայլ լսի բան լեզուաց. զի բան յունացն ասէ՝ փառք ի բարձունս այնմ տեառն, որում վայելէ. իսկ բան ասորւոցն՝ փրկութիւն ի բարձունս և բան հայոց՝ փրկութիւն որդւոյ Դաւթի... Ովսաննայն բան երբայեցւոցն է յօդեալ յերկուց բանից. ի բոլոր բանէ և ի կիսոյ. մին՝ որ է օսի, որ թարգմանի փրկեա՛ միշտ կամ փրկեա՛ զժողովուրդ քո. և միւսն՝ աննա, որ է աղաչական, որպէս ասեն հօթանաւորքն, ո՛ տէր. փրկեա...»։ Երզն. մտթ. 446 «Ովսաննայ բարձրելոյն. այսինքն փրկութիւն ի բարձանց կամ կեցո՛ և ապրեցո՛. նոքա ձևացուցանէին զայս վասն Ղազարու յարութեանն՝ փրկիչ և ապրեցուցիչ ի բարձանց ասացեալ. իսկ ասքա բան խորհրդոյ հետևեալ՝ առուգաբանութեամբ բառիցն եղանակեն զսոյն մինչև ցայսօր։ Քանզի ովսաննայն առուգի՞ ով սա. հարցանեն, որոց պատասխանեն հաւատացեալք, ևա՛ է սա՝ որ զերկինս երկնայնովքն կազմեաց... ո՞վ սա. ևա՛ ասեն՝ որ ի Քորեբ հրով փայլատակեցաւ ... ո՞վ է սա... սա է թագաւորն փառաց»։—Տաթև. ձմ. ճգ. գրում է. «Ովսաննայն յերբայեցւոցն ի մերս օրհնութիւն թարգմանի կամ փառաբանութիւն կամ մեծութիւն և բան այլում առակի՝ սա նա է ասէին, որ ի սկզբանց յաւիտեանց արարիչ է...»։ Նոյնը՝ ճէ. «Ովսաննայ, որ թարգմանի փրկեա՛ զմեզ»։—Նորերից ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ՈՎՐԱԹԻ *«դադարեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 254։*

ՈՎՐԱԿ *«բանակ». ունի միայն Բս. երեմ. 254։*

ՈՎՐԱՅ *«որմիսկ. քթի կամ ականջի օղ». ունի միայն Գաբ. բառ.։*

***ՈՎՓԱԶ.** Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Ճառք, էջ 588. «Ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա այր զգեցեալ բաղէն (այս է պատմուճան աստուածային) և մէջն իր պնդեալ ոսկւով ովփազեա և մարմինն բարեսեաւ»։*

=*Եբր.* פָּז paz *«մաքուր ոսկի» բառն է, որ յն.* Ὠφάζ*ևի վրայից անցել է հայերէնին։ Հաւատացեալ ակնարկում է Դան. ժ. 5, որ մեր Ոսկեդարեան թարգմանութեան մէջ հետևեալ ձևն ունի. «Եւ ընդ մէջ իր ածեալ կամար յոսկւոյն Ոփազայ» (յն.* ἐν χρυσίῳ Ὠφάζ*): Այս տեղ* Ոփազ *հբր.* אוּפָז ūphāz *բառն է, որ սովորաբար առնուած է իբր տեղանուն, ինչպէս է և մեր թարգմանութեան մէջ։ Բայց գիտուններից ոմանք կցում են հբր.* פָּז paz *«մաքուր ոսկի» բառի հետ։ Այսպէս է բմբռնուած նաև Ոսկեբերանի վերի հատուածում։—Ա.Ճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 216։

+**ՈՏՆ.** *բնիկ հայ բառ, որի վրայ տե՛ս հետ։*

Ուղիղ մեկնից նախ Klaproth. As. pol.

1823, էջ 101. յետոյ ՆՀԲ, Peterm. 21, Gosche 23, Böttich. ZDMG 1850, 359. Arica 48, 35, Lag. Urgesch. 395, Müller SWAW 38, 571, *Տէրվ. Նախալ. 92 ևն։ Տէրվիշ. Մասիս 1881 սեպտ. 15 նախաձևը դնում է* *ֆոտն։ *Մի առանձին քննութիւն էլ տե՛ս* Meillet MSL 8, 156—7, *ուր մեր բառի նախաձևը դրւում է* *podm̥։ *Հինք. յն. ὀδός «ճանապարհ» բառից։—Ինսէն ՀԱ 1904, 184 հաթ.* hod(t), ot(d), at: Karst, *Յուշարձան, էջ 422 ՔՔր.* yat, *Քրք.* ayaq, *ույդուր.* yatak, *չաղաթ.* yoyak, *ալթայ.* yoya *«ոտք»։*

ԳԻՒ.—Մշ. ոտ *(սեռ.* ոտկի), *Մկ.* ուտ *Ջղ. Սլմ. Վն.* վուտ, *Երև. Շմ.* վօտ, *Ախց.* վօտ, *Հճ.* վոդ, *Ննխ. Ռ.* վօթ, *Տփ.* վուտ, *Խրբ.* օդ, *Ակն. Պլ.* օթգ *(յգ.* օդվի, օդվընէր), *Սչ.* վօդ՝գ՝, *Ագլ.* ուտ, ո՛ւտներ *(յգ.* ա՛տնաւր), *Ալշ.* ֆոդ, *Մրղ.* վըʰտ, վըէտ *(բայց* վըʰննել *«ընդոստնել»), Սվեդ.* վըդդ, *Սեբ.* վէդգ, *Հմշ.* էօթ, *Զթ.* իդվէ, *Գոր.* վօ՛ներ, *Ղրբ.* վրէ՛ներ, վը՛ներ, *Ասլ.* վէօ՝*ֆ, վէօ՝*։ *Նոր բառեր են* ոտաշոր, ոտատեղ, ոտնաթոռիկ, ոտնաման *(հնից ունինք* ոտից աման *Բրս. մրկ. 221),* ոտնամուտ, ոտնուրագ, ոտնուծոց, ոտխուկ *են ևն։*

ՈՏՆԵՍ *«լուսոյ յարութիւն կամ լոյս վերահաւատից». ունի միայն Բառ. երեմ. 254։*

+ՈՐ, ո *հլ. (հոլովւում է* որոյ, որում, յորմէ, որով, որ, որոց, զորս, յորոց, որովք*) «որ, ով որ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. ևս. («զի» նշանակութեամբ հին, բայց անկանոն գործածութեան վրայ տես Այտնեան, Քնն. քեր. էջ 67). որից* զոր օրինակ *ՍԳր. Եփր. ծն.* որ or *«այն օրը որ» Ոսկ. յհ. ա. 1. Եզեկ.* որ... որ *«մէկը (այսպէս), մէկը (այնպէս)» ՍԳր.* յորոց *«որովհետև» Իմ. ժե. 17.* որ և, որ ինչ, որ զինչ և, որ և իցէ *ՍԳր.* որ միանգամ, որ որ *ՍԳր.* ո՞ր որ *Վրք. Հց.* որով *«քանզի» Յճխ. (սահ.), Վրք. Հց.* յորմէ *Վրք. Հց.* յորմէ ևետէ *ՍԳր.* յորոց ևետէ *Վրք. Հց.* ըստ որոյ, ըստ որում *Գիտն. ածայ.* ըստ որմէ *Պիտ.* և որ այլ, և որ ի կարգին *Խոր. Պիտ.* որ զի *«իբր թէ» Եփր. ծն.* որովհետև *ՍԳր.* որչափ *(ամկ.* որչամ, որչան *Բր. քեր.) ՍԳր. Եւս. քր. Ոսկ.* որչափ ևս, որչափ ևս առաւել *ՍԳր. Ոսկ. Ագաթ.* որպէս *ՍԳր. Ոսկ. ևս. Եզն.* որպէս զի *ՍԳր. Սեբեր.* որպիսի *ՍԳր. Ագաթ.* որման *Հռ. ժա. 13. Գազ. դ. 1.* որպէտ *Շիր. Կանոն.* որբար *«ինչպէս» Արիստ. առինչ.* որգուեակ *Եւս. քր. Ոսկ. յհ. բ. 21. Կիւրղ. ղկ.* որգոն, որգովն, որկէն *«ինչպէս» Պիտ.* որգան *Փիլ. Խոր. Նոնն.* յորման *«երբոր» Կեղծ-Շապհ. 60. այստեղ է պատկանում նաև* որակ *«տեսակ, որպիսութիւն» ՅՀ. իմ. երև. Փիլ. (նշանակութեան զարգացման համար հմմտ. յն.* ποῖος *«ո՞րը. 2. որակութիւն», ποιότης «որակ, յատկութիւն», լտ.* qualis *«ո՞րը, ո՞ր, որակ»,* qualitas *«յատկութիւն». ձևի համար հմմտ.* ֆանի, ֆան-ակ*). որից* որակութիւն *Կիւրղ. գնձ.* որականալ *փիլ. Մաքս. ի դիոն կանաչ-*որակ *Մագ. յոգնորակական Մագ.* որական *«պատուական, ընտիր» (նորագիւտ բառ. Պարականոն շար. 1911, վղրշպտ. էջ 4). Նոր բառեր են* լաւորակ, վատորակ, որակաւոր, որակաւորել, աներակելի *են։*

=Բնիկ հայ բառ. կազմուած է ո<հնխ. $k^{u}o$- *բառից՝ r մասնիկով. հմմտ.* *i—իր. աւելի ընդարձակ տես* ո։—*Հիւրշ. 481։*

Brosset JAs. *1834, 378 վրաց.* ra, romeli *«որը» են։ ՆՀԲ յծ. յն.* ὅς, ἥ, ὅ *լտ.* qui, quae *և* quod: Windisch. 37 *սանս.* kas, *գոթ.* hvas, *գերմ.* wer: *Մորթման* ZDMG *26, 526 բևեռ.* uru *«որ»։ Տէրվ.* Altarm. *3 հնխ.* kva-r *ձևից. հմմտ. լտ.* que. *-r մասնիկ է։* Bopp, Gram. comp. *1, 416 կցում է սանս.* ya *«որ» ձևին, ուր* y>r, *իսկ* ո *յաւելուած է։* Meillet MSL 9, 53 *դնում է* ո+r. *վերջինիս հետ հմմտ. յն.* ὁτα *հոմեր.* ὅς ὁτα, *հյ.* իբր<*ibi-r՝ ընդդէմ իւ, իւիմ ձևերի։ Բազմ. 1897, 591* ո, ով *բառից՝ r մասնիկով։* Scheftelowitz BB *29, 25 սանս.* yatrā *«որ», զնդ.* yaθra *ձևերի հետ՝ իբր հնխ.* yotrā*։ Հիւնք.* or *բառից։ Սաղրզեան ՀԱ 1909, 334 սումեր.* ur *«մարդ, որ» և հյ.* որ-եար։ Zanolli, *Յուշարձան 277 սանս.* ya-s, *փռիւգ.* ιος, *յն.* ὅς։—Ուրակ *բառը* Bopp. Gram. comp. 2, 262 *դնում է սանս.* raga *«կարմրութիւն» բառից։ Հիւնք.*

օրէն բառից։ Մաոիկեան ՀՍ 1919, 32

հաթ. waraš, *ումբր.* uru *ձևերի հետ։*

ԳԻՒ.—Ալշ. Մկ. ur, *Մշ.* ur, or, *Խրբ. Պրտ.* or, *Ջղ. Վն.* vor *(տեղ. Վն.* vuru), *Ագլ. Կր. Ախց. Երև. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սչ. Տիգ.* vor, *Սեբ.* or, vէr, *Տփ.* vur, *Ասլ.* vէo՝r *(տեղ.* vէorի), *Գոր.* vէr, *Ղրբ.* vբէr, vբr, *Մրզ. Սլմ.* vur, *Մզ. Շմ.* hor, *Հճ.* vոյ, *Ակն.* ur, իur։—*Ակն ունի և* -որակ *մասնիկը. ինչ.* գարմրվօրագ *«կարմրորակ»,* ջէրմայվօրագ *«ճերմակորակ» ևն։*—*Նոր ձևեր են* ո՞րանկ, որի՞, յորի՞ *«ինչո՞ւ»,* ո՞րանց *«ո՞ւր, ո՞րտեղ»,* ո՞րման *«ի՞նչպէս»։* — *Համշ.* վէօ՞r *(հրց.),* or *(շղ.)։*

ՓՈԽ.—Բոշայ. or *«որ, որպէսզի» անշուշտ հայկէնից է։ Բայց պատահական նմանութիւն ունին վրաց.* რომ rom, რომე *«զոր»,* რამე ramე *«ինչ-որ, մի բան»,* რა ra՞ *«ի՞նչ»։*

ՈՐԱՅ, ո *հլ. «ցորենի կամ գարու խուրձ» ՍԳր. որից* որայիկ *«կտրած ցորենի կապոցներից մի քանիսը» ԱՓ.* որային *«որայի ցողունը» ԱՔ։*

Տէրվ. Altarm. *72 յն.* λῆϊον, *գոր.* λαΐον, λᾶον *(նախաձևը* λαϝιον*) «արտորայ», սանս.* lāvya *«կտրել»,* lāvaka *«կտրող, հնձող» և հյ.* օրան *բառերի հետ։ Նոյն, Լևզու 120 յն.* ἄρουρα, *սանս.* urvarā, *լտ.* arvum, *հյ.* արտ *բառերին է կցում։ Պատահական նմանութիւն ունին արևել. թրք. (խիվայի գւռ.)* اورا ora *«ցորենի հոր»,* اوراماق oramaq *«հնձել, քաղել», օսմ.* اوراق oraq *«մանգաղ»,* թիւրքմէն اورماك ormak *«հնձել»։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. որա, *յգ.* որէ *«ցորենի կապած խուրձ»։—Տե՛ս և* օրան։

+**ՈՐԲ**, ո *հլ. «հայրը կամ մայրը մեռած» ՍԳր. որից* որբանոց *Բուզ.* որբասէր *Եւագր.* որբութիւն *Ես. խէ. 8. Ոսկ. մտթ.* որբանալ *փիլ. եկ.* որբախնամ *(նոր բառ) ևն։*

=*Ինիկ հայ բառ՝ հնխ.* orbhos *հոմանիշից. սրա ժառանգներն են յն.* ὀρφανός *(բարդութեանց սկիզբը* ὀρφο-*) «որբ, որբացնել», լտ.* orbus *«որդեկորոյս, այրի, որբ, զուրկ»,* orbatus *«զուրկ, այրիացնել»,* orbo *«զրկել».—Նոյն արմատին են պատկանում նաև գոթ.* arbi, *հհիւս.* arfr, *անգսք.* yrfe, *հրգ.* arbi, erbi, *հիոլ.* orbe, *գերմ.* erbe, *հոլլ.* erf *«ժառանգութիւն», որոնց նախնական իմաստն է «որբին թողուած ժառանգութիւն»։ Սրանց յարակից ուրիշ ձևերի վրայ տես* Արբանեակ (Walde 545, Pokorny 1, 183, Ernout-Meillet 676, Boisacq 719, Kluge 121)։ *Յունարէնից են փոխառեալ լտ.* orphanus, *ռում.* orfan, *անգլ.* orphan, *ֆրանս.* orphelin *«որբ»։—Հիւբշ. 482։*

Ուղիղ համեմատութեան ՆՀՔ, Peterm. 38, Windisch. 15, *Պատկ.* Изслъд. *(նաև սանս.* arbha), Lag. Urgesch. 866, Pictet 2, 360, Ascoli KZ 17, 336, *Հիւբշ.* KZ 23, 19 *և* 33, Arm. Stud. § 231 *են։* Müller SWAW 41, 10 *փոխառեալ է համարում յունարէնից։ Տէրվ. Նախալ. 65 հնխ.* arbh *«թողուլ» արմատից է դրնում բոլոր վերի ձևերը։ Հիմնք. բոր բառից։*

ԳԻՒ.—Խրբ. որբ՝, *Ախց. Սչ.* վորբ՝, *Կր.* որփ, *Երև. Ռ.* վորփ, *Մշ.* ոոր՝, *Ալշ.* տոպ, *Սլմ.* վուէրփ, *Սեբ.* վէրփ, *Մրզ.* վրʰրփ, *Տիգ.* վրրփ, *Տփ.* վուրփ, *Ասլ.* էo՝rփ, էo՝r*։—Սրանից է կազմուած* որբևայրի *«մարդը մեռած կին», որի վրայ տե՛ս* այրի։

ՓՈԽ.—Վրաց. ობოლოորոլի *«որբ»,* ობლობა ორլորա *«որբութիւն»,* დაობლება դաորլեբա *«որբանալ»։*—Setälä, Journ. de la Soc. finno-ougr. XVII 4, 31 *(նաև* Pedersen KZ 40, 184*) հայկէնից են դնում նաև ֆինն.* orpo *«որբ», որ անշուշտ հնդևրոպական փոխառութիւն է՝ ըստ ֆիննագէտների։*

ՈՐԲԱԼԻԿ *«ողբ». ունի միայն Բառ. երեմ. էջ 255։*

ՈՐԳԵԼԱԿ *«բայասակ». այսպէս ունի Բռ. երեմ. էջ 255։—Պէ՞տք է արդեօք կարդալ* արգելական *«բացասական»։*

ՈՐԴՈՍՏԱ *(կամ* որդոստա՞*) «վաճառանոց». մէկ անգամ ունի Գծ. իր. 15. «Ելին ընդ առաջ մեր մինչև յորդոստայն Ապիեայ». յն.* ἄχρις Ἀππίου φόρου, *որ է լտ.* forum Appii *«Ապպիի վաճառանոցը, այն է փոքրիկ մի քաղաք Լատիումի մէջ». (ըստ Ջոհրապի 5 հնագոյն օրինակ ունին* յորդոստայն, *մի օր.* յորգոստեան, *մնացեալը* յորգոստայն.

Բագրատունու հրատարակութեան մէջ գրուած է յորգոստայն, ինչպէս նաև Պօլսի 1895 թուի հրատ.)։—Բառ. երեմ. էջ 35 գրում է արգոստայf «ապարանք» և էջ 228 յարգոստեան «օթեան կամ ապարան»։

ՆՀԲ «թերևս իցէ լծ. ընդ յն. ἡ ἀγορά»։ Հիւնք. յն. ἐργαστάσιον կամ ἐργαστήριον «գործանոց»։

Որդ *տե՛ս Որթ։*

+ՈՐԴԻ (-դւոյ, -դւոց, *կամ* -դեաց. *օր Նորագիւտ բ. մնաց. իբ. 11 «Գողացաւ զնա ի միջոյ որդեացն թագաւորին», որ միւս թարգմանութեան մէջ* որդւոցն ձևն ունի։ *Նոյնպէս է Լմբ. մատ. 524.—գրծ. կայ* որդեօf *Մամիկ. 15) «սերունդ, զաւակ, մանաւանդ արու զաւակ, մանչ» ՍԳր. Եփր. դաղ. Եզն. (նշանակութեան համար հմմտ. Մալխասեան, Մշակ 1913, թ. 103 և Ս. Տէր-Մելքիսեդեկեան, անդ՝ թ. 146). որից* որդեակ *ՍԳր.* որդեգիր *ՍԳր.* որդեծնութիւն *Ա. տիմ. բ. 15. Երր. ժա. 11. Կոչ. Եզն.* որդեսէր, *Ոսկ. մ. ա. 10. Եփր. ծն.* աւորդի *ՍԳր. Ոսկ. մ. բ. 23. Կիւրղ. Թուոց. եւս. քր. Կոչ.* արքայորդի *Դ. թագ. ժա. 12. Ոսկ. մ. ա. 6.* կուսորդի *Ոսկ. մ. ա. 5, 12.* բազորդի *Եփր. եղ.* եղբօրորդի *ՍԳր.* դայեկորդի *ՍԳր.* ճարճորդի *Մծբ. Ոսկ. երր. եւս. քր.* շնորդի *Փիլ.* փոխորդի «*տոկոս*» *Սիբեր.* փրղորդի «*փղի ձագ*» *Մխ. առակ. յետնաբար կայ* որդիասէր *Լմբ.* որդիացուցանել *ՅՀ. կթ. ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* portiyo- *ձևից. սրա պարզական արմատն է* per, por «*ծնիլ, ձագ բերել*», *ինչպէս ցոյց է տալիս յատկապէս լտ.* pario, peperi «*ծնիլ, երկնել, տղայ բերել*». *միւս ածանցները տե՛ս* որբ «*Որթի*» *բառի տակ, որ նոյն այս արմատից է ծագում։ Մեր* որդի *բառի հետ յատկապէս համեմատելի են սանս.* पृथुक prthuka- «*ձագ*» *և «մանուկ, երախայ, տղայ», յն. πόρτις «երինջ, գլիկ» և «փոքր տղայ կամ փոքր աղջիկ», լտ.* partus «*զաւակ, ծնունդ, ձագ*»։ «*Անասունի ձագ*» *կամ «մարդու որդի» գաղափարների նոյնութիւնը զարմանալի պէտք չէ երևի, որովհետև այսօր էլ գործածւում է մեր մէջ բրք.* bala *բառը միևնոյն ձևով (մարդու կամ անասունի ձագ)։—Հմմտ. նաև տղայ, ուլ, յատկանիշ բառերի նշանակութեանց զարգացումը։—Հիւբշ.*

ՀՀԲ (նոյնը նաև ՆՀԲ) «որ դիէ (զկաթըն)»։ Klaproth, Asia pol. 105 *կազիկում.* ers. E. Boré, JAs. 1841, 655 *կարդալով* vorti *և դնելով* v=b, *ինչ.* վատ=*պրս.* bad, *մեկնում է իբր զնդ.* puθra, *պրս.* pusar «*որդի*»։ Windisch. 38 *յն.* πόρτις «*հորթ, ձագուկ, տղեկ*»։ Gosche 47, Böttich. Arica 64, 40, Justi, Zendsp. 191, *Պատկ.* Изельд. *27, նաև կասկածով* Müller SWAW 35, 197 *սանս.* putra, *հպրս.* 𐎱𐎢𐎽𐎰 puθrah, *պրս.* پسر pusar «*որդի*» *ձևերի հետ*։ Lag. Urgesch. 412 *սանս.* vṛddha *բառի չեզոքը*։ Müller SWAW 64, 456 *զնդ.* varəδa, *պրս.* gurd «*ճեմումն*»։—Lag. Arm. Stud. § 1745 *յիշում է պրս.* رد rōd «*որդի*», *հսլ.* roditi «*ծնիլ*» *ևն*։ Bopp, Gram. comp. 2, 250 *սանս.* ardh, ṛdh, rudh «*աճիլ*», *գոթ.* lud «*աճիլ*», lauths «*մարդ*», *հսլ.* na-rodŭ «*ժողովուրդ*», *հկելտ.* rhodora «*մի տեսակ բոյս*»։ Bugge, Btrg. *էջ 28 դնում է* *gotrió- *նախաձևից, որին է կցում լտ.* uterus «*արգանդ*», *գոթ.* qiθra «*փոր, որովայն*» (*հմմտ. անգլ.* child «*տղայ*» *և գոթ.* kilθei «*արգանդ*»)։—*Մատ.* ЗВО *5, 317 զնդ.* vareδa «*հերոս*» *կամ* frazainti, *պհլ.* frazand «*որդի*»։ Bugge IF 1, 452, *ծան. 3 մերժում է իր նախորդ մեկնութիւնը։ Հիւնք. լտ.* ortus «*ծագնալ, սերիալ*» *բառից։ Վերջին անգամ* Bugge, Lyk. stud. 1, 59 *յն.* ὀρθός «*ուղիղ*», *լիւկ.* urtu «*օրինական*» *բառերի և լիւկ.* ᶜ Ὑρτιο *ևն յատուկ անունների հետ։* Patrubány SA 1, 191 *յն.* ὀρθόνω «*յուզիլ, զուարճացնել*», *իբրև հնխ.* ordh-ios «*զուարթացուցիչ*» *ձևից։ Հիւբշ.* Festschrift 70 *տալիս է վերի ուղիղ մեկնութիւնը, որ անկախաբար ունին նաև* Meillet MSL. 21, 46, *և աւելի ուշ Շէֆթէլովից* BB 29. 21: Wiedemann BB 27, 221 *(առ* Walde 58 *և* Pokorny 1, 149) *հնխ.* erədh «*աճիլ, մեծանալ*» *արմատի տակ, որից և լտ.* arduus «*բարձր*», *հիռլ.* ard «*բարձր,*

մեծ», ալբան. rit *«աճիլ», հալ.* rastą, *ռուս.* pacmu *«աճիլ, մեծնալ, բուսնիլ» են՝* Jensen *ՀԱ 1904, 183 հաթ.* ortio: Pedersen, *Հայ. դր. լեզ. 46 մերժելով* Bugge-*ի վերջին մեկնութիւնը՝ ընդունում է* Wiedemann-*ի հետ հալ.* rodŭ *«ծնունդ, ազգ», սանս.* rādhnóti *«յառաջ բերել», հհիւս.* ráða *«խորհուրդ տալ» են՝* Karst, *Յուշարձան 422 ալթայ.* ur, *չազաթ.* uruk, *հաքութ.* urutu *«սերունդ, խնամեալ» են՝ Պատահական նմանութիւն ունի չին.* 兒子 örh²-tse³ *«որդի»՝*

ԳԻՒ.—Մշ. որդ՝ի, *Սչ.* որդ՝ի, *վսրդ՝ի, Զթ.* վորդ՝ի, *Ախց. Խրբ. Կր. Տիգ.* որբի, *Ակն.* որբի, վորբի, որբդի, *Սլմ.* վորբի, *Երև. Շմ.* վորբի, *Ննխ.* որբի, օշրի, *Ռ.* վորբի, որբբի, *Պլ.* որբի, որդդի, *Վն.* վորոի, *Ագլ.* վո՛որի, *Տփ.* վո՛ւրբի, *Մկ.* տրար՛, *Ղրբ.* վրէ՛րբի, *Մրզ.* վրի՛րբը՛: *Նոր բառեր են* որդամեռ, որդեաէր, վարպետորդի, տնորդօ՛ *«տնով-տեղով» (Համմ. մհյ.* տունորդօ՛ *Ուռհ. 315, 370)՝*

ՓՈԽ.—Յոյն պատմիչներից Կոստանդին Պերփերոժէն կայսրը իր Պատմութեան մէջ երկու անգամ յիշում է Հունգարացոց նախնական անունը՝ Σαβαρτοιάσφαλοι *(կարդա՛* Սավարտիա՛սփալի): J. Túry *Հունգարացի գիտունը* Századok *թերթում (1897, էջ 317—403) աշխատում է ցոյց տալ թէ յոյն բառի առաջին մասն է հյ.* Սևորդի, *իսկ երկրորդը՝ յն.* ἀσφαλεῖς *«արի, ամուր»՝ Ըստ նոյն հեղինակի՝ Սևորդիները Մաճառ ազգի նախնիքն են. հաստատուած էին Պարսկաստանում և երկար ժամանակ անկախ մնալուց յետոյ՝ Հայոց իշխանութեան հպատակեցան. 921-ին Կոստանդին կայսեր դէմ պատերազմի դուրս եկան (տե՛ս ՀԱ 1898, 88ա)՝ Թօփչեան,* Politische und Kirchengeschichte Arm. 1905, *էջ 201 նոյն Սևորդիներին է կցում Կոստ. Պերփերոժէնի* Σερβότιοι *ձևը* (De Cerem. aulae Byzant. II, 48, 687) *և արաբ պատմիչ Մասուդիի* سیاوردی siyāvardī *ձևը՝ Ըստ Մասուդիի սրանք հայ էին և քաջ ժողովուրդ. նշանաւոր էր յատկապէս մի տեսակ պատերազմական կացին, որ իրենց անունով կոչւում էր* السّاوردّيّة assāvardiyya:

ՈՐԴՆ, ն *հլ.* (–դան, –դուեմ, –դանց) *«որդ» ՍԳր. Փարպ. որից ճնդիկ որդն «շերամ» Վեցօր. 176. որդան կարմիր կամ պարզապէս որդան Ես. ա. 18. Յայտ. ժբ. 15, 12. Սարկ. քհ. որդնալից Գծ. ժբ. 29. Ոսկ. մ. ա. 4 և փիլիպ. իա. որդնածին Արծր. որդնաներ Նար. որդնիլ Մամիկ. Ոսկիփ. Վրք. հց. որդնոտ, որդնոտիլ (Նոր բառեր)՝*

Klaproth, As. polyg. 106 *գերմ.* wurm *և դան.* orm *հոմանիշների հետ՝ ՆՀԲ յիշում է Թրք.* qurd *«որդ»՝ Հիւնք. յն.* ὀρταλίς *«ընդհանուր անուն ձագուց անասնոց»՝* Patrubány SA 2, 12 *յն.* ἄρθρον *«յօդուած»՝ Սագրզեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձան 406 սումեր.* ruta *«մի տեսակ որդ» և կամ «որդերի խումբ», Թրք.* qurt *«որդ»՝ Թիրեաքեան, Արիահայ բռ. 303* Vṛtra *յատուկ անունից՝*

ԳԻՒ.—Մշ. որդ՝, *Սչ.* վորդ՝, *Սլմ. Վն.* վորբ, *Երև. Ռ.* վորբ, *Գնձ.* ճորբ, *Խրբ. Կր.* որբ, *Ննխ.* վորբ, վօշբ, *Տփ. Ախց.* որբուեմ *(որ թէև յոգնակի ձևն է, բայց իբր եզակի է գործածւում)՝ Պլ.* որբ, *Ալշ.* ւորբ, *Ասլ.* էօ՛րբ, էօ՛ր*, *Ղրբ.* վրէ՛րբնր, *Շմ.* վէորբնր, *Սեբ.* վէրբ, *Մրզ.* վրի՛րբ, *Սվեդ.* վիրբ, *Տիգ.* վրրբ, *Հճ.* վոյդ՝, *Զթ.* իւյդ՝, իւրդ՝, *Ագլ.* իւռնր *«որդ» (որից և է՛ռնիլ «որդնոտիլ, որդնիլ»)՝*

***ՈՐԴՈՒԻԿ** *«ուղղափառ». ունի միայն Բառ. հրեմ. էջ 255՝*

=Անշուշտ յն. ὀρθός *«ուղիղ, ճիշտ» բառն է. Համմ.* ոբրոդոքս՝—*Աճ.*

ՈՐԵԱՐ, ո *հլ. «մարդիկ, ժողովուրդ» Ծն. լդ. 21, 22. խգ. 24. Ոսկ. ես. և մ. ա. 2. բ. 10. Եփես. փիլիպ. երբ. 551. Եւս. քր. Կորիւն. Ագաթ. Կոչ. Սրգն. մտթ. 462. Անկ. գիրք առաք. 306.—կրճատուած՝* որեր *Շնորհ. եգես.* оrեr *Սարգ. բ. յհ. (ա տպ. էջ 772 այսպէս, իսկ բ տպ. էջ 610* որեարաց). *որից* ազատորեար, հայորեար, խաչորեար, լաւորեար, ծառայորեար *(բոլորն էլ Փարպ.),* աւագորեար *Ոսկ.՝*

=Կազմուած է –եար *մասնիկով (հաւա-*

քական, յետոյ դարձած յգ. -եr) *nr «մարդ» բառից, որ այլուստ անծանօթ է. ա՛յս է հաստատում nրեանք 84. կթ., որ կազմւած է նոյն *nr արմատից՝ -եանք մասնիկով։

Այս մեկնութիւնը տուաւ նախ ՀՀՐ։ Նոյնն է հասկանում նաև ՆՀՐ՝ մեկնելով «nrf, njf կամ arf, իբր այրեար»։ Նոյնը դարձեալ Այտնեան, Քնն. քեր. 79։ Bopp, Gram. comp. 2, 37 կասկածով այr բառից է դնում։—Տէրվ. Մասիս 1881 մայիս 11՝ մեկնում է վերի ձևով և nr դնում է նոյն ընդ այr, լտ. vir: Նազըճեան, Պատկեր 1890, էջ 198—209 nr «քաջ, քաջարի մարդ», հնագոյն nir ձևից, արականն է nirի բառի և գալիս է սանս. vira բառից։ Patrubány SA 1, 195 -եար յոգնակերտ մասնիկով nr բառից, որի հետ նոյն են յն. ὀρσω, հհիւս. örr, հսաքս. aru, անգսք. earu «ժիր, կորովի»։ Մառ, Грам. др. арм. яз. 97 և ЗВО 1, 172—3 իբրև իր դիւան է դնում -եար յոգնակերտով՝ nr «իշխան» բառից. այս վերջինը կցում է *rar բառին, որ գտնում է նաև նախարար բառի մէջ և երկուսը միասին հանում է զնգ. ratu, պհլ. radh «իշխան» ձևից. սրան իբր ապացոյց է համարում իրանեան Ναχοβαγάν, نخورکان Nax^{w}argān, نخوار naxavār տիտղոսներն ու անուններըր, որոնք հյ. *նախաար ձևից դնելով՝ կցում է նախարար բառին։ Գ. Փաոնակ, Անահիտ 1904, էջ 26 բաբել. ur «հզբայր, օգնական»։ Patrubány ՀԱ 1906, 56 հնխ. orīor-es «ծնունդք, սերունդք» բառից, իբր լտ. origo «ծնունդ», orior «յառնել», յն. ὄρνυμι «շարժել», հյ. յառնել ևն։ Pedersen. Ցուց. դեր. 36 նոյն է համարում ir<իր դերանուան հետ. հմմտ. ձևի համար՝ հյ. nրիշ, nրոյն, իմաստի համար՝ ռուս. լեհ. չեխ. osoba «մի անձ», որ հսլ. soboja փոխադարձ դերանուան գործիականն է։ Նոյն, Հայ. դր. լեզ. 223 արմատը դնում է nr «մի անձ»՝ տարբեր nr յարաբերականից և որ կենդանացած է համարում nրն nr «այն անձը որ» ձևի մէջ։ Սագրեան ՀԱ 1909, 334 սումեր. ur «որ, մարդ» է հյ. nr։ Karst, Յուշարձան 403 սումեր. eri «մարդ», 408 սումեր. ur «մարդ»։ Պատահական պիտի լինի վրաց. ერი ერի, ჭერი ճերի «ժողովուրդ», որ դնում է Աճառ. Արրատ. 1910, 181 և որ չի ընդունում Ա. Շահնազարեան, Արրատ. 1910, 572։ (Վերջինս ասում է թէ nրեար գործածւում է միայն ազնուականների համար. ճիշտ չէ այս. հմմտ. Ծն. լդ. 21, 22, Սարգ. բ. յհ. Անկ. գիրք առաք. 306, բոլորն էլ սովորական մարդոց համար գործածուած. առաջին երկուսի դէմ էլ յն. ἄνθρωποι. հմմտ. մանաւանդ ծառայրեար բառը, որ ցոյց է տալիս թէ ծառաների համար էլ կարելի է nրեար ասել)։ Grammont MSL 20, 224 ցեղակից է դնում nr յարաբերականին։ Ղափանցեան, Նոր ուղի 1929 յնվ. էջ 339 nr «իշխան, տէր»։

ՈՐՆԻ «բոլոր զրևանդ բոյսը. aristolochia rotunda?» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 2410։—եթէ -ենի համարուի բուսական մասնիկ, արմատը կլինի nրի։ Հմմտ. հյ. nրի «ագռաւ»։

Որընդովնիկ տե՛ս Ուլն։

+**ՈՐՔ**, ու հլ. «կովի կամ եղնիկի ձագ, հորթ, մոզի» ՍԳր. որից nրթագլուխ Եփր. թգ. 364, 427. Մծբ. nրթուկ Ոսկ. մ. բ. 26. nրթիկ Երզն. մտթ. nրթագործուրիւն Տօնակ. Վրդն. ծն. մատաղորթ Եփր. թգ. 365. Մծբ. եղնորթ Եւագր. նոր գրականում ընդունուած է գաւառական նորթ ձևը։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. porthu- ձևից. հմմտ. յն. πόρτις, πόρταξ «հորթ, երինջ, փոքր տղայ կամ աղջիկ», սանս. पृथुक prthuka- «մանուկ, տղայ, անասունի ձագ», կիմր. erthyl «օրպակաս ձագ», erthylu «ժամանակից առաջ ծնիլ», հսլ. zaprŭtŭkŭ «մաշկաձու, թերակազմ ձու», չեխ. spratek «օրպակաս հորթ», ուկր. vyportok «վիժուածք», հրգ. far, farro, մրգ. varre, անգսք. fearr. հհիւս. farre, գերմ. Farre, հոլլ. var, varre «գլիկ, մատաղ ցուլ», մրգ. verse, հոլլ. vaars, գերմ. Färse «երինջ» (գերմ. *farz, *fars նախաձևերից)։ Բոլորի նախնական

արմատն է հնխ. per, por *«ծնիլ, ձագ բերել». համմտ. լիթ.* periù *«թխսել», յն.* πόρις *«հորթուկ, ձագուկ», լտ.* pario, peperi *«ծնիլ, երկնել, տղայ բերել»* (Boisacq 804, Walde 562, Pokorny 2, 41 *և* 49, Kluge 131, Petersson KZ 47, 271—273): *Այս նոյն խրմբին է պատկանում նաև հյ.* որդի *և որովհետև հնխ.* t *տալիս է հյ.* r*-ից յետոյ* d, *ուստի հյ.* որդի *յառաջանում է հնխ.* portiyo- *ձևից, իսկ* որբ<*հնխ.* porthu- *ձևից, որի* p *նախաձայնը աւելի հաւատարմութեամբ պահում է դեռ գտ.* fiorp:—*Հայերէնի հետ պատահական նմանութիւն ունին ասոր.* ܦܪܛܐ fartā *«փոքր ոչխար», արամ.* פרתא pārtā *«կով», արաբ.* فرّ farr *«հորթ», եբր.* פר par *«ցուլ», որոնց համար կարծիք կայ թէ փոխառեալ են հնդևրոպականից:*

Նշ՛ր որդի *բառից:* Lag. Urgesch. 730 *և* Ges. Abhd. 172 *կցում է սանս. և յն. ձևերին:* Müller SWAW 38, 579 *են յն. բառի հետ:* Հիւբշ. Arm. Stud. § 232 *ասում է թէ սպասելի էր հյ.* *հորդ *ձևը (նախաձևը ընդունելով* port-): Bugge, Btrg. 10 *նախաձևը դնում է* *porthu- *և ո՛չ* *portu-: *Այս մեկնութիւնը անապահով է համարում Հիւբշ. 483:—Հիւնք.* որոջ *բառից:* Jensen, Hitt. u. Arm. *կցում է հաթեան մի բառի, որից միայն* pa... *նախավանկն է կարողանում կարդալ:*

Գիր.—Մկ. ւորբիկ, *Վն.* վորբիկ, *Սլմ.* վորբիկ՝, *Ղրբ.* վրէրբ, *Մրղ.* վրՙրբիկ՝, *Ախց. Կր.* ֆiorբ, *Ալշ. Մշ.* ֆiorբիգ, *Խրբ.* ֆiorբ, ֆiorբուգ, *Տփ.* ֆiուրբ, *Սվեդ.* ֆիւրբ, *Ասլ.* ֆէօ՛րբ, ֆէօ՛ր* *Հմշ.* ֆէօշտ, *Ագլ.* ա՛որուկ, *Երև.* ֆօրբ, *Սչ.* ֆօրբ, ֆըրբ, *Սեբ.* ֆէրբ, *Ննխ. (գիւղերում)* ֆօրդ՝, ֆօշդ՝ *(Արդուինում* հորբ *նշանակում է «արջի թոժին»):* Նոր բառեր են որբանոց, որկաբող, որկանխոտիկ, հորբաթոկ, հորբաթող, հորբամայր, հորբատել, հորբատուն, հորբարած, հորբոտիլ:

+ՈՐԹ, ո *հլ. «խաղողի տունկը,* vitis vinifera L» *ՍԳր. «խաղող» Մագ. մեծ են. էջ 10 (ճաշէին յորթ, ի հաց և ի կոգի). որից* որթատունկ. *Մծբ.* որթափայտ *Եպիփ. բարոյ.* որթիւ *Փիլ. լին.* որթոց *Թր. քեր.:*

=Բնիկ հայ բառ. կազմուած է փոխաբերաբար նախորդից. նշանակութեան զարգացման համար համմտ. յատկապէս հյ. երինջ, *որ բուն նշանակում է «հորթ, կովի ձագ (էգը)», բայց նաև. նաև «խաղողի որթի մասն»: Նման երևոյթ են ցոյց տալիս նաև յն.* βλαστός *«ծիլ, սերունդ մարդու կամ ա նասունի» և յն.* μόσχος *«հորթ, անասունի ձագ. 2. ընձիւղ, շառաւիղ, ծիլ» (այս մասին տե՛ս* մոզի *բառի տակ):*

Նշ՛ր ուող, յուրթի, ուռեացեալ. *բայց յիշում է նաև լտ.* vitis *«այգի» և* vitulus *«հորթ», յն.* μόσχίον *«մոզի, հորթ, ճիւղ», որով ուղում է կապել* որթ *«հորթ» բառի հետ: Ըստ այսմ ուղիղ մեկնութիւնը տուած կլինի նախ Նշ՛ր: Նոյնը նաև* Lag. Arm. St. § 1746: *Հիւբշ.* Arm. Stud. § 232 *տրամադիր է ընդունելու—*Bugge, Btrg. 28 *հնխ.* gothr- *նախաձևից. համմտ. յն.* βότρυς *«խաղողի ողկոյզ». ըստ այսմ մեզ հետ գործ չունին այրան.* arδî, rδî, δri *«որթատունկ»,* hurδe, urδe, hurθ *«բաղեղ»: Հիւնք. լտ.* hortus *«պարտէզ»: Հիւբշ. 483 մերժում է թէ՛ յն.* βότρυς *և թէ հյ.* որթ *«հորթ» բառին կապելը:* Pedersen BB 20 (1894), 231 *և յետոյ* KZ 36, 341 *իբր բնիկ հայ կցում է այրան.* harδî, arδî *և* δri *«որթ» ձևերին: Վերի մեկնութիւնը վերջին անգամ երինջ բառի համեմատութեամբ հաստատեց Միւրան* SA 1, 304:—*Մատ* ЗВО *25, 306 հյ.* վարդ, *յն.* ῥοά *«նուռ» են բառերի հետ յարեվրասական արմատից:* Petersson KZ 47 (1916), 271—273 *հնխ.* perth- *«ձող, ցուպ» արմատից, որից դնում է նաև սանս.* kapṛth- *«առնի, վարոց», լտ.* pertica *«ձող», յն.* πτόρθος *«ծիլ, ընձիւղ», հսլ.* prątŭ *«ճպուռ» (=ռուս.* прутъ *«ճիւղ, ձողիկ»), և հյ.* որթ *«հորթ»=սանս.* pṛthuka *«հորթ»:* Oštir. Btrg. alarod. 47 *այրան.* arδi *«որթ» և բասկ.* arθo *«գինի» են:* Pokorny 1, 183 *ընդունում է* Pedersen*-ի մեկնութիւնը և դնում է հնխ.* ort- *«որթ» բառի տակ, իսկ 2, 49 ընդունում է* Petersson*-ի*

մեկնութիւնը և դնում է հնխ. perth- *«ձող» բառի տակ։*

Գիմ.—Առանձին կայ միայն Ագլ. ուոբ *«խաղողի որթ». բայց բարդուած ձևով ունինք* ոբբյօա *«խաղողի յօտած ճիւղերը» (Բզ. Հզր. Խրբ. Մշկ. Ջն. Սպ. Սվ. Ք. Տիգ. որոնցից Խրբ.* օրբօղ, *Տիգ.* օրբօղ, վօրբօղ.— *իսկ Մշ.* օոբօղ *«խաղողի ճիւղ՝ որթի վրայ). որից Խրբ.* օրբօղիլ *«որթը յօտել»։*

Փոխ.—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից է դնում ալբան. ourth *«պատառուկ» (?)»։—Հյ.* ոբբյօա *ձևից է Այնթապի հայոց և Թրքաց մէջ գործածուած* օրբուա *հոմանիշը (Բիւր. 1900, 668)։*

ՈՐԹ, ո *հլ. «կողով, քթոց» Սգ. ձ. 7. Խոր. գ. 27. էր ընդ նզր. 44. որից* ոբբաւոբ *«մէջքին կողովով մշակ՝ որ աղբ ևն է թափում» Ոսկ. եփես. 782։—Նորայր, Յուշարձան 168 ուղիղ ձևը համարում է* ոբդ։

ՆՀԲ հանում է ոբբ *«խաղողի որթ» բառից, իբր սրա ճիւղերից շինուած։ Տէրվ. Նախալ. 70 կցում է սանս.* kart, *յն.* κάρταλος *«կողով», լտ.* crates *«հիւսկէն գործուածք, վանդակ», գոթ.* haurds *«պատած տեղ, դուռ» բառերին, իբրև հնխ.* kart *«հիւսել» արմատից։*

***ՈՐԹՈԴՈՔՍ,** ի–ա *հլ. «ուղղափառ, ուղղադաւան քրիստոնեայ» Բուզ. 83, 101, Սիբեր. 129 (գրուած* ոբթոյդօ՚ս), *Կնիք. Հաւ. էջ 364 (գրուած* ոբթոդոս). *որից* ոբթոդոքսական *Թէոդ. մայրագ.—Բառս այժմ յատկացուած է յոյն դաւանութեան և գրւում է բստ հնչման՝* օրթոդոք՚ս։

=Յն. ὀρθόδοξος *«ուղղափառ». կազմուած է* ὀρθός *«ուղիղ» և* δόξος *«փառք» բառերից, յոյնից ևն փոխառեալ նաև լտ.* orthodoxus, *ֆրանս.* orthodoxe *ևն։—Հիւրշ. 369։*

Հներից ուղիղ է ստուգաբանում Ոսկ. եփես. 795. «Նոքա յորթոդոքսացն կրօնիցն իցեն, այսինքն յուղղակարծից կամ թէ որթ ուղիղ փառաւորութիւն տայցեն. քանզի յերկոսեան լսի որթոդոքսքն»։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

***ՈՐԹՈՓՆԻԱ.** *«շնչարգելութիւն, դժուարաշնչութիւն». մէկ անգամ գործածուած է Եւս. պատմ. 46. «Եւ դարձեալ ի թասել ոգւոցն, որ ասի ի յոյն անդր* ոբթոփնիա *(տպ.* ոբթափոնիայ*) և դասպինիա և ճգնութիւն նեղութեան զամենայն անդամս նորա»։*

=Յն. ὀρθοπνοία *«շնչարգելութիւն» բառն է, որ Եւսեբեայ ասորի թարգմանութեան* ܬܥܒܝܪܐ *տառադարձութիւնից փոխանցուած է հայերէնին։*

Ուղիղ մեկնեցին Merx, The eccl. hist. of Euseb. *էջ XV և 46, Վարդանեան ՀԱ 1914, 638 և 1920, 332, Բառաք. դիտ. բ. 77։*

ՈՐԻ *(սեռ.* ոբւոյ*) «մի տեսակ ագռաւ» Օր. ժգ. 14. Վեցօր. 167, 168, 175։*

Böttich. Wurzelforsch. § 10 *բառս ձևի հետ։* Pictet *բ. տպ. Ա. 573, 587 գոթ.* ara, *պրս.* ālah *«արծիւ» ևն բառերի հետ։ Ադոնց* REA VII, 1 (1927), 194 *դնում է վրաց.* or-bi *«արծիւ» բառի հետ. տե՛ս և* ուրուր։

***ՈՐԻՉ** *«բրինձ». մէկ անգամ միայն ունի Ագաթ. յետնաբար ունինք* բռիզ, ռուզ, բռուզ *Բժշ. (ՀԲուս. § 2412 և § 2672). սխալ գրրուած* ոբևզին *(Բառ. երեմ. յաւել. էջ 570)։*

=Յն. ὄρυζα, ὀρύζιον, *նյն.* ὀρύτι, ῥύζι *հոմանիշից։ Այս բառը տարածուած է ընդհանուր լեզուների մէջ, միմեանցից փոխառութեամբ. ինչ. լտ.* oryza, risium, *իտալ.* riso, *սպան. պորտ.* arroz, *ֆրանս.* riz, *ռում.* orez, riškašŭ, *բուլգար.* oriz, *ալբան.* oris, urez, *հունգ.* riskása, *լեհ.* ryž, *ռուս.* рисъ, *մրգ.* rīs, *գերմ.* Reis *(փոխառեալ իտալերէնից.* Kluge 392), *անգլ.* rice, *հոլլ.* rijst, *գնչ.* rizos, *ասոր.* ܪܘܙܐ rūzā, *ն. ասոր.* rəzza, *արաբ.* أرز aruz, *վրաց.* ორიზა որիզա, *բոլորն էլ «բրինձ» նշանակութեամբ, իսկ լազ.* oriza *«ձաւար»։ Բառիս բուն ծագումը Քոչինչինից է, ուր բրինձը աճում է մեծ առատութեամբ և վայրենի վիճակի մէջ* (Boisacq 712). *այստեղից բառը նիւթի հետ անցել է Հնդկաստան (համմ. վեդ.* vrīhi- *«բրինձ»), յետոյ Պարսկաստան (համմ. իրանեան նախաձևը *vrinji-, առանց ռնգականի աֆղան.* vriže), *որից փոխառեալ է յունարէնը (արդէն ն. Ք. ե դարից) և որից էլ տարածուել է ամբողջ Եւրոպա։ Հայերէնի մէջ պարսկական*

աղբիւրից փոխառեալ է բրինձ, յունականից որիզ, *արաբականից էլ* ռուզ, բռուզ (Horn § 208):—*Հիւբշ. 369։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ. նոյնը նաև Lag. Ges. Abhd. 224, *Հիւբշ.* KZ 23, 402 *եւն։*

ԳԻՒ.—ՋՓ. ornuq, *Հճ.* ɯrnuq, *Սվեդ.* prroq, *բոլորն էլ արաբականից։ Նոր բառ է* ոռիզապուր *«փիլաւ»=Սվեդ.* prrուզաբէօր *«շիլա, լապա»։*

Որիշ *տե՛ս Որոշ։*

***ՈՐԻԿԱՆՈՆ** *«գուիրակ». ունի միայն ՋՔ, առանց վկայութեան։*

=Յն. ὀρίγανον «գուիրակ», որից փոխառեալ են նաև լտ. origanum, *ֆրանս.* origan *հոմանիշներբ։—Աճ.*

ՈՐԻՅՍ *«կրճիմն կամ պահանակ». ունի միայն Բառ. նրեմ. էջ 255։*

***ՈՐԻԻՔՍ** *«այծքաղ կամ վիթ». մէկ անգամ ունի Փիլ. եւ. 533։*

=Յն. ὄρυξ նոյն նշ. որից նաև լտ. oryx, oryges։

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

ՈՐԼՈՐ *(եթէ չէ՛ ուղիղի* nr՛ ɯr*) «մի տեսակ թռչուն». մէկ անգամ ունի Վրդն. ծն.։*

+ՈՐՄ, *ո հլ. «ստամոքսից վեր եկած կերակուրը» Նար. յովէդ. Վստկ. 169. Բրս. մրկ. որից* ոռծալ, *կամ նաև* ոռծկալ, ոռծկալ, ոռծկրալ *«կերածը վեր գալ, սիրտը խառնուիլ. փսխել» Կանոն. Պտմ. աղէքս. Մխ. առակ. Բրս. վաշխ. Ասող. Վրդն. առկ. 16 (Արջն ի ձմեռն 40 օր ի յարգելանոցն մտանէ. յառաջ կերթայ և խմէ շատ ջուր, որ կծտայ (sic) և որչափ որ կերակուր կայ ի փորն, զամէնն արտաքս ընկենու և սրբէ զփորն.—ուղղելի է* ոռծկտայ). ոռծացուցանել *Լմբ. առակ.* ոռծացուցիչ *Մագ. Սարգ.* ոռծոց *կամ* ոռծանք *«փսխուներ» Կանոն. 49 (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 166)։ Սրանից է կազմուած նաև* ոռծկուտ *«սիրտ խառնող» Մխ. այրիվ. էջ 43 (Մինչև հասին յօդն ործկուտ և մղձուտ.—օդի բարձրացոյն խաւի համար է ասում). Նոյնը նաև Տաթև. Հարց. 297։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. rug- *արմատից, որի բարձր ձայնդարձն է* reug-. *ցեղակիցներն են՝ յն.* ἐρυγή *«գկռտոց»,* ἐρυγγάνω *«գըկռտալ»,* ἐρεύγομαι *«փսխել, գկռտալ», լտ.* ructo *«գկռտալ, փսխել»,* ērūgo *«նողկալ, գկռտալ», հսլ.* rygają się *«սիրտը խառնել», լեհ.* rzygać *«փսխել», ռուս.* рыгать, отрыгáть *«գկռտալ», լիթ.* raugmi, raugiù *«սիրտը խառնել», անգսք.* rocettan *«գկռտալ»,* edroc *«որոճում», Հրգ.* it-ruchen *և մրգ.* iterücken *«որոճալ», նորվ. գռ.* jort *«որոճ», պրս.* آروغ *ārōγ «գգայոնք»* (Pokorny 2, 357, Trautmann 244, Ernout-Meillet 835, Boisacq 276, Walde 259, Horn § 15):—*Հայերէնի մէջ ո յաւելուած է ր-ի պատճառաւ. բուն ձևն է *որուծալ, որից անշեշտ ու-ի անկումով յառաջացել է* ոռծալ. *արմատը պիտի ունենար *որուծ ձևը և ո՛չ թէ* ոռծ, *որ յետնաբար ձևացած է* ոռծալ *բայի վրայից։—Հիւբշ. 483։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. KZ 23, 395 *և* 405, Arm. Stud. § 233. *Նոյնը նաև* Meillet MSL 7, 57:

ԳԻՒ.—Մկ. ɯռծկալ, *Ջղ.* վռոծկալ, *Սլմ.* վռոծրկալ, *Վն.* վռոծկալ, վռոծկաալ, *Մրղ.* վրէռծրկալ, վրէռծկալ, *Մշ.* որձ՛րգալ *(ըստ Բէնսէյի՝* ջոռձգալ), *Ալշ.* ոռձրգալ, *Կր. Տփ.* ɯրցկալ, *Երև.* վռոցկալ, *Շմ.* ֆէռծիգիլ, ֆէռծիւգիլ, էռձիւգիլ, *Ննխ.* ոռձգալ, ոձգալ, գռձգալ, գռձգալ, *Ագլ.* բռձրտէլ, *Սեբ. Եւդ.* ոզգալ, *Ախց.* կռծկալ, *Հմշ.* գռյձգալ, *Սվեդ.* ըրըզգըդիլ, *Խրբ.* գռձգ՛ըլդալ, *որոնք նշանակում են «գկռտալ, կամ սիրտը խառնուիլ, թափելու փսխելու մօտ լինել, կամ սիրտը թափել, փսխել»։*

ՓՈԽ.—Վրաց. რ₹ღევ₹ *ռծդ՛ևվա «գկռտալ, փսխել»։*

Ործխիդ. *անասոյգ բառ. տե՛ս Վարժ։*

Որկաճոճ *տե՛ս Երդիռն։*

[ՈՐԿԵՆ *«մի տեսակ սղոց». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Արծր. Հրտր. Պատկ. էջ 257.*

Ըստ Թոփչեան, Mittheilungen des Seminars für Orient. Spr. Berlin 1904, *էջ 145։ Սխալ է. նշանակում է պարզապէս «ինչպէս». ինչպէս որ քիչ առաջ դործածած է «որպունակ հնչումն տանելով փայտիցն» (էջ 256)]։

ՈՐԿՈՐ, ո հլ. *(յետնաբար նաև ի հլ.) «ստուգն, կերակրի ամբողջ անցքը՝ կոկորդից սկսեալ մինչև ստամոքսը. ֆր.* oesophage, *գերմ.* Schlund *(ըստ Մէնէվիշեանի՝ ՀԱ 1887, 41). յայնաբար՝ շատակերութիւն։ Վիպաս. (խոր. ա. 11). Գ. մակ. է. 7, Նախ. աղ. Եւագր. որից* **որկորեայ** *«շատակեր» Եւագր. Ոսկ. Եփր. պհ.* **որկորուստ** *Ոսկ. խչ. և գծ.* **որկորամոլ** *Պիտ. Արշ.* **որկորաժէտ** *Սանահն.* **որկորաժեռութիւն** *Նոննհ. 70.* **որկորատութիւն** *Գ. մակ. զ. 26. Առակ. իբ. 7. Եւագր. աստում է նաև* **որկրամոլ** *Ոսկ. յհ. ա. 43.* **որկրամոլութիւն** *Խոսր. Վրք. հց.* **որկրագաճ** *Յայսմ. են, որոնք ենթադրում են կա՛մ *որկուր ձևը և կամ աւելի հաւանաբար կազմուած են միջին ո-ի անկումով։*

=Թերևս բնիկ հայ բառ՝ հնխ. $g^{w}er$- *արմատի* $q^{w}or$- *ձայնդարձից, որոնց ժառանգները տե՛ս կեր և կոկորդ բառերի տակ։ Ըստ այսմ հյ.* **որկոր** *պիտի ծագէր հնխ.* $g^{w}or$-$g^{w}or$- *կրկնականից։—Դժուարութիւնը նախաձայնի անկման մէջ է. հնխ.* g^{w} *ձայնը կարող էր թերևս ընկնել o ձայնաւորի առաջ բառասկիզբը, ինչպէս ունինք* $k^{w}o$-*>*ո, *ով. բայց այդ երևոյթը չի նկատւում կոկորդ բառի մէջ։ Թերևս ունինք այստեղ մի ձայնական օրէնք, որի մանրամասնութիւնները յայտնի չեն։*

Հներից Մաթ. եւագր. 5 **որկորբաութիւն** *մեկնում է «ստութեան որկոր»։ —ՆՀԲ լծ. յն. κόρος «կոկորդ»։ Տէրվ.* Altarm. 9, *Նախալ. 13, 43, 78 տալիս է վերի մեկնութիւնը՝ կցելով յն. γέργερος (կապադովկ. γοῦργοῦρι), սանս.* gárgaras, *լտ.* gurgula, *հրգ.* querechela, *գերմ.* Gurgel, *հյ. կոկորդ բառերին։ Նոյնը ընդունում են նաև* Bugge Btrg. 25, Meillet MSL 8, 160 *և* 279՝ *իբր հնխ.* gorgóros *ձևից՝ նախաձայնի անկումով։ Հիւբշ.* IF Anz. 10, 49 *չի ընդունում այս մեկնութիւնը, որովհետև պատճառ չի դտնում որ նախահայ *կորկոր ձևը դառնար* **որկոր**, *քանի որ կան* **կարկամ, կարկաչ, կարկատ, կերկեր** *են ձևերը։ Նազրճեան, Արևելք 1844 հոկտ՛ 17 ենթադրում է որ բուն նշանակութիւնն է «շատակերութիւն» և այս իմաստով համեմատում է սանս.* vṛkō-dara *«գայլորովայն=շատակեր» բառի հետ։* Karolides, Γλ. συγκρ. 81 *լտ.* vorare, *յն.* βιβρώσκω *և յատկապէս կապադովկ.* γουργίζω *«կլանել»։ Հիւնք.* **կոկորդ**-*ից։*

+**ՈՐՁ** *(յետնաբար ի հլ.) «արու» (թէ՛ մարդոց և թէ՛ անասունների համար գործածուած) Մաղ. ա. 14. Կոչ. 105. Բուզ. «կարծր, պինդ» (իրերի համար գործածուած) Տոմար. Տաթև. ամ. 235. «արու (բոյս)» Վստկ. «չոր, անբեր, կորդ» Օրբել. 58 (Ճըգնաւորն Վասակ... բնակեցաւ յորձ բլրին դամս երեք և դամիսս վեց՝ ի խղի միում).—իմաստի համար հմմտ. գւռ.* **որձ** *(Կր.) «բիրտ, չոր». օր.* **որձ կնիկ. որձաբողկ** *(Ղրբ.) «դահացած՝ սերմի գնացած կարծր բողկ».—որից* **որձակոտոր** *Բուզ.* **որձամոլ** *Հին բռ.* **որձաքար** *«մի տեսակ ամուր քար» Ա. մկ. ժ. 11. Մծբ. (տե՛ս ՀԱ 1925, 295).* **որձևէգ** *Կոչ. միորձի «մէկ ամորձիք ունեցող» Ղևտ. իա. 20.* **յորձ** *«արու ոչխար» Ովս. ե. 6 (գրծ.* **յորձիւ***). Մանդ. գ.* **որձի** *«ոչ-կուրտ» Մխ. դտ. էջ 267. յգ.* **որձիք** *«արուները» Վստկ. սրանից նաև ամ- մասնիկով՝* **ամորձիք** *կամ* **ամորձք** *«ձուանք, երկուորիք», որից* **ամորձատ** *«ներքինի, կուրտ»,* **ամորձատել** *«կրտել» (իբր գւռ. բառ ունի ՆՀԲ)։ Գործածւում է նաև մի քանի բուսական անունների մէջ. այսպէս* **որձախոտ** *կամ* **որձխոտ** *«վայրի քամոնի,* typha*» ՀԲուս. § 2413.* **որձկոճ** *«կոճապղպեղ» Կամրկպ. (ՀԲուս. § 2414), որ և պարզապէս* **կոճ** *«զէնճէֆիլ» Բառ. երեմ. յաւել. 570։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. org hi- *ձևից. հմմտ. սանս.* -r̥̄ji- *«ամորձիք» (պահուած է միայն* avír-r̥̄jika- *«ամորձիքները բաց» բարդի մէջ), զնդ.* ɔ∫ɛ́ʃ ərəzi *«ամորձեաց պարկը, փոշտ», յն.* ὄρχις *«ամորձիք»,* μόνορχις *«միորձի»,* ἔνορχος *«որձի, ոչ-կուրտ», ալբան.* herdɛ *«ամորձիք», լիթ.* eržilas *և լեթթ.* erzelis *«չկրտած՝ մատակախաղ ձի», միւլ.* uirgge (uirghe) *«ամորձիք, առնի» (նշանակութեանց զարգացման համար հմմտ. գւռ.* **պլոր** *«ամորձիք»=Ջղ. «առնանդամ»),*

ռուս. кнорозъ, *լհհ.* kiernoz *«վարազ»=բէ-լոռուս.* knóřěz *«միորձի, ոչ-բոլորովին կըր-տած» (վարազ կամ ձի), որոնք ծագում են հին* *kŭrno+orzi *«ամորձիք» բարդութիւ-նից* (Boisacq 721, Berneker 664, Traut-mann 71, Pokorny 1, 182—3):—*Հիւբշ. 483։ ՆՀՔ յն.* ἄρσην *«արու» և* ὄρχις *«ա-մորձիք» բառերի հետ։ Վերի մեկնու-թիւնը տուաւ նախ Հիւբշ.* KZ *23, 25 և 33։ Տէրվ.* Altarm. 56—57 *այս մեկնու-թիւնը մերժելով՝ կցում է առձակ ար-մատին, որ տե՛ս* Müller SWAW 86, 286 *վերի ձևով։ Հինք. յն.* ἄρσην *-ից* **որձ**, *իսկ* **որձաբար** *դնում է յորձաքի, յորդ են բառերի հետ։ Սրմագաշեան, Արմէնիա* **ամորձատ** *կցում է ռում.* amorțit *«թմրութիւն» բառին։* Karst, *Յուշարձան 408 սումեր.* uru *«արու» բառի հետ։ Ղաֆադարեան* ЗВО *23, էջ 352* **ամորձիք** *բառի մէջ* **ամ-**=է *համա-պում զնդ.* yama *«զոյգ»։*

ԳԻՒ.—Մշ. **որձ՝**, *Խրբ.* **որձ՝**, *Մկ.* **ուրց**, *Սլմ.* **վորց**, *Ախց. Կր.* **վորց**, *Ալշ.* **ուոց**, *Ջղ. Վն.* **վոոց**, *Երև.* **վոոց**, *Շմ. Սեբ.* **վէրց**, *Սվեդ.* **վըրց**, *Մրզ.* **վըՒրց**, *Հմշ.* **էօյց**, *Գոր. Ղրբ.* **վըէրց**, **վըրց**, *Ագլ.* **իւռձ.**—*որից* **որձակ** *«աք-լոր» (<Ջղ.* **վորձ՝ակ**, *Ղրբ.* **վըէ՛րցակ**, *Ագլ.* **է՛ռծոկ**), **որձակականչ**, **որձաբոդկ**, **որձածի**, **որձականուտ**, **որձայ**, **որձատու**, **որձեղէն**, **որձլեզու**, **որձխոտ**, **որձոիլ** *«բոյսը սերմի եր-թալ».—Ալշ.* **օռձա** *«ծաղկի գոխը, որձայ»։*

ՓՈԽ.—Pedersen KZ 40, 184 *հայերէնից է դնում Ֆինն.* oris *«յովատակ»։*

Որդան *տե՛ս Երգիռն։*

ՈՐՄ, ո *հլ. «պատ» ՍԳր. Վեցօր. որ և* **որմն** *Ա. Թագ. ժը. 11. Վրք. Հց. (յգ.* **որ-մուեք**). *որից* **որմզորմայն** *«պատից պատ զարնուելով» Կոչ. 11.* **որմած** *Բուզ.* **որմա-ծակ** *Ոսկ. ա. Թես. ա.* **որմածերպ** *Եփր. աւետ.* **որմայեց** *Ա. Թագ. ի. 25.* **որմաշէն** *Բուզ.* **որմարգել** *Ես. լա. 9=Ոսկ. Ես. 193. միջնորմ Եփես. բ. 14. խաղաորմ Երեմ. ժե. 12. Ագաթ. Բուզ.* **խաւորմ** *Վրդն. պատ.* **երե-որմեայ** *Ջրբ. սարկ. Բ. 105 (չունի ԱՔ).* **որ-մանկար**, **որմնադիր**, **որմնադրութիւն**, **տախ-տակորմ** *(նոր բառեր)։*

Böttich. Arica 76, 259 *պրս.* bārū *«պարիսպ» և* dī-vār *«որմ» բառերի հետ՝ նոյն,* Wurzelforsch. *§ 10* var *որ-մատից։* Lag. Urgesch. 229 *նոյն է դը-նում սանս.* *varman, *varma=*հյ.* **գեղմն** *բառերի հետ՝ իբր «ծածկող»։ Տէրվ. Նախալ. 106, 128 մ մասնիկով* var *«ծածկել» արմատից։* Bugge KZ *32, 22 հնխ.* *sormos *ձևից. հմմտ. հսլ.* chramŭ *«տուն», յն.* ὄρμος *«փողպատ, նաւ կապելու ցից»։ Այս մեկնութիւնը բոլորովին անստոյգ է համարում Հիւբշ. 483, որովհետև հսլ.* ch *այստեղ չի ծա-գում հնխ.* s*-ից։ (Մերժում են նաև* Ber-neker 397 *և* Pokorny 2, 500*)։ Հինք. յն.* ὅρμος *«ամրութիւն» բառից։* Bittner WZKM 14 (1900), 161 *լտ.* murus *«պատ»?* Patrubány *ՀԱ 1906, 56 հնխ.* or *«շարժիլ, վերանալ» արմատից. հմմտ. լտ.* orior *«ամբառնալ, վերա-նալ»։* Karst, *Յուշարձան 408 սումեր.* ur *«հիմ, պատ»։ Պատահական նմա-նութիւն ունին լտ.* murus *և գերմ.* Mauer *«պատ»։ Պատահական նմանու-թիւն ունի ասուր.* arammu *«պատ, պատնէշ», որ թերևս առնի «բաբան» է նշանակում* (Muss-Arnolt, Ass. Handwb. 102*ա*)։

ԳԻՒ.—Մկ. **ուրմ** *(յատկապէս նշանակում է «պարտէզի պատ»), Ջղ.* **վորմ**, *Խոջ.* **վօրմ**, *Ագլ.* **ո՛ւրման**: *Սրանից է կազմուած* **առորմի**:

ՓՈԽ.—Ըստ Patrubány SA 1, 312 *հայե-րէնից է փոխառեալ հունգ.* orom *«շէնքի կա-տարը, լեռան գագաթ». ըստ իս մերժելի է նշանակութեան տարբերութեան պատճառաւ. այսպէս նաև վրաց.* ორმო **որմո** *«փոս», ինգ.* **որմոյ**, *սվան.* **որմո** *«ծակ»։*

***ՈՐՄԻՈՒԿ** *(սեռ. -ի) «վզնոց, մանեակ». մէկ անգամ ունի Կիւրղ. ծն.։*

=Յն. ὁρμίσκος *«փոքր մանեակ». ծագում է* ὅρμος *«կապ, մանեակ» բառից, որից էլ փոխառեալ է հյ.* **հորմայ**:—*Հիւբշ. 369։*

Ուղիղ մեկնեց ՆՀՔ։

ՈՐՄՈՐ *«մի տեսակ չափ». Շիր. էջ 31 (իբր օտար բառ). «Յեգիպտացոց* **որմոր**, *որ է*

բարեժողով. և երթայեցիք վարին նովին չափով՝ յեգիպտացւոց առեալ»։

ՈՐՆԻ *«հացի ծառ.* fraxinus». *ունի միայն Տիրոյեան, Հանրագրութ. էջ 212. (բայց նրա բուն բառարանում չէ յիշուած)։*

ՈՐՈԳԱՅԹ, ի *հլ. «թակարդ, ծուղակ» ՍԳր. որից* որոգայթել *Եփր. աւետ.* որոգայթաղիր *Ագաթ. Ոսկ. ա. տիմ. յհ. բ. 15.* բազմորոգայթ *Խոսր.* գաղտնորոգայթ *Նար.։*

ՆՀԲ «որով գայթէ ոք»։ Տէրվ. Նախալ. 49, 107 հնխ. vargh *«խեղդել» արմատից։* Bugge, Beitr. 25—26 *ասում է թէ կապ չունի հսաքս.* wurgil *«չուան», հբգ.* wurgen *«խեղդել», հսլ.* vrŭzą *«կապել», լիթ.* werszti *«կապկպել» բառերի հետ՝ որոնք հայերէնի մէջ պահանջում են ձ. այլ կցւում է յն.* βρόχος *«որոգայթ, չուան» բառի հետ՝ իբր հնխ.* goroghəth- *ձևից, որ բուն պիտի նշանակէր «կոկորդ». Հմմտ. յն.* βρόχθος, *լտ.* gurges, gurgitis *«կոկորդ»։ Մէնէվիշեան ՀԱ 1890, 54 մեկնում է* որ–ո–գայթ *«ոտք գայթեցնող».* որ *«ոտք» նշանակութեամբ մի հին բառ է, որ ունին նաև* ար–ա–հետ *և* ար–ա–գիլ։ *(Այս մեկնութիւնը շատ դժուար է գրա-նում ինքը ՀԱ 1898, 253)։ Հիւնք. յն.* ἀράχνη *«սարդ, սարդոսայն» բառից՝* –այթ *մասնիկով։ Սարգիսեան, Բիւր. 1898, 484 իբր* հոր–ո–գայթ *«հորի մէջ գայթեցնող».* որ *նախամեսրոպեան մի բառ է՝ «խորութիւն» նշանակութեամբ, որից կազմուած են նաև* հոր, խոր, ձոր, ծորձոր։ Patrubány *ՀԱ 1908, 85* որո–+գայթ *բառերից. առաջինն է լտ.* rārus *«նոսր, ցանցառ»,* rete *«ցանց», իսկ երկրորդը՝ գամ բայի գոյականն է։*

ՈՐՈՓ, ո *հլ. «գաւաթ, հեղուկների մի տեսակ չափ» Ոսկ. պօղ. ա. 874 (յն.* κύαθος*) Ոսկ. ես. էջ 259 (դրծ.* որոքով*), էջ 260 (տպ.* որդաց*)։—Տե՛ս նաև* որոտ *«գաւաթ»։*

ՆՀԲ մեկնում է «բառ անծանօթ՝ որպէս ափ ձեռին կամ աման ինչ կամ կշիռ են»։ Ուղիղ մեկնեց նախ ԱԲ «բաժակ, գաւաթ, չրիղէն նիւթերու չափ մը», յետոյ Վարդանեան ՀԱ 1914, 639, Բառաք. դիտ. Բ. 81։

ՈՐՈՁ *«անասունների՝ իրենց կերածը երկրորդ անգամ ծամելը» Վեցօր. 192. Յղ. մովս. և դաւթի 78. փխբ. «խորհուրդ, մտածմունք» Ոսկ. մ. բ. 7. Սերեր. 179 (տպուած է* որոճան*, որ Վարդանեան ՀԱ 1914, 640 ուղղում է* որոճսն*). որից* որոճել, որոճալ, որոճիլ, որոճացուցանել *ՍԳր. Վեցօր. Ոսկ.* որոճային *Փարպ. մաճորոճ «մահ որճացող» (նորագիւտ բառ) ՅՀ. իմ. խոստ. 5։—Գրուած է նաև* որոջ։

=Թերևս բնիկ հայ բառ՝ հնխ. rod- *արմատից։ Այս արմատի ժառանգորդներն են սանս.* रद rad, rádati *«քերել, փորել, կրտրել, կրծել»,* रदन radana *«ատամ», լատ.* rōdo *«կրծել, պատառոտել»,* dentem dente rodere *«ատամները ծամել, ծնօտները գուր յոգնեցնել»,* rādo *«քերել, փորել, ճանկռել. փոցխել, ածիլել, խուզել, կտրել», կիմր.* rhathu *«հարթել, յղկել»,* rhatheil *«խարտոց»,* rhath *«հարթավայր», բրբտ.* raza *«ածիլել», հբգ.* rāzi *«կծուահամ», ինչպէս նաև «առնէտ» (բուն «կրծող») նշանակող գերմանական և ռոմանական բառերը, ինչ. հբգ.* ratto, *մբգ.* ratze, *գերմ.* Ratte, *հոլլ.* rat, rot, *անգսք.* raett, *անգլ.* rat, *դան.* rotte, *ֆրանս.* rat, *իտալ.* ratto: *Այս բոլորը տալիս են հնխ.* rēd-, rōd- *արմատները. հյ.* որոճ *նոյն պատկանում է այս խմբին, ենթադրում է* rod-. *դժուարութիւն է հանում միայն ճ, որ կարող էր յառաջանալ* dj *ձևից, բայց առհասարակ այս ձայնի հնդևրոպական ծագումը անստոյգ և անորոշ է։ Բառասկզբի* ո– *անշուշտ յաւելուած է՝ ր-ի պատճառաւ, ինչպէս ցոյց է տալիս գւռ.* արոճ, *որի նախաձայնը նոյն յաւելուածի աւելի սովորական կերպարանքն է։ Հմմտ.* Walde 639, Pokorny 2, 369, Kluge 387:

ՆՀԲ «իբր դործ որոջաց»։ Հիւնք. որոջ բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ Patrubány *ՀԱ 1908, էջ 26։*

ԳԻՒ.—Սրև. Կր. Մկ. Սլմ. օրօճալ, *Մրղ.* օռօճալ, *Ալշ.* օրօջալ, *Մշ.* օրօջալ, օրջալ, *Տիգ.* օրօջալ, *Գոր.* բրո՛ճալ, *Ախց.* օրճալ, *Խրբ.* օրջալ, *Երև.* ա՛րօճ աճել, *Տփ.* ա՛րօճ աճիլ,

Ջղ. օրօջ աճել, *Ղրբ.* ա՛ռուճ աճել, *Ագլ.* ա՛ռուճ արիլ, *Շմ.* ուռօճիլ, *Սվեդ.* իրջիլ, *Համշ.* օյջուշ, *Ննխ.* գօռջալ, *Ասլ.* գէօրջալ *(երկուսն էլ կազմուած սահմանականի կ մասնիկի կցումով)*։

ՈՐՈՃ *«ուղունքի նման մի խեցեմորթ, որ գետափնեռումն է գտնում». ունի միայն ՀՀՒ. աւանդուած է միջին Հայերէնում* օռոճ *ձևով (տե՛ս Նորայր, Բառ. ֆրանս.* porcelaine *բառի տակ). գտնում ենք նաև գաւառականներում. ինչ.* եռուճ *Ասլ.,* օռոճիկ *Բլ. Մկ. Մշ. Նր.,* օռօճ *Խոջ. Ջղ. Սլմ. (Համմա. Նորայր, Բանաս. 1901, 127). յետին հեղինակներից գիտէ բառս Սալաձ. տող 62 (Բանաս. 1901, 92)։* **Ռոճ** *նշանակում է նաև «մի տեսակ բոյս,* genista, genêt *(տե՛ս Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ 27—33),* genista albida W. var. armeniaca Stach» *(Տիրացուեան,* Contributo § 224)։ *Այս նշանակութիւնը յառաջացած է նմանութեամբ բոյսի որոճիկի նման ծաղիկների, «որոնք գրեթէ լերկ անտերև ծղօտներու վերև անկոթ փունջեր կը կազմեն»։ Բառս բոյսի նշանակութեամբ գործածում է Բժշ. «զայն որոճն՝ որ ի Մարայ կուգայ» ըստ ՀԲուս. § 3258, որ և յիշում է թէ բառը այս երկրորդ նշանակութեամբ պահում են մինչև այժմ Ջուղայեցիք (կասկածելի!) և Պոնտացիք։ Բոյսի իմաստով ունի Վրդ. անեց. 18. «Ահ բարդութիւն որայի և հասկին. ի ցնծաբեր որոճդ և ի յիշումն կենաց հացին»։ (Ըստ Արթինեան՝ անդ՝* ռոճ *բոյսը գործածում էր արաբական բժշկութեան մէջ, այժմ էլ հանում են նրանից* spartéine *կոչուած դեղը, որ սրտի կանոնաւորիչ է)։*

ՀՀՒ ռոճալ *բայից։ Նորայր ՀԱ. 1921, 613 չի ընդունում ռոճ բոյս։*

Գիւմ.—Ախց. օռօճ, *Մկ.* ուռուճիկ, *Ալշ. Մշ.* ուռուջիգ *են։*

ՈՐՈՃԵԼ *«հնապանդիլ». ունի միայն Մագդամագտ. 3։*

ՈՐՈՄՆ, ն *հլ.* (–ման, –մունէ, –մանց) *«ցորենին վնասող մի բոյս.* zizania» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 21. որից* ռոմմնաբեր *Սանահն. Կաղանկ. Տօնակ.* օռոմմնատեսակ *Սարգ.* ռոմմնացան *ՀՀ. իմ. երև. ՀՀ. կբ. են։*

Հիւնք. Աւերիման *յատուկ անունից։* Bugge, Lyk. Stud. 1, 12 *ուզում է տեսնել 'Ορόμανδος քաղաքի անուան մէջ, որ գտնում է Փոքր-Ասիայում։*

Գիւմ.—Մշ. օռոմ, *Ախց. Երզ. Կր. Խրբ.* օռօմ, *Սեբ.* օռէմ.—*Պլ. կայ միայն* օռօմ ցանել *«հակառակութիւն սերմանել» ոճբ.—նոր բառեր են* ռոմմուտ, ռոմմպակաս։

ՈՐՈՆ *«չոր». առանձին գործածուած չէ. գտնում է միայն* ռոնճանալ *«չորանալ» ածանցի մէջ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ճառք, էջ 472. «Որոնացաւ խոտն և ծաղիկն թօթափեցաւ»։*

ՈՐՈՆԵԼ *«փնտռել, պրպտել» ՍԳր. Ոսկ. Բ. տիմ. «ոչիլ քթուել» Երեմ. խգ. 12. որից* ռոռնողուրիւն *Կիր. Երզն. խր.։*

ՆՀԲ ուռոյն *բառից. լծ. յն.* ἐρευνάω *«որոնել»։ Նոյն յն. բառին են կցում* Bugge, Btrg. 38 *իբր բնիկ Հայ և Հիւնք. իբր փոխառեալ (Հնխ. արմատն է* reu- *«հետազօտել, հարցուփորձել, հարցնել». որ պիտի տար Հյ. *ուռուել>*ռոռել, բայց ո՛չ* ռոռնել. *Համմա.* ռռնալ. Pokorny 2, 356, Boisacq 278): Patrubány *ՀԱ. 1904, 94 յն.* ὄρνυμι *«շարժել» բայի հետ. Համմա. Հյ. յուզել «շարժել. 2. որոնել»։* Karst, *Յուշար. 425—30 ԲԲր.* kōr, kor *«նայիլ, որոնել»։*

Գիւմ.—Մշ. օռոն *էնել, Ղրբ.* ուռուն *աճել «որոնել, փնտռել». իսկ Վն.* ուռոնել *«նկատել» (ըստ Ամատ. Հայոց բառ ու բան 538)։*

Որոնջել *տե՛ս Յօրանջել։*

ՈՐՈՇ *«գատուած, սահմանուած» Սարկ. քհ. «հետու, բաժանուած» Խուրք. «սանդուխի աստիճան կամ ոտք» Սեբեր. 68. Ոսկ. կող. 582. որից* ռուշել *«գատել, ջոկել, բաժանել, ընտրել» ՍԳր.* ռուշումն *Բ. մն. ը. 14, լե. 5. Երր. դ. 12. Սեբեր. Ագաթ.* ռուշտել *«բաժանել, անջատել, քանդել» Եւս. քր.* անռուշական *Ագաթ. հաստռուշ «հաստատուն աստիճաններով» Եփր. վկ. արև. 48 (սանդուխք հաստռուշք). բացռուշել ՀՀ. իմ. պատ. հակռուշել Պերիարմ. դիւռռուշելի Բրս. գորդ. դժուառռուշ Նիւս. բն.։ Նոյն արմատը հրեւում է նաև* ուրիշ, ռուշ, ուրիշ, ուռուշ *ձևերով. այսպէս՝* ուրիշ *«ջոկ, տարբեր, որոշ»*

Ոսկ. յհ. ա. 18, 38. Նխ. ա. թգ. Եղիշ. բազմորիշ *Նիւս. երգ. Տօնակ.* որուշել *«մօտիցը բաժանուիլ, հեռանալ» Մագ. թղ. 37 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 201).* ուրիշ *«ջոկ, բաժանուած» Պզատ. օրին. Յայսմ. (նոր գրականում գործածւում է «միւս, մէկէլ» նշանակութեամբ).* ուրուշեալ *«որոշեալ» վկ. հմզ. (Սոփերք ԺԲ. էջ 73). «Ոչ ոք զինուոր ի ճգունս աշխատասիրեալ և ի կարգս զինուորականս ուրուշեալ, պատաղմունս բաջաղմանց զինքեամբ շուրջ դիցէ», որտեղ* ուրուշեալ *պիտի հասկանալ* որոշեալ. *հմմտ. Սիսիան, էջ 24 ի մեռանելս մի՛ որոշեսցուք, այլ ձձ.* ուրուշեսցուք:

ՆՀԲ *«յն.* ὁρίζω, ἀφορίζω, χωρίζω *և* ὅρος *որ է սահման»: Հիւնք. յն.* ὅρος *«սահման»,* ὁρίζω *«բաժանել, անջրպետել»·* Bugge IF 1, 452 *բուն բառը դնում է* որիշ, *որից ձայնաւորների նմանութեամբ կազմուած է* որոշ: *Մաներհան,* Труды XI арх. II. 11 *բևհտ.* u-li-še, u-li-e-še *հոմանիշից:* Pedersen, *Յուց. դեր. 36* որոշ, որոյն *և* ուրիշ, ուրոյն *բառերի համեմատութիւնից հետևցնում է թէ բոլորի ընդհանուր արմատն է* ur (our), *որ կայում է իր բառին. հմմտ. դան.* saer *«ուրոյն»,* saerlig *«առանձին»=գոթ.* sis *«իրեն»:* Karst, *Յուշարձան 403 սումեր.* bar, bur *«կարել, բաժանել, ուրիշ, կէս», 427 ուգուր.* öluš, ülüš, *չաղաթ.* üleš *«բաժին, բաժանմունք»:*

Գիւմ.—Ագլ. Ալշ. Ախց. Երև. Կր. Համշ. Մշ. Սեբ. Տիգ. Տփ. ուրիշ, *Ջղ.* ջուրիշ, *Ննխ.* ուրիշ, ուրուշ, *Խրբ. Հւր.* ուրուշ, *Ղրդ.* ո՛ւրիշ, *Մկ. Ճիւրիշ, Մրզ. Շմ. Վն.* իւրիւշ, *Գոր.* օ՛րիշ, *Ղրբ.* էօ՛րիշ, *բոլորն էլ «ուրիշ, միւս, այլ» նշանակութեամբ. որից Համշ.* ուրիշել (ուրիշուլ) *«հատուղէննները հընտրել, քարերը ջոկել, ձկան փորը մաքրել են»:*

ՈՐՈՋ, ի–ա *հլ. «գառնուկ» ՍԿր. Սիր. Ծն. էջ 18, 93. վկ. արև. Նխ. ծն. որից* որոջակ *Սիր. թգ. 396. Ոսկ. սղ. Կիւրղ. թգ.* որոջիկ *Ոսկ. ապաշխ. Բրս. ապաշխ. գրուած է նաև* օրոջ *Բրս. սղ. (ստէպ),* արոջ *Սոկր. 786:*

ՆՀԲ *«իբր որոճող»: Հիւնք.* որդի *բառից:* Patrubány SA 2, 212 *յն.* πόρις, πόρτις *«հորթ», հրգ.* farro *«ցուլ», սանս.* pṛthuka *«ձագ» են բառերի հետ, որոնց սակայն հլ. համապատասխանն է* որթ= որդի: Scheftelowitz BB 28, 298 *հլ.* prazŭ *«խոյ», ռուս.* поросъ *«ցուլ» են բառերի հետ:* Lidén, Arm. Stud. 24 *իբր բնիկ հայ կցում է լիթ.* ėras, ėrýtis, ėrùkas, ėrytùkas, *լեթթ.* jērs, *հպրուս.* eristian *«գառնուկ», լտ.* aries *«խոյ», յն.* ἔριφος *«ուլ», հիռլ.* heirp *«այծ» բառերին, ջ համարելով մասնիկ. հյ.* որջ<*երո–ջ: Նոյն մեկնութիւնը կրկնում են* Walde 60, Boisacq 281, Petersson KZ 47, 258, Pokorny 1, 136 *(հնխ.* er- *արմատի տակ):*

ՈՐՈՍԵԼՈՅ *«դիտանոց ողորմութեան կամ բարձրութեան». ունի միայն Բառ. երեմ. էջ 256:*

Որովաթի *տե՛ս Ողովթի:*

+ՈՐՈՎԱՅՆ, ի *հլ. «փոր» ՍԿր.* որից որովայնակոչ *Ես. ը. 19.* որովայնապարար *Ոսկ. ա. կոր. և յհ. ա. 42.* որովայնամոլութիւն *Ոսկ. ա. կոր. և յհ. ա. 44.* որովայնախօս *Փարպ.* դժոխորովայն *Նար.* համորովայն *«մէկ մօր որդիք» ԱԲ.* օձորովայն *Պիտ.:*

=*Բնիկ հայ բառ՝ կազմուած* –այն *մասնիկով՝ հնխ.* qrop- *արմատից. սրա հետ հմմտ. հբգ.* hrëf, rëf *«փոր, փորրափոր, արգանդ», ֆրանք.* ref *«փոր», անգսք.* hrif *«փոր, փորոտիք, արգանդ, ստամոքս», միոլ.* crī *«մարմին», լտ.* corpus *«մարմին», յն.* ῥραπίς *«ստոծանի, սիրտ, հոգի», սանս.* कृप् kṛp *«երևոյթ, գեղեցկութիւն», զնդ.* 𐬐𐬎𐬹𐬨𐬎 kəhrpa (*ուզ.* kerefš) *«կերպարանք, մարմին», պհլ.* ckrp kerp *«մարմին, ձև, կերպ» (որից փոխառութեամբ հյ. կերպ. տե՛ս այս բառը): Սրանք ցոյց են տալիս հնխ.* qṛp-, qrep- *նախաձևերը. հայերէնը ներկայացնում է միջին ձայնդարձը՝* qrop-, *ուր* q *նախաձայնը կորած է, իսկ բառասկզբի* r *ստացել է իր յաւելուած ձայնաւորը, որ յաջորդ* n-*ի պատճառով դարձել է այստեղ* n (Pokorny 1, 486, Walde 194, Ernout-Meillet 214, Boisacq 809):

*Նշ*Բ «որով այն, *զի նովաւ կեայ կամ ծնանի կենդանին»։ Տէրվ. Նախալ. 106 կցում է սանս.* ulva, *լտ.* volva, vulva *հոմանիշներին։ Մառ* ЗВО *5, 319 և Արաքս 1890 Ա. 112 գնդ.* uduθwarə «փոր» *բառի հետ՝ իբր* *որովայն։ Bugge, Btrg. 26 և* KZ 32, 2 *համեմատում է սանս.* gárbhas, *գնդ.* garewa, *յն.* δελφύς, δολφός «փոր, արգանդ» *բառերի հետ,* -այն *համարելով մասնիկ, իսկ* վ *դնելով* bh-*ից։ Նոյնը կրկնում է* Johansson BB 18 (1892), 22: *Հիմնք. էջ 207 դնում է լտ.* vigor *բառից* կորով, *որից* կորովի, *որից* գորով, *որից* անագորոյն *և* որովայն. *իսկ էջ 348* որովայն *դնում է արմատ, որից* գորով, *որից* կորով: Bartholomae IF 5, 228 *մերժում է գնդ.* uruθware «փոր» *բառի հետ համեմատութիւնը։* Patrubány SA 2, 277 *և Բանաս. 1902, 151 հնխ.* srp «սողալ» *արմատից, համմտ. սանս.* sarpati, *լտ.* serpo *են. Հայ բառի հին նշանակութիւնն էր «սողացող»։* Pedersen, *Ցուց. դեր. 37, 40* ով *և այն մասնիկներով՝* որ<իր *արմատից, իբր «իւր անձն». արմատի համար համմտ.* որ–եար, *մասնիկների համար էլ համմտ.* ին–ով, ուն–այն: *Նոյն, Հայ. դր. լեզ. 90 հպ.* ątroba «փոր» *բառի հետ է կցում։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. 22: Karst, *Յուշարձան 406 սումեր.* murub «փոր»։ Persson IF 35, 211 *յն.* ὀρύα «աղիք», *լտ.* arvīna «ճարպ», *հոմեր.* οὐρός «փոս», *լիթ.* urvas «խոռոչ, ծակ» *բառերին ցեղակից։* Pokorny 1, 182 *հնխ.* oreu̯ «աղիք» *ձևի տակ յիշում է այս մեկնութիւնը, բայց առաւելութիւն է տալիս* Lidén-*ի մեկնութեան։*

ՈՐՈՏ «ամպերի գոռգոռոցը» *Չքր. կթ. Վրք. Հց. Յայտմ. որից* որոտալ *ՍԳր. Ագաթ.* որոտաձայն *Եղիշ.* որոտընդոստ *Ագաթ. Եփր. ազ.* որոտումն *ՍԳր.* որոտալի *(նոր բառ). պարզորոտ Վանակ. ոտանաւորի համար սրղուած ձև է* ոռոտումն «որոտումն, տրտփիւն» *Շար.։*

*Նշ*Բ *յիշում է արաբ.* رعد ra'd, *յգ.* ru'ūd «որոտում»։ Müller SWAW 41, 10 *թուի փոխառեալ յն.* βροντή *հոմանիշից։ Հիմնք. յն.* βροντάω «որոտալ» *բայից։* Bugge, Btrg. 38 *սանս.* rud, rōditi «լալ, ողբալ», *գնդ.* rud «լալ», *լտ.* rudere «գոչել, բղաւել, գոռալ» *են ձևերի հետ։* Lidén. Arm. St. *էջ 88* -ոտ *մասնիկով* *որ *արմատից, որին կցում է ռուս.* per-únŭ «փայլակ, շանթ», *չեխ.* perun «որոտում», *սանս.* parǰanya- «Որոտումի և Անձրևի աստուած». *բոլորը գալիս են հնխ.* por-, per- «զարնել» *արմատից, որի ժառանգն է նաև հյ.* հուր, հարկանել: *Այս մեկնութիւնը ընդունում են* Meillet IF Anz. 22, 17, Petersson KZ 47, 274, Pokorny 2, 42:

Գիհ.—Երև. Կր. Սլմ. Տփ. օրոտալ, *Ալշ. Խրբ. Մշ. Սեբ.* օրօղալ, *Տիգ.* օրօղոլ, *Շմ.* ուրօտիլ, *Գոր. Ղրբ.* բրո՛տալ, *Ագլ.* բրըտօ՛լ, *Սվեդ.* գիոդիլ «որոտալ» *(սահմանականի կ-ի միացումով)։ Պլ. կայ միայն* օրօղում «աղմուկ, կռիւ»։

Որոտ տե՛ս Որոթ «գաւաթ». մէկ անգամ դտնում եմ գործածուած Բրս. մրկ. 321. «Կամ խոստանայր ոք ասել թէ որչափ որոտք են ջրոյ ի ծովու և միսն զայն չդիտել. ո՞չ այն անդիտութիւնն քան զդիտելն իմաստնագոյն էր»։ Հատուածս առնուած է Ոսկերերանից (պօղ. ա. 874). «Եւ կամ խոստանայր ոք ասել թէ որչափ որոթ՛ *են ջրոյ ի ծովու...», ուր* որոթ *ըստ Վարդանեան ՀԼ 1914, 639 է յն.* κύαθος «գաւաթ, չափ հեղանիւթոց»։

Որոր *տե՛ս Ուրուր։*

Որորել *տե՛ս Օրօրել։*

ՈՐՈՑԵԼ «կարծել», *ունի միայն Բառ. երեմ. էջ 256։*

ՈՐՋ, ի *հլ. (համմտ. Վկ. արև. 40 սեռ.* որջից. *բայց Նշ*Բ *դնում է նաև ո հլ. առանց վկայութեան) «գազանների բոյնը» ՍԳր. որից* որջանալ, որջիլ *կամ* որջել *Փիլ. Խոր. ՅՀ. կթ.* որջամուտ *Վեցօր. 185.* որջարան *Արծր.* որջասոյզ *Մագ. են։*

Տէրվ. Altarm. 23 *սանս.* vraja «փարախ, ախոռ», *իսկ էջ 84 գոթ.* ligr,

դերմ. Lager «բնակարան, բուն, որջ», յն. λόχος, լիթ. ligà «օրօրոց» բառերի հետ՝ հյ. որջ դնելով հնագոյն *որոջ ձևից։ Հիմնք. լտ. ursus «արջ» բառից։

Փոխ.—Աւետարանի քրդ. թարգմանութեան մէջ գրուած է որջ. այսպէս՝ Որջա ռուվիյան հէյտ «Աղուեսուց որջք գոն» Ղուկ. թ. 58։

ՈՐՍ, ո հլ. «որսալը, որսորդութիւն. 2. որսացած անասունը» ՍԳր. Փարպ. Խոր. «որսի անասուն, վայրի կենդանի» Վրք. հց. ա. 715. «խայծ» Շնորհ. Հրհշտ. որից որսալ ՍԳր. Ագաթ. Եփր. ծն. որսալի Եփր. մատ. Դ. 224. որսաբանել Եւագր. որսակից Ղկ. ե. 7, 10. որսող Սղ. գ. 3. Ճիգ. 7. Առակ. ժա 8. որսորդ ՍԳր. Սևբեր. Եղիշ. որսորդախառ Վեցօր. 163. հաւորս ՍԳր. ձկնորս ՍԳր. ձկնորսութիւն Ագաթ. բանորսող Փարպ. դժուարորս Վեցօր. դիւորսալի Խոր. դժոխորսալի Բրս. Հայեաց. մկնորսակ ՅՀ. իմ. պալ. շընշորսական Փիլ. նխ. գաղտորսակ Բննիկ. որսատեղ (նոր բառ) ևն։

=Թերևս բնիկ հայ բառ՝ հնխ. pork'os «ձկան որս» ձևից, որի միակ ժառանգն է յն. πόρκος «ձկնորսի ուռկան»։ Հայերէնի մէջ նշանակութիւնը յետոյ ընդհանրացած պիտի լինի։ Նախաձայն p-ի հետքը պահում է դեռ գւռ. հորս (Pokorny 2, 45, Boisacq 805):

Lag. Anmerkungen VIII յն. πέρκνός «մի տեսակ արծիւ կամ բազէ» և սանս. pṛç բառերի հետ։ Հիմնք. որջ բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ Patrubány KZ 37 (1904), 428. որ ընդունում է Pokorny 2, 45: (Թերևս նոյնն է նաև Grammont MSL 20, 224, որ դնում է հյ. որսամ<*porcāmi): Scheftelowitz BB 28, 282 վեդ. arç «հետապնդել», BB 29, 52 յն. ἄρκυς «ցանց» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Մատ ՅԲՕ 18, 171 կցում է վրաց. ხორცი խորցի «միս» բառին, հայերէնի նախաւոր իմաստը դնելով «միս»։—Պատահական նմանութիւն ունի դեղ. azra «որս»։—Ննջադրելով բառիս նախաձևը իբր pork'os, սրբան առանձնապէս նման է գուրս գալիս հնխ. pork'os «խոզ», որի ժառանգներն են լտ. porcus (սրանից փոխառեալ յն. πόρκος), իռլ. orc, հբգ. farah, անգսք. feark, լիթ. paršas, հսլ. prasę, ռուս. porosjá, լեհ. prosię. Հպրուս. prastian հոմանիշները (Walde 600, Pokorny 2, 78): Կարելի էր հայ ձևն էլ դնել այս բառերի շարքում՝ նախաւոր իմաստը համարելով «խոզ»>«որսի կենդանի»>«որս»։ Այս կարծիքս յայտնել եմ Meillet-ին, որ սակայն մերժեց, առարկելով թէ 1) հնխ. pork'os միշտ «ընտանի խոզ»ն է, հակառակ հնխ. sū- (>լտ. sūs, յն. ὗς, գնդ. hū-, ալբան. Θi, քուչ. suwo, հբգ. sū, անգսք. sú, հհիւս. sýr. աւելի յետոյ գոթ. swein, դերմ. Schwein, ռուս. свинья ևն) բառին, որ նշանակում է թէ՛ ընտանի խոզը և թէ վայրենին. 2) հնխ. pork'os բառը պահուած է միայն իտալական, կելտական, դերմանական և բալթիկ-սլաւական լեզուներում, և չի գտնւում արիական, թոխարական, յունական խմբերում. ըստ այսմ յատուկ է արևմտեաններին և ո՛չ արևելեաններին, հակառակ sū- բառին, որ ընդհանուր է բոլոր հնդեւրոպացոց. 3) նթէ ֆիննն. porsas և վօգուլ. pūrys «խոզ» բառերը փոխառեալ են հնդեւրոպական լեզուներից, անհրաժեշտ չէ ենթադրել թէ փոխառութիւնը կատարուած է արիական խմբից. կարող է լինել և բալթիկ-սլաւականից (այս բոլորի մասին համմտ. Meillet BSL հտ. 23, № 71, էջ 60, Esquisse lat. էջ 41 և Dial. ind. էջ 19)։

Գիւղ.—Մշ. որս, Ագլ. ուրս, Ծփ. հուրս, վուրս, Գոր. վէրս, Ղրբ. վրէրս, վրս, Համշ. էօյս (սեռ. օյսի), Երև. ֆօրս (<հորս), բայական ձևով էլ՝ Սվեդ. իրսիլ «որսալ»։

*ՈՐՏՈՒ «բանակ» Մխ. այրիվ. էջ 81, 82. (Զանկղ դանն սպանանէ զԱլթան դանն և ինքն սիրէ Ուլուսին և դնէ որսու ի Վիաթ. Զամեննսին պատանդ տարան յորտուն)։ Նոյն բառն է նաև օրդու «թաթարաց խանի բանակը» Կիր. տպ. վենետ. էջ 213։

=Թրք. اوردو ordu «բանակ». յիշուած է արդէն ԺԴ դարում՝ Իբն-ի-Բաթուտա, հտ. II, էջ 380 և 395։—

ՈՐՅԵԼ *«տեղից դուրս հանել, վերցնել, հեռացնել, ցատկել»* ՅՀ. կթ. 27, 270. Թէոդ. խչ. *«կորզել»* Բառ. երեմ. 256. Նոյնը պիտի լինի նաև ուրցեալ Մագ. թղ. 236 *(Որոնեմ որպեսզի կերտեալ ճեմարանիս եպիդեմեալ)*։ Նոյնը գրուած ուրցիլ Թէոդ. խչ. 161 *(Անվթար և սուրբ հաւատով ուրցեալ յԱստուած ճշմարիտ.—ձ. ուրազեալ)*, որի հետ համմտ. անդ՝ էջ 160՝ *Որպեսզի յանապակ... ուրախութիւնն երկնաւորիչ հաւատով ի Քրիստոս*։

ՆՀՔ լծ. յն. ὄρσω *(որ ὄρνυμι «հեռնել, ցատկել»* բայի ապառնին է և համապատասխանում է հյ. յառնել, կոր. յարեայ ձևին)։

ՈՐՔԻՒՆ *(սեռ.* ուրեաց*)* *«մի տեսակ վէրք, թէմրէյի»* Ոսկ. *(Տարիւրապետան ճառի մէջ՝ տպ. Ոսկ. պօղ. Բ. 721՝ յղ. ուղ.* ուրիւնք ձեւով*)*. Փիլ. քհ. 178 *(սեռ.* ուրեան ձեւով*)*. որից ուրիւնոտ *(իմա՛* ուրիւնոտ*)* *«որքիւն ունեցող»* Ղեւտ. իր. 22. գրուած է նաև եւրոյն Վստկ. 223, եւրուինոտ Տաթև. Հարց. 371. ենթրուն Բժշ. *(տե՛ս* Բազմ. 1917, 102*)*։

ՆՀՔ չունենալով ուրիւնք *ձևը, իրր ուղ. ենթադրում է* ուրիւն *կամ* ուրին. *վերջինը՝ որ հետևցնում է* ուրիւնոտ *ածանցից, չի կարող ուղիղ լինել, որովհետև՝ նախ *ուրիւն պիտի տար *ուրինոտ ածանցը և միւս կողմից չպիտի կարողանար տալ սեռ.* ուրեան *ձևը. երկրորդ՝* ուրիւնոտ *ածանցը պիտի ենթադրէր *ուրէն արմատը և ո՛չ *ուրին: Բոլորը իրար հետ հաշտեցնելու համար պէտք է ենթադրել, թէ* ուրիւնոտ *սխալ գրչութիւն է և պէտք է սրբագրել* ուրիւնոտ: *Ա՛յս է հաստատում եւրոյնոտ գրչութիւնը, որի մէջ ոյ ներկայացնում է ու ձայնի յետին ձևափոխութիւնը. համմտ.* հարիւր>*մհյ.* հարոյր:—*Տէրվ.* Altarm. 39 *ուղիղ ձևը համարում է *ուրուն, իրր սանս.* arjuna *«մի տեսակ մորթային հիւանդութիւն»։ Հիւնք. հանում է* արուսի *բառից։* — Petersson KZ 47, 263—4 *կցում է լիթ.* erkė *«ոչխարի ոջիլ», լեթթ.* ērze *«կովի ցեց», լտ.* ricinus *«տիզ», ինչպէս և սանս.* ṛknā *«վէրք» և լիթ.* jerkà *«ճեղք» բառերին։* Pokorny 1, 145 *հնխ.* erek *«ոջիլ, ցեց» արմատի տակ ընդունում է առաջին երեքը և մերժում սնս.* ṛknā *«վէրք» և լիթ.* jerkà *«ճեղքուածք», մինչդեռ բուն իմաստի աւելի յարմար էին սրանք և ո՛չ առաջիններըր, քանի որ* ուրիւնք *վէրք է և ո՛չ միջատ։—Բառիս շատ նման է հնչում պրս.* اگریون agriyūn *(որ և* ادرفن adarfan, پریون paryūn*) հոմանիշը («որքիւն, քաղցկեղ»), որի ծագումը և առնչութիւնը հայերէնի հետ՝ յայտնի չէ։*

+ՈՒ *«և». հների մէջ անկախաբար շատ քիչ է գործածուած. օր. Ջմանկատոյ գրոյց խօսիք ու զշաղփաղփութիւն. Ոսկ. երր. ժա. —Գարդմանակ ոսկի արծաթ ու ի պատիւ գլխոյ՝ հանդոյցք թագի. Բուզ. և. 38. բայց այս և նման ձևերը կարող են յետին ներմուծութիւններ լինել։ Աւելի յաճախ գտնում ենք բարդութեանց և ածանցմանց մէջ՝ որոնք նուազ կասկածելի են. ինչ.* եօթնուտասն, եօթնուտասներորդ *ՍԳր.* ութուտասն, ութուտասներորդ *ՍԳր.* պարտուպատշաճ *Ոսկ. հս. և մ. ա. 13. Եփր. օրին. և թգ.* մարդուպատշաճ *Կոչ.* գինչուգինչ *Ոսկ. մթ. ա. 19.* հարցուփորձ *Յոր. լա. 14.* այրուձի *ՍԳր. և մանաւանդ իրու «իրրև» Ագաթ. յետնաբար գարձել է սովորական շաղկապ, մանաւանդ տաղաչափութեան մէջ. ինչ. Նար. տաղ. Յս. որդի. Շնորհ. եղես. ևն (տե՛ս Այտնեան, Քննակ. քեր. էջ 64). ձայնաւորի մօտ դառնում է մհյ. ուվ. Համմտ. Անտիոք 27, 77. Տփնտէ ու վ՛ուրանայ. Ուղէ համբերութիւն ու վ՛օր։*

=*Բնիկ հայ բառ և հյ. եւ ձևի կրկնակն է եւ գալիս է հնխ. épi ձևից (տե՛ս ընդարձակ եւ բառի տակ). սրա հետ կար նաև հնխ.* opi *ձայնդարձր (համմտ. լտ.* ob *«դէմ, դէպի», յն.* ὀπι-θεν *«յետևից»* Boisacq 264, Walde 604—5*), որից հյ.* ու:—*Հիւրշ.* IF Anz. 12, 51:

ՆՀՔ յիշում է արաբ. պրս. վէ։ Մորթմանն ZDMG 26, 545 *բևեռ.* uu *«ու»։ Վէրի միևնոյնութիւնը տուաւ նախ Հիւրշ. անդ։ Մանտալճեան,* L'idiome 11 *խալդ.* 'ui, *պրս. և ասուր.* u։ *Կարելի էր մեր բառը*

փոխառեալ համարել պհլ. u, *պազ.* u, *պրս.* ū *հոմանիշից, բայց* **ուրուտասն** *են (մանաւանդ իրու) ձևերի մէջ գոյութիւնը հակառակ է փոխառութեան։ Ճիշտ չէ նոյնպէս կարծել (ինչպէս ասում է* Meillet, Le renouvellement des conjonctions, *տե՛ս* Annuaire de l'Ecole pratique des Hautes-Etudes, 1915, *էջ 16) թէ* **ու** *յառաջացած է հայոց մէջ եւ ձևից, որովհետև այսպիսի մի ձայնափոխութիւն չի կարելի բացատրել և ո՛չ մի ձևով։*

Գիւր.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Զթ. Խրբ. Կր. Հճ. Համշ. Ղրբ. Մշ. Ննխ. Ոզմ. Պլ. Ջղ. Սչ Տիգ. Տփ. **ու**, *Ասլ. Ագլ.* **իւ**, *Մկ.* **ը** *(Պլ. կայ նաև վու ձևը, որ գործածւում է երբեմն երկու յարակից գոյականների միջև. ինչ.* **ճար վու տղա.** *«հայր և որդի». կրճատմամբ վ. ինչ.* **մար վ'ախջիգ, fուր վ'ախբար** *«մայր և աղջիկ, քոյր և եղբայր»։*

ՈՒԲԱՂԱՅ *«ճահիճ,* palus, paludes*». գիտէ միայն Ներսէսովիչ, Բո. լո.-հ. 378 բ։*

***ՈՒԴԵՏԵՐՈՆ** *«չեզոք սեռ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Կիւրղ. մեկն. «Եւ համբուրեաց իւրաքանչիւր զընկերս իւր և ելաց իւրաքանչիւր ոք ի վերայ պարանոցի ընկերի իւրոյ մինչև ցվախճան մեծ. ո՛չ ուղեսերոնն (գրուած է* **ուր իւ հերոնն**) *կայ յերբայեցին որ ո՛չ զարուն մեկնէ և ո՛չ զէգ և ոչ երկուորականն»։*

= Յն. οὐδέτερον *«չեզոք»։*

Նորագիւտ բառս գտաւ, սրբագրեց ու մեկնեց Հ. Ա. Վարդանեան ՀՍ. 1913, 349։

ՈՒՋ *«հարս ու փեսի գլուխը դրուած պսակը»? Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Ոսկ. կողոս. 670. Աղաչեա զՔրիստոս գալ ի հարսանիսն... մանաւանդ և յայնժամ իսկ աղաչեսջիր, յորժամ զուգն կամիցիս դնել և տնտեսայս առնել (յն. չիք «զուգն». իսկ վերջինը «փեսայ այնպիսի տալ»)։—Բառ. երեմ. էջ 104 ունի* **զուզ** *«հաստատ կամ նախապարգև»։*

Ուզել *տե՛ս Ցոյզ։*

Pedersen KZ 40, 210 *համեմատելով յն.* εὔχομαι *«ուխտել, մաղթել», գնդ.* aogədā *«ասաց», լտ.* voveo *«ուխտել», սանս.* vāghát *«զոհարար, ուխտաւոր» բառերի հետ, անշուշտ մտածում է տարբեր բան քան յոյզ (տե՛ս այս բառը)։*

ՈՒՋՈՄՈՒԲԵՆԱՅՑ *«մի տեսակ ձուկ». նորագիւտ խաթարուած բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 148. Ուզոմուբենայց վեցկանգնեանս կշիռ քանքարաւորս, յուղիդաս երկքանքարաւորս և այլ ժանիս ձկանց (այլ ձ.* **սազոմորեաց**)։

= Անշուշտ յունարէն բառ է. բայց խաթարուած լինելով ճանաչելի է միայն երկրորդ մասը՝ **մուրենայ** *= μύραινα։ — Աճ.*

+ՈՒԹ, *ի հլ. «ութը» ՍԳր. որից* **ութամեան** *կամ* **ութեմեան** *Գծ. թ. 33.* **ութերորդ** *ՍԳր.* **ութուասն** *կամ* **ութևասն** *ՍԳր.* **ութորեայ** *Մն. ժե. 12 եև. յետնաբար՝* **եօթն, իննն, տասն** *բառերի նմանութեամբ ձևացած է* **ութն** *Տնտկ. որից աշխ.* **ութը և ածանցման մէջ՝ ութներորդ, ութնամեայ** *են։*

= Բնիկ հայ բառ՝ հնխ. okʻtō *ձևից, որի երկակին է* okʻtōu. *ցեղակիցներն են՝ սանս.* अष्टा aštā, अष्टौ aštāu, *գնդ.* 𐬀𐬱𐬙𐬀 ašta, *պհլ.* 𐭠𐭱𐭲 htšt, *պրս.* هشت hašt, *քրդ.* hešt, *աֆղան.* ata, *օսս.* astʻ, *Թոխար.* okat, *քուչ.* okt, *յն.* ὀκτώ *(որից գնչ.* octo, ofto, ochto, hto), *լտ.* octō, *իտալ.* otto. *ֆրանս.* huit, *հիւլ.* ocht, *կիմր.* wyth, *ն. կորն.* eath, *բրբտ.* eiz, *հհիւս.* átta, *անգսք.* eahta, *անգլ.* eight, *գոթ.* ahtau, *հրգ.* ahto, *մրգ.* ahte, *գերմ.* acht, *հոլլ.* acht, *լիթ.* astuni, *լեթթ.* astuôni, *հսլ.* osmĭ, *ռուս.* восемь, *ալբան.* tetɛ *են. բոլորն էլ «ութ» նշանակութեամբ* (Pokorny 1, 172, Walde 536, Boisacq 696, Trautmann 15, Ernout-Meillet 663, Kluge 5, Horn § 1095)։ *Հնխ.* okʻtōu *լինելով երկակի, հետևում է թէ հընդեւրոպացոց հաշուարկութիւնը չորսի վրայ էր. հաշւում էին իւրաքանչիւր ձեռքի չորս մատերը՝ առանց բթամատի։ Սրանից էլ հետևցնում են ոմանք՝ որ* okʻtōu *բառը ծագում է* akʻ- *«սուր, ծայր» արմատից, իբր թէ ձեռքի մատների սուր ծայրերն ի նկատի առնելով, բայց այս բացատրութիւնը այլևս ընդունելի չի համարւում։ Հայերէնի մէջ հնխ.*

ok'tō ձևը հնխ. septm̥ «հօթը» բառի նմանողութեամբ դարձել է (դեռ նախահայ շրջանում) optō, որից յառաջացել է հյ. ութ (համմտ. svopno>քուն, opi>ու «և» ևն). Նոյնպիսի ձևափոխութիւն են կրել նաև ել. ὀκτώ և ռում. opt «ութ»։—Հիւբշ. էջ 483։

Ծանօթ հնդևրոպական ձևերի հետ են համեմատում նախ Klaproth, As. pol. 107, յետոյ ՆՀՔ, Peterm. 20, 33, 38, Windisch. 31, Böttich. ZDMG 1850, 359, Arica 62, 9, Lag. Urgesch. 576, Müller SWAW 35, 198, Հիւբշ. KZ 23, 19, Տէրվ. Երկրագունտ Ա. 48, Լեզու 177, Նախալ. 76, 132, Հիւնք. ևն։ Զայնական բացատրութիւնը վերի ձևով տուաւ նախ Müller, աւելի յետոյ տե՛ս և Bugge, Beitr. 43, Bartholomae IF 2, 269։

ԳԻՒ.—Երև. Մկ. Շմ. վն. ութ, Ալշ. ութ (սեռ. ուտի), Մշ. ութ (ըստ Բէնսէյի՝ ուտ, սեռ. ուտ'ի), Ջղ. ութն, Ախց. Զթ. Խրբ. կր. Համշ. Հճ. Ննխ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. ո՛ւրր, Պլ. ո՛ւրր, ո՛ւրու, Սլմ. ո՛ւրրր, Տիգ. ո՛ւրրր, ո՛ւրրէ, Մրզ. ո՛ւրրա, Անտ. էո՛րր, Սվեդ. էորրր, Ասլ. ի՛ւրր՝, Ագլ. Գոր. Ղրբ. որ։ Նոր բառեր են ութանոց, ութնաչի, ութնում, ութորէնի, ութուց «գութանի չորրորդ լուծը»։

+ՈՒԹՍՈՒՆ, ի հյ. (յետնաբար ունինք ութսնօֆ) «80» ՍԳր. որից ութսնամեայ կամ ութսունամեայ Պիտառ. ութսներորդ Բ. մկ. ա. 10. ութսունամեակ (նոր բառ)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ok'tok'ontə ձևից (տե՛ս Brugmann, Grdr. II 489, 495, 687). ցեղակիցներից համմտ. սանս. açīti, զնդ. aštāiti-, պհլ. haštāt, պրս. haštād, աֆղան. atiyā, թոխար. oktaṅka, յն. ὀκτώκοντα ὀγδώκοντα, ὀγδοήκοντα, լտ. octoginta, հսլ. osĭmĭ, լիթ. asztūmos, գոթ. ahtau tehund, հբգ. ahtozo, գերմ. achtzig, անգլ. eighty «ութսուն» ևն։

Քննիչները մեկնում են բառս նախորդի հետ։

ԳԻՒ.—Ջղ. ութսուն, Մկ. ութսուն, ութանասուն, Ախց. ուցծուն, Սեբ. ութնուն, Սչ. ուցուն, Գոր. Ղրբ. ութա՛սուն, Ագլ. ութա՛սուն, Ագլ. Երև. Շմ. ութանասուն, Սլմ. ութանասուն, Մրզ. ութանացցուն.—Ասլ. Խրբ. կր. Համշ. Ալշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. վն. գործածում են Թրք. սէքսէն համանիշը. իսկ Տփ. վրացերէնի ազդեցութեամբ՝ քսանորդական դրութեամբ՝ չուրս-քսան։

+ՈՒԼ, ու, ո հյ. «այծի, նաև եղնիկի, այծեամի ձագ» ՍԳր. Ոսկ. մտթ. Եզն. Կիւրղ. ծն. որից ուլենի «ուլի մորթ» Ծն. իէ. 16. Եփր. ծն. Ագաթ. ուլիկ կամ յուլիկ Մագ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pōlo- ձևից. համմտ. յն. πῶλος, πωλίον «մտրուկ», նաև «անասունի ձագ, մատաղ աղջիկ կամ տղայ», գոթ. fula, հբգ. folo, fulīn, գերմ. Fohlen, Füllen, հհիւս. fole, անգսք. fola «քուռակ», լտ. pullus «ձագ», ալբան. pel'ε «գամբիկ, էգ ձի»։ Հնդևրոպական նախալեզուում բառս առհասարակ «ձագ, մատաղ անասուն» իմաստն ունէր և յետոյ զանազան լեզուներում մասնաւորուելով՝ ստացաւ այս ու այն անասունի ձագ նշանակութիւնը. համմտ. լտ. pullus՝ որ գործածւում է ձիու, իշու, հաւեղէնի, գորտի և մինչև իսկ փաղաքշաբար մարդոց համար. սրանից ֆրանս. poulain «ձիու ձագ, քուռակ», իսկ poule<լտ. pulla «հաւ»։ Այսպէս է նաև հայերէնի մէջ, ուր ուլ ո՛չ միայն այծի ձագն է, այլ և եղնիկի ու այծեամի. նոր լեզուի մէջ միայն ստացել է «այծի ձագ» մասնաւոր նշանակութիւնը։ Մասնաւորացման այս երևոյթը նկատում ենք նաև յատկանիշ բառի վրայ, որ իրան. yuvān «մատաղատի, մատղաշ, երիտասարդ» բառն է, բայց հայերէնի մէջ փոխ առնուելով՝ յատկացուել է նշանակելու միայն էշի, ձիու, եղնիկի ձագ, իսկ աշխարհաբարի մէջ աւելի ևս մասնաւորուելով՝ դարձել է միայն «էշի ձագ կամ էշ»։ Ձևի կողմից հնխ. pōlos տալիս է հյ. ուլ և ուլ. առաջինը պահուած է միայն Ղրբ., երկրորդը գրաբարում և միւս բարբառներում։—Ըստ ծագման հնխ. pōlos բխում է հնխ. pō-, pōu-, pu- «փոքր, մանր, սակաւ» արմատից, որի ուրիշ ածանցներն են սանս. putrá-, զնդ. puθra-, հպրս. puθra-, պրս. pusar, pūr, քրդ. pūer, յն. παῖς, լտ. puer «որդի, մանուկ, տղայ», լիթ. putýtis «անասունի ձագ, թռչունի ձագ», լեթթ. putns «թռչուն», գոթ. fugls, գերմ. Vogel «թռչ-

չուն», հսլ. pŭta, pŭtica «թռչուն», հռուս. nomka, ռուս. птица «թռչուն», птенецъ «թռչունի ձագ, մանուկ», ուկր. potja «փոքրիկ կով», ptàk «թռչուն», հրգ. fao, fō, հսաքս. fā, անգսք. fea, անգլ. few, լտ. paucus «քիչ», յն. παῦρος, լտ. parvus «փոքր» ևն, ևն (Pokorny 2, 75—76, Boisacq 739, 830, Ernout-Meillet 784, Trautmann 233, Walde 623):

Նշբ «նոյն ձայն է և թրք. ուլագ, օղլագ, ճիլլա»: Տէրվ. Մասիս 1881 մայիս 5 թերևս ազգակից եղն, եղջերու բառերին: Հիւնք. ցոլ բառից: Niedermann BB 25 (1899), 85 յն. ἔνελος, լտ. inuleus «եղնիկի ձագ» բառերի հետ, հայերէնը դնելով հնխ. onlos ձևից: (Ճիշտ ու մերժում են Walde 366, Boisacq 252, Pokorny 1, 154): Patrubány SA 2, 163 յն. πῶλος գոթ. fula «քուռակ» բառերի հետ, որով ինքն է վերի մեկնութեան առաջին հեղինակը: Lidén, Arm. Stud. 25 (որ և յիշում է Walde 28) ալոջ հոմանիշի հետ լտ. alo, գոթ. alan, հիսլ. alim «սնուցանել», մանաւանդ լտ. suboles prōles «յաջորդք, սերունդ, ձագեր»: Սագրեան ՀԱ 1909, 385 և Karst, Յուշարձան 406 սումեր. lu «պառնուկ, ոչխար, մաքի», 422 թրք. ul-ak, ogh-lak «ուլ»: Վերի ձևով մեկնից Աճառ. Արարատ 1912, 838, ինչպէս ընդունում է նաև Meillet MSL 22, 55: Աւելի ուշ St. Mladenov KZ 50 (1923), էջ 54—55 անտեղեակ նախորդներից, տալիս է նոյն ուղիղ մեկնութիւնը: Պատահական նմանութիւն ունին չաղաթ. ولاق olaq, թրք. oγlaq «ուլիկ», չէչէն. lū «գարեջուր», և սեմականների ամբողջ խումբը. ինչ. եբր. עוֹל ʿūl «դիեցիկ մանկիկ», հր. עוּלָה ʿūla «աղջիկ», ասոր. ʿūlā «տղայ», حولا ʿūlā «քուռակ», եդիպտ. ʿalu «մանուկ», արաբ. عول ʿūl «կաթով դիել» և جُلّان ǧullān «ուլ, պառնուկ»:

Գիմ.—Ալբ. Ախց. Երև. Խրբ. Կր. ՀԹ. ՀՃ. Ագլ. Մկ. Մշ. Սեբ. Սչ. Վն. Տփ. ուլ, Տիգ. ուլ', Ցղ. Սվեդ. էօլ, Ասլ. Սլմ. իլ, Գնձ. ճուլ, Գոր. ճօլ, Ղրբ. Մժ. ճէօլ: Նոր բառեր են ուլականջ, ուլանոց, ուլատել, ուլատուն, ուլառած, ուլխաղ:

ՈՒԼԿՈՒԻՄԻԼ կամ ՈՒԼԿՈՒԻՄԻԼ «մի տեսակ սալոր կամ նման մի պտուղ. լտ. mimosa nilotica» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2417. Համմտ. ուլկումել ՀԹ. «մի տեսակ բոյս»:

*ՈՒԼՄՈՒՍ «կնձնի ծառը, ղարաղաջ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մոլութ. 334ա. «Որպէս ուսին և ուլմուսն»:

=Լտ. ulmus «կնձնի», որից և ֆրանս. orme. Նոյն են նաև հիսլ. almr, իռլ. lem «կնձնի» (Ernout-Meillet 1077):—Ա.Ճ.

+ՈՒԼՆ, և հլ. (-լաև, -լուեմ, -լաեց) «վիզ, ճիտ, շլինք» Սղ. Ճիր. 4. Դևտ. ե. 8. որից զուլամբ երթալ «վզի վրայ գլորիլ» Արծր. Հրտ. Պտկ. 195 (տպ. զուլումբեալ). Վրդն. պատ. լդ. ընդուլնել Փիլ. լին. և լիւս. 151 (սրա այլայլուած մի ընթերցուածը պիտի լինի ուրընդովնել «պարանոցատանջ լինել» Փիլ. իմաստն. ուր սխալը ս և վ գրչութեանց նմանութեան պատճառով է). ուլնագելուրիւն Ա՚Ր. ուլնափող Վրք. դիոն. (սխալ և անգոյ բառ. տե՛ս ՀԱ 1913, էջ 659). յուլանց տալ «հրել, pousser» մհյ. բառ (ըստ Նորայր, Բառ. ֆր. 975 ա): Արմատը գրուած է նաև ուղն, ողն:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ōlen- ձևից, ընդարձակ մեկնութիւնը տե՛ս Ողն:

Հիւնք. Հանում է ընկողմանիլ բայից, Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. 129:

Գիմ.—Կայ միայն ուլանց տալ Ջղ. «բևեռվը հրել, բոթել». այս բառը յիշում է Բռ. երեմ. էջ 187 ուլանս տալ ձևով՝ հրել բառի բացատրութեան մէջ:

ՈՒԼՆ, և հլ. (-լուեմ, -լաեց) «մարգարտի հատ կամ զարդի համար փոքրիկ օղակաձև ապակի» Երգ. ե. 1. Ագաթ. «մանուկների խաղալու վէդ» Վեցօր. 178. Արշ. «վզի օղակաձև ոսկորները, անրակ» Տաթև. Հարց. 244 (որ ըստ Մխ. բժշ. 4 ճլուեմ). որից ուլնախաղաց Ա՚Ր. յուռուրլուեմ կամ յուռրլուեմ Բ. մկ. ժբ. 40. տապեղուլուեմ Ոսկ.

մ. գ. 6. Վեցօր. 178. ուլուճավաճառ *«ուլունք ծախող» (չունի ԱԲ) Զքր. սրկ. Ա. էջ 25. գրուած է նաև* ուղուճ *Արիստ. գրչ.։*

Հիւնք. արաբ. lūlū *«մարգարիտ» բառից։* Lidén, Arm. Stud. *էջ 129 կ՚ա նոյն է* ուլն *«վիզ» բառի հետ և կամ իբր «կլորիկ՝ գնուածև բան» պէտք է կցուի լեռ. թրք.* ûla *«խիճ, թուղունի ձու», նոյ.* ole *«պալար», սանս.* āṇḍá- *«ձու, ձուանք»,* aṣṭhīlā *«խիճ, գնուակ, ցորեն» բառերին։*

ԳԻՒ.—Երև. Ջղ. ուլուճ, *Մկ. Վն.* ուլճիկ, *Տփ.* ճո՛ւլուճ, *Մրզ.* իւլիւ՛, *Գոր. Ղրբ.* ճի՛ւլիուճ, *Շմ.* ճիւլիուճ՛, *Ագլ.* էօ՛լիուճ, ի՛ւլիուճ, ճի՛ւլիուճ, *Մշ.* ուլիճ, ճլուն, *Ախց. Խրբ. Կր.* ճլուն, *Հմշ. Սեբ.* ճիլուն, *Ննխ.* ճիլուն, ճիւլիւն, *Ալշ.* ճլու, *Խ. Մկ.* ուլիկ, *Սլմ.* իւլիկ՛, *Հճ.* ճուլլու, *Սվեդ.* ճրնճէօգ, *յգ.* ճրննիր. *բոլորն էլ նշանակում են «ուլունք, բունջուղ». նոյն է նաև Ախց.* ճլուն *«ոլոռի մեծութեամբ կաւոր կամ կաթիլ (շաքար, քրտինք)»։*

*ՈՒԼՈՒ *«դեղձ, շէֆթալու». ունի միայն Բառ. Երեմ. յաւել. 570։*

=*Պրս.* هلو hulu *«դեղձ»։—Ա՛ճ.*

ՈՒԼՈՒԿ *«ջոկ, երամ». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 194, որից և ԳԲ։*

Կայ ԹՒր. մոնղոլ. يلقى yəlqə, *արևել. Թրք.* يلخى yilxi, *Հյ. գւռ.* իլխի *«ձիերի երամակ» (*Будаговъ, *Հտ. Բ, էջ 364)։*

+ՈՒԼՈՒԼԱԼ *«ողբալ, լալ, կոծել»։*

=*Բնիկ Հայ բառ՝ հնխ.* ol-, ōl- *արմատից. աւելի մանրամասն տես* Ողող *«ողբ, լաց, կոծ»։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Մանանդեան (1899 թ. էջմիածնում, խօսակցութեան միջոցին)։

ՈՒԽ *«թակ, թօխմախ». ունի միայն Բառ. Երեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 556։ Արդեօք վրիպակաւ փոխանակ ո՞ւտն, որ սակայն քիչ յետոյ յիշում է։*

ՈՒԽԱՉԱՐ *«օդերևոյթները յառաջ բերող մթնոլորտային խաւը» Բրս. ծն. տե՛ս Ալիշան, Հին Հաւ. 134։*

*ՈՒԽՏ, ի *Հլ. «հաստատ խօսք, հաստատ առաջադրութիւն, դաշն, իրար մէջ կապուած պայման» ՍԳր. Եփր. Համար. 187. «վանք, կրօնական միաբանութիւն» Եղիշ. կանոն. Շար. որից* ուխտել *ՍԳր.* ուխտաւոր *ՍԳր. Ագաթ. Եղն.* ուխտաղրուժ *Երեմ. գ. 7—10. Հռ. ա. 31.* ուխտադիր *ՍԳր. Ոսկ. բ. կոր. և Խրբ.* ուխտակալ *Ա. մկ. ժա. 33 եև.—մհյ.* ըխտաւոր *«լուսնոտութիւն, épilepsie» Բժշ. (տե՛ս Բազմ. 1917, էջ 102ա)։*

=*Պհլ.* *uxt *ձևից, որ չէ աւանդուած. սրրա հետ հմմտ. սոգդ.* úxtə, *«աստուած, աստցեալ», զնդ.* uxti *«խօսք, բան»,* uxta *«աստուած, աստծ», որից* anuxti- *«օրէնքի համաձայն աստուած խօսք»,* antarə-uxti- *«մերժում»,* urvāxš-uxti- *«գոհունակութեան կամ բարեկամական խօսք», սանս.* ukti- *«վճիռ, որոշում, խօսք, բան, տեղեկութիւն, յայտարարութիւն»,* uktá- *«աստցեալ». այս բոլորը յառաջանում են* vač *«խօսիլ, ասել, ճառել» արմատից, որի անցեալ դերբայն է* uktá-, uxta-: *Ցեղակից ձևերը տե՛ս Դոշ-ել բառի պատմականում։—Հիւրշ. 216։*

Հներից Համամ. քեր. 268 հանում է ուխ (!) նախդիրից։ ՆՀԲ «լծ. այլազգ. ազբ, աճբ, ուճաէ, ուճաէբ, վաա, վասիէբ, յն. էխի՛, որ և աղօթք, լտ. pactum»։ Peterm. 21, 27 *լտ.* pactum: Diefenbach, Berl. Jahrb. 1843, 447 *փոխառեալ է դնում լտ.* pactum *բառից,* Lag. Urgesch. 343 *զնդ.* aoxta, *սանս.* ukta: Riggs, *Քերակ. 1856, էջ 60 աբար.* ahd *բառի հետ,* Պատկ. Изслѣд. *էջ 9 զնդ.* uxta *և սանս.* ukta։—Spiegel, Huzw. Gram. 191 *զնդ.* uxti: Müller SWAW 42, 255 *և* 44, 565 *զնդ.* uxti, *սանս.* ukti: Justi, Zendsp. 60 *զնդ.* uxti *ձևի տակ։ Հիւրշ.* KZ *23, 403 փոխառեալ զնդ.* uxti-*ից։ Տէրվ. Նախալ. 105 համեմատելով զնդ.* uxti *և սանս.* ukti *ձևերի հետ՝ չի կարծում թէ բնիկ է։ Հիւնք. արաբ.* ուճաէ, աճաբ: *Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 398 գոթ.* aiths, *հիւլ.* oeth, *հ. բրբտ.* ut *«ուխտ» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ (Այս ձևերը նոյն են գերմ.* eid, *հոլլ.* eed, *անգլ.* oath *են համանիշների հետ, որոնց նախնական նշանակութիւնն է ըստ* Kluge 111 *«գնացք, երթ» և ծագում են հնխ.* i *«եր-*

թալ» արմատից՝ d աճականով։ Այսպէսով հայերէնը բոլորովին հեռանում է սրանցից)։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. Մկ. Մրղ. Ննխ. Շմ. Սլմ. Վն. Տփ. ուխտ, *Ջղ.* յուխտ, *ՋԹ. Խրբ. Հճ. Համշ. Պլ. Սեբ. Տիգ.* ուխդ, *Ակն. յգ.* ըխդիւնաք, *Սչ.* ուխդ՝, *Ռ.* ուխք, *Ասլ.* իւխդ, իւխ*, *Գոր. Ղրբ.* օխտ։— *Նոր բառեր են* ուխտական, ուխտամասիկ, ուխտատեղ, ուխտուճաք, ուխտանալ։—*Քրքքախօս հայոց մէջ՝ Առն.* ուխտ *«մի տեսակ հաց»։*

ՈՒԹԱՂԵՑՈՒՄՆ *«առաջնորդութիւն». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 257։*

Ուծանալ *տե՛ս Ոյծ։*

***ՈՒԿԵՆՈՍ** *«ովկիանոս» Սոկր. 460. (բնագիրը ունի* ὠκεανοῦ, *տե՛ս* Socrates' Ecclesiastical history, Oxford 1893, *էջ 239)։*

=*Տե՛ս* Ովկիանոս։

ՈՒՂԵՂ, ո *հլ. (սեռ.* ուղղոյ *են. յետնաբար ի հլ.) «գլխի ծուծը, խելք» Բուզ. նղն. Ոսկ. մ. բ. 11. «ոսկորների մէջի ծուծը» ՍԳր. կիւրղ. ծն. եւս. պտմ. եղն. որից* ուղղածուծ առնել *Բուզ. իդ. 8.* ուղղալից *Սղ. կե. 15.* ուղղաբոյն *Մեկն. ծն. պարզուղեղ Եփր. համաբ. 107, 260. Նոր բառեր են* ուղեղատապ, յետնուղեղ, ողնուղեղ, ուղեծուծ։ *Արմատը գրուած է նաև* ուղիղ, ուղիւղ *Վրք. հց. Բ. 610. Պզատ. տիմ. 151 (Որովք շուրջ բմբըռնեալ ած զոսկերք և զուղիւղ.—պէտք է կարդալ Աստուած, համաձայն յոյն բնագրին.* οἷς ξυμπεριλαβὼν ὁ θεὸς ὀστᾶ καὶ μυελνό Platonis Opera, Paris 1883, *հա. II. էջ 236, տող 24), ներգ. յղիղ 3ճխ. էջ 225. յղեղ Վրդ. առ. 78. ըղուղ Վրդ. առ. 192. ըղեղ Վանակ. յոբ., որոնց բոլորի մէջ հնագոյն ձևը* Meillet, Altarm. Element. *էջ 20 համարում է* ուղիղ, *որից և սեռ.* ուղղոյ։

Bugge, Btrg. 39 *դնում է "*ուրեղ *նախաձևից և համեմատում սանս.* sāra *«միջուկ, սեր են» բառի հետ։ Այս մեկնութիւնը պաշտպանում է* Osthoff, Parerga I, *էջ 88—92, ենթադրելով որ նախաձևն էր* sōl- *և բուն նշանակութիւնը «սև, մթագոյն», իբր թէ ծառի միջուկը այսպէ՛ս է համարւում. այս ենթադրութեամբ կցում է անգլսք.* sōl *«կեղտոտ», հբգ.* salo *«մթագոյն», ռուս.* solovój *«իզաբել գոյն» են բառերի հետ։ Չի ընդունում* Walde 672, *ինչպես և* Pokorny 2, 454։—*Հիւնք.* ուղիղ *բառից։—* Petersson, Fran filol. föreningen i Lund, Språkliga uppsatzer IV 1915, *էջ 126—7 զնդ.* ūθa- *«ճարպ», հսլ.* udŭ *«անդամ» բառերի հետ՝ հնխ.* eu- *«ճարպ» արմատից (ըստ* Pokorny 1, 109, *որ չի ընդունում)։*

ԳԻՒ.—Մշ. ուղեղ, յղեղ, *Վն.* ուղեղ, ուղող, *Ջղ.* ըղեղ, ըղուղ, *Ախց. Երև.* ըղուղ, *Ակն. Կր. Պլ. Ռ. Սեբ.* ըղէղ, *Ասլ.* իւղ՝ղ, *Շմ.* ուղօղ, *Սլմ.* օղող, *Մրղ. Ննխ.* օղօղ, *Ագլ.* ըղօղ, *ՋԹ.* էղէղ *(այս վերջինը նշանակում է նաև «վրայ»), Մկ.* ղէղ, *Տփ.* ղուղ, *Ալշ.* ղօղ, *Սվեդ.* դիւղ, *Գոր. Ղրբ.* ճուղո՛ւղ, ճղո՛ղ, *Համշ.* էղու. *(Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկ-պետերբ. 1788, էջ 51 ունի* ըղուղ ձևով)։—*Բարբառներից զանազանութիւն դնելով «գլխի ուղեղ, խելք» և «ոսկորի ուղեղ, ծուծ» նշանակութեանց միջև, ոմանք ձեռպէս էլ որոշում են իրարից. ինչ. Վն.* ուղեղ՝ *գլխի,* ուղող՝ *ոսկորի, Մշ.* յղեղ՝ *գլխի,* ուղեղ՝ *ոսկորի, Երև.* ըղուղ՝ *թէ՛ գլխի և թէ ոսկորի, Ախց.* ըղուղ, *Համշ.* էղու, *Ալշ.* ղօղ, *Պլ.* ըղէղ՝ *գլխի, իսկ Ալշ.* ծուծ *և Պլ.* իլիգ *(<Բրք.* ilig)՝ *ոսկորի.—ընդհակառակը Սվեդ.* դիւղ՝ *ոսկորի և բէն (<Բրք.* beyn) *«գլխի ուղեղ»։*

ՈՒՂԵՐՔ *«ընծայ, նուէր» Հին բռ. որից ունինք.* ուղերձել *«ընծայ տալով մի բան խընդրել, աղերսել, սիրտը իրեն գաշել» Իմ. ժր. 21. Եզեկ. ժզ. 33. Ոսկ. մ. բ. 10. «նուիրաբերել» ԺՄ. 604. «քաջալերել, յորդորել» Սարգ. գ. յհ. ա. էջ 620 բ տպ. (Որք մօտ երթան և ողերձենն առ նահատակութիւնան).* ուղերձումն *Նար. խշ. գրուած է նաև* օղերձ, օղերց, ըղերձել, ողորձել *(Սարգ. անդ, ա տպ. 784, բ տպ. 620),* ըղորձել, ողերձել. *Արմատի երկրորդ նշանակութիւնն է «ղէղ. հակ, բեռ», որից ունինք* օղերձել՝ *փխ.* ուղերձել *«բեռնաւորուած» Վեցօր. էջ 129 (տե՛ս Աճառ., Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 163) և նախաձայն ու-ի կրճատմամբ էլ՝*

ղեռն, ի հլ. «հակ, վաճառքի կապոց» Ոսկ. մ. բ. 1 (համմտ. ուղղորդ>ղորդ):

ՆՀԲ «աղերսել... կարօղ էր և առուզաբանել՝ ուղի հեռնել կամ հանդերձել առ խնդրելին»: Մատ ԻԱՀ 1914, 363 հյ. իղձ և վրաց. մղղելի «քահանայ» բառերի հետ:

ՈՒՂԻՇ (յետնաբար ի–ա հլ.) «ճիւղ, ծիլ» Պիտ. փիլ. Անան. յովն. որից ուղեշարձակ ԱԲ. ուղիշարեռն Երզն. քեր. գեղուղէշ Պիտ. բարձրուղէշ Երզն. լս. Ոսկիփ. գեղեցկուղէշ Վրք. հց. երկնուղէշ Նար. կուս. կակղուղէշ Մխ. առկ. յոգնուղէշ Սկևռ. աղ. գրուած է նաև ուղեշ, աղօշ ԱԲ, աղէշ՝ որից անգեղաղէշ Տիմոթ. կուզ, էջ 62:

Հիւնք. ուղիղ բառից:

+ՈՒՂԻ «ճամբայ, ճանապարհ» ՍԳր. Ագաթ. որից ուղևոր Դտ. ժթ. 17. Առակ. ղ. 11. ուղեկից ՍԳր. Ոսկ. ևս. ուղեկցել Վեցօր. ուղեգնաց Ագաթ. գողուղի Ա. մկ. ժ. 82. արտուղի Իգնատ. թղ. 77 (ոսկեդարեան!). զարտուղի Յճխ. Սարգ. նրբուղի Վրդն. երգ. Տօնակ. ուղանցական «ճամբո՞ւդ» Տիմոթ. կուզ, էջ 192. ուղարկել կամ յուղարկել ՍԳր. Ոսկ. Եղիշ. յուղարկիչ Ոսկ. մ. գ. 6. յուղարկաւոր Ա. եգր. բ. 52. Առող. Մաշտ. յուղարկ երթալ Եփր. թգ. յուղարկութիւն կամ ուղեկութիւն «մեռելի յուղարկաւորութիւն» Նորագիւտ բ. մն. ժզ. 13. ստարտուղիլ Սարկ. հանգ. յղել (<*յուղել) ՍԳր. Ոսկ. մ. բ. 2 ևն: Շփոթութեամբ ուղիղ բառի հետ՝ երբեմն սխալմամբ գրւում է կրկին ղ-ով. ինչ. ուղղկից (իմա՛ ուղեկից) Տոբ. և. 22: Միջին հայերէնի ձևեր են յղարկել, աղարկել Վրդն. պատմ. 157, յրղրկել REA 1, 245, յղարկաւոր, ըղևորիլ Վրք. հց. ըղևորութիւն Գնձ. ղևորել Վրք. հց. ա. 174. Սիսիան. ղևորեալ Պարականոն շար. 140. ղևոր ճառընտ.: Յղում ձևն ունի Համատ. քեր. 265: Նոր բառեր են երկաթուղի, երկաթուղագիծ, ծառուղի, խճուղի, փապուղի, փակուղի, ներքնուղի, ուղարգել, ուղեցոյց, կոյուղի, գործուղել, գործուղում են: Յետին հեղինակների մօտ մի քանի տեղ գտնում ենք ուղ «անցք, ճանապարհ» ձևը. այսպէս Նար. կէ. էջ 173 և կուս. Երզն. մաթ. 352. այս ձևը սխալ գրչութի՞ւն է, թէ ուղի բառի հնագոյն արմատական ձևը, որին հայում են թերևս ուղարկել, ուղանցական բառերը՝ փխ. *ուղերկել, *ուղենցական:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ul- արմատից. սրա հետ համմտ. յն. ἀυλός «երկարաձև փոս անցք, սրինգ, խողովակ», ἔναυλος «գետի անկողին», αὐλών «կիրճ, հովիտ, փոս, նեղուց, ջրանցք», հսլ. ulica, ռուս. улица, չեխ. ulice «փողոց, նրբանցք», հսլ. ulijĭ, ռուս. улей, չեխ. úl, լիթ. aulỹs, avilỹs, լեթթ. aulis, aule, avele «մեղուի փեթակ» (այսպէս կոչուած, քանի որում փեթակը նախապէս ծառերի խոռոչումն էր, ինչպէս ցոյց են տալիս նաև բուլղար. úlej «անանձէջ կոճղ ծառի, որ գործածւում է իբր ջաղացքի նաւ, կամ իբր փեթակ», սլով. ûlj «անանձէջ ծառ, փեթակ»), լիթ. aũlas, հպրուս. aulînis «կօշկի վիզ», aulis «ոտքի ոլոր», նորվ. aul, aule, jōl «angelica silvestris բոյսը», հհիսլ. -jōli «սպիտակ եղիճի (angelica archangelica) ցօղունը» (այս երկու բոյսերը Նորվեգիայում կոչւում են նաև slǿke, որի բուն նշանակութիւնն է «եղէգ»), լեթթ. ula, ulá «անուի առանցք, այսինքն անուի մէջտեղի ծակը, որից առանցքն է անցնում», լատ. (շրջմամբ) alvus «խոռոչ, փոր», alveus «խոռոչ, փոս, գուշ, փեթակ, գետի անկողինը» (Pokorny 1, 25, Walde 30, Boisacq 101, Ernout-Meillet 38, Trautmann 18): Այս ձևերը ենթադրում են հնխ. aulos գոյականը, որի արմատն է eul-, oul-, ul-. վերջինը՝ որ նոյնի ստորին ձայնդարձն է, գտնում ենք յատկապէս հց. ուղի և լեթթ. ula, ulá ձևերի մէջ: Տե՛ս նաև Օղ:

Ինճիճեան, Նշան. Բիւզ. 1819, 147 ուղիղ «շիտակ» բառից. համմտ. տճկ. doyru yol «շիտակ ճամբայ, պողոտայ»: ՆՀԲ յծ. բրբ. yol «ճամբայ» և oluç «խողովակ»: Հիւնք. բրբ. yol, Müller, Armen. VI, թիւ 47 համեմատից առաջին անգամ հսլ. ulica, ռուս. улица «փողոց» բառերի հետ: Հիւրշ. 484 այս մեկնութիւնը անատոյգ է համարում: Meillet MSL 8, 238 յուղարկել համեմատում է հսլ. sŭlù «պատգամաւոր», sŭlati «ուղարկել» ձևի հետ (ըստ Liden,

Arm. St. 77 *հսլ.* sŭlŭ *ծագում է հնխ.* k'ul- *ձևից, որ պիտի տար հյ.* *սուլ. նոյնը կրկնում է* Boisacq 211 *ծան.)։ Աճառ. ՀԱ. 1899, 206 բ կցում է ուղիղ բառի հետ։* Pedersen, *Հյ. դր. լեզ. 193 տալիս է վերի մեկնութիւնը, որ ընդունում են* Boisacq 1099, Walde 30 *և* Pokorny 1, 25: *Մառ,* Основ. табл. *էջ 4 արաբ.* sabīl *ևասոր.* šəwīlā *«ճամբայ» բառերից հանում է սեմ.* šbl, sbl *արմատը, որին լծորդ է դնում յաբեթ.* «⁴bl, hvl, *որից վրաց.* biliki *«նեղ ճամբայ», vla, svla «երթալ, քայլել». մոռանում է յիշել այստեղ նաև հյ.* ուղի: Meillet, *Յուշարձան 211 վարանելով յիշում է հսլ.* ulica: Karst, *Յուշարձան 407 սումներ.* sul *«փողոց», 423 թրք.* yol, *նաքուզ.* suol, *չուվաշ.* šul, šol, *կիրկիզ.* žol *«ճամբայ»։ Մառ* ЗВО *25 (1921), էջ 26 մինգր.* olə *«ճանապարհ» և վրաց.* reba *«երթալ» բառերի հետ, իսկ* Яфет. сбор. 1, 63 *ալբան.* udɛ, *բասկ.* bide *«ճանապարհ» բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունին թրք.* yol *և չին.* 道 lu⁴ *«ճանապարհ, փողոց»։*

Գիմ.—Անկախ ձևով են միայն Շմ. ՝ելի, *Հւր.* ՝ղիւ՛, *Ղրբ. Մղր.* ՝ղէ՛ *«ճանապարհ», որոնցից Ղրբ.* ՝ղէ աՙել, *Երև.* ՝ղու աՙել *«ուղարկել»։ Ածանց ձևեր են ներկայացնում 1.* Ուղարկել>*Ջղ.* աղարկել, *Հճ.* ողոյգել, *Ագլ.* բղա՛րկիլ, ղա՛րկիլ, *Սլմ.* օղօրկել, *Մրզ.* օղօրկել, *Մշ.* օղըրգել, ըղըրգել, *Վն.* էօրէօխկել, *Մկ.* ՝էօրէօղկիլ, *Գոր. Ղրբ.* ղարկէլ, *Երև.* ղարգել, *Ախց.* ղրկել, *Սեբ.* ղրգել, *Սվեդ. Տփ.* ղրգիլ, *Մղր.* ղո՛ւրկիլ, *Շմ.* խրկիլ, *Սչ.* խրգել, *Ակն. Ննխ. Պլ.* խրգել, *Խրբ.* խրգիլ.—*2.* Ուղևորել>*Ջն.* աղավօրէլ *«ճանապարհ դնել», Պլ.* խավրէլ *«ուղարկել».—3.* Ուղել, Ուղղել *Ջթ. «քայլել»։*

Փոխ.—Pedersen, *Հայ. դր. լեզ. 193—196* (KZ 40, 194) *մեզանից է դնում սամ.* yol, *նաքուա.* suol, *չուվաշ.* šul, šol *«ճամբայ», որից թրք.* yollamaq *«ուղարկել»։ Նոյնպէս է նաև Գաղանճեան, Յուշարձան 325։—Բոլորի էլ նմանութիւնը պատահական է։*

ՈՒՂԻՂ, ո *հլ. «շիտակ, լաւ, արդար, ճըշմարիտ» ՍԳր. որից* ուղղել *ՍԳր. Բուզ. Եւս. պամ. Կիւրղ. ծն.* ուղղաբերձ *Մծբ.* ուղղորդ *ՍԳր. Ոսկ. մաթ.* ուղղակի *Սիր. դ. 20.* ուղղագիր *Վեցօր.* ուղղագործ *Ոսկ. մ. բ. 9, 10, 13. Սեբեր.* ուղղական *Ագաթ.* ուղղաճառատ *Բուզ.* աՙուղղայ *Իմ. բ. 1. Ոսկ. եբր. ես. մ. բ. 9, գ. 5.* ուղղածել *կամ* ուղղապետել *«առաջնորդել» Տիմոթ. կուզ, էջ 174.* ուղղոտՙիլ *«կաղի ոտքը բժշկուիլ՝ շիտակուիլ» Տիմոթ. կուզ, էջ 135.* նաւուղիղ *Առակ. իգ. 34. Ոսկ. յհ. ա. 9.* թերուղիղ *Խոր.* դժուարուղիղ *Պրպմ. —գրուած է նաև* ուղիւղ, ուղեղ, ուղեղ:—*Նոր բառեր են* ուղղաճայեաց, ուղղալար, հակուղիղ, աՙուղղակի:

Ինճիճեան, Եզան. բիւզ. 1819, 147 ուղեղ *«խելք» բառից։ ՆՀԲ լծ. հյ.* ուղի *և թրք.* ulu *«մեծ»։* Bugge, Btrg. 39 *սանս.* saralá *«ուղիղ» բառի հետ։ Հիւնք.* ուղի *բառից։ Աճառ. ՀԱ. 1899, էջ 206 համարում է կրկնուած* *ուղ *արմատից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 196 ղ մասնիկով* ուղի *բառից. նախապէս նշանակում էր «խողովակաձև»։* Meillet, Altarm. Elementarb. 20 *նոյն է դնում* ուղեղ *«խելք» բառի հետ, որի հին ձևր համարում է* ուղիղ:

Գիմ.—Արմատը կորած է. կայ միայն ուղղորդ *բառը, որի մեկ. ձևերն են* ողորդ *Վեցօր. 135, Եղիշ. այլակ. 60,* ղորդ *Սիր. խոն. 217, էլ. արիստ. 18.—գուռ. ունինք Շմ.* ուղօրբ, *Ալշ. Մշ.* օղորբ, *Հւր.* օղօրդ, *Հճ.* ՝ողոյդ՛, *Ջղ.* ՝աղորդ՛, ղորդ՛, *Սլմ.* աղվորբ, *Տիգ.* ըղուրբ, *Ագլ.* ա՛ղուրդ, *Մկ.* ՝ղուրբ, *Սվեդ.* իւղիւրբ, *Ջթ.* իւղիւյդ՛, իւղիւրդ՛, *Մրզ.* աղվըՙրբ, աւվըՙրբ, ավըՙրբ, *Երև.* ղօրբ, ըղօրբ, *Ախց. Կր.* ղօրբ, *Գոր. Ղրբ.* ղօրբ, ղէօրբ, *Տփ.* ղուրբ, *Ննխ.* խօրբ, խօշբ *«ուղիղ, ճիշտ, ճշմարիտ», որից* խօրբել, խօշբել *Ննխ. «շինել, յարդարել»։ Նոյն բառն է նաև Սվ.* աղօրբել *«մարձել, խախտուած ոտկոնները շփելով տեղը բերել». Համմտ. մեկ.* յղորդիլ *«շիտակուիլ, խանդարուած մի բան ուղղուիլ» Միխ. աս. 314։*

Փոխ.—Մեր գուռ. խորդ *ձևից են բոհեմ. (գնչ.)* horto *«ճիշտ, ուղիղ»,* horta *«ճշմարտութիւն, ճշտութիւն, արդարութիւն» (տե՛ս*

Vaillant, Gram. des Bohémiens, Paris 1868, *էջ 108*). *բոհեմերէնի մէջ* խ *տալիս է* հ. *հմմտ.* han «*իջևան*»<պրս. xān *բառից*։— *Հայերէնից է դարձնալ վրաց.* ფლაფარიოուղափարի «*ուղղափառ (հաւատքով)*»։

ՈՒՂԻՍԿ «*գործի ինչ վիրաբուժից զոր մուծանեն ի փամփուշտն.* cathéter». *իբր նորակերտ բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 208 ա։ Ջունի Քաջունի։ Մագումն անյայտ է։*

ՈՒՂԽ, ի *հլ. (որ և ուխ)* «*առատ հոսող ջուր, հեղեղ, հեղեղատ*» *ՍԳր. Եփր. աւետ. որից* ուղխաջուր *Ա. մկ. ժէ. 37.* ուղխել *Պիտ. Բրս. ծն.* ուղխացաւն *Ագաթ.* ուղխինաւնս *Նար. տաղ. ևն։*

=*Թւում է թէ փոխառնւալ է հիւս. կովկասեան լեզուներից. հմմտ. կայ. ակ. խիւր.* ուրխու «*ծով*», *վար. կուր.* ուխու «*ծով*», *ուտ.* ox, ux, uxk «*գետ*», *կուբ.* ox «*գետ*»։—*Աճ.*

Նշ՛ր լծ. հյ. հեղեղ, ողո՛ղ *և թրք.* oluq «*ջրանցք*» (*իմա՛ «խողովակ»*)։ *Հիւնք.* աղխ *բառից։ Սագրգեան ՀԱ. 1909, 334 հյ.* ողող, ալիք, հեղուլ, *սումեր.* uğ «*թուք*», ik «*ակն*», ak «*ճահիճ*», *թրք.* öl, ül «*ծով*» *են բառերի հետ։* Karst, *Յուշարձան 423 թրք.* oluq «*խողովակ*»։ *Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 թրք.* ուլխ, օլուխ։

Փոխ.—Ըստ Պալեան, Բիւր. 1898, 713 հայերենից է փոխառնւալ կեսարիոյ հայ, թուրք և յոյն ժողովրդի գործածած ulx «*ուղխ, հեղեղ*» *բառը. օր.* jemaat ulx oldə aqdə «*ժողովուրդը հեղեղի պէս հոսեցաւ*»։—*Ըստ իս նմանութիւնը պատահական է. որովհետև 1) հայ գաւառական բարբառներում* ուղխ *բառը գոյութիւն չունի, 2) հյ. յետին* ղ=γ *հնչումից չէր կարող բխել* l *ձայնը, որ գրտնում ենք* ulx *բառի մէջ։*

ՈՒՂՂ. *անատոյգ բառ, որ մէկ անգամ ունի Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 214 ա* (fossa. *գուբ, խորխորատ, ուղկ գոգած, վիհ*)։

+**ՈՒՂՈՒԿ** «*մի տեսակ չափ, քիլ, այն է բթամատից մինչև ցուցամատը եղած տարածութիւնը*» *Եզեկ. խգ. 13. Նորագիւտ բ. մնաց. դ. 5. որից* ուղկեան *Եր. իե. 25, լէ. 12, Եզեկ. խ. 43.* երեքուղկեան *Ես. քր.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ōl- *արմատից, որի ժառանգները տե՛ս* ողն *և* ուլն *բառերի տակ. իմաստի կողմից հմմտ. յատկապէս լտ.* ulna «*գրկաչափ*», *դերմ.* elle, *անգլ.* ell, *հոլլ.* el, *հիսլ.* ǫln, *անգսք.* eln «*գրկաչափ*»։ (*Չափերի արժէքի փոփոխութիւնը շատ սովորական երևոյթ է լեզուների կեանքում*)։—*Աճ.*

Հիւնք. օղակ *բառից։*

Գիհ.—Ղրբ. ƕղоf (*Ջրաբերդում՝* ƕղоկ) «*քիլ, բթամատից մինչև ճկոյթն եղած բացուածքը*».—*Բառ. երեմ. էջ 257* ուղուկ *բառը բացատրում է «թիզ կամ ղուկ», որից երևում է որ 1698 թուին* ղուկ՝ *կենդանի ժողովրդական ձև էր։*

ՈՒՂՈՒՂԻԼ «*ջրի երեսին լողալ՝ ծփալ*». *մէկ անգամ ունի Ճառընտ. «Վէմն այն իբրև զտերև ուղուղեալ ի վերայ ջրոյն»։*

ՈՒՂՈՒՆՆ «*մի տեսակ բոյս*» (*մեկնուած է «աւ», որ նոյնպէս անծանօթ է*). *Բժշ. ունի միայն Հ Բուս. § 2418։*

***ՈՒՂՏ, ու *հլ. (սեռ.* ուղտու *կամ* ըղտու) «*ծանօթ կենդանին. թրք.* deve) *ՍԳր. Բուզ. ղ. 10. Եւագր. Վեցօր. 158 (սեռ.* ուղտոց). «*Բկ ձայնին պատկանող մի եղանակի անուն*» *Մանրուս. (Ամատունի, Հայոց բառ ու բան, 536). որից* ուղտապան (*աւտում է նաև* ըղտապան, *մհյ՝* յղտապան *Վրդ. առ. 799*) *Վրք. Հց.* ուղտեւրամակ *Ես. կ. 6. Երեմ. խթ. 29, 32.* ուղտենի *Վանակ. յոբ.* ուղտաքար *Մագ.* ուղտափուշ *կամ* ըղտափուշ *Բժշ.* ուղտինձ *Շիր. քրոն. կամ* ընձուղտ *Խոր. աշխ.։*

=*Ասուր.* udru, uduru «*երկտապատ ուղտ*» *բառից, որ գործածուած է միայն յգ.* 𒌑𒁀𒊏 𒄑𒌑𒁀 𒌑𒁀𒊏 u-du-ri (*կամ նաև* udurē, udre) *ձևով։ Ասուրական արձանագրութեանց մէջ յիշուած է իբրև դրսից բերուած և Ասորեստանում մեծացրած անասուն։ Առաջին անգամ այս անասունը բերել է Թագլաթպալասար Ա (1108—1080 Ն. Ք.)։ Յիշատակուած են նաև Եփրատի ափին* Ḫindān *քաղաքից,* Guzan *կամ* Gulzan *երկրից,* Mēsu *երկրից և Մարաստանից բերուած ուղտեր* (Delitzsch, Assyrisches Handwörterbuch, *էջ 30 և* Strassmaier, Alphabetisches Verzeich. d. Assyr. u. Akkad. Wörter, *էջ 339*)։ *Ըստ այսմ ասորեստանեան բառը ծագում է իրան.* uštra «*ուղտ*» *բառից*

(*հմմտ. պրս.* اشتر uštur, شتر šutur, *հպրս.* uša-, *պհլ.* uštr (Stackelberg WZKM 17 (1903), *էջ 50*), *ղնդ.* 𐬀𐬎𐬙𐬁 uštra, *սանս.* उष्ट्र úṣṭra-, *բոհեմ.* ušra), *որի սաուգաբանութիւնը տե՛ս* Pokorny 1, 249 *և* 308: *Բայց թերևս կար ասուր. աւելի յարմարաւոր մի ձև՝ յառաջացած* uštra-*ից (իբր* *ultra): *Նկատելի է որ ասուրերէնում ա-տամնականի մօտ գտնուած* š *դառնում է* l *հմմտ.* maltītu *փխ.* maštītu *«խմիչք»* (Delitzsch *անդ, էջ 695*), Kaldu *փխ.* Kašdu *(երբ.* כַּשְׂדִּים kasdīm) *«Քաղդէացի»: Առաջին պարագային պէտք է ենթադրել* udru >*udr>*urd>ուղտ *ձևափոխութիւնը, իսկ երկրորդին՝ պարզապէս* r-*ի անկումով՝* *ult>ուղտ: *Աւելի յարմարաւոր ձև է ասուր.* uldu *«ուղտ», որ տե՛ս* Muss-Arnolt, Ass. Handwb. *42բ:*

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 հյ. ախտ *բառից (ուղտը ախտակալ է):* Klaproth, Mémoires 1, 436 *գրում է սխալմամբ* ուզտ *և կցում է սանս.* ouzza *ձևի հետ!* Peterm. 29 *սանս.* uṣṭra: Pott, Kurd Studien ZKM 4, 12 *կարդում է նոյնպէս* ուզտ *և կցում է սանս. բառին:* Böttich. ZDMG 1850, 359, Arica 65, 59 *սանս. ղնդ. պրս. ափղան. ձևերի հետ:* Lag. Urgesch. 755 *համարում է թէ* š *ձայնը ընկած և* tr *դարձած է* ղտ: Pictet 1, 385 *նոյնպէս* ուզտ *ձևով է:* Müller SWAW 38, 574, Justi, Zendsp. 71 *են սանս. և ղնդ. ձևերի հետ:* Lag. Arm. Stud. § 1760 *փոխառութիւն է համարում մի անծանօթ լեզուից և համեմատում է գոթ.* ulbandus, *ս. գերմ.* olvend *բառերի հետ:* Bopp, Gram. Comp. 1, 399 *սանս.* uṣṭra *ձևից՝* r *դառնալով* ղ *Տէրվ. Երկրագունտ 1884, 100—101 սանս.* uṣṭra *են: Հիւնք.* ուխտ *բառից:* Riabinin MSL 10, 15 *դրաւ առաջին անգամ ասուր.* udru *բառից (նոյնը կրկնում է* Scheftelowitz BB 29, 69): Meillet, Esquisse 109 *համարում է իրան.* uštra *բառի ասուրական ձևից փոխառեալ: (Այս առթիւ* Autran, Sumér. et ind. 111 *ասում է թէ* š>l *ձայնափոխութիւնը կայ հինց սումերերէնում. հմմտ.* šad>lad, ši>lim): *Մառ,* Сред. передвиж. *էջ 25 իրար է կցում հյ.* ուղտ, *պրս.* šutur *և թրք.* deve: *Պատահական նմանութիւն ունին արաբ.* علوذ ʿulūda *«մեծ ուղտ» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 650) և չին.* 駱駝 bó⁴-t'o² *«ուղտ»:*

Դիմ.—Մկ. վն. ուղտ, *Զթ.* ուղդ, *Երև. Ջղ. Տփ.* ուխտ, *Ագլ.* օխտ, *Գոր. Ղրբ.* օղտ: *Նոր բառեր են* ուղտաբեռն, ուղտաերքաշ, ուղտամէջ, ուղտամայլ:

ՈՒՂՓ *«լոյս, արփի». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* ուղփաճեմ *(գրուած նաև* ուղփիաճեմ, ըղփաճեմ, ուղփաճէմ*) «լուսաւոր» Կղնկտ. (Հրատ. Էմինի, էջ 166, 170, Շահնազ. էջ 323, 340). Անան. ևկղ. Մագ. Գնձ.* ուղփեան *«արփիական, երկնային» Աբան. էջ 297.* ուղփագունիլ *«լուսաւորուիլ» Մագ. գամագտ. ե. մեռուղփեան ճառընտ. (տե՛ս առանձին).* նաև ուղփամած *«լուսամած»,* ուղփաճան *«լուսով գնացեալ» Հին բռ. (տե՛ս տակը):*

Հին բռ.=Բառ. երեմ. էջ 257 մեկնում է ուղրՙ *«ուխք ջուրց»,* ուղր *«խաւար կամ խաւարագգած»,* ուղրամած *«խաւարամած»,* ուղփաճան *«լուսով գնացեալ»: Բռ. երեմ. էջ 259 ունի նաև* ուղփագունել *«իմս առ ի մտել», որի ի՛նչ լինելը յայտնի չէ: Ոսկեքան* ուղփագունեալ *հասկանում է «առաւտացեալ», իբր* յղփագունեալ: *ՆՀԲ գնում է «ուղփ, ուղբ, ուղբր, ձայն անյայտ, թերևս որպէս յն.* ὀλοφυής *(«միակտուր») բոլորարուն, խոկարուն, գերարուն կամ որպէս հյ. արփի, լեռն, օդ, երկինք, թրք.* فلك*»: Բազրատունի Քերակ. զարգ. էջ 655, § 1438 չի ընդունում* ուղփ *արմատ, այլ մեկնում է* ուղփաճեմ<*ուղմբաճեմ *«երկնաճեմ, լուսաճեմ», յն.* Ուղիմբ=Ուլիմպոս *բառից: ԱԲ* ուղփ *«արփի»: Հիւնք.* ուղփ=*յն.* Ὄλυμπος *«Ողիմպոս, երկինք»: Նորայր, Բանաս. 1900, 136 վերի ձևով մեկնում է* ուղփ *«արփի, լոյս»: Այսպէս նաև Մէնէվիշեան ՀԱ 1911, 715, որ* ուղփ *գնում է լծ.* արփի

բառին? Petersson IF 43 (1925), *էջ 75 հանում է հնխ.* sāu-el *ձևից. համմտ. լտ.* sōl, *հիռլ.* súil *«աչք», գոթ.* sauil, *սլ.* slŭnico *«արև». Հայերէն ուղիղ բառի մէջ աւելացել է փ՝ նմանութեամբ* ար-փի *և* փաղփ *բառերի։*

ՈՒՄԱՆԱԿ *«խումանակ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 257. յայտնի չէ սակայն թէ ի՛նչ է նշանակում* խումանակ: *(Կայ Ղզ. Ղրբ.* խմանակ *ձևը՝ որ նշանակում է «օրինակ. յայտարար նշան, արդիւնք»)։*

ՈՒՄԵԿ, ի–ա *հլ. «յոյս» Տաղ. Բժշ. Մագ. թղ. 48 (Մի՛ ուրեք այլ (շարժիր) այսր անդր՝ կամ սպառնալիօք կամ ումեկօք). որից* ումեկել *«յուսադրել, սիրտ տալ» Վրդ. առ. 21. Մխ. բժշ. էջ 15 (ձեռ.* ամեկէ, *տպ.* ամեհէ), աճումեկ *«անյոյս» ԱԲ.* ումեկաւոր *«յուսալի?» Ճառընտ.։*

*Նշ*Բ ումեկ *մեկնում է «բառ մթին, որպէս թրք.* էմէք *«վաստակ, արդիւնք» և կամ որպէս հյ.* ամոթումն, *ողոքանք»,* ումեկաւոր *«վաստակաւոր»։ ԱԲ* ումեկ *«ամոքումն, սիրտ առնելը, անուշութիւն»,* ումեկաւոր *«բարերար, արդիւնաւոր»,* աճումեկ *«անոք»։ Երկուսն էլ* ումեկել *դարձնում են* ամեհել: *Վերի ձևով մեկնից Նորայր, Բառաք. էջ 1—2, որ և բառը դնում է պրս.* امید umīd *«յոյս» ձևից փոխառեալ։*

Գիմ.—Սվեդ. ումօգ, *Տփ.* ումիկ *«յոյս». նոյն է նաև Ախց.* ումէկս *«մխիթարանք», ումէկս տալ «մխիթարել» (նոյնը նաև Խոջ.)։*

ՈՒՄՊ *«խմելը, խում» Բր. քեր. որից* ըմպել *(գրուած նաև* ըմբել, ընպել՝ *ինչպէս ունի քանիցս Եփր. Համաբ. 129,* ընբել *Եփր. աւետ. էջ 268, 269) «խմել» ՍԳր. Կիւրղ. ծն. (շատ յետնաբար կայ «ծխել» նշանակութիւնը՝ Զքր. սարկ. Բ. 80. Վասն ծուխ ըմպելոյ. համմտ. ումկ.* սիկար խմել*). ըմպելի ՍԳր. Եզն.* ըմբան *կամ* ըմպան *«կոկորդի վերի մասը,* pharynx*» (ըստ Մէնէվիշեան ՀԱ 1888, 41) Եզն. Իրեն. հերձ. 174 (տե՛ս Վարդանեան ՀԱ 1910, 302).* բեռումպ *կամ* բեռումբ *Կանոն.* ըմպակ *ՅՀ. կթ.* ըմպանակ *Նար.* ըմպիկ *Փիլ. տեսակ. էջ 19.* գինըմպելիք *Ոսկ. մ. բ. 23. Կանոն.* գինըմպուք *Ոսկ. մ. բ. 23.* գինըմպութիւն *Ճառընտ.* բերըմպեալ *Կանոն.* ըմբոց *«ջուր խմելու աման» Կղնկտ. (Հրտր. էմ. էջ 126, Շահն. Ա. 272),* ըմպամաճ *«փարչ» Բառ. երեմ. 292 (երկուսն էլ չունի ԱԲ).* ըմպարան *«բաժակ» Տիմոթ. կուզ. էջ 227.* նախըմպել *Նոնն.։*

Klaproth, As. pol. 1823, *էջ 106 վոգուլ.* aem, ain, *սիբյ. պերմ.* juny, *մանչու* omi *բառերի հետ՝ նշԲ սանս.* ամպու *«ջուր»։* Peterm. 17 *քն–մասնիկով սանս.* pā *«ըմպել» արմատից։ Սրա համեմատ են նաև* Lag. Urgesch. 110, Ges. Abhd. 12, Justi, Zendsp. 189 *սանս. զնդ.* pā, *յն.* πίνω: *Այս վերջիններըը հնդևրոպական ընտանիքի մէջ կազմում են շատ հաստատուն մի ձև. արմատն է հնխ.* pō, pī, *որին պատկանում են սանս.* pā, *նևրկ.* pibāmi *«խըմել», պալի* phā.ⁿiya *«ըմպելի», հինդուստ.* pina *«ըմպել»,* pāni *«ջուր», գնչ.* peo, piava *«խմել»,* pani *«ջուր», հյ. բոշայ.* բիել, պիել *«խմել», յն.* πίνω, *նոյ.* πώνω, *կտ.* πέπωκα *«խմել»,* πῶσις, πῶμα *«արբումն», լտ.* bibo<*pibo *«խմել»,* pōtus *«ըմպելիք», հիռլ.* ibim *«ըմպեմ», հկիմր.* iben *«ըմպեմք», կորն.* evaf *«խմել», լիթ.* pẽnas *«կաթ», հպրուս.* poūt *«խմել», հսլ.* piti, *ռուս.* пить *«խըմել», ալբան.* pī *«խմել» են։ Այս հարուստ ընտանիքի մէջ հայերէնն է միայն՝ որ համապատասխան բառ չունի. ըմպել ձևն է՝ որ իր պ ձայնով բառական յիշեցնում է հնխ.* pō, pōi, pī-*արմատը, բայց մանրամասնութեանց մէջ չի յարմարում։*—Lag. Arm. Stud. § 823 *հյ. ըմպիկ կցում է արաբ. պրս. ասոր.* anbīq *«թորակ» բառին, որ մերժում է Հիւբշ. էջ 153, քանի որ պատկանում է այս ումպ արմատին։* Canini, Et. étym. 103 *ամպ բառի հետ՝ միացնում է յն.* ὄμβρος *«անձրև» ձևին։—Հիւբշ.* Arm. St. § 108 *միացնում է կասկածով ընդհանուր հնդևրոպական* pō, pī *արմատին։ Տէրվ. Նախալ. 91 բացատրելու համար ումպ ձևի ծագումը նոյն արմատից՝ համարում է շրջուած պու ձևից*

և աճած ընդականով։ Meillet MSL 7, 164 չի ընդունում միացնել նոյն արմատին, բայց 9, 155 մի ճարպիկ բացատրութեամբ կցում է նրան, ենթադրելով թէ հին հայ ձևն էր *ճիպել=սանս. pibāmi, որից բնդ նախդիրով ստացուել է *ընդ-ճիպել>*ընդիպել>*ընդպել>*ընպել>*ըմպել։—Bugge, Etr. u. Arm. 44 հորուսկ. eepana=ըմպանակ։ Հիւնք. ամպ բառից է հանում։ Արշէդ՝ դնում է նոյն ընդ արբ, որ տե՛ս։ Bartholomae ZDMG 50, 712 իրրև հնխ. pimbō=pi-n-bo=սանս. pibāmi ձևից՝ ունգայնացած։ Հիւրշ. Arm. Gram. 447 և IF Anz. 10, 45 մերժում է թէ՛ այս և թէ Meillet-ի նախորդ մեկնութիւնը, որովհետև նրանք տալիս են հյ. *իմպել ձևը, մինչդեռ հայերէնն է *ումպել, ինչպէս ցոյց է տալիս ումպ արմատը։ Ս. Գևանջեանց ZAPh 1, 62 յն. ὄμπη, ὄμπνη «սընունդ» բառի հետ։ Մառ, Грам. др. арм. 265 ըմ, ըն- մասնիկով վերի հնդեւրոպական պ արմատից։ Scheftelowitz BB 29, 41 սանս. ambhas «ջուր» ևն իմրի հետ, որի ժառանգները տե՛ս ամպ բառի տակ. սրանց նախաձևն է հնխ. n̥bho-, որի դէմ ինքը ենթադրում է և ombh- ձևը՝ որ պիտի տար հյ. ումպ (յիշում է Pokorny 1, 131)։ Charpentier IF 25, 251 դնում է հնխ. pōi̯, pi արմատից նախ կրկնուած pōp, ապա -mo մասնիկով popmo, շրջուած pōmpo, որ տալիս է հյ. ումպ։ Սագրզեան ՀԱ 1909, 335 և Karst, Յուշարձան 405 հյ. խմել և սումեր. ima «խմել», immeli «ըմպելիք» բառերի հետ։ Թիրեաքեան, Արիա-Հայ բռ. 188 պրս. خنب xunb «կաթսա» բառից։ Pokorny 2, 71 ասում է թէ պատկանում է հնխ. pō, pī արմատին, բայց ձայնական բացատրութիւնը անյայտ է։

Գիմ.—*Խրբ.* Ննխ. ումբ, *Աբբ.* ըմբիլ (<ըմպիկ) «մի փոքր կաթիլ».—*մանկական բարբառով ունինք* բու, բուա, բի-վա, պու, ըմբու «ջուր, խմել», իսկ *Սվեդ.* (նոյնպէս մնկ. բարբառով) ըմբուգ «խմելիք»։

Փոխ.—*Ըստ Յ. Պէտէլեան, Արևելք 1888 նոյ. 8—9 Աստանայի Բրբ. և յն. բարբառներն էլ մեղանից փոխ առնելով ունին* umbu «ջուր»։

ՈՒՅԱՑ «մի տեսակ մժղուկ». *մհյ բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր.* moustique։

+ՈՒՆԱՅՆ (*յետնաբար ի, ո հլ.*) «պարապ, դատարկ» *ՄԿր. Եղիշ. Եփր. օրին. որից* ունայնանալ *Երեմ. ԺԸ. 9,* ունայնացուցանել *Փիլիպ. բ. 7.* ունայնածայն *Ա. տիմ. գ. 2 և Բ. տիմ. բ. 6.* ունայնաձեռն *ՄԿր.* ունայնութիւն *ՄԿր.* ունայնավար *Կորիւն. Ագաթ.* ընդունայն *ՄԿր.* ընդունայնական *Սեբեր.* ընդունայնակարծ *Եւս. քր. վկայօր. Եփր. գազ. 136.* ձեռնունայն *Ել. լգ. 20. Սիր. լբ. 6, ևն։ Արդի Հայերէնում* ունայն նշանակում է միայն բարոյական դատարկութիւն. իսկ հին Հայերէնում նաև նիւթական դատարկութիւն. *ինչ.* ունայն գուր *ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ կազմուած* -այն *մասնիկով (համմտ.* միայն, գիշերայն), *հնխ.* un-*արմատից. ցեղակիցներն են սանս.* ūnā-«պակաս», *զնդ.* una-, ūna-, uyamna-«անբաւական, պակասաւոր», *պամիր.* va-nao «դատարկութիւն», *պրս.* vang «զուրկ, աղքատ», *յն.* εὖνις «զրկուած», *լտ.* vanus «ունայն, թափուր», *գոթ.* wans, *հիսլ.* vanr, *անգսք.* von, *հրգ.* wan «զուրկ, թափուր, պակասաւոր», *անգլ.* want «կարօտ լինել, պէտք ունենալ, պակասիլ, փափագիլ» (Boisacq 296, Walde 806, Ernout-Meillet 1027, Pokorny 1, 108)։ *Հնխ. արմատը դրւում է* eu-, eu̯ā-, *դերբայական ձևով* eu̯ano-. *Հայերէնը կարող է յառաջանալ* un-, ūn- *կամ նաև* eun-, oun- *ձևերից. (վերջին երկուսը պիտի տային* *ոյն-, ածանցման մէջ ուն-, որից* ունայն)։—*Հիւրշ. 484։*

Նշ. ՆՀԲ *մեկնում է «այն՝ որ չունի ինչ յինքեան. լծ. լտ.* inanis»։—Lag. Btrg. bktr. Lex. 70, 35 *զնդ.* ūna- *ձևի հետ։ Նոյնը նաև Հիւրշ.* KZ 23, 36: *Վերի ձևով են մեկնում* Kretschmer KZ 31, 384, *Հիւրշ.* Arm. St. § 236:—*Տէրվ. Նախալ. 104 վերի ձևերի հետ՝ հնխ.* va, u «պակասիլ» *արմատից։ Հիւնք.* ունայն=աե-ոյն «չունեցող», իսկ ընդուն-

այն՝ *կազմուած է* ընդունիլ *բայից*՝ անբացասականով։

ՈՒՆԴ *(գրուած նաև* ունկ*)* *«փուշնման մազուք, մղեղ, փուշի» Ես. ժէ. 13, իթ. 5. ուրիշ օրինակ չկայ։*

Նշ՚ր լծ. Թրք. boŋka, ուն, boŋ: Lag. Urgesch. 803 *սանս.* panka: Petersson KZ 47, 267—8 *կցում է հբգ.* sanga, *մբգ.* sange, *գերմ.* Sange, Sangel, *անգլ. գւտ.* sangle *«հասկիփունջ» և յն.* ἄχυρον *«յարդ» բառերին, բոլորը միասին հանելով հնխ.* songh-, sṇgh- *արմատից։ (Կրկնում է* Pokorny 2, 510, *առանց կասկածի)։ — Այս մեկնութիւնը սխալ է. «փուշի» և «հասկ» բոլորովին տարբեր բաներ են. սխալը յառաջանում է նրանից, որ* Petersson *կարծում է թէ հյ.* ունգ *նշանակում է նաև «*bundle of straw in which some grains of corn remain*—յարդի կապոց, որի մէջ ցորենի հատիկներ էլ են մնացած»։*

ՈՒՆԴ, *ի հլ. «մեղք, յանցանք»? Նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գրանում եմ գործածուած խորվկ. 69. «Այլ և ոչ մահն ըստ բնութեան տնկեալ ասեմք ի մեղ Ստեղծչին, այլ պատուհաս ընդ յանցանացն, որ իրաւապէս դատէր զմարդն ի վերայ ընդից բնութեանս»։ Աւելի խաթարուած է խորվկ. 127. «Ազգի ազգի անօրինականաց Փրկչին գործոց բազմաց ի ներքոյ եղեալ ընգէ փոխմանց զէբռնական մարմին»։*

ՈՒՆԴ *(գրուած նաև* ուճա*),* ո *հլ. «ուտելի սերմ, հատիկ» Դան. ա. 12, 16. Եփր. պհ. Մանդ. որից* ունդակեր *Ագաթ. կամ* ընդակեր *Ստեփ. սեան. Ոսկիփ.* ընդարուտ *Բուզ.* աճունդ առնել *«սերմը՝ ցեղը չնչել» Բուզ.* ընդաճալ *«սերմի գնալ» Կիւրղ. եվ. Եփր. եվ. էջ 150.* ընդիկ *Ստեփ. սեան.* ընդասէր *ԱՔ.* ընդեղէն *(նոր բառ)։ Յետին ձև է* հունդ, ո *հլ. Նոնն. 5 (սեռ.* հնդից*), Պղատ. օրին. բայց սրանից* դեղահունդ *Ոսկ. եփես։ (Արևմտահայերը գրում են և* հուճա*)։*

Canini, Et. étym. 41 ունդ, իմնիւդ, ընծուել *բառերը միացնելով կցում է սանս.* andhas *«բոյս» բառին։* Müller, Armen. VI, *թ. 48 յն.* ἄνθος *«ծիլ, ծաղիկ» և սանս.* andhas *բառերի հետ։* Bugge IF 1, 458 *մերժելով այս՝ դրնում է* հունդ<*հիունդ<հնխ.* seyontó *«ցանք», արմատը հնխ.* sēi *«ցանել», որ ունին լտ.* sero, *լիթ.* sėju, *հսլ.* sějǫ, *գոթ.* saian, *հրգ.* sāen, *գերմ.* säen, *հիսլ.* sā, *անգսք.* sāwan, *հսաքս.* sājan, *կիմր.* heu, *բոլորն էլ «ցանել» նշանակութեամբ։ Նոյնը յիշում է նաև* Meillet, Dial. indeur. 18, *համարելով թէ* հունդ *կազմուած է* -ունդ *մասնիկով (համմտ.* սերունդ*) հնխ.* sē *արմատից. բայց անապահով է գտնում։ Հիմնք. արաբ.* هِنْطَة hinṭa *«ցորեն»։* Patrubány *ՀԱ 1908, 152 հնխ.* ɣendh *«գարձնել» արմատից։*

Դիմ.—Խրք. Տփ. ունդ, *Ալշ. Ախց. Երև. Ջթ. Կր. Հճ. Համշ. Մշ. Ննխ. Սեբ. Սչ.* հունդ, *Սվեդ.* հիւոնդ, *Ասլ.* հիւնդ, հիւն*՝:—Նոր բառեր են* հնտացու, հնտատիլ*.—Ննխ.* հունտոր մարել *«անճիտել, բոլորովին ոչնչացնել».—(Ննխ.* հունդ *նշանակում է յատկապէս «կտաւատ». օր.* հունդ ցանել *«կտաւատ ցանել». սրա մասին տե՛ս կտաւ բառի տակ)։*

Փոխ?—Վրաց. ფნდო ունդի *«բոյս է» (սակայն յայտնի չէ թէ ի՛նչ բոյս է. Չուրինով[2], 1263)։*

+**ՈՒՆԻԼ** *«բռնել, առնել, ստանալ, ունենալ» ՍԳր. Եփր. Թգ. «համարել, բանի տեղ դնել» Եղն. (Համմտ. պրս.* dōst dāštan *«բարեկամ համարել», բուն «բարեկամ ունենալ»). որից* ունելի *ՍԳր. Ոսկ. ես.* ունակութիւն *Փիլ. ՅՀ. իմ.* ունևոր *«հարուստ» Բրս. մրկ.* ունողութիւն *Ոսկ. ա. կոր.* ընդունիլ *ՍԳր. Եւս. պատմ. Եփր. ղեւս.* ընդունելի *ՍԳր.* առնունութիւն *կամ* առնօնութիւն*, «իրաւունք, իշխանութիւն» (Թրգմ. յն.* ἐξ-οχή *ձեւից) Արիստ. Սահմ.* բազմունակ *Նար. խչ.* դժուարունելի *Նար.* երիվունակ *Գնձ.* կենսունակ *Նար. Սկևռ. ես.* կատարունութիւն *կամ* կատարօնութիւն *Նիւս. բն. խոսր.* շարունակ *Փիլ. Պղատ. տիմ.* պարունակել *խոր. ՅՀ. իմ. պալ. փիլ.* շնորհունակ *Միխ. ատ.* առնօնագիր, առնօնաւէր *(նոր բառեր). յետին շրջանում արմատը սարքուած է ոյն «ունեցած ուժը, կարողութիւնը (և յատկապէս գրուածքի*

մէջ)» ՅՀ. կթ. Թր. քեր. 58. Մխ. աննց. էջ 14. Մագ. դամագտ. «քաջութիւն» Բառ. երեմ. էջ 253. դրուած նաև ուն Գնձ. (այս նշանակութիւնը ձևացած է թարգմանաբար յն. ἕξις «զօրութիւն» բառից, որ գալիս է ἔχω «ունիմ» բայից. համմտ. ՆՀԲ ոյն և Նորայր, Բանաս. 1900, 135).—մհյ. ունենալ «ուննալ» Անսիզք 17, Սմբ. դատ. էջ 3։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ōp- «բանել, ձեռք բերել» արմատից, որ աճած է -n- ածականով։ Արմատիս բարձր աստիճանի ձայնդարձն է ēp-։ Սրանցից յառաջացած ձևեր են՝ սանս. āpnóti «ձեռք բերել». apnas «հարբստութիւն, ինչք», գնդ. apayeiti «հասնել», կամիս. epmi (իմա՛ āpmi) «առնում», լա. apiscor «հասնել, շահել, ձեռք բերել», ops, opes «կարողութիւն, ուժ, միջոց», apio «կապել, կցել», aptus «կից, կցուած», ad-ipiscor «հասնել, ձեռք բերել, ըմբռնել», հիսլ. ofa «վարժուիլ» (որ է «վարժութիւն ձեռք բերել»)։ Բոլոր հնդևրոպական լեզուների մէջ էլ «ունենալ» բայը ձևացած է յետնաբար և իրարից անկախ զանազան արմատներից, գլխաւորապէս «բռնել» արմատից. օր. լա. habeo, գերմ. haben, պրս. dāštan «ունենալ», նշանակում են բուն «բռնել» և հայերէնի մէջ՝ ունիմ բայի կատարեալը՝ կալայ, բուն կալ «բռնել» արմատից է։ Ernout-Meillet 58, հայերէնի նախաձևը դնում է ōp-ne։

ՆՀԲ ոյն՝ լծ. ոյժ: Lag. Urgesch. 113, Gesam. Abhd. 68, Btrg. baktr. Lex. 58 գնդ. -pāna, պրս. -bān, հյ. -պան, լիթ. ponas։ Մերժելով այս մեկնութիւնը՝ Տէրվ. Altarm. 52 հանում է հնխ. yug «լծել, կցել» արմատից։ Bugge, Etr. u. Arm. 41 նոր. ituna «աման» կցում է հյ. բնդունակ բառին, էջ 43 ունիմ=յն. ςὐνή «անկողին, ախոռ, որջ», εὐναί «նաւի խարսխաքար»։—Հիւնք. յն. οἰνόω «գինիով արբենալ» բայից։ Patrubány SA 1, 214 յն. ὦν «լեալ» ձևի հետ՝ հնխ. un արմատից. նոյնը ՀԱ 1908, 188 և IF 14, 58 յն. εὐνή «անկողին, պառկիլը, բնակարան», լա. venus «սէր», սանս. vánas «հաճոյք» են։ Pedersen, Նպաստ 14, KZ 38, 203 միացնում է հնորվ. vinna, հբգ. wonen, gewinnan «ընդունել» բայերին, որոնք պատկանում են նոյն արմատին, ինչ որ Patrubány-ի εὐνή և venus ձևերը։ Scheftelowitz BB 29 (1905), 34 մերժում է այս և տալիս է վերի ուղիղ մեկնութիւնը։ Պնդում է Pedersen KZ 40, 209 և իբր վկայ է կանչում Patrubány-ին, որ տալիս է նոյն մեկնութիւնը։ Walde 818, Boisacq 295, Pokorny 1, 259 ընդունում են Patrubány-ի և Pedersen-ի մեկնութիւնը։ Անտեղեակ Շէֆթէլովիցի մեկնութիւնից և իրարից անկախ՝ կրկնում են նոյնը Charpentier IF 25, 247, Desiderativbildungen էջ 15 և Meillet BSL 24 (1923), 170, MSL 23 (1929), 276։

ԳԻՒ.—Ալշ. Մկ. Մշ. Պլ. են ունիմ, Մրզ. իւնիմ, իւնիւմ, Ակն. իւնիմ, Վն. ունեմ. Սվեդ. ունէմ, Սլմ. իւնիմ, Հւր. ունում, Շմ. ունիլ, Ջղ. ունենալ, Ախց. երև. խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. ունէնալ, Տիգ. ունէնոլ, Աժտ. ունաճալ, Ասլ. իւնիւնալ, Համշ. ունուշ, Հճ. ունօլ, Զթ. ունցնօլ, ունցնոլ, Ագլ. Գոր. Ղրբ. օ՛նիլ.—*ուժեղ սղմամբ խրիմի մէջ ունինք բիղնաճաս «պիտի ունենաս»։ Նոր բառեր են ունաւոր, ունաճ, ունենաւոր, ունիմշունիմ, շունեւոր, ունուիլ «կալուիլ, փակուիլ, գոցուիլ»։ Սվեդ. (սահմանականի կը մասնիկի միացմամբ) գունեմ, գունես, գունա «ունիմ, ունիս, ունի...»։

*ՈՒՆԻՒՎՆ «հղնգնաքար». ունի միայն ԱԲ. երկու անգամ գործածում է Պտմ. աղէքս. էջ 155 և 159, երկուան էլ սեռ. ունիովնայց և բիւրղայց ձևով։

=Յն. ὠνίων ձևից տառադարձուած. այս ձևը՝ որ գործածուած է բնագրի համապատասխան տեղում, սխալ գրչութիւն է և պէտք է ուղղել ὀνύχων «հղնգնաքար»։

ԱԲ համարում է յն., վերի մեկնութիւնը տուաւ Տաշեան, Ուսումն. ստոյն կալիսթ. էջ 208։

*ՈՒՆՁԱՅ «մի փոքր կշիռ է. 8 կամ 12 տրամ» Վրք. հց.։

=Միջնադարեան եւր. մի ձևից. համմտ. հին ֆրանս. once նոյն նշ.—տեսի ընդարձակ տե՛ս յաջորդը։—Հիւրշ. 369։

*ՈՒՆԿԻ *«փոքր մի կշիռ, 8 կամ 12 տրամ» (ըստ Մանանդեան, Կշիռները՝ էջ 29, ճիշտ հաշուով 27,2 գրամ) Շիր. էջ 27, Վրք. Հց. գրուած է նաև ուկնի, ուկի. շրջիալ ձև է նուկի, նուկ, նուկիէ Մանդ. Վրք. և վկ. Հտ. բ. էջ 231, Շիր. Նպիփ. Թաղմ. Վրդն. եւլ.։*

*=Յն. οὐγκία Համանիշից, որ իր հերթին փոխառեալ է լտ. uncia բառից. այս էլ ծագում է *oincia «միութիւն» բառից (<unus «մի» Walde 850). տարածուած է նաև շատ ուրիշ լեզուների մէջ. ինչպէս՝ գոթ. unkja, հբգ. unza, գերմ. Unze, իտալ. oncia, ֆրանս. once, ռուս. унція, վրաց. უნკიო ունկի ևն. աստրերէնի մէջ դարձել է* حصا ūnqiā *կամ շրջմամբ* صا nūqiā։ *Մեր մէջ բառը ստացել է երեք տարբեր ձև. յունականից առաջացել է ունկի, միջնադարեան եւրոպականից ունճայ, ասորականից նուկի, որ իբրև զուտ ժողովրդական ձև մինչև այսօր էլ կենդանի է։—Հիւբշ. 369։*

Աւդերեան, Բյուր. չփ. և կշռ. էջ 146. յն. οὐγγία ձևից։ Աւելի լաւ է ՆՀԲ։ Ասրերէնի համեմատութիւնը դրաւ Վարդանեան ՀՄ 1920, 332։

ԳԻՒ.—Երև. վն. նուկի, ՋՖ. Խրբ. Մշ. Սեբ. Տիգ. նուգի, Սլմ. նիւկի, Սվետ. նուգա. (պարունակում է ըստ Երև. 3 ֆունդ, Խրբ. Սեբ. են՝ կէս տաճկական օխա). որից նուկանոց «կէս օխա պարունակութեամբ գինու կամ ձէթի աման հողէ»։

ՓՈԽ.—Քրդ. nuki «օխա» (Justi, Dict. Kurde 425), Թրք. գւռ. Կս. nuyi «կէս օխա» (Բիւր. 1898, 713), Թրք. գւռ. Եւդ. nüγü (Գաղանճեան, անձնական), Թրք. գւռ. Տ. nügü (Բիւր. 1899, 799)։

+ՈՒՆԿՆ, ն Հլ. (-կան, -կամբ. *գրուած է նաև* ունգն) *«ականջ» ՍԳր. Եփր. Համար. «ամանի կանթ, բռնելատեղ, անդղ» Վրք. Հց. բ. 324. (իմաստի զարգացման համար հմմտ. ամկ. խուլախլը «երկու ունկով մի տեսակ տափակ աման» <տճկ. qulaq «ականջ» բառից)։ Որից ունկնդիր ՍԳր. Եւս. քր. սրունկն Կոչ. 24, 248, ունկնամուտ «ականջմատուկ միջատը» Նար. էջ 257. ունկնախից Նար. Լմբ. առունկնեաւ «քսու, բամբասող» Սրգ. Վրք. Հց. ունկանող «հլու, հնազանդ» Տիմոթ. կուզ 272, որի հակառակն է սառնգաճել «ականջ չդնել, ուշադրութիւն չդարձնել, անհնազանդ դտնուիլ» ՍԳր. Ոսկ. Եզն.։—Հայ ունկն գործածւում է միայն իբր եզակի՝ մէկ ականջի համար. յոգնակին է ականջք, որ հին հայերէնի երկակիի թանկագին մի մնացորդն է՝ աչք (հց. ակն) բառի հետ. «ամանի կոթ» նշանակութեամբ յետնաբար յարմարցուած է յդ. ունկունք ձևը։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ōsn- կամ usn- ձևից. սրա ցեղակիցներն են զնդ. uši «երկու ականջները. 2. խելք, հասկացողութիւն» (որից էլ պրս. هوش hōš *«խելք, միտք»> հյ. փոխառութեամբ ուշ), յն. οὖς, դոր. ὦς, լտ. auris (որ է <*ausis, որ շատ լաւ երեւում է aus-cultō «լսել»>ֆրանս. écouter «լսել» բայի մէջ), գոթ. ausō, հբգ. ōra, գերմ. Ohr, հոլլ. oor, հհիւս. eyra, անգսք. éare, անգլ. ear, լիթ. ausìs, լիթթ. auss, հպրուս. ausins, հսլ. ucho (սեռ. ušese, երկ. uši), չեխ. ucho, uši, ռուս. ухо, уши, հիռլ. au, ō, ալբան. veš, բոլորն էլ «ականջ» նշանակութեամբ (Pokorny 1, 18, Trautmann 19, Boisacq 731, Walde 76, Ernout-Meillet 88—9, Kluge 355): Նախաձևն էր հնխ. aus, us, ōus, ōs, որ թերևս ծագում է նախնական au «լսել» արմատից։ Հայերէնի մէջ արմատը աճելով n ռնգականով՝ դարձել է նախ ōsn- կամ usn-, որ տուել է ուն- (նոյնպիսի աճում ցոյց է տալիս նաև յն. οὔατος <*aus-n̥-t). և յետոյ աւելանալով -կն մասը (իբրև մասնիկ. հմմտ. մուկն, ձուկն; արմուկն, և կամ յառաջացած ակն բառի նմանութեամբ՝ ըստ Meillet ZAPh 1, 147), տառացուել է ունկն, իբր ու-ն-կն։—Հիւբշ. 484։*

Klaproth, Asia pol. 103 լեզկ. an, een, hanka բառերի հետ։ ՆՀԲ լծ. Խրբ. օզէն, յն. οὖς, ὠτίον: Տէրվ. Նախալ. 59 ականջ, անգեղ, անկանել բառերի, ինչպէս և սանս. aǰ, anč «կռել», յն. ὄγκος «կոր, ճանկ», լտ. uncus, angulus ձևերի հետ՝ ak «ծռիլ, կորանալ» արմատից։ Ուղիղ մեկնութիւնն ունին Bugge, Btrg. 24 (պատահական է համարում ավար. 'en, յդ. 'undul «ականջ»), Müller, Armen. VI, թ. 49, Meillet MSL

9, 369։ Հիւնք. անկիւն *բառից։* Patrubány SA 1, 188 *հնխ.* onkos «*ծռած*» *ձևից. հմմտ. յն.* ἀγκύ-λος «*կորացեալ*»։ Karst, *Յուշարձան 422 ալթայ.* uk «*լսել, գիտենալ*», *չաղաթ.* ong, ang «*միտք*»։ Osthoff, Parerga 1, 308 *հայերէնի նախաձևը դնում է* us-on-ko-m «*ականջ-իկ*» *նուազականը։ Մարտիրոսեան ՀԱ. 1924, 457 հաթ.* uškinun «*դիտել, լաւ նայիլ*»։

ԳԻՒ.—Ջղ. ունգն, *Ալշ. Երև. Համշ. Տփ.* ունգ, *Կր.* օնգ, ունգ, *Ախն.* ունի՛, *Գոր.* օ՛նգներ, *Սվեդ.* իունգ, *Ղրբ.* օ՛յներ, *Ախց.* վօնգ, *բոլորն էլ նշանակում են «ամանի կոթ». բուն «ականջ» իմաստը կորած է. կայ միայն Շտ.* ունի՛ տալ «*լսել, ականջ տալ, ասածին կատարողութիւն տալ*», *բայց այս գաւառականումն էլ այս ոճից դուրս* ունկ *իրր «ականջ» գոյութիւն չունի։ (Բառիս հետ պէտք չէ շփոթել Խրբ.* անգ, *Սվեդ.* իունգիւղ *են, որոնք պատկանում են* անգղ *արմատին*)։ *Նոր բառեր են* ընկնել, ընկնաճի, ընկած *կամ* ունկնել, ունկանի, ունկնաւոր, ունկնած։ *Նոյն է նաև* ունկ *Շլ. «աղբիւրի խողովակը, որից ջուրն է վազում». 2. Երև. «պատրուակ, սուտ պատճառ»։*

Ունկն և Բունկն *տե՛ս Բանկն։*

ՆՀԲ դնում է ունկն «*ականջ*» *բառից։*

ՈՒՆԿՐԱՆՈՒԿ «*անդ կամ ամրանուկ*». *այսպէ՛ս է մնկնում Բառ. Երեմ. էջ 258. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

Ունձ *տե՛ս Ինձ։*

ՈՒՆՋ, ի–ա *հլ. (աննպական է) «քիթ, քթի ծայրը, քթի և բերանի միջև գտնուած մասը, պեխ, բեղ» ՍԳր. որից* յընչաց ſեռել *Ագաթ. 288, Եղն. 229, Մծբ. 325 (ապ.* ſեռեցաſ յընչից. *այսպէս է սրբագրում Վարդանեան ՀԱ. 1913, 347). Բուզ. (ձեռ.* յընչացſ ե–բաց. *այսպէս է սրբագրում Նորայր, Քննասէր Ա. 40 և Կորիւն վրդ. 244),* ունչս ունել *Եփր. Թգ.* ունչ առնել *Ոսկ. երր. 517. Փարպ. Լմբ.* ունչս ընկենուլ *Կանոն. (բոլորն էլ «արհամարհել, ծաղրել»),* գրնչօſ առնել «*բեխերը շիտկել, յարդարել կամ ոլորել*» *Բ. Թագ. ժԹ. 24.* ունչատ «*քթատ*» *Կանոն. Նար. խր. էջ 531.* ընդունչսարկու *Փարպ.* ընչապատուկ *Եղն. 69.* կարճունչ *Ղեւտ. իա. 17.* կորունչ *Անյ. պորփ.* տափրնչութիւն *Անյ. պորփ.* ընչացſ «*բեխեր*», ընչախոտ «*քթախոտ, բունեօքի*», ընչատուփ «*քթախոտի տուփ*» *(նոր բառեր),* բացունչ *ԷՓիմ. 184 են. սխալմամբ դրուած է մունչ, որ տե՛ս։*

Klaproth, Asia pol. 103 *օսս.* finǰ, *արաբ.* عنف ʻanf «*քիթ*» *բառերի հետ։* Diefenbach, Berl. Jahrber. 1843, 447 *օսս.* findz, *ափխ.* pinza, *պրս.* bīnī, *ալբան.* hundä «*քիթ*»։ Lag. Urgesch. 673 *հյ.* պինչ, *օսս.* fünč, *աֆղան.* pwz: *Հիւնք. չունչ բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 102* ճնշել *և* շնչել *բառերի հետ։* Karst, *Յուշարձան 416 մոնգոլ.* unur, *կալմիկ.* unus, *բուրիաթ.* unde, *թունգուզ.* unu «*հոտ*», *427 թիւրք.* tin, tinč «*շունչ*»։ Meillet, Dict. étym. It. 621 *չի ուզում կցել լտ.* nares, nasus, nassus, *լիթ.* nósis, *հպրուս.* nozy, *սվեդ.* nāsā, *գնդ.* nāñha, *հպրս.* nāham, *հիսլ.* nasar, nǫs, *հրգ.* nasa, *հսլ.* nosъ *և նոյնիսկ յն.* ῥίς, ῥινός *բառերի հետ, որոնք բոլոր նշանակում են «քիթ»։*

ԳԻՒ.—Անշուշտ նոյն բառից է ունչը չէ *Ղրբ. «հոգը չէ, դարդը չէ, փոյթ չի անում» ոճը։*

ՈՒՆՋ *(յետնաբար ո հլ.) «տակը, խորքը, յատակ» Վեցօր. էջ 17, Ֆ65. Բուզ. փիլ. յովն. 589, 603. «գետնի տակը» Բուզ. «խաղողի որթի հողի տակ եղած մասը» Բուզ. 99. Խսիւք. յոր. 273. «հազար բոյսի թուփը» Անան. դիտ. 21. որից* ընչովին «*արմատաքի*» *Բուզ. 99.* անունչ «*անյատակ, խոր*» *ԱԲ. մադունչ (գրուած է մադունչ) «մազի տակին մնացածը» Ոսկիփ.։—Տե՛ս և յաջորդը։*

ՆՀԲ լծ. Թրք. uǰ «*ծայր*»։ *Հիւնք.* ունչ *բառից։* Patrubány SA 1, 189 ուն *ներկայացնում է գերմ.* un-ter «*տակը*» *բառի առաջին մասը, իսկ ջ մասնիկ է՝ նմանութեամբ մէջ բառի։ Նոյն ՀԱ. 1908, 151 լտ.* inferus, *սանս.* adhamás, *գնդ.* aδarō «*ստորին*» *բառերի հետ։* Karst, *Յուշարձան 425 թիւրք.* qon-maq «*իջևանիլ*», koyun «*տակը*»։

ՈՒՆՋ «*դանձ*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բուզ. էջ*

208. Ի գետն ընջին արքունի, որում Արդեհանսն կոչեն»։ (Նոյն գիւղը յիշուած է նաև Եղիշ. 60)։

=Նոյն է վրաց. უნჯი ունջի «գանձ, հարստութիւն», որից უნჯება ունջեբա «դիզել, հարստութիւն հաւաքել», ճիշտ ինչպէս հյ. գանձ–ել. *Համմ. Ամոս Գ. 10. Հոսիմ. Բ. 5.* որոնց մէջ վրացին ունի ունջեբա, իսկ հայը գանձել: Չգիտեմ սակայն թէ բառը կապ ունի՞ նախորդ ունջ «խորք, յատակ» ձևի հետ. երկուսի միջին կապն է թերևս ներկայացնում Վեցօր. «Ջցօղ մեղուն քաղեալ և ի խորս մոմակերտ գբոցն յունջս արկեալ համբարեալ դնէ». որի մէջ յունջս արկեալ նշանակում է «դիզել», բայց ձևով է նախդրիւ հյց. ունջ «խորք» բառիւ—Աճ.

Զուբինով համեմատում է հյ. ունջ բառի հետ, բայց անշուշտ հասկանում է ունջ «խորք»։

ՈՒՆՋ «մուր, վառարանի մէջ մածուած ծուխը» Ոսկիփ. Մաղաք. ար. 50. ուրիշ վկայութիւն չկայ։

ԳԻՒՂ.—Շմ. ունջ, Գոր. Ղրբ. օնջ «մուր, երկաթի ժանգ, սարդոստայն», Հջղ. մունջ «սարդի ոստայն»։ Նոր բառեր են ունջաբաթախ, ունջակալել, ունջաջուր, ունջոտ, ունջոտացնել, ունջոտել, ունջոտուիլ: Նոյնից են նաև մնջոտ Երև. «կեղտոտ», մունջկար, մունկար Մրղ. Վն. «մուրկաթ, ունջաջուր»։

ՈՒՆՋՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ գրտնում ենք գործածուած Պզատ. օրին. 313. «Գրէ՛ իսկ թէ դիս իբր ունջամբ բերիալ հանդէպ բախելով զարհուցեր», ՆՀՒ մեկնում է* ունջամբ բերիլ *«ի բուռն անկանիլ և ձգիլ, լն. φέρομαι»։ Բնագրում իբր ունջամբ բերեալ բառերի դէմ գտնում ենք միայն ὥσπερ φερόμενον. չկայ ունջամբ. (տե՛ս* Platonis opera, Paris 1883, *հտ. Բ. էջ 421)։*

ՈՒՆՏ, *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Տաթև. ամ. 239. «Մաղը... շնչոյ կարկաչումն, ձկտումն այսից, մերկութիւն առամանց և բնութիւ կոկորդին»։ Անշուշտ պէտք չէ ուղղել լնդից, որովհետև կոկորդը լինդ չունի. *ունտ *(բայց գուցէ և* ինտ*) պիտի լինի կոկորդի մասերից մեկը։*

ՈՒՆՔ «աքեամ». *ունի միայն Բառ. երեմ. էջ 258։*

ՈՒՆՔԷՈՒ «սունկ հիւանդութիւն, ecsarcome». *ունի միայն Քաջունի, հտ. Գ. 195, բայց չէ յիշած հտ. Բ, էջ 718։*

ՈՒՇ, ի, ս հլ. «մխոք, խելք, մտադրութիւն, բանականութիւն» Ոսկ. երր. Սեբեր. Մծբ. Վեցօր. աւելի յաճախ գործածւում է ուշ առնել, ուշ դնել, ուշ ունել, յուշ ածել *են ոճերով. սրանից են* ուշարերիլ *Ոսկ. մ. և հա.* ուշի ուշով *Մծբ.* ուշակալ, ուշակալու *Ոսկ. մ. ա. 17, բ. 26, 28.* ուշարար *Սեբեր.* ուշեղ *Եւս. քր.* ուշիմ *Բ. մկ. է. 17. Փարպ.* ապուշ *ՍԳր. Սեբեր. Վեցօր.* ապշիլ *Սղ. ձէ. 16, հգ. 20. Ագաթ. Փարպ.* ապշեցուցանել *ՅՀ. ժբ. 40. Գծ. ը. 9, 11 (գրուած նաև* ափշիլ, յափշիլ, ափշուցեալ *Անկ. կիրք Նոր կտ. էջ 145).* յ նախդիրով յուշ *Փարպ.* որից յուշարար *Վեցօր. Ոսկ. մ. ա. 1.* յուշարարութիւն *Ոսկ. մ. գ. 32, յՀ. ա. 17,* շարայուշ *Ոսկ. երր. Վեցօր.* ամենայուշ *Ոսկ. կող. ա. 529.* մշտայուշ *Պտմ. աղէքս.* յերկարայուշ *ԱՔ.* (յիշել, յիշատակ և շամբուշ բառերի վրայ տե՛ս առանձին)։ *Այստեղ է պատկանում նաև ուշ «անագան» Ագաթ.! բառը, որ անցած է նախ «ուշադիր» առումից. Համմ.* յուշիկ «հանդարտ, կամացուկ, յամր» *Վրք. Հց. Մխ. բժշ.* յուշախաղաց «յամրաշարժ» *Շիր. Արշ.* յուշանալ «ուշ հալուող» *Մխ. բժշ. 125.* յուշանալ «անագանիլ» *Ոսկիփ.* յուշ «ուշ» *Ոսկիփ. Վստկ. 200. Վրդն. սղ. 310.* յուշ յուշ *Պիտառ. (Համմ.* կամաց՝ կամ՛ *բառից)։ Նոր բառեր են* ուշագնացութիւն, ուշադիր, աննուշադիր, յուշատետր, յուշարձան, յուշագիր *են։—Արևելեան գրականի մէջ յաճախ գանագանութիւն դնելով գործածւում է* ուշ «անագան» և ուշ *«մխոք, ուշադրութիւն»։*

=Իրան. uš ձևից. *Համմ. գնդ.* 𐬀𐬎 uš *«ուշ, հասկացողութիւն, խելք, միտք», պհլ.* 𐭥𐭱 ōš=hōš, *մանիք. պհլ.* אוש ōš= hoš (Salemann ZAH 8, 51) *«միտք, բանիմացութիւն, գգայողութիւն», պազ.* hōš *«բանականութիւն», պրս.* هوش hōš *կամ* hūš *«խելք, միտք, խոհականութիւն», քրդ.* hiš *«գաւառութիւն, միտք». որոնցից կազմուած են պհլ.* 𐭠𐭥𐭱𐭲𐭩 =*մանիք. պհլ.*

אבֵיאוש abīhōš (Salemann ЗАН 8, 43)=պրս. بیهوش be-hōš, bī-hūš «ապուշ, անմիտ, տխմար», պազ. hōšyār «իմաստուն, մտացի», պրս. hōšyār «արթուն. սթափ», hōšmand «ուշիմ, մտացի», hōšbar «ընդմտաւտար», քրդ. behiš «խոհեմ, հանդարտ»։ Իրանեան բառի նախնական նշանակութիւնն է «ականջ». այսպէս դնդ. uš- «երկու ականջները. 2. հասկացողութիւն, ըմբռնողութիւն» (Bartholomae, Altir. Wörterb. 414, Horn § 1111). *բառ այսմ* ուշ դնել *բուն նշ. «ականջ դնել» և հյ.* ուշ *միանում է ռուս.* уши «ականջներ» *ձևի հետ։ Աւելի ընդարձակ տես* Ունկն *բառի տակ։—Հիւբշ. 216։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ իբր պրս. հիւշ։ ՆՀԲ ուշ «խելք»=պրս. հուշ, ուս *(իմա՛ թրք.* اوص us «խոհեմութիւն»), ուշ«անագան»=լծ. *թրք.* իւշեմէք «տատամսիլ», եավաշ «կամաց»։ Böttich. Rudimenta 39, 84 *զնդ.* uši, *պրս.* hōš, *երր.* הוזיא hōzia «դիտուն»։ *Նոյն իրանեան ձևերի հետ են դնում* Böttich. Arica 12, 4, Lag. Urgesch. 54, Müller SWAW 41, 8, Justi, Zendsp. 70, *Հիւբշ.* KZ 23, 16, Arm. Stud. § 237 *են։ Հիւնք.* ուշ «միտք»=պրս. հուշ, հիւշ, հուս, *հպրս.* ուշի, *թրք.* ուս, *իսկ* յուշիկ *(որից* ուշ «անագան»)=յն. ἡσυχία «խաղաղութիւն»։ *Քիւրէղեան, Բազմ. 1910, 153 երկու իմաստով էլ* ոգ>ոյժ *արմատից։* Karst, *Յուշարձան 422 պրս.* hōš *բառից, բայց աղղուած թրք.* us *բառից. 424* յուշ «անագան»=չաղաթ. javaš, yuvaš, *ալթայ.* yaboš «կակուղ» *են։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341* ուշ «անագան» *կապում է հյ.* շուշել *և թրք.* իւշեմէք «ծուլանալ» *բառերի հետ։ Մարտիրոսեան ՀԱ. 1924, 457 հաթ.* uškinun «դիտել, լաւ նայիլ»։ Autran, Sumér. et ind. *էջ 131 վերիններին և հյ. բառին է կապում սումեր.* 𒄑𒍪 uš «հասկացողութիւն»։

ԳԻՒ.—Ուշ. «միտք» բառն ունին Գոր. Ղրբ. օշ, Ախց. Երև. Կր. ուշ, *Ալշ. Մկ. Մշ. Տփ.* ուշկ. *որից կազմուած են* ուշագնաց, ուշաթափ, ուշաթափուիլ, ուշկալ.—ուշ «անագան» *բառն ունին Ախց. Երև. Խրբ. Կր. Հճ. Համ. Նախ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ.* ուշ, *Ասլ. Մրզ. Սլմ.* իւշ, *Զթ. օշ. որից են* ուշաճալ, ուշացնել, ուշկեկ, ուշկիկ, ուշնաասուկ։

ՈՒՇԻ «մի տեսակ ծառ». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. փետր. 29.* «Առնուլ փայտ դալար ընկուզի, ուշի և սօսի»։ *Հատուածը ակնարկութիւն է Ծն. լ. 37 համարի.* «Եւ առ Յակոբ գաւազան՝ շեր դալար և ընկուզի և սօսւոյ», *ուր՝ ինչպէս տեսնում է,* ուշի *բառը իր համապատասխանը չունենալով՝ մնում է անբացատրելի—ի հարկէ պէտք չէ մտածել ուղղելու* նուշի, ճշենի, *որովհետև ունինք՝*

ԳԻՒ.—Մշ. հօշի «ուռու նման տերևներով մի թուփ է». *բառ այլոց կաղնի ծառի մէկ տեսակն է, աճում է անտառներում. տերևները ձմեռ ժամանակ ոչխարներին կեր են տալիս։*

**ՈՒՇԱՒԻՐ «տասանորդի տուրք». մէկ անգամ ունի Հաւաք. 53.* «Ստացաւ հալալ վաստակոց իւրոց և արար ոխով ի գուռն յԱղթամարայ սուրբ խաչին, որ է առանց դաւի (արաբ. دعوى da'vă «դատ») և առանց ուշուրի»։ *Սրա բացասականն է* անուշուր «տասանորդից ազատ». «Եւ այլ ամենայն արտօրեա՞ ֆարմանով է, ևս անուշուր է» *Հաւաք. 50։*

=Արաբ. عشر 'ušr>*թրք.* öšür «տասանորդի տուրք»։—*Աճ.*

Հրատարակուած նախ իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 143։

ՈՒՇՏԱԿ. *ձևով ու նշանակութեամբ անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Առաք. պտմ. 462.* «Եաղուբի... զկղինն ի Շրվան դին ունի. ուշտկի խիստ աղէկ է»։ Անշուշտ մի տեսակ հիւանդութեան անուն է, որ *ըստ հին բժշկութեան՝ կղինն յակինթով էր բժշկւում։*

ՈՒՒԻԿ «Հալուէ». *ունի միայն Բառ. երեմ. յաւել. 571։*

=Թերևս սխալ գրչութիւն է փոխանակ արաբ. ալուէ կամ նման մի բառի. *համմտ.* հալուէ *բառի տակ։*

ՈՒՊԱՆ *(որ և* ոպան*)* «քաղբան, չարհոտ, ծանրահոտ մի խէժ և նրա տունկը. լտ. galbanum *(ըստ ՆՀԲ)*, opoponax *(ըստ Արբին-*

հան, Տունկերը էջ 52)» Գաղիան. բժշ. որից ուպանի խիժ, ուպանի տակ, ուպանատակ:

ՈՒՌ, ո *հլ. «ճիւղ, ընձիւղ» ՄԳր. Վեցօր. 94, 95, 97. Եղիշ. զ. էջ 89. «ուռի ծառը» Ես. խդ. 4. Եփր. հռ. 23. Օրբել. Հրտր. էմինի, էջ 101? «գիղձի ծառը» Երեմ. խզ. 14. (սրանք սրբագրելի են ուռի՝ ըստ Նորայր, Բառաքնն. 29.—Նշանակութեանց զարգացման համար համմտ. Թիր.* tal, *որ նշանակում է «1. ճիւղ. 2. ուռի» ըստ* Будаговъ 1, 335), *որից* ուռամիջակ *«ուռենու պէս բարակ մէջքով» Նար. տաղ. (Նորայր, Հայկ. բառաք. 122),* ուռենի *Ոսկ. յհ. ա. 45.* ուռի *Սղ. ճղ. 2. Ղևտ. իգ. 40.—Նոյն բառը պիտի լինի նաև* ուռն *«սրած փայտ, սեպ, երիթ» Ես. պատմ. 158, Ագաթ. Գոր. և շմ. տող 406. Վեցօր. 97. համմտ.* երեփուռնի *«եռոտանի, երիք ոտքով» Վստկ. 183 (Պարտ է երիքուռնի բարձր սանդուղք շինել):*

Հինք. ուռնանալ *բայից է հանում* ուռ, *որից էլ* ուռի, *իբրև անպտուղ և միայն ուռ բերող ծառ;* Karolides, Γλωσ. συγκρ. *78 կապադովկ.* veria *«խաղողի բարուրնակ, ուռ որթոյ»; Մառ* ЗВО *5, 318 գնդ.* vaēti, *պրս.* bīd *համանիշների հետ;* Patrubány *ՀԱ 1903, 381 հնխ.* ōsro, *իբր երկրորդական ձև* ozdo>num *բառի;* Karst, *Յուշարձան 422* ուռնուլ *բայի հետ՝ չաղաթ.* ur *«ուռոյցք»,* uruk *«ծիլ»;* Petersson KZ 47, 256 *հնխ.* orso- *ձևից, որի հետ համմտ. յն.* ἄρριχος, ἄρσιχος, ἄρσικος *«կողով». արմատն է* ers: ors- *«փափուկ ճկուն ճիւղերով հիւսել», որի աճականից յառաջացած ձևեր են լիթ.* rēzgis *«կողով»,* rezgù *«հիւսել», սանս.* rájju *«չուան», լտ.* restis *«չուան» են. Նոյնը կրկնում է* Pokorny 2, 374 *հնխ.* rezg- *«հիւսել, ոլորել» արմատի տակ:*

ԳԻՒ.—խրբ. Կր. Մշ. Սլմ. Վն. ուռի, *Մկ.* ուռ՛, *Զթ.* ուռ՝, *Համշ.* ուռքնի, *Սվեդ.* ուռինա, *Ալշ. երև. Ախց. Մշ.* ուռ, *Գոր.* ուռ՛ոի, *Ղրբ. Մժ.* ուռէ, *Ագլ.* ուռնի, *բոլորն էլ նշանակում են «ուռի ծառը». միայն թէ Ալշ. Մշ.* ուռ *նշանակում են նաև «ուռենու ճիւղ, 2. հոշիի, նորքի են ճիւղ՝ կողով գործելու համար». նոյնպէս Ղզ.* ուռ *«ծառի երկար և ճկուն ճիւղ»: Նոր բառեր են* ուռիկ *«նորածիլ ճիւղ ուռենու»,* ուռխոռ, ուռուց *«ուռենիների անտառ»,* ուռուճիէ *«ծառզարդար»,* ուռի *«մի տեսակ խնձոր»:—Ղրբ. ունի նաև հետևեալ ձևերը.* ուռ *«խուրձ են կապելու համար ուռենու ճիւղերը ոլորելով շինուած կապ. 2. ողնաշար»,* ուռ աճել *«ոլորել, ճմլել»,* ուռ դառնալ *«կոտրիլ»,* ուռացու *«հոո շինելու յարմար ճիւղ»:*

ՈՒՌ *«ուռած տեղը, ուռոյց, պալար» Իրս. մրկ. 118 (Այտուցնալ էի ուռովն). որից* ուռնուլ *կամ* ուռչիլ *«ուռիլ, այտնուլ» ՄԳր. Ես. քր. Կիւրղ. Թգ. Սևերս. Ոսկ. մտթ. (ռամկաձև ուռենալ Մխ. բժշ.),* ուռուցանել *Թուց ե. 22, 27.* ուռոյցք *Փիլ.* ուռեցկոդմ *Եւագր. 21.* ուռուցիկ *Գծ. իէ. 14. Ոսկ. երր.* հողմուռոյց *Ճառընտ.* փիղոյուռոյց *Ագաթ.—Նոյն բառն է անշուշտ* ռռնացուցանել *«ուռցնել» Ոսկ. կողոս. 601 (վկայութիւնը տե՛ս* բմփուռել):

Lag. Urgesch. 268 *սանս.* pṛṇāmi *«լցնել». իսկ* Böttich. Horae aram. 18 ուռոյց=*սասր.* אירז airuz *«գլխի մի տեսակ ուռեցք»; Տէրվ. Նախալ. 107* ուռնանալ *և սանս.* ūrja *«ուռած, պարարտ» բառերի հետ՝ հնխ.* varg *կամ* var *արմատից; Հինք. յն.* οὐρίζω *«ուռնուլ առագաստի նաւու»;* Karst, *Յուշարձան 408 սումեր.* ur *«առատութիւն», 421 ալթայ.* ör, ür *«վերևը», չաղաթ.* ör, ur *«բարձր», յն.* ὄρνυμαι *և հյ.* յառնեմ, *422 չաղաթ.* ur, urma *«ուռոյցք»,* uruk *«ընձիւղ, ծիլ»:*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Զգ. Սլմ. Սչ. Վն. ուռել, *Ախց. Կր. Մկ. Տիգ.* ուռիլ, *Ննխ.* ուռէլ, *Տփ.* ո՛ւռիլ, *Մրղ.* ուռէլ, *երև.* ուռչել, *Համշ.* ուռուշ, *Շմ.* ուռչիլ, *խրբ. Պլ. Ռ. Սևբ.* ուռէնալ, *Գոր. Ղրբ.* օ՛ռչիլ, *Զթ.* ուռուճօլ, ուռուռնալ, *Հճ.* ուռուճօլ, *Ասլ.* էօռռնալ, *Ագլ.* ըռռօ՛նիլ, *Սվեդ.* ուղիցիլ:—*Նոր բառեր են* ուռեցուռիլ, ուռուգեր, ուռնիկուռն, ուռուռոր, ուռուիլ, ուռուցուռուկ:

ՓՈԽ.—Զուբինով մեր բառին է կցում վրթաց. ურნატი ուռնատի *«սիկ», բայց սրա նմանութիւնը պէտք է պատահական համարել, որովհետև չկայ հայերէն* ուռնատ *ձևը: Պատահական են նաև բրք.* اور ur *«ու-*

ռեցք»>քրդ. ur «գեղձ, ուռեցք, այտուց», *որի ցեղակիցներն են չաղաթ.* ör *(կոկանդ* ur, *խիվա* ür*)* «բարձրութիւն, բարձրը», ürmek «փչել, ուռցնել», urma «բշտիկ», ürük «ուռած, մէջը պարապ, սին», hurmak «փչել. ուռցնել», *հակուդ.* ür, üräbin «փչել, շան հաչելը», ürü «փչումն, շան հաչիւն», ur «ուռեցք», *ալթայ.* ür «փչիւն», *մոնղոլ.* ur «ծառերի վրայ գոյացած ուռեցք»։

ՈՒՐ. *անաստղ նշանակութեամբ բառ. հաւանաբար նշանակում է «բարձ կամ սպասի վերաբերեալ մի բան». ունի միայն կղնկտ. հրտր. էմինի, էջ 81, Շահն. Ա. 204. «Եւ զործեալ ճաշ մեծապէս ամենայն մեծամեծաց... և ըստ գահու նախապատիւ արարեալ բաժակաւ և ուռով առաջի իւր՝ զամենայն որ մեծարեալ ցուցանէր»։ Այստեղից առնելով Օրբել. հրտր. էմինի, էջ 20՝ «Ըստ նախադասութեան նախապատիւ արարեալ բաժակօք և ուռովք առաջի իւր՝ զիւրաքանչիւր որ նախամեծար ցուցանէ»։—*

ՈՒՐԱՆ *«աշտանակ կամ վառարան, հրաբան». մէկ անգամ ունի Գր. սքանչ. կուս.:*

Karst, *Յուշարձան 408 սումեր.* u: *«տաքութիւն, այրել, կրակ» բառի հետ։*

ՈՒՐԱՆԱԿ, ի–ա *հլ. «արջ կամ ղնիկ բռնելու թակարդ» նոննս. 22 (վկայութիւնը տե՛ս յարկ). ուրիշ վկայութիւն չկայ։*

ՆՀԲ հանում է ուռի *կամ* ուռկան *բառից։*

ՓՈԽ.—Լազ. ereki, ireki, erenki, ererenki *«թռչուն որսալու ցանց»։*

Ուռթանալ *տե՛ս Յուռթի։*

Ուռթել *տե՛ս Յուռուի։*

ՈՒՐԻ *«հպարտ». ունի միայն Բռ. երեմ. էջ 104՝ զուռեաց «զհպարտից» ձևով։*

Ուռի *տե՛ս Ուռ։*

ՈՒՐԿԱՆ, ի–ա *հլ. «ձուկ բռնելու ցանց» ՍԳր. Լարուր. 48. որից* ուռկանել *«ցանցով որսալ» Ոսկ. ա. կոր.* ուռկանաւոր *Սիրեր.* ուռկանաւոր *Ես. ժԲ. 8.* ուռկանաւորել *«որսալ» Ուխտ. Ա. 10.*—Rivola, *Բառ. հայոց², 349* ուռկան *ձևի հետ յիշում է նաև վարկան, որ պէտք է գաւառական մի ձև լինի?*

Klap. Asia pol. 103 *ֆինն.* werkko, *յն. ἄρκυς ձևերի հետ։ ՆՀԲ լծ. թրք.* ուռղան, ورغان *«պարան»։ Նազըճեան, Արեւելք 1884 հոկտ" 17 սանս.* var, vṛ *«ծածկել» արմատից։* Bugge, Btrg. 39 *յն.* ἔρκος *«որսի ցանց», ἀρκάνη «կապ», լտ.* sarcina *«կապոց, ծրար» բառերի հետ՝ բնիկ հայ։ (Մերժում է* Boisacq 79): *Հիւնք. յն.* ὀρκάνη *«բանտ» և* ὄργανον *«գործի» բառերից. համմտ. հյ.* գործի *«ուռկան»։* Patrubány SA 1, 309 *թրք.* organ *«չուան» բառից փոխառեալ։ Նոյն ՀԱ 1908, էջ 341* ուռի *բառից, իսկ թրք.* organ *փոխառեալ է հայերէնից։ Շէֆթէլովից* BB 29, 52 ուռ, ուռի, ուռեակ *բառերից։* Karst, *Յուշարձան 423 թրք.* örmek, *չաղաթայ.* örge-mek *«հիւսել», ալթայ.* ürmek *«հեծոյլ. հէնք անել»։* Petersson KZ 47, 256 *կցում է* ուռ, ուռի *բառին (որ տե՛ս)։ Նոյնը կրկնում է* Pokorny 2, *էջ 374։*

ՓՈԽ.—Պատահական նմանութիւն ունին և հայերէնից չեն փոխառեալ բոհեմ. arkana *«ցանց, թակարդ» (տես* Vaillant, Gram. des Bohémiens, Paris 1868, *էջ 95), ռուս.* аркань, *ն. սսոր.* ork'än *«ձի կամ մարդ բռնելու մի տեսակ չուան», որոնք ծագում են թրք.* ارغان arγan, ارقان arqan *«հաստ չուան» բառից (*Будаговъ, Срав. слов. 1, *էջ 30,* Berneker 30)։

ՈՒՐՃԱՆԱԼ *«աճիլ, լցուիլ, մեծանալ, զօրանալ» Փիլ. Յոր. որից* ուռճագարդ *Պիտ.* ուռճալի *Անան. պետր.* ուռճալիր *Փիլ.* ուռճալրացեալ *Նիւս. կազմ.։*

ՆՀԲ յուրթի *բառի հետ։* Böttich. ZDMG 1850, 360 *և* Arica 87, 430 *սանս.* ūrj- *«հիւթ, ուժ, անունդ» արմատի հետ։ Տէրվ. Նախալ. 107 սանս.* ūrja *«ուռած, պարարտ» բառի հետ՝ հնխ.* arg *«ուռիլ» արմատից։ (Սանս.* ūrǰ, ūrjá *«ուժ, արնունդ»,* ūrjáyati *«անուցանել, ուժեղացնել» բառերը կցում են յն.* ὀργή *«յուզմունք, ցասում»,* ὀργάω *«յուղուիլ, հռալ, պղտոռիր լինել», իսլ.* fere, ferg *«ցասում» են բառերին և բոլորը միասին հանում են հնխ.* u̯erg- *արմատից (*Pokorny 1, 289), *որի նոյն իսկ* org- *ձևը եթէ վերցնենք, կստանանք հյ.*

*ուրծ): *Հինք. յուրքի բառից: Պատահական նմանութիւն ունի Կազանի Թիր.* اورچیمک ürčimek *«պաղարիրիլ, աճիլ, բազմանալ»* (Будаговъ *1, 123*):

ՈՒՌՆ, ն *հլ.* (–ռան, –ռանէ, –ռանց) *«մուրճ, կռան» ՍԳր. Վեցօր գ. էջ 48. Ագաթ. վկ. արև. 80. Ոսկ. պօղ. ա. 416. որից* ուռնանձն *Անան. եկեղ.* ուռնաւոր *Վրդն. ծն. Ոսկիփ.* ուռնացնալ *Ոսկիփ.* ուռնած *«երկաթ ծեծող, մրճաւոր» (կազմուած է ածել բայով) Զենոբ. 46. սրանց ռամկականն է բստ* ՆՀԲ **վուռ** *(աւանդուած է միայն գրծ. վռով ձևով) Ոսկիփ. Վսակ. 130, 149, 150, 153, 182:*

ՆՀԲ *լծ. հյ.* ուրագ, *Թրք.* ur, vur *«զարկ, հար»:* Lag. Urgesch. *284 առնս.* par *արմատին է կցում:* Տէրվ. Altarm. *76* վէր, վիրաւոր *են ձևերի հետ՝ առնս.* vadh *«զարնել, սպանել»,* vadha *«հարուած, վիրաւորում», զնդ.* vadarɔ *«զէնք» են բառերին է կցում: Մառ* ЗВО *5, 318 զնդ.* vaeδa *համանիշի հետ: Հինք. ուռի բառից:* Lidén, Arm. Stud. *53 հիւլ.* ordd, *գաէլ.* ord, *կիմր.* gordd, *հկորն. հրրբտ.* ord, *նրրբտ.* orz, horz *«մուրճ» բառերի հետ. կելտական նախաձևը դնում է* *ordo-, *հայկականը* *urdn, *որից՝ միջին բազաձայնի անկումով* ուռն: *Նոյնը* Per Persson IF 35, 208: *Կրկնում է* Petersson KZ 47, 259: Karst, *Յուշարձան 422 Թիր.* ur, vur *«զարնել»:* Беридзе, *Նօթըցոն կոճ* СП. *1912, էջ 43 վրաց. դւռ. (Իմեր. և Ռաչին.)* ურატა ურაათა *«փոքր մուրճ» բառի հետ:*

Գիմ.—Ղրբ. օ՛ռնը *«մեծ մուրճ».—Նոր բառ է Խրբ.* ուռնագ *«դռան մուրճ»:—Ռմկ.* վուռ *ձևից պէտք է դնել Երև. Վն.* վռվիլ *«մէջը խրուիլ, ինչ. ցիցը հողի մէջ», որ և Երև.* լռվել:

Փոխ.—Վրաց. ურო ուրո *«մուրճ»,* რკინია ურო რկինիա ուրո *«քարակոփի ուռն» (իսկ* ურატა ուրաատա *տե՛ս վերը):*

ՈՒՌՆԱՅ *«Քոչո՞ւն է» Քուչ. 48. Ա՛յ իմ աղբերանց արիւն, յապառաժ քարն կենաս դուն. Աչերդ ուռնայի նման, ո՛չ ի քուն ես և ո՛չ արթուն. Վախիմ թէ գրկդ որսան ու գրկեն դիս ի քո տեսուն: Թերևս* թուռնայ *կամ* դուռնայ. *որ է Թրք.* تورنا turna, طورنا ṭurna *«կռունկ»* (Будаговъ, Сравн. слов. I, 746). *Հնոց բնագիրն էլ ունի «Աչերդ ուռնայի նըման», ուր դ-ի անկումը կարող է յառաջացած լինել նախորդ դ-ի պատճառով:*

+**ՈՒՍ,** ո *հլ. «ուս» ՍԳր. Փարպ. Եղիշ. որից* ուսել *«ուսն առնել» Ոսկիփ.* ուսանող *Նխ. Բլ. Լմբ. պարգ. Վրդն. սղ.* ուսադիր *(նոր բառ).—*ուս *փխբ. նշանակում է «լեռան լանջ». Համմ. խոր. Ա. 30՝ Բնակեցուցանէ յարևելեայ ուսոյ մեծի լերինն. այս իմաստը պահում է մինչև այժմ Ղարաբաղի բարբառ: Նոյն է նաև* ուս *կամ* ուսակ *«բլուր» Օրբել. էջ 168, 188. («Էր և աւազականոց մի Բերդ անուն՝ հանդէպ վանիցն, յայնկոյս մեծի գետոյն, յափն քարին, որ Աւելադաշան կոչեն, ի ներքին* ուսակին. *Աւազականոցն, որ հանդէպ վանիցն կայր ի վերայ* ուսոյն, *որ Աւելադաշան կոչեն, զոր վերագոյն ասացաք»).—(Շահնազ. Ա. 275 և էմին* ուսակ *համարում են յատուկ անուն. բայց սխալ է, ինչպէս երևում է երկրորդ վկայութեան համեմատութիւնից):*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* omso- *ձևից. ժառանգներն են առնս.* ąsa-, *քուչ.* oñi, *յն.* ὦμος, *լտ.* (h)umerus (<*omesos), *ումբր.* uze, ose, *ռում.* umĕr, us, *գոթ.* ams, *բոլորն էլ «ուս» նշանակութեամբ* (Pokorny 1, 178, Walde 850, Ernout-Meillet 1080, Boisacq 1082): *Հնխ.* omso- *ձևին շատ աւելի հաւատարիմ է մնացել Ագլ. յօնս. ընդհակառակը ռում.* us՝ *թէև ուրիշ ճանապարհով. հասել է ճիշտ հայերէնի աստիճանին—Հիւբշ. 484:*

Klaproth, Asia pol. 104 *հֆր.* osso, *գերմ.* achsel *«ուս»: ԳԴ պրս.* dōš *«ուս»: ՆՀԲ* «ուս, *յորմէ Թրք.* omuz, *յն.* ὦμος, ὦμο՛α, *լտ.* hu՛merus: *Ուղիղ համեմատութիւններ ունին* Böttticher ZDMG 1850, 359, Arica 71, 156, Lag. Urgesch. 689, Müller SWAW 38, 594, *Տէրվ.* Altarm. *96, Նախալ. 72, Հիւբշ.* Arm. Stud. § 238:—Justi, Zendsp. 11 *զնդ.* aosta *«մէջք», առնս.* ôšṭha-? *Հինք. յն. և Թրք. ձևերի հետ:* Karst, *Յուշարձան 423 Թրք.* omuz *«ուս»:*

ԳԻՒ.—Ագլ. յօնս, *երև. կր. Համշ. Շմ. Սչ. Տփ.* ուս, *Ջղ.* ֊ուս, *Ախց.* նուս, *Գոր. Ղրբ.* օս, *Սվեդ.* էօս: *Նոր բառեր են* ուսաբերան, ուսագլուխ, ուսախառն, ուսածակ, ուսաշոր (*Ղզ.* շա՛շօր), ուսապինչ, ուսաւոր, ուսկապ:

+ՈՒՍ «*սովորելը*». *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝* ուսանիլ «*սովորիլ*» *ՍԳր.* ուսած *Ոսկ. յհ. բ. 12.* ուսումն *ՍԳր. Եփր. ա. մն.* ուսող *Ծն. քր.* ուսումնական *Սեբեր.* ուսումնակից *Բուզ.* ուսումնասէր *Կոչ. Սեբեր. Ագաթ. Կորիւն. Ոսկ. ես. Կիւրղ. եվ.* ուսուցանել *ՍԳր. Ոսկ. Կոչ. Սեբեր.* մարուսոյց *Եզն.* բազմուսումն *Փիլ. լին.* այլուսումն «*օտարուսումն*» (*նորագիւտ բառ*) *Եփր. գծ. էջ 9.* դիւրուսոյց *Փիլ. լին.* դժուարուսանելի *Ոսկ. գկ.* իմիմնուս *Փիլ. լին.* իմիմնուսումն *Ոսկ. ես.* կանխուսեալ *Լմբ. պտրգ.* կենսուսոյց *Վրք. հց.* նշմարուսոյց *Պիտառ.* նորուսումն *Նխ. գծ. Կանոն.* նորուս *Թէոդ. մայրագ.* ֆաջուսացի *Տիմոթ. կուզ. 31.*—*Նոր բառեր են՝* անուսումնասիրութիւն, ուսանող, ուսանողուհի, ուսանողութիւն, ուսանողական, թերուս, ուսումնածարաւ, իմիմնուսուցիչ, ուսումնասիրել, ուսումնարան, ուսումնարանական, ուսումնաւարտ, ուսուցչական, ուսուցչանոց, ուսուցչապետ, ուսուցչուհի *են:*

=*Ընդիկ հայ բառ, հնխ.* euk- *արմատի տարբերն ձայնդարձի* uk- *ձևից, որի ընդային տիպարն է* unk-. *ցեղակից լեզուներից համմտ. սանս.* účyati «*սխորժիլ, վարժուիլ*», *սոգդ.* yōčat «*ուսուցանէ*», *հալ.* vyknąti «*վարժուիլ, սովորիլ, ուսանիլ*», ukŭ «*ուսում, վարդապետութիւն*», učiti «*ուսուցանել*», *ռուս.* привыкать, при-выкнуть «*վարժուիլ, ընտելանալ*», учить «*ուսուցանել*», ученикъ «*աշակերտ*», учитель «*ուսուցիչ*», *հպրուս.* jaukint «*վարժեցնել, հրահանգել*», *լիթ.* jùnkti «*սովորիլ, վարժուիլ*», *լեթթ.* jūkt «*վարժուիլ*», *գոթ.* bi-ūhts «*վարժ, սովոր*» (Pokorny 1, 111, Walde 865, Trautmann 335):—*Հիւրշ. 484:*

ՆՀԲ լծ. պրս. ուստա «*վարպետ*»: Lag. Urgesch. 531 paç *արմատից՝ իբր գոթ.* fahan, *կար.* fuic: *Պատկ.* Изслъд. 5 *պրս.* āmōxtan «*սովորիլ*» *ձևի հետ: Հինք. ուշ բառից, համմտ. նաև թրք.* uս «*միտք*», ուպու «*մտացի*», *պրս.* իւսթա «*վարպետ*»: *Ուշիլ մեկնութիւնը տուաւ նախ Տէրվ. Նախալ. 67 (կասկածով), նոյնը նաև* Müller, Armen. VI, *թ. 69,* Bugge, Etrusk. u. Arm. 163, Meillet, Esquisse 80:—Scheftelowitz BB *28, 307 հնխ.* ōk'- «*սուր*» *արմատից:* Patrubány SA 2, 12 ուս «épaule»! *բառի հետ:* Karst, *Յուշարձ. 422 թթր.* us «*միտք*», *429 թթր.* oq, ᵓg, ong «*միտք, ուսանիլ*»:—*Պատահական նմանութիւն ունի չին.* hsüe «*ուսանիլ*»:

ԳԻՒ.—Հճ. Սլմ. ուսնել, *Մրղ.* ուսնէլ, *Խրբ. Սվեդ.* ուսնիլ, *Զթ.* ուսնօլ, ուսնոլ «*ուսանիլ*», *իսկ* ուս *արմատը ունինք* ուս ու տես *Տփ.*, տես ու ուս *Ալշ.* «*տեսնել ու սովորիլ, փորձ*» *բառի մէջ:*

ՓՈԽ.—Միզանից չի կարող փոխառեալ լինել թրք. اوس us «*ողջամտութիւն, խելք, գգօնութիւն*» (*որից* uslu «*խելօք, լուրջ, խոհեմ*», uslanmaq «*խելօքանալ*»), *որովհետև բառը տարածուած է բոլոր Ալթայական լեզուների մէջ՝ այլևայլ առումներով. այսպէս՝ չաղաթ.* اوس us «*ուսում, միտք*», ايس es «*միտք*», ايسلیك eslik «*իմաստուն, խոհեմ*», ايس is «*իմացականութիւն, հոտ, հոտառութիւն*» *են են (տե՛ս* Vámbery, Etym. Wört. *էջ 62):*

[ՈՒՍԱՄ, *որ և* ուսամ «*մի տեսակ կարմիր ծաղիկ*» *Սալաձ.: Նոյն է* նուսամ *բառի հետ, որ է* «lavanda spica»:

ՀՌուս. § 389 և էջ 511 համարում է ուղղելի սուսամ. *իսկ Նորայր, Բանաս. 1901, 126 գնում է թրք.* նիւսամէ օրու =*արաբ.* խուզամա «lavanda spica»:]

Ուսել *տե՛ս Քուսել:*

ՈՒՍՔ. *ասէ ուսքեմ կամ բնութիւն.—այսպէս ունի Բառ. երեմ. էջ 258. ինչ լինելը յայտնի չէ:*

*ՈՒՍՈՒՑԻՉ «*վարպետ, ուսուցիչ*» *Յայսմ. յնվ. 23 (Վաստակէր ընդ ուսթային իւրոյ) Անկ. գիրք առաք. 431 (Աշակերտ ընտիր և հարտար ուսթայի. Քի՞նչ հարտարութիւն ոչ գիտէր ուսթայն իմ. Առաքեալ թագաւորն առ ուսթային):*

=Պրս. (որից և թրք.) استا ustā «վարպետ» (որ և «ուսուցիչ»). կրճատուած է استاد ustād հոմանիշից։ Այս վերջինս էլ ծագում է պհլ. ōstāt (=բևլուճ. vastād, աֆղան ustāð) ձևից։ Բոլորի նախնականն է զնդ. *avastāta- «գլխաւոր, վարիչ, իբր յառաջակայ» (Horn § 83)։

Ուսին տե՛ս Հիւս։

ՈՒՍԿՈՒՄ, ՈՒՍԿՈՒՅ «հիմի, այժմ». մհյ. նորագիւտ բառ, որ ունի Կոստ. երզն. էջ 106, 116, 122. (Ի չորս հակառակէս ուսկամ յերբեր եմ մնացել. Ես այլ եմ սիրու ախր, ուսկայ սրտիս մէջն է դեղին)։ Նոյնը նաև Քուչակ. «Ամ ուսկայ ի ծոցուտ ելայ՝ դեռ աչերս ի յետ կու հայի» (այլ ձևով՝ ճիմի ի ծոցուդ ելայ, դեռ աչուերս ի յետ կու նայի)։

Այսպէս մեկնեց Պոտուրեան, ի հրտր. Կոստ. երզն. էջ 202։

***ՈՒՍԿՈՒԻԼԻ** «անծանօթ մի բոյս» Բժշ. (ըստ ՀԲուս. § 2423). բաղ. իս «վուշ», ինչպէս ցոյց են տալիս ուսկուլի Ննխ. «վուշ» Ջն. «կտաւատի ճիւղերի կծիկը, որից թել են քաշում. Ֆրանս. bourre»։

=Թթր. اسكول usqul «վուշ» (Будаговъ 1, 46). այլ է արաբ. اسقيل isqīl՝ մի տեսակ բոյս, որի վրայ տ. Կամուս, Գ. 249։ —Ա՛ճ.

ՈՒՍՈՒՑԻՈՆ «մի տեսակ խոտ, որով այդինների ճճիներն են սընջացնում. լտ. personata» Վստկ. 77. ունի միայն ՀԲուս. § 2424։

ՈՒՍՏ «ո՛ր տեղից» Պզատ. տիմ. և օրին. Վրք. Հց. Խոր. որից ուստի «որ տեղից որ. 2. սրա համար» ՍԳր. Ագաթ. Բուզ. ուստի և Եփր. երր. ուստի՞ ՍԳր. Եզն. 19. այլուստ Եսթ. գ. 14. Եզն. անդուստ Գ. մկ. ա. 9, գ. 58. Ագաթ. անդստին ՍԳր. Եզն. Կոչ. Ագաթ. ասուստ Ոսկ. յհ. ա. Սահմ. Նար. ասստին Եւս. քր. յերկնուստ Ողիշ. Խոր. ասուածուստ Յհ. կթ. Մագ. յեռուստ ՍԳր. Ոսկ. յհ. ա. 9. Բուզ. վերուստ ՍԳր. Ագաթ. վերստին Յհ. գ. 3, 7. ուստ ուստեմ Վեցօր. Եփր. Ոսկ. յհ. ա. 1. ուստեմն «մի տեղից» Վեցօր. Եւս. քր. Ոսկ. յհ. ա. 1. ուստեմ Մրկ. ը. 27, 29. Եզն. Ոսկ. Թես. Փրպ. ուստեմ ուստեմ Ագաթ. յամենայն ուստեմ Ոսկ. մ. բ. 12. այլ ուստեմ Կոչ. այլուստ ուստեմ Ոսկ. մտթ. յոլով ուստեմ Ոսկ. յհ. բ. 9, 30. ո՛չ ուստեմ ՍԳր. Ոսկ. մտթ. անուստեմ Ագաթ.։

Bopp, Gram. comp. 2, 412 արմատը դնում է ու=ո՞ հարցականը. ս դրուած է ներդաշնակութեան համար. իսկ տի նոյն է ատի, անտի բառերի վերջաւորութեան հետ։ Տէրվ. Altarm. 3 կցում է լտ. que, quisque, գոթ. hvah են ձևերի հետ, իբր qa-st-i նախաձևից։ Justi, Dict. Kurde 15 իրար է կցում գրգ. uvesten «այժմ», աֆղան. hīstah «այստեղ», հյ. անդուստ են։ Kərolides. Γλωσ. συγκρ. 70 կպգովկ. ἀστέ «ուստի» և ἀστζεκο «որպէս»։ Մառ, Грам. др. арм. 133 և ИАН 1910, 1246 բոլորի արմատը դնում է ոյս, որից ձևացած է ոյն> ոյ>ով>ո. ուստի և ոյս հին ձևն է ո՞, ո՞վ բառի։

Գիւր.—Ալշ. յո՞ւստի, չո՞ւստից, Մշ. չո՞ւստէն.—Նո՞յն է նաև զտ. ուսկի՞ց, ուսկէ՞։

ՈՒՍՏԻԿ, անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկիփ. «Մեռաքս ոսկեզօդ, սպիտակ բեհեզ, ուստիկ ծանրագին էած ի վերայ նորա»։

Նշ՚ի մեկնում է «թևերս որպէս զգեստ, զգեստիկ, լծ. յն. ἔνδυμα, լտ. vestis»։ Ա՚ի չունի այս բառը։

+**ՈՒՍՏՐ**, ր հլ. (-տեր, -տերաց) «արու զաւակ, մանչ» ՍԳր. Եւս. քր. սովորաբար դուստր բառի յարադրութեամբ գործածուած և յետին գրականութեան մէջ մոռացուած։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. sukter «որդի» ձևից, որ հարազատօրէն պահել է հայերէնը, իսկ նոյնը -ga մասնիկով և նշանակութեան դոյզն փոփոխութեամբ՝ անգսք. suhterga «հղբօրորդի»։ (Ազգականական անունների մէջ նշանակութեան այսպիսի փոփոխութիւններ սովորական են. համմտ. լտ. nepos «թոռ», յետոյ «հղբօրորդի», հբգ. vetere «հօրեղբայր», յետոյ «հղբօրորդի» են։) Հնխ. sukter «որդի» ծագած պիտի լինի կա՛մ հնխ. seug-, seuq- (սորին ձայնդարձները sug-, suq-) «ծծել, կաթ ծծել» արմատից (համմտ. լտ. sūgo, հիռլ. sūgim, անգսք. sūcan, հիսլ. sūga, հբգ. sūgan, մբգ. söugen, գերմ. saugen «ծծել, դիել») և կամ աւելի հաւանաբար

հնխ. seu-, su- «ծնիլ» արմատից. հմմտ. սանս. sávati «ծնիլ», sûtu- «յղութիւն», sū- «ծնող», գնդ. hav, hunāmi «ծնիլ», հիւլ. suth «ծնունդ, պտուղ», բայց մանաւանդ սանս. sutá-, սանս. sûnu-, գնդ. hunu-, քուչ. soyä, դոթ. sunus, հիսլ. sunr, անգսք. հրգ. sunu, գերմ. Sohn, անգլ. son, լիթ. sūnús, հսլ. synŭ, ռուս. сынъ, յն. υἱός, որոնք բոլոր նշանակում են «որդի» և ծագած են նոյն արմատից՝ զանազան մասնիկներով (Pokorny 2, 469 և 470, Boisacq 1000, Walde 752, Trautmann 292)։ Բառիս վերջամասը հաւանաբար դուստր<հնխ. dhukter ձևի նմանութեամբ է։—Հիւրշ.

ՆՀՔ լծ. յն. υἱός, լտ. filius: Պալասանեան, Պատմ. գրակ. 73 իբր սանս. պուտրա<*պուստրա: Lag. Btrg. bktr. Lex. 14 շինուած դուստր բառի հակառակիդ։ Մորթմանն ZDMG 30, 431 բևեռ. iszara։ Հիւրշ. Arm. Stud. § 239 դուստր բառի համեմատ, բայց ո՞ր բառից շինուած։ Եաղբճեան, Արեւելք 1884 հոկտ՝ 17 vas «հագնիլ» արմատից, իբր ուստր «զգեցուցանող», ինչպէս որ դուստր «դայեկող», հայր «պահող» են։—Տէրվ. Նախալ. 160 կցում է հնխ. sūnus «որդի» բառին, որի ժառանգներն են սանս. sūnus, գնդ. hunu- են. Հայը ծագում է նախաւուր *uստր ձևից, որ կազմուած է բառի sū արմատից. բայց -nu-ի տեղ -tar մասնիկով, ինչպէս որ յն. υἱός կազմուած է նոյն sū- արմատից՝ -nu-ի տեղ -ya մասնիկով։—Meillet MSL 7, 162 ու համարում է sū-nus բառի նախավանկը. մնացեալը ձեացել է դուստր բառի նմանութեամբ։ Հիւնք. դուստր բառից՝ դ-ի անկումով։ Jensen, Hitt. u. Arm. 91, 93, 104 Հաթ. ztár, star, str ձևերը գտնելով՝ կարդում է ustar?=ուստր։ Հիւրշ. Arm. Gram. 484 դուստր բառի նմանութեամբ անյայտ ծագումից էր դնում, բայց յետոյ Strassburger Festschrift, 1901, էջ 69 դրաւ վերի ձևով։ Wiedemann BB 27 (1902), 220 սանս. ukṣā «ցուլ» են բառերի հետ։ Scheftelowitz BB 29 (1905), 34 սանս. pus «մարդ» և pustra «արութիւն»։ Charpentier IF 25 (1909), 242 լիթ. ūszvis «անէր» բառի հետ։ Karst, Յուշարձան 406 սումեր. muš «արու, արականն», 408 սումեր. us «ուսար»+tur «որդի, թոռն»։

Ուտ տե՛ս Յօտ։

+ՈՒՏԵԼ «ուտել» ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. ես. և ա. տիմ. որից ուտելի ՍԳր. ուտեստ Բ. մակ. դ. 30. Բուզ. դ. 19, 23. ուտիճ «ուշպաս օր» Երզն. մտթ. Տոմար. ուտիչ Ոսկ. ես. ուտիճ «ցեց» Մտթ. զ. 19, 20. Ոսկ. մ. ա. 20. ուտճահալ Նար. դժուարուտելի Վրք. սեղբ. Մխ. առկ. ճաշուտիճ Կանոն. մսուտու Տօնակ. պաճուտի Ասող. Ոսկիփ. Տօնակ. ուտելիղէն (նոր բառ) են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ōd արմատից. սրա հետ հմմտ. ժառանգ ձևերից՝ սանս. ádmi, գնդ. aδāiti, յն. ἔδω, լտ. edo, օսկ. edum, դոթ. itan, անգսք. etan, հհիւս. eta, հրգ. ezzan, նրգ. essen, հոլլ. eten, անգլ. eat, կիմր. esu, ysu, հսլ. jami, ռուս. ѣмъ, ѣсть, ուկր. jim, jísty, նսերբ. jẽdem, պոլաբ. jedé, լիթ. ėmi, ėdmi, ėdu, լիթթ. ėdu, êst, հպրուս. īst, որոնք բոլոր նշանակում են «ուտել», իսկ կամիս. adanna «կերակուր»։ Սրանց արմատն է հնխ. ēd կամ ed, որի միջին ձայնդարձն է ōd, որից ծագում է հյ. ուտել (Bartholomae IF 3, 15 և Meillet MSL 17, 199; 19, 181, 188). նոյնը գտնում ենք պահուած յն. կրկնական ἐδωδή «անունդ գոյականի մէջ» (Pokorny 1, 118, Walde 250, Boisacq 216, Berneker 273—5, Trautmann 66, Ernout-Meillet 282—3, Kluge 124)։—Հիւրշ. 485։

Klaproth, Asia pol. էջ 100 լտ. edere, ս. գերմ. eten։ ՆՀՔ լծ. յն. և լտ. ձևերը, «որպէս և (Թրք.) yutmaq «կլանել»։ Մանօթ հնդեւրոպական ձևերի հետ են համեմատած Peterm. 21, 39, Gosche 28, Böttich. ZDMG 1850, 359, Lag. Urgesch. 389, Justi, Zendspr. 17, Müller SWAW 38, 571, Bopp Համմտ. քերակ. 1, 397, Հիւրշ. KZ 23, 33, Arm. Stud. 47, Տէրվ. Altarm. 7, Նախալ. 61 են։ Gosche 28 այստեղ է դնում նաև փռիւգ. ἀττάλη «կոկորդ», որին հետևում

է նաև Justi։ Հիւնք. յն.ἐδω։ Karst, Յուշարձ. 401, 405 սումեր. gudu «ուտել»։ ԳԻՒ.—Ջղ. Սլմ. վն. ուտել, Ախց. Կր. Մրղ. ուտէլ, Երև. Մկ. Շմ. Տփ. ուտիլ, Ալշ. Հճ. Մշ. Սչ. ուդել, Ակն. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. ուդել, Զթ. Խրբ. Սվեդ. ուդիլ, Համշ. ուդուշ, Գոր. Ղրբ. օ՛տէլ, Ագլ. օ՛տիլ, Ասլ. իդէ՛լ։ Նոր բառեր են աճուտել, ուտան, ուտեղէն, ուտելակերիք, ուտեցկան, ուտոց-խմոց, ուտուց, ուտուկ են։

+ՈՒՐ «ո՞ւր, ո՞րտեղ. 2. որտեղ որ» ՍԳր. որից ուրեք, ոչ ուրեք ՍԳր. Նղն. է ուրեՙ Նղիշ. ուրեք ուրեք Նղիշ. Խոր. ուր ուրեք Փարպ. ճագիւ ուրեք ՅՀ. կթ. դուն ուրեք Պորփ. Սարգ. ուրեմն «մի տեղ» Կիւրղ. գնձ. «մօտաւորապէս» նաև. քր. «մի, ինչ որ» Բուզ. Դ. 55 (ընդ գաղտնի գուն ուրեմն). «հեռևաբար, ասել է թէ» ՍԳր. Ագաթ. ուր ուրեմն նաև. քր. ճագիւ ուրեմն Պիտ. Նղիշ. անդ ուրեմըն նաև. քր. ասա ուրեմն Խոր. ուրանօր ՅՀ. իմ. ատ. երև. ուրկայ, ուրկայութիւն Անյ. ատոր. Ոսկիփ. այլուր Իմ. ժր. 18. Վեցօր. Կոչ. այլ ուրեք Հռութ. բ. 8. այլ ուրեմն Վրք. Հց. ճանուր (տե՛ս ատանձին). ա՛յլ է ճամուռ, որից միաճամուռ։—Հնագոյն գործածութեամբ ո՞ւր ցոյց էր տալիս գաղարում. իսկ շարժում ցոյց տալու համար գործածւում էր յո՞. աւելի յետոյ վերջինս ջնջուեց և երկու գործածութեամբ էլ եղաւ ուր. սրա առաջին հետքերն ունի Փարպ. (տես Այտընեան, Քնն. քերակ. էջ 68)։

=Բնիկ հայ բառ. կազմուած է -ր մասնիկով *ու անորոշ դերանունից, որ իր անկախ գոյութիւնը չէ՛ պահած, բայց պահւում է նաև յուկամ, յուպէտ «ո՛ւր որ ուզես, ո՛ւր որ պէտք լինի» նաև. քր. բառերի մէջ և գալիս է հնխ. k²u անորոշից։ Սրա միւս ժառանգներն են՝ սանս. kú «ինչպէս», kuvà, kúha, kútra «ո՞ւր», kútah «ուտո՞ղ, ո՞րտեղից», զնդ. kū, kudā, kuθrā «ուր», լտ. ubi, հլտ. cubi «ուր», օսկ. puf, umbր. pufe, pue «ուր», կրետ. ὅπυ, ալբան. kur «իրր», հսլ. kŭde, լիթ. kur «ուր», անգսք. hū «ինչպէս», կիմր. cw, cwt «ուր», թոխար. kuse, kuce, kupre «թէ», քուչ. kwri «երբ, եթէ» (MSL 18, էջ 419)։ Այս բոլորը կազմուած են պարզական k²u արմատից, զանազան ածականներով. յատկապէս «ո՞ւր» նշանակութեամբ ձևերը կազմուած են -dhe կամ -r ածականներով. առաջինին են պատկանում սանս. kúha, զնդ. kudā, հսլ. kŭde, լտ. ubī, umbր. pufe են, իսկ երկրորդին են պատկանում հյ. ուր և լիթ. kur «ուր»։ Այս բոլորի հետ համմտ. հյ. ի, ր, որոնք գալիս են հնխ. k²i, k²o անորոշներից. յատկապէս ուր կազմում է զուգահեռական ձև՝ իր և որ բառերի՝ իր ր ածականով (Pokorny 1, 522)։—Հիւրշ. 481։

ՆՀԲ արմատը ո՞, ո՞յր, յո՞ր՝ իբր ներգոյական. լծ. յն.οὗ, ὅπου, լտ. ubi: Peterm. 263 յն. ποῦ, οὗ։ Տէրվ. Altarm. 3—4 լտ. que, quisque, գոթ. hvah են բառերի հետ՝ հնխ. qvar ձևից։ Հիւնք. պարոյր բառից։ Bugge KZ 32, 52 լիթ. kûr բառի հետ։ Meillet MSL 10, 259 և Հիւրշ. 481 ր մասնիկով ու արմատից։ Բառիս վրայ մի առանձին քննութիւն տե՛ս Gauthiot, La fin de mot, էջ 210, Meillet MSL 20, 92 և վերջին անգամ REA VII, 1, էջ 3։

ԳԻՒ.—Ախց. Երև. Խրբ. Կր. Սեբ. Տփ. ուր, Մրղ. Տիգ. յուր, Ալշ. Մշ. յուր, Մկ. Հին Ջղ. ճուր, Ասլ. իւր, Սլմ. յիւր, Հճ. յույ, Զթ. յօյ, յոյ, Պլ. Ռ. վուր, Ղրբ. ճօր, Ռմ. Սչ. ո՛ւրուխ, Հնդ. ուդ, Ագլ. ճօր, Համշ. նիր, Սվեդ. յէօ՞ (տե՛ս յո՞).—Ննխ. վրէ՛, վի՞ր է «ո՞ւր է». վդէխ, վդէ, ուդէխ, վուդէխ, վիդէխ «ո՞րտեղ», Խր. վրդէխ, Շմ. ճո՞րդէ «ո՞ւր, ո՞րտեղ».—Տփ. ուրուխմին «որևիցէ մի տեղ». համմտ. ոխմին։—Իսկ Գոր. Ղրբ. բօ՛ռնը, Ջղ. դո՞րն, վն. դո՞ր ծագում են ընդ ո՞ր ձևից։—Բարբառներում ո՞ւր նշանակում է նաև «ինչո՞ւ» (օր. Ջղ. յո՞ւր «ինչո՞ւ»). Որ չէիր գալու, ո՞ւր ասացիր։ Սրա հնագոյն գործածութիւնը գտնում եմ Լմբ. մատ. 315. «ի քէն տուաւ մեզ այս զգաստութիւն աղօթից խօսակցութեան ընդ Աստուծոյ, որ զնախապատմեալ շնորհս արարեր մարդկան. ապա թէ ոչ, մեք ո՞ւր զօրէաք ի թանձրութենէ մարմնոյ ելանել»։ Այս օրինակում ո՞ւր «ինչպէ՞ս» նշանակութեամբ միայն կարող է մեկնուիլ։

*ՈՒՐԱԴ, ի-ա հլ. «փայտ տաշելու գործիք» Ա. մն. ի. 3. նս. խդ. 12. Եփր. նին. 114.

Ոսկ. փիլիպ. որից farəurəqի *Եփր. Թգ. էջ 423. գրուած* ուրաք *Տաթև. ամ. 167 (երկիցս)։*

=*Ասուրականից փոխառեալ բառ. Համմ.* ur-ra-ku *«քարտաշ»,* ston-mason, steinmetz, urrakūtu *«քանդակագործութիւն»,* sculpture, Bildheuerkunst (Muss-Arnolt, Ass. Handwb. *էջ 100 բ)։—Ա.Ճ.*

ՆՀԲ «իբր ազգ ուռան *կամ* ուռաճ ագի՝ *որպէս սրեալ և հատու կողմն»։ Հիւնք.* առոյգ *բառից։ Ի.Աբեղեան, Բազմ. 1913, 342 հլ.* ուռն, վուռ, վիռ, *Թրք.* urmaq *«զարնել»։ Պատահաբար նման են հնչում առնս.* paraçúḥ, *յն.* πέλεκυς *«կացին», որոնք համարւում են ո՛չ թէ բնիկ, այլ փոխառեալ նոյն իսկ նախալեզուեան շրջանին. Համմ. ասուր.* pilaḳḳu (Delitzsch, Assyr. Hndw. 529), *սումեր.* balag, *ասոր.* ܦܠܩܐ pelqā *«կացին, տապար». Նոյն բառը գրտնւում է նաև Աւստրալիայում* balgo, balgu, balko, polgo *ձևերով* (M. Cohen *բստ* Trombetti, BSL *№ 85, էջ 50)։*

ԳԻՒ.—Ալշ. Խրբ. Մշ. ուրագ՝, *Ախց. Երև. Կր. Մրղ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Տփ.* ուրաֆ, *Մկ. Վն.* ուրաֆ[1], *Տիգ.* ուրմֆ, *Ասլ.* իւրաֆ, *Ագլ.* օ՛րագ[1], *Գոր.* հօ՛րաֆ, *Ննխ.* վրաֆ, *Համշ.* ուրէֆ, *Ղրբ.* հօ՛րէֆ[1], *Սվեդ.* ուրիւգ՝, *Հճ.* ույօգ՝, *Զթ.* ույօֆ, ուրոֆ: *Նոր բառեր են* ուրագատաշ, ոտնուրագ, ձեռնուրագ:

ՈՒՐԱԽ *«զուարթ» ՍԳր. որից* ուրախանալ *Սղ. ճխթ. 2.* ուրախութիւն *ՍԳր.* ուրախալից *Ոսկ. մ. ա. 15.* ուրախակից *Յուդ. 12. Փիլիպ. բ. 17, 18. Սեբեր.* ուրախամիտ *Սղ. ճժբ. 9.* ուրախարար *Վեցօր.* բազմուրախ *Կղնկտ.* ուրախալի, կենսուրախ *(Նոր բառեր)։ Բուսանուրների համար սղուած ձևեր են՝* րախ *Գնձ.* րախալի *Գնձ.* րախաճեմ *Ճառընտ.* րախարար *Մագ. են։ Իսկ* խրախ *բառի վրայ՝ որ սրա սուտակականն է, տե՛ս առանձին։*

Böttich. Arica 85, 409, Lag. Urgesch. 296 *պրս.* farrux *«օրհնեալ» և* farāx *«ընդարձակ»։ Միւժում է* Lag. Arm. Stud. *§ 1778։ Տէրվ. Նախալ. 70 բուն ձևը դնում է* *խուրախ, *ինչպէս ցոյց են տալիս* ու–խուր *և* խ(ու)րախ: Meillet MSL 8, 160 *նմանապէս բուն ձևը* *խուրախ: *Հիւնք. յն.* χαρά *«ուրախութիւն», արաբ.* ʿaraq *և Թրք.* raqə *«օղի»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 85 դնում է խուրախ ձևից, որ տարանմանութեամբ դարձաւ* հուրախ *և նախաձայնի անկումով* ուրախ: *Պատահական նմանութիւն ունին արաբ.* راخي rāxī *«բարեկեցիկ մարդ» (Կամուս, Թրք. Բրամ. Գ. էջ 822), ասոր.* ܪܘܚܐ rəvāxā *«հաճոյք, ուրախութիւն» (որի արմատն է* ܪܘܚ rūxē *«ոգի, շունչ»=արաբ.* روح rūḥ), *մանիք. պհլ.* אורואהמי hūrvāxm *«ուրախութիւն»* (Salemann ЗАН *8, էջ 50)։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ. ուրախ, *Հճ.* ույօխ, *Զթ.* ույօխ, ուրոխ, *Տիգ.* ուրմխ, *Ագլ. Գոր. Ղրբ.* օ՛րախ: *Նոր բառեր են* ուրախ–գուրախ, ուրախայ, ուրախու, ուրախատեղ, ուրախատուն:

+ՈՒՐԱՆԱԼ *«ընդունածը մերժել, բացասել, ժխտել, հաւատքից դառնալ» ՍԳր. Եւս. պատմ. Մծբ. Կոչ. Եփր. Թգ. բուն արմատն է* *ուր, *որից զանազան մասնիկներով կազմուած են* ուրացութիւն *Սղ. Ճ. 3. Սեբեր.* ուրաստ *կաղնկատ.* յուրաստ լինել *կամ* յուրաստ կալ *«ուրանալ» Կոչ. Եւագր. Սեբեր. Եզն. Ոսկ. բ. տիմ.* աստուածուրաց *Փարպ. Կղնկտ.* երդմնուրաց *Մաշտ.* ուրալի *«ուրանալի» Ոսկ. Ես. 318.* անուրանալի, ազգուրաց, հաւատուրաց *(Նոր բառեր)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ur- *կամ* ōr- *արմատից, որ Հնդեւրոպացոց ծիսական տերմիններից մէկն էր և նշանակում էր «ծիսական մի բանաձև արտասանել, յատկապէս աղերս կամ անէծք». սրա ժառանգներից յիշենք յն.* ἀρνέομαι *«ուրանալ, ժխտել, մերժել», ἄπ-αρνος, ἔξ-αρνος «ուրացող», ἀρύει «հակաճառել, դոչիլ» (Հեսիք.), ἀρά «աղօթք, անէծք», լտ.* ōrō *«աղօթել», ռուս.* ору, орать *«դոչիլ, բղաւել, բարձրաձայն երգել», լիթթ.* urdit *«քշել, հետացնել, յանդիմանել, նախատել», թերևս նաև ալբան.* rəm *«կեղծ»,* rɛnɛ, rɛrɛ *«սուտախօսութիւն»,* nɛrój *(փխ.* *rɛnój*) *«ուրանալ»* (Walde 548, Ernout-Meillet 680, Pokorny 1, 78):

ՆՀԲ «լծ. յն. ἀρνέομαι, ἀρνοῦμαι և հյ. ետնանալ կամ իբր ո՞ւր այն ասել»։ Հիւնք. յիշեալ յն. ձևերից։ Bugge, Btrg. 39 յուն. ἀρνεομαι ձևի հետ իբր բնիկ հայ։ Ջի յիշում Հիւբշման։ Boisacq 80 դանում է այս մեկնութիւնը կարելի, իսկ Pokorny 1, 78 հարցական։ Pedersen, Ցուց. դեր. 36 կցում է nur-այն և nurիշ բառերին, որոնց արմատը դնում է nur։ Վերի ձևով մեկնից Meillet BSL № 79, էջ 19։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Շմ. Պլ. Ջղ. Սեբ. Սլմ. Տփ. nուռանալ, Մկ. nուռնալ, Տիգ. nուռնիլ, Զթ. nուռանօլ, nուռանոլ, Ասլ. իուռանալ, Մրղ. իուռնալ։

*ՈՒՐԱՆԻՍԿՈՍ «քիմք» Դամասկ. ունի միայն ՀՀԲ։

=Յն. οὐρανίσκος «քիմք». բուն նշանակում է «փոքր երկինն» և οὐρανός «երկինն» բառի նուազականն է։

Ուղիղ մեկնից ՀՀԲ։

*ՈՒՐԱՐ, որ և nուար, nուարն «եկեղեցականի ուսանող», բայց կայ նաև «աշխարհականի զօտի, կայսերական զարդ, կնոջ լաջակ» նշանակութիւններով՝ Մաշտ. ժմ. Մաշկ. Մխ. դտ. Մարթին. Օրբել. իզ. Կանոն. Միխ. ասոր. հնագոյն վկայութիւնն ունի Եւս. պատմ. էջ 589 nուար ձևով (տե՛ս այս մասին ՀԱ 1913, 348). որից բազկուուար Մաշտ. ջահկ. Պարգ. 476. փոռուուար (նորագիւտ բառ) Պարգ. 620. ձեռնուուար Մաշտ. nուարումն «պատելը» Պարգ. էջ 622։

=Յն. ὡράριον բառից, որ նշանակում է «սարկաւագի ուրար» (Sophocles 1186բ)։ Փոխառեալ է լտ. orarium «երես սրբելու թաշկինակ» ձևից, որ ծագում է լտ. os «բերան» բառից։ Յունարէնից է փոխառեալ նաև ասոր. ܐܘܪܪܐ ūrarā «ուրար»։—Հիւբշ. էջ 369։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։ Գաբրճեան. Պատարագամատոյցք 740, ծան. 4 ենթադրում է որ nուար փոխառեալ է ասորերէնից, որովհետև յունարէնից պիտի ունենայինք nուար կամ ոլուար։ Վարդանեան ՀԱ 1913, 348 դանելով իրօք հնագոյն nուար ձևը, դնում է յոյնից։

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Ղրբ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ր. Սեբ. Սլմ. Տփ. nուար, Տիգ. nուmր, Մրղ. իուար, Ջղ. nուար, Զթ. nույօյ, nուnր։

ՓՈԽ.—Վրաց. ოლარი ոլարի «ուրար»։

*ՈՒՐԲԱԹ, nւ հլ. «շաբաթուայ վեցերորդ օրը» ՍԳր. Սեբեր. որից nուրբաթանալ խոսրովիկ. կամրջ. nուրբաթացուցանել ճառընտ. nուրբաթալէզ Ոսկիփ. Շնորհ. թղթ nուրբաթայբ խոր. պատ. հռիփ.։

=Ասոր. ܥܪܘܒܬܐ ʿərūwəθā «ուրբաթ», որից փոխառեալ է նաև արաբ. عروبة ʿarūbaṭ «ուրբաթ». բուն նշանակում էր «պատրաստութիւն». համմտ. արամ. ערובתא ʿərūwəθā dəšabbā և հր. עֲרֻבַּת שַׁבָּת ʿarub šabbaṭ «պատրաստութիւն շաբաթու» (յն. παρασκευή «պատրաստութիւն. 2. ուրբաթ»). այսպէս էր կոչւում այդ օրը, որովհետև այդ օրն էին պատրաստում բոլոր այն բանները, որ կարելի չէր անել շաբաթ օրը՝ սուրբ պահելու համար։ Սակայն այս բացատրութիւնը յառաջացած է ըստ յունականին, որովհետև ասոր. բառը ծագում է ընդհանուր սեմական ʿrb «արևը մայր մտնել, երեկոյանալ» արմատից. համմտ. ասուր. erēb šamši «մայրամուտ արևու», հբր. עֶרֶב ʿereb «երեկոյ», արաբ. غرب ġarb «արևմուտք», غروب ġurūb «արևի մայր մտնելը», ասոր. ܥܪܒ ʿərab «արևը մայր մտնել», مغرب maʿrəbā «արևմուտք» (Brockelm. Lex. syr. 260, Gesenius[17], 615):—Հայերէն բառը ծագում է հնագոյն *nուրուբաթ ձևից՝ միջին անշեշտ nու-ի անկումով։—Հիւբշ. 315։

Ուղիղ մեկնից հներից Բրս. մրկ. 376. «Ուրբաթն կազմութիւն կամ պատրաստութիւն թարգմանի և զայս, անունս հրէայք՝ որ կային ի մէջ յունաց, կոչէին զվեցերորդ օրն շաբաթուն. և զայս այնր աղագաւ ասէին, զի յայնմ աւուր պատրաստէին զինչ պիտոյ էր աւուր շաբաթուն»։ Ուրիշներ մեկնում են or βορβ. այսպէս Վանակ. հց. Տօնակ. Տաթև. ամ. ծէ, ճթ. Յայտմ. մրտ. 22. վերջինս ասում է. «Վասն այնորիկ եղաւ անուն վեցերորդ աւուրս ուրբաթ, որ է կազմութիւն մարդոյն. և զարձեալ ուր-

բաթ, որ արդարև ուաւ բօթ մեղուցնալ մարդոյն»։ Երկուսը միացնելով Տաթև. Հարց. 200. «Ուրբաթ ասի, որ է կազմութիւն. ասի և բօթ. այսինքն սուգ և տրտմութիւն վասն եղիցն ի դրախտէն»։ Նորերից ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lag. Urgesch. 882 *(ասորերէնից). Նոյնը նաև* Dulaurier, Rech. chroł. (1859), *էջ 14,* Müller SWAW 41, 13։ *Մասեաց աղաւ. 1857, 154 երր.* ռապաթ *«պատրաստութիւն» բառից, ինչպէս է նաև յն.* παρασκευή։ *Հիւնք. ասոր.* էռուբբօ, *արաբ.* արիֆէ, արէֆէր *«նախընթաց օրն ուրբաթի»։*

ԳԻՒ.—Ջղ. Սեբ. ուրբ՛ար, *Մշ. Սչ.* ուրբ՛ադ՛, *Ախց. Երև. Խրբ. Կր. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Տփ.* ուրփաթ, *Տիգ.* ուրփոթ, *Ալշ.* ուրպաու, *Մկ. Վն.* ուրպոթ, *Զթ.* ույբ՛օթ, ուրբ՛ոթ, *Հճ.* ույբ՛օթ, *Սվեդ.* ուրբ՛աթ, *Ասլ.* իւրբաթ, *Սլմ.* իւրպոթ, *Շմ.* իւրփոթ, *Մրզ.* իւոպոթ, *Գոր.* օ՛րփաթ, *Ղրբ.* էօ՛րփոթ, *Ագլ.* էօ՛րբոթ, է՛րբոթ։ *Նոր բառեր են* ուրբաթախօս, ուրբաթամուտ, ուրբաթաւոր, ուրբաթեկին, ուրբաթիրիկուն *«հինդշաբթի երեկոյ»։*

ՈՒՐԲԱՅՈՒԹԻՒՆ *«պատրաստութիւն», ունի միայն Բառ. երեմ. էջ 258. (մեկնում է «կազմութիւն», որ հին հայերէնում այս իմաստն ունի)։*

=Եբր. עֲרֵב ʿrb *արմատից, որի վրայ տե՛ս* Ուրբաթ։—*Ա՛ճ.*

ՈՒՐԳԱՅՕՂ *«ուղղիչ». ունի միայն Բս. երեմ. էջ 258։*

ՈՒՐԴ *(յետնաբար ի հլ.) «պարտէզները ջրելու համար փոքրիկ առու» Փիլ. Նխ. բ. 70. Նիւս. կազմ. գրուած նաև* ուրդ *Վրք. հց.։*

ՆՀԲ լծ. յուրդ, ճուրդ։ *Տէրվ.* Altarm. 89 *և Նախալ. 106 *udr նախաձևից համարելով՝ կցում է սանս.* udra, *յն.* ὕδωρ, *լտ.* unda, *հսլ.* voda, *գոթ.* vato, *գերմ.* Wasser *«ջուր» բառերի հետ։ Հիւնք. Երդ բառից։ Սանտալճեան,* L'idiome 13 *բհւեռ.* uldie, *զնդ.* urudh *«ջրանցք»։* Scheftelowitz BB 29, 29 *պրս.* rūd *«գետ», զնդ.* araoδaţ *«հոսիլ»։* Patrubány *ԶԱ 1908, 341 հնխ..* sero *«հոսիլ» արմատից։*

ԳԻՒ.—Ջղ. ուրդ, *Մշ.* ուրդ՛, *Ալշ.* ուրբ, *Սլմ.* յիւրբ, *Ագլ.* էօուդ. *Մաստարա գիւղում՝* ուրց *(այս վերջինը ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան 538)։ Նոր բառ է* ուրդկապ *(Ամատ. 537)։*

ՓՈԽ.—Սալմաստի թուրքերը տեղական հայ բարբառից փոխ առնելով՝ գործածում են yŭrt *ձևը։*

***ՈՒՐԴԳԱՀ** *«բանակատեղի». նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Մաղաք. աբ. 16. «ի բնակութիւնս և յուրդգահս իւրեանց»։*

=Պրս. اوردوگاه ōrdugāh *նոյն նշ. կազմուած է թրք.* ordu *«բանակ» + պրս.* گاه gāh *«տեղ» բառերից։*

Պատկ. հրատ. Մաղաք. աբ. 16 դնում է առանձին առանձին յուրդ գահ (մինչդեռ հրատ. Երուսաղէմի, էջ 26 իբր մէկ բառ է). և էջ 64 ուրդ *մեկնում է թրք.* ordu։

ՈՒՐԹԻԼ *«պատահիլ, հանդիպիլ». մեյ. բառ. համմտ. Վստկ. էջ 4, 7, 93, 158. Անսիզք 13, 15, 23, 39. Սմբ. դատ. 17, Մխ. բժշ. 52։*

*ԳԻՒ.—Կենդանի է Բլ. Եւդ. Մկ. Նբ. Շտ. Սեբ. Սվ. Սր. Վն. Տ. (*ուրդիլ *ձևով) և Խ. (*ուրդնիլ *ձևով).—Նոյնը Սեբ. Սվ. ստացած է նաև «խնդատարուիլ, անդամալոյծ դառնալ» իմաստը (չարիքների հանդիպելով). և այս իմաստից են ձևացած* անկրծակնեռու օրդելիք *Պլ. անիծական հին բանաձևը և* ուրդելուս *Սվ. «ապիկար, անճարակ մարդ».—Նոր բառ է* ուրդածուրիկ *«պատահական» (Ամատունի, Հայոց բառ ու բան 538)։*

+**ՈՒՐԵՄՆ** *տե՛ս Ուր։*

ՆՀԲ ur իմն:

+**ՈՒՐԵՔ** *տե՛ս Ուր։*

ՆՀԲ «ի բառիցս ur *և* uf, iv, ինչ».

ՈՒՐՁԼ *«զայրացումն». ունի միայն Բս. երեմ. էջ 259։*

Ուրիշ *տե՛ս Որոշ։*

ՈՒՐՈՅ *«խնդատեղև բոյսը. լտ.* anthriscus, *ֆր.* anthrisque, cerfeuil *Գաղիան. Հոշք. ունի միայն ՀԲուս. § 2428։*

ՈՒՐՈՑՆ *«զատ, առանձին, մեկուսի, հեռու» ՍԳր. Ես. քր. Ագաթ. Սեբեր. գրուած է նաև* ուրոյն. *նոյն է նաև* ուրոյն *«յատկու-*

թիւն», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խորվիկ. 78. «Սպիտակութիւն գեղման ներկեալ գունով ծիրանւոյ և անուանեա(ա)լ ծիրանի, և համայն զորոյնն զիւր ոչ կորուսանէ»։ Երկուսի կապը ցոյց է տալիս ուրոյն *«ուրոյն» գրչութիւնը. «Երկաթոյ* ուրոյն *առանձին չէ հնար ի վերայ ջուրց կալ» Սեբեր և «Աստուծոյ բնութեանն* ուրոյն *ի մարմնոյն ոչ կարէք մահ ասել» Սանահն.։ Նշանակութեան նոյնութեան համար համմտ. յն.* ἴδιος *«յատուկ, սեպհական 2. բաժանուած անջատ», որից* ուրոյնանալ *«մեկուսանալ» 3Հ. կբ.* ուրոյնութիւն *Նար.* իճիճուրոյն *3Հ. կբ.* իւրուրոյն *Եւս. քր.* ուր ուրոյն *Ոսկ. ես.—Նո՞յն է* աւրոյնել *Վրք. սկզբ. 782։*

Նշ՝ր ուր *կամ իւր բառից։ Մաո.* Грам. др. арм. *151* ուրոյն, ուրիշ, որոշ *բառերի մէջ արմատը դնում է* ոյ>ու, *որից նաև իւ-ր. իսկ շ՝ պրս. երրորդ դէմքի ստացական* ش š *յոդն է։* Pedersen. *Յուց. դերան. 35 և* Lidén, Arm. St. *135 իւր բառից* -ոյն *մասնիկով։* Karst, *Յուշարձան 427 որոշ բառի հետ (տե՛ս* որոշ*)։*

ՈՒՐՈՒ *«երազական տեսիլ, ցնորք» Դնձ. որից* ուրուական *«երազական՝ երևակայական բան, երևոյթ» Նիւս. բն. Դիոն. ածայ. «կուռք, չաստուած» Ագաթ. Եզն. «հոգեգէշ, մեռելի ստուերը« Եւս. քր. Ոսկ. մ. բ. 9.* ուրուապաշտ *«կռապաշտ» Ագաթ.* ուրուարար *«հմայող» Բռ. ստեփ. լեհ.* ուրուածայն *Նար. էջ 243. Նոր բառեր են* ուրուագիծ, ուրուագծել, ուրուանկար*։*

Նշ՝ր փոխառեալ արաբ. رُؤْيَا rūyā *«երազ, ցնորք» բառից։ Տէրվ.* Altarm. *72 առնս.* rūpa *«արտաքին երևոյթ, երազական ցնորք» ևն։ Հիւնք. արաբ.* ռուհ *«հոգի» կամ* ռույէ *«երազ»։ Ալիշան, Հին հաւ. 199 արաբական մի ստուածք է, որի իգականն է* ուրնի. *համմտ. արաբ.* հիւրի*։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 59 զնգ.* ուրուան, *հպրս.* ռուան, *պրս.* روان ruvān *«հոգի»։ Խաչկոնց, Բիւր. 1899, 180 «երբեք կասկածելու տեղի չկայ թէ հպրս. ֆէրուհէրը հայացած ուրու ձևէն առաջ եկած է և որու իգական ձևն է* ուհի*»,* Karst. *Յուշարձան 403 տումբ.* biru *«երազ»։ Ղափանցեան, Արրատ. 1917, 230* երևիմ բայի հետ*։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* رَئِيّ raī, rīī *«ոգի, ուրուական» (Կամուս, Բրք. Բրգմ. հտ. Ժ. էջ 818)։*

ՈՒՐՈՒԱՁԻԼ *«զօրանալ կամ զրգռուիլ». մէկ անգամ գործածում է Կանոն. «Նեստոր սկսաւ դիմել ընդդէմ ճշմարտութեան ուրուազեալ ի սատանայէ»։—Հին բռ. մեկնում է «ուրուազիլ. զօրանալ».— Նշ՝ր և ՋՒ յիշեալ վրկայութեան իբր տարբերակ դնում են «ուրուսեալ, շարժեալ»։*

Նշ՝ր քմածին ստուգաբանութեամբ մեկնում է «զրգռիլ շարժիլ ի ցնորից, յուրուական պատրանաց. կայ և յն. ուրիο՛ο «աջողակ հողմով վարիլ», կամ օ՛ռնիմէ «զրգռիլ»։

ՈՒՐՈՒԻԿ. *մի տեսակ անծանօթ բոյս է. Բժշ. ունի միայն Հ՚Բուս. § 2429, որ և բացատրում է հետևեալ ձևով. «Ուրոյէ տարբեր թուի, որովհետև երկուքն ալ առանձինն յիշուին միևնոյն գրոց մէջ. գուգուի ճալուէ, այլ և դուէ՞ անուանց, յն. այլ գրէ* ակրոՙորդանաս*, որ ինձ անծանօթ է. միթէ վայրի κρότιον (ծղու) բլլայ»։*

ՈՒՐՈՒԿ, *ի-ա հլ. (յգ. նաև* -կուեմ, -կանց. *գրուած է նաև* աւրուկ, օրուկ*) «բորոտ, քոսոտ» Սղ. ճա. 1. (երբ. բնագրում «թշուառ, տառապեալ». յն. «աղքատ»). Ոսկ. ա. տիմ. Բուզ. Սերբր. որից* ուրկանալ *«բորոտիլ» Կանոն. էջ 132.* ուրկութիւն *Խոր.* ուրկանոց *Կանոն. էջ 64, 65. (գրուած* օրկանոց *Ոսկ. ես. 139).* ուրկոտ *Մխ. դտ.* ուրկոտութիւն *Մխ. դտ. էջ 99.—Վերջիններիս մէջ կցուած է ածլորդ* -ոտ *մասնիկը, որովհետև* ուրուկ *բառը առնուած է «բոր, քոս» իմաստով և ո՛չ թէ «բորոտ, քոսոտ», ինչպէս է ածլի հետևում։— Բժ. Արմենակ Մելիքեան (անձնական) հիմնուելով* ուրուկ *և* բորոտ *բառերի միասին գործածութեան վրայ, գտնում է իրաւամբ՝ որ ուրեմն* ուրուկ *չի կարող լինել «բորոտ», և հետևցնելով Մխ. դտ. նկարագրութիւնից, հաստատում է որ ուրուկը սիֆիլիսն է։*

Նշ՝ր «որպէս թէ ունող զեռ կամ զայրուիւ ցաւ» Տէրվիշ. Altarm. 72 առնս.

ruǰ «ցաւ, հիւանդութիւն», rōga «թերութիւն, հիւանդութիւն»։ (Այս մեկնութիւնը ստոյգ չէ, որովհետև յիշեալ ձևերը միանում են հյ. եղուկ բառին. տե՛ս անդ)։— Հիմնք. արfուճի՞ թէ արգանակ բառից։ Müller WZKM 8, 283 լտ. ulcus, յն. ἕλκος «վէրք, կեղ»։

ԳԻՒ.—Պահուած է միայն խրբ. ուրուդ-բ'օրօդ կրկնաւորի մէջ, որ անշուշտ նախ ուրուկ-բորոտ ձևն ունէր և յետոյ վիրջամայնի ազդեցութեամբ նոյն ձևն ստացաւ։

ՈՒՐՈՒՆ «խելք, միտք». գործածուած է իբրև կրկնական ուշ «խելք» բառի՝ Ոսկ. փիլիպ. 476, ևբր. 553. նոյնը գտնում եմ սխալագիր ուշ և ուրու ձևով՝ Ոսկ. բ. տիմ. էջ 277։ (Տարբեր է ուրուշեալ, որ տե՛ս Ուռոյ բառի տակ)։

ՆՀԲ «ուրն ուշոյ»։ Հիմնք. էջ 214 ուշ բառից։

+ՈՒՐՈՒՐ «ցին թռչունը. ոճկ. չայլախ» Մարթին. Վրդն. առ. 67 (Ցին այն որ է ուրուրն). սրա հնագոյն ձևը պիտի լինի ուրուր «մի տեսակ թռչուն» Ղևտ. ժա. 15 (յն. λάρος, լտ. larus, garia ձևի դէմ). երկուսի համար էլ ուրիշ վկայութիւն չկայ. սրանից է շնուրուր կամ շնօրօր «սագի նման մի թռչուն» Բժշ. (ո և ու ձայնների փոխանակութեան համար համմտ. ուրիշ և ուրիշ, ուրոյն և ուրոյն)։

=Բնիկ հայ բառ. կապուած է կրկնութեամբ հնխ. or- (կամ ōr-) արմատից. ցեղակիցներն են՝ յն. ὄρνις, ὄρνιθος, դոր. ὄρνιχος «թռչուն, հաւ, աքլոր», ὄρνεον «թռչուն», հիռլ. irar, ilar, կիմր. eryr, բրբտ. erer, կորն. er, գոթ. ara, հհիւս. ǫrn, are, անգսք. earn, անգլ. erne, հրգ. aro, arn, մբգ. ar, նրգ. Aar, Adler (որ է adel-ar, բարդուած adel «ազնուական» բառով), հոլլ. arend. լիթ. erēlis, arēlis, ēras, āras, հպրուս. arelis, լեթթ. érglis, հսլ. orilŭ, ռուս. орелъ, լհհ. orzeł, սերբ. òrao, բոլորն էլ «արծիւ» նշանակութեամբ (Pokorny 1, 135, Boisacq 714, Trautmann 13, Kluge, էջ 2)։

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 ու բնաձայնից։ ՆՀԲ ուրուր համարում է «որի կամ ուրուր»։ Capelletti, Arm. թրգմ. Արշալ. արևմ. 1842, 108 բնաձայն է համարում։ Մորթմանն ZDMG 32, 724—8 համարում է «դարձողն», իբր ուր «դառնալ» արմատից, որ գտնում է պար-ուր-ել բառի մէջ և հանում է սանս. vṛit ձևից։ Տէրվ. Նախալ. 68 լտ. ululā «բու», յն. ὀλάω, ὀλολύζω ձևերի հետ՝ հնխ. ur «ոռնալ, վայել» արմատի՞ց, իսկ էջ 173 հնխ. uruka «բու»? Pedersen Kelt. Gram. I 491 տուաւ վերի մեկնութիւնը (առ Pokorny անդ)։ Ադոնց REA VII 1 (1927), 194 վրաց. կոր՝ «բազէ», յն. (Հեսիք.) κεῖρις, հյ. որի և վրաց. or-bi «արծիւ» բառերի հետ։

ԳԻՒ.—Ախց. Սրև. Կր. Ննխ. Սեբ. Տփ. ուրուր, Ասլ. իւրիւր, խրբ. ուրուրիւ՝, Ալշ. Մշ. ցուրուր. նոյն է և ուլուրիկ Մլթ. իսկ փխբ. Պլ. ուրուր «այս ու այն կողմ պրպտող, անհանդարտ (տղայ)», Ննխ. ուրուրի աչք «շատ սրատես»։

ՓՈԽ.—Հայերէնից է տառադարձուած արաբ. رورو rūrū «ուրուր» Վրդն. Առակաց թարգմանութեան մէջ (ըստ Մառ, Վրդ. առակ. I, էջ 57)։

*ՈՒՐՊ «քաղաք». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մին. Համդ. 74. Սպանաւ յիւրայնոցն և թաղեցաւ յուրպն Հռոմայ։

=լտ. urbs (urbis, urbem) «քաղաք» (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատեան. Ա. էջ 139)։—Աճ.

ՈՒՐՋ «վերջ». դիտէ միայն ԱԲ.—արդեօք սխալ գրչութի՞ւն է։

ՈՒՐՋՈՒ «խորհուրդ». ունի միայն Բառ. երեմ. էջ 259, որ կարծեմ թէ շփոթած է ուրու և ուրջու բառերը, որոնք տե՛ս առանձին։

ՈՒՐՋՈՒ, ի–ա հլ. «խորթ զաւակ» Սերեր. 42 (սեռ. ըրջուաց), Ծեր. քր. ա. 245։

ՆՀԲ «որ կամ ոյր որդի է և չէ կամ իբր որդի»։ Bugge KZ 32, 23 և IF 1, 451 որդի բառի սեռ. որդւոյ ձևից՝ ու մասնիկով (ճիշտ, ինչպէս ունինք ճորու, մորու), իբր նախաւոր *որդւյու>*որդյու >ուրջու.—ջ ձայնի համար համմտ. մէջ< medyo ձևր։ Հիմնք. որդի բառից։ Patrubany SA 1, 191 որդի<հնխ. *ordh-ios, իսկ ուրջու<հնխ. ordh-ios: Wiede-

mann BB 27, 221 և Pedersen KZ 39, 360 (*ըստ* Walde 58 և Pokorny 1, 149) **ուղի** *բառի հետ հնխ.* erdh- «*աճիլ, մեծանալ*» *արմատից*։

ՈՒՐՍԵՄԱՅ «*դատապարտեալք*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 259*։

ՈՒՐՅ (*գրուած նաև* **ուրձ, ուց**) «*մի տեսակ բոյս. ծոթոր.* thymus serpyllum L» *Բժշ. Գաղիան. (ըստ ՆՀԲ փխբ. նշանակում է նաև «ուռոյցք, պալար, խաղաւարտ», նիթ չէ շփոթուած* **ուռոյց** *բառի հետ)*։

ՆՀԲ մեկնում է «ուռուցուկ խոտ»։ Նշանակութիւնը ճշտում են Տիրացուեան, Contributo § 419 *և Արփինեան, Ամէն. Տարեց. 1914, 161*։

ԳԻՒ.—երև. Ողմ. **ուց**, *Մկ. Սլմ. Վն.* **ուց** *(իսկ Ալշ.* **ուռձ**՝ «*փիսի ծառ*»)։

ՓՈԽ.—Վրաց. **ურც**ი **ուրցի** «богородская трава, полевой тминъ», **ხეურც**ა **խեուրցա** «дикій базилекъ, чебрецъ» *(որ է «ծորիին»)*։

Ուրցիլ *տե՛ս Որցիլ*։

ՈՒՐՓԻԴԻՍ «*օրհնող*». *ունի միայն Բռ. երեմ. էջ 259*։

ՈՒՅԼ «*սուրհանդակ*». *ունի միայն Բռ. երեմ. էջ 289՝* **սուրհանդակ** *բառի բացատրութեան մէջ, ուրեմն իր ժամանակ ծանօթ ժողովրդական բառ էր։ (ա. տպ.* **ուցն**, *բայց բ. տպ.* **ուցէ**)։

ՈՓ, ո *հլ. «խոռոչ կամ փոս, որի մէջ ջուր է հաւաքւում» Վեցօր. էջ 70. Վրք. Աբերկիոսի ՀԱ. 1910, 371, տող 25 (յն.* λάκκος), **Վանակ.** (*տե՛ս Վարդանեան, Բառաք. դիտ. Ա 87*). *Վրդ. առկ. 36։—Սրանի՞ց է արդեօք* **խորոփ** «*խոռոչ*» (*բարդուած* **խոր** *բառով*), *որ յիշում է ՆՀԲ* **ոփ** *բառի տակ, բայց չունի այբուբենական շարքում։*

ՆՀԲ յծ. յն. ὀπή «ծակ, բացուածք, պատուհան, օդանցք, շէնքի ճակատի կոյր պատուհանը». (բայց այս բառի նմանութիւնը պատահական է, որովհետև իբր փոխառեալ պիտի տար հյ. դոնէ **ոպ**, *իսկ իբր բնիկ համապատասխանում է հյ.* **ակն** «*ծակ*» *բառին (հնխ.* oqu- *ձևից. տե՛ս* Boisacq 707)։

ԳԻՒ.—Մշ. Շտ. Ջն. **օփ** «*փոքրիկ լճակ, լճացած ջուր*» (*նոյնը* **հուբ**՝ *Խիան). որից Մշ.* **օփռել** «*ջուրը լճանալով հոսիլ*»։

ՈՓԱԼ «*ատել, արհամարհել*»? *մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. էջ 63. Ոփացող աստեայս (իբր ածական Ս. Մհսրոպի)*։

***ՈՓԵԼԵԹԻՆ** «*պարասաւոր զօրք*». *մի քանի անգամ գործածուած է Բերեթին բառի հետ՝ ՍԳր. (այսպէս՝ Բ. Թագ. ը. 18, ժե. 18, ի. 7, Գ. Թագ. ա. 38, 44, իսկ Ա. Մնաց. ժը. 17՝ սեռ.* **ոփելեթայն**). *սրանցից դուրս մի մի անգամ գտնում ենք Կիւրղ. Թգ. (Քերեթին աղեղնաւորք են և ոփելեթին՝ պարասաւորք) և Մխ. դտ. էջ 267։ Նոյն բառը գրուած է Մագ. Թղ. 62* **ովթելիր**, *որի մասին աւելի մանրամասն տես իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 200*։

=Եբր. פלתי *pəleti բառն է, որ Ս. Գրքի յոյն թարգմանութեան ὁ Φελεθὶ տառադարձութեան վրայից (այլ ձ. ὁ Φελετὶ, φελεθθὶ, φαλλεθθὶ)անցել է հայերէնի՝ὁ որոշիչ յօդը սխալմամբ բառի մասը կարծելով և նրան միացնելով։ Եբրայեցի բառը մեկնւում է զանազան ձևերով. սովորաբար կարծւում է որ փղշտացի մի տոհմի անուն է (իբր* פלתי *pəleti փոխանակ* פלשתי *pəlišti), որ Դաւիթ թագաւորի թիկնապահութեան պաշտօնին կոչուեցաւ։ Ուրիշներ մեկնում են «դահիճ», «արքունի սուրհանդակ» են (տե՛ս* Gesenius[17], *էջ 365 բ, Բառ. Ս. Գրոց, էջ 554)։ Մեր մէջ ըստ Կիւրղի հասկացւում է «պարասաւոր»։ Նոյնն է հասկանում նաև Մագ. Թղ. 62, երբ գրում է. «Իբրու մենքանայիւ մրցեալ մակաւասար գագաթանն ուսուցեալ և յոեկացն մարնամասնից իբրու զովթելիթեացն ճահճոցացանէ հանդէպ ճակատուն»։—Աճ.*

ՈՓԻ *(յգ. սեռ. -եաց) «անպտուղ մի ծառ՝ որի փայտը յարմար է շինութեան մէջ» Պիտ. (յիշուած է կաղամախի հետ). գրուած է նաև* **յոփի, յուրի, հոփի** *և մեկնուած է զանազան ձևով. այսպէս՝* **յուրի** «*կաղամախ*» *Բժշ.* **յոփի** «*կապպար*» *Ոռշք.* **հոփի** «*կասայ, դափնի*» *Հին բռ.* **ոփնի** «*կաղամախի,* populus» *Ղուկ. վրդ. Խարբերդցի (ՀԲուս. § 2430).*

«ազգ կաղամախի» ՆՀԲ և ՋՔ, իսկ ըստ Տիրացուեան, Contributo § 77 fagus silvatica L, § 303 ucer campestre L *(առաջինը ըստ ՀԲուս., երկրորդը ըստ Քաջունի)։—Տե՛ս և գւռ.։*

ՆՀԲ իտալ. oppio *«կաղամախի»։*

ԳԻՒ.—Ղրբ. ճո՛ւփուտ *«սօսիների բազմութիւն» (Մուրճ 1897, էջ 245), որ գալիս է* ճուփի *«սօսի» բառից։ Մղր.* ճուփփի *և Կրճ.* ճուպպի *նշանակում են «բարտի», որով նոյնանում են Բժշկարանի և վրաց. «կաղամախ» և «բարտի» նշանակութեանց հետ։*

ՓՈԽ.—Վրաց. ოფი ոփի *«осокорь, որ է բարտի կամ կաղամախի»։*

**ՈՓԻՏԻՍ «օձախայտ բծերով պատուական մի քար է» Պտմ. աղէքս. էջ 5։*

=Յն. ὀφίτης *նոյն նշ. ծագում է* ὄφις *«օձ» բառից. յոյնից է փոխառեալ նաև լտ.* ophita*։—Հիւբշ. 369։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

**ՈՓՍԱՐԻ «ձուկն». ունի միայն Բն. երեմ. յաւել. Գէորգ գպրի, էջ 556։*

=Բիւզ. յն. ὀψάριον *«ձուկ», նյն.* ψάρι *«ձուկ», որ է հին յն.* ὄψον *«ձուկ», բայց բուն «միս կամ այլ ուտելեղէն»։—Աճ.*

+ՈՔ (հոլովւում է սեռ. ուրուք, *տր.* ումեք, *բց.* յումեքէ. *յոգնակին փոխ է առնում ոմն բառից. կան նաև յետին* ումեքիւ, ոքք *ևն խոտելի ձևերը. օր. Սիր. խր. 22. Ոչ կարօտացայւ ումեքիւ խորհրդակցւ) «մէկը, մի մարդ». որից* ո՛ք, ո՛վ ոք, մի՛ ոք, ո՛չ ոք, ոմն ոք, ո և պէտ իսկ ոք, աւոք, *հոլովեալ՝* ոյր ուրուք, ում ումեք, յումմէ ումեքէ, մի՛ ուրուք, մի՛ ումեք, ո՛չ ումեք *ևն. յետնաբար* չեզոք *կամ* չէզոք *Փիլ. այլար. Կնձ. Ասող. Պզատ. տիմ. գրուած է* չէզոտ *Տաթև. Հարց. 365 (երկու անգամ). իբր ածական* ոչոք *«անպիտան մարդ» (օր. իշխանութիւն նոցա յանարժանան և յոչոքան անկաւ. Ուռհ. 303). նոր բառեր են* չեզոքութիւն, չեզոքացում, չեզոքացնել։

=Բնիկ հայ բառ. կազմուած է ո<հնխ. k^wo *անորոշ դերանունից՝* ք *մասնիկով. մանրամասն տե՛ս* Ո։—*Հիւբշ. 481։*

Տէրվ. Altarm. *3, Նախալ. 119, Մասիս 1881 յուլ. 4 հնխ.* *kvaq *ձևից. հմմտ. հյ.* ուրեք, ոեւ, ոեւէ, *լտ.* quis. quisque, *գոթ.* hvas, *յն.* τις, τε, *սանս. զնդ.* ka, ča։—*Մորթման* ZDMG *26, 517 բևեռ.* hukan, *հմմտ. հյ.* ոք *և* ոեւէ։—Ոք *բառի վերջաձայն* ք-*ի համար հմմտ.* Meillet MSL 7, 163, 8, 281; 10, 269 *և* 272; *Հիւբշ.* Arm. Gr. 502։—*Հիւնք. յոգն բառից։ Սագրզեան ՀՄ 1909, 336 և* Karst, *Յուշարձան 408 սումեր.* uku *«մարդ»։*

ԳԻՒ.—Տփ. օմին, օմիւն, *երև.* օմին, օճնիմ *«մէկը, մի մարդ». (հին հյ. գւռ. ձև է* էմին, *որ տե՛ս Շողակաթ. էջ 43).—Սեբ.* վէչ վէք *«ոչ ոք».—Ջղ.* վոroք *«որ և իցէ բան».—Ագլ.* ո՛ւման, ո՛ւման, ո՛ւման *«ոմն», Մղր.* ո՛ւճէչն *«ոմն, ոք», մի* ուճէչն *«մեկը, մի ոք»։*

ՈՔԱՌՆԼ. *անսովոր նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Բառ. երեմ. էջ 182* ճիճինել *բառի բացատրութեան մէջ. այսպէս՝* ճիճինել *«շտապել, ոքառել»։ Որովհետև այս բառը իսկապէս նշանակում է «հևալ», ուստի* ոքառել *կարող է լինել «շտապել» կամ նաև «հևալ»։ Վերջին պարագային կարող է կապուիլ* ոգի առնուլ *«շունչ առնել» ոճի հետ։*

***ՈՔՈՉ** *«դժնիկ, փուշ, ակռան». մէկ անգամ ունի Բ. մն. իս. 18. (միևնոյն հատուածի կրկնութիւնն է Դ. թագ. ժդ. 9, ուր* ոխոզ *բառի հետ դրուած է ակեան. տե՛ս այս բառը)։*

=Յն. օχός ընթերցուածից, որ ունի մի ձեռագիր՝ բնագրի համապատասխան տեղում։—Աճ.

ՆՀԲ համեմատում է յն. ἄκαν, ἀκχούχ, *երր. խօխա հոմանիշների հետ և կարծում է որ հայը պէտք է ուղղել* ոխոզ։—*(Այսպէս է անում հայ բառը կապելու համար յն.* ἀκχούχ *և երր. խօխա ձևերի հետ. բայց ղ չէ՛=χ)։ Հիւնք. յն.* ὠκός *«սուր, սրածայր» բառից։*

ՈՔՈՉԻԼ. *անսովոր բառ. մէկ անգամ ունի Բէրդ. խշ. «Զարչարեցեր զանմարմին Փառաւոնն, որ խրոխտեալ բարձրաւղութեամբ՝ ինքնահաճոյ հպարտութեամբն ոքոչեալ ի խորշս և ի գոգս քանակաւոր սահմանաց»։*

ՆՀԲ մեկնում է «կա՛մ է սմողեալ, շողեալ կամ նմանեալ սոճ փշոյ և կամ կոկոզացեալ, դառոզացեալ», ՋԲ «ժժնէանալ», ԱԲ «ժանտանալ»։

*ՈՔՍԻՄԵԼԻ «մեղրով ու քացախով պատրաստուած համեմանք՝ կերակուրի համար. իաքէնճէրի» Մագ. բղ. 214 (այլ ձ. ոքսեմելի, ոքսամելի)։

=Յն. ὀξύμελι նոյն նշ. ծագում է ὀξύς «կծու, թթու»+μέλι «մեղր» բառերից. որից նաև ֆրանս. oxymel ևն։—Հիւբշ. 369։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

*ՈՔՍԻՐԻՆՔՈՍ «մի տեսակ գիր, նօտրագիր». նորագիւտ բառ, որ զանազան աղաւաղեալ ձևերով գործածուած է հին մատենագրութեան մէջ՝ հետևեալ հրեք տեղերը. Փոյթ էր առ ի գրել ըստ նմանութեան ոքսոնի իւրեայ. Եւագր. էջ 5.— Փոյթ էր առ ի գրել ըստ նմանութեան ոքսիրինքոսի. Վրք. Հց. ա. 321 (ձեռագրերն ունին ոքսոնիւրեայ, ոքսուռուրիեայ, ոքսոնիւրեայ. տպագրում ուղղուած վերի ձևով).—Առես պարզ և յրատակս և ծայրագոյնս փողին աւքսոյն. Մագ. բեր. 223։

=Ծն. ὀξύρυγχος կամ ὀξύῤῥυγχος, որ բուն նշանակում է «սրաքիթ» (կազմուած ὀξύς «սուր»+ῥύγχος «քիթ» բառերից). նաև մի տեսակ ձուկ է. իսկ ըստ լատին մեկնիչների՝ նշանակում է նաև «նօտրագիր»։

Հներից Եւագրի վարուց մեկնիչը բացատրում է «ջրի ճանճ, մի սղագրի անձնանուն կամ դիպակագործ». «Այնպէս արագագիր էր որպէս այն ճանճքն, որ ի վերայ ջրին կենան և դիհաց դիմ վազեն. ոքսոն այն է որ ասեն։ Ու այլք ասեն թէ դպիր մի կայր Հարտաւր Աղէքսանդրու Հայրապետին, զայն կու ասէ։ Ու այլ՝ թէ ոքսոն դիպակագործքն, որ փութով գարուսան յանգեն, այնոր նըման է»։ Վարք Հարանցի հին ձեռագրում, լուսանցքի վրայ մեկնուած է «ոքսունիրիքայ այն ճճին է կամ սպրիշմագործն»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Վարք Հարանցի հրատարակիչը՝ անդ, էջ 321 ծան. յետոյ Սարգիսեան, Եւագր. էջ 5, վերջին անգամ Ն. Ադոնց, Արուեստ Դիոն. քեր. էջ 224։

*ՈՔՏԱԷԴՈՆ «ութանիստ (երկրաչափական մարմին)» Նեմես. էջ 65 (չունի ԱԲ)։

=Յն. ὀκτάεδρον նոյն նշ. ծագում է ὀκτώ «ութը» և ἕδρα «նիստ» բառերից։—Հիւբշ. 369։

Ուղիղ մեկնից նախ Տաշեան ՀԱ 1892 (արտատպ. Մատ. մանր ուսումն. էջ 16)։

Ոֆրանք տե՛ս Օփրանտ։

Չ

Չ. *բացասական կազմող նախամասնիկ. ընդարձակ տե՛ս Ոչ։*

ՉԱԳԱՐ *«հաճարի ծառը» Ուշք. որից առնելով ունի միայն ՀԲուս. § 2432. (Քաջունի, հտ. Գ. էջ 196 համարում է* hêtre, *որ և փիճի,* fagus*)։*

ՉԱԼԹԱԼ *«բազուկ կամ նման մի բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2435։*

*ՉԱԽ *«յանդիմանութիւն, կշտամբանք». գործածական է Պօլսի բարբառում. նոյն է նաև չեխ Ակն. աւելի հնից ունինք չէխ Քուչ. 57 (Իմ հարն ի դռնէն ի դուրս չէխ՝ Մո՛ւրտատ, թող զնա ի բաց)։ Բայական ձևով ունինք չախել կամ չեխել «յանդիմանել» Մշ. Պլ.։*

=Պրս. چخیدن čaxīdan *«կապել, վիճիլ, իրար հետ կռուիլ». նշանակութեան զարգացման համար հմմտ. Նախ.* կռիվ անել *«յանդիմանել, կշտամբել»։—Աճ.*

—ՉԱԿԵՐՏ. *կէտադրութեան մի նշան, որ է « ». Յիշատ. որից կազմուած նոր բառ է* չակերտաւոր *«իբր, ննջագրեալ, ինքնակոչ»։*

=Կազմուած է չա և կերտ բառերից. իբր թէ չա տառի գլխի ձևով կերտուած նշան։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՉԱՀ *«ջրհոր» Կոստ. Երզն. 130 (Ջնդան և ի ջահ)։*

=Պրս. چاه čāh *«ջրհոր»։*

Ուղիղ մեկնեց Պատուրեան, Հրտր. Կոստ. Երզն. էջ 56։

*ՉԱՂԱՆԱ *«մի տեսակ երաժշտական գործիք». ունի միայն Առաք. լծ. տահմ. 615։*

=Պրս. چغانه čaγāna *«ճեղքեալ փայտ ինչ, յորոյ միջոցս պնդեալ զրամբռունս թմբկի, կաքաւուղք նովին կաքաւեն՝ զնոսին ի ձեռս առնելով»։—Աճ.*

*ՉԱՄԱՆ, ո հլ. *«համեմիչ մի բոյս է» Նա իր. 25, 27, 28. Մտթ. իգ 23. որից* չամանաձոյց «cuminum armenicum, carvi» *Բժշ. չամանուկ «վայրի չաման» Գաղիան. չամանջուր Վստկ. 223։*

=Իրան. čaman *ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց ենթադրւում է արևել. Բրբ. և օսմ.* چمن čemen *ձևից։ Իրանեան բառն էլ ծագած է սեմականից, ուր ունինք ասուր.* 𒄷𒈬𒀀𒈾 kamūnu (Delitzsch, Assyr. Handwb. 336, Strassmaier, Verzeich. 516), *ասոր. արամ.* ܟܡܘܢܐ kammūnā, *եբր.* כמן kammōn, *արաբ.* كمون kammūn, *եթովպ.* kamūnu, *նաև եգիպտ.* gemnini? (Gesenius[17], 350)։ *Սրանցից են փոխառեալ նաև յն.* κύμινον (Boisacq 534), *լտ.* cuminum, *որոնց միջոցով էլ՝ իտալ.* comino, *գռ.* cimino, *ֆրանս.* cumin *հբգ.* chumin, chumil, *մբգ.* kümel, *նբգ.* kümmel (Kluge 285), *հոլլ.* komijn, *ալբան.* k'imino, *հունգ.* köméng, *ռում.* chimin, *հալ.* kuminŭ, *լհհ. չեխ.* kmin, *ռուս.* кминъ, тмонъ, *լիթ.* kmȳnai, kvȳnai (Berneker 681) *են, որոնք բոլոր նշանակում են «չաման»։*

ՆՀԲ համեմատում է վերի զանազան ձևերի հետ Böttich. Arica 74, 197 *պրս.* šambaliθ *ձևի հետ* Lag. Arm. Stud. § 1780 *մերժելով այս՝ դնում է Երր.։ Հիւրշ. 394 Բրբ. ձևերին անծանօթ լինելով՝ դնում է ծագումն անյայտ փոխառութեանց շարքը, մինչդեռ ըստ իս աղբիւրը պէտք է դնել իրանական։*

ԳԻՒ.—Խրբ. Ռ. չաման, ՉԲ. չամօն, չամոն, Ախց. Կր. Սեբ. Տիգ. չոմոն, Պլ. չէմէն (այս վերջին երկու խումբը նոր փոխառութիւն Թուրքերէնից). իսկ Մշ. չաման

«կարմիր տաքդեղի փոշին», Սչ. չաման «գինձ»։—Կապ ունի՞ նաև չաման Դրբ. «իգական անդամ»։

[**ՉԱՄԱՉՈՒ.** *նոյն է ինչ որ լամաչու, որ տե՛ս Բագրճեան, Մասիս 1885, 866 չանդրադառնալով Առձեռն բառարանի լամաչու ձևին, գտնում և մեկնում է իբրև նոր բառ։]*

ՉԱՄԻՉ, ո հլ. *«չորացրած խաղող» ՍԳր. որից չամչեայ Ա. Թգ. լ. 12. Բ. Թգ. ժզ. 1. չամչեղէն Ոմս. գ. 1. չամչախունկ «չոր զուկի, մարեմայ խունկ» Բժշ. չամչուել «չամիչի նման չորանալ, չամիչիլ» (նորագիւտ բառ) Վստկ. 187. չամչարակ «compote, խօշաֆ» (նորակերտ բառ)։*

ՆշԲ յիշում է երր. ձիմիւմ կամ զիմմում (իմա՛ צמוקה ṣimmūqā) «չամիչ»։ Հիւնք. ջամբ կամ շամբ բառից

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Մկ. Մշ. Ննխ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Վն. Տփ. չամիչ, Հճ. Մրղ. Սլմ. Տիգ. չումիչ, Սվեդ. չումէչ, Ալշ. չամիճ, Դրբ. չո՛միճ, չա՛մէճ, չա՛մըէչ, Զթ. չամբ՛չ, Ագլ. չա՛մուչ, Մղր. չօ՛մէճ։—Նոր բառեր են չամչապուր, չամիչխաղող, չամչենի կամ չամչի, չամչկենի, չամչիլ, չամչմիլ են։

ՓՈԽ.—Վրաց. ჩამიჩი չամիչի, ուս. չամիչ, Բրք. դւս. Ակն. Նգ. čemič (տե՛ս Բիւր. 1899, 314, Հնուբ. Ակնայ 352, Յուշարձան 329). Համմտ. էնկիւրիի Բրքախօս հայոց բարբառով čemič «չամիչ», čemičlemek «չամիչ դառնալ, խաղողը չորանալ, չամչիլ» (Բիւր. 1898, 865). Նոյնպէս նաև գնչ. čamik «չամիչ», čamikengoro «չամչավաճառ». (Paspati ծանօթ չլինելով մեր բառին՝ այս ձևերը կցում է նյն. τζαμπί «չանչ», τζαμπόκρασον «չանչի գինի» բառերին, որոնք կապ չունին սրանց հետ). Ն. ասոր. čməiča, čməčt'ə «թառամած, ցամքած», čaməč, čmačt'a «թառամիլ, թօշնիլ, խամրիլ», տճկ. چاميچ čamič բառը ունի նաև Կարապետեան, Ծամ. բռ. 281 «մանր չամիչ. 2. մանր, մանրուկ. 3. չամիչ, աչքի սև» նշանակութեամբ, որից էլ čamič gözlü «սևաչուխ»։

***ՉԱՄՉԱՇԵՐԵՓ** (կամ յարմարեալ ձևով՝ չամչեայ շերեփ) «մեծ շերեփ, խոշոր գդալ» Յայտմ. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Պրս. چمچه čumča «շերեփ. 2. փայտէ պնակ», որից նաև Թրք. چمچه čemče «շերեփ», چامچاق čamčaq «փայտէ խոր սկաւառակ», ն. ասոր. čamčä «գդալ»։—Աճ.

ՆշԲ վերիվերոյ մեկնում է «անօթ ջրոյ կամ ըմպանակ երկայնավիզ և դրդգալ մեծ» և կցում է հյ. չամիչ բառին։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Արրատ. 1910, 268։

ԳԻՒ.—Դրբ. Ջղ. չամչիկ «կարճ կոթով» փայտէ փոքր շերեփ», Երև. չօմչա։

ՉԱՄՐՕՐ կամ ՉԱՄՐՕՐԻ *«հնդկական փշոտ մի ծառ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2450։*

***ՉԱՅ** տե՛ս Թէյ։*

ՉԱՆԱՐ *«անհամբեր, չանող, անյուր». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 260։*

ՉԱՆԱՐԴԻ (-դւոյ, -դեաց) *«վատթար, չընչին, անարժան» Փիլ. առ լիւս. Տօնակ. որ և չանուդի Բննիկ. չանարդագուրդ ՅՀ. կթ. 147. —(Հին բռ.=Բառ. երեմ. 260 մեկնում է չանարդակ «սորուկ», չանարդագուրդ «առաւել սորուկ», չանարդաւիպ «աղքատաձև», չանարդի «անարժան»)։—Բոլորն էլ անստոյգ։*

ՉԱՆԿԱԻՈՐ, ի–ա հլ. *«է տևական ինչ ախտի, որ պատճառի ի յայրեցած արենէ փայծնդան, յորժամ զեղանի առատութեամբ ի լեարդն և մնայ անդ»։ Ունի միայն Փէշտիմալճեան բառարան։*

***ՉԱՆՂ,** ո հլ. *«խաղողի ճզմուած կեղևները. տճկ. ճիպրէ». մէկ անգամ ունի Թուց գ. 4. «Զգինի ի չանղոյ մինչև ցթինն»։ Ձեռագիրները խաթարելով գրել են ի չամչոյ. երբայական բնագիրն ունի תרשן ṭarṣān, որի նշանակութիւնը ստոյգ չէ, բայց հաւանարար պէտք է լինի «ազոխ» (Gesenius[17], 262). յոյն թարգմանութիւնն ունի στέμφυλον «չանչ», որից և առուգում է մեր չանչ ձևը. —Անգլ. Բրգմ. դնում է from the kernels even to the husk «կորիզներից մինչև կեղևը», որ վերիններիս հակառակ շարքն ունի։ —Բառիս հետ նոյն է նաև շնչ, որ տե՛ս։*

=Կովկասեաններից փոխառեալ բառ. համմտ. վրաց. ჩენჩო չենչո «կեղև, կճեպ», ჩენჩოთანი չենչոթանի «կճեպը վրան, դեռ չմաքրուած» (հայագէտներին համար է

աստում), լազ. չոնչի «եգիպտացորենի կուրծի վրայի տերևները», վրաց. ჯ>ჯა ნაწა «խաղողի չանչ», լազ. ნაწի «կաղինի դրսի կանաչ կեղևը». Համմ. նաև պրս. چنچ čunča կամ چنج junja «խաղողի կուտ» (Առաջիններըը համապատասխանում են մեր չանչ բառին, երկրորդները՝ մեր չէչ ձևին)։ —Աճ.

ՆՀԲ դնում է չամիչ բառի մէջ, բայց տալիս է «կոխածն խաղողոյ» նշանակութիւնը։ Հիւնք. սրբագրում է չանչ ձևով (փխ. չամիչ) և կցում է պրս. junja «թին» բառին։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Մկ. Մշ. Մրզ. Սլմ. Վն. չանչ, Ագլ. Դրբ. չոնչ, Ջղ. չենչ, Տիգ. չինչ «խաղողի շրուանդ, կոխածի մնացորդը, կուտերն ու կեղևները». Նշանակում է նաև «խնձորի, տանձի, սերկևիլի դէն գցելու մասը, քացախի դիրտ, հալած իւղի փրփուրը» (այսպէս Ալշ. Լ. Կր. Վն.)։

ՉԱՆՉԱՂԱՏԻ *«ցնցոտի, պատառոտած շորեր». մէկ անգամ ունի Վրք. Հց. ա. էջ 261. «Յորժամ նաև զպատառոտուն չանչաղոտիսն՝ զոր զգեցեալն էր, հարցանէր զնա. Ուստի՞, ասէ, զայդ պատառոտիտ զգեցեալ նա»։—Եզակին *չանչաղ։*

Թոռնեան, Հատընտիր, Բ. էջ 432 ուղղում է ցնցոտի։

ՉԱՆՉԱՔ *«այծեղջիւր պտուղը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2453։*

***ՉԱՇՄԱԿ** (որ և շաշմիկ, շեշմակ) «մի տեսակ փշոտ թուփ. տալիս է կարծր ոսպանման պտուղներ, որ ծնծղալով՝ փոշին իբր աչքի դեղ են գործածում. լտ. argemonia» Բժշ. ունին միայն ՀԲուս. § 2454 և Նորայր, Բառ. Ֆր. 84 բ։*

=Պրս. چشمک čašmak, որ և čašam, čašām, čašxām, նոյն նշ. (ԴԴ մեկնում է «հատք ինչ սեագոյնս որպէս ոսպն»)։—Անշուշտ چشم čašm «աչք» բառից է։—Աճ.

Ուղուրիկեան, Մասիս, 1881 նոյ. 25 համարում է լտ. paliurus aculeatus, «որուն պտուղները Բիւթանիոյ մէջ շէշմրգեն կը կոչեն»։

ԳԻՒ.—Մշ. շաշմիկ (ըստ ՀԲուս. § 2454), որի ուղիղ ձևն է շաշնիզ՝ ըստ Նազ. Մարտիրոսեանի։

***ՉԱՇՄԱԿ** «արտաքնոց»։*

*=ՊՀլ. *čašmak ձևից. ընդարձակ տե՛ս ճեմիշ բառի տակ։*

ԳԻՒ.—Մշ. շաշմա «արտաքնոց»։

***ՉԱՇՏԱ** «վեցապի ջութակ». նորագիւտ բառ, որ գործածական է յետին հայերէնի մէջ. ինչ. Կոստ. Երզն. 175—176 (Մարուպ, դու սազէ զչաշտան). որ և շաշթայ Առաք. լծ. սահմ. 596, 615։*

=Թրք. چشته čašta «վեցապի ջութակ», որ աղաւաղեալ է պրս. شاشتا šaštā < شاشتار šaštār հոմանիշից. բուն նշանակում է «վեց աղի, վեց թել»։

Ուղիղ մեկնեց Նորայր, Հրտր. Կոստ. Երզն. 202։

ՉԱՉ *(կամ շաչեր, որ թերևս նոյնի յոգնակին է) «մի կարգ ծառերի առանձին աճեցնելու համար կտրուած և զատ տնկուած հիւղ» Վստկ. 142, 143, 144, 151։ (Ըստ ՀԲուս. § 2455 նաև նշ. «շողգամի տերև». բայց այս նշանակութեամբ տե՛ս չէչ)։*

***ՉԱՏՐ-ՃԱՂԻԿ** «վրանածաղիկ. convolvulus arvensis» Սալաձ.։*

=Թրք. چادر چیچکی čadər-čičeyi «վրանածաղիկ» բառից՝ առաջին մասը (čadər «վրան») պահելով, երկրորդը թարգմանելով։

Ուղիղ մեկնեց Նորայր, Բանասէր 1901, 126։

ՉԱՐ, ի–ա հլ. «չար, դէշ, վատ» ՍԳր. Եզն. 10. Ոսկ. սրանից ունինք շատ բազմաթիւ ածանցներ, որոնցից յիշենք մի քանի հատ. չարագործ ՍԳր. Եզն. Ոսկ. չարալլուկ Երեմ. իգ. 9. Եւս. քր. Ոսկ. մ. ա. 2. չարակենել Օր. լր. 54, 56. Ոսկ. մ. բ. 15. Կոչ. Սեբեր. Ադաթ. չարաձայն Ոսկ. մաթ. Եւագր. չարաճճի Տիտ. ա. 12. Ոսկ. մ. գ. 3. Եզն. չարամաճ Ադաթ. Բուզ. չարաչար ՍԳր. Եւս. պտմ. Եզն. Եւագր. չարափուշ Եփր. Թգ. չարի Բուզ. չարիմ ՍԳր. Ոսկ. չարուհ Սարգ. չարուա Եփր. Համար. 247. չարեացապարուա Բ. մկ. գ. 47. չարել «չար՝ վատ խօսիլ» Նանայ. 184. չարանգակ «չար» (նորագիւտ բառ՝ կազմուած չար բառից՝ բովանդակ և այլանդակ բառերի հետևողութեամբ) Ուխտ. Բ. 104. գչարիլ*

կամ զչարանալ ՍԳր. Ոսկ. մ. բ. 21. բ. թես. (որ և գրուած սչարիլ Մխ. երեմ.). ընդչարիլ Ճառընտ. չարչարել ՍԳր. Ոսկ. մ. բ. 10 (նըշանակում է նաև «իւղ հանելու համար կաթը հարել». ինչ. Կաթն չարչարելով լինի իւղ. Տաթև. ձմ. կա. և այս իմաստից է բխում չարչրուկ *վն. (ծծկ.) «ժաժիկ», Շտխ. «թան, ջրով հարած մածուն». նոյն է նաև Տաթև. ձմ. ճիէ «Կաթն չարչարեալ լինի իւղ»).* չարչարիչ *Ոսկ. մ. ա. 18 և ես. Ներ. ծն. ել.* չարչարանք *ՍԳր. Եւս. քր. Ոսկ.* գուարթաչար *Մծբ.* ժամաչար *Ոսկ. յհ. ա. 3.* յիշաչար *Վրք. հց.* նախաչար *Սեբեր.* օրաչար *Ոսկ. յհ. ա. 3.* չարաբաստիկ, չարագոյժ, չարամտաբար, չարաճճիգ, չարախիղճ, չարախնդաց, չարախնդութիւն *(նոր բառեր) են։*

ՆՀՐ ոչ բարի կամ ոչ արի։ Lag. Urgesch. 197, Ges. Abhd. 105 arya *բառի հակառակն է՝ իբր չ բացասականով։ Հիւնք. պրս.* čār «չորս» *բառից։* Bugge KZ 32, 23 *չ բացասականով* *war «բարի» արմատից, որ կգտնւմ է յն.* ἄρ-ιστος «լաւագոյն» *գերադրականին։ Հիւբշ. 485 բոլորովին անապահով է համարում այս մեկնութիւնը (բայց* Pokorny 1, 69 *յիշում է իբր ստոյգ՝ հնխ.* ar->*յար, յարել, առնել արմատի տակ)։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 114 պհլ. չաճ հոմանիշի հետ՝ որ գործածուած է անդ ԺԳ 16. իսկ Արիահայ բառ. 307 պհլ.* čaryā «գէշ, վատ», čaryātum «չարաչար», *որոնց գոյութիւնը կարօտ է ստուգութեան։ Յ. Գ. Մ., Պատմ. գրակ. 16 երր.* չար (?): Karst. *Յուշարձան 429 թթր.* qar «սև, անբախտ, ցաւ, չարիք», *ալթայ.* qara «սև, չար»։ *Էսգէթ, Արրտ. 1915, 782 արաբ.* شَرّ šarr «չար» *և գւս.* չառ «ժանտախտ»։ *Մատ ՀԱ 1921, 81 և* Яз. и Лит. I. 257 *կգտնւմ է բասկ.* tzar «չար» *բառին։*

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Հմշ. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Նախ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տփ. չար, *Վն. Տիգ.* չուր, *Ջթ.* չօյ, չոր, *Հճ.* չօյ, *Սվեդ.* չուր.— *2. Ջղ. Սչ.* չարչարել, *Երև. Կր.* չարչարէլ, *Ալշ. Մշ. Սլմ.* չարչրել, *Շմ.* չարչարիլ, *Ախց. Մրղ. Պլ. Ռ. Սեբ.* չարչրէլ, *Խրբ. Տփ.* չարչրիլ, *Հմշ.* չարչառուշ, չարչրուշ, *Մկ. Սվեդ.* չուրչուրիլ, *Գոր. Ղրբ.* չրչա՛րէլ, *Ագլ.* չրչա՛րիլ, *Վն.* չուրչրել, *Տիգ.* չուրչրիլ, *Ջթ.* չայչայիլ, չարչարիլ.—*Սղերդի արաբախօս քրիստոնեաներն ունին* չար *(Բիւր. 1899, 116)։ Նոր բառեր են՝* չարաճալ, չարաչիճ, չարիկչարիկ, չարխափան, չարոց, չարճ, չարուճճ, չարչրկել *(>Ննխ.* չարչրգել), չարճաշ, չարչարմուճճ *են։*

ՓՈԽ. ուս. čär «անասունների ժանտախտ», čärčäräz «չարչարանք»։

ՉԱՐ *«մի տեսակ հարկ». նորագիւտ բառ, որ մի քանի անգամ գտնում եմ գործածուած ԺԳ դարի արձանագրութեանց մէջ և Օրբելեանի մօտ. այսպէս՝ Ազատ յամէն աշխարհական հարկաց, ի դիւանէ, ի խալանէ և յամէն չարէ. Արձ. 1296 թ. (Վիմ. տար. 137).—Ոչ շարիատ, ոչ համարիկ, ոչ սուսունի. ոչ եղին թաղար, ոչ մեծ չար, ոչ փոքր հետ եկեղեցոյս (Վիմ. տար. 247).—Եւ զԱստուածածնին քահանայքն ազատ արարաք յամենայն արքունի չարէ (Օրբել. էջ 132).—Արդ եթէ որ... յափշտակել ջանայ զիմ հոգեցատուր հողագ և զայլ ընծայսդ ի քահանայիցդ, և կամ զքահանայ ի չար ընկենու, զոր ազատեցի ես յամենայն ուրեքս (Օրբել. էջ 130).—ԶԳըրուակ գիւղ... վերստին հաստատեցի... ազատ յամենայն չարէ և հարկաց (էջ 224).—Ոչ մերոց և ոչ ումեք չկայ իշխանութիւն և հաշիւ հետ այս շինորէիցս՝ ոչ չարի, ոչ Տաճկաց հարկի, ոչ բերդաչարի, ոչ գունդգահի և ոչ այլ իրաց (էջ 242).—Եթէ հակառակի և կամ չար և հարկ ի վերայ դնէ, ի սուրբ հրոդութենէն նզովեալ լիցի (էջ 243)։ Այս բառից են* բնաչար *(վկայութիւնը տե՛ս վերը) և* անչարութիւն *«հարկից ազատ լինելը», որից* անչարութեամբ *«հարկից ազատ». Ես Սմբատ զԴուինքիին հողն սուրբ Աստուածածնիս (տուի) անչարութեամբ (Վիմ. տար. էջ 158)։*

Բառիս իմաստը անցողակի նկատում է Այտնեան, Քննակ. քերակ. էջ 143. միւսները շփոթել են չար *ածականի հետ ու անցել։*

**ՉԱՐԵԿ, որ և* չարէկ, չարէճ *«քաոորգ».*

ինչ. Չարեէկ մի ի շինած ծովու ջրէդ ածիս և չարեէկ մի յիատակած ծովու ջուր, ի քսան լիտրն չարեէկ մի. երկու չարեէկ. Վստկ. 104, 107, 108.—չարէf *Առաք. լծ. սահմ. 615. Արձ. 1204 թ. (Վիմ. տար. էջ 46).* չարեկ *Անսիզք 79, 83. Նոյնը* չարէf «*բերքի քառորդ մասը (իբրև տուրք տրուած)*» *Մեծոփ. 111.* «*Թո՛ղ զբահրայ և զչարէք ի ծերոց և ի տղայոց*»։—*Համմտ. Նաև* չարեfտար. *Տուաք չարեքտար և այլ ընծայ. Արձ. 1311 թուից (Վիմ. տար. 156).* չարեfտարովն *Արձ. 1266 թ. (Վիմ. տար. 109)։*

=*Պրս.* چاریك čāryak *(օսմ.* čaryek, čeryek, *ռմկ.* չէյրէկ) «*քառորդ*» *(կազմուած* چار čār «*չորս*»+یك yak «*մի, մէկ*» *բառերից)։*

Ալիշան, Հրտր. Վստկ. 256 գնում է պրս.։

***ՉԱՐԽԱՒՈՐ** «*աղեղնաւոր*». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Սմբ. պտմ. 123.* «*Շատք միոյն յերկուց կողմանց... պի ունէաք... աղէկ ֆռանկի չարխաւորք.*» *(տպ. Մոսկ. 114* չարխաւոր*)։*

=*Պրս.* چرخ čarx *կամ* چرخه čarxa «*աղեղ, նետ նետելու գործիք*», *որից նաև պրս.* چرخ‌انداز čarx-andāz «*աղեղնաւոր*»։ —*Աճ.*

***ՉԱՒԻՒՇ** «*ոստիկան*» *Անսիզք 9, 11, 25, 43.* «*նուիրակ*» *Սասն. էջ 50. գրուած նաև* չայուշ՝ Karst, *Դաստն. II. 79, 3իշատ. 1663 թուից (Դիւան, ժ, էջ 54)։*

=*Թրք.* چاوش čavuš «*տաճնապետ զինուոր*», *որից նաև արաբ.* شاوشيّة šāvušiyyat *(Իբն-ի Բաթուտա, հտ. II, էջ 174), նլն.* τζαούσιος, *բուլգ.* čaūš, *սերբ.* čāūš, *լհհ.* czausz, *ուկր.* čaús (Berneker 138)։—*Հիւրշ. 517։*

Ուղիղ մեկնից նախ Անսիզքի հրատարակիչը, էջ 42։

ՉԱՓ (ո *հլ. եզակիում, ու հլ. յոգնակիում*) «*չափ*» *ՍԳր. Ագաթ. Կորիւն. Եւս. պտմ. Կոչ. Ոսկ. որից* չափել *ՍԳր. (սրա մէկ նոր առումն է «փորը լցնել, ագահութեամբ խմել» Կղնկտ. Համմտ. իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 29).* չափոյf *Ոսկ. Սեբեր.* չափաւ *Եփր. մն. 471. Ոսկ. մ. գ. 8.* չափախօս *Եւագր.* անչափ *ՍԳր. Ոսկ* որչափ *ՍԳր. Ոսկ. Եւս. քր.* այնչափ *ՍԳր. Ագաթ.* այնչափիf *Ոսկ. յհ. բ. 33, 37.* դոյնչափ *Եզն. Ոսկ. ես.* հայկաչափ *Փիլ. լին. 66.* գրկաչափ *Վրք. հց.* ժամանակաչափ *Ագաթ.* երկրաչափ *Զքր. Բ. 1. Վեցօր.* երկայնաչափութիւն *Փարպ.* հասակաչափ. *Բ. մկ. ե. 24. Ագաթ. Են։ Բառիս ռամկական կամ մհյ. ձևերն են՝* չաf *Վստկ. 26, Անսիզք 25,* չաfս *Մխ. բժշ. 129, և* չակ, չան, *որոնցից ունինք* որչաf *Հին քեր.* ափչաf «*մէկ ափի չափ*» *Վստկ. էջ 21,* հանչաf «*այնչափ*» *Անսիզք 51,* որչակ, որչան *Թր. քեր.։ Նոր բառեր են* անհամաչափ, անչափահաս, ծանրաչափ, ջերմաչափ, խոնաւաչափ, բաւականաչափ, աստիճանաչափ, անդաշափութիւն, չափանիշ *են։*

Հինք. կցում է ցուպ *բառին։* Bugge KZ 32, 74 *կապում է յն.* κάλαμος «*եղէգ*» *բառին, իբր անցած* *նափ, *նաղու ձևերից։* Karst, *Յուշարձան 423 ՔՔր.* čak «*մաս*», *ույղուր.* kačak «*երբ*», *չուվաշ.* čok «*ժամանակաչափ*», yüz-čak «*հարիւրապատիկ*» *(այս բառերը կցում է ռմկ.* չաf *ձևին)։ Մառ,* Тексты и Раз. по Кв. фил. *հտ. 1, էջ 86—87 յաբեթական բառ. համմտ. վրաց.* ქარ «*դդում*», *յետոյ «դդումից աման», որ մեր մէջ ստացել է ընդհանուր նշանակութիւն։—Կարևոր են համեմատութեան համար մանիք.* چاق čāf, *հաղն.* čāf «*ո՛րչափ*» *(ИАН 1907, 547), սոգդ.* čāß, *սոգդ. ասոր.* č'f, *հաղն.* čâf «*որչափ, այնքան*» *(*Gauthiot, Gr. sogd. 72, 120), *որոնք բստ վերջինիս ծագում են *čwat ձևից>*čßa-։

Գիր.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Համշ. Ղրբ. Մկ. Մշ. Ննխ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. չափ, *Ասլ.* չափ, չա*, *Տփ.* չափ, չափս, *Շմ.* չափս, *Սլմ. Վն. Տիգ.* չոփ, *Ագլ. Հճ.* չօփ, *Զթ.* չօփ, չոփ, *Սվեդ.* չուփ.—*Ունինք նաև* չամ, չաճ, չուխ *ձևերը, բայց միայն ածանցումների մէջ. այսպէս՝* անչամ «*այնչափ*» *Վն., էնչաճ, մչաճ, մունչուճ Ղրբ., էնչուճ, էչաճ, էնչաճ Ջղ.—Միջին հյ.* չաւ *ձևից է Զթ.* չօf մը «*ինչա՜փ*»։—*Տիզ տեղ տարբերութիւն է դրւում* չափ *գոյականի և* չափ *մակբայի միջև. այսպէս՝ Մրզ.* չոփ,

Ագլ. չօփ գործածական են իբր գոյական, իսկ Մրղ. չամf և Ագլ. չումf՝ իբր մակբայ. հմմտ. նաև Երև. Տփ. չափս՝ միայն իբր գոյական, իսկ չափ՝ թէ՛ գոյական և թէ մակբայ։—Ոզմ. չոճf «այնչափ»։

ՓՈԽ.—Վրաց. ჩაფი չափի «մի տեսակ հեղուկաչափ, որ առնում է 4 թունգի կամ 36 ֆունդ. 2. սափոր, դոյլ», ուտ. չափ «չափ», քրդ. čap «չափ» (հմմտ. Մտթ. է. 2՝ Պը չը չափ հուն չափ պըքըն, պը ուի տէ ոյէ ժը ոուա չափանտըն. Որով չափով չափէք, չափեսցի ձեզ). նշանակում է նաև «հեղուկաչափ». այսպէս Ղուկ. ժզ. 6 (Սատ չափ սունէ ղէյթուն—Հարիւր մար ձիթոյ). օսմ. چاپ čap «չափ. 2. ներքին տրամաչափ», چاپلامق čaplamaq «չափել» [սրանց միջոցով՝ սերբ. čap «թնդանօթի տրամագիծ, Kugelmass», ռում. čiap «չափ», որ ըստ Սրմագաշհանի՝ միայն առաղձագործների մօտ գործածուող մի բառ է]. գւռ. Քրք. Նդ. čap «սայլի անիւին բոլորաձև շրջագիծը չափելու կարկին, զոր հայ գիւղացիք ալ չափ կը կոչեն» (Յուշարձան 329), գւռ. Քրք. և յն. Ատն. չափ «ուղղալար», որ գործածական է և նոյն տեղի հայոց մօտ (Արևելք 1888, նոյ. 8)։—

*ՉԱՓԱՐ «ցանկապատ». մէկ անգամ ունի Բղթ. դաշ. 21. «Ետես աչօք բացօք սուրբն Գրիգորիոս զիջումն Միածնին ի չափար պալատն (իմա՛ պալատաճ) արքունի»։

=Պրս. چپر čapar «որմ կազմեալ ի ցախից և ի մացառաց՝ որ է ցանկ, զոր առնեն շուրջանակի տան, պարտիզի և բակի». նոյնից նաև Քրք. čeper՝ որ նշանակում է «տունը շրջապատող ցանկապատը. 2. կռուի համար պատրաստուած ցանկապատ. 3. մարդկանց շղթայ» (Будаговъ 1, 469)։—Ա՛ճ.

ՆՀԲ մեկնում է «որպէս բառ արաբ. և Եբր. ճապպիր, եէպպար, շիպօր, է «հրզօր, մեծազօր, ահաւոր» և որպէս բառ ռմկ. է «վայր ցանկապատ»։

ԳԻՒ.—Մկ. չափար «որսորդի կամ գինւորի դիրք», Մշ. չափառ և Ախց. չոփոռ «ցանկապատ». շատ գործածական է Կովկասի հայ բարբառներում «ցանկապատ» իմաստով. նոր բառեր են չափարոցակ, չափարոցակի «մի տեսակ թռչուն», յատկապէս չափրոնել «շրջապատել, պաշարել» Ագ. Բլ. Նբ. որի հետ նոյն է Քրք. چپرملك čeperlemek «պարսպել, շուրջ պատել»։

ՉՐՈՒՕՏՈՂ «լեզուանի». ունի միայն Բառ. երեմ. էջ 260։

*ՉԵՆ «շուն վանելու ձայն, օ՛շտ» Վրդ. առակ. 188 (այլ ձ. չխ)։

=Քրք. چېق čəq «դո՛ւրս ել» հրամայականից, որ արև. Քրք. հնչում է čəx, և այժմ էլ գործածական է իբր շուն քշելու բացագանչութիւն։—Ա՛ճ.

Ձեռնել տե՛ս Ջախ։

*ՉԵՉ «ճմլած ձիթապտուղի կեղևանք» Վստկ. 184. «Դարձո՛ զչիչն հանդերձ կտովն ի ջրաղացն»։

=Նոյն է չանչ բառի հետ և նրա հետ միասին փոխառնալ է Կովկասեան լեզուներից. հմմտ. յատկապէս վրաց. ჭაჭა ճաճա «խաղողի կեղևանք», ჩეჩა չեչա «վուշը մաքրել», ნაჩეჩი նաչեչի «վուշի խծուծ»։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Ատն. չէչ, Ղրբ. չիչ և Շմ. չէչ «ճըզմած խաղողի կեղևանք», Երև. չէչ «թուրի քամած կեղևանք», Ախց. Կր. չէչ «խնձորի, տանձի և նման պտուղների նետելու միջուկը, կանաչեղէնների դէն գցելու մասերը, չօփ»։—Սրանց հետ նոյն են չաչ Համշ. «եգիպտացորենի վրայի շապիկը կամ պատեանը». Տր. «լորու դրսի կանաչ պատեանը», Խտջ. «շողգամի և բողկի կանաչ տերևները՝ որ չորացնելով պահում են կերակուր եփելու համար»։

ՓՈԽ.—Քրք. և յն. գւռ. Ատն. čeč «խաղողի ճմլած կեղևանք» (Արևելք 1888, նոյ. 8—9), ուտ. çeç «միջից մնդրը քամուած մեղրահաց»։

*ՉԵՉ «կալի մէջ լցուած մաքուր ցորենի դէզ». դաւառական բառ է, որ հնից աւանդուած չէ. սխալմամբ է որ ՆՀԲ նախորդը շրփոթում է սրա հետ։

=Պրս. چاچ čāč, որ և چاش čāš, ژاژ žaž «դէզ կալի կամ կոյտ արմտեաց, զոր դիզեն զկնի ծեծելոյ և որոշելոյ ի յարդէն զցորեանն ի կալին». նոյնից է Քրք. ՔՔր. čaǰ, čač, čaš, jaš «կալած հաճարի կամ վարսակի դէզ. 2. մաքրելուց յետոյ կալի

մէջ մնացած բարակ յարդը» (Будаговъ 1, 454). Նոյն բառն է դարձեալ՝ որ թուրքերէնի միջոցով փոխ առնուելով՝ դարձել է սերբ. čadj, čadja, լհհ. čač, čadž «բարակ յարդ»։ —Աճ.

ԳԻՒՒ.—Խրբ. չոջ, Ակն. Եւդ. չէչ «կալի մէջ դիզուած մաքուր ցորենի շեղջ»։—Էնկիւրիի Թրքախօս հայոց բարբառով չէչ համանիշը (Բիւր. 1898, 865) անշուշտ հայերէնից է. իսկ Թրք. գւռ. Եւդ. ﻉ̈ čej և Տ. ǰej «ցորենի դէզ» չեն կարող լինել հյ. շեղջ բառից (ինչպէս կարծում են Թուրեան, Բիւր. 1899, 798 և Գազանճեան, Յուշարձան 329), այլ նոյն են վերիններիի հետ. այսպէս նաև Թրք. ﻉ̈ čeč «մաքրելուց յետոյ կալի մէջ մնացած ցորենը» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 178)։

ՉԵՉ «ծակոտիք». արմատը հնից չէ ա. ւանդուած. յետնաբար միայն գտնում եմ գործածուած Ադամ. 136. «Կողն նման է պինդ ոսկրի, բայց մէջն փուճ, չէչով իլի»։ Սակայն սրանից ունինք շեչաwար «ծակոտկէն մի քար» Անյ. սաորոդ. Առաք. լծ. սահմ. 540։

ԳԻՒՒ.—Արմատը պահուած է «ծաղկախտից մնացած հետքեր երեսի վրայ» և «մեղրի ծակ ծակ բջիջներ» նշանակութեամբ. այսպէս Ախց. Խրբ. չէչ, Ագլ. Գոր. Ղրբ. շիչ.—Բայց նշանակում է նաև «մեղրի բջիջները կազմող մեղրամոմը» (Ղրբ.), «մեղրից քամուած մոմը» (Երև. Սևբ.), «մեղրի բջիջների սև նիւթը» (Ակն.). Նմանութեամբ «միսը ծամելուց յետոյ մնացած անհիւթ մասը» (Ղրբ.)։ Այս իմաստները, մանաւանդ վերջինը, կարող են լինել շեչ «կեղևանք» բառից։—Նոր բառեր են շեչոտ (Շմ. չէչօտ, Ջղ. շիչոտ, Մշ. շիչոդ, Տփ. չէչուտ), շեչմեղր, շեչխաթու, շեչոտենի «մի տեսակ տանձ՝ վրան սև կէտերով»։

ՉԵՐԱՆԵՑՈՂ «անհաստատ». ունի միայն Բառ. երեմ. էջ 260։

ՉԵՐՈՒԻՆ ԱՍՏՈՂ «անպատկառելի». ունի միայն Բառ. երեմ. էջ 260։

Չէզոք տե՛ս Ոք։

Թիրեաքեան, Արիահայ բռ. 147 մեկնում է չ-եզ-ոք (իբր թէ ո՛չ-մի-ոք). բայց ինչո՞ւ այն ժամանակ գրուած է է-ով։ Նոյնը կրկնում են Ադոնց և Մէնէվիշեան ՀԱ. 1930, էջ 727—30. Համմտ. ոչ եզով իւիք=մի՛ եզով իւիք Թր. քեր.։

ՉԻՔՈՒՉԻ «հարկը չափից աւելի պահանջելով հարստահարելը». գործածուած է երեք անգամ. Մի՛ լիցի չէքուչէք բազում, այլ չի՛ք լիցին անիրաւ սովորութիւնքն. Մխ. դտ. էջ 316.—Ա՛յլ չէքուչէք չէ պատեհ առնուլ աւելի ի հարկաւավացն. Սմբ. դտ. 23.—Հարկահանս ոչ միայն զհարկառուսն կոչէ, այլ և զյափշտակողս, որք մերկանային զժողովուրդն անիրաւ չէքուչիօք. Գէ. ես.։—Նկատելի է որ առաջին վկայութեան մէջ թէև բայը եզակի է դրուած, բայց բառը յոգնակի է, ինչպէս յայտնի կերպով երևում է երրորդ վկայութիւնից։

Նշ. մեկնում է «կա՛մ է ոչ էմ, չգոյք, չիք կամ ձիգ, ձգումն, ձգձգումն, հարստահարութիւն և կամ ջէմ». իսկ Աբ «ոչինչ, չեզածները»։ Ուղիղ է բացատրում Բաստամեան, Մխ. դտ. էջ 316 ծան. իբր «հարստահարել, ունեցած-չունեցածը խլել՝ կողոպտել», ասելով թէ այժմ էլ գործածական զաւառական բառ է (տեղը չի յայտնում)։

*ՉԻԳԻՏԱՄ, որ և չիֆիտամ, չկիտամ, չգիտամ, չֆիտամ, չիկտամ «մի տեսակ ծաղիկ է» Սալաձ. (colchicum autumnale ըստ ՀԲուս. §§ 2477, 2706, héméroсalle ըստ Նորայր, amaryllis ըստ Արթինեան, Տունկերը Ա. էջ 56)։

=Թրք. ﻉ̈ čigdim՝ նոյն նշ. (յիշուած է Կամուսի մէջ, Թրք. Թրգմ. Բ. 21 և Будаговъ 1, 481՝ իբր դեղագործական բոյս)։

Ուղիղ մեկնեցին ՀԲուս. § 2706 և Նորայր, Բանաս. 1901, 126։

ԳԻՒՒ.—Զթ. չիգիդօմ, Սթ. չիյդէմ. (ըստ Աղգ. Հանդ. Ա. 137 չիգիտամ կամ սաւդուկ Ախթ. colchicum autumnale):

ՉԻՂՋ (գրուած նաև շեղջ) ի հլ. «սեկեմուկ, մաշկաթև» Ղեւտ. ժա. 19. Օր. ժդ. 17. Ոսկ. հս. Եփր. համաբ. 225. որից չղջիկաձ, ի-ա հլ. (գրուած նաև չիղջիկաձ Եփր. համաբ. 225, ղղջիկաձ Վեցօր. 162, 172—3,

չղչկաև, սխալմամբ՝ յղչկաև Յայսմ.) նոյն նշ. Ես. բ. 20. Բարուք գ. 21. Ոսկ. ես. կայ և եղեիկայ Դրնդ. 551. արդի գրականում գործածւում է միայն չղչիկ ձևը։

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 չ բնաձայնից։ Հիւնք. աղջամուղջ բառից։ Scheftelowitz BB 28, էջ 306 առնս. kīla, kīlikā «սեպ, ցից»!

ԳԻՒ.—Ախց. չքխչիկ, Ալշ. Սեբ. չ'խչ'իգ։

ՉԻՆԱՐ «անուշահոտ մի ծաղիկ է» Սալաձ. որ և չինարու Կոստ. երզն. 179։

Հիւս. § 2465 մեկնում է իբր թրք. چنار čənar «սօսի»։

ՉԻՆՉ տե՛ս Ոչ։

ՉԻՉ «ստինք». ունի միայն Բառ. երեմ. էջ 260, որից և ՓԲ յաւել.։

ՉԻՊԱՅ «որսի շուն». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Վրդն. առ. 299 և 318. Չիպամի (իմա չիպա մի) ի մէկալ խանութէն վազեց և զկատուն սպաննեց. Եւ թագաւորն ելեալ ի յորս և չիպամի գնաց ի ծակն, եդիտ և նա քարովն եզարկ և ելեալ կաղկընծելով։

ՉԻՏ «ոզնի». ունի միայն Բառ. երեմ. էջ 260։

*ՉԻՏ «ճնճղուկ» Մխ. առ. ճի. Վրդ. առ. 59. «ԲՉ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան 541). գրուած է և չիտ «ճնճղուկ» Ոսկիփ. որից չաիկ «մի տեսակ թռչուն» Տաղ. (վկայութիւնը տե՛ս Ամատ. անդ՝ էջ 545). մկնչիտ «մի տեսակ թռչուն» Տաղ. (Ամատ. էջ 483)։

=Վրաց. ჩიტი չիտի «ճնճղուկ». աւելի ընդարձակ տե՛ս ծիտ։—Աճ.

ԳԻՒ.—Սվեդ. չէդ «ճնճղուկի նման փոքրիկ մի թռչուն է. թուի է սիրում ուտել». սրա տեսակներն են մկաճ չիտ և ppաչիտ Սվեդ.։

+ՉԻՐ «չորացրած պտուղ» Հին բռ.։

=Բնիկ հայ բառ. չոր բառի ձայնդարձն է. տե՛ս չոր։

ՆՀԲ լծ. հյ. չոր, յն. ξηρός, թրք. quru, quruyu։

ԳԻՒ.—Ագլ. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ջղ. Սեբ. Սլմ. Վն. Տփ. չիր, ՋԲ. չիյ, չիր։ Նոր բառեր են տանձաչիր, շլորաչիր, ծիրաճաչիր։

ՓՈԽ.—Վրաց. ჩიჩი չիրի «չոր պտուղ». օր. լեղվիս չիրի «չոր թուզ, պաղատիտ». Թրք. գւտ. Սեբ. čir «չորացրած ծիրան կամ սալոր»։

ՉԻՔ տե՛ս Իր։

Karolides տես Չիգ։

*ՉԻՔՈՒԻԹ «մոլեխինդ». ունի միայն Հիւս. § 2467՝ առնելով Քիմիական մի գրքից։

=Լտ. cicuta «մոլեխինդ»։

Ուղիղ մեկնեց Հիւս.։

ՉՀԱՆԱԿ «մուրացիկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 261, որից և ՓԲ յաւել.։

*ՉՄՈՒՇԿ «հողաթափ» Միխ. առ. 382. Հին բռ. Աշխ. ճլճ. (չունի ՆՀԲ). որից նորակերտ բառ է՝ շմշկել «սառոյցի վրայ երկաթէ կօշիկներով սահիլ. Ֆրանս. patiner»։

=Պրս. چمشاک čamšāk. որ և چشم čamšak, جمشاک jamšāk «կօշիկ»։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բռ. Ֆրանս. էջ 913 բ.—Նոյնը յետոյ Աճառ. Արրատ. 1910, 268։

ԳԻՒ.—Շմ. չումուշկ, Գոր. Ղրբ. չմօշկ։

ՓՈԽ.—Հայերէն բառի յոյն տառադարձութիւնը գտնում ենք իբր թե հետեւեալ հատուածում, որ Ձմշկիկ կայսեր տրուած անունը մեկնելով՝ ասւում է թէ այս բառը հայերէն է, որ յունարէն թարգմանութեամբ նշանակում է «μουζακίτζην, մուճակ». Ὃς κατ' ἐπικλησιν Τζιμτσκῆς ἐκαλεῖτο (τοῦτο δὲ τὸ τῆς Ἀρμενίων διαλέκτου ρῆσρημα ὄν, εἰς τὴν ἑλλάδα μεθερμηνευόμενον μουζακίτζην δηλοῖ. βραχύτατος γὰρ τὴν ἡλικίαν τελῶν ἐπωνομίαν ταύτην ἐκτήσατο (տե՛ս Leonis Diaconi Caloensis Historiae, հրատ. Niebuhrii, Bonnae, 1828, Hist. V. 9, էջ 92)։ Բայց μουζακίτζης բառը՝ ըստ Sophocles-ի բառարանի (էջ 770 բ) միայն այս հատուածից ծանօթ լինելով, ճիշտ յայտնի չէ թէ ի՛նչ է նշանակում։ Երևում է միայն՝ որ պիտի լինի մի կարճ բան, քանի որ յատկացուել է կայսեր շատ կարճ հասակը որակելու համար։ Ոմանք մեկնում են, շատ յաջող համեմատութեամբ, μουζακίτζης =մուճակ, ինչպէս որ Τζιμισκῆς =չմուշկ։

Sophocles, *առանց իսկ յիշատակելու այս համեմատութիւնը, դնում է* μουζαχίτζης «մարդուկ», *իբր ռուս.* мужъ *բառի կրկին նուազականը։ Աւելի յարմար էր դնել ռուս.* мужикъ «մարդուկ»։ *Բայց այն ժամանակ ո՞ւր է այն հայերէն τζιμισχῆς բառը, որ պիտի նշանակէր «մարդուկ»։*

Չճաշխարհիկ *տե՛ս* Ոչ և աշխարհ։

*Գ. Տ. Մկրտչեան (անձնական) մեկնում է «Չին աշխարհից», իբրև արտասովոր բան։ (Բայց այդ դէպքում պիտի ունենայինք *ճեճաշխարհիկ)։*

Չճարէկ *տե՛ս* Ջնարակ։

+**ՉՈԳԱՄ** *տե՛ս* ՉՈՒ։

Peterm. *237* չու և գալ. *բառերից կազմուած։* Lag. Urgesch. 91 gā *արմատից կրկնուած։—Տէրվ.* Altarm. 12 չու *բառի հետ, իբր սանս.* čučyuvē, *հին կատարեալի մնացորդ։ Հիւբշ.* ZDMG *36 (1882), էջ 118 նոյն ընդ* չու=*սանս.* ǒyavāmi=*յն.* σεύω =*գնդ.* šu, *ինչպէս դրել էր* Justi, Zendsp. 309, *որ մերժել է* Lagarde *և որ վերստին հաստատում է Հիւբշման։ Հինք.* գուճ *բառից։* Bugge IF 1, 439 չու *ձևի հետ՝ իբր հնխ.* qlouə։

+**ՉՈՐ** (ո, ի *հլ. յետնաբար*) «չոր, ոչթաց» ՍԳր. *Նաս. քր. փխբ. «լոկ, միայն» Մաշտ. ջահկ.* (չոր պատարագ), «կարծր, կոշտ» Գր. սքանչ. *ծն. քս. (Ո՛չ մահիճ և ո՛չ անկողին, այլ ի չոր մսուր եդեալ. ՀԱ 1912, 475. Համմտ. Ղրբ.* անկողինը չոր է՝ կարծր է)։ *Որից* չորանալ ՍԳր. չորաբեկ *Ոսկ. ա. տիմ. ժդ.* չորակեաց *Յայսմ.* չորակեր *Կանոն. Տօնակ.* չորաճաշակ *Ուռհ.* դիւրաչոր *Ոսկ. սղ.* խորշակաչոր *Վրդն. սղ.* շ՚աչոր *Վստկ.* չորուտ «անբեր (երկիր, հող)» *Սփր. Համար. 200։ Սրա ձայնդարձն է* **ՉԻՐ** «պրտուղի չոր, չորացրած պտուղ», *որի վրայ տե՛ս առանձին։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* k²soros *ձևից, որի* k²sēros *ձևից էլ ենթադրւում է հլ.* չիր։ *Սրբանց ցեղակիցներն են սանս.* kšārá «կիզիչ, հրավառ», *յն.* ξηρός, ξερός «չոր», ξερόν «ցամաք երկիր», *լատ.* seresco «չորանալ», serenus «պայծառ, չոր», *հբգ.* serawēn «չորանալ, ծիւրիլ», *գերմ.* serben «չորանալ, թառամիլ» (*տե՛ս* Boisacq 678, Walde 701, Ernout-Meillet 887, Pokorny 1, 500 *և* 503)։ *Հնխ.* kser- «չոր» *աճած պիտի լինի հնխ.* k'sē *կամ* k'sā «այրել, վառել» *պարզ արմատից։—Հիւբշ. 485։*

Նշխ լծ. թրք. quru, *յն.* ξηρός *Տէրվ.* Altarm. 87 *սանս.* kšara, *յն.* ξηρός *նոյն. Նախալ. 112 հնխ.* skar «այրել» *արմատից. Համմտ.* խարել, խարշել, *սանս.* kšāra «կծու», kšāma «չոր, ցամաք» *ևն։ Հինք. չուր բառից։* Scheftelowitz BB 28, 293 *սանս.* jvar «տաքանալ, այրել» *արմատի հետ։—*Karst, *Յուշարձան 429 թթր.* kar, kor, kur, *չաղաթ.* koruk, kuruk, *եաքութ.* kurun, kūr «չոր», *օսմ.* qavurmaq «խորովել»։ *Էսգէթ, Արրտ. 1915, 784 արաբ.* شرّ šarr «չորացում, չոր» *բառից։* Pokorny 1, *էջ 500 և 503 իրարից բաժանում է* [1]) *սանս.* kšāra «կիզիչ», kšāma «չորացած, չոր» *և* [2]) *յն.* ξερόν «ցամաք», ξηρός «չոր», *լտ.* seresco «չորանալ», *գերմ.* serben *ևն. առաջին խմբի մէջ դնում է հյ.* ցաւ, ցամաք, ցասնուլ. *երկրորդը հայերէն ներկայացուցիչ չունի. հյ.* չոր *խաբուսիկ կերպով նման է վերիններին և յատկապէս յն.* ξηρός *բառի հետ, բայց իսկապէս երկու խմբի հետ էլ ո՛չ մի կապ չունի։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* **დაშრობა** դաշրոբա, **დავაშრობ** դավաշրոբ «չորացնել» (*արմատը* შრ շր-)։

Գիւռ.—Ալշ. Մշ. Ջղ. Վն. չոր, *Ախց. Գոր. Սրև. Խրբ. Կր. Ղրբ. Նխճ. Շմ. Պլ. Ռ. Սչ.* շor, *Սլմ.* չուէր, *Մրղ.* չուȟր, *Մկ. Տիգ. Տփ.* չուր, *Համշ. Սեբ.* չէor, *Ասլ.* չէo՚r, *Սվեդ.* չիր, *Զթ.* չիյ, չիր, *Հճ.* չոյ *(բայց* չիյճօլ «չորանալ»).—*Ագլ. ունի այս բառը և գործածում է խէշկ ձևը, որ պրս.* خشک xušk *հոմանիշից է փոխառեալ։ (Սակայն կայ* չիր «չոր պտուղ»)։ *Նոր բառեր են* չորագլուխ, չորաբան *կամ* չորբան, չորբանագող, չորակապ, չորամաճակ, չորայիճ, չորապուր, չորել, չորացնել, չորեղէն, չորեփոց, չորոտ,

չորուկ, չորուտ, չորչրուկ, չորչորատիլ, չորխըրտիլ *են*։

Փոխ.—Նոր փոխառութիւններ են քրդ. چورتان čortan *«կակուղ պանիր» (ըստ* Justi, Dict. Kurde 133) *կամ «չորթան» (ըստ Հայաստան 1917, № 90).—Սղերդի արաբախօս քրիստոնէից բարբառով էլ* šərtan *«չորթան» (հմմտ. էնկիւրիի հայոց բարբառով* čörten *հոմանիշը. Բիւր. 1898, 865),* čortətu *«չորթութ, շողգամի կամ կաղամբի թթու» (Բիւր. 1899, էջ 116)։*—Patrubány SA 1, 222 *հայ. չորենի ձևից է դնում հունգ.* Surány *տեղանունը (!)։*

ՉՈՐՄՈՐԵԱԿ *կամ* **ՉՈՐՄՈՒՐԵԱԿ** *«հազարաթերևեան կոչուած բոյսը. լտ.* myriophyllum, *ֆր.* mille-feuille, *ըստ Տիրացուեան.* Contributo § 534 achillea millefolium L» *Բժշ. ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 811 բ, Հ Բուս. § 2471, Քաջունի, Գ. 198։*

+**ՉՈՐՔ**, ի *հլ. (անեզական) ՍԳր. Եզն. 17. Եւս. քր. յետնաբար՝ հայցականը իբրև ուղղական գործածուելով՝ ձևացել է* չորս, *որ գրիչները մոցրել են նաև հին գրութեանց մէջ. ինչպէս՝ Կոչ. ՅՀ. իմ. Պտմ. աղէքս. են։ Ածանցման մէջ մտնում է 4 ձևով.—1.* **ՉՈՐ-.** *ինչ.* չորիր *Եզեկ. ե. 12.* չորրորդ *ՍԳր.* չորիցս *Պիտառ.* չորեակ *կամ* չորեակ *Փիլ. Պիտ. Սահմ.* չորեկ *«չորքոտանի կենդանի» մհյ. բառ (ըստ Նորայր, Բառ. ֆր.)—2.* **ՉՈՐԵՔ-.** *ինչ.* չորեքտասան *ՍԳր.* չորեքանկիւնի *Բլ. իր. 16. Բ. մն. լգ. 11.* չորեքեան *կամ* չորեքին *ՍԳր. Եզն.* չորեքևնեան *Եւս. քր.* չորեկուսի *ՍԳր.— 3.* **ՉՈՐՔ.** *ինչ* չորքիք *Եւս. քր.* չորքոտանի *Մն. ա. 24. Ղևտ. իէ. 27. Թուց լև. 5. Եփր. հռ.* չորանկիւնի *Լծ. փիլ.—4.* **ՉՈՐՍ.** *ինչ.* չորսակնեան *Վրդն. ծն.* չորսամսեան *Վրք. ոսկ.* չորսոտանի *Խոր. աշխ. (բոլորն էլ յետին)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* k²etɥores *ձևից. հմմտ. սանս.* चत्वर čatvar, चत्वार: čatvāras, *հյց.* čatúras, *բոշայ.* չդար, *զնդ.* čaθwārō, *պհլ.* چهار čahār *(նշանագրով* ۴ *), պազ.* čihār, *պրս.* چهار cahār *կամ* چار čār, *քրդ.* čavār, čār, *աֆղան.* calōr, *օսս.* çuppar, çlppar, *նաղն.* tfō, *մինջ.* čafir, *Թոխար.* çtwar, s'twar, *քուչ.* çtwer, çtwār, çwar, çwer, *յն. դոր.* τέτορες, *հոմեր.* τέσσαρες, *յոն.* τέσσερες, *ատտ.* τέτταρες, *հոլ.* πέσυρες, πίσυρες, *լեսբ.* πέσσυρες, *բեոլտ.* πέτταρες, *լտ.* quattuor *(ֆրանս.* quatre, *իտալ.* quattro, *ռում.* patru), *օսկ.* petora, *ումբր.* petur-, *հիռլ.* cethir, *նկիմբ.* petguar, *նոր կիմբ.* pedwar, *կորն.* peswar, *գալլ.* petor-, *նբրըտ.* pévar, *հիսլ.* fjōrer, *անգսք.* fēower, fiðer, *հսաքս.* fiuwar, fior, *գոթ.* fidwōr, *հրգ.* fior, feor, fiar, *գերմ.* vier, *անգլ.* four, *լիթ.* keturì, keïverì, *լեթթ.* četri, *հսլ.* četyre, četvero, *չեխ.* čtyři, *ռուս.* четыре, *ուկր.* čotýry, *լհհ.* cztery, *սլով.* četirje, štirje, *ալբան.* katɛr *են* (Pokorny 1, 512, Walde 630, Trautmann 131, Berneker 153, Boisacq 960, Ernout-Meillet 798, Horn § 452)։ *Թէ ի՛նչ ճամբով հնխ.* k^{u}etɥor-es *դարձած է հյ.* չորեք, չորք՝ *իբրև բարական է. եղած այլևայլ ենթադրութիւնները տե՛ս տակը. հմմտ. նաև* fun *և* funասուն։—*Հիւբշ. 485։*

Ուղիղ համեմատեց նախ Klaproth, Asia pol. 107:—*ԳԴ պրս.* չար, չէիար: *ՆՀԲ «լծ. և նոյն ընդ* funf, *որպէս և ընդ պրս.* չէիար, չաիար, չաո»: Peterm. *38, 153 սանս.* čatur *բառից՝ a և t ձայնների անկումով և յոդնակիի f նշանով։ Նոյնը նաև* Windisch. *31 և* Böttich. Arica 61: Lag. Urgesch. 575, 968 *պրս.* čār *և սանս.* čatur *ձևերի հետ։* Bopp, Vergl. Gram.² II. 71 *սանս. և լատ. ձևերի հետ՝ համառօտութեամբ ձևացած։* Müller SWAW 35, 197 *և* 38, 580, 593 čatvār>časvar>*չոfr, դնելով f իբրև արմատական։* Schweizer KZ 17, 135 *մերժելով* Bopp-*ի մեկնութիւնը՝ յիշում է թէ* čahar *ձևն էլ կարող էր տալ* չոր, *ինչպէս պրս.* čahār *տուել է* čār։ *Հիւբշ.* KZ *23, 29, 33 և 35 զնդ. և լտ. ձևերի հետ։* Lag. Arm. Stud. § 1784 չորք= *պրս.* čār *համարում է արշակունի, մինչ* fun=(ča)tvar *բնիկ հայ.։ Տէրվ.* Altarm. *2, Նախալ. 132, Երկրագունտ Ա. 45, Լեզու Ա. 174* չորս *և* fun *դնում է* *katvar *(հմմտ. լտ.* quattuor*) ձևից՝ միջին* tv-*ի անկումով։ Հիւբշ.* ZDMG

30, 774—9 չի ընդունում որ միևնոյն k *ձայնը տար թէ՛* f *և թէ* չ. *ուստի ենթադրում է* չnrf=čatvar, fun=tvar *(համմտ. սանս.* turya, *զնդ.* tūirya *ևն)*: Bartholomae, Stud. 2, 33 *դնում է* k²etvores>k'ek'or>čk'or>չnrf: Bugge IF 1, 440 *և* 458 k²etvores>k'eyor>k'ēor>k'ior>k'yor>čyor>չnrf: Meillet MSL 9, 158 *չ դնելով նախատոո* kt *կամ* ktv *ձայնախմբից՝* չnr-<հնխ. k²tvor- *համմտ. զնդ.* ᵃxtūiryō, *յն.* τράπεζα —*Հիւնք. ջուր բառից*:

ԳԻՒ.—Ուղղական չnrf *ձևից են ծագում Ագլ. Մղր.* չուրf, *Ղրբ.* չէorf, *Անտ.* չուf, *Ջղ.* չոf. *իսկ հայցական* չnru *ձևից են գալիս՝ Ալշ. Մշ. Սլմ. Վն.* չnru, *Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սչ.* չoru, *Մկ. Սվեդ. Տիգ. Տփ.* չուru, *Մրղ.* չուhru, *Ակն. Սկր.* չէoru, *Ասլ.* չէo'ru, *Հճ.* չոյu, *Զթ.* չիյu, չիuru, *Հմշ.* չէoյu, *Խր.* չou:—*Չորեքշաբթի ձևի դէմ հետաքրքրական են Վն.* f'էorէoշպmp, f'էorէof'pշպmp, չէorէof'pշպmp, չէorէoշպmp *(ՀԱ. 1906, 129)*: *Նոր բառեր են* չnrեfդիմաց, չnrեfմուտ, չnrեfքաթ, չnrեfշաբաթմուտ, չnrեfշուրջ, չnrոց, չnrոցf, չnruանոց, չnruաչf, չnruաչfանի, չnruխաչանի, չnruձեռնանի, չnruանոց, չnruնուկ, չnruուրոյnr, չnruում, չnruտnrufանի:

ՓՈԽ.—Թրք. գւս. Կր. čoros *«չորոց, չորս հզով արօր» (Բիւր. 1898, 627), նոյնը նաև Թորթումի մէջ* չorogf (!) *ձևով (ըստ Շիրակ 1905, 425).—Հյ.* չnru *տարեկան ձևից է վրաց. գւս. հუხტარაგანი* չուuտարագանի *«չորս տարեկան երախայի ոտքի կաղապար» (տե՛ս* Беридзе, Грузинск. глоссарій по имер. и рач'ин. говорамъ, СП. *1912, էջ 59. տե՛ս և տարի բառը)*:

+ՉՈՒ, ի–ա *հլ. (յետնաբար* n *հլ.) «երթ, ուղևորութիւն» Բուզ լգ. 2, 6լ. խ. 36. Վեցօր. 163. Փարպ. «Ճանապարհ» Ա. մկ. ե. 63. «բանակ, կարաւան» ՍԳր. որից* չու առնել *ՍԳր. Ագաթ.* չուել *ՍԳր. Եփր. Բգ.* օդաչու *նար. յորդաչու Յհ. կթ. երկնաչու Ագաթ. Սրկ. յկ. Մագ.* նաւաչու *«նաւագնացութիւն» Եւթաղ. 180.* ամպաչու *Ագաթ. (սխալ է ամպաչուել բայը՝ ըստ Վարդանեան, Եւթաղ էջ 181 ծան.).* լուսաչու *կղնկտ. խորանաչու խոր. վրդ.* ծովաչու *Զքր. կթ. Պիտառ.* կենսաչու *նար. խշ.* մակուկաչու *Շիր. քրոն.*:—*Նոյն արմատի երկրորդ ձևն է* ՀՈԳ, *որից կազմուած են երթալ բայի կատարեալը (չոգայ, չոգար, չոգաւ ևն, գրուած նաև* չոfայ *ևն) և հրամայականը՝ չո՛գ «գնա՛» Ոսկ. մ. ա. 17. յետնաբար կազմուած են նաև ուրիշ ժամանակներ. ինչ.* չոգալ նանայ. չոգալուվ *Ոսկ. յհ. բ. 2.* չոգամ *Վրք. հց. Պզատ. սոկր.*:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* qieu- *«շարժիլ, երթալ» արմատից. հյ. չու գալիս է հնխ.* qiu-ti- *ձևից,* չոգ<հնխ. qioy- *ձևից: Սրանց ցեղակիցներն են սանս.* čyuti- *«հրևան գալը, ելք, հեռացում, անկում»,* čyávatē *«հեռանայ, գնայ, երթայ»,* čyāutná- *«գնացում, արշաւանք», բոշայ.* ջել, ջիել, ուչել, ուչավել, չիել *«երթալ», զնդ.* šu *արմատից՝* šūta- *«նկճալ, վարեալ, վանեալ»,* šavaitē *«ճամբայ կլլել»,* šyaoθna- *«վարմունք, գործ, արարք», հպրս.* ašiyava *«չուեց, գնաց», արևել. իրան.* tsue *«գնաց», պրս.* šavam *«երթամ, լինիմ», աֆղան.* švạl *«երթալ, գալ, լինիլ», վախի* čauạm *«երթամ», քրդ.* čun, čuin *«երթալ»,* čuma *«չու, երթ», զազա* šuin *«երթալ», բելուճ.* šuta *«երթեալ, գնացեալ», օսս.* çäun *«երթալ»,* çıd *«երթ, չու», յն.* σεύω *«յուզիլ, վարել, վանիլ»,* σεῖν *«մղել»,* ἔσσυτο *«շտապից»,* ἐσσύμενος *«շտապ, շտապաւ»: Հնխ.* qieu- *արմատը համարւում է աճած պարզական* qēi- *«շարժիլ» արմատից, որի ժառանգներն են՝ յն.* κίω, ἔκιον *«գնալ»,* κινέω *(n- աճականով) «շարժել»,* κίνυμαι *«շարժիլ, ճամբայ կլլել»,* ὀνο-κί-νδιος *«իշավար», լտ.* cio, cieo *«շարժել»,* citus *«արագ», հիւլ.* ro-chim *«հասնիլ», կորն.* ke *և բրբտ.* kae *«գնա՛», գոթ.* haitan *(d- աճականով) «քշել, վարել, հրամայել, կոչել», մինչև կինօ=սինէմա=cinématographe, որ թարգմանւում է «շարժապատկեր»* (Pokorny 1, 361—3, Walde 159, Boisacq 860, 462, 457, Ernout-Meillet 180, Horn § 778):—*Հիւրշ. էջ 485*:

Justi, Zendsp. 309 *զնդ.* šu *արմատի տակ՝ վերի զանազան ձևերի հետ*

Մորթման ZDMG *26, էջ 528 և 545, Բևեռ. Հայաստ. (Քրգմ. Գ. Ապտուլլահ), էջ 48 բևեռ.* šiubi, šiudata *«չուել», գերմ.* schieben *«վարել»։ Տէրվ.* Altarm. *12, Նախալ. 112 զնդ.* šu, *պրս.* šudan, *սանս.* čyu, *գոթ.* skevjan *ձևերի հետ՝ ուղիղ մեկնութիւնն ունին Հիւբշ.* ZDMG *36 (1882), էջ 117—8,* Arm. Stud. *էջ 48,* Meillet MSL *8, 296—7 և 23, 255։ Հիւնք. «բառ ասիական կամ դուրանական՝ նովին հնչմամբ և նշանակութեամբ. քրդ. չու, տճկ. կիտիշ»։ Սանտալճեան,* L'idiome 12 *բևեռ.* tisuldulini: Karst, *Յուշարձան 429 ԹՔր. ույղուր.* köč, *հաքութ.* kós, *օսմ.* köč-mek, göč-mek *«չուել, քոչել»։ Պատահական նմանութիւն ունին չին.* 去 čü⁴ *կամ* 出 去 čú-wái *«չուել»։ Տե՛ս և տակը դուռ։*

ԳԻՒ.—Խրբ. չվիլ, *Սեբ. (ծծկ.)* չվէլ *«չուել, գնալ»։—Սրանցից պէտք է բաժանել Ալշ. Երև. Ղրբ. Վն.* չո՞ւ, *Արբ.* չո՞, չոչո՞, *բացագանչութիւն՝ ձի կամ էշ քշելու, ինչպէս նաև դամէշներին կռուի դրդռելու, որոնք Թաթարական ծագում ունին. Համմ. արևել. Ղրբ.* ччu *«էշ, ձի քշելու ձայն», որ և Ղրբ* чu *(Կամուս, Ղրբ. Քրգմ. Ա. 28),* չաղաթ. چچن čučun *«ճամբորդութիւն», čučumek, čumek, čuymek «ճամբորդել», նողայ.* ču, čuču *«հէզ քշելու ձայն», ալթայ.* ču *«ձի քշելու ձայն», որոնց բոլորի արմատը* Будаговъ *1, 471 հանում է Թաթար. և մոնղոլ. լեզուներից։*

ՉՈՒԱՆ, ի–ա *հլ. «չուան, պարան, բոկ» ՍԳր. Եփր. աւետ. Խոր. «կօշիկ կարելու առասան» Վստկ. 182. «չմոռանալու համար մատին կապած թել» Բրս. մրկ. 199 (վկայութիւնը տե՛ս* խանփուլ *բառի տակ). որից* չուանեայ *ՅՀ. բ. 15,* չուանեղէն *Գէ. ես.* չուանամատն *Ոսկ. մ. ա. 20.* չուանագործիւն *Պիտ.։*

Justi, Dict. Kurde 127 *կցում է քրդ.* چپان čopān *«չուան» բառին, բայց այս բառը պէտք է համեմատել մեր ևոպան ձևի հետ։ Սագրզեան ՀԱ 1909, 335 սումեր.* guana *«նաւի չուան»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 265 ևոպան բառից։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* გარჩვნილი *«ոլորուն, հիւսած բան»։*

ԳԻՒ.—Ղրբ. չուան, *Մրղ.* չուուան, *Խրբ. Ննխ. Շմ. Պլ. Սեբ. Սչ.* չուվան, *Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Մկ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. Տփ.* չըվան, *Տիգ.* չվոն, *Ասլ.* չիվպ, *Դվ. Ռ.* չիվան, *ՋԲ.* չուվօն, չուվոն, *Համշ.* չիվօն, *Սվեդ.* չվուն, *Հճ.* չօվօն։

**ՉՈՒԱՌ «Բշուառ». տե՛ս* Բշուառ։

Հիւնք. Հանում է չու առնել *բայից։*

**ՉՈՒԽԱՅ* (ի *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) *«աստւի» Վրք. Հց. ա. 491. Վստկ. 104. «կրօնաւորի կապայ» Մ. մաշտ. 343. որից* չուխազգեստ *ԹղԹ. դաշ. 23։*

=Պրս. چوخا čuxā *«չուխայ», որ Արեւելքից մինչև Բալքաններբը ընդհանուր տարածուած մի բառ է. այսպէս՝ քրդ.* čux, čōxā, čuka, *Քրք.* چوقا čuqa, *ոմկ.* čuha, *արաբ.* جوخه jūxa, *լազ.* čoxe, *նյն.* τζόχα (Sophocles 1081), τσοχένιος, *սերբ.* čòa, čòha, *բուլգար.* čohá, *սլովաք.* čuha, *նսլ.* čóha, *հունգ.* csuha, csoha, *լհհ.* czucha, czuha, czuhaj, czuja, czujka, szuja, *ուկր.* čúha, čuhána, *ռուս.* чуга (Berneker 159) *ևն։— Հիւբշ. 273։*

ՆՀԲ յիշում է չուխայ, չօճա, չօգա *ձևերը։* Pictet 2, 298 *պրս. և քրդ. ձևերի հետ։*

ԳԻՒ.—Նոր փոխառութեամբ գոյութիւն ունի ամէն տեղ. ինչ. Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Մկ. Երև. Կր. Համշ. Պլ. Մշ. Մրղ. Ռ. Սեբ. Տփ. չուխա, *Տիգ.* չուխտ, *Սվեդ.* չուխօ, *ՋԲ.* չուխո, *Ակն.* չիխա, *Ղրբ.* չո՛խա *ևն։*

ՉՈՒԿԻՆ, ՉՆՉՈՒԿԻՆ *«կանացի, բօշճ կամ ուլ ուլ կամ այն և այն կամ տապզէ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 261։*

**ՉՈՒՄ «Հոյն պտուղը,* cornus, *տճկ.* գրգըլճ*» Բժշ. որից* չմենի *«հունի ծառը» ՓՒ։*

=Թաթարական բառ է. Համմ. քումուք. čum *«հուն»* (Мохира, Кумыкско-русск. слов. Сборн. Матер. Кавк. *հտ. 17). որի հետ նոյն է պրս.* چوم čūm *«ալոճ» (ԳԴ)։ —Աճ.*

Patrubány ՀԱ 1908, 277 հայերէնից փոխառեալ է դնում հունգ. som։

ԳԻՒ.—Նախ. չում։

ՋՈՒՄԱՐ «թրք. խուրմա չիչկի. արմատնուն գլուխն է կամ ծաղիկն». Կամրկ. որից առնելով ունի միայն ՀԲուս. § 2473։

ՋՈՒՆԿ «ոստերը կտրատելուց յետոյ մնացած անհարթութիւն». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վրդ. այգեկ. էջ 77. «Ինն ըրսուն և իննն ոստ և խոչ և չունկն եհան ի նմանէ». (Նոյնը տե՛ս Վրդ. առ. I. 340—1, ուր Մառ թարգմանում է ռուս. занозъ)։ Համմտ. գւռ. չանկչանկոտ Ղզ. Ղրբ. «խորտուբորտ, ծուռ ու մուռ, վրան բազմաթիւ ճիւղեր կամ ճիւղի արմատներ ունեցող (փայտ)». չոչնկոտ Դվ. «վրան ուռուցքներ կամ անհարթութիւններ ունեցող, ինչպէս է կիտրոնը»։

***ՋՈՒՔԱՋ** «գագին փայտին վարդն, երբ զփուշն ի վայր տան». Մխ. բժշ. 84 ունի միայն ՀԲուս. § 2474։

=Պրս. چوب čob, čūb «փայտ, գաւազան» և گز gaz «գազ» բառերից։—Աճ.

ՋՈՓԱՅ, ի հլ. անստոյգ բառ, որ երկու անգամ գործածում է Կղնկտ. Հրտր. էմինի, էջ 204, 205. «Արդ հաւանեցարուք այսմ բանի, զի որոտընդոստ չոփայիցդ շիրիմք» դարքունանդ կոչեցեալ՝ նախ նա այրեսցի յայսմ աւուր ի ձեռն խոստովանող քրմապետացդ այդոցիկ։ Հողմն ուժգին սաստկապէս հասեալ վառէր զայրեցումն բարձու մեհենին և զչոփայսն (այլ ձ. զչափայսն) զազիր մորթովք հանդերձ»։ ԱՒ մեկնում է «կաշի և գլուխ ձիու, որ ծառոց զոհուած է»։

Տե՛ս և Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 29։

***ՋՈՔԵԼ** «ծուներ դնել, ծնրադրել». մէկ անգամ ունի Վրդ. պտմ. էջ 156. «Եւ ի տեսանելն զմեզ ծուներ ոչ ետուն կրկնել և ոչ չոքել, ըստ իւրեանց սովորութեանն»։ Արմատը չոք «ծունկ» ունի Յովսիմ. (Համառօտ խմբագրութիւն) 30 ա. «Եկեալ չոք եղև առաջի իմ որպէս ուղտ»։

=Թրք. چوکمک čök-mek «ծնրադրել» բայից փոխառեալ՝ միայն թրք. -mek բայական վերջաւորութեան տեղ դնելով հյ. -ել։ Սրանից են նաև քրդ. čok «ծունկ», čok dain «ծնրադրել», պրս. چك čak, چوک čūk «ծնրադրութիւն», վրաց. დაჩოქება դաչոքեբա, ուտ. čöktesun «չոքել»։

Ուղիղ մեկնեց Ալիշան, Վրդ. պտմ. 156։

ԳԻՒ.—Արմատը պահում են Ղրբ. չof և Մկ. չէof «ծունկ», Նախ. չof «ծնրադրութեամբ աղօթք և թափօր՝ երաշտի ժամանակ». որից չոfել, չոfէչոf, չոfիպուկի աճել, չոfկոտուկ, չոfման, չոfչոյ, չոfոտել, ծնկաչոf, որոնք գործածական են զանազան գաւառականներում։ Չոfել բայի ձևերն են՝ Մշ. չօfել, Տրև. չօfէլ, Ախց. Կր. Սեբ. Տիգ. Տփ. չօfիլ, Համշ. չօfուշ, Ալշ. չօկել, Մրդ. չէօfէլ, Մկ. չէօfիլ, Զթ. չուfիլ։

ՋՔԱՏԱԿ «մի տեսակ բոյս, որ աճում է Փոքր-Հայքում և արաբ. կոչւում է būš-Darandī» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2476։ Նոյն ձևով կայ այժմ էլ Խոջ.։

=Կազմուած է անշուշտ տակ բառից. պարզ արմատը չf- յայտնի չէ այլուստ։

ՋՔԵԼ «յետս երթալ». ունի միայն Բռ. երեմ. էջ 261։ Արդի գաւառականներում ունինք չfել Ղրբ. «իբր դժգոհութեան նշան՝ լեզուն քիմքին զարնել. ցք ցք անել», Տրև. «չէ ասել, մերժել», Ակն. «վէրքը հալեցնել՝ չիողնելով որ թարախ կապէ»։ Այս վերջինը թուի թէ համապատասխանում է «յետս երթալ» բացատրութեան։—Բոլորն էլ ծագում են չիf բառից։

Ձքիտամ տե՛ս Ջիգիտամ։

ՋՔՆԱՂ «աննման, հրաշալի, սքանչելի» Եսթ. ժզ. 13. Եւս. քր. Ոսկ. մ. ա. 3, 4. Կիւրղ. թգ. որից չfնաղագեղ Ագաթ. չfնաղագիւտ Ագաթ. չfնաղադէմ Մագ. հիաչfնաղ Բենիկ.—գրուած կայ նաև ըստ ԱՒ չfնագեղ՝ փխ. չfնաղագեղ։

ՀՀԲ «չիք ի նա աղտ»։ ՆՀԲ «չիք այլ որպէս զնա» (ուրեմն իմանում է չիfնա-այդ')։ Տէրվ. Altarm. 3, Նախալ. 119 չիf «չկայ» ձևից (բայց առանց բացատրութեան է թողնում -նաղ վերջաւորութիւնը)։—Հիւնք. էջ 349 աչf և աղաւնի բառերից։

***ՉՔՆՏՈՒՐ** *«ճակնդեղ կամ բազուկ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2478։*

=Պրս. կամ Թրք. چکندر çukundur *«ճակնդեղ» բառից. (բայց այս բառն էլ փոխառեալ է հյ.* ճակնդեղ *ձևից, որ կազմուած է* ճակն+դեղ *բառերի բարդութեամբ. աւելի ընդարձակ այս մասին տե՛ս* ճակն *բառի տակ)։*

Չքոտի *տե՛ս Իք։*

Չօճ *տե՛ս Սոճ։*

***ՉՈՐՏԻԿ** *կամ* **ՉՈՐՏԻԿ** *«մի տեսակ բոյս է. լտ.* panaces asclepiu». *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2480։*

=Թրք. çordik, *որի վկայութիւնը տալիս է Ամիրտ. «Զուֆայրայ, որ թուրքն չորտիկ ասէ» (տե՛ս ՀԲուս. անդ)։ Նոյնը դիտէ նաև* Будаговъ, Срав. слов. *1, էջ 493 չաղաթ.* چوردك çorduk *ձևով, որ մեկնում է «лат.* иссòпъ», *որ է «զոպայ,* hyssopus», *իբր համապատասխան արաբ.* زوفا zūfa *«զոպայ» բառի, առնելով ձենքերից, վերջինս էլ Սէնգի-Լախիից, որ է* Lahjat-ul-luγat։— *Աճ.*

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Գ
ՀԱՏՈՐ

Հ—Ջ

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Լ. Աղայան
Նկարիչ՝ Հ. Ն. Գաբծակալյան
Տեխնիկական խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան
Վերատեսուչ սրբագրիչ՝ Լ. Ս. Մահսուդյան
Լինոտիպիստ՝ Զ. Ա. Աղաջանյան
Տպագրիչներ՝ Գ. Գալստյան, Ս. Հարությունյան, Ժ. Բարսեղյան

Պատվեր 488 *Տպաքանակ 20000*

Հանձնված է արտադրության 24/III 1977 թ.։
Ստորագրված է տպագրության 23/VIII 1977 թ.։
Թուղթ՝ 84×108 1/16։ Տպագր. 39,75=66,78 պայմ. մամուլ։
Հրատարակչական 63 մամուլ։
Գինը՝ 5 ռ. 10 կոպ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փող. № 1։

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արովյան փող. № 52։

Տ ո.10 կ.